Մհեր Հակոբյան

Մեծ խաղը

(Եվրասիական Մեծ խաղը և Հայաստանը)

Հատոր I

Մեծ խաղը կավարտվի միայն այն ժամանակ, երբ բոլորը կմահանան...
Ռեդյարդ Քիփլինգ

Երևան
Հեղինակային Հրատարակություն
2025

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 177

Գիրքը նվիրվում է հանուն Հայաստանի
և հայ ժողովրդի ընկած
ռազմիկների
անմար հիշատակին…

Հակոբյան Մհեր

Հ 177 Մեծ խաղը/ Մ. Հակոբյան.- Եր.: Հեղ. հրատ., 2025, Հատոր I,- 856 էջ:

Մարդկության պատմության ընթացքում գործնականում ոչ մի երևույթ պատահական չէ, այն ծնվում է իր սկզբնապատճառների երկարատև շղթայում և առաջացնում է նորանոր երևույթներ, որոնք էլ, ըստ էության, հանդիսանում են նոր սկզբնապատճառներ ու ծնում են նոր երևույթներ: Եվրասիան ինքն էլ, կարծես հարակից անոթների մի ամբողջություն, ապրում է միմյանցից կապված և միմյանցից բխող երևույթների մի ամբողջության մեջ, որտեղ, ծնելով մեկը մյուսին, ի հայտ են գալիս նորանոր երևույթներ:

Հայոց պատմությունը ուսումնասիրությունների և ուսումնասիրողների պակաս, թերևս, երբեք էլ չի ունեցել, սակայն շատ հարցեր մինչև այժմ էլ մնացել են թերի ուսումնասիրված: Միաժամանակ, սակայն, գործնականում բոլոր ուսումնասիրություններում փակված մնալով զուտ Հայաստանի և հայականության սահմաններում, այն կարծես դուրս է մնացել եվրասիական պատմական զարգացումների ընդհանուր համատեքստից՝ դրա արդյունքում ստանալով համատեքստից որոշակիորեն կտրված տեսք, ինչն էլ իր հերթին հաճախ խանգարում է հասկանալ շատ ու շատ իրադարձությունների ներքին բնույթն ու բովանդակությունը: Այս աշխատության մեջ, ընթերցող, ես պատրաստվում եմ ուղղել այդ բացթողումը և քեզ հետ միասին պատմական մի ճամփորդություն կատարել դեպի Հայոց պատմության խորքերը, ուսումնասիրել մեր ժողովրդի անցած ուղին, համադրել դեպքերն ու փաստերը Հայաստանից դուրս զարգացած իրադարձությունների հետ և փորձ կատարել ի վերջո հասկանալու, թե ինչո՞ւ ամեն ինչ եղավ հենց այնպես, ինչպես եղավ, ու ի՞նչ զարգացումներ են հնարավոր սպասել ապագայում:

Եվրասիայի պատմությունը…: Այս աշխատանքում մենք փորձ կկատարենք մի հայացք գցել Եվրասիայի պատմության վրա և, կենտրոն ունենալով Հայաստանը, փորձ կկատարենք հասկանալու, ինչը և ինչպես եղավ…

Սույն աշխատանքի առաջին հատորն ընդգրկում է մ.թ.ա. 3000 - մ.թ. 629 թվականների միջակայքում ընդգրկած ժամանակաշրջանը՝ հայ ժողովրդի պատմության հնագույն, հին և վաղ միջնադարյան շրջանը:

Այն կարող է հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են հայ ժողովրդի, Հայաստանի և հարակից երկրների ռազմաքաղաքական պատմությամբ:

ISBN 978-9939-0-3775-2
© Մ. Հակոբյան, 2025թ.

Երբ էլ կարդաս այս տողերը, ընթերցող, հիշիր, որ այս աշխատանքը ես գրեցի որպես իմ ազգին և պետությանը նվիրված հայ մարդ, որպես մի մարդ, որը շատ ծանր է տանում հայ ժողովրդին ու Հայոց պետականությանը վերջերս բաժին հասած հարվածները, բայց նաև որպես մի մարդ, որը լի է հույսով դեպի ապագա և հավատում է իր ազգին…

Խոսք ընթերցողին

Ինչի՞ մասին է այս գիրքը

Ինձ հաճախ են հարցնում, թե ինչի՞ մասին է նոր այս գիրքդ և ինչպե՞ս է այն հարաբերվում հենց վերջերս լույս ընծայած **Հայ ժողովրդի ռազմական Տարեգրքիդ** հետ: Թերևս, ճիշտ կլինի մեր խոսակցությունը սկսել հենց այս հարցի պարզաբանումից:

Խնդրը կայանում է նրանում, որ Տարեգրքիս վրա աշխատելու ընթացքում, ձեռքիս տակով անցկացնելով սկզբնաղբյուրների հսկայական մի քանակություն, ես փաստորեն դարձա հարուստ տեղեկատվության կրող, ընդ որում ոչ միայն Հայոց պատմության բնագավառում, քանի որ այդ ընթացքում ես բնականաբար ուսումնասիրեցի նաև մեծ քանակի ռազմատեսական և ընդհանուր պատմական գրականություն: Արդյունքում՝ ես դարձա նաև ռազմական պատմության գծով ոչ աղքատ տեղեկատվության մի կրող՝ Հայ ժողովրդի ռազմական պատմության ուղղվածությամբ: Միաժամանակ, սակայն, հսկայական քանակի տեղեկատվություն, ինչպես նաև մտքեր և գաղափարներ ես ուղղակի ի վիճակի չեղա արտացոլել Տարեգրքումս՝ վերջինս զուտ յուրօրինակ տեսքի պատճառով: Արդյունքում, չցանկանալով կորցնել արդեն իսկ առկա նույն այդ տեղեկատվությունը, ինչպես նաև մտքերն ու գաղափարները, ես այդ ամենը շարադրեցի արդեն այս գրքում: Կան, սակայն, կարևոր մի շարք հանգամանքներ ևս:

Կարելի է ասել, որ հայ ժողովուրդը ծանոթ չէ իր իրական պատմությանը: Մինչխորհրդային, բայց հատկապես խորհրդային շրջանում հրատարակված հայ ժողովրդի պատմության դասագրքերը, մենագրությունները և այլ աշխատությունները Հայոց պատմության վերաբերյալ ձևավորվել են խիստ թյուր կարծիք[1]: Բանն այն է, որ վերջիններս մի քանի տեսանկյունից լիովին աղավաղում էին իրականությունը և տալիս էին խեղաթյուրված պատկերացում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: Մասնավորապես.

1. ***<u>Դրանք բոլորը գրված էին այն ոգով, որ հայ ժողովուրդը մշտապես, ի սկզբանե եղել է թույլ, հալածված ազգ, և մշտապես կարիք է ունեցել և թերևս այժմ էլ ունի (վերջին հանգամանքը հատկապես էր ընդգծվում ու կարևորվում) «Մեծ եղբոր» հովանավորության</u>***: Տառապելով հենց այս ոճով պատմությունը ներկայացնելու մարմաջով՝ մեր մասնագետները կամ ընդհանրապես ուշադրություն չեն դարձրել Հայկական բանակի պատմությանը և ռազմական տարեգրությանը, կամ էլ ներկայացրել են այն խիստ աղքատիկ՝ ուշադրություն դարձնելով միայն այնպիսի փաստերի վրա, որոնք ուղղակի հնարավոր չէր չտեսնել: Մնացած փաստերը, որոնք, երբեմն, ուղղակի զարմացնում են ռազմական գործողությունների նկարագրման մանրամասնությամբ, այս մասնագետների թեթև ձեռքով հեշտությամբ հայտարարվեցին վիպական, որպես ժողովրդական բանահյուսություն նմուշներ, ասքեր, վեպեր, մի խոսքով ամեն ինչ, բացի իրական լինելուց[2]: Խոսքը, մասնավորապես, վերաբերվում է Փավստոս Բյուզանդի,

---

[1] Սրա հետ կապված միաժամանակ կուզենայի նաև հատկապես ընդգծել խորհրդահայ պատմագիտության անուրանալի նվաճումները: Դրանցից նախ և առաջ պետք է մատնանշել իրականացված մեծածավալ թարգմանչական գործունեությունը, երբ իրոք շնորհաշատ մասնագետների կողմից հայերեն թարգմանվեցին, և, որ ոչ պակաս կարևոր է, հիմնականում բարձրորակ, թեև, երբեմն, տենդենցիոզ, Հայոց պետականությունը ու պետական կառույցները թերագնահատող ու գաղափարական շտամպերով հագեցված, մեկնաբանություններով համեմվեցին մեծ թվով օտարալեզու աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին: Միաժամանակ գրեթե բոլոր հիմնական սկզբնաղբյուրները գրաբարից թարգմանվեցին ժամանակակից հայերեն և հրատարակվեցին՝ կրկին բարձրորակ, թեև դարձյալ կոնցեպտուալ թերություններից ոչ զուրկ մեկնաբանություններով: Այս հանգամանքը մեծապես հեշտացնում է այդ աղբյուրների հետ ծանոթացումը: Անուրանալի են նաև առաջնակարգ գիտնականների կողմից իրականացված համեմատական-վերլուծական աշխատությունների դերը որևէ նեղ մի ժամանակաշրջանի կամ տարածաշրջանի վերաբերյալ: Օրինակ՝ ուսումնասիրողի համար անգնահատելի են Ա. Տեր-Ղևոնդյանի աշխատությունները դեպի Հայաստան արաբական արշավանքների, ինչպես նաև նրանց տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի վերաբերյալ:

[2] Դրա հետևանքով հաճախ աղավաղվում է իրադարձությունների ընդհանուր պատկերը, դրանց զարգացման տրամաբանությունը: Ասվածի օրինակ կարող է հանդիսանալ Արմինիայի VII ապստամբության վերաբերյալ Շապուհ Բագրատունու բերած տվյալները հաշվի չառնելը, որի հետևանքով այն վերջացած է համարվել 775 թ-ի ապրիլի 24-ի Արձնի ճակատամարտով, այն դեպքում, երբ տեղի են ունեցել ևս առնվազն երկու ճակատամարտեր, որոնք ստեղծում են ապստամբության վերջի լիովին այլ պատկեր: Նույն ձևով Փավստոս Բյուզանդի տվյալները հաշվի չառնելու պատճառով լիովին աղավաղված է IV դարի Հայ-Պարսկական III պատերազմի (336-

Հովհան Մամիկոնյանի, Շապուհ Բագրատունու[1], մասամբ էլ Մովսես Խորենացու, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու և այլոց աշխատություններին: Բանը հասել է նույնիսկ նրան, որ կասկածի տակ է առնվել համեմատականորեն նոր ժամանակներին վերաբերվող Ստեփանոս Շահումյանի աշխատության զգալի մասը: Բայց նույնիսկ այս ֆոնի վրա ապշեցուցիչ է, որ այս աղբյուրներում նշված հենց անհաջողություններն և պարտություններն են ընդունվում առանց կասկածի, իսկ հաջողությունները ժխտվում են: Այսպես, անառարկելի ճշմարտություն է համարվում Հովհան Մամիկոնյանի բերած այն տեղեկությունը, որ, երբ Արաբական խալիֆության բանակը 640 թ-ի սեպտեմբերին մտավ Տարոն, պարտության մատնեց Հայկական բանակին, սակայն չեն ընդունվում նույն այդ պատմիչի կողմից նույն աշխատության մեջ արձանագրված Փոքր Վարդանի ապստամբության (Մարզպանական Հայաստանի V ապստամբության) (572-591) և Մարզպանական Հայաստանի VII ապստամբության (620-628) հաղթական դրվագների կամ Հյուսիսային II պատերազմի (313-315) ընթացքում Հայկական բանակի մղած հաղթական ճակատամարտերի իրական լինելը,

2. ***<u>Դրանք գրեթե բոլորը գրված են խորը հոգեբանական բարդույթով</u>***: Այս աշխատությունները, կարծես, ամեն կերպ ընդգծում են, որ հայ ժողովրդի ռազմական հաջողությունները կամ ընդհանրապես իրականության մեջ բացակայել են, կամ էլ եղել են խիստ էպիզոդիկ, որպես բացառություն: Մեծամասամբ խոսվում է միայն Տիգրանյան Հայաստանի, այն էլ՝ որպես մի թույլ պետության մասին: Հայոց պատմության այն դրվագների վերաբերյալ, որոնք արտոցոլում են որևէ աշխարհակալ ուժի դեմ հաղթական մի պատերազմ կամ ճակատամարտ, կա խիստ թերահավատ մոտեցում և լավագույն դեպքում այդ տվյալները հայտարարվում են վիպական: Հիշում եմ, թե այս մտայնությամբ տառապող մի հայտնի պատմագետ հեռուստատեսությամբ ինչպես էր ներկայացնում Հայոց պատմությունը՝ որպես չդադարող անհաջողությունների և պարտությունների շարան: Նույնիսկ բանը հասավ նրան, որ հեռուստադիտողներից մեկը հարց ուղղեց հարգարժան գիտնականին, թե ինչո՞ւ է նա ներկայացնում միայն անհաջողությունները, մի՞թե հաջողություններ չեն եղել: Այս հարցին որևէ տրամաբանական պատասխան բնականաբար չստացվեց: Ավելին, մեր խորհրդահայ գիտնականները, եթե ունենան մի հարցի լուծման երկու ենթադրություն, աներկբայորեն կընտրեն այն մեկը, որը ցույց է տալիս Հայկական բանակի և Հայաստանի թուլությունը: Ընթերցող, եթե հանդիպես նման գիտնականներից մեկին, մի ալարիր և հարցրու, թե ինչո՞ւ Ալեքսանդր III Մեծը (մ.թ.ա. 336-323) Հայաստանի հետ չպատերազմեց: Այս հարցին տասից տասը վստահ կպատասխանի, որ Հայաստանը այնքան փոքր և աննշան մի երկիր էր, որ Ալեքսանդր III Մեծը գերադասեց գնալ, գրավել Միջին Ասիայի ամայի տափաստանները և հեռավոր Հնդկաստանը, քան հենց իր կողքին գտնվող և Քսենոֆոնը գովերգած Հայաստանը: Եվ ոչ ոք չի ասի, որ Հայաստանը պարսիկների ու մարերի հետ միասին հանդիսանում էր Արիական Եռադաշինքի անդամներից մեկը, և, եթե պարսիկները ջախջախվել էին, իսկ մարերը՝ հպատակվել, ապա Հայաստանը զենքը ձեռքին պատրաստ էր պահում ու հենց այս պատճառով Ալեքսանդր III Մեծը չցանկացավ պատերազմել, մանավանդ որ հետագայում նրա ուղարկած մի բանակին հայերը ջախջախեցին: Միաժամանակ այն, որ գովերգված հունամակեդոնական ֆալանգը մարտավարական տեսանկյունից բավականին անօգնական կլիներ լեռնային մարտերում (ինչը մինչ այդ ապացուցվել էր Քսենոֆոնը նահանջող բանակի մղած մարտերով), նրանցից ոչ ոքի մտքի ծայրով էլ չի

---

387) պատկերը: Նման օրինակների ցանկը կարելի է երկար շարունակել: Բացի այդ մասնագետները ուշադրություն չեն դարձրել այն հանգամանքի վրա, որ ասքերում, էպոսներում, ժողովրդական վեպերում և նմանատիպ այլ ստեղծագործություններում սովորաբար ընդհակառակը, ռազմական գործողությունները չեն մանրամասնվում (օրինակ՝ «Սասունցի Դավիթ» էպոսում):

[1] Շապուհ Բագրատունու երկի հեղինակի վերաբերյալ գրականության մեջ արտահայտվել են բազմաթիվ կարծիքներ: Այժմ, ոչ սակայն վերջնականապես, ընդունված է այն տեսակետը, որ այն «Պատմություն»-ը, որի հեղինակը հայտնի է որպես Շապուհ Բագրատունի, իրականում հեղինակվել է մեզ անհայտ անունով մի հեղինակի՝ այսպես կոչված «Անանուն»-ի կամ «կեղծ Շապուհ Բագրատունու» կողմից: Չբաժանելով հանդերձ այս տեսակետը՝ ես հարմար չեմ գտնում այստեղ մտնել սույն հարցի քննարկումների մեջ, քանի որ դա չի վերաբերվում իմ թեմային: Բավականին հիմնավորված կերպով գտնելով, որ իրականում ոչ մի «Անանուն» կամ «Կեղծ Շապուհ Բագրատունի» չի եղել՝ ես այսուհետև սույն «Պատմության» հեղինակին կկոչեմ Շապուհ Բագրատունի՝ միաժամանակ ընդունելով, որ նրա գրվածքում կան որոշակի հետագա հավելումներ:

անցնի: Խորհրդային շրջանի պատմական աշխատություններում հիմնականում խոսվում է միայն Արարատյան (այն էլ միայն վերջին շրջանի գրականության մեջ է, ուր գրեթե կասկածի տակ չի առնվում վերջինիս զուտ հայկական լինելը), Արշակունյաց, Բագրատունյաց և Կիլիկյան Հայաստանի ռազմական ուժերի մասին, քանի որ դա արդեն չտեսնել հնարավոր չէր: Նույնիսկ այստեղ, սակայն, ամեն ինչ ներկայացվում է խիստ դժգույն, իսկ այլ և, հատկապես, պետականության կորստի ժամանակաշրջաններում հայկական ռազմուժի մասին գրեթե չի խոսվում և այն տպավորությունն է ստացվում, թե այն գոյություն չի ունեցել, մինչդեռ ըստ իմ ուսումնասիրության, շատ թե քիչ, բայց հայկական ռազմուժը երբեք չի դադարել գոյություն ունենալ, նույնիսկ XV-XVII դժնդակ դարերում: Խորհրդահայ պատմաբաններից ոչ մեկի կողմից ոչ մի լուրջ վերլուծության չի ենթարկվել Հայկական բանակի թվաքանակը, զորատեսակները[1], զինատեսակները, բանակի և առանձին զորատեսակների ու զինատեսակների գործողության մարտավարությունը[2], գրեթե բացակայում են ճակատամարտերի նկարագրությունները, իսկ որոնք էլ նկարագրված են, նկարագրված են թերի, խիստ աղավաղված, միակողմանի, սովորաբար թշնամական կողմի տեղեկությունները, որպես հավաստի և աներկբայելի ճշմարտություն ընդունելու, իսկ հայկական աղբյուրների տեղեկությունները ժխտելու, դրանց ու ընդհանրապես Հայկական զինված ուժերին թերահավատորեն մոտենալու ոգով: Հաճախ լղոզված են «բանակի պարտություն» և «բանակի կանոնավոր նահանջ» հասկացությունները, որոնք իրար, թեև շատ մոտ, բայց իրարից էականորեն տարբերվող հասկացություններ են (օրինակ՝ 451 թ-ի մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտի պարագայում): Ոչ մի քիչ թե շատ լուրջ վերլուծության չի ենթարկվել Հայկական բանակի հակառակորդների զորատեսակները, զինատեսակները, մարտավարությունը և հատկապես թվաքանակը,

3. ***<u>Դրանցում գերակշռում է կեղծ գիտականությունը</u>***: Մասնավորապես, առանց բացառության դեն են նետվում, կամ էլ խիստ քննադատության և բացասական վերաբերմունքի են արժանանում այն փաստերը, որոնք չեն հաստատվում օտարերկրյա աղբյուրների կողմից ու չեն տեղավորվում համաշխարհային պատմության կողմից գրված դասական սխեմաներում: Շատ օրինակներ կարելի է բերել, բայց սահմանափակվենք մեկով: IV դարի կեսի Հայոց պատմության սկզբնաղբյուր հանդիսացող Ամմիանոսին կատարյալ ճշմարտախոս հայտարարելը Հայոց պատմության վերաբերյալ և այս ֆոնի վրա Փավստոս Բյուզանդի այն տեղեկությունները ժխտելը կամ չընդունելը, որոնք չեն հիշատակվում առաջինի կողմից: Օրինակ՝ ինչպե՞ս կարող էր խորհրդահայ գիտնականը ընդունել Մծբինի 356 թվականի ամռանը տեղի ունեցած ճակատամարտում Հայկական բանակի կողմից Հռոմեական կայսրության բանակի ջախջախումը, եթե Ամմիանոսն այս մասին ուղղակի չի խոսում: Բարեբախտաբար այս հարցին ներկայումս հանգամանորեն անդրադարձել է Արմեն Այվազյանը իր փայլուն աշխատության մեջ[3] և սրա վրա մենք մանրամասն կանգ չենք առնի: Գոյություն ունի, սակայն, ևս մեկ լուրջ հիմնահարց:

Վերջին հարյուրամյակներում պատմագիտության մեջ գերակշռել է և մինչև այժմ էլ գերակշռում է «եվրոպակենտրոն» մոտեցումը: Համաձայն այս մոտեցման՝ աշխարհում և, հատկապես, Հին աշխարհում պատմության կերտողները եղել են միայն հույները ու հռոմեացիները, իսկ մնացած և, հատկապես, արևելյան ազգերը հանդես են գալիս որպես երկրորդ տեսակի ազգեր, մի տեսակ վայրենիներ, որոնք ոչ մի բանով աչքի չեն ընկել, բացի քանակական գերակշռությունից, ընդ որում նրանք միշտ էլ զիջել են եվրոպացիներին: Հետագայում այս տեսակետը մարքսիստական տեսանկյունից

---

[1] Օրինակ՝ անտեսված է մ.թ.ա. II հազարամյակում Հայկական բանակում մարտակառքերի ունեցած մեծ նշանակությունը: Ուշադրություն չի դարձվել նաև այն փաստի վրա, որ, ի տարբերություն Բյուզանդական կայսրության կամ խաչակիրների բանակների, Հայկական բանակի կազմում VII-XII դարերում հետևակ նետաձիգները չէին կորցրել իրենց մարտական նշանակությունը, ինչով պայմանավորված էլ այն համեմատականորեն ավելի հաջող էր գործում մահմեդական կամ քոչվոր ցեղերի բանակների դեմ:

[2] Օրինակ՝ ընդհանրապես վերլուծված չէ, թե ինչ մարտակարգ է ունեցել Հայկական բանակը տարբեր դարաշրջաններում և ինչ մարտավարություն է կիրառել տարաբնույթ բանակների հետ ընդհարվելիս:

[3] Տես՝ Ա. Այվազյան «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. Քննական տեսություն» Երևան 1998:

վերանայվեց, բայց այս անգամ էլ ուշադրության կենտրոնում մնաց Եվրոպան, իսկ Արևելքում ուշադրություն դարձվեց միայն այնպիսի պետությունների վրա, ինչպիսիք են Իրանական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում ստեղծված պետությունները, Արաբական խալիֆությունը, Հնդկաստանը և Չինաստանը: Այս սահմանները նախանշեց մարքսիզմը և խորհրդային պատմաբանները ի վիճակի չէին դուրս գալ այս շրջանակից ու առաջ քաշել մի թեզ, որը կհակասեր նրան: Ավելին, ցանկացած նման փորձ շատ հեշտությամբ որակվում էր որպես ազգայնամոլություն կամ առնվազն ազգային սնափառություն: Ինչպե՞ս կարող էր խորհրդահայ պատմաբանը նշել մ.թ.ա. III հազարամյակի վերջում Միջագետքում հաստատված Հայկական Առաջին գերիշխանության ժողովրդավարական բնույթի մասին, եթե դեռ մարքսիզմի դասականներն են նշել, որ ժողովրդավարությունը ծնվել է Հունաստանում մ.թ.ա. I հազարամյակի կեսերում: Իր հերթին այն փաստը, որ, բացի Տիգրանյան Հայաստանից, Հայաստանը ևս հինգ անգամ հասել է գերիշխանության, ի վիճակի էր նման գիտնականի մոտ հեշտությամբ սրտի կաթված առաջացնել: Մի զարմացիր, ընթերցող, նույնիսկ այժմ, երբ հայ պատմագիտությունը ազատվել է նախկին կապանքներից, չեն ընդունվում կամ դժվարությամբ են ընդունվում և ուշադրության արժանանում այնպիսի փայլուն գիտնականների աշխատություններ, ինչպիսիք են Արտակ Մովսիսյանը, Արմեն Այվազյանը և այլք: Իր հերթին կենցաղային մակարդակով մեր հայերի մեջ այն աստիճան է ներծծված այս թույնը, որ ցանկացած փորձ, հենվել վերը նշված գիտնականների աշխատություններում բերված փաստերի վրա, շատ հաճախ հանդիպում է առնվազն թերահավատ ժպիտի և ազգային սնափառության մեջ մեղադրանքի այն անձանց կողմից, որոնց թվում է, թե իրենք լավ գիտեն Հայոց պատմությունը, քանի որ ժամանակին անգիր իմացել են Հայոց պատմության խորհրդային դպրոցական դասագրքերը,

4. ***<u>Հայոց պատմության վերաբերյալ դրսևորվում է զարմանալի մակերեսային մոտեցում</u>***: Սովորաբար տարբեր աշխատանքներում խոսվում է միայն միևնույն փաստերի մասին և նույնիսկ նույն արտահայտություններով, իսկ այդ ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ ու գուցե ավելի կարևոր իրադարձություններ հիշատակության ու վերլուծության չեն արժանանում: Այսպես, Արմինիայի IV ապստամբության (745-753) մասին խոսելիս հիմնականում նշվում են Ղևոնդի բերած տվյալները և այնպիսի տպավորություն է ստացվում, թե հիմնական իրադարձությունները կազմում էին Դավիթ ու Գրիգոր Մամիկոնյանների ծավալած գործողությունները, Սև ծովի ուղղությամբ ապստամբների շարժվելը և պավլիկյաններից «օտարանալը», ընդ որում այս ֆոնի վրա հատկապես հաճույքով ընդգծվում է հայ ազնվականության՝ իր դասակարգային շահերով առաջնորդվելը: Սրան հակառակ, սակայն, համընդհանուր լռության են մատնված նույն ապստամբության բաղկացուցիչ մասը կազմած և ավելի վճռական, իսկ հաճախ նաև հաղթական այնպիսի դրվագներ, ինչպիսիք են Տարոնի իշխանության մղած հաղթական ռազմական մարտերը, Հյուսիսային Հայաստանում հայ-վրացական բանակի ծավալած հաջող գործողությունները, ինչպես նաև Արցախ-Ուտիքում և, մասնավորապես Կուրի ձախափնյա որոշ տարածքներում Հայկական բանակի կողմից իր դեմ ուղարկված թշնամական բանակներին պարտության մատնելը: Այս ամենի մասին լավագույն դեպքում արվում են միայն ընդհանուր բնույթի ակնարկներ: Իրենց հերթին հաճախ մոռացության են մատնվում ամբողջական ապստամբություններ, պատերազմներ, արշավանքներ և ճակատամարտեր, իսկ եղածներն էլ վերլուծվում ու նկարագրվում են խիստ թերի, մակերեսորեն և անգույն[1]: Հնարավոր է բերել ասվածի տասնյակ օրինակներ, բայց ես կբերեմ միայն երկուսը: Եթե բոլոր աշխատություններում մանրամասն ներկայացված են Վարդանանց (Մարզպանական Հայաստանի I ապստամբություն) (449-

[1] Օրինակ՝ ոչ մի աշխատության մեջ 998 թ-ի հոկտեմբերի սկզբից մինչև նույն ամսվա 18 ընթացած Ծումբ ամրոցի ճակատամարտը չի նկարագրվում և վերլուծվում որպես լեռնային պայմաններում գերակշիռ թշնամուն հրապուրելու, շրջապատելու ու թևային, ճակատային և թիկունքային հարվածներով ջախջախելու փայլուն օրինակ, երբ այն ներկայացվում է որպես «դասական» (հարթ տարածությունում մարտակարգերի բախում) սցենարով ընթացած մի մարտ: Նույնը կարելի է ասել նաև 894 թ-ի գարնան Դողսի, ինչպես նաև 775 թ-ի ապրիլի 24-ի Արձնի ճակատամարտերի մասին:

451) և Վահանանց պատերազմները (Մարզպանական Հայաստանի III ապստամբություն) (481-485), ապա ապշեցուցիչ լռության են արժանացել Մարզպանական Հայաստանի II (459-460), Սատրապական Հայաստանի I (484-488), Մարզպանական Հայաստանի IV (491-499) և Սատրապական Հայաստանի II ապստամբությունները (493-496), ինչպես նաև բազմաթիվ այլ ապստամբություններ ու հարյուրավոր ճակատամարտեր: Իր հերթին, առանց բացառության բոլոր աշխատություններում խոսվում է, որ հայերը Ավարայրի ճակատամարտում տվեցին 1.036, իսկ պարսիկները՝ 3.544 զոհ, սակայն սա գրած հեղինակները իրենց նույնիսկ նեղություն չեն տվել բացել Եղիշեի աշխատությունը և կարդալ, որ 1.036 զոհ տվեցին միայն նախարարական տոհմերը, իսկ 3.544 զոհ՝ ուրացողները, այլ ոչ թե պարսիկները[1]: Սրանից զատ պետք է նշել նաև, որ մեր պատմագետների գերակշիռ մեծամասնությունը կազմող գիտնականները, լինելով փայլուն պատմաբաններ, բանասերներ, գրաբարագետներ, գրականագետներ, փիլիսոփաներ կամ լեզվաբաններ, գրեթե ոչ մի գիտելիք չունեին հենց ռազմական պատմությունից: Ասվածի ապացույցն է օրինակ այն, որ տասնամյակների ընթացքում ոչ մի պատմագետի մոտ հարց չի առաջացել, թե ինչպե՞ս է հնարավոր, օրինակ, նույն Ավարայրի ճակատամարտում 14 ժամ այդպիսի հսկայական բանակների ընդհարման դեպքում ունենալ ընդամենը միայն 4.580 զոհ:

5. ***<u>Հայ պատմագիտության հայացքը, կարծես, մի անհաղթահարելի ուժով գամված է Մեծ Հայքի, այն էլ ոչ թե լրիվ, այլ միայն կենտրոնական նահանգների պատմության վրա</u>***: Որպես հիմնաթեզ ընդունելով այն փաստը, որ «Հայաստան» հասկացությունն ընդգրկում է միայն Մեծ Հայքի 15 նահանգները, խորհրդահայ պատմագիտությունը հիմնական ուշադրությունը սևեռում է միայն Հայաստանի կենտրոնական նահանգների պատմության վրա, այն դեպքում, երբ Հայաստանի ծայրամասային նահանգներում տեղի էին ունենում հաճախ ավելի կարևոր իրադարձություններ, որոնք իրենց ազդեցությունն էին թողնում ողջ երկրի ճակատագրի վրա: Գոնե մի որևէ աշխատության մեջ հստակորեն չի արտահայտվել այն միտքը, որ «Հայաստան» հասկացությունը ոչ թե հավասարարժեք է Մեծ Հայքին, այլ Հայաստանը Մեծ Հայքի 15 նահանգներն են, ինչպես նաև Փոքր Հայքը, Հայոց Միջագետքը և Կիլիկիան՝ անկախ ցանկացած քաղաքական փոփոխությունից[2]: Այսպես, դեպի Հայաստան արաբական արշավանքներին վերաբերող բոլոր աշխատություններում Հայաստան արաբների մուտքի ժամանակ է ընդունվում նրանց՝ Տարոն ներխուժելու ժամանակը, բայց մի՞թե Հայոց Միջագետք նահանգի Եդեսիա քաղաքի գրավումը, որը տեղի ունեցավ նկարագրված դեպքերից գրեթե մեկ տարի առաջ, չի նշանակում, որ արաբները հենց այս ժամանակ մտան Հայաստան: Վերոհիշյալ 3 նահանգների, բացառությամբ Կիլիկիայի իշխանապետության և թագավորության շրջանի, ինչպես նաև Մեծ Հայքի ծայրամասային նահանգների պատմության մասին կամ տիրում է համակ լռություն, կամ էլ լավագույն դեպքում ընդհանուր խոսքերով արվում են մի քանի թեթև ակնարկներ: Արցախի, Ուտիքի և Փայտակարանի մասին գրելն ընդհանրապես համարվում էր վատ տոն, քանի որ դա կհակասեր «*հայ և ադրբեջանցի ժողովուրդների դարավոր բարեկամության*» չարչրկվող թեզին: Գրեթե նույն պատճառով

[1] Այս մասին մանրամասն տես իմ «Վարդանանց պատերազմի որոշ դրվագների վերլուծություն» աշխատությունը:

[2] Կարելի է ասվածի տասնյակ օրինակներ բերել, սակայն համեմատականորեն ամենաթարմը 2005 թվականին Երևանում դոկտոր-պրոֆեսոր Բ. Հ. Հարությունյանի հրատարակած և ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի ու դոկտոր-պրոֆեսոր Պ. Մ. Մուրադյանի կողմից գրախոսած «Հայաստանի պատմության ատլաս. Ա մաս» սկզբունքորեն փայլուն աշխատությունն է, որում, սակայն, որևէ քարտեզի մեջ ուղղակի նշում չկա այն մասին, որ Կիլիկիան հանդիսանում է Հայաստանի նահանգ կամ գոնե «Հայկական տարածք»: Մեր թվարկությանը վերաբերվող քարտեզներում Հայոց Միջագետքի, ինչպես նաև Փոքր Հայքի սևծովյան առափնյա տարածքների մասին նշումներում դրանք ոչ մի քարտեզում իրենց հիմնական մասով չեն համարվում Հռոմեական (հետագայում Բյուզանդական), Պարթևական (հետագայում Սասանյան) կամ Արաբական պետությունների կողմից տարբեր ժամանակներում այս կամ այն չափով օկուպացված և Հայաստանից բռնազավթված տարածքներ: 58-59-րդ էջերում բերված քարտեզում համապատասխանաբար «Արաբական այլ վարչական միավորների մեջ մտնող Հայկական տարածքներ»-ի և «Բյուզանդական կայսրության մեջ մտնող Հայկական տարածքներ»-ի մեջ բացակայում է Հայոց Միջագետք նահանգի հիմնական մասի, ինչպես նաև Փոքր Հայքի Սևծովյան առափնյա տարածքների մասին նշագրումը: Հետագայում էլ՝ 62-63-րդ էջերում բերված քարտեզում, «Հայ Բագրատունիների պետությունից դուրս մնացած Հայկական տարածքների սահմաններ»-ի մեջ սահմանագծից դուրս են թողնված և, հետևաբար, Հայաստանի տարածք չեն համարվում նույն Հայոց Միջագետք նահանգի հիմնական մասը, ինչպես նաև Փոքր Հայքի հյուսիսային՝ Սև ծովի առափնյա տարածքները: Դժբախտաբար նման օրինակների ցանկը կարելի է երկար շարունակել:

ուսումնասիրությունից հիմնականում դուրս է մնացել Գուգարք և Տայք նահանգների, իսկ մասամբ էլ նաև Բարձր Հայք նահանգի հյուսիսային գավառների պատմությունը սկսած V դարից: Կիլիկիան ընդհանրապես չի համարվել Հայաստանի նահանգ առանց բացառության և ոչ մի աշխատության մեջ, Հայոց Միջագետքը հիմնականում հիշատակվում է միայն 37 թվականի իրադարձությունների հետ կապված, իսկ Փոքր Հայքն էլ ի սկզբանե դիտվում էր կիսահայկական-կիսահունական տարածք ու նրա պատմությունն այնքան վատ է ուսումնասիրված, որ Հայոց պատմությանը նվիրված և ոչ մի աշխատության մեջ նույնիսկ հիշատակություն չկա Հայաստանի տարածքում ստեղծված այնպիսի մի պետության մասին, ինչպիսին Տրապիզոնի կայսրությունն է: Կարծես ի սկզբանե ընդունվում է, որ դա հունական տարածք է: Լռության են մատնված միջնադարյան Հայաստանի այնպիսի քաղաքների պատմություններ, ինչպիսիք են Մծբինը, Եդեսիան, Ամիդը, Տիգրանակերտը, Մելիտեն, Սամոսատը, Խարբերդը, Սեբաստիան, Մամեստիան, Տարսոնը, Անարզաբան, Կարինը, Մանազկերտը, Դվինը, Նախիջևանը, Պարտավը, Խլաթը, Արճեշը, Բերկրին, Բաղեշը, Ադանան, Մարաշը և այլն: Մի խոսքով միջնադարյան Հայաստանի այնպիսի քաղաքների պատմություններ, որոնք բացառիկ դեր ունեին տարածաշրջանային քաղաքականության և միջազգային առևտրի մեջ, ընդհանրապես համակարգված ձևով ուսումնասիրված չէ: Խորը մշուշում են գտնվում նաև այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հայերի և խաչակիրների հատկապես ռազմական հարաբերությունները խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում, Կիլիկիայի հին ժամանակաշրջանի, վաղ ու միջին միջնադարի պատմությունը, տարբեր ժամանակներում հայկական ռազմուժի մղած դաշնակցային պատերազմները, Հայոց ռազմուժի ունեցած դերը հարևան երկրների բանակներում և այլն: Իր հերթին, Արշակունյաց գահատոհմի կործանումից հետո խոսվում է միայն Մարզպանական Հայաստանի պատմության մասին: Մարզպանական Հայաստանից բռնի անջատված, ինչպես նաև Բյուզանդական կայսրության տիրապետության տակ գտնվող տարածքների պատմությունից ընդհանուր խոսքերով հիշատակվում են միայն բացառիկ էպիզոդներ, այն դեպքում, երբ այնտեղ, երբեմն, տեղի էին ունենում խիստ կարևոր իրադարձություններ:

Այսպիսով՝ սույն գրքի հիմնական արժանիքները, ըստ իս, հանգում են հետևյալին.

1. Սույն գրքում ես **<u>արտացոլել եմ</u> իմ այն մտքերն ու գաղափարները**, որոնք չկարողացա շարադրել Տարեգրքումս՝ զուտ վերջինիս ձևաչափը հաշվի առնելով,

2. Սույն գրքում Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը շարադրված է **<u>անբեկանելի կապի մեջ</u> հարակից երկրների պատմության հետ**: Ասվածի կապակցությամբ հարկ է նշել, որ, թող ներվի ինձ այս համարձակությունը, հայաստանյան պատմական դպրոցը այս առումով, մեղմ ասած, որոշակիորեն թերի է զարգացած: Իրոք, հայ ժողովրդի և հարակից երկրների պատմության համապարփակ ու փոխկապակցված շարադրման տեսակետից թերի են արդի հայ ժողովրդի պատմության հիմնաքարերը հանդիսացող նույնիսկ այնպիսի հիմնարար աշխատություններ, ինչպիսիք են, օրինակ, Լեոյի, Ադոնցի և Մանանդյանի երկերը, ինչպես նաև ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակած հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը: Չկա, ոչ մի տեղ, ըստ էության, շարադրված չէ հայ ժողովրդի պատմությունը՝ իր անբեկանելի և համակարգային կապի մեջ հարակից երկրների պատմության հետ: Դա, սակայն, լուրջ բացթողում է, քանի որ այդ պարագայում Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը դառնում է առավել ընկալելի և հասկանալի, իսկ շատ երևույթներ էլ, որոնք իրենց բացատրությունը չեն գտնում կամ բավարար պարզաբանումը չեն ստանում զուտ Հայաստանի և հայ ժողովրդի պատմության փաստակազմի կիրառմամբ, իրենց բացատրությունն են գտնում Հայաստանի հարակից, ինչպես նաև եվրասիական այլ երկրների անցած պատմական ուղին ուսումնասիրելիս,

3. Սույն գրքում, ի տարբերություն Տարեգրքիս, **<u>պատմողական տեսքով</u> շարադրված են ինչպես առանձին պատերազմներ, այնպես էլ**

ռազմագործողությունների առանձին շղթաներ, երբ քննարկված են նաև դրանց ռազմավարական ու մարտավարական առանձնահատկությունները, ինչպես նաև վերջիններիս ռազմաքաղաքական բաղադրիչը: Ձուտ ձևաչափը հաշվի առնելով՝ սա բացակայում է Տարեգրքումս և ահա իմ նոր այս աշխատանքում այդ բացը լրացվել է,

4. Սույն գրքում դեպքերի և իրադարձությունների շարադրանքը արվել է **արևային ճառագայթների տարածման տեսքով**, երբ տարածման կենտրոնում Հայաստանն է: Որպես հետևանք, Հայաստանի հետ կապված իրադարձությունները շարադրված են իրենց գործնականում համապարփակ տեսքով, մանրամասն տրված են նաև Հայաստանի հարևանների պատմությունները, սակայն արդեն վերջիններիս հարևանների պատմությունները ներկայացված են ուղիղ այնքանով, ինչքանով որ դրանք կապ ունեն Հայաստանի հետ,

5. Սույն գրքում, հետևելով Տարեգրքումս արդեն իսկ որոշակիորեն անցած ուղուն, **համակարգված ձևով շարադրված է տեղեկատվություն** բազմաթիվ տաղանդավոր զորավարների, անձնազոհ հերոսների, խիզախ, քաջարի և հայրենասեր ռազմիկների մասին, որոնց սխրագործությունները գրեթե հայտնի չեն լայն հասարակությանը: Խոսվում է մոռացված ճակատամարտերի, երբեմն նույնիսկ ամբողջական պատերազմների և ապստամբությունների մասին: Փրկել այս փաստերը մոռացությունից՝ իմ կարծիքով սույն աշխատության ամենամեծ առաքելություններից մեկն էլ հենց սա է:

Ինչպե՞ս գրվեց այս գիրքը

Սույն աշխատությունը գրելիս ես որպես ելակետ ընդունեցի իմ մեթոդը ձևավորած հետևյալ հիմնարար սկզբունքները.

1. «***Հայաստան» հասկացությունն ընդգրկում է պատմական Հայաստանի 18 նահանգ (Մեծ Հայքի 15 նահանգները, Փոքր Հայքը, Հայոց Միջագետքը և Կիլիկիան)***: «Հայաստան» հասկացությունը երկրագնդի վրա համապատասխանում է Կիլիկիա նահանգի Անամուռ հրվանդանից 32.8-րդ արևելյան երկայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի հյուսիս, Անտիտավրոսյան լեռներով դեպի հյուսիս-արևելք, Արգեյոս լեռան հարավով Ծամնդավ (Սեյհան) գետի վերին հոսանք, 37-րդ արևելյան երկայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի հյուսիս՝ մինչև Սև ծով, Սև ծովի ափից սկսած 41.8 հյուսիսային լայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի արևելք մինչև Կուր գետ, Կուր գետով մինչև Կասպից ծով, Կասպից ծովի ափից սկսած 38.5 հյուսիսային լայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի արևմուտք մինչև Ուրմիա լճի արևելյան ափին գտնվող Տրպատունիք գավառի հյուսիս-արևելք՝ 46.3 արևելյան երկայնություն, 46.3 արևելյան երկայնությամբ՝ Տրպատունիք գավառի արևելյան սահմանով դեպի հարավ մինչև Վարառատ գետ, նրանից ուղիղ դեպի արևմուտք, Արասխ գետ, Զագրոսյան լեռնաշղթա, նրանից 36.9 հյուսիսային լայնությամբ՝ մոտավորապես ուղիղ դեպի արևմուտք, Ամանոսյան լեռներով հարավ՝ մինչև Մուսա լեռան մոտի Միջերկրական ծովի ափ սահմանագծի միջև ընկած տարածքին: Երկրագնդի հենց այս մասում տեղի ունեցած իրադարձություններն են հիմնականում իմ կողմից ենթարկվել ուսումնասիրության:

2. ***Ամեն ինչ մեր պատմության մեջ մերն է***: Իրոք իմաստուն էր Գարեգին Նժդեհը, երբ ասում էր. «*Մենք պետք է փնտրենք, գտնենք մեր դժբախտությունների իրական պատճառները, մենք պետք է ընդունենք մեր իրական վերքերը, ուսումնասիրության ենթարկենք մեր ժողովրդի հոգին և միայն դրանից հետո կարող է խոսք գնալ բուժման մասին*»: Կրկնենք և ընդգծենք կրկին, որ ամեն ինչ մեր պատմության մեջ մերն է, և փայլուն հաջողություններն ու ձեռքբերումները, և ծանր անհաջողություններն ու կորուստները: Այս ամենից մենք չենք փախչի: Ընդհակառակը, մեզ պետք է սթափ հայացքով նայել մեր պատմությանը, քանի որ այնտեղ չափազանց շատ ուսանելի փորձ է կուտակված, որը մեզ և ապագա սերունդներին կօգնի գնահատել անցյալը, հասկանալ ներկան ու կանխատեսել ապագան: Ես երբեք չեմ փորձել այս աշխատության մեջ «ուռահայրենասիրական» դիրքերից ժխտել ակնհայտը: Որևէ ճակատամարտում Հայկական բանակի կրած պարտությունը անվանվում է պարտություն, քանի որ, նույնիսկ, եթե ես չափազանցնելով այն անվանեմ հաղթանակ, դրանից ոչ զոհված ռազմիկները կկենդանանան, ոչ էլ հետագա բացասական քաղաքական հետևանքները կչեզոքանան, իսկ աշխատության արժեքին հսկայական և անուղղելի վնաս կհասցվի: Միաժամանակ, սակայն, գտնում եմ, որ ոչ պակաս վնաս կհասցվի աշխատության արժեքին հակառակ ծայրահեղության մեջ ընկնելը և ձեռք բերված հաջողությունները ժխտելը:

3. ***Ոչինչ չավելացնել և ոչինչ չպակասեցնել***: Ես գրել եմ միայն հավաստի փաստեր և պատասխանատու եմ ու ունեմ հիմնավորում իմ գրած ամեն մի տառի համար, իսկ որտեղ կասկածել եմ կամ չեմ ունեցել ճշգրիտ տեղեկատվություն, արել եմ այնպիսի ենթադրություն, որը պատմական, աշխարհագրական, ռազմական, քաղաքական, տրամաբանական, հոգեբանական և մշակութային տեսանկյունից առավել հավանականն է: Այնուհանդերձ այդ ենթադրությունները ես երբեք չեմ ներկայացրել որպես աներկբայելի ճշմարտություններ:

4. ***Հետևել հստակ տեղագրության***: Ես աշխատել եմ հնարավորինս պարզել ու նշել արշավող բանակների երթուղին և գրել, թե ինչ վայրում է տեղի ունեցել տվյալ իրադարձությունը, ընդ որում առաջնորդվել եմ հետևյալ մեթոդով: Եթե հայտնի չէ վայրը, գրել, թե ինչ բնակավայրի մոտ է տեղի ունեցել իրադարձությունը, եթե դա էլ հայտնի չէ՝ նշել եմ գավառը, իսկ եթե այդ մասին էլ տեղեկություններ չկան, ապա գոնե գրել եմ, թե

Հայաստանի կամ երկրագնդի ո՞ր մասում է տեղի ունեցել իրադարձությունը:

5. ***<u>Առաջնորդվել «Համադրման մեթոդով»</u>***: Սովորաբար յուրաքանչյուր ազգային պատմաբան իր ազգի պատմությունը ներկայացնելիս որպես առաջնային հիմք ընդունում է իր ազգի ներկայացուցիչների կողմից գրված երկերը՝ առաջնություն տալով դրանցում արտացոլված տվյալներին այլազգի պատմաբանների կողմից հայտնած տվյալների նկատմամբ: Պետք է նշել, որ, հատկապես վերջին տարիներին, այդ թերությունը որոշ չափով սկսել է իշխել նաև մեր պատմագիտության մեջ[1]: Դա, սակայն, անխուսափելիորեն հանգեցնում է վերլուծության միակողմանիության, իսկ երբեմն էլ՝ բացահայտ սխալների: Պատկերավոր ասած, ստեղծվում է մի իրավիճակ, երբ մարդը շրջապատի մասին պատկերացում կազմելու համար դուրս է նայում միայն սեփական տան պատուհանից: Բնականաբար այդ դեպքում ամեն մի մարդու մոտ կստեղծվի շրջապատի յուրօրինակ ընկալում: Այսպես, Խորեզեմի սուլթանության վերջին սուլթան Ջելալ-էդ-Դինը (1220-1231) և դեպի Հայաստան ու հարակից երկրներ կատարված նրա արշավանքները մեր պատմագիտության կողմից դիտարկվել են, որպես կանոն, հիմք ընդունելով միայն հայկական սկզբնաղբյուրները, որոնք, իրադարձությունները լուսաբանելու տեսանկյունից ինքնին լինելով անչափ արժեքավոր, միաժամանակ նաև բնականաբար չեն ստեղծում լիարժեք համայնապատկեր: Այսպես, միայն հայկական սկզբնաղբյուրներով առաջնորդվելու դեպքում ուսումնասիրողին պարզ չի դառնում կամ, լավագույն դեպքում, միայն շատ մշուշոտ կերպով է հասկանալի լինում, թե ո՞վ էր Ջելալ-էդ-Դինը, ի՞նչ պետություն էր նա ներկայացնում, ինչպիսի՞ն էր այդ պետությունը, ինչո՞ւ հանկարծ սկսվեցին նրա արշավանքները դեպի արևմուտք և այլն: Այն բանից հետո, սակայն, երբ մենք, պատկերավոր ասած, դուրս ենք գալիս հայկական պատմագիտության մեր «տնից», հյուրընկալվում ենք թուրքմենական պատմագիտության «տանը» և դուրս ենք նայում նրա պատուհանից, պարզում ենք, որ... Ջելալ-էդ-Դինը թուրքմենների ամենասիրած ու էպոսներում գովերգված հերոսներից մեկն է, Խորեզեմի սուլթանությունը ստեղծվել է Սելջուկյան սուլթանության ավերակների հիմքի վրա, այն, ըստ էության, հանդիսացել է միջինասիական իսկական մի «Հռոմ», իսկ նրա արշավանքները դեպի արևմուտք պայմանավորված էին այս պետության տարածքը Մոնղոլական տերության կողմից գրավվելու հանգամանքով: Ընթերցող, ինձ ճիշտ հասկացիր: Ես չեմ հիանում Ջելալ-էդ-Դինով, քանի որ նա իմ ու քո ազգին անչափ դժբախտություններ պատճառեց, և ոչ էլ որևէ կերպ արդարացնում եմ նրա արարքները, սակայն համաձայնիր, որ այս տիրակալի կերպարը, նրա բանակի կառուցվածքը ու մարտավարությունը, մղած ճակատամարտերը, դրանց ժամանակագրական հաջորդականությունը և տրամաբանական կապը ճիշտ հասկանալու համար մեզ պետք է նայել, այդ թվում նաև թուրքմենական պատմագիտության «տան» պատուհանից:

Այս կապակցությամբ ես առաջնորդվել եմ այլ՝ օտար և հայ սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների սինթեզման ու համադրման, մեթոդով: Վերջինիս էությունը

---

[1] Օրինակ՝ իր աշխատության ֆորմատին համապատասխան և ընդունելի մանրամասնությամբ նկարագրելով Սելջուկյան սուլթանության 1048 թվականի արշավանքը դեպի Հայաստան, բազմավաստակ Ս. Մելիք Բախշյանը դրանից անմիջապես հետո միանգամից թռիչք է կատարում 1054 թվականների հերթական արշավանքի նկարագրության և դրա հետ կապված իրադարձությունների նկարագրությանը՝ ընդամենը արձանագրելով, որ. «*Սելջուկ-թուրքերի արշավանքները վերսկսվեցին 1054 թ.*» (տես՝ Մելիք-Բախշյան Ս. Տ. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան 1975, էջ. 486): Այս կապակցությամբ, սակայն, ընթերցողի մոտ լիովին մութ է մնում այն հանգամանքը, թե ինչո՞ւ ընդհատվեցին այդ արշավանքները դեպի Հայաստան և, ընդհանրապես, տարածաշրջանում ի՞նչ է տեղի ունեցել այդ 6 տարիների ընթացքում: Արդյունքում, փաստորեն, ընթերցողի համար լիովին չբացահայտված է մնում այն հանգամանքը, որ այդ նույն 6 տարիների ընթացքում Սելջուկյան սուլթանությունը վերջնականապես իրենով արեց Իրանական լեռնաշխարհը և հիմքեր ստեղծեց Արաբական խալիֆությունում վերջնականապես գերիշխելու համար: Նույն վիճակն է, սակայն, նաև քիչ անց, երբ, ավարտելով 1054 թվականի արշավանքի նկարագրությունը, հեղինակը միանգամից անցում է կատարում 1064 թվականի իրադարձություններին, կարծես բաց թողնված 10 տարիներին ոչինչ տեղի չէր ունեցել (տես՝ Մելիք-Բախշյան Ս. Տ. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան 1975, էջ. 487): Արդյունքում՝ կրկին պարզ չեն լինում այդ ընթացքում տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները և, մասնավորապես, նաև այն, որ Սելջուկյան սուլթանությունը, հերթական անգամ հարված հասցնելով Հայաստանին, պետահրավական, բայց նաև իր ռազմական հնարավորությունների և հեղինակության առումով արդեն էականորեն այլ մի պետություն էր, քանի որ արդեն գերիշխում էր Արաբական խալիֆության տարածքում: Այսպիսով՝ միայն հայ ժողովրդի և Հայաստանի պատմության վրա կենտրոնանալու ձգտումը բերում է ակնհայտ միակողմանիության, հայ ժողովրդի պատմությունը սկսվում է դիտարկվել տարածաշրջանի պատմությունից դուրս կամ կտրված, իսկ արդյունքում էլ՝ վերջինս դառնում է ավելի քիչ հասկանալի:

կայանում է հետևյալում՝ ի սկզբանե վեր կանգնել ցանկացած տեսակի կանխակալ կարծիքներից և, նախապատվությունը չտալով ոչ մեկին, անկողմնակալ հայացքով ուսումնասիրության ենթարկել բոլոր աղբյուրների հայտնած տվյալները, որից հետո, դրանց քննարկման ու համաշխարհային պատմական իրադարձությունների հետ համադրման արդյունքում (վերջինն անվանենք «Համադրման մեթոդ»), հասնել տրամաբանական եզրահանգման: Օրինակ, ինչքան էլ արժեքավոր լինեն Մովսես Խորենացու հայտնած տվյալները, որոշ դեպքերում դրանցում առկա են բացահայտ և հաճախ Պատմահոր կամքից անկախ տեղ գտած սխալներ, իսկ այս դեպքում ամենևին էլ պետք չէ պնդել այդ տեղեկությունները՝ բացահայտ հակասության մեջ մտնելով հիմնավորված ու համընդհանուր ճանաչում ստացած սխեմաների հետ՝ արդյունքում՝ համաշխարհային հանրության աչքում արժեզրկելով և ծիծաղելի դարձնելով մեր պատմությունը: Դրա փոխարեն անհրաժեշտ է փորձել գտնել նման տեղեկատվության հայտնման պատճառը և վերջինիս իրական տեղը Հայոց պատմության մեջ[1]՝ իր հերթին չընկնելով հակառակ ծայրահեղության մեջ՝ այդ ամենը համընդհանուր ժխտելով ու հեքիաթային կամ վիպական հռչակելով:

Ահա սրանք էին այն հիմնարար սկզբունքները, որոնք կազմել են աշխատությունը գրելու իմ մեթոդի հիմքը: Հարկ եմ համարում, սակայն, ավելացնել նաև հետևյալը:

Այսպիսով՝ գիրքը օգնում է ամբողջական պատկերացում ստանալ հայերի մասնակցությամբ կամ Հայաստանի տարածքում ընթացած որևէ ժամանակաշրջանում տեղի ունեցած ռազմական գործողությունների ամբողջական պատկերի նկատմամբ, քանի որ տարաբնույթ աղբյուրներում ցրված տեղեկատվությունը, որը այլ փաստերից առանձնացված ուսումնասիրելը հստակ պատկերացում չի տալիս ուսումնասիրվող երևույթի նկատմամբ, իր տրամաբանական հիմնավորումն և տեղն է գտնում այլ փաստերի հետ համակարգված դիտարկելիս: Ասվածի օրինակ կարող է հանդիսանալ սույն գրքում դեպի Հայաստան Արաբական խալիֆության, Սելջուկյան սուլթանության և Մոնղոլական տերության արշավանքների ու Հայաստանի փուլային գրավման նկարագրությունը: Իր հերթին, որևէ ժամանակաշրջանում ընթացած ռազմական գործողությունների ամբողջական համայնապատկերը ուսումնասիրելը հնարավորություն է ընձեռնում նկատել կիրառված մարտավարական և ռազմավարական հնարքները, քանի որ մեկ օրինակը դիտարկելիս դրանք սովորաբար աննկատ են մնում, սակայն ամբողջական դիտարկման դեպքում, որպես կանոն, երևում են հստակորեն:

Պետք է նշել նաև, որ սույն գրքում հայ ժողովրդի հինգհազարամյա պատմության ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս, թեև սեղմ, սակայն ամբողջական տեսքով ծանոթանալ մեր ժողովրդի անցած ուղուն, տարբեր ժամանակներում մեր ազգի առաջ ծառացած մարտահրավերներին, դրանց լուծման ուղիներին, մեր ձեռքբերումներին ու կորուստներին, դրանց պատճառներին, ընդհանրապես ազգային հոգեբանությանն և, մասնավորապես ռազմիկի հոգեբանության ու բանակային ավանդույթների ձևավորման առանձնահատկություններին և այլն[2]: Հիշենք կրկին հայ ժողովրդի իմաստուն գաղափարախոսին և լավատեսորեն նայենք ապագային, քանզի.

---

[1] Օրինակ՝ Մովսես Խորենացու աշխատությունում որոշ ժամանակագրական սխեմաներ տրված են բացահայտ անախրոնիզմներով: Նույն թերությունը հին և միջին դարերի վերաբերյալ գրեթե ամենուր առկա է «Քարթլիս Ցխովրեբա»-ի հայտնած տեղեկություններում:

[2] Այստեղ, որոշակիորեն շեղվելով թեմայից, կուզենայի նշել, որ արմատապես սխալ է Հայաստանի հատկապես տարածքային կորուստները բացատրել մեր ազգի իբր հոգեբանական որևէ առանձնահատկությամբ (օրինակ՝ անմիաբանությամբ, քաջության բացակայությամբ, հաշտվողականությամբ և այլն): Ուղղակի հազարամյակների պատմության ուսումնասիրությունը մեզ բերում է այն հետևության, որ աշխարհում գրեթե հնարավոր չէ գտնել Հայաստանի նման մի երկրորդ տարածաշրջան, որտեղ մարդկության պատմության ընթացքում այդքան թվով պատերազմներ, ճակատամարտեր և ասպատակություններ տեղի ունեցած լինեն: Գրեթե հնարավոր չէ նշել նվաճման ուղին բռնած եվրասիական մի ցեղ, ժողովուրդ կամ պետություն, որը փորձած չլինի այս կամ այն ուժգնությամբ հարձակվել Հայաստանի վրա և նվաճել այն, զավթել նրա տարածքի մի մասը կամ ասպատակել այն: Այս ամենը մեզ բերում է այն հետևությանը, որ, ընդհակառակը, դեռ հայ ժողովրդի գոյատևման հսկայական ուժի, տոկունության, ռազմիկների քաջության, կամքի և դրական այլ հատկանիշների շնորհիվ է, որ Հայ ժողովուրդը այդքան դժվարություններից հետո ներկայումս ունի անկախ պետություն: Մեզ հետ պատմական վազքուղում իրենց ուղին սկսած ազգերի մեծ մասը այսօր կամ գոյություն չունեն կամ չունեն անկախ պետություն: Մեզ հետ պատմական վազքուղում իրենց ուղին սկսած միայն չնչին թվով ազգեր կարող են հպարտանալ նման փաստով:

«*Կորուստներ կրելն այնքան էլ կործանարար չէ, եթե այդ ընթացքում աճում, փորձ ես ձեռք բերում ու զգաստանում ես*»:

Աշխատությունը մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել նաև տարբեր ժամանակներում Հայաստանի հարևան երկրների պետությունների և նրանց բանակների տարեգրությունների համար, քանի որ նրանից հնարավոր է համակարգված կերպով պատկերացում ստանալ տարածաշրջանում տեղի ունեցած գրեթե բոլոր պատերազմների մասին (օրինակ՝ Բյուզանդա-Պարսկական կամ Թուրք-Պարսկական պատերազմներ), կամ էլ, առնվազն, հետևել ու հասկանալ ռազմական գործողությունների զարգացման հիմնական փուլերը կոնկրետ պատերազմի ընթացքում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, եթե առանձին պատերազմների մասին, թեև ոչ համակարգված, ապա, այնուամենայնիվ, կա գրականություն, ապա որոշ պատերազմներ էլ համակարգված տեսքով ներկայացված են առաջին անգամ (օրինակ՝ Արաբա-Խազարական պատերազմները կամ XVIII դարի կեսերից մինչև դարի վերջ հարևան խանությունների դեմ վրացական պետական միավորների մղած պատերազմները): Կարևոր է նշել, որ նույնիսկ քիչ թե շատ ուսումնասիրված տարածաշրջանային պատերազմները նմանատիպ ամբողջական տեսքով այնուհանդերձ դժվար է գտնել որևէ աշխատության մեջ, քանի որ արտասահմանյան հեղինակներին հիմնականում խորթ են եղել հայկական աղբյուրները այդ իրադարձությունների վերաբերյալ և վերջիններս դրանք չեն օգտագործել իրենց աշխատությունների մեջ, մի բացթողում, որը փորձ է արվել լրացնել սույն աշխատությունով (օրինակ՝ Հռոմեա-Պարթևական I պատերազմ (մ.թ.ա 54 - մ.թ. 64)):

Այսպիսով՝ սույն աշխատությունը մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել նաև Հայոց, իսկ մասամբ էլ ընդհանուր պատմության տեսանկյունից: Իհարկե, «պատմություն»-ը ավելի լայն հասկացություն է, քան «ռազմական պատմություն»-ը, սակայն պետք չէ մոռանալ, որ վերջինս հանդիսանում է առաջինի գրեթե գլխավոր մասը, իսկ մարդկության պատմությունը դա մեծապես ամենից առաջ հենց պատերազմների պատմություն է: Այս տեսանկյունից սույն աշխատությունը հանդիսանում է յուրօրինակ Հայոց պատմության, իսկ մասամբ էլ՝ տարածաշրջանի պատմության, տարեգիրք և ժամանակագրություն: Նման տեսանկյունից դիտարկելիս նմանատիպ աշխատություն կրկին գոյություն չունի, քանզի նույնիսկ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակած հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը, որը թվում է, թե, թեև իր ժամանակի գիտելիքների մակարդակով, այնուամենայնիվ պետք է սպառիչ տեղեկություններ պարունակեր, բազում մութ ու չպարզաբանված հարցեր է թողնում, իսկ շատ փաստեր էլ նրանում ուղղակի անտեսված են:

Ի՞նչը կօգնի ավելի լավ հասկանալ այս գիրքը

Ներկայացված աշխատանքը առավել լավ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

- Աշխատության մեջ տրված են իմ տողատակային ծանոթագրությունները: Այստեղ ես փորձել եմ հիմնավորել իմ այն տեսակետները, որոնք այս կամ այն չափով տարբերվում են համընդհանուր ճանաչում գտած մոտեցումներից, ինչպես նաև տալ անհրաժեշտ պարզաբանումներ,
- Աշխատության մեջ տրված են տողատակային ծանոթագրություններ, որոնք ցույց են տալիս որևէ իրադարձության սկզբնաղբյուրը, ընդ որում նույն այդ սկզբնաղբյուրի լիարժեք շարադրանքը կարելի է գտնել Հայ ժողովրդի ռազմական Տարեգրքում: Միաժամանակ հարկ է նշել, որ հանրահայտ իրադարձությունները կամ այն փաստերը, որոնք լայնորեն լուսաբանված են պատմագիտական գրականության մեջ, առանձին հղումներով չեն ապահովված, քանի որ մի կողմից դա անիմաստ կծանրաբեռներ աշխատանքը, իսկ մյուս կողմից էլ ի սկզբանե խնդիր եմ դրել խոսել միայն սկզբնաղբյուրային հղումների, ինչպես նաև ոչ այնքան հայտնի կամ ոչ այնքան ուսումնասիրված երևույթների հետ կապված հղումների մասին,
- Աղբյուրները շարադրելիս ես դիտավորյալ չեմ նշել, թե կոնկրետ աղբյուրը ո՞ր հրատարակությունից կամ կայքից եմ վերցրել, ինչպես բնականաբար նշում չկա նաև էջի մասին, քանի որ այս պարագայում դա համարում եմ սխալ: Բանն այն է, որ աշխատանքից օգտվողը հնարավոր է նույն այդ աղբյուրին հանդիպի մեկ այլ հրատարակությամբ, իսկ այդ պարագայում նման հղումները անիմաստ են, մանավանդ որ հաճախ ես որևէ աղբյուր վերցրել եմ միանգամից մի քանի հրատարակությունից կամ նույնիսկ համացանցային կայքերից, իսկ երբեմն էլ այդ տվյալները ուղղակի բացակայել են: Այս պարագայում գտնում եմ, որ առավել հիմնավոր մոտեցում է հանդիսանում աշխատանքի գրքի, բաժնի, մասի կամ գլխի մասին նշումը, քանզի զուտ էջի նշումը հաճախ կարող է ընթերցողին ոչինչ չտալ: Միաժամանակ, սակայն, ես գիտակցում եմ, որ այս մոտեցումն ունի իր թերի կողմը, քանզի շատ աշխատանքներ գրքերի, բաժինների, մասերի կամ գլուխների ուղղակի բաժանված չեն և այս պարագայում ընթերցողն ուղղակի պետք է ինքը ջանքեր ներդնի ու պարզի, թե հիշատակված հատվածը հեղինակային աշխատանքի ո՞ր մասից է
- «ասպատակել» (ընդհանուր իմաստով) տերմինի տակ կընդգրկեմ ավարառության, թալանի, վնասարարության, հետախուզության, ահաբեկության և նմանատիպ այլ նպատակներով հակառակորդի տարածք որևէ զորամիավորման ներխուժման փաստը, երբ ներխուժողների հիմնական նպատակը հակառակորդի հետ ռազմական ընդհարումը չէ: Այս տերմինի տակ ես միավորում եմ, օրինակ, բնակչության գերեվարումը ու նրա նկատմամբ իրականացվող տարատեսակ բռնությունները, թալանը, շինությունների ավերումը և/կամ այրումը, արտերի վնասումը, պաշտպանական շինությունների փլուզումը և այլն,
- «կորցրին» տերմինի տակ տողերիս հեղինակը նկատի ունի ոչ միայն սպանվածներին, այլև մարտունակությունը զգալի ժամանակահատվածով կորցրած ծանր վիրավորներին, դրա, ինչպես նաև այլ վերքերի արդյունքում հետագայում մահացածներին կամ զգալի ժամանակով շարքից դուրս եկածներին, գերիներին, դասալիքներին, ինչպես նաև բուն ճակատամարտի իրադարձությունների հետ կապված որևէ այլ պատճառով (հոգեկան տրավմա, անձնական մոտիվներ և այլն) զգալի ժամանակահատվածով շարքից դուրս եկածներին:
- Իրադարձության թվականից առաջ նշված «մոտ» տերմինը նշանակում է, որ դրա կատարման ժամանակը հնարավոր է եղել պարզել մոտավոր ճշտությամբ և այստեղ հնարավոր են այլ մեկնաբանություններ: Նույնը վերաբերվում է նաև բանակների և նրանց կրած կորուստների թվից առաջ գրված «մոտ»-ին,

- «=» նշանով ես այսուհետև կնշեմ որևէ անվանման տարբերակները, քանի որ հաճախ են հանդիպում բնակավայրեր կամ վայրեր, որոնք կամ ժամանակի ընթացքում փոխել են իրենց անվանումը կամ այն աղավաղվել է, կամ էլ տարբեր լեզուներով այդ անվանումը տարբեր կերպ է հնչում: Այս նշանով կնշվեն նաև որևէ մի ճակատամարտի անվանման հաճախ հանդիպող այլ տարբերակը, քանի որ նույն ճակատամարտը հաճախ սկզբնաղբյուրներում կամ գիտական աշխատություններում հանդիպում է տարբեր անուններով
- Այս գրքին մեծապես չեն հերիքում պատմական քարտեզները, սակայն, զուտ տեխնիկապես և ֆինանսական առումով, ես չկարողացա այն դրանց որակյալ օրինակներով ապահովել: Արդյունքում, երբ կծանոթանաք այս աշխատանքին, իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար աշխատեք ձեռքի տակ ունենալ Հայաստանի և հարակից երկրների պատմական քարտեզներ:

Բարի ճանապարհ գիրքն ուսումնասիրելիս

Ես վաղուց էի նախատեսում նման մի աշխատանք գրել, քանզի Տարեգրքիս վրա աշխատելու ընթացքում մոտս կուտակված հսկայական տեղեկատվությունը, ինչպես նաև դրա վերլուծության արդյունքում ի հայտ եկած մտքերն ու գաղափարները համառորեն իրենց համակարգված շարադրանքի պահանջն էին առաջադրում: Արդյունքում՝ այս գրքում շարադրվեց այն ամենը, ինչի մասին չէր ասվել Տարեգրքումս:

Սույն գրքի վրա աշխատանքի զգալի մասն արվեց 2019-2020 թվականներին՝ երբ ես, ուղղակի չկարողանալով ինձ զսպել, ձեռք զարկեցի վերջինիս շարադրանքին, իսկ հետո էլ եկավ թագավարակի տարին, որին հետևեց Արցախյան III (2020)՝ ողբերգական այդ պատերազմը: Չեմ թաքցնի, ընթերցող, ինքս շատ ծանր տարա վերջին այդ պատերազմի ընթացքը, և, հատկապես, արդյունքը, ինչը, փաստորեն, կազմեց իմ կյանքի ամենամեծ հոգեբանական հարվածներից մեկը, եթե ոչ՝ ամենամեծը: 2020 թվականի նոյեմբերի 10-ի ազգակործան համաձայնագրից հետո հոգուս պատած փոթորիկը ինձ, երևի թե, շատ անկառավարելի հեռուներ կտաներ, սակայն ես իմ ելքը գտա ստեղծագործելու մեջ: Ահա և արդյունքում վերջնական տեսքի բերվեց այս գիրքը՝ հերթական նվերս իմ ժողովրդին:

Դե ինչ, ընթերցող, թերթիր հաջորդ էջերը և եկ միասին ուսումնասիրենք մեր ժողովրդի անցած ուղին, գուցե մենք այնտեղ պատասխաններ գտնենք, որոնք կօգնեն մեզ ավելի լավ պատկերացնել անցյալը, հասկանալ ներկան ու փորձ կատարել կանխագուշակել ապագան, գուցե մենք այնտեղ գտնենք մեր պատասխանները...

Մաս I
Շումերա-աքքադական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Պատմական Հայաստանն ու նրա սահմանները

Պատմական Հայաստանը երկրագնդի վրա համապատասխանում է այն միջատարածքին, որ ձգվում է.

- Կիլիկիա նահանգի Անամուռ հրվանդանից 32.8-րդ արևելյան երկայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի հյուսիս,
- Անտիտավրոսյան լեռներով դեպի հյուսիս-արևելք,
- Արգեյոս լեռան հարավով Ծամնդավ (Սեյհան) գետի վերին հոսանք,
- 37-րդ արևելյան երկայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի հյուսիս մինչև Սև ծով,
- Սև ծովի ափից սկսած 41.8 հյուսիսային լայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի արևելք մինչև Կուր գետ,
- Կուր գետով մինչև Կասպից ծով,
- Կասպից ծովի ափից սկսած 38.5 հյուսիսային լայնությամբ մոտավորապես ուղիղ դեպի արևմուտք մինչև Ուրմիա լճի արևելյան ափին գտնվող Տրպատունիք գավառի հյուսիս-արևելք՝ 46.3 արևելյան երկայնություն,
- 46.3 արևելյան երկայնությամբ՝ Տրպատունիք գավառի արևելյան սահմանով դեպի հարավ մինչև Վարառատ գետ,
- նրանից ուղիղ դեպի արևմուտք՝ Արասխ գետ և Զագրոսյան լեռնաշղթա,
- նրանից 36.9 հյուսիսային լայնությամբ՝ մոտավորապես ուղիղ դեպի արևմուտք,
- Ամանոսյան լեռներով հարավ՝ մինչև Մուսա լեռան մոտի Միջերկրական ծովի ափ

սահմանագծի միջև ընկած տարածքին:

Պատմական Հայաստանն ընդգրկում է Մեծ Հայքի 15 նահանգները, ինչպես նաև Փոքր Հայքը, Հայոց Միջագետքը և Կիլիկիան: Պատմական Հայաստանը սա է՝ անկախ ցանկացած քաղաքական փոփոխությունից:

Պատմական Հայաստանը աշխարհագրորեն գտնվում է Հայկական լեռնաշխարհում, ինչն, ըստ էության, կազմում է Փոքր Ասիա կոչվող միկրոտարածաշրջանի մի մասը: Փոքր Ասիան, իր հերթին, ըստ էության, կազմում է Առաջավոր Ասիա տարածաշրջանի մի մասը, որն իր մեջ ընդգրկում է նաև Մերձավոր ու Միջին Արևելքները: Եվ վերջապես Առաջավոր Ասիան մասն է կազմում Ասիա մայրցամաքի, որը, Եվրոպայի հետ միասին դիտարկելիս, կոչվում է մեկ ընդհանուր անունով՝ Եվրասիա: Երկիր կոչվող մոլորակի մի զգալի հատվածի վրա տարածվում է Եվրասիա մայրցամաքը, որը կազմում է երկրագնդի ընդհանուր ցամաքային տարածության մի քիչ ավելին, քան մեկ երրորդը, ընդ որում հենց այս տարածքի վրա էլ, ավելացված թերևս միայն Հյուսիսային Աֆրիկան, ընթացել են մարդկության գիտակցական պատմության հիմնական իրադարձությունները:

Գլուխ 2
Եվրասիան և նրա աշխարհաքաղաքական կառուցվածքը

Մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսին և, հատկապես, վերջին երկար հազարամյակների ուղի անցած մարդկությունը մուտք գործեց զարգացման նոր դարաշրջան, որը ամենից առաջ բնորոշվում է պետականության կայուն ինստիտուտների ստեղծմամբ: Խնդիրը մինչև վերջ լուսաբանված չէ և այստեղ կարիք էլ չկա փորձ կատարել այն լիարժեք լուսաբանել, սակայն, թերևս, կարող ենք ամրագրել, որ

գործընթացի հիմքում ընկած էին մի կողմից սոցիալ-տնտեսական զարգացումները, մյուս կողմից էլ՝ բնակլիմայական գործոնները:

Իրոք, հենց այս ժամանակ էր, որ արտադրության զարգացած գործիքներն ի վերջո ստեղծեցին մի իրավիճակ, երբ հասարակության մի որոշակի շերտի մոտ ի հայտ եկավ ունեցվածքի ավելցուկ, ինչն էլ իր հերթին անհրաժեշտության բերեց պաշտպանել նույն այդ ունեցվածքը ամենատարբեր միջոցներով՝ ընդհուպ մինչև իրավական կարգավորումները և ռազմական բնույթի միջոցառումները: Կար, սակայն, նաև բնակլիմայական գործոնը: Դեռևս Սառցե դարաշրջանում մարդիկ հյուսիսից շարժվում էին դեպի հարավ, որտեղ ներկայիս Սահարայի անապատի, ինչպես նաև Արաբական թերակղզու անապատների փոխարեն այդ ժամանակ տարածվում էին տայգայատիպ անտառներ, որոնք հետագայում փոխարինվեցին տափաստանների: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, սակայն, Սառցե դարաշրջանն իր հերթին վաղուց արդեն ավարտվել էր և երկրագնդի միջին ջերմաստիճանը, դանդաղ, սակայն անշեղորեն աճում էր[1]: Արդյունքում՝ մ.թ.ա. IV հազարամյակի սկզբից սկսված և արդեն հազարամյակի երկրորդ կեսում աղետալի չափերի հասած երկրագնդի տաքացումն ու կլիմայի չորացումը բերեցին նրան, որ մարդկային հոծ խմբեր, զրկված իրենց բնակության նախկին վայրերից և անապատացման արդյունքում դուրս քշված իրենց բնակության սովորական շրջաններից, մտան շարժի մեջ՝ սեղմվելով խոնավությունն ու բնակլիմայական քիչ թե շատ տանելի պայմանները դեռևս պահպանած մեծ գետերին: Արդյունքում՝ արդեն մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսին և, հատկապես, վերջին երկրագնդի տարբեր մասերում գործնականում միաժամանակ առաջացան մի շարք պետական համակարգեր:

Պետությունները, մարդիկ, ինչպես նաև հասարակական ամենատարբեր միավորներ մշտապես ունեն որոշակի շահեր, որոնք պետք է սպասարկվեն: Սա անբեկանելի կանոն է և կործանման է դատապարտված հասարակական ցանկացած սուբյեկտ, որը չի սպասարկի այդ շահերը կամ, առավել ևս, դեմ կգնա դրանց սպասարկմանը: Այսպիսով՝ հասարակական ցանկացած սուբյեկտ, բայց հատկապես պետությունները, իրենց շուրջ առաջացնում են շահերի յուրօրինակ համակցություններ, որոնք անվերջ կերպով պետք է սպասարկվեն: Մարդկանց կամ ներպետական հասարակական այլ միավորների շահերի համակցությունները պայմանավորված են դրանց ունեցած, լայն իմաստով, սոցիալական դերակատարությամբ, իսկ պետությունների շահերն էլ որոշվում են, համապատասխանաբար, դրանց զբաղեցրած աշխարհագրական դիրքով: Հենց սա էլ կազմում է մի որևէ պետության աշխարհաքաղաքական դերակատարությունը, որը սպասարկելուն էլ ուղղված է նույն այդ պետության ողջ գործունեությունը: Ստորև փորձ կարվի դիտարկել Եվրասիական աշխարհաքաղաքական դասավորվածությունը և կլուսաբանվի նույն այդ տարածքում գործող պետությունների աշխարհաքաղաքական դերակատարությունները, ընդ որում հետաքրքր է նշել, որ, անկախ ժամանակից կամ նույնիսկ դարաշրջանից և նույնիսկ հաշվի չառնելով էլ նույն այդ պետությունների ազգային կամ սոցիալական կառուցվածքը, աշխարհաքաղաքական շահերն ու առաջնահերթությունները, ի դեմս աշխարհաքաղաքական դերակատարության, մնում են անփոփոխ:

Եվրասիայի ծայր արևելքում՝ Չինաստանի տարածքում՝ Հուանհե և Յանցզի գետերի հովիտներում տարածվող Չինական մեծ հարթավայրում, մ.թ.ա. արդեն III հազարամյակի սկզբում հիշատակվում է լեգենդների քողով պատված Երեք իշխանների և Հինգ տիրակալների կողմից հիմնադրված Սյայի թագավորությունը՝ որպես չինական առաջին պետականության ներկայացուցիչ: Այս կապակցությամբ հարկ է հատկապես ընդգծել, որ Սյայի թագավորությունը, ինչպես նաև վերջինիս հաջորդող գահատոհմերը, անկախ իշխանական վերնախավի փոփոխությունից, մեծ հաշվով իրենցից

[1] Տես՝ Brooks, Nick. Cultural responses to aridity in the Middle Holocene and increased social complexity (անգլ.) // Quaternary International (անգլ.) русск.: journal. — 2006. — Vol. 151, no. 1. — P. 29—49.

ներկայացնում էին չինական պետականության արտահայտողներ՝ այս կամ այն չափով ընդգրկելով և որպես կորիզ ունենալով ներկայիս Չինաստանի հյուսիս-արևելքն ու արևելքը: Հարկ է նաև նշել, որ չինական պետականությունը իրենից մեծ հաշվով ներկայացնում էր զարգացած քաղաքակրթության գործնականում միակ օրրանը իր տարածաշրջանում և այս հանգամանքը վճռական դեր խաղաց այն բանում, որ հարևան մարդկային խմբերը, տոհմերն ու ցեղերը, հետագայում աստիճանաբար միավորվեն չինական պետականության դրոշի ներքո՝ ի վերջո ստեղծելով միացյալ և հզոր չինական տերությունը: Սյայի թագավորության մասին տվյալները խիստ սակավ են, լեգենդար և հատվածական, սակայն, անդրադառնալով վերջինիս բանակին, կարող ենք, թերևս, փաստել, որ այն առաջին պետականություններին բնորոշ ու իր հիմքում հետևազորն ունեցող մի բանակ էր, որը կիրառում էր պարզունակ հարվածային և պաշտպանողական զենքեր:

Եվրասիայի ծայր արևելքում գտնվող չինական թագավորությունը, անկախ գահատոհմերի փոփոխությունից, աշխարհաքաղաքական առումով պահպանում էր իր հստակ և որոշակի դերը, որը դրսևորվում էր հետևյալում.

- մշտապես ի մի բերել և միավորել Հուանհե ու Յանցզի գետերի հովիտներում ստեղծված պետական միավորները և հավաքել դրանք մեկ բռունցքի մեջ,
- պաշտպանվել հյուսիսից մշտապես եկող սպառնալիքից,
- ծավալվել հարավային, հյուսիսային և արևմտյան ուղղություններով:

Ահա սրանք էին այն հիմնական ուղենիշները, որոնք աշխարհաքաղաքական առումով ընկած էին չինական թագավորության զարգացումների հիմքում, ընդ որում կյանքը ցույց տվեց, որ, եթե հաճախ հաջողվում էր ստեղծել միասնական և հզոր մի պետականություն, ապա ոչ պակաս անգամներ էլ չինական պետականությունը տրոհվում էր մանր մասերի՝ որպես կանոն, զոհ գնալով հյուսիսից եկող հարվածներին: Այսպես թե այնպես, սակայն հյուսիսում հենց Մեծ տափաստանի արևելքը, արևմուտքում՝ Տիբեթյան լեռները, իսկ հարավում էլ Հնդկաչին թերակղզու ջունգլիներն էին, որ գծեցին չինական պետականության և նույնիսկ քաղաքակրթության սահմանները, որոնցից ներս թափանցել ու այնտեղ քիչ թե շատ երկար ժամանակ գերիշխել չէր հաջողվում և ոչ մի ուժի, բայց որի սահմաններից դուրս գալ էլ նույն այդ չինական պետականությունն իր հերթին ինքն էլ, որպես կանոն, ի վիճակի չէր լինում: Մեկ միասնականության մեջ հանդես գալիս չինական պետական միավորները, հատկապես միջնադարում, ի վիճակի էին գործել մինչև մեկ միլիոնի հասնող, իսկ երբեմն էլ այդ թիվն անցնող ռազմիկներ ունեցող ռազմական մեքենաներով, թեև նման դեպքերն անչափ հազվադեպ էին և հիշատակված քանակի ռազմիկները նույնիսկ մեկ օպերատիվ ուղղությամբ գործնականում չէին կիրառվում:

Չինաստանից հյուսիս սկսվում և ընդհուպ մինչև Արևելյան Եվրոպա տարածվում է հսկայական մեծության մի հարթավայր, որը կոչում է ու որը մենք ևս այսուհետ կկոչենք Մեծ տափաստան: Մեծ տափաստանի հյուսիսային սահմանը արևելքից արևմուտք եզերվում է Սիբիրյան անտառապատ տայգայով, Ուրալյան լեռնաշղթայով և հյուսիսռուսական տայգայատիպ անտառներով, որոնցից հյուսիս էլ տարածվում են բևեռային անտառազուրկ տունդրաները: Ինչ վերաբերում է Մեծ տափաստանի հարավային սահմանին, ապա արևելքում այն սկսվում է Չինական մեծ հարթավայրի հյուսիսից, որից հետո ձգվում են Տիբեթյան լեռները, Իրանական լեռնաշխարհը, Կովկասյան լեռնաշղթան իրենց հյուսիսային սահմաններով, ինչպես նաև Սև ծովի հյուսիսային ափերը:

Մեծ տափաստանն ինքը, որոշակիորեն պայմանականորեն, բայց այնուհանդերձ կարելի է բաժանել երեք մեծ մասերի[1].

[1] Լև Գումիլևն առաջարկում է Մեծ տափաստանը բաժանել երկու մասի՝ փաստացի միավորելով իմ կողմից առաջարկվող Կենտրոնական և Արևմտյան մասերը: Ուշագրավ այս գիտնականը բաժանման հիմքում դնում է բնակլիմայական գործոնը, երբ, ըստ այս հեղինակի, Մեծ տափաստանի արևելքն ավելի հարուստ և դրական բնակլիմայական պայմաններ ունի՝ ի տարբերություն վերջինիս զիջող Մեծ տափաստանի մյուս շրջանների: Տես՝ Гумилев Л. Н. “Тысячелетие вокруг Каспия”, Москва 2002, стр. 101-102:

- Չինաստանից հյուսիս սկսվող հատվածը, որը, որոշակիորեն պայմանականորեն, հարմարության համար հետագայում կկոչենք Մեծ տափաստանի արևելք: Այս հատվածի սահմանները արևմուտքում Ալթայի լեռներն են, հարավում՝ Չինական մեծ հարթավայրի հյուսիսային սահմանը և Տիբեթյան լեռների արևելյան հատվածը, իսկ հյուսիսում էլ վերջինիս սահմանն անորոշ է ու սահուն կերպով վերջանում էր սիբիրյան տայգաների հարավային հատվածներով՝ ամենամոտավոր իմաստով առավելագույնը հասնելով Բայկալ լճի հարավային ափերին:

- Ալթայի լեռներից արևմուտք և մինչև Վոլգա գետ տարածվող հատվածը համապատասխանում է Մեծ տափաստանի կենտրոնական հատվածին ու այն սովորաբար անվանում են Միջին Ասիա: Հարավից վերջինիս սահմաններն էին կազմում Տիբեթյան լեռների արևմտյան հատվածը և Իրանական լեռնաշխարհը: Հյուսիսից, ինչպես նախորդի պարագայում, սահմանը կրկին անորոշ էր և սահուն կերպով վերջանում էր սիբիրյան տայգաների հարավային հատվածներով՝ Ուրալյան լեռնաշղթայի հարավով, ինչպես նաև վերջինիցս դեպի արևմուտք ձգվող հատվածով, մինչև Վոլգա գետը,

- Վոլգայից մինչև Արևելյան Եվրոպա և, մասնավորապես Դանուբ գետի միջին և ստորին հովիտ ու Կարպատյան լեռնաշղթա ձգվող հատվածը, ամենաընդհանուր իմաստով, համապատասխանում է Մեծ տափաստանի արևմտյան հատվածին, որը կարելի է անվանել Մերձսևծովյան և Նախակովկասյան տափաստաններ: Այն արևելքում սկսվում է Վոլգայից, իսկ արևմուտքում էլ վերջանում է Դանուբ գետով, վերջինիս հատկապես միջին և ստորին հովտում: Հարավից վերջինս սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային և Սև ծովի հյուսիսային ափերին, իսկ հյուսիսից էլ վերջանում է հյուսիսռուսական տայգայատիպ անտառներով:

Մարդկության պատմության ընթացքում Մեծ տափաստանում և նրա երեք հատվածներում ամենատարբեր ժամանակներում գերիշխանության են հասել ամենատարբեր ուժեր: Այնուհանդերձ, չնայած դրան, բոլոր այս ուժերի աշխարհաքաղաքական առաջնահերթությունները հիմնականում եղել են նույնը: Այսպես.

- Մեծ տափաստանի արևելքում գերիշխանության հասած ուժը, զուտ տարածքային ընդգրկման տեսանկյունից լինելով ամենամեծաքանակը, ունենալով ավելի դրական բնակլիմայական պայմաններ[1], իսկ արդյունքում նաև՝ մյուս երկու հատվածների նկատմամբ լինելով ամենաուժեղը, մի կողմից ձգտում էր գերիշխանության հասնել դեպի ավելի հարավ տարածվող չինական պետականության ներկայացուցիչների նկատմամբ, մյուս կողմից էլ՝ հարված հասցնել արևմտյան ուղղությամբ: Այս առումով կա ևս մեկ առանձնահատկությունը՝ Մեծ տափաստանի արևելքում իշխանության համար պայքարում պարտություն կրած ուժը, որպես կանոն, շարժվում էր դեպի արևմուտք՝ անցնելով Ջունգարյան դարպասները և, այնուհանդերձ լինելով ավելի ուժեղ իր արևմտյան հարևանների նկատմամբ, իր գերիշխանությանը ենթարկելով Միջին Ասիան:

- Միջին Ասիայում գերիշխանության հասած ուժը, զիջելով Մեծ տափաստանի արևելքում գործող իր հարևանին, սակայն իր հերթին, կրկին քանակական և տարածային գործոնը հաշվի առնելով, ուժեղ լինելով Մեծ տափաստանի արևմուտքում գործող հարևանի նկատմամբ, աշխարհաքաղաքական առումով ձգտումով էր ծավալվել ամենից առաջ հարավային, իսկ հետո՝ արևմտյան ուղղություններով: Այս պարագայում ևս, ինչպես նախորդ դեպքում, տարածաշրջանում գերիշխանության համար մղվող պայքարում անհաջողության մատնված ուժը շարժվում էր դեպի հարավ կամ արևմուտք և, վերջին դեպքում անցնելով Վոլգան, իր գերիշխանությանն էր ենթարկում Մերձսևծովյան տափաստանները ու Նախակովկասյան տափաստանները, կամ էլ ցրվում էր Իրանական և Հայկական լեռնաշխարհներով:

- Մերձսևծովյան և Նախակովկասյան տափաստաններում գերիշխանության հասած ուժը, զիջելով նախորդ երկուսին, որպես կանոն, որևէ կերպ չէր ծավալվում արևելյան ուղղությամբ՝ փոխարենը աշխարհաքաղաքական առաջնություն տալով

[1] Տես՝ Гумилев Л. Н. “Тысячелетие вокруг Каспия”, Москва 2002, стр. 102:

ծավալմանը Կովկասյան լեռնաշղթայից հարավ, ինչպես նաև Դանուբից ու Կարպատյան լեռնաշղթայից արևմուտք ձգվող տարածքների նկատմամբ:

Ընդհանրացնելով ասվածը, թերևս, կարող ենք փաստել, որ, ընդհանուր առմամբ, Մեծ տափաստանում արևելքից արևմուտք ուղղությամբ, որպես կանոն, գործում էր «ընկնող դոմինոներ»-ի սկզբունքը, երբ Մեծ տափաստանի արևելքը թեկուզ և ստիպողաբար լքած ուժն այնուհանդերձ իր տիրապետությունն էր հաստատում Միջին Ասիայի նկատմամբ, իսկ այստեղից վտարված ուժն էլ, որպես կանոն, այնքան ուժեղ էր լինում, որ գերիշխանության էր հասնում Մերձսևածովյան ու Նախակովկասյան տափաստաններում: Այս առումով հարկ է ավելացնել, որ Մեծ տափաստանն ինքը, մեկ ամբողջության մեջ դիտարկելիս, իրենից զգալի մի ուժ էր ներկայացնում ամենից առաջ հենց քանակական տեսանկյունից, չնայած Մեծ տափաստանի ռազմական մեքենան որակական առումով ևս վատը չէր: Այնուհանդերձ, մարդկության պատմության ընթացքում շատ հազվադեպ են հանդիպում դեպքերը, երբ Մեծ տափաստանը հանդես էր գալիս որպես մեկ ամբողջություն, երբ նրա երեք մասերը սովորաբար գործում էին առանձին-առանձին՝ հաճախ թշնամական հարաբերությունների մեջ գտնվելով մեկը մյուսի նկատմամբ:

Տափաստանային քոչվորների բանակի հիմնական մարտական ձեռագիրը անկանոն մարտավարությունն էր, որը հանգում էր քոչվոր մասսաների անկանոն հարվածին և կանոնավոր պատերազմից խուսափելուն՝ մանավանդ ուժեղ հակառակորդի առկայության պարագայում: Մեկ ամբողջության մեջ դիտարկելիս Մեծ տափաստանի արևելքում գերիշխող ուժը ամենաընդհանուր գնահատականի պարագայում ի վիճակի էր մարտադաշտ հանել մինչև 500.000 ռազմիկ, Միջին Ասիան այս առումով հասնում էր մինչև 300.000 ռազմիկի, իսկ Մերձսևածովյան տափաստաններում գերիշխող ուժն էլ՝ նախորդից մի քիչ քիչ՝ հազվադեպ հասնելով 300.000 ռազմիկի և սովորաբար սահմանափակվելով դրանից քիչ քանակի ռազմիկներով: Այսպիսով, ընդհանուր առմամբ, Մեծ տափաստանի հարվածային ուժը միջինացված մակարդակում հանգում էր մոտ 1.000.000 ռազմիկի, որոնք, սակայն, ինչպես արդեն ասվեց, գործնականում երբեք հանդես չէին գալիս որպես մեկ ամբողջություն: Միաժամանակ հատկապես կարևոր է ընդգծել, որ մարդկության գիտակցական պատմության արշալույսին Մեծ տափաստանը ռազմաքաղաքական իմաստով դեռևս չուներ այն տեսքը, ինչը հենց նոր նկարագրվեց և ինչին մենք սովոր ենք հետագայում: Այստեղ, որպես կենցաղին և ռազմական գործի կարևոր միավոր, դեռևս բացակայում էր ձին, իսկ սոցիալական առումով էլ մենք տեսնում ենք պարզագույն կենցաղ ու տնտեսություն վարող և իրենց մարտունակությամբ առանձնապես աչքի չընկնող տարաբնույթ ցեղեր:

Տիբեթյան լեռներում գործող ուժերը իրենց ռազմաքաղաքական եռանդն ամենից առաջ ուղղում էին դեպի Չինական մեծ հարթավայր և, առավելագույնը, ընդհարման մեջ էին մտնում Մեծ տափաստանի արևելքում գործող ուժերի հետ: Իրավիճակի բացատրությունը, թերևս, նրանում էր, որ Տիբեթյան լեռներն արևելքում ավելի հարթ են բարձրանում, այն դեպքում, երբ արևմուտքում դրանք, որպես կանոն, անչափ դիք են և մի բարձր պատի պես կարծես փակում են ինչպես դեպի արևմուտք շարժվելու հնարավորությունը, այնպես էլ նույն այդ արևմուտքից հարված ստանալու հավանականությունը:

Իրանական լեռնաշխարհը, որպես աշխարհաքաղաքական մեկ ամբողջություն, ևս ուներ իր ռազմաքաղաքական հստակ ուղենիշները: Մեր կողմի քննարկվող ժամանակաշրջանում Իրանական լեռնաշխարհի հարավային, իսկ գուցե նաև կենտրոնական և նույնիսկ հյուսիսային շրջանները, նվազող քանակական կորագծով, զբաղեցված էին Հնդկաստանի հարավից աստիճանաբար առաջացած դրավիդյան ցեղախմբերի կողմից, որոնց, թերևս, միակ պետական միավորը տարածաշրջանում

Էլամի թագավորությունն էր[1]: Էլամի թագավորությունը, մեծ հաշվով խորթ լինելով Իրանական լեռնաշխարհում հետագայում միմյանց հաջորդած արիական պետական միավորներին և բյուրեղացնելով արևելքից ժամանող դրավիդյան տարրի ռազմական եռանդը, ուներ միայն մեկ ռազմաքաղաքական առաջնահերթություն՝ հետ մղել արևմուտքից եկող սպառնալիքներն, ի դեմս միջագետքյան, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցող տարբեր պետական միավորների, և իր հերթին փորձ կատարել այս կամ այն չափով ծավալվել նույն արևմտյան ուղղությամբ: Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանի կապակցությամբ Էլամի և նրա բանակի մասին տվյալները խիստ սակավ են ու հատվածական, սակայն, հաշվի առնելով այս թագավորության դրավիդյան էությունը, կարող ենք, թերևս, պնդել, որ վերջինիս ռազմական մեքենան իրենից, ըստ էության, ներկայացնում էր մինչարիական Հնդկաստանի տարածքում գոյություն ունեցած պետական միավորների ռազմական մեքենաների կրկնօրինակներից մեկը՝ բնականաբար, միջագետքյան և հայկական որոշակի ազդեցությամբ: Չնայած առանձին հաջողություններին, Էլամի ազդեցության ոլորտում գտնվող տարածքները այնուհանդերձ, որպես կանոն, սահմանափակվում էին Իրանական լեռնաշխարհի հարավային և մասամբ միայն կենտրոնական շրջաններով, ինչի արդյունքում էլ Էլամի թագավորությունն ի վիճակի էր մարտադաշտ հանել մինչև 50.000 ռազմիկ՝ զինված իրենց ժամանակին բնորոշ զինատեսակներով ու զենքերով:

Դրավիդյան քաղաքակրթությանն էր պատկանում նաև Հնդկաստանի հյուսիսում գտնվող և ներկայումս Մոհանջո-Դարո ու Հարապպա պայմանական անունները կրող երկու ազգակից քաղաք պետությունների կողմից ներկայացվող ենթաքաղաքակրթությունը: Այս առումով հարկ է նշել, որ, պայմանավորված Հնդկաստանի և, մասնավորապես, Հյուսիսային Հնդկաստանի հարուստ բնական ռեսուրսներով, ինչպես երկու այս քաղաքակրթության ներկայացուցիչները, այնպես էլ Հյուսիսային Հնդկաստանում նրանց հետագայում հաջորդող պետական միավորները, որպես կանոն, զերծ էին մնում ագրեսիվ ու Հնդկաստանի սահմաններից դուրս ուղղվող արտաքին-նվաճողական գործունեությունից: Սրան հակառակ, Հյուսիսային Հնդկաստանը մարդկության գիտակցական պատմության ողջ ընթացքում ենթակա էր ավելի սահմանափակ ռեսուրսների տիրապետող հարևան տարածաշրջաններում գործող ուժերի հարվածներին՝ ամենից առաջ արևմուտքից: Աշխարհաքաղաքական այս դասավորությանը հանդիպեցին դեռևս Մոհանջո-Դարո ու Հարապպա քաղաքակրթության ներկայացուցիչները, սակայն նրանք այն որպես ժառանգություն հետագայում փոխանցելու էին Հյուսիսային Հնդկաստանում գործող բոլոր պետական միավորներին և նրանց հարևաններին: Այս առումով կարևոր է անել ևս մեկ դիտարկում: Իրոք, եթե Չինական մեծ հարթավայրում աստիճանաբար միասնական արժեհամակարգի շուրջ ձևավորվող չինացիներին ի վերջո հաջողվեց ստեղծել մեկ միասնական մի պետություն, ապա Հնդկաստանի տարածքում գործող տարաբնույթ ժողովուրդներին և ցեղերին այդպես էլ չհաջողվեց միավորվել մեկ միասնական ամբողջության մեջ, ընդ որում Հյուսիսային Հնդկաստանի բնակչությունն ինքն էլ իր հերթին հետագայում հստակորեն տարանջատվում էր Հնդկական թերակղզու կենտրոնական և, հատկապես, հարավային հատվածի բնակչությունից:

«Շումերական առեղծված»-ը մինչև այժմ էլ զբաղեցնում է ուսումնասիրողներին, որոնք չեն կարողանում հասկանալ, թե Միջագետքում ի վերջո որտեղի՞ց հայտնվեց տարօրինակ այս ժողովուրդը: Շումերները բնիկներ չէին և այս հանգամանքը չի վիճարկվում: Նրանք Միջագետք էին ներգաղթել դրսից: Միաժամանակ, հաշվի առնելով հիմնականում այն հանգամանքը, որ շումերների հայտնի առաջին քաղաք-պետությունը, որը ավանդականորեն ընդունված է կոչել Էրիդու, առաջացել է Միջագետքի ամենահարավում, կարծիք է հայտնվել, որ շումերները եկել են հարավից՝ ծովով, «շումերական դրախտ» համարվող լեգենդար Դիլմուն երկրից: Այս տեսակետը, սակայն,

[1] Տես՝ Дьяконов М. М. “Очерк истории древнего Ирана”, Москва 1961, стр. 34:

ունի թույլ կողմեր, որոնցից կարելի է, մասնավորապես, մատնանշել իր ժամանակի ծովագնացության ցածր մակարդակը, «Դիլմուն» երկրի տեղորոշման անորոշությունը և այլն[1]: Մեկ այլ և ավելի տարածված տեսակետի համաձայն շումերները հայտնվել են Միջագետքում այստեղ տեղափոխվելով հյուսիսից՝ Հայկական լեռնաշխարհից: Այս տեսակետի օգտին վկայող փաստերը բազմաթիվ են և հավանական կարելի է համարել թերևս հենց այն: Այստեղ են և շումերական հավատալիքներում սրբազան համարվող լեռնային երկրի մասին պատկերացումները, և շումերական հավատալիքների ու հոգևոր ընկալումների վերլուծությունը, և բազում այլ հանգամանքներ[2]: Ու, թեև այս տեսակետի վերջնականապես հիմնավորված լինելը հաստատվելու համար դեռ շատ ճանապարհ ունի անցնելու, սակայն կարելի է կարծել, որ, ի դեմս շումերների, մենք գործ ունենք Հայկական լեռնաշխարհից հեռացած գաղութարարների մի խմբի հետ, որը, ամենից առաջ առևտրական նպատակներով հաստատվելով Միջագետքում, ի վերջո մերվեց տեղական բնակչության հետ և մեծապես կորցրեց իր ազգային նկարագիրը՝ խորը հոգեկան պատկերացումներում, սակայն, պահպանելով կապը Հայկական լեռնաշխարհի հետ: Այս մասին, ի դեպ, անուղղակիորեն կարող է վկայել նաև շումերական առաջին քաղաք-պետության անվանումը: Եթե մի պահ վերանանք ավանդականորեն ընկալվող «Էրիդու» անվանումից, ապա այստեղ հնարավոր է տեսնել «Ա(Է)ր(ի)ա (դ)տտ (ու)ա» անվանման արձագանքը: Իրավիճակը քաղաքական իմաստով ամենամոտավոր կերպով համապատասխանում է, օրինակ, Անգլիային և այնտեղից դուրս եկած գաղութարարներին, որոնք Ամերիկայում, Ավստրալիայում, Նոր-Զելանդիայում և այլուր հիմնեցին իրենց «Նյու Յորքները և Նյու Ջերսիները», իսկ էթնիկ իմաստով էլ՝ Իսպանիային, իսպանացիներին և Հարավային Ամերիկային, երբ Իսպանիայից դուրս եկած իսպանացիներն ի վերջո մերվեցին Հարավային Ամերիկայի տեղաբնիկների հետ ու սկսեցին առանձնանալ որպես նոր ազգություններ:

Իրանական լեռնաշխարհից արևմուտք և Հայկական լեռնաշխարհից հարավ տարածվում են երկու երկրամասեր՝ Տիգրիս և Եփրատ գետերի միջատարածքը, որն ընդունված է կոչել Միջագետք, ինչպես նաև Եփրատ գետից մինչև Միջերկրական ծով ու Եգիպտոս, իսկ հարավում էլ՝ մինչև անորոշ կերպով Արաբական թերակղզու հյուսիսային սահմաններն առաջացող տարածքը, որը ավանդականորեն կոչվում է Ասորիք: Միջագետքն և Ասորիքը շատ հազվադեպ էին հանդես գալիս որպես մեկ ամբողջություն, իսկ այդ հազվադեպ դեպքերն էլ հիմնականում վերաբերում էին մեկ այլ՝ երրորդ ուժի, հովանու տակ միավորվելու դեպքերին:

Մեր կողմից դիտարկվող դարաշրջանում զուտ շումերական քաղաքակրթության բանակը ուժերի լիակատար կենտրոնացման դեպքում կարող էր կազմել մոտ 150.000 ռազմիկ, սակայն պետք է ընդգծել, որ նման կենտրոնացման դեպքերը, եթե եղել էլ են, ապա ավելի շուտ իրենցից ներկայացրել են բացառություններ, երբ, համենայն դեպս գոնե մեզ, նման օրինակներ հայտնի չեն: Այսպիսով՝ շումերների հարևանները, որպես կանոն, գործ էին ունենում լավագույն դեպքում մինչև 20.000 կամ առավելագույնը 30.000 ռազմիկ կազմող ուժերի հետ, ինչը հաճախ նրանց քանակական առավելություն էր ապահովում՝ նույնիսկ ռազմուժի ընդհանուր քանակով շումերներին զիջելու պարագայում էլ (օրինակ՝ Էլամի դեպքում): Այս առումով պետք է նշել, որ Արատտայի քրմապետությունը և հետագայում վերջինիս փոխարինած Հայոց թագավորությունը ևս, միավորված ուժերով հանդես գալու պարագայում ի վիճակի լինելով մարտադաշտ դուրս բերել մոտ 120.000 ռազմիկ, երբեմն որոշակի քանակական առավելություն ունեին շումերների նկատմամբ, սակայն հայերի պարագայում վերևում հիշատակված միասնությունն ապահովելը այս կամ այն պատճառով կրկին հաճախ դժվար էր լինում: Այս առումով Միջագետքին լրացուցիչ ուժ էր հաղորդում այն հանգամանքը, որ այստեղ գերիշխանության հասած ուժերը հաճախ կարողանում էին ձևակերպել և մարտական տեսք տալ Արաբական

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Սրբազան լեռնաշխարհը», Երևան 2006, էջ 33:
[2] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Սրբազան լեռնաշխարհը», Երևան 2006:

թերակղզուց ելնող սեմիտական մարդկային մեծաքանակ մասսային, դրանով իսկ իրենց հարևանների նկատմամբ արդեն ձեռք բերելով քանակական էական առավելություն: Արդյունքում՝ հենց Միջագետքում էր, որ ձևավորվեցին առաջին ռազմաքաղաքական այն համակարգերը, որոնք պետական ապարատը և պատերազմը դիտարկում էին որպես յուրօրինակ բիզնես մի գործունեություն, երբ ստեղծվեցին նույնիսկ իրենց ժամանակի համար մեծապես վերազգային բնույթ ունեցող բիզնես-պետությունների առաջին ներկայացուցիչները: Այս առումով հարկ է նշել, որ մեծ հաշվով նույն օրինաչափություններն էին գործում նաև Ասորիքի պարագայում, թեև այստեղ իրավիճակն ավելի ծանր էր և, ի տարբերություն նույն Միջագետքի, Ասորիքը գործնականում երբեք չմիավորվեց: Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել, որ, սկսած արդեն այս ժամանակներից, հետագա հազարամյակների համար Ասորիքում և Միջագետքում ստեղծվում էր ուժերի դասավորության հետաքրքիր մի իրավիճակ:

Բանը կայանում էր նրանում, որ Ասորիքն ինքն իրենից ներկայացնում էր, ըստ էության, երկու առանձին մասերի մի ամբողջություն, երբ Հարավային Ասորիքի կենտրոն էր հանդիսանում Դամասկոսը, իսկ Հյուսիսային Ասորիքինը՝ Հալեպը: Իրավիճակն, ըստ էության, նույն տեսքն ուներ նաև Միջագետքի պարագայում, երբ Հարավային Միջագետքի կենտրոն էր հանդիսանում աշխարհաքաղաքական նույն դերակատարությունն ունեցող Բաբելոնը կամ Բաղդադը, իսկ Հյուսիսային Միջագետքինն էլ՝ Նինվեն կամ Մոսուլը, ընդ որում երկու երկրամասերի հարավային ու հյուսիսային մասերն էլ հաճախ գտնվում էին տարբեր և հաճախ միմյանց հետ մրցակցող ուժերի ձեռքում: Սա, ըստ էության, բխում էր այս երկրամասերի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առանձնահատկություններից՝ երբեմն, սակայն, ընդհատվելով կենտրոնական միասնական իշխանության հաստատման ժամանակաշրջաններով: Այն դեպքերում, սակայն, երբ կենտրոնական հզոր իշխանությունը, որը կկարողանար ապահովեր միասնությունը, բացակայում էր Ասորիքն և Միջագետքը վերադառնում էին իրենց սովորական դրությանը ինչպես միմյանց նկատմամբ հարաբերություններում, այնպես էլ իրենց ներսում: Այս պայմաններում ուժային կենտրոններից և ոչ մեկն, ըստ էության, չէր կարողանում իր լիակատար ազդեցության տակ ունենալ մյուս կենտրոնը, երբ, օրինակ, Հալեպում իշխող ուժը նույնիսկ ռազմական հաջողության պարագայում էլ թույլ դիրքեր էր ունենում Դամասկոսում և հակառակը, իսկ Նինվեում կամ Մոսուլում իշխող ուժն էլ չէր կարողանում ազդեցիկ լինել Բաբելոնում կամ Բաղդադում, ինչպես, թերևս, նաև՝ հակառակը: Այս առումով հետաքրքիր է նշել նաև, որ նմանատիպ հարաբերություններ էին առկա նաև «հորիզոնական» մակարդակում Նինվեի կամ Մոսուլի և Հալեպի, ինչպես նաև Բաբելոնի կամ Բաղդադի ու Դամասկոսի միջև: Այսպիսով՝ Միջագետքի և Ասորիքի համար բնականորեն, ըստ էության, ավելի բացատրելի էր հենց բաժանվածության կարգավիճակն ինչպես մեկը մյուսի, այնպես էլ հարավի ու հյուսիսի պարագայում, իսկ այս ամենի ֆոնին էլ Սիրիայի Արաբական Հանրապետության և Իրաքի Հանրապետության տարածքում ներկայումս ստեղծված վիճակը մեծապես բացատրելի է ամենից առաջ հենց պատմականորեն: Այս կապակցությամբ, սակայն, կա ևս մեկ օրինաչափություն:

Այսպես, Մերձավոր Արևելքի պատմության ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբեմն, կապված Ասորիքի հյուսիսային ուղղությամբ գերիշխող ուժի հզորացման կամ թուլացման կամ, ընդհակառակը, հարավում գոյություն ունեցող Եգիպտոսի տարածքում գործող պետական միավորի ուժեղացման կամ թուլացման հետ, կամ հարավն էր այս կամ այն կերպ իր գերիշխանությունը տարածում Հյուսիսային Ասորիքի և նույնիսկ հարակից որոշ երկրամասերի նկատմամբ, կամ էլ, ընդհակառակը, ինքն է կորցնում Հարավային Ասորիքը՝ տեղի տալով հյուսիսից առաջխաղացող ուժին: Հետաքրքիր է, սակայն, ու հենց սրանում է օրինաչափության յուրօրինակությունը, որ երկու դեպքում էլ կողմերից և ոչ մեկին մեծ հաշվով չի հաջողվում ամրապնդվել հակառակորդի ազդեցության ոլորտին պատկանող տարածքում՝ հարավը

ավանդականորեն թույլ էր լինում հյուսիսում, իսկ հյուսիսն էլ երբեք չէր կարողանում ամրապնդվել հարավում: Այսպիսով, Ասորիքի և հարակից երկրների հարաբերություններում առկա են առնվազն երկու օրինաչափություններ.

- Ասորիքը, որպես կանոն, չի կարող հանդես գալ որպես մեկ վարչաքաղաքական և ռազմական ամբողջություն, իսկ եթե նույնիսկ լինում էլ էին բացառություններ, ապա դրա արդյունքում ստեղծված միավորը ներքնապես լինում էր թույլ, իսկ, որպես հետևանք էլ, ներքին կապերի բացակայության ու արտաքին ճնշումների հետևանքով, այն ի վերջո վերադառնում է իր հին, հյուսիսի ու հարավի միջև մասնատված վիճակին,

- Հարավային Ասորիքում գերիշխում է Եգիպտոսի տարածքում գոյություն ունեցած պետական միավորը, իսկ Հյուսիսային Ասորիքն էլ գտնվում է ավելի հյուսիս գտնվող քաղաքական ուժի գերիշխանության տակ,

- Ասորիքը, ինչ չափով էլ, որ այն ընդգրկված լինի Եգիպտոսի տարածքում գոյություն ունեցած պետական միավորի կազմում, որպես կանոն, թույլ է հսկվում վերջինիս կողմից և, երբ Եգիպտոսի տարածքում գոյություն ունեցած պետական միավորում կենտրոնական իշխանությունը թուլանում է, Ասորիքում անմիջապես գլուխ են բարձրացնում անջատողական տրամադրությունները ու ամենից առաջ հենց այստեղ էին ապաստանում տարաբնույթ ապստամբները, որոնք հմտորեն օգտվում էին այն բանից, որ տեղական բնակչության ու Եգիպտոսի կենտրոնական իշխանության շահերը, որպես կանոն, չեն համընկնում:

Մարդկության գիտակցական պատմության արշալույսը քաղաքակրթական մյուս կենտրոնների հետ միասին սեփական քաղաքակրթության ստեղծմամբ նշանավորվեց նաև Նեղոսի հովտում, որտեղ ստեղծվեց Եգիպտական թագավորությունը: Վերջինս հյուսիս-արևելքից սահմանակից էր Հարավային Ասորիքին, հյուսիսից Միջերկրական ծովն էր, հարավում երկրամասի սահմաններն ավարտվում էին Վերին Եգիպտոսի լեռներով, իսկ արևմուտքում էլ դրանք անորոշ կերպով ձգվում էին դեպի Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական շրջաններ: Եգիպտոսի տարածքում տարբեր ժամանակներում ստեղծված իշխանությունները, որպես կանոն, երեք առաջնահերթություններ ունեին՝ առաջանալ արևելյան, հարավային կամ արևմտյան ուղղությամբ: Արևմտյան ուղղությամբ առաջխաղացումը, որպես կանոն, հանգում էր այս ուղղությամբ գործող քոչվոր կամ կիսաքոչվոր ցեղերին այս կամ այն չափի հպատակություն պարտադրելով: Նույնն էր նաև հարավային ուղղությունը: Ինչ վերաբերում է արևելյան ուղղությամբ առաջխաղացմանը, ապա այստեղ առաջնայինն ամենից առաջ հենց Ասորիքին տիրելն էր: Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ, պայմանավորված ամենից առաջ աշխարհագրական, բայց, երբեմն, նաև ազգագրական, իսկ հաճախ էլ նաև՝ քաղաքական գործոններով, Եգիպտոսի տարածքում գործող ուժին, ըստ էության, այդպես էլ երբեք չէր հաջողվում ամուր կերպով տիրել Ասորիքին: Այս առումով հետաքրքիր է նշել, որ Եգիպտոսը և Ասորիքը մեկ միասնական պետության մեջ միավորելու ամենավերջին փորձը, որը տեղի ունեցավ 1950-ական թվականների վերջին, 1960-ական թվականների վերջին կրկին ավարտվեց անհաջողությամբ, ինչը պատմական առումով միանգամայն բացատրելի էր:

Մարդկության գիտակցական պատմության արշալույսին պետականության յուրօրինակ մի օջախ էլ առաջացավ Ամերիկա մայրցամաքում, ի դեմս Մայաների պետության, սակայն մի կողմից այս պետականության պատմությունը դեռ շատ վատ է ուսումնասիրված և դեռևս բազմաթիվ չպարզաբանված ու վիճելի հարցեր կան, իսկ մյուս կողմից էլ այս պետությունն և նրա պատմությունը ոչ մի կերպ չեն առնչվում Հայաստանի ու հարակից երկրների պատմությանը, այնպես որ այստեղ կսահմանափակվենք միայն Մայաների պետականության առաջացման փաստը ամրագրելով: Մարդկության գիտակցական պատմության արշալույսին պետական միավորները բացակայում էին Փոքր Ասիայում, իսկ Եվրոպան էլ դեռևս գործում էր պարզունակ ցեղապետությունների մակարդակում՝ չունենալով որևէ էական դեր կամ նշանակություն: Եվ վերջապես

Հայաստանն և Հայկական լեռնաշխարհը:

Գլուխ 3
Հայոց առաջին պետականությունը

Հայերն ապրել են Հայկական լեռնաշխարհում ի սկզբանե՝ մարդկության գիտակցական պատմության սկզբից: Արդեն առաջին շումերական, իսկ հետագայում աքքադական աղբյուրները մանրամասն խոսում են հայերի առաջին պետության՝ Հայկական լեռնաշխարհում ստեղծված Արատտայի քրմապետության մասին[1], որին հետո փոխարինեց արդեն Հայկազունիների Հայոց թագավորությունը: Քննարկվող դարաշրջանում Հայոց պետականության սահմանների մասին խոսելը դժվար է՝ մի կողմից կոնկրետ տեղեկատվության խիստ սակավության, մյուս կողմից էլ այն պատճառով, որ պետությունը դեռևս պահպանում էր տոհմատիրական կարգերի զգալի մնացուկներ, իսկ միջագետքի ուղղությունից էլ զատ այլ ուղղություններում ձևավորված պետություններ դեռևս չկային, ինչը դժվարացնում է Հայոց պետականության սահմանների գծանշման հարցը: Ամենաընդհանուր իմաստով կարելի է ենթադրել, սակայն, որ վերջինս այս կամ այն չափով իր իշխանության տակ ուներ Հայկական լեռնաշխարհը, որով էլ հենց բնականաբար սահամանափակվում էին հայ ժողովրդի տարածման հիմնական սահմանները: Այս առումով հարկ է կրկին նշել, որ քիչ թե շատ հստակ էր, թերևս, միայն հարավային սահմանը, որը, համապատասխանելով Հայկական լեռնաշխարհը հարավից եզերող լեռներին, սահմանակից էր Հյուսիսային Միջագետքի և Հյուսիսային Ասորիքի հարթավայրերին: Արևմուտքում, ենթադրաբար, հայ էթնոսի տարածման սահմանը անկում ապրող քանակությամբ ավարտվում էր ինչ-որ տեղ Արևելյան Կապադովկիայում, հյուսիսում, նույն սկզբունքով՝ վրացական հարթավայրերում, իսկ արևելքում, ինչպես և հետագայում էր, Հայոց էթնոսի տարածման առավելագույն սահմանը ամենայն հավանականությամբ Կուր գետն էր, թեև բացառված չէ նաև հայերի որոշակի քանակության առկայություն նաև Կուրի ձախ ափին: Այս առումով պետք է հաշվի առնել նաև Կասպից ծովի մակարդակի տատանումները, որոնք պատմական տարբեր ժամանակներում հասնում էին մոտ 15 մետրի: Արդյունքում, որոշ դեպքերում Փայտակարան նահանգի արևելյան հատվածը, ներկայումս հայտնի որպես Մուղանի հարթավայր, ինչպես նաև նույնիսկ պատմական Ուտիքի հարավային գավառները երբեմն հայտնվում էին ջրի տակ, իսկ Կուր և Արաքս գետերն էլ Կասպից ծովն էին լցվում միմյանցից առանձին:

Արատտայի քրմապետությունը իր բնույթով աստվածապետական պետություն էր: Երկրի գլխին էր կանգնած և անսահմանափակ լիազորություններով էր օժտված Մեծ քուրմը, որը, ըստ ավանդության, նշանակվում էր «Տիեզերքի տիրուհու»՝ Մայր աստվածուհու, կողմից: Այս առումով հարկ է նշել, որ, հաշվի առնելով Մովսես Խորենացու տեղեկությունները այն մասին, թե Սլկունիները, հնարավոր է, պատկանում են մինչհայկազունյան դարաշրջանին, կարելի է զգուշորեն ենթադրել, որ Արատտայի քրմական տոհմը կազմված էր հենց Սլկունիներից: Արատտայի տիրակալը նստում էր ոսկե գահի վրա՝ ոտքերի տակ ունենալով ոսկե աթոռակ: Նրան կից գոյություն ուներ խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողովը, որի հետ Մեծ քուրմը խորհրդակցում էր կարևոր հարցերով: Բանակը ղեկավարում էր «Գլխավոր շտաբ»-ի գործառույթներն իրականացնող մի մարմին, որը շումերական աղբյուրներում կոչվում էր «Արշավանքի տուն»: Այն զարդարված էր թանկարժեք քարերով պատված զենքերով: Գոյություն ուներ մշտական և մասնագիտացված բանակ, որը պատերազմի ժամանակ համալրվում էր աշխարհազորային ուժերով[2]: Առկա տվյալները շատ քիչ են և հատվածական, սակայն,

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Սրբազան լեռնաշխարհը», Երևան 2006; Մովսիսյան Ա. Ե. «Բարեպաշտ արքաների աշխարհակալություն: Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ», Երևան 1997; Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005; Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008 և այլն:

[2] Մանրամասն տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, էջ 92-99:

թերևս, կարելի է պնդել, որ այս ժամանակաշրջանում Հայկական բանակը ուներ հստակ կառուցվածք և կազմակերպում, իսկ զինվածության հարցով էլ գերազանցում էր իր բոլոր հարևաններին, քանի որ Հայկական լեռնաշխարհը հարուստ էր մետաղով, որն էլ հենց հայերը առաջին անգամ սկսեցին մասսայաբար կիրառել զինագործության մեջ: Քննարկվող ժամանակաշրջանում Հայկական բանակն իրենից ներկայացնում էր զարգացած քաղաքակրթության մի բանակ, որը, սակայն, պահպանում էր տոհմատիրական կարգերի զգալի մնացուկներ: Պետք է նշել, որ հենց Արատտայի քրմապետությունում ձին առաջին անգամ սկսեցին կիրառել մարտական նպատակներով[1], որը, սկսած մ.թ.ա. 2200 թվականից, որոշ ժամանակ հսկայական ռազմական և հոգեբանական առավելություն ապահովեց Հայկական բանակին: Ինչ վերաբերվում է Հայկազունիների Հայոց թագավորությանը, ապա այն մեծ հաշվով շարունակեց Արատտայի հոգևոր-քաղաքական ավանդույթները, ուղղակի քրմապետին փոխարինեց արքան:

Գլուխ 4
Մարդկության գիտակցական պատմության սկզբնական շրջանի աղբյուրագիտությունը

Շումերա-աքքադական դարաշրջանի աղբյուրագիտությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի:

Առաջին խումբն իրենից ներկայացնում է շումերական, իսկ հետո արդեն աքքադական և ավելի ուշ շրջանի սեպագիր արձանագրությունները, որոնք իրենց հիմնական հայտնի մասով հրատարակվել ու բավարար չափով վերլուծվել են: Այս աղբյուրները բնականաբար ամենից առաջ տեղեկացնում են Միջագետքում՝ իր ժամանակի Շումերում և Աքքադում, ծավալվող իրադարձությունների մասին, սակայն երբեմն տալիս են նաև հետաքրքիր տեղեկություններ հարևան երկրների, այդ թվում նաև հայերի ու Հայաստանի մասին: Այս առումով հարկ է նշել, որ այս սկզբնաղբյուրները իրադարձությունները ներկայացնում են սեփական տեսանկյունից՝ բնականաբար աչքաթող անելով իրենց քաղաքակրթությանը չվերաբերվող կամ բացասական տեղեկատվությունը և ներկայացնելով, հաճախ չափազանցնելով, սեփական կողմի համար դրական տեղեկատվությունը:

Քննարկվող ժամանակաշրջանի պատմական սկզբնաղբյուրների երկրորդ խումբը կազմում են հետագայում՝ հազարամյակներ անց, ստեղծված մատենագիտական սկզբնաղբյուրները՝ պատմական մատյանները, որոնք, իրենց հատվածական, հաճախ ոչ ճշգրիտ և վիպականացված տվյալներով հանդերձ, քննարկվող դարաշրջանի վերաբերյալ երբեմն այնուհանդերձ հայտնում են խիստ արժեքավոր տեղեկություններ՝ որպես հիմք ունենալով իրենց ստեղծման ժամանակի գոյություն ունեցած և, հնարավոր է, մեզ չհասած սեպագրերը կամ այլ աղբյուրները: Քննարկվող դարաշրջանի իրադարձությունները լուսաբանելու առումով պատմագիտության մեջ սկզբնաղբյուրների այս խմբի նկատմամբ ավանդականորեն առկա է խիստ բացասական և ժխտողական մոտեցում, երբ, որպես կանոն, ամրագրվում է վերջիններիս ոչ թե պատմական, այլ վիպական արժեքը: Այս կապակցությամբ գտնում եմ, սակայն, որ առկա մոտեցումը մեծապես սխալ է և, չընկնելով իհարկե հակառակ ծայրահեղության մեջ, թերևս կարող ենք փաստել, որ վերջիններիս համընդհանուր ժխտումը ճիշտ մոտեցում չէ, քանի որ հաճախ, թեև վիպականության քողի տակ, այս աղբյուրները հայտնում են խիստ արժեքավոր տեղեկություններ, որոնք ոչ մի կերպ չի կարելի անտեսել:

Արդյունքում գտնում եմ, որ պետք է առաջնորդվել սեպագիր և մատենագիտական

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 9, Gamkrelidze Th. V., Ivanov, V. V. 1990. The Early History of Indo-European Languages. — Scientific American, vol. 262, No. 3, March, Кушнарева К.Х., Марковкин В.И. “Эпоха бронзы Кавказа и Ср. Азии. Ранняя и средняя бронза Кавказа”, Москва 1994, стр. 53, 56:

սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների սինթեզման ու համադրման մեթոդով՝ ի սկզբանե վեր կանգնել ցանկացած տեսակի կանխակալ կարծիքներից և, նախապատվությունը չտալով ոչ մեկին, անկողմնակալ հայացքով ուսումնասիրության ենթարկել բոլոր աղբյուրների հայտնած տվյալներն՝ դրանց քննարկման ու սեպագիր աղբյուրներից հայտնի իրադարձությունների հետ համադրման արդյունքում հասնելով տրամաբանական և հիմնավորված եզրահանգման: Այսպիսով, պետք չէ ընկնել ծայրահեղությունների մեջ: Օրինակ, ինչքան էլ արժեքավոր լինեն Մովսես Խորենացու հայտնած տվյալները, որոշ դեպքերում դրանցում առկա են բացահայտ և հաճախ Պատմահոր կամքից անկախ տեղ գտած սխալներ, իսկ այդ դեպքում ամենևին էլ պետք չէ պնդել այդ տեղեկությունները՝ բացահայտ հակասության մեջ մտնելով հիմնավորված և համընդհանուր ճանաչում ստացած սխեմաների հետ ու համաշխարհային հանրության աչքում արժեզրկելով և ծիծաղելի դարձնելով մեր պատմությունը: Փոխարենը, կարծում եմ, անհրաժեշտ է փորձել գտնել նման տեղեկատվության հայտնման պատճառը և վերջինիս իրական տեղը Հայոց պատմության մեջ՝ իր հերթին չընկնելով հակառակ ծայրահեղության մեջ՝ այդ ամենը համընդհանուր ժխտելով ու հեքիաթային կամ վիպական հռչակելով:

Գլուխ 5
Շումերա-աքքադական ռազմական մեքենան

Ռազմաքաղաքական համայնապատկերի տեսանկյունից շումերա-աքքադական աշխարհն իրենից ներկայացնում էր իրար հաջորդած մի քանի փուլերի ամբողջություն, որոնք, երևույթը որոշակիորեն պայմանական բաժանման ենթարկելիս, կարելի է դասակարգել 4 փուլերի.

1. Շումերական միասնական Ոսկեդար (մ.թ.ա. մոտ 3000-2600 թթ.),
2. Շումերական պառակտված Անկում (մ.թ.ա. մոտ 2600-2300 թթ.),
3. Աքքադական դարաշրջան (մ.թ.ա. մոտ 2.300-2200 թթ.),
4. Շումերական վերածնունդ և վերջնական անկում (մ.թ.ա. մոտ 2200-2000 թթ.):

Շումերա-աքքադական դարաշրջանում այս քաղաքակրթության ներկայացուցիչների ձեռքում գտնվող բանակի բաղադրատարրերը պայմանականորեն կարելի է բաժանել 2 մեծ խմբի.

1. Քաղաքային միլիցիա՝ իր հիմքում քաղաք-պետությունների ռազմական մեքենան ունեցող ռազմական համակարգ, որի դասական կիրառումը մենք տեսնում ենք 1-ին, 2-րդ և 4-րդ փուլերում,
2. Քոչվոր կամ կիսաքոչվոր աշխարհազոր՝ իր հիմքում Արաբական թերակղզուց դուրս եկած սեմիտական ցեղական աշխարհազորի հիման վրա հիմնված ռազմական մեքենա, որն ակնհայտ էր հատկապես 3-րդ փուլում:

«Քաղաքային միլիցիա» տերմինի տակ ամենաընդհանուր իմաստով հասկացվում են քաղաքային իշխանության կազմում գործող ուժային կառույցներն և նրանց ներկայացուցիչները, որոնք կոչված են իրականացնել քաղաքի արտաքին (պատերազմական գործողությունների դեպքում) ու ներքին (պարեկային ծառայություն) անվտանգության ապահովությունը: Մարդկության պատմության ընթացքում քաղաքային միլիցիա ունեցել են գործնականում բոլոր բնակավայրերը, սակայն երևույթն ինքնին, հասկանալի է, իր ավարտուն, կայացած և կատարելագործված տեսքը ստացավ ամենից առաջ հատկապես խոշոր քաղաքներում՝ իրենց ժամանակների այդ յուրօրինակ մեգապոլիսներում: Այս քաղաքները, ինչպես թերևս նաև նրանց հաջորդները, առևտրի և արհեստների կենտրոններ էին, որոնք կարիք ունեին պաշտպանության, այսինքն՝ սրանք կարիք ունեին մի կառույցի, որը կպաշտպաներ իրենց գործունեության պտուղները արտաքին հարձակումներից՝ լինեին դրանք իրենց նման քաղաք-պետություններ, առանձին ավազակախմբեր, քոչվոր ցեղեր, թե՞ առանձին անհատներ: Արդյունքում՝

ստեղծվեցին առաջին «քաղաքային բանակներ»-ը կամ, ըստ առաջարկված տերմինոլոգիայի՝ քաղաքային միլիցիաները: Քաղաքային միլիցիայում, որպես կանոն, ծառայությունն էին իրականացնում հենց տվյալ քաղաքի բնակիչները՝ խաղաղ ժամանակ վարձու, իսկ պատերազմական դրության դեպքում՝ կամավոր կամ զորակոչային սկզբունքներով: Քաղաքային միլիցիայի ռազմիկները ժամանակի ընթացքում աստիճանաբար ձևավորեցին իրենց ռազմական մեքենայի մարտական կիրառման առանձնահատկությունները, ընդ որում քաղաքային միլիցիայի միջին ռազմիկը, այլ հավասար պայմանների դեպքում, որպես կանոն ավելի բարձր միջին մարտական հատկանիշների տեր էր՝ ի հաշիվ բարձր մոտիվացման, «հետևումս տունս է» սկզբունքի համաձայն, լավ զինվածության, քաղաքների բնակիչները, որպես կանոն, նյութապես ավելի ապահովված էին և այստեղ արհեստավորների մակարդակն ու ընդհանուր քանակն ավելի շատ էր, ինչպես նաև խմբակային գործողություններում համագործակցության ավելի բարձր մակարդակի հաշվին:

Շումերական խոշոր քաղաքներից կամ քաղաք-պետություններից էին Ուրուկը, Ուրը, Լագաշը, Քիշը և այլն: Այս քաղաք-պետություններից ամենախոշորներն իրենց քաղաքային միլիցիայի կազմում ունեին մինչև 10.000 ծանր զինված ռազմիկներ, որոնց թիվը բնականաբար քչանում էր հավասար համեմատական քաղաքի ծավալների փոքրացման, երբ ամենափոքր քաղաքները կարող էին ունենալ նույնիսկ մինչև 100 ռազմիկ: Շումերական քաղաքային միլիցիան հանդես էր գալիս դասական ֆալանգային մարտակարգով, որը հետագայում իր մաքուր և ավարտուն տեսքով տեսնելու ենք հունական քաղաք-պետությունների պարագայում: Արդյունքում՝ շումերական ֆալանգը լավ էր գործում հարթ տեղանքում հզոր ճակատային հարված հասցնելիս, սակայն թույլ էր լեռնային կամ կտրտված տեղանքում, շարժուն կամ հեռամարտ մղող հակառակորդի դեմ, ինչպես նաև մարտակարգը խախտելիս կամ մարտադաշտում բարդ մանևրեր իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու պարագայում: Մատնանշված խնդիրներին գոնե մասնակի լուծում տալու նպատակով շումերական ֆալանգի թևերում տեղադրվում էին քառանիվ, ծանրաշարժ մարտակառքեր, սակայն այս միջոցառումը որևէ կերպ չէր լուծում առկա խնդիրները և լավագույն դեպքում միայն որոշակիորեն մեղմում էր դրանք: Քաղաքային միլիցիան, առիթի և համապատասխան պայմանների առկայության դեպքում, բնականաբար կարող էր համալրվել նաև ցեղային աշխարհազորով, թեև կառուցվածքային առումով բանակային այս մասերը գործում էին իրարից առանձին[1]:

Հայ ժողովրդի ռազմական պատմության մեջ առնչությունը շումերական քաղաքներ-պետությունների բանակների հետ մշտական էր և պետք է ասել, որ քննարկվող ժամանակաշրջանի շումերական ֆալանգի դեմ պայքարում հայկական պետական միավորներին հաջողվել էր բավականին գործուն միջոցներ մշակել: Իրոք, ինչպես ցույց է տալիս փորձը, իր ժամանակի հայ զորավարները, լավ ըմբռնելով շումերական ֆալանգի ուժեղ ու թույլ կողմերը, ձգտում էին վերջինիս դեմ մարտի մեջ մտնել լեռնային և (կամ) կտրտված տեղանքում՝ դրանով հասնելով վերջինիս մարտակարգի դասավորության խախտմանը: Իր հերթին, որպես ֆալանգի դեմ կիրառվող հակամիջոց, մեր նախնիները գործադրել են «սեպաձև» դասավորությունը, ինչպես նաև հաջողությամբ կիրառել են հեռամարտը:

Գլուխ 6
Առաջին տիրակալները

Մ.թ.ա. III հազարամյակը նշանակալից էր ողջ մարդկության համար: Հենց այս

[1] Շումերական բանակի մասին տես մասնավորապես՝ Коростовцев М. А. “История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия”, Москва 1983, стр. 184-186; Струве В. В. “История древнего Востока”, Москва 1941, стр. 71-72, 85.

հազարամյակում էր, որ մարդկությունն, ըստ էության, մուտք գործեց իր գիտակցական դարաշրջանը: Հետաքրքիր է, որ հենց այս ժամանակից ի վեր է նաև, որ մենք պատմական սկզբնաղբյուրներից սկսում ենք տեղեկություններ ստանալ կոնկրետ ռազմաքաղաքական իրադարձությունների և քաղաքական գործիչների մասին:

Մարդկության պատմության մեջ հայտնի առաջին տիրակալը լինելու պատիվը, թերևս, կարող են վիճարկել երկու անձիք՝ Եգիպտական թագավորության փարավոն Պենաբուն (մ.թ.ա. 3300-3250) և Էրիդուի էնսի (կառավարիչ) Ալիլումը (մ.թ.ա. 3110-3082): Արդյունքում՝ թեև վերջինս ձևականորեն ավելի քան մեկ հարյուրամյակով ավելի ուշ է սկսել կառավարել, քան Եգիպտոսի առաջին փարավոնը, այնուհանդերձ առայժմ առկա տվյալների մակարդակով դժվար է Պենաբուին միանշանակորեն շնորհել «մարդկության պատմության ընթացքում հայտնի առաջին տիրակալ» տիտղոսը, քանի որ երկու այս տիրակալների կառավարման տարիները հայտնի չեն մեծ ճշգրտությամբ: Մի խոսքով, «մարդկության պատմության ընթացքում հայտնի առաջին տիրակալ» տիտղոսը առայժմ չի կարող տրվել ոչ Պենաբուին և ոչ էլ Ալիլումին, ընդ որում դա մեծապես նաև խորհրդանշական է, քանի որ մարդկության գիտակցական պատմության դարաշրջանը մեծ հաշվով միաժամանակ սկիզբ առավ և Միջագետքում, և Նեղոսի ափերին: Շումերական միասնական Ոսկեդարին վերաբերող կոնկրետ ռազմաքաղաքական տեղեկություններ մենք գրեթե չունենք և, մեծ հաշվով, ընդամենը միայն գիտենք այն, որ իրար են հաջորդել Էրիդույում կառավարած մոտ 50 տիրակալներ, իսկ հենց դարաշրջանի վերջում էլ տեղի է ունեցել մի մեծ ջրհեղեղ, որը ոչ միայն հսկայական տպավորություն է թողել ժամանակակիցների վրա ու մնացել է սերունդների հիշողության մեջ, այլև, ըստ էության, վերջ է տվել Շումերական միասնական Ոսկեդարի դարաշրջանին[1]:

Գլուխ 7
Առաջին հիշատակումը հայերի մասին

Միջագետքը հեղեղած մեծ ջրհեղեղին անմիջապես հաջորդած ժամանակաշրջանում էլ հենց պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում են հայերը, ընդ որում հենց «հայ» անունով, որը նրանցից անբաժան էր մնալու հետագա 5 հազարամյակներում: Սրա հետ միաժամանակ հիշատակվում է նաև հայերի պետական միավորը՝ «Արմե»-ն, մի անվանում, որը հետագա 5 հազարամյակներում անփոփոխ կերպով և միայն նրբերանգային չնչին ու ոչ էական փոփոխություններով ուղեկցելու էր հայերի բոլոր պետական գլխավոր միավորներին՝ իհարկե, որպես օտարների կողմից տրվող անվանում[2]: Այս առումով հատկանշական էր, որ «Արմե» անունով Հայոց պետությունը կոչում էին Էբլա քաղաք-պետության բնակիչները, այսինքն՝ դա օտարի կողմից Հայոց պետությանը տրվող անվանում էր, իսկ ինչ վերաբերվում է հայերին, ապա նրանք իրենց պետությունը կոչում էին հենց այնպես, ինչպես և մինչ այժմ՝ Հայաստան, բնականաբար իր ժամանակից բխող արտահայտչական նրբերանգներով:

Ինչպես արդեն նշվեց, հայերն և Հայաստանը պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում են մ.թ.ա. XXVIII դարում, ընդ որում կարևոր է ընդգծել, որ այդ ու դրան հաջորդող հիշատակություններում մեր առաջ հառնում է արդեն իսկ զգալի կայացածության մակարդակ ունեցող մի ազգ և արդեն իսկ որոշակիորեն ձևավորված մի պետություն: Այսպիսով, թեև հայերի առաջին հիշատակումը պատկանում է մ.թ.ա. XXVIII դարին, որը համաշխարհային պատմության մեջ ինքնին բացառիկ մի արդյունք է, քանի որ հայերը կարող են համարվել ներկայումս գոյություն ունեցող աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, սակայն հավանական է կարծել, որ հայերը գոյություն են ունեցել և

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Սրբազան լեռնաշխարհը», Երևան 2006, էջ 39-43:

[2] Տես՝ Gelb I.J. "Hurrians and Subarians", Chikago 1944, page 94-98; "Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну", ИФЖ, N 4, Ереван 1983; Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005 (այսուհետ՝ Մովսիսյան Ա. Ե. «Սրբազան լեռնաշխարհը», Երևան 2006, էջ 57:

սկսել են կազմավորվել դրանից դեռևս մի քանի հարյուրամյակ նույնիսկ առաջ: Իրոք, եթե մ.թ.ա. XXVIII դարի վերաբերյալ մենք տեղեկություն ունենք արդեն իսկ զգալի կայացածության մակարդակ ունեցող մի ազգի և արդեն իսկ որոշակիորեն ձևավորված մի պետության մասին, ապա պարզ է, որ այդ գործընթացը ոչ թե «օդից» կամ միանգամից է հայտնվել մ.թ.ա. XXVIII դարում, այլ սկիզբ է առել դրանից գոնե մեկ կամ մի քանի հարյուրամյակ առաջ՝ կոպիտ գնահատականներով՝ մ.թ.ա. IV հազարամյակի վերջում կամ մ.թ.ա. III հազարամյակի սկզբում: Այս առումով հարկ է միայն ավելացնել, որ, եթե մ.թ.ա. XXVIII դարի վերաբերյալ մենք ունենք «հայ»-ի և «Արմե» տերմինների առաջին հիշատակումը, ապա արդեն նույն հարյուրամյակի վերջի վերաբերյալ առկա է պատմության մեջ առաջին հաղորդումը հայերի կողմից վարված ռազմական գործողության մասին: Այս կապակցությամբ չի խանգարի մի քանի խոսք ավել ասել:

Գլուխ 8
Հայոց հնագույն պատմության հայեցակարգային աղավաղումը

Ինչպես արդեն նշվեց, արդեն առաջին շումերական աղբյուրները մանրամասն խոսում են ինչպես հայերի, այնպես էլ հայերի առաջին պետության՝ իր բնույթով աստվածապետական պետություն հանդիսացած Հայկական լեռնաշխարհում ստեղծված Արատտայի քրմապետության մասին, իսկ աքքադական և էբլայական աղբյուրների «Արմանում»-ն ու «Արմի»-ն էլ լրացնում են այդ տեղեկությունները[1]: Նույնաբովանդակ տեղեկատվություն են փոխանցում նաև հայկական աղբյուրները, ի դեմս Մովսես Խորենացու և վերջինիս համար սկզբնաղբյուր հանդիսացած պատմիչների[2], ինչպես նաև բաբելոնյան, հունական, ասորական, պարսկական (պահլավական) և այլ աղբյուրների[3]: Այսպիսով՝ հինարևելյան աղբյուրները, ինչպես նաև անտիկ և միջնադարյան պատմական ավանդույթը հայերին ավանդաբար համարել է ապրած Հայկական լեռնաշխարհում մարդկության արարումից անմիջապես հետո կամ, ժամանակակից լեզվով ասած՝ մարդկության գիտակցական պատմության սկզբից: Հայոց հնագույն պատմության նկատմամբ վերաբերմունքը, սակայն, սկսեց փոխվել XIX դարի սկզբից և այս գործընթացը իր գագաթնակետին հասավ նույն դարի վերջին ու հատկապես XX դարի երկրորդ կեսին:

1802 թվականին հայտնաբերվեց հին պարսկական սեպագիրը վերծանելու գաղտնիքը, իսկ հետագա տասնամյակներում էլ մի շարք մասնագետներ կարողացան կարդալ նաև ասորեստանյան և բաբելոնյան արձանագրությունները: Հենց այս ժամանակներում էր, որ Հայաստանի տարածքում ավելի ու ավելի մեծ չափերով սկսեցին հայտնաբերվել արձանագրություններ, որոնք սկզբում, կարծես թե, նման էին ասորեստանյան արձանագրություններին: Հետագայում, սակայն, պարզվեց, որ գիտնականները գործ ունեն արձանագրությունների նոր մի տեսակի հետ, որը հենց այդ ժամանակ էլ անվանվեց ոչ այնքան հաջող, սակայն իր ժամանակի գիտական մակարդակի համար ընդունելի թվացող «ուրարտական» տերմինով: «Ուրարտական» արձանագրությունները վերծանելիս մասնագետները սկսեցին օգտվել ասորեստանյան արձանագրությունների վերծանման ժամանակ կիրառվող մեթոդիկայից և արդյունքում, ոչ այնքան ճշգրիտ ու բառացի, բայց այնուհանդերձ շուտով կարողացան կարդալ դրանց զգալի մասը, ընդ որում՝ մասնագետներին այդպես էլ չզարմացրեց այն հանգամանքը, որ

---

[1] Տեղագրական և տերմինաբանական հարցերի մանրամասն և ժամանակակից վերլուծությունը տես՝ Մովսիսյան Ա. Ե., «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)», Երևան 2005, էջ 16-55, 63-64 և այլն:

[2] «Հայոց պատմություն»-ում Մովսես Խորենացին հայտնում է առնվազն 3 անձանց մասին, որոնք իրենից առաջ գրել են Հայոց պատմությունը: Սրանց շարքում նախ և առաջ պետք է նշել ոչ անհայտ Մար Աբաս Կատինային, որի մասին պատմիչը մանրամասն տվյալներ է հաղորդում աշխատության սկզբում և չի զլանում անդրադառնալ վերջինիս նաև աշխատության այլ մասերում: Մյուսը պատմիչը Անի-Կեմախի քուրմ Օղյումպն է, որի հաղորդումները Խորենացին ևս խիստ բարձր է գնահատում (գիրք 2, գլուխ 48): Եվ վերջապես պետք է նշել նաև Բարդածան Եդեսիացու մասին, որն ապրել է II-III դարերում (գիրք 2, գլուխ 66):

[3] Սրանց մասին Մովսես Խորենացին մանրամասն խոսում է իր աշխատության առաջին գլխում:

արձանագրությունները վերծանվում են որոշակիորեն արհեստական, ոչ խոսակցային լեզվով:

Արդյունքում առաջ քաշվեց որոշակիորեն քաղաքական ենթատեքստ ունեցող և 1960-ականների կեսերին հայերի արթնացող անկախականության շարժմանը հարվածելուն կոչված «Ուրարտական միֆ»-ը, որը դրանից հետո դեռ երկար էր շարունակելու իր գոյությունը և, ըստ էության, լինելով փակուղային, հետագա տասնամյակներում ավելի ու ավելի էր դեպի փակուղի տանելու իրենց ընտրած ուղղության անհեռանկարությունը այդպես էլ չընդունած գիտնականներին: Այսպիսով՝ սկսեցին ակտիվորեն շրջանառվել արհեստական ու փաստացի բովանդակազուրկ «Ուրարտու» ու «ուրարտացիներ» տերմինները, որոնց արդյունքում առաջ քաշվեցին նաև համապատասխան տեսություններ չգիտես որտեղից հայտնված և ուր կորած «ուրարտացի»[1] էթնոսի մասին: Այս գործընթացի գագաթնակետը հանդիսացան ոչ անհայտ Ի. Մ. Դյակոնովի աշխատությունները[2]:

Միայն իրեն հատուկ դոգմատիկ համառությամբ, կրքոտությամբ, անառարկելիության տոն ստացած մոլեռանդությամբ և իր ընդդիմախոսներին գիտական ու գործնական շրջանակներից դուրս մղելու նպատակ հետապնդող անձնական[3] և գործնական[4] հստակ հարձակումների արդյունքում 1960-1980-ական թվականների ընթացքում Ի. Մ. Դյակոնովը խորացավ փակուղային հանդիսացող այս ուղղությունում ավելին, քան որևէ մեկը, ու խորացրեց փակուղային այս տեսությունը ավելին, քան որևէ մեկը արել էր և կաներ նրանից հետո: Արդյունքում՝ արդեն XX դարի վերջին արտասահմանյան խորհրդային ու հետխորհրդային «ուրարտագիտություն»-ը հայտնվեց տեղապտույտի և գաղափարական հստակ ճգնաժամի մեջ: Ի. Մ. Դյակոնովը մահացավ 1999 թվականի մայիսի 2-ին և նրանից հետո մեծապես հենց այս գիտնականի ջանքերով իր «փայլուն» վիճակը պահպանող տեսությունը սկսեց ռեգրես ապրել ու փլուզվել: Պատահական չէ, որ Ի. Մ. Դյակոնովի մահվանից հետո արդեն ավելի քան քսան տարի անց էլ այս ոլորտում և անչափ շատ անպատասխան հարցեր պարունակող «դյակոնովյան» ուղղությունում այդպես էլ չի ասվել սկզբունքորեն որևէ նոր խոսք: Արտասահմանում «ուրարտագիտություն»-ը իջավ դյակոնովյան առաջին տարիների և մինչդյակոնովյան մակարդակին ու շարունակում է մնալ այդ վիճակում առ այսօր[5]:

---

[1] «Էթնոս»-ի անվանումն իսկ խոսում է նրա արհեստականության մասին, քանի որ ակնհայտ է, որ այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե ժողովրդի անվան հետ, այլ մի տերմինի հետ, որը կարգավորում է անձի իրավական հարաբերությունները պետության հետ: Համեմատության համար տես «ռուս» և «ռուսաստանցի» տերմինների տարբերությունը:

[2] Ամենից առաջ՝ Дьяконов И. М “Предыстория армянского народа: (История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э.: Хурриты, лувийцы, протоармяне)”, Ереван, 1968. Մանրամասն տես այստեղ - http://www.gerginakkum.ru/bibliography/diakonov/.

[3] Իր հոդվածներում Դյակոնովը զերծ չի մնում գիտության հետ որևէ կապ չունեցող անձնական բնույթ կրող որակումներից: Մասնավորապես, հանկարծ պարզվում է, որ Կիֆիշինը գրում է. «անհեթեթություններ», իսկ Գ. Բ. Ջահուկյանը, Վ. Վ. Իվանովը և այլք, որոնք հանդես են գալիս «Միգրացիոն տեսության» դեմ, ընդամենը հանդիսանում են. «մերձգիտական շրջանակներ»-ի ներկայացուցիչներ (Дьяконов И. М., Древняя Эбла (раскопки в Сирии), М., 1985, с. 336): Ընդ որում սա գրում է մի մարդ, որն իր հուշերում բացահայտորեն խոստովանում է, որ իր «Մարաստանի պատմություն»-ը գրել է պատվերով (տես՝ Дьяконов И. М., “Книга воспоминаний”, СПб 1995, с 731):

[4] Գիտական մակարդակում Ի. Մ. Դյակոնովին հակադրվելու համար իրենց գիտական ու մասնագիտական կարիերայով հատուցեցին մասնավորապես Սանկտ-Պետերբուրգի համալսարանի դոցենտ **Լև Ալեքսանդրի Լիպինը** (1908-1970), որը կորցրեց հրատարակվելու հնարավորությունը 1966 թվականին և որին Դյակոնովը իր հուշերում ուղղակիորեն մեղադրում է ՆԳԺԿ-ի գործակալ լինելու մեջ (տես՝ Дьяконов И. М. “Книга воспоминаний”, СПб; 1995, с 731 (http://uni-persona.srcc.msu.ru/site/authors/djakonov/posl_gl.htm)), ինչպես նաև **Վիտալի Ալեքսանդրի Բելյավսկին**, որը նույնիսկ բացահայտ չէր էլ վիճում Դյակոնովի հետ, բայց որը նույն այդ Դյակոնովի ջանքերով կորցրեց հրատարակվելու հնարավորությունը 1970 թվականից և ավարտեց իր կարիերան ու կյանքը որպես գիշերային սովորական մի պահակ՝ այդպես էլ չպարզված հանգամանքներում: Դյակոնովի կողմից հալածված անձանց շարքում կարելի է մատնանշել նաև պատմական գիտությունների թեկնածու, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի ամբիոնի գիտական քարտուղար **Ռոստիսլավ Անտոնի Գրիբովին**, որին ի վերջո բարեբախտաբար հաջողվեց «պահել դիրքերը»: Սեփական հուշերում Դյակոնովը որպես իր «անձնական թշնամիներ» է որակում եգիպտաբան և ասորաբան, ներկայումս Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր **Անդրեյ Լեոնիդի Վասոևիչին**, որի դոկտորականը 1960-ականներին ենթարկվեց Դյակոնովի կողմից ուղղորդվող ընդդիմախոսի անհիմն հարձակմանը, բայց որը կարողացավ ժխտել իր ընդդիմախոսների բոլոր հակաթեզերը և հաղթանակ տանել, ինչպես նաև **Անատոլի Գեորգիի Կիֆիշինը**, որը մի քանի տարի տևած հալածանքներից հետո 1970-ական թվականների սկզբից ի վերջո զրկվեց հրատարակվելու հնարավորությունից և ձեռք բերեց այդ իրավունքը միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Հատկանշական է, որ Կիֆիշինի հոդվածը ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի «Բանբեր»-ում տպագրելու համար Դյակոնովի ուղարկած «զայրալից նամակի» արդյունքում սեփական պաշտոնով հատուցեց հանդեսի գլխավոր խմբագիր **Սերգեյ Լվովի Ուտչենկոն**, իսկ Կիֆիշինին էլ հեռացրեցին ինստիտուտից: Մանրամասները տես այստեղ՝ Акимова Л. И., “Гениальный Никто”, Киев, 2001:

[5] Արևմտյան ու նախևառաջ ԱՄՆ հայագիտությունը ուներ և ունի իր խնդիրները, որոնք, բարեբախտաբար, ուղղակի ազդեցություն չեն ունեցել և ունենում հայաստանյան հայագիտության վրա: Այնուհանդերձ հարկ է ավելացնել, որ, գործելով հայտնի քաղաքական պատվերի շրջանակներում, ԱՄՆ հայագիտությունը հստակ խնդիր է դրել ամեն կերպ խունացնել Հայոց հնագույն պատմությունը

Այսպիսով՝ հայագիտությանը հասցվեց զգալի վնաս, քանի որ արդյունքում պարզվեց, որ մի քանի սերնդի գիտնականներ իրենց ջանքերն ու եռանդը ծախսել են, ըստ էության, փակուղային հանդիսացող մի տեսության վրա և, լավագույն դեպքում, գիտությանը չեն տվել որևէ օգուտ: Հայագիտությանը հասցված վնասը, սակայն, դժբախտաբար, միայն սրանով չսահմանափակվեց և հասցվեց ևս մեկ ու ծանր վնաս:

«Ուրարտու»-ի և «ուրարտացիներ»-ի ի հայտ գալը անհրաժեշտություն առաջացրեց «տեղավորել» անառարկելիորեն գոյություն ունեցած այս պետությունը մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի հայոց այլ պետությունների հետ նույն ժամանակատարածային հարթության մեջ: Արդյունքում, համարվելով «հնարովի և վիպական», Հայոց հնագույն պատմության համակարգից տառացիորեն դուրս շպրտվեցին մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի բոլոր հաղորդումները Հայոց այլ պետությունների վերաբերյալ: Պատահական չէ, որ 1960-1980-ական թվականներին լայն թափ ստացավ վերոհիշյալ տեղեկությունների ուսումնասիրությունը հենց «վիպական» մակարդակում[1]: Արդյունքում՝ Ի. Մ. Դյակոնովի հեղինակության և վարչահրամայական ճնշման ազդեցության տակ զարգացավ ու ամրապնդվեց որոշակիորեն քաղաքական աստառ ունեցող «Միգրացիոն տեսությունը», որը պատմական իմաստով ուղղակի ոչնչացրեց մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի բոլոր և նույնիսկ ամենաարժեքավոր տեղեկությունները հայոց այլ պետությունների վերաբերյալ՝ վերջ, անառարկելիորեն ընդունվեց, որ բոլոր այն տեղեկությունները, որոնք պատկանում են «մինչուրարտական» ժամանակի Հայոց պատմությանը, «հնարովի են և վիպական»[2]: Այս առումով հատկանշական էր, որ խորհրդահայ և ԽՍՀՄ գիտական միտքը զգայուն կերպով հետևում էր «Միգրացիոն տեսության» վայրիվերումներին:

Այսպես, «Միգրացիոն տեսության» կողմնակիցները սկզբում պնդում էին, որ Հայկական լեռնաշխարհում հայերը հայտնվել են միայն մ.թ.ա. VII դարի վերջում՝ պատմության ասպարեզից դուրս մղելով «ուրարտացիներ»-ին և «Ուրարտու»-ն: Հետագայում, սակայն, հաշվի առնելով «Միգրացիոն տեսության» հիմքերը կասկածելիորեն խարխլող «Արմե/Ուրմե» պետության և «արմե/ուրմե»-ների մասին մ.թ.ա. XII դարին վերաբերվող սեպագրերի հաղորդումները[3], «Միգրացիոն տեսության» կողմնակիցները բարեհաճեցին մասնակի «համաներում» հայտարարել մի քանի հարյուրամյակով՝ Հայկական լեռնաշխարհում հայերի «հայտնվել»-ը տեղափոխելով մ.թ.ա. XII դար և, ըստ էության, համակերպվելով, բայց այդպես էլ վերջնականապես չընդունելով մ.թ.ա. XII-VII դարերին վերաբերվող մատենագիր-գրավոր տեղեկությունների հավաստիությունը:

Առաջ անցնելով և որոշակիորեն թեմայից շեղվելով ասենք, որ առանց այդ էլ խարխուլ ու հիմնազուրկ «Միգրացիոն տեսությանը» նոր հարված հասցրեցին խեթական աղբյուրներից հայտնի դարձած և աստիճանաբար գիտական մեծ շրջանառություն

(տես՝ Այվազյան Ա. Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն, Երևան, 1998):

[1] Տես օրինակ՝ Աբեղյան Մ., Երկեր, հատոր 1, Երևան, 1966, Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, գիրք 1, Երևան, 1972 և այլն:

[2] Այս առումով հարկ է նշել, որ նմանատիպ խնդրի առաջ կանգնել են նաև այլ ժողովուրդներ, որոնց պատմությունը ուսումնասիրվում էր գաղութային իշխանությունների կողմից հովանավորվող պատմաբանների կողմից, պատմաբաններ, որոնք իրենց առջև հստակ խնդիր էին դրել արժեզրկել տեղական և գաղութացված ժողովրդի պատմությունը, այն հնարավորինս զրկել հերոսականությունից՝ արդյունքում գաղութացված նույն այդ ժողովրդին ներարկելով անլիարժեքության ու «մեծ եղբորը» մշտապես ենթակա լինելու տրամադրություն: Այսպես, XIX դարում և XX դարի առաջին կեսին նմանատիպ մի գործընթաց ընթացավ, օրինակ, Հին Հնդկաստանի պատմության առնչությամբ, երբ անգլիական գաղութարարներն, ինչպես մեր պարագայում եղավ ցարական և խորհրդային իշխանությունների կողմից, մինչ Մուարյան տերության ժամանակաշրջանն ընկած պատմական գործնականում ողջ տեղեկատվությունը Հին Հնդկաստանի վերաբերյալ համարեցին «հնարովի ու վիպական»՝ զերծ ամեն տեսակի պատմական արժեքից (տես՝ V. Smith "The Early History of India", Ox., 1924, p. 4, 28.): Արդյունքում՝ միայն անկախ և ուժեղ Հնդկաստանի առկայությունն ազատագրեց Հին Հնդկաստանի պատմությունն այս արժեզրկումից, ինչի գիտական ամրագրումը պատկանում է արդեն XX դարի երկրորդ կեսին: Այս առումով հատկանշական է, որ ԽՍՀՄ պատմագիտական միտքը, արդարացիորեն քննադատելով անգլիական գաղութարարների հակագիտական ողջ վերոնշյալ մոտեցումը Հին Հնդկաստանի պատմության վերաբերյալ (տես օրինակ՝ Бонгард-Левин Г. М., Ильин Г. Ф. “Индия в древности”, Москва, 1985, стр. 130), մեր պարագայում այնուհանդերձ առաջնորդվում էր լիովին նույն սկզբունքներով:

[3] Տես օրինակ՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան, 1968 էջ 239, 293 և այլն:

ստացած հաղորդումները «Հայա(սա)»-ի վերաբերյալ[1], էբլայական սեպագրերից հայտնի հաղորդումները «հայ» էթնոսի ու «Արմի» պետության մասին[2], ինչպես նաև շումերա-աքքադական աղբյուրների «Արատտա»-ն, «Հայ»-ը և «Արմանում»-ը[3]: Հարցին վերջնական պարզաբանում տալու համար ավելացնենք, որ ներկայումս Հայոց հնագույն պատմությունը Հայաստանում ազատվել է «Դյակոնովյան կապանքներ»-ից և «Միգրացիոն տեղապտույտ»-ից ու հաջողությամբ զարգանում է, այն դեպքում, երբ «Միգրացիոն տեսության» հետքերով գնացող Հայոց հնագույն պատմության մասնագետները արտասահմանում հայտնվել են խորը տեղապտույտի մեջ և, գիտակցելով հանդերձ սեփական ուղղության անհեռանկարությունը, սակայն գերի մնալով թղթին հանձնված հազարավոր էջերին ու ձեռք բերված գիտական կոչումներին, որպես կանոն, ոչինչ ավելին չեն անում, քան ծայրահեղ և անտրամաբանականության աստիճանի հասնող պահպանողականության դիրքերից արդեն փլատակների կույտի վերածված «Միգրացիոն տեսության»-ը հերթական հարվածները հասցնող փաստերը կուրորեն ժխտելը, իսկ հայաստանյան մասնագետներին էլ՝ «ազգայնամոլության» մեջ մեղադրելը[4]:

Գլուխ 9
Պատերազմը շումերական քաղաք-պետությունների դեմ

Մ.թ.ա. մոտ 2710 թվականին ապագա Ուրուկի տեղում այդ ժամանակ դեռևս գոյություն ունեցող ընդամենը միայն տեղական տաճարի քուրմ Մեսքիագաշերի (մ.թ.ա. մոտ 2724-2692) գլխավորած Ուրուկի բանակը (մոտ 10.000) ասպատակեց Հայոց Միջագետքը, Աղձնիքը ու Կիլիկիայի հարավ-արևելքը, սակայն, ենթարկվելով Արատտայի քրմապետության բանակի (մոտ 2.000) անկանոն հարվածներին, նահանջեց[5]: Սկիզբ էր առնում մի ընդհարում, որը հսկայական հետևանքներ էր ունենալու, քանի որ շումերական քաղաք-պետությունների փառասեր տիրակալները, անձնական փառքի ձգտումից զատ բնականաբար առաջնորդվելով նաև իրենց պետությունների ռազմաքաղաքական շահերով, այդուհետ ամեն կերպ ձգտելու էին սեփական վերահսկողությունը հաստատել շումերական տնտեսական կյանքում հսկայական դեր և նշանակություն ունեցող հյուսիսի՝ Հայկական լեռնաշխարհի, նկատմամբ:

Մեսքիագաշերին նրա մահից հետո հաջորդեց իր որդի Էնմերքարը (մ.թ.ա. մոտ 2692-2650), որը, եռանդով շարունակելով հոր գործը, իր կողմից կառավարվող տաճարի շուրջ կենտրոնացած բնակավայրը պատեց պարսպով և, ըստ էության, հիմնադրեց Ուրուկը՝ արդյունքում հասնելով ավելի մեծ ուժի, իշխանության ու փառքի, քան իր հայրն էր: Այս ընթացքում էր, որ Էնմերքարը հարված հասցրեց Համազիի իշխանությանը և ոչնչացրեց այն: Իր հերթին, ցանկանալով կանխել հարավի հզորացումը, մ.թ.ա. մոտ 2680 թվականին Արատտայի քրմապետության մեծ քուրմ Էնսուխքեշդանայի (մ.թ.ա. մոտ 2700-2650) գլխավորած Արատտայի քրմապետության բանակը իջավ լեռներից և ուղղվեց դեպի կենտրոնական Միջագետք: Իմանալով այս մասին՝ Ուրուկի բանակը շարժվեց հայերին ընդառաջ: Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 2680 թվականին Էրեշի ճ-մ-ում (Եփրատի ափին) Էնմերքարի գլխավորած Ուրուկի բանակը (մոտ 10.000) հետ մղեց

---

[1] Տես մասնավորապես՝ Ադոնց Ն., «Հայոց պատմությունը», Երևան, 1972, Խաչատրյան Վ. Ն., «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում», Երևան, 1998, Ավետիսյան Հ. Մ., «Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ», Երևան, 2002, Քոսյան Ա. Վ., «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)», Երևան, 2004 և այլն:

[2] Տես մասնավորապես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, "Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну", ИФЖ, N 4, Ереван 1983, Ուլուբաբյան Բ. Ա., Զրուցարան, Երևան, 1991 և այլն:

[3] Տես մասնավորապես՝ «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, Ադոնց Ն., «Հայոց պատմությունը», Երևան, 1972, Гамкрелидзе Т.В., Иванов В.В., “Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры”, Тбилиси 1984 և այլն:

[4] Խնդրի մանրամասն քննարկումը տես այստեղ՝ Шнирельман В.А., “Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье”, Москва 2003.

[5] «Նիպպուրյան արքայական ցանկ»:

Էնսուխքեշդանայի գլխավորած Արատտայի քրմապետության բանակին (մոտ 10.000)[1]: Ավելին, կարծես թե, անհրաժեշտություն էր առաջանում պատժել հանդուգն լեռնականներին և ահա կարճ ժամանակ անց մ.թ.ա. մոտ 2675 թ-ին Ուրուկի համալրված բանակը Էնմերքարի գլխավորությամբ առաջացավ դեպի Հայաստան ու պաշարեց Արատտայի մայրաքաղաք Մեծամորը (Արարատ, Արագածոտն գավառ, Քասախ գետի աջ վտակ Մեծամորի ափերին)[2]:

«*Քաղաքից տեղում էին նետեր, ինչպես անձրևն ամպերից, պարսատիկների քարերն անձրևի կաթիլների պես Արատտայի պարիսպներից աղմկոտ սուլոցով թափվում էին ողջ տարին: Օրերն անցնում էին, ամիսները երկարում, տարին բոլորեց մի ողջ շրջան»*,- հետագայի վերաբերյալ տխրությամբ և իրենց կրած անխուսափելի անհաջողության գիտակցմամբ հայտնում էին շումերական տրտմած արձանագրությունները, որոնք այնուհետև պատմում են, որ արշավանքի ղեկավարը օգնություն բերելու համար կոչով դիմում է իր բանակին, այդ թվում նաև վարձկաններին, սակայն բոլորը հրաժարվում են և միայն Լուգալբանդան է, որ համաձայնում է ու մեկնում է: Արդյունքում՝ թեև այն, թե ինչպես է ավարտվում այս պատմությունը, հայտնի չէ, քանի որ բնագրի վերջին հատվածը վնասված է, սակայն հաստատապես հայտնի է, որ ի վերջո արշավանքը նախաձեռնած Էնմերքարը ստիպված է եղել նահանջի հրաման տալ: Այստեղ, մի պահ ընդհատելով պատումը, պետք է անել ռազմաաշխարհագրական բնույթի մի կարևոր ընդհանրացում, որը հետագայում մեզ շատ է պետք գալու և որի օրինակներին մենք հետագայում շատ ենք հանդիպելու՝ ինչպես Հայաստանի ու իր հարևան երկրների, այնպես էլ այլ լեռնային երկրների ու նրանցից ավելի ներքև տեղավորված հարևանների պարագայում:

Գլուխ 10
Լեռնականի ուժը

Բանն այն է, որ լեռնային երկրները ամենատարբեր սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով ավելի դժվարությամբ են հանդես գալիս որպես մեկ ամբողջություն, քան դաշտավայրերում՝ հարթ տարածությունում, տարածվող երկրները: Արդյունքում՝ հաճախ են իրավիճակները, երբ, այլ հավասար պայմանների առկայության դեպքում, լեռնային երկրների հետ հարաբերությունում ռազմաքաղաքական առավելությունը, ի հաշիվ ավելի բարձր կենտրոնացվածության, պատկանում է հարթավայրում գտնվող պետությանը, իսկ լեռնականներն էլ, որպես կանոն, միայն դժվարությամբ պաշտպանվում են: Այսպես է, օրինակ, Տիբեթի իշխանությունների և չինական պետական միավորների, Աֆղանստանի ու հարավից, հյուսիսից և արևմուտքից նրան տարբեր ժամանակներում շրջապատած հարևանների, Կովկասյան լեռնականների ու հիշատակված լեռնաշղթայից հարավ և հյուսիս տարածվող ուժերի, շոտլանդիացիների ու նրանից հարավ տարածվող իշխանությունների հարաբերությունների պատկերը և այլն: Մի խոսքով, սա մի օրինաչափություն է, որը ուղղակի պետք է հաշվի առնել: Միաժամանակ, սակայն, առկա է նաև մեկ այլ օրինաչափություն:

Բանն այն է, որ լեռնականները, ի տարբերություն հարթավայրերի նստակյաց բնակիչների, որպես կանոն, ավելի մարտունակ են և, այլ հավասար պայմանների դեպքում, ռազմական արդյունավետության միջին օգտակար գործունեության գործակիցը նրանց մոտ ավելի բարձր է: Արդյունքում, երբ հարթավայրում գտնվող

[1] Այս ճակատամարտի աղբյուր է հանդիսացել շումերական «Էնմերքարը և Էնսուխքեշդանան» շումերական բնագիրը, որի այլաբանական բնույթի պատճառով այն այստեղ բերելը իմաստ չունի: Համառոտ միայն նշենք, որ Արատտայի քրմապետության բանակի արշավանքը դեպի հարավ տեղի է ունեցել Համազի կործանված երկրի խնդրանքով, սակայն Էրեշ քաղաքի մոտակայքում տեղի է ունենում անորոշ ելքով ռազմական բախում, որից հետո, ըստ շումերական տեսակետի, Արատտայի տիրակալն ընդունում է Էնմերքարի առաջնությունը՝ կոչելով նրան «մեծ եղբայր»:

[2] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, էջ 59:

պետությունը, որը, ինչպես նշվեց վերևում, այլ հավասար պայմանների դեպքում ունի ռազմաքաղաքական առավելություն, հայտնվում է քաղաքական վայրիվերումների անկայունության փուլում, այսինք այս կամ այն պատճառով կորցնում է միասնական ուժով հանդես գալու հնարավորությունը, թեկուզ և իրավաբանորեն լինելով միասնական, առավելությունն անցնում է լեռնականներին, որոնք լեռներից իջնում են հարթավայր ու իրենց տիրապետությունն են հաստատում այնտեղ: Այս սխեման, անչափ կարևոր է ոչ միայն այս, այլև հետագա իրադարձությունները լավ պատկերացնելու համար, դրա համար էլ ես հատուկ ուշադրություն եմ հրավիրում վերջինիս վրա և առաջարկում եմ հաշվի առնել այն, քանի որ հիշատակված օրինաչափությանը մենք հետագայում անընդհատ անդրադառնալու ենք: Եվ այսպես մ.թ.ա. XXVII դարի առաջին կեսին, երբ ուժեղ ջրհեղեղից հետո շումերական Ոսկեդարը իր հոգեվարքն էր ապրում, Եվրասիան առաջին անգամ ականատես եղավ հիշատակված օրինաչափության կիրառմանը, երբ լեռնական երկիրը, իր ռազմաքաղաքական հզորությամբ ընդհանուր առմամբ զիջելով հարթավայրային հարևանին, այնուհանդերձ անցավ ակտիվ գործողությունների:

Իրոք, դատելով ըստ ամենայնի, Էնմերքարի անհաջող արշավանքը դեպի հյուսիս խիստ բացասաբար էր ազդել նրա դիրքերի ամրության վրա տեղում և մեծացրել էր նրանից դժգոհ ռազմիկների քանակությունը: Որպես հետևանք այս ամենի՝ նույն այն Լուգալբանդան, որը դեռևս Մեծամորի պաշարման ժամանակ համաձայնեց լինել Ուրուկի տիրակալի սուրհանդակը, դավադրություն կազմեց և մ.թ.ա. մոտ 2650 թվականին գահընկեց արեց Էնմերքարին: Արդյունքում՝ Ուրուկի հիմնադիր տիրակալի գահատոհմը հեռացավ քաղաքի կառավարումից և Ուրուկի լուգալ հռչակվեց իր կյանքը որպես հասարակ հովիվ սկսած Լուգալբանդան (մ.թ.ա. մոտ 2650-2638): Իր հերթին, սակայն, Մեծամորի պաշարումը և դրան ուղեկցող իրադարձությունները հայերի հետ հարաբերություններում շումերների համար անհաշտ թշնամության դուռ էին բաց արել ու հայերն այդ հանգամանքն աչքաթող անել ոչ մի կերպ ուղղակի չէին կարող:

Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 2650 թվականին Արատտայի քրմապետության մեծ քուրմ Դումուզիի (մ.թ.ա. մոտ 2650-2600) գլխավորած Արատտայի քրմապետության բանակը ձեռք բերեց մի մեծ հաջողություն՝ Ուրուկի բանակից գրավելով Ուրուկը (Հարավային Միջագետք՝ Եփրատի աջ ափին), ինչի արդյունքում քաղաքն և իր հարակից շրջանները ընկան Արատտայի քրմապետության գերիշխանության տակ[1]: Հետագայի վերաբերյալ տվյալները խիստ սակավ են և հատվածական, բայց այնուհանդերձ հայտնի է, որ Հայկական բանակը չամրացավ Ուրուկում, այլ ի վերջո թողեց այս քաղաքն ու հետ քաշվեց դեպի հարազատ լեռները, ինչից հետո տեղում ամրացավ Լուգալբանդան: Հարկ է նշել, որ Լուգալբանդան իր քաղաքական նախնիներին ամեն կերպ արժանի մի տիրակալ էր, բայց այս առումով ուշագրավն այն է, որ, անձնական փորձով հիանալի իմանալով Արատտայի քրմապետության հետ պայքարի ծանր և անհեռանկար բնույթը, վերջինս հյուսիսում ամեն կերպ խուսափեց հարաբերությունների հետագա սրումից՝ հիմնականում զբաղվելով ներքին կամ, առավելագույնը, համաշումերական խնդիրների կարգավորմամբ: Այս առումով հատկանշական է, որ նույն քաղաքականությունը շարունակեց նաև վերջինիս որդի և հաջորդ Գիլգամեշը (մ.թ.ա. մոտ 2638-2626), որը, հետ մղելով Քիշի ոտնձգությունները ու գերիշխանության հասնելով Հարավային Միջագետքում՝ այնուհանդերձ որևէ կերպ չոտնձգեց հայերի ուղղությամբ՝ Արատտայի քրմապետության նկատմամբ դրսևորելով պաշտանմունքի հասնող խորը խոհափիլիսոփայական հարգանք:

Շումերական քաղաքակրթության ճգնաժամը, սակայն, չնայած հայերի հեռանալուն, շարունակվում էր, իսկ, քանի որ դա անխուսափելիորեն ունենալու էր իր հետևանքները, հայերի փոխարեն հայտնվեցին նոր լեռնականներ՝ խոսքը Էլամի մասին է: Մանրամասները այս անգամ ևս հայտնի չեն, սակայն փոխարենը արդյունքը մեծ հաշվով պարզ է:

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, էջ 57:

Գլուխ 11
Հայկ և Բել

Եվ այսպես, երկարատև պատերազմները համայնքների միջև ծայրահեղ թուլացրեցին շումերական քաղաք-պետությունները, ինչի արդյունքում, համաձայն «Նիպպուրյան արքայացանկ»-ի[1], գերագահությունն ի վերջո անցավ էլամական Ավանին: Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 2500 թվականին մենք արդեն տեսնում ենք, որ շումերական արքայացանկ է «ներխուժել» Էլամի արքա Մեսիլիմը (մ.թ.ա. մոտ 2500 - ուղ. 2492), որը նստում էր Ավանում, սերում էր Դեր քաղաքից և հանդես է գալիս որպես Քիշի լուգալ[2]: Իրականում, սակայն, բավականին հիմքեր կան ենթադրելու, որ վերջինիս իշխանության տակ են եղել ոչ միայն Էլամը և Քիշը:

Այսպես, Լագաշում գտնվել է Մեսիլիմի անձնական իրերից մեկը և հայտնաբերվել են մի շարք առարկաներ, որոնք մակագրվել են Մեսիլիմի կողմից: Բացի սրանից, Մեսիլիմը, որպես հաշտարար դատավոր, հանդես է եկել այսպես կոչված «Գուեդենի տարածք»-ի վերաբերյալ Լագաշի և Ումմայի միջև մղվող հողային վեճում, որի կապակցությամբ վիճաբանությունը, իսկ ավելի հավանական է՝ պատերազմը, շարունակվում էր մի քանի տասնամյակ[3]: Եվ այսպես, մենք ունենք մի տիրակալ, որի իշխանության տակ են գտնվում Էլամը, ինչպես նաև Լագաշը, Ումման, Ադաբը, Քիշը և սրանց հարակից տարածքները: Սա համապատասխանում է Հարավային և Կենտրոնական Միջագետքներին: Միաժամանակ հարկ է նշել, որ, եթե Մեսիլիմի գոյության հետքերը Հյուսիսային Միջագետքում դեռևս չեն գտնվել, ապա, հաշվի առնելով քաղաքական զարգացումների հավանական մոդելը, ամենևին էլ չի կարելի բացառել, որ Մեսիլիմի առնվազն գոնե ձևական գերիշխանությունը չի ընդունել նաև Միջագետքի մնացած՝ հյուսիսային, մասը: Այսպիսով՝ արդեն մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում հայերին հարավից հարևան դարձավ մի ուժեղ և լայնարձակ իշխանություն ունեցող, թեև պատմության մեջ այնուհանդերձ ոչ այնքան հայտնի ռազմաշունչ մի արքա, որի գործունեությունն էլ հենց իրենից ներկայացնում է «դարաշրջանի մեխն» ու որի նույն այդ գործունեությունն էլ հետագայում իր արձագանքը գտավ պատումների «Բաբելոնյան աշտարակ» շարքում: Այս ամենի ֆոնին սխալված չենք լինի նաև, եթե պնդենք, որ, ի դեմս մատենագիր-գրավոր աղբյուրներից հայտնի «Բել»-ի[4], մենք գործ ունենք հենց Մեսիլիմի հետ:

Հատկանշական է, որ Մեսիլիմի՝ Արևելքի իրապես առաջին այդ բռնակալի, «շումերական ազատության» առաջին այդ խեղդողի և Միջագետքում կենտրոնացված պետություն ստեղծելու առաջին այդ եռանդուն ջատագովի, գործունեությունը, ինչպես նաև հենց նրա պետությունն իսկ այն աստիճան էին տպավորել ժամանակակիցներին, որ դրա արձագանքները զգացվում են նաև հազարամյակներ անց: Այսպես, օրինակ՝ Մովսես Խորենացին մեզ է փոխանցում տեղեկատվություն, որը, կիրառելով համադրման մեջ և դիտարկելով այն իր ժամանակի ժամանակատարածային կոնկրետ հարթությունում, ստանում է լրիվ որոշակի ռազմաքաղաքական մի իմաստ[5]:

Արդյունքում պարզ է դառնում, որ միջագետքյան քաղաքների հենց այս երկարատև և ավերիչ պատերազմների արձագանքներն են, որ պահպանվել են Մովսես Խորենացու մոտ, իսկ դրան հաջորդած պատմության մեջ հայտնի միջագետքյան քաղաքների քիչ թե

---

[1] Տես՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, էջ 57, Коростовцев М. А. “История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия”, Москва 1983, стр. 170-171.

[2] Քննարկվող ժամանակաշրջանում՝ քաղաքի ավագանու կողմից ընտրվող կառավարիչ-զորավարի տիտղոսը:

[3] Дьяконов И. М. “История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации”, Москва 1983, с. 195, 198.

[4] «Բել» տերմինը նշանակում է ընդամենը կառավարիչ, քաղաքի տիրակալ: Այս ամենի ֆոնին խիստ հատկանշական է, որ Մեսիլիմը եղել է Քիշի, ինչպես նաև մեծ հավանականությամբ, այլ միջագետքյան քաղաքների լուգալը: Իհարկե, տերմինն ունի ավելի ուշ-սեմիտական բովանդակություն, բայց, ի դեմս այդ փաստի մենք գործ ունենք ընդամենը տերմինների աղավաղման և մատենագիր-գրավոր սկզբնաղբյուրներում դրանց աղավաղված արտացոլման հետ:

[5] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 10:

շատ կայուն առաջին միավորումն իրականացրած Էլամի ու Միջագետքի արքա Մեսիլիմի գործունեությունն է, որ Պատմահոր կողմից ընկալվել է որպես. «*… և Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել*»: Միաժամանակ հարկ է նշել, որ այս սխեմայում լիովին տեղավորվում են և Հայկ Նահապետի գործողությունները, որը չհամակերպվեց այս ամենի հետ, և նոր արքայի «աշխարհանվաճ» նկրտումները, որը ցանկացավ հնազանդեցնել նաև Հայկին ու նվաճել նրա երկիրը:

Այս ամենի ֆոնի վրա կարելի է ենթադրել, որ Արատտայի քրմապետությունը, որը, ելնելով սեփական շահերից, բնականաբար ամեն կերպ ձգտում էր պահպանել միջագետքյան քաղաքների մասնատվածությունը, օգնել է տեղացիներին Էլամի թագավորության դեմ պայքարում, իսկ Հայկն էլ եղել է հայկական օժանդակ զորաբանակի ղեկավարը հարավում: Ինչ վերաբերում է Բաբելոն քաղաքին, որն արձանագրություններում առաջին անգամ հիշատակվում է այս դեպքերից միայն մոտ 200 տարի հետո, այն էլ որպես երկրորդական մի քաղաք, ապա դա ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ այն հիշատակված է Աստվածաշնչում և, բացի այդ, հետագա հազարամյակներում այն Միջագետքի ամենահայտնի քաղաքն էր ու պատմիչների կարծիքով ցանկացած միջագետքյան տիրակալ բնականաբար հենց այն պետք է ունենար որպես իր մայրաքաղաք: Այս ամենի ֆոնին, ի դեպ, արդեն ամենևին էլ զարմանալի չէ, որ «Բել»-ը Հայոց Նահապետի բանակի ուղղությամբ է շարժվում հենց հետևակ բանակի մեծ բազմությամբ, քանզի ռազմական պատմության բնագավառում գոնե տարրական գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր ոք կհաստատի, որ մ.թ.ա. XXVI–XXV հարյուրամյակների Մերձավոր Արևելքի առանց բացառության բոլոր բանակները դեռևս չունեին հեծելազոր և, որպես կանոն, կազմված էին բացառապես միայն հետևակից:

Եվ այսպես մ.թ.ա. մոտ 2500 թվականին Էլամին հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել Միջագետքի նկատմամբ, այսինքն՝ ստեղծվեց Իրանական լեռնաշխարհի հարավն ու Միջագետքը ընդգրկող մի պետություն, որն իր ռազմական հնարավորություններով գերազանցում էր Արատտայի քրմապետությանը: Այս պայմաններում հասկանալի էր, որ մեծ պատերազմը ամենևին էլ սարերի հետևում չէր և այն, իրոք, շուտով պայթեց: Արդյունքում՝ տեղի ունեցավ Հայ ժողովրդի ռազմական պատմության ամենաուշագրավ և արժեքավոր դրվագներից մեկը՝ մ.թ.ա. 2492 թվականի օգոստոսի 11-ի Հայոց ձորի ճակատամարտը: Մինչ առանձին նկարագրմամբ այս ճակատամարտին անդրադառնալը, սակայն, մի քանի խոսք վերջինիս վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ այս ճակատամարտը ավանդականորեն համարվել է վիպական և հեքիաթային, սակայն ուշադիր ուսումնասիրողը այստեղ ոչ մի «հեքիաթային» տարր չի գտնի, քանզի մարտական գործողությունները ու դրան նախորդող և հաջորդող իրադարձությունների նկարագրությունը նման ենթադրության որևէ հիմք չի թողնում: Ինչ վերաբերում է այս ճակատամարտի թվականին, ապա տոմարագիտական հաշվարկներով վաղուց արդեն հիմնավորվել է վերջինիս կոնկրետ տարին, ամիսը և օրը:

Իր հերթին, «հեքիաթային», այն էլ զգալի վերապահումներով, կարող են համարվել թերևս միայն հաղորդումները «երկնադեզ հսկաների» և «հավերժ քաջերի» մասին, սակայն ակնհայտ է, որ «երկնադեզ հսկաներ» և «հավերժ քաջեր» ասելով Մովսես Խորենացին կամ այն աղբյուրը, որից օգտվել է նա, առաջին դեպքում ուղղակի ուզեցել են ընդգծել հակառակորդի բանակի ընտիր կազմը ու նրանում հատկապես հաղթանդամ ռազմիկների մեծ քանակությունը, իսկ երկրորդում էլ, ըստ երևույթին, նկատի է ունեցվում հետագա Աքեմենյանների և Սասանյանների Մատյան գնդի նման մի զորամասի մասնակցությունը, որի կազմը, ինչպես հայտնի է, անփոփոխ էր ու այն անվանվում էր նաև «անմահների գունդ»: Ըստ երևույթին Մեսիլիմի «երկնադեզ հսկաներից» և «հավերժ քաջերից» կազմված այս զորագունդը հանդիսացել է հետագա աքքադական 5.400 հոգանոց վարձկան-մշտական զորաբանակի նախատիպը, որն էլ հետագայում ավելի

զարգացած տեսքով, ի դեմս «անմահների» «Մատյան գնդի», հանդիպում ենք Աքեմենյանների ու Սասանյանների բանակներում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

2492 օգոստոսի 11 – ***Հայոց ձորի ճ-մ***[1] (Վասպուրական նահանգ, Տոսպ գավառ, Վանա լճի արևելյան ափին, Խոշաբ գետը Վանա լիճը թափվելու տեղից ոչ հեռու)[2]

Միջագետքին տիրած Էլամի արքա Մեսիլիմը, որն արդեն հնարավորություն էր ստացել կենտրոնացված ձևով տնօրինել տեղի ուժերը, Արատտայի քրմապետությունից պահանջեց ընդունել իր գերիշխանությունը, սակայն ստացավ մերժում: Ի պատասխան դրա՝ Մեսիլիմի գլխավորած Էլամի թագավորության բանակը (50.000) երկու զորասյունով ներխուժեց Արատտայի քրմապետության տարածք, ընդ որում վերջինս այնքան վստահ էր իր ուժերին, որ որոշեց ճակատամարտ տալ միայն իր գլխավորած գլխավոր զորասյունով:

Հայկական բանակի առաջնորդ Հայկը, Կադմոսի հետախուզական ջոկատից տեղեկանալով, որ թշնամին երկիր է ներխուժել հենց երկու զորասյունով, որոշեց գլխավոր զորասյան դեմ ճակատամարտ տալ մինչև նրանց միավորվելը՝ հակառակորդի թվական գերակշռությունը գոնե մասնակիորեն չեզոքացնելու մտայնությամբ: Իր հերթին, Հայկը ճակատամարտի համար ընտրեց այնպիսի վայր, որտեղ Հայկական բանակը կունենար դիրքային առավելություն: Այդ նպատակով ընտրվեց Խոշաբ գետի լեռնահովիտներից մեկը, որտեղ էլ Հայկական բանակը (մոտ 15.000) ամուր պաշտպանական դիրքեր գրավեց և փակեց թշնամու բանակի առաջխաղացման ճանապարհը:

Օգոստոսի 11-ին թշնամու բանակը մոտեցավ Հայկական բանակի դիրքերին և, հույս դնելով թվական գերակշռության վրա, պատրաստվեց հընթացս հարված հասցնել: Հայկական բանակը ընդունեց սեպաձև դասավորություն՝ սեպի սուր ծայրն ուղղելով դեպի թշնամու դասավորության կենտրոն, ընդ որում Հայկը հատուկ ուժեղացրեց իր բանակի մարտակարգի ձախ կողմը՝ այնտեղ տեղավորելով համեմատաբար լավ պատրաստված ռազմիկների: Իր հերթին, Էլամի թագավորության բանակը ֆալանգ կազմեց: Անմիջապես մարտից առաջ Հայկը ոգևորիչ խոսքով դիմեց իր ռազմիկներին և միաժամանակ ձևավորեց նաև Հայկական բանակի մարտական ծրագիրը՝ գլխավոր հարվածի ուղղությամբ անակնկալ ու սրընթաց հարվածով ճեղքել հակառակորդի դասավորությունը, ջախջախել բլրի վրա ամրացած Մեսիլիմի թիկնապահ գունդը և, սպանելով նրան, խուճապի մատնել թշնամու բանակին:

I փուլ – Մեսիլիմի բանակը անցավ հարձակման, ի պատասխան որի Հայկական բանակը հակահարձակման անցավ և հուժկու հարված հասցրեց հակառակորդի մարտակարգի կենտրոնին: Բռնկվեց համառ մարտ: Տեսնելով մարտի անհեռանկար բնույթը և անորոշ ելքը՝ Մեսիլիմը իր բանակին հրամայեց նահանջել դեպի թիկունքում գտնվող բլուրը՝ դիմադրությունը ավելի լավ կազմակերպելու ու երկրորդ զորասյանը սպասելու համար:

II փուլ – Հայկը իր թիկնապահ գնդով շեշտակի հարվածով ճեղքեց թշնամու բանակի մարտակարգը և մոտեցավ Մեսիլիմին: Հայկի թիկնազորը կատաղի

---

[1] Այս ճակատամարտը ավանդորեն համարվել է վիպական և հեքիաթային, սակայն ուշադիր ուսումնասիրողը այստեղ ոչ մի «հեքիաթային» տարը չի գտնի, քանզի մարտական գործողությունները և դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների նկարագրությունը նման ենթադրության որևէ հիմք չի թողնում: Խնդիրը մանրամասն քննարկված է իմ «Հայկազունիներ, մոռացված մի արքայատոհմ» աշխատությունում: Ճակատամարտը, որպես իրական ռազմաքաղաքական իրադարձություն, խորհրդահայ պատմական դպրոցի կողմից ավանդականորեն չի ընդունվել, թեև եղել են այն վերլուծության ենթարկելու առանձին փորձեր (տես օրինակ՝ Սարգսյան Ս. Վ. «Հայ ռազմական արվեստի պատմություն», Երևան 1969, էջ 28-31): Արդյունքում՝ ճակատամարտի վերլուծությունը, որպես կոնկրետ ռազմաքաղաքական իրադարձություն, պատկանում է արդեն հետխորհրդային ժամանակաշրջանին: Տես օրինակ՝ Հակոբյան Մ. Ի. «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Հատոր 1», Երևան 2007, էջ 19-21, Մարտիկյան Ս. «Մեր հաղթանակները, Հատոր Ա», էջ 4-11 և այլն:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 11; Սեբեոս «Պատմություն», գլուխ 1; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 2; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 15; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Այգեկցի «Աղվեսագիրք»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 6, 8; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 1; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոնացի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 9, 10; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

մարտի բռնվեց Մեսիլիմի թիկնազորի հետ: Այդ ընթացքում Հայկը մոտեցավ Մեսիլիմին և իր լայնալիճ աղեղից այնպիսի ուժով նետահարեց նրան, որ նետը, ծակելով թշնամու զրահը ու, սպանելով Էլամի և Միջագետքի արքային, դուրս եկավ նրա թիկունքից ու խրվեց գետնի մեջ: Թշնամու բանակը խուճապի մատնվեց և դիմեց փախուստի:

III փուլ – Հայկական բանակը հետապնդեց թշնամու բանակին և, ծանր կորուստներ պատճառելով նրան, դուրս մղեց Հայաստանի սահմաններից:

Հայերը կորցրին մոտ 3.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը և Մեսիլիմի սպանվելը ճակատագրական նշանակություն ունեցավ նրա տերության համար, որի գոյությունը, ինչպես և կարելի էր սպասել, դադարեց: Արդյունքում՝ էլամցիները հետ քաշվեցին դեպի իրենց լեռները, իսկ շումերները, շարունակելով «լավագույն ավանդույթները», վերադարձան հին ու մասնատված դրությանը՝ միաժամանակ, սակայն, առժամանակ զգուշանալով շարունակել բացահայտ թշնամություն անել լեռնականների հետ: Վերջին հանգամանքն իր հերթին և հայերին, և էլամցիներին ապահովեց բավականին երկար տևած հանգստի մի ժամանակաշրջան: Իրոք, հաջորդ տեղեկությանը հայերի մասնակցությամբ տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձության մասին մենք հանդիպում ենք այս դեպքերից միայն տասնամյակներ անց: Եվ վերջապես հարկ է նշել, որ այս ճակատամարտից հետո Արատտայի քրմապետության ղեկավար դարձավ Հայկ Նահապետը (մ.թ.ա. 2492-2411), որը դրանից հետո իշխեց բավականին երկար՝ կյանքի կոչելով սոցիալ-մշակութային մի շարք բարեփոխումներ և զգալիորեն մեծացնելով իրեն բաժին հասած պետության ռազմաքաղաքական հնարավորությունները:

Հայոց ձորի ճ-մ-ից հետո Հայաստանի սահմաններում, ինչպես ասվեց, մոտ 60 տարով խաղաղություն հաստատվեց, սակայն մ.թ.ա. մոտ 2430 թվականին այն խախտվեց: Բանն այն է, որ հենց այս ժամանակ շումերական աշխարհում հերթական գերիշխանության հասած Լագաշի կառավարիչ Էանատումի (մ.թ.ա. 2450-2425) գլխավորած Լագաշի ու նրան ենթակա քաղաք պետությունների միացյալ բանակը հարձակվեց Ուրուա, Ակշակ և Քիշ քաղաք պետությունների վրա, որոնց էլ իրենց հերթին օգնության հասավ Արատտայի քրմապետության ու Էլամի թագավորության միացյալ դաշնակից բանակը: Դաշնակից ուժերին, սակայն, վիճակված չէր հաջողություն:

Արդյունքում՝ Էանտումի բանակը գրավեց Քիշը և իրեն ենթարկեցրեց Ակշակ քաղաք-պետությունը[1]: Այսպիսով՝ լեռնականների հերթական փորձը, միջամտել դաշտայինների ներքին վեճերին, այս անգամ ավարտվեց անհաջողությամբ: Որպես ընդհանուր արդյունք այս ամենի՝ շումերական Միջագետքը, թեկուզ ուժերի մեծագույն լարումով, սակայն լեռնականների դեմ պայքարում այնուհանդերձ դիմացավ, բայց մահացու հարված նրա համար նախատեսել էր Մեծ անապատը:

Գլուխ 12
Երկրագնդի բնակլիմայական վիճակի փոփոխությունների ցիկլերը և դրանց ազդեցությունը ռազմաքաղաքական իրավիճակի վրա

Մ.թ.ա. XXIV դարի վերջին շումերական քաղաքակրթության ճգնաժամը անդառնալի չափեր ընդունեց, ընդ որում ոչ միայն ողբալի վիճակում էր գտնվում այս ամենի բնական արդյունք հանդիսացած տնտեսությունը, այլև՝ շումերների ժողովրդագրական դրությունը: Դրան հակառակ, սակայն, ծաղկում էր ապրում շումերական քաղաքակրթությունից հարավ-արևմուտք ձգվող Արաբական թերակղզում տարածվող Մեծ անապատի ժողովրդագրական վիճակը, ինչը վաղ թե ուշ ներխուժում էր ենթադրում դեպի շումերների քաղաքակրթության սահմաններ: Մինչև առաջ անցնելը,

[1] Լագաշի լուգալ Էանատումին վերագրվող արձանագրությունից:

սակայն, անենք ևս մեկ ընդհանրացում, որը հետագայում մեզ կրկին շատ է պետք գալու: Խոսքը երկրագնդի բնակլիմայական վիճակի փոփոխությունների ցիկլերի և ռազմաքաղաքական իրավիճակի վրա դրանց ազդեցության մասին է:

Առաջինը, թերևս, ոչ անհայտ Լև Գումիլևն էր, որ սրանից մոտ կես դար առաջ, փորձ անելով վեր հանել պատմական իրադարձությունների զարգացման իր կողմից նկատված որոշակի օրինաչափություններ, սեփական աշխատություններում սկսեց խոսել այսպես կոչված «պասսիոնարության» մասին՝ ստեղծելով մի ամբողջ տեսություն, որտեղ շեշտը դրված էր այդ թվում նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած երկրագնդի բնակլիմայական փոփոխությունների վրա: Արդյունքում՝ յուրօրինակ այս գիտնականը, փորձելով որոշակի օրինաչափություններ տեսնել Մեծ տափաստանի և հարևան երկրամասերի հարաբերություններում, առաջ քաշեց մի տեսակետ, որը, որոշակիորեն պարզեցված տեսքով ներկայացվելիս, ունի ներքոհիշյալ տեսքը: Եվ այսպես, ինչպես պնդում է Լև Գումիլևը, Մեծ տափաստանի և հարևան երկրամասերի ռազմաքաղաքական հարաբերությունների տեմպը որոշակիորեն բացատրվում է այն օրինաչափությամբ, որ, երբ երկրագնդի միջին ջերմաստիճանը լինում է նվազ, իսկ խոնավությունն էլ՝ շատ, Մեծ տափաստանում մարդկանց գոյության համար համեմատաբար ավելի դրական պայմաններ են ստեղծվում: Արդյունքում՝ անջրդի հողերի և ավազի նահանջի հաշվին բուսականությունը բուռն աճ է ապրում, իսկ այս ամենն էլ բերում է Մեծ տափաստանի արտաքին ակտիվության նվազման, քանի որ Մեծ տափաստանում գործող մարդկային խմբերը զրկվում են անհրաժեշտությունից դուրս գալու վերջինիս սահմաններից: Նախկինին հակառակ, սակայն, ըստ Լ. Գումիլևի, երբ երկրագնդի միջին ջերմաստիճանը սկսում է բարձրանալ, Մեծ տափաստանը սկսում է չորանալ, առաջընթաց է ապրում ավազը, մարդկանց գոյության համար միջոցները քչանում են և արդյունքում լիովին սպասելի կերպով սկիզբ է առնում Մեծ տափաստանից դեպի հարևան երկրամասեր ուղղվող մարդկային արտահոսքի մի շրջան, որը սովորաբար ստանում է դեպի հարևան երկրներ սկսված բռնի նվաճումների տեսք՝ ուժեղացված նախորդ դրական ժամանակաշրջանի ձեռքբերումներով:

Մարդկության պատմության 5.000-ամյա ընթացքը մեծ հաշվով ցույց է տալիս, որ, իրոք, պայմանավորված երկրագնդի բնակլիմայական վիճակով, Մեծ տափաստանի և հարակից երկրամասերի հարաբերությունների վերևում նկարագրված օրինաչափությունը զգալիորեն հիմնավորված է: Իհարկե, առկա են սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, դասակարգային և այլ ամենատարբեր հանգամանքներ, աչքաթող անել չի կարելի նաև հանրահայտ «մարդկային գործոնը», բայց վերջին հաշվով, այդ ամենով հանդերձ, վերը բերված սխեման կարելի է մեծապես հիմնավոր համարել: Այսպիսով, սեղմ տեսքով ասած, ըստ Լև Գումիլևի, վիճակն ունի հետևյալ տեսքը՝ երբ երկրագնդի միջին ջերմաստիճանն անկում է ապրում կամ, այլ խոսքերով ասած՝ երկրագունդը սառչում է, Մեծ տափաստանը սկսում է ծաղկել և ուժեր կուտակել, իսկ երբ երկրագունդը տաքանում է, Մեծ տափաստանը դուրս է մղում իր մեջ կուտակված ուժերը՝ հարված հասցնելով հարևան երկրամասերին[1]:

Հիշատակված սխեման, սակայն, Լև Գումիլևը վերջնական տեսքի բերեց շատ մեծ հարաբերականությամբ և այնտեղ առկա մնացին իր նրբությունները, որոնք հաշվի չառնեցվեցին: Այսպես՝ օրինակ, հաշվի չի առնեցվում այն հանգամանքը, որ երկրագնդի տաքանալու պարագայում թեկուզ մի կողմից, այո, սկիզբ է առնում Մեծ տափաստանից սկսվող մարդկային արտահոսքի մի շրջան, սակայն մյուս կողմից էլ մեծանում են Մեծ տափաստանի սահմանները հյուսիսային ուղղությամբ, երբ տայգան աստիճանաբար տեղի է տալիս տափաստանին, իսկ մարդիկ էլ հնարավորություն են ստանում առաջանալ դեպի ավելի հյուսիս՝ յուրացնելով բնակության համար պիտանի դարձած

[1] Տես հեղինակի մասնավորապես այս աշխատությունները՝ Гумилев Л. Н. “Древняя Русь и Великая степь”, Москва 2007, Гумилев Л. Н. “Древние тюрки”, Москва 1967, Гумилев Л. Н. “Открытие Хазарии”, Москва 2007, Гумилев Л. Н. “Хунну”, Москва 1960 259, Гумилев Л. Н. “Тысячелетие вокруг Каспия”, Москва 2002:

շրջանները հյուսիսում: Եվ սրան հակառակ՝ երկրագնդի սառչելու պարագայում էլ, երբ ըստ Լև Գումիլևի, Մեծ տափաստանի ագրեսիվությունը պետք է անկում ապրեր, ընդհակառակը, նույն հյուսիսային ուղղությամբ նվազում են Մեծ տափաստանի սահմանները, տայգան սկսում է հետ մղել տափաստանային լանդշաֆտին, իսկ արդյունքում էլ մինչ այդ դեպի հյուսիս առաջացած մարդկային խմբերը ստիպված կրկին իջնում են դեպի հարավ՝ ընդհարման մեջ մտնելով այս ուղղությամբ հաստատված մարդկային խմբերի հետ, իսկ արդյունքում էլ երբեմն, միավորված և ուժեղացած զուտ քանակապես, սակայն չկարողանալով բավարար ռեսուրսներ գտնել տեղում՝ ի վերջո դուրս գալով Մեծ տափաստանի սահմաններից: Այսպիսով, թերևս, կարելի է գալ հետևության, որ, այո, թեև Լև Գումիլևի տեսական կառուցումներում անկասկած կան ճշմարտության տարրեր, սակայն ամեն ինչ չէ, որ այդքան միանշանակ է: Եվ այսպես, շարադրելով արդեն իմ ձեռքբերումները, շարունակենք դատողությունները ու անենք մի քանի դիտարկումներ:

Նախ՝ իրոք ակնհայտ է, կրկնենք այս պարագան, որ երկրագնդի տաքանալու պարագայում Մեծ տափաստանի ագրեսիվությունը մեծանում է, ընդ որում սրա պատճառների մասին արդեն խոսվեց: Այս իրավիճակը ես այսուհետ կկոչեմ Մեծ տափաստանի Մեծ ակտիվություն: Երկրագնդի սառչելու պարագայում ևս, սակայն, թեև անհամեմատ ավելի փոքր չափերով, սակայն Մեծ տափաստանը այնուհանդերձ երբեմն ակտիվություն դրսևորում է: Իրոք, թեև վերջին պարագայում անջրդի հողերի և ավազի նահանջի հաշվին բուսականությունը բուռն աճ է ապրում, ինչը մարդու գոյության համար դրական պայմաններ է ստեղծում, սակայն, սրան հակառակ, նաև ուժեղանում է ցրտերից խուսափող մարդկանց հոսքը հյուսիսից դեպի հարավ, ինչն իր հերթին գումարվում է ստեղծված դրական պայմանների արդյունքում Մեծ տափաստանում սկիզբ առած ժողովրդագրական աճին: Արդյունքում՝ երբեմն հանդիպում են իրավիճակներ, երբ, չնայած երկրագունդը սառչում է և, ըստ Լև Գումիլևի, Մեծ տափաստանի ակտիվությունը պետք է, որ անկում ապրեր, սակայն տեղում սահմանային մի ինչ-որ չափից անցած մարդկային խմբերը այնուհանդերձ երբեմն դուրս են գալիս Մեծ տափաստանի սահմաններից նույնիսկ չնայած այն բանին, որ դրա համար բնակլիմայական նախադրյալներ, ըստ Լև Գումիլևի, կարծես այնքան էլ չկային: Այս իրավիճակն էլ, թերևս, կարելի է կոչել Մեծ տափաստանի Փոքր ակտիվություն, քանի որ այս շարժը նախկինի համեմատ, որպես կանոն, իրոք ավելի փոքր չափեր է ունենում և, չվերաբերելով բնակչության հիմնական մասին, Մեծ տափաստանից, ըստ էության, դուրս է մղում մարդկային միայն ավելցուկ զանգվածը:

Մեծ տափաստանի ցանկացած ակտիվության պարագայում Մեծ տափաստանի բնակչության ակտիվությունը, որպես կանոն, ուղղվում է ամենից առաջ դեպի հարավ, իսկ հետո նաև՝ դեպի արևմուտք, երբ գործընթացը հանգում է Մեծ տափաստանը հարավից կամ արևմուտքից եզերող երկրամասերին հարված հասցնելուն: Հետագայում, սակայն, սկսում է գործել արդեն նաև քաղաքական գործոնը և, եթե Մեծ տափաստանը այդ կողմերից եզրերող երկարամասերում գործող քաղաքական իշխանությունը կարողանում է հետ մղել հարվածը, այսինքն՝ փակել Մեծ տափաստանում գործող մարդկային խմբերին նույն Մեծ տափաստանի սահմաններում, ապա արդյունքում առաջնային է դառնում արդեն հյուսիսային ուղղությունը և Մեծ տափաստանում գործող մարդկային խմբերը սկսում են յուրացնել ավելի հյուսիս տարածվող շրջանները: Եվ հակառակը, եթե Մեծ տափաստանը հարավից կամ արևմուտքից եզրերող երկարամասերում գործող քաղաքական իշխանությունը չի կարողանում պատշաճ դիմադրություն կազմակերպել, ապա հյուսիսային ուղղության վրա որևէ էական ուշադրություն չի դարձվում ու Մեծ տափաստանից ելած մարդկային խմբերը հեղեղում են Մեծ տափաստանին հարավից և արևմուտքից սահմանակից երկրամասերը: Այսպիսով, զարգացնելով Լև Գումիլևի մտահանգումները, առաջարկում եմ շրջանառության մեջ մտցնել «Մեծ տափաստանի Մեծ ակտիվություն» և «Մեծ տափաստանի Փոքր ակտիվություն» հասկացությունները,

ինչպես նաև վերջնարդյունքի վրա կլիմայական փոփոխությունների ուղղակի ազդեցությանը գումարել նաև կոնկրետ քաղաքական գործոնը:

Ընդհանրացնելով վերոգրյալը ամրագրենք, որ երկրագնդի սառչելու պարագայում Մեծ տափաստանի ակտիվությունը նվազում է, սակայն, ի հաշիվ հյուսիսից դեպի հարավ շարժվող մարդկանց խմբի, եթե առաջանում է մարդկային կուտակման մի ինչ-որ սահմանային չափը գերազանցող վիճակ, սկիզբ է առնում Մեծ տափաստանի Փոքր ակտիվությունը: Իր հերթին, այս մասին ևս արդեն նշվեց, երկրագնդի տաքանալու դեպքում Մեծ տափաստանում գործող մարդկային խմբերը ձգտում են ամեն կերպ լքել վերջինիս սահմանները, սակայն դրանք շարժվում են դեպի հյուսիս միայն այն պարագայում, երբ առաջին ուղղությամբ մատնվում են անհաջողության: Այս առումով հետաքրքիր է նշել, որ, վերջին պարագայում երկրագնդի միջին ջերմաստիճանի ցիկլային փոփոխության հաջորդ փուլում Մեծ տափաստանի մինչ այդ հետ մղված ուժի հնարավորություններն ավելի են մեծանում: Իրոք, չսպառված հարավային ուղղությամբ, դեպի հյուսիս մղված մարդկային խմբերը երկրագնդի հերթական սառչելու ժամանակ արդյունքում ավելի մեծ քանակությամբ են այնուհանդերձ իջնում դեպի հարավ և այս պարագայում Մեծ տափաստանի Փոքր ակտիվությունն ավելի զգալի է լինում, իսկ հետագայում երկրագնդի տաքացման դեպքում էլ իր հերթին ավելի ուժեղ է արտահայտվում Մեծ տափաստանի արդեն նաև Մեծ ակտիվությունը: Այս առումով հետաքրքիր է նշել ևս մեկ հանգամանք:

Իրոք, եթե Լև Գումիլևն իր բոլոր մտահանգումները կապում էր Մեծ տափաստանի հետ, ապա ես առաջարկում եմ նրա կողմից առաջ քաշած և իմ կողմից վերևում զարգացված այս բոլոր օրինաչափությունները կիրառել արդեն նաև ոչ միայն վերջինիս, այլև Արաբական թերակղզու, իսկ մասնակիորեն նաև՝ Հյուսիսային Աֆրիկայում տարածվող Սահարայի անապատի հետ, որն այսուհետ կկոչենք Մեծ անապատ: Այս առումով մինչև առաջ անցնել նշենք, որ, եթե Մեծ անապատի մասը կազմող Սահարայի անապատի ազդեցությունը մեր տարածաշրջանի վրա այնուհանդերձ համեմատականորեն թույլ է և՝ որոշակիորեն միջնորդավորված, ապա Մեծ անապատի արևելյան մասը կազմող Արաբական թերակղզու ազդեցությունը, սրան հակառակ, ուղղակի է ու հսկայական: Եվ այսպես, կիրառելով վերևում քննարկված մոտեցումները, փաստենք, որ երկրագնդի սառչելու պարագայում, ինչպես Մեծ տափաստանի դեպքում էր, Մեծ անապատի ագրեսիվությունն անկում է ապրում, իսկ երկրագնդի տաքանալն էլ բերում է Մեծ անապատի ագրեսիվության աճին: Իր հերթին, սակայն, եթե երկրագնդի սառչելու պարագայում երբեմն կարելի է խոսել Մեծ տափաստանի Փոքր ակտիվության մասին, ապա նույն ժամանակահատվածում Մեծ անապատի ակտիվությունը շարունակում է անշեղորեն անկում ապրել և Մեծ տափաստանի Փոքր ակտիվությանը բնորոշ երևույթներ այստեղ չկան: Այս նոր գործընթացի բացատրությունը կայանում է նրանում, որ, եթե Մեծ տափաստանի պարագայում ցուրտը մարդկանց խմբերին հյուսիսից քշում է դեպի հարավ, ապա Մեծ անապատի պարագայում նույն այդ գործընթացը միայն բարելավում է կյանքի պայմանները հարավում՝ թույլ տալով ծավալվել այս ուղղությամբ: Սրան հակառակ, սակայն, երկրագնդի տաքանալը Մեծ անապատին, ի տարբերություն Մեծ տափաստանի, միջին համեմատական մակարդակում ավելի մեծ հարվածային ուժ է հաղորդում, քանի որ, եթե Մեծ տափաստանի պարագայում հարավային ուղղությամբ հետ շպրտվելու դեպքում դեռևս կա հյուսիսային ուղղությունը, ապա Մեծ անապատի պարագայում կա ընդամենը մեկ և միակ ուղղություն՝ հյուսիսայինը: Եվ այսպես, ամրագրենք նաև, որ, եթե Մեծ տափաստանի պարագայում իրավիճակը, երբեմն, ոչ այնքան միանշանակ է և կարելի է խոսել Մեծ տափաստանի Մեծ ու Փոքր ակտիվությունների մասին, ապա Մեծ անապատի պարագայում ամեն ինչ ավելի պարզ է և հստակ՝ երկրագնդի միջին ջերմաստիճանի անկումը բերում է Մեծ անապատի ակտիվության ուղղակի անկման առանց որևէ ակտիվության, իսկ երկրագնդի միջին ջերմաստիճանի աճն էլ բերում է Մեծ

անապատի ակտիվությանը միջին մակարդակում ավելի մեծ չափով:

Գլուխ 13
Շումերական անկումը

Եվ այսպես, մ.թ.ա. XXIV դարի վերջին մի կողմից հսկայական չափեր ընդունեց շումերական քաղաքակրթության ճգնաժամը, իսկ մյուս կողմից էլ զգալիորեն բարձրացավ մինչ այդ մի պահ, թվում է, թե կանգ առած երկրագնդի տաքացման գործընթացը[1], ինչն էլ բերեց նրան, որ Մեծ անապատի արևելյան մասը կազմող Արաբական թերակղզին ի ցույց դրեց վերևում նկարագրված գործընթացի առաջին օրինակը: Կոնկրետ ռազմաքաղաքական մակարդակում ամեն ինչ սկսվեց Արաբական թերակղզում թափ առնող սեմիտ անհատների տարերային գաղթից դեպի ավելի բարեբեր Միջագետք, հետո բանը հասավ ընտանիքների և տոհմերի գաղթին, իսկ վերջում էլ շարժի մեջ մտան ամբողջական ցեղեր: Գործընթացը, որ սկիզբ էր առել դեռևս մ.թ.ա. XXIV դարի սկզբին, իր ազդեցությունն ունեցավ նաև Եգիպտական թագավորության վրա, սակայն դեռևս բավարար ուժեր պահպանած այս թագավորությանը հաջողվեց հետ մղել հարվածը: Այս պայմաններում, երբ մի կողմից Եգիպտական թագավորությունը հեռու էր և այստեղ դիմադրական մեծ ուժ կար, իսկ մյուս կողմից էլ Միջագետքն ավելի մոտիկ էր ու այստեղ թուլություն էր տիրում, Արաբական թերակղզու եռանդն ամենից առաջ բնականաբար ուղղվեց հենց շումերների դեմ: Որպես հետևանք, Միջագետքի ժողովրդագրական վիճակը կտրուկ փոխվեց և այստեղ սկսեց գերիշխել Արաբական թերակղզուց ելած սեմիտական տարրը, որին ռազմաքաղաքական գերիշխանության հասնելու համար բոլոր դրական պայմանների առկայության պարագայում պակասում էր միայն փորձառու մի առաջնորդ: Ժամանակն է ծնում իր հերոսին ու այս անգամ ևս այս կանոնը գործեց: Արդյունքում՝ մ.թ.ա. XXIV դարի վերջին Միջագետքի երկնակամարում փայլեց Սարգոն Աքքադացու (մ.թ.ա. 2316-2261) չարագուշակ աստղը՝ աստղը քաղաքական մի գործչի, որին վիճակված էր խաղալ շումերական քաղաքակրթության դահճի դերը:

Սարգոնը ամենահասարակ ծագման տեր մի մարդ էր, որը քաղաքական իշխանության բուրգի գագաթին էր հասել ամենաներքևներից: Այս պահին, սակայն, մեր ուսումնասիրության շրջանակների սահմաններից որոշակիորեն դուրս է այս ուշագրավ մարդու անցած ուղու, ինչպես նաև շումերական քաղաքակրթության ներկայացուցիչների նվաճման պատմության շարադրանքը, դրա համար էլ ընդամենը միայն նշենք, որ, ի դեմս Սարգոն Աքքադացու, մենք գործ ունենք ընդունակ, խելացի, հաշվենկատ և, ամենայն հավանականությամբ, անձնական մեծ հմայքի տեր մի անձնավորության հետ, մի մարդու հետ, որը, ինչպես արդեն ասվեց, վեր ելնելով հասարակության ամենաստորին շերտերից, կարողացավ ստեղծել ուժեղ ու կենտրոնացված մի բռնապետություն՝ սեփական անսահմանափակ իշխանությամբ:

Արդյունքում՝ արդեն մ.թ.ա. XXIV դարի վերջին, ինչպես դրանից մոտ 200 տարի առաջ եղել էր Մեսիլիմի պարագայում, Միջագետքը միավորվեց մեկ իշխանության ներքո, ընդ որում, եթե նախկինում առկա էր Էլամն և Միջագետքը ընդգրկող միասնական մի տերություն, ապա այժմ որպես միասնական մի ուժ սկսեցին հանդես գալ արդեն Արաբական թերակղզին ու Միջագետքը: Որպես հետևանք նոր այս զարգացումների՝ տարածաշրջանում մինչ այդ գոյություն ունեցած ուժերի հավասարակշռության վիճակը էականորեն փոխվեց, ընդ որում՝ մեծապես ոչ հայերի օգտին, ինչը ենթադրում էր, որ հարավից Հայաստանին վաղ թե ուշ հարված է սպասվում:

Գլուխ 14
Աքքադի թագավորության ռազմական մեքենան

[1] Տես՝ Gibbons, Ann. How the Akkadian Empire Was Hung Out to Dry (англ.) // Science: journal. — 1993. — Vol. 261, no. 5124. — P. 985.

Սեմիտական քաղաքներն ընդհանրապես և Աքքադ քաղաք-պետությունը մասնավորապես, հանդիսանալով շումերական ավանդույթների և, բնականաբար նաև ռազմական մեքենայի օրգանական շարունակությունը, այնուհանդերձ որոշակի յուրօրինակություն հաղորդեցին վերջինիս, իսկ որոշակի իմաստով էլ՝ զարգացրին հին մարտավարությունը: Այսպես, ի տարբերություն շումերական միլիցիայի, սեմիտական քաղաքային միլիցիան սկսեց հիմնվել ավելի ճկուն մարտավարության վրա, այն անհամեմատ ավելի լայն կիրառության մեջ դրեց վարձկան ուժերը, իսկ հեռամարտին էլ սեմիտական քաղաքային միլիցիան համեմատականորեն ավելի պատրաստված էր: Սեմիտական տարրի վրա հիմնած խոշոր քաղաքներից կարելի է մատնանշել օրինակ Աքքադը, Իսինան, Էշնունան, Բաբելոնը, Աշշուրը, Նինվեն, Մարին և այլն:

Ինչ վերաբերում է կոնկրետ Աքքադի թագավորությանը, ապա Սարգոն Աքքադացին սեփական ռազմական մեքենայի հիմքում դրեց անձնապես իրենց նվիրված, կատաղի, հզոր և իր համար ամեն ինչի պատրաստ ռազմիկներից հավաքագրված Հատուկ գունդը: Վերջինս կազմված էր 5.400 մշտական ռազմիկներից, որոնք հատուկ ընտրություն էին անցնում, մշտապես բնակվում են այն քաղաքի շրջակայքում, որտեղ գտնվում է Աքքադի թագավորության արքան, և պատրաստ են նրա առաջին իսկ հրամանով կտոր-կտոր անել ցանկացած մեկին: Աքքադի թագավորության բանակի երկրորդ, ավելի վատ պատրաստված, սակայն խիստ բազմաքանակ մասն էր կազմում սեմիտական աշխարհազորը, որի ռազմիկները գրեթե չունեին ռազմական կարգավորվածություն և իրենց տոհմապետերի գլխավորությամբ մարտի մեջ են մտնում տոհմերով ու խառնիխուռն: Այս տոհմապետերն իրենց հերթին գործում էին Աքքադի տիրակալի անձնական նվիրվածության, ինչպես նաև հաջող ռազմավար ձեռք բերելու մոտիվացիայով: Աքքադի թագավորության բանակում կային նաև քիչ քանակությամբ մարտակառքեր, որոնց մնացել էին միջագետքյան նախկին բանակներից, դրանք նոր բան չէին, այնքան էլ շատ չէին և երկրորդական նշանակություն ունեին:

Ի տարբերություն շումերական բանակների, աքքադական բանակը հենց ճակատամարտի սկզբից ձգտում էր խուսափել մերձամարտից, սակայն դրա փոխարեն հակառակորդի շարքերի վրա էր թափում նետերի և քարերի մի ամբողջ հեղեղ: Այս բանակին սեղմում էին, իսկ այն նահանջում էր և շարունակում էր հակառակորդի վրա նետերի ու քարերի հեղեղ թափել: Իր հերթին, սակայն, այս բանակի թերությունն այն էր, որ, եթե բանը հասներ ձեռնամարտի, այն դառնում էր բավականին թույլ՝ հատկապես լավ հանդերձավորված հակառակորդի հետ ընդհարվելիս: Այդ դեպքում վերջինիս միակ հույսը մնում է աշխարհազորայինների ուժը, կատաղությունը և նվիրվածությունը, քանզի այս բանակի ռազմիկների հիմնական մասը սովորաբար լինում էր վատ զինված, նրանց մոտ չափազանց քիչ էին երկաթե զենքերը, զրահները կամ վահանները: Թերություն էր նաև այն, որ այս աշխարհազորայինները սովոր են իրենց տոհմական կարգերին և դժվար էին ենթարկվում կարգապահության, կամ էլ խմբովի որևէ գործողության: Ինչ վերաբերում է աքքադական բանակի ընդհանուր թվաքանակին, ապա վերջինս, որպես մարդկային ռեսուրս ունենալով Արաբական թերակղզու և Ասորիքի սեմիտական բնակչությանը, քանակապես զգալիորեն գերազանցում էր տարածաշրջանի բոլոր խաղացողներին՝ կազմելով մոտ 300.000 ռազմիկ[1]:

Գլուխ 15
Պատերազմը Աքքադի թագավորության դեմ

Երկրագնդի տաքացման գործընթացը իր առաջնային դրսևորումն ունեցավ ինչպես Միջագետքում, այնպես էլ Ասորիքում, երբ Միջագետքում ոտքի կանգնեց

[1] Աքքադի բանակի մասին տես մասնավորապես՝ Коростовцев М. А. “История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия”, Москва 1983, стр. 235-236.

Աքքադի թագավորությունը, իսկ Ասորիքում էլ մեծ հզորության հասավ Էբլայի թագավորությունը: Այս ամենն անխուսափելիորեն բերելու էր ընդհարման ինչպես վերջին երկուսի, այնպես էլ դեպի ավելի հյուսիս տարածվող Արատտայի քրմապետության հետ և այն իրեն իրոք սպասեցնել չտվեց:

Մ.թ.ա. արդեն 2313 թ-ին Էբլայի թագավորության բանակը (մոտ 5.000) Բատնայի ճ-մ-ում (Եդեսիայից մոտ 30 կմ հարավ-արևելք) հաղթեց Արատտայի քրմապետության բանակին (մոտ 4.000)[1]: Այս առումով, սակայն, հայերի համար լավն այնուհանդերձ այն եղավ, որ մի կողմից Արատտայի քրմապետությանը լուրջ հարված հասցնելու համար Էբլայի թագավորությունն ինքը բավարար ուժեր չուներ, իսկ մյուս կողմից էլ վերջինիս սպառնում էր նույն Աքքադի թագավորությունը: Արդյունքում հայերի համար առավել արդիական էր դառնում հենց Միջագետքից սպասվող վտանգը, ինչն էլ ի վերջո իրականության գծեր ընդունեց:

Իրոք, երկու տասնամյակ ծախսելով Միջագետքն և հարակից երկրները հնազանդեցնելու վրա՝ մ.թ.ա. 2305 թվականին Սարգոն Աքքադացին պատերազմ սկսեց արդեն Արատտայի քրմապետության դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 2305 թվականին Հախայի ճ-մ-ում (Հայոց Միջագետքի արևմուտք, Եփրատի ձախ ափին) Սարգոն Աքքադացու գլխավորած Աքքադի թագավորության բանակը (մոտ 200.000) հետ մղեց Արատտայի քրմապետության բանակին (մոտ 100.000), որից հետո իր տիրապետության տակ գցեց Հայոց Միջագետքը և Անդրեփրատյան[2] Ծոփքը[3]: Այս իրադարձություններում աքքադական կողմի վճռական հաջողության մասին, ըստ էության, չի հայտնվում, բայց մյուս կողմից էլ այս ճակատամարտից հետո Հյուսիսային Ասորիքի և մի շարք այլ տարածքների հետ միասին Աքքադական տիրապետության տակ է հայտնվում նաև Հայոց Միջագետք նահանգի տարածքը գրեթե իր ամբողջ կազմով: Այս անհաջողության գործում հայերի դեմ խաղաց ամենից առաջ հակառակորդի թվական գերակշռությունը, սակայն կարելի է ենթադրել նաև, որ գուցե իր դերն է ունեցել նաև այն հանգամանքը, որ հայերը երկարատև խաղաղ դարաշրջանից հետո թերագնահատեցին թշնամուն, կամ էլ որոշակիորեն անակնկալի եկան նոր հակառակորդի անսովոր մարտավարությունից, իսկ գուցե նաև՝ թվաքանակից: Չեմ բացառում նաև, որ կարող են դեր ունեցած լինել նաև այլ հանգամանքներ, սակայն այս հարցով ենթադրություններ անելն արդեն ուղղակի իմաստ չունի: Եվ այսպես, Արատտայի քրմապետության տիրապետության տակից դուրս եկավ հետագա Հայոց Միջագետքի տարածքը, այսինքն՝ Հայաստանը աննախադեպ ծանր տարածքային կորուստ կրեց: Միաժամանակ կարելի է կարծել, սակայն, որ հեշտ չէր տրվել հաղթանակը նաև աքքադական կողմին, քանի որ այս դեպքից հետո կրկին հարաբերական անդորր է հաստատվում և Սարգոն Աքքադացու տերության հետ հայերի ունեցած որևէ էական ընդհարման մասին հետագա մի քանի տասնամյակներում որևէ տեղեկություն առկա չէ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ, պայմանավորված Աքքադի թագավորության և Արատտայի քրմապետության ծանր ընդհարմամբ ու երկու կողմերի ուժերի որոշակի թուլացմամբ, Ասորիքում կրկին ակտիվացավ Էբլայի թագավորությունը, որը իր հարվածները կրկին ուղղեց հայերի ուղղությամբ: Որպես հետևանք, մ.թ.ա. 2301 թ-ին Էբլայի թագավորության բանակը (մոտ 20.000) Արատտայի քրմապետության բանակից (մոտ 1.000) պաշարեց Ափիշալը (Հայոց Միջագետք, Եփրատի աջ ափին), սակայն, չկարողանալով գրավել այն, հետ մղվեց ելման դիրքեր[4]: Չհամակերպվելով անհաջողության հետ՝ մ.թ.ա. 2299 թ-ին Էբլայի թագավորության կառավարիչ Իբբի-Զաքիրի գլխավորած Էբլայի թագավորության բանակը (4.000) ասպատակեց Հայոց

[1] Էբլայական արձանագրությունից:
[2] Մեծ Հայքի Ծոփք նահանգը Եփրատ գետով բաժանվում է երկու մասի: Այսուհետ «Անդրեփրատյան Ծոփք» բառերով կկոչենք նահանգի արևմտյան՝ Եփրատի աջ ափին գտնվող, իսկ «Մինչեփրատյան Ծոփք» բառերով՝ նահանգի արևելյան՝ Եփրատի ձախ ափին գտնվող մասը:
[3] Սարգոն Աքքադացուն վերագրվող արձանագրությունից; Հաթթուսիլ Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Այս մասին տեղեկանում ենք Էբլայական արձանագրությունից, որի տեքստը, սակայն, այս պահին ինձ հասանելի չէ:

Միջագետքը և նահանջեց[1]: Նախորդին լրիվ նման ևս մեկ հարված Իբբի-Զաքիրը Հայոց Միջագետքին հասցրեց նաև մ.թ.ա. 2295 թ-ին, սակայն այս անգամ ևս որևէ էական հաջողության չհասավ[2]: Դրանից հետո Էբլայում որոշակի խաղաղվեցին, մանավանդ որ երկրի վրա կախվել էր Էբլայի երդվյալ հակառակորդ Մարիի թագավորության դրդումներին ենթարկվող Սարգոն Աքքադացու հարվածի վտանգը:

Իրոք, մ.թ.ա. 2285 թ-ին Աքքադի և Մարիի թագավորությունների միացյալ բանակը մեծ արշավանքի ելավ Էբլայի թագավորության դեմ և, պարտության մատնելով հակառակորդին ու համառ մարտերով գրավելով նաև Էբլան, վերջ տվեց Էբլայի թագավորության հետագա գոյությանը: Վերջնականապես ամրանալ հյուսիսում, սակայն, Սարգոն Աքքադացուն մեծ հաշվով կրկին չհաջողվեց: Ավելին, կյանքը ցույց էր տալու, որ աքքադական բռնակալը ի վիճակի չէր լինելու պահպանել նույնիսկ հայերի դեմ ծանր պայքարում իր ձեռք բերածը:

Մ.թ.ա. 2260-ական թվականների սկզբներին, երբ Սարգոն Աքքադացին արդեն ծեր տարիքում էր, նրա դեմ մի լայնամասշտաբ ապստամբություն բռնկվեց: Արդյունքում՝ ոտքի ելան Աքքադի տիրակալի տիրապետության տակ գտնվող գրեթե բոլոր երկրները, այդ թվում նաև Հայոց Միջագետքի տարածքում դրանից հետո իշխանության հասած Արշաները, որոնք գործում էին, կարելի է կարծել, Արատտայի քրմապետության ոչ բացահայտ աջակցությամբ[3]: Ապստամբներին օժանդակում էր նաև Էլամը և արդյունքում Աքքադի տերության համար ստեղծվեց բացառիկորեն ծանր մի դրություն: Հիշատակված իրադարձությունների ընդհանուր ընթացքն այնքան էլ պարզ չէ, իսկ աքքադական գոռոզ և ինքնահավան արձանագրություններն էլ ամեն կերպ ձգտում են հօգուտ իրենց ներկայացնել իրավիճակը, սակայն միայն այն, որ ապստամբները կարողացել են պաշարել Աքքադ քաղաքը և արդյունքում զարգացող իրադարձություններից մեկի ժամանակ Սարգոն Աքքադացին իր կյանքը փրկելու համար ստիպված է եղել նույնիսկ ցատկել հոտած մի ջրանցք ու թաքնվել այնտեղ, ինքնին վկայում է, որ ապստամբների հաջողությունները ամենևին էլ համեստ չեն եղել: Իհարկե, արդյունքում Աքքադի թագավորությունը չոչնչացավ, սակայն մի բան փաստ է, որ այն կորցրեց իր լայնարձակ տիրապետությունների զգալի հատվածն, ի դեմս ամենից առաջ հյուսիսային տարածքների: Այս առումով Հայաստանի համար լավ եղավ այն, որ արդյունքում Հայոց Միջագետքում ինքնուրույնություն ձեռք բերեց նաև Արշաների իշխանատոհմը, ի դեմս Թուփկիշի (մ.թ.ա. մոտ 2265-2200), որին հաջորդեցին Թիշարին (մ.թ.ա. մոտ 2200-2150), Շատարմատը (մ.թ.ա. մոտ 2150-2100), Արիշեն (մ.թ.ա. մոտ 2100-2050) և Անարին (մ.թ.ա. մոտ 2050-2000):

Աքքադի թագավորության դեմ պատերազմը, որոշակիորեն թուլացող ուժով, շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Այսպես, մ.թ.ա. մոտ 2262 թվականին Աքքադի թագավորության բանակը հարձակման անցավ Հայաստանի ուղղությամբ և ներխուժեց Կորճայքի հարավ-արևելյան Մահկերտ-տուն գավառ: Հարձակումը, սակայն, կարելի է կարծել հայկական կողմի ակտիվ դիմադրության արդյունքում, վերջացավ առանց որևէ արդյունքի և թշնամին նահանջեց[4]:

Մ.թ.ա. 2261 թվականին Սարգոն Աքքադացին մահացավ և նրան հաջորդեց որդին՝ Ռիմուշը (մ.թ.ա. 2261-2252), սակայն մ.թ.ա. 2252 թվականին նրան սպանեցին իր իսկ գրագիրները՝ ծեծելով քարե կնիքներով: Դրանից հետո Աքքադի թագավորության գահը զբաղեցեց հանգուցյալի եղբայր Մանիշտուսուն (մ.թ.ա. 2252-2237): Այս առումով հարկ է նշել, որ իրենց մեծ հորը հաջորդած այս անհաջողակ արքաները ոչ մի կերպ չկարողացան վերականգնել Աքքադի տերության նախկին ուժն ու հզորությունը և հազիվ միայն զբաղված էին սեփական իշխանության ու առկա սահմանների պահպանմամբ: Իրավիճակը, սակայն, փոխվեց Մանիշտուսուի որդի Նարամ-Սուենի (մ.թ.ա. 2237-2200)

[1] Էբլայական արձանագրությունից:
[2] Էբլայական արձանագրությունից:
[3] Սարգոն Աքքադացուն վերագրվող արձանագրությունից:
[4] Սարգոն Աքքադացուն գործունեությանը նկարագրող արձանագրությունից:

օրոք, որը, մ.թ.ա. 2237 թվականին սպանելով հորն և զբաղեցնելով նրա տեղը, իր փառքի գագաթնակետին, բայց նաև անկմանը հասցրեց Աքքադական թագավորությունը:

Նարամ-Սուենն ամեն ինչով նման էր իր մեծ պապին, ընդ որում նմանությունը տարածվում էր ոչ միայն այս մարդկանց ֆիզիկական, այլ նաև հոգեկան հատկանիշների վրա: Ինչպես և Սարգոն Աքքադացին, Նարամ-Սուենը լավ կազմակերպիչ էր և կարողանում էր ի նպաստ իրեն դասավորել իրադարձությունները, ընդ որում պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ նա լիուլի կարողանում էր սեփական անձնական հմայքի հաշվին գրավել դյուրավառ սեմիտների սրտերը: Ավելին, Նարամ-Սուենը, նույնիսկ ավելի առաջ գնաց և, ի տարբերություն սեփական պապի, վերջնականապես կազմակերպեց Աքքադի թագավորության պետական կառավարման համակարգը: Եվ այսպես, գործի դնելով վերջնականապես ձևավորված ռազմավարչական կառավարման հզոր մի համակարգ, Նարամ-Սուենը ձեռնամուխ եղավ Աքքադի հինավուրց սահմանների վերականգման գործին, իսկ դա նշանակում էր ամենից առաջ մի բան՝ պատերազմ է սպասվում պաշտոնական Աքքադի ու նրա բոլոր հարևանների, այդ թվում նաև հայերի միջև:

Արդյունքում՝ մի քանի կտրուկ և մտածված քայլերով կարգի գցելով իր տերության գործերը, մ.թ.ա. 2234 թվականին Նարամ-Սուենը հարձակման անցավ Հայաստանի ուղղությամբ: Հարվածը նախատեսված էր հասցնել Տիգրիս գետի հովտով դեպի հյուսիս, հյուսիս-արևմուտք ուղղությամբ: Ձեռքերը ծալած նստած չէին, սակայն, նաև հայերը, որոնք, հավաքելով առկա ուժերը, ելան թշնամու հսկայական բանակի դեմ: Որպես հետևանք, Տիգրիսի ձախ վտակ Խոշր գետի ափին, ներկայիս Մոսուլից մոտ 40 կմ հյուսիս գտնվող Թալխուդ վայրում տեղի ունեցավ մի խոշոր ճակատամարտ, որի արդյունքում Աքքադական թագավորության բանակը հետ նահանջեց[1]:

Առաջին այս հարվածի անհաջողությունը, սակայն, հարված, որը, կարծես, ուժերի փորձարկում լիներ, չկանգնեցրեց Աքքադի երիտասարդ և փառասեր տիրակալին, որը մյուս տարի կրկին մեծ ուժեր դրեց շարժի մեջ և այս անգամ հարվածն ուղղեց արդեն դեպի Հայոց Միջագետքի տարածք՝ Եփրատի աջ ափին, գտնվող Ափիշալ քաղաքի ուղղությամբ: Հարվածն այս անգամ անակնկալ կերպով զգալի արդյունք ապահովեց, քանի որ առայժմ անհայտ հանգամանքների պատճառով Ափիշալ սահմանային այդ քաղաքում էր գտնվում Արատտայի մեծ քուրմ Ռիշիադադը (մ.թ.ա. մոտ 2270-2233), որը, երբ քաղաքը գրավվեց, գերվեց[2]: Նարամ-Սուենն իր թողած արձանագրություններից մեկում պարծենկոտ կերպով հայտնում է, որ Ափիշալի պալատի դիմաց անձամբ է մենամարտել Ռիշիադադի դեմ և հաղթել է նրան ու, թեև այս հաղորդման ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը լիովին մնում է Նարամ-Սուենի խղճին, սակայն, ընդհանուր առմամբ, պարզ է, որ Արատտայի քրմապետությունը անակնկալորեն ծանր մի հարված էր ստացել, ընդ որում քրմի գերվելուց զատ ոտքի տակ գնացին նաև Հայոց Միջագետքի, Կոմագենեի և Եկեղյաց գավառների տարածքները, ինչպես նաև Կիլիկիայի արևելքը[3]:

Ռիշիադադի գերվելն և Արատտայի քրմապետության արևմտյան նահանգների ասպատակումը ծանր հարված էր, բայց Հայոց պետության բուն ռազմական ուժերը այնքան էլ չէին տուժվել ու վճռական ընդհարումները դեռևս առջևում էին: Եվ ահա, կենտրոնացնելով ուժերը, մ.թ.ա. 2232 թվականին Նարամ-Սուենն իր ավելի քան 100.000 հոգանոց բանակով հարձակման անցավ արդեն Կորճայքի արևմտյան գավառների ուղղությամբ: Ազուխինումի մոտ տեղի ունեցած ճակատամարտը հայերի համար անհաջող ելք ունեցավ[4], բայց դրան կարճ ժամանակ հետո հաջորդած Տավրի ճակատամարտում, որը տեղի ունեցավ ինչ-որ տեղ հետագա Մոկք նահանգի տարածքում, հայերը կարողացան ծանր կորուստներ պատճառել հակառակորդին և

[1] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[2] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից; Սարգոն Աքքադացուն գործունեությանը նկարագրող արձանագրությունից:
[3] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրություններից:
[4] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրություններից:

ստիպել վերջինիս հեռանալ իրենց լեռներից[1]: Փաստորեն մի քանի տարվա ընթացքում ձեռնարկած ուղղակի հարձակումները աքքադցիներին ոչ մի էական ռազմաքաղաքական առավելություն չապահովեցին, դրա համար էլ Նարամ-Սուենը որոշեց մի վերջին և վճռական հարված հասցնել:

Արդյունքում՝ կենտրոնացնելով բավականին ազդու մի բանակ, մ.թ.ա. 2231 թվականին Նարամ-Սուենը հարվածը կրկին ուղղեց ըստ իրեն Հայաստանի առավել անպաշտպան հատվածի ուղղությամբ՝ դեպի Աղձնիք և Ծոփք նահանգների տարածքներ: Որպես հետևանք այս ամենի՝ Հաշտեանք գավառի տարածքում գտնվող Շենամինդայի դաշտում խոշոր մի ճակատամարտ տեղի ունեցավ, որը վճռական առավելություն չտվեց կողմերից և ոչ մեկին, սակայն որի արդյունքում Հայկական բանակը, մշտական հարվածի տակ պահելով հակառակորդին, աստիճանաբար սկսեց նահանջել դեպի արևելք[2]: Միաժամանակ, սակայն, այս ընթացքում հայերը հակառակորդի համար մի մեծ անակնկալ էին պատրաստել, որի մասին արժե, թերևս, մի քիչ մանրամասն խոսել:

Միջագետքին արևելքից սահմանակից Զագրոսյան լեռներում, ինչպես նաև հետագա Ատրպատականի տարածքում մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում ապրում էին մեծաքանակ լեռնական վայրենի տարաբնույթ ցեղեր, որոնք աչքի էին ընկնում իրենց խիստ ռազմունակությամբ, բայց միաժամանակ նաև՝ անկազմակերպ և ցեղային բնույթով: Այս ցեղերին ընդունված էր մի ընդհանրական անունով կոչել լուլլուբեներ, որը, թարգմանած իր ժամանակի աքքադերենից, ընդհանուր իմաստով հավասար է հետագա հունահռոմեական աղբյուրների «բարբարոս» տերմինին: Այլ անուն այս տարացեղ զանգվածին կոչելու համար չկա և մենք ևս կկիրառենք այս տերմինը: Եվ այսպես լուլլուբեները, չունենալով մի որևէ հստակ քաղաքական գիծ և այս առումով մեծապես կրկնելով հետագա քրդերին, իսկ ինչ-որ տեղ էլ նույնիսկ հանդիսանալով նրանց ֆիզիկական նախնիները, մեծ քանակություններով վարձկան ծառայություն էին իրականացնում Հյուսիսային Միջագետքի ու Ասորիքի, ինչպես նաև Փոքր Ասիայի արևելքի ամենատարբեր մեծ և փոքր պետական միավորներում: Ստացվել էր այնպես, սակայն, որ մեր նկարագրած դեպքերից մի քանի տարի առաջ Նարամ-Սուենը որոշակի պատժիչ գործողություններ էր իրականացրել լուլլուբեների հարազատ լեռներում և այնտեղ ոչ քիչ արյուն էր թափել՝ դրանով իսկ իր դեմ հանելով այս կատաղի վայրենիներին: Հենց վերջին հանգամանքից էլ ճարպկորեն օգտվեցին հայերը, որոնց հաջողվեց աքքադական ընդհանուր թշնամու դեմ Նարամ-Սուենի համար ոչ միայն լիովին աննկատ մի լայնարձակ համադաշնություն ստեղծել, այլև վերջինիս ուժերը շարժման մեջ դնել օպերատիվ լիակատար անակնկալի պայմաններում:

Եվ այսպես Աքքադի թագավորության բանակը, փորձելով զարգացնել Շենամինդայի դաշտում ձեռք բերած հաջողությունը, սկսեց հետապնդել Հայկական բանակին, սակայն հենց այդ ժամանակ էլ Նարամ-Սուենը տեղեկացավ հայերի ու նրանց միացած լուլլուբեների խոշոր ուժերի մոտենալու մասին, ուժեր, որոնց ընդհանուր ղեկավարումն իրականացնումն էր վարձկանների առաջնորդ Անուբանին: Ավելին, շուտով պարզվեց, որ հայերն և այլ տեղացիներ, ուժերի ծայրահեղ լարումի պայմաններում զենքի տակ դնելով ում հնարավոր է, Նարամ-Սուենի դեմ էին շարժել 360.000 հոգանոց իրոք հսկայական մի բանակ, ինչը Աքքադի տիրակալի համար միանգամից աղետալի մի դրություն էր ստեղծել: Արդյունքում՝ հայերի, այլ տեղացիների և լուլլուբեների միացյալ բանակը, անկազմակերպ ձևով ասպատակելով արշավելով Փոքր Հայք-Մինչեփրատյան Ծոփք-Արածանիի հովտով-Տուրուբերան-Վասպուրական-Կորճայք-Էլամ երթուղով, անմիջական սպառնալիք առաջացրեց բուն Միջագետքի համար[3]: Այդ ընթացքում սրընթաց կերպով հետ քաշված Նարամ-Սուենն իր հերթին, չհասցնելով

[1] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[2] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[3] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:

կենտրոնացնել բոլոր ուժերը, հազիվ հավաքեց 120.000 հոգանոց մի բանակ և այն ուղարկեց թշնամիների դեմ: Արդյունքում՝ ինչ-որ տեղ Միջագետքում մի խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ, որտեղ Աքքադի թագավորության բանակը ծանր պարտություն կրեց[1]:

Հաջորդ տարիները էականորեն չփոխեցին իրավիճակը, քանզի մ.թ.ա. 2230 թվականին Անուբանիի դաշնակցային բանակը ջախջախեց Աքքադի 90.000 հոգանոց[2], իսկ մյուս տարի էլ՝ 60.700 հոգանոց[3] ևս երկու բանակներ: Սեմիտների պարտությունը կատարյալ էր, ընդ որում նրանք մարդկային այնպիսի ծանր կորուստներ էին կրել, որ Աքքադի թագավորության ռազմական ակտիվությունը լրջորեն սահմանափակվեց: Առկա տվյալները մեզ հնարավորություն չեն տալիս հետևել Անուբանիի և նրա բանակի հետագա ճակատագրին, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ այդ մեծ հաղթանակներից հետո Անուբանին այս կամ այն պատճառով հեռացել է քաղաքական թատերաբեմից, իսկ նրա դաշնակցային բանակն էլ ցրվել է: Այսպիսով, թեև հայերին չհաջողվեց ոչնչացնել Աքքադի թագավորությունն և նրանից բխող ռազմական սպառնալիքը, սակայն Արատտայի քրմապետությունը այնուհանդերձ ազատագրեց Աքքադի կողմից մինչ այդ գրավված իր բոլոր տարածքները ու ամբողջացրեց սեփական սահմանները, իսկ Աքքադի թագավորությունն էլ թուլացավ և զրկվեց մի շարք տիրույթներից:

Գլուխ 16
Հայկական Առաջին գերիշխանությունը

Տեղի ունեցած ահեղ մարտերը, ինչպես ասվեց, թեև հայկական կողմին վերջնական հաղթանակ չբերեցին, բայց այնուհանդերձ մեծապես սահմանափակեցին Աքքադի պետության և Նարամ-Սուենի ինչպես նվաճողական ձգտումները, այնպես էլ ցանկությունը՝ հետագայում ևս ոտնձգություն իրականացնել հայերի նկատմամբ: Հետագա տասնամյակներն անցան որոշակիորեն խաղաղ և առավելագույնը, որին ռազմաքաղաքական ոլորտում Աքքադի թագավորության տիրակալը հասավ, դա Էլամի արքա Կուտիկ-Ինշուշինակի (մ.թ.ա. մոտ 2260-2175) հետ դաշինքն էր, որն ուղղված էր լինելու երկու երկրների արտաքին թշնամիների ու հատկապես հայերի դեմ: Այս ընթացքում Արատտայի քրմապետությունում իշխանության ղեկին էր գտնվում Մեծ քուրմ Թախիշաթալը (մ.թ.ա. մոտ 2233-2232), որին հաջորդեց Մադակ-Անին (մ.թ.ա. մոտ 2232-2205): Մ.թ.ա. 2205 թվականին, իր դիրքերը այնուհանդերձ համարելով արդեն բավականին ամրապնդված, Նարամ-Սուենը, դաշնակցած էլամցիների հետ, կրկին վերսկսեց ռազմական գործողությունները հայերի դեմ, ընդ որում պատերազմի ձևական առիթը այս անգամ, կարծես թե, այլ էր:

Բանն այն էր, որ Հյուսիսային Միջագետքում գտնվող Սիմմուրում երկրի կառավարիչ Բաբան ապստամբել էր Աքքադի թագավորության դեմ և այս ընթացքում ստացել էր Արատտայի քրմապետության աջակցությունը: Արդյունքում՝ ինչ-որ տեղ Մեծ ու Փոքր Զաբ գետերի հովտում՝ Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի հարավային լեռնաշղթաների մոտակայքում գտնվող Կիրաշենիվեի դաշտում, տեղի ունեցավ բավականին խոշոր մի ճակատամարտ, որտեղ Արատտայի քրմապետության և Սիմմուրումի իշխանության միացյալ բանակը պարտություն կրեց, իսկ Բաբան, ինչպես նաև Արատտայի կառավարիչ ու բանակի հրամանատար Դավուլն էլ գերվեցին[4]: Գրեթե միաժամանակ հարձակման անցան նաև էլամցիները, որոնք Կուտիկ-Ինշուշինակի գլխավորությամբ ներխուժեցին Կորճայք, սակայն տեղական մարտերից հետո նահանջեցին[5]: Զարգացող իրադարձություններում հաջողությունները հայերի կողմում

[1] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[2] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[3] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրությունից:
[4] Նարամ-Սուենին վերագրվող արձանագրություններից:
[5] Կուտիկ-Ինշուշինակին վերագրվող արձանագրությունից:

չէին, սակայն ամեն ինչ դեռ նոր էր սկսվում:

Մեր նկարագրած իրադարձություններից հենց հետո Հայաստանում քաղաքական ասպարեզից հեռացավ Մադակ-Անին և նրան հաջորդեց Էրիդապիզիրը (մ.թ.ա. մոտ 2205 - ուղ. 2199), որին էլ հենց վիճակված էր լինելու վերջակետ դնել Աքքադի թագավորության հետ արդեն մեկ դարից ավել շարունակվող հակամարտությանը և սանձել սեմիտական այդ առաջին ագրեսիան Հայաստանի նկատմամբ: Հարկ է նշել, սակայն, որ Էրիդապիզիրի օգտին եղան նաև որոշ ներքին զարգացումներ, որոնք տեղի ունեցան Միջագետքում:

Բանն այն էր, որ Նարամ-Սուենը, ձգտելով ամեն կերպ վերջնականապես խեղդել շումերական դիմադրության մնացորդները, իրականացնում էր տեղացի շումերներին ամեն կերպ ճնշելու դաժան մի քաղաքականություն՝ ոչ մի կերպ հաշվի չնստելով մի քանի հարյուրամյակ գոյություն ունեցող այդ քաղաքակրթության ներկայացուցիչների շահերի ու հետաքրքրությունների հետ և ամեն կերպ առաջ մղելով Արաբական թերակղզու սեմիտների շահերը: Իր հերթին Նարամ-Սուենի ագրեսիվ արտաքին քաղաքականությունը լուրջ սպառնալիք էր հանդիսանում նրա բոլոր հարևանների համար, իսկ ներքին բռնատիրական վարչարարությունն էլ իր իսկ երկրում խորը դժգոհություն էր առաջացրել, որն ամեն պահի պատրաստ էր պայթել: Հուժկու այդ ներքին պայթյունի համար միայն առիթն էր պակասում և այն շատ չուշացավ: Եվ այսպես, այն բանից հետո, երբ Նիպպուրը գրաված Աքքադի թագավորության արքան, կատարելով չլսված մի սրբապղծություն, իրեն աստված հռչակեց, արդեն իսկ անտանելի պայմաններում գտնվող Միջագետքի քաղաքները ապստամբեցին և օգնություն խնդրեցին Արատտայի քրմապետությունից, որին ևս պետք էր իր վաղեմի թշնամու տապալումը:

Հարկ է նշել, որ Արատտայի քրմապետության հնարավոր ռազմական հաջողությանը մեծապես կարող էր նպաստել նաև այն հանգամանքը, որ նույն այդ ժամանակաշրջանում այստեղ արդեն որոշ ժամանակից ի վեր սկսել էին վարժեցնել վայրի ձիերին և օգտագործել դրանց ռազմական նպատակներով: Փաստորեն աշխարհում առաջին անգամ ստեղծվեց հեծելազոր զորատեսակը, ինչը հսկայական օպերատիվ, մարտավարական և նույնիսկ հոգեբանական առավելություն ապահովեց Հայկական բանակին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 2200 – ***<u>Նիպպուրի ճ-մ</u>*** (Եփրատի ձախ ափին, Պարսից ծոցից մոտ 400 կմ հյուսիս-արևմուտք)[1]
>
> Արձագանքելով Միջագետքի ապստամբների խնդրանքին՝ Էրիդապիզիրի գլխավորած Արատտայի քրմապետության բանակը (մոտ 50.000, որից մոտ 20.000 հեծյալ), չհանդիպելով էական դիմադրության, սրընթաց երթով հասավ Միջագետքի հարավ: Տեղեկանալով այդ մասին՝ Նարամ-Սուենը Աքքադի թագավորության բանակը (մոտ 120.000) կենտրոնացրեց քաղաքի շրջակայքում և Հայկական բանակի մոտենալուն պես վերջինս մարտակարգ ընդունեց:
>
> I փուլ – Հայոց այրուձին անցավ վճռական հարձակման և պարտության մատնեց թշնամու բանակին, ընդ որում թշնամու բանակի ռազմիկները, առաջին անգամ ընդհարվելով այրուձիու հետ, խուճապի մատնվեցին և, ենթարկվելով վերջինիս հուժկու հարվածներին, առանց լուրջ դիմադրության դիմեցին փախուստի:
>
> II փուլ – Հայկական բանակը հետապնդեց թշնամու բանակին և ծանր

[1] Այս ճակատամարտի աղբյուր է հանդիսացել «Աքքադի նզովքը» շումերական բնագիրը, որի այլաբանական և գեղարվեստական-չափածո բնույթի պատճառով այն այստեղ բերելը ես հարմար չեմ համարում: Համառոտ միայն նշենք, որ բնագրում պատմվում է Միջագետքում և ողջ Նիպպուրում Նարամ-Սուենի իրականացրած բռնությունների ու «կուտիներ»-ի կողմից վերջինիս գլխովին ջախջախման մասին:

կորուստներ պատճառեց: Մարտում ընկավ նաև Նարամ-Սուենը:

Հայերը կորցին մոտ 4.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը հսկայական քաղաքական հետևանքներ ունեցավ: Արդյունքում՝ Աքքադի թագավորությունը, ըստ էության, դադարելով իրենից տարածաշրջանային որևէ ուժ ներկայացնել, առժամանակ պարփակվեց Հարավային Միջագետքում, իսկ Միջագետքի հիմնական մասը, ինչպես նաև Սիմուրումի իշխանության և Լուլլուբիի տարածքներն ընկան Արատտայի քրմապետության գերիշխանության տակ: Ստեղծվեց Հայկական Առաջին գերիշխանությունը, որը տևեց 91 տարի և 40 օր:

Այսպիսով՝ մ.թ.ա. 2200 թվականին, առաջին անգամն իրենց պատմության մեջ, հայերը ստեղծեցին մի իրավիճակ, երբ նրանց պետությունը բարձրացավ, ըստ էության, տերության մակարդակի՝ իր գերիշխանությունը հաստատելով հարևան երկրների նկատմամբ: Հարկ է, սակայն, հատկապես ընդգծել, որ, ըստ միջագետքյան իսկ աղբյուրների վստահեցումների, Հայկական Առաջին գերիշխանությունը, ազատագրելով Միջագետքի ժողովուրդներին բռնապետությունից, փոխարենը չհաստատեց սեփական բռնապետությունը, այլ վերականգնեց հին կարգերը:

Իրոք, որպես ազատարար հայտնված Արատտայի քրմապետությունը չդարձավ բռնությամբ տիրող ու, թեև Միջագետքը ենթարկվում էր Արատտայի քրմապետությանը և հարկ էր վճարում, սակայն միաժամանակ այն նաև ձեռք բերեց տեղական բնակչության կողմից ընտրվող կառավարիչների կողմից իրականացվող լայն ներքին ինքնավարություն՝ կառավարիչներ, որոնք կառավարում էին հստակ որոշված ժամկետներում, այն դեպքում, երբ Միջագետքում մնացած Հայկական զինված ուժերը կատարում էին բնակչության անվտանգության պահպանման և խաղաղապահ գործառույթներ: Քննարկվող ժամանակաշրջանում Միջագետքում, ինչպես հավանական է նաև Արատտայում իշխած քրմերի ցանկը հետևյալն է՝ Իտա (մ.թ.ա. 2199-2196), Ինկեշուշ (մ.թ.ա. 2196-2190), Սարլագաբ (մ.թ.ա. 2190-2184), Շուլմե (մ.թ.ա. 2184-2178), Էլուլումեշ (մ.թ.ա. 2178-2172), Ինիմագաբեշ (մ.թ.ա. 2172-2167), Իգեշաուշ (մ.թ.ա. 2167-2161), Իարլագաբ (մ.թ.ա. 2161-2146), Իբատ (մ.թ.ա. 2146-2143), Իարլանգաբ (մ.թ.ա. 2143-2140), Կուրում (մ.թ.ա. 2140-2139), Խաբիլկին (մ.թ.ա. 2139-2136), Լաերաբում (մ.թ.ա. 2136-2134), Արարում (մ.թ.ա. 2134-2132), Խաբլում (մ.թ.ա. 2132-2129), Պուզուր-որդի (մ.թ.ա. 2129-2122), Իարլագանդա (մ.թ.ա. 2122-2115) և Սիում (մ.թ.ա. 2115-2109):

Գլուխ 17
Շումերական վերածնունդը և վերջնական անկումը

Այսպիսով՝ փաստորեն սկիզբ առավ շումերական վերածննդի մի դարաշրջան, երբ շումերական քաղաքակրթությունը, մինչև վերջնականապես վերանալը, մի վերջին անգամ ուղղեց մեջքը: Միաժամանակ պետք է հատուկ նշել, սակայն, որ արդեն այստեղ սկսվեց այն բացասական գործընթացը, որը հետագայում իր զարգացումը ստացավ և բարձրակետին հասավ արիական արշավանքների ժամանակ: Խոսքն այն մասին է, որ, թեկուզ և դրական առաքելություն կատարելու պատճառով, Հայաստանը զրկվում էր իր առողջ, ստեղծարար ու երիտասարդ ուժից, քանի որ այլ տարածքներում տեղակայված կայազորների զինվորները հիմնականում մերվում էին տեղական բնակչության հետ և հետագայում, թեև շատ դանդաղ, բայց, այնուամենայնիվ, կորցնում էին իրենց ազգային դիմագիծը: Արդյունքում՝ հիշատակված տարածքի բնակչությունը գենետիկորեն և մշակութային տեսանկյունից ուժեղանում ու զարգանում էր, իսկ Հայաստանը մարդկային ստեղծագործական առողջ ռեսուրսի կորստի պատճառով թուլանում էր:

Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. գրեթե ողջ XXII դարն անցավ հայկական գերիշխանության ներքո: Աքքադի երբեմնի հզոր թագավորության մնացորդները, այժմ

կծկված Հարավային Միջագետքում, մ.թ.ա. 2190[1] և 2184[2] թվականների Աքքադի թագավորության հերթական արքա Շարկալաշիրի (մ.թ.ա. 2200-2176) գլխավորությամբ երկու անգամ փորձեցին փոխել իրերի առկա դրությունը, սակայն սկզբնական որոշ հաջողություններից հետո վերջնական հաջողության այդպես էլ չհասան, իսկ մ.թ.ա. 2176 թվականին էլ, կարծես թե, ձանձրացած այդ ամենից, շարժի մեջ մտան Հայկական բանակի խոշոր ուժեր և վերջնականապես վերջ տվեցին Աքքադի թագավորությանը, ընդ որում Շարկալաշիրը սպանվեց[3]: Վերջ, այդուհետ Աքքադ պետություն այլևս չկար: Այդ ժամանակ էր նաև, որ հայերը իրենց ենթարկեցրին նաև Էլամի թագավորությունը: Արդյունքում՝ վերջնականապես ձևավորվեց Հայկական Առաջին գերիշխանությունը, որն ընդգրկում էր ողջ Միջագետքը և Ասորիքը՝ Միջերկրական ծովից մինչև Պարսից ծոց: Միջագետքում և հարակից երկրներում հաստատված խաղաղությունն ու անդորրը իր հերթին թույլ տվեց շումերական քաղաքակրթությանը, ազատված սեմիտական բռնակալությունից, վերածնվել: Իրոք, դատելով մեզ հասած տեղեկություններից, Հայկական Առաջին գերիշխանությունը խիստ օգտակար և արգասաբեր է եղել Միջագետքի համար՝ արտաքին վտանգը բացակայում էր, դրսի իշխանությունն այնքան էլ զգալի չէր և բոլոր հիմքերը կային կայուն զարգացման համար:

Պատմական օրինաչափություններից մեկն այն է, սակայն, որ տեղական ուժերի զարգացումը ի վերջո բերում է նրան, որ ցանկություն է առաջանում տեղից դուրս մղել արտաքին ուժերին ու այս անգամը ևս բացառություն չեղավ, այնպես որ ինչ-որ տեղ մ.թ.ա. XXII դարի վերջերին տեղացիներին սկսեց թվալ, թե հայերի իշխանությունն իրենց տարածքում արդեն ավելորդ է: Արդյունքում՝ Միջագետքում սկիզբ առավ հակահայկական մի շարժում, որին կոչված էր վերջ դնելու Հայկական Առաջին գերիշխանությանը:

Մ.թ.ա. 2109 թվականին, իրար բերելով առկա ուժերը, ապստամբած և տեղական ուժերը հավաքած Ուրուկի լուգալ Ութուխենգալի (մ.թ.ա. 2116-2104) գլխավորած շումերների բանակը հենց Ուրուկի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտում էլ հաղթեց Արատտայի Մեծ քուրմ Տիգրանի (մ.թ.ա. 2109-2108) գլխավորած Արատտայի քրմապետության բանակին[4]: Տիգրանը փորձեց պատսպարվել Դուբրում քաղաքում, բայց կարճ ժամանակ անց, հավանաբար արդեն մ.թ.ա. 2108 թվականի սկզբներին, վերջինիս ուխտադրժորեն գերեցին և հանձնեցին Ութուխենգալին, որը մահապատժի ենթարկեց Մեծ քրմին ու նրա ընտանիքի անդամներին: Այսպիսով՝ Հայկական Առաջին գերիշխանությունը իր ավարտը գտավ և Հայաստանը կրկին պարփակվեց լեռներում: Ութուխենգալի իշխանությունը, սակայն, կարճ տևեց:

Մ.թ.ա. 2104 թվականին Ուրի երրորդ գահատոհմի տիրակալ Ուր-Նամուն (մ.թ.ա. 2112-2093) կարողացավ կազմակերպել Ութուխենգալի սպանությունը և արդեն Ուրի գերիշխանության տակ միավորել ողջ Միջագետքը: Դրանից հետո, սակայն, հաջողությունից արբեցած Ուրի տիրակալները սկսեցին առաջնորդվել աքքադական արքաների բացասական ավանդույթներով՝ ոչ միայն հաստատելով նախկինի նման մի բռնապետություն, այլև բազմիցս պատերազմելով հարևան երկրների, այդ թվում նաև Հայաստանի դեմ:

Ուր-Նամուի օրոք Ուրի տերությունը վերջնականապես կազմավորվեց, իսկ նրա որդի Շուլգիի (մ.թ.ա. 2093-2048) երկարատև կառավարման տարիներին էլ այն բռնեց նվաճումների ուղին և հասավ իր զարգացման գագաթնակետին: Հենց այս արքայի օրոք էր, որ շումերները մ.թ.ա. 2067[5] և 2045[6] թվականներին երկու անգամ հարձակվեցին

---

[1] Լագաշից գտնված արձանագրությունից:
[2] Լագաշից գտնված արձանագրությունից:
[3] Այս իրադարձության ամրագրման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Էլամի թագավորության արքա Կուտիկ-Ինշուշինակից հետո Էլամի թագավորության արքայացանկը ընդհատվում է, այսինքն՝ Էլամի անկախ պետությունն իր վերջն է գտնում: Այսպիսով՝ հավանական է կարծել, որ այն նվաճվել է Միջագետքին տիրած հայերի կողմից:
[4] Ասխապալա գրագրի արձանագրությունից:
[5] Շուլգիին վերագրվող արձանագրությունից:
[6] Շուլգիին վերագրվող արձանագրությունից:

Հայաստանի հարավային սահմանների վրա, սակայն հետագա Կորճայքի տարածքում տեղի ունեցած մարտերում Ուրի տերության բանակը ոչ մի հաջողության չհասավ ու հետ շպրտվեց: Քննարկվող իրադարձությունների մասին մենք անչափ սուղ տեղեկություններ ունենք, սակայն հայտնի է, որ Շուլգիի կառավարման շրջանում Արատտայի տիրակալն է եղել Ապիլաշան (մ.թ.ա. 2108-2026):

Մ.թ.ա. XXI դարը Ուրի տերությանն էր պատկանում, սակայն հենց այդ դարին էլ վիճակված էր տեսնել միջագետքյան ոչ միայն այս, այլև շումերական ողջ քաղաքակրթության վախճանը: Շուլգիին հաջորդեց որդին՝ Ամար-Սինը (մ.թ.ա. 2048-2039), որին էլ փոխարինեց եղբայրը՝ Շու-Սուենը (մ.թ.ա. 2039-2030): Շու-Սուենը վերջինն էր շումերական տիրակալներից, որ հարձակվեց Հայաստանի վրա, սակայն, ինչպես և իր անմիջական նախնիները, մ.թ.ա. 2031 թվականին Հայաստանի ուղղությամբ ձեռնարկած նրա հարձակումը հայերի ակտիվ դիմադրության հետևանքով հետ շպրտվեց[1], իսկ հաջորդ տարի էլ այս տիրակալը մահացավ: Ուրի գահին բազմեց հանգուցյալի որդի Իբբի -Սուենը (մ.թ.ա. 2030-2003) և հենց այս արքայի ժամանակ էր, որ Հայաստանում տեղի ունեցավ ներքաղաքական մի մեծ փոփոխություն՝ ընտրվող կամ ժառանգաբար իշխող քրմերի փոխարեն երկրի ղեկին վերջնականապես կանգնեց Հայկազունիների տոհմն, ի դեմս Արամանյակի (մ.թ.ա. 2026-1980): Իր հերթին Իբբի-Սուենը շումերական վերջին տիրակալն էր, որը եզրափակեց ինչպես իր պետությունն, այնպես էլ շումերական ողջ քաղաքակրթությունը:

Բանն այն է, որ մ.թ.ա. XXI դարի վերջին քառորդում, կապված երկրագնդի միջին ջերմաստիճանի հերթական բարձրացման հետ, սկիզբ առավ Մեծ անապատի որդիների հերթական հոսքը դեպի Միջագետք, ընդ որում սեմիտական շարժն այս անգամ ավելի ուժեղ էր, քան նույնիսկ Սարգոն Աքքադացու ժամանակ: Անապատի եռանդուն զավակները, որոնց բուռն բազմացումը իրենց կրկին հանգիստ չէր տալիս, իսկ կլիմայական հերթական փոփոխությունն էլ համառորեն դուրս էր մղում Արաբական թերակղզուց, նույն այս ժամանակ մանր և մեծ խմբերով լքում էին իրենց բնակության սովորական վայրերը ու անկազմակերպ ձևով հեղեղում Ուրի գերակայության տակ գտնվող Միջագետքը: Սեմիտները, որոնք այս անգամ հայտնի դարձան թարգմանաբար «արևմուտքցի» նշանակող «ամորիացի» անունով, անխնա կերպով քշում էին իրենց անասունները դեպի շումերների ցորենի դաշտերը, շրջապատում էին քաղաքները, կոտորում և ահաբեկում էին տեղի բնակչությանը: Դա Ուրի, իսկ արդյունքում նաև շումերների վերջն էր, քանզի կյանքը ցույց տվեց, որ Իբբի-Սուենը, պայքարե՞ր մարդկային այս հեղեղի դեմ ակտիվ, ինչպես իր իշխանության սկզբում էր վարվում, թե՞ դիմադրության անցներ պասիվ միջոցներով, ինչպես հետագայում եղավ, ցանկացած դեպքում չէր կարողանալու ամորիացիների դեմն առնել: Բանը հասավ նույնիսկ նրան, որ, ձգտելով կասեցնել ամորիացիների հեղեղը դեպի իր պետության կենտրոնական շրջաններ, Իբբի-Սուենը, գործի մեջ դնելով նյութական հսկայական միջոցներ, Միջագետքի այն հատվածում, որտեղ Եփրատն ու Տիգրիսը առավելագույնս են մոտենում միմյանց, մի ամուր պարիսպ կառուցեց, ընդ որում հաշվարկի հիմքն այն էր, որ Եփրատի ստորին և միջին հոսանքներում հակառակորդը կկասեցվի գետի օգնությամբ, իսկ Եփրատի վերին հոսանքներում էլ գետն այնուհանդերձ անցած ամորիացիները կկասեցվեն հիշատակված հենց պարսպի միջոցով:

Կյանքը ցույց տվեց, սակայն, որ ամորիացիների հեղեղը, չնայած Իբբի-Սուենի թափած եռանդուն ջանքերին, դանդաղ, բայց անկասելի կերպով կուլ էր տալիս Ուրի տերությունը, որի սահմաններում սկիզբ առան սովն և հիվանդությունները, իսկ պետական կառավարման համակարգն էլ, ըստ էության, դադարեց գործել: Արդյունքում՝ տեղական մանր և մեծ տիրակալները, իրենց պաշտպանելու գործում տեսնելով պաշտոնական Ուրի անկարողությունը, կամ անկախություն հռչակեցին և սկսեցին դիմադրություն կազմակերպել սեփական միջոցներով, կամ էլ այս կամ այն կերպ լեզու

[1] Շու-Սուենին վերագրվող արձանագրություններից:

գտան նորեկների հետ՝ փորձելով հենց այդ կերպ պահպանել սեփական գոյությունը, իսկ այդ պայմաններում էլ Ուր քաղաքն իր հերթին վերածվեց առանց մարմնի մի գլխի:

Արդյունքում՝ մ.թ.ա. 2003 թվականին ամորիացիների լայն աջակցությունն ապահովված Էլամի թագավորության Խուտրան-Տեմպտի արքայի (մ.թ.ա. 2010-1990) գլխավորությամբ գործող Էլամի և Հայոց թագավորության միացյալ բանակը Իբբի-Սուեն արքայի գլխավորած Ուրի թագավորության բանակից գրավեց Ուրը[1]: Գրավված քաղաքը հիմնահատակ ավերվեց, ընդ որում այդ իրադարձությունների ժամանակ էլ հենց նաև զոհվեց Իբբի-Սուենը: Այսպիսով՝ Ուրի թագավորությունը կործանվեց, իսկ նրա տարածքը որոշ ժամանակ անցավ Էլամի թագավորությանը, սակայն էլամցիները հարթավայրում չամրացան և հետագայում Միջագետքը արդեն անվերադարձ կերպով հայտնվեց սեմիտական ամորիացիների լայնածավալ, սակայն ամորֆ իշխանությունների համադաշնության տիրապետության տակ:

Սկիզբ էին առնում արդեն անդառնալի փոփոխություններ:

[1] Այս ճակատամարտի աղբյուր է հանդիսացել «Ողբ Ուրի և Աքքադի մասին» շումերական բնագիրը, որի գեղարվեստական, իսկ երբեմն էլ նույնիսկ չափածո բնույթի պատճառով այն այստեղ բերելը ես հարմար չեմ համարում: Համառոտ միայն նշենք, որ բնագրում պատմվում է Ուր գրավման հետևանքների մասին՝ նկարագրվում են ավերված և լքված տները, խոսվում է թափթփված դիակների ու գերեվարության մասին և այլն:

Մաս II
Ասորա-բաբելական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

Մ.թ.ա. II հազարամյակը մարդկությունը մտավ առանց շումերական քաղաքակրթության: Պատմությունը, երբեմն, կարծես թե, խաղեր է անում տարեթվերի հետ և ահա այդպես եղավ նաև այժմ՝ հզոր ու անկրկնելի շումերական քաղաքակրթությունը, ծաղկելով և անկում ապրելով մ.թ.ա. ողջ III հազարամյակում, հաջորդ հազարամյակում արդեն չկար: Արդյունքում՝ Միջագետքն և հարակից երկրները մ.թ.ա. II հազարամյակ մուտք գործեցին Արաբական թերակղզուց հերթական անգամ դուրս ժայթքած սեմիտական հորդայի կողմից ստեղծված սեմիտական գերիշխանության լույսի ներքո, որը դրանից հետո դեռ երկար էր պահպանվելու:

Ասորա-բաբելական քաղաք-պետությունները, ըստ էության, շումերական ավանդույթների օրգանական շարունակողներն էին, թեև դրանք նաև որոշակի յուրօրինակություն հաղորդեցին երևույթին, իսկ որոշ իմաստով էլ՝ զարգացրին: Արդյունքում՝ Ասորա-բաբելական դարաշրջանում այս քաղաքակրթության ներկայացուցիչների ձեռքում գտնվող ռազմական մեքենան իրենից, ըստ էության, ներկայացնում էր նախկինում գոյություն ունեցած քաղաքային միլիցիայի և սեմիտական ցեղական աշխարհազորի այն յուրօրինակ ամբողջության զարգացած տեսակը, որը առկա էր դեռևս Աքքադի թագավորության բանակում: Այսպես, ի տարբերություն շումերական միլիցիայի, սեմիտական քաղաքների միլիցիաները սկսեցին հիմնվել ավելի ճկուն մարտավարության վրա, այստեղ լայնորեն կիրառության մեջ դրվեցին վարձկան ուժերը, իսկ հեռամարտի էլ այս ռազմական մեքենան համեմատականորեն ավելի էր պատրաստված: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Ասորա-բաբելական քաղաքակրթության ներկայացուցիչները, դատելով առկա տեղեկատվության ամբողջությունից, այնուհանդերձ իրենց ռազմական դոկտրինաներում ավելի շատ շեշտը դնում էին հենց քաղաքային տարրի, այլ ոչ թե ցեղական աշխարհազորների վրա: Իր հերթին կարևոր է նշել, որ, սկսած դեռևս սեմիտական առաջին ալիքից, ի դեմս աքքադցիների, Արաբական թերակղզին հանդիսանում էր սեմիտական պետություններին ռազմական մարդկային ուժ ապահովող, ըստ էության, անսպառ մի շուկա: Ավելին, եթե մ.թ.ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբում այս գործընթացը այնուհանդերձ որոշակիորեն հախուռն տեսք ուներ, ապա, սկսած սեմիտական քաղաք-պետությունների հիման վրա ստեղծված սեմիտական երկու հզոր պետական միավորների ի հայտ գալուց, ի դեմս Բաբելոնի և Ասորեստանի թագավորությունների, սեմիտական վարձկանությունը, կարելի է ասել, հասավ արդյունաբերական մակարդակի:

Իրավիճակը հատկապես տիպիկ էր Ասորեստանի թագավորության պարագայում: Իրոք, իրենից, ըստ էության, ներկայացնելով Հյուսիսային Միջագետքում գտնվող մի փոքրիկ երկրամասի կենտրոն հանդիսացող քաղաք, վերջինս մարդկության պատմության ընթացքում իր ամբողջական տեսքով առաջին անգամ կարողացավ հասնել այն բանին, որ պատերազմը վերջնականապես վերածվի իսկական մի բիզնես գործունեության, որում ներդրվում են որոշակի քանակությամբ նյութական միջոցներ և ձեռք են բերվում որոշակի քանակի մարդկային միջոցներ, որոնք, լուծելով որոշակի խնդիրներ, պետք է ապահովեին որոշակի քանակի նյութական միջոցների հայթայթումը: Արդյունքում՝ հենց Ասորեստանի թագավորությունն էր, որը կարողացավ Արաբական թերակղզու ողջ առողջ, ռազմունակ, սակայն անհամեմատ վատ զինված և անկազմակերպ մարդկային մասսային ապահովել երկաթյա կարգապահությամբ ու, զինելով իր ժամանակի ռազմական հանդերձանքի և տեխնիկայի լավագույն նմուշներով,

ստեղծել ունիվերսալ ռազմական մի մեքենա:

Քննարկվող դարաշրջանում ինքնուրույն, բայց տարածաշրջանի հետ սերտորեն կապված մյուս սուբյեկտը շարունակում էր մնալ Պարսից ծոցի հյուսիսային ափերին՝ հետագա Պարսքի տարածքում, իր գոյությունը շարունակող Էլամի թագավորությունը: Վերջինս, թեև դրավիդյան համալրումը ստանալով աստիճանաբար ավելի ու ավելի թուլացող չափով, իրենից դեռևս այնուհանդերձ զգալի ուժ էր ներկայացնում: Եվ վերջապես Հայաստանը:

Գլուխ 2
Հայաստանը և հայերը
մ.թ.ա. II հազարամյակի սկզբին

Հայաստանը մ.թ.ա. II հազարամյակ մտավ, ըստ էության, արդեն իսկ «հրաժեշտ տված Արատտային», քանզի Հայկական առաջին գերիշխանության անկումն իր հետ բերեց նաև Արատտայի քրմապետության քրմեր Սլկունիների իշխանության անկմանը Հայկական լեռնաշխարհում, ընդ որում փոխվեց նաև երկրի պետաիրավական ձևը: Արդյունքում՝ Ապիլաշայի մահից հետո մ.թ.ա. 2026 թվականին Հայաստանում Արատտայի քրմապետությունը փոխարինվեց Հայկազունիների կողմից գլխավորվող Հայոց թագավորությամբ, որի առաջին արքան դարձավ Արամանյակը:

Համաձայն Միքայել Չամչյանի, որը գահակալական իր ցանկը կազմելիս հիմք է ընդունել հիմնականում Մովսես Խորենացու, իսկ մասամբ էլ այլ պատմիչների տվյալները, Հայկազունիների գահացանկը սկսվում է մ.թ.ա. 2107 թվականին: Այլ կարծիքի է Ղևոնդ Ալիշանը[1], որը, հիմք ընդունելով Հայկյան օրացույցի հետ կապված տոմարագիտական հաշվարկները[2], Հայկ Նահապետի իշխանության սկիզբ է համարում մ.թ.ա. 2492 թվականի օգոստոսի 11-ը: Արդյունքում՝ կարելի է ենթադրել, որ Արամանյակը իրականում չի եղել Հայկ Նահապետի որդին, այլ այդպիսի կարգավիճակ է ստացել հետագա պատմիչների պատկերացումներում այն բանի հետևանքով, որ Հայկ Նահապետից հետո մոտ 300 տարով Արատտայի քրմերին վերադարձած քաղաքական իշխանությունը կրկին, և այս անգամ արդեն ավելի քան մեկ ու կես հազարամյակով, վերադարձրել է Հայկազունիների տոհմին:

Հարկ է նշել, որ կարող է տարակարծությունների տեղիք տալ նաև Հայկ Նահապետի իշխելու տարիների և մ.թ.ա. 2107 թվականի անհամապատասխանությունը, երբ ըստ Չամչյանի, սկսվում է Հայկի գահակալությունը: Դա էլ, սակայն, իմ կարծիքով, ունի իր բավարար բացատրությունը:

Իրոք, մ.թ.ա. 2107 թվականը այս անգամ զարմանալիորեն համընկնում է Հայկական Առաջին գերիշխանության ավարտի թվականի (մ.թ.ա. 2109/2108)[3] հետ, երբ որևէ կերպ նշված այդ հայտնի իրադարձությունը և Միջագետքից Հայկական բանակի վերադարձը Չամչյանը ընկալել է որպես Հայկ Նահապետի վերադարձ Բաբելոնից, ինչից մեկ տարի անց էլ, այսինքն՝ մ.թ.ա. 2107 թվականին, սկիզբ է առնում վերջինիս գահակալությունը: Արդյունքում՝ կարելի է ենթադրել, և դա հաստատում են նաև Միջագետքյան աղբյուրները, որ Հայկից հետո այս կամ այն պատճառով Արատտայի քրմապետությունը շարունակել են կառավարել քրմերը, Հայկազունիները պահպանել են

---

[1] Խնդիրը մանրամասն քննարկված է այստեղ՝ Ալիշան Ղ., «Հին հավատք կամ հեթանոսական կրոն հայոց», Վենետիկ 1895:

[2] Հայկյան օրացույցում տարին կազմված էր 365 օրվանից, այն դեպքում, երբ իրական տիեզերական տարին դրան գումարում է նաև 6 ժամ: Արդյունքում՝ ստացվում էր այնպես, որ յուրաքանչյուր 4 տարին մեկ Հայկյան օրացույցը «տիեզերական տարուց» առաջ էր ընկնում 1 օրով: Այն բանից հետո, երբ սա կրկնվում էր 365 անգամ, Հայկյան օրացույցը, կատարում է այսպես կոչված «Հայկյան շրջան»-ը՝ 1460 տարին մեկ «տիեզերական ժամանակից» առաջ ընկնելով արդեն մեկ ամբողջ տարի: 428 թվականին, վերջացել է Հայկյան հերթական շրջանը, որից առաջ եղել է ևս մեկը: Այսպիսով, 428 թվականի օգոստոսի 11-ին վերջացած Հայկյան շրջանը սկսված է եղել մ.թ.ա. 1032 թվականի օգոստոսի 11-ին, իսկ դրա նախորդ՝ մ.թ.ա. 2492 թվականի օգոստոսի 11-ին: Հատկանշական է, որ սա գործնականում (8 տարվա ճշտությամբ) համապատասխանում է միջնադարյան աստվածաբան-տոմարագետների կողմից հաշվարկված «Բաբելոնյան աղետ»-ի տարեթվին՝ մ.թ.ա. 2500 թվականին:

[3] Տես՝ Коростовцев М. А. “История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия”, Москва 1983, стр. 265-266, Մովսիսյան Ա. Ե. «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում», Երևան 2005, էջ 80-81:

բանակի ռազմական ղեկավարությունը, իսկ Արամանյակն էլ իրականում ոչ թե անմիջապես Հայկի, այլ մ.թ.ա. 2108 թվականին Ուրուկի ճակատամարտում Հայկական բանակը ղեկավարած և, ենթադրաբար, Հայկից սերած Տիգրանի սերնդից էր: Արամանյակը, սակայն, Հայկի որդին է համարվել, քանի որ, հաջորդելով Ապիլաշային, լինելով Հայկի տոհմից և միավորելով արքայի ու գերագույն քրմի պաշտոնները, Արատտայի քրմապետության իրավահաջորդը հանդիսացած Հայոց թագավորությունում վերջնականապես հաստատել է Հայկազունիների իշխանությունը՝ այս ամենով արժանի դառնալով պատմիչների մոտ կոչվելու «Հայկի որդի»[1]: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է ընդգծել, որ, ի դեմս համահայկական նշանակություն ունեցող Հայկազունիների Հայոց թագավորության, մենք գործ ունենք միապետական բնույթ ունեցող Հայկազունիների տիրակալության հետ, որոնց պարագայում գահը արդեն ժառանգաբար փոխանցվում էր հորից որդուն:

Ընդհանրապես ասած, Հայկազունիների թագավորությունն իր բնույթով ավելի կենտրոնացված և կայացված մի պետություն էր, որը, զարգացնելով նախորդ փուլի ձեռքբերումները, դրանք հասցրեց որակական մի նոր աստիճանի: Քննարկվող դարաշրջանում կրկին դժվար է սպառիչ խոսել Հայոց պետականության սահմանների մասին, երբ Միջագետքի ուղղությունից զատ այլ ուղղություններում ձևավորված պետություններ դեռևս մեծ հաշվով չկային և դժվար է գծանշել հայ էթնոսի տարածման հստակ սահմանները: Քիչ թե շատ հստակ էր, ինչպես ասվեց, թերևս միայն հարավային սահմանը, որը, ինչպես և նախկինում, համապատասխանելով Հայկական լեռնաշխարհը հարավից եզերող լեռներին, սահմանակից էր Հյուսիսային Միջագետքի ու Հյուսիսային Ասորիքի հարթավայրերին: Արևմուտքում, ենթադրաբար, հայ էթնոսի տարածման սահմանը քչացող քանակությամբ կրկին ավարտվում էր ինչ-որ տեղ Արևելյան Կապադովկիայում, հյուսիսում, նույն սկզբունքով՝ վրացական հարթավայրերում, ինչպես նաև Սև ծովի ափերին, իսկ արևելքում, ինչպես և հետագայում էր, ամենայն հավանականությամբ հայ էթնոսի տարածման առավելագույն սահմանը Կուր գետն էր, թեև բացառված չէ հայերի որոշակի քանակության առկայություն նաև Կուր գետի ձախ ափին՝ միաժամանակ հաշվի առնելով նաև Կասպից ծովի հարավ-արևմտյան ափաշերտի փոփոխությունները:

Գլուխ 3
Ամորիացիները

Մինչ Հայաստանում տեղի էր ունենում իշխանափոխության գործընթացը, երբ Արատտայի քրմապետությունը վերջնականապես փոխարինվեց Հայոց թագավորությամբ, Իսինայի կառավարիչ Իշբի-Էրայի (մ.թ.ա. 2003-1985) գլխավորած նույն ամորիացիները շարունակում էին նվաճողական-թալանչիական արշավանքները: Միաժամանակ հարկ է նշե, որ մեր կողմից դիտարկվող դարաշրջանի սկզբում գոյություն ուներ ամորիացիների ամորֆ, քոչվոր կամ կիսաքոչվոր մի համադաշնություն, որը, դեպքերի մեծագույն մասում գործելով անկազմակերպ, այնուհանդերձ քանակական զգալի առավելություն էր ապահովում հարևան երկրների, այդ թվում նաև հայերի ռազմական մեքենաների նկատմամբ: Ուժերի լիակատար կենտրոնացման պարագայում ամորիացիների ռազմուժի թվաքանակը, ընդհանուր առմամբ կարելի է գնահատել մոտ 250.000 ռազմիկի սահմաններում, թեև, ինչպես ասվեց, միասնական և կենտրոնացված տեսքով այս ուժը գործնականում երբեք հանդես չէր գալիս: Իր հերթին Հայկազունիների

[1] Այստեղ առիթն օգտագործելով կուզենայի նշել, որ Մովսես Խորենացու աշխատությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ունի բարդ ներքին կառուցվածք և այն, նրանում նկարագրված իրադարձությունները, պատմական դեպքերն ու փաստերը հասկանալու և դրանց ժամանակագրությունը հստակեցնելու համար պետք է վերջիններս դիտարկել սթափ ու կանխակալ կարծիքներից զերծ հայացքով՝ համաշխարհային պատմական աղբյուրների հետ համադրելու, բոլոր աղբյուրների հայտնած տեղեկությունները համակարգված ու քննադատաբար դիտարկելու, դրանք հաճախ սինթեզելու և այդ ճանապարհով ճշմարտությունը վեր հանելու, ինչպես նաև տրամաբանական հնարքները կիրառելու մեթոդով:

կողմից գլխավորվող Հայոց թագավորությունը, միավորված ուժերով հանդես գալու պարագայում ի վիճակի լինելով մարտադաշտ դուրս բերել առավելագույնը մոտ 100.000 ռազմիկ, հակառակորդի դեմ պայքարում թշնամու կողմից ոչ միասնական ուժով հանդես գալու պարագայում այնուհանդերձ կարող էր հաջողության հասնելու լուրջ հույսեր ունենալ: Այս առումով հայերի օգտին էր ամենից առաջ զինվածության ընդհանուր ավելի բարձր մակարդակը, ինչպես նաև մարտական նժույգների կիրառությունը՝ սկզբում թեթև հեծելազորի, հետո արդեն՝ մարտակառքերի տեսքով:

Մ.թ.ա. մոտ 2000 թվականից մինչև մ.թ.ա. 1940 թվականը ամորիացիները, ոտնատակ տալով հարակից երկրները, բազմիցս ասպատակեցին նաև Հայոց Միջագետքը, Աղձնիքը, Կորճայքը, Վասպուրականը, Մոկքը և Պարսկահայքը՝ ի վերջո կործանելով Արշայի թագավորությունը[1], որը դուրս էր մնացել համահայկական պետականության սահմաններից: Արամանյակի մահից հետո մ.թ.ա. 1980 թվականին Հայոց թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Արամայիսը (մ.թ.ա. 1980-1940), որը հիմնեց Արմավիրը: Սկզբնաղբյուրներում չի ճշտվում, թե ի՞նչ պատճառով Արամայիսը մայրաքաղաքը Հայկաշենից տեղափոխեց դեպի ավելի հյուսիս գտնվող իր նոր քաղաքը, սակայն համընդհանուր պատմության հետ համադրելիս ակնհայտ է դառնում, որ դրա պատճառը կրկին ամորիացիներն էին: Իրոք, ամորիացիների արշավանքները տեղի էին ունենում Հայոց թագավորության հարավային նահանգների անմիջական հարևանությամբ և լրջորեն սպառնում էին երկրի նախկին մայրաքաղաքին:

Մ.թ.ա. 1940 թվականին Արամանյակը մահացավ և նրան փոխարինեց արդեն իր որդի Ամասիան (մ.թ.ա. 1940-1908): Հայոց այս գահակալի ժամանակ էլ հենց Մերձավոր Արևելքում լուրջ փոփոխություններ եղան, որոնք ի վերջո սասանելու էին ամորիացիների ռազմաքաղաքական գերակայությունը: Իրոք, Ամասիայի գահակալման տարիներին արդեն իսկ հստակ էր գործընթացը, երբ Միջագետքում հաստատված և տեղական պայմաններին մեծապես արդեն հարմարված, իսկ որոշակիորեն էլ նաև տեղացիների հետ մերված ամորիացիների առաջին սերունդը հակասության մեջ էր մտնում Միջագետք ժամանող ամորիացիների նոր սերնդի հետ: Այս առումով հատկանշական է, որ Իսինայի քաղաք-պետությունը, որը մեծապես հիմնված էր ամորիացիների հենց առաջին սերնդին պատկանող ներգաղթյալների վրա, ռազմական ընդհարումների մի ամբողջ շարքի մեջ մտավ նույն այն ամորիացիների հետ, որոնք նոր էին միայն ժամանում Միջագետք: Վերջին հանգամանքը, սակայն, սասանում էր Իսինայի ռազմաքաղաքական դրությունը այլ առումով ևս, քանզի, ինչպես արդեն ասվեց, Իսինայի տիպի քաղաք-պետությունների ռազմական հիմքը հենց քոչվոր ամորիացիներն էին, իսկ այժմ, փաստորեն մերժելով սրանց, օրինաչափորեն անկում էր ապրում նաև նույն այդ քաղաք-պետությունը: Արդյունքում՝ Իսինայի քաղաք-պետությունը, որը մոտ 70 տարի գերիշխանություն ուներ ամորիացիների այլ քաղաք-պետությունների նկատմամբ, մ.թ.ա. XX-րդ դարի երկրորդ կեսին սկսեց դիրքերն աստիճանաբար զիջել:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Իսինիայի քաղաք-պետության գլխավոր հակառակորդը Լարսայի քաղաք-պետությունն էր, որին հաջողվել էր ավելի հաջող համագործակցություն հաստատել եկվոր, եկվոր, բայց տեղացիների հետ արդեն մերված, ինչպես նաև տեղացի տարրերի միջև: Լարսան հատկապես ծաղկում ապրեց քաղաք-պետության հերթական արքա Գունգունումի (մ.թ.ա. 1933-1906) օրոք, երբ ուժեղ այս տիրակալը, իրար բերելով սեփական ուժերը և հաջողությամբ կազմակերպելով դրանք, ի վերջո գրեթե բացահայտ պայքարի մեջ մտավ Իսինայի դեմ, ընդ որում այդ պայքարը Գունգունումը որոշեց սկսել ամենից առաջ հենց ներսից՝ քայքայելով Իսինայի հերթական տիրակալ Լիպիտ-Իշտարի (մ.թ.ա. 1935-1924) առանց այդ էլ թուլացած դիրքերը վերջինիս երկրի ներսում:

Արդյունքում՝ Իսինայում ներքին պայթյուն եղավ և, վայելելով Լարսայի տիրակալի աջակցությունը, այստեղ իշխանության եկավ Գունգունումի աջակցությունը վայելող Ուր-

[1] Նուր-ահումին վերագրվող արձանագրությունից:

Նինուրտան (մ.թ.ա. 1924-1895): Դրանից հետո, արդեն մ.թ.ա. 1920 թվականին տեղի ունեցած Ալիոնի ճ-մ-ում Ամասիայի գլխավորած Հայոց թագավորության (մոտ 70.000) և Գունգունումի գլխավորած 10 դաշնակից երկրների (մոտ 70.000) միացյալ բանակը հաղթեց Իսինայի արքա Ուր-Նիպուրտայի գլխավորած ամորիացներին (մոտ 100.000)[1], ինչի հետևանքով Միջագետքում գերիշխանությունը մի քանի տասնամյակ անցավ Լարսային, իսկ ամորիացիների ավերիչ արշավանքներն էլ դեպի հարակից երկրներ դադարեցին:

Այս առումով խիստ ուշագրավ են նաև մատենագիտական տեղեկությունները տարածաշրջանում զարգացող իրադարձությունների մասին: Մխիթար Այրիվանցին հայտնում է. «*Ամասիան մեծ սարն անվանեց Մասիս: Այդ ժամանակ հայտնվեցին ամազոնուհիները, այսինքն՝ կանացի զորքը, որոնք Թորգոմի սերնդից էին: Թորգոմը նկատելով անհնազանդություն իր բանակում, սպանեց բոլոր տղամարդկանց և իր բանակը միայն կանանցից կազմեց: Նրանք իրենց գահը տեղափոխեցին Ալիոն և ասպատակելով ամայացրեցին երկիրը: 11 թագավորներ հավաքվեցին միասին և ոչնչացրին նրանց*»: Հաստատելով Այրիվանցուն, նմանատիպ հաղորդումներ տալիս են նաև Իսահակ Երեցը և Վարդան Արևելցին, որոնցից առաջինը ասում է. «*Այս ժամանակ եղան ամազոնուհիները՝ կանանց զորքը, որոնք պատերազմեցին, քանզի կնոջը մնաց թագակալ թագավորությունը Թորգոմի, հատվեցին արու զավակները, և ոչ-ոք չկամեցավ գլխավորել նրանց, քանզի քաջասիրտ ու քաջազն չէին: Եվ ահա նրանք ծանր զորքով ելան, մեծ հաղթությամբ և հաջողությամբ ավերեցին ու գերեցին բազում աշխարհներ ու ոչ-ոք կարողացավ դիմադրել նրանց: Այդ ժամանակ ինչ-որ դավ և նենգության խորհուրդ եղավ զորքում, քանզի թագավորությունը ցանկացան խլել նրանցից, սակայն նրանք, նախապես իմացան այդ, քիչ-քիչ կոտորեցին զորքի բոլոր տղամարդկանց, ինչից հետո կանանցից զորք կազմեցին: Դրանից հետո նրանք հաջողությամբ շարունակեցին իրենց հաղթություն գործը և ձեռք գցեցին բազում աշխարհներ: Նրանք տղամարդ էին ճանաչում միայն մեկ անգամ, իսկ, երբ տղա էին ունենում, նրան սպանում էին: Այսպես՝ նրանք մի հզոր իշխանություն կազմեցին և հյուսիսային կողմում մի ամուր քաղաք կառուցեցին, որ կոչվեց Ալիոն անունով: Ի վերջո՝ երկրի բոլոր թագավորները նեղվեցին և ձանձրացան այդ ամենից, մոտ 10 թագավորություններ ժողովեցին միասին և գնացին նրանց վրա: Նրանք գրավեցին նրանց թագավորության ամրոցը և վերացրին անարգությունն աշխարհից, քանզի տղամարդիկ գրավեցին բուն ազգի թագավորությունը՝ ինչպես ամենայն երկրի օրենք է*»: Այս առումով հետաքրքիր է նաև Վարդան Արևելցու հաղորդումը, թե. «*Թարան յոթանասուն տարեկանում ծնեց Աբրահամին: Եվ ասում են, որ այն ժամանակ էին ապրում ամազոնները, որոնք զինված կանայք էին: Պատմում են, որ Թորգոմի ցեղի արու զավակներին կոտորեցին և, որպես թագավորության ժառանգ, մնաց միայն մի կին, որը, լինելով քաջասիրտ ու արի, կոտորեց բազմաթիվ ազգերի: Այդ ժամանակ գժտություն առաջացավ իր զորքի մեջ և նա կոտորեց նրանց, որից հետո կանանցից զորք կազմեց ու կրկին գրավեց Ալիոն քաղաքում գտնվող իր թագավորական աթոռը*»: Եվ այսպես, հիմք ընդունելով Ամասիայի գահակալության տարիները և համադրմամբ դրանք դիտարկելով համընդհանուր պատմության ֆոնի վրա, ակնհայտ է դառնում, որ այս հաղորդման մեջ խոսքը կրկին վերաբերում է ամորիացիներին, իսկ ավելի կոնկրետ՝ այստեղ արտահայտված են սեպագիր աղբյուրներից հայտնի այն իրադարձությունները, որոնք դիտարկվեցին հենց՝ նոր Իսինայում տեղի ունեցած ներքին պայթյունը, որը գահից տապալեց Լիպիտ-Իշտարին և իշխանության բերեց Ուր-Նինուրտային, ինչպես նաև նույն Ուր-Նինուրտայի պարտությունը:

Ամորիացիների սանձումից հետո Միջագետքը մեծ հաշվով փակվեց ինքն իր մեջ և վերադարձավ տեղական պայքարին ու հակամարտություններին, սակայն մ.թ.ա. XIX դարի կեսերից սկսած սկսվեց աստիճանաբար սասանվել նաև Լարսայի

[1] Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 2; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 6; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3:

գերիշխանությունը: Իրոք, արդեն Լարսայի տիրակալ Նուր-ադի (մ.թ.ա. 1866-1850) գահակալման տարիների հետ կապված առկա են մի շարք բնական աղետների մասին հիշատակումներ, ի դեմս ամենից առաջ հերթական հզոր մի ջրհեղեղի, ինչպես նաև խոսվում է անհայտ թշնամու կողմից հասցված ծանր մի հարվածի մասին, որը հսկայական ազդեցություն ունեցավ Լարսայի հզորության անկման հարցում: Սկզբնաղբյուրները չեն հստակեցնում, թե կոնկրետ այդ ո՞ր թշնամին է ծանր հարված հասցրել Լարսային, սակայն, դատելով ըստ ամենայնի, խոսքը հենց այս ժամանակ Միջագետքում ի հայտ եկած ուժային նոր մի կենտրոնի մասին է, ի դեմս աստիճանաբար ոտքի կանգնող Ասորեստանի թագավորության:

Իրոք, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հարավային և Կենտրոնական Միջագետքներում, ըստ էության, մերժված ամորիացիները իրենց, ինչպես նրանց սկզբնաղբյուրներում են կոչում, «վրանաբնակ արքաների» գլխավորությամբ աստիճանաբար կենտրոնանում էին Հյուսիսային Միջագետքում, ինչով էլ պայմանավորեցին իրենց իսկ ձեռքում հայտնված Ասուրի վերելքը ու Ասորեստանի թագավորության ստեղծումը: Արդյունքում՝ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում պաշտոնական Ասուրը վերջինիս հերթական, սակայն նոր սերնդի տիրակալ Սարգոն Ի-ի (մ.թ.ա. մոտ 1880-1850) օրոք, ըստ էության, արդեն իսկ բարձրացել էր ուժեղ մի թագավորության մակարդակի: Այս առումով հարկ է նշել, որ Լարսայի և Միջագետքի այլ քաղաք-պետությունների դեմ պայքարում Ասուրը առժամանակ դաշնակցում էր նույն այս ժամանակ իր հերթին աստիճանաբար վերելքի ուղին բռնած Բաբելոն քաղաքի հիմքի վրա ստեղծված համանուն թագավորության հետ, ընդ որում հատկանշականն այն էր, որ, ի վերջո հարավային հոգսերը թողնելով նույն Բաբելոնի թագավորության վրա, Ասորեստանի թագավորությունը աստիճանաբար անդրադարձ կատարեց հյուսիսային հոգսերին:

Գլուխ 4
Արամ I Մեծի հիմնախնդիրը

Մ.թ.ա. 1908 թվականին Ամասիայի մահից հետո Հայոց թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Գեղամը (մ.թ.ա. 1908-1858), որի մահից հետո էլ նրան փոխարինեց իր որդի Հարման (մ.թ.ա. 1858-1827): Այս առումով հետաքրքիր է, որ Գեղամի ողջ գործունեությունն ուղղված էր ամեն կերպ սեփական երկիրը, և հատկապես Հայոց Միջնաշխարհը շենացնելուն, քանզի ակնհայտ էր, որ պետք էր շենացնել ավերված երկիրն ու, նախ և առաջ վերաշինել ամորիացիների նոր ասպատակություններից առավել զերծ տարածքները՝ Հայոց թագավորության համեմատաբար հյուսիս ընկած շրջանները:

Նույնը կարելի է ասել նաև Հարմայի մասին, որին հայրը, ի դեպ, պատվիրեց ապրել Արմավիրում՝ շենացնելով հենց այն տարածքը, որը կրկին առավել ապահով էր հարավից սպառնացող թշնամու հարձակումներից: Միաժամանակ հետաքրքիր է նշել նաև, որ նույն այս ժամանակ Հայոց թագավորությունը ընդգծված կերպով զերծ էր մնում հարավի գործերին խառնվելուց ու միայն, թերևս, Սարգոն I-ի գործունեություն էր, որ խախտեց փխրուն այդ հավասարակշռությունը:

Իրոք, մ.թ.ա. մոտ 1860 թվականին Սարգոն I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 30.000) ասպատակեց Հայոց Միջագետքը, Աղձնիքն ու Կիլիկիայի հարավ-արևելքը և նահանջեց[1]: Վերջին հանգամանքն, ինքնին ոչ այնքան էական ռազմական առումով, ամենից առաջ հենց քաղաքական իմաստ ուներ և նշանակում էր հարավային հարևանների հետ քիչ թե շատ խաղաղ գոյակցության ժամանակաշրջանի վերջ, ընդ որում Հայոց թագավորության հակառակորդն այս անգամ ամենից առաջ հենց Ասորեստանի թագավորությունն էր, որն արդեն լիովին իրենով էր արել Արաբական թերակղզու մարդկային հնարավորությունները և սկսել էր դրանք ամենայն եռանդով օգտագործել իր, առանց բացառության, բոլոր հարևանների դեմ:

Մ.թ.ա. 1827 թվականին իր մահկանացուն կնքեց Հայոց թագավորության արքա Հարման և նրան հաջորդեց որդին՝ Արամ I Մեծը (մ.թ.ա. 1827-1769), որին վիճակված էր լինելու հսկայական դեր խաղալ ինչպես Հայոց թագավորության, այնպես էլ հարևան երկրների ճակատագրերում: Հայոց նոր արքան հայրենասեր, եռանդուն, մինչև հոգու խորքը իր ազգին և իրեն բաժին հասած պետությանը նվիրված, զորավարական, դիվանագիտական ու անձնական հսկայական ունակությունների տեր մի անձնավորություն էր, որը անմիջապես էլ եռանդուն գործունեություն ծավալեց: Կարծում եմ, սակայն, որ, մինչև առաջ անցնելը, կարիք կա մի քանի խոսք ավել ասել Հայոց ակնառու այս տիրակալի պատմականության վերաբերյալ:

Այսպես, Մովսես Խորենացին հայտնում է, որ գահ բարձրանալուց անմիջապես հետո Հայոց այս արքան ընդհարվել է «մարեր»-ի արքա «Նյուքար-Մադես»-ի հետ, հաղթել է նրան, մահապատժի է ենթարկել և ազատել է Հայոց թագավորության հարավ-արևելյան նահանգները վերջինիս ավերիչ ասպատակություններից[2]: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հիշատակված ճակատամարտը և դրա հարակից իրադարձությունները ավանդականորեն համարվել են վիպական: Արդյունքում, թեև ես առայժմ չունեմ այն հաստատող կողմնակի աղբյուրներ, ինչպես օրինակ Արամ I Մեծի տված հաջորդ երկու ճակատամարտերի պարագայում, սակայն վերևում արդեն տրված Հայկազունիների գահացանկի և Չամչյանի մատնանշած նրանց գահակալության տարիների, ինչպես նաև հաջորդ երկու ճակատամարտերի հիմնավորումը ինձ բերում են հետևության, որ Մովսես Խորենացին այս անգամ ևս չափազանց մոտ է ճշմարտությանը, ուղղակի աղբյուրների ուսումնասիրման ներկայիս վիճակը հնարավորություն չի տալիս վերջնականապես հաստատել Պատմահոր ճշմարտացիությունը: Կարելի է միայն ենթադրել, չունենալով

[1] Սարգոն I-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 13:

որևէ ուղղակի ապացույց, սակայն հաշվի առնելով աշխարհագրական գործոնը և Հայաստանի հարավ-արևելյան տարածաշրջանում այդ ժամանակ այս կամ այն չափող գերիշխող պետության հանգամանքը, որ խոսքը կարող է գնալ Էլամի թագավորության և (կամ) լուլլուբեների բանակի մասին: Հատկանշական է, որ Խորենացու երկի առաջին գլուխների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետագայում առաջացած «Մարաստան» տերմինը Պատմահայրը կիրառում է իր առաջացման ժամանակից շուտ՝ նկատի ունենալով պատմական Ատրպատականի տարածքը: Տեղեկատվությունը անչափ հետաքրքիր հետևություններով է լի, սակայն, հետագա իրադարձությունների պարագայում:

Այսպես, շարունակելով պատումը, Պատմահայրը հայտնում է, որ հայրենանվեր Արամը բարդ դիվանագիտաքաղաքական հարաբերությունների մեջ է մտնում Ասորեստանի արքայի հետ, որը կոչվում է «Նինոս»[1]: Հարավային հարևանի հետ բարդացած հարաբերությունները, սակայն, ի վերջո հանգեցնում են պատերազմի, որում Արամ I Մեծը հաղթանակ է տանում, ոչնչացնում է Հայոց թագավորության վրա հարձակված «Բարշամ»-ին և դրանից հետո Ասորեստանի տարածքը երկար տարիներ գցում է Հայոց թագավորության գերիշխանության տակ[2]: Կրկին կիրառության մեջ դնենք Համադրման մեթոդը և պարզենք, թե իրականում ո՞ր իրադարձություններն են իրենց արտացոլումը գտել Պատմահոր մոտ:

Նախ՝ ակնհայտ է, որ տվյալ ժամանակահատվածում գործող Ասորեստանի թագավորության արքան իրականում ամենևին էլ «Նինոս» անունը չէր կրում, քանզի մի կողմից, ըստ սեպագիր աղբյուրների, նման անունով արքա այդ ժամանակաշրջանում Ասորեստանում չի եղել, իսկ մյուս կողմից էլ պարզորեն երևում է այս անվան ծագումը Նինվե քաղաքի անունից: Այսինքն, «Նինոս»-ը իրականում ոչ թե հատուկ անուն է, այլ դա, պատկերավոր ասած, Ասորեստանի թագավորության մայրաքաղաք Նինվեում իշխող հերթական արքան է և դա նրա պատվանունն է[3]: Իրականում տվյալ ժամանակահատվածում Ասորեստանի թագավորությունում իշխում էր Էրիշում II-ը (մ.թ.ա. 1818-1813)[4], որը, հաշվի առնելով այս անվան սկզբի «է»-ի «ա» ձևափոխվելու հակումը, օրինակ՝ էմիր-ամիր բառերի դեպքում, ինչպես նաև հետագայի ասորեստանյան արձանագրություններում գրեթե ամենուր հանդիպող «ա»-ի արտասանումը որպես «ու», օրինակ՝ Արարատ-Ուրարատ, Արմե-Ուրմեն այլ բառերի դեպքում, ակնհայտորեն Խորենացու հիշատակած «Բարշամ»-ն (Արշամ) է: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ անվան սկզբի «Բ»-ն ավելացել է որպես մնացորդ «Բել» տիտղոսից:

Արդյունքում՝ կարելի է կարծել, որ անունը ի սկզբանե ունեցել է «Բել-Էրիշում» ձևը, սակայն արձանագրություններում արտացոլվել է միայն «Էրիշում»-ը: Հատկանշական է, որ Մարական թագավորության արքա Կիաքսարեսը (մ.թ.ա. 625-585), որը հունական պատմական ավանդույթում անվանվում է «Արբակես», Մովսես Խորենացու մոտ անվանված է առայժմ անհայտ պատճառներով ավելացված, «ավելորդ» «Բ/Վ» տառով, որպես. «Վարբակես», ինչը, հաշվի առնելով այն հանգամանքը ուր հունարենում «Բ»-ն արտասանվում է որպես «Վ» և, ընդհանրապես, այս տառերի՝ միմյանց փոխարինելու փոխվելու հակումը, լիովին կարող է ունենալ նաև «Բարբակես» ձևը: Այսինքն՝ ամենևին էլ չի կարելի բացառել, որ. «Բարշամ» անունը ի սկզբանե ունեցել է «Արշամ», այսինքն «Էրիշում» տեսքը և վերջինս հենց այդ ձևով է իր ամրագրումն է ստացել արձանագրություններում՝ մատենագիր կամ բանավոր խոսքում մնալով որպես. «Վ(Բ)արշամ»: Այսպիսով՝ կարելի է թույլ տալ մեզ գալ հետևության, որ Հայաստանի հարավում Ասորեստանի հիմնական բանակի ջախջախվելու և Էրիշում II-ի, ըստ Մովսես Խորենացու՝ Բարշամի, սպանվելուց հետո անխուսափելի էր Ասորեստանի

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 13:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14:
[3] Իրավիճակը նման է պարթևական արքաների պարագային և նրանց կրած «Արշակ» տիտղոս-պատվանվանը:
[4] Գահակալման տևողությունը 6 տարի՝ իսկ գահակալման կոնկրետ տարիները ըստ – http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm:

թագավորության ենթարկվելը Արամ I Մեծին և այստեղ ևս Պատմահայրը չի նահանջել ճշմարտությունից:

Անչափ հետաքրքիր են նաև տեղեկությունները Արամի և «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ի միջև մղված պատերազմի պարագայում: Պատմահայրը հայտնում է, որ նախորդ հակառակորդներին հաղթելուց հետո Արամ I Մեծը իր հիմնական ռազմական ուժերը տեղափոխում է թագավորության արևմուտք և երկարատև պայքարից հետո հաղթում ու քաղաքական ասպարեզից դուրս է մղում տարածաշրջանի իր հակառակորդներից ամենաուժեղին և վտանգավորին՝ «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ին[1]: Ո՞վ է այս խորհրդավոր անձնավորությունը՝ Մովսես Խորենացու հիշատակած և Արամ I Մեծի ժամանակակից «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ն:

Պահպանված «Անիտայի գրվածքներ» խեթական արձանագրության մեջ պատմվում է, թե ինչպես Խեթական թագավորության առաջին արքաներից մեկը՝ Անիտան (մ.թ.ա. մոտ 1810-1790), իր գահակալության սկզբում հաջող արշավանքներով նվաճում է Փոքր Ասիան՝ Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքները[2]: Այս հանգամանքն իր հերթին լիովին համապատասխանում է Պատմահոր այն հաղորդմանը, թե «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ն. «*...բռնացել գրավել էր տարածությունը երկու մեծ ծովերի միջև՝ այսինքն Պոնտոսի (**Սև ծով – Մ.Հ.**) և Օվկիանոսի (**Միջերկրական ծով – Մ.Հ.**)*»[3]: Հետաքրքիր է, որ վերոհիշյալ արձանագրությունը լռության է մատնում Խեթական թագավորության արքայի գահակալության հետագա տարիների իրադարձությունները, որոնք հայտնի են կողմնակի աղբյուրներից, իսկ դրանցից, մասնավորապես պարզ է դառնում, որ Անիտայի թագավորության վերջից Խեթական թագավորությունը մոտ 160 տարով անկում է ապրում: Ինչպես տեսնում ենք, սա ևս լիովին համապատասխանում է Մովսես Խորենացու հիշատակած «Տիտանյան Պայապսիս Քաղյա»-ի գործունեությանը, նրա պետությանը, դրա տարածքին և, հատկապես, վերջին: Այսպիսով՝ այս ճակատամարտերը մեկ անգամ ևս հաստատում են Չամչյանի բերած թվերի մեծ ստույգությունը: Արդյունքում՝ Հայոց պատմության Պատմահոր հայտնած տեղեկությունները Համադրման մեթոդի օգնությամբ ուսումնասիրելիս հանկարծ պարզ է դառնում, որ, ի դեմս «Խորենացու» կամ Հայկազունիների Արամի, մենք գործ ունենք աշխարհակալ իսկական մի արքայի հետ՝ Հայոց պատմության ընթացքում աշխարհակալություն հիմնած մի տիրակալի հետ, որի գործունեության լիակատար պատկերը բացահայտվում է սեպագիր և գրավոր-մատենագիր աղբյուրների հայտնած տեղեկատվության համալիր վերլուծության արդյունքում:

Այս կապակցությամբ, թերևս, միայն հարկ է ավելացնել, որ «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1»-ում իմ կողմից փորձ է արվել վերականգնել Արամ I Մեծի գահակալության ժամանակագրությունը[4]: Մասնավորապես, հաշվի առնելով Պատմահոր հաղորդումներն այն մասին, որ Արամ I Մեծը «Նյուքար-Մադես»-ի դեմ գործել է. «*...Նինոսի՝ ասորեստանցիներին և Նինվեին տիրելուց քիչ տարիներ առաջ*»[5] և իր գահ բարձրանալուց ոչ շատ հետո, այսինքն՝ մ.թ.ա. 1818 թվականից առաջ և մ.թ.ա. 1827 թվականից ոչ շուտ, կարծում եմ, որ «Նյուքար-Մադես»-ի պարտությունը և մահապատիժը տեղի են ունեցել մ.թ.ա. մոտ 1826 թ-ին: Իր հերթին, Էրիշում II-ի գահակալության վերջը մեզ օգնում է Ասորեստանի բանակի պարտությունը թվագրել մ.թ.ա. 1813 թ-ով: Դժվարություն է հարուցում, թերևս, միայն Անիտայի պարագան, սակայն, հաշվի առնելով, որ Խեթական թագավորության հետ ընդհարումը տեղի է ունեցել նախորդ իրադարձություններից բավականին անց, այն կարելի է մոտավորապես տեղադրել մ.թ.ա. 1790 թ-ին:

Գլուխ 5

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14:
[2] Տես՝ Вестник древней истории, 1965 г., № 4, стр. 87-111 - http://annales.info/hetts/small/anitta.htm:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14:
[4] Տես՝ Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, Գիրք 1», Երևան 2007, էջեր 26-27:
[5] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 13:

Եվ այսպես, Հայոց թագավորության ղեկին հայտնվեց Արամ I Մեծը, որը սկիզբ դրեց սեփական պետության ռազմաքաղաքական հզորացմանը: Նույն այս ժամանակ, սակայն, տարածաշրջանում դասավորված ռազմաքաղաքական իրադրությունն իր հերթին ավելի բարդացավ՝ ամենից առաջ հարստանալով նոր մասնակիցներով:

Խոսքն ամենից առաջ վերաբերում էր լուլլուբեներին, որոնք, շարունակելով գործել տարացեղ և ոչ կենտրոնացված դրության մեջ, հիմնականում զբաղված էին մանր ավազակային, սակայն, երբեմն, նաև բավականին մեծ ծավալների հասնող ավարառուական գործունեությամբ, ընդ որում վերջին պարագայում հաճախ համագործակցություն էր իրականացվում Էլամի թագավորության հետ: Նույն այս ժամանակ, սակայն, ռազմաքաղաքական ուժեղ մի խաղացող էլ ի հայտ եկավ Հայոց թագավորության արևմտյան սահմաններում, ի դեմս Խեթական թագավորության հիմնադիր արքա Անիտայի, որը, աստիճանաբար իրար բերելով Փոքր Ասիայում նույն այս ժամանակ գործող մանր իշխանությունները, ուժեղ մի պետություն էր հիմնել: Եվ վերջապես, ինչպես հարևան իշխանությունների, այնպես էլ Հայոց թագավորության նկատմամբ սեփական նվաճողական ծրագրերն ուներ նաև Ասորեստանի թագավորության հերթական արքա Էրիշում II-ը, որի օրոք պաշտոնական Ասուրը հասել էր սեփական հզորության գագաթնակետից առաջինին, իսկ գործող տիրակալն ինքն էլ աչքի էր ընկնում եռանդով և ռազմաշունչ տրամադրվածությամբ:

Մ.թ.ա. մոտ 1826 թվականին Էլամի թագավորության բանակը (մոտ 30.000) և լուլլուբեները (մոտ 30.000) Հայոց թագավորության բանակից (մոտ 7.000) գրավեցին Փայտակարանը, Վասպուրականի արևելքը, Պարսկահայքը ու Տրպատունիքը[1]: Սա լուրջ մի ոտնձգություն էր Հայոց թագավորության նկատմամբ, սակայն նույն այս ոտնձգության ձեռնարկողները ակնհայտորեն հաշվի չէին առել այն հանգամանքը, թե այս ժամանակ ով էր զբաղեցնում Հայոց թագավորության գահը: Արդյունքում, արագորեն իրար բերելով սեփական ռազմական մեքենան, մ.թ.ա. մոտ 1826 թվականին ինչ-որ տեղ Փայտակարանում տեղի ունեցած ճակատամարտում Արամ I Մեծի գլխավորած Հայոց թագավորության բանակը (50.000) գիշերային անակնկալ հարվածով ջախջախեց Նյուքար-Մադեսի գլխավորությամբ առաջխաղացած էլամալուլլուբեյական բանակին (մոտ 100.000)[2]: Գերված Նյուքար-Մադեսը տեղափոխվեց Արմավիր և ճակատից մեխվեց Արմավիրի միջնաբերդի պարսպի աշտարակին՝ ի տես, ի ազդարարումն ու ի դաս Հայոց բոլոր թշնամիներին: Արդյունքում՝ Հայոց թագավորությունը հետ բերեց կորսված տարածքները, իսկ Զագրոսյան լեռնաշղթան էլ ընկավ վերջինս գերիշխանության տակ: Ստեղծվեց Հայկական Երկրորդ գերիշխանությունը:

Վերջնականապես ամրապնդելով սեփական դիրքերը արևելքում՝ Հայոց արքան անդրադարձ կատարեց հարավին, որտեղ հասունանում էր ընդհարումը պաշտոնական Ասուրի հետ: Արդյունքում՝ մ.թ.ա. 1813 թվականին Կորճայքի ճ-մ-ում Արամ I Մեծի գլխավորած Հայոց թագավորության բանակը (մոտ 50.000) ջախջախեց Էրիշում II-ի գլխավորությամբ առաջխաղացած և շրջակայքն ասպատակած Ասորեստանի թագավորության բանակին (45.000, որից 5.000 հեծյալ)՝ հետապնդելով վերջինիս մինչև Նինվե: Մարտում ընկավ նաև Էրիշում II-ը, իսկ Ասորեստանի թագավորությունն էլ ընկավ Հայոց թագավորության գերիշխանության տակ[3]:

Հաջողությամբ իր օգտին ավարտելով հակամարտությունը նաև Ասորեստանի

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 13; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 17; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 13; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 17; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 17; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

թագավորության հետ՝ պաշտոնական Արմավիրը անդրադարձ կատարեց իր արևմտյան հարևանին, ընդ որում Անիտան, մի կողմից զբաղված ներքին խնդիրներով, իսկ մյուս կողմից էլ զգուշանալով հայերից, իրեն այնուհանդերձ բավականին զուսպ էր պահում: Խեթական թագավորության հետ սկիզբ առավ դիվանագիտական երկարատև մի հակամարտություն, որը բացահայտ ընդհարման տեսքով պայթեց միայն երկու տասնամյակ անց:

Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 1790 թվականին Արգեյոս լեռան ճ-մ-ում (Կեսարիայի մոտ) Արամ I Մեծի գլխավորած Հայոց թագավորության բանակը (92.000, որից 2.000 հեծյալ) ջախջախեց Անիտա արքայի գլխավորությամբ հարձակման պատրաստվող Խեթական թագավորության բանակին (մոտ 130.000)[1]: Այսպիսով՝ Արամ I Մեծի հաջողությունը լիարժեք էր նաև Արևմուտքում, ընդ որում Անիտան գերվեց և աքսորվեց Կիպրոս կղզի, իսկ Խեթական թագավորության տարածքն ընկավ Հայոց թագավորության գերիշխանության տակ: Հայկական Երկրորդ գերիշխանության սահմանները ընդլայնվեցին և գրեթե բոլոր հարևան պետությունները հայտնվեցին դրա ոլորտում:

Գլուխ 6
Արա I Գեղեցիկի հիմնախնդիրը

Մ.թ.ա. 1769 թվականին Արամ I Մեծը մահացավ և նրան հաջորդեց որդին՝ մանկահասակ Արա I Գեղեցիկը (մ.թ.ա. 1769-1743): Այս կապակցությամբ կրկին կարծում եմ, որ չի կարելի առաջ անցնել առանց Հայոց նաև այս ուշագրավ արքայի պատմականության մասին մի քանի խոսք ասելու:

Հայոց հնագույն պատմությունը աղբանոց նետած մասնագետների թեթև ձեռքով «վիպական» հռչակված Հայոց հերթական արքա Արա I Գեղեցիկի գործողությունները ևս լիովին համապատասխանում են համաշխարհային պատմությանը և այն ժամանակի ոգուն, երբ Միքայել Չամչյանը տեղադրել է նրա գահակալության տարիները: Իրոք, երբ Համադրման մեթոդը կիրառելով շարունակում ենք դիտարկել Հայկազունիների տոհմի պատմությունն ընդհանրապես և Արա I Գեղեցիկի գահակալության ռազմաքաղաքական պատմությունը մասնավորապես, պարզ է դառնում, որ այստեղ ևս ամեն ինչ ավելի քան իրական է:

Եվ այսպես, համաձայն «մասսորետյան տրադիցիայով» կազմված ու այժմ էլ Իսրայելում գործածության մեջ գտնվող Հրեական պաշտոնական օրացույցի հիման վրա վերականգնված «Աստվածաշնչյան ժամանակագրության», Աբրահամը ծնվել է «աշխարհի արարումից», այսինքն, ըստ այս հայեցակարգի, մ.թ.ա. 3760 թ-ից, հետո 1948 թ-ին, ինչը համապատասխանում է Գրիգորյան օրացույցի մ.թ.ա. 1812 թ-ին: Միաժամանակ, համաձայն Եվսեբիոս Կեսարացու կողմից վերականգնված ժամանակագրության, Շամիրամը Աբրահամի ժամանակակիցն էր, այսինքն՝ ծնվել էր մ.թ.ա. XIX դարի վերջում կամ XVIII դարի սկզբում: Իր հերթին, համաձայն Դիոդորոս Սիկիլիացու[2], Շամիրամի ամուսինը՝ հերթական «Նինոս»-ը, պայքարել է իր թագավորության արևելքում գտնվող լեռնականների դեմ, ինչը հաստատվում է սեպագրերից հայտնի այն տեղեկությունով, որ Իշմեդագան I-ը (մ.թ.ա. 1781-1756) ծանր պատերազմներ է մղել Ներքին Զաբ և Դիալա գետերի հովիտներում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ լիովին տրամաբանական է կարծել, որ որպես Շամիրամի ամուսին հանդես եկող հերթական «Նինոս»-ը իրականում հենց Իշմեդագան I-ն է:

Մովսես Խորենացին հայտնում է, որ. «*Արան Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենիքին*»: Վերևում արդեն ցույց տրվեց, որ այստեղ

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 17; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 2, գլուխ 1:

հանդիպող «Նինոս»-ը իրականում Իշմեդագան Ի-ն է, որը մահացել է մ.թ.ա. 1756 թ-ին: Արա Ի Գեղեցիկը արքա է հռչակվել մ.թ.ա. 1769 թվականին և ակնհայտ է, որ Խորենացին ու Չամչյանը այստեղ ևս չեն սխալվել: Ավելին, աղբյուրները հայտնում են, որ Շամիրամը իշխել է 42 տարի[1]: Ինչպես արդեն ասվեց, Իշմեդագան Ի-ը մահացել է մ.թ.ա. 1756 թ-ին, որից հետո էլ հենց պետք է հաշվել «շամիրամյան» 42 տարին:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ մ.թ.ա. XIX դարի վերջում կամ XVIII դարի սկզբում ծնված, մ.թ.ա. 1780-1770-ական թվականներին Իշմեդագան Ի-ի հետ ամուսնացած և մ.թ.ա. 1756 թվականից հետո էլ 42 տարի իշխած Շամիրամը, որը մահացել է մ.թ.ա. 1714 թ-ին, լիովին կարող էր լինել Արա Ի Գեղեցիկի և նրա որդու ժամանակակիցն ու մարտական գործողություններ ձեռնարկել հայերի դեմ սկզբում մ.թ.ա. 1743 թ-ին, իսկ հետո էլ իր բանակով մասնակցել մ.թ.ա. 1725 թվականին տեղի ունեցած մարտերին: Այսինքն՝ Շամիրամի քաղաքական գործունեության ավարտը կարելի է թվագրել մ.թ.ա. 1725 թ-ով[2], նրա մահը՝ մ.թ.ա. 1714 թ-ով, իսկ քաղաքացիական պատերազմի տարիների Ասորեստանի թագավորության վերջին արքայի գահակալումն էլ ավարտվում է մ.թ.ա. մոտավորապես 1700 թվականով[3]: Այս առումով ուշագրավ է Թովմա Արծրունու հաղորդումը, թե. «*Շամիրամի վերջին տարում հովիվները տիրեցին Եգիպտոսին*»[4]:

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 2, գլուխ 20; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 3:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 17:
[3] Տես՝ http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm:
[4] Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4:

Գլուխ 7
Միջագետքի Մեծ կազմակերպիչը և Հայաստանը

Եվ այսպես, Հայոց երկրորդ գերիշխանության անկումը սկսվեց նրանից, որ եռանդուն, խելացի, ինչպես նաև դիվանագիտական, ռազմական և գործնական հսկայական ունակությունների տեր Համմուրապին (մ.թ.ա. 1792-1750), որը արդյունավետ բարենորոգումներով մինչ այդ սկիզբ էր դրել Բաբելոնի թագավորության աննախադեպ վերելքին, աննկատ կերպով սկսեց վիճարկել Հայոց թագավորության գերիշխանությունը Մերձավոր Արևելքում: Արդյունքում՝ մեզ հասած պատմական տեղեկությունների ամբողջությունը վկայում է այն մասին, որ Արամ I Մեծի մահվանից հետո նրա տերությունը դադարել է գոյություն ունենալ:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ մ.թ.ա. 1764 թվականին Բաբելոնի ճ-մ-ում Համմուրապի արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Հայոց (մոտ 50.000) և Էլամի թագավորությունների, ինչպես նաև Էշնունայի ու Մալգումի (ընդհանուր՝ մոտ 20.000) միացյալ առաջխաղացած բանակին[1]: Իր հերթին, մ.թ.ա. 1762 թվականին Մանկիսումի ճ-մ-ում (Կենտրոնական Միջագետք, Տիգրիսի ափին) Համմուրապի արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) կրկին հաղթեց Հայոց (մոտ 30.000) և Էլամի թագավորությունների, ինչպես նաև Էշնունայի ու Մալգումի միացյալ բանակին (ընդհանուր՝ մոտ 10.000), որից հետո մտավ Մանկիսում[2]: Այսպիսով՝ իր գահակալության 30-րդ տարում Համմուրապին. «*...մեծագույն աստվածների ուժով ճզմեց հսկայական ուժով եկած Էլամի թագավորության բանակին, որը եկել էր սահմանից, ինչպես նաև Սուբարտուին, Կուտիումին, Էշնունային և Մալգումին: Նա նրանց մեկ հարվածով տապալեց*», իսկ Հայոց թագավորությունն էլ, ի դեմս վերոհիշյալ արձանագրությունում «Սուբարտու» և «Կուտիում» կոչվող միավորների[3], ծանր պարտություն կրեց: Միաժամանակ, հայերի համար իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ արդեն գրեթե տասը տարի էր, որ չկար Արամ I Մեծը, իսկ նրա որդին էլ դեռևս երեխա էր: Արդյունքում՝ Հայոց աշխարհակալությունը դադարեց գոյություն ունենալ, իսկ հաջողությունը զարգացված Համմուրապին էլ. «*...ամրապնդեց Շումերի և Աքքադի հիմքերը*»[4]: Ավելին, սկիզբ առավ և շարունակվեց արդեն նաև ուղղակի հակամարտությունը մի կողմից Հայոց, իսկ մյուս կողմից էլ Բաբելոնի թագավորությունների միջև:

Մ.թ.ա. 1761 թվականին Մարիի թագավորության արքա Զիմիր-Լիմի (մ.թ.ա. 1780-1758) գլխավորած Մարիի (30.000) և Բաբելոնի (3.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Հայոց Միջագետքը ու Աղձնիքը և նահանջեց: Այս առումով հետաքրքիր է նշել, որ զգուշավոր Համմուրապին, զգալի մասնակցություն ունենալով վերջին հարվածին և, ըստ էության, հենց ինքը դրդած լինելով այն, բացահայտ մակարդակում ամեն ինչ ներկայացրեց, ըստ էության, որպես ընդամենը միայն Զիմիր-Լիմի սովորական մի ինքնագործունեություն:

---

[1] Համմուրապիին վերագրվող արձանագրությունից; Իբալ-Պիելին վերագրվող արձանագրությունից:

[2] Համմուրապիին վերագրվող արձանագրությունից:

[3] Մ.թ.ա. III-II հազարամյակներում Հայաստանի նկատմամբ կիրառվող տերմինների բազմազանությունը չպետք է շփոթություն առաջացնի, քանի որ դրանք կիրառվում էին տարբեր հարթություններում: Նմանատիպ օրինակներ պատմության մեջ բազմիցս են հանդիպում: Այսպես, ԽՍՀՄ-ը **պաշտոնապես** կոչվում էր «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն», **պաշտոնապես-կրճատ**՝ «ԽՍՀՄ», **երկրի ներսում, կենցաղային մակարդակում**՝ «Սովետ», միջազգային **ոչ-պաշտոնական մակարդակում**՝ «Ռուսաստան», **արևմտյան հոգևոր-քաղաքական մակարդակում**՝ «Չարիքի կայսրություն», **միջազգային-քաղաքական մակարդակում**՝ «Կոմունիստական կայսրություն», **արևելյան աշխարհագրաքաղաքական մակարդակում**՝ «Սիբիրյան տերություն» և այլն: Սկզբունքորեն նույն կերպ է եղել նաև Հայաստանի ընկալումը մեր նշած ժամանակահատվածում ու տարածաշրջանում: Այսպես, Հայաստանը **պաշտոնապես** կոչվում էր «Արա(րա)տտա, իսկ հետագայում էլ «Հայք», **պաշտոնապես-կրճատ**՝ «Սու» «Հա» կամ «Ար», **երկրի ներսում, կենցաղային մակարդակում**՝ «Հայք», **միջազգային ոչ-պաշտոնական մակարդակում**՝ «Արմի» «Արմանում» կամ «Արմենիա», **միջագետքյան հոգևոր-քաղաքական մակարդակում**՝ «Սուբարտու», **միջազգային-քաղաքական մակարդակում**՝ «Անմահության և արդար օրենքների երկիր», **միջագետքյան աշխարհագրաքաղաքական մակարդակում**՝ «Կուտիում» իսկ հետագայում էլ «Կարդու» և այլն:

[4] Տես՝ Дьяконов И. М. "История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации", Москва 1983, с 362: Արձանագրության բուն տեքստը տես այստեղ – https://ru.wikipedia.org/wiki/%D0%A5%D0%B0%D0%BC%D0%BC%D1%83%D1%80%D0%B0%D0%BF%D0%B8:

Վերևում նկարագրված դեպքերից մի քանի տարի անց հակաբաբելոնյան դաշնակից ուժերը փորձեցին վերսկսել հարձակումը Բաբելոնի ուղղությամբ, սակայն արդյունքում մ.թ.ա. 1757 թվականին Տուրուկուի ճ-մ (Հյուսիսային Միջագետք) Համմուրապի արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Հայոց (մոտ 50.000) և Էլամի թագավորությունների, ինչպես նաև Էշնունայի ու Մալգումի (ընդհանուր՝ մոտ 20.000) առաջխաղացած միացյալ բանակին[1]: Հերթական այս պարտությունը կործանարար և ամենավերջնական ազդեցությունն ունեցավ Հայկական Երկրորդ գերիշխանության վրա, որը վերջնականապես փլուզվեց: Արդյունքում՝ Հայկական բանակը նահանջեց Հայրենիք, իսկ դրանից օգտված Ասորեստանի թագավորությունն էլ դուրս եկավ Հայոց թագավորության գերիշխանության տակից: Խնդիրը, սակայն, ամենևին էլ սրանով չէր սպառվելու, քանզի այս ամենից էլ գոհ չմնացած Համմուրապին դրանից հետո նպատակ դրեց վերջնականապես ծնկի բերել հայերին, ընդ որում, որպեսզի չհամարվի հենց նոր կնքած խաղաղությունը խախտած անձ, Բաբելոնի տիրակալը այս անգամ էլ մարտական գործողությունները սկսեց իր հերթական ենթակայի՝ պաշտոնական Ասուրի միջոցով:

Դեռևս Արամ I Մեծի թագավորության վերջին տարիներին Ասորեստանի արքա Շամշիադադ I-ը (մ.թ.ա. 1813-1781) իրեն բավականին ազատ էր զգում: Արդյունքում, թեև իր նախորդի սարսափելի ջախջախումը այդպես էլ չմոռացած Ասորեստանի թագավորության հերթական արքան իրեն չափազանց զգույշ էր պահում, այնուհանդերձ դա չէր խանգարում վերջինիս բուռն գործունեություն ծավալել:

Այսպես թե այնպես, սակայն Շամշիադադ I-ին մի քանի հաջող արշավանքներով հաջողվեց մի շարք քաղաքներ զավթել Տիգրիսի միջին հովտում, իսկ հետո էլ՝ հաստատվել նաև Ասուրում: Սրանով ևս, սակայն, փառասեր այս տիրակալը չբավարարվեց և վերջինիս հաջողվեց, թեև առժամանակ, իր պետությանը միացնել նաև Մարիի թագավորությունը, ինչպես նաև սեփական տիրապետությունը հաստատել Բալիհ[2] և Խաբուր գետերի հովիտներում՝ սրան գումարելով նաև Կատնա երկրամասի զավթումը: Սեփական արձանագրություններում Ասորեստանի թագավորության այս արքան հպարտանում էր նաև նրանով, որ իրեն հաջողվել է հարկատու դարձնել Ասորեստանից հյուսիս-արևելք գտնվող Տուրկիշի արքաներին: Բացի այս՝ Շամշիադադ I-ը նաև մի հուշակոթող թողեց Լաբանա երկրում՝ «Մեծ ծովի ափին»[3]՝ խոսքը վերաբերում է Ասորիքին և Միջերկրական ծովին: Արդյունքում՝ Շամշիադադ I-ի թագավորության արդեն վերջին տարիներին կախումը Հայոց թագավորությունից պաշտոնական Ասուրի համար դարձել էր արդեն գործնականում ձևական: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Շամշիադադ I-ը իրեն ի վերջո հռչակեց ոչ թե «իշշիակկում» (կառավարիչ), այլ՝ «շարկիշշատի», որը թարգմանաբար նշանակում է. «Բազմաթիվների արքա»: Եվ վերջապես հենց Շամշիադադ I-ն էր, որ սերտ հարաբերություններ հաստատեց նույն այս ժամանակ վերելքի ուղին բռնած Բաբելոնի թագավորության հետ, որի սեմիտական բնույթը, ինչպես նաև Համմուրապիի հակահայկական կեցվածքը վերջինիս բնականաբար ավելի հարազատ էր, քան արիական Հայաստանը[4]:

Մ.թ.ա. 1781 թվականին Շամշիադադ I-ի մահից հետո, սակայն, իրադրությունը Միջագետքում ավելի արմատական փոփոխությունների ենթարկվեց: Իրոք, հաջողակ այս արքայի որդին և հաջորդ, արդեն իսկ հիշատակված Իշմեդագան I-ը, ի տարբերություն իր նախորդի, իրեն դրսևորեց որպես թույլ մի տիրակալ, որը հաստատուն կերպով սկսեց զիջել ավելի ու ավելի ուժեղացող Բաբելոնի թագավորությանը: Ավելին, այս արքան ստիպված էր ոչ միայն ծանր և անհեռանկար պատերազմ մղել Ներքին Զաբ

[1] Համմուրապիին վերագրվող արձանագրությունից:
[2] Կարելի է կարծել, որ մի շարք հեղինակների մոտ այս գետի անունը շփոթվել է հետագա «Բահլ» քաղաքի անվան հետ, որի արդյունքում էլ կարծիք է ստեղծվել, թե Շամիրամը մարտնչել է Բահլում կամ նրա մոտակայքում, ինչը իրոք որ անհավանական է:
[3] Նկատի է ունեցվում ներկայիս Լիբանանի տարածքը:
[4] Коростовцев М. А. “История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия”, Москва 1983, с. 362:

ու Դիալա գետի ստորին հովիտներում բնակվող լեռնականների դեմ, այլև՝ մշտապես դիմագրավել պալատական խարդավանքներին: Իրավիճակը բարդացնում էր հատկապես իշխանատենչ և ամենազոր կնոջ՝ Շամիրամի, առկայությունը: Այս ամենը ի վերջո հանգեցրեց նրան, որ Իշմեդագան I-ը ստիպված եղավ ընդունել Բաբելոնի թագավորության ուղղակի գերիշխանությունը և, ենթարկվելով Համմուրապիի դրդումներին, մարտական գործողությունների մեջ ներքաշվել հենց նոր խոշոր անհաջողություն կրած Հայոց թագավորության դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 1756 թվականին Զաբ գետի ճ-մ-ում (Կորճայք, Կորդուք) Իշմեդագան I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (100.000, 150 փիղ) հաղթեց փոքրիկ արքայազնի խնամակալ Բարզանեսի գլխավորած Հայոց թագավորության բանակին (մոտ 80.000): Կնքվեց հաշտություն, համաձայն որի Հայոց թագավորությունը պարտավորվեց իր ռազմուժի մի մասով մասնակցել Ասորեստանի թագավորության մղած պատերազմներին[1]: Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել, որ, ըստ մեզ հասած տվյալների, հենց այս ճակատամարտում Հայկական բանակը առաջին անգամ ընդհարվեց թշնամու բանակի կազմում գործող մարտական փղերի հետ, որոնց առկայությամբ և առաջացած տպավորությամբ էլ, ըստ երևույթին, կարելի է մեծապես բացատրել նրա պարտությունը:

Մ.թ.ա. 1756 թվականին Դիալա գետի ճ-մ-ում (Իրանական լեռնաշխարհի արևմուտք) Իշմեդագան I-ի գլխավորած Ասորեստանի (մոտ 100.000) և Հայոց (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ջախջախեց Փառնաս արքայի գլխավորած լուլլուբեներին (մոտ 80.000)[2], ինչի արդյունքում Զագրոսյան լեռնաշղթան ընկավ Ասորեստանի թագավորության գերիշխանության տակ: Այսպիսով՝ պաշտոնական Ասուրը արևելքում լուրջ հաջողության հասավ, սակայն, դրանով հանդերձ, Ասորեստանի թագավորության վիճակն ինքն էլ ամենևին փայլուն չէր: Ճիշտ է, մ.թ.ա. 1750 թվականին Համմուրապիի մահից հետո նրա որդի և հաջորդ արքա Շամշիիլունայի (մ.թ.ա. 1750-1712) օրոք, չնայած վերջինիս ներդրած եռանդուն ջանքերին, Բաբելոնի թագավորությունն այնուհանդերձ աստիճանաբար սկսեց զիջել դիրքերը, սակայն Ասորեստանի թագավորությունը ևս նույն այս ժամանակ անկման ուղին էր բռնել:

Մ.թ.ա. 1756 թվականին Իշմեդագան I-ը մահացավ և գահին նրան հաջորդեց իր որդի Մութ-Ասկուրը (մ.թ.ա. 1756-1740՝ համիշխան), սակայն վերջինս, ըստ էության, կառավարում էր միայն ձևականորեն, իսկ ողջ փաստական իշխանությունը գտնվում էր նրա իշխանատենչ մոր՝ Շամիրամի (մ.թ.ա. 1756-1740՝ համիշխան, մ.թ.ա. 1740-1714), ձեռքում: Հենց վերջինիս նախաձեռնությամբ էր, որ մ.թ.ա. 1743 թվականին Ասորեստանի թագավորության բանակը կրկին ներխուժեց Հայոց թագավորության տարածք: Հերթական այս հարձակման, համենայն դեպս գոնե ձևական պատճառը լայնորեն հայտնի է՝ Ասորեստանի թագուհու տենչանքը Հայոց արքայի նկատմամբ: Արա լեռան ստորոտում տեղի ունեցած արյունոտ ճակատամարտում, սակայն, հայերին հաջողվեց կասեցնել թշնամու առաջխաղացումը, թեև Հայոց արքան ընկավ մարտում: Արդյունքում՝ Հայկական բանակը, որը նահանջել էր, սկսեց արագորեն համալրումներ ստանալ, ինչն էլ ստիպեց թշնամուն ի վերջո հեռանալ Հայոց թագավորության սահմաններից[3]:

Արա I Գեղեցիկ մահից հետո նրան հաջորդեց իր որդին՝ տասներկուամյա Արա II Կարդոսը (մ.թ.ա. 1743-1725), որը մեծ հաշվով հորն արժանի տիրակալ եղավ: Իր հերթին, հայերի դեմ մղված ծանր պատերազմից հետո Ասորեստանի թագավորությունը սկսեց արագ տեմպերով թուլանալ, իսկ, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 1740 թվականին Մութ-Ասկուրն ինքը զոհ գնաց ակնհայտորեն սեփական մոր կողմից հղացած պալատական

---

[1] Համմուրապիին վերագրվող արձանագրությունից; Իբալ-Պիելին վերագրվող արձանագրությունից; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 2, գլուխ 1:

[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 2, գլուխ 1:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 15; Սեբեոս «Պատմություն», գլուխ 1; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 18; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 3; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

դավադրությանը[1], Ասորեստանում սկիզբ առավ ու երկար տասնամյակներ շարունակվեց քաղաքացիական իսկական մի պատերազմ: Այսպիսով՝ կյանքը ցույց տվեց, որ Հին աշխարհի ամենագեղեցիկ և իշխանատենչ կանանցից մեկը այդպես էլ չկարողացավ դրսևորել իրեն քաղաքական ասպարեզում: Մութ-Ասկուրի մահվանից հետո Ասորեստանի թագավորության տարբեր մասերում տարբեր ժամանակներում իրենց արքա հռչակեցին Ռիմուշը, Ասինումը, Պուզուր-Սինը, Ասուրդուգալը, Ասուրապլաադինը, Նասիր-Սինը, Սին-Նամիրը, Իպկիիշուրը, Ադադ-Ցալուլը և Ադասին[2]:

Գլուխ 8
Հայկական Երրորդ գերիշխանությունը

Շամիրամի արկածախնդրության տապալումից, կրած կորուստներից և, հատկապես, իրենց սիրելի արքայի զոհվելուց հետո հայերը լցված էին վրեժխնդրությամբ, ընդ որում հասկանալի էր, որ իրական մեղավորը ոչ այնքան պաշտոնական Ասուրն էր, թեև վերջինիս մեղքի բաժինն էլ էր հսկայական, այլ՝ ամենից առաջ հենց Բաբելոնը: Արդյունքում՝ զոհված արքայի որդին՝ Հայոց թագավորության նոր արքա Արա II Կարդոսը, մարտական գործողություններ սկսեց հենց Բաբելոնի դեմ: Սկիզբ առան իրադարձություններ, որոնք համաշխարհային պատմական ավանդույթում ավանդաբար կապվում են սեմիտական տարբերակում «կաս(շ)ու» անվանվող մարդկային խմբի հետ: Ավանդաբար ընդունված է կիրառել անվան հենց այս տարբերակը, թեև առավել ճշգրիտ է կիրառել «Կարդու» անվանումը, ինչպես մարդկային այս խումբն ինքն է անվանել իրեն[3]:

Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ հենց այս ժամանակ էր, որ Հայկական բանակը ձեռք բերեց մարտավարական զգալի մի առավելություն՝ երկաթի հետագա հաջող յուրացման արդյունքում ստեղծվեցին և մասսայական կիրառություն ստացան նոր սերնդի մարտակառքերը: Հայկական բանակի կողմից կիրառության մեջ դրված նոր մարտակառքն իրենից ներկայացնում էր երկաթյա երկու ճաղավոր անիվների վրա տեղակայված լավ պաշտպանված համեմատականորեն փոքրիկ մի սայլակ, որին լծված էին երկու կամ երեք ձիեր և որի վրա գտնվում էին երկու, հազվադեպ՝ երեք, ռազմիկներ: Ռազմիկներից մեկը սովորաբար զինված էր լինում նետերով և աղեղով, ինչպես նաև հետն ուներ տեգեր, ընդ որում հակառակորդին հարվածելու հիմնական խնդիրը լուծում էր հենց այս ռազմիկը: Մյուս ռազմիկի հիմնական գործառույթը մարտակառքը վարելն էր, ինչպես նաև, առիթի պարագայում՝ հարվածներ հասցնող ռազմիկի պաշտպանությունը իր վրա եկող հարվածներից: Այս ռազմիկն ինքը հարվածներ էր հասցնում խիստ հազվադեպ:

Մարտակառքերի մեծաքանակ կիրառումը միանգամից էլ մեծացրեց Հայկական բանակի ինչպես ռազմավարական, այնպես էլ օպերատիվ և մարտավարական արագաշարժությունը, ինչը նախկինի համեմատ համեմատականորեն կարճ ժամանակաշրջանում թույլ տվեց երկար տարածություններ անցնել՝ իր հերթին թույլ տալով ավելի հեռավոր արշավանքներ իրականացնել, քան մինչ այդ էր: Իր հերթին, մարտակառքերի կիրառումը առաջացրեց մարտավարական նոր իրավիճակներ, երբ, մասնավորապես, ի հայտ եկավ մարտադաշտում մղվող պայքարի մի նոր տեսակ, ի դեմս մարտակառքերի անհատական կամ խմբային մենամարտերի: Եվ վերջապես հարկ է ընդգծել, որ մարտակառքերի կիրառումը նմանատիպ մարտակառքեր չունեցող և հիմնականում միայն հետևազորից կազմված բանակների նկատմամբ մարտակառք կիրառող բանակին մեծ առավելություն էր տալիս, երբ ավելի արագաշարժ ու ճկուն մարտակառքերը հետևազորի հոծ խմբերի նկատմամբ հսկայական առավելություն էին ստանում՝ արագորեն և տարբեր կողմերից հարվածելով վերջիններիս, երբ իրենք

[1] Դատելով Խորենացու հաղորդումներից՝ այս արքան զոհ է գնացել սեփական մոր հղացած դավադրությանը (գիրք 1, գլուխ 17:
[2] Ցանկն՝ ըստ - http://web.archive.org/web/20080511203747/http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/0.htm
[3] Տես օրինակ՝ «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 20:

պատասխան հարվածների համար մնում էին համեմատականորեն անխոցելի: Վերևում նկարագրված մարտավարական և ռազմավարական առանձնահատկությունները իրենց անմիջապես էլ զգացնել տվեցին, ընդ որում առաջնային հարվածն իր վրա կրեց Բաբելոնի թագավորության բանակը, որի հետ Հայոց թագավորությունը քննարկվող ժամանակաշրջանում գտնվում էր պատերազմական դրության մեջ:

Մ.թ.ա. 1742 թվականին Գանդաշի գլխավորած Հայոց թագավորության բանակը (մոտ 100.000, 100 մարտակառք) ասպատակեց Կենտրոնական Միջագետքն ու Նիպպուրի շրջակայքը և նահանջեց: Ստեղծվեց Կարդունիաշի իշխանությունը[1], որի առաջին իշխան հռչակվեց Գանդաշը (մ.թ.ա. 1742 - մոտ 1720): Արդյունքում՝ Հայոց թագավորությունը, շրջափակելով Ասորեստանին արևմուտքից, հարավից և հյուսիսից ու մեկուսացնելով վերջինիս, ինչպես նաև սպառնալով Բաբելոնին, ռազմաքաղաքական զգալի առավելություն ձեռք բերեց[2]: Մ.թ.ա. 1741 թվականին, սակայն, Բաբելոնի ճ-մ-ում Շամշիհիլունա արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Գանդաշի գլխավորությամբ առաջխաղացած Հայոց թագավորության բանակին (մոտ 50.000)[3], ինչը որոշակիորեն կայունացրեց իրադրությունը:

Մ.թ.ա. 1730 թվականին Շամշիհիլունա արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Էշնունայի շրջակայքը և, ենթարկվելով Կարդունիաշի իշխանության բանակի (մոտ 10.000) անկանոն հարվածներին, նահանջեց[4]: Դրանից հետո մ.թ.ա. 1728 թվականին Շամշիհիլունայի ռազմական մեքենան ասպատակեց Կորճայքի հարավ-արևելքը, սակայն, ենթարկվելով Կարդունիաշի իշխանության բանակի (մոտ 10.000) անկանոն հարվածներին, նահանջեց[5]: Մ.թ.ա. 1727 թվականին Շամշիհիլունա արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) հերթական անգամ ասպատակեց Կորճայքի հարավ-արևելքը, սակայն այս անգամ ևս մանր մարտերից հետո հետ շպրտվեց[6]: Հարավային հարևանի հետ զարգացող հարաբերությունները պաշտոնական Արմավիրի վճռական միջամտությունն էին պահանջում, ինչը և եղավ:

Արդյունքում՝ մ.թ.ա. 1725 Կորճայքի ճ-մ-ում Արա II Կարդոսի գլխավորած Հայոց թագավորության բանակը (մոտ 100.000, 100 մարտակառք) ջախջախեց Բաբելոնի և Ասորեստանի թագավորությունների առաջխաղացած միացյալ բանակին (մոտ 60.000): Այսպիսով՝ հաջողությունն այս անգամ ևս մնաց հայերի կողմում, սակայն, դժբախտաբար, այս անգամ ևս, ինչպես և իր հայրը, Հայոց արքան ընկավ մարտի դաշտում[7]:

Արա II Կարդոսից հետո Հայոց թագավորության գահը զբաղեցրեց նրա որդի Անուշավան Սոսանվերը (մ.թ.ա. 1725-1662), որը գահը զբաղեցնելու պահին ևս գտնվում էր մանուկ հասակում: Այս առումով լավը, թերևս, այն էր, որ կրած անհաջողությունը էժան չէր նստել նաև Հայոց թագավորության հակառակորդների վրա, որոնք այս դեպքերից հետո սկսեցին ավելի ահագնացող տեմպերով անկում ապրել: Մ.թ.ա. 1722 թվականին Շամշիհիլունա արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Կորճայքի հարավ-արևելքը, սակայն, ենթարկվելով Կարդունիաշի իշխանության բանակի (մոտ 10.000) անկանոն հարվածներին, նահանջեց[8]: Ավելին, շուտով պարզվեց, որ Բաբելոնի թագավորությունը այս կամ այն չափով հաջող

---

[1] «Կարդունիաշ» տերմինը կազմվել է Կորճայք նահանգի Կորդուք գավառի անունից, ինչպես նաև սեմիտական «իաս» վերջավորությունից, որը նշանակում է «երկիր»: Այսպիսով՝ այս իշխանության անվանումը բառացիորեն նշանակում է «Կորդուքի երկիր», ինչն էլ ցույց է տալիս վերջինիս ուղղակի կապը Հայկական լեռնաշխարհի և հայերի հետ: Հարկ է նշել նաև, որ այս և հաջորդող իրադարձությունները ավելի շատ հայտնի են «Քաշուների արշավանքներ» անվանումով, ինչը բացատրվում է նրանով, որ որպես արշավի ելած բանակի ելման կետ հանդես են եկել այդ թվում նաև Հայոց Միջագետքի հարավում գտնվող Քաշիարի լեռները:

[2] Այս հաղորդման համար հիմք է հանդիսացել Նիպպուրում գտնված Գանդաշի արձանագրությունը:

[3] Շամշիհիլունային վերագրվող արձանագրությունից:

[4] Շամշիհիլունային վերագրվող արձանագրությունից:

[5] Շամշիհիլունային վերագրվող արձանագրությունից:

[6] Շամշիհիլունային վերագրվող արձանագրությունից:

[7] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 20; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[8] Շամշիհիլունային վերագրվող արձանագրությունից:

պատերազմում էր մեծապես միայն Շամշիիլունա արքայի շնորհիվ, որի մահվանից անմիջապես հետո նրա թողած թագավորությունը անկում ապրեց:

Մ.թ.ա. 1712 թվականին Շամշիիլունան կնքեց իր մահկանացուն և նրան հաջորդեց որդին՝ Աբիեշուն (մ.թ.ա. 1712-1684), որի օրոք էլ մ.թ.ա. հենց 1711 թվականին Կարդունիաշի իշխան, Գանդաշին հաջորդած Ագում Մեծի (մ.թ.ա. մոտ 1720-1690) գլխավորած Հայոց թագավորության (մոտ 50.000, 100 մարտակառք) և Կուտիր-Նուխունտե Ի-ի (մ.թ.ա. 1730-1700) գլխավորած Էլամի թագավորության (մոտ 50.000) միացյալ բանակը ասպատակեց Կենտրոնական ու Հարավային Միջագետքը[1]: Արդյունքում՝ Բաբելոնի թագավորությունը, որպես տարածաշրջանային ուժ, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ, թեև Բաբելոն քաղաքը շարունակեց պահպանել իր հսկայական նշանակությունը, Հյուսիս-արևմտյան Միջագետքը ընկավ Հայոց թագավորությանը ենթակա Կարդունիաշի իշխանության տիրապետության տակ, իսկ Էլամի թագավորությանն էլ բաժին հասավ հսկայական ավար:

Բաբելոնին հասցված վերջին ջախջախիչ հարվածն, ըստ էության, նաև վերջին այն փորձաքարն էր, որը ցույց տվեց նույն այս ժամանակ գործող Հայոց ռազմական մեքենայի անվիճելի առավելությունը տարածաշրջանի նույնիսկ առաջատար պետությունների ռազմական մեքենաների նկատմամբ: Արդյունքում՝ Արմավիրում որոշեցին շարունակել նվաճումները և սկզբում հարված հասցնել Եգիպտոսին, իսկ հետո էլ՝ արշավանք իրականացնել դեպի արևելք: Որպես հետևանք ընդունված որոշման՝ մ.թ.ա. 1710 թվականին Սինայի թերակղզու ճ-մ-ում (Եգիպտոսի հյուսիս-արևելք) Հայոց թագավորության բանակը (մոտ 100.000) ջախջախեց Եգիպտական թագավորության բանակին (մոտ 120.000): Արդյունքում՝ Եգիպտոսն ընկավ Հայոց թագավորության տիրապետության տակ, իսկ նրա կառավարումը հանձնվեց Հայկազունիներից սերող Հայկազուտներին: Ստեղծվեց Հայկական Երրորդ գերիշխանությունը, որը տևեց 164 տարի[2]: Արմավիրում, սակայն, միայն սրանով բավարարվել չէին պատրաստվում:

Մ.թ.ա. 1700 թվականին Ասուրի ճ-մ-ում (Հյուսիսային Միջագետք) Հայոց թագավորության բանակը (մոտ 100.000) ջախջախեց Ադասի արքայի (մ.թ.ա. մոտ 1710-1700) գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 60.000), ինչի արդյունքում Ասորեստանի թագավորության տարածքը ընկավ Հայոց թագավորության գերիշխանության տակ[3]: Դրանից հետո Հայոց ռազմական մեքենան ուղղություն վերցրեց դեպի արևելք և, առանց էական դիմադրության հանդիպելու կտրելով Իրանական լեռնաշխարհը, մտավ Հյուսիսային Հնդկաստան: Արդյունքում՝ մ.թ.ա. 1700 թվականին Հայոմարտի գլխավորությամբ Իրանական լեռնաշխարհով առաջխաղացած Հայոց թագավորության բանակը (մոտ 90.000) Մոհանջո-Դարոյի և Հարապպայի թագավորությունների միացյալ բանակից (ընդհանուր՝ մոտ 80.000) գրավեց Ինդոս ու Գանգես գետերի հովիտները (Հնդկաստան)[4]: Որպես հետևանք կյանքի կոչված ռազմաքաղաքական աննախադեպ այս գործողության՝ Իրանական լեռնաշխարհն և Հյուսիսային Հնդկաստանը ընկան Հայոց թագավորության տիրապետության տակ, իսկ դրանց կառավարիչներ էլ հռչակվեցին նորանվաճ տարածքներում հաստատված Հայոմարտն ու նրա սերունդները, որոնք հիմնեցին Հայոմարտների գահատոհմը: Արդյունքում՝ ստեղծվեց Արիական տերությունը, որը, որպես կենտրոն ունենալով Հայոց թագավորությունը, իր սահմաններում ընդգրկեց մի տարածք, որը արևելքում սահմանափակվում էր Տիբեթով, արևմուտքում՝ Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական

---

[1] Շամշիիլունային վերագրվող արձանագրությունից; Ասուրբանիպալին վերագրվող արձանագրությունից:

[2] Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապպիոնի», գիրք 1, գլուխ 14; Հուլիոս Աֆրիկանոս «Ժամանակագրություն»; Եվսեբիոս Կեսարացի «Ժամանակագրություն»; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4:

[3] Այս ճակատամարտի, ընդհարումների շարանի կամ գուցե նույնիսկ պատերազմի մասին աղբյուր է հանդիսանում սեպագիր արձանագրություններից հայտնի Ասորեստանի արքայացանկի ուսումնասիրությունը, ինչպես նաև այս պետության, որպես քաղաքական միավորի, ըստ էության, դադարելը գոյություն ունենալուց: Խնդիրը մանրամասն քննարկված է իմ «Հայկազունիներ, մոռացված մի արքայատոհմ» , Երևան 2012թ. աշխատությունում:

[4] Այս ճակատամարտի մասին տեղեկությունները ցրված են «արիական աղբյուրներում», որոնց շարադրման և հրատարակության որոշակի առանձնահատուկ բնույթի պատճառով դրանք այստեղ շարադրել ես հարմար չգտա:

հատվածով և Փոքր Ասիայի արևմուտքով, հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթայով ու Սիր-Դարյա գետով, իսկ հարավում էլ Պարսից ծոցով և Հնդկական օվկիանոսով:

Գլուխ 9
Արիների հիմնախնդիրը

Արիական արշավանքները և արիական նվաճումները հանդիսանում են մարդկության պատմության ամենաակնառու, բայց միաժամանակ նաև ամենաառեղծվածային իրադարձություններից մեկը: Իրոք, մի քանի հարյուրամյակ շարունակ համաշխարհային պատմական միտքը չի կարողանում բավարար լուծում տալ այս իրադարձությունների հետ կապված հիմնական և սկզբունքային այնպիսի հարցերի, ինչպիսիք են արիական արշավանքների մեկնակետը, դրանց գոնե մոտավոր ժամանակը, արշավողների էթնիկ պատկանելիությունը, արշավանքների հետևանքները և այլն: Մատնանշված հարցերին բավարար լուծում տալու համար, ըստ իս, ամենից առաջ անհրաժեշտ է առաջնորդվել ընդհանուրից մասնավորին գալու գիտության մեջ ընդունված մեթոդով:

Զարգացնելով այս մոտեցումը՝ ստորև նախ կքննարկվի արիների էթնիկ պատկանելիության հարցը և դրանով փորձ կարվի լուսաբանել արիական արշավանքների մեկնակետի խնդիրն ու դրանց առաջարկվող ժամանակահատվածը, դրանից հետո կվերլուծվեն արդեն արիական բուն արշավանքները, իսկ վերջում էլ կշարադրվի, իմ կողմից առաջին անգամ շրջանառության մեջ մտցվող «Արիական տերություն» տերմինով անվանված, արիական արշավանքների արդյունքում ստեղծված պետության քաղաքական պատմությունը: Ուզում եմ հատկապես ընդգծել, որ ստորև գրվածը, ամենևին էլ չհավակնելով վերջնական ճշմարտություն, ընդամենը մի փորձ է գիտական շրջանակների քննարկմանը ներկայացնել երկար տարիների ընթացքում կատարված հեղինակային ուսումնասիրությունների արդյունքները՝ նպատակ ունենալով բացահայտել և հիմնավորել մ.թ.ա. II հազարամյակի կեսի Հայոց քաղաքական պատմության որոշ հարցեր:

Մարդկության պատմության ընթացքում ազգերի և պետությունների նվաճման դեպքերը բազմաթիվ են, իսկ Եվրասիայի հինգհազարամյա պատմությունն էլ իրենից, ըստ էության, ներկայացնում է պատերազմների ու նվաճումների անվերջանալի մի շղթա, որում առանձնակի տեղ ունի պայքարը նստակյաց և քոչվոր ազգերի միջև: Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին պարագայում, մինչև հրազենի ի հայտ գալը, նվաճումների սուբյեկտի դերում, որպես կանոն, հանդես են եկել զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող և քոչվոր ապրելակերպ վարող ազգերը, իսկ որպես նվաճումների օբյեկտ՝ նստակյաց ապրելակերպ վարող ու զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող ազգերը: Որպես օրինակ կարելի է բերել մի կողմից քոչվոր ապրելակերպ վարող հուններին, սաբիրներին, ույղուրներին, թյուրքերին, չժուրչժեներին, քիդաններին, մոնղոլներին և այլոց, իսկ մյուս կողմից էլ՝ Չինաստանի տարածքում տարբեր ժամանակներում ստեղծված ու լավագույն դեպքում հաջող պաշտպանությամբ աչքի ընկած նստակյաց չինացիների պետական միավորներին: Ոչ պակաս վառ օրինակ կարող են հանդիսանալ մի կողմից քոչվոր կիմմերները, սկյութները, սարմատները, հոները, սաբիրները, ավարները, խազարները, օղուզները, պածինակները, ղփչախները և նույն մոնղոլները, մյուս կողմից էլ՝ Մերձավոր ու Միջին Արևելքում տարբեր ժամանակներում ստեղծված և ի վերջո նվաճված նստակյաց ազգերի պետությունները Իրանական ու Հայկական լեռնաշխարհներում, Փոքր Ասիայում, Բալկանյան թերակղզում, Մերձավոր Արևելքում և այլն: Մատնանշված երևույթի պատճառները խորքային են և քիչ են պայմանավորված որևէ ազգի դրական կամ բացասական այս կամ այն կողմերով: Սա, սակայն, առանձին ուսումնասիրության թեմա է և այստեղ պետք է բավարարվել ընդամենը միայն փաստի սույն արձանագրմամբ: Մինչև հրազենի ի հայտ գալը

նստակյաց ազգի կողմից քոչվոր ապրելակերպ վարող ազգերի միակ նվաճման դեպքը վերաբերվում է, թերևս, միայն արիական արշավանքներին: Գոյություն ունի, սակայն, ևս մեկ զարմանալի օրինաչափություն:

Եվրասիայի հինգհազարամյա պատմության ընթացքում նվաճողները, որպես կանոն, շարժվել են արևելքից արևմուտք, ընդ որում սա այն աստիճան ակնհայտ մի փաստ է, որ նույնիսկ օրինակներով հիմնավորման կարիք էլ չունի: Կարելի է մատնանշել, թերևս, միայն երեք դեպք, երբ նվաճումների ալիքը ունեցել է հակառակ տեսքը՝ արևմուտքից արևելք: Դեպքերից երկուսը վերաբերում են հունամակեդոնական նվաճումներին և Հռոմեական կայսրության առաջխաղացմանը դեպի արևելք, որոնք, սակայն, ավելի շուտ ոչ լիարժեք բացառություններ են, քան կարող են հավակնել օրինաչափության: Արևմուտքից արևելք իրականացված նվաճման երրորդ դեպքը վերաբերում է արիական արշավանքներին:

Արիական լեզվի, ինչպես նաև հնագույն արիական մշակույթի ուսումնասիրությունը բերում է հետևության, որ, ի դեմս արիների, մենք գործ ունենք միասնական մի ժողովրդի հետ, որի հիմքի վրա այլ ժողովուրդների առաջացումը տեղի է ունեցել մ.թ.ա. մոտավորապես II հազարամյակի կեսերին: Այս տեսանկյունից ամենից առաջ պետք է քննարկել արիական արշավանքների մեկնակետի խնդիրը և փորձ կատարել այդ, ինչպես նաև հարակից այլ փաստերի միջոցով պարզաբանել արիների էթնիկ պատկանելիության հարցը: Կարծում ենք, որ խնդրին բավարար լուծում տալու համար անհրաժեշտ է քննարկել արիներին բնորոշ և ներկայումս մեզ հայտնի հատկանիշների ամբողջությունը:

1. ***Արիները հմուտ մարտակառքեր վարողներ էին և ունեին մեծաթիվ մարտակառքեր, որոնք հանդիսանում էին նրանց բանակի հիմնական հարվածային ուժը***[1]: Մեծաթիվ մարտակառքեր ունենալու առաջնային պայմաններից մեկը զարգացած մետաղագործություն և մետաղի հարուստ հանքեր ունենալն է: Ավելին, մարտակառքերի հետ հմուտ վարվելու համար անհրաժեշտ է ունենալ դրանց կիրառման բավականին երկար ավանդույթներ: Արիների արշավանքների մեկնակետի հնարավոր թեկնածուներից Մերձսևծովյան տափաստանները, Միջին Ասիան և Իրանական լեռնաշխարհը ոչ մի կերպ չեն բավարարում այս պայմաններին: Իր հերթին Հայկական լեռնաշխարհի տարածքում մետաղը սկսվել է մշակվել դեռևս մ.թ.ա. II հազարամյակի սկզբին[2], ինչի մասին են վկայում մետաղամշակման մի շարք կենտրոնների և ամենից առաջ Մեծամորի մետաղամշակման կենտրոնի հայտնաբերումը: Հատկանշական է, որ հենց Հայկական լեռնաշխարհում, այլ ոչ թե հարևան տարածաշրջաններում են գտնվում մետաղի հարուստ հանքավայրեր,

2. ***Արիները ունեին զարգացած գիտելիքներ աստղագիտության ոլորտում:*** Այս մասին է վկայում այն հանգամանքը, որ հենց նրանց հետ է կապվում «Կենդանակերպի 12 նշաններ»-ի հայտնագործումը, որը պետք չէ շփոթել «Չինական կենդանակերպի նշաններ»-ի հետ[3]: Եվ կրկին հատկանշական է, որ արիների արշավանքների մեկնակետի հնարավոր թեկնածուներից Մերձսևծովյան տափաստանները, Միջին Ասիան և Իրանական լեռնաշխարհը ոչ մի կերպ չեն բավարարում աստղագիտության զարգացած կենտրոններ լինելու թեկնածության հատկանիշներին: Հետաքրքիր է, որ «Կենդանակերպի 12 նշանների» ողջ համակարգը իր ամբողջական տեսքով համապատասխանում է միայն Հայկական լեռնաշխարհի բնության և հոգևոր-մշակութային բաղադրիչներին: Ոչ մի այլ տարածաշրջան մեկ համակարգում չունի հեթանոս հայերի կողմից խորը պաշտամունքի արժանացած Խոյ[4], Այծեղջյուր, Ցուլ, Ջրհոս և Աղեղնավոր կենդանակերպի նշանները, իսկ Առյուծն էլ մինչև վաղ միջնադար

[1] Վարպետյան Ա. Ս. «Ովքեր են ի վերջո արիացիները», Մարսել 1989:
[2] Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 17, նաև՝ նույն էջի ներքևում 18-րդ ծանոթագրությունը:
[3] Տես՝ Мифологии народов мира. Т 2, С.630.
[4] Հատկանշական է, որ լատիներենում «խոյ»-ը թարգմանվում է որպես. «Aries», ինչը չի կարող պատահական լինել:

տարածված է եղել Հայկական լեռնաշխարհի հարավում ու Հյուսիսային Միջագետքում[1]: Եվ այսպես, եթե արիները պատկանեին չինական քաղաքակրթությանը, նրանց «կենդանակերպի համակարգում», անկասկած, առկա կլիներ Վագր կամ Վիշապ, միջինասիականի դեպքում մենք կհանդիպեինք Ուղտի, իսկ, եթե արիները պատկանելիս լինեին հինեգիպտական մշակութային տարածքին, նրանց «կենդանակերպի համակարգում», անկասկած, կհանդիպեր Կոկորդիլոս կամ Կատու: Հատկանշական է, որ աստղագիտության պատմության այնպիսի խոշորագույն մասնագետներ, ինչպիսիք են Մաունդերը, Օլկոտը և Շվարցը, կարծում են, որ մարդիկ, որոնք բաժանել են երկինքը համաստեղությունների, ապրել է հյուսիսային լայնության 36-րդ և 42-րդ աստիճանների միջև[2]: Այս կապակցությամբ Օլկոտը արտահայտվում է բավականին որոշակիորեն, նշելով, որ. «*Այն մարդիկ, որոնք հեղինակել են համաստեղությունների հինավուրց ուրվագծերի նմանությունները, հավանաբար ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան շրջակայքում*»: Հարկ է նշել նաև, որ Հայկական լեռնաշխարհի հնագիտական ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ հենց այստեղ է գտնվում «Քարահունջների» մի ամբողջ համակարգ: Խոսքը ամենից առաջ վերաբերում է Սյունիքում գտնվող և առայժմ ամենալավը ուսումնասիրված «Քարահունջին»: Այս առումով հատկանշական է, որ երկրագնդի քարտեզի վրա «Քարահունջների համակարգը» դիտարկելիս ստանում ենք արևային ճառագայթների տարածման տեսքը, երբ տարածման կենտրոնում դրանք շատ են ու դասավորված են խիտ, իսկ հետագայում, համապատասխան կենտրոնից դասավորվածության հեռավորությանը, դրանց քանակը և խտությունը նվազում են: Համակարգը այս կերպ դիտարկելիս պարզվում է, որ «Քարահունջների համակարգի» կենտրոնը գտնվում է Հայկական լեռնաշխարհում: Այս առումով ավելորդ չէ մեջբերել Ջ. Հոուկինսի կարծիքը, որը Վիկտոր Համբարձումյանին գրած մի նամակում նշում է. «*Ես համոզված եմ, որ Սթոունհենջը միայնակը չէ և պետք է սպասել այդպիսի աստղագիտական մշակույթ Հայաստանում*»[3],

3. ***Արիների ինքնանվանումը («Արի»):*** Երկրագնդի վրա ոչ մի ժողովուրդ ոչ մ.թ.ա. II հազարամյակի կեսերին և ոչ էլ հիմա չունի ավելի շատ իրավունք իրենը համարելու այս էթնոնիմը, քան հայերը, որոնց օտարները անվանում են «Արմեն»: Ավելին, որևէ ժամանակ երկրագնդի վրա ապրած և ոչ մի ժողովրդի բառապաշարում «Ար» արմատը չունի այնքան հարգալից ու դրական իմաստ, ինչպես հայերի մոտ: Իր հերթին, ոչ մի ժողովրդի լեզվում չկան «Ար» արմատով սկսվող այդքան շատ տեղանուններ և անձնանուններ, ինչպես հայերի մոտ[4]: Հատկանշական է, որ «Արմա(ե)ն» տերմինը բառացիորեն նշանակում է «արիական մարդ»: Հնդեվրոպական «man» բառը, որից առաջացել են պրոտո-գերմանական «mannaz» կամ «manwaz» («մարդ») բառը, «մարդ» բառի ամենահին կիրառություններից մեկն է և հանդիպում է արդեն մեր կողմից դիտարկվող դարաշրջանում: Տերմինը կարելի է համեմատել, օրինակ, սանսկրիտյան բառապաշարի կամ չեխական «mu» («մարդ», «տղամարդ») տերմինի հետ: Ավելացնենք, որ հին հայերենում եղել է տղամարդու «Մանվազ» անունը, որը և ամենայն հավանականությամբ հանդիսանում է պրոտո-գերմանական (արիական) «mannaz» կամ «manwaz» («մարդ») բառի հիմքը: Այստեղ ավելորդ չէ հիշել նաև Մովսես Խորենացու կողմից հիշատակվող «Մանվազ»-ին, որը Հայկ Նահապետի սերնդից էր[5]:

4. ***«Կարդու-կաս/շուներ»-ի, «Հաքսոսներ»-ի և «Խուռիներ»-ի հիմնախնդիրը ու արիները:***

- ***«Կարդու-կաս/շուներ»-ը և արիները:***

Արա I Գեղեցիկի մահով սկիզբ առան իրադարձություններ, որոնք

[1] Այս առումով պատահական չպետք է համարել, որ Առյուծը հանդիպում է իր արմատներով դեպի Հայոց պատմության վաղնջական ժամանակները գնացող Հայոց ազգային էպոսում «Սասունցի Դավիթ»-ում:
[2] Уильям Тайлер Олькотт. Легенды звездного мира, С.-П., 1914.
[3] Խանզադյան Է. Վ. «Մեծամոր», Երևան 1973, էջ 149:
[4] Վարպետյան Ա. Ս. «Ովքեր են ի վերջո արիացիները», Մարսել 1989:
[5] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 12:

համաշխարհային պատմական ավանդույթում ավանդաբար կապվում են սեմիտական տարբերակում «կաս(շ)ու» անվանվող մարդկային խմբի հետ[1]: Մ.թ.ա. 1711 թվականին «Կարդու»-ները և Էլամի թագավորության բանակը լայնամասշտաբ հարձակման անցան Կենտրոնական ու Հարավային Միջագետքի ուղղությամբ և վերջակետ դրեցին Բաբելոնի տարածաշրջանային կարգավիճակին[2]: Այսուհետ, չնայած նրան, որ Բաբելոնում արքայական իշխանությունը պահպանվեց, որևէ տարածաշրջանային դերի մասին վերջինս արդեն խոսել անգամ չէր կարող: Դրանից հետո Բաբելոնի արքաների իշխանությունը տարածվում էր առավելագույնը միայն Բաբելոն քաղաքի և հարակից տարածքների վրա:

Այս մասին արդեն խոսվեց, իսկ այժմ ամրագրենք, որ «Կարդուներ» անվանված մարդկային խումբը.

ա) որպես արշավանքի մեկնակետ ունեցել է Հայկական լեռնաշխարհը[3],

բ) ունի ընդգծված հնդեվրոպականություն[4],

գ) հենց այդ ժամանակներում ունի գործող մի արքա, որին կոչում էին «Կարդոս», ինչը, շարադրված փաստերի համակարգային վերլուծության ֆոնի վրա, բերում է մեծապես հիմնավորված մի հետևության, որ Բաբելոնի դեմ մարտական գործողություններ մղող բանակի ռազմիկները անվանվել են ըստ իրենց արքայի երկրորդ անվան[5] (կամ մականվան),

դ) ինքն իրեն անվանում էր «Կարդու», իսկ իր ստեղծած իշխանությունը՝ «Կարդունիաշի իշխանություն»: Այս կապակցությամբ չափազանց տեղին է Արտակ Մովսիսյանի դիտարկումը. «*Անջատելով վերջավորությունները՝ կստանանք մաքուր տեղանունը՝ Քարդու, որը Հայաստանի հնագույն անվանումներից է: Այդ անվամբ է Հայաստանը հանդես գալիս նաև Աստվածաշնչի հին ասորական և հին արաբական թարգմանություններում*»[6]: Թույլ տանք մեզ ավելացնել միայն, որ ամենայն հավանականությամբ մի կողմից Հայաստանի հարավային նահանգը՝ Կորճայքը (Կարդուքը), իր անվանում ստացել է հենց այն պատճառով, որ այստեղ տեղի ունեցած ճակատամարտում հոր ողբերգական ճակատագիրն է կիսել Հայոց հերթական արքա Արա II Կարդոսը, մյուս կողմից էլ՝ որպես Միջագետքին առավել մոտիկ երկրամաս, Հայաստանը նախ և առաջ հենց որպես Կարդուք են ընկալել միջագետքյան հարավային հարևանները՝ ասորիները, մասնավորապես, և սեմիտները ընդհանրապես: Այսինքն, դնելով երկու փաստերը միմյանց կողքին, պարզվում է, որ «Հաքսոս»-ների ներխուժումը Եգիպտոս իրականում «Կարդու»-ների արշավանքների տրամաբանական շարունակությունն էր:

- ***«Հաքսոսներ»-ը և արիները:***

Այն մասին, որ «Հաքսոսներ»-ը իրականում չեն եղել սեմիտներ, վկայում են մի շարք փաստեր.

ա) **Ինքնին Եգիպտոսի նվաճման փաստը:** Եթե մի պահ ընդունենք, որ «Հաքսոս»-ները[7] եղել են սեմիտներ, ապա այդ դեպքում հարց է ծագում, թե ինչպե՞ս կարող էին քոչվոր-սեմիտ անասնապահները Եգիպտոսի նկատմամբ հասնել տեխնոլոգիական այնպիսի մի գերազանցության, որ ոչ միայն ուղղակի տառացիորեն ոչնչացնեին վերջինիս բանակը, այլև տիրեին այս հինավուրց երկրին, կառավարեին այն մեկուկես

---

[1] Ստորև կհիմնավորվի, որ մենք պատահականորեն չէ, որ զերծ ենք մնում «ցեղ» կամ «ցեղային միություն» տերմինների կիրառումից:

[2] Коростовцев М. А. "История древнего востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации. Ч. I. Месопотамия", Москва 1983: Բաբելոնի հերթական արքա Աբու-էշուն (մ.թ.ա. 1712-1684) բաբելոնյան սեպագրերին հատուկ ոճով հայտնում է «կասսուներ»-ի դեմ ձեռք բերված հաջողության մասին, սակայն ընդհանուր քաղաքական իրավիճակի վերլուծությունը ստեղծում է լրիվ հակառակ պատկեր:

[3] Տես օրինակ՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 17-23:

[4] Տես օրինակ՝ Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 17-23:

[5] Նմանատիպ բազում օրինակներ կարելի է հանդիպել հետագայում: Մասնավորապես, Նապոլեոնի կողմնակիցները կոչվում էին «բոնապարտիստներ», իսկ Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում գերմանական զավթիչներին ընդունված էր անվանել նաև «հիտլերականներ»:

[6] Մովսիսյան Ա. Ե. «Հայոց պատմության աշխարհակալությունները», Երևան 2008, էջ 20:

[7] Այստեղ և հետագայում տերմինը օգտագործվում է պայմանականորեն:

դար և մշակութային զգալի հետք թողնեին այնտեղ: Այս առումով հատկանշական է, որ ոչ դրանից առաջ, ոչ էլ հետո քոչվոր-անասնապահ սեմիտները աչքի չէին ընկնում նմանատիպ տեխնոլոգիական առաջադիմությամբ,

բ) **Մարտակառքերի հիմնախնդիրը:** Հաստատապես հայտնի է, որ «Հաքսոս»-ների բանակում հիմնական հարվածային ուժը եղել են իրենց հիմնական մարտական հատկանիշներով «խուռիական» և արիական մարտակառքերին հիշեցնող մարտակառքերը, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին շումերական ու սեմիտական տիպի մարտակառքերի հետ: Այս հանգամանքը հաստատվում է ինչպես մեզ հասած պատկերներով, այնպես էլ եգիպտական բուրգերում հայտնաբերված մարտակառքերի բնօրինակներով: Մինչ այս ներխուժումը եգիպտական բանակում մարտակառքեր ընդհանրապես չեն եղել: Դրանք բացակայել են նաև քոչվոր-սեմիտ անասնապահների մոտ, որոնց մարտակառքեր ոչ միայն անհրաժեշտ չէին, այլև նրանք նաև չունեին դրանք կառուցելու տեխնոլոգիական և տեխնիկական հնարավորություններ: Հետաքրքիր է, որ մարտակառքերի դետալներում հանդիպող բնափայտի տեսակը հանդիպում է հենց Հայկական լեռնաշխարհում, իսկ մարտակառքի երկաթյա դետալների բարձր որակը խոսում է զարգացած մետաղագործական մշակույթի մասին: Այստեղ ավելորդ չէ հիշել, որ մետաղագործությունը ինչքան զարգացած էր երկաթի հարուստ հանքեր ունեցող Հայկական լեռնաշխարհում, այնքան էլ զարգացած չէր Ասորիքում թափառող քոչվոր-սեմիտ անասնապահների մոտ,

գ) **Մարդաբանական տիպը:** Մեզ հասած տվյալներով «Հաքսոս»-ները հստակորեն պատկանում են «արմենոիդներ»-ի մարդաբանական տիպին: Ավելորդ էլ է ասել, որ այս տիպը բնորոշ է ամենից առաջ հենց հայերին,

դ) «**Աստղակերպի 12 նշաններ»-ը:** Մեզ հասած տվյալների հիման վրա կարելի է պնդել, որ «Հաքսոս»-ները տիրապետում էին «Աստղակերպի 12 նշաններին»: Վերևում արդեն հիմնավորվեց, որ դա բնորոշ է ամենից առաջ հայերին:

ե) **Իանե Հիանա և այլ արքաներ:** «Հաքսոս»-ները ունեին մի արքա, որի անունը սեպագրերը աղավաղված ձևով փոխանցում են. «Իանե Հիանա» ձևով: Այստեղ ավելորդ չէ հիշել, որ արիական արշավանքների դարաշրջանից ոչ շատ առաջ հայերն ունեցել են իր արտասովոր գեղեցկությամբ հայտնի մի արքա: Խոսքը Արա I Գեղեցիկի մասին է, որի վառ կերպարն և հերոսական մահը խորը հետք էր թողել հայերի պատմական հիշողության մեջ: Հետաքրքիր է նաև, որ Եգիպտոսում իշխած և ակնհայտորեն Հայկազունիների ճյուղը հանդիսացող տեղի արքայական գահատոհմը կոչվում է Հայկազուտ (Hqaaswt):

Հայկազուտների գահացանկը, որի անունների շարանում, ի դեպ, ակնհայտ են հայկական արմատ ունեցող անունները, ունի հետևյալ տեսքը (փակագծերում տրվում է այս անունների «միջազգային-ընդունված» ձևը),

1. Սասուն (Սեսու) (մ.թ.ա. 1725-1707)
2. Հակուբ-հայր (Իակուբհեր) (մ.թ.ա. 1707-1699)
3. Օհանե Հիանալի (Իանե Հիանա) (մ.թ.ա. 1699 - մոտ 1650)
4. Հակոբ I (Ապոպի I) (մ.թ.ա. մոտ 1650-1610)
5. Հակոբ II (Ապոպի II) (մ.թ.ա. մոտ 1610-1600)
6. Կիռնակ (Կեռտա, Կիռտա) (մ.թ.ա. մոտ 1600-1561)

զ) «**Հաքսոս»-ների էթնոնիմի հիմնախնդիրը:** Եգիպտոս մտած Հայկական բանակի ռազմիկները բնականաբար իրենց անվանում էին «հայք», այսինքն «հայեր», որտեղ «ք»-ն, ինչպես գիտենք, հավասար է ներկայիս հայերենի հոգնակի «ներ» կամ «եր» վերջածանցին: Իր հերթին տեղաբնիկները, չունենալով «յ»-ին հավասարարժեք հիերոգլիֆ, գրավոր աղբյուրներում սկսեցին այս ռազմիկներին անվանել «հաք»: Հետագայում, եգիպտական տաճարներում պահպանված պապիրուսներից օգտված հելլենականացված պատմիչ Մանեթոնի, ինչպես նաև Եվսեբիոս Կեսարացու և Հովսեփ Փլավիոսի մոտ այս «հաք»-ը հնչյունափոխվեց «հաքսոս»-ի, որտեղ «սոս»-ը լոկ զուտ

հունական վերջածանց է, իսկ «ա»-ն «ու»-ի վերափոխվելու հատկությունն էլ հայտնի է: Ավելացնենք նաև, որ «հաքսոսներ»-ի աստվածային պանթեոնում առաջնային տեղ ուներ կայծակի աստվածը և նրա կին Անահիտը: Հետաքրքիր է նաև, որ Եգիպտոսը գրավելուց հետո հայերն հիմնեցին իրենց նոր մայրաքաղաքը, կոչելով այն «Ավարիս», որը կարող է ունենալ «*սա իմ ավարն է*» իմաստը:

- ***«Խուռիներ»-ը և արիները:***

Համաձայն հայտնի եգիպտագետ Վ. Հելկի՝ «Հաքսոս»-ները ազգակից են եղել հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող «խուռիներ»-ին[1], կամ էլ ուղղակիորեն եղել են «խուռիական» ցեղեր: Այսպիսով՝ «Հաքսոս»-ները ազգակից են եղել «խուռիներ»-ին կամ էլ ուղղակիորեն եղել են «խուռիական» ցեղեր, ինչից բխում է, որ, ի դեմս «Հաքսոս»-ների, իրականում մենք գործ ունենք արիների հետ, այլ թեկնածու ուղղակի չկա:

«Հուրի» անվանումը ռուսալեզու գրականության մեջ անցյալ դարում բացատրելիորեն սխալ կերպով (քանի որ ռուսական այբուբենը չունի «հ» տառը) սկսեց գրվել «Խուրի» կամ «Խուռի» ձևով և այդ տեսքով հետագայում սկսեց արտաբերվել նաև հայալեզու գրականության մեջ[2]՝ ավելի հեռացնելով այն իր սկզբնական տեսքից: «Հ» տառ ունեցող այբուբենների վրա հիմնված գրականությունում, սակայն (օրինակ ֆրանսալեզու կամ անգլիալեզու գրականության մեջ), նրանք կոչվում են իրականության ավելի մոտ՝ «հուրի», անունով, ինչպես նրանց իրականում կոչել են օրինակ եգիպտացիները[3]: Իր հերթին հանրահայտ է «ա» և «ու» տառերի նույնացումը սեպագիր լեզվում (ամենահայտնի օրինակը՝ «Արարատ-Ուրարատ»): Այսպիսով՝ կարելի է ասել, որ «Հուրի»-ին իրականում հնչեցվել կամ գրվել է որպես «Հարի», որն էլ իր հերթին ակնհայտորեն հանգում է «Հայարի»-ի: «Անվանափոխության» պատճառներից կարելի մատնանշել օրինակ այն, որ այդ ժամանակահատվածում «Հայ» և «Արի» անվանումները նույնացվում ու դեռևս հավասարապես օգտագործվում էին, այդ հետագայում էր հայերի մեջ ամրապնդվելու «Հայ»-ը, իսկ օտարների մեջ՝ «Արի»-ին համարժեք «Արմեն»-ը, կամ էլ այն, որ դրանով Եգիպտոսի Հայկազուտների գահատոհմի «Հայարիները» իրենց առանձնացնում էին ընդհանուր «արիական» տարածքից արդեն որպես առանձին ժողովուրդներ առանձնացած այլ «արի»-ներից, ինչպես օրինակ՝ Հնդկաստանի հյուսիսում և Պարսկաստանի արևելքում իշխող «Մարտի նետվող» Հայկերի գահատոհմի «Հնդարի»-ներից: Եվ այսպես, այն ժամանակաշրջանում, երբ տեղի ունեցան արիների արշավանքները, տեղի է ունեցել նաև Բաբելոնի պարտությունը, Եգիպտոսի նվաճումը մարդկային խմբերի կողմից, որոնք գործնականում նույնանում են արիներին, ինչպես նաև սկսվեց մարդկային մեկ այլ խմբի ակտիվությունն, ի դեմս այսպես կոչված «խուռիներ»-ի:

Այս առումով հատկանշական են հետևյալ հանգամանքները.

ա) **Հուրիների ակտիվությունը Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում:** Այս գործընթացը համընկնում է Պաղեստինի ուղղությամբ Եգիպտոսից «Հաքսոս»-ների հեռանալու հետ: Հետաքրքիր է, որ մ.թ.ա. 1561 թվականից հետո ըստ Մանեթոնի, «Հաքսոս»-ների մասին տեղեկությունները իսպառ դադարում են, ինչը ավելի քան բնական է, քանի որ այդպես Եգիպտոս մտած հայերին կոչում էին եգիպտացիները, իսկ այժմ նրանց մեծ մասը, չհաշված անկասկած «անարժան հիշատակման» որոշակի թվով գերիների, այլևս Եգիպտոսում չէր: Դրանից հետո աղբյուրները սկսում են ակտիվորեն խոսել «Հայարի»-ների մասին,

բ) **Եգիպտոսից իր ժողովրդի և բանակի հետ հեռացած Հայկազուտների հերթական արքայի անունը՝ «Կեռտա»:** Այս անունը մեկ, այն էլ արձանագրություններում կամ դրանց վերծանություններում, հավանաբար, շփոթված և իրար նման տառի ճշգրտությամբ համապատասխանում է Միտանիի թագավորության առաջին արքայի

[1] Այստեղ և հետագայում տերմինը օգտագործվում է պայմանականորեն:
[2] Տես օրինակ՝ Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, էջ 102:
[3] Տես օրինակ՝ G. Contenau «La Civilisation des Hittites et Hurrites du Mitanniib, Paris 1948, Gelb I.J. "Hurrians and Subarians", Chikago 1944.

անվանը՝ «Կիռտա»: Վերևում ասվածի և ներքևում դեռևս ասվելիքի ֆոնի վրա բոլոր հիմքերը կան ասելու, որ դրանք նույն անձիք են, ընդ որում Միտանիի թագավորության «հայարիական» բույթն անկասկած է,

գ) **Հուրիների կրոնական համակարգը:** Հուրիները արևապաշտ էին, որը բնորոշ է Հայկական լեռնաշխարհին, իսկ նրանց գերագույն աստվածներն էին Արևը և համաշխարհային գրականության մեջ «Ինդրա» անունով ընդունված աստվածը: Իր հերթին, սակայն, երբ «Ինդրա» անունը կարդում ենք ոչ թե ձախից աջ, այլ՝ հակառակը, ապա ստանում ենք այդ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի աստվածներից մեկի անունը՝ «Արդնի»: Կարելի է ենթադրել, որ Միտանիում այս կամ այն պատճառով «Արդնի» անունը գրել են աջից ձախ, իսկ վերծանողները այն կարդացել են դասական ձևով՝ ձախից աջ, կամ էլ տեղի է ունեցել նմանաոճ մի որևէ թյուրիմացություն, ընդ որում կրկին նշենք՝ Միտանիում հաստատված հուրիների հնդեվրոպականության վարկածը ներկայումս գիտության մեջ գերակշռում է:

դ) **Կապը այսպես կոչված «Հաքսոս»-ների հետ:** Համաշխարհային գրականության մեջ, ինչպես արդեն ասվեց, այժմ գերիշխում է այն տեսակետը, որ «Հաքսոս»-ներն ազգակից են եղել հուրիներին, կամ էլ ուղղակիորեն եղել են հուրիական ցեղեր: Այսպիսով, հաստատելով ճշմարտությունը խառնաշփոթ կերպով ներկայացնող այս սխեման, կարելի է ուղղակի պարզաբանելով ճշգրտել այն և ասել, որ հուրիները պարզապես հայերն էին, որոնք, մտնելով Եգիպտոս և այստեղ կոչվելով «Հաքսոս»-ներ, իսկ հետագայում էլ Պաղեստինով նահանջելով իրենց Հայրենիքի ուղղությամբ, Հյուսիսային Ասորիքում ու Հայոց Միջագետքում իրենց կոչել կամ շրջապատի կողմից կոչվել են «Հուրի» կամ «Հա(յ)արի»:

ե) **Հուրիների մարդաբանական տիպը:** Հուրիները եղել են արմենոդիներ և այս հանգամանքը չի վիճարկվում:

զ) **Հուրիների տարածման սկզբնակետը Հայկական լեռնաշխարհն է:** Այս հանգամանքը ևս չի վիճարկվում:

Այս ամենը ուղղակի չի կարող պատահական համընկնում լինել: Ակնհայտ է, որ վերևում շարադրված փաստերի համակցությունը, առնվազն գոնե, լրջագույն քննարկման կարիք ունի:

Սեպագիր արձանագրությունների վրա հիմնված տարածաշրջանի քաղաքական իրավիճակի վերլուծությունը հիմք է տալիս արիական արշավանքները դեպի հարավ և արևելք տեղադրել մ.թ.ա. 1700 թվականին՝ ոչ ուշ և ոչ շուտ: Իրոք, հենց այս ժամանակաշրջանում էր, որ տարածաշրջանային քաղաքական իրավիճակը լիովին հնարավորություն էր ընձեռնում իրականացնել նման մի արշավանք: Այսպես, մ.թ.ա. XVIII դարի կեսերին ծաղկում ապրող Բաբելոնի հզոր պետությունը նույն դարի վերջին սկսում է շեշտակիորեն անկում ապրել, իսկ դարասկզբին նույնպես բավականին հզոր Ասորեստանը մ.թ.ա. XVIII դարի ողջ երկրորդ կեսը բզկտվում էր միջգահակալական պայքարից և դարավերջին արդեն այն աստիճան էր թուլացել, որ ողջ հաջորդ դարը նրա մասին նույնիսկ էական հիշատակում իսկ չկա:

Մ.թ.ա. 1742-1711 թվականներին տեղի են ունեցել «Կարդուներ»-ի արշավանքները, իսկ մ.թ.ա. 1710 թվականով էլ թվագրվում է «Հաքսոսներ»-ի արշավանքը և Եգիպտոսի նվաճումը: Այսպիսով՝ ակնհայտ է, որ մ.թ.ա. 1710 թվականից շուտ արիների արշավանքը դեպի արևելք տեղի ունենալ չէր կարող: Իր հերթին, եթե մ.թ.ա. 1711 թվականից հետո ավարտված մարտական գործողություններից հետո Ասորիքում հայտնված «Կարդու»-ների համար ամենևին էլ դժվար չէր հարձակվել համեմատականորեն մոտ գտնվող Եգիպտոսի վրա, ապա իր դժվարությամբ անհամեմատ ավելի բարձր դիրքերի վրա գտնվող «արիական արշավանքների» համար անհրաժեշտ էր լուրջ նախապատրաստություն, որը կարող էր տևել մի քանի տարի:

Այս առումով հատկանշական է, որ մ.թ.ա. հենց 1700 թվականին, ըստ սեպագիր աղբյուրների, Ասորեստանի թագավորությունում վերջացան գահակալական կռիվները,

մի հանգամանք, որը կարելի է կապել Հայկական բանակի կողմից երկրի գրավման հետ[1]: Իր հերթին թուլացած Էլամի թագավորությունը մ.թ.ա. ողջ XVII դարում ևս էական դերակատարություն չուներ, իսկ Ասորիքի պետություններն իրենք այդպես էլ ուշքի չեկան Բաբելոնի թագավորության հարվածներից և աստիճանաբար ավելի մասնատվեցին: Ինչ վերաբերում է Խեթական թագավորությանը, ապա մ.թ.ա. XVIII դարի վերջին և մ.թ.ա. XVII դարի սկզբում այն դեռևս թույլ էր և սկսելու էր ակտիվորեն պայքարել արիական գերիշխանության դեմ միայն մ.թ.ա. XVII դարի կեսերից սկսած:

Հետաքրքիր կերպով այս ամենը հաստատում է նաև «Արա Գեղեցիկ և Շամիրամ» զրույցի արաբական տարբերակը, ըստ որի հայերը պարտության են մատնել Շամիրամի որդի և հաջորդ Արսիսին, ամենայն հավանականությամբ նկատի է ունեցվում Ասորեստանի քառասնամյա կատաղի միջգահակալական պայքարի վերջում մի պահ իշխանության հասած Ադասին (մ.թ.ա. 1700), որից հետո Ասորեստանի քսան թագավորներ, ինչպես հայտնվում է. «*... հարկ էին վճարում Հայոց թագավորին*»[2]: Ակնհայտ է, որ այս զրույցում խոսքը գնում է հենց Արա I Գեղեցիկին և նրա որդի Արա II Կարդոսին հաջորդած ժամանակաշրջանի մասին, երբ արիական արշավանքներից հետո մ.թ.ա. 1700-1427 թվականներին կառավարած Ասորեստանի 20 թագավորներ 273 տարվա ընթացքում ենթարկվում և հարկ էին վճարում Հայկազուններին, ի դեմս նրանց ենթակա Միտանիի թագավորության: Այս առումով նշենք, որ քննարկվող ժամանակահատվածում Միտանիի թագավորությունը նույնիսկ 8 տարով (մ.թ.ա. 1480-1472) էլ վերացրեց Ասորեստանի թագավորությունը: Այսպիսով՝ այս ամենը հիմք է տալիս բավականին հիմնավորված համարել արիական արշավանքների հենց իմ բերած թվականը՝ մի քանի տարվա հնարավոր շեղումներով, ինչը նման պարագայում բնական է:

Վերևում արդեն լուսաբանվեց արիների հնարավոր էթնիկ պատկանելիության հարցը, ինչպես նաև քննարկվեցին արիական արշավանքների մեկնակետի և դրանց համար առաջարկվող հնարավոր ժամանակահատվածի հետ կապված հարցերը: Իհարկե, ես հեռու եմ այն մտքից, որ առաջարկվող հարցերին տրվել են վերջնական պատասխաններ, բայց այնուհանդերձ գտնում եմ, որ ասվածը բավականին հիմնավոր է: Ստորև, հիմնվելով վերևում արված վերլուծության վրա, փորձ կարվի լուսաբանել արիական արշավանքների ընթացքը, որպես առանձին ռազմաքաղաքական մի երևույթ, իսկ վերջում էլ կշարադրվի իմ կողմից առաջարկվող նոր տերմինով կոչված Արիական տերության քաղաքական պատմությունը:

Գլուխ 10
Արիական տերությունը

Առկա տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ արիական արշավանքների նախադրյալներ Հայկական լեռնաշխարհում ստեղծվել էին դեռևս մ.թ.ա. XIX դարի վերջին և մ.թ.ա. XVIII դարի սկզբին: Այսպես, համաձայն Մովսես Խորենացու, արդեն հենց այս ժամանակաշրջանում Արամ I Մեծն ուներ զգալի քանակությամբ հեծելազորային ուժեր[3]: Նույնն են վկայում նաև հնագիտական պեղումները, որոնք Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեցած այսպես կոչված «Կուր-Արաքսյան» մշակույթում առաջին անգամ ֆիքսում են ձիու կիրառության հետքերը[4]: Արամ I Մեծին հաջորդած Արա I Գեղեցիկի օրոք «հեծելազորային հաղթաթուղթն» առժամանակ մղվեց հետին պլան, համենայն դեպս նրա ակտիվ կիրառության մասին մենք տեղեկություններ առայժմ չունենք, սակայն արդեն հաջորդ արքա Արա II Կարդոսի օրոք այն հայտնվեց առաջին դերերում, ընդ որում՝ ավելի մեծածավալ չափով: Ավելին, եթե նախկինում խոսքը գնում էր միայն հեծելազորի մասին, ապա վերջին արքաների օրոք, դատելով առկա

[1] Տես՝ http://www.genealogia.ru/projects/lib/catalog/rulers/1.htm:
[2] Մ. Օհանյան «Հայ ժողովրդի պատմության ցեղային շրջանի մասին»:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 14:
[4] Кушнарева К.Х., Марковкин В.И. “Эпоха бронзы Кавказа и Ср. Азии.Ранняя и средняя бронза Кавказа”, Москва 1994.

տեղեկատվության ամբողջությունից, Հայկական բանակի հիմնական հաղթաթուղթը դառնում են արդեն մարտակառքերը՝ հիմնականում հենց որոնց առկայությամբ էլ բացատրվում են հաջողությունները Բաբելոնի թագավորության դեմ պատերազմում և Եգիպտոսի նվաճումը: Առաջին իրադարձությունը, ինչպես արդեն ասվեց, տեղի ունեցավ մ.թ.ա. 1711 թվականին, իսկ երկրորդը՝ մյուս տարի՝ մ.թ.ա. 1710 թվականին: Այսպիսով՝ մ.թ.ա. XVIII դարի վերջին արիական արշավանքների սկզբնական կամ նախապատրաստական փուլը ավարտվեց և արդյունքում ամբողջ Մերձավոր Արևելքը հայտնվեց Հայոց թագավորության գերիշխանության տակ: Եվ այսպես, մ.թ.ա. XVIII դարի վերջին Մերձավոր Արևելքում Հայոց թագավորության գլխավորությամբ ստեղծվել էր մոտավորապես այնպիսի մի իրավիճակ, ինչ 1206 թվականին Մոնղոլական տերությունում, երբ հարակից երկրները արդեն նվաճվել էին և պահանջ էր առաջացել իրականացնել ավելի հեռավոր արշավանքներ[1]:

Ինչպես արդեն ցույց տրվեց վերևում, բուն «արիական արշավանքներ» կոչված ռազմաքաղաքական իրադարձությունը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել մ.թ.ա. 1700 թվականին՝ մի քանի տարի այս կամ այն կողմ հնարավոր շեղումով: Իր հերթին կարելի է ենթադրել, որ արշավողների ուժերը եղել են հսկայական և Հայոց թագավորությունը ոտքի է հանել իր, ըստ էության, գործնականում ողջ բանակը: Այս առումով հատկանշական է, որ մ.թ.ա. 1700-1650 թվականներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած որևէ պատերազմի կամ ճակատամարտի մասին մեզ որևէ տեղեկություններ չի հասել, ինչն իր հերթին անուղղակիորեն վկայում է այն բանի օգտին, որ այստեղ բոլորը միավորված էին մեկ և հզոր մի ուժի իշխանության ներքո, ընդ որում վերջինիս ռազմական մեքենայի հիմնական մասն էլ գտնվում էր այլ տարածքներում:

Հետագա իրադարձությունների մասին մեզ տեղեկություններ են հայտնում երեք խումբ աղբյուրներ.

1. Վաղ և Միջին պարսկական աղբյուրները, ի դեմս «Ավեստա»-ի, «Բունդախիշնեի»-ի, «Դենկարդ»-ի և այլ ստեղծագործությունների,

2. Արաբական և Ուշ պարսկական աղբյուրներ, որոնց շարքում հատկապես կարևորվում է «Շահնամե»-ն,

3. Հին հնդկական աղբյուրները, որոնց շարքում հատկապես կարևոր է արիական արշավանքների հիմնական նկարագրությունը պարունակող «Ռիգվեդա»-ն:

Դեպի արևելք արշավող արիական բանակի առաջնորդի անունը պահպանվել է արիական լեգենդար աղբյուրներում և «Ավեստա»-ում «Հայոմարտա» ձևով: Կարծում ենք, որ այստեղ ակնհայտ է «Հայ» արմատը, որ ընդունելով որպես «Հայկ», այս անունը կարելի է մեկնաբանել հետևյալ տարբերակներից մեկով.

1. «Հայկ ի մարտ»՝ այսինքն «Հայկ, որը նետվում է մարտի»,

2. «Հայ մարդ»,

3. «Հայերին մարտի տանող»՝ «հայ ի մարտ», որպես պաշտոնի անվանում, որը հետագայում դարձել է հատուկ անուն:

Եվ այսպես, մ.թ.ա. 1700 թվականին Հայոմարտի գլխավորությամբ Հայոց թագավորությունից դուրս եկավ մի բանակ և ուղղություն վերցրեց դեպի արևելք: Այս բանակի թվաքանակի մասին որևէ ուղղակի տեղեկություն մենք առայժմ չունենք, թեև անուղղակի տվյալները հիմք են տալիս ասելու, որ բանակը կարող էր կազմել մոտ 100.000 ռազմիկ և մոտ 1.000 մարտակառք: Գրեթե միանգամից էլ առանց լուրջ մարտերի ընկավ

[1] Այստեղ և հետագայում պարզության համար կկիրառվի անալոգիայի մեթոդը և արիական արշավանքները ու արիական նվաճումները զուտ ռազմաքաղաքական առումով կհամեմատվեն մոնղոլական արշավանքների և մոնղոլական նվաճումների հետ: Սակայն մինչև առաջ անցնելը կարևոր եմ համարում ընդգծել, որ նմանությունը զուտ ռազմաքաղաքական է, այլ նմանություն ուղղակի չկա, քանի որ արիների դեպքում մենք գործ ունենք նստակյաց և ավելի բարձր զարգացման մակարդակի վրա գտնվող մի ազգի կողմից կատարված ավելի ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող ազգերի նվաճման հետ, իսկ մոնղոլների դեպքում լրիվ հակառակ իրավիճակն է: Ընդ որում, եթե արիական արշավանքներով ու նվաճումներով նվաճման օբյեկտ հանդիսացած ազգերը մեծ առաջընթաց ապրեցին, ապա մոնղոլական նվաճումները մի քանի հարյուրամյակով հետ մղեցին մոնղոլների կողմից նվաճված ազգերին: Այնուհանդերձ, զուտ ռազմաքաղաքական առումով որոշակի նմանություններ կան և լիակատար պարզության համար այստեղ և հետագայում անալոգիա կիրառելը համարում եմ տեղին:

քաղաքացիական պատերազմից բզկտվող Ասորեստանի թագավորությունը, որից հետո Հայկական բանակը մտավ Իրանական լեռնաշխարհ: Այստեղով Հայկական բանակի առաջխաղացման մանրամասների մասին մենք որևէ տեղեկատվություն չունենք, ինչից կարելի է ենթադրել, որ այս ընթացքում լուրջ մարտեր չեն եղել: Իրոք, դժվար է մատնանշել որևէ ուժ, որն այդ ժամանակաշրջանում ի վիճակի կլիներ լուրջ դիմադրություն ցույց տալ դեպի արևելք արշավող Հայկական բանակին:

Շարունակելով առաջխաղացումը դեպի արևելք՝ արիական բանակը մտավ Հնդկաստանի արևելք՝ ներկայիս Փենջաբի տարածքում գտնվող և ժամանակակից գիտնականների կողմից Մոհանջո-Դարո ու Հարապպա անվանված քաղաք-պետությունների տարածք: Հատկանշական է, որ մ.թ.ա. հենց XVIII դարի վերջով են մասնագետները թվագրում հիշատակված քաղաք-պետությունների անկումը և քաղաքական ասպարեզից սրանց դուրս գալը[1], ինչը չի կարող պատահական համընկնում լինել: Մոհանջո-Դարոն և Հարապպան գլխավոր քաղաքի շուրջը հավաքված քաղաք-պետություններ էին, որոնք ունեին նաև շրջակա ու ավելի մանր քաղաքներ կամ նույնիսկ ամրություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ «Ռիգվեդա»-ում հիշատակվում է արիների կողմից գրավված մեծ քանակությամբ բերդերի, ամրոցների և այլ ամրացված կետերի մասին: Մոհանջո-Դարոն և Հարապպան նվաճելուց հետո արիական բանակը շարունակեց առաջխաղացումը դեպի արևելք և իր տիրապետությունը հաստատեց գործնականում ողջ Հյուսիսային Հնդկաստանի վրա:

Այսպիսով՝ առաջացավ Արիական տերությունը, որի արդյունավետ կառավարման համար ստեղծվեց վարչական որոշակի համակարգ: Այսպես, Հնդկաստանը, Միջին Ասիայի հարավային և կենտրոնական մասը ու Իրանական լեռնաշխարհը հանձնվեցին Հայոմարտին և նրա սերունդներին, Միջագետքը ու Ասորիքը սկսեցին կառավարել Կարդունիաշի իշխանության տիրակալները, Եգիպտոսում իշխանության ղեկը ստանձնեցին Հայկազուտները, իսկ Փոքր Ասիայում էլ իշխանությունն անցավ պայմանականորեն «Տավարնա» կոչվող տոհմի ձեռքը, որը հետագայում պետք է հիմք դներ Խեթական հզոր թագավորությանը: Արիական տերության գոյության առաջին տասնամյակներում բոլոր այս տարածաշրջանային թագավորությունները առնվազն ձևականորեն ընդունում էին Հայոց թագավորության Հայկազունիների գերագահությունը: Այսպիսով, ըստ էության, ստեղծվեց նույն այն իրավիճակը, որն առաջացավ Մոնղոլական տերությունում 1242 թվականից հետո, երբ Մոնղոլական միասնական տերությունը բաժանվեց կենտրոնական իշխանությանը ենթական մասերի, ի դեմս Չաղաթայական ուլուսի, Ոսկե Հորդայի և Էլխանության:

Դատելով ըստ ամենայնի, սակայն, նորաստեղծ Արիական տերության կազմում Հայկական լեռնաշխարհը, հատկապես հետագա տասնամյակներում, արդյունքում չի կարողացել հանդես գալ որպես տերության քաղաքական կենտրոն և պահել սկզբնական իր այդ դերը: Այս առումով հարկ է նշել, որ հիշատակված գործընթացը չի կարող որակվել որպես ինչ-որ մի բացառիկ երևույթ: Իրականում այդպիսին են բոլոր այն պետական միավորների ճակատագրերը, որոնք կատարում են իրենց չափսերից էականորեն մեծ նվաճումներ: Այսպես, լրիվ նույն կերպ էլ հազարամյակներ անց մոնղոլական արշավանքների մեկնակետ հանդիսացած Մոնղոլիան կամ Մեծ տափաստանի արևելքը չկարողացավ հանդես գալ որպես տերության քաղաքական կենտրոն և պահել այդ դերը: Նույնը եղավ նաև սելջուկյան նվաճումների մեկնակետ հանդիսացած Միջին Ասիայի հետ: Իր հերթին հարկ է նշել, որ նկարագրված գործընթացի պատճառը ակնհայտ է, քանզի ստեղծված լայնատարած պետության կազմում Հայկական լեռնաշխարհը հայտնվել էր ծայրամասային վիճակում: Լիովին նույն վիճակում էլ հայտնվեցին Հունաստանը հունամակեդոնական, Արաբական թերակղզին՝ արաբական, Միջին Ասիան՝ սելջուկյան, իսկ Մոնղոլիան էլ մոնղոլական նվաճումների արդյունքում: Դրությունը նման է

[1] Տես՝ Hermann Kulke, Dietmar Rothermund. “A History of India”, Routledge, 2004. p. 19.

Մոնղոլական տերության մայրաքաղաքը Ղարա-Ղորումից Պեկին տեղափոխելու հայտնի իրավիճակին, երբ Մոնղոլական տերության քաղաքական կենտրոնը Մոնղոլիայից կամ Մեծ տափաստանի արևելքից տեղափոխվեց Չինաստան և այս փաստով արդեն դե-յուրե ամրագրվեց Մոնղոլիայի ոչ «տերունակենտրոն» կարգավիճակը:

Վերևում հիշատակված գործընթացի մասին դժվար է հստակորեն խոսել, սակայն Մովսես Խորենացու մոտ պահպանված աղոտ ակնարկներից կարելի է ենթադրել, որ այն սկիզբ է առել Անուշավան Սոսանվերի մահվանից հետո, քանի որ, ի տարբերություն այս արքայի և նրա նախորդների՝ մինչև Հայկ Նահապետ, հաջորդ արքաները Մովսես Խորենացու մոտ արդեն որակվում են որպես «*ոչ կարևոր*», ընդ որում հատկանշական է նաև Պատմահոր վերաբերմունքը վերջիններիս ռազմաքաղաքական ուղիների վերաբերյալ, որոնք, ի համեմատ նախկինների, ակնհայտորեն երկրորդական դերերի վրա են: Այսպիսով՝ թերևս, կարելի է կարծել, որ արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործընթացը արագացրել և անդառնալի տեսք է ստացել հատկապես մ.թ.ա. 1650 թվականին բռնկված խեթական ապստամբության արդյունքում, որն, ըստ էության, Փոքր Ասիայում բռնկված մի ապստամբություն էր Արիական տերության կենտրոնական իշխանության դեմ: Արդյունքում՝ հենց այդ ժամանակներից սկսած էլ իրենց, ըստ էության, ազատ զգացին և Հայոմարտները արևելքում, և Հայկազուտները Եգիպտոսում, և Կարդունիաշի տիրակալները Միջագետքում ու Ասորիքում:

Մ.թ.ա. XVII դարի առաջին կեսին Արիական տերության ռազմաքաղաքական կյանքի հիմնական իրադարձությունները տեղի էին ունենում երկրի արևելքում, որտեղ իշխում էր Հայոմարտը (մ.թ.ա. մոտ 1700-1670): Դժբախտաբար Հայոմարտի մասին տվյալները «Ավեստա»-ում չափազանց քիչ են[1], քանի որ նրա մասին պատմող «Ավեստա»-ի «Չիխրդադ-Նասկ» մասը առայժմ համարվում է կորսված: Այս ամենով հանդերձ հատկանշական է, սակայն, որ Հայոմարտը բոլոր դեպքերում հանդես է գալիս որպես առաջնամարդ, որպես ամեն ինչի և ամեն բանի սկիզբ[2], ինչ-որ տեղ նույնիսկ ավելին, քան ավետարանական Ադամը: «Նովրուզնամե»-ն հայտնում է, որ Հայոմարտի որոշմամբ տեղի ունեցավ տարվա բաժանումը 12 ամիսների[3]: Նույն աղբյուրը այս արքային է վերագրում նաև տարեգրությունների վարման ավանդույթի հիմնադրումը: Հայոմարտը շիկահեր էր և սպիտակամաշկ, աչքի էր ընկնում հաղթանդամ կառուցվածքով ու բարձր հասակով: «Բունդախշի»-ն, «Շահնամե»-ն և այլ աղբյուրներ Հայոմարտի իշխանության տևողությունը սահմանում են 30 տարի[4], թեև Օմար Խայամին վերագրվող «Նովրուզնամե»-ն տեղեկացնում է 40 տարվա մասին[5]:

Հայոմարտը իր իշխանությունը սկզբնական տարիներին խնդիրներ ունեցավ, թերևս, միայն Արիական տերության ամենաարևելքում՝ Հյուսիս-արևելյան Հնդկաստանում, որտեղ գործող դրավիդյան ցեղերը այնուհանդերձ ոչ մի կերպ չէին ցանկանում խաղաղ կերպով նահանջել արիական նվաճումների առջև: Այս իրադարձություններում Հայկական բանակը ղեկավարում էր Սուդասը, որն էլ մ.թ.ա. հենց մոտ 1690 թվականին Հյուսիսային Հնդկաստանում գտնվող Ռավի գետի ափին տեղի ունեցած Տասն արքաների ճակատամարտում պարտության մատնեց ուժերը միավորած և իր դեմ շարժված տեղական տասն արքաների միացյալ բանակին, ընդ որում ճակատամարտը սկզբում ամենևին էլ չէր զարգանում Սուդասի բանակի օգտին, որը հայտնվել էր շրջապատման մեջ ու ստիպված էր մարտերով նահանջել, սակայն հետագայում, ինչպես հայտնվում է, ռազմի Ինդրա կամ Արդնի աստծո օգնությամբ Սուդասին հաջողվում է ոչ միայն դուրս պրծնել շրջապատումից, այլև ծանր պարտության մատնել հակառակորդին: Ի վերջո՝ թշնամու բանակը ծանր կորուստներ կրեց ու

[1] История всемирной литературы. В 9 т. Т.1. М., 1983. С.269.
[2] Մանրամասն տես՝ С. П. Виноградова “Авеста в русских переводах”СПб, 1997.
[3] Տես՝ Мифологии народов мира. Т 2, С.630.
[4] Տես՝ Большой Бундахишн IV 22-26; VII 9-11; Зороастрийские тексты. М., 1997. С.270-271.
[5] Տես՝ Мифологии народов мира. Т 2, С.630.

պարտության մատնվեց, իսկ նրա ռազմիկների մեծ մասը խեղդվեց Ռավի գետում[1]: Արդյունքում՝ Հայոմարտի իշխանության տակ հայտնված տարածքի արևելքը կազմող Հյուսիսային Հնդկաստանում իշխանությունն առժամանակ անցավ Սուդասին, որը պատկանում էր Տրիտսու տոհմին:

Այս դեպքերից մի քանի տարի անց, մոտավորապես մ.թ.ա. 1685 թվականին, Սուդասի հաջորդ Բխարտայի բանակի դեմ շարժվեցին տեղական արդեն հինգ արքաների միացյալ ուժերը, սակայն Հյուսիսային Հնդկաստանում տեղի ունեցած Հինգի հերթական ճակատամարտում հինգի այս միությունը ևս պարտություն կրեց[2]: Հիմնական խնդիրները, սակայն, որ առկա էին, այնուհանդերձ ստեղծելու էին ոչ դրավիդյան ցեղերը:

Առկա տեղեկատվության հիման վրա կարելի է ենթադրել, որ Հայոմարտի իշխանության վերջին տարիներին Արիական տերության արևելյան սահմանի վրա արևելքից բավականին հզոր մի հարձակում է տեղի ունեցել: «Շահնամե»-ում այս փաստը ներկայացվում է որպես «դևեր»-ի հարձակում: Այս առումով առանձին քննարկման է ենթակա այն հարցը, թե ի վերջո ովքե՞ր էին հետագայում լեգենդների քողով պատված, միֆականացված և նույնիսկ դիվականացված նույն այդ «դևեր»-ը:

Ամենից առաջ պետք է ընդգծել, որ սկզբնաղբյուրներում «դևեր»-ը ներկայացվում են որպես արիական աշխարհի հակոտնյաներ, այնպես որ կարելի է վստահորեն պնդել, որ հարձակվողները միանշանակորեն չեն պատկանել հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների խմբին: Իրենց հերթին, սկզբնաղբյուրներում հիշատակվող «դևեր»-ի էթնիկ պատկանելիության հարցը ավելի կոնկրետացնելու գործում չափազանց ուշագրավ են չինական աղբյուրների հայտնած տեղեկությունները: Իրոք, հենց չինական բանահյուսությունն է, որ պահպանել է որպես. «կարմրահեր դևեր»[3] բնորոշվող եվրոպոիդ ժուների և դիերի[4] դեմ «սևագլուխ» չինացիների պայքարի արձագանքները: Հազարամյակ ձգված այս պայքարում չինացիները ի վերջո հաղթանակ տարան և արդեն մ.թ.ա. XVIII դարի վերջին ու հաջորդ դարի սկզբին «կարմրահեր դևերին» ստիպեցին հեռանալ դեպի Արևմտյան երկրամաս և Յոթնագետք, որոնք համապատասխանում են Միջին Ասիայի հյուսիս-արևելյան հատվածին: Այսպիսով՝ երևի թե կարելի է զգուշորեն պնդել, որ այդ հենց արևելյան ճակատում չինացիների դեմ պայքարում անհաջողության մատնված ժուները, և հատկապես դիերն էին, որ իրենց նվաճողական էներգիան ուղղել են դեպի արևմուտք, որի արդյունքում էլ հենց կատաղի ընդհարման մեջ են մտել նույն այս ժամանակ Հնդկաստանից առաջխաղացումը շարունակած ու Յոթնագետքի հարավային սահմաններին մոտեցած արիների հետ: Այս տեսակետից հատկանշական է նաև «դի», «դից» և «դև» բառերի հնարավոր նույնությունը:

Սկզբնաղբյուրները հայտնում են, որ Արիական տերության բանակը, որը գտնվում էր Հայոմարտի որդի Սիյամեկի ղեկավարության տակ, պարտություն է կրել, իսկ Սիյամեկը ընկել է մարտում[5]: Այս ճակատամարտը տեղի է ունեցել մ.թ.ա. մոտ 1671 թվականին Արիական տերության հյուսիս-արևելյան սահմաններում, ներկայիս Սիր-Դարյա գետի հյուսիսային կամ հարավային ափերին: Կրած պարտությունից հետո Հայոմարտը իրեն հաջորդ հռչակեց թոռանը՝ Սիյամեկի որդի Հաո-սինին, որից հետո իր տրամադրության տակ եղած հիմնական բանակային ուժերով մ.թ.ա. արդեն մոտ 1670 թվականին անձամբ շարժվեց «դևերի» դեմ: Արդյունքում՝ Ամու-Դարյա և Սիր-Դարյա

---

[1] Այս ճակատամարտի մասին տեղեկությունները ցրված են «արիական աղբյուրներում», որոնց շարադրման և հրատարակության որոշակի առանձնահատուկ բնույթի պատճառով դրանք այստեղ շարադրել ես հարմար չգտա:

[2] Այս ճակատամարտի մասին տեղեկությունները ցրված են «արիական աղբյուրներում», որոնց շարադրման և հրատարակության որոշակի առանձնահատուկ բնույթի պատճառով դրանք այստեղ շարադրել ես հարմար չգտա:

[3] Грумм-Гржимайло Г.Е. Западная Монголия и Урянхайский край. Т. II. Гл. 1. Л., 1926.

[4] Այս ցեղերի վերաբերյալ կա հսկայական քանակության ուսումնասիրություններ, սակայն մասնագետները միակարծիք են, որ, ի դեմս սրանց մենք գործ ունենք եվրոպոիդների հետ, որոնք Սառցե դարաշրջանի ավարտից հետո դանդաղորեն տեղաշարժվել են դեպի արևելք ու հայտնվել Չինաստանի տարածքում: Սրանց մի ճյուղն է, որ իր ժամանակին դեռևս անցանելի Բերինգյան նեղուցով անցել է Ամերիկա և բնակեցրել այն:

[5] Այս ճակատամարտի մասին տեղեկությունները ցրված են «արիական աղբյուրներում», որոնց շարադրման և հրատարակության որոշակի առանձնահատուկ բնույթի պատճառով դրանք այստեղ շարադրել ես հարմար չգտա:

գետերի միջև տարածվող միջագետքում, որը սովորաբար կոչվում է Մավերնահր, տեղի ունեցած նոր ճակատամարտում դիերը և ժուները գլխովին ջախջախվեցին[1]: Հայոմարտն ինքը, սակայն, այս հաղթանակից կարճ ժամանակ անց մահացավ, իսկ Արիական տերության արևելյան մասի վրա իշխանությունն էլ անցավ նրա արդեն իսկ հիշատակված թոռանը, որը աչքի էր ընկել այս երկրորդ ճակատամարտում՝ մարտադաշտում հանդիպելով հակառակորդի առաջնորդի որդուն և մենամարտում սպանելով նրան:

Մ.թ.ա. XVII դարի կեսերին, չնայած արտաքին փայլին, աստիճանաբար արդեն ի հայտ են գալիս Արիական տերության անկման առաջին նշանները, երբ ամենից առաջ նկատելի է դառնում դեռևս դարասկզբին սկիզբ առած տեղայնացման գործընթացը: «Դևերի» նկատմամբ տարած հաղթանակից հետո տերության արևելյան մասում քիչ թե շատ ամուր խաղաղություն հաստատվեց, բայց դրա փոխարեն իրավիճակը աստիճանաբար սկսեց բարդանալ տերության արևմտյան մասում:

Իրոք, Փոքր Ասիայում իշխող Տավարնաները վաղուց էին արդեն ծանր տանում Հայկազունիների գերիշխանությունը, որոնց ենթարկվելու որևէ իրական հիմք սրանք, ըստ էության, վաղուց արդեն չունեին, մանավանդ որ Անուշավան Սոսանվերին հաջորդած Պարետի (մ.թ.ա. 1662-1612) օրոք Հայկազունիների գերիշխանությունն իրոք արդեն ընդունել էր մեծապես խորհրդանշական մի բնույթ: Այս առումով հարկ է նշել, որ հիշատակված գործընթացի գլուխ կանգնած էր Անիտայից հետո ռազմաքաղաքական իմաստով ավերակների կույտի վերածված Խեթական թագավորությունը կրկին ոտքի հանած Խեթական թագավորության արքա Հաթթուսիլ Ի-ը (մ.թ.ա. մոտ 1650-1620), որը ուժեղ, եռանդուն և զորավարական զգալի ունակությունների տեր մի անձնավորություն էր: Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 1650 թվականին Արիական տերության արևմուտքում ծայր առավ մի ապստամբություն:

Մ.թ.ա. մոտ 1650 թվականին Հաթթուսիլ Ի-ի գլխավորած Խեթական թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Կիլիկիան՝ գցելով այն իր տիրապետության տակ[2]: Մ.թ.ա. մոտ 1647 թվականին Արիական տերության բանակը (մոտ 50.000), օգտվելով թշնամու հիմնական ուժերի դեպի Արցավա արշավանքով զբաղված լինելու հանգամանքից և Խեթական թագավորության ողջ արևելքում բռնկված ապստամբությունից, ասպատակեց Կապադովկիան, Կուսսարի շրջակայքը (վերջինը՝ Կեսարիայից մոտ 70 կմ հյուսիս) ու Խեթական թագավորության արևելյան բոլոր քաղաքները, բացի Հաթթուսաս մայրաքաղաքից (Կուսսարից մոտ 100 կմ հյուսիս-արևմուտք), որից հետո, խուսափելով Հաթթուսիլ Ի-ի գլխավորությամբ Արցավայից վերադարձած և հարձակման անցած Խեթական թագավորության բանակից (մոտ 70.000), շարժվեց դեպի արևելք: Իր հերթին Խեթական թագավորության առաջխաղացած բանակը հասավ մինչև Նենասա, Ուլմա և Սալախսուվա (վերջինը երկուսը՝ Եփրատի և Կանեշի միջև), սակայն սկսված ձմռան պատճառով չշարունակեց արշավանքը[3]:

Վճռական ընդհարումը տեղի ունեցավ մի քանի տարի անց, երբ մ.թ.ա. մոտ 1644 թվականին Ադալուր լեռան ճ-մ-ում (Անդրեփրատյան Ծոփք) Հաթթուսիլ Ի-ի գլխավորությամբ Եփրատի Մելաս վտակ (= Արևմտյան Եփրատ) -Եփրատի հուն երթուղով արշավող Խեթական թագավորության հիմնական (մոտ 50.000), ինչպես նաև արևելքից մոտեցող լրացուցիչ (մոտ 10.000) բանակները հաղթեցին Արիական տերության (մոտ 40.000) և Յամհադի թագավորության (մոտ 20.000) միացյալ բանակին, որից հետո մտան Հասուվա (Կոմագենե) ու Հախա[4]: Ավելին, զարգացնելով հաջողությունը, մ.թ.ա. նույն 1644 թվականին հակառակորդի բանակը գրավեց Ուռհան (Հայոց

---

[1] Այս ճակատամարտի մասին տեղեկությունները ցրված են «արիական աղբյուրներում», որոնց շարադրման և հրատարակության որոշակի առանձնահատուկ բնույթի պատճառով դրանք այստեղ շարադրել ես հարմար չգտա:

[2] Այս իրադարձության մասին հայտնվել է այն հիմնավորմամբ, որ հետագայում Եդեսիայի պաշարման ժամանակ Լուխուցանտիան, որը գտնվում է Կիլիկիայում, հիշատակվում է որպես մինչ այդ արդեն խեթերին ենթարկված տարածք:

[3] Հաթթուսիլ Ի-ին վերագրվող արձանագրության խեթական և աքքադական տարբերակներից:

[4] Հաթթուսիլ Ի-ին վերագրվող արձանագրություններից; Հաթթուսիլ Ի-ին վերագրվող արձանագրության խեթական և աքքադական տարբերակներից:

Միջագետքի արևմուտք, Եփրատի Դայսան վտակի աջ ափին)[1]: Ու, թեև պատերազմը դրանից հետո շարունակվեց դեռ երկար, սակայն Արիական տերության մասը կազմող Փոքր Ասիան Հայկազունիների համար արդեն ընդմիշտ կորած էր: Մնացածը վերաբերում է արդեն բուն Խեթական թագավորության պատմությանը, որը այսուհետ կքննարկվի միայն այնքանով, ինչքանով որ այն կառնչվի Արիական տերության կամ հայերի ռազմաքաղաքական պատմությանը:

Մ.թ.ա. XVII դարի կեսերին ճգնաժամի առաջին նշանները ի հայտ եկան նաև Արիական տերության արևելյան հատվածում: Ինչպես արդեն ասվեց, Հայոմարտի մահվանից հետո այստեղ իշխանությունն անցել էր վերջինիս թոռ և Սիյամեկի որդի Հաո-սինին (մ.թ.ա. մոտ 1670-1620), որը հիմնականում աչքի ընկավ խաղաղ պետականաշինությամբ ու մշակութային բնագավառում իրականացված գործունեությամբ: Մասնավորապես, Հաո-սինը տնտեսության մեջ լայն շրջանառության մեջ մտցրեց կրակի կիրառումը, զարկ տվեց անասնապահությանը, դարբնությանը, դերձակությանը, ինչպես նաև մեծ ուշադրություն հատկացրեց ոռոգման համակարգերի ներդրմանը, դրանց կարգավորմանն և համակարգված գործունեությանը: Միաժամանակ, սակայն, Իրանական լեռնաշխարհի բնակչության, այդ թվում նաև տեղում հաստատված հայերի, մոտ արդեն հենց այս արքայի օրոք սկիզբ առան որպես առանձին ժողովուրդ հայերից առանձնանալու առաջին նախանշանները, մի գործընթաց, որը հետագայում աստիճանաբար իր զարգացումն էր ապրելու և որի արդյունքում հետագա հարյուրամյակներում պատմության ասպարեզ էին իջնելու պարսիկներն ու մարերը: Աննկատ, սակայն հեռուն գնացող և Արիական տերության արևելքում սկզբում փոքր, բայց հետագայում արդեն լուրջ ճաքեր առաջացրած ժողովրդագրական այս գործընթացից զատ, սակայն, Հաո-սինի, իսկ արդյունքում նաև Արիական տերության արևելյան տարածքներում տեղի էին ունենում նաև արդեն կոնկրետ քաղաքական բնույթ ու հետևանքներ ունեցող գործընթացներ:

Մասնավորապես, Հնդկաստանի հյուսիսում իշխող և այդպես էլ իր իշխանությունը ժառանգական դարձնել չկարողացած Տրիտսու ցեղի ներկայացուցիչ Սուդասին հաջորդած Բխարատա ցեղը ներկայացնող Բխարտան, ինչպես Հաո-սինը Հայկազունիների պարագայում, նույն Հաո-սինի օրոք Հայոմարտների նկատմամբ սկսեց իրեն ազատ զգալ մի շարք պարտավորություններից մոտավորապես այնպես, ինչպես Հաո-սինն էր իրեն ազատ զգում Հայկազունիներից: Այս գործընթացը հետագայում արդեն բերեց փաստացի անկախության:

Արիական տերության հերթական գերագույն տիրակալ Արբակի (մ.թ.ա. 1612-1568) օրոք դեռևս իր նախորդի ժամանակ սկիզբ առած ճգնաժամային նախանշանները ավելի խորացան: Զգալի տարածքներ արևմուտքում տերությունը կորցրել էր դեռևս նախորդ տիրակալի օրոք, իսկ Հայկազուտները և Հայոմարտներն էլ գործնականում դադարել էին ճանաչել Հայկազունիների գերիշխանությունը: Արբակի օրոք, սակայն, բացասական այս զարգացումները աստիճանաբար սպառնալից չափեր ընդունեցին:

Մ.թ.ա. մոտ 1620 թվականին Արիական տերության արևելյան մասում իշխող Հայոմարտների մոտ իշխանության եկավ Հաո-սինի որդի Թահմաուրպան (մ.թ.ա. մոտ 1620-1590), որը, թեև ավելի սահմանափակ չափով, բայց այնուհանդերձ շարունակեց հոր պետականաշինական գործունեությունը: Այս տիրակալի կարևորագույն գործերից մեկն էր կրոնական բարեփոխումը և մովպտների դասի հիմնադրումը: Միաժամանակ հարկ է նշել, որ հենց այս տիրակալի օրոք էր, որ շարունակվեց և աստիճանաբար սկսեց արդեն հստակ տեսք ստանալ դեռևս Հաո-սինի օրոք սկսված ժողովրդագրական գործընթացը՝ հայերի և տեղաբնիկների միաձուլման արդյունքում պարսիկների ու մարերի, որպես առանձին ժողովուրդների, առաջացումը: Ավելին, նույն այս տիրակալի օրոք էլ Իրանական լեռնաշխարհն արդեն փաստացի մակարդակում դադարեց ընդունել Հայկական լեռնաշխարհի գերիշխանությունը, ընդ որում նույնը եղավ նաև մի կողմից

[1] Հաթթուսիլ Ի-ին վերագրվող արձանագրություններից:

հայերի, իսկ մյուս կողմից էլ պարսիկների և մարերի հարաբերություններում:

Արդյունքում՝ պարսիկների և մարերի կրոնական պատկերացումներում ոչ միայն վերջնական տեսք ստացավ գլխավոր աստվածն, ի դեմս Արումազդի, այլև հստակեցվեց նաև վերջինիս հակոտնյան, որը, հատկապես վերևում նկարագրվածի ֆոնին, լիովին բացատրելիորեն կրում էր Արիման անվանումը: Իրոք, խնդիր ունենալով վերջնական տեսք տալ սեփական տիրույթների քաղաքական անկախությանը, արդեն Թահմաուրպայի օրոք կոնկրետ քաղաքական ձեռնարկումներին միացան նաև գաղափարական ձեռնարկումները, իսկ այդ ոլորտում առաջնայինն էր այն, ինչ միշտ և բոլոր ժամանակներում արել են կենտրոնից անջատվող մարզերը՝ դիվականացնել կենտրոնին: Արդյունքում՝ ամենևին էլ զարմանալի չէր, որ Արումազդի հակառակորդի դերում, որպես լիակատար մի չարիք և ամեն մի չարի սկիզբ, սկսեց հանդես գալ Արիմանը՝ Արմենը՝ հայերն ու նրանց ներկայացնող Հայաստանը: Այս առումով հատկանշական էր նաև այն հանգամանքը, որ իր ժամանակի վիպական պատկերացումներում Թահմաուրպան սկսեց ներկայացվել որպես մի մարդ, որը ոչ միայն հաղթել է Արիմանին, այլև հեծնել է վերջինիս և ենթարկեցրել է նրան իրեն:

Ի տարբերություն սեփական հոր, Թահմաուրպան վարում էր ավելի ակտիվ արտաքին-նվաճողական քաղաքականություն, որը, թեև նրան անմիջական հաջողություններ էր բերելու, բայց հեռանկարային առումով ավելի էր թուլացնելու իր իշխանության, հետևապես նաև՝ Արիական տերության ամրությունը: Մ.թ.ա. XVII դարի վերջին Թահմաուրպան ակտիվ գործողությունների անցավ «դևերի» դեմ և ջախջախիչ պարտության մատնեց վերջիններիս: Դիերի և ժուների ռազմիկների մեկ երրորդը ընկավ մարտում, իսկ կենդանի մնացածներից զգալի մի քանակություն էլ հայտնվեց գերության մեջ: Դրանից հետո հերթական այս Հայոմարտի գերիշխանության տակ հայտնվեցին Սիր-Դարյայից հյուսիս և արևելք ընկած հսկայական տարածքներն, ի դեմս Յոթնագետքի: Արդյունքում՝ Թահմաուրպան հարևան դարձավ չինական քաղաքակրթությանը, ի դեմս հենց այդ ժամանակ Սյա գահատոհմին փոխարինած Շանգ գահատոհմի թագավորության:

Այս առումով իրոք հատկանշական է, որ մ.թ.ա. հենց 1600 թվականներին Շանգի թագավորությանը հաջողվեց պարտության մատնել իրենից ավելի արևելք գտնվող Սյայի թագավորությանը և հասնել համաչինական գերիշխանության, ընդ որում Շանգի թագավորությունը, հատկապես վերևում ասվածի ֆոնին, սպասելիորեն կրում էր որոշակի արիական հատկանիշներ, ի դեմս, օրինակ, մարտի ժամանակ կիրառվող հենց նույն երկանիվ-ճաղավոր մարտակառքերի: Վերջին հանգամանքը անուղղակի կերպով կարող է վկայել Արիական տերության կողմից Շանգի թագավորությանը ցույց տրված որոշակի աջակցության մասին: Իրականացված նվաճումները, սակայն, ամուր չեղան, իսկ երբ մ.թ.ա. մոտ 1590 թվականին նորանվաճ տարածքներում գտնվող Թահմաուրպան էլ զոհ գնաց իր իսկ մտերիմների հղացած դավադրությանը, Սիր-Դարյայից անդին գտնվող տարածքներում բռնկվեց ապստամբություն և դրանք, այնտեղ գտնվող բանակային ուժերի հետ միասին, կորսվեցին: Այս առումով ուշագրավ է, որ հնագետները հենց այս ժամանակներից սկսած են, որ առաջին անգամ ամրագրում են «տափաստանային եկվորերի» հետ չինացիների ընդհարումները, որոնք վստահորեն կապվում են այսպես կոչված «թոխարների» հետ: Արդյունքում՝ կարծում եմ, որ մինչև առաջ անցնելը կարիք կա մի քանի խոսք ասելու նաև այս մասին:

«Թոխարների հիմնախնդրին» գիտության մեջ ներկայումս վերջնական լուծում տրված չէ, սակայն մի բանում մասնագետները, ըստ էության, համակարծիք են՝ «թոխարները» եղել են եվրոպոիդներ, ունեցել են որոշակի «արիական հատկանիշներ» և հստակորեն տարբերվել են շրջակայքի չինական էթնոզանգվածից: Այս մասին է, մասնավորապես, վկայում օրինակ 1937 թվականին Լոբ-Նոբ լճի և Տակլա-Մական անապատի մոտակայքում գերմանական արշավախմբի կողմից հայտնաբերված «թոխարական» դամբարաններում հիանալի վիճակում պահպանված մումիաների

ուսումնասիրությունը: Այս կապակցությամբ պրոֆեսոր Վ. Գ. Մայերը նշում է. «*Բացարձակ վստահությամբ կարող ենք պնդել, որ մումիաների վրա հայտնաբերված տեքստիլային իրերը իրենցից չեն ներկայացնում ինչ-որ առանձնահատուկ բան, այլ ենթարկվում են ընդհանուր տեխնոլոգիական այն ավանդույթին, որը բնորոշ է Եվրոպային և Կովկասին*»[1]: Հետաքրքիր են նաև լեզվաբանական տվյալները, որոնք ևս միանշանակորեն վկայում են թոխարների և Հայկական լեռնաշխարհի անխզելի կապի մասին: Այսպես, ըստ Հեննինգի. «*Այն փաստը, որ կուտիները պատկանել են հնդեվրոպացիներին, հաստատվում է նրանց լեզվական տվյալներով, որոնք հիմնականում վկայվում են նրանց հատուկ անուններով: Կուտիների լեզուն հնդեվրոպական լեզուներից ամենամոտիկն է թոխարերենին: Ավելի ուշ շրջանում թոխարները իրենց կոչում են Tugri, իսկ «Յուչժե»-ն, համաձայն չիներենի բնական ֆոնետիկ փոփոխությունների, հնչում է որպես Գուտի (Guti)*»[2]:

Այսպիսով՝ թերևս, կարելի է ենթադրել, որ, ի դեմս «թոխարներ»-ի, մենք գործ ունենք Թահմաուրպայի հաղթանակի արդյունքում Սիր-Դարյայից հյուսիս-արևելք ձգվող տարածքներում հայտնված նրա բանակային ուժերի հետ, որոնք իրենց տիրակալի սպանությունից հետո այս կամ այն պատճառով փոխել են Թահմաուրպայի օրոք որդեգրված ռազմաքաղաքական համագործակցության քաղաքականությունը Շանգի համաչինական թագավորության հետ և ընդհարումների մեջ են մտել վերջինիս հետ: Հայոմարտների իշխանության ուղեծրից դուրս եկած «թոխարների» ռազմաքաղաքական հետագա պատմությունը հնարավոր չէ վերականգնել նույնիսկ չինական աղբյուրների հաղորդումների հիման վրա, սակայն ընդհանուր պատկերը պարզ է՝ Մեծ տափաստանի արևելյան հատվածում հայտնված թոխարները հետագա դարերում աստիճանաբար թուլացան և ձուլվեցին շրջակա ժողովուրդների ու նախ և առաջ քուշանների մեջ՝ ընդամենը իրենց անունը թողնելով հետագայում այս տարածքներում հայտնված ու իրենց հետ միայն հեռակա և միջնորդավորված կապ ունեցող «կեղծ թոխարներին»՝ հայտնի որպես քուշաններ: Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. XVI դարի սկզբին Հայոմարտների իշխանությունը զրկվեց զգալի բանակային ուժերից և թուլացավ: Արդյունքում՝ զգալիորեն թուլացավ նաև Արիական տերությունը:

Մ.թ.ա. մոտ 1620 թվականին Հաթթուսիլ I-ի մահից հետո նրան հաջորդեց իր թոռ և որդեգիր Մուրսիլ I-ը (մ.թ.ա. 1620-1590), որն արժանի եղավ իր նախնուն: Արդյունքում, արագորեն կարգավորելով ներքին խնդիրները և վերջ տալով Հաթթուսիլ I-ի քրոջ որդու գահակալական հավակնություններին, Խեթական թագավորության նոր արքան սկիզբ դրեց ռազմաքաղաքական արտաքին ակտիվության հերթական փուլին: Որպես հետևանք այս գործունեության՝ մ.թ.ա. 1597 թվականին Մուրսիլ I-ի գլխավորած Խեթական թագավորության բանակը (մոտ 50.000) Արիական տերության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) գրավեց Հասուվան և Հուրումը, որից հետո պաշարեց ու գրավեց Հալեպը (Հյուսիսային Ասորիք, Ուռհայից մոտ 150 կմ հարավ-արևմուտք)[3]: Իր հերթին, մ.թ.ա. 1596 թվականին Հայոց Միջագետքի ճ-մ-ում Մուրսիլ I-ի գլխավորությամբ Հալեպից առաջխաղացած Խեթական թագավորության (մոտ 60.000) և Կարդունիաշի իշխանության (մոտ 10.000, 100 մարտակառք) միացյալ բանակը հաղթեց Արիական տերության (մոտ 40.000) բանակին[4]: Դրանից հետո Մուրսիլ I-ը կյանքի կոչեց իրեն բաժին հասած պետության վերջնականապես ձևավորված աշխարհաքաղաքական դիրքով պայմանավորված հերթական գործողությունն, ի դեմս հարվածի դեպի Միջագետք:

Արդյունքում՝ մ.թ.ա. 1595 թվականին Մուրսիլ I-ի գլխավորած Խեթական թագավորության (մոտ 70.000) և Տիպտակզիի (մ.թ.ա. մոտ 1630-1590) գլխավորած Կարդունիաշի իշխանության (մոտ 20.000, 100 մարտակառք) միացյալ բանակը Շամշուդիտանա արքայի (մ.թ.ա. 1625-1595) գլխավորած Բաբելոնի թագավորության

[1] Ըստ «Bild der Wissenschaft» ամսագրի տվյալների (http://vytoky.nm.ru/China.htm).
[2] HENNING 1978, 'The First Indo-Europeans in History, 221-225, Narain 1987: On the "First" Indo-Europeans: The Tokharian-Yuezhi and their Chinese homeland, Papers on Inner Asia 2, Indiana University, Bloomington, Indiana.
[3] Մուրսիլ I-ին վերագրվող արձանագրություններից:
[4] Մուրսիլ I-ին վերագրվող արձանագրություններից; Տելեպինուին վերագրվող արձանագրությունից:

բանակից (մոտ 5.000) գրավեց Բաբելոնը[1]: Շամշուդիտանան զոհվեց, սակայն հաղթողները չամրացան քաղաքում և ձեռք բերած հսկայական ավարով նահանջեցին: Որպես հետևանք, Բաբելոնի թագավորության տարածքն ընկավ Հարավային Միջագետքում հաստատված Ծովափնյա թագավորության տիրապետության տակ:

Մ.թ.ա. մոտ 1590 թվականին Մուրսիլ Ի-ը զոհ գնաց դավադրությանը և նրան հաջորդեց մինչ այդ իր զորավարներից մեկը հանդիսացած Խանթիլի Ի-ը (մ.թ.ա. 1590-1560): Նոր տիրակալը բավականին ուժեղ մի անձնավորություն էր, սակայն վերջինիս գահակալման հետ կապված իրադարձությունները երկրի ներսում բավականին թուլացրին նրա դիրքերը, իսկ իրավիճակին էլ լրացուցիչ սրություն հաղորդեց այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ Արմավիրում ի վերջո որոշեցին լուրջ հարված հասցնել Խեթական թագավորությանը:

Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 1589 թվականին Փոքր Ասիայի արևելքը և Կապադովկիան ասպատակած Արիական տերության բանակը (մոտ 80.000) Խեթական թագավորության բանակից (մոտ 10.000) գրավեց Ներիկը (Փոքր Ասիա, Հաթթուսասից մոտ 100 կմ հյուսիս-արևելք, Հալիս գետի ափին), Տիլիուրուն (Փոքր Ասիա) ու Սուկցիան և, այրելով գրաված քաղաքները, ինչպես նաև գերելով ու մահապատժի ենթարկելով Խեթական թագավորության թագուհուն և նրա երեխաներին, վերադարձավ ելման դիրքեր[2]: Սրանից հետո Խեթական թագավորության դեմ պատերազմական գործողությունները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին, սակայն էական արդյունքի Հայկազունիները այդպես էլ չհասան:

Արդյունքում՝ թեև Խեթական թագավորությունը լրջորեն թուլացավ, սակայն դա չուժեղացրեց նաև Արիական տերությանը, որը կորցրեց հսկողությունը Ասորիքի վրա ընդհանրապես և Կարդունիաշի իշխանության վրա մասնավորապես: Այս առումով հարկ է նշել, որ, ինչպես Արիական տերությունից մինչ այդ անջատված տարածքների պարագայում, այնպես էլ այս դեպքում Կարդունիաշի իշխանության հետագա ռազմաքաղաքական պատմությունը ևս դուրս է մնում մեր թեմայի շրջանակից: Ուղղակի պետք է ավելացնել, որ մ.թ.ա. 1571 թվականին այս իշխանությունը Ծովափնյա թագավորության բանակից գրավեց Բաբելոնը, որտեղ և տեղափոխեց իր քաղաքական կենտրոնը[3]: Դրանից հետո միահյուսված երկու այս պետական միավորները՝ Բաբելոնը և, ըստ էության, նրա մեջ տարալուծված Կարդունիաշի իշխանությունը, այդ վիճակում գոյատևեցին մի քանի դար:

Մ.թ.ա. 1590 թվականին Թահմաուրպային հաջորդեց նրա որդի Յաման (մոտ 1590-1540): Հայտնի է, որ իր թագավորության սկզբնական տարիներին Յաման հնազանդեցրել է «դևերին», որը կարող է նշանակել այն, որ վերջինս ճնշել է հոր մահից հետո սկիզբ առած դիերի և ժուների ապստամբությունը: Այլ նշանակալից ռազմական ընդհարումներ Յամայի տիրապետության տակ գտնվող տարածքներում տեղի չեն ունեցել: Դրա փոխարեն հենց Յամայի օրոք էր, որ պարսկական և մարական տարրերը արդեն գործնականում վերջնականապես ձևավորվեցին որպես առանձին էթնիկ միավորներ, ինչի մասին վկայում է այս տիրակալի գործունեության կրոնաքաղաքական կողմը: Իրոք, հենց Յաման էր, որ պարսիկների և մարերի կրոնական համակարգում դրեց կրակապաշտության հիմքերը: Յամայի օրոք իրականացվեցին նաև լայն շինարարական աշխատանքներ, այն դեպքում, երբ Արիական տերությունում ստեղծված ընդհանուր վիճակը Հայոմարտներին ի վերջո նաև իրավաբանական անկախություն շնորհեց:

Արբակի կյանքի վերջին տարիներին Արիական տերության արևմուտքում ծավալվող ապակառուցողական գործընթացները, երբ կենտրոնական իշխանությունից փաստացի անջատվեցին Ասորիքն և Միջագետքը, օրինաչափորեն բերեցին նրան, որ կորսվեց նաև Եգիպտոսը: Արիական տերության գոյության ընթացքում Եգիպտոսը,

---

[1] Մուրսիլ Ի-ին վերագրվող արձանագրություններից; Տելեպինուին վերագրվող արձանագրությունից; Ասխապալա գրագրին արձանագրությունից:

[2] Տելեպինուին վերագրվող արձանագրության խեթական և աքքադական տարբերակներից:

[3] Ագում Ի-ին վերագրվող արձանագրությունից:

չհաշված, իհարկե, բուն Հայաստանի, երևի թե տերության ամենահանգիստ անկյունն էր, որտեղ Հայկազուտները կարողացել էին հարմոնիկ ձևով համատեղել իրենց իշխանությունը տեղական ավանդույթների հետ, սակայն ընդհանուր ճգնաժամը ազդեցություն գործեց նաև այս երկրամասի վրա և մ.թ.ա. 1570 թվականին Եգիպտոսում մի մեծ ապստամբություն բռնկվեց:

Մ.թ.ա. 1570 թվականին եգիպտացիները փարավոն ընտրեցին Սեկեներա II-ին (մ.թ.ա. 1570), սակայն բաց ճակատամարտում ջախջախիչ պարտություն կրեցին, իսկ փարավոնն էլ սպանվեց: Դրանից հետո ապստամբներին սկսեց գլխավորել սպանվածի եղբայրը՝ նոր փարավոն Կամեսը (մ.թ.ա. 1570-1567), և այս անգամ հաջողությունն արդեն տեղացիների կողմում էր: Մ.թ.ա. 1568 թվականին Հայկազուտները պարտություն կրեցին[1], սակայն նրանց համար լավը գոնե այն եղավ, որ այս դեպքերից կարճ ժամանակ անց իր մահկանացուն կնքեց նաև ռազմաշունչ Կամեսը և նրան հաջորդեց իր եղբորորդի ու Սեկեներա II-ի որդի Յահմոս I-ը (մ.թ.ա. 1567-1546): Մ.թ.ա. 1568 թվականին կյանքից հեռացավ Արբակը և նրան հաջորդեց Արիական տերության վերջին գերագույն տիրակալ Զավանը (մ.թ.ա. 1568-1531), հենց որի օրոք էլ Արիական տերությունը վերջնականապես փլուզվեց: Ավելին, գահակալական վերջին փոփոխությունը վերջնականապես ոտքի հանեց նաև եգիպտացիներին, որոնք վերսկսեցին հարձակումը Հայկազուտների ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

1567 – ***<u>Ավարիսի ճ-մ</u>*** (Հյուսիսային Եգիպտոս, Նեղոսի ափին)[2]

Յահմոս I-ի գլխավորած Եգիպտական թագավորության բանակը և նավատորմը, դաշնակցելով Կրետեի իշխանության բանակի ու նավատորմի (ընդհանուր՝ 480.000, մոտ 1.000 նավ) հետ, մոտեցան Կիռնակի գլխավորությամբ քաղաքի մոտ մարտակարգ ընդունած Արիական տերության բանակին (մոտ 80.000): Եգիպտական թագավորության բանակի առաջին շարքում տեղավորված էին մարտակառքերը, իսկ երկրորդում՝ հետևակը:

I փուլ – Թշնամին անցավ հարձակման: Բռնկվեց համառ հանդիպակաց մարտ, որի արդյունքում Հայկական բանակը նահանջեց և ամրացավ լայն ու բարձր պարիսպներով պաշտպանված քաղաքում:

II փուլ – Թշնամու ցամաքային բանակը մոտեցավ քաղաքի պարիսպներին, իսկ ջրանցքների և լճակների կողմից քաղաքի ջրահայաց պարիսպներին էլ մոտեցավ վերջինիս նավատորմը: Կարճ ժամանակ անց թշնամու բանակը բոլոր կողմերից անցավ համակցված գրոհի, սակայն Հայկական բանակը հետ մղեց այն:

Հայերը կորցրին մոտ 5.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր: Սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում Յահմոս I-ը համաձայնվեց հետ քաշել իր ուժերը ու հնարավորություն տալ Հայկական բանակին և հայ բնակչությանը հեռանալ երկրից: Արդյունքում՝ Արիական տերության բանակը կազմակերպված կերպով նահանջեց ***<u>Պաղեստինի</u>*** ուղղությամբ:

Ավարիսի անկումից հետո Հայկազուտները և Եգիպտոսում մնալ չցանկացող հայերի զգալի մասը նահանջեցին Ասորիքի ուղղությամբ, որից հետո, որպես առաջնակետ ունենալով Շարուքենը, մի քանի տարի շարունակ հետ մղեցին Յահմոս I-ի բանակի հետագա հարձակումները: Մ.թ.ա. 1561 թվականին, սակայն, ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում Հայկական բանակը և բնակչությունը շարունակեցին նահանջը դեպի հյուսիս-արևելք, որտեղ և հիմնադրեցին Երուսաղեմը:

---

[1] Կամոսին վերագրվող արձանագրությունից; Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապպիոնի», գիրք 1, գլուխ 14:

[2] Կամոսին վերագրվող արձանագրությունից; Կամոսի գործունեությանը վերագրվող նավավար Յահմոսի արձանագրությունից; Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապպիոնի», գիրք 1, գլուխ 14; Թեոփիլիոս Անտիոքցի «Խոսք Ավտոլիկոսին»; Տատիանոս Ասորի «Ընդդեմ հույների»; Կղեմենոս Ալեքսանդրիացի «Ստրոմատներ», գիրք 1, գլուխ 21:

Այնուհետև, շարունակելով առաջխաղացումը դեպի ավելի հյուսիս, Հայկական բանակը հաստատվեց Հյուսիսային Ասորիքում և Հայոց Միջագետքում[1]:

Այս առումով կարծում եմ, որ մ.թ.ա. 1561 թվականը պետք է համարել Արիական տերության փլուզման տարի, քանի որ Եգիպտոսի անկումով, ըստ էության, վերջ գտավ գրեթե մեկ դար շարունակված քայքայման և տրոհմանը այն գործընթացը, որը բերեց վերջինիս վերջնական անկման: Իրոք, մ.թ.ա. 1561 թվականին ստեղծված վիճակով վաղուց արդեն Արիական տերության կազմում չէին Փոքր Ասիան, Միջագետքը, Ասորիքը, ինչպես նաև հենց նոր կորսված Եգիպտոսը: Ինչ վերաբերում է Հայոմարտների տիրապետության տակ գտնվող տարածքներին, ապա վաղուց արդեն փաստացի անկախություն վայելող այս տոհմի տիրակալներն իրենք էլ հենց այս ժամանակներից սկսած ձեռք բերեցին նաև վերջնական կամ իրավաբանական անկախություն:

Սկիզբ էր առնում, սակայն, արդեն նոր դարաշրջան:

[1] Յահմոս Ի-ին վերագրվող արձանագրությունից; Յահմոս Ի-ի գործունեությանը վերագրվող նավավար Յահմոսի արձանագրությունից:

Մաս III
Ասորա-խեթական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

Մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսը բացվեց առանց Արիական տերության, որի փաստացի վերացումից հետո Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծվեց ռազմաքաղաքական նոր մի իրադրություն: Արիական տերության փլուզումով ավարտվեց նաև Հայկական Երրորդ գերիշխանությունը, բայց գործընթացը միայն դրանով չսահմանափակվեց, քանզի արդյունքում Հայոց թագավորությունը ոչ միայն կորցրեց իր կողմից նախկինում նվաճված բոլոր տարածքները, այլև Հայոց թագավորությունն ինքն էլ տրոհվեց հինգ մասերի՝ սկիզբ առավ Հինգի թագավորության ժամանակաշրջանը: Արդյունքում.

1. Հետագա Մինչեփրատյան Ծոփքը, Տուրուբերանը, Աղձնիքը, Մոկքը ու Արարատի արևմտյան մասը ընդգրկվեցին Արմենիի թագավորության կազմում և այնտեղ շարունակեց իշխել Հայկազունիների գլխավոր ճյուղը,
2. Եփրատի վերին հոսանքից հյուսիս, արևմտյան հոսանքից արևմուտք, մինչև Մեծամորի մոտ հարավ թեքվելը Արաքսի հոսանքից հյուսիս ընկած տարածքում ստեղծվեց Հայայի թագավորությունը և այնտեղ սկսեց իշխել Անիաների գահատոհմը: Այս թագավորությունը սերտորեն համագործակցում էր, իսկ երբեմն էլ իր կազմում ուներ Կասկայի իշխանությունը, որը հայ-կասկական խառը բնակչություն ուներ,
3. Հետագա Արարատ նահանգի հիմնական մասը, հետագա Պարսկահայքը, Փայտակարանը, Արցախը, Ուտիքը, Սյունիքը, Վասպուրականը և Կորճայքը անցան մինչ այդ Հայկազունիների ռազմական ղեկավարների դերն իրականացրած Արծրունիների գահատոհմի գլխավորած Արարատյան թագավորությունը,
4. Հետագա Հայոց Միջագետքի, Անդրեփրատյան Ծոփքի և Հյուսիսային Ասորիքի տարածքներն ընդգրկող Միտանիի թագավորությունում սկսեց իշխել Եգիպտոսից հեռացած Հայկազուտների գահատոհմը,
5. Հետագա Կիլիկիա նահանգի տարածքում ստեղծվեց Կիցուադանավանիների գահատոհմի ղեկավարած Կիլիկիայի թագավորությունը:

Այս առումով հարկ է նշել, որ Հայոց հինգ այս թագավորությունները ոչ միայն չէին վարում կամ նույնիսկ ի վիճակի էլ չէին վարել մեկ միասնական և համակարգված քաղաքականություն, այլև, ունենալով ռազմաքաղաքական իրարից տարբերվող հզորություն ու ազդեցություն, առանձին հարցերում նույնիսկ, երբեմն, մեկը մյուսի շահերի դեմ էին ելնում, թեև քիչ չէին նաև դաշնակցության դեպքերը: Այսպիսով՝ Հայոց պետականությունը լրջորեն թուլացավ, ինչն հետագա մի քանի հարյուրամյակներում իր լուրջ ազդեցությունն ունեցավ հայ ժողովրդի վրա:

Հայոց հինգ թագավորությունների մեջ, մեծապես, սակայն, արդեն խորհրդանշական և ավելի շատ ավանդության ուժով, առաջնային տեղ այնուհանդերձ ուներ Արմենիի Հայկազունիների թագավորությունը: Զավանից մինչև Հորո (մ.թ.ա. 1197-1194) ներառյալ, ի տարբերություն նախկինի, Հայկազունի արքաների մասին տեղեկատվությունը բավականին սուղ է: Այս ամենի ֆոնին, ինչպես արդեն նշվեց վերևում, կարելի է կարծել, որ մ.թ.ա. XVII դարի կեսերից սկսված և մ.թ.ա. XVI դարի կեսերին ավարտին հասած միասնական պետության անկումից հետո Հայկազունիները Հայաստանում իրական իշխանություն այլևս չեն ունեցել: Վերջիններիս իշխանությունը ամենայն հավանականությամբ կրել է խորհրդանշական բնույթ, իսկ առաջին դիրքերում են եղել Միտանիի և Հայայի թագավորությունները:

Զավանից հետո իրար հաջորդեցին Փառնակ Ի-ը (մ.թ.ա. 1531-1478), Սուրենը (մ.թ.ա. 1478-1433), Հավանակը (մ.թ.ա. 1433-1403), Վաշտակը (մ.թ.ա. 1403-1381), Հայկակ Ի-ը (մ.թ.ա.

1381-1363), Ամբակ Ի-ը (մ.թ.ա. 1363-1349), Առնակը (մ.թ.ա. 1349-1332), Շավարշ Ի-ը (մ.թ.ա. 1332-1326), Նորայրը (մ.թ.ա. 1326-1302), Վստամը (մ.թ.ա. 1302-1288), Կարը (մ.թ.ա. 1288-1285), Հորակը (մ.թ.ա. 1285-1267), Հրանտը (մ.թ.ա. 1267-1242), Էնզակը (մ.թ.ա. 1242-1227), Գլակը (մ.թ.ա. 1227-1197) և Հորոն (մ.թ.ա. 1197-1194), որոնց գործունեության մասին տեղեկատվությունը գործնականում բացակայում է: Այսպիսով, իրոք, դատելով ըստ ամենայնի, համահայաստանյան մակարդակում Արմենիի Հայկազունիների իշխանությունը մեծապես ձևական էր և քննարկվող ժամանակաշրջանում այս թագավորությունը որևէ աչքի ընկնող ռազմաքաղաքական ակտիվություն այդպես էլ չդրսևորեց: Ինչ վերաբերում է Հայոց մնացած չորս թագավորություններին, ապա նրանք, մտնելով Մերձավոր Արևելքի քաղաքական իրադարձությունների հորձանուտը, այս կամ այն կերպ ձգտում էին ապահովել սեփական շահերի պաշտպանությունը: Հայոց այս չորս թագավորություններից ամենահզորը Միտանին էր, վերջինիս իր ուժով քիչ էր զիջում Հայան, հետո գալիս էր Արարատյան թագավորությունը և ցանկը եզրափակում էր Կիլիկիայի թագավորությունը:

Միտանիի թագավորությունը, ամենաշատը հայկական այլ թագավորություններից, դեռևս պահպանում էր Արիական տերության ռազմական ավանդույթները և հենց այստեղ էր, որ առաջացավ ու իր զարգացումը ստացավ մարիաների սոցիալական խումբը: Մարիաները, որպես, ենթադրաբար Արիական տերությունում գոյություն ունեցած «արիաների» սոցիալական խմբի օրգանական շարունակությունն, ի դեմս «Միտանիի արիաների» կամ «մարիաների», ռազմական դասակարգի յուրօրինակ ներկայացուցիչներ էին, որոնք արմատներով գնում էին դեպի արիական արշավանքների դարաշրջանը և, մասնավորապես, դեպի հետագայում որպես քշատրիներ հայտնի դարձած սոցիալական շերտը, թեև հետագայում նրանք իրենց վերջնական տեսքը ստացան հենց Միտանիի թագավորությունում: Այսպիսով՝ ամենաընդհանուր իմաստով մարիաները Միտանիի բանակի էլիտար ռազմիկներն էին, որոնք հատկապես էին աչքի ընկնում իրենց մարտական կարողություններով և, որպես կանոն, մարտնչում էին մարտակառքերով: Ինչպես քշատրիների պարագայում, մարիաների միակ և, կարելի է ասել նույնիսկ բացառիկ, առանձնահատկությունն այն էր, որ նրանք պատկանում էին մեկ, որոշակի և հստակ որոշված դասակարգի (կաստայի), որի մեջ անհատը կարող էր մուտք ունենալ միայն ու միայն իր ծննդյան փաստով: Այս կապակցությամբ պետք է հատկապես նշել, որ կաստային փակ բնույթը ինքնանպատակ չէր, այլ ուներ կոնկրետ սոցիալական նշանակություն՝ կոչված լինելով խաղաղ պայմաններում պահպանել ռազմական այս դասակարգը քայքայումից և կազմալուծումից:

Կիլիկիայի թագավորության մասին տվյալները սուղ են, սակայն, դատելով ըստ ամենայնի, մեծ հաշվով այն հանդիսանում էր Միտանիի թագավորության որոշակիորեն դժգույն արտապատկերը: Յուրօրինակ բնույթ ունեին Հայայի և Արարատյան թագավորությունները, որոնք, գործի դնելով ավանդական լեռնային պայքարի մեթոդները, այնուհանդերձ դեռևս որոշակիորեն պահպանում էր Արիական տերության ռազմավարչական հիմնական հատկանիշները:

Ուժերի ծայրահեղ լարման պայմաններում հայկական հինգ թագավորություններն ի վիճակի էին զենքի տակ դնել առավելագույնը հետևյալ քանակի զինական ուժ.

- Արմենիի թագավորություն՝ մոտ 15.000 զինվոր,
- Միտանիի թագավորություն՝ մոտ 40.000 զինվոր,
- Հայայի թագավորություն՝ մոտ 30.000 զինվոր,
- Արարատյան թագավորություն՝ մոտ 20.000 զինվոր,
- Կիլիկիայի թագավորություն՝ մոտ 15.000 զինվոր:

Քննարկվող դարաշրջանում գործող ոչ հայաստանյան տարածաշրջանային քաղաքական ուժերի շարքում կարելի է մատնանշել Խեթական, Եգիպտական, Ասորեստանի, Բաբելոնի և Էլամի թագավորությունները, որոնց ձեռքում գործող ռազմական մեքենաներն ունեին իրենց յուրահատկությունները: Այսպես, խեթական,

ինչպես նաև «կարդուական» Բաբելոնի ռազմական համակարգերը դեռևս մեծապես կրում էին Արիական տերության ռազմական համակարգի կնիքը՝ այստեղ էին և մարտակառքերը, և մարտի վարման սրընթաց միջոցները, և՝ պատերազմի վարման արիական բնորոշ այլ հատկանիշներ: Մեծապես արիական հատկանիշների կրող կարող էր համարվել նաև Հայկազուտների ռազմավարչական, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ մշակութային կնիքը կրող Եգիպտական վերածնված անկախ թագավորությունը, որը քննարկվող ժամանակաշրջանում նվաճողական ակտիվ շարժեր էր անում Ասորիքի և նրա հարակից երկրների նկատմամբ: Ինչպես և նախկինում, իր յուրօրինակ ձեռագիրն ուներ նաև Էլամի թագավորության ռազմական մեքենան, որը, եթե առիթը հարմար լիներ, ձգտում էր լեռներից իջնել Միջագետքի հարթավայրեր և այստեղ այս կամ այն կերպ իր գերիշխանությունը հաստատել, ընդ որում Էլամի թագավորության հիմնական ռազմաքաղաքական մրցակիցը Բաբելոնի թագավորությունն էր: Այս առումով հետաքրքիր է նշել, որ, իր ժամանակին ընդգրկվելով Արիական տերության կազմում, Էլամի թագավորությունը այս տերության անկումից հետո ենթարկվեց Բաբելոնի թագավորությանը: Արդյունքում՝ Էլամի թագավորության ռազմավարչական համակարգը ևս իր վրա որոշակիորեն կրում էր արիական զգալի ազդեցություն:

Քննարկվող ժամանակաշրջանում ուժերի ծայրահեղ լարման պայմաններում հիշատակված պետություններն ի վիճակի էին զենքի տակ դնել առավելագույնը հետևյալ քանակի զինական ուժ.

- Խեթական թագավորություն՝ մոտ 60.000 զինվոր,
- Եգիպտական թագավորություն՝ մոտ 100.000 զինվոր,
- Ասորեստանի թագավորություն՝ մոտ 90.000 զինվոր,
- Բաբելոնի թագավորություն՝ մոտ 60.000 զինվոր,
- Էլամի թագավորություն՝ մոտ 50.000 զինվոր:

Գլուխ 2
Դարաշրջանի աղբյուրագիտությունը

Ասորա-խեթական դարաշրջանի աղբյուրագիտությունը, ինչպես և նախկինում, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի:

Առաջին խումբը ներկայացված է ասորա-խեթական, ինչպես նաև եգիպտական արձանագրություններով, որոնք իրենց հիմնական հայտնի մասով հրատարակվել և բավարար չափով վերլուծված են: Այս աղբյուրները ամենից առաջ բնականաբար տեղեկացնում են Եգիպտոսում, Միջագետքում, Ասորիքում և Փոքր Ասիայում ծավալվող իրադարձությունների մասին, սակայն հաճախ տալիս են նաև խիստ ուշագրավ տեղեկություններ հարևան երկրների, այդ թվում նաև հայերի ու Հայաստանի մասին: Այս առումով հարկ է նշել, որ, ինչպես և նախկինում, այս անգամ ևս հիշատակված սկզբնաղբյուրները իրադարձությունները ներկայացնում են սեփական տեսանկյունից՝ բնականաբար աչքաթող անելով իրենց քաղաքակրթությանը չվերաբերող կամ դրան վերաբերող, սակայն բացասական տեղեկատվությունը՝ միաժամանակ ներկայացնելով, հաճախ՝ չափազանցնելով, սեփական կողմի համար դրական տեղեկությունները:

Քննարկվող ժամանակաշրջանի պատմական սկզբնաղբյուրների երկրորդ խումբը կազմում են հետագայում՝ հարյուրամյակներ անց, ստեղծված մատենագիտական սկզբնաղբյուրները՝ պատմական մատյանները, որոնք, իրենց հատվածական, հաճախ ոչ ճշգրիտ և վիպականացված բնույթի տեղեկություններով հանդերձ քննարկվող դարաշրջանի վերաբերյալ, երբեմն այնուհանդերձ հայտնում են խիստ արժեքավոր տեղեկություններ՝ որպես հիմք ունենալով իրենց ստեղծման ժամանակի գոյություն ունեցած ու, հնարավոր է, մեզ չհասած սեպագրերը կամ այլ աղբյուրները: Արդյունքում՝ ինչպես և նախկինում, գտնում եմ, որ, չընկնելով իհարկե հակառակ ծայրահեղության մեջ, վերջիններիս համընդհանուր ժխտումը ճիշտ մոտեցում չէ, քանի որ հաճախ, թեև

վիպականության քողի տակ, այս աղբյուրները հայտնում են խիստ արժեքավոր տեղեկություններ ու դրանք ոչ մի կերպ չի կարելի անտեսել, մանավանդ որ դիտարկվող ժամանակաշրջանի համար մատենագիտական սկզբնաղբյուրներն արդեն զգալի պատմական արժեք են ներկայացնում՝ անհամեմատ ավելի մեծ, քան նախորդ հազարամյակում էր: Այս առումով կրկին գտնում եմ, որ պետք է առաջնորդվել սեպագիր և մատենագիտական սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունների սինթեզման ու համադրման մեթոդով:

Գլուխ 3
Հայ-խեթական մրցակցության սկիզբը

Նոր էին դեռ միայն Եգիպտոսից հեռացած Հայկազուտները Միտանիի թագավորության հիմնադիր արքա Կիռնակի (մ.թ.ա. մոտ 1561-1555) գլխավորությամբ հաստատվել Հայոց Միջագետքի ու Հյուսիսային Ասորիքի տարածքներում, երբ մ.թ.ա. մոտ 1560 թվականին Հայայի թագավորությունը մարտական գործողություններ սկսեց ներքաղաքական ճգնաժամ ապրող Խեթական թագավորության դեմ, ինչի արդյունքում Կասկայի իշխանության հետ միասին դաժանորեն ասպատակեց խեթերի հյուսիսային տարածքները և նահանջեց[1]: Խեթերը, մի պահ փորձելով հաղթահարել իրենց թագավորությանը պարուրած ճգնաժամը, մ.թ.ա. մոտ 1545 թվականին հարձակվեցին Կիլիկիայի թագավորության վրա, սակայն Կիլիկիայի թագավորության հիմնադիր արքա Պիլիա Ի-ի (մ.թ.ա. մոտ 1561-1510) գլխավորությամբ հայերին հաջողվեց պարտության մատնել Ամունի արքայի (մ.թ.ա. մոտ 1550-1530) գլխավորած Խեթական թագավորության բանակին ու հետ շպրտել վերջինիս ելման դիրքեր[2]:

Խեթերին, սակայն, այս անգամ վիճակված չէր երկար մնալ ճգնաժամի մեջ, քանի որ շուտով այս թագավորության ղեկին հայտնված Տելեպինուն (մ.թ.ա. մոտ 1525-1500), որը մի ուժեղ և եռանդուն տիրակալ էր, մեծապես կարգի գցեց իր պետության գործերը: Արդյունքում, մի քանի կտրուկ քայլերով կարգավորելով դրությունը, մ.թ.ա. մոտ 1523 թվականին վերջինս ոտքի հանեց Խեթական թագավորության խոշոր մի բանակ և Կիլիկիայի թագավորության բանակից գրավեց Հասուվան՝ հիմնահատակ ավերելով այն[3]: Հաջողությունն այս արքայի կողմում էր նաև հաջորդ տարիներին, իսկ մ.թ.ա. մոտ 1520 թվականին էլ Տելեպինուն Կիլիկիայի արևելքում տեղի ունեցած Լավացանտիայի ճ-մ-ում խոշոր հաղթանակ տարավ Կիլիկիայի թագավորության բանակի նկատմամբ[4]: Արդյունքում՝ Կիլիկիայի թագավորությունն ընդունեց Խեթական թագավորության գերիշխանությունը, ընդ որում Պիլիա Ի-ին հաջորդած Պարիյավատրին (մ.թ.ա. մոտ 1510-1500), Իսպատակսուն (մ.թ.ա. մոտ 1500-1480), Սանասար Ի-ը (մ.թ.ա. մոտ 1480-1470) և Պիլիա ԻԻ-ը (մ.թ.ա. մոտ 1470-1430) մեծ հաշվով հավատարիմ եղան իրերի ստեղծված դրությանը: Մ.թ.ա. XVI դարը հայերի համար ավարտվում էր ոչ լավագույն արդյունքներով, սակայն խեթերի հետ կապված անհաջողությունները միակը չէին, որ, որպես լուրջ մարտահրավեր, դարի վերջին հառնեցին հայերի առջև:

Այսպիսով Խեթական թագավորություն ամրապնդեց իր դիրքերը տեղում և պաշտոնական Ուռհայից 150 կմ արևելք գտնվող Ոսկե-Անիին այլ բան չէր մնում անել, քան ամրապնդվել տեղում: Որպես հետևանք, գործեց նաև Միտանիի արքա, Կիռնակին հաջորդած նրա որդի Շավարշ Ի-ի (մ.թ.ա. մոտ 1555-1530) տղա Պարետի (մ.թ.ա. մոտ 1530-1520) որդի Բաղդասարը (մ.թ.ա. մոտ 1520-1490): Արդյունքում՝ մ.թ.ա 1517 թ-ին Հալեպի ճ-մ -ում Միտանիի թագավորության բանակը (մոտ 30.000) հաղթեց Իլիմիլիմա արքայի (մ.թ.ա.

---

[1] Այս իրադարձությունների համար հիմք են հանդիսացել Տելեպինուին վերագրվող արձանագրության վնասված հատվածները, սակայն վերջիններիս ծայրահեղ հատվածական, անկանոն և աղքատ ինֆորմատիվ բնույթի պատճառով ես նպատակահարմար չեմ գտնում այն այստեղ արտացոլել: Ու թեև, կոնտեքստը վերականգնել առայժմ որևէ կերպ հնարավոր չէ, սակայն անկասկած ընդունվում է, որ խոսքը հենց իրադարձությունների այն պատկերի մասին է, որը ես շարադրել եմ:

[2] Տելեպինուին վերագրվող արձանագրությունից:

[3] Տելեպինուին վերագրվող արձանագրությունից:

[4] Տելեպինուին վերագրվող արձանագրությունից:

1524-1517) գլխավորած Յամհադի թագավորության բանակին (մոտ 20.000)[1], երբ Իլիմիլիման սպանվեց, իսկ Յամհադի թագավորությունն ընկավ Միտանիի թագավորության ենթակայության տակ:

Գլուխ 4
Հայ-Եգիպտական պատերազմը

Իրոք, դուրս մղելով Հայկազուտներին Եգիպտոսից, Եգիպտոսի փարավոնները դրանով իսկ հանդերձ ոչ մի կերպ չհանգստացան, քանզի մի կողմից այրող ատելությունը իրենց երկրի մի ժամանակվա տիրակալների նկատմամբ, որը նրանք շարունակում էին տածել չթուլացող չափով, մյուս կողմից էլ Հայկազուտների թողած հիանալի ռազմական մեքենան և ավարի անհագ ձգտումը փարավոններին ստիպում էին գործել: Արդյունքում՝ մ.թ.ա. նույն XVI դարի ամենավերջում, հավանաբար մ.թ.ա. մոտ 1504 թվականին, Թութմոս Ի-ի (մ.թ.ա. 1506-1496) գլխավորությամբ առաջխաղացած Եգիպտական թագավորության բանակը (մոտ 50.000) հարձակման անցավ Միտանիի թագավորության ուղղությամբ: Եգիպտացիների այս առաջին հարձակումը, սակայն, դատելով ըստ ամենայնի, այնքան էլ հաջողություն չապահովեց թշնամուն և Բաղդասարին առժամանակ հաջողվեց պահել դիրքերը[2]: Այսպես թե այնպես, սակայն սկիզբ առավ Հայ-Եգիպտական պատերազմը (մ.թ.ա. մոտ 1504-1412), որը դրանից հետո շարունակվելու էր գրեթե մեկ դար:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Եգիպտական թագավորության հետ թշնամությունը աստիճանաբար մտնում էր Միտանի թագավորության քաղաքական կյանքի օրակարգ և այս պայմաններում կարիք կար ոչ միայն կենտրոնացնել թագավորության բոլոր առկա ուժերը, այլև առնել առաջիկա պատերազմի պարագայում թիկունքից սպասվող հնարավոր հարվածի դեմը, իսկ թիկունքից պաշտոնական Ոսկե-Անիին կարող էր հարվածել ամենից առաջ հենց աստիճանաբար ոտքի կանգնող սեմիտական Ասորեստանի թագավորությունը: Ասորեստանի երբեմնի հզոր թագավորությունը, սակայն, դեռևս ուշքի չեկած արիների հարվածներից, առժամանակ իրենից դեռևս ներկայացնում էր, ըստ էության, միայն մի քանի քիչ թե շատ խոշոր քաղաքների փխրուն մի համադաշնություն, որի մեջ առաջնային տեղն այնուհանդերձ պատկանում էր Ասուրին: Այսպես թե այնպես, սակայն, ցանկանալով սանձել սեմիտական վտանգը, մ.թ.ա. 1480 թվականին Բաղդասարին հաջորդած նրա որդի Սանասարի (մ.թ.ա. մոտ 1490-1450) գլխավորած Միտանիի թագավորության բանակը ասպատակեց Ասուրի և Առապխայի (Միջագետք, Ասուրից մոտ 140 կմ արևելք) շրջակայքը: Արդյունքում՝ Ասորեստանի նորընծա արքա Ասուրսադունին (մ.թ.ա. 1480) գահընկեց արվեց, իսկ հայերի դժգոհությունն էլ այնքան մեծ էր, որ Ասորեստանի թագավորությունը փաստացի վերացվեց և Ասուրը հարակից շրջանների հետ միասին 8 տարով սկսվեց կառավարվել Միտանիի թագավորության նշանակած կառավարիչների կողմից[3]: Ասորեստանի հարցը, ահա, նման մի լուծման արժանացավ և, չնայած այն բանին, որ մ.թ.ա. 1472 թվականից, Ասորեստանի գահը կրկին վերականգնվեց ու այստեղ սկսեց իշխել Ասուրրաբի Ի-ը (մ.թ.ա. 1472-1452), այս թագավորությունը, դրանից հետո ևս մոտ դարուկես, որևէ լուրջ նշանակություն այդպես էլ չունեցավ:

Նույն այս ժամանակ, սակայն, շարունակվում էր պատերազմը նաև խեթերի դեմ, մի պատերազմ, որն աստիճանաբար ընդունել էր փոխադարձ հարձակումների և ասպատակությունների բնույթ: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Խեթական թագավորությանը պատած հերթական անկումներից մեկի ժամանակ մ.թ.ա. մոտ 1470 թ-ին Յամհադի թագավորության բանակը (մոտ 20.000) ասպատակեց պաշտոնական Հաթթուսասի հովանու ներքո գտնվող Կիլիկիան և նահանջեց[4]: Արդյունքում Խեթական

[1] Ալալախի տիրակալ Իդրիմին վերագրվող արձանագրությունից:
[2] Թութմոս Ի-ին գործունեությանը վերագրվող արձանագրությունից:
[3] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված նախնական պայմանագրից; Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Ալալախի տիրակալ Իդրիմին վերագրվող արձանագրությունից:

թագավորության հերթական արքա Ցիտանդա II-ը (մ.թ.ա. մոտ 1480-1465), որը, հաշվի առնելով սեփական թագավորության ներքին թույլ դրությունը, որոշում էր ընդունել հանուն իր կրտսեր դաշնակցի կռվի մեջ որևէ կերպ չմտնել, այնուհանդերձ այն բանից հետո, երբ թշնամին հետ քաշվեց, Պիլիա II-ին հպատակության նոր դաշնագիր պարտադրեց: Կյանքը ցույց տվեց, սակայն, որ Պիլիա II-ի հաջորդներ Բաղդասարը (մ.թ.ա. մոտ 1430-1410), Թալզուշը (մ.թ.ա. մոտ 1410-1400) և Սանասար II-ը (մ.թ.ա. մոտ 1400-1345) գերադասում էին հավատարմությունն այնուհանդերձ Միտանիի թագավորությանը: Խեթական թագավորության խնդիրները, սակայն, սրանով ևս ոչ մի կերպ չէին սպառվելու:

Իրոք, մ.թ.ա. մոտ 1458 թվականին Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը ասպատակեց Խեթական թագավորության հյուսիսային ու կենտրոնական շրջանները և նահանջեց[1], իսկ մ.թ.ա. մոտ 1457 թվականին էլ պատասխան արշավանք իրականացրեց արդեն Խեթական թագավորության հերթական արքա Թուդհալիս II-ի (մ.թ.ա. մոտ 1460-1440) գլխավորած Խեթական թագավորության բանակը, թեև ի վերջո այն ևս նահանջեց[2]: Մինչ հյուսիսում իրադարձությունները զարգանում էին իրենց հունով, սակայն, նույն այդ ժամանակ ի վերջո սկսեցին վճռական իրադարձություններն զարգանալ հարավում՝ Միտանիի և Եգիպտական թագավորությունների հարաբերություններում:

Իրոք, Եգիպտական թագավորության մեծագույն փարավոններից մեկը հանդիսացող Թութմոս III-ը (մ.թ.ա. 1479-1425)՝ Թութմոս I-ի թոռը, նույն այս ժամանակ, իրականացնելով մի շարք հաջող բարենորոգումներ, սեփական երկիրը հասցրել էր վերջինիս ռազմաքաղաքական հզորության գագաթնակետերից ամենաբարձրին: Արդյունքում՝ Թութմոս III-ը սկսեց հարատև պայքար մղել նաև Եգիպտական թագավորության գերիշխանությունը Ասորիքում հաստատելու համար, իսկ դա ամենից առաջ նոր ընդհարում էր նշանակում Միտանիի թագավորության հետ: Իրոք, Ասորիքի մանր իշխանությունները նույնիսկ միասնական ուժով հանդես գալու պարագայում էլ ի վիճակի չէին դիմադրել հարավ-արևմտյան հարևանին և այս պայմաններում նրանց միակ հույսը մնում էր պաշտոնական Ոսկե-Անին, քանզի Միտանիի թագավորության համար ևս Եգիպտոսի առաջխաղացումը հղի էր վտանգներով:

Արդյունքում՝ արդեն մ.թ.ա. 1450-ական թվականների սկզբին ստեղծվեց հակաեգիպտական ուղղվածություն ունեցող լայնարձակ մի դաշինք, որի մեջ մի կողմից մտան Ասորիքի մանր իշխանությունները, իսկ մյուս կողմից էլ՝ Միտանիի թագավորությունը, ընդ որում հետաքրքիր էր այն, որ վերջինիս աջակցում էր նույնիսկ Խեթական թագավորությունը, որին, ըստ երևույթին, ևս չէր հրապուրում իր հարավային սահմանների անմիջական հարևանությամբ Եգիպտոսի հզոր թագավորության նման մի պետություն տեսնելու հեռանկարը: Արդյունքում՝ Թութմոս III-ը, որ ուշադիր կերպով հետևում էր հյուսիս-արևելքում զարգացող իրադարձություններին, ինչ-որ մի պահի եկավ այն մտքի, որ առաջացած թնջուկը կարող է լուծվել միայն ռազմական ճանապարհով: Որպես հետևանք ընդունված որոշման՝ մ.թ.ա. 1457 թվականի վաղ գարնանը Թութմոս III-ը, իրար բերելով ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր ուժերը, արշավանքի ելավ հյուսիս-արևելյան ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

1457 ապրիլի 26 – ***<u>Մեգիդոյի ճ-մ</u>*** (Երուսաղեմից մոտ 80 կմ հյուսիս)[3]

Թութմոս III-ի գլխավորած Եգիպտական թագավորության բանակը (մոտ 100.000) մեծ արշավանք սկսեց Ասորիքի ուղղությամբ և ապրիլի երկրորդ կեսին սկսեց մոտենալ Ասորիքի 119 մանր իշխանությունների (մոտ 50.000), ինչպես նաև

[1] Թուդհալիս III-ին վերագրվող արձանագրությունից; Արնուվանդա I-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Տելեպինուին վերագրվող արձանագրությունից; Արնուվանդա I-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Թութմոս I-ի գործունեությունը նկարագրող արձանագրությունից:

Միտանիի (մոտ 10.000), Կիլիկիայի (մոտ 5.000) ու Խեթական (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին: Ապրիլի 25-ին Եգիպտական թագավորության բանակը արագորեն անցավ քաղաքից հարավ գտնվող բարձունքները և անակնկալի բերեց հակառակորդին: Ապրիլի 26-ի առավոտյան Եգիպտական թագավորության բանակը մարտակարգ ընդունեց քաղաքից հարավ -արևմուտք տեղավորված հակառակորդի բանակի դիմաց՝ երկու թևերի բարձունքներում տեղավորելով հետևակը, իսկ կենտրոնում՝ մարտակառքերը:

I փուլ – Եգիպտական թագավորության բանակի կենտրոնը Թութմոս III-ի անձնական ղեկավարությամբ անցավ հարձակման և պարտության մատնեց հակառակորդի բանակին, որը սկսեց անկանոն ձևով փախչել քաղաքի ուղղությամբ:

II փուլ – Եգիպտական թագավորության բանակի թևերը անցան հարձակման, որի արդյունքում դաշնակից բանակի թևերը առանց լուրջ դիմադրության նահանջեցին քաղաքի ուղղությամբ:

III փուլ – Անմիջական հետապնդում իրականացնելու փոխարեն Եգիպտական թագավորության բանակի ռազմիկները սկսեցին զբաղվել ավար հավաքելով, որը հնարավորություն տվեց դաշնակից բանակին ամրանալ քաղաքում և պատրաստվել հետագա դիմադրության:

Հայերը կորցրին մոտ 2.000 զինվոր, դաշնակիցները՝ մոտ 10.000 զինվոր, 924 մարտակառք, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր: Եգիպտական թագավորության բանակը պաշարեց քաղաքը, սակայն քաղաքի պաշտպանների շարքերում բռնկված սովի շնորհիվ կարողացավ գրավել այն միայն նոյեմբերին:

Հենց նոր ավարտված ճակատամարտում Թութմոս III-ը շահեց իր կյանքի և իր պետության կարևորագույն հաղթանակներից մեկը, սակայն եռանդուն այս փարավոնը ոչ մի կերպ չէր պատրաստվում բավարարվել միայն դրանով: Արդյունքում, ձգտելով զարգացնել նախորդ տարի ձեռք բերված հաջողությունը, մ.թ.ա. 1456 թվականի գարնանը Թութմոս III-ի գլխավորած Եգիպտական թագավորության համալրված բանակը արշավանքի ելավ արդեն Հյուսիսային Ասորիքի ուղղությամբ: Ստեղծված ծանր պայմաններում գործելուց բացի այլ բան չէր մնում նաև Միտանիի թագավորությանն և նրա դաշնակիցներին, սակայն կարճ ժամանակ անց տեղի ունեցած Կարքեմիշի ճ-մ-ում (Հյուսիսային Ասորիք) նրանք հերթական ծանր պարտությունը կրեցին[1]: Արդյունքում՝ Եգիպտական թագավորության հաղթական բանակը, ասպատակելով շրջակայքը, Եփրատի հովտով իջավ դեպի հարավ՝ ի վերջո հասնելով Հարավային Ասորիք, ընդ որում եգիպտացիների հիմնական մասը, ի մեծ զարմանս իրեն, այս ընթացքում հանկարծ պարզեց, որ աշխարհի ոչ բոլոր գետերն են, ինչպես Նեղոսը, հոսում հարավից դեպի հյուսիս՝ Եփրատը հոսում էր հյուսիսից դեպի հարավ:

Մ.թ.ա. 1454 թվականին Թութմոս III-ը, շարժի մեջ դնելով խոշոր ուժեր, կրկին հարձակման անցավ Միտանիի թագավորության և նրա դաշնակիցների ուղղությամբ, ինչի արդյունքում Հյուսիսային Ասորիքում գտնվող Իարաինա կոչվող վայրում խոշոր մի ճակատամարտը տեղի ունեցավ: Այս կապակցությամբ եգիպտական աղբյուրները կրկին ակնարկում են հաջողության մասին, սակայն, հաշվի առնելով, որ արդյունքում որպես հաջողություն խոսվում է միայն 10 գերու, ձեռք գցած 180 ձիու և 60 մարտակառքի մասին, թերևս, կարելի է վստահորեն պնդել, որ իրականում հաջողությունն ամենևին էլ Թութմոս III -ի ռազմական մեքենայի օգտին չի եղել կամ էլ, առավելագույնը, եթե ինչ-որ հաջողություն այնուհանդերձ եղել էլ է, ապա ոչ այն չափով, ինչի համար նախատեսված էր արշավանքը[2]: Ավելին, թեև այս ճակատամարտից հետո Հայ-Եգիպտական պատերազմը շարունակվեց ևս որոշ ժամանակ, սակայն ուղղակի ընդհարումներ այլևս չեղան, իսկ պաշտոնական

[1] Թութմոս I-ին գործունեությանը վերագրվող արձանագրություններից:
[2] Թութմոս III-ի գործունեությանը վերագրվող արձանագրությունից:

Թեբեան էլ սահմանափակվեց բացառապես միայն Ասորիքի իշխանությունների դեմ իրականացվող մարտական գործողություններով:

Մ.թ.ա. 1425 թվականին Թութմոս III-ի մահից հետո վերջինիս հաջորդեց նրա որդի Ամենհոտեպ II-ը (մ.թ.ա. 1425-1397), որն իր առջև ամենից առաջ խնդիր դրեց ավարտին հասցնել արդեն ամեն մի հեռանկարից զրկված պատերազմը հյուսիսում: Արդյունքում՝ կողմերն ի վերջո համաձայնության եկան և մ.թ.ա. մոտ 1412 թվականին մի կողմից Ամենհոտեպ II-ի, իսկ մյուս կողմից էլ Սանասարին հաջորդած նրա որդի Արտակ I-ի (մ.թ.ա. մոտ 1450-1410) միջև կնքվեց հաշտության պայմանագիր, համաձայն որի Հյուսիսային Ասորիքը անցավ Միտանիի թագավորությանը, իսկ Փյունիկիան, Պաղեստինն ու Հարավային Ասորիքն էլ հայտարարվեցին Եգիպտական թագավորության ազդեցության գոտի: Այսպիսով՝ արդեն մ.թ.ա. XV դարի վերջին Ասորիքում ստեղծվեց ուժերի հավասարակշռության յուրօրինակ մի դրություն, որը դրանից հետո պահպանվելու էր բավականին երկար:

Գլուխ 5
Հայ-խեթական մրցակցության զարգացումը

Մ.թ.ա. XV դարի վերջին իրավիճակը Ասորիքում որոշակիորեն կայունացավ, սակայն տարածաշրջանում խաղաղություն դեռ երկար չէր հաստատվելու, քանի որ շուտով սրվեց իրավիճակը Փոքր Ասիայում և Հայաստանի արևմտյան սահմաններում: Իրոք, խեթերի հետ թշնամությունն այստեղ դեռևս ամենևին վերացած չէր, իսկ հենց այդ ժամանակ կրկին մեջքն ուղղող Խեթական թագավորության առկայությունն էլ իր հերթին ամենևին հիմքեր չէր տալիս խաղաղ տրամադրությունների համար:

Մ.թ.ա. արդեն մոտ 1405 թվականին սեփական թագավորությունը կրկին ոտքի հանած Թուդհալիս III-ի (մ.թ.ա. մոտ 1410-1380) գլխավորած Խեթական թագավորության բանակը սկիզբ դրեց ակտիվ ռազմական գործողությունների և Հայայի ու Միտանիի թագավորությունների միացյալ բանակից գրավեց Անդրեփրատյան Ծոփքի հարավը և Հայոց Միջագետքի արևմուտքը[1]: Մի քանի տարի անց՝ մ.թ.ա. մոտ 1399 թվականին, Թուդհալիս III-ը շարունակեց առաջխաղացումը Հյուսիսային Ասորիքի ուղղությամբ և, ոտնատակ տալով Անդրեփրատյան Ծոփքի հարավը, Հայոց Միջագետքի արևմուտքը, Կիլիկիայի արևելքը ու Հյուսիսային Ասորիքը, Հալեպի իշխանության և Միտանիի թագավորության միացյալ բանակից գրավեց Հալեպը[2]: Փաստորեն, հազիվ միայն ազատված Եգիպտական թագավորության հետ ծանր մրցակցությունից, Միտանիի թագավորությունը ձեռք բերեց մեկ այլ մրցակից, որը, ինչպես ցույց տվեց կյանքը, ավելի վտանգավոր էր: Խեթերի դեմ շարունակվող պատերազմի պայմաններում մ.թ.ա. մոտ 1398 թվականին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը հետաքրքիր հետք է թողել հայկական ավանդազրույցներում:

Իրոք, դատելով ըստ ամենայնի, այդ տարի խեթերը նախատեսած են եղել Հայային հարվածել ծովից՝ մի ծրագիր, որն էլ կյանքի կոչելու նպատակով նրանց ծովային խոշոր ուժեր են մոտեցրել Հայայի ծովափնյա հատվածին: Արդյունքում, ինչպես հայտնում են հայկական ավանդազրույցները ու դրանք գրի առած մեր միջնադարյան հեղինակները, Պասքամյան Տորք Անգեղ Հայկազունու գլխավորած Հայայի թագավորության բանակը դուրս եկավ թշնամու բանակի դեմ և, նետողական զենքերով ոչնչացնելով հակառակորդի նավերից շատերը, իսկ այլք էլ՝ վնասելով, ջախջախեց Խեթական թագավորության առաջխաղացած բանակը[3]:

---

[1] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից; Սուպիլուլիումա I-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրերից:

[3] Այս իրադարձությունն արձանագրելիս ես որպես հիմք ընդունել եմ Մովսես Խորենացու և Մխիթար Այրիվանցու բերած տվյալները, ինչպես նաև ազգային ավանդազրույցները: Ինչ վերաբերվում է վերջինիս թվականին, ապա այն տրվել է ըստ Մխիթար Այրիվանցու, որը, խոսելով իր ժողովրդի հետ Եգիպտոսից Մովսեսի հեռանալու ժամանակաշրջանի և դրան հաջորդող իրադարձությունների մասին, հայտնում է. «*Մովսեսից (հրեաների առաջնորդ Մովսեսից (մ.թ.ա. 1460-1410) – Մ.Հ.) հետո ... թագավորեց Հիսուսը (հրեաների առաջնորդ Հիսուս Նավինը (1410-1400) – Մ.Հ.) ...: Այս ժամանակ ապրեց Տորքը*»: Այսպիսով՝ այս իրադարձության թվականը տրվել է՝

Որպես հետևանք, չուշացավ նաև հայերի պատասխան հարվածը և ահա մ.թա. 1397 թվականին Հայայի արքա, Մարի-Անիի (մ.թ.ա. մոտ 1450-1410) որդի Կար-Անիի (մ.թ.ա. մոտ 1410 - ուղ. 1375) գլխավորած Հայայի ու Կիլիկիայի թագավորությունների, ինչպես նաև Կասկայի իշխանության միացյալ բանակը ասպատակեց Խեթական թագավորության արևելքը, հյուսիսը և հարավը[1]: Այս գործողությանը, սակայն, հաջող վերջաբան չէր վիճակված և շուտով Կատխարիայի ճ-մ-ում Թուդհալիս III-ի գլխավորած Խեթական թագավորության բանակը հաղթանակ տարավ ու ցրեց ներխուժած բանակը[2], որից հետո նույն տարում էլ հարվածեց Անդրեփրատյան Ծոփքին[3]: Արդյունքում՝ վճռական իրադարձությունները ծավալվեցին արդեն Հայայի մայրաքաղաք, Բարձր Հայք, Դարանաղի գավառում գտնվող Անի-Կեմախի պարիսպների տակ, երբ հայերը, կուտակելով առկա բոլոր ուժերը, վճռական մարտ տվեցին Թուդհալիս III-ի գլխավորած Խեթական թագավորության ռազմական մեքենային և ստիպեցին վերջինիս հեռանալ իրենց սահմաններից[4]: Այսպիսով՝ խեթերի դեմ պատերազմի հերթական փուլը էական առավելություն չտվեց կողմերից և ոչ մեկին, սակայն թշնամությունը պահպանվեց ու հենց դրա արդյունքում էր, որ մ.թ.ա. 1380 թվականին Կար-Անի արքայի գլխավորած Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը, օգտվելով նույն թվականին Թուդհալիս III-ի մահից հետո տեղում առաջացած խառնաշփոթից, Խեթական թագավորության բանակից գրավեց Հաթթուսասը, որից հետո, այրելով ու հիմնովին ավերելով այն, նահանջեց[5]:

Մ.թ.ա. 1380 թվականին որոշակիորեն սրվեց իրավիճակը նաև Հարավային Ասորիքում: Հենց այդ ժամանակ էր, որ Հարավային Ասորիքում Եգիպտական թագավորությանը ենթակա տեղական իշխան Աբդի-Աշիրտայի հրավերով Դամասկոս ժամանեց Միտանիի թագավորության օժանդակ բանակը (մոտ 10.000), որի արդյունքում զգալի տարածքներ առժամանակ ընկան Միտանիի թագավորության գերիշխանության տակ[6]: Դրանից հետո Միտանիի թագավորության բանակը, զարգացնելով հաջողությունը, ասպատակեց Պաղեստինը, սակայն, Եգիպտական թագավորության բանակի (մոտ 40.000) առաջխաղացման պայմաններում այնուհանդերձ խուսափելով պատերազմ հրահրելուց, ի վերջո նահանջեց ոչ միայն Պաղեստինից, այլև Դամասկոսից, երբ արդյունքում տարածաշրջանում որևէ էական փոփոխություն այդպես էլ տեղի չունեցավ[7]: Պաղեստինի ուղղությամբ իրավիճակը որոշակիորեն սրվեց նաև մ.թ.ա. 1370 թ-ին, երբ Միտանիի թագավորության բանակը (մոտ 10.000) ասպատակեց Պաղեստինը և նահանջեց, սակայն ուժերի առկա հավասարակշռության մեջ այս անգամ ևս փոփոխություն տեղի չունեցավ[8]:

Մ.թ.ա. XIV դարի կեսերին Մերձավոր Արևելքում քաղաքական իրադրությունը սկսեց աստիճանաբար փոխվել: Եգիպտական թագավորությունը, աննկատ ու դեռևս դանդաղորեն, սակայն աստիճանաբար զրկվում էր նախորդ հարյուրամյակում հարևան երկրներին ցնցող իր ռազմական հզորությունից և զիջում էր իր դիրքերը, ինչը հատկապես ակնառու դարձավ ներքին ռեֆորմներով տարված հերթական փարավոն Էխնաթոնի օրոք (մ.թ.ա. 1379-1334): Սրան հակառակ՝ նույն այս ժամանակ՝ ուժեղանում էր դիվանագիտական, քաղաքական և ռազմական ակնառու ունակություններով օժտված Սուպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1380-1325) կողմից ղեկավարվող Խեթական թագավորությունը,

---

հաշվի առնելով վերոշարադրյալը և իրադարձությունների զարգացման ընդհանուր ընթացքը:

[1] Թուդհալիս III-ին վերագրվող արձանագրությունից; Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Թուդհալիս III-ին վերագրվող արձանագրությունից:

[4] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

[5] Մուրսիլ II-ին վերագրվող աղոթք-արձանագրությունից:

[6] Ամոնհատեպ III-ին ուղղված Ռիբ-Ադդիի 85-րդ նամակից, որը գտնվել է Ամարնյան արխիվից; Ամոնհատեպ III-ին ուղղված 95-րդ նամակից, որը գտնվել է Ամարնյան արխիվից:

[7] Այս իրադարձության մասին հայտնում են հրեական աղբյուրները, որոնք տեղեկացնում են, որ հրեաների առաջնորդ Հիսուսը (մ.թ.ա. մոտ 1400-1373) պատերազմել է Հայաստանի արքա «Շավահ»-ի հետ: Այս կապակցությամբ ակնհայտ է, որ նկատի է ունեցվում Միտանիի թագավորության արքա Շավարշ II-ը (մ.թ.ա. մոտ 1410-1382), իսկ բուն իրադարձությունը կապված է դեպի Դամասկոս կազմակերպված արշավանքի հետ:

[8] Ամոնհատեպ III-ին ուղղված 101-րդ նամակից, որը գտնվել է Ամարնյան արխիվից:

որն այս արքայի երկարատև կառավարման տարիներին հասավ իր հզորության գագաթնակետին: Արդյունքում, արդյունավետ կերպով հօգուտ իրեն օգտագործելով սեփական երկրին բաժին հասած խաղաղ տասնամյակները, խեթական արքաներից այս ամենահզորն և հաջողակը Հաթթուսասի մոխիրների միջից նախապատրաստեց Խեթական թագավորության նոր հզորացումը:

Որպես հետևանք՝ մ.թ.ա. XIV դարի կեսերին և երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ, թեև Խեթական թագավորությունը մեծ հաշվով ամեն դեպքում չէր կարող հասնել Եգիպտական թագավորության ռազմաքաղաքական հզորությանը, բայց, ի հաշիվ ավելի լավ կազմակերպման և կառավարման, իսկ Եգիպտական թագավորության մոտ էլ՝ դրա հակառակ պատկերի առկայության, ինչպես նաև տեղական ուժերի մոտ Եգիպտական թագավորությունից առկա դժգոհ տրամադրությունների հմուտ օգտագործման, Սուպիլուլիումա I-ի թագավորությունը ի վիճակի դարձավ լրջորեն վիճարկել իր հարավային հարևանի քաղաքական առաջնությունը Մերձավոր Արևելքում ու հատկապես Ասորիքում: Այս առումով հետաքրքիր է նշել, որ, եթե երկաթյա Թութմոս III-ի օրոք Խեթական թագավորությունը ամեն կերպ խուսափում էր Եգիպտական թագավորության հետ ընդհարումից, ապա այժմ պաշտոնական Հաթթուսասը ավելի ագրեսիվ դիրք գրավեց և արդյունքում ընդհարումից աստիճանաբար, ընդ որում ավելի ու ավելի մեծացող չափով, սկսեցին խուսափել հենց Թեբեաում:

Միաժամանակ հարկ է նշել, որ նոր պայմաններում որոշակիորեն հօգուտ Խեթական թագավորության փոխվեց նաև ռազմական հավասարակշռության նախկինում քիչ թե շատ առկա ընդհանուր դրությունը, քանի որ վերջինս ինքնին ավելի մոտ էր գտնվում պատերազմական գործողությունների թատերաբեմին, իսկ հակառակորդն էլ լուրջ խնդիրներ ուներ ինչպես ուժերը կենտրոնացնելու, այնպես էլ տեղական իշխանությունների դեմ հետագա պայքար մղելու հարցերում: Այսպիսով, սկսած հենց այս ժամանակից էլ, աստիճանաբար սեփական վերելքի ուղուն վերադարձող Խեթական թագավորությունը մոտ մեկ դար շարունակ կրկին սկսեց կյանքի կոչել աշխարհաքաղաքական այն նույն դերակատարությունը, որը վիճակված էր նրան և որն այս կամ այն չափով փորձելու էին կյանքի կոչել նույն դիրքում հետագայում հայտնված հռոմեական ու բյուզանդական կայսրերը, Իկոնիայի և Օսմանյան սուլթանները ու նույնիսկ ներկայումս գործող Ռեջեբ Թայիպ Էրդողանը՝ առաջանալ դեպի արևելք և տիրել Հայկական լեռնաշխարհի ու Հյուսիսային Ասորիքի հնարավորինս լայն մասին:

Քննարկվող ժամանակահատվածում Միտանիի թագավորության գահին բազմած էր Տուշրատան (մ.թ.ա. մոտ 1380 - ուղ. 1326), որը, գահից հեռացնելով եղբորը՝ Արտաշեսին (մ.թ.ա. մոտ 1382-1380), արժանի հետնորդ հանդիսացավ իր հայր Շավարշ II-ին (մ.թ.ա. մոտ 1410-1382) և իր պապ Արտակ I-ին: Տուշրատան հզոր ու ռազմունակ մի արքա էր, որը իր գահակալման շրջանում կարողացավ արժանի դիմադրություն կազմակերպել խեթական վտանգին և տարածաշրջանի օրըստօրե բարդացող միջազգային իրավիճակում պահպանել սեփական երկրի ուժն ու հզորությունը: Մ.թ.ա. 1355 թվականին, սակայն, Տուշրատայի դեմ ապստամբեց նրա եղբայր Արտակը, որն օգնության համար դիմեց Սուպիլուլիումա I-ին: Սրանով Միտանիի թագավորության համար ներքաղաքական պայքարի և ճգնաժամի մի կործանարար դուռ բացվեց, որն իր հետ անցյալ էր տանելու նաև այս թագավորության ռազմաքաղաքական հզորությունը: Այսպես թե այնպես, սակայն Տուշրատան, հենց սկզբից էլ գործելով ամենայն վճռականությամբ, ելավ Արտակի և նրա հետ միասին թագավորության տարածք մտած Խեթական թագավորության միացյալ բանակի դեմ ու ծանր պարտության մատնեց վերջինիս[1]: Արդյունքում՝ Արտակին այլ բան չէր մնում անել, քան իր բանակի

[1] Սուպիլուլիումա I-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից; Սուպիլուլիումա I-ի և Սանասար միջև կնքված պայմանագրից; Ամոնհատեպ III-ին ուղղված Թուշրատտայի 17-րդ նամակից, որը գտնվել է Ամարնյան արխիվից:

մնացորդներով ապաստանել խեթերի մոտ, մանավանդ որ Սուպիլուլիումա Ի-ն ինքն էլ այստեղ արդեն լիովին պատրաստ էր ակտիվ գործողությունների:

Մ.թ.ա. 1350 թվականին Սուպիլուլիումա Ի-ի գլխավորած Խեթական թագավորության բանակը Հայայի թագավորության բանակից գրավեց Անդրեփրատյան Ծոփքի տարածքը՝ սպառնալից իրավիճակ ստեղծելով, այդ թվում նաև Միտանիի թագավորության համար[1]: Տուշրատան ոչ մի կերպ չէր կարող աչքաթող անել այդ հանգամանքը և արդյունքում ռազմունակ այս տիրակալը, ոտքի հանելով սեփական ընտիր մարիաներին, մ.թ.ա. 1349 թվականին Հայայի թագավորության հետ միասին իր հերթին ներխուժում իրականացրեց Անդրեփրատյան Ծոփքի տարածք՝ մաքրելով այն խեթերից[2]: Հիշատակված տարածքները, սակայն, հայերը հետագայում կարողացան իրենց ձեռքում պահել ընդամենը միայն 4 տարի, քանզի մ.թ.ա. 1345 թվականին Սուպիլուլիումա Ի-ը, հերթական անգամ գործի դնելով Խեթական թագավորության բանակի խոշոր ուժեր, կրկին ռազմակալեց դրանք, ընդ որում տեղի Մելիտեի իշխանությունն անցավ Խեթական թագավորությանը, իսկ Հայայի թագավորությունն էլ ընդունեց պաշտոնական Հաթթուսասի գերիշխանությունը[3]: Անդրեփրատյան Ծոփքի կորուստը ռազմաքաղաքական մի ծանր հարված էր Տուշրատային, սակայն բանը չսահմանափակվեց միայն դրանով:

Մ.թ.ա. 1345 թվականին Սուպիլուլիումա Ի-ի գլխավորությամբ Եփրատի Մելաս վտակ (= Արևմտյան Եփրատ) -Եփրատի հուն երթուղով արշաված Խեթական (մոտ 60.000) և Կիլիկիայի (100 մարտակառք, 1.000 հեծյալ, 1.000 հետևակ) թագավորությունների միացյալ բանակը Տուշրատա արքայի գլխավորությամբ քաղաքից նահանջած Միտանիի թագավորության բանակի վերջապահից (մոտ 1.000) գրավեց Ոսկե-Անի մայրաքաղաքը (Ուռհայից 150 կմ արևելք), սակայն, չկարողանալով գրավել միջնաբերդը, նահանջեց[4]: Հարվածն իրոք հզոր էր, սակայն, բարեբախտաբար, թեթև չէր նաև սեփական մատակարարման բազաներից հեռացած և հարվածի տակ գտնվող հաղորդակցման ուղիներ ունեցող հակառակորդի բանակի վիճակը, որը ի վերջո նահանջեց: Տուշրատայի օգտին, սակայն, նույն այս ժամանակ եղավ նաև մեկ այլ հանգամանք:

Իրոք, Սուպիլուլիումա Ի-ը, ցանկանալով մեկ և հզոր հարվածով տապալել Տուշրատային, Միտանիի թագավորության դեմ արշավանքի էր հանել իր տերության գրեթե բոլոր ուժերը: Արդյունքում՝ Ոսկե-Անիից զատ խեթերի տիրակալը գրավեց նաև Հյուսիսային Ասորիքում գտնվող և Տուշրատային դաշնակից Արախտուն, Կատնուն, Նիյը ու Նուխաշեն[5], իսկ կարճ ժամանակ անց էլ Կադեշի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում հաղթեց Հալեպի իշխանության և Միտանիի թագավորության դաշնակից ուժերին[6] ու գրավեց Ապսուան (Հյուսիսային Ասորիք)[7], սակայն այս շեղումներում էլ հենց վերջինս, ըստ էության, բացեց օպերատիվ հարվածի ուղղությունը դեպի սեփական գործող բանակի թիկունք:

Որպես հետևանք, մինչ խեթերի արքան մեկ ձեռքով մարտնչում էր Միտանիի թագավորության տարածքում և հասել էր վերջինիս մայրաքաղաքին, իսկ մյուս ձեռքով էլ իր տիրապետությունն էր հաստատում Հյուսիսային Ասորիքում, Հայայի թագավորության նոր արքա Անա-Անիի (մ.թ.ա. 1345-1316) գլխավորած Հայայի թագավորության բանակը մտավ ուղիղ խեթական տիրույթների սիրտը կազմող տարածքներ և ոտնատակ տվեց դրանք[8]: Արդյունքը լիովին սպասելի էր, քանզի ինչպես Հյուսիսային Ասորիք, այնպես էլ

---

[1] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված նախնական պայմանագրից; Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից:
[2] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված նախնական պայմանագրից; Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից; Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից:
[4] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից; Էխնաթոնին ուղղված Բիբլոսի արքա Ռիբ-Ադդիի 75-րդ նամակից, որը գտնվել է Ամարնյան արխիվից:
[5] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից:
[6] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից:
[7] Սուպիլուլիումա Ի-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից:
[8] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

Միտանի ներխուժած Խեթական թագավորության բանակը, այդպես էլ չամրապնդվելով տեղում, ի վերջո ստիպված եղավ նահանջել՝ նահանջի հարկադրելով նաև Անա-Անիին: Արյունոտ տարին ավարտվեց և արդյունքները որոշակիորեն հակասական էին:

Իրոք, թեև մի կողմից Հալեպի թագավորությունը կործանվեց, իսկ Կիլիկիայի թագավորությունն էլ ամուր կերպով ընդունեց Խեթական թագավորության գերիշխանությունը, երբ այստեղ սկսեց իշխել Սուպիլուլիումա I-ի որդի Տելեպինուն (մ.թ.ա. մոտ 1345-1325), բայց մյուս կողմից էլ ոչ մի կերպ ամուր համարվել չէր կարող նաև Սուպիլուլիումա I-ի իշխանությունը Հյուսիսայի Ասորիքում և հարակից երկրներում: Իր հերթին, սակայն, ամենևին էլ թեթև չէր նաև Միտանիի թագավորության դրությունը, որի թուլացման պայմաններում երկարատև հարյուրամյակների ընդմիջումից հետո ի վերջո իր մասին հայտարարեց նաև կրկին գլուխ բարձրացնող սեմիտական տարրն, ի դեմս Ասորեստանի թագավորության:

Իրոք, ինչպես արդեն նշվեց, վերջին դար ու կեսում պաշտոնական Ասուրն իրեն անչափ զգույշ, կարելի է ասել նույնիսկ աննկատ էր պահել, որևէ կերպ չցանկանալով զայրացնել հայերին և, հատկապես, հզոր Միտանիի թագավորությանը, սակայն այժմ, երբ Տուշրատայի թագավորությունը ծանր հարվածներ էր ստացել, ոտքի ելավ նաև Ասուրուբալիտ I-ի (մ.թ.ա. 1365-1330) գլխավորած Ասորեստանի թագավորությունը՝ մեջտեղ բերելով սեփական հավակնությունները: Սկիզբ էր առնում սեմիտական առաջխաղացման հերթական խոշոր ալիքներից մեկը, որը դեռ երկար էր փոթորկելու Հայկական լեռնաշխարհը՝ այլ հետևանքների թվում անհայտության խավարից դուրս բերելով նաև վերջին հարյուրամյակներում, կարծես թե, խորը թմբիրի մեջ գտնվող Արծրունիների Արարատյան թագավորությանը:

Այս առումով հարկ է նշել, որ սեմիտական աշխարհի ուժեղացման մեջ ընդհանրապես և Ասորեստանի թագավորության հերթական վերելքի գործում, մասնավորապես մեծ դեր ունեցավ ամենից առաջ հենց կլիմայական գործոնը, երբ վերջին հարյուրամյակներում երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակվող բարձրացումը Արաբական թերակղզուց անվերջ կերպով դուրս էր մղում սեմիտների մարդկային նորանոր խմբեր, որոնք էլ իրենց հերթին ամենից առաջ հաստատվում էին ավելի թույլ դիմադրող Ասորիքում ու Հյուսիսային Միջագետքում՝ վարվելով այնպես, ինչպես մի ժամանակ վարվել էին ամորիացիները, իսկ դրանից առաջ էլ՝ հետագայում աքքադցի կոչվածները: Գործընթացը սկիզբ էր առել դեռևս մ.թ.ա. XVIII դարի առաջին կեսից, սակայն այդ ժամանակ Հայոց թագավորության ռազմական հզոր մեքենան սեմիտներին որևէ հնարավորություն չէր թողել և առավելագույնը, որին նրանք հասել էին, դա պաշտոնական Արմավիրի համաձայնությամբ Ասորիքում ու Հայոց Միջագետքում հաստատվելն էր: Հենց այս ժամանակաշրջանից էր, ի դեպ, որ նույն Հայոց Միջագետքը տեղական աղբյուրներում սկսվեց կոչվել «Արամ Նախարաիմ»՝ նկատի ունենալով Արամ I Մեծի մեծահոգությունը և սրանով փաստորեն պատվելով Հայոց տիրակալին: Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը պետք է մի պահ ևս կանգ առնել և անդրադարձ կատարելի «արամեացիների հիմնախնդրին»:

Հարցը կայանում է նրանում, որ Հյուսիսային Ասորիքում և Հայոց Միջագետքում հաստատված սեմիտական տարրը, ի տարբերություն Հյուսիսային Միջագետքում հաստատված յուրայինների, աստիճանաբար ստացավ «արամեացիներ» անվանումը: Այս առումով պատահական չէ նաև այն հանգամանքը, որ Հին Կտակարանում Սեմի որդիների մեջ հիշատակվում է նաև Արամը, որը հռչակվում է որպես արամեացիների նախնի: Իհարկե, հնդեվրոպական արմատներ ունեցող ոչ հայերը և ոչ էլ Արամ I Մեծը բնականաբար սեմիտներ չէին ու չեն էլ կարող համարվել «Սեմի որդի», սակայն, որպես արամեացիների նախնի, Արամ I Մեծի հիշատակումն ինքնին լիովին արտացոլում է պատմական իրականությունը, իսկ Սուրբ գիրքն էլ, փաստորեն, պահպանել է պատմական հստակ իրողության խուլ մի արտահայտությունը՝ խոսքը վերաբերում է սեմիտական զանգվածի հաստատմանը Հյուսիսային Ասորիքում և Հայոց Միջագետքի

տարածքում, մի զանգված, որը հետագայում ստացավ «արամեացի» անունը: Եվ վերջապես արամեացիների հայտնվելով պայմանավորված Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական իրադրության վերջնական պարզաբանման համար հարկ է նշել, որ, չնայած սեփական սեմիտական բնույթին, արամեացիները իրենց, որպես կանոն, հստակորեն հակադրում էին Ասորեստանի թագավորությանը, իսկ այս հողի վրա էլ հաճախ դաշնակցում էին հայերի հետ: Ավելին, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում փաստորեն արդեն իսկ ստեղծվել էր մի իրավիճակ, երբ հայերի համաձայնությամբ Հայկական լեռնաշխարհի հարավում հաստատված արամեացիները սկսեցին զգալի թիվ կազմել, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, հայկական պետական միավորները փորձում էին այդ ճանապարհով իրենց և պաշտոնական Ասուրի միջև որպես պատնեշ ունենալ զգալի մարտունակությամբ աչքի ընկնող նույն այս արամեացիներին:

Մ.թ.ա. մոտ 1335 թվականին Ասուրուբալիտ I-ի բանակը արշավի ելավ, ասպատակեց Արարատյան թագավորության իշխանության ներքո գտնվող Մահկերտ տուն գավառի ու Կորճայքի տարածքը և նահանջեց[1]: Ասորեստանի փառասեր արքան, սակայն, միայն դրանով չէր, որ սահմանափակվելու, քանզի լեռներում մղվող բարդ ռազմագործողություններից զատ վերջինս պատերազմ սկսեց նաև հարթավայրում՝ արդեն Միտանիի թագավորության հետաքրքրությունների ոլորտում:

Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 1333 թվականին Ասուրուբալիտ I-ը հարձակվեց Միտանիի դաշնակից կամ ենթակա Արապխա քաղաքի վրա և Հյուսիսայի Միջագետքում տեղի ունեցած Տուրշայի ճ-մ-ում պարտության մատնեց տեղացիների ու Միտանիի թագավորության միացյալ բանակին[2]: Մ.թ.ա. մոտ 1332 թվականին հաջողությունը կրկին պաշտոնական Ասուրի կողմում էր, որն այս անգամ հաղթանակ տարավ Հյուսիսայի Միջագետքում գտնվող Զիզայի ճ-մ-ում[3], նույն արդյունքին հասավ նաև մեկ տարի անց՝ մ.թ.ա. մոտ 1331 թվականին տեղի ունեցած Սիլիայի ճ-մ-ում[4], իսկ հաղթական շարքն էլ վերջացրեց մ.թ.ա. 1330 թվականի Տուրշայի մոտ տեղի ունեցած հերթական ճակատամարտով[5]: Տուշրատայի վիճակը գնալով ծանրանում էր, մանավանդ այն բանի ֆոնին, որ վերջին անհաջողություններից հետ իրենց նվաճողական նկրտումները կրկին մեջտեղ բերեցին նաև խեթերը և որևէ հնարավորություն չկար շեղել սեփական թագավորության հարվածային ուժերը արևելյան ուղղությամբ: Այսպիսով՝ Միտանիի թագավորությունը, հայտնվելով Խեթական և Ասորեստանի թագավորությունների մեջտեղում, հառնեց երկճակատ պատերազմի անհրաժեշտության առջև, որը, բարդացնելով առանց այդ էլ բարդ իրավիճակը, բացառիկորեն ծանր մի դրություն ստեղծեց:

Մ.թ.ա. 1328 թվականին Արնուվանդա արքայազնի և Ցիդաս զորավարի գլխավորությամբ Եփրատի հովտով դեպի հարավ առաջխաղացած Խեթական թագավորության բանակը Կարքեմիշի մոտ գտնվող Մարմուրիգայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթեց այս քաղաքը տեղական 600 հոգանոց կայազորից պաշարած Թակհուլիաս զորավարի գլխավորած Միտանիի թագավորության բանակին, որից հետո պաշարեց ու գրավեց նաև Կարքեմիշը[6]: Նույն այս ժամանակ Հայաստանի բզկտումը շարունակվում էր նաև մյուս կողմից, քանզի մ.թ.ա. նույն 1328 թվականին Ասուրուբալիտ I-ին նրա մահից հետո հաջորդած Էլիլներարի արքայի (մ.թ.ա. 1329-1320) գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը հերթական անգամ ասպատակեց Մահկերտ

[1] Ադադնիրարի I-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Այս ճակատամարտի մասին հայտնի է Նիսյան արխիվում գտնված արձանագրություններից մեկից, որը այն վերագրում է Ասուրուբալիտ I-ի թագավորության վերջին շրջանին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:
[3] Այս ճակատամարտի մասին հայտնի է Նիսյան արխիվում գտնված արձանագրություններից մեկից, որը այն վերագրում է Ասուրուբալիտ I-ի թագավորության վերջին շրջանին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:
[4] Այս ճակատամարտի մասին հայտնի է Նիսյան արխիվում գտնված արձանագրություններից մեկից, որը այն վերագրում է Ասուրուբալիտ I-ի թագավորության վերջին շրջանին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:
[5] Այս ճակատամարտի մասին հայտնի է Նիսյան արխիվում գտնված արձանագրություններից մեկից, որը այն վերագրում է Ասուրուբալիտ I-ի թագավորության վերջին շրջանին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:
[6] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

տուն գավառը ու Կորճայքի տարածքը և նահանջեց[1]: Այս պայմաններում հայերի և Միտանիի թագավորության համարը լավը, թերևս, միայն այն եղավ, որ մ.թ.ա. 1328 թվականին Հայայի թագավորության բանակը հարձակում գործեց Խեթական թագավորության վրա և նահանջեց՝ այնուհանդերձ ստիպելով Սուպիլուլիումա I-ի գլխավորությամբ Միտանիի թագավորության տարածք ներխուժել պատրաստվող Խեթական թագավորության հիմնական բանակին գալ իր դեմ և հրաժարվել Տուշրատային հարվածելու մտադրությունից[2]: Արդյունքում՝ իրավիճակը, թվում էր, թե, Տուշրատայի համար մի պահ կայունացավ, սակայն այս անգամ էլ Հայոց ուշագրավ այս թագավորությունը պայթեց արդեն ներսից:

Իրոք մ.թ.ա. 1326 թվականին Տուշրատայի որդի Սատոնը սպանեց հորը, որից հետո գահ բարձրացավ հանգուցյալի եղբայրը և Սատոնի հորեղբայրը՝ քաղաքական վտարանդիությունից վերադարձած Արտակը՝ Արտակ II-ը (մ.թ.ա.1326-1325): Վերջինս, սակայն, կարճ ժամանակ անց մահացավ և նրան հաջորդեց որդին՝ Շավարշ III-ը (մ.թ.ա. 1325): Սատոնը, սակայն, որ բնականաբար դժգոհ մնաց այս ամենից, ընդամենը 3 մարտակառքերով ու երկու ուղեկիցների հետ միասին դիմեց փախուստի և, ինչպես մի ժամանակ վարվել էր Արտակը, ապաստանեց խեթերի մոտ: Այս պայմաններում Սուպիլուլիումա I-ը, որն ինքն էլ արդեն մահվան շեմին էր, հարմար առիթ գտավ ի վերջո գերիշխանության հասնել Միտանիի թագավորության հետ հարաբերություններում:

Արդյունքում՝ մ.թ.ա. 1325 թվականի գարնանը Իրիդիի ճ-մ-ում (Կարքեմիշի և Խառանի միջև) Պիյալիս, Մուրսիլ և Սատոն արքայազնների գլխավորությամբ առաջխաղացած Խեթական թագավորության բանակը (մոտ 20.000) հաղթեց Շավարշ III-ի գլխավորությամբ քաղաքին մոտեցած Միտանիի թագավորության բանակին (մոտ 15.000): Դրանից հետո հաջողությունը զարգացված Խեթական թագավորության բանակը, օգտվելով քաղաքի բնակչության աջակցությունից, մտավ Շավարշ III-ի ուժերի կողմից լքված Ոսկե-Անի՝ դեմ ելնելով արևելքից առաջխաղացած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 10.000): Արդյունքում՝ Խեթական թագավորության բանակը, այրելով Ոսկե-Անին, ամրացավ Պագարրիբա քաղաքում ու նրա շրջակայքում (Ուռհայից մոտ 150 կմ արևելք), իսկ քաղաքին մոտեցած Ասորեստանի թագավորության բանակն էլ իր հերթին, պարենի լուրջ պակաս ունենալով, ի վերջո նահանջեց և հեռացավ Միտանիի թագավորության տարածքից: Սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում Միտանիի թագավորության արքա հռչակվեց պաշտոնական Հաթթուսասի գերիշխանությունն ընդունած Սատոնը (մ.թ.ա. 1325-1298), թագավորության տարածքի հիմնական մասն ընկավ վերջինիս տիրապետության տակ, սակայն արևելյան որոշ տարածքներ էլ անցան ավարի իր բաժինը վերցրած Ասորեստանի թագավորությանը[3]:

Միտանիի թագավորության հարցերը լուծելուց հետո իր կյանքի ամենավերջում Սուպիլուլիումա I-ը հարված հասցրեց Հայային, սակայն մ.թ.ա. 1325 թվականի ամռանը տեղի ունեցած Կանուվարայի ճ-մ-ում Անա-Անի արքայի գլխավորած Հայայի թագավորության բանակը հաղթեց Նուվանցասի գլխավորությամբ առաջխաղացած Խեթական թագավորության բանակին և հետ շպրտեց[4]: Հայերի դեմ պատերազմի հետագա վարումը վիճակված էր արդեն Խեթական թագավորության նոր արքա Մուրսիլ II -ին (1325-1295), որը մ.թ.ա. 1325 թվականի վերջին Սուպիլուլիումա I-ի մահից հետո հաջորդեց հորը և մեծ հաշվով արժանի եղավ նրան, թեև կային նաև տարբերություններ:

Իրոք, եթե Սուպիլուլիումա I-ը ողջ կյանքը անցկացրել էր ռազմաքաղաքական ամենատարբեր միջոցառումների մեջ և, դատելով ըստ ամենայնի, գիր-գրականության ու գիտության հետ այնքան էլ սեր չուներ, ապա նրա որդի Մուրսիլ II-ը, թերևս, ամենակրթվածն էր խեթական արքաների ոչ կարճ արքայացանկում: Այսպիսով, այն

[1] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից; Ասորա-բաբելոնական զուգահեռ ժամանակագրություն-արձանագրությունից:
[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սուպիլուլիումա I-ի և Սատոնի միջև կնքված նախնական պայմանագրից; Սուպիլուլիումա I-ի և Սատոնի միջև կնքված վերջնական պայմանագրից; Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

բանից հետո, երբ, իհարկե, ըստ պաշտոնական վարկածի, Մուրսիլի ավագ եղբայր Պիյալիսը զոհ գնաց քննարկվող ժամանակահատվածում Խեթական թագավորություն սկիզբ առած ժանտախտի մեծամասշտաբ համաճարակին, գահն անցավ բավականին բարեկիրթ Մուրսիլ II-ին:

Մ.թ.ա. 1325 թվականի սեպտեմբերին խեթական նորընծա արքայի գլխավորած Խեթական թագավորության խոշոր բանակը մտավ շարժի մեջ և, ասպատակելով Անդրեփրատյան Ծոփքն ու Փոքր Հայքը, նահանջեց[1]: Մուրսիլ II-ը, սակայն, չէր պատրաստվում ցրել բանակը և նույն տարվա հոկտեմբերից մինչև նոյեմբեր հարվածն ուղղեց արդեն Կիլիկիայի վրա՝ իր եղբայր, ապստամբած և մինչ այդ Կիլիկիայում տիրող Տելեպինու քրմի գլխավորությամբ անկանոն հարվածներ հասցնող Կիլիկիայի թագավորության բանակից գրավելով Իյախրեսը, Պիգաինարեսան, Թարկուման, Թափթինեն, Հարսուման, Պիկուրցին ու Խապկիսսուն (Կիլիկիայի արևելք)[2]: Արդյունքում՝ Տելեպինուի գործը տապալվեց և Կիլիկիայի թագավորությունը ստիպված կրկին ընդունեց Խեթական թագավորության գերիշխանությունը, իսկ տեղում էլ սկսեց իշխել Պենտիսիլասը (մ.թ.ա. մոտ 1325-1260):

Մ.թ.ա. 1324 թվականի գարնանը, շարունակելով մարտական գործողությունները հայերից, ըստ էության, իրեն որպես միակ հակառակորդ մնացած Հայայի դեմ, Մուրսիլ II-ի գլխավորությամբ առաջխաղացած և Անա-Անի արքայի գլխավորած Հայայի թագավորության բանակի անկանոն հարվածների ենթարկվող Խեթական թագավորության բանակը այնուհանդերձ գրավեց Փոքր Հայքում գտնվող Դուկկաման, ինչպես նաև Բարձր Հայքի Եկեղյաց գավառում, Եփրատ գետի աջ ափին գտնվող հայտնի Երզնկա քաղաքը[3]: Շուտով, սակայն, Խալիմունա քաղաքի առաջնորդ Մութթուի միջնորդությամբ հաշտություն կնքվեց, Մուրսիլ II-ին վերադարձվեցին 1.000 գերիներ և թշնամու բանակը նահանջեց: Կնքվեց զինադադար, համաձայն որի Հայան պարտավորվեց 3.000 ռազմիկներից կազմված օժանդակ ջոկատով մասնակցել Խեթական թագավորության բանակի արշավանքներին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Հայայի թագավորության դեմ պատերազմը ծանր էր նստում ժանտախտի աստիճանաբար ուժեղացող չափերով տարածվող համաճարակի հետևանքով առանց այդ էլ մարդկային ծանր կորուստներ կրող նաև Մուրսիլ II-ի թագավորության վրա, դե իսկ հայերի ակտիվ դիմադրությունն էլ իր հերթին ամենևին չէր մեծացնում լավատեսությունը մղվող պատերազմի հաջող հեռանկարների կապակցությամբ: Այսպես թե այնպես, սակայն գոնե ձևականորեն կնքվեց մի հաշտություն և գոնե ձևականորեն պատերազմին վերջ տրվեց, թեև, իրապես ասած, պատերազմն այդպես էլ չդադարեց, քանի որ կնքված հաշտությունից կարճ ժամանակ անց Հայայի թագավորության 3.000 հոգանոց օժանդակ զորաբանակը, այդպես էլ չմասնակցելով որևէ մարտական գործողության, վերադարձավ Հայրենիք, իսկ Հայայի թագավորությունն էլ սկսեց պաշտոնական Հաթթուսասի դեմ միջնորդավորված պատերազմ վարել իրեն ենթակա Կասկայի իշխանության ձեռքով: Այս պայքարն իր հերթին տևեց բավականին երկար՝ ըստ էության, կազմելով Մուրսիլ II-ի թագավորության հիմնական ռազմաքաղաքական բովանդակությունը:

Մ.թ.ա. 1324 թվականի ամռանը Կասկայի իշխանության իշխան Պիխու-Անիի գլխավորած Հայայի թագավորության ու Կասկայի իշխանության միացյալ բանակը ասպատակեց Մուրսիլ II-ի տիրույթները և նահանջեց[4]: Խեթերը, պարտադրված լինելով պատասխան ձեռնարկել, կարճ ժամանակ անց Դուրմիտտայի ճ-մ-ում հաղթանակ տարան և, Պիխու-Անիից ստանալով հպատակության ձևական երաշխիքներ, նահանջեցին[5], սակայն մ.թ.ա. նույն 1324 թվականի աշնանը Պիխու-Անին կրկին հարված

[1] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրություններից:
[4] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

հասցրեց[1]:

Հետագա երկու տարվա վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն չկա, սակայն, դատելով ըստ ամենայնի, Պիխու-Անին ոչ մի կերպ չէր դադարեցնում իր ակտիվությունը և ահա մ.թ.ա. 1321 թվականին Մուրսիլ II-ը ստիպված եղավ կրկին գործել իր հիմնական ուժերով: Արդյունքում՝ Հումմեսենայի ճ-մ-ում (Փոքր Հայքի հյուսիս-արևմուտք) խեթերը, ըստ իրենց հաղորդումների, հաղթանակ տարան և Պիխու-Անիից կրկին հպատակության երաշխիքներ ստացան, թեև այն մասին, թե ինչ արժեին դրանք, վկայում է թեկուզ հենց միայն այն հանգամանքը, որ մարտական գործողությունները դրանից հետո շարունակվեցին նույն չթուլացող թափով[2]: Արդյունքում, ստիպված լինելով հերթական անգամ գործել, մ.թ.ա. 1320 թվականին Մուրսիլ II-ը կրկին հաղթանակ տարավ Հումմեսենայի մոտ տեղի ունեցած նոր ճակատամարտում և կրկին, ինչպես անցած տարի, Պիխու-Անիից հպատակության ձևական երաշխիքներ ստանալուց հետո նահանջեց[3]:

Մ.թ.ա. 1319 թվականին խեթերը, հերթական անգամ ըստ իրենց խոսքերի, իհարկե, ևս մեկ հաղթանակ տարան Կաթիադուվայի ճ-մ-ում (Փոքր Հայքի հյուսիս-արևմուտք)[4], սակայն այն մասին, թե իրականում ինչ արժեր դա, կրկին վկայում է հենց թեկուզ միայն այն հանգամանքը, որ հենց նույն տարում էլ Անա-Անի արքայի գլխավորած Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը Խեթական թագավորության բանակից գրավեց Արիննան (Հալիս գետի աջ ափին, Սև ծովի ափից մոտ 100 կմ հարավ) ու Անկուվան (Տուզ լճից մոտ 150 կմ հյուսիս-արևելք) և, ասպատակելով շրջակայքը, նահանջեց[5]: Փաստորեն իրենց արևելյան հարևանների դեմ մղվող պատերազմը, որը, թվում էր, թե հեշտ է լինելու և սկզբնական տարիներին խեթերի կողմից վարվում էր ինքնավստահ, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ որոշակիորեն իմիջիայլոց տեսքով, աստիճանաբար միանգամայն լուրջ ընթացք ստացավ:

Արդյունքում՝ Մուրսիլ II-ը, կրկին ստիպված լինելով կտրվել իր սրտին այնքան հաճելի մտավոր աշխատանքից, ստիպված եղավ իրար բերել սեփական թագավորության ռազմական միջոցները և ուժերի լուրջ լարման հաշվին պայքարի մեջ մտնել ոչ միայն Հայայի ու Կասկայի, այլ նաև մինչ այդ ռազմաքաղաքական ամեն տեսակի ակտիվությունից զերծ մնացած Արմենիի թագավորության դեմ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Մուրսիլ II-ը նախատեսել էր համակցված հարված հասցնել երկու ուղղություններով՝ հյուսիսային ուղղությամբ հարվածել Հայայի թագավորությանն և Կասկայի իշխանությանը, իսկ հարավային ուղղությամբ էլ՝ Արմենիի թագավորությանը: Եվ այսպես, փորձելով կյանքի կոչել իր ռազմավարական մտահղացումը, մ.թ.ա. 1318 թվականին Խեթական թագավորության բանակը, կարելի է կարծել ուժերը հարաբերակցությունը պարզելու նպատակով, պաշարեց Արմենիի թագավորության կենտրոն հանդիսացող Արմե ամրոցը (Տուրուբերան, Տարոն գավառ), սակայն, չկարողանալով գրավել այն Արմենիի և Հայայի թագավորությունների միացյալ բանակից, նահանջեց՝ հիմնական հարվածը թողնելով մյուս տարվան[6]:

Մ.թ.ա. 1317 թվականին, կրկին Մուրսիլ II-ն ինքը, անձամբ ղեկավարելով հյուսիսային ուղղությունը, խոշոր բանակի գլուխն անցած Կամմամայի ճ-մ-ում (Փոքր Հայքի հյուսիս-արևմուտք) հաղթեց Պիխու-Անիի գլխավորած Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակին, որից հետո գրավեց Պալխուսիան (Փոքր Հայքի հյուսիս-արևմուտք)[7]: Այսպիսով՝ հյուսիսային ուղղությամբ, կարծես թե, լուրջ հաջողություն ձեռք բերվեց, սակայն հարավային ուղղությամբ հաջողությունն այնուհանդերձ հենց հայերի կողմում էր, քանզի Արմե ամրոցի ճ-մ-ում Արմենիի

[1] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրություններից:
[6] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրություններից:
[7] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

թագավորության բանակը հաղթանակ տարավ Նուվանցաս զորավարի գլխավորած Խեթական թագավորության 10.000 հոգանոց բանակի նկատմամբ և հետ շպրտեց վերջինիս[1]: Արդյունքում՝ հյուսիսում կրկնվեց հին պատմությունը՝ Պիխու-Անին հպատակություն հայտնեց, սակայն հետո, կրկին անցնելով ակտիվ գործողությունների, մ.թ.ա. նույն 1317 թվականին Կամմամայի ճ-մ-ում իր հերթին հաղթանակ տարավ Պազզաննաս ու Նունուտաս զորավարների գլխավորած Խեթական թագավորության բանակի նկատմամբ[2]:

Մ.թ.ա. 1316 թվականին Անա-Անի արքայի գլխավորած Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը Խեթական թագավորության դաշտային բանակի նկատմամբ խոշոր հաղթանակ տարավ Կանուվարայի ճ-մ-ում: Սա իրոք կարևորագույն մի հաջողություն էր հայերի համար, քանզի փաստորեն վերջնականապես ձևավորվեց ուժերի հավասարակշռության վիճակ մի կողմից հայերի, իսկ մյուս կողմից էլ խեթերի միջև, երբ պաշտոնական Հաթթուսասը այդուհետ հրաժարվեց հայերի և կասկերի նկատմամբ իր կողմից վարվող մեծապետական քաղաքականությունից, իսկ վերջիններս էլ ապագայում սկսեցին իրենց համեմատականորեն ավելի հանգիստ պահել: Իհարկե, մանր ընդհարումները լինելու էին դեռ երկար, սակայն ուժերի հիմնական այս դասավորվածությունը հետագա ավելի քան մեկ դարում այդպես էլ անփոփոխ մնաց: Իրոք, թեև մ.թ.ա. 1307 թվականին Մուրսիլ II-ի գլխավորած Խեթական թագավորության բանակը Հայայի թագավորության բանակից գրավեց Փոքր Հայքի հյուսիս-արևմուտքում գտնվող Թարիկարիմուն[3], իսկ մ.թ.ա. 1302[4] և 1300[5] թվականներին էլ հարձակումներ գործեց Փոքր Հայքի տարածքի վրա, սակայն ուժերի հարաբերակցության որևէ փոփոխության այդ ամենն այդուհանդերձ չբերեց:

Գլուխ 6
Հայ-խեթական մրցակցության ավարտը

Սկսած մ.թ.ա. XIV դարի վերջից Խեթական թագավորությունը սկսեց աստիճանաբար դեպի անկում թեքվել: Այս պայմաններում տարածաշրջանում սկսեց ավելի ու ավելի բարձր հնչել Ասորեստանի ոտքի կանգնող թագավորության ձայնը, որը սկսում էր սպառնալ նույնիսկ պաշտոնական Հաթթուսասին:

Մ.թ.ա. 1307 թվականին Արիկդենիլի արքայի (մ.թ.ա. 1319-1307) գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը ոտնատակ տվեց Կորճայքի տարածքը[6], իսկ մ.թ.ա. 1290 թվականին էլ արդեն նոր արքա Ադադնիրարի I-ը (մ.թ.ա. 1307-1274), անցնելով իր նախնու հետքերով, զգալի հաջողության հասավ անկանոն հարվածների հասցնող Արմենիի, Արարատյան և Միտանիի թագավորությունների միացյալ բանակի նկատմամբ՝ կրկին հարված հասցնելով Կորճայքին[7]: Ասորեստանի թագավորությունը գնալով ուժեղանում էր և շուտով զգալի գործոն էր դառնալու:

Մ.թ.ա. 1295 թվականին Մուրսիլ II-ը մահացավ, որից հետո Խեթական թագավորության գահին նրան հաջորդեց իր որդի Մուվաթալիս II-ը (մ.թ.ա. 1295-1274): Նոր արքան անմիջապես էլ, դեռևս չլուծած առկա խնդիրները սեփական սահմանների ներսում, որոնց մեջ ամենածանրը ժանտախտի շարունակվող համաճարակն էր, փորձ կատարեց Եգիպտական թագավորության հետ վիճարկել գերիշխանությունը Ասորիքի նկատմամբ, ինչի արդյունքում երկրի բոլոր ղեկավարների հետ միասին տեղափոխվեց իր թագավորության հարավային շրջաններ՝ աչքաթող անելով հյուսիսը:

Արդյունքում՝ մ.թ.ա. 1284 թվականին Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը կրկին ներխուժեց խեթերի երկիր և ասպատակեց

[1] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:
[6] Ադադնիրարի I-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Ադադնիրարի I-ին վերագրվող արձանագրությունից; Մուրսիլ II-ին վերագրվող արձանագրությունից:

Անկուվայի շրջակայքը, ինչպես նաև Խեթական թագավորության կենտրոնական շրջանները[1]: Որպես հետևանք այս ամենի պարզվեց, որ անտեր մնացած երկրում պաշտպանության միակ կազմակերպիչը, թերևս, միայն գործող արքայի եղբայր և ապագա արքա Հաթթուսիլն էր, որը սեփական զգուշավոր ու խոհեմ պահվածքով ավելի էր նման հորը, քան իր պոռթկուն և հույզերի տրվող ավագ եղբայրը: Որպես հետևանք, մ.թ.ա. 1284 թվականին արքաեղբայր Հաթթուսիլը, անցած տեղական ուժերի գլուխ, Հախայի ճ-մ-ում ելավ հայերի դեմ և, թեև վճռական հաջողության չհասավ, սակայն կարողացավ հետ մղել վերջիններիս[2]: Մ.թ.ա. 1283 թվականին Հայայի թագավորության և Կասկայի իշխանության միացյալ բանակը կրկին ներխուժում իրականացրեց հակառակորդի տարածք, սակայն արքաեղբայր Հաթթուսիլի գլխավորած ռազմական մեքենան Վիստավանդայի ճ-մ-ում (Խեթական թագավորության հյուսիս-արևելք) այս անգամ արդեն բավականին խոշոր մի հաջողության հասավ[3], ինչով էլ սահմանափակեց ակտիվությունը հյուսիսում: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հանգամանքը շատ էր պետք Հաթթուսիլի թագակիր եղբորը, քանզի հարաբերությունները Եգիպտական թագավորության հետ վերջինս նույն այս ժամանակ վերջնականապես արդեն հասցրել էր պատերազմական դրության:

Մ.թ.ա. XIV դարի վերջին Էխնաթոնին հաջորդած մի քանի փարավոնների օրոք Եգիպտական թագավորությունը շարունակում էր դանդաղ անկում ապրել, իսկ արդյունքում էլ բնականաբար թուլանում էր վերջինիս ազդեցությունը հյուսիսում: Սկսած արդեն մ.թ.ա. XIII դարի սկզբից, սակայն, Ռամզես I-ի (մ.թ.ա. 1294-1292) և նրա որդի Սեթի I -ի (մ.թ.ա. 1292-1279) գահակալման ընթացքում Եգիպտական թագավորությունը հերթական անգամ ուղղեց մեջքը և բռնեց վերելքի ուղին: Գործընթացը հատկապես բուռն ընթացք ստացավ Սեթի I-ի որդի, եռանդուն, ռազմաշունչ և ուժեղ փարավոն Ռամզես II-ի (մ.թ.ա. 1279-1213) օրոք, որն էլ ի վերջո որոշեց վերականգնել կորսված դիրքերը նույն Ասորիքում: Այս առումով հարկ է վերհիշել, որ Միտանիի և Եգիպտական թագավորությունների միջև մ.թ.ա. դեռևս 1412 թվականին կնքված հաշտության համաձայնագրով էր, որ որոշվել էին ազդեցության հստակ գոտիները Ասորիքում, սակայն այժմ մի կողմից Միտանիի թագավորությունն ինքն էր արդեն, ըստ էության, դուրս եկել Ասորիքի համար մրցակցություն վարող կողմերի շարքից, իսկ մյուս կողմից էլ վերջինիս փոխարինած Խեթական թագավորությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Հարավային Ասորիքի վրա: Այսպիսով՝ Սատոնի մահից հետո մ.թ.ա. 1298 թվականին վերջինիս հաջորդած նրա որդի Շավարշ IV-ը (մ.թ.ա. 1298-1272) դուրս եկավ Ասորիքի համար պայքարից, բայց փոխարենը այդ պայքարն իր վրա վերցրեց Մուվաթալիս II-ը: Իր հերթին, օրակարգից հանված չէին նաև Եգիպտական թագավորության հավակնությունները Հյուսիսային Ասորիքի նկատմամբ և այս ամենի արդյունքում էլ հենց իրավիճակը տարածաշրջանում թեժացավ:

Մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ Ռամզես II-ը շեշտադրում էր ամենից առաջ հենց ռազմական հարվածը և այս ճանապարհին լրջագույն բացթողումներ եղան դիվանագիտական ճակատում ու դա այն դեպքում, երբ Ասորիքում եգիպտական իշխանությունը ավանդականորեն չէին սիրում, իսկ Մուվաթալիս II-ն ինքն էլ, սրան հակառակ, դիվանագիտական ճակատում լուրջ աշխատանք տարավ: Արդյունքում՝ Ասորիքում այս կամ այն չափով ազդեցություն ունեցող բոլոր ուժերն, ըստ էության, անցան խեթական տիրակալի կողմը, որի դաշնակիցների շարքերը լրացրին նաև Միտանիի, Հայայի և Կիլիկիայի թագավորությունները: Այսպիսով՝ ըստ էության ստեղծվել էր մ.թ.ա. 1457 թվականի ապրիլի 26-ի Մեգիդոյի ճ-մ-ին նախորդող ուժերի դասավորությունը կրկնող ուշագրավ մի դրությունը, ընդ որում հյուսիսցիներն այս անգամ լի էին նախորդ անհաջողության համար վրեժ լուծելու վճռականությամբ:

[1] Հաթթուսիլ III-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Հաթթուսիլ III-ին վերագրվող արձանագրություններից:
[3] Հաթթուսիլ III-ին վերագրվող արձանագրությունից:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

1274 մայիսի վերջ – ***Կադեշի ճ-մ***[1]

Ռամզես II-ի գլխավորած Եգիպտական թագավորության բանակը (մոտ 70.000), որը կազմված էր Ամոն, Ռա, Պտախ և Սուտեխ, ինչպես նաև ծովային հետևակի առանձնացված ջոկատներից, ապրիլի վերջին մեծ արշավանք սկսելով Պաղեստինի ու Ասորիքի ուղղությամբ, մայիսի վերջին սկսեց մոտենալ ***Կադեշին***: Ի պատասխան դրա՝ Մուվաթալիս II-ի գլխավորած Խեթական (47.500, այդ թվում 17.000 հետևակ, 3.500 մարտակառք), ինչպես նաև վերջինիս կազմում գործող Արմենիի (մոտ 5.000), Միտանիի (մոտ 5.000), Հայայի (մոտ 5.000) և Կիլիկիայի (մոտ 5.000) թագավորությունների[2], ինչպես նաև Կասկայի իշխանության (մոտ 500) միացյալ բանակը սկսեց աննկատ շարժվել հակառակորդի բանակին ընդառաջ, ընդ որում դրա հետ միաժամանակ Մուվաթալիս II-ը հակառակորդի ճամբարում կեղծ լուրեր տարածեց այն մասին, որ իր ուժերը դեռևս հեռու են: Արդյունքում՝ Ռամզես II-ը և նրա բանակի ղեկավար կազմը հավատացին այդ լուրերին ու նրանց զգուշությունը բթացավ:

Արշավանքի երեսուներորդ օրը Եգիպտական թագավորության բանակը դուրս եկավ Կադեշից մոտ 20 կմ հարավ տեղակայված իր ճամբարից և սկսեց Օրոնտես գետի գետանցը, ինչը ոչ միայն բավականին ժամանակ խլեց, այլև մասնատեց բանակը: Դրանից հետո Ռամզես II-ը հենց նոր գետանցն ավարտած Ամոն ջոկատի հետ միասին սկսեց արագորեն շարժվել դեպի հյուսիս, այն դեպքում, երբ Ռա ջոկատը բավականին հետ էր մնացել, Պտախ ջոկատը դեռ գետանցումում էր, իսկ Սուտեխ ջոկատն էլ դեռևս նույնիսկ չէր սկսել գետանցումը: Ամոն ջոկատը կեսօրին հասավ Կադեշին և ճամբարեց նրանից հյուսիս-արևմուտք տարածվող հարթավայրում՝ Օրոնտես գետի աջ ափին՝ նույն գետի ձախ ափին գտնվող թշնամական ուժերի անմիջական հարևանությամբ, ընդ որում բռնված գերիներից Ռամզես II-ը միայն վերջին պահին տեղեկացավ հարևանությամբ գտնվող հակառակորդի հիմնական ուժերի մասին, որոնք պատրաստվում էին անակնկալ հարված հասցնել: Արդյունքում, փորձելով փրկել իրավիճակը, Ռամզես II-ը անմիջապես սուրհանդակ ուղարկեց Պտախ ջոկատի հետևից, ինչպես նաև հրամայեց մարտական վիճակի բերել Ամոնը: Այս ընթացքում Մուվաթալիս II-ի հրամանով խեթական մարտակառքերը անցան Օրոնտես գետը և, իրականացնելով թևանցում, սկսեցին քաղաքի արևելքից շարժվել դեպի հարավ՝ նպատակ ունենալով թիկունքային հարված հասցնել հակառակորդի բանակին: Սրա հետ միաժամանակ Մուվաթալիս II-ի հետևազորը, 9.000 ռազմիկի կազմով մասամբ գետանցելով Օրոնտեսը, հիմնական ուժերով տեղաբաշխված մնաց Կադեշից հյուսիս-արևելք:

I փուլ – Խեթական մարտակառքերը հուժկու հարված հասցրին Ամոնին հասնել փորձող Ռա ջոկատին, ինչի արդյունքում այս ջոկատի ռազմիկների մեծագույն մասը ոչնչացավ և ջոկատի միայն շատ փոքր մասին հաջողվեց հասնել Ամոն ջոկատի ճամբար ու պատսպարվել այնտեղ:

II փուլ – Խեթական մարտակառքերը զարգացրին հաջողությունը և հարավից, իսկ հետագայում՝ արևմուտքից, հզոր հարված հասցրին Ամոնին: Վերջինիս ռազմիկները սկսեցին համառորեն պաշտպանվել՝ փորձելով ճեղքել հակառակորդի շարքերը և շարժվել դեպի արևմուտք: Արդյունքում, սակայն, Եգիպտական թագավորության բանակը ոչ միայն հաջողության չհասավ, այլև ի

[1] Ռամզես II-ին վերագրվող արձանագրություններից; Հաթթուսիլ III-ին վերագրվող արձանագրություններից:
[2] Ֆ. Լենորմանը հիշատակում է Հայաստանը Ռամզես II-ի դեմ ծագած ապստամբությանը մասնակից երկրների շարքում, նշելով, որ Նեղոսի ափերի հուշարձանները վկայում են Ռամզես II-ի հաղթանակների, ինչպես նաև նրա դեմ դուրս եկած ապստամբությունների մասին: Ապստամբներին էին միացել Արմենիան, Ասորեստանը, Միջագետքը, Բաբելոնը և Արամեն:

վերջո, լքելով նույնիսկ սեփական ճամբարը, ստիպված եղավ նահանջել դեպի արևելք: Ամոնի ճամբարը հայտնվեց հակառակորդի բանակի ձեռքում, որի ռազմիկները, լքելով մարտակառքերը, սկսեցին զբաղվել թալանով:

III փուլ – Ուժերը վերականգնած Եգիպտական թագավորության բանակը հարձակման անցավ արևելյան ուղղությամբ և, ջարդելով Օրոնտեսը գետանցած հակառակորդի հետևակին, վերջինիս շպրտեց գետի մյուս ափ: Միաժամանակ մարտադաշտ հասավ նաև արևմուտքից մոտեցող ծովային հետևակի առանձնացված ջոկատը՝ իր հերթին հարվածելով թալանով զբաղված հակառակորդի ռազմիկներին:

IV փուլ – Մուվաթալիս II-ը մարտի նետեց Հայկական մարտակառքերը, որոնք հարավից շրջանցեցին Կադեշը և հզոր հարված հասցրին Եգիպտական թագավորության բանակին՝ հետ շպրտելով վերջինիս: Դրանից հետո երեք ժամվա ընթացքում Հայկական մարտակառքերը հետ մղեցին հակառակորդի բանակի վեց հակահարձակում՝ հնարավորություն տալով խեթական մարտակառքերին վերականգնել մարտունակ վիճակը:

V փուլ – Երեկոյան հարավից մարտադաշտին սկսեց մոտենալ Պտախ ջոկատը, որի հետևանքով դաշնակից մարտակառքերը հայտնվեցին շրջապատման վտանգի մեջ: Արդյունքում՝ վերջիններս, Պտախ ջոկատի արագ առաջխաղացման պայմաններում, ստիպված եղան ճեղքել հակառակորդի բանակի շարքերը և պատսպարվել ***Կադեշում***:

Հայերը կորցրին մոտ 600 զինվոր, 200 մարտակառք, դաշնակիցները մոտ 9.000 զինվոր, 600 մարտակառք, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր, 50 մարտակառք:

Այսպիսով՝ Ռամզես II-ի փորձը, փոփոխել Ասորիքում հաստատված ուժերի հավասարակշռության սովորական վիճակը, վերջինիս որևէ հաջողություն չբերեց, ընդ որում հենց նոր ավարտված ճակատամարտը, միայն մեծ պայմանականությամբ և այն էլ միայն մարտավարական մակարդակում, կարող էր համարվել ավարտված Եգիպտական թագավորության օգտին, այն դեպքում, երբ ռազմավարական արդյունքը միանշանակ հյուսիսային դաշնակցության կողմում էր՝ Եգիպտոսում վճռականորեն և վերջնականապես դադարեցին ծրագրել Հյուսիսային Ասորիքի նվաճումը, ինչն էլ իր հերթին նշանավորեց Մուվաթալիս II-ի կողմից վարվող հետևողական քաղաքականության հաջողությունը: Իր հերթին հարկ է նշել, որ Խեթական թագավորության շարունակվող թուլացման և, հատկապես, ոչ միայն չդադարած, այլև աստիճանաբար ուժեղացող ժանտախտի համաճարակի ֆոնին պաշտոնական Հաթթուսասի համար այս արդյունքն ևս անչափ կարևոր էր: Այս առումով հարկ է ավելացնել, որ արդյունքը պակաս կարևոր չէր նաև հայերի համար, երբ Միտանիի թագավորության նախկին հզորությունն արդեն չկար, իսկ իրերի զարգացման այլ պարագայում էլ մարտաշունչ փարավոնները մի ինչ-որ պահի կարող էին սպառնալ նույնիսկ Հայոց հինգ թագավորություններին: Արդյունքում՝ Խեթական թագավորության գլխավորած հյուսիսային դաշնակցության և Եգիպտական թագավորության միջև հաստատվեց խաղաղ գոյակցության երկար մի ժամանակաշրջան, որին հաջորդած նոր և անակնկալ զարգացումներն էլ իրենց հերթին հետագայում վերացնելու էին երկու այս պետությունների ընդհարման նույնիսկ տեսական հնարավորությունը:

Գլուխ 7
Ասորեստանի թագավորության առաջին վերելքը

Մինչ Խեթական թագավորության գլխավորած հյուսիսային դաշնակցությունն և Եգիպտական թագավորությունը Կադեշի պարիսպների տակ իրենց հարաբերություններն էին հստակեցնում, Ասուրում, հաջորդելով Ադադնիրարի I-ին,

վերջինիս մահից հետո մ.թ.ա. 1274 թվականին գահ բարձրացավ հանգուցյալի որդի Սալմանասար I-ը (մ.թ.ա. 1274-1245), որին էլ հենց վիճակված էր լինելու սկիզբ դնել Ասորեստանի թագավորության հերթական հզորացման դարաշրջանին, ընդ որում, կարծես թե, ցանկանալով ընդգծել իր պետության նոր կարգավիճակը, Սալմանասար I-ը ամենից առաջ իր երկրի մայրաքաղաքը Ասուրից տեղափոխեց Կալխա: Ասորեստանի թագավորության նոր տիրակալը գահը զբաղեցրեց իր պետության համար ռազմաքաղաքական բավականին բարենպաստ մի իրավիճակում, երբ փոխադարձ ծանր պայքարից հետո աստիճանաբար թուլացող Խեթական և Եգիպտական թագավորությունները խիստ զգուշանում էին ոչ միայն նոր ընդհարումից, այլև՝ նոր նվաճումներից, Բաբելոնի թագավորությունը գտնվում էր անկման դրության մեջ, իսկ հայկական պետական միավորներն էլ մասնատված էին և ենթակա էին հարևանների հարձակումների սպառնալիքներին: Այս առումով հարկ է նշել, որ պաշտոնական Կալխայի օգտին էին նաև բնակլիմայական զարգացումները, երբ երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակվող բարձրացումը Արաբական թերակղզուց սեմիտների նորանոր խմբեր էր դուրս մղում, որոնք, մի կողմ թողնելով Կարդունիաշի արիական գահատոհմի կողմից դեռևս կառավարվող և իրենց այդքան էլ չսիրող Բաբելոնի թագավորությունը, ամենից առաջ հաստատվում էին իրենց հարազատ Ասորեստանի սեմիտական թագավորությունում: Հայկական պետական միավորներից Ասորեստանի թագավորությանն ամենամոտը գտնվում էին Միտանիի և Արարատյան թագավորությունները, ընդ որում նույն այս ժամանակ Միտանիի թագավորությունում իշխում էր Շավարշ IV-ի տղա Վասակը (մ.թ.ա. 1272-1268), իսկ Արարատյան թագավորությունում էլ՝ Էխլի-Թեշուբը (մ.թ.ա. մոտ 1280-1240):

Մ.թ.ա. 1274 թվականի գարնանը, ամենից առաջ հարված հասցնելով ավելի հեշտ հասանելի համարված Միտանիի թագավորությանը, Սալմանասար I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) Միտանիի թագավորության բանակից (մոտ 10.000) գրավեց Տայդան (Հայոց Միջագետքի հարավ), Ամասկուն, Կախատը (վերջինը՝ Հայոց Միջագետք, Արվաստան գավառ, Խաբուր գետի Ջախջախ վտակի ափին), Սավուրը (Հայոց Միջագետք, Տուռաբդե գավառ), Նաբուլը (վերջինը՝ Մծբինից 25 կմ հյուսիս-արևելք), Հուրուն, Շուդուխան, Իրիդին, Էլուխտուն (վերջինը՝ Ամիդից հարավ-արևելք), Սուդան (Հայոց Միջագետքի հյուսիս-արևմուտք) և Ոսկե-Անի մայրաքաղաքը[1]: Վասակը գերվեց և մ.թ.ա. 1268 թվականին հենց գերության մեջ էլ մահացավ, իսկ Միտանի թագավորությունը ընդունեց Ասորեստանի թագավորության գերիշխանությունը: Վասակի մահից հետո Միտանիի թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Շավարշ V-ը (մ.թ.ա. 1268-1258), որի օրոք, սակայն, Սալմանասար I-ի սպառնալիքներն ավելի ուժեղացան:

Մահացու հարված հասցնելով Միտանիի թագավորությանը՝ պաշտոնական Կալխան հարվածն ուղղեց դեպի հյուսիս, սակայն մ.թ.ա. 1267 թվականին Կորճայքի ճ-մ-ում Արարատյան թագավորության բանակը (մոտ 20.000) հաղթեց Սալմանասար I-ի գլխավորությամբ առաջխաղացած և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 42.000, 200 մարտակառք)[2]: Առաջին հարվածի անհաջողությունից հետո մի քանի տարի ծախսելով նախապատրաստությունների վրա՝ մ.թ.ա. 1259 թվականին Սալմանասար I-ը նոր հարված հասցրեց և արդյունքում Արարատյան թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 10.000) գրավեց Խիմմեն, Ուատկունը, Մաշգունը, Սալուան, Խալիլան, Լուխան, Նիլիպախրին, Զինգունը, Արինան ու ևս 51 բերդ (Կորճայք)[3]:

Ասորեստանի թագավորությունը փաստորեն մահացու սպառնալիք էր առաջացրել Հայոց երկու պետությունների համար, սակայն վերջինիս ագրեսիվ առաջխաղացումից

[1] Սալմանասար I-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Սալմանասար I-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սալմանասար I-ին վերագրվող արձանագրությունից:

իրեն ապահովագրված չէր զգում նույնիսկ մ.թ.ա. 1274 թվականի վերջին Մուվաթալիս II-ի մահից հետո վերջինիս փոխարինած նրա որդի Մուրսիլ III-ի (մ.թ.ա. 1274-1267) հորեղբայր, նույն այս ժամանակ ի վերջո գահը զբաղեցրած հայերի լավ ծանոթ Հաթթուսիլը՝ Հաթթուսիլ III-ը (մ.թ.ա. 1267-1250), որը որոշեց իր մասնակցությունը բերել այս անգամ արդեն Ասորեստանի թագավորության դեմ ձևավորված դաշինքին: Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 1258 թվականին Նիխրիայի ճ-մ-ում (Տիգրանակերտի մոտ) Սալմանասար I-ի գլխավորությամբ շրջապատման մեջ հայտնված և ջրի խիստ պակաս զգացող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000) մինչև երեկո տևած համառ մարտում այնուհանդերձ հաղթեց Շավարշ V-ի գլխավորած Արմենիի, Միտանիի (մոտ 30.000) ու Խեթական (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակին և վարձկան արամեացիներին (մոտ 20.000): Հայերը կորցրին մոտ 15.000 զինվոր, որոնց թվում զոհվեց նաև Շավարշ V-ը, դաշնակիցները՝ մոտ 20.000 զինվոր, ինչպես նաև 14.400 գերի, որոնք կուրացվեցին, թշնամին կորցրեց մոտ 15.000 զինվոր: Արդյունքում՝ Միտանիի թագավորությունը կործանվեց, իսկ նրա տարածքն անցավ Ասորեստանի թագավորությանը[1]:

Միտանիի թագավորության ոչնչացումը ծանր ռազմաքաղաքական հարված էր ոչ միայն հակաասորեստանյան դաշինքին, որը դրանից հետո, ըստ էության, դադարեց գործել, այլև Հայոց պետականությանը, որի հինգ ներկայացուցիչներից մեկը փաստորեն դադարեց գոյություն ունենալ, իսկ հայերի դիրքերն էլ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, ինչպես սրանից հարյուրամյակներ առաջ Արշաների թագավորության անկման պարագայում եղավ, զգալիորեն թուլացան: Ավելին, զգալի էր նաև քաղաքակրթական կորուստը, քանի որ ամենից առաջ հենց Միտանիի թագավորությունում էր, թերևս, ամենաուժեղը Հայոց բոլոր պետական միավորներից, որ դեռևս պահպանվում էր արիական ոգին և հենց այստեղ էր, որ դեռևս բաբախում էին հուշերն Արիական տերության մասին: Արդյունքում՝ Միտանիի թագավորությանը բաժին հասած կործանումով հայ ժողովուրդը, ըստ էության, զրկվեց իր պատմական հիշողության քաղաքակրթական կարևոր կրողներից մեկից: Եվ վերջապես հարկ է նշել, որ կրած պարտությունը ծանր հետևանքներ ունեցավ նաև հյուսիսային իշխանությունների դաշինքի վրա, մանավանդ այն բանի ֆոնին, որ մ.թ.ա. 1250 թվականին Հաթթուսիլ III-ը մահացավ և նրան փոխարինեց իր որդի Թուդհալիս IV-ը (մ.թ.ա. 1250-1230): Արդյունքում՝ վերևում հիշատակված դաշինքն, ըստ էության, վերջնականապես դադարեց գործել, իսկ մ.թ.ա. մոտ 1249 թվականին էլ Կասկայի իշխանության բանակը (մոտ 10.000) ասպատակեց Խեթական թագավորության հյուսիսային շրջանները և նահանջեց[2]:

Մ.թ.ա. 1245 թվականին Սալմանասար I-ը կնքեց իր մահկանացուն և վերջինիս հաջորդեց նրա որդի Թուկուլտի-Նինուրտա I-ը (մ.թ.ա. 1245-1207), որը ռազմաքաղաքական մակարդակում ոչ միայն լիովին արժանի եղավ իր անմիջական նախնիներին, այլև ինչ-որ տեղ էլ նույնիսկ գերազանցեց նրանց: Իրոք, կազմակերպչական և ռազմական հսկայական ունակություններով օժտված Ասորեստանի թագավորության այս նոր արքան անմիջապես էլ ամենայն մանրամասնության ու վերջնականապես կարգի գցեց իր թագավորության ռազմավարչական համակարգը՝ այս ճանապարհին չմոռանալով հերթական անգամ փոխել երկրի մայրաքաղաքը և այն Կալխայից տեղափոխել Ասուրին շատ մոտ կառուցված, սակայն բացառապես միայն նոր արքայի ցանկացած անձանցով բնակեցված իր իսկ կողմից հիմնադրված Կար-Թուկուլտի-Նինուրտա: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հանգամանքը Թուկուլտի-Նինուրտա I-ն ինքը շատ էր կարևորում, քանի որ հենց այս տիրակալի կառավարման ժամանակաշրջանից էր, որ սկիզբ առավ ներքաղաքական մրցակցության, իսկ հաճախ էլ՝ արյունոտ ընդհարումների և դավադրությունների տեսք ընդունած դաժան մի պայքար հակամարտ երկու

[1] Սալմանասար I-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Թուդհալիս IV-ին վերագրվող արձանագրություններից:

խմբակցությունների՝ Ասորեստանի թագավորության տոհմիկ առևտրական ավագանու և ռազմավարչական խմբակցության, միջև:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Ասորեստանի թագավորության արքաները, մշտապես ձգտելով ուժեղացնել սեփական դիրքերը, ինչպես նաև զարգացնել Ասորեստանի թագավորությանը բնորոշ և նրա զարգացման կարևորագույն երաշխիք հանդիսացող պատերազմը, որպես բիզնես գործունեություն իրականացնելու մեխանիզմը, շեշտադրում էին ռազմավարչական համակարգը, որը, սակայն, զգալի նյութական միջոցներ էր պահանջում: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչ արքաները նույն այդ նյութական միջոցների ձեռք բերման բեռը մշտապես ձգտում էին գցել տոհմիկ առևտրական ավագանու վրա, վերջինիս դիմադրությունը, բնականաբար, կատաղի բնույթ էր ընդունում, ընդ որում իրավիճակին լրացուցիչ սրություն էր հաղորդում հատկապես այն հանգամանքը, որ տոհմիկ առևտրական ավագանուց խլված միջոցները արդյունքում բերում էին ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչ հանդիսացող արքայի դիրքերի առավել ուժեղացմանը, իսկ նույն այդ նյութական միջոցների նախկին տերերի դիրքերի էլ՝ թուլացմանը: Հիշատակված գործընթացը սկիզբ էր առել դեռևս Ադադնիրարի I-ի օրոք և դրան զարգացում էր ապահովել Սալմանասար I-ը, ինչն էլ մեծապես հանդիսացել էր երկու այս տիրակալների հաջողության սոցիալական հիմքը, սակայն այս ամենին հատկապես լայն, աննախադեպ մեծության ծավալ և համակարգված բնույթ հաղորդեց հենց Թուկուլտի-Նինուրտա I-ը: Այսպես թե այնպես, սակայն Ասորեստանի թագավորության ղեկին, ըստ էության, հայտնվեց խիստ ռազմաշունչ մի տիրակալ, ինչը պատերազմ էր նշանակում ամենից առաջ հենց հայերի համար: Այս առումով հարկ է նշել, որ, թեև հյուսիսային իշխանությունների դաշինքը վերջին տարիներին գործնականում դադարել էր գոյություն ունենալ, սակայն Թուկուլտի-Նինուրտա I-ի հայտնվելը Ասորեստանի թագավորության ղեկին ստիպեց ինչպես Թուդհալիս IV-ին, այնպես էլ հայերին վերանորոգել և մի վերջին անգամ կրկին գործարկել այն:

Մ.թ.ա. 1244[1] թվականին Նիխրիայի ճ-մ-ում Արմենիի (մոտ 30.000) և Խեթական (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Թուկուլտի-Նինուրտա I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 70.000), որը նահանջեց դեպի հարավ ու կենտրոնացավ Սավուրի մոտակայքում[2]: Վճռական ընդհարումը, սակայն, տեղի ունեցավ մ.թ.ա. արդեն 1243 թվականին, երբ Սավուրի ճ-մ-ում Թուկուլտի-Նինուրտա I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000), օգտվելով խեթերի դավաճանությունից, հաղթեց Արմենիի (մոտ 28.000, 300 մարտակառք) և Խեթական (մոտ 28.000) թագավորությունների միացյալ բանակին, ընդ որում Խեթական թագավորության գերված ռազմիկները հետագայում սկսեցին որպես վարձկաններ ծառայել Ասորեստանի թագավորության ռազմական մեքենայում[3]: Այսպիսով՝ հայկական կողմը ծանր պարտություն կրեց, ընդ որում հատկապես վատ էր այն հանգամանքը, որ դրանից հետո փաստորեն վերջնականապես դադարեց նաև դաշինքը Խեթական թագավորության հետ: Իր հերթին Թուկուլտի-Նինուրտա I-ը, օգտվելով հօգուտ իրեն դասավորված իրադարձությունների ընթացքից, նախատեսել էր ամենամոտ ժամանակներս հարված հասցնել արդեն Արարատյան թագավորությանը՝ ցանկանալով կրկնել հորը և, եթե նա վերացրել էր Միտանիի թագավորությունը, ապա ինքն էլ նպատակ դրեց նույն արդյունքն ապահովել արդեն Արարատյան թագավորության պարագայում:

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ արձանագրություններից հայտնի պատերազմների ժամանակագրությունը ընդհանրապես և ժամանակագրությունը հատկապես հայկական պետական միավորների հետ կապված դեռևս մեծապես պարզ չէ՝ հստակ ուղեցույցների բացակայության պատճառով: Ընդհանուր առմամբ պարզ է միայն, որ դրանք տեղի են ունեցել այս արքայի թագավորության սկզբում, հավանաբար մինչև մ.թ.ա. 1235 թվականը, քանի որ հետագա տարիներին հայտնվում է արդեն դեպի այլ ուղղություններ ձեռնարկված արշավանքների մասին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ես այս արքայի հետ կապված մարտական գործողությունները դասավորել եմ այն հաջորդականությամբ, որն առավել հավանական եմ գտել՝ բնականաբար տեղ թողնելով այլ տարբերակների համար:

[2] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրություններից:

Մ.թ.ա. 1242 թվականին Կորճայքի ճ-մ-ում Թուկուլտի-Նինուրտա I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 88.000, այդ թվում 28.000 խեթեր), պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակին (մոտ 30.000)[1], որից հետո նույն տարում գրավեց Կորդուքի 5 բերդ[2]: Մարտական գործողությունները շարունակելով արդեն հաջորդ տարի՝ մ.թ.ա. 1241 թվականին Թուկուլտի-Նինուրտա I-ի ռազմական մեքենան Էխլի-Թեշուբի գլխավորությամբ անկանոն հարվածներ հասցնող Արարատյան և Արմենիի թագավորությունների միացյալ բանակից գրավեց Պուրուլիմզին ու ևս 4 քաղաք, 6 ամրոց (վերջին 6-ը՝ Ամիդի մոտ) և 180 բերդ[3]: Այսպիսով՝ Արարատյան թագավորության վիճակը զգալիորեն բարդացավ, թեև լուրջ խնդիրների առաջ կանգնեց նաև Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան, որը որևէ կերպ չէր կարողանում խորանալ Հայոց լեռներում:

Մ.թ.ա. մոտ 1240 թվականին Էխլի-Թեշուբը կնքեց իր մահկանացուն և նրան հաջորդեց իր որդի Արուբի I-ը (մ.թ.ա. մոտ 1240-1200), որը արժանի եղավ հորը ու շարունակեց համառ դիմադրությունը հարավային գիշատիչ հարևանի նկրտումներին: Արդյունքում՝ մ.թ.ա. 1240 թվականին Թուկուլտի-Նինուրտա I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Կորճայքը և նահանջեց[4], մ.թ.ա. 1239 թվականին կրկնեց հարվածը նույն Կորճայքի ուղղությամբ ու հետ քաշվեց[5], իսկ մ.թ.ա. 1238[6], մ.թ.ա. 1237[7] և մ.թ.ա. 1236 թվականներին էլ հարված հասցրեց ավելի լայն շառավիղով՝ Կորճայքից զատ ոտնատակ տալով արդեն նաև Մոկքը ու Աղձնիքը և վերադառնալով ելման դիրքեր[8]: Շուտով պարզվեց, սակայն, որ սա, ըստ էության, առավելագույնն էր, որ Թուկուլտի-Նինուրտա I-ը կարող էր հասնել հայերի ուղղությամբ: Արդյունքում՝ բավարարվելով դիվանագիտական զիջումներով և հպատակության, ըստ էության, ոչինչ չնշանակող երաշխիքներով, Ասորեստանի թագավորության ռազմաշունչ այս տիրակալը ձեռք քաշեց հայերից՝ դրանից հետո կենտրոնանալով նվաճումների այլ ուղղությունների վրա:

Մ.թ.ա. 1235 թվականից սկսած ամենամյա հետևողական արշավանքների իրականացման արդյունքում մ.թ.ա. 1231 թվականի դրությամբ Թուկուլտի-Նինուրտա I-ը արդեն, ըստ էության, հասել էր մի դրության, երբ Ասորեստանի թագավորության տիրապետության տակ էին հայտնվել Հյուսիսային Ասորիքի որոշ տարածքներ, ինչպես նաև Կենտրոնական Միջագետքի զգալի մասը: Հենց վերջին հանգամանքն էլ, սակայն, ընդհարման դուռ բացեց Բաբելոնի թագավորության հետ: Արդյունքում՝ մ.թ.ա. 1231 թվականին Թուկուլտի-Նինուրտա I-ի ռազմական մեքենան ջախջախեց Բաբելոնի թագավորության բանակը, գրավեց Բաբելոնը և դաժան թալանի ենթարկեց այն, իսկ Բաբելոնի թագավորության հերթական արքա Կաշտիլիաշ IV-ն (մ.թ.ա. 1243-1231) էլ գերու կարգավիճակով տեղափոխվեց Ասուր, որտեղ մահապատժի ենթարկեց: Արդյունքում՝ Բաբելոնի թագավորությունն ընդունեց Ասորեստանի թագավորության գերիշխանությունը, սակայն, տեղում Թուկուլտի-Նինուրտա I-ի գերիշխանության ամրապնդման հարցում, բացի, իհարկե, տեղացիների խուլ դիմադրությունից, լուրջ խոչընդոտ հանդիսացավ նաև հերթական անգամ վերելքի ուղին բռնած և դեռևս մ.թ.ա. 1350 թվականից Բաբելոնի թագավորությունից անջատված Էլամի թագավորությունը, ի դեմս վերջինիս եռանդուն ու ռազմունակ արքա Կիտեն-Խուտրանի (մ.թ.ա. 1235-1210):

Իրոք, հենց այս ժամանակ պարզվեց, որ Էլամում վաղուց արդեն իրենց ծրագրերն ունեին աստիճանաբար թուլացող Բաբելոնի թագավորության ժառանգության

---

[1] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրություններից:
[2] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրություններից:
[6] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:
[8] Թուկուլտի-Նինուրտա I-ին վերագրվող արձանագրությունից:

նկատմամբ և այստեղ որևէ կերպ չէին պատրաստվում Հարավային ու Կենտրոնական Միջագետքը զիջել Ասորեստանի թագավորությանը: Արդյունքում՝ Ասորեստանի և Էլամի թագավորությունների միջև սկիզբ առած և ծանր ընթացք ստացած մրցակցությունը, որը հատկապես զգալի կորուստներ արժեցավ տեղական բնակչությանը, շարունակվեց բավականին երկար, ինչը, մասնավորապես, նաև հայերի համար էր նշանակում, որ հարավային սպառնալիքը զգալիորեն չեզոքացված է: Այս առումով, թերևս, հատկանշական էր, սակայն, այն, որ Էլամի թագավորության դեմ իր մղած պայքարում հաղթական վերջակետն այնուհանդերձ պատկանում էր Թուկուլտի-Նինուրտա I-ին, որն, անցած իր հարվածային բանակի գլուխ, մ.թ.ա. 1210 թվականին ոչ միայն հասավ մինչև Պարսից ծոց, այլև գրավեց Էլամի թագավորության տարածքի նույնիսկ մի մասը: Արդյունքում՝ Կիտեն-Խուտրանի դեմ կուտակված դժգոհությունը ներքին դավադրության տեսքով պայթեց այս անգամ արդեն Էլամի թագավորությունում և այս արքային սպանեցին, իսկ նրան էլ հաջորդեց Խալլունտիշ-Ինշուշինակը (մ.թ.ա. 1210-1185), որը անմիջապես էլ վճռականորեն հրաժարվեց շարունակել մրցակցությունը Թուկուլտի-Նինուրտա I-ի հետ:

Մ.թ.ա. 1210-ական թվականների վերջի վիճակով Թուկուլտի-Նինուրտա I-ը հասել էր իր հզորության գագաթնակետի և ավելին, քան ցանկացած մեկը իր նախնիներից, ուժեղացրել էր Ասորեստանի թագավորությունն ու լայնացրել էր նրա սահմանները, սակայն խնդիրը նաև հակառակ կողմ ուներ, քանզի վերջինիս լայնածավալ ռազմական ձեռնարկումները նյութական աննախադեպ ծանր բեռի տեսքով ընկած էին նաև սեփական հպատակների ուսերին, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, Ասորեստանի արդեն ծերացող տիրակալը մի ինչ-որ պահի իրոք որ բոլոր չափերն անցել էր՝ իր խստություններով գործողության դրդելով նույնիսկ սեփական ընտանիքի անդամներին: Արդյունքում՝ մ.թ.ա. 1207 թվականին Թուկուլտի-Նինուրտա I-ի որդիները ապստամբեցին սեփական հոր դեմ, ոտքի հանեցին իրենց հավատարիմ ուժերին, գրոհով գրավեցին Կար-Թուկուլտի-Նինուրտան և ոչ միայն հիմնահատակ ավերեցին այն ու կոտորեցին տեղի բնակչությանը, այլև սպանեցին նաև Թուկուլտի-Նինուրտա I-ին, որից հետո գահ բարձրացավ սպանվածի որդի Ասուրնադինապալը (մ.թ.ա. 1207-1204):

Նոր տիրակալը գահին էր հասել սեփական հոր արյան վրայով և նրան այդ գործում զգալիորեն աջակցել էր տոհմիկ առևտրական ավագանին, ինչը նշանակում էր ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչների դիրքերի լրջագույն թուլացում: Վերջին հանգամանքը, սակայն, մեկ այլ նշանակություն ևս ուներ, քանզի դա նշանակում էր նաև գործող արքայի դիրքերի թուլացում, ինչը հենց շատ շուտով էլ իրեն զգացնել տվեց: Արդյունքում՝ մ.թ.ա. 1204 թվականին Ասուրնադինապալն ինքը զոհ գնաց դավադրությանը և գահի վրա նրան հաջորդեց եղբայրը՝ Ասուրներարի III-ը (մ.թ.ա. 1204-1197): Նոր արքայի դիրքերը ևս, սակայն, որևէ կերպ ամուր չէին, իսկ ներքաղաքական ճգնաժամն էլ Ասորեստանի թագավորությունում շարունակվեց: Արդյունքում՝ անկում ապրող Ասորեստանի թագավորությունը կորցրեց հսկողությունն ամենից առաջ Բաբելոնի թագավորության նկատմամբ, սակայն Բաբելոնի թագավորությունն ինքն էլ նույն այս ժամանակ ավելի ու ավելի մեծացող չափերի պատերազմական գործողությունների մեջ մտավ Ասորեստանի թագավորության թուլացումից հետո կրկին ոտքի կանգնած Խալլունտիշ-Ինշուշինակի Էլամի թագավորության դեմ, մի մրցակցություն, որը տևելու էր մոտ ութ տասնամյակ: Էլամցիները հերթական անգամ փորձում էին խաղարկել «լեռնականի ուժը», իսկ այդ ամենն էլ հայերի համար կրկին խաղաղություն էր նշանակում: Հենց նույն այս ժամանակ էր, սակայն, որ տեղի ունեցան հսկայական փոփոխություններ, որոնք հեռուն գնացող հետևանքներ էին ունենալու:

Գլուխ 8
Դարաշրջանի Մեծ աղետը

Երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակվող բարձրացումը, որը վերջին հարյուրամյակում մեծապես նպաստել էր հենց նույն Ասորեստանի թագավորության վերելքին և, երևույթը պատմական համայնապատկերի ընդհանուր ֆոնի վրա դիտարկելիս, զգալի մի ժամանակաշրջանում օգտակար էր եղել վերջինիս համար, արդյունքում, սակայն, պատմական համայնապատկերի ավելի երկար ժամանակաշրջանի առումով Մերձավոր ու Միջին արևելքի երկրների համար ծանրագույն հետևանքներ առաջացրեց: Իրոք, մարդկային անվերջ հոսքը, որ գալիս էր Արաբական թերակղզուց, ամենից առաջ հենց ժողովրդագրական լուրջ խնդիրներ էր ստեղծում ինչպես Եգիպտոսի, այնպես էլ Ասորիքի և Միջագետքի համար, ընդ որում սրա հետևանքներն իրենց վրա զգում էին նաև հարևան երկրամասերն, ի դեմս ամենից առաջ Հայկական ու Իրանական լեռնաշխարհների:

Ավելին, ջերմաստիճանի շարունակվող բարձրացումը, որը Արաբական թերակղզուն աստիճանական անապատացում էր բերում, հատկապես վերջին հարյուրամյակներում սկսել էր իրեն զգացնել տալ նաև Մերձավոր և Միջին Արևելքում, որտեղ բավականին հաճախակի էին դարձել երաշտներն ու բերքի կորուստը, որոնք էլ իրենց հետ բերել էին երկրագործության արդյունավետության ընդհանուր անկման: Արդյունքում՝ սկսել էին սրվել ինչպես սոցիալական, այնպես էլ միջպետական հարաբերությունները, ընդ որում այս ամենին գումարվում էին նաև սովը և համաճարակները, իսկ ամենատարբեր մակարդակի ընդհարումներն էլ, պայմանավորված նյութական միջոցների պակասով, աստիճանաբար ավելի ու ավելի դաժան և անհանդուրժող տեսք էին ստանում: Միաժամանակ հարկ է նշել, որ երկրագնդի նույն այդ միջին ջերմաստիճանի շարունակվող բարձրացումը, որի մասին վերևում խոսվեց, իր հերթին դրական ազդեցություն ունեցավ արդեն Մեծ տափաստանի վրա, որի բնակչությունը սկսեց ավելի ու ավելի տարածվել ամենից առաջ դեպի հյուսիս՝ յուրացնելով նորանոր տարածքներ և քանակապես շատանալով: Վերջին հանգամանքն իր հերթին դրական ազդեցություն ունեցավ Մեծ տափաստանին հարավից եզրող երկրամասերի նկատմամբ, քանի որ ընկավ Մեծ տափաստանի ագրեսիվությունը և թուլացավ այդ կողմից հարված ստանալու հնարավորությունը: Իրոք, նույն այս ժամանակաշրջանում Մեծ տափաստանի բնակչությունը գերադասում էր ամենից առաջ շարժվել հենց դեպի հյուսիս և մարդազուրկ նորանոր տարածքներ յուրացնել հենց այս ուղղությամբ, այլ ոչ թե շարժվել դեպի հարավ ու դաժան ընդհարման մեջ մտնել նյութական ռեսուրսների պակասից առանց այդ էլ տառապող և խիստ չարացած մարդկանց այն խմբերի հետ, որոնք գտնվում էին այս ուղղությամբ: Ողջ այս գործընթացը, սակայն, շուտով կտրուկ փոփոխություն ապրեց:

Ինչ-որ պահի մ.թ.ա. XIII դարի ամենավերջում ներկայիս Իսլանդիայի տարածքում գտնվող Հեկլա հրաբուխը հզոր ժայթքում ունեցավ, ինչը ոչ միայն մթնոլորտ նետեց հսկայական քանակությամբ հրաբխային մոխիր, այլև իր հետ տեկտոնական զգալի ակտիվություն բերեց՝ ամենից առաջ արտահայտվելով մի քանի հզոր երկրաշարժներով, որոնք ավելի ծանրացրին ընդհանուր ոչ թեթև դրությունը: Ավելին, մթնոլորտում հայտնված հսկայական քանակի հրաբխային մոխիրն իր հետ երկրագնդի միջին ջերմաստիճանի կտրուկ անկման բերեց, ինչը իրեն զգացնել տվեց երկրագնդի ամենից առաջ բնականաբար հենց հյուսիսային լայնություններում: Որպես հետևանք այս ամենի, սկսած արդեն մ.թ.ա. XII դարի ամենասկզբից, Մեծ տափաստանում գործող մարդկային հոծ խմբերը, որոնք մինչ այդ շարժվում էին դեպի հյուսիս, նույն այդ հյուսիսում սկիզբ առած անտանելի ցրտերի պատճառով քշվելով այս անգամ արդեն հակառակ ուղղությամբ, սկսեցին իջնել դեպի հարավ: Սկիզբ առավ Մեծ տափաստանի Փոքր ակտիվություն, որը, սակայն հսկայական էր իր ուժով ամենից առաջ հենց այն պատճառով, որ երկրագնդի տաքացումը մինչ այդ տևել էր ավելի քան երկու հազարամյակ և մարդկային խմբերը ոչ միայն անհամեմատ ավելի մեծ թիվ էին կազմել, այլև շարժվել էին շատ ու շատ ավելի դեպի հյուսիս: Այս առումով հետաքրքիր է նշել, որ,

թեև գործընթացն իր օրինաչափություններով համապատասխանում էր Մեծ տափաստանի այնուհանդերձ Փոքր ակտիվությանը, սակայն իր չափերով այն գործնականում հավասարվեց Մեծ տափաստանի Մեծ ակտիվության սովորական դրսևորումներից մեկին:

Եվ այսպես, գործելով «ընկնող դոմինոների» սկզբունքով, մինչ այդ տեղի ունեցած դրական զարգացումների արդյունքում քանակապես զգալիորեն աճած մարդկային խմբերը, հյուսիսից առաջանալով դեպի հարավ և ամեն նվաճումից հետո իրենց հերթին ավելի ուժեղանալով, ի վերջո մոտեցան Մեծ տափաստանի հարավային սահմաններին: Վերջին հանգամանքն էլ հենց իր հետ մեծածավալ պատերազմների մի ողջ շարք առաջացրեց Մեծ տափաստանի հարավային ողջ սահմանագծի երկայնքով: Որպես անմիջական հետևանք այս փոփոխությունների՝ Մեծ տափաստանի արևելքում հարձակման ենթարկվեց Շանգի չինական թագավորությունը, իսկ նույն այս ժամանակ էլ Իրանական լեռնաշխարհում վերջնականապես ձևավորված Հայոմարտների թագավորությունն ինքը համառ պայքարի մեջ մտավ Միջին Ասիայից առաջխաղացող քոչվորների այն ուժերի դեմ, որոնք հյուսիսից հարավ շարժվել էին արդեն այս ուղղությամբ: Այս առումով կարծում եմ, որ, մինչև առաջ անցնելը, չի խանգարի մի քանի խոսք ասել նաև Հայոմարտների թագավորության հետագա քաղաքական ճակատագրի մասին, ինչի ֆոնին Իրանական լեռնաշխարհում զարգացող հետագա իրադարձությունները ավելի պարզ կլինեն:

Գլուխ 9
Հայոմարտների թագավորության ընթացքը

Արիական տերության անկումից հետո Արևելքում՝ Հայոմարտների տիրապետության տակ գտնվող տարածքներում, շարունակեց իշխել Յաման և նա գահակալեց բավականին երկար՝ ի վերջո, սակայն, զոհ գնալով դավադրությանը: Իր հերթին, Յամայի գահակալության վերջին շրջանի կապակցությամբ արդեն կարելի է հստակորեն ամրագրել, որ նրա հպատակների հիմնական մասն արդեն ոչ թե հայեր էին, ի դեմս «արիներ» կոչվածների, այլ՝ վերջնականապես ձևավորված պարսիկներ ու մարեր: Այսպիսով՝ մ.թ.ա. XVI դարի վերջին հայերի և տեղական էթնոսների միաձուլման արդյունքում տեղի ունեցած պարսկա-մարական էթնոսի ձևավորման գործընթացը իր ավարտը գտավ:

Յամային հաջորդած ինքնակոչ Աժդահակի (մոտ 1540-1480) իշխանության տարիները Հայոմարտների թագավորության համար անլուր դաժանության և քաոսի տարիներ եղան: Խոհեմ Տրիտոնին (մ.թ.ա. 1480-1440)՝ Հայոմարտների հերթական այդ ներկայացուցչին, կարծես թե, որոշակիորեն հաջողվեց ոտքի հանել երկիրը, սակայն Աժդահակի առաջացրած քաոսի արդյունքում մ.թ.ա. XV դարի առաջին կեսին Հայոմարտներն այնուհանդերձ կորցրին Հնդկաստանը:

Այսպես, թեև մ.թ.ա. XVII-XVI դարերում Բխարտային հաջորդած յոթ տիրակալների մասին հստակ տեղեկատվություն չկա, բայց հետագայի համար հայտնի է, որ Բխարատա ցեղի արքան ամուսնացել է Տրիտսու ցեղին պատկանող մի աղջկա հետ և արդյունքում իշխանությունն անցել է նրանց որդի Հուրուին: Հուրուն, որը իշխեց մ.թ.ա. XVI դարի վերջերին, իր հերթին հանդիսացավ Հնդկաստանի Լուսնային և Արևային գահատոհմերի հիմնադիրը, որոնք, բաժանած միմյանց մեջ, սկսեցին կառավարել Հյուսիսային Հնդկաստանը: Այս առումով կարելի է ենթադրել, որ նույն Հուրուն իրեն արդեն բավականին ազատ էր զգում Հայոմարտների նկատմամբ որևէ պարտավորությունից մոտավորապես այնպես, ինչպես Հայոմարտներն իրենք էին իրենց ազատ էին զգում որևէ պարտավորությունից Հայկազունիների պարագայում, քանի որ հետագա պատմաքաղաքական ավանդույթում հենց այս տիրակալն է ներկայանում որպես Հնդկաստանի ժառանգական իշխանության իրական հիմնադիրը: Իրոք, արդեն ասվեց, որ Աժդահակի դաժան կառավարումը անկման հասցրեց Հայոմարտների թագավորությունը և այս ամենի ֆոնին կարելի է ենթադրել, որ, թերևս, հենց այս ժամանակներում էր, որ Հյուսիսային Հնդկաստանը առանձնացավ վերջինիցս: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ ինքնիշխանության ձեռքբերումը ամենևին էլ չուժեղացրեց արիական վերնախավի դիրքերը Հյուսիսային Հնդկաստանում: Արդյունքում՝ ահագնացավ մասնատվածությունը, երբ Արևային գահատոհմի նկատմամբ ի վերջո առավելության հասած Լուսնային գահատոհմից սերած Կուարավաների և Պանդավների հզոր տոհմերի միջև իր հերթին գերագահության համար սկիզբ առած դաժան պատերազմը մ.թ.ա. մոտ 1440 թվականին վերջացավ Կուրուկշետրի արյունահեղ ճակատամարտով, երբ Պանդավների 150.000 հոգանոց բանակը ջախջախեց Կուրավաների 250.000 հոգանոց բանակին: Իրականում, սակայն, դա իսկական մի «Պյուրոսյան հաղթանակ» էր հենց Պանդավների համար, քանի որ Կուրավաների լիակատար ոչնչացման փոխարեն Պանդավները հատուցեցին իրենց անչափ թուլացմամբ: Արդյունքում՝ մի քանի տասնամյակ անց պատմության ասպարեզից ի վերջո հեռացան նաև Պանդավները՝ Հյուսիսային Հնդկաստանը վերջնականապես թողնելով տեղական դրավիդյան ցեղերին, երբ արիները պահպանվեցին, թերևս, միայն կաստայական մակարդակում:

Տրիտոնի գահակալության վերջին տարիներին նրա երեք որդիների միջև սկիզբ առավ գահակալական արյունահեղ մի պայքար, որին զոհ գնացին այս տիրակալի նույն երեք որդիները: Արդյունքում՝ Տրիտոնի մահից հետո Հայոմարտների թագավորության

արքա հռչակվեց վերջինիս սպանված որդիներից կրտսերի տղա Մանուչարը (մոտ 1440-1390): Գահակալական այս պայքարի արդյունքում Հայոմարտների թագավորությունը կորցրեց արդեն նաև Մավերնահրը, որտեղ հիմնվեց Թուրանի իշխանությունը և որտեղ շարունակեցին իշխել Հայոմարտների նկատմամբ թշնամական քաղաքականություն վարող սպանված երկու ավագ եղբայրների սերունդները: Մանուչարն իրեն հաջորդած որդի Նազարին (մ.թ.ա. մոտ 1390-1350) որպես ծանր մի ժառանգություն թողեց մեծ թշնամությունը Թուրանի իշխանության հետ և այս իշխանության հերթական մի հարձակման ժամանակ էր հենց, որ Հայոմարտները ծանր պարտություն կրեցին, Նազարը զոհվեց, իսկ Հայոմարտների թագավորությունն էլ վերջնականապես կորցրեց Միջին Ասիան՝ փակվելով Իրանական լեռնաշխարհում: Բավականին երկար տևած պայքարից հետո Հայոմարտներին ի վերջո հաջողվեց հետ մղել հյուսիսից եկած հարվածը, սակայն Հայոմարտների վերջին տիրակալ, ծերունազարդ Զավենը (մ.թ.ա. 1350-1330) ի վերջո հրաժարվեց գահից, ինչի արդյունքում Հայոմարտների գահատոհմը վերացավ:

Արդյունքում՝ Հայոմարտների երբեմնի լայնարձակ տիրույթների վրա իշխանությունն անցավ նրանցից սերող Կայենյանների թագավորությանը, որին էլ հենց, արդեն մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, բաժին հասավ ճակատագիրը Իրանական լեռնաշխարհի հյուսիսային սահմաններում դաժան պայքարի մեջ մտնել Մեծ տափաստանի հյուսիսից դեպի հարավ շարժվող քոչվորների դեմ՝ ստանձնելով, ըստ էության, նույն այն դերակատարությունը, որը Շանգի թագավորությունը նույն այս ժամանակ իրականացնում էր Մեծ տափաստանի արևելքում:

Գլուխ 10
Ծովի ժողովուրդները

Հարկ է նշել, որ վերևում նկարագրված գործընթացն իր սպասելի տեսքը ստացավ նաև Մեծ տափաստանի արևմտյան հատվածում, որտեղ ևս շարժի մեջ մտավ հյուսիսից հարավ շարժվող քոչվորների հերթական մեծաքանակ հորդան: Հենց այս շարժի արդյունքում էր, որ Մերձսևածովյան տափաստաններում հայտնվեցին թոխարների հեռավոր հետնորդներ հանդիսացող ցեղերը, որոնք, իրենց ենթարկեցնելով տեղական ոչ հնդեվրոպական բնակչությանը, հնդեվրոպական անհաղթահարելի մի ալիքով ընդհուպ մինչև Հունաստան ողողեցին Բալկանյան ողջ թերակղզին՝ իրենց մեջ ձուլելով նաև իրենց հետ միասին շարժի մեջ մտած տեղական ոչ հնդեվրոպական տարրին և հասնելով մինչև Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափեր: Սա, ըստ էության, թերևս, առաջին անգամն էր, որ Մեծ տափաստանից ներխուժում եղավ Արևելյան Եվրոպա և, մասնավորապես, Դանուբից արևմուտք ձգվող տարածքներ, սակայն աշխարհաքաղաքական այս դասավորությունը պահպանվելու էր նաև հետագա հազարամյակներում: Մեծ տափաստանի արևմտյան հատվածից դեպի հարավ շարժվող մարդկային խմբերը Միկենյան քաղաքակրթությունը ներկայացնող պետական միավորներին և Եգիպտական թագավորությանը հիմնական հարված հասցնում էին, որպես կանոն, հենց ծովից, ինչի արդյունքում նույն այս ժամանակ էլ նորեկ զավթիչներին մի ընդհանուր անունով սկսեցին կոչել «Ծովի ժողովուրդներ»:

Որպես առաջնային հետևանք վերևում նկարագրված գործընթացի՝ Միկենյան հզոր քաղաքակրթությունը ներկայացնող պետական միավորները կործանվեցին և Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափերին հաստատվեց նոր ձևավորված հունական տարրը: Իրենց հերթին, Արևելյան Եվրոպայում սկսեցին գերակշռել հնդեվրոպացիները, որոնք հետագայում իրենցով էին անելու գործնականում արդեն ողջ Եվրոպան:

Վերևում նկարագրված գործընթացի արդյունքում շուտով, մասնավորապես, պարզվեց նաև, որ այն, ինչ վերջին հաշվով և գոնե առժամանակ կարողացան անել

Շանգի և Կայենյանների թագավորություններում, չկարողացան անել Խեթական թագավորությունում, որի հերթական արքա, Թուդհալիս IV-ի որդի Արնուվանդա III-ի (մ.թ.ա. 1230-1205) տղա Սուպիլուլիումա II-ը (մ.թ.ա. 1205-1180) փաստորեն անհաղթահարելի դժվարությունների առաջ կանգնեց: Իրոք, թեև Մեծ տափաստանի արևմտյան հատվածից դեպի հարավ առանձին ցեղեր սկսել էին շարժվել դեռևս XIII դարի կեսերին և, վարձկան ծառայության անցնելով Խեթական ու Եգիպտական թագավորություններում, ինչպես նաև Միկենյան քաղաքակրթությունը ներկայացնող պետական միավորներում, այստեղ բավականին հայտնի էին, իսկ նրանց հետ ընդհարումն էլ իրենից մի ինչ-որ առանձնակի նորույթ չէր ենթադրում, սակայն այժմ հարվածը հասցվեց ամենից առաջ հենց քանակական աննախադեպորեն հսկայական մի ուժով: Որպես հետևանք, ժանտախտի այդպես էլ չդադարած համաճարակից առանց այդ էլ ուժասպառ լինող Խեթական թագավորությունը ամենից առաջ չկարողացավ դիմանալ հենց զուտ ֆիզիկապես և կործանվեց:

Արդյունքում՝ մ.թ.ա. 1185 թվականին Ծովի ժողովուրդները (50.000, 500 նավ) Տրոյայի թագավորության (մոտ 2.000), ինչպես նաև Արմենիի արքա Զարմայրի (մ.թ.ա. 1194-1180) գլխավորած Արմենիի և Կիլիկիայի (մոտ 3.000) թագավորությունների միացյալ բանակից պաշարեցին Տրոյան (Փոքր Ասիայի արևմուտք, Միջերկրական ծովի ափին) ու մ.թ.ա. 1180 թվականին գրավեցին այն, ընդ որում հայերից մարտում ընկավ նաև Զարմայրը[1]: Դրանից հետո, շարունակելով առաջխաղացումը արդեն Խեթական թագավորության կենտրոնական շրջանների ուղղությամբ, Ծովի ժողովուրդները համեմատականորեն կարճ ժամանակում գրավեցին Խեթական թագավորության տարածքը, ոչնչացրին այն և հենց իրենք էլ հաստատվեցին տեղում՝ ստեղծելով մանր իշխանությունների յուրօրինակ մի համադաշնություն: Այս առումով կարծում եմ, որ մինչև առաջ անցնելը անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև Տրոյական պատերազմին հայերի մասնակցության խնդրին:

Գլուխ 11
Տրոյական պատերազմը և հայերը

Ամենազարմանալի համընկնումներից մեկը, որ գոյություն ունի Միքայել Չամչյանի կողմից ներկայացված Հայկազունիների գահացանկի ժամանակագրության և տարածաշրջանի, այսպես կոչված, «համընդհանուր ընդունված» պատմության հետ, դա Չամչյանի նշած Զարմայրի գահակալության տարիներն են: Պատմահայր Մովսես Խորենացին ուղղակիորեն նշում է, որ Զարմայրը, մասնակցել է Տրոյական պատերազմին և զոհվել է այդ պատերազմի ժամանակ: «*Զարմայրը, որ եթովպական զորքի հետ միասին Տևտամոսի կողմից օգնական ուղարկվեց Պրիամոսին և մեռավ հելենացոց քաջերից*»[2],- հայտնում է Պատմահայրը և ավելացնում է. «*Մեր Զարմայրը, որ ասորեստանցիներին հպատակ էր, քիչ մարդով եթովպական զորքի հետ օգնական եղավ Պրիամոսին և հենց այնտեղ էլ, հելենացոց քաջերից վիրավորվելով, մեռավ, բայց կկամենայի, որ՝ Աքիլլեսից և ոչ թե մի ուրիշ քաջից*»[3]:

Տրոյական պատերազմն ու Տրոյայի կործանումը, որը մոտավորապես տեղադրվում է մ.թ.ա. XII դարում, ներկայումս մասնագետների մեծամասնությունը, վերադառնալով ավանդական տեսակետին, ավելի կոնկրետացնում է, համապատասխանաբար, մ.թ.ա. 1190-1180 և մ.թ.ա. 1180 թվականներին[4]: Այս տեսակետի ամենածանրակշիռ

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 19, 32; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 2; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն») Այս հանրահայտ իրադարձության աղբյուր է հանդիսանում բնականաբար ամենից առաջ Հոմերոսի «Իլիական»-ը: Առկա են նաև վերջինիցս բխող այլ աղբյուրներ: Միաժամանակ պետք է նշել սակայն, որ, հաշվի առնելով «Իլիական»-ի յուրօրինակ և հայտնի բնույթը՝ ես այն այստեղ շարադրել հարկ չեմ համարում:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 19:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 32:

[4] Ինչպես հայտնվում է ԱՄՆ գիտությունների ակադեմիայի պաշտոնական կայքէջում, Նյու-Յորքի Ռոկֆելերյան համալսարանի

հիմնավորումներից մեկն այն է, որ Խեթական թագավորության վերջին արքա Սուպիլուլիումա II-ը, որը գահ է բարձրացել մ.թ.ա. 1205 թվականին, գրեթե հետք չի թողել իր մասին և նրանից հետո Խեթական թագավորությունը տառացիորեն ջնջվել է պատմության թատերաբեմից: Այս հանգամանքը ներկայումս բացատրվում է մ.թ.ա. 1190 թվականից Բալկանյան թերակղզուց ներխուժումներ սկսած Ծովի ժողովուրդների մասսայական և չտեսնված ավերիչ արշավանքով, որոնք, ըստ Ռամզես III-ի (մ.թ.ա. 1182-1151) «Անալներ»-ի, կործանեցին Խեթական թագավորությունը և հենց նույն ժամանակ էլ գրավեցին Տրոյան: Այսպիսով՝ Զարմայրի զոհվելու տարին ևս ճշգրիտ կերպով համընկնում է այն թվականի հետ, երբ ընկել է Տրոյան: Հետաքրքիր է նաև, որ ըստ Մխիթար Այրիվանցու Զարմայրը իշխում էր այն ժամանակ, երբ ընկավ Տրոյան, իսկ. «*Հռոմեացիների վրա թագավորեց Էնեյոսը*», որը իշխել է մ.թ.ա. մոտավորապես 1179-1176 թվականներին[1]:

Հետազոտողների համար, սակայն, իրենից միշտ էլ որոշակի հանելուկ է ներկայացրել Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, որ Արմենիի արքա Զարմայրը մարտնչել է Տրոյայի պարիսպների տակ՝ ղեկավարելով, այդ թվում նաև եթովպիացիներից կազմված բանակը[2]: Այն որ Տրոյայի պաշտպանությանը մասնակցել են «արիմներ»-ը[3] Կիլիկիայից, փաստ է[4], այն մասին, որ Զարմայրի հետ եղել են նաև Հայ ռազմիկներ, ուղղակիորեն տեղեկացնում է Մովսես Խորենացին, բայց այնուհանդերձ զարմանալ կարելի է՝ ի՞նչ եթովպիացիներ: Բանն այն է, որ եթե խոսքը գոնե եգիպտացիների մասին լիներ, էլի կարելի էր որոշակի վերապահումներով համաձայնել, բայց չէ՞ որ Եթովպիան Եգիպտոսից էլ հեռու է և այն երբեք էլ չի մասնակցել Եգիպտոսից հյուսիս գտնվող այլ երկրների գործերին: Կարելի է նույնիսկ փաստել, որ, կոպիտ ասած, Եթովպիան քննարկվող ժամանակաշրջանում գործ ուներ միայն Եգիպտոսի հետ, իսկ Եգիպտոսից զատ էլ ոչ-ոք այլևս մեծ հաշվով չգիտեր Եթովպիայի մասին: Ակնհայտ է, որ այստեղ պետք է լինի որևէ այլ բացատրություն: Թույլ տանք մեզ կարծել, որ ստորև շարադրվածը գործնականում բացահայտում է «եթովպական առեղծված»-ը՝ լույս սփռելով մեր պատմության ամենաանբացատրելի հանելուկներից մեկի վրա:

Համաձայն Ա. Ի. Իվանչիկի, Տրոյական պատերազմի ժամանակ հիշատակվող «եթովպացիները» իրականում որևէ կապ չունեն Եգիպտոսից հարավ բնակվող եթովպացիների հետ, իսկ Իլիականում էլ չեն հիշատակվում որպես սևամորթներ[5]: Ավելին, ոչ միայն «եթովպ» բառն է հին հունարենում ունեցել «թխամաշկ» իմաստը, այլև «եթովպացի» հասկացությունը մինչև VI դարը ընդհանրապես չի ունեցել «սևամորթ» իմաստը և նրա տակ երբեք էլ նկատի չեն ունեցել բուն Եթովպիայի բնակիչներին: Օրինակ, Հիսիոդիոսի մոտ «եթովպացիները» առանձնացված են «սևամորթներից»[6]: Միայն VI դարից հետո է այդ բառը աստիճանաբար ձեռք բերել «ներկայիս եթովպացի» կամ «սևամորթ» իմաստը: Հատկանշական է, սակայն, որ երբ նյութը ուսումնասիրում ենք ավելի խորությամբ, ի հայտ են գալիս նորանոր և ավելի հետաքրքիր մանրամասներ:

դասախոս Մարչելո Մանյասկոն և «Լա-Պլատա» աստղադիտարանի աշխատակից Կոնստանտինո Բայկոուզիսը կարողացել են հաշվարկել Ոդիսևսի վերադարձի տարեթիվը Իթաքա և եկել են եզրակացության, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 1178 թվականին (տես՝ http://grani.ru/Society/Science/m.138086.html): Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Տրոյան ընկել է մ.թ.ա. 1180 թվականին, իսկ Ոդիսևսի «Ոդիսական»-ը տեղի է ունեցել լիովին ողջամիտ ժամկետում՝ երկու տարում:

[1] Մխիթար Այրիվանցի «Ժամանակագրական պատմություն» (ռուսերեն), ՍՊԲ 1869:

[2] Համարձակություն ենք վերցնում մեզ վրա պնդել, որ սույն առեղծվածի բացատրությունը առաջինն իրականացնում եմ հենց ես:

[3] Մասնագետները գրեթե միակարծիք են, որ արիմները բնակվելիս են եղել Կիլիկիայում (տես՝ www.antiquitas.ru/arimy-arimi/): Արիմներին առաջինը հայերի հետ ուղղակիորեն կապեց Յ. Մարկվարտը: Կարծում ենք, որ «Արիմ» անվանումը ուղղակիորեն կապված է «Արմեն» անվանման հետ: Այսպես, «Արմա(ե)ն» տերմինը բառացիորեն նշանակում է «արիական մարդ»: "man" բառը առաջացել է պրոտո-գերմանական (արիական) *mannaz կամ *manwaz («մարդ») բառից, որը «մարդ» բառի ամենահին կիրառություններից մեկն է և հանդիպում է հնդեվրոպական լեգենդար «Manu» կերպարի տեսքով: Տերմինը կարելի է համեմատել օրինակ սանսկրիկտյան բառապաշարի կամ չեխական "mu" («մարդ, «տղամարդ») տերմինի հետ: Ավելացնենք, որ հին հայերենում եղել է տղամարդու «Մանվազ» անունը, որը և ամենայն հավանականությամբ հանդիսանում է պրոտո-գերմանական (արիական) *mannaz կամ *manwaz («մարդ») հիմքը: Այստեղ ավելորդ չէ հիշել նաև Մովսես Խորենացու կողմից հիշատակվող «Մանվազին, որը Հայկ Նահապետի սերնդից էր» (գիրք 1, գլուխ 12):

[4] Տես՝ Իլիական, Բեոտիա, երգ II, տողեր 780-784:

[5] Иванчик А. И., “Накануне колонизации. Северное Причерноморье и степные кочевники VIII-VII вв. до н. э. в античной литературной традиции”, М.,-Берлин 2005, с. 23-25:

[6] Гесиод, “Перечень женщин”, фр.150 М.-У.

Այսպես, հին հույները համոզված էին, որ «եթովպացիները» բնակվում էին ոչ թե հարավում, այլ արևելքում: Օրինակ, Հերոդոտոսը, հստակորեն տարբերակելով հարավում գտնվող «եթովպացիներից», հայտնում է արևելքում բնակվող «եթովպացիների» մասին: Իրենց հերթին, Փոքր Ասիայում հաստատված փռյուգիացիները բավականին երկար ժամանակ ցույց էին տալիս այն ճանապարհը, որով «եթովպացիների» բանակը շարժվել է Տրոյային օգնության, ինչը ևս ուղղակիորեն վկայում է այն մասին, որ վերջինս, անցնելով Փոքր Ասիայով որպես միջանկյալ մի երկրով, Տրոյային է մոտեցել արևելքից: Ավելին, հունական պատմական ավանդույթում Տրոյական պատերազմի ժամանակ հիշատակվող և այդ պատերազմում էլ զոհված «եթովպացիների» առաջնորդը, որը ստացել է «Մեմնոն» անունը, բնութագրվում է որպես շատ գեղեցիկ մի տղամարդ, որին, համաձայն Դիոդորոս Սիկիլիացու, Ասորեստանի արքա «Տևտամոսը» ուղարկում է օգնության Տրոյային 10.000 «եթովպացիներից»՝ «թխամաշկերից», և 10.000 էլ ազգությունը չհստակեցված ռազմիկներից, ինչպես նաև 200 մարտակառքերից կազմված մի բավականին ազդու բանակով[1]: Նախորդ հեղինակից զատ այս մասին, թեև ավելի համառոտ, հայտնում է նաև Պլատոնը[2]: Մեմնոնը Տրոյայի պարիսպների տակ քաջաբար մարտնչում է, բայց ի վերջո ընկնում է թեսալացիների պատրաստած դարանը և զոհվում է: Այլ հեղինակներ այս պատմության վերջը փոխանցում են մի քիչ այլ կերպ և հայտնում են, որ Մեմնոնը սպանում է հունական դյուցազուն Անտիլոքոսին, բայց ինքը զոհվում է ոչ թե դարանում, այլ՝ Աքիլլեսի հետ մենամարտում: Այս կարծիքին է, օրինակ, Կվինտուս Զմյուռնացին, որի հեղինակած մի պոեմի համաձայն Մեմնոնը սպանել է 3 աքայացու, բայց զոհվել է Աքիլլեսի դեմ մարտում[3]:

Մեմնոնի մահից հետո Զևսը, տեսնելով Մեմնոնի մայր Հաոս[4] աստվածուհու թափած անմխիթար արցունքները իր զոհված որդու համար, հին հույները հավատում էին, որ վաղորդյան ցողը հենց այս աստվածուհու արցունքներն էին, վերակենդանացնում է Մեմնոնին և դարձնում է նրան անմահ: Այս առումով հետաքրքիր է նշել, որ հենց միայն թեկուզ իր անվամբ սեփական հայականությունը մատնող Հաոս աստվածուհին Տիտանյանների ցեղից էր, որոնցից էր նաև մեր Հայկը: Այսինքն՝ ստացվում է, որ Մեմնոնի առնվազն մայրը հայ էր: Բայց ոչ հայ չէին նաև Մեմնոնի հնարավոր հայրերը: Այսպես, և Մեմնոնի «պաշտոնական» հոր՝ «արիմների» առաջնորդ Տիֆոնի, և Հաոսի երկար տարիների սիրեկան, մեր Հայկ Աղեղնաձիգին նույնացող Օրիոնի[5] առկայությունը ցանկացած դեպքում վկայում են, որ Մեմնոնի հայրը ևս եղել է հայ: Այս առումով հատկանշական է, որ «Մեմնոն»-ը իրականում անուն չէ, այլ ընդամենը մի բառ է, որը թարգմանաբար նշանակում է. «Արևելքի տիրակալ»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արիական տերության գոյության շրջանում ողջ Մերձավոր և Միջին Արևելքը փաստացի գտնվում էր Հայկազունիների տիրապետության տակ, որոնք էլ, ըստ երևույթին, ավանդաբար պահպանել էին երբեմնի իրական քաղաքական նշանակություն ունեցած իրենց տիտղոսը, «Մեմնոն» անունը, որով Արմենիի տիրակալ և Հայկազունիների իրավահաջորդ Զարմայրը հայտնի է դարձել հույներին, ավելի քան բացատրելի է:

Եվ այսպես.

- «եթովպացի» տերմինը մինչև VI դարը իրականում հավասար էր «թխամաշկ» հասկացությանը,
- «Մեմնոն»-ը հատուկ անուն չէ և թարգմանաբար նշանակում է. «Արևելքի տիրակալ»,
- Զարմայրը գլխավորել է «թխամաշկեր»-ի բանակը,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը Հաոս աստվածուհու, այսինքն՝ հայուհու որդի էր,

[1] Դիոդորոս Սիկիլիացի, Գիրք 2, մաս 22:
[2] Платон, “Сочинения в четырех томах”, СПб, 2005, с. 167 (http://www.plato.spbu.ru/TEXTS/PLATO/new/Platon3_2.pdf).
[3] Квинт Смирнский, “После Гомера” II 666-679.
[4] Այս աստվածուհու անունը բխեցվում է նախահնդեվրոպական h-aus-os արմատից:
[5] Псевдо-Аполлодор “Мифологическая библиотека”, Л. 1972, I 4, 4: Կարծում ենք, որ անունը ի սկզբանե ունեցել է «Արիան» ձևը և նշանակել է արիների (հայերի) գլխավոր աստծուն՝ Հայկ Աղեղնաձիգին:

- «թխամաշկեր»-ի առաջնորդի հայրության հնարավոր երկու թեկնածուներն էլ անխզելի կապ ունեին հայերի հետ,
- Հայկը հայերի գլխավոր աստվածն էր,
- Տիֆոնը «արիմներ»-ի առաջնորդն էր,
- Մեմնոնի «պաշտոնական» հայրը Տիֆոնն էր,
- Մեմնոնի հնարավոր հայրը հայ էր,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը շատ գեղեցիկ էր,
- հայերն ունեցել են ընդգծված գեղեցկության տեր արքա, որն աստվածացվել է,
- «թխամաշկեր»-ի առաջնորդը զոհվում է Տրոյայի պարիսպների տակ՝ Աքիլլեսի դեմ մենամարտում կամ թեսալացիների պատրաստած դարանում,
- Զարմայրը, ըստ ենթադրություն-ցանկության, զոհվել է Աքիլլեսի դեմ մենամարտում,
- «թխամաշկերի» առաջնորդը վերակենդանանում է,
- հայերն ունեն մահացող և վերակենդանացող, ընդգծված գեղեցկության տեր աստված,
- «թխամաշկերի» առաջնորդը իր բանակը Տրոյա է տարել Փոքր Ասիայով, սակայն, թեև Տրոյա է ժամանել արևելքից, բայց նա չի եկել Փռյուգիայից կամ Կապադովկիայից,
- Մեմնոնը մասնակցել է Տրոյայի պաշտպանությանը, ընդ որում այդ դերը ստանձնել է Ասորեստանի արքա «Տևտամոսի» հանձնարարությամբ,
- Զարմայրը մասնակցել է Տրոյայի պաշտպանությանը, ընդ որում այդ դերը ստանձնել է Ասորեստանի արքա «Տևտամոսի» հանձնարարությամբ:

Հաշվի առնելով այս ամենը, կարելի է գալ համարձակ հետևության, որ փաստորեն ոչ միայն Մովսես Խորենացին է հայտնում Զարմայրի մասին, այլ նաև Տրոյական պատերազմին Արմենիի թագավորության արքայի մասնակցության մասին հարուստ տեղեկություններ են տալիս նաև հունական աղբյուրները[1]: Արդյունքում՝ պարզ է դառնում, որ Զարմայրը ևս, որը հաշվի առնելով Ծովի ժողովուրդների արշավանքի աննախադեպ չափերը, իր և ասորեստանցիների ուժերով օգնում էր Տրոյային, նպատակ ունենալով արգելակել ներխուժողների հնարավոր հետագա արշավանքը դեպի արևելք, զոհվել է հենց ճշգրիտ այն տարում, երբ ընկել է Տրոյան:

Այսպիսով՝ Զարմայրի վերաբերյալ առկա տեղեկատվությունը ևս բոլոր ծանրակշիռ հիմքերը տալիս է ասելու, որ Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի կողմից փոխանցվող տվյալները չափազանց մոտ են ճշմարտությանը: Վերջում ավելացնենք, որ Զարմայրի մահից հետո Արմենիի թագավորությունում իշխող արքաների մասին տեղեկատվությունը կրկին անչափ սուղ է և, թերևս, միայն կարող ենք փաստել, որ, հաջորդելով Զարմայրին, այստեղ կառավարել է Շավարշ II-ը (մ.թ.ա. 1180-1137):

Ինչ վերաբերում է բուռն այս իրադարձությունների արդյունքում հայերի պետական մյուս միավորների հետագա ընթացքին, ապա այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ Խեթական թագավորությանը բաժին հասած ճակատագիրը ինչ-որ իմաստով կիսեց նաև Կիլիկիայի թագավորությունը, թեև հետագա հարյուրամյակում այստեղ հաջողվեց թոթափել եկվորների գերիշխանությունը: Քննարկվող ժամանակահատվածում Կիլիկիայում իշխում էր Մոպսը (մ.թ.ա. մոտ 1260-1180), սակայն նրա գոյության և գործունեության հետ կապված շատ հարցեր դեռևս ենթակա են պարզաբանման: Խնդիրներ ունեցան, սակայն, ոչ միայն Խեթական և Կիլիկիայի թագավորությունները:

Մ.թ.ա. 1208 թվականին Ռամզես II-ի որդի և հաջորդ Մերնեպտախի (մ.թ.ա. 1213-1203) օրոք Ծովի ժողովուրդները հենց ծովից էլ առաջին հարվածը հասցրին Եգիպտական թագավորությանը, սակայն այն հաջողվեց հետ մղել: Հետագայում դրությունն ավելի ծանրացավ, սակայն, ի բարեբախտություն Եգիպտոսի, մ.թ.ա. 1181

[1] Հատկանշական է, որ այս իրադարձություններում Հոմերոսը հայերին հիշատակում է ոչ թե որպես աքայացիների դաշնակիցներ, ինչը բնական կլիներ սպասել տխրահռչակ «Միգրացիոն տեսության» հիմնավորված լինելու դեպքում, այլ՝ որպես Տրոյայի պաշտպաններ ու Բալկանյան թերակղզուց ներխուժած աքայացիների հակառակորդներ:

թվականին հերթական և բավականին մարտունակ փարավոն Ռամզես III-ը հետ մղեց Ծովի ժողովուրդների ծովային, իսկ մ.թ.ա. 1178 թվականին էլ՝ ծովացամաքային նոր ու ավելի հսկայածավալ երկու հարձակումները: Իրավիճակն իր լուծումը ստացավ, մ.թ.ա. 1175 թվականին, երբ Եգիպտական թագավորության բանակը ինչ-որ տեղ Եգիպտոսի հյուսիս-արևմուտքում տեղի ունեցած խոշոր ճակատամարտում վերջնական պարտության մատնեց Ծովի ժողովուրդներին, ինչից հետո նրանց առաջխաղացմանը Եգիպտոսի ուղղությամբ վերջ տրվեց, իսկ Ծովի ժողովուրդների ներկայացուցիչներն էլ նստակեցության անցան այն վայրերում, որտեղ հաջողվել էր հաստատվել:

Եվ այսպես, մ.թ.ա. XII դարը քաղաքակրթական մի իսկական կործանում բերեց մինչև այդ Մերձավոր Արևելքում ու Արևելյան Եվրոպայում գերիշխող ուժերի զգալի մասին և ծանր անդրադարձ ունեցավ Մեծ տափաստանը հարավից եզրող բոլոր երկրամասերի վրա, ինչն արդյունքում ռազմաքաղաքական ու նույնիսկ քաղաքակրթական լիովին նոր մի իրականություն առաջացրեց: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ վերևում նկարագրված հսկայածավալ ցնցումները, որոնք նույնիսկ երկարաժամկետ առումով էլ ծանր հետևանքներ ունեցան Մերձավոր և Միջին Արևելքի առանց բացառությամբ, թերևս, բոլոր խաղացողների համար, համեմատաբար թույլ զգացվեցին Հայկական լեռնաշխարհում ու Միջագետքում, որոնք, ըստ էության, հանդիսանում էին թիկունքային շրջաններ: Արդյունքում՝ Հայկական լեռնաշխարհում մեծ հաշվով խաղաղ մի դրություն հաստատվեց, մանավանդ այն բանի ֆոնին, որ թուլացման հարատև դրության մեջ էր նաև Ասորեստանի թագավորությունը:

Գլուխ 12
Ասորեստանի թագավորության երկրորդ վերելքը

Մ.թ.ա. 1197 թվականին Ասուրներարի III-ի մահից հետո գահի վրա նրան հաջորդեց Էնլիլկուդուրիուցուրը (մ.թ.ա. 1197-1193), որին հաջորդեց Նինուրտաապալեկուրը (մ.թ.ա. 1193-1179), իսկ նրան էլ փոխարինեց Ասուրդան I-ը (մ.թ.ա. 1179-1134): Բոլոր այս տիրակալները շատ թույլ էին, չէին վայելում ռազմավարչական խմբակցության աջակցությունը և իրենք չէին էլ հետևում վերջինիս շահերի պաշտպանությանը:

Միաժամանակ հարկ է նշել, սակայն, որ Մերձավոր և Միջին Արևելքում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայում սկիզբ առած մեծածավալ պատերազմական գործողությունները խախտել էին նաև տոհմիկ առևտրական ավագանու ներկայացուցիչների առևտրական ավանդական կապերը ու նրանք ևս թուլացել էին: Արդյունքում՝ լավ չէր Ասորեստանի թագավորության նաև ներքին տնտեսական դրությունը, ընդ որում բնակլիմայական շարունակվող բացասական զարգացումները լուրջ վնաս էին հասցնում հատկապես գյուղատնտեսությանը: Այս առումով միակ դրականը, թերևս, այն էր, որ աստիճանաբար թուլանում էր մարդկային հոսքը Մեծ անապատից, քանի որ երկրագնդի միջին ջերմաստիճանի անկումը այստեղ բնակության համար ավելի տանելի պայմաններ էր ստեղծում: Վերջին հանգամանքը, սակայն, իր հետ բացասական մի երևույթ այնուհանդերձ ևս բերում էր, քանզի այս պարագայում էլ Ասորեստանի թագավորության ղեկավարները զրկվում էին սեփական ռազմական մեքենան մարդկային մշտական թարմ հոսքով համալրելու նախկինում առկա լայն հնարավորությունից:

Որպես ընդհանուր հետևանք այս ամենի՝ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում որևէ արտաքին ռազմաքաղաքական ակտիվության մասին Ասորեստանի թագավորությունում, ըստ էության, մտածել չէին կարող և նույնիսկ ավելին՝ ավանդական հակառակորդներն իրենք էին հնարավորություն ստացել ակտիվանալ նույն Ասորեստանի թագավորության ուղղությամբ: Արդյունքում, մասնավորապես, մ.թ.ա. 1175 թվականին Արմենիի, Հայայի և Արարատյան թագավորությունների, ինչպես նաև Կասկայի իշխանության միացյալ բանակը (մոտ 50.000) Ասորեստանի թագավորության

բանակից (մոտ 20.000) ազատագրեց Աղձնիքը, Մոկքը ու Կորճայքը[1]: Այս առումով հատկանշական էր, որ թուլացած դիրքերում գտնվող Ասուրդան I-ը ոչինչ ձեռնարկել չկարողացավ, քանի որ մ.թ.ա. XII դարի կեսերին Ասորեստանի թագավորությունում շարունակվում էր պահպանվել ներքին անկայուն դրությունը:

Մ.թ.ա. 1134 թվականին Ասուրդան I-ի մահից հետո նրան հաջորդեց որդին՝ Նինուրտա-Թուկուլտի Ասուրը (մ.թ.ա. 1134), որը արագորեն գահընկեց արվեց իր իսկ եղբոր կողմից, ինչից հետո գահը զբաղեցրեց նույն այդ եղբայրն, ի դեմս Մութաքիլնուսկուի (մ.թ.ա. 1134-1133): Վերջինս, սակայն, ևս չհասցրեց երկար վայելել գահը, մ.թ.ա. 1133 թվականին մահացավ և արդյունքում նրան հաջորդեց արդեն իր որդին, ի դեմս Ասուրեսիսի (մ.թ.ա. 1133-1115): Ասորեստանի թագավորության նոր արքային առժամանակ հաջողվեց կայունացնել երկրի գոնե ներքին դրությունը, սակայն նույն այս ժամանակ արդեն վերելքի ուղին էր բռնել թիկունքային դրության դրական կողմերն իր հերթին հաջողությամբ օգտագործած Բաբելոնի թագավորությունը, որը եռանդուն և տաղանդավոր Նաբուգոդոնոսոր I-ի (1125-1104) օրոք ոչ միայն կարողացել էր ի վերջո ուղղել մեջքը, այլև՝ իր կողմը թեքել հաջողության նժարը նաև Էլամի թագավորության հետ տասնամյակներ շարունակվող մահացու մրցակցությունում: Այս առումով հարկ է նշել, որ նույն այս ժամանակ Բաբելոնի թագավորության օգտին մեծապես եղավ ամենից առաջ հենց այն հանգամանքը, որ Ասորեստանի թագավորությունում գահը զբաղեցված էր առևտրական ավագանու ներկայացուցիչների թեկնածուների կողմից, որոնք մերժում էին ռազմավարչական ձեռնարկումները, իսկ դրա հետ միաժամանակ նաև՝ Արաբական թերակղզուց թեև թուլացող հոսքով, բայց այնուհանդերձ ելնող սեմիտների նորանոր խմբերի օգտագործումը ռազմական ոլորտում: Որպես հետևանք այս գործընթացի՝ Արաբական թերակղզին լքող մարդկանց խմբերը իրենց կիրառումը գտան վերջիններիս ծառայության վերցնելու պատրաստակամությամբ լի Նաբուգոդոնոսոր I-ի տիրույթներում, ինչն էլ իր հերթին մեծապես պայմանավորեց Բաբելոնի թագավորության հզորացումը: Արդյունքում՝ Նաբուգոդոնոսոր I-ը մի ինչ-որ պահի հարձակման անցավ նույնիսկ Ասորեստանի թագավորության ուղղությամբ, սակայն Ասուրեսիսին այնուհանդերձ հաջողվեց պահել դիրքերը, իսկ Բաբելոնի թագավորության արքան էլ դրանից հետո չհամառեց և վերադարձավ Էլամի թագավորության դեմ մինչ այդ մղվող ավանդական պայքարին:

Թուկուլտի-Նինուրտա I-ի մահից հետո Ասորեստանի թագավորությունում իշխանությունը գրեթե մեկ դար պատկանում էր տոհմիկ առևտրական ավագանու ներկայացուցիչներին, որոնք, սակայն, ըստ էության, փաստորեն տապալել էին երկրի կառավարման գործը: Ավելին, ինչպես արդեն նշվեց, բանը ի վերջո հասել էր նույնիսկ նրան, որ Ասորեստանի թագավորության նկատմամբ հավակնություններ էին սկսել դրսևորել նույնիսկ ուժեր, որոնք մինչ այդ հազիվ միայն դժվարությամբ պաշտպանվում էին վերջինիցս: Արդյունքում՝ ռազմավարչական դասակարգն ի վերջո երկար նախապատրաստվող հակահարվածը հասցրեց, որը կոնկրետ տեսք ստացավ այն բանից հետո, երբ մ.թ.ա. 1115 թվականին Ասուրեսիսի մահից հետո գահ բարձրացավ նրա որդի Թիգլաթպալասար I-ը (մ.թ.ա. 1115-1076): Նոր արքան ուժեղ, եռանդուն և դիվանագիտական ու ռազմական մեծ ունակությունների տեր մի անձնավորություն էր, որը մեծապես նման էր արժանահիշատակ Թուկուլտի-Նինուրտա I-ին: Արդյունքում, խնդիր դնելով վերականգնել Ասորեստանի թագավորության երբեմնի հզորությունը, Թիգլաթպալասար I-ը անմիջապես էլ եռանդուն գործունեություն ծավալեց և, ամենից առաջ կարգի գցելով երկրի ռազմավարչական համակարգը, վերադարձ կատարեց պատերազմը, որպես բիզնեսի մի տեսակ, իրականացվող գործունեությանը: Սա, ամեն ինչից զատ, ամենից առաջ նաև հայերի համար էր նշանակում, որ խաղաղ տարիներն ավարտվում են: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ նույն այս ժամանակ Արարատյան թագավորությունում կառավարում էր Կալի-Թեշուբի (մ.թ.ա. մոտ 1200-1150)

[1] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրությունից:

հաջորդ Արուբի II-ը (մ.թ.ա. մոտ 1150-1100), Հայայի թագավորությունում իշխում էր Արսենը (մ.թ.ա. մոտ 1120-1080), իսկ Արմենիի թագավորությունում էլ առաջին երկուսի նկատմամբ գերագահության իրավունքով իշխում էր Շավարշ II-ի որդի Պերճ I-ը (մ.թ.ա. 1137-1102):

Մ.թ.ա. 1114[1] թվականին Կորճայքի ճ-մ-ում Թիգլաթպալասար I-ի գլխավորությամբ Տիգրիսի գետահովտով առաջխաղացած և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000), պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակին (20.000): Այլ կորուստների թվում հայերը կորցրին նաև 6.000 գերի[2]: Նախնական այս հաջողությունից հետո Թիգլաթպալասար I-ը նոր հարված հասցրեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

1113 – ***<u>Շերեշի ամրոցի ճ-մ</u>*** (Կորճայք, Տիգրիսի ափին)[3]

> Թիգլաթպալասար I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000, 500 մարտակառք) մոտեցավ Արուբի II-ի գլխավորությամբ ամրոցի մոտ մարտակարգ ընդունած Արարատյան թագավորության բանակին (մոտ 20.000):
>
> I փուլ – Ասորեստանի թագավորության բանակը անցավ հարձակման և համառ մարտում պարտության մատնեց Արարատյան թագավորության բանակին, որի մնացորդները պատսպարվեցին ամրոցում:
>
> II փուլ – Ասորեստանի թագավորության բանակը հարձակման անցավ ամրոցի ուղղությամբ և գրավեց այն:
>
> III փուլ – Արարատյան թագավորության բանակը ճեղքեց թշնամու պաշարման օղակը և անտառներով հեռացավ:
>
> Հայերը կորցրին մոտ 7.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Նախորդ հաջողությունից հետո շարունակելով պատերազմական գործողությունները՝ հայերի դեմ՝ Թիգլաթպալասար I-ը հարվածն ուղղեց Արմենիի թագավորությանը: Արդյունքում՝ մ.թ.ա. 1113 թվականին Տարոնի ճ-մ-ում արշավանքը շարունակող և անկանոն հարվածների ենթարկվող Թիգլաթպալասար I-ի գլխավորած Ասորեստանի թագավորության համալրված բանակը (մոտ 80.000), պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց անկանոն հարվածներով նահանջող Արմենիի, Արարատյան ու Հայայի թագավորությունների միացյալ բանակին (մոտ 40.000)[4]: Դրանից հետո, հարված հասցնելով արդեն Արմենիի թագավորության մայրաքաղաքին, մ.թ.ա. 1113 թվականին Արմե ամրոցի ճ-մ-ում (= Արումա) Թիգլաթպալասար I-ի գլխավորությամբ դեպի հյուսիս արշաված և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 44.000, ուղիղ 30 մարտակառք), կրկին պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց Արմենի թագավորության բանակին (մոտ 15.000), որից հետո ասպատակեց շրջակայքը, բայց, շարունակվելով ենթարկվել անկանոն հարվածների, ի վերջո նահանջեց[5]: Պատերազմը, սակայն, սրանով չէր ավարտվելու և

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ Թիգլաթպալասար I-ի պատերազմների ժամանակագրությունը դեռևս վերջնականապես պարզ չէ: Ընդհանուր առմամբ պարզ է միայն, որ դրանք հիմնականում տեղի են ունեցել այս արքայի թագավորության սկզբնական շրջանում, թեև ավելի ուշ գործողություններ էլ կան: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ես այս արքայի հետ կապված մարտական գործողությունները դասավորել եմ այն հաջորդականությամբ, որն առավել հավանական եմ գտել՝ բնականաբար տեղ թողնելով այլ տարբերակների համար: Հարկ է նշել, որ, բացառությամբ այն արձանագրությունների, որոնք բերված են ստորև, Թիգլաթպալասար I-ին և Հայաստանի վերաբերվող կան այլ արձանագրություններ կամ դրանց պատառիկներ ևս, սակայն, քանի որ դրանք շատ քիչ ինֆորմատիվ բնույթ ունեն, հատվածական են և հիմնականում կրկնում են արդեն իսկ բերվածներին, ես դրանք շարադրելը հարմար չգտա:

[2] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրությունից:

[4] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրություններից:

[5] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրությունից:

Ասորեստանի թագավորության ռազմաշունչ տիրակալը հաջորդ տարի շարունակելու էր այն:

Մ.թ.ա. 1112 թվականին Կորճայքի ճ-մ-ում Թիգլաթպալասար Ի-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000) հաղթեց անկանոն հարվածներով նահանջող Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակին (մոտ 20.000)[1], որից հետո նույն տարում հաղթանակ տարավ արդեն նաև Աղձնիքի ճ-մ-ում[2]՝ ի վերջո գրավելով Աղձնիքի 25 բերդ[3]: Հերթական անգամ հաջողության հասնելով Արարատյան թագավորության նկատմամբ՝ Թիգլաթպալասար Ի-ը նոր հարվածն ուղղեց արդեն Արմեիի թագավորության մայրաքաղաքին, սակայն մ.թ.ա. 1112 թվականին Արմե ամրոցի ճ-մ-ում այս անգամ ևս վերջնական հաջողության չհասավ և հետ քաշվեց[4]՝ մինչ այդ ասպատակելով Անդրեփրատյան Ծոփքը[5]: Այսպիսով՝ հայերը դիմացան ծանր պատերազմի նաև հերթական տարուն, սակայն առաջիկա տարում սպասվող հարվածը պակասը չէր լինելու:

Մ.թ.ա. 1111 թվականին Խիրխա լեռան ճ-մ-ում (Վանա լճից հարավ-արևմուտք) Թիգլաթպալասար Ի-ի գլխավորությամբ առաջխաղացող և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 75.000), պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց անկանոն հարվածներով նահանջող Արմենիի, Արարատյան ու Հայայի թագավորությունների միացյալ բանակին (մոտ 10.000)[6]: Առջևում, սակայն, ավելի խոշոր մի ընդհարում էր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

1111 – ***<u>Մանազկերտի ճ-մ</u>***[7] (Տուրուբերան, Հարք գավառ)[8]

> Հայայի թագավորության արքա Արսենի գլխավորած Արմենիի, Արարատյան և Հայայի թագավորությունների միացյալ բանակի (մոտ 30.000) անկանոն հարվածներին ենթարկվող Թիգլաթպալասար Ի-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 73.000) հասավ ***<u>Հարք</u>***:
>
> I փուլ – Հայկական բանակի առաջապահը (մոտ 15.000) հարձակվեց թշնամու բանակի առաջապահի վրա, սակայն, չհասնելով էական հաջողության, նահանջեց: Հայերը կորցրին 120 մարտակառք:
>
> II փուլ – Հայկական հիմնական բանակը հարձակվեց թշնամու հիմնական բանակի վրա, սակայն տեղի ունեցած համառ մարտում պարտություն կրեց:
>
> Հայերը կորցրին մոտ 15.000 զինվոր, 120 մարտակառք, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր: Արսենը գերվեց, սակայն հետագայում ազատ արձակվեց:

Վերջին հաղթանակից հետո մ.թ.ա. 1111 թվականին Թիգլաթպալասար Ի-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը ու Մելիտեի շրջակայքը (վերջինը՝ Անդրեփրատյան Ծոփք, Մելիտե գավառ, Եփրատից մոտ 15 կմ արևմուտք) և նահանջեց[9]: Այսպիսով՝ հերթական տարվա ռազմական գործողություններն ավարտվեցին հայերի համար զգալի կորուստներով, սակայն որևէ կերպ վերջնական հաջողության հասնել չէր հաջողվում նաև Թիգլաթպալասար Ի-ին, որը արդյունքում որոշեց շարունակել պատերազմը:

Մ.թ.ա. 1110 թվականին Այգառք գավառի ճ-մ-ում (Կորճայքի հարավ)

---

[1] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[6] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Այս ճակատամարտի կոնկրետ տեղը հայտնի է Մանազկերտի մոտ գտնվող Յունջալու լեռան վրա թողնված արձանագրությունից:
[8] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրություններից:
[9] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:

Թիգլաթպալասար Ի-ի գլխավորությամբ հարավից առաջխաղացած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Արարատյան թագավորության և Մուսասիրի իշխանության միացյալ բանակին (մոտ 20.000)[1]: Դրանից հետո նույն տարում Տալա լեռան ճ-մ-ում (Կորճայքի հարավ) Թիգլաթպալասար Ի-ը ևս մեկ հաղթանակ տարավ[2], որից հետո տիրեց Խնուսին (= Խունուսա) (Տուրուբերան, Վարաժնունիք գավառ) և ևս 3 ամրոցների: Արդյունքում՝ Թիգլաթպալասար Ի-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը ծանր մարտերով հասավ մինչև Փոքր Հայքի սևծովյան ափ, սակայն ի վերջո հետ քաշվեց ելման դիրքեր[3]: Համառ այս մարտերից հետո սկիզբ առան բանակցություններ, ինչի արդյունքում Հայոց երեք թագավորությունները ձևական մակարդակում ընդունեցին Ասորեստանի թագավորության գերիշխանությունը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ խաղաղություն հյուսիսում պետք էր նաև Ասորեստանի թագավորության տիրակալին, քանի որ Հայոց լեռներում մղվող մարտերը վտանգ էին ստեղծում անվերջ շարունակություն ունենալ, իսկ նույն այդ ժամանակ հարավում հասունանում էր ընդհարումը ավանդական մրցակից Բաբելոնի թագավորության հետ:

Իրոք, մ.թ.ա. նույն 1110 թվականին, մինչև Թիգլաթպալասար Ի-ը հասնում էր Սև ծովի ափերին, Նաբուգոդոնոսոր Ի-ի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը իր հետևանքներով մահացու մի հարված հասցրեց Էլամի թագավորությանն և նրա բանակին: Հարվածն իրապես մահացու էր և արդյունքում էլամցիներն ու նրանց պետականությունը լիուլի հատուցեցին երեք այն հարյուրամյակների համար, երբ Միջագետքում գործում էին պաշտոնական Բաբելոնի դեմ: Այս հարվածի արդյունքում Էլամի թագավորությունը փաստորեն ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ ընկավ պաշտոնական Բաբելոնի հսկողության տակ: Եվ այսպես՝ հզորացող Բաբելոնը ուշադրություն էր պահանջում և Թիգլաթպալասար Ի-ը իրեն արդեն ուղղակի չէր կարող շռայլություն թույլ տալ խրված մնալ Հայոց լեռներում:

Արդյունքում՝ Թիգլաթպալասար Ի-ը, սկսելով գործել արդեն հարավային ուղղությամբ, մի քանի տարվա նախապատրաստություններից հետո, օգտվելով Նաբուգոդոնոսոր Ի-ի մահից և նրան հաջորդած վերջինիս որդի Էլիլնադիլապլիի (մ.թ.ա. 1104-1099) փոքրահասակությունից, ի վերջո հարձակման անցավ Բաբելոնի թագավորության ուղղությամբ: Հարավային ուղղությամբ Թիգլաթպալասար Ի-ի հարվածին դիմադրել վիճակված էր արդեն Բաբելոնի թագավորության նոր արքա, Նաբուգոդոնոսոր Ի-ի եղբայր, Էլիլնադիլապլիին փոխարինած Մարդուկնադինախեին (մ.թ.ա. 1099-1081), որի օրոք էլ հենց այս ուղղությամբ իրականացված իր երկրորդ արշավանքի վերջնարդյունքում Թիգլաթպալասար Ի-ին հաջողվեց գրավել Բաբելոնը: Մ.թ.ա. 1089 թվականին Բաբելոնի թագավորության բանակը այնուհանդերձ հետ գրավեց մայրաքաղաքը և նույնիսկ հաջող հակահարված հասցրեց հյուսիսային ուղղությամբ, սակայն առավելագույնը, որին այս ամենի արդյունքում հասավ Մարդուկնադինախեն, դա մեծ դժվարությամբ ընդամենը միայն դիրքերը պահելն էր: Այս առումով Բաբելոնի տիրակալի օգտին եղավ, թերևս, միայն այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ կրկին բարդացան Թիգլաթպալասար Ի-ի գործերը հյուսիսում:

Մ.թ.ա. մոտ 1087 թվականին Աղձնիքի ճ-մ-ում (Վանա լճից հարավ-արևմուտք) Թիգլաթպալասար Ի-ի գլխավորությամբ առաջխաղացող և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000), պարտադրելով բաց մարտի մեջ մտնել, հաղթեց անկանոն հարվածներով նահանջող Արմենիի, Արարատյան ու Հայայի թագավորությունների միացյալ բանակին (22.000)[4], սակայն այս անգամ, ի տարբերություն նախորդ անգամների, մարտական գործողությունները հետագա շարունակում չունեցան, իսկ Թիգլաթպալասար Ի-ն ինքն էլ կենտրոնացավ հարավային ուղղության վրա: Եվ միայն մ.թ.ա. 1080 թվականին էր, որ Թիգլաթպալասար Ի-ի

[1] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրություններից:
[4] Թիգլաթպալասար Ի-ին վերագրվող արձանագրություններից:

գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը ու Մելիտեի շրջակայքը և նահանջեց[1]՝ թեև կրկին առանց որևէ էական հետևանքների:

Էլամի թագավորության կործանումից հետո նրա տարածքը, ինչպես արդեն ասվեց, առժամանակ հայտնվեց Բաբելոնի թագավորության գերիշխանության ներքո, սակայն Ասորեստանի թագավորության դեմ մղվող և ծանր ընթացք ստացած պատերազմը Բաբելոնի տիրակալներին իր հերթին որևէ կերպ թույլ չտվեց ոչ միայն ամրանալ տեղում, այլև՝ պահպանել արդյունավետ հսկողությունն այդ տարածքների նկատմամբ: Սրան հակառակ՝ նույն այս ժամանակ Էլամի նախկին թագավորության տարածքի նկատմամբ իրենց հավակնություններով առաջ եկան այլ ուժեր:

Իրոք, նույն այս ժամանակ, շարունակելով անվերջանալի և ծանր պատերազմները Թուրանի իշխանության դեմ, մ.թ.ա. XII դարի վերջին Կայենյանների թագավորությունն ի վերջո տրոհվել էր երկու մասի, երբ թագավորության հյուսիսային հատվածը պարունակող իշխանությունում սկսեցին գերակշռել մարերը և այստեղ ստեղծվեց Մարական իշխանությունը, իսկ հարավային հատվածում էլ իշխանության հասան պարսիկները, ի դեմս Պարսքի իշխանության: Արդյունքում՝ պարսիկները, հենց նույն այս ժամանակ էլ օգտվելով Էլամի թագավորության գլխին պայթած ռազմաքաղաքական աղետից ու Ասորեստանի թագավորության դեմ մղվող պատերազմով պաշտոնական Բաբելոնի զբաղվածությունից, մի քանի տասնամյակի ընթացքում հարավային ուղղությամբ դանդաղ առաջխաղացում իրականացրին և ի վերջո հաստատվեցին Իրանական լեռնաշխարհի հարավում, որը աստիճանաբար սկսեց կոչվել Պարսք: Արդյունքում՝ սեփական իշխանության տեսքով հյուսիսում կենտրոնանացած մարերը աստիճանաբար իրենց մեջ տարրալուծեցին անկում ապրող տեղական լուլլուբեական տարրին, իսկ հարավում ամրացած պարսիկներն էլ մեծապես կլանեցին տեղի դրավիդյաններին: Այսպիսով՝ մ.թ.ա. արդեն XI դարի սկզբին Իրանական լեռնաշխարհում սկիզբ առավ մարա-պարսկական տարրի գերիշխանությունը, որը հետագայում մեծ հաջողություններ էր գրանցելու:

Գլուխ 13
Մութ դարերը և արամեացիները

Մ.թ.ա. 1076 թվականին Թիգլաթպալասար I-ը զոհ գնաց դավադրությանը, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, դավադիրների թիկունքում, ինչպես Թուկուլտի-Նինուրտա I-ի պարագայում էր եղել, կրկին կանգնած էր տոհմիկ առևտրական ավագանին: Արդյունքում՝ Ասորեստանի թագավորության արքա հռչակվեց դավադիրների թեկնածու, սպանված արքայի կրտսեր որդի Ասարեդապալեկուրը (մ.թ.ա. 1076-1074), որի դիրքերը, սակայն, չափազանց թույլ էին: Մ.թ.ա. 1074 թվականին գործեց հերթական դավադրությունը, Ասարեդապալեկուրը սպանվեց և արքա հռչակվեց հանգուցյալի ավագ եղբայր Ասուրբելկալան (մ.թ.ա. 1074-1056), որը, դատելով ըստ ամենայնի, կրկին տոհմիկ առևտրական ավագանու ներկայացուցիչն էր ու լարված հարաբերություններ ուներ ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչների հետ:

Այսպիսով, ի տարբերություն Թիգլաթպալասար I-ի կառավարման շրջանի, Ասորեստանի թագավորությունում կրկին առաջին դերերի վրա եկավ տոհմիկ առևտրական ավագանին, որը հետ մղեց ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչներին: Վերջին հանգամանքը, սակայն իր հերթին, գումարվելով այն բանին, որ նույն այս ժամանակ կլիմայական դեռևս անբավարար դրության մեջ գտնվող Արաբական թերակղզին, թեև թուլացող չափով, բայց այնուհանդերձ շարունակում էր իրենից դուրս մղել մարդկային նորանոր սեմիտական խմբերի, որոնք ճնշում էին Ասորեստանի թագավորության սահմաններին, միայն ծանրացրեց առանց այդ էլ

[1] Թիգլաթպալասար I-ին վերագրվող արձանագրությունից:

ծանրացող դրությունը: Ավելին, դատելով ըստ ամենայնի, հույսը կտրած սեփական թեկնածուին տեսնել Ասորեստանի թագավորության գահին, ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչները այս անգամ սկսեցին գործել այլ կերպ՝ հենց իրենք կազմակերպելով Արաբական թերակղզուց ելնող մարդկային խմբերին և ուղղելով սրանց Ասորեստանի թագավորության սահմանների վրա: Այսպիսով՝ ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչները երկրում, ըստ էության, սկիզբ դրեցին դանդաղ մլմլացող քաղաքացիական մի պատերազմի, ընդ որում իրավիճակը սրվեց նաև արամեացիների գործունեությամբ, որոնք զգալի կապեր ունեին հայերի հետ և, հնարավոր է, նույնիսկ ուղղորդվում էին նրանց տիրակալների կողմից: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ գործնականում նույն զարգացումներն էին տեղի ունենում նաև Բաբելոնի թագավորության պարագայում, թեև՝ իրենց ավելի ծանր տեսքով, քանի որ Ասորեստանի թագավորությունն ամեն դեպքում ավելի կազմակերպված և ուժեղ մի պետություն էր:

Մ.թ.ա. 1074 թվականին Ասուրբելկալա արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) Մուսասիրի իշխանության բանակից (մոտ 10.000) գրավեց Մահկերտ տուն գավառը[1], ինչին ի պատասխան մ.թ.ա. արդեն 1073 թվականին Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 30.000)[2], ինչպես նաև վարձկան արամեացիները (մոտ 20.000) ասպատակեցին Հյուսիսային Միջագետքը՝ հետ քաշվելով խոշոր ավարով[3]: Մ.թ.ա. 1072 թվականին Արմենիի թագավորության բանակի (մոտ 5.000) և վարձկան արամեացիների (մոտ 5.000) անկանոն հարվածներին ենթարկվող Ասուրբելկալա արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Շածիրուն, Պաուծան (վերջինը՝ Բեմադա լեռան ստորոտում), Նաբուլը, Տիբուան, Լիշուրծալա-Աշուբի (վերջինը՝ Արևելյան Կիլիկիայում), Մուրարբիրը, Մագրիսուն (վերջինը՝ Մծբինից մոտ 40 կմ հարավ) ու նրանց շրջակայքը և նահանջեց[4]: Սա, սակայն, թերևս, վերջինն էր հայերի դեմ Ասուրբելկալի ձեռնարկումներից, քանի որ դրանից հետո նա ստիպված էր արդեն լիովին տրվել արամեացիների գլխավորությամբ Արաբական թերակղզուց ելնող և սեփական տարածքներ ներխուժող մարդկային խմբերի դեմ պայքարին: Այս առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ, ձգտելով միասնական ուժերով դիմադրություն կազմակերպել արամեացիների հարաճուն հարձակումների դեմ, Ասուրբելկալան ի վերջո ռազմաքաղաքական փոխօգնության դաշինք կնքեց իր երդվյալ հակառակորդ և մրցակից, Բաբելոնի թագավորության հերթական արքա, Մարդուկնադինախեին հաջորդած Մարդուկշապիկզերի (մ.թ.ա. 1081-1068) հետ:

Մ.թ.ա. 1056 թվականին Ասուրբելկալան կնքեց իր մահկանացուն և նրան գահի վրա հաջորդեց իր որդի Էրիբադադ II-ը (մ.թ.ա. 1056-1054), որին հայրը որպես ժառանգություն թողեց արամեացիների հարվածներին դիմացած, բայց միաժամանակ այնուհանդերձ նաև նրանց հարաճուն ճնշմանը ենթակա մի երկիր: Այս առումով հարկ է ավելացնել, սակայն, որ հենց նույն այս ժամանակ արամեացիները փաստորեն արդեն իրենցով էին արել Բաբելոնի թագավորությունը, երբ Մարդուկշապիկզերի մահից հետո կարողացել էին այստեղ արքայի դերում հաստատել ծագումով Արաբական թերակղզու սեմիտներից սերող Ադադապլաիդինին (մ.թ.ա. 1068-1046): Այսպիսով՝ հարավային մինչ այդ դաշնակից թագավորությունը Ասորեստանի թագավորության համար այժմ, ըստ էության, վերածվել էր առնվազն չեզոք, իսկ, հնարավոր է նույնիսկ, թշնամական մի ուժի:

Մ.թ.ա. 1054 թվականին այդպես էլ իրապես կառավարել չհասցրած Էրիբադադ II-ը զոհ գնաց հերթական դավադրությանը և նրան հաջորդեց հորեղբայրը՝ Շամշիադադ IV-ը (մ.թ.ա. 1054-1050): Մ.թ.ա. 1050 թվականին, սակայն, հազիվ հասցրած կյանքի կոչել մի

[1] Ասուրբելկալային վերագրվող արձանագրությունից:
[2] Ես ելնում եմ այն կանխավարկածից, որ Հայկական բանակի կորուստներն արտահայտող թվերը հրեական պատմիչ Հովսեփ Փլավիոսը 10 անգամ մեծացրել է:
[3] Սիմբար-Շիխունին վերագրվող արձանագրությունից:
[4] Ասուրբելկալային վերագրվող արձանագրությունից:

քանի շինարարական ձեռնարկումներ, Շամշիադադ IV-ը կնքեց իր մահկանացուն և նրան հաջորդեց որդին՝ Ասուրնացիլպար I-ը (մ.թ.ա. 1050-1031): Ասորեստանի թագավորության հերթական արքան, սակայն, առողջական լուրջ խնդիրներ ուներ, բայց, սրանից զատ, երկրի արևմտյան սահմանին նաև անշեղորեն ուժեղանում էր արամեացիների ճնշումը, այնպես որ, մ.թ.ա. 1031 թվականին կնքելով իր մահկանացուն, Ասուրնացիլպար I-ը իր որդի և հաջորդ Սալմանասար II-ին (մ.թ.ա. 1031-1019) թողեց խնդիրների մեջ հարաճուն կերպով սուզվող ու թուլացած մի պետություն:

Մ.թ.ա. 1025 թվականին Սալմանասար II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Կորճայքը և նահանջեց[1]: Հայերին հասցված հարվածը, սակայն, Սալմանասար II-ի համար շուտով փոխարինվեց արամեացիներից ստացված մի քանի հուժկու հակահարվածներով, որոնք Ասորեստանի թագավորության ռազմական մեքենային ծանր պարտություններ, իսկ պետությանն էլ ռազմական լուրջ կորուստներ արժեցան: Մ.թ.ա. 1019 թվականին Սալմանասար II-ի մահից հետո նրան փոխարինեց իր որդի Ասուրնիրարի I-ը (մ.թ.ա. 1019-1013), որը շարունակեց անշեղորեն տեղի տալ արամեացիների հարվածներին, իսկ մ.թ.ա. 1013 թվականին վերջինիս փոխարինած արդեն նրա որդի Ասուրրաբի II-ի (մ.թ.ա. 1013-972) կառավարման առաջին կեսին էլ Հյուսիսային Միջագետքում արամեացիներից ստացված հարվածները Ասորեստանի թագավորությանն արդեն կոնկրետ տարածքային կորուստներ արժեցան: Ասուրրաբի II-ի կառավարման վերջում, սակայն, իրավիճակը սկսեց աստիճանաբար փոխվել:

Մ.թ.ա. մոտ 975 թվականին Կարքեմիշի ճ-մ-ում սեմիտական տարրի կողմից ստեղծված պետական միավորներից հերթականի բանակն, ի դեմս Իսրայելի թագավորության, որն աջակցում էր Կարքեմիշի թագավորության բանակին, հաղթեց քաղաքի շրջակայքն ասպատակող Արմենիի թագավորության բանակին և հետ մղեց վերջինիս[2]: Արդյունքում, օգտվելով ի վերջո հօգուտ իրեն դասավորված իրավիճակից, Ասուրրաբի II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը խորը ռազմարշավ իրականացրեց արևմտյան ուղղությամբ և, երկար տարիների ընդմիջումից հետո հատելով Հյուսիսային Ասորիքը, կրկին հասավ Միջերկրական ծովին: Պահպանել այս ձեռքբերումները, սակայն, արդյունքում այնուհանդերձ հնարավոր չեղավ:

Մ.թ.ա. 972 թվականին Ասորեստանի թագավորության բոլոր արքաներից, թերևս, ամենաերկարն իշխած Ասուրրաբի II-ը մահացավ և նրան հաջորդեց որդին՝ Ասուրրեսիսի II-ը (մ.թ.ա. 972-967), որին էլ մ.թ.ա. 967 թվականին իր մահից հետո փոխարինեց արդեն սրա որդին, ի դեմս Թիգլաթպալասար II-ի (մ.թ.ա. 967-935): Հերթական այս տիրակալի, ինչպես նաև նրա հոր օրոք, Ասորեստանի թագավորությունը շարունակում էր ծանր պայքար մղել արամեացիների, ինչպես նաև Հայոց պետական միավորների դեմ, երբ, մասնավորապես, մ.թ.ա. 935 թվականին Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 30.000) ու վարձկան արամեացիները (մոտ 20.000) Ասորեստանի թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեցին Գիդարան (= Ռակամատու) (Հայոց Միջագետք)[3]:

Մ.թ.ա. 935 թվականին Թիգլաթպալասար II-ի մահից հետո նրան հաջորդեց իր որդի Ասուրդան II-ը (մ.թ.ա. 935-911), որին էլ հենց բաժին հասավ պատերազմական գործողությունների հերթական ծանր փուլը հայերի և արամեացիների դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 930 թվականին Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 30.000) Ասորեստանի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 1.000) գրավեց Արդնին, Տուբխուն և Զադուրուն (Կորճայք, Մահկերտ տուն գավառ)[4]: Ստեղծված

[1] Սալմանասար II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Սուխիս I-ին վերագրվող արձանագրությունից; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 7, գլուխ 5:
[3] Այս իրադարձության մասին հայտնի է Ադադնիրարի II-ի արձանագրություններից, որոնք պատմում են Հայոց Միջագետքի տարածքում արամեացիների և հայերի դեմ իրականացված մարտական գործողությունների մասին: Արձանագրության կոնկրետ բովանդակությունն առայժմ ինձ անհասանելի է:
[4] Ասուրդան II-ին վերագրվող արձանագրությունից:

պայմաններում միակ բանը, որ կարողացավ անել Ասուրդան II-ը, դա մ.թ.ա. 920 թվականին Զամրինի (Կորճայքի հարավ) գրավումն էր Արարատյան թագավորության բանակից (մոտ 1.000), թեև ամրանալ տեղում այդպես էլ չհաջողվեց[1]:

Հակասական այս արդյունքների հետ միաժամանակ հարկ է նշել, սակայն նաև, որ նույն այս ժամանակ Ասուրդան II-ը զգալի քայլեր իրականացրեց իր թագավորության ռազմավարչական համակարգի ուժեղացման, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ: Արդյունքը շատ շուտով իրեն զգացնել տվեց, մանավանդ այն բանի ֆոնին, որ երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակական անկումը նույն այս ժամանակ ի վերջո գործնականում արդեն վերացրել էր մարդկային հոսքը Արաբական թերակղզուց դեպի դուրս, ինչը ռազմական առումով թուլացրել էր արամեացիներին և հնարավորություն էր ստեղծել երկար սպասված բեկումը մտցնել պատերազմական գործողություններում: Այս առումով Ասորեստանի թագավորության օգտին եղավ նաև այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ արամեացիները, ինչպես մի ժամանակ եղավ ամորիացիների պարագայում, աստիճանաբար արդեն անցել էին նստակեցության և բաժանվել էին մի քանի ու հաճախ միմյանց թշնամի իշխանությունների, ինչն իր հերթին թուլացրել էր նրանց հարվածային հնարավորությունները:

Նույն այս ընթացքում Հայոց երբեմնի հինգ թագավորություններից փաստորեն մնացել էին միայն չորսը, ընդ որում Հայայի թագավորությունը գնում էր դեպի անկում և քաղաքական մասնատում, իսկ Կիլիկիայի ու Արարատյան թագավորությունների տիրակալների մասին էլ մենք որևէ տեղեկություն չունենք: Ինչ վերաբերում է Արմենիի թագավորությանը, ապա, հաջորդելով Պերճ I-ին, այստեղ միմյանց փոխարինելով իշխեցին Արբունը (մ.թ.ա. 1102-1075), Պերճ II-ը (մ.թ.ա. 1075-1035), Բազուկը (մ.թ.ա. 1035-985), Խոյը (մ.թ.ա. 985-941) և Հուսիկը (մ.թ.ա. 941-910): Մինչև առաջ անցնելը կարծում եմ, սակայն, որ այստեղ ևս կարիք կա որոշ պարզաբանումների:

Այսպես, Մխիթար Այրիվանցին, խոսելով Պերճի մասին, հայտնում է, որ նա ապրեց Իսրայելի թագավորության հիմնադիր արքա Դավթի (մ.թ.ա. մոտ 1012-972) օրոք: Մխիթար Այրիվանցու աշխատության հիշատակված մասի ուսումնասիրումից պարզ է դառնում, սակայն, որ նա, ի դեպ հիմնվելով Մովսես Խորենացու վրա, վերոհիշյալ Պերճի անվան տակ նույնացրել է երկու տարբեր անձնավորությունների՝ Պերճ I-ին (մ.թ.ա. 1137-1102) և նրա թոռ Պերճ II-ին (մ.թ.ա. 1075-1035), ընդ որում հենց այս պատճառով էլ կարծես զգալով, որ այս «*միացյալ Պերճը*» «կասկածելիորեն չափազանց շատ է ապրել», Այրիվանցին նրան կոչում է Երկարակյաց: Իրականությունը, սակայն, թվում է այլ է, քանզի, ըստ Միքայել Չամչյանի, նախ Զարմայրից հետո թագավորել է Շավարշ II-ը, իսկ հետո՝ գոյություն են ունեցել «Պերճ» անունով երկու արքաներ՝ պապ և թոռ: Արդյունքում՝ ակնհայտ է, որ խոսքը այստեղ վերաբերվում է Պերճ II-ին, որը թեև մի քանի տասնամյակ շուտ է թագավորել, քան Իսրայելի թագավորության արքա Դավիթը, սակայն այս անգամ մեր հեղինակի խոսքերը պետք է հասկանալ այն իմաստով, որ նա նկատի ունի ժամանակակցություն ոչ թե ըստ գահակալման տարիների, այլ ըստ երկու անձնավորությունների ապրած ժամանակի: Բանն այն է, որ Պերճ II-ի թագավորության վերջին տարիները գրեթե համընկնում են դեռևս արքա չդարձած Դավթի կյանքի սկզբնական տարիների հետ, Դավիթը արքա դարձավ 20 տարեկանում, այսինքն ծնվել էր մ.թ.ա. մոտ 1032 թ-ին, և այստեղ «օրոք» խոսքը կրկին, իհարկե որոշակի վերապահումով, նկատի ունենալով ավելի շուտ «դարաշրջանային համընկնումը», տեղին է:

Մ.թ.ա. 911 թվականին Ասուրդան II-ը կնքեց իր մահկանացուն և խելամիտ այս արքայի գործունեության իրական պտուղները քաղեց արդեն նրա որդի ու հետնորդ Ադադնիրարի II-ը (մ.թ.ա. 911-891), որն ինքն էլ խելացի, հեռատես ու եռանդուն մի տիրակալ էր: Արդյունքում, օգտվելով հերթական անգամ հօգուտ Ասորեստանի

[1] Ըստ Ժ. Օպերտի, Կալախի կամ Նիմրուդի մի մեծ արձանագրությունում ասվում է, որ մ.թ.ա. 920 թվականին, լուր ստանալով, որ հայ Ամիկան հրաժարվել էր իրեն հարկ վճարել, Ասորեստանի թագավորության արքան արշավում է Զամուա երկրի Ամիկայի մայրաքաղաք՝ Զամրի:

թագավորությանը դասավորված տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակից, Ադադնիրարի II-ը ի վերջո իր ձեռքը վերցրեց երկար ժամանակ կորսված նախաձեռնությանը և հարձակողական գործողությունների անցավ, այդ թվում նաև հայերի ուղղությամբ:

Մ.թ.ա. 910 թվականին Մահկերտ տուն գավառի ճ-մ-ում Ադադնիրարի II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000) հաղթեց Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակին (մոտ 30.000)[1]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 909 թվականի հոկտեմբերին, Ադադնիրարի II-ի գլխավորությամբ Տիգրիսի գետահովիտ-Մինչեփրատյան Ծոփքի սահման երթուղով առաջխաղացած և անկանոն հարվածների ենթարկվող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 58.000, 600 մարտակառք) Արմենիի ու Արարատյան թագավորությունների միացյալ բանակից (մոտ 20.000) գրավեց Աղձնիքը, սակայն ի վերջո նահանջեց[2]:

Կարգավորելով հարաբերությունները հյուսիսում՝ Ադադնիրարի II-ը հարվածն ուղղեց հարավային ուղղությամբ և մ.թ.ա. 905 թվականին Բաբելոնի թագավորության հետ ընթացող սահմանային վեճը լուծեց իր օգտին: Հաջողությամբ ավարտելով նաև այս ձեռնարկումը՝ Ասորեստանի թագավորության եռանդուն արքան իր ռազմական մեքենան ուղղեց արդեն արամեացիների տեղական իշխանությունների դեմ, որոնց հետ շատ հին հաշիվներ կային:

Մ.թ.ա. 901 թվականին Պաուծայի ճ-մ-ում Ադադնիրարի II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) հաղթեց Նուր-Ադադի գլխավորած Թիլ-Բարսիբ իշխանության (մոտ 30.000) և Արմենիի թագավորության (մոտ 5.000) միացյալ բանակին[3]: Դրանից հետո, մարտական գործողությունները շարունակելով արդեն հաջորդ տարի, Ադադնիրարի II-ի ռազմական մեքենան մ.թ.ա. 900 թվականին Նաբուլի ճ-մ-ում ևս մեկ անգամ հաղթեց Նուր-Ադադի գլխավորած Թիլ-Բարսիբ իշխանության արամեացիներին և Արմենիի թագավորության օժանդակ զորաջոկատին[4]:

Մ.թ.ա. 899 թվականին Արմենիի թագավորության բանակի (մոտ 5.000) և արամեացի իշխան Մումլի գլխավորած արամեացիների (մոտ 5.000) անկանոն հարվածների ենթարկվող Ադադնիրարի II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) Հայկական (մոտ 500) ու արամեական (մոտ 500) միացյալ կայազորից գրավեց Խուզիրնան (Հայոց Միջագետք) և նահանջեց[5]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 898 թվականին, Գիդարայի ճ-մ-ում Ադադնիրարի II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) հաղթեց արամեացի իշխան Մուկուրուի գլխավորած արամեացիներին (մոտ 15.000) և Արմենիի թագավորության բանակին (մոտ 5.000)[6]: Վերջին իրադարձությունները ծանր հետևանքներ ունեցան արամեացիների համար, սակայն հայերի համար էլ վատն իր հերթին այն եղավ, որ փաստորեն վերանում էր Հայկական լեռնաշխարհի հարավային եզրագծում արամեացիներից կազմված վահանը և շուտով հարվածի տակ էին ընկնելու Հայաստանի արդեն նաև ավելի խորքային շրջաններ, երբ կարծես սպառնում էին վերադառնալ Թիգլաթպալասար I-ի ժամանակները:

Իրոք, մ.թ.ա. արդեն 895 թվականի մայիսից հունիս Ադադնիրարի II-ի գլխավորած

---

[1] Ադադնիրարի II-ին վերագրվող արձանագրությունից:

[2] Ադադնիրարի II-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Այս իրադարձության մասին հայտնի է Ադադնիրարի II-ի արձանագրություններից, որոնք պատմում են Հայոց Միջագետքի տարածքում արամեացիների և հայերի դեմ իրականացված մարտական գործողությունների մասին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:

[4] Այս իրադարձության մասին հայտնի է Ադադնիրարի II-ի արձանագրություններից, որոնք պատմում են Հայոց Միջագետքի տարածքում արամեացիների և հայերի դեմ իրականացված մարտական գործողությունների մասին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:

[5] Այս իրադարձության մասին հայտնի է Ադադնիրարի II-ի արձանագրություններից, որոնք պատմում են Հայոց Միջագետքի տարածքում արամեացիների և հայերի դեմ իրականացված մարտական գործողությունների մասին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:

[6] Այս իրադարձության մասին հայտնի է Ադադնիրարի II-ի արձանագրություններից, որոնք պատմում են Հայոց Միջագետքի տարածքում արամեացիների և հայերի դեմ իրականացված մարտական գործողությունների մասին: Արձանագրության կոնկրետ տեքստն առայժմ ինձ անհասանելի է:

Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Կորճայքի հարավը ու Հայոց Միջագետքը և նահանջեց[1]: Դրանից հետո վերջինս լրիվ նույնաոճ մի հարված էլ հասցրեց մ.թ.ա. 894 թվականի մարտից մինչև ապրիլ[2]:

Մ.թ.ա. 891 թվականին Ադադնիրարի II-ը, որն այդքան շատ բան էր արել սեփական թագավորության հզորացման համար, կնքեց իր մահկանացուն և գահն անցավ նրա որդի Թուկուլտի-Նինուրտա II-ին (մ.թ.ա. 891-884), որն արժանի եղավ հորն ու պապին և շարունակեց նրանց որդեգրած քաղաքականությունը: Ավելին, հենց Թուկուլտի-Նինուրտա II-ն էր, որ, չնայած իր համեմատականորեն կարճ կառավարմանը, Ասորեստանի թագավորության բանակում առաջին անգամ ստեղծեց հեծելազորը, որպես առանձին մի զորատեսակ: Արդյունքում, մի քանի տարի ծախսելով սեփական բարենորոգումները կյանքի կոչելու համար, Թուկուլտի-Նինուրտա II-ը ի վերջո հարված հասցրեց հայերին:

Մ.թ.ա. 885 թվականի մայիսին Ամիդի ճ-մ-ում (Հայոց Միջագետքի հյուսիս, Արևմտյան Տիգրիսի աջ ափին) Թուկուլտի-Նինուրտա II-ի գլխավորությամբ Տիգրիսի գետահովիտ-Մինչեփրատյան Ծոփքի սահման երթուղով արշաված Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) կատաղի և անորոշ ելք ունեցած մարտում ընդհարվեց Հուսիկին հաջորդած Ամբակ II-ի (մ.թ.ա. 910-883) գլխավորած Արմենիի թագավորության բանակի (մոտ 30.000) հետ, ինչի արդյունքում ի վերջո նահանջեց[3]: Հետաքրքիր է, որ այս իրադարձությունների կապակցությամբ Թուկուլտի-Նինուրտա II-ի թողած արձանագրություններից երկուսը Ամբակ II-ին հիշատակում են որպես «Ամբելլա» և այս հանգամանքը հերթական անգամ հետաքրքիր կերպով լրացնում է վերևում շարադրված Հայկազունիների ողջ ժամանակագրության պատմականության կռվանների զինանոցը:

Մ.թ.ա. 884 թվականին, այնուհանդերձ շարունակելով մարտական գործողությունները նախկին ուղղությամբ, Թուկուլտի-Նինուրտա II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Կորճայքի հարավը ու Աղձնիքը և նահանջեց[4]: Ավելին անել, սակայն, Թուկուլտի-Նինուրտա II-ն ուղղակի չհասցրեց, քանի որ հենց նույն տարում էլ կնքեց իր մահկանացուն:

Սկիզբ էին առնում, սակայն, արդեն նոր իրողություններ, որոնք իրենց հետ անդառնալի փոփոխություններ էին բերելու:

[1] Ադադնիրարի II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Ադադնիրարի II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Թուկուլտի-Նինուրտա II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Թուկուլտի-Նինուրտա II-ին վերագրվող արձանագրությունից:

Մաս IV
Ասորա-մարական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հայոց երբեմնի հինգ թագավորություններից իրենց գոյությունը շարունակում էին, ըստ էության, միայն երեքը՝ Արմենիի, Արարատյան և Կիլիկիայի թագավորությունները: Միտանիի թագավորության անկման մասին արդեն խոսվեց, իսկ ինչ վերաբերում է Հայայի թագավորությանը, ապա ինչ-որ տեղ մ.թ.ա. XI դարի սկզբի անհայտ մի պահի այն որպես կենտրոնացված մի ուժ վերջնականապես դադարեց իր գոյությունը և տրոհվեց մանր իշխանությունների, որոնց մեջ առաջնայինը Տայքի իշխանությունն էր: Դեռևս իրենց գոյությունը շարունակող Հայոց երեք թագավորություններից Արմենիի թագավորությունում շարունակում էին իշխել Հայկազունիները, որոնք նույն այս ժամանակ սերտորեն դաշնակցում էին ինչ-որ տեղ ձևականորեն, բայց այնուհանդերձ իրենց գերագահության տակ գտնվող Արարատյան թագավորության Արծրունիների հետ: Ինչ վերաբերում է Կիլիկիայի թագավորությանը, ապա այն, թեև ազատված Ծովի ժողովուրդների իշխանությունից, բայց գտնվում էր բավականին թույլ վիճակում, որևէ կերպ չէր համագործակցում ու, թերևս, նաև համագործակցել էլ ի վիճակի չէր Հայոց մյուս երկու թագավորությունների հետ: Ավելին, այս ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորության նույնիսկ արքայացանկը հայտնի չէ: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նաև ավելացնել, որ նույն այս ժամանակ Պարսկահայքում և Փայտակարանում ձևավորվեց նաև Արմաննայի հայկական իշխանությունը, որը սերտորեն համագործակցում էր Արարատյան թագավորության հետ: Արմաննայի հայկական իշխանությունում սկզբում իշխում էր Անդովկը (մ.թ.ա. մոտ 844-815), որին փոխարինեց իր որդի Զիրտան (մ.թ.ա. մոտ 815-760):

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Արմենիի թագավորության գահակալն էր Ամբակ II-ին հաջորդած նրա որդի Կախպակը (մ.թ.ա. 883-838): Ինչ վերաբերում է Արարատյան թագավորությանը, ապա նույն այս ժամանակ մեծապես արդեն համահայկական գերիշխանության հասնելու հավակնություններ ունեցող այս թագավորության գահը զբաղեցրեց Արամ II Մեծը (մ.թ.ա. 883-840), որը ուժեղ, եռանդուն և զորավարական զգալի ունակություններով օժտված մի անձնավորություն էր: Արամ II Մեծը իր երկարատև գահակալման ընթացքում հիմք դրեց Արարատյան թագավորության աննախադեպ հզորացմանը և այն բանին, որ վերջինս հավակնություններ ունենա առաջնորդի դեր ստանձնել սկզբում համահայկական, իսկ հետո էլ արդեն՝ տարածաշրջանային մակարդակով:

Մ.թ.ա. IX դարի սկզբին նախորդ հարյուրամյակներում անշեղորեն թուլացող Եգիպտական թագավորությունը Մերձավոր Արևելքում որևէ լուրջ դերակատարություն, ըստ էության, արդեն չուներ և վերջինիս ազդեցությունը տարածվում էր հազիվ միայն Հարավային Ասորիքի վրա: Ավելի լավ վիճակում չէին, սակայն, նաև արդեն նստակեցության անցած Ծովի ժողովուրդների և արամեացիների ստեղծած պետական միավորները: Իրոք, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Ծովի ժողովուրդներին Խեթական երբեմնի թագավորության տարածքում, ինչպես նաև Ասորիքի հիմնականում ծոփափնյա շրջաններում, թեև հաջողվել էր ստեղծել մի շարք մանր իշխանություններ, սակայն դրանք, չնայած իրենց մեծաքանակությանը, թույլ էին և մասնատված: Ծովի Ժողովուրդների ստեղծած պետական միավորների կազմում քիչ թե շատ ուժեղ էր, թերևս, միայն երբեմնի Խեթական թագավորության հազիվ միայն ստվերը հանդիսացող և վերջինիս մի ժամանակ պատկանող տարածքների միայն կենտրոնական մասը զբաղեցնող Փռյուգիական թագավորությունը: Միաժամանակ զգալի հավակնություններ ուներ նաև առայժմ դեռևս Փռյուգիական թագավորության

ստվերում գտնվող և նրանից ավելի արևմուտք տարածվող Լյուդիական թագավորությունը: Արամեացիների իշխանությունների մասին արդեն խոսվեց, իսկ ինչ վերաբերում է սեմիտների այլ պետական միավորներին, ապա սրանց շարքում սկսել էր իր առանձնահատուկ տեղը զբաղեցնել հրեաների կողմից ստեղծված Իսրայելի թագավորությունը, որը, սակայն, բացառապես միայն հարավասորիքյան նշանակություն ուներ: Իր հերթին հարկ է ավելացնել, որ հենց այս ժամանակաշրջանում էր, որ, որպես վրացական առաջին պետական միավորներից մեկը, իր ընթացքը սկսեց արդեն նաև Արևմտյան Վրաստանում ստեղծված Կոլխիդայի թագավորությունը: Եվ վերջապես հենց նույն այս ժամանակ էր, որ Հունաստանում սկսեցին աստիճանական վերելք ապրել տեղի քաղաք-պետությունները, որոնք մեծապես կրկնօրինակում էին Արևելքի քաղաք-պետությունների ռազմաքաղաքական մոդելը:

Գլուխ 2
Ասորեստանի թագավորության երրորդ վերելքը

Մ.թ.ա. 884 թվականին Թուկուլտի-Նինուրտա II-ի մահից հետո Ասորեստանի թագավորության գահին նրան հաջորդեց իր որդի Ասուրնացիլպար II-ը (մ.թ.ա. 884-859): Վերջինս խելացի, եռանդուն, ինչպես նաև ռազմական և դիվանագիտական առաջնակարգ ունակություններով օժտված, բայց դրա հետ միաժամանակ նաև անլուր դաժանության տեր մի տիրակալ էր՝ մի անձնավորություն, որը սեփական դաժանությամբ կարող էր մրցել, թերևս, միայն արժանահիշատակ Սարգոն Աքքադացու հետ: Այս առումով հարկ է նշել նաև, որ Ասուրնացիլպար II-ի գահ բարձրանալով ինչպես Ասորեստանի թագավորության, այնպես էլ հարևան պետական միավորների համար սկիզբ էր առնում իր հետ հսկայական փոփոխությունների բերած մի նոր դարաշրջան, որն Մերձավոր և Միջին Արևելքի համար անճանաչելիորեն նոր իրողություններ էր բերելու:

Մ.թ.ա. 883[1] թվականի հունիսից մինչև օգոստոս Ասուրնացիլպար II-ի գլխավորությամբ Տիգրիսի գետահովիտ-Կորճայք-Աղձնիք երթուղով առաջխաղացած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) անկանոն հարվածներ հասցնող Արամ II Մեծի գլխավորած Արարատյան ու Արմենիի թագավորությունների միացյալ բանակից (ընդհանուր մոտ 10.000) գրավեց Կորճայքի հարավը և Աղձնիքը[2]: Սա, սակայն, միայն սկիզբ էր: Մ.թ.ա. 882 Հալայի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 20.000) և արամեացիները (մոտ 4.000) ասպատակեցին Դամդամուսայի շրջակայքը (Ամիդի մոտ) ու ամրացան քաղաքում[3], ինչը պատասխան հարվածի բերեց: Արդյունքում՝ մ.թ.ա. նույն 882 թվականին Ասուրնացիլպար II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 90.000) Հալայի գլխավորած Արարատյան թագավորությունների բանակից (մոտ 1.000) և արամեացիներից (մոտ 1.000) գրավեց Դամդամուսան, երբ քաղաքի բնակչությունը կոտորվեց, իսկ Հալան էլ գերվեց ու մահապատժի ենթարկվեց[4]: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը, Ասուրնացիլպար II-ի ռազմական մեքենան մ.թ.ա. նույն 882 թվականին տիրեց Մարիու ամրոցին (Ամիդի մոտ), երբ հայերը կորցրին 50 սպանված և 200 գերի, որոնք սպանվեցին[5]:

Ստեղծված ծանր պայմաններում մ.թ.ա. 882 թվականին Նիրբի դաշտի ճ-մ-ում

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ Ասուրնացիլպար II-ի պատերազմների ժամանակագրությունը դեռևս վերջնականապես պարզ չէ: Ընդհանուր առմամբ պարզ է միայն, որ դրանք հիմնականում տեղի են ունեցել այս արքայի թագավորության սկզբնական շրջանում, թեև ավելի ուշ գործողություններ էլ կան: Հարկ է նշել, որ, բացառությամբ այն արձանագրությունների, որոնք բերված են ստորև, Ասուրնացիլպար II-ին և Հայաստանի վերաբերվող կան ևս մի քանի այլ արձանագրություններ կամ դրանց պատառիկներ, սակայն, քանի որ դրանք շատ քիչ ինֆորմատիվ բնույթ ունեն, հատվածական են և հիմնականում կրկնում են արդեն իսկ բերվածներին, ես դրանք շարադրելը հարմար չգտա:

[2] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:

[4] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:

[5] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:

(Ամիդի մոտ) Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 10.000) այնուհանդերձ հաղթեց Ասորեստանի թագավորության բանակի մի մասին (մոտ 20.000), սակայն ի վերջո նահանջեց՝ կորցնելով 332 զինվոր[1]: Մ.թ.ա. 882 թվականին Թիլ ամրոցի մոտ տեղի ունեցած հերթական ճակատամարտում (Ամիդի մոտ) Ասուրնացիլպար II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 77.000) հաղթեց Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակին (մոտ 30.000), որից հետո, հաղթահարելով ամրոցի 3 շարք պարիսպները, գրավեց այն: Հայերի կորուստները կազմեցին 3.000 զինվոր[2]: Սրանից հետո, զարգացնելով հաջողությունը, Ասուրնացիլպար II-ի ռազմական մեքենան մ.թ.ա. նույն 882 թվականին անկանոն հարվածներ հասցնող Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակից գրավեց Տուսխե ու Իսպիլիբրիու ամրոցները (Ամիդի մոտ): Դրանից հետո, համարելով արշավանքն ավարտված, Ասորեստանի թագավորության արքան իր ռազմական մեքենայով Տիգրիսի հովտով վերադարձավ Տուսխե, իսկ հետո էլ հետ քաշվեց ելման դիրքեր[3]: Պատերազմական նման ծանր տարիներ հայերը չէին տեսել դեռևս Թիգլաթպալասար I-ի ժամանակներից, սակայն նույն այդ պատերազմը հեշտ չէր տրվել նաև Ասորեստանի թագավորության ռազմական մեքենային, իսկ ձեռք բերված արդյունքներն էլ որևէ կերպ կայուն չէին:

Մեկ տարի ծախսելով իր ուժերը կարգի գցելու վրա՝ Ասուրնացիլպար II-ը շուտով նոր հարված հասցրեց: Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 880 թվականին Մատնի լեռան ճ-մ-ում (Աղձնիք) Ասուրնացիլպար II-ի գլխավորությամբ ասպատակելով առաջխաղացած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 73.000) անորոշ ելքով ընդհարվեց Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակի (մոտ 30.000) հետ, որից հետո, ասպատակելով շրջակայքը, նահանջեց[4]: Որպես հետևանք այս ամենի՝ հայերի հետ հաստատվեց ուժերի հավասարակշռության քիչ թե շատ կայուն մի դրություն, ինչն, ըստ էության, առավելագույնն է, ինչին կարողացավ հասնել վերջիններիս հարավային հակառակորդը: Այս կապակցությամբ կրկին հետաքրքիր է նշել, որ մ.թ.ա. 882 և 880 թվականների իրադարձությունների կապակցությամբ Ասուրնացիլպար II-ի թողած արձանագրություններից երկուսը կրկին հիշատակում են «Ամբելլային» և այս հանգամանքը, 1-2 տարվա ճշգրտությամբ, ևս մեկ անգամ ուշագրավ կերպով լրացնում է վերևում շարադրված Հայկազունիների ողջ ժամանակագրության պատմականության կռվանների զինանոցը:

Քիչ թե շատ կարգի գցելով գործերը հյուսիսում և այս ուղղությամբ, կարծես թե, հաստատելով սեփական գերիշխանությունը, հետագա տարիներին Ասուրնացիլպար II-ը իր հարվածային բանակն ուղղեց դեպի Արևմուտք՝ մի քանի տարվա հետևողական արշավանքների արդյունքում մ.թ.ա. 875 թվականի վիճակով իր գերիշխանությունը հաստատելով արդեն նաև Հյուսիսային Ասորիքում: Ինչպես հարկն է ամրանալով Հյուսիսային Ասորիքում՝ մ.թ.ա. 860-ական թվականների սկզբին Ասուրնացիլպար II-ը շարունակեց առաջխաղացումն այս ուղղությամբ և մ.թ.ա. արդեն 867 թվականի վիճակով իրեն ենթարկեցրեց Հարավային Ասորիքը՝ առավել լայնացնելով սեփական թագավորության տարածքները, քան որևէ մեկն այդ արել էր իրենից առաջ:

Հաջողությամբ ավարտելով նաև այս գործը և, ըստ էության, իրենով անելով ողջ Ասորիքը՝ Ասորեստանի ռազմաշունչ արքան կրկին անդրադարձ կատարեց հյուսիսին: Արդյունքում՝ մ.թ.ա. 866 թվականի օգոստոսին Ասուրնացիլպար II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000) ասպատակեց Կորճայքի հարավն ու Աղձնիքը և նահանջեց[5], սակայն այս հարվածը էական հետևանքների չբերեց, իսկ Արամ II Մեծին էլ, ըստ էության, հաջողվեց պահել դիրքերը:

---

[1] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրություններից:
[5] Ասուրնացիլպար II-ին վերագրվող արձանագրությունից:

Մ.թ.ա. 859 թվականին Ասուրնացիլպար II-ը կնքեց իր մահկանացուն՝ սեփական որդի և հաջորդ Սալմանասար III-ին (մ.թ.ա. 859-824) թողնելով Ասորեստանի թագավորությունն իր ամենաուժեղ վիճակում, որում վերջինս երբևէ եղել էր: Այս առումով հարկ է նշել, որ Սալմանասար III-ը լիովին արժանի եղավ սեփական հորը՝ իր հիմնական գծերով շարունակելով վերջինիս արտաքին նվաճողական քաղաքականությունը: Սրա հետ միաժամանակ հարկ է ավելացնել նաև, որ նոր արքան, ի տարբերություն իր անմիջական նախնու, չուներ բոլոր սահմաններն անցնող վերջինիս դաժանությունը: Իր հերթին հարկ է նշել, որ Ասուրնացիլպար II-ի երկաթյա ձեռքի հեռանալն անմիջապես էլ անկայունացրեց դրությունը հենց նոր նվաճված տարածքներում: Սրա հետ միաժամանակ բնականաբար բարդացան գործերը նաև հյուսիսում, որտեղ Արարատյան թագավորությունն իր հերթին վերելքի ուղին էր բռնել:

Մ.թ.ա. 859[1] թվականին Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) անկանոն հարվածներ հասցնող Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակից (ընդհանուր մոտ 7.000) գրավեց Նինին, Արիդուն ու Աղձնիքի 100 բերդ[2], ինչից հետո մ.թ.ա. նույն 859 թվականին Շիլայա քաղաքի ճ-մ-ում (Աղձնիք) հաղթեց Աղձնիքի իշխանության իշխան Գագիկի գլխավորությամբ անկանոն հարվածներ հասցնող Աղձնիքի իշխանության բանակին[3]: Այսպիսով՝ Արարատյան թագավորության տիրակալի սահմանային բանակը անհաջողության մատնվեց, ինչից հետո, սակայն, գործի մեջ մտան վերջինիս գլխավոր ուժերը: Արդյունքում՝ մ.թ.ա. կրկին նույն 859 թվականին տեղի ունեցած Սուգունիայի ճ-մ-ում Արամ II Մեծի գլխավորած Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000), համառ մարտում արյունաքամ անելով Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 82.000), անկանոն հարվածներ հասցնելով նահանջեց[4], ինչից հետո հակառակորդը գրավեց Ռշտունիքի 14 բերդեր, սակայն ի վերջո հետ քաշվեց ելման դիրքեր[5]:

Մ.թ.ա. 858 թվականին Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) անկանոն հարվածներ հասցնող Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակից (մոտ 40.000) գրավեց Հայոց Միջագետքը ու Կորճայքի հարավ-արևելքը[6], որից հետո տիրեց նաև Ուաշթալ ամրոցին (Մինչեփրատյան Ծոփք, Բալահովիտ գավառ)[7]: Հիմնական հարվածը, սակայն, Սալմանասար III-ը նախատեսել էր հասցնել հաջորդ տարի:

Մ.թ.ա. 857 թվականի հունիսին Արամ II Մեծի գլխավորած Արմենիի և Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000) Արծկեի ճ-մ-ում (Տուրուբերան նահանգ, Բզնունիք գավառ, Վանա լճի հյուսիս ափին գտնվող հրվանդանի վրա) համառ մարտում ընդհարվեց Սալմանասար III-ի գլխավորությամբ Տիգրիսի գետահովիտ-Մինչեփրատյան Ծոփք-Եփրատի հուն-Բարձր Հայք-Տայք-Արարատի արևմուտք-Տուրուբերան երթուղով ասպատակելով արշաված Ասորեստանի թագավորության բանակի (մոտ 100.000) հետ և կանոնավոր նահանջեց դեպի արևելք[8]: Առջևում, սակայն, ավելի խոշոր մի ընդհարում էր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ Սալմանասար III-ի պատերազմների ժամանակագրությունը դեռևս վերջնականապես պարզ չէ: Հարկ է նշել նաև, որ, բացառությամբ այն արձանագրությունների, որոնք բերված են ստորև, Սալմանասար III-ին և Հայաստանի վերաբերվող կան ևս մի քանի այլ արձանագրություններ կամ դրանց պատառիկներ, սակայն, քանի որ դրանք շատ քիչ ինֆորմատիվ բնույթ ունեն, հատվածական են և հիմնականում կրկնում են արդեն իսկ բերվածներին, ես դրանք շարադրելը հարմար չգտա:

[2] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[3] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[4] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[5] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[6] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[7] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

[8] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

857 հուլիս – ***<u>Սիփան լեռան ճ-մ</u>*** (Տուրուբերան նահանգ, Բզնունիք գավառ, Վանա լճի հյուսիսային ափից մոտ 10 կմ հյուսիս)[1]

Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 90.000) մոտեցավ լեռան լանջերին բնական ամրություններով հարուստ մի վայրում Արամ II Մեծի գլխավորությամբ ամուր պաշտպանական դիրքեր գրաված Արարատյան և Արմենիի թագավորությունների միացյալ բանակին (մոտ 40.000), որը իր պաշտպանական դիրքերը շրջապատել էր 2 շարք հողաթմբերով ու ցցապարիսպներով: Հայկական բանակի առաջին շարքում դիրքեր գրավեց թեթև, իսկ երկրորդ շարքում՝ ծանր հետևակը: Հեծելազորը զբաղեցրեց երրորդ շարքը:

I փուլ – Ասորեստանի թագավորության բանակը անցավ հարձակման և ծանր կորուստներով հաղթահարեց Հայկական բանակի առաջին շարքի դիմադրությունը, որը նահանջեց ու ամրացավ երկրորդ շարքում:

II փուլ – Ասորեստանի թագավորության բանակը հարձակման անցավ Հայկական բանակի երկրորդ շարքի ուղղությամբ, սակայն, ծանր կորուստներ կրելով, հետ շպրտվեց:

III փուլ – Հայկական բանակը անցավ հակահարձակման և, շեշտակի հարվածով պարտության մատնելով թշնամու բանակին, շպրտեց վերջինիս ելման դիրքեր: Այնուհետև, սակայն, խուսափելով մարտի բռնվել բաց տարածությունում, Հայկական բանակը նահանջեց և կրկին ապաստանեց ամրացված դիրքերում:

IV փուլ – Մինչև օրվա վերջ Ասորեստանի թագավորության բանակը մի քանի գրոհներ ևս ձեռնարկեց, սակայն որևէ արդյունքի չհասավ:

Հայերը կորցրին 3.400, թշնամին մոտ 20.000 զինվոր:

Վերջին ճակատամարտից հետո Ասորեստանի թագավորության բանակը, ենթարկվելով Հայկական բանակի անկանոն հարվածներին, Վասպուրական-Կորճայք երթուղով հեռացավ Արարատյան թագավորության սահմաններից՝ գրավված պահելով Հայոց Միջագետքը: Հաջորդ հարվածը, սակայն, ուղղված էր լինելու արդեն Արմենիի թագավորությանը:

Մ.թ.ա. 856 թվականին Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) Արմենիի թագավորության բանակից (մոտ 1.000) պաշարեց Ուպպումու ամրոցը (Տարոն), սակայն չկարողացավ գրավել այն[2]: Դրանից հետո մ.թ.ա. 855 թվականին, Սալմանասար III-ի գլխավորած ռազմական մեքենան ոտնատակ տվեց Կորճայքն ու Աղձնիքը և կրկին նահանջեց[3], իսկ արդեն մ.թ.ա. 854 թվականին էլ նույն կերպ վարվեց Անդրեփրատյան Ծոփքի հարավում ու հարակից երկրամասերում[4]:

Վերջին արշավանքները Ասորեստանի մարտաշունչ տիրակալը ուղղել էր դեպի Հայաստանի արևմտյան և Ասորիքի հյուսիսային շրջաններ, որտեղ բավականին ամրապնդել էր սեփական դիրքերը: Արդյունքում, իրավիճակը համարելով վերջնականապես կարգավորված, Սալմանասար III-ը ի վերջո որոշեց հարված հասցնել արդեն Ասորիքին և վերականգնել հոր մահից հետո այստեղ կորսված սեփական դիրքերը: Այս առումով հարկ է նշել, որ, գիտակցելով իրենց գլխին կախված վտանգը, նույն այս ժամանակ Ասորիքի իշխանություններն իրենց հերթին միավորվել էին հակաասորեստանյան ուժեղ մի դաշինքում՝ արևելքից սպառնացող վտանգին փորձ կատարելով դիմադրություն կազմակերպել համատեղ ուժերով: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 853 թվականի Քարքարի ճ-մ-ում (Հյուսիսային Ասորիք, Օրոնտես գետի ափին) Սալմանասար III-ի գլխավորությամբ առաջխաղացած Ասորեստանի

[1] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրություններից:
[2] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

թագավորության բանակը (մոտ 120.000) անորոշ ելք ունեցած մարտում ընդհարվեց Դամասկոսի, Համմայի, Իսրայելի ու Եգիպտական թագավորությունների, Ակկայի, Արվադի, Սիդոնի և Տյուրոսի քաղաք-պետությունների, ամոնիացիների ու արաբների (63.000, որից 2.000 հեծյալ, 4.000 մարտակառք), ինչպես նաև Կիլիկիայի թագավորության (500) միացյալ բանակի հետ և ի վերջո նահանջեց[1]: Այսպիսով՝ Ասորիքում ձևավորված դաշնակցությանն, ըստ էության, հաջողվեց պահել դիրքերը, այն դեպքում, երբ Սալմանասար III-ը, հաշվի առնելով սեփական ռազմական մեքենայի կրած ծանր կորուստները, դրանից հետո մի քանի տարի շարունակ դադարեցրեց ակտիվ ռազմական գործողությունները:

Մ.թ.ա. 851 և մ.թ.ա. 850 թվականներին Սալմանասար III-ը անդրադարձ կատարեց Բաբելոնի թագավորության խնդիրին, որտեղ գահակալական ճգնաժամ էր առաջացել: Միաժամանակ, աստիճանաբար իրար բերելով ուժերը և պատրաստվելով հերթական հարվածը հասցնել արևմտյան ուղղությամբ, սկսած արդեն մ.թ.ա. 848 թվականից Ասորեստանի տիրակալի ռազմական մեքենան մի քանի համեմատականորեն մանր արշավանքներ ձեռնարկեց դեպի արևմուտք:

Որպես հետևանք՝ հիմնական հարվածը հասցվեց մ.թ.ա. 845 թվականին, սակայն էական հաջողություն այս անգամ ևս չարձանագրվեց: Դրանից հետո, առժամանակ կրկին վերադառնալով հյուսիսային հիմնախնդրին, մ.թ.ա. 844 թվականին Սալմանասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) ասպատակեց Աղձնիքը, Մինչեփրատյան Ծոփքն ու Բարձր Հայքը և նահանջեց[2], ինչից հետո որոշվեց հարված հասցնել Արմաննայի իշխանությանը:

Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 844 թվականին ինչ-որ տեղ Պարսկահայքում տեղի ունեցած ճակատամարտում անկանոն հարվածներ հասցնող Արմաննայի իշխանության բանակը (մոտ 30.000) հաղթեց Ասորեստանի թագավորության առաջխաղացած բանակին (մոտ 50.000) և հետ շպրտեց վերջինիս[3]: Հակասական արդյունք ունեցած այս գործողություններից հետո Սալմանասար III-ը կրկին դադարեցրեց իր ակտիվությունը հյուսիսային ուղղությամբ և սկսեց հերթական հարվածը նախապատրաստել արևմտյան ուղղությամբ:

Մ.թ.ա. 841 թվականին Ասորեստանի թագավորության հսկայական բանակը վերջինը ու վճռականը լինելուն կոչված մի արշավանք ձեռնարկեց Ասորիքի ուղղությամբ և արդյունքն այս անգամ ի վերջո մեծապես գոհացուցիչ եղավ: Իրոք, արդյունքում դիտարկվող ժամանակաշրջանում Ասորիքի իշխանությունների մեջ ամենաուժեղը համարվող Դամասկոսի թագավորության բանակը վճռական ճակատամարտում ի վերջո պարտություն կրեց, թեև բուն Դամասկոսը Սալմանասար III-ին գրավել այդպես էլ չհաջողվեց: Փոխարենը, սակայն, ինչպես հարկն է ահաբեկված Ասորիքի բոլոր մնացած մանր թագավորություններն և իշխանությունները, այդ թվում նաև ծովափնյա քաղաք-պետությունները, Սալմանասար III-ին իրենց հնազանդության երաշխիքներն ուղարկեցին: Այս առումով հատկանշական էր հատկապես նաև հանգամանքը, որ երկու ուղտ, մեկ գետաձի և Մերձավոր Արևելքին անսովոր մի քանի այլ աֆրիկյան կենդանիներ էլ, որպես նվեր ու որպես իր դրական տրամադրվածության արտահայտություն, Սալմանասար III-ին ուղարկեց նաև Եգիպտական թագավորության փարավոն Օսորկոն II-ը (872-837): Այս առումով հետաքրքիր է նշել, որ վերջին հանգամանքը գրեթե երկու հարյուրամյակով հետաձգեց ասիական ու աֆրիկյան առաջատար այս երկու տերությունների ընդհարումը, որին կոնկրետ այդ պահին նույն այդ տերություններից և ոչ մեկն այնուհանդերձ պատրաստ չէր: Այսպիսով, որպես ընդհանուր արդյունք, Ասորեստանի տիրակալը կարող էր իր վերջին այդ ձեռնարկումից լիովին գոհ մնալ՝ Սալմանասար III-ը, մի բան էլ դեռ ավելին, հաստատեց բոլոր այն նվաճումները, որոնք նրան որպես ժառանգություն

[1] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրություններից:
[3] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:

հասել էին հորից: Սա, ըստ էության, առավելագույնն էր, որին Ասորեստանի թագավորությունը հասավ իր հզորության հերթական այս փուլում:

Հետ քաշելով սեփական հարվածային բռունցքը Ասորիքից՝ մ.թ.ա. 840 թվականին Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան հարված հասցրեց Կիլիկիայի հարավ-արևելքին[1], իսկ մ.թ.ա. 839 թվականին էլ կրկնեց հարվածը[2]: Այս առումով հարկ է նշել, որ, եթե վերջին հարվածների ռազմական հետևանքները մեծ հաշվով համեստ էին, ապա քաղաքական հետևանքները հսկայական էին: Իրոք, որպես այս հարվածի անմիջական հետևանք, մինչ այդ առանց այդ էլ ամուր վիճակում չգտնվող Կիլիկիայի թագավորությունը վերջնականապես տրոհվեց մի քանի մասերի, որոնց շարքում կարելի է մատնանշել.

- Տավալի իշխանությունը,
- Սամալի իշխանությունը,
- Կուի իշխանությունը,
- Գուրգումի իշխանությունը,
- Կումուխի իշխանությունը,
- Պաթթինայի իշխանությունը,
- Ադանայի իշխանությունը,
- Անամուռի իշխանությունը:

Այս իշխանությունների մեջ քիչ թե շատ առաջնային նշանակություն ուներ Տավալի իշխանությունը, որտեղ սկսեց իշխել Թուվաթին (մ.թ.ա. մոտ 840-780): Ինչ վերաբերում է Սամալի իշխանությանը, ապա այստեղ, հաջորդելով իրար, իշխեցին Թուվաթին (մ.թ.ա. մոտ 840-780), Ջաբարուն (մ.թ.ա. մոտ 880-870), նրա որդի Բաման (մ.թ.ա. մոտ 870-860), վերջինիս եղբայր Հաջան (մ.թ.ա. մոտ 860-850), նրա որդի Շահլը (մ.թ.ա. մոտ 850-840), վերջինիս եղբայր Կալամուն (մ.թ.ա. մոտ 840-830), Պանամուն (մ.թ.ա. մոտ 830-800), Բարսուրը (մ.թ.ա. մոտ 800-770), Ասպիյավուն (մ.թ.ա. մոտ 770-740), Պանամուն (մ.թ.ա. մոտ 740-732) և նրա որդի Բարակիբը (մ.թ.ա. մոտ 732-720):

Մ.թ.ա. 840 թվականին Արամ II Մեծը կնքեց իր մահկանացուն և Արարատյան թագավորության գահին նրան հաջորդեց իր որդի Լուսաբերը (մ.թ.ա. 840-835): Իր հերթին, մ.թ.ա. 838 թվականին իր մահկանացուն կնքեց նաև Արմենիի թագավորության արքա Կախպակը և նրան էլ հաջորդեց արդեն իր որդին՝ Փառնվազ I-ը (մ.թ.ա. 838-805):

Օգտվելով գահակալական այս փոփոխություններից՝ մ.թ.ա. 838 թվականին Ասորեստանի թագավորության բանակը, կրկին վերադարձած տեղական խնդիրներին, ասպատակեց Կորճայքը և նահանջեց[3]: Դրանից հետո, սակայն, հարվածը կրկին դեպի արևմուտք գնաց և արդյունքում մ.թ.ա. 836 թվականին Ուետեշի ճ-մ-ում (Լեռնային Կիլիկիա (= Տավալ)) Սալմանասար III-ի գլխավորությամբ Անդրեփրատյան Ծոփքով առաջխաղացող Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) հաղթեց Կիլիկիայի իշխանությունների ու Արմենիի թագավորության միացյալ բանակին (մոտ 50.000)[4]:

Մ.թ.ա. 835 թվականին Լուսաբերը մահացավ և Արարատյան թագավորության գահն անցավ նրա որդի Արթուր I-ին (մ.թ.ա. 835-828): Կրկին օգտվելով Արարատյան թագավորության գահի վրա գահակալի փոփոխությունից՝ մ.թ.ա. 835 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 60.000) ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը և նահանջեց[5], մ.թ.ա. 833 թվականին ոտնատակ տվեց Կիլիկիայի հարավ-արևելքը ու հետ քաշվեց[6], իսկ մ.թ.ա. 832 թվականին էլ կրկնեց նախորդ հարվածը՝ նույն արդյունքով[7]: Դրանից հետո, նոր հարվածը համարելով բավարար չափով

[1] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[6] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[7] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

նախապատրաստված, առաջիկա տարում Սալմանասար III-ը հարվածը կրկին ուղղեց Արարատյան թագավորության ուղղությամբ, սակայն մ.թ.ա. 831 թվականին Արածանիի ճ -մ-ում (Մինչեփրատյան Ծոփք, Հաշտեանք գավառ) Արթուր I-ի և Փառնվազ I-գլխավորած Արմենիի ու Արարատյան թագավորությունների միացյալ բանակը (մոտ 70.000) հաղթեց Դայան-Ասուր տուրտանի գլխավորությամբ Արածանին գետանցած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 100.000)[1]: Հայերի վերջին այս հաջողությունը կարևոր նշանակություն ունեցավ դեպի Հայաստանի կենտրոնական շրջաններ հակառակորդի հետագա առաջխաղացումը կասեցնելու հարցում, սակայն սահմանային ընդհարումները դեռևս շարունակվելու էին:

Մ.թ.ա. 830 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Կորճայքն ու Աղձնիքը և նահանջեց[2], որից հետո մ.թ.ա. նույն 830 թվականին ոտնատակ տվեց Կիլիկիայի հարավ-արևելքը ու կրկին հետ քաշվեց[3]: Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան Կորճայքին և Աղձնիքին ևս մեկ անգամ հարվածեց մ.թ.ա. 829 թվականին[4], իսկ մ.թ.ա. 828 թվականին էլ, հաշվի առնելով Արթուր I-ի մահը, ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը, թեև արդյունքում կրկին հետ քաշվեց[5]: Արթուր I-ին Արարատյան թագավորության գահին հաջորդեց նրա որդի Ասպունին (մ.թ.ա. 828-810), որը խոհեմ և գործունյա մի անձնավորություն էր: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հօգուտ այս տիրակալի դասավորվեցին նաև տարածաշրջանի քաղաքական զարգացումները:

Մ.թ.ա. 824 թվականին կյանքից հեռացավ Ասորեստանի թագավորության պատմության մեջ, թերևս, ամենաշատը պատերազմած Սալմանասար III-ը, որն իրենից հետո թողեց արտաքինից փայլուն, սակայն ներքնապես հիվանդ մի պետություն: Իրոք, ինչպես արժանահիշատակ Թուկուլտի-Նինուրտա I-ի պարագայում եղավ, այս անգամ արդեն Սալմանասար III-ն էր, որ, ավելին, քան սեփական նախնիներից որևէ մեկը, Ասորեստանի թագավորությունը հասցրել էր իր հզորության գագաթնակետին և առավելագույնս լայնացրել էր նրա սահմանները: Խնդիրը, սակայն, այս անգամ ևս կրկին հակառակ կողմն ուներ, քանզի լայնածավալ ռազմական այս ձեռնարկումները նյութական աննախադեպ ծանր բեռի տեսքով արդյունքում հերթական անգամ նստել էին վերջինիս հպատակների ուսերին: Սալմանասար III-ը դեռևս պառկած էր մահվան մահճում, երբ, վայելով տոհմիկ առևտրական ավագանու աջակցությունը, նրա դեմ ապստամբություն բարձրացրեց հորենական ժառանգությունից զրկված վերջինիս ավագ որդի Ասուրդանիպալը: Ապստամբությունը մեծ ծավալներ ընդունեց, սակայն Սալմանասար III-ի հաջորդ նշանակված նրա մյուս որդի Շամշիադադի օգտին եղավ այն հանգամանքը, որ Ասուրնացիլպար II-ի և Սալմանասար III-ի կողմից կերտված ռազմավարչական համակարգը, նույնիսկ անկախ առաջնորդի առկայությունից էլ, բախտորոշ այդ պահին հստակ գործեց, իսկ բանակն էլ պահպանեց սեփական հավատարմությունը գործող տիրակալին՝ ընդունելով վերջինիս կամքը: Սալմանասար III-ի մահվան պահին Ասուրդանիպալի ապստամբությունը դեռևս ընթանում էր, սակայն Ասորեստանի թագավորության նոր արքա հռչակված Սալմանասար III-ի կրտսեր որդի Շամշիադադ V-ին (824-811), թեև ոչ առանց դժվարության, բայց այնուհանդերձ ի վերջո հաջողվեց ճնշել եղբոր ելույթը: Արդյունքում, սակայն, եթե Շամշիադադ V-ի կառավարման շրջանում Ասորեստանի թագավորությունը դեռևս պահպանում էր նախկին հարակայուն ուժը, ապա ամեն դեպքում արդեն ոչ միայն հնարավոր չէր մտածել նոր նվաճումների մասին, այլև վերջին հաշվով հնարավոր չեղավ պահել նաև նախորդ ձեռքբերումները:

Նույն այս ժամանակ Արարատյան թագավորության արքա Ասպունին իր հերթին, օգտվելով հարավային հարևանի համար ստեղծված ծանր դրությունից, հիմք դրեց

[1] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] Սալմանասար III-ին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

նախկինից կտրուկ կերպով տարբերվող մի նոր քաղաքականության, որի էությունը հանգում էր այն բանին, որ Արարատյան թագավորությունն ինքն էր սկսում հայկական մյուս պետական միավորների, այդ թվում նաև Արմենիի թագավորության, նկատմամբ հավակնել միանձնյա առաջնորդի դերին: Վերջին հանգամանքն իր հերթին, սակայն, ինքնիշխանության երկար հարյուրամյակներին արդեն իսկ սովորած հայկական պետական միավորների հետ երկարատև առճակատման ծանր մի դուռ բացեց, թեև նոր այս քաղաքականությունն ի վերջո պսակվեց հաջողությամբ, իսկ Հայոց պետականության միասնականության վերականգման հարցում էլ այս ամենը վերջին հաշվով հսկայական դրական նշանակություն ունեցավ:

Այսպես թե այնպես, սակայն արդեն մ.թ.ա. 824[1] թվականին Ալաշկերտի ճ-մ-ում (Արարատ, Բագրևանդ գավառ, Արաքսի վերին հոսանքից մոտ 22 կմ հարավ) Արարատյան թագավորության բանակը (17.220, որից 1.460 հեծյալ, ինչպես նաև 66 մարտակառք) հաղթեց Տայքի, Գուգարքի, Խաղկտիքի և Արցախի իշխանությունների միացյալ բանակին (մոտ 10.000), որից հետո առանց մարտերի մտավ Հզոր Կուկրու ամրոց ու Ախուրյանի հովտով հասավ մինչև Կղարջք: Գերվեցին 1.720 տղամարդ և 1.670 կին, վերցվեցին 126 ձի, 13.540 գլուխ խոշոր և 20.785 գլուխ մանր եղջերավոր անասուններ[2]: Արդյունքում՝ Հայաստանի հյուսիսում և արևելքում գտնվող բոլոր իշխանությունները ընդգրկվեցին Արարատյան թագավորության կազմում, ինչը զգալի չափով մեծացրեց Ասպունիի պետության ռազմական հզորությունը: Հարավային վտանգը, սակայն, նույն այս ժամանակ դեռևս լիովին չեզոքացված չէր և արդյունքում Արարատյան թագավորության գահակալը այդպես էլ հնարավորություն չունեցավ լրիվ ծավալով կյանքի կոչել սեփական քաղաքական ծրագրերը:

Մ.թ.ա. 823 թվականին Շամշիադադ V-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Աղձնիքը ու Կորճայքը և նահանջեց[3]: Առաջին հարվածը հայերը բաց էին թողել, բայց փոխարենն արդեն մ.թ.ա. 822 թվականին, հակառակորդի հերթական հարվածի ժամանակ, Աղձնիքի ճ-մ-ում Ասպունի արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000), օգտվելով մարտի ընթացքում թշնամու բանակի կազմում գործող Աղձնիքի իշխանության բանակի (մոտ 7.000)՝ թիկունքից հասցված հարվածից, հաղթեց Շամշիադադ V-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 70.000)[4]: Դրանից հետո, զարգացնելով խոշոր այս հաջողությունը, մ.թ.ա. նույն 822 թվականին Արարատյան թագավորության բանակը (11.878, որից 9.174 հեծյալ, ինչպես նաև 106 մարտակառք) Ասորեստանի թագավորության բանակից (մոտ 3.000) գրավեց Արդնին և Կորճայքի հարավ-արևելքը, որից հետո, շարունակելով արշավանքը ու մտնելով Մեհշտա, Կուան, Շարիտուն և Նիգիբուն (Կորճայքի հարավ-արևելք), իր գերիշխանությանը ենթարկեցրեց Պարսքը (Արևմտյան Պարսկաստան): Գերվեցին զգալի քանակությամբ մարդիկ, վերցվեցին 1.120 ձի, 12.000 գլուխ խոշոր և 5.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 65 ուղտ, ինչպես նաև այլ տեսակի ռազմավար: Ի պատիվ այս հաղթանակի Ասպունիի հրամանով տնկվեցին սոսյաց անտառներ և կառուցվեցին տաճարներ[5]: Վերջին իրադարձություններում Շամշիադադ V-ի թագավորությունը շոշափելի հարված էր ստացել, սակայն այն դեռևս պահպանել էր զգալի հարվածային հնարավորություններ:

Արդյունքում՝ մ.թ.ա. 821 թվականին Շամշիադադ V-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Պարսկահայքը ու Կորճայքը և

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ Ասպունիի, Մենուայի, Արա III Մեծի, Արթուր II-ի, որոշակիորեն նաև հաջորդ արքաների կողմից ոչ Ասորեստանի դեմ մղված պատերազմների ժամանակագրությունը դեռևս վերջնականապես պարզ չէ: Սույն աշխատությունում տրվել է իմ կողմից ամենահավանականը համարված ժամանակագրական պատկերը, սակայն հարկ եմ համարում հատկապես ընդգծել, որ առաջարկված ժամանակագրական սխեման դեռևս ոչ մի կերպ չի կարելի համարել վերջնական:

[2] Իշպուինիին և Մենուային վերագրվող արձանագրություններից:

[3] Շամշիադադ V-ին վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

[4] Շամշիադադ V-ին վերագրվող արձանագրությունից:

[5] Իշպուինիին և Մենուային վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

նահանջեց[1], որից հետո մ.թ.ա. 818[2], մ.թ.ա. 817[3] ու մ.թ.ա. 816 թվականներին հարված հասցրեց արդեն միայն Կորճայքին, թեև ի վերջո կրկին հետ քաշվեց ելման դիրքեր[4]: Մարտական այս գործողությունները, սակայն, Շամշիադադ V-ին վերջին հաշվով որևէ հաջողություն չբերեցին և, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 811 թվականին վերջինս կնքեց իր մահկանացուն ու գահն անցավ նրա մանկահասակ որդի Ադադնիրարի III-ին (մ.թ.ա. 811-783), Ասորեստանի թագավորություն արդեն կորցրել էր իր երբեմնի հզորության զգալի մասը, իսկ Արարատյան թագավորությունն էլ, սրան հակառակ, գտնվում էր վերելքի ուղու վրա: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հանգամանքին ոչ քիչ չափով նպաստեց նաև այն, որ մանկահասակ Ադադնիրարի III-ի իշխանության սկզբնական տարիներին երկիրը կառավարում էր վերջինիս մայր Շամիրամը:

Գլուխ 3
Հայկական Չորրորդ գերիշխանությունը

Մ.թ.ա. 810 թվականին Ասպունիի մահից հետո Արարատյան թագավորության գահն անցավ նրա որդի Մենուային (մ.թ.ա. 810-786), որը ռազմական, վարչական և կազմակերպչական հսկայական ունակությունների տեր մի անձնավորություն էր: Հենց այս ժամանակից սկսած էլ Ասորեստանի և Արարատյան թագավորությունների հարաբերություններում ռազմավարական նախաձեռնությունը գրեթե յոթ տասնամյակով անցավ երկու այս թագավորություններից վերջինին: Արդյունքում, օգտվելով հարավային վտանգի նվազումից, Մենուան ամենից առաջ սկսեց ամրանալ հյուսիսում:

Մ.թ.ա. նույն 810 թվականին Մենուա արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 50.000) Կոլխիդայի թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեց Լիխունիան (Արևմտյան Վրաստան, Ռիոնի գետի մոտ)[5], ինչի արդյունքում Կոլխիդայի թագավորությունն ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը: Դրանից հետո Արարատյան թագավորության գահակալը անդրադարձ կատարեց արդեն Տայքի իշխանությանը, որը, ամենահեռավոր կերպով, համարվում էր Հայայի արդեն վաղուց վերացած թագավորության հետնորդը: Արդյունքում՝ մ.թ.ա. կրկին նույն 810 թվականին Շաշիլուի ճ-մ-ում (Տայքի հարավ-արևմուտք) Մենուա արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) հաղթեց Ուտուպուրշի իշխանի գլխավորած Տայքի իշխանության բանակին (մոտ 3.000), որից հետո առանց մարտերի մտավ նաև Զուա (Արարատ, Վանանդ) և Օլթի (Տայք, Բուա գավառ)[6]: Տայքի իշխանությունն ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը:

Կարգավորելով գործերը հյուսիսում՝ հաջորդ հարվածը Մենուան հասցրեց Արմենիի թագավորությանը՝ ըստ էության վիճարկելով արդեն նույնիսկ այն ձևական գերիշխանությունը, որը Հայկազունիների այս թագավորությունն ուներ Հայոց մնացած թագավորությունների և իշխանությունների նկատմամբ: Այսպիսով՝ Մենուան փաստորեն առաջինն էր, որ, զարգացնելով հոր մտահղացումը, արդեն նույնիսկ փաստական մակարդակում փորձ կատարեց ամրապնդել Արարատյան թագավորության ռազմաքաղաքական առաջնայնության հարցը Հայոց մնացած այլ պետական միավորների շարքում: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հանգամանքը միանգամից և անվերադարձ կերպով փչացրեց Վանի գահակալների հարաբերությունները Արմենիի թագավորության տիրակալների հետ, իսկ բուն պայքարն էլ, ուժեղանալով կամ թուլանալով, ինչպես նաև ստանալով խուլ մրցակցության կամ բացահայտ

[1] Շամշիադադ V-ին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] Մենուային վերագրվող արձանագրություններից:
[6] Մենուային վերագրվող արձանագրություններից:

ընդհարումների մի բնույթ, Արարատյան և Արմենիի թագավորությունների միջև դրանից հետո շարունակվեց ամբողջ երկու հարյուրամյակ:

Այսպես թե այնպես, սակայն արդյունքում, որպես սկիզբ, մ.թ.ա. 809 թվականին Մենուա արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Փառնվազ I-ի գլխավորած Արմենիի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 10.000) գրավեց Կուտմուն, Աթումեն և Կուլիմերին, ինչպես նաև Տարոնի 200 բերդ, որից հետո մտավ Ուռհա[1]: Արմենիի թագավորությունն ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը, իսկ մ.թ.ա. 805 թվականին Փառվազ I-ի մահից հետո նրան հաջորդած վերջինիս որդի Փառնակ II-ն (մ.թ.ա. 805-765) էլ, ըստ էության, ընդունեց իրերի նույն այդ դրությունը: Հաջողությամբ ավարտելով մրցակցության առաջին փուլը Արմենիի թագավորության հետ՝ մ.թ.ա. նույն 809 թվականին Մենուա արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Մելիտեի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 10.000) գրավեց Շեբետերնան, Խուզանին և Ծուպանին, ինչի արդյունքում Մելիտեի իշխանությունը ևս ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը[2]:

Ցանկանալով առնել Արարատյան թագավորության եռանդուն առաջխաղացման դեմը՝ մ.թ.ա. 808 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Հայոց Միջագետքի արևելքը և նահանջեց[3], իսկ մ.թ.ա. 807 թվականին էլ հարված հասցրեց Կորճայքին ու Պարսկահայքին, թեև արդյունքում կրկին նահանջեց[4]: Ի պատասխան սրա՝ մ.թ.ա. 806 թվականին Մենուա արքայի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Աղձնիքը և Հայոց Միջագետքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[5], սակայն սրան մ.թ.ա. նույն 806 թվականին իր հերթին հաջորդեց Ասորեստանի թագավորության ռազմական մեքենայի հարվածը Կորճայքին ու Պարսկահայքին, թեև կրկին առանց էական արդյունքի[6]:

Ինչ-որ տեղ սկսած մ.թ.ա. 805 թվականից .արդեն բավականին հասունացած Ադադնիրարի III-ը Ասորեստանի թագավորությունում սկսեց ինքնուրույն կառավարել, թեև նրա մայր Շամիրամը դրանից հետո ևս երկար տարիներ շարունակեց պահպանել սեփական հսկայական ազդեցությունը: Արդյունքում, փորձ կատարելով ի վերջո կրկին տիրել ռազմավարական նախաձեռնությանը Արարատյան թագավորության հետ հարաբերություններում, Ադադնիրարի III-ը ակտիվ գործունեություն ծավալեց: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 801 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Աղձնիքը և նահանջեց[7]՝ այդպես էլ, սակայն, որևէ էական արդյունք չարձանագրելով: Եվս երկու արշավանք Աղձնիքի ուղղությամբ Ադադնիրարի III-ի ռազմական մեքենան ձեռնարկեց մ.թ.ա. 798[8] և 791[9] թվականներին, սակայն ավելիին, քան Հայոց այս երկրամասն ասպատակելն ու ավարով հետ քաշվելն էր, կրկին հնարավոր չեղավ անել:

Մ.թ.ա. 786 թվականին, դրած Արարատյան թագավորության հզորացման հիմքը, կյանքից հեռացավ Արարատյան թագավորության արքա Մենուան և նրան հաջորդեց որդին՝ Արա III Մեծը (մ.թ.ա. 786-766): Արարատյան թագավորության նոր տիրակալը հոր իսկական շարունակությունն էր այդ թվում նաև քաղաքական առումով, սակայն նա աչքի էր ընկնում հորից ավելի մեծ եռանդով, ինչպես նաև ավելի մեծ ռազմական ունակություններով, թեև ցավոք, դատելով ըստ ամենայնի, Արա III Մեծը նաև առողջական

---

[1] Մենուային վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Մենուային վերագրվող արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] Մենուային վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] Մենուային վերագրվող արձանագրությունից:
[6] Մենուային վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[7] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[8] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[9] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

զգալի խնդիրներ ուներ: Այսպես թե այնպես, սակայն տաղանդավոր ռազմաքաղաքական այս գործչին էլ հենց արդյունքում վիճակված էր լինելու ի վերջո ոչ միայն կրկին իրար բերել վերջին հազարամյակում ցրված Հայոց պետականության բեկորները, այլև հասնել Հայոց հերթական գերիշխանությանը տարածաշրջանում: Սկզբում, սակայն, բարդ եղավ, քանզի հսկայական հեղինակության հասած Մենուայի մահը իր հետ բացասական զարգացումներ էր բերել, ի դեմս այս արքայի գերիշխանությունն ընդունած իշխանությունների անհնազանդության, և Արա III Մեծն ամենից առաջ ձեռնամուխ եղավ հենց այս խնդրի լուծմանը:

Մ.թ.ա. 786 թվականի գարնանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Տայքի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Զուան, ինչպես նաև 453 բերդ: Գերվեցին 15.181 երեխա, 2.734 տղամարդ, 10.604 կին, վերցվեցին 4.426 ձի, 10.478 գլուխ խոշոր և 73.770 գլուխ մանր եղջերավոր անասուններ[1]: Տայքի իշխանության ապստամբությունը ճնշվեց: Կարգավորելով գործերը հյուսիսում՝ Արարատյան գահակալն իր ռազմական մեքենան ուղղեց դեպի Հայաստանի արևելյան շրջաններ և մ.թ.ա. նույն 786 թվականի գարնանը ասպատակեց Արցախը ու Արարատի արևելքը՝ վերացնելով Հայաստանի արդեն արևելքում և հյուսիս-արևելքում տիրող ապստամբական տրամադրությունները[2]: Այս ընթացքում, օգտվելով առիթից, մ.թ.ա. 786 թվականի ամռանը Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Կորճայքի արևելքը և Պարսկահայքի հարավը, սակայն, խուսափելով Արա III Մեծի գլխավորությամբ առաջխաղացած Արարատյան թագավորության բանակից (մոտ 80.000), նահանջեց[3]:

Համարելով խնդիրները հյուսիսում դեռևս չլուծված՝ մ.թ.ա. 785 թվականի ամառվանից մինչև աշուն Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) ասպատակեց Տայքը, Արարատը, Գուգարքը և Կոլխիդայի թագավորության հարավը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 19.255 երեխա, 10.140 տղամարդ, 23.280 կին, վերցվեցին 1.104 ձի, 35.016 գլուխ խոշոր և 1.829 գլուխ մանր եղջերավոր անասուններ[4]: Արշավել դեպի Հայաստանի արևելյան շրջաններ, սակայն, Արարատյան թագավորության գահակալն այս անգամ չհասցրեց, քանի որ հարավում կրկին սպառնալից դիրք էր գրավել Ադադնիրարի III-ը: Արդյունքում՝ մ.թ.ա. 784 թվականի գարնանը Աղձնիքի ճ-մ-ում Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 80.000) հաղթեց Ադադնիրարի III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 100.000)[5]: Այս հաղթանակը բեկումնային նշանակություն ունեցավ Ասորեստանի և Արարատյան թագավորությունների հարաբերություններում՝ վերջնականապես զրկելով հարավային գիշատչին Հայաստանի նկատմամբ հավակնություններից: Միաժամանակ այն իր հերթին իրենով կարծես նաև ամրագրեց Ադադնիրարի III-ի ռազմաքաղաքական գծի լիակատար տապալումը և այս առումով, թերևս, հատկանշական էր, որ սրանից հետո կարճ ժամանակ անց Ադադնիրարի III-ը կնքեց իր մահկանացուն:

Կարգի գցելով գործերը հարավում և ցանկանալով վերջնականապես լուծել նաև հյուսիսային խնդիրները՝ մ.թ.ա. 784 թվականի ամռանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) ասպատակեց Արարատի արևելքը, Արցախը ու Գուգարք՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[6]: Դրանից հետո, հարվածն ուղղելով դեպի արևմուտք, մ.թ.ա. 784 թվականի աշնանը Արարատյան թագավորության գահակալը հարված հասցրեց

[1] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[5] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[6] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:

Մինչեփրատյան Ծոփքին՝ վերացնելով նաև այստեղ տիրող ապստամբական տրամադրությունները[1]: Այնուհետև, զարգացնելով հաջողությունը, մ.թ.ա. 784 թվականի աշնանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Մելիտեի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Մուրուզուն, Ուբարուգիլդունին և Կուրպիրան (Անդրեփրատյան Ծոփք): Գերվեցին 9.279 տղամարդ և 11.000 կին, վերցվեցին 1.280 ձի, մեծ քանակությամբ խոշոր և 126.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ[2]:

Շարունակելով առաջխաղացումը արևմտյան ուղղությամբ՝ մ.թ.ա. 783 թվականի գարնանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության մասերի բաժանված բանակը (մոտ 80.000) Մելիտեի և Ադանայի իշխանությունների միացյալ բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Ուրմանին, Մելիտեն, Պիտեիրան, Խուրման (Անդրեփրատյան Ծոփք) ու Ադանան (Դաշտային Կիլիկիա, Սեյհան գետի աջ ափին): Գերվեցին 2.539 երեխա, 8.698 տղամարդ, 18.047 կին, վերցվեցին 17.962 գլուխ խոշոր և մեծ քանակությամբ մանր եղջերավոր անասուններ: Արդյունքում՝ Մելիտեի և Ադանայի իշխանությունների ապստամբությունը ճնշվեց, ապստամբների բանակի գերի վերցված 6.600 ռազմիկներ էլ արդեն տարվա վերջում վերաբնակեցվեցին Արարատյան դաշտում, երբ նրանց միջոցով հաջորդ տարի Ոստան Հայոց գավառում հիմնադրվեց Երևան ամրոցը[3]:

Ավարտելով գործերը արևմուտքում՝ մ.թ.ա. 783 թվականի ամռանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատի արևելքը և Արցախը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 8.648 երեխա, 2.655 տղամարդ. 8.497 կին, վերցվեցին 1.083 գլուխ խոշոր և 11.626 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 232 ձի[4]: Նույն այս ժամանակ, սակայն, հարավում առաջացած հոգսերը Հայոց եռանդուն այս գահակալին կրկին ստիպեցին անդրադարձ կատարել Ասորեստանի խնդրին:

Մ.թ.ա. 783 թվականին Ադադնիրարի III-ի մահից հետո Ասորեստանի թագավորության գահին նրան հաջորդեց իր որդի Սալմանասար IV-ը (մ.թ.ա. 783-773): Արդյունքում՝ Ասորեստանի թագավորության նոր տիրակալը, դեռևս ակնհայտորեն լավ չպատկերացնելով ուժերի ստեղծված իրական հարաբերակցությունը Արարատյան թագավորության հետ, անմիջապես էլ հարձակման անցավ հյուսիսային ուղղությամբ, սակայն մ.թ.ա. 783 թվականի աշնանը Աղձնիքի ճ-մ-ում Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) հաղթեց Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 100.000)[5]:

Մ.թ.ա. 782 թվականին Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Մինչեփրատյան Ծոփքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 2.539 երեխա, 8.698 տղամարդ, 18.047 կին, վերցվեցին 17.962 գլուխ խոշոր և 20.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև զգալի քանակությամբ ձիեր[6]:

Նույն այս ժամանակ Սալմանասար IV-ը կրկին ակտիվացավ, թեև հարվածն այս անգամ այլ կողմ ուղղեց: Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 781 թվականին Մահկերտ տուն գավառի ճ-մ-ում Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 80.000) հաղթեց Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 80.000), երբ թշնամին այլ կորուստների թվում տվեց նաև 11.839 գերի[7]: Մ.թ.ա. 780 թվականին նույն Մահկերտ տուն գավառում տեղի ունեցած հերթական ճակատամարտում Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը

---

[1] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[3] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[4] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[5] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[6] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[7] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

(մոտ 80.000) կրկին հաղթեց Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 80.000), ընդ որում հակառակորդի բանակի կորուստներն այս անգամ կազմեցին 11.439 սպանված և 20.000 գերի[1]: Ավելին, զարգացնելով հաջողությունը, մ.թ.ա. 780 թվականին Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) ասպատակեց Պարսքի իշխանության տարածքը, ինչպես նաև Հարավային Միջագետքը և նահանջեց: Գերվեցին 18.827 հոգի, վերցվեցին 6.527 գլուխ խոշոր և 33.203 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 606 ձի[2]: Վերջին գործողությունը կարևոր էր հարավային մրցակցին արևելքից թևանցելու և այս կողմից վերջինիս շրջապատումն իրականացնելու ռազմավարական ծրագիրը կյանքի կոչելու առումով:

Մ.թ.ա. 779 թվականին Արարատյան թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Տայքի իշխանության տարածքը, վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[3], սակայն առաջնայինը կրկին հարավային ճակատն էր, որտեղ շարունակվում էին պատերազմական գործողությունները Ասորեստանի թագավորության հետ: Արդյունքում՝ Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության ռազմական մեքենան վերջին տարիների համար պատերազմի արդեն սովորական թատերաբեմի վերածված Մահկերտ տուն գավառում մ.թ.ա. նույն 779 թվականին կրկին հաղթանակ տարավ Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության ռազմական մեքենայի նկատմամբ[4], հետո էլ հենց նույն տարում կրկնեց հաղթանակը[5]:

Մ.թ.ա. 778 թվականին Մահկերտ տուն գավառի ճ-մ-ում Արա III Մեծի գլխավորությամբ գործող և մանր հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակը (մոտ 90.000) հերթական անգամ հաղթեց Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 90.000): Գերվեցին 18.243 մարդ, վերցվեցին 22.500 գլուխ խոշոր և 36.830 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 790 ձի, 100 ուղտ[6]: Դրանից հետո մ.թ.ա. 777 թվականին Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը: Գերվեցին 18.827 մարդ, վերցվեցին 6.257 գլուխ խոշոր և 33.203 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 600 ձի և 184 ուղտ: Արդյունքում՝ Արմաննայի իշխանությունն ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը[7]:

Մ.թ.ա. 776 թվականին Մահկերտ տուն գավառում տեղի ունեցած հերթական, բայց պատերազմաշարքի այս շղթայում, թերևս, վերջին ճակատամարտում Արա III Մեծի գլխավորությամբ անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակը (մոտ 80.000) հերթական անգամ հաղթեց Սալմանասար IV-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 90.000)[8]: Այս հաղթանակը Ասորեստանի թագավորության հետ հարաբերություններում վերջնականապես ամրապնդեց պաշտոնական Վանի ձեռքում գտնվող ռազմավարական նախաձեռնությունը, որը դրանից հետո հարձակման անցավ արդեն հակառակորդի բուն տարածքի ուղղությամբ:

Մ.թ.ա. 775 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 30.000) ասպատակեց Կիլիկիայի հարավ-արևելքը և նահանջեց[9], իսկ մ.թ.ա. նույն այդ 775 թվականին էլ արդեն Արարատյան թագավորության բանակն (մոտ 70.000) ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 6.471 մարդ, վերցվեցին 2.251 գլուխ խոշոր և 8.205

[1] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[3] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[4] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[6] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից: «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[7] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[8] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[9] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 286 ձի[1]: Դրանից հետո մ.թ.ա. 775 թվականին Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատը և, վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[2], մ.թ.ա. 774 թվականի գարնանը նմանատիպ պատժիչ մի արշավանք էլ իրականացրեց Արմաննայի իշխանության ուղղությամբ՝ գերվելով 7.183 մարդ, վերցվեցին 4.990 գլուխ խոշոր և 19.550 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 290 ձի, 101 ուղտ[3]: Նախապատրաստվում էր վերջնականը և վճռականը լինելուն կոչված հարված Ասորեստանի թագավորության ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[3] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:

774 ամառ – ***Զիմրիի ճ-մ*** (Նինվեից 25 կմ հյուսիս)[1]

Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) մոտեցավ Սամսիլա տուրտանի գլխավորությամբ բարձունքներում ամուր պաշտպանական դիրքեր գրաված Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 70.000):

I փուլ – Հայկական բանակը անցավ հարձակման, սակայն թշնամու բանակն այն հետ մղեց:

II փուլ – Ասորեստանի թագավորության բանակը անցավ հակահարձակման, սակայն մինչև ուշ երեկո տևած համառ մարտում հետ շպրտվեց ելման դիրքեր: Կողմերը պատրաստվեցին մարտը շարունակել հաջորդ օրը և արդեն ուղղակի սպառնալիք էր կախված Նինվեի վրա, սակայն նույն այս ժամանակ Հայոց արքան, տեղեկանալով սեփական թագավորության հյուսիսային նահանգներում բռնկված ապստամբության մասին, նահանջի հրաման տվեց:

Հայերը կորցրին մոտ 15.000, թշնամին՝ 20.000 գերի, մոտ 15.000 սպանված և վիրավոր ռազմիկ: Արդյունքում՝ Հայաստանի 18 նահանգներն իր մեջ ընդգրկած Արարատյան թագավորության գերիշխանության ոլորտում հայտնվեցին գրեթե բոլոր հարևան պետությունները: Ստեղծվեց Հայկական Չորրորդ գերիշխանությունը, որը տևեց 31 տարի:

Հայաստանի հյուսիսային տարածքներում բռնկված ապստամբությունը, որը ծանր հարված հասցրեց համահայկական շահերին, խանգարեց Արա III Մեծին ավարտին հասցնել Ասորեստանի թագավորության տապալման գործընթաց, ընդ որում, թերևս, արդեն պարզ էր, որ Հայոց արքայի առաջիկա հարվածը լինելու էր հենց այդ ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 774 թվականի աշնանը Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատը, Արցախը և Գուգարքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[2], իսկ մ.թ.ա. 773 թվականի գարնանն էլ պատժիչ գործողություններ իրականացրեց Արարատ նահանգում[3]:

Կարգի գցելով գործերը հյուսիսում՝ մ.թ.ա. 773 թվականի աշնանը Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) հերթական անգամ ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 13.979 մարդ, վերցվեցին 8.121 գլուխ խոշոր և 32.538 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 308 ձի[4]: Դրանից հետո, արդեն մ.թ.ա. 772 թվականին, Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Արմաննայի իշխանության բանակից (մոտ 1.500) գրավեց Շիմերեխադերեն (Մահկերտ տուն գավառ)[5]: Այս անգամ ևս, սակայն, հյուսիսային խնդիրները շեղեցին Հայոց արքային, որը մ.թ.ա. 772 թվականին պատժիչ արշավանք իրականացրեց Գեղարքունիքում, երբ գերվեցին 1.200 մարդ, վերցվեցին 29.504 գլուխ խոշոր և 60.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև զգալի քանակությամբ ձիեր[6]: Այսպիսով՝ Արա III Մեծը, մի կողմից հաջողությամբ հետ մղելով արտաքին թշնամիներին, իսկ մյուս կողմից էլ լարված պայքար մղելով ներքին ապստամբությունների դեմ, իր երկաթյա ձեռքով, ըստ էության, կարողացավ մի բռունցքի մեջ հավաքել Հայաստանը, սակայն Հայոց այս արքային շուտով վիճակված էր լինելու դեմ դուրս գալ նոր մի մարտահրավերի, ի դեմս Արմենիի թագավորության տիրակալների:

---

[1] Զորավար Շամշի-իլունին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[3] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[4] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[5] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[6] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:

Իրոք, Արմենիում արդեն երկար ժամանակ էր, որ մեծ դժգոհությամբ ու աճող անհանգստությամբ էին հետևում Վանի տիրակալների հաջողություններին, իսկ թեկուզ և ձևական, բայց այնուհանդերձ գերիշխանության կորուստն էլ ողջ Հայաստանի նկատմամբ այստեղի Հայկազուններին ու մասնավորապես Փառնակ II-ին ընդհանրապես պարուրել էր առավել անհանդուրժող տրամադրություններով: Արդյունքում՝ շուտով հենց Արմենիի թագավորությունը դարձավ Արարատյան թագավորության դեմ բարձրացվող ապստամբությունների գլխավոր հրահրիչը, իսկ պաշտոնական Վանի հարվածներն էլ ի վերջո բնականաբար ուղղվեցին հենց Արմենիի ուղղությամբ: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 771 թվականին Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Արմենիի թագավորության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 24.813 մարդ, վերցվեցին 8.744 գլուխ խոշոր և 48.825 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 25 ձի[1]: Սրանից հետո երկիրը որոշ ժամանակ խաղաղվեց, սակայն խաղաղությունը վերջնական չէր:

Մ.թ.ա. 767 թվականին Արա III Մեծի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Տայքի իշխանության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[2]: Այսպիսով՝ իր կյանքի վերջում Արա III Մեծն, ըստ էության, արդեն կարող էր, բոլոր հիմքերն ունենալով դրա համար, պնդել, որ իրենից հետո թողել է ուժեղ և իր առջև հառնած հիմնական մարտահրավերներն, ըստ էության, հաղթահարած մի պետություն:

Մ.թ.ա. 766 թվականին Հայոց մեծագույն արքաներից մեկն, ի դեմս Արա III Մեծի, կնքեց իր մահկանացուն և գահն անցավ նրա որդի Արթուր II-ին (մ.թ.ա. 766-734): Արթուր II-ը հոր արժանի զավակը հանդիսացավ և շարունակեց վերջինիս քաղաքականությունը՝ առավել մեծացնելով Արարատյան թագավորության հզորությունը: Սրա հետ միաժամանակ հարկ է նշել նաև, որ Արթուր II-ին, թերևս, որոշակիորեն չէր հերիքում հոր խորաթափանցությունը և արդյունքում վերջինիս չկարողացավ հայտնաբերել ու լիարժեք կերպով չեզոքացնել ժամանակի հետ միասին իր տերության դեմ հառնող նոր մարտահրավերները:

Դեռևս մ.թ.ա. 773 թվականին իր մահկանացուն էր կնքել Սալմանասար IV-ը և գահն անցել էր նրա եղբայր Ասուրդան III-ին (մ.թ.ա. 773-755), որը, ամեն կերպ ձգտելով հեռու մնալ Արարատյան թագավորության հետ հնարավոր նոր ընդհարումից, իր թագավորության սկզբում ընդամենը միայն տեղական նշանակություն ունեցող մի քանի արշավանքներ իրականացրեց, որոնք մեծ հաշվով այդպես էլ որևէ էական արդյունք չտվեցին: Ավելին, շուտով Ասորեստանի թագավորությունում սկիզբ առավ ժանտախտի ուժեղ մի համաճարակ, իսկ երկրում էլ ապստամբություն բռնկվեց: Այս պայմաններում Արթուր II-ը շարունակեց ակտիվ գործողությունները հարավում և, եթե Արա III Մեծը թևանցել էր Ասորեստանի թագավորությանը արևելքից, ապա Արթուր II-ն էլ խնդիր դրեց նույնն անել արևմուտքից՝ նվաճելով Ասորիքը: Առժամանակ, սակայն, Հայոց նոր արքային կասեցրին տեղական խնդիրները, քանզի, ինչպես եղել էր իր հոր պարագայում, այս անգամ ևս գահակալի փոփոխությունը Արարատյան թագավորության ենթակա իշխանությունների շարքերում անհնազանդությունը հարուցեց:

Մ.թ.ա. 766 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատի հյուսիսը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[3], իսկ մ.թ.ա. 765 թվականին էլ պատժիչ գործողություններ իրականացրեց արդեն Արարատի հյուսիսում, Գուգարքում և Կոլխիդայի թագավորության տարածքում: Գերվեցին 3.496 տղամարդ, 6.408 կին, 1.890 երեխա, վերցվեցին 11.090 գլուխ խոշոր և 10.897 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 65

[1] Արա III Մեծին վերագրվող արձանագրություններից:
[2] Արա III Մեծին վերագրվող արձանագրությունից:
[3] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:

ձի, ինչպես նաև զգալի քանակի պարենամթերք[1]: Մ.թ.ա. 764 թվականի գարնանը Հայոց արքան շարունակեց գործել Արարատի անհանգիստ հյուսիսում՝ գերելով 7.130 մարդ, վերցվեցին 8.560 գլուխ խոշոր և 25.170 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 500 ձի[2], նույն տարվա ամռանը վերջինս կարգուկանոն հաստատեց Արցախում[3], իսկ աշնանն էլ կրկին տեղափոխվեց Արարատի հյուսիս, որտեղից գերեց 6.436 երեխա, 15.553 կին, վերցրեց 16.529 գլուխ խոշոր և 37.685 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 1.613 ձի, 115 ուղտ[4]:

Կարգավորելով գործերը երկրի ներսում և մի քանի տարի ծախսելով նախապատրաստությունների վրա՝ մ.թ.ա. 761 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) նստակյաց արամեացիներին պատկանող Բեթ-Ագուսիի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Քիշթանին, Հալեպը և Պարալան (Հյուսիսայի Ասորիք), իսկ Բեթ-Ագուսիի թագավորությունն էլ ընդունեց Արարատյան թագավորության գերիշխանությունը[5]: Նույն այս ժամանակ, սակայն, անհնազանդություն առաջացավ Հայոց տերության արևելքում և արդյունքում մ.թ.ա. 760 թվականին Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը[6]՝ նույն տարում էլ գրավելով Դարբա ամրոցը (Կորճայք, Մահկերտ-տուն գավառ)[7]: Նոր էին դեռ կարգավորվել հարաբերությունները արևելքում, սակայն, երբ հերթական ապստամբության ուղին բռնեց հավերժ անհանգիստ հյուսիսը:

Արդյունքում՝ մ.թ.ա. 759 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատի հյուսիսը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 10.000 երեխա, 4.600 տղամարդ, 23.200 կին, վերցվեցին 40.353 գլուխ խոշոր և 214.700 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 3.500 ձի[8]: Դրանից հետո, հարվածն ուղղելով արդեն ավելի հյուսիս, մ.թ.ա. նույն 759 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) Կոլխիդայի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Կոլխիդայի թագավորության 35 ամրոց և 200 բերդ[9]:

Հարկ է նշել, որ Հայոց թագավորությունում հերթական անգամ սկիզբ առած անկայունությունը որոշակի հույսեր տվեց Ասուրդան III-ին, որի ռազմական մեքենան մ.թ.ա. 759 թվականին ասպատակեց Հայոց Միջագետքի արևելքը և նահանջեց[10], իսկ մ.թ.ա. 758 թվականին էլ կրկնեց հարվածը՝ ի վերջո, սակայն, կրկին հետ քաշվելով[11]: Նույն այս ժամանակ Հայաստանի հյուսիսը որևէ կերպ չէր հանգստանում և արդյունքում մ.թ.ա. 758 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Գեղարքունիքը, վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[12], իսկ 757 թվականի ամռանն էլ պատժիչ գործողությունները կրկին տեղափոխեց Արարատի հյուսիս: Այստեղ գերվեցին 9.904 մարդ, վերցվեցին 1.090 գլուխ խոշոր և 10.897 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 65 ձի[13]: Եվ վերջապես մ.թ.ա. 757 թվականի աշնանը Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) հերթական անգամ ասպատակեց Արցախը և Արարատի հյուսիսը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[14]:

---

[1] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[6] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[8] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[9] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[10] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[11] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[12] Արթուր II-ին վերագրվող արձանագրություններից:
[13] Արթուր II-ին վերագրվող արձանագրություններից:
[14] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:

Քիչ թե շատ խաղաղեցնելով իրավիճակը երկրում՝ մ.թ.ա. 756 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) ասպատակեց Հյուսիսային Միջագետքը և նահանջեց[1], սակայն Հայոց եռանդուն այս տիրակալին հերթական անգամ շեղեցին հյուսիսային խնդիրները: Արդյունքում՝ մ.թ.ա. 755 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատի հյուսիսը, հերթական անգամ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[2], իսկ մ.թ.ա. 754 թվականին էլ Արցախի իշխանության բանակից գրավեց Էդիան, Էրվիան, Էրդուան և Բուինի-ալխին: Գերվեցին 4.000 տղամարդ, 15.000 կին, 3.500 երեխա, վերցվեցին 8.525 գլուխ խոշոր և 18.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ[3]:

Կարգի գցելով գործերը իր տերության արևելյան շրջաններում՝ մ.թ.ա. 753 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց արդեն Տայքն և Բարձր Հայքը[4], որից հետո հարվածը տեղափոխեց արևմուտք: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 752 թվականին Արթուր II-ի ռազմական մեքենան Մելիտեի իշխանության բանակից գրավեց Սասինը և Մելիտեն, ինչպես նաև 14 ամրոցներ և 100 բերդ (Անդրեփրատյան Ծոփք): Արդյունքում՝ լրջորեն ամրացան Հայոց թագավորության դիրքերը նաև արևմուտքում, իսկ Հայկական Չորրորդ գերիշխանության սահմանն էլ հարավ-արևմուտքում հասցվեց մինչև Դամասկոսի թագավորության հյուսիսային սահման[5]:

Մ.թ.ա. 751 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Արմաննայի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 3.000) գրավեց Արմաննայի իշխանության 21 ամրոց և 45 բերդ[6], որից հետո, ոտքի հանելով ամենախոշոր բանակը, որ երբևէ եղել է Հայոց մի որևէ տիրակալի ձեռքում, Հայոց արքան ծանր հարված հասցրեց արևելյան ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 751 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (355.611, որից 3.600 հեծյալ, ինչպես նաև 92 մարտակառք) Մարաստանի իշխանության բանակից (մոտ 10.000) գրավեց Մարաստանի 3 ամրոց և 23 բերդ: Մարաստանը միացվեց Արարատյան թագավորությանը, որի արդյունքում Հայկական Չորրորդ գերիշխանության սահմանը հարավ-արևելքում հասցվեց մինչև Իրանական լեռնաշխարհի հարավ-արևմուտք[7]: Այսպիսով՝ պաշտոնական Վանի հետևողական քաղաքականության արդյունքում Միջագետքում գործող Ասորեստանի թագավորությունը վերջնականապես թևանցվեց ինչպես արևելքից, այնպես էլ արևմուտքից: Այս ժամանակաշրջանում, սակայն, փոփոխություններ էին եղել նաև Ասորեստանի թագավորությունում, որտեղ մ.թ.ա. 755 թվականին մահացած Ասուրդան III-ին փոխարինել էր նրա եղբայր Ասուրներարի V-ը (մ.թ.ա. 755-746), որի դիրքերը, ևս բավականին թույլ էին: Ներքին խաղաղություն, սակայն, Հայոց տերությանը որևէ կերպ վիճակված չէր:

Մ.թ.ա. 750 Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Մելիտեի իշխանության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[8]: Դրանից հետո մ.թ.ա. նույն 750 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) Տայքի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Տայքի իշխանության 20 ամրոց և 120 բերդ[9]: Մ.թ.ա. 749 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արարատի արևելքը և Արցախը՝

[1] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Արթուր II-ին վերագրվող արձանագրություններից:
[6] Արթուր II-ին վերագրվող արձանագրություններից:
[7] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[8] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[9] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:

վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 12.610 երեխա, 1.829 տղամարդ. 7.751 կին, վերցվեցին 5.747 գլուխ խոշոր և 19.062 գլուխ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 252 ձի[1]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 748 թվականի գարնանը Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը[2], իսկ արդեն տարվա վերջին էլ պատժիչ գործողություններ իրականացվեցին Տայքում և Բարձր Հայքում, ինչի արդյունքում գերվեցին 3.225 տղամարդ, 4.928 կին, վերցվեցին 6.665 գլուխ խոշոր ու 25.735 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 412 ձի[3]:

Մ.թ.ա. 747 թվականի գարնանը, ավարտին հասցնելով գործերը հյուսիսում, Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Ուտիքը և Գեղարքունիքը[4], որից հետո, իրար բերելով ուժերը, շարժվեց հարավում հերթական անգամ ակտիվացած ավանդական հակառակորդի դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 747 թվականի ամռանը Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 100.000) Հյուսիսային Միջագետքում հաղթեց Ասուրներարի V-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 100.000)[5], սակայն տեղական հոգսերը այս անգամ ևս հնարավորություն չտվեցին զարգացնել հաջողությունը:

Խնդիրը կայանում էր նրանում, որ մ.թ.ա. 765 թվականին Փառնակ II-ի մահից հետո պաշտոնական Վանն, ըստ էության, վերացված էր հայտարարել Արմենիի թագավորությունը, սակայն տեղում գործող Հայկազունիները, որպես առանձին տոհմ, ոչ միայն պահպանվել էին, այլև շարունակել էին պահպանել անհանդուրժող տրամադրությունները պաշտոնական Վանի նկատմամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 747 թվականի աշնանը Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Արմենիի թագավորության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[6]: Ներքին խնդիրները, սակայն, չէին պատրաստվում նահանջել, իսկ Հայաստանի տարբեր մասերում էլ մարդիկ համառորեն չէին ցանկանում համակերպվել Արարատյան թագավորության գահակալների իշխանության հետ:

Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 746 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Արարատի հյուսիսը և Գուգարքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները: Գերվեցին 8.100 տղամարդ, 9.110 կին, վերցվեցին 17.300 գլուխ խոշոր և 31.600 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 1.500 ձի[7]: Դրանից հետո, արդեն մ.թ.ա. 745 թվականին, Հայոց արքան հարված հասցրեց Արարատի հյուսիսին, Գուգարքին և Կոլխիդայի թագավորության տարածքին, երբ վերցվեցին 17.300 գլուխ խոշոր և 31.600 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 1.500 ձի[8]:

Մ.թ.ա. 744 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Արցախի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.500) գրավեց Իրկուական և Իրուդան (Արցախ): Գերվեցին 4.000 տղամարդ, 12.000 կին, 3.500 երեխա, վերցվեցին 8.525 գլուխ խոշոր և 18.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ[9]: Դրանից հետո մ.թ.ա. 744 թվականին Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) արդեն Արմաննայի իշխանության բանակից (ընդհանուր՝ մոտ 3.000) գրավեց Արմաննայի իշխանության 3 քաղաք և 23 ամրոց, որից հետո ասպատակեց Հարավային Միջագետքը: Գերվեցին 6.000 տղամարդ, 25.000 կին, 8.135 երեխա, վերցվեցին 12.300 գլուխ խոշոր և 25.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ,

[1] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[5] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[6] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[8] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[9] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:

2.500 ձի[1]: Եվ վերջապես մ.թ.ա. 744 թվականի աշնանը Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 60.000) Արմենիի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.500) գրավեց Արմենիի թագավորության 11 ամրոց: Գերվեցին 2.000 տղամարդ, 6.500 կին, 1.100 երեխա, վերցվեցին 2.538 գլուխ խոշոր և 8.000 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 2.500 ձի[2]:

Այսպիսով՝ ընթանում էր Արթուր II-ի թագավորության արդեն երրորդ տասնամյակը, սակայն իրավիճակը էական փոփոխություն չէր կրում՝ Հայաստանի տեղական իշխանությունները հրաժարվում էին ենթարկվել պաշտոնական Վանին և Արարատյան թագավորության Արծրունիները միայն զենքի ուժով էին հասնում հնազանդության, սակայն առավել վատն այն էր, որ, դրա հետ միաժամանակ, վերջիններս ստիպված էին Հայոց թագավորության հզորությունը պահպանելու համար մարտնչել նաև արտաքին ճակատում: Այս առումով ժամանակի ինչ-որ մի ընթացքում լավը ինչ-որ տեղ դեռ այն էր, որ նույն այս ժամանակ Ասորեստանի թագավորությունը գտնվում էր թույլ վիճակում, սակայն իրավիճակն այս հարցով դեպի վատը փոխվեց այն բանից հետո, երբ մ.թ.ա. 746 թվականին Ասորեստանի թագավորությունում գահին հասավ Ասուրներարի V-ի դեմ ապստամբած և գահակալական կարճատև, սակայն դաժան պայքարի արդյունքում հաղթանակ տարած Թիգլաթպալասար III-ը (մ.թ.ա. 746-727), որը մի եռանդուն, ինչպես նաև ռազմական, վարչական և կազմակերպչական հսկայական ունակությունների տեր անձնավորություն էր: Հայոց տերությունը կանգնեց մի մեծ մարտահրավերի առջև:

[1] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Արթուր II-ին վերագրվող արձանագրությունից:

Գլուխ 4
Ասորեստանի թագավորության չորրորդ վերելքը

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Ասորեստանի թագավորությունում իշխանությունն աստիճանաբար իր ձեռքն էր վերցրել տոհմիկ առևտրական ավագանին: Ամեն ինչից զատ խնդիրը կրկին խորքային արմատներ ուներ, քանի որ երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակական անկումը, որը լավացրել էր բնակության պայմանները Արաբական թերակղզում, նույն այս ժամանակ երկար հարյուրամյակներ էր արդեն, որ գործնականում վերացրել էր մարդկային հոսքը Արաբական թերակղզուց դեպի դուրս, ինչն էլ իր սպասելի հետևանքներն էր ապահովել նույն Ասորեստանի թագավորությունում: Տոհմիկ առևտրական ավագանու դիրքերի ուժեղացումը, սակայն, Ասորեստանի թագավորության ներսում ռազմավարչական խմբակցության ներկայացուցիչների լուրջ դժգոհությունը առաջացրեց և հենց նույն այդ դժգոհությունն էր, որ Ասուրներարի V-ին ի վերջո գահ ու կյանք արժեցավ, իսկ արդյունքում էլ իշխանության բերեց ռազմավարչական խմբակցության դասական ներկայացուցիչ հանդիսացող Թիգլաթպալասար III-ին:

Նոր տիրակալը, վերջնականապես հաստատվելով գահին, անմիջապես էլ կյանքի կոչեց մի շարք կարևորագույն ռազմավարչական ձեռնարկումներ, որոնց մեջ առաջնայինը երկրի վարչական համակարգի ձևափոխումն էր, երբ նախկին տեղական և իրենց իշխանության տակ համեմատականորեն խոշոր տարածքներ ունեցող ժառանգական տիրակալների փոխարեն այժմ հաստատվեցին իրենց իշխանության տակ անհամեմատ ավելի փոքր տարածքներ ունեցող ավելի մեծաթիվ պաշտոնյաներ, որոնք, սակայն, ենթակա էին կենտրոնական իշխանությանը ու որևէ կերպ չէին կարող ժառանգական սկզբունքով հաստատվել տեղերում: Թիգլաթպալասար III-ը լուրջ բարեփոխման ենթարկեց նաև Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան, երբ բանակային համակարգում զգալիորեն ավելացվեց հեծելազորի թիվը, զարգացվեցին և սկսեցին ավելի համակարգված գործել պաշարողական ու ինժեներական ստորաբաժանումները, մարտունակ արքայական թիկնազորը, սակրավորների և կապի ստորաբաժանումները, ինչպես նաև հետախուզական գործակալությունը, որոնց բոլորին վճարում էր արքան ու որոնք լիովին պետության տրամադրության տակ էին: Եվ վերջապես հենց Թիգլաթպալասար III-ն էր, որ Ասորեստանի թագավորության գահը կրկին հաստատեց Նինվեում: Այսպիսով՝ Թիգլաթպալասար III-ը, ինչպես Ասորեստանի լավագույն ռազմաշունչ արքաներն, ի դեմս, մասնավորապես նույն Թուկուլտի-Նինուրտա I-ի և Թիգլաթպալասար I-ի, կրկին վերադարձավ բիզնես-պատերազմ համակցությանը, ինչը լուրջ փոփոխություններ էր ենթադրում, այդ թվում նաև, հայերի համար: Արդյունքում, արագորեն ավարտելով իր բոլոր այս ձեռնարկումները, Թիգլաթպալասար III-ը ձեռնամուխ եղավ արտաքին խնդիրների լուծմանը:

Մ.թ.ա. 745 թվականին Թիգլաթպալասար III-ը մի խոշոր արշավանք ձեռնարկեց հարավային ուղղությամբ և ի վերջո հասավ նրան, որ Բաբելոնի թագավորությունը կցեց իր թագավորությանը՝ հընթացս հռչակվելով նաև Բաբելոնի թագավորության արքա: Այս հանգամանքը միանգամից էլ կտրուկ մեծացրեց Թիգլաթպալասար III-ի հարվածային ուժը, քանի որ նրա տիրապետության տակ հայտնվեց, ըստ էության, ողջ միացյալ Միջագետքը: Հաջողությամբ լուծելով հարավի խնդիրը՝ Թիգլաթպալասար III-ը անդրադարձ կատարեց արդեն նաև Արևելքին և մ.թ.ա. 744 թվականին մի խոշոր արշավանք իրականացրեց Մարաստանի և Պարսքի իշխանությունների ուղղությամբ՝ ըստ էության վերացնելով Ասորեստանի թագավորությունը արևելքից շրջափակող ու Արարատյան թագավորության գահակալների կողմից մի քանի տասնամյակ շարունակ հետևողականորեն կառուցվող ռազմաքաղաքական պատնեշը:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ հենց նույն այս ժամանակ էր, որ, ցանկանալով

մարերի և պարսիկների դեմ արևելքում մի որևէ իրական հակակշիռ ստեղծել, Թիգլաթպալասար III-ը, կենտրոնացնելով առաջին երկու ժողովուրդների հետ լարված հարաբերություններ ունեցող ու Իրանական լեռնաշխարհի արևմուտքում դեռևս իրենց գոյությունը շարունակող դրավիդյանների զգալի ուժեր, հռչակեց Էլամի թագավորության վերաստեղծումը, որի առաջին տիրակալը դարձավ Խումբանտախրախը (մ.թ.ա. 744-742): Սրանով Թիգլաթպալասար III-ը, թեև հենվելով աստիճանաբար նահանջ ապրող դրավիդյանների վրա, բայց այնուհանդերձ փաստորեն փորձում էր տարածաշրջանում սեմիտների և դրավիդյանների յուրօրինակ մի դաշինք ստեղծել, որը ուղղված էր արիական ժողովուրդների դեմ, ի դեմս հայերի, մարերի ու պարսիկների: Այս առումով հարկ է նշել, որ կարճաժամկետ առումով Ասորեստանի նոր արքայի վերջին ձեռնարկումը զգալի արդյունք ապահովեց և արիական ժողովուրդների դեմ պայքարում դրավիդյանները, համենայն դեպս գոնե սկզբնական շրջանում, բավականին օժանդակեցին հարևան սեմիտներին: Հեռանկարում, սակայն, դրավիդյանների վերակերտած Էլամի թագավորությունն, ի վերջո ինքը վերածվեց Ասորեստանի թագավորության մրցակցի, իսկ արիական ժողովուրդների դեմ պայքարում էլ վերջնական հաջողություն ցանկացած պարագայում ձեռք չբերվեց:

Այսպես թե այնպես, սակայն, ամրանալով իր թագավորության հարավային և արևելյան սահմաններում, Թիգլաթպալասար III-ը խնդիր դրեց վերացնել ռազմաքաղաքական նաև այն արգելքը, որը Արարատյան թագավորության նույն գահակալները հետևողական ջանքերով Ասորեստանի թագավորության համար կառուցել էին արդեն նաև Արևմուտքում, ի դեմս Ասորիքի իշխանությունների հակաասորեստանյան դաշինքի: Այս առումով հարկ է նշել, որ, եթե Արթուր II-ը բաց թողեց Թիգլաթպալասար III-ի գահակալումը և Արարատյան թագավորության համար հաջորդ տարիներին դրան հաջորդած բացասական զարգացումները, ապա այժմ, երբ Ասորեստանի ռազմաշունչ տիրակալը պատրաստվեց հարված հասցնել արդեն արևմտյան ուղղությամբ, Վանում որոշում ընդունեցին աջակցել յուրայիններին և պահպանել դիրքերը գոնե Ասորիքում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

742[1] – ***<u>Արպադի ճ-մ</u>*** (Հյուսիսային Ասորիք, Հալեպից մոտ 20 կմ հյուսիս)[2]

Թիգլաթպալասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) հարձակվեց Արարատյան թագավորության գերիշխանության տակ գտնվող Արպադի իշխանության վրա և պաշարեց նրա մայրաքաղաքը: Տեղեկանալով այս մասին՝ Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության (մոտ 100.000) և Ասորիքի դաշնակից իշխանությունների (մոտ 50.000) միացյալ բանակը շարժվեց Արպադի իշխանությանն օգնության ու մոտեցավ հակառակորդի բանակին:

I փուլ – Վաղ առավոտից մինչև ուշ երեկո տևած համառ և անզիջում մարտի արդյունքում Արարատյան թագավորության ու դաշնակիցների միացյալ բանակը ծանր պարտություն կրեց:

II փուլ – Հայկական բանակը, պահպանելով մարտակարգը, նահանջեց և, ***<u>Եփրատի գետանցի</u>*** մոտ անցնելով գետի ձախ ափ, պոկվեց թշնամու բանակից:

Հայերը կորցրին մոտ 50.000, դաշնակիցը՝ մոտ 25.000, թշնամին՝ մոտ 40.000 զինվոր:

---

[1] Այստեղ և հետագայում հարկ է հաշվի առնել, որ Թիգլաթպալասար III-ի պատերազմների ժամանակագրությունը դեռևս վերջնականապես պարզ չէ: Հարկ է նշել նաև, որ, բացառությամբ այն արձանագրությունների, որոնք բերված են ստորև, Թիգլաթպալասար III-ին և Հայաստանի վերաբերվող կան ևս մի քանի այլ մանր արձանագրություններ կամ դրանց պատառիկներ, սակայն, քանի որ դրանք շատ քիչ ինֆորմատիվ բնույթ ունեն, հատվածական են և հիմնականում կրկնում են արդեն իսկ բերվածներին, ես դրանք շարադրելը հարմար չգտա:

[2] Թիգլաթպալասար III-ին վերագրվող արձանագրությունից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր հետևանքներ ունեցավ Արթուր II-ի տերության համար, որն, ըստ էության, զրկվեց իր այդ կարգավիճակից, իսկ Հայկական Չորրորդ գերիշխանությունն էլ վերջացավ: Արդյունքում՝ Արարատյան թագավորությունից անջատվեցին գերիշխանություն ընդունած բոլոր երկրները, ինչպես նաև Կիլիկիայի մասնատված իշխանությունները: Այս առումով հատկանշական է, սակայն, որ, չնայած ձեռք բերած խոշոր հաջողությանը, հարված հասցնել բուն Արարատյան թագավորության տարածքին Ասորեստանի ռազմաշունչ տիրակալը առժամանակ չհամարձակվեց՝ փոխարենը գերադասելով ավարտին հասցնել գործերն Արևմուտքում և վերջնականապես վերացնել ռազմաքաղաքական այն շրջափակումը, որի մասին արդեն բավարար խոսվեց:

Մ.թ.ա. 742 թվականին Թիգլաթպալասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) վերսկսեց Արպադի պաշարումը, սակայն չկարողացավ գրավել այն Արպադի իշխանության (մոտ 5.000) և Արարատյան թագավորության (մոտ 1.000) միացյալ բանակից[1]: Մ.թ.ա. 741 թվականին Թիգլաթպալասար III-ը կրկնեց հարվածը Արպադի ուղղությամբ, սակայն կրկին հաջողության չհասավ[2] և միայն մ.թ.ա. 740 թվականին էր, որ վերջինս ի վերջո գրավեց ըմբոստ այդ քաղաքը[3]: Արպադի անկումից հետո Թիգլաթպալասար III-ը, շարունակելով հարվածել Ասորիքի համադաշնության մասնակիցներին, մ.թ.ա. 738 թվականին Կուլապիի իշխանության և Արարատյան թագավորության միացյալ բանակից գրավեց արդեն Կուլապին (Հյուսիսային Ասորիք)[4], ինչից հետո հիշատակված դաշինքն, ըստ էության, դադարեց գործել, իսկ Ասորիքն էլ, բացառությամբ Դամասկոսի թագավորության, ինչպես նաև Իսրայելի և վերջինիցս մինչ այդ անջատված Հուդայի թագավորությունների, հայտնվեց Ասորեստանի թագավորության գերիշխանության ներքո մոտավորապես այն տեսքով, ինչ տեսքով որ իրավիճակն առկա էր Սալմանասար III-ի գահակալման վերջում:

Ավարտին հասցնելով Արևմուտքում ձևավորված համադաշնության ոչնչացումը՝ Թիգլաթպալասար III-ը մեկ տարի ծախսեց ուժերը կարգի գցելու վրա, որից հետո մ.թ.ա. 736 թվականին հարվածեց Հայոց Միջագետքին ու Աղձնիքին և հետ քաշվեց[5]: Սա հերթական մարտահրավերն էր Արարատյան թագավորությանը և Արթուր II-ն ընդունեց այն:

Արդյունքում՝ մեկ տարի ծախսելով ուժերը կարգի գցելու վրա, արդեն մյուս տարի կողմերն իրար եկան վճռական ընդհարման համար: Որպես հետևանք այս ամենի, սակայն, մ.թ.ա. 734 թվականին տեղի ունեցած Հալեպի ճ-մ-ում Թիգլաթպալասար III-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) համառ մարտում ծանր պարտության մատնեց Արթուր II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակին (մոտ 100.000)[6]: Երկրորդ այս պարտությունը, որ Հայոց թագավորությունը կրեց իր ավանդական հակառակորդից, այս անգամ վերջինիս համար ավելի թանկ արժեցավ, քան նախորդը և, եթե ութ տարի առաջ գործն ավարտվեց տերության փլուզմամբ, սակայն բուն Արարատյան թագավորության տարածքները զերծ մնացին հարվածից, ապա այժմ այդպես չեղավ: Իրոք, մ.թ.ա. 734 թվականին Թիգլաթպալասար III-ի գլխավորությամբ Աղձնիք-Մոկք-Վասպուրական երթուղով արշաված Ասորեստանի թագավորության բանակը անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակից պաշարեց Վանը (Վասպուրական, Տոսպ գավառ), սակայն, չկարողանալով գրավել այն, ի վերջո հեռացավ Հայոց թագավորության սահմաններից[7]:

---

[1] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[3] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[4] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[5] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[6] Թիգլաթպալասար III-ին վերագրվող արձանագրությունից:
[7] Թիգլաթպալասար III-ին վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

Վերջին իրադարձությունները հենց իրենցով էլ նշանավորեցին Արթուր II-ի ռազմաքաղաքական գործունեության ավարտը, որը մ.թ.ա. նույն 734 թվականին կնքեց իր մահկանացուն և Արարատյան թագավորության գահի վրա վերջինիս հաջորդեց իր որդի Առուշան I-ը (մ.թ.ա. 734-713): Արարատյան թագավորության նոր գահակալին բաժին էր հասել տերության կարգավիճակից արդեն զրկված ու հարվածներ ստացած, բայց այնուհանդերձ բավականին հզոր մի թագավորություն, ընդ որում Հայոց նոր արքան ինքն էլ բավականին խելացի և ուժեղ անձնավորություն էր:

Ինչ վերաբերում է Թիգլաթպալասար III-ին, ապա Արարատյան թագավորությանը ծանր հարված հասցնելուց հետո մ.թ.ա. 732 թվականին վերջինս հարվածը կրկին ուղղեց հարավային ուղղությամբ՝ ի վերջո ոչնչացնելով նաև Դամասկոսի թագավորությունը և իր ուժեղ ազդեցության տակ գցելով նաև հրեական թագավորությունները: Հաջողությամբ ավարտին հասցնելով իր նաև այս ձեռնարկումները՝ Թիգլաթպալասար III-ը մ.թ.ա. 731 թվականին մի մեծ արշավանք ձեռնարկեց Բաբելոնի ուղղությամբ և այստեղից հետ քաշվեց հսկայական ավարով ու գերիներով՝ վերջնականապես հաստատելով իր իրավունքները Բաբելոնի թագավորության գահի նկատմամբ: Այսպիսով՝ արդեն իր գահակալման վերջում Թիգլաթպալասար III-ը, ըստ էության, վերականգնել էր Ասորեստանի թագավորության հզորությունը Սալմանասար III-ի թագավորության վերջի դրության վիճակով:

Այս առումով հետաքրքիր է նշել, սակայն նաև, որ նույն այս ժամանակ Թիգլաթպալասար III-ն ինքը, ըստ էության, գոհ Արարատյան թագավորության դեմ մղված պայքարի արդյունքներից, այդուհետ զերծ մնաց ռազմական նոր ընդհարման մեջ մտնել հայերի դեմ, իսկ Առուշան I-ն ինքն էլ որևէ ակտիվ գործունեության չդիմեց՝ սպասելով հարմար առիթի և բավարարվելով բացառապես միայն հետախուզադիվանագիտական քայլերով: Հենց վերջին գործընթացի համատեքստում էր, որ Հայոց գահակալը նամակագրական կապ հաստատեց Տավալի իշխանություն իշխան, Թուվաթիին հաջորդած Կիկկին (մ.թ.ա. մոտ 780-750) փոխարինած Թուվաթիի (մ.թ.ա. մոտ 750-740) հաջորդ Վասուհարմայի (մ.թ.ա. մոտ 740 - ուղ. 728) հետ, սակայն դա որևէ էական արդյունքի չբերեց, իսկ մ.թ.ա. 728 թվականին այդ մասին իմացած Թիգլաթպալասար III-ն էլ, կրկին ոչ ռազմական միջամտությամբ, հասավ Վասուհարմայի գահազրկմանը: Արդյունքում՝ Վասուհարմային փոխարինեց Հուլլին (մ.թ.ա. ուղ. 728 - մոտ 726), որին էլ հաջորդեցին Ամբարիսը (մ.թ.ա. մոտ 726-713), Հիդին (մ.թ.ա. մոտ 713-690), Իսկալուն (մ.թ.ա. մոտ 690-679), Մուգալուն (մ.թ.ա. մոտ 679-651) և Խուսսին (մ.թ.ա. մոտ 651-612): Նմանատիպ ևս մեկ զարգացում եղավ նաև Ադանայի իշխանության պարագայում, որի իշխան Արիքի (մ.թ.ա. մոտ 750-720) նամակագրական կապը պաշտոնական Վանի հետ իր հերթին բացահայտվեց, թեև կոնկրետ հետևանքներից այս անգամ հաջողվեց զերծ մնալ: Հաշվի առնելով հենց այս զարգացումները՝ մ.թ.ա. 727 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Հայոց Միջագետքի արևելքը և նահանջեց[1]՝ ըստ էության բավարարվելով, թերևս, միայն ուժի հաջող ցուցադրությամբ: Դրանից անմիջապես հետո Թիգլաթպալասար III-ը ևս մեկ արշավանք իրականացրեց՝ այս անգամ արդեն Մարաստանի իշխանության ուղղությամբ: Արդյունքում՝ վերջին իր այդ ձեռնարկումը Ասորեստանի ռազմաշունչ այս արքան մեծ հաշվով ևս հաջողությամբ ավարտեց, իսկ մ.թ.ա. 727 թվականի ամենավերջում էլ կնքեց իր մահկանացուն՝ սեփական ավագ որդի ու հաջորդ Սալմանասար V-ին (մ.թ.ա. 727-722) թողնելով ուժերով լեցուն և ծաղկուն մի տերություն:

Հզոր և հսկայական հեղինակության հասած Թիգլաթպալասար III-ի մահը, ինչպես եղավ Ասուրնացիլպար II-ի և նրա որդի Սալմանասար III-ի պարագայում, անմիջապես էլ իր ազդեցությունն ունեցավ Ասորիքի վրա, որի իշխանությունները դուրս եկան հսկողությունից ու հրաժարվեցին ենթարկվել պաշտոնական Նինվեին: Որպես հետևանք, եռանդի ամենևին էլ պակաս չունեցող Սալմանասար V-ը փորձ կատարեց կրկնել նույն

[1] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

այն դերակատարությունը, որը կյանքի էր կոչել Սալմանասար III-ը, և այս հողի վրա զգալի արդյունքներ ամրագրեց, սակայն վերջնական հաջողություն նա այդպես էլ չտեսավ, քանի որ արդեն մ.թ.ա. 722 թվականին զոհ գնաց իր իսկ եղբոր կազմակերպած դավադրությանը: Արդյունքում՝ Ասորեստանի թագավորության արքա հռչակվեց Սարգոն II-ը (մ.թ.ա. 722-705), որը անչափ մարտունակ, ռազմաշունչ, ռազմական և դիվանագիտական առաջնակարգ ունակությունների, ինչպես նաև անձնական հսկայական քաջության ու խիզախության տեր մի անձնավորություն էր՝ այս առումով գերազանցելով նույնիսկ իր հորը: Արդյունքում՝ ամենից առաջ հենց Սարգոն II-ն ինքն էլ կյանքի կոչեց այն դերակատարությունը, որը չէր հասցրել կյանքի կոչել Սալմանասար V-ը:

Եվ այսպես, ձեռք զարկելով պետական կառավարման գործին, Սարգոն II-ն ամենից առաջ ամրապնդվեց Բաբելոնում և մ.թ.ա. ողջ 722 թվականը ծախսեց այդ գործի վրա: Դրանից հետո, շարունակելով հոր և եղբոր քաղաքական գիծը, եռանդուն այս տիրակալը շարունակեց պատերազմը Ասորիքում: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 720 թվականի վիճակով Ասորիքում հաստատված էր նույն այն դրություն, որն այստեղ առկա էր Թիգլաթպալասար III-ի կառավարման ամենավերջում, ընդ որում Ասորեստանի թագավորության ռազմաշունչ տիրակալը հընթացս ոչնչացրել էր նաև Իսրայելի թագավորությունը:

Մինչ Ասորեստանի թագավորության նոր տիրակալը ամրապնդվում էր գահին և ավարտին էր հասցնում իր նախորդների կողմից կիսատ թողած գործերը, օգտվելով իրավիճակից, ակտիվ գործունեություն էր ծավալել, սակայն, նաև Առուշան I-ը: Արդյունքում՝ մ.թ.ա. 722 թվականին Առուշան I-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) ասպատակեց Արմաննայի իշխանության տարածքը՝ վերացնելով տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[1]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 721 թվականին, Առուշան I-ի ռազմական մեքենան ասպատակեց Կոլխիդայի թագավորության տարածքը՝ վերացնելով նաև այստեղ տիրող ապստամբական տրամադրությունները[2]: Եվ վերջապես մ.թ.ա. 720 թվականին Արարատյան թագավորության ռազմական մեքենան, հարավային հարևանի հետ շատ մոտ ժամանակներում արդեն անխուսափելի համարվող ընդհարումում փորձ կատարելով դիրքավորվել հնարավորինս հարմար, հարված հասցրեց Հյուսիսային Միջագետքին, թեև ի վերջո հետ քաշվեց[3]: Նույն այդ ընդհարումն, իրոք, մոտենում էր, պետք էր միայն հարմար մի առիթ և այդ առիթն այս անգամ Արմաննայի իշխանությունն էր:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Արմաննայի իշխանության իշխան Արանզան (մ.թ.ա. մոտ 718-717) նույն այս ժամանակ լարված հարաբերություններ ուներ Առուշան I-ի հետ, սակայն նրա իսկ իշխանությունում առկա էին լուրջ ուժեր, որոնք հանդես էին գալիս Հայոց թագավորության հետ հետևողական դաշինքի օգտին: Այս ուժերի գլուխ կանգնած էր Բագրատունիների տոհմի հիմնադիր համարվող Բագրատ Բագրատունին, որն էլ հենց հասավ նրան, որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում մի շարք ամրություններ ապստամբեցին Արանզայի դեմ և անցան Հայոց թագավորության կողմը: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 719 թվականին[4] Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) Արմաննայի իշխանության բանակից (ընդհանուր մոտ 2.000) գրավեց Շուանդախուլ, Դուրդուկա, Սուկկու, Բալա և Աբիտիկնա ամրոցները (Ուրմիա լճի արևելյան ափին)[5]՝ հիմնական հարվածը հասցնելով ապստամբներին: Այսպիսով՝

[1] Առուշան I-ին վերագրվող արձանագրությունից; Սարգոն II-ի գործունեությանը վերաբերվող արձանագրությունից:
[2] Առուշան I-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սարգոն II-ի գործունեությանը վերաբերվող արձանագրությունից:
[4] Այստեղ և հետագայում Սարգոն II-ի պատերազմների պարագայում հարկ է նշել նաև, որ, բացառությամբ այն արձանագրությունների, որոնք բերված են ստորև, Սարգոն II-ին և Հայաստանի վերաբերվող կան ևս մի քանի այլ մանր արձանագրություններ կամ դրանց պատառիկներ, սակայն, քանի որ դրանք շատ քիչ ինֆորմատիվ բնույթ ունեն, հատվածական են և հիմնականում կրկնում են արդեն իսկ բերվածներին, ես դրանք շարադրելը հարմար չգտա: Չեն արտացոլվում նաև այն արձանագրությունները, որոնք ըստ էության, երբեմն նույնիսկ տառացի, կրկնում են արդեն իսկ շարադրվածներին:
[5] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:

Արմաննայի իշխանության գահին Արանզայի դիրքերը ամրապնդվեցին, ինչից հետո, մի պահ հետաձգելով պայքարը Արևելքում, Սարգոն II-ը կրկին անդրադարձ կատարեց Արևմուտքին:

Մ.թ.ա. 718 թվականին Կարքեմիշի ճ-մ-ում Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) հաղթեց Արարատյան (մոտ 20.000, որից 15.000 հետևակ), Կարքեմիշի (մոտ 10.000) և Փռյուգիայի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակին[1], ինչից հետո մ.թ.ա. նույն 718 թվականին տիրեց Պապան ու Լալլուական (Հյուսիսային Ասորիք, Կարքեմիշի մոտ) քաղաքներին[2]: Եվ միայն այս ամենից հետո էր, որ, ինչպես հարկն է ամրանալով նաև Արևմուտքում, Ասորեստանի թագավորության ռազմաշունչ արքան ձեռնամուխ եղավ Արարատյան թագավորության ուղղությամբ վճռական հարված հասցնելուն: Սկիզբը, ինչպես և սպասելի էր, կրկին դրվեց Արմաննայի իշխանության տարածքում, որտեղ իրադրությունը հերթական անգամ բարդացել էր:

Խնդիրը կայանում էր նրանում, որ մ.թ.ա. 717 թվականին Արանզան կնքել էր իր մահկանացուն և Արմաննայի իշխանության գահի վրա նրան հաջորդել էր իր որդի Ազան (մ.թ.ա. մոտ 717 - ուղ. 716): Նոր տիրակալը, սակայն, չկարողացավ ամրանալ գահին և նրա դեմ հերթական ապստամբությունը բռնկվեց: Արդյունքում՝ մ.թ.ա. 716 թվականին Ուաշ լեռան ճ-մ-ում (Տրպատունիք, Ուրմիա լճի արևելյան ափից մոտ 30 կմ արևելք) Արարատյան թագավորության և Բագրատ Բագրատունու գլխավորած Արմաննայի իշխանության միացյալ բանակը (մոտ 25.000) հաղթեց Արմաննայի իշխան Ազայի և Ասորեստանի թագավորության միացյալ բանակին (մոտ 15.000, որից մոտ 3.000 հայ): Ազան սպանվեց մարտում, իսկ Արմաննայի իշխանության նոր իշխան հռչակվեց նրա եղբայր Ալասան (մ.թ.ա. 716 - մոտ 680)[3]: Այսպիսով՝ Արմաննայի իշխանության տարածքում պաշտոնական Նինվեի գերիշխանությունը դրվեց հարվածի տակ, ինչն էլ ստիպեց մինչ այդ բոլոր պատրաստություններն ավարտած Սարգոն II-ին ի վերջո ձեռնամուխ լինել ռազմական գործողությունների:

Մ.թ.ա. 716 թվականին Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) Բագրատ Բագրատունու գլխավորած Արմաննայի իշխանության բանակից (մոտ 10.000) գրավեց Արմաննայի իշխանության մայրաքաղաք Իզիրտուն (Ատրպատական, Ուրմիա լճից մոտ 40 կմ հարավ), ինչպես նաև 55 ամրոց ու 11 բերդ, որից հետո ասպատակեց Արմաննայի, ինչպես նաև Մարաստանի իշխանությունների տարածքները[4]: Հենց այս ընթացքում էլ գերվեց և սպանվեց նաև Բագրատունյաց իշխանը, իսկ Արմաննայի իշխանությունն էլ արդյունքում ընդունեց Ասորեստանի թագավորության գերիշխանությունը: Սա, սակայն, միայն սկիզբն էր, բայց այս առումով Արարատյան թագավորության համար ամենավատն այն էր, որ հենց նույն այս ժամանակ անակնկալ կերպով բարդացավ դրությունը նաև Հայոց թագավորության հյուսիսային սահմաններից անդին:

Խնդիրը կայանում էր նրանում, որ երկրագնդի միջին ջերմաստիճանի անկումը, որը սկիզբ էր առել մ.թ.ա. XIII դարի վերջում և մի պահ, կարծես թե, դադարել էր մ.թ.ա. XI-IX դարերում, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում վերսկսել էր իր դանդաղ, սակայն անշեղ անկումը: Սրա ազդեցության մասին Արաբական թերակղզու պարագայում արդեն խոսվեց, սակայն գործընթացն իր ազդեցությունն ունեցավ նաև Մեծ տափաստանի վրա, որի կողմից սպասվող վտանգը, ընդհակառակը, կտրուկ վերելք ապրեց: Արդյունքում, ինչպես հարյուրամյակներ առաջ էր, Մեծ տափաստանում սկիզբ առավ հյուսիսից դեպի հարավ ուղղված ժողովուրդների հերթական հզոր մի շարժ, որը գրեթե անմիջապես էլ իրենց վրա զգացին Մեծ տափաստանը հարավից եզերող առանց բացառության բոլոր պետական միավորները: Սկիզբ առավ Մեծ տափաստանի Փոքր

[1] «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից; Առուշան I-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

ակտիվության հերթական փուլը, որն իր չափերով, թեև զիջեց նախկինին, սակայն կրկին խիստ զգալի էր:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Չինաստանի տարածքում Մեծ տափաստանի հետ մինչ այդ զգալի համագործակցություն իրականացնող Շանգի թագավորությունից գերիշխանությունը վաղուց արդեն անցել էր իր ժամանակին Մեծ տափաստանն իր հերթին շեշտադրող, բայց այժմ վաղուց արդեն չինական տարրի հիման վրա գործող Չժոուի թագավորությանը, որի հզորությունը, սակայն, ևս աստիճանաբար սասանվում էր: Իր հերթին, դիտարկելով արևելքից արևմուտք սկզբունքով, նույն այս ժամանակաշրջանում Մեծ տափաստանում գործում էին Հուննուական, Քուշանական, Մասագետական, Սկյութական և Կիմմերական թագավորությունները, ընդ որում վերջինս գտնվում էր Մեծ տափաստանի արևմուտքում, նրա նախորդը տարածվում էր Մեծ տափաստանի կենտրոնական հատվածում, իսկ մնացած երեքն էլ գործում էին Մեծ տափաստանի արևելքում:

Մ.թ.ա. դեռևս 822 թվականին Հուննուական թագավորությունը պատերազմական գործողություններ սկսեց Չժոուի թագավորության դեմ և այս հարվածը չինացիները կարողացան հետ մղել միայն ծանր պատերազմից հետո: Վերջնարդյունքում, սակայն, անհաջողություն կրելով Չժոուի թագավորության դեմ պայքարում, Հուննուական թագավորությունը հարվածն ուղղեց դեպի արևմուտք և պարտության մատնեց Քուշանական թագավորությանը: Որպես հետևանք այս ամենի՝ սեփական տարածքների զգալի մասից զրկված Քուշանական քոչվոր թագավորության հիմնական ուժերը արդեն իրենք իր տեսակի մեջ առաջին շարժերից մեկը սկսեցին դեպի արևմուտք և, պարտության մատնելով Մասագետական թագավորության բանակին, այս թագավորությանն իր հերթին դուրս մղեցին Մեծ տափաստանի արևելքից, ինչից հետո Մասագետական թագավորությունը հաստատվեց Միջին Ասիայում:

Գործընթացը, սակայն, շարունակվելով «ընկնող դոմինոների» սկզբունքով ու ահագնացող ցրտերի պատճառով իր մեջ հյուսիսից դեպի հարավ մղվող մարդկային նոր զանգված ընդունելու պատճառով միայն ավելի ուժեղանալով, իր շարունակությունն ունեցավ նաև Միջին Ասիայում, որտեղ Մասագետական թագավորությունը պարտության մատնեց Սկյութական թագավորությանը և, դուրս մղելով վերջինիս Մեծ տափաստանի կենտրոնական հատվածից, հետ մղեց նրան դեպի Մեծ տափաստանի արևմտյան հատված: Արդյունքում՝ Սկյութական թագավորության հիմնական ուժերը, ստիպված լինելով անցնել Վոլգան, իրենց հերթին պարտության մատնեցին Կիմմերական թագավորությանը և հաստատվեցին Մերձսևածովյան ու Նախակովկասյան տափաստաններում: Եվ վերջապես պարտություն կրած Կիմմերական թագավորության ուժերի մի մասը իր հերթին հետ քաշվեց դեպի Արևելյան Եվրոպա, իսկ մյուս մասն էլ անցավ Կովկասյան լեռնաշղթան ու հաստատվեց Հայաստանից հյուսիս և արևելք տարածվող ու Հայկական լեռնաշխարհը եզերող տարածքներում: Այսպիսով՝ սեփական տարածքները կորցրած, չարացած և ամեն ինչի պատրաստ կիմմերների հայտնվելը Հայաստանից հյուսիս ու արևելք ձգվող տարածքներում համընկավ հենց նույն այն ժամանակաշրջանի հետ, երբ Առուշան I-ը մահացու մարտի էր պատրաստվում Սարգոն II-ի դեմ: Որպես հետևանք այս զարգացումների՝ Հայոց թագավորության ուժերը շեղվեցին դեպի հյուսիս:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

715 – ***<u>Գոդերձականի ճ-մ</u>*** (Գուգարք)[1]

Առուշան I-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) շարժվեց ***<u>Ալանաց դուռ լեռնանցքից</u>*** ներխուժած Կիմմերական թագավորության

[1] Սարգոն II-ի գործունեությանը վերաբերվող արձանագրություններից; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»:

բանակի (մոտ 150.000) դեմ և ամուր պաշտպանական դիրքեր գրավեց:

I փուլ – Կիմմերական թագավորության բանակ անցավ վճռական գրոհի, սակայն համառ մարտում այն հետ մղվեց:

II փուլ – Հայկական բանակը անցավ հակագրոհի և ծանր կորուստներ պատճառեց Կիմմերական թագավորության բանակին:

III փուլ – Կիմմերական թագավորության բանակը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր և փորձեց շրջապատել Հայկական բանակին, որին միայն ծանր մարտերով հաջողվեց ճեղքել թշնամու բանակի շարքերը և կրկին ապաստանել ամրացված դիրքերում: Որպես հետևանք այս ամենի՝ ծանր կորուստներ կրած Կիմմերական թագավորության բանակը չհամարձակվեց շարունակել մարտը և նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 30.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր:

Համաշխարհային և հայկական պատմագիտության մեջ այս ճակատամարտը, հիմնվելով Ասորեստանի թագավորության հետախույզների զեկուցագրերի վրա, ավանդականորեն համարվել է Հայկական բանակի կողմից տանուլ տրված: Ինչպես ցույց են տալիս ճակատամարտին հաջորդող իրադարձությունները, սակայն, այս ճակատամարտը, Հայկական բանակի համար իրոք լինելով չափազանց ծանր, մարտավարական տեսանկյունից այնուհանդերձ անորոշ ելք է ունեցել, քանզի թշնամու հետագա առաջխաղացման մասին որևէ տեղեկություն չկա, ինչից էլ իր հերթին կարելի է ենթադրել, որ Հայկական բանակին այնուհանդերձ հաջողվել է պահել դիրքերը: Իր հերթին, եթե խնդիրը դիտարկենք ռազմավարական տեսանկյունից, ապա կարող ենք ամրագրել, որ արդյունքը ինչ-որ տեղ նույնիսկ Հայկական բանակի օգտին է եղել, քանի որ դրանից հետո թշնամին, նույնիսկ չփորձելով էլ առաջխաղացում իրականացնել, նահանջեց, ինչից էլ իր հերթին հետևում է, որ Հայկական բանակը վերջին հաշվով կատարել է իր մարտական առաջադրանքը: Հատկանշական է, որ այս ճակատամարտից հետո կիմմերները Առաջավոր Ասիա արշավելիս, որպես կանոն, շրջանցում էին Արարատյան թագավորությունը և, ընդհանրապես, խուսափում էին ռազմական բախման մեջ վերջինիս հետ: Այստեղ, մասնակիորեն շեղվելով թեմայից, պետք է ասել հետևյալը:

Ռազմական պատմաբանները կիմմերների, իսկ հետագայում էլ նաև սկյութների հաջողությունները Առաջավոր Ասիայում և Մերձավոր Արևելքում բացատրում են, հաճախ գերագնահատելով այս փաստը, նրանց՝ հիանալի նետ ու աղեղով զինված մասսայական թեթև հեծելազորի առավելությամբ: Վերջինս իրոք արագաշարժ էր իր հակառակորդների առանց այդ էլ համեմատականորեն սակավաթիվ հեծելազորներից, սակայն ողջ ռազմական պատմության վերլուծությունն իր հերթին ցույց է տալիս, որ թեթև հեծելազորը, այս առավելությամբ հանդերձ, ունի նաև թերություններ, որոնցից ամենագլխավորը կանոնավոր մարտ վարելու անկարողությունն է: Նպատակ չունենալով այստեղ խորանալ այս թեմայի մեջ, նշեմ միայն, որ թեթև հեծյալների դեմ պայքարելու արդյունավետ միջոցները բազում են և միայն սույն զորատեսակի կիրառմամբ հաջողության հասնելը բավականին դժվար է:

Սրա հետ կապված պետք է նշել նաև, որ արդյունքում սխալ է այն մոտեցումը, ըստ որի Առաջավոր Ասիայի և Մերձավոր Արևելքի պետությունների զարգացման օրինաչափությունները, այնտեղի պետական կառույցներում, այդ թվում նաև բանակում, գոյություն ունեցող հարաբերությունները մեխանիկորեն վերագրվում են Արարատյան թագավորությանը: Իրականում Արարատյան Հայոց թագավորությունը, ունենալով իր առանձնահատկությունները, որոնցից ամենակարևորը, որպես միասնական ազգային հենքի և պետականության կրողի իր հիմքում հայ ժողովրդի ունենալն էր, զարգանում էր իր յուրօրինակ ուղով: Այսպիսով՝ կարծում եմ, որ ճիշտ չէ համաշխարհային ռազմական պատմագիտության մեջ շրջանառվող այն վիճահարույց թեզը, թե Կիմմերական կամ Սկյութական թագավորությունների բանակները անվիճելի առավելություն ունեին Առաջավոր Ասիայի և Մերձավոր Արևելքի պետությունների բանակների նկատմամբ ու,

առավել ևս՝ դրա մեխանիկորեն վերագրումը նաև Արարատյան թագավորությանը:

Խնդիրը նեղ մարտավարական տեսանկյունից դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ Հայկական բանակը, որը ի տարբերություն իր մյուս հարևանների, այս ժամանակ արդեն իսկ ուներ հեծելազորային մոտ մեկ և կես հազարամյա փառահեղ պատմություն ու ավանդույթներ և արդյունքում ուներ տարածաշրջանում լավագույն հեծելազորներից մեկը, ի համեմատ հենց նույն Ասորեստանի թագավորության բանակի, ի վիճակի էր ավելի հաջող գործել Կիմմերական կամ Սկյութական թագավորությունների ռազմական մեքենաների դեմ: Բացի այդ, կրկին անդրադարձ կատարելով մարտավարական մակարդակին, հարկ է նշել, որ կիմմերական, իսկ հետագայում էլ սկյութական գովերգված աղեղը, որը մահացու հարվածը պահում էր 120 մետրի վրա, իր մարտական որակներով ևս, մեղմ ասած, առնվազն չէր գերազանցում այդ ժամանակ Հայկական բանակի սպառազինության մեջ գտնվող նույն զինատեսակին: Խոսքը հայկական աղեղի այն տեսակի մասին է, որով արձակած նետն, օրինակ, իր առավելագույն թռիչքի մեջ մի անգամ հասավ 476 մետրի՝ բնականաբար մահացու հարվածի ուժը պահելով առնվազն մոտ 150 մետրի վրա[1], և որով սրանից չորս հարյուրամյակ անց հայ նետաձիգները միջաթափանց ծակում էին հունական բանակի հոպլիտների վահաններն ու զրահները:

Այսպիսով՝ Հայկական բանակը, իր կազմում ունենալով նման զինատեսակով զինված թեթև հետևազոր և հզոր հեծելազոր, դրան գումարած ծանր հետևազորն ու մարտակառքերը, անկասկած ի վիճակի էր արժանի հակահարված տալ տափաստանային եկվորներին, որոնց միակ առավելությունը այս պարագայում մնում էր թվական գերակշռությունը: Արդյունքում՝ կարծում եմ, որ Կիմմերական և Սկյութական թագավորությունների բանակների հաջողությունները Հայաստանի հարակից երկրներում ավելի շատ պետք է բացատրել համաշխարհային զարգացումներով, երբ հին տիպի պետությունները իրենց վերջին ժամերն էին ապրում, իսկ նոր տիպի պետությունները դեռևս կամ չէին առաջացել, կամ էլ ձևավորման փուլում էին: Այս առումով կրկին խիստ հատկանշական է այն հանգամանքը, որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում տափաստանային քոչվորները Հայաստանում որևէ լուրջ հաջողություն այդպես էլ չունեցան:

Այս առումով հետաքրքիր է նաև նշել, որ, ինչքան էլ խորհրդային պատմագիտությունը, առաջնորդվելով նույնացման վերը հիշատակված սխալ մեթոդով, փորձում է Հայաստանում կիմմերների, իսկ հետագայում էլ սկյութների ավերիչ արշավանքի պատկեր ստեղծել, դա չի հաստատվում ոչ մշակույթի նյութական կրիչներում պարունակվող տվյալներով, ոչ էլ հետագա կարճ ժամանակամիջոցում ձեռք բերված հսկայական առաջընթացներով և նվաճումներով[2]: Այսպիսով՝ Հայկական բանակին վերջին հաշվով իրոք հաջողվեց հաջողությամբ պաշտպանել Հայաստանը, սակայն այս

---

[1] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր 1, Երևան 2007, էջ 186:

[2] Մ.թ.ա. VII դարի վերջի և VI դարի սկզբի համար չունենալով դեպի Արարատյան թագավորության կենտրոնական շրջաններ իրականացված որևէ արշավանքի մասին տվյալներ՝ խորհրդային պատմաբանները փորձում էին «Ուրարտուի անկումը» տեսնել անուղղակի տվյալներում: Այսպես, Բ. Պիատրովսկին առաջ քաշեց տեսակետ, թե Արարատյան թագավորության ամրությունների ոչ մշակութային շերտերում հայտնաբերված նետասլաքները, դրանց քանակությունը և դիրքը վկայում են այն մասին, որ դրանք սկյութական տիպի էին ու կիրառվել են պաշարողական գործողությունների ընթացքում (տես օրինակ հեղինակի տեսակետը, արտահայտված ավելի ուշ այստեղ՝ Пиотровский Б. Б. “Ванское царство”, Москва 1959, стр. 241): Համաձայնելով այս տեսակետի հետ և ձգտելով զարգացնել այն՝ տխրահռչակ Ի.Մ. Դյակոնովը, կիրառելով անչափ մշուշոտ, սայթաքուն ու ոչ միանշանակ մեկնաբանելի փաստարկներ, փորձ կատարեց տեղայնացնել ժամանակի մեջ «սկյութների ավերիչ արշավանքը դեպի Ուրարտու» և թվագրել է այն 609 թվականով՝ որպես աղբյուրագիտական հիմք ունենալով ընդամենը միայն բաբելոնյան մեկ, վնասված ու հատվածականորեն պահպանված արձանագրություն Արարատյան թագավորության հարավային սահմաններում ընթացած մարտական գործողությունների մասին (И. М. Дьяконов. “Последние годы урартского государства по ассиро-вавилонским источникам”, ВДИ, № 2, 1951 г., стр. 33): Այս կապակցությամբ ավելորդ էլ է ասել, որ նետերի արձակման ուղղությամբ անչափ դժվար է ճշգրիտ հետևության գալ դրանց կիրառման հարցում հենց հարձակողական, այլ ոչ թե, օրինակ, պաշտպանողական գործողությունների ընթացքում: Իր հերթին, սկյութական նետի առկայությունը դեռևս ամենևին էլ չի կարող անկասկած կերպով վկայել հենց սկյութ ռազմիկի առկայության մասին: Հակառակ դեպքում թերևս ստիպված կլինենք պնդել, որ Վիետնամի տարածքում գտնված ԽՍՀՄ արտադրության Կալաշնիկովի ինքնաձիգից արձակած բոլոր փամփուշտները արձակել են միայն ԽՍՀՄ զինծառայողները: Արդյունքում՝ մի կողմ թողնելով այս կասկածելի և ոչ համոզիչ փաստարկները, ավելի հավանական է կարծել ընդամենը միայն Հայոց թագավորության սահմաններում իշխող գահատոհմի փոփոխություն, իսկ նետերն էլ կարող էին արձակված լինել նույն դարաշրջանի ամենատարբեր իրադարձությունների ընթացքում, որոնց մասին մեզ կոնկրետ տեղեկություններ ուղղակի չեն հասել: Այս առումով բացառված չէ, որ այդ իրադարձությունները տեղի են ունեցել մ.թ.ա. 590 թվականին հաջորդող տասնամյակներում, որից հետո Արմենիի թագավորության տարածքում 21 տարով խառն և անկայուն մի դրություն հաստատվեց:

արդյունքն առկա էր վերջնական պատմական համայնապատկերի տեսանկյունից, իսկ կոնկրետ մ.թ.ա. 715 թվականին, թեև թշնամին, ինչպես նշվեց, առաջխաղացում չունեցավ, սակայն Արարատյան թագավորության ռազմական մեքենան, այն էլ Ասորեստանի թագավորության կողմից առաջացրած ռազմական անմիջական սպառնալիքի պայմաններում, ծանր կորուստներ կրեց և դա վատ էր:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ պակաս բացասական դեր չխաղաց նաև երկրի ներքաղաքական դրության սրումը, որը դրսևորվեց ռազմական խռովության տեսքով: Հայոց պատմության մեջ անչափ հազվադեպ հանդիպող ռազմական խռովություններից կոնկրետ այս օրինակի ոչ դրդապատճառները, ոչ էլ մանրամասները, սակայն, մեզ ցավոք հայտնի չեն, թեև դեպքերի զարգացման ընդհանուր պատկերը մեծ հաշվով պարզ է: Արդյունքում՝ մ.թ.ա. նույն 715 թվականին, կիմմերների դեմ հենց նոր ավարտված ծանր ճակատամարտից հենց հետ, Վանի ճ-մ-ում Առուշան Ի-ի գլխավորած Ոստանիկ (մոտ 25.000) բանակը հաղթեց առաջին սպարապետ Նարագայի, երկրորդ սպարապետ Արծնեի, ինչպես նաև վերջինիս եղբայր, Մուսասիրի իշխան Աբալիուկնուի գլխավորությամբ ապստամբած բանակին (մոտ 10.000), որից հետո առանց մարտերի մտավ մայրաքաղաք: Մահապատժի ենթարկվեցին 100 հոգի[1], ինչից հետո Առուշան Ի-ին հաջողվեց կայունացնել դրությունը: Իրադարձության մասին հայտնի է ուղիղ այսքանը և արդյունքում որևէ կերպ հնարավոր չէ ասել, թե ի՞նչ հարաբերությունների մեջ էին խռովության հեղինակները մեկը մյուսի կամ կենտրոնական իշխանության հետ կամ ի՞նչը և ո՞վ էր նրանց դրդել գործել: Շուտով, սակայն, ի վերջո սկիզբ առավ երկար սպասված հարվածը հարավից:

Մ.թ.ա. 714 թվականի հունիս Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) ասպատակեց Ատրպատականի հյուսիսը և Տրպատունիքը[2], ինչից հետո կողմերը վճռական ընդհարման համար իրար բերեցին ուժերը: Արդյունքում՝ մ.թ.ա. 714 թվականի հունիսին Ուաշ լեռան ճ-մ-ում Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 120.000) անակնկալ հարվածով հաղթեց Առուշան Ի-ի գլխավորած Արարատյան թագավորության և Դեովկեսի (մ.թ.ա. մոտ 715-647) գլխավորած Մարական իշխանության (մոտ 10.000) ճամբարած միացյալ բանակին (մոտ 60.000), ընդ որում այլոց թվում գերվեց նաև Դեովկեսը[3]:

Ծանր հարված հասցնելով Արարատյան թագավորության ռազմական մեքենային՝ մ.թ.ա. 714 թվականի հուլիսին Սարգոն II-ի գլխավորությամբ Գաբիթեան-Բաքեան-Զարեհավանդ երթուղով արշաված Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 110.000) անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) գրավեց Անիաշտանիան ու ևս 17 բերդ (Վասպուրական, Անձախիձոր գավառ)[4]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 714 թվականի հուլիսին հակառակորդը տիրեց Տարուա (= Տուսուկ), Տարմակիսու, Բուբուզի, Խունդուր, Այալե, Ծինիշպալա, Ծինունակ, Արնա, Շարնի, Արբու, Ռիար ամրոցներին[5], իսկ նույն թվականի օգոստոսին էլ, խորանալով Արարատյան թագավորության տարածքում, գրավեց Կոտոր (= Ուրխու), Ունիտե, Խուրունկու, Գիզուարզա, Շաշզիսսա, Խունդուրնա, Վերին Ուադնաունզ, Արազու, Շադիշցինա, Ներքին Խունդուրա, Էլնակ, Զիմրա, Սուրզի, Շլադինա, Դագ, Ցուրզի, Էլիադինա, Դագ, Ցուրզիալդիա, Արմունա, Կինաշտանիա, Բուբուզի Խունդուր, Այալե, Ծինիշպալա, Ծինունակ, Արնա և Շարնի ամրոցները[6]: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ հայերի ամրացված շատ կետերի էլ հակառակորդին տիրել չհաջողվեց և վերջիններս թվում կարելի է մատնանշել Անզալիա Կուայաի, Կալլանիա, Բիտայա, Ալուարզա, Կիունա, Ալլի, Արզուգու, Շիկկանու, Արդիունակ, Դայազունա, Գետա, Բանիու, Բիրխիլուզա, Դեզիզու,

[1] Սարգոն II-ի գործունեությանը վերաբերվող արձանագրություններից:
[2] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[3] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[4] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[5] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[6] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:

Դիլիզիա, Աբաինդի, Դուայի, Խասրանա, Պարրա, Այածուն, Անիաշտանիա, Բալդուարզա, Խիրարդի, Շումատտար, Շալզի, Ալբուրի, Ծիկարրա և Հին Ուայահիս ամրոցները[1]:

Այսպես թե այնպես, սակայն, շարունակելով առաջխաղացումը Վանի ուղղությամբ, մ.թ.ա. 714 թվականի օգոստոսին Սարգոն II-ի ընդհանուր հրամանատարությամբ գործող և մասերի բաժանված Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) անկանոն հարվածներ հասցնող Արարատյան թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեց Արգիշտիունան, Կալլանիան ու ևս 87 բերդ (Վասպուրական)[2], իսկ նույն թվականի սեպտեմբերին էլ տիրեց Ուայահիսին և ևս 40 բերդի (Պարսկահայք)[3]: Այս առումով հետաքրքիր է նշել, որ Վանի պաշարումին հակառակորդն այդպես էլ ձեռնամուխ չեղավ և արդյունքում Սարգոն II-ը, որն մինչ այդ հասել էր Արարատյան թագավորության կենտրոնական շրջաններ, խնդիր դրեց ամենից առաջ բարեհաջող լքել Հայոց թագավորության սահմանները: Արդյունքում՝ մ.թ.ա. 714 թվականի հոկտեմբերին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Կորճայքը[4], ինչից հետո ձեռք բերեց խոշոր մի հաջողություն, երբ մ.թ.ա. 714 թվականի հոկտեմբերին Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (1.000 հեծյալ, 12.000 հետևակ) Մուսասիրի իշխան Արզանայի գլխավորած Արարատյան թագավորության բանակից (մոտ 1.000) անակնկալ հարձակումով գրավեց Արդնին, ավերեց քաղաքը և մեծ ավարով հեռացավ[5]:

Վերջին իրադարձությունները Արարատյան թագավորության համար անչափ ծանր էին, սակայն դրանք էժան գին չարժեցան նաև Ասորեստանի թագավորության ռազմական մեքենային: Իր պարծենկոտ արձանագրություններում Սարգոն II-ը, հավատարիմ մնալով Ասորեստանի թագավորության արքաներին ընդհանրապես բնորոշ ծանոթ ինքնագովերգող ոճին, այս կապակցությամբ փորձում է այնպիսի մի տպավորություն ստեղծել, թե Արարատյան թագավորությունը նա ուղղակի ոչնչացրել է: Այս առումով հատկանշական է, սակայն, այն հանգամանքը, որ դրանից հետո որևէ նոր արշավանք Հայոց թագավորության կենտրոնական հատվածների ուղղությամբ Ասորեստանի թագավորությունն այդպես էլ չձեռնարկեց, ինչն ամենևին էլ չի խոսում այն բանի օգտին, որ Սարգոն II-ի խոսքերը մոտ են իրականությանը: Իր հերթին, ստախոսության մեկ այլ օրինակ էլ Սարգոն II-ի նույն արձանագրությունները տալիս են այս դեպքերի հետ կապված մասնավոր մեկ այլ օրինակում, երբ, կարծես թե, ամփոփելով իր հաջողությունները, դրանք հայտնում են կրած ծանր վշտից Առուշան I-ի գործած ինքնասպանության մասին, սակայն հետագայում, մոռանալով այս մասին, մ.թ.ա. արդեն 713 թվականի դեպքերի կապակցությամբ նույն այդ արձանագրությունները կրկին հիշատակում են Առուշան I-ին: Այս կապակցությամբ, թերևս, պետք է ավելացնել, որ, այո, թեև Առուշան I-ը ինքնասպան չեղավ և մ.թ.ա. 714 թվականին նույնիսկ չմահացավ էլ, սակայն մ.թ.ա. 713 թվականին նա իրոք կնքեց իր մահկանացուն, ինչից հետո Արարատյան թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Արա IV-ը (մ.թ.ա. 713-685), որը ուժեղ մի անձնավորություն էր և հզոր տիրակալ՝ արժանի լինելով իր անմիջական նախնիներին: Հենց Արա IV-ին ուսերին էլ ընկավ հարավային հարևանի հետ հակամարտության հետագա շարունակումը:

Մ.թ.ա. 713 թվականին Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը և նահանջեց[6]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 712 թվականին Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) Թարխունիայի գլխավորած Գուրգումի իշխանության բանակից (մոտ 3.000) գրավեց Մարաշը (= Մարքասու) (Կիլիկիայի արևելք,

[1] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:
[2] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:
[3] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[5] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[6] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

Մարաշ գավառ, Ջեյհուն գետի ձախ ափին)[1]: Գուրգումի իշխանությունը ոչնչացավ: Մ.թ.ա. 711 թվականին Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) կրկին ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը և նահանջեց[2]: Իր հերթին, մ.թ.ա. 710 թվականին Սարգոն II-ի ռազմական մեքենան Կոմագենեի իշխան Մութթալուի գլխավորած Կոմագենեի իշխանության բանակից գրավեց Կումուխը (Անդրեփրատյան Ծոփք, Կոմագենե գավառ, Եփրատի աջ ափին) և 62 բերդ (Կոմագենե գավառ)[3]:

Արդյունքում պարզվեց, որ, չկարողանալով հաշիվ տեսնել Արարատյան թագավորության հետ ուղղակի ռազմական հարվածով, Սարգոն II-ը, ըստ էության, փորձում է վերջինիս նկատմամբ կյանքի կոչել արևելքից և արևմուտքից նրան թևանցելու ու մեկուսացնելու մոտավորապես նույն այն ռազմավարությունը, որ սրանից տասնամյակներ առաջ նույն Ասորեստանի թագավորության նկատմամբ բավականին հաջող կիրառել էին հայերը: Այս հանգամանքը, սակայն, ստիպեց գործել արդեն նաև Արա IV-ին, որը հզոր հակահարված կազմակերպեց: Որպես հետևանք՝ մ.թ.ա. 708 թվականից մինչև մ.թ.ա. 706 թվական Կոմագենեի իշխան Մութթալուի ընդհանուր հրամանատարությամբ գործող մասերի բաժանված Արարատյան թագավորության բանակը (ընդհանուր՝ մոտ 30.000 ռազմիկ) ասպատակեց Հյուսիսային Ասորիքը ու Կիլիկիայի արևելքը՝ ընդհանուր արդյունքում ոչնչացնելով թշնամական 300 կայազոր[4]: Այսպիսով՝ Արարատյան թագավորությունը մեկուսացնելու Սարգոն II-ի քաղաքականությունը ոչ միայն անհաջողության մատնվեց, այլև վերջինիս ռազմական մեքենայի համար այն զգալի կորուստներ արժեցավ:

Հաշվի առնելով վերջին տարիների անհաջող զարգացումները՝ Սարգոն II-ը, իրար բերելով սեփական ռազմական մեքենայի բոլոր մասերը և որպես նշանակետ կրկին ունենալով Արարատյան թագավորությունից արևմուտք ձգվող տարածքները, վերջինն ու վճռականը լինելուն կոչված հզոր մի արշավանք ձեռնարկեց Կիլիկիայի ուղղությամբ: Մ.թ.ա. 705 թվականին, սակայն, ինչ որ տեղ Լեռնային Կիլիկիայում տեղի ունեցած ճակատամարտում Արա IV-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000) ջախջախեց Սարգոն II-ի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 120.000), ընդ որում մարտում սպանվեց նաև Ասորեստանի ռազմաշունչ արքան[5]: Այս առումով հարկ է նշել, որ սա մոռացված և խորհրդային պատմագիտության կողմից համարյա ուշադրության չարժանացած ճակատամարտերից մեկն է, որը էականորեն փոխում է Ասորեստանի և Արարատյան թագավորությունների միջև մղվող հակամարտության արդյունքի վերաբերյալ պատկերացումները ու նրան տալիս է նոր մի բովանդակություն: Իրոք, Լեռնային Կիլիկիայում տեղի ունեցած այս ճակատամարտով էլ հենց, որտեղ սպանվեց Սարգոն II-ը, ըստ էության, իրենց վերջը գտան Ասորեստանի թագավորության գրեթե հազարամյա հավակնությունները Հայաստանի նկատմամբ, իսկ Արարատյան թագավորությունն էլ ի վերջո խաղաղ զարգացման հնարավորություն ստացավ:

Ռազմաշունչ Սարգոն II-ին Ասորեստանի թագավորության գահին փոխարինեց նրա որդի Սինաքերիբը (մ.թ.ա. 705-680), որը փորձ կատարեց շարունակել հոր քաղաքական գիծը: Խնդիրները, սակայն, որոնք հառնեցին նոր տիրակալի առջև, լրջորեն շեղեցին նրա ուշադրությունը հայերի դեմ պատերազմից, մանավանդ որ հայերն իրենք էլ շարունակում էին լցված մնալ համառ դիմադրություն ցույց տալու տրամադրություններով: Սինաքերիբը մի քանի տարի ծախսեց հոր մահից հետո հերթական անգամ հսկողությունից դուրս եկած Բաբելոնի թագավորության տարածքում, ինչպես նաև Ասորիքում իր գերիշխանությունը հաստատելու վրա՝ այս ճանապարհին ի վերջո հերթական անգամ կարողանալով ուժերի հավասարակշռության մի վիճակ հաստատել

[1] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:
[2] Սարգոն II-ի գործունեությանը վերաբերվող արձանագրությունից:
[3] Սարգոն II-ին վերագրվող արձանագրությունից:
[4] Սարգոն II-ին վերագրվող արձանագրություններից:
[5] «Բաբելոնյան ժամանակագրություն»-ից; «Էպոնիմների ցանկ» արձանագրությունից:

նաև Ասորիքից այդպես էլ չհրաժարված Եգիպտական ոտքի կանգնող թագավորության հետ: Արդյունքում՝ մ.թ.ա. միայն 699 թվականին էր, որ Սինաքերիբ արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 70.000) ասպատակեց Կորճայքի հարավը և նահանջեց[1]: Դրանից հետո, սակայն, Նինվեի տիրակալին երկար տարիներ կրկին սկսեց զբաղեցնել սեփական թագավորության արևելյան սահմանների անվտանգության խնդիրները և այս հողի վրա վերջինս մի շարք հարվածներ հասցրեց Մարաստանի իշխանությանը, ինչպես նաև լուրջ հակամարտության մեջ մտավ սեփական հավակնությունների մասին աստիճանաբար ավելի ու ավելի բարձր ձայնով հայտարարող Էլամի թագավորության հետ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ սեփական հավակնություններով առաջ էին եկել արդեն նաև հունական քաղաքակրթության ներկայացուցիչներն, ի դեմս հոնիացիների, որոնք, ամրանալով Փոքր Ասիայում և հիմնվելով այստեղ աստիճանաբար ուժեղացող հունական տարրի վրա, փորձ էին կատարում սեփական ազդեցությունը տարածել դեպի ավելի արևելք: Այս ճանապարհին հոնիացիների հարածային գլխավոր գործիքներից մեկը նույն այս ժամանակ Փոքր Ասիայի արևմուտքում ոտքի կանգնող Լյուդիական թագավորությունն էր, որը աստիճանաբար առաջ էր գալիս անչափ լուրջ հավակնություններով: Արդյունքում՝ հոնիացները փորձ կատարեցին առաջխաղացում իրականացնել Կիլիկիայի ուղղությամբ, սակայն, մ.թ.ա. 689 թվականին Կիլիկիայի ճ-մ-ում Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) հաղթեց առաջխաղացած Լյուդիական թագավորության բանակին (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5.000)[2], ինչից հետո նույն թվականին գրավեց Ինգիրուն, Տարսոնը ու Իլլուբրուն (Կիլիկիա)[3]:

Մ.թ.ա. մոտ 688 թվականին Արա IV-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 40.000) իր հերթին ասպատակեց Մարաստանի իշխանության տարածքը և նահանջեց[4]: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Սինաքերիբն այս անգամ ևս խուսափեց Արարատյան թագավորության հետ ռազմական ուղղակի ընդհարման մեջ մտնել:

Մ.թ.ա. 685 թվականին Արա IV-ը կնքեց իր մահկանացուն և Արարատյան թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Առուշան II-ը (մ.թ.ա. 685-660): Օգտվելով այս հանգամանքից՝ մ.թ.ա. նույն 685 թվականին Սինաքերիբ արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) Մելիտեի իշխան Կուրտիկի գլխավորած Մելիտեի իշխանության բանակից (մոտ 2.000) գրավեց Մելիտեն, սակայն ի վերջո նահանջեց[5]:

Մ.թ.ա. 680 թվականի հունվարի 10-ին Սինաքերիբի դեմ դավադրություն կազմած նրա երկու ավագ որդիները, որոնք մինչ այդ զրկվել էին ժառանգությունից, սպանեցին իրենց հորը, որից հետո, սակայն, չկարողանալով ամրանալ գահին, փախուստի դիմեցին և պատսպարվեցին Արմենիի թագավորությունում: Արդյունքում՝ Ասորեստանի թագավորության արքա հռչակվեց հանգուցյալի երրորդ և կրտսեր որդի, դեռևս իր կենդանության օրոք Սինաքերիբի կողմից ժառանգորդ ճանաչված Ասարհադոնը (մ.թ.ա. 680-669):

Սինաքերիբին սպանած նրա որդիները, որոնք դրա հետ միասին Ասորեստանի գործող արքա Ասարհադոնի, ըստ էության, նաև քաղաքական հակառակորդներն էին, ապաստանել էին Արմենիի թագավորության տարածքում և բնական էր սպասել, որ առաջին հարվածը պետք է գար հենց այս ուղղությամբ, ընդ որում հետաքրքիր է նշել, որ այս հարցում պաշտոնական Նինվեին իր աջակցությունը ցույց տվեց նաև պաշտոնական Վանը: Բացատրությունը կայանում էր նրանում, որ վերջին տասնամյակներում

[1] Սինաքերիբին վերագրվող արձանագրությունից:
[2] Սինաքերիբին վերագրվող արձանագրությունից:
[3] Սինաքերիբին վերագրվող արձանագրություններից:
[4] Արա IV-ին վերագրվող արձանագրություններից:
[5] Սինաքերիբին վերագրվող արձանագրությունից:

Կիմմերական թագավորության բանակը, մի կողմ թողած Արարատյան թագավորության հիմնական տարածքը և առաջանալով Փոքր Հայքի ծովափնյա շրջաններով, վերջնականապես հրաժարվել էր Մերձսևածովյան ու Նախակովկասյան տափաստաններից և հաստատվել էր Հայաստանի արևմտյան, ինչպես նաև Կապադովկիայի արևելյան շրջաններում, որտեղ Ասորեստանի թագավորությունը մինչ այդ այդպես էլ չէր կարողացել ամրանալ: Որպես հետևանք նոր այս զարգացումների՝ Արմենիի թագավորությունում կրկին ուժեղացել էին անջատամետ տրամադրությունները և հենց այս հանգամանքն էր, որ Ասորեստանի ու Արարատյան թագավորություններին դաշինքի բերեց, մի դաշինք, որն ուղղված էր Կիմմերական և Արմենիի թագավորությունների դեմ:

Առաջին հարվածը հասցվեց կիմմերներին և արդյունքում մ.թ.ա. 679 թվականին Աղձնիքի ճ-մ-ում Առուշան II-ի գլխավորած Արարատյան (մոտ 60.000) ու Ասարհադոն արքայի գլխավորած Ասորեստանի (մոտ 40.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Թեուշպայի (մ.թ.ա. մոտ 700 - ուղ. 679) գլխավորած Կիմմերական թագավորության առաջխաղացած բանակին (մոտ 120.000), ընդ որում մարտում ընկածների թվում էր նաև Թեուշպան[1]: Այս պարտությունը ծանր հարված հասցրեց Կիմմերական կիսաքոչվոր թագավորության դիրքերին ու դրանից հետո կիմմերները, դադարելով գործել որպես կենտրոնացած մի ուժ, սկսեցին վարձկան ծառայություն իրականացնել տեղական կամ հարևան պետական միավորներում և նույնիսկ՝ Ասորեստանի թագավորության բանակում: Արդյունքում՝ կիմմերների զգալի քանակություն հայտնվեց նաև Արարատյան թագավորությունում, ինչը զգալիորեն մեծացրեց վերջինիս հարվածային հնարավորությունները:

Մ.թ.ա. 678 թվականին Սինաքերիբ արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) Մելիտեի իշխան Կուրտիկի գլխավորած Մելիտեի իշխանության բանակից (մոտ 2.000) գրավեց Մելիտեն, սակայն նահանջեց[2]: Իրոք, խնդիրներ էին հասունանում Ասորեստանի թագավորության լայնարձակ սահմանների ողջ երկայնքով և հետագայում զարգացնել մարտական գործողությունները Հայաստանի արևմուտքում Նինվեում ուղղակի ի վիճակի չէին:

Մ.թ.ա. 673 թվականին Մահկերտ տուն գավառի ճ-մ-ում Ասարհադոն արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) հաղթեց Ալասանի մահից հետո մ.թ.ա. 680 թվականին վերջինիս փոխարինած Արմաննայի իշխանության իշխան Ախշերիի (մ.թ.ա. մոտ 680 - ուղ. 659) գլխավորած Արմաննայի իշխանության (մոտ 20.000) և Իշպակիայի (մ.թ.ա. մոտ 700 - ուղ. 673) գլխավորած Սկյութական թագավորության միացյալ բանակին (մոտ 40.000, այդ թվում մարեր), ընդ որում այլոց հետ միասին մարտում ընկավ նաև Իշպակիան[3]: Վերջին հաջողությունը Ասարհադոնի համար շատ կարևոր էր, քանի որ այն մեծապես, թեև վերջին հաշվով միայն առժամանակ, վերացրեց այն վտանգը, որը Ասորեստանի թագավորության գլխին կախվել էր արևելքից:

Իրոք, Ասորեստանի տիրակալները երբեք էլ ամուր չէին իշխել Իրանական լեռնաշխարհին, իսկ վերջին տասնամյակներում էլ, չհաշված նույնիսկ Էլամի թագավորության առկայությունը, այստեղ կտրուկ ուժեղացել էին մարերի և պարսիկների դիրքերը: Ավելին, ավելի մեծացնելով վտանգը, նույն այս ժամանակ այստեղ էր հայտնվել նաև Կիմմերական թագավորության հեռացող ուժերին հետապնդող Սկյութական թագավորությունը, ինչը սեմիտական Ասորեստանի վրա արիական ներխուժման մի իսկական վտանգ էր կախել: Այսպիսով՝ վերջին հաջողության արդյունքում վերևում հիշատակված վտանգը առժամանակ կանխվեց, թեև այն վերջնականապես որևէ կերպ չվերացավ: Ինչ վերաբերում է Ասարհադոնին, ապա դրանից հետո նա շարունակեց տենդագին կերպով նետվել իր տերության մեկ սահմանից մյուսը՝ արդյունքում, սակայն,

[1] Ասարհադոնին վերագրվող արձանագրություններից; «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] Սինաքերիբի գործունեությանը վերագրվող արձանագրությունից:
[3] Ասարհադոնին վերագրվող արձանագրություններից; Սինաքերիբի գործունեությանը վերագրվող արձանագրությունից:

ընդամենը միայն կարողանալով պահպանել հավասարակշռությունը՝ այդ թվում նաև Ասորիքի նկատմամբ ավելի ու ավելի մեծ հավակնություններ դրսևորող Եգիպտական թագավորության հետ հարաբերություններում:

Մ.թ.ա. 672 թվականի ամռանը Առուշան II-ի գլխավորած Արարատյան (մոտ 60.000, մոտ 10.000 վարձկան կիմմերներ) և Ասարհադոն արքայի գլխավորած Ասորեստանի (մոտ 60.000) թագավորությունների միացյալ բանակը ապստամբած Հսկա Հայկազունու բանակից (ընդհանուր՝ մոտ 10.000) գրավեց Ուպպումուն ու Կուլիմերին, ինչպես նաև Տարոնի 22 բերդ[1]: Արդյունքում՝ Արմենիի թագավորության ապստամբությունը ճնշվեց և երկրամասը վերամիավորեց Արարատյան թագավորությանը: Այսպիսով՝ Ասարհադոնը, թերևս, կարող էր գոհ լինել և դրանից հետո նա վերադարձավ իր հոգսերին, սակայն Առուշան II-ն ինքը շարունակեց ակտիվությունը Արևմուտքում:

Արդյունքում՝ մ.թ.ա. 672 թվականին ինչ-որ տեղ Փոքր Հայքում տեղի ունեցած ճակատամարտում[2] Առուշան II-ի գլխավորած Արարատյան թագավորության բանակը (մոտ 70.000, այդ թվում վարձկան կիմմերներ) հաղթեց Միդաս III-ի (մ.թ.ա. մոտ 720-671) գլխավորած Փռյուգիայի թագավորության առաջխաղացած բանակին (մոտ 80.000)[3], ինչից հետո մ.թ.ա. 671 թվականին ասպատակեց Փռյուգիայի թագավորության տարածքը: Որպես հետևանք այս հարվածների՝ Փռյուգիայի թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքում էլ սկսեցին տնօրինություն անել Առուշան II-ի զգալի ազդեցության տակ գտնվող կիմմերները[4]:

Գլուխ 5
«Մեծացած աշխարհը» և նրա բերած նոր իրականությունը

Մ.թ.ա. 669 թվականի նոյեմբերի 1-ին դեպի Եգիպտոս նախապատրաստվող խոշոր արշավանքի հենց ամենասկզբում Ասարհադոնը հանկարծամահ եղավ և գահի վրա վերջինիս հաջորդեց իր որդի Ասուրբանապալը (մ.թ.ա. 669-627): Ասորեստանի թագավորության գահին հայտնված նոր տիրակալը անչափ ուշագրավ մի անձնավորություն էր: Խելացի և ռազմունակ, ինչպես իր անմիջական նախնիները, սրա հետ միաժամանակ Ասուրբանապալն իրենից ամենից առաջ ավելի շատ հենց ռազմական տեսաբան ու պալատական մի հրամանատար էր ներկայացնում, որը մշակում էր հարվածների ընդհանուր ռազմավարությունը, սակայն դրանց կոնկրետ կիրառումը թողնում էր սեփական զորավարներին: Միաժամանակ, լինելով անչափ կրթված մի անձնավորություն, որը ոչ միայն ի վիճակի էր պատմական սեպագրերի հսկայական հավաքածու հավաքել, այլև՝ հենց ինքն էլ նոր օրինակներով համալրել նույն այդ հավաքածուն, Ասուրբանապալը այնուհանդերձ զուրկ էր գործընթացները համայնապատկերային խորությամբ դեպի ապագա գնահատելու ունակությունից: Արդյունքում՝ իր երկարատև թագավորության ընթացքում Ասորեստանի թագավորության բոլոր արքաներից այս ամենակրթվածը սեփական թագավորությանը աննախադեպ մեծության մի փայլ հաղորդեց, սակայն, դրա հետ միաժամանակ էլ նաև, նա ոչ միայն չկարողացավ գնահատել իր նույն այդ թագավորության առջև ապագայում հայտնվելիք մարտահրավերները, այլև, բնականաբար նաև՝ մշակել դրանց հաղթահարման ուղիները:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ամենամեծ մարտահրավերը, որ նույն այս ժամանակ հառնել էր Ասորեստանի թագավորության առջև, դա այս թագավորության ռազմավարական զարգացման նույնիսկ հեռանկարի մշակումը չէր և կամ ոչ էլ այս ոլորտում գոնե առկա խնդիրների վեր հանումն ու դրանց հաղթահարման ուղիների մշակման պակասն էր: Իրոք, ամենամեծ մարտահրավերը, որ նույն այս ժամանակ

[1] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] Այս ճակատամարտի տեղը խիստ մոտավոր է և տրվում է այն հաշվարկով, որ հենց Փոքր Հայքն է հանդես գալիս որպես Արարատյան թագավորության ու Փռյուգիայի թագավորության սահմանային տարածք:
[3] Ասարհադոնին վերագրվող հարցում-արձանագրությունից: Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 1, գլուխ 3, մաս 21:
[4] Առուշան II-ին վերագրվող արձանագրությունից:

հառնել էր Ասորեստանի թագավորության առջև, դա հենց այս տասնամյակներում տեղի ունեցած և հսկայական փոփոխությունների հանգեցրած «*աշխարհի աննախադեպ լայնացումն էր*»՝ բնականաբար՝ ռազմաքաղաքական իմաստով: Այսպես, եթե նախկինում տարածաշրջանն, ըստ էության, սահմանափակված էր Ասորիքով, Միջագետքով, Հայկական, ինչպես նաև, այն էլ մասնակիորեն, Իրանական լեռնաշխարհներով կամ Աֆրիկայի հյուսիս-արևմտյան հատվածով և Արաբական թերակղզով, ապա այժմ հանկարծ պարզվեց, որ ռազմաքաղաքական առումով «*աշխարհն իրոք լայնացել է*», երբ դրա մեջ ընդգրկվել էին ոչ միայն Փոքր Ասիան, այլև Արևելյան Եվրոպան ու Մեծ տափաստանը: Որպես հետևանք աննախադեպ այս զարգացման՝ իր հերթին հանկարծ պարզվեց, որ, եթե նախկին «*փոքր աշխարհի*» պայմաններում Ասորեստանի թագավորությունը իրենից իրական մի առաջնորդ էր ներկայացնում ամենից առաջ հենց սեփական ռազմական հզորության տեսանկյունից, ապա այժմ, արդեն «*մեծ աշխարհի*» չափանիշներով առաջնորդվելիս, Ասորեստանի թագավորությունը, նույնիսկ իր հզորության գագաթնակետին և նույնիսկ Ասուրբանապալի գերարդյունավետ կառավարման պայմաններում էլ, այնուհանդերձ ոչ միայն առաջինների շարքում չէ, այլև նույնիսկ ինքը խնդիրներ ունի սեփական անվտանգության ապահովման հետ կապված:

Իրոք, նույն այս ժամանակ արդեն իսկ, ըստ էության, ձևավորվել էր ասորեստանյան գերությունից հաջողությամբ ազատված արժանահիշատակ նույն Դեովկեսի կողմից հիմնադրված Մարական թագավորությունը, որը սերտորեն համագործակցում էր նույն այս ժամանակ իր հերթին թագավորության աստիճանի բարձրացած ու Կայենյաններից սերող Աքեմենի (մ.թ.ա. 705-675) կողմից հիմնադրված Պարսքի թագավորության հետ: Արդյունքում՝ երկու այս ազգակից թագավորություններն, ըստ էության, իրենցով էին արել Իրանական լեռնաշխարհի հիմնական մասը, իսկ իրենց միասնական հզորությամբ էլ նրանք, ըստ էության, արդեն ավելին էին, քան նույն Ասորեստանի թագավորությունը: Ավելին, Մարաստանի և Պարսքի թագավորությունները նույն այս ժամանակ սերտորեն համագործակցում էին Մեծ տափաստանի արևմտյան հատվածում վերելքի ուղին բռնած Սկյութական թագավորության հետ, ինչի արդյունքում երեք այս ուժերը հանդես էին գալիս, ըստ էության, միասնական մի դրոշի ներքո: Այս ամենին գումարվում էր նաև Արարատյան թագավորության դիրքորոշումը, որի արիական բնույթն ամեն դեպքում ավելի շատ հարիր էր ամենից առաջ հենց առաջին երեքին, այլ ոչ թե իր երդվյալ հակառակորդ՝ սեմիտական Ասորեստանի թագավորությանը: Եվ վերջապես ոչ պակաս կարևոր էր նաև կիմմերների առկայությունը Փոքր Ասիայում, որոնք, թեև լարված հարաբերություններ ունեին Մարաստանի, Պարսքի և Սկյութական թագավորությունների հետ, սակայն սերտորեն համագործակցում էին նույն Արարատյան թագավորության հետ ու առիթի դեպքում ևս կարող էին սպառնալ պաշտոնական Նինվեին:

Ասուրբանապալի գահակալման սկզբնական տարիներին վերևում նկարագրված նոր իրականությունը դեռևս այնքան էլ նկատելի չէր, իսկ տարածաշրջանի նոր խաղացողներն էլ դեռևս լիարժեք կազմակերպված չէին և մեծ խնդիրներ ունեին հատկապես սեփական գործողությունները համակարգելու հետ, սակայն առաջիկա բախտորոշ տասնամյակներում նույն այս ուժերը ոչ միայն ի վերջո լիարժեք ինքնակազմակերպվելու էին, այլև համագործակցության հստակ մեխանիզմներ էին մշակելու: Այսպիսով՝ Ասուրբանապալն իր գահակալման ամենասկզբում չնկատեց նոր իրականությունը, սակայն նա ուշադրություն չդարձրեց դրա վրա նաև սեփական երկարատև գահակալման հետագա տարիներին, ինչն, անկասկած, լուրջ բացթողում էր: Ի մասնակի արդարացումն Ասուրբանապալի, սակայն, վերջում այնուհանդերձ պետք է նշել, որ տեղի ունեցած փոփոխությունները աշխարհաքաղաքական խիստ խորքային բնույթ էին կրում և դեռ հարց է, թե կկարողանա՞ր արդյոք Ասուրբանապալը իրավիճակը հօգուտ իր պետության ուղղել, եթե նույնիսկ գիտակցեր էլ նոր զարգացումները, թեև, կրկնենք, որ դրանք ի վերջո այդպես էլ չգիտակցվեցին:

Այսպես թե այնպես, սակայն Ասուրբանապալի գահակալման ամենասկզբում

իրավիճակը անհանգստության որևէ հիմք, համենայն դեպս գոնե առերևույթ մակարդակում, կարծես թե, չէր տալիս և լավատեսությամբ լի երիտասարդ ու ինքնավստահ գահակալը, իրեն համարելով շատերից հեռատես ու խելացի, իսկ ինչ-որ տեղ էլ իրոք լինելով այդպիսին, ամենայն եռանդով ձեռնամուխ եղավ սովորական այն խնդիրների լուծմանը, որոնք գահը զբաղեցնելիս անփոփոխ կերպով հառնում էին Ասորեստանի թագավորության ամեն մի գահակալի առջև: Որպես հետևանք, Ասուրբանապալն ամրացավ Ասորիքում, իր դիրքերն ուժեղացրեց Բաբելոնում և ողջ երկրում սեփական ազդեցությունը մեծացրեց այն աստիճան, որ հիմքեր նախապատրաստեց կյանքի կոչել հոր կողմից կիսատ թողնված գործը՝ հարձակումը Եգիպտական թագավորության վրա:

Արդյունքում՝ մարտական գործողություններ սկսելով Ասորիքում և ոչ միայն ամրապնդելով պաշտոնական Նինվեի դիրքերն այստեղ, այլև ի վերջո ծանր պարտության մատնելով նաև Եգիպտական թագավորության բանակին ու գրավելով այս թագավորության տարածքը, մ.թ.ա. 667 թվականին Ասուրբանապալը ամրագրեց այս ուղղությամբ իր ձեռքբերումների առավելագույնը: Դրանից հետո, մինչև մ.թ.ա. 663 թվականը համառ պայքար մղելով Եգիպտական թագավորությունից հարավ տարածվող Քուշի թագավորության դեմ, պաշտոնական Նինվեն այնուհանդերձ կարողացավ պահել դիրքերը Եգիպտոսի նորանվաճ տարածքում:

Մ.թ.ա. 660 թվականին Ասուրբանապալը ակտիվ մարտական գործողություններ սկսեց արդեն Արևելքում, որտեղ մինչ այդ սահմանափակվում էր առանձին և տեղական նշանակություն ունեցող գործողություններում: Արդյունքում՝ մ.թ.ա. 659 թվականին Մահկերտ տուն գավառի ճ-մ-ում Արմաննայի իշխանության տարածք մտած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 50.000) գիշերային անակնկալ հարվածով հաղթեց անակնկալ հարձակում գործել փորձող Արմաննայի իշխանության բանակին (մոտ 10.000)[1], որից հետո նույն թվականին էլ գրավեց Այուսիաշ, Պասա, Բուստուն, Ասդիաս, Ուպպիս, Սիխուան և Նազինիրին ամրոցները[2]: Մ.թ.ա. նույն 659 թվականին Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 100.000) Արմաննայի իշխանության իշխան Ախշերիի գլխավորած Արմաննայի իշխանության բանակից (մոտ 10.000) պաշարեց Իզիրտուն[3]: Շուտով, սակայն, Ախշերին դավադրաբար սպանվեց, իսկ Արմաննայի նոր իշխան հռչակված Ուալիի (մ.թ.ա. 659-630) հետ էլ Ասուրբանապալը հաշտություն կնքեց, համաձայն որի Արմաննայի իշխանությունը Ասորեստանի թագավորությանը վերադարձրեց մի քանի ամրություններ և ընդունեց վերջինիս գերիշխանությունը:

Գլուխ 6
Հսկայի և Պարույր Հսկայորդու հիմնախնդիրները

Մ.թ.ա. 656 թվականին Կուլիմերիի ճ-մ-ում Հսկա Հայկազունու ապստամբած որդի Պարույր Հսկայորդու բանակը (մոտ 10.000) հաղթեց Անդարի իշխանի գլխավորած Արարատյան թագավորության բանակին (մոտ 15.000): Արդյունքում՝ Անդարին սպանվեց, իսկ Պարույր Հսկայորդին (մ.թ.ա. 656-612) հռչակվեց անկախությունը վերականգնած Արմենիի թագավորության արքա[4]: Այս կապակցությամբ պետք է կրկին անդրադառնալ Միքայել Չամչյանի բերած Հայկազունիների արքայացանկին:

Ուշադիր ուսումնասիրությունը այս անգամ մեզ բերում է հետևության, որ այստեղ Միքայել Չամչյանը առաջին անգամ որոշակիորեն սխալվել է: Մասնավորապես, Հսկան և նրա որդի Պարույր Հսկայորդին Միքայել Չամչյանի մոտ տեղավորված են մ.թ.ա. 765-700 թ-երին, որից հետո առաջ են բերված նաև Արմենիի հաջորդ գահակալների

[1] Ասուրբանապալի գործունեությանը վերագրվող արձանագրությունից:
[2] Ասուրբանապալի գործունեությանը վերագրվող արձանագրությունից:
[3] Ասուրբանապալի գործունեությանը վերագրվող արձանագրություններից:
[4] Ասարհադոնին վերագրվող արձանագրությունից:

կառավարման տարիները: Անառարկելի է, սակայն, որ Պարույր Հսկայորդին, ըստ Մովսես Խորենացու, մասնակցել է Նինվեի գրավմանը, ինչը տեղի է ունեցել մ.թ.ա. 612 թ-ին: Այս կապակցությամբ կարծում եմ, որ Չամչյանի մասնակի սխալվելը բացատրվում է նրանով, որ վաստակաշատ մխիթարիստին հայտնի չի եղել Արարատյան թագավորության «մոռացված» լինելու հանգամանքը և նրա թվացել է, թե Հայկազունիները գերագահության իրավունքով շարունակել են իշխել Հայաստանում անընդհատ:

Իրոք, Հայոց հնագույն պատմության ամենամեծ հանելուկներից մեկն այն է, թե այդ ինչպե՞ս հանկարծ ստացվեց, որ Արարատյան թագավորության փայլուն ժամանակաշրջանը և նրա հզոր արքաները Մովսես Խորենացու երկում նույնիսկ ակնարկված էլ չեն: Այս կապակցությամբ կարծում ենք, որ խնդիրը դրված է քաղաքական հարթության վրա, որն էլ իր արտացոլումն է գտել պատմական երկերում:

Այսպես, արդեն ասվեց, որ, երբ մ.թ.ա. IX դարի վերջում Արարատյան գահակալները սկսեցին համահայաստանյան մակարդակով գերիշխանության հավակնել, վերջիններս լուրջ հակասությունների մեջ մտան Արմենիի թագավորությունում նույն այդ ժամանակ դեռևս ժառանգաբար իշխել շարունակող Հայկազունիների հետ: Ճիշտ է, ինչպես արդեն ասվեց, մ.թ.ա. XVII դարի կեսերից սկսած Հայկազունիների գերագահությունը Հայաստանում մեծապես ձևական բնույթ էր կրում, բայց այնուհանդերձ բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ այն պահպանվում էր և Արմենիի Հայկազունիները չէին համակերպվել իրավիճակի հետ ու միայն հարմար առիթի էին սպասում իր միասնականությունը կորցրած Հայոց թագավորությունը իրենց ղեկավարությամբ կրկին միավորելու համար: Սկզբում, սակայն, տեղի ունեցավ հակառակը և համահայաստանյան գերիշխանության ձգտող Արարատյան թագավորության գահակալները մ.թ.ա. 765 թվականին ոչ միայն գործնականում հենց իրենք միավորեցին Հայաստանը, այլև՝ իրենց ուղղակի գերիշխանությունը տարածեցին նաև Արմենիի թագավորության վրա: Արդեն ասվեց, թե ինչ աստիճան անհանդուրժող էին տրամադրությունները Արմենիում Արարատյան գահակալների նկատմամբ և պատահական չէ, որ այս թագավորությունը Արարատյան թագավորության կենտրոնական իշխանության դեմ ամենահամառ պայքար մղած թագավորությունների կամ իշխանությունների շարքում էր:

Իրավիճակը փոխվեց, սակայն, մ.թ.ա. VII դարի երկրորդ քառորդում, երբ Արմենիի գահակալները, օգտվելով Արարատյան թագավորության գահակալների քաղաքական թուլությունից, ի վերջո կարողացան փաստացի վերականգնել իրենց գերագահությունը Հայաստանում, իսկ մ.թ.ա. 612 թվականին էլ հասան այդ իրավունքի միջազգային ճանաչմանը: Ակնհայտ է, սակայն, որ նույնիսկ դրանից հետո էլ Հայկազունիները չէին կարող իրենց թույլ տալ մոռանալ երկար դարեր տևած տոհմական թշնամությունը, մանավանդ, որ քաղաքական տեսակետից ևս դա չէր կարող ճիշտ համարվել: Արդյունքում Արարատյան թագավորության գերագահության տարիները և նույնիսկ գահակալների հիշատակը ենթարկվեցին գիտակցական մոռացության, ինչն էլ իր արտացոլումը գտավ կրկին ամբողջովին Հայկազունիների հսկողության տակ վերադարձած պաշտոնական կամ մեհյանական պատմագրությունում, ընդ որում Արարատյան գահակալների և Արարատյան դարաշրջանի նկատմամբ ատելությունը Հայկազունիների մոտ ակնհայտորեն այնքան ուժեղ էր, որ վերջիններս խուսափեցին հենց նոր ավարտված դարաշրջանին նույնիսկ բացասական պատմական արտացոլում տալուց: Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ հայոց գրավոր-մատենագիր պատմագրությունը հաջողությամբ «մոռացավ» սեփական պատմության կարևորագույն դարաշրջաններից մեկը

Եվ այսպես, շարունակելով Հայկազունիների տիրակալների պատմության շարադրանքը, Միքայել Չամչյանը կամ այն աղբյուրը, որից նա օգտվել է, ուղղակի հաշվի չեն առել այն, որ, նախ Հայկազունիները քննարկվող ժամանակաշրջանում փաստացի

իշխել են Հայաստանի միայն մի մասում՝ Արմենիի թագավորությունում, և հետո՝ նրանց արքայական իշխանությունը, ինչպես արդեն ասվեց, Փառնակ II-ի մահից հետո վերացել է 92 տարով: Այսպիսով, հաշվի առնելով Հայկազունիների կողմից համահայաստանյան գերիշխանության իրավաբանական կորստի ժամանակաշրջանը, հիմք ընդունելով Արմենիի կողմից կրկին անկախության նվաճման տարեթիվն ու հաշվելով Հայկազունի հերթական արքաների իշխելու թվականները ըստ Չամչյանի փոխանցած փաստացի տարիների, պարզվում է, որ համաշխարհային-պատմական իրադարձությունների ֆոնին ամեն ինչ կրկին իր ճշգրիտ տեղն է գտնում:

Իրոք, համաձայն Մովսես Խորենացու՝ Պարույր Հսկայորդին մասնակցել է Նինվեի գրավմանը, որը տեղի է ունեցել մ.թ.ա. 612 թ-ին, ընդ որում, ըստ Պատմահոր, այս արքան ժամանակակիցն է եղել Մարական թագավորության արքա Կիաքսարին, ինչպես նաև Բաբելոնի թագավորության արքա Նաբոպալասարին (մ.թ.ա. 626-605): Այսպիսով՝ Պարույր Հսկայորդու գահակալման տարիները կրկին լիովին համապատասխանում են Ասորեստանի թագավորության անկման հետ կապված իրադարձություններին: Հատկանշական է, որ նույն իրավիճակն է նաև Արմենիի թագավորության հաջորդ արքայի՝ Հրաչյայի, պարագայում, որը ժամանակակիցն է Բաբելոնի արքա Նաբուգոդոնասորին (մ.թ.ա. 605-556):

Գլուխ 7
Արմենիի թագավորության հզորացումը և առաջընթացը

Պարույր Հսկայորդին զորավարական և դիվանագիտական առաջնակարգ ունակություններով օժտված եռանդուն մի անձնավորություն էր, որը, ի տարբերություն հենց նույն Ասուրբանապալի, լավ կողմնորոշվելով իր ժամանակի քաղաքական զարգացումներում, արդյունքում ամենից առաջ ձգտում էր դաշնակցել նոր ու ոտքի կանգնող հզոր ուժերի հետ: Այսուհանդերձ հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ, քաղաքական լարված մրցակցության մեջ մտնելով Արարատյան թագավորության հետ սկզբում անկախության պահպանման, իսկ հետագայում էլ արդեն համահայկական գերիշխանության համար, Պարույր Հսկայորդին ցանկացած դեպքում մնաց հայ ժողովրդի ընդհանուր շահերի գիտակցման դրական տիրույթում և գործը լուրջ ընդհարման այդպես էլ չհասցրեց, ինչին իր հերթին բնականաբար նպաստեց նաև նույն այս ժամանակ Արարատյան թագավորության գահը զբաղեցնող, Առուշան II-ին հաջորդած նրա որդի Արթուր III-ի (մ.թ.ա. 660-635), ինչպես նաև վերջինիս հաջորդած նրա տղա Արթուր IV-ի (մ.թ.ա. 635-625) և Արթուր IV-ին փոխարինած նրա որդի Առուշան III-ի (մ.թ.ա. 625-612) հավասարակշիռ դիրքորոշումը:

Մինչ Հայաստանում տեղի էին ունենում մեր կողմից նկարագրվող իրադարձությունները, Ասուրբանապալը, կրկին գործի դնելով սեփական ռազմական մեքենան, մ.թ.ա. 653 թվականին ջախջախիչ պարտության մատնեց Էլամի թագավորության բանակին, որից հետո իր գերիշխանությունը պարտադրեց նաև Էլամի թագավորությանը: Ասուրբանապալի տերությունը, սակայն, ակնհայտորեն գործում էր ուժերի ծայրահեղ լարման ընդհանուր դրության մեջ և դա չէր կարող իրեն ի վերջո զգացնել չտալ:

Արդյունքում Արևելքում ձեռք բերված հաջողությունը փոխհատուցվեց Եգիպտոսի կորստով, երբ հերթական փարավոն Պսամատեխ I-ը (մ.թ.ա. 664-610), որը գահ էր բարձրացել պաշտոնական Նինվեի աջակցությամբ և սկզբնական շրջանում Եգիպտական թագավորության գահին հանդիսանում էր վերջինիս ընդամենը միայն դրածոն, երկրից աստիճանաբար դուրս մղեց ասորեստանյան կայազորները, իսկ ինչ-որ տեղ մ.թ.ա. 660 թվականի մոտակայքում էլ դադարեց Ասուրբանապալին ուղարկել ամենամյա հարկը: Այս առումով հարկ է նշել, որ Պսամատեխ I-ի քայլը ժամանակի առումով անչափ ճիշտ էր հաշվարկված, քանի որ նույն այս ժամանակ պաշտոնական

Նինվեն, զբաղված Արևելքում ընթացող ծանր պատերազմով, որևէ հնարավորություն չուներ նոր հարված հասցնելու արևմտյան ուղղությամբ: Ավելին, նույնիսկ այն բանից հետո էլ, երբ Էլամի թագավորության խնդիրը լուծվեց, Եգիպտոսին հարվածելու հնարավորությունը կրկին ի հայտ չեկավ, քանի որ Էլամի թագավորության դիմադրությունը վերջնականապես ճզմել ցանկացած դեպքում չհաջողվեց, իսկ շուտով էլ բարդացավ դրությունն արդեն Բաբելոնում: Մինչ Ասուրբանապալը զբաղված էր իր թագավորության առջև ծառացած հերթական խնդիրները լուծելով, իսկ Ասորեստանի թագավորությունն էլ, չդիմանալով իրեն պարտադրված ռազմաքաղաքական աննախադեպ լարմանը, դանդաղ, բայց անշեղ կերպով զիջում էր դիրքերը, Փոքր Ասիայում իր հզորությունն էր փորձում մեծացնել Կիմմերական թագավորության արքա Լիգդամիսը (մ.թ.ա. մոտ 670 - ուղ. 640):

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ կիմմերները վաղուց արդեն իրենցով էին արել Փռյուգիական նախկին թագավորության տարածքները և այժմ նրանց առաջնային հակառակորդն արդեն հոնիացիների աջակցությունը վայելող Լյուդիական թագավորությունն էր: Արդյունքում, լիակատար ռազմական առավելության հասնելով նաև Լյուդիական թագավորության նկատմամբ, մ.թ.ա. 644 թվականին Կիմմերական թագավորության բանակը գրավեց ոչ միայն Լյուդիական թագավորության մի շարք առաջնակարգ քաղաքներ, այլև տիրեց այս թագավորության նույնիսկ մայրաքաղաք Սարդեսին (Փոքր Ասիայի արևմուտք), ընդ որում հենց այս ընթացքում էլ զոհվեց Լյուդիական թագավորության հերթական արքա Գիգեսը (մ.թ.ա. 680-644):

Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ Լիգդամիսի հենց այս հաջողության ֆոնին էր, որ նրա թագավորության թիկունքում կրկին մեջտեղ եկան Նախակովկասյան տափաստաններից Փոքր Հայքի ծովափնյա շրջաններով աստիճանաբար առաջխաղացած սկյութները, որոնց արքա, Իշպակիայից հաջորդած նրա որդի Պարտատուայի (մ.թ.ա. 673 - մոտ 645) տղա Մադեսը (մ.թ.ա. մոտ 645-615) կրկին մեջտեղ էր բերել հին հաշիվները նույն կիմմերների հետ՝ ցանկանալով վերջնականապես ոչնչացնել վերջիններիս և թույլ չտալ Կիմմերական թագավորության ոչ միայն հզորությունը, այլև նրա նույնիսկ գոյությունը Փոքր Ասիայում: Որպես հետևանք այս քաղաքականության՝ սկյութները, մի քանի տարվա ընթացքում բոլոր կողմերից հետ մղելով կիմմերներին, ի վերջո հյուսիսից նրանց սեղմեցին Անտիտավրոսյան լեռներին լանջերին:

Արդյունքում՝ մ.թ.ա. 640 թվականին Կիլիկիայի ճ-մ-ում Մադեսի գլխավորած Սկյութական թագավորության բանակը (մոտ 100.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) գլխովին ջախջախեցին Լիգդամիսի գլխավորած Կիմմերական թագավորության բանակին (մոտ 60.000), ընդ որում մարտում զոհվեց նաև Լիգդամիսը[1]: Արդյունքում՝ Կիմմերական թագավորությունը զրկվեց իր տարածքների զգալի մասից և սահմանափակվեց միայն Կապադովկիայի արևմտյան որոշ շրջաններով, իսկ նրա տարածքի հիմնական մասն էլ անցավ Սկյութական թագավորությանը: Այս առումով հարկ է նշել, որ Փոքր Ասիայում տեղի ունեցած վերջին զարգացումներն իրենց հերթին միայն մեծացրին սպառնալիքները Ասորեստանի թագավորության համար, քանի որ այստեղ հայտնված Սկյութական թագավորությունը իր ռազմական հնարավորություններով մի գլուխ գերազանցում էր Կիմմերական թագավորությանը, այն դեպքում, երբ պաշտոնական Նինվեն նույնիսկ նույն Կիմմերական թագավորության հետ հարաբերություններում էր հավասարակշռությունը պահպանում միայն մեծ դժվարությամբ: Այս առումով սպառնալիքները միայն մեծացնում էր նաև այն հանգամանքը, որ Պարույր Հսկայորդին դաշնակցում էր սկյութների հետ, ընդ որում այս հանգամանքն էլ իր հերթին ապահովության որոշակի վիճակ էր ստեղծում Արարատյան թագավորության համար:

Մ.թ.ա. նույն 640 թվականին, մինչ սկյութները Փոքր Ասիայում կիմմերների

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 9:

նկատմամբ իրենց հաղթանակն էին տոնում, Ասուրբանապալը ի վերջո մահացու հարված հասցրեց Էլամի թագավորությանը, որից հետո Նինվեի փողոցներում ամենայն շքեղությամբ տոնեց իր այս հաղթահանդեսը: Ժամանակները, սակայն, արդեն այնպիսինն էին, որ նույնիսկ հաջողությունները Ասորեստանի թագավորության դեմ էին շուռ գալիս:

Այդպես եղավ նաև այս պարագայում, քանզի Էլամի թագավորության ջախջախումը և նրա ոչնչացումը իրականում ծանր հարված հասցրեց ամենից առաջ տեղի հենց դրավիդյան տարրին, ինչն իր հերթին միայն նպաստեց մարերի ու պարսիկների հետագա առաջխաղացմանը: Արդյունքում, թեև Էլամի նախկին թագավորության տարածքը վերածվեց Ասորեստանի թագավորության սովորական մի նահանգի, սակայն վերջինիս հարևանությամբ նույն այս ժամանակ վերջնականապես վերելքի ուղին բռնեցին Մարական և Պարսքի թագավորությունները: Ավելին, նույն այս ժամանակ Ասորեստանի թագավորության նկատմամբ սկսեց իրեն ագրեսիվ պահել նաև Փոքրի Ասիայից առաջխաղացող Սկյութական թագավորությունը ու, թերևս, միայն այժմ էր, որ բոլոր կողմերից սեղմվող Ասուրբանապալը, գուցե, ինչ-որ տեղ ի վերջո զգաց վտանգը:

Իրոք, թեև Ասուրբանապալի գահակալման հետագա իրադարձությունների մասին մանրամասն տեղեկություններ, սկսած մ.թ.ա. 639 թվականից, մեզ չեն հասել, սակայն առկա տվյալների պատառիկներից այնուհանդերձ կարելի է եզրակացնել, որ Ասորեստանի թագավորության վերջին հզոր այս տիրակալը նույն այդ տարիներին վճռականորեն վերջ էր տվել ռազմական բոլոր ձեռնարկումներին և փորձում էր գոնե ձեռք բերածը պահել, ընդ որում գերիշխանությունը Բաբելոնի նկատմամբ ի վերջո վերջնականապես այսպես թե այնպես կորսվեց: Ավելին, ինչ-որ տեղ մ.թ.ա. 629 թվականի մոտակայքում, թերևս, արդեն մահվան շունչը զգացող Ասուրբանապալը իրեն գահակից հռչակեց սեփական որդի Ասուրետելիլանիին, ինչը, սակայն, երկրում կառավարչական ընդհանուր խառնաշփոթ առաջացրեց և որոշակիորեն թուլացրեց այն: Արդյունքում, այդպես էլ չլուծած սեփական երկրի առաջ հառնած աշխարհաքաղաքական մարտահրավերները, մ.թ.ա. 627 թվականին Ասուրբանապալը կնքեց իր մահկանացուն և գահի վրա վերջինիս հաջորդեց արդեն իսկ հիշատակված Ասուրետելիլանին (մ.թ.ա. 627-623):

Ասորեստանի թագավորության նոր արքային ամենից առաջ բաժին հասավ հերթական պատերազմը հարավում, որը նրա դեմ սկսեց Բաբելոնի թագավորության անկախությունը վերահռչակած Նաբոպալասարը (մ.թ.ա. 626-605): Պատերազմական գործողություններն ընթացան փոփոխակի հաջողություններով, սակայն նույն այս ժամանակ ի վերջո իր խոսքն ասաց նաև մարա-պարսկական տարրը:

Իրոք, Դեովկեսին հաջորդած նրա որդի Հրոարտեսի (մ.թ.ա. 647-625) օրոք ինչ-որ տեղ մ.թ.ա. 630 թվականի մոտակայքում Մարական թագավորությունն առավելության էր հասել Պարսքի թագավորության նկատմամբ, ինչպես նաև ոչնչացրել էր Արմաննայի իշխանությունը՝ արդյունքում հասնելով մեծ հզորության: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 625 թվականին, մինչ Ասուրետելիլանիի ռազմական մեքենան մեծ դժվարությամբ, բայց այնուհանդերձ իր օգտին էր փոխում Բաբելոնի թագավորության հետ վարվող և ծանր տեսք ստացած պատերազմական գործողությունների ընթացքը, Հրոարտեսի գլխավորած Մարական թագավորության բանակը ներխուժեց Ասորեստանի թագավորության տարածք: Որպես անմիջական հետևանք այս հարձակման՝ Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան կիսատ թողեց մարտական գործողությունները հարավային հակառակորդի դեմ և, այս ուղղությամբ չամրապնդելով վերջնական հաջողությունը, շարժվեց Հրոարտեսի դեմ: Արդյունքում՝ Ասորեստանի թագավորության բանակը մի վերջին անգամ իր առավելությունը գրանցեց մարա-պարսկական տարրի նկատմամբ, երբ Հրոարտեսի բանակը ջախջախիչ պարտություն կրեց, ընդ որում Մարական թագավորության արքան ինքն էլ ընկավ մարտում:

Հրոարտեսի գլխին պայթած անձնական և ռազմաքաղաքական աղետն իրենով իսկ, ըստ էության, միաժամանակ ամրագրեց նաև այն հանգամանքը, որ Մարական թագավորության ռազմական մեքենան, համենայն դեպս գոնե իր այն տեսքով, որը վերջինս ուներ մինչ այդ, դեռևս պատրաստ չէ լիարժեք ընդհարման մեջ մտնել Ասորեստանի թագավորության, թեև խնդիրներ ունեցող, բայց այնուհանդերձ իր երկաթյա հատկանիշները դեռևս պահպանող ռազմական մեքենայի հետ: Արդյունքում՝ Հրոարտեսին հաջորդած նրա որդի Կիաքսարեսը (մ.թ.ա. 625-585), պաշտոնական Նինվեի հետ պատրաստվելով վճռական ընդհարման նոր փուլին, ռազմական խորը բարեփոխումներ իրականացրեց՝ մինչ այդ հախուռն կերպով մարտի նետվող Մարական թագավորության բանակը հստակորեն բաժանելով ծանր և թեթև հեծելազորի ու հետևազորի զորատեսակների:

Սկիզբ էր առել, սակայն, արդեն մի նոր դարաշրջան:

Մաս V
Մարա-պարսկական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Մարական թագավորության վերելքը

Մ.թ.ա. 623 թվականին Ասուրետելիլանին կնքեց իր մահկանացուն և Ասորեստանի թագավորության գահի վրա վերջինիս հաջորդեց նրա եղբայր Սինսարիսկունը (մ.թ.ա. 623-612), որին բաժին հասավ խնդիրների ու մարտահրավերների նույն այն ծավալը, ինչը հառնել էր իր անմիջական նախորդի առջև: Արդյունքում, փորձ կատարելով գոնե մի ինչ-որ կերպ դուրս գալ ռազմաքաղաքական, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ աշխարհաքաղաքական փակուղուց, պաշտոնական Նինվեն դաշինք կնքեց Արարատյան թագավորության արքա Առուշան III-ի, ինչպես նաև Եգիպտոսի փարավոն Պսամատեխ I-ի հետ: Դրանից հետո Սինսարիսկունը շարունակեց պատերազմը Բաբելոնի թագավորության դեմ, որը, սակայն սկզբնական շրջանում վճռական հաջողություն չբերեց կողմերից և ոչ մեկին:

Մինչ Ասորեստանի թագավորության ռազմական մեքենան զբաղված էր Բաբելոնի թագավորության դեմ պատերազմով, Կիաքսարեսը, ավարտին հասցրած իր բարեփոխումները, մ.թ.ա. 621 թվականին, ինչպես իր հայրը, առաջացավ Նինվեի ուղղությամբ, սակայն Մարական թագավորության ռազմական մեքենային այս անգամ ևս վիճակված չէր հաջողություն, քանզի հենց նույն այս ժամանակ Սկյութական թագավորության բանակը անակնկալ հարված հասցրեց Մարական թագավորության բանակին և ծանր պարտության մատնեց վերջինիս: Անակնկալ այս նվերը առժամանակ կայունացրեց Սինսարիսկունի պետության դրությունը, մանավանդ այն բանի ֆոնին, որ դրանից հետո Սկյութական թագավորության ռազմական մեքենան հարվածն ուղղեց Ասորիքի ուղղությամբ և, զգալի հաջողություններ արձանագրելով նաև այստեղ, ի վերջո Եգիպտոս չներխուժելու փոխարեն խոշոր փրկագին վերցրեց նույնիսկ Պսամատեխ I-ից:

Մ.թ.ա. 610-ական թվականների սկզբին Սինսարիսկունը շարունակեց պատերազմական գործողությունները Նաբոպալասարի դեմ, սակայն դրանք այս անգամ ևս վճռական հաջողություն չբերեցին կողմերից և ոչ մեկին: Սրան հակառակ, սակայն, սեփական մաշկի վրա զգացած Սկյութական թագավորության հսկայական հզորությունը, Կիաքսարեսը, պատրաստվելով վերսկսել պայքարը Ասորեստանի թագավորության դեմ, դավադրական աննկատ գործունեություն ծավալեց ամենից առաջ հենց սկյութների շարքերում, ընդ որում հաշվարկն արվում էր այն ուղղությամբ, որ ոչ միայն սկյութական վտանգը վնասազերծվի, այլև սկյութական հզորությունը սկսի ծառայել Մարական թագավորությանը: Արդյունքում, մի քանի տարվա հետևողական աշխատանքով իր կողմը գրավելով սկյութների հիմնական մասի սրտերը, ինչ-որ տեղ մ.թ.ա. 615 թվականի մոտակայքում Կիաքսարեսը սկյութական բանակի գլխավոր առաջնորդների հետ միասին խնջույքի հրավիրեց Սկյութական թագավորության արքա Մադեսին, որից հետո նրանց բոլորին կոտորեց:

Կիաքսարեսի կողմից կյանքի կոչված դաժան և նենգ, սակայն քաղաքական առումով փայլուն այս գործողության արդյունքում սկյութների հիմնական մասը, լքելով Փոքր Ասիան, հաստատվեց Մարական թագավորությունում ու սկսեց ծառայել նույն Կիաքսարեսին, իսկ նրանց մյուս և ավելի փոքր մասն էլ, այնուհանդերձ չհամակերպվելով նոր իրողությունների հետ, սակայն արդեն նաև չկարողանալով մնալ Փոքր Ասիայում, հետ քաշվեց Նախակովկասյան տափաստաններ: Որպես հետևանք այս ամենի, Սկյութական թուլացած թագավորությունը սահմանափակվեց Նախակովկասյան և Մերձսևածովյան տափաստաններով, իսկ Մարական թագավորությունն էլ ոչ միայն ազատվեց մի անչափ վտանգավոր մրցակցից, այլև հենց միանգամից էլ հսկայական հզորության հասավ:

Գլուխ 2
Ասորեստանի թագավորության կործանումը

Մինչ արիական աշխարհում տեղի էր ունենում ուժերի վերջնական դասավորումը և աննախադեպ հզորությամբ վեր էր հառնում Կիաքսարեսի գլխավորած Մարական թագավորությունը՝ Ասորեստանի թագավորությունը շարունակում էր պատերազմը Բաբելոնի թագավորության դեմ: Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 616 թվականի հուլիսի 23-ի Կաբլինի ճ-մ-ում (Կենտրոնական Միջագետք) Նաբոպալասար արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10.000)[1]: Այս պարտությունը, որը պաշտոնական Նինվեին ռազմական մակարդակում ծանր գին արժեցավ, կոնկրետ քաղաքական հետևանքներ, սակայն, առժամանակ այդպես էլ չունեցավ, քանի որ ավարով ծանրաբեռնված իր բանակը Նաբոպալասարը հետ քաշեց, իսկ նույն այս ժամանակ էլ Կաբլինին մոտեցավ սկյութական վտանգից իր հերթին ազատված Պսամատեխ I-ի գլխավորած Եգիպտական թագավորության ուժեղ բանակը: Իրոք, ինչպես հենց այս ժամանակ էլ պարզվեց, Միջագետքում սկիզբ առած խառնաշփոթի պայմաններում իր հնարավորություններն էր փնտրում նաև Պսամատեխ I-ը, որը փորձ էր կատարում գրեթե հազար տարի անց կրկնել Թութմոս III-ի ձեռքբերումները: Նույն այս ժամանակ, սակայն, սկսեց գործեց նաև մեծ հզորության հասած Կիաքսարեսը, որն իր հերթին հասցրել էր արդեն դաշինք կնքել Արմենի թագավորության արքա Պարույր Հսկայորդու հետ:

Արդյունքում մ.թ.ա. 614 թվականի օգոստոսի Ասուրի ճ-մ-ում Կիաքսարես արքայի գլխավորած Մարական թագավորության (մոտ 100.000, այդ թվում մոտ 60.000 սկյութներ), ինչպես նաև Պարույր Հսկայորդու գլխավորած Արմենիի թագավորության (մոտ 30.000) միացյալ բանակը հաղթեց Ասորեստանի թագավորության բանակին (մոտ 50.000), մտավ քաղաք և ավերեց այն[2]: Հենց այս ժամանակ էլ այրվող Ասուրի ավերակների վրա վերջնականապես ստեղծվեց Արիական Եռադաշինքն, ի դեմս մարերի, պարսիկների և հայերի, որին սկզբնական շրջանում հարում էր նաև Բաբելոնի թագավորությունը, ընդ որում այս դաշինքում առաջնային դերը պատկանում էր մարերին: Դրանից հետո, մեկ տարի ծախսելով անհրաժեշտ նախապատրաստությունների վրա, դաշնակից ուժերը պատրաստվեցին մի վերջին և վճռական հարված հասցնել Ասորեստանի թագավորությանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

612 մայիս - հուլիսի վերջ – ***<u>Նինվեի գրավումը</u>***[3]

Նաբոպալասար արքայի գլխավորած Բաբելոնի, Կիաքսարես արքայի գլխավորած Մարական, Կյուրոս I-ի (մ.թ.ա. մոտ 615-580) գլխավորած Պարսքի (մոտ 120.000) և Պարույր Հսկայորդու գլխավորած Արմենիի (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը, ուժերը կենտրոնացնելով ***<u>Կորճայքում</u>***, մայիսին շարժվեց ***<u>Նինվեի</u>*** ուղղությամբ, ընդ որում Կիաքսարին ենթակա սկյութները (մոտ 60.000), որոնք դեռևս տեղ չէին հասել, պետք է ժամանեին ուղիղ

[1] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 6:
[3] «Բաբելոնյան ժամանակագրություն»-ից; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 2, գլուխ 24-27; Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 102; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 3; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 8, գլուխ 5; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 1, գլուխ 19, գիրք 2, գլուխ 2; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 21; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 19, 23; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 4; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 4; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 4; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 4, գլուխ 15; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 6:

մարտադաշտ: Տեղեկանալով թշնամական բանակի առաջխաղացման մասին՝ Սինսարիսկուն արքայի գլխավորած Ասորեստանի թագավորության բանակը (մոտ 80.000) քաղաքի մոտ ամուր պաշտպանական դիրքեր գրավեց: Կողմերը պատրաստվեցին մարտի:

I փուլ – Առավոտյան դաշնակիցների բանակը հարձակում գործեց թշնամու բանակի վրա, սակայն հետ մղվեց ելման դիրքեր:

II փուլ – Կեսօրին դաշնակիցների բանակը կրկնեց հարձակումը, սակայն այս անգամ ևս որևէ հաջողության չհասավ:

III փուլ – Օրվա երկրորդ կեսին դաշնակիցների բանակը հերթական հարձակումը գործեց թշնամու բանակի վրա, սակայն կրկին հետ մղվեց ելման դիրքեր:

IV փուլ – Ասորեստանի թագավորության բանակը անցավ հակահարձակման և գրավեց դաշնակից ուժերի ճամբարը:

V փուլ – Երեկոյան տեղ հասան սկյութները, ինչից հետո դաշնակիցների բանակը գիշերային հարձակում կազմակերպեց հաղթական օրվա ավարտից հետո անհոգության տրած, զգուշությունը կորցրած և կերուխում սկած Ասորեստանի թագավորության բանակի վրա՝ ծանր պարտության մատնելով վերջինիս: Արդյունքում՝ թշնամու ջախջախված բանակի մի մասը մեծ դժվարությամբ ապաստանեց քաղաքում, իսկ Ասուրուբալիտ զորավարի գլխավորած մյուս և ավելի մեծաթիվ մասն էլ նահանջեց դեպի հյուսիս-արևմուտք:

VI փուլ – Հաջորդ օրը Ասորեստանի թագավորության բանակը արտագրոհ կազմակերպեց քաղաքի պաշարումը սկսած դաշնակիցների բանակի առաջապահի վրա, սակայն որևէ արդյունքի չհասավ և հետ մղվեց ելման դիրքեր:

VII փուլ – Մյուս օրը Ասորեստանի թագավորության բանակը մեկ այլ կողմից արտագրոհ իրականացրեց, բայց այն ևս հետ մղվեց:

VIII փուլ – Մայիսից մինչև հունիս դաշնակիցների բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց, որին թշնամու բանակը պատասխանեց համառ պաշտպանությամբ, ինչպես նաև բազում համակցված հակագրոհներով ինչպես քաղաքի ներսում գտնվող ուժերի, այնպես էլ քաղաքը պաշարողների թիկունքում գործող Ասուրուբալիտ զորավարի բանակի ուժերի միջոցով:

IX փուլ – Հուլիսին, հյուսիս-արևելյան կողմում քանդելով պարսպի մի հատվածը, դաշնակիցների բանակը համառ մարտերով ներխուժեց քաղաք և ի վերջո գրավեց այն: Հենց այդ ժամանակ էլ սեփական այրվող պալատի բոցերում զոհվեց նաև Սինսարիսկունը:

Հայերը կորցրին մոտ 7.000, դաշնակիցները՝ մոտ 30.000, թշնամին՝ մոտ 60.000 զինվոր: Քաղաքը հիմնովին ավերվեց, նրա բնակչությունը սպանվեց կամ գերեվարվեց:

Նինվեի անկումը, գումարվելով մինչ այդ տեղի ունեցած Ասուրի անկմանը և ծանրացած Սինսարիսկունի զոհվելով՝ ըստ էության ծանրագույն մի հարված էր Ասորեստանի թագավորությանը, որից վերջինս այլևս այդպես էլ ուշքի չեկավ: Այս առումով հարկ է նշել, որ, ամեն ինչից զատ, խնդիրը կայանում էր նաև նրանում, որ Ասորեստանի թագավորությունն, այս մասին մի քանի անգամ արդեն խոսվեց, ի սկզբանե հանդես էր գալիս որպես բիզնես-պետության յուրօրինակ մի համակարգ, իսկ վերջինիս վարած պատերազմներն էլ, ինչպես և սպասելի էր ու այս մասին ևս արդեն բազմիցս խոսվել է, ամենից առաջ հենց բիզնես պատերազմներ էին: Արդյունքում՝ հարյուրամյակների ընթացքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ այդպես էլ չէր ձևավորվել կոնկրետ մի ազգ, որը իրենը կհամարեր Ասորեստանի թագավորությունը կամ կմարտնչեր վերջինիս համար, իսկ նույն այդ պետության անկումից հետո էլ կձգտեր վերակերտել այն: Այսպիսով՝ Ասորեստանի պետականության մոդելը գոյություն ուներ,

ըստ էության, հենց ուղիղ այնքանով, ինչքանով որ մարդկանց այս կամ այն խմբերը, բայց ոչ՝ կոնկրետ մի որևէ ազգ, ցանկանում էին իրենց ճակատագիրը կապել գործարար հաջողակ այս նախագծի հետ, ընդ որում այժմ, երբ նույն այդ նախագիծը ծանր հարված էր ստացել, վերջինիս մասնակիցների հիմնական մասն ուղղակի լքեց այն՝ անցնելով ավելի հաջող մեկ այլ մասնակցի կողմը: Այս ամենը նշանակում էր Ասորեստանի թագավորության վերջը, թեև այն, ինչպես վազքի մեջ գտնվող, բայց արդեն մահացու խոցված խոշոր մի գազան, թեկուզ տապալվելիս էլ, հարակայունության ուժով որոշ տարածություն այնուհանդերձ ևս առաջացավ:

Սինսարիսկունի զոհվելուց հետո Ասուրուբալիտը կամ արդեն Ասուրուբալիտ II-ը (մ.թ.ա. 612-605) իր գլխավորած բանակով նահանջեց դեպի հյուսիս-արևմուտք և արդյունքում, գրավելով Խառանը, սակայն չկարողանալով տիրել քաղաքի միջնաբերդին, ինչպես նաև գրավելով Կարքեմիշը, ամրացավ Հյուսիսային Միջագետքում՝ ստանալով Եգիպտական թագավորության օժանդակությունը: Ինչ վերաբերում է բուն Ասորեստանի թագավորության մնացած տարածքներին, ապա դրանց հարավային և կենտրոնական մասն անցավ Բաբելոնի, իսկ հյուսիսայինը՝ Մարական թագավորությանը: Միաժամանակ հարկ է նշել, որ հենց Նինվեի ավերակների վրա էլ Մարաստանի և Բաբելոնի թագավորությունների արքաները Արմենիի թագավորության արքա Պարույր Հսկայորդուն ճանաչեցին որպես ողջ Հայաստանի արքա՝ ըստ էության, արդեն նաև միջազգայնորեն ամրագրելով մինչ այդ էլ մոտ քառորդ դար փաստացի արդեն գոյություն ունեցող գերագահության իրավունքի անցումը Արարատյան թագավորությունից Արմենիի թագավորությանը: Այսպիսով՝ տարածաշրջանում տեղի ունեցած գլոբալ փոփոխությունների համատեքստում հայերը մեծ ճկունություն ցուցաբերեցին, ինչը Հայաստանը զերծ պահեց կորուստներից:

Եվ այսպես, Ասորեստանի թագավորությունն, ըստ էության, արդեն չկար, սակայն իր գոյությունը դեռևս շարունակում էր վերջինիս բանակային մեքենայի մի մասը, որը, գործելով Ասուրուբալիտ II-ի հրամանի ներքո և հույսը դրած Եգիպտական թագավորության աջակցության վրա, դեռևս շարունակում էր դիմադրությունը: Այս առումով լրացուցիչ հույսեր էր ներշնչում այն հանգամանքը, որ դաշնակից ուժերը Ասուրուբալիտ II-ի բանակի ուղղությամբ անմիջական հարվածը որոշ ժամանակ հետաձգեցին:

Մ.թ.ա. 612 թվականին Նինվեի անկումից և իր ու իր պետության միջազգային ճանաչումից կարճ ժամանակ անց սեփական մահկանացուն կնքեց Հայոց պետականաշինության գործում հսկայական գործ արած Պարույր Հսկայորդին և նրան ժառանգեց իր որդի Հրաչյան (մ.թ.ա. 612-590), որը արժանիորեն շարունակեց հոր գործը՝ իր հիմնական գծերով զարգացնելով վերջինիս քաղաքականությունը: Իր հերթին, մ.թ.ա. 610 թվականին կյանքից հեռացավ նաև Պսամատեխ I-ը և նրան հաջորդեց արդեն իր որդին, ի դեմս Նեխո II-ի (մ.թ.ա. 612-594), որը ևս արժանի եղավ հորը՝ թեև արդյունքում աչքի ընկնելով ավելի շատ ռազմատենչությամբ, քան հորը բնորոշ խոհեմ զգուշավորությամբ: Այսպիսով՝ Բաբելոնի թագավորությունն և Արիական Եռադաշինքը դեմ դուրս եկան Եգիպտական ու Ասորեստանի թագավորություններին, ինչը նոր և թեժ ընդհարումների դուռ բացեց:

Մ.թ.ա. 611 թվականի գարնանից մինչև աշուն Նաբոպալասար արքայի գլխավորած Բաբելոնի (մոտ 100.000) և Հրաչյա արքայի գլխավորած Արմենիի (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Հայոց Միջագետքը ու Խառանի շրջակայք և նահանջեց[1]: Նմանատիպ ևս մեկ հարված, բայց ավելի ուժեղ ձևով, դաշնակիցները կրկնեցին մ.թ.ա. արդեն 610 թվականի գարնանից մինչև աշուն՝ ի վերջո ստիպելով Ասուրուբալիտ II-ին իր հիմնական ուժերով նահանջել արդեն Եփրատի աջ ափ, որտեղ վերջինս սկսեց սպասել օգնության շտապող Եգիպտական թագավորության

[1] Նաբոպալասարին վերագրվող արձանագրությունից; «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:

բանակին[1]: Եգիպտոսից սպասվող օգնությունը, սակայն, առժամանակ ուշացավ և արդյունքում Նաբոպալասար մ.թ.ա. 609 թվականի գարնանը Հայոց Միջագետքի և Խառանի շրջակայքից հետ քաշեց իր ուժերը դեպի Միջագետք՝ հընթացս ոտնատակ տալով դրանք[2]:

Ի վերջո, ստանալով սպասված օգնությունը, մ.թ.ա. 609 թվականի հունիսից մինչև սեպտեմբեր Ասուրուբալիտ II-ի գլխավորած Ասորեստանի (մոտ 20.000) և Եգիպտական (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակը անցավ Եփրատի ձախ ափ ու ասպատակեց Հայոց Միջագետքը և Խառանի շրջակայքը[3], ինչը ստիպեց գործել արդեն վերջինիս հակառակորդներին: Արդյունքում, սակայն, մ.թ.ա. 609 թվականի սեպտեմբերին Իզալա ամրոցի ճ-մ-ում (Հայոց Միջագետք, Խաբուր գետի ակունքի մոտ) Նաբոպալասար արքայի գլխավորած Բաբելոնի, Կիաքսարես արքայի գլխավորած Մարական, Կյուրոս I-ի գլխավորած Պարսքի (մոտ 120.000) և Հրաչյա արքայի գլխավորած Արմենիի (մոտ 60.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Նեխո II-ի ու Ասուրուբալիտ II-ի գլխավորած Եգիպտական (մոտ 100.000) և Ասորեստանի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակին, որի մնացորդները նահանջեցին Եփրատի աջ ափ[4]: Այս պարտությունը ծանր հարված հասցրեց Նեխո II-ի և Ասուրուբալիտ II-ի դավանած գործին, սակայն պատերազմը դեռևս ավարտված չէր:

Մ.թ.ա. 608 թվականի ամռանը Արիական Եռադաշինքի և Բաբելոնի թագավորության միացյալ բանակը ասպատակեց Հայոց Միջագետքը ու Խառանի շրջակայք և նահանջեց[5], որից հետո նմանատիպ մի հարված էլ վերջինս հասցրեց մ.թ.ա. 608 թվականի դեկտեմբերի վերջից մինչև մ.թ.ա. 607 թվականի փետրվարի սկիզբ[6]: Հաջողությամբ ավարտին հասցնելով նաև այս ձեռնարկումը՝ Արիական Եռադաշինքի և Բաբելոնի թագավորության ուժերը իրենց առջև խնդիր դրեցին անցնել Եփրատի աջ ափ ու վճռական մարտում պարտության մատնել հակառակորդին արդեն Ասորիքի տարածքում՝ վերջ տալով այս կողմից Եփրատի ձախափնյակի վրա մշտապես կախված սպառնալիքներին: Այս առումով հատկանշական էր այն, որ Նեխո II-ն և Ասուրուբալիտ II-ն իրենց հերթին, հատկապես 609 թվականի աղետի ֆոնին, այլևս և ոչ մի քայլ չէին ձեռնարկում Եփրատի ձախ ափ անցնելու ուղղությամբ՝ ակնհայտորեն նախատեսելով, որպես ամուր պաշտպանական բնագիծ ունենալով նույն Եփրատ գետը, հարատև պաշտպանական մարտերում արյունաքամ անել հակառակորդին ու վճռական մարտ տալ արդեն սեփական տարածքում՝ գետի աջ ափին: Արդյունքում, թեև ընդունելով մարտահրավերը, Արիական Եռադաշինքի և Բաբելոնի թագավորության ղեկավարությունը, սակայն, այնուհանդերձ որոշեց մինչև վերջ չխաղալ հակառակորդի թելադրած պայմաններով, իսկ, քանի որ հակառակորդի բանակը գործում էր Հայոց Միջագետքում, որոշվեց Եփրատը գետանցել վերջինիցս կամ ավելի հյուսիս, կամ ավելի հարավ ուղղություններով: Առաջինը որոշվեց փորձարկել հյուսիսային տարբերակը, ինչն էլ սկիզբ դրեց մարտական թեժ գործողությունների նոր մի շարքի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

607 հոկտեմբեր - 606 ամառ – ***<u>Կումուխի ճ-մ</u>***[7]

> Նաբոպալասար արքայի և Նաբուգոդոնոսոր արքայազնի գլխավորած Բաբելոնի, Կիաքսարես արքայի գլխավորած Մարական, Կյուրոս I-ի գլխավորած Պարսքի (մոտ 60.000) ու Հրաչյա արքայի գլխավորած Արմենիի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակը պաշարեց քաղաքը Եգիպտական

[1] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] Նաբոպալասարին վերագրվող արձանագրությունից:
[3] Նաբոպալասարին վերագրվող արձանագրությունից:
[4] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[5] Նաբուգոդոնոսոր արքայազնին վերագրվող արձանագրությունից:
[6] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից; Նաբուգոդոնոսոր արքայազնին վերագրվող արձանագրությունից:
[7] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:

թագավորության բանակից (մոտ 3.000):

I փուլ – Մ.թ.ա. 607 թ-ի հոկտեմբերից մինչև դեկտեմբերի կես դաշնակից ուժերը մի շարք հարձակումներ ձեռնարկեցին քաղաքի ուղղությամբ և ի վերջո գրավեցին այն: Դրանից հետո, սակայն, խուսափելով Նեխո II-ի և Ասուրուբալիտ II-ի գլխավորությամբ հարավից քաղաքին մոտեցող Եգիպտական (մոտ 100.000) ու Ասորեստանի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակից (մոտ 120.000), դաշնակից ուժերը, տեղում թողնելով ուժեղ կայազոր, հետ քաշվեցին ելան դիրքեր:

II փուլ – Մ.թ.ա. 607 թ-ի դեկտեմբերի վերջից մինչև 606 թ-ի ամառ Եգիպտական ու Ասորեստանի թագավորությունների միացյալ բանակը պաշարեց քաղաքը և ի վերջո, հաղթահարելով վերջինիս կայազորի համառ դիմադրությունը, գրավեց այն:

Հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցները՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Այսպիսով՝ հյուսիսային ուղղությամբ Եփրատը գետանցելու փորձն ըստ էության ավարտվեց անհաջողությամբ և այս պայմաններում որոշում ընդունվեց գետանցումն իրականացնել արդեն հարավից՝ հերթական օպերատիվ անակնկալն ապահովելով կրկին Հայոց Միջագետքի տարածք վերադարձած ու Եփրատ գետի աջ ափին ճամբարած հակառակորդի բանակին: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 606 թվականի սեպտեմբերին Նաբոպալասար արքայի և Նաբուգոդոնոսոր արքայազնի գլխավորած Բաբելոնի, Կիաքսարես արքայի գլխավորած Մարական, Կյուրոս I-ի գլխավորած Պարսքի (մոտ 120.000) ու Հրաչյա արքայի գլխավորած Արմենիի (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը, մինչ հակառակորդը նոր հարված էր սպասում հյուսիսում, հարավում Եգիպտական թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 10.000) գրավեց Շուանդիրին, Էլամուն և Դախարուն (Հյուսիսային Ասորիք, Եփրատի աջ ափին)[1]: Այսպիսով, հաջողությամբ ավարտին հասցնելով Եփրատի աջ ափին ցատկահարթակ ստեղծելու խնդիրը, Արիական Եռադաշինքի և Բաբելոնի թագավորության ղեկավար կազմն իր առջև վճռական խնդիր դրեց արդեն հիմնական ուժերով անցնել Եփրատի աջ ափ ու վերջնական պարտության մատնել հակառակորդին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

605 մայիսի վերջ – ***<u>Կարքեմիշի ճ-մ</u>***[2]

Նաբոպալասար արքայի և Նաբուգոդոնոսոր արքայազնի գլխավորած Բաբելոնի, Կիաքսարես արքայի գլխավորած Մարական, Կյուրոս I-ի գլխավորած Պարսքի (մոտ 120.000) ու Հրաչյա արքայի գլխավորած Արմենիի (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը մոտեցավ քաղաքին, սակայն, տեղեկանալով Նեխո II-ի գլխավորած Եգիպտական և Ասուրուբալիտ II-ի գլխավորած Ասորեստանի թագավորությունների միացյալ բանակի (մոտ 150.000, այդ թվում լիբիացիներ, նուբիացիներ և հույներ) առաջխաղացման մասին, կեղծ նահանջ իրականացրեց դեպի արևելք: Իր հերթին, տեղեկություն չունենալով այս մասին, Եգիպտական ու Ասորեստանի թագավորությունների միացյալ բանակը մոտեցավ քաղաքին և, տեղավորվելով երկու առանձնացված ճամբարներում, դադար առավ քաղաքի անմիջական հարևանությամբ:

I փուլ – Օգտվելով հակառակորդի անհոգությունից՝ Բաբելոնի, Մարական, Պարսքի և Արմենիի թագավորությունների միացյալ բանակը աննկատ մոտեցավ Եգիպտական թագավորության ճամբարած բանակին ու հզոր հարձակման անցավ: Չնայած անակնկալին, սակայն, թշնամու բանակը համառ դիմադրություն ցույց

[1] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 10, գլուխ 6:

տվեց:

II փուլ – Ասուրուբալիտ II-ը հարձակման տարավ սեփական բանակը, որի հետևանքով մարտը խիստ համառ և արյունահեղ բնույթ ընդունեց:

III փուլ – Մարտի մեջ մտան Բաբելոնի, Մարական, Պարսքի և Արմենիի թագավորությունների միացյալ բանակի նոր ուժեր, որի հետևանքով թշնամու միացյալ բանակը ի վերջո ծանր պարտություն կրեց ու դիմեց փախուստի:

IV փուլ – Բաբելոնի, Մարական, Պարսքի և Արմենիի թագավորությունների միացյալ բանակի մի մասը սկսեց հետապնդել ու ոչնչացնել թշնամու փախչող բանակին, իսկ մյուս մասը զարգացրեց հաջողությունը, ներխուժեց քաղաք և համառ մարտերից հետո գրավեց այն՝ գլխովին ոչնչացնելով բոլոր դիմադրողներին:

Հայերը կորցրին մոտ 10.000, դաշնակիցները՝ մոտ 20.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը իր հետ վճռական փոփոխություններ բերեց, երբ Կարքեմիշի պարիսպների տակ էլ հենց փաստորեն իր ավարտը գտավ այն գործը, որը սկիզբ էր առել դրանից դեռևս յոթ տարի առաջ Նինվեի պարիսպների տակ: Արդյունքում՝ ավելի քան մեկ հազարամյակ Առաջավոր Ասիան ահաբեկող, նրա զարգացմանը խոչընդոտող և իր արտաքին գիշատչային քաղաքականությամբ սեփական բոլոր հարևանների համար իսկական մի պատուհաս դարձած Ասորեստանի թագավորությունը վերջնականապես կործանվեց: Իր հերթին, ծանր հարված ստացած Եգիպտական թագավորությունը սրանից հետո երկար ժամանակով թողեց Ասորիքը և պարփակվեց Աֆրիկայում, Բաբելոնի թագավորությունը իր տիրապետությունը հաստատեց ողջ Ասորիքի վրա, իսկ Արիական Եռադաշինքի անդամներին էլ բաժին հասավ խոշոր ավար: Այսպիսով, Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծվեց լիովին նոր մի դրություն, որը, սակայն, ևս վերջնական չէր:

Գլուխ 3
Բաբելոնի թագավորության հիվանդագին փայլը

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մի ինչ-որ ժամանակ բոլորին դեռևս թվում էր, թե ուժերի աշխարհաքաղաքական դասավորությունում մեծ հաշվով էական ոչինչ այդպես էլ չի փոխվել, ուղղակի սեմիտական բնույթ ունեցող Ասորեստանի թագավորությունը փոխարինվել է կրկին սեմիտական բնույթի կրող հանդիսացող Բաբելոնի թագավորությամբ, ընդ որում վերջինս ինքն էլ ուներ Ասորեստանի նույն թագավորության սահմանները՝ արժանահիշատակ Ասուրբանապալի թագավորության վերջին շրջանի վիճակով: Իրական և խորքային փոփոխությունները, սակայն, արդեն վաղուց տեղի էին ունեցել ու դրանք այժմ շատ շուտով դեմ էին դուրս գալու արդեն հենց Բաբելոնի թագավորությանը: Իրոք, իր ներքին բնույթով Ասորեստանի թագավորությունը կրկնող սեմիտական հերթական պետական այս միավորը նոր պայմաններում փաստորեն ժառանգեց աշխարհաքաղաքական նույն այն դժվարությունները, որոնք իր ժամանակին հառնել էին Ասորեստանի թագավորության առաջ և կործանման էին հասցրել նրան: Սկիզբը, սակայն, այնուհանդերձ հուսադրող էր, քանի որ վերջին խոշոր հաջողությունից հետո նոր պայմաններին ընտելանալու և դրանք իրապես գնահատելու համար Արիական Եռադաշինքին դեռ ժամանակ էր պետք, դե իսկ Բաբելոնի թագավորությունն ինքն էլ գտնվում էր կարող ձեռքերում:

Մ.թ.ա. 605 թվականի օգոստոսի 15-ին վաղուց արդեն ծանր հիվանդ Նաբոպալասարը կնքեց իր մահկանացուն և գահին վերջինիս հաջորդեց իր որդի Նաբուգոդոնոսոր II-ը (մ.թ.ա. 605-562), որը զգալի ունակություններով ու եռանդով օժտված մի անձնավորություն էր, թեև դրա հետ միաժամանակ ուներ նաև թերություններ, ի դեմս

խորաթափանցության որոշակի պակասի և ծայրահեղության հասնող սնոտիապաշտության: Այսպես թե այնպես, սակայն, ստանձնելով Բաբելոնի թագավորության կառավարման սանձերը և փորձ կատարելով լուծել աշխարհաքաղաքական նույն այն խնդիրները, որոնք իրեն բաժին էին հասել ասորեստանյան ժառանգության հետ միասին, Նաբուգոդոնոսոր II-ը իր առջև ամենից առաջ խնդիր դրեց ամրանալ Ասորիքում՝ վերջնականապես հետ շպրտելով Եգիպտական թագավորությանը: Արդյունքում՝ արդեն, սակայն, առանց Արիական Եռադաշինքի աջակցության, Բաբելոնի ռազմատենչ արքան մի քանի տարի շարունակ լարված ռազմական գործողություններ իրականացրեց Ասորիքում և, ինչպես մի ժամանակ այդ հաջողվել էր անել Նինվեի տիրակալներին, ի վերջո ամրապնդվեց այստեղ՝ հընթացս ծանր հարված հասցնելով, այդ թվում նաև Հուդայի թագավորությանը: Այսպիսով՝ Նաբուգոդոնոսոր II-ը, հետ մղելով Եգիպտական թագավորությանը, ընդհուպ մոտեցավ արդեն Նեխո II-ի բուն թագավորության սահմաններին, սակայն մ.թ.ա. 601 թվականի դեկտեմբերին ինչ-որ տեղ Սինայի թերակղզում տեղի ունեցած ծանր և արյունահեղ ճակատամարտում Եգիպտական թագավորության բանակին այնուհանդերձ հաջողվեց պահել դիրքերը, թեև պարտություն չկրեց նաև Բաբելոնի թագավորության բանակը: Այսպիսով՝ Նեխո II-ին հաջողվեց փրկել սեփական թագավորությունն այն ճակատագրից, որը վերջինիս բաժին էր հասել Ասուրբանապալի թագավորության ամենասկզբում, սակայն՝ ընդամենը այսքանը և ոչ ավելին: Այս առումով գործող փարավոնի համար լավը, թերևս, միայն այն էր, որ հենց նոր ավարտված ծանր ճակատամարտից հետո հետագա որևէ առաջխաղացման մասին մտածել չէր կարող նաև Նաբուգոդոնոսոր II-ը:

Ավելին, Բաբելոնի թագավորության ռազմական մեքենայի կրած ծանր կորուստները, ինչպես նաև Նեխո II-ի ակտիվ դրդումները ի վերջո բերեցին նրան, որ որևէ կենտրոնական իշխանության առկայության հետ այդպես էլ համակերպվել չցանկացող Ասորիքում նույն այս ժամանակ ելույթներ սկսվեցին այս անգամ արդեն ընդդեմ Նաբուգոդոնոսոր II-ի, որի թագավորությունն իր հերթին աննկատ կերպով արդեն հետևում էր թողել սեփական հզորության գագաթնակետը: Արդյունքում, սկսած մ.թ.ա. արդեն 600 թվականից, Նաբուգոդոնոսոր II-ը ավելի քան մեկ տասնամյակ ստիպված եղավ հարատև և բավականին ծանր, սակայն վերջին հաշվով հաջող ռազմական գործողություններ իրականացնել Ասորիքում՝ հընթացս հերթական ծանր հարվածները հասցնելով նաև Հուդայի թագավորությանը:

Մ.թ.ա. 586 թվականին Նաբուգոդոնոսոր II-ը վերջին հաղթական վերջակետները դրեց սեփական գերիշխանության համար Ասորիքում մղվող համառ պայքարում, որին իրենց ոչ այնքան հաջող մասնակցությունն էին բերել նաև Նեխո II-ը, ինչպես նաև վերջինիս մահից հետո նրան փոխարինած իր որդի Պսամատեխ II-ը (մ.թ.ա. 594-588) և սրա որդի Ապրիոսը (մ.թ.ա. 588-567): Այսպես թե այնպես, սակայն փարավոնների երկրի հետ չկարգավորված հարաբերությունները և նույնիսկ փոփոխական հաջողությամբ ընթացած ռազմական բախումները չխանգարեցին Նաբուգոդոնոսոր II-ին ի վերջո ամրանալ Ասորիքում, իսկ մ.թ.ա. 582 թվականին էլ վերջնական հաշտություն կնքել արդեն հենց նույն Եգիպտական թագավորության հետ, ինչի արդյունքում Ապրիոսը, ըստ էության, վերջնականապես հրաժարվում էր Ասորիքի նկատմամբ հավակնություններից, իսկ Նաբուգոդոնոսոր II-ն էլ հրաժարվում էր Եգիպտոսը նվաճելու մտադրությունից: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հաշտությունը, ինչքան էլ դա չերևար առաջին հայացքից, մեծապես պետք էր նաև հենց Բաբելոնի տիրակալին, քանի որ նույն այս ժամանակ աստիճանաբար սրվում էին սեմիտական և արիական աշխարհների հարաբերությունները, իսկ սեմիտական աշխարհի գլխավոր ներկայացուցիչն էլ այժմ հենց Բաբելոնի թագավորությունն էր:

Գլուխ 4

Մարական թագավորության վերելքն ու անկումը

Սկյութական գերիշխանության անակնկալ փլուզումը, որը տեղի ունեցավ Կիաքսարեսի հմուտ դրդումներով, իր ժամանակին մեծապես օգտակար էր եղել Մարական թագավորությանը, սակայն այն պակաս օգտակար չեղավ նաև Լյուդիական թագավորության համար, որն, ըստ էության, ազատվել էր մահացու մի սպառնալիքից: Եվ այսպես, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Մարական թագավորության հետ միասին Փոքր Ասիայում իր հերթին աստիճանաբար ոտքի էր կանգնում նաև իր մեջ հունական զգալի տարր ընդունած և դրա հետևանքով ուժեղացած Լյուդիական թագավորությունը: Միաժամանակ հարկ է նշել, որ մարերի նույն այդ հաջողությունները նաև կիմմերներին էին փրկել վերջնական ոչնչացումից, համենայն դեպս՝ գոնե առժամանակ, և ահա այժմ երբեմնի իրենց դիրքերը վերականգնելու ուղղությամբ Փոքր Ասիայում լուրջ քայլեր էին ձեռնարկում նաև նույն կիմմերները, որոնց գլխին կանգնել էր ռազմունակ Սանդակշատրուն (մ.թ.ա. 640-586): Այս ամենը անխուսափելի էր դարձնում տարածաշրջանի առաջատար երեք խաղացողների բախումը, ինչն իր հերթին իր հետ նոր զարգացումներ էր բերելու:

Մ.թ.ա. 599 թվականին Լյուդիական թագավորության արքա Սադդիատեսը (մ.թ.ա. 605-593) պատերազմ սկսեց Միլեթ քաղաք-պետության դեմ և այս պատերազմը տևեց 11 տարի, որի վերջին 5 տարին, սակայն, բաժին ընկան արդեն նրա որդի և հաջորդ Ալիաթես II-ի (մ.թ.ա. 593-560) գահակալության շրջանին: Արդյունքում, քիչ թե շատ հաջողությամբ ավարտելով պատերազմը Միլեթի դեմ և մ.թ.ա. 587 թվականը ծախսելով ուժերը կարգի գցելու վրա, Լյուդիական թագավորության արքան արդեն հաջորդ տարի սկիզբ դրեց կիմմերների դեմ պատերազմին:

Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 586 թվականին Գամիրքի ճ-մ-ում (Անդրեփրատյան Ծոփք) Արմենիի (մոտ 50.000) և Ալիաթես II-ի գլխավորած Լյուդիական (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Սանդակշատրուի գլխավորած Կիմմերական թագավորության բանակին (մոտ 50.000), ընդ որում զոհվածների թվում էր նաև իր ընկած զինակիցներին մինչև վերջ հավատարիմ մնացած Սանդակշատրուն: Արդյունքում՝ Կիմմերական թագավորությունը ոչնչացավ, նրա տարածքն անցավ Լյուդիական թագավորությանը, իսկ կիմմերներն էլ հետագայում ձուլվեցին տեղի բնակչությանը՝ առավել ուժեղացնելով ամենից առաջ հենց Լյուդիական թագավորության հարվածային հնարավորությունները[1]: Այսպիսով մ.թ.ա. արդեն 580-ական թվականների երկրորդ կեսին, գումարվելով Մարական թագավորության հետ արդեն իսկ առկա մրցակցությանը, Բաբելոնի թագավորության և վերջինիս հատկապես ասորիքյան տիրույթների վրա հյուսիսից կախվեց նաև լյուդիական հարվածի վտանգը, ինչն էլ հենց ստիպեց Նաբուգոդոնոսոր II-ին վերջնական հաշտություն կնքել Եգիպտական թագավորության հետ: Արդյունքում, վերջնականապես կարգավորելով գործերը Ասորիքում և հաշտություն կնքելով Ապրիոսի հետ, Նաբուգոդոնոսոր II-ը անմիջապես էլ եռանդուն գործունեություն սկսեց արիական վտանգի դեմն առնելու ուղղությամբ՝ այս առումով ևս, համենայն դեպս գոնե իր ու իր տերության համար, ստիպված լինելով կրկնել Ասորեստանի թագավորության գահակալների նույն այն քայլերը, որոնք սրանք իրականացրել էին վերջին մի քանի հարյուրամյակում: Այս անգամ, սակայն, հօգուտ Բաբելոնի տիրակալի որոշ զարգացումներ այնուհանդերձ եղան:

Մ.թ.ա. 590 թվականին կյանքից հեռացավ Հրաչյան, որից հետո Արմենիի թագավորության տարածքում 21 տարով խառն և անկայուն մի դրություն հաստատվեց, երբ երկրի տարբեր մասերում միաժամանակ իշխանության եկան մի քանի արքաներ, ի դեմս Երվանդ I Սակավակյացի (մ.թ.ա. 590 - մոտ 552), Փառնվազ II-ի (մ.թ.ա. 590-569), Պաճույճի (մ.թ.ա. 590-577), Կոռնակի (մ.թ.ա. 590-535), Փավոսի (մ.թ.ա. 590-582) և Հայկակ II -ի (մ.թ.ա. 590-554): Արդյունքում՝ Արմենիի թուլացած թագավորությունն ընկավ Մարական

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 16:

թագավորության գերիշխանության տակ, ինչի հետևանքով էլ հենց Արիական Եռադաշինքը սահմանակից դարձավ կիմմերներին հենց նոր ջախջախած և արևմուտքից իր հերթին Հայկական լեռնաշխարհին մոտեցող Լյուդիական թագավորությանը: Որպես հետևանք այս ամենի, մ.թ.ա. 585 թվականի մայիսի 28-ին Հալիս գետի ճ-մ-ում (Կապադովկիայի արևմուտք) Կիաքսարես արքայի գլխավորած Մարական (մոտ 70.000), Կյուրոս Ի-ի գլխավորած Աքեմենյան (մոտ 30.000) և Արմենիի (24.000, որից 4.000 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը ընդհարվեց Ալիաթես II-ի գլխավորած Լյուդիական թագավորության բանակի (մոտ 130.000) հետ, սակայն հենց մարտի սկզբում տեղի ունեցած արեգակի անակնկալ խավարումը ընդհատեց ճակատամարտը: Արեգակի խավարումն իր հերթին հակամարտող կողմերի կողմից ընկալվեց որպես աստվածային նախանշան և կնքվեց հաշտություն, ինչի արդյունքում Արիական Եռադաշինքի ու Լյուդիական թագավորության սահմանը համարվեց Հալիս գետի ակունքը[1]:

Հարկ է նշել, սակայն, որ հենց նոր կնքված հաշտությունը, որը այնուհանդերձ ուժի մեջ թողեց Բաբելոնի թագավորության և վերջինիս հատկապես ասորիքյան տիրույթների վրա հյուսիսից կախված վտանգը, սրանից բացի իր մեջ պարունակում էր նաև Արիական Եռադաշինքի կողմից առաջացվող սպառնալիքներ: Աչքի առաջ ունենալով այս ամենը՝ հետագա տարիներին, ընդհուպ մինչև իր թագավորության վերջ, Նաբուգոդոնոսոր II-ը պաշտպանական մի շարք եռանդուն միջոցառումներ իրականացրեց: Այս առումով հերթական անգամ Բաբելոնի տիրակալի օգտին եղավ այն հանգամանքը, որ մ.թ.ա. 585 թվականի վերջին իր մահկանացուն կնքեց եռանդուն Կիաքսարեսը և Մարական թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Աստիգեսը (մ.թ.ա. 585-550), որն, ի տարբերություն սեփական ռազմաշունչ նախնիների, եռանդից զուրկ ու թույլ, բայց նաև դաժան մի անձնավորություն էր՝ հակված տրվելու հաճույքներին: Վերջին հանգամանքը, ինչպես նաև այն, որ Նաբուգոդոնոսոր II-ն ամուսնացած էր Աստիգեսի քրոջ հետ, Բաբելոնի թագավորության համար առժամանակ թուլացրեց արիական սպառնալիքը, թեև այն բնականաբար որևէ կերպ չվերացավ: Արդյունքում, կարգավորելով հարաբերությունները նաև Արիական Եռադաշինքի հետ, Նաբուգոդոնոսոր II-ը հերթական անգամ անդրադարձ կատարեց Եգիպտոսի խնդրին:

Իրոք, սեփական գահակալման արդեն վերջին տարիներին Եգիպտոսի փարավոն Ապրիոսը երկրում իր դեմ լուրջ դժգոհություններ էր հարուցել, իսկ մ.թ.ա. 570 թվականին էլ գործը հասավ նույնիսկ գահակալական պայքարի, որը գործող փարավոնի դեմ սկսեց վերջինիս զորավար և մորական կողմի ազգական Ամասիսը: Կողմերը փոփոխական հաջողություններով մի քանի ընդհարումներ ունեցան, սակայն հաջողությունն ի վերջո մնաց Ամասիսի կողմում: Հենց այս պայմաններում էլ Ապրիոսը դիմեց Նաբուգոդոնոսոր II-ին, որի ռազմական մեքենան էլ իր հերթին, արձագանքելով այս դիմումին, մ.թ.ա. 567 թվականի սկզբին ներխուժեց Եգիպտական թագավորության տարածք: Արդյունքում՝ ի պաշտպանություն Ապրիոսի խորը մարտարշավ իրականացնելով Նեղոսի հովտում, Բաբելոնի թագավորության բանակն ի վերջո, այնուհանդերձ չկարողանալով ամրանալ տեղում, հետ քաշվեց ելման դիրքեր: Դրանից հետո մ.թ.ա. նույն 567 թվականի կեսերին Ապրիոսը սպանվեց և Եգիպտոսի փարավոն հռչակվեց ապստամբների առաջնորդ Ամասիսը՝ Ամասիս II-ը (մ.թ.ա. 567-527), որին էլ հաջողվեց արագորեն կարգավորել հարաբերությունները Բաբելոնի թագավորության հետ:

Մ.թ.ա. 562 թվականի հոկտեմբերի 7-ին Նաբուգոդոնոսոր II-ը կնքեց իր մահկանացուն և գահի վրա նրան հաջորդեց իր ավագ որդի Ամել-Մարդուկը (մ.թ.ա. 562-560), որը թույլ մի տիրակալ էր: Այս առումով հարկ է նշել, որ այս արքայի օրոք Բաբելոնի թագավորության դեմ կանգնած նույն այն մարտահրավերները, որոնք առկա էին իր նախորդի օրոք, ոչ միայն շարունակեցին իրենց գոյությունը, այլև ավելի ահագնացան: Արդյունքում, այդպես էլ ոչինչ չարած սեփական տերության համար, մ.թ.ա. 560 թվականի

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 74, 103:

օգոստոսի առաջին կեսին Ամել-Մարդուկը զոհ գնաց իր իսկ փեսա Ներիգլիսարի կողմից հղացած դավադրությանը, որից հետո Բաբելոնի թագավորության արքա հռչակվեց նույն Ներիգլիսարը (մ.թ.ա. 560-556): Նոր արքան, ի տարբերություն իր անմիջական նախորդի, ավելի եռանդուն և ուժեղ մի անձնավորություն էր: Ավելին, Ներիգլիսարի հայտնվելը Բաբելոնի թագավորության գահին, քանի որ վերջինս ամուսնացած էր Աստիգեսի քրոջ աղջկա հետ, լավ ընդունվեց նաև Մարական թագավորությունում, ինչի հետևանքով արիական սպառնալիքը որոշակիորեն թուլացավ, մանավանդ որ նույն այս ժամանակ խնդիրներ էին առաջացել Մարական, Պարսքի և Արմենիի թագավորությունների ներքին հարաբերություններում:

Ինչպես արդեն ասվեց, սկսած մ.թ.ա. արդեն 590 թվականից Արմենիի թագավորությունում հաստատվել էր ներքին խառը մի դրություն և մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում խնդիրները դեռևս չէին հաղթահարվել: Նույն այս ժամանակ, սակայն, Արմենիի գահակալների շարքում աստիճանաբար առաջին դերերի վրա էր հայտնվում թագավորության հարավում իշխանության հասած Երվանդ I Սակավակյացը, որի հետ էլ հենց Աստիգեսի հարաբերությունները հանգեցին ընդհարման: Այս առումով հարկ է նշել, որ հարթ չէին նաև Աստիգեսի և Պարսքի թագավորության արքա, Կյուրոս I-ին մ.թ.ա. 580 թվականին նրա մահից հետո հաջորդած վերջինիս որդի Կամբիս I-ի (մ.թ.ա. 580-559) հարաբերությունները, թեև վերջին երկուսի պարագայում գործը բացահայտ ընդհարման դեռևս չէր հասել: Արդյունքում՝ մ.թ.ա. մոտ 560 թվականին Աստիգես արքայի գլխավորած Մարական (մոտ 50.000) և Կյուրոս արքայազնի գլխավորած Պարսքի (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակը Վասպուրականի ճ-մ-ում հաղթեց Երվանդ I Սակավակյացի գլխավորած Արմենիի թագավորության բանակին (մոտ 40.000), որից հետո կնքվեց հաշտություն, ըստ որի մինչ այդ Մարական թագավորության հետ իրավահավասար կողմ հանդիսացող Արմենիի թագավորությունը սկսեց ենթարկվել ու հարկ վճարել վերջինիս[1]: Այսպիսով՝ տեղական տիրակալները առժամանակ զբաղված էին սեփական հարաբերությունները կարգավորելով և ի վիճակի չէին լուրջ սպառնալիք առաջացնել մեկը մյուսի նկատմամբ, սակայն, սրան հակառակ, նույն այս ժամանակ բարդացավ Բաբելոնի թագավորության դրությունն արևմուտքում:

Մ.թ.ա. 560 թվականին իր մահկանացուն կնքեց Լյուդիական թագավորության արքա Ալիաթես II-ը և նրան, կարճատև գահակալական պայքարից հետո, հաջորդեց իր որդի Կրեսոսը (մ.թ.ա. 560-547), որը, լինելով ուժեղ, խելացի ու եռանդուն մի անձնավորություն, կտրուկ մեծացրեց սեփական հոր օրոք առանց այդ էլ վերելքի ուղին բռնած Լյուդիական թագավորության հզորությունը: Այս առումով հարկ է նշել, որ Սարդեսի տիրակալների օգտին էր դասավորվել նաև այն հանգամանքը, որ նրանք, արևելքում լինելով հունական տարրի հիմնական ներկայացուցիչը, մի կողմից, ըստ էության, լիուլի օգտվում էին վերելքի ուղին բռնած հունական էթնոսի ակտիվ եռանդից, իսկ մյուս կողմից էլ, իր ժամանակին ոչնչացրած լինելով Կիմմերական թագավորությունը, այժմ սեփական ռազմավարչական ապարատի մեջ էին ընդգրկել կիմմերների զգալի քանակություն: Վերջին երկու հանգամանքներն իրենց հերթին կտրուկ մեծացրել էին մարդկային այն ռեսուրսի քանակությունը, որը հայտնվել էր Լյուդիական թագավորության գահակալների տրամադրության տակ, իսկ կիմմերների պարագան էլ, սրան գումարած, Լյուդիական թագավորության ռազմական մեքենային նաև հեծելազորային առաջնակարգ հատկանիշներ էր ապահովել: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նաև ավելացնել, որ նույն այս ժամանակ իր հերթին Կիլիկիայում գործող իշխանությունների շարքում տեղի էր ունեցել խոշորացում և արդյունքում մնացել էին միայն Ադանայի, Պաթթինայի ու Անամուռի իշխանությունները, որոնք էլ հենց, ընկած լինելով Լյուդիական թագավորության ազդեցության տակ, պաշտոնական Սարդեսի համար վերածվեցին Բաբելոնի թագավորությանը հարված հասցնելու առաջնային, սակայն միջնորդավորված

[1] Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 2, գլուխ 4, մաս 12, գիրք 3, գլուխ 1, մաս 10:

մի գործիքի: Այս հարցում պաշտոնական Սարդեսը մեծապես հենվում էր Սիենիսին (մ.թ.ա. մոտ 612-580) հաջորդած Սիենիսի (մ.թ.ա. մոտ 580-540) աջակցության վրա, ընդ որում վերջին երկու տիրակալները, ներկայացնելով Տավալների գահատոհմը, իշխում էին Կիլիկիայի երեք իշխանություններից որևէ մեկում՝ առայժմ հնարավոր չէ ասել, թե կոնկրետ որում:

Մ.թ.ա. 557 թվականի ամռանը Ադանայի, Պաթթինայի ու Անամուռի իշխանությունների միացյալ բանակը (մոտ 10.000) ասպատակեց Հյուսիսային Ասորիքը և նահանջեց[1], ինչն ամենից առաջ նշանակում էր մարտական գործողությունների սկիզբ պաշտոնական Բաբելոնի դեմ, ընդ որում մարտահրավերն այստեղ ընդունվեց: Արդյունքում՝ մ.թ.ա. 557 թվականի աշնանը Մալիս կիրճի ճ-մ-ում (Կիլիկիա, Թիլ-Համտուն գավառի արևելք, Ամանոսյան լեռների հյուսիս) Ներիգլիսար արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 20.000) անակնկալ հարձակումով հաղթեց դարանակալ հարձակում գործել պատրաստվող Ադանայի, Պաթթինայի և Անամուռի իշխանությունների միացյալ բանակին (մոտ 10.000)[2]: Պատերազմի շարունակությունը, սակայն, Ներիգլիսարին տեսնել այդպես էլ վիճակված չէր, քանի որ մ.թ.ա. 556 թվականի ապրիլի վերջին նա կնքեց իր մահկանացուն, որից հետո Բաբելոնի թագավորության գահին նրան հաջորդեց իր փոքրահասակ որդի Լաբաշի-Մարդուկը (մ.թ.ա. 556): Նոր արքայի դիրքերը, սակայն, ի սկզբանե էլ հենց բավականին թույլ էին և նույն թվականի հունիսի կեսին այս արքան զոհ գնաց դավադրությանը, որից հետո Բաբելոնի թագավորության արքա հռչակվեց դավադիրների ղեկավար Նաբոնիդը (մ.թ.ա. 556-539): Բաբելոնի թագավորության գահին հայտնված նոր տիրակալը ուժեղ և գործունյա մի անձնավորություն էր, որը, կարծես հենց ինքը իսկական շարունակությունը հանդիսանալով արժանահիշատակ Նաբուգոդոնոսոր II-ին, ամենաեռանդուն կերպով շարունակեց վերջինիս գործունեությունը, ընդ որում պետության առջև կանգնած խնդիրներից առաջնայինը պատերազմի շարունակումն էր Արևմուտքում:

Արդյունքում, վճռականորեն ձեռք զարկելով հայերի դեմ պատերազմին, մ.թ.ա. 555 թվականի փետրվարին Նաբոնիդ արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 50.000) Ադանայի, Պաթթինայի և Անամուռի իշխանությունների միացյալ բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) գրավեց Ուռան ու Կիռշուն (Հարավ-արևմտյան Կիլիկիա)[3], իսկ մ.թ.ա. 555 թվականի մարտին էլ տիրեց Պաթթինային (Հարավ-արևմտյան Կիլիկիա, Սարպեդոն հրվանդանում գտնվող կղզու վրա)[4]: Եվ վերջապես մ.թ.ա. 555 թվականի մարտին Սոլեի ճ-մ-ում (Դաշտային Կիլիկիայի արևմուտքում, ծովի ափին, Տարսոնից մոտ 40 կմ հարավ-արևմուտք) Նաբոնիդ արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 70.000) վճռական հաղթանակ տարավ Ադանայի, Պաթթինայի և Անամուռի իշխանությունների միացյալ բանակի (մոտ 20.000) նկատմամբ[5], ինչն էլ հենց ավարտական կետ դրեց Արևմուտքում մղվող պատերազմում՝ ամրագրելով Կրեսոսի արևելյան քաղաքականության լիակատար անհաջողությունը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ հեշտ չէր նաև Նաբոնիդի դրությունը և հենց այդ էր պատճառը, որ նա ոչ միայն պահանջկոտ չեղավ Կիլիկիայի իշխանությունների, այլև հենց իր՝ Կրեսոսի, նկատմամբ:

Իրոք, նույն այս ժամանակ վերջնականապես անկում էին ապրել Արիական Եռադաշինքի և Բաբելոնի թագավորության հարաբերությունները, քանի որ, ամեն ինչից զատ, Էկբատանում նաև Լաբաշի-Մարդուկի սպանվել էին որպես սեփական շահերի ոտնահարում ընկալել: Արդյունքում, այլևս չհետաձգելով հարվածը, Աստիգեսը մարտական գործողություններ սկսեց Բաբելոնի թագավորության դեմ և, փորձ կատարելով ոտքի հանել Եռադաշինքն իր ողջ կազմով, հարված հասցրեց Խառանին:

[1] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[2] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[3] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[4] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:
[5] «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից:

Նույն այս ժամանակ, սակայն, իրենց հերթին հերթական ճգնաժամ ապրեցին նաև Մարական թագավորության արքայի և Երվանդ I Սակավյակացի հարաբերությունները, ընդ որում աննկատ, սակայն լուրջ խնդիր կար նաև Աստիգեսի հարաբերություններում մ.թ.ա. 559 թվականին Կամբիս I-ի մահից հետո վերջինիս հաջորդած Կամբիս I-ի որդի և Աստիգեսի աղջկա տղա, Պարսքի թագավորության արքա Կյուրոս II Մեծի (մ.թ.ա. 559-530) հարաբերություններում:

Կյուրոս II Մեծը բացառիկ մի անձնավորություն էր ոչ միայն Արիական Եռադաշինքի սահմաններում կամ նույնիսկ իր ժամանակի ռազմաքաղաքական գործիչների աստղաբույլում, այլև, չափազանցրած չենք լինի, եթե ասենք՝ ողջ Հին Աշխարհի ռազմաքաղաքական գործիչների համաստեղության մեջ: Իրոք, անչափ խելացի, խորաթափանց, եռանդուն, գործնական, ռազմական և դիվանագիտական առաջնակարգ ունակություններով օժտված այս անձնավորությունը սրա հետ միաժամանակ աչքի էր ընկնում նաև իր ողջ դարաշրջանի համար բացառիկ մի մարդասիրությամբ ու հատկապես մարդկանց սրտերն իր կողմը գրավելու աննախադեպ ունակությամբ՝ այս առումով կարծես իր մեջ մարմնավորելով արիական ողջ այն հումանիզմը, որն առկա էր այս քաղաքակրթությունում: Կյուրոս II Մեծը մորական կողմից Աստիգեսի թոռն էր, սակայն սա չխանգարեց այն բանին, որ վաղուց ի վեր խուլ մրցակցության բնույթ ունեցող մարա-պարսկական հարաբերությունները հենց նույն այս ժամանակ ավելի խորը ճգնաժամ ապրեին, ընդ որում սեփական պալատական անհասանելիության մեջ փակված ծերունի Աստիգեսի քարացած հեղինակությանը հաջողությամբ հակադրվում էր համեմատականորեն ավելի երիտասարդ Կյուրոս II Մեծի պարզ շփումը մարդկանց հետ, ինչն էլ հենց աննախադեպ ուժով գրավում էր բոլորի սրտերը, այդ թվում նաև մարերի շարքերից: Անձնական բնույթ ունեցող այս գործոնին, սակայն, շուտով գումարվեցին նաև ժողովրդագրական և էթնոմշակութային զարգացումները:

Խնդիրը կայանում է նրանում, որ քոչվոր ժողովուրդները, իրենց ներկայացուցիչների միջին մակարդակում, որպես կանոն, լինելով ավելի մարտունակ, քան նստակյաց ժողովուրդներն են, տիրելով նույն այս նստակյաց ժողովուրդներին և դրանից հետո որևէ պատճառով դադարեցնելով ակտիվ նվաճողական գործունեությունը, շատ արագ կորցնում են իրենց էթնոմշակութային դիմագիծը և աստիճանաբար տարալուծվում են նվաճված ժողովուրդների մեջ: Այս օրինաչափությունը գործում էր ինչպես քոչվոր և առավել մարտունակ սկյութների և կիսաքոչվոր մարերի, այնպես էլ կիսաքոչվոր մարերի ու նստակյաց պարսիկների փոխհարաբերություններում: Այսպիսով՝ ինչպես Սկյութական, այնպես էլ Մարական թագավորությունների թուլացման հիմքում ընկած էր հենց իրենց իսկ բնույթը, ընդ որում այն, ինչ ժամանակին նրանց ուժ էր ապահովում, այժմ սկսեց դառնալ թուլություն, իսկ գործընթացն էլ, հավասար համեմատական հասարակության քոչվորության մակարդակի անկման, առավել կամ պակաս բուռն զարգացում էր ունենում:

Եվ այսպես, սկյութական ու մարական ցեղերը, ի համեմատ Իրանական լեռնաշխարհի սահմաններում գտնվող բնակչության և, մասնավորապես, դրավիդյանների մնացորդների ու հատկապես պարսիկների, նվաճողական պոռթկման մեջ ի վիճակի էին զենքի տակ դնել սեփական համայնքից հավաքված անհամեմատ ավելի մեծ քանակի և անհամեմատ ավելի մարտունակ ռազմիկների, իսկ այդ հանգամանքն էլ ժամանակին իր վճռական դերը խաղաց ինչպես Սկյութական թագավորության հաջողության գործում Մարական թագավորության հետ հարաբերություններում, այնպես էլ տարածաշրջանում նույն Սկյութական թագավորությանն ի վերջո տապալած Մարական թագավորության հաջողության գործում Պարսքի թագավորության հետ հարաբերություններում: Նույն գործընթացի սահմաններում, սակայն, օրինաչափ էր նաև այն, որ խոշոր նվաճումներին հաջորդող ժամանակաշրջանում, երբ դրանց ժամանակն արդեն անցել էր, սահմանները, չնայած

սահմանային պատերազմների մշտական վիճակին, քիչ թե շատ կայուն էին և ժամանակն էր սեփական թագավորությունների արդեն ներսում խաղաղ կյանք կառուցելու, սկյութական ու մարական տարրերը այս խնդիրը հաջողությամբ լուծել այդպես էլ չկարողացան, երբ սկյութները զիջեցին մարերին, իսկ մարերն էլ՝ պարսիկներին և սրանց մեջ ձուլված դրավիդյաններին:

Արդյունքում, Իրանական լեռնաշխարհի բնակչության հետ միջին համեմատական մակարդակում գտնվելով զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, նույն այդ տարածքին տիրելուց և պատերազմական լայնածավալ գործողությունների ավարտից հետո սկյութական ու մարական հզորության հիմքը կազմող հասարակության առանձին անդամների բարձր անձնական և մոբիլիզացիոն մարտունակությունը դրանից հետո իր վերջը գտավ, ընդ որում սոցիալական հարաբերությունների նոր ոլորտ մուտք գործած սկյութական ու մարական հասարակություններն իրենք էլ դասակարգային առումով միանգամից շերտավորվեցին: Արդյունքում՝ սկյութամարական համայնքի հասարակ անդամները, ամենաընդհանուր իմաստով, զբաղեցրին այն տեղը, ինչն ունեին Մերձավոր և Միջին Արևելքի շահագործվող դասակարգի անդամները, իսկ իշխող վերնախավն ինքն էլ իր հերթին, փորձելով կրկնօրինակել նոր բարքերը, զբաղեցրեց շահագործողների դիրքը: Սրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ երբեմնի քոչվոր կամ կիսաքոչվոր սկյութամարական տարրը նոր պայմաններում լավ չէր տիրապետում նստակյաց կյանքի սոցիալական և նույնիսկ առօրեական կանոններին հատկապես նոր ու ավելի քաղաքակրթված մակարդակում, ինչի արդյունքում, մարտադաշտում իր միջին մակարդակում գերիշխելով տեղի բնակչությանը, խաղաղ կյանքում այն տեղի տվեց վերջինիս: Եվ վերջապես իր դերը խաղաց նաև մշակութային զարգացվածության և ազգային ինքնագիտակցության համեմատականորեն ցածր մակարդակը, երբ նոր պայմաններում սկյութամարական տարրը ուղղակի լուծվեց պարսկական քաղաքակրթական կաթսայում:

Եվ այսպես, այն բանի արդյունքում, որ նոր սահմաններում հաստատված սկյութներն ու մարերը անցան նստակեցության, քայքայվեց վերջիններիս արդեն նաև ռազմական բարձր մոբիլությունը, իսկ առանձին ռազմիկների մարտունակության բարձր մակարդակն էլ կամ վերացավ, կամ էլ արդեն խաղաղ կյանքի անցած նույն այդ նախկին ռազմիկների մոտ այնուհանդերձ էական անկում ապրեց: Իրոք, սերունդները փոխվում էին, իսկ նոր և արդեն խաղաղ պայմաններում հայտնված սկյութամարական նոր սերնդի արական անդամներն էլ աստիճանաբար արդեն ավելի ու ավելի շատ էին հեռանում ռազմական գործից, որի կարիքը վրա հասած խաղաղության պայմաններում կարծես առանց այդ էլ այնքան էլ չկար՝ փոխարենն իրենց նվիրելով այլ գործունեության: Այսպիսով, ինչպես իր ժամանակի մարերն օգտվեցին սկյութների նկատմամբ սեփական էթնո-սոցիալական գերակշռությունից և, առավելության հասնելով նրանց նկատմամբ, ուժեղացան, այժմ էլ եկավ արդեն իրենց հերթը, երբ մարերի նկատմամբ առկա ու վերևում նկարագրված գերակշռությունից պատրաստվում էին օգտվել արդեն պարսիկները: Այս առումով պետք է ավելացնել, որ անձնական գործոնը ևս, ի դեմս, ինչպես արդեն ասվեց, մարդկանց համար ավելի ընկալունակ Կյուրոս II Մեծի և անհամեմատ ավելի անընկալունակ Աստիգեսի, միայն խորացրեց ընդհանուր օրինաչափ զարգացումները՝ առավել արագացնելով դրանք: Եվ այսպես, ամեն ինչ պատրաստ էր վերջնական խզման համար, անհրաժեշտ էր միայն առիթ և այն շուտով ներկայացավ:

Արդեն ասվեց, որ պաշտոնական Էկբատանում չափազանց ծանր էին տարել Լաբաշի-Մարդուկի սպանությունը և այս կնճիռն էլ, շարունակելով խորանալ, ի վերջո պատերազմի հանգեցրեց մի կողմից Արիական Եռադաշինքի, իսկ մյուս կողմից էլ Բաբելոնի թագավորության միջև: Հասունանում էր պատերազմը և այս առումով պաշտոնական Բաբելոնի համար լավը, թերևս, միայն այն եղավ, որ Կրեսոսը, զգուշանալով Արիական Եռադաշինքի չափից դուրս ուժեղացումից, փոխեց իր

թշնամական վերաբերմունքը Նաբոնինդի նկատմամբ և զգալի աջակցություն ցուցաբերեց վերջինիս: Այսպիսով՝ Առաջավոր Ասիայում ձևավորվեցին ռազմաքաղաքական հերթական խմբավորումներն, ի դեմս մի կողմից Արիական Եռադաշինքի, իսկ մյուս կողմից էլ Բաբելոնի և Լյուդիական թագավորությունների: Հենց վերջիններս էլ ձեռնամուխ եղան ազդեցության գոտիների հերթական վերաբաժանմանը:

Մ.թ.ա. 554 թվականին Մարական թագավորության բանակը հարված հասցրեց Խառանի ուղղությամբ և պաշարեց այս քաղաքը Բաբելոնի թագավորության կայազորից: Պատերազմական գործողությունների հետագա ծավալմանը, սակայն, խանգարեց այն հանգամանքը, որ Արմենիի թագավորությունը հրաժարվեց միանալ Աստիգեսի կողմից սկիզբ դրած պատերազմին, իսկ Լյուդիական թագավորությունն էլ իր հերթին սկսեց ակտիվորեն աջակցել Բաբելոնի թագավորությանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

554 հունիս – ***<u>Խաղկտիքի ճ-մ</u>*** (Փոքր Հայքի հարավ-արևելք)[1]

<u>Խառանի</u> պաշարման ժամանակ Արմենիի թագավորության արքա Երվանդ I Սակավակյացը հրաժարվեց կատարել Արիական Եռադաշինքի մասնակցի պարտականությունները և իր մասնակցությունը բերել մղվող պատերազմին: Ի պատասխան դրա՝ Կյուրոս II Մեծի գլխավորած Պարսքի թագավորության բանակը (30.000 հեծյալ) մտավ Արմենիի թագավորության տարածք, որից հետո Պարսքի արքային հաջողվեց խորամանկությամբ գերել Հայոց արքային և նրա ընտանիքի անդամներին: Սկսված բանակցություններից հետո, սակայն, կողմերը, Երվանդ I Սակավակյացի գահակից որդի և Կյուրոս II Մեծի վաղեմի որսընկեր Տիգրանի միջնորդությամբ, համաձայնեցին նախկին պայմաններով վերականգնել Արիական Եռադաշինքում հայերի մասնակցությունը: Մինչ Խառան շարժվելը, սակայն, Տիգրանի գլխավորած Արմենիի (48.000, որից 8.000 հեծյալ, 20.000 ծանր և 20.000 թեթև հետևակ) և Կյուրոս II Մեծի գլխավորած Պարսքի թագավորությունների միացյալ բանակը շարժվեց դեպի հյուսիս՝ նպատակ ունենալով պարտության մատնել ***<u>Խաղկտիքի լեռներում</u>*** ամրացած հայ-հալդայների[2] բանակին (8.000[3]՝ երկար նիզակներով և կաշեպատ վահաններով զինված հետևակային), որը իր մշտական ավարառուկան արշավանքներով խաթարում էր Հայաստանի ողջ հյուսիսի բնականոն կյանքը: Արդյունքում, մոտենալով բարձունքներում տեղակայված հայ-հալդայների ամրացված դիրքերին, դաշնակից բանակը մարտակարգ ընդունեց: Արմենիի թագավորության բանակը տեղավորվեց աջ թևում և կենտրոնում, իսկ ձախ թևը զբաղեցրեց Պարսքի թագավորության բանակը: Դաշնակից բանակի առաջին շարքում գտնվում էր հետևակը, երկրորդում՝ հեծելազորը:

I փուլ – Դաշնակից բանակի հետևակը անցավ հարձակման, սակայն կարճատև մարտից հետո կանխամտածված նահանջ սկսեց դեպի հարթավայր:

II փուլ – Ոգևորված իրենց կեղծ հաջողությունից՝ հայ-հալդայները դուրս եկան ամրացված դիրքերից և սկսեցին հետապնդել նահանջողներին:

III փուլ – Դաշնակից հեծելազորի մի մասը շրջանցիկ ռազմերթով գրավեց բարձունքի վրա գտնվող հայ-հալդայների ամրացված դիրքերը, իսկ հիմնական մասը շրջապատեց բաց տեղանքում հայտնված հակառակորդի հիմնական ուժերին: Արդյունքում՝ հայ-հալդայները դադարեցրին դիմադրությունը և գերի հանձնվեցին:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը մոտ 80, հայ-հալդայները՝ մոտ 200 զինվոր: Կնքվեց հաշտություն, ըստ որի մի կողմից Խաղկտիքում վերականգնվեց Արմենիի թագավորության գերիշխանությունը և հայ-հալդայներն էլ պարտավորվեցին Արմենիի թագավորության բանակին 4.000 ռազմիկից բաղկացած ջոկատ տրամադրել, իսկ մյուս կողմից էլ նրանք իրավունք ստացան օգտվել հարթավայրային արոտավայրերից:

Այսպիսով Արիական Եռադաշինքի միասնությունը վերահաստատվեց, թեև իր այս

---

[1] Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 3, գլուխ 2:

[2] Խաղկտիքում այս ժամանակաշրջանում բնակվող խալդայների (անվանման սկզբի «հ»-ն «խ» է դարձել ռուսալեզու գրականության մեջ՝ «հ» տառի բացակայության պատճառով) ինքնության մասին հայտնվել են տարբեր կարծիքներ: Ըստ իս հավանական է թվում այն տեսակետը, որ վերջիններս էթնիկ տեսանկյունից հայ ժողովրդի մի մասն էին, ուղղակի հանդիսանում էին Հայկ (Հալդ) աստծո պաշտանմունքին հետևող կրոնական մի ուղղության ներկայացուցիչներ, որոնց կրոնական աշխարհայացքը տարբերվում էր այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի հիմնական մասի մոտ գերիշխածից: Կարելի է կարծել, որ դրա հետևանքով էլ նրանց համայնքը սկսել էր լեռներում առանձնացված կյանք վարել, իսկ հետագայում էլ անցել էր ավարառուական արշավանքների, մոտավորապես այնպես, ինչպես հետագայում՝ պավլիկյանները: Հետագա դարերում, սակայն, հայ-հալդայների կրոնական առանձնացվածությունը աստիճանաբար դադարեց և նրանք միաձուլվեցին հայ ժողովրդի հիմնական մասին:

[3] Այս թիվը տրվել է՝ հաշվի առնելով հետագայում հայ-հալդայների տրամադրած 4.000 հոգանոց ջոկատի փաստը: Կարելի է ենթադրել, որ վերջին դեպքում նրանք, ինչպես սովորաբար արվում էր այդ ժամանակ, որպես օժանդակ ջոկատ տրամադրել են իրենց բանակի կեսը:

հաջողության համար Աստիգեսն ավելի թանկ էր վճարել, քան ենթադրում էր: Իրոք, հենց Հայաստանում գտնվելու ընթացքում էր, որ Կյուրոս II Մեծը Աստիգեսի դեմ միասնական ուժերով գործելու հարցով վերջնական համաձայնության եկավ Տիգրանի հետ, մի հանգամանք, որը շատ շուտով երևան էր գալու: Առժամանակ, սակայն, Արմենիի և Պարսքի տիրակալները դեռևս հանդես էին գալիս որպես Աստիգեսի գերիշխանության տակ գտնվող տիրակալներ, որոնց առաջնային խնդիրը դարձավ, օժանդակելով իրենց ղեկավարին, հաջող ավարտին հասցնել պայքարը Բաբելոնի և Լյուդիական թագավորությունների դեմ: Հենց այս ժամանակ էր նաև, որ, հաջորդելով հորը, Արմենիի թագավորության արքա հռչակվեց Տիգրան I-ը (մ.թ.ա. 554-522):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

554 ամռան սկիզբ - ամռան վերջ – ***Խառանի ճ-մ***[1]

Ամռան սկզբին Բաբելոնի թագավորության տիրապետության տակ գտնվող քաղաքին մոտեցավ Աստիգես արքայի գլխավորած Մարական (70.000, որից 10.000 հեծյալ) և Կյուրոս II Մեծի գլխավորած Պարսքի (31.000, որից 30.000 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը, իսկ ամռան վերջին էլ նրանց միացավ նաև Տիգրան I-ի գլխավորած Արմենիի (28.000[2], որից 4.000 հեծյալ) թագավորության, ինչպես նաև Ադանայի, Պաթթինայի ու Անամուռի իշխանությունների (մոտ 6.000, որից մոտ 1.000 հեծյալ) միացյալ բանակը, որից հետո դաշնակից բանակը սկսեց քաղաքի պաշարումը: Տեղեկանալով այդ մասին՝ Նաբոնիդ արքայի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակը (մոտ 120.000, այդ թվում 1.000 հյուրկան հեծյալներ, արաբներ և կապադովկիացիներ), իր կազմում ունենալով նաև Լյուդիական թագավորության օժանդակ մի զորամաս (մոտ 10.000), սկսեց դանդաղ շարժվել դեպի հյուսիս, ինչից հետո, հասնելով Արիական Եռադաշինքի բանակին, ճամբարեց՝ ստեղծելով դաշտային ամրությունների հզոր մի համակարգ:

I փուլ – Առաջին օրը Արիական Եռադաշինքի բանակը մարտակարգ ընդունած մոտեցավ թշնամու ճամբարին, սակայն թշնամու բանակը դուրս չեկավ ամրացված դիրքերից, իսկ Արիական Եռադաշինքի ուժերն էլ իրենց հերթին չցանկացան հարձակվել և նահանջեցին ելման դիրքեր:

II փուլ – Հաջորդ օրը Արիական Եռադաշինքի բանակը մարտակարգ ընդունած կրկին մոտեցավ թշնամու բանակին և վերջինս այս անգամ դուրս եկավ ճամբարից՝ ինքն էլ մարտակարգ ընդունելով: Օգտվելով դրանից՝ Արիական Եռադաշինքի բանակը անցավ հարձակման և ծանր պարտության մատնեց թշնամու բանակին, որի մնացորդները սկսեցին անկանոն փախչել սեփական ամրացված ճամբարի ուղղությամբ:

III փուլ – Թշնամու բանակին հետապնդող Արիական Եռադաշինքի բանակը ներխուժեց վերջինիս ճամբար և գրավեց այն, սակայն, զգուշանալով անակնկալ հարձակումից, լքեց ճամբարը:

IV փուլ – Թշնամու բանակը գիշերը լքեց ճամբարը և սկսեց նահանջել դեպի հարավ: Տեղեկանալով այդ մասին՝ Արիական Եռադաշինքի բանակը հաջորդ օրը սկսեց հետապնդել վերջինիս, ինչի ընթացքում Բաբելոնի թագավորության բանակի վերջապահը կազմող հյուրկանները անցան Արիական Եռադաշինքի բանակի կողմը:

V փուլ – Բաբելոնի թագավորության բանակը դադարեցրեց նահանջը և փորձեց դիմադրություն կազմակերպել, սակայն բռնկված մարտում կրկին պարտություն կրեց ու վերջնականապես ցրվեց: Մարտում ընկան նաև

[1] Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 3, գլուխ 3, գիրք 4, գլուխ 1-4:

[2] Այս ժամանակաշրջանում Արմենիի բանակը Արիական Եռադաշինքի դաշնակցային պարտավորությունը սովորաբար կատարում էր 20.000 հետևակով և 4.000 հեծյալով, սակայն այստեղ հետևակի թվին պետք է գումարել նաև հայ-հալդայների 4.000 հոգանոց հետևակ զորամասը:

կապադովկիացիների առաջնորդը և արաբների արքան:

Հայերը կորցրին մոտ 6.000, դաշնակիցները՝ մոտ 20.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր:

Այսպիսով Արիական Եռադաշինքը վճռական հաջողության հասավ, ինչը մեծապես սահմանափակեց Նաբոնիդի ռազմական հնարավորությունները, ինչպես նաև իսկական մի սառը ցնցուղ հանդիսացավ Կրեսոսի համար: Այնուհանդերձ Բաբելոնի տիրակալի օգտին եղավ, սակայն, այն հանգամանքը, որ այս դեպքերից կարճ ժամանակ անց ի վերջո սկիզբ առավ վաղուց ծրագրվող պայթյունը Արիական Եռադաշինքի հենց ներսում, երբ Պարսքի և Արմենիի թագավորությունները դուրս եկան Մարական թագավորության դեմ:

Իրոք, մ.թ.ա. արդեն 553 թվականին Կյուրոս II Մեծը և Տիգրան I-ը սկիզբ դրեցին բացահայտ մի պատերազմի, որը, ստանալով մանր ընդհարումների բնույթ և հիմնականում ընթանալով Պարսքի ու Մարական թագավորությունների միջև, ձգձգվեց մինչև մ.թ.ա. 550 թվականը: Վերջին տարուն, սակայն, ընթացող պատերազմում վիճակված էր վճռականը լինել, քանի որ հենց այս ժամանակ էր, որ կողմերը, իրար բերած բոլոր հնարավոր ուժերը, վճռական ընդհարման համար միմյանց դեմ դուրս եկան:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

550 – ***<u>Պասարգատայի ճ-մ</u>*** (Կենտրոնական Պարսկաստան, ներկայիս Շիրազից 130 կմ հյուսիս-արևելք)[1]

Աստիգես արքայի գլխավորությամբ առաջխաղացում իրականացրած Մարական թագավորության բանակը (120.000, որից 20.000 հեծյալ, ինչպես նաև 300 մարտակառք[2]) մոտեցավ Կյուրոս II Մեծի գլխավորությամբ քաղաքի մոտ մարտակարգ ընդունած Պարսքի թագավորության բանակին (մոտ 70.000, որից 30.000 հեծյալ): Դրանից հետո, տեղյակ չլինելով Տիգրան I-ի գլխավորությամբ մարտադաշտին մոտեցող Արմենիի թագավորության բանակի (մոտ 50.000, որից մոտ 10.000 հեծյալ) առկայության մասին, Աստիգեսը հրամայեց սկսել հարձակումը և ոչնչացնել թշնամու բանակը:

I փուլ – Առաջին օրը Մարական թագավորության բանակը ողջ ճակատով հարձակման անցավ և, կրելով ծանր կորուստներ, համառ մարտից հետո այնուհանդերձ կարողացավ հետ շպրտել Պարսքի թագավորության բանակին դեպի քաղաք:

II փուլ – Երկրորդ օրը Պարսքի թագավորության բանակը արտագրոհ իրականացրեց, սակայն համառ մարտից հետո ոչ միայն որևէ հաջողության չհասավ, այլև թշնամու հատուկ մի ջոկատ (1.000), անցնելով հենց իր թիկունք, անակնկալ հարվածով գրավեց քաղաքի արտաքին պարիսպը: Ստեղծված պայմաններում Պարսքի թագավորության բանակը թողեց քաղաքը և ամրացավ վերջինիս հարող լեռներում, որտեղ մինչ այդ տեղափոխվել էր նաև խաղաղ բնակչությանը:

---

[1] Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 6; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 6, մաս 9, գլուխ 45 մաս 2; Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 127-128; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 9, գլուխ 23; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 11, մաս 19; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 13, գլուխ 3, մաս 8; Օրոսիոս «Ընդդեմ հեթանոսների», գիրք 1, գլուխ 19; Նիկողայոս Դամասկացի «Պատմություն» գիրք 7, գլուխ 75; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 51; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 24, 26; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 25; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 3; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7, 11; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; «Բաբելոնյան ժամանակագրություն» արձանագրությունից; Նաբոնիդ արքայի Սիփփարյան ցիլինդրից:

[2] Այստեղ և հետագայում բանակների քանական տվյալները տրվել են՝ հիմք ընդունելով Նիկողայոս Դամասկցու տվյալները և առաջնորդվելով «մեկ 0 պակասեցնելու» սկզբունքով:

III փուլ – Երրորդ օրվա առաջին կեսին Աստիգեսը, փախուստը խոչընդոտելու համար նախատեսված հատուկ ուժեր տեղադրելով հարձակման պատրաստվող իր իսկ բանակի թիկունքում, սեփական բանակը հարձակման ուղարկեց լեռներում ամրացած թշնամու բանակի դեմ: Բռնկվեց համառ մարտ, որի արդյունքում Պարսքի թագավորության բանակը սկզբում պարտություն կրեց և դիմեց փախուստի, բայց հետագայում, վերախմբավորելով ուժերը, անցավ հակահարձակման:

IV փուլ – Օրվա երկրորդ կեսին մարտադաշտ հասավ Արմենիի թագավորության բանակը և, թևային ու թիկունքային հարված հասցնելով Մարական թագավորության բանակին, Պարսքի թագավորության բանակի հետ միասին ծանր պարտության մատնեց վերջինիս:

V փուլ – Մարական թագավորության բանակը դիմեց փախուստի, իսկ Պարսքի և Արմենիի թագավորությունների միացյալ բանակը սկսեց հետապնդել վերջինիս:

VI փուլ – Մի քանի օր անց թշնամու բանակը վերջնական պարտություն կրեց և ցրվեց, ընդ որում Տիգրան I-ը, այս ընթացքում մարտադաշտում հանդիպելով Աստիգեսին, հեծյալ նիզակամարտում միջանցիկ նիզակահարելով սպանեց նրան:

Հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցը՝ մոտ 20.000 զինվոր, թշնամին՝ 60.000 սպանված և վիրավոր, 40.000 գերի:

Այսպիսով՝ Պարսքի և Արմենիի թագավորությունները ոչ միայն վճռական հաղթանակ տարան, այլև հասան նույնիսկ նրան, որ Աստիգեսը սպանվեց: Արդյունքում՝ Արիական Եռադաշինքում գերագահությունը Մարական թագավորությունից անցավ Պարսքի թագավորությունը, ընդ որում, ի տարբերություն նախկինի, նոր պայմաններում Կյուրոս II Մեծը որևէ այլ անձնավորության թույլ չտվեց զբաղեցնել Մարական թագավորության գահը՝ արդյունքում անձնական ունիայի միջոցով Մարական թագավորությունը փաստորեն կցելով Պարսքի թագավորությանը: Այսուհանդերձ հարկ է ընդգծել նաև, որ Մարական թագավորության տարածքը պահպանեց ներքին լայն ինքնավարությունը, իսկ մարերն էլ, հայերի հետ միասին, շարունակեցին հանդես գալ որպես Արիական Եռադաշինքի գլխավոր մասնակիցների դերում, ուղղակի, ի տարբերություն նախկինի, ինչպես արդեն նշվեց, Արիական Եռադաշինքը սկսեցին գլխավորել երկու գահակալներ, որոնցից մեկը Կյուրոս II Մեծն էր, իսկ մյուսը՝ վերջինիս մոտիկ ընկեր և զինակից Տիգրան I-ը:

Հենց նոր ավարտված ճակատամարտը իր հետ ևս մեկ հետևանք բերեց, քանզի հենց դրանից հետո էր, որ, ըստ էության, ստեղծվեց Աքեմենյանների տերությունը, որն իր հիմքում ուներ Արիական արդեն իսկ հիշատակված Եռադաշինքը և որում գերագահությունն այդուհետ պատկանելու էր Աքեմենյանների տոհմին ու պարսիկներին: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է հատուկ ընդգծել, որ Աքեմենյանների տերության կազմում գտնվող պետական միավորները, ինչպես նաև վերջինիս հետ սերտորեն համագործակցող Արմենիի թագավորությունը գործում էին յուրօրինակ մի համադաշնության սկզբունքով, որը բնորոշվում էր ներքին լայն ինքնավարությամբ, երբ Աքեմենյանների տերությունն ինքն, ըստ էության, փաստորեն յուրօրինակ մի համադաշնություն էր:

Գլուխ 5
Աքեմենյանների տերության վերելքը

Աքեմենյանների տերության ստեղծումը կրկին ուժեղացրեց Բաբելոնի թագավորության համար մինչ այդ առկա սպառնալիքները, որոնք, մի պահ, թվում էր թե, մնացել էին անցյալում: Ավելին, այժմ պարզվեց, որ Նաբոնիդի նոր հակառակորդն

անհամեմատ ավելի ուժեղ է, իսկ վերջինիս ղեկավարներն էլ ավելի ունակ մարդիկ են, քան արդեն, ըստ էության, վերացված Մարական թագավորությունն ու մեռածների թվում գտնվող Աստիգեսն էր: Իր հերթին Աքեմենյանների տերության տիրակալ Կյուրոս II Մեծը, ըստ էության, ժառանգելով Մարական թագավորության աշխարհաքաղաքական բոլոր առաջնահերթությունները, ինքը ևս իր առջև խնդիր դրեց ամենից առաջ լուծել Բաբելոնի թագավորության և Միջագետքի խնդիրը:

Այս առումով մինչև առաջ անցնելը պետք է նշել, որ, եթե նույնիսկ մի կողմ թողնենք մ.թ.ա. 554 թվականին Բաբելոնի թագավորության ռազմական մեքենայի կրած ծանր կորուստները, Արիական Եռադաշինքի ռազմական մեքենան այսպես թե այնպես մի գլուխ գերազանցում էր վերջինիս և քանակապես, և որակապես: Իրոք, եթե Բաբելոնի թագավորության ռազմական մեքենան իրենից ներկայացնում էր Ասորեստանի թագավորության ռազմական մեքենայի, ըստ էության, ընդամենը միայն մի քիչ փոփոխված տարբերակը, ապա Արիական Եռադաշինքի ռազմական մեքենան իր հիմքում ուներ հեծելազորի մասսայական կիրառման վրա հիմնվող ճկուն մի համակարգ, ընդ որում այստեղ զգալի նշանակություն ուներ նաև հետևազորը[1]: Եվ վերջապես ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ, եթե առաջիկա պատերազմում Նաբոնիդի բանակը հազիվ միայն կարող էր անցնել 100.000 հոգին, ապա Արիական Եռադաշինքի բանակային ուժերը վստահորեն գերազանցնում էին 200.000 հոգին: Արդյունքում՝ ռազմավարական նախաձեռնությունը պատերազմի հենց սկզբում էլ միանգամից և անվերադարձ կերպով անցավ Արիական Եռադաշինքին, ինչը միայն խորացրեց Բաբելոնի թագավորության համար ստեղծված ընդհանուր ծանր դրությունը: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել նաև, սակայն, որ իրեն այնուհանդերձ լավ դրսևորեց նաև Նաբոնիդը:

Իրոք, ստեղծված ծանր պայմաններում Արիական Եռադաշինքին նկատմամբ դրսևորելով ընդգծված պասիվություն և փորձելով ոչ մի կերպ ընդհարում չհրահրել կամ, գոնե, հնարավորինս հետաձգել այն, դրա հետ միաժամանակ Բաբելոնի թագավորության արքան նաև ամենաեռանդուն մի գործունեություն ծավալեց սեփական դիրքերն ինչպես երկրի ներսում ամրապնդելու և պաշտպանական կառույցներն ուժեղացնելու ուղղությամբ, այնպես էլ արտաքին քաղաքական ասպարեզում՝ վերջնական դաշինք կնքելով Եգիպտական ու Լյուդիական թագավորությունների, ինչպես նաև հունական պետական միավորների, այդ թվում նաև Սպարտայի թագավորության հետ: Ավելի, չբավարարվելով սրանով և օգտվելով իրեն այնուհանդերձ բաժին հասած խաղաղության մի քանի տարիներից, Նաբոնիդը լայն նվաճողական գործողություններ ծավալեց Արաբական թերակղզում՝ մի կողմից ցանկանալով, ինչպես թելադրում էին աշխարհաքաղաքական խաղի կանոնները, տեղի արաբների հաշվին հնարավորինս մեծացնել սեփական բանակի քանակությունը, իսկ մյուս կողմից էլ նպատակ ունենալով ձեռքի տակ ունենալ առևտրական ուղիների պահեստային տարբերակներ այն պարագայի համար, եթե առևտրական հյուսիսմիջագետքյան և հյուսիսասորիքյան ուղղությունները հայտնվեն հարվածի տակ կամ կորսվեն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, մինչ Նաբոնիդը ամենաեռանդուն միջոցառումներով պատրաստվում էր ապագա փոթորիկներին, թեթև չէր նաև Արիական Եռադաշինքի մյուս հակառակորդի դրությունն, ի դեմս Կրեսոսի, որի բանակը ևս քանակական ու որակական առումով զիջում էր հակառակորդին: Ավելին, պաշտոնական Սարդեսի դրությունը հատկապես ծանրացրեց այն հանգամանքը, որ, հաշվի առնելով Նաբոնիդի ընդգծված պասիվությունը, Արիական Եռադաշինքի ղեկավար կազմում որոշում ընդունվեց առաջին հարվածը հասցնել հենց Լյուդիական թագավորությանը:

Այս առումով հարկ է նշել, որ, հետ չմնալով Նաբոնիդից, նույն այս ժամանակ Կրեսոսն իր հերթին ևս մի շարք ակտիվ միջոցառումներ ձեռք առավ, երբ, մասնավորապես, ունենալով նյութական հսկայական միջոցներ, վերջինս վարձկանների

[1] Տես՝ Разин Е. А. “История военного искусства”, том 1, Москва 1999, стр. 82.

աննախադեպ մեծության մի հավաք իրականացրեց: Բացի այդ Լյուդիական թագավորության տիրակալը դաշնակցային հարաբերություններ հաստատեց նաև Աքեմենյանների տերության հաջողություններից ահաբեկված Եգիպտական և Սպարտայի թագավորությունների, ինչպես նաև Ադանայի, Պաթթինայի ու Անամուռի իշխանությունների հետ: Այս ամենով հանդերձ հարկ է նշել, սակայն, որ Լյուդիական թագավորության հետ հարաբերություններում ռազմավարական նախաձեռնությունը ևս լիովին գտնվում էր Արիական Եռադաշինքի ձեռքում, որը, մի քանի տարի ծախսելով ուժերը վերջնականապես կարգի գցելու վրա, իրեն հարմար մի պահի պատերազմական գործողություններ սկսեց Լյուդիական թագավորության դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

547 սեպտեմբեր – ***<u>Պտեյրայի ճ-մ</u>*** (Կապադովկիա, Սեբաստիայից մոտ 210 կմ արևմուտք, Հալիս գետից մոտ)[1]

Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 30.000) և նրա կազմում Տիգրան Ի-ի, ինչպես նաև հեծելազորի հրամանատարներ Քսերեքս ու Արշեզ Արծրունիների գլխավորությամբ գործող Արմենիի թագավորության (8.000) միացյալ հեծելազորը սկսեց մոտենալ Լյուդիական թագավորության դարանակալ բանակին (մոտ 10.000, այդ թվում մոտ 1.000 կիլիկիոհայեր):

I փուլ – Լյուդիական թագավորության բանակը անակնկալ հարված հասցրեց հակառակորդի առաջապահին և փախուստի մատնեց վերջինիս:

II փուլ – Արիական Եռադաշինքի բանակը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր և հաղթանակ տարավ:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցները՝ մոտ 400, պարտվողներից՝ հայերը՝ մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 2.000 զինվոր:

547 հոկտեմբեր – ***<u>Թյումբրարայի ճ-մ</u>*** (Փոքր Ասիայի արևմուտք, Նիկիայից մոտ 100 կմ հարավ-արևելք)[2]

Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (197.000, այդ թվում 90.000 պարսիկներ, որոնցից 20.000 հեծյալ, 70.000 մարեր, որոնցից 10.000 հեծյալ, 24.000 կատիշներ, որոնցից 4.000 հեծյալ, 12.000 սակեր, որոնցից 10.000 հեծյալ, 300 մանգաղակիր մարտակառքեր) և նրա կազմում Տիգրան Ի-ի, ինչպես նաև հետևակի հրամանատար Ամբակի, հեծելազորի հրամանատարներ Քսերեքս ու Արշեզ Արծրունիների գլխավորությամբ գործող Արմենիի թագավորության (48.000, որից 8.000 հեծյալ, ինչպես նաև Մարդպետական գունդը) միացյալ բանակը մոտեցավ քաղաքին և մարտակարգ ընդունեց: Առաջին շարքում տեղավորվեցին մարտակառքերը և ուղտերի վրա տեղավորված ռազմիկները, երկրորդում՝ հետևակը, ընդ որում հետևակի առաջին գծում տեղավորվեց ծանր, իսկ երկրորդում՝ թեթև հետևակը: Երրորդ շարքը և թևերը զբաղեցրեց հեծելազորը:

Կրեսոս արքայի գլխավորած Լյուդիական թագավորության բանակը (360.000, այդ թվում 120.000 եգիպտացի ծանր հետևակայիններ, մոտ 50.000 բաբելոնացիներ, որոնցից 20.000 հեծյալ, 50.000 լյուդիացիներ, որոնցից 10.000 հեծյալ, 48.000

---

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 75-77; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 6, մաս 7; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 9, գլուխ 31; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 5, մաս 4; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 6; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 7; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 51:

[2] Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 2, գլուխ 1, գիրք 5, գլուխ 3, գիրք 6, գլուխ 2-4, գիրք 7, գլուխ 1, գիրք 8, գլուխ 4; Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 79-80; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 6, մաս 6; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 4, մաս 12; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 7; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 6; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4; Սամվել Անեցի «Ժամանակագրություն:

փռյուգիացիներ, որոնցից 8.000 հեծյալ, 36.000 կապադովկիացիներ, որոնցից 6.000 հեծյալ, մոտ 20.000 արաբներ, որոնցից 10.000 հեծյալ և 100 մարտակառք, 16.000 հելեսպոնտոսյան հույներ, որոնցից 6.000 հեծյալ, մոտ 10.000 թրակիացիներ, լիկոնիացիներ, պաֆլագոնցիներ, կարիացիներ ու փյունիկիացիներ, մոտ 10.000 կիլիկիհոհայեր) ևս մարտակարգ ընդունեց, ընդ որում կենտրոնում տեղակայվեցին եգիպտացիների 10.000 հոգանոց 12 ջոկատները, իսկ թևերից յուրաքանչյուրում՝ յուրաքանչյուրը 3.000 հոգանոց կազմով հետևակի 30 ջոկատներ: Հեծելազորը տեղաբաշխվեց թևերի ծայրերում:

I փուլ – Լյուդիական թագավորության բանակի կենտրոնը անցավ հարձակման և համառ մարտի մեջ մտավ արիական բանակի կենտրոնի հետ: Միաժամանակ, հընթացս ծավալվելով կողային ուղղություններով, սկսեց առաջ խաղալ նաև Լյուդիական թագավորության բանակի հեծելազորը՝ նախատեսելով թևանցել արիական բանակը և շրջապատել վերջինիս: Ի պատասխան դրա՝ թևերում տեղավորված արիական բանակի հեծելազորը շարժվեց թշնամուն հեծելազորին ընդառաջ, սակայն ընդհարումից անմիջապես առաջ հեծյալներից առաջ թողեց ուղտերի վրա տեղավորված ռազմիկներին, որոնց տեսքից վախեցած թշնամու հեծելազորի ձիերը խրտնեցին և, ցած նետելով հեծյալներին, դիմեցին փախուստի: Օգտվելով հակառակորդի հեծելազորի կազմալուծումից՝ արիական բանակի հեծելազորը սկսեց հետապնդել և ոչնչացնել վերջինիս:

II փուլ – Արիական բանակի հեծելազոր թևանցեց և շրջապատեց թշնամու բանակը, որը համառ դիմադրությունից հետո ի վերջո դիմեց փախուստի՝ հետապնդվելով հակառակորդի կողմից և ծանր կորուստներ կրելով:

III փուլ – Բոլոր կողմերից շրջապատված եգիպտացիները շրջանաձև պաշտպանություն կազմակերպեցին, սակայն, կրելով զգալի կորուստներ և բանակցությունների արդյունքում բավարար երաշխիքներ ստանալով, ի վերջո պատվավոր պայմաններով հանձնվեցին:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցները՝ մոտ 20.000, պարտվողներից՝ հայերը՝ մոտ 4.000, դաշնակիցը՝ մոտ 200.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ամենակործանարար հետևանքներն ունեցավ Լյուդիական թագավորության ռազմական մեքենայի համար, որն այլևս հնարավորություն չունեցավ և որևէ կերպ նույնիսկ չհասցրեց էլ վերականգնվել: Իրոք, թեև Կրեսոսն իր տիրապետության տակ դեռևս նյութական հսկայական միջոցներ ուներ, սակայն վարձկանների նոր խմբեր հավաքելու, ինչպես նաև բանակային նոր մեխանիզմ կազմակերպելու համար ժամանակ, ըստ էության, արդեն չկար, քանի որ Արիական Եռադաշինքի բանակը սրընթաց մոտենում էր Լյուդիական թագավորության մայրաքաղաքին: Արդյունքում՝ մ.թ.ա. 547 թվականի Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 150.000, այդ թվում մարեր, կատիշներ և սակեր) և նրա կազմում Տիգրան I-ի, հետևակի հրամանատար Ամբակի, ինչպես նաև հեծելազորի հրամանատարներ Քսերեքս ու Արշեզ Արծրունիների գլխավորությամբ գործող Արմենիի թագավորության (մոտ 40.000, այդ թվում Մարդպետական գունդը) միացյալ բանակը Լյուդիական թագավորության բանակից (մոտ 5.000) գրավեց Սարդեսը՝ Մարդպետական գնդի կազմով քաղաք ներխուժելով անառիկ համարված և դրա համար էլ պարսպով չպաշտպանված կողմից[1]: Որպես հետևանք այս ջախջախման՝ Կրեսոսը գերվեց, Լյուդիական թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն անցավ Արիական Եռադաշինքին:

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 81-84; Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 7, գլուխ 2; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 4; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 6, մաս 3; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 3, գլուխ 8, մաս 3; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 6; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 7; «Բաբելոնյան ժամանակագրություն»-ից; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 4, գլուխ 21; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7:

Վերջինի իրադարձություններից արդյունքում Աքեմենյանների տերության սահմաններում հայտնվեց նաև գործնականում ողջ Փոքր Ասիան, ինչից հետո ի վերջո օրակարգ մտավ արդեն պատերազմը նաև Բաբելոնի թագավորության դեմ: Մինչ այդ, սակայն, ցանկանալով վերջնականապես ամրապնդել սեփական դիրքերը Իրանական լեռնաշխարհում և, հատկապես, վերջինիս արևելյան հատվածում, մ.թ.ա. մոտ 543 թվականից մինչև մ.թ.ա. 540 թվականը Արիական Եռադաշինքի բանակն իրեն ենթարկեցրեց Մարգիանան, Բակտրիան, Խորեզեմը, Ղանդահարն ու Սատագիդիան[1]: Հաջողությամբ ավարտելով նաև այս ձեռնարկումը՝ Աքեմենյանների տերության ղեկավար կազմը ի վերջո հասցրեց երկար նախապատրաստվող հարվածը Միջագետքին:

Մ.թ.ա. 539 թվականի օգոստոսին Օպիս ամրոցի ճ-մ-ում (Միջագետք, Բաբելոնից հյուսիս) Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (218.000, այդ թվում 100.000 պարսիկներ, որոնցից 30.000 հեծյալ, 70.000 մարեր, որոնցից 10.000 հեծյալ, 100 մանգաղակիր մարտակառքեր) և նրա կազմում Տիգրան Ի-ի ու Գոբրյուասի գլխավորությամբ գործող Արմենիի թագավորության (48.000, որից 8.000 հեծյալ) միացյալ բանակը, գետանցելով Եփրատը և, արևմուտքից թևանցելով Մարական պարիսպը, որը սրանից հազարամյակ ու կես առաջ կառուցել էր Իբբի-Սուենը և այժմ վերակառուցել էր Բաբելոնի թագավորության տիրակալը, թիկունքային հարվածով հաղթեց Նաբոնիդ արքայի գլխավորությամբ ամուր պաշտպանական դիրքեր գրաված Բաբելոնի թագավորության բանակին (մոտ 120.000)[2]: Այսպիսով՝ երկար սպասված ընդհարումը Արիական Եռադաշինքի, ինչպես նաև սեմիտական աշխարհի հնարավորինս բոլոր ուժերն իրար բերած Բաբելոնի թագավորության միջև ավարտվեց արիական աշխարհի վճռական հաղթանակով: Այս պարտությունը Բաբելոնի թագավորության ռազմական մեքենայի համար ամենակործանարար հետևանքներն ունեցավ, ընդ որում վերջինս այդպես էլ չհասցրեց վերականգնվել:

Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 538 թվականի հոկտեմբերի 10-ին Գոբրյուասի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 190.000, այդ թվում մարեր) ու նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 40.000) միացյալ բանակը Վալտազար արքայազնի գլխավորած Բաբելոնի թագավորության բանակից (մոտ 10.000) պաշարեց Բաբելոնը և նույն թվականի հոկտեմբերի 12-ին էլ գրավեց այն՝ քաղաք մտնելով Եփրատի ցամաքեցված հունով: Արդյունքում՝ Վալտազարը սպանվեց, Բաբելոնի թագավորության արքա Նաբոնիդը դադարեցրեց դիմադրությունը և, գերի հանձնվելով ու աքսորվելով Ղահրամանիա, հենց այնտեղ էլ վերջացրեց իր օրերը, Բաբելոնի թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ անցավ Աքեմենյանների տերությանը[3]: Այսպիսով՝ Կյուրոս II Մեծը ոչնչացրեց իր առաջնային հակառակորդներից նաև վերջինին, ինչի արդյունքում Միջագետքն ու Ասորիքը ևս հայտնվեցին Աքեմենյանների տերության գերիշխանության ներքո: Մինչ Արիական Եռադաշինքը մարտնչում էր Միջագետքում, սակայն, օգտվելով Փոքր Ասիայում Աքեմենյանների տերության իշխանության դեռևս թույլ բնույթից, արևելյան ուղղությամբ իրենց հերթին լուրջ առաջխաղացում իրականացրին Բալկանյան թերակղզուց Փոքր Ասիա անցած թրակիացիները:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

538 հոկտեմբեր - նոյեմբեր – ***<u>Արգնի ճ-մ</u>***[4]

---

[1] Պլինոս Ավագ «Բնական պատմություն», գիրք 6, գլուխ 92; Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը» գիրք 6, գլուխ 24, մաս 3; Բերոս «Բաբելոնի պատմություն»:

[2] «Բաբելոնյան ժամանակագրություն»; Բերոս «Բաբելոնի պատմություն»; Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապիոնի», խոսք 1:

[3] Քսենոֆոն «Կյուրոպեդիա», գիրք 7, գլուխ 2; Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 189-191; Բերոս «Բաբելոնի պատմություն»; Հովսեփ Ֆլավիոս «Ընդդեմ Ապիոնի», խոսք 1; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 10, գլուխ 11; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 6; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 4; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 6; «Բաբելոնյան ժամանակագրություն»; Կյուրոս II Մեծին վերագրվող արձանագրություններից:

[4] Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 4:

Կապադովկիայով առաջխաղացած թրակիացիները (120.000) մոտեցան քաղաքի մոտ մարտակարգ ընդունած Քսերեքս և Արշեզ Արծրունիների գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 100.000, այդ թվում մարեր) ու նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 50.000) միացյալ բանակի առաջապահին:

I փուլ – Հոկտեմբերից մինչև նոյեմբեր արիական բանակի առաջապահը համառ դիրքային մարտերում հետ մղեց հակառակորդի բանակի բոլոր գրոհները, ընդ որում մարտերում աչքի ընկան Քսերեքս և Արշեզ Արծրունիները:

II փուլ – Նոյեմբերին մարտադաշտ հասան արիական բանակի հիմնական ուժերը և վճռական հարձակումով գլխովին ջախջախեցին հակառակորդի բանակին, ընդ որում այս անգամ ևս մարտերում աչքի ընկան Քսերեքս ու Արշեզ Արծրունիները:

Հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցները՝ մոտ 8.000, թշնամին՝ մոտ 80.000 զինվոր[1]:

Միջագետքին տիրելուց հետո Կյուրոս II Մեծը վերջնականապես կայունացրեց սեփական տերության դրությունը, որն իր սահմաններով այժմ, ըստ էության, կրկնում էր Արիական տերությանը և որին, սակայն, բաժին հասավ նաև վերջինիս առջև ծառացած աշխարհաքաղաքական խնդիրները, ի դեմս առաջխաղացման դեպի Եգիպտոսի, Հնդկաստանի և Միջին Ասիայի ուղղությունների: Արդյունքում, մի քանի տարի ծախսելով ներքին խնդիրները կարգավորելու վրա, Աքեմենյանների տերության ամենազոր տիրակալը հերթական պատերազմը սկսեց՝ այս անգամ որպես հարվածի թիրախ ունենալով Մասագետական թագավորությանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

530 հուլիս – ***Ամու-Դարյա գետի ճ-մ*** (Միջին Ասիա, Մավերնահր)[2]

Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (200.000) և նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 40.000) միացյալ բանակը արշավանք սկսեց Մասագետական թագավորության դեմ՝ ի վերջո գետանցելով Ամու-Դարյան: Տեղեկանալով այդ մասին՝ արքայազն Սպարգապիսի գլխավորած Մասագետական թագավորության բանակը (մոտ 50.000) շարժվեց հակառակորդի բանակին ընդառաջ:

I փուլ – Մասագետական թագավորության բանակը հաղթեց արիական բանակի առաջապահին:

II փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ Մասագետական թագավորության բանակը ներխուժեց արիական հիմնական բանակի կողմից դիտավորյալ լքված ճամբար, սակայն դրան հաջողված խնջույքում հաղթողները տրվեցին որպես ավար ձեռք գցած ոգելից խմիչքներին և գրեթե ողջ կազմով հարբեցին: Արդյունքում՝ հենց նույն գիշեր էլ անակնկալ հարձակման անցած արիական հիմնական բանակը գլխովին ջախջախեց Մասագետական թագավորության

[1] Այս իրադարձությունների վերաբերյալ առկա է թերահավատ մոտեցում, որը հիմնավորվում է նրանով, որ գալաթացիները իրոք այդ ժամանակ դեռևս մուտք չէին գործել Փոքր Ասիա: Իմ կարծիքով, սակայն, դա իրականում ոչ թե գալաթացիների, այլ թրակիացիների բանակն էր, որը Բաբելոնի թագավորության դեմ պատերազմի ամենաեռուն պահին հոնիացիների դրդումով ներխուժել էր Փոքր Ասիա և հասել Աղձնիք, իսկ աղբյուրները սկզբնապես հիշատակվող թրակիացիներին, էապես չտարբերակելով, վերանվանել են որպես հետագայում մոտավորապես նույն տարածքում հաստատված և նույն երթուղով մ.թ.ա. III դարի առաջին քառորդում Փոքր Ասիա ներխուժած գալաթացիներ: Սա, սակայն, ընդամենը ենթադրություն է և ես այստեղ տեղ եմ թողնում այլ մեկնաբանությունների համար: Ամեն դեպքում պարզ է սակայն, որ Թովմա Արծրունու տվյալները կասկածի ենթարկելու որևէ այլ հիմք չկա:

[2] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 201, 205, 206, 208, 211; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 6; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 8; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 8, մաս 5; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 8, գլուխ 28; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 5; Օրոսիոս «Ընդդեմ հեթանոսների», գիրք 2, գլուխ 7; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին», գլուխ 62; Սամվել Անեցի «Ժամանակագրություն:

բանակին:

Հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցները՝ մոտ 6.000, թշնամին՝ մոտ 45.000 զինվոր: Սպարգապիսը գերվեց և ինքնասպան եղավ:

Այսպիսով՝ Կյուրոս II Մեծի ռազմական մեքենան թվում էր, թե իր սովորական հաղթանակներից մեկը տարավ, սակայն իրադարձություններն այս անգամ զարգանալու էին լիովին այլ մի սցենարով: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 530 թվականի օգոստոսի սկզբին Դահաս հովտի ճ-մ-ում (Միջին Ասիա, Մավերնահր) Թոմարիս թագուհու գլխավորած Մասագետական թագավորության բանակը (մոտ 200.000) համառ և արյունահեղ մարտում ծանր պարտության մատնեց Կյուրոս II Մեծի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 195.000) ու նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 39.000) միացյալ բանակին, ընդ որում մարտում ընկավ նաև Կյուրոս II Մեծը[1]: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Կյուրոս II Մեծի ինչ-որ տեղ անակնկալ մահը իր հետ ռազմաքաղաքական կոնկրետ հետևանքներ այդուհանդերձ չբերեց, քանի որ զգալի կորուստներ կրած Մասագետական թագավորությունն ինքը ևս որևէ կերպ չզարգացրեց առաջխաղացումը Աքեմենյանների հիմնական տիրույթների ուղղությամբ, իսկ սեփական կառավարման երեք տասնամյակների ընթացքում Կյուրոս II Մեծի ստեղծած ռազմավարչական համակարգն էլ դիմացավ իր ստեղծողի մահվանը, թեև կորուստներն, ինչ խոսք, անչափ զգալի էին:

Վերջին տարիներին Աքեմենյանների տերության գրանցած հսկայական հաջողությունները, անկախ նույնիսկ մ.թ.ա. 530 թ-ի աղետից, իրենց հետ նաև էթնոմշակութային բնույթի լուրջ փոփոխություններ բերեցին, քանզի սրանով, ըստ էության, ավարտին հասցվեց արդեն հազար տարուց ավել ընթացող արիական տարրի պայքարը սեմիտական տարրի դեմ, որի որոշակի խմբեր, թեև բնականաբար պահպանվեցին Միջագետքում և Ասորիքում, սակայն որը, մեծ հաշվով, երկար ժամանակով հետ մղվեց ու կրկին պարփակվեց Արաբական թերակղզում: Այսպիսով՝ սեմիտական աշխարհի հերթական հզոր մակընթացությունը, որը սկսվել էր դեռևս Արիական տերության անկումից հետո, փոխարինվեց արիական աշխարհի պատասխան մակընթացությամբ, ի դեմս Աքեմենյանների տերության հզոր առաջխաղացման: Այս առումով հարկ է նշել, որ դեպքերի զարգացմանը նպաստեց նաև երկրագնդի միջին ջերմաստիճանի շարունակվող անկումը, ինչի արդյունքում մի կողմից բնակության պայմանները Արաբական թերակղզում ավելի դրական տեսք ստացան և այստեղ գործող սեմիտական տարրը մեծապես զրկվեց այն լքելու ձգտումից, իսկ մյուս կողմից էլ շարունակվեց շարժը Մեծ տափաստանի հյուսիսից դեպի հարավ, ընդ որում հիշատակված շարժն իրականացնող նույն այդ ցեղերն ու ժողովուրդները ավելի ուժեղացրին Աքեմենյանների տերությունը, որին վերջին հաշվով հաջողվեց մարդկային այս խմբերի հետ խաղաղ և փոխշահավետ համագործակցություն ապահովել:

Կյուրոս II Մեծի մահից հետո Աքեմենյանների տերության գահին նրան հաջորդեց իր որդին, ի դեմս Կամբիս II-ի (մ.թ.ա. 530-522), որը հոր լիակատար հակապատկերն էր: Իրոք, եթե Կյուրոս II Մեծը ձգտում էր գրավել ամենից առաջ մարդկանց հենց սրտերը և իր ժամանակակիցների մոտ ընկալվում էր որպես յուրօրինակ մի «մեծ հայր», ապա երեսնամյա Կամբիս II-ը արդեն հենց սկզբից էլ սեփական հպատակների նկատմամբ սկսեց անհանդուրժող ու ինքնակամ վարքագիծ դրսևորել, ընդ որում տարիների հետ նրա բնավորության այս հատկանիշը միայն խորացավ՝ ի վերջո վերածվելով խստասիրտ մի դաժանության: Արդյունքում՝ Կամբիս II-ը ոտք դրեց արևելյան տիրակալների

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 1, գլուխ 212-214; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 7, 8; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 8; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 2, գլուխ 44; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 8, մաս 6; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 5; Բերոս «Բաբելոնի պատմություն»; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 8, գլուխ 28; Օրոսիոս «Ընդդեմ հեթանոսների», գիրք 2, գլուխ 7; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 6; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին», գլուխ 62; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 4, գլուխ 21; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 4:

սովորական բռնակալության ճանապարհին և, ըստ էության, վերածվեց ասիական սովորական մի բռնակալի, ինչը մեծապես զրկեց նրան նույն այն հոգեկան աջակցությունից, որը սեփական հպատակների աչքերում վայելում էր իր հայրը: Կամբիս II-ի գահակալման հենց ամենասկզբում նրա դեմ խռովություն բարձրացրեց սեփական եղբայր Բարդիան, որը իր իշխանության տակ ուներ Աքեմենյանների տերության արևելյան տարածքները, սակայն գործը լուրջ ընդհարման չհասավ և Կամբիս II-ին հաջողվեց ձերբակալել եղբորը: Արդյունքում, երկրում վերահաստատելով ներքաղաքական կայունությունը, Կամբիս II-ը ձեռնամուխ եղավ վերջին այն գործի կյանքի կոչմանը, որը չէր հասցրել կյանքի կոչել նրա հայրը՝ պատերազմին Եգիպտական թագավորության դեմ:

Մ.թ.ա. 527 թվականին Աքեմենյանների տերության հետ իրեն անչափ զգույշ պահող Եգիպտոսի փարավոն Ամասիս II-ը կնքեց իր մահկանացուն և գահին նրան հաջորդեց իր որդի Պսամատեխ III-ը (մ.թ.ա. 527-525), հենց որին էլ բաժին հասավ ծանր պատերազմը Արիական Եռադաշինքի դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 525 թվականի մայիսին Պելուզիայի ճ-մ-ում (Եգիպտոսի հյուսիս-արևելք, ծովի ափին) Կամբիս II-ի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 150.000) և նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 50.000) միացյալ բանակը հաղթեց Պսամատեխ III-ի գլխավորած Եգիպտական թագավորության բանակին (մոտ 150.000, այդ թվում հույներ)[1], երբ հաղթողները կորցրին 20.000, իսկ պարտվողները՝ 50.000 ռազմիկ, ինչից հետո, նույն թվականի մայիսին էլ պաշարելով Մեմփիսը, հունիսին գրավեց այն[2]: Պսամատեխ III-ը գերվեց և մահապատժի ենթարկվեց: Արդյունքում՝ Եգիպտական թագավորությունը ոչնչացավ, իսկ Եգիպտոսն էլ ընկավ Աքեմենյանների տերության գերիշխանության տակ: Այսպիսով, թեև հոր թողած հարակայունության ուժով, սակայն Կամբիս II-ը զգալի մի հաջողություն ապահովեց՝ իր վերջնական տեսքը տալով Աքեմենյանների տերությանը և այն վերջնականապես նմանեցնելով Արիական տերությանը: Այս տիրակալի հետագա ինքնուրույն գործողությունները, սակայն, արդեն այնքան էլ հաջող չէին: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այս կապակցությամբ ընդամենը պետք է արձանագրել, որ «*մեծացած աշխարհն*», ըստ էության, ի վերջո փաստորեն կուլ տվեց արդեն նաև փարավոնների հինավուրց պետությունը, ինչպես մինչ այդ կուլ էր տվել նույն Ասորեստանի և Բաբելոնի թագավորություններին:

Մ.թ.ա. 524 թվականի դեկտեմբերից մինչև մ.թ.ա. 523 թվականի փետրվար Կամբիս II-ի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 100.000) և նրա կազմում գործող Արմենիի թագավորության (մոտ 20.000) միացյալ բանակը ասպատակեց Եթովպիայի հյուսիսը, սակայն, ծանր կորուստներ կրելով պարենամթերքի պակասից, դժվարությամբ նահանջեց[3]: Դրանից հետո, մ.թ.ա. 523 թվականի դեկտեմբերից մինչև մ.թ.ա. 522 թվականի փետրվար Թեբեայից առաջխաղացած Կամբիս II-ի ռազմական մեքենան ոտնատակ տվեց այս անգամ արդեն Մեծ Օազիսը (Եգիպտոսի հարավ-արևմուտք), սակայն, հերթական անգամ ծանր կորուստներ կրելով այս անգամ արդեն ավազային փոթորիկներից, կրկին դժվարությամբ նահանջեց[4]: Այս առումով հարկ է նշել, որ վերջին անհաջողությունները ծանր գին արժեցան Աքեմենյանների տերության ռազմական մեքենային և այն առժամանակ դադարեցրեց ակտիվությունը: Իր հերթին հարկ է նշել նաև, որ նույն այդ անհաջողությունները խիստ բացասական արձագանք ունեցան նաև Կամբիս II-ի բնավորության վրա, որը վերջնականապես տրվեց դաժանությանը և, իրականացնելով մի շարք մասսայական մահապատիժներ, ի վերջո գաղտնի կերպով սպանել տվեց նաև իր հետ Եգիպտոսում գտնվող սեփական եղբայր Բարդիային:

---

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 9-11; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 9; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 9; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 1, գլուխ 68, գիրք 10, գլուխ 14; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 1, գլուխ 8; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 8; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 51:

[2] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 1; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 51:

[3] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 25:

[4] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 25, 26:

Կամբիս II-ի անհավասարակշիռ և մեծապես անհասկանալի կառավարումը, ինչպես նաև հատկապես այն հանգամանքը, որ վերջինս արդեն մի քանի տարի էր, որ գտնվում էր Եգիպտոսում, Աքեմենյանների տերության կենտրոնական շրջաններում ապստամբական տրամադրություններ ստեղծեցին, որոնք պայթեցին մ.թ.ա. արդեն 522 թվականի մարտի առաջին կեսին: Ապստամբների գլուխ կանգնած էր ազգությամբ մար մոգ Գաումատան, որը, օգտվելով իր և սպանված Բարդիայի արտաքին նմանությունից, իրեն հռչակեց որպես մահից հրաշքով փրկված Բարդիա և բացահայտ պայքար սկսեց Կամբիս II-ի դեմ: Իր հերթին Կամբիս II-ը, ի վերջո, կարծես թե, գիտակցելով, թե իր անխոհեմ կառավարումը ինչ խնդիրներ է առաջացրել սեփական տերության համար, արագորեն հավաքեց ձեռքի տակ գտնվող բանակային ուժերը և պատրաստվեց վերադառնալ Աքեմենյանների տերության կենտրոնական շրջաններ: Այս երթարշավի հենց ամենասկզբում էլ, սակայն, Կամբիս II-ը պատյանի ներքևի մասը կորցրած սեփական դաշույնով, որը, հնարավոր է, դավադիրները նախապես թունավորել էին, ձի հեծնելիս քերծեց ոտքը, ինչից հետո վերքն արագորեն բարդացում տվեց և մ.թ.ա. 522 թվականի ապրիլի վերջին Աքեմենյանների տերության գործող արքան, գտնվելով դեռևս Դամասկոսում, կնքեց իր մահկանացուն:

Կամբիս II-ի մահից հետո տրամաբանական էր սպասել, որ, օգտվելով իրեն, կարծես թե, որպես նվեր բաժին հասած այս հանգամանքից, գահի վրա վերջնականապես կամրանա որպես Բարդիա ներկայացրող Գաումատան (մ.թ.ա. 522): Ամեն ինչ, թերևս, այդպես էլ կլիներ, եթե նոր տիրակալը ձեռք չզարկեր սոցիալական սխալ մի քաղաքականության՝ փորձ կատարելով պետության կառավարման հարցում առաջնությունը տալ մարերին և կրկին հետ մղել պարսիկներին՝ ամեն ինչից զատ ու ամենից առաջ նաև տերության կառավարման կենտրոնը Պարսքից տեղափոխելով Մարաստան: Արդյունքում՝ մ.թ.ա. 522 թվականի սեպտեմբերին Աքեմենյան տերության յոթ առաջատար իշխանական տների ներկայացուցիչներն, ի դեմս Դարեհ Աքեմենյանի, Օտանի, Վինդաֆարայի, Գոբրյուասի, Հիդարնեսի, Մեգաբազեսի և Ասպատի, դավադրություն կազմեցին ու սպանեցին Գաումատային: Գահից հեռացնելով մարերի ներկայացուցչին՝ դավադիրները Աքեմենյանների տերության արքա հռչակեցին Դարեհ Աքեմենյանին՝ Դարեհ I-ին (մ.թ.ա. 522-486), որը Կամբիս II-ի պապի պապի թոռան թոռն էր և սրանից զատ, իր իրավունքները գահի նկատմամբ վերջնականապես ամրապնդելու մտայնությամբ, ամուսնացել էր Կյուրոս II Մեծի աղջիկ Աթոսայի հետ: Դարեհ I-ը ուժեղ, վճռական, եռանդուն, զորավարական և դիվանագիտական առաջնակարգ ունակություններով ու կամային հսկայական հատկանիշներով օժտված մի անձնավորություն էր, որն ինքը, թերևս, ավելի էր արժանի ժառանգել Կյուրոս II Մեծին, քան ինքնահավան և դատարկ Կամբիս II-ը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Աքեմենյանների տերությունը Դարեհ I-ին բաժին էր հասել ծայրահեղ ծանր մի վիճակում, երբ գործնականում իր ողջ տարածության մեջ այն պատված էր ապստամբություններով՝ ըստ էության գտնվելով քայքայման եզրին: Չնայած սրան, սակայն, Դարեհ I-ը, հենվելով պարսկական տարրի սոցիալական լայն աջակցության վրա ու օգտվելով այն հանգամանքից, որ ապստամբները որևէ կերպ չեն համակարգում սեփական գործողությունները և, որպես կանոն, հետևում են պասիվ ռազմավարության, ի վերջո հաջողության հասավ:

Մինչ Աքեմենյանների տերությունը սուզվում էր անիշխանության քաոսի մեջ, մ.թ.ա. 522 թվականի ամռանը Տիգրան I-ի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 120.000) ասպատակեց Կապադովկիան և նահանջեց[1], ինչից կարճ ժամանակ անց էլ հենց Տիգրան I-ը կնքեց իր մահկանացուն: Արմենիի թագավորության ղեկին Տիգրան I-ին հաջորդեց նրա որդի Արտաշեսը, որը, զբաղեցնելով գահը, հայտնի դարձավ որպես Վահագն Վիշապաքաղ (մ.թ.ա. 522-493): Հայոց նոր արքան աչքի էր ընկնում զորավարական առաջնակարգ ունակություններով, անձնական մեծ քաջությամբ,

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 24:

խիզախությամբ և ֆիզիկական հսկայական ուժով, ինչը հայերին շատ էր անհրաժեշտ մոտական բուռն իրադարձություններում: Իրոք, շատ շուտով հետևեց արևմուտքից եկած պատասխան հարվածը, սակայն մ.թ.ա. 522 թվականի աշնանը Կապադովկիայի ճ-մ-ում Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 100.000) հաղթեց հոնիական առաջխաղացած բանակին (մոտ 100.000)[1]: Նույն այս ժամանակ, սակայն, Աքեմենյանների տերության ողջ տարածքում արդեն ընթանում էին մի շարք ապստամբություններ, որոնք դրանից հետո շարունակվեցին երեք տարի և որոնց իրենց մասնակցությունը բերեցին նաև հայերը:

Մ.թ.ա. 522 թվականի սեպտեմբերին ապստամբեցին Պարսքի տարածքում դեռևս իրենց գոյությունը պահպանող դրավիդյանները, սակայն Դարեհ Ի-ի ուղարկած բանակներից մեկը պարտության մատնեց նրանց: Դրանից հետո ապստամբեց Միջագետքի հիմնականում սեմիտական բնակչությունը և փորձ կատարեց վերականգնել Բաբելոնի թագավորությունը, սակայն մ.թ.ա. 522 թվականի դեկտեմբերի 13-ին և 18-ին իրար հաջորդած երկու ճակատամարտերում Դարեհ Ի-ը անձամբ ծանր պարտության մատնեց սեմիտներին: Չնայած սրան, սակայն, ապստամբական շարժումները շուտով առավել ծավալվեցին և ընդգրկեցին գործնականում արդեն ողջ Իրանական լեռնաշխարհը: Ստեղծված ծանր պայմաններում Աքեմենյանների տիրակալը ապստամբների դեմ ուղարկեց իր զորավարներին, սակայն նույն այս ժամանակ սկիզբ առան ռազմական գործողությունները նաև Արմենիի թագավորության դեմ: Սկսվեց Հայ-Պարսկական Ի պատերազմը (մ.թ.ա. 521-520):

Գլուխ 6
Հայ-Պարսկական Ի պատերազմը

Մ.թ.ա. 521 թվականի ապրիլի 19-ին Զուզա գյուղի ճ-մ-ում (Հայոց Միջագետք, Արվաստան գավառ, Բզաբդե ամրոցի մոտ) Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակի առաջապահը (մոտ 10.000) համառ մարտում ընդհարվեց Դադարշիս Հայի գլխավորությամբ առաջխաղացած Աքեմենյան տերության բանակի (մոտ 20.000) հետ և, մշտական հարվածի տակ պահելով վերջինիս, 10 օրում նահանջեց ու ամրացավ Տիգրա ամրոցի շրջակայքում[2]: Դրանից հետո մ.թ.ա. 521 թվականի ապրիլի 29-ին Տիգրա ամրոցի ճ-մ-ում (Աղձնիք, Արևմտյան Տիգրիսի ափ) Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 50.000) կրկին հաղթանակ տարավ Դադարշիսի գլխավորած Աքեմենյան տերության համալրված բանակի (մոտ 70.000) նկատմամբ և շարունակեց նահանջը՝ մշտական հարվածի տակ պահելով թշնամուն[3]: Եվ վերջապես մ.թ.ա. 521 թվականի մայիսի 20-ին Ուհյամա բերդի ճ-մ-ում (= Էթիլ), (= Անգղ) (Աղձնիք, Անգեղ-տուն գավառ, Տիգրիս գետի ափին) Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 40.000) ջախջախեց Դադարշիսի գլխավորած Աքեմենյան տերության բանակին (մոտ 60.000)[4]:

Այս առումով հարկ է նշել, որ, ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի, Դարեհ Ի-ի դրությունն անհամեմատ ավելի լավ էր Իրանական լեռնաշխարհի պարագայում և մ.թ.ա. 521 թվականի երկրորդ կեսի վիճակով, թեև ծանր մարտերի գնով, սակայն ապստամբություններն այստեղ հիմնականում արդեն ճնշվել էին: Մ.թ.ա. 521 թվականի աշնանը հերթական անգամ ապստամբեց Միջագետքը, բայց նույն թվականի նոյեմբերին տեղի ունեցած Բաբելոնի ճ-մ-ում Վինդաֆարայի գլխավորած Աքեմենյան տերության

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 14; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 29; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 4; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 10; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:
[2] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:
[3] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:
[4] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:

բանակը (մոտ 7.000) հաղթեց Արախա Հայի գլխավորությամբ գործող ապստամբած Բաբելոնի աշխարհազորին (297) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 50): Արախան գերվեց և սպանվեց, իսկ ապստամբների մնացորդները նահանջեցին դեպի հյուսիս[1]: Իր հերթին, մ.թ.ա. 521 թվականի դեկտեմբերի 10-ին Մարգիանայի ճ-մ-ում (Միջին Ասիայի հարավ-արևմուտք) Դադարշիս Հայի գլխավորած Աքեմենյան տերության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) հաղթեցին ապստամբած Մարգիանայի աշխարհազորին (մոտ 7.000)[2], ինչից հետո իրավիճակը Աքեմենյանների տերության արևելքում ևս զգալիորեն հանդարտվեց, իսկ այս պայմաններում առաջնայինը դառնում էր պատերազմն արդեն Արմենիի թագավորության դեմ:

Մ.թ.ա. 520 թվականի հունվարի 18-ին Իզալա ամրոցի ճ-մ-ում Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Վահումիսայի գլխավորությամբ առաջխաղացած Աքեմենյան տերության բանակին (մոտ 70.000)[3], որից հետո, սակայն, հակառակորդը համալրեց ուժերը և պատրաստվեց նոր հարվածի: Արդյունքում՝ մ.թ.ա. 520 թվականի հունիսի 1-ին Ավդիտյարայի ճ-մ-ում (Մեծ Զաբ գետի հովտում) Վահումիսայի գլխավորած Աքեմենյան տերության համալրված բանակը (մոտ 80.000) համառ մարտում հաղթեց Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության բանակին (մոտ 40.000)[4]: Դրանից հետո հակառակորդը փորձ կատարեց շարունակել առաջխաղացումը դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններ, սակայն մ.թ.ա. 520 թվականի հուլիսի Կորճայքի ճ-մ-ում[5] Վահագն Վիշապաքաղ արքայի գլխավորած Արմենիի թագավորության համալրված բանակը (մոտ 50.000) լեռնային մարտում ծանր պարտության մատնեց Վահումիսայի գլխավորած Աքեմենյան տերության համալրում ստացած և առաջխաղացում իրականացրած բանակին (120.000)[6]: Արդյունքում՝ Արմենիի թագավորության հետ հաշտություն կնքվեց և պատերազմական գործողություններն իրենց վերջը գտան:

Որպես ընդհանուր հետևանք այս ամենի, մ.թ.ա. 518 թվականի առաջին կեսի վիճակով Աքեմենյանների տերության տարածքում մղվող մարտական գործողություններն, ըստ էության, արդեն դադարել էին և վիճակը կայունացել էր, ընդ որում ոչ միայն վերականգնվեց Աքեմենյանների գերիշխանությունը նաև Եգիպտոսում, այլև Քուշի թագավորությունը և Կարթագենի հանրապետությունը ևս հայտնվեցին վերջինիս ազդեցության ոլորտում: Այս առումով հարկ է նշել, որ հաջողությունը զգալի էր նաև Արևելքում, որտեղ Աքեմենյանների տերության ազդեցության ոլորտում հայտնվեց Մասագետական թագավորությունը: Միաժամանակ այնուհանդերձ հարկ է ավելացնել նաև, որ հսկայական էին նաև Աքեմենյանների ռազմական մեքենայի կրած կորուստները, ինչի չափը պատկերացնելու համար նշենք, որ այս ամենի արդյունքում միայն ապստամբները կորցրին մոտ 150.000 ռազմիկ:

Կայունացնելով սեփական տերության ներքին դրությունը՝ Դարեհ Ի-ը անմիջապես էլ ձեռնամուխ եղավ Աքեմենյանների տերության վարչատարածքային նոր բաժանման գործին, ինչի արդյունքում նախկին ժառանգական իշխանությունների փոխարեն ստեղծվեցին սատրապություններ, իսկ տերության ներքին ամրությունն էլ մեծացավ: Ինչ

---

[1] «Բեհիստունյան արձանագրություն»-ից; Հերոդոտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 150-159; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 3, գլուխ 3, մաս 4:

[2] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:

[3] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:

[4] «Բեհիստունյան արձանագրություն»-ից:

[5] Իմ կարծիքով, թեև այս հաղորդման մեջ պարսկական բանակի պարտության մաս շտաբը չափազանցված է, սակայն տեղեկությունն ինքնին արտացոլում է իրական փաստը, որը ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել Հայ-Պարսկական Ի պատերազմի վերջում, սակայն գոռոզ Դարեհ Ի-ը «մոռացել է» այն մտցնել «Բեհիստունյան արձանագրության» մեջ: Ըստ երևույթին պարսկական բանակը փորձել է զարգացնել մ.թ.ա. 520 թ. հունիսի 1-ի Ավդիտյարայի ճակատամարտում ձեռք բերված հաջողությունը և առաջխաղացում իրականացնել դեպի Հայկական թագավորության կենտրոնական շրջաններ, սակայն ծանր պարտություն է կրել, որից հետո նոր կնքվել է հաշտություն:

[6] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 3, գիրք 5:

վերաբերում է Հայաստանին, ապա այն, ըստ էության, բաժանվեց երեք մասի:

Արդյունքում՝ Արմենիի թագավորությունը սկսեց կոչվել Մեծ Հայքի թագավորություն, որն իր մեջ ընդգրկում էր պատմական Հայաստանի 14 նահանգներ և 2 նահանգների կեսերը: Իր հերթին Փոքր Հայքը, Հայոց Միջագետքի արևմտյան մասը և Անդրեփրատյան Ծոփքը, թեև պահպանեցին լայն ներքին ինքնավարությունը, բայց այնուհանդերձ ստացան սատրապության կարգավիճակ ու Հիդարնյանների տոհմի ժառանգական գլխավորությամբ կազմեցին Աքեմենյանների տերության XIII սատրապությունը: Եվ վերջապես Կիլիկիան, որտեղ պահպանվեց տեղի Սիենիսների ժառանգական կառավարումը, կազմեց Աքեմենյան տերության IV սատրապությունը, որտեղ իր իշխանությունը պահպանեց Սիենիսը (մ.թ.ա. մոտ 540-500), իսկ նրան էլ հաջորդեցին կրկին Սիենիսը (մ.թ.ա. մոտ 500-460) և Քսենոգորը (մ.թ.ա. մոտ 460-420):

Գլուխ 7
Հույն-Պարսկական I պատերազմը

Մ.թ.ա. 517 թվականին Դարեհ I-ը մի մեծ արշավանք ձեռնարկեց արևելյան ուղղությամբ և իր տերության կազմում ընդգրկեց Սինդը՝ դուրս գալով Ինդոս գետի հովիտ: Ավելի արևելք, սակայն, վերջինս շարժվել ի վիճակի չեղավ և այս մասով Աքեմենյանների տերությունը զիջեց Արիական տերությանը: Դրանից հետո, նպատակ դնելով Մերձսևածովյան և Նախակովկասյան տափաստանների հետ միասին տիրել նաև Բալկանյան թերակղզուն, ռազմաշունչ Դարեհ I-ը սկսեց արշավանք նախապատրաստել Սկյութական թագավորության ուղղությամբ:

Որպես հետևանք նպատակամղված այս գործունեության՝ մ.թ.ա. արդեն 512 թվականի սկզբի վիճակով Աքեմենյանների տերության գերիշխանության տակ էր հայտնվել Թրակիան, որն էլ հարմար ցատկահարթակ հանդիսացավ սկյութների դեմ ռազմական գործողություններ սկսելու համար: Արդյունքում՝ մ.թ.ա. 512 թվականի ամռանը Դարեհ I-ի գլխավորությամբ Թրակիայից առաջխաղացած Աքեմենյան տերության (մոտ 300.000) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 50.000) միացյալ բանակը ասպատակեց Մերձսևածովյան ու Նախակովկասյան տափաստանները, սակայն, ենթարկվելով Սկյութական թագավորության բանակի (մոտ 150.000) անկանոն հարվածներին, ի վերջո նահանջեց՝ կորցնելով 80.000 զինվոր[1]: Անհաջողությամբ ավարտված այս ռազմագործողությունից հետո Դարեհ I-ը երկար ժամանակով դադարեցրեց արտաքին ռազմաքաղաքական ակտիվությունը և, կարծես ըմբռնած այն հանգամանքը, որ Աքեմենյանների տերությունը հասել է իր հնարավորությունների գագաթնակետին, ուշադրությունը կենտրոնացրեց ներքին խնդիրների վրա: Մեկ տասնամյակ անց, սակայն, Դարեհ I-ը ստիպված եղավ կրկին պատերազմել:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ, ավանդականորեն թույլ իշխանություն ունենալով հոնիական քաղաքների նկատմամբ, Դարեհ I-ը աստիճանաբար սկսեց աջակցել այստեղ իշխող բռնակալներին, որոնք, բնականաբար աջակցություն չունենալով սեփական իշխանությունների ներսում, ստիպված էին փնտրել դրսի աջակցությունը: Այս պարագան միայն ուժեղացրեց հակապարսկական տրամադրությունները հոնիացիների շրջանում, իսկ այն հանգամանքն էլ, որ Փոքր Ասիան ավանդականորեն դեմ էր պարսկական իշխանությանը, իսկ վերջինս էլ այստեղ ի սկզբանե թույլ էր, ի վերջո գործը հասցրեց ապստամբության: Արդյունքում՝ սկիզբ առավ Հույն-Պարսկական I պատերազմը (մ.թ.ա. 499-449), որը տևեց ուղիղ կես դար և իր հետ մեծ փոփոխություններ բերեց:

Մ.թ.ա. 499 թվականին սկիզբ առավ հոնիացիների ապստամբությունը, ընդ որում մ.թ.ա. 498 թվականին ապստամբները զգալի հաջողություններ արձանագրեցին: Մ.թ.ա. 497 թվականին Դարեհ I-ի ռազմական մեքենան հաջողությունը թեքեց իր կողմը, սակայն տարվա վերջում այնուհանդերձ ծանր պարտություն կրեց: Հաջորդ երկու տարիներն անցան առանց խոշոր գործողությունների, սակայն մ.թ.ա. արդեն 494 թվականին Դարեհ I -ը վճռական հարձակման անցավ, ընդ որում ցամաքային մարտից խուսափող հոնիացիները փորձ կատարեցին դիմադրություն կազմակերպել ամենից առաջ հենց ծովի վրա:

Մ.թ.ա. 494 թվականի ամռանը, սակայն, Լադայի ծովամարտում (Փոքր Ասիայի արևմուտք, Միլեթի մոտ) Աքեմենյան տերության նավատորմը (մոտ 50.000, որից մոտ 5.000 հայ, 600 նավ, որից 60-ը Կիլիկիայից) հաղթեց հոնիական նավատորմին (մոտ 20.000, 353 նավ)՝ կորցնելով 50 նավ և ոչնչացնելով հակառակորդի 246 նավ[2]: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 493 թվականին ընկավ Միլեթը և գրավվեցին հոնիացիների բոլոր հիմնական

---

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 4, գլուխ 97-98, 102, 120-137, 139-142; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 17; Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 1; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 11; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 2, գլուխ 5; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 8:

[2] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 6, գլուխ 6-17:

քաղաքները, սակայն Աքեմենյանների տերության ու հունական աշխարհի վճռական ընդհարումը դեռևս առջևում էր: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ մ.թ.ա. 493 թվականին Վահագն Վիշապաքաղի մահից հետո Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Առավանը (մ.թ.ա. 493-475), որը շարունակեց Աքեմենյանների հետ համագործակցելու հոր քաղաքականությունը:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հունական թերակղզում և Փոքր Ասիայի արևմուտքում, իսկ որոշ չափով էլ նաև հարակից երկրամասերում, ոտքի էր կանգնում հելլենական անկրկնելի քաղաքակրթությունը, որը տիրապետում էր ուշագրավ ռազմական մի մեքենայի: Իրոք, մեծ հաշվով կրկնելով Արևելքի քաղաք-պետությունների ռազմավարչական փորձը, բայց արդյունքում զգալիորեն զարգացնելով այն և յուրօրինակ գծեր հաղորդելով վերջինիս, նույն այս ժամանակ հունական քաղաքակրթությունը ստեղծել էր բավականին հզոր ռազմական մի համակարգը, որի հիմքում, ինչպես դեռևս շումերական քաղաք-պետությունների պարագայում էր, ընկած էր քաղաքային միլիցիան: Վերջինս գործում էր դեռևս նույն Մերձավոր Արևելքում ստեղծված ֆալանգային մարտակարգի մարտավարությամբ՝ իր հիմքում ունենալով ծանր զինված հետևակայինին, որին կոչում էին հոպլիտ: Հունական խոշոր քաղաք պետությունները, օրինակ՝ Աթենքը, ունեին ավելի քան 10.000 հետևակային, որոնցից մոտ 5.000-ը կազմում էին հոպլիտները, սակայն ռազմիկների այդ քանակությունը բնականաբար քչանում էր հավասար համեմատական քաղաքի ծավալների փոքրացման, երբ ամենափոքր քաղաքները կարող էին ունենալ նույնիսկ մինչև 100 ռազմիկ: Ռազմավարչական այս մոդելից որոշակիորեն դուրս էր, թերևս, միայն Սպարտայի գերռազմականացված թագավորությունը, որն, ըստ էության, միապետություն էր, չնայած մշտապես ուներ երկու արքաներից կազմված իշխանություն, որոնցից մեկը իրականացնում էր թագավորության ներքին, իսկ մյուսը՝ արտաքին կառավարումը: Սպարտայի թագավորության միջին ռազմիկն իր մարտական հատկանիշներով, որպես կանոն, գերազանցում էր հունական այլ պետական միավորների միջին ռազմիկին, սակայն խնդիրը կայանում էր նրանում, որ Սպարտայի ռազմական մեքենան քանակապես անչափ սահմանափակ էր և հազիվ կազմում էր մոտ 6.000 ռազմիկ: Ինչ վերաբերում է հունական քաղաքակրթության ընդհանուր բանակային հնարավորություններին, ապա մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում այն կազմում էր մոտ 150.000 ռազմիկ՝ այսպիսով, ըստ էության, գրեթե եռակի զիջելով Աքեմենյանների տերության ռազմական հնարավորություններին: Աքեմենյանների տերության ռազմական մեքենայի հետ ապագա ընդհարումում քանակական պակասը, սակայն, զգալիորեն փոխհատուցվում էր այն բանի հաշվին, որ սեփական երկրի համար մարտնչող հույները, որպես կանոն, ավելի մոտիվացված էին, իսկ մատակարարման հիմնական կենտրոններից հեռու գտնվող Աքեմենյանների տերության ռազմական մեքենան էլ, որը ստիպված էր մարտնչել ծովացամաքային յուրօրինակ խառնուրդ ներկայացնող իր համար խորթ մի թատերաբեմում, արդյունքում ավելի անբարենպաստ վիճակում էր հայտնվում: Ռազմավարչական մակարդակում, սակայն, Աքեմենյանների տերության օգտին էր այնուհանդերձ ավելի կենտրոնացված և հստակ կառավարումը, իսկ հույներին էլ լրջորեն խանգարում էր ավանդական պառակտվածությունը, մրցակցությունը ու նույնիսկ թշնամանքը առանձին պետական միավորների միջև: Այսպես թե, այնպես, սակայն հոնիացիների ապստամբության ճնշումից հետո գրեթե անմիջապես էլ Դարեհ I-ի ռազմական մեքենան հարձակման անցավ բուն Հունաստանի ուղղությամբ:

Մ.թ.ա. 492 թվականի գարնանը Մարդոնիոսի գլխավորած Աքեմենյան տերության (մոտ 130.000, որից մոտ 10.000 հայ, 600 նավ, որից 60-ը Կիլիկիայից) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 20.000) միացյալ բանակը ասպատակեց Թրակիան ու Հյուսիս-արևելյան Հունաստանը, սակայն, ծանր կորուստներ կրելով բրիգների (մոտ 30.000) անկանոն հարվածներից, ինչպես նաև փոթորիկից, նահանջեց՝

ընդհանուր առմամբ կորցնելով 300 նավ և 20.000 զինվոր[1]: Մեկ տարի ծախսելով ուժերը համախմբելու վրա՝ Աքեմենյանների տերության ռազմական մեքենան նոր հարված հասցրեց և մ.թ.ա. 490 թվականի օգոստոսին Դատիսի գլխավորությամբ ծովով ներխուժած Աքեմենյան տերության (մոտ 30.000, որից մոտ 6.000 հայ, 100 նավ, որից 10-ը Կիլիկիայից) ու նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակը հունական բանակից (ընդհանուր՝ մոտ 1.000) առանց լուրջ մարտերի գրավեց Կարիարը և Էրետրեան (Հունաստան, Էվբեա կղզի)[2]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

490 սեպտեմբերի 12 – ***Մարաթոնյան դաշտի ճ-մ*** (Հունաստան, Աթենքից 42 կմ հարավ)[3]

Դատիսի գլխավորությամբ ***ծովով*** ներխուժած Աքեմենյան տերության (մոտ 25.000, որից մոտ 5.000 հայ, 600 նավ, որից մոտ 60-ը Կիլիկիայից) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 8.000) միացյալ բանակը սկսեց մոտենալ ***Աթենքին***, ընդ որում Դատիսը հույսը դրել էր հունական քաղաք-պետությունների միջև առկա ներքին սուր պայքարի, ինչպես նաև նրանցում գոյություն ունեցող պարսկամետ ուժերի գործողությունների վրա: Արդյունքում, ցանկանալով դուրս քաշել հույների հիմնական ուժերին Աթենքից և դրանով իսկ տեղի պարսկամետ ուժերին հնարավորություն տալ քաղաքում հեղաշրջում իրականացնել, ***Աթենքին*** մոտեցած Դատիսի բանակը ափհանում իրականացրեց ու մոտեցավ ***Մարաթոնյան դաշտին***:

Տեղեկանալով այդ մասին՝ Աթենքի հանրապետության բանակը (11.000, որից 5.000 հոպլիտ) դուրս եկավ քաղաքից և մոտեցավ թշնամու բանակին՝ միաժամանակ, սակայն, ցանկանալով զերծ մնալ բաց դաշտում մարտի մեջ մտնել հեծելազորի հարցում վճռական առավելություն ունեցող թշնամու բանակի դեմ: Իր հերթին, ցանկանալով մինչև սպարտացիների կողմից թշնամու բանակին խոստացված օգնության տեղ հասնելը որևէ կերպ հանգուցալուծել իրավիճակը, Դատիսը որոշեց սեփական բանակը տեղաբաշխել նավերի վրա և շարժվել դեպի Աթենք՝ հույս ունենալով այս քայլով ի վերջո իր օգտին փոխել իրավիճակը քաղաքում: Որպես հետևանք այս ամենի՝ Դատիսը հրամայեց սեփական բանակին նավեր վերադառնալ: Առաջինը հրամանը կատարեց հեծելազորը, որի նահանջը ապահովում էր հետևակը:

I փուլ – Տեղեկանալով թշնամու բանակի նահանջի մասին՝ բարձունքում տեղավորված հունական բանակը ֆալանգ կազմեց և սրընթաց հարձակման անցավ հակառակորդի կենտրոնի ուղղությամբ՝ սկզբում քայլքով, իսկ հետո, որպեսզի խուսափի տևական նետահարության տակ ընկնելուց՝ արդեն վազքով: Իր հերթին, տեսնելով թշնամու բանակի հարձակումը, Դատիսը փորձեց արագորեն մարտակարգի բերել սեփական բանակը՝ կենտրոնում տեղավորելով լավագույն ուժերը: Բռնկվեց համառ մարտ, որի արդյունքում Աքեմենյանների տերության բանակը թշնամու բանակին պարտության և փախուստի մատնեց կենտրոնում, իսկ Աթենքի հանրապետության բանակը հաջողության հասավ թևերում:

II փուլ – Աթենքի հանրապետության բանակը շրջապատեց հակառակորդի կենտրոնը և գլխովին ջախջախեց այն, ընդ որում մարտում ընկավ նաև Դատիսը:

---

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 6, գլուխ 6-17:

[2] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 6, գլուխ 94-101; Պլատոն, «Երկխոսություններ» Մենեկսեն:

[3] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 6, գլուխ 9, 102-103, 107-109, 111-117; Լիսիաս «Դամբանականներ», գլուխ 21; Պլատոն «Երկխոսություններ», Մենեկսեն; Սիմոնիդես Քեոսացի «Լիրիկա»; Էսքիլես «Մահախոսական»; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն», գիրք 18; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 2, գլուխ 9; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Արիստիդես», գլուխ 5; Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 1; Պավսանիոս «Հելլադայի նկարագրությունը», գիրք 1, գլուխ 32, գիրք 7, գլուխ 4; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 2; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 8; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 2; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 6:

III փուլ – Աթենքի հանրապետության բանակը պարտության մատնեց և ցրեց իրեն դիմադրող ուժերին, որից հետո, վերականգնելով ֆալանգի խախտված դասավորությունը, փորձեց կրկնել հարվածը, սակայն այդ ընթացքում հակառակորդի բանակը հասցրեց տեղավորվել նավերում և բաց ծով դուրս գալ:

Ընդհանուր շարքից դուրս եկած 6.400 զինվորից հայերը կորցրին մոտ 1.200, դաշնակիցները՝ 5.200 զինվոր, թշնամին կորցրեց մոտ 1.000 զինվոր:

Այսպիսով՝ հունապարսկական հակամարտության առաջին փուլն ավարտվեց հունական կողմի հաջողությամբ և վերջինս, ըստ էության, կարողացավ պահել դիրքերը: Միաժամանակ, սակայն, Դարեհ Ի-ը, որն իր ծրագիրը ամենևին էլ տապալված չէր համարում, եռանդուն կերպով ձեռք զարկեց նոր հարվածի նախապատրաստման գործին: Իրոք, մ.թ.ա. 490 թվականի սեպտեմբերի 12-ի Մարաթոնյան դաշտի ճ-մ-ը, ինչքան էլ հայտնի ռազմական պատմության մեջ և ինչքան էլ բարոյական հսկայական նշանակություն ունեցած, այնուհանդերձ, զուտ ռազմական առումով, Աքեմենյանների տերության բանակի համար, թեկուզ հենց միայն իր ծավալներով, ըստ էության, ոչինչ չէր նշանակում:

Հունաստանի ուղղությամբ նոր հարված հասցնել, սակայն, պաշտոնական Շոշին խանգարեց հենց նույն այս տարիներին Եգիպտոսում սկիզբ առած ապստամբությունը, ընդ որում, այդպես էլ չհասցրած ճնշել իր կյանքի վերջին այդ անհնազանդությունը, մ.թ.ա. 486 թվականի հոկտեմբերի վերջին Դարեհ Ի-ը կնքեց իր մահկանացուն, ինչից հետո Աքեմենյանների տերության արքա հռչակվեց նրա որդի Քսերեքս Ի-ը (մ.թ.ա. 486-465): Աքեմենյանների տերության նոր տիրակալը, ի տարբերություն նախորդի, աչքի չէր ընկնում ոչ առանձնակի եռանդով, ոչ էլ ինչ-որ կամային առանձնահատուկ հատկանիշների առկայությամբ՝ իրենից, ըստ էության, ներկայացնելով, թերևս, միայն ծննդյան փաստի ուժով իր ժամանակի ամենահզոր տերություններից մեկի ղեկին հայտնված և ճակատագրի կողմից երես տրված միջակ մի անհատականություն: Երկաթյա Դարեհ Ի-ի թողած պետության հարակայուն ուժը, սակայն, դեռևս հսկայական էր, ինչն էլ թույլ տվեց Քսերեքս Ի-ին, համենայն դեպս սեփական կառավարման գոնե սկզբում, հաջողության մեջ լինել:

Մ.թ.ա. 484 թվականի հունվարին Եգիպտոսն ի վերջո խաղաղեցվեց, սակայն դրանից անմիջապես հետո հերթական ապստամբությունը բռնկվեց արդեն Միջագետքում, որը հնարավոր եղավ ճնշել միայն մ.թ.ա. 481 թվականի մարտին: Արդյունքում, կարծես ընդհանրացնելով վերջին տարիներին այս ուղղությամբ կատարված նախապատրաստական բոլոր աշխատանքները, Քսերեքս Ի-ը ի վերջո սկիզբ դրեց Հունաստանի ուղղությամբ վերջինը և վճռականը լինելու կոչված նոր հարվածին, որին վիճակված էր լինելու իրոք վճռել ամեն ինչ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

480 սեպտեմբերի 8-10 – ***Թերմոպիլեի ճ-մ*** (Միջին Հունաստանի արևելք)[1]

Քսերեքս Ի-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Աքեմենյան տերության (մոտ 400.000, որից մոտ 20.000 հայ և «Անմահներ»-ի գունդը, ինչպես նաև հյուրկաններ, դադիկներ, էֆիոպացիներ, քասպեր, սարանգներ, պակլեր, ուտիներ, մյուկեր, պարիկանիներ, արաբներ, եթովպիացիներ, լիբիացիներ, լիգեր, մարիանդիներ, ասորիներ, մառեր, սկյութներ, հոնիացիներ, հույներ, մարեր, բակտրիացիներ, սակեր, մասագետներ, հնդիկներ, պարթևներ, խորասմներ,

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 7, գլուխ 20-27, 30-37, 40-45, 54-56, 58-97, 100, 105, 108, 109, 112, 113, 115, 119, 121-123, 127, 131, 138, 175, 177, 184-187, 196, 198, 201-213, 215-220, 222-228, 233; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 2-10) Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 23; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 2, գլուխ 10, 11; Պավսանիոս «Հելլադայի նկարագրությունը», գիրք 20, գլուխ 2; Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 2, 21; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 9; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 2, մաս 13; Սիմոնիդես Քեոսացի «Լիրիկա»:

սողդեր, հնդարիներ, արեյներ, բյութանիացիներ, լյուդիացիներ, պաֆլագոնցիներ, կապադովկիացիներ, փռյուգիացիներ, մյուսիացիներ, պիսիդացիներ, կաբալիներ, տիբարեններ, մոսխեր, կոլխեր, մատիներ, մակրոններ, մոսինոյկներ և ալարոդներ, մոտ 1.300 նավ, որից 100-ը Կիլիկիայից) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 40.000) միացյալ բանակը ***Թրակիայից*** ներխուժեց ***Հյուսիսային Հունաստան*** ու շարժվեց դեպի հարավ՝ սեպտեմբերի 3-ին մոտենալով ***Թերմոպիլեի լեռնանցքին***: Տեղեկանալով այդ մասին՝ Սպարտայի թագավորության արքա Լեոնիդաս I-ի (մ.թ.ա. 491-480) գլխավորած հունական բանակը (6.000) քարե պատով ամրացրեց լեռնանցքը և փակեց հակառակորդի առաջխաղացման հետագա ճանապարհը: Արիական բանակը մոտեցավ լեռնանցքին և ճամբարեց:

I փուլ – Սեպտեմբերի 8-ի առավոտյան մարական բանակը (20.000) հարձակման անցավ, սակայն հունական բանակը համառ մարտում վերջինիս հետ շպրտեց ելման դիրքեր:

II փուլ – Օրվա կեսին հարձակման անցան կասսիացիներն և սակերը (50.000), սակայն համառ մարտից հետո նրանք ևս հետ մղվեցին:

III փուլ – Օրվա վերջում մարտի նետվեց «Անմահներ»-ի գունդը, սակայն հունական բանակը, կեղծ նահանջով քաշելով վերջինիս կիրճի խորքը և անցնելով կտրուկ հակահարձակման, զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին՝ կրկին ստիպելով նահանջել:

IV փուլ – Սեպտեմբերի 9-ի առավոտից սկսած արիական բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց, սակայն մինչև երեկո տևած համառ մարտում որևէ հաջողության չհասավ:

V փուլ – Սեպտեմբերի լույս 10-ի գիշերը, տեղեկանալով շրջանցիկ արահետի մասին, «Անմահներ»-ի ուժեղացված գունդը (20.000) ողջ գիշերը տևած երթից հետո թևանցեց պաշտպանվող հունական բանակին և նույն օրն առավոտյան սկսեց թիկունքից մոտենալ նրան, ընդ որում վերջինս գլխովին ջախջախեց հիմնական ուժերից առանձնացած ու իր առաջխաղացումը կասեցնելու համար նշանակված հունական ջոկատին (1.000), ինչից հետո բուն լեռնանցքում պաշտպանվող հույները հայտնվեցին շրջապատման վտանգի մեջ: Տեղեկանալով այդ մասին՝ հունական բանակի մեծ մասը նահանջեց, սակայն Լեոնիդաս I-ի գլխավորած ջոկատը (300) մնաց տեղում:

VI փուլ – Օրվա կեսից սկսած լիակատար շրջապատման մեջ հայտնված Լեոնիդաս I-ի ջոկատը այնուհանդերձ քաջարի դիմադրություն ցույց տվեց հարձակման անցած հակառակորդին:

VII փուլ – Օրվա վերջում Լեոնիդաս I-ի ջոկատի մնացորդները անակնկալ հակագրոհի արդյունքում ներխուժեցին հակառակորդի ճամբար, սակայն բռնկված խիստ անհավասար մարտում վերջնականապես շրջապատվեցին և ոչնչացվեցին:

Հայերը կորցրին մոտ 3.000, դաշնակիցը՝ մոտ 17.000, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

480 սեպտեմբերի 5-11 – ***Արտեմիսիոն հրվանդանի ծովամարտ*** (Հյուսիս-արևելյան Հունաստան, Էվբեա կղզուց հյուսիս, կղզու և մայրցամաքային Հունաստանի միջև)[1]

Քսերեքս I-ի ընդհանուր ղեկավարությամբ ***Թերմոպիլեի լեռնանցքի մոտակայքում*** գործող ցամաքային բանակի հետ միաժամանակ առաջխաղացում իրականացրեց նաև Աքեմենյան տերության նավատորմը՝ (մոտ 50.000, որից մոտ 5.000 հայ, 1207 նավ, այդ թվում 100 նավ Կիլիկիայից)՝ նպատակ ունենալով դուրս գալ լեռնանցքում պաշտպանվող հակառակորդի բանակի թիկունք: Ստեղծված

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 7, 190-195, գիրք 8, գլուխ 1, 2, 6-18; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 12-13; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Թեմիստոկլես», գլուխ 7-9:

պայմաններում հունական նավատորմը (280), նպատակ ունենալով խոչընդոտել հակառակորդի առաջխաղացումը, դիրքեր գրավեց Արտեմիսիոն հրվանդանում: Մինչ կողմերը կմոտենային իրար, սակայն, սեպտեմբերի 4-ին բռնկվեց և 3 օր շարունակվեց ուժեղ մի փոթորիկ, որի արդյունքում հուսալի նավահանգիստներում տեղակայված հունական նավատորմը որևէ վնաս չկրեց, սակայն, դրան հակառակ, Աքեմենյան տերության նավատորմը կորցրեց 400 նավ:

I փուլ – Սեպտեմբերի 7-ին, երբ փոթորիկը հանդարտվեց, Աքեմենյան տերության նավատորմի 15 նավեր, որոնք մոլորվել էին ծովում, պատահաբար հանդիպեցին հակառակորդի նավատորմի գերակշիռ ուժերի և գրավվեցին վերջիններիս կողմից: Նույն օրն էլ հիմնական ուժերից առանձնացվեցին 200 նավեր, որոնք Էվբեա կղզու արևելյան ափով ուղարկվեցին հարավ, որպեսզի, շրջանցելով կղզին, դուրս գան հակառակորդի թիկունք:

II փուլ – Սեպտեմբերի 8-ի առավոտյան Աքեմենյան տերության նավատորմը անցավ հարձակման, որին հունական նավատորմը պատասխանեց հակահարձակմամբ: Բռնկվեց և բավականին երկար շարունակվեց համառ մի մարտ, որի արդյունքում Աքեմենյան տերության նավատորմը նահանջեց, ընդ որում հակառակորդին հաջողվեց գրավել 30 նավ, իսկ 1 նավ էլ հակառակորդի կողմն անցավ կամավոր:

III փուլ – Սեպտեմբերի 9-ին կրկին սկիզբ առած փոթորիկը ցրեց Աքեմենյան տերության նավատորմի ուժերը, իսկ Էվբեա կղզու արևելյան ափով առաջացող տորմիղն էլ լիովին ոչնչացրեց: Օրվա երկրորդ կեսին հունական նավատորմը խոշոր համալրում (53 նավ) ստացավ, որից հետո անցավ ակտիվ գործողությունների և, հարձակվելով Կիլիկիայի նավատորմի վրա, ծանր պարտության մատնեց վերջինիս:

IV փուլ – Սեպտեմբերի 10-ին Աքեմենյան տերության նավատորմը, ի վերջո կարողանալով վերականգնել շարքերը, ողջ կազմով հարձակման անցավ: Բռնկվեց համառ մարտ, որի արդյունքում կողմերը օրվա վերջում ելման դիրքեր վերադարձան: Ստեղծված պայմաններում, սակայն, հաշվի առնելով սեփական ուժերի սպառվելը, ինչպես նաև տեղեկանալով Թերմոպիլեի ճակատամարտի ելքի մասին, հունական նավատորմը թողեց զբաղեցրած դիրքերը և սեպտեմբերի 11-ին նահանջեց հարավային ուղղությամբ:

Հայերը կորցրին մոտ 1.500 զինվոր, 10 նավ, դաշնակիցը՝ մոտ 15.000 զինվոր, 390 նավ, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր, 100 նավ:

480 սեպտեմբերի 28 – ***<u>Սալամինի ծովամարտ</u>*** (Արևելյան Հունաստան, Աթենքից մոտ 20 կմ հարավ-արևմուտք, Սալամին կղզու ափի մոտ)[1]

Քսերեքս I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Աքեմենյան տերության (մոտ 350.000, որից մոտ 18.000 հայ և «Անմահներ»-ի գունդը, ինչպես նաև հյուրկաններ, դադիկներ, էֆիոպացիներ, քասպեր, սարանգներ, պակլեր, ուտիներ, մյուկեր, պարիկանիներ, արաբներ, եթովպիացիներ, լիբիացիներ, լիգեր, մարիանդիներ, ասորիներ, մառեր, սկյութներ, հոնիացիներ, հույներ, մարեր, բակտրիացիներ, սակեր, մասագետներ, հնդիկներ, պարթևներ, խորասմներ, սողդեր, հնդարիներ, արեյներ, բյութանիացիներ, լյուդիացիներ, պաֆլագոնցիներ, կապադովկիացիներ, փռյուգիացիներ, մյուսիացիներ, պիսիդացիներ, կաբալիներ, տիբարեններ, մոսխեր, կոլխեր, մատիներ, մակրոններ, մոսինոյկներ, ալարոդներ, մոտ 600 նավ, որից 80-ը Կիլիկիայից) և նրա կազմում գործող Մեծ Հայքի

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 8, գլուխ 40-46, 48-51, 54, 64, 70, 78, 83-97; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 17-19; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Թեմիստոկլես», գլուխ 12-16; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Արիստիդես», գլուխ 8-10; Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 2, 3; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 26; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 2, մաս 14:

թագավորության (մոտ 35.000) միացյալ բանակը առանց էական դիմադրության հանդիպելու մտավ ***Աթենք*** ու այրեց այն: Միաժամանակ առաջացավ նաև ներխուժումն իրականացնող բանակի նավատորմը, որը, նպատակ ունենալով վերջնական պարտության մատնել հակառակորդի ծովային ուժերին, սեպտեմբերի 27-ի օրվա վերջում կենտրոնացրեց ուժերը և մարտակարգ ընդունած մոտեցավ կղզու մոտ տարածվող նեղ հրվանդանում իր հերթին մարտակարգ ընդունած հունական նավատորմին (մոտ 400 նավ):

I փուլ – Սեպտեմբերի 28-ի առավոտյան Աքեմենյան տերության նավատորմը անցավ հարձակման, ընդ որում, քանի որ մինչ այդ լուրեր էին տարածվել, թե հակառակորդը պատրաստվում է հանձնվել կամ փախչել, այն լիովին պատրաստ չէր մարտին: Դրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ, մտնելով նեղ հրվանդանը, Աքեմենյան տերության նավատորմի սկզբնական մարտակարգը խառնվեց և խառնաշփոթ առաջացավ: Ստեղծված պայմաններում հունական նավատորմը, դիմելով կեղծ նահանջի, այնուհետև վճռական հակահարձակման անցավ և ծանր կորուստներ պատճառեց հակառակորդի նավատորմին:

II փուլ – Օրվա երկրորդ կեսին հունական նավատորմը, շարունակելով հաջողությամբ մարտնչել, վերջնական պարտության մատնեց հակառակորդի նավատորմին, որը ծանր կորուստներով վերադարձավ ելման դիրքեր:

Հայերը կորցրին մոտ 1.500 զինվոր, մոտ 30 նավ, դաշնակիցը՝ մոտ 15.000 զինվոր, մոտ 170 նավ, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր, մոտ 20 նավ:

Պատերազմական գործողությունների թեժ շարքը, որը վերջնական հաջողություն չբերեց Քսերեքս I-ին, իսկ նրա ռազմական մեքենային էլ զգալի կորուստներ արժեցավ, ի վերջո ստիպեց այս տիրակալին, որի մոտ արդեն սասանվել էր վերջնական հաջողության հասնելու վստահությունը և որը սկսել էր հոգալ ամենից առաջ հենց սեփական անվտանգության մասին, հետագա մարտական գործողությունների համար Մարդոնիոսի գլխավորությամբ տեղում խոշոր ուժեր թողնել ու հեռանալ սեփական տիրույթներ: Դրանից հետո մարտական գործողություններում ի հայտ եկավ դադար, որը խախտվեց միայն մոտ մեկ տարի անց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

479 սեպտեմբերի 9 – ***Պլատեայի ճ-մ*** (Հարավ-արևելյան Հունաստան)[1]

Մարդոնիոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Աքեմենյան տերության (350.000, որից մոտ 15.000 հայ և «Անմահներ»-ի գունդը, ինչպես նաև հույներ, բակտրիացիներ, հնդիկներ և սակեր) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 35.000) միացյալ բանակը, ամայացնելով ***Աթենքն ու նրա շրջակայքը,*** շարժվեց դեպի հյուսիս և ճամբարեց Պլատեայի մոտակայքում: Այս պայմաններում հունական բանակը (110.000) մոտեցավ թշնամու բանակին և սեպտեմբերի կեսին ինքն էլ ճամբարեց՝ որդեգրելով սպասողական մարտավարություն ու հույսը դնելով այն բանի վրա, որ թշնամական երկրում գտնվող հակառակորդի բանակի վիճակն աստիճանաբար կվատթարանա: Դրան հաջորդեցին մի քանի մանր ընդհարումներ, որից հետո Մարդոնիոսը, չհամարձակվելով հարձակվել ամուր դիրք գրաված թշնամու բանակի վրա, որոշեց վերջինիս արգելել գետից ջուր վերցնելը՝ այդ ճանապարհով իր հերթին հասնելով թշնամու նահանջին: Այս նպատակով Մարդոնիոսը գործի դրեց նետաձիգների

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 8, գլուխ 100, 107, 131, գիրք 9, գլուխ 2, 14, 17, 19-26, 28-33, 39-42, 44, 45, 47-57, 59-63, 65-71; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 28-33; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Արիստիդես», գլուխ 10-12, 14-19; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Թեմիստոկլես», գլուխ 16; Կտեսիոս Կնիդացի «Պարսից պատմություն» գիրք 25; Պլատոն «Երկխոսություններ», Մենեկսեն; Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 3; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 2, գլուխ 11; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 2; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 6:

ջոկատներ, ինչպես նաև հեծյալ ջոկատներ ուղարկեց թշնամու բանակի թիկունք՝ կտրելով ջուրը նաև այդ կողմից: Ստեղծված պայմաններում հույներն իրոք որոշեցին սեպտեմբերի լույս 9-ի գիշերը նահանջ իրականացնել և ավելի հարմար դիրքեր գրավել, սակայն նահանջն իրականացվեց ծայրահեղ անկազմակերպ, երբ հեռացողների մի մասը մոլորվեց, մյուս մասը հեռացավ խառնաշփոթ վիճակում, իսկ երրորդ մասն էլ ընդհանրապես մնաց տեղում:

I փուլ – Լուսաբացին, նկատելով թշնամու բանակի տեղաշարժը, Մարդոնիոսը հարձակման նետեց հեծելազորը: Միաժամանակ առաջ շարժվեց նաև հետևազորը, որը, վահանափակ կազմելով, սկսեց նետերի տարափ տեղալ յուրայինների նահանջն ապահովող սպարտական ֆալանգի վրա՝ ծանր կորուստներ պատճառելով վերջինիս:

II փուլ – Թողնելով թշնամուն բանակին բավականին մոտենալ՝ արդեն կրկին շարվել հասցրած հունական ֆալանգը կտրուկ հակահարձակման անցավ՝ շեշտակի հարվածով ջարդելով թշնամու հեծելազորին և վերջինիս փախուստի մատնելով: Շուտով սպանվեց նաև Մարդոնիոսը, որից հետո անկանոն փախուստին միացավ նաև հետևազորը:

III փուլ – Հետապնդելով թշնամու փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառելով վերջինիս՝ առաջինը թշնամու ամրացված ճամբար հասան սպարտացիները, սակայն չկարողացան այն գրավել և միայն հիմնական ուժերի մոտենալուց հետո ճամբարը գրավվեց:

Հայերը կորցրին մոտ 15.000, դաշնակիցները՝ մոտ 75.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը Բալկանյան թերակղզում գործող Աքեմենյանների տերության ռազմական մեքենայի վրա ամենածանր ազդեցությունն ունեցավ, ընդ որում վերջինս, որպես կազմակերպված ուժ, դրանից հետո, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ: Ավելին, հունական կողմը չէր պատրաստվում թուլացնել հարվածի թափը և, գործնականում անմիջապես այն բանից հետո, երբ հաջողությամբ ավարտեց նախորդ ճակատամարտը, հարված նախապատրաստեց արդեն Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող հակառակորդի թիկունքային ուժերի նկատմամբ, որոնց էլ հենց այս ընթացքում սկսել էին միանալ նախորդ ճակատամարտում պարտություն կրած ուժերի մնացորդները: Արդյունքում՝ մ.թ.ա. 479 թվականի սեպտեմբերի կեսին Մյուքելե թերակղզու ճ-մ-ում (Փոքր Ասիայի արևմուտք) Տիգրանի ընդհանուր ղեկավարությամբ գործող Աքեմենյան տերության (մոտ 60.000, որից մոտ 5.000 հայ, ինչպես նաև մեծաքանակ հույներ) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակը հարձակվեց հունական բանակի (մոտ 40.000) վրա, սակայն սեփական շարքերում գտնվող հույների դավաճանության պատճառով պարտություն կրեց: Տիգրանն ընկավ մարտում, իսկ Աքեմենյանների տերության բանակի կորուստը կազմեց 40.000 ռազմիկ[1]: Վերջ, սրանով էլ հենց վերջ դրվեց Աքեմենյանների տերության փորձերին հարձակում գործել Հունաստանի վրա: Իրոք, վճռական այս իրադարձություններից հետո անհամեմատ ավելի փոքր չափեր ընդունած պատերազմական գործողություններն ուժերի հետագա հարաբերակցության վրա, ըստ էության, արդեն որևէ կերպ չազդեցին:

Անհաջողության մատնվելով իր կյանքի գլխավոր պատերազմում՝ Քսերքես I-ը կենտրոնացավ սեփական տերության կառավարման ներքին հոգսերի վրա, սակայն այս ոլորտում ևս, ըստ էության, աչքի չընկավ ոչ մի բանով՝ բացառությամբ չհամակարգված գործունեության, ինչպես նաև եսակենտրոնության վրա հիմնված անտեղի դաժանության: Իր հերթին, մ.թ.ա. 468 թվականին Պամֆիլիայի ափերի մոտ գտնվող Էվրիմետոնդեի ծովացամաքամարտում Աքեմենյանների տերության ծովային և ցամաքային բանակը հերթական համոզիչ պարտությունը կրեց հույներից, որը միայն ավելի ծանրացրեց

[1] Հերոդոտոս «Պատմություն», գիրք 9, գլուխ 96-100, 102-104, 106; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 11, գլուխ 34-36:

Աքեմենյանների տերության ներքին դրությունը, ընդ որում այս ամենին շուտով իրենց հերթին գումարվեցին նաև անբերրի տարիների շարքն ու սովը: Եվ վերջապես հանգիստ չէր նաև արքայական ընտանիքի ներսում, երբ, խույս տալով եղբոր բռնություններից, փախուստի դիմեց և Մասագետական թագավորությունում պատսպարվեց նույնիսկ Քսերեքս Ի-ի եղբայրը: Արդյունքում՝ իր իսկ կրտսեր որդի Արտաքսերեքսի գլխավորությամբ Քսերեքս Ի-ի դեմ ի վերջո դավադրություն կազմվեց, ինչի հետևանքով մ.թ.ա. 465 թվականի օգոստոսին արքայական պահակազորի հրամանատար Արտավանն ու գլխավոր ներքինի Ասպամիթրան կյանքի կոչեցին ինչպես Աքեմենյան տիրակալի, այնպես էլ վերջինիս ավագ որդի Դարեհի սպանությունը: Աքեմենյանների տերության արքա հռչակվեց Արտաքսերեքս Ի-ը (մ.թ.ա. 465-424):

Քսերեքս Ի-ը կառավարման շրջանով, ըստ էության, իր ավարտը գտավ Աքեմենյանների տերության վերելքի դարաշրջանը, երբ նույն այդ տերությունը դրանից հետո սկսեց դանդաղ անկում ապրել: Ավելին, փոփոխության ենթարկվեցին նաև Աքեմենյանների տերության ներսում գործող բարոյական կանոնները ամենից առաջ հենց իշխող վերնախավի շարքերում: Իրոք, եթե Դարեհ Ի-ը ականատեսն էր եղել Կյուրոս II Մեծի դարաշրջանին և, զգալի նահանջներով, բայց այնուհանդերձ դեռևս մեծապես կրում էր դրա ազդեցությունը, իսկ Քսերեքս Ի-ի կառավարման շրջանն էլ պահպանում էր վերջինիս հարակայունության ուժը, ապա այժմ ամեն ինչ փոխվեց: Միաժամանակ փոփոխություններ եղան նաև կրոնագաղափարական ոլորտում, երբ դեռևս Դարեհ Ի-ի օրոք սկիզբ առած Արումազդի ընդգծված պաշտամունքը վերջնական և գերակշռող տեսք ստացավ, ի դեմս նույն այս ժամանակ էլ, ըստ էության, առաջացած զրադաշտականության: Այս հանգամանքը հերթական անջրպետը դրեց մի կողմից հայերի, իսկ մյուս կողմից էլ պարսիկների և մարերի միջև՝ կրոնական, իսկ արդյունքում նաև գաղափարական ու աշխարհայացքային մակարդակում պարսիկներին և մարերին ավելի հեռացնելով հայերից:

Որպես ընդհանուր հետևանք այս ամենի՝ արդեն Արտաքսերեքս Ի-ի կառավարման շրջանից սկսած էլ հենց Աքեմենյան տիրակալները ամենից առաջ հենց բարոյական մակարդակում մեծապես կորցրին ազատարարի, համընդհանուր բարերարի և, հատկապես, Արիական Եռադաշինքի արժանավոր առաջնորդի դերը՝ ըստ էության վերածվելով արևելյան տիպի ընդամենը միայն սովորական արքաների, որոնք հաճախ արդեն աչքի էին ընկնում բռնակալական հակումներով, իսկ իշխանությունն էլ հպատակների նկատմամբ պահում էին ավելի շատ հենց բռնի մեթոդներով, քան բարոյական գերազանցության ուժով: Արդյունքում՝ մեծապես արժեզրկվեց նաև երբեմնի հզոր Արիական Եռադաշինքը, ընդ որում մարերի դերը գնալով ավելի ընկավ, երբ նոր պայմաններում նրանք սկսեցին արդեն բացահայտորեն զիջել պարսիկներին: Իրենց հերթին, պարսկամարական տարրի քաղաքական միասնությունից սեփական առանձնացվածությունը սկսեցին աստիճանաբար ընդգծել արդեն նաև հայերը, իսկ այս ամենի հետևանքով էլ անդառնալի փոփոխություն կրեցին արդեն Աքեմենյանների տերության ներսում գործող քաղաքական փոխհարաբերությունները՝ դառնալով ավելի ձևական և ոչ անկեղծ: Այնուհանդերձ հարկ է նշել, որ առժամանակ, քանի դեռ Աքեմենյանների տերությունը արտաքին լուրջ հակառակորդ չուներ, ներքին քայքայիչ այս գործընթացները գործնականում նկատելի չէին: Արտաքին քիչ թե շատ լուրջ սպառնալիքի պայմաններում, սակայն, դրանք իրենց, անկասկած, զգացնել էին տալու:

Մ.թ.ա. 475 թվականին իր մահկանացուն կնքեց Մեծ Հայքի թագավորության արքա Առավանը և գահի վրա վերջինիս հաջորդեց նրա որդի Ներսեհը (մ.թ.ա. 475-440): Իր հերթին, մ.թ.ա. 440 թվականին, արդեն Ներսեհի մահից հետո, Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց իր որդի Զարեհը (մ.թ.ա. 440-394): Հայոց երեք գահակալներին բաժին էին հասել կառավարման բավականին խաղաղ տարիներ, ինչը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ նույն այս ժամանակ Աքեմենյանների տերությունն, ըստ էության, արդեն հրաժարվել էր Հունաստանը

ռազմական ուղղակի միջոցառումներով գրավելու գաղափարից, իսկ երկու քաղաքակրթությունների միջև ընթացող պատերազմն էլ վաղուց արդեն կրում էր երկրորդական ընդհարումների բնույթ: Ի վերջո, նպատակադրվելով վերջնականապես կարգավորել հարաբերությունները հունական աշխարհի հետ, մ.թ.ա. 449 թվականին Արտաքսերեքս I-ը դրական պատասխան տվեց հաշտության առաջարկով իրեն ներկայացած հունական դեսպաններին, ինչի հետևանքով հաշտություն կնքվեց և Հույն-Պարսկական I պատերազմը վերջացավ: Արդյունքում՝ Արիական Եռադաշինքը հրաժարվեց Հունաստանի վրա գերիշխելու գաղափարից, իսկ Փոքր Ասիայի հոնիական քաղաքներն ու Կիպրոսի թագավորությունն էլ անկախություն ստացան:

Գլուխ 8
Աքեմենյանների տերության լճացումը

Մ.թ.ա. 424 թվականի մայիսի վերջին դավադիրները թունավորելով սպանեցին Արտաքսերեքս I-ին, ընդ որում նույն թունավորման արդյունքում վերջինիս հետ միասին մահացավ նաև նրա գլխավոր կինը, ինչից հետո Աքեմենյանների տերության արքա հռչակվեց Արտաքսերեքս I-ի որդի Քսերեքս II-ը (մ.թ.ա. 424): Չէր լրացել, սակայն, նոր արքայի կառավարման դեռ 50-րդ օրը, երբ մ.թ.ա. 424 թվականի հուլիսի վերջին պալատական դավադիրները սպանեցին հարբած վիճակում գտնվող արդեն Քսերեքս II-ին և արքա հռչակեցին վերջինիս եղբայր Սեկուդիանին (մ.թ.ա. 424-423): Շատերը, սակայն, այդ թվում նաև Աքեմենյանների տերության արևելքում մեծ իշխանության հասած վերջինիս եղբայր Դարեհը, չընդունեցին նոր արքայի իշխանությունը: Սեկուդիանը, իբր թե հաշտվելու համար, փորձ կատարեց եղբորը մայրաքաղաք հրավիրել, սակայն վերջինս, հասկանալով, որ իրեն այնտեղ ուղղակի կսպանեն, թեև արդյունքում իրոք դեպի մայրաքաղաք շարժվեց, սակայն այդ արեց իր ձեռքի տակ առկա ռազմական ողջ մեքենայի հետ միասին: Այս պայմաններում Սեկուդիանը, որը նույն այս ժամանակ իր հերթին արդեն իսկ զրկվել էր Աքեմենյանների տերության իշխող վերնախավի աջակցությունից, ի վերջո հանձնվեց և փորձ կատարեց գոնե այդ ճանապարհով փրկել սեփական կյանքը, սակայն արդյունքում նրան ուղղակի սպանեցին:

Որպես հետևանք ներքաղաքական հերթական այս փոփոխության՝ մ.թ.ա. 423 թվականի փետրվարի կեսին Աքեմենյանների տերության արքա հռչակվեց Դարեհը՝ Դարեհ II-ը (մ.թ.ա. 423-404): Նոր արքայի դիրքերը ևս, սակայն, ի սկզբանե բավականին թույլ էին և մի քանի տարի շարունակ իրար էին հաջորդում դավադրությունները, որոնք այնուհանդերձ ավարտվում էին անհաջողությամբ և հենց իրենց իսկ՝ դավադիրների, մահապատիժներով: Իրավիճակը, սակայն, չհանդարտվեց նաև հետագա տարիներին և Դարեհ II-ի կառավարման ողջ ընթացքում Աքեմենյանների տերությունը ցնցվում էր այս կամ այն ուժգնությամբ բռնկվող ապստամբություններից, խռովություններից և տարաբնույթ այլ ելույթներից, որոնց մեղավորն, ի դեպ ասած, մեծապես հենց պետական իշխանությունն էր, որի պաշտոնյաները տեղերում վաղուց արդեն անցել էին թալանի նմանվող հարկահանության: Այս առումով Դարեհ II-ի իշխանության համար գոնե դրական էր, թերևս, միայն այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ Հունաստանում մի կողմից Աթենքի հանրապետության և նրա դաշնակիցների, իսկ մյուս կողմից էլ Սպարտայի թագավորության ու նրա դաշնակիցների միջև ընթանում էր մեծ կորուստների բերած Պելոպոնեսյան պատերազմը (մ.թ.ա. 431-404), ինչի արդյունքում հունական աշխարհն ոչ միայն ի վիճակի չէր օգտվել Աքեմենյանների տերության թուլացումից, այլև նույնիսկ հենց Դարեհ II-ի կառավարությունն ինքն էր հաջողությամբ կառավարում Հունաստանում բորբոքված բախումը՝ օգնելով կողմերից մեկին կամ մյուսին, իսկ վերջում էլ վճռական աջակցություն ցույց տալով այնուհանդերձ հենց Սպարտայի թագավորությանը և նրա դաշնակիցներին:

Աքեմենյանների տերությունում սկիզբ առնող քաոսի և կենտրոնական

իշխանության թուլացման պայմաններում յուրօրինակ տեսք ստացավ իրավիճակը նաև Աքեմենյանների տերության փոքրասիական հատվածում, որտեղ տեղում վաղուց արդեն ուժեղացած սատրապները, հենվելով կենտրոնական իշխանության նկատմամբ ավանդական ըմբոստ տրամադրություններով համակված հունական հոծ տարրի առկայության վրա, նույն այդ կենտրոնական իշխանության հսկողությունից իրենց մեծապես արդեն ազատ էին զգում, իսկ հաճախ էլ, ուշադրություն չդարձնելով վերջինիս վրա, պատերազմում էին միմյանց դեմ: Այս առումով Հունական աշխարհի ընդհանուր մոտիկությունը միայն ծանրացնում էր դրությունը:

Նույն այս ժամանակ իր հերթին ոտքի կանգնեց նաև սեփական անկախությունն այդպես էլ չմոռացած Եգիպտոսը, որը անհանգիստ էր դեռևս Արտաքսերեքս I-ի իշխանության տարիներին և որտեղ դեռևս չէր հանգել անկախության վերականգման գաղափարը: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 405 թվականին Եգիպտական թագավորությունը վերահռչակեց իր անկախությունը, իսկ պատասխան հարված հասցնել էլ Դարեհ II-ն ուղղակի չհասցրեց:

Իրոք, մ.թ.ա. 404 թվականի մարտին Դարեհ II-ը կնքեց իր մահկանացուն և գահի վրա վերջինիս հաջորդեց նրա որդի, քսանմեկամյա Արտաքսերեքս II-ը (մ.թ.ա. 404-359), որը բավականին ուժեղ ու եռանդուն մի անձնավորություն էր: Նոր արքան որպես ժառանգություն չլուծված խնդիրների մի ամբողջ խումբ էր ստացել և հենց սկզբից էլ նա ձեռնամուխ դրանց լուծմանը: Ամենամեծ խնդիրը, սակայն, որ սեփական կառավարման հենց ամենասկզբում ծառացավ նոր արքայի առջև, դա իր իսկ փոքր եղբայր, «Կրտսեր» մականվանյալ Կյուրոսի ապստամբությունն էր: Վերջինս դեռևս հոր կենդանության օրոք մեծ իշխանության և հեղինակության էր հասել Փոքր Ասիայի կառավարչի պաշտոնում, իր ձեռքում նյութական զգալի միջոցներ էր կուտակել և պետքական կապեր էր հաստատել ինչպես տեղացիների, այնպես էլ Հունաստանի իշխող վերնախավի հետ, իսկ այժմ էլ արդեն լի էր եղբոր բարձրագույն իշխանությունը կոնկրետ քայլերով վիճարկելու վճռականությամբ:

Մ.թ.ա. 401 թվականի փետրվարին Կյուրոս Կրտսերը, որը նույն այս ժամանակ իբր տեղում գործող ապստամբներին հնազանդեցնելու նպատակով ձեռքի տակ արդեն իսկ զգալի ուժեր էր հավաքել, ի վերջո բացահայտեց իր ծրագրերը, որից հետո արշավանքի ելավ Միջագետքի ուղղությամբ: Ապստամբների ճանապարհին էր գտնվում Կիլիկիան, որտեղ այս ժամանակ կառավարող և Քսենոգորին հաջորդած Սիենիսը (մ.թ.ա. մոտ 420 - մ.թ. ուղ. 400) հայտնվեց բարդ ընտրության առջև:

Իրոք, մի կողմից Սիենիսը իրոք ոչ մի ցանկություն չուներ միանալու ապստամբների մեծապես կասկածելի այդ ձեռնարկին, սակայն մյուս կողմից էլ հենց նրա իշխանության սահմաններին էր հայտնվել մի մեծաքանակ և ուժեղ բանակ, որին դիմադրելու որևէ հնարավորություն, ըստ էության, չկար: Արդյունքում՝ մ.թ.ա. 401 թվականի մարտին Կիլիկիայի ճ-մ-ում (նահանգի արևմուտք)[1] Կիլիկիայի սատրապության բանակը (մոտ 500) դարանը գցեց շրջանցիկ ուղով նահանգ ներխուժել փորձող ապստամբած Կյուրոս Կրտսերի բանակի (112.900, այդ թվում 3.000 լյուդիացի ծանր հեծյալներ, 11.000 ծանր հետևակայիններ, 2.700 թեթև հետևակայիններ, մոտ 20 մանգաղակիր մարտակառք) մի ջոկատին (100) և լիովին ոչնչացրեց: Այս ընթացքում, սակայն, Կյուրոս Կրտսերի բանակը մոտեցավ Սիենիսի գլխավորությամբ Դուռն Կիլիկիո կիրճում ամուր պաշտպանական դիրքեր գրաված Կիլիկիայի սատրապության բանակին, որը, որոշ ժամանակ անց, այն բանից հետո, երբ արևմուտքից դեպի Կիլիկիա մուտք ապահովող մյուս՝ Կուկլակա կիրճը, պահպանող Աքեմենյան տերության բանակը լքեց գրաված դիրքերը, որի հետևանքով Կյուրոս Կրտսերի բանակի մի մասը սկսեց դուրս գալ Հայկական բանակի թիկունք, նահանջեց և ամրացավ Լեռնային Կիլիկիայում: Սկսվեցին բանակցություններ, որոնց

[1] Այս ճակատամարտի տեղի մասին հայտնի է միայն այնքանը, որ հայերը դարանել և լիովին ոչնչացրել են թշնամուն: Քանի որ Կիլիկիայի Հայկական բանակը դարանները սովորաբար կիրճերում էր պատրաստում, կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը գնում է արևմուտքից Կիլիկիա մտնող երկրորդական կիրճերից մեկի մասին:

արդյունքում, մասնավորապես, Սիենիսը, կենտրոնական իշխանություններին տեղեկացնելով սկսված ապստամբության և իր իրական հավատարմության մասին, միաժամանակ Կյուրոս Կրտսերին հեծյալ մի ջոկատ (մոտ 1.000 հեծյալ) տրամադրեց[1]: Այսպիսով՝ իր զբաղեցրած երկիմաստ դիրքով Սիենիսը, համենայն դեպս գոնե առժամանակ, ըստ էության, փրկեց ինչպես իր իշխանությունը, այնպես էլ ազատեց սեփական տարածքները ոտքի տակ գնալուց, սակայն նույն այս ժամանակ Արտաքսերեքս II-ն ինքն էլ եռանդուն հակամիջոցներ ձեռնարկեց՝ ամենից առաջ ապստամբների դեմ ուղղելով Ասորիքում նույն այս ժամանակ հավաքված այն բանակը, որը ի սկզբանե նախատեսված էր Եգիպտոս շարժելու համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

401 սեպտեմբերի 3 – ***Կունաքսայի ճ-մ*** (Միջագետք, Բաբելոնից մոտ 80 կմ հյուսիս)[2]

Շարունակելով առաջխաղացումը ***Սոլե-Տարսոն-Իսոս*** (Իսոսի ծոցի հյուսիս-արևելքում) ***-Պլատանա կիրճ*** (Կիլիկիա, Ալեքսանդրեկ գավառ, Ամանոսյան լեռների հարավ) ***-Թապսակոս-Կորսոտե-Քարմանդե-Կունաքսա*** երթուղով՝ Կյուրոս Կրտսերի բանակը (113.900, 20 մանգաղակիր մարտակառք) մոտեցավ Արտաքսերեքս II-ի գլխավորած Աքեմենյան տերության կառավարական բանակին (90.000, որից 6.000 հեծյալ, 150 մանգաղակիր մարտակառք): Կողմերը մարտակարգ ընդունեցին Եփրատ գետի ձախ ափին: Ավելի հյուսիս տեղակայված Կյուրոս Կրտսերի բանակի մարտակարգի առաջին շարքում տեղակայվեց հույների ֆալանգը, իսկ երկրորդ շարքում՝ հեծելազորը, ընդ որում այս բանակի աջ թևը հենվում էր Եփրատ գետին: Իր հերթին, հակառակորդից հարավ տեղակայված Արտաքսերեքս II-ի բանակի մարտակարգը ավելի էր ձգված դեպի արևելք և արդյունքում այնպես ստացվեց, որ վերջինիս կենտրոնի փոքր մասի և ողջ աջ թևի դիմաց հակառակորդ ուժեր, ըստ էության, չկային:

I փուլ – Կյուրոս Կրտսերի բանակը ողջ ճակատով անցավ հարձակման, փախուստի մատնեց թշնամու բանակի առաջին շարքերին և սկսեց հետապնդել վերջիններիս: Այս ընթացքում մարտակառքերը փորձեցին կասեցնել թշնամուն և անցնել հակահարձակման, սակայն հույները, նիզակներով հարվածելով վահաններին ու առաջացած աղմուկով վախեցնելով ձիերին, թույլ չտվեցին վերջիններիս թափ հավաքել, որից հետո մարտակառքերի մեծ մասը լքվեց դրանք կառավարողների կողմից, իսկ մի քանիսն էլ ընկան թշնամու ռազմիկների ձեռքը:

II փուլ – Արտաքսերեքս II-ը, օգտվելով այն բանից, որ իր բանակի աջ թևի դիմաց ուժեր չկան, այն շարժեց թշնամու բանակի վրա՝ նպատակ ունենալով ձախ թևից շրջանցել հակառակորդին և վերջինիս թևային հարված հասցնել: Ի պատասխան սրա՝ Կյուրոս Կրտսերը այս ուղղությամբ հակահարված հասցրեց, ինչի արդյունքում համառ մարտ բռնկվեց:

III փուլ – Ծանր հեծելազորի հարձակմանը ենթարկվող հունական հետևակայինները հետ քաշվեցին և սկսեցին հեռվից հարվածել հեծյալներին, ստիպելով վերջիններս նահանջել, սակայն Արտաքսերեքս II-ը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր՝ ի վերջո պարտության մատնելով ու ցրելով հակառակորդի բանակի հիմնական մասին՝ բացառությամբ իր մարտունակությունը չկորցրած հունական ֆալանգի: Այս ընթացքում, սակայն, Կյուրոս Կրտսերն ընկավ մարտում, որի պատճառով էլ նրա բանակը դադարեցրեց դիմադրությունը և իր հիմնական մասով ցրվեց:

Ընդհանուր շարքից դուրս եկած 20.000 զինվորից հայերը կորցրին մոտ 500,

[1] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 1, գլուխ 1, 2:

[2] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 1, գլուխ 3-8, 10; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 14, գլուխ 19-24; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Արտաքսերեքս», գլուխ 6-13; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 5, գլուխ 11; Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 2, գլուխ 6; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 3, մաս 6, գիրք 4, գլուխ 2, մաս 5, 7, 8:

դաշնակիցները՝ մոտ 19.500 զինվոր, թշնամին կորցրեց 3.000 զինվոր: Կյուրոս Կրտսերի ապստամբությունը ճնշվեց, իսկ Կիլիկիայի հայերը վերադարձան Հայրենիք, թեև Սիենիսը ի վերջո այնուհանդերձ գահընկեց արվեց և նրան փոխարինեց Քամիսարը (մ.թ.ա. 400-385):

Հենց նոր ավարտված ճակատամարտը, որի քաղաքական հետևանքները պարզ էին, օպերատիվ առումով այնուհանդերձ անչափ ուշագրավ մի իրավիճակ ստեղծեց, քանզի, եթե Կյուրոս Կրտսերի բանակի տեղական ուժերից կազմված մասը ուղղակի ցրվեց և վերադարձավ ելման դիրքեր, ապա հույները, չկարողանալով այդ անել, մնացին տեղում՝ հակառակորդի հսկայական ուժերի շրջապատման մեջ: Այս առումով հարկ է նշել, որ արշավանքին մասնակցող հույներն իրենց հիմնական մասով ներկայացված էին ի դեմս վարձկանների, իսկ Կյուրոս Կրտսերի մահն էլ նրանց զրկել էր վերջինիս գործի համար պայքարելու նույնիսկ տեսական հնարավորությունից: Արդյունքում, դատելով զուտ վարձկաններին բնորոշ սթափ հոգեբանությամբ, հույները Արտաքսերեքս II-ին առաջարկեցին վեճը ուղղակի համարել հարթված՝ պատրաստակամ լինելով նույնիսկ ծառայության անցնելով հաղթողի բանակի շարքերում: Արտաքսերեքս II-ը, սակայն, ակնհայտորեն իրոք լավ չկողմնորոշվելով իրավիճակում, ի պատասխան ընդունեց չհիմնավորված և տաքարյուն մի որոշում՝ խնդիր դնելով ոչնչացնել արդեն, ըստ էության, կորցնելու ոչինչ չունեցող ու այդ պատճառով էլ վճռական դիմադրության հակված արհեստավարժ այդ ռազմիկներին: Արդյունքում՝ բանակցությունների համար Արտաքսերեքս II-ին ներկայացած վարձկանների առաջնորդները ձերբակալվեցին և սպանվեցին, սակայն դա որևէ կերպ չհանգուցալուծեց իրավիճակը, քանզի հույները սեփական շարքերից նոր առաջնորդներ ընտրեցին, որից հետո պատրաստվեցին, պաշտպանվելով զենքի ուժով, վերադառնալ հայրենի եզերքներ՝ ամենից առաջ ուղղություն բռնելով դեպի Տրապիզոն (Փոքր Հայք, Սև ծովի ափին):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

401 սեպտեմբերի 5-7 – ***<u>Արբելայի ճ-մ</u>***[1]

Նախորդ ճակատամարտից հետո ողջ մնացած հույները (10.000 հոպլիտ, 2.000 պելտաստ) բանակցություններում սպանված իրենց առաջնորդների փոխարեն նոր առաջնորդներ ընտրեցին, այդ թվում նաև Քսենոֆոնին, և սկսեցին նահանջել:

I փուլ – ***<u>Օպսիոսի</u>*** մոտ Աքեմենյան տերության բանակը (200 հեծյալ նետաձիգ, 400 նետաձիգ և պարսատիկավոր) հարձակվեց հունական բանակի վրա և սկսեց նետահարել՝ գերազանցելով թշնամու նետաձիգներին ու կորուստներ պատճառելով հոպլիտներին: Հունական բանակը ստիպված բոլոր ուժերով անցան հետապնդման, որը, սակայն, արդյունք չտվեց, թեև որոշ ժամանակ հետո Աքեմենյան տերության բանակն ինքը նահանջեց:

II փուլ – Հաջորդ օրը Աքեմենյան տերության համալրված բանակը (1.000 հեծյալ, 4.000 նետաձիգ և պարսատիկավոր) նորից սկսեց հետապնդել հունական բանակին: Ի պատասխան դրա՝ հունական բանակն անցավ մի կիրճով և, դարանում տեղավորելով թեթևազեններին, հիմնական ուժերով հեռացավ: Աքեմենյան բանակը մտավ կիրճը և փորձեց դուրս գալ մյուս կողմից, սակայն ենթարկվեց դարանակալ հարձակման ու, կորուստներ կրելով, դիմեց փախուստի:

III փուլ – Աքեմենյան տերության համալրված բանակը, իր կազմում արդեն ունենալով նաև Տիրիբազի և Երվանդ Հիդարնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության ու Փոքր Հայքի սատրապության միացյալ բանակին (մոտ 4.000),

[1] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 2, գիրք 3, գլուխ 1-5; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 14, գլուխ 25-27; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 2, գլուխ 49, մաս 1, 2:

մի քանի մանր հարձակումներ իրականացրեց թշնամու բանակի վրա, սակայն վերջինս շարունակեց առաջխաղացումը:

Հայերը կորցրին մոտ 20, դաշնակիցը՝ մոտ 500, թշնամին՝ մոտ 500 զինվոր:

401 սեպտեմբերի կես - սեպտեմբերի վերջ – ***Կորճայքի ճ-մ***[1]

Հյուսիսային Միջագետքից նահանջած հունական բանակը (մոտ 11.500) մտավ ***Կորճայք***: Այս պայմաններում Կորճայքի իշխանության բանակը (մոտ 2.000 հետևակային), խուսափելով կանոնավոր մարտից, ընտրեց անկանոն հարվածների մարտավարությունը:

I փուլ – Հայկական բանակի մի մասը (մոտ 100) երեկոյան անակնկալ հարձակվեց երկարատև անցումից հոգնած և դեպի գյուղ շարժվող հունական բանակի վրա, որից հետո նետաձգությամբ ու քարեր գլորելով վերջինիս կորուստներ պատճառեց: Հակառակորդի բանակը, սակայն, այնուհանդերձ հանգրվանեց մոտակա գյուղում:

II փուլ – Հաջորդ օրը, ենթարկվելով Հայկական բանակի հարվածներին, հակառակորդի բանակը շարունակեց առաջխաղացումը: Արդյունքում՝ հունական բանակի մի մասը (2.000) թևանցում կատարեց և անակնկալ հարձակվեց հանգստի տեղավորված հայկական պահակախմբի վրա՝ գերելով երկու զինվորի, որոնցից մեկը թշնամուն տեղեկություններ չտալու համար սպանվեց, իսկ մյուսը համաձայնեց կատարել ուղեկցողի դերը: Միաժամանակ հիմնական բանակի առաջապահը, ենթարկվելով Հայկական բանակի քարային հարվածներին, մարտերով գրավեց մի բարձունք, և, հիմնական բանակի անցումը ապահովելու համար այնտեղ որոշ ուժեր թողնելով, գրավեց երկրորդ բարձունքը: Երրորդ բարձունքը հունական բանակը գրավեց առանց մարտի, քանի որ Հայկական բանակը, թշնամու թևանցող ջոկատի իր թիկունք անցած լինելու պայմաններում, թողեց այն: Այս ընթացքում Հայկական բանակը հետ վերցրեց հակառակորդի գրաված առաջին բարձունքը, որից հետո սկսեց նեղել վերջինիս հիմնական ուժերին, որոնք միայն մեծ դժվարությամբ կարողացան վերամիավորվել: Անհաջող ավարտված բանակցություններից հետո Հայկական բանակը կրկին սկսեց հարվածել հակառակորդին, որը միայն գիշերը կարողացավ հանգստանալ հերթական մի գյուղում:

III փուլ – Հաջորդ օրը առաջխաղացումը շարունակած հակառակորդի բանակը ողջ երթուղու երկայնքով սկսեց ենթարկվել բարձունքներում տեղավորված նետաձիգների և տեգավորների, ինչպես նաև քարերով հասցվող հարվածների, ընդ որում հայկական նետերը միջանցիկ ծակում էին թշնամու ռազմիկների վահանները ու զրահները, իսկ լեռնային տեղանքն էլ իր հերթին խանգարում էր ֆալանգի արդյունավետ գործելուն:

IV փուլ – Հունական բանակին հաջողվեց դուրս գալ լեռներից և մոտենալ ***Ջերմ գետին***, ինչից հետո գետի մյուս ափին վերջինիս դիմավորեց Տիրիբազի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը, որի կազմում գործող հայ-հալդայների հետևակը ու Մարդպետական գունդը տեղավորվել էին բարձունքների վրա, իսկ հեծելազորը՝ ավելի ներքև՝ առաջին շարքում: Միաժամանակ կենտրոնացած Կորճայքի իշխանության բանակը սկսեց հակառակորդի բանակին սպառնալ թիկունքից: Հաջորդ օրը, սակայն, հույներին հաջողվեց մեկ այլ վայրում անցում գտնել և անցնել գետը: Իմանալով այդ մասին՝ Հայկական բանակը նահանջեց, իսկ Կորճայքի իշխանության բանակը սկսեց նետահարել հակառակորդի բանակին, որը, կիրառելով մանր հակահարձակումներ, այնուհանդերձ կարողացավ անցնել գետը: Ի վերջո, հունական բանակը ***Արզնի*** մոտով հասավ ***Ձորա պահակ կիրճին*** (Աղձնիք, Սոլնոձոր գավառ, Ձորա պահակ լեռնանցքում, Վանա լճից մոտ 18 կմ հարավ-արևմուտք): Այստեղ Տիրիբազը հեծյալների ընտիր ջոկատով մոտեցավ հույներին և հաշտություն կնքեց, ըստ որի

[1] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 3, գլուխ 5, գիրք 4, գլուխ 1-4; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 14, գլուխ 27; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 2, գլուխ 49, մաս 3, 4; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 4, մաս 10:

հունական բանակը պետք է նահանջեր առանց խոչընդոտի, սակայն միաժամանակ նաև չպետք է ավերեր հայկական գյուղերը:

Հայերը կորցրին մոտ 300, թշնամին՝ 700 զինվոր:

Մ.թ.ա. 401 թվականի հոկտեմբերի սկզբին Բզնունիքի ճ-մ-ում նահանջը շարունակող հունական բանակի (մոտ 10.800) մի մասը (մոտ 1.000) անակնկալ հարձակվեց Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 300, այդ թվում վարձկան խալյուբներ[1]) ճամբարի վրա և գրավեց այն[2], որից հետո, մինչև մ.թ.ա. 401 թվականի հոկտեմբերի վերջ, ասպատակելով արշավեց Բզնունիք-Ապահունիք-Բագրևանդ-Կոգովիտ-Մասյացոտն-Արշարունիք-Գաբեղյան երթուղով՝ ենթարկվելով Տիրիբազի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 15.000, այդ թվում վարձկան խալյուբներ) մանր հարվածներին[3]: Մ.թ.ա. 401 թվականի նոյեմբերին հունական բանակը առաջխաղացումը շարունակեց Բուղք-Ազորդաց Փոր-Ճակք-Կղարջք-Կոլխիդա-Արսյաց Փոր-Սպեր-Փոքր Հայք-Տրապիզոն երթուղով՝ կրկին ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 15.000, այդ թվում վարձկան խալյուբներ, ճաներ[4], մոսինոյկներ, կետեր և տիբարեններ) մանր հարվածներին[5]: Ի վերջո, մտնելով Փոքր Հայք, մ.թ.ա. 401 թվականի նոյեմբերի վերջին Տրապիզոնից ասպատակելով առաջխաղացած հունական բանակը (մոտ 2.000) գրավեց Տրապիզոնի մոտ գտնվող մեկ ամրոց[6], իսկ մեկ այլ ամրոց էլ այս դեպքերից անմիջապես հետո վերջինս գրավեց երկու օրվա ընթացքում[7]: Դրանից հետո, շարունակելով առաջխաղացումը դեպի արևմուտք, հունական բանակը դուրս եկավ Փոքր Հայքի սատրապության տարածքից և հետագայում վերադարձավ Հայրենիք: Այսպիսով՝ ինչպես Կյուրոս Կրտսերի ապստամբությունը, այնպես էլ, ըստ էության, վերջինիս անակնկալ հետևանք հանդիսացած հունական վարձկանների նահանջը իրենց վերջը գտան, որից հետո Արտաքսերեքս II-ի իշխանությունը ամրապնդվեց:

Կրած ցնցումներից հետո Աքեմենյանների տերության նոր տիրակալն իրեն պատրաստ չհամարեց մինչ այդ նախատեսված ռազմական ուղղակի հարվածը հասցնել Եգիպտական թագավորությանը, որն այս ընթացքում իր հերթին հասցրեց բավականին ամրապնդել սեփական դիրքերը: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել նաև, որ հենց այս ժամանակ փայլեց երիտասարդ Երվանդ Հիդարնյանի ռազմաքաղաքական աստղը, որը, ամուսնացած լինելով Արտաքսերեքս II-ի աղջկա հետ և զբաղեցնելով Փոքր Հայքի սատրապության սատրապի պաշտոնը, մեծապես աչքի էր ընկնում իր ունակություններով: Իրոք, եռանդուն բնավորությունը և մեծ փառասիրությունը սրանից հետո Երվանդին դեռևս մեկ անգամ չէր, որ մղելու էին գործելու: Ինչ վերաբերում է Մեծ Հայքի թագավորությանը, ապա մ.թ.ա. 394 թվականին իր մահկանացուն կնքեց Մեծ Հայքի թագավորության արքա Զարեհը և գահի վրա վերջինիս հաջորդեց նրա որդի Արմոգը (մ.թ.ա. 394-385): Իր հերթին, արդեն մ.թ.ա. 385 թվականին, Արմոգի մահից հետո նրան փոխարինեց իր որդի Բայղամը (մ.թ.ա. 385-371), մ.թ.ա. 371 թվականին Բայղամին հաջորդեց նրա որդի Վահանը (մ.թ.ա. 371-351), որին էլ փոխարինեց արդեն իր որդի Վահեն (մ.թ.ա. 351-331):

Նույն այս ժամանակ, մինչ Մեծ Հայքի թագավորության գահին խաղաղորեն իրար էին փոխարինում հայրեր և որդիներ, Արտաքսերեքս II-ին աստիճանաբար հաջողվեց զգալիորեն ամրապնդել սեփական դիրքերը՝ մեծացնելով ազդեցությունը նաև Հունաստանի վրա: Իրոք, Պելոպոնեսյան պատերազմի ավարտից հետո Աթենքի

---

[1] Սրանք Փոքր Հայքի ծովափնյա գավառների արմատներով հույն, սակայն արդեն իրենց ազգային դիմագիծը կորցրած գաղութաբնակներից կազմված վարձկաններն էին:
[2] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 4, գլուխ 4; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 14, գլուխ 28:
[3] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 4, գլուխ 4-7; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 14, գլուխ 29:
[4] Սրանք հայտնի են նաև որպես «մակրոններ»:
[5] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 4, գլուխ 7, 8; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 14, գլուխ 29-30:
[6] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 5, գլուխ 2; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 14, գլուխ 30, 31:
[7] Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 5, գլուխ 4, 5:

հանրապետության դիրքերի կտրուկ թուլացման պայմաններում Հունաստանում գերիշխանության էր հասել Սպարտայի թագավորությունը, որը, սակայն, տեղում իր խնդիրներն ուներ: Արդյունքում՝ Արտաքսերեքս II-ը, նյութական միջոցներով աջակցելով Սպարտայի թագավորությանը, ձգտում էր ուժեղացնել սեփական ազդեցությունը Հունաստանում կամ, նվազագույնը, գոնե չթողնել Հունաստանի միավորումը:

Այս առումով հարկ է նշել, սակայն, որ նույն այս ժամանակ ի վերջո սրվեց նաև Եգիպտոսի խնդիրը, որի հերթական փարավոն Ախորիսը (մ.թ.ա. 393-380), հաջողությամբ օգտվելով իր երկրին բաժին հասած խաղաղ տարիներից, ձեռնամուխ եղավ ավելի ակտիվ քաղաքականության և նույնիսկ որոշակի ձեռքբերումներ արձանագրեց Հարավային Ասորիքում՝ միաժամանակ իր ազդեցությանը ենթարկելով նաև նույն այս ժամանակ կիսաանկախ դրության հասած Կիպրոսի թագավորության արքա Էվագորաս I-ին (մ.թ.ա. 411-374): Արդյունքում՝ Արտաքսերեքս II-ը, գործի դնելով ռազմական զգալի միջոցներ, մ.թ.ա. 383-380 թվականների մի շարք մեծամասշտաբ գործողություններ իրականացրեց Եգիպտական թագավորության ուղղությամբ, սակայն էական հաջողության այդպես էլ չհասավ: Եգիպտոսին հասցված հարվածի հետ միաժամանակ Աքեմենյանների տերության ռազմական մեքենան մարտական գործողություններ սկսեց նաև Կիպրոսի թագավորության դեմ, որոնք, սակայն, իրենց հերթին ևս ձգձգվեցին:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ Կիպրոսի թագավորության դեմ իրականացված գործողությունների հրամանատարությունը հանձնվեց դեռևս մ.թ.ա. 401 թվականին աչքի ընկած Տիրիբազին, ինչպես նաև եռանդից ու փառասիրական տենչերից այրվող արքայական փեսա Երվանդին, որոնց հարաբերությունները, սակայն, արդեն լուրջ ճգնաժամ էին ապրում: Արդյունքում՝ մ.թ.ա. 381 թվականին Սալամինի ճ-մ-ում (Կիպրոս) Էվագորաս I-ի գլխավորած Կիպրոսի թագավորության բանակը (մոտ 10.000, այդ թվում արաբներ, 200 նավ) հաղթեց ցամաքային զորքերի հրամանատար Երվանդ Հիդարնյանի և նավատորմի հրամանատար Տիրիբազի գլխավորությամբ կղզում ափ իջած Աքեմենյան տերության (30.000, որից մոտ 3.000 հայ, 300 նավ, որից 30-ը Կիլիկիայից) ու նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 3.000) միացյալ բանակին[1]: Քիչ անց, սակայն, մ.թ.ա. նույն 381 թվականին Կիտիոսի ծովամարտում (Կիպրոս) Աքեմենյան տերության (30.000, որից մոտ 3.000 հայ, 300 նավ, որից 30-ը Կիլիկիայից) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 3.000) միացյալ նավատորմը հաղթեց Կիպրոսի թագավորության նավատորմին (մոտ 10.000, այդ թվում արաբներ, 200 նավ)[2]: Դրանից հետո մ.թ.ա. 381 թվականից մինչև մ.թ.ա. 380 թվականը ցամաքային զորքերի հրամանատար Երվանդ Հիդարնյանի և նավատորմի հրամանատար Տիրիբազի գլխավորությամբ կղզում ափ իջած Աքեմենյան տերության ռազմական մեքենան պաշարեց Սալամինը և, չնայած Երվանդի ու Տիրիբազի միջև առկա հակասությանը, դրա արդյունքը հանդիսացած Տիրիբազի ձերբակալությանը, դատին ու արդարացմանը, մ.թ.ա. 380 թվականին ի վերջո ստիպեց հանձնվել[3]: Արդյունքում՝ Կիպրոսի թագավորությունը կրկին ընդունեց Աքեմենյանների տերության գերիշխանությունը:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ Կիպրոսում ընթացող ռազմական գործողությունների ավարտից հետո վերջնականապես բաժանվեցին նաև Տիրիբազի և Երվանդի ուղիները: Իրոք, Տիրիբազը, վերջին հաշվով գոհ չմնալով իրեն բաժին հասած ճակատագրից և, հատկապես դժգոհ մնալով այն բանից, որ իրեն որպես կին չեն տվել Արտաքսերեքս II-ի աղջիկներից որևէ մեկին, ինչպես արվել էր Երվանդի պարագայում, մ.թ.ա. 370 թվականին Արտաքսերեքս II-ի որդի Դարեհի հետ միասին փորձեց դավադրություն կազմել և սպանել իր չկայացած աներոջը, սակայն դավադրություն բացահայտվեց, Դարեհը ձերբակալվեց ու մահապատժի ենթարկվեց, իսկ Տիրիբազն ինքն էլ զոհվեց իրեն ձերբակալել փորձողներին դիմադրություն ցույց

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 15, գլուխ 2, 4:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 15, գլուխ 3:
[3] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 15, գլուխ 4, 8, 9; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 14, մաս 1:

տալու ընթացքում: Ինչ վերաբերում է Երվանդին, ապա արդեն բավականին հասուն այս այրը վերադարձավ Փոքր Հայք և սկսեց սեփական փառասիրական ծրագրերը կյանքի կոչելու հերթական հնարավորությանը սպասել:

Համարելով Կիպրոսի խնդիրը լուծված՝ մ.թ.ա. 373 թվականին Արտաքսերեքս II-ը ռազմական նոր հարված հասցրեց Եգիպտոսի ուղղությամբ, սակայն, չնայած սկզբնական հաջողությունների, Աքեմենյանների տերության ռազմական մեքենան այս անգամ ևս ի վերջո ստիպված եղավ ելման դիրքեր վերադառնալ: Նոր հարված հասցնել, սակայն, խանգարեցին սրված ներքին խնդիրները, որոնց մեջ առաջնայինը Փոքր Ասիայում արդեն լրիվ ինքնուրույնության հասած սատրապների ապստամբությունն էր:

Մ.թ.ա. 373 թվականի գարնանը, մինչ դեռևս պատերազմական լարված գործողություններ էին ընթանում Եգիպտոսի ուղղությամբ, ապստամբեց Կիլիկիայի և Կապադովկիայի սատրապ Դատամը (մ.թ.ա. 385-362), որին շուտով աջակցեցին նաև այլ սատրապներ: Մ.թ.ա. 372 թվականին Կապադովկիայի ճ-մ-ում ամուր դիրքեր գրաված Դատամի բանակը (մոտ 20.000, այդ թվում հույներ) հաղթեց Ասորիք-Կիլիկիա-Կապադովկիա երթուղով առաջխաղացող և հարձակման անցած Աքեմենյան տերության կառավարական բանակին (մոտ 150.000, այդ թվում 10.000 հայեր, 10.000 փռյուգիացիներ, 8.000 կապադովկիացիներ, 5.000 պաֆլագոնցիներ, 5.000 լյուդիացիներ, 3.000 հույներ, 3.000 ասպենդցիներ և պիսիդիացիներ, 2.000 կիլիկիացիներ, 2.000 կապտիաններ, որոնցից 100.000 ծանր հետևակայիններ, 3.000 պարսատիկավորներ ու 20.000 հեծյալ): Այս հաջողությունից հետո Դատամն իր բանակով այնուհանդերձ նահանջեց և, որոշ ժամանակ շարունակված մանր մարտերից հետո, որում հաջողությունը նրա կողմում եղավ, ի վերջո հաշտություն կնքեց[1]: Ապստամբությունը, սակայն, սրանով չվերջացավ և, ստանալով հույների աջակցությունը, մ.թ.ա. 367 թվականին վիճակով այն ավելի լայն թափ հավաքեց, ընդ որում ապստամբներին միացավ նաև նույն այս ժամանակ արդեն նաև Հոնիայի սատրապի պաշտոնը զբաղեցնող արքայական փեսա Երվանդ Հիդարնյանը: Այս առումով հետաքրքիր է նշել, սակայն, որ խորամանկ և հեռատես Երվանդն այնուհանդերձ ձգտում էր հնարավորինս չընդգծել սեփական դերակատարությունը ապստամբությունում՝ համառորեն խուսափելով առաջին դերերից:

Մ.թ.ա. 363 թվականի վիճակով Փոքր Ասիայում դեռևս ընթացող սատրապների ապստամբության գլուխ կանգնած էր Փռյուգիայի սատրապ Արիոբարզանեսը, սակայն նույն թվականին էլ նա սպանվեց և մ.թ.ա. արդեն 362 թվականին ապստամբներին ի վերջո սկսեց գլխավորել Երվանդը, որի դիրքորոշումը, սակայն, այնուհանդերձ ամենևին էլ միանշանակ չէր: Ավելին, շուտով Դատամն ինքը զոհ գնաց դավադրությանը, որից հետո մ.թ.ա. արդեն 361 թվականին Երվանդը Արտաքսերեքս II-ի հետ կարողացավ հաշտություն կնքել, ինչի արդյունքում փոքրասիական սատրապների անհնազանդությունն ի վերջո իր վերջը գտավ: Տեղում առկա խնդիրները, սակայն, որևէ կերպ չլուծվեցին, իսկ Աքեմենյանների կենտրոնական իշխանությունն էլ նույն Փոքր Ասիայում ինչքան թույլ էր ապստամբությունից առաջ, այդքան էլ թույլ մնաց այժմ:

Գլուխ 9
Աքեմենյանների տերության անկումը

Արտաքսերեքս II-ի գահակալման վերջին տարիներին, ի տարբերություն այս գահակալի կառավարման սկզբնական տարիների, Աքեմենյանների տերության ներքին դրությունը կրկին սկսեց ծանրանալ: Արդյունքում՝ լայն ինքնավարության հասան նաև կատիշները, ընդ որում անձամբ Արտաքսերեքս II-ի գլխավորությամբ նրանց դեմ ձեռնարկված արշավանքն ավարտվեց անհաջողությամբ[2]: Նույն այս ժամանակաշրջանում իր կիսաանկախ դրությունը ամրապնդեց նաև Կոլխիդայի

[1] Նեպոտ «Հայտնի օտարազգի զորավարների մասին», գլուխ 21:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 15, գլուխ 10:

թագավորությունը: Ավելին, մ.թ.ա. արդեն 360 թվականին բանն ի վերջո հասավ նույնիսկ նրան, որ Եգիպտոսի հերթական փարավոն Տախոսը (մ.թ.ա. 362-360) հաջող հարձակման անցավ Հարավային Ասորիքում և միայն փարավոնի դեմ կազմակերպված հաջող դավադրությունն էր, որը նրան կյանք արժեցավ, որ կասեցրեց այս առաջխաղացումը:

Մ.թ.ա. 359 թվականի դեկտեմբերին Արտաքսերեքս II-ը կնքեց իր մահկանացուն և գահն անցավ հանգուցյալի որդի Արտաքսերեքս III-ին (մ.թ.ա. 359-338): Աքեմենյան նոր տիրակալը եռանդուն, դաժան և ուժեղ կամքի տեր մի անձնավորություն էր, որն անմիջապես էլ ձեռք զարկեց քայքայվող տերությունը կրկին իրար բերելու գործին: Այս ճանապարհին, ի դեպ, Արտաքսերեքս III-ը չմոռացավ նաև ներքին խնդիրների մասին և, որպեսզի կանխի գահի դեմ հետագա ցանկացած ոտնձգություն, իր հարազատ Աքեմենյանների տոհմում մի իսկական ջարդ կազմակերպեց՝ վերացնելով գահի հնարավոր բոլոր թեկնածուներին: Այս ջարդի չափերը պատկերացնելու համար ընդամենը միայն նշենք, որ միայն մեկ օրում սպանվեցին Արտաքսերեքս III-ի միանգամից 80 եղբայրները, իսկ դաժան այս բռնություններին զոհ գնացած արքայի այլ ազգականների թիվն էլ ոչ-ոք ուղղակի չէր հաշվում: Այսպես թե այնպես, սակայն, ամրանալով գահի վրա՝ մ.թ.ա. 356 թվականին Արտաքսերեքս III-ը փոքրասիական սատրապներին հրամայեց ցրել իրենց ռազմական ջոկատները, սակայն Հելեսպոնտոսյան Փռյուգիայի սատրապ Արտաբազեսը չենթարկվեց այս հրամանին, իսկ շուտով էլ նրան միացավ նաև հավերժ անհանգիստ Երվանդ Հիդարնյանը, որն այժմ զբաղեցնում էր նաև Միզիայի սատրապի պաշտոնը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

355 գարուն – ***<u>Տմոլայի ճ-մ</u>*** (Սարդեսի մոտ)[1]

> Դասկելիոնի գլխավորած Աքեմենյան տերության կառավարական բանակը (մոտ 30.000) մոտեցավ Տմոլա բլրի վրա ամուր պաշտպանական դիրքեր գրաված Միզիայի ապստամբած սատրապ Երվանդ Հիդարնյանի գլխավորած բանակին (մոտ 15.000, այդ թվում հույներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000): Երեկոյան Երվանդը, հետը վերցնելով հեծելազորի ընտիր ուժեր, մնացած ուժերին հրամայեց, իրենց վրա գրավելով հակառակորդի ուշադրությունը, հսկել ամրացված դիրքերը, ինչից հետո ինքը սկսեց գործել:
>
> I փուլ – Գիշերը Երվանդի անձնական ղեկավարությամբ գործող հեծելազորը անակնկալ հարձակվեց Սարդեսից դեպի հակառակորդի ճամբար տարվող պարենամթերքի քարավանը հսկող հակառակորդի ջոկատի վրա և, պարտության մատնելով վերջինիս, տեր դարձավ հարուստ ավարի:
>
> II փուլ – Լույսը բացվելուն պես Երվանդի անձնական ղեկավարությամբ գործող հեծելազորը թիկունքից, իսկ մնացած ուժերն էլ ճակատից համակցված հարված հասցրին հակառակորդին և ծանր պարտության մատնեցին:
>
> Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցները՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 12.000 զինվոր:

Շարունակելով գործել կառավարական ուժերի դեմ՝ մ.թ.ա. 355 թվականի ամռանը Կիմայի ճ-մ-ում (Փոքր Ասիայի արևմուտք, Էգեյան ծովի ափին, Զմյուռնիայից մոտ 50 կմ հյուսիս) Երվանդի գլխավորած բանակը (մոտ 15.000, այդ թվում 10.000 հույներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.500) հաղթեցին Աֆտոթրադոսի գլխավորած Աքեմենյան տերության կառավարական բանակին (մոտ 25.000)[2], սակայն, մ.թ.ա. 354 թվականի գարնանը Սարդեսի մոտ[3] տեղի ունեցած հերթական ճակատամարտում

[1] Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 14, մաս 2:
[2] Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 14, մաս 3:
[3] Այս ճակատամարտի տեղը խիստ մոտավոր է և տրվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրադարձությունները զարգանում էին Սարդեսի մոտակայքում:

հաջողությունը մնաց արդեն կառավարական ուժերի կողմում, երբ Աֆտոթրադոսի գլխավորած Աքեմենյան տերության կառավարական բանակը (մոտ 10.000) անակնկալ հարձակումով հաղթեց Երվանդի դաշնակից բանակին (մոտ 15.000, այդ թվում 10.000 հույներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 20)[1]: Ստեղծված պայմաններում, հաշվի առնելով հետագա պայքարի վտանգավոր բնույթ ընդունելը, Երվանդ Հիդարնյանը դադարեցրեց դիմադրությունը, լքեց իր բոլոր պաշտոնները և ապաստանեց Հունաստանում, իսկ հետագայում էլ աննկատ կերպով վերադարձավ Մեծ Հայքի թագավորություն: Արդյունքում՝ արդեն տարիքն առած այս ուշագրավ անձնավորությունը դադարեցրեց ակտիվ գործունեությունը, սակայն դրա փոխարեն ակտիվ գործունեություն ծավալեց նրա համանուն որդի Երվանդը, որը, Մեծ Հայքի թագավորության արքա Վահեի օրոք հաջող առաջընթաց ապրելով, ի վերջո զբաղեցրեց Մեծ Հայքի թագավորության բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Եվ այսպես, մ.թ.ա. արդեն 352 թվականի վիճակով Փոքր Ասիան հնազանդվեց Արտաքսերեքս III-ին, ինչից հետո կրկին օրակարգ մտավ հինգ տասնամյակ շարունակ իր լուծմանը սպասող Եգիպտոսի խնդիրը: Առաջին հարվածը, որը Արտաքսերեքս III-ի ռազմական մեքենան մ.թ.ա. 350 թվականին հասցրեց Եգիպտոսի ուղղությամբ, ավարտվեց անհաջողությամբ, սակայն արդեն երկրորդ հարվածը, որը սեփական ուժերը վերստին կարգի գցած Աքեմենյանների տիրակալը սկզբնավորեց մ.թ.ա. 344 թվականի դեկտեմբերին, նրան հաջողություն բերեց: Արդյունքում՝ մ.թ.ա. 342 թվականի գարնան վիճակով Աքեմենյանների տերության 300.000 հոգանոց բանակը համառ մարտերից հետո ի վերջո արդեն պարտության էր մատնել Եգիպտական թագավորության 100.000 հոգանոց բանակին, իսկ այս ամենն էլ ավարտվեց Եգիպտոսի գրավմամբ, ինչպես եղել էր դեռևս Կամբիս II-ի օրոք: Որպես հետևանք այս ամենի՝ Եգիպտական թագավորության վերջին փարավոն Նեքթանեբ II-ը (մ.թ.ա. 360-342) փախուստի դիմեց և ապաստանեց Քուշի թագավորությունում, որտեղ էլ մի քանի տարի անց կնքեց իր մահկանացուն: Այսպիսով՝ Արտաքսերեքս III-ի երկաթյա ձեռքը լուծեց նաև Եգիպտոսի խնդիրը և մի պահ թվում էր, թե վերադառնում են Աքեմենյանների տերության լավ ժամանակները, սակայն մ.թ.ա. 338 թվականին սեպտեմբերին դավադրություններից այդքան զգուշացող Աքեմենյանների հզոր տիրակալն այնուհանդերձ զոհ գնաց իր դեմ կազմակերպված վերջին մի դավադրությանը, երբ նրան թունավորեց իր իսկ անձնական բժիշկը: Արդյունքում՝ Աքեմենյանների տերության արքա հռչակվեց հանգուցյալի որդի Արտաքսերեքս IV-ը (մ.թ.ա. 338-336), սակայն մ.թ.ա. 336 թվականի սեպտեմբերին նա ևս զոհ գնաց դավադրությանը:

Արտաքսերեքս IV-ի սպանությունից հետո Աքեմենյանների տերության արքա հռչակվեց Դարեհ II-ի թոռան որդի Դարեհ III-ը (մ.թ.ա. 336-330): Աքեմենյանների տերության նոր տիրակալը բավականին եռանդուն և ուժեղ մի անձնավորություն էր, որն աչքի էր ընկնում նաև անձնական խիզախությամբ: Վերջին հատկանիշը այդ ժամանակ դեռևս Փոքր Հայքի սատրապի պաշտոնը զբաղեցնող Դարեհը դրսևորել էր դեռևս մ.թ.ա. 340 թվականին կատիշների դեմ ձեռնարկված հերթական արշավանքի ժամանակ, երբ, գլխավորելով Փոքր Հայքի սատրապության բանակը, մարտի սկզբում տեղի ունեցած մենամարտում հաղթել էր իրեն մարտահրավեր նետած կատիշ մի հզոր ռազմիկի[2]: Արդյունքում՝ Դարեհ III-ը անմիջապես էլ պատժեց վերջին երկու դավադրությունների գլխավորներին, ինչպես նաև ամրապնդեց իր դիրքերը կրկին անհանգստության ուղին բռնած Եգիպտոսում:

Սկիզբ էին առնում, սակայն, արդեն լրջագույն փոփոխություններ, որոնք իրենց հետ լիովին նոր իրողություններ էին բերելու:

[1] Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 14, մաս 4:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 17, գլուխ 6; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 10, գլուխ 3:

Մաս VI
Հելլենա-պարթևական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Մակեդոնական թագավորության վերելքը

Երկրագնդի միջին ջերմաստիճանի կայուն անկումը, որը սկսվել էր մ.թ.ա. դեռևս մ.թ.ա. XIII դարի ամենավերջում, մ.թ.ա. IV դարում հասել էր իր զարգացման գագաթնակետին, ինչի արդյունքում Մեծ անապատը շարունակում էր պարփակված մնալ ինքն իր մեջ և ուժեր կուտակել, իսկ Մեծ տափաստանն էլ, ընդհակառակը, անվերջ դուրս էր մղում իր մեջ կուտակված մարդկային զանգվածը, որը վրա հասնող ցրտերի պատճառով հյուսիսից տենդագին կերպով առաջ էր մղվում դեպի հարավ: Արդյունքում, մասնավորապես, մ.թ.ա. արդեն VI դարի վերջին, խուսափելով Սկյութական թագավորության հետ հարևանությունից, Մեծ տափաստանի հյուսիս-արևմուտքից դեպի Արևելյան Եվրոպա շարժվեց նաև հնդեվրոպական ծագում ունեցող և իր մեջ արիական քաղաքակրթության զգալի տարրեր պարունակող մարդկային մի մեծ զանգված: Վերջինս աստիճանաբար սկսեց ձևավորվել որպես տարբեր ցեղերից կազմված մի առանձին ժողովուրդ, որը շուտով հայտնի դարձավ «գալլեր» կամ «կելտեր» անունով: Որպես հետևանք այս շարժի՝ մ.թ.ա. արդեն V դարի վերջում գալլերը հաստատվեցին Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում, որից հետո վերսկսեցին առաջխաղացումը հարավային ուղղությամբ: Արդյունքում՝ հարվածի տակ ընկավ ամենից առաջ Ապենինյան թերակղզին, որտեղ գալլերի 70.000 հոգանոց բանակը մ.թ.ա. 390 թվականի հուլիսի 18-ին ծանր պարտության մատնեց այս ժամանակ Ապենինյան նույն թերակղզում աստիճանաբար ոտքի կանգնող Հռոմեական հանրապետության 40.000 հոգանոց բանակին, ընդ որում հետագա տասնամյակներում ևս գալլերը այս ուղղությամբ շարունակեցին ծանր հարվածներ հասցնել: Նույն այս ժամանակ էր նաև, որ գալլերը առաջխաղացում իրականացրին նաև Պիրենյան թերակղզում, որտեղ ևս զգալի հաջողությունների հասան:

Մ.թ.ա. IV դարում երկրագնդի միջին ջերմաստիճանի անկումը ոչ միայն շարունակվեց, այլև հասավ իր գագաթնակետին, ինչի արդյունքում գալլական ալիքը ողողեց արդեն նաև Բալկանյան թերակղզին՝ սկզբունքորեն մոտենալով, սակայն իր չափերով այնուհանդերձ չհասնելով մ.թ.ա. XII դարում ստեղծված դրությանը: Ցանկացած դեպքում, սակայն գալլերի հաջողությունները զգալի էին և, որպես հետևանք այս ամենի, Բալկանյան թերակղզու բնակչությունը, ի դեմս ամենից առաջ իլիրիացիների տարացեղ ժողովրդի, ինչպես նաև թրակիացիների, սեղմվեց նույն թերակղզու հարավին, ընդ որում խաղաղ այս տեղաշարժի սահմաններում մարդկային զգալի խմբեր անցան նաև հունական քաղաքակրթության սահմանները՝ հետագայում արագորեն հունականանալով: Վերջին հանգամանքն իր հերթին բերեց նրան, որ մարդկային զգալի հոսք ստացած և նույն այդ հոսքը հաջողությամբ հելլենականացրած հունական քաղաքակրթությունը ռազմաքաղաքական մեծ եռանդով լցվեց, ընդ որում հունական պետությունների շարքում ամենից առաջ վերելք ապրեց մինչ այդ երկրորդական դերերի վրա գտնվող ու Հունաստանի հյուսիսում տարածվող Մակեդոնական թագավորությունը: Արդյունքում՝ Մակեդոնական թագավորության եռանդուն և տաղանդավոր արքա Ֆիլիպ II-ը (մ.թ.ա. 359-336) արդյունավետ բարեփոխումների միջոցով ոչ միայն ուժեղացրեց սեփական ռազմական մեքենան, այլև մեծացրեց նաև վերջինիս թվաքանակը՝ այն հասցնելով 50.000 ռազմիկի: Ավելին, ի տարբերություն հունական այլ պետական միավորների, Ֆիլիպ II-ի ստեղծած ռազմական մեքենան իր կազմում ուներ նաև հեծելազորային մինչև 10.000 հոգանոց ուժեղ մի բաղադրատարր, ընդ որում այստեղ ստեղծվել էր հեծելազորի և հետևազորի բավականին արդյունավետ համագործակցության հիանալի գործող մի մեխանիզմ:

Արդյունքում՝ գործի դնելով իր բանակային արդյունավետ համակարգը, մ.թ.ա. արդեն 340 թվականի վիճակով ռազմական և դիվանագիտական առաջնակարգ ունակություններ դրսևորող Ֆիլիպ II-ը ոչ միայն նվաճել էր Թրակիան ու իրեն էր ենթարկեցրել Իլիրիան, այլև իր տիրապետությունն էր հաստատել ողջ Հունաստանի նկատմամբ: Ավելին, մ.թ.ա. 339 թվականի գարնանը Մակեդոնական թագավորությունը պատերազմական գործողություններ սկսեց արդեն նաև Սկյութական թագավորության դեմ, քանզի կլիմայական անկումից նեղվող սկյութներն իրենք ևս իրենց հերթին սկսել էին սեփական հավակնությունները դրսևորել Ֆիլիպ II-ի կողմից հենց նոր նվաճված Թրակիայի նկատմամբ՝ ձգտելով անցնել Դանուբը և հաստատվել վերջինիցս ավելի հարավ ձգվող տարածքներում: Ֆիլիպ II-ի ռազմական մեքենան, սակայն, ջախջախիչ հաղթանակ տարավ Դանուբն անցած Սկյութական թագավորության ռազմական մեքենայի նկատմամբ, ընդ որում տասնյակ հազարավոր սպանված ռազմիկների մեջ էր նաև Սկյութական թագավորության իննսունամյա արքա Աթեոսը (մ.թ.ա. մոտ 360 - ուղ. 339): Որպես հետևանք այս ամենի՝ Մակեդոնական թագավորության դիրքերն ինչպես Թրակիայում, այնպես էլ Բալկանյան թերակղզու մնացած հատվածում և բուն Հունաստանում ավելի ամրապնդվեցին: Այսպիսով՝ նույն այն ժամանակ, երբ Աքեմենյանների տերության գահակալները զոհ էին գնում դավադրություններին և անառողջ հաճախականությամբ փոխում էին մեկը մյուսին, իսկ նրանց տերությունն էլ թուլանում էր, Բալկանյան թերակղզու հարավում ձևավորվեց իր նշանակությամբ առայժմ միայն տարածաշրջանային նշանակություն ունեցող ուժեղ մի պետություն, ի դեմս Մակեդոնական թագավորության:

Մակեդոնական թագավորության ձեռք բերած ռազմաքաղաքական աննախադեպ հզորացումը, թագավորություն, որն իր մեջ, ըստ էության, բյուրեղացրել էր ոչ միայն Հունաստանի և հույների, այլ նաև հարակից որոշ երկրամասերի ու ժողովուրդների ռազմական հնարավորությունները, սկյութների դեմ տարած վերջին հաղթանակից հետո Ֆիլիպ II-ին դրդեց նոր նվաճումներ իրականացնել: Իրոք, Հունաստանն և հարակից երկրամասերն արդեն, ըստ էության, նվաճված էին, Մերձսևածովյան տափաստաններ անցնելը վտանգավոր, անհեռանկար ու մեծ հաշվով անիմաստ մի գործ էր, մարտունակ գալլերի հետ հյուսիսում գործ ունենալ ուղղակի չարժեր և, բացի այդ, այստեղ նաև չկային նվաճման արժանի թիրախներ, իսկ Ապենինյան թերակղզի անցնելն էլ տեխնիկապես դժվար էր: Սրա հետ միաժամանակ, սակայն, խորաթափանց Ֆիլիպ II-ը մի կողմից տեսնում էր սեփական թագավորության ուժը, իսկ մյուս կողմից էլ նրան հստակ տեղեկություններ էին հասնում Աքեմենյանների տերության քայքայված ներքին դրության մասին, ընդ որում հատկապես լավատեսություն էր ներշնչում վերջինիս փոքրասիական սատրապությունների դրությունը, որտեղ ուժեղ էր հունական տարրը և որտեղ վաղուց ի վեր խորը հակատրամադրվածություն կար Աքեմենյանների կենտրոնական իշխանության նկատմամբ: Եվ վերջապես մակեդոնական տաղանդավոր արքային լրացուցիչ լավատեսություն էր ներշնչում նաև հույների ավանդական հակապարսկական տրամադրվածությունը, որը ստեղծված պայմաններում կիրառելու հիանալի հնարավորություն էր առաջացել:

Արդյունքում՝ ավարտելով անհրաժեշտ նախապատրաստությունները, մ.թ.ա. 336 թվականի գարնանը Ֆիլիպ II-ը իր մի շարք ունակ զորավարների գլխավորությամբ Փոքր Ասիա անցկացրեց 10.000 հոգանոց ուժեղ մի զորախումբ, որը, նպատակ ունենալով Աքեմենյանների տիրակալներից խլել ամենից առաջ հենց հունական դիմագիծ ունեցող Փոքր Ասիան, պետք է նաև տեղում գնահատեր իրավիճակը և ապագա հարվածի համար ընդհանուր հող նախապատրաստեր: Նույն այս ժամանակ Աքեմենյանների տերությունում դեռևս իշխում էր Արտաքսերեքս IV-ը, որը, սակայն, լիովին զբաղված էր ներքին խնդիրներով և ոչ ցանկություն ու ոչ էլ որևէ հնարավորություն չուներ դեմ դուրս գալ այս ներխուժմանը, դե իսկ փոքրասիական առաջնորդներն իրենք էլ մեծ հաշվով առանձնակի որևէ հիմք չունեին ընդհարվելու առայժմ իրեն բավականին պասիվ պահող

հակառակորդի հետ: Ավելին, շուտով Արտաքսերեքս IV-ը, ինչպես արդեն ասվեց, զոհ գնաց դավադրությանը և Աքեմենյանների տերության ղեկին հայտնվեց Դարեհ III-ը, որի դիրքերը, սակայն, ևս որևէ կերպ ամուր չէին: Ստեղծված պայմաններում Ֆիլիպ II-ը պատրաստվեց մեծացնել սեփական ռազմական ներկայությունը Փոքր Ասիայում և Աքեմենյանների տերության դեմ մի մեծ պատերազմ սկիզբ դնել, սակայն մ.թ.ա. 336 թվականի հոկտեմբերին դավադիրները այս եռանդուն արքային սպանեցին, ինչից հետո Մակեդոնական թագավորության գահը զբաղեցրեց վերջինիս քսանամյա որդի Ալեքսանդր III Մեծը (մ.թ.ա. 336-323):

Գլուխ 2
Ալեքսանդր III Մեծը

Մակեդոնական թագավորության նոր արքան բացառիկ մի անձնավորություն էր, որը իր շատ հատկանիշներով գերազանցում էր նույնիսկ տաղանդներից ամենևին էլ ոչ զուրկ իր հորը: Իրոք, լինելով խելացի, խորաթափանց, եռանդուն, կամային, ինչպես նաև դիվանագիտական, ռազմական, կազմակերպչական և դերասանական առաջնակարգ ունակությունների տեր մի անձնավորություն, Ալեքսանդր III Մեծը կարողացավ անել նույնիսկ այն, ինչ չկարողացավ կամ չհասցրեց անել իր հայրը: Այս առումով ամենից առաջ նշենք, որ, եթե մինչև իր կյանքի վերջն էլ Ֆիլիպ II-ը հույների հիմնական մասի կողմից այնուհանդերձ շարունակվում է ընկալվել որպես, ըստ էության, մի եկվոր և հունական ազատության կոպիտ մի խեղդող, ընդ որում Ֆիլիպ II-ն ինքը ևս որևէ փորձ չկատարեց ուղղել այս մտայնությունը, ապա, սրան հակառակ, Ալեքսանդր III Մեծը, հիանալի գիտակցելով այն հանգամանքը, որ պետք է տիրել մարդկանց ամենից առաջ հենց սրտերին, մի շարք ուղղորդված ու հաշվենկատ քայլերով կտրուկ ամրապնդեց իր դիրքերը ոչ միայն մակեդոնացիների, այլև մնացած հույների աչքում: Ավելին, եթե նույնիսկ իր հայրը ռազմական առաջնակարգ մեքենայի կիրառումը զուգորդում էր դիվանագիտական եռանդուն գործունեությամբ, ապա Ալեքսանդր III Մեծը սրան գումարեց նաև տեղեկատվական ակտիվ պայքարի գործոնը: Արդյունքում՝ Ալեքսանդր III Մեծն ինքը, ինքնին լինելով անչափ հմայիչ և մարդկանց սրտերը գրավելուն ունակ մի անձնավորություն, տեղեկատվական ամենաակտիվ գործունեություն ծավալեց ամենից առաջ հենց սեփական կերպարի փառաբանման ուղղությամբ, երբ Մակեդոնական թագավորության նոր արքան ներկայանում էր, կարծես, որպես գրեթե մի աստված կամ հենց նոր լեգենդներից դուրս եկած փառապանծ մի հերոս՝ մի տիրակալ, որն ի վիճակի էր կյանքի կոչել հույների նույնիսկ ամենահամարձակ ազգային երազանքներն ու իղձերը:

Վերջին հանգամանքի կապակցությամբ խիստ կարևորվում էր Ալեքսանդր III Մեծի ամենից առաջ հենց դրական կերպարի ստեղծումն և դրա տարածումը մարդկանց ամենալայն շրջանակների սահմաններում, մի կերպար, որտեղ երիտասարդ տիրակալը ներկայանում էր որպես մի բարի, ազնիվ, սովորական մարդկանց ցավով ու հոգսով ապրող, հասարակ ռազմիկների հետ միասին ուս-ուսի տված մարտնչելու պատրաստ անձնավորություն, ընդ որում այն հանգամանքը, որ անչափ խելացի և խորաթափանց Ալեքսանդր III Մեծը նաև լավագույն ֆիզիկական տվյալներ ուներ ու ինքն էլ չէր խուսափում իրեն վերագրվող դերի, համենայն դեպս, գոնե որոշ տարրեր իրականացնելուց, միայն ուժեղացնում էր այս պատկերը: Իրոք, Ալեքսանդր III Մեծին գովերգողներն, օրինակ, գրեթե միշտ պնդում էին, որ իրենց արքան շատ հաճախ անձամբ էր նետվում մարտի դաշտ և մարտնչում էր ընդհուպ մինչև ձեռնամարտում, ինչն իր մեջ ճշմարտության տարրեր, իհարկե, ուներ, սակայն այս հանգամանքը հաճախ ընդգծված գերագնահատվում էր: Իրականում Ալեքսանդր III Մեծն, այո, իրոք, լինելով մեծ խիզախության և քաջության տեր մի անձնավորություն, այնուհանդերձ սկզբունքորեն հեռու էր այն մտայնությունից, որ մարտի վտանգավոր հատվածներում իրեն անխոհեմ կերպով մահացու վտանգի ենթարկի, իսկ մարտին էլ նա մասնակցում էր բացառապես միայն անձնական թիկնազորի հուսալի ուղեկցությամբ, ընդ որում այդ անում էր, որպես կանոն, նույն այդ մարտի ամենավերջում կամ, առավելագույնը՝ ամենավճռական պահին: Այսպիսով՝ քարոզվող իդեալական, սակայն գործնական լուրջ վտանգներով լեցուն հերոսական կերպարը և դրան զուգորդող ու դրա կողմից, կարծես թե, պարտադրվող սոցիալական վարքագիծը, որի ուղղամիտ կիրառությունը կյանք արժեցավ նույն Կյուրոս Կրտսերին, Ալեքսանդր III Մեծի կողմից իր կիրառությունն էր ստանում ավելի խոհեմ և հաշվենկատ մի ձևով, սակայն նրան գովերգողներն այնուհանդերձ ամեն կերպ ուռճացնում էին այս հանգամանքը: Ավելին, սեփական արքայի ստացած մի քանի թեթև կամ առավելագույնը միջին ծանրության վերքերը վերջիններիս կողմից ներկայացվում

էին որպես թեժ կռվին մասնակցելու ապացույց, ընդ որում լուրջ հարցականի տակ էին ինչպես այդ վերքերի առկայությունն ընդհանրապես, այնպես էլ դրանց խորության և ստացման հանգամանքները մասնավորապես: Այս առումով հարկ է ավելացնել, որ տեղեկատվական նույն ակտիվ քարոզչությունը, որն ուղեկցում էր Ալեքսանդր III Մեծի անձին, ուղեկիցն էր նաև վերջինիս ռազմական մեքենային:

Իրոք, ռազմական գործողությունները, որոնց նախորդում էին կազմակերպչական լուրջ ջանքերը և այն հաջողությունները, որոնք ձեռք էին բերվում բարոյապես պարսավելի կամ առնվազն չեզոք միջոցների կիրառմամբ, Ալեքսանդր III Մեծի տեղեկատվական գործակալների կողմից ներկայացվում էին որպես բացառապես միայն անձնական քաջության ու խիզախության պարզ դրսևորումների արդյունքներ: Տեղեկատվական լայնածավալ այս գրոհի սահմաններում էին կիրառվում նաև առաջնակարգ հետախուզական ցանցի միջոցով հակառակորդի շարքերում կեղծ ու վերջինիս բարոյալքող տեղեկությունների տարածումը, հակառակորդի աչքի ընկնող առաջնորդների չեզոքացումը նրանց առնվազն գոնե վատաբանման միջոցով, սեփական առաջնորդների փառաբանումը և, ընդհանրապես, բոլոր այն սոցիալական լեգենդների հաջող կիրառումը, որոնք հունական ինքնասեր հասարակությունում վաղուց ի վեր առկա էր հարևան «բարբարոսների» նկատմամբ ու որոնց նույն այդ հասարակության անդամները պատրաստ էին հավատալու ամենայն պատրաստակամությամբ:

Եվ վերջապես ոչ պակաս կարևոր էր ընդգծել նաև այն հանգամանքը, որ Ալեքսանդր III Մեծը չէր գործում միայնակ, այլ հենվում էր դեռևս հոր կենդանության օրոք առաջին շարքերում հայտնված իրոք տաղանդավոր անձանց մի իսկական աստղաբույլի վրա: Ավելին, երիտասարդ արքան ինքն էլ ամեն միջոց ձեռնարկում էր, որպեսզի նույն այդ աստղաբույլը անընդհատ համալրվի ունակ նոր անձանց կողմից:

Այսպիսով՝ Ալեքսանդր III Մեծը իրեն որպես ժառանգություն հասած ռազմական ու դիվանագիտական առաջնակարգ մեքենայի արդյունավետ գործունեությանը միացրեց նաև տեղեկատվական աննախադեպ ակտիվ քարոզչությունը ինչպես սեփական երկրի ներսում, այնպես էլ դրսում, ինչը հիանալի արդյունք ապահովեց և ինչը, սակայն, ստեղծեց նաև լեգենդար այն հմայիչ քողը, որը Ալեքսանդր III Մեծի կերպարը պարուրած է պահում մինչ այժմ: Այս առումով վերջնական պարզության համար կրկնենք՝ այո, Ալեքսանդր III Մեծը անչափ կամային, խելացի, խորաթափանց և եռանդուն, ինչպես նաև դիվանագիտական, ռազմական, կազմակերպչական ու դերասանական առաջնակարգ ունակությունների տեր մի անձնավորություն էր, սակայն այս տիրակալի հաջողությունների հիմքում մեծապես ընկած էր ամենից առաջ հենց առաջնակարգ ռազմավարչական ապարատի արդյունավետ գործունեությունը և տեղեկատվական աննախադեպ գրոհը: Այս ամենը, որն իր ամբողջության մեջ այս տիրակալի կերպարին զրկում է սեփական ռոմանտիկ գրավչությունից, վերջինիս ուղղությամբ ավելի խորը հայացք գցելու պարագայում, սակայն, նրան նոր մի մի հմայք է հաղորդում, երբ ռոմանտիկորեն պարզ հերոսն իր տեղը զիջում է անչափ ունակ, հաշվենկատ և խիստ արդյունավետ կազմակերպչին:

Ալեքսանդր III Մեծի կողմից վարվող տեղեկատվական պատերազմի մասին, որն, ինչպես արդեն ասվեց, հաջողությամբ լրացրեց դեռևս նրա հոր կողմից կարգավորված ռազմավարչական համակարգը, կարելի է երկար խոսել և սա նույնիսկ առանձին մի ուսումնասիրության թեմա է, սակայն կոնկրետ այս պահին, քանի որ դա մեր կողմից ուսումնասիրվող հիմնական թեմայի շրջանակներից այնուհանդերձ դուրս է, հիշատակված երևույթի կիրառությունը դիտարկենք միայն մի մասնավոր, սակայն ռազմական առումով առաջնակարգ կարևորություն ունեցող երևույթի վրա, ի դեմս Ալեքսանդր III Մեծի բանակի թվաքանակի, մի հանգամանք, որը խիստ կարևոր է դեպքերի հետագա զարգացումը հասկանալու ու ճիշտ գնահատելու համար:

Գլուխ 3

Հունամակեդոնական բանակի թվաքանակը

Պատմական որևէ բանակի թվաքանակը, որը ներկայումս ունի բացառապես միայն տեսա-պատմական իմաստ, կոնկրետ ժամանակատարածային հարթությունում, սակայն, ունեցել է խիստ կարևոր և կենսական նշանակություն, ընդ որում այն, հասկանալի պատճառներով, պահվել է խիստ գաղտնի: Այսպես, եթե սեփական բանակի թվաքանակը եղածից քիչ ցույց տալը, երբեմն, նպատակ էր հետապնդում բթացնել հակառակորդի զգոնությունը և անակնկալ կերպով մահացու հարված հասցնել վերջինիս, ապա երբեմն էլ, ընդհակառակը, բանակի նույն այդ թվաքանակը եղածից շատ ցույց տալով, զորավարները ձգտում էին կանխել հակառակորդի հարձակումը: Կոնկրետ Ալեքսանդր III Մեծի բանակի պարագայում այս ամենին գումարվեց նաև վերևում արդեն իսկ մանրամասն կերպով քննարկված տեղեկատվական գործոնը, երբ Ալեքսանդր III Մեծն իր գործակալների առջև խնդիր դրեց, լրջորեն աղավաղելով իրականությունը, սեփական բանակը հնարավորինս փոքրաքանակ ցույց տալ, որպեսզի մի կողմից հակառակորդին անակնկալ ուժի հարված հասցվի, իսկ մյուս կողմից էլ ընդգծվի իր և հունամակեդոնական ռազմական մեքենայի անառարկելի առավելությունը նույնիսկ քանակապես գերակշռող արևելյան «բարբարոսների» հետ ընդհարման պարագայում: Այս առումով հարկ է նշել, որ երևույթի նմանատիպ արտացոլումը առկա է նաև այժմ և հենց այն է գերիշխում ներկայումս: Բարեբախտաբար, սակայն, մեզ հասել են որոշ տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս վեր հանել Աքեմենյանների տերության դեմ պատերազմ սկսած հունամակեդոնական բանակի իրական թվաքանակը:

Խնդիրը կայանում է նրանում, որ ժամանակակից ռազմապատմական գրականության մեջ ավանդականորեն ընդունված է Աքեմենյանների տերության դեմ պատերազմական գործողություններ սկսած հունամակեդոնական բանակի թվաքանակը գնահատել առավելագույնը 50.000 ռազմիկի սահմաններում: Իրականում, սակայն, կոնկրետ դեպքում մենք, ըստ էության, գործ ունենք ընդամենը մի շփոթության հետ, որն իր հիմքում ունի Ալեքսանդր III Մեծի կողմից շրջանառության մեջ դրված տեղեկատվական հստակ ուղերձը, ինչն էլ իր կոնկրետ արտացոլումն էլ գտել է մեզ հասած պատմական չորս սկզբնաղբյուրներում: Այս առումով մինչև առաջ անցնելը կարծում եմ, որ անհրաժեշտ է հատուկ քննարկել նույն այն չորս սկզբնաղբյուրները, որոնք Աքեմենյանների տերության դեմ պատերազմի հենց նախօրեին խոսում են Ալեքսանդր III Մեծի բանակի թվաքանակի մասին:

Այսպես, համաձայն Ալեքսանդր III Մեծ պաշտոնական պատմագիր Կալիսթենեսի, իսկ ըստ մեկ այլ տեսակետի էլ որպես Կալիսթենես ներկայացած մեկ այլ անձնավորության, ի դեմս Կեղծ-Կալիսթենեսի, որի տվյալները Ալեքսանդր III Մեծի բանակի մասին մեզ է հասել մ.թ.ա. II դարի հռոմեացի պատմիչ Պոլիբիոսի միջոցով. «*Այսպիսին են Կալիսթենեսի տեղեկությունները Ալեքսանդրի մասին: Այսպես, ըստ նրա խոսքերի ստացվում է, որ Ալեքսանդրը դեպի Ասիա արշավանքը սկսել է 40.000 հետևակով և 4.500 հեծյալներով, իսկ այն ժամանակ, երբ պատրաստվելիս է եղել մտնել Կիլիկիա, Մակեդոնիայից նրան որպես համալրում ժամանել է 5.000 հետևակային և 800 հեծյալ: Եթե այս թվից հանեք 3.000 հետևակայիններին ու 300 հեծյալներին, թեև սա չափից դուրս մեծ թիվ է տարբեր պատճառներով բացակայող ռազմիկների պարագայում, ապա նույնիսկ այդ դեպքում էլ դեռ կմնան 42.000 հետևակայիններ և 5.000 հեծյալներ*»[1]: Ուսումնասիրվող հարցի վերաբերյալ մեկ այլ տեղեկություն հայտնում է մ.թ.ա. I դարի հռոմեացի պատմիչ Դիոդորոս Սիկիլիացին, ըստ որի. «*Զոհաբերություններով և այլ կերպ, ինչպես որ կարգն է, հարգանք մատուցելով հերոսների գերեզմաններին՝ Աքիլլեսի, Այաքսի և այլոց, Ալեքսանդրը իր զորքի մանրազնին զորատես իրականացրեց: Արդյունքում՝ պարզվեց, որ մակեդոնական հետևազորը կազմում է 12.000 հոգի, 7.000*

[1] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 12, գլուխ 19:

հոգի դաշնակիցներն են, իսկ վարձկանները կազմում են 5.000 հոգի: Սրանք բոլորը գործում էին Պարմենիոնի հրամանատարության տակ: Բացի դրանից նրան 5.000 հոգու կազմով հետևում էին օդրիսցիներ, տրիբալներ և իլիրիացիներ, ինչպես նաև այսպես կոչված ագրիանցիների 1.000 հոգին, այնպես որ նրա հետևազորը կազմում էր 30.000 հոգի: Հեծյալներից մակեդոնացիները 1.500 հոգի էին և նրանց ղեկավարում էր Պարմենիոնի որդի Փիլոտան, թեսալացիները 1.500 հոգի էին և գործում էին Հարպալոսի որդի Կալլաթոսի հրամանատարության տակ, իսկ մնացած հելլենները, որոնք կազմում էին 600 հոգի, ենթարկվում էին Էրիգիոսին: Հետախույզները, թրակիացիները և պեոնացիները կազմում էին 900 հոգի ու գործում էին Կասանդրոսի հրամանատարության տակ: Արդյունքում՝ հեծյալները կազմում էին 4.500 հոգի: Ահա այս ուժերով Ալեքսանդրը անցավ Ասիա, իսկ Եվրոպայում Անտիպատրոսի հրամանատարության տակ մնացին 12.000 հետևակային և 1.500 հեծյալ»[1]: Իր հերթին, II դարի հռոմեական ռազմաքաղաքական գործիչ և պատմիչ Արիանոսը հայտնում է. «*Գարունը բացվելուն պես Ալեքսանդրը, Մակեդոնիայի և հելլենների ղեկավարումը հանձնելով Անտիպատրոսին, ուղղվեց Հելեսպոնտոս: Նա իր հետ տանում էր քիչ ավել, քան 30.000 հետևակայինների, թեթև զինվածների և նետաձիգների, իսկ հեծյալները 5.000 հոգուց ավել էին*»[2]: Եվ վերջապես խնդրահարույց հարցի վերաբերյալ տեղեկություններ է տալիս նաև II դարի հունահռոմեական բարոյագետ-պատմիչ Պլուտարքոսը, ըստ որի. «*Ալեքսանդրի զորքը, ըստ նրանց հաղորդումների, ովքեր մատնանշում էին նվազագույն թիվ, բաղկացած էր 30.000 հետևակից և 4.000 հեծյալից, իսկ ըստ նրանց տեղեկությունների էլ, ովքեր առավելագույնն են հաշվում՝ 40.000 հետևակից ու 5.000 հեծյալից*»[3]: Այսպիսով՝ առկա են միանգամից չորս սկզբնաղբյուրներ, որոնց տվյալներն էլ հենց հիմք են ընդունվել և որոնք Աքեմենյանների տերության դեմ հարձակման նախօրեին Ալեքսանդր III Մեծի բանակի թվաքանակը գնահատում են առավելագույնը 50.000 ռազմիկի սահմաններում, ընդ որում, դատելով Դիոդորոս Սիկիլիացու տվյալներից, բուն մարտական գործողություններին, համենայն դեպս գոնե սկզբում, մասնակցել են հազիվ առավելագույնը 40.000 ռազմիկներ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ հիշատակված թվաքանակը իրատեսական չի կարող համարվել ամենից առաջ հենց ռազմապատմական մոդելավորման տեսանկյունից, քանզի Աքեմենյանների տերությունը նույն այս ժամանակ, ընդհանուր առմամբ, ուներ մոտ 400.000 ռազմիկ, ընդ որում վերջին թիվը հաստատվում է բազում օրինակներով ինչպես, ի դեմս սկզբնաղբյուրների հաղորդումների, այնպես էլ ռազմապատմական մոդելավորման մեթոդների կիրառմամբ: Այսպիսով, եթե ընդունեք Ալեքսանդր III Մեծի բանակի առաջակվող թվաքանակը 40-50.000 ռազմիկի սահմաններում, ապա պետք է համաձայնենք նաև այն բանի հետ, որ, իր ժամանակի առաջնակարգ զորավարներ հանդիսացող Ալեքսանդր III Մեծը և նրա օգնականները նախատեսում էին ոչ միայն հարձակման անցնել սեփական բանակին տասն անգամ գերազանցող ուժերի դեմ, այլև՝ այդ գործում հաջողության հույս ունենալ: Այս հանգամանքն ինքնին արդեն իսկ կասկածներ է առաջացնում, սակայն երևույթին ոչ այնքան խորը ծանոթ մասնագետները այնուհանդերձ ընդունում են այս փաստը և, որպեսզի վերացնեն կասկածները, ընդամենը միայն սահմանափակվում են հունամակեդոնական բանակի որակական հատկանիշները գովերգելով, հակառակորդինը՝ փնովելով, իսկ Աքեմենյանների տերության բանակի թվաքանակն էլ՝ անհիմն կերպով քչացնելով: Հաշվարկն, ինչպես արդեն ասվեց, պարզ է, քանի որ նույնիսկ այս խմբին պատկանող մասնագետների համար պարզ է, որ Ալեքսանդր III Մեծն ինքն, ինչքան էլ լավ զորավար լիներ, նրա ռազմական մեքենան ինչքան էլ առաջնակարգ հատկանիշներ ունենար, իսկ Աքեմենյանների տերությունն ինչքան էլ գտնվեր քայքայված

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 17, գլուխ 17:
[2] Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 1, գլուխ 11:
[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ալեքսանդր», գլուխ 15:

վիճակում, ուժերի առաջարկվող հարաբերակցության պայմաններում հարձակողական գործողությունների անցնելը առնվազն հավասարազոր էր ինքնասպանության: Հայտնի է, սակայն, որ պատերազմը ոչ միայն չավարտվեց Ալեքսանդր III Մեծի կամ նրա զորավարներից որևէ մեկի ինքնասպանությամբ, այլև գլխավոր երեք արյունահեղ ճակատամարտների և մի շարք ռազմարշավների, ինչպես նաև մի շարք ամրացված կետերի գրավման արդյունքում 4 տարում այն իր վերջը գտավ Աքեմենյանների տերության կործանմամբ: Ավելին, այս ամենից հետո քանակական աճ ապրած հունամակեդոնական 120.000 հոգանոց բանակը իր մեջ հանկարծ ուժ գտավ արշավանք իրականացնել նաև դեպի Հնդկաստան: Սթափ ուսումնասիրողի մոտ այս հանգամանքը ևս չի կարող չմեծացնել կասկածները, սակայն խնդիրը միայն սրանով չի սահմանափակվում:

Մ.թ.ա. 479 թվականի սեպտեմբերի 9-ի Պլատեայի ճ-մ-ում, երբ Աքեմենյանների տերության 350.000 հոգանոց բանակի դեմ իր ուժերն էր կենտրոնացրել ողջ Հարավային Հունաստանը, մարտադաշտ դուրս բերվեց 110.000 հոգանոց մի բանակ, ընդ որում կրկնենք, որ սա բացառապես միայն Հարավային Հունաստանի ռազմական հնարավորությունն էր: Իր հերթին, արդեն մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, Հյուսիսային Հունաստանում գերիշխող Մակեդոնական թագավորության բանակն, ինչպես արդեն ասվեց, կազմում էր 50.000 ռազմիկ, իսկ, քանի որ մ.թ.ա. 479 թվականից մինչև մ.թ.ա. 333 թվականը ընկած ժամանակահատվածում Հունաստանը ժողովրդագրական բացասական կորուստ առնվազն չէր կրել, արդեն այս պահին իսկ կարող ենք պնդել հունամակեդոնական 160.000 հոգանոց բանակի տեսական առկայության հնարավորության մասին: Ալեքսանդր III Մեծի ռազմական հնարավորությունները, սակայն, սրանով ևս չէին սահմանափակվում, քանի որ դեռևս նրա հայրը նվաճել էր գործնականում ողջ Թրակիան և Իլիրիան, որտեղ հյուսիսից ճնշող գալլական առաջխաղացումից խուսափած մարդկային զանգվածի հաշվին բնակչության թվաքանակի զգալի աճ էր նկատվում: Իր հերթին, Ֆիլիպ II-ի ռազմաքաղաքական հաջողությունները անխուսափելի դրական ազդեցություն ունեցան նաև վերջինիս ռազմական մեքենայի վրա, որի կորիզը կազմող Մակեդոնական թագավորության 50.000 հոգանոց բանակին միացան ոչ միայն հունական դաշնակից բանակները, այլև զգալի քանակի իլիրիացիներ և թրակիացիներ: Արդյունքում, ինչպես հայտնում է III դարի հռոմեացի պատմիչ Հուստինոսը, որը, ըստ էության, կրկնում է մ.թ.ա. I դարի հռոմեացի մեկ այլ պատմիչ, Ֆիլիպ II-ի գահակալման պատմությունը գրած, սակայն, ցավոք, մեզ չհասած Պոմպեոս Տրոգոսի աշխատանքը, մ.թ.ա. 330-ական թվականների սկզբին Ֆիլիպ II-ի բանակի օժանդակ, ոչ մակեդոնական մասը կազմված էր 215.000 ռազմիկից, որից 15.000 հեծյալ[1], ընդ որում սրան գումարվում էին նաև բուն մակեդոնական ուժերը նույն 50.000 հոգու կազմով: Այս տվյալները կրկնում է նաև Օրոսիոսը[2]: Արդյունքում, ըստ երկու այս հեղինակների, դեռևս Ֆիլիպ II-ի ռազմական մեքենան կազմում էր 265.000 ռազմիկ, սակայն Ալեքսանդր III Մեծի ազդեցությունը Մակեդոնական թագավորությունում, ողջ Հունաստանում և հարակից երկրամասերում, անկասկած, ավելին էր, քան հորինը: Եվ վերջապես պետք չէ մոռանալ նաև հոնիացիների մասին, որոնք, վերջին տարիներին Փոքր Ասիայում առաջացած անիշխանության և այստեղ առանց այդ էլ առկա հակապարսկական ավանդական տրամադրությունների աճի պայմաններում, ակնհայտորեն ևս ի վիճակի էին համահունական բանակ լուրջ ուժեր ներկայացնել: Սա

[1] «*Դրանից հետո որոշվեց օժանդակ ջոկատների թիվը, որոնք արքայի վրա հարձակման կամ նրա հրամանի տակ գործելու անհրաժեշտության պարագայում, եթե նա ինքը որոշել որևէ մեկին պատերազմ հայտարարել, պետք է ներկայացներին առանձին պետությունները: Եվ կասկած չկար, որ բոլոր այդ նախապատրաստություններն ուղղված էին Պարսից տերության դեմ: Օժանդակ ջոկատներում առկա մարդկանց թվաքանակը կազմեց 200.000 հետևակային և 15.000 հեծյալ: Սրանից զատ, սակայն, առկա էին նաև մակեդոնական զորքը, ինչպես նաև բարբարոսների ջոկատներ Մակեդոնիայի կողմից նվաճված հարևան ցեղերից*» (Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 9, գլուխ 5):

[2] «*Դրանից հետո, երբ ողջ Հունաստանով մեկ ռազմիկների մեծ հավաք իրականացվեց, որպեսզի համալրեն արքայական բանակը, Ֆիլիպը պարսկական արշավանքի համար ոտքի հանեց 200.000 հետևակայինների և 15.000 հեծյալների՝ չհաշված մակեդոնացիների, ինչպես նաև բարբարոսական ժողովուրդների անթիվ ռազմիկների զորքը: Նա մտադիր էր ողջ այդ բանակը Ասիա տեղափոխել* (Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների», գիրք 3, գլուխ 14):

ևս, սակայն, փաստարկների ամբողջությունը չէ:

Խնդիրը վերջնականապես պարզաբանելու համար հարկ է առանձին քննարկման առարկա դարձնել նաև Կալիսթենեսի կամ Կեղծ Կալիսթենեսի, ինչպես նաև Դիոդորս Սիկիլիացու, Արիանոսի և Պլուտարքոսի հաղորդումները: Իրոք, չորս այս հեղինակներից առաջինը խոսում է հենց բացառապես միայն «մակեդոնական բանակի» մասին, Պլուտարքոսը հիշատակում է «Ալեքսանդրի բանակը»[1], իսկ Դիոդորս Սիկիլիացու հաղորդումն էլ ևս իր հիմնական մասով կրկին վերաբերում է նույն Մակեդոնական թագավորության բանակին, ինչպես նաև նրա սկզբնական վիճակով իր կազմում ընդգրկված դաշնակից ուժերին, որոնք հետագայում լրջորեն համալրվել են: Ինչ վերաբերում է Արիանոսի հաղորդմանը, ապա պարզ է, որ Ալեքսանդր III Մեծի հետ կրկին միայն Մակեդոնական թագավորության բանակն էր:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոշարադրյալը, թերևս, կարող ենք փաստել, որ Ալեքսանդր III Մեծի բանակը Աքեմենյանների տերությանը հասցված հարվածի նախօրեին կազմել է մոտ 265.000 ռազմիկ, առաջարկված 40-50.000 թիվը կամ կեղծիքի արդյունք է, կամ վերաբերում է բացառապես միայն Մակեդոնական թագավորության բանակին, իսկ այդ պարագայում էլ, եթե ընդունենք, որ Աքեմենյանների տերության բանակը կազմված էր մոտ 400.000 ռազմիկից, սակայն առկա էին ներքին լուրջ խնդիրներ, որոնք Դարեհ III-ի ռազմավարչական համակարգին խանգարում էին արդյունավետ գործել, ուժերի արդեն առկա այս հարաբերակցության պայմաններում հունամակեդոնական նվաճողները կարող էին լիակատար հույսեր ունենալ հաջողության հասնել:

Գլուխ 4
Հույն-Պարսկական II պատերազմը

Եվ այսպես, ստանձնելով Հունամակեդոնական աշխարհի առաջնորդի դերը և ավարտելով բոլոր նախապատրաստությունները, որոնց մեջ, ի դեպ, կարևոր նշանակություն ուներ նաև հյուսիսում ուժեղացած գալլերի հետ չեզոք հարաբերությունների հաստատումը, մ.թ.ա. 334 թվականի գարնանը Ալեքսանդր III Մեծը ռազմական գործողություններ սկսեց Աքեմենյանների տերության դեմ: Սկիզբ առավ Հույն -Պարսկական II պատերազմը (մ.թ.ա. 334-330):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

334 մայիս – ***<u>Գրանիկոս գետի ճ-մ</u>*** (Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտք)[2]

> Փոքր Ասիայի սատրապների, ինչպես նաև Կիլիկիայի թագավորության արքա Արշամի (մ.թ.ա. 362-333) ընդհանուր ղեկավարությամբ գործող Աքեմենյան տերության (110.000, այդ թվում 10.000 հեծյալ, 20.000 հույներ, 5.000 մարեր և 2.000 բակտրիացի հեծյալներ, մոտ 10.000 հայեր, ինչպես նաև հյուրկաններ ու

[1] Այս առումով հատկանշական է, որ ոլորտի դասական համարվող Ի. Դրոյզենը, քննարկելով սույն խնդիրը, ինքը ևս մակեդոնական բանակի թիվը գնահատում է 34.000 ռազմիկի սահմաններում, որից 4.000 հոգին՝ հեծյալ (տես՝ Дройзен И. “История эллинизма”, том 1, Москва 2011, стр. 114, 115): Ուշագրավ է նաև, որ այս հեղինակը հետագայում ևս, խոսելով Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենայի մասին, հիմնականում հիշատակում է միայն բուն մակեդոնական բանակը (տես օրինակ՝ նույն աշխատության 459 էջի 22-րդ ծանոթագրությունը, որտեղ նշված է. «*...выступивших теперь в поход из Македонии воинов*»), սակայն ավելի ուշ խոսում է Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենայի կազմում այնուհանդերձ առկա ոչ մակեդոնական և նույնիսկ ոչ հունական տարրի մասին (տես օրինակ՝ նույն աշխատության 463-464 էջերի 48-րդ ծանոթագրությունը և նրանում բերված աղյուսակը): Ընդհանրապես ասած այլ հեղինակներ ևս, հետևելով ոլորտի դասական համարվող Ի. Դրոյզենին, ոչ միայն չեն քննարկել Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենայի թվաքանակը կամ նրա էթնիկ բաղադրատարրերը, այլև հստակ տարբերակում չեն դրել վերջինիս հունական, ոչ հունական և մակեդոնական տարրերի միջև: Այս առումով թույլ տամ ինձ կարծել, որ վերևում բերված վերլուծությունը խնդիրը պարզաբանելու առաջին փորձն է:

[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 17, գլուխ 17-21; Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 1, գլուխ 12-16; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ալեքսանդր», գլուխ 15, 16; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 11, գլուխ 6; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 4, գլուխ 3, մաս 15, 16; Հովսեփ Փլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 11, գլուխ 8; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 4:

պաֆլագոնցիներ) և նրա կազմում գործող Մեծ Հայքի թագավորության[1] (մոտ 20.000) միացյալ բանակը, տեղյակ չլինելով հակառակորդի թվական գերակշռության մասին, շարժվեց Ալեքսանդր III Մեծի գլխավորությամբ ***Փոքր Ասիա*** մտած հունամակեդոնական բանակին (մոտ 250.000) ընդառաջ՝ դիրքեր գրավելով գետի աջ և բարձրադիր ափին: Արիական Եռադաշինքի բանակի ձախ թևի առաջին շարքում տեղավորվեցին Աքեմենյան, Կիլիկիայի, հյուրկանական և պաֆլագոնական, աջ թևի առաջին շարքում՝ մարական, բակտրիական ու պարսկական հեծելազորները, կենտրոնի առաջին շարքում տեղաբաշխվեց Մեծ Հայքի թագավորության հեծելազորը, իսկ հետևակը մնաց երկրորդ շարքում: Հունամակեդոնական բանակի աջ թևում տեղաբաշխվեցին մակեդոնական ծանր հեծելազորը և թեթև հետևակը, կենտրոնում տեղավորվեց ֆալանգը, իսկ ձախ թևում դիրքեր գրավեցին թեսալական ու դաշնակից մյուս հեծելազորները:

I փուլ – Հունամակեդոնական բանակի աջ թևը անցավ հարձակման, սակայն, ընկնելով հակառակորդի նետահարության և տեգահարության տակ, հետ մղվեց ելման դիրքերը:

II փուլ – Հունամակեդոնական բանակը Ալեքսանդր III Մեծի անձնական ղեկավարությամբ աջ թևում կրկին անցավ հարձակման և ի վերջո հասավ հաջողության: Միաժամանակ հարձակման անցան և հաջողության հասան նաև հունամակեդոնական բանակի կենտրոնն ու ձախ թևը, ընդ որում վճռական պահին Աքեմենյանների տերության բանակի երկրորդ շարքում գտնվող հույն վարձկանները դանդաղեցին մարտի մեջ մտնել, որն էլ պայմանավորեց հակառակորդի բանակի վերջնական հաջողությունը: Աքեմենյանների տերության բանակը պարտություն կրեց և դիմեց փախուստի:

III փուլ – Հունամակեդոնական բանակը շրջապատեց և ոչնչացրեց կատաղորեն պաշտպանվող հույն վարձկաններին:

Ընդհանուր շարքից դուրս եկած 32.000 զինվորից, որոնցից 12.000 սպանված և 20.000 գերի, հայերը կորցրին մոտ 8.000, դաշնակիցները՝ մոտ 24.000 զինվոր, թշնամին կորցրեց մոտ 10.000 զինվոր:

Աքեմենյանների տերության բանակի դեմ շահելով առաջին և կարևոր հաղթանակը՝ Ալեքսանդր III Մեծը դրանից հետո, առանց լուրջ դիմադրության հանդիպելու շարունակելով արշավանքը Գրանիկոս-Սարդես-Եփեսոս (վերջինը՝ Փոքր Ասիայի հարավ-արևմուտք) -Միլեթ -Հալիկառնաս (վերջինը՝ Փոքր Ասիայի հարավ-արևմուտք) -Լուկիա- Գորդիոս (վերջինը՝ Կապադովկիայի արևմուտք) -Անկյուրա (վերջինը՝ Սեբաստիայից մոտ 316 կմ արևմուտք) երթուղով, գրավեց Փոքր Ասիայի զգալի մասը: Նույն այս ժամանակ ազգությամբ հույն, սակայն հակառակորդին ծառայող Մեմնոն Հռոդոսցու գլխավորած Աքեմենյանների տերության նավատորմը մի շարք գործողություններ իրականացրեց Էգեյան ծովում և փորձ կատարեց հակամակեդոնական ապստամբություն սկզբնավորել Հունաստանում, սակայն մ.թ.ա. արդեն 333 թվականի մայիսին նա կասկածելի պայմաններում հանկարծամահ եղավ, որից հետո հունամակեդոնական բանակի թիկունքն ու հաղորդակցության ուղիները խաղաղվեցին: Այս ընթացքում Դարեհ III-ն իր հերթին վճռական մարտի համար արդեն կենտրոնացրել էր սեփական տերության ուժերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

333 նոյեմբերի սկիզբ – ***Իսոսի ճ-մ*** (Կիլիկիա, Ճկեր գավառ, Հայոց ծոցից հյուսիս-

[1] Դիոդորոս Սիկիլիացին, առանց էթնիկ պատկանելիությունը, ճշտելու խոսում է արիական բանակի կենտրոնը գրավող «մյուս ազգերի հեծյալների» մասին, «*որոնք մեծաթիվ էին և ընտիր իրենց արիությամբ*»: Հաշվի առնելով համաարիական բանակում Հայկական բանակի ունեցած մեծ դերն ու բարձր համբավը և այն, որ հետագա 2 ճակատամարտերում Հայկական բանակը առաջնային դեր ուներ, կարելի է վստահությամբ պնդել, որ այստեղ խոսվում է հենց Հայկական հեծելազորի մասին:

արևելք, Պայաս գետի[1] ափին)[2]

Վերսկսելով առաջխաղացումը՝ Ալեքսանդր III Մեծի գլխավորած հունամակեդոնական բանակը (մոտ 235.000), արշավելով ***Անկյուրա-Կեսարիա*** (վերջինը՝ Կապադովկիայի հարավ-արևելք) ***-Տարսոն-Իսոս*** երթուղով, առանց լուրջ մարտերի նվաճեց Կիլիկիան և արդեն աշնան վերջին հասավ Կիլիկիայի ծայր հարավ-արևելք: Ի պատասխան դրա՝ Դարեհ III-ի ընդհանուր ղեկավարությամբ ***Հյուսիսային Ասորիքում*** կենտրոնացած Աքեմենյան տերության (400.000, որից 100.000 հեծյալ, այդ թվում 100.000 պարսիկներ, որոնցից 30.000 հեծյալ, 60.000 մարեր, որոնցից 10.000 հեծյալ, 42.000 դերբիկներ և սակեր, 30.000 հույներ, 14.200 կասպեր, 12.000 բարկանցիներ, որոնցից 2.000 հեծյալ, 6.000 հյուրկաններ, 1.000 տապուրներ, ինչպես նաև բակտրիացիներ, դահեր, արաքոսցիներ, մասագետներ, սողդեր, լեռնային հնդիկներ, կասպեր, մարեր, շոշեցիներ, օքսեր, հնդիկներ, կարմիրծովցիներ, արեյներ, «անհայտ ցեղեր»[3], կատիշներ, կապադովկիացիներ, ասորիներ, ատրպատականցիներ, աղվանցիներ, կովկասցիներ, սարմատներ, սկյութներ, փռյուգիացիներ, կատաոններ, կարիացիներ, հորտուացիներ, բաբելացիներ, բելիտներ, սիտակեններ ու պարթևներ) և նրա կազմում Վահե արքայի գլխավորությամբ գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 60.000, այդ թվում, Մարդպետական գունդը), ինչպես նաև Կիլիկիայի թագավորության արքա Արշամի գլխավորած Կիլիկիայի ու Փոքր Հայքի սատրապությունների (մոտ 10.000) միացյալ բանակը առաջխաղացում սկսեց դեպի հյուսիս: Արդյունքում՝ Արիական Եռադաշինքին բանակը ***Մալիս կիրճով*** մտավ Կիլիկիա և, անցնելով Իսոսի ծոցի հյուսիս-արևելյան ափերով, հյուսիսից սկսեց մոտենալ ավելի հարավ գտնվող հակառակորդի բանակին: Իր հերթին, տեղեկանալով սեփական բանակի թիկունքում հակառակորդի բանակի առաջխաղացման մասին, Ալեքսանդր III Մեծը փոխեց իր բանակի շարժման ուղղությունը, հետ դարձավ և, շարժվելով արդեն դեպի հյուսիս, աստիճանաբար մոտեցավ ***Պայաս գետի հարավային ափին:*** Հունամակեդոնական բանակը ճամբար զարկեց, ընդ որում մինչև այդ Ալեքսանդր III Մեծին հաջողվեց իր կողմը գրավել մարերի, ինչպես նաև մի շարք այլ ժողովուրդների և ցեղերի ղեկավարներին:

Մոտենալով միմյանց՝ կողմերը մարտակարգ ընդունեցին: Աքեմենյանների տերության բանակի առաջին շարքում տեղավորվեց հույների ֆալանգը, շրջապատված պարսից թեթև հետևակով, երկրորդ շարքի կենտրոնում տեղաբաշխվեցին Աքեմենյան, ձախ թևում մարական և նրանց դաշնակից, իսկ աջ թևում՝ Հայկական բանակները: Հունամակեդոնական բանակի աջ թևը կազմվեց ծանր հեծելազորից, կենտրոնում տեղաբաշխվեց ֆալանգը, որի հետևում տեղավորվեց թեսալական հեծելազորը, իսկ ձախ թևում տեղավորվեց դաշնակից հեծելազորը:

I փուլ – 12:00-ի մոտակայքում հունամակեդոնական բանակը աջ թևում

---

[1] Սովորաբար համարվում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել Պինարոս գետի ափին, որը գտնվում է Պայաս գետից մոտ 16 կմ ավելի հյուսիս: Հաշվի առնելով այն հանգամանքը, սակայն, որ, համաձայն Կեղծ-Կալիսթեսի, լեռների ստորոտից մինչև Հայոց ծոցի ծովափը կազմել է 14 ասպարեզ՝ 2.5 կիլոմետր, ավելի հավանական կարելի է համարել հենց իմ նշած տարբերակը, քանի որ Պինարոս գետի մոտակայքում լեռների ստորոտից մինչև Հայոց ծոցի ծովափը ընկած տարածքը կազմում է 8-10 կմ: Հայտնի է, որ հունամակեդոնական բանակը ստեղծված օպերատիվ իրավիճակում ձգտում էր մարտի մեջ մտնել այնպիսի տեղանքում, որտեղ ճակատի լայնությունը և հետևաբար հակառակորդի մեծաթիվ ու շարժունակ բանակի մանևրի հնարավորությունը սահմանափակ կլիներ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կրկին կարելի է հավանական համարել հենց Պայաս գետի տարբերակը, որտեղ ճակատը չի գերազանցել 2.5 կմ-ը,ի համեմատ Պինարոս գետի, որտեղ ճակատը կազմում է արդեն մոտ 10 կմ, ընդ որում վերջին պարագայում հունամակեդոնական բանակի հակառակորդի մանևրը սահմանափակող որևէ հանգամանք արդեն գործնականում չկար:

[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 17, գլուխ 31-36; Կուրցիոս Ռուֆոս «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» գիրք 3, գլուխ 2, 4, 7-11; Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 2, գլուխ 4-11; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ալեքսանդր», գլուխ 18, 19; Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 12, գլուխ 17-22; Հովսեփ Փլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 11, գլուխ 8; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 11, գլուխ 9; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 4, գլուխ 3, մաս 5; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 4; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 5, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 6; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 4:

[3] Սրանք սկզբնաղբյուրներում կոչված են հենց այսպես:

անցավ հարձակման, և, գետն անցնելուց հետո կորցնելով մարտակարգը, անկազմակերպ ձևով հարված հասցրեց հակառակորդի բանակին: Նույնը փորձ կատարեց անել նաև հունամակեդոնական բանակի կենտրոնը, սակայն վերջինս, չկարողանալով արագ հաղթահարել կտրուկ զառիվերը, հետ մնաց սեփական աջ թևից: Այս ընթացքում Հայկական բանակն իր հերթին աջ թևում հարձակման անցավ, որի արդյունքում համառ հեծելազորային մարտ բռնկվեց:

II փուլ – 14:00-ի մոտակայքում Հայկական բանակը սկսեց առավելության հասնել հակառակորդի բանակի ձախ թևի նկատմամբ և արդյունքում Ալեքսանդր III Մեծը ստիպված եղավ կենտրոնից օգնության ուղարկել թեսալական հեծելազորը, ինչպես նաև ողջ պահեստազորը: Այս ընթացքում Արիական Եռադաշինքի բանակի կենտրոնի հետևակը նետվեց հակառակորդի կենտրոնի հետ մնալու պատճառով նրա կենտրոնի և աջ թևի միջև ստեղծված միջանցքը՝ փորձելով դուրս գալ հակառակորդի առաջ եկած աջ թևի թիկունք ու շրջապատել այն:

III փուլ – 16:00-ի մոտակայքում Արիական Եռադաշինքի բանակի ձախ թևը կազմող մարական և սրանց դաշնակից ուժերը դավաճանաբար դիմեցին փախուստի, որի արդյունքում Աքեմենյան տերության բանակի ձախ թևը միանգամից հայտնվեց ծանր դրության մեջ: Օգտվելով դրանից՝ Ալեքսանդր III Մեծի գլխավորած աջ թևը հարձակվեց Արիական Եռադաշինքի բանակի կենտրոնի երկրորդ շարքի վրա, որտեղ բռնկված խիստ համառ և արյունահեղ մարտից ու Դարեհ III-ի փախուստից հետո փախուստի դիմեցին նաև մնացած ուժերը:

IV փուլ – 17:00-ի մոտակայքում Ալեքսանդր III Մեծի գլխավորած աջ թևը թիկունքից, իսկ նրա բանակի կենտրոնը՝ ճակատից, շրջապատեցին և գլխովին ջախջախեցին հակառակորդի կենտրոնում գործող հետևազորին:

V փուլ – 19:00-ի մոտակայքում հունամակեդոնական ողջ բանակը շարժվեց սեփական ձախ թևին օգնության, որն այդ ընթացքում հայտնվել էր խիստ ծանր դրության մեջ: Իր հերթին, զգալով, որ շուտով տեղ կհասնեն հակառակորդի հսկայական ուժեր, իսկ ճակատամարտն էլ ընդհանուր առմամբ արդեն տանուլ է տրված, Հայկական բանակի խորը դասավորություն ունեցող հեծելազորը շրջվեց և, հետ շպրտելով թիկունքից մոտեցող հակառակորդի բանակին, ապահովեց սեփական հետևակի ու դաշնակից ուժերի դուրս գալը մարտից: Արդյունքում՝ Հայկական և դաշնակից միացյալ բանակը մարտերով նահանջեց՝ ի վերջո հեռանալով մարտի դաշտից:

Ընդհանուր շարքից դուրս եկած 110.000 զինվորից, որից 10.000-ը հեծյալ, հայերը կորցրին մոտ 20.000 զինվոր, որոնց թվում զոհվեց նաև Արշամը, դաշնակիցները՝ մոտ 90.000 զինվոր, թշնամին կորցրեց մոտ 30.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր հարված հասցրեց Աքեմենյանների տերության ռազմական մեքենային, որն առժամանակ դադարեց գործել: Ավելին, համաաքեմենյան բանակի մարական և վերջինիս դաշնակից ուժերից կազմված հատվածն ընդհանրապես դադարեցրեց դիմադրությունը, իսկ նրա մի մասն էլ անցավ հակառակորդի կողմը: Ստեղծված բարենպաստ պայմաններում լիովին իրացնելով իր այս մեծ հաջողության պտուղները՝ հունամակեդոնական բանակը հետագա մեկ տարում գրավեց Ասորիքը և Եգիպտոսը, ընդ որում Եգիպտոսում Ալեքսանդր III Մեծին ընդունեցին որպես ազատարար ու անմիջապես էլ փարավոն հռչակեցին: Հընթացս կարգավորելով գործերը և պատրաստվելով Աքեմենյանների տերության ռազմական մեքենայի հետ նոր և, դատելով ըստ ամենայնի, վերջին ու վճռական մի ընդհարման, մ.թ.ա. 331 թվականի արդեն մայիսին Ալեքսանդր III Մեծը սկսեց սեփական ռազմական մեքենան Ասորիքով աստիճանաբար դեպի հյուսիս տեղափոխել:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

331 հոկտեմբերի 1 – ***Գավգամելայի ճ-մ*** (= ***Արբելայի ճ-մ***) (Հյուսիսային Միջագետք, Նինվեից մոտ 30 կմ հարավ-արևելք)[1]

Ալեքսանդր III Մեծի գլխավորությամբ ***Հյուսիսային Ասորիքում*** կենտրոնացած հունամակեդոնական համալրված բանակը (մոտ 200.000) վերսկսեց առաջխաղացումը դեպի արևելք: Արդյունքում, հուլիսին անցնելով ***Եփրատը*** և դանդաղ առաջանալով ***Հյուսիսային Միջագետքով,*** հակառակորդի բանակի գլխավոր հրամանատար Մազեյոսի թողտվությամբ վերջինս սեպտեմբերի վերջին անարգել գետանցեց արդեն նաև ***Տիգրիսը,*** որից հետո պատրաստվեց շարժվել հարավային ուղղությամբ: Տեղեկանալով այս մասին՝ Դարեհ III-ի ընդհանուր ղեկավարությամբ ***Կենտրոնական Միջագետքում*** կենտրոնացած Աքեմենյան տերության (245.000, որից 45.000 հեծյալ, այդ թվում 9.000 բակտրիացիներ, 2.000 շոշեցիներ, 2.000 արաքոսցիներ, 2.000 մասագետներ, 1.000 դահեր, ինչպես նաև հույներ, օքսեր, սակեր, հնդիկներ, լեռնային հնդիկներ, կարմիրծովցիներ, արեյներ, պարսեր, սողդեր, կասպեր, հյուրկաններ, տապուրներ, «անհայտ ցեղեր», կատիշներ, կապադովկիացիներ, ասորիներ, ատրպատականցիներ, աղվանցիներ, կովկասցիներ, սարմատներ, սկյութներ, փռյուգիացիներ, կատաոններ, կարիացիներ, հորտուացիներ, բաբելացիներ, բելիտներ, սիտակեններ և պարթևներ, 200 մանգաղակիր մարտակառք, 15 փիղ) և նրա կազմում Վահե արքայի, սպարապետ Երվանդ Հիդարնյանի, հեծելազորի հրամանատար Աշոտ Արծրունու ու նրա օգնական Վահագն Քաջ Հայկազունու գլխավորությամբ գործող Մեծ Հայքի թագավորության (մոտ 50.000, այդ թվում, Մարդպետական գունդը), ինչպես նաև Միհրդատի գլխավորած Փոքր Հայքի սատրապության (մոտ 5.000) միացյալ բանակը մոտեցավ հակառակորդին և պատրաստվեց մարտի: Հունամակեդոնական բանակն իր հերթին անշտապ մոտեցավ հակառակորդին և մարտակարգ ընդունեց:

Հունամակեդոնական բանակի աջը թևը կազմվեց ծանր հեծելազորից, կենտրոնը՝ ֆալանգից, իսկ ձախ թևում տեղաբաշխվեցին դաշնակից հեծելազորը և հետևակը: Ավելին, կրկին հակառակորդի օգտին գործած Մազեյոսի մեղքով հսկողության տակ չվերցվեց կարևոր նշանակություն ունեցող մի բարձունք, որը անմիջապես նվաճեց Ալեքսանդր III Մեծը՝ այնտեղից իրականացնելով ճակատամարտի հետագա ղեկավարումը: Աքեմենյանների տերության բանակի ձախ թևը կազմվեց սատրապ Բեսոսի գլխավորած բակտրիացիներից և նրանց ենթակա ցեղերի ռազմիկներից, իսկ կենտրոնում տեղակայվեց Դարեհ III-ի գլխավորած Աքեմենյան տերության մնացած բանակը: Արիական Եռադաշինքի բանակի աջ թևը կազմվեց երկու շարասյուններից, ընդ որում Մեծ Հայքի թագավորության բանակը կազմում էր աջ շարասյունը՝ ձախը թողնելով Փոքր Հայքի բանակին:

I փուլ – 11:00-ի մոտակայքում Ալեքսանդր III Մեծը իր բանակի աջ թևը տեղաշարժեց ավելի աջ: Տեսնելով այդ՝ Դարեհ III-ին թվաց, թե հակառակորդը

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 17, գլուխ 52-61; Կուրցիոս Ռուֆոս «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» գիրք 4, գլուխ 12-16; Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 3, գլուխ 7-15; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ալեքսանդր», գլուխ 31-33; Հուստինոս «Ֆիլիպի պատմությունը», գիրք 11, գլուխ 13, 14; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 4, գլուխ 3, մաս 6, 17; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 26; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 4; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 3, մաս 19; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 6; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 31; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 22, 25; Անանիա Շիրակացի «Պատմություն»; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 1, 4; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 4; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 7; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 2; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 4; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

ձգտում է դուրս գալ մարտակառքերի գործողության համար նախապես հատուկ նախատեսված տեղանքից և, դա թույլ չտալու նպատակով, վերջինս հակառակորդի աջ թևի ուղին փակելու նպատակով առաջ ուղարկեց բակտրիական հեծելազորը, որն ուժեղացված էր սակական հեծելազորով: Արդյունքում՝ հակառակորդի բանակի ձգված աջ թևի հետ սկիզբ առավ կատաղի բախում: Միաժամանակ Արիական Եռադաշինքի բանակի աջ թևում ճակատային գրոհ իրականացնող հետևակը և մարտակառքերը, ինչպես նաև թևանցում կատարող հեծելազորը սկսեցին նեղել ու աստիճանաբար պարտության մատնել հակառակորդի ձախ թևին, չնայած այն բանին, որ վերջինիս ի վերջո հաջողվեց վնասազերծել մարտակառքերը՝ նիզակներով վահաններին հարվածելով աղմուկ ստեղծելու միջոցով ահաբեկելով մարտակառքերի ձիերի մի մասին:

II փուլ – 13:00-ի մոտակայքում Արիական Եռադաշինքի բանակի ձախ թևում հարձակման անցան մարտակառքերը, որոնք որոշակի կորուստներ պատճառեցին հակառակորդի ռազմիկներին, սակայն վերջիններս ի վերջո կարողացան սեփական շարքերում ճանապարհ բացելու միջոցով ոչ միայն հաջող պայքար մղել մարտակառքերի դեմ, այլև՝ ոչնչացնել դրանց մեծ մասն և վերականգնել շարքերը:

III փուլ – 15:00-ի մոտակայքում Դարեհ III-ը ձախ թևի հետևակի մեծ մասը հարձակման նետեց հակառակորդի բանակի աջ թևի վրա, որի հետ մարտն այստեղ ավելի թեժացավ: Միաժամանակ, հակասելով իր իսկ այս որոշմանը, Դարեհ III-ը, սեփական բանակի թիկունքում և ծայր աջ թևում խորը շրջանցում կատարելով, իր բանակի ձախ թևի բակտրիացիների ու սակերի հեծելազորները ուղղեց թշնամու բանակի ձախ թևի թիկունքում գտնվող վերջինիս գումակի վրա:

IV փուլ – 17:00-ի մոտակայքում Ալեքսանդր III Մեծի գլխավորած աջ թևի հեծելազորը և կենտրոնի ֆալանգը, օգտվելով հակառակորդի ձախ թևի զգալի թուլացումից, անցան կտրուկ հարձակման ու, պարտության մատնելով հակառակորդին, համառ և արյունահեղ մարտում ցրեցին վերջինիս: Կարճ ժամանակ անց պարտություն կրեց նաև Արիական Եռադաշինքի բանակի կենտրոնը, որի ռազմիկները, հետապնդվելով հակառակորդի բանակի կողմից, դիմեցին փախուստի: Միաժամանակ Ալեքսանդր III Մեծը սեփական բանակի ձախ թևին օգնության ուղարկեց թեսալական հեծելազորը:

V փուլ – Մինչ զարգանում էին նախորդ իրադարձությունները՝ Արիական Եռադաշինքի բանակի հետևազորը ճակատային հարձակումով խիստ ծանր վիճակ էր ստեղծել հակառակորդի բանակի ձախ թևի համար, իսկ Աշոտ Արծրունու և Վահագն Քաջ Հայկազնի գլխավորությամբ հակառակորդի մարտակարգը թևանցած Հայկական, բակտրիական, սակական ու կատիշական հեծելազորներն էլ, չնայած թեսալական հեծելազորի ժամանելուն, ի վերջո ներխուժեցին հունամակեդոնական բանակի գումակ:

VI փուլ – 19:00-ի մոտակայքում ստանալով տեղեկություն իր բանակի ձախ թևի օրհասական դրության մասին՝ Ալեքսանդր III Մեծը դադարեցրեց հակառակորդի հետապնդումը և ողջ բանակով շարժվեց սեփական ձախ թևին օգնության: Իր հերթին, զգալով, որ շուտով տեղ կհասնեն հակառակորդի հսկայական ուժեր, իսկ ճակատամարտն էլ ընդհանուր առմամբ արդեն տանուլ է տրված, Հայկական բանակի խորը դասավորություն ունեցող հեծելազորը շրջվեց և, հետ շպրտելով թիկունքից մոտեցող հակառակորդի բանակին, ապահովեց սեփական հետևակի ու դաշնակից ուժերի դուրս գալը մարտից: Հայկական և դաշնակից միացյալ բանակը մարտերով նահանջեց և, ի վերջո պոկվելով հակառակորդի բանակից, վերադարձավ Հայրենիք, սակայն հենց այս ընթացքում էլ Վահեն ընկավ մարտում:

Ընդհանուր շարքից դուրս եկած 90.000 զինվորից հայերը կորցրին մոտ 15.000, դաշնակիցները՝ մոտ 75.000 զինվոր, թշնամին կորցրեց մոտ 40.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը իր հետ հսկայական փոփոխություններ բերեց: Մարտում զոհվեց Մեծ Հայքի թագավորության արքա Վահեն, որով Հայկազունիների տոհմի արական ուղիղ գիծն ընդհատվեց: Վահեի զոհվելուց հետո Մեծ Հայքի թագավորության արքա դարձավ վերջին ճակատամարտերում աչքի ընկած նրա սպարապետ, Երվանդ Հիդարնյանի որդի Երվանդը՝ Երվանդ II-ը (մ.թ.ա. 331 - մոտ 305): Աշոտ Արծրունին և Վահագն Քաջ Հայկազնը գերվեցին, հետագայում Աշոտը տարբեր պաշտոններ զբաղեցրեց Ալեքսանդր III Մեծի զորավարներից Պտղոմեոսի մոտ, իսկ Վահագնը ծառայության անցավ Ալեքսանդր III Մեծի թիկնապահ զորամասում: Փոփոխությունները, սակայն, անհամեմատ ավելի ճակատագրական, եղան Աքեմենյանների տերության, Մերձավոր Արևելքի և, ընդհանրապես, ողջ աշխարհի պարագայում:

Իրոք, երեք այս ճակատամարտերի արդյունքում շարքից դուրս եկան Արիական Եռադաշինքի բանակին մոտ 240.000 ռազմիկներ, ինչը ծանրագույն հարված հասցրեց վերջինիս՝ հետագայում արդեն, ըստ էության, բացառելով ինչպես կազմակերպված դիմադրության իրականացումը, այնպես էլ այն կյանքի կոչելու իրական հնարավորությունը: Ավելին, հսկայական էր նաև Աքեմենյանների տերության ղեկավար կազմի հոգեբանական ճնշվածությունը, որը երեք լիարժեք ճակատամարտերում ամենահամոզիչ կերպով համոզվեց, որ կոնկրետ ժամանակատարածային հարթության մեջ հունամակեդոնական ռազմական մեքենային դիմադրելու և ոչ մի հնարավորություն ուղղակի չկա: Այս առումով Արիական Եռադաշինքի գլխին չար կատակ խաղաց նաև վերջինիս համադաշնային բնույթը, որը ոչ միայն ցրվեց, այլև ի հայտ չբերեց նաև ուժեր, որոնք ստեղծված ծանր պայմաններում հանուն Աքեմենյանների մեծապես արդեն վարկաբեկված տոհմի պատրաստ կլինեին շարունակել հետագա դիմադրությունը: Եվ վերջապես ոչ պակաս ճակատագրական եղավ նաև Դարեհ III-ի հետագա վարքագիծը, որը, իր հերթին հոգեպես ճնշված և արդեն չմտածելով հետագա դիմադրության մասին, ուղղակի պատսպարվեց սեփական կործանվող տերության արևելքում, որտեղ էլ հենց մ.թ.ա. 330 թվականի մայիսին զոհ գնաց արդեն իսկ հիշատակված Բեսոսի հղացած դավադրությանը:

Դարեհ III-ի սպանությամբ Աքեմենյանների տերությունը վերջնականապես կործանվեց, իսկ Հույն-Պարսկական II պատերազմն էլ իր վերջը գտավ: Արիական Եռադաշինքը կործանվեց և այլևս երբեք չվերականգնվեց: Մարերն և պարսիկներն ընկան հունամակեդոնական նվաճողների տիրապետության տակ, սակայն Մեծ Հայքի թագավորությունը պահպանեց իր անկախությունն և տիրապետությունը Հայաստանի 16 նահանգներում, Փոքր Հայքում ստեղծվեց անկախ թագավորություն ու միայն Կիլիկիան էր, որ մնաց Ալեքսանդր III Մեծի և նրա հետնորդների իշխանության տակ, թեև այն էլ հաճախ վայելում էր փաստացի անկախություն:

Գլուխ 5
Հունամակեդոնական տերության վերելքը

Ոչնչացնելով Աքեմենյանների տերությունը և ինչպես հարկն է ամրանալով վերջինիս տարածքում՝ մ.թ.ա. 327 թվականին Ալեքսանդր III Մեծը պատերազմական գործողությունները տեղափոխեց Միջին Ասիա ու Հյուսիսային Հնդկաստան, իսկ մ.թ.ա. արդեն 325 թվականի ամռան վիճակով էլ վերջինս, ըստ էության, արդեն նվաճել էր Ինդոս գետի ողջ հովիտը: Ավելին, ստանալով տեղեկություններ այն մասին, որ դեպի ավելի արևելք գտնվում է Գանգես գետը, որն, իր ժամանակվա մարդկանց պատկերացումների համաձայն, «աշխարհի ծայրն» էր, Ալեքսանդր III Մեծը որոշեց արշավել նաև այդ ուղղությամբ: Շուտով, սակայն, տեղեկություններ ստացվեցին, որ այդ դեպքում հունամակեդոնական ռազմական մեքենան ստիպված կլինի ընդհարվել տեղական

իշխանությունների 200.000 հոգանոց միացյալ բանակի հետ:

Արդյունքում, չնայած արշավանքի հրաման այնուհանդերձ տրվեց, սակայն արդեն հունամակեդոնական բանակը հրաժարվեց կատարել այն, քանի որ, ինչպես պարզվեց, ռազմիկների մեծագույն մասն ուղղակի այլևս ի վիճակի չէր շարժվել դեպի ավելի արևելք: Որպես հետևանք այս զարգացումների՝ Ալեքսանդր III Մեծը իր բանակը բաժանեց երեք մասի, երբ նավատորմը պետք է Պարսք վերադառնար ծովով, իսկ իրենից երկու շարասյուներ ներկայացնող մնացած բանակն էլ պետք է նույնն աներ ցամաքով: Ցամաքային անցումը Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենային բավականին թանկ գին արժեցավ և վերջինս զգալի կորուստներ կրեց պարենամթերքի ու ջրի պակասից, ինչպես նաև տեղական այլ անբարենպաստ պայմաններից և, մասնավորապես՝ շոգից: Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. 324 թվականի սկզբին Ալեքսանդր III Մեծն, ինչպես նաև նրա հարվածային հիմնական բանակն արդեն Պարսքում էին: Սրանով էլ հենց ավարտվեցին Ալեքսանդր III Մեծի նվաճումները, որոնց արդյունքում ստեղծվեց Ինդոս և Ամու-Դարյա գետերի ափերից մինչև Հյուսիսային Աֆրիկայի կենտրոնական հատվածներ ու Բալկանյան թերակղզի, ինչպես նաև Միջին Ասիայից ու Հայկական լեռնաշխարհի հարավային սահմաններից մինչև Հնդկական օվկիանոս ձգվող տարածքներն ընդգրկող Հունամակեդոնական տերությունը: Վերջինս, սակայն, կարճ կյանք էր ունենալու:

Գլուխ 6
Հայոց պատմության հիմնական ուղենիշները հելլենիզմի դարաշրջանում

Պայմանավորված Հունամակեդոնական տերության հիմնադիր և միակ տիրակալ Ալեքսանդր III Մեծի նվաճումներով, ինչպես նաև Աքեմենյան տերության կործանումով՝ Մերձավոր ու Միջին Արևելքում սկիզբ առավ երկար հարյուրամյակներ տևած հելլենիզմի դարաշրջանը: Սա շատ բան տեսած Արևելքի համար, թեև հերթական, բայց միաժամանակ նաև նոր և փայլուն մի էջ էր՝ կապված մեծ քաղաքակրթական ձեռքբերումների ու մշակութային թռիչքի, ինչպես նաև հզոր տերությունների, փառահեղ տիրակալների և ականառու զորավարների մի ամբողջ համաստեղության գործունեության հետ: Եղան նաև ժողովրդագրական փոփոխություններն, երբ արդյունքում հունական տարրը մասսայականորեն տեղափոխվեց Մերձավոր ու Միջին Արևելք, հաստատվեց այստեղ և, երկար ժամանակի ընթացքում տեղում տիրապետելով քաղաքական գերիշխանությանը, ապահովեց Արևելյան ու հունական մշակութային յուրօրինակ մի սիմբիոզ՝ սկիզբ դնելով, ինչպես արդեն ասվեց, նոր և յուրօրինակ մի քաղաքակրթության: Սկիզբ առավ Հելլենիզմի դարաշրջանը: Ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում նաև Հայաստանի վրա բացվում էր նոր դարաշրջանի առավոտը:

Հելլենիզմի դարաշրջանը նոր էջ բացեց նաև Հայոց պատմության բազմադարյա մատենագրքում: Այս առումով, թերևս, կարելի է խորհրդանշական համարել նաև այն հանգամանքը, որ նախորդ դարաշրջանն ավարտվեց Հայկազունիների գահատոհմի վերջին տիրակալ Վահեի մահով: Մարտունակ այս արքայի մահից հետո Հայկազունիների տոհմը սպառվեց և Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Գավգամելայի ճակատամարտում աչքի ընկած Երվանդ II-ը (մ.թ.ա. 331-305)՝ դեռևս Աքեմենյանների օրոք հայտնի դարձած Երվանդ Հիդարնյանի որդին և Երվանդունիների արքայական գահատոհմի իրական հիմնադիրը[1]: Այսպիսով, նախորդ դարաշրջանի հետ միասին պատմության գիրկն անցավ նաև մոտ երկու հազարամյակ Հայոց բարձրագույն իշխանությունն իր ձեռքում պահած և Հայկ Նահապետից սերող Հայկազունիների արքայատոհմը[2]:

[1] Գահատոհմը զբաղեցրել է Մեծ Հայքի թագավորության գահը մ.թ.ա. 331 - մոտ 247 և 212-201 թվականներին:

[2] Այս թեմայի վերաբերյալ տես իմ նախորդ աշխատանքը՝ Հակոբյան Մ.Ի. «Հայկազուններ (մոռացված մի արքայատոհմ)», Երևան 2012:

Հելլենիզմի դարաշրջանի Հայոց պատմությունը ուսումնասիրողների և ուսումնասիրությունների պակաս երբեք չի ունեցել: Ի տարբերություն նախորդների, այս դարաշրջանն իր վրա է բևեռել մասնագետների ուշադրությունը գործնականում արդեն վաղ միջնադարից: Խնդիրը մի կողմից պայմանավորված էր այն հանգամանքով, որ այս դարաշրջանն անխզելիորեն կապված էր հունահռոմեական քաղաքակրթության հետ, իսկ մյուս կողմից էլ առկա էր սկզբնաղբյուրների անհամեմատ ավելի մեծ քանակություն՝ ի համեմատ նախորդ դարաշրջանի:

XIX դարի երկրորդ կեսից, երբ դրվեցին ժամանակակից գիտական պատմագրության հիմքերը, հելլենիզմի դարաշրջանի Հայոց պատմության ուսումնասիրությանը ձեռք զարկեցին արդեն նաև այսպես կոչված «բուրժուական» պատմաբանները, որոնց գիտական դպրոցի գլուխգործոցն և թագը հանդիսանում էր Լեոն (1860-1932): Վաստակաշատ այս գիտնականը, կարծես, ամփոփեց բոլոր այն ձեռքբերումները, որոնց հասել էր իր կողմից հիանալի կերպով ներկայացված գիտական դպրոցը՝ միաժամանակ իր մեջ կրելով նաև նույն այդ դպրոցին բնորոշ թերությունները[1]:

Դարաշրջանի ուսումնասիրությանը հետագայում նոր որակներ հաղորդեց այսպես կոչված «խորհրդային» պատմագիտությունը, որի արձանագրած արդյունքները մեծ հաշվով տպավորիչ էին: Իրոք, ժամանակակից ակադեմիական ողջ զինանոցի կիրառմամբ, ըստ էության, գիտական շարադրանքի ենթարկվեց դարաշրջանի լիակատար պատմությունը, ընդ որում ուրվագծվեցին նաև հիմնական այն ուղենիշները, որոնցով մեծ հաշվով առաջնորդվում ենք նաև մենք հիմա: Պատմական այս դպրոցի հիմնադիրն և ամենափայլուն ներկայացուցիչը Հ. Մանանդյանն (1873-1952) էր, որի հիմնարար աշխատանքներն, ըստ էության, հենասյուներ հանդիսացան խորհրդահայ ողջ պատմագիտության համար, այդ թվում նաև մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի առումով[2]: Այս պատմական դպրոցի գլուխգործոցը կարող է համարվել նաև Հայ ժողովրդի պատմություն ակադեմիական բազմահատորյակը, որը, մեծ հաշվով հիմք ունենալով Հ. Մանանդյանի գծած ուղենիշները, միաժամանակ նաև դրանք լրացրեց ու հարստացրեց նորանոր փաստերով[3]:

Խորհրդահայ պատմական դպրոցին, սակայն, բնորոշ էին նաև մի քանի կոնցեպտուալ թերություններ, ընդ որում դրանք ավելի շատ ունեին գաղափարական բնույթ և իրենց արմատներով գնում էին դեպի խորհրդային վարչահրամայական համակարգը: Այսպես, այս պատմական դպրոցի գործնականում բոլոր աշխատանքները միանգամից մի քանի տեսանկյունից լիովին աղավաղում էին իրականությունն և տալիս էին խեղաթյուրված պատկերացում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: Այս մասին, սակայն, վերևում արդեն խոսվեց:

XX դարում խորհրդային աշխարհաքաղաքական սահմաններից դուրս Հայոց պատմագիտությունը, չնայած առանձին ձեռքբերումների, փայլուն արդյունքներ այնուհանդերձ չարձանագրեց՝ խորհրդահայ պատմագիտության համեմատությամբ բոլոր առումներով մնալով զիջող: Մերձավորարևելյան գաղութներում զարգացող պատմագիտությունը, ինչ-որ տեղ ակնառու իր ժամանակի համար, XX դարի երկրորդ կեսից հայտնվեց լճացման վիճակում և անհուսալիորեն հետ մնաց իր ժամանակի գիտական մակարդակից: Այս առումով պետք է հատուկ նշել, որ Հայոց պատմության ընդհանուր պատմական հարցերին և, մասնավորապես հելլենիզմի դարաշրջանին նվիրված ոչ մի լուրջ աշխատություն այս դպրոցում լույս աշխարհ այդպես էլ չեկավ[4]: Իր հերթին, Հայոց պատմագիտությունը, որի փայլուն հիմքերը դրեց Ն. Ադոնցը (1871-1942) արդեն եվրոպական քաղաքակրթության սահմաններում[5], չնայած առանձին փորձերին[6],

---

[1] Տես՝ Լեո «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 1, Երևան 1966:

[2] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 1, Երևան 1977; հատոր 2, Երևան 1978; Մանանդյան Հ. Հ. «Տիգրան երկրորդն և Հռոմը», Երևան 1972 և այլն:

[3] Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971; մասնակիորեն՝ հատոր 2, Երևան 1984:

[4] Տես մասնավորապես՝ Ալպոյաճեան Ա. Ա. «Հայ գաղթականության պատմություն», Կահիրե 1941; Ալպոյաճեան Ա. Ա. «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», Կահիրե 1937 և այլն:

[5] Տես՝ Ադոնց Ն. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», Երևան 1987; Ադոնց Ն. «Հայոց նախարարության ծագումը», Բեյրութ

արժանի հետնորդ ու զարգացում ևս այդպես էլ չունեցավ նաև այստեղ:

Անկախության ձեռքբերումից ի վեր հելլենիզմի դարաշրջանի Հայոց պատմությունն արժանացավ նորանոր ուսումնասիրությունների, ընդ որում արձանագրված արդյունքներն իրոք ծանրակշիռ են[2]: Միաժամանակ, սակայն, չպարզաբանված և ոչ միանշանակ գիտական լուծման արժանացած հարցերի քանակն առայժմ զգալի է, ընդ որում ցավալի է այն հանգամանքը, որ, եթե իրոք հիշատակության արժանի որոշ ժամանակաշրջաններ ուսումնասիրված են բավականին խորությամբ, թեև այստեղ էլ կան առնվազն քննարկման արժանի մնացած շատ հարցեր, (օրինակ՝ Տիգրանյան ժամանակաշրջանը), ապա շատ և զգալի հետաքրքրություն առաջացնող այլ ժամանակաշրջաններ ու տարածաշրջաններ էլ մնացել են ընդհանրապես առանց հատուկ ուսումնասիրության (օրինակ՝ Հայոց Միջագետքի պատմությունը): Ուսումնասիրության կարոտ են մնացել նաև ինչպես հարցեր և խնդիրներ, որոնք ունեն մեծ ժամանակատարածային ընդգրկում, այնպես էլ հարցեր ու խնդիրներ, որոնք ունեն ավելի փոքր ընդգրկում: Առանձին քննարկման կարիք ունեն նաև որոշ ժամանակագրական հարցեր և վերջապես, միանշանակ վերաբերմունքի չեն արժանացել նաև պատմական սկզբնաղբյուրները:

Գլուխ 7
Երվանդունիների հիմնախնդիրը

Ընդունված է կարծել, որ մ.թ.ա. VI դարի կեսերից սկսած Հայոց թագավորությունում իշխանության է եկել մի տոհմ, որն անվանվել է «Երվանդուններ» անունով: Այս պնդումը, սակայն, իր հիմքում ունի, թերևս, միայն հայտնի հաղորդումը Երվանդ I Սակավակյացի տիրապետության մասին և հիմնված է այս արքայի զուտ անվան վրա: Միայն այս հանգամանքը հիմք ընդունելով հետևություններ անել անձի տոհմական պատկանելիության մասին, սակայն, սխալ է: Օրինակ, Ֆրանսիայում տիրել են «Լյուդովիկոս» («Լուի») անունով 19 արքաներ, որոնք պատկանել են արքայական չորս տարբեր գահատոհմերի: Այսինքն՝ զուտ «Երվանդ» անունով արքայի առկայության պարագայում խոսել գահատոհմի փոփոխության մասին, կարծում եմ, հիմնավոր չէ և այս պարագայում Մովսես Խորենացու տեղեկություններն այն մասին, որ Հայոց թագավորությունում ընդհուպ մինչև մ.թ.ա. 331 թվականը շարունակել են իշխել Հայկազունիները, արժանահավատ են[3]:

Երվանդունիների տոհմի պատմությունն իր մեջ ավելի շատ հարցեր է պարունակում, քան՝ պատասխաններ: Մասնավորապես, հստակորեն հայտնի չէ, թե ի՞նչ արմատներ է ունեցել այս տոհմն և ի՞նչ կերպ ու երբ է այն հասել քաղաքական իշխանության[4]: Արդեն ասվեց, որ մ.թ.ա. VI դարի կեսերին վերաբերող տեսությունն, ըստ էության, որևէ աղբյուրագիտական հիմք չունի: Միաժամանակ, սակայն, կան նաև զգալի տեղեկություններ, որոնք այնուհանդերձ հիմք են տալիս ասելու, որ արդեն Աքեմենյան դարաշրջանում այս տոհմն ունեցել է որոշակի քաղաքական իշխանություն: Այսպես,

---

1949; Ադոնց Ն. «Հայոց պատմությունը», Երևան 1972; Ադոնց Ն. «Պատմագիտական ուսումնասիրություններ», Փարիզ 1948; Ադոնց Ն. «Տիգրան Մեծ», Երևան 2010 և այլն:

[1] Հրանդ Ք. Արմեն «Մեծն Տիգրան», Անթիլիաս 1947, Հրանդ Ք. Արմեն «Անկում Արտաշէսեան հարստութեան», Բէյրութ 1967 և այլն:

[2] Տես՝ Հակոբյան Հ. Պ. «Տիգրան Մեծ», Երևան 2005; Մանասերյան Ռ. Լ. «Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան 2007; Մովսիսյան Ա. Ե. «Տիգրան Մեծ», Երևան 2010 և այլն:

[3] Այս առումով հատկանշական է, որ խորհրդահայ պատմագիտության պաշտոնական տեսակետն ու վերջին ձեռքբերումներն արտահայտող հայ ժողովրդի պատմություն ակադեմիական հրատարակության հեղինակներն ավելի քան զգուշ են արտահայտվում. «*Նաև այն կարծիքն է արտահայտվել, թե Երվանդունիների դինաստիան իր ծագմամբ կապված է եղել մ.թ.ա. VI դարի Հայաստանի թագավորների հետ: Այդ տեսակետի օգտին վկայում է երկու դինաստիաներում Երվանդ անվան առկայության փաստը*» (Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 504), ընդ որում տողատակում հղում է կատարվում Ս. Երեմյանի աշխատանքներից մեկին (С. Т. Еремян, К вопросу об этногенезе армян, ВИ, 1951, № 7): Փաստորեն խնդիրն, ըստ էության, հանգեցվում է միայն մեկ գիտնական կարծիքի, իսկ իրենք՝ ակադեմիական հրատարակչության հեղինակները, ընդամենը զգուշորեն հիշատակում են այդ մասին:

[4] Խնդրի ուշագրավ քննարկումը տես՝ Рунг Э. В. “Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н.э.”ВДИ, N 1, 2012.

որպես Հայաստանի ղեկավարներ, թեև այդպես էլ իշխանության չկոնկրետացվող ձևով և տարածական ընդգրկմամբ, նույն այդ Աքեմենյան դարաշրջանում հիշատակվում են մի շարք տիրակալներ, որոնցից ոմանք ակնառու դերակատարություն են ունեցել նույնիսկ Աքեմենյան պետական համակարգում: Մասնավորապես, մ.թ.ա. V դարի վերջին և IV դարի առաջին կեսին, այս մասին արդեն խոսվեց, հիշատակվում է Երվանդ անունով Հայաստանի մի տիրակալ, որն ամուսնացած էր Արտաքսերեքս II-ի աղջկա հետ, այս արքայի օրոք զբաղեցնում էր ամենաազդեցիկ պաշտոններ, իսկ հետագայում էլ նա իր մասնակցությունը բերեց փոքրասիական սատրապների հերթական ապստամբությունը[1]:

Չնայած ուղղակի տվյալների բացակայությանը՝ հիմքեր կան ենթադրելու, որ այս Երվանդը հայրն էր այն Երվանդի, որը գլխավորում էր Մեծ Հայքի թագավորության բանակը մ.թ.ա. 331 թ-ի հոկտեմբերի 1-ի Գավգամելայի ճակատամարտում, իսկ հետո էլ զբաղեցրեց Մեծ Հայքի թագավորության գահը: Կան հատվածական տեղեկություններ նաև այլ Երվանդունիների մասին, ընդ որում այս տիրակալներն իրենց սերած էին համարում դեռևս Դարեհ I-ի ժամանակ ապրած և այդ արքայի օրոք մեծ ազդեցություն ունեցած Հիդարնեսից՝ մեկից Աքեմենյան տերության այն յոթ ազնվատոհմիկներից, որոնք օժանդակեցին Դարեհ I-ին տիրել Աքեմենյանների տերության գահին[2]:

Երվանդունիների տոհմի քաղաքական իշխանության սահմանները, սակայն, ինչպես արդեն ասվեց, չեն հստակեցվում և այժմ գերիշխում է տեսակետը, որ նրանք եղել են Հայկական լեռնաշխարհի հիմնական մասն ընդգրկող աքեմենյան սատրապություններից ամենամեծի սատրապները, սակայն այս պնդումը որևէ ուղղակի ապացույցով չի հաստատվում: Վերոգրյալի կապակցությամբ, հաշվի առնելով իմ կողմից առաջ քաշած այն տեսակետը, որ Աքեմենյանների դարաշրջանում ենթադրաբար մ.թ.ա. 520 թվականին ստեղծված Մեծ Հայքի թագավորությունը, որպես հերթական համահայկական պետական միավոր, շարունակել են ղեկավարել Հայկազունիները, ես հավանական եմ համարում այն մոտեցումը, որ հենց այս ժամանակ էր, որ Մեծ Հայքից առանձնացվեց ու ստեղծվեց Փոքր Հայքի սատրապությունը, որը հանձնվեց Դարեհ I-ի մտերիմ շրջապատին պատկանող Հիդարնեսին: Վերջինիցս էլ հենց սերվեցին հետագայում աստիճանաբար հայացած նրա հետնորդները, որոնց մենք արդեն գիտենք որպես Երվանդունիներ: Ընդհանրացնելով վերոգրյալն ամրագրենք, որ մինչև մ.թ.ա. 331 թվականն Երվանդունիների որևէ արքայատոհմի առկայության մասին պնդումները չեն համապատասխանում իրականությանը, իսկ այս տոհմի մասին այնուհանդերձ առկա տեղեկություններն էլ վերաբերում են Փոքր Հայքում իշխած սատրապական ժառանգական գահատոհմին:

Մ.թ.ա. 331 թ-ի հոկտեմբերի 1-ի Գավգամելայի ճակատամարտն, ինքնին շրջադարձային Մերձավոր և Միջին Արևելքի համար, նույն նշանակությունն ունեցավ նաև Հայոց պատմության պարագայում ու հենց այս ճակատամարտի կապակցությամբ է, որ առաջին անգամ հիշատակվում է Օրոնտես կամ Երվանդ անունով հայտնի մի առաջնորդ[3], որին հետագայում վիճակված էր լինելու գլխավորել Մեծ Հայքի թագավորությունը: Այս առումով կարծում եմ, որ, հաշվի առնելով Հայոց արքա Երվանդ I Սակավակյացի առկայությունը, ճիշտ է հենց այս, այլ ոչ թե մեկ այլ տիրակալի, կոչել Երվանդ II:

Երվանդ II-ի մասին հաղորդումները, դժբախտաբար, ընդամենը երկուսն են, որոնցից մեկի մասին, կապված մ.թ.ա. 331 թ-ի հոկտեմբերի 1-ի Գավգամելայի ճակատամարտի հետ, արդեն բավարար խոսվեց: Ինչ վերաբերում է երկրորդ հաղորդմանը, ապա այն թվագրվում է մ.թ.ա. 317 թվականով, երբ այսպես կոչված «Դիոդոխների պատերազմի» դրվագներից մեկում Երվանդ II-ը հիշատակվում է որպես

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 15, գլուխ 2; Քսենոֆոն «Անաբասիս», գիրք 3, գլուխ 5; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 7, գլուխ 14, մաս 3, 4 և այլն:
[2] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15:
[3] Արիանոս «Ալեքսանդրի արշավանքը», գիրք 3, գլուխ 8:

անկախ և հզոր երկրի մի տիրակալ[1]: Սրանք են այն երկու հաղորդումները, որոնցով էլ, ըստ էության, սպառվում են մեր տեղեկություններն Երվանդ II-ի մասին, ընդ որում, եթե այս արքայի իշխանության սկզբի պահը, կապված Գավգամելայի ճակատամարտի հետ, հնարավոր է քիչ թե շատ ճշտությամբ սահմանել, իսկ մ.թ.ա. 317 թվականին էլ նա դեռ կենդանի էր, ապա վերջինիս իշխանության ավարտի թվականի հարցը մեծապես մնում է անորոշ: Այս առումով որոշակի ժամանակագրական խարիսխ հանդիսանում է, թերևս, միայն այն հանգամանքը, որ մ.թ.ա. 301 թվականին մենք գործ ունենք Մեծ Հայքի թագավորության արդեն մեկ այլ և բավականին հզոր արքայի հետ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ որպես Երվանդ II-ի թագավորության վերջի ժամանակ կարելի է մատնանշել մ.թ.ա. մոտ 305 թվականը:

Գավգամելայի ճակատամարտից հետո, ինչպես արդեն նշվեց, անկախ թագավորության կարգավիճակի հասավ նաև Փոքր Հայքը, որի առաջին արքա հռչակվեց նույն Գավգամելայի ճակատամարտին իր մասնակցությունը բերած Միհրդատը՝ Միհրդատ I-ը (մ.թ.ա. 331-322): Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա Արշամի զոհվելուց հետո այնտեղ անկախության որևէ գործընթաց տեղի չունեցավ և երկրամասն ուղղակի ընդգրկվեց Հունամակեդոնական տերության կազմում:

Ինչպես արդեն ասվեց, Երվանդ II-ի մասին հաղորդումները ընդամենը երկուսն են, սակայն վերջինիս կառավարման շրջանի վերաբերյալ այնուհանդերձ մեզ են հասել որոշ անուղղակի տվյալներ, որոնք հիմք են տալիս ասելու, որ նրա թագավորությունը ոչ միայն չի նվաճվել կամ ընդգրկվել Ալեքսանդր III Մեծի ստեղծած Հունամակեդոնական տերության կազմում[2], այլև չի ենթարկվել նաև վերջինիս հիմնական բանակի հարձակմանը: Մեկ ռազմական ընդհարում, սակայն, Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենայի հետ Գավգամելայի ճակատամարտին հաջորդող շրջանում հայերն այնուհանդերձ ունեցան:

Իրոք, մ.թ.ա. 324 թվականի ամռանը Սպերի ճ-մ-ում (Բարձր Հայք) Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 60.000) հաղթեց Սպերի ոսկու հանքերը գրավելու նպատակով Մենոնի գլխավորությամբ առաջխաղացած Հունամակեդոնական տերության բանակին (մոտ 70.000), ընդ որում Մենոնը զոհվեց[3]: Սկզբնաղբյուրում իրադարձության թվականը չի նշվում, սակայն հավանական է համարել, որ այն տեղի է ունեցել Ալեքսանդր III Մեծի՝ Բաբելոն վերադառնալուց հետո, այսինքն՝ մ.թ.ա. 324-323 թվականների միջև: Արդյունքում՝ կարելի է ենթադրել, որ այս իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 324 թվականին, քանի որ հենց այդ ժամանակ Ալեքսանդր III Մեծը մասամբ անդրադարձավ Միջագետքի մոտակա երկրներին նվաճմանը և, մասնավորապես արշավանք սկսեց դեպի հարակից երկրամասեր, ընդ որում մ.թ.ա. 323 թվականին նախատեսված էին ռազմական այլ գործողություններ:

Գլուխ 8
Հունամակեդոնական տերության անկումը

Աքեմենյանների տերության տապալումից հետո Ալեքսանդր III Մեծն, ինչպես արդեն ասվեց, շարունակեց իր նվաճումները և ստեղծեց հսկայական մի նոր տերություն, որը, սակայն, խիստ կարճ կյանք ունեցավ: Իրոք, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 323 թվականի հունիսի 10-ին իրեն պատած տենդի նոպայից կամ, ըստ որոշ կարծիքների, թունավորման արդյունքում Ալեքսանդր III Մեծը կնքեց իր մահկանացուն, նրա թողած տերությունը քայքայման երկարատև մի փուլ մտավ:

---

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 19, գլուխ 23; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 4, գլուխ 8:

[2] Այս հանգամանքը, ի տարբերություն արտասահմանյան պատմական դպրոցների, միանշանակ ընդունվում էր խորհրդահայ պատմական դպրոցի կողմից: Տեսակետն առաջ քաշեց Հ. Մանանդյանը, որը ամուր կերպով հիմնավորեց այն և որևէ կասկածի տեղ, ըստ էության, չթողեց: Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1, Երևան 1977, էջ 97-100, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 504 և այլն:

[3] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 9:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Ալեքսանդր III Մեծը իր իսկ կողմից հենց նոր ստեղծած տերության համար ուղղակի չհասցրեց վարչական քիչ թե շատ ամուր մի կմախք թողնել, նա ինքը չուներ նույնիսկ լիարժեք հետնորդ, իսկ նորանվաճ տարածքներն էլ մեկը մյուսի հետ թույլ էին կապված և, բացի այդ, լի էին հունամակեդոնական տարրին հակադրվելու տրամադրություններով: Իր հերթին, շարժի մեջ մտած հունամակեդոնական ռազմիկների հսկայական քանակությունից նույն այս ժամանակ արդեն վաղուց առաջին դերերի վրա էին հայտնվել Ալեքսանդր III Մեծին հասակակից նրա զինակիցները, որոնք, աչքի առաջ ունենալով իրենց ղեկավարի հսկայական հաջողությունները, բնականաբար լի էին սեփական քայլերն անելու վճռականությամբ: Ալեքսանդր III Մեծի մահվան պահին վերջինս օրինական ժառանգ, ինչպես արդեն ասվեց, դեռևս չուներ և արդյունքում որոշվեց, մինչև պարսկուհի նրա հղի գլխավոր կնոջից երեխան կծնվի ու կհասունանա, Հունամակեդոնական տերության խնամակալ նշանակել դեռևս Ֆիլիպ II-ի թիկնազորի հրամանատար, իսկ այժմ էլ պետության լավագույն զորավարներից մեկը համարվող Պերդիկային, որը, սրան գումարած նաև, Ալեքսանդր III Մեծին հեռավոր ազգական էր գալիս:

Ալեքսանդր III Մեծի մահից անմիջապես հետո Պերդիկան Հունամակեդոնական տերության արքա հռչակեց վերջինիս խորթ եղբայր Ֆիլիպ III-ին (մ.թ.ա. 323), սակայն, հազիվ մեկ ամիս անց այն բանից հետո, երբ Ալեքսանդր III Մեծի պարսկուհի գլխավոր կինը արու զավակ ունեցավ, արքա հռչակեցին հենց վերջինիս՝ նորածին Ալեքսանդր IV-ին (մ.թ.ա. 323-309): Այս առումով հարկ է նշել, որ երկու գահակալներն էլ չընդունվեցին իրենց հպատակների զգալի մասի կողմից, երբ հասարակ ռազմիկները Ֆիլիպ III-ի կողմն էին, իսկ Պերդիկան և այլ զորավարներ էլ՝ նորածին Ալեքսանդր IV-ի: Սրան, սակայն, շուտով գումարվեց նաև մեկ այլ խնդիր:

Ինչպես և կարելի էր սպասել, Պերդիկան անմիջապես էլ իր ձեռքը վերցրեց պետության կառավարման սանձերը ու սկսեց հետևողական քաղաքականություն վարել նվաճումների, եթե ոչ շարունակման, ապա Հունամակեդոնական տերության գոնե ամբողջականության պահպանման ուղղությամբ: Կենտրոնաձիգ այս քաղաքականությունը, սակայն, բնականաբար չէր համապատասխանում փառասերների արդեն իսկ հիշատակված այն ուշագրավ աստղաբույլի ներկայացուցիչների հիմնական մասի շահերին, որոնք առաջին դերերի վրա էին եկել դեռևս Ալեքսանդր III Մեծի օրոք և այժմ լի էին սեփական իշխանությունը ստեղծելու մարմաջով: Այս առումով հարկ է ավելացնել նաև, որ միմյանց հակասող և բացառող այս գործընթացներում Պերդիկայի դեմ դուրս եկավ նաև սոցիալական գործոնը, քանի որ ի վերջո պարզվեց, որ հունական միասնականության ու գերիշխանության իդեալական գաղափարներին մարդիկ գերադասում են հակադրել ավելի իրական և այդ պահին իրենց ձեռքի տակ եղած կոնկրետ օգուտը, ինչի արդյունքում Պերդիկան աստիճանաբար զրկվեց կողմնակիցներից: Եվ վերջապես ավելորդ չէ ավելացնել նաև, որ հիշատակված գործընթացում իր բացասական դերն ունեցավ նաև անձնական գործոնը, քանզի մարդկային շփումներում գոռոզ և իրեն արդեն ասիական բռնապետի վարքուբարքով դրսևորող Պերդիկային, ինչպես նաև բանակում այդպես էլ չսիրված նրա գլխավոր օգնական, Ալեքսանդր III Մեծի քարտուղարության ղեկավար Էվմենոսին զորքը վերջին հաշվով այդպես էլ չսիրեց, այն դեպքում, երբ մյուս կողմում էին ռազմիկների հետ մշտական շփումներում գտնվող ու նրանց սրտերը գրաված այնպիսի ընդունված զորավարներ, ինչպիսիք էին Անտիպատրոսը, Լեոնադիոսը, Անտիգոնոսը, Լիսիմաքոսը, Կրատերոսը, Պտղոմեոսը, Սելևկոսը և այլք: Եվ այսպես, Ալեքսանդր III Մեծի մահից անմիջապես հետո նրա թողած տերության առաջնորդների միջև հարաբերությունները սրվեցին, երբ մ.թ.ա. արդեն 323 թվականի վերջին, ըստ էության, ստեղծվեց մի իրավիճակ, երբ պետության տարբեր հատվածներում գտնվող զորավարները, կասկածանքով նայելով մեկը մյուսին, սրանով հանդերձ ապստամբական այնուհանդերձ միասնական դիրք գրավեցին Պերդիկայի գլխավորած կենտրոնական իշխանության նկատմամբ:

Արդյունքում՝ Պերդիկան ամենից առաջ կորցրեց իշխանությունը Բալկանյան թերակղզու նկատմամբ, երբ այստեղ հրաժարվեց նրան ենթարկվել դեռևս Ալեքսանդր III Մեծի կողմից տեղում թողնված Անտիպատրոսը, որին աջակցում էին Փոքր Ասիայում զգալի տիրույթներ ունեցող Լեոնադիոսը և Անտիպատրոսի հետ միասին կառավարող Կրատերոսը: Ավելին, շուտով իր ձեռքի տակ եղած ուժերով Փոքր Ասիայից փախուստի դիմեց և վերջիններիս միացավ նաև Անտիգոնոսը: Իր հերթին, նույն այս ժամանակ Թրակիայում անկախ դիրք գրավեց նաև Ալեքսանդր III Մեծի երբեմնի անձնական թիկնապահ և իր ժամանակի լավագույն ռազմիկներից մեկը համարվող Լիսիմաքոսը (մ.թ.ա. 323-281)՝ հիմնադրելով Թրակիայի թագավորությունը: Այս բոլորի հետ միաժամանակ ապստամբեց նաև Պտղոմեոսը, որը, հափշտակելով Հունաստան տեղափոխվող Ալեքսանդր III Մեծի դին, այն փոխադրեց Եգիպտոս և իր իշխանությունը տարածեց այս երկրամասի վրա, երբ փաստորեն ստեղծվեց Եգիպտոսն ընդգրկող Պտղոմյանների թագավորությունը, որի առաջին հիմնադիր արքան դարձավ նույն այս Պտղոմեոսը՝ Պտղոմեոս I-ը (մ.թ.ա. 323-282): Եվ վերջապես հարկ է նշել, որ Աքեմենյանների տերության փլուզումից հետո նաև Կապադովկիայում էր անկախ մի թագավորություն հռչակվել, որի արքա էր դարձել մինչ այդ տեղական սատրապ հանդիսացած Արիարաթես I-ը (մ.թ.ա. 331-322): Ստեղծված ծանր պայմաններում Պերդիկան որոշեց ամենից առաջ հարված հասցնել Եգիպտոսին, իսկ նույն այս ժամանակ հյուսիս-արևմուտքում սկիզբ առած ապստամբության դեմ էլ ուղարկել Էվմենոսին:

Արդյունքում մ.թ.ա. 322 թվականի գարնանը Էվմենոսը պարտության մատնեց Արիարաթես I-ին, գերեց վերջինիս և մահապատժի ենթարկեց, իսկ Արիարաթես I-ի դժվարությամբ փրկված եղբորորդին էլ ստիպված եղավ դիմել փախուստի ու ապաստանել Մեծ Հայքի թագավորությունում[1]: Մ.թ.ա. 322 թվականի կեսերի վիճակով Էվմենոսն արդեն իր տիրապետությունն էր հաստատել Փոքր Ասիայի հիմնական մասի վրա, որից հետո, օգտվելով այն բանից, որ նույն այս ժամանակ Լեոնադիոսը հույների դեմ ընթացող մարտերից մեկում զոհվել էր, իսկ Կրատերոսն էլ հազիվ աջակցում էր Անտիպատրոսին, ամրացավ տեղում: Ավելին, Էվմենոսը շուտով հասավ նաև այն բանին, որ Փոքր Հայքի թագավորության արքա Միհրդատ I-ը գահընկեց արվեց և Փոքր Հայքի թագավորության արքա հռչակվեց իրեն ենթակա Նեոպտղոմեոսը (322, 322-321), որը, սակայն, մի գոռոզ ու անհեռատես անձնավորություն էր: Արդյունքում՝ մ.թ.ա. 322 թվականի աշնանը Փոքր Հայքի ճ-մ-ում Մեծ Հայքի ու Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 40.000) հաղթեց Նեոպտղոմեոսի գլխավորած հունամակեդոնական բանակին (մոտ 10.000), սակայն շուտով բանակցություններ սկսվեցին և արդյունքում կողմերը համաձայնության եկան, ըստ որի Նեոպտղոմեոսը կրկին դարձավ Փոքր Հայքի թագավորության արքա[2]: Հունական աշխարհում, սակայն, խմորումները շարունակվում էին:

Մ.թ.ա. 321 թվականի սկզբին Պերդիկան լայնածավալ հարձակման անցավ Եգիպտոսի ուղղությամբ, սակայն մի կողմից տեղական պայմաններին լավ ծանոթ չլինելն և Պտղոմեոս I-ի կազմակերպած ակտիվ դիմադրությունը, իսկ մյուս կողմից էլ ռազմագործողության ընդհանուր վատ կազմակերպումը, չնայած առանձին հաջողություններին, վերջին հաշվով հանգեցրին անհաջողության ու լուրջ կորուստների: Արդյունքում՝ մինչ այդ բանակում առանց այդ էլ առկա դժգոհությունն ի վերջո բացահայտ տեսք ստացավ և մ.թ.ա. 321 թվականի հուլիսի սկզբին իր իսկ ապստամբած զորավարները հենց սեփական վրանում սպանեցին Պերդիկային: Պերդիկայի սպանությունից հետո նրա բանակը ամենից առաջ հենց Պտղոմեոս I-ին առաջարկեց կանգնել Հունամակեդոնական տերության գլուխ, սակայն վերջինս, իր տրամադրության

[1] Տեղեկատվությունը բավականին հայտնի է և քննարկված: Տես, օրինակ՝ Габелко О.Л. "К династической истории эллинистической Каппадокии: царский дом Ариаратидов" «Античный мир и археология». Вып. 13. Саратов, 2009, стр. 99-100:
[2] Պլուտարքոս «Եվմենոս», գլուխ 3, 4:

տակ առկա ուժերով իրեն որևէ կերպ պատրաստ չհամարելով այդ դերին, հրաժարվեց արված առաջարկն ընդունել՝ գերադասելով ամուր կերպով ձեռքի տակ ունենալ մի մասն, ի դեմս Եգիպտոսն ընդգրկող Պտղոմյանների թագավորության, այլ ոչ թե շատ կասկածելի հեռանկարով պայքար սկսել ամբողջի համար: Այսպիսով՝ Պտղոմեոս Ի-ն իր հիմնադրած թագավորությունով, ըստ էության, առանձնացավ Հունամակեդոնական տերությունից, որտեղ, սակայն, ներքին պայքարն իր հերթին հեռու էր ավարտվելուց:

Մ.թ.ա. 321 թվականի նույն գարնանը, մինչ Պերդիկան և Պտղոմեոս Ի-ն իրենց հարաբերություններն էին պարզում, Անտիպատրոսն ու Կրատերոսն ավարտեցին Հունաստանում ընթացող ապստամբության ճնշման գործը, որից հետո Կրատերոսն ամուսնացավ Անտիպատրոսի աղջկա հետ և իր բանակը շարժեց դեպի Փոքր Ասիա՝ Պերդիկայի, իսկ արդյունքում կոնկրետ դեպքում արդեն՝ Էվմենոսի դեմ: Մինչ այս, սակայն, այստեղ ևս փոփոխություններ էին եղել:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

321 գարուն – ***<u>Փոքր Հայքի ճ-մ</u>***[1]

> Ալեքսանդր III Մեծի տերության խնամակալ հռչակված Պերդիկան, արշավելով Եգիպտոսի տիրակալ Պտղոմեոս Ի-ի դեմ, հանձնարարեց Կապադովկիայի սատրապ Էվմենոսին պաշտպանել Փոքր Ասիան Մակեդոնիայից առաջացող Մակեդոնական թագավորության խնամակալ Անտիպատրոսի օգնական Կրատերոսի մոտեցող բանակից՝ նրա տրամադրության տակ դնելով այդ թվում նաև Նեոպտղոմեոսի բանակը: Նեոպտղոմեոսը, սակայն, հրաժարվեց ենթարկվել Էվմենոսին և մարտական պատրաստության բերեց ինչպես իր (մոտ 10.000), այնպես էլ Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորության միացյալ բանակը՝ պատրաստվելով դիմադրել Էվմենոսի մոտեցող բանակին (մոտ 20.000, որից ուղիղ 6.000 հեծյալ):
>
> I փուլ – Նեոպտղոմեոսի բանակի հետևակը առաջինն անցավ հարձակման, փախուստի մատնեց հակառակորդի հետևակին և սկսեց հետապնդել՝ խառնելով, սակայն, սեփական մարտակարգը ու կորցնելով դասավորությունը: Այդ ընթացքում Էվմենոսի հեծելազորը իր հերթին փախուստի մատնեց Նեոպտղոմեոսի հեծելազորին և գրավեց նրա ճամբարը:
>
> II փուլ – Վերականգնելով շարքերը՝ Էվմենոսի հեծելազորը հզոր հարձակում սկսեց Նեոպտղոմեոսի հետևակի վրա, որը կարճատև դիմադրությունից հետո գերի հանձնվեց:
>
> Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

Այսպիսով՝ Նեոպտղոմեոսի գլխավորած հունամակեդոնական բանակը անցավ Էվմենոսի կողմը, իսկ Նեոպտղոմեոսն ինքն էլ դիմեց փախուստի և միացավ Կրատերոսին: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց, սակայն, Էվմենոսի գլխավորած 25.000 հոգանոց բանակը, որից 5.000 հեծյալ, Դարդանելի ճակատամարտում ծանր պարտության մատնեց Կրատերոսի գլխավորած 22.000 հոգանոց բանակին, որից 2.000 հեծյալ, ընդ որում և Կրատերոսը, և Նեոպտղոմեոսը զոհվեցին մարտում: Ինչ վերաբերում է Փոքր Հայքին, ապա այն, այստեղ գահ բարձրացած Արյուկ Ի-ի (մ.թ.ա. 321 - մոտ 270) գլխավորությամբ, շարունակեց վայելել լիակատար անկախություն: Այսպիսով՝ հայերը գործերը կարգավորեցին, սակայն հույների մոտ կրքերը դեռևս շարունակվում էին բորբոքվել:

Կրատերոսի զոհվելուց հետո նրա բանակի գլուխ կանգնեց Անտիպատրոսը, որի գլխավորած ռազմական մեքենան, հետ մղելով Էվմենոսի ուժերին, արշավանք

[1] Պլուտարքոս «Եվմենոս», գլուխ 5; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 13, գլուխ 8:

իրականացրեց Գրանիկոս-Սարդես-Գորդիոս-Անկյուրա-Տարսոն-Իսոս-Պլատանա կիրճ-Հյուսիսային Ասորիք երթուղով: Այսպիսով՝ ըստ էության ստեղծվեց մի դրություն, երբ մի կողմում սկսեցին հանդես գալ Հունամակեդոնական տերության, ըստ էության, տրոհման կողմնակիցները, իսկ մյուս կողմում էլ՝ միայնակ մնացած Էվմենոսը, որին հեռակա կարգով վաղուց արդեն մահվան էին դատապարտել և որը կորցնելու որևէ բան, ըստ էության, արդեն չուներ: Որպես հետևանք այս ամենի, մինչ Էվմենոսը շարունակում էր դիմադրությունը Փոքր Ասիայում, նրա հակառակորդները հավաքվեցին Ասորիքի ծովափնյա փոքրիկ քաղաքներից մեկը հանդիսացող Տրիպարադիսում և համաձայնության եկան: Արդյունքում՝ կնքվեց Տրիպարադիսի համաձայնագիրը, որով ամրագրվեց Ալեքսանդր III Մեծի թողած տերության առաջին բաժանումը և որը Էվմենեսի դեմ պայքարող կողմերից յուրաքանչյուրին, ըստ էության, թողեց այն ամենը, ինչին վերջիններս արդեն իսկ տիրապետում էին այդ պահին: Սա, սակայն, ընդամենը միջանկյալ մի վիճակ էր, որը շուտով փոփոխություն էր կրելու:

Տրիպարադիսի համաձայնագրի կնքումից հետո մարտական լայնածավալ գործողությունները որոշ ժամանակ դադարեցին, սակայն, թերևս, բոլորի համար էլ պարզ էր, որ դա ընդամենը միայն ժամանակավոր մի վիճակ է: Ավելին, նույն այս ժամանակ էր նաև, որ արդեն իսկ սեփական Մեծ Փռյուգիայի թագավորությունը հիմնադրած Անտիգոնոսը (մ.թ.ա. 321-301) պաշարեց Փռյուգիայում գտնվող լավ ամրացված Նորիկ ամրոցում ամրացած Էվմենոսին, թեև որևէ հաջողության այդպես էլ չհասավ: Շուտով, սակայն, իրենց հերթին տեղի ունեցան նոր զարգացումներ, որոնք Էվմենոսի համար նոր հնարավորություններ ստեղծեցին:

Մ.թ.ա. 319 թվականի ամռանը Անտիպատրոսը մահացավ՝ որպես հետնորդ թողնելով ոչ թե սեփական որդի Կասանդրոսին, այլ իր վաղեմի զինակից Պոլյուպերքոնին: Կասանդրոսը, սակայն, չհամակերպվեց ստեղծված իրավիճակի հետ և պայքար սկսեց Պոլյուպերքոնի դեմ, իսկ արդյունքում էլ նրա բնական դաշնակցի կարգավիճակում հայտնվեց Ալեքսանդր III Մեծի մայր Օլիմպիադան, որի խնամակալության տակ էր գտնվում չորսամյա Ալեքսանդր IV-ը: Ստեղծված պայմաններում Էվմենոսը հաջողությամբ հեռացավ Նորիկից և փորձ կատարեց անցնել Հունաստան, սակայն, Անտիգոնոսի կողմից այնուհանդերձ կտրվելով ծովից, արդյունքում սկսեց մարտերով նահանջել դեպի արևելք՝ այս անգամ փորձելով Անտիգոնոսի դեմ հանել արդեն մարա-պարսկական առաջնորդներին, որոնք իրենք էլ անհանգստացած էին Մեծ Փռյուգիայի թագավորության տիրակալի հզորացումից ու հավակնություններից: Հենց այս իրադարձությունների ժամանակ էլ, ի դեպ, այս մասին արդեն ասվեց, երկրորդ անգամ հիշատակվում է Երվանդ II-ը, որին սեփական ռազմիկներին ուղղված խոսքում Էվմենոսը որակում է որպես անկախ և ուժեղ, Անտիգոնոսին դիմադրելու ունակ մի տիրակալի, որն իբր իրեն օգնության է գալու:

Արդյունքում՝ մինչ Հունաստանում շարունակվում էր պայքարը, մ.թ.ա. 316 թվականի գարնանը Էվմենոսի 36.700 հոգանոց բանակը ինչ-որ տեղ Պարսքում ծանր պարտության մատնեց Անտիգոնոսի 22.000 հոգանոց բանակին, սակայն մարտից անմիջապես հետո սեփական զորավարները, որոնց ընտանիքները դեպքերի բերումով հայտնվել էին Անտիգոնոսի գերության մեջ, դավաճանեցին Էվմենոսին, գերեցին նրան և հանձնեցին Մեծ Փռյուգիայի տիրակալին: Անտիգոնոսն անմիջապես էլ սպանել տվեց Էվմենոսին, ինչից հետո պաշտոնազրկեց կամ սպանել տվեց տեղական նաև այլ առաջնորդների: Պաշտոնազրկվածների շարքում էր նաև մահից հազիվ փրկված և Պտղոմեոս I-ի մոտ ապաստանած Միջագետքի տիրակալ Սելևկոսը, որն իր հերթին պատկանում էր Ալեքսանդր III Մեծի լավագույն զորավարների թվին: Նույն այս ժամանակ իրավիճակը փոփոխություն կրեց նաև Հունաստանում, երբ սեփական իշխանության հաստատման անհագ մարմաջով պատված Կասանդրոսը սպանել տվեց Օլիմպիադային, որն իր հերթին դեռևս մ.թ.ա. 317 թվականին սպանել էր տվել իր տիրապետության տակ հայտնված Ֆիլիպ III-ին: Արդյունքում՝ մ.թ.ա. 316 թվականի վիճակով Ալեքսանդր III Մեծի

թողած տերությունում իրավիճակը կրկին որոշակիորեն հանդարտվեց, կողմերը համաձայնության եկան և ստեղծվեց նոր մի իրողություն, երբ Հունաստանում իշխանության հասավ Կասանդրոսը, սակայն զգալի տարածքների էին տիրապետում նաև Պոլյուպերքոնը, ինչպես նաև Հյուսիսային Հունաստանում և Թրակիայում սեփական թագավորությունը ոտքի հանած Լիսիմաքոսը, Եգիպտոսում շարունակում էր իշխել Պտղոմեոս Ի-ը, իսկ երբեմնի Հունամակեդոնական տերության զգալի մասի վրա էլ իշխանության հասավ Անտիգոնոսի Մեծ Փռյուգիայի թագավորությունը:

Հարկ է նշել, սակայն, որ Անտիգոնոսն ինքը, որպես այդ պահին ենթադրաբար ամենաուժեղը, այդպես էլ չըմբռնելով սոցիալական և ժողովրդագրական իրական զարգացումները ու չհասկանալով Ալեքսանդր III Մեծի կողմից վարվող քաղաքականության ներքին էությունը, անմիջապես էլ սկսեց նեղմիտ կերպով շեշտադրել յուրային հելլեններին և հունական տարրը, ինչը հակադրեց վերջիններիս տեղական ժողովուրդներին՝ արդյունքում Անտիգոնոսին վերջին հաշվով զրկելով տեղացիների աջակցությունից ու օբյեկտիվորեն թուլացնելով վերջինիս իշխանությունը: Ավելին, այս ամենով հանդերձ Անտիգոնոսը հենց միանգամից որդեգրեց նաև միակը լինելու գործնականում նույն այն քաղաքականությունը, որը մի ժամանակ իրականացնում էր Պերդիկան և որից հեռատեսորեն հրաժարվել էր Պտղոմեոս Ի-ը, իսկ այս հանգամանքը բնականաբար նրա դեմ հանեց արդեն նաև մյուս առաջնորդներին, ընդ որում հատկանշականն այն էր, որ վերջիններս, ի տարբերություն նույն Անտիգոնոսի, ոչ միայն վայելում էին տեղացիների աջակցությունը, այլև ակտիվորեն օգտվում էին դրանից: Արդյունքում՝ մ.թ.ա. 315 թվականին պատերազմական գործողությունները վերսկսվեցին, իսկ Անտիգոնոսն էլ սկսեց աստիճանաբար տեղի տալ:

Սկսած մ.թ.ա. արդեն 315 թվականից Անտիգոնոսը և նրա որդի Դեմետրիոսը, մասնակիորեն օգտվելով Պոլյուպերքոնի աջակցությունից, մի շարք հարվածներ հասցրին իրենց դեմ ձևավորված համադաշնությանը, ի դեմս Կասանդրոսի, Լիսիմաքոսի և Պտղոմեոս Ի-ի, սակայն, փոփոխակի հաջողությամբ ընթացած մարտերից հետո որևէ հաջողության այդպես էլ չհասան: Հենց այս ընթացքում էր, որ մ.թ.ա. 313 թվականի աշնանը Անտիգոնոսի դեմ պայքարող Պտղոմեոս Ի-ի ուղարկած Պտղոմյանների թագավորության ծովով արշաված բանակը (մոտ 15.000) ասպատակեց Դաշտային Կիլիկիան և վերադարձավ Կիպրոս[1]: Ավելին, մ.թ.ա. արդեն 312 թվականի գարնանը Պտղոմեոս Ի-ի աջակցությունը ստացած Սելևկոսը Եգիպտոսից սրընթաց երթով անցավ Միջագետք և տիրեց Բաբելոնին, ընդ որում այլ ճակատներում լարված պայքարի մեջ գտնվող Անտիգոնոսն ու Դեմետրիոսը այս ամենին որևէ կերպ չկարողացան խոչընդոտել, իսկ Անտիգոնոսից դժգոհ տեղացիներն էլ մեծ ուրախությամբ ընդունեցին Սելևկոսին: Արդյունքում՝ հիմնադրվեց Սելևկյանների թագավորությունը, որի առաջին հիմնադիր արքա հանդիսացավ նույն Սելևկոսը՝ Սելևկոս Ի Նիկատորը (մ.թ.ա. 312-281):

Իր հերթին, նույն այս ընթացքում էր, որ մ.թ.ա. 311 թվականի ամռանը Լեոնիդոսի գլխավորությամբ ծովով արշաված Պտղոմյանների թագավորության բանակը (մոտ 15.000) հերթական հարվածը հասցրեց Կիլիկիային և Անտիգոնոսի բանակից (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) գրավեց այն: Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. 311 թվականի աշնանը հակամարտող կողմերը հերթական անգամ համաձայնության եկան հաշտության վերաբերյալ, ինչի արդյունքում պահպանվեց նույն այն դրությունը, որն առկա էր մ.թ.ա. 315 թվականին[2]: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Պտղոմեոս Ի-ի աջակցությունը վայելող կիսածովահենական ուժերը, ձևականորեն չենթարկվելով վերջինիս, շարունակեցին գործել Անտիգոնոսի թագավորության ափերին: Իր հերթին մ.թ.ա. 310 թվականին Սոլեի ճ-մ-ում Դեմետրիոսի բանակը (մոտ 10.000) հաղթեց Լեոնիդոսի գլխավորությամբ ծովով արշաված Պտղոմյանների թագավորության բանակին (մոտ 15.000), որից հետո մտավ քաղաք և վերահաստատեց Անտիգոնոսի

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 19, գլուխ 79:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 20, գլուխ 19:

իշխանությունը նահանգում[1]:

Մ.թ.ա. 311 թվականի հաշտությունը Հունամակեդոնական տերության փլատակների վրա իրար դեմ պայքարող Ալեքսանդր III Մեծի երբեմնի զորավարների միջև քիչ թե շատ հավասարակշռության վիճակ էր ստեղծել, թեև այս հաշտությունն, ինչպես տեսանք, երբեմն խախտվում էր, ընդ որում Սելևկոս I Նիկատորի պարագայում Անտիգոնոսն ինքն ընդհանրապես նույնիսկ սկզբունքորեն էլ հրաժարվեց պահպանել այն: Արդյունքում, սկսած մ.թ.ա. հենց նույն 311 թվականի վերջից և մինչև մ.թ.ա. 309 թվականը Մեծ Փռյուգիայի թագավորությունը մի շարք հարվածներ հասցրեց Սելևկյանների թագավորությանը, սակայն այդպես էլ որևէ հաջողության չհասավ, իսկ մ.թ.ա. արդեն 308 թվականին էլ սկիզբ առավ Ալեքսանդր III Մեծի հետնորդների մեջ ընթացող պայքարի հերթական փուլը: Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել, որ մ.թ.ա. հենց 309 թվականին էր, որ Կասանդրոսը սպանել տվեց արդեն չափահասության տարիքին մոտեցող Ալեքսանդր IV-ին, ինչպես նաև Ալեքսանդր III Մեծի ապօրինի որդի Հերակլեսին՝ վերջնականապես ոչնչացնելով Ալեքսանդր III Մեծի բոլոր հնարավոր ժառանգներին և Մակեդոնական թագավորությունում կարծես արմատից կտրելով սեփական իշխանության նկատմամբ ցանկացած նկրտում:

Մ.թ.ա. 308 թվականի գարնանը Դեմետրիոսի գլխավորած Մեծ Փռյուգիայի թագավորության բանակը զգալի մեծության հարված հասցրեց Հունաստանի ուղղությամբ և մի շարք հաջողություններ արձանագրեց, սակայն մ.թ.ա. արդեն 306 թվականին ստիպված եղավ ուժերն այնուհանդերձ հետ քաշել դեպի Փոքր Ասիա, քանի որ նույն այդ հաջողությունները վերջնական տեսք այդպես էլ չստացան, իսկ Անտիգոնոսն ինքն էլ այս ժամանակ նախատեսում էր հերթական հարվածը հասցնել՝ այս անգամ արդեն Եգիպտոսի ուղղությամբ: Արդյունքում մ.թ.ա. 306 թվականի մայիսին Անտիգոնոսի գլխավորած 88.000 հոգանոց բանակը, որից 8.000 հեծյալ, ինչպես նաև 83 փիղ, ներխուժեց Պտղոմյանների թագավորության տարածք, սակայն, ինչպես Պերդիկայի պարագայում եղավ սրանից 15 տարի առաջ, այս անգամ ևս Պտղոմեոս I-ը համառ դիմադրություն կազմակերպեց: Ավելին, գործի դնելով իր մոտ առկա նյութական զգալի միջոցները, Պտղոմեոս I-ը ի վերջո հասավ այն բանին, որ հակառակորդի բանակի ռազմիկները սկսեցին մեծ ծավալներ ընդունած չափերով դասալքել և ծառայության անցնել իր մոտ: Արդյունքում՝ Անտիգոնոսը ստիպված եղավ ելման դիրքեր վերադառնալ, ինչից հետո վերջինս, բանակային ուժերը կրկին հանձնելով որդուն, մի քանի տարի շարունակ շարունակեց հարվածներ հասցնել Հունաստանի ուղղությամբ՝ կրկին, սակայն, առանց վերջնական հաջողության:

Մինչ Անտիգոնոսն և Պտղոմեոս I-ը իրենց հարաբերություններն էին պարզում Արևմուտքում, նույն այս ժամանակ իր դիրքերն արդեն զգալիորեն ամրապնդած և Սելևկյանների թագավորությունն ամուր կերպով ոտքի հանած Սելևկոս I Նիկատորը մ.թ.ա. 305-303 թվականներին հարատև մարտերի մեջ ներքաշվեց սեփական տիրույթների արևելքում՝ մարտեր, որոնք մղվում էին Հյուսիսային Հնդկաստանն ընդգրկող Մուարյան տերության հիմնադիր Չանդրագուպտայի (մ.թ.ա. 322-298) ռազմական մեքենայի դեմ: Արդյունքում՝ Սելևկոս I Նիկատորն ի վերջո հակառակորդին զիջեց Ինդոս գետի հովիտը, ի դեմս Սինդի, սակայն փոխարենը սեփական թագավորության արևմուտքում ամուր խաղաղություն հաստատեց, ինչպես նաև ստացավ 500 մարտական փիղ:

Մինչ հունամակեդոնական զորավարները կիսում էին Ալեքսանդր III Մեծի թողած ժառանգությունը՝ մ.թ.ա. 305 թվականի մոտակայքում իր մահկանացուն կնքեց Երվանդ II-ը և Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց Արտավազդ I-ը (մ.թ.ա. 305-247)՝ մեր պատմագիտության մեջ որոշակիորեն անարժանիորեն ստվերում մնացած այդ տիրակալը[2]: Այս առումով մինչև առաջ անցնելն ուղղակի նշենք, որ, քանի որ այս արքային

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 20, գլուխ 19:
[2] Այս արքային նվիրված առաջին կարծիքներից մեկը տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1,

ավանդականորեն հաշվի չեն առել որպես Մեծ Հայքի թագավորության արքա, «Արտավազդ» անունը կրող հետագա արքաների թվագրումը պետք է մեկ նիշով առաջ տանել: Մեզ հստակորեն հայտնի չէ, թե ի՞նչ ընտանեկան կապ է եղել Երվանդ II-ի և Արտավազդ I-ի միջև, սակայն հավանական է կարծել, զուտ ենթադրության մակարդակով, որ Արտավազդ I-ը եղել է Երվանդ II-ի որդին: Արտավազդ I-ի մասին տեղեկություններն ևս, ինչպես իր նախորդի պարագայում, սուղ են և ցրված են մի շարք սկզբնաղբյուրներում: Միաժամանակ, սակայն, առկա տեղեկատվության ամբողջությունն այնուհանդերձ հիմք է տալիս ասելու, որ մենք գործ ունենք տարածաշրջանային մակարդակով բավականին հզոր, ռազմունակ և ակտիվ արտաքին քաղաքականություն վարելուն հակված մի տիրակալի հետ: Իրոք, կյանքը ցույց տվեց, որ Մեծ Հայքի թագավորության արքա Արտավազդ I-ի իրեն պատրաստ էր համարում ոտք մեկնել հելլենական աշխարհի և, մասնավորապես, վերջինիս ամենահզոր ներկայացուցիչներից մեկը համարվող Սելևկոս I Նիկատորի հետ՝ ընդ որում դա անելով ամենայն հաջողությամբ: Մյուս փոփոխությունը, որ նույն այս ժամանակ եղավ Հայաստանում, դա Փոքր Հայքի թագավորությունից անջատված Ծոփքի թագավորության ստեղծումն էր, որի առաջին հիմնադիր արքան էր Արտանես I-ը (մ.թ.ա. մոտ 305-260): Մինչ Հայոց թագավորություններում տեղի էին ունենում մեր կողմից նկարագրված փոփոխությունները, հունական աշխարհում շարունակում էին եռալ կրքերը, որոնք այս անգամ, սակայն, վերջնականապես պարզաբանելու էին իրավիճակը:

Մ.թ.ա. 302 թվականի ամռանը Դեմետրիոսի գլխավորած 60.000 հոգանոց բանակը վճռական հարձակման անցավ Կասանդրոսի ուղղությամբ, ինչին ի պատասխան վերջինս դիմեց Լիսիմաքոսին և արևելյան հոգսերից հենց նոր ազատված Սելևկոս I Նիկատորին: Արդյունքում, որոշվեց Անտիգոնոսին և Դեմետրիոսին հետ շպրտել Փոքր Ասիա, ինչից հետո արդեն այստեղ համատեղ ուժերով ոչնչացնել վերջիններիս: Այս առումով հետաքրքիր է նշել, որ վերջին այս դաշնադրությանն իր մասնակցությունը բերեց նաև Պտղոմեոս I-ը, որը սկսեց առաջանալ Հարավային Ասորիքում, սակայն, այն բանից հետո, երբ կեղծ լուր ստացավ իր դաշնակիցների պարտության մասին, հապճեպ հետ քաշվեց Եգիպտոս, ինչի արդյունքում հետագա իրադարձություններին նա իր մասնակցությունը չբերեց, թեև ճշմարտությունն իմանալ այնուհանդերձ հասցրեց:

Մ.թ.ա. 301 թվականի գարնանը կողմերն աստիճանաբար իրենց ուժերը կենտրոնացրին Փոքր Ասիայում, ընդ որում այս ընթացքում Սելևկոս I Նիկատորի գլխավորած Սելևկյանների թագավորության բանակը (մոտ 70.000, 70 փիղ) մ.թ.ա. 301 թվականի նույն գարնանը Ծոփքի թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեց Ուռհան (= Եդեսիա), ինչի արդյունքում էլ Հայոց Միջագետքը անցավ Սելևկյանների թագավորությանը[1]: Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. 301 թվականի ամռանը Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծվել էր մի դրություն, երբ Ալեքսանդր III Մեծի հետնորդների միջև արդեն ավելի քան 20 տարի մղվող պատերազմը հասել էր իր գագաթնակետին և, մեծապես նաև, ավարտին:

Արդյունքում մ.թ.ա. 301 թվականի ամռանը բոլոր հակամարտող ուժերն իրար եկան Փոքր Ասիայի Իպսոս քաղաքի մոտակայքում, որտեղ տեղի ունեցած մեծ և վճռական ճակատամարտում էլ հենց Անտիգոնոսի 80.000 հոգանոց բանակը, որից 10.000 հեծյալ, ինչպես նաև 75 փիղ, ջախջախիչ պարտություն կրեց հակառակորդի 74.500 հոգանոց բանակից, որից 10.500 հեծյալ, ինչպես նաև 400 փիղ ու 120 մարտակառք: Ավելին, ութսունմեկամյա Անտիգոնոսն ինքը, որ, չնայած տարիքին, եռանդուն կերպով մարտնչում էր սեփական ռազմիկների շարքերում, ի վերջո ընկավ մարտում, նրա

Երևան 1977, էջ 101-103: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ հեղինակն ինքը, քննարկելով սկզբնաղբյուրի կողմից անվան փոխանցման նրբությունները, այնուհանդերձ հանգում է վերջինիս «Երվանդ» ձևին, որի կողմնակիցն է եղել նաև Ի. Մարկվարտը, և այն կապում է Երվանդ II-ի հետ: Ինքս, սակայն, ինչպես արդեն ասվեց, ավելի հակված եմ հենց անվան «Արտավազդ» ձևին, որն ավելի տարածված է և որի օգտին է արտահայտվում Թ. Ռեյնաքը՝ այդ թվում հաշվի առնելով նաև այս տիրակալի իշխելու ժամանակահատվածի երկարությունը, որը Երվանդ II-ի պարագայում քիչ հավանական է:

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 55; Ջաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 1: Այս մասին հայտնում է նաև Ստեփանոս Բյուզանդացին, որը, սակայն, առայժմ ինձ հասանելի չէ:

ռազմիկների մի մասը զոհվեց, իսկ մյուս մասն էլ անցավ հաղթողների կողմը: Սա Մեծ Փռյուգիայի թագավորության վերջն էր, որն, ըստ էության, ոչնչացվեց: Ինչ վերաբերում է Դեմետրիոսին, ապա նրան հաջողվեց հավաքել ընդամենը միայն 9.000 ռազմիկ և, հետ քաշվելով սկզբում Եփեսոս, իսկ հետո էլ, անցնելով Հունաստան, անկանոն պատերազմ սկսել Լիսիմաքոսի դեմ՝ հընթացս տիրանալով Պոլյուպերքոնի տիրույթների մի մասին: Հենց նոր ավարտված ճակատամարտն իր հետ հսկայական հետևանքներ բերեց, ընդ որում վերջնականապես կայունացավ նաև տարածաշրջանի ռազմաքաղաքական պատկերը, որը վերջին 22 տարում գտնվում էր հարատև փոփոխությունների մեջ:

Արդյունքում՝ աշխարհաքաղաքական նույն այն դերակատարության մեջ, որը մինչ այդ ուներ Աքեմենյանների տերությունը, ըստ էության, հաստատվեց Սելևկյանների թագավորությունը, որը մեծ հզորության հասավ՝ հելլենական բոլոր պետությունների մեջ դառնալով ամենաուժեղը: Իր ուժով երկրորդն էր Եգիպտոսում հաստատված Պտղոմյանների թագավորությունը, որն ինքը, հավատարիմ արդեն իրեն բաժին հասած աշխարհաքաղաքական դերին, անվերջ հավակնություններ ուներ Ասորիքի նկատմամբ և այս հարցով նրա շահերը բախվում էին ամենից առաջ հենց նույն Սելևկյանների թագավորության հետ: Ինչ վերաբերում է Բալկանյան թերակղզուն, ապա այստեղ սեփական թագավորություններում շարունակեցին իշխել Կասանդրոսն և Լիսիմաքոսը, սակայն զգալի ազդեցություն ուներ նաև Դեմետրիոսը, որին հաջողվել էր վերջնականապես տիրանալ նույն այս ժամանակ կյանքից հեռացած Պոլյուպերքոնի ժառանգությանը: Այսպես թե այնպես, սակայն, որպես Մերձավոր և Միջին Արևելքի խաղացողներ, երկու այս թագավորություններն, ըստ էության, արդեն չկային: Նույն այս ժամանակ, սակայն, Մերձավոր Արևելքում տեղի ունեցան նոր զարգացումներ, որոնք այնուհանդերձ հարստացրին այստեղի հիմնական խաղացողների ցանկը:

Մ.թ.ա. 301 թվականի ամռանը, մինչ հելլենիստական ուժերն իրենց հարաբերություններն էին պարզում Իպսոսի մոտակայքում, Արտավազդ Ի-ի գլխավորությամբ Կապադովկիա մտած Մեծ Հայքի թագավորության բանակը հաղթեց և երկրից դուրս վտարեց Սելևկյանների թագավորության բանակին, որից հետո գահը հանձնեց օրինական արքա համարվող և մինչ այդ Մեծ Հայքի թագավորության տարածքում ապաստանած Արիարաթեսին՝ Արիարաթես II-ին (մ.թ.ա. 301-280)[1]: Սելևկոս I Նիկատորը, սակայն, որի ազդեցության ոլորտն էր համարվում Կապադովկիան, որոշակի պատճառներից ելնելով չշարունակեց պայքարն այս երկրամասի համար և Արտավազդ Ի-ի ազդեցության ոլորտում գտնվող Արիարաթես II-ն ամրապնդվեց հայրենական գահին:

Սելևկոս I Նիկատորի կողմից Կապադովկիայի համար մրցակցությունից հրաժարվելու պատճառներից կարևորագույնը, թերևս, այն էր, որ նույն այն ժամանակ, երբ նոր աշխարհակարգի հիմքերն էին դրվում Իպսոսի մոտակայքում, անկախություն էր ձեռք բերել նաև Պոնտոսի թագավորությունը, ընդ որում իրավիճակը բարդանում էր նրանով, որ այստեղ իշխանության հասած թագավորության հիմնադիր արքա Միհրդատ I -ը (301-266) հանդիսանում էր Անտիգոնոսի մերձավորներից մեկն և մի կողմից հենց միայն այս պատճառով իսկ ինքնին բավարար հիմքեր ուներ չսիրելու Սելևկոս I Նիկատորին, իսկ մյուս կողմից էլ սելևկյան տիրակալն ինքն էլ անհանգստանում էր փոքրասիական տարածքներում Միհրդատ I-ի ակտիվությունից: Փաստորեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ իրար հետ ինչ-որ տեղ հեռակա կարգով, բայց այնուհանդերձ հակամարտող Սելևկյանների և Պոնտոսի թագավորությունների համար խիստ կարևորվում էր Մեծ Հայքի թագավորության արքա Արտավազդ Ի-ի դիրքորոշումը, ինչի արդյունքում շահեց առավել ճկուն քաղաքականության հակված սելևկյան տիրակալը:

Իրոք, եթե Պոնտոսի նորընծա արքան միանգամից էլ անհաշտ դիրք գրավեց հենց նույն այս ժամանակ իր անկախությունը հռչակած Իբերիայի թագավորության և վերջինիս այդ ճանապարհին մեծապես աջակցած Արտավազդ Ի-ի նկատմամբ, ապա Սելևկոս I Նիկատորը գերադասեց, աչք փակելով կապադովկյան խնդրի վրա, սիրաշահել

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 19:

հայերին ու վրացիներին: Արդյունքն եղավ այն, որ, երբ մ.թ.ա. 300 թվականին Պոնտոսի թագավորության խոշոր բանակը հարձակման անցավ և, խորանալով Մեծ Հայքի թագավորության տարածքում, հասավ Արդահանին (Գուգարք, Արդահան գավառ, Կուրի աջ ափին), հենց այդ ժամանակ էլ Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորությունների միացյալ բանակը, ինչ-որ տեղ նաև սելևկյանների աջակցությամբ, ծանր պարտության մատնեց վերջինիս և հետ շպրտեց[1]: Վճռական այս ճակատամարտի արդյունքն եղավ այն, որ դրանից հետո Պոնտոսի նորաստեղծ թագավորության ագրեսիվ մղումները մեծապես սահմանափակվեցին, Փոքր Ասիայում Սելևկյանների ակտիվ հակառակորդները զգալիորեն թուլացան, Մեծ Հայքի թագավորությունն ավելի ամրապնդեց իր դիրքերը, իսկ վերջնականապես անկախացած Իբերիայի թագավորության գահին էլ հաստատվեց Արտավազդ I-ի ազդեցության ոլորտում գտնվող հերթական արքան՝ Իբերիայի թագավորության հիմնադիր արքա Փառնավազը (մ.թ.ա. 301-240): Այսպիսով, ամեն ինչից զատ, տարածաշրջանում սկսեց գործել նաև Իբերիայի թագավորությունը, որը, որպես կանոն, գտնվում էր Մեծ Հայքի թագավորության ազդեցության ոլորտում: Եղան, սակայն, նաև այլ փոփոխություններ:

Գլուխ 9
Գալլական հարվածը

Հունական աշխարհում ընթացող անվերջ պատերազմները, որոնք ոչ միայն չէին նպաստում միասնությանը, այլև ուժասպառ էին անում հույներին, նույն այս ժամանակ իրենց հերթին, ակտիվացրին նրանց հարևաններին, որոնց մեջ վաղուց արդեն առաջնային տեղ ունեին գալլերը: Դեռևս մ.թ.ա. 336 թվականին գալլերը, նախապես ծանոթանալով Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենայի հնարավորություններին, հեռատեսորեն հրաժարվել էին վերջինիս հետ որևէ կերպ ընդհարման մեջ մտնելուց, սակայն այժմ արդեն եկել էին նոր ժամանակներ: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 298 թվականին գալլերը մի մեծ հարձակում ձեռնարկեցին Մակեդոնական թագավորության ուղղությամբ, սակայն Կասանդրոսին այնուհանդերձ հաջողվեց ծանր պարտության մատնել հակառակորդին և հետ շպրտել վերջինիս ելման դիրքեր: Այս հաղթանակը կարևոր նշանակություն ունեցավ Հունաստանի համար և այն երկար ժամանակով հետ պահեց գալլերին Հունաստանի ուղղությամբ նոր հարված հասցնելու մտայնությունից, սակայն գալլերի խնդիրը որևէ կերպ բնականաբար չվերացավ:

Մ.թ.ա. 297 թվականին Կասանդրոսը կնքեց իր մահկանացուն և Մակեդոնական թագավորության գահին նրան հաջորդեց իր որդի Ֆիլիպ IV-ը (մ.թ.ա. 297-294), որին էլ հաջորդեց նրա եղբայր Անտիպատրոսը (294): Գրեթե անմիջապես էլ, սակայն, Անտիպատրոսի դեմ գահակալական պայքար սկսեց վերջինիս եղբայր Ալեքսանդրը և կրքերը թեժացան մինչ այն աստիճան, որ Անտիպատրոսը սպանեց իր իսկ մորը, որ աջակցում էր Ալեքսանդրին: Արդյունքում՝ Ալեքսանդրը դիմեց նույն այս ժամանակ վերելքի ուղին բռնած, Մակեդոնական թագավորությունից արևմուտք տարածվող Էպիրոսի թագավորության արքա Պյուրոսին (մ.թ.ա. 307-302, 296-272), ինչպես նաև նույն այս ժամանակ Հունաստանում իր դիրքերը արդեն բավականին ուժեղացրած Դեմետրիոսին: Պյուրոսն ու Դեմետրիոսը օգնեցին Ալեքսանդրին, Անտիպատրոսը դիմեց փախուստի, ապաստանեց Լիսիմաքոսի մոտ և հետագայում հենց վերջինիս կողմից էլ սպանվեց, իսկ Մակեդոնական թագավորության արքա հռչակվեց Անտիպատրոսի եղբայր նույն Ալեքսանդրը՝ Ալեքսանդր V-ը (294): Նոր էր, սակայն, Պյուրոսը հեռացել, երբ Դեմետրիոսը կազմակերպեց արդեն Ալեքսանդր V-ի սպանությունը, որից հետո Մակեդոնական թագավորության արքա հռչակվեց հենց ինքը՝ Դեմետրիոս I-ը (մ.թ.ա. 294-288):

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Սամցխեի և Կղարջքի կյանքը»:

Արդյունքում՝ պարզվեց, սակայն, որ Դեմետրիոս Ի-ը ընդամենը կրկնակում է հորը՝ սեփական բոլոր հպատակների հետ իրեն պահելով խիստ գոռոզ և անհասանելի, ինչը առնվազն անհեռանկար վարքագիծ էր մի դարաշրջանում, երբ արքաների իշխանությունը մեծապես պայմանավորված էր հենց մարդկանց համակրանքով: Ավելին, Դեմետրիոս Ի-ի գոյության հետ չէին պատրաստվում համակերպվել նաև նրա հոր հին հակառակորդները, ինչպես նաև իրեն որոշակիորեն խաբված զգացող Պյուրոսը: Արդյունքում, քիչ թե շատ կարգավորելով հարաբերությունները Պյուրոսի և Լիսիմաքոսի հետ, Դեմետրիոս Ի-ը նախապատրաստեց 110.000 հոգանոց ուժեղ մի բանակ, որտեղ հեծելազորը կազմում էր 12.000 հոգի, որից հետո պատրաստվեց հարված հասցնել Սելևկյանների թագավորությանը: Մ.թ.ա. 288 թվականի օգոստոսին, սակայն, այս բանակը ապստամբեց և Դեմետրիոս Ի-ը դիմեց փախուստի:

Մ.թ.ա. 287 թվականի առաջին կեսին Դեմետրիոս Ի-ը դեռևս փորձում էր ամրանալ Հունաստանում, սակայն, ի վերջո վերջնականապես ստիպված լինելով լքել այն, վերջինս անցավ Փոքր Ասիա, որտեղ էլ հենց փորձ կատարեց շարունակել պայքարը: Արդյունքում, սակայն, հետ մղված Լիսիմաքոսի փոքրասիական տիրույթներից, մ.թ.ա. 287 թվականի հոկտեմբերին Դեմետրիոս Ի-ի գլխավորած Մակեդոնական թագավորության բանակը (մոտ 6.000) անցավ Սելևկյանների թագավորության տարածք և ասպատակեց Կիլիկիան[1]: Դրանից հետո մ.թ.ա. 287 թվականի նոյեմբերին Պլատանա կիրճի ճ-մ-ում Սելևկյանների թագավորության մարտակառքերի ջոկատը (մոտ 100, մոտ 50 մարտակառք) անհաջող ելքով հարձակվեց Դեմետրիոս Ի-ի գլխավորած Մակեդոնական թագավորության բանակի (մոտ 6.000) վրա և նահանջեց[2], ինչից կարճ ժամանակ անց Դեմետրիոս Ի-ի ուժերն իրենք անակնկալ հարձակում գործեցին նույն Պլատանա կիրճում ամրաշինական աշխատանքներով զբաղված Սելևկյանների թագավորության բանակի վրա և, հաղթելով նրան, գրավեցին կիրճը[3]: Մ.թ.ա. 287 թվականի նույն նոյեմբերին, սակայն, Պլատանա կիրճի ճ-մ-ում Սելևկոս Ի Նիկատորի գլխավորած Սելևկյանների թագավորության բանակը (մոտ 10.000), վաղ լուսաբացին կանխելով հակառակորդի անակնկալ հարձակումը, հաղթանակ տարավ Դեմետրիոս Ի-ի գլխավորած Մակեդոնական թագավորության բանակի (մոտ 5.000) նկատմամբ այն բանից հետո, երբ մի թևում պարտվեց, սակայն մյուս թևում թշնամու ռազմիկները անցան անձամբ իրենց մոտեցած սելևկյաների արքայի կողմը[4]: Արդյունքում՝ Դեմետրիոս Ի-ը դիմեց փախուստի, սակայն կարճ ժամանակ անց դադարեցրեց դիմադրությունը, հանձնվեց, աքսորվեց և դրանից հետո 4 տարի անց հենց աքսորում էլ կնքեց իր մահկանացուն: Այսպիսով՝ վերջնականապես օրակարգից հանվեց Հունամակեդոնական տերությունը մեկ տիրակալի իշխանության ներքո միավորելու գաղափարը, ինչից հետո տարածաշրջանի բոլոր առաջնորդները ամրացան սեփական տիրույթներում:

Դեմետրիոս Ի-ի անկումից հետո նրա տիրույթները, Պյուրոսի հետ կարճատև դիմակայությունից հետո, անցան Լիսիմաքոսին, ինչից հետո օրակարգ մտավ արդեն Լիսիմաքոսի պատերազմը Սելևկյանների թագավորության դեմ: Կողմերը վճռական ճակատամարտի համար արագորեն իրար եկան և արդյունքում մ.թ.ա. 281 թվականի օգոստոսին Մագնեսիայից հյուսիս ընթացած Կյուրոպեդիոնի ճակատամարտում Սելևկոս Ի Նիկատորը ոչ միայն լիակատար հաղթանակ տարավ հակառակորդի բանակի նկատմամբ, այլև մենամարտում սպանեց նաև հենց իրեն՝ Լիսիմաքոսին, ինչից հետո Թրակիայի թագավորության տարածքը կցվեց Սելևկյանների թագավորությանը: Հաղթանակի բերկրանքը, սակայն, երկար չվայելեց նաև Սելևկոս Ի Նիկատորը, որը, արագորեն զարգացնելով հաջողությունը և իր բանակով անցնելով Թրակիա, նույն թվականի սեպտեմբերին էլ Մարմարա ծովի ափին գտնվող Լիսիմաքիա քաղաքում սպանվեց: Իրոք, դեպքերի բերումով այնպես էր ստացվել, որ, գահակալական հարցերով

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Դեմետրիոս», գլուխ 46, 47:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Դեմետրիոս», գլուխ 47, 48:
[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Դեմետրիոս», գլուխ 48:
[4] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Դեմետրիոս», գլուխ 48, 49:

վիճած հոր հետ և փախուստի դիմած Պտղոմյանների թագավորությունից, նույն այս ժամանակ Սելևկոս I Նիկատորի մոտ էր հայտնվել մինչ այդ Լիսիմաքոսին ևս լքած Պտղոմեոս I-ի առաջին կնոջից ծնված ավագ որդի Պտղոմեոսը, որն էլ հենց անձնական հանդիպման ժամանակ թրով թիկունքից անակնկալ հարվածեց սելևկյանների տիրակալին, սպանեց նրան ու դիմեց փախուստի:

Սելևկոս I Նիկատորի մահից հետո Սելևկյանների թագավորության գահին վերջինիս հաջորդեց իր որդի Անտիոքոս I Սոտերը (մ.թ.ա. 281-261), որը, ի տարբերություն սեփական երկաթյա հոր, բավականին թույլ մի անձնավորություն էր, իսկ Սելևկյանների թագավորությունն էլ վերջինիս օրոք շարունակեց զարգանալ ընդամենը միայն իր հզոր հիմնադիրի թողած հարակայունության ուժով: Այս պայմաններում ինքնին պարզ էր նաև, որ, չնայած Լիսիմաքոսի ջախջախմանը և մահին, դեպի Հունաստան որևէ առաջխաղացման մասին որևէ կերպ խոսք գնալ չէր կարող, ընդ որում Անտիոքոս I Սոտերը խնդիրներ ուներ սեփական իշխանությունը նույնիսկ Փոքր Ասիայում պահպանելու հետ: Ավելին, նոր պայմաններում Մակեդոնական թագավորության արքա հռչակվեց Սելևկոս I Նիկատորին սպանած նույն Պտղոմեոսը (մ.թ.ա. 281-279), որի հետ Անտիոքոս I Սոտերի հարաբերությունները ևս բնականաբար ծայրահեղ թշնամական էին:

Մ.թ.ա. 280 թվականի գարնանը արժանահիշատակ Դեմետրիոս I-ի որդի Անտիգոնոսը, որը նույնիսկ հոր գլխին պայթած ռազմաքաղաքական աղետից հետո էլ Հունաստանում իր ձեռքում այնուհանդերձ զգալի տիրույթներ էր պահպանում, փորձ կատարեց պարտության մատնել Պտղոմեոսին և զբաղեցնել Մակեդոնական թագավորության գահը, սակայն անհաջողության մատնվեց ու հետ շպրտվեց ելման դիրքեր: Խնդիրները, սակայն, ինչպես շուտով պարզվելու էր, Պտղոմեոսի համար դեռ նոր էին սկսվում, իսկ արդեն երկար տասնամյակներ լարված ժողովրդագրական զսպանակն էլ հենց նույն այս ժամանակ ի վերջո սկսեց գործել:

Իրոք, գալլերը, որոնք ոտքի էին կանգնել դեռևս մ.թ.ա. 336 թվականին և հետ էին մղվել մ.թ.ա. 298 թվականին, հենց այս ժամանակ էր, որ որոշեցին Հունաստանի ուղղությամբ կրկին և ավելի մեծածավալ մի հարված հասցնել, ընդ որում հսկայական հեղինակություն վայելող Լիսիմաքոսի մահվան մասին լուրը միայն ամրապնդել էր նրանց վճռականությունը: Արդյունքում՝ մ.թ.ա. 280 թվականի դեկտեմբերին գալլական 85.000 հոգանոց բանակը ներխուժեց Մակեդոնական թագավորության տարածք, իսկ մ.թ.ա. 279 թվականի մայիսին էլ գլխովին ջախջախեց Պտղոմեոսի գլխավորությամբ իր դեմ դուրս եկած Մակեդոնական թագավորության փոքրաքանակ բանակին, ընդ որում հակառակորդի ուժերի դեմ քանակապես խիստ զիջող ուժերով անխոհեմ կերպով մարտի մեջ մտած Պտղոմեոսն ինքն էլ ընկավ մարտում: Ծանր հարված հասցնելով հակառակորդի ռազմական մեքենային՝ գալլերն իրենց բանակը բաժանեցին երեք մասի և սկսեցին առաջանալ հարավ-արևելյան, հարավային և հարավ-արևմտյան ուղղություններով՝ միաժամանակ, սակայն, այնուհանդերձ խոհեմաբար հեռու մնալով բավականին հզոր Էպիրոսի թագավորությունից: Արդյունքում՝ գալլերը քիչ թե շատ ուժեղ դիմադրության հանդիպեցին, թերևս, միայն Պտղոմեոսի զոհվելուց հետո Մակեդոնական թագավորության ռազմական մեքենան առաջնորդող Սոսոֆենոսի կողմից, որը, սակայն, սկզբնական հաջողություններից հետո ինքն էլ ի վերջո անհաջողության մատնվեց և շուտով կնքեց իր մահկանացուն:

Մ.թ.ա. 279 թվականի օգոստոսին գալլերը ձեռք բերած հարուստ ավարով վերադարձան ելման դիրքեր, սակայն մ.թ.ա. նույն 279 թվականի վերջին գալլերի այս անգամ արդեն 176.400 հոգանոց բանակը նոր հարված հասցրեց Հունաստանի ուղղությամբ՝ նպատակադրվելով հասնել մինչև Հարավային Հունաստան: Ստեղծված բացառիկ ծանր պայմաններում հույները, որոնք սրանից դեռևս կես դար առաջ իրենց ռազմական հզորությամբ աշխարհն էին դղրդացնում, բացարձակապես և ոչ մի հնարավորություն չտեսան հակառակորդի դեմ բաց մարտի մեջ մտնել՝ արդյունքում 25.000 ռազմիկի կազմով, թերևս, միայն ամուր պաշտպանություն կազմակերպելով

Թերմոպիլեի հերոսական լեռնանցքում: Որպես հետևանք այս ամենի՝ Թերմոպիլեի հերթական ճակատամարտում հույները բավականին երկար դիմադրեցին գալլերի բանակին և ծանր կորուստներ պատճառեցին վերջինիս, սակայն, ինչպես եղել էր երկու դար առաջ, այս անգամ ևս հակառակորդը լեռնային ուղիներով շրջանցեց լեռնանցքում պաշտպանվողներին և արդյունքում վերջիններիս չմնաց այլ բան, քան ծովով հեռանալն էր: Հաղթահարելով Թերմոպիլեի լեռնանցքը՝ մինչ այդ հույների կողմից արհամարհված բարբարոսները աննախադեպ թալան իրականացրին Հարավային Հունաստանում, որից հետո, որոշակի կորուստներ կրելով հակառակորդի անկանոն հարվածներից, ինչպես նաև տարածված համաճարակից և ցրտից, ձեռք գցած հսկայական ավարով կրկին հետ քաշվեցին ելման դիրքեր:

Մ.թ.ա. 278 թվականին գալլերը, անհամեմատ ավելի սահմանափակ ծավալով, ոտնատակ տվեցին Թրակիան և կրկին հետ քաշվեցին ելման դիրքեր: Արդեն հաջորդ տարի, սակայն, սկիզբ առան նոր զարգացումներ, որոնք ի վերջո հույների օգտին եղան:

Իրոք, Անտիգոնոսը, որը ժամանակին չէր կարողացել հաղթել Պտղոմեոսին, մ.թ.ա. 279 թվականի ծանր իրադարձությունների ժամանակ իր եռանդուն գործողություններով հույների մոտ զգալի հեղինակության էր հասել, ինչի հետևանքով նրա ռազմական հնարավորություններն ավելի էին մեծացել: Արդյունքում՝ այն բանից հետո, երբ մ.թ.ա. 277 թվականին գալլերը հերթական հարվածը հասցրին Հարավային Թրակիային, Անտիգոնոսի գլխավորած բանակը արժանահիշատակ Լիսիմաքիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում դարանը գցեց նրանց և, գիշերը վերջիններիս թույլ տալով ներխուժել իր ճամբար, սեփական հիմնական ուժերով անակնկալ հարված հասցրեց հակառակորդին և ծանր պարտության մատնեց: Այս ճակատամարտը լուրջ բացասական ազդեցություն ունեցավ գալլերի ռազմական մեքենայի վրա, սակայն այն հսկայական հեղինակություն ապահովեց նաև հաղթող զորավարին, ինչի հետևանքով Անտիգոնոսը՝ Անտիգոնոս Ի-ը (մ.թ.ա. 277-239) հռչակվեց Մակեդոնական թագավորության արքա: Սրանից հետո, սակայն, շատ արագ սրվեցին Մակեդոնական թագավորության հարաբերությունները արդեն Էպիրոսի թագավորության հետ, ինչը երկու թագավորությունների համար ծանր կորուստներ արժեցած հերթական մի պատերազմի հանգեցրեց, ընդ որում հատկանշական էր այն հանգամանքը, որ այս պատերազմում Էպիրոսի թագավորությունը զգալի, իսկ Մակեդոնական թագավորությունն էլ սահմանափակ չափով, բայց այնուհանդերձ օգտվում էին գալլ վարձկանների ծառայությունից:

Մ.թ.ա. 277 թվականի աղետը ծանր հարված էր հասցրել գալլերին, սակայն հետագա նվաճումների համար նրանք իրենց դեռևս բավականին ուժեղ էին համարում: Արդյունքում, մի կողմ թողնելով արդեն բավականին ուժեղ համարվող Մակեդոնական թագավորությունը և Հունաստանը, գալլերը որոշեցին ավարառության ենթարկել Փոքր Ասիան, մանավանդ որ հարմար առիթն ինքն էր ներկայացել:

Իրոք, արժանահիշատակ Լիսիմաքոսի մահից հետո Փոքր Ասիայի արևմուտքում առաջին դերերի վրա էր հայտնվել մ.թ.ա. 297 թվականին տեղական սատրապներից մեկի կողմից հիմնադրված Բյութանիայի թագավորությունը, որի նորընծա արքա Նիկոմեդես Ի-ը (մ.թ.ա. 278-255) նույն այս ժամանակ գահակալական լարված պայքար էր մղում ինչպես եղբոր, այնպես էլ վերջինիս իր աջակցությունը ցույց տված Անտիոքոս Ի Սոտերի դեմ: Արդյունքում՝ Նիկոմեդես Ի-ի հրավերով և աջակցությամբ գալլերը մ.թ.ա. 277 թվականին անցան Փոքր Ասիա, որտեղ էլ Բյութանիայի թագավորությունում ընթացող գահակալական վեճը վերջնականապես լուծեցին Նիկոմեդես Ի-ի օգտին: Մնում էր, սակայն, դեռևս պատերազմը Սելևկյանների թագավորության դեմ, որի ռազմական մեքենան նույն այս ժամանակ դանդաղորեն մոտենում էր Բյութանիայի թագավորության սահմաններին: Նիկոմեդես Ի-ը, սակայն, այս անգամ ևս չհապաղեց և, մի կողմից տուրք տալով ավարառության գալլերի ձգտմանը, իսկ մյուս կողմից էլ ցանկանալով ոչ սեփական միջոցների հաշվին ազատվել մարդկանց վտանգավոր այդ խմբից, գալլերին

ուղղեց դեպի արևելք՝ Սելևկյանների թագավորության բանակի դեմ: Արդյունքում, ասպատակելով և շրջակայքը ավարառելով առաջանալով դեպի արևելք՝ գալլական բանակը, որը մեծաքանակ հետևազորից բացի ուներ նաև 20.000 հոգանոց հեծելազոր և 240 մարտակառք, արժանահիշատակ Թյումբրարայի հարթավայրում դեմ դուրս եկավ քանակապես իրեն զիջող Անտիոքոս I Սոտերի բանակին, որի կազմում, սակայն, կային 16 փղեր: Հենց վերջին հանգամանքն էլ, սակայն, իր անսպասելիորեն վճռական նշանակությունն ունեցավ: Իրոք, հաջորդած ճակատամարտի հենց սկզբում գալլերը, որոնք մինչ այդ փղեր երբեք չէին տեսել, հակառակորդի շարքերի խորքից մարտադաշտում անակնկալ կերպով իրենց դեմ ելած այս կենդանիների տեսքից անմիջապես էլ գլխակորույս խուճապի մատնվեցին և դիմեցին անկանոն փախուստի՝ հետապնդվելով հակառակորդի կողմից ու կրելով զգալի կորուստներ:

Այսպիսով՝ Սելևկյանների թագավորության ռազմական մեքենային հաջողվեց կասեցնել գալլական առաջխաղացումը, սակայն ելման դիրքեր չվերադարձան արդեն նաև գալլերը: Իրոք, մի կողմից ճակատամարտից փրկված գալլերն իրոք որ այլևս չէին կարող հետ վերադառնալ, քանի որ Նիկոմեդես I-ը հրաժարվեց իր տիրույթներով նրանց ճանապարհ տալ, իսկ զենքի դիմել էլ նրանք արդեն չէին կարող, բայց մյուս կողմից էլ, սրան հակառակ, տեղանքն ու պայմանները խիստ հարմար էին հետագա բնակության համար: Արդյունքում, այն բանից հետո, երբ Սելևկյանների թագավորության ռազմական մեքենան ինքն էլ հետ քաշվեց, գալլերը հենց տեղում էլ բնակության հաստատվեցին՝ երբեմնի Փռյուգիայի տարածքը, ըստ էության, վերանվանելով Գալաթիա: Արդյունքում՝ հիմնադրվեցին Գալաթական տետրարխությունը և Պաֆլագոնիայի թագավորությունը, որոնք մոտակա երկու հարյուրամյակներում հարակից երկրների համար վերածվեցին վարձկանների մի լայնարձակ շուկայի: Այս առումով թեման վերջնականապես սպառելու համար, թերևս, միայն պետք է ավելացնել, որ գալլերի փոքրասիական վերջին արկածներով էլ հենց, ըստ էության, իր ավարտը գտավ գալլական ակտիվության ուշագրավ այս փուլը, ինչից հետո Եվրոպայում մնացած գալլերը, ռազմական խոշոր այս իրադարձություններում, ըստ էության, սպառած սեփական եռանդը, շարունակեցին իրենց արդեն քիչ թե շատ խաղաղ գոյությունը՝ հիմնական հարվածներն ուղղելով դեպի Ապենինյան թերակղզի, սակայն աստիճանաբար արդեն գնալով դեպի անկում: Մինչ գալլերը, օգտվելով Անտիոքոս I Սոտերի, կարծես թե, ալարկոտ գործողություններից, հաստատվում էին Փոքր Ասիայում, նույն Սելևկյանների թագավորության արևմտյան սահմաններին, սակայն, նոր խնդիրներ էին հասունանում, որոնք էլ հենց, ի դեպ, պայմանավորեցին գալլերի դեմ պայքարում սելևկյանների տիրակալի նույն այդ եռանդի պակասը՝ հնարավորություն տալով վերջիններիս ուշքի գալ:

Գլուխ 10
Ասորիքյան I պատերազմը

Խնդիրը կայանում էր նրանում, որ մ.թ.ա. 301 թվականի ամռանը տեղի ունեցած Իպսոսի բախտորոշ ճակատամարտից հետո այդ ճակատամարտում հաղթանակ տարած կողմերը տարածաշրջանի հերթական բաժանման գործում աչքաթող էին արել Պտղոմյանների թագավորությանը՝ մի կողմից հիմնավորելով իրենց վարքագիծը այն բանով, որ Պտղոմեոս I-ն իր մասնակցությունը չէր բերել այդ հաղթանակին, սակայն մյուս կողմից էլ դրանով իսկ ապագա բախումների համար նոր դուռ բացելով: Արդյունքում՝ եռանդուն Պտղոմեոս I-ը, Իպսոսի ճակատամարտից անմիջապես հենց հետո էլ, չնայած այն բանին, որ իրեն աչքաթող էին արել, գործի դրեց սեփական ռազմական մեքենան և Հարավային Ասորիքում մի շարք տարածքային ձեռքբերումներ արձանագրեց, որոնք, բնականաբար, ամենից առաջ ուղղված էին հենց Սելևկյանների թագավորության դեմ: Սելևկոս I Նիկատորն իր հերթին, նույն այս ժամանակ զբաղված լինելով լիովին այլ հոգսերով, որևէ հնարավորություն չունեցավ լուծել Պտղոմյանների թագավորության հետ հարաբերություններում առաջացած խնդիրները, որոնք որպես ժառանգություն հենց այդպես էլ թողեց Անտիոքոս I Սոտերին:

Արդյունքում՝ նույն կերպ նաև, ինչպես Սելևկյանների պարագայում եղավ, մ.թ.ա. 282 թվականի հուլիսին մահացած Պտղոմեոս I-ը, որն, ի դեպ, միակն էր Ալեքսանդր III Մեծի ժառանգությունը վիճարկող առաջատար զորավարներից, որ մահացավ բնական մահով, խնդիրը ժառանգություն թողեց իր երկրորդ կնոջից ծնված ավագ որդի Պտղոմեոս II-ին (282-245), որը ուժեղ և եռանդուն մի անձնավորություն էր՝ արժանիորեն շարունակող հոր գործը: Այսպիսով՝ այն, ինչ չհասցրեց անել ավագ սերունդը, բաժին հասավ կրտսեր սերնդին և հենց գալլերի դեմ մղվող ծանր պայքարի վերջին տարիներին էր, որ Ասորիքում գերիշխանություն ունենալու համար մղվող մի պայքար էլ սկիզբ առավ Անտիոքոս I Սոտերի և Պտղոմեոս II-ի միջև: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել նաև որ, նույն այս ժամանակ Պտղոմյանների թագավորությունը Միջերկրական ծովի արևելքում ռազմաքաղաքական լուրջ մրցակցության մեջ էր մտել նաև Մակեդոնական թագավորության դեմ և Անտիգոնոս I-ը փաստորեն հանդիսանում էր Անտիոքոս I Սոտերի բնական դաշնակիցը, թեև, այնուհանդերձ՝ միայն ծովի վրա:

Ասորիքյան I պատերազմը (մ.թ.ա. 275-271), որը Սելևկյանների և Պտղոմյանների թագավորությունների միջև Ասորիքում սկիզբ առավ մ.թ.ա. 275 թվականին, սկզբնավորվեց Անտիոքոս I Սոտերի կողմից ու սկզբում այն վերջինիս համար հաջող էր: Հետագայում, սակայն, Պտղոմեոս II-ը արագորեն համալրեց սեփական ռազմական մեքենան և հզոր հակահարձակման անցավ՝ արդյունքում տիրելով ոչ միայն Հարավային Ասորիքին, այլև՝ անցնելով դեպի ավելի հյուսիս: Հենց այս ընթացքում էր, որ մ.թ.ա. 273 թվականին ծովով արշաված Պտղոմյանների թագավորության բանակը ասպատակեց Դաշտային Կիլիկիան և նահանջեց[1]: Նույն այս ժամանակ Սելևկյանների թագավորության դրությունը լրացուցիչ բարդացրեցին նաև լուրջ տեսք ստացած տնտեսական խնդիրները, ինչպես նաև ժանտախտի բավականին ուժեղ համաճարակը, որը լայն չափեր ստացավ հատկապես Միջագետքում: Արդյունքում՝ կողմերը համաձայնության եկան, Ասորիքյան I պատերազմը վերջացավ և ռազմական գործողություններն իրենց ավարտը գտան՝ ըստ էության ամրագրելով մինչպատերազմական դրությունն, ի դեմս Պտղոմյանների թագավորության հաջողության: Իր հերթին, քիչ թե շատ խաղաղություն հաստատելով Ասորիքում՝ Անտիոքոս I Սոտերը փորձ կատարեց այնուհանդերձ ամրապնդել Սելևկյանների թագավորության դիրքերը Փոքր Ասիայում:

Գլուխ 11
Ասորիքյան II պատերազմը

[1] Թեոկրիտոս «Իդիլիաներ», գլուխ 17:

Ավարտելով վերջին պատերազմը՝ Անտիոքոս I Սոտերը պատերազմական գործողություններ սկսեց Փոքր Ասիայում վերելք ապրած հերթական հելլենական թագավորություններից մեկի դեմ, ի դեմս Պերգամոսի թագավորության, սակայն մ.թ.ա. 261 թվականին Սարդեսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում վերջինիս գլխավորած բանակը ծանր պարտություն կրեց, իսկ Անտիոքոս I Սոտերն էլ ընկավ մարտում: Անտիոքոս I Սոտերի զոհվելուց հետո Սելևկյանների թագավորության գահին վերջինիս հաջորդեց իր որդի Անտիոքոս II Թեոսը (մ.թ.ա. 261-246), որը սեփական ունակությունների առումով, ըստ էության, իր նախնու կրկնությունն էր: Զբաղեցնելով հոր տեղը՝ Սելևկյանների նորընծա տիրակալը, մի կողմ թողնելով փոքրասիական հոգսերը, կրկին անդրադարձ կատարեց Ասորիքի խնդրին և Պտղոմյանների թագավորությանը:

Արդյունքում՝ մ.թ.ա. 260 թվականին սկիզբ առած Ասորիքյան II պատերազմը (մ.թ.ա. 260-253), որը սկզբնական տարիներին Սելևկյանների և նրան դաշնակցող Մակեդոնական թագավորությունների համար թեև կրկին որոշակիորեն հաջող տեսք ուներ, մ.թ.ա. 253 թվականին հերթական անգամ իր վերջը գտավ առանց որևէ որոշակի արդյունքի կամ հետևանքի: Այսպիսով՝ Պտղոմեոս II-ին, թեև այս անգամ արդեն ոչ առանց զգալի ջանքերի ու կորուստների, այնուհանդերձ կրկին հաջողվեց պահել դիրքերը Հարավային Ասորիքում:

Գլուխ 12
Արտավազդ I-ը և Բյութանիայի խնդիրը

Մ.թ.ա. մոտ 270 թվականին իր մահկանացուն կնքեց Փոքր Հայքի թագավորության արքա Արյուկ I-ը և գահին նրան հաջորդեց Արմանը (մ.թ.ա. մոտ 270-230): Իր հերթին, մ.թ.ա. մոտ 260 թվականին կյանքից հեռացավ Ծոփքի թագավորության արքա Արտանես I-ը և վերջինիս հաջորդեց Սամվելը (մ.թ.ա. մոտ 260-240): Ինչ վերաբերում է Արտավազդ I-ին, ապա նրա թագավորության երկար տասնամյակները, զուտ աղբյուրների բացակայության պատճառով, մեծապես մնում են մթության մեջ, թեև, հիմք ընդունելով որոշակի տեղեկատվություն, կարելի է ասել, որ այս արքան մ.թ.ա. 255 թվականին դեռևս իշխում էր:

Իրոք, հենց այս ժամանակ էր, որ գահակալական անհարթություններ ծագեցին Բյութանիայի թագավորությունում, երբ արժանահիշատակ Նիկոմեդես I-ը կնքեց իր մահկանացուն և, ինչպես նախատեսված էր, գահը պետք է անցներ նրա որդի Զիաելասին[1]: Վերջինս, սակայն, ինչպես մի ժամանակ Արիարաթեսը Կապադովկիայի պարագայում, ստիպված եղավ թողնել իր երկիրն ու ապաստանել Հայոց թագավորությունում: Այս դեպքերի կապակցությամբ, ցավոք, Հայոց արքայի անունը չի հստակեցվում, սակայն հետագա իրադարձություններում հայերի գործողությունների ձեռագիրն ավելի քան նման է այն ամենին, ինչին մենք ականատես եղանք Կապադովկիայի թագավորության պարագայում մ.թ.ա. 301 թվականին:

Իրոք, Կապադովկիայի թագավորությունն ավանդականորեն դաշնակից էր Մեծ Հայքի թագավորությանը, լավ վճարված Գալաթիայում ամեն կերպ աջակցում էին Զիաելասին և արդյունքում Հայոց ռազմական մեքենան Բյութանիայի թագավորության տարածք հասավ, ըստ էության, դաշնակից տարածքներով: Այսպիսով՝ այս անգամ ևս, ինչպես 46 տարի առաջ էր, մ.թ.ա. 255 թվականին Բյութանիայի ճ-մ-ում Արտավազդ I-ի գլխավորությամբ երկրամաս մտած Մեծ Հայքի և Ծոփքի[2] թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000, այդ թվում գալլեր) մանր մարտերում հաղթեց ու երկրից դուրս

[1] Այս իրադարձությունները բավականին մանրամասն, սակայն այնուհանդերձ թերի կերպով վերլուծված են Օ. Լ Գաբելկոյի կողմից (տես՝ Габелко О. Л. "История Вифинского царства", СПб 2005, стр. 198-203), որը լիովին անտեսում է ինչպես Մեծ Հայքի և Ծոփքի թագավորությունների վճռական դերը հիշատակված իրադարձություններում, այնպես էլ վերջիններիս մասնակցությամբ տարածաշրջանում ստեղծված ուժերի ընդհանուր հարաբերակցությունը::

[2] Ծոփքի թագավորության մասին հայտնում է Էրատոսթենոսը, ըստ որի Զիաելասը ապաստանել է Ծոփքի թագավորությունում:

վտարեց Զիաելասի հակառակորդների բանակին (մոտ 10.000), որից հետո գահը հանձնեց օրինական արքա Զիաելասին (մ.թ.ա. 255-228)[1]: Արդյունքում, թեև քննարկվող դեպքում, ինչպես արդեն ասվեց, սկզբնաղբյուրը չի հստակեցնում Հայոց արքայի անունը, սակայն, դատելով վարքագծի ընդհանրությունից, կարելի է հավանական համարել, որ այս անգամ ևս գործել է Արտավազդ Ի-ը: Այսպիսով՝ կարելի է պարզված համարել Հայոց այս հզոր արքայի թագավորության դրվագներից ևս մեկը: Գլխավոր գործերից մեկը, սակայն, որ այս արքային սպասում էր, այնուհանդերձ դեռ առջևում էր, ընդ որում ամեն ինչ տեղի ունեցավ Արտավազդ Ի-ի թագավորության արդեն վերջին տարիներին:

Գլուխ 13
Հայ-պարթևական դաշնադրության սկիզբը

Մ.թ.ա. 250-ական թվականներին Սելևկյանների թագավորությունը շարունակում էր գտնվել բարդ արտաքին-քաղաքական դրության մեջ: Եգիպտոսում իշխող Պտղոմյանների թագավորության հետ սրված հարաբերություններն արդեն հանգեցրել էին երկու խոշոր պատերազմների, որոնցից և ոչ մեկն էլ կողմերից որևէ մեկին վճռական հաջողություն չէր տվել, սակայն զգալի կորուստների էր բերել: Իր հերթին, տարված Պտղոմյանների հետ մրցակցությամբ, սելևկյան գահակալները սեփական թագավորության արևելյան տարածքներն աստիճանաբար սկսել էին դիտարկել զուտ որպես ռեսուրսների աղբյուր, իսկ այդ պարագայում էլ հիշատակված տարածքներում մի կողմից աճում էին կենտրոնախույս տրամադրությունները, իսկ մյուս կողմից էլ կենտրոնական իշխանությունն այստեղ աստիճանաբար թուլանում էր: Այս ամենի հետևանքով մ.թ.ա. նույն 250-ական թվականներին Սելևկյանները սկզբում կորցրին իշխանությունը Մավերնահրն ընդգրկող Սողդիանայի նկատմամբ, հետո անկախացավ նրանից արևմուտք գտնվող Բակտրիան, իսկ վերջում էլ ապստամբություն բռնկվեց արդեն ավելի արևմուտք տարածվող Պարթևստանում:

Հենց վերջին ելույթն էր, որ ամենավտանգավոր բնույթն էր կրում, քանի որ, եթե այլ պարագայում ապստամբներն ուղղակի ուզում էին անկախացնել սեփական երկրամասը, ապա վերջին պարագայում ապստամբությունն աստիճանաբար իրենց ձեռքը վերցրած քոչվոր և մարտունակ պարթևները Սելևկյանների նկատմամբ ավելի ագրեսիվ քաղաքականություն որդեգրեցին: Եվ ահա մ.թ.ա. արդեն 250 թվականին Դահ ցեղի Ապար ցեղախմբի ներկայացուցիչ Արշակ Ի Քաջը (մ.թ.ա. 250-247), որը ուժեղ, եռանդուն, քաջարի և խիզախ մի անձնավորություն էր ու սեփական կողմնակիցների հետ միասին մինչ այդ էլ աչքի էր ընկնել անկախ վարքագծով, վերջնականապես գրավեց Պարթևստանն ու դարձավ Պարթևական թագավորության առաջին և հիմնադիր արքան[2]: Արդյունքում, փաստորեն, Սելևկյանների թագավորության արևելքում ստեղծվեց բավականին հզոր մի ուժ, որը, անհաշտ դիրքորոշում ունենալով սելևկյան տիրակալների նկատմամբ, Սելևկյանների թագավորության բոլոր հակառակորդների համար իրենից, ըստ էության, բնական մի դաշնակից էր ներկայացնում:

Մ.թ.ա. III դարի կեսերին բարդ արտաքին քաղաքական ընտրության առաջ էր կանգնած նաև Մեծ Հայքի թագավորությունը: Դատելով ըստ ամենայնի՝ ծերացած Արտավազդ Ի-ն ուղիղ ժառանգորդ չուներ, ընդ որում հելլենիստական վտանգը, ի դեմս ամենից առաջ Սելևկյանների թագավորության, դեռևս ամենևին էլ վերացած չէր: Ի վերջո,

[1] Մեմնոն Հերակլեացի «Պոնտական Հերակլեայի պատմությունը», մաս 14:

[2] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 9, մաս 3; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 2; Արիանոս «Պարթևստանի պատմությունը»; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 65; Եվսեբիոս Կեսարացի «Եկեղեցական պատմություն», գիրք 9, գլուխ 8; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 8, գիրք 2, գլուխ 2; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 26, 49; Սեբեոս «Պատմություն», գլուխ 2; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 4; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 5; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Ավագ Սեբաստացի «Ժամանակագրություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»; Եսայի Հասան-Ջալալյան «Համառոտ պատմություն Աղվանից աշխարհի», գլուխ 1; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 5, գլուխ 5, 6:

բացառված չէր, որ մի որևէ եռանդուն արքայի ի հայտ գալու պարագայում Սելևկյանների թագավորությունը կարող էր ոտնձգություն իրականացնել Մեծ Հայքի թագավորության նկատմամբ: Ստեղծված պայմաններում Արտավազդ Ի-ն աստիճանաբար հանգեց այն մտքին, որ պետք է ստեղծել հայ-պարթևական խոշոր և կայուն մի դաշնակցություն, ընդ որում այդ ճանապարհին հաջողության հասնելու ամենահաստատ եղանակը կլիներ այն, որ Հայոց գահը զբաղեցնի Արշակ Ի Քաջի եղբայր Վաղարշակը: Այսպիսով՝ Արտավազդ Ի-ն իրականացրեց իր վերջին և, թերևս, ամենակարևոր ձեռնարկումներից մեկը՝ Մեծ Հայքում թագավորելու հրավիրելով Արշակ Ի Քաջի եղբայր Վաղարշակին ու ստեղծելով հայ-պարթևական հարատև մի դաշնակցություն:

Դատելով մեզ հասած տեղեկություններից՝ արդեն այն ժամանակ, երբ Արշակի և նրա եղբայր, ապագա արքա Տրդատի գլխավորած պարթևները հակասելևկյան պայքարի դրոշ պարզեցին Սելևկյանների թագավորության արևելքում, նրանք ամենայն եռանդուն աջակցության են արժանացել հայերի ու Մեծ Հայքի թագավորության կողմից: Այսպես, Մեծ Հայքի թագավորության ազդեցիկ տոհմերից մեկի նահապետը հանդիսացող Կյուրոս Արծրունին իր ակտիվ մասնակցությունը բերեց պարթևների մղած պայքարին տեղում[1], իսկ ոչ պակաս ազդեցիկ Բագրատունիների նախարար Բագրատն էլ նույն այս ժամանակ ապահովում էր կապը Պարթևստանի ու Հայաստանի միջև՝ կարգավորելով գործերն արդեն Հայաստանում[2]:

Գլուխ 14
Վաղարշակ Ի-ի հիմնախնդիրը

Վաղարշակ Ի-ը բուրժուական և, հատկապես, խորհրդահայ պատմագիտության կողմից ավանդականորեն հռչակված է որպես վիպական կամ նույնիսկ «հավաքական կերպար», ընդ որում նույն մոտեցումը գերիշխում է նաև այժմ: Այսպես, ըստ հայագիտության մեջ իշխող տեսակետի, Վաղարշակի պատմական նախատիպ է ծառայել Տրդատ Ի-ը (51, 54-59, 62-76): Արտահատվել են, սակայն, այլ տեսակետներ ևս: Այսպես, ըստ Մ. Աբեղյանի այդ նախատիպը Պարթևական թագավորության արքա Վաղարշ Ի-ն (51-79) է[3], Ս. Երեմյանը այստեղ տեսնում է Տրդատ Ի-ին և նույն Վաղարշ Ի-ին[4], իսկ Հ. Մանանդյանն էլ, մերժելով բոլոր այս տեսակետները, արտահայտվում է Մեծ Հայքի թագավորության արքա Վաղարշ II-ի օգտին (186-206)[5]: Այս առումով բնորոշ է Գ. Սարգսյանի տեսակետը, ըստ որի Վաղարշակը հավաքական անձ է՝ բաղկացած Մեծ Հայքի թագավորության արքաներ Արտաշես Ի-ի և Տրդատ Ի-ի, ինչպես նաև այլ հայ տիրակալների առանձին գծերից: Սեփական ուսումնասիրություններս, սակայն, ինձ հանգեցրել են հետևության, որ Վաղարշակ Ի-ը իրականում գոյություն ունեցած անձնավորություն է: Միաժամանակ հարկ է միանգամից նշել, որ այս գաղափարը նոր չէ, ընդ որում ողջ միջնադարում Վաղարշակ Ի-ի իրականությունը որևէ կերպ կասկածի տակ չի դրվել և միայն նոր ժամանակներում էր, որ առաջ քաշվեց տեսակետ Վաղարշակ Ի-ի ոչ իրական լինելու վերաբերյալ: Ավելացնենք, սակայն, որ դրանով հանդերձ վերջնականապես չժխտվեց նաև հակառակ տեսակետը:

Այն բանի օգտին, որ Վաղարշակ Ի-ը եղել է իրականում գոյություն ունեցած անձնավորություն և իշխած արքա, վերջին հարյուրամյակներում արտահայտվել են մի շարք գիտնականներ, թեև միաժամանակ պետք է նշել նաև, որ այնուհանդերձ վիճելի է համարվել այս արքայի իշխանության գալու ժամանակը: Այսպես, Վաղարշակ Ի-ի

---

[1] Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 3; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 27; Սեբեոս «Պատմություն», գլուխ 2 և այլն:
[3] Տես՝ Մ. Աբեղյան «Հայ ժողովրդական առասպելները Մ.Խորենացու Հայոց պատմության մեջ», Վաղարշապատ 1899, էջ 489, ծանոթագրություն 1:
[4] Տես՝ Ադոնց Ն. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», Երևան 1987, էջ 481, Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 746-747:
[5] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 2, Երևան 1978, էջ 62:

գահակալության սկզբնատարվա համար ներքոհիշյալ հետևյալ գիտնականներն առաջարկել են հետևյալ տարիները.

1. Ա. Գարագաշյան - մ.թ.ա. 166 թ.,
2. Ա. Գուտշմիդ - մ.թ.ա. 153 թ.,
3. Գ. Սարգսյան - մ.թ.ա. 153, 137, 134 կամ 111 թթ.,
4. Ա. Սեն-Մարտեն - մ.թ.ա. 152 թ.,
5. Լ. Գաթրճյան - մ.թ.ա. 150 կամ 149 թթ.,
6. Մ. Չամչյան - մ.թ.ա. 149 թ.,
7. Մ. Էմին - մ.թ.ա. 144 թ.,
8. Թ. Ավդալբեգյան - մ.թ.ա. 135 թ.,
9. Ք. Պատկանյան - մ.թ.ա. 132 թ.,
10. Ս. Մալխասյանց - մ.թ.ա. 132 թ.,

Այս տվյալները ի մի են հավաքված բազմավաստակ Լ. Շահինյանի կողմից[1], ընդ որում նույն Լ. Շահինյանն ինքը կողմ է մ.թ.ա. 134 թվականին[2]: Իմ կողմից առաջարկվում է, սակայն, մեկ այլ տարբերակ, որի մասին կխոսվի ստորև:

Խորհրդահայ պատմագիտության շրջանակներում մի շարք փորձեր կատարվել են վերլուծելու և հասկանալու Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգը, սակայն, թող ներվի ինձ այս համարձակությունը, այդ փորձերից և ոչ մեկն էլ հաջողությամբ չի ավարտվել: Սույն աշխատանքի շրջանակներում բնականաբար նպատակ չունենալով մանրամասնել այս հարցն՝ ուղղակի ամրագրենք, որ խնդիրը կարևորվում է ամենից առաջ հենց Վաղարշակ Ի-ի իշխանության սկզբնատարին պարզելու տեսանկյունից, ընդ որում այս հարցն ինքը սերտորեն կապված է Պարթևական թագավորության հիմնադրման տարեթվի հետ, ինչն էլ հիմքն է կազմում խորենացիական ժամանակագրական համակարգին վերջինիս աշխատանքի առնվազն 2-րդ գրքի մասով: Խնդրին ձեռք զարկած գիտնականներից էին, մասնավորապես, Ստ. Մալխասյանը[3], Թ. Ավդալբեգյանը[4], Գ. Սարգսյանը, Լ. Շահինյանը և այլք: Այս առումով ավելորդ չէ նշել, որ, եթե գիտնականների մեծ մասն ուղղակի արտահայտում էր իր տեսակետը երևույթի մասին և հետագայում որևէ կերպ չէր զարգացնում այն կամ չէր պնդում դրա վրա, ապա Գ. Սարգսյանի ու Լ. Շահինյանի պարագայում դա վերածեց մի իսկական «Շահինյանն ընդդեմ Սարգսյանի» գիտական բանավեճի: Ստորև, հետագայում պարզ լինելու համար, ավելորդ չեմ գտնում մի քանի խոսքով անդրադառնալ իր ժամանակի մասնագիտական նեղ շրջանակում բավականին հայտնի դարձած այդ բանավեճին, ինչի ֆոնի վրա իմ կողմից առաջարկվող լուծումն առավել հասկանալի կլինի:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 1965 թվականին լույս տեսավ Գ. Սարգսյանի «Հայոց պատմության ժամանակագրական համակարգը» աշխատությունը[5], որտեղ հեղինակն, ըստ էության, առաջին անգամ փորձ կատարեց ամփոփ կերպով վերականգնել Մովսես Խորենացու երկի 2-րդ գրքի ժամանակագրական համակարգը՝ տալով անհրաժեշտ բացատրություններ, անելով հնարավոր ուղղումներ և այլն: Սկզբունքորեն նույն խնդիրների լուծմանն էր ուղղված նաև նույն հեղինակի 1966 թվականին լույս ընծայած «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» աշխատությունը[6]: Դրանից հետո, Գ. Սարգսյանի հետ ունենալով սկզբունքային անհամաձայնություն, նույն 1966 թվականին Լ. Շահինյանը հանդես եկավ առաջին գիտական հոդվածով[7], իսկ հաջորդ տարի էլ, ըստ էության, լրացրեց իր տեսակետը երկու նոր հոդվածներով[8]: Ի

[1] Շահինյան Լ. «Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն», Երևան 1989, էջ 176:
[2] Շահինյան Լ. «Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն», Երևան 1989, էջ 194:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյան, Երևան, 1981:
[4] Ավդալբեգյան Թ. «Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ», ՊԲՀ 1964, N 4:
[5] Սարգսյան Գ. Խ. «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965:
[6] Սարգսյան Գ. Խ. «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին», Երևան, 1966:
[7] Շահինյան Լ. Փ. «Պարսից Արշակունի հարստության հիմնադրման տարեթիվն ըստ Խորենացու», ՊԲՀ 1966, N 1:
[8] Շահինյան Լ. Փ. «Նորից Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրության մասին», ՊԲՀ 1967, N 4; Շահինյան Լ. «Ո՞րն է Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», ԲՄ 1967, N 8:

պատասխան արված մեծածավալ քննադատության՝ Գ. Սարգսյանը հանդես եկավ պատասխան հոդվածով, որը հրապարակվեց արդեն 1968 թվականին[1]: Ակնհայտորեն նպատակ ունենալով երկու գիտնականներին էլ հնարավորություն տալ լիարժեք արտահայտվելու՝ 1971 թվականին նույն հանդեսի մեջ լույս տեսան Լ. Շահինյանի և Գ. Սարգսյանի հերթական հոդվածները[2], որով էլ, ըստ էության, արդեն փակուղի մտած բանավեճն ավարտվեց: Տարիներ անց, արդեն 1989 թվականին, Լ. Շահինյանը հրատարակեց իր ամփոփիչ բնույթ ունեցող մենագրությունը[3], որը, սակայն, ըստ էության, լինելով կրկնությունը հեղինակի նախկինում հրատարակված տեսակետների, ևս բազում անպատասխան հարցեր թողեց: Այս առումով, թերևս, դիպուկ էին Գ. Սարգսյանի խոսքերը, թե. «*Մեր վեճը դոփում է տեղում, առաջ չի շարժվում*»[4]:

Ես պատահական չէր, որ այս չափ մանրամասն անդրադարձա խորհրդահայ պատմական դպրոցի շրջանակներում առանց որևէ արդյունքի ավարտված գիտական հիշատակված բանավեճին, քանի որ դրանով ամենից առաջ ակնհայտորեն պարզ եղավ, թե ինչ աստիճան խճճված խնդրի հետ է, որ մենք գործ ունենք: Կա, սակայն, ևս մեկ և ավելի կարևոր մի հանգամանք:

Եվ Գ. Սարգսյանը, և Լ. Շահինյանը, փորձելով առաջ տանել իրենց առաջարկած համակարգերն ու ժխտել դիմացինինը, իմ կարծիքով անում էին մեկ սկզբունքային սխալ, որը միանգամից ի չիք էր դարձնում նրանց ջանքերի արդյունքները: Այդ սխալը կայանում էր նրանում, որ նրանք, որպես Վաղարշակ I-ի թագավորության սկզբնատարի, ընդունում էին, լայն իմաստով, մ.թ.ա. II դարը: Իհարկե, բազմավաստակ երկու հեղինակներն էլ դրել էին ավելի մեծ մի խնդիր, ի դեմս խորենացիական ժամանակագրական համակարգի վերականգման, սակայն, որպես ժամանակագրական ցատկահարթակ ունենալով այդ թվում նաև Վաղարշակ I-ի իշխանության գալու թվականը ու, ի դեմս դրա, ինչպես արդեն ասվեց, տեսնելով մ.թ.ա. II դարը, նրանք ի սկզբանե զրկվում էին խնդրին պատշաճ լուծում տալու ցանկացած հնարավորությունից: Իրոք, ինչպես ակնհայտ է երկու գիտնականների աշխատանքների ուշադիր վերլուծությունից, երկու հեղինակներն էլ, պայքարելով միմյանց դեմ, ըստ էության, գտնվում էին փակուղում: Արդյունքում՝ ստեղծվեց մի վիճակ, երբ ոչ Գ. Սարգսյանը և ոչ էլ Լ. Շահինյանը չկարողացան ոչ լիարժեք հիմնավորել իրենց տեսակետները, ոչ էլ՝ ժխտել դիմացինի հակափաստարկները: Ամփոփելով ասվածը՝ ևս մեկ անգամ փաստենք, որ առաջացող հարցերին բավարար լուծում տալուն ի սկզբանե խանգարեց սխալ ժամանակագրական ցատկահարթակ ընտրելը, երբ մ.թ.ա. III դարի փոխարեն առաջարկվում էր մ.թ.ա. II դարը: Այս առումով կարծում եմ, որ իմ կողմից առաջարկվող տեսակետը, լինելով սկզբունքորեն նոր, ի վերջո կօգնի բավարար լուծում տալ դեռևս խորհրդահայ պատմաբաններին զբաղեցրած այս ուշագրավ խնդրին:

Վերոգրյալի կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ Վաղարշակ I-ի գահակալության սկզբի համար մ.թ.ա. II դարի այս կամ այն թվականն ընդունելու հիմնական պատճառն այն է, որ, ըստ Մովսես Խորենացու, վերջինիս Մեծ Հայքի թագավորության արքա է դարձրել «*Արշակ I Քաջի որդի և հաջորդ Արտաշեսի որդի ու հաջորդ Արշակը Մեծը*», որին այսուհետ, Արշակ I Քաջից տարբերելու և կարճության համար, կկոչենք «Արշակ Միասնական»: Եվ այսպես, ըստ Պատմահոր, Արշակ I Քաջի թոռ «Արշակ Միասնական»-ը հաղթել ու գերել է սելևկյան արքա «Դեմետրի որդի Դեմետրին», ինչպես նաև հաղթել ու սպանել է վերջինիս եղբայր, «Անտիոք Սիդեացի» անունը կրող սելևկյան ևս մեկ արքայի, ընդ որում Վաղարշակ I-ի գահակալումը կապվում է հենց «Արշակ Միասնական»-ի հետ:

Տեսակետն առաջին հայացքից իրոք որ հիմնավոր է թվում, քանի որ, ըստ Պատմահոր. «*...Սրանցից էր Արշակ քաջը, որ, մակեդոնացիներից ապստամբվելով,*

[1] Սարգսյան Գ. Խ. «Խորենացու «Պատմության» ժամանակագրական համակարգի վերականգնման մասին», ՊԲՀ 1968, N 1:
[2] Շահինյան Լ. Փ. «Մովսես Խորենացու ժամանակագրության մի քանի հարցերի մասին», ՊԲՀ 1971, N 1; Սարգսյան Գ. Խ. «Դարձյալ Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգի մասին», ՊԲՀ 1971, N 1:
[3] Շահինյան Լ. «Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն», Երևան 1989:
[4] Սարգսյան Գ. Խ. «Դարձյալ Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգի մասին», ՊԲՀ 1971, N 1:

քուշանաց երկրում թագավորեց երեսունմեկ տարի: Նրանից հետո՝ նրա Արտաշես որդին՝ քսանվեց տարի, ապա՝ նրա Արշակ որդին, որ կոչվեց Մեծ: Նա Անտիոքոսին սպանեց և իր եղբայր Վաղարշակին Հայոց վրա թագավոր դրեց՝ իր երկրորդը դարձնելով, իսկ ինքը, չվելով Բահլ, այստեղ հիսուներեք տարի հաստատեց իր թագավորությունը: Այս պատճառով նրա սերունդները պահլավ կոչվեցին, ինչպես և նրա եղբայր Վաղարշակի սերունդները նախնիի անունով կոչվեցին Արշակունի»[1]: Իր հերթին, լայնորեն հայտնի է, որ Սելևկյանների թագավորության արքա Դեմետրիոս I Սոտերի (մ.թ.ա. 162-150) որդի Դեմետրիոս II-ը (մ.թ.ա. 145-139, 129-126) պարտություն է կրել Պարթևական թագավորության արքա Միհրդատ I-ից (մ.թ.ա. 171-138), իսկ վերջինիս եղբայր Անտիոք VII Սիդեացին (մ.թ.ա. 138-129) էլ իր հերթին պարտություն է կրել պարթևների արքա Հրահատ II-ից (մ.թ.ա. 138-128), ընդ որում առաջինը գերվել է մ.թ.ա. 139 թվականին, իսկ վերջինը զոհվել է մ.թ.ա. 129 թվականին: Այս ամենի հիման վրա էլ հենց բխեցվել է, որ «Արշակ Միասնական»-ը Պատմահոր մոտ Միհրդատ I-ի և Հրահատ II-ի հավաքական մի ամբողջությունն է, «Դեմետրի որդի Դեմետրը» Դեմետրիոս II-ն է, իսկ «Անտիոք Սիդեացի»-ն էլ, բնականաբար՝ Անտիոք VII Սիդեացին: Ահա հենց այս հիմնաթեզն է, որ ընկած է վերոհիշյալ տեսակետի հիմքում և առավել ամբողջական արտահայտված է Լ. Շահինյանի ընդհանրացնող վերլուծության հիմքում[2]:

Իրականում, սակայն, Մովսես Խորենացու աշխատանքի համապատասխան հատվածների ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերում է հետևության, որ, դատելով նկարագրվող պատկերից, խոսքը վերաբերում է ոչ թե Միհրդատ I-ին կամ Հրահատ II-ին կամ, առավել ևս՝ նրանց «միասնական ամբողջությանը», այլ՝ Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ I Քաջին, իսկ Վաղարշակ I-ն էլ հենց նրա, այլ ոչ թե «Արշակ Միասնական»-ի, եղբայրն է և, հետևաբար, նա ապրել է մ.թ.ա. ոչ թե II, այլ III դարում: Հատկանշական է, որ այս արքան ևս ժամանակակից է Սելևկյան մի գահակալի, որը կրում էր «Անտիոքոս» անունը՝ խոսքը Սելևկյանների թագավորության արքա Անտիոքոս II Թեոսի մասին է, որի թագավորության ամենավերջում Սելևկյանները ծանր անհաջողություններ կրեցին իրենց արևելյան սահմաններում և դա բերեց Պարթևական անկախ թագավորության առաջացմանը: Այս առումով չի խանգարի առանձին-առանձին դիտարկել ինչպես Պատմահոր հաղորդումները, այնպես էլ նրա երկի համապատասխան հատվածների ներքին կառուցվածքը:

Ամենից առաջ ավելորդ չեմ գտնում անել ընդարձակ մեջբերում Պատմահոր երկրի 2-րդ գրքի 1-ին գլխից, ընդ որում, պարզության համար, ես մեջբերումը որոշ դեպքում կլրացնեմ իմ սեղմ մեկնաբանություններով. «*Այժմ, սկսելով երկրորդ գիրքս, քեզ գրում եմ այն առանձին գործերը, ինչ-որ մեր երկրում են կատարվել՝ կարգով պատմելով Ալեքսանդրի թագավորությունից մինչև քաջ ու սուրբ մարդու՝ Տրդատի, թագավորությունը, ինչ-որ այստեղ քաջության և արիության, իմաստության ու բարեկարգության գործեր են կատարվել ամեն մի թագավորի ձեռքով՝ սկսած Պարսից Արշակ թագավորից ու նրա Վաղարշակ եղբորից, որին Արշակը թագավորեցրեց մեր երկրի վրա, և մեր երկրի մյուս թագավորներից, որ նրանից հետո եղան նրա զարմից, որոնք, տերությունը որդին հորից առնելով, կոչվեցին Արշակունիներ՝ Արշակի անունից, որոնցից մեկն ըստ կարգի հաջորդում էր թագավորությանը, իսկ մյուսները՝ ավելորդները, աճում ու բազմանում էին՝ իբրև ցեղ: Բայց կարճառոտ գրում եմ այն, ինչ մեզ հարկավոր է, իսկ ավելորդները բաց եմ թողնում, որովհետև ուրիշ ազգերի մասին այն, ինչ-որ շատերից արդեն ասված էր, բավական է: Երբ բոլոր տիեզերքին տիրեց Ալեքսանդր Մակեդոնացին՝ Փիլիպպոսի և Ոլոմպիադայի որդին, քսանչորսերորդն Աքիլլեսից, ապա ինքը մեռնում է՝ իր տերությունը թողնելով շատ մարդկանց՝ կտակելով, որ բոլորի իշխանությունն էլ կոչվի մակեդոնական: Նրանից հետո Բաբելոնի վրա թագավորեց Սելևկիոսը (**Սելևկյանների թագավորության հիմնադիր արքա Սելևկոս I Նիկատորը – Մ.Հ.**), որ շատերից իշխանությունը խլեց ու*

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 68:
[2] Շահինյան Լ. «Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն», Երևան 1989, էջ 175-195:

*պարթևներին մեծ պատերազմով հնազանդեցրեց, որի պատճառով և Նիկանովր՝ հաղթող, կոչվեց: Սա, երեսունմեկ տարի տիրելուց հետո, թագավորությունը թողնում է իր որդի Անտիոքին, որը Սոտեր էր կոչվում (**Սելևկյանների թագավորության արքա Անտիոքոս I Սոտերը – Մ.Ք.**): Սա թագավորեց տասնևինը տարի: Սրան հաջորդեց Թևոս կոչված Անտիոքը (**Սելևկյանների թագավորության արքա Անտիոքոս II Թեոսը – Մ.Ք.**), որը տասը տարի իշխեց: Նրա տասնմեկերորդ տարում (**մ.թ.ա. 250 թվականին – Մ.Ք.**) պարթևներն ապստամբվում են և դուրս են գալիս մակեդոնացիների հպատակությունից, ուստի թագավորում է Արշակ Քաջը (**Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ I Քաջը – Մ.Ք.**), որ Աբրահամի սերնդից էր՝ Քետուրայի զավակներից, որով հաստատվում էր Աբրահամին ուղղված տիրոջ խոսքը, թե. «Քեզանից ազգերի թագավորներ կծնվեն»»*[1],- հայտնում է Մովսես Խորենացին՝ ըստ էության շարադրելով առաջիկա գրքում իր անելիքն ու ևս մեկ անգամ ամրագրելով, որ Վաղարշակ I-ն եղբայրն էր «*Պարսից Արշակ թագավորի*», իսկ վերջինիս հետ նույնացող ու մի քանի տող ներքև հիշատակվող «*Արշակ Քաջ*»-ն էլ այն տիրակալն է, որն ապստամբել է մ.թ.ա. 250 թվականին՝ Անտիոքոս II Թեոսի իշխանության 11-րդ տարում: Այս առումով հարկ է նշել, որ, թեև «*Պարսից Արշակ թագավորի*» մատնանշումն առ Արշակ I Քաջ կարող է այնքան էլ միանշանակ չթվալ, սակայն, հաշվի առնելով պատումի ներքին տրամաբանությունը, երբ հեղինակը խոսում է Ալեքսանդր III Մեծից ու նրա հետնորդներից հետո առաջացած Պարթևական թագավորության մասին, այն հանգամանքը, որ այստեղ հիշատակվող «Արշակ»-ը ընկալվում է որպես անվանադիր նախահայր, ինչպես նաև մի քանի տող ներքև որպես միանշանակ Արշակ I Քաջ հիշատակվող «*Արշակ Քաջ*»-ի պարագան, կրկին հավանական է կարծել, որ խոսք հենց Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ I Քաջի, այլ ոչ թե մի որևէ այլ՝ «շարքային», արքայի մասին է:

«*Պատմում են, թե Արշակ Մեծը՝ Պարսից և Պարթևների թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբվեց մակեդոնացիների դեմ, թագավորեց ամբողջ Արևելքի ու Ասորեստանի վրա, Անտիոքոս թագավորին սպանեց Նինվեում և ամբողջ տիեզերքը հնազանդեցրեց իրեն: Սա իր եղբորը՝ Վաղարշակին, թագավորեցնում է Հայաստանի վրա՝ նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա: Նա նրան մայրաքաղաք է տալիս Մծբինը և նրա համար սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը և Թետալիան՝ Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է արևմտյան ծովի մոտ, նաև Ատրպատականը, և էլի՝ որքան քո միտքն ու քաջությունը կհասնեն, որովհետև, ասում են՝ քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում են: Սա, իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով, կամեցավ իմանալ, թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի՞ մարդիկ տիրելիս են եղել Հայաստանի վրա իրենից առաջ, արդյո՞ք ինքը անցյալ քաջերի տեղն է գրավում, թե՞՝ ապիկարների: Նա գտավ Մար Աբաս Կատինա անունով մի ուշիմ ասորի՝ քաղդեական և հունական գրության մեջ վարժ, և նրան արժանավայել ընծաներով ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի, մոտ՝ խնդրելով բանալ նրա առաջ արքունական դիվանը»*[2],- հերթական անգամ հայտնում է Մովսես Խորենացին: Այսպիսով՝ առկա է ևս մեկ հստակ հաղորդում, որ Սելևկյանների տիրապետության դեմ ապստամբած «Արշակ Մեծ» անունով Պարթևական թագավորության մի արքա իր եղբայր Վաղարշակին հաստատել է Մեծ Հայքի թագավորության գահին, ընդ որում որևէ կասկած չկա, որ այս պարագայում, ինչպես նաև քիչ հետո, կապված Մար Աբաս Կատինայի հետ, խոսքը գնում է հենց Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ I Քաջի մասին, որը գործել է մ.թ.ա. հենց III, այլ ոչ թե II հարյուրամյակում, և թագավորել է մ.թ.ա. 250-247 թվականներին: Իրոք, հենց Արշակ I Քաջն էր, այլ ոչ թե «Արշակ Մեծ»-ը, ով էլ նա լինի, որ. «*...ապստամբվեց մակեդոնացիների դեմ*», այլ թեկնածու ուղղակի չի կարող լինել, ընդ որում հաստատ հենց

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 1:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 8:

Արշակ I Քաջին կարող էր վերագրվել նաև «*քաջերի սահմանը նրանց զենքն է*» հայտնի արտահայտությունը:

Վերոհիշյալ թեզը իր հաստատում է գտնում նաև «Հայոց պատմության» 2-րդ գրքի 2-րդ գլխում, երբ Պատմահայրը հայտնում է. «*Ինչպես ասացինք, Ալեքսանդրի մահից վաթսուն տարի հետո Բահլ Առավոտին կոչված քաղաքում՝ Քուշանների երկրում, պարթևների վրա թագավորում է Արշակ Քաջը: Դաժան և սաստիկ պատերազմներ մղելով՝ նա գրավում է ամբողջ արևելքը, Բաբելոնից էլ հալածում է մակեդոնացիների իշխանությունը*»[1]: Այսպիսով՝ հերթական անգամ իր հաստատումն է ստանում այն հանգամանքը, որ, ըստ Պատմահոր տրամաբանության և իրական պատմական փաստերի, հենց Արշակ I Քաջն էր, այլ ոչ թե «Արշակ Միասնական»-ը, ում էլ որ մենք փորձենք տեսնել այս կերպարի տակ, որ ապստամբության դրոշ է բարձրացրել Սելևկյանների տիրապետության դեմ:

Հիշատակված սխեմայի օգտին ևս մեկ հաղորդում էլ Պատմահայրը տալիս է քիչ հետո, երբ հայտնում է. «*Մակեդոնացիների հետ Արշակի պատերազմից հետո, երբ նա գրավեց Բաբելոնն և Ասորեստանից արևելք ու արևմուտք ընկած երկրները, Վաղարշակն էլ մեծ զորք գումարեց Ատրպատականից և Հայաստանի միջնաշխարհից՝ անվանի ու քաջ մարդիկ՝ վերը հիշված Բագարատին և նրա ձեռքի տակ եղած քաջերին, ծովեզերքի երիտասարդներին, որ սերված էին Գեղամից ու քանանցիներից, ինչպես նաև Շարայի և Գուշարի սերունդներից, նաև՝ իրենց մերձավորներով նրանց մերձակա Սիսակյաններին ու Կադմյաններին՝ գրավելով մեր երկրի կես մասը*»[2]: Այս հաղորդման մեջ ևս ուղղակիորեն չի հստակեցվում, թե ո՞ր Արշակի հետ մենք գործ ունենք՝ Արշակ I Քաջի, թե՞ «Արշակ Միասնականի», սակայն մեկ հանգամանք մեզ այնուհանդերձ օգնում է ընտրությունը կրկին կանգնեցնել Արշակ I Քաջի վրա, քանի որ, ըստ Պատմահոր, Արշակը Բաբելոնից հալածում է մակեդոնացիների իշխանությունը, իսկ ըստ Մովսես Խորենացու մեկ այլ հաղորդման էլ՝ Բաբելոնից մակեդոնացիների իշխանությունը հալածեց հենց Արշակ I Քաջը[3], այն դեպքում, երբ, դրան հակառակ, «Արշակ Միասնական»-ը, լինի վերջինս Միհրդատ I-ը թե Հրահատ II-ը, Սելևկյանների հետ հերթական ընդհարման ժամանակ արդեն իսկ տիրում էր Բաբելոնին:

Միաժամանակ, մինչև առաջ անցնելը ամրագրենք նաև ևս մեկ կարևոր հանգամանք՝ Պատմահայրը «Արշակ Մեծ» է կոչում ինչպես Արշակ I Քաջին, այնպես էլ «Արշակ Միասնական»-ին: Հիշենք այս ամենն ու շարունակենք դատողությունները:

Վերևում արդեն մանրամասն հիմնավորվեց, որ Մովսես Խորենացին Վաղարշակ I-ին, ըստ էության, համարում է հենց Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ I Քաջի, այլ ոչ թե Միհրդատ I-ի և Հրահատ II-ի միասնական ամբողջությունն արտացոլող «Արշակ Միասնականի»-ի եղբայրը: Միաժամանակ, ինչպես ցույց կտրվի ստորև, Սելևկյանների թագավորության դեմ ապստամբած ու երբեմն «Արշակ Մեծ» կոչվող Արշակ I Քաջը Պատմահոր մոտ որոշ դեպքերում, դժբախտաբար, այնուհանդերձ շփոթվել է «Արշակ Միասնական»-ի հետ, ընդ որում շփոթությունը հատկապես ակնհայտ է այն պարագայում, երբ մի դեպքում Վաղարշակ I-ը համարվել է Արշակ I Քաջի, իսկ մեկ այլ դեպքում՝ «Արշակ Միասնական»-ի եղբայր:

Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը վերջնականապես ամրագրենք, որ Պատմահոր «Արշակ Միասնական»-ն իրականում Պարթևական թագավորության արքա Միհրդատ I-ի և Հրահատ II-ի միասնական արտացոլումն է, ընդ որում նշենք նաև, որ վերջինս ոչ թե Արշակ Քաջի թոռն էր, այլ՝ Արշակ Քաջի եղբայր և հաջորդ Տրդատ I-ի (մ.թ.ա. 247-211) թոռան որդին կամ թոռան թոռն էր, այսինք այս հարցում Մովսես Խորենացին կրկին սխալվել է: Այսպիսով, չնայած «Արշակ Միասնական»-ի նախնիների հետ կապված սխալին, միանշանակ է, որ, ի դեմս վերջինիս, Պատմահայրը նկատի է ունեցել Միհրդատ I-

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 2:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 4:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 2:

ի և Հրահատ II-ի միասնական ամբողջությունը, իսկ իր երկի 2-րդ գրքի 2-րդ գլուխն էլ նա վերջացնում է՝ պատմելով մ.թ.ա. 129 թվականի իրադարձությունների մասին:

Իր երկի 2-րդ գրքի 2-րդ գլուխը նվիրելով Պարթևական թագավորության պատմության շարադրմանն և խոսելով, ըստ իր տեսակետի, «Արշակ Միասնական»-ի հակամարտության մասին Սելևկյանների թագավորության արքաներ Դեմետրիոս II-ի ու Անտիոքոս VII Սիդեացու հետ, Պատմահայրն ի վերջո, ինչպես արդեն նշվեց, մեզ է փոխանցում այլ աղբյուրներից բավականին հայտնի պատմությունը: Խոսքն այն մասին է, թե ինչպես է Դեմետրիոս II-ը հաղթվում ու գերվում Հրահատ II-ի կողմից, իսկ Անտիոքոս VII Սիդեացին էլ իր հերթին, երբ դրանից 10 տարի անց խոշոր բանակով դեմ է դուրս գալիս դեպի արևմուտք առաջխաղացող Պարթևական թագավորության արքա Հրահատ II-ին, ջախջախիչ պարտություն է կրում և ընկնում է մարտի դաշտում:

Եվ այսպես, իր երկի 2-րդ գրքի 2-րդ գլուխը նվիրելով Պարթևական և Սելևկյանների թագավորությունների ռազմաքաղաքական հարաբերությունների պատմությանը, 3-րդ գլխում Պատմահայրը կրկին վերադառնում է իր հիմնական թեմային՝ Հայոց պատմությանը՝ ի վերջո ձեռնամուխ լինելով այն բանի շարադրմանը, որի մասին մի քանի անգամ ակնարկել էր մինչ այդ՝ Մեծ Հայքի թագավորության գահին Արշակունիների ու Վաղարշակ I-ի հաստատման հարցին: Միաժամանակ, սակայն, հենց այստեղ էլ նույն այդ 3-րդ գլուխը Պատմահայրը սկսում է մի արտահայտությամբ, որն էլ խորը շփոթության մեջ է գցել Վաղարշակ I-ի թագավորության տարիները պարզել փորձող հետագա գրեթե բոլոր հեղինակներին:

«*Այն ժամանակ Հայաստանի վրա թագավորեցնում է իր Վաղարշակ եղբորը՝ նրան սահման տալով հյուսիսն ու արևմուտքը*»[1],- հայտնում է Պատմահայրը՝ հետագա սերունդներին թողնելով մի իսկական հանելուկ[2], թե ի վերջո, իրոք, ո՞վ էր այն պարթևական տիրակալը, որ. «*…Հայաստանի վրա թագավորեցնում է իր Վաղարշակ եղբորը*»: Սա մի հարց է, որի ճիշտ պատասխանից էլ մեծապես կախված կլինեն Վաղարշակ I-ի թագավորության տարիները:

Վերևում արդեն մանրամասն հիմնավորվեց, որ Մովսես Խորենացին Վաղարշակ I-ին, ըստ էության, համարում է հենց Պարթևական թագավորության հիմնադիր արքա, Սելևկյանների թագավորության դեմ ապստամբություն բարձրացրած Արշակ I Քաջի, այլ ոչ թե Միհրդատ I-ի և Հրահատ II-ի միասնական ամբողջությունն արտացոլող և, ըստ էության, փաստորեն գոյություն չունեցած ոմն «Արշակ Միասնական»-ի եղբայրը: Միաժամանակ, սակայն «Հայոց Պատմության» 2-րդ գրքի 3-րդ գլխի սկզբի այդ անորոշ արտահայտությունը, գումարված մյուս հաղորդման հետ, որտեղ Վաղարշակ I-ը համարվում է «Արշակ Միասնական»-ի եղբայր, կարծես թե, տեղ է թողնում այլ մեկնաբանության համար, քանի որ նախորդ գլխի շարադրանքը Պատմահայրն ավարտում է որպես գործող անձ ունենալով «Արշակ Միասնական»-ին կամ, այլ կերպ, ասած, կոնկրետ պարագայում, Հրահատ II-ին, ու թվում է, թե տրամաբանական է կարծել, որ «*այն ժամանակ Հայաստանի վրա*» իր եղբորը թագավորեցնողն ևս պետք է լինի նույն Հրահատ II-ը: Ասվածի կապակցությամբ հատկանշական է Լ. Շահինյանի մոտեցումը, որը, մեջբերելով Մովսես Խորենացու երկի համապատասխան հատվածը, միջնամասում հատուկ անում է հեղինակային ընդմիջարկում և հաստատված համարում, որ խոսքը հենց «Արշակ Միասնական»-ի մասին է. «*Այն ժամանակ մեր Հայոց աշխարհի վրա թագավորեցնում է (Արշակ Մեծը,- Լ. Շ.) իր Վաղարշակ եղբորը՝ նրան սահման տալով հյուսիսն ու արևմուտքը*»[3]:

Փաստորեն ստացվում է, որ մի դեպքում, մի քանի դրվագներում նկարագրելով Արշակ I Քաջի ռազմաքաղաքական ակտիվությունը, ի դեմս Սելևկյանների թագավորության դեմ վերջինիս ապստամբության, Պատմահայրը Վաղարշակ I-ին

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 3:

[2] Գրաբարում արտահայտությունն ունի հետևյալ տեսքը. «*Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց, զհիւսիսի և զարևմուտս տալով նմա սահմանս*»:

[3] Շահինյան Լ. «Մովսես Խորենացի. պատմություն և ժամանակագրություն», Երևան 1989, էջ 178:

համարում է հենց վերջինիս եղբայրը, իսկ մեկ այլ պարագայում էլ, ուղղակիորեն հիշատակելով փաստորեն գոյություն չունեցած «Արշակ Միասնական»-ին և հաստատ նկատի ունենալով հենց նրան, այլ ոչ թե Արշակ I Քաջին, Պատմահայրը Վաղարշակ I-ին համարում է արդեն «Արշակ Միասնական»-ի եղբայրը: Այսպիսով՝ վերևում հիշատակված և աղբյուրագիտական ամուր հիմք ունեցող այն սխեման, որ հենց Արշակ I Քաջն է, այլ ոչ թե, ըստ էության, գոյություն չունեցած «Արշակ Միասնական»-ն է, որ ապստամբության դրոշ է բարձրացրել Սելևկյանների տիրապետության դեմ, որից հետո արդեն, ըստ Պատմահոր, իր եղբայր Վաղարշակ I-ին հաստատել է Մեծ Հայքի թագավորության գահին, հակասության մեջ է մտնում նույն Պատմահոր այն հաղորդման հետ, որտեղ Վաղարշակ I-ը ուղղակիորեն կոչվում է Արշակ I Քաջի թոռ Արշակ Մեծի եղբայր:

Փորձելով որևէ կերպ լուծում տալ վերոհիշյալ հակասությանը՝ ամենից առաջ թույլ տանք մեզ կարծել, որ քննարկվող դեպքում կիրառելի չէ այն տրամաբանական-ժամանակագրական սխեման, որի մասին ասվեց քիչ առաջ: Բանն այն է, որ իրականում մենք գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Պատմահայրն իր երկի 2-րդ գրքի 2-րդ և 3-րդ գլուխները շարադրելիս առաջնորդվում է ոչ թե ժամանակագրական սկզբունքով, այսինքն, երբ 3-րդ գլխում նկարագրված իրադարձություններն եղել են 2-րդ գլխում նկարագրվածներից հետո, այլ մենք գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Մովսես Խորենացին 2-րդ գլխում մոտ մեկդարյա կտրվածքով ամփոփ կերպով խոսում է Պարթևական թագավորության պատմության մասին, իսկ 3-րդ գլխում էլ թողնում է այդ հարցի շարադրանքը, վերադառնում է ավելի քան մեկ դար հետ և սկսում է շարադրել քննարկվող ժամանակաշրջանի արդեն Հայոց պատմությանը: Այսպիսով՝ մինչ այս, կարծես թե, ինքնըստինքյան հասկանալի թվացող տրամաբանական սխեման, որը, թվում է, թե ունի նաև աղբյուրագիտական ուղղակի հիմք, ի դեմս Պատմահոր 2-րդ գրքի 68-րդ գլխում տրված հաղորդման, հանկարծ հայտնվում է անակնկալ կասկածի տակ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, մի կողմից այստեղ չի գործում ժամանակագրական սկզբունքը, իսկ մեկ այլ դեպքում էլ նույն Մովսես Խորենացու մոտ առկա են մի քանի հստակ հաղորդումներ, որ Վաղարշակ I-ը եղբայրն է «Արշակ Մեծ» կոչվող Արշակ I Քաջի, ընդ որում «Արշակ Մեծ» կոչումը Պատմահայրը կիրառում է ինչպես Արշակ I Քաջի, այնպես էլ «Արշակ Միասնական»-ի վերաբերյալ: Գոյություն ունի, սակայն, ևս մեկ նրբություն, որին պետք է անդրադառնալ առանձին:

«*Պատմում են, թե Արշակ Մեծը՝ Պարսից և Պարթևների թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբվեց մակեդոնացիների դեմ, թագավորեց ամբողջ Արևելքի ու Ասորեստանի վրա, Անտիոքոս թագավորին սպանեց Նինվեում և ամբողջ տիեզերքը հնազանդեցրեց իրեն: Սա իր եղբորը՝ Վաղարշակին, թագավորեցնում է Հայաստանի վրա՝ նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա*»[1],- հայտնում է Մովսես Խորենացին: Այս հաղորդմանը մենք արդեն անդրադարձել ենք, բայց այժմ դիտարկենք այն մեկ այլ տեսանկյունից: Փաստորեն այս դեպքում, ըստ Պատմահոր, «Արշակ Մեծ» հորջորջվող Արշակ I Քաջը, որն ապստամբություն էր բարձրացրել Սելևկյանների տիրապետության դեմ, սպանել էր Սելևկյանների թագավորության արքա Անտիոքոս II Թեոսին, ընդ որում դա այն պարագայում, երբ այլ աղբյուրներ չեն հաստատում այս հանգամանքն և, ըստ նրանց, այս արքան ուղղակի թունավորվել է[2]: Միաժամանակ մենք գիտենք, որ, ինչպես վերևում ասվեց, Միհրդատ I-ը հաղթել և գերել է Դեմետրիոս II-ին, իսկ Հրահատ II-ն էլ հաղթել ու սպանել է Անտիոքոս VII Սիդեացուն, ընդ որում, սա ևս ասվեց, Մովսես Խորենացու «Արշակ Միասնական»-ը հանդիսանում է Միհրդատ I-ի և Հրահատ II-ի միասնական ամբողջությունը և, փաստորեն, գոյություն չունեցող մի անձնավորություն է:

Ողջ վերոշարադրյալը կարող է հիմք տալ հետևության գալու, որ հենց այս հանգամանքն է ընկել Պատմահոր սխալի հիմքում, երբ, ամենայն հավանականությամբ,

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 8:
[2] Տես օրինակ՝ Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 65:

նա ուղղակի շփոթել է իրարից մեկ հարյուրամյակ ժամանակաշրջանով բաժանված, բայց նաև նույն անունները կրած և նման ռազմաքաղաքական ճակատագիր ունեցած արքաներին՝ անհաջողության մատնված Անտիոքոս II Թեոսին ու մեծ հաջողության հասած Արշակ I Քաջին մի կողմից և կրկին անհաջողության մատնված Անտիոքոս VII Սիդեացուն ու ռազմաքաղաքական մեծ հաջողության հասած և «Արշակ» տոհմանունը կրող Հրահատ II-ին մյուս կողմից: Այսպիսով՝ կարող ենք ամրագրել, որ Մովսես Խորենացու մոտ «Արշակ Մեծ» են կոչվում ինչպես Արշակ I Քաջը, այնպես էլ «Արշակ Միասնական»-ը, ընդ որում Պատմահայրը փաստորեն մեկի գործողությունները մյուսին վերագրելու սկզբունքով շփոթել է ինչպես երկու այս տիրակալներին, որոնցից «Արշակ Միասնական»-ը ուղղակի գոյություն չի ունեցել, այնպես էլ նրանց ժամանակակից Սելևկյան թագավորության նույն անունը կրող արքաներին: Արդյունքում՝ Վաղարշակ I-ը մի դեպքում ուղղակիորեն համարվել է «Արշակ Մեծ» կոչվող «Արշակ Միասնական»-ի եղբայր, իսկ մի քանի այլ դրվագներում էլ այնուհանդերձ ներկայացվել է իր իրական տեղում՝ որպես Սելևկյանների թագավորության դեմ ապստամբություն բարձրացրած և իր հերթին «Արշակ Մեծ» հորջորջվող Արշակ I Քաջի եղբայր:

Եվ այսպես, ընդհանրացնելով ասվածը, կարծում եմ, որ Պատմահոր հաղորդումն առ այն, որ Վաղարշակ I-ը հանդիսանում է «Արշակ Միասնական»-ի եղբայրը, թյուրիմացության արդյունք է և իրականում նա եղբայրն էր Արշակ I Քաջի: Այս առումով հատկանշական է, որ, եթե «Արշակ Միասնական»-ի կերպարը մեծ հաշվով հեռու է մնում պատմականությունից, հանդիսանալով երկու արքաների արհեստական մի միասնություն, որը իրական կյանքում բնականաբար չի կարող գոյություն ունեցած լինել, ապա Պատմահոր մոտ «Արշակ Մեծ» հորջորջվող Արշակ I Քաջի կերպարը լիովին համապատասխանում է իր պատմական նախատիպին: Իր հերթին, եթե Մովսես Խորենացու մոտ հիշատակվող Պարթևական թագավորության արքաները, բացառությամբ Արշակ I Քաջի և արքայացանկի վերջին երկու արքաների, որևէ կերպ չեն համապատասխանում իրականությանը, ապա հաղորդումները Արշակ I Քաջի մասին լիովին հաստատվում են պատմական այլ աղբյուրներով: Եվ վերջապես, եթե մ.թ.ա. II դարի կեսերի հայաստանյան պատմական իրողություններում Վաղարշակ I-ը որևէ կերպ չի տեղավորվում, ապա նա հիանալի կերպով իր տեղը գտնում է մ.թ.ա. III դարի կեսերի նույն հայաստանյան պատմական իրողություններում, ընդ որում այդ պարագայում իրենց տեղն են գտնում և նրան հաջորդող իրադարձությունները և՝ անձիք ու նրանց ապրած կամ իշխած տարիները:

Ընդհանրացնելով ողջ վերոգրյալը՝ թույլ տանք մեզ փաստել, որ, նախ, Պատմահայրը իր հաղորդումներում ունի ակնհայտ հակասություն, երբ մի դեպքում Վաղարշակ I-ը եղբայրն է Արշակ I Քաջի, իսկ մյուս դեպքում՝ «Արշակ Միասնական»-ի, և հետո՝ տարբեր առիթներով «Արշակ Մեծ» կոչվող Արշակ I Քաջն ու «Արշակ Միասնական»-ը շփոթվել են ու միախառնվել, ընդ որում, եթե Պատմահոր հաղորդումները Արշակ I Քաջի մասին լիովին հաստատվում են այլ աղբյուրներով, ապա «Արշակ Միասնական»-ը, որպես այդպիսին, ուղղակի գոյություն չի ունեցել: Այսպիսով, ի հակադրություն տարածված տեսակետի, ակնհայտ է՝ *Վաղարշակ I-ը եղբայրն է հենց Արշակ I Քաջի, այլ ոչ թե գոյություն չունեցած «Արշակ Միասնական»-ի:*

Արդյունքում՝ փաստորեն առկա է հետաքրքիր հաղորդումների մի ամբողջություն, ըստ որոնց Արշակ I Քաջի եղբայր Վաղարշակ I-ը մ.թ.ա. III դարի կեսերին բազմել է Մեծ Հայքի թագավորության գահին, ընդ որում որևէ կասկած չկա, որ դա տեղի է ունեցել հայ ժողովրդի և, հատկապես, վերջինիս իշխող վերնախավի գործուն աջակցությամբ՝ հեռահար նպատակ ունենալով սելևկյան վտանգին ընդառաջ ապահովել հայ-պարթևական միասնական ճակատը: Եվ այսպես, կարծում եմ հաստատվում է ավանդականորեն չընդունվող Վաղարշակ I-ի իրականությունը, ընդ որում հայտնի է նաև նրա թագավորության տևողությունը՝ 22 տարի[1]:

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 8:

Շարունակելով առկա տեղեկատվության տրամաբանական վերլուծությունը՝ փորձենք պարզել Վաղարշակ Ի-ի գահակալման սկզբնական տարին, որից հետո մեզ պարզ կդառնան նաև Արտավազդ Ի-ի գահակալման վերջին տարին: Այս առումով առաջարկում եմ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի կողմից Արշակ Ի Քաջի թագավորության վերջին տարին մ.թ.ա. 247 թվականն է, իսկ մյուս կողմից էլ այն պարագան, որ հենց այդ տարում էր Սելևկյանների թագավորության ներքաղաքական ու արտաքին-քաղաքական դրությունը բարդության առումով հասել իր գագաթնակետին, որպես Արտավազդ Ի-ի գահակալման վերջին և Վաղարշակ Ի-ի գահակալման առաջին տարի ընդունել մ.թ.ա. 247 թվականը: Բերված սխեման իր հստակ հաստատումն է գտնում նաև Վաղարշակ Ի-ի հետագա ինչպես անմիջական, այնպես էլ հարակից գահակալների պարագայում, ինչը հստակորեն կտեսնենք ներքևում:

Գլուխ 15
Ատրպատականի թագավորության ստեղծման հիմնախնդիրը

Հաջորդ հարցը, որին կցանկանայի անդրադառնալ, վերաբերում է Ատրպատականի թագավորության անկախացման խնդրին: Պատմական գրականության մեջ որևէ հստակություն չկա այն հարցի կապակցությամբ, թե ե՞րբ է Սելևկյանների թագավորությունից անկախացել Ատրպատականը և ե՞րբ է ստեղծվել Ատրպատականի թագավորությունը:

Այս կապակցությամբ ընդամենը հայտնի է, որ մ.թ.ա. 213-212 թվականներին Ատրպատականի՝ դրանից արդեն զգալի ժամանակ առաջ անկախացած թագավորությունում իշխում էր Արտավազդ անունով մի տիրակալ[1], սակայն այն բանի մասին, թե ե՞րբ է այս արքան սկսել իշխել և ե՞րբ է անկախություն ձեռք բերել Ատրպատականի թագավորությունը, հստակ որևէ բան հայտնի չէ: Այս առումով կարելի է հավանական համարել, որ Ատրպատականի թագավորությունն անկախացել է մ.թ.ա. հենց նույն 247 թվականին և հենց այդ թվականից էլ այստեղ սկսել է իշխել մինչ այդ տեղական իշխան հանդիսացող Արտավազդը՝ Արտավազդ Ի-ը (մ.թ.ա. մոտ 247-210), այն դեպքում, երբ Մեծ Հայքի արքա Արտավազդ Ի-ի մահից հետո Հայոց թագավորությունում իր հերթին սկսել է իշխել Վաղարշակ Ի-ը: Այսպիսով՝ փաստորեն հյուսիսում ստեղծվում էր Մեծ Հայքի, Ատրպատականի և Պարթևական թագավորությունների լայն մի համադաշնություն, որն ուղղված էր ամենից առաջ Սելևկյանների թագավորության դեմ, իսկ երեք թագավորությունների դաշինքի ամրապնդման հիմքն էլ հանդիսանում էր շահերի ընդհանրությունը՝ հակասելևկյան դիրքորոշումն ու ձգտումը միասնական ուժերով պահպանել իրենց անկախությունն և ինքնիշխանությունը:

Գլուխ 16
Մարփյուղակեսի հիմնախնդիրը

Նպատակ ունենալով ավելացնել Հայոց թագավորության հզորությունը՝ Մեծ Հայքի թագավորության գահին բազմած Հայ Արշակունիների տոհմի առաջին ներկայացուցիչ, եռանդուն, ուժեղ, ռազմական և կազմակերպչական զգալի ունակություններ ունեցող Վաղարշակ Ի-ը սկսեց արագորեն տնտեսական, կազմակերպչական ու ռազմական բարենորոգումներ իրականացնել՝ բանակի կազմում, մասնավորապես, հատկապես ավելացնելով հեծելազորի թիվը, ընդ որում հեծելազորի կազմում առանձնահատուկ զարգացումը ստացավ նախկինում գոյություն ունեցած ծանր հեծելազորը, որն այժմ, սակայն, ավելի կազմակերպված էր, թվով ավելի մեծաքանակ էր, ի վիճակի էր հասցնել մեծամասշտաբ մարտավարական հարվածներ և, որը հատկապես կարևոր էր՝ առավել արդյունավետ պայքար մղել հելլենական տիպի ֆալանգի դեմ: Այս առումով կարծում եմ,

[1] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 5, գլուխ 55:

սակայն, որ Վաղարշակ Ի-ի թագավորության պատմության լուսաբանումը կիսատ կլինի առանց ևս մեկ կարևոր հարցի քննարկման՝ խոսքը վերաբերում է «Մարփյուղակեսի հիմնախնդրին»:

Մովսես Խորենացին հայտնում է. «*/4/ Վաղարշակը մեծ զորք գումարեց Ատրպատականից և Հայաստանի միջնաշխարհից՝ անվանի ու քաջ մարդիկ՝ վերը հիշված Բագարատին և նրա ձեռքի տակ եղած քաջերին, ծովեզերքի երիտասարդներին, որ սերված էին Գեղամից ու քանանցիներից, Շարայի և Գուշարի սերունդներից, ինչպես նաև, իրենց մերձավորների հետ միասին, նա հավաքեց նրանց մերձակա Սիսակյաններին ու Կադմյաններին՝ գրավելով մեր երկրի գրեթե կես մասը: Նա հասավ մեր երկրի կենտրոնը՝ Մեծամորի ակունքից վեր, Երասխի ափը, Արմավիրի մոտ, որ Բլուր է կոչվում, և բավական շատ օրեր մնաց այնտեղ, որովհետև, ինչպես հարկ է ասել, զինվորական կարգ ու կանոն չգիտեին: Այստեղից, մեր երկրի բոլոր կողմերից զորքերն իրար միացնելով, նա հասնում է Խաղտիքի սահմանները, որովհետև Լազիկան, Պոնտոսը, Փռյուգիան, Մաժաքը և ուրիշները, Արշակի (**Պարթևական թագավորության հիմնադիր արքա Արշակ Ի Քաջի – Մ.Հ.**) պատերազմների լուրն առած չլինելով, հաստատ էին պահում բարեկամական դաշինքը մակեդոնացիների պետության հետ: Եվ ահա մի ոմն Մորփյուղիկես, վերոհիշյալ կողմերը միաբանելով, պատերազմի է պատրաստվում Վաղարշակի դեմ: Նրանք իրար են պատահում մի բարձրավանդակ և քարագագաթ բլուրի մոտ, որ այժմ կոչվում է Կոլոնիա, ու, միմյանց մոտ գալով և մեջտեղն երկար ասպարեզներ թողած, երկու կողմերն էլ ամբողջական օրեր ամրանում են...: /5/ Երկու կողմերի ամրանալուց շատ օրեր հետո պատերազմը սկսվում է մեր կողմից, ուստի և Մորփյուղիկեսը, կամա թե ակամա, կազմակերպում է իր զորքի ճակատն ու հանդուգն հարձակումով վրա է վազում, որովհետև նա սրտոտ մարդ էր՝ միմյանց պատշաճ երկար անդամներով, մարմնին համապատասխան էլ նա սաստիկ ուժեղ էր, ամրացած էր պղնձով և երկաթով ու շրջապատված էր ուրիշ ընտիր սպառազեններով: Արդյունքում՝ Վաղարշակի երիտասարդներից ոչ սակավ ընտիր և քաջ մարդկանց գետին են գլորում, իսկ Մորփյուղիկեսն էլ ջանք էր անում անցնել ու հասնել Հայոց թագավորի մոտ, որ ամրացած էր զինված մեծ խմբի մեջ: Եվ ահա մոտ հասնելով՝ նրան հաջողվեց սվինը գցել, որովհետև կորովի և երկայնաձիգ էր, ու աշտեն նա հեռու արձակեց՝ կարծես սրաթև թռչունի թռիչքով: Չհապաղեցին, սակայն, մեջ ընկնել Հայկի և Ասորեստանի Սենեքերիմի (**Ասորեստանի թագավորության արքա Սինաքերիբի – Մ.Հ.**) սերունդներից քաջ ու անվանի մարդիկ, որոնք աշտեի հարվածով քաջին սպանեցին, իսկ նրա զորքերն էլ, առաջները գցելով, փախցրին: Արյան բազմաթիվ վտակներ թափելով՝ նրանք գետինը ոռոգեցին՝ ինչպես անձրևի հեղեղներով: Այնուհետև, այդ երկիրը Վաղարշակի ձեռքի տակ նվաճվելով, խաղաղվում է և մակեդոնական սպառնալիքը դադարում է*»[1]: Այսպիսով՝ Պատմահայրը տեղեկացնում է, որ, կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ Մեծ Հայքի թագավորության գահին բազմում է Վաղարշակ Ի-ը, Հայոց թագավորության վրա ձեռնարկվում է հելլենիստական դաշնակից ուժերի համակցված մի հարձակում: Հարձակվողների շարքում, Սելևկյանների թագավորությունից բացի, Պատմահայրը հիշատակում է նաև «Լազիկային», «Մաժաքին» և «Փռյուգիային»: Այս առումով ավելորդ չէ անել մի քանի պարզաբանումներ, որոնք կօգնեն մեզ նաև ավելի լավ պատկերացնել հետագա ասելիքը:

Կարելի է ենթադրել, որ «Լազիկա» տեղանունն այստեղ օգտագործվել է՝ ամենից առաջ տուրք տալով ավելի ուշ ժամանակաշրջանի պատմական ավանդությանը, քանի որ մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում ավելի ուշ գոյություն ունեցած Լազական թագավորության տարածքում գոյություն ուներ Կոլխիդայի թագավորությունը: Իր հերթին «Մաժաքը», այսինքն՝ Կեսարիան, Կապադովկիայի թագավորության մայրաքաղաքն էր և փաստորեն այստեղ բառն ունի այն իմաստը, ինչ ներկայումս օգտագործվող օրինակ «պաշտոնական Երևան» արտահայտությունը, որը գործնականում ունի «Հայաստանի

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 4, 5:

Հանրապետություն» նշանակությունը: Եվ վերջապես կարելի է ենթադրել, որ «Փռյուգիա» անվանումը տրվել է ըստ իներցիայի, քանի որ նախկին Փռյուգիական թագավորության տարածքում այդ անունով պետություն այլևս չկար: Դրա փոխարեն նրա տարածքում այս ժամանակաշրջանում գոյություն ունեին Գալաթական տետրարխությունը և Պաֆլագոնիայի թագավորությունը, որոնք հարևան հելլենիստական պետությունների համար հանդիսանում էին վարձկանների մի հսկայական շուկա, քանզի խիստ մարտունակ գալլերը, ինչպես արդեն ասվեց, չուզենալով կամ չկարողանալով իրականացնել այլ գործունեություն, մեծ սիրով էին դառնում վարձկան ռազմիկներ: Այս ամենն անուղղակի կերպով հաստատում է նաև այն, որ մ.թ.ա. III դարի երկրորդ քառորդում Փոքր Ասիա ներխուժած գալլերը մինչ այդ բնակվում էին Բալկանյան թերակղզում, մի տարածքում, որտեղ, մինչև Ծովի ժողովուրդների կազմում մ.թ.ա. 1190 թվականին Փոքր Ասիա ներխուժելը, բնակվել էին փռյուգիացիները, այսինքն՝ աղբյուրները կարող էին հեշտորեն նույնացնել «Փռյուգիա» և «Գալաթիա» անվանումները: Եվ վերջապես, ինչպես ասվեց, նույն այդ տարածքներում իր ժամանակին գոյություն էր ունեցել Անտիգոնոսի հիմնադրած Մեծ Փռյուգիայի թագավորությունը: Այսպիսով՝ կարելի է գալ հիմնավորված հետևության, որ Վաղարշակ I-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության դեմ հարձակման են անցել Սելևկյանների, Կապադովկիայի, Պաֆլագոնիայի և Կոլխիդայի թագավորությունների, ինչպես նաև Գալաթական տետրարխության միացյալ ուժերը, ընդ որում հատկանշական է, որ հարվածը հասցվեց արևմտյան կողմից՝ հեռու Ատրպատականի ու Պարթևական թագավորություններից, որոնք կարող էին խանգարել այս ձեռնարկին և օգնության ձեռք մեկնել Մեծ Հայքի թագավորությանը: Ասվածն ամբողջական դարձնելու նպատակով՝ ողջ վերոգրյալի կապակցությամբ կարծում եմ, որ առանձին քննարկման է արժանի նաև այս հարձակման տարին, ընդ որում միանգամից նշեմ, որ իմ կողմից առաջարկվում է մ.թ.ա. 243 թվականը, ինչն արվում է հետևյալ հիմնավորմամբ:

Մ.թ.ա. 246 թվականին Փոքր Ասիայի քաղաքներն ու իշխանություններն ապստամբեցին Սելևկյանների թագավորության նոր արքա, Անտիոքոս II Թեոսի մահից հետո վերջինիս հաջորդած նրա որդի Սելևկոս II Կալինիկոսի (մ.թ.ա. 246-225) դեմ, որից հետո անցան հենց այդ ժամանակ էլ սկիզբ առած Ասորիքյան III պատերազմում (մ.թ.ա. 246-241) հսկայական հաջողությունների հասած, ողջ Ասորիքը գրաված և նույնիսկ Միջագետք մտած Պտղոմյանների թագավորության կողմը, որն, ի դեպ ասած, հենց այս ժամանակ էլ ասպատակեց նաև Դաշտային Կիլիկիան[1]: Այն բանից հետո, սակայն, երբ մ.թ.ա. 245 թվականի հունվարի 27-ին իր հերթին արդեն Պտղոմեոս II-ը կնքեց սեփական մահկանացուն և գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Պտղոմեոս III-ը (մ.թ.ա. 245-222), մ.թ.ա. 245 թվականի գարնանը Եգիպտոսում սկսված ապստամբության պատճառով Պտղոմյանների թագավորության բանակը հետ քաշվեց, իսկ մ.թ.ա. արդեն 244 թվականին էլ Փոքր Ասիայի քաղաքներն ու իշխանությունները կրկին ընդունեցին Սելևկյանների թագավորության գերիշխանությունն և հնազանդվեցին Սելևկոս II Կալինիկոսին: Վերոհիշյալ տարածքներում իր իշխանությունն ամրապնդելու և հակահայկական համադաշնություն ստեղծելու համար Սելևկյանների գահակալին պետք էր ամենամոտավոր հաշվարկներով մ.թ.ա. ողջ 244 թվականը: Այս առումով կարծում եմ, որ միայն դրանից հետո, կենտրոնացնելով բոլոր ուժերը, ինչպես նաև ամրապնդվելով Փոքր Ասիայում և Սև Ծովի արևելյան ափերին, Սելևկյանների թագավորությունը պատրաստ կլիներ Մեծ Հայքի թագավորության դեմ կազմակերպել ու կյանքի կոչել Մարփյուղակեսի գլխավորած այն մեծ հարձակումը, որի մասին մանրամասն տեղեկացնում է Պատմահայրը: Այսպիսով՝ հավանական է առաջարկել ժամանակագրական այն սխեման, ըստ որի Արտավազդ I-ը մահացել է և Վաղարշակ I-ը

[1] Անանուն «Գուրոբի պապիրուս»; Հիերոնիմոս; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 27, գլուխ 1; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 8, գլուխ 50; Անանուն «Հին Կտակարան», «Դանիել մարգարեի գիրք ը», գլուխ 12; Կոզմաս Հնդկացի «Քրիստոնեական տեղագրություն», գիրք 11, գլուխ 9, մաս 3:

(մ.թ.ա. 247-225) բազմել է Մեծ Հայքի թագավորության գահին մ.թ.ա. 247 թվականին, Մարփյուղակեսի գլխավորած դաշնակից ուժերի հարձակումը տեղի է ունեցել մ.թ.ա. 243 թվականին, իսկ Վաղարշակ Ի-ն էլ, իշխելով 22 տարի, մահացել է մ.թ.ա. 225 թվականին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

243 – ***<u>Կոլոնիայի ճ-մ</u>*** (Փոքր Հայք, Կոլոնիա գավառ)[1]

Չցանկանալով թույլ տալ Մեծ Հայքի թագավորության հզորանալը, սակայն Պտղոմյանների թագավորության հետ դեռևս շարունակվող Ասորիքյան III պատերազմի պայմաններում ի վիճակի չլինելով իրականացնել ռազմական անմիջական լայնամասշտաբ գործողություններ՝ Սելևկոս II Կալինիկոսը Կոլխիդայի, Պոնտոսի, Կապադովկիայի ու Պաֆլագոնիայի թագավորություններից, փոքրասիական հելլենական այլ ուժերից, ինչպես նաև Գալաթական տետրարխությունից ստեղծեց դաշինք և, ռազմական օժանդակություն ցույց տալով վերջինիս, դրդեց մարտական գործողություններ սկսել Փոքր Հայքի, իսկ դրանից հետո նաև, Մեծ Հայքի թագավորությունների դեմ: Արդյունքում՝ Մարփյուղակեսի գլխավորած թշնամու բանակը (մոտ 70.000) մտավ Փոքր Հայքի թագավորության տարածք, հասավ ***<u>Կոլոնիա գավառ</u>*** և ճամբարեց համանուն բերդի մոտ՝ դաշտային ամրություններով պաշտպանված ճամբարում:

Տեղեկանալով այս ամենի մասին՝ Վաղարշակ Ի-ի, սպարապետ, թագադիր ասպետ Բագրատ Բագրատունու, արքայական դրոշակակիր Կյուրոս Քաջանուն Արծրունու, մաղխազ Մաղխազ Խորխոռունու, մարդպետ Հայր Մարդպետունու և սենեկապետ Ձեռես Գնթունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000), իր կազմում ունենալով Ոստանիկ, ինչպես նաև Առան Սյունու գլխավորած Արևելյան, Գուգարքցիների գլխավորած Հյուսիս-արևելյան, Բագրատունիների գլխավորած Հյուսիս-արևմտյան, Կադմեացիների գլխավորած Հարավ-արևելյան ու Շարաշան Սասունցու գլխավորած Հարավ-արևմտյան կուսակալությունների բանակները, շարժվեց թշնամուն ընդառաջ և, մոտենալով վերջինիս, ճամբարեց դաշտային ամրություններով պաշտպանված բանակատեղիում՝ սպասելով Արման արքայի գլխավորած Փոքր Հայքի (մոտ 10.000) ու Սամվել արքայի գլխավորած Ծոփքի (մոտ 10.000) թագավորությունների, ինչպես նաև Տորք Անգեղացու գլխավորած Մեծ Հայքի Արևմտյան կուսակալության միացյալ բանակին, որը տեղ հասավ մի քանի օրից:

Դրանից հետո Հայկական բանակը առավոտյան դուրս եկավ բանակատեղիից, մոտեցավ թշնամու բանակին և մարտակարգ ընդունեց: Հայկական բանակի առաջին շարքում տեղավորվեց թեթև հեծելազորը, իսկ երկրորդում՝ հետևակը, ընդ որում երկրորդ շարքի առաջին գիծը զբաղեցրեց ծանր հետևակը, իսկ երկրորդում տեղավորվեցին նետաձիգները: Շարաշան Սասունցու, Կյուրոս Քաջանուն Արծրունու և Գին Գնունու գլխավորած ծանր հեծելազորը, ինչպես նաև Մաղխազ Խորխոռունու գլխավորած Մաղխազական ու Հայր Մարդպետունու գլխավորած Մարդպետական գնդերը թողնվեցին պահեստազորում: Թշնամու բանակի կենտրոնում տեղավորվեց հոպլիտների ֆալանգը, վերջինիս թևերում՝ հեծելազորը, իսկ առջևում տեղաբաշխվեց մնացած հետևակը:

Ի փուլ – Զգալով, որ մարտակարգ ընդունած Հայկական բանակը մտադիր չէ սկսել մարտը, Մորփյուղակեսն առաջինն իր ողջ ուժերով անցավ հարձակման և հարվածեց Հայկական բանակի առաջին շարքին, որը որոշակի դիմադրությունից

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 4, 5; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 27; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 4; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 14:

հետո սկսեց նախապես ծրագրված կեղծ նահանջ իրականացնել դեպի երկրորդ շարք: Թշնամու բանակը սկսեց հետապնդել նահանջողներին, որի արդյունքում Հայկական թեթև հեծելազորը պոկվեց վերջինիցս և արագորեն հեռացավ մարտադաշտից, իսկ թշնամու հիմնական ուժերն էլ, մխրճվելով Հայկական բանակի կենտրոնի երկրորդ շարքի դասավորության մեջ, խառնեցին ֆալանգի կուռ դասավորությունն ու կորցրին մարտակարգը:

II փուլ – Մարփյուղակեսը, անձամբ գլխավորելով հոպլիտներին և փորձելով հզոր հարվածով վերջնականապես ճեղքել Հայկական բանակի դասավորությունը ու պարտության մատնել վերջինիս, նրանց վճռական հարձակման տարավ: Արդյունքում, համառ մարտ մղելով Հայկական բանակի երկրորդ շարքի հետևակի հետ, Մարփյուղակեսին, թեև ծանր կորուստներով, այնուհանդերձ հաջողվեց ճեղքել վերջինիս դասավորությունը և հասնել Հայկական բանակի պահեստազորին: Այս ընթացքում, ընդհուպ մոտենալով Վաղարշակ I-ին, Մարփյուղակեսը նետեց տեգը, սակայն Մեծ Հայքի թագավորության արքան հաջողությամբ խուսափեց դրանից:

III փուլ – Մարտի մեջ մտան պահեստազորում գտնվող Հայկական ծանր հեծելազորը, Մաղխազական և Մարդպետական գնդերը, ինչպես նաև մարտադաշտ վերադարձած թեթև հեծելազորը, որոնք, ջախջախիչ հարված հասցնելով թշնամու բանակին, ծանր կորուստներ պատճառեցին վերջինիս ու մատնեցին փախուստի: Այս ժամանակ էլ հենց, խոցվելով հայկական նիզակներից, ընկավ քաջաբար մարտնչող Մարփյուղակեսը:

IV փուլ – Հայկական բանակը հետապնդեց թշնամու բանակին, ծանր կորուստներ պատճառեց և դուրս շպրտեց Փոքր Հայքի թագավորության տարածքից:

Հայերը կորցրին մոտ 10.000, թշնամին՝ մոտ 50.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը մեծ դեր ունեցավ Հայոց պետական միավորների ռազմաքաղաքական անվտանգության ամրապնդման գործում: Իրոք, արդյունքում Փոքր Հայքի թագավորության ինքնիշխանությունը լիովին վերականգնվեց, Կուտիորան (Սև ծովի ափին, Տրապիզոնից մոտ 150 կմ արևմուտք), Կեռասունտը (Սև ծովի ափին, Տրապիզոնից մոտ 110 կմ արևմուտք), Տրապիզոնը և Խաղկտիքը միավորվեցին Փոքր Հայքի, Հայոց Միջագետքը՝ Մեծ Հայքի թագավորությանը, իսկ Սելևկյանների թագավորությունն էլ բավականին երկար ժամանակով հրաժարվեց Հայոց թագավորությունների նկատմամբ ոտնձգություններից:

Գլուխ 17
Արշակ I-ի հիմնախնդիրը

Մ.թ.ա. 241 թվականին ռազմաքաղաքական հերթական փակուղու մեջ հայտնված Ասորիքյան III պատերազմը ավարտվեց առանց որևէ արդյունքի, որից հետո կողմերը վերադարձան սեփական սովորական խնդիրների լուծմանը: Նոր պայմաններում հատկապես ծանր էր, սակայն, Սելևկյանների թագավորության դրությունը և, եթե Պտղոմեոս III-ը կարողացավ ամուր կերպով կառավարել իր թագավորությունը, ապա անձնական հատկանիշներով առանց այդ էլ առանձնապես աչքի չընկնող Սելևկոս II Կալինիկոսի դիրքերը գահի վրա բավականին թույլ էին: Խնդիրը կայանում էր նրանում, որ սելևկյան գահակալը գահին էր հասել հորը թունավորած իր իշխանատենչ մոր աջակցությամբ, որը, սակայն, կործանելով սեփական ամուսնուն, այժմ ոչ միայն անցել էր Սելևկոս II Կալինիկոսի եղբայր և իր մյուս որդի Անտիոքոս Հիերաքսի կողմը, այլև պնդում էր, որ եղբայրները իշխեն միասին: Արդյունքում՝ Սելևկյանների թագավորությունում սկիզբ առավ գահակալական ներքին մի ծանր պայքար, որը, մանավանդ Արշակ I Քաջին հաջորդած նրա եղբայր Տրդատ I-ի (մ.թ.ա. 247-211) օրոք արևելքից իրականացվող

Պարթևական թագավորության առաջխաղացման ֆոնին, բավականին ծանրացրեց Սելևկոս II Կալինիկոսի դրությունը:

Անտիոքոս Հիերաքսը գործում էր իր ավանդական անջատողական տրամադրություններով աչքի ընկնող Փոքր Ասիայում և նրա դիրքերն ուժեղ էին հատկապես Գալաթական տետրարխության սահմաններում, ինչն էլ հաշվի առնելով, Սելևկոս II Կալինիկոսն ի վերջո հարվածն ուղղեց այս ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 235 թվականին Անկյուրայի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում Սելևկյանների թագավորության կառավարական բանակը ծանր պարտություն կրեց, իսկ Անտիոքոս Հիերաքսն էլ առժամանակ կարողացավ պահել դիրքերը:

Մ.թ.ա. 230 թվականին, սակայն, ստիպված լինելով այնուհանդերձ լքել Գալաթական տետրարխության սահմանները, Անտիոքոս Հիերաքսը մի ինչ-որ պահի հայտնվեց Ծոփքի թագավորության սահմաններում, որտեղ այդ ժամանակ արդեն իր մահկանացուն էր կնքել Սամվելին հաջորդած Արշամ I-ը (մ.թ.ա. մոտ 240-230) և թագավորության գահը հենց նոր զբաղեցրել էր նրա որդի Արշամ II-ը (մ.թ.ա. մոտ 230-220): Արդյունքում՝ Սելևկյանների գահակալը փորձեց հարված հասցնել ինչպես եղբորը, այնպես էլ հայերին, սակայն մ.թ.ա. 230 թվականին Ծոփքի ճ-մ-ում Ծոփքի թագավորության (մոտ 10.000) և Անտիոքոս Հիերաքսի (մոտ 50) միացյալ բանակը գլխովին ոչնչացրեց Սելևկյանների թագավորության բանակին (4.000)[1]: Չնայած այս հաջողությանը, սակայն, Անտիոքոս Հիերաքսը լքեց նաև Ծոփքի թագավորության տարածքը, հեռացավ Փոքր Ասիա, հետագայում կրկին անհաջողության մատնվեց, դիմեց փախուստի և մ.թ.ա. 226 թվականին սպանվեց: Մոտավորապես մ.թ.ա. 230 թվականին էլ իր հերթին կյանքից հեռացավ նաև Փոքր Հայքի թագավորության արքա Արմանը և թագավորության գահին նրան փոխարինեց Արյուկ II-ը (մ.թ.ա. մոտ 230-201):

Մ.թ.ա. 225 թվականին, մի քիչ ավել ապրելով իր ապստամբ եղբորից, ձիուց ընկավ և իր մահկանացուն կնքեց Սելևկոս II Կալինիկոսը, որից հետո Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց նրա տասնյոթնամյա որդի Սելևկոս III Կերավանը (մ.թ.ա. 225-223): Սելևկյանների թագավորության նոր արքան հոգեպես և ֆիզիկապես թույլ ու անգործունակ մի տիրակալ էր, որն, իր պետության առջև հառնած խնդիրների շարքում որպես ժառանգություն ամենից առաջ ստացել էր այդպես էլ չհանդարտվող դրությունը Փոքր Ասիայում: Այստեղ, այլ ըմբոստների շարքում, սելևկյանների գերիշխանությունը ամենից համառորեն վիճարկում էր տեղական առաջնորդ հանդիսացող Պերգամոսի թագավորությունը, որին էլ հենց նախատեսվեց հարված հասցնել:

Մ.թ.ա. նույն 225 թվականին իր մահկանացուն կնքեց Վաղարշակ I-ը և Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Արշակ I-ը (մ.թ.ա. 225-212): Վաղարշակ I-ը որդուն թողել էր ուժեղ և վերելքի ուղին բռնած մի պետություն, իսկ Արշակ I-ն էլ, ինչպես ցույց տվեց կյանքը, լիովին արժանի եղավ հորը: Վերևում արդեն մանրամասն հիմնավորվեց, որ Վաղարշակ I-ն իրական պատմական անձնավորություն և արքա է, իսկ նրա իշխանության սկիզբն էլ ընկնում է մ.թ.ա. 247 թվականին: Հատկանշական է, որ դրանից հետո իր հաստատումն են գտնում նաև հերթական արքայի՝ «հնարովի ու վիպական կերպար» հռչակված Վաղարշակի որդի Արշակ I-ի և իրականությունը, և թագավորության տարիները՝ 13 տարի[2]: Այս կապակցությամբ միանգամից նշենք, որ բացառված չէ, որ, ինչպես պարթևական արքաների պարագայում է, մեր դեպքում ևս «Արշակ» անունը հանդես է եկել որպես տոհմանուն և իրականում Արշակ I-ը կրել է իր որդու թողած արձանագրություններում հիշատակված «Զարեհ» անունը:

Արշակ I-ի գահակալման հիմնական իրադարձությունը հայտնի այն ընդհարումն է, որն արտացոլվել է դեպի Մովսես Խորենացի գնացող մի շարք սկզբնաղբյուրներում և

[1] Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 4, գլուխ 17:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 9:

կրկին համարվել է «հնարովի ու վիպական», ընդ որում մի կողմից դեր է խաղացել այդ հաղորդումների անորոշ բնույթը, իսկ մյուս կողմից էլ այն հանգամանքը, որ, ինչպես նշվեց ոչ մեկ անգամ, ոչ միայն Վաղարշակ Ի-ի, այնպես էլ Արշակ Ի-ի իրականությունը ժխտվում էր ընդհանրապես:

Ահա այդ հաղորդումները.

- «*Արշակը՝ Վաղարշակի որդին..., պոնտացիների հետ պատերազմելով, մեծ ծովի ափին իր հաղթության նշանը թողեց՝ մի արձան: Ասում են, թե, ոտնաքացի նետելով բոլորակ տեգով իր նիզակը, որ մխված էր զեռունների արյունի մեջ, նա այն խորը նստեցրեց երկնաքար այդ արձանի մեջ, որ կանգնեցրել էր ծովեզերքում*»[1],
- «*Արշակը կոտորեց դյուցազուններին, որ իր վրա գալու նպատակով զորահավաք էին արել Ասորվոց Միջագետքում*»[2],
- «*Արշակ Առաջինը, պատերազմելով պոնտացիների դեմ, իր նիզակը նշանաձող թողեց, որն, ասում են, զեռունների արյան մեջ էր ջրխմել: Նա նետեց այն և թողեց երկնաքար արձանի մեջ*»[3],
- «*Արշակը, ուղղակի մարտնչելով պոնտացիների դեմ, հալածեց նրանց: Պատմում են, թե ինչպես նա, իր նիզակի տեգը, որը օձի արյամբ էր թաթախված, խորությամբ մխրճեց մի արձանի մեջ՝ տեսնողների վրա թողնելով իր քաջության նշանը*»[4],
- «*Արշակը, պատերազմելով պոնտացիների դեմ, մեծ ծովի ափին իր հաղթության նշանը թողեց՝ մի արձան, իսկ իր բոլորակ տեգով նիզակն էլ, որ, ասում են, թաթախված էր օձերի և զեռունների արյան մեջ, հետևի կողմից նետելով՝ խորը մխրճեց երկնաքարից շինված նույն այդ արձանի մեջ, որը կանգնեցրեց ծովեզերքին*»[5],
- «*Արշակը... արիություն և ուղիղ ընթացք ցույց տվեց ու հաղթեց պոնտացիներին: Նա իր բոլորատեգ նիզակը խորագույնս մեխեց մի մեծ վեմի մեջ և, իբրև հուշասյուն, այն կանգնեցրեց Պոնտոս ծովի ափին, նիզակ, որի մասին համբավ էր տարածված, թե այն զարդված էր զեռունների արյամբ*»[6],
- «*Պոնտոս ծովի ափին որձաքարի մեջ Արշակը նիզակ ցցեց, որը թաթախեց թունավոր սողունների արյան մեջ, և այն պոնտացիները պաշտում են իբրև աստծո գործ*»[7],
- «*Այս Արշակը, պատերազմելով պոնտացիների դեմ, հաղթեց նրանց և ծովի ափին իր հաղթության նշանը թողեց՝ մի արձան, իսկ իր բոլորակ տեգով նիզակը, որ թաթախված էր զեռունների արյան մեջ, ուժեղ նետելով խորը մխրճեց երկնաքարից շինված նույն այդ արձանի մեջ, որը կանգնեցրել էր ծովեզերքին*»[8],
- «*Հայերը այս Արշակի մասին պատմում են, թե նա սպանել է Անտիոք արքային և տիրել է Ասորիքին, Երուսաղեմին, Պաղեստինին, Ասորեստանին ու Բաբելոնին*»[9]:

Եվ այսպես, առկա է Մովսես Խորենացու հետաքրքիր մի տեղեկություն, ինչպես նաև կան իրենց արմատներով դեպի Պատմահոր երկը գնացող մի շարք ուշագրավ հաղորդումներ, որոնք, սակայն, մեր պատմագիտության կողմից բացարձակ անուշադրության են մատնվել, ինչը, կարծում եմ, լուրջ մի բացթողում է: Այս կապակցությամբ առաջարկում եմ դիտարկել իր ժամանակի պատմական իրադարձությունները և, դնելով դրանք իմ կողմից առաջարկվող ժամանակագրական

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 9:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 2:
[3] Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 27:
[4] Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 4:
[5] Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5:
[6] Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 10:
[7] Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 15:
[8] Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:
[9] Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5:

սխեմայի վրա, փորձ կատարել հստակեցնել իրականությունը:

Պոլիբիոսը[1] տեղեկացնում է, որ Սելևկյանների թագավորության արքա Սելևկոս III Կերավանը իր գահակալությունից որոշ ժամանակ անց, փորձելով հետ բերել Սելևկյանների թագավորության կողմից հերթական անգամ կորսված Փոքր Ասիան և իր ազդեցությունը տարածել Հայաստանի վրա, Եփրատ գետի հունն ուղղություն ունենալով արշավանք սկսեց դեպի հյուսիս ու անցավ Տավրոսյան լեռնաշղթան, որից հետո, սակայն, կարճ ժամանակ անց սպանվեց: Միաժամանակ, այն բանի օգտին, որ հելլենիստական ուժերն այս ընթացքում պարտություն են կրել կամ առնվազն գոնե անհաջողության են մատնվել, միաձայն վկայում են բոլոր սկզբնաղբյուրները, ընդ որում անուղղակիորեն ևս, դատելով, որոշակիորեն քողածածկ հաղորդումներից և նկատի ունենալով նիզակով խոցված արձանի մասին դրվագը, կարելի է պնդել, որ հաջողությունը ցանկացած դեպքում Արշակ I-ի կողմում է եղել:

Արդյունքում՝ կարծում եմ, որ հայկական աղբյուրների հաղորդումները, դիտարկելով վերը թվարկած տեղեկությունների լույսի ներքո, պետք է հասկանալ այն իմաստով, որ Արշակը I-ը պատերազմել է ոչ թե անմիջապես Պոնտոսի թագավորության, այլ ընդհանրապես հույների դեմ, ի դեմս ամենից առաջ նրանց ամենաուժեղ պետության՝ Սելևկյանների թագավորության, որին գուցե և դաշնակցել է Պոնտոսի թագավորությունը, սակայն հետագայում հույները նույնացվել են պոնտացիների հետ, քանզի Պոնտոսի թագավորությունը վաղ միջնադարում ընկալվում էր որպես հունական մի պետություն: Այս առումով հատկանշական է, որ Սելևկոս III Կերավանի մտերիմ զորավար և ռազմական գործողությունների փաստացի ղեկավար Աքեոսը Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ II-ի (մ.թ.ա. 250-210) աղջկա ամուսինն էր[2], ինչը, գումարած այլ հայտնի հաղորդումներին երկու թագավորությունների դաշնակցային հարաբերությունների մասին[3], անկասկած վկայում է քննարկվող ժամանակաշրջանում Սելևկյանների և Պոնտոսի թագավորությունների առնվազն մոտիկ, իսկ գործնականում՝ դաշնակցային հարաբերությունների մասին:

Վերևում արդեն հիմնավորվեց, որ Արշակ I-ը հանդիսանում է Սելևկոս III Կերավանի ժամանակակիցը, իսկ այդ պարագայում արդեն լիովին հնարավոր է դառնում նաև նրա կողմից ներխուժում իրականացրած զավթիչներին պարտության մատնելու փաստը: Այս ամենը մեզ օգնում են պարզել արշավանքի ամենահավանական թվականն և, հաշվի առնելով Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդման մեջ հիշատակվող «*միանգամից*»-ը, ինչպես նաև այն, որ Սելևկոս III Կերավանը սպանվել է մ.թ.ա. 223 թվականին, մատնանշել մ.թ.ա. 224 թվականը: Եվ այսպես, մ.թ.ա. 224 թվականին Արշակ I-ի գլխավորած Մեծ Հայքի, ինչպես նաև ամենայն հավանականությամբ վերջինիս դաշնակցած Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունների միացյալ բանակը խոշոր մի հաղթանակ տարավ Հայոց պետական միավորների նկատմամբ հերթական հարձակումը ձեռնարկած Սելևկյանների ու Պոնտոսի թագավորությունների միացյալ բանակի նկատմամբ ու հետ մղեց հելլենիստական աշխարհի հերթական հարվածը, ընդ որում կրած անհաջողությունը սելևկյան հերթական արքային վերջնական առումով կյանք արժեցավ:

[1] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 4, գլուխ 48:
[2] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 5, գլուխ 74:
[3] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 5, գլուխ 43 և այլն:

Գլուխ 18
Ասորիքյան IV պատերազմը

Սելևկոս III Կերավանի սպանությունից հետո Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց վերջինիս կրտսեր եղբայր, տասնութնամյա Անտիոքոս III Մեծը (մ.թ.ա. 223-187): Վերջինս, ի տարբերություն իր նախորդների, մի ուժեղ, եռանդուն, խելացի և մեծ նպատակներ կյանքի կոչելու հակված անձնավորություն էր, որը, դրան գումարած, աչքի էր ընկնում նաև ռազմական զգալի ունակություններով: Սրա հետ միաժամանակ նաև հարկ է նշել, որ նոր արքան ուներ նաև թուլություններ, որոնցից գլխավորը բնավորության որոշակի չհամակարգվածությունն էր, ինչպես նաև հիմնականը երկրորդականից տարբերել չկարողանալու թերությունը: Այսպես թե այնպես, սակայն նոր արքան իր առջև խնդիր դրեց վերականգնել Սելևկյանների թագավորության հզորությունը, իսկ վերջնարդյունքում էլ՝ հասնել Ալեքսանդր III Մեծի տերության մակարդակին: Այս առումով առաջնային խնդիրը, որ ծագեց նոր գահակալի առաջ, դա կենտրոնական իշխանության և իր դեմ բռնկված ապստամբությունների ճնշումն էր, մի խնդիր, որը, թեև ոչ առանց դժվարության, սակայն ի վերջո կյանքի կոչվեց, երբ մ.թ.ա. արդեն 221 թվականի վիճակով Անտիոքոս III Մեծը արդեն վերջնականապես ամրապնդվել էր գահի վրա:

Մինչ Սելևկյանների թագավորության գահին իր դիրքերն էր ամրապնդում Անտիոքոս III Մեծը, մ.թ.ա. 222 թվականի դեկտեմբերին իր մահկանացուն կնքեց Պտղոմեոս III-ը, ինչից հետո գահն անցավ նրա որդի, քսաներեքամյա Պտղոմեոս IV-ին (մ.թ.ա. 222-203), որը որևէ կերպ արժանի չեղավ իր հզոր նախնիներին: Իրոք, տրված գրական դատարկ գործունեությանը, կրոնական ծեսերին և հավերժական խնջույքներին, Պտղոմեոս IV-ն, ըստ էության, ինքնահոսի թողեց երկրի կառավարման ներքին ու արտաքին հարցերը և դա հակառակի նման արեց այն ժամանակ, երբ Սելևկյանների թագավորության գահին հայտնվել էր ուժեղ ու եռանդուն մի տիրակալ: Հաշվի առնելով այս ամենը՝ Անտիոքոս III Մեծը, մի կողմ թողնելով փոքրասիական խնդիրները, որոշեց ամենից առաջ լուծել Ասորիքի հավերժական հարցը, ինչի արդյունքում սկիզբ առավ Ասորիքյան IV պատերազմը (մ.թ.ա. 221-217):

Մ.թ.ա. արդեն 221 թվականին Անտիոքոս III Մեծը մի բավականին ուժեղ հարված հասցրեց Հարավային Ասորիքի ուղղությամբ, սակայն նրա բանակն ի վերջո վերադարձավ ելման դիրքեր: Մեկ տարի ծախսելով անհրաժեշտ նախապատրաստությունների վրա՝ Սելևկյանների թագավորության արքան Հարավային Ասորիքի ուղղությամբ նոր հարված հասցրեց մ.թ.ա. արդեն 219 թվականին, ինչի արդյունքում այս անգամ արդեն զգալի հաջողությունների հասավ: Պտղոմյանների թագավորության հարակայուն ուժը, սակայն, դեռևս բավականին ուժեղ էր և, չնայած Պտղոմեոս IV-ի անճարակությանը, երկրի ռազմավարչական համակարգը գործեց բավականին հստակ: Արդյունքում՝ բանակը համալրվեց մեծ քանակի ռազմիկներով, որոնց շարքերում, սակայն, հարկ է նշել նաև, որ արդեն զգալի թիվ էին կազմում հենց տեղացիները:

Մինչ Եգիպտոսում զբաղված էին վերևում նկարագրված նախապատրաստություններով, մ.թ.ա. 218 թվականի գարնանը Անտիոքոս III Մեծը վերսկսեց հարձակողական գործողությունները և արդյունքում գրավեց արդեն գործնականում ողջ Ասորիքը: Պատասխան հարվածը, սակայն, նույն այս ժամանակ արդեն պատրաստ էր և հակառակորդն այն հասցրեց հենց հաջորդ տարի: Արդյունքում՝ մ.թ.ա. 217 թվականի հունիսի 22-ին Պաղեստինում տեղի ունեցած Ռաֆիայի ճակատամարտում Պտղոմյանների թագավորության 75.000 հոգանոց բանակը, այդ թվում 5.000 հեծյալ, ինչպես նաև 73 փիղ, պարտության մատնեց Սելևկյանների թագավորության 68.000 հոգանոց բանակին, այդ թվում 6.000 հեծյալ և 103 փիղ: Այս պարտությունը զգալի եղավ Սելևկյանների թագավորության ռազմական մեքենայի համար, որը կորցրեց 11.000 ռազմիկ և հետ շպրտվեց, սակայն այն այնուհանդերձ որևէ

կերպ չվերացրեց Անտիոքոս III Մեծի հարվածային հնարավորությունները: Այսպես թե այնպես, սակայն, որպես հետևանք այս ամենի, Անտիոքոս III Մեծը խաղաղության բանակցություններ սկսեց, ի վերջո հաշտություն կնքվեց, Ասորիքյան IV պատերազմն ավարտվեց և արդյունքում որևէ փոփոխություն կրկին տեղի չունեցավ:

Գլուխ 19
Արտաշես Ի-ի հիմնախնդիրը

Անհաջողության մատնվելով Ասորիքի ուղղությամբ՝ Անտիոքոս III Մեծը փորձեց լուծել գոնե փոքրասիական խնդիրները և հնազանդեցնել հավերժորեն անհանգիստ Փոքր Ասիան, որտեղ, ի դեպ, համագործակցելով տեղացիների հետ, իրեն բավականին ինքնուրույն էր զգում Սելևկոս III Կերավանի սպանության կազմակերպիչներից մեկը հանդիսացող Աքեոսը: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 216 թվականին բոլոր կողմերից հետ շպրտված և Սարդեսում փակված Աքեոսը գերվեց ու մահապատժի ենթարկվեց, իսկ Փոքր Ասիայում էլ ի վերջո ամրապնդվեց Սելևկյանների թագավորության գերիշխանությունը:

Ավարտելով գործերն Արևմուտքում՝ Անտիոքոս III Մեծը անդրադարձ կատարեց արդեն Արևելքին, որին Սելևկյաններն ավանդականորեն միշտ քիչ ուշադրություն էին դարձնում և որտեղ նույն այս ժամանակ նրանց դիրքերը շատ էին թուլացել: Իրոք, Տրդատ Ի-ի օրոք վերջնականապես ոտքի կանգնած Պարթևական թագավորությունը նույն այս ժամանակ ոչ միայն լուրջ մարտահրավեր էր նետել Սելևկյանների թագավորությանը Միջին Արևելքում, այլև նպաստել էր նաև մի քանի այլ պետական միավորների առանձնացմանը, որոնց շարքում առաջնայինը Հունա-Բակտրիական հելլենիստական թագավորությունն էր: Արդյունքում՝ սկսած մ.թ.ա. արդեն 216 թվականից, Անտիոքոս III Մեծը սկսեց մի մեծ արշավանք նախապատրաստել դեպի Արևելք, սակայն սկիզբը նախատեսվածից այլ տեսք ունեցավ:

Վերևում արդեն հիմնավորվեցին Վաղարշակ Ի-ի թագավորության տարիներն և, զարգացնելով այս սխեման, հստակորեն տրվեցին նաև նրան հաջորդած որդու՝ Արշակ Ի-ի, թագավորության տարիները: Արդյունքում՝ հաստատվում է, որ Արշակ Ի-ը մահացել է մ.թ.ա. 212 թվականին, քանի որ, վերջինս թագավորել է 13 տարի, իսկ Վաղարշակ Ի-ը մահացել է մ.թ.ա. 225 թ-ին:

Դժբախտաբար հենց Արշակ Ի-ի մասին տվյալներով էլ, սակայն, վերջանում է Մովսես Խորենացու երկի սկզբնական մասի համար հիմնական և արժանահավատ աղբյուր հանդիսացած Մար Աբաս Կատինայի աշխատությունը, շնորհիվ որի Պատմահոր աշխատանքի այդ մասը հարթ, հստակ ու ժամանակագրական տեսանկյունից ճշգրիտ տեսք ունի: Դրանից հետո աղբյուրների սղության և խառնաշփոթի պատճառով Մովսես Խորենացին ընկնում է շփոթմունքի մեջ: Արդյունքում՝ հայտնելով ճիշտ այն տեղեկությունը, որ Արշակ Ի-ին հաջորդել է նրա որդի Արտաշեսը[1]՝ Մովսես Խորենացին սխալմամբ վերջինիս չի նույնացնում Մեծ Հայքի հայտնի արքա Արտաշես Ի-ի (մ.թ.ա. 201-160) հետ, այլ, ինքն էլ զարմանալով[2], նրան վերագրում է իրականում այդ դեպքերից մոտ 300 տարի առաջ ապրած Աքեմենյան տերության արքա Կյուրոս II Մեծի արարքները՝ միաժամանակ այնուհանդերձ չբացառելով, որ խոսքը կարող է ամեն դեպքում չվերաբերվել Աքեմենյան տերության հիմնադիր տիրակալին[3]: Իր հերթին իրական Արտաշես Ի-ին, որի մասին Մովսես Խորենացին այնուհանդերձ տեղեկություններ ունեցել է, նա ներկայացնում է որպես մեկ այլ՝ Արշակ Ի-ի որդի Արտաշեսի հետ կապ չունեցող և իրականում գոյություն էլ չունեցած մի անձնավորություն՝ որպես Մեծ Հայք թագավորության Սանատրուկ արքայի որդի Արտաշեսի, ու տեղադրում է մոտավորապես II դարում: Արդյունքում՝ կարծում եմ, որ պետք է ուղղակի առաջնորդվել այն կանխավարկածով, որ «երեք Արտաշեսների» մասին Մովսես Խորենացու հայտնած բոլոր տեղեկությունները, բնականաբար սեփական պատմական նրբերանգներով, իրականում վերաբերում են Մեծ Հայքի թագավորության հայտնի արքա Արտաշես Ի-ին:

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 11:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 13:
[3] «*Արդ՝ ես այս պատմություններն արժանահավատ եմ համարում, իսկ այն Կրեսոսը, որ ինչպես պատմում են, եղել է՝ Կյուրոսի կամ Նեքթանեբոսի ժամանակ, կամ սուտ է, կամ մի անունով կոչված են շատ թագավորներ, ինչպես շատերը սովորություն ունեն*» (Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 13:

Առաջ անցնելով նշեմ, որ Պատմահոր սխալն ըստ իս բացատրվում է նրանով, որ Հայաստանի պատմության հնագույն շրջանի մասին իր հիմնական տեղեկությունները նա քաղել է Մար Աբաս Կատինայից, որի աշխատանքն ավարտվում է հենց իրական Արտաշես Ի-ի, թագավորության սկզբի ժամանակահատվածով՝ չհասած դրան, որից հետո Մովսես Խորենացին, զրկվելով այնպիսի կարևոր տեղեկատվության աղբյուրից, ինչպիսին էր Մար Աբաս Կատինան, մոլորվել է՝ ինչպես արդեն ասվեց, ամրագրելով մեկ այլ Արտաշեսի գոյությունը, ընդ որում իրական Արտաշեսի գործունեությունը գոնե Արշակ Ի-ի որդի Արտաշեսի հետ կապելու փոխարեն, ինչը զգալիորեն կմեղմեր սխալը, նա անում է երկրորդ սխալը և այն կապում է Սանատրուկ արքայի որդի, գոյություն չունեցած Արտաշեսի հետ:

Այսպիսով՝ Մովսես Խորենացու աշխատության 2-րդ գրքի 9-րդ գլխի ավարտից հետո հեղինակը, օբյեկտիվորեն և իր կամքից անկախ ընկնելով շփոթմունքի մեջ ու հայտնելով տեղեկություններ, որոնք չեն վերաբերում տվյալ ժամանակահատվածին և այդ ընթացքում գործող անձանց, «պատմության թելը» կրկին գտնում է 2-րդ գրքի 15-րդ գլխից սկսած՝ խոսելով Գնեոս Պոմպեոսի արևելք գալու մասին, որից հետո նրա տեղեկությունները կրկին դառնում են խիստ արժանահավատ ու ճիշտ՝ պարունակելով չափազանց արժեքավոր, բացառիկ և այլ աղբյուրներում չհանդիպող տվյալներ Հայաստանի մ.թ.ա. I - մ.թ. I դարերի պատմության մասին: Հետագայում, սակայն, Մովսես Խորենացին իր երկի 2-րդ գրքի 37-ից 63-րդ գլուխներում կրկին սխալմունքի մեջ է ընկնում, բայց այս անգամ այդ սխալն ավելի պարզ է և, վերը նշվածի ֆոնի վրա՝ ավելի բացատրելի: Իրոք, հավատարիմ իր կառուցած սխալ ժամանակագրական սխեմային՝ նա Արտաշես Ի-ին վերաբերվող հիմնական տեղեկությունները տեղափոխել է II դար, որը, ինչպես արդեն նշվեց, սխալ է: Ընդհանրացնելով ասվածը փաստենք, որ, բացառությամբ մասամբ 55-րդ գլխի, Մովսես Խորենացու աշխատության 2-րդ գրքի 37-ից 63-րդ գլուխներն իմաստային տեսանկյունից պետք է անմիջապես հաջորդեն 15-րդ գլխին, որից հետո պետք է նոր տեղադրվեն 16-36-րդ գլուխները, հետո՝ 55-րդ գլխի համապատասխան հատվածները, որից հետո՝ 64-րդ գլուխն և այլն:

Հիմք ընդունելով այս ամենը՝ կարելի է ասել, որ Արշակ Ի-ի որդի Արտաշեսը, հորական կողմից հանդիսանալով Վաղարշակ Ի-ի թոռն և պարթևների առաջին արքա Արշակ Ի Քաջի ու երկրորդ արքա Տրդատ Ի-ի եղբոր թոռը, մորական կողմից, ըստ Սեբեոսի[1], սերել է Բագրատունիների[2] և, ինչպես հայտնվում է իր թողած արձանագրություններում, նաև Երվանդունիների տոհմերից: Վերջին դիտարկման կապակցությամբ, թերևս, կարելի է ավելացնել, որ ամենայն հավանականությամբ Երվանդունի է եղել Արտաշեսի մայրը՝ Արշակ Ի-ի կինը: Ըստ Մովսես Խորենացու, Երվանդը. «*Արշակունյաց ցեղից մի կնոջ որդի*»[3] էր, Արտաշես Ի-ն ինքն էլ նրան Արշակունի է համարել[4], իսկ այս պարագայում հավանական է համարել, որ, եթե Վաղարշակ Ի-ն իր որդու համար հարս էր բերել արական ուղիղ գծով, ըստ երևույթին, արդեն հանգած Երվանդունիների տոհմից, ապա ինքն էլ իր հերթին սեփական աղջկան հարս էր տվել Երվանդունիների կողմնակի գծերի ներկայացուցիչներից մեկին և այդ ամուսնությունից էլ հենց ծնվել է Երվանդը: Այսպիսով՝ մանկահասակ Արտաշեսը, մորական կողմից լինելով Բագրատունիների և Երվանդունիների, արդյունքում էլ Աքեմենյանների, Հայոմարտների ու Հայկազունիների տոհմերի ներկայացուցիչ, իսկ հորական կողմից էլ՝ հայ ավագանու և ժողովրդի համաձայնությամբ արդեն երկու սերունդ Մեծ Հայքում իշխած Հայ Արշակունիների ուղիղ ժառանգորդը, լիակատար հիմքեր ուներ հաջորդելու ամենայն հավանականությամբ[5] իր հորաքրոջ որդի Երվանդի կողմից հղացած դավադրությանը զոհ գնացած սեփական հորը:

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 2:
[2] Բագրատունի էր Արտաշեսի հոր մայրը՝ Բագրատ Բագրատունու աղջիկն և Վաղարշակ Ի-ի կինը:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37:
[4] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 4:
[5] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37:

Իրոք, հաշվի առնելով Արտաշես արքայազնի մանկահասակությունը, Արշակ Ի-ի մահից հետո նրա խնամակալ է նշանակվում իր ամենամոտիկ ազգականը՝ հորաքրոջ որդի Երվանդը, որն էլ, գահը վերջնականապես գրավելու մտայնությամբ, կոտորում է քեռու բոլոր որդիներին և իրեն հռչակում է Մեծ Հայքի թագավորության արքա՝ հանդես գալով որպես Երվանդ III (մ.թ.ա. 212-201): Իր դաժանության և գահին բռնատիրելու պատճառով, սակայն, Մեծ Հայքի թագավորության նոր այս արքան չի ընդունվում հայ նախարարների ու բանակի կողմից: Երկրում ստեղծվում է խառն և կիսաապստամբական վիճակ: Շատ նախարարներ հրաժարվում են ենթարկվել նոր արքային, իսկ ենթարկվողներն էլ առանձնապես հավատարիմ չէին և հարմար առիթի էին սպասում նրանից ազատվելու համար[1]: Արդյունքում՝ կազմալուծվում է բանակն և փլուզվում է Հայկական թագավորությունների ավանդական փոխօգնության դաշինքը: Ինքը՝ Երվանդ III-ը, ըստ Մովսես Խորենացու, Սելևկյանների թագավորությանն է զիջում Հայոց Միջագետք նահանգն ու դառնում է նրանց հարկատու՝ ստանձնելով կրտսեր դաշնակցի պարտավորությունը՝ ի հակադրություն հայ-ատրպատականա-պարթևական համադաշնության փորձելով ապահովել հայ-սելևկյան դաշնակցությունը[2]: Հենց այս ամենն է, որ Մովսես Խորենացու մոտ[3] խիստ բացասական և դժնի կերպար է պահպանել Երվանդ III-ի վերաբերյալ, քանզի նա իր վարքագծով իրոք անկման հասցրեց Վաղարշակ Ի-ի և Արշակ Ի-ի օրոք ծաղկող, միջազգային բարձր հեղինակության հասած, Հայոց այլ թագավորությունների գլխավոր և Սելևկյանների թագավորության ոտնձգությունները հաջողությամբ հետ մղած ու նրան պարտության մատնած թագավորությունը: Այսպիսով՝ Երվանդ III-ը վերացրեց հայկական թագավորությունների փոխօգնության դաշինքն և թույլ տվեց նրանց նվաճումը, թեև հանուն արդարության պետք է նշել նաև, որ նա լայն շինարարական գործունեություն իրականացրեց և թույլ չտվեց[4] Գուգարքի նվաճումն Իբերիայի թագավորության կողմից[5]:

Սմբատ Քաջ Բագրատունին Արշակ Ի-ի երեխաներից՝ իր հորաքրոջ թոռներից, կարողացավ փրկել միայն փոքրիկ արքայազն Արտաշեսին և, հատկանշական փաստ, նրա հետ հեռացավ ոչ թե մի այլ երկիր, այլ հենց Պարթևական թագավորություն[6]: Բանն այն է, որ հենց այստեղ, այլ ոչ թե այլ երկրում էր, որ Արտաշեսի ազգական Արշակունիները, առաջնորդվելով սեփական պետության շահերով և ձգտելով Մեծ Հայքում պահպանել Արշակունիների իշխող գահատոհմը, ոչ միայն ավելին, քան որևէ մեկը, կհոգային իրենց փոքրիկ ազգականի շահերը, այլև Երվանդ III-ի պահանջով չէին սպանի կամ հանձնի նրան: Հենց այդպես էլ լինում է, երբ, ի պատասխան Արտաշեսին հանձնելու պահանջի, Երվանդ III-ը վիրավորական տոնով մերժում է ստանում[7]: Դա վերը նշվածի ֆոնի վրա ամենի ինչից զատ բացատրելի է նաև այն տեսանկյունից, որ Երվանդ III-ը սպանել էր Պարթևական թագավորությունում այդ ժամանակ թագավորող Տրդատ Ի-ի հարազատ եղբոր տղային ու նրա զավակներին: Այս ամենի համար, ի դեպ Բագրատունիները հատուցեցին ծանր մարդկային կորուստներով և տոհմական Բաբերդի անկմամբ[8]:

Գլուխ 20
Անտիոքոս III Մեծի Արևելյան արշավանքը

[1] Օրինակ՝ հետևազորի հրամանատար Արգամ Մուրացյանն և գրեթե բոլոր կուսակալությունների հրամանատարները:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 44:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37:
[4] «Քարթլիս-Ցխովրեբա»-ում (Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը») բերված և Երվանդ III-ին վերաբերվող այս տվյալներն ուշադրության չեն արժանացել, այն դեպքում, երբ դրանք ցույց են տալիս բնիկ Հայկական նահանգի համար հայկական պետության պայքարի մի դրվագ:
[5] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:
[6] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37:
[7] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 38:
[8] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37, 38; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 14:

Եվ այսպես, մ.թ.ա. 212 թվականին, երբ Սելևկյանների ռազմական մեքենան արդեն, ըստ էության, պատրաստ էր արշավել դեպի Արևելք, Մեծ Հայքի թագավորության արքա Արշակ I-ը զոհ գնաց դավադրությանը, որից հետո Հայոց թագավորության գլուխ կանգնեց դավադրությունը կազմակերպած Երվանդ III-ը: Վերջին հանգամանքն, իր հերթին, ամենակործանարար ազդեցություն ունեցավ Հայոց թագավորությունների ավանդական դաշինքի վրա, ինչն էլ հաշվի առնելով Անտիոքոս III Մեծը փոխեց հարվածի ուղղությունը և իր Արևելյան մեծ արշավանքը սկսեց՝ հարված հասցնելով դեպի հյուսիս: Արդյունքում՝ Անտիոքոս III Մեծի ռազմական մեքենան ներխուժեց Ծոփքի թագավորության տարածք և, ենթարկվելով հայերի անկանոն հարվածերին, պաշարեց Արշամաշատը (Մինչեփրատյան Ծոփք, Բալահովիտ գավառ): Որպես հետևանք այս ամենի, թեև մայրաքաղաքը չգրավվեց, սակայն կնքվեց հաշտություն, համաձայն որի Ծոփքի թագավորության գործող արքա, մ.թ.ա. մոտ 220 թվականին Արշամ II-ի մահից հետո վերջինիս հաջորդած Քսերեքսը (մ.թ.ա. մոտ 220-210), ամուսնանալով Անտիոքոս III Մեծի քրոջ հետ և ընդունելով Սելևկյանների թագավորության գերիշխանությունը, պահպանեց իր իշխանությունը տեղում[1]: Հազիվ էին, սակայն, Հայոց պետական միավորները ուշքի եկել արևմուտքից ստացված հարվածից, երբ հարված եկավ արդեն արևելքից:

Իրոք, օգտվելով ստեղծված իրավիճակից, նույն այս ժամանակ Ատրպատականի թագավորությունը, ինչ-որ տեղ ձևականորեն ներկայացնելով ատրպատականա-պարթևական դաշնակցության շահերը, բայց իրականում բնականաբար ձգտելով ապահովել ամենից առաջ հենց սեփական հետաքրքրությունների կյանքի կոչումը, հարմար առիթ գտավ դուրս գալ նախկին դաշնակցի դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. նույն 212 թվականին Արտավազդ I-ի գլխավորած Ատրպատականի թագավորության բանակը (մոտ 60.000) Մեծ Հայքի թագավորության բանակից (մոտ 10.000) իր հերթին գրավեց[2] Պարսկահայքը, Փայտակարանը, Վասպուրականի արևելքը և Տրպատունիքը[3]: Ստեղծված ծանր իրավիճակում Մեծ Հայքի թագավորության արքա Երվանդ III-ն ինքը Սելևկյանների թագավորությանը զիջեց Հայոց Միջագետք նահանգը և դարձավ Սելևկյանների թագավորության հարկատու[4]: Այս առումով հետաքրքիր է նշել, որ վերջին զարգացումները իրենց հերթին ստիպեցին հերթական անգամ ակտիվանալ Անտիոքոս III Մեծին, որն արդեն իսկ սկսել էր իր Արևելյան արշավանքը:

Արդյունքում՝ սեփական 120.000 հոգանոց բանակով, որից 20.000 հեծյալ, անմիջապես էլ ներխուժելով Ատրպատականի թագավորության տարածք, սելևկյան տիրակալը հասավ մի դրության, երբ Արտավազդ I-ը ձևականորեն ընդունեց Սելևկյանների թագավորության գերիշխանությունը և այդ գնով շարունակեց տիրել մինչ այդ զավթված Հայաստանի արևելյան տարածքներին, թեև իրականում շարունակեց պահպանել պարթևական կողմնորոշումը: Եվ վերջապես մ.թ.ա. նույն չարաբաստիկ 212 թվականին էր, որ Պոնտոսի թագավորության բանակը (մոտ 30.000) Փոքր Հայքի թագավորության բանակից (մոտ 7.000) գրավեց Կուտիորան, Կեռասունտը և Տրապիզոնը, ինչպես նաև Խաղկտիքը[5]: Այսպիսով՝ Երվանդ III-ի գահակալումը ծանր հետևանքներ

---

[1] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 12, գլուխ 17-20:

[2] Այս իրադարձությունը նկարագրելիս հիմք են ընդունվել Պոլիբիոսի հաղորդումը Ատրպատականի թագավորության սահմանների մասին (Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 5, գլուխ 55), ինչպես նաև Ստրաբոնի հաղորդումն այն մասին, որ Արտաշես I-ը նկարագրվող դեպքերից մոտ 20 տարի անց ազատագրել է Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան (Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5): Հիշատակված հաղորդումների համադրումից պարզ է դառնում, որ, թեև Պոլիբիոսի մոտ, ինչի հետ համաձայն են գործնականում բոլոր ուսումնասիրողները, Ատրպատականի թագավորության սահմանները ներկայացված են իրականությանը ոչ մոտ աստիճանի լայնարձակությամբ, բայց այնուհանդերձ, հիմք ընդունելով Ստրաբոնի հաղորդումը, կարելի է գալ հետևության, որ վերջինիս հաջողվել է գրավել Պարսկահայքը, Փայտակարանը, Վասպուրականի արևելքը և Տրպատունիքը:

[3] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 5, գլուխ 55:

[4] Վերջին հանգամանքի մասին հայտնում է Մովսես Խորենացին իր երկում (գիրք 2, գլուխ 38), որտեղ անխուսափելի սխալմամբ Սելևկյանների փոխարեն նշվում է հռոմեացիների մասին, քանի որ ըստ Պատմահոր սխալ ժամանակագրական սխեմայի այս իրադարձությունները տեղի են ունեցել մ.թ. II դարում:

[5] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 12, գլուխ 3, մաս 28, ընդ որում հեղինակը հայտնում է հիշատակված տարածքների մասին այն կոնտեքստով, որ դրանք վերագրավվել են հայերի կողմից, իսկ այդ պարագայում պարզ է, որ մի ինչ-որ ժամանակ դրանք պետք է կորսված լինեին: Արդյունքում՝ հավանական է համարել, որ հիշատակված տարածքները կորսվել են հենց հայերի անհաջողության այս շրջանում:

ունեցավ հայկական բոլոր պետական միավորների համար և այս առումով լավը գոնե դեռ այն էր, որ մ.թ.ա. 209 թվականին Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 40.000) Իբերիայի թագավորության առաջխաղացած բանակից (մոտ 20.000) ազատագրեց Գուգարքը, որից հետո նահանգում հաստատեց Քաջբերունիների նախարարական տոհմի ժառանգական տիրապետությունը, իսկ Իբերիայի թագավորությունն էլ ընդունեց Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը[1,2]:

Անտիոքոս III Մեծի ձեռնարկած Արևելյան արշավանքը իրոք որ հաջող սկիզբ էր ունեցել և կյանքի էին կոչվել նույնիսկ նպատակներ, որոնք մինչ այդ չէին էլ դրվել, երբ Սելևկյանների թագավորությունից հյուսիս տարածվող թագավորություններն ընդունեցին վերջինիս գերիշխանությունը, իսկ Մեծ Հայքի, Ատրպատականի ու Պարթևական թագավորությունների միությունն էլ քայքայվեց՝ Պարթևական թագավորությանը փաստորեն թողնելով միայնակ: Ավելին, մ.թ.ա. արդեն 211 թվականին իր մահկանացուն կնքեց Տրդատ I-ը և Պարթևական թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Արտավան I-ը (մ.թ.ա. 211-191), ինչը լրացուցիչ լավատեսության հիմքեր էր տալիս: Արդյունքում, ի վերջո հարված հասցնելով արևելյան ուղղությամբ, մ.թ.ա. արդեն 209 թվականի վիճակով Անտիոքոս III Մեծն արդեն գրավել էր Պարթևական թագավորության տարածքը:

Հնազանդեցնելով Արտավան I-ին՝ Անտիոքոս III Մեծը սեփական ռազմական մեքենայով ներխուժեց վերջինիս թագավորությունից ավելի արևելք տարածվող Հունա-Բակտրիական թագավորության տարածք: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Սելևկյանների թագավորության տիրակալը երկու դեպքում էլ առանձնակի խստություններ չդրսևորեց և լիովին բավարարվեց Արտավան I-ից ու Հունա-Բակտրիական թագավորության արքա Էվտիդեմոս I-ից (մ.թ.ա. 235-200) հնազանդության երաշխիքներ ստանալով: Նույն այս ժամանակ իր լավ օրերն արդեն անցյալում էր թողել նաև Մուարյան տերությունը, ինչի պատճառով էլ Մուարյան տերության հետ դեռևս Սելևկոս I Նիկատորի կնքած բարեկամության դաշինքը Անտիոքոս III Մեծը ստիպված եղավ վերականքել ոչ թե այդ ժամանակ Մուարյան տերության տիրակալ Շալիշուկայի (մ.թ.ա. 215-202), այլ վերջինիս տերության արևմտյան տարածքներում փաստացի անկախ դրության մեջ իշխող նրա ազգական Սոֆագասենեսի հետ: Եվ այսպես, ինչպես հարկն է կարգավորելով գործերն Արևելքում, մ.թ.ա. արդեն 205 թվականին Անտիոքոս III Մեծը իր ռազմական մեքենան շրջեց դեպի արևմուտք՝ ավարտելով իր կյանքի մեծագույն ձեռնարկումներից մեկը և Սելևկյանների թագավորությանն ապահովելով սեփական հզորության գագաթնակետներից վերջինը: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ արևելյան տիրակալների նկատմամբ Անտիոքոս III Մեծի որոշակիորեն անակնկալ զիջողականությունը իր ուշագրավ բացատրությունն ուներ, որի մասին, թերևս, արժե մի քանի խոսք ավել ասել:

Երկրագնդի միջին ջերմաստիճանի անկումը, որը, ինչպես արդեն մի քանի անգամ ասացինք, սկսվել էր մ.թ.ա. դեռևս XIII դարի ամենավերջում, իսկ մ.թ.ա. IV դարում էլ հասել էր իր գագաթնակետին, մ.թ.ա. III դարում արդեն աստիճանաբար հակառակ տեսքն էր ստանում, երբ ջերմաստիճանը սկսում էր բարձրանալ: Արդյունքում՝ սկիզբ էր առնում Մեծ տափաստանի Մեծ ակտիվությունը, սակայն հենց Մեծ տափաստանում մինչ այս արդեն իսկ հասցրել էին զգալի փոփոխություններ տեղի ունենալ: Իրոք, հյուսիսից դեպի հարավ շարժվող և սահմանային քանակությունը որոշակիորեն գերազանցող մարդկային զանգվածի կուտակումը Մեծ տափաստանի ամենից առաջ հենց արևելքում մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում ստեղծել էր մի դրություն, երբ օրակարգ էր մտնում քոչվոր հերթական տերության ստեղծման հարցը: Այս խնդիրն էլ հենց հաջողությամբ

[1] «Քարթլիս-Ցխովրեբա»-ում (Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը») բերված և Երվանդ III-ին վերաբերվող այս տվյալները ուշադրության չեն արժանացել, այն դեպքում, երբ դրանք ցույց են տալիս բնիկ Հայկական նահանգի համար հայկական պետության պայքարի մի դրվագ:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Սամցխեի և Կղարջքի կյանքը»:

լուծեց հուննուների առաջնորդ, եռանդուն, ուժեղ, դաժան և ռազմատենչ Մոդեն (մ.թ.ա. 209-174): Արդյունքում՝ վերջինս, համառ պայքար մղելով հարևան ցեղերի և ժողովուրդների դեմ, հիմնեց Հուննուական տերությունը, որի ռազմական մեքենան իր կազմում ուներ 300.000 մարտունակ ռազմիկներ:

Հուննուական տերության ստեղծումը համընկավ մինչ այդ չինական պետական միավորների նկատմամբ գերիշխանության հասած և, ըստ էության, համաչինական պետական մի միավոր հանդիսացած Ցինի տերության անկման հետ, որը, սկսած մ.թ.ա. արդեն 210 թվականից, մեկ տասնամյակ շարունակ սկսեց ալեկոծվել ներքաղաքական դաժան մի պատերազմում: Արդյունքում՝ Մոդեն, արդեն հանգիստ լինելով մինչ այդ հուննուներին լրջորեն սպառնացող չինական հարվածից, մ.թ.ա. 210-ական թվականների սկզբին պատերազմական գործողություններ սկսեց Հուննուական տերությունից արևմուտք տարածվող Քուշանական թագավորության դեմ, որին աջակցում էր արդեն իրենից արևմուտք տարածվող Մասագետական թագավորությունը: Արդյունքում՝ մի կողմից Հուննուական տերության, իսկ մյուս կողմից էլ Քուշանական և Մասագետական թագավորությունների միջև սկիզբ առած պատերազմական լայնածավալ գործողությունները համընկան Անտիոքոս III Մեծի Արևելյան արշավանքի հետ: Եվ ահա այնպես ստացվեց, որ տարածաշրջանում ստեղծվող ուժերի հարաբերակցությանը հիանալի տեղյակ Հունա-Բակտրիական թագավորության արքա Էվտիդեմոս I-ը, որի արևելյան հարևան Մասագետական թագավորության արևելյան հարևանն էր Հուննուական տերության հարվածին ենթարկված Քուշանական թագավորությունը, լիովին հիմնավոր կերպով բացահայտեց իրավիճակը Անտիոքոս III Մեծի դեսպանին: Արդյունքում՝ Հունա-Բակտրիական թագավորության արքան հանձնարարեց իրեն ներկայացած Սելևկյանների տիրակալի դեսպանին հայտնելու իր տիրոջը, որ Հունա-Բակտրիական թագավորության արևելքում խոշոր ուժեր կան, իսկ Հունա-Բակտրիական կամ Պարթևական թագավորությունների ոչնչացումն էլ կվերացնի ամուր մի պատնեշ և հարվածի տակ կդնի արդեն Սելևկյանների թագավորության արևելյան սահմանները:

Ի պատիվ իրեն պետք է ասել, որ Անտիոքոս III Մեծը լիովին հասու եղավ իրավիճակին և այս հանգամանքը հետագայում հսկայական դրական դերակատարություն ունեցավ ինչպես Մերձավոր ու Միջին Արևելքների համար ընդհանրապես, այնպես էլ Սելևկյանների տերության համար մասնավորապես: Իրոք, դեպքերի զարգացման այլ պարագայում բացառված չէր, որ Իրանական լեռնաշխարհին հյուսիսից սահմանակից կդառնար քուշանական, մասագետական, բակտրիական և պարթևական ուժերն իր մեջ ներառած Հուննուական տերությունը, որի հզորությունն այդ պարագայում իրոք արդեն բոլոր սահմաններն անցած կլիներ: Սրան հակառակ այժմ, սակայն, նույն այդ ուժերը, ազատված սելևկյաններից սպառնացող վտանգից, ակտիվ դիմադրություն կազմակերպեցին Մոդեի ռազմական մեքենային, որն էլ իր հերթին վերջնարդյունքում հրաժարվեց Մեծ տափաստանի կենտրոնական հատվածի նկատմամբ լուրջ առաջխաղացում իրականացնելու գաղափարից:

Այս առումով պետք է նշել նաև, որ Անտիոքոս III Մեծի հաշվարկը հիմնավորված էր նաև մեկ այլ առումով, քանզի, թերևս, արդեն պարզ էր, որ Հուննուական տերության հարվածներին ենթարկված, թուլացած, սակայն չոչնչացված Քուշանական և Մասագետական թագավորությունները Մոդեի կողմից առաջացրած վտանգից ազատվելուց հետո, խուսափելով շարունակել հակամարտությունը Հուննուական տերության հետ, պետք է հարատև հակամարտության մեջ մտնեին Հունա-Բակտրիական ու Պարթևական թագավորությունների հետ՝ թուլացնելով վերջիններիս և այս մասով ևս փոքրացնելով սպառնալիքները Սելևկյանների թագավորության համար: Այսպիսով՝ Անտիոքոս III Մեծը իր թագավորության արևելյան սահմաններին հեռատեսորեն պահպանեց ուժերի, որոնք, բավականին թույլ լինելով, որ լրջորեն չսպառնան իրեն, միաժամանակ նաև այնքան ուժեղ էին, որ կասեցնեին արևելքից վեր հառնող Հուննուական ահեղ տերության առաջխաղացումը:

Գլուխ 21
Արտաշես Ի-ի հաստատվելը Մեծ Հայքի թագավորության գահին

Վերևում արդեն նշվեց, որ Սմբատ Քաջ Բագրատունին Արշակ Ի-ի երեխաներից կարողացավ փրկել միայն փոքրիկ արքայազն Արտաշեսին և, ինչպես ասվեց, նրա հետ հեռացավ Պարթևական թագավորություն: Մ.թ.ա. արդեն 201 թվականին, սակայն, Արտաշեսն և Սմբատ Քաջ Բագրատունին, արտահայտելով հայ-ատրպատականա-պարթևական համադաշնության շահերը, պայքար սկսեցին Մեծ Հայքի թագավորության գահի համար: Վերևում իր հերթին արդեն խոսվեց այս ժամանակաշրջանում տարածաշրջանում առկա ուժերի դասավորության մասին: Հենց դրանով է, ի դեպ ասած, բացատրվում նաև այն հանգամանքը, որ գահակալական պայքար սկսած Արտաշեսի բանակում էր գտնվում Ատրպատականի թագավորության բանակի մի ջոկատ, իսկ իր հերթին ընդգծված հակապարթևական և, հետևաբար ուժեղ պրոսելևկյան դիրքորոշում ունեցող Երվանդ III-ի բանակում էլ բնականաբար առկա էին հելլենիստական ուժեր Հայոց Միջագետք նահանգից:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 201 գարուն – ***<u>Երվանդաշատի ճ-մ</u>*** (Արարատ, Արշարունիք գավառ, քաղաքից մոտ 58 կմ հյուսիս)[1]
>
> Պարթևական թագավորությունում ապաստանած Արտաշես արքայազնը հոր քեռու տղա, դայակ և իր տրամադրության տակ եղած բանակի սպարապետ նշանակված Սմբատ Քաջ Բագրատունու հետ միասին, օգտվելով Երվանդ III-ի դեմ Հայաստանի բոլոր մասերում առկա դժգոհությունից, Պարթևական թագավորությունից անցավ Ատրպատականի թագավորություն ու հպատակություն հայտնեց Անտիոքոս III Մեծին: Դրանից հետո վերջինս Ատրպատականի թագավորության բանակի փոքր ջոկատով (մոտ 5.000[2]) արևելքից մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք, որտեղ իրենց տրամադրության տակ եղած ուժերով նրան միացան Մեծ Հայքի թագավորության արևելյան տարածքների դժգոհ նախարարները և կուսակալները: Այնուհետև, շարունակելով առաջխաղացումը, Արտաշեսի բանակը (մոտ 30.000, որից մոտ 5.000 ատրպատականցի) հյուսիս-արևելքից մոտեցավ ***<u>Երվանդաշատին</u>***: Իր հերթին, տեղեկանալով այս մասին, Երվանդ III-ը հակառակորդի ուղղությամբ շարժեց սեփական բանակը (մոտ 40.000), որ կազմված էր Մաղխազական և Մարդպետական հեծելազորից, Արգամ Մուրացյանի գլխավորած հետևազորից, Սասունցիների Հարավ-արևմտյան կուսակալության բանակից, հավատարիմ մնացած որոշ նախարարների հեծելազորներից, ինչպես նաև Իբերիայի թագավորության ու Հայոց Միջագետք նահանգում տեղակայված Սելևկյանների թագավորության[3] օժանդակ բանակներից: Մինչ այս, սակայն, Արտաշեսին հաջողվել էր իր կողմը գրավել Արգամ Մուրացյանին, ինչպես նաև Երվանդ III-ի կողմում գտնվող նախարարներին: Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին:
>
> Երվանդ III-ի բանակը կազմված էր 3 շարքից և պահեստազորից, ընդ որում

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 43-46; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 8; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 7, 8; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5:

[2] Միքայել Ասորին հայտնում է, որ օժանդակ բանակը կազմել է 70.000 ռազմիկ, ինչը քիչ հավանական է:

[3] Ըստ Մովսես Խորենացու Երվանդ III-ը. «*... շտապով գալիս է իր քաղաքը, որպեսզի մոտը հավաքի Հայոց, վրաց և Կեսարիայի կողմերի զորքերը, նաև՝ Միջագետքինը՝ խնդրելով ու վարձ վճարելով*» (գիրք 2, գլուխ 44): Հենց այս վերջին հաղորդումն է հիմք տալիս ասելու, որ Երվանդ III-ի բանակում եղել են վարձկաններ Սելևկյանների թագավորությանը զիջած Հայոց Միջագետքում տեղակայված վերջինիս բանակից:

առաջին շարքում տեղավորվեց Արգամ Մուրացյանի գլխավորած հայկական հետևակը, երկրորդ շարքում տեղաբաշխվեց Իբերիայի թագավորության բանակը, երրորդ շարքում դիրքեր զբաղեցրեց Սելևկյանների թագավորության բանակը[1], իսկ առաջին և երկրորդ շարքերի թևերում էլ տեղավորվեցին Երվանդ III-ին հավատարիմ մնացած նախարարների հեծելազորային ուժերը: Մաղխազական և Մարդպետական հեծելազորը, ինչպես նաև Սասունցիների Հարավ-արևմտյան կուսակալության բանակը մնաց պահեստազորում: Արտաշեսի բանակը կազմված էր երկու շարքից, ընդ որում առաջին շարքում տեղավորվեց Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած հեծելազորը, երկրորդում տեղաբաշխվեց հետևազորը, իսկ առաջին և երկրորդ շարքերի թևերում էլ դիրքեր գրավեցին հեծելազորի առանձնացված ջոկատներ:

I փուլ – Արտաշեսի բանակի առաջին շարքի հեծելազորը հարձակվեց հակառակորդի առաջին շարքի վրա, որը առանց պայքարի անցավ իր կողմը:

II փուլ – Միավորելով ուժերը՝ Արգամի Մուրացյանի հետևակը և Սմբատ Քաջ Բագրատունու հեծելազորը հարձակվեցին հակառակորդի բանակի երկրորդ շարքի վրա, ինչի ընթացքում թևերում գտնվող հայ նախարարների հեծելազորային ուժերն իրենց հերթին ողջ կազմով անցավ Արտաշեսի բանակի կողմը: Սրան հակառակ, սակայն, Իբերիայի թագավորության բանակը կատաղի հակահարձակում ձեռնարկեց: Բռնկվեց համառ հանդիպակաց մարտ, որի ընթացքում բոլոր կողմերից հարվածների ենթարկվող Իբերիայի թագավորության բանակը ի վերջո պարտություն կրեց և դիմեց փախուստի:

III փուլ – Արտաշեսի բանակը շրջապատեց և ոչնչացրեց Սելևկյանների թագավորության բանակին, որից փրկվել հաջողվեց միայն քչերին:

IV փուլ – Մինչ այդ մարտին չմասնակցած Երվանդ III-ի պահեստազորը անակնկալ հարված հասցրեց մարտակարգն արդեն կորցրած Արտաշեսի բանակին: Բռնկվեց կատաղի մարտ, որի ընթացքում Սասունցիների Հարավ-արևմտյան կուսակալության բանակը հասավ ընդհուպ մինչև անզիջումորեն դիմադրող Արտաշեսի թիկնապահ գնդին և այս ընթացքում, պաշտպանելով սեփական արքային, զոհվեց քաջաբար մարտնչող Գիսակ Դիմաքսյանը: Բոլոր կողմերից շրջապատված Երվանդ III-ի պահեստազորը, սակայն, ի վերջո պարտություն կրեց, նրա ռազմիկները ցրվեցին կամ գերվեցին, իսկ Երվանդ III-ն էլ իր սակավաթիվ թիկնապահ հեծյալներով դիմեց փախուստի:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 6.000, դաշնակիցը՝ մոտ 1.000, պարտվողներից հայերը մոտ 4.000, դաշնակիցները մոտ 16.000 զինվոր:

Վճռական հաղթանակ տանելով հակառակորդի նկատմամբ՝ նախորդ ճակատամարտից կարճ ժամանակ անց Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորությամբ սրընթաց երթով դեպի հարավ արշաված Արտաշեսի բանակը Երվանդ III-ի կայազորից առանց լուրջ մարտերի գրավեց Երվանդաշատը (մոտ 1.000), ընդ որում այս ընթացքում Երվանդ III-ը սպանվեց Սմբատի ռազմիկներից մեկի վաղրի հարվածից[2]: Արդյունքում՝ Արտաշեսը՝ Արտաշես I-ը, հռչակվեց Մեծ Հայքի թագավորության արքա, սակայն ընդունեց Սելևկյանների թագավորության գերիշխանությունը: Այս առումով ևս մինչև առաջ անցնելը ևս, սակայն, կարիք կա մի քանի խոսք ասելու:

Գլուխ 22
Արտաշես I-ի հաստատած քաղաքական նոր կուրսը

[1] Ըստ Մովսես Խորենացու Արգամի հետևազորի դասավորությունը անցնելուց հետո Արտաշեսի բանակը ընդհարվում է սկզբում իբերների հետ, որոնց փախուստի մատնելուց հետո է միայն հասնում Սելևկյանների բանակին:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 46:

Իրոք, Արտաշես Ի-ը, արքայական գահին հասնելով Պարթևական և վերջինիս որոշակիորեն ենթակա Ատրպատականի թագավորությունների աջակցությամբ, այնուհանդերձ, թեկուզ վերջին երկուսի լուռ համաձայնությամբ, իր իշխանության առաջին 11 տարիներին ընդունեց Անտիոք III Մեծի օրոք կրկին վերելքի ուղին բռնած և տարածաշրջանում գերիշխող դիրքի հասած Սելևկյանների թագավորության գերիշխանությունը: Այսպիսով՝ երիտասարդ գահակալը, դրսևորելով քաղաքական հեռատեսություն և ճիշտ գնահատելով ուժերի իրական դասավորությունը, հեռահար հաշվարկի հիման վրա արեց ռազմաքաղաքական մի ընտրություն, որը վերջնական հաշվով արդարացրեց իրեն:

Բանն այն է, որ Ատրպատականի թագավորությունը, որն իր ստեղծման իսկ պահից ենթարկված էր ուժեղ պարթևական ազդեցությանը, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում արդեն ենթարկվել էր Սելևկյանների թագավորությանը՝ իսկ հայ-ատրպատականա-պարթևական համադաշնությունն էլ մոտ 10 տարով, ըստ էության, դադարել էր գործել: Միաժամանակ, ընդհանրացնելով վերջին տասնամյակում Հայաստանում զարգացող իրադարձությունները, կարող ենք փաստել, որ, փաստորեն Սելևկյանների ու Պարթևական թագավորություններն արտաքին ակտիվ քաղաքական միջոցառումներով ձգտում էին իրենց կողմնակիցներին ունենալ Մեծ Հայքի թագավորության գահի վրա, դրանով իսկ ուժեղացնելով իրենց դիրքերը ողջ Հայաստանում և, եթե Արշակ Ի-ի սպանությունից ու Երվանդ III-ի գահ բարձրանալուց հետո ուժեղացել էին Սելևկյանների թագավորության դիրքերը, ապա Արտաշես Ի-ի իշխանության գալով կրկին ուժեղացավ Պարթևական թագավորության ազդեցությունը:

Այս առումով հետաքրքիր է նշել, սակայն, որ, ինչպես արդեն ասվեց, Անտիոք III Մեծի օրոք կրկին վերելքի ուղին բռնած Սելևկյանների թագավորության հետ թեև Պարթևական թագավորության աջակցությամբ գահ բարձրացած Արտաշես Ի-ը այնուհանդերձ որևէ կերպ չսրեց հարաբերությունները, այլ դրա փոխարեն ճանաչեց Անտիոք III Մեծի գերիշխանությունը: Իր հերթին Պարթևական թագավորությունը, բավականին թուլացած լինելով Անտիոք III Մեծի Արևելյան մեծ արշավանքից հետո, թեկուզ և այդ գնով համաձայնեց տեղի ունեցածի հետ, քանի որ ամեն դեպքում Մեծ Հայքի թագավորությունում, հետևաբար նաև ողջ Հայաստանում, իշխանության էին հասել պրոպարթևական ուժեր, որոնք վաղ թե ուշ կվարեին հակասելևկյան քաղաքականություն: Ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա ընթացքը, այս հաշվարկները ճիշտ դուրս եկան: Այսպիսով, ի դեմս Արտաշես Ի-ի առաջին իսկ ձեռնարկումների, ակնհայտ է, որ մենք գործ ունենք հեռատես և գրագետ քաղաքականություն վարող մի գործչի հետ, որը, սթափ և ճիշտ գնահատելով արտաքին-քաղաքական դասավորությունները, արդյունքում իր թագավորությունը զերծ պահեց արտաքին մարտահրավերներից ու մեծապես նպաստեց վերջինիս զարգացմանը: Այս կապակցությամբ հարկ է ավելացնել նաև, որ Մեծ Հայքի թագավորության տարածքում Սելևկյանների թագավորության դիրքերի վերջնական ամրապնդումն իր ազդեցությունն ունեցավ նաև հայկական մյուս պետական միավորների վրա:

Իրոք, դեռևս մ.թ.ա. մոտ 210 թվականին Ծոփքի թագավորության արքա Քսերեքսի կինը թունավորելով սպանել էր իր ամուսնուն, ինչից հետո արքա էր հռչակվել տեղի մեծատոհմիկ Աբդիսարեսը (մ.թ.ա. մոտ 210-201), սակայն մ.թ.ա. արդեն նույն 201 թվականին վերջինս հեռացվեց իշխանությունից և Ծոփքի թագավորության արքա հռչակվեց տեղական մեծատոհմիկ Զարեհը (մ.թ.ա. 201-179): Նույն այս ժամանակ Կոմագենե և Գավրենե գավառներն իրենց հերթին անջատվեցին Ծոփքի թագավորությունից ու հռչակվեցին առանձին թագավորություն, որտեղ արքա հռչակվեց տեղական մեծատոհմիկ Պտղոմեոսը (մ.թ.ա. 201-130): Պրոսելևկյան փոփոխություններ եղան նաև Փոքր Հայքի թագավորությունում, որտեղ Արյուկ II-ին փոխարինեց Անտիոքոս III Մեծի քրոջ որդի Միհրդատը՝ Միհրդատ II-ը (մ.թ.ա. 201-160):

Գլուխ 23
Ասորիքյան V պատերազմը

Մ.թ.ա. 203 թվականի ամռանը Պտղոմեոս IV-ը կնքեց իր մահկանացուն, սակայն նրա մտերիմները այս փաստը երկար ժամանակ գաղտնի պահեցին և հայտարարեցին այդ մասին միայն պետական գանձարանը ինչպես հարկն է թալանելուց հետո: Արդյունքում՝ մ.թ.ա. 203 թվականի նոյեմբերի 28-ին արդեն իսկ իր լավ օրերն անցյալում թողնող Պտղոմյանների թագավորության արքա հռչակվեց հանգուցյալի վեցամյա որդի Պտղոմեոս V-ը (մ.թ.ա. 203-180): Ինքնին հասկանալի էր, որ նոր արքան ի վիճակի չէր կառավարել երկիրը, սակայն գահի շուրջ ստեղծված անառողջ մրցակցության մթնոլորտում նույնիսկ խնամակալական խորհուրդ իսկ չհասցրեց ստեղծվել, երբ միմյանց դեմ բացահայտ պայքար սկսած ուժերը սկսեցին ուղղակի անխնա կերպով ոչնչացնել մեկը մյուսին: Ավելին, ըստ էության, գահակալական պայքարի բնույթ ստացած այս գործընթացին շուտով միացան նաև բնիկ եգիպտացիները, որոնք խռովարար տրամադրություններով էին հակված դեռևս Պտղոմեոս IV-ի ժամանակ, իսկ այժմ, արդեն լիուլի գիտակցելով իրենց ուժն ամենից առաջ հենց երկրի ռազմական համակարգում, անցան բացահայտ գործողությունների: Արդյունքում՝ Պտղոմյանների երբեմնի հզոր թագավորությունը սուզվեց քաոսի հորձանուտի մեջ, որից Պտղոմեոս V-ի գահակալման ողջ ընթացքում այդպես էլ դուրս չեկավ:

Պտղոմյանների թագավորությունում սկիզբ առած խնդիրները իր հզորության գագաթնակետին գտնվող Անտիոքոս III Մեծին Ասորիքի հարցով նոր հույսեր ներշնչեցին և արդյունքում վերջինս մ.թ.ա. 202 թվականին սկսեց Ասորիքյան V պատերազմը (մ.թ.ա. 202-195)՝ այս ընթացքում վերահաստատելով դաշնակցային հարաբերությունները նաև Պտղոմյանների թագավորության վաղեմի ծովային մրցակից Մակեդոնական թագավորության հետ: Արդյունքում՝ փոփոխակի հաջողությամբ ընթացած պատերազմական լայնածավալ գործողություններից հետո, որոնցում հաջողությունն ամեն դեպքում մեծամասամբ հենց Սելևկյանների թագավորության կողմում մնաց, մ.թ.ա. արդեն 198 թվականի վիճակով Անտիոքոս III Մեծն ի վերջո իր տիրապետությունը հաստատեց ողջ Ասորիքի նկատմամբ: Ի վերջո՝ տիրելով Ասորիքին և ամրանալով այստեղ՝ Անտիոքոս III Մեծը ձեռնամուխ եղավ նաև Կիլիկիայի նվաճմանը, որը Սելևկյանների թագավորությունում հաստատված խառը տարիներին աստիճանաբար ընկել էր Պտղոմյանների թագավորության տիրապետության տակ:

Արդյունքում՝ մ.թ.ա. 197 թվականի գարնանը Անտիոքոս III Մեծի ընդհանուր ղեկավարությամբ գործող Սելևկյանների (մոտ 30.000, 300 նավ), Միհրդատ II-ի գլխավորած Փոքր Հայքի (մոտ 5.000) և Պտղոմեոսի գլխավորած Կոմագենեի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը, արշավելով ծովով ու ցամաքով, Պտղոմյանների թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) առանց լուրջ մարտերի գրավեց Կոռիկոսը (Կիլիկիա, ծովի ափին, Տարսոնից մոտ 80 կմ հարավ-արևմուտք), Սելինունտը (Իսավրիա, ծովի ափին, Տարսոնից մոտ 360 կմ արևմուտք), Զեֆիրիան, Սոլեն ու Աֆրոդիսիդան (Կիլիկիա)[1], որից հետո վերջնականապես ամրապնդեց իր դիրքերը Փոքր Ասիայում:

Այս առումով ավելորդ չէ մատնանշել այստեղ և հետագա տասնամյակի իրադարձություններում անտեսված մնացած, սակայն ուշագրավ ու, հատկապես վերևում ասվածի ֆոնին, խիստ հատկանշական մի փաստ՝ Սելևկյանների թագավորության բանակին դաշնակցային օգնություն են ցույց տալիս միայն անկեղծորեն Սելևկյանների թագավորության ազդեցության տակ գտնվող Փոքր Հայքի թագավորության արքա Միհրդատ II-ը՝ Անտիոքոս III Մեծի քրոջ որդին, ինչպես նաև Կոմագենեի թագավորության արքա Պտղոմեոսը: Դրա փոխարեն, սակայն, Արտաշես I-ի գլխավորած Մեծ Հայքի և

[1] Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», գիրք 33, գլուխ 19-20; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 1:

Զարեհի գլխավորած Ծոփքի թագավորությունները, օգտվելով Անտիոքոս III Մեծի, որպես կանոն, անփույթ նախապատրաստություններից, ինչպես նաև խիստ անկայուն ու չհամակարգված բնավորությունից, հասկանալի պատճառներով, ըստ երևույթին, ձգձգել են օգնական ուժերի ուղարկումը և ի վերջո այդպես էլ չեն ուղարկել դրանք, մի հանգամանք, որը, կարծես, չի էլ նկատվել կամ դրա վրա ուշադրություն չի էլ դարձվել: Այսպես թե այնպես, սակայն վերջին հաջողությունները ավելի մեծացրին Անտիոքոս III Մեծի թագավորության սահմանները, սակայն նույն այդ հաջողություններն արդյունքում Սելևկյանների թագավորությանը դեմ դուրս բերեցին մեկ այլ հակառակորդի, որը մինչ այս աստիճանաբար ուժեղանում էր Ապենինյան թերակղզում և Միջերկրական ծովի արևմտյան հատվածում: Խոսքը Հռոմեական հանրապետության մասին է:

Գլուխ 24
Հռոմեական հանրապետության բնութագիրը

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետությունը վաղուց արդեն իր տիրապետությանն էր ենթարկել Ապենինյան թերակղզին, ինչպես նաև կարողացել էր վերացնել գալլերի հավակնությունները վերջինիս նկատմամբ: Իրոք, գալլերի վերջին խոշոր արշավանքը դեպի Ապենինյան թերակղզի, որը գալլական 70.000 հոգանոց բանակը, այդ թվում 20.000 հեծյալ, այս ուղղությամբ ձեռնարկեց մ.թ.ա. 225 թվականին, ավարտվեց Տելամոնի ճակատամարտով, որտեղ Հռոմեական հանրապետության 108.000 հոգանոց բանակը, այդ թվում 6.400 հեծյալ, ջախջախիչ պարտության մատնեց վերջինիս, ընդ որում, եթե հաղթողների կորուստը կազմում էր 6.000 ռազմիկ, ապա պարտվողները կորցրին 40.000 սպանված և 10.000 գերի:

Հարկ է նշել, սակայն, որ Հռոմեական հանրապետության հզորացումը վերջինիս շահերի բախման դրության մեջ դրեց նույն այս ժամանակ Հյուսիսային Աֆրիկայում և Միջերկրական ծովի արևմտյան հատվածում գերիշխող դիրք գրաված Կարթագենի հանրապետության հետ: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում արդեն անցյալում էին երկու այս հանրապետությունների միջև ընթացած Փյունիկյան երկու պատերազմները, որոնցից վերջինն ավարտվել էր հենց նոր՝ մ.թ.ա. 202 թվականին, և արդյունքում առավելությունը վերջնականապես անցել էր պաշտոնական Հռոմի կողմը:

Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն II դարի ամենասկզբում Հռոմեական հանրապետությունն իրեն զգում էր որպես Միջերկրական ծովի արևմտյան հատվածում գերիշխող, ըստ էության, միակ մի ուժ, սակայն աչքաթող չէր արվում նաև Միջերկրական ծովի արևելյան հատվածը: Այս ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետության բանակը կազմված էր մոտ 200.000 ռազմիկից, ընդ որում բանակային մեխանիզմը հաջողությամբ կիրառում էր ֆալանգային մարտավարության հետագա և ավելի զարգացած տարատեսակը հանդիսացող լեգեոնային մարտավարությունը:

Գլուխ 25
Հռոմեական հանրապետության մուտքը Փոքր Ասիա

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, պայմանավորված Սելևկյանների թագավորության վերջին հաջողություններով, սկիզբ առավ մի գործընթաց, երբ տեղական հելլենական պետական միավորների ղեկավարները, հատկապես Փոքր Ասիայում, փորձ կատարելով դիմակայել Սելևկյանների նկրտումներին, սկսեցին դիմումներ հղել պաշտոնական Հռոմին՝ իրենց աջակցելու մտայնությամբ: Սելևկյանների թագավորության առաջխաղացումը Փոքր Ասիայում ամենից առաջ անհանգստացնում էր այստեղ տեղական առաջնորդի դերին հավակնող Պերգամոսի թագավորությանը, ինչպես նաև ծովային հսկայական հզորության տիրապետող Հռոդոսի հանրապետությանը, որը ևս իր շահերն ուներ Միջերկրական ծովի արևելյան հատվածում:

Խնդիրն անհանգստացնում էր, սակայն, նաև Հունաստանում գտնվող հելլենական պետական մյուս միավորներին, որոնք անհանգստացած էին դեպի արևմուտք Սելևկյանների թագավորության առաջխաղացման փաստից:

Այս առումով հարկ է նշել, որ Հռոմեական հանրապետությունն ինքն էլ իր հերթին տնտեսական և, դրանով պայմանավորված, քաղաքական էական շահեր ուներ տարածաշրջանում, իսկ օրինակ Պտղոմյանների թագավորությունից ներմուծվող հացահատիկի հարցն էլ, ընդհանրապես, վերջինիս համար գրեթե կենսական նշանակություն ուներ: Ավելին, նույն այս ժամանակ Հռոմում անհանգստացած էին Ասորիքյան V պատերազմում Սելևկյանների թագավորության հաջողությունների ծավալից, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, Միջերկրական ծովի ափերին վերջինիս գրանցած դրական արդյունքներից: Արդյունքում՝ Պերգամոսի թագավորության արքա Էվմենես II-ը (մ.թ.ա. 197-159), ինչպես նաև Հռոդոսի հանրապետության ղեկավարությունն ի վերջո պաշտոնապես դիմեցին Հռոմեական հանրապետությանը և խնդրեցին ընդդեմ սելևկյան վտանգի աջակցել իրենց: Որպես հետևանք՝ հռոմեական սենատի ներկայացուցիչները բանակցություններ սկսեցին Անտիոքոս III Մեծի հետ, սակայն մ.թ.ա. 192 թվականին դրանք ավարտվեցին անհաջողությամբ, իսկ Անտիոքոս III Մեծն էլ, կարծես արդարացնելով հունական աշխարհի ամենավատ սպասումները, մ.թ.ա. նույն 192 թվականի աշնանը ներխուժում իրականացրեց դեպի բուն Հունաստան՝ տիրելով վերջինիս զգալի հատվածին: Արդյունքում՝ սկիզբ առան մարտական գործողություններ արդեն, ըստ էության, հենց Հռոմեական հանրապետության դեմ, որոնք Անտիոքոս III Մեծի համար, սակայն, անակնկալ կերպով ծանր տեսք ստացան:

Իրոք, մ.թ.ա. արդեն 191 թվականի ամռանը արժանահիշատակ Թերմոպիլեի լեռնանցքում տեղի ունեցած հերթական ճակատամարտում Հռոմեական հանրապետության 40.000 հոգանոց բանակը ծանր պարտության մատնեց քանակապես հակառակորդին գրեթե քառակի զիջող Սելևկյանների թագավորության բանակին, որը կորցրեց մոտ 10.000 ռազմիկ, իսկ արդյունքում էլ՝ ստիպված եղավ լքել Հունաստանը: Չհամակերպվելով անհաջողության հետ՝ Անտիոքոս III Մեծը կրկին կարգի գցեց սեփական ռազմական մեքենան և մ.թ.ա. 190 թվականի գարնանը ասպատակեց Պերգամոսի թագավորության տարածքը, որի բանակն իր հերթին սկսեց ամեն կերպ խուսափել բաց մարտից՝ սպասելով Հռոմից եկող օգնությանը: Այս ռազմագործողության հետ միաժամանակ Անտիոքոս III Մեծը գործողություններ ձեռնարկեց նաև ծովի վրա:

Արդյունքում՝ մ.թ.ա. 190 թվականի նույն գարնանը Սամոսի ծովացամաքամարտում Սելևկյանների թագավորության նավատորմը (մոտ 1.500, որից մոտ 500 հայ, մոտ 12 նավ, որից 5-ը Կիլիկիայից) վաղ առավոտյան ձեռնարկած անակնկալ հարձակումով հաղթեց խարիսխ գցած վիճակում գտնվող Հռոմեական և Հռոդոսի հանրապետությունների միացյալ նավատորմին (մոտ 3.000, 27 նավ), որից հետո առանց լուրջ մարտերի տիրեց անձնակազմերից արդեն հիմնականում զրկված նավերին, ընդ որում հակառակորդը կորցրեց 20 գերված նավ[1]: Ի պատասխան սրա, սակայն, մ.թ.ա. 190 թվականի աշնանը Միոննեսի ծովամարտում (Փոքր Ասիայի արևմուտքում, Եփեսոսի հրվանդանում, Ասպիսի կղզու դիմաց) Հռոմեական և Հռոդոսի հանրապետությունների միացյալ նավատորմը (80 նավ) ինքը հաղթեց Սելևկյանների թագավորության նավատորմին (80, այդ թվում 5 ծովահենական նավ Կիլիկիայից), որի կորուստը կազմեց 42 նավ, որոնցից 30-ը գերվեցին, ընդ որում հակառակորդը կորցրեց միայն 3 նավ, որից հռոդոսյան 1 նավ գերվեց[2]: Արդյունքում, աչքի տակ ունենալով հերթական տարում ընթացած մարտական գործողությունների ոչ միանշանակ արդյունքը, Անտիոքոս III Մեծը իր հակառակորդներին հաշտություն առաջարկեց, սակայն, այդ առաջարկը մերժվեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 24; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», գիրք 27, գլուխ 11:

[2] Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», գիրք 33, գլուխ 28-30: Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 21, գլուխ 12:

190 դեկտեմբերի 22 – ***Մագնեսիայի ճ-մ*** (Փոքր Ասիայի արևմուտք)[1]

Լուցիոս Կոռնելիոս Սցիպիոնի գլխավորած Հռոմեական հանրապետության (70.000[2], այդ թվում 3.000 հույն թեթև հետևակային) և նրա կազմում Էվմենես II-ի գլխավորությամբ գործող Պերգամոսի թագավորության (մոտ 31.000, որից ուղիղ 10.000 հեծյալ, 16 փիղ) միացյալ բանակը շարժվեց Անտիոքոս III Մեծի ընդհանուր ղեկավարությամբ քաղաքի մոտ տեղավորված Սելևկյանների (75.000, այդ թվում 16.000 հոպլիտ, 12.000 հեծյալ, 4.000 գալլ, 2.700 հելլեն վարձկան, պարթևներ, մոտ 400 արաբ 200 ուղտերով, ինչպես նաև 54 փիղ և մոտ 100 մանգաղակիր մարտակառք) ու նրա կազմում Միհրդատ II-ի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (մոտ 5.000), Պտղոմեոսի գլխավորած Կոմագենեի (մոտ 2.000), ինչպես նաև Կապադովկիայի (2.000) թագավորությունների միացյալ բանակի դեմ: Մանր ընդհարումներից հետո հակամարտող բանակները ճամբարեցին, որից հետո մի քանի օր շարունակ ճամբարներից դուրս եկան և մարտակարգ ընդունեցին, սակայն, քանի որ կողմերից ոչ մեկը չէր ցանկանում զիջել իր գրաված բարենպաստ դիրքերը, ընդհարումը հետաձգվեց: Ի վերջո, դեկտեմբերի 21-ին կողմերը մասնակի դիրքային զիջումներ իրականացրին, որից հետո ընդհարումը դարձավ անխուսափելի: Դեկտեմբերի 22-ի վաղ առավոտյան կողմերը դուրս եկան ճամբարներից և պատրաստվեցին մարտի:

Հռոմեական հանրապետության բանակը ընդունեց հետևյալ մարտակարգը: Ձախ թևում տեղավորվեցին Հռոմեական հանրապետության լեգեոնները՝ իրենցից ձախ ունենալով հեծելազորը, որի դասավորությունը հասնում էր մինչև մոտակա գետը: Կենտրոնում տեղաբաշխվեց Պերգամոսի թագավորության, հելլենական և մնացած դաշնակից հետևակը, իսկ աջ թևում՝ հեծելազորի հիմնական մասը: Փղերը տեղավորվեցին միացյալ բանակի թիկունքում: Սելևկյանների թագավորության բանակը ընդունեց հետևյալ մարտակարգը: Առաջին շարքի կենտրոնում տեղավորվեց 10 ջոկատների բաժանված հոպլիտների ֆալանգը, որը ճակատով քիչ տարածություն էր զբաղեցնում և ուներ մեծ խորություն: Որպես օժանդակություն ֆալանգին՝ վերջինիս ջոկատների միջև ընկած տարածքում տեղավորվեցին 22, իսկ նրանց թիկունքում՝ 32 փղեր: Ֆալանգը թևերից պաշտպանում էր վահանակիրների հատուկ ջոկատը, իսկ նրանից ձախ տեղավորվեց գալլերի, Կապադովկիայի թագավորության և մնացած հետևակը: Սրանցից ավելի ձախ՝ ձախ թևի առաջին շարքում, տեղադրվեցին մարտակառքերը, իսկ նրանցից հետ՝ ուղտերի վրա տեղավորված նետաձիգները: Սելևկյանների, Հայկական, գալլական և պարթևական ծանր հեծելազորի հիմնական մասը տեղավորվեց երկրորդ շարքի աջ թևում, սակայն նրա որոշ մասը թողնվեց նաև ձախ թևի երկրորդ շարքում: Երրորդ շարքի կենտրոնում տեղավորվեց թեթև հեծելազորը՝ թևերում ունենալով թեթև հետևակ:

I փուլ – Սելևկյանների թագավորության բանակի ձախ թևի մանգաղակիր մարտակառքերը հարձակվեցին հակառակորդի վրա, սակայն ցրված շարքերով

[1] Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», գիրք 37, գլուխ 37-44; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 30-36; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 31, գլուխ 8; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 2, գլուխ 8; Զոնորաս «Պատմություն»; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 4, գլուխ 4; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 2, 11, 12; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 17a:

[2] Այսուհետև Հռոմեական հանրապետության, իսկ հետո արդեն Հռոմեական կայսրության բանակի մասին խոսվելիս կնշվի մեկ թիվ, որի մեջ ես միավորել եմ բուն Հռոմի բանակը և նրա դաշնակիցներին, որոնք տարբեր ժամանակաշրջաններում կազմել են արշավի ելած հռոմեական բանակի մոտ կեսը: Սա հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ սովորաբար հիմք է ընդունվում հունահռոմեական պատմիչների՝ հռոմեական բանակի մասին ի սկզբանե փոքրացրած տվյալները, որոնք սակայն վերաբերվում են միայն բուն Հռոմի բանակին և աղավաղում են մարտերին մասնակցած Հռոմի բանակի իրական թվաքանակը: Կոնկրետ այս ճակատամարտի պարագայում ուսումնասիրողների մեծամասնությունը համակարծիք է, որ հռոմեական բանակը դաշնակից ուժերի հետ միասին կազմել է մոտ 70.000 ռազմիկ: Խնդրի հիանալի և սպառիչ վերլուծությունը տես այստեղ՝ Шкрабко Д. “Битва при Магнесии (190 г. Д.н.э.)”http: //www.xlegio.ru/ancient-armies/ancient-warfare/battle-of-magnesia/)”: Կիսելով հեղինակի տեսակետը՝ ավելացնենք նաև, որ մ.թ.ա. II դարի սկզբում Հռոմեական հանրապետության բանակն իր կազմում ուներ մոտավորապես 200.000 ռազմիկ, իսկ արդեն դարի վերջում այս թիվ սկսեց մոտենալ 300.000-ի:

կենտրոնից այս ուղղությամբ շարժված հակառակորդի թեթև հետևակը միահամուռ նետաձգությամբ և տեգահարությամբ կարողացավ լուրջ վնաս հասցնել մարտակառքերի ձիերին ու հետ մղել նրանց: Արդյունքում՝ մարտակառքերի մի մասը կորսվեց, իսկ մնացածը, հետ նահանջելով, մտավ ուղտերի մեջ և վնասելով ու քերծելով վերջիններիս, վախեցրեց և փախուստի մատնեց նաև նրանց: Այնուհետև փախուստը շարունակող ողջ այս խուճապահար և անկանոն զանգվածը մտավ ձախ թևի երկրորդ շարքի ծանր հեծելազորի մեջ: Ի վերջո, մարտակառքերը և ուղտերը, շարունակելով փախուստը, ցրվելով ու իրենց հետ տանելով նաև ձախ թևի թեթև հեծելազորին և հետևակին, անջատվեցին ծանր հեծելազորից՝ Արդյունքում, սակայն, վերջիններիս ամբողջովին թողնելով առանց թեթև հետևակի ու հեծելազորի աջակցության:

II փուլ – Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Հռոմեական հանրապետության բանակի աջ թևի հեծելազորը անցավ վճռական հարձակման և, օգտագործելով թեթև ու ծանր զորատեսակների համակցված հարվածը, ծանր պարտության մատնեց Սելևկյանների թագավորության բանակի երկրորդ շարքի ծանր հեծելազորին, որը, զրկված լինելով թեթև հետևակի ու հեծելազորի աջակցությունից և չկարողանալով արդյունավետ միասնական գործողություն իրականացնել, ծանր կորուստներ կրեց: Այս ընթացքում, սակայն, Սելևկյանների թագավորության բանակի աջ թևի ծանր հեծելազորը Անտիոքոս III Մեծի անձնական ղեկավարությամբ իր հերթին հարձակման անցավ և հզոր հարվածով փախուստի մատնեց լեգեոնների առաջին շարքին: Դրանից հետո շարունակելով հարձակումը՝ վերջինիս մի մասը փախուստի մատնեց դաշնակից հեծելազորին, իսկ մյուսը հարձակվեց լեգեոնների երկրորդ և երրորդ շարքերի վրա:

III փուլ – Սելևկյանների թագավորության բանակի աջ թևի ողջ հեծելազորը հարվածը կենտրոնացրեց լեգեոնների վրա՝ ի վերջո պարտության և փախուստի մատնելով նաև նրանց ու հետապնդելով մինչև վերջիններիս ճամբար: Արդեն ճամբարի մոտ, սակայն, օգնություն ստանալով ճամբարը պահպանող ուժերից, հակառակորդի ռազմիկները դժվարությամբ կանգ առան և դիմադրություն կազմակերպեցին: Դրան ի պատասխան՝ Անտիոքոս III Մեծի հեծելազորի մի մասը շարունակեց մարտը, իսկ մյուս մասը թիկունքից շրջանցեց ճամբարը և, ներս խուժելով չպաշտպանվող դարպասներից, թալան սկսեց՝ փախուստի մատնելով ճամբարում գտնվող գումակայիններին:

IV փուլ – Հռոմեական հանրապետության բանակի առաջխաղացած կենտրոնը և աջ թևի հեծելազորը, փախուստի մատնելով օժանդակ ուժերին, բոլոր կողմերից շրջապատեցին թևերից անպաշտպան մնացած Սելևկյանների թագավորության բանակի ֆալանգը ու առան այն նետերի և տեգերի հուժկու հարվածների տակ: Շարքերը խտացրած և շրջանաձև պաշտպանություն անցած ֆալանգը համառ դիմադրություն ցույց տվեց ու սկսեց աստիճանաբար նահանջել դեպի սեփական ճամբար, սակայն իրենց շարքերում գտնվող և հակառակորդի հարվածներից կատաղած փղերը ի վերջո դուրս եկան կառավարումից ու սկսեցին տրորել յուրայիններին: Արդյունքում՝ ֆալանգի շարքերն ի վերջո խախտվեցին և այն գլխովին ջախջախվեց:

V փուլ – Հետապնդելով Սելևկյանների թագավորության բանակի մնացորդներին՝ Հռոմեական հանրապետության բանակը գրավեց վերջինիս ճամբարը: Այս ընթացքում Անտիոքոս III Մեծի գլխավորած հեծելազորը վերադարձավ մարտադաշտ, սակայն ոչինչ փոխել արդեն հնարավոր չէր:

VI փուլ – Հռոմեական հանրապետության բանակը սկսեց հետապնդել Սելևկյանների թագավորության բանակի փախչող մնացորդներին, իսկ Անտիոքոս III Մեծն էլ իր հեծելազորի մնացորդներով միայն դժվարությամբ նահանջեց ***Սարդես***:

Ընդհանուր շարքից դուրս եկած 64.000 զինվորից, որից 11.000 գերի, հայերը կորցրին մոտ 3.000 զինվոր, թշնամին կորցրեց մոտ 10.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտն իր հետ հսկայական փոփոխություններ բերեց, երբ, դրա արդյունքում ծանր հարված ստացած Սելևկյանների թագավորությունը միանգամից թուլացավ: Արդյունքում՝ սկիզբ առան բանակցություններ և մ.թ.ա. 187 թվականին կնքվեց Ապամեայի հաշտության համաձայնագիրը: Համաձայն վերջինիս՝ Սելևկյանների թագավորությունը հրաժարվեց Հունաստանում և Փոքր Ասիայում գտնվող գործնականում իր բոլոր տիրույթներից, որոնք հիմնականում բաժին հասան Հռոմեական հանրապետության ազդեցության տակ գտնվող Պերգամոսի թագավորությանը, իսկ Հռոդոսի հանրապետությանն էլ անցան նաև Կեֆալոնիա և Զակինաֆ կղզիները: Իրենց հերթին, Փոքր Ասիայում Սելևկյաններից թագավորության ազդեցությունից ազատվեց Կապադովկիայի թագավորությունը, մեծապես իրենց դիրքերն ամրապնդեցին Պերգամոսի, Պոնտոսի, Պաֆլագոնիայի ու Բյութանիայի թագավորությունները, Գալաթական տետրարխությունը, ինչպես նաև տարածաշրջանի հելլենական քաղաք-պետությունները: Այս առումով հետաքրքիր է նշել, որ, չնայած սկզբնական փայլի պակասին, արդյունքում փոքրասիական պետական միավորներից ամենամեծ հզորությանը ի վերջո հասավ հենց Պոնտոսի թագավորությունը, որը մի կողմից ամենահեռուն էր տեղակայված Հռոմեական հանրապետությունից, իսկ մյուս կողմից էլ թիկունքում ուներ տարածքներ, որոնք իրենցից վարձկանների հարմար շուկա էին ներկայացնում:

Գլուխ 26
Արտաշես I-ը և Մեծ Հայքի թագավորությունը նոր պայմաններում

Վերջին իրադարձությունների հետ կապված փոփոխություններ եղան նաև Հայաստանում, երբ ճակատամարտից անմիջապես հետո Արտաշեսի I-ի գլխավորությամբ Հայաստանում վերջնական անկախություն ձեռք բերեցին Հայաստանի 8 նահանգ, ինչպես նաև Աղձնիքի, Ծոփքի, Տայքի արևելյան ու Վասպուրականի արևմտյան մասերը ընդգրկող Մեծ Հայքի թագավորությունը, Միհրդատ II-ի գլխավորությամբ Փոքր Հայք նահանգը և Բարձր Հայք նահանգի մեծագույն մասը (բացառությամբ Մուզուր գավառի) ընդգրկող Փոքր Հայքի թագավորությունը, Զարեհի գլխավորությամբ Ծոփք նահանգի գերակշիռ մասը (բացառությամբ Խորձյան, Հաշտեանք, Գավրենե և Կոմագենե գավառների), Աղձնիքի արևմուտքը, Հայոց Միջագետքի արևելքը ու Բարձր Հայքի Մուզուր գավառը ընդգրկող Ծոփքի թագավորությունը, Պտղոմեոսի գլխավորությամբ Կոմագենե, Գավրենե գավառներն և Հայոց Միջագետքի արևմուտքը ընդգրկող Կոմագենեի թագավորությունը, ինչպես նաև Կիլիկիա նահանգը ընդգրկող Կիլիկիայի ծովահենական իշխանությունը, որը թեև ձևականորեն ենթարկվում էր Սելևկյանների թագավորությանը, սակայն փաստացի անկախ էր ու առաջիկա տասնամյակներում դարձավ ծովահենության ահեղ կենտրոն[1]:

Սելևկյանների թագավորության ստացած ծանր հարվածը, ինչպես արդեն ասվեց, Մեծ Հայքի թագավորությանը հնարավորություն ընձեռեց ոտքի կանգնել և այս պայմաններում Անտիոքոս III Մեծը, հայերի դեմ պայքարելու համար չունենալով որևէ այլ հնարավորություն, բավարարվեց ընդամենը միայն Հայոց թագավորության ծայրամասային շրջաններում գոյություն ունեցող ուժերին ոտքի հանելով: Նույն այս ժամանակ Արտաշես I-ը զբաղված էր իր թագավորության արևելյան սահմաններին ծագած խնդիրներին լուծում տալով և սելևկյանների գահակալը արդյունքում իրոք

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 20; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 24:

որոշակի հաջողություն այնուհանդերձ արձանագրեց: Մեծ Հայքի թագավորության դեմ պայքարում սելևկյան գահակալի ձեռքին գործիք հանդիսացան կատաոնները, մոսինոյկները և խալյուբները:

Վայրենի և կիսաքոչվոր կատաոնները բնակվում էին Կապադովկիայի արևելյան շրջաններում: Իրենց հերթին, վայրենի և կիսաքոչվոր մոսինոյկները Արիական Եռադաշինքի ժամանակներում հաստատվել էին Փոքր Հայքի ծովափնյա շրջաններում, երբ, որպես կանոն, վարում էին խաղաղ գոյակցություն, սակայն այս անգամ վերջիններս ենթարկվեցին Սելևկյանների թագավորություն դրդմանը: Եվ վերջապես խալյուբները, որ բնակվում էին Գուգարքից հյուսիս՝ Սև ծովի ափերին, ևս ենթարկվեցին Սելևկյանների թագավորություն դրդմանը ու վերջինիս բանակի և կատաոնների հարավ-արևմուտքից կազմակերպած հարձակման հետ միաժամանակ մոսինոյկների հետ միասին հյուսիսից հարձակվեցին Մեծ Հայքի թագավորության Բարձր Հայք ու Տայք նահանգների վրա:

Արդյունքում՝ մ.թ.ա. 189 թվականի սկզբին կատաոնները (մոտ 10.000) Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմագենեի թագավորությունների միացյալ բանակից (մոտ 10.000) գրավեցին Եկեղյաց, Մուզուր, Դարանաղի, Աղվյուն ու Գավրենե գավառները (վերջին երկուսը՝ Անդրեփրատյան Ծոփք, Եփրատի Մելաս, Կառամինիոն վտակների ու նրանց ենթավտակների հովիտ), ինչից հետո գրավված տարածքներում ստեղծվեց Կատաոնների իշխանությունը[1]: Իրենց հերթին մոսինոյկները (մոտ 3.000) և խալյուբները (մոտ 3.000) Մեծ Հայքի ու Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակից (մոտ 7.000) գրավեցին Արսյաց Փոր, Սպեր, Կարին և Դերջան գավառները, երբ գրավված տարածքներում ստեղծվեց Մոսինոյկների ու Խալյուբների իշխանությունը[2]: Նույն այս ժամանակ, սակայն, նաև Արտաշես Ի-ի և սպարապետ, Հարավային զորավարության հրամանատար Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000) Ատրպատականի թագավորության բանակից (մոտ 30.000) ազատագրեց Փայտակարանը, Վասպուրականի արևելքը, Պարսկահայքը և Տրպատունիքը[3]: Այս ժամանակաշրջանում, սակայն, դրությունն իր հերթին բարդացավ Մեծ տափաստանի արևմտյան հատվածում:

Գլուխ 27
Ալանական թագավորության հաստատումը Մեծ տափաստանի արևմուտքում

Բանն այն է, որ, Մեծ տափաստանի արևելքում մինչ այդ համառորեն դիմադրելով Հուննուական տերությանը, սակայն վերջին հաշվով մատնվելով անհաջողության, մ.թ.ա. III դարի վերջին Քուշանական և Մասագետական թագավորությունները աստիճանաբար սկսել էին հետ քաշվել դեպի արևմուտք: Արդյունքում, երբ հարաբերությունները նախկին դաշնակիցների միջև, ըստ էության, արդեն սրվել էին, Քուշանական թագավորության քոչվոր ուժերը հաստատվեցին Մասագետական թագավորության տարածքում՝ գերիշխանության հասնելով Մեծ տափաստանի կենտրոնական մասում մինչ այդ գերիշխող մասագետների և սակերի նկատմամբ, իսկ Քուշանական թագավորությանն արդեն ենթակա Մասագետների արքայական հորդան էլ իր հերթին հաստատվեց Կասպից ծովի արևելյան ափերին՝ իր գոյությունը առժամանակ շարունակելով արդեն նոր այս տարածքներում: Մեծ տափաստանի Մեծ ակտիվությունը, սակայն, իր օրինաչափություններն ուներ և Քուշանական թագավորությունը չէր կարող դուրս մնալ դրանից: Արդյունքում՝ կոնկրետ ռազմաքաղաքական մակարդակում երևույթն իր արտահայտությունը գտավ Քուշանական թագավորության աննախադեպ ակտիվությունում: Այս կապակցությամբ Մեծ տափաստանը հարավից եզերող

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5:
[2] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 53; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5:

երկրամասերի օգտին եղավ, սակայն, հեռատես այն որոշումը, որն իր ժամանակին ընդունել էր Անտիոքոս III Մեծը:

Արդեն ասվեց, որ մ.թ.ա. 209-205 թվականներին, դեռևս սեփական Արևելյան արշավանքի ժամանակ Անտիոքոս III Մեծը ի վերջո ականջ կախեց Էվտիդեմոս I-ի զգուշացումներին և արդյունքում Քուշանական թագավորության բանակն ու նրանց ենթարկված մասագետներն ու սակերն առժամանակ սահմանափակեցին իրենց առաջխաղացումը Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերի ուղղությամբ: Նույն այդ ճնշումը, սակայն, սահմանափակված Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերի ուղղությամբ, պահպանվեց և արդյունքում ավելի ուժեղ տեսքով հանդես եկավ Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերի ուղղությամբ, որտեղ գտնվում էին սարմատները, ընդ որում հենց նույն այս ժամանակ Մեծ տափաստանի արևմուտքում չափազանց թուլացել էին նաև սկյութները:

Այս ամենի հետևանքով մ.թ.ա. արդեն 180-ական թվականների սկզբներին[1] քոչվոր սարմատների մեծաթիվ և հզոր հորդան, խուսափելով Քուշանական թագավորության հետ հարևանությունից, անցավ Վոլգան ու գլխովին ջախջախեց սկյութներին, որոնց փոքր մասը նահանջեց դեպի արևմուտք, հետագայում ընդունելով սարմատների գերիշխանությունը, իսկ հիմնական մասն էլ ձուլվեց սարմատների մեջ և ավելի ուժեղացրեց վերջիններիս: Սրա արդյունքն եղավ այն, որ Դանուբից Վոլգա ձգվող Մերձսևածովյան և Նախակովկասյան լայնարձակ տափաստաններում ստեղծվեց Ալանական հզոր թագավորությունը, իսկ Սկյութական թագավորության մնացորդները կուչ եկան Մերձսևածովյան տափաստանի արևմտյան փոքր հատվածում:

Գլուխ 28
Ալանների և սարմատների հիմնախնդիրը

Այս առումով ամենից առաջ նշենք, որ, ըստ տարածված տեսակետի, որն, ինչպես կտեսնենք ստորև, այնքան էլ հիմնավոր չէ, ալաններին սկզբնաղբյուրներն առաջին անգամ ֆիքսում են I դարում: Խոսքն ամենից առաջ վերաբերում է հունահռոմեական աղբյուրներին[2], թեև նաև հետաքրքիր է, որ չինական աղբյուրներն ևս ալաններին առաջին անգամ հիշատակում են հենց նույն ժամանակ՝ 25 թվականին[3]: Վերոգրյալի հիման վրա էլ հենց, առաջնորդվելով ավանդական եվրոցենտրիզմով, արվել է հետևություն, որ Մովսես Խորենացու տեղեկություններն ալանների մասին, որոնք վերաբերում են մ.թ.ա. II դարի առաջին կեսերին, չեն համապատասխանում իրականությանը, իսկ Պատմահայրն էլ, ըստ էության, տեղ է տվել «վեպերին և առասպելներին»: Այս կապակցությամբ պետք է նշել, սակայն, որ, այո, Արտաշեսի և Սաթենիկի հայտնի պատմությունը շարադրելիս Պատմահայրն իրոք մեզ է փոխանցել մեր մինչքրիստոնեական մշակույթի արժեքավոր տարրերից մեկը, բայց միայն այս ամենի հիման վրա համարել Մովսես Խորենացու տեղեկությունները, իսկ արդյունքում նաև՝ Հայ-Ալանական պատերազմը, «հնարովի և վիպական», ոչ մի կերպ ճիշտ համարվել չի կարող: Իր հերթին, դատելով ըստ ամենայնի, Ալանական թագավորությունն իր անվանումը ստացավ սարմատների արքայական ցեղ հանդիսացող ալանների կամ, ինչպես մեկ այլ անունով է այս տոհմը հայտնի, Ռոքսալանների անունից: Այս առումով հատկանշական է, որ «ռոքսալան» տերմինը հանդիպում է մ.թ.ա. արդեն 110 թվականի իրադարձությունների հետ կապված:

Մասնագիտական գրականության մեջ «ռոքսալան» անվանման հետ կապված իր

---

[1] Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 25, գլուխ 1: Հիշատակված հեղինակը սարմատների արքային հիշատակում է մ.թ.ա. 179 թվականի իրադարձությունների կապակցությամբ, սակայն հաղորդման կոնտեքստն այնպիսին է, որ, ակնհայտ է՝ այս արքան ու իր ժողովուրդը Մերձսևածովյան տափաստաններում էին գտնվում արդեն առնվազն կես տասնամյակ:

[2] Տես՝ Луций Анней Сенека. Фиест. Перевод С. А. Ошерова // Луций Анней Сенека. Трагедии. М., 1983, стр. 202-232:

[3] Տես՝ Бичурин [Иакинф] Н. Я. Собрание сведений о народах, обитавших в Средней Азии в древние времена. М-Л. АН СССР, Институт этнографии им. Миклухо-Маклая. 1950, стр. 229.

հերթին արտահայտվել են տարբեր կարծիքներ, սակայն հարցը մինչև այժմ էլ հեռու է վերջնականապես լուծված լինելու վիճակից: Այսպես, Վ. Ի. Աբաևն առաջ է քաշում տեսակետ, ըստ որի «ռոքսալան» տերմինն առաջացել է իրանական (արիական) «roxs-alan» բառերից և թարգմանաբար նշանակում է «լուսավոր ալան», ընդ որում «roxs»-ն առաջացել է հին իրանական «rauxšna» բառից, իսկ «alan»-ն էլ՝ «aryana» բառից[1]: Այս տեսակետի հետ համաձայն են նաև Մ. Ֆասմերն ու Վ. Ն. Տոպորովը[2]: Օ. Ն. Տրուբաչևը, սակայն, ժխտում է այս տեսակետը, թեև ինքն էլ առաջարկում է մոտ տեսակետ: Ըստ նրա «ruksą-» տերմինը հին հնդկական է և ունի նույն «լուսավոր» իմաստը: Այս ամենով հանդերձ իմ կողմից առաջարկվում է մեկ այլ լուծում, երբ «ռոքսալան» բառը կազմված է երկու տարրերից՝ իր արմատներով դեպի լատիներենը գնացող «rex» մասից, որը նշանակում է «արքա», ինչպես նաև «ալան» էթնոնիմից, երբ երկու հասկացություններն իրար հետ միասին նշանակում են «արքայական ալաններ», իսկ ավելի կոնկրետ՝ արտահայտությունը մատնանշում է սարմատների արքայական ցեղի անվանումն և (կամ) ցեղանվան վերածված տիտղոսը:

Արդյունքում՝ կարելի է ամենից առաջ ասել, որ հիմնազուրկ են այն պնդումները, որոնց համաձայն ալանները պատմության մեջ առաջին անգամ ֆիքսվում են I դարում, քանի որ, ինչպես տեսանք, ռոքսալանները հայտնի են դեռևս առնվազն մ.թ.ա. II դարի վերջից: Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը նշենք, որ իրականում թյուրիմացությունն առաջացել է այն բանի ազդեցության ներքո, որ երբեք և ոչ մի ուսումնասիրողի կողմից ռոքսալանները չեն դիտարկվել որպես ընդամենը միայն արքայական մի տոհմ, որն իշխանություն է ունեցել սարմատների նկատմամբ ու ղեկավարել է Ալանական թագավորությունը: Միաժամանակ հարկ է նաև ավելացնել, որ միայն ռոքսալաններով ևս չեն կարող սպառված համարվել հիշատակությունները ալանների մասին, քանի որ, ինչպես արդեն ասվեց, ռոքսալանները հանդիսանում էին Ալանական հզոր թագավորությունում իշխող արքայական ընդամենը այնուհանդերձ միայն մի տոհմ, որի հպատակների զգալի մասն էլ կազմված էր սարմատներից, որոնք իրենց հերթին հիշատակվում են մ.թ.ա. արդեն II դարի սկզբից: Եվ այսպես, ինչպես ցույց տրվեց վերևում, ալանների կողմից ղեկավարվող սարմատները Նախակովկասյան և Մերձսևծովյան տափաստաններում հայտնվում են մ.թ.ա. արդեն 190-180 թվականներին, իսկ Պատմահայր Մովսես Խորենացուն էլ պատկանում է ալանների պատմության ռազմաքաղաքական դրվագներից ամենաառաջինի ուղղակի ամրագրման պատիվը, ընդ որում դա դեռ այն ժամանակ, երբ ալանների գլխավորած սարմատները դեռևս ակտիվ շփում չէին հաստատել հունահռոմեական աշխարհի հետ և իրենց պատմական ամրագրումը չէին ստացել այս քաղաքակրթության կողմից:

Իրոք, վերևում արդեն նշվեց, որ ալաններին, ի դեմս ռոքսալանների, հունահռոմեական աշխարհը ֆիքսելու էր դրանից միայն ավելի քան կես դար հետո՝ մ.թ.ա. 110 թվականին, իսկ առկա այլ հաղորդումներն էլ նկատի ունեն սարմատներին: Արդյունքում, ինչպես արդեն ասվեց, թեև սարմատները կազմում էին Ալանական թագավորության բնակչության հիմնական մասն և այլ աղբյուրներ սարմատների մասին խոսում են Պատմահորից առաջ, սակայն հենց ալանների առաջին հիշատակությունը պատկանում է Մովսես Խորենացուն, ի դեմս Արտաշես I-ի թագավորության ժամանակ նկարագրված իրադարձությունների: Այսպիսով՝ կարող ենք ամրագրել, որ Հայ-Ալանական պատերազմն Ալանական թագավորության կողմից վարվող արտաքին-ավարառուական քաղաքականության արդյունքներից մեկն էր: Այս առումով մինչև առաջ անցնելը մի պահ ևս հապաղենք և փորձենք պարզել այս պատերազմի սկզբի թվականը, ընդ որում վերջին հանգամանքի կապակցությամբ միանգամից նշենք, որ իմ կողմից առաջարկվում է մ.թ.ա. 184 թվականը:

---

[1] Абаев В. И. Осетинский язык и фольклор. М-Л.: Академия наук СССР, 1949. т. I. стр. 156; Абаев В. И. Историко-этимологический словарь осетинского языка. Л.: Наука, 1973, т. I. стр. 435-437.

[2] Топоров В. Н. “Прусский язык: Словарь.” - М.: Наука, 1990. т. 5. стр. 186.

Գլուխ 29
Հայ-Ալանական պատերազմը

Բանն այն է, որ Արտաշես Ի-ի ավագ որդի Արտավազդը պետք է ծնված լիներ ամենաուշը մ.թ.ա. 183 թվականին, քանզի նրա կրտսեր եղբայրները պետք է ևս իրենց հերթին գոնե չափահաս լինեին՝ Արտաշես Ի-ի թագավորության վերջին տասնամյակում իրենց ստանձնած պատասխանատու պաշտոնները վարել կարողանալու համար: Այսինքն, եթե համարենք, որ եղբայրներից ամենափոքրը ստանձնել է իր պաշտոնը մոտ 18 տարեկան հասակում, ապա գալիս ենք հետևության, որ Արտավազդը մ.թ.ա. 160 թվականին, երբ հաջորդեց հորը, 23 տարեկան էր: Այս ամենի արդյունքում կարելի է գալ հետևության, որ Հայ-Ալանական պատերազմի ընթացքում Ալանական թագավորության բանակի արշավանքն ու Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունը տեղի են ունեցել մ.թ.ա. 184 թվականին, իսկ Արտավազդը ծնվել է մ.թ.ա. 183 թվականին:

Հաջորդ հարցը, որ, կապված Հայ-Ալանական պատերազմի հետ, անհրաժեշտ է քննարկել, վերաբերում է այդ պատերազմի ընթացքում Կուր գետի ափերին տեղի ունեցած վճռական և մեծ ճակատամարտին, ինչն ևս լիովին անտեսվել է մեր պատմագիտության կողմից, այն դեպքում, երբ այս ու հետագա իրադարձությունները, որոնք հստակ արտահայտված են Մովսես Խորենացու մոտ, ինչպես նաև վրաց աղբյուրներում, ամբողջացնում են Հայ-Ալանական պատերազմը, ինչպես նաև տալիս են նրա ավարտի լիակատար պատկերը: Դժբախտաբար հիշատակված ճակատամարտը մեծ հաշվով չի ընդունվել խորհրդահայ պատմագիտության կողմից և հիմնականում դիտարկվել է «վիպական» մակարդակում: Այս առումով հետաքրքիր է, որ, եթե Մովսես Խորենացու մոտ շեշտադրումներն իրոք դրված են ամենից առաջ գեղեցիկ, բայց այնուհանդերձ ոչ ռազմական մանրամասների վրա, ապա վրաց աղբյուրներն ինչպես այս ճակատամարտը, այնպես էլ դրան հաջորդող իրադարձությունները դիտարկում են ամենից առաջ հենց ռազմական հարթության մեջ:

Վերոգրյալի կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ իր ստեղծման իսկ օրից Իբերիայի թագավորությունը հավակնություններ ուներ պատմական Հայաստանի անբաժանելի մասը հանդիսացող Մեծ Հայքի Գուգարք նահանգի նկատմամբ: Այս հավակնություններն իրենց արմատներով գնում էին դեռևս մ.թ.ա. 300 թվականը, երբ Պոնտոսի թագավորության հարձակումը Գուգարքի ուղղությամբ հետ մղվեց Մեծ Հայքի և Իբերիայի թագավորությունների միացյալ ուժերով: Իր հերթին, ինչպես արդեն նշվեց, Երվանդ III-ի օրոք Իբերիայի թագավորությունը փորձ կատարեց բացահայտ կերպով գրավել բուն հայկական այդ նահանգը, սակայն որևէ հաջողության չհասավ: Իբերիայի թագավորության հերթական արքա Միհրան Ի-ին (մ.թ.ա. 210-160), սակայն, հաջողության նոր հույսեր ներշնչեց իր թագավորության հյուսիսում հայտնված Ալանական թագավորության ռազմունակ սարմատների պարագան, երբ, արագորեն լեզու գտնելով վերջիններիս հետ, Իբերիայի թագավորության տիրակալը ստեղծեց յուրօրինակ մի համադաշնություն և այն ուղղեց Մեծ Հայքի թագավորության դեմ: Մինչև առաջ անցնելը, սակայն, մի պահ ևս հապաղենք և փորձ կատարենք հասկանալ, թե ո՞վ էր Իբերիայի թագավորության արքան քննարկվող դեպքերի ժամանակ:

Ըստ «Քարթլիս Ցխովրեբա»-ի (Լեոնտիոս Մրովելի), որը վրաց արքաների ցանկերը փոխանցում է զգալի խառնաշփոթություններով և անճշտություններով, քննարկվող ժամանակաշրջանում Իբերիայի թագավորությունում կային միաժամանակ կառավարող երկու եղբայր-արքաներ՝ Արզոկն ու Արմազելը: Ներկայումս, սակայն, վրացագիտության մեջ ընդունված է, որ այս ժամանակ Իբերիայի թագավորությունում իշխել է Միհրան Ի-ը[1]: Այս կապակցությամբ կարծում եմ, որ խնդրի բանալին հետևյալում է:

[1] Մասնավորապես տես՝ Toumanoff, Cyril (1963), Studies in Christian Caucasian History, p. 317. Georgetown University Press; Rapp, Stephen H. (2003), Studies In Medieval Georgian Historiography: Early Texts And Eurasian Contexts, p. 281 և այլն:

Բանն այն է, որ, ինչպես արդեն նշվեց վերևում, Մովսես Խորենացու աշխատության 2-րդ գրքի ժամանակագրական համակարգը պարունակում է մի լրջագույն սխալ, որի հետևանքով Պատմահայրը Երվանդ III-ին, Արտաշես I-ին և Սմբատ Քաջ Բագրատունուն մ.թ.ա. 212-160 թվականների ժամանակահատվածի փոխարեն սխալմամբ տեղափոխել է ու տեղակայել I դարի վերջում և II դարի սկզբում: Հարկ եմ համարում կրկնել, որ, ըստ իս, Պատմահոր թույլ տված սխալի հիմքում ընկել է այն հանգամանքը, որ վերջինս մեկ միասնական Արտաշես I-ի փոխարեն ընդունել է երկու Արտաշեսների գոյությունը, որոնցից մեկը, ի դեմս Արշակ I-ի որդի Արտաշեսի, իր տեղում է՝ մ.թ.ա. 212-160 թվականների ժամանակահատվածում, իսկ մյուսը, որն իրականում գոյություն չի ունեցել, ի դեմս Սանատրուկի որդի Արտաշեսի, Պատմահոր կողմից տեղակայվել է I դարի վերջում և II դարի սկզբում: Այս մասին վերևում արդեն խոսվեց, սակայն, մի պահ վերհիշելով ասվածը, արդյունքում հարցը դիտարկենք մեկ այլ տեսանկյունից: Եվ այսպես, Արշակ I-ի որդի Արտաշեսի մասին Մովսես Խորենացին, ինչպես արդեն ասվեց, խոսում է շատ անորոշ՝ իրական Արտաշեսի հիմնական գործունեությունը կապելով Սանատրուկի որդի Արտաշեսի հետ, այսինքն՝ սխալվելով արդեն երկրորդ անգամ[1]:

Արդյունքում՝ վրաց Պատմահայր Լեոնտիոս Մրովելին, իր հերթին սեփական ժամանակագրական համակարգը կապելով Մովսես Խորենացու 2-րդ գրքում առաջարկված ժամանակագրական համակարգի հետ և հետևելով վերջինիս, ալանական հարձակման հետ կապված իրադարձությունները տեղափոխել է I դարի վերջ ու II դարի սկիզբ, բայց միաժամանակ նաև, ձեռքի տակ ունենալով Իբերիայի թագավորության արքաների սեփական մի գահացանկ, անխուսափելի կերպով, որպես դեպքերին ժամանակակից արքաներ, խոսել է Արզոկի և Արմազելի մասին, որոնց թագավորության տարիներն իրոք մոտավորապես համապատասխանում են հենց I դարի վերջին ու II դարի սկզբին: Այս առումով խիստ հատկանշական է, որ Մովսես Խորենացին որպես իրական՝ Արշակ I-ի որդի Արտաշեսի ժամանակակից, այնուհանդերձ հիշատակում է վերջինիս ժամանակակից, վրաց տիրակալ Միհրանին, կոչելով վերջինիս «Միհրդատ». «*Բայց իր Արտաշամա դստերն Արտաշեսը կնության է տալիս ոմն Միհրդատի՝ Վրաց մեծ բդեշխին, որը Դարեհի նախարար Միհրդատի զավակներից էր, որին Ալեքսանդրը նշանակել էր իվերիացիների գերիների վրա, ինչպես առաջ պատմեցինք, և նրան է հավատում հյուսիսային լեռների ու Պոնտոս ծովի կուսակալությունը*»[2]: Արդյունքում՝ մենք ունենք մի իրավիճակ, երբ, փոխանակ հայտնվի Փառնավազյանների գահատոհմի երրորդ գահակալ, Փառնավազին հաջորդած նրա տղա Սաուրմագ I-ին (մ.թ.ա. 240-210) հաջորդած վերջինիս խորթ որդի Միհրան I-ի մասին, ժամանակագրական անախրոնիզմով խոսվում է վերջինիցս գրեթե երեք հարյուրամյակ ավելի ուշ ապրած Արզոկի և Արմազելի մասին: Եվ այսպես, մ.թ.ա. 184 թվականին սկիզբ առավ Հայ-Ալանական պատերազմ (մ.թ.ա. 184):

Մ.թ.ա. 184 թվականի գարնանն Իբերիայի թագավորության դրդմամբ Ալանաց դուռ լեռնանցքով առաջխաղացած Բազուկի և նրա եղբայր Անբազուկի գլխավորած Ալանական թագավորության, ինչպես նաև Միհրան I-ի գլխավորած Իբերիայի թագավորության միացյալ բանակը դաժանորեն ասպատակեց Գուգարք ու Արարատ նահանգները, որից հետո, նպատակ ունենալով հետ վերադառնալ, անցավ Կուրն և բանակեց Իորի գետի ափին[3]: Այս իրադարձություններին էլ հենց հաջորդեց Կուր գետի ափին տեղի ունեցած վճռական ճակատամարտը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1, Երևան 1977, էջ 129: Այս առումով հարկ է նշել, որ հեղինակն ինքը հղում է անում Մ. Աբեղյանի կարծիքին և սկզբունքորեն համաձայնում է վերջինիս հետ, թեև հետագայում սխալվում է նաև ինքը՝ երկրորդ Արտաշեսին նույնացնելով Տրդատ I-ի հետ:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 38:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 50; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

184 գարուն – ***<u>Կուրի ճ-մ</u>*** (Ուտիք և Աղվանքի Կամբեճան գավառ, Կուր գետի աջ ու ձախ ափերին)[1]

Արտաշես Ի-ի և սպարապետ, Հարավային զորավարության հրամանատար Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 100.000) շարժվեց Բազուկի ու Անբազուկի գլխավորած Ալանական (մոտ 70.000), ինչպես նաև Միհրան Ի-ի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակի դեմ: Մինչև մարտը սկսելը Սմբատն առաջարկեց թշնամուն ազատել գերիներին և ավարով հեռանալ, սակայն Բազուկը վիրավորական տոնով մերժեց Հայոց սպարապետի առաջարկն ու, մարտահրավեր նետելով վերջինիս, իր բանակով գետանցեց Կուրը և կրկին մտավ Հայաստանի տարածք: Հայկական բանակը կեսօրին մոտեցավ թշնամուն և մարտակարգ ընդունեց: Առաջին շարքում տեղավորվեց հետևակը, ընդ որում առաջին շարքի առաջին գիծը զբաղեցրեց ծանր հետևակը, իսկ երկրորդում տեղ գրավեցին նետաձիգները: Երկրորդ շարքում տեղավորվեց Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած հեծելազորը: Ճակատամարտից առաջ Սմբատը մենամարտեց իրեն մարտի հրավիրած Բազուկի հետ, հեծյալ նիզակամարտում միջանցիկ նիզակահարելով սպանեց նրան և, վերցնելով նիզակի վրա, տապալեց ձիուց: Դրանից անմիջապես հետո Հայոց սպարապետը մենամարտեց նաև հարձակման անցած Անբազուկի հետ, որին ևս միջաթափանց խոցեց նիզակով, վերցրեց նիզակի վրա ու տապալեց ձիուց:

I փուլ – Օրվա երկրորդ կեսին թշնամու բանակը անցավ կատաղի հարձակման, սակայն առաջին շարքի առաջին գծում մարտնչող Հայկական ծանր հետևակը ձեռնամարտում, իսկ երկրորդ գծում մարտնչող նետաձիգները՝ աղեղնամարտում, կարողացան կասեցնել թշնամու հեծելազորի հարձակումը, ծանր կորուստներ պատճառել վերջինիս և հետ շպրտել:

II փուլ – Երեկոյան հարձակման անցավ Հայոց այրուձին և, ծանր կորուստներ պատճառելով թշնամու բանակին, շպրտեց նրան գետի մյուս ափը, ընդ որում Արտաշես Ի-ը մենամարտում գերեց ալանների երիտասարդ արքայազնին: Գրեթե անմիջապես էլ, այն բանից հետո, երբ մարտնչող բանակները մի պահ կտրվեցին իրարից և բանակեցին գետի հակադիր ափերին, ալանների արքայադուստր Սաթենիկը փորձեց բանակցել Արտաշես Ի-ի հետ, նպատակ ունենալով համոզել վերջինիս, որ նա ազատ արձակի իր եղբորը, սակայն Արտաշես Ի-ը, հեծնելով իր ձին, արագորեն անցավ գետի մյուս ափն և, գերելով ափին մոտեցած Սաթենիկին, նույնպիսի արագությամբ հասցրեց նրան Հայկական բանակ:

III փուլ – Հայկական բանակը, առաջին շարքում ունենալով արդեն հեծելազորը, անցավ գետն և կրկին հարձակվեց մարտակարգը վերականգնած թշնամու բանակի վրա: Բռնկվեց և մինչև ուշ երեկո շարունակվեց համառ հանդիպակաց մարտ, որի արդյունքում թշնամին ի վերջո ջախջախիչ պարտություն կրեց:

IV փուլ – Հայկական բանակը մի քանի տեղից վիրավոր Սմբատ Քաջ Բագրատունու անձնական ղեկավարությամբ սկսեց թշնամու նահանջող մնացորդների հետապնդումն և անխնա ջարդը, ընդ որում հատկապես ծանր կորուստներ կրեցին իբերների դաշնակիցները՝ փախուստի վայրերին ծանոթ չլինելու պատճառով:

Հայերը կորցրին մոտ 20.000, թշնամին՝ մոտ 60.000 զինվոր:

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 50; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 8; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 42; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

Այսպիսով՝ հայկական բանակը վճռական հաղթանակ տարավ, որից հետո Քաջբերունիների գլխավորած Մեծ Հայքի թագավորության Հյուսիսային զորավարության բանակն և մեսխերն ասպատակեցին Իբերիայի թագավորության տարածքը՝ պաշարողական տեխնիկայի բացակայության պատճառով, սակայն, չկարողանալով գրավել թշնամու քաղաքներն ու ամրոցները[1]: Այս ընթացքում Նոստե գետի մոտ անորոշ ելքով տեղի ունեցավ խոշոր մի ճակատամարտ ևս, որից հետո հայկական կողմը հետ քաշեց ուժերը[2]:

Մ.թ.ա. 184 թվականի ամռանը Իբերիայի թագավորության բանակը, օգտվելով դադարից, ասպատակեց Գուգարքը, Տայքի արևելքն և Աշոցքը[3], ինչին հետևեց հայկական կողմի պատասխան ու ավելի հզոր հակահարվածը: Արդյունքում՝ մ.թ.ա. 184 թվականի ամռան վերջին և աշնանը Մեծ Հայքի թագավորության բանակը Իբերիայի, ինչպես նաև Ալանական թագավորությունների միացյալ բանակից հինգ ամիս պաշարեց Մծխեթը, սակայն ամեն ինչ ի վերջո ավարտվեց հաշտությամբ: Որպես հետևանք, Իբերիայի ու Ալանական թագավորությունների հետ կնքվեց հաշտություն, որն ամրապնդվեց Արտաշես Ի-ի և Սաթենիկի ամուսնությամբ: Ալանական թագավորությունը դադարեցրեց Մեծ Հայքի թագավորության նկատմամբ վարվող թշնամական քաղաքականությունը, իսկ Իբերիայի թագավորությունն էլ կրկին ընդունեց Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը: Սաթենիկի ազգական ալանների մի տոհմ հաստատվեց Մեծ Հայքի թագավորությունում, ստացավ նախարարական աստիճան և կոչվեց Առավեղյան[4]:

Գլուխ 30
Արտաշես Ի-ի տեղական հոգսերը

Ալանական թագավորության հետ կնքված հաշտության դրական արդյունքներից մեկն էլ եղավ այն, որ, ազատվելով հյուսիսում ուժերը շեղող պատերազմական գործողություններից, Մեծ Հայքի թագավորության բանակը կարճ ժամանակ անց շարժվեց դեպի արևմուտք և, ազատագրելով Արսյաց Փոր, Սպեր, Կարին ու Դերջան գավառները մոսինոյկներից և խալյուբներից, միավորեց դրանք Մեծ Հայքի թագավորությանը, իսկ Մոսինոյկների ու Խալյուբների իշխանություններն էլ ոչնչացան[5]: Եվ վերջապես հենց այս ժամանակ էր, որ Մեծ Հայքի ու Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը Պոնտոսի թագավորության բանակից առանց լուրջ մարտերի ազատագրեց Կուտիորան, Կեռասունտն և Տրապիզոնը, ինչպես նաև Խաղկտիքն ու դրանք միացրեց Փոքր Հայքի թագավորությանը, ընդ որում անբարենպաստ արտաքին քաղաքական իրավիճակում հայտնված Պոնտոսի թագավորությունը համակերպվեց այս կորստի հետ[6]:

Մ.թ.ա. մոտ 182 թվականին Պտղոմեոսի գլխավորած Կոմագենեի թագավորության բանակը (մոտ 5.000) ասպատակեց Մելիտեի շրջակայքը, փորձելով այն հետ խլել Կապադովկիայի թագավորությանը ենթակա Կատաոնների իշխանությունից, սակայն արդյունքում, խուսափելով Կապադովկիայի թագավորության առաջխաղացած բանակից (մոտ 30.000), նահանջեց[7]: Իր հերթին, մ.թ.ա. նույն 182 թվականին Մեծ Հայքի, Ծոփքի ու Կոմագենեի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000) Կատաոնների իշխանության բանակից (մոտ 3.000) ազատագրեց Եկեղյաց, Մուզուր, Դարանաղի, Աղվյուն և Գավրենե գավառները: Կատաոնների իշխանությունը ոչնչացավ: Բարձր Հայքի

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:
[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»:
[3] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:
[4] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:
[5] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5:
[6] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 12, գլուխ 3, մաս 28:
[7] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 31, գլուխ 19a:

արևմտյան գավառները միացվեցին Ծոփքի, իսկ Գավրենեն՝ Կոմագանեի թագավորություններին[1]:

Մ.թ.ա. 180 թվականին Փառնակ I-ի (մ.թ.ա. մոտ 185-170) գլխավորած Պոնտոսի (մոտ 20.000) և Միհրդատ II-ի գլխավորած Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ներխուժեց Կապադովկիայի թագավորության ու Գալաթական տետրարխության տարածքներ, սակայն, կորուստներ կրելով թշնամիների մշտական և անակնկալ հարձակումներից, նահանջեց[2]: Դրանից հետո պաշտոնական Հռոմի միջնորդությամբ հաշտություն կնքվեց, ինչի արդյունքում Փառնակ I-ը և Միհրդատ II-ը պարտավորվեցին խոշոր ռազմատուգանք մուծել, ընդ որում, որպես այս հաշտության պայմանների պահպանման երաշխավոր, կողմերն ընտրեցին Արտաշես I-ին՝ ըստ էության ամրագրելով Հայոց արքայի միջազգային բաձր հեղինակությունը: Նույն այս ժամանակ, սակայն, լավ վիճակում չէին գործերը Սելևկյանների մոտ:

Գլուխ 31
Ասորիքյան VI պատերազմը

Հռոմեական հանրապետության դեմ մղված և տանուլ տրված վերջին պատերազմի արդյունքում որոշվել էր, որ Անտիոքոս III Մեծը պետք է հսկայական չափի մի տուգանք վճարի, որի հնարավորությունը, սակայն, արքայական գանձարանն, ըստ էության, չուներ: Արդյունքում, փաստորեն իջնելով հասարակ մի ավազակի մակարդակի, Սելևկյանների թագավորության արքան որոշեց թալանել Պարսքում գտնվող Բելի տաճարը, սակայն մ.թ.ա. 187 թվականի հուլիսի 3-ին տեղի բնակչությունը հենց տաճարում էլ շրջապատեց Անտիոքոս III Մեծին և նրա ուղեկիցներին ու ոչնչացրեց՝ բնականաբար չխնայելով նաև Սելևկյանների թագավորության գործող արքային: Անտիոքոս III Մեծի մահից հետո Սելևկյանների թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Սելևկոս IV-ը (մ.թ.ա. 187-175), որը, սեփական թագավորության մինչ այդ ստացած ծանր հարվածներից հետո, իրեն շատ զգույշ էր պահում՝ հատկապես Հռոմեական հանրապետության հետ հարաբերություններում: Մ.թ.ա. 175 թվականի սեպտեմբերի 3-ին Սելևկոս IV-ը զոհ գնաց դավադրությանը և նրան հաջորդեց իր եղբայր Անտիոքոս IV Եպիփանեսը (մ.թ.ա. 175-164), որը մինչ այդ պատանդի կարգավիճակում գտնվում էր Հռոմում և որին Սելևկոս IV-ն ազատել էր՝ փոխարենը պատանդ հանձնելով իր որդի Դեմետրիոսին: Մ.թ.ա. արդեն 175 թվականի վերջին Անտիոքոս IV Եպիփանեսը վերջնականապես հաստատվեց գահին և պատժեց եղբորը սպանողներին: Դրանից հետո Սելևկյանների թագավորության նոր արքան սեփական թագավորությունն ուժեղացնելու ուղղությամբ մի շարք եռանդուն միջոցառումներ ձեռնարկեց, ընդ որում հատուկ շեշտադրվում էին ինչպես հելլենիզմը, այնպես էլ հելլենիզմի և տեղական քաղաքակրթությունների համատեղ ու խաղաղ գոյակցության հանգամանքը: Արդյունքում, հատկապես այն բանի ֆոնին, որ, հերթական անգամ շեղված Արևմուտքում առաջացած սեփական խնդիրների, ինչպես նաև Մակեդոնական թագավորության դեմ պատերազմի վրա, պաշտոնական Հռոմն Արևելքում նույն այս ժամանակ իրեն բավականին պասիվ էր պահում, Սելևկյանների թագավորությունը բավականին դրական զարգացում ապրեց և ուժեղացավ, թեև Անտիոքոս III Մեծի լավ ժամանակների վիճակին այն այդպես էլ չհասավ:

Մ.թ.ա. 180 թվականի հունվարին դավադրության զոհ դարձավ և թունավորման արդյունքում կյանքից հեռացավ Պտղոմյանների թագավորության արքա Պտղոմեոս V-ը, որից հետո վերջինիս հաջորդեց նրա վեցամյա որդի Պտղոմեոս VI-ը (մ.թ.ա. 180-145): Նոր արքան, կրկին հասկանալի պատճառներով, ի վիճակի չէր կառավարել երկիրը և արդյունքում Պտղոմյանների թագավորության կառավարումն անցավ վերջինիս խնամակալներին: Չափահաս դառնալուց հետո ևս, սակայն, Պտղոմեոս VI-ը չփայլեց

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 5:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 29, գլուխ 23, 24; Պոլիբիոս «Համընդհանուր պատմություն», գիրք 25, գլուխ 2:

երկիրը կառավարելու իր առանձնակի հմտություններով: Արդյունքում՝ Պտղոմյանների թագավորությունը շարունակեց դանդաղ, բայց անշեղորեն թուլանալ: Իր հերթին, քանի որ նույն այս ժամանակ Սելևկյանների թագավորությունը վերելքի ուղին էր բռնել, սկսեց հասունանալ հերթական պայքարը Ասորիքի համար, ընդ որում Պտղոմեոս VI-ն և նրա շրջակայքը սեփական անխոհեմ ու գրգռիչ վարքագծով միայն արագացրին ընդհարումը: Այս առումով հատկանշական է, սակայն, այն հանգամանքը, որ ինչպես Պտղոմյանների, այնպես էլ Սելևկյանների թագավորությունները նույն այս ժամանակ այնուհանդերձ խիստ կարևորում էին Հռոմեական հանրապետության դիրքորոշումը՝ ձգտելով վերջինիս դաշնակցի կամ գոնե չեզոքության վիճակի: Այսպիսով՝ Մերձավոր Արևելքում փաստորեն ստեղծվել էր, ըստ էության, նույն այն դրությունը, որն այստեղ առկա էր Եգիպտական թագավորության հարաբերություններում Ասորեստանի թագավորության հետ Ասուրբանապալի օրոք կամ Բաբելոնի թագավորության հետ Նաբուգոդոնոսոր II-ի օրոք, ընդ որում հատկանշական էր նաև այն հանգամանքը, որ բոլոր այս ուժերը կախված էին արևմտյան հզոր խաղացողից: Վերջինիս դերում իր ժամանակին հանդես էր գալիս Հունական աշխարհը, իսկ այժմ՝ Հռոմեական հանրապետությունը: Ահա այս պայմաններում էլ հենց սկիզբ առավ Ասորիքյան VI պատերազմը (մ.թ.ա. 170-168):

Մ.թ.ա. 170 թվականին Սելևկյանների թագավորության բանակը հարված հասցրեց Պտղոմյանների թագավորությանը և ծանր պարտության մատեց հակառակորդի ռազմական մեքենային, որից հետո, մինչև հաջորդ տարվա կեսը, իր տիրապետության տակ գցեց գործնականում ողջ Եգիպտոսը: Մ.թ.ա. 169 թվականի վերջին, սակայն, ենթարկվելով մի շարք հանգամանքների ճնշմանը, ինչպես նաև զգուշանալով պաշտոնական Հռոմից, Անտիոքոս IV Եպիփանեսը սեփական բանակը հեռացրեց Եգիպտոսի զգալի մասից, թեև այնուհանդերձ իր տիրապետության տակ պահպանեց Ասորիքը: Դրանից հետո մ.թ.ա. 168 թվականի գարնանը Անտիոքոս IV Եպիփանեսը նոր հարված հասցրեց Պտղոմյանների թագավորությանը, որի հետ միաժամանակ տիրեց նաև Կիպրոսին:

Նույն այս ժամանակ պաշտոնական Հռոմն իր հերթին հաջող ավարտին հասցրեց պատերազմը Մակեդոնական թագավորության դեմ, երբ մ.թ.ա. 168 թվականի հունիսի 22-ին տեղի ունեցած Պիդնայի ճակատամարտում Հռոմեական հանրապետություն 46.000 հոգանոց բանակը գլխովին ջախջախեց հակառակորդի 40.000 հոգանոց բանակին, որի կորուստները կազմեցին 32.000 զինվոր: Այս պարտությունը Մակեդոնական թագավորության, ըստ էության, վերջն էր, որը դրանից հետո փաստորեն վերացավ, իսկ մ.թ.ա. 146 թվականին էլ նրա տարածքը վերջնականապես վերածվեց պրովինցիայի կարգավիճակ ունեցող հռոմեական սովորական մի տիրույթի: Արդյունքում՝ հերթական խոշոր հաջողություն արձանագրած պաշտոնական Հռոմը, ի վերջո որոշելով աջակցել Պտղոմյաններին, Անտիոքոս IV Եպիփանեսից ամենակտրուկ կերպով պահանջեց լքել Եգիպտոսը՝ մի պահանջ, որին սելևկյան տիրակալը չհամարձակվեց հակառակվել: Արդյունքում՝ Ասորիքյան VI պատերազմն ավարտվեց, ընդ որում, եթե Ասորիքում Սելևկյանների դիրքերն ամրացան և այս առումով կարելի էր լիովին գոհ լինել, ապա հեղինակության հսկայական ու անդառնալի այն կորուստը, որ կրել էին նրանք, խիստ բացասական ազդեցություն ունեցավ երկրի միջազգային դրության վրա, երբ արդեն և ոչ մի հելլենիստական պետություն նույնիսկ մտածել իսկ չէր կարող պաշտոնական Հռոմին հակառակվելու մասին: Ինչ վերաբերում է Պտղոմյանների թագավորությունը, ապա այն ընդհանրապես տրորվեց՝ նյութական զգալի հարվածներից զատ նաև փաստորեն, ըստ էության, վերածվելով Հռոմեական հանրապետության ընդամենը մի ենթակայի:

Գլուխ 32
Պարթևական թագավորության վերելքը

Մ.թ.ա. մոտ 175 թվականին Դերբենդի ճ-մ-ում (Աղվանքի հյուսիս-արևելք) Սմբատ

Քաջ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000, այդ թվում Մարդպետական գունդը) հաղթեց Ալանական թագավորության գահը բռնատիրած անձնավորության գլխավորած Ալանական թագավորության բանակին (մոտ 50.000): Արդյունքում անիրավորեն գահից զրկված երիտասարդ արքայազը հռչակվեց Ալանական թագավորության արքա: Հայկական բանակը ձեռք բերեց հսկայական քանակությամբ ավար և մեծաթիվ գերիներ, որոնք բնակեցվեցին Արտազ գավառում[1]: Ալանաց Դուռ և Դերբենդ ամրոցների հսկողությունը հանձնվեց Մարդպետական գնդի առանձին ջոկատներին, որոնց հիմնական ուժերը տեղավորվեցին Քարակում: Հետագա տարիներին, սակայն, պայմանավորված այն բանի հետ, որ Սելևկյանների թագավորության առաջխաղացումը Արևմուտքում կասեցվել էր, Մեծ Հայքի թագավորության միջազգային դրությունը բարդացավ, քանի որ Անտիոքոս IV Եպիփանեսը սկսեց պատերազմ պատրաստել արդեն հայերի դեմ, ընդ որում հարմար պահի էր սպասում նաև Իբերիայի թագավորության արքա, հայերի հետ հին հաշիվները չմոռացան Միհրան I-ը: Այս առումով հայերի համար որոշակիորեն դրական եղավ, թերևս, միայն այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ Սելևկյանների թագավորության համար հերթական սպառնալիքները հայտնվեցին արևելքից:

Իրոք, մինչ իրենց հիմքում հունական տարրն ունեցող հելլենական պետական միավորները իրենց մայրամուտն էին ապրում, նույն այս ժամանակ Սելևկյանների թագավորության արևելյան սահմաններին վերելքի ուղին էր բռնել Պարթևական թագավորությունը: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում այս թագավորության գլուխ կանգնած էր Պարթևական թագավորության հզորացման հերթական փուլի հիմքը դրած Միհրդատ I-ը (մ.թ.ա. 171-138), որը Արտավան I-ին հաջորդած նրա որդի Հրահապատին (մ.թ.ա. 191-176) փոխարինած վերջինիս որդի Հրահատ I-ի (մ.թ.ա. 176-171) եղբայրն էր: Այս առումով հարկ է նշել, որ, թեև Պարթևական թագավորությունն ինքն, իհարկե, այնուհանդերձ զգալի կրողն էր հանդիսանում հելլենական քաղաքակրթության, ինչից նույն այս դարաշրջանում ուղղակի սկզբունքորեն իսկ զերծ մնալ ի վիճակի չէր Մերձավոր կամ Միջին Արևելքի մի որևէ պետական միավոր, սակայն խնդիրը հանգում էր նրան, որ, եթե այլ հելլենական պետական միավորներ իրենց պետականաստեղծ հիմքում ունեին հունական տարրը, ապա Պարթևական թագավորության պարագայում, ի դեմս պետականաստեղծ տարրի, հանդես եկան Իրանական լեռնաշխարհում և հարակից տարածքներում բնակվող արիական ժողովուրդները: Վերջիններիս մեջ առաջնային տեղը գրավում էին բնականաբար ամենից առաջ հենց պարթևներն իրենք, սակայն զգալի դերակատարություն էր վստահված նաև պարսիկներին, սակերին և նույնիսկ քուշաններին: Այսպիսով՝ Իրանական լեռնաշխարհում ընթացող պետականաստեղծ գործընթացները կրկին հանգեցին նույն այն օրինաչափությանը, որն այստեղ առկա էր մարերի և պարսիկների վերելքի դարաշրջանում նրանց միջև առկա հարաբերություններում, երբ քոչվոր ու իր միջին մակարդակում ավելի մարտունակ տարրը հաղթականորեն պետական միավոր է ստեղծում, սակայն հետագայում նույն այդ պետական միավորն աստիճանաբար զիջում է նստակյաց և համեմատականորեն խաղաղ պայմաններում ծաղկում ապրող նստակյաց ու ավելի ստեղծագործ տարրին: Մի ժամանակ, ինչպես արդեն մի քանի անգամ նշվեց, սկյութների եռանդից օգտված մարերն իրենց հաղթական պատերազմներով ուժեղ պետություն ստեղծեցին և այն զիջեցին պարսիկներին, իսկ այժմ էլ մարերի դերը ստանձնեցին պարթևները, որոնք հետագայում կրկին դիրքերը զիջելու էին պարսիկներին: Նկարագրված գործընթացի վերջին փուլը, սակայն, լինելու էր հարյուրամյակներ անց, իսկ այժմ թարմ և ուժերով լեցուն պարթևները, ինչպես արդեն ասվեց, ոտքի հանեցին Պարթևական թագավորությունը: Այս առումով հարկ է նշել, որ ռազմաքաղաքական ընդհանուր զարգացումներն ինքնին ևս Պարթևական թագավորության օգտին եղան՝ նպաստելով վերջինիս հզորացմանը:

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 52; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 8; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

Իրոք, արժանահիշատակ Մոդեն, որը մ.թ.ա. դեռևս III դարի վերջում անզիջում պայքար էր սկսել Քուշանական և Մասագետական թագավորությունների դեմ, մ.թ.ա. 174 թվականին իր մահվան պահին արդեն իսկ, ըստ էության, հաջողությամբ ավարտին էր հասցրել նույն այդ պայքարը, երբ Հուննուական տերության տիրապետությունն էր հաստատել Մեծ տափաստանի ողջ արևելյան հատվածի նկատմամբ: Խնդիրը, սակայն, կայանում էր նրանում, որ հակառակորդը դեռևս համառ դիմադրության էր պատրաստ Մեծ տափաստանի կենտրոնական հատվածի ամենաարևելքում՝ Ջունգարյան դարպասներից արևմուտք ընկած տարածքում և ամենից առաջ Յոթնագետքում: Նույն այս տասնամյակներում Հուննուական տերությունից հարավ իր հերթին ոտքի էր կանգնում համաչինական նշանակություն ձեռք բերած հերթական պետական միավորն, ի դեմս Հանի տերության, որի հետ պատերազմը ևս Հուննուական տերության օրակարգային կարևորագույն առաջնային հարցերից մեկն էր: Մոդեից հետո Հուննուական տերության տիրակալ հռչակվեց նրա որդի Լաոշանը (մ.թ.ա. 174-161), որը, փոխարինելով հորը և մի պահ քիչ թե շատ կարգավորելով հարաբերությունները Հանի տերության հետ, որոշեց ամենից առաջ լուծել սեփական տերության հենց արևմտյան սահմանների անվտանգության խնդիրները:

Արդյունքում՝ ոտքի հանելով սեփական ռազմական մեքենան, Լաոշանը ծանր հարված հասցրեց արևմտյան ուղղությամբ: Որպես հետևանք այս հարվածի՝ Հուննուական տերության բանակը կրկին հաջողության հասավ և մ.թ.ա. 170 թվականի վիճակով վերջնականապես հետ շպրտեց հակառակորդին դեպի արևմուտք, ինչի արդյունքում Մասագետական թագավորության տարածքը վերջնականապես ընդգրկվեց Քուշանական թագավորության կազմում, իսկ Քուշանական թագավորության ու Հուննուական տերության սահմանն էլ հաստատվեց Սիր-Դարյա գետով: Այս առումով հարկ է նշել, որ դեպի ավելի արևմուտք շարժվել և, մասնավորապես, Մավերնահրին հարված հասցնել Լաոշանին ամեն դեպքում խանգարեցին նույն այս ժամանակ սրված հարաբերությունները Հանի տերության հետ, որոնք երկու այս պետական միավորների միջև մ.թ.ա. արդեն 166 թվականին բավականին լայնածավալ ռազմական գործողությունների հանգեցրին: Այս ամենի արդյունքում էլ հենց Մեծ տափաստանում իրավիճակը վերջնականապես կայունացավ, երբ Մեծ տափաստանի արևելքում, կենտրոնում և արևմուտքում սկսեցին ձգվել, համապատասխանաբար, Հուննուական տերությունը, ինչպես նաև Քուշանական և Ալանական թագավորությունները:

Մեծ տափաստանում տեղի ունեցած փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան վերջինիս հարևան բոլոր երկրների, այդ թվում, մասնավորապես նաև, Իրանական լեռնաշխարհում ոտքի կանգնող Պարթևական թագավորության վրա: Իրոք, իր մեջ ընդունելով քուշանական գերիշխանությունից խուսափող և այս կամ այն պատճառով այն ընդունելու ոչ պատրաստ Մասագետական թագավորության շարժիչ ուժը կազմող սակական մարդկային զգալի քանակություն, մ.թ.ա. 160-ական թվականների սկզբում Պարթևական թագավորությունը սկսեց արագորեն հզորանալ, ընդ որում հիշատակված ժամանակաշրջանը համընկավ Միհրդատ Ի-ի կառավարման շրջանի հետ: Արդյունքում՝ Պարթևական թագավորությունը լուրջ հայտ ներկայացրեց Իրանական լեռնաշխարհում գերիշխելու և գերիշխանությունն այստեղ Սելևկյանների թուլացած թագավորությունից խլելու հարցով, թեև այնուհանդերձ հարկ է նշել նաև, որ Պարթևական թագավորության վիճակն էլ այդքան միանշանակորեն պարզ չէր, քանի որ Քուշանական թագավորության հետ հարաբերությունները, որպես կանոն, թշնամական բնույթ ունեին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Իրանական լեռնաշխարհում իր առաջխաղացման ճանապարհին Պարթևական թագավորությունը ևս մեկ ու իր հիմքում հունական տարրն ունեցող հելլենական հակառակորդ ուներ, ի դեմս Հունա-Բակտրիական թագավորության: Վերջինս իր ժամանակին, օգտվելով այն հանգամանքից, որ քուշաններն ու սակերը զբաղված են հուննուների դեմ մղվող լարված

պայքարով, Պարթևական թագավորությունից արևելք զգալի հաջողություններ էր արձանագրել, իսկ մ.թ.ա. 180 թվականին էլ, օգտվելով Մուարյան տերության վերջնական փլուզումից, երբ վերջինիս փոխարինեց Շունգի ավելի թույլ տերությունը, իր տիրապետությունն էր հաստատել նույնիսկ ողջ Հյուսիսային Հնդկաստանի նկատմամբ՝ հասնելով մինչև Գանգես գետի վերին հովիտներ՝ այսինքն՝ դեպի արևելք առաջանալով նույնիսկ ավելի առաջ, քան Ալեքսանդր III Մեծի ռազմական մեքենան: Հուննուների դեմ մղվող պատերազմի ավարտը և Հուննուական տերության ու Քուշանական թագավորության սահմանի հստակեցումը Սիր-Դարյա գետի հոսանքով, սակայն, ծանր հետևանքներ առաջացրեց Հունա-Բակտրիական թագավորության համար, որը, ենթարկվելով Քուշանական թագավորության հզոր հարվածներին, մ.թ.ա. արդեն 170 թվականի վիճակով կորցրեց Հյուսիսային Հնդկաստանը, որտեղ գործող բանակային ուժերն ապստամբեցին կենտրոնական իշխանության դեմ:

Արդյունքում՝ Միջին Ասիայի հարավ-արևելքով սահմանափակված և Հյուսիսային Հնդկաստանը կորցրած Հունա-Բակտրիական թագավորությունն ընդունեց Քուշանական թագավորության գերիշխանությունը, սակայն նույն այս ժամանակ Քուշանական նույն թագավորության նկատմամբ թշնամական դիրք գրավեց արդեն Հյուսիսային Հնդկաստանում վերջինիս բանակային հիմնական ուժերի ղեկավարների կողմից ստեղծված Հունա-Հնդկական թագավորությունը: Այսպիսով՝ մ.թ.ա. II դարի երկրորդ կեսին Իրանական լեռնաշխարհի համար Սելևկյանների թագավորության դեմ Պարթևական թագավորության կողմից մղվող պայքարում վերջինիս թիկունքից մշտապես սպառնում էր Քուշանական թագավորությունը, սակայն Հյուսիսային Հնդկաստանում նույն այս ժամանակ իր յուրօրինակ դիրքորոշումն ուներ նաև Հունա-Հնդկական թագավորությունը, որը մի կողմից հակաքուշանական հասկանալի մղումներ ուներ, որը ենթադրում էր դաշինք պարթևների հետ, բայց մյուս կողմից էլ վերջիններիս հակասելևկյան, իսկ արդյունքում նաև հակահունական քաղաքականությունը ստիպում էր Հունա-Հնդկական թագավորության տիրակալներին մեծապես զգուշանալ նաև նույն այդ Պարթևական թագավորությունից: Ուժերի դասավորության ահա նման ուշագրավ վիճակն էր հենց, որ, չնայած ընդհանուր թուլությանը, քիչ թե շատ կայուն դրություն էր ստեղծում Սելևկյանների թագավորության արևելքում, իսկ վերջին հաշվով էլ՝ խաղաղություն էր ապահովում նաև Հայաստանի արևելյան սահմաններին:

Մ.թ.ա. 160-ական թվականների կեսերին, սակայն, իրավիճակն աստիճանաբար սկսեց փոխվել, ընդ որում, քանի որ Հուննուական տերությունը վերջնականապես խրվեց Հանի տերության դեմ ընթացող մեծածավալ և հարատև մարտերում ու այդ հանգամանքն իր հերթին խաղաղություն բերեց Քուշանական թագավորության արևելյան սահմաններին, դա էլ իր հերթին Քուշանական թագավորությանը հնարավորություն տվեց ի վերջո ակտիվանալ սեփական թագավորության արևմուտքում: Քուշանական թագավորության հենց նոր հիշատակված ակտիվությունը, սակայն, ամենից առաջ ուղղվեց անզիջում դիրքորոշում ունեցող Հունա-Հնդկական թագավորության դեմ, ինչն էլ օգնեց պարթևներին իրենց հերթին, գոնե առժամանակ, ակտիվանալ սեփական սահմանների արևմուտքում:

Մ.թ.ա. 167 թվականին Միհրդատ I-ը Սելևկյանների թագավորության բանակից գրավեց Հերաթը (ներկայիս Աֆղանստանի արևմուտք) և հարակից տարածքները՝ ըստ էության կտրելով Սելևկյանների թագավորության կապը Հնդկաստանի և ավելի արևելք տարածվող այլ երկրների հետ: Ի պատասխան սրա՝ Անտիոքոս IV Եպիփանեսն իր բանակային հիմնական ուժերի գլուխն անցած շարժվեց Պարթևական թագավորության դեմ և արդյունքում կողմերը, թեև փոխադարձ զիջումներով, սակայն այնուհանդերձ համաձայնության եկան: Այս զարգացումներն էլ հենց մ.թ.ա. 160-ական թվականների կեսերին մի քանի տասնամյակի կտրվածքով սրեցին իրավիճակը Սելևկյանների և Մեծ Հայքի թագավորությունների սահմաններին:

Գլուխ 33
Արտաշես Ի-ը և Անտիոքոս IV Եպիփանեսը

Գոնե առժամանակ կարգավորելով հարաբերությունները պարթևների հետ՝ Անտիոքոս IV Եպիփանեսը դրանից հետո որոշվեց հարված հասցնել արդեն նաև հայերին: Արդյունքում՝ մ.թ.ա. 165 թվականի աշնանը Տմորիքի ճ-մ-ում Անտիոքոս IV Եպիփանեսի գլխավորած Սելևկյանների թագավորության բանակի (մոտ 70.000, 100 փիղ) հետ մեկ օր տևած ծանր, արյունահեղ և անորոշ ելք ունեցած մարտի արդյունքում Արտաշես Ի-ի ու սպարապետ, Հարավային զորավարության հրամանատար Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած Հայկական բանակին (մոտ 70.000) հաջողվեց պահել դիրքերը ու պարտադրել թշնամուն նահանջել[1]: Այսպիսով՝ հայերին հարավում հաջողվեց դիմանալ, սակայն նույն այս ժամանակ հարված եկավ հյուսիսից, երբ մ.թ.ա. նույն 165 թվականի աշնանը Ջավախքի ճ-մ-ում (Գուգարք) Միհրան Ի-ի գլխավորած Իբերիայի (մոտ 10.000) և Ալանական (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Զարեհ արքայազնի գլխավորած Մեծ Հայքի թագավորության Հյուսիսային զորավարության բանակին (մոտ 20.000), ընդ որում Զարեհը գերվեց[2]:

Դրանից հետո, շարունակելով հայերին հարվածելու քաղաքականությունը, մ.թ.ա. 164 թվականի գարնանը Արկաթիակերտի ճ-մ-ում (= Անգղ) (Աղձնիք, Անգեղտուն գավառ, Տիգրիսի վերին հոսանքում)[3] Անտիոքոս IV Եպիփանեսի գլխավորությամբ հերթական անգամ առաջխաղացած Սելևկյանների թագավորության բանակը (մոտ 70.000) հաղթեց մ.թ.ա. 179 թվականին Զարեհի մահից հետո թագավորության գահին վերջինիս փոխարինած իր որդի Արկաթիասի (մ.թ.ա. 179-164) գլխավորած Ծոփքի թագավորության բանակին (մոտ 15.000), ընդ որում Արկաթիասը զոհվեց[4], իսկ նրա որդի Մեհրուժանը դիմեց փախուստի և ապաստանեց Կապադովկիայի թագավորության տարածքում: Արդյունքում՝ Ծոփքի թագավորության տարածքը կցվեց Սելևկյանների թագավորությանը, սակայն Աղձնիքի արևմտյան մասն անցավ Մեծ Հայքի թագավորությանը:

Այս առումով հարկ է նշել, սակայն, որ ի վերջո մեծապես հայերի օգտին եղավ այնուհանդերձ այն հանգամանքը, որ մ.թ.ա. 164 թվականի աշնանը միջոցների սուղ պակաս զգացող Անտիոքոս IV Եպիփանեսը իր հերթին որոշեց թալանել Պարսքում գտնվող Արտեմիսիայի տաճարը, սակայն, ինչպես մի ժամանակ դա եղել էր Անտիոքոս III Մեծի պարագայում, տեղի բնակչությունը այս անգամ ևս իր ուղեկիցների հետ միասին հենց տաճարում շրջապատեց Սելևկյանների թագավորության գործող արքային և ոչնչացրեց: Անտիոքոս IV Եպիփանեսի մահից հետո նրան հաջորդեց իր իննամյա որդի Անտիոքոս V-ը (մ.թ.ա. 164-162), որը իրապես չէր կառավարում, իսկ նրա խնամակալներն էլ հազիվ միայն պահպանում էին երկրի ռազմաքաղաքական հավասարակշռությունը, ընդ որում Սելևկյանների թագավորության դիրքերը շարունակում էին անշեղորեն թուլանալ և Արևելքում, և Արևմուտքում:

Ավելին, շուտով պարզվեց, որ առկա է նաև գահակալական պայքար, քանի որ Հռոմի սենատը հենց այս ժամանակ մեջտեղ բերեց Սելևկոս IV-ի որդի Դեմետրիոսին, որը քաղաքական պատանդի կարգավիճակով վաղուց ի վեր գտնվում էր Հռոմում: Նույն այս ժամանակ պաշտոնական Հռոմի ներկայացուցիչները իրենց հերթին սկսել էին իրենց

---

[1] Հիերոնիմոս գիրք 5, 6; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 45, 66; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 17a; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 12, գլուխ 7; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 11, մաս 3:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 53; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:

[3] Այս ճակատամարտի տեղը ևս խիստ մոտավոր է և տրվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռական ճակատամարտը ամենայն հավանականությամբ պետք է տեղի ունենար հենց մայրաքաղաքի մոտակայքում:

[4] Այս իրադարձությունը ներկայացվել է հիմք ընդունելով այն տեղեկությունը (Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 22), որ Կապադովկիայի թագավորության արքա Արիարաթես IV Եուսեբեսը հորենական գահի վրա վերականգնել է Մեհրուժանի իշխանությունը, ընդ որում այս, ինչպես նաև նույն աղբյուրի հայտնած տեղեկատվության կոնտեքստը հաշվի առնելով անչափ հավանական է ենթադրել, որ մինչ այդ Սելևկյանների թագավորության բանակի ներխուժման արդյունքում Ծոփքի թագավորության արքա Արակթիասը զոհվել է, իսկ նրա որդիներն էլ ապաստանել էն Կապադովկիայի թագավորությունում:

չափից դուրս ազատ զգալ Անտիոքոս V-ի տիրույթներում, ինչը միայն ուժեղացրել էր դժգոհությունները գործող իշխանության դեմ տեղերում:

Գլուխ 34
Արտաշես Ի-ը և տեղական նոր հոգսերը

Օգտվելով Սելևկյանների թագավորության հերթական թուլացումից՝ մ.թ.ա. 164 թվականի դեկտեմբերին Արիարաթես IV Եուսեբեսի (մ.թ.ա. 220-163) գլխավորած Կապադովկիայի թագավորության (մոտ 20.000) և Մեհրուժան արքայազնի գլխավորած Ծոփքի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակը Սելևկյանների թագավորության բանակից (մոտ 10.000) հետ գրավեց Ծոփքի թագավորության տարածքը, ինչից հետո կրկին իր անկախությունը վերագտած Ծոփքի թագավորության արքա հռչակվեց Մեհրուժանը (մ.թ.ա. 164 - մոտ 140)[1]: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Ծոփքի թագավորության նկատմամբ նույն այս ժամանակ իր հասկանալի նկրտումներն ուներ նաև պաշտոնական Արտաշատը և այս պայմաններում Կապադովկիայի թագավորության արքան, փաստացի հաջողություն գրանցելով իր օգտին ու ձեռքում ունենալով կատարված փաստը, դրանից հետո իրավիճակն այնպես ներկայացրեց, թե Արտաշես Ի-ն իրեն մինչ այդ իբր առաջարկած է եղել սպանել Մեհրուժանին և կիսել Ծոփքի թագավորությունը, սակայն ինքը, գործելով ազնվորեն, մերժել է այդ առաջարկը: Արդյունքում՝ կարելի է կարծել, որ, թեև Արտաշես Ի-ը բնականաբար ամենևին էլ հրեշտակ չէր և տեսականորեն, իհարկե, հնարավոր էր, որ վերջինս նման մի առաջարկ արած լիներ, սակայն մյուս կողմից էլ ողջ այս պատմության կապակցությամբ մենք գիտենք միայն ու միայն բացառապես պաշտոնական Կեսարիայի դիրքորոշումը, իսկ այն հանգամանքն էլ, որ Կապադովկիայի թագավորության արքան բոլոր հիմքերն ուներ ստելու, սևացնելու Հայոց արքային և արդյունքում ձգտելու կտրել Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքի թագավորությունից ու, վերջին հաշվով, իրենով անելու այն, ևս փաստ է, այնպես որ հարցի վերջնական պարզաբանումը մեծ հաշվով մնում է անորոշ: Նույն այս ժամանակ, սակայն, որոշակիորեն լարվեց դրությունը նաև Մեծ Հայքի թագավորության ներսում:

Սկզբնաղբյուրները հստակ չեն արտահայտվում այն բանի կապակցությամբ, թե սեփական գահակալման հարցում Արտաշես Ի-ին մեծապես աջակցած Արգամ Մուրացյանը ի վերջո ինչով էր հարուցել սեփական արքայի այդ աստիճան խորը դժգոհությունը և այս կապակցությամբ ակնարկներն արվում են ամենից առաջ արքայազն Արտավազդի փառասիրության ու Արգամի գեղեցկուհի հարճ Մանդուի նկատմամբ Հայոց արքայի նկրտումների մակարդակում: Արդյունքում՝ կարելի է կարծել, սակայն, որ Արգամ Մուրացյանի ազդեցիկ դերը Հայոց թագավորության հարավ-արևելյան շրջաններում, մանավանդ Ատրպատականի թագավորության հետ տարածքային վեճերի առկայության պարագայում, Արտաշես Ի-ի համար մի ինչ-որ պահի մի կողմից իրոք համարվել է անընդունելի, իսկ մյուս կողմից էլ իր դերն են ունեցել նաև Սաթենիկի դրդումները, որը բնականաբար որևէ կերպ չէր կարող ողջունել իր ամուսնու նկրտումները նույն Մանդուի նկատմամբ, ընդ որում այս ամենն իր վերջնական տեսքը ստացավ մոր կողմից իր որդիների և, հատկապես, քսանամյա ավագ որդու բնավորության յուրահատուկ գծերը հմուտ կառավարելով:

Այսպես թե այնպես, սակայն մ.թ.ա. մոտ 163 թվականին Մաժան արքայազնի գլխավորած Մեծ Հայքի Ոստանիկ բանակը (մոտ 10.000 հեծյալ) բռնագրավեց Նախիջևան գավառը (Վասպուրական) հակաարքունական դավադրության մեջ մեղադրվող Մուրացյանների տոհմից[2], ընդ որում գեղեցկուհի Մանդուին հատուկ հրամանով հասցրին Հայոց արքայի մոտ: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ այս դեպքերից երկու տարի անց, երբ Մուրացյաններն այնուհանդերձ արժանացան

[1] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 22:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 51:

Արտաշես Ի-ի մասնակի ներմանը և Հայոց արքան վերադարձրեց նրանց իրենց տիրույթների մի մասն ու հատուցեց կրած գույքային կորուստները, Մանդուն Մուրացյաններին այնուհանդերձ այդպես էլ չվերադարձվեց: Այսպես թե այնպես, սակայն, կարգավորելով գործերը երկրի ներսում, Արտաշատում ի վերջո որոշեցին անդրադարձ կատարել վաղուց ի վեր հասունցած հյուսիսային խնդրին:

Արդյունքում՝ մ.թ.ա. 162 թվականի աշնանը Ջավախքի ճ-մ-ում Սմբատ Քաջ Բագրատունու, ինչպես նաև Արտավազդ և Տիրան արքայազնների գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000) գլխովին ջախջախեց Միհրան Ի-ի գլխավորած Իբերիայի թագավորության բանակին (մոտ 33.000): Զարեհը ազատվեց գերությունից, Գուգարքի սահմանները ամբողջացվեցին, իսկ Իբերիայի թագավորությունն էլ կրկին ընդունեց Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը և բավականին երկար ժամանակով հրաժարվեց Հայաստանի հյուսիսային նահանգների նկատմամբ հավակնություններից[1]: Հաջողությամբ կարգավորելով հարաբերությունները Իբերիայի թագավորության հետ՝ Արտաշես Ի-ը անդրադարձ կատարեց հարավին, որտեղ նոր զարգացումներ էին եղել:

Գլուխ 35
Արտաշես Ի-ը և Դեմետրիոս I Սոտերը

Խնդիրը կայանում էր նրանում, որ, մ.թ.ա. 162 թվականի աշնանը Դեմետրիոսը փախավ կամ նրան թույլ տվեցին փախչել հռոմեական պատվավոր գերությունից, որից հետո, հասնելով Սելևկյանների թագավորության տարածք, վերջինս գահընկեց արեց և սպանել տվեց Անտիոքոս V-ին: Արդյունքում՝ Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց Դեմետրիոսը՝ Դեմետրիոս I Սոտերը (մ.թ.ա. 162-150), որը եռանդուն, սակայն ոչ այնքան խելացի մի անձնավորություն էր: Դեմետրիոս I Սոտերի գահակալումից հետո նրա դեմ մի շարք ապստամբություններ բռնկվեցին, որոնց մեջ ամենագլխավորը Բաբելոնի ապստամբած սատրապ և իրեն Մարաստանի արքա հռչակած Տիմարքոսի ապստամբությունն էր: Մ.թ.ա. 162 թվականի աշնանը, սակայն, Բաբելոնի ճ-մ-ում Դեմետրիոս I Սոտերի բանակը (մոտ 40.000) հաղթեց Տիմարքոսի (մոտ 10.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակին, ինչից հետո Մեծ Հայքի թագավորության բանակը վերադարձավ Հայրենիք[2]:

Մ.թ.ա. մոտ 161 թվականին Նախիջևանի ճ-մ-ում (Վասպուրական, Նախիջևան գավառ, Արաքսի ձախ վտակ Նախիջևանի աջ ափին) Արտավազդ արքայազնի գլխավորած Մեծ Հայքի Ոստանիկ բանակը (մոտ 10.000 հեծյալ) հաղթեց Արգամ Մուրացյանի գլխավորած Մուրացյանների գնդին (մոտ 1.000)[3]: Արդյունքում՝ Մուրացյանների տոհմի ղեկավարները սպանվեցին, իսկ նրանց տիրույթները վերջնականապես անցան արքունիքին: Այսպիսով՝ Մեծ Հայքի թագավորության ներքին իրավիճակը կրկին խաղաղվեց, ինչը խիստ կարևոր էր, քանի որ նույն այս ժամանակ հելլենիստական աշխարհը հերթական հարվածն էր նախատեսում հայերի ուղղությամբ

Արտաշես Ի-ի թագավորության մի շարք իրադարձություններ բավականին քննարկված են, սակայն, մեր այս փայլուն գահակալի թագավորության ամենավերջում տեղի ունեցան ևս էլի իրադարձություններ, որոնք անպայման անդրադարձի կարիք ունեն, քանի որ հերթական անգամ հռչակվել են «հնարովի և վիպական»: Խոսքը մ.թ.ա. 160 թվականին տեղի ունեցած Բասենի ճ-մ-ի և դրան անմիջապես հաջորդած իրադարձությունների մասին է, մի ճակատամարտ, որը ևս, դժբախտաբար, չի ընդունվում խորհրդահայ պատմագիտության կողմից և դրա նկատմամբ առկա է ժխտողական

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:
[2] Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան», գիրք 31, գլուխ 27a; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 47:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 51:

մոտեցում նաև այժմ, ինչը, թող թույլ տրվի ասել, բացթողում է:

Իրոք, Մովսես Խորենացին[1] այս ճակատամարտի մասին խոսելիս հիշատակում է հռոմեական բանակն և իր կարծիքով կայսեր Դոմիցիանոսին (81-96), ինչը, կարծես, միանգամից ժխտում է դրա իրական լինելու ամեն մի հավանականություն, քանի որ Հռոմեական կայսրության կայսր Դոմիցիանոսի գահակալման տարիները ու դրա հիմնական իրադարձությունները հիանալի կերպով հայտնի են և հռոմեական բանակի կողմից մղված ոչ մի նմանատիպ մարտական գործողության մասին դրանցում որևէ տեղեկություն չկա: Միաժամանակ, ավելորդ էլ է ասել, որ կայսր Դոմիցիանոսն իշխել է Արտաշես I-ից մոտ 250 տարի հետո: Այս կապակցությամբ, սակայն, թույլ տամ ինձ անել հերթական դիտարկումը, որի արդյունքում, կարծում եմ, Պատմահոր տեղեկությունները ժամանակատարածային հարթության մեջ կրկին գտնում են իրենց կոնկրետ տեղն ու բացատրությունը:

Մովսես Խորենացին հայտնում է. «*Այդ ժամանակ արևմուտքում ինչ-որ հուզմունքներ են ծագում: Սրա վրա վստահանալով՝ Արտաշեսն ապստամբվում է հռոմեացիների տերության դեմ և հարկ չի վճարում: Դոմետիանոս կայսրը, սրա վրա զայրանալով, զորք է ուղարկում Արտաշեսի վրա: Նրանք գալիս, հասնում են Կեսարիայի կողմերը, իսկ Տիրանին էլ, արևմտյան զորքերի հետ միասին, առաջ խառնած քշած բերում են մինչև Բասենի մեծ և ընդարձակ հովիտը՝ մեծ տագնապով: Այստեղ, սակայն, Արտավազդը արևելյան և հյուսիսային զորքերով թագավորի բոլոր որդիների հետ միասին նրանց դեմ է դուրս գալիս, բայց պատերազմի ժամանակ շատ նեղն են ընկնում: Ի վերջո՝ պատերազմի վերջերին հարավային զորքերով վրա է հասնում Սմբատը և, մեջ մտնելով, վտանգից ազատում է թագավորի որդիներին: Նա հաղթություն է տանում և վերջ է դնում պատերազմին, որովհետև նա, չնայելով իր ծերությանը, երիտասարդի պես կազմակերպեց և մղեց ճակատամարտը: Նա, հռոմեացիների զորքին հետամուտ լինելով, նրանց հալածեց մինչև Կեսարիայի սահմանները: Առասպելներում այս բանը երգել կամենալով՝ ասում են, թե եկած է եղել մի ոմն Դոմետ, որ ինքը Դոմետիանոս կայսրն է: Իրականում, սակայն, այդ ոչ թե ինքն է եկել այս կողմերը, այլ նրա հրամանով նրա զորքերն են եկել, իսկ առասպելներն էլ, այլաբանելով, այս ամենը նրա անունով են կոչել*»: Եվ այսպես, առկա է մի իրավիճակ, երբ Պատմահայրը, տեղեկություն ունենալով հելլենիստական աշխարհի կողմից կազմակերպված հերթական մի հարձակման մասին և հավատարիմ իր կազմած ժամանակագրական սխալ համակարգին, որի մասին մի քանի անգամ խոսվեց վերևում, Արտաշես I-ին, Սմբատ Քաջ Բագրատունուն և մ.թ.ա. 212-160 թվականներին վերաբերող ժամանակահատվածը տեղաշարժել է ու տեղակայել I դարի վերջում և II դարի սկզբում: Արդյունքում, մի կողմից ունենալով որոշակի տեղեկատվություն I դարի վերջում և II դարի սկզբում գերիշխող և հելլենական բնույթ ունեցող ռազմաքաղաքական ուժի, իսկ մյուս կողմից էլ՝ «*մի ոմն Դոմետ*»-ի մասին, Պատմահայրն անխուսափելի սխալ տրամաբանությամբ հանգում է հետևության կայսր Դոմիցիանոսի և հռոմեական բանակի, ինչպես նաև վերջիններիս ու Արտաշես I-ի բանակի միջև տեղի ունեցած ճակատամարտի մասին: Այս կապակցությամբ հատկանշական է Հ. Մանանդյանի մոտեցումը, որը, կիրառելով ժամանակագրական արհեստական տեղափոխումներ, առաջ է քաշել այն տեսակետը, թե այստեղ խոսքը գնում է Դոմիցիանոս Կորբուլոնի Արևելյան արշավանքի մասին, «մի ոմն Դոմետն» իրականում հենց հռոմեական հայտնի այս զորավարն է, այլ ոչ թե Հռոմեական կայսրության կայսրը, իսկ ողջ հաղորդումն էլ արտացոլանքն է վերջինիս հայտնի արշավանքին[2], մի ենթադրություն, որն, ըստ էության, ընդունվել է խորհրդահայ պատմագիտության կողմից: Կարծում եմ, սակայն, որ, եթե մի կողմ թողնենք ժամանակագրական բացթողումն և այս իրադարձությունները տեղափոխենք Արտաշես I -ի մահվան ժամանակները, ինչը բխում է Պատմահոր իսկ հաղորդումներից, այսինքն՝ եթե

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 54:
[2] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 1, Երևան 1977, էջ 344:

այս իրադարձությունները տեղակայենք մ.թ.ա. 160 թվականին, ամեն ինչ ստանում է իր հստակ տեսքը: Հետաքրքիր է, որ այս պարագայում ստացվում է մի իրավիճակ, երբ այս հաղորդումն ոչ միայն միանգամից իր տեղն է գտնում իր ժամանակի ռազմաքաղաքական իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա, այլև՝ անուղղակիորեն հաստատվում է նաև այլ աղբյուրներով:

Իրոք, այս իրադարձությունների հետ կապված Արտաշես Ի-ի որդիների և, հատկապես, Արտավազդի՝ դեռևս որպես արքայորդու, սակայն արդեն բավականին հասուն մի երիտասարդի, հիշատակումը մեզ օգնում է պարզել այս ճակատամարտի բավականին ճշգրիտ թվականը, քանի որ, ինչպես ասվեց վերևում, Արտավազդը կարող էր ծնված լինել մ.թ.ա. 183 թվականին: Իր հերթին այն, որ այս իրադարձությունը տեղի է ունեցել Արտաշես Ի-ի գահակալման ամենավերջում, անուղղակիորեն հաստատում է նաև հաղորդումը «ծեր» Սմբատ Քաջ Բագրատունու մասին, որն Արտաշես Ի-ի պատանեկության ու ամուրիության ժամանակ արդեն իսկ հասուն այր էր և ուներ երեխաներ, իսկ իր սանի որդիների հասունության ժամանակ բնականաբար իրոք որ արդեն պետք է «ծեր» լիներ: Եվ վերջապես պատահական չէ, որ հենց այս իրադարձություններից հետո է, որ Պատմահայրը հայտնում է Սանատրուկի որդի Արտաշեսի մահվան մասին[1], թեև, բնական է, որ Արտաշես Ի-ի մահվան մասին են նաև այն հաղորդումները, որոնք վերաբերում են Արշակ Ի-ի որդի Արտաշեսին[2], ընդ որում երկու Արտաշեսների մասին երկու հաղորդումներն էլ, ի դեմս քննարկվող ճակատամարտին հաջորդած հարվածին արևմտյան ուղղությամբ, այնուհանդերձ ոչ միայն տեղավորվում են իմ կողմից բերված տրամաբանական հստակ սխեմայում, այլև լրացնում են դրանց:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոգրյալը, մենք կարող ենք հանգել հետևության, որ իրականում Պատմահոր ողջ այս հաղորդումը վերաբերում է մ.թ.ա. II դարի երկրորդ քառորդին, սակայն այն ժամանակահատվածին, երբ Արտաշես Ի-ը դեռ ողջ էր, Սմբատ Քաջ Բագրատունին՝ «ծեր», իսկ արքայազն Արտավազդն էլ արդեն բավականին հասուն այր էր: Այսինքն՝ իրադարձությունը կարող է տեղի ունեցած լինել մ.թ.ա. մոտ 165 թվականից սկսած, երբ Արտավազդ արքայազնը գոնե 18 տարեկան կլիներ, մինչև մ.թ.ա. 160 թվականն ընկած ժամանակահատվածում, երբ մահացավ Արտաշես Ի-ը՝ մի ժամանակահատվածում, երբ Մեծ Հայքի թագավորությունը պատերազմում էր Սելևկյանների թագավորության դեմ: Ժամանակագրական սահմաններն ավելի փոքրացնել մեզ օգնում է այն հանգամանքը, որ Սելևկյանների թագավորության արքա, հաջորդելով Անտիոքոս V-ին, մ.թ.ա. 162 թվականից հռչակվեց Դեմետրիոս I Սոտերը: Արդյունքում՝ կարելի է գալ հիմնավորված հետևության, որ, անկասկած, Մովսես Խորենացու հիշատակած «*մի ոմն Դոմետը*» հենց Դեմետրիոս I Սոտերն է: Ավելին, հայտնի է, որ Մեծ Հայքի թագավորությունն օժանդակ ռազմաջոկատով օգնել էր սելևկյան նորահռչակ արքայի դեմ Բաբելոնի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը և Դեմետրիոս I Սոտերը բնականաբար, հատկապես կապված նաև այս հանգամանքի հետ, անկասկած պետք է անհաշտ թշնամական մտադրություններ ունենար Մեծ Հայքի թագավորության նկատմամբ, մանավանդ, եթե հաշվի առնենք նաև արդեն իսկ ընթացող պատերազմը երկու թագավորությունների միջև: Այսպիսով՝ ժամանակագրական սահմաններն ավելի են փոքրանում՝ հանգելով մ.թ.ա. 162-160 թվականներին:

Շարունակելով վերլուծությունն ամրագրենք, որ հենց նոր արքա դարձած Դեմետրիոս I Սոտերն անմիջապես էլ՝ մ.թ.ա. 161 թվականին, պատերազմ սկսեց Կապադովկիայի թագավորության դեմ և ապաստան տվեց օրինական արքա Արիարաթես V-ի (մ.թ.ա. 163-161, 157-130) դեմ ապստամբած վերջինիս եղբայր Օլոֆերնին, որից հետո, ներխուժելով Կապադովկիայի թագավորության տարածք և տապալելով Արիարաթես V-ին, նոր արքա հռչակեց վերջինիս արդեն հիշատակված եղբայր

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 60:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 13:

Օլոֆերնին (մ.թ.ա. 161-157)[1]: Սրա համար Սելևկյան գահակալին պետք էր ամենամոտավոր հաշվարկներով մ.թ.ա. ողջ 161 թվականը: Եվ ահա միայն դրանից հետո, կենտրոնացնելով բոլոր ուժերը, ամրապնդվելով Կապադովկիայի թագավորության տարածքում և մեծացնելով իր ազդեցությունը ողջ Փոքր Ասիայում, Սելևկյանների թագավորությունն ի վիճակի կլիներ նմանատիպ մի պատերազմ սկսել Մեծ Հայքի թագավորության դեմ, մի բան, որը կարող էր տեղի ունենալ մ.թ.ա. արդեն 160 թվականին՝ Արտաշես Ի-ի մահվան տարում, բայց տարվա դեռևս այն հատվածում, երբ վերջինիս բնականաբար դեռևս կենդանի էր: Հետաքրքիր կերպով այս սխեման հաստատում է նաև այն հանգամանքը, որ թշնամին, ըստ Պատմահոր, ներխուժումն իրականացրել է ոչ թե հարավից, ինչպես օրինակ մ.թ.ա. 165 թվականին եղավ, այլ՝ արևմուտքից՝ Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայից՝ անկասկած որպես օժանդակություն ունենալով նաև դրածո արքա Օլոֆերնի բանակը, ինչպես նաև աջակցություն վայելելով Փոքր Ասիայի այլ հելլենիստական պետությունների կողմից:

Եվ այսպես Մովսես Խորենացին, տեղեկություն ունենալով «*մի ոմն Դոմետի*» մասին և հավատարիմ մնալով իր կառուցած ժամանակագրական սխալ սխեմային, որտեղ Երվանդ III-ին, Արտաշես Ի-ին և հետագաներին վերաբերվող տվյալները տեղավորված են մոտավորապես Ի դարի վերջում և II դարի սկզբում, անխուսափելի սխալմամբ այս «*մի ոմն Դոմետին*» էլ նույնացրել է Հռոմեական կայսրության կայսր Դոմիցիանոսի հետ, որից հետո, շարունակելով կուռ տրամաբանական հետևողականությամբ, սակայն՝ ի սկզբանե սխալ, գրել է հռոմեական բանակի մասին, քանի որ, եթե խոսքը Հռոմի կայսեր Դոմիցիանոսի մասին է, բնականաբար կռվող զորքն էլ պետք է Հռոմեական կայսրության բանակը լինի:

Վերևում արդեն մի քանի անգամ և մանրամասն կերպով ասվեց, որ Արտաշես Ի-ը, Երվանդ III-ն ու նրանց անմիջական ժամանակակիցներն և հաջորդները գործել են ոչ թե Ի դարի վերջում ու II դարի սկզբում, այլ՝ մ.թ.ա. 212-160 թվականների միջատարածքում, իսկ այդ դեպքում «*մի ոմն Դոմետն*» անխուսափելի և հիմնավոր կերպով սկսում է համապատասխանել իր իրական տիրոջը՝ Արտաշես Ի-ի թագավորության վերջին տարիներին Սելևկյանների թագավորության արքա դարձած Դեմետրիոս I Սոտերին: Այսպիսով, հաշվի չառնելով հռոմեացիների և իբր կայսեր Դոմիցիանոսի մասին հաղորդումները, որոնք Մովսես Խորենացին ընկալել է որպես հռոմեացիների կայսեր և, հետևաբար, հռոմեացիների մասին հիշատակում, սակայն որոնք իրականում նկատի են ունեցել Սելևկյանների թագավորության արքա Դեմետրիոս I Սոտերին, կարելի է ասել, որ մենք գործ ունենք իրականում տեղի ունեցած իրադարձության հետ: Իր հերթին, ինչ վերաբերում է այս իրադարձությունների նկարագրությունը, ապա այն ճակատամարտն առասպել ընդունելու իրոք որևէ հիմք չի թողնում, քանզի նկարագրությունն իր բնույթով նման է մեր պատմիչների կողմից նկարագրված այն բազում ճակատամարտերին, որոնք երբևէ առասպելական լինելու կասկած չեն առաջացրել: Եվ այսպես, մ.թ.ա. 160 թվականին հելլենական աշխարհը որոշեց վերջինը և վճռականը լինելու կոչված մի հարված հասցնել հայերին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

160 գարուն – ***<u>Բասենի ճ-մ</u>***[2]

> Մեծ Հայքի թագավորությանը մահացու հարված հասցնելու համար Սելևկյանների թագավորության արքա Դեմետրիոս I Սոտերը Փոքր Ասիայի հելլենիստական պետական միավորների մասնակցությամբ ստեղծեց հզոր մի դաշինք, ընդ որում այս անգամ նախատեսվել էր Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժումն իրականացնել արևմուտքից՝ շրջանցելով Մեծ Հայքի

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 47; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 35, գլուխ 1:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 54:

թագավորության Հարավային զորավարության ուժեղ բանակը: Այս ծրագիրը իրագործելու նպատակով Կապադովկիայի թագավորության տարածքում կենտրոնացած Սելևկյանների, Կապադովկիայի, Պերգամոսի, Բյութանիայի և Պաֆլագոնիայի թագավորությունների, ինչպես նաև Գալաթական տետրարխության միացյալ բանակը (մոտ 120.000) ***Կեսարիա-Կոմագենե-Ծոփք*** երթուղով ներխուժեց սկզբում Կոմագենեի, իսկ հետո՝ Ծոփքի թագավորության տարածք: Այս պայմաններում Կոմագենեի (մոտ 5.000) և Ծոփքի (մոտ 15.000) թագավորությունների միացյալ բանակը սկսեց մանր մարտերով նահանջել՝ ի վերջո անցնելով Մեծ Հայքի թագավորության տարածք: Արդյունքում, գետանցելով Եփրատը նրա վերին հոսանքներում, թշնամու բանակը ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք և ***Դերջան*** գավառով սկսեց առաջանալ դեպի ***Բասեն***: Ստեղծված իրավիճակում արքայազն Տիրանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության Արևմտյան զորավարության բանակը, խուսափելով կանոնավոր մարտից, սկսեց մարտերով նահանջել դեպի արևելք, բայց արդեն ***Բասենում*** թշնամուն դիմավորեց Արտաշես Ի-ի և նրա որդիների գլխավորած Մեծ Հայքի թագավորության կենտրոնացած բանակը (մոտ 70.000)՝ իր կազմում ունենալով Հյուսիսային, Արևելյան ու Արևմտյան զորավարությունների բանակները: Միաժամանակ այս ընթացքում արագացրած երթով հարավից մարտի դաշտին էր մոտենում Սմբատ Քաջ Բագրատունու գլխավորած Հարավային զորավարության (մոտ 30.000), ինչպես նաև Կոմագենեի և Ծոփքի թագավորությունների միացյալ բանակը:

I փուլ – Օրվա առաջին կեսին թշնամու բանակը վստահորեն սկսեց մարտը և անցավ հարձակման: Բռնկվեց համառ մարտ, որը տևեց մինչև օրվա երկրորդ կեսը: Ի վերջո, Հայկական բանակը սկսեց աստիճանաբար նահանջել:

II փուլ – Մարտադաշտ հասավ Մեծ Հայքի թագավորության Հարավային զորավարության, ինչպես նաև Կոմագենեի և Ծոփքի թագավորությունների միացյալ բանակը ու, ընթացքից մտնելով մարտի մեջ, կործանիչ հարված հասցրեց թշնամու բանակի աջ թևին՝ ծանր կորուստներ պատճառելով վերջինիս: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը, Հայկական բանակը անցավ համընդհանուր հարձակման:

III փուլ – Թշնամու բանակը ջախջախիչ պարտություն կրեց և դիմեց խուճապահար փախուստի: Հայկական բանակը հետապնդեց թշնամու բանակի մնացորդներին մինչև ***Կեսարիա*** և անխնա ոչնչացրեց:

Հայերը կորցրին մոտ 20.000, թշնամին՝ մոտ 60.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը հսկայական հետևանքներ ունեցավ: Արդյունքում՝ Սելևկյանների, ինչպես նաև Փոքր Ասիայի հելլենիստական թագավորությունները ստիպված եղան մեկընդմիշտ հրաժարվել Հայկական թագավորությունների նկատմամբ ոտնձգություններից՝ աստիճանաբար անկում ապրելով: Ավելին, այս ճակատամարտից անմիջապես հետո Հայկական բանակի վրեժխնդիր և պատժիչ արշավանք իրականացրեց դեպի Փոքր Ասիա[1]՝ վերջնականապես հստակեցնելով հարաբերությունները հելլենական աշխարհի հետ: Ավելացնենք, որ Պատմահոր կողմից արտացոլված և Արշակ Ի-ի որդի Արտաշեսի, և Սանատրուկի որդի Արտաշեսի գործունեության նկարագրություններում այս առումով ևս որևէ «վիպական» տարր չկա: Արդյունքում՝ ուղղակի պետք է նշել, որ տրամաբանական է և այն, որ Մեծ Հայքի թագավորությանը մահացու հարված հասցնելու համար Սելևկյանների թագավորությունը պետք է կենտրոնացներ փոքրասիական ողջ հելլենական և հակահայկական ռեսուրսը, և այն, որ դրանից հետո Հայկական պետությունները պետք է վրեժխնդիր լինեին հակառակորդին վերջիններիս տարածքների պատասխան

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 12, 54:

ասպատակումով, ինչն էլ արտացոլված է Մովսես Խորենացու մոտ՝ կիսված երկու Արտաշեսների գործունեության մեջ և շեշտադրված հատկապես Արշակ Ի-ի որդի Արտաշեսի մասին խոսելիս:

Հելլենական աշխարհը մահանում էր: Սկիզբ էին առնում նոր ժամանակներ:

Մաս VII
Հռոմեա-պարթևական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

Մ.թ.ա. 160 թվականի երկրորդ կեսին Արտաշես Ի-ի կնքեց իր մահկանացուն, որից հետո Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց նրա ավագ որդի Արտավազդը՝ Արտավազդ II-ը (մ.թ.ա. 160-116), որը, ի տարբերություն հոր, ներքին ներհակությունների ենթակա և պոռթկուն մի անձնավորություն էր: Այս առումով, սակայն, հայերի օգտին եղավ այնուհանդերձ այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ Հայաստանի սահմաններում իրավիճակը բավականին խաղաղվեց:

Դեմետրիոս I Սոտերի կողմից Հայոց պետական միավորների նկատմամբ ձեռնարկված վճռական հարձակման տապալումից հետո Սելևկյանների թագավորությունը սկսեց ահագնացող թափով անկում ապրել, ընդ որում արագացավ նաև մինչ այդ առանց այդ էլ անկման դրության մեջ գտնվող և իր հիմքում հույներին ունեցող հելլենական աշխարհի ընդհանուր անկումը: Հայերի դեմ անհաջող պատերազմ մղած սելևկյանների գահակալը դրանից հետո մի քանի տարի հանգիստ կառավարեց, սակայն մ.թ.ա. արդեն 152 թվականին նրա դեմ գահակալական մի պայքար բռնկվեց, որը գլխավորում էր իրեն որպես Անտիոքոս IV Եպիփանեսի որդի ներկայացնող, սակայն իրականում մի ինքնակոչ հանդիսացող ոմն Ալեքսանդր: Այս ինքնակոչը, սակայն, ստացավ Հռոմեական հանրապետության, ինչպես նաև Պտղոմյանների թագավորության աջակցությունը, ինչի արդյունքում մ.թ.ա. 150 թվականին հաղթանակ տարավ: Արդյունքում՝ հայերի դեմ այդքան եռանդուն, սակայն անհաջող պայքար մղած Դեմետրիոս I Սոտերը սպանվեց, իսկ Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց նույն ինքնակոչ Ալեքսանդրը՝ Ալեքսանդր I-ը (մ.թ.ա. 150-145): Սելևկյանների թագավորության գահին, սակայն, նոր արքայի դիրքերը ևս որևէ կերպ ամուր չէին և շուտով հենց վերջինսի դեմ գահակալական պայքար սկիզբ առավ, որը գլխավորում էր արդեն Դեմետրիոս I Սոտերի որդի Դեմետրիոսը, որն ինքն էլ այս անգամ ստացել էր Հռոմեական հանրապետության և Պտղոմյանների թագավորության աջակցությունը: Արդյունքում՝ մ.թ.ա. 145 թվականի մայիսի վերջին տեղի ունեցած վճռական ճակատամարտում Ալեքսանդր I-ը պարտություն կրեց և սպանվեց, որից հետո Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց Դեմետրիոսը՝ Դեմետրիոս II-ը (մ.թ.ա. մ.թ.ա. 145-139, 129-126):

Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ նույն այն ճակատամարտում, որը Դեմետրիոս II-ին գահ բերեց, չնայած իր համար հաջող ելքին, Պտղոմեոս VI-ը ծանր վերք ստացավ և մ.թ.ա. 145 թվականի հունիսի սկզբին կնքեց իր մահկանացուն, որից հետո Պտղոմյանների թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի, փոքրահասակ Պտղոմեոս VII-ը (մ.թ.ա. 145): Արդեն տարվա վերջին, սակայն, վերջինս սպանվեց և Պտղոմյանների թագավորության արքա հռչակվեց Պտղոմեոս VI-ի եղբայր Պտղոմեոս VIII-ը (մ.թ.ա. 145-116): Պտղոմյանների թագավորության հերթական արքան աչքի ընկավ ամենից առաջ իր դաժանությամբ, իսկ նրա օրոք էլ Պտղոմյանների թագավորությունը շարունակեց անշեղորեն թուլանալ: Այսպիսով՝ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում հունական հիմք ունեցող իր ժամանակի հելլենական առաջատար երկու պետական միավորներն էլ գտնվում էին անկման մեջ և աստիճանաբար տեղի էին տալիս Հռոմեական հանրապետությանը, ընդ որում Մակեդոնական թագավորությունն էլ իր հերթին արդեն երկու տասնամյակ էր, որ, ըստ էության, ուղղակի ոչնչացված էր: Ինչ վերաբերում է հելլենական փոքրասիական պետական միավորներին, ապա սրանց մոտ ընդհանուր անկումն և կախվածությունը պաշտոնական Հռոմից նույն այս ժամանակ արդեն այն աստիճանի էր հասել, որ քաղաքական օրակարգ էր մտել նրանց նույնիսկ

ուղղակի կցումը Հռոմեական հանրապետությանը՝ ինչպես, արդեն, թերևս, զուտ միայն իրավաբանական մակարդակում, եղավ Մակեդոնական թագավորության պարագայում մ.թ.ա. նույն 146 թվականին:

Մ.թ.ա. 145 թվականին, մինչ սելևկյան տիրակալները խրված էին գահակալական մահացու պայքարում, Քուշանական թագավորությունը ծանր հարված հասցրեց Հունա-Բակտրիական թագավորությանը և, ըստ էության, ոչնչացրեց այն, որից հետո օրակարգ մտավ պատերազմը արդեն Հունա-Հնդկական թագավորության դեմ: Այս առումով հարկ է նշել նաև, որ Հունա-Բակտրիական թագավորության անկումից հետո վերջինիս արևմտյան որոշ տարածքներ անցան Պարթևական թագավորությանը, ինչն էլ վերջնականապես փչացրեց Քուշանական թագավորության հարաբերությունները նաև Պարթևական թագավորության հետ:

Դեմետրիոս II-ի հաստատվելը Սելևկյանների թագավորության գահին որևէ կերպ չկայունացրեց Սելևկյանների թագավորության ներքին դրությունը, քանի որ նույն այս ժամանակ Հարավային Ասորիքում Ալեքսանդր I-ի զորավարներից մեկը հանդիսացող Դիոդոտոս Տրիֆոնը արքա հռչակեց Ալեքսանդր I-ի փոքրահասակ որդի Անտիոքոս VI-ին (մ.թ.ա. 146-138): Այս պայմաններում արևելյան հոգսերը կրկին մոռացվեցին և Դեմետրիոս II-ի ներքաղաքական օրակարգ մտավ գահակալական հենց այս խնդրի լուծումը, ինչի ուղղությամբ, սակայն, իրական քայլեր անել վերջինս այդպես էլ չհասցրեց:

Իրոք, մ.թ.ա. արդեն 141 թվականի գարնանը Միհրդատ I-ի գլխավորած Պարթևական թագավորության 150.000 հոգանոց բանակը լայնածավալ հարձակման անցավ Իրանական լեռնաշխարհի կենտրոնական հատվածի ուղղությամբ, իսկ արդեն ամռան սկզբի վիճակով էլ վերջինս տիրել էր ողջ Միջագետքին: Պարթևական ռազմական մեքենայի հիմնական ուժերի շեղումը դեպի արևմուտք, սակայն, իր հետևանքներն այնուհանդերձ ունեցավ և արդյունքում մ.թ.ա. նույն 141 թվականի աշնանը Քուշանական թագավորության ռազմական մեքենան իր հերթին հարված հասցրեց Պարթևական թագավորության արևելյան շրջաններին: Որպես հետևանք անակնկալ այս զարգացման՝ Միհրդատ I-ը, տեղում ուժեղ կայազորային ուժեր թողնելով, իր հիմնական բանակային մեքենայով շարժվեց Քուշանական թագավորության ռազմական մեքենայի ուղղությամբ, որի դեմ մարտերը ձգվեցին մ.թ.ա. ողջ 140 թվականը, ինչպես նաև ընդգրկեցին մ.թ.ա. 139 թվականի հիմնական մասը: Մ.թ.ա. 139 թվականի սկզբին Դեմետրիոս II-ն իր հերթին, օգտվելով Քուշանական թագավորության դեմ Պարթևական թագավորության բանակի հիմնական ուժերի զբաղված լինելու հանգամանքից, բավականին մեծաքանակ մի բանակով հակահարձակման անցավ Միջագետքի ուղղությամբ, սակայն Քուշանական թագավորության դեմ պայքարն հաջողությամբ ավարտած և կրկին Միջագետքին մոտեցող Միհրդատ I-ի հարվածային բանակի դեմ հետագա ճակատամարտում Սելևկյան անհաջողական այս գահակալը ոչ միայն պարտություն կրեց, այլև գերի ընկավ, իսկ Պարթևական թագավորությունն էլ կրկին տիրեց Միջագետքին: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Միհրդատ I-ը ոչ միայն խիստ չվարվեց սելևկյան գերված գահակալի հետ, այլև նրան որպես կին տվեց սեփական աղջկան՝ ակնհայտորեն նախատեսելով հետագա իր նվաճումներում օգտագործել այս հանգամանքը:

Դեմետրիոս II-ի գերվելու հետո Սելևկյանների թագավորության նոր արքա հռչակվեց նրա եղբայր Անտիոքոս VII Սիդեացին (մ.թ.ա. 139-129), որին, սակայն, բավականին ծանր մի ժառանգություն էր հասել: Արդյունքում՝ սելևկյան նոր տիրակալը, առժամանակ զգուշանալով ընդհարվել Պարթևական թագավորության հետ, որոշեց ամրանալ գոնե Ասորիքում, ընդ որում Անտիոքոս VII Սիդեացու օգտին եղավ այն հանգամանքը, որ մ.թ.ա. 138 թվականի վերջի վիճակով Անտիոքոս VI-ն արդեն կենդանի չէր, իսկ Դիոդոտոս Տրիֆոնն էլ ինքնասպան էր եղել: Ամրանալով Ասորիքում՝ Անտիոքոս VII Սիդեացին պատերազմական գործողություններ սկսեց մ.թ.ա. 140 թվականին իր հերթին անկախացած Հուդայի թագավորության դեմ, սակայն մ.թ.ա. 134 թվականին այս պատերազմն ավարտվեց փոխադարձ զիջումներով և առանց էական արդյունքի:

Մ.թ.ա. 138 թվականի վերջում Միհրդատ I-ը, որն այս ժամանակ արդեն իսկ հասցրել էր ամրանալ նաև Պարսքում և սեփական տիրապետությունը հաստատել գործնականում ողջ Իրանական լեռնաշխարհի նկատմամբ, կնքեց իր մահկանացուն, որից հետո Պարթևական թագավորության նոր արքա դարձավ նրա երիտասարդ որդի Հրահատ II-ը (մ.թ.ա. 138-128): Արդյունքում, հաշվի առնելով երկաթյա Միհրդատ I-ի փոխարինվելը երիտասարդ Հրահատ II-ով, Անտիոքոս VII Սիդեացին որոշեց վերսկսել պայքարը Միջագետքի համար:

Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 129 թվականի ամռանը Անտիոքոս VII Սիդեացին ոտքի հանեց 120.000 հոգանոց բավականին մեծաքանակ, սակայն վատ կազմակերպված ու կառավարվող մի բանակ և, ինչպես դրանից տասնմեկ տարի առաջ վարվել էր իր եղբայրը, հարձակման անցավ Միջագետքի ուղղությամբ: Տարին, սակայն, ավարտվում էր և սելևկյանների ռազմական մեքենան, մի քանի մանր հաղթանակներ տանելով Պարթևական թագավորության կայազորային ուժերի նկատմամբ, ցրեց ուժերն ու տեղավորեց դրանք ձմեռոցներում: Շուտով պարզվեց, սակայն, որ ամեն ինչ չէ, որ այդքան պարզ է, իսկ տեղական հելլենական տարրն էլ, որը Սելևկյանների բանակի հայտնվելը սկզբում որպես ազատագրում էր ընկալել, տեղական ոչ հունական այլ տարրի հետ միասին այժմ պատվել է խորը դժգոհությամբ, քանի որ ձմեռոցներում հաստատված վարձկան ռազմիկները սկսել էին գրեթե օրինական տեսք ստացած թալան իրականացնել: Այսպիսով՝ տեղական բնակչությունը լուրջ դժգոհությամբ լցվեց, իսկ, այն բանից հետո էլ, երբ Միջագետքին սկսեց մոտենալ Պարթևական թագավորության հարվածային բանակը, այստեղ արդեն մի իսկական ապստամբություն բռնկվեց: Որպես հետևանք այս ամենի՝ ապստամբները, միացած Միջագետք ներխուժած արդեն նաև Պարթևական թագավորության ռազմական մեքենայի հետ, ուղղակի ոչնչացրին ուժերն այդպես էլ վերամիավորել չհասցրած Անտիոքոս VII Սիդեացու ռազմական մեքենան, ընդ որում Սելևկյան անհաջողակ այս գահակալն ինքը մարտերից մեկում սպանվեց, իսկ Պարթևական թագավորությունն էլ արդյունքում կրկին տիրեց Միջագետքին:

Դեռևս Անտիոքոս VII Սիդեացու հաջող հակահարձակման օրերին Հրահատ II-ը, հույս ունենալով Սելևկյանների մոտ գահակալական ճգնաժամ առաջացնել, գերությունից ազատել էր Դեմետրիոս II-ին և ուժեղ հսկողության տակ ուղարկել էր Միջագետք: Այժմ, սակայն, երբ Սելևկյանների թագավորության ռազմական մեքենան ծանր պարտություն էր կրել, կարծես թե, վերացել էր անհրաժեշտությունը վերջնական ազատություն պարգևել Դեմետրիոս II-ին: Վերջինս, սակայն, նույն այս ժամանակ ինքը հաջող փախուստի դիմեց և, խուսափելով հետապնդումից, ապաստանեց Սելևկյանների թագավորության տարածքում, որտեղ էլ ստանձնեց երկրի կառավարումը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Դեմետրիոս II-ին արդեն իրոք որ ոչ նախանձելի մի ժառանգություն էր բաժին հասել, երբ Սելևկյանների թագավորությունն այժմ սահմանափակվում էր ընդամենը միայն Հյուսիսային և Կենտրոնական Ասորիքով ու Կիլիկիայով, ընդ որում վերջին երկրամասում Դեմետրիոս II-ի իշխանությունը մեծապես ձևական էր և այստեղ տնօրինություն էին անում ծովահենները: Իր հերթին հենց այս ժամանակ էր, որ վերջնական անկախություն հռչակեց Հուդայի թագավորությունը, իսկ Հայոց Միջագետքում էլ ստեղծվեց Հայոց Միջագետքի թագավորությունը, որի առաջին և հիմնադիր արքա հանդիսացավ Արան (մ.թ.ա. մոտ 129-120): Այսպիսով՝ Դեմետրիոս II-ը ոչ միայն որևէ հնարավորություն չուներ վերականգնել իր իշխանությունը կորսված տարածքների նկատմամբ, այլև նա լուրջ խնդիրներ ուներ նույնիսկ իր ձեռքի տակ մնացած Սելևկյանների թագավորության վերջին տարածքներում ամուր իշխանություն ունենալու առումով:

Ավելին, ստանձնելով գահը՝ Դեմետրիոս II-ն անզգուշություն ունեցավ միջամտել Պտղոմեոս VIII-ի դեմ ընթացող գահակալական հերթական ելույթներից մեկին, ինչի արդյունքում Պտղոմյան գահակալն ինքը Սելևկյանների թագավորության արքա հռչակեց իրեն որպես Անտիոքոս VII Սիդեացու որդի ներկայացնող ոմն Ալեքսանդրի, որը զինված

պայքար սկսեց Դեմետրիոս II-ի դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 126 թվականին Դեմետրիոս II-ը ծանր պարտություն կրեց և սպանվեց, իսկ Սելևկյանների թագավորության արքա էլ հռչակվեց այս Ալեքսանդրը՝ Ալեքսանդր II-ը (մ.թ.ա. 126): Նույն այս ժամանակ, սակայն, Դեմետրիոս II-ի կին Կլեոպատրան Սելևկյանների թագավորության արքա հռչակեց իր և Դեմետրիոս II-ի որդի Սելևկոս V-ին (մ.թ.ա. 126-125), որին, սակայն, հենց ինքն էլ մյուս տարի թունավորեց ու սպանեց, որից հետո արքա հռչակեց իր մյուս որդի Անտիոքոս VIII-ին (մ.թ.ա. 125-116, 116-96՝ համիշխան): Մ.թ.ա. 123 թվականին Անտիոքոս VIII-ին հաջողվեց պարտության մատնել ու սպանել Ալեքսանդր II-ին և ի վերջո ամրանալ Սելևկյանների թագավորության գահին, սակայն նույն այս ժամանակ Սելևկյանների թագավորությունն ինքը վաղուց արդեն դադարել էր իրենից նույնիսկ տարածաշրջանային ուժ ներկայացնել: Այս անգամ ևս, սակայն, արտաքին զարգացումները որոշակիորեն Սելևկյանների թագավորության օգտին եղան՝ հետաձգելով այս թագավորության վերջնական անկումը:

Մ.թ.ա. 129 թվականի արժանահիշատակ իրադարձությունների ժամանակ Հրահատ II-ը, վստահ չլինելով սեփական հնարավորություններին, օգնության էր կանչել Քուշանական թագավորության զգալի ուժեր, սակայն արդյունքում այնպես ստացվեց, որ, մինչ քուշանական օժանդակ ուժերի տեղ հասնելը, պարթևական թագավորության ռազմական մեքենան ինքն արդեն իսկ հաղթանակ էր տարել հակառակորդի նկատմամբ: Այս ամենի արդյունքում արդեն պատերազմական գործողությունների հաջող ավարտից հետո Պարթևական և Քուշանական թագավորությունների հարաբերությունները վերջնականապես հանգեցին ճգնաժամի, քանի որ հիշատակված երկու թագավորություններից վերջինը ավարի իր բաժինն էր պահանջում, սակայն Հրահատ II-ը, ինչ-որ տեղ արդարացիորեն մատնանշելով այն հանգամանքը, որ պատերազմական գործողությունների ծանրությունն իր վրա տարել է միայն ինքը, հրաժարվում էր այդ պահանջը կատարել: Այսպիսով, որևէ կերպ չկարողանալով համաձայնության գալ, կողմերը զենքի դիմեցին: Արդյունքում՝ Քուշանական թագավորություն հարվածային բանակը ներխուժեց Պարթևական թագավորության տարածք և տեղի ունեցած խոշոր ճակատամարտում ծանր պարտության մատնեց Պարթևական թագավորության բանակին, ընդ որում Հրահատ II-ն ինքն էլ ընկավ մարտում:

Հրահատ II-ի զոհվելուց հետո Պարթևական թագավորության արքա հռչակվեց Միհրդատ I-ի հորեղբայր, Հրահապատի որդի Արտավան II-ը (մ.թ.ա.129-123), որը, իրար բերելով ծանր հարված ստացած Պարթևական թագավորության ռազմական մեքենան, շարունակեց պայքարը Քուշանական թագավորության դեմ՝ բնականաբար որևէ հնարավորություն չունենալով ակտիվանալ Արևմուտքում: Արդյունքում՝ Արտավան II-ը, չնայած չհասավ վերջնական կամ վճռական հաջողության, սակայն այնուհանդերձ զգալիորեն կասեցրեց Քուշանական թագավորության ռազմական մեքենայի առաջխաղացումը: Հենց այս պայմաններում էլ, սակայն, մ.թ.ա. 123 թվականին տեղի ունեցած մարտերից մեկում ստացած վերքից Արտավան II-ը կնքեց իր մահկանացուն, որից հետո Պարթևական թագավորության արքա հռչակվեց նրա որդի Միհրդատ II Մեծը (մ.թ.ա. 123-87): Պարթևական թագավորության նոր այս գահակալին էլ հենց, որը մի ուժեղ և եռանդուն անձնավորություն էր, ի վերջո հաջողվեց ամրապնդել դեռևս հոր օրոք ձեռք բերած հաջողությունները և քիչ թե շատ հավասարակշռություն հաստատել Քուշանական թագավորության հետ հարաբերություններում: Հարկ է նշել, սակայն, որ Միհրդատ II Մեծի վիճակը, համենայն դեպս իր թագավորության գոնե սկզբնական տարիներին, այնուհանդերձ ամենևին էլ թեթև չէր:

Իրոք, պատերազմական վերջին տարիները բավականին ծանր էին նստել Պարթևական թագավորության հենց միայն ռազմական մեքենայի վրա, սակայն եղել էին նաև քաղաքական հետևանքներ, երբ Միջագետքը հերթական անգամ դուրս էր եկել հսկողությունից, իսկ Հարավային Միջագետքում էլ նույն այս տարիներին ստեղծվել էր իր բնույթով արաբական Քարակենեի թագավորությունը: Խնդիրը կայանում էր նրանում, որ

վերջին մեկ հարյուրամյակում երկրագնդի միջին ջերմաստիճանը շարունակում էր աճ ապրել, Մեծ անապատում բնակության պայմանները սկսել էին ծանրանալ, իսկ այստեղ գտնվող մարդկային խմբերն էլ աստիճանաբար սկսել էին կրկին ուղիներ որոնել այն լքելու համար: Միջագետքում դա արտահայտվեց Քարակենեի թագավորության ստեղծումով, Հարավային Ասորիքում նույն այս ժամանակ ստեղծվեց Նաբաթեական թագավորությունը, դե իսկ արաբական տարրն էլ իր հերթին սկսեց աստիճանաբար տարածվել Ասորիքի ավելի հյուսիս ընկած շրջաններում: Արդյունքում՝ Միհրդատ II Մեծն իր առջև առաջնային խնդիր դրեց ամենից առաջ կարգավորել հարաբերությունները Քուշանական թագավորության հետ, ընդ որում Պարթևական թագավորության ռազմական մեքենայի կողմից մարտի դաշտում ձեռք բերած հաջողությունները մեծապես նպաստեցին այս հանգամանքին: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ ուժեղ դիմադրություն ցույց տվող Պարթևական թագավորության հետ հետագա ընդհարումից աստիճանաբար սկսեցին խուսափել նաև Քուշանական թագավորությունում, որի արևելյան սահմաններին նույն այս ժամանակ իր հերթին սկսել էր մոտենալ Կաշագարյան հարթավայրում ամուր կերպով հաստատված Հանի տերությունը: Իրոք, Հանի տերությունը, չնայած ծանր կորուստներ արժեցած պատերազմական գործողություններին, նույն այս ժամանակ այնուհանդերձ լուրջ հաջողությունների էր հասել Հուննուական տերության դեմ պայքարում, դեպի հյուսիս հետ էր մղել վերջինիս, մոտեցել էր Քուշանական թագավորության արևելյան սահմաններին և այժմ ամենևին էլ բացառված չէր, որ այն կարող էր սկսել հավակնություններ դրսևորել նաև Քուշանական թագավորության նկատմամբ: Այսպիսով՝ մի կողմից Պարթևական թագավորության ուժեղացած դիմադրությունը, իսկ մյուս կողմից էլ Հանի տերության կողմից Քուշանական թագավորության արևելյան սահմաններին առաջացրած ապագա հնարավոր վտանգը Քուշանական թագավորության արևմտյան սահմաններում ի վերջո բերեցին պատերազմական գործողությունների ավարտի:

Արևելքում գործերը կարգավորելուց հետո Միհրդատ II Մեծը ձեռք բերեց ևս մեկ և այս անգամ արդեն դիվանագիտական հաջողություն՝ ի վերջո, ըստ էության, հասնելով նրան, որ Քուշանական թագավորությունն իր հարվածային եռանդը այդուհետ ուղղի դեպի հարավ-արևելք ու հարված հասցի Հունա-Հնդկական թագավորությանը: Վերջին հանգամանքն իր հերթին արդեն Պարթևական թագավորությանը հնարավորություն ընձեռեց, վերջնականապես հանգիստ լինելով թիկունքից, ի վերջո լուծել սեփական արևմտյան խնդիրները: Արդյունքում, սկսած մ.թ.ա. արդեն 125 թվականից, Քուշանական թագավորությունը սկսեց հետևողական հարվածներ հասցնել Հունա-Հնդկական թագավորությանը, թեև, ի պատիվ տեղի հելլեն տիրակալների պետք է ասել, որ տեղական բնակչության հելլենականացման արդյունքում վերջիններիս իրենց թագավորության սահմաններում նույն այս ժամանակ արդեն իսկ հաջողվել էր դիմադրական բավականին ուժեղ հնարավորություններ ստեղծել: Արդյունքում՝ պատերազմական գործողությունները ձգձգվեցին երկար տասնամյակներ և, թեև դրանք հիմնականում ընթանում էին Քուշանական թագավորության ռազմական մեքենայի առավելությամբ, այնուհանդերձ վերջինս ստիպված էր մշտապես գամված մնալ այս ուղղությամբ, ինչը գործնականում վերացրեց դեպի արևմուտք հարված հասցնելու Քուշանական թագավորության տիրակալների և հնարավորությունը, և՝ ցանկությունը:

Գլուխ 2
Հայ և Պարթև Արշակունիների ներհակությունը

Եվ այսպես, ամուր խաղաղություն հաստատած սեփական թագավորության արևելյան սահմաններին, Միհրդատ II Մեծը հարձակման անցավ արևմտյան ուղղությամբ և մ.թ.ա. 120 թվականի վիճակով վերջինս արդեն ոչ միայն վերջնականապես վերատիրել էր Միջագետքին, այլև Պարթևական թագավորության գերիշխանությանն էր

ենթարկել նաև Քարակենեի թագավորությանը: Արևմուտքում Պարթևական թագավորության հաջորդ հակառակորդն Անտիոքոս VIII-ի կողմից գլխավորվող և արդեն վաղուց իր տերունական կարգավիճակը կորցրած կրկին նույն Սելևկյանների թագավորությունն էր, սակայն մինչ այդ իրենց կարգավորմանն էին սպասում արդեն նաև Պարթևական թագավորության հարաբերությունները Մեծ Հայքի թագավորության հետ, որտեղ, փոթորկուն այս տասնամյակների հիմնական իրադարձությունները մի կողմ թողած, հաջողությամբ իր գահակալման վերջին էր մոտենում Արտավազդ II-ը:

Արդյունքում՝ մ.թ.ա. 116 թվականի գարնանը Ուրմիա լճի ճ-մ-ում Արտավազդ II-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 80.000) հաղթեց Պարթևական թագավորության բանակին (մոտ 90.000)[1]: Այսպիսով՝ ռազմական ոլորտում հոր արժանի հետնորդը հանդիսացած Արտավազդ II-ին իր կյանքի ամենավերջում հաջողվեց հետ մղել հարվածը, սակայն մ.թ.ա. արդեն 116 թվականի մայիսին Հայոց ուշագրավ այս արքան, որը ժառանգ չուներ, որսի ժամանակ անհետ կորավ և, ենթադրելով, թե նա հրաժեշտ է տվել կյանքին, հայերը Մեծ Հայքի թագավորության արքա հռչակեցին վերջինիս եղբայր Տիրանին՝ Տիրան I-ին (մ.թ.ա. 116-95): Իր հերթին, սակայն, օգտվելով հայերի մոտ գահակալի փոփոխությամբ պայմանավորված որոշակի անկայուն դրությունից, Միհրդատ II Մեծը կրկին հարձակման նետեց մինչ այդ անհաջողության մատնված սեփական ռազմական մեքենան:

Արդյունքում՝ մ.թ.ա. 116 թվականի ամռանը Ուրմիա լճի ափերի տեղի ունեցած նոր ճակատամարտում Պարթևական թագավորության բանակը (մոտ 100.000) հաղթեց Տիրան I-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակին (մոտ 80.000): Որպես հետևանք այս ամենի՝ կնքվեց հաշտություն, ի կատարումն որի պայմանների էլ Տիրան I-ի յոթնամյա որդի Տիգրանը պատանդ տրվեց Պարթև Արշակունիներին[2]: Հիշատակված իրադարձությունները, սակայն, կարիք ունեն լրացուցիչ լուսաբանման և, մինչև առաջ անցնելը, չի խանգարի այս մասին մի քանի խոսք ավել ասել:

Այս առումով ամենից առաջ հետաքրքիր է տարածաշրջանային քաղաքականության, հայ-պարթևական հարաբերությունների վրա ազդած և նախորդ ուսումնասիրողների կողմից չքննարկված այն հարցը, թե ի՞նչն ի վերջո հանգեցրեց նախորդ հարյուրամյակում այդքան սերտ համագործակցության մեջ գտնվող ու տոհմակից արքայատոհմերի կողմից կառավարվող երկու թագավորությունների հարաբերությունների ոչ միայն վատթարացմանը, այլև՝ նրանց բախմանը: Խնդիրն իրականում կայանում էր նրանում, որ Հայ ու Պարթև Արշակունիների հարաբերություններն առաջին հարվածը ստացել էին դեռևս այն փաստով, որ Արտաշես I -ը, արքայական գահին հասնելով Պարթևական թագավորության աջակցությամբ, այնուհանդերձ, թեկուզ և վերջինիս լուռ համաձայնությամբ, իր իշխանության առաջին 11 տարիներին ընդունել էր Սելևկյանների թագավորության գերիշխանությունը: Այս առումով իր դերն ունեցավ նաև այն հանգամանքը, որ, դառնալով այնպիսի լայնարձակ և հզոր թագավորության մի արքա, ինչպիսին Մեծ Հայքի թագավորությունն էր, ինչպես նաև իրենց ազդեցության տակ ունենալով ողջ Հայաստանը, Արտաշես I-ն ու նրա հաջորդները, ինչքան էլ մեծ տեղ տային ազգակցական կապերին, այնուհանդերձ որևէ հիմք չպետք է տեսնեին ընդունելու Պարթևական թագավորության առաջնայնությունը:

Իրոք, ըստ քաղաքագիտության ընդհանուր կանոնների, նոր պայմաններում վերջիններս պետք է ձգտեին ոչ միայն պահպանել իրենց պետության ինքնուրույնությունը և ինքնիշխանությունը, այլ նաև՝ նրա շահերը, որոնք հաճախ կարող էին նաև չհամընկնել Պարթևական թագավորության շահերի հետ: Իր հերթին մ.թ.ա. II դարի երկրորդ կեսում, Սելևկյանների թագավորության ավելի ու ավելի թուլացման պայմաններում, Մեծ Հայքի թագավորության համար սպառնալիքը հարավից մի կողմից արդեն մեծապես կորցնում էր իրականության գծերը, իսկ մյուս կողմից էլ Մեծ Հայքի

[1] Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 2:
[2] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 16, գլուխ 1, մաս 19:

թագավորությունը Մերձավոր և նույնիսկ Միջին Արևելքում սկսել էր աստիճանաբար դառնալ Պարթևական թագավորության մրցակիցը: Այս ամենին, սակայն, գումարվեց նաև մեկ այլ հանգամանք:

Բանն այն է, որ Արշակ I Քաջից հետո Պարթևական թագավորության գահն անցավ ոչ թե վերջինիս անմիջական սերունդներին, այլ՝ Պարթևական թագավորության հիմնադիր արքայի եղբայր Տրդատ I-ին և նրա սերունդներին, որին ի պատասխան Արշակ I Քաջի սերունդները սկսեցին ոչ բացահայտ, սակայն անզիջում կերպով պայքար մղել իրենց գահակալական իրավունքների վերականգնման համար՝ մի պայքար, որն իր գագաթնակետին հասավ մ.թ.ա. հենց II դարի վերջում[1]: Ահա հենց այս ամենով է բացատրվում Հայ և Պարթև Արշակունիների հարաբերությունների աստիճանական վատթարացումը, քանի որ, եթե Վաղարշակ I-ը սկզբում բարոյապես, իսկ հետագայում որոշ չափով նաև քաղաքականապես, ընդունում էր եղբայրների մեջ ավագն ու առաջնորդը համարվող Արշակ I Քաջի առաջնայնությունը, ապա այժմ արդեն և ոչ մի հիմք չկար ընդունելու Տրդատ I-ի սերունդների առաջնայնությունը, քանի որ Տրդատ I-ն երբեք էլ նույնիսկ բարոյական առաջնայնություն չէր ունեցել Վաղարշակ I-ի նկատմամբ: Կարելի է ենթադրել, որ հարաբերությունների արդեն իսկ խիստ վատթարացման այս ֆոնի վրա բանը հասել է բացահայտ բախման այն բանից հետո, երբ Հայ Արշակունիները որևէ կերպ օժանդակել են գահի համար պայքար մղող Արշակ I Քաջի հետնորդներից որևէ մեկին:

Մինչև առաջ անցնելը, սակայն, մի պահ ևս հապաղենք և քննարկենք Մեծ Հայքի ու Պարթևական թագավորությունների բանակների միջև տեղի ունեցած ընդհարման թվականը, որը ևս լրացուցիչ պարզաբանման կարիք ունի: Այս առումով խնդիրը լուսաբանելու համար մենք պետք է անդրադարձ կատարենք և Արտավազդ II-ի կառավարման վերջին տարիներին, և նրա եղբայր ու հաջորդ Տիրան I-ի կառավարման շրջանին, և վերջինիս որդի Տիգրան II Մեծի (մ.թ.ա. 95-38) կառավարման առաջին շրջանին:

[1] Пилипко В.Н. “Нисийские документы и некоторые проблемы генеалогии Аршакидов” // Центральная Азия. Источники, история, культура. М., 2003, стр. 123-125.

Գլուխ 3
Մեծ Հայքի ու Պարթևական թագավորությունների բանակների միջև տեղի ունեցած ընդհարման թվագրման հարցը

Տիգրան II Մեծի գահակալման շրջանն ուսումնասիրողների և ուսումնասիրությունների պակաս երբեք չի ունեցել: Խնդրին անդրադարձել են ինչպես հայազգի, այնպես էլ օտարազգի մասնագետները, ընդ որում ուսումնասիրությունները շարունակում են լույս աշխարհ գալ արդեն 150 տարուց էլ ավել: Հայոց մեծագույն այս տիրակալի թագավորության շատ ու շատ իրադարձություններ հիանալի կերպով լուսաբանված են, բայց, դրանով իսկ հանդերձ, կան նաև իրադարձություններ, որոնք դեռևս կարիք ունեն լուսաբանման[1]: Այս առումով կարծում եմ, որ ամենից առաջ անհրաժեշտ է քննարկել Տիգրան II Մեծի ծննդյան թվականի հարցը, որն էլ մեզ կօգնի պարզաբանել նաև հայ-պարթևական առաջին ընդհարման տարին:

Խնդիրը կայանում է նրանում, որ, քանի որ Տիգրան II Մեծի մասին տեղեկությունները հիմնականում հայտնվում են հունահռոմեական աղբյուրներում, իսկ նրանց ուշադրության կենտրոնում էլ մեր մեծագույն արքաներից այս մեկը հայտնվում է արդեն բավականին հասուն տարիքում, վերջինիս կյանքի սկզբնական տարիների և, հատկապես, ծննդյան թվականի մասին հստակ տեղեկություններ չկան: Այս առումով արվել են տարբեր ենթադրություններ, թեև ի վերջո մասնագետների մեծ մասը կանգ է առել մ.թ.ա. 140 թվականի վրա[2] և այդ տեսակետն է նաև, որ այժմ, ըստ էության, գտնվում է շրջանառության մեջ[3]: Կարծում եմ, սակայն, որ այս կարծիքի վերանայման համար որոշակի հիմքեր այնուհանդերձ կան:

Տիգրան II Մեծի ծննդյան թվականի մասին առկա են երկու քիչ թե շատ հստակ տեղեկություններ, ինչպես նաև մի քանի ակնարկներ: Այսպես, համաձայն Հուստինոսի. «*Արտավանին հաջորդեց նրա որդին՝ Միհրդատը, որն իր գործերի համար կոչվեց Մեծ...: Սա... վերջը կռվեց հայերի թագավոր Արտավազդի հետ*»[4]: Այսպիսով՝ առկա է հաղորդում պարթևական Միհրդատ անունով մի արքայի մասին, որը կռվել է Արտավազդ անունով Հայոց արքայի՝ Արտավազդ II-ի, հետ: Խնդիրը, սակայն, բարդանում է նրանով, որ քննարկվող ժամանակաշրջանում առկա են «Միհրդատ» անունով պարթևական միանգամից երկու արքաներ, որոնց իրավական նախնիները, հակառակի նման, կրել են «Արտավան» անունը, ընդ որում խնդիրն եռակի է բարդանում այն բանի պատճառով, որ երկու «Միհրդատներ»-ն էլ իրենց ողջ գործունեության արդյունքում կարող են հավակնել «Մեծ» տիտղոսին: Այսպիսով՝ խոսքը վերաբերում է Պարթևական թագավորության արքաներ Արտավան I-ին և Արտավան II-ին, ինչպես նաև Միհրդատ I-ին ու Միհրդատ II-ին և ահա մասնագետների մեծ մասը հակված է այն բանի օգտին, որ ողջ այս հատվածում խոսքը գնում է Արտավան I-ին ու Միհրդատ I-ի մասին, իսկ հաղորդումն էլ կարող է արտահայտել մ.թ.ա. 141-139 թվականների մոտակայքում տեղի ունեցած դեպքերը՝ կապված դեպի արևմուտք Պարթևական թագավորության առաջին լուրջ առաջխաղացման տարիների իրադարձությունների հետ, որոնք արդեն քննարկվեցին: Սա, սակայն, կարծում եմ, որ թյուրիմացության արդյունք է, քանզի Արտավան I-ն ամենևին էլ Միհրդատ I-ի հայրը չէր, այլ նրա պապն էր: Իրոք, Միհրդատ I-ի հայրը Պարթևական թագավորության արքա Հրահապատն էր, իսկ Միհրդատ I-ն ինքն էլ հաջորդել էր եղբորը՝ Հրահատ I-ին: Այս առումով հատկանշական է և խնդրին վերջնական լուծում է տալիս այն

---

[1] Թեմային նվիրված հայազգի ուսումնասիրողների գործերից մասնավորապես տես՝ Մանանդյան Հ. Հ. «Տիգրան երկրորդն և Հռոմը», Երևան 1972 (ռուսերեն թարգմանությունը հրատարակվել է Երևանում 1943 թ-ին, ֆրանսերենը՝ Լիսաբոնում 1963 թ-ին); Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 1, Երևան 1977; Ադոնց Ն. «Տիգրան II Մեծ», Երևան 2010; Հրանդ Ք. Արմեն «Մեծն Տիգրան», Անթիլիաս 1947; Հակոբյան Հ. Պ. «Տիգրան II Մեծ», Երևան 2005; Մանասերյան Ռ. Լ. «Տիգրան II Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան 2007; Մովսիսյան Ա. Ե. «Տիգրան II Մեծ», Երևան 2010 և այլն:

[2] Մասնավորապես տես՝ Ադոնց Ն. «Տիգրան II Մեծ», Երևան 2010, էջ 35; Մանասերյան Ռ. Լ. «Տիգրան II Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան 2007 էջ 30 և այլն:

[3] Տես օրինակ՝ Դեմոյան Հ. «Հայոց պատերազմներն և ռազմարվեստը Տիգրան II Մեծի օրոք», Երևան 2013, էջ 6 և այլն:

[4] Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 2:

հանգամանքը, որ Հուստինոսն ինքն իր երկի հիշատակված հատվածում նկատի ունի Արտավան II-ին, այլ ոչ թե Արտավան I-ին, քանզի արված նախորդ ողջ նկարագրությունը վերաբերում է հենց Արտավան II-ին: Կա, սակայն, նաև մեկ այլ հանգամանք:

Ստրաբոնը հայտնում է. «*Պարթևները տիրեցին մարերի և բաբելոնացիների երկրներին, բայց ոչ՝ Հայաստանին: Իրոք, թեև հարձակումներ հաճախ տեղի ունեցան, սակայն երկիրն ուժով չնվաճվեց, ընդհակառակը, Տիգրանը զորեղ կերպով դիմադրեց և հաղթեց նրանց, ինչպես մենք ասացինք Հայաստանի մասում*»[1]՝ «Տիգրան» անվան տակ նկատի ունենալով Տիրան I-ին՝ Տիգրան II Մեծի հորը: Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ մասնագիտական գրականության մեջ փաստորեն տիրում է այն կարծիքը, թե Հուստինոսի և Ստրաբոնի այս հաղորդումներն, ըստ էության, վերաբերում են միևնույն իրադարձությանը, սակայն, ինչպես ակնհայտ է դրանց ուշադիր վերլուծությունից, այստեղ խոսք կարող է գնալ տարբեր իրադարձությունների մասին: Իրոք, հենց միայն այն, որ Հուստինոսի մոտ հիշատակվում է Արտավազդ II-ը, իսկ Ստրաբոնի մոտ՝ Տիրան I-ը, արդեն իսկ հերիք է այս հետևության համար՝ չհաշված դեռ այն հանգամանքը, որ հիշատակված հաղորդումները տարբեր են նաև ոճական տեսանկյունից: Միաժամանակ, սակայն, երկու հաղորդումների համակցված դիտարկումը մեզ հիմք է տալիս անելու մեկ այլ հետևություն ևս, որի հաստատումը տեսնելու ենք նաև հետագայում:

Եվ այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հուստինոսի մոտ հիշատակվում է Արտավազդ II-ը, իսկ Ստրաբոնի մոտ՝ Տիրան I-ը, կարելի է գալ հետևության, որ իրադարձությունները վերաբերում են մ.թ.ա. 116 թվականին՝ Հուստինոսի հաղորդումը տարվա այն ժամանակահատվածին, երբ դեռ կենդանի էր և իշխում էր Արտավազդ II-ը, իսկ Ստրաբոնի հաղորդումն էլ նկատի ունի նույն տարվա այն ժամանակահատվածը, երբ Մեծ Հայքի թագավորության գահին արդեն բազմել էր Տիրան I-ը: Այս պարագայում այլ տարի, քան մ.թ.ա. 116 թվականն է, առաջարկվել ուղղակի սկզբունքորեն իսկ հնարավոր չէ: Եվ վերջապես, ինչպես նշվեց վերևում, հենց այս ժամանակ էր, որ Պարթևական թագավորությունում իշխում էր Արտավան II-ի որդի Միհրդատ II Մեծը, ընդ որում, սա ևս կարևոր է, ինչպես նշվեց, Միհրդատ I-ն ամենևին էլ Արտավան I-ի որդին չէր, այն դեպքում, երբ Միհրդատ II Մեծն Արտավան II-ի որդին էր: Ողջ վերոգրյալը կարող է հաստատվել ևս երկու անուղղակի ապացույցներով:

Հայտնի էր, որ Տիգրան II Մեծն ամուսնացած էր Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ VI Եվպատորի (մ.թ.ա. 120-63) աղջկա հետ, ընդ որում Պոնտոսի տիրակալն ինքը ծնվել էր մ.թ.ա. 132 թ-ին: Մ.թ.ա. 140 թ-ի պարագայում կստացվի, որ Տիգրան II Մեծն 8 տարով մեծ էր Միհրդատ VI Եվպատորից, սակայն երկու այս գահակալների հարաբերության ողջ ընթացքը վկայում է այն բանի օգտին, որ տարիքով ավագ էր հենց պոնտացի տիրակալը: Իր հերթին, հայտնի է, որ մ.թ.ա. 68 թ-ի իրադարձություններում Տիգրան II Մեծն անձամբ էր մարտի տանում իր հեծելազորը[2], իսկ դա ամեն դեպքում ավելի հավանական է կարծել հիսունհինգամյա տղամարդու համար, եթե ընդունենք, որ Հայոց գահակալը ծնվել էր մ.թ.ա. 123 թ-ին, այլ ոչ թե յոթանասուներկուամյայի՝ մ.թ.ա. 140 թ-ի պարագայում:

Հայ-պարթևական առաջին այս հակամարտության ժամանակ, ինչպես հայտնի է, Տիգրան II Մեծը դեռ երեխա էր, այսինքն կարելի է գալ հետևության, որ մենք գործ ունենք 6-7 տարեկան մի մանուկի հետ: Այնուհանդերձ վերևում պնդում կատարվեց հենց մ.թ.ա. 123 թ-ի կապակցությամբ: Ինչո՞ւ հենց այդ թվականը, այս հարցին մասնակիորեն պատասխան տրվեց, իսկ վերջնական պատասխանն էլ կտրվի քիչ ուշ՝ կապված Տիգրան II Մեծի մահվան թվականի հետ: Եվ այսպես, մ.թ.ա. 116 թվականին Մեծ Հայքի և Պարթևական թագավորություններն ընդհարվեցին, սակայն դրանից հետո պետական այս երկու միավորների միջև ավելի քան երկու տասնամյակով հաստատվեցին խաղաղ հարաբերություններ: Այդ ընթացքում, սակայն, տարածաշրջանն ինքը լուրջ

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 16, գլուխ 1, մաս 19:
[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 87:

փոփոխություններ կրեց:

Գլուխ 4
Պոնտոսի թագավորության վերելքի նախադրյալները և դրա ընդհանուր բնութագիրը

Իրոք, մինչ Հայ և Պարթև Արշակունիներն իրենց հարաբերություններն էին հստակեցնում, իրենց հիմքում հունական տարրն ունեցող տարածաշրջանի հելլենիստական մյուս էպետությունները շարունակում էին դանդաղ, սակայն կայուն անկում ապրել: Այս ընթացքում էր, սակայն, որ վերելքի ուղին բռնեց Պոնտոսի թագավորությունը, ընդ որում դա բացատրվում էր միանգամից մի քանի հանգամանքներով:

Խնդիրն ամենից առաջ կայանում էր նրանում, որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Բալկանյան թերակղզու հելլենական բոլոր պետական միավորները վաղուց արդեն ընդգրկվել էին անշեղորեն դեպի Արևելք առաջացող Հռոմեական հանրապետության կազմում, ընդ որում Հունաստանի անկախության վերջնական անկումը տեղի էր ունեցել, ինչպես արդեն ասվեց, դեռևս մ.թ.ա. 146 թվականին: Իր հերթին, մ.թ.ա. 129 թվականին Հռոմեական հանրապետությանը կցվեց մինչ այդ ոչնչացված Պերգամոսի թագավորության տարածքը, իսկ Պաֆլագոնիայի թագավորությունը և Գալաթական տետրարխությունն էլ ընկան վերջինիս ուժեղ ազդեցության տակ: Նույն այս ժամանակ իր գոյությունը դեռևս շարունակում էին Բյութանիայի թագավորությունը, որը, սակայն, գործնականում ևս լիովին ենթակա էր Հռոմեական հանրապետությանը, ինչպես նաև Կապադովկիայի թագավորությունը, որտեղ հռոմեական ազդեցությունը կրկին հսկայական էր: Ինչ վերաբերում է Փոքր Ասիայի մնացած տարածքներին, ապա Լյուկիայում, Պամֆիլիայում, Իսավրիայում, ինչպես նաև արդեն Հայկական լեռնաշխարհի մաս կազմող Կիլիկիայում շարունակում էր իր գոյությունը ծովահենների ամորֆ իշխանությունը, որի գոյությունը առժամանակ ձեռնտու էր Հռոմեական հանրապետության իշխող վերնախավին և այդ պատճառով էլ վերջինիս հետ կար համագործակցության յուրօրինակ մի ձև՝ ամենից առաջ բնականաբար հենց տնտեսական հիմքի վրա: Այսպիսով, որպես Պոնտոսի թագավորության վերելքի առաջին պատճառ, թերևս, կարելի է մատնանշել վերջինիս հովանու ներքո հունական դեռևս պահպանվող ռեսուրսի բյուրեղացումը:

Պոնտոսի թագավորության վերելքը կանխորոշող մյուս գործոնն աշխարհագրական այն դիրքն էր, որ վերջինս զբաղեցնում էր տարածաշրջանում, քանի որ այն մի կողմից հարմար էր առևտրական գործունեություն ծավալելու համար, իսկ մյուս կողմից էլ այս թագավորությունից դեպի արևելք և հյուսիս տարածվում էին տարածքներ, որոնցից լայն հնարավորություն կար հաջող առևտրական գործունեության արդյունքում ձեռք բերած միջոցների հաշվին վարձկաններ ձեռք բերել: Եվ վերջապես կարևոր էր նաև մարդկային գործոնը, քանի որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Պոնտոսի թագավորության ղեկին էր կանգնած Միհրդատ VI Եվպատորը, որը երկաթյա կամքի, զորավարական և դիվանագիտական հսկայական ունակությունների, մեծ խելքի, հսկայական խորամանկության, ինչպես նաև կառավարչական առաջնակարգ ունակությունների տեր մի անձնավորություն էր՝ սրա հետ միաժամանակ նաև լինելով բավականին դաժան ու նենգամիտ մի տիրակալ:

Գլուխ 5
Սելևկյանների թագավորությունում սկիզբ առած Մեծ քաոսը

Մ.թ.ա. 116 թվականին Սելևկյանների թագավորության արքա Անտիոքոս VIII-ի դեմ գահակալական պայքար սկսեց Անտիոքոս VII Սիդեացու որդի, հենց նույն այս ժամանակ

թագադրված Անտիոքոս IX-ը (մ.թ.ա. 116-95՝ համիշխան): Այսպիսով՝ Սելևկյանների թագավորությունում ձևավորվեց գահակալական պայքար մղող անձանց, ըստ էության, երկու մեծ խմբավորում, որոնք ներկայացված էին ի դեմս հարազատ եղբայրներ Դեմետրիոս II-ի և Անտիոքոս VII Սիդեացու որդիների: Այս առումով հարկ է նշել, որ երկու եղբայրների որդիների միջև սկիզբ առած գահակալական պայքարը, որը, ինչպես նման դեպքերում լինում է, միանգամից էլ թեժ տեսք ստացավ, շուտով առավել անհանդուրժող բնույթ ընդունեց նաև անձնական գործոնը հաշվի առնելով:

Իրոք, մ.թ.ա. 112 թվականին մինչ այդ մղվող պայքարում ինչ-որ մի պահի առավելության հասած Անտիոքոս VIII-ի հրամանով սպանվեց գերության մեջ հայտնված Անտիոքոս IX-ի մայրը, իսկ մ.թ.ա. արդեն 111 թվականին էլ իր հերթին հաջողության հասած Անտիոքոս IX-ի հրամանով սպանվեց գերության մեջ հայտնված արդեն Անտիոքոս VIII-ի մայրը, ընդ որում երկու սպանված կանայք էլ իրար հարազատ քույրեր էին: Այս առումով Սելևկյանների թագավորությունում նույն այս ժամանակ ստեղծված իրավիճակը լավագույնս բնորոշում է Հուստինոսը՝ նշելով. «*Եղբայրների փոխադարձ ատելությունը, ապա և նրանց որդիներին ժառանգաբար անցած թշնամությունը անընդհատ պատերազմներ ծնեցին, որոնք ծայրահեղ թուլության հասցրին Ասորիքը ու նրա թագավորներին*»[1]: Արդյունքում՝ միմյանց, այդ թվում նաև անձնական ծանր հարվածներ հասցրած Անտիոքոս VIII-ը և Անտիոքոս IX-ը ինչ-որ տեղ մ.թ.ա. 110 թվականին ի վերջո համաձայնության եկան և իրար մեջ բաժանեցին Սելևկյանների թագավորությունը, սակայն մ.թ.ա. արդեն 105 թվականին նրանց միջև սկիզբ առավ նոր մի պայքար, որն այդուհետ փոխանցվելու էր երկու այս եղբորորդիների նաև սերունդներին ու ձգվելու էր ևս չորս տասնամյակ:

Գլուխ 6
Հայոց պետական միավորների ընդհանուր բնութագիրը

Մ.թ.ա. 160 թվականին իր մահկանացուն էր կնքել Փոքր Հայքի թագավորության արքա, Անտիոքոս III Մեծի քրոջորդի Միհրդատ II-ը, որից հետո նրան հաջորդել էր իր որդի Սիսիդոսը (մ.թ.ա. մոտ 160-140), իսկ վերջինիս մահից հետո էլ նրա փոխարինել էր արդեն նրա որդի Անտիպատրոսը (մ.թ.ա. մոտ 140-115): Անտիպատրոսն իր մահկանացուն կնքեց մ.թ.ա. 115 թվականին և, քանի որ նա որևէ պատշաճ ժառանգ չուներ, իր թագավորությունը կտակեց Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ VI Եվպատորին: Արդյունքում՝ Փոքր Հայքի թագավորությունը անձնական ունիայով, ըստ էության, կցվեց Պոնտոսի թագավորությանը, իսկ այստեղ էլ արքա նշանակվեց Միհրդատ VI Եվպատորի նորածին որդի Արկաթիոսը (մ.թ.ա. մոտ 115-86):

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Ծոփքի թագավորությունը կառավարում էր մ.թ.ա. մոտ 140 թվականին Մեհրուժանին փոխարինած նրա որդի Արտանես II-ը (մ.թ.ա. մոտ 140 - ուղ. 95), որը մեծապես զգուշանում էր Մեծ Հայքի թագավորությունից և ձգտում էր հնարավորինս հեռու մնալ վերջինիցս: Նմանատիպ այս գործընթացի արդեն լիովին ծայրահեղացված իրավիճակն էլ նույն այս ժամանակ տիրում էր նաև Կոմագենեի թագավորությունում, որտեղ մ.թ.ա. 130 թվականին Պտղոմեոսի մահից հետո նրան հաջորդել էր իր որդի Սամվելը (մ.թ.ա. 130-109), իսկ մ.թ.ա. 109 թվականին էլ վերջինիս մահից հետո նրան փոխարինել էր արդեն իր որդի Միհրդատ I-ը (մ.թ.ա. 109-70): Այսպիսով՝ Կոմագենեի թագավորությունում ևս տիրում էին ընդգծված հելլենական բարքեր և այստեղ ևս մեծապես զգուշանում էին Մեծ Հայքի թագավորությունից՝ դրանով իսկ, ըստ էության, ժխտելով Հայոց պետական միավորների համագործակցության նույն այն մոդելը, որն առկա էր դեռևս մ.թ.ա. III դարում:

Հայկական հաջորդ պետական միավորը, որը նույն այս ժամանակ իր գոյությունն էր վարում տարածաշրջանում, դա Հայոց Միջագետքի թագավորությունն էր: Վերջինիս

[1] Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 40, գլուխ 1:

կապակցությամբ, սակայն, խոսքը մանրամասնելու կարիք կա:

Գլուխ 7
Հայոց Միջագետքի թագավորության հիմնախնդիրը

Մ.թ.ա. 129 թվականին Արտավազդ II-ի ազգական Արայի կողմից հիմնադրված այս թագավորությունը ընդգրկում էր Հայոց Միջագետք նահանգը: Այն ոչ միայն ապահովում էր Մեծ Հայքի թագավորության հարավային սահմանի զգալի մասի պաշտպանությունն, այլև հարավից սպառնացող վտանգից համեմատաբար ապահով վիճակ էր ստեղծում նաև Ծոփքի, Կոմագենեի և Փոքր Հայքի թագավորությունների համար: Հայոց Միջագետքի թագավորությունում իշխող արքայատոհմը սերտ համագործակցություն էր իրականացնում Մեծ Հայքի թագավորության հետ և այս խելամիտ քաղաքականությամբ վերջինս այնքան ամրապնդեց իր դիրքերը, որ հետագա դարաշրջանում հաճախ ինքն էր նեցուկ կանգնում Մեծ Հայքի թագավորությանը: Մ.թ.ա. 123 թվականին Արայի մահից հետո գահի վրա վերջինիս հաջորդեցին Մազուրը (մ.թ.ա. մոտ 123-120), Բաղդասարը (մ.թ.ա. մոտ 120-115), Բակուր I-ը (մ.թ.ա. մոտ 115) և Բակուր II-ը (մ.թ.ա. մոտ 115-94): Տիգրանյան դարաշրջանում Հայոց Միջագետքի թագավորության արքան էր Աբգար I Նիզակակիցը (մ.թ.ա. մոտ 94-69):

Պատմագիտության մեջ, սակայն, այս թագավորության ճակատագիրը տարօրինակ է դասավորվել և Հայոց Միջագետք նահանգն ընդգրկող պետական այս միավորը շատ հաճախ չի համարվել ու չի համարվում հայկական: Այս մասին ստորև դեռ էլի կխոսվի, իսկ այժմ միայն արձանագրենք, որ նույնիսկ իր անաչառության մեջ երբեմն ծայրահեղությունների հասնող Մովսես Խորենացին ինքն էլ այս դեպքում լիովին վստահ, առանց կասկածի որևէ ստվերի և մեծ սիրով է պատմում Հայոց Միջագետքի թագավորության ամենաականառու արքա Աբգար V Մեծի, որպես Հայոց արքայի, մասին՝ նույնիսկ չնչին ակնարկ իսկ չանելով վերջինիս հայ չլինելու վերաբերյալ: Այս առումով հետաքրքիր է, որ օտարազգի մասնագետներն ավելի ակտիվ և որոշակիորեն են խոսում այս թագավորության հայկական էության մասին, թեև, բնականաբար արտահայտվում են ոչ լրիվ, քանի որ մի կողմից լիովին ծանոթ չեն հայկական աղբյուրներին, իսկ մյուս կողմից էլ գտնվում են հռոմեական աղբյուրների հայտնած տեղեկությունների ազդեցության տակ: Այսպես, ըստ եգիպտացի պատմաբան Ֆաուդ Հասան Հաֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատության. «*Մ.թ.ա. 136 - մ.թ. 216 թվականներին գոյություն է ունեցել Ուրֆայի հայ-արաբական էմիրությունը*»[1]:

Իր հերթին.

1. Հայոց Միջագետքի թագավորությունը գտնվում էր Հայաստանի հիմնական նահանգներից մեկում՝ Հայոց Միջագետքում,

2. Վերջինիս բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին,

3. Աբգար V Մեծի հայր Աբգար IV-ը Տիգրան II Մեծի թոռ Արտաշես II-ի որդին էր,

4. Աբգար V Մեծի մասին հիմնական տեղեկություններում վերջինս հանդես է գալիս ոչ միայն որպես տիպիկ հայ, այլև՝ որպես Հայոց Միջագետքի և Մեծ Հայքի թագավորությունների արքա,

5. Թագավորության արքաների և արքայազնների մեծամասնությունը կրում է զուտ հայերին բնորոշ անուններ ու մականուններ, իսկ մնացած մասը՝ պարթևներից հայերին անցած անուններ (Սանատրուկ, Բակուր, Պարթանասպատ և այլն): Այսպես, զուտ հայկական են հետևյալ անուններն ու մականունները.

ա) Աբգար. Տիպիկ հայկական անուն, որը բառացիորեն նշանակում է «ավագ այր»[2]: Տեղական արքաների ամենատարածված անունն էր, որը երբեմն հանդես էր գալիս որպես հիմնական, իսկ երբեմն էլ՝ որպես միայն արքայատոհմին բնորոշ անուն, որը

[1] Ըստ Հովհաննիսյան Ն. «Արաբական երկրների պատմությունը» Երևան 2003, էջ 72-73:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 26:

հերթական արքան կրում էր իր հիմնական անվան հետ միաժամանակ, ինչպես օրինակ «Արշակ» անունը Պարթևական թագավորության արքաների պարագայում,

բ) Արա. Տիպիկ հայկական անուն, որը կրել է թագավորության հիմնադիր Արան: Այս անունը գրականության մեջ հաճախ փոխանցվում է «Օրհոյ» կամ «Օրա» տեսքով, ինչը ճիշտ չէ,

գ) Արման. Տիպիկ հայկական անուն, որը կրել են իշխող արքայատոհմի բազում ներկայացուցիչներ: Այն ուղղակիորեն նշանակում է «հայ մարդ»՝ կազմված լինելով հայերին և հայերենին անչափ բնորոշ «Ար» (հայ) և արիական ժամանակաշրջանի հայերենին բնորոշ ու այդ ժամանակներից էլ հայերենում պահպանված «մեն» (մարդ) բառերից (վերջինս անաղարտ տեսքով պահպանվել է հայերենի հետ ընդհանուր արիական արմատներ ունեցող անգլերենում «man/men» տեսքով): Ըստ Մովսես Խորենացու, սակայն, տեղական բարբառով անունը վերափոխվել է և սկսել է հնչել պարզապես «Ման» տեսքով[1],

դ) Բաղդասար. Տիպիկ հայկական անուն: Այս անունը գրականության մեջ հաճախ փոխանցվում է «Բարադասար» տեսքով, ինչը ճիշտ չէ,

ե) Վահե. Տիպիկ հայկական անուն: Այս անունը գրականության մեջ հաճախ փոխանցվում է «Վահի» տեսքով, ինչը կրկին ճիշտ չէ,

զ) Արիարմեն. Տիպիկ հայկական մականուն, որը բառացիորեն նշանակում է «քաջ հայ»: Այս մականունը կրել է Աբգար II-ը և նա արժանի է եղել դրան, քանզի նրա, որպես բացառիկ հատկանիշներով օժտված մարդու մասին, մեծ գովեստով է խոսում նույնիսկ խիստ բացասաբար տրամադրված Պլուտարքոսը[2],

է) Հայզուտ. տիպիկ հայկական մականուն, որը կազմված է «Հայ» և «զուտ» բառերից, որտեղ «զուտ»-ն ունի նվազեցնող, փոքրությունն ընդգծող իմաստ: Այս մականունը կրել են Աբգար VII-ը և Արման VII-ը,

ը) Երվանդ. Տիպիկ հայկական անուն, որը կրել է Աբգար VII Հայզուտի որդին՝ արքայազն Երվանդը:

Այսպիսով, հաշվի առնելով բերված փաստերի ամբողջությունն և դրանց վերլուծությունը, ակնհայտ է, որ մենք գործ ունենք Հայաստանի տարածքում գտնվող, հայ հպատակներ ունեցող ու հայ արքաների կողմից կառավարվող մի թագավորության հետ և ուղղակի ոչ մի հիմք չկա խոսելու վերջինիս «ոչ հայկականության» մասին համար: Միաժամանակ, սակայն, մինչև թեման փակված համարելը, ավելորդ չեմ գտնում անդրադառնալ նաև այն տեղեկատվությանը, որը այնուհանդերձ հիմք է տվել խոսել Հայոց Միջագետքի թագավորության արաբական բնույթի, իսկ նրա տիրակալների էլ՝ արաբական ծագում ունենալու մասին:

Այսպես, խոսելով Աբգար II Արիարմենի մասին՝ Պլուտարքոսը նրան համարում է արաբ[3]: Իր հերթին, հետագա իրադարձություններում վերջինս, խոսելով Մարկոս Կրասոսի մոտ Սուրենից ժամանած դեսպանների մասին, վերջիններիս կրկին համարում է արաբ[4]: Ի վերջո, հռոմեական այս հեղինակը նշում է նաև, որ Մարկոս Կրասոսի բանակի վերջնական ջախջախումից հետո իրականացված հետապնդմանը մասնակցել են նաև արաբներ[5]: Եվ վերջապես Տակիտոսը, խոսելով արդեն Աբգար V Մեծի մասին, նրան համարում է արաբ[6]: Ահա այս չորս խումբ տեղեկություններն են, որ չարաբաստիկ եվրոպակենտրոնությամբ տառապող և, երբեմն, զարմանալի մակերեսայնություն դրսևորող արևմտյան պատմաբաններին հիմք են տալիս ասելու, որ մենք գործ ունենք արաբական թագավորության հետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է մանրամասն քննարկել այս չորս խումբ

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 24:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 21, 22:
[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 21, 22:
[4] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 28, 29:
[5] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 30:
[6] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 12:

հաղորդումներն և բացահայտել դրանց ներքին էությունը.

1. Պլուտարքոսը, առանց որևէ հիմք նշելու, Աբգար II-ին համարում է արաբ: Այս հաղորդման դեմ է, սակայն, խոսում ոչ միայն վերևում բերված փաստարկների ամբողջությունը, այլև քաղաքական դեպքերի զարգացման տրամաբանությունը, երբ գրեթե կնքված հայ-պարթևական դաշինքի պայմաններում Մեծ Հայքի ու Հայոց Միջագետքի թագավորությունները մի և Պարթևական թագավորությունը մյուս կողմից բնականաբար պետք է իրար ռազմական օգնություն ցույց տային,

2. Սուրենից ժամանած դեսպանների մասին հաղորդումն ևս հիմք չի կարող հանդիսանալ հետևությունների համար, քանի որ ակնհայտորեն վերջիններս արաբ են համարվել նախորդ հաղորդման ազդեցության տակ, այն ենթատեքստով, որ, եթե ակտիվ դերակատարություն ունեցող Աբգար II-ն արաբ է եղել, ապա բնականաբար դեպքերին մասնակցող դեսպանախումբն էլ պիտի արաբներից կազմված լիներ,

3. Մարկոս Կրասոսի ջախջախված բանակի հետապնդման պարագայում բացառված չէ արաբների մասնակցությունը, սակայն դա ևս ոչ մի կերպ չի կարող վկայել այն բանի օգտին, որ Հայոց Միջագետքի թագավորությունն արաբական էր: Բանն այն է, որ դեռևս Տիգրան II Մեծն էր արաբական վաչկատուն ցեղերից մեկին հաստատել Հայոց Միջագետքում՝ հանձնարարելով նրան տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը: Նույն այս արաբներն էին, որ, փորձելով միանալ Տիգրանակերտի ճ-մ-ին պատրաստվող Մեծ Հայքի թագավորության բանակին, անակնկալ հարձակման ենթարկվեցին Հռոմեական հանրապետության բանակի կողմից և պարտություն կրեցին[1]: Կարելի է ենթադրել, որ սրանից հետո էլ են այս արաբները մնացել Հայոց Միջագետքի թագավորության տարածքում՝ շարունակելով իրականացնել տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը՝ պատերազմի դեպքում էլ վարձկան ծառայություն իրականացնելով թագավորության Հայկական բանակում: Հենց վերջին հանգամանքն էլ բացատրում է ամեն ինչ, քանի որ ակնհայտ է, որ ճակատամարտի վերջին փուլում թշնամու բանակի ցրված մնացորդներին առավել արդյունավետ կարող էին հետապնդել և ոչնչացնել հենց տեղանքին լավ ծանոթ արաբները: Բացի այդ, հիշատակված իրադարձությանը միայն արաբների մասնակցության մասին Պլուտարքոսի նշումը դեռևս ամենևին էլ չի ենթադրում, որ Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորության Հայկական բանակը դրան իր մասնակցությունը չի բերել,

4. Վերևի կետում նշված հանգամանքով է, ըստ երևույթին, բացատրվում նաև Տակիտոսի հաղորդումը, քանի որ այս արքայի, ինչպես նաև ողջ արքայատոհմի մասին հաղորդումները ոչ մի հիմք չեն տալիս խոսելու այս տոհմի կամ նրա ներկայացուցիչը հանդիսացող առանձին անհատների որևէ «արաբականության» մասին: Հետաքրքիր է, որ, ըստ վերը հիշատակված Ֆաուդ Հասան Հաֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատանքի, Եդեսիայի (Հայոց Միջագետքի) թագավորության արքաներից հատկապես առանձնանում էր. «*Հայ թագավոր Աբգար V-ը*»[2]:

Այսպիսով, ըստ էության, առկա հաղորդումների ներքին էության սխալ մեկնաբանումն ու դրանց վերաբերյալ դրսևորված մակերեսային մոտեցումն է, որ հիմք է տվել խոսելու Հայոց Միջագետքի թագավորության արաբական էության մասին, այն դեպքում, երբ խոսքը Հայաստանում գտնվող, հոծ հայկական բնակչություն ունեցող և հայկական գահատոհմի կողմից ղեկավարվող թագավորության մասին է: Եվ վերջապես մինչև առաջ անցնելն անհրաժեշտ է անպայմանորեն անդրադարձ կատարել նաև Հռոմեական հանրապետությանը, որը արդեն երկար տասնամյակներ իր բավականին աննկատ, սակայն խիստ ծանրակշիռ ներկայությունն էր ապահովում Մերձավոր Արևելքում և որը, սակայն, այստեղ շատ շուտով անհամեմատ ավելի ակտիվ

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 25; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14:

[2] Ըստ Ն. Հովհաննիսյան «Արաբական երկրների պատմությունը» Երևան 2003, էջ 72-73:

դերակատարություն էր ստանձնելու:

Գլուխ 8
Անկման շրջանի հանրապետական Հռոմի ընդհանուր բնութագիրը

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետությունում, ըստ էության, տիրում էր հանրապետական բնույթ ունեցող օլիգարխիկ կառավարման ուշագրավ մի համակարգ, երբ պետական կառավարումն իրականացնում էր բարձրագույն օրենսդիր մարմինը, ի դեմս սենատի: Պետական կառավարման այս ձևը, սակայն, որն իր արմատներով բնականաբար գնում էր դեպի հունական քաղաքակրթություն, հավասար համեմատական Հռոմեական հանրապետության սահմանների ընդլայնմանը, աստիճանաբար կորցնում էր սեփական արդիականությունը: Իր հերթին, իշխող վերնախավի մոտ կուտակված նյութական հսկայական միջոցները, ինչպես նաև Հռոմեական հանրապետության իրավական դաշտ նորանոր տարածքների և բնակչության ներմուծման հանգամանքը աստիճանաբար հարուցում էին նոր և ավելի գործնական բնույթի դժվարություններ: Իմ կողմից ուսումնասիրվող թեմայի շրջանակներից, սակայն, բնականաբար դուրս է Հռոմեական հանրապետության անկման շրջանի ռազմաքաղաքական և, հատկապես, սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրումը, որի կապակցությամբ, ի դեպ, հսկայական քանակությամբ տարաբնույթ գրականություն կա, դրա համար էլ այս առումով ես կսահմանափակվեմ, ըստ էության, ընդամենը միայն ասվածով՝ հընթացս կրկին ամրագրելով, որ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետությունում տիրող հանրապետական կարգերն իրենց աստիճանաբար արդեն սպառում էին ու հիմքեր էին առաջ գալիս միանձնյա իշխանության առաջացման համար:

Այսպիսով՝ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Սելևկյանների թագավորությունն, ըստ էության, վերջնականապես զրկվել էր իր նույնիսկ տարածաշրջանային կարգավիճակից, իսկ Մերձավոր Արևելքում էլ առաջնության համար պայքարի մեջ էին մտնում Պարթևական և Պոնտոսի թագավորությունները, Հռոմեական հանրապետությունը, ինչպես նաև զգալի հզորության հասած Մեծ Հայքի թագավորությունը: Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը մի պահ ևս հապաղենք և անդրադարձ կատարենք տարածաշրջանի հիմնական խաղացողների ռազմական մեքենաներին:

Գլուխ 9
Պարթևական թագավորության բանակի ընդհանուր բնութագիրը

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Պարթևական թագավորության ռազմական մեքենան իր մեջ, ըստ էության, ներառել էր ողջ այն դրականը, որը հասցրել էին մշակել Մեծ տափաստանում միմյանց հետևողականորեն փոխարինող պետական միավորների ռազմական համակարգերը, ընդ որում սրա հետ միաժամանակ նաև պարթևական ռազմական մեքենան, գտնվելով Մեծ տափաստանի և նստակյաց քաղաքակրթությունների հատման յուրօրինակ մի սահմանակետում, իր մեջ ներառել էր բավականին դրական տարրեր նաև նստակյաց պետական միավորների ռազմական համակարգերից: Արդյունքում՝ Պարթևական թագավորության ռազմական մեքենան, թեև քոչվոր ռազմական մեքենաներին բնորոշ տարրերի զգալի գերակշռությամբ, բայց իր մեջ ուներ տարրեր նաև վերջինիս հակոտնյայից, ինչը նրան զգալի ունիվերսալություն էր ապահովում՝ ի համեմատ ինչ-որ տեղ գուցե ավելի հզոր, բայց, ըստ էության, միակողմանի զարգացում ունեցող օրինակ Քուշանական թագավորության ռազմական մեքենայի, որտեղ բնականաբար գերակշռում էր քոչվոր տարրին բնորոշ վարքագիծը: Պարթևական

թագավորության բանակը իդեալում իր կազմում ուներ մոտ 150.000 ռազմիկ, սակայն, հաշվի առնելով այս թագավորության կառուցվածքային թերությունները, կենտրոնական իշխանության ավանդական թուլությունը և տեղայնականության ուժեղ կենտրոնախույս ձգտումները, այս թիվը մարտադաշտում գործնականում իրապես ապահովել անչափ հազվադեպ էր հաջողվում:

Գլուխ 10
Պոնտոսի թագավորության բանակի ընդհանուր բնութագիրը

Պոնտոսի թագավորությունը, որի ռազմական մեքենայում, համադրված արևելյան պայմանների հետ, իր հետագա զարգացումը ստացավ հելլենական ռազմական մեքենան, ի սկզբանե տարածքային բավականին սահմանափակ հնարավորություններ ուներ և, արդյունքում, բնականաբար սահմանափակ էին նաև բանակային թվաքանակ ապահովելու վերջինիս հնարավորությունները: Այնուհանդերձ կոնկրետ հենց մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Միհրդատ VI Եվպատորը, գործի դնելով նյութական զգալի միջոցներ, ի վիճակի էր մարտադաշտ հանել իր կազմի ճնշող մեծամասնությամբ Պոնտոսի թագավորության սահմաններից դուրս վարձած վարձկան ռազմիկների զգալի մի քանակություն՝ որոշ դեպքերում ապահովելով մոտ 300.000 ռազմիկի առկայությունը: Այս ամենով հանդերձ հարկ է նշել, սակայն, որ նման թվաքանակ ապահովելը Պոնտոսի տիրակալի համար ամեն դեպքում հնարավոր էր լինում միայն կարճ ժամանակով և պատերազմի համեմատականորեն սահմանափակ թատերաբեմում, ընդ որում իր հիմնական մասով վարձկաններից կազմված բանակը բնականաբար ուներ նաև իրեն բնորոշ թերությունները, որոնցից գլխավորն այն էր, որ առանձնակի եռանդ չդրսևորող վարձկանները հավատարիմ էին միայն հաջողության պարագայում, իսկ ռազմական գործողության վերջնարդյունքն էլ նրանց մեծապես չէր հետաքրքրում:

Այսպիսով՝ Միհրդատ VI Եվպատորի ռազմական մեքենան բիզնես-պատերազմի հելլենականացված մոդելի բյուրեղացված ներկայացումն էր՝ իր բոլոր առավելություններով և թերություններով հանդերձ: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նաև ավելացնել, որ Պոնտոսի թագավորության ռազմական մեքենայի կազմում իր ուրույն, իսկ սեփական մարտական հատկանիշներով էլ նույնիսկ անկրկնելի դերն ուներ Փոքր Հայքի թագավորության բանակը և վերջինիս հատկապես հեծելազորը, ընդ որում վերջինս, բանակային ընդհանուր համակարգում լինելով համեմատականորեն փոքրաթիվ, զուտ նյութական օգուտի համար պայքարող վարձկաններին հաջողությամբ հակադրում էր սեփական ավանդական հավատարմությունը:

Գլուխ 11
Հռոմեական հանրապետության բանակի ընդհանուր բնութագիրը

Ինչ վերաբերում է Հռոմեական հանրապետության ռազմական մեքենային, ապա վերևում արդեն նշվեց, որ վերջինիս բանակային մեխանիզմը հաջողությամբ կիրառում էր ֆալանգային մարտավարության հետագա և ավելի զարգացած տարատեսակը հանդիսացող լեգեոնային մարտավարությունը, որն ավելի ճկուն և ունիվերսալ մի երևույթ էր: Միաժամանակ հարկ է նշել, որ նույն այս ժամանակաշրջանում, հավասար համեմատական նոր տարածքների նվաճման, անշեղորեն աճում էր նաև Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակը և, եթե մ.թ.ա. II դարի սկզբում այն իր կազմում ուներ մոտավորապես 200.000 ռազմիկ, ապա արդեն դարի վերջում այս թիվը սկսեց մոտենալ 300.000-ի, հաջորդ դարում այն ավելի էր աճելու՝ հասնելով 400.000-ի, իսկ դարի երրորդ քառորդում էլ ընդհուպ մոտենալու էր 600.000-ի:

Իրոք, այն բանից հետո, երբ ավարտվեց Դաշնակցային պատերազմը (մ.թ.ա. 91-88), որի արդյունքում Ապենինյան թերակղզու բնակչությունն, ըստ էության, ստացավ նույն այն իրավունքները, ինչ բուն Հռոմ քաղաքի բնակչությունը, հնարավորություն առաջացավ Հռոմեական հանրապետության բանակային մեքենայի կազմում մասսայականորեն ընդգրկել նաև վերջինիս ներկայացուցիչներին, ինչը կտրուկ ավելացրեց հանրապետության ռազմական մեքենայի թվակազմը: Պարզության համար նշենք, որ Դաշնակցային պատերազմում Հռոմի դեմ ելած դաշնակիցների ուժերն ընդհանուր առմամբ ընդգրկում էին 200.000 ռազմիկ, այն դեպքում, երբ նույն այս ժամանակաշրջանում 200.000 ռազմիկ էլ ընդգրկում էր բուն Հռոմի ռազմական մեքենան, իսկ այժմ, վերջնարդյունքում՝ այս թվերն, ըստ էության, գումարվեցին իրար:

Խնդիրը, սակայն, սրանով ևս չսահմանափակվեց, քանի որ Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան այժմ ևս պահպանեց մարտական գործողություններում տարաբնույթ կարգավիճակ ունեցող դաշնակիցների ռազմուժի կիրառումը: Արդյունքում՝ եթե մինչև Դաշնակցային պատերազմը Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան կազմող լեգեոնները համալրվում էին բացառապես միայն Հռոմեական հանրապետության քաղաքացիներ հանդիսացող անձանցից, իսկ Հռոմեական հանրապետության ազդեցության ոլորտում գտնվող այլ տարածքներից էլ հավաքվում էր ընդամենը միայն կոնկրետ ռազմագործողությանը մասնակցող լեգեոներներին քանակապես կրկնող նույն քանակի դաշնակից ուժ, ապա այժմ իրավիճակը փոխվեց: Արդյունքում՝ Դաշնակցային պատերազմի ավարտից հետո որպես լեգեոնների համալրման բազա սկսեց ծառայել ողջ Ապենինյան թերակղզին, իսկ նույն այն դերակատարությունն էլ, որ նախկինում կրում էին Ապենինյան թերակղզու ոչ Հռոմի քաղաքացի հանդիսացող բնակիչները, այժմ տեղափոխվեց Ապենինյան թերակղզուց դուրս գտնվող Հռոմեական հանրապետության պրովինցիաների վրա:

Մ.թ.ա. II դարի վերջին և մ.թ.ա. I դարի առաջին կեսին Հռոմեական հանրապետության, ըստ էության, պրովինցիայի կարգավիճակ ունեին Պիրենյան թերակղզին, Հյուսիսային Աֆրիկայի արևմտյան և կենտրոնական հատվածները, Բալկանյան թերակղզին ու Փոքր Ասիայի արևմուտքը, որի բնակչությունը համալրում էր Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան այսպես կոչված «առաջնային դաշնակցի» կարգավիճակով՝ որպես Հռոմեական հանրապետությանը ենթակա, բայց ոչ վերջինիս քաղաքացիներ: Մարտավարական մակարդակում «առաջնային դաշնակիցներից» հավաքագրված ռազմիկները ներկայանում էին որպես օժանդակ ուժեր, որոնք գործում էին լեգեոնի մարտավարական կարգում՝ չընդգրկվելով նրա կազմում, սակայն աջակցելով վերջինիս: Նույն այս ժամանակ, սակայն, առկա էին նաև այսպես կոչված «երկրորդական դաշնակցի» կարգավիճակ ունեցող անձիք, որոնք հավաքվում էին Հռոմեական հանրապետության սահմաններից դուրս գտնվող, սակայն վերջինիս այս կամ այն չափով ենթակա պետական միավորներից, ցեղերից կամ

ժողովուրդներից, ինչպիսիք էին օրինակ Բյութանիայի ու Պաֆլագոնիայի թագավորությունները, Գալաթական տետրարխությունը, թրակիացիները, իլիրիացիները և այլն: Մարտավարական մակարդակում «երկրորդական դաշնակիցները» բավականին մեծ ազատություն ունեին և սովորաբար մարտնչում էին իրենց բնորոշ ու իրենց համար սովորական մարտավարական եղանակներով՝ արդյունքում լրացնելով լեգեոնական մարտավարական սխեմաներն արդեն ավելի ընդհանուր իմաստով: Այս առումով կարևոր է նշել և կրկնել, որ Դաշնակցային պատերազմի ավարտից հետո ևս պահպանվեց ընդհանուր կանոնը՝ ռազմագործողությունում պետք է իր մասնակցությունը բերի այնքան քանակի «առաջնային» կամ «երկրորդական» դաշնակից ռազմիկ, ինչքան ռազմիկ ներկայացնում էին լեգեոնները:

Գլուխ 12
Մեծ Հայքի թագավորության բանակի ընդհանուր բնութագիրը

Մեծ Հայքի թագավորության ռազմական մեքենան իրենից ներկայացնում էր հենց նստակյաց ժողովրդի և պետական միավորի ռազմական մեքենայի մի տեսակ, ընդ որում, եթե նույն Պարթևական թագավորության ռազմական մեքենան, թեև քոչվոր ռազմական մեքենաներին բնորոշ տարրերի զգալի գերակշռությամբ, բայց իր մեջ ուներ տարրեր նաև վերջինիս հակոտնյայից, ապա նույն այս ժամանակվա Հայոց ռազմական մեքենան իրենից ներկայացնում էր սրա ուղիղ հակառակ պատկերը՝ այն նստակյաց ժողովրդի ռազմական մեքենա էր, որն իր մեջ որոշ տարրեր ուներ նաև վերջինիս հակոտնյայից: Այս պատկերը բնականաբար ամենից առաջ հենց Պարթևական թագավորության հետ շփման արդյունք էր, ընդ որում գործընթացի հիմքը դրել էր դեռևս Վաղարշակ Ի-ը:

Ինչպես և բոլոր այն ժամանակներում, երբ Հայոց պետականությունն իր սահմաններում է ընդգրկում Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը, Մեծ Հայքի թագավորության ռազմական հնարավորությունները կազմում էին մոտ 120.000 ռազմիկ, թեև գործնականում մեկ ուղղությամբ մարտադաշտ էր հնարավոր հանել բնականաբար միայն մոտ 100.000 ռազմիկ: Այս առումով մինչը առաջ անցնելը կարևոր է նշել նաև Մեծ Հայքի թագավորության դաշնակից ուժերի մասին, որոնց առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված էր բնականաբար ամենից առաջ քաղաքական հանգամանքներով: Որպես կանոն, սակայն, Մեծ Հայքի թագավորության հետ դաշնակցում էին ամենից առաջ Իբերիայի և Աղվանքի թագավորությունները: Վերջիններիս ռազմական հնարավորությունները կազմում էին առավելագույնը մոտ 40.000 ռազմիկ, ընդ որում, որպես դաշնակից, նրանք ներկայացնում էին բնականաբար ավելի սահմանափակ քանակի ռազմիկներ: Իբերիայի թագավորության մասին արդեն իսկ բավականին խոսվել է և սոցիալական առումով այն, ըստ էության, Մեծ Հայքի թագավորության ավելի փոքր մի տարբերակն էր՝ կովկասյան ավելի ընդգծված տարրերով: Ինչ վերաբերում է Աղվանքի թագավորությանը, ապա ընդունված է համարել, որ այն հիմնադրվել է մ.թ.ա. 331 թվականին, սակայն, ի տարբերություն օրինակ Իբերիայի թագավորության, Աղվանքի թագավորությունը այդպես էլ չկարողացավ հանդես գալ որպես մեկ կուռ քաղաքական միասնական մի համակարգ, իսկ նրա բնակչությունն էլ չկարողացավ բյուրեղանալ որպես միասնական էթնոս:

Գլուխ 13
Տարածաշրջանի հիմնական խաղացողների ռազմական մեքենաների համեմատականը

Ընդհանրացնելով մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Պարթևական և Պոնտոսի թագավորությունների, Հռոմեական հանրապետությունը, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորությունների ռազմական հնարավորությունների մասին ողջ

վերոշարադրյալը, թերևս, կարող ենք փաստել հետևյալը: Իրականացված համեմատության մեջ ակնհայտ առավելությունը պատկանում էր հենց Հռոմեական հանրապետությանը, ընդ որում այդ առավելության հիմքում ամենից առաջ հենց քանակական գերակշռությունն էր, թեև առաջնային էր նաև ռազմական թրծված, առաջադեմ, իսկ որոշ դեպքերում նաև ավելի ունիվերսալ համակարգը:

Իր հերթին, սակայն, վերևում նշված նույն այդ առավելությունը որոշակիորեն չեզոքացվում էր այն բանի հաշվին, որ մյուս երեք պետական միավորները մարտական գործողությունների թատերաբեմին ավելի մոտ էին, իսկ Հռոմեական հանրապետությունն էլ, բնականաբար, ստիպված էր զգալի բանակային ուժեր պահել նաև այլ սահմաններում: Այս առումով լիակատար պարզության համար այնուհանդերձ փաստենք, որ նույնիսկ միայն իր տարածաշրջանային հնարավորություններով էլ Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան մ.թ.ա. I դարում քանակապես, ըստ էության, գործնականում գերազանցում էր իր հիմնական հակառակորդներին, իսկ այն դեպքերում էլ, երբ հնարավորություն էր լինում հանրապետության այլ հատվածներից նոր ուժեր տեղափոխել Արևելք, այդ գերակշռությունն ավելի ընդգծված էր դառնում:

Գլուխ 14
Տարածաշրջանի Մեծ պատերազմի սկիզբը

Մ.թ.ա. 112 թվականին Միհրդատ VI Եվպատորի ռազմական մեքենան տիրեց Կոլխիդայի թագավորության տարածքին, ինչի արդյունքում Կոլխիդայի թագավորությունը վերացավ, իսկ նրա տարածքն անցավ Պոնտոսի թագավորությանը[1]: Դրանից հետո, իր հերթին ձգտելով Սև ծովն իր թագավորության որպես յուրօրինակ մի ներքին ծով ունենալ, Պոնտոսի տիրակալը սկիզբ դրեց Սև ծովի հյուսիսային ափերի նվաճմանը, որին էլ իր մասնակցությունը բերեցին նաև Հայ ռազմիկները: Միհրդատ VI Եվպատորի կողմից կյանքի կոչված այս ռազմագործողության առաջնային թիրախը արդեն իսկ սահմանափակ սահմաններ ունեցող Սկյութական թագավորությունն էր, քանի որ մինչ այդ, ինչպես արդեն ասվել է, Սկյութական թագավորությունը պարտություն էր կրել Ալանական թագավորությունից, կորցրել էր իր հիմնական տարածքները և այժմ շարունակում էր սեփական գոյությունը միայն Ղրիմի թերակղզում ու Սև ծովի հյուսիսային ափերի որոշ ափամերձ տարածքներում:

Մ.թ.ա. 111 թվականի ամռանը Կերկենիտիդայի ճ-մ-ում (Ղրիմի թերակղզու արևմուտք) Դիոֆանտոսի ընդհանուր ղեկավարությամբ ծովով առաջխաղացած Պոնտոսի թագավորության (մոտ 10.000, 300 նավ) և նրա կազմում Զարեհի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (մոտ 1.000) թագավորության միացյալ բանակը հաղթեց ռազմերթի ժամանակ իրեն անակնկալի բերել փորձած Փալակ արքայի (մ.թ.ա. մոտ 115-105) գլխավորած Սկյութական թագավորության բանակին (մոտ 20.000)[2], որից հետո մ.թ.ա. 111 թվականի նույն ամռանը ասպատակեց Տավրիկիան (Ղրիմ)՝ հնազանդեցնելով տավրներին[3]: Եվ վերջապես, ավարտելով թերակղզու նվաճումը, մ.թ.ա. 111 թվականի աշնանը Դիոֆանտոսի ռազմական մեքենան Սկյութական թագավորության բանակից առանց լուրջ մարտերի գրավեց Նեոպոլիս մայրաքաղաքը (Ղրիմի թերակղզու արևմուտք), ընդ որում Փալակի հիմնական ուժերը նահանջեցին դեպի հյուսիս-արևմուտք: Հենց այս մարտում էլ զոհվեց Զարեհը:[4] Շուտով, սակայն, Ղրիմի համար պայքարին միացավ Ալանական թագավորությունը:

Մ.թ.ա. 110 թվականի նոյեմբերին Կերկենիտիդայի ճ-մ-ում Դիոֆանտոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (6.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 600) թագավորության միացյալ բանակը ջախջախեց

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 12, գլուխ 3, մաս 28:
[2] Անանուն «Խերսոնյան դեկրետ»:
[3] Անանուն «Խերսոնյան դեկրետ»:
[4] Անանուն «Խերսոնյան դեկրետ»; Խերսոնեսում գտնված շիրմաքար:

ներխուժած, Խերսոնեսը (Ղրիմի թերակղզու հարավ-արևմուտք) պաշարած, սակայն ստեղծված անբարենպաստ պայմաններում պաշարումը ընդհատած և նահանջած Փալակ արքայի գլխավորած Սկյութական (մոտ 10.000) ու վերջինիս ավելի ուշ միացած Տասիոսի արքայի (մ.թ.ա. 120-90) գլխավորած Ալանական (50.000) թագավորությունների միացյալ բանակին[1]: Այսպիսով՝ Ղրիմի թերակղզու համար պայքարում Պոնտոսի թագավորության ռազմական մեքենան մի կարևորագույն հաջողություն արձանագրեց, որը այդուհետ էապես նվազեցրեց նույնիսկ Ալանական թագավորության ցանկությունը այդ ուղղությամբ շարունակել դիմակայությունը Միհրդատ VI Եվպատորի հետ: Տեղում, սակայն, ամրանալու լուրջ խնդիրներ այնուհանդերձ կային:

Մ.թ.ա. 109 թվականի գարնանը Դիոֆանտոսի գլխավորած Պոնտոսի թագավորության (մոտ 4.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 400) թագավորության միացյալ բանակը Սկյութական թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 500) առանց լուրջ մարտերի գրավեց Նեոպոլիս մայրաքաղաքը, որը մինչ այդ ապստամբել էր, ինչպես նաև՝ Խաբեան (Ղրիմի թերակղզու արևմուտք)[2]. Իր հերթին, մ.թ.ա. արդեն 108 թվականի գարնանը Դիոֆանտոսի գլխավորած Պոնտոսի թագավորության (մոտ 10.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 1.000) թագավորության միացյալ բանակը Սավմակի գլխավորությամբ ապստամբած բոսպորցիներից (ընդհանուր՝ մոտ 2.000) համառ մարտերով գրավեց Թեոդոսիան ու Պանտիկապեոնան (Ղրիմի թերակղզու արևելք), ընդ որում այլոց թվում գերվեց նաև Սավմակը[3]: Մ.թ.ա. 108 թվականի դեկտեմբեր Պերեկոպի ճ-մ-ում (Ղրիմի թերակղզու հյուսիս) Դիոֆանտոսի գլխավորած Պոնտոսի թագավորության (մոտ 15.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 1.500) թագավորության միացյալ բանակը հաղթեց Ղրիմից դեպի հյուսիս ճեղքելով անցնել փորձող Սկյութական թագավորության բանակին (մոտ 20.000) ու հետ շպրտեց[4], ինչից հետո այս ուղղությամբ գործող Պոնտոսի թագավորության բանակի ղեկավարումը ստանձնեց արդեն նոր անձ:

Արդյունքում՝ մ.թ.ա. 107 թվականի ամռանը Պերեկոպի ճ-մ-ում Նեոպտղոմեոսի գլխավորած Պոնտոսի թագավորության (մոտ 13.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 1.300) թագավորության միացյալ բանակը ջախջախեց Ղրիմից դեպի հյուսիս հերթական անգամ ճեղքելով անցնել փորձող Սկյութական թագավորության բանակին (մոտ 13.000, այդ թվում զիխեր, աքայացիներ և հենիոխներ)[5]: Պոնտոսի թագավորության ռազմական մեքենայի ինչպես առավելությունը, այնպես էլ հաջողություններն ակնհայտ էին, սակայն այս պայմաններում Տասիոսը որոշեց այնուհանդերձ ևս մեկ քայլ ձեռնարկել:

Արդյունքում՝ մ.թ.ա. 106 թվականի աշնանը Ալանական թագավորության բանակը (մոտ 40.000) պաշարեց Օլիվիան (Սև ծովի հյուսիս, Ղրիմից հյուսիս-արևմուտք), որը մինչ այդ ընդունել էր Պոնտոսի թագավորության գերիշխանությունը, սակայն քաղաքի (մոտ 500), ինչպես նաև Փոքր Հայքի թագավորության (մոտ 1.000) միացյալ բանակը, չնայած պարենամթերքի խիստ պակասին, կարողացավ պահել դիրքերը[6]: Վերջ, սրանով էլ հենց պայքարն ավարտվեց Միհրդատ VI Եվպատորի օգտին և արդյունքում Սև ծովի հարավ-արևելյան, արևելյան ու հյուսիսային ողջ ափաշերտը ընկավ Պոնտոսի թագավորության տիրապետության տակ: Իր հերթին այս պատերազմն, ըստ էության, վերջինը եղավ նաև Սկյութական թագավորության համար, որը դրանից հետո որոշ ժամանակ անց ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ վերջնականապես անցավ Ալանական թագավորությանը:

Գլուխ 15
Հռոմեական հանրապետությունը և Պոնտոսի թագավորությունը

[1] Անանուն «Խերսոնյան դեկրետ»; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 7, գլուխ 3, մաս 17:
[2] Անանուն «Խերսոնյան դեկրետ»:
[3] Անանուն «Խերսոնյան դեկրետ»:
[4] Անանուն «Խերսոնյան դեկրետ»; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 2, գլուխ 1, մաս 16, գիրք 7, գլուխ 3, մաս 18:
[5] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 2, գլուխ 1, մաս 16, գիրք 7, գլուխ 3, մաս 18:
[6] Օլիվիայում գտնված արձանագրությունից:

Սևծովյան ավազանի համար Կոլխիդայի, Սկյութական, իսկ հետո արդեն Ալանական թագավորությունների դեմ պայքարում Միհրդատ VI Եվպատորը ակնառու հաջողություններ արձանագրեց, ինչը ոչ միայն մեծապես ամրապնդեց նրա թագավորության դիրքերը տարածաշրջանում, այլև Պոնտոսի թագավորության տիրակալին նաև անձնական հսկայական հեղինակություն ապահովեց: Խնդիրը կայանում էր նրանում, սակայն, որ, չնայած այս ամենին, սևծովյան ավազանին լիակատար տիրել դեռևս չէր ստացվել, ընդ որում Միհրդատ VI Եվպատորը իր տիրապետության տակ ոչ միայն դեռևս որևէ կերպ չուներ Սև ծովի արևմտյան ափերը, այլև, ինչը ոչ պակաս կարևոր էր, չէր տիրել Սև ծովից Միջերկրական ծով ելքն ապահովող երկու նեղուցներին, որոնք գտնվում էին Հռոմեական հանրապետության ամուր ազդեցության ներքո գտնվող Բյութանիայի թագավորության տիրապետության տակ: Այսպիսով՝ աստիճանաբար քաղաքական օրակարգ էր մտնում Պոնտոսի թագավորության հակամարտությունն արդեն Հռոմեական հանրապետության հետ, ընդ որում նույն այդ հակամարտության մեջ միայն առաջին հայացքից էր Պոնտոսի տիրակալը հարձակվող, իսկ մյուս կողմը՝ պաշտպանվող:

Իրոք, նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետության տնտեսական շահերը վաղուց արդեն իրենց ազդեցության ոլորտն էին ընդգրկել Բալկանյան թերակղզու հարավն և Փոքր Ասիան, իսկ այդ պարագայում էլ Հռոմեական հանրապետության իշխող վերնախավի համար առաջնային էր նաև խնդրի հետագա զարգացումն, ի դեմս Սև ծովի ավազանի համար մղվող պայքարի: Վերևում արդեն քննարկվեց նույն այս ժամանակ տարածաշրջանում գործող հիմնական խաղացողների ուժերի հարաբերակցությունը և նշվեց, որ առավելագույնը, որին կարող էր հավակնել Պոնտոսի թագավորությունը, այն էլ կարճաժամկետ կտրվածքով, դա վարձկանների աննախադեպ մեծ չափով կիրառման հաշվին հակառակորդին անակնկալի բերելով հարված հասցնելն էր, իսկ երկարատև կամ, առավել ևս՝ հյուծման հանգող ռազմական գործողությունների պարագայում բոլոր առավելություններն արդեն հակառակորդի կողմում էին: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ, համենայն դեպս գոնե առժամանակ, Միհրդատ VI Եվպատորի օգտին եղան մի շարք արտաքին զարգացումներ, որոնք շեղեցին առանց այդ էլ Արևելքում իրենց դեռևս որոշակիորեն օտար զգացող Հռոմեական հանրապետության իշխող վերնախավի ուշադրությունը տարածաշրջանից:

Իրոք, մ.թ.ա. II դարի ողջ երկրորդ կեսին մինչ այդ թուլացած գալլերին դանդաղ, բայց հաստատուն կերպով դեպի արևմուտք էին մղում Եվրոպայի հյուսիս-արևելյան շրջաններից դեպի հարավ-արևմտյան շրջաններ շարժվող գերմանացիները, որոնք մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում արդեն իրենցով էին արել Արևելյան Եվրոպան և տիրել էին Կենտրոնական Եվրոպային՝ դուրս գալով Ապենինյան թերակղզու հյուսիսային սահմաններ: Արդյունքում՝ գերմանացիները հյուսիսից ոչ միայն հարևան դարձան Հռոմեական հանրապետությանը, այլև, ինչպես մի ժամանակ գալլերը, մի քանի հզոր հարվածներ հասցրին վերջինիս:

Նկարագրված գործընթացն իր կոնկրետ ռազմաքաղաքական արտահայտությունը ստացավ մ.թ.ա. արդեն 113 թվականին, երբ Դանուբի միջին հովտում գտնվող Նորիկ բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում գերմանական 300.000 հոգանոց բանակը անակնկալի բերեց և գործնականում ոչնչացրեց տեղի իր դաշնակիցներին օգնել փորձած Հռոմեական հանրապետության 30.000 հոգանոց բանակին: Գերմանական 200.000 հոգանոց բանակից անհամեմատ ավելի դաժան մի ջարդ էլ, սակայն, Հռոմեական հանրապետության 120.000 հոգանոց բանակը կրեց մ.թ.ա. 105 թվականի հոկտեմբերի 6-ին ներկայիս Ֆրանսիայի հարավում տեղի ունեցած Արաուզիոնի ճակատամարտում, որտեղ վերջինիս կորուստները կազմեցին 80.000 ռազմիկ: Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի ստացած ծանր

հարվածները, ըստ էության, բացել էին գերմանական ներխուժման դուռը դեպի Ապենինյան թերակղզի և նույն այդ ներխուժումն անմիջապես տեղի չունեցավ, թերևս, միայն այն պատճառով, որ գերմանացիները գերադասեցին թալանի ենթարկել այնուհանդերձ անհամեմատ ավելի վատ պաշտպանված Պիրենյան թերակղզին: Այս հանգամանքը, սակայն, իր հերթին թույլ տվեց պաշտոնական Հռոմին ուշքի գալ և պատասխան քայլեր ձեռնարկել:

Արդյունքում՝ մ.թ.ա. 102 թվականի ամռանը Ապենինյան թերակղզուց առաջացած Հռոմեական հանրապետության 80.000 հոգանոց բանակը Ֆրանսիայի նույն հարավում տեղի ունեցած Ակվա-Սեստայի ճակատամարտում ջախջախեց գերմանական 110.000 հոգանոց բանակին, որի կորուստները կազմեցին 90.000 ռազմիկ: Դրանից հետո, համարելով տեղի ունեցածը պատահականություն և ցանկանալով վրեժխնդիր լինել կրած ծանր պարտության համար, մ.թ.ա. 101 թվականի գարնանը գերմանական 200.000 հոգանոց բանակը ի վերջո ներխուժեց Ապենինյան թերակղզի, սակայն նույն թվականի հունիսի 30-ին էլ Ապենինյան թերակղզու ծայր հյուսիս-արևմուտքում տեղի ունեցած Վերցելայի ճակատամարտում Հռոմեական հանրապետության 100.000 հոգանոց բանակը հակառակորդի նկատմամբ վճռական հաղթանակ տարավ, ընդ որում գերմանացիները կորցրին 90.000 սպանված և 60.000 գերի: Վերջ, սրանով էլ հենց ավարտվեց Հռոմեական հանրապետության կողմից մղվող պայքարի հերթական փուլը իրենից հյուսիս տարածվող Եվրոպայի մնացած մասում գերիշխող ուժերի դեմ, իսկ այդ պարագայում արդեն մնում էր, թերևս, միայն լուծում տալ ներքին խնդիրներին, որից հետո արդեն՝ ի վերջո անդրադառնալ Արևելքին:

Հարկ է նշել, սակայն, որ ներքին խնդիրները ևս հեշտ լուծում չէին խոստանում, քանի որ երբեմնի սովորական մի քաղաքի կարգավիճակից այժմ արդեն հսկայական տերության չափերի հասած Հռոմեական հանրապետության ներսում նույն այս ժամանակ խիստ սրվել էին սոցիալական հարաբերությունները, ընդ որում այս հարցում ոչ վերջին դեր ուներ, ինչպես արդեն ասվեց, այն հանգամանքը, որ, փաստացի գտնվելով Հռոմեական հանրապետության կազմում, Հռոմ քաղաքի իրավական դաշտին չպատկանող բնակչության լայն զանգվածներ, ըստ էության, զրկված էին քաղաքացիական լիարժեք իրավունքներից: Արդյունքում՝ սկիզբ առավ արդեն իսկ հիշատակված Դաշնակցային պատերազմը, որից էլ, չնայած ձևական անհաջողությանը և կրած զգալի կորուստներին, Հռոմեական հանրապետությունը դուրս եկավ անհամեմատ ավելի ուժեղացած: Եվ այսպես, նույն այն ժամանակ, երբ Միհրդատ VI Եվպատորը ուժեղանում էր Սև ծովի ավազանում և աստիճանաբար լայն ծրագրերով էլ լցվում ինչպես Հռոմեական հանրապետության Ասիա պրովինցիայի ու այստեղ նրա դաշնակիցների, այնպես էլ նույնիսկ Բալկանյան թերակղզու հարավային հատվածի նկատմամբ, Արևմուտքում վերջնականապես ոտքի կանգնեց Հռոմեական հանրապետությունը:

Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ իր համար բուռն ու հիմնականում Արևմուտքում ծագող հոգսերով լի այս տարիներին Հռոմեական հանրապետությունը Արևելքում կարողացել էր արձանագրել ընդամենը մեկ և այն էլ որոշակիորեն պայմանական մի հաջողություն՝ մ.թ.ա. 102 թվականին Սելևկյանների թագավորության կողմից վաղուց արդեն իրապես չկառավարվող ու ինքն իրեն թողնված Կիլիկիան և Իսավրիան նույն այդ տարածքներին փաստորեն տիրող ծովահեններին անկայուն իշխանությունների, ըստ էության, կամավոր որոշման արդյունքում միավորվել էին Հռոմեական հանրապետությանը[1]: Այս առումով կրկին ընդգծենք, սակայն, որ Հռոմեական հանրապետության փաստացի ազդեցությունը ինչպես Կիլիկիայում և Իսավրիայում ընդհանրապես, այնպես էլ ծովահենների շարքերում մասնավորապես, նույնիսկ դրանից հետո էլ երկար տասնամյակներ շարունակ մնաց անչափ թույլ: Ահա հենց նման պայմաններում էլ ուժերով և լավատեսությամբ լի Միհրդատ VI Եվպատորը սկսեց իր հայտնի պայքարը Հռոմեական հանրապետության դեմ, որը դրանից հետո

[1] Ցիցերոն «Բրուտոսը կամ հայտնի հռետորների մասին», գլուխ 45:

տևելու էր ամբողջ 40 տարի:

Գլուխ 16
Պայքարը Կապադովկիայի թագավորության համար

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Կապադովկիայի թագավորությունում ստեղծվել էր ներքաղաքական լուրջ մի ճգնաժամ, ինչն էլ հենց ի վերջո կոնկրետ սկիզբ ապահովեց վերևում հիշատակված պայքարին: Իրոք, դեռևս մ.թ.ա. 116 թվականին Միհրդատ VI Եվպատորը կազմակերպել էր իր քրոջ ամուսին, Կապադովկիայի թագավորության արքա Արիարաթես V-ի որդի Արիարաթես VI-ի (մ.թ.ա. 130-116) սպանությունը և այժմ, արդեն մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, Կապադովկիայի թագավորությունում ձևականորեն իշխում էր հանգուցյալի որդի, փոքրահասակ Արիարաթես VII-ը (մ.թ.ա. 116-100), իսկ իրապես էլ կառավարում էր նրա մայր Լաոդիկեան, որը, ինչպես արդեն ասվեց, Միհրդատ VI Եվպատորի քույրն էր:

Կապադովկիայի թագավորությունում ստեղծված ներքին խոցելի դրությունն այս թագավորության հարևանների մոտ իրենց հերթին բնականաբար լավատեսական ծրագրեր առաջացրեցին վերջինիս նկատմամբ և, եթե Միհրդատ VI Եվպատորը առայժմ ընդամենը դեռևս միայն աննկատ միջոցներով էր ուժեղացնում իր դիրքերը տեղում, ապա Բյութանիայի թագավորության արքա Նիկոմեդես III-ը (մ.թ.ա. 127-94), որը գործում էր պաշտոնական Հռոմի աննկատ աջակցությամբ, ավելի ակտիվ եղավ՝ փաստորեն պատրաստվելով հենց ինքը կուլ տալ այն ավարը, որը Միհրդատ VI Եվպատորը հեռատեսորեն նախապատրաստում էր սեփական պետության համար: Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել, որ Նիկոմեդես III-ը և Միհրդատ VI Եվպատորը մինչ այս ևս լուրջ մրցակցության մեջ էին, քանի որ Պաֆլագոնիայի թագավորության արքա Ֆիլեմեն II-ի (մ.թ.ա. 140-130) մահից հետո Միհրդատ VI Եվպատորը ժառանգել էր Պաֆլագոնիայի թագավորության գահը և անձնական ունիայով այն կցել էր Պոնտոսի թագավորությանը, սակայն այս թագավորության տարածքի մի մասն էլ մ.թ.ա. 108 թվականին այնուհանդերձ իրենով էր արել նույն Նիկոմեդես III-ը, որն արդեն լիովին Բյութանիայի թագավորությանը ենթակա Պաֆլագոնիայի վերստեղծված թագավորության արքա էր նշանակել իր որդի Ֆիլեմեն III-ին (մ.թ.ա. 108-89): Այսպիսով՝ Պոնտոսի և Բյութանիայի թագավորությունների արքաների շահերը բախվել էին դեռևս Պաֆլագոնիայի թագավորության ժառանգությունը բաժանելիս, իսկ այժմ էլ հարաբերություններն ավելի սրվեցին, քանի որ Նիկոմեդես III-ը փորձ կատարեց Պաֆլագոնիայի հարցով առանց այդ էլ խիստ դժգոհ մնացած Միհրդատ VI Եվպատորի քրոջից խլել արդեն նաև Կապադովկիայի թագավորությունը, որը Պոնտոսի տիրակալը, ինչպես արդեն ասվեց, պահել էր իր համար:

Իրադարձությունների սկիզբ հանդիսացավ այն հանգամանքը, որ մ.թ.ա. 101 թվականին սկզբին Բյութանիայի թագավորության բանակը ներխուժեց Կապադովկիայի թագավորության տարածք և հաջողության հասավ: Ավելին, Նիկոմեդես III-ը ստիպեց Լաոդիկեային ամուսնանալ իր հետ՝ դրանով փաստացի, որպես խնամակալ, Կապադովկիայի թագավորությունը անձնական ունիայով միացնելով իր թագավորությանը: Վերջին հանգամանքը, սակայն, բնականաբար որևէ կերպ չէր կարող բավարարել Միհրդատ VI Եվպատորին և, որպես պատասխան այս գործողության, սկսեց գործել նաև նա:

Արդյունքում՝ մ.թ.ա. 101 թվականի աշնանը Միհրդատ VI Եվպատորի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (80.000 հետևակ, 600 մարտակառք) և նրա կազմում Նեմանեսի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (10.000 հեծյալ) թագավորության միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը՝ տեղից դուրս մղելով Նիկոմեդես III-ի ռազմական մեքենային ու վերստին

թագավորության փաստացի արքա հռչակելով Արիարաթես VII-ին[1]: Այսպիսով՝ Հռոմեական հանրապետության դեմ մղվող պայքարի ամենաառաջին փուլը Պոնտոսի տիրակալն ավարտեց իր օգտին, սակայն սա միայն սկիզբն էր, իսկ Միհրդատ VI Եվպատորի դեմ էլ շուտով դուրս էին գալու նաև այլ և ոչ այնքան ռազմական բնույթ ունեցող խնդիրներ:

Իրոք, վերստին հայտնվելով Կապադովկիայի թագավորության գահին, արդեն չափահասության հասած Արիարաթես VII-ը, մի կողմից առաջնորդվելով սեփական թագավորության շահերով, մյուս կողմից տարված ինքնուրույն իշխելու երիտասարդական պոռթկուն ցանկությամբ, իսկ ինչ-որ տեղ էլ երևի ի վերջո գիտակցելով նաև, թե ով է իրականում սպանել իր հորը, սեփական մի շարք քայլերով դեմ դուրս եկավ իր քեռի Միհրդատ VI Եվպատորին, որը, սակայն, հաստատ այն մարդը չէր, որի հետ կարելի էր անվտանգ կերպով նման խաղի մեջ մտնելը: Արդյունքում՝ մ.թ.ա. 100 թվականին Միհրդատ VI Եվպատորը անձնական հանդիպման ժամանակ հենց ինքն էլ անձամբ սպանեց Արիարաթես VII-ին, ինչից հետո, ցանկանալով արքայից զրկված Կապադովկիայի թագավորությունը կցել Պոնտոսի թագավորությանը, այս թագավորության արքա հռչակեց Փոքր Հայքի թագավորության արքա, իր որդի Արկաթիոսին, որն արքա հռչակվեց արդեն որպես Արիարաթես VIII (մ.թ.ա. 100-94, 93-92, 91-90, 89-86):

Արիարաթես VIII-ի հաստատվելը Կապադովկիայի թագավորության գահին չէր կարող աննկատ մնալ Հռոմում, ընդ որում տեղում վերջինիս շահերը ներկայացնող Նիկոմեդես III-ն ինքն էլ իրավիճակի մասին տեղեկացնելու ուղղությամբ անմիջապես եռանդուն միջոցառումներ ձեռնարկեց՝ դիմումներ հղելով ուղիղ դեպի Հռոմի սենատ: Որպես հետևանք այս ամենի՝ Հռոմեական հանրապետության սենատը որոշեց խնդիրը լուծել հօգուտ Նիկոմեդես III-ի, սակայն միաժամանակ նաև, աչքի առաջ ունենալով մի շարք ներքին և արտաքին խնդիրներ, վերջինս առժամանակ ի վիճակի չեղավ նույն այդ լուծումը կյանքի կոչել ռազմական միջոցառումներով: Արդյունքում՝ սկսեց գործել տեղում գտնվող Նիկոմեդես III-ը, որին հաջողվեց տեղական ուժերի կիրառմամբ Արիարաթես VIII-ի դեմ հզոր մի ապստամբություն կազմակերպել: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 96 թվականի գարնանը Նիկոմեդես III-ը Արիարաթես VIII-ին վտարեց Կապադովկիայի թագավորության գահից, որից հետո արքա հռչակեց Արիարաթես VII-ի եղբայր և սեփական դրածո Արիարաթես IX-ը (96): Այս հանգամանքը, սակայն, իր հերթին ստիպեց գործել արդեն նաև Միհրդատ VI Եվպատորին:

Մ.թ.ա. 96 թվականի աշնանը Միհրդատ VI Եվպատորի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (80.000 հետևակ, 600 մարտակառք), ինչպես նաև նրա կազմում Նեմանեսի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (10.000 հեծյալ) թագավորության միացյալ բանակը մտավ Կապադովկիայի թագավորության տարածք և մանր մարտերից հետո հաղթեց ու երկրից վտարեց Արիարաթես IX-ի գլխավորած Կապադովկիայի (մոտ 10.000) և Բյութանիայի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին: Արդյունքում՝ Արիարաթես VIII-ը կրկին հռչակվեց Կապադովկիայի թագավորության արքա, իսկ Արիարաթես IX-ը հեռացավ Հռոմեական հանրապետության տարածք և շուտով, կարելի է ենթադրել, որ կրկին իր քեռու աննկատ դրդումներով, կնքեց իր մահկանացուն[2]: Այսպիսով՝ Կապադովկիայի թագավորության տարածքը մի քանի տարով կրկին ընկավ Պոնտոսի թագավորության տիրապետության տակ, իսկ նրա ճակատագրի վերաբերյալ վեճի վերջնական լուծումն էլ փորձ կատարվեց տալ Միհրդատ VI Եվպատորի և Հռոմեական հանրապետության սենատի միջև ընթացող բանակցություններում: Սկիզբ առած բանակցությունները, սակայն, ձգձգվեցին, քանի որ Հռոմեական հանրապետության սահմաններում նույն այդ ժամանակ սրվում էր ներքաղաքական դրությունը, ինչի պայմաններում մի կողմից Հռոմի

[1] Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 1:
[2] Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 2:

սենատն ինքը չուզեց հարցին վերջնական լուծում տալ, իսկ մյուս կողմից էլ իրերի ստեղծված դրությունը միանգամայն ձեռնտու էր նաև Միհրդատ VI Եվպատորին:

Գլուխ 17
Սելևկյանների թագավորությունում շարունակվող Մեծ քաոսի ընթացքը

Մ.թ.ա. 96 թվականին Անտիոքոս VIII-ը իր իսկ խորհրդականի կողմից սպանվեց և նրան հաջորդեց սեփական որդի Սելևկոս VI-ը (մ.թ.ա. 96-95՝ համիշխան), որը մ.թ.ա. 95 թվականին պարտության մատեց Անտիոքոս IX-ին, գերեց վերջինիս և մահապատժի ենթարկեց: Սելևկյանների թագավորությունում ընթացող ներքին պայքարը, սակայն, սրանով ևս որևէ կերպ չավարտվեց, քանի որ շուտով Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց Անտիոքոս IX-ի որդի Անտիոքոս X-ը (մ.թ.ա. 95-90՝ համիշխան), որը իր հերթին պարտության մատնեց Սելևկոս VI-ին և ստիպեց վերջինիս ապաստանել Կիլիկիայում: Սելևկյան այս տիրակալին, սակայն, ցանկացած դեպքում վիճակված չէր խաղաղ վերջաբան, քանի որ, մ.թ.ա. 95 թվականի դեկտեմբերին Մամեստիայի ճ-մ-ում (Դաշտային Կիլիկիա, Ջեյհուն գետի աջ ափին) քաղաքի ապստամբած աշխարհազորը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 700) հաղթեցին քաղաքացիների նկատմամբ բռնություններ սկսած Սելևկոս VI-ի գլխավորած Սելևկյանների թագավորության բանակին (մոտ 500), ընդ որում զոհվածների թվում էր նաև Սելևկոս VI-ը[1]:

Սելևկոս VI-ի զոհվելուց հետո ևս, սակայն, Սելևկյանների թագավորությունում ընթացող գահակալական պայքարը չավարտվեց, քանի որ Անտիոքոս X-ի դեմ այս անգամ էլ պայքար սկսեցին Սելևկոս VI-ի եղբայրները՝ միաժամանակ արքա հռչակված և ինչպես միմյանց, այնպես էլ Անտիոքոս X-ի դեմ պայքար սկսած Անտիոքոս VIII-ի որդիներ Անտիոքոս XI-ը (մ.թ.ա. 95-92՝ համիշխան), Դեմետրիոս III-ը (մ.թ.ա. 95-88՝ համիշխան) ու Ֆիլիպ I-ը (մ.թ.ա. 95-88՝ համիշխան, 88-87, 87-84՝ համիշխան, 84-83): Ի սկզբանե Անտիոքոս XI-ը և Դեմետրիոս III-ը դաշինքի մեջ մտան ընդդեմ Ֆիլիպ I-ի, սակայն այդ դաշինքը նրանց որևէ հաջողություն չբերեց, իսկ մ.թ.ա. 92 թվականին էլ Անտիոքի (Հյուսիս-արևմտյան Ասորիք, Հալեպից մոտ 90 կմ արևմուտք) վրա կազմակերպված անհաջող հարձակումից հետո տեղի ունեցած նահանջի ժամանակ Անտիոքոս XI-ը կամրջի վրայով սլացող ձիու վրայից ընկավ Օրոնտես գետը և խեղդվեց, ինչից հետո Սելևկյանների թագավորության տարբեր մասերում շարունակեցին իշխել Անտիոքոս X-ը, Դեմետրիոս III-ը և Ֆիլիպ I-ը:

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 13, գլուխ 13: Այս մասին հայտնում է նաև Հիերոնիմոսը:

Գլուխ 18
Տիգրան II Մեծ

Մ.թ.ա. 95 թվականին իր մահկանացուն կնքեց Մեծ Հայքի թագավորության արքա Տիրան I-ը: Վերջինիս խաղաղ և ռազմաքաղաքական էական իրադարձություններից գործնականում զուրկ գահակալման շրջանը, կարծես, լուռ նախերգանքն էր բուռն իրադարձություններով լի գահակալման այն շրջանին, որը բաժին էր ընկնելու նրա որդի և հաջորդ Տիգրան II Մեծին:

Մեծ Հայքի թագավորության արքա Տիգրան II Մեծը նույնիսկ մեծամասշտաբ անձանց ամենևին էլ պակաս չունեցող մեր պատմության մեջ բացառիկ մի անձնավորություն է, ընդ որում վերջինիս բացառիկությունը պայմանավորվում է այս տիրակալի ամենից առաջ ռազմաքաղաքական ձեռքբերումներով, սակայն ամենևին էլ չի սահմանափակվում դրանով: Տիգրան II Մեծն իրենից ներկայացնում էր բացառիկ խելքի և խորաթափանցության, քաղաքական զարգացումների գնահատման անչափ սուր ընկալման, զորավարական առաջնակարգ ունակությունների, հսկայական եռանդի, երկաթյա կամքի, ինչպես նաև կազմակերպչական մեծ ունակությունների տեր մի անձնավորություն: Հայոց բացառիկ այս տիրակալը, որը, կարծես թե, կրկնելով, իսկ ինչ-որ իմաստով էլ նույնիսկ գերազանցելով Արա III Մեծին, արդյունքում ոչ միայն հսկայական ռազմաքաղաքական վերելքի ապահովեց Մեծ Հայքի թագավորությանը և հայ ժողովրդին, այլև, որ, թերևս, ավելի կարևոր էր, վերջիններիս կենսունակության հսկայական ուժ ապահովեց, ինչը անչափ կարևոր նշանակություն ունեցավ հետագայի համար՝ ըստ էության մեծապես պայմանավորելով հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: Այս առումով Տիգրան II Մեծին լավագույններից մեկը բնորոշում է Ռենե Գրոսեն, որը նշում է. «*Տիգրանը՝ թերագնահատված այդ մեծ տիրակալը..., անշուշտ, շատ ավելի է արժանի պատմության հիացմունքին, քան նրա ժամանակակից Միհրդատ Եվպատորը, եթե ցանկանաք նկատել, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության հասցրեց իր երկիրը», մինչդեռ Տիգրանն ապահովեց սեփական ժողովրդի հավերժական հարատևումը*»:

Մինչև Մեծ Հայքի թագավորության գահը զբաղեցնելը Տիգրան II Մեծը, կապված դեռևս մ.թ.ա. 116 թվականի իրադարձությունների հետ, քաղաքական պատվավոր պատանդի կարգավիճակում գտնվում էր Պարթևական թագավորությունում և հենց Միհրդատ II Մեծի արքունիքում էր, որ թրծվեց Հայոց պատմության մեծագույն այս գործչի քաղաքական կերպարը: Եվ այսպես, ստանալով հոր մահվան լուրը և Մեծ Հայքի սահմանային որոշ տարածքներ Պարթևական թագավորությանը զիջելու գնով ձեռք բերելով ազատություն, երիտասարդ արքան վերադարձավ Հայրենիք ու ստանձնեց Մեծ Հայքի թագավորության ղեկավարումը՝ ամենից առաջ Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Նփռետ գավառում հիմնելով մի նոր մայրաքաղաք և իր անունով կոչելով այն Տիգրանակերտ:

Տիգրան II Մեծի կողմից Մեծ Հայքի թագավորության գահը զբաղեցնելու պահին երկրի առաջ ծառացած էին մի շարք արտաքին և ներքին հիմնախնդիրներ, որոնք իրենց լուծումներն էին պահանջում: Իրոք, նույն այս ժամանակ խիստ սրվել էին Իբերիայի թագավորության զառամյալ արքա Փառանջոմի (մ.թ.ա.160-95) հարաբերությունները սեփական իշխանների հետ, ընդ որում վերջինիս հիմքում ընկած էր ամենից առաջ հենց մշակութային կամ նույնիսկ քաղաքակրթական դիմակայության տեսք ստացած քաղաքական հակամարտությունը, երբ երկրում աստիճանաբար ուժեղացող Մեծ Հայքի Արշակունիների ազդեցությունն արտահայտում էին Փառանջոմի դեմ դուրս եկած իշխաններն, ի դեմս ավանդականի, իսկ Փառանջոմն ինքն էլ կանգնած էր ավելի հելլենական մշակութային հենքի վրա՝ որոշակիորեն վայելելով Պարթևական թագավորության աջակցությունը: Իբերիայի թագավորությունում առկա ներքին ներհակությունների սկզբունքային որոշակի կրկնությունն էլ նույն այս ժամանակ պետք է

որ առկա լիներ նաև Աղվանքի թագավորությունում, սակայն այս մասին մենք որևէ կոնկրետ տեղեկություն առայժմ չունենք:

Ուշագրավ էր դրությունը նաև Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմաններում, որտեղ հասունանում էր Պոնտոսի թագավորության հսկայածավալ պայքարը Հռոմեական հանրապետության դեմ, իսկ ներհայկական խնդիրներից էլ առաջնայինը Ծոփքի թագավորության ժառանգության հարցն էր, քանի որ հենց նույն այս ժամանակ իր մահկանացուն էր կնքել Ծոփքի թագավորության արքա Արտանես II-ը: Միաժամանակ, սակայն, առկա էր նաև Կոմագենեի թագավորության խնդիրը, որը սկսել էր աստիճանաբար ենթարկվել Հյուսիսային Միջագետքին մոտեցող Պարթևական թագավորության սպառնալիքներին, ընդ որում հեռավոր հեռանկարում կար նաև Կիլիկիայի խնդիրը, որի լուծումը, զուտ հայկական հողերը միավորելու տեսանկյունից զատ, նաև Մեծ Հայքի թագավորությանը ելք կապահովեր դեպի Միջերկրական ծով: Եվ վերջապես ոչ պակաս կարևոր էր նաև Սելևկյանների թագավորության քաղաքական ժառանգությանը տիրելու հարցը, քանի որ նույն այս ժամանակ, թերևս, արդեն բոլորի համար պարզ էր, որ այս թագավորության կործանումը մոտ է:

Գլուխ 19
Տիգրան II Մեծը և Իբերիայի ու Աղվանքի թագավորությունները

Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության արքան որոշեց խնդիրների լուծումը սկսել հյուսիսից՝ մանավանդ օգտվելով այն բանից, որ նույն այս ժամանակ Իբերիայի թագավորության մի շարք առաջատար իշխաններ, ի վերջո գահընկեց հայտարարելով Փառանջոմ արքային, աջակցության համար դիմել էին իրեն՝ Հայոց արքայից խնդրելով իրենց թագավոր կարգել իբերական արքայադստեր հետ ամուսնացած նրա որդի Արշակին: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 95 թվականին Տաշիրի ճ-մ-ում (Գուգարք, Լոռի ամրոցի մոտակայքում) Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 50.000) համառ մարտում ջախջախեց Փառանջոմ արքայի գլխավորած Իբերիայի և Պարթևական թագավորությունների միացյալ բանակին (մոտ 50.000): Արդյունքում՝ Փառանջոմը սպանվեց, Իբերիայի թագավորության արքա հռչակվեց Արշակը՝ Արշակ I Հայը (մ.թ.ա. 95-68), և Իբերիայի թագավորությունը ընկավ Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ: Սկսվեց Հայկական Հինգերորդ գերիշխանությունը, որի սահմանները հյուսիսում հասան մինչև Կովկասյան լեռնաշղթայի կենտրոնական ու արևելյան հատվածներ[1]:

Մինչխորհրդային ժամանակաշրջանում, երբ եվրոպակենտրոնության դիրքերից սկսվեց ուսումնասիրվել Տիգրան II Մեծի գահակալության շրջանը, այն հարցերը, թե ի՞նչ կերպ Իբերիայի և Աղվանքի թագավորություններն ընկան Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ, որոշակիորեն շրջանցվեցին, քանի որ հունահռոմեական աղբյուրներն այս մասին լռում են ու ակնարկներից այն կողմ չեն անցնում, իսկ այլ աղբյուրների էլ եվրոպակենտրոն մասնագետներն, ըստ էության, ծանոթ չէին: Իրավիճակը չփոխվեց նաև խորհրդային տարիներին, քանի որ այս անգամ էլ արդեն ընդունված չէր խոսել «եղբայրական ժողովուրդների» բարեկամության որոշակիորեն արհեստական թեզին դեմ դուրս եկող հանգամանքների մասին, իսկ քննարկվող դեպքում հենց այդ վիճակն էր՝ հայերն առավելության էին հասնում վրացիների և աղվանցիների նկատմամբ, ընդ որում վերջիններս, իհարկե անհիմն, ընկալվում էին որպես ադրբեջանցիների նախնիներ: Այս առումով կարծում եմ, որ իրավիճակը պարզաբանման կարիք ունի:

Վրաց Պատմահայր Լեոնտիոս Մրովելին հայտնում է. «*Փառանջոմը սիրեց պարսից կրոնը և կրակապաշտությունը, Պարսկաստանից կանչեց կրակի սպասավորներին ու մոգերին, նրանց հաստատեց Մծխեթում ու այն վայրում, որն այժմ կոչվում է Մողվթա, և*

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 41; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

սկսեց բացահայտորեն պաշտել կուռքերին: Հենց այս պատճառով էլ Քարթլիի բնիկները նրան ատեցին: Եվ ահա Վրաց իշխանների մեծամասնությունը դավադրություն կազմեց և նրանք դեսպան ուղարկեցին Հայոց թագավորի մոտ՝ ասելով. «Մեր թագավորն ուրացավ հայրական կրոնն ու չի պաշտում Վրաց պահապան աստվածներին: Նա չընդունեց հայրենի կրոնն և մոռացավ մայրենին, արդ նա այլևս արժանի չէ մեզ թագավոր լինելու: Տուր մեզ քո որդի Արշակին, որի կինը մեր Փառնավազյան թագավորների սերնդից կլինի, և հասցրու քո զորքը, որպեսզի քշենք նոր կրոն ընդունող Փառանջոմին ու մեզ թագավոր լինի քո որդի Արշակը, իսկ թագուհի՝ նրա կինը՝ մեր թագավորների զավակը»: Հայոց թագավորը հավանեց այս մտադրությունը և հետ ուղարկեց վրաց դեսպանին մի պատասխանով, որում ասվում էր. «Եթե իմ որդուն իրոք անարատ սրտով կցանկանք ձեզ թագավոր, ապա դուք՝ իշխաններդ, ինձ պատանդ տվեք, ես իմ որդուն ձեզ թագավոր կտամ և ամենուրեք լիուլի ձերը կդարձնեմ»: Եվ ահա Վրաց իշխանների մեծ մասը, տալով պատանդներ, հայտարարեցին, որ ուրանում են Փառանջոմին, որից հետո Հայոց թագավորն իր ողջ զորքով դիմեց Քարթլի: Փառանջոմն իր հերթին օգնության կանչեց պարսիկներին և ուժեղ պարսկական զորք մտցրեց Քարթլի: Նա իր շուրջը հավաքեց նաև վրացիներին, որոնք հավատարիմ էին մնացել իրեն: Ուրացած վրաց իշխաններն իրենց հերթին Տաշիրում ընդառաջ գնացին Հայոց թագավորին, որտեղ ժողովվեցին շատ հայեր և վրացիներ: Փառանջոմը ևս դիմեց այնտեղ՝ Տաշիր: Նրանց միջև սաստիկ պատերազմ տեղի ունեցավ և երկու կողմերից էլ անհամար մարդիկ կոտորվեցին: Ի վերջո, Փառանջոմը հայերի և վրացիների կողմից հաղթվեց ու սպանվեց, իսկ նրա զորքը կոտորվեց: Փառանջոմի որդի Միհրանը, որը մեկ տարեկան երեխա էր, վերցվեց իր դայակի կողմից, որը տարավ նրան Պարսկաստան, իսկ Հայոց թագավորը վրացիներին զիջեց իր որդուն»[1]: Հիմնական հաղորդումը սա է, որին, ըստ էության, կրկնելով էլ, քննարկվող իրադարձությունների մասին հայտնում են ավելի ուշ, գրեթե նոր շրջանի վրացական ևս երկու պատմիչներ: Այսպես, ըստ Դավիթ Բագրատունու. «*Միհրան արքայի մահից հետո Իբերիայում թագավորեց նրա որդի Փառանջոմը: Այս արքայի առանձնահատկությունն էր հակումը դեպի պարսկական սովորությունները, իսկ դա բերեց նրան, որ նա սկսեց արգելել պաշտել կուռքերին և առաջարկել, որ իբերները դիմեն կրակը պաշտելուն: Հինավուրց սովորությունների նկատմամբ դրսևորած արհամարհանքը և հին ու երկարաժամկետ սովորույթների վերացումը, սակայն, Իբերիայում ժողովրդական հուզումների պատճառ հանդիսացան, որի արդյունքում Փառանջոմը վտարվեց այն երկրից, որին նա տիրում էր ժառանգական իրավունքով: Անիշխանություն կործանարար հետևանքների կանխման հետևանքով իբերները խնդրեցին Հայոց արքա Արտաշեսին, որ նա իր որդի և Իբերիայի արքա Միհրանի փեսա Արշակին թույլ տա ընդունել արքայական իշխանությունը Իբերիայի նկատմամբ: Ժողովրդի ցանկությունը կատարվեց, Արշակն ընդունեց գահը և իր ջանքերը սկսեց ուղղել դեպի սեփական հպատակների բարեկեցությանը: Փառանջոմը, սակայն, հուսահատության գիրկն ընկնելով, դիմեց պարսիկներին և, որպեսզի ճնշի իբերների դիմադրությունը, նրանցից որպես օգնություն զորք խնդրեց,: Եվ ահա նա օտար զորքերով մտավ Իբերիա: Ժողովուրդը, սակայն, վշտացած նրա վարքագծից, մազաչափ իսկ չտատանվեց իր մտադրություններում: Արդյունքում՝ Լոռու մոտ տեղի ունեցած ճակատամարտում Փառանջոմը պարտվեց և սպանվեց: Սրա հետևանքով այսպես կոչված Փառնավազյանների սերունդը ընդհատվեց»*[2]: Իր հերթին, ըստ Վախուշտի Բագրատունու. «*Հայոց թագավորի որդի Արշակ Արշակունուն բերին ու ողջ Վրաստանի թագավոր նստեցրին*»[3]: Այսպիսով՝ Իբերիայի թագավորության գահին փաստորեն տեղի ունեցավ արքայական տոհմի փոփոխություն՝ մինչ այդ իշխած և պրոպարթևական դիրքորոշում ունեցող Փառնավազյանների տոհմին հաջորդեց Մեծ Հայքի Արշակունիների

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»:
[2] Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 41:
[3] Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

տոհմի մի ճյուղը, որին ճիշտ է կոչել Վրաց Արշակունիներ: Սրանով սկիզբ դրվեց հայ-պարթևական մրցակցության հերթական ճակատի բացմանը, որի առաջին արարը, ի դեմս Իբերիայի թագավորության նկատմամբ գերիշխանության հաստատման, եղավ հայերի օգտին: Այժմ, սակայն, անենք մի քանի դիտարկումներ:

Ամենից առաջ հարկ է նշել, որ Լեոնտիոս Մրովելին որպես ճակատամարտի վայր նշում է Տաշիրը, Վախուշտի Բագրատունին լռում է, իսկ Դավիթ Բագրատունին ավելի է կոնկրետացնում՝ Լոռի ամրոցի մոտակայքում: Իր հերթին Դավիթ Բագրատունին Իբերիայի թագավորության արքա Արշակ I Հային ճանաչում է որպես Արտաշես I-ի որդի, սակայն դա սխալ է և այս առումով հատկանշական է, որ Մրովելին, որպես սկզբնական տեղեկատվության կրող, չի կոնկրետացնում Հայոց արքայի անունը:

Իրականում, հաշվի առնելով, որ Իբերիայի թագավորությունում Արշակ I Հայի թագավորության ժամանակ Մեծ Հայքի թագավորության արքան էր Տիգրան II Մեծը, կարելի է վստահորեն ասել, որ Արշակը հենց վերջինիս որդին էր: Խնդիրն, իհարկե, զուտ ենթադրական մակարդակի վրա է, քանի որ վրացական աղբյուրները Հայոց արքայի ճշգրիտ անունը ցավալի կերպով այնուհանդերձ չեն մատնանշում, սակայն մի բան փաստ է, որ Արշակ I Հայ սկզբունքորեն իսկ չէր կարող լինել Արտաշես I-ի որդին, իսկ այլ պարագայում, հաշվի առնելով համընդհանուր ճանաչում ստացած այն փաստը, որ Իբերիայի թագավորությունը Տիգրան II Մեծ գահակալման հենց սկզբում ընկնում է Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ, չի մնում այլ թեկնածու, քան հենց ինքը՝ Տիգրան II Մեծը: Վերջում ուղղակի սեղմ կերպով ամրագրենք, որ, քանի որ վրացական աղբյուրները պահպանվել են, Իբերիայի թագավորության պարագան պարզաբանելը մեծ հաշվով հաջողվում է, սակայն այն հարցը, թե Աղվանքի թագավորությո՞ւնն ինչպես է ընկել Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ, մանրամասների մակարդակով հայտնի չէ:

Գլուխ 20
Տիգրան II Մեծը և արևմտյան խնդիրները

Հաջողությամբ լուծելով հյուսիսային և արևելյան խնդիրները՝ Տիգրան II Մեծը անդրադարձ կատարեց արևմտյան խնդիրներից առաջնայինին՝ մ.թ.ա. 94 թվականի գարնանը առանց լուրջ մարտերի տիրելով Ծոփքի թագավորության տարածքին: Ծոփքի թագավորությունը ոչնչացավ, նրա տարածքը միավորվեց Մեծ Հայքի թագավորությանը, իսկ նահանգի կառավարիչ դարձավ Մեհրուժան Անգեղացին[1]:

Մինչ Հայոց գահակալը իր խնդիրներն էր լուծում Արևմուտքում, նույն այդ Արևմուտքում սեփական խնդիրների լուծման համար հերթական անգամ ոտքի ելավ, սակայն, նաև Միհրդատ VI Եվպատորը, որին հաջողվեց փոխօգնության դաշինք կնքել Տիգրան II Մեծի հետ՝ նրան կնության տալով իր դուստր Կլեոպատրային: Երկու տիրակալների միջև կնքված դաշինքի ամենաէական պայմանը փոխօգնությունն էր, ընդ որում կողմերը միաժամանակ բաժանում էին նաև ազդեցության և առաջխաղացման առաջնահերթությունների գոտիները, երբ Պոնտոսի թագավորությունը պետք է պայքար սկսեր Հռոմեական հանրապետության դեմ ու առաջանար Արևմուտքում, իսկ Մեծ Հայքի թագավորությունն էլ պետք է նույնն աներ Պարթևական թագավորության դեմ և առաջանար Արևելքում: Այս առումով Ծոփքի թագավորության խնդրի լուծումը մինչև դաշինքի կնքումը խիստ կարևոր եղավ հայերի համար, քանի որ այս թագավորության հարցը երկու գահակալների բանակցություններում նույնիսկ չքննարկվեց էլ՝ համարվելով ինքնըստինքյան լուծված հօգուտ հայերի:

Մ.թ.ա. 95 թվականին Հռոմեական հանրապետության սենատը, ի վերջո լուծում տալով Կապադովկիայի թագավորության խնդրին, որպես այս թագավորության սեփական թեկնածու առաջ քաշեց տեղական ազնվականներից մեկը հանդիսացող

[1] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15:

Արիոբարզանեսին: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 94 թվականին Արիոբարզանեսը՝ Արիոբարզանես I-ը (մ.թ.ա. 94-93, 92-91, 90-89, 86-81, 81-73, 72-62) հռչակվեց Կապադովկիայի թագավորության արքա, երբ այս թագավորության համար մղվող պայքարում առավելությունը հերթական անգամ անցավ պաշտոնական Հռոմի կողմը: Շուտով պարզվեց, սակայն, որ Միհրդատ VI Եվպատորն ինքը որևէ կերպ պատրաստ չէ այդքան հեշտությամբ զիջել դիրքերը:

Մ.թ.ա. 93 թվականի գարնանը Գորդիոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (մոտ 50.000), նրա կազմում Նեմանեսի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (10.000 հեծյալ), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը՝ փախուստի մատնելով Արիոբարզանես I-ն և կրկին թագավորության արքա հռչակելով Արիարաթես VIII-ին[1]: Սրանից հետո հարվածի հերթը կրկին անցավ պաշտոնական Հռոմին, որը Արևելքում մղվող պատերազմի համար ոտքի հանեց ժամանակի իր ամենատաղանդավոր, բայց նաև ամենադաժան զորավարներից մեկին, ի դեմս Լուցիոս Սուլլայի: Արդյունքում՝ մ.թ.ա. 92 թվականի գարնանը Լուցիոս Սուլլայի գլխավորությամբ Կապադովկիայի թագավորության տարածք մտած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 70.000) մանր մարտերում հաղթեց Գորդիոսի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 10.000), Պոնտոսի (մոտ 10.000) և Կապադովկիայի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին, որի արդյունքում Արիարաթես VIII-ը գահընկեց արվեց, իսկ Կապադովկիայի թագավորության արքա էլ կրկին դարձավ Արիոբարզանես I-ը[2]:

Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել, որ հենց այս ժամանակ էր, որ Եփրատ գետի ափին տեղի ունեցավ հռոմեա-պարթևական առաջին և, ինչ որ իմաստով, պատմական շփումը, երբ Լուցիոս Սուլլան հանդիպում ունեցավ Միհրդատ II Մեծի դեսպանի հետ ու կողմերը փորձ կատարեցին պայմանավորվածություն ձեռք բերել ինչպես ազդեցության գոտիների բաժանման, այնպես էլ Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորությունների դեմ համատեղ գործողությունների իրականացման հարցով: Հանդիպումը, սակայն, արդյունքում, թերևս, միայն ճանաչողական նշանակություն ունեցավ, քանի որ, պայմանավորված ամենատարբեր հանգամանքներով, երկու այս տերությունները այդպես էլ չկարողացան ոչ միայն համակարգել իրենց գործողությունները, այլև նույնիսկ՝ զերծ մնալ հետագա ընդհարումից: Նույն այս ժամանակ, հերթական անգամ անհաջողության մատնվելով Կապադովկիայի թագավորության համար մղվող պայքարում՝ Միհրդատ VI Եվպատորը պատասխան հարված հասցրեց, ընդ որում հարվածն այս անգամ նաև այլ ուղղություն ուներ:

Խնդիրը կայանում էր նրանում, որ մ.թ.ա. մ.թ.ա. 94 թվականին Նիկոմեդես III-ը կնքել էր իր մահկանացուն և Բյութանիայի թագավորության գահին նրան հաջորդել էր իր ապօրինի որդի, Հռոմեական հանրապետության դրածո Նիկոմեդես IV-ը (մ.թ.ա. 94-74), այն դեպքում, երբ հանգուցյալի մյուս ապօրինի որդի Սոկրատես Խրեստոսը դիմել էր փախուստի և ապաստանել էր Պոնտոսի թագավորությունում: Արդյունքում՝ մ.թ.ա. 91 թվականի գարնանը Սոկրատես Խրեստոսի և Մեհրուժան Անգեղացու ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի (մոտ 20.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 10.000) ու Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի, Պաֆլագոնիայի և Բյութանիայի թագավորությունների տարածքները՝ հերթական անգամ Կապադովկիայի թագավորության արքա հռչակելով Արիարաթես VIII-ին[3]: Այսպիսով, թեև Բյութանիայի թագավորության հարցով վերջնական հաջողություն չեղավ, սակայն Կապադովկիայի բազմաչարչար թագավորության գահի համար պայքարում հերթական հաջողությունը գրանցեց արդեն Պոնտոսի թագավորությունը:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 10; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 3:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Սուլլա», գլուխ 5; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 11:

[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 10; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 3:

Դրանից հետո, սակայն, հարված հասցնելու հերթը բնականաբար անցավ Հռոմեական հանրապետությանը, որն էլ որևէ կերպ չհապաղեց: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 90 թվականի գարնանը Կապադովկիայի ճ-մ-ում Մանիոս Ակվիլիոսի և Լուցիոս Կասսիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 50.000) մանր մարտերում հաղթեց Պոնտոսի (մոտ 2.000), Մեծ Հայքի (մոտ 10.000) ու Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին, ինչի արդյունքում հերթական անգամ Կապադովկիայի թագավորության արքա հռչակվեց Արիոբարզանես I-ը[1]: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, սակայն, որ Կապադովկիայի թագավորության համար պայքարի հերթական դրվագը կոնկրետ այս դեպքում մեկ այլ հետևանք ևս ունեցավ:

Իրոք, մինչ Միհրդատ VI Եվպատորը պատասխան հարվածի համար ուժերն իրար կբերեր, բավականին անակնկալ կերպով գործեց Պարթևական թագավորության արքա Միհրդատ II Մեծը, որն ակնհայտորեն դժգոհ էր մնացել իր դեսպանի ու Լուցիոս Սուլլայի միջև դեռևս մ.թ.ա. 92 թվականին տեղի ունեցած հանդիպումից և նույնիսկ մահապատժի էր ենթարկել իր նույն այդ դեսպանին: Եվ ահա այժմ, Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի հերթական հաղթահանդեսի ֆոնին, Պարթևական թագավորության արքան մի կողմից վախեցավ կորցնել ենթադրաբար իրեն պատկանողը, իսկ մյուս կողմից էլ ցանկացավ անմիջապես վերցնել դա: Արդյունքում՝ Պարթևական թագավորությունում որոշեցին հարված հասցնել Կոմագենեի թագավորությանը: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Կոմագենեի թագավորությունում իշխող Միհրդատ I-ը ամուսնացած էր Անտիոքոս X-ի խորթ քույր Լաոդիկեայի հետ, ինչն էլ հաշվի առնելով պաշտոնական Սամոսատն իր հերթին օգնության համար դիմեց Անտիոքոս X-ին: Արդյունքում՝ մ.թ.ա. 90 թվականի աշնանը Կոմագենեի ճ-մ-ում Միհրդատ I-ի գլխավորած Կոմագենեի (մոտ 5.000) և Անտիոքոս X-ի գլխավորած Սելևկյանների (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակը հետ մղեց Հայոց Միջագետքի թագավորության տարածքով առաջխաղացած Պարթևական թագավորության ներխուժած բանակին (մոտ 40.000), թեև Անտիոքոս X-ը զոհվեց մարտում[2]: Այսպիսով՝ Միհրդատ I-ին, ըստ էության, հաջողվեց պահել դիրքերը, իսկ Սելևկյանների թագավորությունում էլ իշխելու մնացին միայն երկու արքաներ՝ Դեմետրիոս III-ը և Ֆիլիպ I-ը:

Մ.թ.ա. 89 թվականի ամռանը Միհրդատ VI Եվպատորը հերթական անգամ վերսկսեց պայքարը Կապադովկիայի թագավորության համար, ինչի արդյունքում Պոնտոսի (մոտ 20.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 10.000) և Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը՝ երկրից հերթական անգամ վտարելով Արիոբարզանես I-ին ու կրկին թագավորության արքա հռչակելով Արիարաթես VIII-ին[3]: Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ, քանի որ նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետության տարածքում ընթանում էին Դաշնակցային պատերազմի վերջին և ամենածանր արարները, հենց այդ պատճառով էլ սպասելի պատասխան հարվածը չհասցվեց:

Գլուխ 21
Միհրդատյան I պատերազմը

Իր հերթին, սակայն, իրավիճակին այնուհանդերձ լրացուցիչ սրություն հաղորդեց այն հանգամանքը, որ Նիկոմեդես IV-ն ինքը խիստ լարված հարաբերություններ ուներ

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 11; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 3; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:

[2] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 13, գլուխ 13:

[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 11, 15; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 48; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 5, գլուխ 5:

Պոնտոսի թագավորության արքայի հետ և մի ինչ-որ պահի նույնիսկ ինքը նախահարձակ եղավ: Արդյունքում՝ օգտվելով հակառակորդի մոտ առկա խնդիրներից, Միհրդատ VI Եվպատորը որոշեց ավելի մեծացնել ռազմական գործողությունների ծավալները՝ հարված հասցնելով արդեն բուն Հռոմեական հանրապետության դաշնակցի տարածքին և ի վերջո կյանքի կոչելով նաև հելլենական ողջ աշխարհին տիրելու իր վաղեմի ծրագիրը: Ահա այսպես էլ հենց սկիզբ առավ Միհրդատյան I պատերազմը (մ.թ.ա. 89-85):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

89 աշուն – ***<u>Ամինաս գետի ճ-մ</u>*** (Փոքր Ասիա, Հալիս գետի վտակի ափին)[1]

Հռոմեական հանրապետության ազդեցության տակ հայտնված Բյութանիայի թագավորության հետ խիստ սրված հարաբերությունների պայմաններում Արքելայոսի և Նոեպտղոմեոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (290.000, որից 40.000 հեծյալ, ինչպես նաև սարմատներ, սկյութներ, կոլխեր, տավրներ և գալլեր, 130 մարտակառք), ինչպես նաև նրա կազմում գործող Արիարաթես VIII-ի ու Նեմանեսի գլխավորած Փոքր Հայքի (10.000 հեծյալ) թագավորության միացյալ բանակը մեծ արշավանք սկսեց դեպի արևմուտք՝ ներխուժելով Բյութանիայի թագավորության տարածք: Ստացվեց այնպես, սակայն, որ սրընթաց երթի արդյունքում Պոնտոսի թագավորության բանակի ծանր հետևակը հետ մնաց, իսկ Արքելայոսի, Նոեպտղոմեոսի, Արիարաթես VIII-ի և Նեմանեսի գլխավորած թեթև հետևակը ու Փոքր Հայքի թագավորության հեծելազորը (ընդհանուր՝ 50.000) առաջ անցան: Արդյունքում՝ կտրվելով բանակային հիմնական ուժերից և անակնկալ հանդիպելով Նիկոմեդես IV-ի գլխավորած Բյութանիայի թագավորության բանակին (56.000, որից 6.000 հեծյալ), վերջիններս այնուհանդերձ չշփոթվեցին և արագորեն մարտակարգ ընդունեցին՝ թևերում տեղավորելով երկու մասի բաժանված հեծելազորը, իսկ կենտրոնում՝ թեթև հետևակը:

I փուլ – Պոնտոսի թագավորության բանակը անցավ գրոհի և գրավեց իր ձախ թևում գերիշխող դիրք ունեցող մի բարձունք, սակայն հակառակորդը համարձակ հակագրոհով շուտով այն հետ վերցրեց:

II փուլ – Պոնտոսի թագավորության բանակը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր, այդ թվում նաև ողջ հեծելազորը, և փորձեց հետ խլել կորցրած բարձունքը, սակայն Նիկոմեդես IV-ն ինքն էլ մարտի մեջ մտցրեց նոր ուժեր, որի արդյունքում ի վերջո կարողացավ փախուստի մատնել Պոնտոսի թագավորության բանակի ձախ թևին:

III փուլ – Պոնտոսի թագավորության բանակը հարձակվեց հակառակորդի առաջ եկած ձախ թևի վրա և, քաշելով վերջինիս մարտի մեջ, սկսեց նահանջել՝ չշրջապատվելու, ինչպես նաև փախուստի դիմած սեփական ուժերին մարտակարգը վերականգնելու հնարավորություն տալու համար:

IV փուլ – Շահելով բավականին ժամանակ՝ Պոնտոսի թագավորության բանակը կտրուկ հակահարձակման անցավ սեփական աջ թևում և, հակառակորդին սկզբում հարված հասցնելով մանգաղակիր մարտակառքերով, այնուհետև սկսեց ձեռնամարտը: Բռնկված մարտին օժանդակեցին նաև փախուստը դադարեցրած ու մարտադաշտ վերադարձած ձախ թևի ուժերը:

V փուլ – Շրջապատման մեջ հայտնված Բյութանիայի թագավորության բանակը համառ դիմադրություն ցույց տվեց, բայց ի վերջո ծանր պարտություն կրեց:

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 17-19; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 38, գլուխ 3; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 76; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 4; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 5, գլուխ 5; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 40.000 զինվոր:

Այսպիսով՝ Բյութանիայի թագավորության բանակը ծանր հարված ստացավ: Տարածաշրջանում, սակայն, դեռևս առկա էր երեք առանձին ճամբարներում հավասար մասերով տեղակայված Հռոմեական հանրապետության 132.000 հոգանոց բանակը, որից 12.000 հեծյալ, որի հետ ընդհարումն էլ հենց դարձավ առաջիկա խնդիր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

89 աշուն – ***<u>Պախիայի ճ-մ</u>*** (Փոքր Ասիա, Անկյուրայի մոտ)[1]

Նոեպտղոմեոսի և Նեմանեսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի (մոտ 100.000, այդ թվում սարմատներ, սկյութներ, կոլխեր, տավրներ, գալլեր) ու նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 9.000 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը սկսեց մոտենալ Մանիոս Ակվիլիոսի գլխավորությամբ ճամբարած Հռոմեական հանրապետության բանակին (40.000, որից 4.000 հեծյալ):

I փուլ – Պոնտոսի թագավորության բանակի առաջապահը (100 սարմատներ) հարձակվեց հակառակորդի բանակի առաջապահի (800) վրա և պարտության մատնեց վերջինիս:

II փուլ – Հարձակման անցավ Պոնտոսի թագավորության բանակի հիմնական մասը և ծանր պարտության մատնեց հակառակորդին:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ 10.000 սպանված և վիրավոր, 300 գերի:

Այսպիսով՝ Միհրդատ VI Եվպատորը երկու ծանր հարվածներ հասցրեց իր հիմնական հակառակորդներին, որի արդյունքում Բյութանիայի թագավորության ռազմական մեքենան, ըստ էության, լիովին շարքից դուրս եկավ, իսկ Արևելքում տեղակայված Հռոմեական հանրապետության երեք բանակներից մեկն էլ ջախջախվեց: Որպես հետևանք այս հաջողություններին՝ Հյուսիսային, Կենտրոնական և Հարավ-արևմտյան Փոքր Ասիան ընկան Պոնտոսի թագավորության տիրապետության տակ, իսկ դիմադրությունն էլ շարունակեցին միայն Հռոդոսում ամրացած հակառակորդի ուժերը, որոնց դեմ մ.թ.ա. արդեն 88 թվականի ամռանը ձեռնարկած արշավանքը, սակայն, Պոնտոսի թագավորության տիրակալին որևէ արդյունք այդպես էլ չապահովեց:

Անհաջողություն կրելով Հռոդոսի ուղղությամբ հասցված հարվածում՝ Միհրդատ VI Եվպատորը հետ քաշեց իր ուժերը և պատրաստվեց հետագա հարձակումը զարգացնել արդեն Բալկանյան թերակղզու հարավային հատվածի ուղղությամբ՝ քիչ ավել, քան հարյուր տարվա տարբերությամբ, ըստ էության, փաստորեն կրկնելով Անտիոքոս III Մեծին: Միաժամանակ, փորձ կատարելով շահել տեղացիների սրտերը, Պոնտոսի թագավորության տիրակալը այս ընթացքում նրանց զիջեց բոլոր պետական պարտքերը, ինչպես նաև վերջիններիս հինգ տարով ազատեց բոլոր տեսակի հարկերից: Այնուհետև, ավելի ամրանալով տեղում, մ.թ.ա. արդեն 88 թվականի աշնանը Միհրդատ VI Եվպատորի գաղտնի հրամանով տեղի ունեցավ փոքրասիական հռոմեացիների նույն օրն իրականացված մի իսկական ջարդ, որին զոհ գնացին մոտ 80.000 հոգի: Եվ վերջապես մ.թ.ա. արդեն 88 թվականի վերջի վիճակով Միհրդատ VI Եվպատորի զորավար Արքելայոսը տիրեց Էգեյան ծովի բոլոր կղզիներին, այդ թվում նաև Դելոսին, որտեղ, որպես պատիժ ցույց տված դիմադրության համար, կոտորվեցին 20.000 հռոմեացիներ:

Մ.թ.ա. 87 թվականի գարնանը Միհրդատ VI Եվպատորի ռազմական մեքենան

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 19; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 18; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Սուլլա», գլուխ 11; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 76:

ներխուժեց Թրակիա և Հունաստան[1], սակայն անորոշ ելք ունեցած մի շարք ռազմագործողություններում որևէ հաջողության չհասավ, իսկ արդեն տարվա վերջին էլ Դաշնակցային պատերազմից ազատված խոշոր ուժերով վերջինիս դեմ կրկին շարժվեց Լուցիոս Սուլլան: Արդյունքում՝ ռազմական գործողությունների ընթացքն աստիճանաբար սկսեց թեքվել Հռոմեական հանրապետության կողմը, իսկ մ.թ.ա. 86 թվականի մայիսի վիճակով էլ Միհրդատ VI Եվպատորը, ըստ էության, կորցրել էր արդեն ողջ Հունաստանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

86 ամառ – ***Քերոնեայի ճ-մ*** (Հյուսիս-արևելյան Հունաստան)[2]

Լուցիոս Սուլլայի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (55.000, որից 1.500 հեծյալ[3]) շարժվեց Արքելայոսի գլխավորած Պոնտոսի (120.000, այդ թվում կոլխեր, տավրներ, գալլեր, 90 մարտակառք) ու նրա կազմում գործող Փոքր Հայքի (10.000 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակի դեմ և, մոտենալով վերջինիս, մի բարձրադիր վայրում ճամբարեց՝ ամրացնելով սեփական բանակատեղին պաշտպանական ամրություններով: Իր հերթին Պոնտոսի թագավորության բանակի հիմնական մասը, թշնամու պասիվ մարտավարության պատճառով դառնալով ինքնավստահ, ցրվեց և սկսեց ավարառությամբ զբաղվել: Կողմերի հանդիպման արդեն երրորդ օրը, սակայն, Հռոմեական հանրապետության բանակը դուրս եկավ ճամբարից և մարտակարգ ընդունեց: Նույնը կատարեց նաև Պոնտոսի թագավորության բանակը, որի զգալի ուժեր, սակայն, գտնվում էին շրջակայքում և, զբաղված լինելով ավարառությամբ, այդպես էլ մարտի չներկայացան: Հռոմեական հանրապետության բանակի կենտրոնում տեղավորվեցին լեգեոներները, թևերում տեղաբաշխվեց հեծելազորը, ողջ մարտակարգի առջևում և թևերում դիրքեր զբաղեցրին դաշնակից ուժերը, իսկ 4 կահորտ էլ մնաց որպես պահեստազոր: Իր հերթին Հռոմեական հանրապետության բանակին դաշնակից հունական մի ջոկատ մինչ մարտը աննկատ երթով դուրս եկավ Պոնտոսի թագավորության բանակի աջ թևի թիկունք և զբաղեցրեց տեղանքի վրա գերիշխող մի բարձունք: Պոնտոսի թագավորության բանակի առաջին շարքում տեղավորվեցին հեծելազորը և մարտակառքերը, իսկ երկրորդում տեղաբաշխվեց ֆալանգը՝ առջևում ու թիկունքում ունենալով թեթև հետևազորը:

I փուլ – Պոնտոսի թագավորության բանակի հեծելազորը ողջ ճակատով անցավ հարձակման, սակայն այն հետ մղվեց: Դրանից հետո հարձակման գնացին մարտակառքերը, որոնք որոշակի կորուստներ պատճառեցին հակառակորդի ռազմիկներին, սակայն վերջիններս ի վերջո կարողացան սեփական շարքերում ճանապարհ բացելու միջոցով ոչ միայն հաջող պայքար մղել մարտակառքերի դեմ, այլև՝ ոչնչացնել դրանց մեծ մասն և վերականգնել շարքերը:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 35:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Սուլլա», գլուխ 15-19; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 41-45; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 3, մաս 17; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 76; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 5, գլուխ 6; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2:

[3] Այս իրադարձություններում հռոմեական բանակի կոնկրետ թվաքանակը հայտնի չէ, սակայն որոշ կողմնակի հաղորդումներ թույլ են տալիս տալ իրականությանը որոշակի մոտ գնահատական: Այսպես, Ապպիանոսը հայտնում է, որ. «*Սուլլան իր հետ տանում էր իտալացիներին, այն հելլեններին ու մակեդոնացիներին, որոնք վերջերս էին անցել նրա կողմը Արքելայոսի մոտից, ինչպես նաև շրջակա քաղաքներից ոմանց: Բոլոր նրանք իրար հետ չէին կազմում նույնիսկ թշնամական զորքի երրորդ մասը*» (Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 41): Արքելայոսի բանակը, ըստ տեղեկությունների, կազմում էր 120.000 հոգի, այսինքն Լուցիոս Սուլլայի բանակի միայն օժանդակ ուժերը կազմում էին մոտ 40.000 ռազմիկ: Իր հերթին, սակայն, ըստ Պլուտարքոսի, որի հաղորդումներն այս անգամ ակնհայտորեն վերաբերվում են բուն հռոմեական բանակին, Լուցիոս Սուլլայի բանակի. «*հեծյալները 1.500 հոգուց ոչ ավել էին, իսկ հետևակայինները՝ 15.000 հոգուց պակաս*» (Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Սուլլա», գլուխ 16): Այսպիսով՝ կարելի է գալ հետևության, որ այս իրադարձություններում Լուցիոս Սուլլայի բանակը կազմել է առնվազն 55.000 ռազմիկ, ինչը հաշվի առնելով ռազմաքաղաքական իրադրությունը, լիովին կարող է համապատասխանել իրականությանը՝ բնականաբար որոշակի ընդունելի շեղումներով:

II փուլ – Պոնտոսի թագավորության բանակի աջ թևը թևանցած հունական ջոկատը անակնկալ հարվածով փախուստի մատնեց վերջինիս, որի մնացորդները փախուստի դիմեցին դեպի հիմնական բանակ՝ խուճապ և անկանոնություն առաջացնելով այստեղ: Միաժամանակ կենտրոնում հարձակման անցավ նաև Հռոմեական հանրապետության բանակը, որի արդյունքում այստեղ համառ մարտ բռնկվեց:

III փուլ – Պոնտոսի թագավորության բանակի հեծելազորը հզոր հարված հասցրեց հակառակորդի բանակի աջ թևին և գրեթե շրջապատեց այն, իսկ երբ Հռոմեական հանրապետության բանակի պահեստազորի 4 կահորտները փորձեցին շարժվել վերջինիս օգնության, հեծյալ մի ջոկատ (2.000) հարվածեց արդեն վերջիններիս ու հետ շպրտեց:

IV փուլ – Արքելայոսը կենտրոնի ծանր հետևակի մեծ մասը հարձակման նետեց հակառակորդի բանակի աջ թևի վրա, որից հետ մարտը այստեղ ավելի թեժացավ: Միաժամանակ վերջինս հեծելազորի ողջ ուժով հարված հասցրեց նաև հակառակորդի բանակի ձախ թևին: Արդյունքում, սակայն, Պոնտոսի թագավորության բանակի հետևակը պարտություն կրեց: Որևէ հաջողության չհասավ նաև հեծելազորը:

V փուլ – Պոնտոսի թագավորության բանակի կենտրոնը, իսկ դրանից հետո նաև թևերը, չդիմանալով հակառակորդի բանակի ճնշմանը, դիմեցին փախուստի:

Հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցը՝ մոտ 50.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր[1]:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր հարված հասցրեց Միհրդատ VI Եվպատորի ռազմական մեքենային, որը, սակայն, իրենից դեռևս զգալի հզորություն էր ներկայացնում: Արդյունքում՝ արդեն հաջորդ տարի կողմերը իրար եկան հարաբերությունները վերջնականապես պարզելու համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

85 գարուն – ***<u>Օրքոմենոսի ճ-մ</u>*** (Հյուսիս-արևելյան Հունաստան)[2]

Լուցիոս Սուլլայի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 60.000) շարժվեց Արքելայոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի (90.000, այդ թվում սարմատներ, կոլխեր և տավրներ) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 9.000 հեծյալ) թագավորությունների միացյալ համալրված բանակի դեմ, որից հետո, ***<u>Տիլթոսիա ամրոցի</u>*** մոտ տեղի ունեցած փոքրիկ ընդհարումից հետո մոտենալով հակառակորդի բանակին, ճամբարեց: Միաժամանակ, ցանկանալով թույլ չտալ թշնամուն օգտվել հեծելազորում ունեցած առավելությունից, Հռոմեական հանրապետության բանակը սկսեց խորը խրամատներ փորել սեփական դիրքերի դիմաց՝ աստիճանաբար մոտենալով թշնամու ճամբարին:

I փուլ – Չցանկանալով հայտնվել անբարենպաստ իրավիճակում՝ Պոնտոսի թագավորության բանակի հեծելազորը անցավ հարձակման և փախուստի մատնեց թշնամուն:

II փուլ – Լուցիոս Սուլլայի անձնական ղեկավարությամբ մարտի մեջ մտան

[1] Այստեղ և հետագայում հունահռոմեական հեղինակների ուռճացված և ստահոդ տեղեկությունների ոճը լավ ընկալելու համար նշենք, որ, ըստ Պլուտարքոսի և Ապպիանոսի, այս ճակատամարտում Պոնտոսի թագավորության 120.000 հոգանոց բանակից փրկվել է ընդամենը 10.000, իսկ ըստ Եվտրոպիոսի՝ 10 հոգի, այն դեպքում, երբ Հռոմեական հանրապետության բանակը կորցրել են ընդամենը... ըստ Պլուտարքոսի 12, իսկ ըստ Ապպիանոսի և Եվտրոպիոսի՝ 13 հոգի: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Սուլլա», գլուխ 20-21; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 46, 49, 50; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Պոլիենոս «Ռազմական խորամանկություններ» գիրք 8, գլուխ 9, մաս 2; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 5, մաս 18, գիրք 1, գլուխ 11, մաս 20; գիրք 2, գլուխ 8, մաս 12; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 76; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 5, գլուխ 6; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 16, գլուխ 12:

նոր ուժեր, որի արդյունքում Պոնտոսի թագավորության բանակը հետ մղվեց՝ կորցնելով 15.000 ռազմիկ, որից 10.000-ը հեծյալ:

III փուլ – Հարձակման անցավ Պոնտոսի թագավորության արդեն ողջ բանակը, սակայն մինչև գիշեր տևած համառ մարտում այն ծանր պարտություն կրեց և հետ շպրտվեց սեփական ճամբար՝ կորցնելով 50.000 ռազմիկ:

IV փուլ – Հաջորդ օրը լուսաբացին Հռոմեական հանրապետության բանակը մոտեցավ հակառակորդի ճամբարին և, զգալով, որ վերջինս չի պատրաստվում նախահարձակ լինել, ինքը անցավ հզոր հարձակման: Բռնկված համառ մարտում Պոնտոսի թագավորության բանակը վերջնական պարտություն կրեց, իսկ նրա ճամբարը գրավվեց:

Հայերը կորցրին մոտ 7.000, դաշնակիցը՝ մոտ 70.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը վերջնականապես կոտրեց Միհրդատ VI Եվպատորի ռազմական մեքենայի մեջքը, ընդ որում Պոնտոսի թագավորության արքան ոչ միայն կորցրեց Բալկանյան թերակղզում մինչ այդ ունեցած բոլոր ձեռքբերումները, այլև ներխուժման իրական վտանգ կախվեց նաև Պոնտոսի թագավորության փոքրասիական տարածքների վրա: Միաժամանակ, սակայն, պայմանավորված ներքաղաքական իրավիճակի հերթական սրմամբ, պատերազմի ավարտի հարցով սկսեց խիստ շահագրգիռ դառնալ նաև Լուցիոս Սուլլան:

Որպես հետևանք այս ամենի՝ կողմերը հաշտության բանակցություններ սկսեցին և, որոշակի տատանումներից հետո այնուհանդերձ գալով համաձայնության, մ.թ.ա. 85 թվականի օգոստոսին կնքեցին Դարդանելի հաշտության պայմանագիրը, որով էլ Միհրդատյան I պատերազմը ավարտվեց: Արդյունքում, ի համեմատ նախկինի, որևէ փոփոխություն տեղի չունեցավ, ընդ որում մինչպատերազմական իրավիճակը վերականգնվեց և Կապադովկիայի թագավորությունում, որտեղ կրկին հաստատվեց Արիոբարզանես I-ը, երբ Արիարաթես VIII-ը մահացել էր դեռևս մ.թ.ա. 86 թվականին, և Պաֆլագոնիայի թագավորությունում, որտեղ անձնական ունիայի սկզբունքով սկսեց իշխել Նիկոմեդես IV-ը: Մինչ Միհդատ VI Եվպատորը տանուլ էր տալիս Հռոմեական հանրապետության դեմ իր մղած ամենավճռական պատերազմը, սակայն, նույն այս ընթացքում Արևելքում խոշոր փոփոխություններ էին տեղի ունեցել:

Գլուխ 22
Տիգրան II Մեծը և Սելևկյանների թագավորությունում ընթացող Մեծ քաոսի շարունակությունը

Մ.թ.ա. 88 թվականին Դեմետրիոս III-ը, փորձ կատարելով վերսկսել պայքարը իր եղբայր Ֆիլիպ I-ի դեմ, պարտություն կրեց վերջինիս կողմից օգնության կանչված Պարթևական թագավորության բանակից, գերի ընկավ և հենց գերության մեջ էլ կնքեց իր մահկանացուն: Վերջին հանգամանքը, սակայն, որևէ կերպ չամրացրեց նաև Ֆիլիպ I-ի դիրքերը, քանի որ մ.թ.ա. արդեն 87 թվականին իր մահկանացուն կնքեց նաև Միհրդատ II Մեծը և Պարթևական թագավորության գահին վերջինիս փոխարինեց Միհրդատ I-ի եղբայր, արդեն բավականին տարիքն առած Գոտարզ I-ը (մ.թ.ա. 87-81): Պարթևական թագավորության նոր արքան, որն ավելի պասիվ արտաքին քաղաքականության կողմնակից էր, այդ թվում նաև Սելևկյանների թագավորության հարցով, արդյունքում, ըստ էության, դադարեց որևէ աջակցություն ցույց տալ Ֆիլիպ I-ին: Որպես հետևանք նոր այս զարգացումների՝ Սելևկյանների թագավորությունում իրեն արքա հռչակեց Ֆիլիպ I-ի եղբայր Անտիոքոս XII-ը (մ.թ.ա. 87-84՝ համիշխան), ինչի հետևանքով Հարավային Ասորիքն ընկավ նրա, իսկ Հյուսիսային Ասորիքը մնաց Ֆիլիպ I-ի տիրապետության տակ: Այսպիսով՝ մ.թ.ա. արդեն 86 թվականի վիճակով Մերձավոր Արևելքում ստեղծվել էր մի

իրավիճակ, երբ Պարթևական և Պոնտոսի թագավորությունները արտաքին ակտիվությունը լրջորեն սահմանափակել էր: Հենց այս հանգամանքն էլ հնարավորություն տվեց ի վերջո ակտիվանալ Տիգրան II Մեծին՝ իրացնելով Մեծ Հայքի թագավորությունում մինչ այդ կուտակված ներքին հսկայական ուժերը:

Մ.թ.ա. 86 թվականի աշնանը Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 120.000) և Իբերիայի (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակը Պարթևական թագավորության բանակից (մոտ 50.000) գրավեց Ատրպատականը, Արբելան, Նինվեն և Ադրաբանա ամրոցը[1]: Արդյունքում՝ Պարսկահայք և Փայտակարան նահանգները, ինչպես նաև Վասպուրական նահանգի արևելյան գավառները միացվեցին Մեծ Հայքի թագավորությանը, որից հետո Մեծ Հայքի թագավորությունը սկսեց ընդգրկել Հայաստանի 14 նահանգ և Ծոփք նահանգի գերակշիռ մասը, բացառությամբ Կոմագենե ու Գավրենե գավառների: Միաժամանակ Պարթևական, Ադիաբենեի, Ատրպատականի և Աղվանքի թագավորությունները ընկան Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ: Հայկական Հինգերորդ գերիշխանության սահմանները արևելքում հասան մինչև Կասպից ծովի արևմտյան, հարավային և արևելյան ափեր, ինչպես նաև Քուշանական թագավորության արևմտյան սահման:

Շարունակելով նվաճումները արդեն հաջորդ տարի՝ մ.թ.ա. 85 թվականի գարնանը, Հայոց ռազմական մեքենան մտավ նաև Հայոց Միջագետք և Կոմագենե, ինչի արդյունքում Հայոց Միջագետքի ու Կոմագենեի թագավորություններում ամրապնդվեց Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը[2]: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ մեկ տարի էլ չտևած հաջող և ոչ այնքան համառ ռազմական գործողությունների արդյունքում Մերձավոր Արևելքում առաջին դերերի վրա հայտնվեց Մեծ Հայքի թագավորությունը, ընդ որում կոնկրետ ժամանակատարածային հարթության մեջ Պարթևական թագավորության նկատմամբ առավելությունն ակնհայտ էր, իսկ հենց վերջերս ծանր պատերազմն ավարտած և զգալի կորուստներ կրած Պոնտոսի թագավորությունն ինքն էլ մեծ հաշվով ևս զիջում էր Հայոց թագավորությանը:

Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Մեծ Հայքի թագավորության ձեռքբերումները որևէ կերպ սրանով ևս չէին ավարտվելու, քանի որ նույն այս ժամանակ, օրակարգ մտավ նաև Սելևկյանների թագավորության հարցը, ընդ որում միմյանց նկատմամբ անհաշտ թշնամությամբ լցված և արդեն երկար տասնամյակներ միմյանց դեմ պայքարող Սելևկյան գահակալներն իրենք էլ մինչ այս արդեն ինչպես հարկն է հոգնեցրել էին տեղի բնակչությանը: Ավելին, գահակալական այդ երկարատև պայքարը մեծապես արգելակում էր նաև Ասորիքի տնտեսական զարգացմանը, ընդ որում Սելևկյան գործող երկու գահակալներից և ոչ մեկն էլ արդեն բավարար ուժ ու հնարավորություն չուներ պահպանել իր իշխանությունը նույնիսկ սեփական տիրույթների նկատմամբ: Խնդիրները, սակայն, սրանով ևս չէին սահմանափակվում:

Իրոք, մ.թ.ա. արդեն 84 թվականին Հարավային Ասորիքում իշխող Անտիոքոս XII-ը պատերազմ սկսեց Նաբաթեական թագավորության դեմ և ընկավ մարտում: Ահա հենց այս պայմաններում էր, որ Ասորիքի բնակչությունը գրեթե միահամուռ կամքով դիմեց Տիգրան II Մեծին՝ իր տիրապետությունը հաստատելու համար երկրամասի նկատմամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 83 թվականի սկզբին Հայոց տերության ռազմական մեքենան առանց լուրջ դիմադրության հանդիպելու իր տիրապետության տակ գցեց Ասորիքը[3]՝ հաստատվելով նաև Անտիոքում (Հյուսիս-արևմտյան Ասորիք, Հալեպից մոտ 90 կմ արևմուտք): Ինչ վերաբերում է Ֆիլիպ I-ին, ապա նա գահընկեց արվեց և այդուհետ խաղաղ կերպով իր օրերն ավարտեց ինչ-որ տեղ Ասորիքում կամ հարակից

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 14; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15; Իսիդորոս Քարակենցի «Պարթևական կայանները»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5:

[2] Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15:

[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 69; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 105; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 40, գլուխ 1; Բաբելոնյան արձանագրությունից; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 14»; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15:

երկրամասերից մեկում: Այս առումով կարևոր է նշել, սակայն, որ Սելևկյանների թագավորությունը չկործանվեց, քանի որ Ասորիքի ծովափնյա քաղաքները չընդունեցին Տիգրան II Մեծի իշխանությունը և այստեղ սկսեց իշխել Անտիոքոս X-ի փոքրահասակ որդի Անտիոքոս XIII-ը (83-64), որի խնամակալն էր իր մայր, Պտղոմեոս VIII-ի աղջիկ, ինչպես նաև տարբեր ժամանակներում Պտղոմեոս IX-ի (մ.թ.ա. 116-107, 89-81), Պտղոմեոս X-ի (մ.թ.ա. 107-89) Անտիոքոս VIII-ի, Անտիոքոս IX-ի և Անտիոքոս X-ի կին եղած Կլեոպատրա-Սելենեն:

Ինչպես հարկն է կարգավորելով գործերն Ասորիքում՝ մ.թ.ա. 83 թվականի ամռանը Հայոց տիրակալը դուրս մղեց Հռոմեական հանրապետության կայազորին Սոլեից, որից հետո Հայկական Հինգերորդ գերիշխանության սահմանները արևմուտքում հասան մինչև Պամֆիլիայի արևելք և Կապադովկիայի հարավ[1]: Ավելին, այդուհետ ընդհուպ մինչև մ.թ.ա. 66 թվականը Կիլիկիայի ծովահենական նավատորմի (1.000 նավ) կազմում գործող ծովահենները (մոտ 30.000) և նրանց կազմում գտնվող Հայ ռազմիկները[2] (մոտ 15.000), ամուր խարսխակայաններ ունենալով Կիլիկիայում, Միջերկրական ծովում ու հարակից ափաշերտում լայն գործունեություն ծավալեցին՝ կողոպտելով 400 քաղաք և մեծ քանակությամբ նավեր՝ հսկայական վնաս հասցնելով Հռոմեական հանրապետությանը[3]:

Գլուխ 23
Միհրդատյան II պատերազմը

Մինչ Հայոց արքան ոտքի էր հանում Հայոց տերությունը, նախորդ ընդհարումից հետո չլուծված հարցերը Պոնտոսի թագավորությանը և Հռոմեական հանրապետությանը հերթական պատերազմին էին մղում: Իրոք, վերջին պատերազմում, չնայած ձեռնարկած հսկայական նախապատրաստություններին, երբ հաջողության հասնելու համար թվում էր, թե արվել է ամենայն հնարավորը, Պոնտոսի թագավորության ռազմական մեքենան այնուհանդերձ ոչ միայն ծանր հարվածներ էր ստացել, այլև բացարձակապես և որևէ հաջողություն չէր արձանագրել, իսկ այդ հանգամանքն անչափ փառասեր Միհրդատ VI Եվպատորին դրդում էր ևս մեկ անգամ փորձել բախտը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Հռոմում ևս գոհ չէին Լուցիոս Սուլլայի կնքած հապճեպ հաշտությունից, քանի որ հաշտության կնքման պահին պատերազմի ընթացքը լիովին պաշտոնական Հռոմի օգտին էր, իսկ Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան էլ մարտավարական մակարդակում ապացուցել էր իր լիակատար առավելությունը հակառակորդի ռազմական մեքենայի նկատմամբ:

Հռոմ մեկնելուց առաջ Լուցիոս Սուլլան 2 լեգեոններով և այլ օժանդակ ուժերով Արևելքում էր թողել իր ենթակա Լուցիոս Մուրենային, որը գործողությունների զգալի ազատություն էր վայելում: Արդյունքում՝ պատճառ բռնելով այն հանգամանքը, որ հակառակորդի կողմում ռազմական լայն նախապատրաստություններ և բանակային

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 48; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 28; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 2, 37:

[2] Կիլիկիայի ծովահենների կազմում Հայ ռազմիկների գործողության, ինչպես նաև նրանց քանակի հարցը ընդհանրապես ուսումնասիրված չէ: Ավելի, սկզբնաղբյուրներում, որպես կանոն, կիրառվող «կիլիկիացիներ» տերմինը ոչ մի հնարավորություն չի տալիս պարզել այն կրողի էթնիկ պատկանելիությունը, մանավանդ որ մ.թ.ա. II-I դարերում «Կիլիկիա» հասկացության տակ հաճախ հասկացվում էին նաև Իսավրիան իր հարակից շրջաններով, իսկ երբեմն էլ նույնիսկ՝ միայն դրանք: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ես վերապահմամբ եմ մոտենում բոլոր դեպքերի պարագայում, երբ հիշատակվում է «կիլիկիացիներ» տերմինը, դրանում այս կամ այն չափով հայերին ընդգրկված տեսնելու հարցին և գերադասում եմ խնդրին անդրադառնալ միայն ընդհանուր մակարդակում՝ նշելով միայն ծովահանեկան գործունեության տարածման շրջանների ու կոնկրետ ժամանակաշրջանի մասին: Եվ այսպես, այն պարագայում, երբ սկզբնաղբյուրներում հիշատակություն կլինի «կիլիկիացիներ»-ի մասին, սակայն ես դրան չեմ անդրադառնա, դա կնշանակի, որ ես, սա կարելի է համարել հեղինակային մոտեցում, հավանական չեմ համարել հայերի մասնակցության առկայությունը: Օրինակ, այսպես կոչված «Ալեքսանդրիական պատերազմ»-ի պարագայում Հուլիոս Կեսարի բանակի կազմում հիշատակվում են 5 կիլիկյան նավեր (Անանուն «Ալեքսանդրիական պատերազմը», գլուխ 13): Քննարկվող դեպքում կարծում եմ, որ «կիլիկյան» կոչվող նավերն իրականում իսավրիական էին, քանի որ բուն Կիլիկիան այդ ժամանակ քաղաքական որոշակի այլ կարգավիճակ ուներ և, եթե առկա լինեին նրա ուժերը, ապա այդ մասին անպայման կնշվեր:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 20-22; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 24; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 92-93; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 6; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 12:

ուժերի լուրջ կուտակումներ են նկատվում, մ.թ.ա. 82 թվականի գարնանը Լուցիոս Մուրենան, ըստ էության, սեփական նախաձեռնությամբ, սկիզբ դրեց ռազմական գործողությունների: Սկիզբ առավ Միհրդատյան II պատերազմը (մ.թ.ա. 82):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

82 գարուն – ***<u>Հալիս գետի ճ-մ</u>*** (Կապադովկիա)[1]

Լուցիոս Մուրենան, պատճառ բռնելով այն հանգամանքը, որ հակառակորդի կողմում ռազմական լայն նախապատրաստություններ և բանակային ուժերի լուրջ կուտակումներ են նկատվում, իր հրամանատարության տակ գտնվող Հռոմեական հանրապետության բանակով (մոտ 20.000) առաջխաղացում իրականացրեց դեպի Պոնտոսի թագավորության տարածքի խորք, սակայն արդյունքում, խուսափելով Միհրդատ VI Եվպատորի ընդհանուր ղեկավարությամբ ասպատակելով առաջխաղացած Պոնտոսի (մոտ 70.000) ու նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակից, սկսեց արագորեն նահանջել՝ ի վերջո մարտակարգ ընդունելով Հալիս գետի ափին:

I փուլ – Պոնտոսի թագավորության բանակը անցավ հարձակման և պարտության մատնեց հակառակորդին:

II փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ Պոնտոսի թագավորության բանակը գրավեց հակառակորդի ճամբարը:

III փուլ – Պոնտոսի թագավորության բանակը հետապնդեց հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 15.000 զինվոր:

Ծանր հարված հասցնելով Արևելքում գործող Հռոմեական հանրապետության ռազմական մեքենային՝ մ.թ.ա. 82 թվականի գարունից մինչև ամառ Գորդիոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պոնտոսի թագավորության (մոտ 50.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 5.000) թագավորության միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը: Շուտով պարզվեց, սակայն, որ ոչ Պոնտոսում և ոչ էլ Հռոմում հակված չեն ռազմական գործողությունների հետագա շարունակմանը, քանի որ հակամարտող կողմերից երկուսի մոտ էլ առկա էին սեփական դեռևս չլուծված մի շարք խնդիրներ[2]: Արդյունքում՝ նույն տարում էլ կնքվեց հաշտության պայմանագիր և Միհրդատյան II պատերազմը ավարտվեց, երբ, ի համեմատ նախկինի, որևէ փոփոխություն տեղի չունեցավ: Պոնտոսի թագավորության և Հռոմեական հանրապետության միջև մի պահ սկիզբ առած, սակայն այդպես էլ մեծ թափ չստացած ու իր ավարտը գտած պատերազմից հետո տարածաշրջանը բավականին երկար ժամանակով խաղաղվեց, երբ բոլորը մեծ հաշվով, թեև, իհարկե, առժամանակ, վերադարձան իրենց ներքին խնդիրներին:

Գլուխ 24
Տիգրան II Մեծը և Պտղոմյանների թագավորությունը

Մ.թ.ա. 81 թվականին իր մահկանացուն կնքեց Պարթևական թագավորության արքա Գոտարզ I-ը և նրան հաջորդեց Միհրդատ II Մեծի որդի Օրոդես I-ը (մ.թ.ա.81-80), սակայն մ.թ.ա. 80 թվականի մայիսին նա սպանվեց, որից հետո Քուշանական թագավորության աջակցությամբ Պարթևական թագավորության արքա հռչակվեց Արշակունիների տոհմին պատկանող ոմն Արշակ՝ կոչվելով Արշակ II (մ.թ.ա. 80-77): Նույն

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 64, 66:
[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 66:

այս ժամանակ, սակայն, դանդաղ, բայց հաստատուն կերպով վերելքի ուղին բռնած Քուշանական թագավորությունը իր ռազմաքաղաքական հիմնական եռանդն այնուհանդերձ ուղղել էր Հյուսիսային Հնդկաստանում դեռևս իր գոյությունը շարունակող Հունա-Հնդկական թագավորության դեմ և արդյունքում այն մեծ հաշվով չուզեցավ կամ չկարողացավ հետագա աջակցություն ապահովել Արշակ II-ին, որի դիրքերը երկրի ներսում շարունակեցին անչափ թույլ մնալ, դե իսկ արտաքին որևէ ակտիվության մասին էլ նույնիսկ խոսք գնալ իսկ չէր կարող: Եվ վերջապես մեր կողմից դիտարկվող այս քիչ թե շատ հանդարտ տարիներին էր, որ բարդացավ ներքին դրությունը Պտղոմյանների թագավորությունում, ինչն արդյունքում բերեց Տիգրան II Մեծի միջամտությանը:

Դեռևս մ.թ.ա. 116 թվականին Պտղոմեոս VIII-ը կնքել էր իր մահկանացուն և Պտղոմյանների թագավորության գահին նրան հաջորդել էր իր որդի Պտղոմեոս IX-ը, որի իշխանությունը, սակայն, ոչ միայն որևէ կերպ ամուր չէր, այլև բանը նույնիսկ հասել էր նրան, որ իր գահակալման զգալի ժամանակահատվածներում այս տիրակալը չուներ իրական իշխանություն, իսկ փաստացի էլ կառավարում էին այլ անձիք: Ավելին, մ.թ.ա. 107 թվականին իշխանությունը զավթեց Պտղոմեոս IX-ի եղբայր Պտղոմեոս X-ը, որը, սակայն, արդյունքում ի վերջո սպանվեց և գահը կրկին զբաղեցրեց Պտղոմեոս IX-ը: Մ.թ.ա. 81 թվականի ամենավերջում, սակայն, այնուհանդերձ իր մահկանացուն կնքեց նաև Պտղոմեոս IX-ը, որից հետո տեղական ուժերը արքա հռչակեցին Պտղոմեոս X-ի որդի Պտղոմեոս XI-ին (մ.թ.ա. 81-80): Մ.թ.ա. 80 թվականի սկզբին, սակայն, Պտղոմեոս XI-ին սպանեցին, որից հետո Պտղոմյանների թագավորությունում առկա գահակալական ճգնաժամն ավելի խորացավ:

Նույն այս ժամանակ այնպես էր ստացվել, որ Պտղոմեոս IX-ի որդիներից մեկը գտնվում էր Տիգրան II Մեծի տիրապետության տակ հայտնված Ասորիքում, ընդ որում այս թեկնածուի կողմից Պտղոմյանների թագավորության գահը զբաղեցնելն այն առավելությունն ուներ, որ այդ պարագայում, ինչպես ենթադրվում էր, նոր գահակալը կգործեր Տիգրան II Մեծի օգտին՝ զերծ մնալով Հռոմեական հանրապետության ազդեցությունից: Ավելին, բանը հասել էր նույնիսկ նրան, որ Պտղոմյանների թագավորության գահի այս թեկնածուին իր աղջիկներից մեկին էր պատրաստվում կնության տալ նաև Միհրդատ VI Եվպատորը՝ ակնհայտորեն վերջինիս հակահռոմեական դիրքորոշումն ավելի ամրապնդելու մտայնությամբ:

Արդյունքում՝ մ.թ.ա. 80 թվականի հունվարին արքայազն Պտղոմեոսի գլխավորությամբ Ասորիքից առաջխաղացած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 30.000) մանր մարտերով երկրից դուրս վտարեց Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 2.000), որից հետո Պտղոմյանների թագավորության արքա հռչակվեց նույն այս Պտղոմեոսը՝ Պտղոմեոս XII-ը (մ.թ.ա. 80-51), իսկ Պտղոմյանների թագավորությունն էլ հայտնվեց Մեծ Հայքի թագավորության ազդեցության ոլորտում[1]: Նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետությունում իր հերթին տիրում էր ներքաղաքական բարդ մի դրություն, երբ հանրապետության ռազմական մեքենայի վրա հիմնվող Լուցիոս Սուլլան հռչակվել էր երկրի անսահմանափակ լիազորությունների տեր մի տիրակալ և հսկայական չափերի հասնող բռնություններ էր սկսել, ինչի արդյունքում որևէ հնարավորություն չկար միջամտել Պտղոմյանների թագավորությունում տեղի ունեցած փոփոխություններին:

Գլուխ 25
Միհրդատյան III պատերազմը

Մ.թ.ա. 80 թվականի գարնանը Բոսպորի ճ-մ-ում Միհրդատ VI Եվպատորի

[1] Այս մասին հայտնում է Ցիցերոնը իր «Ալեքսանդրիայի արքայի մասին» աշխատությունում, որում, մասնավորապես տեղեկացվում է, որ մինչ գահ բարձրանալը ապագա Պտղոմեոս XII-ը գտնվում էր Ասորիքում, որն իր հերթին գտնվում էր Տիգրան II Մեծի գերիշխանության տակ:

գլխավորությամբ Ղրիմից առաջխաղացած Պոնտոսի (մոտ 50.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Ալանական թագավորության բանակին (մոտ 40.000, այդ թվում բաստարներ), որից հետո Տյուրասը, Իստրիան, Դիոնիսպոլիսը, Մեսեմվրիան ու Ապոլլոնիան (Սև ծովի հյուսիս-արևմտյան և արևմտյան ափ) ընդունեցին Պոնտոսի թագավորության գերիշխանությունը[1], իսկ Հռոմեական հանրապետության դեմ ապագա պայքարում էլ Պոնտոսի թագավորությունն ավելի ամրապնդեց իր դիրքերը: Այսպիսով՝ աստիճանաբար օրակարգ էր մտնում Պոնտոսի թագավորության հերթական պատերազմը Հռոմեական հանրապետության դեմ և սա այն պայմաններում, երբ Տիգրան II Մեծի տերությունում տիրում էր խաղաղություն և անդորր: Ինչ վերաբերում է Պարթևական թագավորությանը, ապա Քուշանական թագավորության աջակցությունից զրկված Արշակ II-ը մ.թ.ա. 77 թվականին գահընկեց արվեց և նրան փոխարինեց Հրահատ II-ի եղբայր, ութսունամյա Սանատրուկը՝ Սանատրուկ I-ը (մ.թ.ա. 77-70):

Մ.թ.ա. 74 թվականին, աջակցելով Միհրդատ VI Եվպատորին, Մեծ Հայքի (մոտ 100.000), Հայոց Միջագետքի (մոտ 5.000), Կոմագենեի (մոտ 5.000), Իբերիայի (մոտ 10.000), Ադիաբենեի (մոտ 5.000), Ատրպատականի (մոտ 10.000) և Աղվանքի թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը ու հսկայական ավարով և գերիներով նահանջեց[2]: Արդյունքում՝ չնայած Հռոմեական հանրապետության ազդեցության ոլորտում գտնվող տարածքին հասցված հարվածին, Մեծ Հայքի թագավորությունն այնուհանդերձ զերծ մնաց պատերազմական հետագա գործողություններին առնչվելուց, իսկ դրանց հիմնական ծանրությունն էլ իր վրա վերցրեց հերթական պատերազմի համար այս անգամ, թվում էր, թե ամեն ինչ ինչպես հարկն է նախապատրաստած Միհրդատ VI Եվպատորը: Այսպիսով՝ պատերազմական գործողությունների սկզբի համար պատրաստ էր, ըստ էության, ամեն ինչ և պետք էր միայն հարմար մի առիթ, որն էլ շուտով ներկայացավ:

Իրոք, մ.թ.ա. 74 թվականի սկզբին իր մահկանացուն կնքեց անժառանգ մահացած Նիկոմեդես IV-ը, որն իր թագավորությունը կտակել էր Հռոմեական հանրապետությանը: Այսպիսով՝ Բյութանիայի թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ համալրեց Հռոմեական հանրապետության փոքրասիական տիրույթների շարքը: Հենց սա էլ, սակայն, պատճառ հանդիսացավ պատերազմական գործողությունների համար: Սկիզբ առավ Միհրդատյան III պատերազմը (մ.թ.ա. 74-71), որում նախահարձակը կրկին Պոնտոսի թագավորության տիրակալը եղավ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 74 աշուն – ***<u>Քաղկեդոնի ծովացամաքամարտ</u>*** (Բյուզանդիոնի դիմաց, Բոսֆորի ասիական ափին)[3]
>
> Միհրդատ VI Եվպատորը Պաֆլագոնիայում կենտրոնացրեց Պոնտոսի (156.000, որից 16.000 հեծյալ, ինչպես նաև ալաններ, սարմատներ, սկյութներ, թրակիացիներ, բաստարներ, կոլխեր, տավրներ, զիխեր, աքայացիներ, հենիոխներ, խալյուբներ, յազիգներ, լևկոսուրներ, կորալներ, 400 նավ, 120 մարտակառք) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը, որից հետո վերջինս, առանձին ջոկատներ (ընդհանուր՝ մոտ 20.000) ուղարկելով ասպատակելու ***<u>Կապադովկիայի թագավորության և Գալաթական</u>***

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 64, 67:
[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 67; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 12, գլուխ 2, մաս 9, գիրք 11, գլուխ 14, մաս 15; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 14»:
[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 69, 71; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 7, 9; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 4; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 6:

տետրարխության տարածքները, ինչպես նաև Պերգամոսի շրջակայքը, հիմնական ուժերը շարժեց դեպի արևմուտք՝ ***Պաֆլագոնիա-Բյութանիա*** երթուղով մոտենալով ***Քաղկեդոնին,*** որի մատույցներում էլ նրան դիմավորեց ամուր պաշտպանական դիրքերում տեղավորված Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 30.000):

I փուլ – Պոնտոսի թագավորության բանակը անցավ հարձակման և, պարտության մատնելով հակառակորդի բանակին, հետապնդեց նրա մնացորդներին մինչև քաղաքի պարիսպներ՝ ծանր կորուստներ պատճառելով վերջինիս հատկապես քաղաքի դարպասների մոտ:

II փուլ – Նախորդ դեպքերի հետ միաժամանակ Պոնտոսի թագավորության նավատորմը ներխուժեց նավահանգիստ՝ այրելով 4 և գրավելով 60 նավ:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 2.000 զինվոր, թշնամին 13.300 սպանված և վիրավոր, 4.500 գերի, 64 նավ:

Ծանր հարված հասցնելով հակառակորդի ռազմական մեքենային՝ Միհրդատ VI Եվպատորը հարվածն ուղղեց դեպի հակառակորդի ամրացված կետերից հաջորդը, սակայն հետագա իրադարձություններն արդեն չզարգացան Պոնտոսի տիրակալի նախանշած ձևով, ընդ որում այս անգամ որպես Միհրդատ VI Եվպատորին հակառակորդ զորավար հանդես եկավ մ.թ.ա. 78 թվականին իր մահկանացուն կնքած Լուցիոս Սուլլայի մերձավոր զինակիցներից մեկը հանդիսացող Լուցիոս Լուկուլլոսը, որը ռազմական ունակություններից ամենևին էլ ոչ զուրկ, բայց սեփական գործողությունները ավելի շատ տեղեկատվական դրական ֆոնի տակ ներկայացնելու գործում անչափ վարժ մի անձնավորություն էր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

73 դեկտեմբերի սկիզբ - 72 հունվարի վերջ – ***Կիզիկոսի պաշտպանությունը*** (Փոքր Ասիայի հուսիս-արևմուտք)[1]

Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի (մոտ 150.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 8.000) թագավորությունների միացյալ բանակը պաշարեց քաղաքը Հռոմեական հանրապետության բանակից (մոտ 3.000): Միաժամանակ Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության դաշտային բանակը (մոտ 60.000), օգտվելով Միհրդատ VI Եվպատորի ճամբարում գործող դավաճանից ստացված տեղեկություններից, թիկունքից մոտեցավ հակառակորդի բանակին և, հարմար դիրքեր զբաղեցնելով, կտրեց վերջինիս մատակարարման ուղիները:

I փուլ – Մ.թ.ա. 73 թ-ի դեկտեմբերի սկզբից մինչև դեկտեմբերի վերջ Պոնտոսի թագավորության բանակը քաղաքի ուղղությամբ ծովից և ցամաքից մի շարք գրոհներ իրականացրեց, սակայն որևէ արդյունքի չհասավ:

II փուլ – Պարենի պակասի պատճառով հայտնվելով ծանր իրավիճակում՝ Միհրդատ VI Եվպատորը իր բանակից առանձնացրեց մարտունակությունը կորցրածներին և փորձեց հեռացնել նրանց քաղաքից, սակայն մ.թ.ա. 73 թ-ի դեկտեմբերի վերջին ***Ռինդակես գետի հովտում*** Լուցիոս Լուկուլլոսի ուժերն անակնկալ հարված հասցրին վերջիններիս ու ծանր պարտության մատնեցին: Պարտվողները կորցրին, մասնավորապես, 15.000 գերի և 6.000 ձի:

III փուլ – Մ.թ.ա. 73 թ-ի դեկտեմբերի վերջից մինչև մ.թ.ա. 72 թ-ի հունվարի

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 72-76; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 8-11; Դիոդորոս Սիկիլիացի «Պատմական գրադարան» գիրք 37, գլուխ 22b; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 1, գիրք 4, մաս 4; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 33; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 6; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 74; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 4, գլուխ 5, մաս 21, գիրք 3, գլուխ 13, մաս 6:

վերջ Պոնտոսի թագավորության բանակը շարունակեց քաղաքի պաշարումը և փորձ կատարեց վերջինիս գրավումն իրականացնել թունելներ փորելու միջոցով, սակայն, դրան հակառակ, հակառակորդի կայազորի ռազմիկներն իրենք աննկատ փորած թունելով անցան քաղաքը պաշարողների ճամբար ու ոչնչացրին պաշարողական տեխնիկայի զգալի մասը, որը մինչ այդ առանց այդ էլ լուրջ կորուստներ էր կրել նաև փոթորիկից, երբ քաղաքի մոտ էր տեղափոխվում նավերով:

IV փուլ – Հաշվի առնելով, որ սեփական ճամբարում բռնկված սովը արդեն աղետալի չափերի է հասնում, մ.թ.ա. 72 թ-ի հունվարի վերջին Միհրդատ VI Եվպատորը, որոշելով հրաժարվել քաղաքի հետագա պաշարումից, նավերով հեռացավ ***Փարոս,*** իսկ բանակային հիմնական ուժերին էլ հրամայեց նահանջել դեպի ***Լամպասկոս: Գրանիկոս գետի մոտ,*** սակայն, Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը անակնկալ հարված հասցրեց վերջինիս և ծանր կորուստներ պատճառեց:

Հայերը կորցրին մոտ 4.000, դաշնակիցը՝ մոտ 75.000, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր[1]:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել նաև, որ հաջող չգործեցին նաև Պոնտոսի թագավորության արքայի օժանդակ ջոկատները, քանի որ մ.թ.ա. 72 թվականի հունվարին Կապադովկիայի ճ-մ-ում Կապադովկիայի թագավորության և Գալաթական տետրարխության միացյալ բանակը (մոտ 20.000) մի շարք մանր մարտերում հաղթեց Կապադովկիայի թագավորության ու Գալաթական տետրարխության տարածքները, ինչպես նաև Պերգամոսի շրջակայքը ասպատակած Պոնտոսի թագավորության բանակին (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000)[2]: Այսպիսով, թեև ավելի սահմանափակ չափերով, սակայն, ըստ էության, կրկնվեց նույն այն իրավիճակը, որն առկա էր Միհրդատյան I պատերազմի սկզբում, երբ պատերազմի առաջին փուլում հակառակորդին օպերատիվ անակնկալ ապահոված Միհրդատ VI Եվպատորը արդյունքում լիովին կորցրեց ոչ միայն անակնկալի գործոնը, այլև վերջնականապես հակառակորդին զիջեց նաև ռազմավարական նախաձեռնությունը: Արդյունքում՝ Հռոմեական հանրապետությունը փաստորեն հերթական անգամ հետ մղեց իր արևելյան տիրույթներ ներխուժած հակառակորդին, որից հետո անցավ պատասխան գործողությունների: Որոշ չնախատեսված հանգամանքներ, սակայն, այնուհանդերձ դանդաղեցրին վերջինիս ռազմական մեքենայի անմիջական առաջխաղացումը: Վերևում մատնանշված հանգամանքներից առաջնայինը այն համառ դիմադրությունն էր, որին հանդիպեց Լուցիոս Լուկուլլոսի ռազմական մեքենան:

Իրոք, մ.թ.ա. 72 թվականի գարնանը Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 80.000) Պոնտոսի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 4.000) և քաղաքների Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 500) պաշարեց Սինոպը (Փոքր Ասիա, ծովափին, Հալիս գետը Սև ծովը թափվելու վայրից մոտ 65 կմ հյուսիս-արևմուտք), Ամիսոսը (Փոքր Ասիա, ծովափին, Հալիս գետը Սև ծովը թափվելու վայրից մոտ 65 կմ հարավ-արևելք), Եվպատորիան (Փոքր Ասիա, Ամիսոսի մոտ) և Թեմիսկիրան (Փոքր Ասիա, Ամիսոսի մոտ), սակայն գրավեց դրանք միայն մ.թ.ա. 71 թվականի մարտին[3]: Այսպիսով՝ Միհրդատ VI Եվպատորի ամրությունների ցույց տված համառ դիմադրությունը զգալիորեն կասեցրեց Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի առաջխաղացումը դեպի

[1] Այս իրադարձությունները նկարագրելիս հունահռոմեական «ճշմարտախոս» հեղինակները կրկին իրենց տարերքի մեջ են. Ըստ Եվտրոպիոսի («Կենսագրություններ», գիրք 6) այդ տարում Պոնտոսի բանակը կորցրել է 100.000, իսկ ըստ Պլուտարքոսի («Լուկուլլոս», գլուխ 11)՝ 300.000 ռազմիկ:

[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 75; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 2:

[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 14, 15, 19; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 78, 83; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 1; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 3; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 8; Ֆլեգոն Տրալացի «Օլիմպիադաներ»:

Պոնտոսի թագավորության խորքեր, սակայն կար ևս մեկ պատճառ, որ դանդաղեցրեց Լուցիոս Լուկուլլոսի առաջխաղացումը:

Խոսքը Սպարտակի կողմից գլխավորվող գլադիատորների այն հայտնի ապստամբության մասին է, որը մ.թ.ա. 73 թվականին սկիզբ էր առել Ապենինյան թերակղզում, իսկ մ.թ.ա. 72 թվականին էլ մեծ ծավալներ էր ընդունել: Այս կապակցությամբ հիմնավոր է թվում կարծիքը, որ Սպարտակի ապստամբության եթե ոչ դրդչի, ապա, համենայն դեպս, վերջինիս օժանդակողի դերում հանդես է եկել Տիգրան II Մեծը: Ասվածը, մասնավորապես, հիմնավորվում է հետևյալով:

Համաձայն Ապպիանոսի[1] Բրուտիոսյան թերակղզում շրջապատված Սպարտակը. «*…սպասում էր հեծելազորի, որն ինչ-որ տեղից եկավ նրա մոտ*», ընդ որում՝ հեծելազորի ժամանումից հետո ապստամբները միանգամից ակտիվանում են և կարողանում են ճեղքել պաշարման օղակը[2]: Հետաքրքիր է, որ հեղինակը որևէ կերպ չի որոշակիացնում Սպարտակին օգնության եկած հեծելազորի պատկանելիությունը, սակայն պետք է հաշվի առնել, որ մինչ այս իրադարձությունները ապստամբած ստրուկների առաջնորդը սերտ կապեր էր հաստատել Մեծ Հայքի թագավորության ուղղակի ազդեցության ոլորտում գտնվող կիլիկյան ծովահենների հետ: Այս պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ մատնանշել այլ պետություն կամ ուժ, որը շահագրգռված էր, բայց միաժամանակ նաև կարող էր ծովով հեծելազոր ուղարկել Սպարտակին օգնության, կարելի է մեծ վստահությամբ պնդել, որ խոսքը հենց Մեծ Հայքի թագավորության հեծելազորի մասին է:

Եվ այսպես, մինչ Լուցիոս Լուկուլլոսը խրված էր մնում Պոնտոսի թագավորության ամրությունների դեմ մղվող հարատև մարտերում, Ապենինյան թերակղզում բռնկվեց Սպարտակի ապստամբությունը, ընդ որում փոփոխական ընթացք ունեցած մարտերից հետո ապստամբներն ի վերջո հաստատվեցին Ապենինյան թերակղզու հարավ-արևմուտքում: Մ.թ.ա. 71 թվականի փետրվարին Բրուտիոսյան թերակղզու ճակատամարտում (Հարավ-արևմտյան Իտալիա) Սպարտակի գլխավորած ապստամբների բանակը (90.000) և ծովով վերջինիս օգնության եկած Մեծ Հայքի օժանդակ հեծելագունդը (մոտ 5.000) գիշերային հարձակումով ճեղքեցին Մարկոս Կրասոսի գլխավորությամբ իրենց թերակղզում փակած Հռոմեական հանրապետության բանակի (50.000) ամրությունները և հեռացան դեպի հյուսիս[3]: Դրանից հետո, մ.թ.ա. արդեն 71 թվականի ամռանը Պետելյան լեռների ճակատամարտում (Հարավային Իտալիա) Սպարտակի գլխավորած ապստամբների բանակը (60.000) և Մեծ Հայքի օժանդակ հեծելագունդը (մոտ 4.200) ևս մեկ անգամ հաղթեցին Հռոմեական հանրապետության բանակին (10.000)[4]: Եվ միայն մ.թ.ա. 71 թվականի ապրիլին էր, որ Տերենտի ճ-մ-ում (Հարավ-արևելյան Իտալիա) Մարկոս Կրասոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 45.000) ջախջախեց Սպարտակի գլխավորած ապստամբների բանակին (մոտ 58.000) ու Մեծ Հայքի օժանդակ հեծելագնդին (մոտ 4.000), ընդ որում Սպարտակը զոհվեց, նրա ապստամբությունը ճնշվեց, իսկ Մեծ Հայքի օժանդակ հեծելագնդի մնացորդները ցրվեցին[5]:

Մ.թ.ա. 71 թվականի ապրիլին, վերջնականապես համոզվելով, որ Սպարտակի ապստամբությունը ճնշվել է և թիկունքը հանգիստ է, Լուցիոս Լուկուլլոսը, որն արդեն ավարտել էր Միհրդատ VI Եվպատորի ամրացված հիմնական քաղաքների նվաճումը, վճռական հարձակման անցավ Պոնտոսի թագավորության արդեն մնացած տարածքի

[1] «Քաղաքացիական պատերազմներ», գլուխ 119:
[2] «Քաղաքացիական պատերազմներ», գլուխ 120:
[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 1, գլուխ 119, 120; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 10; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 2, գլուխ 10; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 5, մաս 20:
[4] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 10:
[5] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 1, գլուխ 120; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 10; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 21; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 2, գլուխ 10; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 6:

ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 71 թվականի ապրիլին Գայլ գետի ճ-մ-ում (= Լիկոս գետ) (Փոքր Հայք, Կաբեյրա գավառ, Կաբեյրայի մոտ) Հայկական հեծելազորը (4.000) հաղթեց Հռոմեական հանրապետության հեծելազորին (մոտ 4.000)[1], սակայն կողմերը շուտով ուժերն իրար բերեցին վճռական ընդհարման համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

71 մայիս – ***<u>Կաբեյրայի ճ-մ</u>*** (Փոքր Հայք, Սեբաստիայից մոտ 90 կմ հյուսիս)[2]

Նախորդ պարտությունից հետո առաջխաղացումը դադարեցրած Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 60.000[3]), խուսափելով մարտի բռնվել բաց տեղանքում, ճամբարեց մի ամրացված վայրում: Ի պատասխան դրա՝ Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի (40.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 3.500 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը մոտեցավ հակառակորդի բանակին և ինքն էլ ճամբարեց:

I փուլ – Մի քանի օր անց Լուցիոս Լուկուլլոսը մի քանի փոքրիկ ջոկատներ ուղարկեց պարեն ձեռք բերելու, սակայն դրանք հանդիպեցին հակառակորդի բանակին և պարտություն կրեցին:

II փուլ – Մի քանի օր անց Լուցիոս Լուկուլլոսը պարեն ձեռք բերելու համար ուղարկեց ավելի խոշոր մի ջոկատ (6.000): Ի պատասխան դրա՝ Հայկական հեծելազորը կիրճերից մեկում փորձեց անակնկալ հարվածով պարտության մատնել վերջինիս, սակայն հակառակորդի ջոկատը հասցրեց մարտակարգ ընդունել և հետ մղել այդ հարձակումը:

III փուլ – Տեղեկանալով կրած անհաջողության մասին՝ Պոնտոսի թագավորության բանակը փորձեց նահանջել, սակայն արդյունքում դա վերածվեց անկանոն փախուստի: Օգտվելով դրանից՝ Հռոմեական հանրապետության բանակը հետապնդեց հակառակորդի բանակին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս, որից հետո քաղաք մտավ:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 20.000, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Վերջին պարտությունը Պոնտոսի թագավորությանը համար անչափ ծանր հետևանքներ ունեցավ, երբ Միհրդատյան III պատերազմը, ըստ էության, ավարտվեց, ինչի արդյունքում Հռոմեական հանրապետությունը գրավեց Պոնտոսի թագավորության ողջ տարածքը և Փոքր Հայքը, իսկ Միհրդատ VI Եվպատորն էլ ապաստանեց Մեծ Հայքի թագավորության տարածքում: Խնդիրը, սակայն, սրանով ևս չսպառվեց, քանի որ Հռոմի սենատը, իմանալով այն մասին, որ Միհրդատ VI Եվպատորը ապաստանել է Տիգրան II Մեծի մոտ, Պոնտոսի թագավորության արքային հանձնելու հարցով բանակցություններ սկսեց Հայոց արքայի հետ:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 79; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 15:

[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 80-82; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 15, 17, 19; Ցիցերոն «Պոմպեոսի հրամանատարության մասին», գլուխ 9, մաս 23, 24; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 1, գիրք 4, մաս 4; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ֆլեգոն Տրալացի «Օլիմպիադաներ»; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 8; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 74, 76:

[3] Ըստ Եվտրոպիոսի («Կենսագրություններ», գիրք 6) այս ճակատամարտում Հռոմեական հանրապետության բանակը կազմում էր ընդամենը 5.000 ռազմիկ: Մնում է միայն զարմանալ, որ այս «ճշմարտախոսը» իրենից անկախ այդքան նսեմացրել է իր պաշտած հերոս Լուկուլլոսին և Հռոմեական հանրապետության ողջ արևելյան բանակի հրամանատարին (որի անմիջական տրամադրության տակ կար մոտ 200.000 ռազմիկ) իջեցրել է սովորական լեգեոնի հրամանատարի մակարդակի ու հատկացրել ընդամենը 1 լեգեոն ռազմիկ: Ամեն ինչ սակայն հասկանալի է դառնում, եթե հաշվի առնենք նրա ձգտումը ամեն կերպ փառաբանել «*իրենց քանակով մեծապես գերազանցող բարբարոսներին փոքրաթիվ ուժերով հաղթող հռոմեական քաղաքակիրթ, քաջարի և հմուտ զորավարի ու զինվորի*» կերպարը: Իր հերթին ըստ Ապպիանոսի («Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 72) Հռոմեական հանրապետության բանակը կազմում էր 30.000 հետևակ և 1.600 հեծյալ, իսկ ըստ Պլուտարքոսի («Լուկուլլոս», գլուխ 8)՝ 30.000 հետևակ ու 2.500 հեծյալ: Ինչպես արդեն նշվել է, սակայն, սա վերաբերում է միայն բուն Հռոմեական հանրապետության բանակին, այն դեպքում, երբ մարտերին մասնակցել են նաև վերջինիս դաշնակից զգալի ուժեր:

Գլուխ 26
Տիգրան II Մեծը և նրա տերության ներքին խնդիրները

Մինչ Միհրդատ VI Եվպատորը տանուլ էր տալիս Հռոմեական հանրապետության դեմ մղվող իր ամենակարևոր պատերազմը, Տիգրան II Մեծի տերությունն իր հիմնական մասով շարունակում էր խաղաղություն վայելել: Որոշ խնդիրներ, սակայն, ի դեմս ներքին խլրտումների, ինչպես նաև սահմանային ընդհարումների, Հայոց տերությունում այնուհանդերձ առկա էին: Այս առումով ամենից առաջ հարկ է նշել, որ Մեծ Հայքի թագավորության կազմում Ասորիքի հայտնվելը վերջինիս հակառակորդների թվում ավելացրեց տեղական մանր թագավորություններին և իշխանություններին, որոնց շարքում առաջնային տեղ ուներ Արաբական թերակղզուց ուժեղացող թափով ստացվող մարդկային հոսքի հաշվին վերելք ապրող Նաբաթեական թագավորությունը:

Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 72 թվականի աշնանը Դամասկոսի ճ-մ-ում Բագրատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 100.000), Հայոց Միջագետքի (մոտ 5.000), Կոմագենեի (մոտ 5.000), Իբերիայի (մոտ 10.000), Ադիաբենեի (մոտ 5.000), Ատրպատականի (մոտ 10.000) և Աղվանքի (մոտ 5.000), ինչպես նաև Քալկիդայի (մոտ 8.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Երուսաղեմ-Դամասկոս երթուղով քաղաքին մոտեցած Նաբաթեական թագավորության բանակին (մոտ 50.000)[1], որից հետո մ.թ.ա. 72 թվականի նույն աշնանը վերջինիս ուժերից գրավեց Բոստրան (Հարավային Ասորիք, Երուսաղեմից մոտ 130 կմ հյուսիս-արևելք)[2]: Արդյունքում՝ Նաբաթեական թագավորությունը ընդունեց Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը, որից հետո օրակարգ մտավ հակամարտությունն արդեն Հուդայի թագավորության հետ: Մինչ այդ, սակայն, ևս էլի ներքին խնդիրներ ծագեցին:

Իրոք, դատելով ըստ ամենայնի, Տիգրան II Մեծի ամուսնությունը Կլեոպատրայի հետ իր հիմքում ամենից առաջ այնուհանդերձ հենց քաղաքական հաշվարկ ուներ, որն էլ իր հերթին չէր կարող իր բացասական հետևանքները չունենալ: Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության տիրակալի ընտանիքում անառողջ մթնոլորտ ստեղծվեց, երբ Տիգրան II Մեծի ավագ որդի Զարեհը սկսեց արքայական հավակնություններ դրսևորել, ընդ որում գործն ի վերջո հասավ նրան, որ Հայոց արքայի դեմ ապստամբեց մի բավականին մեծ երկրամաս: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 72 թվականի աշնանը Կորճայքի ճ-մ-ում[3] Տիգրան II Մեծի գլխավորած կառավարական բանակը (մոտ 7.000) հաղթեց ապստամբած արքայազն Զարեհի բանակին (մոտ 700), ընդ որում սպանվածների թվում էր նաև Զարեհը[4]: Ավագ եղբորը բաժին հասած դառը ճակատագիրը, սակայն, դաս չեղավ նրա փոքր եղբայրներին և արդյունքում վերևում նկարագրված դեպքերից որոշ ժամանակ անց հոր դեմ դավադրություն կազմեց Կլեոպատրայի արդեն երկրորդ որդին, որը, սակայն, ինքը ևս անհաջողության մատնվեց և զոհ գնաց սեփական իշխանական հավակնություններին: Ենթադրաբար հենց այս իրադարձությունների հետ է կապված նաև այն հանգամանքը, որ մ.թ.ա. 71 թվականի ամռանը Տիգրան II Մեծի գլխավորած կառավարական բանակը (մոտ 30.000) Զարբիենասի գլխավորած Կորճայքի իշխանության բանակից (մոտ 2.000) գրավեց Փյունիկը (Կորճայք, Կորդուք գավառի արևմուտք, Տիգրիսի ձախ ափին), ընդ որում Զարբիենասը գերվեց և մահապատժի ենթարկվեց, իսկ Կորճայքի իշխանությունը ոչնչացավ[5]:

---

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 5:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 21; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37: Ըստ Հովսեփ Ֆլավիոսի («Հրեական հնախոսություն», գիրք 13, գլուխ 15) մինչ այս Հարավային Ասորիքին տիրել է Նաբաթեական թագավորության բանակը, որի արքան Բոստրայում կազմակերպում է դրամահատարանի գործունեություն: Իր հերթին հնագիտական տեղեկություններից հայտնի է, որ մ.թ.ա. 72-69 թվականների այս դրամահատարանը չի գործել, իսկ այլ աղբյուրներից էլ հայտնի է, որ հենց այդ ժամանակահատվածում Տիգրան II Մեծի բանակը գործել է Հարավային Ասորիքում և Պաղեստինում:
[3] Այս ճակատամարտի տեղը խիստ մոտավոր է:
[4] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 104:
[5] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 29:

Գլուխ 27
Հռոմեական հանրապետության բանակի ընդհանուր թվաքանակի հիմնախնդիրը և վերջինիս հնարավորությունները Արևելքում

Կարգի գցելով սեփական տերության ներքին գործերը՝ Տիգրան II Մեծը անդրադարձ կատարեց Ասորիքի ծովափնյա ափաշերտում իր գոյությունը դեռևս շարունակող Սելևկյանների թագավորությանը, որի արքա Անտիոքոս XIII-ին նրա մայր Կլեոպատրա-Սելենեն դեռևս մ.թ.ա. 75 թվականին ուղարկել էր Հռոմ՝ հայերի դեմ պայքարում աջակցություն ստանալու մտայնությամբ: Արդյունքում, սակայն, մինչ Անտիոքոս XIII-ը գտնվում էր Հռոմում, մ.թ.ա. 71 թվականի ամռանը Բագրատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 90.000), Հայոց Միջագետքի (մոտ 7.000), Կոմագենեի (մոտ 4.000), Իբերիայի (մոտ 10.000), Ադիաբենեի (մոտ 5.000), Ատրպատականի (մոտ 10.000) և Աղվանքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը Սելևկյանների թագավորության բանակից (մոտ 2.000) պաշարեց Ակկան (Պաղեստին, ծովափին, Երուսաղեմից մոտ 130 կմ հյուսիս-արևմուտք) ու մ.թ.ա. 69 թվականի գարնանը գրավեց այն[1]: Կլեոպատրա-Սելենեն գերվեց և մահապատժի ենթարկվեց, իսկ արդյունքում էլ ողջ Ասորիքն ընկավ Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ, ընդ որում Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը ընդունեց նաև Հուդայի թագավորությունը: Հենց այս ժամանակ էր, սակայն, որ Միհրդատ VI Եվպատորին հանձնելու հարցով բանակցություններն ավարտվեցին անհաջողությամբ, ինչից օգտվելով էլ Հռոմեական հանրապետությունը պատերազմական գործողություններ սկսեց արդեն Մեծ Հայքի թագավորության դեմ:

Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը, սակայն, կարծում եմ, որ առանձին քննարկման է արժանի Լուցիոս Լուկուլլոսի գլխավորությամբ Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակի հարցը, ընդ որում միանգամից նշենք, որ սույն հարցը մինչև այժմ էլ բավարար լուսաբանում չի ստացել: Այս առումով կարծում եմ, որ խնդրի ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել հարցի պարզաբանմանն ուղղված կարծիքների ժամանակագրական դասավորվածության սկզբունքով: Արդյունքում՝ ամենից առաջ առաջարկում եմ քննարկել սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունները, ընդ որում դրանք պետք է դիտարկել երկու մակարդակում՝ Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակը Մեծ Հայքի թագավորության տարածք մուտք գործելիս, ինչպես նաև Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակը Տիգրանակերտի ճ-մ-ից անմիջապես առաջ:

Մեծ Հայքի թագավորության տարածք մուտք գործելիս Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակի մասին առկա են հետևյալ հաղորդումները.

Պլուտարքոս. «*Լուկուլլոսը նախկին պատերազմը ավարտված համարեց և, 6.000 հոգանոց զորամասով Սոռնատիոսին թողնելով Պոնտական մարզը պահպանելու, ինքը 12.000 հետևակով և 3.000 հոգուց էլ պակաս հեծյալներով մեկնեց հաջորդ պատերազմը մղելու*»[2],

Ապպիանոս. «*Զոհեր մատուցելուց հետո նա երկու ընտիր լեգեոններով և 500 հեծյալներով արշավեց Տիգրանի վրա*»[3],

Իր հերթին, Տիգրանակերտի ճ-մ-ից առաջ Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակի մասին առկա են հետևյալ հաղորդումները.

Պլուտարքոս. «*Լուկուլլոսը հայտարարեց, թե երկու կողմերն էլ, առանձին վերցրած, իրավացի չեն, բայց, միասին վերցրած, լավ խորհուրդ են տալիս, և նա զորքը բաժանեց*

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 14; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 5; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 5; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 13, գլուխ 16; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 21; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 24:
[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 84:

երկու մասի: Եվ ահա նա Մուրենային 6.000 հետևակով թողեց պաշարումը շարունակելու, իսկ ինքը իր հետ վերցրեց 24 կահորտ, որը կազմում էր ոչ ավելի քան 10.000 ծանրազեն հետևակ, ինչպես նաև՝ ողջ հեծելազորը և շուրջ 1.000 պարսատիկավոր ու աղեղնավոր, և նրանց հետ շարժվեց թշնամու դեմ»[1],

Ֆրոնտին. «*Թեև Մեծ Հայաստանում՝ Տիգրանակերտի մոտ, Տիգրանի և Միհրդատի դեմ ինքը Լուկուլլոսն ուներ ոչ ավելի քան 15.000 զինվոր...»*[2]:

Եվտրոպիոս. «*...իսկ իրեն էլ՝ արքային, որը Լուկուլլոսի դեմ էր ելել 7.500 հետևազորով և 100.000 նետաձիգներով, վերջինս, ունենալով միայն 18.000 ռազմիկներ, այնպես ջախջախեց, որ հայերի մեծ մասը զոհվեց*»[3]:

Ընդհանրացնելով վերոգրյալը, կարծես թե, կարող ենք փաստել, որ, համաձայն մեզ հասած սկզբնաղբյուրների, Մեծ Հայքի թագավորության տարածք մտած Լուցիոս Լուկուլլոսի բանակը թվաքանակը տատանվում էր 15.000-ից 22.000 ռազմիկի մոտակայքում: Թվերի պարզագույն գումարման վրա հիմնված այս կարծիքն առաջարկվել էր դեռ նախանցած դարում, սակայն այն հետագայում իրավացիորեն վերանայվեց:

Այս կապակցությամբ ես ինքս, ըստ էության, չցանկանալով հեծանիվ հայտնագործել, ստորև կմեջբերեմ Հ. Մանանդյանի իրավացի դիտարկումները և դրանից հետո նոր միայն, հիմք ընդունելով շարադրվածը, կշարունակեմ դատողություններիս տրամաբանական սխեման: Եվ այսպես, համաձայն Հ. Մանանդյանի. «*Հռոմեական զորքի թվի նկատմամբ գրեթե բոլոր պատմագետները համամիտ են և, հենվելով Պլուտարքոսի և Փրոնտինուսի վերոհիշյալ վկայությունների վրա՝ Տիգրանակերտի կռվին մասնակցողների ընդհանուր թիվն ենթադրում են 14.000-15.000: Սակայն Ռեյնաքն և Էքհարդն իրավացի կերպով մատնացույց են արել, որ Պլուտարքոսի վկայություններն իրար չեն բռնում: Տիգրանակերտի ճակատամարտի առթիվ Պլուտարքոսի մոտ տրված են, ինչպես տեսանք, հետևյալ թվերը՝ 6.000 զորք Մուրենայի, իսկ Լուկուլլոսի հետ՝ 10.000 ծանրազեն, 3.000 հեծելազոր և 1.000 պարսավոր ու աղեղնավոր, ուրեմն՝ընդամենը 20.000 զորք: Իսկ Հայաստան արշավող հռոմեական ամբողջ զորքի քանակը նրա մոտ նշանակված է՝ 12.000 հետևակ և 3.000 հեծելազոր, ընդամենը՝ 15.000: Էքհարդի կարծիքով, այս վերջին թվի մեջ չեն հիշատակված Մուրենայի 6.000 զորքն և 1.000 թեթևազենները: Այս ուղղումն անելուց հետո Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվը ստացվում է նրա մոտ ոչ թե 15.000, այլ՝ 22.000: Եթե ընդունելու լինենք Էքհարդի ուղղումը հավանական, ինձ թվում է, այնուամենայնիվ դժվար է համաձայնել, որ Լուկուլլոսը հնարավոր էր համարել փոքրաթիվ այդ ուժերով ռազմական մեծ արշավանք սկսել ընդդեմ Տիգրան Բ-ի, որին, ինչպես նա շատ լավ գիտեր, միանալու էր նաև Միհրդատը: Պատմաբանները, ինչպես շատ ճիշտ նկատել է Աստուրյանը, աչքաթող են արել, որ հռոմեական աղբյուրները մատնանշել են միմիայն հռոմեական զորքերի թիվը, բայց չեն հիշատակել Հռոմի դաշնակիցների փոքրասիական զորքերը: Իսկ որ այդ օգնական զորքերը գործուն մասնակցություն էին ունեցել Հայկական կռիվներին՝ այդ երևում է հենց իրենց իսկ հռոմեական կամ նաև այլ աղբյուրներից: Ստրաբոնի ուշագրավ մի վկայությունից դժվար չէ, օրինակ, կռահել, որ Լուկուլլոսը, հավանորեն, օգնական զորքեր էր ստացել Կապադովկիայի Արիոբարզանես թագավորից, որին ռազմական այդ գործակցության համար նա տվել էր իբրև վարձատրություն Ծոփաց երկրում գտնվող նշանավոր Տոմիսա բերդը: Մենք կտեսնենք ներքև, որ Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցել էին թրակիացի և գալատացի թեթևազեն հեծելագնդերը, որոնք, հավանորեն, նույնպես օժանդակ զորքեր էին և չէին համարվում բաղադրիչ մասեր հռոմեական վերոհիշյալ զորքի: Բացի այդ, Սալլուստիուսի մոտ ևս իբրև օգնական զորքեր հիշատակված են բյութանացիները, որոնք 68 թվի աշնանը հռոմեական մյուս զորամասերից առաջ հասել*

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 26:
[2] Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 1, մաս 14:
[3] Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 9:

էին Արածանիի գետափին: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, փոքրասիական օգնական ու դաշնակից զորքերի մասնակցությունը հայկական կռիվներին միանգամայն անժխտելի է: Օգնական այդ զորքերը, որոնցից որոշակի հիշատակված են գալատացիները, թրակիացիներն և բյութանացիները՝ կազմում էին, ըստ երևույթին, Լուկուլլոսի զորաբանակի նշանակալի մասը: Ուստի և մենք սխալված չենք լինի, եթե Լուկուլլոսի ամբողջ զորքի թիվն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ոչ թե 15.000 կամ 22.000, ինչպես այդ ենթադրվում է պատմագիտական երկերում, այլ անհամեմատ ավելի»[1]:

Եվ այսպես, արված է մի հանգամանալից և հիմնավոր վերլուծություն, որին, մինչև առաջ անցնելը, ըստ էության, կարելի է միանալ: Վաստակաշատ գիտնականը, փաստորեն, կարդալով տողատակերը, հունահռոմեական աղբյուրների կողմնակալ և ոչ օբյեկտիվ տեղեկատվության ընդհանրացման արդյունքում, քննարկելով նաև մինչ այդ արտահայտված կարծիքները, հանգում է այն հետևությանը, որ մենք բոլորս սխալված չենք լինի, եթե. «*Լուկուլլոսի ամբողջ զորքի թիվն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ոչ թե 15.000 կամ 22.000, ինչպես այդ ենթադրվում է պատմագիտական երկերում, այլ՝ անհամեմատ ավելի»*: Այս պարագայում, հիմք ընդունելով, որ. «*Պատմաբանները, ինչպես շատ ճիշտ նկատել է Աստուրյանը, աչքաթող են արել, որ հռոմեական աղբյուրները մատնանշել են միմիայն հռոմեական զորքերի թիվը, բայց չեն հիշատակել Հռոմի դաշնակիցների փոքրասիական զորքերը»*, այդ «*անհամեմատ ավելի»*-ն կարող էր կազմել. «*Լուկուլլոսի զորաբանակի նշանակալի մասը»*, ըստ իս՝ Լուկուլլոսի բանակի, ըստ էության, կեսը:

Այսպիսով՝ Հ. Մանանդյանն արել է հիմնավոր մի եզրահանգում առ այն, որ Մեծ Հայքի թագավորության տարածք մտած Հռոմեական հանրապետության բանակը կազմել էր ոչ թե 15.000-ից 22.000 ռազմիկ, այլ «*անհամեմատ ավելի»*, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, հեղինակը նկատի ունի մի թիվ մոտ 50.000 ռազմիկի շրջանակներում: Սկզբնաղբյուրների տեղեկությունները իրավացի կերպով վերանայող այս կարծիքն, ըստ էության, ընդունվել է խորհրդահայ պատմագիտության կողմից[2] և գործածության մեջ է նաև այժմ[3]: Եվ այսպես, 50.000 թիվը, որպես Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Հռոմեական հանրապետության բանակի մոտավոր թիվ ու առաջարկված դեռևս խորհրդային ժամանակներում, ըստ էության, շրջանառության մեջ է նաև այսօր:

Ես, սակայն, առաջարկում եմ լիովին այլ մի թիվ, որը մի կողմից հիմնված է քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետության բանակի ընդհանուր թվաքանակի վրա, իսկ մյուս կողմից էլ այն հաստատվում է ռազմական գործողությունների մեզ հայտնի ընդհանուր պատկերով, ինչպես նաև ռազմապատմական մոդելավորմամբ: Եկեք միասին կառուցենք փաստերի հայտնի շղթան և ստուգենք իմ դատողությունների տրամաբանական հիմնավորվածությունը:

Ամենից առաջ ակնհայտ է, որ Մեծ Հայքի թագավորության դեմ պատերազմը հաղթական ավարտին հասցնելու համար արևելքի զորավար նշանակված և արտակարգ լիազորություններով օժտված Լուցիոս Լուկուլլոսը, համաձայն բոլոր ռազմական կանոնների, պետք է իր տրամադրության տակ ունենար այնպիսի մի բանակ, որը, հենց միայն թվաքանակի տեսանկյունից, մի կողմից առավելագույնս կապահովեր դրված ռազմական խնդիրների արդյունավետ իրականացումը «թափած ջանք-առկա արդյունք» տեսանկյունից, իսկ մյուս կողմից էլ՝ վտանգի տակ չէր դնի Հռոմեական հանրապետության անվտանգությունն ու շահերը պետության այլ հատվածներում: Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակը վերևում որոշակիորեն քննարկվեց, սակայն խնդիրն այժմ դիտարկենք ավելի մանրամասն կերպով:

Ըստ պատմիչների և ռազմական պատմագետների քննարկվող դարաշրջանում

[1] Մանանդյան Հ. Հ. «Տիգրան երկրորդն և Հռոմը», Երևան 1972, էջ 135-136:
[2] Տես օրինակ՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 587-588:
[3] Տես օրինակ՝ Դեմոյան Հ. «Հայոց պատերազմներն և ռազմարվեստը Տիգրան II Մեծի օրոք», Երևան 2013, էջ 93; Մանասերյան Ռ. Լ. «Տիգրան II Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան 2007, էջ 167; Մովսիսյան Ա. Ե. «Տիգրան II Մեծ», Երևան 2010, էջ 49 և այլն:

Արևելքում Հռոմեական հանրապետությունը ուներ մոտ 200.000 զինվոր՝ պատկանող Հռոմեական հանրապետության բանակի հաստիքային կազմին, ինչպես նաև դաշնակիցներին: Այսպես, ըստ Պ. Կոնտամինի և Պ. Կոնոլիի, հռոմեական բանակն ըստ տարբեր տեղեկությունների ուներ 400.000-ից 600.000 զինվոր[1]: Իր հերթին, ըստ Ե. Ռազինի, Հռոմեական հանրապետության բանակի ընդհանուր թիվը մ.թ.ա. մոտ 100-65 թվականներին հասնում էր 300.000-350.000 մարդու[2]: Այս թվերը մենք կկարողանանք ավելի կոնկրետացնել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մ.թ.ա. մոտ 100-65 թվականներին բուն Հռոմեական հանրապետության բանակը կազմված էր 40 լեգեոնից, որոնցից յուրաքանչյուրի կազմում, «Մարիուսյան լեգեոն»-ի հաստիքային թվաքանակի պայմաններում, կար մոտ 6.000 ռազմիկ: Այսինքն՝ կարելի է հաստատված համարել, որ Հռոմեական հանրապետության ողջ բանակն այս ժամանակաշրջանում կազմում էր մոտ *400.000* ռազմիկ՝ 240.000 լեգեոներ և մոտ 160.000 դաշնակից: Հիշենք այս թիվն և շարունակենք դատողությունները:

Ըստ Ա. Այվազյանի «*...Իտալիայից դուրս տեղավորված էր 300.000 զինվոր, որի միայն կեսը՝ արևելյան ուղղությամբ*»[3], իսկ ըստ Ե. Ռազինի՝ Հռոմեական հանրապետության բանակի ուժերի ուղիղ կեսը տեղաբաշխված էր հյուսիս-արևելյան՝ դանուբյան սահման, արևելյան՝ Փոքր Ասիա ու Ասորիք, և հարավ-արևելյան՝ Եգիպտոս, ուղղությամբ[4]: Սա փաստորեն հռոմեական ուժերի հայտնի դասավորությունն է, որն, ըստ էության, կասկածի ենթակա չէ[5]: Այսպիսով՝ Հռոմեական հանրապետության բանակը մ.թ.ա. I դարի առաջին կեսում կազմում էր մոտ 400.000 ռազմիկ, որի մոտ կեսը տեղավորված էր Արևելքում: Այսինքն՝ Արևելքում պատերազմ վարող հռոմեական հիմնական զորավարները այս ժամանակաշրջանում իրենց տրամադրության տակ ունեին մոտ *200.000* զինվոր՝ լեգեոներ և դաշնակից: Մինչև շարունակելը հիշենք նաև այս թիվը:

Առաջ անցնելով ամրագրենք նաև, որ Արևելքում իր հիմնական հակառակորդի դեմ հաղթանակի հասնելու համար տվյալ ժամանակաշրջանի Արևելքի զորավարը մի կողմից պետք է հնարավորինս կենտրոնացներ իր ձեռքի տակ եղած ուժերը, ինչը պարզագույն ռազմավարական կանոն է, բայց մյուս կողմից էլ նույն այդ զորավար պետք է տեղերում թողներ անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր՝ այլ հատվածներում անվտանգությունը հարվածի տակ չդնելու համար: Սա ևս կարևոր ելակետ է:

Իր հերթին կարելի է ենթադրել, որ այս պայմաններում անմիջականորեն մարտական գործողություններ մղելու համար Արևելքի զորավարի տրամադրության տակ, հանելով ամենատարբեր պատճառներով շարքից դուրս եկած ռազմիկների որոշակի քանակություն, կարող էր լինել մոտ *180.000* ռազմիկ՝ լեգեոներ և դաշնակից, մի թիվ, որը մինչ Լուկուլլոսի արշավանքին վերաբերող ժամանակահատվածի կապակցությամբ հաստատվում է, օրինակ, Միհրդատյան I պատերազմի անմիջապես նախօրեին քննարկվող տարածաշրջանում առկա ուժերի քանակով՝ 132.000 ռազմիկ, որից 12.000 հեծյալ[6], իսկ Լուցիոս Լուկուլլոսի արշավանքին անմիջապես հաջորդող ժամանակահատվածի կապակցությամբ էլ հաստատվում է, օրինակ, Գնեոս Պոմպեոսի բանակի թվաքանակով, որն ուներ 172.000 ռազմիկ՝ լեգեոներ և դաշնակից: Այսպիսով՝ այսպես թե այնպես ակնհայտ է, որ տվյալ ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետությունն Արևելքում ուներ 180-200.000 ռազմիկ: Որպես եզրափակում անենք

---

[1] Peter Connolly “Greece and rome at war”, London-Hongkong 1981, page 7-11, Philippe Contomine “War in the middle ages”, Blackwell 1998, page 255 և այլն:

[2] Разин Е. А. “История военного искусства, в 3-х т.", том 1, СПб 1999, стр. 412.

[3] Այվազյան Ա. Ա. «Հայ զինվորականների պատվո վարքականոնը (4-5 դդ)», Երևան 2000, էջ 23:

[4] Разин Е. А. “История военного искусства, в 3-х т.", том 1, СПб 1999, стр. 413.

[5] Օրինակ, ըստ Ապպիանոսի (Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 17) Միհրդատյան I պատերազմի (մ.թ.ա. 88-85) անմիջապես նախօրեին Փոքր Ասիայի արևմուտքում կենտրոնացված էր հռոմեական 170.000 հետևակ և 18.000 հեծյալ՝ լեգեոներ և դաշնակից: Իր հերթին, Լուկուլլոսին հաջորդած Պոմպեոսի ձեռքի տակ նույն այդ տարածաշրջանում և գործնականում նույն ժամանակահատվածում առկա էր 172.000-ի՝ լեգեոներ և դաշնակից:

[6] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 17:

ևս մեկ դիտարկում և փորձենք ընդհանրացնել ողջ ասվածը:

Տիգրանյան տերության, իսկ ավելի կոնկրետ՝ Մեծ Հայքի թագավորության տարածքում խորանալիս Լուցիոս Լուկուլլոսն, անկասկած, համաձայն ռազմական բոլոր կանոնների, պարտավոր էր հոգալ սեփական հաղորդակցման ուղիների ապահովման մասին՝ դրանց նկատմամբ սահմանելով մշտական հսկողություն, իսկ որոշ կարևոր կետերում էլ թողնելով կայազորներ՝ խոսքը վերաբերում է մոտ 500 կմ երկարությամբ ձգվող մի տարածքի: Այս պայմաններում եկեք ուղղակի հարց տանք մեզ, թե, պարզագույն մոդելավորման արդյունքում, զուտ քանակապես, կհերիքե՞ին արդյոք 15.000 -ից 22.000 ռազմիկները ոչ միայն վերոհիշյալ խնդիրներն արդյունավետ լուծելու, այլև՝ հայերի դեմ ակտիվ և հաջող հարձակողական գործողություններ իրականացնելու համար, ընդ որում սա դեռ այն պայմաններում, երբ, ինչպես գլխավոր ճակատամարտերում, այնպես էլ այլ ընդհարումներում, Հռոմեական հանրապետության բանակը մշտական կորուստներ էր կրում և, անկասկած նաև, կրում էր նաև ոչ մարտական կորուստներ: Վերոհիշյալ հարցի պատասխանը միանշանակ է՝ ոչ, 15.000-ից 22.000 կազմելու պարագայում քննարկվող ժամանակահատվածում և տարածաշրջանում Հռոմեական հանրապետության բանակն ուղղակի ֆիզիկապես ի վիճակի չէր անել այն ամենը, ինչ վերագրվում է վերջինիս, ընդ որում դա անչափ դժվար ու գործնականում անհնարին կլիներ իրականացնել նաև 50.000 ռազմիկի առկայության պարագայում:

Եվ վերջապես ավելացնենք նաև, որ դեպի Մեծ Հայքի թագավորության տարածք Լուցիոս Լուկուլլոսի արշավանքի ժամանակաշրջանում տապալված Պոնտոսի թագավորությունից բացի տարածաշրջանում Հռոմեական հանրապետությունն այլևս չուներ և ոչ մի հակառակորդ, իսկ այդ պայմաններում, ընդհանրացնելով ողջ վերոգրյալը, տրամաբանական է պնդել, որ, նվաճված Պոնտոսում թողնելով առավելագույնը մոտ 40.000 ռազմիկ, իսկ մոտ 20.000 ռազմիկ էլ ունենալով արևելյան այլ տարածքներում կամ այս կամ այն պատճառով շարքից դուրս եկածի կարգավիճակում, ըստ ռազմական բոլոր կանոնների, Լուցիոս Լուկուլլոսը պետք է Մեծ Հայքի թագավորության դեմ իր վճռական արշավանքը սկսեր սեփական 200.000 ռազմիկներից առնվազն գոնե մոտ *<u>140.000</u>* ռազմիկների գլուխն անցած:

Եվ այսպես, խնդիրն, ըստ էության, երկու հարթության մեջ է.

1. *Կա՞ր արդյոք Լուցիոս Լուկուլլոսի տրամադրության տակ այնքան ռազմիկ, որ նա կարողանար դրանցից առանձնացներ 140.000 հոգու և ուղղեր Մեծ Հայքի թագավորության դեմ:*

Պատասխանը միանշանակ է՝ այո, քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական հանրապետության արևելքի, ըստ էության, բացարձակ տիրակալ հռչակված Լուցիոս Լուկուլլոսի տրամադրության տակ ընդհանուր առմամբ կային մոտ 200.000 ռազմիկներ, որոնցից 140.000 հոգուն այսպես թե այնպես բոլոր հնարավորությունները կար ուղղել Մեծ Հայքի թագավորության դեմ:

2. *Ի՞նչը կարող էր խանգարել Լուցիոս Լուկուլլոսին, տեղում թողնելով անհրաժեշտ նվազագույն ուժեր, հիմնական ուժերով հարվածել հայերին:*

Պատասխանը միանշանակ է՝ ոչինչը, ոչինչ չէր կարող խանգարել Լուցիոս Լուկուլլոսին, տեղում թողնելով անհրաժեշտ նվազագույն ուժեր, հիմնական ուժերով հարվածել հայերին՝ Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ VI Եվպատորը ռազմաքաղաքական իմաստով արդեն գոյություն չուներ, Պարթևական թագավորությունը չեզոք, եթե ոչ Լուցիոս Լուկուլլոսին դաշնակից դրության մեջ էր, իսկ այս պարագայում էլ իրոք որ չի մնում և ոչ մի խելամիտ պատճառ, որը կխանգարեր Լուցիոս Լուկուլլոսին հայերի դեմ կենտրոնացնել իր ձեռքի տակ եղած ուժերի հիմնական հարվածային մասը:

Եվ այսպես, ամեն ինչ ծայրահեղ տրամաբանական է՝ հիմնավորված ինչպես սկզբնաղբյուրների, այնպես էլ մասնագետների կարծիքների ամփոփ վերլուծության ու ռազմապատմական մոդելավորման վրա, ընդ որում, ամփոփելով ասվածը, կարող ենք պնդել, որ Մեծ Հայքի թագավորության դեմ արշավող Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական

հանրապետության բանակը կազմել է մոտ *140.000* ռազմիկ՝ լեգեոներ և դաշնակից: Ինչ վերաբերում է հունահռոմեական հեղինակներին պատկանող սկզբնաղբյուրներում արտացոլված անհամեմատ ավելի փոքր թվերին, ապա այս մասով խնդրի լուծումը նույն այն հարթության վրա է, ինչ Ալեքսանդր III Մեծի բանակի թվաքանակի աղճատված քանակությունը՝ տվյալները տրվել են Արևելքում մղվող պատերազմը մի հեշտ գործ ներկայացնելու, սեփական ռազմուժը գովերգելու և «*իրենց թվաքանակով հակառակորդին զիջող քաղաքակիրթ աշխարհի ռազմիկների առավելությունը բարբարոսների հորդայի*» նկատմամբ ընդգծելու պարզ մի մտայնությամբ:

Գլուխ 28
Հայ-Հռոմեական պատերազմը

Եվ այսպես, անհաջողության մատնվելով Միհրդատ VI Եվպատորին հանձնելու հարցով մղվող բանակցություններում, Լուցիոս Լուկուլլոսը, առանց ստանալու Հռոմի սենատի համաձայնությունը և գործելով սեփական նախաձեռնությամբ, դիմեց ռազմական գործողությունների: Սկիզբ առավ Հայ-Հռոմեական պատերազմը (մ.թ.ա. 69-66):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

69 ապրիլի վերջ – ***Նփռետ գավառի ճ-մ*** (Աղձնիք)[1]

Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 140.000, որից մոտ 70.000 դաշնակից, այդ թվում Դեյոթարոս I Գալաթացու (մ.թ.ա. 75-40), գլխավորած 6.000 գալաթական, թրակիական և բյութանիական հեծյալներ), պատրվակ բռնելով Մեծ Հայքի թագավորության տարածքում ապաստանած Միհրդատ VI Եվպատորին հանձնելը մերժելը և առաջանալով ***Ծոփք -Արիարաթեսիա-Մելիտե-Տոմիսիա*** (վերջինը՝ Մինչեփրատյան Ծոփք, Անձիտ գավառ, Եփրատի ձախ ափին) ***-Անձիտ*** (= ***Թիլ-Անձիտ***) ***-Արշամաշատ*** երթուղով, անակնկալ ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք՝ առաջխաղացման ուղու երկայնքով թողնելով կայազորներ: Տեղեկանալով այս մասին՝ Մեծ Հայքի թագավորության բանակի հիմնական մասը, որը գտնվում էր Հարավային Ասորիքում, ինչպես նաև Հուդայի և Նաբաթեական թագավորությունների տարածքներում, սկսեց նահանջել Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ, այն դեպքում, երբ անմիջականորեն Պոնտոսի թագավորության սահմանում գտնվող ուժերը սկսեցին նահանջել դեպի երկրի խորք: Արդյունքում, բանակելով ***Տիգրիս գետի ափին***, Լուցիոս Լուկուլլոսը առաջ ուղարկեց Սեքստիլիոսի գլխավորած առաջապահին (մոտ 3.600, որից 1.600 հեծյալ): Այս պայմաններում Ծոփքի կառավարիչ Մեհրուժան Անգեղացին, իմանալով թշնամու բանակի թվական բացարձակ գերակշռության մասին և որոշելով դարանը գցել վերջինիս գոնե մի մասին, իր տրամադրության տակ գտնվող հեծյալ զորամասով (2.000) առաջ շարժվեց ու դարան դրեց մոտակա լեռնանցքում:

I փուլ – Հայկական բանակը անակնկալ հարվածեց թշնամու բանակի առաջապահին և սկսեց ծանր կորուստներ պատճառել վերջինիս:

II փուլ – Լուցիոս Լուկուլլոսը օգնության շարժեց հիմնական բանակը և շրջապատեց Հայկական հեծելազորին:

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 24-25; Պլուտարքոս «Զրույցներ արքաներից ու զորավարներից», «Լուկուլլոս», գլուխ 87; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 84; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 10; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 8, գլուխ 16; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 14; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Ներսես Պալիենց «Հայոց իշխանների ու թագավորների պատմություն»:

III փուլ – Հայկական հեծելազորը փորձեց ճեղքել շրջապատման օղակը և հեռանալ, սակայն հանդուգն, խիզախ ու անհավասար այդ մարտում ընկավ Մեհրուժանը և զոհվեցին նրա գրեթե բոլոր քաջերը:

Հայերը կորցրին մոտ 1.900, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

Այսպիսով՝ հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու խիզախ փորձն անհաջողությամբ ավարտվեց, որից հետո Հռոմեական հանրապետության բանակը սկսեց մոտենալ Տիգրանակերտին: Միաժամանակ, տեղյակ լինելով այն մասին, որ Տիգրան II Մեծը լուրջ ուժեր է կուտակում մոտակայքում, Լուցիոս Լուկուլլոսը որոշ միջոցներ ձեռնարկեց նաև այդ ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 69 թվականի մայիսի սկզբին Հայոց Միջագետքի ճ-մ-ում նույն Սեքստիլիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 6.000) անակնկալ հարձակումով ջախջախեց Տիգրան II Մեծի կողմից Հայոց Միջագետքում հաստատված և Մեծ Հայքի թագավորության բանակին օգնության շարժվող վարձկան արաբներին (մոտ 3.000), որից հետո միացավ Հռոմեական հանրապետության հիմնական բանակին[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 25; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14:

69 մայիսի կես - հոկտեմբերի կես – ***Տիգրանակերտի ճ-մ*** (Աղձնիք, Նփռետ գավառ, Արևմտյան Տիգրիսի ձախ վտակ Քաղիրթի միջին հոսանքից մոտ 12 կմ արևմուտք)[1]

Շարունակելով արշավանքը՝ Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 130.000, այդ թվում Դեյոթարոս I Գալաթացու գլխավորած գալլական, թրակիական և բյութանիական հեծյալներ) մոտեցավ Տիգրանակերտին, որտեղ Մամիկոնյան իշխանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 2.000, այդ թվում հույներ) անցավ համառ պաշտպանության:

I փուլ – Մայիսի կեսին Հռոմեական հանրապետության բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց քաղաքի ուղղությամբ, սակայն, մատնվելով անհաջողության, դրանից հետո բավարարվեց միայն քաղաքի պասիվ օղակումով:

II փուլ – Մայիսի վերջին Հայկական Մաղխազական (մոտ 6.000) և Մարդպետական (մոտ 10.000) հեծելազորը խիզախ հարձակում գործեց քաղաքը պաշարողների վրա, որի ընթացքում մաղխազ հեծյալները ճեղքեցին պաշարման օղակը ու ստիպեցին թշնամու ռազմիկներին ապաստանել սեփական ճամբարում, իսկ մարդպետ հեծյալներն էլ հուժկու նետաձգությամբ փակեցին վերջինիս մուտքը: Այնուհետև մաղխազ հեծյալները, կազմելով հզոր վահանափակ, քաղաքից արագորեն դուրս բերեցին արքայական ընտանիքի անդամներին և պետական գանձարանը: Ամռանը, երբ սեփական մայրաքաղաքը դեռ պաշարված էր, Տիգրան II Մեծը սկսեց արագորեն հակամիջոցներ ձեռնարկել, սակայն իրավիճակը բարդանում էր նրանով, որ հենց նոր հպատակեցված և դեռևս անհանգիստ Հուդայի ու Նաբաթեական թագավորություններից, ինչպես նաև Ասորիքից վերջինս չէր կարող արագորեն դուրս հանել Մեծ Հայքի թագավորության բանակը՝ առանց վերջնականապես կորցնելու այդ տարածքները: Մյուս կողմից էլ, սակայն նաև, ճակատամարտը հետաձգելը ևս բավարար ելք չէր, քանի որ թշնամին փաստացի գրավել էր Մեծ Հայքի թագավորության մի մասը և աստիճանաբար ուժեղանում էր, որին հակառակ էլ Հայոց տերությունը աստիճանաբար թուլանում էր ու փլուզվում: Հաշվի առնելով այս ամենը՝ Տիգրան II Մեծը, մի կողմից այդ տարածքները պահպանելու, մյուս կողմից էլ Հայկական բանակը խնայելու մտայնությամբ, Մեծ Հայքի թագավորության բանակի հուսալի համարվող՝ Հայկական, մասը հիմնականում թողեց գրաված տարածքներում, որից հետո Մեծ Հայքի թագավորության բանակի մի մասով (մոտ 40.000), ինչպես նաև Իբերիայի, Աղվանքի, Ադիաբենեի, Ատրպատականի, Քարակենեի և Քուշանական թագավորությունների դաշնակից միացյալ բանակով (մոտ 60.000) շարժվեց թշնամու ուղղությամբ: Միաժամանակ Բագրատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության հիմնական բանակը (100.000) սկսեց Ասորիքից աստիճանաբար նահանջել հյուսիս-արևելյան ուղղությամբ և կենտրոնանալ ***Հայոց Միջագետքում***: Ի վերջո, հոկտեմբերի սկզբին Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի և դաշնակից թագավորությունների միացյալ բանակը սկսեց մոտենալ Տիգրանակերտը պաշարած Հռոմեական հանրապետության բանակին՝ արդյունքում ճամբար դնելով Քաղիրթ գետի աջ ափին տարածվող հարթավայրում: Տեղեկանալով այս մասին՝ հոկտեմբերի 6-ի վաղ առավոտյան Լուցիոս Լուկուլլոսը,

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 26-29; Պլուտարքոս «Զրույցներ արքաներից ու զորավարներից», «Լուկուլլոս», գլուխ 87; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 84-86; Մեմնոն Հերակլեացի «Պոնտական Հերակլեայի պատմությունը», մաս 56, 57; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 1b, 2; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 1, մաս 14, գիրք 2, գլուխ 2, մաս 4; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 15, գիրք 12, գլուխ 2, մաս 9; Պլինոս Ավագ «Բնական պատմություն», գիրք 2, գլուխ 92; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 4; Ցիցերոն «Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի»; Ցիցերոն «Պոմպեոսի հրամանատարության մասին», գլուխ 9, մաս 23; Ֆլեգոն Տրալացի «Օլիմպիադաներ»; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 33; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 74; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 3; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 9:

Լուցիոս Մուրենայի գլխավորած ջոկատին (6.000 հետևակային) թողնելով քաղաքի օղակումը շարունակելու, հիմնական ուժերով շարժվեց դեպի արևելք և իր հերթին մարտակարգ ընդունեց Քաղիրթ գետի արևմտյան՝ աջ, ափին: Հռոմեական հանրապետության բանակի առաջին շարքում տեղակայվեց հեծելազորը, իսկ երկրորդ շարքում՝ հետևակը: Միաժամանակ երկու լեգեոններ, հյուսիսից շրջանցելով հյուսիսում տարածվող բլուրները, աննկատ թևանցեցին Մեծ Հայքի թագավորության բանակի մարտակարգը՝ նախատեսելով մարտի վճռական պահին թևային հարված հասցնել թշնամու բանակի աջ թևին: Նույն այս ժամանակ Քաղիրթ գետի արևելյան՝ ձախ, ափից զգալի տարածություն դեպի արևելք մարտակարգ ընդունեց նաև Մեծ Հայքի թագավորության բանակը, որի առաջին շարքում տեղավորվեց թեթև հեծելազորը, երկրորդ շարքի ձախ թևում տեղակայվեց Ադիաբենեի արքայի գլխավորած Ադիաբենեի, Իբերիայի և Աղվանքի թագավորությունների հետևազորը, երկրորդ շարքի աջ թևում դիրքեր զբաղեցրեց Միհրդատ արքայի (մ.թ.ա. մոտ 85-65) գլխավորած Ատրպատականի թագավորության հետևազորը, երկրորդ շարքի կենտրոնում մնաց Տիգրան II Մեծի գլխավորած Հայկական հետևազորը, երրորդ շարքի կենտրոնում տեղակայվեց գումակը, որից էլ աջ, որպես ընդհանուր պահեստազոր, դիրքեր զբաղեցրեց Հայկական ծանր հեծելազորը:

III փուլ – Օրվա առաջին կեսին Հռոմեական հանրապետության բանակը անցավ գետը և մարտակարգ ընդունեց գետի ձախ ափին, ինչից հետո ողջ ճակատով համառ հանդիպակաց մարտ բռնկվեց:

IV փուլ – Կեսօրին Հռոմեական հանրապետության հեծելազորը անցավ հարձակման, սակայն ի վերջո դիմեց կեղծ փախուստի: Մեծ Հայքի թագավորության բանակի առաջին շարքը սկսեց հետապնդել թշնամու հեծելազորին:

V փուլ – Հռոմեական հանրապետության բանակի ձախ թևը ճակատային, իսկ թևանցումն ավարտած 2 լեգեոններն էլ թևային հարված հասցրին Մեծ Հայքի թագավորության բանակի աջ թևին, որը խուճապի մատնվեց և սկսեց քայքայվել: Միաժամանակ կեղծ փախուստը դադարեցրած թշնամու հեծելազորը սեփական հետևակի հետ միասին ճակատից հարված հասցրեց կենտրոնում, ինչպես նաև մյուս թևում:

VI փուլ – Մարտի մեջ մտավ Հայկական ծանր հեծելազորը և, ծանր հարվածով շփոթի մատնելով հակառակորդի բանակին, հնարավորություն ընձեռնեց Մեծ Հայքի թագավորության բանակին վերականգնել շարքերը և դուրս գալ մարտից:

VII փուլ – Մեծ Հայքի թագավորության բանակը պոկվեց թշնամու բանակից և հեռացավ դեպի արևելք:

VIII փուլ – Հոկտեմբերի կեսերից սկսած Հռոմեական հանրապետության բանակը ուժեղացրեց քաղաքի պաշարումը, սակայն քաղաքի կայազորը համառորեն հետ մղեց թշնամու բանակի բոլոր գրոհները: Շուտով, սակայն, թշնամուն հաջողվեց իր կողմը գրավել քաղաքի պաշտպանությանը մասնակցող հույներին, ինչի արդյունքում վերջիններս գրոհներից մեկի ժամանակ ապստամբեցին և գրավեցին 2 աշտարակների միջև ընկած պարսպի մի տարածություն, որով էլ Հռոմեական հանրապետության բանակը ի վերջո ներխուժեց քաղաք ու գրավեց այն: Մամիկոնյան իշխանը Հայկական կայազորի հետ միասին ճեղքեց պաշարումը և հեռացավ:

Հայերը կորցրին մոտ 5.000, դաշնակիցները՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Այսպիսով՝ Տիգրանակերտի համար մղվող մարտերը ավարտվեցին

անհաջողությամբ և քաղաքն ի վերջո ընկավ, սակայն մի կողմից դա էժան գին չարժեցավ հակառակորդին, իսկ մյուս կողմից էլ Հայոց արքայի ձեռնարկած միջոցառումները նույն այս ժամանակ այնուհանդերձ տվեցին իրենց սպասելի պտուղները, ինչի արդյունքում, չնայած դաշտային բաց ճակատամարտում կրած անհաջողությանը ու մայրաքաղաքի կորստին, արդեն տարվա վերջին Տիգրան II Մեծի հրամանի տակ կրկին գործում էր 100.000 ռազմիկի կազմով մարտունակ և բավականին ուժեղ մի բանակ: Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև սկիզբ առնող ձմեռը՝ Լուցիոս Լուկուլլոսը պատերազմական գործողությունների հետագա վարումը հետաձգեց մյուս տարվան, ընդ որում հայերը ևս, որոնք հստակորեն գիտակցում էին, որ ժամանակն արդեն իրենց օգտին է աշխատում, չվերսկսեցին դրանք:

Այս առումով հարկ է նշել, որ իր իսկ կողմից շահած հաղթանակից հետո Լուցիոս Լուկուլլոսն ակնհայտորեն հույս ուներ ձեռքում ունենալ մի իրավիճակ, երբ կրած անհաջողությունից հետո Հայոց արքան բանակցությունների կսկսի, սակայն այդ հույսերն ի վերջո չարդարացան: Արդյունքում՝ ստիպված լինելով շարունակել սկսած գործը, մ.թ.ա. արդեն 68 թվականի գարնան սկզբին, ոտքի հանելով Տիգրանակերտի մոտակայքում տեղակայված սեփական ռազմական մեքենան, Լուցիոս Լուկուլլոսը նպատակ դրեց գրավել Մեծ Հայքի թագավորության մյուս մայրաքաղաքն, ի դեմս Արտաշատի՝ ցանկանալով գոնե այդ ճանապարհով կոտրել Հայոց արքայի համառությունը և ստիպել վերջինիս բանակցել: Ի պատասխան սրա՝ Տիգրան II Մեծը որդեգրեց անկանոն մարտերով հակառակորդին հյուծելու և հետո նոր միայն վճռական մարտ տալու մարտավարություն, որն արդյունքում իրեն լիովին արդարացրեց՝ էականորեն դանդաղեցնելով հակառակորդի բանակի առաջխաղացման ընթացքը և զգալի կորուստներ արժենալով վերջինիս:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

68 մայիս – ***<u>Տարոնի ճ-մ</u>***[1]

Մ.թ.ա 68 թ-ի մարտին Լուցիոս Լուկուլլոսի գլխավորությամբ ***<u>Տիգրանակերտից</u>*** դեպի արևելք, իսկ հետո արդեն դեպի հյուսիս-արևելք արշավող Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 135.000, այդ թվում Դեյոթարոս I Գալաթացու գլխավորած գալլական, թրակիական և բյութանիական հեծյալներ) ***<u>Բաղեշ</u>*** (Աղձնիք, Սոլնոձոր գավառ, Ձորա պահակ լեռնանցքում, Վանա լճից մոտ 18 կմ հարավ-արևմուտք) ***<u>-Տարոն</u>*** երթուղով մոտեցավ Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Հայկական ծանր հետևակի և հեծելազորի բանակատեղիին (մոտ 20.000)՝ ի վերջո պաշարելով այն:

I փուլ – Հռոմեական հանրապետության բանակը անցավ հարձակման, սակայն Հայկական բանակը համառորեն հետ մղեց վերջինիս բոլոր գրոհները:

II փուլ – Տիգրան II Մեծի գլխավորած Հայկական թեթև հետևակը ու հեծելազորը թիկունքից հարվածեցին Հռոմեական հանրապետության բանակին և, խուճապի մատնելով վերջինիս, հնարավորություն ընձեռեցին պաշարվածներին հեռանալ:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Անհաջողություն կրելով Տարոնում՝ մ.թ.ա. 68 թվականի մայիսից մինչև սեպտեմբեր Հռոմեական հանրապետության բանակը շարունակեց իր դանդաղ առաջխաղացումը Տարոն-Հարք-Կորի-Ապահունիք-Արածանի գետի հուն-Բագրևանդ երթուղով՝ ողջ երթուղու երկայնքով թողնելով կայազորներ և ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 30.000) անկանոն հարվածներին[2]: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել,

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 87; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40:
[2] Ցիցերոն «Պոմպեոսի հրամանատարության մասին»; Մեմնոն Հերակլեացի «Պոնտական Հերակլեայի պատմությունը», մաս 55: Դիոն

որ խորհրդահայ պատմագիտության կողմից համարյա ուշադրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ, մայիսին մտնելով Տարոն, Հռոմեական հանրապետության բանակը միայն սեպտեմբերի կեսերին հասավ Բագրևանդ:

Խնդիրը կայանում է նրանում, որ, փաստորեն, Հռոմեական հանրապետության բանակը արդյունքում մոտ չորս ու կես ամսում անցավ ընդամենը միայն մոտ 220 կմ, ինչը իր ժամանակվա Հռոմեական հանրապետության բանակի համար մարտարշավի խիստ ցածր տեմպ էր, քանի որ այդ ժամանակաշրջանում վերջինս ի վիճակի էր շարժվել միջինը օրական 25, արագացված երթով՝ 30, իսկ սրընթաց երթով՝ 45 կմ արագությամբ: Այս հանգամանքը մեզ համար կարևորվում է նախ նրանով, որ ցույց է տալիս, թե Մեծ Հայքի թագավորության բանակը ինչ աստիճանի համառ դիմադրություն էր ցույց տալիս հակառակորդին, և հետո մեզ հիմք է տալիս ենթադրություն անելու առ այն, որ գուցե Հռոմեական հանրապետության բանակը, կրելով կորուստներ, մի քանի անգամ դադարեցրել է առաջխաղացումը կամ նույնիսկ հետ վերադառնալուց հետո նորից է սկսել արշավանքը՝ մի հանգամանք, որի մասին հռոմեական գոռոզ զորավարի զեկուցագրերի վրա հիմնվող հունահռոմեական պատմիչներն ուղղակի «մոռացել» են նշել:

Այսպես թե այնպես, սակայն արդեն աշնան սկզբին Մեծ Հայքի թագավորության տարածքում խորացող Հռոմեական հանրապետության բանակը հասավ Արարատ նահանգի կենտրոնական հատվածին, որտեղից արդեն հեռու չէր նաև Արտաշատը: Արդյունքում՝ Տիգրան II Մեծը որոշեց ի վերջո վճռական մարտ տալ հակառակորդին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 68 սեպտեմբերի 15 – ***<u>Արածանիի ճ-մ</u>*** (Արարատ, Բագրևանդ գավառ, Արածանի գետի 3 ակունքային վտակների միավորման տեղից մի քանի կմ արևելք, արևելյան ակունքային վտակի հյուսիսային ափին)[1]
>
> Ծանր արշավանքից հետո սեպտեմբերի 14-ի երեկոյան Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 110.000, այդ թվում Դեյոթարոս I Գալաթացու գլխավորած գալաթական, թրակիական և բյութանիական հեծյալներ), այնուամենայնիվ, հաջողվեց հասնել Արածանի գետի ակունքներին, որի հետևանքով ուղղակի սպառնալիք կախվեց ***<u>Արտաշատի</u>*** (Արարատ, Ոստան Հայոց գավառ, Արաքսի և Մեծամորի միախառնման վայրում) վրա: Արդյունքում, նպատակ ունենալով հեռացնել երկրի երկրորդ քաղաքի վրա կախված վտանգը, թշնամու բանակին դիմավորեց Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000 ռազմիկ, որից 23.000 ծանր հեծյալ, այդ թվում Մաղխազական գունդը (6.000 ռազմիկ), 17.000 թեթև հեծյալ, այդ թվում Մարդպետական գունդը), ինչպես նաև Ատրպատականի (մոտ 8.000) և Իբերիայի (մոտ 7.000) թագավորությունների միացյալ հեծելազորային բանակը, ընդ որում Հայոց արքան իր հետևազորը (70.000) թողել էր թիկունքում՝ Արտաշատի շրջակայքում, քանի որ նախատեսել էր կիրառել մարտավարման սկյութական ձևը և թշնամու բանակին ջախջախել միայն հեծելազորային ուժերով: Այսպիսով՝ մարտադաշտում Հայկական բանակի բացակայության պայմաններում սեպտեմբերի 15-ի առավոտյան Հռոմեական հանրապետության բանակը դուրս եկավ ամրացված ճամբարից և մարտակարգ ընդունեց: Առաջին շարքում տեղավորվեց Դեյոթարոս I Գալաթացու գլխավորած գալաթական, թրակիական և բյութանիական հեծելազորը, իսկ երկրորդ շարքում՝ հետևակը:
>
> I փուլ – Մարդպետական գնդի, ինչպես նաև Իբերիայի և Ատրպատականի թագավորությունների միացյալ բանակի թեթև հեծյալները, դուրս գալով ավելի

Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 3; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 31:

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 31; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 5; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 74-76; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:

արևելք տեղաբաշխված բլուրների հետևից, հարձակվեցին թշնամու բանակի հեծելազորի վրա: Կարճատև մարտից հետո, սակայն, իբր չդիմանալով թշնամու հետևակի և հեծելազորի համակցված հարվածին, դաշնակից թեթև հեծելազորը, ցրվելով ճակատից աջ ու ձախ ուղղությամբ, սկսեց փախուստ ձևացնելով կանխամտածված հետ քաշվել՝ իր հետևից հրապուրելով թշնամու հեծելազորին և միաժամանակ բացելով ճակատային հանդիպակացը: Իր հերթին, խանդավառված այս կեղծ հաջողությունից, Հռոմեական հանրապետության բանակի հեծելազորը սկսեց հետապնդել նահանջողներին, ինչի արդյունքում շուտով հեռացավ և կտրվեց իր հիմնական բանակից:

II փուլ – Հաղթականորեն արշավող թշնամու հեծելազորի դեմ-դիմաց՝ ազատված տարածության վրա, Տիգրան II Մեծի անձնական ղեկավարությամբ հայտնվեց Հայկական ծանր հեծելազորը, որը սեպաձև-խոյընթաց հատու հարվածով ջախջախեց թշնամու հեծելազորին՝ ըստ էության ոչնչացնելով այն:

III փուլ – Լեգեոնները փորձեցին օգնության հասնել սեփական ոչնչացվող հեծելազորին, սակայն, մինչ նրանք ընդհարման վայր կհասնեին, վերջինս, որպես մարտավարական որակ, ըստ էության արդեն դադարեց գոյություն ունենալ:

IV փուլ – Օրվա երկրորդ կեսին Տիգրան II Մեծի ծանր հեծյալները, թողնելով նիզակները, թրերն և տապարները ու անցնելով նետերին և աղեղներին, շեղընթաց գրոհ սկսեցին նոր վայրում դիրքավորված լեգեոնների վրա, ինչի ընթացքում նրանց միացավ նաև մարտադաշտ վերադարձած թեթև հեծելազորը: Դաշնակից բանակի հեծյալները սկսեցին շեղընթաց սուրալ թշնամու բանակի շարքերի առջևից՝ նետերի տարափ տեղալով վերջիններիս վրա: Արդյունքում՝ թշնամու մարտակարգում ռազմիկների հոծ շարքերի առկայությունն ինքնին հնարավորություն չէր թողնում վրիպելու, ընդ որում թշնամու ռազմիկներին չէր փրկում նույնիսկ հզոր վահանափակը, քանի որ արձակված նետերը հաճախ միջաթափանց ծակում էին վերջիններիս վահաններն ու զրահները և, բացի այդ, դրանք թեքված ճանկերով էին ու թունավոր, որի հետևանքով նույնիսկ վիրավորները, թեև մի քիչ ուշ, սակայն դեպքերի մեծ մասում անխուսափելիորեն մահանում էին: Իր հերթին հեծելազորի լիակատար բացակայությունը թշնամու բանակին հնարավորություն չէր թողնում որևէ ակտիվ դիմադրություն կազմակերպել և լեգեոններին փաստորեն ոչինչ չէր մնում անելու, քան, պասիվ դիմադրելով ու աստիճանաբար նահանջելով, վերադառնալ սեփական ճամբար: Այս նահանջի ընթացքում ևս Տիգրան II Մեծի հեծելազորը բազմիցս կրկնեց իր շեղընթացը և, այն բանից հետո, երբ թշնամին պատսպարվեց ճամբարում, հեռացավ մարտադաշտից:

Մեծ Հայքի թագավորության բանակը կորցրեց մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 100, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր կորուստներ արժեցավ Հռոմեական հանրապետության բանակին, սակայն էականը նույնիսկ այդ չէր, այլ այն, որ, ըստ էության, լիովին զրկվելով հեծելազորից, Մեծ Հայքի թագավորության ռազմական մեքենայի հետ հետագա ընդհարումներում Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան հայտնվում էր մարտավարական փակուղում: Արդյունքում՝ լիովին գիտակցելով ստեղծված իրավիճակի անհեռանկարային բնույթն ամենից առաջ հենց իր համար, Լուցիոս Լուկուլլոսը նահանջի հրաման տվեց: Որպես հետևանք այս ամենի՝ մ.թ.ա. 68 թվականի սեպտեմբերի կեսից մինչև հոկտեմբեր Հռոմեական հանրապետության հիմնական և այլ վայրերից հեռացած կայազորներից կազմված բանակը նահանջեց Բագրևանդ-Զարեհավան (վերջինը՝ Արարատ, Ծաղկոտն գավառ) -Վանա լճի արևելյան ափով Բոգունիք-Վան-Բոժունիք-Առնոտն-Ջերմ գետի ափով Մոկք Առանձնյակ-Միջա-Ջերմաձոր-Մյուս Իշայր-Արձն-Բաղեշ երթուղով՝ այնուհանդերձ ենթարկվելով Տիգրան II

Մեծի ռազմական մեքենայի անկանոն հարվածներին[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

68 հոկտեմբերի կես – դեկտեմբերի սկիզբ – ***<u>Մծբինի գրավումը</u>*** (Հայոց Միջագետք, Արվաստան գավառ, Խաբուր գետի Ջախջախ վտակի ափին)[2]

Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 70.000) պաշարեց քաղաքը արքաեղբայր Գոռի գլխավորած Հայկական բանակից (մոտ 2.000):

I փուլ – Հոկտեմբերից մինչև նոյեմբեր Հայկական բանակը համառորեն հետ մղեց թշնամու բանակի գրոհները:

II փուլ – Դեկտեմբերի սկզբին մի մութ ու անձրևոտ գիշեր թշնամու բանակի ռազմիկներին հաջողվեց օգտագործել դավաճանությունը և, գրավելով պարսպի մի մասը, ներխուժել քաղաք:

III փուլ – Հայկական բանակը, համառորեն դիմադրելով թշնամու բանակին փողոցային մարտերում, ի վերջո ամրացավ միջնաբերդում:

IV փուլ – Թշնամու բանակը պաշարեց միջնաբերդը, սակայն պարսպի դիմացի խրամը ցախով և փայտով լցնելու ու գրոհ կազմակերպելու փորձը ձախողվեց, քանի որ Հայկական բանակի ռազմիկները նավթի կիրառմամբ այրեցին լցվածքը: Ի վերջո, Լուցիոս Լուկուլլոսը բանակցություններ սկսեց, որի արդյունքում Հայկական բանակը իր բոլոր զենքերով, դրոշներով և տարբերանշաններով հեռացավ քաղաքից:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ կարելի է հանդիպել կարծիքի, թե մ.թ.ա. 68 թ-ի սեպտեմբերի 15-ի Արածանիի ճ-մ-ից հետո հայկական կողմի սխալն էր թույլ տալ թշնամուն ձմեռելու հարմարավետ և պաշարներով հարուստ Մծբինում, երբ առաջարկվում է տեսակետ, թե պետք էր հետապնդել ու մինչև վերջին մարդը ոչնչացնել թշնամու նահանջող բանակին: Վերևում ասվածի ֆոնի վրա, սակայն, այս տեսակետը քննադատության չի դիմանում:

Իրոք, եթե հիմք ընդունենք վերևում իմ կողմից առաջարկվող տեսակետը Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակի վերաբերյալ, ապա պարզ է դառնում, որ նույնիսկ վերջին հաջող ճակատամարտից հետո էլ թշնամական բանակն իրենից զգալի քանակություն էր ներկայացնում, որի հետ հետագա ընդհարումների ելքը կարող էր կասկածելի լինել: Իր հերթին, դատելով ռազմավարական տեսանկյունից, իրոք առավել նպատակահարմար էր ազատագրել Պոնտոսի թագավորության տարածքն և հենց այդ ճանապարհով ստիպել Լուցիոս Լուկուլլոսին նահանջել՝ վերջինիս համար առաջացնելով, ըստ էության, ռազմավարական իսկական մի փակուղի: Կյանքը ցույց տվեց, որ այս ծրագիրը հիանալի գործեց: Եվ վերջապես, ինչ վերաբերում է Մծբինի պաշարներին, ապա այստեղ բավականին երկար ու համառ դիմադրած և այն թողած Հայկական կայազորն հաստատ այնքան միջոցներ ու ժամանակ ուներ, որ ոչնչացներ թշնամուն հասնող պաշարներն և վերացներ քաղաքի «հարմարավետությունը»: Այսպիսով՝ մ.թ.ա. 68 թվականի աշնանը, երբ Լուցիոս Լուկուլլոսի բանակը ռազմավարական տեսակետից դատարկ մի հաղթանակ էր տոնում Մծբինի պարիսպների տակ, Տիգրան II Մեծը հզոր հարված հասցրեց արևմտյան ուղղությամբ՝ արդյունքում տոնելով ռազմավարական արդեն իսկական մի հաղթանակ:

---

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 32; Ցիցերոն «Պոմպեոսի հրամանատարության մասին», գլուխ 9, մաս 23, 24; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 6:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 32; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 6,7; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 3; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 15; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 9:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

68 նոյեմբեր – ***<u>Կաբեյրայի ճ-մ</u>***[1]

Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Մեծ Հայքի (4.000) և Փոքր Հայքի (4.000) թագավորությունների միացյալ հեծելազորը ***<u>Սատաղ</u>*** (Փոքր Հայք, Գայլ գետի վերին հոսանքում) ***<u>-Կաբեյրա</u>*** երթուղով մոտեցավ Մարկոս Ֆաբիոսի գլխավորությամբ քաղաքի մոտ ճամբարած Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 10.000):

I փուլ – Հայկական հեծելազորը հարձակվեց Հռոմեական հանրապետության առաջխաղացած բանակի վրա և, պարտության մատնելով վերջինիս, հետ շպրտեց:

II փուլ – Հաջորդ օրը նոր մարտ բռնկվեց, որը ընթացավ փոփոխակի հաջողություններով: Ի վերջո, թշնամու բանակի շարքերում մարտնչող վարձկան թրակիացիները մարտի վճռական պահին անցան հայերի կողմը, որի արդյունքում Հռոմեական հանրապետության բանակը ծանր պարտություն կրեց, իսկ նրա մնացորդները ապաստանեցին քաղաքում:

III փուլ – Հայկական հեծելազորը պաշարեց քաղաքը, սակայն այնպես էր ստացվել, որ նախորդ մարտի վերջում Միհրդատ VI Եվպատորը վիրավորվել էր քարի և նետի հարվածներից, իսկ Տրիարոսի գլխավորած մեկ լեգեոն էլ սկսել էր մոտենալ քաղաքին, որի պաշարմանն իր հերթին Հայկական հեծելազորը պատրաստ չէր: Հաշվի առնելով այս ամենը՝ Հայկական հեծելազորը հետ քաշվեց քաղաքից:

Հայերը կորցրին մոտ 800 զինվոր, թշնամին՝ 1.000 սպանված և վիրավոր, ինչպես նաև 4.000 գերի, որոնք սկսեցին ծառայել Միհրդատ VI Եվպատորին:

Մեծ հաշվով անորոշ ելք ունեցած նախորդ ճակատամարտից հետո մ.թ.ա. 68 թվականի դեկտեմբերին Կոմենայի ճ-մ-ում (Սեբաստիայի մոտ) Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի թագավորության բանակը (մոտ 10.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 3.000) և Փոքր Հայքի (մոտ 4.000) թագավորությունների միացյալ հեծելազորը մեկօրյա համառ մարտում հետ մղեց Տրիարոսի գլխավորությամբ առաջխաղացած Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 10.000)՝ այս անգամ ևս, սակայն, չհասնելով վճռական հաջողության[2]: Այսպիսով՝ հակամարտությունը սահուն կերպով փոխանցվեց մյուս տարուն, որին արդեն վճռական զարգացումներ էին վիճակված:

Մ.թ.ա. 67 թվականի մարտին Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 20.000) Հռոմեական հանրապետության բանակից (մոտ 2.000) պաշարեց Արզնը, սակայն, խուսափելով Մծբինից հեռացող Լուցիոս Լուկուլլոսի խոշոր ուժերի հետ բախվելուց, նահանջեց[3]: Այսպիսով՝ հայկական կողմը, կարծես թե, մարտավարական անհաջողություն կրեց, սակայն իրականում ակնհայտ էր հենց ռազմավարական հաջողությունը, քանի որ հենց այս ժամանակ իրեն լիուլի արդարացրեց Տիգրան II Մեծի հղացած ռազմավարական մտահղացումը, երբ Լուցիոս Լուկուլլոսի գլխավորությամբ ռազմավարական փակուղում հայտնված Հռոմեական հանրապետության բանակը հենց այս ժամանակ արդեն թողել էր Մծբինը և հետ էր քաշվում արևմտյան ուղղությամբ: Իրոք, արդեն լիուլի հասկանալով, որ ռազմավարական մակարդակում ինքն, ըստ էության, խաբվել է, նույն այս ժամանակ Լուցիոս Լուկուլլոսն այնուհանդերձ հույս ուներ ապաստանել գոնե Պոնտոսի թագավորության տարածքում: Մինչ Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան հետ կքաշվեր Հայաստանի հարավային շրջաններից, սակայն, Պոնտոսի թագավորության տարածքում ի վերջո տեղի ունեցան

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 88; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 8-9; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 34; Ցիցերոն «Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի»; Սալյուստիոս «Պատմություն», գիրք 5, մաս 1:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 10:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 8:

վճռական զարգացումներ, որոնք վերացրին հռոմեական զորավարի նաև այդ հույսերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

67 մարտ – ***Զելայի ճ-մ*** (Սեբաստիայից 120 կմ հարավ-արևմուտք)[1]

Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 70.000), խուսափելով Մեծ Հայքի թագավորության առաջխաղացող բանակից, վաղ գարնանը թողեց Մծբինը և ***Մծբին-Տիգրանակետ-Արկաթիակերտ-Մելիտե*** երթուղով սկսեց հետ քաշվել դեպի հյուսիս-արևմուտք՝ ընթացքում հավաքելով Մեծ Հայքի տարածքում ցրված սեփական կայազորներն ու ընդհանուր նահանջ իրականացնելով դեպի Հռոմեական հանրապետության տիրապետության տակ մնացած Պոնտոսի թագավորության շրջաններ: Այս ընթացքում, սակայն, Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի թագավորության բանակը (10.000 հետևակ), ինչպես նաև Մեծ Հայքի (4.000) և Փոքր Հայքի (5.000) թագավորությունների միացյալ հեծելազորը, նպատակ ունենալով մինչև Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած հիմնական ուժերի տեղ հասնելը ջախջախել Պոնտոսի թագավորության տարածքում գտնվող Հռոմեական հանրապետության բանակին, պաշարեց ***Դադասը,*** որտեղ գտնվում էր տեղում գործող թշնամու բանակի գումակը: Տեղեկանալով այդ մասին՝ Պոնտոսի թագավորության տարածքում գտնվող Հռոմեական հանրապետության բանակը (10.000) Մարկոս Ֆաբիոսին փոխարինած Տրիարոսի գլխավորությամբ շարժվեց հակառակորդի ուղղությամբ: Ի պատասխան դրա՝ Միհրդատ VI Եվպատորը, թողնելով պաշարումը, իր բանակը արագորեն շարժեց թշնամու բանակին ընդառաջ և քաղաքի մոտ հանդիպեց վերջինիս:

I փուլ – Հռոմեական հանրապետության բանակը վաղ առավոտյան հարձակվեց առաջապահում գտնվող Պոնտոսի թագավորության բանակի վրա, որի արդյունքում համառ և անորոշ մարտ բռնկվեց:

II փուլ – Կեսօրին, զգալով, որ մարտը երկարում է, Միհրդատ VI Եվպատորը, անձամբ գլխավորելով Հայկական հեծելազորը, վճռական հարձակում գործեց թշնամու բանակի վրա և պարտության ու փախուստի մատնեց վերջինիս: Արդյունքում՝ հակառակորդի բանակի ռազմիկների մեծ մասը փակվեց մի ճահճոտ տեղանքում և վերջնականապես ոչնչացավ, ընդ որում, թեև մարտի վերջում Միհրդատ VI Եվպատորը վիրավորվեց իրեն աննկատ մոտեցած թշնամու ռազմիկներից մեկի հարվածից, սակայն դա որևէ կերպ չփոխեց իրավիճակը:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ 7.174 զինվոր:

Այսպիսով, մինչ Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած հարվածային ուժերը տեղ կհասնեին, Պոնտոսի թագավորության տարածքում գործող Հռոմեական հանրապետության բանակն, ըստ էության, ոչնչացվեց: Դրանից հետո մ.թ.ա. 67 թվականի ապրիլին Տալավարի ամրոցի ճ-մ-ում (Փոքր Հայք) Մեծ Հայքի (մոտ 3.500) և Փոքր Հայքի (4.500) թագավորությունների միացյալ հեծելազորը անակնկալ հարձակումով կորուստներ պատճառեց արդեն Լուցիոս Լուկուլլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 70.000), որից հետո հաջողությամբ նահանջեց: Արդյունքում՝ արդեն Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 80.000) արշավանքի պայմաններում, Հռոմեական հանրապետության բանակը ի վերջո ստիպված եղավ թողնել նաև Պոնտոսի թագավորության տարածքը և նահանջել Կապադովկիայի թագավորության տարածք, իսկ Միհրդատ VI Եվպատորն էլ դրանից

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 89, 90; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Լուկուլլոս», գլուխ 35; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 12, 13; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 9:

հետո առանց դիմադրության գրավեց Սեբաստիան (վերջինը՝ Փոքր Հայք, Սեբաստիա գավառ, Հալիս գետի աջ ափին), Ամասիան (Սեբաստիայից մոտ 120 կմ հյուսիս-արևմուտք) և Գանգրան (Փոքր Ասիա, Տուզ լճից մոտ 165 կմ հյուսիս)[1]: Ստեղծված բարենպաստ պայմաններում մ.թ.ա. 67 թվականի ամռանը Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 100.000), Հայոց Միջագետքի (մոտ 5.000), Կոմագենեի (մոտ 5.000), Իբերիայի (մոտ 10.000), Աղվանքի (մոտ 5.000), Ադիաբենեի (մոտ 5.000) և Ատրպատականի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի թագավորության տարածքը ու Բյութանիան, սակայն ի վերջո հետ քաշվեց ելման դիրքեր[2]: Այսպիսով՝ մոտ երկու տարի տևած ռազմական լարված գործողություններից հետո Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորությունները վերադարձան, ըստ էության, նույն այն դրությանը, որն այս թագավորությունների մոտ առկա էր Հռոմեական հանրապետության հետ հարաբերություններում մինչև մ.թ.ա. 73 թվականը: Շուտով պարզվեց, սակայն, որ այժմ ստեղծվել է նոր մի իրողություն, որն իր հետ նոր հետևանքներ էր բերելու:

Այս առումով ամենից առաջ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ ակնհայտ ճգնաժամ էին ապրում մինչ այդ առանց այդ ևս առանձնակի անկեղծությամբ աչքի չընկնող Տիգրան II Մեծի և Միհրդատ VI Եվպատորի հարաբերությունները, ընդ որում Մեծ Հայքի թագավորության արքան բոլոր հիմքերն ուներ ենթադրելու, որ իր որդիների իշխանական նկրտումների արմատներում կանգնած էին հենց նրանց մայրն ու մորական կողմի պապը: Իրոք, իրական քաղաքականության կանոններով առաջնորդվելիս ակնհայտորեն պարզ էր, որ Միհրդատ VI Եվպատորին Մեծ Հայքի թագավորության գահին պետք էր ամենից առաջ տեսել սեփական ազդեցության տակ գտնվող և, ըստ էության, իր հլու կամակատարի դերում գործող սեփական աղջկա հենց որդիներից մեկին, այլ ոչ թե այնպիսի մի ուժեղ ու ինքնուրույն քաղաքական գործչի, ինչպիսի էր Տիգրան II Մեծն էր: Այսպիսով, չնայած ուղղակի ապացույցների բացակայությանը, Հայոց տիրակալն այնուհանդերձ ուներ բոլոր հիմքերն ինչպես իր ներընտանեկան ողբերգության, այնպես էլ Հայոց պետականության դեմ ուղղված ոտնձգությունների հետևում տեսնելու Պոնտոսի տիրակալի դրդումները:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ երկու տիրակալների մոտեցումներում առկա էր նաև իր արմատներով ընդհուպ մինչև էթնո-հոգեբանական մակարդակ գնացող մի հակասություն, երբ Տիգրան II Մեծը հազարամյակների ուղի անցած և նույնքան էլ պետական ավանդույթներ ունեցող մի ժողովրդի ու պետականության ներկայացուցիչ էր, այն դեպքում, երբ Պոնտոսի թագավորությունն իրենից ներկայացնում էր, ըստ էության, բիզնես-պետության հերթական մի օրինակ, որն իր մեջ չէր կրում պետության հիմք կազմող կոնկրետ մի ազգություն: Իր հերթին Միհրդատ VI Եվպատորը ոչ թե ազգային և ազգային շահերը պետական քաղաքականության մակարդակի բարձրացրած մի գործիչ էր, այլ վերջինս իրենից, ըստ էության, ներկայացնում էր ընդամենը միայն հաջող մի կառավարիչ, որի համար սեփական հպատակները, ինչպես նաև սեփական պետությունն ընդամենը միայն միջոցներ էին անձնական նպատակներին հասնելու համար: Այս առումով ակնհայտ էր այն, որ, եթե Միհրդատ VI Եվպատորը առանց իր անձի որևէ կերպ չէր պատկերացնում Պոնտոսի թագավորությունն և նրա հպատակներին, պատրաստ լինելով հանուն սեփական քաղաքական ապագայի մարտնչել ընդհուպ մինչև վերջին պոնտացին, ապա Տիգրան II Մեծը հոգում էր ամենից առաջ հենց հայ ժողովրդի ու Հայոց պետականության մասին՝ նույնիսկ ի վնաս սեփական անձնական նեղ շահերի: Ստեղծված իրավիճակը, սակայն, այլ ենթատեքստեր ևս ուներ:

Մինչ Հռոմեական հանրապետությունը մի կողմից, իսկ Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորություններն էլ մյուս կողմից իրենց հարաբերություններն էին պարզում

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 14-17; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 91; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 49:
[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 106:

հյուսիսում, մ.թ.ա. 70 թվականին իր մահկանացուն էր կնքել Պարթևական թագավորության արքա Սանատրուկ Ի-ը և նոր արքա էր հռչակվել վերջինիս որդի Հրահատ III-ը (մ.թ.ա. 70-58), որի օրոք Պարթևական թագավորությունը սկսել էր ուղղել մեջքը, իսկ նոր գահակալն ինքն էլ, օգտվելով այն հանգամանքից, որ Քուշանական թագավորությունը իր ողջ ուշադրությունը նվիրել է Հունա-Հնդկական թագավորության դեմ պայքարին և Պարթևական թագավորության արևելյան սահմաններին իրեն խիստ պասիվ է պահում, պատրաստվում էր ակտիվանալ Մեծ Հայքի թագավորության հետ հարաբերություններում: Այսպիսով՝ ռազմաքաղաքական մակարդակում, ըստ էության, ստեղծվում էր մի իրադրություն, երբ Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորության փխրուն միությունը դուրս էր գալիս Հռոմեական հանրապետության ու Պարթևական թագավորության եթե ոչ միության, ապա առնվազն գոնե համակարգված գործողությունների դեմ:

Վերջին հանգամանքն իրեն զգացնել տվեց արդեն հենց մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, քանի որ, մինչ Հայոց արքայի ռազմական մեքենան բոլոր ուժերը լարելով պայքար էր մղում սեփական թագավորության արևմտյան սահմաններին, Մեծ Հայքի թագավորությունը բավականին անակնկալ մի հարված ստացավ Պարթևական թագավորությունից, ընդ որում զարգացող իրադրությունը Հայոց արքայի համար կրկին, այդ թվում նաև անձնական ողբերգության բնույթ ուներ: Իրոք, հենց այս պայմաններում էր, որ Տիգրան II Մեծի դեմ ապստամբական վարքագիծ դրսևորեց Կլեոպատրայից ծնված այս անգամ նրա արդեն կրտսեր որդի Տիգրան Կրտսերը, որը, ոտնահարելով որդիական զգացումներն ու պետական շահը, լքեց նույնիսկ իր մորական պապի ռազմաքաղաքական արդեն խորտակվող նավը և, ամուսնանալով Հրահատ III-ի աղջկա հետ, դուրս եկավ հոր ու Հայոց պետականության դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

67 աշուն - 66 մարտ – ***<u>Արտաշատի ճ-մ</u>***[1]

> Մոտ երկու տարի ծավալվող իրադարձություններին միջամտել չփորձող Պարթևական թագավորության արքա Հրահատ III-ը ի վերջո վճռեց, որ Մեծ Հայքի թագավորությունը բավականին թուլացել է, նրա բանակային հիմնական ուժերը գտնվում են արևմուտքում և եկել է ժամը վերցնելու ավարի իր բաժինը: Իրադարձություններին միջամտելու հարմար առիթ տվեց արքայազն Տիգրան Կրտսերը, որը, դավաճանական գործունեություն ծավալելով հոր և Հայոց թագավորության դեմ, սակայն անհաջողություն կրելով, փախուստի դիմեց ու ապաստանեց Պարթևական թագավորությունում՝ ամուսնանալով Հրահատ III-ի դստեր հետ: Դրանից հետո Հրահատ III-ի գլխավորած և Տիգրան Կրտսերի օժանդակությունից օգտվող Պարթևական թագավորության բանակը (մոտ 100.000) ***<u>Թավրիզից</u>*** (Ատրպատականի հյուսիս, Ուրմիա լճի հյուսիս-արևելյան ափից մոտ 70 կմ արևելք) ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք ու, շարժվելով ***<u>Մարանդ</u>*** (Վասպուրական, Բաքեան գավառի հարավ) ***<u>-Նախիջևան-Արած-Ուրծաձոր</u>*** երթուղով, պաշարեց Արտաշատը, որի Հայկական կայազորը (մոտ 2.000) անցավ համառ պաշտպանության:
>
> I փուլ – Մ.թ.ա. 67 թ-ի ողջ աշնանը Հայկական կայազորը համառորեն հետ մղեց հակառակորդի գրոհները: Ի վերջո, Հրահատ III-ը Պարթևական թագավորության բանակի մի մասով (մոտ 50.000) նահանջեց, իսկ մյուս մասը (մոտ 50.000) քաղաքի պաշարումը շարունակելու համար հանձնեց Տիգրան Կրտսերին:
>
> II փուլ – Մ.թ.ա. 66 թ-ի մարտին Մեծ Հայքի թագավորության բանակի խոշոր ուժերով (մոտ 60.000) Հայոց թագավորության կենտրոնական նահանգներ

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 45, 51; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:

վերադարձած Տիգրան II Մեծը անակնկալ հարձակվեց Պարթևական թագավորության բանակի վրա և գլխովին ջախջախեց այն՝ թշնամու մնացորդներին հալածելով մինչև ***Ատրպատական:***

Հայերը կորցրին մոտ 5.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

Սեփական ռազմաքաղաքական վերջին անհաջողության ֆոնին Տիգրան Կրտսերը դիմեց փախուստի և ուղղություն վերցրեց դեպի Պոնտոսի թագավորության տարածք: Այս ուղղությամբ ևս, սակայն, շատ արագ նոր զարգացումներ եղան, ընդ որում նույն այս ժամանակ փոփոխություններ էին եղել նաև հռոմեական կողմում:

Իրոք, Լուցիոս Լուկուլլոսի գլխին պայթած ռազմաքաղաքական աղետից հետո նրա դիրքերը Հռոմի սենատում կտրուկ թուլացել էին և արդյունքում այս զորավարին ի վերջո պաշտոնանկ արեցին ու դրանից հետո վերջինս անցավ մասնավոր կյանքի՝ այդուհետ Հռոմում հայտնի դառնալով ավելի շատ ընդամենը միայն իր ցոփ և շվայտ կյանքով: Արևելյան խնդիրները, սակայն, համառորեն իրենց լուծումներն էին պահանջում և Լուցիոս Լուկուլլոսի հեռանալուց հետո Հռոմի սենատը դրանք այսպես թե այնպես որևէ կերպ աչքաթող անել չէր կարող: Արդյունքում՝ Արևելքում գործող Հռոմեական հանրապետության ռազմավարչական ապարատի ղեկավար նշանակվեց Լուցիոս Սուլլայի մեկ այլ ականավոր զինակից, ի դեմս Գնեոս Պոմպեոսի, որը համարվում էր իր ժամանակի լավագույն զորավարներից մեկը:

Այս առումով հարկ է նշել, որ հռոմեական արևելքում նույն այս ժամանակ իրավիճակն իրոք անչափ բարդ տեսք էր ընդունել, քանի որ խաղաղ տարիներին ներքին խնդիրներով տարված հանրապետությունն արդեն երկար տասնամյակներ էր, որ այս տարածաշրջանին բավարար ուշադրություն չէր դարձնում, դե իսկ Պոնտոսի և Մեծ Հայքի թագավորությունների դեմ մղված ծանր պատերազմներն էլ միայն ավելի էին անկայունացրել ընդհանուր ոչ թեթև դրությունը: Հռոմեական հանրապետության Արևելքում նույն այս ժամանակ առկա խնդիրներից առաջնայինը, սակայն, ծովահենների դեմ պայքարն էր, որոնք այս խառը տասնամյակներում հսկայածավալ գործունեություն էին ծավալել և մեծ հզորության էին հասել: Այս կապակցությամբ հետաքրքիր են Պլուտարքոսի հայտնած տվյալները, որ. «*Ավազակային նավերի թիվն անցնում էր 1.000 հատից և ծովահեններին հաջողվել էր գրավել մինչև 400 քաղաք: Նրանք կողոպտել էին մինչ այդ անձեռնմխելի մնացած շատ տաճարներ*»[1]: Արդյունքում՝ ամենից առաջ հենց ծովահենների դեմ պայքարելու, բայց վերջնարդյունքում նաև Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորության դեմ մղվող պայքարը ավարտին հասցնելու համար անսահմանափակ լիազորություններով Արևելք ժամանեց Գնեոս Պոմպեոսը, որի տրամադրության տակ հսկայական ուժեր կային:

Մ.թ.ա. 66 թվականի հունվարի Կոռակեսիոնի ծովամարտում (Իսավրիա, ծովի ափին) Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության նավատորմը (500 նավ) հաղթեց Կիլիկիայի ծովահենական նավատորմին (մոտ 400 նավ)[2], ինչը հիմնավորապես կոտրեց ծովահենների ռազմական հզորության մեջքը: Առկա էին, սակայն, ծովահենների նաև ցամաքային ուժեր և հաջորդ հարվածը Գնեոս Պոմպեոսը ուղղեց արդեն վերջիններիս դեմ: Արդյունքում՝ մ.թ.ա. 66 թվականի փետրվարին Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության մասերի բաժանված բանակը (172.000, որից 9.000 հեծյալ[3]) ծովահենական բանակից (ընդհանուր՝ մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 7.500) պաշարեց Կիլիկիայի

---

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 24:

[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 94-95; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 25, 27, 28; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 6; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 32:

[3] Վերևում արդեն խոսվեց հռոմեական բանակի քանակության մասին: Ավելացնենք միայն, որ ըստ Ապպիանոսի (Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 94) Պոմպեոսի տրամադրության տակ ի սկզբանե կար 120.000 հետևակ և 4.000 հեծյալ: Իր հերթին արդեն Փոքր Ասիայում նրան միացան «Ֆամբրիական» 2, Կիլիկիայի 3 և Լուկուլլոսի 3 լեգեոնները (ընդհանուր՝ 48.000 լեգեոներ)՝ այսպիսով նրա բանակի թիվը հասցնելով 172.000-ի՝ լեգեոներ և դաշնակից:

ծովահենական 120 քաղաքները, ամրոցները ու բերդերը և ի վերջո ստիպեց հանձնվել, ընդ որում, որպես սպանված և գերված, ծովահենները կորցրին 10.000 զինվոր: Ավելին, արդյունքում Գնեոս Պոմպեոսին հանձնվեցին նաև 306 պատրաստի և պատրաստվող նավեր: Այս ամենի ընդհանուր վերջնարդյունքում Կիլիկիայի մեծ մասը դարձավ Հռոմեական հանրապետության պրովինցիա, իսկ նրա մի մասում ստեղծվեց վերջինիս ենթակա Տարսոնի թագավորությունը[1]:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ Տարսոնի թագավորությունը ստեղծվեց որպես արդյունք արևելքում Հռոմեական հանրապետության վարած քաղաքականության, երբ վերջինս, առայժմ բավականին ամուր չզգալով իրեն նվաճված տարածքներում, ձգտում էր ստեղծել իրենից կախվածության մեջ գտնվող ենթակա թագավորությունների մի շղթա, որոնք պետք է կառավարվեին անձնապես պաշտոնական Հռոմին նվիրված միապետների կողմից: Այսպիսով՝ նույն այս ժամանակ, երբ Տիգրան II Մեծը դեռևս պայքար էր մղում Արտաշատի համար, Հռոմեական հանրապետության ռազմական մեքենան Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմաններին լուրջ սպառնալիքներ առաջացրեց:

Միաժամանակ հարկ է նշել, որ Պարթևական թագավորության հետ Տիգրան II Մեծի հարաբերությունների օգտին եղավ այնուհանդերձ այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ գահակալական խնդիրներ ծագեցին արդեն Հրահատ III-ի մոտ: Արդյունքում՝ Արտաշատի պարիսպների տակ կրած պարտությունից հենց անմիջապես հետո մ.թ.ա. 66 թվականի գարնանը ինչ-որ տեղ Էկբատանի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում Հրահատ III-ի բանակը (մոտ 40.000) անորոշ ելք ունեցած մարտում ընդհարվեց իրեն Պարթևական թագավորության արքա հռչակած Ատրպատականի թագավորության արքա Դարեհ I-ի (մ.թ.ա. 66-60) գլխավորած Ատրպատականի (մոտ 20.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 20.000) միացյալ բանակի հետ[2]: Այսպիսով՝ Պարթևական թագավորությունից եկող վտանգը Հայոց թագավորության համար նույն այս ժամանակ որոշակիորեն չեզոքացվեց, թեև այն նաև չվերացավ: Փոխարենը, սակայն, առավել ահագնացավ Մեծ Հայքի թագավորությանը սպառնացող վտանգը Հռոմեական հանրապետության կողմից, որի միայն տարածաշրջանային բանակը էականորեն գերազանցում էր Հայոց ռազմական մեքենային ամենից առաջ հենց քանակապես: Հռոմեական ռազմական մեքենայի հարվածը, սակայն, չհաշված ծովահեններին, առաջինն իր վրա կրեց Պոնտոսի թագավորությունը, երբ Գնեոս Պոմպեոսը փաստորեն սկսեց անել այն, ինչ Լուցիոս Լուկուլլոսը սկսել էր անել դեռևս մ.թ.ա. 72 թվականին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

> 66 մարտ – ***<u>Դաստարակ բերդի ճ-մ</u>*** (Փոքր Հայք, Եփրատի աջ ափին, Անի-Կեմախից գետի հովտով 30 կմ հարավ-արևմուտք)[3]
>
> Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 155.000, որից 9.000 հեծյալ) ***<u>Գալաթիա-Պոնտոսի հարավ-Փոքր Հայք</u>*** երթուղով ներխուժեց Պոնտոսի թագավորության տարածք և մոտեցավ Միհրդատ VI Եվպատորի գլխավորությամբ ամուր պաշտպանական դիրքեր գրաված Պոնտոսի (30.000) ու նրա կազմում գործող Փոքր Հայքի (3.000 հեծյալ) թագավորությունների

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 96; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 28; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 37; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 6; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 32; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 12; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 15; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[2] Սալյուստիոս «Պատմություն», գիրք 4, մաս 4; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 8:

[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 97, 98; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 32; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 12, գլուխ 3, մաս 28; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 45-48; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 33, գիրք 1, գլուխ 1, մաս 7; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4:

միացյալ բանակին:

I փուլ – Հռոմեական հանրապետության բանակի հեծելազորը անցավ հարձակման, սակայն Հայկական հեծելազորը կտրուկ հակահարձակումով պարտության մատնեց նրան և սկսեց հետապնդել:

II փուլ – Գնեոս Պոմպեոսը մարտի մեջ մտցրեց դարանում տեղադրված ուժերը և փորձեց ոչնչացնել Հայկական հեծելազորը, սակայն վերջինիս հաջողվեց մարտերով նահանջել:

III փուլ – Հռոմեական հանրապետության բանակը փորձեց հետապնդել Հայկական հեծելազորին, սակայն, այն բանից հետո, երբ Պոնտոսի թագավորության հետևակը դուրս եկավ ճամբարից և մարտակարգ ընդունեց, թշնամին նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 100, թշնամին՝ մոտ 800 զինվոր: Չնայած այս հաջողությանը, սակայն, Պոնտոսի և Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը, ունենալով պարենի ու ջրի լուրջ պակաս, 45 օր դիրքերը պահելուց հետո ստիպված եղավ գիշերով աննկատ նահանջել:

66 ապրիլի վերջ – ***<u>Նիկոպոլսի ճ-մ</u>*** (Փոքր Հայք, Սատաղից մոտ 110 կմ արևմուտք)[1]

Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի (30.000) և նրա կազմում գործող Փոքր Հայքի (2.000 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը սկսեց նահանջել դեպի հյուսիս: Իր հերթին Կիլիկիայից ժամանած երեք լեգեոններով համալրված Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 169.000), բավականին ուշ տեղեկանալով հակառակորդի նահանջի մասին, սկսեց արագ երթով հետապնդել վերջինիս և աստիճանաբար հասնել նրան:

I փուլ – Նահանջն ապահովող Հայկական հեծելազորը հարձակվեց սեփական բանակին հետապնդող Հռոմեական հանրապետության բանակի առաջապահի վրա և, հետ շպրտելով նրան, հնարավորություն ընձեռեց հիմնական բանակին ճամբարել երեք կողմից խիստ պաշտպանված մի բարձունքում:

II փուլ – Մոտեցնելով հիմնական ուժերը՝ Հռոմեական հանրապետության բանակը անցավ հուժկու գրոհի, սակայն բռնկված համառ մարտում, մեծապես շնորհիվ նաև այն բանի, որ հետևակ վիճակում կռվող Հայկական հեծելազորի ռազմիկները մարտնչում էին սեփական բանակի հետևազորի շարքում, թշնամու բանակի գրոհները հետ մղվեցին:

III փուլ – Գիշերը՝ լիալուսնի պայմաններում, Հռոմեական հանրապետության բանակը անցավ վճռական գրոհի և ի վերջո կարողացավ ճեղքել պաշտպանվողների շարքերն ու պարտության մատնել նրանց:

IV փուլ – Միհրդատ VI Եվպատորը Հայկական հեծելազորի վերջին ուժերով (800 հեծյալ) ճեղքեց հակառակորդի շարքերը և հեռացավ:

Հայերը կորցրին մոտ 2.500, դաշնակիցը՝ մոտ 10.000[2], թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 99-101, 104; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 32; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 48-50; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 1, մաս 12; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 12; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 2, 16; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 76; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 15; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 5; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[2] Այստեղ Եվտրոպիոսը («Կենսագրություններ», գիրք 6) կրկին իր տարերքի մեջ է: Ըստ նրա այս ճակատամարտում Պոնտոսի թագավորության բանակը կորցրել է 40.000, իսկ հռոմեացիները... ընդամենը 22 ռազմիկ: Քիչ է հետ մնում Օրոսիոսը, որը Պոնտոսի թագավորության բանակի նույն 40.000 կորուստների պայմանում խոսում է 40 սպանվածի մասին՝ միաժամանակ «բարեհաճելով» հիշատակել 1.000 վիրավորների մասին:

Տանուլ տալով վերջին երկու ճակատամարտերը՝ Միհրդատ VI Եվպատորը իր փոքրաթիվ ուղեկիցներով սկզբում ապաստանեց Սինորա ամրոցում (Բարձր Հայք, Սպեր գավառ, Ակամասիս գետի ափին), սակայն անմիջապես էլ ուղղվեց դեպի Մեծ Հայք: Հենց այս ժամանակ էր, սակայն, որ Տիգրան II Մեծի և Միհրդատ VI Եվպատորի հարաբերությունները վերջնականապես փլուզվեցին, ընդ որում հատկանշականն այն էր, որ, եթե նախորդ անհաջողությունից հետո Պոնտոսի թագավորության արքան ապաստանել էր Մեծ Հայքի թագավորությունում, ապա այս անգամ վերջինս ուղղակի չցանկացավ իրեն վտանգել և այդ կերպ վարվել: Այսպիսով՝ մ.թ.ա. 66 թվականի կեսերին, ըստ էության, վերջնականապես ստեղծվեց այն վիճակը, երբ Մեծ Հայքի թագավորությունը միայնակ էր մնում Հռոմեական հանրապետության և Պարթևական թագավորության եթե ոչ դաշինքի, ապա, համենայն դեպս գոնե, ինչպես արդեն ասվեց, համակարգված գործունեության երկճակատ պայքարի դեմ: Նման պայմաններում բացառապես միայն անձնական շահերով առաջնորդվող Միհրդատ VI Եվպատորը կպայքարեր մինչև իր վերջին հպատակը, սակայն Հայոց իրոք ազգային տիրակալն այլ ուղի ընտրեց:

Այսպիսով, այն բանից հետո, երբ Տիգրան II Մեծը հրաժարվեց ապաստան տալ Պոնտոսի թագավորության փախստական արքային և նույնիսկ վերջինիս գլխի համար պարգև խոստացավ, Պոնտոսի թագավորության արքան շարժվեց դեպի հյուսիս: Արդյունքում՝ մ.թ.ա. 66 թվականի մայիսին Գոդերձականի ճ-մ-ում Միհրդատ VI Եվպատորի գլխավորած Պոնտոսի (մոտ 3.000) և Փոքր Հայքի (մոտ 500) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց իր առաջխաղացումը խոչընդոտել փորձող Իբերիայի թագավորության բանակին (մոտ 3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 1.000), որից հետո Կոլխիդայով անցավ Բոսպորի թագավորություն[1]: Ահա հենց այս ընթացքում էր, որ Արտաշատի պարիսպների տակ սեփական հույսերի կործանումը տեսած Տիգրան Կրտսերն իր հերթին փոխեց շարժման ուղղությունը և արդյունքում ապաստան գտավ Մեծ Հայքի թագավորության դեմ սեփական պայքարը սկսել պատրաստվող Գնեոս Պոմպեոսի մոտ: Այսպիսով՝ տարածաշրջանում շահերի բախումների բարդ հարաբերակցությունների պայմաններում փոխադարձ պայքար մղող ուժերը հերթական անգամ տեղավորվեցին նոր դիրքերում:

Մ.թ.ա. 66 թվականի ամռանը Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 10.000) անկանոն հարվածների ենթարկվող Պարթևական թագավորության բանակը (մոտ 50.000) գրավեց Կորճայքը[2], սակայն իրապես ամրանալ Հայոց հինավուրց այս նահանգում Հրահատ III-ի ռազմական մեքենան որևէ կերպ ի վիճակի չեղավ: Այս ընթացքում մ.թ.ա. 66 թվականի ամռանը Տիգրան II Մեծի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 60.000), Հայոց Միջագետքի (մոտ 5.000), Կոմագենեի (մոտ 5.000), Իբերիայի (մոտ 10.000) և Աղվանքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը արշավեց դեպի Հյուսիսային Ասորիք, սակայն շուտով սկսվեցին բանակցություններ: Արդյունքում՝ Հայ-Հռոմեական պատերազմը ավարտվեց և Մեծ Հայքի թագավորության ու Հռոմեական հանրապետության միջև Արտաշատում հաշտության պայմանագիր կնքվեց, ըստ որի Հռոմեական հանրապետությունն և Մեծ Հայքի թագավորությունը ճանաչվեցին միմյանց «դաշնակից ու բարեկամ»: Հայկական Հինգերորդ գերիշխանությունը վերջացավ և Մեծ Հայքի թագավորությունից անջատվեցին նրա գերիշխանությունն ընդունած բոլոր երկրները, սակայն Մեծ Հայքի թագավորության կազմում մնացին Հայաստանի 14 նահանգ ու Ծոփք նահանգի գերակշիռ մասը՝ բացառությամբ Մելիտե, Կոմագենե և Գավրենե գավառների[3]:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 101:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 16; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 2; Պլուտարքոս «Պոմպեոս», գլուխ 33; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 104, 105; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 49, 51; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 52-53; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 37; Ցիցերոն «Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի»; Ստրաբոն «Աշխարհագրություն»,

Գլուխ 29
Տիգրան II Մեծի սև լեգենդը

Այժմ, մինչև առաջ անցնելը, սակայն, առաջարկում եմ քննարկման առարկա դարձնել Տիգրան II Մեծի հետ կապված հերթական լեգենդներից մեկը, որն այս տողերը գրելու պահին էլ գտնվում է լիարժեք շրջանառության մեջ ու սեղմ փոխանցմամբ իր դասական ձևով ունի հետևյալ տեսքը՝ այն բանից հետո, երբ Գնեոս Պոմպեոսը հսկայական բանակով եկավ Արևելք, իսկ Պարթևական թագավորությունն էլ սպառնալից դիրք գրավեց Մեծ Հայքի թագավորության հարավում, Տիգրան II Մեծը հրաժարվեց որևէ ակտիվ դիմադրությունից, թույլ տվեց Հռոմեական հանրապետության բանակին հասնել Արտաշատի մատույցներն և այստեղ, անզեն ու միայնակ ներկայանալով հակառակորդի ճամբար, թագը դրեց հռոմեական զորավարի ոտքերի տակ: Դրանից հետո, ըստ այս տեսակետի, Հայոց արքան թագը հետ ստացավ Գնեոս Պոմպեոսից և դրանով սկիզբ դրվեց հաշտության գործընթացին[1]: Սա է դասական սխեման, որը գտնվում է շրջանառության մեջ, սակայն այժմ եկեք տեսնենք, թե ինչ կարծիք ունի այս ամենի մասին հայկական կողմը:

«*Տիգրանը, գերի հրեաներին տեղավորելով Արմավիրում և Վարդգեսի ավանում, որ գտնվում է Քասախ գետի վրա, ելուզակներին լեռներից բնաջինջ անելով ու Միհրդատի սուգը կատարելով, այնուհետև շարժվում, գնում է Ասորիք՝ հռոմեացիների զորքերի վրա՝ վրեժ առնելու*»,- հայտնում է Մովսես Խորենացին[2]: Ահա այսպես, հայկական կողմը, ինչպես պարզվում է, ոչ մի բան չգիտի վերոհիշյալ ողջ սխեմայի մասին և, մեզ փոխանցելով իր տեսակետը, ըստ էության, առաջարկում է իրադարձությունների զարգացման լիովին այլ մի տարբերակ: Հետաքրքիր է, որ այս հաղորդումը շրջանառության մեջ է եղել նաև միջնադարում, երբ Ստեփանոս Տարոնեցին հայտնում է. «*Հայոց թագավոր Տիգրանը, լսելով այդ բանը, շարժվում է դեպի Ասորիք՝ հռոմեական զորքերի վրա*»[3], ինչպես նաև ուշ միջնադարում, երբ Դավիթ Բաղիշեցին տեղեկացնում է. «*Այդ ժամանակ Տիգրանը, երբ լսեց այդ ամենը, դարձյալ եղավ երկրորդը Պարսից համեմատ, որից հետո նրանց հետ միասին անթիվ զորք վերցրեց, ղեկավար դրեց Բարզափրան Ռշտունուն և սա յուրայիններով հանդերձ խաղաց Ասորիքի վրա՝ հռոմեացիներին ընդառաջ*»[4]: Այսպիսով՝ հայկական կողմի տեսակետը հստակ է և ակնհայտ է, որ այն սկզբունքորեն տարբերվում է այն տեսակետից, որը շարադրված է հունահռոմեական ու արմատներով դեպի վերջիններս գնացող այլ աղբյուրներում: Մինչև առաջ անցնելը, սակայն, հարկ եմ համարում անել ևս մեկ ուշագրավ դիտարկում:

Իրոք, ըստ էության, հունահռոմեական դպրոցին պատկանող, բաց իր յուրօրինակ աշխարհայացքն ունեցող հրեական պատմիչ Հովսեփ Ֆլավիոսը, թեև ստեղծագործելով հունահռոմեական գաղափարախոսական տիրույթում, սակայն քննարկվող հարցի վերաբերյալ, թեկուզ իմիջիայլոց և այլ առիթով, բայց այնուհանդերձ արտահայտվում է մի քիչ այլ կերպ. «*Այդ ժամանակ դեռևս Հայաստանում գտնվող և Տիգրանի դեմ*

գիրք 11, գլուխ 14, մաս 10; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 13; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 16; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

[1] Պլուտարքոս «Պոմպեոս», գլուխ 33; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 104, 105; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 49; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 52-53; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 37; Ցիցերոն «Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի»; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 10; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 13; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 16; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 16:

[3] Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5:

[4] Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

պատերազմով զբաղված Գնեոս Պոմպեոսը Ասորիք է ուղարկում Սկավրոսին»[1]՝ ըստ էության, սեղմ կերպով, բայց այնուհանդերձ ասելով, որ Գնեոս Պոմպեոսի դեմ ամեն դեպքում մղվել է պատերազմ, իսկ վերջինս էլ Մեծ Հայքի թագավորություն չի մտել այն տեսքով, ինչի մասին միաբերան հայտնում են հունահռոմեական այլ աղբյուրներ: Խնդիրը կայանում է նրանում, որ Գնեոս Պոմպեոսի մերձավոր զինակից Մարկոս Սկավրոսը Ասորիքի ուղղությամբ շարժվեց Գնեոս Պոմպեոսի արշավանքի վերջին հատվածում և նույնիսկ Տիգրան II Մեծի հետ հաշտություն կնքելուց հետո, բայց նույնիսկ այս պարագայում էլ հրեա պատմիչը ավելորդ չի գտնում հիշատակել Գնեոս Պոմպեոսի դեմ մղվող պատերազմի մասին:

Այն, որ Պոնտոսի թագավորության տարածքում իր ուժերը հավաքող Գնեոս Պոմպեոսն իրականում չի մտել Մեծ Հայքի թագավորության տարածք մինչև Արտաշատի հաշտության պայմանագրի կնքումը, անուղղակիորեն հաստատում է նաև այն հանգամանքը, որ, համեմատած նախորդ (Լուցիոս Լուկուլլոսի արշավանք) և հաջորդ (օրինակ՝ Դոմիցիանոս Կորբուլոնի կամ Ցեցենիոս Պետոսի արշավանք) իրադարձությունների հետ, այս անգամ նույնիսկ ակնարկ էլ չկա տեղի ունեցած գոնե փոքրիկ մի ընդհարման մասին, այն դեպքում, երբ երկու պետական միավորները գտնվում էին փաստացի պատերազմական դրության մեջ: Փաստորեն քննարկվող հարցի վերաբերյալ որոշակիորեն առկա են այլ տեսակետներ, որոնք, սակայն, անտեսվել են, իսկ բուրժուական, ինչպես նաև խորհրդահայ պատմագիտությունն էլ, կրկին գտնվելով համաշխարհային պատմագիտության չարաբաստիկ եվրոպակենտրոնության ազդեցության տակ, առանց լուրջ հիմնավորման առաջնությունը տվել է հռոմեական աղբյուրներին:

Այսպիսով՝ կարելի է կարծել, որ, ամենայն հավանականությամբ հռոմեական զենքի «հաղթահանդեսը», ինչպես նաև հռոմեական զորավարների և «ասպետների» «սխրագործությունները» նկարագրելու մոլուցքով տարված հունահռոմեական հեղինակները հաշտության պայմանագիրը կնքելու համար Արտաշատ ժամանած Գնեոս Պոմպեոսի դեսպանախումբը ներկայացրել են որպես հսկայական մի բանակի ներխուժում, որի արդյունքն է եղել «բարբարոսների» հանձնվելը: Իր հերթին, սակայն, հայրենի խորհրդահայ պատմաբաններն էլ, ավանդականորեն թերագնահատելով Հայոց բանակն և Հայոց պետության ռազմական ուժը, լիովին հիմնավորված, մի տեսակ ինքն իրեն հասկանալի ու բնական են համարել, որ «*Պոմպեոսի բանակի մուտքը Մեծ Հայք մինչև Արտաշատի հաշտության պայմանագրի կնքումը*» կարող էր լիովին և այն աստիճան կաթվածահարել Տիգրան II Մեծի կամքն ու Հայոց բանակը, որ նույնիսկ եզակի և փոքրիկ մի ընդհարում չլիներ:

Այս ֆոնի վրա կրկին ցավալիորեն բնական է համարվել և նույնիսկ մի տեսակ զգացմունքային-հուզիչ, իսկ ինչ-որ տեղ նաև դիվանագիտական ճկուն քայլ ներկայացնելու տոնով է որպես բացարձակ ճշմարտություն ընդունվել իրականում գոյություն չունեցած «*Տիգրան Մեծի՝ Պոմպեոսի ճամբար միայնակ ներկայանալու և թագը նրա ոտքերի տակ դնելու*» քաղաքական տեսանկյունից իրոք անընդունելի, Մեծ Հայքի տիրակալին ոչ հարիր և հոգեբանորեն էլ դժվար հասկանալի դրվագը: Իրոք, վերջին փաստարկի կապակցությամբ, ամեն ինչից զատ, նաև քիչ հավանական է թվում, որ երկար ժամանակ արքայական ավանդույթներով դաստիարակված ու ապրած և դրանից հետո էլ 30 տարի բացարձակ տիրակալ եղած անձը նման բան կաներ: Սա, սակայն, կրկնենք, ցավալի և միաժամանակ բացատրելիորեն-բնականաբար ընդհանրապես չի զարմացրել բուրժուական ու խորհրդահայ միջին վիճակագրական պատմաբանին, քանզի ըստ վերջինիս կարծրացած պատկերացումների «*Մեր ազգը միշտ էլ եղել է փոքր, թույլ Հռոմին կամ որևէ այլ տերությանն ենթակա, իսկ այս տերությունն էլ ավելի շուտ պատահաբար էր ստեղծվել և բնականաբար այդպես էլ պետք է լիներ*»: Այս առումով հաճելի բացառություն կարող է կազմել, թերևս, միայն ոչ խորհրդահայ դպրոցին

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 2:

պատկանող Ն. Ադոնցը, որը հետևողականորեն դեմ դուրս եկավ առաջարկվող այս լեգենդին[1], թեև նրա տեսակետը այդպես էլ համընդհանուր ճանաչում չստացավ: Ես ինքս, սեփական ուսումնասիրությունների արդյունքում և Ն. Ադոնցի տեսակետին ծանոթ չլինելով այնուհանդերձ հանգելով նույն հետևությանը, միայն տարիներ հետո հաճույքով պարզեցի, որ այս հարցով փաստորեն համակարծիք եմ մեծ գիտնականի հետ[2]:

Եվ վերջում ավելորդ չեմ համարում նաև նշել, որ նմանատիպ մի քայլ, որ այս դեպքերից ավելի քան երկու դար անց, ըստ երևույթին արդեն այդ ժամանակ շրջանառության մեջ գտնված նույն այս լեգենդի ազդեցության տակ, փորձեց անել Մեծ Հայքի մեկ այլ արքա, խոսքը Պարթամասիրի (113-114) մասին է, վերջինիս համար ամենաողբերգական հետևանքներն ունեցավ՝ հռոմեական ճամբար ներկայացած և հետ ստանալու ակնկալիքով թագը Հռոմեական կայսրության կայսր Մարկոս Տրայանոսի (98-117) ոտքի տակ դրած Մեծ Հայքի թագավորության արքան ոչ միայն հետ չստացավ նույն այդ թագը, այլև դրանից կարճ ժամանակ անց էլ սպանվեց, ընդ որում դրանից հետո Մեծ Հայքի թագավորությունն այլևս ի վիճակի չեղավ որևէ կազմակերպված դիմադրություն ցուցաբերել թշնամու բանակին[3]: Հակառակորդի ճամբար ներկայանալու նույն հնարքը, որը փորձ կատարեց կիրառել նաև Արտավազդ III-ը (մ.թ.ա. 38-34), վերջինիս, ինչպես նաև երկրի համար ևս ունեցավ բավականին ծանր հետևանքներ:

Եվ այսպես, կյանքը հստակորեն ցույց տվեց, թե ինչ կարող էր արժենալ նման անհեռատես, քաղաքական առումով սխալ ու զգացմունքային բնույթ ունեցող քայլը, իսկ այս պարագայում կրկնակի սխալ է նման մի քայլ սպասել Տիգրան II Մեծի փորձառությունն ունեցող քաղաքական գործիչից: Արդյունքում՝ հավանական է համարել իրավիճակը, որ Պոնտոսում ուժերը կենտրոնացրած Գնեոս Պոմպեոսի հետ սկիզբ են առել բանակցություններ, որոնք իրենց ավարտն են գտել Արտաշատում, իսկ հռոմեական ճամբար ներկայանալու հետ կապված ողջ վերոգրյալ տեսարանն էլ, ըստ էության, հանդիսանում է հռոմեական քարոզչամեքենայի հաջող հնարքներից մեկը և յուրօրինակ պատմական վրեժը Հայոց արքայից, քանզի Հռոմեական հանրապետությունը չէր կարողացել վերջնականապես ոչնչացնել Տիգրան II Մեծին, ինչպես դա եղավ Միհրդատ VI Եվպատորի պարագայում, ու պետք էր հնարավորինս ակնառու մի որևէ կերպով ցույց տալ Տիգրան II Մեծի բացարձակ հնազանդվելը: Այսպիսով, մի կողմ թողնելով քարոզչական և քաղաքական նպատակներ հետապնդող վերոհիշյալ լեգենդը, սակայն այնուհանդերձ ամրագրելով, որ Արտաշատի մ.թ.ա. 66 թվականի հաշտության պայմանագրի կնքումից հետո Մեծ Հայքի թագավորությունը ու Հռոմեական հանրապետությունը այդուհետ հանդես էին գալիս թեև ոչ այնքան անկեղծ, բայց այնուհանդերձ դաշնակիցների կարգավիճակով, փաստենք, որ արդյունքում տարածաշրջանում տեղի ունեցավ ուժերի ընդհանուր դասավորվածության հերթական փոփոխությունը, երբ Պոնտոսի թագավորությունն, ըստ էության, դուրս եկավ խաղից, իսկ Մեծ Հայքի թագավորությունն և Հռոմեական հանրապետությունն էլ սկսեցին հանդես գալ միասին՝ ամենից առաջ դեմ դուրս գալով իր հերթին արդեն միայնակ մնացած Պարթևական թագավորությանը:

Գլուխ 30
Գնեոս Պոմպեոսը և Իբերիայի ու Աղվանքի թագավորությունները

Այս առումով հարկ է նշել, սակայն, որ Պարթևական թագավորության հետ բացահայտ ընդհարման ժամանակը դեռևս այնքան էլ չէր եկել, քանի որ Արևելքում

[1] Ադոնց Ն. «Տիգրան Մեծ», Երևան 2010, էջ 86-87:
[2] Որպես ասվածի ապացույց նշեմ, որ դեռևս 2007 թվականին լույս տեսած իմ «Հայ ժողովրդի ռազմական Տարեգիրք, հատոր 7»-ում (էջ 38-39) ես շարադրեցի իմ տեսակետն այս հարցի կապակցությամբ, ընդ որում դա այն պարագայում, երբ դեռևս անտիպ վիճակում գտնվող Ադոնցի աշխատանքը հրատարակվեց միայն 2010 թվականին և 2007 թվականին ես ոչ մի կերպ ի վիճակի չէի հասու լինելու վերջինիս բովանդակությանը:
[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 17-20:

աննախադեպ առաջխաղացում իրականացրած Գնեոս Պոմպեոսը դեռևս տեղում ամրանալու լուրջ խնդիր ուներ, ընդ որում բաց էր մնում ինչպես Սելևկյանների թագավորության և տարածաշրջանի մյուս ավելի մանր տիրակալների հետ հարաբերությունների կարգավորման հարցը, այնպես էլ Իբերիայի ու Աղվանքի թագավորությունների հետ հարաբերությունների պարզաբանման խնդիրը: Իրոք, վերջին երկու թագավորությունները, որոնք մինչ այդ հանդես էին գալիս Մեծ Հայքի թագավորության ենթակայության ներքո, այժմ Տիգրան II Մեծի աննկատ, սակայն գիտակցական թողտվությամբ իրենց ազատ համարեցին Հռոմեական հանրապետության նկատմամբ որևէ պարտավորությունից և ըմբոստ դիրք գրավեցին: Այս առումով մինչև առաջ անցնելը հետաքրքիր է նշել նաև, որ Իբերիայի թագավորությունում նույն այս ժամանակ կառավարում էր Տիգրան II Մեծի թոռ և մ.թ.ա. 68 թվականին Արշակ I Հայի մահից հետո վերջինիս հաջորդած նրա որդի Արտակը (մ.թ.ա. 68-66), իսկ Աղվանքի թագավորությունում իշխում էր Օրոյսը (մ.թ.ա. մոտ 86-50): Արդյունքում՝ Գնեոս Պոմպեոսի կողմից որոշում ընդունվեց ամենից առաջ լուծել հենց այս խնդիրները և հետո նոր միայն անդրադառնալ հարավային հարցերին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

66 դեկտեմբերի 17 – ***<u>Խոսպիքի ճ-մ</u>*** (Գուգարք, Ջավախք, Փարվանա լճից 21 կմ արևելք)[1]

Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության (մոտ 100.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 20.000) միացյալ բանակը, առաջանալով ***<u>Նիկոպոլիս-Սատաղ-Սպերի հարավ-Դերջան-Կարին-Արաքսի հովտով Բասեն-Արածանիի հովտով Բագրևանդ-Կոգովիտի հյուսիս-Մասյացոտն-Արտաշատ-Ջավախք</u>*** երթուղով ու բաժանվելով երեք մասերի, ճամբարեց: Այս ընթացքում արևմուտքից սկսեց մոտենալ Արտակ արքայի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) և Օրոյս արքայի գլխավորած Աղվանքի (40.000) թագավորությունների միացյալ բանակը, որը, գետանցելով Կուրը, նախատեսել էր անակնկալ հարված հասցնել հակառակորդի բանակին:

I փուլ – Օրոյսի գլխավորած Աղվանքի թագավորության բանակը անակնկալ հարձակվեց Մետելլոս Կելլերի ճամբարած բանակի վրա, սակայն համառ մարտից հետո այդ հարձակումը հետ մղվեց:

II փուլ – Այս ընթացքում Արտակի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը հարձակվեց Լուցիոս Ֆլակկոսի ճամբարած բանակի վրա, սակայն համառ մարտից և այն բանից հետո, երբ ճամբարի խրամատի առաջին գիծը թողած ու խրամատի երկրորդ գծում պաշտպանվող ռազմիկները ծանր կորուստներ պատճառեցին հակառակորդի առաջխաղացած բանակին, այդ հարձակումը ևս հետ մղվեց:

III փուլ – Գնեոս Պոմպեոսի գլխավորած հիմնական ուժերը մոտեցան Մետելլոս Կելլերի ճամբարին և վերջնական պարտության մատնեցին Աղվանքի թագավորության բանակին՝ հետապնդելով վերջինիս մնացորդներին:

IV փուլ – Գնեոս Պոմպեոսի բանակը հետապնդեց Իբերիայի թագավորության բանակին մինչև ***<u>Կուրի գետանցը</u>*** և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս, ընդ որում շրջակա անտառներում ցրված հակառակորդի բանակի ռազմիկները դադարեցրին դիմադրությունը միայն այդ անտառները հրդեհելուց հետո:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 20.000

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 34; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 36, գլուխ 54; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 42; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 14; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 16:

զինվոր:

Ծանր հարված հասցնելով հակառակորդի բանակին՝ արդեն հաջորդ տարի Գնեոս Պոմպեոսը զարգացրեց հաջողությունը: Արդյունքում՝ մ.թ.ա. 65 թվականի մարտին Արմազիի ճ-մ-ում (Կուրի աջ ափին, Մծխեթից մոտ 2 կմ հարավ) Գնեոս Պոմպեոսի գլխավորությամբ Կուրի վերին հոսանքի հովտով արշաված Հռոմեական հանրապետության (մոտ 90.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 19.000) միացյալ բանակը հաղթեց Արտակ արքայի գլխավորած Իբերիայի թագավորության ու Օրոյս արքայի գլխավորած Աղվանքի թագավորության միացյալ բանակին (մոտ 40.000), որի մնացորդները նահանջեցին Կուրի ձախ ափ, իսկ հետագայում, շարունակվելով հետապնդվել, անցան նաև Իորի գետի ձախ ափ: Ի վերջո, ամռան սկզբին կնքվեց հաշտություն և Հռոմեական հանրապետությունն ու Իբերիայի թագավորությունը ճանաչվեցին միմյանց «դաշնակից և բարեկամ»[1]: Լուծելով Իբերիայի թագավորության խնդիրը՝ Գնեոս Պոմպեոսը անդրադարձ կատարեց Աղվանքի թագավորությանը:

Արդյունքում մ.թ.ա. 65 թվականի հուլիսին Ալազանի գետի ճ-մ-ում (Հյուսիս-արևմտյան Աղվանք, գետի ձախ ափին) Գնեոս Պոմպեոսի գլխավորությամբ Ջավախք-Քաջատուն-Կումայրի-Նիգ-Վարաժնունիք-Աղվե-Տուչ Կատակ-Կուր-Կամբեճան-Ալազան երթուղով արշաված Հռոմեական հանրապետության (մոտ 90.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 18.000) բանակը հաղթեց Օրոյս արքայի ու նրա եղբայր Կոտիսի գլխավորած Աղվանքի թագավորության բանակին (72.000, որից 12.000 հեծյալ) այն բանից հետո, երբ Աղվանքի թագավորության բանակը, կարծելով թե հարձակվում է միայն հեծելազորի վրա, անակնկալ հարձակման ենթարկվեց միաժամանակ հակառակորդի հեծելազորի և նրա թիկունքում թաքնված հետևակի կողմից, ընդ որում զոհվեց նաև Կոտիսը: Ի վերջո, կնքվեց հաշտություն և Հռոմեական հանրապետությունն ու Աղվանքի թագավորությունը ևս ճանաչվեցին միմյանց «դաշնակից և բարեկամ»[2], որից հետո Հռոմեական հանրապետության բանակը Ալազանի-Կամբեճան-Տուչ Կատակ-Աղվե-Վարաժնունիք-Նիգ-Արտաշատ-Մասյացոտն-Կոգովիտի հյուսիս-Արածանիի հուն-Բասեն-Արաքսի հուն-Կարին-Դերջան-Սպերի հարավ-Սատաղ երթուղով հետ քաշեց ուժերը դեպի Փոքր Հայք:

Այսպիսով՝ Գնեոս Պոմպեոսի կողմից կյանքի կոչված ռազմաքաղաքական մեծածավալ և նույնիսկ նախորդներին էլ գերազանցող բացառիկ գործողությունների արդյունքում Հռոմեական հանրապետությունը Արևելքում աննախադեպ հաջողություն արձանագրեց՝ սեփական քաղաքական ազդեցությամբ հասնելով ընդհուպ մինչև Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշեր և Կասպից ծովի արևմտյան ափեր: Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում կտրուկ առաջանալիս, սակայն, բաց էր մնում ազդեցության հարավային թևը, որտեղ դեռևս նույնիսկ Ասորիքում էլ Հռոմեական հանրապետության ազդեցությունը միանշանակ չէր, իսկ Միջագետքին էլ տիրում էր իր նոր այս հակառակորդին անչափ մեծ կասկածամտությամբ վերաբերող Պարթևական թագավորությունը: Արդյունքում՝ Գնեոս Պոմպեոսը, կարգի գցելով գործերը հյուսիսում, որոշեց ամենից առաջ անդրադարձ կատարել Ասորիքի խնդրին, ընդ որում որոշվեց սկսել ամենից առաջ հենց Կոմագենեի թագավորությունից, որտեղ մ.թ.ա. 70 թվականին մահացած Միհրդատ Ի-ին նույն այս ժամանակ փոխարինել էր նրա որդի Անտիոքոս Ի-ը (մ.թ.ա. 70-38): Ողջ վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտ է ավելացնել նաև

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 34; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37, գլուխ 1-3; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 42; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 35, 36; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37, գլուխ 3-5; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 3, մաս 14; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 42; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 5; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 4; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 14; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 16; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 47; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

մասնավոր մի հանգամանք: Իրոք, գոհ ձեռք բերված հաշտությունից, Գնեոս Պոմպեոսը արդյունքում ձերբակալեց և Հռոմ տեղափոխեց Տիգրան Կրտսերին, որը տեղում մնալով բավականին երկար, մ.թ.ա. 58 թ-ին փախուստի անհաջող փորձ կատարելուց հետո բռնվեց և մահապատժի ենթարկվեց:

Գլուխ 31
Գնեոս Պոմպեոսը և հարավային գործերը

Մ.թ.ա. 65 թվականի սեպտեմբերին Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 100.000) Անտիոքոս Ի-ի գլխավորած Կոմագենեի թագավորության (մոտ 10.000) և վերջինիս օգնության եկած Դարեհ Ի-ի գլխավորած Ատրպատականի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակից մանր մարտերից հետո գրավեց Սամոսատ մայրաքաղաքը (վերջինը՝ = Կումուխա): Ի վերջո, կնքվեց հաշտություն և Հռոմեական հանրապետությունն ու Կոմագենեի թագավորությունը ևս ճանաչվեցին միմյանց «դաշնակից և բարեկամ»: Քիչ ուշ Անտիոքոս Ի-ը ճանաչվեց նաև Հյուսիսային Ասորիքի և Ապամիայի (վերջինը՝ Հայոց Միջագետքի արևմուտք, Եփրատի ձախ ափին) կառավարիչ[1]:

Եվս մեկ անգամ ամրագրելով, որ Տիգրան II Մեծը մահացել է միայն մ.թ.ա. 38 թվականին և այս հարցի հիմնավորումը մի պահ էլ հետաձգելով ու դրան անդրադառնալով քիչ անց՝ անցնենք առաջ ու փորձ կատարենք լուսաբանել հետագա իրադարձությունները, որոնք հայրենի պատմագիտական գրականության մեջ ներկայացված են խիստ թերի: Այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ թեմային նվիրված գործնականում բոլոր աշխատանքներում Տիգրան II Մեծի գահակալության նկարագրությունն իր ավարտն է գտնում մ.թ.ա. 66 թվականի Արտաշատի հաշտության, ինչպես նաև դրան մ.թ.ա. 65 թվականին հաջորդած այն արշավանքի նկարագրությամբ, որ Գնեոս Պոմպեոսն իրականացրեց ընդդեմ Իբերիայի և Աղվանքի թագավորությունների: Վերջ, սրանով, ըստ էության, ավարտվում է Տիգրանյան դարաշրջանի նկարագրությունը, ընդ որում ամրագրվում է նաև, որ Հայոց արքան իր մահկանացուն է կնքել մ.թ.ա. 55 թվականին, մի մոտեցում, որի հետ, ինչպես վերևում նշվեց, դժվար է համաձայնել: Այս կապակցությամբ կարծում եմ, որ մ.թ.ա. 65-55 թվականների միջատարածքում գտնվող 10 տարվա այն իրադարձությունները, որոնք զարգացան Հայաստանում և հարակից երկրներում, արժանիորեն լուսաբանման կարիք ունեն:

Եվ այսպես, ավարտելով արշավանքն Իբերիայի, Աղվանքի և Կոմագենեի թագավորությունների դեմ, մ.թ.ա. 65 թվականի ամռանը Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը ամենից առաջ ինչպես հարկն է ամրացավ տեղերում: Դրանից հետո Գնեոս Պոմպեոսը խնդիր դրեց իր իշխանության տակ վերցնել Սելևկյանների արդեն գործնականում վերացած թագավորության տարածքը, ինչպես նաև այս կամ այն կերպ Հռոմեական հանրապետության գերիշխանությանն ենթարկեցնել մանր այն թագավորություններին, որոնք տարածվում էին Հայաստանի արևմուտքում ու Ասորիքում և ձգվում էին մինչև Պտղոմյանների ու Պարթևական թագավորությունների սահմանները: Կոմեգենեի թագավորության խնդիրը, ինչպես արդեն ասվեց, համեմատաբար հեշտ լուծվեց: Հաջորդը Հայոց Միջագետքի թագավորությունն էր, որտեղ, փոխարինելով Աբգար Ի Նիզակակցին, վերջինիս մահից հետո գահը զբաղեցրել էր Աբգար II Արիարմենը (մ.թ.ա. մոտ 69-53), որը մի ուժեղ, խելացի և խորամանկ անձնավորություն էր: Արդյունքում՝ Աբգար II Արիարմենը ևս, տալով իրավիճակի սթափ գնահատական, ընտրեց Անտիոքոս Ի-ի բռնած ուղին՝ հռչակվելով

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 106: Այս մասին, ըստ որոշ տեղեկությունների, հայտնում է նաև և Դիոն Կասսիոսը իր աշխատանքի 35-րդ գրքի 2-րդ գլխում, սակայն գիրքը մեզ է հասել խիստ հատվածաբար և առայժմ չկա հնարավորություն գտնել այդ հատվածը:

Հռոմի «դաշնակից ու բարեկամ»: Նույն այս ժամանակ հետաքրքիր զարգացումներ էին եղել, սակայն, նաև Սելևկյանների մոտ:

Իրոք, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 69 թվականին Մեծ Հայքի թագավորությունը հետ քաշվեց Ասորիքից, Սելևկյանների թագավորությունում ի վերջո արքայական փաստացի իշխանության տեր դարձավ Անտիոքոս XIII-ը: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ նոր պայմաններում ևս Անտիոքոս XIII-ի ազդեցությունը տեղում անչափ թույլ էր ու Ասորիքի նկատմամբ վերջինս փաստացի չուներ նույնիսկ այն թույլ իշխանությունը, որն ունեին այստեղ իր անմիջական նախորդները, իսկ տեղում էլ ուժեղանում էին Մեծ անապատից անդադար կերպով դուրս հորդող և դեպի Ասորիքի ավելի ու ավելի հյուսիսային շրջաններ տարածվող արաբների դիրքերը: Արդյունքում՝ Գնեոս Պոմպեոսը, նպատակադրվելով տիրել Ասորիքին, այսինքն՝ փաստացի՝ Սելևկյանների թագավորության ողջ տարածքին, քաղաքական առումով գործեց բավականին գրագետ և սեփական ռազմական մեքենայով հարված հասցնելուց առաջ Անտիոքոս XIII-ի դեմ հանեց տեղական արաբներին, ի դեմս ամենից առաջ հենց այս ժամանակներում ստեղծված Հեմսի արաբական թագավորության արքա Սամպսիցերամոս I-ի (մ.թ.ա. 69-48):

Որպես հետևանք այս ամենի՝ սկիզբ առան ռազմական գործողություններ, որոնց արդյունքում մ.թ.ա. 64 թվականի սկզբին Անտիոքոս XIII-ի գլխավորած Սելևկյանների թագավորության բանակը ծանր պարտություն կրեց, իսկ Անտիոքոս XIII-ն ինքն էլ, ինչպես իր հոր հետ էր եղել, ընկավ մարտում: Անտիոքոս XIII-ի զոհվելուց հետո Սելևկյանների թագավորության արքա հռչակվեց Ֆիլիպ I-ի որդի Ֆիլիպ II-ը (մ.թ.ա. 64), որը, սակայն, ավելի սահմանափակ իշխանություն ուներ և տիրում էր միայն Կիլիկիայի որոշ շրջանների: Իր հերթին Ֆիլիպ II-ի օրոք, ըստ էության, ստեղծվեց մի իրավիճակ, երբ Սելևկյանների դատը տեղում արդեն այնքան էր վարկաբեկված և թուլացած, որ Հռոմեական ռազմական մեքենայի հարվածը Ասորիքի ուղղությամբ վերջնականապես պարզեց իրավիճակը:

Արդյունքում՝ ձմեռելով Փոքր Հայքում, մ.թ.ա. 64 թվականի գարնանը Գնեոս Պոմպեոսի գլխավորած Հռոմեական հանրապետության համալրված բանակը առանց դիմադրության հանդիպելու արշավեց Անդրեփրատյան Ծոփք-Հայոց Միջագետք-Ասորիք -Պաղեստին երթուղով, ինչի արդյունքում Սելևկյանների թագավորությունը ոչնչացավ, իսկ Ֆիլիպ II-ն էլ կորավ անհայտության մեջ: Արդյունքում՝ կազմվեց Ասորիք պրովինցիան և նրա առաջին ղեկավար նշանակվեց Գնեոս Պոմպեոսի մերձավոր զինակից Մարկոս Սկավրոսը: Որպես հետևանք այս ամենի՝ Անդրեփրատյան Ծոփքի Մելիտե գավառը և Լեռնային Կիլիկիայի հյուսիսը Պոնտոսի թագավորության տարածքի հետ միասին միացվեցին Հռոմեական հանրապետությանը ենթակա Կապադովկիայի թագավորությանը, Դաշտային Կիլիկիան ու Ասորիքը դարձան Հռոմեական հանրապետության պրովինցիաներ, Կիլիկիայի հարավում ամրապնդվեցին Հռոմեական հանրապետությանը ենթակա Տարսոնի թագավորության դիրքերը, իսկ Փոքր Հայքն, ինչպես նաև Պաֆլագոնիայի ոչնչացված թագավորության տարածքն էլ անցան կրկին Հռոմեական հանրապետությանը ենթակա Դեյոթարոս I Գալաթացու գլխավորած և հենց նոր ստեղծված Գալաթական թագավորությանը: Վերջնականապես իր թագավորությունում հաստատվեց նաև հավերժ վտարանդի Արիոբարզանես I-ը, որը, սակայն, այդպես էլ չհասցնելով լիարժեք կառավարել, մ.թ.ա. 62 թվականին կնքեց իր մահկանացուն և նրան հաջորդեց իր որդի Արիոբարզանես II-ը (մ.թ.ա. 62-51): Նույն այն ժամանակ, սակայն, երբ Գնեոս Պոմպեոսը պատրաստվում էր իջնել Ասորիք, պատերազմական գործողությունները վերսկսվեցին նաև Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների միջև:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Պարթևական թագավորության արքա Հրահատ III-ը, դիվանագիտական միջոցառումներով ձգտելով ապահովել պաշտոնական Հռոմի աջակցությունը, հերթական անգամ իր բանակը մտցրեց Մեծ Հայքի թագավորության

Կորճայք նահանգ, սակայն համապատասխան դիվանագիտական միջոցառումներ իրականացրեց նաև Տիգրան II Մեծը, որից հետո, Գնեոս Պոմպեոսից ստանալով արդեն նաև իրական աջակցություն, հետ մղեց պարթևական հարվածը[1]: Այս իրադարձությունների ժամանակ Հռոմեական հանրապետության բանակը գլխավորում էր Գնեոս Պոմպեոսի մեկ այլ մերձավոր զինակից հանդիսացող Լուցիոս Աֆրանիոսը, իսկ նրա օգնականն էլ Ավլոս Գաբինիոսն էր, որը հետագայում ավելի բարձր դիրքի էր հասնելու: Այսպիսով՝ նույն այս ժամանակ, երբ Գնեոս Պոմպեոսը հռոմեական տիրապետությունն էր հաստատում Ասորիքում, պատերազմական գործողությունները շարունակվում էին նաև Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների միջև[2]: Այս իրադարձությունների մանրամասները, սակայն, մեզ որևէ կերպ հայտնի չեն և հայտնի է միայն, որ հաջողությունն եղել է սկզբում հայերի, իսկ հետո՝ պարթևների կողմում, թեև վերջնականապես ամրագրել ձեռք բերածը պարթևական կողմն այդպես էլ ի վիճակի չի եղել ու արդյունքում Հրահատ III-ն աջակցության համար ստիպված է եղել կրկին անգամ դիմել Գնեոս Պոմպեոսին: Այս պայմաններում Հռոմեական հանրապետության զորավարին հերթական անգամ դիմեց նաև Հայոց արքա Տիգրան II Մեծը, սակայն Գնեոս Պոմպեոսը խուսափողական դիրք գրավեց և որևէ կերպ չմիջամտեց երկու թագավորությունների միջև զարգացող կոնֆլիկտին[3]:

Ավարտելով Ասորիքի նվաճումը՝ Գնեոս Պոմպեոսը հակամարտության մեջ մտավ Հուդայի և Նաբաթեական թագավորությունների հետ: Արդյունքում՝ Հուդայի թուլացած ու մասնատված թագավորությունը մ.թ.ա. 63 թվականի սկզբին ուղղակի կախվածության մեջ ընկավ Հռոմեական հանրապետությունից, իսկ Նաբաթեական թագավորության և, ընդհանրապես, արաբների հավակնություններն էլ խիստ սահմանափակվեցին, ընդ որում Նաբաթեական թագավորությունը առժամանակ զերծ մնաց հռոմեական ուղղակի հարվածից, թերևս, միայն այն պատճառով, որ մ.թ.ա. հենց նույն 63 թվականի սկզբին, երբ Մարկոս Սկավրոսի գլխավորած բանակը մտավ այս թագավորության տարածք, Գնեոս Պոմպեոսին հասավ Հռոմեական հանրապետության երդվյալ թշնամին, Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ VI Եվպատորի մահվան լուրը:

Իրոք, աննկուն Միհրդատ VI Եվպատորը, Սև ծովի հարավային ափերին հաջողությամբ խույս տված իր հակառակորդներից և ապաստանած իր երբեմնի թագավորության ընդամենը միայն ծայրամասում, մ.թ.ա. 63 թվականի սկզբի վիճակով հիմնականում Ալանական թագավորության, ինչպես նաև գերմանացիների ուժերից այնուհանդերձ կարողացել էր մի հսկայական վարձկան բանակ հավաքագրել՝ նպատակադրվելով, այս անգամ առաջանալով արդեն Եվրոպայով, Ապենինյան թերակղզի ներխուժել հյուսիսից: Միհրդատ VI Եվպատորի կյանքի վերջին այս ձեռնարկը, սակայն, անհաջողության մատնվեց, քանզի նույն այդ հարվածային բանակը, որը նախատեսված էր Հռոմեական հանրապետությանը հերթական հարված հասցնելու համար, Միհրդատ VI Եվպատորի իսկ որդի Փառնակի գլխավորությամբ ի վերջո ապստամբեց սեփական տիրակալի դեմ: Արդյունքում՝ Պոնտոսի թագավորության ահեղ տիրակալը, շրջապատված ամեն կողմից և այլևս որևէ ելք չունենալով, ի վերջո ինքնասպան եղավ: Այս պայմաններում, հետ քաշված Մարկոս Սկավրոսի գլխավորությամբ 2 լեգեոն և այլ օժանդակ ուժեր թողնելով Հուդայի թագավորության տարածքում, Գնեոս Պոմպեոսը զգալի ուժերով արագորեն վերադարձավ հյուսիս:

Միհրդատ VI Եվպատորի մահվանից հետո ի վերջո ամուր կերպով ոտք դնելով վերջինիս թագավորության տարածքում, ամրանալով Ասորիքում, վերջնականապես կարգի գցելով գործերն Արևելքում և այս ամենի վրա ծախսելով մ.թ.ա. 63 թվականի մնացած մասն, ինչպես նաև մ.թ.ա. 62 թվականի զգալի մասը՝ մ.թ.ա. 62 թվականի

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 36; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37, գլուխ 5:
[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 106; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37, գլուխ 6, 7:
[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 37, գլուխ 6, 7:

ամենավերջում Գնեոս Պոմպեոսն ի վերջո թողեց Արևելքն ու վերադարձավ Հռոմ: Իր զորավարի հեռանալուց հետո մ.թ.ա. 61 թվականին Հռոմ վերադարձավ նաև Ասորիքի նախկին կառավարիչ Մարկոս Սկավրոսը, որից հետո վերջինիս Ասորիքի կառավարիչի պաշտոնում երկուական տարիներով փոխարինեցին երկու պրոկոնսուլներ, իսկ մ.թ.ա. 57 թվականին էլ հիշատակված պաշտոնը զբաղեցրեց դեռևս մ.թ.ա. 64 թվականի իրադարձությունների կապակցությամբ հիշատակված Գնեոս Պոմպեոսի մերձավոր զինակիցներից մեկ ուրիշը՝ Ավլոս Գաբինիոսը: Ես դիտավորյալ որոշակիորեն մանրամասն անդրադարձա, թվում է, թե Հայաստանի և Տիգրան II Մեծի հետ ուղղակիորեն այնքան էլ չկապված իրադարձություններին, որպեսզի, հետագան նկարագրելիս, ասելիքն առավելագույնս պարզ լինի:

Գլուխ 32
Տիգրան II Մեծը և հարավային գործերը

Եվ այսպես, մ.թ.ա. 57 թվականին Ասորիքի կառավարիչն էր Ավլոս Գաբինիոսը, որն էլ հենց հիշատակվում է Մովսես Խորենացու կողմից հետագա իրադարձությունները նկարագրելիս: «*Տիգրանը, գերի հրեաներին տեղավորելով Արմավիրում և Վարդգեսի ավանում, որ գտնվում է Քասախ գետի վրա, ելուզակներին լեռներից բնաջինջ անելով ու Միհրդատի սուգը կատարելով, այնուհետև շարժվում, գնում է Ասորիք՝ հռոմեացիների զորքերի վրա՝ վրեժ առնելու*»,- հայտնում է Պատմահայրը[1]՝ ըստ էության ընդհանրացնելով Հայոց արքայի գործունեության սեղմ պատկերը՝ սկսած Լուցիոս Լուկուլլոսի արշավանքից և վերջացրած Գնեոս Պոմպեոսի արևելք գալով: «*Հայոց թագավոր Տիգրանի դեմ է գալիս հռոմեացիների զորքի սպարապետ Գաբիանոսը, որին Հռոմ վերադառնալիս այնտեղ թողել էր Պոմպեոսը: Գաբիանոսը, սակայն, չի համարձակվում Տիգրանի հետ ընդհարվել և Եփրատի մոտից դառնում, գնում է Եգիպտոս՝ պատճառ բերելով Պտղոմեոսին: Եվ ահա նա, Տիգրանի հետ գաղտնի հաշտություն կնքելով, հետ է տալիս Միհրդատի որդուն՝ պատանի Միհրդատին, որ Տիգրանի քեռորդին էր և որին Գնեոս Պոմպեոսը բռնել էր Մաժաքում, ասելով, թե նա գաղտնի փախավ*»[2],- ավելացնում է Մովսես Խորենացին՝ ըստ էության անդրադառնալով արդեն այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել մ.թ.ա. 57-55 թվականների միջատարածքում և նկարագրված են այլ սկզբնաղբյուրներում[3]: Պատմահորը կրկնում են նաև միջնադարյան մեր երկու պատմիչները[4], իսկ հունահռոմեական աղբյուրներն էլ իրենց հերթին բավականին մանրամասն տեղեկացնում են Ավլոս Գաբինիոսի գործողությունների ներքին և արտաքին դրդապատճառների մասին:

Իրոք, Ասորիքի կառավարիչ Ավլոս Գաբինիոսը սկզբում ցանկանում էր պատերազմել Նաբաթեական թագավորության դեմ, սակայն հետո վերջինիս տեղեկություն հասավ, որ մ.թ.ա. 58 թվականի վերջին Հրահատ III-ի որդիներ Միհրդատը և Օրոդեսը սպանել են իրենց հորը, որից հետո Պարթևական թագավորության արքա է հռչակվել եղբայրներից ավագն, ի դեմս Միհրդատի՝ Միհրդատ III-ի (մ.թ.ա. 58-57): Միհրդատ III-ը, սակայն, որևէ կերպ չկարողացավ ամրանալ գահին և շուտով վերջինիս գահընկեց արեց իր իսկ եղբայր Օրոդեսը: Արդյունքում՝ մ.թ.ա. 57 թվականի սկզբին Պարթևական թագավորության արքա հռչակվեց Օրոդեսը՝ Օրոդես II-ը (մ.թ.ա. 57-38), իսկ առժամանակ Միջագետքում ամրացած Միհրդատ III-ն էլ օգնության համար դիմեց Ավլոս Գաբինիոսին: Արդյունքում՝ Ասորիքի անսահմանափակ տիրակալի լիազորություններով օժտված Ավլոս Գաբինիոսը, շահագրգռված Միհրդատ III-ի առաջարկած պայմաններով,

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 16:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 16:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 16; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 6; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 8; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 51:
[4] Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5, Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

սկզբում շարժվեց վերջինիս օգնության, սակայն շուտով պարզվեց, որ նույն այս ժամանակ գահակալական լուրջ խնդիրներ ունի նաև Պտղոմյանների թագավորության արքա Պտղոմեոս XII-ը, ընդ որում, քանի որ վերջինս օգնության համար ավելի մեծ գումար էր առաջարկում, իսկ միջամտության պայմաններն էլ ավելի թեթև էին, Ավլոս Գաբինիոսն ի վերջո հետ դարձրեց սեփական ռազմական մեքենան և այն վերջնականապես շարժեց դեպի Եգիպտոս: Սա, ըստ էության, որոշեց նաև Միհրդատ III-ի քաղաքական ճակատագիրը, քանի որ մ.թ.ա. նույն 57 թվականի երկրորդ կեսին էլ հենց Օրոդես II-ի ռազմական մեքենան պաշարեց Բաբելոնը և ստիպեց քաղաքին հանձնվել, ընդ որում գերության մեջ հայտված Միհրդատ III-ը սպանվեց:

Այսպիսով, մ.թ.ա. 57 թվականին Մեծ Հայքի թագավորության արքա Տիգրան II Մեծը, գործելով ամենայն եռանդով և, ըստ էության, ուշադրություն չդարձնելով մինչ այդ Հռոմեական հանրապետության հետ ձեռք բերած պայմանավորվածություններին, ակտիվ արտաքին-քաղաքական ու ռազմական միջոցառումներով պաշտպանեց իր երկրի շահերը, ընդ որում բանը հասավ նույնիսկ նրան, որ Հռոմեական հանրապետությունն ինքը խուսափեց Հայոց արքայի հետ բացահայտ ընդհարման մեջ մտնել:

Իրոք, դատելով ըստ ամենայնի, Տիգրան II Մեծը ակտիվացել էր ակնհայտորեն հենց Օրոդես II-ին աջակցելու մտայնությամբ, երբ արդյունքում Հայոց արքան, օգտվելով քաղաքական ասպարեզից Հրահատ III-ի հեռանալուց, եռանդուն միջոցառումներով փաստորեն աջակցեց Պարթևական թագավորության նոր արքային: Արդյունքում, թույլ չտալով Ավլոս Գաբինիոսին Պարթևական թագավորության գահին հաստատել Միհրդատ III-ին և աջակցելով Օրոդես II-ին, Տիգրան II Մեծը դրեց այն համագործակցության հիմքը, որը զարգանալու էր հետագա տասնամյակներում: Ավելին, Հայոց արքան հիանալի կերպով գիտակցում էր այն հանգամանքը, որ, եթե որևէ հնարավորություն կա հաջող դիմադրություն կազմակերպել աննախադեպ հզորությամբ Մերձավոր Արևելքում հայտնված Հռոմեական հանրապետությանը և վերջինիս ռազմական մեքենային, ապա այդ հնարավորությունն ամենից առաջ կայանում է հենց Մեծ Հայքի ու Պարթևական թագավորությունների դաշինքի մեջ, ընդ որում Միհրդատ III-ի հեռանալը քաղաքական ասպարեզից և Օրոդես II-ի հաստատվելը Պարթևական թագավորության գահին ապահովում էր հենց նույն այդ հնարավորությունը: Այսպիսով՝ մեզ հաջողվեց վերականգնել Հայոց մեծագույն այս տիրակալի գահակալման կարևոր իրադարձություններից ևս մեկը, որը մինչ այժմ մնացել էր ստվերում:

Գլուխ 33
Մարկոս Կրասոսը Մերձավոր Արևելքում

Ավլոս Գաբինիոսի չկողմնորոշվող գործողությունները դժգոհություն առաջ բերեցին Հռոմում, ընդ որում հենց նույն այդ ժամանակ Հռոմի սենատում մղվող ներքին լարված պայքարի արդյունքում Արևելքը բաժին էր հասել Հռոմեական հանրապետությունում ի վերջո ձևավորված առաջին եռապետության եռապետ Մարկոս Կրասոսին (մ.թ.ա. 60-53): Արդյունքում՝ Ավլոս Գաբինիոսը հեռացվեց Ասորիքից և նրան փոխարինեց Հռոմեական հանրապետության արևելյան շրջանների անսահմանափակ տիրակալի լիազորություններով օժտված Մարկոս Կրասոսը: Մարկոս Կրասոսը, տարված մեծ փառք և հարստություն ձեռք բերելու տենչանքով, մ.թ.ա. 55 թվականի երկրորդ կեսին Արևելք ժամանելուն պես անմիջապես ակտիվ գործողությունների նախապատրաստություններ սկսեց, թեև ամեն ինչ իրականացվում էր հակառակորդին զգալիորեն թերագնահատելու մտայնությամբ՝ խիստ թերի կերպով:

Իրոք, լավ ծանոթ չլինելով Արևելքի պայմաններին և, ըստ երևույթին, զոհ գնալով Լուցիոս Լուկուլլոսի տարածած ստահոդ տեղեկություններին, Մարկոս Կրասոսն անմիջապես էլ որոշեց հարված հասցնել Պարթևական թագավորությանը՝ այդպես էլ

լիովին չպատկերացնելով ոչ այն ուժի ռազմաքաղաքական հնարավորությունները, որի վրա պատրաստվում է հարձակվել, ոչ տեղում առկա ուժերի դասավորությունը, ոչ էլ նույնիսկ տեղանքի բնակլիմայական ու, դրանից բխող, մարտավարական առանձնահատկությունները: Վերոգրյալ խնդիրը սերտորեն առնչվում է նաև մ.թ.ա. 53 թվականի մայիսի 7-ից 9-ն ընթացած Խառանի ճ-մ-ին Մեծ Հայքի թագավորության բանակի մասնակցության հարցին:

Գլուխ 34
Խառանյան ջարդը և հայերը

Հիշատակված ճակատամարտը ռազմապատմական գրականության մեջ բազմիցս ու հիմնավորապես նկարագրված է և այն, ըստ էության, համարվում է ռազմական պատմության ամենահայտնի ճակատամարտերից մեկը, սակայն որևէ տեղ գոնե մի որևէ հիշատակում իսկ չկա այն մասին, որ վերջինիս իր մասնակցությունն էր բերել նաև Հայկական բանակը[1]: Այս կապակցությամբ, սակայն, Մովսես Խորենացին հայտնում է. «*Հռոմեացիները կասկածելով՝ Գաբիանոսին փոխում են և նրա տեղն ուղարկում են Կրասոսին: Նա գալով՝ գրավում է ողջ գանձերը, որոնք գտնվում էին Երուսաղեմում՝ աստծո տաճարում, իսկ հետո դիմում է Տիգրանի վրա: Եփրատն անցնելով, սակայն, Տիգրանի դեմ պատերազմելիս Կրասոսն իր բոլոր զորքերի հետ միասին սպանվում է, իսկ Տիգրանն էլ, նրա գանձերը հավաքելով, վերադառնում է Հայաստան*»[2]: Այսպիսով՝ Պատմահայրը փաստորեն հստակորեն ամրագրում է այն հանգամանքը, որ Մեծ Հայքի թագավորության բանակն իր մասնակցությունն է բերել այս հայտնի ճակատամարտին, սակայն Պատմահոր հաղորդումները, հունահռոմեական աղբյուրների հեղինակության, ինչպես նաև տխրահռչակ եվրոպակենտրոնության ազդեցության ներքո, առանց քիչ թե շատ խորանալու դրանց էության մեջ, ուղղակիորեն դեն են նետվել:

Արդյունքում, սակայն, Մովսես Խորենացին ամբողջացնում է այս հայտնի ճակատամարտի մասին հիմնական տեղեկություններն և տալիս է նրա վերջի լիակատար պատկերը: Իր հերթին այս ամենի մասին են անուղղակիորեն վկայում հետևյալ փաստարկները.

1. Ճակատամարտի նախավերջին փուլում Օկտավիոսի գլխավորած և դեպի հյուսիս բավականին առաջխաղացած Հռոմեական հանրապետության բանակի մի մասն անակնկալ հետ է վերադառնում, մի հանգամանք, որը կարող է վկայել այն մասին, որ հյուսիսից առկա է եղել իրական վտանգ ու այլ ելք չի եղել,

2. Մինչ այդ Հռոմեական հանրապետության բանակը վատ թե լավ, սակայն հաջողությամբ դիմադրում էր հակառակորդին և նահանջում էր, այն դեպքում, երբ ճակատամարտի վերջին փուլում վերջինս ջախջախվում է անակնկալորեն հեշտ՝ մի հանգամանք, որը կարող էր տեղի ունենալ միայն ուժերի հսկայական տարբերության առաջանալու, այսինքն՝ իրադարձություններին Մեծ Հայքի թագավորության բանակի մասնակցության դեպքում:

Վերևում արդեն հիմնավորվեց, որ մ.թ.ա. 53 թվականին Տիգրան II Մեծը դեռևս ողջ էր ու այս մասին դեռ էլի կխոսվի, իսկ այդ պարագայում չի մնում և ոչ մի հիմք, որ մենք կասկածի տակ դնենք այս ճակատամարտին Հայկական բանակի մասնակցության փաստը: Ինչ վերաբերում է Մարկոս Կրասոսի հետ շփումներ հաստատած Արտավազդի պարագային, ինչի մասին հստակորեն հայտնում են հունահռոմեական սկզբնաղբյուրները, ապա մի կողմից հավանական է համարել, որ Գնեոս Պոմպեոսի հետ

[1] Այս առումով հարկ է նշել, որ հռոմեա-պարթևական հարաբերություններին նվիրված խորհրդային պատմական դպրոցի հիմնարար աշխատանքներից մեկը գրած Ա. Բոկշանինը, որը իր գիտական գործունեությամբ կարծես դրեց երևույթի ուսումնասիրման սահմանները ու գծագրեց դրա հիմնական ուղենիշները, իր հիմնարար աշխատանքում Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, որ Մարկոս Կրասոսի բանակի ջախջախումն իրականացրել է Տիգրան II Մեծը, ուղղակի համարում է ֆանտաստիկ՝ իր այդ խոսքերն ուղեկցելով բացականչական նշաններով, որոնք կոնկրետ ենթատեքստում ենթադրում են ֆանտաստիկ, զարմանալի և անընդունելի մի երևույթ (տես՝ Бокщанин А. Г. “Парфия и Рим”, том 1, Москва 1960, стр. 69:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 17:

բարեկամանական հարաբերություններ ունեցող Տիգրան II Մեծը հասկանալի պատճառներով որդուն էր ուղարկել վերջինիս հակառակորդ Մարկոս Կրասոսի մոտ, իսկ մյուս կողմից էլ հավանական է համարել նաև, որ, ինչպես Բակուր արքայազնի պարագայում Պարթևական թագավորության դեպքում եղավ, Արտավազդ արքայազնի պարագայում էլ այս ժամանակ արդեն վերջինս էր հանդիսանում Մեծ Հայքի թագավորության գահակից արքա: Միաժամանակ բացառված չէ նաև, որ Տիգրան II Մեծը Մարկոս Կրասոսի մոտ չեկավ հենց միայն անվտանգության տեսանկյունից:

Վերջում միայն ավելացնենք, որ ամենայն հավանականությամբ իրականում պարթևական բանակի ոչ մի ներխուժում էլ Մեծ Հայքի թագավորության տարածք տեղի չի ունեցել, իսկ լուրը նման ձևով Մարկոս Կրասոսին հայտնելը նպատակ է հետապնդել մի կողմից արդարացնել Մեծ Հայքի թագավորության դիրքորոշումը, մյուս կողմից էլ՝ շփոթեցնել Մարկոս Կրասոսին այն տեսանկյունից, որ վերջինս կարծի, թե Պարթևական թագավորության ուժերի մեծ մասը Մեծ Հայքում են, իսկ ինքն արշավում է թշնամու ուժերի ավելի փոքրաքանակ և վատ որակ ունեցող մասի դեմ, երբ իրականությունը լրիվ հակառակ տեսքն է ունեցել: Եվ այսպես, հենց Մարկոս Կրասոսի անխոհեմ ջանքերով էլ սկիզբ առավ Հռոմեա-Պարթևական I պատերազմը (մ.թ.ա. 54 - մ.թ. 64), որն իր հետ հսկայական հետևանքներ էր բերելու:

Գլուխ 35
Հռոմեա-Պարթևական I պատերազմի սկիզբը

Մ.թ.ա. 54 թվականի աշնանը Զևգմայի գետանց (Հյուսիսային Ասորիքի հյուսիս-արևելք, Եփրատի աջ ափին) -Պիր (Հայոց Միջագետքի արևմուտք, Եփրատի ձախ ափին, Զևգմայի դիմաց) -Խառան-Իխնի (վերջինը՝ Խառանից մոտ 60 կմ հարավ) -Նիկեփորիոն (Իխնիից մոտ 28 կմ հարավ-արևելք) -Թափսակոս (Նիկեփորիոնից մոտ 10 կմ հարավ-արևմուտք) երթուղով, չհանդիպելով որևէ դիմադրության, ասպատակելով արշավեց Մարկոս Կրասոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (50.000, որից 5.000 հեծյալ): Դրանից հետո, տեղերում որպես կայազոր թողնելով մի ուժեղ ջոկատ (8.000, որից 1.000 հեծյալ), Հռոմեական հանրապետության բանակը Բարբալիսոս բերդ (Ասորիք, Եփրատի աջ ափին, Հալեպից մոտ 120 կմ հարավ-արևելք) -Հալեպ երթուղով վերադարձավ Ասորիք[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

53 մայիսի 7-9 – ***<u>Խառանի ճ-մ</u>***[2]

Մ.թ.ա. 54 թ-ի վերջին և մ.թ.ա. 53 թ-ի սկզբին Մարկոս Կրասոսը եռանդուն կերպով նախապատրաստվեց Պարթևական թագավորության դեմ ձեռնարկվելիք նոր արշավանքին: Այս պայմաններում մ.թ.ա. 53 թ-ի վաղ գարնանը Մաղխազական գնդով (6.000 ծանր հեծյալ) Ասորիք ժամանեց Տիգրան II Մեծի գահակից որդի

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Արտաքսերեքս», գլուխ 18; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 12-14; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 18-31; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 16-27; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 3, գլուխ 11; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 46; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 31; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Նիկողայոս Դամասկցի «Պատմություն» գիրք 114, գլուխ 88; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 16, գլուխ 1, մաս 23; Պլինոս Ավագ «Բնական պատմություն», գիրք 5, գլուխ 21; Օվիդիոս «Օրացույց», գլուխ 6; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 18; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 51; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 13; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 18; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 8; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 7; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 2; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 17; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 3; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 17; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Գիյոմ Տյուրացի «Անդրծովյան երկրների պատմությունը», գիրք 10, գլուխ 29:

Արտավազդը, որը, մասնավորապես, խորհուրդ տվեց Պարթևական թագավորության դեմ նախապատրաստվող առաջիկա արշավանքը իրականացնել ոչ թե հարթավայրերով, որտեղ հեծելազորի աղետալի պակաս ունեցող Հռոմեական հանրապետության բանակի նկատմամբ հակառակորդի հեծելազորը հսկայական մարտավարական առավելություն կունենար, այլ՝ Մեծ Հայքի թագավորության տարածքում ձգվող լեռներով, քանի որ այս պարագայում, ընդհակառակը, Պարթևական թագավորության հեծելազորը ոչ միայն կզրկվեր իր մարտավարական առավելությունը կիրառելու հնարավորությունից, այլև, առիթի դեպքում, Հռոմեական հանրապետության բանակը ինքը կօգտվեր Հայկական բանակի աջակցությունից: Ավելին, այս պարագայում Արտավազդը խոստացավ Հռոմեական հանրապետության բանակին նաև օժանդակել բանակային խոշոր ուժերով (46.000, որից 16.000 ծանր հեծյալ): Հաշվի չառնելով, սակայն, արված խելամիտ առաջարկները, իր մտադրությունների իրականացման մեջ անմտության աստիճանի հասնող համառություն դրսևորող Մարկոս Կրասոսը այնուհանդերձ որոշեց առաջիկա պատերազմական գործողությունները վարել հենց հարթավայրերում:

Մարկոս Կրասոսի հետ անհաջողությամբ ավարտված բանակցություններից հետո Արտավազդը վերադարձավ Հայրենիք, իսկ կարճ ժամանակ անց էլ Սուրենի գլխավորած Պարթևական թագավորության բանակը (մոտ 80.000) հզոր հարձակում կազմակերպեց Հյուսիսային Միջագետքում թողնված Հռոմեական հանրապետության կայազորների վրա: Արդյունքում՝ վերջիններիս մի մասը ոչնչացվեց, իսկ մնացած մասը պաշարվեց, ընդ որում վերջին քայլին Սուրենը դիմեց միանգամայն կանխամտածված՝ նպատակ ունենալով դրդել Մարկոս Կրասոսին շարժվել սեփական ռազմիկներին օգնության: Իր հերթին, այնուհանդերձ թույլ տալով Հռոմեական հանրապետության ջախջախված կայազորների ռազմիկների մի մասի վերադարձը յուրայինների մոտ, Սուրենը վերջիններիս միջոցով կարողացավ Հռոմեական հանրապետության բանակում լուրեր տարածել իր ռազմիկների անխոցելիության, բարձր մարտական հատկանիշների և մեծաթիվ լինելու մասին՝ այդ ճանապարհով բարոյալքելով թշնամուն: Ստեղծված իրավիճակը Մարկոս Կրասոսին իր հերթին իրոք ստիպեց շտապել:

Արդյունքում՝ արդեն մայիսի վերջին Մարկոս Կրասոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (43.000, որից 5.000 հեծյալ, այդ թվում 1.000 գալլ հեծյալներ), որպես ուղեցույց ունենալով Հայոց Միջագետքի թագավորության արքա Աբգար II Արիարմենին, որը իրականում խնդիր ուներ, առաջնորդելով Հռոմեական հանրապետության բանակին դժվարանցանելի տեղանքով, ուժասպառ անել վերջինիս և հասցնել բաց մի տարածություն, անցավ ***<u>Զևգմայի գետանցով</u>***, հետևում թողեց ***<u>Պիրը</u>*** ու սկսեց շարժվել դեպի հարավ-արևելք՝ չհանդիպելով որևէ դիմադրության: Ավելին, արդեն հենց սկզբից էլ Պարթևական թագավորության բանակը, թողնելով Հռոմեական հանրապետության կայազորների պաշարումը, սկսեց սրընթաց երթով նահանջ իրականացնել: Իր հերթին, ցանկանալով զարգացնել հաջողությունը, Հռոմեական հանրապետության բանակը, թողնելով Եփրատի ձախ ափաշերտը, սկսեց շարժվել ուղիղ դեպի արևելք: Այս ընթացքում Մարկոս Կրասոսին սուրհանդակներ ներկայացան Մեծ Հայքի թագավորությունից և հայտնեցին, թե իբր Պարթևական թագավորության բանակի հիմնական մասը ներխուժել է Մեծ Հայքի թագավորության տարածք, որի պատճառով Հայկական բանակը ի վիճակի չէ օգնության հասնել Հռոմեական հանրապետության բանակին: Այս հաղորդմանը Մարկոս Կրասոսը պատասխանեց շատ կոպիտ տոնով և, հետ ուղարկելով սուրհանդակներին, սպառնաց արշավանքից վերադառնալուց հետո անպայման պատժել Արտավազդին: Ստանալով նման պատասխան՝ Տիգրան II Մեծը վերջնականապես

դաշինք կնքեց Օրոդես II-ի հետ, որից հետո կողմերը որոշեցին գործել համատեղ ուժերով: Նույն այս ընթացքում Մարկոս Կրասոսը հրամայեց շարունակել առաջընթացը, որի ընթացքում Աբգար II Արիարմենը, կատարված համարելով իր խնդիրը, աննկատ լքեց Հռոմեական հանրապետության բանակը և Հայոց Միջագետքի թագավորության բանակով (մոտ 5.000, այդ թվում արաբներ) միացավ արդեն բավականին մոտիկ գտնվող Պարթևական թագավորության բանակի առաջապահին (12.000, որից 10.000 թեթև հեծյալ, 1.000 թեթև հետևակային, 1.000 ծանր հեծյալ): Արդյունքում՝ արշավանքը շարունակող Հռոմեական հանրապետության բանակը, տեղյակ չլինելով հակառակորդի մոտ լինելու մասին, շատ շուտով հայտնվեց Պարթևական ու Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի անմիջական հարևանությամբ:

I փուլ – Մայիսի 7-ին երկար և հոգնեցուցիչ երթարշավից բարոյալքված ու հուսահատված Հռոմեական հանրապետության բանակի առջևում գտնվող հետախույզների ջոկատը անակնկալ հարձակման ենթարկվեց Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի առաջապահի կողմից ու գրեթե լիովին ոչնչացվեց, սակայն մի քանի փրկված ռազմիկներ այնուհանդերձ կարողացան թշնամու բանակի մոտ լինելու մասին լուրը հասցնել Մարկոս Կրասոսին, որը անմիջապես էլ հրամայեց իր բանակին մարտակարգ ընդունել՝ շարվելով երեք շարքերի բաժանված կահորտների երկար մի գծով: Մինչ, սակայն, երթարշավային կարգով ձգված բանակը կկատարեր այս հրամանը, այն փոխվեց և այս անգամ էլ Մարկոս Կրասոսը հրամայեց ընդունել արդեն մի հսկայական ուղղանկյան տեսք ունեցող մարտակարգ՝ ուղղանկյան թևերում տեղավորելով 12-ական կահորտ ու վերջիններիս միջև հավասարաչափ բաշխելով հեծելազորը:

II փուլ – Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի ծանր հեծելազորը, փորձելով ճեղքել հակառակորդի շարքերը, անցավ ճակատային հարձակման, սակայն Հռոմեական հանրապետության բանակը հետ մղեց հակառակորդին, որից հետո վերջինս սկսեց արդեն թևերից շրջապատել Հռոմեական հանրապետության բանակին:

III փուլ – Նպատակ ունենալով զարգացնել հաջողությունը՝ Հռոմեական հանրապետության բանակի թեթև հետևակը փորձեց հակահարձակում կազմակերպել հակառակորդի հեծելազորի վրա, սակայն գրեթե միանգամից էլ, ընկնելով նետերի հզոր հարվածի տակ, հետ շպրտվեց և պատսպարվեց ծանր հետևակի շարքերում՝ այստեղ խուճապ ու շփոթ առաջացնելով:

IV փուլ – Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի հեծյալները սկսեցին շեղընթաց սուրալ թշնամու բանակի շարքերի առջևից՝ նետերի տարափ տեղալով վերջիններիս վրա: Արդյունքում՝ թշնամու մարտակարգում ռազմիկների հոծ շարքերի առկայությունն ինքնին հնարավորություն չէր թողնում վրիպելու, ընդ որում թշնամու ռազմիկներին չէր փրկում նույնիսկ հզոր վահանափակը, քանի որ արձակված նետերը հաճախ միջաթափանց ծակում էին վերջիններիս վահաններն ու զրահները:

V փուլ – Մարկոս Կրասոսը, խնդիր դնելով հետ շպրտել թշնամուն, իր որդու գլխավորությամբ առաջ ուղարկեց առանձնացված մի ջոկատ (1.300 հեծյալ, որից 1.000 գալլ, 4.500 հետևակ, որից 500 նետաձիգ), սակայն Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ հեծելազորը կեղծ նահանջով առաջ քաշեց վերջինիս, որից հետո, բոլոր ուժերով անցնելով հակահարձակման, գլխովին ոչնչացրեց այս ջոկատի սկզբում հեծելազորը, իսկ հետագայում, նետերի տարափի տակ առնելով՝ նաև իրար հաջորդող շարքերով մոտակա բարձունքի վրա տեղավորված ու դրանով իսկ հարմար թիրախ դարձած ողջ հետևազորը՝ գերելով ընդամենը միայն 500 հոգու:

VI փուլ – Հռոմեական հանրապետության հիմնական բանակին մոտեցած

Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը ծանր հեծելազորի հարվածով հետ շպրտեց թշնամու առաջ եկած առանձին հետևակ ու հեծյալ ջոկատներին, որից հետո թեթև հեծելազորի ուժերով թևանցեց թշնամու բանակի մարտակարգը և նետերի տարափի տակ առավ իրար հաջորդող շարքերով մոտակա բարձունքի վրա տեղավորված ու դրանով իսկ կրկին հարմար թիրախ դարձած թշնամուն բանակի ռազմիկներին: Արդյունքում՝ Հռոմեական հանրապետության հեծյալ մի ջոկատ (300) լքեց շարքերը և, արագորեն փախչելով ու Խառանի կայազորին տեղեկացնելով ստեղծված ծանր իրավիճակի մասին, կարողացավ անվնաս անցնել Ասորիք, այն դեպքում, երբ Հռոմեական հանրապետության հիմնական բանակը մինչև մութն ընկնելը շարունակվեց ենթարկվել անխնա հարվածների՝ կրելով հսկայական կորուստներ: Մութն ընկնելուն պես, սակայն, մարտն ընդհատվեց, ինչը հնարավորություն տվեց Հռոմեական հանրապետության բանակի մնացորդներին պատսպարվել հապճեպ կառուցված սեփական ճամբարում:

VII փուլ – Մայիսի լույս 8-ի գիշերը Հռոմեական հանրապետության բանակը աննկատ թողեց ճամբարը և սկսեց նահանջել դեպի հյուսիս-արևմուտք: Ի պատասխան սրա՝ արդեն առավոտյան Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը գրավեց թշնամու կողմից լքված դիրքերը ու ոչնչացրեց այնտեղ մնացած 4.000 վիրավորներին, որից հետո սկսեց թշնամու բանակի հետապնդումը՝ այդ ընթացքում շրջապատելով և ջախջախելով ճանապարհը կորցրած Հռոմեական հանրապետության բանակի մի ջոկատ (2.000), որի ռազմիկներից փրկվեցին միայն 20 հոգի: Արդյունքում, սակայն, նահանջը շարունակող Հռոմեական հանրապետության բանակին այնուհանդերձ հաջողվեց հասնել ***Խառանին*** և պատսպարվել այնտեղ, սակայն Մարկոս Կրասոսը, գնահատելով իրավիճակը, իր բանակով չմնաց քաղաքում այլ, հետը վերցնելով նաև քաղաքի կայազորը ու սեփական ուժերը բաժանվելով երեք մասի, մայիսի 9-ին շարունակեց նահանջը դեպի հյուսիս:

VIII փուլ – Նահանջի ընթացքում աստիճանաբար պարզվեց, որ տեղացիներից ընտրված ուղեցույցները դիտավորյալ մոլորեցնում են Հռոմեական հանրապետության բանակի առանձին շարժվող մասերին, որոնցից միայն Գայոս Կասսիոսի գլխավորած առաջին մասն էր (500 հեծյալ), որ, ժամանակին զգալով խաբեությունը, հետ վերադարձավ ***Խառան,*** իսկ հետագայում էլ կարողացավ անվնաս անցնել Ասորիք: Ինչ վերաբերում է Մարկոս Կրասոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակի երկրորդ մասին, ապա այն, շարունակելով անիմաստ ռազմերթը և, ըստ էության, չկարողանալով որևէ առաջխաղացում իրականացնել, շուտով սկսեց հարվածների ենթարկվել իրեն հետապնդող Պարթևական ու Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի կողմից, ընդ որում սրա հետ միաժամանակ նաև հյուսիսից վերջինիս ուղղությամբ շուտով սկսեց շարժվել նաև Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000): Այս պայմաններում Օկտավիոսի գլխավորությամբ դեպի հյուսիս բավականին առաջացած Հռոմեական հանրապետության բանակի երրորդ մասը (5.000), արդեն այլ չունենալով ելք, հետ քաշվեց և կրկին միավորվեց Մարկոս Կրասոսի տրամադրության տակ եղած ուժերին:

IX փուլ – Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը մոտեցավ թշնամու բանակին, ինչից հետո սկիզբ առած բանակցությունների ընթացքում Մարկոս Կրասոսն ու Օկտավիոսը սպանվեցին: Դրանից հետո Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը անցավ վճռական հարձակման ու վերջնականապես ջախջախեց թշնամու բանակին:

X փուլ – Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների

միացյալ բանակը սկսեց հետապնդել և ոչնչացնել շրջակայքում ցրված Հռոմեական հանրապետության բանակի մնացորդներին:

Հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցները՝ մոտ 2.000 զինվոր, թշնամին՝ 20.000 սպանված և վիրավոր, 10.000 գերի:

Հենց նոր ավարտված ճակատամարտում կրած ծանր պարտությունը զգալի հարված հասցրեց պաշտոնական Հռոմի դիրքերին Արևելքում, քանի որ սպանվել և գերեվարվել էին 30.000 ռազմիկներ: Իր հերթին, օգտվելով այս ամենից, Մեծ Հայքի թագավորության բանակը առանց լուրջ մարտերի Կապադովկիայի թագավորության բանակից ազատագրեց Անդրեփրատյան Ծոփքը: Չնայած այս ամենին, սակայն, Հռոմեական հանրապետությունը, թեև որոշակիորեն ցրված վիճակում, սակայն Արևելքում դեռևս զգալի ուժեր ուներ: Միաժամանակ, Մարկոս Կրասոսի հետ արշավանքի ելած ուժերից ևս այս կամ այն կերպ փրկվել էին մոտ 12.000 ռազմիկներ, որոնց էլ արագորեն կենտրոնացրեց և կազմակերպեց ջախջախված բանակից հաջողությամբ հեռացած և իր քաղաքական հայացքներով երդվյալ հանրապետական հանդիսացող Գայոս Կասսիոսը:

Գլուխ 36
Ասորիքին հասցված հակահարվածի սկզբնական փուլը և հայերը

Ստեղծված իրավիճակում հարվածի տակ էր հայտնվում Ասորիքը և այս պարագայում առաջնային խնդիր էր դառնում հենց սահմանների պաշտպանությունը: Գայոս Կասսիոսի օգտին եղավ այնուհանդերձ այն հանգամանքը, սակայն, որ հարվածը որոշակիորեն հետաձգվեց:

Իրոք, Օրոդես II-ը ոչ մի կերպ չէր կարողանում Ասորիքում խորանալու համար բավարար ուժեր հավաքել, ընդ որում մ.թ.ա. արդեն 53 թվականի վերջին հերթական անգամ բարդացավ Պարթևական թագավորության նաև ներքաղաքական դրությունը: Արդյունքում, կասկածվելով հակաարքայական դավադրության մեջ, նույն այս ժամանակ սպանվեցին ինչպես Սուրենը, այնպես էլ Աբգար II Արիարմենը, ընդ որում Հայոց Միջագետքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց իր որդի Բակուր III-ը (մ.թ.ա. մոտ 53-30): Այս պարագայում, երբ պարթևական կողմը ի վիճակի չեղավ հարված հասցնել նաև մ.թ.ա. 52 թվականին, գործի անցավ Տիգրան II Մեծը:

«Այս բոլորից հետո Տիգրանը, հիվանդ լինելով, աղաչում է պարսից Արտաշես թագավորին իրենց մեջ սեր հաստատել, որ խզվել էր իր հոր հպարտության պատճառով, երբ նա պարսիկներից խլեց նախագահությունը: Եվ ահա ինքը՝ Տիգրանը, երկրորդական գահն ընդունելով, ինչպես օրենքն էր, նախագահությունը վերադարձնում է նրան: Այս կերպով Արտաշեսին հաշտեցնելով՝ նա նրանից օգնական զորք է խնդրում»[1],- հայտնում է Պատմահայրը՝ ըստ էության մեզ փոխանցելով Տիգրան II Մեծի և Օրոդես II-ի միջև ձեռք բերված համաձայնության հիմքերը՝ Հայոց արքան, առժամանակ, գուցե ինչ-որ տեղ ձևականորեն, քանզի դեռևս Տիգրան II Մեծի հետնորդները այնուհանդերձ կրում էին «արքայից-արքա» տիտղոսը, պարտավորվում էր առնվազն գոնե չշեշտադրել իր բարձր դիրքը, ինչին ի պատասխան էլ Օրոդես II-ն ինքը իր հերթին ապահովում է համագործակցությունը մյուս կողմից: Փոխադարձ զիջումների այս արդյունքը եղավ, ինչպես արդեն ասացինք, մ.թ.ա. 53-38 թվականների այն ռազմական համագործակցությունը, որը հաստատվեց Մեծ Հայքի ու Պարթևական թագավորությունների միջև և իր կոնկրետ ռազմաքաղաքական արտացոլումը գտավ դեպի Ասորիք ձեռնարկված արշավանքներում:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ մ.թ.ա. 52 թվականի իրադարձություններում, առանց խորանալու դեպքերի ներքին բովանդակության մեջ,

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19:

սովորաբար նշում է արվում միայն Պարթևական թագավորության բանակի մասին, որի հարվածները, ըստ հունահռոմեական սկզբնաղբյուրների, Գայոս Կասսիոսին հաջողվել է հետ մղել: Իրոք, հունահռոմեական սկզբնաղբյուրները խոսում են բացառապես միայն Պարթևական թագավորության բանակի մասին[1], սակայն այդ հաղորդումները կրկին միակը չեն, որ արտացոլում են հիշատակված իրադարձությունները, ու այս անգամ ևս, դժբախտաբար, աչքաթող են արվել Մովսես Խորենացու հաղորդումները, որոնք միանշանակորեն վկայում են այն մասին, որ հարված հասցնողը եղել է հենց հայկական, այլ ոչ թե պարթևական կողմը: Այսպիսով, մինչև Օրոդես II-ը կենտրոնացնում էր ուժերը, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների բանակները, գործի դնելով տեղական միջոցները, փորձեցին ներխուժել Ասորիք:

«*Հռոմեացիք զայրանալով՝ անթիվ զորքերով ուղարկում են Կասսիոսին: Սա գալով՝ դիմադրում է Հայոց զորքերին և թույլ չի տալիս Եփրատն անցնել ու ասպատակել Ասորիքը*»,- այս կապակցությամբ հայտնում է Մովսես Խորենացին՝ անելով իրադարձությունների լուսաբանման համար խիստ կարևոր ևս մեկ հավելում[2]: Այսպիսով՝ մ.թ.ա. 52 թվականի գարնանը Զևգմայի ճ-մ-ում Գայոս Կասսիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 20.000) անորոշ ելք ունեցած մարտում դիմադրեց Մեծ Հայքի (մոտ 40.000) և Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակին՝ թույլ չտալով վերջինիս անցնել Եփրատն ու ներխուժել Ասորիք[3]:

Եվ կրկին պետք է ցավով նշել, որ Մովսես Խորենացու հաղորդած այս տեղեկությունները, որպես մ.թ.ա. 53 թվականի մայիսի 7-ից 9-ն ընթացած Խառանի ճակատամարտին հաջորդած իրադարձությունների պարզաբանման կարևոր աղբյուր, որոնք, դրան գումարած էլ նաև, տեղեկացնում են այն մասին, որ այդ տարի հռոմեական ռազմական մեքենան ընդհարվել է ոչ թե Պարթևական, այլ Մեծ Հայքի թագավորության բանակի հետ, դժբախտաբար կրկին ուշադրության չեն արժանացել՝ կարելի է ենթադրել վերջիններիս ժամանակագրական անորոշության, Տիգրան II Մեծի հիշատակության, մեր և համաշխարհային պատմագիտության ավանդական եվրոպակենտրոնության, ինչպես նաև, գլխավորապես, թերևս, այն պատճառով, որ հունահռոմեական աղբյուրները այս իրադարձությունների կապակցությամբ հիշատակում է միայն պարթևներին: Այս առումով կարծում եմ, սակայն, որ Մովսես Խորենացու հաղորդումները կասկածի ենթարկելու և հունահռոմեական աղբյուրներին նրա նկատմամբ առաջնություն տալու որևէ լուրջ հիմք, ըստ էության, չկա, քանի որ այս ժամանակ արդեն գործում էր հայ-պարթևական դաշինքը և բնական է, որ Մեծ Հայքի թագավորության բանակը, երբ դաշնակիցը դժվարանալով հապաղում էր, պետք է ձեռնամուխ լիներ իր դաշնակցային պարտավորությունների իրականացմանը: Միաժամանակ կարծում եմ, որ պետք է հաշվի առնել նաև հայկական, ինչպես նաև պարթևական ռազմական մեքենաների առանձնահատկությունները:

Իրոք, եթե Պարթևական թագավորության բանակը, մեծապես կազմված քոչվոր ժողովուրդներին բնորոշ սկզբունքներով, սովորաբար դժվար էր կենտրոնանում և դրա համար զգալի ժամանակ էր անհրաժեշտ, ապա Հայկական բանակը, որպես տիպիկ նստակյաց պետության բանակ, նմանատիպ որևէ խնդիր չուներ: Իր դերն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Հայկական բանակն ավելի մոտ էր գտնվում մարտական գործողությունների ապագա թատերաբեմին, դե իսկ Հայոց Միջագետքի թագավորության բանակն էլ, ընդհանրապես, գտնվում էր գործնականում Ասորիքի դարպասների հենց դիմաց, ընդ որում մշտապես ձեռքի տակ առկա տեղանքին հիանալի

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 28; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 8; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 18; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 17:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 18:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 28; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 8; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 18; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 17; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 18:

ծանոթ, մարտունակ և ոչ կանոնավոր մարտերում ու ասպատակություններում իրենց հիանալի դրսևորող արաբների զգալի ուժերի առկայությունն էլ միայն մեծացնում էր Հայոց թագավորությունների հարվածային հնարավորությունները: Խնդրի կապակցությամբ ավելորդ չեմ համարում նշել նաև հունահռոմեական հեղինակների մոտ միայն պարթևների մասին նշումի բացատրության մասին:

Ամեն ինչ, ըստ էության, բացատրվում է նրանով, որ դեպքերին ոչ ժամանակակից հունահռոմեական հետագա հեղինակների պատկերացմամբ իրենք պատերազմում էին հենց Պարթևական թագավորության դեմ, քանի որ Մեծ Հայքի թագավորությունը հանդիսանում էր Հռոմեական հանրապետության «դաշնակից և բարեկամ»-ն ու պարթևներին օգնում էր, ըստ էության, ներքին կարգով, իսկ պատերազմի դաշտում զգալ, որ Հռոմեական հանրապետության բանակը կռվում է հայ և պարթև ռազմիկների դեմ, դեպքերին ոչ ականատես հեղինակներն անկարող էին: Այս առումով առավել հասկանալի լինելու համար առաջարկում եմ դիտարկել տիպիկ մի օրինակ:

Այսպես, Հովսեփ Փլավիոսը, որպես մ.թ.ա. 41 թվականի դեկտեմբերի Ապամեայի ճակատամարտում հայ-պարթևական բանակի հրամանատար, պարթևական Բակուր արքայազնի հետ միասին հիշատակում է նաև «*սատրապ Բարզափրանեսին*»[1], որպես, ինչպես կարծես ինքնին ենթադրվում է ենթատեքստից, Պարթևական թագավորության պաշտոնյա: Մովսես Խորենացու մոտ, սակայն, նույն «*Բարզափրանեսը*» հիշատակվում է որպես Ռշտունյաց տոհմի նահապետ[2]: Այսպիսով, Պատմահոր տեղեկության բացակայության պայմաններում մեզ, կարծես թե, չէր մնա այլ բան, քան ենթադրել, որ Բարզափրանեսը իրոք եղել է Պարթևական թագավորության մի պաշտոնյա, սակայն Մովսես Խորենացու խիստ տեղին հաղորդումը, որը մեզ է հասցնում հայկական կողմի տեսակետը, ճշգրտում է իրավիճակը՝ Ասորիք պրովինցիա մտած բանակը ղեկավարվում էր ինչպես պարթևական Բակուր արքայազնի, այնպես էլ Բարզափրան Ռշտունու կողմից, ընդ որում նույն Մովսես Խորենացու այլ հաղորդումները, կապված ասորիքյան իրադարձությունների հետ, հստակ հիմքեր են տալիս ասելու, որ Բակուրը գլխավորել է հայ-պարթևական բանակի պարթևական, իսկ Բարզափրանը՝ Հայոց մասը: Այժմ առաջարկում եմ նույն այս օրինակի վրա դիտարկել հունահռոմեական պատմիչների մտածողության համակարգի առանձնահատկությունները:

Իրոք, ինչպես ասվեց, այս խմբի հեղինակների պատկերացմամբ Հռոմեական հանրապետությունը պատերազմում էր բացառապես միայն Պարթևական թագավորության դեմ, քանի որ Մեծ Հայքի թագավորությունը հանդիսանում էր Հռոմեական հանրապետության «դաշնակից և բարեկամ»-ն ու Արտաշատի մ.թ.ա. 66 թվականի պայմանագիրը դեռևս գործում էր: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ, դատելով ըստ ամենայնի, Տիգրան II Մեծը, դրսևորելով դիվանագիտական որոշակի ճկունություն, Պարթևական թագավորությանը օգնում էր, ամենայն հավանականությամբ, մեծապես հենց ներքին կարգով, իսկ այս ամենի առկայության պարագայում նույնիսկ պատերազմի դաշտում էր դժվար լինելու զգալ, որ սեփական ռազմիկները կռվում են հենց հայ ու պարթև ռազմիկների, այլ ոչ թե միայն պարթև ռազմիկների դեմ, բայց չէ՞ որ մենք խոսում ենք դեպքերին ոչ ականատես պատմիչների փոխանցած տեղեկատվության մասին, որոնք արդեն գործնականում և ոչ մի հնարավորություն չունեին իմանալու հայերի մասին: Եվ այսպես, կարծում եմ ժամանակն է ամրագրել, որ, ի դեմս մ.թ.ա. 53 թվականի մայիսի 7-ից 9-ն ընթացած Խառանի ճակատամարտի տրամաբանական արդյունքը հանդիսացած մ.թ.ա. 52 թվականի իրադարձությունների, մենք գործ ունենք իր ակտիվ ռազմաքաղաքական միջոցառումները հետևողականորեն կյանքի կոչելը շարունակող Տիգրան II Մեծի հերթական ձեռնարկումներից ևս մեկի հետ, ընդ որում հենց այդ տարվա իրադարձություններն էին, որ սկիզբ հանդիսացան հետագա տարիներին Ասորիքի ուղղությամբ ռազմավարական նախաձեռնության տիրապետման համար, երբ հայ-

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 13:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19:

պարթևական ուժերը մշտապես հանդիսանում էին նախահարձակ, իսկ հռոմեականը կողմը պաշտպանվողի դիրքում էր:

Մ.թ.ա. 52 թվականի գարնանը Զևգմայի գետանցման մոտ Գայոս Կասսիոսին հաջողվեց պահել դիրքերը, սակայն հաջորդ տարի, երբ Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակին միացավ արդեն նա Պարթևական թագավորության բանակը, պրովինցիայի սահմանը պահելը դարձավ արդեն անհնար: Արդյունքում՝ մ.թ.ա. արդեն 51 թվականի սեպտեմբերին Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարթևական (մոտ 30.000), ինչպես նաև սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 20.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 2.000) թագավորությունների միացյալ հեծելազորի մասերի բաժանված ջոկատները ասպատակեցին Ասորիքը և նահանջեցին[1]: Նույն այս ընթացքում մ.թ.ա. 51 թվականի սեպտեմբերին Բակուր արքայազնի ու Վասակ Մամիկոնյանի միացյալ ռազմական մեքենան Հռոմեական հանրապետության կայազորից պաշարեց Անտիոքը, սակայն, տեխնիկապես պատրաստ չլինելով քաղաքի գրավմանը, ասպատակեց շրջակայքը և նահանջեց[2]:

Ի պատասխան այս ամենի՝ մ.թ.ա. 51 թվականի սեպտեմբերի վերջին Անտիգոնիայի ճ-մ-ում (Հյուսիսային Ասորիք, Անտիոքի մոտ) Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 15.000) դարանը գցեց և անակնկալ հարվածով պարտության մատնեց Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ նահանջող Պարթևական (մոտ 24.000), ինչպես նաև սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 15.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 1.500) թագավորությունների միացյալ հեծելազորին, ընդ որում մարտում զոհվեց նաև սպարապետ Վասակ Մամիկոնյանը[3]: Այս առումով մինչև առաջ անցնելը, սակայն, անհրաժեշտ է անդրադառնալ պատմագիտական գրականության մեջ բացարձակապես ստվերում մնացած մի այնպիսի հարցի, ինչպիսին Կիլիկիայի բնակչության վերաբերմունք էր հայ-պարթևական առաջխաղացմանը:

Գլուխ 37
Կիլիկիան հռոմեա-պարթևական հակամարտությունում

Կիլիկիայի այն ապստամբությունները, որոնք ուղեկցում էին հայ-պարթևական առաջխաղացմանը, խորհրդահայ պատմագիտության կողմից ընդհանրապես ուշադրության չեն արժանացել, ինչի պատճառները միանգամից մի քանիսն են: Այս առումով կարծում եմ, որ իր դերն ուներ, ըստ երևույթին, ամենից առաջ այն հանգամանքը, որ Կիլիկիան ավանդականորեն չի ընկալվել որպես Հայաստանի մաս, սակայն, թերևս, ոչ պակաս դեր է ունեցել նաև այն հանգամանքը, որ նկարագրվող իրադարձությունների համար հիմնական սկզբնաղբյուր հանդիսացող դեպքերի ժամանակակից, իսկ հաճախ նաև մասնակից Մարկոս Ցիցերոնի գործերում նշում չկա կոնկրետ հայերի մասին, այլ խոսվում է ոչինչ չասող անուններով մարդկանց խմբերի մասին: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, սակայն, որ իրականում այդ անունները ոչ թե մարդկանց այդ խմբերի, այլ նրանց բնակության վայրերի անուններն էին, քանզի անտիկ հեղինակները

---

[1] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Կատոնին 15.3»; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.18»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, կոնսուլներին, ընկերներին, ժողովրդական տրիբուններին և սենատին 15.1»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Ապպիոս Կլավդիոս Պուլխարիոսին 3.8»; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 51; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 7; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4:

[2] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Պորցիուս Կատոնին 15.4»; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 28, 29; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 13; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 17:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 29; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 46; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 35; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Ցելիոս Ռուֆոսին 2.10»; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.21»; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 83; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 13; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 17:

(օրինակ՝ Հերոդոտոս, Ստրաբոն, Քսենոֆոն և այլն) հաճախ էին նույն ժողովրդի տարբեր մասերին տարբեր անուններով կոչում, ըստ նրանց բնակության վայրի, երբ արդյունքում տպավորություն էր ստացվում, թե խոսքը տարբեր ցեղերի կամ ժողովուրդների մասին է: Այս դեպքում ևս խոսքը գնում է ոչ թե տարբեր ցեղերի կամ ժողովուրդների, այլ ուղղակի տարբեր գավառների կամ շրջանների բնակիչների մասին:

Ասվածը ավելի ակնառու ներկայացնելու համար պատկերացնենք, հաշվի առնելով, իհարկե, մեր տեղեկացված դարաշրջանի և Հին աշխարհի աշխարհագրական պատկերացումների, մեղմ ասած, աղոտության տարբերությունը, Արցախով, Գեղարքունիքով, Երևանով ու Շիրակով ճանապարհորդող հարգարժան անգլիացուն, որին ամեն մի մարզում տեղի հայերը ներկայանում են ոչ թե որպես հայեր, ինչն, ըստ տեղացիների, պետք է, որ ինքնին հասկանալի լինի, այլ «ղարաբաղցիներ», «քյավառցիներ», «երևանցիներ» և «լենինականցիներ»: Արդյունքում, բավարար պարզաբանումներ չստացած օտարերկրացին իր երկիր վերադառնալով և հուշեր գրելով, կնկարագրի ներկայիս Հայաստանի Հանրապետության բնակչությանը, որպես տարբեր ցեղերի կամ ժողովուրդների մի ամբողջություն, իսկ մի քանի հազար տարի հետո էլ նրա գրվածքը հիմք ընդունելու դեպքում ներկայիս Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքն, օրինակ, բնակեցված կլինի «լենինականցիներ» անվանումով տարօրինակ մի «ցեղով»: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Կիլիկիան հնագույն ժամանակներից ի վեր ուներ հոծ հայկական բնակչություն, իսկ Տիգրանյան դարաշրջանում էլ հայերի դերն այս երկրամասում ավելի էր ընդգծվել: Իհարկե, միամտություն կլիներ պնդել, թե սահմանային, իսկ հաճախ նույնիսկ ոչ միանշանակ հայկական իշխանություն ունեցող այս նահանգում միակ բնակիչները հայեր էին, սակայն այն, որ հայերն այստեղ ծանրակշիռ դեր ունեին, հատկապես մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, կարծում եմ փաստ է:

Գլուխ 38
Կիլիկիայի I ապստամբությունը

Քննարկվող ժամանակահատվածում Կիլիկիան գտնվում էր ծովահենների իշխանության անկումից հետո ձևավորված տեղական մի թագավորության իշխանության տակ, որը վերևում ճիշտ եմ համարել կոչել Տարսոնի թագավորություն: Վերջինս. գտնվելով Հռոմեական հանրապետության ազդեցության և իշխանության ոլորտում, իրենից, ըստ էության, ներկայացնում էր մեկն այն բուֆերային ու կիսաանկախ թագավորություններից, որոնք Սելևկյանների և Պոնտոսի թագավորությունների, ինչպես նաև Տիգրանյան տերության անկումից հետո մանր ցանցով տարածված էին Փոքր Ասիայի արևելքից մինչև Եգիպտոս: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Տարսոնի թագավորության գահին բազմած էր թագավորության հիմնադիր արքա Տարկոնդիմոտոս I-ը (մ.թ.ա. 65-31), որը իրականացնում էր հայ-հռոմեա-պարթևական ուժերի միջև հավասարակշռություն պահպանելու բարդ մի քաղաքականություն: Եվ այսպես, մ.թ.ա. 51 թվականի աշնան սկզբին, երբ Բակուր արքայազնի և Վասակ Մամիկոնյանի ռազմական մեքենան հարված հասցրեց Ասորիքին, ոտքի կանգնեց նաև Կիլիկիայի բնակչությունն ու սկսվեց Կիլիկիայի I ապստամբությունը (մ.թ.ա. 51-49):

Այն բանից հետո, սակայն, երբ հաջողությունը երես թեքեց Բակուրից և Վասակից, այն երես թեքեց ապստամբներից նաև Կիլիկիայում: Արդյունքում՝ նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց Եպիփանիայի ճ-մ-ում (Կիլիկիա, Ալեքսանդրեկ գավառ, Իսոսի ծովից հյուսիս-արևելք) Հռոմեական հանրապետության բանակը հետ մղեց ապստամբներին օգնելու նպատակով Կիլիկիա ներխուժել փորձող դաշնակիցների ևս մեկ բանակի[1], որից հետո նույն տարվա հոկտեմբերի 13-ին Ամանոսյան լեռներում տեղի ունեցած մեկ այլ ճակատամարտում Մարկոս Ցիցերոնի գլխավորած Հռոմեական

[1] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Պորցիուս Կատոնին 15.4»:

հանրապետության բանակը պարտության մատնեց արդեն Տարսոնի թագավորության բանակին՝ անհաջողությամբ ավարտված գիշերային գրոհից հետո հաջողության հասնելով արդեն լուսաբացին իրականացված գրոհի արդյունքում[1]: Մ.թ.ա. 51 թվականի նոյեմբերի սկզբից դեկտեմբերի 17-ը ընկած ժամանակահատվածում նույն Մարկոս Ցիցերոնի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը համառ մարտերով գրավեց Ամանոսյան լեռներում գտնվող Տարկոնդիմոտոս I-ի այնպիսի ամրություններ, ինչպիսիք էինք մինչև վերջ դիմադրած Արանը, Սեպիորեն, Կոմմորիդուն և Պինդենիսը[2]: Ստեղծված պայմաններում առավելագույնը, որ մնաց անելու Տարսոնի թագավորության արքային, դա մ.թ.ա. 51 թվականի դեկտեմբերի վերջին ինչ-որ տեղ Ամանոսյան լեռներում Մարկոս Բիբուլոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակի մի զգալի ջոկատի ոչնչացումն էր[3]:

Մ.թ.ա. 50 թվականին Տարկոնդիմոտոս I-ը, ամրացած լեռներում և սկզբունքորեն խուսափելով ճիշտ ընդհարումից, շարունակեց մնալ ապստամբական դրության մեջ, իսկ մ.թ.ա. արդեն 49 թվականին էլ կրկին ինչ-որ տեղ Ամանոսյան լեռներում տեղի ունեցած ճակատամարտում վերջինս հաղթեց իր դեմ գործող Մետելլոս Սցիպիոնի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակին[4]: Արդեն պարզ էր, սակայն, որ հայ-պարթևական ուժերի հետ քաշման պայմաններում Տարկոնդիմոտոս I-ին չի մնում այլ բան, քան հերթական անգամ կարգի գցել հարաբերությունները պաշտոնական Հռոմի հետ և վերստին ընդունել վերջինիս գերիշխանությունը: Այսպիսով՝ Կիլիկիայի I ապստամբությունը վերջացավ առանց որևէ փաստական արդյունքի, ընդ որում կարևոր է նշել, որ վերևում նկարագրված վերջնարդյունքում մեծապես շահագրգռված էին նաև Հռոմի սենատում, քանի որ նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետության տարածքում կրկին սրվել էին ներքաղաքական հարաբերությունները և գործը հասել էր զինված ընդհարման:

Գլուխ 39
Գնեոս Պոմպեոսի և Հուլիոս Կեսարի պայքարն ու հայերը

Իրոք, Մարկոս Կրասոսի զոհվելուց հետո սրվել էին ամենից առաջ հենց Գնեոս Պոմպեոսի և նույն այս ժամանակ եռապետներից երրորդը հանդիսացող տաղանդավոր զորավար ու քաղաքական գործիչ Հուլիոս Կեսարի հարաբերությունները, ընդ որում, եթե Գնեոս Պոմպեոսը կանգնած էր իրեն արդեն մեծապես սպառած հանրապետական կարգերի պաշտպանի դերում, ապա Հուլիոս Կեսարն ավելի շատ հակված էր դեռևս Լուցիոս Սուլլայի կողմից կյանքի կոչված կառավարման այն մոդելին, որը հանգում էր մեկ անձի բացարձակապետությանը և որն ավելի էր համապատասխանում նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններին: Եվ այսպես, մինչ Գնեոս Պոմպեոսը, ժառանգելով Մարկոս Կրասոսին, ամրանում էր Հռոմեական հանրապետության Արևելքում, Հուլիոս Կեսարը մի քանի տարի տևած համառ պատերազմից հետո գրավեց ներկայիս Ֆրանսիայի տարածքը և, վերջնականապես հնազանդեցնելով տեղի գալլերին, Գալլիան ընդգրկեց Հռոմեական հանրապետության կազմում: Ավելին, Հուլիոս Կեսարը արշավանք կազմակերպեց նաև դեպի Բրիտանիա կղզի, թեև արդյունքում վերջինս չամրացավ

[1] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Պորցիուս Կատոնին 15.4»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, կոնսուլներին, ընկերներին, ժողովրդական տրիբուններին և սենատին 15.1»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, կոնսուլներին, ընկերներին, ժողովրդական տրիբուններին և սենատին 15.2»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Ցելիոս Ռուֆոսին 2.10»; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»:

[2] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Ցելիոս Ռուֆոսին 2.10»; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Պորցիուս Կատոնին 15.4»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Մարկոս Պորսիուս Կատոնին 15.4»; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ցիցերոն», գլուխ 36; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 79:

[3] Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»; Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 31; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Ցիցերոն», գլուխ 36:

[4] Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 31:

տեղում և, այդ կղզու նվաճումը թողնելով սերունդներին, փոխարենը ամուր կերպով ու վերջնականապես Հռոմեական հանրապետության ռազմավարչական համակարգում ընդգրկեց Գալլիան:

Արդյունքում՝ Հռոմեական հանրապետության կազմում հայտնվեցին արագորեն հունահռոմեական մշակույթի ազդեցությանը ենթարկված գալլերի հսկայաքանակ զանգվածներ, որոնք ավելի ուժեղացրին պետական ուշագրավ այս միավորը՝ մեծացնելով նաև Հուլիոս Կեսարի հարվածային հնարավորությունները: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է հատուկ ամրագրել, որ, եթե Գնեոս Պոմպեոսի ձեռքի տակ գտնվող միջոցներն, ամենալայն իմաստով, ավելի շատ էին, ապա Հուլիոս Կեսարի օգտին էր գործում կազմակերպվածության ավելի բարձր մակարդակը, ավելի մեծ կենտրոնացվածությունը և լավ կառավարումը, ինչպես նաև հակառակորդի շարքերում առկա ուժային տարբեր կենտրոնների առկայությունը: Սույն աշխատանքի սահմաններում բնականաբար խնդիր չդնելով համապարփակ վերլուծության ենթարկել երևույթը, որը ռազմաքաղաքական և պատմական գրականության մեջ հիմնովին քննարկված է, այսուհետ անդրադարձ կկատարեմ այս պայքարի միայն այն տարրերին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Հայոց պատմությանը:

Եվ այսպես, մ.թ.ա. արդեն 48 թվականի սկզբի վիճակով մի կողմից Գնեոս Պոմպեոսի գլխավորությամբ Հռոմեական հանրապետությունում գործող հանրապետական կարգի կողմնակիցները, իսկ մյուս կողմից էլ Հուլիոս Կեսարի գլխավորած բացարձակապետության կողմնակիցներն իրար բերեցին սեփական ռազմական մեքենաները՝ հարաբերությունները վերջնականապես պարզելու համար: Մ.թ.ա. 48 թվականին ծավալված վճռական իրադարձություններում, երբ Գնեոս Պոմպեոսը իրար էր բերում այս կամ այն կերպ իրեն համակրող բոլոր ուժերը, վերջինիս աջակցություն ապահովեցին նաև արևելյան տիրակալները, այդ թվում Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Կոմագենեի և Տարսոնի թագավորությունները հայերից, ինչպես նաև Պարթևական, Պոնտոսի, Գալաթական ու մի շարք այլ թագավորությունները՝ օտարներից[1]: Այս առումով հարկ է նշել, որ Գնեոս Պոմպեոսին աջակցելը հանդիսանում էր արևելյան տիրակալների գործնականում միասնական որոշումը, ընդ որում հասկանալի է, որ այդ որոշման ընդունման հարցում վճռական խոսքը պատկանել է Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների գահակալներին: Այս առումով մինչև առաջ անցնելը, սակայն, ցանկանում եմ ևս մեկ ուշագրավ դիտարկում անել:

Հայտնի է, որ մ.թ.ա. 48 թվականին ծավալված վճռական իրադարձություններում Մեծ Հայքի թագավորության բանակը գլխավորել է, ըստ Ապպիանոսի խոսքերի. «*Արտավազդ արքայի կուսակալ Մեգաբադեսը*»՝ մի հաղորդում, որը զարմանալի կերպով անուշադրության է մատնվել: Արդյունքում՝ մինչև առաջ անցնելը ևս մեկ անգամ նշենք, որ, դատելով ըստ ամենայնի, արդեն այս ժամանակաշրջանում հոր հետ միասին գահակալական պարտականությունները կիսում էր նաև Արտավազդը, որի ակտիվ գործունեությունը սկսվել էր սրանից դեռևս առնվազն 5 տարի առաջ և շարունակվում էր նաև այժմ: Հետաքրքիր է, սակայն, նաև Մեգաբադեսի խնդիրը:

Այս անձնավորության մասին, ինչպես արդեն ասվեց, տեղեկացնում է Ապպիանոսը[2] և ժամանակաշրջանին նվիրված պատմագիտական գրականության մեջ[3] սովորաբար ուղղակի փոխանցվում է վերջինիս անունը, որի մասին, եթե նրա անունը ընկալենք հենց այս կերպ, իրոք անհնար է որևէ նոր բան ավելացնելը: Նույն Ապպիանոսը,

---

[1] Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 3, 4; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 71; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 41, գլուխ 55, 63 և այլն:

[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 71:

[3] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 1, Երևան 1977, էջ 157, 161 և այլն; Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 835; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր 1, Երևան 2007, էջ 347, 352; Ադոնց Ն. «Տիգրան Մեծ», Երևան 2010, էջ 38; Մանասերյան Ռ. Լ. «Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ», Երևան 2007, էջ 79 և այլն:

սակայն, մեկ այլ տեղում[1] տեղեկացնում է Տիգրան II Մեծի կողմից Ասորիքի հայկական կուսակալ նշանակված մեկ այլ անձնավորության մասին, որի անունը փոխանցում է «Մագադատես» աղավաղված ձևով: Այս առումով ամենից առաջ նշենք, որ մասնագիտական գրականության մեջ միասնական է կարծիքը, որ իրականում «Մագադատես»-ի փոխարեն պետք է լինի «Բագադատես» և, ի դեմս վերջինիս, մենք գործ ունենք Բագրատունիների տոհմի հերթական մի ներկայացուցչի հետ[2]:

Արդյունքում, թերևս, միայն զարմանալ կարելի է, որ հիշատակված մասնագետներից և ոչ մեկը բավարար ուշադրություն չի դարձրել դիտարկվող իրադարձությունների կապակցությամբ հիշատակվող «*կուսակալ Մեգաբադես*»-ի ու նրա անվան վրա, քանզի, առաջնորդվելով նույն այն տրամաբանությամբ, որն առկա է «Մագադատես-Բագադատես-Բագրատ»-ի պարագայում, կարող ենք վստահությամբ պնդել, որ հիշատակվող անձնավորությունը իրականում Բագրատունյաց տոհմի հերթական ղեկավարն էր, իսկ ավելի կոնկրետ՝ Բագրատի (մ.թ.ա. մոտ 95-50) որդի Անանիան (մ.թ.ա. մոտ 50-30): Անուղղակիորեն այս հանգամանքի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այնպիսի պատասխանատու գործի իրականացումը, ինչպիսին էր Գնեոս Պոմպեոսի մոտ Մեծ Հայքի թագավորության ներկայացումը և վերջինիս ռազմական ուժի ղեկավարումն էր, կարող էր հանձնարարվել, թերևս, միայն երկրի առաջատար պաշտոնյաներից մեկին, որն էլ հենց հանդիսանում էր այդ ժամանակաշրջանում Մեծ Հայքի թագավորությունում մեծ ազդեցություն ունեցող ու թագադիր ասպետի ժառանգական տիտղոսը կրող Բագրատունյաց իշխանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 48 ապրիլի վերջ - հուլիսի 11 – ***<u>Դիրհխիայի ճ-մ</u>*** (Հունաստանի արևմուտք)[3]
>
> Հռոմեական հանրապետության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմի պայմաններում ***<u>Բրինդիզիից</u>*** ծովով առաջխաղացած Հուլիոս Կեսարի բանակը (մոտ 80.000) ափ իջավ Հյուսիս-արևմտյան Հունաստանում՝ Դիրհխիայից հարավ ծովին սեղմելով Գնեոս Պոմպեոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Հռոմեական հանրապետության (մոտ 140.000, այդ թվում 120.000 լեգեոներ, 7.000 հեծյալ, 3.000 նետաձիգ, 1.200 պարսատիկավոր), ինչպես նաև Անանիա Բագրատունու գլխավորությամբ գործող Մեծ Հայքի (մոտ 1.000) և Տաքսիլեսի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (մոտ 500) ու Կոմագենեի (200 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակին: Մոտ 22 կմ երկարությամբ ցցապարիսպ ունեցող խանդակով մի լայն տարածության վրա շրջափակելով հակառակորդին՝ Հուլիոս Կեսարը նախատեսում էր հակառակորդին ծանր դրության մեջ դնել՝ վերջինիս համար առաջացնելով պարենի ու անասնակերի պակաս: Ստացվեց, սակայն, ուղիղ հակառակը, քանզի ակտիվ պաշտպանության անցած Գնեոս Պոմպեոսի բանակը, իր հերթին արդեն սեփական կողմից փորելով գրեթե նույնքան երկարությամբ ցցապարիսպ ունեցող խանդակ և գերիշխանություն վայելելով ծովում, սկսեց առատորեն պարենամթերք ու անասնակեր ստանալ, այն դեպքում, երբ ամայացված երկրամասում գործող հենց Հուլիոս Կեսարի բանակում սկսվեց և աստիճանաբար մեծ չափերի հասավ պարենամթերքի ու անասնակերի պակասը:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 48, 49:
[2] Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 1, Երևան 1977, էջ 450:
[3] Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 2-5, 12, 13, 42-54, 56, 58, 62-73; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կեսար», գլուխ 39; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 65; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 61, 62; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 41, գլուխ 50, 51; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 52; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 15; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 20; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 3, գլուխ 17, մաս 4:

I փուլ – Ապրիլի վերջից մինչև հուլիսի սկիզբ տեղի ունեցան փոփոխակի հաջողությամբ ընթացած մանր մարտեր, որոնք կողմերից ոչ մեկին էական առավելություն չտվեցին:

II փուլ – Հունիսի կեսին Հուլիոս Կեսարի բանակը ծանր մարտերով հետ մղեց վեց ուղղություններով Գնեոս Պոմպեոսի բանակի իրականացրած միաժամանակյա արտագրոհը, որը կորցրեց 2.000 ռազմիկ:

III փուլ – Հուլիսի 10-ին Հուլիոս Կեսարի բանակը հարձակման անցավ ամրացված շրջանի ամենահարավային ուղղությամբ և հասավ որոշակի հաջողությունների, սակայն, այն բանից հետո, երբ ճակատից, ինչպես նաև ծովի կողմից առաջխաղացած Գնեոս Պոմպեոսի բանակը համակցված հարված հասցրեց վերջինիս ու հետ շպրտեց, զերծ մնալով, սակայն, հետապնդումից, ի վերջո նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

Ստեղծված պայմաններում Հուլիոս Կեսարը, հաշվի առնելով իր բանակի օրըստօրե վատթարացող ռազմավարական դրությունը, թողեց հակառակորդի բանակի շրջափակումը և սկսեց նահանջել Թեսալիայի ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 48 թվականի հուլիսի կեսին Գենուս գետի ճ-մ-ում (Հյուսիսային Հունաստան) Հուլիոս Կեսարի նահանջող բանակի (մոտ 75.000) վերջապահը կազմող հեծելազորը (մոտ 3.000) հաղթեց Գնեոս Պոմպեոսի միացյալ բանակի առաջապահը կազմող հեծելազորին (մոտ 5.000)[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

48 օգոստոսի 9 – ***<u>Փարսալի ճ-մ</u>*** (Հյուսիսային Հունաստան)[2]

Հուլիոս Կեսարի բանակը (մոտ 70.000, որից 2.000 հեծյալ) շարժվեց Գնեոս Պոմպեոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Հռոմեական հանրապետության (մոտ 120.000), ինչպես նաև Անանիա Բագրատունու գլխավորությամբ գործող Մեծ Հայքի (մոտ 920) և Տաքսիլեսի գլխավորությամբ գործող Փոքր Հայքի (մոտ 430) ու Կոմագենեի (մոտ 170 հեծյալ) թագավորությունների միացյալ բանակի դեմ, որը, տեղեկանալով հակառակորդի բանակի առաջխաղացման մասին, ամուր դիրքեր գրավեց: Երկարատև հապաղումից հետո կողմերը մարտակարգ ընդունեցին:

Գնեոս Պոմպեոսի բանակի ձախ թևում տեղավորված էին 4 լեգեոններ, նրանցից աջ՝ IV Scythica և VI Ferrata լեգեոնները, վերջիններիցս աջ տեղաբաշխվեցին Կիլիկյան և VI Victrix լեգեոնները, իսկ սրանցից էլ ավելի աջ դիրքեր զբաղեցրին ևս 3 լեգեոններ: Ողջ հեծելազորը, թեթև հետևակը, ինչպես նաև Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը տեղավորվեցին ձախ թևում, քանի որ աջ թևը հուսալիորեն պաշտպանված էր ճահճուտներով ու գետով: Հուլիոս Կեսարի բանակի կենտրոնում տեղավորվեցին 8 լեգեոններ, նրանցից ձախ՝ VIII Mutinensis և IX Triumphalis լեգեոնները, իսկ աջ՝ X Veneria

[1] Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 73, 75:

[2] Հուլիոս Կեսար «Նոթեր, Քաղաքացիական պատերազմ» գիրք 3, գլուխ 76, 77, 80-82, 84-99; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 63-68, 70-73, 75-82; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կեսար», գլուխ 39-45; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Պոմպեոս», գլուխ 66-72; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 41, գլուխ 51-63; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 52; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Հուլիոս», մաս 30, 35 75; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 77, 78; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 15; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 20; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 3, մաս 22; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 8: Այս ճակատամարտի համար աղբյուր է հանդիսանում նաև Լուկիանոսի «Փարսալիա կամ քաղաքացիական պատերազմի մասին» պոեմը, որի գեղարվեստական ու չափածո բնույթի պատճառով այն թարգմանելը և այստեղ բերելը ես հարմար չեմ համարում: Համառոտ միայն նշեմ, որ պոեմում բանաստեղծական հնարքների լայն կիրառմամբ ընդհանուր գծերով պատմվում է այն ամենի մասին, ինչ հայտնի է մնացած աղբյուրներից:

լեգեոնը՝ իրենց օժանդակ ուժերով: Միաժամանակ Հուլիոս Կեսարը թիկունքում թողեց 6 կահորտից (3.000 լեգեոներ) բաղկացած հատուկ պահեստազոր՝ խնդիր դնելով օգնության հասնել սեփական մարտակարգի աջ թևին:

I փուլ – Հուլիոս Կեսարի բանակի կենտրոնը անցավ հարձակման, որի արդյունքում համառ մարտ բռնկվեց: Այս ընթացքում Գնեոս Պոմպեոսի հեծելազորը և թեթև հետևակը, ինչպես նաև Մեծ Հայքի ու Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը հանդիպակաց մարտում փախուստի մատնեցին Հուլիոս Կեսարի հեծելազորին և սկսեցին հետապնդել:

II փուլ – Մարտի մեջ մտան Հուլիոս Կեսարի պահեստազորային կահորտները և փախուստը դադարեցրած հեծելազորի հետ միաժամանակ հզոր հարված հասցրին իրենց աջ թևին հետապնդել փորձող հակառակորդի ուժերին՝ փախուստի մատնելով դրանց, ինչպես նաև այդ թևի մնացած ուժերին:

III փուլ – Ընդհանուր հարձակման անցած Հուլիոս Կեսարի բանակը թևային և ճակատային համակցված հարված հասցրեց Գնեոս Պոմպեոսի բանակի կենտրոնին, ջարդեց ու փախուստի մատնեց վերջինիս, որից հետո գրավեց հակառակորդի ճամբարը:

IV փուլ – Հուլիոս Կեսարի բանակը սկսեց հետապնդել հակառակորդի բանակին և արդեն երեկոյան Գնեոս Պոմպեոսի բանակի մնացորդները դադարեցրեցին դիմադրությունը ու գերի հանձնվեցին:

Ընդհանուր շարքից դուրս եկած 15.000 սպանվածից և 24.000 գերուց հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ 8.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտն, ըստ էության, որոշեց Հռոմեական հանրապետությունում քաղաքական բարձր իշխանության տիրոջ հարցը, թեև պայքարն, ավելի թուլացող չափերով, շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Գնեոս Պոմպեոսը դիմեց փախուստի և փորձ կատարեց ապաստանել Պտղոմյանների թագավորությունում մ.թ.ա. 51 թվականի հունիսին մահացած Պտղոմեոս XII-ին փոխարինած նրա որդի, տասնամյա Պտղոմեոս XIII-ի (մ.թ.ա. 51-47) մոտ, սակայն մ.թ.ա. 48 թվականի սեպտեմբերի 28-ին Պելուզիայում ափ իջնելիս դավադրաբար սպանվեց, քանզի Պտղոմեոս XIII-ի խնամակալները սրանով փորձ էին կատարում ապահովել Հուլիոս Կեսարի բարեհաճությունը: Ինչ վերաբերում է Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Կոմագենեի թագավորությունների բանակների մնացորդներին, ապա դրանք վերադարձան Հայրենիք:

Գլուխ 40
Վերսկսված պայքարը Պոնտոսի համար

Հռոմեական հանրապետության տարածքում մղվող ներքաղաքական ծանր պայքարը իր ազդեցությունն ունեցավ երկրի բոլոր, այդ թվում նաև արևելյան սահմանների կայունության վրա: Որպես հետևանք, հորենական ժառանգությանը վերատիրելու մտայնությամբ, ոտքի կանգնեց նաև Միհրդատ VI Եվպատորի որդի, հոր սպանությունը կազմակերպած և դրանից հետո Ղրիմում Պոնտոսի թագավորության գոյությունը շարունակած Փառնակ II-ը (մ.թ.ա. 63-47):

Արդյունքում՝ մ.թ.ա. 47 թվականի գարնանը Փառնակ II-ի գլխավորությամբ Ղրիմից ծովով արշաված և ափ իջած Պոնտոսի (մոտ 25.000) ու Փոքր Հայքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կապադովկիայի և Գալաթական թագավորությունների տարածքները[1]: Այսպիսով՝ Արևելքում պաշտոնական Հռոմի, ինչպես նաև Արիոբարզանես II-ին մ.թ.ա. 51 թվականին վերջինիս սպանությունից հետո

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 120; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 42, գլուխ 9; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2:

փոխարինած նրա որդի Արիոբարզանես III-ի (մ.թ.ա. 51-42) առջև կրկին հառնեց Պոնտոսի երբեմնի ահեղ թագավորության ուրվականը, ընդ որում իրեն ամուր պահեց հատկապես Դեյոթարոս I Գալաթացին, որը սովոր էր անվերջ մարտերին: Եվ ահա ստեղծված պայմաններում այս անգամ խնդրի լուծմանը ձեռք զարկեց արդեն գործնականում բացարձակ իրավունքներով Հռոմեական հանրապետության տարածքում իշխանության տեր դարձած Հուլիոս Կեսարը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

47 հունիս – ***<u>Նիկոպոլսի ճ-մ</u>***[1]

Դոմիցիոսի գլխավորությամբ ***<u>Կոմենայից</u>*** առաջխաղացած Հռոմեական հանրապետության բանակը (38.200[2], որից 2.200[3] հեծյալ) ճամբար զարկեց քաղաքի մոտակայքում: Ի պատասխան դրա՝ Փառնակ II-ի գլխավորությամբ քաղաքում և նրա շրջակայքում տեղակայված Պոնտոսի (մոտ 35.000) ու Փոքր Հայքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը մոտեցավ թշնամու բանակին և մարտակարգ ընդունեց, ընդ որում հետևազորը, թևերից ու թիկունքից պաշտպանված լինելով խանդակներով, զբաղեցրեց չորս շարք, իսկ հեծելազորն էլ տեղակայվեց թևերում: Մարտակարգ ընդունեց նաև Հռոմեական հանրապետության բանակը՝ աջ և ձախ թևերում տեղակայելով, համապատասխանաբար, XXXVI ու Պոնտական լեգեոնները, իսկ կենտրոնում և պահեստազորում էլ թողնելով, համապատասխանաբար, Գալաթական երկու ու Կիլիկյան մեկ լեգեոնները:

I փուլ – Հռոմեական հանրապետության բանակը անցավ հարձակման և համառ մարտ սկսվեց: Այդ ընթացքում XXXVI լեգեոնը կարողացավ առավելության հասնել և թևանցումով դուրս գալ հակառակորդի թիկունք, սակայն Պոնտական լեգեոնը խանդակն անցնելիս մեծ կորուստներ կրեց ու հետ շպրտվեց: Արդյունքում՝ Հռոմեական հանրապետության բանակի ձախ թևը ծանր պարտություն կրեց և դիմեց փախուստի:

II փուլ – Պոնտոսի և Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը ողջ ճակատով անցավ հակահարձակման, որի արդյունքում հակառակորդի բանակի ձախ թևն ու կենտրոնը վերջնական պարտություն կրեցին և ծանր կորուստներով նահանջեցին, ընդ որում Պոնտական լեգեոնը գրեթե ողջ կազմով ոչնչացավ, իսկ Գալաթական լեգեոնները կորցրին իրենց կազմի կեսից ավելին: Արդյունքում, միանալով Կիլիկյան լեգեոնի հետ, նահանջեց նաև ուժերը կենտրոնացրած և քաջաբար մարտնչող XXXVI լեգեոնը՝ կորցնելով 250 հոգի:

Հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 13.000 զինվոր:

Հաղթանակ տանելով նախորդ ճակատամարտում՝ մ.թ.ա. 47 թվականի հուլիսին Փառնակ II-ի ռազմական մեքենան տիրեց Ամիսոսին[4]: Շուտով, սակայն, վերջինիս դեմ շարժվեցին արդեն Հռոմեական հանրապետության Արևելքում գործող ռազմական մեքենայի հիմնական ուժերը՝ Հուլիոս Կեսարի անձնական գլխավորությամբ:

---

[1] Անանուն «Ալեքսանդրիական պատերազմը», գլուխ 34-40; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 91; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 42, գլուխ 45, 46; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կեսար», գլուխ 50:

[2] Այս թիվը տրվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ սկզբնաղբյուրների, թեև Դոմիցիոսի բանակում կային 6.000 հոգի հաստիքային կազմ ունեցող 5 լեգեոններ, սակայն դրանցից մեկը՝ Կիլիկյանը, կազմված էր երկու լեգեոնների միավորումից, այսինքն՝ ըստ էության կրկնակի կազմ ուներ, և, բացի այդ, գալաթական երկու լեգեոնների կազմից դուրս առկա էր 2.000 հեծյալ:

[3] Այս թիվը տրվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դեյոթարոս I Գալաթացու կազմած երկու լեգեոններում կար 2.000 հեծյալ, իսկ 100-ական հեծյալներ էլ մինչ այդ Դոմիցիոսին էր տրամադրել նա ինքը Արիոբարզանես III-ի հետ միասին:

[4] Անանուն «Ալեքսանդրիական պատերազմը», գլուխ 41; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 120; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 91; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 42, գլուխ 46:

Հետագա իրադարձությունների հետ կապված հարկ է նշել, որ առաջիկա ճակատամարտը մեծապես հայտնի է հենց նրանում տարած հաղթանակը նկարագրած և թևավոր դարձած Հուլիոս Կեսարի հայտնի «*Եկա, տեսա, հաղթեցի*» խոսքերով, սակայն, ինչպես կարող է համոզվել սկզբնաղբյուրներին ուշադիր կերպով ծանոթացած յուրաքանչյուր ոք, հաղթանակը ամենևին էլ այդքան հեշտությամբ ու արագ չի տրվել Հուլիոս Կեսարին, ինչպես ենթադրվում է այդ խոսքերից: Իրոք, ճակատամարտի պահպանված նկարագրությունը ոչ մի կերպ, եթե, իհարկե, ճշմարտությունը լրջորեն չխեղաթյուրվի, արժանի չէ նման խոսքերով որակման, իսկ իրականում էլ սա Հռոմի հետ կապված հերթական պատմական միֆն և հռոմեական քարոզչամեքենայի հերթական քարոզչական հնարքն է, որը Հուլիոս Կեսարի փառքը մեծացնելու ու այն ավելի ընդգծելու մտայնությամբ ի սկզբանե տարածել են նրա կողմնակիցները, իսկ դրանից հետո էլ վերջինս, առանց բավարար ստուգման տեղափոխվելով մեկ աշխատությունից մյուսը, ձեռք է բերել լիակատար ճշմարտացիության հավակնելու իրավունք: Իր հերթին այս միֆը լիովին համահունչ է նկարագրված ժամանակներից մինչև այժմ ակտիվորեն քարոզվող, «*իրենց քանակով մեծապես գերազանցող բարբարոսներին փոքրաթիվ ուժերով հաղթող հռոմեական քաղաքակիրթ, քաջարի և հմուտ զորավարի ու զինվորի*» կերպարը փառաբանող և եվրոպակենտրոնության գաղափարախոսության տարր հանդիսացող ռասիստական մոտեցմանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

47 օգոստոսի 2 – ***Զելայի ճ-մ***[1]

Սակավ ուժերով Եգիպտոսից ծովով արշաված, Կիլիկիայում ափ իջած և Փոքր Ասիայում Հռոմեական հանրապետության ցրված ուժերը կենտրոնացրած Հուլիոս Կեսարի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 30.000) ***Կապադովկիա-Գալաթիա*** երթուղով շարժվեց դեպի հյուսիս ու մոտեցավ Փառնակ II-ի գլխավորած Պոնտոսի (մոտ 30.000) և Փոքր Հայքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակին, որը բանակել էր քաղաքի մոտ գտնվող մի բլրի վրա ու ամրացրել էր այն դաշտային ամրություններով:

I փուլ – Օգոստոսի լույս 2-ի գիշերը Հռոմեական հանրապետության բանակը գրավեց հակառակորդի բանակի կողքին գտնվող մի բլուր և սկսեց այնտեղ ամրացված ճամբար կառուցել: Իր հերթին վաղ առավոտյան, նկատելով այս գործով զբաղված թշնամու բանակի ռազմիկներին, Պոնտոսի և Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակը դուրս եկավ ճամբարից ու շարվեց մարտական կարգով, որից հետո կտրուկ հարձակման անցավ՝ անակնկալի բերելով թշնամու բանակին: Ստեղծված ծանր պայմաններում Հռոմեական հանրապետության բանակը, թեև սկսեց արագորեն և որոշակիորեն խուճապահար կերպով մարտակարգ ընդունել, սակայն, չհասցնելով լիովին շարվել, բռնկված մարտում հայտնվեց ծանր վիճակում՝ սկսելով պարտություն կրել ու նահանջել:

II փուլ – Այս ընթացքում Հռոմեական հանրապետության բանակի աջ թևում գտնվող VI Ferrata լեգեոնին հաջողվեց փախուստի մատնել իր դիմաց գտնվող հակառակորդին և օգնության հասնել կենտրոնին, որից հետո Հռոմեական հանրապետության արդեն ողջ բանակը, կենտրոնացնելով ուժերը, անցավ հակահարձակման ու ծանր պարտության մատնեց հակառակորդին:

III փուլ – Հռոմեական հանրապետության բանակը հարձակվեց Պոնտոսի և

[1] Անանուն «Ալեքսանդրիական պատերազմը», գլուխ 66-77; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 42, գլուխ 46-47; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 120; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 2, գլուխ 91, 92; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կեսար», գլուխ 50; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Հուլիոս», մաս 35; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 2; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 78; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 6, գլուխ 22; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 16:

Փոքր Հայքի թագավորությունների միացյալ բանակի ճամբարի վրա ու, թեև այստեղ վերջինիս պահեստազորը որոշ ժամանակ համառորեն դիմադրեց, հնարավորություն տալով Փառնակ II-ին հեռանալ, սակայն ի վերջո այն ևս պարտություն կրեց և ցրվեց:

Հայերը կորցրին մոտ 2.500, դաշնակիցը՝ մոտ 16.000, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր:

Կրած ծանր պարտությունը, ըստ էության, վերացրեց Փառնակ II-ի կողմից մինչ այդ փայփայված բոլոր ծրագրերը, ընդ որում հայրասպան այս տիրակալը դրանից հետո հեռացավ Ղրիմ և հենց այնտեղ էլ սպանվեց: Ինչ վերաբերում է Հռոմեական հանրապետության բանակին, ապա այն վերջնականապես գրավեց Պոնտոսի և Փոքր Հայքի թագավորությունների տարածքները՝ մեծապես ամրապնդելով Հռոմեական հանրապետության տիրապետությունը ողջ Փոքր Ասիայում:

Գլուխ 41
Կիլիկիայի II ապստամբությունը

Չնայած հյուսիսում Հուլիոս Կեսարի ձեռք բերած հաջողությանը, սակայն, ներքաղաքական ճգնաժամը Հռոմեական հանրապետությունում այնուհանդերձ շարունակվում էր: Արդյունքում խնդիրն իր յուրօրինակ արտացոլումը գտավ նաև Արևելքում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

45 դեկտեմբեր – ***Ապամեայի ճ-մ*** (Ասորիք, Հալեպից մոտ 98 կմ հարավ-արևմուտք)[1]

Ասորիքում և Կիլիկիայում տեղակայված Հռոմեական հանրապետության բանակի շարքերում խիստ սրվեցին հակասությունները Հուլիոս Կեսարի ու հանրապետական կառավարման ձևի կողմնակիցների միջև: Սկսվեցին ընդհարումներ, որից հետո Գայոս Անաստասիոսի գլխավորած Հուլիոս Կեսարի կողմնակիցների բանակը (մոտ 10.000) պաշարեց Ցեցելիոս Բասսիոսի գլխավորությամբ քաղաքում ամրացած հանրապետականների բանակին (մոտ 5.000):

I փուլ – Գայոս Անաստասիոսի բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց քաղաքի ուղղությամբ, սակայն որևէ հաջողության չհասավ:

II փուլ – Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարթևական (մոտ 20.000), Մեծ Հայքի (մոտ 15.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 2.000) թագավորությունների միացյալ բանակը անակնկալ հարձակումով ջախջախեց Գայոս Անաստասիոսի բանակին և, ազատելով հանրապետականների բանակը պաշարումից, շրջակայքը ասպատակելով նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Չնայած առկա որոշակի խնդիրներին՝ մ.թ.ա. 48 թվականից հետո, ինչպես արդեն նշվեց, Հուլիոս Կեսարի իշխանությունը սկզբունքային մակարդակում աստիճանաբար ամրապնդվեց և տաղանդավոր այս առաջնորդին, թերևս, ոչինչ չէր խանգարի դառնալ Հռոմի առաջին կայսրը, եթե մ.թ.ա. 44 թվականի մարտի 15-ին նա զոհ չգնար

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 27; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 14.9»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Գայոս Կասսիոս Լոնգինոսից 12.12»; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 11; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 18:

դավադրությանը, որի կազմակերպմանը իրենց մասնակցությունն էին բերել նրա ամենամտերիմ անձիք, այդ թվում նաև Մարկոս Բրուտոսը: Հուլիոս Կեսարին սպանելիս հանրապետական դավադիրները հույս ունեին պահպանել պետական կառավարման իրենց հարազատ ձևը, սակայն կյանքը ցույց տվեց, որ հասարակության լայն շերտերի շրջաններում նրանք այլևս չեն վայելում բավարար աջակցություն, այսինքն՝ թույլ էր նախկին կարգերի կողմնակիցների սոցիալական բազան: Արդյունքը եղավ կրկին թեժացած քաղաքացիական պատերազմը: Սույն աշխատանքի առջև դրված խնդիրների շրջանակից, սակայն, բնականաբար կրկին դուրս է Հռոմեական հանրապետությունում մղվող քաղաքացիական պատերազմի հերթական այս փուլի ընթացքի ամփոփ շարադրումը և դրա համար ես կբավարարվեմ միայն մի քանի դիտարկումներով, որոնք կապված են հայերի ու Հայաստանի հետ:

Ինչպես արդեն ասվեց, հանրապետականները Հռոմեական հանրապետության սահմաններում բավարար աջակցություն չստացան և այդ հանգամանքը իրեն զգացնել տվեց նաև Արևելքում: Այստեղ, օգտվելով հարմար առիթից, կրկին ոտքի կանգնեց Տարսոնի թագավորության աննկուն տիրակալ Տարկոնդիմոտոս I-ը՝ սկսելով Կիլիկիայի II ապստամբությունը (մ.թ.ա. 43): Արդյունքում, աջակցելով Պուբլիոս Դոլոբելայի գլխավորությամբ հանրապետականների դեմ պայքար մղող ուժերին, մ.թ.ա. 43 թվականի մարտին Հռոմեական հանրապետության և Տարսոնի թագավորության միացյալ բանակը տիրեց Կիլիկիայի արևելքում գտնվող Աեգայի ամրություններին[1]: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը, մ.թ.ա. արդեն 43 թվականի ապրիլ ամսին դաշնակիցները պաշարեցին Անտիոքը, սակայն, չկարողանալով գրավել այն հանրապետականների բանակից, հետ քաշվեցին և առանց մարտերի մտան Լաոդիկեա (Հյուսիսային Ասորիք, Անտիոքից մոտ 85 կմ հարավ-արևմուտք, ծովի ափին): Շուտով, սակայն, Տարկոնդիմոտոս I-ը իր հիմնական ուժերով հետ հեռացավ սեփական թագավորություն և դաշնակիցները կորցրին նախաձեռնությունը[2]:

Խնդիրը կայանում էր նրանում, որ, մինչ դաշնակիցները մարտնչում էին Հյուսիսային Ասորիքում, հանրապետական Լուցիոս Ցիմբերի գլխավորած մի զգալի մեծության բանակ մուտք էր գործել Դաշտային Կիլիկիա, որից հետո սկսել էր առաջանալ դեպի Հյուսիսային Ասորիք, իսկ այդ պարագայում այլ կերպ վարվելը, քան վարվել էր, Տարկոնդիմոտոս I-ի համար կնշանակեր կորցնել սեփական թագավորությունը: Մ.թ.ա. 43 թվականի մայիսին Ադանայի ճ-մ-ում Տարսոնի թագավորության բանակը անակնկալ հարձակումով հաղթեց հանրապետականների մի բանակի, սակայն հետագայում ստիպված եղավ հետ քաշվել դեպի Լեռնային Կիլիկիա[3]: Այս ընթացքում հաջող չէին ընթանում նաև Պուբլիոս Դոլոբելայի գործերը, որը մ.թ.ա. 43 թվականի նույն մայիսին տեղի ունեցած Արադոսի ճ-մ-ում (Հյուսիսային Ասորիք, Լաոդիկեայից մոտ 75 կմ հարավ, ծովի ափին) ևս անհաջողության մատնվեց[4]:

Դատելով ըստ ամենայնի՝ Կիլիկիայի II ապստամբությունը նախաձեռնված չէր հայ-պարթևական ուժերի կողմից և կարելի է ենթադրել, որ այս ապստամբությունը հանդիսանում էր ամենից առաջ հենց Տարկոնդիմոտոս I-ի ու Պուբլիոս Դոլոբելայի անձնական նախաձեռնության արդյունքը: Սրան հակառակ, հայ-պարթևական ուժերը, ավանդականորեն աջակցելով Գնեոս Պոմպեոսի կողմնակիցներին և հանրապետականներին, այս անգամ ևս իրենց աջակցությունը ցույց տվեցին վերջիններիս անունից իրենց դիմած Գայոս Կասսիոսին:

---

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 60; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 30:

[2] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Պուբլիոս Կոռնելիոս Լենտուլոս Սպինտերայից 12.14»; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 30:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 31:

[4] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Գայոս Կասսիոս Պարմացուց 12.13»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, կոնսուլներին, պրետորներին, ժողովրդական տրիբուններին, սենատին հռոմեական ժողովրդին և պլեբսին Պուբլիոս Կոռնելիոս Լենտուլոս Սպինտերայից 12.14»; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 60-62; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 30:

Արդյունքում՝ մ.թ.ա. 43 թվականի հունիսին Լաոդիկեայի ճ-մ-ում Գայոս Կասսիոսի գլխավորած հանրապետականները, ինչպես նաև Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Պուբլիոս Դոլոբելայի գլխավորությամբ Արադոսից նահանջող հռոմեական ու Տարսոնի թագավորության միացյալ բանակին, որից հետո պաշարեց Լաոդիկեան[1]: Հիշատակված քաղաքի պաշարումը տևեց մոտ մեկ ամիս և, թեև այս ընթացքում Ադանայի ճ-մ-ում Տարսոնի թագավորության բանակին հաջողվեց հաղթանակ տանել Ասորիքից առաջխաղացած Լուցիոս Ռուֆոսի գլխավորած հանրապետականների ևս մեկ բանակի նկատմամբ,[2] սակայն Գայոս Կասսիոսը, առավելության հասնելով նաև ծովում, ի վերջո ստիպեց Լաոդիկեաում պաշարված հակառակորդին դադարեցնել դիմադրությունը[3]: Արդյունքում՝ Պուբլիոս Դոլոբելան ինքնասպան եղավ, որից հետո Գայոս Կասսիոսի բանակի հիմնական ուժերը շարժվեցին Կիլիկիա: Ստեղծված պայմաններում միայնակ մնացած Տարկոնդիմոտոս I-ը խոշոր ռազմատուգանքի փոխարեն հաշտություն առաջարկեց և արդյունքում ֆինանսական ու այլ տիպի դժվարությունների առաջ կանգնած հանրապետականները համաձայնեցին դրան: Կիլիկիայի II ապստամբությունը վերջացավ, Տարկոնդիմոտոս I-ը ընդունեց հանրապետականների գերիշխանությունը և որևէ փոփոխություն, ըստ էության, այդպես էլ տեղի չունեցավ:

Գլուխ 42
Գայոս Օկտավիանոսի և Մարկոս Անտոնիոսի պայքարը Մարկոս Բրուտոսի ու Գայոս Կասսիոսի դեմ և հայերը

Հռոմեական հանրապետության տարածքում թեժացող քաղաքացիական պատերազմի հերթական փուլն իր գագաթնակետին, սակայն նաև ավարտին հասավ մ.թ.ա. 42 թվականի վերջին: Այս անգամ ևս, սակայն, խնդիր չունենալով մանրամասն լուսաբանել այս իրադարձությունները՝ դրանց հետ կապված ուղղակի հերթական անգամ ամրագրենք, որ այս անգամ ևս Արևելքի տիրակալները, բնականաբար կյանքի կոչելով հիմնականում Տիգրան II Մեծի և Օրոդես II-ի հղացած քաղաքական որոշումը, լայնորեն աջակցեցին հանրապետականներին[4]: Այս առումով հատկանշական են Ապպիանոսի ընդհանրացնող խոսքերը, թե. «*Ժողովուրդներ Բրուտոսն և Կասսիոսը իրենց ենթարկեցրել էին Մակեդոնիայից մինչև Եփրատ: Բոլոր նրանց, ում հետ, որ մարտնչել էին, նրանք հակեցին իրենց հետ դաշինքի, այնպես որ ի վիճակի էին առանց անհանգստության օգտվել նրանց օգնությունից: Նրանք օգտվում էին արքաների և գահակալների օժանդակությունից, ինչպես նաև՝ պարթևների՝ չնայած որ սրանք թշնամի էին հռոմեացիներին: Վերջիններիս, սակայն, նրանք օգտագործում էին միայն ոչ կարևոր գործերի համար, իսկ առավել կարևոր գործողությունների մասնակցել թույլ չէին տալիս, որպեսզի բարբարոսական և թշնամական այդ ցեղին հռոմեացիների մոտիկությանը չսովորեցնեն*»[5]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 30; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Գայոս Կասսիոս Լոնգինոսին 12.5, 12.4»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Գայոս Կասսիոս Լոնգինոսից 12.12»:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 31:

[3] Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Գայոս Կասսիոս Պարմացուց 12.13»; Ցիցերոն «Նամակներ ընկերներին, Պուբլիոս Կոռնելիոս Լենտուլոս Սպինտերայից 12.14»; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 3, գլուխ 78, գիրք 4, գլուխ 59, 60, 62, 64; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 30; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 69; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 16, գլուխ 2, մաս 9; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 18; Ավլոս Գելլիոս «Աթենական գիշերներ» գիրք 3, գլուխ 9; Սենեկա Ավագ «Կոչեր» գիրք 1, գլուխ 7; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 11: Այս մասին հայտնում է նաև Զոնորասը:

[4] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 133; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 48 և այլն:

[5] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 133:

42 հոկտեմբերի 3-23 – ***Ֆիլիպպեի ճ-մ*** (Հյուսիս-արևելյան Հունաստան, Հունաստանի և Թրակիայի սահմանի մոտ, Էգեյան ծովի ափին)[1]

Հռոմեական հանրապետության տարածքում քաղաքացիական պատերազմ մղող Հուլիոս Կեսարի երբեմնի զինակիցներ Գայոս Օկտավիանոսի և Մարկոս Անտոնիոսի գլխավորած բանակը (108.000, որից 13.000 հեծյալ) շարժվեց Մարկոս Բրուտոսի ու Գայոս Կասսիոսի գլխավորած բանակի (115.000, որից 20.000 հեծյալ), ինչպես նաև վերջինիս կազմում գործող Մեծ Հայքի (մոտ 2.000), Փոքր Հայքի (մոտ 1.000) և Կոմագենեի (մոտ 1.000) թագավորությունների միացյալ բանակի դեմ: Մոտենալով իրար՝ հակառակորդ բանակները ճամբարեցին, ընդ որում ընդդեմ աջ թևում տեղավորված Մարկոս Բրուտոսի բանակի ձախ թևում ճամբարեց Գայոս Օկտավիանոսի բանակը, իսկ Մարկոս Անտոնիոսի բանակն էլ տեղակայվեց աջ թևում՝ դիմակայելով ձախ թևում տեղավորված Գայոս Կասսիոսի բանակին: Ստեղծված իրավիճակում Մարկոս Բրուտոսի և Գայոս Կասսիոսի բանակը ձեռք բերեց դիրքային զգալի առավելություն, քանի որ մի կողմից այն տեղավորված էր իր հակառակորդից ավելի բարձր՝ երկու առանձին բլուրների վրա, որոնց միջատարածքը փակված էր հուսալի պարսպով, մյուս կողմից էլ՝ թիկունքում ուներ ծովափը ու գերիշխում էր ծովում: Բացի այդ Գայոս Կասսիոսի բանակը ձախ թևից պաշտպանված էր ճահիճներով, իսկ Մարկոս Բրուտոսի բանակը աջ թևից՝ լեռներով:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակառակորդի բանակում պարենի սուր պակաս է զգացվում, Մարկոս Բրուտոսն և Գայոս Կասսիոսը որոշեցին ամեն կերպ ձգձգել վճռական ընդհարումը: Իր հերթին, ցանկանալով հակառակորդին այնուհանդերձ մարտ պարտադրել, Մարկոս Անտոնիոսի բանակի հիմնական ուժերը սկսեցին Գայոս Կասսիոսի ճամբարից ձախ գտնվող ճահիճներում անցում պատրաստել՝ փորձելով դուրս գալ հակառակորդի թիկունք և կտրել վերջինիս ծովից: Արդյունքում՝ 10 օր տևած աշխատանքներից հետո վերջիններս, հակառակորդի համար լիովին աննկատ, դուրս եկան նրա թիկունք՝ հայտնվելով ծովի և Գայոս Կասսիոսի բանակի ճամբարի միջև: Թվում էր, թե ձեռք է բերվել մեծ հաջողություն, սակայն վերջին պահին ստեղծված իրավիճակի մասին տեղեկացած Գայոս Կասսիոսի բանակին հաջողվեց ոչնչացրեց ճահիճների մեջ բացված անցումը՝ դրա փոխարեն սկսելով կառուցել հերթական մի հզոր պարիսպ և փորձ կատարելով Մարկոս Անտոնիոսի բանակի հիմնական ուժերին կտրել իրենց իսկ սեփական ճամբարից: Այս իրավիճակում, արդեն չունենալով այլ ելք, Մարկոս Անտոնիոսի բանակի հիմնական ուժերը պատրաստվեցին գրոհել հակառակորդի կառուցած պարիսպը, իսկ այդ ամենի մասին տեղեկացված Գայոս Օկտավիանոսի բանակը և նախկին դիրքերում մնացած Մարկոս Անտոնիոսի բանակի մնացած մասն էլ պատրաստվեցին մարտ սկսել մյուս կողմից՝ օժանդակելով յուրայիններին:

I փուլ – Հոկտեմբերի 3-ին Մարկոս Անտոնիոսի բանակը անցավ գրոհի և համառ մարտերով գրավեց հակառակորդի կողմից պաշտպանվող պարիսպը: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը և հետ շպրտելով ճահճի կողմից հարձակվող հակառակորդին, Մարկոս Անտոնիոսի հիմնական բանակը

[1] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 1, 88, 89, 101, 107-114, 117, 119, 121-131, 133; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Բրուտոս», գլուխ 36, 38-49, 51, 52; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 22; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կեսար», գլուխ 69; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 47, գլուխ 35-39, 42-49; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 70; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 7; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Օգոստոս», մաս 13; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 1, գլուխ 2; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 82, 83; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 18; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 7, գլուխ 3; Ավլոս Գելլիոս «Աթենական գիշերներ» գիրք 3, գլուխ 9; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 12; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 12:

ներխուժեց Գայոս Կասսիոսի ճամբար ու գրավեց այն: Ճամբարում գտնվողները գերի հանձնվեցին, իսկ Գայոս Կասսիոսը դիմեց փախուստի և հետագայում, տեղեկություն չունենալով մարտի ընթացքի մասին ու հուսահատվելով, ինքնասպան եղավ: Այս ընթացքում, սակայն, Մարկոս Բրուտոսի բանակն իր հերթին հզոր հարձակում կազմակերպեց Գայոս Օկտավիանոսի բանակի ու նախկին դիրքերում մնացած Մարկոս Անտոնիոսի բանակի մնացած մասի վրա և, ջարդելով ու փախուստի մատնելով հակառակորդին, գրավեց նրա ճամբարը: Այս ամենի արդյունքում ի վերջո կառավարումը կորցրած և վճռական հաջողության չհասած երկու հակառակորդ բանակներն էլ վերադարձան սեփական ճամբարներ: Մարկոս Անտոնիոսի և Գայոս Օկտավիանոսի բանակը կորցրեց մոտ 20.000, հակառակորդը՝ 8.000 զինվոր:

II փուլ – Ստեղծված պայմաններում Մարկոս Բրուտոսը կրկին սկսեց ձգձգել մարտի վերսկսումը, քանի որ պարենի պակասը հակառակորդի ճամբարում արդեն սպառնալից չափեր էր ընդունում, սակայն, բանակի բարձր հրամանատարության ճնշման տակ, հոկտեմբերի 23-ին վերջինս ի վերջո ստիպված եղավ իր բանակը դուրս հանել ճամբարից և մարտակարգ ընդունել: Նույնը կատարեց նաև հենց դրան սպասող հակառակորդը: Արդեն կեսօրին սկսված մարտում Մարկոս Բրուտոսի գլխավորությամբ գործող նրա բանակի աջ թևը պարտության մատնեց հակառակորդին և սկսեց հետապնդել վերջինիս, սակայն միաժամանակ նրա բանակի ձախ թևը ու կենտրոնը, որոնք, թևային անցում թույլ չտալու համար մեծ ձգվածություն և քիչ խորություն ունեին, հակառակորդի հզոր հարձակման արդյունքում ճեղքվեցին:

III փուլ – Հետապնդելով փախչողներին՝ Գայոս Օկտավիանոսի և Մարկոս Անտոնիոսի բանակը թիկունքից հարձակվեց Մարկոս Բրուտոսի բանակի աջ թևի վրա ու պարտության մատնեց նաև նրան:

IV փուլ – Մարկոս Բրուտոսի բանակը ցրվեց շրջակայքում, իսկ հետագայում էլ իր հիմնական մասով միացավ հաղթողներին:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 25.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր: Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Կոմագենեի թագավորությունների միացյալ բանակը վերադարձավ Հայրենիք, Մարկոս Բրուտոսը ինքնասպան եղավ, իսկ Մարկոս Անտոնիոսը, Գայոս Օկտավիանոսը ու Մարկոս Լեպիդոսը, ստեղծելով երկրորդ եռապետությունը, Հռոմեական հանրապետության տարածքում հասան լիակատար իշխանության:

Գլուխ 43
Ասորիքին հասցված հակահարվածի վերջին փուլը և հայերը

Հենց նոր ավարտված ճակատամարտը Հռոմեական արդեն մահացող հանրապետության քաղաքական երկնակամարում փայլեցրեց Հռոմի ապագա առաջին կայսեր, ինչպես նաև առժամանակ դեռևս վերջինիս զինակից Մարկոս Անտոնիոսի ցոլացող աստղերը, ընդ որում, իշխանության բաժանման յուրօրինակ կանոնների համաձայն, Արևելքը և հանրապետության, ըստ էության, ավելի քան մեկ երրորդը բաժին հասան հենց Մարկոս Անտոնիոսին: Միաժամանակ, սակայն, հանրապետականներին վերջնական պարտության մատնելու և իր իշխանությանը հանձնված տարածքներում վերջնականապես ամրապնդվելու համար Մարկոս Անտոնիոսին դեռևս զգալի ժամանակ էր պետք, մանավանդ որ Արևելքն ընդհանուր առմամբ աջակցել ու այժմ էլ դեռևս աջակցում էր հանրապետականներին, իսկ Մարկոս Անտոնիոսի հայտնվելուն էլ այստեղ առանձնապես ոգևորված չէ, որ սպասում էին:

Իր հերթին, Հռոմեական հանրապետության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմի հերթական ակտիվացման փուլում հսկողությունը երկրի սահմանային

շրջաններում կրկին թուլացել էր, ինչն իր արտացոլումը գտավ նաև Արևելքում: Արդյունքը եղավ դեպի Ասորիք հայ-պարթևական ուժերի հերթական մարտարշավը, որը, սկսվելով մ.թ.ա. 41 թվականի վերջերից, շարունակվեց մ.թ.ա. 40 թվականին և միայն մ.թ.ա. 39 թվականին էր, որ Մարկոս Անտոնիոսը ի վերջո ի վիճակի եղավ գործուն միջոցներ ձեռնարկել:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

41 դեկտեմբեր – ***Ապամեայի ճ-մ***[1]

Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարթևական (մոտ 40.000), ինչպես նաև սպարապետ Բարզափրան Ռշտունու և Գնել Գնունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, կովկասյան ցեղեր) ու Հայոց Միջագետքի (մոտ 2.000) թագավորությունների միացյալ բանակը պաշարեց քաղաքը Դեցիդիոս Սաքսայի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակից (մոտ 10.000):

I փուլ – Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը հաղթեց արտագրոհ իրականացնել փորձող թշնամու բանակին ու փակեց քաղաքում՝ սկսելով վերջինիս պաշարումը:

II փուլ – Քաղաքը պաշարողները, դեպի քաղաք արձակվող նետերին կապած նամակներով իրենց կողմը գրավելով քաղաքի կայազորի շարքերում գտնվող Մարկոս Բրուտոսի կողմնակից զինվորներին, քաղաքի պաշտպանների շարքերում երկպառակտություն առաջացրին: Արդյունքում՝ Դեցիդիոս Սաքսան գիշերով լքեց քաղաքը և ապաստանեց Անտիոքում, հետագայում, փախավ Կիլիկիա, սակայն ի վերջո սպանվեց, իսկ քաղաքն էլ առանց հետագա լուրջ դիմադրության ընկավ:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 1.500, թշնամին՝ մոտ 6.000 զինվոր:

Մ.թ.ա. 41 թվականի դեկտեմբերին Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարթևական (մոտ 35.000), ինչպես նաև սպարապետ Բարզափրան Ռշտունու և Գնել Գնունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 35.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, կովկասյան ցեղեր) ու Հայոց Միջագետքի (մոտ 1.500) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Անտիոքը, Բեյրութը, Ակկան, Սամարիան ու նրանց շրջակայքը, ինչպես նաև Կիլիկիան[2], որից հետո դաշնակից ուժերը որոշեցին օգտվել նաև նույն այս ժամանակ Հուդայի թագավորությունում առկա գահակալական ներքին պայքարից:

Իրոք, հենց մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում էր, որ Հուդայի թագավորության արքա Հյուրկանոս II-ի (մ.թ.ա. 76-41) դեմ պայքար էր սկսել տեղի ազդեցիկ առաջնորդ և տեղում Հռոմեական հանրապետության շահերի ներկայացուցիչ հանդիսացող Հերովդեսը: Արդյունքում՝ մ.թ.ա. 41 թվականի նույն դեկտեմբերի կեսին սպարապետ Բարզափրան Ռշտունու և Գնել Գնունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 35.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, կովկասյան ցեղեր) ու Հայոց Միջագետքի (մոտ 1.500) թագավորությունների միացյալ հեծելազորը Հուդայի թագավորության կայազորից (մոտ 2.000) գրավեց Երուսաղեմը, ընդ որում դա արվեց այն բանից հետո, երբ քաղաքում ընդհարումներ սկսվեցին Հերովդեսի և Հյուրկանոս II-ի կողմնակիցների միջև, ինչի պայմաններում Գնել Գնունին առաջապահ հեծյալ ջոկատով (500) քաղաք մտավ ու, Բարզափրանի մոտ բանակցությունների հրավիրելով Հյուրկանոս II-ին և Հերովդեսի եղբայր Ֆասայել զորավարին, գերեց վերջիններիս[3]: Արդյունքում՝

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 48, գլուխ 24, 25; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 9; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 13; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5:

[2] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 4, գլուխ 63; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Ասորիքյան գործեր», գլուխ 51; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 48, գլուխ 25, 26; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 13; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 13; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19, 22; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 8; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 30; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 5; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5:

[3] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 13; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 13; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 5; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 15; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

Հուդայի թագավորության արքա հռչակվեց Հյուրկանոս II-ի եղբորորդի Անտիգոնոսը (մ.թ.ա. 41-37), սակայն խնդիրը սրանով որևէ կերպ չէր սպառվելու: Իրոք, չհամարելով իրենց գործը տանուլ տված, Անտիգոնոսի հակառակորդները շուտով հակահարձակման անցան, սակայն հարավից Հերովդեսի գլխավորությամբ քաղաքին մոտեցած Հուդայի թագավորության բանակը մ.թ.ա. 40 թվականի հունվարին Երուսաղեմի ճ-մ-ում անորոշ ելք ունեցած մարտում պոկվեց սպարապետ Բարզափրան Ռշտունու և Գնել Գնունու գլխավորած Մեծ Հայքի ու Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ հեծելազորից՝ ի վերջո ամրանալով Մասսադ ամրոցում (Հարավ-արևելյան Պաղեստին, Մեռյալ ծովի հարավ-արևմտյան ափին)[1]:

Մ.թ.ա. 39 թվականի ամռանը Կիլիկիայի արևմուտքում գտնվող Դուռն Կիլիկիո կիրճի ճ-մ-ում Պուբլիոս Բենտիդիոսի գլխավորությամբ բարձրադիր մի վայրում ամուր դիրքեր գրաված Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 10.000), ժամանակին ստանալով համալրում, հզոր հակահարձակումով հետ շպրտեց իր հերթին գրեթե միաժամանակ համալրում ստացած և դեպի վերև հարձակվել փորձող Պարթևական (մոտ 20.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 2.000), Հայոց Միջագետքի (մոտ 500) ու Տարսոնի (մոտ 500) թագավորությունների միացյալ բանակին, որից հետո արդեն փախուստի մատնեց հակառակորդի մնացած ուժերին: Արդյունքում՝ դաշնակիցները նահանջեցին Կիլիկիայից՝ թողնելով այն Հռոմեական հանրապետության առաջխաղացող բանակին[2]:

Իր հերթին, մ.թ.ա. 39 թվականի աշնանն արդեն Կիլիկիայի արևելքում տեղակայված Մալիս կիրճի ճ-մ-ում Պուպեցիոս Սիլոնի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակի առաջապահը (մոտ 10.000) հարձակվեց կիրճում դիրքավորված Պարթևական (մոտ 1.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 900), Հայոց Միջագետքի (մոտ 400) և Տարսոնի (մոտ 400) թագավորությունների միացյալ բանակի վերջապահի վրա, որը, թեև սկզբում հզոր հակահարձակումով հետ շպրտեց թշնամուն, սակայն իր հերթին հարձակման ենթարկվեց Պուբլիոս Բենտիդիոսի գլխավորությամբ մոտեցած Հռոմեական հանրապետության հիմնական բանակի (մոտ 40.000) կողմից ու կրկին պարտություն կրեց: Արդեն երկրորդ այս պարտությունը դաշնակից ուժերին վերջնականապես Կիլիկիա արժեցավ, սակայն դրանից զատ նրանք շուտով ստիպված նահանջեցին նաև Պաղեստինից և Ասորիքից՝ թողնելով այն Հռոմեական հանրապետության առաջխաղացող բանակին[3]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 38 մայիսի 6-9 – ***<u>Գինդարոս լեռան ճ-մ</u>*** (Հյուսիսային Ասորիք, Անտիոքից մոտ 30 կմ հյուսիս-արևելք)[4]
>
> Բակուր արքայազնի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարթևական, ինչպես նաև սպարապետ Բարզափրան Ռշտունու և Գնել Գնունու գլխավորած Մեծ Հայքի ու Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 13; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 48, գլուխ 26:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 48, գլուխ 39; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 9; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 36; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 18; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 18:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 48, գլուխ 41; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 37; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 18; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 20:

[4] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 19-20; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 1, գլուխ 1, մաս 6; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 9; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 42, գլուխ 4; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Կրասոս», գլուխ 33; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 18; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 14, գլուխ 2, մաս 8; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 15; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 16; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 18; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 20:

բանակը (20.000, որից մոտ 2.000 հայ) ***<u>Զևգմայի գետանցով</u>*** անցավ Եփրատը և մայիսի 6-ին մոտեցավ Պուբլիոս Բենտիդիոսի գլխավորությամբ մի բարձրադիր վայրում ճամբարած Հռոմեական հանրապետության բանակին (մոտ 30.000):

I փուլ – Պուբլիոս Բենտիդիոսը, թաքցնելով հիմնական ուժերը ճամբարի խորքում, 3 օր շարունակ սեփական ճամբարում տիրող լիակատար անգործություն, խուճապ և շփոթ ցուցադրեց: Սրան հակառակ՝ դաշնակից հեծելազորը մի քանի օր շարունակ անընդհատ մոտեցավ թշնամու ճամբարին և մանր հարձակումներով ու նետաձգությամբ փորձեց բաց մարտի կանչել թշնամուն, սակայն որևէ արդյունքի չհասավ: Միաժամանակ, սակայն, Պուբլիոս Բենտիդիոսը Պուպեցիոս Սիլոնի գլխավորությամբ ճամբարից աննկատ մի խոշոր ջոկատ (8.000) հանեց և տեղակայեց դեպի լեռան գագաթ տանող ճանապարհի երկու կողմերում:

II փուլ – Մայիսի 9-ին Հռոմեական հանրապետության բանակի մի մասը հարձակվեց հերթական մանր հարձակումը ձեռնարկած թշնամու բանակի վրա և դիմեց կանխամտածված փախուստի՝ իր հետևից տանելով հարձակվողների ուժերին:

III փուլ – Բակուրի գլխավորած Պարթևական թագավորության բանակի հեծելազորը, զարգացնելով հարձակումը բարձունքն ի վեր, ի վերջո ներխուժեց դատարկ թվացող թշնամու ճամբար: Արդեն ճամբարում, սակայն, թշնամու թաքնված ուժերը անակնկալ հարված հասցրին, ընդ որում միաժամանակ թևային հարվածներ հասցրին նաև դարանում տեղակայված ուժերը: Արդյունքում՝ Բակուրի բանակը, փորձելով մարտերով հետ նահանջել, ի վերջո ծանր պարտություն կրեց և գլխովին ջախջախվեց, ընդ որում մարտում ընկավ նաև Բակուրը:

IV փուլ – Ճամբարից դուրս պրծած հեծելազորի մնացորդները նահանջեցին և պոկվեց թշնամուց՝ ի վերջո ապաստանելով Կոմագենեի թագավորության տարածքում:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 15.000, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր հարված հասցրեց Արևելքում գործող Պարթևական թագավորության դաշտային բանակին, որը առժամանակ ուղղակի դադարեց գոյություն ունենալ: Հաջողության նժարը, փաստորեն, զգալի կերպով թեքվեց դեպի Մարկոս Անտոնիոսի ու Հռոմեական հանրապետության կողմը, իսկ այս պարագայում հիմնավորված և ինչ-որ տեղ նաև տրամաբանական էր սպասել, որ Տիգրան II Մեծը կրկին գործի մեջ կդնի իր փայլուն ռազմական մեքենան: Եվ այսպես, պարտության մատնելով Բակուրին, Պուբլիոս Բենտիդիոսը շարժվեց դեպի Հարավային Ասորիք՝ հյուսիսում, սակայն, իր տեղակալ Պուպեցիոս Սիլոնի գլխավորությամբ թողնելով զգալի ուժեր:

«*Հերովդեսը, անցնելով Հռոմ՝ Անտոնիոսի, Կեսարի և սինկլիտոսի առաջ պատմում է իր հավատարմությունը հռոմեացիներին: Դրանից հետո Անտոնիոսից Հրեաստանի թագավոր նշանակվելով՝ նա հռոմեական զորքերով իրեն օգնական է վերցնում Վենտիդիոս սպարապետին, որպեսզի Հայոց հետ պատերազմի և Անտիգոնոսին տապալի: Ասորիք հասնելով՝ նա փախուստի է մատնում Հայոց զորքերը: Սիղոնին թողնելով, որ հայերին դիմադրի Եփրատի մոտ, իսկ Պակարոսին էլ սպանելով՝ Վենտիդիոս սպարապետն ինքը դառնում է Երուսաղեմ՝ Անտիգոնոսի դեմ: Հայերը, սակայն, նորից օգնություն ստանալով պարսիկներից, դիմում են Սիղոնի վրա և հալածում են նրան՝ շպրտելով Վենտիդիոսի մոտ ու անչափ արյունահեղություններ անելով*»[1],- շարունակում է պատումը Պատմահայրը՝ մեզ փոխանցելով, դժբախտաբար, կրկին ստվերում մնացած, սակայն Տիգրան II Մեծի ռազմաքաղաքական գործունեության, ինչպես նաև Հայկական բանակի անցած փառահեղ ուղու դրվագներից ևս մեկը: Եվ

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 19:

այսպես, մ.թ.ա. 38 թվականի մայիսի վերջին Զևգմայի ճ-մ-ում Մեծ Հայքի (մոտ 90.000) և Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը ծանր պարտության մատնեց Հռոմեական հանրապետության համալրված, հաջողությունը զարգացնել փորձող ու Պուպեցիոս Սիլոնի գլխավորությամբ առաջխաղացում իրականացրած բանակին (մոտ 70.000)[1]:

Այս ճակատամարտը խորհրդահայ պատմագիտության կողմից, սակայն, ինչպես և սպասելի էր, հայտարարվել է ոչ իրական, դե իսկ համաշխարհային պատմագիտությունն էլ ընդհանրապես չի ընդունում վերջինիս գոյությունը: Արդյունքում, սակայն, համադրելով այս ճակատամարտը նախորդ իրադարձությունների հետ, հնարավորություն է ստացվում տեղադրել այն իրադարձությունների կոնկրետ շղթայում, որտեղ վերջինս գտնում է իր ճշգրիտ տեղը:

Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը հերթական անգամ հիշենք, որ համաշխարհային պատմագիտությանը հիմնականում խորթ են տարածաշրջանային մի շարք իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ հայտնող հայկական աղբյուրները, կամ էլ վերջիններս, կրկին չարաբաստիկ եվրոպակենտրոնության պատճառով, առնվազն խիստ թերագնահատվել են և չեն օգտագործվել իրադարձությունները լուսաբանելիս: Կոնկրետ այս օրինակի վրա պարզորոշ երևում է, թե ինչպես Մովսես Խորենացուն անտեսելը բերել է իրադարձությունների ամբողջական պատկերի կորստին: Ասվածի կապակցությամբ հատկանշական է, որ Դիոն Կասսիոսը՝ հռոմեական կողմից հիմնական սկզբնաղբյուրը մ.թ.ա. 38 թվականի մայիսի 6-ից 9-ը ընթացած Գինդարոս լեռան ճ-մ-ին անմիջապես հաջորդող իրադարձությունների վերաբերյալ, հռոմեական բանակի որևէ անհաջողության մասին չի հայտնում, սակայն վերջինիս երկում այնուհանդերձ առկա են որոշակի տողատակեր[2]:

Այսպես, Դիոն Կասսիոսը հայտնում է, որ, չնայած պարթևների դեմ ձեռք բերած մեծ հաջողությանը, Մարկոս Անտոնիոսն այնուհանդերձ չափազանց դժգոհ մնաց Պուբլիոս Բենտիդիոսից և վերջինս պաշտոնազրկվեց, ընդ որում դրանից հետո այս զորավարն այլևս երբեք չզբաղեցրեց որևէ զինվորական պաշտոն: Դիոն Կասսիոսը այս հանգամանքը բացատրում է Մարկոս Անտոնիոսի ռազմաքաղաքական խանդով, այն ենթատեքստով, թե վերջինս չէր ցանկանում Պուբլիոս Բենտիդիոսի փառքի հետագա մեծացումը, սակայն կարելի է ենթադրել, որ որոշակիորեն, իսկ գուցե նաև հիմնականում իր դերն է ունեցել հենց այն հանգամանքը, որ Պուբլիոս Բենտիդիոսի ենթակա Պուպեցիոս Սիլոնը, այսինքն՝ փաստացի՝ Պուբլիոս Բենտիդիոսը, ծանր պարտություն էր կրել Գինդարոս լեռան ճ-մ-ին անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում, ինչի հետևանքով Գինդարոս լեռան ճ-մ-ում ձեռք բերված հաջողությունը մեծապես արժեզրկվել էր: Արդյունքում՝ կարելի է լիովին հիմնավորված գալ հետևության, որ մ.թ.ա. 38 թվականի մայիսի 6-ից 9-ը ընթացած Գինդարոս լեռան ճակատամարտում Պարթևական թագավորության բանակի կրած խոշոր պարտությունից հետո Մեծ Հայքի թագավորության բանակն իր հիմնական ուժերով միջամտել է իրադարձություններին և, ինչ որ տեղ Զևգմայի գետանցման մոտակայքում ծանր պարտության մատնելով Հռոմեական հանրապետության բանակին ու փոխելով պատերազմի ընթացքը, կայունացրել է իրավիճակը: Այսպիսով՝ կարծում եմ, որ ժամանակն է իր արժանի տեղում դնել Տիգրան II Մեծի գահակալության նաև ամենավերջին այս իրադարձությունը ևս, երբ Մեծ Հայքի թագավորությունը, ժամանակին իր մասնակցությունը բերելով զարգացող իրադարձություններին, կրկին վերականգնեց ռազմաքաղաքական հավասարակշռությունը Արևելքում: Եվ ահա այժմ ի վերջո ժամանակն է անդրադառնալու Տիգրան II Մեծի մահվան թվականի խնդրին, որի մասին վերևում որոշակիորեն արդեն խոսվեց և որն այժմ արդեն վերջնական պարզաբանման կարիք ունի:

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 20; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 20, 21:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 20, 21:

Գլուխ 44
Տիգրան II Մեծի ծննդյան և մահվան տարիների հիմնախնդիրը

Ինչպես արդեն ասվեց, ավանդականորեն ընդունված է կարծել, որ Տիգրան II Մեծը մահացել է մ.թ.ա. 55 թվականին, ընդ որում, ուղղակի տվյալների բացակայության պայմաններում, այս մասին հետևությունն արվել է բացառապես միայն այն բանի ազդեցության ներքո, որ, համաձայն Մարկոս Ցիցերոնի ճառերից մեկի[1], մ.թ.ա. 56 թվականին Տիգրան II Մեծը դեռ կենդանի էր, իսկ մ.թ.ա. 54 թվականին էլ, երբ Հռոմեական հանրապետության եռապետ Մարկոս Կրասոսը ժամանեց Արևելք, նրա հետ բանակցություններ էր վարում արդեն Տիգրան II Մեծի որդի Արտավազդը: Ահա հենց սրա հիման վրա էլ արվել է հետևություն, որ Տիգրան II Մեծը մահացած պետք է լիներ մ.թ.ա. 55 թվականին: Ողջ այս սխեման, սակայն, հիմք ունի, ըստ էության, միայն հունահռոմեական աղբյուրների անորոշ տվյալներն և, ինչն է ցավալին, կրկին տուրք տալով չարաբաստիկ եվրոպակենտրոնությանը, վերջինս լիովին անտեսում է այն հաղորդումները, որոնք առկա են Մովսես Խորենացու մոտ: Հայոց Պատմահայրը, սակայն, ուղղակիորեն հայտնում է, որ, Տիգրան II Մեծը կենդանի էր մ.թ.ա. դեռևս 40-ական թվականներին և մահացել է միայն դեպի Սամոսատ Մարկոս Անտոնիոս արշավանքից քիչ առաջ, այսինքն՝ մ.թ.ա. 38 թվականի ամռանը[2]:

Վերևում արդեն խոսվեց այն մասին, որ խիստ հավանական է համարել այն հանգամանքը, որ մ.թ.ա. 116 թվականի իրադարձությունների ժամանակ ապագա արքա Տիգրան II Մեծը դեռևս 6-7 տարեկան մի երեխա էր, ընդ որում արվեց պնդում, որ Հայոց այս գահակալը պետք է, որ ծնված լինի մ.թ.ա. 123 թվականին: Այս առումով նշենք, որ վերևում բերված այս սխեման հետաքրքիր կերպով իր հաստատումն է գտնում նաև Տիգրան II Մեծի մահվան թվականի հետ կապված, քանի որ, համաձայն Լուկիանոսի[3], երբ մեր այս մեծագույն արքան մահացավ, նա 85 տարեկան էր: Ինչպես արդեն ասվեց, դեպի Սամոսատ Մարկոս Անտոնիոսի արշավանքը թվագրվում է մ.թ.ա. 38 թվականի աշունով, իսկ դրան էլ նախորդել էր Հայոց ութսունհինգամյա արքայի մահը, այսինքն՝ ակնհայտ է, որ Տիգրան II Մեծը պետք է ծնված լիներ մ.թ.ա. 123 թվականին: Այսպիսով՝ կարելի է կատարել մի պնդում, որ Տիգրան II Մեծը ծնվել է մ.թ.ա. 123 թվականին, իսկ վախճանվել՝ մ.թ.ա. 38 թվականի ամռանը՝ 85 տարեկան հասակում:

Գլուխ 45
Մարկոս Անտոնիոսի արևելյան գործերը և հայերը

Մ.թ.ա. 38 թվականին Տիգրան II Մեծի մահից հետո Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս, որպես արդեն միանձնյա գահակալ, հաջորդեց նրա որդի Արտավազդ III-ը (մ.թ.ա. 38-34), որը հոր մտավոր ունակությունները մեծապես կրկնող, սակայն իր քաղաքական ունակություններով վերջինիս էականորեն զիջող մի անձնավորություն էր: Հայոց թագավորության գահին գահակալի փոփոխությունը, սակայն, իր հերթին համընկավ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած ևս մի քանի այլ փոփոխությունների հետ, որոնք իրենց հետ նոր իրականություն բերեցին:

Իրոք, իր սիրելի որդի և ժառանգորդ Բակուր արքայազնի զոհվելը Պարթևական թագավորության արքա Օրոդես II-ը զուտ մարդկայնորեն շատ ծանր էր տարել և այս պայմաններում, հայրական իր ողջ սերը տեղափոխելով դրան, ըստ էության, անարժան սեփական մյուս որդու վրա, Պարթևական թագավորության արքան մ.թ.ա. 38 թվականի ամենավերջում հրաժարվեց գահից և արքա հռչակեց իր արդեն իսկ հիշատակված մյուս

[1] Ցիցերոն «Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի»:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 22:
[3] Լուկիանոս «Երկարակյացների մասին», գլուխ 15:

որդի Հրահատին՝ Հրահատ IV-ին (մ.թ.ա. 38-30, 29-26, 25-2): Շուտով պարզվեց, սակայն, որ նոր տիրակալը, զուտ իր անձնական հատկանիշներով, ոչ միայն որևէ կերպ արժանի չէր արքայական իշխանության և Պարթևական թագավորության տիպի պետական մի միավոր ղեկավարելուն, այլև նույնիսկ ավելին՝ վերջինս զուրկ էր նույնիսկ որդիական տարրական զգացումներից: Արդյունքում՝ երկրի ղեկը ստանձնելուց հետո գրեթե անմիջապես էլ Հրահատ IV-ը թունավորեց հորը, իսկ երբ թույնը լիարժեք չգործեց, նա ուղղակի հրամայեց խեղդել վերջինիս: Այսպիսով՝ իր հետ հսկայական փոփոխություններ բերած մ.թ.ա. 38 թվականին Մերձավոր Արևելքի երկու հզոր պետական միավորներում էլ տեղի ունեցավ գահակալի փոփոխություն, ընդ որում, եթե ավագ սերնդի ներկայացուցիչներն իրար հետ հիանալի հարաբերություններ ունեին, ապա նույնը որևէ կերպ հնարավոր չէր ասել կրտսեր սերնդի ներկայացուցիչների մասին, ինչն իրեն շատ արագ զգացնել տվեց և դեռ իր հետևանքներն ունենալու էր: Փոփոխությունները, սակայն, սրանով ևս չէին սահմանափակվելու:

Մ.թ.ա. 38 թվականի երկրորդ կեսին, ինչպես արդեն ասվեց, ի վերջո Արևելք ժամանեց նաև Մարկոս Անտոնիոսը, որն արդեն հասցրել էր ուժերի հավասարակշռության, բայց նաև անհաշտ մի մրցակցության վիճակ ստեղծել Գայոս Օկտավիանոսի հետ, ընդ որում, թերևս, արդեն բոլորի համար էլ պարզ էր, որ Հռոմեական հանրապետության տարածքում վաղ թե ուշ իրար էին գալու նաև բարձրագույն իշխանության վերջին այս երկու թեկնածուները: Այս առումով հարկ է նշել, որ Մարկոս Անտոնիոսն իրենից ներկայացնում էր ամենից առաջ հենց առաջնակարգ մի ռազմիկի, իսկ հետո որոշակիորեն նոր միայն՝ միջակ զորավարի կամ, առավել ևս, քաղաքական գործչի դասական մի կերպար, այն դեպքում, երբ Գայոս Օկտավիանոսը վերջինիս ուղիղ հակապատկերն էր: Սրանից էր բխում նաև ռազմաքաղաքական երկու այս գործիչների քաղաքական ձեռագրերի տարբերությունը, քանզի, եթե իր պոռթկումների մեջ անզուսպ և ինքնավստահ Մարկոս Անտոնիոսը հակված էր արագ, կտրուկ, ինքնակամ, իսկ հաճախ նույնիսկ կոպիտ գործողությունների, ապա Գայոս Օկտավիանոսն իրենից ներկայացնում էր խելամիտ, խոհեմ, զգուշավոր ու հեռատես քաղաքական գործչի մի տեսակ, որը, դրան գումարած նաև, իր ձեռքի տակ հավաքած ուներ ունակ անձանց մի իսկական աստղաբույլ: Արդյունքում՝ ակնդետ հետևելով իր հակառակորդին և սպասելով վերջինիս սխալվելուն, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Գայոս Օկտավիանոսը Մարկոս Անտոնիոսի հետ դեռևս առերևույթ բարեկամական հարաբերություններ էր պահպանում: Ահա հենց այս պայմաններում էր, որ Մարկոս Անտոնիոսը ոտք դրեց Արևելք:

Առաջնային խնդիրը, որն Արևելքում սպասում էր Հռոմեական հանրապետության արևելյան հատվածի բացարձակ տիրակալ հռչակված Մարկոս Անտոնիոսի լուծմանը, դա Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների դեմ մղվող պատերազմի շարունակումն էր, որը, սակայն, անակնկալորեն հեշտացել էր մի կողմից հենց վերջերս Պարթևական թագավորության ռազմական մեքենայի կրած ծանր պարտության, իսկ մյուս կողմից էլ երեկվա դաշնակիցների միջև առաջացած լուրջ տարաձայնությունների պատճառով: Վերջին հանգամանքի հետ կապված խնդիրն ամենից առաջ կայանում էր նրանում, որ քաղաքական ասպարեզից հեռացել էին, ինչպես արդեն ասվեց, նախկին հավատարիմ դաշնակիցներ Տիգրան II Մեծն և Օրոդես II-ը, սակայն իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ, ցանկանալով խուսափել հզոր Մարկոս Անտոնիոսի հետ ընդհարումից, Արտավազդ III-ը ինքն էլ հեռացավ Հռոմեական հանրապետության հետ առճակատման վտանգավոր ուղուց ու վերջինիս նկատմամբ փաստացի կրկին դաշնակցային պարտավորություններ ստանձնեց: Եվ վերջապես կարող էր իր դերն ունենալ նաև այն հանգամանքը, որ Հրահատ IV-ը իշխանությունը ստանձնելուն պես ոչ միայն ոչնչացրել էր գահի բոլոր հնարավոր թեկնածուներին և պարթևական ավագանուց շատ շատերին, այլև ի վերջո սպանել էր տվել նաև, ինչպես արդեն ասվեց, սեփական հորը՝ Օրոդես II-ին, մի արարք, որը բնականաբար խիստ բացասաբար անդրադարձավ

Արտավազդ III-ի և Հրահատ IV-ի հարաբերությունների վրա: Այսպիսով՝ Մերձավոր Արևելք ժամանելուն պես Մարկոս Անտոնիոսը մի խոշոր քաղաքական հաջողություն արձանագրեց, ինչն անչափ կարևոր էր այստեղ հետագայում հաջող գործողություններ իրականացնելու համար:

Հաջորդ խնդիրը, որը անակնկալ կերպով ծագեց Մարկոս Անտոնիոսի առջև, դա տեղական մանր թագավորությունների, այդ թվում նաև Պտղոմյանների արդեն իսկ թուլացած և կործանման գնացող թագավորության հետ հարաբերությունների կարգավորումն, ինչպես նաև հենց վերջիններիս միջև նորմալ հարաբերություններ հաստատելն էր: Արդյունքում՝ առաջնային բնույթ ստացան նաև Հուդայի թագավորության հարաբերությունների հստակեցումը Կոմագենեի թագավորության հետ, ընդ որում նույն այս ժամանակ վերջինիս դրությունն ավելի բարդացավ:

Իրոք, Պարթևական թագավորության հզորությունը նույն այս ժամանակ, ինչպես արդեն ասվեց, զգալի հարված էր կրել և դեռևս վերականգման կարիք ուներ, դադարել էր գործել ավանդական դաշինքը Մեծ Հայքի ու Պարթևական թագավորության միջև և այս պայմաններում, ըստ էության, արդեն ոչինչ չէր խանգարում Մարկոս Անտոնիոսին հարված հասցնել այդքան մոտիկ ու հասանելի, ինչպես նաև իրեն այդքան հարուստ ավար խոստացող Կոմագենեի թագավորությանը: Այս առումով հարկ է ավելացնել, որ առաջիկա հարվածում փոքր չէր նաև Հերովդեսի դերը, որը, իր պատճառներն ունենալով չսիրելու Հայոց փոքրիկ այս թագավորությունը, իր հերթին մեծ ավարի ակնկալիք ուներ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

38 աշուն – ***<u>Սամոսատի պաշտպանությունը</u>***[1]

Մարկոս Անտոնիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 140.000) ***<u>Անտիոք-Հայոց Միջագետք-Կոմագենե</u>*** երթուղով ներխուժեց Կոմագենեի թագավորության տարածք և, ենթարկվելով անկանոն հարվածների, պաշարեց քաղաքը Անտիոքոս I-ի գլխավորած Կոմագենեի թագավորության բանակից (մոտ 1.000), ընդ որում թշնամու դեմ ակտիվ գործունեություն ծավալելու նպատակով Հայկական բանակի հիմնական մասը (մոտ 4.000) մնաց քաղաքից դուրս: Այս ընթացքում Հերովդեսի գլխավորած Հուդայի թագավորության բանակը (մոտ 10.000), առաջանալով ***<u>Անտիոք-Հայոց Միջագետք-Կոմագենե</u>*** երթուղով, սկսեց շարժվել Հռոմեական հանրապետության բանակին օգնության: Տեղեկանալով այդ մասին՝ Հայկական բանակը Սամոսատի մոտ գտնվող մի լայն դաշտավայրում դարան դրեց՝ ուժերի մի մասը (500) տեղավորելով դաշտավայրում, իսկ հիմնական մասն էլ տեղաբաշխելով դաշտավայր մտնող կիրճերից մեկի ելքի մոտ գտնվող անտառներում:

I փուլ – Կիրճի ելքի մոտ տեղավորված Հայկական բանակը անակնկալ հարձակվեց երթային վիճակում գտնվող թշնամու բանակի վրա և փախուստի մատնեց նրա առաջին շարքերը, սակայն թշնամու բանակն ի վերջո համալրում ստացավ, որի արդյունքում կարողացավ հետ մղել այս հարձակումը:

II փուլ – Արդեն դաշտավայրում երթը շարունակող Հուդայի թագավորության բանակի վրա հարձակվեց Հայկական հիմնական բանակը, սակայն բռնկված համառ մարտում այս հարձակումը ևս ի վերջո հետ մղվեց, որից հետո թշնամու բանակը հասավ ***<u>Սամոսատ</u>***:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 14, գլուխ 15; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 16; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 22; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 21; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 5; Վիլյամ Մալմսբերցի «Անգլիական արքաների պատմությունը», գիրք 4, գլուխ 2:

Հենց նոր ավարտված ճակատամարտից հետո հաշտություն կնքվեց, Անտիոքոս I-ը խոշոր ռազմատուգանք վճարեց և արդյունքում Հռոմեական հանրապետությունն ու Կոմագենեի թագավորությունը կրկին ճանաչվեցին իրար «դաշնակից և բարեկամ»: Ստեղծված նոր պայմաններում ներքաղաքական անկայունություն ապրող Պարթևական թագավորության աջակցությունից զրկված Արտավազդ III-ը Մեծ Հայքի թագավորության սահմանում հսկայական ուժեր կուտակած Մարկոս Անտոնիոսին իր հերթին ստիպված զիջեց Անդրեփրատյան Ծոփքը, որից հետո արդեն նաև Հռոմեական հանրապետությունն ու Մեծ Հայքի թագավորությունը վերաճանաչվեցին իրար «դաշնակից և բարեկամ»:

Մերձավոր Արևելքի համար շրջադարձային հանդիսացած մ.թ.ա. նույն 38 թվականի վերջում իր մահկանացուն կնքեց նաև Կոմագենեի թագավորության արքա Անտիոքոս I-ը, որին դիվանագիտական բացառիկ ջանքերի գնով մինչ այդ հաջողվել էր հավասարակշռություն պահպանել տարածաշրջանում գործող բոլոր առաջատար ուժերի միջև՝ բացահայտորեն չանցնելով կողմերից և ոչ մեկի կողմը: Անտիոքոս I-ի մահից հետո Կոմագենեի թագավորության գահին նրան հաջորդեց իր ավագ որդի Անտիոքոս II-ը (մ.թ.ա. 38-36), սակայն մ.թ.ա. 36 թվականին Մարկոս Անտոնիոսը վերջինիս գահընկեց արեց և ձերբակալեց, որից հետո Կոմագենեի թագավորության նոր արքա հռչակեց վերջինիս եղբայր Միհրդատ II-ին (մ.թ.ա. 36-20), որը շարունակեց հոր քաղաքականությունը: Ինչ վերաբերում է Անտիոքոս II-ին, ապա նա, մեղադրվելով եղբոր կողմից ուղարկված դեսպանի սպանության մեջ, մ.թ.ա. 29 թվականին Հռոմում մահապատժի ենթարկվեց: Այս առումով մինչև առաջ անցնելը, սակայն, ավելորդ չի լինի մի քանի խոսք ասել նաև տարածաշրջանի մյուս մանր և իրենց հիմնական կազմով պաշտոնական Հռոմին ենթարկված պետական միավորների մասին:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում, թեև արդեն անվերադարձ կերպով ենթակա պաշտոնական Հռոմին, սակայն Փոքր Ասիայում իրենց գոյությունը այնուհանդերձ դեռևս շարունակում էին Գալաթիայի, Կապադովկիայի և Պոնտոսի թագավորությունները: Մ.թ.ա. 40 թվականին Դեյոթարոս I Գալաթացու մահից հետո Գալաթական թագավորությունը սկսեց անկում ապրել, երբ այստեղ սկզբում իշխանության եկավ վերջինիս աղջկա ամուսին Կաստորը (մ.թ.ա. 40-37), որին էլ մ.թ.ա. 36 թվականին փոխարինեց Դեյոթարոս I Գալաթացու մյուս աղջկա որդի Ամյունատեսը (մ.թ.ա. 37-25), ընդ որում վերջինս սրա հետ միաժամանակ նաև Կապադովկիայի թագավորության արքան էր: Ամյունատեսի գահակալման հետ միաժամանակ, սակայն, Գալաթական թագավորության որոշ շրջաններում, կրկին Մարկոս Անտոնիոս որոշմամբ, սկսեց իշխել Կաստորի որդի Դեյոթարոս II-ը (մ.թ.ա. 37-6), իսկ այս ամենի արդյունքում էլ Գալաթական թագավորությունն իրենից, ըստ էության, դադարեց որևէ իրական ուժ ներկայացնել՝ ընդամենը միայն օժանդակ ուժերի հարուստ մի պաշար հանդիսանալով Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի համար: Մ.թ.ա. 42 թվականին պաշտոնական Հռոմի կողմից հղացած դավադրությանը զոհ գնաց անկախ քայլեր ձեռնարկելու մեջ մեղադրվող Կապադովկիայի թագավորության արքա Արիոբարզանես III-ը, որից հետո գահն անցավ նրա եղբայր Արիարաթես X-ին (մ.թ.ա. 42-36), սակայն մ.թ.ա. 36 թվականին Մարկոս Անտոնիոսը նրան փոխարինեց Պոնտոսի թագավորության երբեմի զորավար Արքելայոսի թոռան թոռ Արքելայոսով (մ.թ.ա. 36 - մ.թ 17), ինչից հետո վերացան արդեն նաև Կապադովկիայի թագավորության անկախության նույնիսկ վերջին նշույլները, որոնք մինչ այդ այնուհանդերձ առկա էին: Ինչ վերաբերում է Պոնտոսի թագավորությանը, ապա մ.թ.ա. 47 թվականին Փառնակ II-ի մահից հետո նրան հաջորդեց իր որդի Դարեհը (մ.թ.ա. 47-37), մ.թ.ա. 37 թվականին վերջինիս մահից հետո նրան փոխարինեց իր եղբայր Արշակը (մ.թ.ա. 37), սակայն, այն բանից հետո, երբ Արշակը ևս կնքեց իր մահկանացուն, Մարկոս Անտոնիոսի որոշմամբ Պոնտոսի թագավորության փոքրասիական տիրույթներում գահ բարձրացավ տեղական ազնվատոհմիկ Պոլեմոնը՝ Պոլեմոն I-ը (մ.թ.ա. 37-8), իսկ Ղրիմում էլ իր գոյությունը սկսեց Պոնտոսի թագավորությունից անջատված Բոսպորի թագավորությունը: Այսպիսով՝ Փոքր Ասիայում

իրենց գոյությունը դեռևս պահպանող հելլենիստական երեք թագավորություններն էլ, ըստ էության, հանդիսանում էին Հռոմեական հանրապետության բաղկացուցիչ մասերը և բացարձակապես զուրկ էին ամեն մի ինքնուրույնությունից:

Ինչ վերաբերում է Հռոմեական հանրապետությանը ենթակա հայկական պետական միավորներին, ապա այստեղ տիրում էր հետևյալ դրությունը: Միհրդատ VI Եվպատորի դատն աննահանջ պաշտպանելը շատ ծանր անդրադարձ ունեցավ Փոքր Հայքի թագավորության քաղաքական ապագայի վրա, որի կառավարումը մ.թ.ա. 86 թվականին Արիարաթես VIII-ի մահից հետո մի որոշ ժամանակ իրականացրեց հենց Պոնտոսի ամենազոր արքան ինքն ուղղակիորեն, իսկ վերջինիս տապալումից հետո էլ Գնեոս Պոմպեոսն այս թագավորությունը հանձնեց Դեյոթարոս I Գալաթացուն: Վերջինս, կրկին անձնական ունիայով տիրելով Հայոց այս նահանգին, մ.թ.ա. 44 թվականին այն մի պահ զիջեց Արիոբարզանես III-ին, սակայն մ.թ.ա. 42 թվականին կրկին վերահաստատեց իր իշխանությունը տեղում, իսկ Դեյոթարոս I Գալաթացու մահից հետո էլ Փոքր Հայքի տարածքը անցավ Գալաթական թագավորության արքա Ամյունատեսին: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Տարկոնդիմոտոս I-ի գլխավորությամբ Կիլիկիայում գործող Տարսոնի թագավորությունից առանձնացվեց նահանգի հյուսիսային հատվածը, սակայն այստեղ առանձին գահատոհմ այդպես էլ չհաստատվեց: Տարածքը սկզբում հանձնվեց Պոնտոսի թագավորության արքա Պոլեմոն I-ին, սակայն հետագայում Մարկոս Անտոնիոսն այն նվիրեց Կլեոպատրային: Եվ վերջապես Կոմագենեի թագավորությունում նույն այս ժամանակ շարունակում էր իշխել Միհրդատ II-ը, որը, սակայն, ի համեմատ վերևում նշվածների, այնուհանդերձ ավելի մեծ ինքնիշխանություն ուներ:

Արդյունքում՝ մի կողմ թողնելով Կոմագենեի թագավորության արդեն իսկ լուծված խնդիրը և իր ամուր իշխանության տակ ունենալով արդեն իսկ նկարագրված պետական միավորները, Մարկոս Անտոնիոսի համար առաջնային նշանակություն ստացավ Պարթևական թագավորության աջակցությունից զրկված արդեն Հուդայի թագավորության արքա Անտիգոնոսի խնդիրը, որը կարճատև դիմադրությունից հետո մ.թ.ա. 37 թվականի սկզբին գահընկեց արվեց ու Մարկոս Անտոնիոս հրամանով մահապատժի ենթարկվեց, իսկ Հուդայի թագավորության արքա էլ հռչակվեց մինչ այդ իրեն որպես Հռոմեական հանրապետության հավատարիմ դաշնակից դրսևորած Հերովդեսը՝ Հերովդես I Մեծը (մ.թ.ա. 37-4): Այս առումով Մարկոս Անտոնիոսի համար ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ նա, ըստ էության, իրենով արեց նաև Պտղոմյանների թագավորությունը:

Իրոք, մ.թ.ա. 47 թվականին Պտղոմեոս XIII-ի մահից հետո Պտղոմյանների թագավորության գահին վերջինիս հաջորդել էր իր տասներեքամյա եղբայր Պտղոմեոս XIV-ը (մ.թ.ա. 47-44), որին էլ փոխարինեց վերջին երկուսի քույր Կլեոպատրան (մ.թ.ա. 44-30), որը մինչ այդ էլ գահակալական մեծ հավակնություններ ուներ: Ավելին, իր ժամանակի ամենահմայիչ կանանցից մեկը համարվող Կլեոպատրան, որը ժամանակին հաջողությամբ օգտագործել էր Հուլիոս Կեսարի տղամարդկային զգացումները, այժմ նույն տիպի ազդեցություն ձեռք բերեց նաև Մարկոս Անտոնիոսի նկատմամբ՝ սրանով մի կողմից կտրուկ կերպով մեծացնելով սեփական քաղաքական կշիռը, բայց մյուս կողմից էլ Պտղոմյանների թագավորությունն անվերադարձ կերպով ներառելով Հռոմեական հանրապետության ռազմավարչական համակարգի մեջ: Եվ վերջապես նույն այս ժամանակ, դաշնակցային հարաբերությունները վերահաստատելով Մեծ Հայքի թագավորության հետ, Մարկոս Անտոնիոսը միջոցներ ձեռնարկեց նաև Իբերիայի և Աղվանքի թագավորությունների ուղղությամբ:

Որպես հետևանք, Արտավազդ III-ի և պաշտոնական Հռոմի հարաբերությունների վերականգնումից հետո Մարկոս Անտոնիոսի զորավարներից Կանիդիոս Կրասոսը, մ.թ.ա. 37 թվականին անցնելով Մեծ Հայքի թագավորության տարածքով, ինչպես մի ժամանակ այդ արել էր Գնեոս Պոմպեոսը, Հռոմեական հանրապետությանը

ենթարկեցրեց սկզբում Իբերիայի[1], իսկ հետո արդեն՝ Աղվանքի թագավորությունները[2]: Եվ այսպես, Պարթևական և Ատրպատականի թագավորությունները փաստորեն զրկվեցին միանգամից երեք կարևոր դաշնակիցներից, ընդ որում տարածաշրջանում, ըստ էության, վերստեղծվեց այն դրությունը, որն այստեղ առկա էր մ.թ.ա. 64 թվականին: Արդյունքում՝ Մարկոս Անտոնիոսն ի վերջո ձեռնամուխ եղավ իր Արևելյան արշավանքի նախապատրաստությանը: Այս առումով, սակայն, մինչև առաջ անցնելը, պետք է քննարկել այս իրադարձություններում Հռոմեական հանրապետության բանակի թվաքանակի խնդրը:

Գլուխ 46
Հռոմեական հանրապետության բանակի ընդհանուր թվաքանակի հիմնախնդիրը և Մարկոս Անտոնիոսի բանակի թվաքանակը վերջինիս Արևելյան արշավանքում

Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքում վերջինիս բանակի թվաքանակի մասին ամենահամապարփակ տվյալները հայտնում է Պլուտարքոսը[3], ըստ որի այն ունի հետևյալ կազմը.

- 60.000 լեգեոներներ,
- 23.000[4] ռազմիկներ Մեծ Հայքի թագավորությունից,
- 10.000 իսպանական, գալլական և այլազգի հեծյալներ,
- 30.000 այլ դաշնակից ռազմիկներ:

Այսպիսով, ըստ Պլուտարքոսի, Մարկոս Անտոնիոսի միացյալ բանակը կազմում էր *123.000* ռազմիկ:

Այս առումով արժեքավոր են, սակայն, նաև Տիտոս Լիվիոսի տեղեկությունները, քանզի, ըստ նրա աշխատանքի մեզ հասած մասում պարունակվող տվյալների, խոսքը գնում է 18 լեգեոնների (108.000 լեգեոներ) և 60.000 հեծյալների մասին[5], որից մոտ 5.500-ն, ըստ երևույթին, բաժին է հասնում լեգեոններին որպես սրանց կազմում գործող, իսկ մնացած մասը՝ դաշնակից և օժանդակ ուժերին: Այսպիսով, ըստ նկարագրվող դեպքերին ավելի մոտ կանգնած Տիտոս Լիվիոսի, Մարկոս Անտոնիոսի միացյալ բանակը կազմել է *168.000* ռազմիկ:

Ինչ վերաբերում է այլ հեղինակների բերած թվերին, որոնք, որպես կանոն, խոսում են միայն լեգեոներների մասին, ապա.

- ըստ Ֆլորիանոսի առկա էին 16 լեգեոններ (96.000 լեգեոներ)[6],
- Ավրելիանոս Վիկտորը խոսում է 15 լեգեոնի մասին (90.000 լեգեոներ)[7],
- Վելլեյուս Պատերկուլոսն էլ հիշատակում է 13 լեգեոն (78.000 լեգեոներ)[8]:

Քննարկելով Մարկոս Անտոնիոսի բանակի թվաքանակի հարցն՝ ամենից առաջ պետք է կրկին հաշվի առնել, որ, ինչպես և գրեթե միշտ, «*իրենց քանակով մեծապես գերազանցող բարբարոսներին փոքրաթիվ ուժերով հաղթող հռոմեական քաղաքակիրթ, քաջարի և հմուտ զորավարի ու զինվորի*» կերպարն ամեն կերպ փառաբանել փորձող հունահռոմեական հեղինակները, ցանկանալով կոծկել հռոմեական զենքի պարտության չափերն և դրա խայտառակ բնույթը, հակված են հայտնել որոշակիորեն փոքրացված տվյալներ ու նրանց տեղեկությունները կարելի է լավագույն դեպքում հավաստի համարել միայն դաշնակից ուժերի թվաքանակի տեսանկյունից: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բոլոր հեղինակները իրենց հաղորդումներում, որպես կանոն, նկատի

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 24; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 48:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 33; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 24; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 48:
[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 37:
[4] Այս մասին մանրամասն քիչ հետո:
[5] Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:
[6] Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 10:
[7] Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 85:
[8] Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 82:

ունեն միայն բուն լեգեոներական ուժերը՝ աչքաթող անելով դաշնակիցներին, որոնք, սակայն, զգալի թիվ էին կազմում: Իրոք, իրականում, և դա ակամա խոստովանում են գրեթե բոլոր հեղինակները, Մարկոս Անտոնիոսի բանակն անսովորության աստիճանի մեծ էր: Վերոհիշյալ խնդրի նրբությունները, սակայն, կապված Լուցիոս Լուկուլլոսի Արևելյան արշավանքի հետ, մանրամասն քննարկվեց վերևում, այս առումով կրկնվելը, թերևս, իմաստ չունի և ես ընդամենը կառաջարկեի միայն մինչև առաջ անցնելը ևս մեկ անգամ ծանոթանալ Լուցիոս Լուկուլլոսի արշավանքի կապակցությամբ շարադրված իմ փաստարկներին:

Առաջ անցնելով ավելացնենք, որ ակնհայտ է, որ սեփական Արևելյան արշավանքի հետ հսկայական հույսեր կապող Մարկոս Անտոնիոսին, որն այդ ժամանակ իր տիրապետության այլ ուղղություններում լիակատար խաղաղություն էր վայելում և ի վիճակի էր սեփական բանակի մեծագույն մասը հանել արշավանքի, ոչինչ չպետք է խանգարեր տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային ու սահմանապահ ուժեր թողնելուց հետո արշավանքի դուրս գալ այդ պահին իր տրամադրության տակ գտնվող բանակի մեծագույն մասով, քանի որ հակառակորդին մահացու հարված հասցնելու համար վերջինս նրա դեմ պետք է առավելագույնս մեծ ուժեր հաներ: Այս պայմաններում անմտություն է պնդել, որ Պարթևական թագավորության տարածքում կենաց ու մահու պայքարի պատրաստվող Մարկոս Անտոնիոսը, որին, ի դեպ, ժառանգություն էին հասել Հուլիոս Կեսարի բոլոր ռազմավարական մտահղացումներն և որը մեծապես առաջնորդվում էր հենց դրանցով, խորը թիկունքում կթողներ, ըստ էության, անգործության մատնված սեփական հսկայական ուժեր:

Ըստ մեզ հասած տվյալների, մ.թ.ա. 50-30 թվականներին հռոմեական բանակն ուներ 75 լեգեոն, որոնց կազմում, «Մարիուսյան լեգեոն»-ի հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էին 450.000 լեգեոներներ, ինչպես նաև բավականին մեծ թվով դաշնակիցներ, և ընդհանուր հաշվով այն կազմում էր մոտ 600.000 ռազմիկ: Իր հերթին, կրկին ըստ մեզ հասած տվյալների, մ.թ.ա. 42-31 թվականներին Մարկոս Անտոնիոսի տրամադրության տակ կար մոտ 30 լեգեոն՝ 180.000 լեգեոներների կազմով: Ու, թեև այս պայմաններում անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար բնականաբար կարող էին հատկացվել ավելի քիչ ուժեր, սակայն փոխարենը Մարկոս Անտոնիոսի բանակում էին հաշվվում Հռոմեական հանրապետության «դաշնակից և բարեկամ»-ների ուժերը, որոնք, այս անգամ արդեն հիմք ընդունելով Պլուտարքոսի հաղորդումները, կազմում էին 40.000 ռազմիկ: Բացի այդ պետք է հաշվի առնել նաև Արտավազդ III-ի տրամադրած Մեծ Հայքի թագավորության բանակը՝ 23.000 ռազմիկ: Այսպիսով՝ կարելի բավականին մեծ ճշգրտությամբ պնդել, որ Պարթևական թագավորության տարածք ներխուժած Մարկոս Անտոնիոսի միացյալ բանակը կազմում էր առնվազն *200.000* ռազմիկ, որից մոտ 137.000-ը լեգեոներներ, իսկ 23.000 ու 40.000 ռազմիկ էլ տրամադրել էին համապատասխանաբար հայերն և մնացած դաշնակիցները: Մինչև առաջ անցնելը, սակայն, ևս մի պահ հապաղենք և Մեծ Հայքի թագավորության բանակի թվաքանակի մասին խոսենք մի քիչ մանրամասն:

Ըստ Պլուտարքոսի[1] Մարկոս Անտոնիոսին միացած Արտավազդ III-ն իր հետ բերել էր 13.000 ռազմիկ՝ 6.000 հեծյալ և 7.000 հետևակ: Ավելի ուշ, սակայն, նույն հեղինակը հայտնում է, որ Մարկոս Անտոնիոսի բանակից հեռացած Հայոց արքան իր հետ տարել էր արդեն 16.000 ծանր հեծյալ[2]: Արդյունքում՝ հենց այս հաղորդումն է հիմք տալիս ասելու, որ արդեն Ատրպատականում Մարկոս Անտոնիոսի բանակում կար 23.000 հոգանոց Հայկական բանակ և հեծյալների նախնական թվին ավելացվել էր ևս 10.000-ը:

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 37:
[2] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 50:

Գլուխ 47
Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքը

36 օգոստոսի կես - հոկտեմբեր – ***Փրաասպայի ճ-մ*** (Ատրպատական, Ուրմիա լճից մոտ 132 կմ հարավ-արևելք)[1]

Մարկոս Անտոնիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (200.000, այդ թվում 30.000 պոնտացի, ինչպես նաև 10.000-ական իսպանացի, գալլ, արաբ և հրեա հեծյալներ), արշավելով ***Անտիոք-Կոմագենե-Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Նիկոպոլիս-Սատաղ-Սինորա-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Արտագ-Ճվաշ-Զարավանդ-Հեր-Մարանդ-Գաբիթյան-Թավրիզ-Տրպատունիք*** երթուղով և միանալով Արտավազդ III-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակին (23.000[2], որից 16.000 հեծյալ), արշավանք սկսեց Պարթևական թագավորության դեմ: Շտապելով սկսել մարտական գործողությունները, սակայն, Մարկոս Անտոնիոսը դանդաղ շարժվող ու հետ մնացած պաշարողական տեխնիկան Օպպիոս Ստատիանոսի և Պոլեմոն I-ի գլխավորած Հռոմեական հանրապետության 2 լեգեոնի ու Մեծ Հայքի թագավորության միացյալ բանակի հսկողության տակ թողեց թիկունքում, իսկ ինքը, մնացած բանակով արագորեն առաջ անցավ, ներխուժեց Ատրպատականի թագավորության տարածք և Ատրպատականի թագավորության կայազորից (մոտ 2.000) պաշարեց թագավորության մայրաքաղաք ***Փրաասպան***:

I փուլ – Օգոստոսի կեսին, օգտվելով ստեղծված իրավիճակից, Պարթևական և Ատրպատականի թագավորությունների միացյալ հեծելազորը (50.000) անցավ թշնամու թիկունք ու պաշարողական տեխնիկան հսկող և իր կողմն անցած Հայկական բանակի աջակցությամբ գլխովին ջախջախեց Հռոմեական հանրապետության բանակին՝ ոչնչացնելով նաև պաշարողական տեխնիկան: Օպպիոս Ստատիանոսը զոհվեց, իսկ Պոլեմոն I-ը գերվեց և միայն հետագայում փրկագնով բաց թողնվեց:

II փուլ – Տեղեկանալով ստեղծված իրավիճակի մասին՝ Մարկոս Անտոնիոսի բանակը, թողնելով քաղաքի պաշարումը, շարժվեց Օպպիոս Ստատիանոսի բանակին օգնության, սակայն տեղ հասավ միայն այն բանից հետո, երբ ամեն ինչ վերջացել էր:

III փուլ – Սեպտեմբերին կրկին քաղաքին մոտեցած և անկանոն հարվածների ենթարկվող Մարկոս Անտոնիոս բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց վերջինիս ուղղությամբ, սակայն որևէ հաջողության չհասավ: Ստեղծված պայմաններում Արտավազդ III-ը թողեց քաղաքի պաշարումը և վերադարձավ Հայրենիք:

IV փուլ – Հոկտեմբերին Հռոմեական հանրապետության բանակը սկսեց նահանջել ***Տրպատունիք-Թավրիզ-Գաբիթյան-Մարանդ*** երթուղով՝ այդ ընթացքում ենթարկվելով հետապնդող Պարթևական և Ատրպատականի թագավորությունների միացյալ բանակի 18 հարձակումներին՝ դրա, ինչպես նաև

---

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 37-51; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 24-32; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 10; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 82; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 9, 15, 4; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 5, գլուխ 95, 133; Հուստինոս «Ֆիլիպիկա», գիրք 41, գլուխ 2; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 1, 2; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 85; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 15, գլուխ 3; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 18; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 19; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 7, գլուխ 6; Ֆրոնտին «Ստրատեգամներ» գիրք 2, գլուխ 3, մաս 15; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 48:

[2] Ըստ Պլուտարքոսի (Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ, Անտոնիոս», գլուխ 37) Մարկոս Անտոնիոսին միացած Արտավազդ III-ը իր հետ բերել էր 13.000 ռազմիկ՝ 6.000 հեծյալ և 7.000 հետևակ: Ավելի ուշ, սակայն, (Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ, Անտոնիոս», մաս 50) նույն հեղինակը հայտնում է, որ Անտոնիոսի բանակից հեռացած Հայոց արքան իր հետ տարել էր արդեն 16.000 ծանր հեծյալ: Հենց այս հաղորդումն է հիմք տալիս ասելու, որ արդեն Ատրպատականում մարկոս Անտոնիոսի բանակում կար 23.000 հոգանոց Հայկական բանակ և հեծյալների նախնական թվին ավելացվել էր ևս 10.000-ը:

պարենամթերքի խիստ պակասի ու սկսված ցրտերի պատճառով հայտնվելով բացառիկ ծանր վիճակում: Արդյունքում, դժվարությամբ հասնելով Մեծ Հայքի թագավորության տարածք, Հռոմեական հանրապետության բանակը ազատվեց թշնամու բանակի հետապնդումից և, բավարար չափով պարենավորվելով, ***Գողթն-Նախիջևան-Արած-Ուրծաձոր-Արտաշատ-Մասյացոտն-Զարեհավան-Բագրևանդ-Բասեն-Կարին-Դերջան-Սինորա ամրոց-Սատաղ-Նիկոպոլիս-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Մելիտե Կոմագենե*** երթուղով հեռացավ ***Անտիոք***:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 5.000, Հռոմեական հանրապետության բանակը՝ 44.000 զինվոր:

Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքի հետ կապված հարկ եմ համարում անդրադառնալ նաև Հռոմեական հանրապետության բանակի կորուստների խնդրին: Այս մասին ևս հայտնի են մի շարք տվյալներ:

Գլուխ 48
Մարկոս Անտոնիոսի բանակի կորուստների հիմնախնդիրը վերջինիս Արևելյան արշավանքում

Այս կապակցությամբ ամենամանրամասն տեղեկությունները կրկին պատկանում են Պլուտարքոսին, ըստ որի Փրաասպայից նահանջած և դժվարությամբ Արաքսն անցած Մարկոս Անտոնիոսն այդ պահին արդեն իսկ կորցրել էր իր հետ գտնվող բանակի 24.000 ռազմիկների[1], այն դեպքում, երբ մինչ այդ 2 լեգեոն կամ 12.000 ռազմիկներ էլ զոհվել էին Օպպիոս Ստատիանիոսի հետ միասին, երբ ոչնչացվել էին Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի գումակային ուժերը[2]: Իր հերթին, նահանջը Մեծ Հայքի թագավորության տարածքով շարունակող Մարկոս Անտոնիոսն ի վերջո կորցրեց ևս ոչ մարտական կորուստների զոհ դարձած 8.000 ռազմիկի[3], այնպես որ, ըստ այս հեղինակի, հռոմեական բանակի կորուստը կազմել է 44.000 ռազմիկ: Ինչ վերաբերում է այլ հեղինակների, որոնք այս անգամ ևս, որպես կանոն, ակնհայտորեն խոսում են միայն լեգեոներների մասին, ապա.

- ըստ Ֆլորիանոսի Արաքսն անցնելուց հետո առկա 16 լեգեոններից մնացել էր միայն դրանց մեկ երրորդը[4], այսինքն՝ կորուստները կազմում էին տասն ու կես լեգեոն կամ 63.000 ռազմիկ,
- Լուցիոս Ավրելիանոս Վիկտորը հայտնում է, որ 15 լեգեոններից մնացել էր միայն երրորդ մասը[5], այսինքն՝ կորուստները կազմում էին տասը լեգեոն կամ 60.000 ռազմիկ,
- Վելլեյուս Պատերկուլոսն էլ տեղեկացնում է, որ 13 լեգեոններից մնացել էր միայն քառորդ մասը[6], այսինքն՝ կորուստները կազմում էին մոտ 10 լեգեոն կամ մոտ 60.000 ռազմիկ:

Այս առումով առանձնահատուկ տեղ են գրավում Տիտոս Լիվիոսի տեղեկությունները, որը, ըստ նրա աշխատանքի մեզ հասած մասում պարունակվող տվյալների, առանձին խոսում է 2 լեգեոնների և սրանց կից օժանդակ ուժերի (12.000 զինվոր) կորստի մասին, որից հետո արդեն բանակի ընդհանուր թվում բոլոր տեսակի կորուստների թիվը, հիմնականում այնուհանդերձ դասալքածներին, գնահատում է 308.000 հոգու սահմաններում[7]:

Քննարկելով Մարկոս Անտոնիոսի բանակի կորուստների հարցը վերջինիս Արևելյան արշավանքում՝ կրկին ամենից առաջ պետք է հաշվի առնել, որ «*իրենց*

---

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 50:
[2] Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 82:
[3] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 51:
[4] Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 10:
[5] Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 85:
[6] Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 82:
[7] Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ:

քանակով մեծապես գերազանցող բարբարոսներին փոքրաթիվ ուժերով հաղթող հռոմեական քաղաքակիրթ, քաջարի և հմուտ զորավարի ու զինվորի» կերպարն ամեն կերպ փառաբանել փորձող հունահռոմեական հեղինակները, ցանկանալով կոծկել հռոմեական զենքի պարտության չափերն և դրա խայտառակ բնույթը, հակված են հայտնել որոշակիորեն փոքրացված տվյալներ, ընդ որում նրանց տեղեկությունները, որպես կանոն, վերաբերում են միայն լեգեոներներին: Ինչ վերաբերում է Տիտոս Լիվիոսի տեղեկություններին, ապա դրանք ակնհայտորեն վերաբերում են Մարկոս Անտոնիոսի տրամադրության տակ ընդհանրապես առկա բոլոր ուժերի թվաքանակին, այդ թվում հաշված նաև դաշնակիցներին, այլ ոչ թե կոնկրետ արշավանքում նրա բանակի թվաքանակին, այնպես որ այս հաղորդումը մեզ համար օգտակար է միայն ընդհանուր տեսակետից:

Եվ վերջապես, կոնկրետ Մարկոս Անտոնիոսի պարագայում, պետք է հաշվի առնել, որ այս դեպքում հունահռոմեական հեղինակները տեղեկատվությունը փոխանցում են մոտիվացիոն որոշակի այնուհանդերձ դուալիզիմի պայմաններում, ինչի հետևանքով հայտնվում են ճշմարտությանն ավելի մոտ թվեր, քան, ասենք, Լուցիոս Լուկուլլոսի դեպքում: Բանը կայանում է նրանում, որ Մարկոս Անտոնիոսն իրենից ամենից առաջ ներկայացնում էր Հռոմեական հանրապետության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմում ի վերջո պարտություն կրած մի գործիչ, ընդ որում, որպես կանոն, բոլոր հեղինակներն էլ ստեղծագործել են այն ժամանակ, երբ դեռևս ուժեղ էր Հռոմի առաջին հիմնադիր կայսր Գայոս Օկտավիանոսի հեղինակությունը և, արդյունքում, Մարկոս Անտոնիոսին չէին խնայում ու նրա անհաջողությունների մասին որոշակիորեն չէին քաշվում խոսել: Սրա հետ միաժամանակ էլ մյուս կողմից, սակայն, խոսքը այնուհանդերձ վերաբերում էր հռոմեական պետությանն ու բանակին, որին գովերգել, թեկուզ և ստահոդ տեղեկությունների մակարդակով, բոլորը սովոր էին ու դա նույնիսկ բարձրացված էր քաղաքական անհրաժեշտության մակարդակի: Արդյունքում, լիովին հասկանալի մոտիվացիոն այս առանձնահատկությունների համադրմամբ, Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքի պարագայում մենք ունենք մի իրավիճակ, երբ, եթե այնուհանդերձ չի էլ հայտնվում տեղեկատվություն անհաջողության ողջ ծավալի մասին, ապա ամեն դեպքում մեզ են փոխանցվում ճշմարտությանն ավելի մոտ թվեր, ի համեմատ, այլ դեպքերի, ինչպես ասենք օրինակ՝ Լուցիոս Լուկուլլոսի Արևելյան արշավանքի պարագայում:

Գլուխ 49
Հայ և Պարթև Արշակունիների պայքարի հերթական փուլը Իբերիայի թագավորության համար

Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքի ձախողումից հետո սրվեցին մի կողմից Մեծ Հայքի և Իբերիայի թագավորությունների, իսկ մյուս կողմից էլ՝ Պարթևական ու Ատրպատականի թագավորությունների հարաբերությունները: Ինչ վերաբերում է Աղվանքի թագավորությանը, ապա այն հանդիսանում յուրօրինակ չեզոք մի խաղացող, որն, այնուհանդերձ, ավելի շատ հակվում էր պարթևա-ատրպատականական դաշնակցության օգտին:

Քննարկվող ժամանակաշրջանում Իբերիայի թագավորության գահին բազմած էին միանգամից երկու արքաներ՝ Իբերիայի թագավորության արքա Արտակի որդի Բարտոմ I-ը (մ.թ.ա. 66-35) և վերջինիս աղջկա ամուսին ու գահակից արքա Քարտամ I-ը (մ.թ.ա. 38-35), այսինքն՝ երկրում իշխում էին Մեծ Հայքի Արշակունիների կրտսեր ճյուղը հանդիսացող Վրաց Արշակունիները: Այս պայմաններում Հրահատ IV-ի, ինչպես նաև Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքի կապակցությամբ Հայոց արքա Արտավազդ III-ի հետ հատկապես թշնամական հարաբերություններ ունեցող Ատրպատականի թագավորության արքա, Դարեհ I-ին հաջորդած նրա որդի Արիոբարզանես I-ի (մ.թ.ա. 60-

56) տղա Արտավազդ II-ի (մ.թ.ա. 56-30) արտաքին քաղաքականությունն ուղղվեց Մեծ Հայքի թագավորության դեմ, իսկ ավելի կոնկրետ՝ վերջինս խնդիր ստացավ դուրս բերել Իբերիայի թագավորությունը Մեծ Հայքի թագավորության ազդեցության ոլորտից՝ ենթարկեցնելով այն պարթևա-ատրպատականական ազդեցությանը: Արդյունքում, ինչպես մի ժամանակ էր, երբ Տիգրան II Մեծին հաջողվեց Իբերիայի թագավորության գահից հեռացնել Պարթևական թագավորության ազդեցությանը ենթարկված Փառնավազյանների տոհմի ներկայացուցիչ Փառանջոմին և երկրում հաստատել Արշակունիների կրտսեր ճյուղի իշխանությունը, այնպես էլ այժմ՝ եկավ պատասխան քայլի հերթը, երբ պարթևա-ատրպատականական դաշնակցությունը խնդիր ստացավ վերականգնել ազդեցությունը Իբերիայի թագավորության վրա՝ գահից հեռացնելով Վրաց Արշակունիներին ու քաղաքական իշխանությունը կրկին վերադարձնելով Փառնավազյաններին: Մեր պատմագիտության կողմից ուշադրության չարժանացած այս դրվագը փաստորեն ցույց է տալիս Իբերիայի թագավորությունն իրենց ազդեցություն տակ ունենալու համար Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների միջև մղվող պայքարի հերթական դրվագներից մեկը, երբ Մեծ Հայքի թագավորության գահակալը ձգտում էր Իբերիայի թագավորության գահի վրա պահել Տիգրան II Մեծի որդի Արշակ I Հայի սերնդին, ի դեմս վերջինիս թոռ Բարտոմ I-ի ու սրա փեսա և գահակից Քարտամ I-ի, այն դեպքում, երբ Պարթևական թագավորության ու վերջինիս ազդեցության ոլորտում գտնվող Ատրպատականի թագավորության տիրակալներն էլ ցանկանում էին երկրի ղեկին տեսնել իրենց թեկնածուին՝ մինչև Արշակ I Հայը Իբերիայում իշխած Փառնվազյանների տոհմի հետնորդ, Միհրան I-ի որդի Փառանջոմի թոռ ու հասկանալի պատճառներով Արշակ I Հային և նրա սերնդին ատող Միհրանին:

Մ.թ.ա. 36 թվականի վերջին Պարթևական թագավորության բանակը ներխուժեց Իբերիայի թագավորության տարածք և այստեղի տիրակալները, չունենալով այլ ելք, հետ քաշվեցին լեռներն ու ամրությունները՝ ընտրելով ոչ կանոնավոր պայքարի մարտավարությունը: Արդյունքում՝ հակառակորդը նահանջեց՝ հաջորդ տարի, սակայն, պատրաստվելով նոր հարվածի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

35 – ***Դեբեդ գետի ճ-մ*** (Ուտիք, Ծոբոփոր գավառ)[1]

Իբերիայի գահակից արքաներ Բարտոմ I-ի և վերջինիս փեսա Քարտամ I-ի գլխավորած Իբերիայի (մոտ 20.000) ու Մեծ Հայքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը շարժվեց Պարթևական թագավորության բանակով (մոտ 40.000) դեպի Իբերիայի թագավորություն արշավող գահի թեկնածու Միհրանի դեմ ու ճամբարեց Դեբեդ գետի հյուսիսային ափին: Իր հերթին հակառակորդը, ***Կուր գետի ձախ ափով*** շարժվելով դեպի հյուսիս, ***Հունարակերտ քաղաքի*** (Գուգարք, Ձորափոր գավառ) մոտ անցավ Կուրի աջ ափ և, շարունակելով առաջխաղալ դեպի հյուսիս արդեն ***Կուրի աջ ափով***, ճամբարեց Դեբեդ գետի հարավային ափին:

I փուլ – Հակառակորդ բանակները իրար դեմ կանգնեցին մոտ մեկ ամիս, որի ընթացքում երկու կողմերի ռազմիկների միջև տեղի ունեցան բազում մենամարտեր, որոնցում աչքի ընկավ այդպես էլ իր տասներեք մենամարտերում որևէ հակառակորդի կողմից պարտության չմատնված Միհրանը:

II փուլ – Իբերիայի և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ բանակը մարտակարգ ընդունեց և հարձակման անցավ, սակայն բռնկված խիստ համառ մարտում ծանր պարտություն կրեց, իսկ Բարտոմ I-ը ու Քարտամ I-ը զոհվեցին:

Հայերը կորցրին մոտ 6.000, դաշնակիցը՝ մոտ 11.000, թշնամին՝ մոտ 7.000

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 44; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

զինվոր:

Նախորդ ճակատամարտից հետո զարգացնելով հաջողությունը՝ Միհրանի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը Մեծ Հայքի թագավորության կայազորից գրավեց Շամշուլդե ամրոցը (Գուգարք, Տաշիր գավառի հյուսիս) և, գերելով Քարտամ I-ի այրուն, նահանջեց, որից հետո Իբերիայի թագավորության արքա հռչակվեց Քարտամ I-ի այրու հետ ամուսնացած Միհրանը՝ Միհրան II-ը (մ.թ.ա. 35 - մոտ 20)[1]: Այսպիսով՝ հյուսիսային ուղղությամբ Արտավազդ III-ը խոշոր մի անհաջողություն կրեց, ընդ որում վիճակը հատկապես բարդանում էր նրանով, որ հենց այս ժամանակ էր, որ Մեծ Հայքի թագավորության գլխին կախվել էր նաև հռոմեական ներխուժման ահեղ վտանգը, քանզի լիակատար անհաջողությամբ ավարտված իր Արևելյան արշավանքից հետո սեփական սասանված հեղինակությունը փրկելու և հարուստ ավար ձեռք բերելու մտայնությամբ տարված Մարկոս Անտոնիոսը նույն այս ժամանակ արդեն եռանդուն պատրաստությունների մեջ էր՝ մտնելու Մեծ Հայքի թագավորության տարածք: Այսպես թե այնպես, սակայն հյուսիսային խնդիրը լուծելու համար Արտավազդ III-ին չէին մնում արդեն ոչ ժամանակ և ոչ էլ միջոցներ, իսկ Իբերիայի թագավորության վրա ազդեցության համար մղվող պայքարն էլ փոխանցվեց Արտավազդ III-ի սերունդներին:

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»:

Գլուխ 50
Մարկոս Անտոնիոսի արշավանքը դեպի Մեծ Հայքի թագավորություն

34 ամառ – ***Արմավիրի ճ-մ***[1]

Մարկոս Անտոնիոսը, փորձելով արդարացնել իր Արևելյան արշավանքի անհաջողությունը և դրսևորելով ծայրահեղ ապերախտություն, տեղի ունեցածում սկսեց մեղադրել Արտավազդ III-ին: Դրանից հետո, ցանկանալով գերել Հայոց արքային, վերջինս Մեծ Հայքի թագավորության արքային մի քանի անգամ հրավիրեց բանակցությունների, սակայն Արտավազդ III-ը, կռահելով հակառակորդ զորավարի նենգ մտադրությունները, հրաժարվեց մեկնել նրա մոտ: Ի պատասխան այս ամենի՝ Մարկոս Անտոնիոսի գլխավորած Հռոմեական հանրապետության բանակը (մոտ 150.000), ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության նահանջող բանակի (մոտ 80.000) անկանոն հարվածներին, արշավեց ***Անտիոք-Կոմագենե-Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Եփրատի հովտով Դարանաղի-Երեզ-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Մասյացոտն*** երթուղով և հասավ ***Արմավիրին***: Այս պայմաններում, ցանկանալով վերջ տալ սեփական երկրի ավերմանը, Արտավազդ III-ը ի վերջո ընդունեց բանակցություններ վարելու վերաբերյալ Մարկոս Անտոնիոսի հերթական առաջարկը և իր կնոջ, ինչպես նաև որդի Տիգրանի հետ միասին ներկայացավ Հռոմեական հանրապետության բանակի ճամբար: Այստեղ, սակայն, ինչպես և սպասելի էր, որոշ ժամանակ անց Հայոց արքան ու նրա ընտանիքի անդամները գերվեցին: Ի պատասխան այս ամենի՝ Արտաշես արքայազնի գլխավորած Հայկական բանակը (մոտ 30.000), նպատակ ունենալով ազատել իր արքային ու նրա ընտանիքի անդամներին, մոտեցավ հակառակորդի բանակի ճամբարին:

I փուլ – Հայկական բանակը անակնկալ հարձակվեց Հռոմեական հանրապետության բանակի վրա, սակայն, չհասնելով հաջողության, հետ քաշվեց:

II փուլ – Հռոմեական հանրապետության բանակը կարճ տարածություն հետապնդեց Հայկական բանակին, սակայն վերջինիս հաջողվեց պոկվել հակառակորդից և հեռանալ Պարթևական թագավորության տարածք:

Հայերը կորցրին մոտ 5.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Հասնելով իր առջև դրված նպատակին՝ Մարկոս Անտոնիոսը, Մեծ Հայքի թագավորության խոշոր քաղաքներում թողնելով կայազորային ուժեր, իր հիմնական բանակով հեռացավ եկած երթուղով՝ հետը տանելով Արտավազդ III-ին և նրա ընտանիքի անդամներին, որոնք հետագայում բանտարկվեցին Ալեքսանդրիայում: Նույն այս ժամանակ, սակայն, Մեծ Հայքի թագավորության տարածքում ծավալվեց հզոր դիմադրական պայքար, որի արդյունքում ամբողջական քաղաքներ և ամրոցներ շարունակեցին դիմադրությունը՝ ստեղծելով մի վիճակ, երբ թշնամին փաստորեն տիրապետում էր միայն այն տարածքներին, որտեղ անմիջականորեն գտնվում էին սեփական կայազորային ուժերը:

Արտավազդ III-ի գերվելուց հետո Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց նրա որդի Արտաշեսը՝ Արտաշես II-ը (մ.թ.ա. 34-20), որը մի ուժեղ և եռանդուն անձնավորություն էր՝ ինչ-որ տեղ կրկնող սեփական պապին: Այս առումով հարկ է, սակայն, նշել նաև, որ

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 33, 39, 40, գիրք 50, գլուխ 1; Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 50; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 18; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 15, գլուխ 4; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 82; Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Քաղաքացիական պատերազմներ», գիրք 5, գլուխ 145; Տակիտոս «Տարեգրություններ»,գիրք 2, գլուխ 1,3; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 19; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 23; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 30; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 5; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 15; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 48:

Արտաշես II-ը նույն այս ժամանակ եռանդուն աջակցություն ստացավ Հրահատ IV-ից և Մեծ Հայքի թագավորության նոր գահակալի օրոք երկու թագավորությունների հարաբերությունները վերականգնվեցին, ընդ որում այս հարցում ոչ պակաս դերակատարություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ այս ամենի հետ միաժամանակ իրենց հերթին խորապես թշնամական բնույթ էին ընդունել Հրահատ IV-ի հարաբերությունները Ատրպատականի թագավորության արքա Արտավազդ II-ի հետ:

Խնդիրը կայանում էր նրանում որ Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքից հետո Արտավազդ II-ը Հրահատ IV-ին մեղադրում էր ոչ այնքան եռանդուն գործողությունների, ինչպես նաև պատերազմական ավարը չկիսելու և իր կրած վնասները չփոխհատուցելու մեջ, երբ Ատրպատականի թագավորության տարածքն իրոք զգալի հարվածների էր ենթարկվել: Այսպիսով՝ տարածաշրջանում ձևավորվեցին հերթական դաշինքները, երբ Ատրպատականի թագավորության հետ միասին մի կողմում էին գտնվում Հռոմեական հանրապետությունն իր ենթակա թագավորություններով, իսկ մյուս կողմում էլ գործում էին Պարթևական, Մեծ Հայքի, Իբերիայի, Աղվանքի և Հայոց Միջագետքի թագավորությունները:

Մ.թ.ա. 32 թվականին Փրաասպայի ճ-մ-ում Արտավազդ II-ի գլխավորած Ատրպատականի թագավորության (մոտ 20.000) և Հռոմեական հանրապետության (մոտ 20.000) միացյալ բանակը հաղթեց Արտաշես II-ի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 20.000) ու Հրահատ IV-ի գլխավորած Պարթևական (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակին[1]: Հաջող այս սկիզբը, սակայն, Մարկոս Անտոնիոսի և Արտավազդ II-ի համար շուտով լրիվ հակառակ տեսքն ընդունեց, քանի որ նույն այս ժամանակ Հռոմեական հանրապետության տարածքում սկիզբ առավ արդեն կես դարից էլ ավել այստեղ մլմլացող ներքաղաքական պայքարի վերջին արարը՝ Գայոս Օկտավիանոսը վճռական պայքար սկսեց Մարկոս Անտոնիոսի դեմ:

Գլուխ 51
Մարկոս Անտոնիոսի և Գայոս Օկտավիանոսի պայքարն ու հայերը

Այս առումով հարկ է նշել, որ, ի տարբերություն սեփական արևելյան պաշտոնակցի, խոհեմ Գայոս Օկտավիանոսը վերջին տարիներն իր համար մեծ օգտակարությամբ էր օգտագործել և, եթե Մարկոս Անտոնիոսը դրանք ծախսել էր իրեն վերջին հաշվով անհաջողություններ բերած ու զգալի կորուստներ արժեցած անիմաստ ձեռնարկումների մեջ, ապա Գայոս Օկտավիանոսը միայն ուժեղացել էր՝ մեծացնելով նաև սեփական հեղինակությունը: Արդյունքում՝ Հռոմեական հանրապետության արևմտյան հատվածում իշխող Գայոս Օկտավիանոսին հաջողվեց խորապես դժգոհ տրամադրություններ ստեղծել Մարկոս Անտոնիոսի դեմ, որից հետո արդեն անցնել պատերազմական գործողությունների: Այս պայմաններում Մարկոս Անտոնիոսը, բնականաբար մի կողմ թողած արևելյան հոգսերը, իրար բերեց իր տրամադրության տակ առկա բոլոր ուժերը և դեմ դուրս եկավ Գայոս Օկտավիանոսին: Հենց այս ժամանակ էր, որ, մեկնելով իր կյանքի վերջին և ամենավճռական այդ պայքարին, Մարկոս Անտոնիոսի հրամանով Ալեքսանդրիայում պահվող Արտավազդ III-ը գլխատվեց, ընդ որում որպես այս արարքի հիմնավորում բերվեց այն պատճառաբանությունը, որ Հայոց արքան հրաժարվել էր խոնարհվել Կլեոպատրայի առջև ու նրան տիրուհի հռչակել:

Այս շրջանի հետ կապված վերջին հարցը, որին կցանկանայի թեկուզ և համառոտ անդրադառնալ, վերաբերում է Հռոմեական հանրապետության տարածքում հերթական անգամ ակտիվ ռազմական ընդհարումների տեսք ստացած քաղաքացիական պատերազմի հետ կապված իրադարձություններին: Այս առումով ևս մեկ ու վերջին անգամ ամրագրենք, որ Հռոմեական հանրապետության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմի երրորդ և վճռական այդ արարին հերթական անգամ

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 44:

իրենց մասնակցությունը բերեցին հայկական պետական միավորները և, եթե այս անգամ հասկանալի պատճառներով չի խոսվում Մեծ Հայքի թագավորության կամ Հայոց արքայի ուղարկած ուժերի մասին, ապա միանշանակ է, որ Մարկոս Անտոնիոսի բանակի կազմում այս իրադարձություններին իրենց մասնակցությունն են բերել Կոմագենեի թագավորության արքա Միհրդատ II-ի գլխավորած Կոմագենեի, Տարկոնդիմոտոս I-ի գլխավորած Տարսոնի, ինչպես նաև Պոլեմոն I-ի հպատակ Փոքր Հայքի թագավորությունների բանակները, ընդ որում ակտիվ գործողությունների հասկանալի պատճառով մասնակցել են, թերևս, միայն Տարսոնի թագավորության ուժերը, ի դեմս մարտունակ նավատորմի: Այսպիսով՝ կարելի է ամրագրել, որ մ.թ.ա. I դարի երկրորդ կեսում Հռոմեական հանրապետության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմի երեք վճռական ճակատամարտերին էլ իրենց մասնակցությունն են բերել հայերն և հայկական պետական միավորները, մի հանգամանք, որը գրականության մեջ այնքան էլ ուշադրության չի արժանացել:

Մ.թ.ա. 31 թվականի սեպտեմբերի 2-ին Ակցիումի ծովամարտում (Հյուսիս-արևմտյան Հունաստան) Գայոս Օկտավիանոսի գլխավորած բանակի (92.000, որից 12.000 հեծյալ, 260 նավ) նավատորմը հաղթեց Մարկոս Անտոնիոսի բանակի (135.000, որից 12.000 հեծյալ, 370 նավ), ինչպես նաև վերջինիս կազմում գործող Փոքր Հայքի (մոտ 1.000), Միհրդատ II-ի գլխավորած Կոմագենեի (մոտ 2.000) և Տարկոնդիմոտոս I-ի գլխավորած Տարսոնի (մոտ 1.000) թագավորությունների միացյալ բանակի նավատորմին, որից հետո Մարկոս Անտոնիոսի ցամաքային բանակը դադարեցրեց դիմադրությունն ու իր հիմնական մասով անցավ հաղթողի կողմը, իսկ Փոքր Հայքի, Կոմագենեի և Տարսոնի թագավորությունների բանակները վերադարձան Հայրենիք[1]: Արդյունքում՝ ամեն ինչ վերջնականապես կորցրած Մարկոս Անտոնիոսը իր վերջին կողմնակիցների հետ միասին Կլեոպատրայի ուղեկցությամբ հեռացավ Պտղոմյանների թագավորության տարածք, սակայն, Գայոս Օկտավիանոսի ռազմական մեքենայի առաջխաղացման պայմաններում չցանկանալով հանձնվել հակառակորդին, ի վերջո նույն Կլեոպարտայի հետ միասին էլ հենց ինքնասպան եղավ:

Այսպիսով՝ Մարկոս Անտոնիոսը և Կլեոպատրան հեռացան քաղաքական թատերաբեմից, Պտղոմյանների թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ անցավ Հռոմեական հանրապետությանը: Իր վերջին էր մոտենում, սակայն, նաև Հռոմեական հանրապետության տարածքում գործող հանրապետական կարգերի ժամանակը, քանի որ հսկայական այն տերությունը, որի վերածվել էր մի ժամանակ ընդամենը միայն փոքրիկ մի քաղաք հանդիսացող Հռոմը, կառավարման համառորեն նոր մի ձև էր պահանջում: Արդյունքում՝ Գայոս Օկտավիանոսը, որը Մարկոս Անտոնիոսի կործանումից հետո, ըստ էության, արդեն իսկ դարձել էր Հռոմեական հանրապետության անսահմանափակ մի տիրակալ, իր նոր այդ կարգավիճակին ի վերջո նաև համապատասխան իրավական ձև ապահովեց: Որպես հետևանք՝ մ.թ.ա. 27 թվականին Հռոմեական հանրապետությունը վերջնականապես վերափոխվեց Հռոմեական կայսրության, որի առաջին կայսր հռչակվեց նույն Գայոս Օկտավիանոսը կամ, ինչպես իր նոր կարգավիճակում արդեն կոչում էին նրան՝ կայսր Օգոստոսը (մ.թ.ա. 27 - մ.թ. 14):

Հռոմեական հանրապետության տարածքում ընթացող ներքաղաքական ծանր ճգնաժամը հերթական անգամ իր դրական ազդեցությունն ունեցավ Արևելքում, իսկ Մարկոս Անտոնիոսի կործանումն էլ, մանավանդ այն բանի ֆոնին, որ Գայոս Օկտավիանոսը այստեղ ակտիվ չէր և, համենայն դեպս գոնե առժամանակ, լավ չէր պատկերացնում իրավիճակն Արևելքում, հնարավորություն տվեց Հռոմեական դեռևս

[1] Պլուտարքոս «Համեմատական կենսագրություններ», «Անտոնիոս», գլուխ 60-68; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 50, գլուխ 6, 11-15; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 84-85; Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 11; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Օգոստոս», մաս 17; Տիտոս Լիվիոս «Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից սկսած», ցանկ; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 19; Ավրելիանոս Վիկտոր «Հայտնի մարդկանց մասին», գլուխ 85; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 7, գլուխ 7; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 1, գլուխ 20; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 15, գլուխ 5; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 7: Այս մասին հայտնում է նաև Հորացիոսը:

հանրապետության դեմ պայքարող ուժերին ակտիվանալ՝ վերականգնելով նախկինում կորսված որոշ դիրքեր: Արդյունքում՝ մ.թ.ա. 31 թվականի հոկտեմբերին Արտաշես II-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 50.000) Արտավազդ II-ի գլխավորած Ատրպատականի թագավորության բանակից (մոտ 20.000 հետևակ) գրավեց Ատրպատականի թագավորության տարածքը և միացրեց այն Մեծ Հայքի թագավորությանը[1]: Արտավազդ II-ը գերվեց, հետագայում փախավ գերությունից, հեռացավ Հռոմեական հանրապետության տարածք և հռչակվեց Փոքր Հայքի միայն հարավային գավառներն ընդգրկող Փոքր Հայքի թագավորության արքա՝ փոխարինելով Պոլեմոն I-ին և այս կարգավիճակում մնալով մինչև մ.թ.ա. 20 թվականը, երբ էլ կնքեց իր մահկանացուն: Լուծելով Ատրպատականի թագավորության խնդիրը՝ Հրահատ IV-ը և Արտաշես II-ը դրանից հետո ակտիվ ռազմական գործողությունները շարունակեցին այս անգամ արդեն Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ, ինչի արդյունքում Մեծ Հայքի թագավորության ողջ տարածքը ազատագրվեց, իսկ Արտաշես II-ն էլ արդեն նաև փաստացի բազմեց հոր գահին[2]:

Եվ այսպես Արտաշես II-ի օրոք Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների հարաբերությունները, չնայած իբերական կնճռոտ խնդրին, կրկին բարելավվեցին, երբ մի կողմից, իհարկե, սեփական շահերի համատեքստում, Հրահատ IV-ը աջակցեց Արտաշես II-ին գրավելու հայրենի գահն ու վրեժ լուծելու հռոմեացիներից, իսկ մյուս կողմից էլ, ինչպես արդեն ասվեց, խիստ սրվեցին Հրահատ IV-ի ու Մարկոս Անտոնիոսի կողմն անցած Ատրպատականի թագավորության արքա Արտավազդ II-ի հարաբերությունները: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ նույն այս ժամանակ իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ Հրահատ IV-ի թագավորությունն աստիճանաբար սկսել էր զգալիորեն սասանվել ներքին գահակալական ցնցումներից: Իրավիճակը հստակ պատկերացնելու համար նշենք, որ քննարկվող ժամանակահատվածում Հրահատ IV-ը երկու անգամ փաստացի զրկվեց գահից և այն զիջեց Տրդատ II-ին (մ.թ.ա. 30-29, 26-25), թեև վերջինս իր հերթին ևս այդպես էլ ի վիճակի չեղավ ամրանալ գահին: Իրոք, Արևելքի թագավորությունների հարևանությամբ իր հզորության կիզակետում փայլում էր ահեղ Հռոմը և այդ հանգամանքը ապակայունացնում էր ներքաղաքական դրությունը տեղի նույնիսկ այնպիսի առաջատար խաղացողների մոտ, ինչպիսիք Մեծ Հայքի ու Պարթևական թագավորություններն էին:

Գլուխ 52
Հռոմեական կայսրության բանակի ընդհանուր բնութագիրը

Հռոմեական կայսրությունը, որը փոխարինեց Հռոմեական հանրապետությանը, թերևս, միայն կառավարման ձևի առումով էր այլ երևույթ, իսկ զուտ ռազմական մակարդակում, ըստ էության, կայսրությանն անցան բոլոր այն հնարավորությունները, որոնք հանրապետությունը տիրապետում էր իր անկման պահին: Իր հերթին հարկ է նշել, որ հանրապետության անկման պահին վերջինիս ռազմական մեքենան իր կազմում ուներ մոտ 600.000 ռազմիկ:

Այս առումով կարևոր է նշել, սակայն, նաև այն հանգամանքը, որ, բարձրագույն իշխանության հավակնորդների միջև մղվող ներքաղաքական ծանր պայքարի պայմաններում կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր հակառակորդի ռազմական մեքենայի նկատմամբ ամենից առաջ հենց քանակական առավելություն ապահովել, քանի որ որակական առումով պայքարի բոլոր մասնակիցների ռազմական մեքենաներն էլ, ըստ էության, նույնն էին: Արդյունքում՝ ինչպես արդեն նշվեց, Հռոմեական հանրապետության ռազմական մեքենայի թվաքանակը հասավ 600.000 հոգու, սակայն դա տեղի ունեցավ որակի զգալի անկման հաշվին և հենց այս իրավիճակի

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 49, գլուխ 44:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 51, գլուխ 16:

փոփոխությանն էլ ձեռք զարկեց կայսր Օգոստոսը, որն իրականացրեց Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի լուրջ մի բարեփոխում՝ որոշակիորեն կրճատելով ռազմիկների քանակությունը և կրկին շեշտադրելով որակը:

Որպես հետևանք այս ամենի, մասնավորապես, լեգեոնների ընդհանուր թիվը քչացվեց, սակայն փոխարենն ավելացավ կոնկրետ լեգեոնի կազմում գտնվող լեգեոներների թիվը՝ նախկին 6.000 հոգու փոխարեն այժմ կազմելով մոտ 7.000 հոգի: Ըստ մեզ հասած տվյալների՝ մ.թ.ա. I դարի վերջին քառորդում և մ.թ. I դարում Հռոմեական կայսրության բանակն ուներ 25 լեգեոն, որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի մոտ 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էին մոտ 175.000 լեգեոներներ, սակայն կրկին առկա էին նաև բավականին մեծ թվով դաշնակիցներ, իսկ բանակի ընդհանուր թվաքանակն էլ կազմում էր մոտ 300.000 ռազմիկ: Միաժամանակ, ինչպես և նախկինում, այս ուժերի մոտ մեկ երրորդը տեղակայված էր Արևելքում:

Այսպիսով՝ հենց միայն սեփական թվաքանակով Հռոմեական կայսրության միայն արևելյան բանակը մոտավորապես հավասար էր այստեղ իր հիմնական հակառակորդների բանակների թվաքանակներին առանձին վերցրած, սակայն Արևելքում լայնածավալ ռազմական գործողություններ մղելու պարագայում Հռոմեական կայսրության արևելյան բանակը սովորաբար լրջորեն համալրվում էր մյուս մասերի և հատկապես դանուբյան սահմանում տեղակայված ուժերի հաշվին՝ հաճախ կազմելով մոտ 200.000 ռազմիկ: Եվ վերջապես սկսած նույն այս ժամանակներից էր, որ պրովինցիաների կարգավիճակով աստիճանաբար Հռոմեական կայսրության ռազմավարչական համակարգում ընդգրկվող Հռոմեական կայսրության երբեմնի «դաշնակիցների և բարեկամներ»-ի տարածքներից հավաքագրվող մարդկային ներուժը ևս սահուն կերպով միավորվեց լեգեոններից կազմված Հռոմեական կայսրության բուն ռազմական մեքենային՝ թվաքանակով շարունակելով կազմել մոտավորապես այնքան, ինչքան լեգեոներներն էին:

Գլուխ 53
Հայոց Միջագետքի թագավորությունը, որպես Հայոց պետականության պահեստային հարթակ

Մ.թ.ա. 20 թվականի ամռան սկզբին Արտաշես II-ը զոհ գնաց դավադրությանը[1], որից հետո պաշտոնական Հռոմը իշխանությունը հանձնեց վերջինիս եղբայր և իր համար առավել ընդունելի թեկնածու հանդիսացող Արտավազդ III-ի որդի Տիգրանին՝ Տիգրան III-ին (մ.թ.ա. 20-6): Վերջինս, որ գերվել էր հոր հետ միասին, արդեն 10 տարուց ավել ապրում ու դաստիարակվում էր Հռոմում և, ընդհանուր առմամբ, համարվում էր անհամեմատ ավելի հռոմեամետ մի անձնավորություն, քան Արտաշես II-ը: Մեր կողմից դիտարկվող այս ժամանակաշրջանի հետ կապված, սակայն, մինչև առաջ անցնելը հարկ է ուշադրություն բևեռել մի ուշագրավ հարցի վրա, որը բավարար ուշադրության չի արժանացել: Խոսքը վերաբերում է Հայոց Միջագետքի թագավորությանը: Վերևում արդեն մանրամասն խոսվեց Հայոց Միջագետքի թագավորության և նրա արքայատոհմի հայկական էության մասին և այս առումով կարծում եմ, որ ժամանակն է անել ևս մի քանի արժեքավոր դիտարկումներ:

Մ.թ.ա. մոտ 34 թվականին իր մահկանացուն կնքեց մ.թ.ա. 53 թվականին Հայոց Միջագետքի թագավորության գահին Աբգար II Արիարմենին հաջորդած նրա որդի Բակուր III-ը և թագավորության գահին վերջինիս փոխարինեց արդեն նրա որդի Աբգար III-ը (մ.թ.ա. մոտ 30 - ուղ. 24): Իր հերթին, մ.թ.ա. 24 թվականին կյանքից հեռացավ նաև Աբգար III-ը և Հայոց Միջագետքի թագավորության գահին վերջինիս փոխարինեց Աբգար

[1] Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 94; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Տիբերիոս», մաս 11; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 3; Օգոստոս կայսեր կտակից; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 15, գլուխ 4; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 54, գլուխ 9; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 10; Բար -Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

IV-ը (մ.թ.ա. 24-4):

Մովսես Խորենացին հայտնում է. «*Արշեզի կյանքի վերջին տարում, որ նրա թագավորության քսանմեկերորդ տարին էր, հայոց զորքերը ժողովվելով, նրա հրամանով իրենց վրա թագավորեցրին Արջամին կամ Արշամին, որ Արտաշեսի որդին էր՝ Տիգրանի եղբայրը և Աբգարի հայրը: Ասորիներից ոմանք այս Արշամին կոչեցին Մանովա, ինչպես շատերը սովորություն ունեն երկու անուն կրել*»[1]: Այսպիսով, ըստ Պատմահոր, Աբգար IV-ը[2] Արտաշեսի որդին էր և Տիգրանի եղբայրը: Այս առումով առաջին հայացքից թվում է, թե նկատի են ունեցվում Արտաշես I-ն ու Տիգրան II Մեծը, սակայն ժամանակագրական սահմանները չեն խոսում դրա օգտին և, եթե Մովսես Խորենացին իրոք նկատի ունի նրանց, ապա նա սխալվել է: Դրան հակառակ, եթե ընդունենք, որ Աբգար IV-ը Արտաշես II-ի որդին և Մեծ Հայքի թագավորության արքա Տիգրան III-ի եղբոր տղան էր, ապա ամեն ինչ մեծ հաշվով գտնում է իր տեղը: Այս առումով կարծում եմ, որ վերջին հաշվով նույնիսկ կարևոր էլ չէ, թե Պատմահա՞յրն է սխալվել, սկզբնապես իր ձեռքի տակ առկա տեղեկատվությունը վերագրելով Արտաշես I-ին և Տիգրան II Մեծին, թե՞ նա իրոք նկատի է ունեցել Արտաշես II-ին ու Տիգրան III-ին և այդ նրան են հետագայում սխալ հասկացել, սա, ինչպես ասացի, իմ կարծիքով այնքան էլ էական չէ: Փոխարենը կարծում եմ, խիստ կարևոր է այն հանգամանքը, որ, եթե մենք Արտաշես I-ի և Տիգրան II Մեծի փոխարեն քննարկվող դեպքում տեղադրում ենք Արտաշես II-ին ու Տիգրան III-ին, ապա ամեն ինչ մեծ հաշվով գտնում է իր տեղը և ժամանակագրական առումով միանգամից պատշաճ տեսք է ստանում:

Վերջին պարագայում պարզվում է, որ Աբգար IV-ը, Պարթևական թագավորությունում Հրահատ IV-ի և Տրդատ II-ի միջև մղվող գահակալական պայքարի ամենավերջում իր հայր Արտաշես II-ի կողմից հաստատվելով Հայոց Միջագետքի թագավորության գահին, դրանով իսկ Հայոց Միջագետքի թագավորությունն ամուր թելերով կապել է Մեծ Հայքի թագավորության հետ, ընդ որում խնդիրը, բացի ռազմաքաղաքական հարթությունից, գտնվում էր նաև իրավաբանական մակարդակի վրա: Իրոք, Հայոց Միջագետքի թագավորության գահին Աբգար IV-ի հայտնվելով փաստորեն ստեղծվում էր մի իրավիճակ, երբ այստեղ սկսում էր կառավարել Մեծ Հայքի Արշակունիների կրտսեր ճյուղերից մեկը, ընդ որում, կարծես թե, կառուցվում էր պահեստային մի հարթակ, որտեղից Մեծ Հայքի թագավորությունում տեղի ունեցող անբարենպաստ քաղաքական զարգացումների պարագայում հնարավոր էր դառնալու այս կամ այն ազդեցությունն ունենալ վերջինիս վրա, իսկ Հայոց Միջագետքի թագավորության տիրակալներն էլ հնարավորություն էին ստանում, առիթի դեպքում, նաև իրավաբանորեն լիովին հիմնավորված կերպով հավակնել Մեծ Հայքի թագավորության գահին: Այս առումով խիստ ուշագրավ տեղեկություններ կան Պատմահոր երկի տողատակերում, որոնք մինչ այժմ ուշադրության չեն արժանացել և այդ մասին մենք կխոսենք ստորև: Ասվածի վերաբերյալ կարծում եմ, որ ամենից առաջ լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունի այն հարցը, թե ե՞րբ են իշխել Աբգար IV-ը և նրա որդի Աբգար V Մեծը (մ.թ.ա. 4 - մ.թ. 50):

Մովսես Խորենացին հայտնում է, որ Աբգար IV-ի գահ բարձրանալու տարում. «*...Արշեզը վախճանվեց, պարսից թագավորությունը թողնելով իր Արշավիր որդուն, որ շատ փոքրահասակ տղա էր: Այդ ժամանակ չկար մեկը, որ Արշամին օգներ հռոմեացիներին դիմադրելու համար, ուստի Արշամը Հերովդեսի միջոցով նրանց հետ խաղաղության հաշտություն է կնքում՝ Միջագետքից և Կեսարիայի կողմերից նրանց հարկ տալով: Այս եղավ սկիզբը Հայոց մասնակի հարկատու դառնալուն հռոմեացիներին*»[3]: Քննարկվող դեպքում մեզ դժվար թե հաջողվի պարզել, թե ո՞ւմ նկատի ունի Պատմահայրը, ի դեմս «Արշեզ»-ի, թեև, այսպես թե այնպես, սակայն պարզ է, որ այս

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 24:
[2] «Արշամ» նշանակում է սև:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 24:

ժամանակ Պարթևական թագավորությունում իշխանության գլուխ գտնվող Հրահատ IV-ին դա չի կարող վերաբերել:

«*Արշամի որդի Աբգարը զբաղեցնում է գահը պարսից Արշավիր թագավորի քսաներորդ տարում*»[1],- շարունակում է Պատմահայրը՝ խնդիրը պարզաբանելու առումով մեզ փոխանցելով ևս մեկ հուշում: Եվ վերջապես նույն Մովսես Խորենացին հայտնում է, որ Աբգար V Մեծը գահը զբաղեցրել է Հուդայի թագավորության արքա Հերովդես I Մեծի մահվան տարում, որը համապատասխանում է մ.թ.ա. 4 թվականին[2]:

Ընդհանրացնելով ողջ վերոգրյալը կարող ենք պնդել, որ մ.թ.ա. 4 թվականին կյանքից հեռացած, սակայն մինչ այդ «*... պարսից Արշավիր թագավորի*» հետ զուգահեռ 20 տարի իշխել հասցրած և մ.թ.ա. 4 թվականին մահացած Աբգար IV-ը թագավորել է մ.թ.ա. 24-4 թվականներին, իսկ Աբգար V Մեծն էլ գահը ընդունել է նույն Հերովդես I Մեծի մահվան տարում, այսինքն՝ մ.թ.ա. 4 թվականին: Ինչ վերաբերում է Աբգար V Մեծի մահվան թվականին, ապա հայտնի է, որ վերջինս կենդանի է եղել դեռևս 49 թվականին, սակայն Մեծ Հայքի թագավորության գահի մի նոր թեկնածու գործում է արդեն 51 թվականին, այսինքն՝ մեծ է հավանականությունը պնդել, որ Հայոց այս ուշագրավ արքան մահացել 50 թվականին: Ողջ վերոգրյալի կապակցությամբ կա ևս մեկ անուղղակի փաստարկ:

Մովսես Խորենացին, պատմելով Աբգար IV-ի կողմից հալածանքների ենթարկվող Ենանոս Բագրատունու մասին, իմիջիայլոց հայտնում է նաև, որ, ի վերջո հանգիստ թողնելով Ենանոսին, Հայոց Միջագետքի թագավորության արքան այնուհանդերձ. «*....լիովին չի վստահանում նրան, այլ, երկիրը նրան վստահելով, ուղարկում է Հայաստան, միայն թե հեռացնի նրան Միջագետքից*»[3]: Մինչև առաջ անցնելը կրկին փորձենք պարզել, թե ե՞րբ կարող էր տեղի ունենալ այս իրադարձությունը:

Այս առումով, թերևս, սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ, մի կողմից, այնուհանդերձ չհամարձակվելով հաշիվ տեսնել այնպիսի մի ազդեցիկ նախարարի և նրա տոհմի հետ, ինչպիսիք Ենանոսն ու Բագրատունիներն էին, իսկ մյուս կողմից էլ ամեն դեպքում ստիպված լինելով գոնե մի որևէ բան անել, Աբգար IV-ը Ենանոս Բագրատունուն Հայոց Միջագետքի թագավորությունից հեռացնում և ուղարկում է Մեծ Հայքի թագավորություն՝ կարելի է կարծել այն հույսով, որ իր հայր Արտաշես II-ին ավելի լավ կհաջողվի հնազանդության բերել կամակոր թագադիր ասպետին: Եվ այսպես, կարելի է, թերևս, պնդել, որ Աբգար IV-ը, լինելով Արտաշես II-ի որդին և Տիգրան III-ի եղբոր տղան, թագավորել է մ.թ.ա. 24-4 թվականներին, այսինքն՝ հոր կողմից հաստատվել է Հայոց Միջագետքի թագավորության գահին Արտաշես II-ի իշխանության վերջին շրջանում:

Եվ այսպես փաստորեն, ի հակադրություն նախկինի, մ.թ.ա. 20 թվականին Մեծ Հայքի թագավորությունում, համենայն դեպս գոնե սկզբնական տարիներին, հաստատվեց հռոմեամետ մի իշխանություն, իսկ այս պարագայում, մասնավորապես, պարզ էր նաև, որ Աբգար IV-ի դիրքերը որոշակիորեն թուլանում էին և վերջինս առիթի դեպքում չէր կարող հույս ունենալ Մեծ Հայքի թագավորության աջակցության վրա: Ասվածի ապացույցը մենք անմիջապես էլ գտնում ենք Պատմահոր խոսքերում, որը հայտնում է, որ. «*Սրանից հետո խռովություն ծագեց Հրեաստանի Հերովդես թագավորի և մեր Արշամ թագավորի միջև*», ընդ որում Հուդայի թագավորության արքա ամեն կերպ վայելում էր հռոմեացիների աջակցությունը և, չնայած այն բանին, որ. «*Արշամը հանձն չառնելով՝ զորք է ժողովում Հերովդեսին դիմադրելու, և, պատգամավորներ ուղարկելով Հռոմ, խնդրում է կայսրից, որ իրեն Հերովդեսի իշխանությանը չենթարկի*», Հռոմեական կայսրության կայսրը. «*...ոչ միայն Արշամին չի ազատում Հերովդեսի իշխանությունից, այլև ամբողջ Ասորիքը նրան է հանձնում*», ինչից հետո. «*Արշամն ամեն բանով հպատակվում է Հերովդեսին*»[4]: Այսպիսով՝ գնալով հսկայական զիջումների և, ըստ էության, նաև ինքը

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 26:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 26:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 24:
[4] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 24:

ընդունելով հռոմեամետ կողմնորոշում՝ Տիգրան III-ի օրոք Մեծ Հայքի թագավորության աջակցությունից զրկված Աբգար IV-ին միայն մեծ դժվարություններով է հաջողվում պահել իշխանությունը Հայոց Միջագետքի թագավորությունում:

Իր եղբորորդի Աբգար IV-ին բավականին սառը վերաբերող Տիգրան III-ի մահից հետո մ.թ.ա. 6 թվականին Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Տիգրան III-ի որդի և արդյունքում նաև Աբգար IV-ի հորեղբորորդի Տիգրան IV-ը (մ.թ.ա. 6-5, 2 - մ.թ. 1)[1]: Ի սկզբանե ենթադրվում էր, որ Մեծ Հայքի թագավորության նոր գահակալը կշարունակի հոր հռոմեամետ քաղաքականությունը, սակայն իրական կյանքը մեծապես չարդարացրեց այդ հույսերը և Տիգրան IV-ը իրեն որպես բավականին ինքնուրույն մի տիրակալ դրսևորեց, ինչն իր սպասելի դրական ազդեցությունն ունեցավ նաև Հայոց Միջագետքի թագավորության վրա: Ստեղծված պայմաններում, սակայն, մ.թ.ա. 5 թվականին կայսր Օգոստոսն ի վերջո կարողացավ հասնել նրան, որ Տիգրան IV-ը թողնի մեծ Հայքի թագավորության գահը՝ վերջինիս փոխարեն Մեծ Հայքի թագավորության արքա հռչակելով Տիգրան IV-ի եղբայր Արտավազդ IV-ին (5-2)[2]:

Արտավազդ IV-ը առաջինն էր դրանից հետո ավելի քան կես դար Մեծ Հայքի թագավորության գահը զբաղեցրած տիրակալներից, որոնց նկատմամբ ես հիմնավորված եմ համարում կիրառել «վաղանցիկ» տերմինը: Արդյունքում, հանդիսանալով Մեծ Հայքի թագավորության այս կամ այն հարևանի կողմից նշանակված դրածո, օտար լինելով հայերին և Հայաստանին ու երկրում չունենալով քիչ թե շատ ամուր մի հենարան, այս արքաները, որպես կանոն, կառավարում էին համեմատաբար կարճ մի ժամանակահատվածում՝ այդ ընթացքում ոչ միայն չունենալով որևէ իրական քաղաքական կշիռ, այլ նաև՝ սեփական իշխանության ամրություն և ապահովություն: Սա, սակայն, բավականին քննարկված մի թեմա է և, զուտ միայն «վաղանցիկ» տերմինը առաջարկելու համար, ես այս հարցին առանձին չէի անդրադառնա, բայց կա մի էական հանգամանք, որը ինձ ստիպում է այնուհանդերձ քննարկման առարկա դարձնել Վաղանցիկ արքաների դարաշրջանը: Խնդիրը կրկին անգամ վերաբերում է Հայոց Միջագետքի թագավորությանը և այն հանգամանքին, որ վերջինս Մեծ Հայքի թագավորության համար հանդիսանում էր օժանդակ լուրջ մի կառույց:

Վերևում արդեն նշվեց, որ, սկսած Աբգար IV-ից, Հայոց Միջագետքի և Մեծ Հայքի թագավորությունների հարաբերություններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ Հայոց Միջագետքի թագավորությունը սկսում էր իրենից կարծես մի պահեստային հարթակ ներկայացնել, որտեղից հնարավոր էր դառնում ղեկավարել պայքարը Մեծ Հայքի թագավորության գահի համար կամ այստեղ տեղի ունեցող անբարենպաստ քաղաքական զարգացումների պարագայում ազդեցություն ունենալ Մեծ Հայքի թագավորության վրա, ընդ որում Հայոց Միջագետքի թագավորության տիրակալները իրավաբանորեն ավելի հիմնավոր իրավունքներ ունեին Մեծ Հայքի թագավորության գահին հավակնելու համար, քան գործնականում բոլոր Վաղանցիկ արքաները: Այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ գրականության մեջ երբեք չի քննարկվել այն հարցը, թե որտե՞ղ ապաստանեց Տիգրան IV-ը մ.թ.ա. 5 թվականից հետո մինչև մ.թ.ա. 2 թվականը, այսինքն՝ այն ժամանակահատվածում, երբ նա զրկվել էր գահից և Մեծ Հայքի թագավորության գահին հաստատվել էր Արտավազդ IV-ը: Այս առումով կարծում եմ, որ ժամանակն է փորձ կատարելու լրացնել վերոհիշյալ բացը և, ընդհանրացնելով ողջ վերոգրյալը, անել պնդում, որ մ.թ.ա. 5-2 թվականներին Տիգրան IV-ն ու իր կողմնակիցները գտնվում էին Հայոց Միջագետքի թագավորությունում, որտեղ նրանց ընդունեց և ամեն կերպ աջակցություն ապահովեց սկզբում Աբգար IV-ը, իսկ հետո արդեն՝ վերջինիս որդին ու Հայոց Միջագետքի թագավորության ամենաականավոր արքան հանդիսացած Աբգար V Մեծը:

---

[1] Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 100; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 55, գլուխ 9; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 32:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 55, գլուխ 10; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 3, 4:

Իր հերթին հարկ է նշել, որ սեփական ոչ կարճատև թագավորության ընթացքում Աբգար V Մեծը քաղաքական և մշակութային հսկայական ու բեղուն մի գործունեություն ծավալեց՝ լայն դիվանագիտական կապեր ունենալով հարևան պետությունների հետ և հաճախ նույնիսկ միջամտելով նրանց ներքին գործերին: Ավելին, Հայոց այս ուշագրավ տիրակալն այնքան հզորություն և ազդեցություն ուներ, որ, երբեմն, ի վիճակի էր լինում կարգավորել նույնիսկ Պարթևական թագավորության գահի հավակնորդների միջև առաջացած միջգահակալական վեճերը[1]: Այս հայրենանվեր արքայի գործունեության իրոք զարդը, սակայն, հանդիսացավ այն, որ I դարի այն ժամանակահատվածներում, երբ Մեծ Հայքի թագավորության գահի վրա բռնությամբ բազմած էր լինում օտար մի արքա, փաստացի հենց նրա գլխավորած Հայոց Միջագետքի թագավորությունն էր, որ, զարգացնելով Աբգար IV-ի թողած քաղաքական ավանդույթները, դառնում էր ազատագրական պայքարի կենտրոն և Մեծ Հայքի թագավորությանը նեցուկ: Այս առումով սխալված չենք լինի, եթե ասենք, որ նման ժամանակահատվածներում Աբգար V Մեծը դառնում էր նաև Մեծ Հայքի թագավորության փաստացի արքա ու «թագավոր Հայոց» տիտղոսի կրող՝ կենտրոնացնելով և ուղղություն տալով Հայրենիքի ազատության համար պայքարող ուժերին:

Մ.թ.ա. 4 թվականին, իմանալով, որ Մեծ Հայքի թագավորության գահի և Արտավազդ IV-ի դեմ հանդես եկող ուժերը կենտրոնացել են Հայոց Միջագետքի թագավորության տարածքում, Արևելքում ուղղակի մարտական գործողություններ մղելուց մշտապես խուսափող կայսր Օգոստոսը ոտքի հանեց Հուդայի թագավորությանն ու նրա բանակին, սակայն նույն թվականի գարնանն էլ Հայոց Միջագետքում տեղի ունեցած Բուգնանի ճ-մ-ում Աբգար V Մեծի և Խուրան Արծրունու գլխավորած Հայոց Միջագետքի թագավորության բանակը գլխովին ջախջախեց Հայոց Միջագետքի թագավորության տարածք ներխուժած Հուդայի թագավորության բանակին[2]: Ավելին, հռոմեական ռազմական մեքենայի կրած անհաջողությունից հետո հերթական անգամ ոտքի կանգնեց նաև Կիլիկիան:

Գլուխ 54
Կիլիկիայի III ապստամբությունը

Գործունյա և ռազմունակ Տարկոնդիմոտոս I-ի մահից հետո Տարսոնի թագավորությունը զգալիորեն թուլացել էր, ընդ որում Լեռնային Կիլիկիան Տարսոնի արքան կորցրել էր դեռևս մ.թ.ա. 39 թվականին, երբ Պուբլիոս Բենտիդիոսը գրավեց այն և այլևս չվերադարձրեց նախկին տիրոջը: Դրանից հետո Լեռնային Կիլիկիան անձնական ունիայի սկզբունքով մշտապես փոխանցվում էր հարևան գահակալներից որևէ մեկին, թեև այն, թե ինչքան էր վերջիններիս իրական իշխանության չափը Անտիտավրոսյան լեռներում, մեծապես մնում է վիճելի: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ ասվածը մ.թ.ա. 31 թվականից հետո մեծապես վերաբերում էր Լեռնային Կիլիկիայի միայն արևմտյան մասին, այն դեպքում, երբ Լեռնային Կիլիկիայի կենտրոնական և արևելյան մասերում ստեղծվեց տեղական մի թագավորություն, որի կենտրոնը Մարաշն էր: Մարաշի թագավորության հիմնադիր արքան էր Երվանդ I-ը (մ.թ.ա. 31 - մ.թ. 11), որը, իշխելով բավականին երկար, ամեն կերպ պայքար էր մղում իր թագավորության անկախության համար և առիթի դեպքում աջակցում էր իրենից ավելի արևելք տարածվող Հայոց Միջագետքի թագավորության գահակալներին: Ինչ վերաբերում է արդեն միայն Դաշտային Կիլիկիան ընդգրկող Տարսոնի թագավորությանը, ապա Տարկոնդիմոտոս I-ից հետո այստեղ նրան հաջորդեց իր որդի Տարկոնդիմոտոս II-ը (մ.թ.ա. 31-30), մ.թ.ա. 30-20 թվականների միջատարածքում Դաշտային Կիլիկիան ուներ մոտավորապես

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 28:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 26; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 6; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5:

պրովինցիայի կարգավիճակ, իսկ մ.թ.ա. 20 թվականից սկսած էլ թագավորության վերականգնված գահին բազմեց Տարկոնդիմոտոս I-ի մյուս որդին՝ Տարկոնդիմոտոս III-ը (մ.թ.ա. 20 - մ.թ. 17): Վերջինս, ի տարբերություն Մարաշի ըմբոստ տիրակալի և իր հանգուցյալ հոր, սակայն, հռոմեական իշխանության նկատմամբ ավելի հնազանդ քաղաքականություն էր վարում:

Եվ այսպես, այն բանից հետո, երբ մ.թ.ա. 4 թվականին պաշտոնական Հռոմի քաղաքականությունը Արևելքում մի բավականին էական անհաջողություն կրեց, ոտքի կանգնեց նաև Մարաշի թագավորությունը՝ սկսելով Կիլիկիայի III ապստամբությունը (մ.թ.ա. 4-3): Խնդիրը կայանում էր նրանում, սակայն, որ ինչպես Հայոց Միջագետքի, այնպես էլ Մարաշի թագավորությունները վճռականորեն և ոչ մի հնարավորություն չունեին դուրս գալու իրենց թագավորությունների անկրկնելի բնակլիմայական պայմաններից ու մեծացնել սեփական ելույթի շրջանակը, իսկ այդ պարագայում ռազմավարական ողջ նախաձեռնությունը լիովին մնում էր հակառակորդի կողմում: Արդյունքում՝ մ.թ.ա. 3 թվականին Մարաշի թագավորության տարածք մտած Հռոմեական կայսրության բանակը Մարաշի թագավորության բանակից գրավեց Գոմոնադյան ամրությունները (Լեռնայի Կիլիկիայի արևելք)[1], որից հետո Երվանդ I-ին չմնաց այլ բան, քան հաշտության գնալը: Կիլիկիայի III ապստամբությունը վերջացավ առանց որևէ փոփոխություն բերելու:

Մարաշի թագավորությանը շարքից հանելուց հետո հերթը անխուսափելիորեն պետք է հասներ Հայոց Միջագետքի թագավորությանը, սակայն Աբգար V Մեծն և Տիգրան IV-ը, օգտվելով Հռոմեական կայսրության կայսեր գործողությունների որոշակիորեն դանդաղ բնույթից, պատասխան քայլեր ձեռնարկեցին՝ հարված հասցնելով արդեն Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ: Արդյունքում՝ մ.թ.ա. 2 թվականին Աբգար V Մեծի և Տիգրան IV-ի գլխավորած Մեծ Հայքի ու Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը, մտնելով Մեծ Հայքի թագավորության տարածք, ոչնչացրեց և երկրից հալածեց Հռոմեական կայսրության բանակին, ինչի արդյունքում Արտավազդ IV-ը գահընկեց արվեց, իսկ Տիգրան IV-ը կրկին հռչակվեց Մեծ Հայքի թագավորության արքա[2]: Դրանից հետո, երբ հակահռոմեական ուժերի դիրքերը զգալիորեն ուժեղացան, Հռոմեական կայսրության կայսրը գերադասեց փոխզիջումների տարբերակը՝ Աբգար V Մեծն և Տիգրան IV-ը չէին վարում բացահայտ հակահռոմեական քաղաքականություն, իսկ Հռոմեական կայսրությունն էլ հաշտվում էր ստեղծված իրավիճակի հետ:

Առկա ծանր պայմաններում ձեռք բերված արդյունքը հայկական կողմի համար իրոք որ կարող էր բավարար թվալ, քանզի իր թագավորության վերջին շրջանում Հռոմեական կայսրության հետ բացահայտ ընդհարումից խուսափում էր նաև Պարթևական թագավորության արքա Հրահատ IV-ը, իսկ այն բանից հետո, երբ մ.թ.ա. 2 թվականին Հրահատ IV-ի սպանությունից հետո թագավորության գահին նրա փոխարեն հաստատվեց ընդհանրապես կայսրության շահերի հլու կամակատարը հանդիսացող վերջինիս ազգությամբ հույն կնոջից ծնված որդի Հրահատ V-ը (մ.թ.ա. 2 - մ.թ. 4), Պարթևական թագավորության որևէ աջակցության կամ վերջինիս հետ միասին հակահռոմեական որևէ համակարգված գործողություն իրականացնելու մասին խոսք գնալ սկզբունքորեն իսկ չէր կարող: Այս պայմաններում ուժերի փխրուն այն հավասարակշռությունը, որը ստեղծվեց, թերևս, առավելագույնն էր, որին կարող էին հավակնել հայերը: Ավելին, Մեծ Հայքի և Պարթևական թագավորություններն ունեին նաև իրենց փոխադարձ հավակնությունները, որոնցից առաջնային կրկին Իբերիայի թագավորության հարցն էր:

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 3, գլուխ 48:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 4:

Գլուխ 55
Հայ և Պարթև Արշակունիների պայքարի հերթական փուլը Իբերիայի թագավորության համար

Իրոք, մ.թ.ա. 1 թվականին Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների հարաբերություններում կրկին առաջին պլան մղվեց իբերական կնճռոտ խնդիրը: Իր ժամանակին Տիգրան II Մեծին հաջողվել էր Իբերիայի թագավորության գահին հաստատել Մեծ Հայքի Արշակունիների կրտսեր մի ճյուղին, որն իր հերթին, ինչպես արդեն ասվեց, հեռացվել էր գահից մ.թ.ա. 35 թվականին, որից հետո գահը կրկին հանձնվել էր Պարթևական թագավորության աջակցությունը վայելող և մինչև Իբերիայի թագավորության գահին Մեծ Հայքի Արշակունիների հայտնվելը այստեղ իշխած Փառնավազյանների գահատոհմին պատկանող Միհրան II-ին: Արդյունքում՝ ահա այժմ, օգտվելով Հրահատ V-ի քաղաքական թուլությունից, Աբգար V Մեծն և Տիգրան IV-ը հարմար գտան կրկին վերսկսել մրցակցությունը Իբերիայի թագավորության համար:

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Իբերիայի թագավորության գահին Միհրան II-ին հաջորդել և գահը զբաղեցնում էր նրա որդի Արշակ II-ը (մ.թ.ա. 20-1), սակայն նույն այս ժամանակ Մեծ Հայքի թագավորությունում էր գտնվում Քարտամ I-ի որդի Ադերկը: Արդյունքում, պահը համարելով հարմար, մ.թ.ա. 1 թվականին Ադերկի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը շարժվեց դեպի հյուսիս և ճամբարեց Թռեղքում, որից հետո արդեն վերջինիս մոտեցավ Արշակ II-ի գլխավորած Իբերիայի ու Պարթևական թագավորությունների միացյալ բանակը: Արյունահեղ ընդհարումից, սակայն, այս անգամ հաջողվեց խուսափել, քանի որ, այն բանից հետո, երբ երկօրյա մենամարտում Արշակ II-ը Ադերկի կողմից պարտության մատնվեց և սպանվեց, վերջինիս բանակը դադարեցրեց դիմադրությունն ու անցավ հաղթողի կողմը[1]: Արդյունքում՝ Ադերկը, գահին բազմելուց հետո հայտնի որպես Միհրդատ I[2] (մ.թ.ա. 1 - մ.թ. 25), հռչակվեց Իբերիայի թագավորության արքա:

Մեր պատմագրության կողմից ուշադրության չարժանացած այս տվյալները արժեքավոր տեղեկություններ են պարունակում Իբերիայի թագավորությունն իրենց ազդեցություն տակ ունենալու համար մղվող պայքարում Մեծ Հայքի և Պարթևական թագավորության մրցակցության հերթական դրվագի մասին: Բանն այն է, որ եթե նախորդ մի քանի տասնամյակներում Պարթևական թագավորության հովանավորությունը վայելող Փառնվազյանների օրոք այստեղ ուժեղացել էր պարթևական ազդեցությունը, ապա Միհրդատ I-ի գահ բարձրանալով Փառնվազյանների տոհմը այժմ ոչ միայն վերջնականապես զրկվեց իշխանությունից ու Իբերիայի թագավորության գահին վերջնականապես հաստատվեցին Վրաց Արշակունիները, այլև այս թագավորության տարածքում կրկին ուժեղացան Մեծ Հայքի թագավորության դիրքերը:

Այսպիսով՝ հյուսիսում Մեծ Հայքի թագավորության ազդեցություն կրկին վերականգնվեց, սակայն վատը այն եղավ, որ Իբերիայի թագավորության նկատմամբ գերիշխանության վերահաստատումը ընդհարման բերեց ամենայն հավանականությամբ պաշտոնական Հռոմի կամ Պարթևական թագավորության դրդումով գործող Ալանական թագավորության հետ: Արդյունքում՝ 1 թվականին Տիգրան IV-ը, թեև հաղթեց և հետ շպրտեց Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժած ու շրջակայքն ասպատակող Ալանական թագավորության բանակին, սակայն ինքն էլ ընկավ մարտում[3]:

Գլուխ 56

---

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 47:

[2] Սույն աշխատանքը գրելիս ես ամենևին էլ խնդիր չեմ դրել պարզել Իբերիայի թագավորության արքաների անունների, հաջորդականության և թագավորելու տարիների հետ կապված խճճված խնդիրը, այլ հիմնականում առաջնորդվել եմ դասական ու շրջանառության մեջ գտնվող տեսակետներով: Այս առումով կոնկրետ դեպքում պետք է նշել, որ վրացական աղբյուրում այս արքան կրում է «Ադերկի» անունը, թեև գիտական գրականության մեջ շրջանառվում է նաև «Միհրդատ» ձևը:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 55, գլուխ 10a:

Տիգրան IV-ի զոհվելուց հետո Մեծ Հայքի թագավորության գահը փաստորեն անցավ Աբգար V Մեծին, որը, բացի այն, որ հսկայական հեղինակություն ուներ, նաև հանդիսանում էր արական ուղիղ գծով սպառված Մեծ Հայքի արքայական գահատոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչը՝ իրենից, ըստ էության, ներկայացնելով Մեծ Հայքի թագավորության գահի ամենամոտիկ ժառանգորդը: Աբգար V Մեծի կողմից փաստացի Հայոց արքայի լիազորությունների տեր դառնալը, սակայն, ոչ մի կերպ չէր կարող բավարարել պաշտոնական Հռոմին, որը, եթե ինչ-որ տեղ պատրաստ էր համակերպվել Տիգրան IV-ի հետ, ապա Հայոց Միջագետքի հզոր տիրակալի հետ համակերպվել, այն էլ Մեծ Հայքի թագավորության գահին, իրոք որ ոչ մի կերպ ի վիճակի չէր, մանավանդ այն բանի ֆոնին, որ Հայոց Միջագետքի թագավորության գահակալը հսկայական հեղինակության էր հասել նաև Պարթևական թագավորությունում, որտեղ Հրահատ V-ը, ընդհակառակը, բացարձակապես և ոչ մի հեղինակություն չուներ:

Արդյունքում՝ արդեն 2 թվականին կայսր Օգոստոսի որդեգիր Գայոս Կեսարի գլխավորած Հռոմեական կայսրության մի խոշոր բանակ մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք, ընդ որում միաժամանակ արևելքից առաջխաղացում իրականացրեց նաև Ատրպատականի թագավորության գահին Արտավազդ II-ին փոխարինած Ասինալուսի (մ.թ.ա. 30-20) հաջորդ, Արտավազդ II-ի որդի Արիոբարզանես II -ի (մ.թ.ա. 20 - մ.թ. 4, 4-5՝ նաև Մեծ Հայքում) գլխավորած Ատրպատականի թագավորության բանակը: Ստեղծված ծանր պայմաններում Աբգար V Մեծը, ի մի հավաքելով Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորության ուժերը, բայց միաժամանակ նաև խուսափելով ուղիղ ընդհարումից, ձեռնամուխ եղավ անկանոն դիմադրության կազմակերպմանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 2 գարուն - սեպտեմբերի 9 – ***Արտագերս ամրոցի ճ-մ*** (Արարատ, Արշարունիք գավառ, Արաքսի ձախ ափից մոտ 5 կմ հյուսիս)[1]
>
> Տիգրան IV-ի զոհվելուց հետո, նպատակ ունենալով Մեծ Հայքի թագավորությունը ենթարկեցնել Հռոմեական կայսրությանը, Գայոս Կեսարի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 100.000), առաջանալով ***Անտիոք-Կոմագենե-Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ Նիկոպոլիս-Սատաղ-Սինորա-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Մասյացոտն*** երթուղով և ենթարկվելով անկանոն հարվածների, մոտեցավ Ատոմ իշխանի գլխավորությամբ ամրոցի մոտ մարտակարգ ընդունած Մեծ Հայքի թագավորության բանակին (մոտ 50.000):
>
> I փուլ – Հռոմեական կայսրության բանակը անցավ հարձակման: Բռնկվեց համառ և արյունահեղ մարտ, որի արդյունքում Հայկական բանակը, ի վերջո կտրվելով թշնամու բանակից, նահանջեց՝ շարունակելով մշտական սպառնալիքի տակ պահել վերջինիս:
>
> II փուլ – Գարնանը և ամռանը Հռոմեական կայսրության բանակը պաշարեց ամրոցը, սակայն առժամանակ որևէ հաջողության չհասավ, ընդ որում այդ ընթացքում բանակցության պատրվակով Գայոս Կեսարին մոտեցած Ատոմը դաշունահարելով ծանր վիրավորեց վերջինիս և կրկին հաջողությամբ ապաստանեց ամրոցում:
>
> III փուլ – Սեպտեմբերի 9-ին թշնամու բանակն ի վերջո, հաղթահարելով

[1] Ֆլորիանոս «Համառոտագրություններ», գիրք 4, գլուխ 32; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 55, գլուխ 10a; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 100; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 4; Օգոստոս կայսեր կտակից; Ստրաբոն «Աշխարհագրություն», գիրք 11, գլուխ 14, մաս 6; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 19:

Հայկական բանակի համառ դիմադրությունը, գրավեց ամրոցը, ընդ որում Ատոմը, դիմադրելով թշնամուն մինչև վերջ, գերության մեջ չհայտնվելու համար ինքնասպան եղավ:

Հայերը կորցրին մոտ 10.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Այս կամ այն կերպ տիրելով Մեծ Հայքի թագավորության տարածքին՝ պաշտոնական Հռոմի որոշմամբ անձնական ունիայի սկզբունքով Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Ատրպատականի թագավորության արքա Արիոբարզանես II-ը՝ Մեծ Հայքի թագավորության պարագայում՝ Արիոբարզանես Ատրպատականցին[1], որը Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր նրանով, որ իր հոր մայրը՝ Արիոբարզանես I-ի կինը, Մեծ Հայքի թագավորության արքա Արտավազդ III-ի աղջիկն էր: Ինչ վերաբերում է Աբգար V Մեծին, ապա վերջինս իրեն հավատարիմ և հակահռոմեական տրամադրվածություն ունեցող ուժերի հետ միասին հետ քաշվեց Հայոց Միջագետքի թագավորության տարածք՝ միաժամանակ չդադարեցնելով նաև անկանոն պայքարը Մեծ Հայքի թագավորությունում հաստատված օտար տիրապետության դեմ:

4 թվականի փետրվարի 21-ին, այդպես էլ չապաքինված երկու տարի առաջ Արտագերսի պարիսպների տակ ստացած վերքից, կյանքից հեռացավ Հռոմեական կայսրության արևելյան տարածքների կառավարումն իրականացնող Գայոս Կեսարը, ընդ որում դրանից կարճ ժամանակ անց՝ նույն 4 թվականի կեսերին, Աբգար V Մեծի մղած գաղտնի կամ բացահայտ պայքարի արդյունքում սպանվեց նաև Արիոբարզանես II-ը: Ստեղծված պայմաններում պաշտոնական Հռոմը, կրկին մնալով անձնական ունիայի սահմաններում, Մեծ Հայքի թագավորության արքա հռչակեց Ատրպատականի թագավորության նոր արքա, սպանվածի որդի Արտավազդ III-ին՝ Արտավազդ V Մեծ Հայքի թագավորության պարագայում (4-5): 5 թվականին, սակայն, վերջինս ևս զոհ գնաց հայերի մղած պայքարին, ինչից հետո, հրաժարվելով Ատրպատականի թագավորության տիրակալներից, պաշտոնական Հռոմը Մեծ Հայքի թագավորության արքա հռչակեց Տիգրան V Հրեային (5-6): Վերջինս Հուդայի թագավորության արքա Հերովդես I Մեծի թոռն էր և Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր նրանով, որ իր մոր մայրը՝ Կապադովկիայի թագավորության արքա Արքելայոսի կինը, Մեծ Հայքի թագավորության արքա Արտավազդ III-ի աղջիկն էր: Մեծ Հայքի թագավորության գահը, սակայն, երջանկություն չբերեց նաև Տիգրան V Հրեային, որը, ընդ որում բավականին կասկածելի հանգամանքներում, մահացավ արդեն 6 թվականին:

Այսպիսով՝ 2-6 թվականների դրությամբ Մեծ Հայքի թագավորությունում փաստորեն առկա էր մի դրություն, երբ, կենտրոն ունենալով Աբգար V Մեծի գլխավորած Հայոց Միջագետքի թագավորությունը, երկրում ծավալվում էր հզոր դիմադրական մի պայքար, որ արդյունքում ամբողջական քաղաքներ և ամրոցներ շարունակում էին դիմադրությունը: Փաստորեն, ըստ էության ստեղծվել էր մի վիճակ, երբ Վաղանցիկ արքաները տիրապետում էին միայն այն տարածքներին, որտեղ անմիջականորեն գտնվում էին սեփական կայազորային ուժերը, ընդ որում նույնիսկ այդ պարագայում էլ գրեթե ամեն տարի սպանվում էր մեկ Վաղանցիկ արքա[2]: Ստեղծված իրավիճակը ի վերջո ստիպեց ինչպես պաշտոնական Հռոմին, այնպես էլ Աբգար V Մեծին գնալ որոշակի փոխզիջումների, ինչի արդյունքում Մեծ Հայքի թագավորության թագուհի հռչակվեց Տիգրան III-ի դուստր Էրատոն (6-12), ընդ որում բուն թագավորությունում շարունակում էր հսկայական մնալ նաև Աբգար V Մեծի ազդեցությունը: Իրավիճակը առժամանակ հանդարտվեց, սակայն դա կարճ էր տևելու:

Իրոք, հռոմեական բարքերի տեր Հրահատ V-ը, մինչև վերջ էլ ատելի մնալով

[1] Սա Ատրպատականի արքա Արիոբարզանես II-ն էր՝ Արտավազդ II-ի որդին, որը Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր նրանով, որ իր հոր մայրը՝ Արիոբարզանեսի կինը, Արտավազդ III-ի աղջիկն էր:

[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 4; Օգոստոս կայսեր կտակից, մաս; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 17, գլուխ 5:

պարթևական հասարակությանը, 4 թվականին սպանվեց, որից հետո Պարթևական թագավորության արքա հռչակվեց Հրահատ IV-ի մեկ այլ կնոջից ծնված որդի Օրոդես III-ը (4-6), սակայն այս արքան ևս չընդունվեց պարթևական հասարակության կողմից և իր արտառոց դաժանության ու անիմաստ հրամանների պատճառով շուտով հենց որսի ժամանակ էլ սպանվեց: Օրոդես III-ի սպանությունից հետո Պարթևական թագավորության գահին հաստատվեց Հռոմում մեծացած Օրոդես III-ի եղբայր Վոնոն I-ը (6-12), սակայն նա ևս, ունենալով ընդգծված հունահռոմեական վարքագիծ և խորթ լինելով պարթևական բարքերին, չընդունվեց պարթևական հասարակության կողմից, ընդ որում Ատրպատականի թագավորությունում այս տիրակալին ընդհանրապես հրաժարվեցին ճանաչել, երբ գործն ի վերջո հասավ պատերազմի: Փաստորեն, ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ Պարթևական թագավորություններում շարունակվում էր զգալի ներքաղաքական անկայունության վիճակը, որը պայմանավորված էր, ինչպես արդեն նշվեց, իր հզորության գագաթնակետին գտնվող Հռոմեական կայսրության հարևանությամբ, ընդ որում պաշտոնական Հռոմի ուժն ու ազդեցությունն այնքան ուժեղ էին, որ հաճախ նույնիսկ ուղղակի միջամտության բացակայության պարագայում էլ կայսրության հարևանները ներքաղաքական անկայունություն էին ապրում:

12 թվականին Վոնոն I-ի դեմ բռնկվեց հերթական ապստամբությունը, որից հետո վերջինս, զրկված Պարթևական թագավորության գահից, նահանջեց Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ: Մեծ Հայքի թագավորության տարածքում, ինչպես արդեն ասվեց, Էրատոյի իշխանությունը մեծապես միայն անվանական էր և արդյունքում, հարմար առիթ գտնելով, ինչպես նաև վայելելով պաշտոնական Հռոմի աջակցությունը, Վոնոն I-ը կամ, Մեծ Հայքի թագավորության պարագայում արդեն Վոնոն Պարթևը (12-16) իր իշխանությունը հաստատեց Մեծ Հայքի թագավորության գահին: Ինչ վերաբերում է Պարթևական թագավորությանը, ապա Վոնոն I-ի հեռանալուց հետո Պարթևական թագավորության արքա հռչակվեց 6 թվականից Ատրպատականի թագավորության գահը զբաղեցնող, Արտավազդ II-ի որդի Դարեհ II-ի (5-6) տղա Արտավան III-ը (6-12, 12-35, 36-38՝ նաև Պարթևական թագավորությունում): Սույն աշխատանքի առաջ դրած խնդիրների շրջանակներում, թերևս, կարիք չէր լինի առանձնահատուկ անդրադառնալ պարթևական նոր գահակալին, սակայն կարծում եմ, որ այստեղ ևս որոշակիորեն նոր հայացքի կարիք կա և արժե մի քանի խոսք ավել ասել:

Գլուխ 57
Պարթև Արշակունիների Առաջին և Երկրորդ սերունդները

Բանը կայանում է նրանում, որ Արտավան III-ը սկզբնաղբյուրներում ներկայանում է որպես մի տիրակալ, որը, Արշակունի լինելով մոր կողմից[1], հորական կողմից ուղղակի սերում էր Դահ ցեղախմբից[2], որից էին նաև իրենք՝ Արշակունիները: Միաժամանակ հայտնի է, որ Արտավան III-ը, մինչև Պարթևական թագավորության գահին բազմելը, զբաղեցնում էր Ատրպատականի թագավորության գահը: Այս կապակցությամբ կարծում եմ, որ առկա է ճշգրտման որոշակի անհրաժեշտություն, երբ կարող է հավանական համարվել այն տարբերակը, ըստ որի Ատրպատականի թագավորության արքա Արտավան III-ը Ատրպատականի թագավորության գահին է հասել այն բանից հետո, երբ իր հայրը կարճ մի ժամանակահատված հաջորդել է կյանքից հեռացած սեփական եղբորորդի Արտավազդ III-ին՝ Արտավազդ V Մեծ Հայքի թագավորության պարագայում[3]:

Այսպիսով, թեև սկզբնաղբյուրները ընդգծում են, որ Արտավան III-ը Արշակունի էր միայն մորական կողմից, բայց այնուհանդերձ համարել, որ նա Արշակունի չէր հորական կողմից և արդյունքում սահմանափակ իրավունքներ ուներ Պարթևական

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 6, գլուխ 42:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 3:
[3] Տես՝ http://archiver.rootsweb.ancestry.com/th/read/GEN-MEDIEVAL/1998-08/0903422361:

թագավորության գահի նկատմամբ, թերևս, ճիշտ չէ: Այս առումով պետք է ընդգծել նաև, որ քննարկվող դարաշրջանում Եփրատից արևելք տարածվող տարածքների վրա, ընդհուպ մինչև Միջինի Ասիա, բոլոր առաջատար պետական միավորների գլխին, այսպես թե այնպես, կանգնած էր Արշակունիների այս կամ այն ճյուղը և արդյունքում քիչ հավանական է կարծել, որ Արտավան III-ի հայրը Արշակունի չէր, քանի որ մի կողմից Ատրպատականի թագավորության գահին ոչ Արշակունի գահակալի առկայությունը քիչ հավանական է, իսկ մյուս կողմից էլ իրենք՝ Պարթև Արշակունիները, դժվար թե իրենց տոհմից աղջիկ տային անհայտ կամ ստորին ծագումով մեկին: Այս պայմաններում կարծիքը, որ Արտավան III-ի հայրը եղել է Ատրպատականի թագավորության արքա Դարեհ II-ը, որոշակիորեն լուսաբանում է իրավիճակը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ պետք է հստակորեն տարանջատել Պարթևական թագավորությունում իշխած Արշակունիների երկու սերունդները՝ Արշակ I Քաջը և նրա ուղիղ ժառանգները, որոնք թագավորության գահն իրենց ձեռքում պահեցին մ.թ.ա. 250 - մ.թ. 12 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև Արտավան III-ի ուղիղ ժառանգները, որոնք թագավորության գահն իրենց ձեռքում պահեցին 12-228 թվականներին: Այսպիսով՝ առաջարկում եմ Արշակ I Քաջի սերունդներին կոչել Պարթև Արշակունիների Առաջին, իսկ Արտավան III-ի ժառանգորդներին՝ Պարթև Արշակունիների Երկրորդ սերունդ: Արդյունքում՝ կարելի է ամրագրել, որ Պարթևական թագավորությունում Արտավան III-ի գահ բարձրանալով նույն տոհմի սահմաններում տեղի ունեցավ իշխող գահատոհմի սերնդափոխություն, ընդ որում նույն այդ գործընթացը Վաղանցիկ արքաների դարաշրջանի ավարտից հետո տեղի ունեցավ նաև Մեծ Հայքի թագավորությունում: Մինչև առաջ անցնելը, սակայն, հարկ եմ համարում անել ևս մեկ դիտարկում:

Իրոք, եթե Առաջին սերնդի Պարթև Արշակունիները, ի դեմս իրենց վերջին գահակալների, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում մարդկայնորեն ու քաղաքականապես արդեն այլասերվել էին և, հեղինակազրկվելով, կորցրել էին Պարթևական թագավորությունը կառավարելու բարոյական, ֆիզիկական ու նույնիսկ մտավոր ունակությունները, ապա Արտավան III-ի թագավորելով Պարթևական թագավորության գահի վրա թարմացված արյան, կարծես թե, ուժեղ մի հոսանք փչեց, երբ նոր այս գահակալի սերունդը, համենայն դեպս գոնե մտավոր և բարոյական մակարդակում, ավելի պատրաստ էր Պարթևական թագավորության կառավարմանը: Իհարկե, գահակալական պայքարը և դրան ուղեկցող տարաբնույթ բացասական երևույթները չվերացան ու նաև չէին էլ կարող վերանալ, սակայն այսպես թե այնպես փաստ է, որ Արտավան III-ն և նրա անմիջական սերունդները ավելի բարձր բարոյական մակարդակի վրա էին գտնվում, քան Առաջին սերնդի Պարթև Արշակունիների վերջին գահակալները, ընդ որում նրանք նաև ավելի լավ էին պատրաստված ու ավելի պատասխանատու էին մոտենում Պարթևական թագավորության կառավարման հարցին:

Գլուխ 58
Մանր թագավորությունների անկման առաջին փուլը հռոմեական արևելքում

Մեծ Հայքի թագավորության գահին Վոնոն Պարթևի հաստատվելը մի կողմից դրական, բայց մյուս կողմից էլ բացասական էր Աբգար V Մեծի և հայրենասեր ուժերի համար: Իրոք, մի կողմից, այո, Վոնոն Պարթևն այնուհանդերձ Պարթևական թագավորության նախկին արքան էր և դա ենթադրում էր որոշակի պրոպարթևական քաղաքական կողմնորոշում, բայց մյուս կողմից էլ լիովին հռոմեական բարքերին ու կողմնորոշմանը տրված այս տիրակալի առկայությունն այնուհանդերձ նաև զգալի հռոմեամետ կողմնորոշում էր ենթադրում: Այս առումով կարելի է ենթադրել, որ Մեծ Հայքի թագավորության գահին Վոնոն Պարթևի հաստատման ընթացքում Հայոց արքայի

տիտղոսի փաստացի կրողը, այսպես թե այնպես, շարունակում էր մնալ Աբգար V Մեծը: Կարծում եմ, որ հենց այս ժամանակաշրջանին են վերաբերում Պատմահոր հաղորդումներն այն մասին, որ Աբգար V Մեծը իր մայրաքաղաքը Մծբինից տեղափոխում է Եդեսիա, որը, սպասելով հռոմեական հնարավոր ներխուժմանը, մեծապես ուժեղացնում է պաշտպանական կառույցներով[1]:

14 թվականի օգոստոսի 19-ին, ըստ էության, հաջողությամբ ավարտած Հռոմեական հանրապետության վերափոխման գործընթացը Հռոմեական կայսրության, իր մահկանացուն կնքեց Հռոմեական կայսրության առաջին կայսր Օգոստոսը, որն իրենից հետո թողեց ուժեղ և ծաղկում ապրող մի պետություն: Կայսր Օգոստոսի մահից հետո իշխանության ղեկին վերջինիս հաջորդեց նրա խորթ որդի Հուլիոս Տիբերիոսը (14-37), որը, ի տարբերություն սեփական խելամիտ հորացուի, մի նեղմիտ, բռնկուն և դաժան անձնավորություն էր: Նույն այս ժամանակ էր, սակայն նաև, որ Արևելքում զգալի փոփոխություններ եղան:

Իրոք, դեռևս կայսր Օգոստոսի կառավարման տարիներին այստեղ արդեն ստեղծվել էր մի դրություն, երբ, հաշվի առնելով ավանդական հակառակորդների թուլությունը, սահմանային մանր թագավորություններից կազմված ցանցը տեղում պաշտոնական Հռոմին, ըստ էության, արդեն պետք չէր: Արդյունքում՝ դեռևս մ.թ.ա. 25 թվականին վերացվեց Գալաթական թագավորությունը և վերջինիս տարածքը կցվեց Հռոմեական կայսրության պրովինացիաների պետական համակարգին, իսկ արդեն 17 թվականին էլ, երբ իր մահկանացուն կնքեց Կապադովկիայի թագավորության վերջին արքա Արքելայոսը, նույն ճակատագիրը բաժին հասավ նաև Կապադովկիայի թագավորությանը: Նույն 17 թվականին էր նաև, որ պաշտոնական Հռոմը գահընկեց հայտարարեց Միհրդատ II-ին հաջորդած նրա որդի Միհրդատ III-ի (մ.թ.ա. 20-12) տղա Անտիոքոս III-ին (մ.թ.ա. 12 - մ.թ. 17) և պրովինցիա հայտարարեց նաև Կոմագենեի թագավորության տարածքը: Ողջ Կիլիկիայի հետ միասին նույն ճակատագրին արժեցան նաև Տարսոնի, ինչպես նաև Փոքր Հայքի թագավորությունները, սակայն, առժամանակ, թագավորության կարգավիճակը պահպանվեց Մարաշում: Այստեղ, 11 թվականին Երվանդ I-ին հաջորդել էր Դևկրոսը (11), որին փոխարինել էր Երվանդ II-ը (11-17) իսկ նրան էլ՝ Անտոնիոս Պոնտացին (17-35): Այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ կայսրության մյուս սահմաններում ևս ընթանում էին նմանատիպ գործընթացներ, երբ, մասնավորապես, հենց նույն այս ժամանակաշրջանում, ինչպես եղավ Արևելքում, կայսրությունը վերջնականապես պրովինցիալ կառավարման համակարգ հաստատեց նաև Բալկանյան թերակղզում՝ այս ուղղությամբ որպես կայսրության սահմանագիծ հաստատելով Դանուբ գետը:

Գլուխ 59
Վաղանցիկ արքաներ. Վոնոն Պարթևից Արտաշես III

Մեծ Հայքի թագավորության գահին Վոնոն Պարթևի կառավարումը իր ավարտը գտավ 16 թվականին, երբ, տեղեկանալով այն մասին, որ վերջինս չի վայելում հայերի աջակցություն, ինչպես նաև տեղի տալով նրան ժամանակին գահընկեց արած Պարթևական թագավորության արքա Արտավան III-ի հարաճուն սպառնալիքներին, Հուլիոս Տիբերիոսի հրամանով Ասորիքի կուսակալը իր մոտ հրավիրեց այս տիրակալին և գերեց[2], ընդ որում փախուստի անհաջող փորձի ժամանակ վերջինս հետագայում սպանվեց: Վոնոն Պարթևի գահազրկումից հետո նույն 16 թվականին էլ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Արտավան III-ի որդի Օրոդեսը՝ Օրոդես Պարթևը (16-18, 35): Ձուտ իրավաբանորեն այս տիրակալը Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր մի կողմից նրանով, որ իր հոր հոր հայր՝

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 27:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 3, 4, 56; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 17, գլուխ 2:

Ատրպատականի թագավորության արքա Արիոբարզանես II-ի, հոր մայրը՝ Արիոբարզանես I-ի կինը, Մեծ Հայքի թագավորության արքա Արտավազդ III-ի աղջիկն էր, իսկ մյուս կողմից էլ նրանով, որ իր հոր հորեղբայրն ու հոր հորեղբորորդին թագավորել էին նաև Մեծ Հայքի թագավորությունում: Օրոդես Պարթևի հաստատվելը Մեծ Հայքի թագավորության գահին, սակայն, այստեղ կտրուկ ուժեղացնում էր Պարթևական թագավորության և Աբգար V Մեծի դիրքերը, իսկ այդ հանգամանքը իր հզորության գագաթնակետում գտնվող Հռոմեական կայսրությունը ոչ մի կերպ թույլ տալ չէր կարող:

Արդյունքում՝ կողմերի հարաբերությունները կրկին սրվեցին, սակայն բանը ուղղակի ռազմական բախման այնուհանդերձ չհասավ, քանի որ 18 թվականին, փոխադարձ համաձայնությամբ, Մեծ Հայքի թագավորության նոր արքա հռչակվեց Արտաշես III-ը (18-34), որը Պոնտոսի թագավորության արքա Պոլեմոն I-ի որդին էր և զուտ իրավաբանորեն Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր մի կողմից նրանով, որ Պոնտոսի թագավորության արքա Միհրդատ VI Եվպատորը ամուսնացած էր Տիգրան II Մեծի դստեր հետ, մյուս կողմից էլ նրանով, որ Միհրդատ VI Եվպատորի որդի և Պոնտոսի թագավորության արքա Փառնակ II-ի քույրը Տիգրան II Մեծի կինն էր:

Արտաշես III-ի գահակալումը տարածաշրջանում ուժերի և շահերի փոխադարձ հավասարակշռության հերթական մի դրություն ստեղծեց, որը պահպանվեց մինչև այս գահակալի մահը: Այս ընթացքում տարածաշրջանում, ընդհանուր առմամբ, խաղաղ դրություն հաստատվեց, որը խախտվեց Հայաստանի հետ կապ ունեցող միայն զուտ տեղական նշանակության մի իրադարձությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

19 նոյեմբեր – ***<u>Քելանդարի ամրոցի ճ-մ</u>*** (Կիլիկիա, ծովի ափին)[1]

> Ասորիքի նախկին կուսակալ Պիզոնը, չցանկանալով ենթարկվել նոր կուսակալ Սենցիոսին, իր տրամադրության տակ գտնվող Հռոմեական կայսրության բանակով (7.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներով (մոտ 1.000) ամրացավ ամրոցի շրջակայքում ու պատրաստվեց դիմադրել Սենցիոսի առաջխաղացած բանակին (մոտ 14.000), որն իր հերթին մոտեցավ ամրոցի մոտ մարտակարգ ընդունած հակառակորդին:
>
> I փուլ – Սենցիոսի բանակը անցավ հարձակման և պարտության մատնեց Պիզոնի բանակին, որի մնացորդները դժվարությամբ ապաստանեցին ամրոցում:
>
> II փուլ – Սենցիոսի բանակը պաշարեց ամրոցը, որտեղ ամրացած Պիզոնը և իր բանակի մնացորդները որոշակի դիմադրությունից հետո հանձնվեցին:
>
> Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 500 զինվոր: Պիզոնը ձերբակալվեց և ուղարկվեց Հռոմ, որտեղ նրա դեմ դատավարություն սկսվեց և արդյունքում նա ի վերջո ինքնասպան եղավ:

Հուլիոս Տիբերիոսի գահակալման շրջանում Հռոմեական կայսրությունն իր բոլոր սահմաններում, ըստ էության, արդեն անցել էր ռազմավարական պաշտպանության և սա խաղաղության որոշակի շրջան ապահովեց նաև վերջինիս հարևաններին, սակայն ներքին հուզումներ այնուհանդերձ կային: Հենց սրանցից մեկի ընթացքում էր, որ 33-ից 34 թվականներին Պիրենյան թերակղզում մղվող պատերազմին Հռոմեական կայսրության բանակի (մոտ 60.000) կազմում իր մասնակցությունը բերեց Խուրան Արծրունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության օժանդակ բանակը (մոտ 3.000)[2]: Այս իրադարձության որոշակի մանրամասներ, սակայն, մեզ չեն հասել, իսկ հունահռոմեական աղբյուրներն էլ այս ամենի մասին որևէ տեղեկություն չեն տալիս: Ունենք ընդամենը

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 2, գլուխ 80-81:
[2] Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6:

միայն Թովմա Արծրունու տեղեկությունն այն մասին, որ ռազմական գործողությունները եղել են Պիրենյան թերակղզում և մղվել են ինչ-որ ոսկեհանքերի համար: Արդյունքում՝ հավանական է համարել, որ խոսքն ինչ-որ ապստամբության ճնշման մասին է: Այսպես թե այնպես, սակայն խաղաղության համեմատականորեն երկար այն ժամանակաշրջանը, որն առկա էր Արևելքում, շուտով իր ավարտը գտավ, իսկ 34 թվականին էլ տարածաշրջանի հիմնական խաղացողների միջև սկիզբ առավ մրցակցության մի նոր փուլ:

Գլուխ 60
Արտավան III-ի Մեծ քաոսը և Հայաստանը

Իրոք, Հուլիոս Տիբերիոսի կառավարման հենց վերջին տարիներին էր, որ Արտավան III-ը, որն իր գահակալման երկու տասնամյակներում բավականին նոր ուժեր էր հաղորդել Պարթևական թագավորությանը և մեծապես վերականգնել էր վերջինիս հզորությունը, այդ ամենը հաշվի առնելով, սակայն այնուհանդերձ որոշակիորեն թերագնահատելով հակառակորդին ու գերագնահատելով սեփական ուժերը, հարմար առիթ էր փնտրում Հռոմեական կայսրության հետ մղվող պայքարում կշեռքի նժարն իր կողմը թեքելու փորձ կատարելու համար: Այս կապակցությամբ իր դերն էր խաղում նաև այն հանգամանքը, որ Հուլիոս Տիբերիոսի օրոք Հռոմեական կայսրությունն Արևելքում իրեն շարունակում էր որոշակիորեն պասիվ պահել և թվում էր, թե վերջինս թուլացել է: Եվ վերջապես ծերունական տարիքի հասած Հուլիոս Տիբերիոսն ինքն էլ հակված չէր ակտիվ գործողությունների:

Այս առումով պետք է նշել, որ ապագայում սպասվելիք իրադարձություններին իր մասնակցությունն էր պատրաստվում բերել նաև մեկ այլ խաղացող, ի դեմս Իբերիայի թագավորության, որտեղ Միհրդատ I-ին հաջորդել էր նրա որդի Քարտամ II-ը (25-35), իսկ մեր կողմից նկարագրվող իրադարձություններից հենց առաջ էլ իրար դեմ մղված սուր գահակալական պայքարի արդյունքում Քարտամ II-ի կրտսեր որդի Փարսման I-ին (35-74) հաջողվել էր խլել գահը իր ավագ եղբայր Միհրդատից: Արդյունքում՝ Փարսման I-ը, տարածաշրջանում ներկայացնելով հռոմեական շահերը, թիկունքում ունենալով Ալանական և Աղվանքի թագավորությունների աջակցությունն ու համարելով իրեն Մեծ Հայքի Արշակունիների գահատոհմի հետնորդ, ցանկանում էր Մեծ Հայքի թագավորության գահին իրեն կամ յուրայիններից որևէ մեկին հաստատել՝ դրանով իսկ մեծացնելով սեփական իշխանության ծավալները կամ գոնե ազատվելով գահի թեկնածու իր եղբորից:

34 թվականին Արտաշես III-ի մահից հետո Վաղանցիկ արքաներից Մեծ Հայքի թագավորության գահին բազմեց Արտավան III-ի որդի Արշակ II Պարթևը (34-35): Վերջինս Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր նրանով, որ նախ իր հոր մոր հոր՝ Ատրպատականի թագավորության արքա Արիոբարզանես II-ի հոր մայրը՝ Արիոբարզանես I-ի կինը, Արտավազդ III-ի աղջիկն էր և հետո նրանով, որ իր եղբայր Օրոդեսը, իր հոր մոր հայրը և իր հոր մորեղբայրը թագավորել էին նաև Մեծ Հայքում: Ոչ լրիվ, սակայն, քան մեկ տարի անց վերջինս իր իսկ մտերիմների կողմից սպանվեց, որից հետո Մեծ Հայքի թագավորության գահի համար պայքարը ակտիվ պատերազմական գործողությունների տեսք ստացավ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

35 ամառ – ***<u>Արտաշատի ճ-մ</u>***[1]

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 6, գլուխ 31-35; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 17, գլուխ 4; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Տիբերիոս», մաս 41; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ հռոմեական կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 2; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

34 թվականին Արտաշես III-ի մահից հետո Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Պարթևական թագավորության արքա Արտավան III-ի որդի Արշակը՝ Արշակ II Պարթևը: 35 թ-ին, սակայն, պաշտոնական Հռոմի դրդումով գործող իբերական գահի թեկնածու, Իբերիայի թագավորության արքա Փարսման I-ի եղբայր Միհրդատին հաջողվեց թունավորել Արշակ II Պարթևին և իր կողմնակիցների միջոցով կազմալուծել Մեծ Հայքի պաշտպանունակությունը: Դրանից հետո Փարսման I-ի և Միհրդատի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) ու Ալանական (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը հյուսիսից ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք: Թշնամու բանակն առանց դիմադրության հանդիպելու շարժվեց ***Մծխեթ-Խաղխաղ*** (վերջինը՝ Ուտիք, Աղվե գավառ, Կուրի աջ վտակ Աղստևի զույգ ափերին) երթուղով, միացավ Աղվանքի թագավորության բանակին (մոտ 20.000) և, շարունակելով առաջխաղացումը դեպի հարավ, առանց դիմադրության հանդիպելու մտավ ***Արտաշատ***: Ի պատասխան այս ամենի՝ կրկին Մեծ Հայքի թագավորության արքա հռչակված Օրոդեսի՝ Օրոդես Պարթևի, գլխավորած Պարթևական թագավորության հեծելազորը (մոտ 40.000) հարավից մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք և, արշավելով ***Մարանդ-Նախիջևան-Արած-Ուրծաձոր*** երթուղով, միավորվեց սպարապետ Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ Արտաշատից նահանջած Հայկական հեծելազորի (մոտ 30.000) հետ: Դրանից հետո Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ հեծելազորը բանակեց Արտաշատի մոտակայքում, սակայն այնպես ստացվեց, որ վերջինս սկսեց պարենի սուր պակաս զգալ, որի պատճառով էլ, չնայած թշնամու բանակի թվական գերակշռությանը, ի վիճակի չեղավ հետաձգել մարտը:

Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին, ընդ որում Օրոդես Պարթևը սխալ ընտրեց մարտի վայրը, քանի որ սեփական հեծելազորը լեռնային տեղանքում կորցնում էր իր մարտավարական առավելությունը, այն դեպքում, երբ հակառակորդի բանակը, թվական գերակշռությունից բացի իր կազմում ունենալով նաև հետևազոր, լեռնային տեղանքում մարտավարական զգալի առավելություն էր ստանում: Սրանից զատ Օրոդես Պարթևը ընտրեց սեփական հեծելազորի օգտագործման նաև սխալ մարտավարություն՝ չօգտագործելով հեռահար մարտում սեփական հեծելազորի ակնհայտ առավելությունը թշնամու հիմնականում ծանր հեծելազորի նկատմամբ: Եվ վերջապես Օրոդես Պարթևը սեփական հեծելազորը պահեց անշարժ վիճակում՝ դրանով իսկ թույլ տալով հակառակորդին ոչ միայն արշավի ողջ թափով հարվածել վերջինիս, այլև՝ միանգամից անցնել մերձամարտի, որի պայմաններում բոլոր առավելություններն արդեն մերձամարտում հիանալիորեն գործող ծանր հեծելազորի կողմում էին:

I փուլ – Թշնամու հեծելազորը հարձակվեց Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ հեծելազորի վրա ու միանգամից անցավ մերձամարտի, ինչի արդյունքում համառ մարտ բռնկվեց:

II փուլ – Իբերիայի և Աղվանքի թագավորությունների միացյալ բանակի հետևակը անցավ հակառակորդի բանակի թիկունք ու թիկունքից հզոր հարված հասցրեց վերջինիս, ընդ որում տեղի ունեցած մենամարտում Փարսման I-ը ծանր վիրավորեց Օրոդես Պարթևին, որի մահվան մասին կեղծ լուրը լիովին բարոյալքեց նրա ռազմիկներին:

III փուլ – Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ բանակը վերջնական պարտություն կրեց ու դիմեց փախուստի՝ ցրվելով և դժվարությամբ կտրվելով հակառակորդից:

Հայերը կորցրին մոտ 8.000, դաշնակիցը՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտի արդյունքում Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց հերթական Վաղանցիկ արքա Միհրդատը՝ Միհրդատ Իբերացին (35-37, 47-50), իսկ Գուգարքի Գոդերձական գավառն էլ անցավ Իբերիայի թագավորությանը: Մեծ Հայքի թագավորության նոր արքան, ինչպես արդեն ասվեց, Իբերիայի թագավորության արքա Փարսման Ի-ի եղբայրն էր, այս երկուսը Իբերիայի թագավորության արքա Միհրդատ Ի-ի թոռներն էին, իսկ վերջինս էլ հանդիսանում էր Տիգրան II Մեծի որդի Արշակ I Հայի թոռ Բարտոմ Ի-ի աղջկա որդին՝ մի հանգամանք, որով հիմնավորվում էին Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ Վրաց Արշակունիների իրավունքները: Իր հերթին, այս մասին ևս նշվեց, իրեն գահի վրա դեռևս բավարար ամուր չզգալով և ցանկանալով ազատվել Իբերիայի թագավորության գահի համար բացահայտ գահակալական պայքար մղող անչափ փառասեր սեփական եղբորից, Հռոմեական կայսրության օժանդակությունից օգտվող Փարսման Ի-ը, չնայած ոչ վաղ անցյալի թշնամությանը, սկսեց ակտիվորեն աջակցել Մեծ Հայքի թագավորության գահին հաստատված եղբորը՝ դրանով միաժամանակ փորձելով նաև իր ազդեցությունը տարածել վերջինիս թագավորության վրա: Այսպիսով՝ Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունները փաստորեն անսպասելի մի պարտություն կրեցին: Ստեղծված ծանր պայմաններում Արտավան III-ն և Աբգար V Մեծը[1], ցանկանալով շտկել իրավիճակը, իրենց թագավորության հիմնական ուժերով շարժվեցին Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ, սակայն այս անգամ գործեց արդեն պաշտոնական Հռոմը:

Մ.թ.ա. 35 թվականի ամռանը, նպատակ ունենալով շեղել Մեծ Հայքի թագավորության սահմաններում կենտրոնացող Պարթևական և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակին, դեպի հարավ արշավեց Լուցիոս Վիտելլիոսի գլխավորությամբ առանց դիմադրության հանդիպելու Զևգմայի գետանցումով անցած Հռոմեական կայսրության մի խոշոր բանակ՝ որպես ուղեկից ունենալով Պարթևական թագավորության արքա հռչակված Հրահատ IV-ի հերթական որդի Հրահատ VI-ին (35): Սրա հետ միաժամանակ Արտավան III-ի դեմ պայթեց նաև վաղուց ի վեր կուտակված այն դժգոհությունը, որը թևածում էր նրա թագավորության ավագանու շարքերում, ընդ որում ապստամբների գլուխ կանգնեց Պարթևական թագավորության արևելյան տարածքներում հսկայական իշխանություն ունեցող տեղական մեծատոհմիկ Աբդագասը: Արդյունքում, առանց լուրջ մարտերի գահընկեց հայտարարելով Պարթևական թագավորության հյուսիս-արևելյան տարածքներ նահանջած Արտավան III-ին, Լուցիոս Վիտտելիոսը մինչ այդ մահացած Հրահատ VI-ի փոխարեն Պարթևական թագավորության արքա հռչակեց վերջինիս եղբայր Տրդատին՝ Տրդատ III-ին (35-36), որից հետո հետ քաշվեց Ասորիք:

Հենց այն նույն ժամանակ, երբ Եփրատ գետի մոտակայքում իրենց հարաբերություններն էին պարզում Հռոմեական կայսրությունն և Պարթևական թագավորությունը, կարելի է կարծել Աբգար V Մեծի որոշակի դրդումներով բռնկվեց Կիլիկիայի IV ապստամբությունը, որտեղ դեռևս գործում էր Մարաշի թագավորությունը: Ապստամբների գործողությունները, սակայն, իրենց բնույթով կրկին զուտ պաշտպանողական էին ու այս անգամ ևս դուրս չեկան սեփական լեռների սահմաններից: Արդյունքում՝ հռոմեական 1 լեգեոնից էլ քիչ կազմող ուժերը, ինչպես նաև Կապադովկիայից հավաքված օժանդակ բանակը Մարաշի թագավորության բանակից պաշարեցին Կադրա և Դաուրա բերդերը (Լեռնայի Կիլիկիայի արևելք), որոնք անհաջողությամբ ավարտված արտագրոհից հետո ջրի պակասի պատճառով ի վերջո դադարեցրին դիմադրությունն ու հանձնվեցին: Կիլիկիայի IV ապստամբությունը ճնշվեց, Անտոնիոս Պոնտացին գահընկեց արվեց, Մարաշի թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն ընդգրկվեց Հռոմեական կայսրության Կիլիկիա պրովինցիայի կազմի մեջ[2]:

Լուցիոս Վիտտելիոսի հեռանալուց հետո Արտավան III-ը, զգալի աջակցություն

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 27:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 6, գլուխ 41:

ստանալով Քուշանական թագավորությունից, խոշոր ուժերով անցավ հակահարձակման և փախուստի մատնեց Տրդատ III-ին, որից հետո արդեն շարժվեց Աբդագասի գլխավորած ապստամբների դեմ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հունահռոմեական աղբյուրները, ամրագրելով Արտավան III-ի համար, ընդհանուր առմամբ, հաջող այս գործողության վերջնարդյունքը, այնուհանդերձ, զերծ են մնում մանրամասներից, որոնք, սակայն, հերթական անգամ հաջողությամբ լրացնում է Մովսես Խորենացին[1]: Պատմահայրը հայտնում է. «*Աբգարն արևելք է գնում և գտնում է, որ պարսից վրա թագավորել է Արշավիրի որդի Արտաշեսը, սակայն նրա եղբայրները ընդդիմանում են նրան, որովհետև նա կամենում էր նրանց վրա ժառանգաբար թագավորել, իսկ նրանք չէին համաձայնում: Նա տեսավ, որ Արտաշեսը նրանց պաշարել էր և մահվան սպառնալիք էր ստեղծել, սակայն այս պատճառով զորքի և մյուս ազգականների մեջ մեծ երկպառակտություն ու հակառակություն էր ծագել: Եվ ահա, քանի որ Արշավիր թագավորը երեք որդի և մեկ դուստր ուներ, մեկն ինքը՝ Արտաշես թագավորը, երկրորդը Կարեն անունով, երրորդը՝ Սուրեն անունով, իսկ նրանց քույրն էլ, որ Կոշմ էր կոչվում, կինն էր ամբողջ արյաց զորավարին, որ նշանակված էր նրա հորից, ահա ուրեմն, այս պատճառով Աբգարը նրանց համոզում է խաղաղվել ու բոլորի մեջ այս կարգն է սահմանում: Որոշվում է, որ իր զավակներով հանդերձ կթագավորի Արտաշեսը, ինչպես մտադրվել էր, իսկ եղբայրները կկոչվեն Պահլավներ՝ իրենց քաղաքի և մեծ ու պտղաբեր երկրի անունով, ընդ որում նրանք կհամարվեն պարսից բոլոր նախարարությունների մեջ ամենապատվավորներն և առաջինները՝ որպես իսկական թագավորական սերունդներ: Աբգարը նրանց միջև նաև երդումով դաշինք է հաստատում, որ, եթե Արտաշեսի ցեղից տղամարդիկ սպառվեն, թագավորությունը նրանց կանցնի: Պայմանավորվեցին նաև, որ, թագավորող ցեղից դուրս, նրանց երեք ցեղերի պետք է բաժանել՝ անվանելով Կարենի Պահլավ և Սուրենի Պահլավ, իսկ քրոջը՝ Ասպահապետի Պահլավ՝ նրա ամուսնու տանուտերության անունով: Եվ ասում են, թե Սուրբ Գրիգորը Սուրենյան Պահլավից է, իսկ Կամսարականները՝ Կարենյան Պահլավից: Սրանց մեր երկիրը գալու հանգամանքները, սակայն, իր կարգին կպատմենք, այստեղ միայն նրանց նշանակենք Արտաշեսի կողքին, որպեսզի ճանաչես, որ այս մեծ ցեղը հիրավի Վաղարշակի անունից է, այսինքն Վաղարշակի եղբոր՝ Արշակ Մեծի սերունդն է: Այս այսպես կարգադրելով և դաշնագիրը իր հետ վերցնելով՝ Աբգարը հետ է դառնում, սակայն ոչ առողջ, այլ՝ չարաչար ցավերով հիվանդացած*»:

Լիովին վերականգնելով իր իշխանությունը Պարթևական թագավորությունում՝ 36 թվականի վերջում Արտավան III-ը շարժվեց արդեն արտաքին հակառակորդի դեմ, սակայն խոշոր ուժերով հերթական անգամ իր հերթին Զևգմայի գետանցումին մոտեցած Լուցիոս Վիտելլիոսի հետ անմիջապես էլ հաշտություն կնքեց՝ ըստ էության հաստատելով Հռոմեական կայսրության ձեռքբերումները և ընդունելով սեփական ռազմաքաղաքական հաշվարկների սխալ լինելը[2]: Այս առումով Արտավան III-ի համար քիչ թե շատ մխիթարություն կարող էր հանդիսանալ, թերևս, միայն այն հանգամանքը, որ պաշտոնական Հռոմը վերականգնեց Կոմագենեի թագավորությունը և այստեղ արքա նշանակվեց Անտիոքոս III-ի որդի Անտիոքոս IV-ը (36-72): Իր հերթին վերականգնվեց նաև Փոքր Հայքի թագավորությունը, որի արքա հռչակվեց Հռոմեական կայսրությանը ենթակա, Թրակիայում գտնվող Օդրիսի թագավորության արքայական տոհմին պատկանող Կոտիս Թրակիացին (38-47, 41-47՝ նաև Մեծ Հայքում), որը Պոնտոսի թագավորության արքա Պոլեմոն I-ի աղջկա որդին և Արտաշես III-ի քրոջ որդին էր:

35-36 թվականների իրադարձությունները ծանր հարված հասցրին Պարթևական թագավորության, թվում էր, թե, վերելք ապրող հզորությանը, ընդ որում երկրի առաջ ծառացած ներքին մարտահրավերներից զատ իր բացասական դերն ունեցավ նաև այն հանգամանքը, որ կտրուկ քչացան Արտավան III-ի դաշնակիցները: Այսպես, Մեծ Հայքի,

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 28:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 58, գլուխ 26, գիրք 59, գլուխ 27; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 6, գլուխ 36:

Իբերիայի և Աղվանքի թագավորությունները փաստորեն արդյունքում ոչ միայն դուրս մղվեցին Պարթևական թագավորության արքայի հնարավոր դաշնակիցների շարքից, այլև բացահայտ թշնամական դիրք գրավեցին վերջինիս նկատմամբ, ընդ որում դրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ բարդացան հարաբերությունները նաև Հայոց Միջագետքի թագավորության հետ: Վերջին պարագայում խնդիրը կայանում էր նրանում, որ ժամանակին Աբգար V Մեծը չէր կարողացել խոչընդոտել Հռոմեական կայսրության բանակի անցմանը Զևգմայի գետանցումով, ինչն էլ մեծապես պայմանավորել էր Արտավան III-ի անհաջողությունների շղթան, իսկ այդ հանգամանքն էլ իր հերթին լրջորեն փչացրել էր երկու գահակալների հարաբերությունները: Պետք է ասել, սակայն, որ քննարկվող ժամանակաշրջանում Աբգար V Մեծն ինքն էլ որոշակիորեն մեղմել էր հարաբերությունները պաշտոնական Հռոմի ու հատկապես վերջիններիս ենթակա իշխանությունների հետ և, մինչև առաջ անցնելը, չէր խանգարի մի քանի խոսքով անդրադառնալ նաև ուշագրավ այս իրադարձություններին:

Այս առումով հարկ է նշել, որ Աբգար V Մեծի որոշակիորեն հռոմեամետ կողմնորոշում ձեռք բերելն ամենից առաջ պայմանավորված էր Արտավան III-ի վարքագծով: Իրոք, անդուլ պայքար մղելով Պարթևական թագավորության հետաքրքրությունների շրջանակներում գտնվող կենտրոնախույս բոլոր ուժերի դեմ, Պարթևական թագավորության արքան ի վերջո անխուսափելիորեն պետք է հանգեր մի իրավիճակի, երբ պետք է սրվեին հարաբերությունները նաև իրեն բավականին ինքնուրույն զգացող Հայոց Միջագետքի թագավորության արքայի հետ: Չի բացառվում, որ իր դերը կարող էր ունեցած լինել նաև այն հանգամանքը, որ Աբգար V Մեծը ընկալվում էր որպես Պարթև Արշակունիների Առաջին սերնդի շառավիղ, իսկ Արտավան III-ը, ինչպես ասվեց, սկիզբ էր դրել Պարթև Արշակունիների Երկրորդ սերնդին, և այս առումով երկու գահակալների հարաբերություններում առկա էին որոշակի քաղաքական, մշակութային ու նույնիսկ հոգեբանական խնդիրներ: Պարթևական թագավորության արքային ակնհայտորեն չէր կարող հիացնել նաև այն հանգամանքը, որ Աբգար V Մեծը հավակնում էր Մեծ Հայքի թագավորության գահին: Եվ վերջապես սխալված չենք լինի կարծել, որ Արտավան III-ին ոչ մի կերպ չէր կարող դուր գալ նաև այն մեծ ազդեցությունը, որ Հայոց Միջագետքի թագավորության արքան ուներ բուն Պարթևական թագավորության ռազմաքաղաքական ավագանու շրջանակում, ընդ որում կարելի է ենթադրել, որ վերջնական խզմանը հանգեցրել էր հենց այն ակտիվ դերակատարությունը, որը Աբգար V Մեծը ստանձնեց Արտավան III-ի ու նրա ապստամբած հպատակների հարաբերությունները կարգավորելիս:

36 թվականին ամենատարբեր պատճառներով, որոնց քննարկման վրա կանգ չենք առնի, սրվել էին Հռոմեական կայսրությանը ենթակա Նաբաթեական թագավորության արքա Հարիաթ IV-ի (մ.թ.ա. 9 - մ.թ. 40) և վերջինիս նախկին փեսայի, Հուդայի թագավորության արքա Հերովդես II-ի (մ.թ.ա. 4 - մ.թ. 39) հարաբերությունները: Գործն ի վերջո հասավ պատերազմի և այս պայմաններում Հարիաթ IV-ը աջակցության համար դիմեց Աբգար V Մեծին: Արդյունքում, մասնակցելով Հարավային Ասորիքում տեղական թագավորությունների միջև ընթացող պայքարին, արդեն 36 թվականի աշնանը Պիրենյան թերակղզուց վերադարձած Խուրան Արծրունու գլխավորած Հայոց Միջագետքի և Հարիաթ IV-ի գլխավորած Նաբաթեական թագավորությունների միացյալ բանակը Գամալիտադայի ճ-մ-ում հաղթեց Հերովդես II-ի գլխավորած Հուդայի թագավորության բանակին[1]:

37 թվականին գարնանը Արտավան III-ի դեմ հերթական մի ապստամբություն բռնկվեց, որը հենց միանգամից էլ այնպիսի ահեղ տեսք ընդունեց, որ, հույս չունենալով պահել դիրքերը, Արտավան III-ն իր մերձավորների հետ միասին հեռացավ Ադիաբենեի թագավորության տարածք: Նախորդ տարի Աբգար V Մեծը միջնորդի դեր էր խաղացել

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 17, գլուխ 5; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 29; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5:

Արտավան III-ի և ապստամբների միջև ու կարելի է կարծել, որ նոր այս ապստամբության պայթելը, որում Արտավան III-ն անպայմանորեն պետք է մեղադրեր Աբգար V Մեծին, վերջնականապես խաթարեց երկու գահակալների հարաբերությունները, ընդ որում այդ ամենն այն բանի ֆոնին, որ Հայոց Միջագետքի թագավորության արքան բավականին ակտիվ քաղաքականություն էր վարում Հռոմեական կայսրությանը ենթակա շրջաններում և որոշակիորեն ընկալվում էր որպես պաշտոնական Հռոմի դաշնակից: Այս ամենը հաշվի առնելով՝ ամենևին էլ պատահական չէր, որ Արտավան III-ը հեռացավ հենց Ադիաբենեի թագավորության տարածք՝ փորձելով հենց վերջինիս միջոցով հակակշռել Հայոց Միջագետքի թագավորությանը: Արդյունքում, ժամանելով Ադիաբենեի թագավորության տարածք և անմիջապես էլ ստանալով տեղի եռանդուն և դրական ունակություններից ամենևին էլ ոչ զուրկ արքա Իզաատես I-ի (20-54) աջակցությունը, որն ինքն էլ մրցակցության մեջ էր Աբգար V-ի հետ, Արտավան III-ը Իզաատես I-ին նվիրեց Հայոց Միջագետքի թագավորության նախկին մայրաքաղաք հանդիսացող Մծբինը:

37 թվականի մարտի 16-ին իր մահկանացուն կնքեց Հռոմեական կայսրության կայսր Հուլիոս Տիբերիոսը և գահի վրա վերջինիս հաջորդեց նրա որդեգիր Կալիգուլան (37 -41), որը սեփական անձնական և գործնական հատկանիշներով էականորեն զիջում էր իր նախորդին, սակայն փոխարենը գերազանցում էր վերջինիս դաժանությամբ ու խելագարության աստիճանի հասնող վարքագծի տարօրինակությամբ: Կալիգուլան, սակայն, իր հիմնական գծերով շարունակեց Հուլիոս Տիբերոսի կողմից վարվող արտաքին քաղաքականությունը, այդ թվում, մասնավորապես նաև Արևելքում և, եթե Հռոմեական կայսրության ներսում նոր գահակալը զգալի ցնցումներ առաջացրեց, ապա սահմաններում փոփոխություններ գրեթե չեղան: Նույն այս ժամանակ Աբգար V Մեծի ու Արտավան III-ի հարաբերությունները, ինչպես արդեն ասվեց, լուրջ ճգնաժամ էին ապրում և արդյունքում Հայոց Միջագետքի արքան ավելի սերտացրեց հարաբերությունները պաշտոնական Հռոմի հետ: Արդյունքում՝ նույն 37 թվականի կեսերին Կալիգուլան գահընկեց արեց Մեծ Հայքի թագավորության արքա, Աբգար V Մեծի հակառակորդ ընկալվող Միհրդատ Իբերացուն, որից հետո, նոր արքայի բացակայության պայմաններում, թագավորության կառավարումը փաստացի ստանձնեց սպարապետ Գիսակ Դիմաքսյանը, ինչը Հայոց Միջագետքի տիրակալի օգտին էր[1]: Այս առումով, թերևս, սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ քննարկվող ժամանակաշրջանում «թագավոր Հայոց» տիտղոսի իրական կրողը փաստացի կրկին հանդիսանում էր Աբգար V Մեծը:

Արձագանքելով այս փոփոխություններին՝ 37 թվականի աշնանը, նույնիսկ այն բանից հետո էլ, երբ մինչ այդ մեծ չափերի հասած ապստամբությունը կարծես ինքն իրեն հանգեց և Արտավան III-ը վերահաստատվեց սեփական թագավորության գահին, Պարթևական ու Ադիաբենեի թագավորությունների միացյալ բանակը, կյանքի կոչելով մինչ այդ ընդունված որոշումը, Հայոց Միջագետքի թագավորության կայազորից այնուհանդերձ գրավեց Մծբինը և միացրեց այն Ադիաբենեի թագավորությանը[2]: Սա, սակայն, եղավ Արտավան III-ի վերջին ձեռնարկումներից մեկն և 38 թվականի սկզբին նա այլևս կենդանի չէր:

Գլուխ 61
Վաղանցիկ արքաներ. Գիսակ Դիմաքսյանից Միհրդատ Իբերացի

Արտավան III-ի մահից հետո Պարթևական թագավորության գահին վերջինիս հաջորդեց նրա որդի Վարդանը (38-48), որը, ընդհանուր առմամբ լինելով բավականին տաղանդավոր և եռանդուն մի տիրակալ, այնուհանդերձ մշտապես ստիպված էր պայքարել իր եղբայր Գոտարզի դեմ, ինչը զգալիորեն թուլացնում էր ինչպես հենց իր,

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 58, գլուխ 26, գիրք 59, գլուխ 27; Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 6, գլուխ 36; Պետրոս Պատրիկոս «Պատմություն», հատված 1:
[2] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 20, գլուխ 3:

այնպես էլ Պարթևական թագավորության դիրքերը այդ թվում նաև արտաքին հարաբերություններում:

41 թվականի հունվարի 24-ին դավադիրները սպանեցին Կալիգուլային և Հռոմեական կայսրության նոր կայսր հռչակվեց սպանվածի հորեղբայր Կլավդիոսը՝ Կլավդիոս I-ը (41-54), որը թույլ մի անձնավորություն էր: Կլավդիոս I-ի գահ բարձրանալուց հետո, սակայն, պաշտոնական Հռոմի վերաբերմունքը Մեծ Հայքի թագավորության նկատմամբ կրկին փոխվեց, այս ուղղությամբ վարվող քաղաքականությունը կրկին խստացվեց և որոշվեց ձևականորեն թափուր, իսկ փաստացի Հայոց Միջագետքի թագավորության արքա Աբգար V Մեծի ազդեցության տակ գտնվող Մեծ Հայքի թագավորության գահին կրկին հաստատել հռոմեամետ մի թեկնածուի: Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Հռոմեական կայսրության խոշոր բանակը, օգտվելով որոշ հայ նախարարների դավաճանությունից, հաղթեց սպարապետ Գիսակ Դիմաքսյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակին, որից հետո Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Փոքր Հայքի թագավորության արքա Կոտիս Թրակիացին, որը Արտաշես III-ի քրոջ որդին էր և Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր հենց դրանով[1]: Այսպիսով՝ մի ինչ-որ պահի Մեծ և Փոքր Հայքերի թագավորությունները միավորվեցին մեկ տիրակալի իշխանության ներքո, սակայն, հերթական այս Վաղանցիկ արքան ևս ոչ մի կերպ չկարողացավ հասնել իրական իշխանության: Արդյունքում՝ 47 թվականին Կլավդիոս I-ը ի վերջո գահընկեց արեց նաև Կոտիս Թրակիացուն, որից հետո կրկին Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Միհրդատ Իբերացին: Հերթական այս տեղափոխություններից հետո Օդրիսի թագավորությունը վերածվեց Հռոմեական կայսրության պրովինցիայի, իսկ Փոքր Հայքի թագավորության արքա էլ հռչակվեց Արիստոբուլոս Քալկիդացին (47-72), որը Քալկիդայի թագավորության արքա Հերովդես Ագրիպպա II Կրտսերի (53-100) որդին և Հուդայի թագավորության արքա Հերովդես I Մեծի թոռան թոռն էր[2]: Իշխանության վերադարձած Միհրդատ Իբերացին, սակայն, ևս իրական իշխանություն չուներ և Մեծ Հայքի թագավորությունում շարունակվեց Վաղանցիկ արքաների դարաշրջանին բնորոշ անորոշ դրությունը: Իրոք, եթե իր թագավորության առաջին շրջանում արդեն իսկ նկարագրված պատճառներով Փարսման I-ն աջակցում էր հարավում գործող եղբորը, ապա այժմ, ամրապնդած սեփական դիրքերը տեղում, վերջինս ոչ միայն զրկեց եղբորն այդ աջակցությունից, այլև սկսեց գործել նրա դեմ:

48 թվականին Վարդանը որսի ժամանակ զոհ գնաց եղբոր կողմնակիցների կողմից հղացած դավադրությանը և դրանից հետո Պարթևական թագավորության արքա դարձավ նրա եղբայր նույն Գոտարզը՝ Գոտարզ II-ը (48-51), որի դիրքերը գահի վրա ևս, սակայն, որևէ կերպ ամուր չէին: Այս պայմաններում լավը, սակայն, այն եղավ, որ Գոտարզ II-ի և Աբգար V Մեծի հարաբերությունները դրական տեսք ստացան: Հենց այս պայմաններում էր, որ Պարթևական թագավորության գահին իր դրածոյին ունենալու համար, ինչպես Հրահատ V-ի ու Վոնոն I-ի ժամանակներում էր, Հռոմեական կայսրությունը առաջ քաշեց Վոնոն I-ի որդի և Հրահատ IV-ի թոռ Միհրդատին: Արդյունքում, արդեն 49 թվականին զգալի ուժերով ժամանելով Արևելք, Միհրդատը սկիզբ դրեց գահակալական մի պայքարի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

49 դեկտեմբեր – ***<u>Կորմա գետի ճ-մ</u>*** (Արբելայից հարավ)[3]

Պարթևական թագավորության արքա Գոտարզ II-ի դեմ գահակալական պայքար սկսած Միհրդատի գլխավորած Հռոմեական կայսրության (մոտ 10.000),

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 11, գլուխ 8, 9:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 50, 51, գիրք 13, գլուխ 6, 7; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 12-14:

ինչպես նաև Իզաատես I-ի գլխավորած Ադիաբենեի (մոտ 10.000) և Աբգար V Մեծի գլխավորած Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը, Գոտարզ II-ին գաղտնի աջակցող Աբգար V Մեծի դրդումներով երկար ժամանակ հապաղելով Եդեսիայում, ի վերջո ***<u>Զևգմայի գետանցումով</u>*** շարժվեց դեպի հյուսիս-արևելք, իսկ հետո էլ, ուղղվելով դեպի արևելք, ճամբար զարկեց ***<u>Արբելայի մոտակայքում</u>***՝ մարտի հրավիրելով Գոտարզ II-ի գլխավորած Պարթևական թագավորության բանակին (մոտ 20.000): Գոտարզ II-ը, սակայն, ամեն կերպ ձգձգելով մարտի մեջ մտնելը, ի վերջո կաշառքով և տարաբնույթ խոստումներով կարողացավ հասնել այն բանին, որ Իզաատես I-ն ու Աբգար V Մեծը, որոնք մինչ այդ առանց այդ էլ հակված էին անցնելու իր կողմը, լքեն Միհրդատին և հեռանան:

I փուլ – Օգտվելով Միհրդատի բանակի թուլացումից՝ Պարթևական թագավորության բանակը անցավ հարձակման, որի արդյունքում բռնկվեց համառ մարտ:

II փուլ – Կարեն իշխան գլխավորած Պարթևական թագավորության բանակի մի մասը թևանցումով դուրս եկավ հակառակորդի բանակի թիկունք, որի արդյունքում վերջինս ծանր պարտություն կրեց:

Հաղթողները կորցրին մոտ 1.500, պարտվողները՝ մոտ 6.000 զինվոր: Միհրդատը գերվեց և ըստ Գոտարզ II-ի հրամանի նրա ականջները կտրվեցին՝ ինչը վերջնականապես զրկեց վերջինիս պարթևական գահին հավակնելու հնարավորությունից:

Այսպիսով, ի դեմս Պարթևական թագավորությունում զարգացող գահակալական պայքարի հերթական փուլի, մենք ականատես եղանք Հայոց Միջագետքի թագավորության արքա Աբգար V Մեծի ռազմաքաղաքական գործունեության ևս մեկ, բայց, թերևս, արդեն վերջին արարին՝ ստիպված լինելով գործել Հռոմեական կայսրության կողմից նախանշված գործունեության ընդհանուր տիրույթում՝ Աբգար V Մեծն ամեն դեպքում կարողացավ այնուհանդերձ հասնել այն բանին, որ պաշտոնական Հռոմի ազդեցությունը տարածաշրջանում չափից շատ չմեծանա՝ ըստ էության նենգադուլի ենթարկելով այն խնդիրը, որի լուծմանն էլ նա ձևականորեն կոչված էր: Այս առումով հատկանշական էր այն հանգամանքը, որ այս անգամ ևս Հայոց Միջագետքի թագավորության արքան կարողացավ այնպես անել, որ պահպանի և ռազմաքաղաքական հավասարակշռությունը, և իր հեղինակությունը Պարթևական թագավորության ավագանու շրջանում:

50 թվականի աշնանը, երբ Վաղանցիկ արքաների դարաշրջանն, ըստ էության, արդեն մոտենում էր իր ավարտին, մի քանի տարի չապրած մինչև նոր և ավելի լուսավոր ժամանակներ, մահացավ հայ ժողովրդի քաղաքական կյանքում էական դեր ու նշանակություն ունեցած, բայց, դժբախտաբար, նաև մինչև այժմ բավարար գնահատական չստացած մեր ժողովրդի տաղանդավոր և գործունյա գահակալներից մեկը՝ Աբգար V Մեծը: Այս արքայի մահով էլ, սակայն, ըստ էության, ավարտվեց նաև Հայոց Միջագետքի թագավորության ազդեցության գագաթնակետի շրջանը, ընդ որում, օբյեկտիվորեն լինելով թույլ և իր ռազմաքաղաքական հզորությամբ զիջելով հարևաններից շատերին, Հայոց Միջագետքի թագավորությունը սեփական հնարավորություններից բարձր արդյունք էր ցույց տալիս մեծապես հենց միայն Աբգար V Մեծի եռանդի, շրջահայացության ու ջանքերի շնորհիվ: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Աբգար V Մեծի օրոք Հայոց Միջագետքի թագավորությունը մի իսկական նեցուկ հանդիսացավ Մեծ Հայքի թագավորությունը, իսկ տաղանդավոր այս տիրակալն էլ, ըստ էության, փաստացի, իսկ հաճախ նույնիսկ իրավաբանորեն, կրում էր «թագավոր Հայոց» տիտղոսը՝ խոսքը վերաբերում է Աբգար V Մեծի կողմից չընդունվող Վաղանցիկ արքաների իշխանության շրջաններին:

Գլուխ 62
Աբգար VI-ը և Սանատրուկը

Նույն 50 թվականի աշնանը, երբ մահացավ իր հայրը, կառավարելով շատ կարճ, մահացավ նաև Աբգար V Մեծին հաջորդած նրա որդի Աբգար VI-ը (50)[1], որը չէր հանդիսանում «թագավոր Հայոց» տիտղոսի կրողը ոչ իրավաբանորեն և ոչ էլ փաստացի: Մովսես Խորենացին հայտնում է. «*Աբգարից հետո Հայոց թագավորությունը երկու մասի է բաժանվում, որովհետև նրա Անանուն որդին թագադրվեց և թագավորեց Եդեսիայում, իսկ նրա քեռորդի Սանատրուկը թագավորեց Հայաստանում*»: Այսպիսով, ինչպես հստակորեն արտահայտվում է Պատմահայրը, մինչ այդ անձնական ունիայի սկզբունքով հաճախ յուրօրինակ միասնական թագավորություն հանդիսացող Հայոց Միջագետքի և Մեծ Հայքի թագավորությունները կրկին բաժանվում են, ինչպես իրավաբանորեն, այնպես էլ, կարելի է ենթադրել, նաև փաստացի: Իրոք, եթե Աբգար VI-ը շարունակեց թագավորել Հայոց Միջագետքի թագավորությունում, ապա վերջինիս հորաքրոջ որդի Սանատրուկը (50-51, 76-106՝ Մեծ Հայքում, 50-106՝ նաև Հայոց Միջագետքում)[2] հռչակվեց Մեծ Հայքի թագավորության արքա, երբ Միհրդատ Իբերացին, ըստ էության, գահընկեց արվեց և փակվեց Գառնի ամրոցում:

Դատելով ըստ ամենայնի՝ դեռևս իր կենդանության օրոք Աբգար V Մեծը նախատեսել էր իրերի հենց այս դասավորությունը, երբ Հայոց Միջագետքի թագավորությունում պետք է թագավորեր իր որդին, իսկ Մեծ Հայքի թագավորությունում էլ պետք է հաստատվեր Հայ Արշակունիների մի նոր ճյուղն, ի դեմս սեփական քրոջ սերնդի, ընդ որում նախատեսվում էր, որ հենց դրանով էլ պետք է իր վերջը գտներ Վաղանցիկ արքաների դարաշրջանը: Իրականությունը, սակայն, չարդարացրեց Աբգար V Մեծի այս վերջին հույսը, քանի որ Աբգար V Մեծի մահից հետո հենց սկզբից էլ իրար սառը վերաբերվող Աբգար VI-ի և Սանատրուկի հարաբերությունները բերեցին արդեն բացահայտ ընդհարման, երբ որևէ համագործակցության մասին խոսք գնալ բնականաբար արդեն չէր կարող[3]: Սկիզբ առած գահակալական պայքարը, սակայն, ծանր ռազմական բախմամբ բարեբախտաբար այնուհանդերձ չավարտվեց, քանի որ, մինչ իրադարձությունները կզարգանային, Աբգար VI-ը դժբախտ պատահարի զոհ դարձավ ու մահացավ, երբ սեփական պալատի սյունազարդ դահլիճներից մեկը նորոգելիս վարպետները վեր հանվող սյուներից մեկը անզգուշորեն ցած գցեցին, այն ընկավ Աբգար VI-ի վրա և սպանեց նրան:

Աբգար VI-ի մահից հետո Հայոց Միջագետքի թագավորության արքա ճանաչվեց Սանատրուկը, որն ամենից առաջ խնդիր ուներ ամրանալ տեղում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դեռևս Աբգար VI-ի կենդանության օրոք Խուրան Արծրունին և Տուվիա Բագրատունին ապստամբել էին այս տիրակալի դեմ և անցել էին Սանատրուկի կողմը, սակայն, չնայած սրան, այն բանից հետո, երբ իշխանության եկավ Սանատրուկը, Խուրան Արծրունին և Տուվիա Բագրատունին շնորհազրկվեցին ու ստիպված եղան իրենց տոհմերով հեռանալ Հայաստանից: Խուրանը անցավ ճգնակեցության և, գտնվելով արդեն ծեր տարիքում, շուտով մահացավ, իսկ նրա որդի Վաչեն ու եղբայր Արշավիրն էլ ծառայության անցան Բաբելոնի կառավարչի պաշտոնը վարող պարթև արքայազն Ներսեհի մոտ:

Տեղում իրավիճակը խաղաղեցնելուց հետո հաջորդ խնդիրը, որ կանգնեց նոր տիրակալի առջև, դա Ադիաբենեի թագավորության հետ հարաբերությունների կարգավորումն էր: Իր ժամանակի Իզաատես I-ը, աջակցելով Արտավան III-ին, Հայոց

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 34:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 34:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 35; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 40; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 6; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 14; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

Միջագետքի թագավորության հաշվին լայնացրել էր սեփական տիրույթները, սակայն այժմ ամուր չէին նաև հենց իր դիրքերը, ընդ որում Իզաատես I-ի դեմ հատկապես լուրջ էին տրամադրված դեռևս նախորդ հարյուրամյակում Հայոց Միջագետքի թագավորության տիրակալների հետ լավ հարաբերություններ ունեցող արաբները, սակայն ուժեղ էր նաև ընդդիմությունը սեփական ազնվականների շարքերում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

50 աշուն – ***<u>Մծբինի ճ-մ</u>***[1]

Ադիաբենեի թագավորության արքա Իզաատես I-ի ավագ եղբայր Մոնոբազեսի գլխավորությամբ Իզաատես I-ի դեմ դավադրություն կազմած ազնվականները, խոստանալով մարտի ժամանակ անցնել հակառակորդի կողմը, դրդեցին Աբիասի գլխավորած քոչվոր արաբներին (մոտ 10.000) հարձակվել քաղաքի մոտ ճամբարած Ադիաբենեի թագավորության բանակի (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 1.000) վրա:

I փուլ – Արաբները անցան հարձակման և դավադիրներն անցան նրանց կողմը, սակայն Իզաատես I-ը, արագորեն ժամանելով սեփական ճամբար, կենտրոնացրեց իրեն հավատարիմ մնացած ուժերը ու հետ մղեց հարվածը:

II փուլ – Հաջորդ օրը Իզաատես I-ի բանակը հարձակվեց հակառակորդի վրա և պարտության մատնեց վերջինիս:

III փուլ – Մյուս օրը Իզաատես I-ի գլխավորած Ադիաբենեի թագավորության բանակը նահանջած և Աբիասի գլխավորությամբ ամրոցում պաշտպանվել փորձող արաբներից գրավեց ***<u>Արշամոս ամրոցը</u>*** (Մծբինի մոտ), ընդ որում Աբիասը, դիմադրելով մինչև վերջ, ի վերջո ինքնասպան եղավ:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցները՝ մոտ 3.000, պարտվողները՝ մոտ 5.000 զինվոր:

Այսպիսով, թեև Ադիաբենեի թագավորության հարցում Սանատրուկի ծրագրերն առժամանակ հաջողություն չարձանագրեցին, սակայն սեփական թագավորության ներսում Իզաատես I-ի դիրքերն այսպես թե այնպես լուրջ հարված կրեցին: Վերջին հանգամանքն ինքնին օգուտ էր Հայոց Միջագետքի թագավորությանը:

Ամրապնդելով սեփական իշխանությունը Հայոց Միջագետքի թագավորությունում՝ Սանատրուկը նախապատրաստվեց իր իշխանությունը փաստացի տարածել նաև Մեծ Հայքի թագավորության վրա՝ ձգտելով անձնական ունիայի սկզբունքով ի վերջո վերամիավորել երկու այս թագավորությունները: Այս մտայնությունը, սակայն, առժամանակ չհաջողվեց, քանի որ հենց նույն այս ժամանակ Մեծ Հայքի թագավորության գահի համար մրցակցության մեջ մտան մի կողմից Հռոմեական կայսրության աջակցությունը վայելող Իբերիայի թագավորությունը, իսկ մյուս կողմից էլ մութ տարիները հետևում թողած և կրկին մեջքն ուղղող Պարթևական թագավորությունը:

Գլուխ 63
Վաղանցիկ արքաներ. Միհրդատ Իբերացուց Հռադամիզդ Իբերացի

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Իբերիայի թագավորության արքա Փարսման I-ը, որը մի ժամանակ իր եղբայր Միհրդատին էր զիջել Մեծ Հայքի թագավորության գահը և այն զբաղեցնելու հարցով նույնիսկ աջակցել էր վերջինիս, բնականաբար ամենից առաջ հոգալով այն բանի մասին, որ սեփական գահի վտանգավոր այդ մրցակցին հեռացնի երկրից, այժմ հանգել էր նոր մտքի: Իրոք, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Փարսման I-ը հետևության էր եկել, որ եղբորը

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 20, գլուխ 4:

պետք է հեռացնել նաև Մեծ Հայքի թագավորության գահից՝ փոխարենն այստեղ հաստատելով մեկ այլ փառասերի, ի դեմս սեփական որդի Հռադամիզդի, որը հոր կենդանության օրոք սկսել էր աչք ունենալ վերջինիս՝ նույն Փարսման Ի-ի, գահի վրա: Իրոք, Հռադամիզդը իր անձնական և գործնական հատկանիշներով բացառիկ մի անձնավորություն էր, աչքի էր ընկնում սուր խելքով, ֆիզիկական մեծ ուժով ու խիզախությամբ և Փարսման Ի-ը բոլոր հիմքերն ուներ կարծելու, որ սեփական հպատակները մի ինչ-որ պահի որդուն կարող են գերադասել հորից: Այս առումով Սանատրուկի պայքարը Միհրդատ Իբերացու դեմ ևս Փարսման Ի-ի օգտին եղավ, երբ վերջինիս եղբոր առանց այդ էլ թույլ դիրքերը Մեծ Հայքի թագավորությունում վերջնականապես փլուզվեցին: Միաժամանակ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ փոխվել էր ներքին դրությունը նաև Պարթևական թագավորությունում:

Իրոք, 51 թվականի հունիսին Գոտարզ II-ը կնքեց իր մահկանացուն և նրան հաջորդեց Արտավան III-ի եղբայր Վոնոն II-ը (51), սակայն նույն 51 թվականի աշնանը կյանքից հեռացավ նաև այս տիրակալը և Պարթևական թագավորության արքա հռչակվեց վերջինիս որդի Վաղարշ Ի-ը (51-79), որը մի ուժեղ, եռանդուն, խելացի, կրթված, ինչպես նաև զորավարական ու դիվանագիտական մեծ ունակությունների տեր անձնավորություն էր: Նույն այս ժամանակ Ատրպատականի թագավորության արքա հռչակվեց նաև Վաղարշ Ի-ի եղբայր Բակուրը (51-81, 81-105՝ նաև Պարթևական թագավորությունում), ինչի արդյունքում Պարթևական և Ատրպատականի թագավորություններն, ըստ էության, սկսեցին գործել որպես մեկ ամբողջություն: Այսպիսով՝ Պարթևական թագավորության գահին կանգնեց ունակ մի տիրակալ, որը, կայունացնելով սեփական թագավորության ներքին դրությունը և հետևում թողնելով անկայունության տարիները, ձեռնամուխ եղավ սեփական երկրի առջև հառնած արտաքին քաղաքական հիմնախնդիրների լուծմանը: Այս առումով ամենից առաջ խնդիր դրվեց վերսկսել պայքարը Մեծ Հայքի թագավորության համար, ընդ որում Պարթևական թագավորության արքան նախատեսում էր այստեղ արքա հռչակել իր ավագ եղբայր Տրդատին: Արդյունքում՝ Պարթևական թագավորության կողմից Մեծ Հայքի թագավորության գահի համար առաջարկվող թեկնածուն փաստորեն դեմ դուրս եկավ Փարսման Ի-ի կողմից առաջարկվող թեկնածուին, որն իր հերթին բնականաբար վայելում էր պաշտոնական Հռոմի աջակցությունը:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, սակայն, որ սկիզբ առնող պայքարում Պարթևական թագավորությանն այնուհանդերձ մեծապես կաշկանդում էր իր հզորության գագաթնակետին հասած Քուշանական թագավորության գործոնը: Իրոք, Քուշանական թագավորությունը, 10 թվականին վերջնականապես ոչնչացրած Հունա-Հնդկական թագավորությունը և տեր դարձած նրա ժառանգության հիմնական մասին, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Շունգի տերության հետնորդը հանդիսացած Կանվայի տերությանը փոխարինած Սատավահանայի հնդկական թագավորությանը հաջողությամբ հետ էր շպրտել դեպի Հնդկաստանի հարավ, չեզոքացրել էր վերջինիցս բխող սպառնալիքները և այժմ արդեն ապահովել էր բոլոր հնարավորություններն ակտիվանալու սեփական սահմանների արևմուտքում՝ Պարթևական թագավորության դեմ:

51 թվականի գարնանը Միհրդատ Իբերացուն գերելու նպատակ հետապնդող արքայազն Հռադամիզդի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 10.000) պաշարեց Գառնի ամրոցը (Արարատ, Ոստան Հայոց գավառ) Հռոմեական կայսրության կայազորից (մոտ 1.000), որի ղեկավարը, վերցնելով խոշոր կաշառք, ի վերջո առանց մարտի հանձնվեց: Այսպիսով՝ վերևում արդեն իսկ նկարագրված ուժերի դասավորության ֆոնին կողմերից մեկի մոտ տեղի ունեցավ սեփական թեկնածուի փոփոխություն, քանզի Հռադամիզդի կողմից բավարար երաշխիքներ ստացած վերջինիս հորեղբայր Միհրդատ Իբերացին գերվեց և հետագայում այնուհանդերձ սպանվեց՝ չնայած նույնիսկ այն բանին, որ ամուսնացած էր Հռադամիզդի քրոջ հետ: Այս

առումով հետաքրքիր է նշել, որ նենգամիտ Հռադամիզդը, դրդելով հորեղբորը սեփական ընտանիքի հետ միասին հանձնվել, երդվեց չթափել հանձնվողների արյունը և արդյունքում հավատարիմ մնաց իր երդմանը՝ արդյունքում ուղղակի հրամայելով գերված հորեղբոր և նրա ընտանիքի անդամների վրա ծանր գորգեր լցնել, ինչի հետևանքով վերջիններս խեղդամահ եղան: Այսպիսով՝ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Հռադամիզդը՝ Հռադամիզդ Իբերացին (51, 51-54)[1]: Այս առումով հարկ է նշել, որ Հռադամիզդ Իբերացին Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր մի կողմից նրանով, որ հանդիսանում էր Տիգրան II Մեծի որդի Արշակ I Հայի թոռ Բարտոմ I-ի աղջկա որդի Միհրդատ I-ի թոռ Փարսման I-ի որդին, մյուս կողմից էլ նրանով, որ իր հորեղբայրը՝ Միհրդատ Իբերացին, թագավորել էր Մեծ Հայքի թագավորությունում:

Նույն 51 թվականի գարնանը Վաղարշ I-ի գլխավորած Պարթևական թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Ադիաբենեի թագավորության տարածքը և սկսեց մոտենալ Իզաատես I-ի գլխավորությամբ Մծբինի մոտ կենտրոնացած Ադիաբենեի թագավորության բանակին (6.000 հեծյալ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 600): Նույն այս ժամանակ տեղեկանալով, սակայն, որ Քուշանական թագավորության բանակը (մոտ 30.000) ասպատակում է Պարթևական թագավորության արևելյան շրջանները, Վաղարշ I-ը նահանջեց՝ ուժերն ուղղելով դեպի արևելք և իր հերթին ստիպելով թշնամու բանակին նահանջել[2]:

Չեզոքացնելով Քուշանական թագավորությունից բխող սպառնալիքները՝ 51 թվականի դեկտեմբերին պարթևական Տրդատ արքաեղբոր և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Պարթևական (մոտ 30.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 30.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը արշավեց Գանձա-Տրպատունիք-Թավրիզ-Գաբիթյան-Մարանդ-Հեր-Զարավանդ-Ճվաշ-Արտազ-Զարեհավան-Մասյացոտն-Արտաշատ-Մասյացոտն-Զարեհավան-Բագրևանդ-Մանազկերտ-Տարոն-Բաղեշ-Տիգրանակերտ երթուղով՝ Հռադամիզդ Իբերացու գլխավորությամբ նահանջող Հռոմեական կայսրության (մոտ 5.000) և Իբերիայի թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակից առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավելով Մեծ Հայքի թագավորության տարածքը: Արդյունքում՝ Հռադամիզդ Իբերացին դիմեց փախուստի և ապաստանեց հոր մոտ, իսկ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Տրդատը՝ Տրդատ I-ը (51, 54-59, 62-76): Ստացվեց այնպես, սակայն, որ պարենի անբավարարության, վերահաս ձմեռվա և բռնկված համաճարակի պատճառով դաշնակից բանակը արդյունքում ինքն էլ Տիգրանակերտ-Ադիաբենե երթուղով նահանջեց Պարթևական թագավորության տարածք, իսկ Հռադամիզդ Իբերացու բանակն էլ իր հերթին կրկին մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք[3]: Այսպիսով՝ Վաղարշ I-ի կողմից Մեծ Հայքի թագավորության գահին տիրելու փորձն ավարտվեց անհաջողությամբ, սակայն պայքարը դեռևս առջևում էր և դա այն պայմաններում, երբ պաշտոնական Հռոմն ինքն էլ դեռևս չէր արտահայտվել:

52 թվականին Անամուռի ճ-մ-ում (Կիլիկիայի արևմուտք) Կիլիկիայում բռնկված Կիլիկիայի V ապստամբության պայմաններում Տրոքսոբարոսի գլխավորությամբ քաղաքը պաշարած Հայկական բանակը (մոտ 7.000), օգտագործելով տեղանքի առանձնահատկությունները, հաղթեց Ասորիքից առաջխաղացած Հռոմեական կայսրության հեծյալ բանակին (մոտ 5.000): Շուտով, սակայն, Կոմագենեի թագավորության արքա Անտիոքոս IV-ին հաջողվեց կազմակերպել Տրոքսոբարոսի սպանությունը, որից հետո Կիլիկիայի V ապստամբությունը վերջացավ[4], այսպիսով, ըստ էության, միայն շատ հեռավոր չափերով կրկնելով այն իրավիճակը, որն առկա էր եղել մ.թ.ա. 40-ական թվականներին:

---

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 44-48; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:
[2] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 20, գլուխ 4:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 50:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 12, գլուխ 55:

54 թվականի հոկտեմբերի 13-ին կյանքից հեռացավ սեփական ընդհանուր և, մասնավորապես նաև, Արևելքում դրսևորած պասիվ քաղաքականությամբ աչքի ընկնող Հռոմեական կայսրության կայսր Կլավդիոս Ի-ը, որն այնուհանդերձ հասցրել էր գրավել Բրիտանիա կղզու հիմնական մասը, ու նրան հաջորդեց իր խորթ որդի Ներոնը (54-68): Վերջինս սեփական արտասովոր վարքագծով աչքի ընկնող պոռթկուն և մտավոր խիստ սահմանափակ ունակությունների տեր մի անձնավորություն էր, որը, դրա հետ միաժամանակ, սակայն, նաև աչքի էր ընկնում հսկայական դաժանությամբ՝ այս ամենով, ըստ էության, կրկնելով, իսկ ինչ-որ տեղ էլ նույնիսկ գերազանցելով Կալիգուլային: Հռոմեական կայսրությունում տեղի ունեցած գահակալական փոփոխությունները նոր հույսեր արթնացրին Պարթևական թագավորությունում, որտեղ Վաղարշ Ի-ը մեծ հաշվով կարգավորել էր իր գործերը, իսկ նրա եղբայր Տրդատ Ի-ն էլ եղբորից անվերջ պահանջում էր ակտիվ գործողությունների անցնել: Արդյունքում՝ Վաղարշ Ի-ն ամենից առաջ լուծեց Ադիաբենեի թագավորության խնդիրը, որտեղ 54 թվականին Իզաատես Ի-ի մահից հետո հասավ այն բանին, որ արքա հռչակվեց պրոպարթևական կողմնորոշում ունեցող հանգուցյալի եղբայր, արդեն իսկ հիշատակված Մոնոբազեսը (54-65): Այսպիսով, ամրապնդվելով Ադիաբենեի թագավորության տարածքում, մինչ այդ իրենով անելով Ատրպատականի թագավորությունը և մեծ հաշվով վայելելով նաև Հայոց Միջագետքի թագավորության արքա Սանատրուկի աջակցությունը, սեփական թագավորության արևելյան սահմաններում խաղաղություն հաստատած Վաղարշ Ի-ը սկիզբ դրեց Մեծ Հայքի թագավորության համար պայքարի վճռական փուլին:

Արդյունքում՝ 54 թվականի դեկտեմբերին Գանձա-Տրպատունիք-Թավրիզ-Գաբիթյան -Մարանդ-Գողթն-Նախիջևան-Արած-Ուրծաձոր երթուղով Տրդատ Ի-ի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ արշաված Պարթևական (մոտ 30.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 30.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը Արտաշատի ճ-մ-ում հաղթեց Հռադամիզդ Իբերացու գլխավորած Իբերիայի թագավորության բանակին (մոտ 30.000): Հռադամիզդ Իբերացին դիմեց խուճապահար փախուստի, ընդ որում Մեծ Հայքի թագավորության գահի այս անհաջողակ հավակնորդի փախուստն այն աստիճան հապճեպ էր, որ, չկարողանալով հետը տանել սուր ցավերից տառապող իր հղի կնոջը, նա նույն այդ կնոջ իսկ խնդրանքով դաշունահարեց վերջինիս և նետեց Արաքս գետը: Ստացվեց այնպես, սակայն, որ տեղի հայ հովիվները փրկեցին ծանր վերք ստացած այդ կնոջը, իսկ հետո էլ, պարզելով վերջինիս բարձր ծագումը, նրան հասցրին Տրդատ Ի-ի մոտ: Արդյունքում՝ ծանր ճակատագրի արժանացած այս կինը հետագայում հաջողությամբ ծննդաբերեց և լույս աշխարհ բերեց տղա մի երեխայի, որը տասնամյակներ անց տարածաշրջանի քաղաքական զարգացումներում դեռ իր դերն ունենալու էր: Այս առումով հետաքրքիր է նաև հենց իրեն՝ Հռադամիզդ Իբերացուն, բաժին հասած ճակատագիրը, որը, այս ամենից հետո ևս չդադարեցնելով պայքարը սեփական հոր դեմ այս անգամ արդեն Իբերիայի թագավորության գահի համար, ի վերջո հենց Փարսման Ի-ի իսկ հրամանով էլ սպանվեց:

Եվ այսպես, Մեծ Հայքի թագավորության տարածքի մեծ մասը ազատագրվեց և թագավորության արքա կրկին հռչակվեց Տրդատ Ի-ը, սակայն Ծոփքը մնաց պաշտոնական Հռոմի տիրապետության տակ, որը այստեղ վերականգնեց Ծոփքի թագավորությունը և անձնական ունիայի սկզբունքով նրա արքա հռչակեց Հեմսի գահակալ Հուլիոս Սոհեմոսին (54-72), ընդ որում վերջինս Ծոփքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր նրանով, որ հեռավոր ազգակցական կապ ուներ Ծոփքի թագավորության վերջին արքա Արտանես II-ի հետ: Այսպիսով, առժամանակ պատրաստ չլինելով լայնածավալ ռազմական գործողությունների մղմանը Արևելքում, պաշտոնական Հռոմը պաշտպանական դիրք գրավեց և բավականացավ առայժմ միայն իրեն ենթակա արքային համապատասխան պաշտոնի նշանակելով: Միաժամանակ, սակայն, կայսր Ներոնի հրամանով Արևելքում սկսեցին աստիճանաբար բանակային զգալի ուժեր կուտակվել, իսկ մինչ այդ էլ գործի անցան

տեղում պաշտոնական Հռոմի ազդեցության ոլորտում գտնվող սահմանային ուժերը: Այս առումով պաշտոնական Հռոմի օգտին եղավ նաև մեկ այլ հանգամանք, քանզի արդեն 55 թվականին Վաղարշ Ի-ի որդի Վարդանը գահակալական պայքար սկսեց հոր դեմ և Պարթևական թագավորության հարվածային ուժերը շեղեց իր ուղղությամբ: Արդյունքում՝ միայն 59 թվականին էր, որ Վարդանի ապստամբությունը վերջնականապես ճնշվեց և Վաղարշ Ի-ը հնարավորություն ունեցավ կրկին անդրադարձ կատարել արտաքին խնդիրներին:

Եվ այսպես, մինչ Վաղարշ Ի-ը զբաղված էր սեփական ապստամբած որդու դեմ պայքարով, իսկ պաշտոնական Հռոմն էր դեռևս շարունակում էր Արևելքում կուտակել իր հարվածային ուժերը ու կարգի բերել դրանք, կայսր Ներոնի հրամանով Մեծ Հայքի թագավորության դեմ պայքար սկսեցին Արևելքում դեռևս իրենց գոյությունը պահպանող տեղական մանր և Հռոմեական կայսրությանը ենթակա թագավորությունները: Արդյունքում՝ 57 թվականի գարնանը Սպերի ճ-մ-ում Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 10.000) հաղթեց պաշտոնական Հռոմի դրդումով Պոնտոսի թագավորության արքա Պոլեմոն Ի-ի որդի Պոլեմոն II-ի (23-64) գլխավորությամբ Խաղկտիքի արևելքից Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Պոնտոսի թագավորության բանակին (մոտ 4.000), ինչպես նաև հենիոխներին (մոտ 3.000), ճաներին և մակրոններին (մոտ 3.000)[1]: Նույն 57 թվականի գարնանը Փարսման Ի-ի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 20.000) իր հերթին ասպատակեց Գուգարքը[2], Արիստոբուլոս Քալկիդացու գլխավորած Փոքր Հայքի թագավորության բանակը (մոտ 10.000) հարված հասցրեց Եկեղյաց, Դարանաղի, Աղյուն և Մուզուր գավառներին[3], իսկ Անտիոքոս IV-ի գլխավորած Կոմագենեի թագավորության բանակն (մոտ 5.000) էլ ասպատակեց Անգեղտուն գավառը[4]: Սրանք բոլորը, սակայն, ըստ էության, մանր գործողություններ էին և Մեծ Հայքի թագավորության գահի համար պայքարում չէին կարող լուրջ փաստարկ հանդիսանալ: Արդյունքում՝ հենց որ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան իրեն պատրաստ զգաց լայնածավալ գործողությունների, հարվածը չհապաղեց, ընդ որում, հարվածային բանակի ղեկավար նշանակվեց իր ժամանակի Հռոմեական կայսրության ամենատաղանդավոր զորավարներից մեկը համարվող Դոմիցիանոս Կորբուլոնը:

Գլուխ 64
Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի թվաքանակը դեպի Մեծ Հայքի թագավորություն վերջինիս առաջին արշավանքում

Ռազմապատմական գրականության մեջ հստակ արտահայտված չէ իր Արևելյան առաջին արշավանքի ժամանակ Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, մի խնդիր, որը կարիք ունի լրացուցիչ լուսաբանման: Եվ այսպես, ըստ մեզ հասած տվյալների 14-90 թվականներին Հռոմեական կայսրության բանակն ուներ 25 լեգեոն, որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի մոտ 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էին 175.000 լեգեոներներ, ինչպես նաև բավականին մեծ թվով դաշնակիցներ: Ընդհանուր հաշվով բանակի կազմում կար մոտ 300.000 ռազմիկ: Միաժամանակ հայտնի է, որ 58 թվականի վիճակով 8 լեգեոն գտնվում էր արևելյան (Փոքր Ասիա և Ասորիք), իսկ 1 լեգեոն՝ հարավ-արևելյան (Եգիպտոս) ուղղությամբ: Այսպիսով, թեև սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված իր Արևելյան առաջին արշավանքի ժամանակ Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի թվաքանակը, սակայն առկա տվյալների վերլուծության արդյունքում այն հնարավոր է պարզել բավականին մեծ ճշգրտությամբ: Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի թվաքանակը պարզելու համար 58 թվականին արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 8, 34, 37:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 37; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:
[3] Սկզբնաղբյուրներում այս մասին ուղղակի վկայություն չկա, սակայն դա համարվում է միանգամայն հավանական վարքագիծ:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 37:

գտնվող Հռոմեական կայսրության 9 լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի կազմում.

1. **III Gallica**[1],
2. **IV Scythica**[2],
3. **V Macedonica**[3],
4. **VI Ferrata**[4],
5. **X Fretensis**[5],
6. **XII Fulminata**[6]:

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք գտնվում էին Արևելքում և կարող էին հայտնվել Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի կազմում.

1. **III Augusta**[7],
2. **III Cyrenaica**[8],
3. **XXII Deiotariana**[9]:

Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում արևելյան (Փոքր Ասիա և Ասորիք) և հարավ-արևելյան (Եգիպտոս) ուղղությամբ Հռոմեական կայսրությունն ուներ 9 լեգեոն, որոնց կազմում ընդգրկված էր 63.000 լեգեոներ: Իմաստ չտեսնելով կրկնել վերևում Լուցիոս Լուկուլլոսի և Մարկոս Անտոնիոսի Արևելյան արշավանքների կապակցությամբ արված դիտարկումներն ու առաջարկելով ևս մեկ անգամ ծանոթանալ դրանց՝ առաջ անցնելով ենթադրենք, որ այս պայմաններում Դոմիցիանոս Կորբուլոնի տրամադրության տակ, տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 55.000 լեգեոներ:

Իր հերթին, սակայն, արտակարգ լիազորություններով օժտված Դոմիցիանոս Կորբուլոնը Հռոմեական կայսրության բոլոր «դաշնակից և բարեկամ»-ներից պահանջել է կատարել իրենց դաշնակցային պարտավորություններն ու սեփական բանակներով միանալ Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժել պատրաստվող Հռոմեական կայսրության բանակին: Մասնավորապես Դոմիցիանոս Կորբուլոնին են միացել.

1. Իբերիայի թագավորության բանակը (մոտ 20.000 ռազմիկ),
2. Պոնտոսի թագավորության բանակը (մոտ 15.000 ռազմիկ),
3. Կոմագենեի թագավորության բանակը (մոտ 5.000 ռազմիկ),
4. Փոքր Հայքի թագավորության բանակը (մոտ 2.000 ռազմիկ),
5. Հեմսի թագավորության բանակը (մոտ 2.000 ռազմիկ),
6. Հենիոխների, ճաների և մակրոնների բանակը (մոտ 1.000 ռազմիկ):

Այսպիսով՝ կարելի բավականին մեծ ճշգրտությամբ պնդել, որ Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Դոմիցիանոս Կորբուլոնի բանակը կազմում էր մոտ 100.000 ռազմիկ, որից 55.000-ը լեգեոներներ և 45.000 դաշնակից բանակների ռազմիկներ:

Գլուխ 65
Դոմիցիանոս Կորբուլոնի առաջին արշավանքը դեպի Մեծ Հայքի թագավորություն

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 38:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 38:
[5] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 40:
[6] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 35:
[7] Մշտապես տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[8] Մշտապես տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[9] Այս ժամանակաշրջանում տեղաբաշխված էր Գալաթիայում:

Եվ այսպես, սկիզբ առավ պաշտոնական Հռոմի մեծածավալ հարվածը արևելյան ուղղությամբ: Հարվածի սուր ծայրում Մեծ Հայքի թագավորությունն էր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

58 գարուն – ***Կարին գավառի ճ-մ***[1]

Մեծ Հայքի թագավորության գահին Տրդատ Ի-ի հաստատվելը խորը անհանգստություն առաջացրեց պաշտոնական Հռոմում, որը, չկարողանալով իրավիճակը փոխել «դաշնակից և բարեկամ»-ների ուժերով, դիմեց ավելի լուրջ միջոցների: Արդյունքում՝ Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 100.000) ***Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Նիկոպոլիս-Սատաղ-Դերջան*** երթուղով ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք և, ենթարկվելով նահանջող Հայկական բանակի (մոտ 30.000, այդ թվում Մարդպետական գունդը) անկանոն հարվածներին, ճամբարեց ***Բասենի դաշտում***: Տեղեկանալով այդ մասին՝ Տրդատ Ի-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի հեծելազորը (մոտ 30.000) մոտեցավ թշնամու բանակի ճամբարին:

I փուլ – Հայկական բանակի թեթև հեծյալ նետաձիգները հարձակվեցին թշնամու բանակի հեծելազորի վրա: Կարճատև մարտից հետո, սակայն, իբր չդիմանալով թշնամու հետևակի և հեծելազորի համակցված հարվածին, Հայկական թեթև հեծելազորը, ցրվելով ճակատից աջ ու ձախ ուղղությամբ, սկսեց փախուստ ձևացնելով կանխամտածված հետ քաշվել՝ իր հետևից հրապուրելով թշնամու հեծելազորին և միաժամանակ բացելով ճակատային հանդիպակացը: Իր հերթին, խանդավառված այս կեղծ հաջողությունից, Հռոմեական կայսրության բանակի հեծելազորը սկսեց հետապնդել նահանջողներին, ինչի արդյունքում շուտով հեռացավ և կտրվեց իր հիմնական բանակից:

II փուլ – Հաղթականորեն արշավող թշնամու հեծելազորի դեմ-դիմաց՝ ազատված տարածության վրա, հայտնվեց Հայկական ծանր հեծելազորը, որը սեպաձև-խոյընթաց հատու հարվածով ջախջախեց թշնամու հեծելազորին՝ ըստ էության ոչնչացնելով այն:

III փուլ – Հռոմեական կայսրության բանակի լեգեոնները, զգուշանալով առաջ շարժվել և օգնության հասնել սեփական հեծելազորին, արագորեն վերադարձան սեփական ճամբար:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:[2]

Կրելով առաջին անհաջողությունը Բասենում՝ 58 թվականի գարնանից մինչև սեպտեմբեր հակառակորդի բանակը շարունակեց իր դանդաղ առաջխաղացումը Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Կոգովիտի հյուսիս երթուղով՝ ողջ երթուղու երկայնքով թողնելով կայազորներ և ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 50.000, այդ թվում Մարդպետական գունդը) անկանոն հարվածներին[3]: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ, ինչպես և Լուցիոս Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, այս անգամ ևս ուշադրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ, մոտ չորս ու կես ամսում Հռոմեական կայսրության բանակն անցավ միայն մոտ 250 կմ: Այս հանգամանքը մեզ համար կրկին կարևորվում է նախ նրանով, որ ցույց է տալիս, թե Մեծ Հայքի

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 36; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 4, գլուխ 1, մաս 28:

[2] Խորհրդային պատմագիտության կողմից Տակիտոսի նկարագրած այս ճակատամարտը ընդհանրապես ուշադրության չի արժանացել, իսկ համաշխարհային պատմագիտությունն էլ վերջինիս անդրադարձել է անչափ հպանցիկ (Дибвойз Н. К. “Политическая история Парфии”, СПб 2008, стр. 160): Տակիտոսը կասկածելիորեն ժլատ է արտահայտվում այս ճակատամարտի ընթացքի մասին, սակայն նույնիսկ նմանատիպ նկարագրումից երևում են մարտավարական մանրամասները և ակնհայտ է դառնում հռոմեական բանակի պարտության փաստը: Հատկանշական է, որ ինչպես մ.թ.ա. 68 թ. սեպտեմբերի 15-ի Արածանիի ճակատամարտում, այստեղ ևս տեսնում ենք կանոնավոր բանակի կողմից սկյութական մարտաձևի կիրառում, մի հանգամանքը, որը մեծապես աննկատ է մնացել:

[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 37-39:

թագավորության բանակը ինչ աստիճանի համառ դիմադրություն էր ցույց տալիս և հետո էլ մեզ հիմք է տալիս ենթադրություն անելու, որ գուցե Հռոմեական կայսրության բանակը կորուստներ կրելով մի քանի անգամ դադարեցրել է առաջխաղացումը և հետ վերադառնալուց հետո նորից է սկսել արշավանքը, մի հանգամանք, որին հռոմեական գիշատիչ-զավթողական քաղաքականությունը փառաբանող, հռոմեական բանակով ակնհայտորեն հիացած ու այն ամեն կերպ գովերգել փորձող Տակիտոսը չի անդրադարձել:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

58 սեպտեմբեր – ***<u>Վոլանդ ամրոցի գրավումը</u>*** (Արարատ, Մասյացոտն գավառի հարավ-արևմուտք, Հայկական Պար լեռնաշղթայի Գայլատու լեռնանցքում)[1]

Հռոմեական կայսրության բանակը (մոտ 85.000), բաժանվելով չորս մասի, պաշարեց ամրոցը Հայկական կայազորից (մոտ 1.000), ընդ որում մասերից առաջինը պետք է աշխատեցներ պաշարողական և նետողական տեխնիկան, մյուսը՝ օժանդակեր վերջինիս նետաձգությամբ, երրորդ մասը՝ փորձեր սանդուղքներով մագլցել պարիսպը, իսկ չորրորդ մասը կազմող ծանր հետևակը «կրիա» կազմած մարտակարգով պետք է գրոհեր պարսպում առաջացած ճեղքվածքը:

I փուլ – Պաշարման առաջին օրը Հռոմեական կայսրության բանակը անցավ գրոհի, սակայն ողջ օրը տևած համառ մարտի արդյունքում հետ մղվեց ելման դիրքեր:

II փուլ – Պաշարման երկրորդ օրը Հռոմեական կայսրության բանակը կրկին անցավ գրոհի, սակայն ողջ օրը տևած համառ մարտի արդյունքում այս անգամ ևս հետ մղվեց ելման դիրքեր:

III փուլ – Պաշարման երրորդ օրը Հռոմեական կայսրության բանակը վերստին անցավ գրոհի և ողջ օրը տևած համառ մարտի արդյունքում ի վերջո գրավեց ամրոցը:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Ավարտելով Վոլանդ ամրոցի գրավում՝ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան շարունակեց առաջխաղացումը արևելյան ուղղությամբ՝ նպատակակետ ունենալով Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաքը: Արդյունքում՝ 58 թվականի սեպտեմբերին Արտաշատի ճ-մ-ում Տրդատ I-ի ու սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 40.000, այդ թվում Մարդպետական գունդը) հարձակվեց Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորությամբ Մասյացոտն-Արաքս երթուղով արշաված Հռոմեական կայսրության բանակի (մոտ 83.000) վրա և, կորուստներ պատճառելով վերջինիս, նահանջեց՝ թողնելով մայրաքաղաքը ու պահպանելով բանակը[2]:

Գրավելով Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաքը՝ Դոմիցիանոս Կորբուլոնն ակնհայտորեն հույս ուներ հենց այդ փաստով իսկ կոտրել հակառակորդի համառությունը և ստիպել նստել պաշտոնական Հռոմի համար ձեռնտու բանակցությունների սեղանի շուրջ, սակայն այս հույսերը որևէ կերպ չարդարացան: Միաժամանակ 58 թվականի նոյեմբերի վիճակով փաստորեն ստեղծվել էր մի դրություն, երբ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան, ըստ էության, տիրել էր Մեծ Հայքի թագավորության միայն հյուսիսային հատվածին, այն դեպքում, երբ Հայոց թագավորության հարավային հատվածը դեռևս գտնվում էր աննվաճ վիճակում:

Արդյունքում՝ ձմեռն անցկացնելով Արտաշատում և նրա շրջակայքում ու այդպես էլ

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 39; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 4, գլուխ 1, մաս 21:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 13, գլուխ 39, 40, 41; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 19, 20:

չկարողանալով Վաղարշ Ի-ին և Տրդատ Ի-ին ստիպել հաշտության բանակցություններ սկսել, Դոմիցիանոս Կորբուլոնի հրամանով Հռոմեական կայսրության ռազմական մեքենան ավերեց Արտաշատը, որից հետո արշավանք սկսեց Մեծ Հայքի թագավորության իր կարևորությամբ երկրորդը համարվող քաղաքի ուղղությամբ: Արդյունքում՝ 59 թվականի գարնանը Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորությամբ Արտաշատ-Մասյացոտն-Բագրևանդ-Բագավան (վերջինը՝ Նպատ լեռան հյուսիս-արևմտյան ստորոտին, Արածանի գետի ձախ ափին) -Արածանի գետի հովտով Ապահունիք երթուղով արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 82.000) Մեծ Հայքի թագավորության բանակից (մոտ 700) գրավեց Ծումբ ամրոցը (Տուրուբերան, Ապահունիք գավառ)[1], որից հետո, մինչև աշուն առաջացավ Ապահունիք-Տարոն-Բաղեշ երթուղով՝ ողջ երթուղու երկայնքով ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 50.000, այդ թվում Մարդպետական գունդը) անկանոն հարվածներին[2]: Այս առումով մինչև առաջ անցնելը ևս մեկ անգամ հարկ է նշել, որ թշնամու բանակի նման դանդաղ առաջխաղացման վրա ևս բավարար ուշադրություն չի դարձվել ու, կարելի է կարծել, որ այս անգամ ևս դա տեղի է ունեցել Հայկական բանակի հզոր դիմադրության պատճառով:

Այսպես թե այնպես, սակայն 59 թվականի աշնանը Տիգրանակերտի ճ-մ-ում Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորությամբ Բաղեշից արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 76.000) հաղթեց Ատատ իշխանի գլխավորած քաղաքի Հայկական կայազորին (մոտ 2.000): Ատատը զոհվեց, ընդ որում Դոմիցիանոս Կորբուլոնի հրամանով Ատատի գլուխը բաբանով նետվեց քաղաք, որի առաջացրած տպավորությունն էլ համոզեց խորհրդակցության հավաքված և դիմադրության պատրաստվող քաղաքի ավագանուն դադարեցնել այն[3]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 59 աշուն – ***<u>Լեգերդա ամրոցի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Ասպակունյաց ձոր գավառ, Տիգրանակերտից մոտ 40 կմ հյուսիս)[4]
>
> Ծանր մարտերից հետո բավարար ուժեր չունենալով մնալ Տիգրանակերտում և միաժամանակ զգուշանալով հայտնվել ռազմավարական անելանելի դրության մեջ՝ Դոմիցիանոս Կորբուլոնը Մեծ Հայքի թագավորության արքա հռչակեց Տիգրան VI Հրեային (59-62) ու, թողնելով նրան պահակային մի ջոկատ (1.000 լեգեոներ, 1.500 դաշնակից ռազմիկներ, 1.000 հեծյալ), ինքը Հռոմեական կայսրության բանակի հիմնական մասով (մոտ 72.000) շարունակեց արշավանքը՝ նպատակ ունենալով հեռանալ Մեծ Հայքի թագավորության տարածքից: Այս ծրագիրը իրականացնելու նպատակով Հռոմեական կայսրության բանակը դուրս եկավ ***<u>Տիգրանակերտից</u>*** և, շարժվելով դեպի հյուսիս, մոտեցավ ամրոցին, որի առաջ մարտակարգ էր ընդունել Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 20.000):
>
> I փուլ – Հռոմեական կայսրության բանակը հարձակվեց Հայկական բանակի վրա, որի հիմնական մասը համառ մարտից հետո նահանջեց, իսկ մնացած մասը պատսպարվեց ամրոցում:
>
> II փուլ – Հռոմեական կայսրության բանակը գրոհեց ամրոցը և համառ մարտից հետո գրավեց այն:
>
> III փուլ – Շարունակելով առաջխաղացումը և ողջ երթուղու երկայնքով ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի անկանոն հարվածներին՝ ***<u>Տարոն-Հաշտեանք-Արածանի գետի հուն</u>*** երթուղով արշավող Հռոմեական

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 14, գլուխ 23; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 20:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 14, գլուխ 24:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 14, գլուխ 24; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 20; Ֆրոնտին «Ստրատեգեմներ», գիրք 2, գլուխ 9, մաս 5:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 14, գլուխ 25, 26; Հովսեփ Ֆլավիոս «Հրեական հնախոսություն», գիրք 18, գլուխ 5; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:

կայսրության բանակը դուրս եկավ Մեծ Հայքի թագավորության տարածքից՝ կանգ առնելով ***Արշամաշատում***:

Հայերը կորցրին մոտ 2.000, թշնամի մոտ 5.000 զինվոր:

Տիգրան VI Հրեան Հուդայի թագավորության արքա Հերովդես I Մեծի թոռան որդին էր, որը Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները հիմնավորում էր մի կողմից նրանով, որ իր հոր մոր մայրը՝ Կապադովկիայի թագավորության արքա Արքելայոսի կինը, Արտավազդ III-ի աղջիկն էր, մյուս կողմից էլ նրանով, որ իր հորեղբայրը՝ Տիգրան V Հրեան, թագավորել էր Մեծ Հայքում: Չնայած իրավաբանական այս խրթին և ոչ համոզիչ փաստարկներին, սակայն, Մեծ Հայքի թագավորության բնակչության հիմնական մասը այդպես էլ որևէ կերպ հակված չէր իր համար որպես արքա տեսնել Տիգրան VI Հրեային, որն իր դիրքերը երկրում պահում էր բացառապես միայն Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի շնորհիվ: Այսպիսով՝ Դոմիցիանոս Կորբուլոնի ռազմական մեքենան ընդամենը միայն հասել էր այն բանի, որ զինական ուժի կիրառմամբ անցել էր Հայոց թագավորության տարածքով, ընդ որում վերջինիս այդպես էլ չէր հաջողվել վճռական ճակատամարտ պարտադրել հակառակորդին: Իր հերթին, Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի հեռանալը հնարավորություն տվեց ակտիվանալ նաև Վաղարշ I-ի ռազմական մեքենային և վերջինիս աջակցող Մեծ Հայքի թագավորության ուժերին:

60 թվականի գարնանը Մծբինի ճ-մ-ում Տրդատ I-ի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Պարթևական (մոտ 5.000), Մեծ Հայքի (մոտ 10.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Տիգրան VI Հրեայի գլխավորությամբ քաղաքը գրավել փորձող Հռոմեական կայսրության բանակին (մոտ 3.000), ընդ որում թշնամու բանակի մնացորդները նահանջեցին և ապաստանեցին Տիգրանակերտում, որտեղ վերջիններիս միացան Դոմիցիանոս Կորբուլոնի ուղարկած 2 լեգեոններ[1]: Այսպիսով՝ Տիգրան VI Հրեան զրկվեց ռազմաքաղաքական որևէ նախաձեռնություն դրսևորելու հնարավորությունից, սակայն խնդիրը սրանով ևս չէր սպառվելու:

61 թվականի գարնանը Տրդատ I-ի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Պարթևական (մոտ 20.000) և Մեծ Հայքի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակը Տիգրան VI-ի Հրեայի գլխավորած Հռոմեական կայսրության բանակից (մոտ 16.000) պաշարեց Տիգրանակերտը՝ ոչնչացնելով պարեն ձեռք բերելու նպատակով քաղաքից դուրս եկած թշնամու մի ջոկատի: Միաժամանակ Մծբին-Եդեսիա-Զևգմա երթուղով արշավեցին Պարթևական, Ատրպատականի, Ադիաբենեի և Հայոց Միջագետքի թագավորություններից միացյալ բանակը (մոտ 100.000) գլխավորած Վաղարշ I-ը, Բակուրը, Մոնոբազեսը և Սանատրուկը՝ սպառնալով ներխուժել Ասորիք: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության համար ստեղծված խիստ անբարենպաստ պայմաններում զինադադար կնքվեց և հակամարտող ուժերը դուրս հանեցին իրենց բանակները Մեծ Հայքի թագավորության տարածքից[2]: Այսպիսով՝ կողմերն, ըստ էության, վերադարձան նույն այն դրությանը, որը տարածաշրջանում առկա էր մինչև Դոմիցիանոս Կորբուլոնի արշավանքը:

Պաշտոնական Հռոմը, սակայն, իրեն դեռևս ոչ մի կերպ չէր համարում վերջնականապես անհաջողության մատնված և արդյունքում կայսր Ներոնը որոշեց ևս մեկ փորձ ձեռնարկել: Արդյունքում՝ մերժելով հակառակորդի հետ հետագա բանակցություն մղելու ամեն մի փորձ և որոշակիորեն, թեև լիովին անհիմ կերպով, դժգոհ լինելով Դոմիցիանոս Կորբուլոնից, Ներոնը Մեծ Հայքի թագավորության տարածքի ուղղությամբ գործող բանակի հրամանատար նշանակեց իր մերձավոր սիրելի, սակայն ռազմական գործից մեծապես հեռու Ցեցենիոս Պետոսին՝ Դոմիցիանոս Կորբուլոնին

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 1-4; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 20:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 4-6; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 20:

թողնելով միայն Ասորիքի ուղղությամբ գործող կայսերական բանակի հրամանատարությունը:

Գլուխ 66
Ցեցենիոս Պետոսի բանակի թվաքանակը դեպի Մեծ Հայքի թագավորություն վերջինիս արշավանքում

Ռազմապատմական գրականության մեջ հստակորեն արտահայտված չէ իր Արևելյան արշավանքը սկսած Ցեցենիոս Պետոսի բանակի թվաքանակը: Այս կապակցությամբ ամենից առաջ պետք է հաշվի առնել, որ փաստորեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ արևելյան և հարավ-արևելյան ուղղություններում գտնվող Հռոմեական կայսրության լեգեոնները բաժանված էին երկու զորավարների՝ Դոմիցիանոս Կորբուլոնի և Ցեցենիոս Պետոսի, միջև:

Ըստ Տակիտոսի 61 թվականի աշնան վիճակով Ցեցենիոս Պետոսի բանակի կազմում էին գտնվում հետևյալ լեգեոնները.

1. **IV Scythica**[1],
2. **V Macedonica**[2],
3. **XII Fulminata**[3]:

Սրանից բացի այս կամ այն չափով Ցեցենիոս Պետոսին էր միացել նաև Հռոմեական կայսրության «դաշնակից և բարեկամ»-ների նույն այն բանակը, որն առկա էր դեռևս Դոմիցիանոս Կորբուլոնի արշավանքի ժամանակ: Այսպիսով՝ կարելի բավականին մեծ ճշգրտությամբ պնդել, որ Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Ցեցենիոս Պետոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը 61 թվականի աշնանը կազմում էր մոտ *60.000* ռազմիկ, որից մոտ 20.000-ը լեգեոներ և 40.000-ը դաշնակից բանակների ռազմիկներ:

Գլուխ 67
Ցեցենիոս Պետոսի արշավանքը դեպի Մեծ Հայքի թագավորություն

Հարկ է նշել, որ ռազմական գործում Ցեցենիոս Պետոսի անփորձությունն իրեն անմիջապես էլ զգացնել տվեց, քանի որ, առաջնորդվելով ընդամենը միայն իր հովանավոր կայսեր հաճոյանալու մտայնությամբ և ուշադրություն չդարձնելով ռազմական նրբությունների վրա, վերջինս, հաշվի չառնելով, որ ձմեռն արդեն մոտ է, իսկ այդ պայմաններում Հայաստանում մարտնչելը հեռանկարային չէ, սկիզբ դրեց ռազմական գործողությունների նոր փուլի: Արդյունքում, սակայն, 61 թվականի աշնանը Անգղի ճ-մ-ում (= Արկաթիակերտ) (Աղձնիք, Անգեղ-տուն գավառ, Տիգրիս գետի ափին) Տրդատ I-ի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 50.000) հաղթեց Մելիտե-Անձիտ-Անգղ երթուղով Ցեցենիոս Պետոսի գլխավորությամբ արշաված Հռոմեական կայսրության բանակին (մոտ 60.000) ու ստիպեց նահանջել[4]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

62 գարուն – ***Հռանդեայի ճ-մ***[5]

---

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6-8:
[5] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 9-17; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 21; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Ներոն», մաս 39; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 20; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 7; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 7, գլուխ 3; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:

Նախնական անհաջողություններից հետո Ցեցենիոս Պետոսը որոշեց առժամանակ դադարեցնել մարտական գործողությունները, որից հետո, 61 թ-ի աշնանը հիմնական ուժերով (մոտ 50.000) ճամբարելով ***Հռանդեայի դաշտում***, V Macedonica լեգեոնը ուղարկեց Փոքր Հայք, առանձնացված մի ջոկատ (3.000) տեղավորեց Տավրոսյան լեռների կիրճերում, իսկ մեկ այլ ջոկատ (500) էլ՝ Արշամաշատում: Իր հերթին, նպատակ ունենալով զարգացնել Մեծ Հայքի թագավորության տարածքում ձեռք բերված նախնական հաջողությունները, 62 թ-ի գարնանը Վաղարշ Ի-ի, Բակուրի և Մոնոբազեսի գլխավորած Պարթևական, Ատրպատականի ու Ադիաբենեի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 120.000) ***Եդեսիա-Ամիդ*** երթուղով շարժվեց դեպի հյուսիս և միավորվեց Տրդատ Ի-ի, Սանատրուկի ու սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 60.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակի հետ:

I փուլ – Դաշնակից բանակը ջախջախեց Տավրոսյան լեռների կիրճերը հսկող հակառակորդի ջոկատը, որից հետո, ոչնչացնելով նաև Արշամաշատում տեղակայված ջոկատը, ինչպես նաև ցրված այլ ուժեր, շրջապատեց Ցեցենիոս Պետոսի գլխավորությամբ ***Հռանդեայի դաշտում*** ճամբարած Հռոմեական կայսրության բանակի հիմնական ուժերին:

II փուլ – Դաշնակից բանակը, պարտության մատնելով հակառակորդի բանակին և հետ մղելով նրա բոլոր արտագրոհները, վերջնականապես շրջապատեց վերջինիս ճամբարը, ընդ որում հարավից ու արևմուտքից շրջապատում իրականացնում էին Պարթևական, Ատրպատականի և Ադիաբենեի թագավորություններից միացյալ բանակը, իսկ հյուսիսից ու արևելքից էլ՝ Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը:

III փուլ – Դաշնակից բանակը սկսեց մասնակի գրոհներով, հզոր նետահարությամբ, ինչպես նաև պարենից և ջրից կտրելու միջոցով ծանր կորուստներ պատճառել հակառակորդի բանակին: Ի վերջո, անելանելի վիճակում հայտնված Ցեցենիոս Պետոսը զինադադար խնդրեց, որից հետո Վասակ Մամիկոնյանը հակառակորդի ճամբար այցելեց և բանակցություններ սկսեց: Արդյունքում՝ կողմերը պայմանավորվեցին, որ Հռոմեական կայսրության բանակը դադարեցնում է դիմադրությունը, նրա ռազմիկները հանձնում են բոլոր դրոշները, նշանները, զենքերը և ձեռք բերած ավարը, իսկ դրա փոխարեն վերջիններիս թույլ է տրվում դուրս գալ ճամբարից ու հեռանալ: Որպես հետևանք, Հռոմեական կայսրության բանակի ռազմիկները դուրս եկան ճամբարից, հանձնեցին զենքերը, դրոշները, նշաններն և ձեռք բերած ավարը, որից հետո անցան նիզակներից պատրաստված լծի տակով ու հեռացան Հռոմեական կայսրության տարածք՝ խուճապահար փախուստի մեջ օրական անցնելով մոտ 60 կմ և ճանապարհին լքելով վիրավորներին:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Այսպիսով՝ Վաղարշ Ի-ի և Տրդատ Ի-ի ռազմական մեքենան Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի նկատմամբ խոշոր մի հաջողության հասավ, ընդ որում դրան գումարվում էր նաև պաշտոնական Հռոմի համար նույն այդ հաջողության խայտառակ բնույթը: Արդյունքում՝ կայսր Ներոնը, կարծես թե, նոր միայն ընկալելով ռազմական գործողություններում լավ զորավար ունենալու կարևորությունը, պաշտոնազրկեց Ցեցենիոս Պետոսին և Արևելքում գործող Հռոմեական կայսրության բանակի միանձնյա հրամանատար կրկին նշանակեց նույն Դոմիցիանոս Կորբուլոնին:

Գլուխ 68

Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի թվաքանակը դեպի Մեծ Հայքի թագավորություն վերջինիս երկրորդ արշավանքում

62 թվականի գարնանը Հռանդեայի դաշտում կողմերը պայմանավորվել էին զինադադար պահպանել և բանակցություններ վարել, սակայն 63 թվականի ողջ ընթացքում ընթացած այդ բանակցությունները հաջողություն չունեցան: Սրա հետ միաժամանակ հարկ է նշել, սակայն, որ նույն այս ժամանակ Հռոմեական կայսրության իշխող վերնախավում արդեն լավ գիտակցում էին նաև առաջիկա պատերազմի ծանր, իսկ հնարավոր է նույնիսկ անհեռանկար բնույթը, ինչն էլ հաշվի առնելով Դոմիցիանոս Կորբուլոնի առջև խնդիր դրվեց, ռազմական խոշոր շարժերով սեփական ուժը ցույց տալու հետ միասին, արդյունքում ամենից առաջ հասնել հենց հաշտության կնքմանը:

Այս առումով մինչև առաջ անցնելը պետք է անդրադառնալ նաև Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի թվաքանակին իր Արևելյան երկրորդ արշավանքի ժամանակ: Այս անգամ ևս Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը պարզելու համար 64 թվականին արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ գտնվող Հռոմեական կայսրության լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի կազմում.

1. **III Gallica**[1],
2. **III Cyrenaica**[2],
3. **IV Scythica**[3],
4. **V Macedonica**[4],
5. **VI Ferrata**[5],
6. **X Fretensis**[6],
7. **XII Fulminata**[7],
8. **XV Apollinaris**[8]:

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք գտնվում էին Արևելքում և կարող էին հայտնվել Դոմիցիանոս Կորբուլոնի բանակի կազմում.

1. **III Augusta**[9],
2. **VIII Augusta**[10],
3. **XXII Deiotariana**[11]:

Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում արևելյան (Փոքր Ասիա և Ասորիք) և հարավ-արևելյան (Եգիպտոս) ուղղությամբ Հռոմեական կայսրությունն արդեն ուներ 11 լեգեոն, որոնց կազմում ընդգրկված էր 77.000 լեգեոներ: Կարելի է ենթադրել, որ այս պայմաններում Դոմիցիանոս Կորբուլոնի տրամադրության տակ, տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 70.000 լեգեոներ, սակայն դրանից զատ Դոմիցիանոս Կորբուլոնին էր միացել նաև Հռոմի «դաշնակից և բարեկամ»-ների մոտ 40.000 հոգանոց բանակը: Արդյունքում՝ կարելի բավականին մեծ ճշգրտությամբ պնդել, որ 64 թվականին Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը կազմում էր մոտ *110.000* ռազմիկ, որից 70.000-ը լեգեոներ և 40.000-ը դաշնակից բանակների ռազմիկներ:

---

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[2] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 26:
[3] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 26:
[4] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 26:
[5] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[6] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 6:
[7] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 26:
[8] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 25:
[9] Մշտապես տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[10] Այս ժամանակաշրջանում տեղաբաշխված էր Կապադովկիայում:
[11] Այս ժամանակաշրջանում տեղաբաշխված էր Գալաթիայում:

Գլուխ 69
Դոմիցիանոս Կորբուլոնի երկրորդ արշավանքը դեպի Մեծ Հայքի թագավորություն և Հռոմեա-Պարթևական I պատերազմի ավարտը

Եվ այսպես, 64 թվականի գարնանը Դոմիցիանոս Կորբուլոնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (110.000) արշավեց Արիարաթեսիա-Մելիտե-Տոմիսիա երթուղով, սակայն ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում հռոմեական զորավարը իրականում նպատակ էր հետապնդում, ինչպես արդեն ասվեց, ընդամենը միայն հասնել պատվավոր հաշտության կնքման: Այս պայմաններում մի կողմից Դոմիցիանոս Կորբուլոնի, իսկ մյուս կողմից էլ Վաղարշ Ի-ի և Տրդատ Ի-ի միջև նույն Հռանդեայում սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում կնքվեց Հռանդեայի հաշտության պայմանագիրը ու Հռոմեա-Պարթևական I պատերազմն ավարտվեց: Արդյունքում՝ Տրդատ Ի-ը հռչակվեց Մեծ Հայքի թագավորության արքա, սակայն նա իր թագը պետք է ստանար կայսր Ներոնից[1]: Միաժամանակ կողմերը պայմանավորվեցին նաև, որ այս կարգը պետք է գործի նաև հետագայում: Մեծ Հայքի թագավորությունը պահպանեց իր անկախությունն և տիրապետությունը Հայաստանի 13 նահանգի, ինչպես նաև Մինչեփրատյան Ծոփքի ու Գուգարք նահանգի մեծագույն մասի վրա: Ծոփքի թագավորությունը կրկին վերացավ: Մծբին քաղաքը, ինչպես նաև Ծավդեք և Արվաստան գավառները վերամիավորվեցին Հայոց Միջագետքի թագավորությանը, սակայն Հայաստանի 2 ու կես նահանգ՝ Կիլիկիան, Փոքր Հայքը և Անդրեփրատյան Ծոփքը, շարունակեցին մնալ Հռոմեական կայսրության, իսկ Գուգարքի Գոդերձական գավառը՝ Իբերիայի թագավորության տիրապետության տակ:

Մեծ պատերազմի ավարտն Արևելքում, ըստ էության, վերջնականապես հստակեցրեց ուժերի հարաբերակցության այն վիճակը, որն այստեղ դրանից հետո գործելու էր երկար տասնամյակներ: Իր հերթին սա, ըստ էության, նաև ամրագրեց Արևելքում Հռոմեական կայսրության ձեռքբերումների առավելագույնը՝ սա այն առավելագույնն էր, որն այս ուղղությամբ ի վիճակի եղավ ամրագրել պաշտոնական Հռոմը: Այս առումով հետաքրքիր է նշել, որ Հռոմեական կայսրության ձեռքբերումներն Արևելքում, ըստ էության, սահմանափակվեցին հելլենիստական այն աշխարհի սահմաններով, որն իր հիմքում ուներ հույներին: Սրա հետ միաժամանակ, սակայն, Հռոմեական կայսրությունը ի վերջո հաստատվեց նաև սեփական ամուր սահմանների մեջ, որի համար Միջերկրական ծովը վերջնականապես վերածվեց ներքին մի ծովի, իսկ սահմաններն էլ սկսեցին հենվել երեք մեծ գետերին՝ Հռենոսին և Դանուբին Եվրոպայում, ինչպես նաև Եփրատին՝ Մերձավոր Արևելքում: Այս առումով հարկ է նշել, որ ձեռք բերած հաշտությունը ձեռնտու էր նաև Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների իշխող վերնախավին, քանի որ այստեղ ևս գիտակցում էին, որ, կոնկրետ ժամանակատարածային հարթության մեջ ավելիին հասնելն իրատեսական չէ, ընդ որում Պարթևական թագավորության արևելյան սահմաններին իր հզորության գագաթնակետին գտնվող Քուշանական թագավորության, ինչպես նաև հյուսիսից սպառնացող Ալանական թագավորության առաջացրած վտանգները ևս որևէ կերպ վերացած չէին: Այս կապակցությամբ Պարթևական թագավորության օգտին էր, թերևս, միայն այն հանգամանքը, որ մոտակա տասնամյակներում Քուշանական թագավորությունն աստիճանաբար խրվեց Սատավահանայի թագավորության դեմ հարատև մարտերի մեջ, որոնք կողմերից ոչ մեկին վճռական հաջողություն չբերեցին, բայց այնուհանդերձ մեծապես շեղեցին քուշանների ուշադրությունը պարթևական սահմաններից, ընդ որում քննարկվող ժամանակաշրջանում նույն Քուշանական թագավորության համար կրկին որոշակի սպառնալիքներ էր սկսել առաջացնել նաև

[1] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 24-31; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 62, գլուխ 22, 23, գիրք 63, գլուխ 1; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 4, գլուխ 2, մաս 3; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:

վերջինիցս ավելի արևելք գտնվող Հանի տերությունը:

Գլուխ 70
«Չորս կայսրերի տարին»

68 թվականի գարնանը, օգտվելով կայսր Ներոնի կառավարչական բացարձակ անճարակությունից և առաջ մղվելով վերջինիս աճող դաժանությունից, որին 67 թվականի գարնանը, իմիջիայլոց, զոհ գնաց նաև Դոմիցիանոս Կորբուլոնը, Գալլիայում ու Պիրենյան թերակղզում տեղակայված բանակային ուժերը ապստամբություն բարձրացրին և արագորեն շարժվեցին Հռոմի ուղղությամբ: Արդյունքում՝ Ներոնին հայտարարեցին գահազրկված և 68 թվականի հունիսի 9-ին վերջինս, լքված բոլորի կողմից, իր մեկ ստրուկի ներկայությամբ ինքնասպան եղավ, իսկ Հռոմեական կայսրության կայսր էլ հռչակվեց ապստամբության ռազմական ղեկավար Սերվիոս Գալբան (68-69): 69 թվականի հունվարի 15-ի, սակայն, բանակը կրկին ապստամբեց և Սերվիոս Գալբան սպանվեց: Արդյունքում՝ այս անգամ կայսր հռչակվեց արդեն Սերվիոս Գալբայի նախկին զինակից Մարկոս Օթոնը (69):

Հերթական այս կայսեր խնդիրը, սակայն, ինչպես, ի դեպ, նաև իր նախորդինը, կայանում էր նրանում, որ փոփոխությունը տեղի էր ունեցել, ըստ էության, միայն Հռոմում կամ, առավելագույնը, միայն Ապենինյան թերակղզում, երբ պրովինցիաներում տեղակայված Հռոմեական կայսրության ռազմական մեքենան էլ իր հիմնական մասով դրան սեփական մասնակցությունը չէր բերել: Այս պայմաններում ավելորդ էլ է ասել, որ Ներոնին հաջորդած կայսրերից և ոչ մեկը պրովինցիալ բանակում բավարար հեղինակություն չուներ:

Արդյունքում՝ Մարկոս Օթոնն այդպես էլ չկարողացավ ամրապնդել իր իշխանությունը, իսկ արդեն 69 թվականի գարնան սկզբին էլ նրա դեմ ապստամբություն սկսեց դանուբյան սահմանում տեղակայված Հռոմեական կայսրության բանակի հրամանատար, 35-36 թվականների իրադարձությունների հերոս Լուցիոս Վիտելլիոսի որդի Ավլոս Վիտելլիոսը: Վերջինս, սեփական ռազմական մեքենան արագորեն շարժելով գործող կայսեր դեմ, 69 թվականի ապրիլի 14-ին պարտության մատնեց Մարկոս Օթոնի բանակին, իսկ արդեն նույն թվականի ապրիլի 16-ին էլ վերջինիս ինքնասպան եղավ:

Այսպիսով՝ Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց Ավլոս Վիտելլիոսը (69), սակայն իր դաժանությամբ և անխոհեմ կառավարմամբ նա ևս բոլորին արագորեն իր դեմ տրամադրեց: Որպես հետևանք այս ամենի՝ նույն 69 թվականի արդեն հուլիսին հերթական այս կայսեր դեմ մի նոր ապստամբություն բռնկվեց և այն այս անգամ ղեկավարում էր արդեն Արևելքում կայսերական բանակի հրամանատար Տիտոս Վեսպասիանոսը, որը նույն այս ժամանակ իր ձեռքի տակ եղած ռազմական մեքենայով պայքար էր մղում Հուդայի թագավորության նախկին տարածքում աստիճանաբար թափ առնող հրեաների ապստամբության դեմ: Արդյունքում՝ լիարժեք կերպով օգտվելով ապստամբների պասիվությունից, Տիտոս Վեսպասիանոսը, տեղում թողնելով անհրաժեշտ նվազագույն ուժեր, սեփական ռազմական մեքենայի հարվածային մասն ի վերջո ուղղեց Հռոմի ուղղությամբ և, մի քանի մարտերում պարտության մատնելով հակառակորդի բանակին, 69 թվականի դեկտեմբերի 20-ին ի վերջո գրավեց Հռոմը:

Որպես հետևանք, Ավլոս Վիտելլիոսը գերվեց և սպանվեց, իսկ Հռոմեական կայսրության նոր կայսր էլ հռչակվեց Տիտոս Վեսպասիանոսը (69-79), որին էլ ի վերջո հաջողվեց ամրանալ գահին: Հռոմեական կայսրության նոր կայսրը մի ուժեղ, իրատես, եռանդուն, ինչպես նաև ռազմական և վարչական զգալի ունակությունների տեր անձնավորություն էր, որն ի վերջո կարողացավ ամրացնել ոչ միայն սեփական իշխանությունը, այլև՝ կայունացնել դրությունը Հռոմեական կայսրության ներսում:

Գլուխ 71

Մանր թագավորությունների անկման վերջին փուլը հռոմեական արևելքում

Տիտոս Վեսպասիանոսը, որը լավ ծանոթ էր Արևելքի իրողություններին, տեղում մեծ պատերազմի բացակայության, սահմանների կայունացման և խաղաղության սպասվող երկար տարիների պայմաններում ի վերջո որոշում ընդունեց վերջնականապես վերացնել բոլոր այն սահմանակից մանր թագավորությունները, որոնք մինչ այդ գոյություն ունեին Մերձավոր Արևելքում ու ապահովում էին Հռոմեական կայսրության քաղաքական շահերը տեղում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պոնտոսի թագավորությունը ոչնչացված էր հայտարարվել դեռևս 64 թվականին՝ հարվածն ամենից առաջ ուղղված էր Փոքր Հայքի թագավորությանը: Այստեղ, սակայն, կային անկախության բավականին ամուր ավանդույթներ, որոնք էլ խնդիրներ առաջացրին:

Իրոք, արդեն 69 թվականի գարնանը Փոքր Հայքի երբեմնի թագավորության ծովային ուժերի հրամանատար Պոլեմոն Անիկետոսի գլխավորած ապստամբների բանակը (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) Հռոմեական կայսրության բանակից (մոտ 400) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 150) անակնկալ հարձակումով գրավեցին Տրապիզոնը[1]: Արդյունքում, սակայն, պաշտոնական Հռոմը անցավ կտրուկ գործողությունների: Որպես հետևանք, 69 թվականի ամռանը Վիրդիոս Գեմինոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 10.000) ասպատակեց Տրապիզոնը և նրա շրջակայքը՝ մանր մարտերում փախուստի մատնելով Պոլեմոն Անիկետոսի գլխավորած ապստամբների բանակին (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000): Արդյունքում Պոլեմոն Անիկետոսը փախուստի դիմեց դեպի Կոլխիդա, սակայն հետագայում գերվեց և նրա ապստամբությունը ճնշվեց[2]:

Անդրադարձ կատարելով Արևելքին՝ գործող կայսրն աչքի տակ ուներ ամենից առաջ նաև հենց մլմլացող, սակայն այդպես էլ չհանգող ապստամբությունը Հուդայի նախկին թագավորության տարածքում, որը ճնշելը այնուհանդերձ բավականին ջանքեր էր պահանջում: Իրոք, սկսած արդեն դեռևս 60-ական թվականների կեսերից, վաղուց արդեն Հռոմեական կայսրության սովորական պրովինցիայի կարգավիճակի հասած Հուդայի նախկին թագավորության տարածքում անհանգիստ էր, իսկ ժամանակի հետ էլ այստեղ մեծածավալ ռազմական գործողություններ սկսվեցին: Արդյունքում՝ հաջողության հասած Հռոմեական կայսրության ռազմական մեքենան 70 թվականի մարտի սկզբին պաշարեց Երուսաղեմը և սեպտեմբերի 9-ին գրավեց այն: Այս ռազմագործողությանն իր մասնակցությունը բերեցին ինչպես Հռոմեական կայսրության ապագա կայսր, Տիտոս Վեսպասիանոսի որդի Տիտոսը, այնպես էլ Եպիփանես արքայազնի գլխավորությամբ գործող Կոմագենեի թագավորության բանակը: Արդյունքում՝ քաղաքը հիմնովին ավերվեց, նրա բնակչության զգալի մասը սպանվեց, փրկվածները գերվեցին, իսկ տեղում էլ պաշտոնական Հռոմի իշխանությունը վերջնականապես ամրապնդվեց[3]: Կոմագենեի թագավորության ռազմական մեքենայի մասնակցությունը հրեաների դեմ մղվող պատերազմին, սակայն, հերթական հարվածից չփրկեց նաև Անտիոքոս IV-ի թագավորությանը այն բանից հետո, երբ 72 թվականին Հռոմում որոշեցին միանգամից վերացած համարել սկզբում Փոքր Հայքի և Կոմագենեի, իսկ հետո արդեն Հեմսի ու Քալկիդայի թագավորությունները:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Տակիտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 47:
[2] Տակիտոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 48:
[3] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 5, գլուխ 2-13, գիրք 6, գլուխ 1-8; Տակիտոս «Պատմություն», գիրք 5, գլուխ 11-13; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 7, գլուխ 10; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 1; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 5, գլուխ 6, գիրք 6, գլուխ 3, Հավելված 5; Անանիա Շիրակացի «Պատմություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 5; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն «Ժամանակագրություն 1207-1318 թվականների»; Գիյոմ Տյուրացի «Անդրծովյան երկրների պատմությունը», գիրք 1, գլուխ 2; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 4:

72 գարուն – ***Սամոսատի ճ-մ***[1]

Տեղի թագավորության վերացման և նրա տարածքը Հռոմեական կայսրության պրովինցիայի վերածելու պատճառով Անտիոքոս IV-ը ապստամբեց: Արդյունքում, ցանկանալով արագորեն ճնշել ապստամբությունը, Ցեցենիոս Պետոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Հռոմեական կայսրության (մոտ 8.000), ինչպես նաև Հուլիոս Սոհեմոսի գլխավորած Հեմսի թագավորության և Արիստոբուլի գլխավորած Քալկիդայի թագավորության (մոտ 8.000) միացյալ բանակը սրընթաց երթով մտավ թագավորության տարածք ու առանց մարտերի գրավեց ***Սամոսատը***: Անտիոքոս IV-ը փորձեց բանակցություններ սկսել, սակայն նրա որդիներ, արքայազններ Եպիփանեսն և Կալինիկոսը կենտրոնացրեցին Կոմագենեի (մոտ 5.000), ինչպես նաև վերջինիս միացած Մեծ Հայքի (մոտ 1.000), Հայոց Միջագետքի (մոտ 500) ու Պարթևական (մոտ 500) թագավորությունների միացյալ բանակը, որից հետո, ամուր դիրքեր գրավելով, պատրաստվեցին դիմադրել թշնամու հետագա առաջխաղացմանը:

I փուլ – Հռոմեական կայսրության բանակը անցավ հարձակման, սակայն ողջ օրը տևած համառ մարտի արդյունքում այդպես էլ հաջողության չհասավ և ստիպված եղավ նահանջել:

II փուլ – Հաջորդ օրը Անտիոքոս IV-ը վերջնականապես լքեց իր մարտնչող բանակը, որի հետևանքով այն բարոյալքվեց և սկսեց քայքայվել: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության բանակն անցավ հարձակման և առանց լուրջ մարտերի հաղթանակ տարավ՝ ցրելով հակառակորդի բանակը:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 150, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտից հետո Անտիոքոս IV-ը լքեց երկրամասը և ապաստանեց Հռոմեական կայսրության տարածքում, իսկ նրա որդիները ապաստանեցին Պարթևական թագավորությունում, բայց հետագայում այնուհանդերձ հանձնվեցին Հռոմեական կայսրությանը: Արդյունքում՝ Կոմագենեի, Հեմսի և Քալկիդայի թագավորությունները ոչնչացան, իսկ նրանց տարածքները վերածվեցին պրովինցիաների: Ինչ վերաբերում է Անտիոքոս IV-ին և նրա որդիներին, ապա վերջիններս, ստանալով պետական հովանավորություն, իրենց օրերն ավարտեցին ինչ-որ տեղի երբեմնի Սպարտայի թագավորության տարածքում:

[1] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 7, գլուխ 7:

Գլուխ 72
Սանատրուկի հիմնախնդիրը

Մինչ Հռոմեական կայսրության սահմաններում պարզվում էին հարաբերությունները պաշտոնական Հռոմի և վերջինիս ենթակա թագավորությունների միջև, սրվեց իրավիճակը Արշակունիների համադաշնության հյուսիսային սահմաններում, որտեղ ագրեսիվ դիրք գրավեց Ալանական թագավորությունը: Արդյունքում՝ 74 թվականին Գարգարացվոց դաշտի ճ-մ-ում[1] (Ուտիք նահանգի հարավ) Տրդատ Ի-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 90.000) հաղթեց Դերբենդի լեռնանցքից ներխուժած և ասպատակող Ալանական թագավորության բանակին (մոտ 100.000): Հենց այս ընթացքում էր, որ մարտի ընթացքում թշնամու ռազմիկներից մեկը նետեց օղապարանը ու կաշկանդեց Հայոց արքային, սակայն վերջինս ճարպկորեն թրատեց օղապարանը և հաջողությամբ ազատվեց իրեն շրջապատած հակառակորդի ռազմիկներից[2]:

Հետ մղելով Ալանական թագավորության հարվածը՝ արդեն 75 թվականին Վաղարշ Ի-ի գլխավորած Պարթևական (մոտ 40.000), Տրդատ Ի-ի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 30.000) և Սանատրուկի գլխավորած Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակի մասերի բաժանված ջոկատները ասպատակեցին Հյուսիսային Ասորիքը, սակայն, խուսափելով Հռոմեական կայսրության հետ լուրջ պատերազմ հրահրելուց, արագորեն նահանջեցին[3]: Շուտով, սակայն, փոփոխություններ եղան նաև Մեծ Հայքի թագավորությունում:

Ինչպես արդեն նշվեց, 50 թվականին Սանատրուկը եղել է սկզբում Մեծ Հայքի, իսկ հետո արդեն՝ Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի միացյալ թագավորությունների արքա: Միաժամանակ, սակայն, սկսած արդեն 51 թվականից, որպես Մեծ Հայքի թագավորության արքաներ, միմյանց հետ մրցակցելով, հանդես էին գալիս Հռադամիզդ Իբերացին ու Տրդատ Ի-ը, ընդ որում հաջողությունը ի վերջո մնաց վերջինիս օգտին և արդյունքում, սկսած արդեն 62 թվականից, հենց Տրդատ Ի-ն էր, որ հաստատվեց Մեծ Հայքի թագավորության գահին: Տրդատ Ի-ի գահակալության վերջի հարցը, սակայն, անորոշ է, թեև հայտնի է, որ 75 թվականին նա դեռևս ողջ էր: Այս առումով կարծում եմ, որ Տրդատ Ի-ի մահվան և, բնականաբար նաև, գահակալման ավարտը կարող է թվագրվել 76 թվականով, որի օգտին իրոք առկա են որոշակի փաստարկներ:

Այսպես, համաձայն որոշ աղբյուրների, 76 թվականին ապագա կայսեր հայր և Ասորիքի կառավարիչ Մարկոս Տրայանոսը արժանացել է հաղթանշանների, թեև կոնկրետ ինչի՞ համար, առայժմ հայտնի չէ[4]: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց Ասորիքի այս կառավարչի օրոք զսպվեց Վաղարշ Ի-ի ներխուժումը դեպի Ասորիք, կարելի է, անկասկած, համարել, որ գնահատվել էր Ասորիքի կառավարչի հաջողությունը հենց արևելյան ճակատում ձեռք բերված արդյունքների համար: Արդյունքում՝ կարծում եմ, որ սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ Մարկոս Տրայանոսի հաջողության արդյունքներից մեկն էլ ամենայն հավանականության եղել է հենց այն, որ նա կարողացել է Տրդատ Ի-ի մահից հետո Մեծ Հայքի թագավորության գահին հաստատել Հայոց Միջագետքի թագավորության արքա Սանատրուկին, ընդ որում Ալանական թագավորության ծանր հարվածներին ենթարկված, ինչպես նաև ներքին անկայունության հերթական շրջան մտած Պարթևական թագավորության արքա Վաղարշ Ի-ը փաստացի ստիպված է եղել համակերպվել փոխզիջումային այս որոշման հետ: Այս առումով հատկանշական է, որ հռոմեական աղբյուրները ընդգծված դրական են

---

[1] Այս ճակատամարտի տեղը մոտավոր է և հնարավորություն այլ մեկնաբանությունների: Ցանկացած դեպքում պարզ է, որ խոսքը Մեծ Հայքի թագավորության արևելյան, իսկ ավելի հավանական է՝ հարավ-արևելյան սահմանի մոտ գտնվող որևէ մի տարածքի մասին է:

[2] Հովսեփ Ֆլավիոս «Հրեական պատերազմի մասին», գիրք 7, գլուխ 7; Սվետոնիոս «Տասներկու կեսարների կյանքը, Դոմիցիանոս», մաս 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 65, գլուխ 15:

[3] Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 9; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ հռոմեական կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 9:

[4] J. Bennett, Trajan. Optimus Princeps. A Life And Times, Londres, Routledge, 1997, p. 19:

արտահայտվում Սանատրուկի վերաբերյալ[1], ինչն անուղղակիորեն կարող է վկայել այն բանի օգտին, որ վերջինս վայելել է կայսրության աջակցությունն և հանդես է եկել որոշակի հակապարթևական դիրքերից, ընդ որում Սանատրուկին տրված գնահատականի վրա կարող էր ազդել նաև Տրդատ I-ի հետ նրա մրցակցության փաստը:

Վերևում ասվածի կապակցությամբ ամրագրենք, որ, ըստ Մովսես Խորենացու, Սանատրուկը թագավորել է 30 տարի[2], ընդ որում կարևոր է ընդգծել, որ այս ժամանակահատվածի հաշվարկը վարելիս պետք է հաշվի չառնել Հայոց Միջագետքի թագավորությունում նրա իշխելու ժամանակահատվածը, այլ այն պետք է հաշվել Տրդատ I-ի մահվան տարուց՝ 76 թվականից: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Սանատրուկը Մեծ Հայքի թագավորությունում հաստատվելով 50 թվականին, հետագա 25 տարիներին «թագավոր Հայոց» տիտղոսը կրել է միայն ձևական մակարդակով, սակայն 76 թվականին անձնական ունիայի սկզբունքով ի վերջո կարողացել է կրկին վերամիավորել Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունները՝ դրանից հետո կառավարելով ևս 30 տարի՝ մինչև 106 թվականը: Փաստորեն Հայոց Միջագետքի թագավորության գահակալների մղած այն հետևողական քաղաքականությունը, որի հիմքերը դրվեցին դեռևս Աբգար IV-ի ժամանակ, իր ընթացիկ արդյունքն ապահովեց Վաղանցիկ արքաների դարաշրջանում և վերջնական հաջողության հասավ I դարի վերջին քառորդում:

Գլուխ 73
Խաղաղություն փոթորիկից առաջ

78 թվականի ապրիլին Վաղարշ I-ի դեմ գահակալական պայքար սկսեց նրա եղբայր, Ատրպատականի թագավորության արքա Բակուրը, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, Բակուրն անչափ դժգոհ էր մնացել այն հանգամանքից, որ եղբայրը ժամանակին չէր կանխել Ալանական թագավորության հասցրած հարվածը իր թագավորությանը, իսկ հետո էլ բավարար կերպով չէր օժանդակել վերջինիս, ինչի հետևանքով Բակուրի ռազմական մեքենան ծանր պարտություն էր կրել, Ատրպատականի թագավորության արքայի ընտանիքը գերվել էր, իսկ Բակուրն էլ նույն գերյալներին հետագայում կարողացել էր ազատել միայն մեծ փրկագին վճարելուց հետո: Եղբայրներն այդպես էլ չհաշտվեցին և նրանց միջև պայքարը շարունակվեց մինչև 79 թվականի սկիզբը, երբ Վաղարշ I-ը կնքեց իր մահկանացուն: Վաղարշ I-ի մահից հետո Պարթևական թագավորության արքա հռչակվեց նրա փոքրահասակ որդի Վաղարշ II-ը (79-80), որը, սակայն, ըստ էության, զրկված էր իրական իշխանությունից, իսկ Արշակունիների համադաշնությունում էլ հսկայական էր հենց վերջինիս հորեղբայր Բակուրի հեղինակությունը: Ավելին, Վաղարշ II-ի դեմ շուտով գահակալական իր պայքարը սկսեց արդեն Գոտարզ II-ի որդի Ներսեհի տղա Արտավանը, որը վայելում էր սկզբում Վաչե և Արշավիր Արծրունիների, իսկ հետո նույնիսկ՝ Մեծ Հայքի թագավորության արքա Սանատրուկի աջակցությունը: Արդյունքում՝ 80 թվականի սկզբին Վաղարշ II-ը գահընկեց արվեց և Պարթևական թագավորության արքա հռչակվեց Արտավանը՝ Արտավան IV-ը (80-81):

Մինչ Պարթևական թագավորության տարածքում գահի համար պայքարող կողմերը վճռական ընդհարման համար իրար էին բերում ուժերը, 79 թվականի հունիսի 24-ին իր մահկանացուն կնքեց Հռոմեական կայսրության կայսր Տիտոս Վեսպասիանոսը և կայսրության գահին նրան հաջորդեց իր որդի Տիտոսը (79-81), որը ռազմական ոլորտում հոր ակտիվ օգնականն էր դեռևս վերջինիս կենդանության օրոք: Հենց նույն այս ժամանակ էր, որ ի հայտ եկավ իրեն որպես կայսր Ներոն ներկայացնող մի անձնավորություն, որն իբր հրաշքով փրկվել էր մահից:

Խնդիրը կայանում էր նրանում, որ կայսր Ներոնի ինքնասպանությանը ներկա էր

[1] Արիանոս «Պարթևստանի պատմությունը»:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 36:

եղել, ինչպես արդեն ասվեց, միայն մեկ անձնավորություն, որի խոսքերը, սակայն, դրվում էին կասկածի տակ, իսկ արդյունքում էլ արվում էր պնդում, որ Արևելքում զգալի համակրանք վայելող Ներոնը փրկվել է, երկար ժամանակ թաքնվել է և հիմա նոր միայն ի հայտ է եկել: Արդյունքում, որպես կայսր Ներոն ներկայացող այս անձնավորությանը սկզբում իր աջակցությունը ցույց տվեց Մեծ Հայքի թագավորության արքա Սանատրուկը, իսկ հետո արդեն՝ Արտավան IV-ը: Որպես հետևանք այս ամենի՝ Մեծ Հայքի և Պարթևական թագավորություններում որոշում ընդունվեց իրեն որպես Ներոն ներկայացնող անձնավորությանը հաստատել Հռոմեական կայսրության գահին, ինչի նպատակով էլ ռազմական լայնածավալ միջոցառումներ ձեռնարկվեցին: Շուտով տեղ հասան, սակայն, կայսր Տիտոսի մեղմ, բայց վճռական նախազգուշացումները, որոնց հետ միասին նաև անհերքելի ապացույցներ ներկայացվեցին այն մասին, որ իրեն որպես Ներոն ներկայացնող անձնավորությունը իրականում կեղծարար է: Ավելին, շուտով վճռական հարձակման անցավ նաև Պարթևական թագավորության գահի նկատմամբ իր իրավունքները չմոռացած Բակուրը, որը լրջագույն մի մարտահրավեր նետեց Արտավան IV-ին: Արդյունքում՝ իրեն որպես Ներոն ներկայացնող անձնավորությանը որպես խաբեբայի մահապատժի ենթարկեցին, իսկ տարվա կեսերին էլ գահը կորցրեց արդեն Արտավան IV-ը, երբ Պարթևական թագավորության արքա հռչակվեց Ատրպատականի թագավորության արքա Բակուրը: Արդյունքում՝ Ատրպատականի թագավորությունը փաստորեն ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ անձնական ունիայի սկզբունքով միացվեց Պարթևական թագավորությանը: Այս առումով իր դրական դերն ունեցավ այն հանգամանքը, որ Սանատրուկի և Բակուրի հարաբերությունները այնուհանդերձ ճգնաժամ չապրեցին:

81 թվականի սեպտեմբերի 13-ին իր իսկ եղբայր Դոմիցիանոսի կողմից ուղղորդվող դավադիրները թունավորեցին կայսր Տիտոսին, որից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց Դոմիցիանոսը (81-96): Նոր կայսրը չուներ հոր և եղբոր անձնական հատկանիշները, բայց արդյունքում այնուհանդերձ կարողացավ կայուն պահել կայսրության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին դրությունը: Հենց այս ընթացքում էր, որ, այս անգամ արդեն Պարթևական թագավորությունում, հայտնվեց իրեն որպես Ներոն ներկայացնող հերթական մի անձնավորություն, սակայն 88 թվականին կողմերը կրկին համաձայնության եկան և Բակուրը հերթական այս ինքնակոչին հանձնեց Հռոմեական կայսրությանը:

96 թվականի սեպտեմբերի 18-ին դավադիրները իր իսկ պալատում սպանեցին կայսր Դոմիցիանոսին, ինչից հետո կայսր հռչակվեց սենատորական դասին պատկանող Մարկոս Ներվան (96-98), որը խոհեմ և զուսպ մի անձնավորություն էր: Նոր կայսրը, սակայն, նաև բավականին տարիքն առած ու անժառանգ մի մարդ էր և, որպեսզի կայունացնի սեփական իշխանությունը ու իր մահից հետո էլ զերծ պահի կայսրությունը ցնցումներից, վերջինս 97 թվականի սեպտեմբերին որդեգրեց Արևելքում իր ժամանակին աչքի ընկած Մարկոս Տրայանոսի նույնանուն որդի Մարկոս Տրայանոսին, որը զինվորական փայլուն ուղի էր անցել և սիրված էր բանակում: Եվ ահա 98 թվականի հունվարի 25-ին Մարկոս Ներվան հանկարծամահ եղավ, որից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց քառասունհինգամյա Մարկոս Տրայանոսը (98-117): Նոր կայսրը, ի տարբերություն իր շատ նախորդների, աչքի էր ընկնում բացառիկ ռազմաշունչությամբ, ինչպես նաև զորավարական և ռազմական զգալի տաղանդով՝ իրենից, ըստ էության, ներկայացնելով ռազմաքաղաքական այնպիսի մի գործիչ, որը կայսրության շրջանին բնորոշ ռազմավարական պաշտպանությունը մի վերջին անգամ փոխարինեց հարձակումով՝ այդ գործի մեջ դնելով Հռոմեական կայսրության ողջ ներուժը:

Արդյունքում՝ ամենից առաջ որոշվեց լուծել դանուբյան սահմանի ապահովության խնդիրը՝ հարված հասցնելով Դանուբի ստորին հոսանքի ձախ ափին նույն այս ժամանակ իր գոյությունը շարունակող Դակիական թագավորությանը, որի շարժիչ ուժը

տեղի գերմանական և սարմատական ցեղերն էին: Արդյունքում՝ Դանուբի աջ ափին կուտակելով մոտ 200.000 ռազմիկ կազմող բանակային ուժեղ մի զորախումբ, 101 թվականին Մարկոս Տրայանոսը ծանր հարված հասցրեց հակառակորդին, սակայն, այդպես էլ չկարողանալով ամրապնդել իր հաջողությունները, 102 թվականի գարնանը վերադարձավ ելման դիրքեր: Դակիական թագավորությանը Մարկոս Տրայանոսը ևս մեկ հարված հասցրեց արդեն 105 թվականին և 106 թվականի վերջին հաջողությունն այս անգամ արդեն վերջնական էր՝ Դակիական թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքում էլ կազմակերպվեց Հռոմեական կայսրության հերթական պրովինցիան:

Վերջին հաջողությունը Դանուբի ստորին հոսանքում Հռոմեական կայսրության սահմանները հասցրեց մինչև Դնեստր գետ և Կարպատյան լեռնաշղթա, սակայն մարտունակ այս կայսրը զուտ միայն սրանով ևս որևէ կերպ չէր պատրաստվում սահմանափակվել, ընդ որում, մինչև կոնկրետ ռազմաքաղաքական միջոցառումներով Արևելքի խնդիրներին անդրադառնալը Մարկոս Տրայանոսը 106 թվականին վերացված հայտարարեց նաև Նաբաթեական թագավորությունը, որի տարածքը վերածվեց կայսրության հերթական մի պրովինցիայի: Նույն այս ժամանակ էր, որ վերջնականապես վերացվեցին նաև Ասորիքում գտնվող բոլոր մանր թագավորությունները:

Գլուխ 74
Հայ և Պարթև Արշակունիների պայքարի հերթական փուլը Իբերիայի թագավորության համար, ինչպես նաև այլ հարցեր

74 թվականին իր մահկանացուն կնքեց Իբերիայի թագավորության արքա Փարսման I-ը և նրան հաջորդեց իր որդի Միհրդատ II-ը (74-90), սակայն 90 թվականին վերջինիս գահընկեց արեցին և նա ապաստանեց Պարթևական թագավորությունում, իսկ Իբերիայի թագավորության արքա էլ հռչակվեց Փարսման I-ի մյուս որդի Համազասպ I-ը (90-105): 105 թվականին Համազասպ I-ը մահացավ և դրանից հետո Սանատրուկի որոշմամբ Իբերիայի թագավորության արքա հռչակվեց Հռադամիզդ Իբերացու որդի Փարսման I Խիզախը (105-150), որի մորը Հռադամիզդ Իբերացին իր փախուստի ժամանակ դաշունահարել ու լքել էր դեռևս 54 թվականին և որն այժմ իրենից ներկայացնում էր հիսնամյա փառահեղ մի ռազմիկ: Այս առումով Սանատրուկի օգտին եղավ այն հանգամանքը, որ նույն 105 թվականին իր մահկանացուն կնքեց Պարթևական թագավորության արքա Բակուրը և գահի վրա վերջինիս հաջորդեց իր եղբայր Խոսրովը (105-115, 117-129), որը, սակայն, գրեթե անմիջապես էլ գահակալական լուրջ խնդիրների առջև կանգնեց: Իրոք, նույն այս ժամանակ գահին հավակնում էր նաև Վաղարշ II-ի որդի Վաղարշը, որը Պարթևական թագավորության արևելքում մինչ այդ հսկայական հեղինակության էր հասել և վայելում էր Պարթևական թագավորության նկատմամբ ամենևին էլ ոչ բարեկամաբար տրամադրված ու իր հզորության գագաթնակետին գտնվող Քուշանական թագավորության աջակցությունը:

Այսպես թե այնպես, սակայն գահին հենց նոր բազմած Խոսրովը փորձ կատարեց այնուհանդերձ վիճարկել Սանատրուկի ազդեցությունը Իբերիայի թագավորության նկատմամբ ու դա բերեց երկու երբեմնի դաշնակից այս թագավորությունների ռազմական բախմանը՝ թեկուզ և հարաբերությունների պարզաբանման որոշակիորեն երկրորդական թատերաբեմում: Որպես հետևանք այս ամենի՝ Խոսրովը, որպես Իբերիայի թագավորության գահի թեկնածու, առաջ քաշեց Իբերիայի թագավորության երբեմնի արքա Միհրդատ II-ին, որին էլ հենց փորձեց հաստատել Իբերիայի թագավորության գահին: Արդյունքում, սակայն, 105 թվականին Երկաթաձորի ճ-մ-ում (Իբերիայի հարավ) Փարսման II Խիզախի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) և Մեծ Հայքի (մոտ 15.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Միհրդատ II-ի գլխավորած Պարթևական թագավորության բանակին (մոտ 40.000)[1]:

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի

Եվս մեկ փորձ, տիրել Իբերիայի թագավորության գահին, Խոսրովը և Միհրդատ II-ը ձեռնարկեցին մեկ տարի անց, սակայն 106 թվականին Ջվարիի ճ-մ-ում (Մծխեթից հարավ) Փարսման II Խիզախի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) ու Մեծ Հայքի (մոտ 15.000) թագավորությունների միացյալ բանակը կրկին հաղթեց Իբերիայի թագավորության տարածք մտած ու Փարսման II-ին սպանել փորձող Միհրդատի գլխավորած Պարթևական թագավորության բանակին (մոտ 40.000)[1]: Այսպիսով՝ Իբերիայի թագավորության վրա ազդեցության համար պայքարի հերթական դրվագը ավարտվեց Մեծ Հայքի թագավորության օգտին: Որպես հետևանք՝ Գոդերձականը վերամիավորվեց Մեծ Հայքի թագավորությանը[2]: Շուտով պարզվեց, սակայն, որ Պարթևական թագավորության խնդիրները դեռ նոր էին միայն սկսվում, քանի որ եռանդուն Մարկոս Տրայանոսը, հաջողությամբ ամրացած դանուբյան սահմանում, նույն այս ժամանակ վերջնականապես հանգել էր Հռոմեական կայսրության արևելյան երկու հակառակորդներին վճռական հարված հասցնելու գաղափարին:

106 թվականին, հազիվ միայն ավարտին հասցրած Իբերիայի թագավորության համար մղվող պայքարը, որսի ժամանակ ստացած նետի պատահական հարվածից իր մահկանացուն կնքեց Մեծ Հայքի թագավորության արքա Սանատրուկը, որից հետո Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս հաջորդեց Պարթևական թագավորության հանգուցյալ արքա Բակուրի որդի Աշխադարը (106-113): Խոսրովը, սակայն, եղբորորդուն որպես Մեծ Հայքի թագավորության արքա հաստատեց առանց Մարկոս Տրայանոսի հետ խորհրդակցելու, ինչը առանց այդ էլ խզման ձգտող պաշտոնական Հռոմի կողմից մեծ հաճույքով դիտվեց որպես 64 թվականի հաշտության համաձայնագրի պայմանների խախտում: Իր հերթին, Սանատրուկի մահից հետո Հայոց Միջագետքի թագավորությունը կրկին անջատվեց Մեծ Հայքի թագավորությունից և այստեղ գահը զբաղեցրեց Սանատրուկի որդի Աբգար VII-ը (106-117, 121-138):

113 թվականին Աշխադարը կնքեց իր մահկանացուն և, այս անգամ ևս առանց պաշտոնական Հռոմի հետ խորհրդակցելու, Խոսրովը Մեծ Հայքի թագավորության արքա կարգեց Աշխադարի եղբայր Պարթամասիրին (113-114): Արդյունքում՝ հարաբերություններն Արևելքում վերջնականապես սրվեցին և ի վերջո հանգեցրին պայթյունի: Այս առումով մինչև առաջ անցնելը, սակայն, անհրաժեշտ է հերթական անգամ վերլուծության ենթարկել Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը Մարկոս Տրայանոսի Արևելյան արշավանքի ընթացքում՝ բնականաբար առաջնորդվելով նույն այն սկզբունքներով, որոնք կիրառության մեջ տեսանք մինչ այս: Եվ այսպես 114 թվականին սկիզբ առավ Հռոմեա-Պարթևական II պատերազմը (114-117):

Գլուխ 75
Մարկոս Տրայանոսի բանակի թվաքանակը վերջինիս Արևելյան արշավանքում

Ռազմապատմական գրականության մեջ հստակ արտահայտված չէ իր Արևելյան արշավանքի ժամանակ Մարկոս Տրայանոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, մի խնդիր, որը կարիք ունի լրացուցիչ լուսաբանման: Եվ այսպես, ըստ մեզ հասած տվյալների 110-116 թվականներին բուն Հռոմեական կայսրության բանակը կազմված էր 30 լեգեոնից, որոնցից յուրաքանչյուրի կազմում կար 7.000 ռազմիկ: Այսինքն՝ կարելի է հաստատված համարել, որ Հռոմեական կայսրության ողջ բանակն այս ժամանակաշրջանում կազմում էր մոտ 400.000 ռազմիկ՝ 210.000 լեգեոներ և դրանից մի քիչ քիչ դաշնակից: Իր հերթին մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում

Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 53:

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 54:

[2] Այս հետևության համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ, համաձայն Պտղոմեոսի «Աշխարհագրության» (Գիրք 5, մաս 31, գլուխ 9) տվյալների, II դարի կեսի վիճակով Գոդերձականը եղել է Մեծ Հայքի թագավորության կազմում:

Հռոմեական կայսրության բանակի զգալի մասը՝ 17 լեգեոն 119.000 լեգեոների կազմով, տեղաբաշխված էր հյուսիս-արևելյան՝ դանուբյան սահման, արևելյան՝ Փոքր Ասիա և Ասորիք, և հարավ-արևելյան՝ Եգիպտոս, ուղղությամբ: Սա կարևորվում է այն տեսանկյունից, որ ըստ ընդունված կարծիքի, իր Արևելյան արշավանքի ընթացքում Մարկոս Տրայանոսի տրամադրության տակ կար ընդամենը 11 լեգեոն կամ 77.000 լեգեոներ: Կարելի է կարծել, սակայն, որ այս անգամ ևս Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, գրված լինելով հռոմեական զորավարներին գովերգելու և «*իրենց քանակով մեծապես գերազանցող բարբարոսներին փոքրաթիվ ուժերով հաղթող հռոմեական քաղաքակիրթ, քաջարի ու հմուտ զորավարի և զինվորի*» կերպարը փառաբանելու ոգով, որոշակիորեն քչացված է:

Մարկոս Տրայանոսի Արևելյան արշավանքում Հռոմեական կայսրության բանակի իրական թվաքանակը պարզելու համար այն կազմող լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 3 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Մարկոս Տրայանոսի բանակի կազմում.

1. **I Adiutrix**,
2. **II Trajana**,
3. **IV Scythica**,
4. **VI Ferrata**,
5. **VII Claudia**,
6. **X Fretensis**,
7. **XII Fulminata**,
8. **XIII Gemina**,
9. **XV Apollinaris**,
10. **XVI Flavia**,
11. **XXX Ulpia**[1]:

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք այդ ժամանակ գտնվում էին արևելյան և հարավ-արևելյան ուղղություններում և կարող էին հայտնվել Մարկոս Տրայանոսի բանակի կազմում.

1. **III Augusta**[2],
2. **III Cyrenaica**[3],
3. **III Gallica**[4],
4. **XXII Dejotariana**[5]:

գ) լեգեոններ, որոնք 113 թվականին գտնվում էին հյուսիս-արևելյան ուղղությունում ու, թեև քննարկվող ժամանակաշրջանում սովորաբար չէին մասնակցում արևելյան և հարավ-արևելյան ուղղություններում ընթացող մարտական գործողություններին, սակայն այս անգամ, կապված այն բանի հետ, որ Հռոմեական կայսրության կայսրն այս արշավանքի համար լարել էր կայսրության բոլոր ուժերն ու գրեթե մերկացրել դանուբյան սահմանը, անկասկած զգալի ուժեր էին ուղարկել Մարկոս Տրայանոսի բանակին.

1. **I Italica**[6],
2. **II Adiutrix**[7],
3. **IV Flavia**[8],
4. **V Macedonica**[9]:

---

[1] Մանրամասն տես՝ Дибвойз Н. К. “Траян в Армении и Месопотамии”, http://www.roman-glory.com/debevoise-trayan
[2] 114 թվականին տեղաբաշխված էր Արևմտյան Եգիպտոսում:
[3] 114 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավ-արևելքում:
[4] 114 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[5] 114 թվականին տեղաբաշխված էր Արևմտյան Եգիպտոսում:
[6] 114 թվականին տեղաբաշխված էր Ներքին Մեզիայում:
[7] 114 թվականին տեղաբաշխված էր Պանոնիայի հյուսիս-արևելքում:
[8] 114 թվականին տեղաբաշխված էր Վերին Մեզիայում:
[9] 114 թվականին տեղաբաշխված էր Ներքին Մեզիայում:

Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում ընդհանուր արևելյան ուղղությամբ Հռոմեական կայսրությունն ուներ 19 լեգեոն կամ մոտ 133.000 լեգեոներ: Կարելի է ենթադրել, որ այս պայմաններում Մարկոս Տրայանոսի տրամադրության տակ, մի կողմից կայսրության բոլոր ուժերը լարելու և դանուբյան սահմանը գրեթե մերկացնելու, իսկ մյուս կողմից էլ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 110.000 լեգեոներ: Իր հերթին Հռոմեական կայսրության պրովինցիաների վերածված կայսրության բոլոր նախկին «դաշնակից և բարեկամ»-ների տարածքներից այս բանակին կարող էր միանալ ևս մոտ 60.000 դաշնակից ռազմիկ: Այս առումով ավելորդ չէ հիշել, որ դեռևս 101 թվականին Դակիական թագավորության դեմ պայքար սկսելիս Մարկոս Տրայանոսը ուներ 200.000 ռազմիկ կազմող բանակային հարվածային զորախումբ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Մարկոս Տրայանոսի Հռոմեական կայսրության բանակը վերջինիս Արևելյան արշավանքի սկզբում կազմում էր մոտ *170.000* ռազմիկ, որից մոտ 110.000 լեգեոներ և մոտ 60.000 դաշնակից:

Գլուխ 76
Հռոմեա-Պարթևական II պատերազմը

114 թվականի գարնանը Մարկոս Տրայանոս կայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 170.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, հենիոխներ և մախելոններ) արշավեց Անտիոք-Կոմագենե-Սամոսատ-Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Նիկոպոլիս-Սատաղ-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Մասյացոտն-Արտաշատ-Մասյացոտն-Բագրևանդ երթուղով՝ քաղաքներում չհանդիպելով դիմադրության և այնտեղ թողնելով կայազորներ, սակայն դրա փոխարեն ողջ երթուղու երկայնքով ենթարկվելով Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 55.000, այդ թվում Մարդպետական գունդը) անկանոն հարվածներին[1]: Հենց այս ընթացքում էր, որ կայսեր ներկայացավ Պարթամասիրը և, փորձելով գործել նույն այն լեգենդի սահմաններում, որը արդեն իսկ վերագրված էր Տիգրան II Մեծին, հետ ստանալու ակնկալիքով նրա ոտքերի տակ դրեց սեփական թագը: Մարկոս Տրայանոսը, սակայն, գործելով իրական քաղաքականության կանոններով և բնականաբար դուրս գալով հունահռոմեական սենտիմենտալ հեղինակների գծած սահմաններից, թագն ուղղակի իրեն վերցրեց, որից հետո Պարթամասիրի ուղեկիցներին, որպես այդ թագի նոր կրող, հրամայեց պահել իր մոտ, իսկ Պարթամասիրին իրեն էլ մի փոքրաթիվ ուղեկից ջոկատով թույլ տվեց հեռանալ: Մարկոս Տրայանոսը, սակայն, բնականաբար սրանով ևս չէր պատրաստվում սահմանափակվել և արդյունքում, արդեն Հռոմեական կայսրության բանակի ճամբարի սահմաններից դուրս, ուղեկիցներն ուղղակի սպանեցին Պարթամասիրին՝ հետագայում գործն այնպես ներկայացնելով, թե այդ Պարթամասիրին ինքն է ընդհարում հրահրել: Իր ուզածի նման կարգավորելով հարաբերությունները Պարթամասիրի հետ՝ Մարկոս Տրայանոսը հրամայեց անհապաղ գործել:

Արդյունքում՝ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան շարունակեց առաջխաղացումը և 114 թվականի գարնանից մինչև աշուն առաջացավ Ապահունիք-Տարոն-Բաղեշ-Տիգրանակերտ երթուղով՝ քաղաքներում կրկին չհանդիպելով դիմադրության ու այնտեղ թողնելով կայազորներ, սակայն դրա փոխարեն ողջ երթուղու երկայնքով ենթարկվելով Մամիկոնյան սպարապետի[2] գլխավորած Մեծ Հայքի

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 17, 19; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 3; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 20; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 56:

[2] Այս իշխանի անունը գրականության մեջ հաճախ փոխանցվում է «Մանիսար» ձևով: Ընդ որում, եղած տեղեկատվության խիստ սակավության պայմաններում վերջինս երբեմն համարվում է Կորճայքի իշխան, իսկ երբեմն էլ՝ Պարթևական թագավորության գահի թեկնածու, սակայն «Մանիսար»-ի՝ Կորճայքի իշխան լինելու հանգամանքը ենթադրելու համար հիմք է ընդունվել միայն այն հանգամանքը, որ նա հիշատակվում է բացառապես Կորճայքում մղված մարտերում: Իր հերթին վերջինիս՝ Պարթևական գահի թեկնածու լինելու տարբերակի դեպքում էլ բավարար բացատրություն չի գտնում այն հանգամանքը, թե ինչ էր անում այս թեկնածուն

թագավորության բանակի (մոտ 50.000, այդ թվում Մարդպետական գունդը) անկանոն հարվածներին: Արդյունքում, համարելով Մեծ Հայքի թագավորության տարածքը նվաճված, Մարկոս Տրայանոսը այնտեղ կայազորներ թողեց և այն հայտարարեց Հռոմեական կայսրության պրովինցիա: Ի պատասխան դրա, սակայն, Մեծ Հայքի թագավորության տարածքում հզոր դիմադրական պայքար ծավալվեց և ստեղծվեց մի վիճակ, երբ թշնամին փաստորեն տիրապետում էր միայն այն տարածքներին, որտեղ անմիջականորեն գտնվում էին սեփական կայազորային ուժերը[1]: Ինչ վերաբերում է բարձագույն իշխանության կրողին, ապա Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց երկրի արևելյան տարածքներ նահանջած Սանատրուկի որդի և Աբգար VII-ի եղբայր Վաղարշը՝ Վաղարշ Ի-ը (114-144): Այս կապակցությամբ ևս մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ Մեծ Հայքի տարածքում թշնամու նման դանդաղ առաջխաղացման վրա բավարար ուշադրություն չի դարձվել:

Իրոք, փաստորեն ընդհանրապես չի քննարկվել այն հարցը, որ ողջ 114 թվականը Մարկոս Տրայանոսը փաստորեն ծախսեց միայն դեպի Մեծ Հայք ուղղված արշավանքի վրա, այսինքն՝ Հռոմեական կայսրության բանակը մոտ 7 ամսում ամենակոպիտ հաշվարկով անցավ ընդամենը միայն մոտ 750 կմ, այն դեպքում, երբ, ինչպես արդեն նշվել է, քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության բանակն ի վիճակի էր շարժվել միջինը օրական 25, արագացված երթով՝ 30, իսկ սրընթաց երթով՝ 45 կմ արագությամբ: Կարելի է կարծել, որ այս անգամ ևս հակառակորդի նման դանդաղ առաջխաղացումը տեղի է ունեցել Հայկական բանակի հզոր դիմադրության պատճառով:

Այսպես թե այնպես, սակայն, ավարտելով այդ տարվա ռազմական գործողությունները, 114 թվականի աշնանը Հայոց Միջագետքի ճ-մ-ում Տիգրանակետից առաջխաղացած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 50.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, հենիոխներ և մախելոններ) հաղթեց Հայոց Միջագետքի (մոտ 10.000) և Ադիաբենեի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին, որից հետո, միանալով հիմնական ուժերին, առաջ շարժվեց Եդեսիա-Մծբին-Սինգարա (վերջինը՝ Հյուսիսային Միջագետք, Մծբինից մոտ 95 կմ հարավ-արևելք) երթուղով՝ ի վերջո ցրելով ուժերը ու ճամբարելով[2]: Ստեղծված ծանր պայմաններում դիմադրության բոլոր միջոցները սպառած Հայոց Միջագետքի թագավորության արքա Աբգար VII-ը ընդունեց Հռոմեական կայսրության գերիշխանությունը և այդ գնով առժամանակ պահեց սեփական իշխանությունը Հայոց Միջագետքի թագավորությունում:

114 թվականին Պարթևական թագավորության արքա Խոսրովը և նրա դաշնակիցները Մեծ Հայքի թագավորության տարածքի ուղղությամբ, ըստ էության, բաց էին թողել հարվածը, սակայն առաջիկա ձմռանը նրանք ինչպես հարկն է պատրաստություններ տեսան և նախապատրաստվեցին վճռական մարտ տալ հակառակորդին: Ձեռքերը ծալած նստած չէր, սակայն, նաև Մարկոս Տրայանոսը, որը, գարունը բացվելուն պես, սեփական ահեղ ռազմական մեքենան շարժեց իր հակառակորդների դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

115 գարուն – ***<u>Արբելայի ճ-մ</u>***[3]

Կորճայքում՝ Մեծ Հայքի թագավորության տարածքում: Ինձ առավել ընդունելի է թվում այն տեսակետը, որ իրականում «Մանիսար»-ի անվան տակ, ինչպես և Տիգրանակերտի պաշտպանությունը գլխավորած և Ապպիանոսի (Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», մաս 84-86) կողմից հիշատակվող «Մանկայոս»-ի պարագայում, հանդես է գալիս Մամիկոնյան տոհմի հերթական ղեկավարը և Մեծ Հայքի սպարապետը: Այս տեսանկյունից խնդիրը մեկնաբանելիս կարելի է ենթադրել, որ «Մանիսար» անունը իրականում առաջացել հայկական «Մամիկոնյան սպարապետ» բառերի աղավաղված տեսքով միացումից:

[1] Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 20; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 3:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 21, 22; Արիանոս «Պարթևստանի պատմությունը»; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 20:

[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 26, 28; Արիանոս «Պարթևստանի պատմությունը»; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 13; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 3; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 12; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 20; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5, գիրք 24, գլուխ 6; Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»; Մովսես Խորենացի

Մարկոս Տրայանոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 140.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, հենիոխներ և մախելոններ), արշավելով ***Եդեսիա-Մծբին-Հյուսիսային Միջագետք*** երթուղով, քաղաքներում չհանդիպելով դիմադրության, այնտեղ թողնելով կայազորներ, ինչպես նաև իր հետ վերցնելով, այդ թվում նաև սայլերի վրա քանդված վիճակում տեղափոխվող նավակները, ***Տիգրիսի աջ ափով*** սկսեց շարժվել դեպի հարավ: Տեղեկանալով այդ մասին՝ Խոսրով արքայի գլխավորած Պարթևական (մոտ 60.000), ինչպես նաև Վաղարշ I-ի և Մամիկոնյան սպարապետի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակը գետի մյուս ափով սկսեց շարժվեց թշնամուն բանակին ընդառաջ:

I փուլ – Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը հարձակվեց նավակներով ու դրանցից պատրաստված կամրջակներով Տիգրիսի ձախ ափ անցնել փորձող թշնամու բանակի վրա և համառ մարտում ստիպեց վերջինիս նահանջել:

II փուլ – Հռոմեական կայսրության բանակը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր, անցավ հակահարձակման և ի վերջո պարտության մատնեց հակառակորդին, որը դժվարությամբ նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 10.000, դաշնակիցը՝ մոտ 25.000, թշնամին՝ մոտ 15.000 զինվոր:

Նախորդ ճակատամարտում ծանր հարված հասցնելով իր հակառակորդներին և դրանից հետո շարունակելով առաջխաղացումը Պարթևական թագավորության տարածքում՝ Տիգրիսի հովտով դեպի հարավ շարժվող Հռոմեական կայսրության բանակը, կայսեր հրամանով վերակառուցելով նաև Տիգրիսն ու Եփրատն իրար կապող հինավուրց ջրանցքն ու այն դարձնելով նավարկելի, մինչև տարվա վերջ առանց մարտերի գրավեց Սելևկիան (Կենտրոնական Միջագետք, Տիգրիսի աջ ափին, Տիզբոնից մոտ 3 կմ արևմուտք) ու Տիզբոնը (Կենտրոնական Միջագետք, Տիգրիսի աջ ափին, Սելևկիայից մոտ 3 կմ արևելք) և հասավ Պարսից ծոց: Արդյունքում՝ ողջ Միջագետքը հայտնվեց Հռոմեական կայսրության տիրապետության տակ, իսկ Խոսրովը իր հիմնական ուժերով նահանջեց Ատրպատական ու Մեծ Հայքի թագավորության արևելյան տարածքներ: Շուտով, սակայն, նվաճված տարածքներում ուժեղ դիմադրական շարժում բռնկվեց, սակայն միաժամանակ Խոսրովի դեմ գահակալական պայքար սկսեց նաև նրա եղբայր Միհրդատը: Արդյունքում՝ Խոսրովը ստիպված եղավ փախչել սեփական թագավորության արևելյան տարածքներ, իսկ Պարթևական թագավորության արքա էլ հռչակվեց Միհրդատը՝ Միհրդատ IV-ը (115-116):

116 թվականի գարնանը Միհրդատ IV-ի գլխավորած Պարթևական (մոտ 20.000), ինչպես նաև Վաղարշ I-ի և Մամիկոնյան սպարապետի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը արշավեց Արարատ-Տարոն-Բաղեշ-Տիգրանակերտ-Մծբին-Եդեսիա-Կոմագենե երթուղով՝ առանց լուրջ դիմադրության հանդիպելու Հռոմեական կայսրության (մոտ 15.000) նահանջող բանակից ազատագրելով Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների տարածքները: Այնպես ստացվեց, սակայն, որ այս արշավանքի ամենավերջում Միհրդատ IV-ը ընկավ ձիուց և մահացավ, որից հետո նրան հաջորդեց ու պայքարը շարունակեց արդեն նրա որդի Սանատրուկը՝ Սանատրուկ II-ը (116)[1]: 116 թվականի նույն գարնանը, շարունակելով հակահարվածը, Կոմագենեի ճ-մ-ում Սանատրուկ II-ի և Խոսրովի որդի Պարթամասպատի գլխավորած Պարթևական (մոտ 10.000), ինչպես նաև Վաղարշ I-ի ու Մամիկոնյան սպարապետի գլխավորած Մեծ Հայքի

«Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 55; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»:

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 29:

(մոտ 20.000) և Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Ապպիուս Մաքսիմոսի գլխավորած Հռոմեական կայսրության առաջին բանակին (մոտ 7.000), ընդ որում Մաքսիմոսը մենամարտում սպանվեց Արբակի կողմից[1]: Բաց թողած հակառակորդի առաջին հարվածը հյուսիսում՝ Մարկոս Տրայանոսը կարգի գցեց սեփական ռազմական մեքենան և այն հակահարձակման ուղարկեց նույն հյուսիսային ուղղությամբ:

Արդյունքում՝ 116 թվականի ամռանը Լուցիոս Կվինտուս Մավրոսի գլխավորությամբ արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 100.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, հենիոխներ և մախելոններ) Ադիաբենեի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) գրավեց Մծբինը այն բանից հետո, երբ քաղաքում գտնվող ու գերված հռոմեական զինվորները ապստամբություն բարձրացրեցին և բացեցին քաղաքի դարպասները[2]: Դրանից հետո 116 թվականի նույն ամռանը Հռոմեական ռազմական մեքենան տիրեց Եդեսիային, Բատնային և Ապամիային[3], ինչից հետո կողմերը վճռական մարտի համար կրկին իրար բերեցին ուժերը: Արդյունքում՝ 116 թվականի ամռանը Կոմագենեի ճ-մ-ում Լուցիոս Կվինտուս Մավրոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 50.000), օգտվելով այն բանից, որ Պարթևական թագավորության թագի խոստում ստացած Պարթամասպատը մարտի ընթացքում իր բանակով լքեց մարտադաշտը, հաղթեց Սանատրուկ II-ի գլխավորած Պարթևական (մոտ 30.000), ինչպես նաև Վաղարշ I-ի և Մամիկոնյան սպարապետի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակին, ընդ որում Սանատրուկ II-ը զոհվեց մարտում[4]:

Արդյունքում՝ ցանկանալով ամրապնդել ձեռք բերած հաջողությունը, Մարկոս Տրայանոսի ռազմական մեքենան կրկին առաջացավ արևելյան ուղղությամբ, սակայն 116 թվականի նույն ամռանը Կորճայքի ճ-մ-ում Վաղարշ I-ի և Մամիկոնյան սպարապետի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 20.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը շրջապատեց Հայաստանի կառավարիչ նշանակված Լուցիոս Սեվերոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակին (մոտ 7.000)՝ ստիպելով զինադադար կնքել և նահանջել: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության բանակը, Պարթևական թագավորության արքա հռչակելով Պարթամասպատին (116-117) և ողջ Միջագետքում թողնելով ուժեղ կայազորներ, սկսեց հետ քաշվել դեպի հյուսիս: Իր հերթին Մարկոս Տրայանոսը շուտով հաստատեց հաշտության պայմանները և Մեծ Հայքի թագավորության արքա ճանաչեց Վաղարշ I-ին[5]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 30:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 20, 30:
[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 20, 30:
[4] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 30:
[5] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68 (այլ տարբերակներում՝ գիրք 69 կամ 75), գլուխ 9:

116 աշուն – ***Հատրայի ճ-մ***[1]

Մարկոս Տրայանոս կայսեր գլխավորությամբ Միջագետքի հարավից նահանջող Հռոմեական կայսրության բանակը (մոտ 100.000, այդ թվում իբերներ, աղվանցիներ, սարմատներ, հենիոխներ և մախելոններ) պաշարեց քաղաքը Պարթևական թագավորության բանակից (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500):

I փուլ – Հռոմեական կայսրության բանակը մի շարք հարձակումներ գործեց քաղաքի վրա, սակայն բռնկված համառ մարտերում դրանք հետ մղվեցին:

II փուլ – Պաշարողներին հաջողվեց քանդել քաղաքային պարսպի մի մասը, որից հետո Հռոմեական կայսրության բանակը այդ ուղղությամբ անցավ վճռական հարձակման: Բռնկվեց համառ մարտ, որի վճռական պահին, սակայն, պաշարյալները հզոր արտագրոհ իրականացրին և հետ շպրտեցին թշնամուն, ընդ որում Մարկոս Տրայանոսի գլխավորած հեծելազորը ցրվեց, կայսրն էլ մարտի բովում կորավ յուրայինների տեսադաշտից ու հազիվ փրկվեց:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր: Արդյունքում՝ պարենամթերքի և, հատկապես, ջրի լուրջ պակաս ունեցող Հռոմեական կայսրության բանակը, նեղվելով նաև բանակը պաշարած մոծակների ու ճանճերի պարսից, ի վերջո ստիպված եղավ թողնել քաղաքի պաշարումը և նահանջել ***Անտիոք***:

116 թվականին ոչ միանշանակ ընթացք ունեցած ռազմական գործողություններից հետո Մարկոս Տրայանոսը նախատեսել էր մարտական գործողություններն այնուհանդերձ վերսկսել 117 թվականի գարնանը: Սեփական ռազմական մեքենայի ծանր վիճակը, սակայն, որը զգալի կորուստներ կրեց նաև նույն ձմռանը տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից, ի վերջո ստիպեց կայսեր չեղյալ համարել այդ որոշումը:

Այս առումով ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Արևելքում մղվող պատերազմի համար Մարկոս Տրայանոսը զգալի ուժեր էր բերել կայսրության այլ սահմաններից, իսկ այժմ էլ դրան գումարվեց անհրաժեշտությունը դեռ մի բան էլ համալրել նույն այդ ուժերը: Արդյունքում՝ անվտանգության հետ կապված այն խնդիրները, որոնք առանց այդ էլ ի հայտ էին եկել այն բանից հետո, երբ կայսրն իր բանակային բռունցքը կուտակել էր Արևելքում, այս ուղղությամբ համառելու պարագայում հետագայում սպառնում էին ավելի սրվել՝ հատկապես այլ սահմաններում: Իր հերթին հարկ է նշել նաև, որ Արևելքում մղվող պատերազմը ծանր էր անդրադարձել ոչ միայն Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի, այլ նաև արդեն ոչ երիտասարդ կայսեր անձի վրա, երբ նույն 117 թվականի սկզբի վիճակով վերջինիս մոտ արդեն շատերն էին ֆիզիկական թուլության նշաններ նկատում, ընդ որում Հատրայի պարիսպների տակ կրած ֆիզիկական ցնցումները միայն ծանրացրել էին կայսեր առողջական ընդհանուր դրությունը: Արդյունքում՝ այդպես էլ վերջնական հաշտություն չկնքած դեռևս ընթացող պատերազմում ու այդպես էլ բավարար լուծում չգտած այն փակուղուց դուրս գալու ուղղությամբ, որում հայտնվել էր Հռոմեական կայսրության ռազմական մեքենան, Մարկոս Տրայանոսը լքեց Անտիոքը և ուղղություն վերցրեց դեպի Հռոմ, սակայն, վերջին օրերին արդեն իսկ գտնվելով կաթվածահար վիճակում, նույն թվականի օգոստոսի 8-ին հենց Իսավրիայի ափերին գտնվող ու հետագայում Տրայանապոլիս կոչված քաղաքում էլ վերջինս կնքեց իր մահկանացուն:

Մարկոս Տրայանոսի մահից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց նրա հեռավոր ազգական Պուբլիոս Ադրիանոսը (117-138), որը իր նախորդի լիակատար հակապատկերն էր: Ժամանակները, սակայն, հարմար էին արդեն հենց այս տիպի

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 31, 33; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 20; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 13; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 25, գլուխ 8:

քաղաքական մի գործչի համար, քանի որ սեփական սահմանների լայնացման գագաթնակետի հասած Հռոմեական կայսրությունն, այսպես թե այնպես, այլևս որևէ հնարավորություն չուներ շարունակելու նախկին ռազմաշունչ քաղաքականությունը, իսկ նոր պայմաններում էլ անհրաժեշտ էր ունենալ հենց նոր կայսեր խաղաղասեր բնույթին համապատասխանող մի անձնավորություն: Արդյունքում՝ Պարթևական թագավորության արքա Խոսրովը և Մեծ Հայքի թագավորության արքա Վաղարշ Ի-ը Պուբլիոս Ադրիանոսի հետ հենց նույն տարում էլ վերջնական հաշտություն կնքեցին ու Հռոմեա-Պարթևական II պատերազմը ավարտվեց, երբ, ի համեմատ նախկին, որևէ էական փոփոխություն տեղի չունեցավ: Մեկ փոփոխություն, սակայն, կողմերն այնուհանդերձ արեցին, երբ Աբգար VII-ը գահընկեց հայտարարվեց և Հայոց Միջագետքի թագավորության արքա հռչակվեց Պարթևական թագավորության գահից իր հերթին զրկված Պարթամասպատը (117-121): Այս փոփոխությունը, սակայն, ևս ժամանակավոր եղավ և 121 թվականին Աբգար VII-ը վերականգնեց իր իշխանությունը Հայոց Միջագետքի թագավորության գահին:

Գլուխ 77
Երկու պատերազմների միջակայքում

Մարկոս Տրայանոսի Արևելյան արշավանքից հետո Արևելքում վերահաստատվեց մինչ այդ գոյություն ունեցող ուժերի հավասարակշռության սովորական վիճակը, իսկ Մեծ Հայքի թագավորության գահին էլ, ինչպես արդեն ասվեց, վերջնականապես հաստատվեց Սանատրուկի որդի Վաղարշ Ի-ը: Այս արքայի գահակալմամբ էլ հենց փաստորեն, ինչպես եղավ Պարթևական թագավորության պարագայում սրանից մեկ դար առաջ, վերջնականապես տեղի ունեցավ սերնդափոխությունը նաև Մեծ Հայքի թագավորության գահին հաստատված Արշակունիների գահատոհմում, ընդ որում այս անգամ ևս մեծապես դեր խաղաց հենց կանանցի գիծը: Իրոք, Մեծ Հայքի թագավորության գահին Վաղարշ Ի-ի հաստատումով փաստորեն ստեղծվեց մի իրավիճակ, երբ շարունակեց իշխել մորական կողմով Արշակունի, իսկ հորական կողմով առայժմ անհայտ, բայց միանշանակ բարձրատոհմիկ ծագում ունեցող Սանատրուկի սերունդը, որը թագավորության ղեկն իր ձեռքում էր պահելու արդեն մինչև վերջինիս անկումը: Այս առումով կարծում եմ, որ Մեծ Հայքի թագավորության գահին վերջնականապես ամրապնդված Երկրորդ սերնդի Արշակունիների տոհմի հիմնադիր պետք է համարել ոչ թե Տրդատ Ի-ին, այլ՝ Սանատրուկին: Կարելի է կարծել, որ, թերևս, հենց այս հանգամանք է հիմք տվել Մեծ Հայքի թագավորությունում Սանատրուկի կերպարի հետագա որոշակի փառաբանմանն և ընդգծմանը, ինչի ապացույցն, այլ տեղեկությունների թվում, մենք տեսնում ենք նաև նրանում, որ այս արքայի դամբարանն ամենամեծն ու ամուրն է եղել[1]:

129 թվականին իր մահկանացուն կնքեց Պարթևական թագավորության արքա Խոսրովը և թագավորության գահին վերջինիս հաջորդեց Վաղարշ II-ի որդի Վաղարշը՝ Վաղարշ III-ը (129-147), որը բավականին ուժեղ ու եռանդուն մի անձնավորություն էր, վայելում էր Քուշանական թագավորության աջակցությունը և, ընդհանրապես, վերջինս զգալի գործ կատարեց սեփական թագավորության հզորության ամրապնդման հարցում: Նույն այս ժամանակ, հաշվի առնելով Պուբլիոս Ադրիանոսի կողմից վարվող ընդգծված պաշտպանողական քաղաքականությունը, որպես Պարթևական թագավորության հիմնական հակառակորդ մնում էր Ալանական թագավորությունը, ընդ որում վերջինս ինքն էլ արդեն մեծապես հետևում էր թողել սեփական հզորության գագաթնակետի շրջանը: Կովկասյան լեռնաշղթայից հարավ ձգվող տարածքների ուղղությամբ, սակայն, վերջին մի հարված նույն այս ժամանակ Ալանական թագավորության բանակն այնուհանդերձ իրականացրեց:

Արդյունքում, սակայն, 134 թվականին Դերջանի ճ-մ-ում Վաղարշ Ի-ի և Արշակ սպարապետի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 50.000), Պարթևական թագավորության (մոտ

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 24:

30.000), ինչպես նաև Ռահբադ արքայի (մոտ 117 - ուղ. 134) գլխավորած Ադիաբենեի թագավորության (20.000 հետևակ) միացյալ բանակը, չնայած շրջապատվեց, բայց Ռահբադ արքայի քաջարի գործողությունների արդյունքում մարտի երրորդ օրը ի վերջո դուրս եկավ շրջապատումից ու հաղթեց Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժած և Գուգարք-Խաղխաղ-Նիգ-Արագածոտն-Մասյացոտն-Կոգովիտ-Բագրևանդ-Բասեն-Կարին-Դերջան երթուղով ասպատակելով արշաված Ալանական թագավորության բանակին (մոտ 100.000), ընդ որում Ռահբատն ընկավ մարտում[1]: Եվս մեկ հարված, այս անգամ արդեն Փոքր Հայքի և Կապադովկիայի ուղղությամբ, Ալանական թագավորության բանակը (մոտ 60.000) հասցրեց 135 թվականին, սակայն, խուսափելով այս անգամ արդեն Հռոմեական կայսրության առաջխաղացած բանակից (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 1.000)[2], Խաղկտիք-Իբերիա երթուղով ի վերջո կրկին նահանջեց Նախակովկասյան տափաստաններ[3]:

138 թվականի հուլիսի 10-ին կյանքից հեռացավ Հռոմեական կայսրության կայսր Պուբլիոս Ադրիանոսը և կայսր հռչակվեց վերջինիս որդեգիր Անտոնիոս Պիոսը (138-161), որը ողջ ծավալով շարունակեց իր նախորդի արտաքին ու ներքին քաղաքականությունը, այդ թվում նաև՝ ընդգծված պաշտպանական ռազմավարությունը սահմաններին: 147 թվականին իր հերթին մահացավ սեփական թագավորության հզորացման համար բավականին շատ գործ արած Վաղարշ III-ը և Պարթևական թագավորության գահին վերջինիս հաջորդեց Միհրդատ IV-ի որդի և Սանատրուկ II-ի եղբայր Վաղարշ IV-ը (147-191): Վերջինս, հաջողությամբ զարգացնելով Վաղարշ III-ի գործը, իր երկարատև թագավորության առաջին շրջանում Պարթևական թագավորությունը հասցրեց սեփական հզորության գագաթնակետներից ևս մեկին: Այս առումով առաջնային խնդիրը, որ կանգնեց Վաղարշ IV-ի առջև, դա հյուսիսում Պարթևական թագավորության դեմ գործող և պաշտոնական Հռոմին աջակցող դաշնադրության քայքայումն էր, որի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև:

Գլուխ 78
Տիգրան VII Սոհեմոսի հիմնախնդիրը

144 թվականին Վաղարշ I-ը կնքեց իր մահկանացուն և Մեծ Հայքի թագավորության գահին վերջինիս փոխարինեց նրա որդի Տիգրան VII Սոհեմոսը (144-161, 164-186): Վերջինիս անձնավորության հետ կապված ևս, սակայն, քննարկման արժանի հարցեր կան:

Իրոք, ընդունված է համարել, որ Տիգրան VII Սոհեմոսը Վաղարշ I-ի որդին չէր, այլ շառավիղն էր Հեմսի արքայատոհմի: Այս պնդումը, սակայն, իր հիմքում ունի, ըստ էության, միայն II դարի պատմիչ Յամբելիքոսի հաղորդումը, որը ստորև ավելորդ չեմ համարում մեջբերել ամբողջությամբ, ընդ որում այս խոսքերը մեզ են հասել ըստ IX դարի բյուզանդական գրականագետ Փոտի հավաքածուի. «*Այս հեղինակը հայտնում է*»,- գրում է Փոտը,- «*որ ինքը, թեև բաբելոնացի է և գիտակ է մոգական գործի, բայց այնուհանդերձ նաև հելլենիստական լավ կրթություն ունի, ընդ որում նրա ծաղկուն տարիքը համընկնում է Սեհոմոսի ժամանակների հետ՝ Սոհեմոսի, որը Աքեմենյանների ու Արշակի որդին էր, ուներ արքայական նախնիներ, դարձավ Հռոմի սենատի անդամ և նույնիսկ կոնսուլ, իսկ հետո էլ կրկին բազմեց Մեծ Հայքի գահին: Ահա հենց սա էր Յամբելիքոսի լավ ժամանակը, ինչպես նա ինքն է ասում: Նա ասում է, որ այդ ժամանակ հռոմեացիների վրա իշխում էր Անտոնիոսը, և, այն բանից հետո, երբ վերջինս իր գլխավոր զորավար, եղբայր ու յուրային Վերոսին ուղարկեց պարթևների դեմ պատերազմի, Յամբելիքոսն ինքը գուշակեց այդ պատերազմի և սկիզբը, և ավարտը, քանզի Վոլոգեսն իրոք փախավ Եփրատից ու*

[1] Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 69, գլուխ 15:
[2] Այս մասին հայտնում է Արիանոսը, ըստ որի կայսր Ադրիանոսի ժամանակ Կապադովկիայի կուսակալի բանակում կար Փոքր Հայքի Հայ ռազմիկներից կազմված զորամաս:
[3] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 69, գլուխ 15; Արիանոս «Տեղաբաշխումը ալանների դեմ»:

Տիգրիսից անդին, իսկ պարթևական ավագանին էլ դարձավ հռոմեացիներին ենթակա»: Այսպիսով՝ խիստ անորոշ են հիմքերը, որոնք թույլ են տալիս ասելու, որ Տիգրան VII Սոհեմոսը հենց Հեմսի արքայական տան ներկայացուցիչն էր, քանզի առկա է ուղղակի մի սեղմ և անորոշ հաղորդում «Սոհեմոս» անվան տեսքով, երբ Յամբելիքոսն ինքն էլ Հեմսի երբեմնի թագավորության իշխող գահատոհմի շառավիղն էր: Մյուս կողմից, սակայն, նույն Յամբելիքոսի մոտ առկա են հստակ տեղեկություններ այն մասին, որ այս գահակալն ուներ արքայական նախնիներ: Արդյունքում՝ կարծում եմ, որ, թերևս, չկա և ոչ մի լուրջ հիմք մերժելու այն տեսակետը, որ Տիգրան VII Սոհեմոսը եղել է Վաղարշ I-ի որդին, ընդ որում «Սոհեմոս» մականունն էլ կարող է ունենալ ամենատարբեր բացատրություններ և կապ չունենալ «Հեմս» տեղանվան հետ: Այս առումով հատկանշական է, որ Տիգրան VII Սոհեմոսին Մեծ Հայքի թագավորության գահին հաջորդած նրա որդին ևս կրում էր «Վաղարշ» անունը՝ «*պապի անունը փոխանցվում է թոռանը*» հայերի մոտ ընդունված սկզբունքով[1]: Եվ վերջապես քննարկվող անձնավորության վերաբերյալ իմ դիտարկումներն ամփոփելիս ավելորդ չեմ գտնում անդրադառնալ նաև Մովսես Խորենացու կողմից հիշատակվող «Տիգրան Վերջին»-ի խնդրին:

Այս կապակցությամբ Պատմահայրը հայտնում է. «*Տիրանին հաջորդում է նրա եղբայր Տիգրան Վերջինը, որ Հայոց վրա թագավորեց պարսից Պերոզ թագավորի չորրորդ տարում: Նա երկար իշխեց՝ քառասուներկու տարի, բայց ոչ մի արիության գործ ցույց չտվեց, որ արժանի լիներ հիշատակելու, բայց մի հույն աղջկանից կալանավորվեց այն ժամանակ, երբ վախճանվեց հռոմեացիների Տիտոս երկրորդ թագավորը, որ կոչվեց Անտոնինոս Ավգուստոս, իսկ պարսից Պերոզ թագավորն էլ արշավեց հռոմեացիների իշխանության վրա, որի պատճառով և Պերոզ կոչումը ստացավ, որ նշանակում է հաղթող, որովհետև նա առաջ հունարեն լեզվով կոչվում էր Վաղեգեսոս, իսկ թե պարսկերեն ինչպես էին կոչում՝ չգիտեմ: Արդ, երբ Պերոզն Ասորիքի վրայով ասպատակում էր պաղեստինացիների կողմերը, նրա պատճառով և նրա հրամանով մեր Տիգրանն էլ ասպատակեց Միջերկրայքը, որտեղ էլ կալանավորվեց մի աղջկանից, որ իշխում էր այդ կողմերում, ընդ որում սա եղավ այն ժամանակ, մինչ Ղուկիանոս կեսարը Աթենքում շինում էր մեհյանը: Ղուկիանոս կեսարը, սակայն, Պերոզի մեռնելուց հետո մեծ զորքով Միջերկրայք գալով, նվաճեց Հայաստանն և արձակեց Տիգրանին: Նա Տիգրանին կին տվեց իր ազգական Ռոփի կույսին, որին Տիգրանը Հայաստան դառնալիս արձակեց իր մոտից, իսկ նրանից ծնված չորս պատանիներին էլ նախարարական ցեղի վերածեց՝ նրանց մոր Ռոփիի անունով Ռոփսյան կոչելով, որպեսզի Արշակունի չկոչվեն, ընդ որում նրանցից առաջինին այդ նախարարության նահապետ նշանակեց*»[2]: Վերոհիշյալ հաղորդումը, չնայած իր ուշագրավ բնույթին, մեծապես մնացել է ստվերում, քանզի, կարծես թե, ինքնըստինքյան ընդունվել է, որ այս դեպքում այս կամ այն կերպ, սակայն խոսքը կարող է վերաբերել Տիգրան II Մեծին: Կարծում եմ, սակայն, որ այստեղ կան ավելի ուշագրավ մանրամասներ, քան թվում է առաջին հայացքից:

Ամենից առաջ նշենք, որ իր աշխատանքի վերոհիշյալ հատվածով Մովսես Խորենացին, ի վերջո հրաժեշտ տալով այն մեծ ժամանակագրական սխալին, որը թույլ էր տվել իր երկի 2-րդ գրքում ու որի մասին մանրամասն խոսվեց վերևում, կրկին վերադառնում է ժամանակագրական ճիշտ և հիմնավոր ուղուն, որից այլևս չի շեղվում: Այսպիսով՝ հիշատակվող հաղորդումն ինքնին կարծես մի ջրբաժան է հանդիսանում, որը սահմանափակում է Պատմահոր ժամանակագրական սխալմունքի հատվածն և որից հետո Մովսես Խորենացու հաղորդումները ժամանակագրական առումով կրկին ճշգրիտ տեսք են ստանում: Հարկ է նաև ավելացնել, որ վերոհիշյալ հատվածը պարունակում է ինքնին բացառիկ տեղեկությունների մի ամբողջություն Տիգրան VII Սոհեմոսի մասին, որի վերաբերյալ տվյալներն այդքան աղքատիկ են հունահռոմեական աղբյուրներում:

Եվ վերջապես հատկանշական է, որ Պատմահայրը, թեև սեղմ և հայկական

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64:

«պատուհանից», բայց այնուհանդերձ մեզ է փոխանցում հայկական կողմի տեսակետը 161-166 թվականներին մղված մարտական գործողությունների վերաբերյալ, երբ միանգամից պարզ է դառնում և այն հանգամանքը, որ հռոմեական կողմը անհաջողություններ է կրել պատերազմի սկզբնական փուլում, և այն հանգամանքը, որ դրանից հետո հաջողությունն ի վերջո կրկին եղել է պաշտոնական Հռոմի կողմում, որոնց ներկայացուցիչն էր նաև Տիգրան VII Սոհեմոսը: Այս առումով հետաքրքիր է, որ, որպես պարթևական կամ պարսից արքա Պատմահայրը հիշատակում է «Պերոզ»-ին, ի դեմս որի հանդես է գալիս Պարթևական թագավորության արքա Վաղարշ IV-ը, որը հայտնի էր իր «Պերոզ» մականունով, իսկ որպես Հռոմի տիրակալ էլ՝ «Ղուկիանոս»-ին, որը ոչ այլ ոք է, քան Հռոմեական կայսրության համակայսր և Արևելքում մղվող ռազմական գործողությունների գլխավոր հրամանատար Լուցիոս Վերոսը: Ողջ վերոգրյալի կապակցությամբ Պատմահայրը, թերևս, սխալվել է միայն մեկ կետում՝ զարգացող իրադարձություններում Տիգրան VII Սոհեմոսը դաշնակից էր ոչ թե Պարթևական թագավորությանը, այլ՝ Հռոմեական կայսրությանը, և «*Միջերկրայք*»-ը վերջինս ասպատակեց ոչ թե ի կատարումն դաշնակցության Պարթևական թագավորության արքայի, այլ՝ Հռոմի կայսեր:

Վերոգրյալի կապակցությամբ հետաքրքիր է նաև ավելացնել, որ Տիգրան VII Սոհեմոսը, ըստ Պատմահոր, թագավորել է 42 տարի[1]: Արդյունքում, եթե ընդունենք մեր պատմագիտության մեջ համընդհանուր տարածում գտած այն տեսակետը, որը Տիգրան VII Սոհեմոսը բազմել է Մեծ Հայքի թագավորության գահին 144 թվականին, ապա նրա իշխանության վերջին տարին կլինի 186 թվականը[2]: Եվ վերջապես ողջ վերոհիշյալ հատվածը հերթական անգամ ցույց է տալիս այն հանգամանքը, որ Մովսես Խորենացու երկի 2-րդ գիրքն այնուհանդերձ սերտորեն կապված է համաշխարհային պատմական սկզբնաղբյուրների հետ, չի հակասում և լրացնում է դրանց: Եվ այսպես, հենց Տիգրան VII Սոհեմոսի օրոք էր, որ հերթական անգամ առաջին պլան եկավ իբերական խնդիրը:

Գլուխ 79
Հայ և Պարթև Արշակունիների պայքարի հերթական փուլը Իբերիայի թագավորության համար

Բանը կայանում էր նրանում, որ Տիգրան VII Սոհեմոսը, գահ բարձրանալով պաշտոնական Հռոմի աջակցությամբ, արդյունքում խզեց Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների ավանդական դաշինքն ու սկսեց մեծապես դաշնակցել հենց իր հզորության գագաթնակետին գտնվող Հռոմեական կայսրության հետ: Իր հերթին արդեն ծերունական տարիքում գտնվող Փարսման II Խիզախի օրոք ռազմաքաղաքական վերելք ապրող Իբերիայի թագավորությունն ինքն ևս նույն այս ժամանակ ավելի ու ավելի էր հակվում Հռոմեական կայսրության օգնությամբ ինքնուրույն քաղաքականություն վարելու և Պարթևական թագավորության ազդեցությունից դուրս գալու գաղափարին: Այսպիսով՝ ստեղծված իրավիճակում հռոմեամետ կողմնորոշում որդեգրած Մեծ Հայքի և Իբերիայի թագավորությունները լրջորեն սահմանափակեցին Պարթևական թագավորության ազդեցությունը հյուսիսում: Իր հերթին, սակայն, որպես հետևանք այս ամենի, Պարթևական թագավորության քաղաքական ակտիվությունն ուղղվեց յուրօրինակ այս համադաշնության դեմ, իսկ իր հզորության գագաթնակետին հայտնված Վաղարշ IV-ն էլ փորձ կատարեց փոխել ի վնաս սեփական թագավորության դասավորվող իրերի դրությունը:

Արդյունքում՝ 150 թվականին Փարսման II Խիզախը զոհ գնաց դավադրությանը, որից հետո նրա կին և Վաղարշ I-ի աղջիկ Գադանան իր որդի Գադամի հետ միասին ապաստանեց Մեծ Հայքի թագավորության տարածքում, իսկ Իբերիայի թագավորության

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64:
[2] Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1971, էջ 781-781:

գահին էլ հաստատվեց սպանվածի պապի պապի եղբոր թոռան թոռ Միհրդատ III-ը (150-155): Հայ-հռոմեական շահերի նման կոպիտ ոտնահարումը, սակայն, չէր կարող անպատասխան մնալ:

Իրոք, 155 թվականին Իբերիայի թագավորության գահի թեկնածու, Փարսման II Խիզախի որդի Գադամի գլխավորած Իբերիայի և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ բանակը մտավ Իբերիայի թագավորության տարածք, որտեղ Ռեխի ճ-մ-ում (Հյուսիս-արևելյան Իբերիա, Լիախվի գետի ափին) հաղթեց Միհրդատ III-ի գլխավորած Իբերիայի ու Պարթևական թագավորությունների միացյալ բանակին[1]: Միհրդատ III-ը զոհվեց, իսկ Գադամը (մոտ 155-158) հռչակվեց Իբերիայի թագավորության արքա:

Վերևում արդեն խոսվեց այս ժամանակաշրջանում տարածաշրջանում առկա ուժերի դասավորության մասին, իսկ այս դեպքում էլ, ըստ էության, փաստորեն ստեղծվել էր մի վիճակ, երբ Միհրդատ III-ի գահ բարձրանալով Իբերիայում մի քանի տարով խիստ ուժեղացել էր Պարթևական թագավորության ազդեցությունը՝ ի վնաս պաշտոնական Հռոմի և այդ ժամանակ նրա դաշնակից Մեծ Հայքի թագավորության շահերի: Դրա փոխարեն, սակայն, ահա այժմ՝ Միհրդատ III-ի գահընկեց լինելով և Գադամի գահ բարձրանալով, Իբերիայի թագավորության տարածքում կրկին ուժեղանում էին Հռոմեական կայսրության ու Մեծ Հայքի թագավորության դիրքերը: Այս առումով հարկ է նշել, որ իրավիճակը չփոխվեց նաև հետագայում, երբ 158 թվականին Գադամի մահից հետո Իբերիայի թագավորության արքա հռչակվեց նրա որդի Փարսման III-ը (158-161), իսկ վերջինիս մահից հետո էլ 161 թվականին նրան փոխարինեց արդեն իր որդի Համազասպ II-ը (161-189): Նույն այս ժամանակ, սակայն, տեղի ունեցան ավելի խոշոր փոփոխություններ, որոնք իրենց զգալի ազդեցությունը թողեցին ողջ Եվրասիայի վրա:

Գլուխ 80
Ժողովուրդների մեծ գաղթի սկիզբը և Մեծ տափաստանը

Հուննուական հզոր տերությունը, որը մ.թ.ա. ողջ II դարում ակտիվ հարձակողական քաղաքականություն էր վարում չինական Հանի տերության նկատմամբ, մ.թ.ա. I դարի վերջի վիճակով ինչպես Հանի տերությունից ստացված պատասխան հարվածների, այնպես էլ սեփական ներքին խնդիրների պատճառով արդեն մեծապես թուլացել էր: Արդյունքում՝ թուլացած և մասերի բաժանված Հուննուական տերությունը արդեն I դարի սկզբում կախվածության մեջ հայտնվեց Հանի տերությունից, իսկ II դարի սկզբին էլ սկսեց ենթարկվել վերջինիս ուղղակի ռազմական հարվածներին: Որպես հետևանք այս ամենի՝ 155 թվականին Հուննուական տերությունը ոչնչացավ, իսկ Մեծ տափաստանի արևելքում էլ գերիշխանությունն անցավ Սաբիրների տերությանը: Արդյունքում՝ նույն 155 թվականին Սաբիրների տերության կողմից ծանր պարտության մատնված և նրանց կողմից հետապնդվող հուննուները, ինչպես մի ժամանակ եղել էր նույն հուննուների և քուշանների պարագայում, ստիպված եղան թողնել Մեծ տափաստանի արևելքն ու, խուսափելով սաբիրներից, քուշանների նման շարժվել դեպի արևմուտք: Այս անգամ ևս կրկին, սակայն, ինչպես Քուշանական թագավորության պարագայում եղավ, ստացվեց այնպես, որ այս փախստականները, որոնք պարտություն էին կրել և չէին կարողացել մնալ նույնիսկ իրենց հայրենի տափաստաններում, արդեն Միջին Ասիայի հյուսիսային տափաստաններում, շնորհիվ իրենց մեծաթվության և ավելի հզոր ռազմական համակարգի, կրկին ուժերն իրար բերեցին: Որպես հետևանք այս ամենի, մերվելով տեղացիների հետ և արդեն մեծապես հայտնի դառնալով որպես հոներ, ռազմաշունչ այս ցեղախումբը կրկին ոտքի կանգնեց՝ ստեղծելով արդեն Հունական տերությունը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ հուննուների կամ արդեն, թերևս, հոների օգտին եղավ այն հանգամանքը, որ, սկսած ինչ-որ տեղ II դարի կեսերից

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

երկրագունդը կրկին սկսեց սառչել, իսկ արդյունքում էլ կյանքի պայմանները Մեծ տափաստանում սկսեցին բարելավվել: Ավելին, Հոնական տերության օգտին խաղաց նաև այն հանգամանքը, որ նույն այս ժամանակ սկիզբ առավ հետագա հարյուրամյակներում շարունակված այն գործընթացը, երբ, խուսափելով ցրտերից, հյուսիսից աստիճանաբար կրկին դեպի հարավ էին շարժվում մարդկային խոշոր խմբեր, որոնք ուժեղացնում էին ամենից առաջ հենց նույն Հոնական տերությունը: Իրոք, նախորդ հարյուրամյակներում գործած Մեծ տափաստանի Մեծ ակտիվության պայմաններում նույն այդ Մեծ տափաստանի այժմ բարելավվող շրջաններում ոչ միայն կյանքի համար անհամեմատ ավելի լավ պայմաններ կային, այլև կար ազատված նաև զգալի կենսատարածք, ինչը խիստ հարմար էր հյուսիսից հարավ շարժվող մարդկային խմբերի համար:

Արդյունքում՝ ուժեղացած և իր մեջ նոր ուժեր ներառած Հոնական տերությունը ոչ միայն կարողացավ ոտքի կանգնել, այլև ի վերջո այն նաև պարտության մատնեց տեղական քոչվոր ցեղերին՝ բուլղարներին, բասիլներին ու խազարներին: Որպես հետևանք այս զարգացման, կրկին գործեց «ընկնող դոմինոների» սկզբունքը, ինչի արդյունքում բուլղարները, բասիլներն և խազարներն իրենք էլ իրենց հերթին ստիպված լքեցին սեփական տափաստանները ու շարժվեցին դեպի արևմուտք՝ հաստատվելով Միջին և Հարավային Վոլգայի հովտում ու հիմնելով Բասիլական և նրանից ավելի հյուսիս գտնվող Վոլգյան Բուլղարիայի թագավորությունը:

Դեպի արևմուտք հուննուների տեղաշարժի մյուս արդյունքն էլ այն եղավ, որ աստիճանաբար թուլացավ նույն այս ժամանակ Մավերնահրը կորցրած Քուշանական երբեմնի հզոր թագավորությունը: Վերջին հանգամանքը, սակայն, իր հետ նաև դրական զարգացումներ բերեց և ամենից առաջ հենց Պարթևական թագավորության համար:

Իրոք, թուլացած և հուննուների հարվածներից հետ քաշվող քուշանասականական տարրը, որևէ կերպ չցանկանալով համագործակցել ոչ արիական հուննուների հետ կամ ապրել արդեն որպես հոներ հայտնի դարձող այս ցեղախմբի իշխանության ներքո, աստիճանաբար սկսեց լքել Քուշանական քայքայվող թագավորությունը, ընդ որում այստեղից հեռացող քոչվորների մեծաքանակ խմբերը իրենց համար լիովին հարազատ միջավայր էին գտնում հենց Պարթևական թագավորությունում տիրող արիական իրողությունների պայմաններում, մանավանդ որ խոհեմ Վաղարշ IV-ը իր խելամիտ դրդումներով միայն խթանում էր այս միտումները: Այսպիսով՝ մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Քուշանական և Ալանական թագավորությունները սկսեցին թուլանալ, Մեծ տափաստանի կենտրոնական ու արևմտյան հատվածների հյուսիսային մասերում ստեղծվեցին քոչվոր նոր թագավորություններ, Մեծ տափաստանի արևելքում կարճ տևած, բայց մեծ ուժով ոտքի կանգնեց Սաբիրների տերությունը, իսկ Պարթևական թագավորությունն էլ հասավ իր հզորության գագաթնակետներից հերթականին:

Արդյունքում՝ մի պահ ևս կանգ առնենք և ամրագրենք նաև, որ, թեև այս ոլորտում իրոք ուշագրավ Լև Գումիլևի կարծիքով հոների պատմությունը 158-350 թվականներին լիովին մութ է[1], սակայն կարելի է պնդել, որ հայկական ու վրացական աղբյուրները որոշակիորեն լույս են սփռում այդ անհայտության վրա: Մասնավորապես պարզ է դառնում, որ Ալանական թագավորության ինչ-որ տեղ անակնկալ թուլացումը և տրոհումը, ինչպես նաև Հյուսիսային I պատերազմը արդյունքն էր հոների ու դրան հետևած բուլղարների, բասիլների և խազարների հենց այս տեղաշարժի, որի հետևանքով Միջին ու Հարավային Վոլգայի հովտում, իսկ արդյունքում նաև Նախակովկասյան և Մերձսևածովյան տափաստաններում ուժերի հարաբերակցության լուրջ փոփոխություն եղավ:

Գլուխ 81
Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը

[1] Տես՝ Гумилев Л. Н. “Тысячелетие вокруг Каспия”, Москва 2002, стр. 143, 160:

Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետ կապված հաջորդ հարցը, որ անհրաժեշտ է քննարկել, վերաբերում է 161-166 թվականներին Արևելքում գործող Հռոմեական կայսրության բանակի թվաքանակի հարցին, ինչը ռազմապատմական գրականության մեջ հստակ արտահայտված չէ: Այս առումով, թերևս, վերլուծությունն արժե սկսել 161 թվականի գարնանը տեղի ունեցած Եղեգի ամրոցի ճ-մ-ով, որի արդյունքում Փոքր Ասիայում գտնվող Հռոմեական կայսրության բանակը, ըստ էության, ոչնչացավ:

Վերոհիշյալ ճակատամարտում[1] Հռոմեական կայսրության բանակը կազմված էր հետևյալ լեգեոններից.

ա) 6 լեգեոններից.

1. IV Scythica[2],
2. IX Hispana[3],
3. XII Fulminata[4] ,
4. XV Apollinaris[5],
5. XVI Flavia[6],
6. XXII Dejotariana[7]:

բ) Կապադովկիա պրովինցիայից հավաքված մոտ 23.000 դաշնակից ռազմիկներից:

Վերոգրյալի կապակցությամբ ավելորդ չեմ համարում անել ևս մի քանի պարզաբանումներ: Իրոք, սկզբնաղբյուրներում հիշատակված լեգեոնների մասին հստակ տեղեկատվություն չկա և մենք ավելի շատ հիմնվում ենք վերլուծության վրա ըստ երկրորդական հատկանիշների:

«Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում որևէ հիմք առ այն, որ հայ-պարթևական ներխուժման դեմն առնելու համար ուժերը կենտրոնացրած հռոմեական փոքրասիական բանակի լեգեոնները մարտադաշտ են ելել ոչ լրիվ կազմով, ուղղակի չկա, հատկապես եթե հաշվի առնենք, որ XII Fulminata-ն և XV Apollinaris-ը դեպի արևմուտք էին հետ քաշվել հենց Մեծ Հայքի թագավորության տարածքից: Իր հերթին, հարկ է նշել, որ IX Hispana-ն տեղակայված էր Կապադովկիայում, իսկ Հռոմեական կայսրության արևելյան բանակի հրամանատար Մարկոս Սեվերիանոսն ինքն էլ հենց այս պրովինցիայի կառավարիչն էր, այնպես որ այս լեգեոնի առկայությունը ևս գործնականում ապացուցված է: Մնացած լեգեոններից IV Scythica-ն և XVI Flavia-ն տեղակայված էին համապատասխանաբար Զևգմայի գետանցման մոտ, ինչպես նաև Սամոսատում, ընդ որում սա ևս Հայաստան է, այս տարածքները ևս ենթակա էին հարվածի ու գտնվում էին մարտական գործողությունների թատերաբեմում, այնպես որ այս երկու լեգեոնների մասնակցությունը մարտական գործողություններին ևս խիստ հավանական է կարծել: Ինչ վերաբերում է XXII Dejotariana-ին, ապա այս առումով հատկանշական է հենց այն փաստը, որ Մարկոս Սեվերիանոսն ինքը գալլ էր կամ, իր ժամանակի լեզվով ասած, արդեն հռոմեացած գալաթացի կամ գալլո-հռոմեացի էր, իսկ հիշատակված լեգեոնը, ստեղծված Գալաթական թագավորության արքա, արժանահիշատակ Դեյոթարոս I Գալաթացու, կողմից, ավանդականորեն համարվում էր հենց գալլերի լեգեոն: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ այս ճակատամարտում Հռոմեական կայսրության բանակը կազմում էր *66.000* ռազմիկ, որից մոտ 41.000 լեգեոներ և մոտ

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 71, գլուխ 1, 2; Լուկիանոս «Ալեքսանդր կամ կեղծ մարգարե», գլուխ 27; Լուկիանոս «Ինչպես գրել պատմություն», գլուխ 2, 14, 18, 21, 25, 26; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 15; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64:
[2] 161 թվականին տեղաբաշխված էր Զևգմայի գետանցումում:
[3] 161 թվականին տեղաբաշխված էր Կապադովկիայում:
[4] 161 թվականին տեղաբաշխված էր Վաղարշապատում:
[5] 161 թվականին տեղաբաշխված էր Վաղարշապատում:
[6] 161 թվականին տեղաբաշխված էր Սամոսատում:
[7] 161 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:

25.000 դաշնակից:

162 թվականի գարնանը, հարվածն ուղղելով արդեն Ասորիքին, հայ-պարթևական դաշինքը վերսկսեց ռազմական գործողությունները: Սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված նաև այս իրադարձություններին մասնակցած Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, որը կարելի է պարզել միայն առկա տվյալների վերլուծության արդյունքում:

Եղած տեղեկատվության վերլուծությունից ակնհայտ է, որ այս ճակատամարտին մասնակցել են Հռոմեական կայսրության միայն այն լեգեոնները, որոնք այդ ժամանակ տեղաբաշխված էին Ասորիքում, իսկ 162 թվականին Ասորիքում էին գտնվում հետևյալ լեգեոնները.

1. **II Trajana**[1],
2. **III Cyrenaica**[2],
3. **III Gallica**[3],
4. **VI Ferrata**[4],
5. **X Fretensis**[5]:

Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում Ասորիքում պաշտոնական Հռոմն ուներ 5 լեգեոն, որոնց կազմում ընդգրկված էր 35.000 լեգեոներ: Կարելի է ենթադրել, որ այս պայմաններում Ասորիքի կառավարիչ Ատիդիոս Կոռնելիանուսի տրամադրության տակ, տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 30.000 լեգեոներ: Իր հերթին Հռոմեական կայսրության հարավ-արևելյան պրովինցիաներից կարող էր հավաքվել նաև մոտ 20.000 դաշնակից ռազմիկ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Ատիդիոս Կոռնելիանուսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը կազմում էր 50.000 ռազմիկ, որից մոտ 30.000 լեգեոներ և մոտ 20.000 դաշնակից:

Ըստ մեզ հասած տվյալների 163 թվականին սկիզբ առած և մինչև 166 թվականը շարունակված Արևելյան արշավանքին իրենց մասնակցությունն են բերել հետևյալ լեգեոնները.

1. **I Minervia**[6],
2. **II Adiutrix**[7],
3. **II Italica**[8],
4. **II Trajana**[9],
5. **III Augusta**[10],
6. **III Cyrenaica**[11],
7. **III Gallica**[12],
8. **III Italica**[13],
9. **IV Flavia**[14],
10. **IV Scythica**[15],
11. **V Macedonica**[16],

---

[1] 162 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[2] 162 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավ-արևելքում:
[3] 162 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[4] 162 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[5] 162 թվականին տեղաբաշխված էր Երուսաղեմում:
[6] 163 թվականին տեղաբաշխված էր Ներքին Գերմանիայում:
[7] 163 թվականին տեղաբաշխված էր Պանոնիայի հյուսիս-արևելքում:
[8] Ստեղծվեց 162 թվականին և միանգամից ուղարկվեց արևելք:
[9] 163 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[10] 163 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[11] 163 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավ-արևելքում:
[12] 163 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[13] Ստեղծվեց 162 թվականին և միանգամից ուղարկվեց արևելք:
[14] 163 թվականին տեղաբաշխված էր Վերին Մեզիայում:
[15] 163 թվականին տեղաբաշխված էր Զևգմայի գետանցում:
[16] 163 թվականին տեղաբաշխված էր Դակիայում:

12. VI Ferrata[1],
13. X Fretensis[2],
14. X Gemina[3],
15. XII Fulminata[4],
16. XIV Gemina[5],
17. XV Apollinaris[6],
18. XVI Flavia[7],
19. XXII Primigenia[8],
20. XXX Ulpia[9]:

Այսպիսով՝ քննարկվող իրադարձություններին մասնակցել են 20 լեգեոններ 140.000 լեգեոներ հաստիքային կազմով: Այս պայմաններում տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, գործող բանակում կարող էր ընդգրկված լինել մոտ 130.000 լեգեոներ: Իր հերթին Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաներից կարող էր հավաքվել ևս մոտ 50.000 դաշնակից ռազմիկ: Եվ այսպես, կարելի է պնդել, որ Մեծ Հայքի, իսկ հետո արդեն Պարթևական թագավորության տարածք ներխուժած Հռոմեական կայսրության բանակը կազմում էր մոտ 180.000 ռազմիկ, որից մոտ 130.000 լեգեոներ և մոտ 50.000 դաշնակից: Այս առումով ընդամենը միայն ավելացնենք, որ ուժերի այս հարաբերակցությունը ընդհանուր առմամբ պահպանվեց նաև հետագայում և, ընդհուպ մինչև III դարի վերջը, խոշոր Արևելյան արշավանքներում Հռոմեական կայսրությունը ներառում էր մոտավորապես այսքան ուժեր:

Գլուխ 82
Հռոմեա-Պարթևական III պատերազմը

161 թվականի մարտի 7-ին Անտոնիոս Պիոսը կնքեց իր մահկանացուն և Հռոմեական կայսրության կայսր հռչակվեցին նրա միանգամից երկու որդեգիրները՝ Մարկոս Ավրելիոսը (161-180) և վերջինիս խորթ եղբայր Լուցիոս Վերոսը: Երկու այս տիրակալներն իրենցից ներկայացնում էին երկու իսկական հակադրություններ, երբ զուսպ, խոհեմ և փիլիսոփայական աշխարհայացքի հակված Մարկոս Ավրելիոսը, որը դրա հետ մեկտեղ նաև գործնական զգալի ունակություններ ուներ, կարծես հակադրվում էր թեթևամիտ ու անպատասխանատու Լուցիոս Վերոսին: Այս առումով այնուհանդերձ կարևոր է նշել նաև, որ, չնայած հավասար կոչումին, փաստացի, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ բարոյական առաջնությունը պատկանում էր փիլիսոփա կայսր Մարկոս Ավրելիոսին և պետության ղեկավար էր ընկալվում հենց վերջինս: Այսպես թե այնպես, սակայն երկու կայսրերի կառավարման հենց սկզբում էլ սկիզբ առավ Հռոմեա-Պարթևական III պատերազմը (161-167), երբ ապագա հաջողության համար ամեն ինչ նախապատրաստած և Քուշանական թագավորության ուժերը իր թագավորության մեջ մեծապես ներծծած Վաղարշ IV-ը սկիզբ դրեց ռազմական գործողությունների: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նաև նշել, որ առաջիկա մարտական գործողություններում Վաղարշ IV-ին, համենայն դեպս գոնե սկզբում, մեծապես աջակցում էր նաև 138 թվականին Աբգար VII-ի մահից հետո Հայոց Միջագետքի թագավորության գահին վերջինիս փոխարինած Արմանը (138-162, 164-177):

---

[1] 163 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավում:
[2] 163 թվականին տեղաբաշխված էր Երուսաղեմում:
[3] 163 թվականին տեղաբաշխված էր Ներքին Գերմանիայում:
[4] 163 թվականին տեղաբաշխված էր Մելիտեում:
[5] 163 թվականին տեղաբաշխված էր Վերին Մեզիայում:
[6] 163 թվականին տեղաբաշխված էր Սատաղում:
[7] 163 թվականին տեղաբաշխված էր Սամոսատում:
[8] 163 թվականին տեղաբաշխված էր Ներքին Մեզիայում:
[9] 163 թվականին տեղաբաշխված էր Վերին Գերմանիայում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

161 սեպտեմբեր – ***Եղեգի ամրոցի ճ-մ*** (= ***Իլիջայի ճ-մ,*** = ***Էլեգիայի ճ-մ***) (Բարձր Հայք, Դերջան գավառի արևելք)[1]

Խոսրովի գլխավորած Պարթևական (մոտ 50.000) և սպարապետ Տրդատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000) ու Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը արշավեց ***Գանձա-Տրպատունիք-Թավրիզ-Գաբիթյան-Բաքեան-Գողթն-Նախիջևան-Արած-Ուրծաձոր-Արտաշատ-Մասյացոտն-Կոգովիտ-Բագրևանդ-Բասեն-Կարին*** երթուղով՝ առանց լուրջ դիմադրության հանդիպելու Տիգրան VII Սոհեմոսի գլխավորությամբ նահանջող Հռոմեական կայսրության (մոտ 13.000) բանակից գրավելով Մեծ Հայքի թագավորության տարածքը: Ի պատասխան դրա՝ Մարկոս Սևերիանոսի գլխավորությամբ Սատաղում կենտրոնացած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 66.000) շարժվեց հակառակորդին ընդառաջ և ամրոցի մոտ ամուր դիրքեր գրավեց: Ճակատամարտի առաջին երկու օրը թվական տեսանկյունից զիջելով թշնամու բանակին՝ Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը դիրքեր գրավեց ամրոցից հարավ գտնվող ու տեղանքի վրա գերիշխող մի վայրում՝ նախատեսելով պաշտպանողական մարտ տալ, ընդ որում առաջին շարքի աջ թևում տեղավորվեցին Պարթևական, իսկ ձախում՝ Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների հեծելազորները: Հռոմեական կայսրության բանակի առաջին շարքում և թևերում տեղավորվեց հեծելազորը, երկրորդ շարքի առաջին գծում՝ ծանր հետևակը, իսկ երկրորդ շարքում երկրորդ գծում էլ տեղաբաշխվեցին նետաձիգները: Մարտաշարքի հետևում տեղադրվեցին նետողական մեքենաներ, իսկ թևերում էլ՝ նիզականետ և քարանետ մեքենաներ:

I փուլ – Առաջին օրը Հռոմեական կայսրության բանակը անցավ հարձակման, սակայն դաշնակից բանակը ողջ օրը տևած համառ մարտում հետ մղեց թշնամու գրոհները՝ հաճախ անցնելով հաջող հակագրոհների:

II փուլ – Երկրորդ օրը ևս թշնամու բանակը բազմաթիվ գրոհներ ձեռնարկեց, որոնք, սակայն, վերջացան անարդյունք:

III փուլ – Երրորդ օրը Հռոմեական կայսրության բանակը անցավ վճռական գրոհի, որի արդյունքում մինչև կեսօր համառ մարտ բռնկվեց:

IV փուլ – Կեսօրին արդեն խոշոր համալրում ստացած Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակի հեծելազորը հատուկ առանձնացված ջոկատների ուժերով թևային հարվածներ հասցրեց, որի հետ միաժամանակ էլ նաև, օգտվելով թշնամու բանակի շարքերում առաջացած խառնաշփոթից ու խուճապից, հեծելազորի հիմնական ուժերով անցավ ճակատային հարձակման: Արդյունքում՝ թշնամու բանակի թևերը ի վերջո պարտություն կրեցին և դիմեցին փախուստի:

V փուլ – Դաշնակից բանակը շրջապատեց և ոչնչացրեց Հռոմեական կայսրության բանակի կենտրոնը, որից հաջողվեց փրկվել միայն քչերին, ընդ որում Մարկոս Սևերիանոսն ինքնասպան եղավ:

VI փուլ – Դաշնակից բանակը հետապնդեց թշնամու բանակին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 7.000, դաշնակիցը՝ մոտ 8.000, թշնամին՝ մոտ 40.000 զինվոր:

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 71, գլուխ 1, 2; Լուկիանոս «Ալեքսանդր կամ կեղծ մարգարե», գլուխ 27; Լուկիանոս «Ինչպես գրել պատմություն», գլուխ 2, 14, 18, 21, 25, 26; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 15; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ծանր հարված հասցրեց Արևելքում գործող Հռոմեական կայսրության ռազմական մեքենային, ընդ որում զգալի էին նաև քաղաքական հետևանքները, երբ պաշտոնական Հռոմի դաշնակից Տիգրան VII Սոհեմոսը գահընկեց արվեց, իսկ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Վաղարշ IV-ի որդի Բակուրը (161-163): Նույն կերպ շուտով գահակալական փոփոխություն տեղի ունեցավ նաև Հայոց Միջագետքի թագավորությունում, որտեղ Արմանին փոխարինեց Վահեն (162-164):

Եվ այսպես, զարգացնելով հաջողությունը, Պարթևական, Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների ռազմական մեքենան շուտով հարված հասցրեց արդեն նաև Ասորիքի ուղղությամբ: Արդյունքում՝ 162 թվականի գարնանը Անտիոքի ճ-մ-ում Նիկեփորիոնից (= Կալլինիկում) առաջխաղացած Պարթևական (մոտ 50.000), սպարապետ Տրդատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 20.000) և Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը հաղթեց Ատիդիոս Կոռնելիանուսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակին (մոտ 50.000)[1], որից հետո, ինչպես արվել էր սրանից գրեթե երկու հարյուրամյակ առաջ, ոտնատակ տվեց Ասորիքը[2]: Արևելքում ստացած ծանր հարվածը, սակայն, պաշտոնական Հռոմին իր հերթին ստիպեց կտրուկ միջոցառումների դիմել:

Արդյունքում՝ դեպի Արևելք ոչ միայն խոշոր ուժեր և փորձառու զորավարներ տեղափոխվեցին, այլև Մարկոս Ավրելիոսի անձնական ցուցումով ռազմական գործողություններն այստեղ անձնապես ղեկավարելու համար Արևելք շարժվեց նաև Լուցիոս Վերոսը, ընդ որում փիլիսոփա կայսրը մի կողմից գաղտնի կերպով հույս ուներ սրանով խելքի բերել իր կայսերակից խորթ եղբորը, իսկ մյուս կողմից էլ ցանկանում էր իրեն վարկաբեկող այդ անձնավորությանն այնուհանդերձ հեռացնել Հռոմից: Շուտով պարզվեց, սակայն, որ Լուցիոս Վերոսն այս ամենի մասին իր սեփական կարծիքն ունի, իսկ դեպի Արևելք սեփական մեկնումն էլ քմահաճ այս տիրակալը հնարավորինս ձգձգեց՝ ճանապարհին տրվելով ամենատարբեր զվարճանքների և Ասորիք ժամանելով միայն 162 թվականի ամենավերջում: Ավելին, տեղ հասնելուց հետո ևս Լուցիոս Վերոսը ռազմական ոլորտում որևէ իրական քայլ չձեռնարկեց և այս առումով իրավիճակը փրկեցին, թերևս, միայն Մարկոս Ավրելիոսի կողմից նախապես հեռատեսորեն Արևելք ուղարկված ռազմական առաջնորդները, որոնք էլ հենց սկսեցին իրականացնել ռազմական գործողությունների հետագա կոնկրետ ղեկավարումը:

Եվ այսպես, մինչ Լուցիոս Վերոսը կժամաներ Ասորիք, Մարկոս Ավրելիոսի կողմից այս ուղղությամբ նշանակված հրամանատարները ավարտեցին բոլոր նախապատրաստությունները ու արդեն առաջիկա տարում պատրաստվեցին հարված հասցնել արևելյան ուղղությամբ, ընդ որում հարվածի առաջնային ուղղությունում Մեծ Հայքի թագավորությունն էր: Արդյունքում՝ 163 թվականի գարնանը Ստատիոս Պրիսկոսի գլխավորությամբ Սատաղ-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Կոգովիտ-Մասյացոտն երթուղով ներխուժած և սպարապետ Տրդատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 50.000) անկանոն հարվածներին ենթարկվող Հռոմեական կայսրության բանակը (մոտ 200.000) Հայկական կայազորներից (ընդհանուր՝ մոտ 4.000) գրավեց Արտաշատը ու Վաղարշապատը (վերջինը՝ Արարատ, Արագածոտն գավառ)[3]: Մեծ Հայքի թագավորության տարածքում թողնվեցին կայազորներ, Բակուրը գերվեց և տեղափոխվեց Հռոմ, որտեղ էլ հենց ավարտեց իր օրերը, իսկ թագավորության արքա էլ կրկին հռչակվեց Տիգրան VII Սոհեմոսը: Այսպիսով՝ ընթացիկ տարում իր առջև դրված ռազմական խնդիրը Հռոմեական կայսրության ռազմական մեքենան լիուլի կատարեց, որից հետո, ամրացած լինելով հյուսիս-արևելքում

[1] Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ», «Մարկոս Անտոնիոս փիլիսոփա», մաս 8:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 71, գլուխ 2; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 45; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:
[3] Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ», «Մարկոս Անտոնիոս փիլիսոփա», մաս 9:

և տեղում թողնելով միայն կայազորային ուժեր, կենտրոնացավ Հյուսիսային Ասորիքում ու Հայոց Միջագետքում, երբ խնդիր դրվեց հարված հասցնել արդեն հարավ-արևելյան ուղղությամբ:

164 թվականի գարնանը, վերսկսելով ռազմական գործողություններն արդեն հարավ-արևելյան ուղղությամբ, Ավիդիոս Կասսիոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 180.000) Սուրի ճ-մ-ում (Նիկեփորիոնի մոտ) հաղթեց Պարթևական (մոտ 70.000), ինչպես նաև սպարապետ Տրդատ Բագրատունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 50.000) և Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին, որից հետո, շարունակելով արշավանքը դեպի հարավ, մտավ Նիկեփորիոն[1]: Դրանից հետո 164 թվականի նույն գարնան Ավիդիոս Կասսիոսի ռազմական մեքենան ևս մեկ անգամ պարտության մատնեց հակառակորդին Դուր-Եվրոպոսի ճ-մ-ում (Միջագետք, Եփրատի ձախ ափին, Նիկեփորիոնից մոտ 190 կմ հարավ-արևելք), որից հետո ամրացավ գրաված տարածքներում[2]: Նույն այս ժամանակ էր, որ 164 թվականի գարնանը Տիգրան VII Սոհեմոսի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի մի մասը (մոտ 10.000) ասպատակեց Հյուսիսային Միջագետքը, սակայն Մեծ Հայքի թագավորության արքան խաբեությամբ գերվեց, որից հետո նրա բանակը նահանջեց[3]: Այսպիսով՝ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան նաև հերթական այս տարում կյանքի կոչեց իր առջև դրված խնդիրները, սակայն շուտով պարզվեց, որ ռազմական գործողությունները սրանով այնուհանդերձ չեն սահմանափակվելու, իսկ սպարապետ Տրդատ Բագրատունին էլ այս ամենի հարցով դեռ իր ասելիքն ունի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

164 աշուն – ***<u>Սպերի ճ-մ</u>***[4]

> Սպարապետ Տրդատ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 60.000) շարժվեց Ստատիոս Պրիսկոսի մահից հետո վերջինիս փոխարինած Մարտիոս Վերոսի գլխավորությամբ ***<u>Սատաղից</u>*** Մեծ Հայքի թագավորության տարածք մտած Հռոմեական կայսրության բանակի (մոտ 60.000), ինչպես նաև հենիոխների (մոտ 10.000) և մախելոնների (մոտ 10.000) դեմ ու մարտակարգ ընդունեց:
>
> I փուլ – Հենիոխները և մախելոնները անցան հարձակման, սակայն Հայկական բանակը հանդիպակաց մարտում գլխովին ջախջախեց նրանց, ընդ որում տեղի ունեցած մենամարտում Տրդատը սպանեց հենիոխների արքային, որից հետո, թուրն ուղղելով Հռոմեական կայսրության բանակի կողմը, մարտակոչ ուղղեց Մարտիոս Վերոսին:
>
> II փուլ – Չհամարձակվելով ընդունել մենամարտի հրավերը՝ Մարտիոս Վերոսը հարձակման նետեց իր հիմնական բանակը: Բռնկվեց համառ մարտ, որի արդյունքում Հայկական բանակը պարտություն կրեց, իսկ քաջաբար մարտնչող Տրդատը գերվեց:
>
> Հայերը կորցրին մոտ 30.000, թշնամին՝ մոտ 25.000 զինվոր:

Նախորդ ճակատամարտում շահած հաջողությունից հետո շարունակելով առաջխաղացումը՝ Հռոմեական կայսրության բանակը տեղակայվեց Մեծ Հայքի թագավորության տարածքում: Իր հերթին, Հռոմ տարված Տրդատ Բագրատունին ներում ստացավ, սակայն աքսորվեց Բրիտանիա, որտեղ էլ ավարտեց իր օրերը:

---

[1] Լուկիանոս «Ինչպես գրել պատմություն», գլուխ 29:
[2] Լուկիանոս «Ինչպես գրել պատմություն», գլուխ 20, 28; Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ», «Վերոս», մաս 8; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 15:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 45:
[4] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 71, գլուխ 2:

Հերթական անգամ վերսկսելով ռազմական գործողությունները և առաջիկա տարում ձեռնամուխ լինելով իր առջև դրված մարտական նոր խնդիրների կյանքի կոչմանը՝ 165 թվականի գարնանը Դաուսար ամրոցի 6-մ-ում (Մծբից մոտ 15 կմ արևմուտք) Ավիդիոս Կասսիոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 180.000) հաղթեց Պարթևական (մոտ 70.000), Մեծ Հայքի (մոտ 50.000), ինչպես նաև Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին[1]: Արդյունքում, ծանր և վերջնական հարված հասցնելով հակառակորդի ռազմական մեքենային, Հռոմեական կայսրության բանակը, Տիգրիսի հովտով շարունակելով առաջխաղացումը դեպի հարավ, մինչև տարվա վերջ առանց մարտերի գրավեց Սելևկիան ու Տիզբոնը և, ինչպես սրանից կես դար առաջ էր, հասավ Պարսից ծոց:

166 թվականին Ավիդիոս Կասսիոսը պատրաստվում էր զարգացնել հարձակումը դեպի Ատրպատական, սակայն սեփական ռազմական մեքենայի կրած զգալի կորուստների, մատակարարման բազաներից հեռանալու, ինչպես նաև բանակում ժանտախտի համաճարակի տարածման պատճառով վերջինս այս ծրագրից ի վերջո ստիպված եղավ հրաժարվել: Արդյունքում՝ արդեն 167 թվականին հաշտություն կնքվեց, Հռոմեա-Պարթևական III պատերազմը ավարտվեց և Հռոմեական կայսրության ռազմական մեքենան, հիմնովին ավերելով Սելևկիան ու Տիզբոնը, վերադարձավ Հյուսիսային Միջագետք: Որպես հետևանք այս ամենի՝ Մեծ Հայքի թագավորությունում կրկին հաստատվեց Տիգրան VII Սոհեմոսը, իսկ Հայոց Միջագետքի թագավորությունը, ինչպես նաև նրանից հարավ ընկած տարածքները՝ Մծբինից մոտ 15 կմ արևմուտք-Կիրկեսիոն (Հյուսիսային Միջագետք, Եփրատի ձախ ափին) ուղիղ գծից արևմուտք, ընկան Հռոմեական կայսրության գերիշխանության տակ: Միաժամանակ Հայոց Միջագետքի թագավորության գահին վերատիրեց նաև Արմանը:

Վերջ, հենց նոր ավարտված պատերազմով Հռոմեական կայսրությունը վերջնականապես ապացուցեց, որ ի վիճակի է առավելության հասնել Պարթևական թագավորության նկատմամբ նույնիսկ վերջինիս կողմից Քուշանական թագավորությունից ստացված զգալի օժանդակության, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության էական աջակցության պայմաններում: Այսպիսով՝ Վաղարշ IV-ի ռազմաքաղաքական ողջ մտահղացումը և, ըստ էության, վերջինիս կյանքի այն հիմնական գործը, որին այս տիրակալը նվիրել էր իր բոլոր ջանքերը, հիմնովին և ամենահամոզիչ կերպով տապալվեցին, իսկ դրանից հետո էլ Պարթևական թագավորության ամենափառասեր, բայց միաժամանակ նաև դրա համար ամենածանր գինը վճարած արքան, ըստ էության, դադարեցրեց ռազմաքաղաքական հետագա ամեն մի տեսակի ակտիվություն: Այս առումով պետք է նշել, սակայն, որ հեշտ չեղան նաև Հռոմեական կայսրության կայսրերի կառավարման հետագա տարիները:

Իրոք, Հռոմեական կայսրությանը մարդկային զգալի կորուստներ պատճառած ժանտախտի համաճարակին՝ հիվանդություն, որը ողջ կայսրությունով մեկ տարածեցին Արևելքից սեփական տեղակայման վայրեր վերադարձած ռազմիկները, 169 թվականի հունվարի 23-ին զոհ գնաց Լուցիոս Վերոսը, որից հետո Մարկոս Ավրելիոսը մնաց որպես կայսրության միանձնյա տիրակալ: Նույն այս ժամանակ էր, սակայն իր հերթին, որ, պայմանավորված Մեծ տափաստանում վերջին տասնամյակներում տեղի ունեցած փոփոխություններով, Արևելյան Եվրոպայում գործող գերմանական ցեղերը, որոնք տարածաշրջանում մինչ այդ համարվում էին միակ և ամենազորեղ ուժը, նեղվելով արևելքից առաջխաղացող քոչվորներից, իրենց հերթին աննախադեպ կերպով ուժեղացրին ճնշումը Հռոմեական կայսրության դանուբյան ու հռենոսյան սահմանագծում:

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 71, գլուխ 2; Յամբելիքոս «Բաբելոնի պատմությունը»; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5, 6; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 10; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 20; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 16; Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ», «Վերոս», մաս 7; Մշիխա Զեխա «Ադիաբենեի եկեղեցու պատմությունը»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 64; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 45:

Սկիզբ առավ տասնամյա ծանր պատերազմը Հռոմեական կայսրության եվրոպական ճակատներում, ընդ որում իրավիճակին լրացուցիչ ծանրություն էր հաղորդում նաև ժանտախտի արդեն իսկ հիշատակված և բավականին մեծ չափերի հասած համաճարակը:

Գլուխ 83
Հայ և Պարթև Արշակունիների պայքարի հերթական փուլը Իբերիայի թագավորության համար

174 թվականին Մծխեթի ճ-մ-ում Համազասպ II-ի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) և Մեծ Հայքի (մոտ 70.000) թագավորությունների միացյալ բանակը եռօրյա մարտում, ի վերջո ստանալով խոշոր համալրումներ, հաղթեց Ալանական թագավորության ներխուժած բանակին (մոտ 70.000)[1], որից հետո արդեն 175 թվականին Համազասպ II-ի ռազմական մեքենան ասպատակեց Ալանական թագավորության տարածքը[2]: Ալանական թագավորությունը տրոհվեց մի քանի մասերի և թուլացավ: Արդյունքում, արդեն հիմնականում ընդգրկելով միայն Արևմտյան և Կենտրոնական Կովկասն ու Նախակովկասյան տափաստանները, Ալանական թագավորությունը ստիպված եղավ մեծապես հրաժարվել մինչ այդ վարվող արտաքին ավարառուական քաղաքականությունից: Դրա փոխարեն, սակայն, Հյուսիս-արևելյան Կովկասում, Հարավային Վոլգայի հովտում և Աղվանքի տարածքում ստեղծվեց Բասիլական թագավորությունը, որը շուտով ինքը սկսեց վարել ակտիվ արտաքին ավարառուական քաղաքականություն:

180 թվականի մարտի 17-ին, հաջողությամբ ավարտած եվրոպական սահմաններում գերմանացիների դեմ մղվող պատերազմական գործողությունները, Մարկոս Ավրելիոսը կնքեց իր մահկանացուն, ինչից հետո վերջինիս հաջորդեց նրա որդի Կոմմոդոսը (180-192), որը սեփական հոր ուղղակի հակապատկերն էր: Արդյունքում՝ կայսրության կառավարման արդյունավետությունը կտրուկ անկում ապրեց, իսկ ներքաղաքական անդորրն էլ՝ խաթարվեց:

186 թվականին իր մահկանացուն կնքեց Մեծ Հայքի թագավորության արքա Տիգրան VII Սոհեմոսը և վերջինիս հաջորդեց նրա որդի[3] Վաղարշ II-ը (186-206), որը հոր ժառանգորդը հանդիսացավ նաև վարվող քաղաքական գծի առումով՝ շարունակելով վարել պրոհռոմեական քաղաքականություն: Վաղարշ II-ի գահակալության շրջանի մասին տվյալները թեև կցկտուր են, բայց ընդհանուր առմամբ դրանք լավ ուսումնասիրված են: Այս առումով կարծում եմ, սակայն, որ բաց է մնացել, թերևս, միայն հերթական այն հակամարտության լուսաբանման հարց, որը տարածաշրջանի առաջատար ուժերը ևս մեկ անգամ մղեցին Իբերիայի թագավորության վրա ազդեցությունը պահպանելու համար:

189 թվականին Գուտի կիրճի ճ-մ-ում (Գուգարքի և Իբերիայի սահմանին) գահի թեկնածու, Վաղարշ II-ի որդի և Համազասպ II-ի քրոջ որդի Արևի գլխավորած Մեծ Հայքի թագավորության (մոտ 30.000), Հռոմեական կայսրության (մոտ 13.000), ինչպես նաև Իբերիայի ապստամբած իշխանների (մոտ 10.000) ու Ալանական թագավորության (մոտ 10.000) միացյալ բանակը ջախջախեց Համազասպ II-ի գլխավորած Իբերիայի (մոտ 30.000) և Պարթևական (մոտ 15.000) թագավորությունների միացյալ բանակին[4]: Համազասպ II-ը սպանվեց, իսկ Արևը՝ Ռևը (189-216), հռչակվեց Իբերիայի թագավորության արքա: Որպես հետևանք՝ Իբերիայի թագավորությունը մինչև 253

---

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 57:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 57:

[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65:

[4] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 57:

թվականը ընկավ Մեծ Հայքի թագավորության գերիշխանության տակ: Արդյունքում, ամեն ինչից զատ, Համազասպ II-ի մահով և Իբերիայի թագավորության գահին Ռևի հաստատումով նույն գահատոհմի շրջանակում սերնդափոխություն տեղի ունեցավ նաև Վրաց Արշակունիների արքայատոհմում, երբ Առաջին սերնդի Արշակունիներին հաջորդեց Երկրորդ սերունդը: Այս առումով ավելորդ չէ ավելացնել, որ Վրաց Արշակունիների Երկրորդ սերունդը Իբերիայի թագավորությունում իր իշխանությունը պահպանեց մինչև 253 թվականը՝ այդ ընթացքում հանդիսանալով Մեծ Հայքի թագավորության հավատարիմ դաշնակիցը, ընդ որում վերջինս, փաստորեն, վերջնականապես շահեց Պարթևական թագավորության հետ մղվող մրցակցությունը Իբերիայի թագավորության համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Քարթլիս-Ցխովրեբա»-ում բերված և իմ կողմից նկատի ունեցվող դրվագը մեր պատմագիտությունն ուշադրությանը հերթական անգամ չի արժանացել, ըստ երևույթին, վրացական աղբյուրի հիմնական թերության՝ վերջինիս ժամանակագրական անորոշության, իսկ հաճախ էլ անախրոնիզմների պատճառով, սակայն այն հանգամանքը, որ Իբերիայի թագավորության արքա Համազասպ II-ը սպանվել է այս իրադարձությունների ժամանակ, թույլ է տալիս քիչ թե շատ հստակորեն ասել նրա թվականը: Հետաքրքիր այս իրադարձությունն իր հերթին ցույց է տալիս տարածաշրջանում առկա ուժերի հերթական վերադասավորությունը:

Բանն այն է, որ Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության աջակցությամբ գահ բարձրացած Գադամի թոռ Համազասպ II-ը, Իբերիայի թագավորության համար ապահովելով երկարատև խաղաղություն և հաղթանակ տանելով Ալանական թագավորության նկատմամբ, իր իշխանության վերջում հասել էր մեծ հզորության: Այս պայմաններում, ցանկանալով դուրս գալ պաշտոնական Հռոմի ազդեցության ոլորտից, վերջինս սկսել էր մեծապես վարել պրոպարթևական քաղաքականություն: Նկարագրված ժամանակաշրջանում Մեծ Հայքի թագավորության արքան, սակայն, պաշտոնական Հռոմի դաշնակիցն էր և հենց վերջին հանգամանքով էլ բացատրվում է ինչպես Իբերիայի թագավորության դեմ Մեծ Հայքի թագավորության գործողությունը, այնպես էլ նույն այդ գործողությանը Հռոմեական կայսրության բանակի մասնակցությունը.

Իրոք, Վաղարշ II-ը հռոմեամետ կողմնորոշում ուներ և բնականաբար կայսրությունը պետք է աջակցեր ռազմական օգնություն ցույց տալու մասին նրա խնդրանքին՝ դրանով իսկ հասնելով նաև նրան, որ, Իբերիայի թագավորության արքա հռչակելով Վաղարշ II-ի որդի Արևին, այս թագավորությունը ենթարկի Մեծ Հայքի թագավորությանը, իսկ միջնորդավորված ձևով՝ նաև Հռոմեական կայսրությանը: Այս առումով հատկանշական է, որ Համազասպ II-ն ինքն իր հերթին ռազմական աջակցություն ստացավ Պարթևական թագավորության կողմից, սակայն արդյունքն այնուհանդերձ եղավ ոչ նրա օգտին:

Եվ վերջապես նկարագրված իրադարձությունների լուսաբանման առումով հարկ է ավելացնել, որ սկզբնաղբյուրներում ընդհանրապես չի նշվում այս իրադարձություններին մասնակցած Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, որը կարելի է պարզել միայն առկա տվյալների վերլուծության արդյունքում: Եղած տեղեկատվության վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ այս իրադարձությանը մասնակցել են կայսրության միայն այն լեգեոնները, որոնք այդ ժամանակ իրենց հիմնական մասով տեղաբաշխված էին Մեծ Հայքի թագավորության տարածքում և կոչված էին ռազմական օժանդակություն ապահովել Վաղարշ II-ին, իսկ այդ լեգեոններն երկուսն էին.

1. XII Fulminata[1],
2. XV Apollinaris[2]:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ այս իրադարձություններում Հռոմեական

[1] II դարի երկրորդ կեսում տեղաբաշխված էր Վաղարշապատում:
[2] II դարի երկրորդ կեսում տեղաբաշխված էր Վաղարշապատում:

կայսրության բանակը կազմում էր մոտ *13.000* ռազմիկ:

Գլուխ 84
Հռոմեական Ոսկե դարաշրջանի արյունոտ մայրամուտը

191 թվականին կյանքից հեռացավ Պարթևական թագավորության արքա Վաղարշ IV-ը և գահի վրա վերջինիս հաջորդեց նրա որդի Վաղարշ V-ը (191-204), որը, լինելով եռանդուն մի անձնավորություն ու, կարծես թե, այնուհանդերձ փորձելով կյանքի կոչել հոր չիրականացված երազանքները, արևմտյան ուղղությամբ ավելի ակտիվ քաղաքականություն որդեգրեց, ընդ որում այս գործում Պարթևական թագավորության նոր արքան սերտորեն համագործակցում էր Հայոց Միջագետքի թագավորության արքա Արմանի մահից հետո 177 թվականին գահին վերջինիս փոխարինած նրա որդի Աբգար VIII-ի (177-212), ինչպես նաև Ադիաբենեի թագավորության ռազմաշունչ տիրակալ Նարսայրի (մոտ 190 - ուղ. 194) հետ: Այս առումով հարկ է նշել, որ հարձակողական ապագա գործողությունների համար պայմանները, համենայն դեպս գոնե սկզբում, բարենպաստ էին, երբ Վաղարշ V-ը եռանդուն գործողություններով ճնշեց Միջագետքում գահակալական պայքարի փորձ կատարած ոմն Խոսրովի ելույթը և ամրացավ գահին:

Ավելին, սեփական անմիտ կառավարմամբ և անտեղի դաժանությամբ իր իսկ հպատակներին մահու չափ հոգնեցրած Կոմմոդոսը 192 թվականի դեկտեմբերի 31-ին զոհ գնաց դավադրությանը, երբ սպորտային հերթական մենամարտի ժամանակ իր իսկ մրցակիցը խեղդեց նրան: Կոմմոդոսին հաջորդեց սենատորների դասից սերող ազատարձակյալի որդի Պուբլիոս Պերտինաքսը (192-193), սակայն 193 թվականի մարտի 28-ին նա ևս սպանվեց: Դրանից հետո նոր կայսր հռչակվեց կրկին սենատորների դասին պատկանող Դիդիանոս Հուլիանոսը (193), ընդ որում ապստամբած և նախորդ կայսեր սպանած պալատական թիկնազորի ռազմիկներից վերջինս ուղղակի գնեց գահը: Արդյունքում, սակայն, նոր կայսեր և կայսերական գահը աճուրդի առարկա դարձրած ռազմիկների նկատմամբ Հռոմեական կայսրության ողջ տարածքում ատելությունն այն աստիճանի հասավ, որ ապստամբության ուղին բռնեցին պրովինցիաներում տեղակայված բանակի միանգամից երեք զորավարները՝ դանուբան սահմանում տեղակայված բանակի հրամանատար Սեպտիմիանոս Սևերոսը, Կոմմոդոսի սիրեցյալ և Արևելքում տեղակայված ուժերի հրամանատար Պեսցենիոս Նիգերը, ինչպես նաև Արևմուտքի ռազմական ղեկավար Կլոդիոս Ալբինոսը: Ստեղծված բացառիկ պայմաններում ամենաարագը գործեց Սեպտիմիանոս Սևերոսը և, դաշինք կնքելով Կլոդիոս Ալբինոսի հետ, ինչպես նաև կանխելով Պեսցենիոս Նիգերին, 193 թվականի հունիսի 1-ին գրավեց Հռոմը: Դիդիանոս Հուլիանոսը սպանվեց, իսկ Հռոմեական կայսրության կայսրեր էլ հռչակվեցին Սեպտիմիանոս Սևերոսը (193-211) և Կլոդիոս Ալբինոսը (193-197): Արդյունքում՝ երկու համակայսրերը, կիսելով ազդեցության ոլորտները և առժամանակ հաջողությամբ դաշնակցելով միմյանց հետ, պատերազմական գործողություններ սկսեցին Պեսցենիոս Նիգերի դեմ:

Գլուխ 85
Սեպտիմիանոս Սևերոսի բանակի թվաքանակը վերջինիս Արևելյան արշավանքում

Ռազմապատմական գրականության մեջ հստակ արտահայտված չէ իր Արևելյան արշավանքի ժամանակ Սեպտիմիանոս Սևերոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, մի խնդիր, որը կարիք ունի լրացուցիչ լուսաբանման: Եվ այսպես, ըստ մեզ հասած տվյալների Հռոմեական կայսրության տարածքում մղվող քաղաքացիական պատերազմում Սեպտիմիոս Սևերոսի կողմում մարտնչում էին հետևյալ լեգեոնները.

1. I **Adiutrix,**
2. **I Italica,**
3. **I Minervia,**
4. **II Adiutrix,**
5. **II Italica,**
6. **III Augusta,**
7. **III Italica,**
8. **IV Flavia,**
9. **V Macedonica,**
10. **VI Ferrata,**
11. **VII Claudia,**
12. **VII Gemina,**
13. **VIII Augusta,**
14. **X Gemina,**
15. **XI Claudia,**
16. **XIII Gemina,**
17. **XIV Gemina,**
18. **XXII Primigenia,**
19. **XXX Ulpia**:

Հիշատակված 19 լեգեոններին, որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էր 133.000 լեգեոներ, պետք է ավելացնել, սակայն, նաև պրովինցիաներից հավաքված ևս մոտ 70.000 դաշնակից ռազմիկ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ իր Արևելյան արշավանքում Սեպտիմիոս Սևերոսի բանակը, տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, կազմում էր մոտ 150.000 ռազմիկ՝ 100.000 լեգեոներ և 50.000 դաշնակից:

Գլուխ 86
Հռոմեա-Պարթևական IV պատերազմը

193 թվականի հոկտեմբերին Կիզիկոսի ճ-մ-ում Սեպտիմիոս Սևերոսի բանակը (մոտ 150.000) հաղթանակ տարավ Պեսցենիոս Նիգերի բանակի (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 1.000) նկատմամբ[1], որից հետո Սեպտիմիոս Սևերոսի ռազմական մեքենան հակառակորդի նկատմամբ ևս մեկ հաղթանակ տարավ 193 թվականի նոյեմբերին տեղի ունեցած Նիկիայի ճ-մ-ում (Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտք)[2]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

193 հոկտեմբեր - 194 փետրվար – ***<u>Դուռն Կիլիկիո կիրճի ճ-մ</u>***[3]

<u>Նիկա-Գալաթիա-Կիլիկիա</u> երթուղով առաջխաղացած Սեպտիմիոս Սևերոսի բանակը (մոտ 150.000) մոտեցավ պարիսպներով ամրացված կիրճում դիրքեր գրաված Պեսցենիոս Նիգերի բանակին (մոտ 7.000, այդ թվում մոտ 1.000 հայ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 1.000)

I փուլ – 193 թ-ի հոկտեմբերից մինչև 194 թ-ի փետրվար Սեպտիմիոս Սևերոսի բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց հակառակորդի դիրքերի ուղղությամբ,

[1] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 1, 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 75, գլուխ 6; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 20; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 17; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 18:

[2] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 2; Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 75, գլուխ 6; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Սևերոս», մաս 8; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Պեսցենիոս Նիգեր», մաս 5:

[3] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 2, 3:

սակայն որևէ հաջողության չհասավ:

II փուլ – 194 թ-ի փետրվարին, այն բանից հետո, երբ անձրևային հեղեղը քանդեց պարիսպները, Պեսցենիոս Նիգերի բանակը դիմեց փախուստի, իսկ Սեպտիմիանոս Սևերոսի բանակն էլ, հետապնդելով վերջինիս, հեշտությամբ մտավ ***Կիլիկիա:***

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 1.200, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Հռոմեական կայսրության տարածքում մղվող մարտական գործողությունները, կարծես թե, հենց այն առիթն էին, որին սպասում էր Վաղարշ V-ը: Արդյունքում՝ վերջինս անմիջապես էլ անցավ ակտիվ գործողությունների, երբ սկիզբ առավ Հռոմեա-Պարթևական IV պատերազմը (193-199):

Եվ այսպես, մինչ կայսերական գահի թեկնածուներն իրենց հարաբերություններն էին պարզում Կիլիկիայում, 193 թվականի աշնանը Հայոց Միջագետքի (մոտ 10.000) և Ադիաբենեի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը Հռոմեական կայսրության բանակից (մոտ 1.000) պաշարեց Մծբինը, սակայն հենց նույն այս ժամանակ, երբ Վաղարշ V-ը պատրաստվում էր շարժվել պատերազմը սկսած սեփական դաշնակիցներին օգնության, լիովին անակնկալ արդեն հենց իր համար, նրա դեմ ապստամբեց Պարթևական թագավորությանը ենթակա թագավորություններից մեկը հանդիսացող Պարսից թագավորությունը: Ավելին, արագորեն մեծ չափեր ընդունած նույն այս ապստամբությունը հետագա տարիներին այն աստիճան վտանգավոր բնույթ ընդունեց, որ Վաղարշ V-ը ստիպված եղավ, վերջնականապես մի կողմ թողած սեփական թագավորության արևմտյան սահմաններին անտեղի շտապողականությամբ սկսած պատերազմը, Պարթևական թագավորության 120.000 հոգանոց հարվածային բանակն ուղղել հենց նույն այդ ապստամբների դեմ, իսկ այդ պայմաններում խոսք իսկ գնալ չէր կարող Մծբինի նման ամրացված քաղաքի նկատմամբ պաշարողական գործողությունների հետագա շարունակման մասին[1]: Իր հերթին, մինչ Վաղարշ V-ը զբաղված էր սեփական թագավորության տարածքում անակնկալ կերպով սկիզբ առած և մեծ չափեր ընդունած ապստամբության դեմ պայքարով, Սեպտիմիանոս Սևերոսը շարունակում էր աննահանջ պայքար մղել Պեսցենիոս Նիգերի դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 75, գլուխ 15 (այլ տարբերակներում՝ 1; Մշիխա Զեխա «Ադիաբենեի եկեղեցու պատմությունը»:

194 մարտի 31 – ***Իսոսի ճ-մ***[1]

Կիլիկիայով առաջխաղացած Սեպտիմիոս Սևերոսի բանակը (մոտ 150.000) մոտեցավ ցցապարիսպներով ամրացված դիրքերում ամրացած Պեսցենիոս Նիգերի բանակին (մոտ 60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (300), ինչպես նաև Հայոց Միջագետքի (մոտ 5.000) ու Ադիաբենեի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակին: Սեպտիմիոս Սևերոսի բանակի առաջին շարքում տեղակայվեց ծանր հետևակը, երկրորդ շարքում տեղաբաշխվեց թեթև հետևակը, իսկ հեծելազորն էլ առաջ ուղարկվեց՝ թևանցումով հակառակորդի թիկունք դուրս գալու հրամանով:

I փուլ – Սեպտիմիոս Սևերոսի բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց հակառակորդի դիրքերի ուղղությամբ, սակայն որևէ հաջողության չհասավ:

II փուլ – Հակառակորդի թիկունք անցած Սեպտիմիոս Սևերոսի բանակի հեծելազորը թիկունքային հարված հասցրեց Պեսցենիոս Նիգերի բանակին և, միավորելով ուժերը ճակատից կրկին հարձակման անցած հետևազորի հետ, պարտության մատնեց հակառակորդին:

Ընդհանուր 20.000, սպանվածից հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցները՝ մոտ 18.000 զինվոր: Թշնամին կորցրեց մոտ 15.000 զինվոր:

Իր համար անհաջող ելք ունեցած նախորդ ճակատամարտից հետո Պեսցենիոս Նիգերը դիմեց փախուստի, սակայն շուտով սպանվեց: Արդյունքում՝ Սեպտիմիոս Սևերոսի դիրքերը կտրուկ ուժեղացան և բոլոր պայմանները ստեղծվեցին նրա վերջնական հաղթանակի համար: Երկու համակայսրերի միջև, սակայն խզում առժամանակ չեղավ, քանի որ դեռևս ուշադրություն էին պահանջում պատերազմական գործողությունները Հռոմեական կայսրության արևելյան սահմաններում: Արդյունքում, հաջողությամբ ավարտելով պայքարը Պեսցենիոս Նիգերի դեմ, 194 թվականի մայիսի սկզբին Մծբինի ճ-մ-ում Սեպտիմիոս Սևերոս կայսեր գլխավորությամբ մասերի բաժանված և առաջխաղացած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 200.000), օգտվելով այն բանից, որ Վաղարշ V-ի գլխավորած Պարթևական թագավորության հիմնական բանակը (120.000) շարժվել է Պարսից ապստամբած թագավորության բանակի դեմ, մանր մարտերում հաղթեց Պարթևական (մոտ 20.000) և Հայոց Միջագետքի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակին[2]:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված այս ճակատամարտում Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, որը կարելի է պարզել միայն առկա տվյալների վերլուծության արդյունքում: Դա պարզելու համար Հռոմեական կայսրության բանակը կազմող լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ի սկզբանե գտնվում էին Սեպտիմիոս Սևերոսի բանակի կազմում.

1. **I Adiutrix,**
2. **I Italica,**
3. **I Minervia,**
4. **II Adiutrix,**
5. **II Italica,**
6. **II Trajana,**

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 75, գլուխ 7, 8; Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 2; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Սևերոս», մաս 9; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Պեսցենիոս Նիգեր», մաս 5; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 8:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 75, գլուխ 15, 16 (այլ տարբերակներում՝ 1 կամ 2); Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 5; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Սևերոս», մաս 9; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 18; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 20:

7. III Augusta,
8. III Italica,
9. IV Flavia,
10. IV Scythica,
11. V Macedonica,
12. VI Ferrata,
13. VII Claudia,
14. VII Gemina,
15. VIII Augusta,
16. X Gemina,
17. XI Claudia,
18. XIII Gemina,
19. XIV Gemina,
20. XXII Primigenia,
21. XXX Ulpia:

բ) լեգեոններ, որոնք ի սկզբանե գտնվում էին Պեսցենիոս Նիգերի բանակի կազմում, իսկ հետո միացան Սեպտիմիոս Սևերոսի բանակին.

1. III Cyrenaica,
2. III Gallica,
3. X Fretensis,
4. XII Fulminata,
5. XV Apollinaris,
6. XVI Flavia:

Այսպիսով՝ հաստատապես հայտնի է, որ Սեպտիմիոս Սևերոսի տրամադրության տակ կար 21 լեգեոն՝ որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, պետք է ընդգրկված լիներ 147.000 լեգեոներ: Սրանից զատ արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում 194 թվականին տեղաբաշխված էր ևս 6 լեգեոն կամ 42.000 լեգեոներ, որոնք ի սկզբանե գտնվում էին Պեսցենիոս Նիգերի բանակի կազմում, իսկ հետո միացան Սեպտիմիոս Սևերոսի բանակին: Մի կողմից պետք է հաշվի առնել, սակայն, հենց նոր ավարտված արյունահեղ մարտերը, ինչպես նաև այն փաստը, որ պարտված ու ցրված Պեսցենիոս Նիգերի բանակի շատ լեգեոներներ այդպես էլ չվերադարձան Հռոմեական կայսրության բանակ, մյուս կողմից էլ այն, որ կորուստներ կրած լեգեոնները բնականաբար համալրվել են: Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 160.000 լեգեոներ: Իր հերթին Պեսցենիոս Նիգերի տիրապետության տակ եղած պրովինցիաներից այս բանակին կարող էր միանալ ևս մոտ 40.000 դաշնակից ռազմիկ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Սեպտիմիոս Սևերոսի բանակը կազմում էր ռազմիկ, որից 160.000 լեգեոներ և 40.000 դաշնակից:

Չնայած վերջին հաջողությանը՝ Սեպտիմիոս Սևերոսը չշարունակեց առաջխաղացումը դեպի արևելք՝ փոխարենը գերադասելով, բավարարվելով սահմանների վերականգմամբ ու հակառակորդի սաստմամբ, շարժվել գահակալական պայքարում իրեն արդեն վտանգավոր թվացող Կլոդիոս Ալբինոսի դեմ: Իր հերթին Պարթևական թագավորության բանակը, որը ապստամբների դեմ կարողացել էր հաղթանակ տանել միայն ծանր կորուստների գնով, ինքը ևս իր հերթին հետագայում ի վիճակի չեղավ որևէ ակտիվ գործողություն ձեռնարկել՝ բացառությամբ տեղում տիրող ապստամբական տրամադրությունները ճնշելու նպատակով Ադիաբենեի թագավորության տարածքն ասպատակելուց:

Սկսած արդեն 194 թվականի վերջից՝ Սեպտիմիոս Սևերոսը սեփական ռազմական մեքենայի հիմնական ուժերը սկսեց աստիճանաբար դեպի Արևմուտք շարժել՝

նախատեսելով վերջնականապես պարզել հարաբերությունները Կլոդիոս Ալբինոսի հետ: Արդյունքում՝ 197 թվականի փետրվարին ներկայիս Ֆրանսիայի տարածքում գտնվող Լիոն քաղաքի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Սեպտիմիոս Սևերոսը վճռական հաղթանակ տարավ, իսկ Կլոդիոս Ալբինոսն էլ սպանվեց: Այսպիսով՝ Սեպտիմիոս Սևերոսը մնաց որպես Հռոմեական կայսրության միակ տիրակալ, որից հետո ի վերջո ձեռնամուխ եղավ հարաբերությունները արդեն նաև Արևելքում կարգավորելու գործին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, ի դեմս Հռոմեական կայսրության նոր կայսեր, Վաղարշ V-ին բաժին էր հասել խելացի, մարտունակ և ռազմական հսկայական փորձառության տեր մի հակառակորդ, որը մի ինչ-որ պահ նույնիսկ մոտեցավ Մարկոս Տրայանոսի մակարդակին:

Սկսած արդեն 196 թվականի գարնանից և ընդհուպ մինչ 198 թվականի ամառ Հայոց Միջագետքի (մոտ 10.000) ու Ադիաբենեի (մոտ 10.000) թագավորությունների միացյալ բանակը Հռոմեական կայսրության բանակից (մոտ 2.000) կրկին պաշարել էր Մծբինը և արդյունքում հակառակորդ ուժերը հետ քաշվեցին միայն այն բանից հետո, երբ տեղեկացան Սեպտիմիոս Սևերոս կայսեր գլխավորությամբ Ամիդից առաջխաղացող խոշոր բանակի մասին[1]: Եվ կրկին հարկ է նշել, որ սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված այս իրադարձություններում Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը, որը կարելի է պարզել միայն առկա տվյալների վերլուծության արդյունքում: Դա պարզելու համար Հռոմեական կայսրության բանակը կազմող լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Սեպտիմիոս Սևերոսի բանակի կազմում.

1. **I Adiutrix,**
2. **I Italica,**
3. **I Parthica,**
4. **II Parthica,**
5. **III Gallica,**
6. **III Italica,**
7. **III Parthica,**
8. **IV Scythica,**
9. **VII Claudia,**
10. **VIII Augusta,**
11. **XVI Flavia:**

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք այդ ժամանակ գտնվում էին արևելյան և հարավ-արևելյան ուղղություններում և կարող էին հայտնվել Սեպտիմիոս Սևերոսի բանակի կազմում.

1. **II Traiana**[2],
2. **IV Flavia**[3] ,
3. **VI Ferrata**[4],
4. **X Fretensis**[5],
5. **XII Fulminata**[6],
6. **XV Apollinaris**[7]:

Այսպիսով՝ հաստատապես հայտնի է, որ Սեպտիմիոս Սևերոսի տրամադրության տակ կար 11 լեգեոն՝ որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, պետք է ընդգրկված լիներ 77.000 լեգեոներ: Սրանից զատ

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 76, գլուխ 9: Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 20:
[2] 198 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[3] 198 թվականին տեղաբաշխված էր Կապադովկիայում:
[4] 198 թվականին տեղաբաշխված էր Հարավային Ասորիքում:
[5] 198 թվականին տեղաբաշխված էր Երուսաղեմում:
[6] 198 թվականին տեղաբաշխված էր Մելիտեում:
[7] 198 թվականին տեղաբաշխված էր Սատաղում:

արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում 198 թվականին տեղաբաշխված էր ևս 6 լեգեոն՝ 42.000 լեգեոներ: Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 100.000 լեգեոներ: Իր հերթին արևելյան պրովինցիաներից այս բանակին կարող էր միանալ ևս մոտ 60.000 դաշնակից ռազմիկ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Սեպտիմիոս Սևերոսի բանակը կազմում էր 160.000 ռազմիկ, որից մոտ 100.000 լեգեոներ և 60.000 դաշնակից:

Եվ այսպես, հերթական անգամ ժամանելով Արևելք, զորավարական տաղանդներից ամենևին էլ ոչ զուրկ Սեպտիմիոս Սևերոսը սկսեց զարգացնել հաջողությունը ու, շարունակելով կիրառել սեփական ռազմական մեքենան, 198 թվականի ամռանն առաջացավ Մծբին-Բաղեշ երթուղով: Այս առումով հարկ է նշել, որ Սեպտիմիանոս Սևերոսը նպատակ ուներ ամենից առաջ ներխուժել հենց Մեծ Հայքի թագավորության տարածք, սակայն սկսված բանակցությունների արդյունքում վերջինս Վաղարշ II-ին ի վերջո ճանաչեց Մեծ Հայքի թագավորության արքա, իսկ Հռոմեական կայսրությունն ու Մեծ Հայքն էլ իրենց հերթին ճանաչվեցին իրար «դաշնակից և բարեկամ»: Միաժամանակ պաշտոնական Հռոմը պարտավորվեց ամեն տարի խոշոր գումար վճարել Մեծ Հայքի թագավորությանը, որի միջոցով վերջինս պետք է ապահովեր Ալանաց Դուռ ամրոցի հսկողությունը և լեռնանցքի պաշտպանությունը Ալանական թագավորության հարձակումներից[1]:

Եվ այսպես, կարգի գցելով գործերը հյուսիս-արևելքում, Սեպտիմիոս Սևերոսը պատրաստվեց վճռական հարված հասցնել Պարթևական թագավորությանը, ընդ որում խորամանկ կայսրը գործն ի սկզբանե այնպես ներկայացրեց, թե արշավանքն ուղղված է ընդամենը միայն Հատրայի տեղական կիսաանկախ իշխանության դեմ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ռազմական միջոցների առանց այդ էլ մեծ պակասություն զգացող Վաղարշ V-ը միանգամից ու լիովին կուլ տվեց այս խայծը և, նույնիսկ այն պայմաններում էլ, երբ Հռոմեական կայսրության հարվածային բանակը գործում էր Հատրայի պարիսպների տակ ու սեփական տիրույթների գործնականում կիպ հարևանությամբ, ռազմական որևէ միջոցառում այդպես էլ չձեռնարկեց: Վերջին հանգամանքն էլ հենց Սեպտիմիոս Սևերոսին մեծ հաջողություն ապահովեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

198 օգոստոս - 199 փետրվար – ***<u>Հատրայի պաշտպանությունը</u>***[2]

Սեպտիմիոս Սևերոս կայսեր գլխավորությամբ ***<u>Մծբինից</u>*** առաջխաղացած Հռոմեական կայսրության (մոտ 160.000), ինչպես նաև Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների (մոտ 10.000) միացյալ բանակը պաշարեց քաղաքը Պարթևական թագավորության բանակից (մոտ 2.000, այդ թվում մեծաթիվ արաբներ):

I փուլ – 198 թ-ի օգոստոսին քաղաքը պաշարողները մի շարք գրոհներ ձեռնարկեցին, սակայն, նույնիսկ լրջորեն վնասելով էլ պարիսպը, չկարողացան հասնել որևէ հաջողության:

II փուլ – 198 թ-ի աշնանը Հռոմեական կայսրության բանակը, որոշ ուժեր թողնելով քաղաքի մոտ, անակնկալ արշավանք իրականացրեց ***<u>Հատրա-Տիգրիսի ձախ ափ-Սելևկիա-Տիգրոն</u>*** երթուղով՝ դաժանորեն ասպատակելով և ավերելով

[1] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 9:

[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 31, գիրք 75, գլուխ 17 (այլ տարբերակներում՝ 3), գիրք 76, գլուխ 9-13; Հերոդիանոս «Պատմություն», գիրք 3, մաս 9; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Սևերոս», մաս 15, 16; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 8; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 17; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5, գիրք 24, գլուխ 6, գիրք 25, գլուխ 8; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 20; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 18; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 20; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 20; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 4:

շրջակայքը: Գերվեց և Հռոմեական կայսրության կայսրություն տեղափոխվեց մոտ 100.000 խաղաղ բնակիչ:

III փուլ – 198 թ-ի դեկտեմբերին հիմնական ուժերով կրկին քաղաքին մոտեցած Հռոմեական կայսրության, ինչպես նաև Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ բանակը կրկին մի շարք գրոհներ ձեռնարկեց, սակայն այս անգամ ևս մատնվեց անհաջողության: Դրանից հետո, տեղում թողնելովվ պաշարողական բանակ, դաշնակից հիմնական ուժերը նահանջեցին դեպի հյուսիս և սկսեց վերականգնել կորուստները:

IV փուլ – 199 թ-ի գարնանը Հռոմեական կայսրության, ինչպես նաև Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների միացյալ հիմնական բանակը կրկին պաշարեց քաղաքը և, ավերելով պարսպի զգալի մասը, անցավ վճռական գրոհի: Ստացվեց այնպես, սակայն, որ կայսրը, որը ցանկանում էր քաղաքից ձեռք բերվող ողջ ավարը միանձնյա տնօրինել, ամենավերջին պահին նահանջի հրաման տվեց՝ նախատեսելով քաղաքը գրավել հաջորդ օրն և ավելի քիչ ուժերով: Դրան հակառակ, սակայն, քաղաքի պաշտպանները մեկ օրվա ընթացքում վերականգնեցին պարիսպը և հետագա բոլոր գրոհները որևէ հաջողություն չբերեցին: Ի վերջո, կրած ծանր կորուստների և բանակում սկիզբ առած անհնազանդության պայմաններում Սեպտիմիոս Սևերոսը ստիպված եղավ նահանջի հրաման տալ:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 20.000, թշնամին՝ մոտ 500 զինվոր:

Այս առումով հարկ է նշել, որ, չնայած վերջին անհաջողությանը, բոլորի համար էլ ակնհայտ էր, որ Վաղարշ V-ի թեթև ձեռքով սկիզբ առած և Պարթևական թագավորության արևմտյան հզոր հարևանի դեմ մղվող պատերազմական գործողությունները ոչ միայն որևէ հեռանկար չունեն, այլև վտանգավոր են հենց նույն Պարթևական իսկ թագավորության համար, ընդ որում Միջագետքին հասցված հերթական հարվածը, կարծես, մեկ ավելորդ անգամ ևս հստակորեն պարզաբանեց ամեն ինչ: Որպես հետևանք այս ամենի՝ սկիզբ առան բանակցություններ, 199 թվականի վերջին հաշտություն կնքվեց և Հռոմեա-Պարթևական IV պատերազմը ավարտվեց: Արդյունքում՝ ողջ Հյուսիսային Միջագետքը՝ Տիգրիս-Սինգարայից մոտ 25 կմ հարավ-Կիրկեսիոն ուղիղ գծով, անցավ Հռոմեական կայսրությանը:

Գլուխ 87
Պարթև Արշակունիների մայրամուտը

Հենց նոր ավարտված հերթական անհաջող պատերազմը հատկապես ծանր հետևանքներ ունեցավ ինչպես Պարթևական թագավորության համար ընդհանրապես, այնպես էլ Վաղարշ V-ի համար մասնավորապես: Արդյունքում՝ դեռևս Վաղարշ IV-ի օրոք հեղինակության զգալի կորուստ կրած Արշակունիները Վաղարշ V-ի օրոք վերջնականապես հեղինակազրկվեցին, ընդ որում նույն Պարթևական թագավորության իսկ ներսում արդեն գլուխ էին բարձրացնում նոր ուժեր, որոնք իրենց պատրաստ էին համարում ձեռնոց նետել իշխող գահատոհմին: Արդյունքում՝ փաստորեն, ինչպես եղավ Սկյութական և Մարական կամ Մարական ու Պարսքի թագավորությունների պարագայում, այս անգամ ևս աստիճանաբար ուժեղացած նստակյաց տարրը պատրաստվեց իր վճռական խոսքն ասել՝ խլելով իշխանությունը հզոր պետականություն ստեղծած, սակայն այն ի վերջո անկման հասցրած քոչվոր տարրից: Այս առումով հարկ է նշել, որ պարսկական տարրի հերթական վերելքը, ինչքան էլ տարօրինակ էր, բայց, գուցե ինչ-որ տեղ նույնիսկ իրենից անկախ, սակայն մեծապես ապահովել էր դեռևս արժանահիշատակ Վաղարշ I-ը, որը, վճռական մի շրջադարձով հեռանալով հելլենականությունից և սկսելով շեշտադրել հենց արևելյան արիականությունը, ոչ միայն

խմբագրեց Ավեստան ու այն իր ժամանակի համար ժամանակակից տեսքի բերեց, այլև հենց դրանով իսկ պարսկական տարրի վերածննդի համար մշակութա-գաղափարական ամուր հիմք նախապատրաստեց: Ստեղծված արդեն իսկ բարենպաստ պայմաններում, երբ հելլենիզմն Արևելքում իր, այսպես թե այնպես, արդեն իսկ վերջին օրերն էր ապրում, հօգուտ նստակյաց տարրի զարգացող ժողովրդագրական գործոնը հսկայական խթան ստացավ: Եվ վերջապես հետաքրքիր է նշել նաև, սակայն, որ Պարթևական թագավորության ներսում հասունացող պայթյունը նույն այս ժամանակ գործնականում և ոչ-ոք չէր նկատում, ընդ որում Արշակունիների տոհմում սկիզբ առած գահակալական հերթական պայքարը միայն մոտեցրեց վերջաբանը:

204 թվականին Վաղարշ V-ը կնքեց իր մահկանացուն և Պարթևական թագավորության արքա հռչակվեց նրա որդի Վաղարշ VI-ը (204-213, 213-224՝ Միջագետքում, 224-228), սակայն գրեթե անմիջապես էլ եղբոր դեմ գահակալական պայքար սկսեց Վաղարշ V-ի մյուս որդի Արտավանը, ինչի արդյունքում Պարթևական թագավորության արքա հռչակվեց նաև ինքը՝ Արտավան V-ը (204-224՝ համիշխան): Արդյունքում՝ Պարթևական թագավորությունում ամբողջ երկու տասնամյակով ստեղծվեց մի դրություն, երբ Վաղարշ VI-ը կառավարում էր միայն Միջագետքում, իսկ Արտավան V-ի տիրապետության տակ էլ գտնվում էր թագավորության մնացած մասը և վերջինիս իրական կառավարումը: Ի տարբերություն Պարթևական թագավորության, սակայն, նույն այս ժամանակ գործերը դրական զարգացում էին ապրում Մեծ Հայքի թագավորությունում:

Գլուխ 88
Հյուսիսային I պատերազմը

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ, պայմանավորված Հոնական տերության ստեղծմամբ և Մեծ տափաստանի արևմտյան հատվածում դրան հաջորդած մարդկային զգալի զանգվածի կուտակմամբ, այստեղ հսկայական լարվածություն էր առաջացել, որի ազդեցությունն իրենց վրա զգացին ամենից առաջ, ինչպես արդեն ասվեց, գերմանացիները, իսկ հետո արդեն՝ Մարկոս Ավրելիոսի կողմից ղեկավարվող Հռոմեական կայսրությունը, սակայն նույն այդ ազդեցությունից զերծ չմնացին նաև Կովկասյան լեռնաշղթայից հարավ ձգվող տարածքները: Հռոմեական փիլիսոփա կայսեր հաջողվել էր հաջող դիմադրություն կազմակերպել կայսրության սահմանների վրա ճնշող գերմանացիների դեմ և արդյունքում այլ ելք չունեցող գերմանացիներն իրենք էլ իրենց հերթին համառ դիմադրություն կազմակերպեցին Մեծ տափաստանի արևմուտքից իրենց վրա եկող քոչվորներին: Արդյունքում՝ արդեն նույն այդ քոչվորները, խուսափելով հետագա խոշոր հակամարտությունը շարունակել Արևելյան Եվրոպայում, երբ արևելյան ուղղությունը փակ էր, իսկ հյուսիսայինն էլ՝ անհեռանկար, սեփական հարվածային եռանդն ուղղեցին Կովկասյան լեռնաշղթայից հարավ ձգվող տարածքների ուղղությամբ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ժամանակակիցները լավ էին գիտակցում Մեծ տափաստանի արևմտյան հատվածից եկող սպառնալիքի բնույթը և Կովկասյան լեռնանցքերի պահպանությունը, կարծես, յուրօրինակ մի ընդհանուր գործ էր համարվում նույնիսկ միմյանց մրցակից կամ թշնամի պետական միավորների համար: Իրոք, վերևում արդեն նշվեց, որ դեռևս Տիգրան VII Սոհեմոսի վրա էր խնդիր դրված ամենատարբեր ռազմաքաղաքական միջոցառումներով իրականացնել նույն այդ լեռնանցքների պաշտպանությունը և Հայոց հիշատակված արքան պատվով կատարեց իր այդ առաքելությունը: Նույն այս խնդրի լուծումը, սակայն, վատ կերպով կյանքի չկոչեց նաև Վաղարշ II-ը, ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ, նույնիսկ ամենևին էլ բարեկամաբար չվերաբերվելով Հայոց արքային, 198 թվականի ամռանը Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան սահմաններին մոտեցած Սեպտիմիոս Սևերոսը այնուհանդերձ ոչ միայն չսրեց հակամարտությունը վերջինիս հետ, այլև պարտավորվեց տարեկան նույնիսկ բավարար միջոցներ տրամադրել Վաղարշ II-ին՝ Կովկասյան լեռնաշղթայի բավարար պաշտպանությունն ապահովելու նպատակով: Մեծ տափաստանի արևմտյան հատվածում կուտակվող մարդկային քանակությունն և այնտեղ հավաքվող ներուժը, սակայն, տարիների հետ այնուհանդերձ միայն ավելանում էր, իսկ այդ հանգամանքն էլ իր հետ այսպես թե այնպես անխուսափելիորեն նոր պատերազմ էր բերելու: Արդյունքում՝ ի վերջո սկիզբ առավ Հյուսիսային I պատերազմը (206-207), որն իր հետ մեծ փոփոխություններ էր բերելու:

206 թվականի գարնանը Վաղարշ II-ի, սպարապետ Աշոտ Բագրատունու և Բաբկեն Արծրունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000) Ուտիքի ճ-մ-ում գլխովին ջախջախեց Վնասեպ Սուրհապի գլխավորությամբ Դերբենդ ամրոց-Ուտիք երթուղով Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Բասիլական ու Ալանական թագավորությունների միացյալ բանակին (մոտ 100.000, այդ թվում սարմատներ, խազարներ ու բուլղարներ)[1]: Դրանից հետո, արդեն 206 թվականի ամռանը, Դերբենդ ամրոցի ճ-մ-ում Վաղարշ II-ի, սպարապետ Աշոտ Բագրատունու և Բաբկեն Արծրունու գլխավորությամբ Դերբենդի լեռնանցքն անցած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 80.000) գլխովին ջախջախեց Բասիլական ու Ալանական թագավորությունների միացյալ բանակին (մոտ 80.000, այդ թվում սարմատներ, խազարներ ու բուլղարներ), թեև մարտի վերջում Վաղարշ II-ը նետահար եղավ և զոհվեց[2]: Այսպիսով, չնայած Հայոց

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 46; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 8; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 46; Թովմա Արծրունի

ռազմական մեքենայի հաջողությանը, Վաղարշ II-ը ընկավ մարտում, ինչը խանգարեց ամրապնդել նույն այդ հաջողությունը: Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը, սակայն, մի պահ կանգ առնենք և փորձենք հասկանալ, թե ո՞վ է եղել Մեծ Հայքի թագավորության արքան Վաղարշ II-ից հետո ու ե՞րբ է կառավարել այդ տիրակալը:

Գլուխ 89
Խոսրով I Քաջի հիմնախնդիրը

Մովսես Խորենացին հայտնում է. «*Պարսից Արտավան թագավորի երրորդ տարում թագավորությունն առնում է Վաղարշի որդի Խոսրովը*»: Այսպիսով՝ Պատմահայրը հայտնում է, որ Վաղարշ II-ի մահից հետո Մեծ Հայքի թագավորության արքա է հռչակվում նրա որդի Խոսրով I Քաջը (206-253), որը հսկայական խելքի, կազմակերպչական շնորհքի, ինչպես նաև զորավարական և դիվանագիտական ունակությունների տեր մի անձնավորություն էր: Վաղարշ II-ի թագավորությունը տևել է 20 տարի, ընդ որում վերջինս, ըստ Մովսես Խորենացու, մահացել է Պարթևական թագավորության արքա Արտավան V-ի թագավորության 3-րդ տարում[1]: Ներկայումս, Արտավան V-ի թագավորության սկզբի ժամանակահատվածը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, երբ նա սկսեց գահակալական պայքարը և արքա էր դեռևս մեծապես միայն ձևականորեն, վիճելի է, սակայն Մովսես Խորենացու հաղորդումները օգնում են պարզաբանել այդ հանգամանքը, քանի որ, եթե Վաղարշ II-ը մահացել է և նրա հաջորդը գահին է բազմել 206 թվականին, ապա Արտավան V-ի գահակալման, գուցե ձևական, առաջին տարին կարող է լինել 204 թվականը: Այս առումով հետաքրքիր է, որ, ըստ Պատմահոր, Վաղարշ II-ին հաջորդած նրա որդի Խոսրով I Քաջը գահակալել է 48 տարի, իսկ այդ պարագայում, հաշվելով 206 թվականը ներառյալ, ամեն ինչ ամենայն ճշգրտությամբ գտնում է իր տեղը՝ Հայոց այս մեծագույն արքաներից մեկը կյանքից հեռացել է 253 թվականին:

Մինչև առաջ անցնելը, սակայն, ևս մի պահ հապաղենք և նշենք, որ պատմագիտական գրականության մեջ ընդունված է կարծել, թե Խոսրով I Քաջը իշխել է մինչև 216 թվականը, որից հետո Մեծ Հայքի թագավորության գահին բազմել է Տրդատ անունով նրա որդին, որին էլ սովորաբար կոչում են «Տրդատ II»: Իմ ուսումնասիրությունները, սակայն, չեն հաստատում այս հանգամանքը: Իրոք, վերջին հետևությունը հիմնված է, ըստ էության, միայն Դիոն Կասսիոսի մի քանի, ինչպես նաև Զոնորասի մեկ հաղորդման վրա և բացարձակապես անտեսում է բազմաթիվ ու մանրամասն այն տեղեկությունները, որոնք առկա են հայկական աղբյուրներում, ի դեմս Մովսես Խորենացու և Դավիթ Հռոմեացու[2] երկերի, որոնցում հստակորեն խոսվում է Խոսրով I Քաջի գործունեության մասին մինչև 253 թվականը:

Դիոն Կասսիոսը հայտնում է. «*/12/ Արդ՝ Անտոնինոսը, խաբելով Օսրոենեի Աբգարոս թագավորին, համոզեց նրան իբրև բարեկամի իր մոտ գալ, որից հետո նրան ձերբակալելով կալանավորեց և այդպիսով Օսրոենեն, որը մնացել էր առանց թագավորի, հպատակեցրեց: Իր հերթին Հայոց թագավորին, որը վեճի մեջ էր սեփական որդիների հետ, նա բարեկամական նամակներով նույնպես կանչեց, իբր նրանց հաշտեցնելու պատրվակով, բայց սրանց հետ ևս վարվեց այնպես, ինչպես Աբգարոսի հետ: Հայերը, սակայն, չհանդուրժեցին նրան, այլ դիմեցին զենքի, ընդ որում դրանից հետո նրանցից ոչ ոք երբևիցե ոչ մի բանում նրան այլևս չէր հավատում, այնպես, որ նա գործով սովորեց, թե*

«Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 8; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Սամվել Անեցի «Ժամանակագրություն; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17:

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65:

[2] Ըստ Ա. Մուշեղյանի արժեքավոր հետազոտության («Ագաթանգեղոսի պատմություն» ստեղծման հանգամանքները, գրության ժամանակն և հեղինակի հարցը», ՊԲՀ, 2012, N 1, էջ 196-222) «Ագաթանգեղոսի» հեղինակությամբ հայտնի աշխատանքը իրականում ի սկզբանե IV դարի սկզբում հունարեն հեղինակել է հայազգի ժամանակագիր Դավիթ Հռոմեացին, որից հետո 410-ական թվականներին այն հայերեն է թարգմանել Սահակ Պարթևը, ընդ որում իրականում «Ագաթանգեղոս»-ը ոչ թե աշխատության հեղինակի անունն է, այլ՝ աշխատանքի վերնագիրը, իսկ պատմության վերնագիրը ունի «Ավետաբեր Գրիգոր Լուսավորչի պատմությունը» տեսքը:

որքան վնասաբեր է կայսեր համար խաբեությամբ վերաբերվելը բարեկամներին»[1], որից հետո ավելացնում է. «*Սրանով հանդերձ Հայոց թագավորի դեմ նրա մղած պատերազմը ևս, ինչպես ասել եմ, դադարեց, երբ Տիրիդատեսը ընդունեց Մակրինոսի կողմից իրեն ուղարկված թագը և մորը, որին Տարավտասը տասնմեկ ամիս պահել էր բանտում, ինչպես նաև ստացավ այն ողջ ավարը, որ տարված էր Հայաստանից՝ այն բոլոր երկրների հետ միասին, որ նրա հայրը ձեռք էր բերել Կապադովկիայում: Նա հույս ուներ նաև ստանալու այն փողը, որ ամեն տարի ուղարկում էին հռոմեացիները*»[2]: Իր հերթին Զոնորասը, նկատի ունենալով արդեն 253 թվականի վիճակը, հայտնում է. «*Նորից սրա ժամանակ սկսեցին պարսիկների խլրտումները և նրանք նվաճեցին Հայաստանը: Այս երկրի Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին Պարսից կողմերը*»[3]: Ահա այս հաղորդումների հիման վրա և կրկին չարաբաստիկ եվրոպակենտրոնության ազդեցության տակ է, որ որպես անառարկելի ճշմարտություն ընդունվել է այն հանգամանքը[4], որ Խոսրով I Քաջը մահացել է գերության մեջ և Մեծ Հայքի թագավորության գահին նրան հաջորդել է Տրդատ II անունով մի արքա[5]:

Դիոն Կասսիոսի հաղորդումը, սակայն, իրականում այնքան էլ միանշանակ չէ, իսկ հայկական սկզբնաղբյուրների հայտնած տեղեկատվությունն էլ ավելի է խորացնում ոչ միանշանակությունը: Այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ Դիոն Կասսիոսի մոտ ոչ մի խոսք չկա այն մասին, որ Խոսրով I Քաջը մահացել է գերության մեջ և այդ հանգամանքը ենթադրվել է, ըստ երևույթին, միայն այն բանի ազդեցության ներքո, որ հայերի հետ հաշտության եզրեր փնտրելիս Հռոմեական կայսրության նոր կայսրը թագ է ուղարկում Հայոց արքայի որդի Տրդատին, ինչպես նաև գերությունից ազատում է վերջինիս մորը, այն դեպքում, երբ Խոսրով I Քաջի մասին ոչինչ չի հայտնվում: Այս առումով, թերևս, կարելի է ենթադրել, որ, այո, թեև Խոսրով I Քաջը խաբեությամբ գերվել է, սակայն վերջինս հետագայում ազատ է արձակվել, իսկ «*...Հայոց թագավորի դեմ... մղած պատերազմը*» դադարել է հռոմեական կողմի զիջումների, ինչպես նաև այն բանի արդյունքում, որ հռոմեական կողմը փորձ է կատարել գահի հակակշիռ ստեղծել, ի դեմս Տրդատ արքայազնի, երբ, կարծես ի հակադրություն հոր, թագ է ուղարկվում որդուն:

Այս առումով «Հայոց թագավոր»-ն իրականում Խոսրով I Քաջն է, այլ ոչ թե նրա որդի Տրդատը, ընդ որում բացառված չէ նաև այն տարբերակը, որ հայերի կողմից առկա է եղել որոշակի երկակի խաղ՝ հայր ու որդի ցուցադրել են գժտություն, որպեսզի հռոմեական կողմը, հիմք ընդունելով այդ հանգամանքը, հույս դնի Տրդատ արքայազնի վրա և, արդեն վերջինիս սիրաշահելու համար, ազատ արձակի նրա մորը: Իրոք, Տրդատը հետագայում որևէ կերպ չի հիշատակվում որպես արքա և Մեծ Հայքի թագավորությունը շարունակում է կառավարել Խոսրով I Քաջը: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սրանից մի քանի տասնամյակ անց ծնված իր որդուն Խոսրով I Քաջը կրկին կոչում է «Տրդատ» անունով, կարելի է կարծել, որ հոր և որդու հարաբերությունները երբեք էլ իրական ճգնաժամ չեն ապրել, իսկ իր նորածին որդուն էլ «Տրդատ» անունը տալը նպատակ է հետապնդել վառ պահել մինչ այդ, երևի թե, մահացած ու դրանով իսկ հորը մեծ վիշտ պատճառած տարիքով ավելի ավագ որդու հիշատակը:

Եվ վերջապես չպետք է աչքաթող անել, որ «*...Հայոց թագավորը... հույս ուներ նաև ստանալու այն փողը, որ ամեն տարի ուղարկում էին հռոմեացիները*»՝ խոսքը Կովկասյան անցումները պահպանելու համար նախատեսված գումարի մասին է, որը ստանում էր

---

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 78, գլուխ 12:
[2] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 79, գլուխ 27:
[3] Զոնորաս «Պատմություն»:
[4] Որպես մոտեցման տիպիկ օրինակ՝ տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 80, որտեղ բազմավաստակ հեղինակը գրում է. «*Երրորդ դարի պատմական անցքերը ներքև մենք տալու ենք համաձայն հունահռոմեական աղբյուրների, որոնց օգնությամբ, ինչպես կտեսնենք, նաև որոշվում են Ագաթանգեղոսի վիպական ավանդության մեջ եղած իրական պատմական հիշողությունները*»: Ինչո՞ւ են կիրառության մեջ դրվում միայն հունահռոմեական աղբյուրները, ինչո՞ւ «վիպական» և ի՞նչ կարիք կա մեր պատմության այս փառահեղ հատվածը նման անտեղի շռայլությամբ հռչակել անիրական, մնում է վճռականորեն անհասկանալի:
[5] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 65; Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1984, էջ 27, 38 և այլն; Մելիք-Բախշյան Ս. Տ. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան 1975, էջ 187 և այլ:

հենց Խոսրով I Քաջի հայր Վաղարշ II-ը: Ինչ վերաբերում է Զոնորասի հաղորդմանը, ապա այստեղ նկատի է ունեցվում արդեն Խոսրով I Քաջի մյուս որդի Տրդատը՝ Մեծ Հայքի թագավորության առաջին քրիստոնյա միապետը, որի «որդիներ»-ի մասին հաղորդումն ամենայն հավանականությամբ ավելի շատ ունի «հետևորդներ» կամ «տոհմակիցներ» իմաստը: Այս առումով հատկանշական է, որ հաղորդումն ունի նաև ներքին տրամաբանական թերություն, քանզի, եթե «Տրդատ»-ը իրոք «փախել» էր, ըստ ասվածի ներքին տրամաբանության, խուսափելով պարսկական սպառնալիքից, ապա նրա «որդիներ»-ը չէին կարող ապաստանել նույն պարսիկների մոտ:

Այսպիսով՝ կարծում եմ, որ ճիշտ չէ, մի կողմ թողած հայ պատմիչների հաղորդումները, զուտ հռոմեական երկու պատմիչների կողմից փոխանցվող ոչ միանշանակ տեղեկատվության հիման վրա անել պնդում 216 թվականին քաղաքական ասպարեզից Խոսրով I Քաջի հեռանալու մասին՝ այս արքան ոչ միայն շարունակել է իշխել, այլև հետագայում կյանքի է կոչել բազում փառահեղ գործեր: Ասվածն ամփոփելու համար վերջում կրկին ավելացնեմ, որ, ըստ Մովսես Խորենացու, Խոսրով I Քաջը թագավորել է 48 տարի, ինչը, հաշված 206 թվականից, լիովին հիմնավորված է, քանզի հաստատապես ընդունվում է, որ, ով էլ որ նա լինի, Հայոց հերթական արքայի մահը թվագրվում է 253 թվականով[1]: Եվ այսպես, Մեծ Հայքի թագավորության գահին հայտնվեց հորը փոխարինած Խոսրով I Քաջը, ինչը միայն ծանրացրեց Հայոց թագավորության հակառակորդների դրությունը:

Գլուխ 90
Հայոց տերունական վերջին թռիչքը

Արդյունքում՝ արդեն 207 թվականի գարնանը Խոսրով I Քաջի, սպարապետ Աշոտ Բագրատունու և Բաբկեն Արծրունու գլխավորությամբ պատժիչ արշավանքով Դերբենդի լեռնանցքն անցած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 110.000) Դերբենդ ամրոցի ճ-մ-ում հաղթեց Բասիլական ու Ալանական թագավորությունների միացյալ բանակին (մոտ 60.000, այդ թվում սարմատներ, խազարներ ու բուլղարներ), ինչի արդյունքում Հյուսիսային I պատերազմը ավարտվեց: Որպես հետևանք՝ Ալանական, Բասիլական և Աղվանքի թագավորությունները ընդունեցին Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը, իսկ սարմատներից, խազարներից, բասիլներից ու բուլղարներից էլ, որպես երաշխիք կնքված հաշտության, վերցվեցին պատանդներ: Ստեղծվեց Հայկական Վեցերորդ գերիշխանությունը, որի սահմանները հյուսիսում հասան մինչև Վոլգայի հարավային հովիտ և Նախակովկասյան տափաստաններ, իսկ արևելքում՝ Կասպից ծով ու Ատրպատական[2]: Արդյունքում՝ հաջորդելով հորն և ծանր պարտության մատնելով Բասիլական ու Ալանական թագավորությունների միացյալ բանակին, Խոսրով I Քաջը, որը մինչ այդ իր գերիշխանության տակ ուներ նաև Իբերիայի թագավորությունն, ի դեմս այստեղ իշխող իր եղբայր Ռևի, դաշնակցային պարտավորություններ պարտադրեց նաև Բասիլական ու Ալանական թագավորություններին՝ ըստ էության ստեղծելով հյուսիսային պետությունների հզոր մի համադաշնություն՝ Մեծ Հայքի թագավորության գերիշխանության ներքո:

Համաշխարհային պատմության և վերջինիս հատկապես հին դարերին վերաբերվող ժամանակաշրջանի կապակցությամբ տարբեր իրադարձությունների լուսաբանմանը բաժին է հասել տարբեր ճակատագրեր: Այս առումով հետաքրքիր է նշել, որ որոշ իրադարձություններ, իրենց իրական ընդգրկմամբ և ռազմաքաղաքական հետևանքներով լինելով անհամեմատ ավելի մեծ, իրականում ավելի սահմանափակ

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 88; Հայ ժողովրդի պատմություն, հատոր 1, Երևան 1984, էջ 39 և այլ:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 65; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 46, 47; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Սամվել Անեցի «Ժամանակագրություն; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

արտացոլում են ստացել սկզբնաղբյուրներում, քան դրան ոչ այնքան արժանի, իրենց չափերով ավելի փոքր և ռազմաքաղաքական անհամեմատ ավելի սահմանափակ հետևանքներով իրադարձությունները: Համեմատության համար, օրինակ, հիշատակենք իրենց ընդգրկմամբ անհամեմատելի Քսենոֆոնի մ.թ.ա. 401 թվականի հայտնի Բյուրաց նահանջը, ինչպես նաև Հռոմեական կայսրության 163-166 թվականների Արևելյան արշավանքը: Իրոք, եթե առաջինի պարագայում մենք գործ ունենք, ըստ էության, ընդամենը միայն տեղական բնույթ ունեցող մի իրադարձության հետ, որը ռազմաքաղաքական որևէ էական փոփոխության կամ պատմական հետևանքի չառաջացրեց, ապա երկրորդի դեպքում տարածաշրջանային ռազմաքաղաքական հիմնական երկու ախոյաններից մեկը այնպիսի ծանր մի հարված ստացավ, որը մեծապես կանխորոշեց Մերձավոր ու Միջին Արևելքում ուժերի հետագա դասավորվածությունը: Այս առումով հետաքրքիր է, սակայն, որ, եթե Քսենոֆոնի Բյուրաց նահանջի պատմությունը շարադրված է գրեթե օրերի կտրվածքով և անչափ մանրամասն, ապա Հռոմեական կայսրության 163-166 թվականների Արևելյան արշավանքի մասին մեզ են հասել անհամեմատ ավելի սուղ, գրեթե պատահական տեղեկատվության պատառիկներ՝ անուղղակիության և կցկտուրության զգալի կնիքով:

Առկա որոշակիորեն անարդար իրադրության մեջ մեղքի իրենց բաժինն ունեն ամենից առաջ, իհարկե, սկզբնաղբյուրները, որոնք, ամենատարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, դրանք նկարագրում են տարբեր կերպ: Իր դերն ունի նաև վերևում մի քանի անգամ քննարկված եվրոպակենտրոնությունը, քանզի, ինչքան հեռու է իրադարձության ծավալումը Եվրոպայի տարածքից և ինչքան քիչ է այն ազդեցություն ունեցել Եվրոպայի վրա, այդքան էլ հատվածական է նաև վերջինիս լուսաբանումը եվրոպական սկզբնաղբյուրներում ու այդքան էլ քիչ է ցանկությունը լուսաբանել դրանք ինչպես սկզբնաղբյուրների, այնպես էլ հետագա ուսումնասիրողների կողմից:

Այս ամենի մասին կարելի է երկար խոսել, սակայն իմ նպատակն այս պահին այդ չէ, այլ ես ընդամենը ցանկացա միայն նկարագրել ընդհանուր իրավիճակը: Այսպիսով՝ խոսքը գնում է III դարում գոյություն ունեցած Հայկական մի գերիշխանության մասին, երբ Մեծ Հայքի թագավորությունը վերջինիս ակնառու գահակալներից մեկը հանդիսացող տիրակալներից մեկի օրոք մի վերջին անգամ ձեռք բերեց տերության կարգավիճակ, ընդ որում նույն այդ գերիշխանությունն ինչպես ստեղծվեց այս գահակալի ջանքերով, այնպես էլ պատմության գիրկն անցավ վերջինիս մահվան հետ միասին:

Գլուխ 91
Փոքրիկ բռնակալը և նրա բարեփոխումները

Մինչ Խոսրով I Քաջը դնում էր Հայոց հերթական գերիշխանության հիմքերը՝ ամենակուլ ժամանակն և հիվանդություններն իրենց արեցին մարտի դաշտում այդպես էլ անհաղթ մնացած Սեպտիմիանոս Սևերոսի հետ, որը, հաջողությամբ ավարտելով իր ռազմական ձեռնարկումներից հերթականը, 211 թվականի փետրվարի 4-ին հեռավոր Բրիտանիայում կնքեց իր մահկանացուն: Սեպտիմիանոս Սևերոսի մահից հետո կայսր հռչակվեցին նրա միանգամից երկու որդիները՝ քսաներեքնամյա ավագ որդի Սեպտիմիանոս Կարակալլան (211-217) և քսաներկուամյա կրտսեր որդի Պուբլիոս Գետան (211): Խնդիրը, սակայն, կայանում էր նրանում, որ երկու այս եղբայրները մահու չափ ատում էին մեկը մյուսին և հենց սկզբից էլ փորձում են կյանքից զրկել միմյանց: Արդյունքում՝ հաջողության հասավ ավագ եղբայրը և 211 թվականի դեկտեմբերի 26-ին Պուբլիոս Գետան սեփական մոր ներկայությամբ հենց եղբոր իսկ կողմից նենգաբար սպանվեց, որից հետո, որպես Հռոմեական կայսրության միակ տիրակալ, մնաց միայն Սեպտիմիանոս Կարակալլան: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության ղեկին հայտնվեց դաժան, անմիտ, կամակոր, փառասեր և ուղղակի հիմար մի տիրակալ, ընդ որում, եթե իր հայրը նույն այդ դաժանությունը կիրառում էր բացառապես միայն անհրաժեշտությունից

ելնելով, բայց դրա հետ միաժամանակ նա նաև առաջնակարգ զորավար էր, ապա Սեպտիմիանոս Կարակալլայի մոտ ամենաաչքի ընկնող հատկանիշները հենց միայն նենգամտությունն ու դաժանությունն էին: Այս առումով հետաքրքիր է նշել, որ Սեպտիմիանոս Կարակալլան, տեղի տալով իր ժամանակ արդեն իսկ լիարժեք կերպով շրջանառության մեջ գտնվող լեգենդներին և կուլ գնալով քաղաքական քարոզչության սեփական իսկ համակարգի հնարքներին, սկսեց ինքն իրեն ամեն կերպ նմանեցնել Ալեքսանդր III Մեծին, ընդ որում գործող կայսրն այս ամենն անում էր ընդհուպ մինչև ծիծաղելիության աստիճանի հասնող ուղղամտությամբ:

Ավելին, մի շարք ռազմական գործողություններ մղելով Հռոմեական կայսրության եվրոպական սահմաններում, սակայն այդպես էլ որևէ էական հաջողության չարձանագրելով, 212 թվականին Սեպտիմիանոս Կարակալլան մի վիճահարույց որոշում ընդունեց, որով Հռոմեական կայսրության լիիրավ քաղաքացու կարգավիճակ շնորհեց կայսրության առանց բացառությամբ բոլոր բնակիչներին, բացի, իհարկե, ստրուկներից: Հիմնական նպատակը, որին իր այս քայլով ձգտում էր հասնել գործող կայսրը, դա պետական եկամուտների մեծացումն էր, քանի որ կայսրության քաղաքացի հանդիսացող հպատակներին ավելի հեշտ էր հարկել: Դատելով ըստ ամենայնի, սակայն, ոչ պակաս նշանակություն ուներ նաև Հռոմեական կայսրության բանակի համալրման խնդիրը, քանի որ մի կողմից լեգեոների կարգավիճակ կարող էին ստանալ միայն կայսրության քաղաքացիները, իսկ մյուս կողմից էլ զինապարտների անկում ապրող քանակությունը, ընդհակառակը, արդեն չէր հերիքում իր թվաքանակով անշեղորեն մեծացող բանակի պահանջմունքները համալրելու համար, երբ անվերջ սպառնալիքներ էին առաջանում լայնարձակ կայսրության ողջ սահմանի երկայնքով և բանակը իրոք քանակապես մեծացնելու կարիք կար: Այսպես թե այնպես, սակայն, ինչպես Դաշնակցային պատերազմից հետո եղավ Ապենինյան թերակղզու պարագայում, այս անգամ արդեն ողջ կայսրության տարածքում Սեպտիմիանոս Կարակալլան կյանքի կոչեց վարչահիրավական մի էական փոփոխություն, ինչը վերջնականապես համահարթեցրեց Ապենինյան թերակղզու և մայրաքաղաք Հռոմի բնակիչների իրավական ու սոցիալական կարգավիճակը պրովինցիաների բնակիչների հետ: Այս առումով հարկ է նշել, որ վերջին հանգամանքը, օգտակար կարճաժամկետ կտրվածքով, հեռանկարում կայսրությանը լրջագույն վնաս հասցրեց:

Իրոք, արդեն Մարկոս Ավրելիոսի օրոք պետության ռազմավարչական համակարգում զգալի էր հենց պրովինցիաներից դուրս եկածների կշիռը, սակայն այդ ժամանակ Հռոմն և Ապենինյան թերակղզին դեռևս պահպանում էին իրենց առաջատար դիրքերը: Վերջին այս բարեփոխումը, սակայն, կայսրության ռազմավարչական ու սոցիալական համակարգերում վերջնականապես արժեզրկեց Հռոմի և Ապենինյան թերակղզու դերն ու նշանակությունը ընդհուպ մինչև մշակութային և նույնիսկ էթնո-հոգեբանական ընկալումներում, իսկ մյուս կողմից էլ, սրան հակառակ, բնականաբար մեծացրեց պրովինցիաների նույնաբովանդակ դերն ու նշանակությունը, ընդ որում այս ամենն այն պայմաններում, երբ գործընթացը, պայմանավորված կայսրության ներքին սոցիալ-տնտեսական զարգացումներով, առանց այդ էլ արդեն իսկ ուժեղացող թափով ընթանում էր:

Արդյունքում՝ Սեպտիմիանոս Կարակալլան, կարծես թե, միացրեց դանդաղ գործող յուրօրինակ մի ռումբի ժամային մեխանիզմ, ռումբ, որը դրվում էր Հռոմեական կայսրության ռազմավարչական ողջ համակարգի և նույնիսկ էթնո-հոգեբանական ընկալումների հիմքում: Խնդիրը կայանում էր նրանում, որ առաջին տասնամյակների համընդհանուր համահարթեցման ուրախությանը շուտով անխուսափելիորեն հետևելու էր հաջորդ գործընթացը, երբ տնտեսապես իրար հետ թույլ կապված, սակայն տեղում ուժեղ և տնտեսապես զարգացող կայսրության առանձին մասեր սեփական առաջնորդների գլխավորությամբ ձգտելու էին կենտրոնախույս գործունեություն ծավալել՝ այդպես էլ վճռականորեն ի վիճակի չլինելով հասկանալ, թե ինչո՞ւ

պրովինցիաները պետք է ենթակա լինեն մայրաքաղաք Հռոմին կամ ստորադասվեն Ապենինյան թերակղզուն, իսկ իրենց առաջնորդն էլ պետք է ենթակա լինի Հռոմում նստող տիրակալին:

Գլուխ 92
Հռոմեական կայսրության բանակի թվաքանակը Հռոմեա-Պարթևական V պատերազմում

Սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված Սեպտիմիանոս Կարակալլայի բանակի թվաքանակը 216-217 թվականների Արևելյան արշավանքում: Դա պարզելու համար Հռոմեական կայսրության բանակը կազմող լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Սեպտիմիանոս Կարակալլայի բանակի կազմում.

1. I Adiutrix,
2. I Parthica,
3. II Adiutrix,
4. II Parthica,
5. III Augusta,
6. III Cyrenaica,
7. III Parthica,
8. IV Flavia,
9. XII Fulminata,
10. XV Apollinaris,
11. XVI Flavia:

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք այդ ժամանակ գտնվում էին արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում և կարող էին հայտնվել Սեպտիմիանոս Կարակալլայի բանակի կազմում.

1. II Trajana[1],
2. III Gallica[2],
3. IV Scythica[3],
4. VI Ferrata[4],
5. X Fretensis[5]:

Այսպիսով՝ հաստատապես հայտնի է, որ Սեպտիմիանոս Կարակալլայի տրամադրության տակ կար 11 լեգեոն, որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էր 77.000 լեգեոներ: Սրանից զատ արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում 216 թվականին տեղաբաշխված էր ևս 5 լեգեոն կամ 35.000 լեգեոներներ: Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր տրամադրվել մոտ 100.000 լեգեոներ: Իր հերթին արևելյան պրովինցիաներից այս բանակին կարող էր միանալ ևս 40.000 մոտ դաշնակից ռազմիկ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ Սեպտիմիանոս Կարակալլայի բանակը կազմում էր 140.000 ռազմիկ, որից մոտ 100.000 լեգեոներ և 40.000 դաշնակից:

Գլուխ 93

[1] 216 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[2] 216 թվականին տեղաբաշխված էր Հարավային Ասորիքում:
[3] 216 թվականին տեղաբաշխված էր Զևգմայի գետանցում:
[4] 216 թվականին տեղաբաշխված էր Հարավային Ասորիքում:
[5] 216 թվականին տեղաբաշխված էր Երուսաղեմում:

Այսպես թե այնպես, սակայն, կյանքի կոչելով սեփական վիճահարույց ռազմավարչական ձեռնարկումները, Սեպտիմիանոս Կարակալլան, որին հանգիստ չէր տալիս Ալեքսանդր III Մեծի փառքը և որը ամեն կերպ, ինչպես արդեն ասվեց, ձգտում էր նմանվել վերջինիս, ի վերջո անդրադարձ կատարեց նաև Արևելքին՝ փորձ կատարելով օգտվել Պարթևական թագավորությունում տիրող խառը վիճակից: Որպես սկիզբ Սեպտիմիանոս Կարակալլան մտադիր էր տիրել Հայոց Միջագետքի թագավորությանը, որտեղ, հաջորդելով Աբգար VIII-ին, հենց նույն այս ժամանակ գահին բազմած էր վերջինիս որդի Աբգար IX-ը (212-216): Արդյունքում՝ սկիզբ առավ Հռոմեա-Պարթևական V պատերազմը (216-217):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

216 աշուն – ***<u>Կորդուքի ճ-մ</u>***[1]

> Սեպտիմիանոս Կարակալլա կայսրը, նպատակ ունենալով մեծ արշավանք սկսել Մեծ Հայքի և Պարթևական թագավորությունների դեմ, ժամանեց Հյուսիսային Ասորիք, ինչից հետո հասնելով Եդեսիա՝ գերեց իրեն ներկայացած Աբգար IX-ին՝ ոչնչացված հայտարարելով Հայոց Միջագետքի թագավորությունը և նրա տարածքը վերածելով Հռոմեական կայսրության պրովինցիայի: Դրանից հետո Սեպտիմիանոս Կարակալլայի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 140.000) արշավեց ***<u>Եդեսիա-Մծբին</u>*** երթուղով և պատրաստվեց ներխուժել Մեծ Հայքի թագավորության տարածք: Իր հերթին, հակառակորդի բանակի ներխուժումը սեփական երկիր կանխելու նպատակով բանակցությունների վարելու համար Խոսրով I Քաջը կնոջ հետ միասին ժամանեց Հռոմեական կայսրության ճամբար, որտեղ, սակայն, Հայոց արքան ու թագուհին գերվեցին: Տեղեկանալով այդ մասին՝ Տրդատ արքայազնի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 100.000) արշավանքի դուրս եկավ և սկսեց շարժվել թշնամու բանակի ուղղությամբ: Սրան ի պատասխան Թեոկրիտոսի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը ինքն էլ շարժվեց Հայկական բանակին ընդառաջ: Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին:
>
> I փուլ – Հայկական բանակը ծանր պարտության մատնեց Հռոմեական կայսրության բանակին:
>
> II փուլ – Հռոմեական կայսրության բանակը հարձակման անցավ և մարտի ընթացքում սկսեց կիրառել նույնիսկ սեփական գումակում գտնվող վայրի գազաններին, սակայն ի վերջո վերջնական պարտություն կրեց ու հետ քաշվեց դեպի ***<u>Եդեսիա</u>***:
>
> Հայերը կորցրին մոտ 15.000, թշնամին՝ մոտ 50.000 զինվոր:

Կյանքի կոչելով իր կողմից հղացած կասկածելի քայլերը, սակայն այդպես էլ որևէ լուրջ հաջողություն չարձանագրած՝ վերջին իրադարձություններից հետո Սեպտիմիանոս Կարակալլան այնուհանդերձ հրամայեց ամենուր հայտարարել սեփական հաջողությունների և նոր թագավորությունների նվաճման մասին, որից հետո սկսեց տենդագին պատրաստություն տեսնել արդեն Պարթևական թագավորությանը հարված հասցնելու ուղղությամբ: Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ այս գործում ևս Սեպտիմիանոս Կարակալլան հավատարիմ մնաց ինքն իրեն և ռազմական միջոցառումները ուղեկցեց նենգամիտ գործողություններով:

Իրոք, ձգտելով նմանակել պարսկուհի կնոջ հետ ամուսնացած Ալեքսանդր III Մեծին,

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 78, գլուխ 12, 18, 19, 21; Էլիոս Սպարտիանոս «Օգոստոսների կենսագրություններ», «Անտոնիոս Կարակալա», մաս 6:

Սեպտիմիանոս Կարակալլան ամենից առաջ սկսեց ամենահամառ կերպով իրեն որպես կին պահանջելով Արտավան V-ի աղջկան՝ դրանով իսկ անթաքույց նպատակ հետապնդելով իր համար Պարթևական թագավորության արքա հռչակվելու օրինական հիմք ստեղծել: Իր հերթին Արտավան V-ը, հիանալի կերպով գիտակցելով այս ամենը, սկզբում ոչ պակաս համառությամբ մերժեց տարօրինակ այս փեսայացուին, սակայն, այն բանից հետո, երբ 217 թվականի գարնան սկզբին Սեպտիմիանոս Կարակալլան գործի դրեց սեփական ռազմական մեքենան և, ելնելով Եդեսիայից, սկսեց առաջանալ դեպի արևելք, Արտավան V-ը, չդադարեցնելով հավաքել սեփական բանակային ուժերը, ի վերջո այնուհանդերձ տվեց իր համաձայնությունը:

Հետագան, սակայն, մեծ հաշվով սպասելի էր, քանզի հարսանեական արարողությունների իրականացման նպատակով Հռոմեական կայսրության բանակի ճամբար ներկայացած Արտավան V-ի ներկայացուցիչներն ուղղակի կոտորվեցին, հարսնացուն, ինչպես նաև վերջինիս հարուստ օժիտը խլվեց, իսկ Արտավան V-ն ինքն էլ նույն այդ թակարդից հրաշքով փրկվեց միայն վերջին պահին: Ավելին, դույզն իսկ չզղջալով արածի համար, դրանից անմիջապես հետո Սեպտիմիանոս Կարակալլայի հրամանով մինչև Արբելլա առաջխաղացած Հռոմեական կայսրության ռազմական մեքենան գրավեց նաև այս քաղաքը, որից հետո ավերեց Արշակունիների տոհմական դամբարանը, ցրիվ տվեց Արշակունի տիրակալների նշխարները և հետ քաշվեց դեպի Մծբին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

217 ապրիլի 9-11 – ***Մծբինի ճ-մ***[1]

Սեպտիմիանոս Կարակալլայի գլխավորությամբ ***Եդեսիա-Խառան-Մծբին-Արբելլա*** երթուղով արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 140.000) պատրաստվեց ներխուժել Պարթևական թագավորության տարածք: Տեղեկանալով այդ մասին՝ Արտավան V-ի գլխավորած Պարթևական (մոտ 80.000) և Տրդատ արքայազնի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 100.000) թագավորությունների միացյալ բանակը շարժվեց հակառակորդի ուղղությամբ, որը հետ քաշվեց մինչև ***Մծբին*** և այս քաղաքի մոտ ճամբար զարկեց: Ստացվեց այնպես, սակայն, որ ապրիլի 8-ին իր իսկ թիկնապահները սպանեցին Սեպտիմիանոս Կարակալլային, որից հետո, արդեն թշնամական բանակի անմիջական հարևանությամբ, կայսր հռչակեցին վերջինիս գրագիր և դավադրության իրական կազմակերպիչ Մարկոս Մակրինոսին (217-218): Հենց այս պայմաններում էլ արդեն ապրիլի 9-ին կողմերը մոտեցան միմյանց և մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Ապրիլի 9-ին Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ բանակը հարձակման անցավ, սակայն ողջ օրը տևած համառ մարտը ոչ մի կողմին առավելություն չտվեց:

II փուլ – Ապրիլի 10-ին հանդիպակաց մարտերը շարունակվեցին՝ այդպես էլ առավելություն չտալով հակառակորդներից որևէ մեկին:

III փուլ – Ապրիլի 11-ին Պարթևական և Մեծ Հայքի թագավորությունների միացյալ բանակը, գերազանցելով հակառակորդին հատկապես հեծելազորի թվով, անցավ հարձակման ու փորձեց թևանցել Հռոմեական կայսրության բանակի մարտակարգը, որին ի պատասխան, սակայն, վերջինս ձգեց մարտակարգը և այնուհանդերձ պահեց դիրքերը: Արդյունքում՝ բռնկված և ողջ օրը շարունակված համառ ու արյունահեղ մարտը կրկին առավելություն չտվեց կողմերից և ոչ մեկին,

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 79, գլուխ 3, 11, 26, 27; Հերոդիանոս «Պատմություն», գիրք 4, մաս 15; Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ», «Օպիլիոս Մակրինոս», մաս 8; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8, գլուխ 20; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 21; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 18; Մշիխա Զեխա «Ադիաբենեի եկեղեցու պատմությունը»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 74, 78:

որից հետո ծանր կորուստներ կրած հակառակորդ բանակները օրվա վերջում նահանջեցին ելման դիրքեր: Ստեղծված ծանր պայմաններում Մարկոս Մակրինոսը, հիանալի ըմբռնելով այն հանգամանքը, որ իր հերթին ոչ թեթև վիճակում գտնվող հակառակորդը համառորեն մարտնչում է, թերևս, միայն Սեպտիմիանոս Կարակալլայի նկատմամբ վրեժի զգացումից դրդված, ապրիլի 12-ին ազատ արձակեց Խոսրով I Քաջին և նրա կնոջը ու վերջիններիս միջոցով հակառակորդ բանակի ղեկավարությանը տեղեկացրեց, որ Սեպտիմիանոս Կարակալլան արդեն չորս օր է, որ սպանված է, ինչն էլ հաշվի առնելով, առաջարկեց հաշտություն կնքել: Այս առաջարկը ընդունվեց:

Հայերը կորցրին մոտ 25.000, դաշնակիցը՝ մոտ 25.000, թշնամին՝ մոտ 50.000 զինվոր:

Եվ այսպես կնքվեց հաշտություն և Հռոմեա-Պարթևական V պատերազմը ավարտվեց: Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության գահին կրկին հաստատվեց Խոսրով I Քաջը, իսկ Հայոց Միջագետքի թագավորության, ինչպես նաև նրանից հարավ ընկած տարածքները՝ Մծբինից մոտ 15 կմ արևմուտք-Կիրկեսիոն ուղիղ գծից արևմուտք, մնացին Հռոմեական կայսրության գերիշխանության տակ:

Գլուխ 94
Մանուկները հզոր կայսրության ղեկին

Հենց նոր կնքված հաշտությունից հետո տարածաշրջանում հերթական անգամ վերականգնվեց ուժերի հավասարակշռության արդեն, կարծես թե, սովորական դարձած վիճակը, սակայն Մարկոս Մակրինոսի դիրքերը սեփական կայսրության ներսում ամուր համարվել այնուհանդերձ որևէ կերպ չէին կարող: Արդյունքում՝ բանակի կողմից այդպես էլ չընդունված և արհամարհված այս տիրակալը, որը զինվորականների ընկալումներում շարունակում էր մնալ ոչ միայն խորթ, այլև «*Ալեքսանդրի նման մի հիանալի կայսեր սպանության կազմակերպիչ*», սեփական մի քանի իրոք ոչ ընդունելի քայլերով վերջնականապես իր դեմ տրամադրեց ռազմական համակարգի ներկայացուցիչներին, ինչի հետևանքով ի վերջո գահընկեց արվեց, փորձ կատարեց դիմել փախուստի, ձերբակալվեց ու փախուստի հերթական փորձի ժամանակ էլ հենց 218 թվականի հունիսի 8-ին սպանվեց:

Մարկոս Մակրինոսի սպանությունից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց Սեպտիմիանոս Կարակալլայի մորաքրոջ աղջկա որդի, տասնչորսամյա Հելիոգաբալոսը (218-222), որի տոհմը Հեմսի մայր տաճարում գլխավոր քրմի ժառանգական պաշտոնն էր վարում: Այս առումով հարկ է նշել, որ գեղեցիկ այս պատանին անմիջապես էլ դուր եկավ ռազմիկներին, իսկ առատորեն բաժանվող ոսկին էլ, որը մեջտեղ բերեցին նրա մայրն ու մորական կողմի տատը, վերջնականապես արեցին իրենց գործը: Արդյունքում՝ Հելիոգաբալոսը բոլորի մոտ միանգամից էլ մեծ հույսեր առաջացրեց, սակայն դրանք շատ արագ փոխվեցին հուսախաբության:

Իրոք, տեղափոխվելով Հռոմ, պատանի կայսրը իրեն կարծես նվեր հասած կայսերական բարձր իշխանությունը դրանից հետո սկսեց ընկալել որպես սովորական մի զվարճալիք, որն իրեն ուղղակի անսահմանափակ հնարավորություն է տալիս հաճույքներ վայելել: Արդյունքում՝ մի կողմ թողած պետական կառավարման հարցերը և նույնիսկ սկզբունքորեն էլ չպատկերացնելով, թե ինչ են իրենցից ներկայացնում դրանք, Հելիոգաբալոսը անմիջապես էլ սկսեց ընդգծել իր բացարձակ իշխանությունը, անտեսել սենատը և տրվել զվարճալիքներին, որոնց շարքում ոչ վերջին տեղն էր զբաղեցնում նաև արվամոլությունը: Ավելին, նոր կայսրը շատ շուտով սկսեց փոփոխության ենթարկել նաև հռոմեական ավանդական պանթեոնը, նախատեսելով այնտեղ գլխավոր աստված հռչակել փյունիկյան գլխավոր աստված Հելիոգաբալոսին, ընդ որում գործն ի վերջո

հասավ նրան, որ Հռոմեական կայսրության տարածքում սկսեցին նույնիսկ մարդկային զոհաբերություններ իրականացնել: Որպես հետևանք այս ամենի, բանն ի վերջո հասավ նաև նրան, որ Հելիոգաբալոսի արտառոց վարքագծից սկսեց զգուշանալ նույնիսկ վերջինիս կայսերական կառավարման համակարգի ամենավերին աստիճանին բարձրացրած նրա մորական կողմի տատը, որն էլ հենց որոշեց կայսեր մի նոր թեկնածու առաջ քաշել:

Արդյունքում՝ արդեն 222 թվականի սկզբին Հելիոգաբալոսին համոզեցին որդեգրել իր մորաքրոջ որդի Ալեքսանդրին, որը, չնայած ինքն էլ քրմի պաշտոն էր վարում Հեմսում, սակայն հունահռոմեական դասական կրթություն ստացած և այնուհանդերձ ավելի չափավոր վարքագծի տեր հերթական մի պատանի էր: Հելիոգաբալոսը որդեգրեց Ալեքսանդրին, սակայն, շատ շուտ ըմբռնելով, որ ինքը սեփական իսկ ձեռքով գահի օրինական հավակնորդ է ստեղծել, փորձ կատարեց սպանել ինչպես Ալեքսանդրին, այնպես էլ նրա մայր և իր մորաքույր Հուլիաննա Սոհեմոսին: Արդյունքում, սակայն, 222 թվականի մարտի 11-ին հենց իր իսկ թիկնապահները սպանեցին Հելիոգաբալոսին, որից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց տասնչորսամյա Ալեքսանդր Սևերոսը (222-235):

Սկիզբ էին առնում, սակայն արդեն, նոր ժամանակներ, որոնք իրենց հետ անդառնալի իրականություն էին բերելու:

Մաս VIII
Հռոմեա-պարսկական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

224 թվականի ապրիլի 27-ին Որմզդականի ճակատամարտում Արտաշիր I-ի (220-243) գլխավորած Պարսից թագավորության և նրա դաշնակիցների միացյալ բանակը գլխովին ջախջախեց Արտավան V-ի գլխավորած Պարթևական թագավորության բանակին, ընդ որում Սասանյանների տոհմի առաջնորդը, որը անհաշտ ու նույնիսկ տոհմական ատելություն էր տածում Արշակունիների նկատմամբ, ոչ միայն չբավարարվեց Արտավան V-ի մահով, այլև, ոտքերի տակ գցելով մարմնից կտրված վերջինիս գլուխը, անսպառ ատելությամբ սկսեց կոխկրտել այն[1]: Մերձավոր և Միջին Արևելքի համար բացվում էր նոր մի ժամանակաշրջան՝ Արշակունիների դարաշրջանն ավարտվում էր ու սկիզբ էր առնում Սասանյանների դարաշրջանը:

Սասանյանների տոհմը, իհարկե, դեռևս ոչ այդ անվամբ, հնուց ի վեր իշխում էր պարսիկների սիրտը համարվող Պարսք նահանգում, որը միաժամանակ հանդիսանում էր նաև պարսիկների առաջին տերության հիմնադիրների՝ Աքեմենյանների, տոհմի հայրենիքը: Միաժամանակ, Պարսքի հոգևոր իշխանություն համակարգում վարելով բարձր պաշտոններ, Սասանյանները տեղացի, ինչպես նաև այլ մարզերի պարսիկների շրջանում ավանդականորեն մեծ հեղինակություն էին վայելում և ընկալվում էին որպես Աքեմենյանների հանգած հուրը մոխրակույտերի միջից կրկին բորբոքելու ունակ հիմնական ուժը: Սասանյանների բուն տոհմանունն առաջացել էր Պարսքի Անահիտ աստվածուհու տաճարի քրմապետ Սասանի անունից, որն ամուսնացած էր Ստահրի արքունի տոհմի մի աղջկա հետ: Այս ամուսնությունից ծնվել էր Պապակ անունով մի որդի, որին արդեն հաջողվեց այնպես անել, որ իր կրտսեր որդի Արտաշիրը՝ Սասանյանների մեծ տերության ապագա հիմնադիրը, զինվորական բարձր մի պաշտոն ստանա Դարբակերտ քաղաքում[2]: Չբավարարվելով սրանով, սակայն, հայր ու որդի շուտով ապստամբության դրոշ բարձրացրին տեղական իշխանավորների դեմ և ավելի մեծացրին իրենց իշխանությունը: 208 թվականին Պապակը մահացավ և նրան հաջորդեց ավագ որդին՝ Շապուհը, սակայն կարճ ժամանակ անց սա ևս, եղբոր հետ գտնվելով լարված հարաբերությունների մեջ, բավականին կասկածելի հանգամանքներում մահացավ, որից հետո Սասանյանների տոհմի տոհմապետությունը, ինչպես նաև վերջինիս ռազմաքաղաքական բոլոր ձեռքբերումներն անցան մինչ այդ ռազմական մեծ ուժի և հեղինակության հասած փոքր եղբորը[3]: Հաջորդ տարիներին Արտաշիրն ավելի մեծացրեց իր իշխանությունը, ձեռքի տակ հավաքեց հարևան երկրամասերը և, օգտվելով 220-ական թվականների սկզբի Պարթևական թագավորության ծայրահեղ քայքայվածության հասած վիճակից, ապստամբեց արդեն կենտրոնական իշխանության դեմ: Իր հերթին պետք է ասել, սակայն, որ 220-ական թվականների սկզբի վիճակով «կենտրոնական իշխանություն» ասվածը Պարթևական թագավորության համար արդեն որոշակիորեն հարաբերական մի հասկացություն էր:

Իրոք, մինչև անկման վերջին պահն էլ իրար կոկորդ կրծելը չդադարեցրած պարթևական Արշակունի գահակալները այդ ժամանակ պետությունում ստեղծել էին մի դրություն, երբ մայրաքաղաքում և Միջագետքի մի շարք այլ վայրերում գահակալում էր սահմանափակ իշխանություն ունեցող Վաղարշ VI-ը, իսկ պետության այլ՝ գավառական, շրջանների վրա էլ իշխանության էր հասել վերջինիս ապստամբած եղբայր Արտավան V-ը: Միաժամանակ, սակայն, գավառներում ևս Արշակունիների իշխանությունը որևէ կերպ

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 70-71:
[2] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 70:
[3] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 70:

ամուր չէր, քանզի ամեն մի մարզում կամ քաղաքում տեղական իշխանությունն, ըստ էության, պատկանում էր տեղական տիրակալներից որևէ մեկին և սրանք միայն մեծ պայմանականությամբ էին ենթակա Արտավան V-ին: Այսպիսով, թեև Պարթևական թագավորության իրական արքան, ըստ էության, հենց Արտավան V-ն էր և երկու եղբայրներից համեմատաբար տաղանդավոր այս գահակալն էր հենց, որ ներկայացնում էր պետությունը արտաքին հարաբերություններում, բայց Միջագետքում թագավորող սեփական եղբոր պարագան իր հերթին այնուհանդերձ մեծապես ջլատում էր նրա ուժերը ու թուլացնում էր հզորությունը: Պարթևների այս երկփեղկվածությունը, սակայն, առժամանակ թվում էր, թե իր մեջ որևէ վտանգ չի պարունակում, քանի որ 220-ական թվականների սկզբի վիճակով արտաքին ռազմաքաղաքական կոնկրետ մարտահրավերներ երկիրը, կարծես, դեռևս չուներ:

Իրոք, երիտասարդ, սակայն մեծապես մանկամիտ կայսր Ալեքսանդր Սևերոսի օրոք Պարթևական թագավորության ավանդական հակառակորդ հանդիսացող Հռոմեական կայսրությունը նույն այս ժամանակ ապրում էր կայսերական դարաշրջանի ճգնաժամին նախորդող իր վերջին քիչ թե շատ հանդարտ տարիները, սակայն ապագա աղետի ահեղ ստվերն արդեն այս ժամանակ իսկ իրեն աստիճանաբար սկսում էր զգացնել տալ և արդյունքում աշխարհասասան այս տերությունը քննարկվող ժամանակաշրջանում ոչ մի կերպ չէր կարող սպառնալ պարթևներին: Միաժամանակ արդեն երկրորդ տասնամյակն էր ընթանում, երբ Հռոմեական կայսրության քաղաքացիությունը դադարել էր բացառապես միայն Հռոմ քաղաքի կամ գոնե Ապենինյան թերակղզու հետ անմիջականորեն կապված անձանց պատկանել և արդյունքում կայսրության ռազմավարչական համակարգում արդեն զգալի թիվ էին կազմում պրովինցիաների տեղական բնակչությունից ելած անձիք, ընդ որում այդ ամենն այն բանի ֆոնին, որ Ապենինյան թերակղզու դերը դանդաղ, բայց անշեղորեն մինչ այդ էլ անկում էր ապրում զուտ օբյեկտիվորեն: Որպես հետևանք այս ամենի՝ պրովինցիալ բնակչությունը, և հատկապես վերջինիս վերնախավը, մուտք ստանալով դեպի պետական համակարգի բարձր պաշտոններ, իր քանակով աստիճանաբար սկսում էր գերակշռել, իսկ այդ հանգամանքն էլ վաղ թե ուշ նաև որակ էր ապահովելու՝ իր հետ բերելով տնտեսական, ռազմական, քաղաքական, հոգեբանական ու նույնիսկ էթնոմշակութային խնդիրներ: Արդյունքում՝ կայսրության նախկին միակ բևեռ հանդիսացող Հռոմն և Ապենինյան թերակղզին աստիճանաբար զրկվում էին բևեռային գագաթ հանդիսացող իրենց ուժային կենտրոնի դերից և ի հայտ էին գալիս նոր ու պրովինցիաներում տեղավորված կենտրոններ: Նախորդ գործընթացի հետ համահավասար՝ բնականաբար աճում էր նաև քաղաքացիություն ստացած նոր մարդկանց խմբի քաղաքական ախորժակը, որի ներկայացուցիչներն արդեն իրենք էին ձգտում քաղաքական իշխանության տիրել, ընդ որում արդեն ոչ միայն սեփական պրովինցիայի, այլև՝ ողջ կայսրության մակարդակով: Վերևում նկարագրված գործընթացը լրացվում էր նաև արդեն սոցիալ-մշակութային և նույնիսկ էթնիկ բնույթ ունեցող այլ փոփոխություններով:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Հռոմեական հանրապետությունը, իսկ հետո արդեն՝ կայսրությունը, ի սկզբանե իրենից ներկայացնում էին հունական քաղաքակրթության մի ճյուղը հանդիսացող զուտ հռոմեական կամ, առավելագույնը, ապենինյան քաղաքակրթական մի երևույթ: Այժմ, սակայն, տարածվելով Եվրոպայի երեք թերակղզիներում, Ապենինյանից բացի ընդգրկելով նաև Պիրենյան և Բալկանյան թերակղզիներն ու դրան գումարելով նաև Արևմտյան Եվրոպան, Բրիտանիա կղզու հարավային հատվածը, Փոքր Ասիան և Հյուսիսային Աֆրիկան, նախկին մաքուր հռոմեական քաղաքակրթական արժեքներն աստիճանաբար կորսվում էին ու իրենց տեղը զիջում էին նոր և ավելի հիբրիդային քաղաքակրթական արժեքների, ինչն էլ ծնելու էր նոր մի երևույթ: Արդյունքում՝ ինչպես մի ժամանակ հունական հզոր քաղաքակրթության հիման վրա ստեղծվեց, ըստ էության, հելլենիստական հիբրիդային

քաղաքակրթությունը, այնպես էլ այժմ՝ հռոմեական քաղաքակրթական հիմքի վրա ստեղծվում էր, այսպես ասենք, ռոմանականացված նոր մի քաղաքակրթություն: Արդյունքում՝ հռոմեական քաղաքակրթության և հռոմեական քաղաքացու արժեհամակարգը կրող հասարակության բջջի փոխարեն այժմ արժեքային կրողների շարքում սկսում էին գերակշռել ռոմանականացված տարրերը՝ Պիրենյան թերակղզու, Գալլիայի, Բրիտանիայի, Բալկանյան թերակղզու, Փոքր Ասիայի և Հյուսիսայի Աֆրիկայի բոլոր այդ իբերները, գալլերը, բրիտները, գերմանացիները, իլիրիացիները, պանոնիացիները, թրակիացիները, հույները, բերբերները, ղոպտերը, հայերը և այլք: Որպես հետևանք վերևում նկարագրված գործընթացի՝ հենց մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում կայսրության կյանքում տեղի ունեցավ հսկայական չափերի հասնող մի ապակենտրոնացում, երբ տեղական տարրերը, ֆիզիկապես և սոցիալապես իրենց արդեն պատրաստ գտնելով գերիշխանության հասնելու ոչ միայն սեփական պրովինցիաներում, այլև՝ կայսրությունում ընդհանրապես, գործնականում միանգամից ոտքի ելան, իսկ նախկին հռոմեական արժեքների կրողներն էլ, թուլացած ու քանակապես նվազած, մղվեցին հետին պլան: Հենց այս գործընթացն էլ պայմանավորեց «Զինվորական կայսրերի դարաշրջան» կոչվող հեղափոխական այն ժամանակաշրջանի վրա հասնումը, որից կայսրությունը դուրս էր գալու արդեն լիովին այլափոխված:

Պարթևական թագավորության համար առժամանակ խաղաղ էր նաև երբեմնի ահեղ արևելյան սահմանը: Բանն այն էր, որ, կապված Հոնական տերության ստեղծմամբ, Միջին Ասիայի արիական ցեղերին ի մի բերած Քուշանական երբեմնի հզոր թագավորությունը այժմ սրընթաց կերպով դեպի անկում էր գնում, ինչն էլ անդորր էր հաստատել Պարթևական թագավորության արևելյան սահմաններին: Հյուսիսից Պարթևական թագավորությանը սահմանակից էին ազգակից Արշակունիների կողմից կառավարվող Մեծ Հայքի թագավորությանը, վերջինիս ազդեցության ոլորտում գտնվող Իբերիայի և Աղվանքի թագավորությունները, ինչպես նաև, այս կամ այն չափով՝ Ալանական ու Բասիլական թագավորությունները: Հայ Արշակունիներն և նրանց ենթակա վրաց, ինչպես նաև աղվանցի Արշակունիները Հռոմեական կայսրության սպառնալիքի պայմաններում գործում էին իրենց պարթև ազգակիցների հետ համաձայնության պայմաններում, աջակցում էին Արտավան V-ին ու այս կողմից ևս պարթևներն ավելի քան ապահով էին: Ավելին, ռազմունակ Խոսրով I Քաջի ջանքերով Մեծ Հայքի թագավորության գլխավորությամբ նույն այս ժամանակ հյուսիսում ստեղծվել էր Մեծ Հայքի, Իբերիայի, Աղվանքի, Ալանական և Բասիլական թագավորությունների յուրօրինակ մի համադաշնություն, որը, այս կամ այն կերպ գերիշխելով այդ թվում նաև Նախակովկասյան տափաստաններում, իրենից լուրջ մի ուժ էր ներկայացնում: Պարթևական թագավորության համար հեռանկարային առումով սրվում էր իրավիճակը, թերևս, միայն Մեծ տափաստանի կենտրոնական և արևմտյան հատվածներում, սակայն այդ հանգամանքը ևս առայժմ էական վտանգ չէր սպառնում, այնպես որ, սեփական քայքայվածության մեջ գտնվելով հանդերձ, պարթև Արշակունիները արտաքին մարտահրավերներից կարող էին իրենց առժամանակ անվտանգ զգալ: Պայթյունը, սակայն, ինչպես արդեն ասվեց, լիովին անսպասելի կերպով եկավ ներսից:

Արդեն մի քանի անգամ ուշադրություն հրավիրվեց այն օրինաչափության վրա, որ, Իրանական լեռնաշխարհում գործող պարսիկները կամ պարսկալեզու ժողովուրդները հազարամյակների ընթացքում գտնվում էին ռազմաքաղաքական հարաբերությունների օրինաչափությունների ուշագրավ մի ոլորտում, երբ երկրամասի արիական ժողովուրդներից յուրաքանչյուրը ինչքան ավելի հյուսիս էր տեղակայված և ինչքան մոտ էր Մեծ տափաստանին, այնքան ավելի էր վարում քոչվոր ապրելակերպ՝ դրա հետ միաժամանակ նաև, որպես կանոն, լինելով ավելի քիչ քաղաքակրթված, սակայն՝ ավելի մարտունակ: Արդեն տեսանք, որ իր ժամանակին սկյութները ռազմաքաղաքական մեծ հզորություն հաղորդեցին իրենցից դեպի ավելի հարավ տեղակայված, կիսանստակյաց և ավելի զարգացած մարերին, որոնք մի հզոր տերություն ստեղծեցին, սակայն ի վերջո

իրենց հերթին զիջեցին այն իրենցից դեպի ավելի հարավ տեղակայված, նստակյաց ու ավելի զարգացած պարսիկներին: Նույն կերպ նաև հետագայում եղավ՝ պարսիկների կողմից քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո հակասելևկյան ալիք բարձրացրած արիական ժողովուրդների մեջ պայքարի դրոշը կրկին պարզեցին ամենից առաջ հենց սակերի կողմից ուժեղացված պարթևները, որոնք էլ, սակայն, Որմզդականի բախտորոշ ճակատամարտում գերիշխանությունը իրենց հերթին կրկին անգամ զիջեցին նստակյաց և ավելի զարգացած պարսիկներին:

Եվ այսպես 223 թվականի վերջին, երբ պարթև Արշակունի եղբայրները քարացած էին իրենց մրցակցության մեջ, Պարսքում պայթեց երկար ժամանակ զսպվող դժգոհությունը, որից հետո ապստամբները անցան ակտիվ գործողությունների, իսկ անակնկալի եկած Արտավան V-ն էլ նահանջեց: Դրանից հետո այս թագավորությանը միացան նաև Ադիաբենեի և Քարակենեի թագավորությունները, որից հետո դաշնակիցները միացյալ ուժերով սեղմեցին այդպես էլ ուժերը հավաքել չհասցրած Արտավան V-ին: Արդյունքում՝ պարթև այս գահակալը, որը, ի տարբերություն իր նախորդներից շատ շատերի, կարողացել էր հաջողությամբ մրցակցել հռոմեացիների հետ, չդիմացավ արդեն սեփական երկրի ներսից եկած հարվածին և ընկավ, ինչպես արդեն ասվեց, Որմզդականի բախտորոշ ճակատամարտում: Իրանական լեռնաշխարհի վրա բացվում էր նոր՝ Սասանյանների, առավոտը:

Արտավան V-ի զոհվելու լուրը լայն արձագանք գտավ հարևան երկրներում, ընդ որում մինչ այդ գործնականում արդեն իսկ իր գոյությունը դադարեցրած պարթևական համադաշնությունը փաստորեն վերջնականապես վերացավ: Արշակունիների գահակարգում երկրորդ տեղն ունեին Մեծ Հայքի Արշակունիները, իսկ, մանավանդ այն հանգամանքը հաշվի առնելով, որ, ի տարբերություն անկայունությամբ համակված և դեպի քայքայում ընթացող Պարթևական թագավորության, Խոսրով I Քաջին հաջողվել էր ոչ միայն ամբողջական պահել սեփական երկրի սահմանները, այլև իր հովանու ներքո դաշնակից ուժերի նաև մի համադաշնություն ստեղծել, պարթև Արշակունիների ու նրանց կողմնակիցների բոլոր հուսավառ հայացքներն ուղղեցին դեպի Հայոց թագավորություն: Պետք է ասել, սակայն, որ, եթե շատերը հավատարիմ եղան պարթև Արշակունիներին և նահանջեցին Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ, ապա շատ շատերն էլ հրաժարվեցին հետևել արդեն բավականին վարկաբեկված գահատոհմի գործին ու իրենց հնազանդությունը հայտնեցին նորաստեղծ և եռանդով լի Սասանյաններին: Այսպես, պարթևական իշխող վերնախավը կազմող յոթ ազդեցիկ տոհմերից առնվազն երեքը՝ Ասպահապետի, Սուրենյանների և Միհրանյանների տոհմերը, հավատարմության լիակատար երդում տվեցին Սասանյաններին, ինչի արդյունքում Արշակունիների դատը շարունակեց պաշտպանել միայն Կարեն Պահլավի, այն էլ մասնատված տոհմը: Տատանողական դրության մեջ էին գործում նաև մնացած երեք տոհմերն, ի դեմս Վարազյանների, Սպանդիատյանների և Զիկերի: Արդյունքում՝ փաստորեն ստեղծվեց մի վիճակ, երբ սեփական նախկին հպատակներից պարթև Արշակունիների դատը պաշտպանելու ելավ նրանց հպատակ ազնվականության միայն համեմատականորեն ավելի փոքր մի մասը:

Այժմ կարելի է երկար խոսել պարթև բարձր և նույնիսկ Արշակունիների հետ հազար ու մեկ թելով կապված ազնվականության նման վերաբերմունքի մասին, սակայն կարևոր պատճառների թվում ամենից առաջ դեր խաղաց, թերևս, Արշակունիների տոհմի ներկայացուցիչների մշտական գահակալական պայքարը միմյանց դեմ, մի պայքար, որը մեծապես գցել էր այս տոհմի վարկը: Դատելով ըստ ամենայնի՝ ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ արիական այս գահատոհմը վերջին հաշվով տեղի տվեց առաջացող Հռոմեական կայսրությանը: Արդյունքում՝ փաստորեն արդեն 220-ական թվականների սկզբին Իրանական լեռնաշխարհում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ այդ տարածաշրջանի բնակիչները, ըստ էության, սկզբունքորեն դժգոհ էին իշխող գահատոհմից, փոփոխությունների էին ձգտում և հենց այդ հանգամանքն էլ

վերջին հաշվով բերեց Արշակունիների անկմանը ու Պարթևական թագավորության վերացմանը:

Գլուխ 2
Պարսից թագավորության բանակի ընդհանուր բնութագիրը առաջին Սասանյանների օրոք

Կանգնելով համաիրանական հավակնություններ ունեցող մի թագավորության գլուխ՝ կազմակերպչական, ռազմական և դիվանագիտական զգալի ունակություններով աչքի ընկնող Արտաշիր Ի-ը ամենից առաջ լուրջ ուշադրություն նվիրեց իր ռազմական մեքենան կարգավորելու հարցին: Նախկինում՝ պարթև Արշակունիների օրոք, Պարթևական թագավորության բանակի հիմնական հարվածային ուժը կազմում էր հեծելազորը, որի մեջ առաջնային տեղ ուներ հատկապես ծանր զրահավոր հեծելազորը՝ մարտադաշտում հանդիսանալով պարթևական ռազմական մեքենայի գլխավոր հաղթաթուղթը: Պարթևական հեծելազորի երկրորդ մասը ներկայացված էր մեծաքանակ թեթև հեծելազորով, որը սովորաբար հավաքվում էր Միջին Ասիայի սակա-քուշանական քոչվորների միջավայրից: Պարթևական բանակի երկրորդ մասը բաղկացած էր հետևազորից, որը հիմնականում երկու տեսակի էր: Առաջին խումբ պարթև հետևակայինները կազմվում էր Իրանական լեռնաշխարհի հիմնականում լեռնային շրջանների կիսավայրենի իրանալեզու ցեղերի կամ ժողովուրդների կողմից, որոնք, մի կողմից թեև մարտունակ էին, սակայն մյուս կողմից էլ կանոնավոր մարտ մղելու ի վիճակի չէին և անկարգապահ էին: Սրանց շարքում կարելի է հիշատակել ամենից առաջ դելմիկներին և կատիշներին, ինչպես նաև մի քանի այլ ցեղերի: Հետևազորի մյուս մասը կազմված էր գյուղացիության ներկայացուցիչներից, որոնք ընդհանրապես շատ ցածր մարտական որակներ ունեին և, չնայած իրենց բավականին մեծաթվությանը, ոչ մի կերպ վճռական նշանակություն ձեռք չէին բերում: Փաստորեն պարթևական հետևազորի ընդհանուր մարտական որակները, հատկապես հռոմեական երկաթյա լեգեոնների հետ ընդհարվելիս, լիովին անբավարար էին և արդյունքում մարտադաշտում պարթևական բանակի հիմնական ուժը այնուհանդերձ կազմում էր հեծելազորը: Միաժամանակ, սակայն, պետք է նշել նաև, որ պարթևական հեծելազորի գլխավոր մասը կազմող ծանր զրահավոր հեծելազորը, ինչքան էլ հզոր մարտերում, այնուհանդերձ չէր կարող արդյունավետ գործել առանց թեթև հեծելազորի մարտավարական աջակցության, սակայն այս պարագայում ևս խնդիրներ էին առաջանում, քանի որ թեթև հեծելազորի ներկայությունը մարտադաշտում, հաշվի առնելով քոչվորների մշտական անկայուն և փոփոխական բնույթը, ռազմաքաղաքական տարբեր իրավիճակներում պարթև գահակալների համար հաճախ դժվար էր լինում ապահովել: Իրոք, հատկապես վերջին տասնամյակներում, Պարթևական թագավորությունում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ մարտադաշտում գործում էին ամենից առաջ ծանր զրահավոր հեծյալները, ինչպես նաև մեծաքանակ, սակայն մարտական յուրօրինակ որակ ունեցող հետևակայինները: Ահա հենց այս վիճակն էլ փորձ կատարեց փոխել Արտաշիր Ի-ը:

Սասանյան առաջին այս գահակալը, ամուր կերպով գիտակցելով, որ թեթև հեծելազորի տեսանկյունից Մեծ տափաստանի քոչվորների վրա հույս դնելն իրեն արդեն մեծապես չի արդարացնում, իսկ այդ պարագայում էլ ծանր զրահավոր հեծելազորը մարտավարական առումով կորցնում է իր հիմնական որակները, ստեղծեց նախկինի համեմատ ավելի թեթև, բայց նաև մեծաքանակ մի հեծելազոր, որը գտնվում էր յուրօրինակ միջին մի մակարդակում՝ ի համեմատ պարթևական տիպի ծանր զրահավոր հեծյալների և քոչվոր-տափաստանային տիպի թեթև հեծելազորայինների: Այս առումով Արտաշիր Ի-ի օգտին խաղաց նաև այն հանգամանքը, որ ողջ տարածաշրջանում սկիզբ առած սոցիալ-տնտեսական հարաբերությունների ամբողջությունը հենց քննարկվող ժամանակաշրջանում աստիճանաբար հասարակական հարաբերությունների

յուրօրինակ մի տեսակ էր առաջացրել, որը հետագայում բերելու էր ֆեոդալիզմ կոչվող սոցիալ-տնտեսական կացութաձևին: Հիշատակված զարգացումների հաշվին արդյունքում ստացվեց այնպես, որ այն, ինչ չէին նկատել վերջին Արշակունիները, նկատեց Արտաշիր Ի-ը, որը, համահունչ ընթանալով իր ժամանակի պահանջներին, ստեղծեց միջին ու ավելի բազմաքանակ մի հեծելազոր, իսկ, քանի որ ամեն ինչ պետք է դիտարկել համեմատության մեջ, ապա պարթևական ծանր զրահավոր հեծելազորի վերանալուց հետո նոր այս հեծելազորը, թեև նախկինի համեմատ ավելի թեթև, սակայն իրենից, ըստ էության, ներկայացնում էր ծանր տիպի ու ավելի մեծաքանակ մի հեծելազոր: Եվ այսպես, պայմանավորված վերջին հարյուրամյակի զարգացումներով, Արտաշիր Ի-ի ձեռքի տակ էին հայտնվել մանր և միջին դասի ազնվականների բավականին հոծ զանգվածներ, որոնցից էլ կազմվեց մեր կողմից հիշատակված հեծելազորը, որը զիջում էր պարթևականին, սակայն որը նաև, ինչպես ասվեց, պարթևական ծանր զրահավոր հեծելազորի բացակայության պայմաններում, ինքն էլ, ըստ էության, հանդիսանում էր ծանր հեծելազոր: Ինչ վերաբերում է հետևազորին, ապա այստեղ փոփոխություններ համեմատականորեն քիչ եղան, թեև, ի տարբերություն նույն պարթևների, սեփական բարձր հոգևոր և քաղաքական հեղինակության հաշվին Արտաշիր Ի-ը ու նրա անմիջական հաջորդներից ոմանք կարող էին հույս ունենալ մինչ այդ պարթևներին որոշակի թեականությամբ ծառայելու պատրաստ պարսիկ գյուղացիության, ինչպես նաև պարսկալեզու լեռնային վայրենի ցեղերի ավելի ոգևորված մասնակցության վրա:

Եվ վերջապես կարևոր է նշել, որ Արտաշիր Ի-ը խմբագրեց և, որպես մեկ ամբողջություն, վերջնական տեսքի բերեց նաև զրադաշտական կրոնական համակարգը՝ ըստ էության ավարտին հասցնելով այն գործընթացը, որը սկսվել էր դեռևս Վաղարշ Ի-ի օրոք: Արդյունքում՝ սկսած հենց այս տիրակալի կառավարման ժամանակից էլ հելլենիզմն Իրանական լեռնաշխարհում, ըստ էության, իր վերջը գտավ և իր տեղը զիջեց դեռևս Աքեմենյանների տերությունում սկիզբ առած ու մի քանի հարյուրամյակ, կարծես թե, մոռացված զրադաշտականությանը[1]: Այս կապակցությամբ, թերևս, ավելորդ էլ է ասել, որ այդուհետ ընդգծված պետական աջակցություն ստացան հենց պարսկական լեզուն և մշակույթը՝ որոնք հասան զարգացման բարձր աստիճանի:

Գլուխ 3
Հանուն Արշակունյաց պատերազմի սկիզբը

Այսպես թե այնպես, սակայն Սասանյանները կենաց ու մահու պայքար էին հայտարարել Արշակունիներին և արդեն պարզ էր, որ հաջորդ հարվածը գալու է Պարթևական թագավորության հարևան Արշակունի տիրակալներին: Իր հերթին, առաջնորդվելով սկիզբ առնող վտանգը կանխելու մտայնությամբ, ինչպես նաև գուցե ինչ-որ տեղ հույս ունենալով վերականգնել իր ազգակիցների իշխանությունը Իրանական լեռնաշխարհում, Մեծ Հայքի թագավորության արքա Խոսրով Ի Քաջը պայքար սկսեց Սասանյանների դեմ: Սկիզբ էր առնում և դրանից հետո մոտ երեք տասնամյակ արիական աշխարհի ներսում շարունակվելու էր վճռական մի պատերազմ, որը խոշոր հետևանքներ էր ունենալու և որը, սակայն, մինչև այժմ լավ ուսումնասիրված չէ: Սկիզբ առավ Հանուն Արշակունյաց կամ Հայ-Պարսկական II պատերազմը (224-253):

225 թվականը ծախսելով ուժերը կենտրոնացնելու վրա՝ 226 թվականի գարնանը Խոսրով Ի Քաջի գլխավորած Մեծ Հայքի և Հայոց Միջագետքի թագավորությունների (մոտ 120.000), ինչպես նաև Իբերիայի, Ալանական, Բասիլական ու Աղվանքի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000, այդ թվում հոներ, խազարներ և լեզգիներ) ասպատակեց Ատրպատականը և Հյուսիսային Միջագետքը[2], որից հետո

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 72-74:
[2] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19:

արագացված երթով մոտեցավ Տիզբոնին: Հենց այս քաղաքի պարիսպների տակ էլ նույն թվականի ամռանը դաշնակից ուժերը ծանր պարտության մատնեցին Արտաշիր I-ի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 120.000), սակայն ի վերջո, չկարողանալով տիրել Արշակունիների նախկին մայրաքաղաքին, նահանջեցին[1]: Հայոց արքայի գլխավորած դաշնադրությունը վերստին հարվածեց Սասանյանների Ատրպատականին ու Միջագետքին 227,[2] 228[3] և 229[4] թվականներին, ընդ որում բոլոր դեպքերում էլ Խոսրով I Քաջի միացյալ բանակն այնուհանդերձ արդյունքում ստիպված էր լինում նահանջել: Իհարկե, այս հարձակումների արդյունքում Սասանյանների և Արտաշիր I-ի վիճակն էլ մեծ հաշվով թեթև չէր, բայց այնուհանդերձ վճռական հաջողության չէին կարողանում հասնել նաև Արշակունիների օգտին գործող ուժերը, որոնք, դրան գումարած նաև, 228 թվականին կորցրին Միջագետքում քիչ թե շատ իշխանություն ունեցող Վաղարշ VI-ին, որը գահընկեց արվեց և սպանվեց:

230 թվականի գարնանը, փորձելով կանխել Հայոց արքայի հերթական տարեկան հարվածը, Արտաշիր I-ի գլխավորած Պարսից, Սարհատի (մոտ 198-240) գլխավորած Ադիաբենեի և Դոմիցիանի (մոտ 220-240) գլխավորած Քարակենեի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 45.000) անակնկալ հարված հասցրեց Հյուսիսային Միջագետքի ուղղությամբ, որից հետո Հռոմեական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) գրավեց Բզաբդե ամրոցը (Հայոց Միջագետք, Ծավդեք գավառ, Տիգրիսի աջ ափին),[5] իսկ Մեծ Հայքի թագավորության բանակից էլ՝ Արզնը[6]: Մծբինը, սակայն, քաղաքը համառորեն պաշտպանած կայսերական բանակից թշնամին չկարողացավ գրավել[7]: Այսպիսով Սասանյանների հղացած հարվածը արևմտյան ուղղությամբ նրանց որևէ էական հաջողություն չտվեց և արդյունքում հենց նույն 230 թվականին Հայոց արքան հերթական հարվածը հասցրեց Ատրպատականին ու Միջագետքին,[8] իսկ 231 թվականին էլ ոչ միայն կրկնեց այն[9], այլև հասավ նրան, որ Արտաշիր I-ը իր բանակի մնացորդով նահանջեց մինչև Քուշանական թագավորության արևմտյան սահմաններ: Փաստորեն Հայկական Վեցերորդ գերիշխանության սահմանները հարավում հասան մինչև Կենտրոնական Միջագետք և Պարսքի հյուսիսային սահման: Ողջ վերոգրյալի կապակցությամբ իր հերթին հարկ է նշել, որ Սասանյանների վառած պատերազմը ոտնահարել էր նաև Հռոմեական կայսրության շահերը և այստեղ ևս չէին կարող աչքաթող անել նորեռանդ տիրակալին:

Գլուխ 4
Ալեքսանդր Սևերոսի Արևելյան արշավանքը

Արդյունքում՝ թեև արդեն 23 տարեկան դարձած, սակայն մանկական տարիքից այդպես էլ, ըստ էության, դուրս չեկած Ալեքսանդր Սևերոսը, բնականաբար, սակայն, իր

---

[1] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Զոնորաս «Պատմություն»:

[2] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[3] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[4] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[5] Մշիխա Զեխա «Ադիաբենեի եկեղեցու պատմությունը»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն»:

[6] Մշիխա Զեխա «Ադիաբենեի եկեղեցու պատմությունը»:

[7] Զոնորաս «Պատմություն»:

[8] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[9] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն»:

մոտիկների դրդումով, պատրաստվեց հարված հասցնել Պարսից թագավորությանը, ընդ որում այս ճանապարհին աչքաթող չարվեց նաև դաշնակցությունը Խոսրով I Քաջի հետ: Հակասասանյան ուժերը, պատրաստվելով ոչնչացնել Պարսքում հիմնավորված Արտաշիր I-ին, նախատեսել էին վերջինիս հարված հասցնել երկու հիմնական ուղղություններով: Առաջին ուղղությունը, որը ըստ Հռոմեական կայսրության ռազմական տեսաբանների կոչված էր լինելու գլխավորը, իր մեջ ներառում էր հարված Մծբինից դեպի հարավ-արևելք՝ Հռոմեական կայսրության հիմնական, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության հարակից օժանդակ ուժերով: Երկրորդ ուղղությունը, որտեղ գլխավոր դերը պատկանում էր արդեն Հայոց արքայի դաշնակից համադաշնության բանակին և որում արդեն Հռոմեական կայսրության ուժերն էին ավելի փոքրաթիվ ու օժանդակ, ընդգրկում էր Հայաստանից հասցված հարվածը Թավրիզին, որից հետո կողմերը պետք է իրար գային Պարսքի հյուսիսում: Թվում էր, թե ամեն ինչ լավ է մտածված, սակայն հիշատակված ծրագիրն այնուհանդերձ հաջողության չբերեց:

Անհաջողության պատճառներից գլխավորն, ըստ երևույթին, այն եղավ, որ Ալեքսանդր Սևերոսը, ականջ կախելով ապագա պատերազմի վտանգներից որդուն զերծ պահելու մղումներով տրվող սեփական մոր խորհուրդներին, դանդաղ գործեց: Այսպես, արդեն աշնան սկզբին Խոսրով I Քաջի գլխավորած ուժերը Վասպուրական-Թավրիզ-Գանձա երթուղով իջան Ատրպատական, սակայն տեղում պարզվեց, որ ավելի արևմուտքից դեպի Միջագետք առաջացող Հռոմեական կայսրության ռազմական մեքենան ուշանում էր: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակի (մոտ 30.000) անկանոն հարվածների, ինչպես նաև սկսված ձմեռային ցրտերի պայմաններում կրելով զգալի կորուստներ, Խոսրով I Քաջի գլխավորած ուժերը ի վերջո հետ քաշվեցին դեպի հյուսիս[1]: Նույն այս ժամանակ ավելի լավ չէին ընթանում, սակայն, նաև Ալեքսանդր Սևերոսի գործերը:

Իրոք, երիտասարդ այս կայսրը, փորձելով այնուհանդերձ առաջանալ Մծբինից դեպի հարավ-արևելք, թեև 232 թվականի նոյեմբերին Հատրայի ճ-մ-ում ծանր գնով, բայց այնուհանդերձ հաղթեց Պարսից թագավորության բանակներից գլխավորին (մոտ 70.000, ուղիղ 700 փիղ, 1.800 մարտակառք), սակայն, Պարսից թագավորության մեկ այլ բանակ շրջապատեց Եփրատ գետի հովտով հարավ շարժվող Հռոմեական կայսրության բանակի լրացուցիչ զորասյանը (մոտ 30.000) ու, թեև ծանր կորուստներով, սակայն լիովին ոչնչացրեց այն, իսկ այս ամենի արդյունքում էլ Ալեքսանդր Սևերոսի հիմնական ուժերը վերջին հաշվով ստիպված եղան նահանջել[2]: Փաստորեն հակասասանյան ուժերի գլխավոր այդ հարվածը, որին մասնակցեց նաև Հռոմեական հզոր կայսրությունը, ավարտվեց լիակատար անհաջողությամբ և Արտաշիր I-ը կարողացավ ոչ միայն պահել դիրքերը, այլև շարունակել սպառնալիք հանդիսանալ շրջակա երկրների համար: Ալեքսանդր Սևերոսին Հռոմ տարան կարևոր ներքաղաքական զարգացումները, սակայն կրած անհաջողություններից հետո, ցանկանալով գոնե որևէ կերպ ուժեղացնել Պարսից թագավորության դեմ պայքարող տեղական հռոմեամետ ուժերին, նա հաջորդ տարի պաշտոնապես ճանաչեց Հայոց Միջագետքի թագավորության արքա, Աբգար IX-ի որդի Արմանի տղա Աբգար X-ին (216-254):

Միաժամանակ փոփոխություններ եղան նաև Միջին Արևելքում: Իրոք, մինչ այդ առանց այդ էլ անկում ապրող Քուշանական թագավորությունը, ինչպես հարյուրամյակներ առաջ եղել էր Հունա-Բակտրիական թագավորության հետ, նույն այս ժամանակ Պարսից թագավորության կողմից հետ մղվեց դեպի արևելք և, ինչպես այն ժամանակ ստեղծված Հունա-Հնդկականական թագավորությունը, վերջնականապես փակվեց Հյուսիսային Հնդկաստանում, իսկ վերջինիս կողմից լքված տարածքներում էլ ստեղծվեց Պարսից

[1] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 6, մաս 4-6; Զոնորաս «Պատմություն»:
[2] Հերոդիանոս «Պատմություն», գիրք 6, մաս 5-6; Էլիոս Լամպրիդոս «Օգոստոսների կենսագրություններ, «Ալեքսանդր Սևերոս», մաս 50; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 22; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 24; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 18; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 8 գլուխ 23; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 61:

թագավորությանը ենթակա Քուշանշահերի թագավորությունը, որի առաջին արքա հռչակվեց Արտաշիր Ի-ի երկրորդ որդի Արտաշիրը (233-245):

Գլուխ 5
Հանուն Արշակունյաց պատերազմի շարունակությունը

Արդյունքում՝ Սասանյանների դեմ պայքարում փաստորեն կրկին առաջամարտիկի դեր ստանձնած Խոսրով Ի Քաջը, հավաքելով իր բանակը և կենտրոնացնելով սեփական համադաշնության ուժերը, 233 թվականին Վասպուրական-Թավրիզ-Գանձա-Կենտրոնական Ատրպատական երթուղով կրկին իջավ դեպի հարավ ու այս անգամ կարողացավ զգալի հաջողություն գրանցել՝ տիրելով Էկբատանին[1]: Այնուհետև, ձգտելով վերջնականապես ճզմել Սասանյան տիրակալին, Հայոց արքան 234[2], 235[3], 236[4] և 237[5] թվականներին ծանր հարվածներ հասցրեց արդեն Պարսքին ու Հարավային Միջագետքին, թեև արմատախիլ անել Սասանյաններին վերջին հաշվով այդպես էլ չկարողացավ: Իր հերթին, 238 թ-ին Արտաշիր Ի-ի գլխավորած Պարսից, Սարհատի գլխավորած Ադիաբենեի ու Դոմիցիանի գլխավորած Քարակենեի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000) Հռոմեական կայսրության բանակից (ընդհանուր՝ մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 500) գրավեց Մծբինը և Խառանը[6]: Դրանից հետո մարտական գործողություններում սկիզբ առավ դադար, քանի որ մի կողմից Խոսրով Ի Քաջը պետք է ուժերը կարգի բերեր, իսկ մյուս կողմից էլ դաշնակից Հռոմեական կայսրությունում էին սկիզբ առել վճռական իրադարձություններ:

Իրոք, այդպես էլ ավարտին չհասցնելով արևելյան գործերը, Ալեքսանդր Սևերոսը և իր մայրը պատերազմ էին սկսել գերմանացիների դեմ, սակայն, սանձազերծելով նույն այդ պատերազմը, երիտասարդ կայսրն ու նրա մայրը կրկին գործել էին խիստ անվճռականությամբ, ինչն էլ ի վերջո պայթեցրել էր բանակում նրանց դեմ վաղուց ի վեր առկա դժգոհությունը: Արդյունքում՝ Ալեքսանդր Սևերոսն և նրա մայրը 235 թվականի մարտի 19-ին ապստամբած լեգեոներների կողմից սպանվել էին, որից հետո ապստամբները կայսր էին հռչակել հասարակ ծագման տեր ու զինվորական շարքային պաշտոններից դեպի վեր հառնած Մաքսիմինոս Ի Թրակիացուն (235-238): Հռոմեական կայսրությունում սկիզբ էր առնում նրա ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկը՝ այսպես կոչված «Զինվորական կայսրերի» խառն և մեծ արյունով լի դարաշրջանը, որը վերջնականապես անցյալի գիրկն էր ուղարկելու ոչ միայն հռոմեական հզորությունն ու փառքը, այլև հռոմեական ողջ ապրելակերպն ընդհանրապես և կայսրության ռազմական մեքենան՝ մասնավորապես: Այս պայմաններում բարդանում էին նաև հայերի գործերը:

«Զինվորական կայսրերից» առաջինը հանդիսացող Մաքսիմինոս Ի Թրակիացին, ընդհանրապես, լինելով հսկայական մարմնի և մեծագույն ուժի տեր, բայց որոշակիորեն արդեն տարիքն առած հզոր մի ռազմիկ, սրա հետ միաժամանակ աչքի էր ընկնում նաև իր դաժանությամբ և կտրուկությամբ, ընդ որում վերջինս նաև շատ աղոտ պատկերացում ուներ պետական կառավարման նրբությունների մասին: Ավելին, նոր կայսրը, թերևս,

---

[1] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[2] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[3] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[4] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[5] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 8; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2:

[6] Զոնորաս «Պատմություն»:

միայն իրեն հայտնի պատճառներով, չէր սիրում հայերին, ընդ որում նրա այդ վերաբերմունքը հայերի նկատմամբ չփոխեց նաև 237 թվականի սեպտեմբերին Հռենոսի ճահճապատ անտառներում Հայկական օժանդակ զորաբանակի խիզախ մաքառումը[1], իսկ այս պայմաններում Հայոց արքան արդեն որևէ կերպ չէր կարող հույս դնել պաշտոնական Հռոմի աջակցության վրա:

Զինվորական առաջին կայսեր խստասիրտ դաժանությունն և նրա պաշտոնյաների հսկայական չափերի հասնող ապօրինություններն ի վերջո հանգեցրին նրան, որ 238 թվականի մայիսի 10-ին Մաքսիմինոս I Թրակիացին ու իր որդին զոհ գնացին լեգեոներների հղացած հերթական դավադրությանը, որից հետո գահը զբաղեցրին փոքրասիական ծագում ունեցող հայր և որդի Գորդիանոս I-ն (238) ու Գորդիանոս II-ը (238): Այն բանից հետո, սակայն, երբ նույն 238 թվականի մայիսի վերջին Մաքսիմինոս I Թրակիացու կողմնակիցներից մեկի դեմ անհաջող ելք ունեցած մարտի արդյունքում Գորդիանոս II-ն ընկավ կռվի դաշտում, իսկ Գորդիանոս I-ն էլ ինքնասպան եղավ, գահն անցավ արդեն սենատի թեկնածուներին՝ միաժամանակ իշխած Դեցիոս Բալբինին (238) ու Մարկոս Պուպիենին (238): 238 թվականի հուլիսի 29-ին, սակայն, զինվորական դասի ներկայացուցիչները սպանեցին նաև այս երկու տիրակալներին, որից հետո կայսր հռչակվեց Գորդիանոսների թոռ և որդի, տասներեքամյա Գորդիանոս III-ը (238-244): Քիչ թե շատ ամուր հաստատվելով Հռոմեական կայսրության գահին՝ երիտասարդ կայսրը կրկին առաջին պլան մղեց կայսրության սահմանների անվտանգության հարցը՝ ըստ էության շարունակելով Ալեքսանդր Սևերոսի որդեգրած և մի պահ մոռացված ռազմաքաղաքական գիծը: Արդյունքում՝ պարզ էր, որ Գորդիանոս III-ը վաղ թե ուշ պետք է դուրս գար նաև աստիճանաբար ուշքի գալ փորձող Սասանյանների դեմ, որոնց մոտ, սակայն, ևս փոփոխություններ էին եղել:

Իրոք, արդեն ծերացող Արտաշիր I-ը 239 թվականին տիրել էր Հյուսիսային Միջագետքի ամենահարավում գտնվող Հռոմեական կայսրության Դուր-Եվրոպոս սահմանային քաղաքին, իսկ 240 թվականին էլ՝ Հատրային: Հենց այս վերջին քաղաքի երկարատև պաշարման ժամանակ էր, ահա, որ արդեն հիվանդ Արտաշիր I-ը թագադրել էր իր որդի Շապուհին, ընդ որում նախատեսվում էր, որ հզոր այս ռազմիկը և զորականը, որը մասնակցել էր վերջին տարիներին հոր իրականացրած ռազմաքաղաքական բոլոր հիմնական ձեռնարկումներին, դրանցում աչքի էր ընկել գործնական խելքով, խիզախությամբ և անձնական մեծ քաջությամբ, Սասանյան առաջին արքայի մահից հետո պետք է հաջորդեր վերջինիս: Եվ ահա 243 թվականի ապրիլին, հիմնադրած Սասանյանների նոր պետությունը, բայց մեծապես հենց Հայոց արքա Խոսրով I Քաջի ջանքերով դիրքերն այդպես էլ ամրապնդել չկարողացած ու սեփական ջանքերի պտուղները լիարժեք վայելել այդպես էլ չհասցրած, Արտաշիր I-ը հեռացավ կյանքից, իսկ նրան էլ հաջորդեց մինչ այդ իր գահակից ավագ որդի Շապուհը՝ Շապուհ I-ը (243-273): Նույն այս ժամանակ իրենց հերթին արդեն ամենայն թափով ընթանում էին պաշտոնական Հռոմի նախապատրաստությունները դեպի արևելք իրականացվող հերթական արշավանքի ուղղությամբ և արդյունքում արտակարգ այս իրավիճակում գահը ստանձնած Շապուհ I-ը, ոչ մի պահ չկորցնելով, ձեռնամուխ եղավ հոր մահից անմիջապես հետո վտանգի տակ հայտնված սեփական պետությունը պաշտպանելու գործին:

[1] Հերոդիանոս «Հերոդիանա», գիրք 7, մաս 1, 2; Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ, երկու Մաքսիմինոսներ», գլուխ 11, 12; Տրեբելիոս Պոլիոն «Օգոստոսների կենսագրություններ, «Տիտոս», մաս 32; Էլիոս Լամպրիդոս «Օգոստոսների կենսագրություններ, «Ալեքսանդր Սևերոս», մաս 61; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 19; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 1; Զոնորաս «Պատմություն»; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»:

Գլուխ 6
Գորդիանոս III-ի բանակի թվաքանակը վերջինիս Արևելյան արշավանքում

Սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված Գորդիանոս III-ի բանակի թվաքանակը 243-244 թվականների Արևելյան արշավանքում: Դա պարզելու համար Հռոմեական կայսրության լեգեոնները նպատակահարմար է դիտարկել 2 խմբում.

ա) լեգեոններ, որոնք ուղղակիորեն հիշատակվում են Գորդիանոս III-ի բանակի կազմում.

1. **I Adiutrix**,
2. **I Parthica**,
3. **II Adiutrix**,
4. **III Italica**,
5. **III Parthica**,
6. **IV Flavia**,
7. **X Gemina**,
8. **XIV Gemina**,
9. **XV Apollinaris**:

բ) լեգեոններ, որոնք ուղղակիորեն չեն հիշատակվում, սակայն որոնք այդ ժամանակ գտնվում էին արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում և կարող էին հայտնվել Գորդիանոս III-ի բանակի կազմում.

1. **II Trajana**[1],
2. **III Augusta**[2],
3. **III Cyrenaica**[3],
4. **III Gallica**[4],
5. **IV Scythica**[5],
6. **VI Ferrata**[6],
7. **X Fretensis**[7],
8. **XII Fulminata**[8]:

Այսպիսով՝ հաստատապես հայտնի է, որ Գորդիանոս III-ի տրամադրության տակ կար 9 լեգեոն, որոնց կազմում, «Օգոստոսյան լեգեոն»-ի 7.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էր 63.000 լեգեոներ: Սրանից զատ արևելյան ու հարավ-արևելյան ուղղություններում 243 թվականին տեղաբաշխված էր ևս 8 լեգեոն՝ 56.000 լեգեոներ: Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն մարտական գործողություններ վարելու համար կարող էր լինել մոտ 100.000 լեգեոներ: Իր հերթին արևելյան պրովինցիաներից այս բանակին կարող էր միանալ ևս մոտ 50.000 դաշնակից ռազմիկ:

Գլուխ 7
Գորդիանոս III-ի Արևելյան արշավանքը

Եվ այսպես, 243 թվականի աշնանը երիտասարդ Գորդիանոս III-ը, ինչպես մի ժամանակ իր դժբախտ նախորդ Ալեքսանդր Սևերոսն էր արել, դրեց մարտական

---

[1] 243 թվականին տեղաբաշխված էր Եգիպտոսում:
[2] 243 թվականին տեղաբաշխված էր Արևմտյան Եգիպտոսում:
[3] 243 թվականին տեղաբաշխված էր Ասորիքի հարավ-արևելքում:
[4] 243 թվականին տեղաբաշխված էր Հարավային Ասորիքում:
[5] 243 թվականին տեղաբաշխված էր Զևգմայի գետանցում:
[6] 243 թվականին տեղաբաշխված էր Հարավային Ասորիքում:
[7] 243 թվականին տեղաբաշխված էր Երուսաղեմում:
[8] 243 թվականին տեղաբաշխված էր Մելիտեում:

գործողությունների սկիզբը Պարսից թագավորության դեմ: Մինչ այս, սակայն, Շապուհ Ի-ի արագընթաց ջոկատները, փորձելով կանխել թշնամու առաջխաղացումը կամ գոնե դժվարացնել այն, առաջացել էին Հյուսիսային Միջագետքի հյուսիս-արևմտյան սահմանների ուղղությամբ և երևացել էին նույնիսկ Անտիոքի շրջակայքում, սակայն այժմ Գորդիանոս III-ի գլխավորած Հռոմեական կայսրության (մոտ 150.000), ինչպես նաև Մեծ Հայքի (մոտ 30.000) և Հայոց Միջագետքի (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը, հետապնդելով Անտիոք-Խառան երթուղով արագորեն նահանջող Պարսից թագավորության բանակին (մոտ 100.000) ու առանց մարտերի մտնելով Խառան և Մծբին, Ռաշ-Այնի (Հյուսիսային Միջագետք, Խառանից մոտ 87 կմ արևելք) մոտ ի վերջո հասավ թշնամուն և հաղթեց նրան՝ դրանից հետո առանց մարտերի մտնելով սկզբում Ռաշ-Այն, իսկ հետագայում նաև՝ Դուր-Եվրոպոս[1]: Առաջիկա պատերազմում ձեռք էր բերվել լուրջ հաջողություն և դաշնակից ուժերը որոշեցին զարգացնել այն՝ առաջանալով Տիզբոնի ուղղությամբ: Փաստորեն, ինչպես մինչ այդ բազմիցս եղել էր պարթևների պարագայում, հերթական անգամ ահեղ սպառնալիք կախվեց Կենտրոնական Միջագետքի և Տիզբոնի վրա, ինչը ստիպեց Շապուհ Ի-ին ի մի բերել բոլոր առկա ուժերը և կենաց ու մահու մի մարտ տալ:

Վերսկսելով առաջխաղացումը դեպի հարավ-արևելք՝ 244 թվականի փետրվարին Գորդիանոս III-ի ռազմական մեքենան մոտեցավ Բեթ-Մաշկենե կոչվող վայրին (Միջագետք, Եփրատի ձախ ափին, ներկայիս Բաղդադից մոտ 64 արևմուտք, Էլ-Ֆարուջա քաղաքի մոտ), որտեղ էլ նույն թվականի փետրվարի 11-ին խոշոր մի ճակատամարտ տեղի ունեցավ: Այս վճռական ընդհարման մանրամասները, դժբախտաբար, մեզ չեն հասել, սակայն առկա պատառիկներից, թերևս, կարելի է վերականգնել մարտի որոշակի դրվագներ և, մասնավորապես, գալ հետևության, որ Սասանյանների գահակալը հակառակորդի դեմ է նետել իր ողջ հեծելազորը, որի վճռական հարվածն էլ հենց բերել է նրան, որ Գորդիանոս III-ը, ծանր վերք ստանալով ազդրին, տապալվել է նժույգից:

Բեթ-Մաշկենեի արյունոտ ճակատամարտը վերջացավ առանց կողմերից որևէ մեկի վճռական հաջողության[2], սակայն դաշնակից ուժերի առաջխաղացումը վերջին հաշվով կասեցվեց, ինչին քիչ չնպաստեց նաև այն հանգամանքը, որ կայսրը ծանր վիճակում էր: Առժամանակ բանակի հրամանատար հռչակվեց ծագումով Հռոմեական կայսրության Արաբիա պրովինցիայից սերող պրետորյանների պրեֆեկտ, կայսեր աներ Ֆիլիպը, որից հետո արդեն փետրվարի կեսերին դաշնակից ուժերը որոշեցին նահանջել: Հենց այդ ընթացքում էլ 244 թվականի փետրվարի 25-ին ծանր վերքից տառապող Գորդիանոսը III-ը Ֆիլիպի հրամանով սպանվեց, իսկ հանգուցյալից առանց այդ էլ դժգոհ մնացած բանակն էլ կայսր հռչակեց իրեն՝ Ֆիլիպ I Արաբին (244-249): Իր հերթին շուտով պարզվեց, սակայն, որ Արաբիա պրովինցիայից սերող և ամենից առաջ հենց վերջինս ներկայացնող նորահռչակ կայսրը կայսրության այլ մասերում իր իշխանության ամրապնդման հետ կապված մեծ խնդիրներ ունի և ոչ մի կերպ չի ուզում Արևելքում ռազմական գործողությունների հետագա շարունակումը, որոնք ձեռք չէին տալիս նաև ծանր կորուստներ կրած Շապուհ Ի-ին: Արդյունքում՝ կողմերը քաշվեցին ելման դիրքեր և որևէ փոփոխություն տեղի չունեցավ:

Այսպիսով՝ Հռոմեական կայսրության հերթական արշավանքը դեպի արևելք ավարտվեց առանց որևէ արդյունքի, բայց դրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ հենց այդ արշավանքից հետո Հռոմեական կայսրության գահին բազմած կայսր Ֆիլիպ I Արաբը հետագայում ոչ մի ցանկություն չդրսևորեց գործել Սասանյանների դեմ, մանավանդ որ կայսրության ներքին դրությունն էլ ոչ մի կերպ կայուն համարվել չէր

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 22; Զոնորաս «Պատմություն»:

[2] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 18, գիրք 3, գլուխ 32; Հուլիոս Կապիտոլիոս «Օգոստոսների կենսագրություններ, Երեք Գորդիանոսներ», մաս 26, 27; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 27; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 19; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 2; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 5; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 22; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Շապուհ Ի-ին վերագրվող Քաաբ ի-Զարադուշտի արձանագրությունից:

կարող: Ստեղծված պայմաններում, փաստորեն, Շապուհ I-ի դեմ պայքարի ողջ բեռը շարունակում էր մնալ Հայոց արդեն ծերացող արքա Խոսրով I Քաջի ուսերին: Այս առումով հարկ է նշել, որ Ֆիլիպ I Արաբը աջակցեց Հայոց արքային, թերևս, միայն նրանով, որ, հատուկ ցուցումով, կայսրության արևելքում տեղակայված լեգեոններին հրամայեց օգնել վերջինիս, թեև, դատելով ըստ ամենայնի, այդ աջակցությունն ամենևին էլ գործնական լայն տեսք չի ստացել:

Գլուխ 8
Հանուն Արշակունյաց պատերազմի հետագա ընթացքը և ավարտը

249 թվականի սեպտեմբերի վերջին Ֆիլիպ I Արաբը սպանվեց, ինչից հետո Հռոմեական կայսրությունը արդեն երկար ժամանակով սուզվեց գահակալական արյունոտ պայքարի հորձանուտում, իսկ «զինվորական կայսրերն» էլ սկսեցին «փայլել» իրենց ողջ ուժով: Նույն այս ժամանակ[1] Խոսրով I Քաջի գլխավորած Մեծ Հայքի ու Հայոց Միջագետքի թագավորությունների (մոտ 120.000), ինչպես նաև Իբերիայի, Ալանական, Բասիլական և Աղվանքի թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000, այդ թվում հոներ, խազարներ և լեզգիներ) հերթական անգամ իջավ Միջագետք ու Տիզբոնի ճ-մ-ում հաղթանակ տարավ Շապուհ I-ի գլխավորած Պարսից թագավորության բանակի (մոտ 130.000) նկատմամբ[2]: Դրանից հետո, փորձելով զարգացնել հաջողությունը արդեն 250 թվականին, Հայոց արքան մի նոր հարված հասցրեց Ատրպատականի և Էկբատանի ուղղությամբ՝ այս անգամ նպատակ ունենալով միավորվել Վասուդևա II-ի (մոտ 220 - ուղ. 250) գլխավորությամբ արևելքից ի վերջո առաջխաղացող և, կարծես թե, Արշակունիների դատի պաշտպանության գործին լծված Քուշանական թագավորության բանակի (մոտ 80.000) հետ: Արդյունքում, սակայն, ստացվեց այնպես, որ Շապուհ I-ի գլխավորած Պարսից թագավորության բանակն ինքն առաջինը հասավ Վասուդևա II-ի բանակին և անակնկալ հարձակումով գլխովին ջախջախեց վերջինիս, ընդ որում մարտում զոհվեց նաև քուշանների արքան: Ստեղծված պայմաններում, փաստորեն մնալով առանց հիմնական դաշնակից ուժերի, Հայոց արքան իր ուժերով հետ քաշվեց դեպի սեփական լեռներ[3], ընդ որում հատկանշական է, որ Շապուհ I-ը ևս, խուսափելով ընդհարումից, հեռացավ Պարսք: Փաստորեն, թեև երկու կողմերն էլ մարտնչում էին ուժերի ծայրահեղ լարման պայմաններում, բայց հաջողությունը առժամանակ մնաց հայերի կողմում և Հայկական Վեցերորդ գերիշխանության սահմանները արևելքում հասան մինչև Քուշանական թագավորության արևմտյան սահման:

251 թվականը Շապուհ I-ի համար ամենևին էլ հեշտ չէր: Ընթանում էր նոր արքայի ինքնուրույն գահակալության արդեն 8-րդ տարին, սակայն վերջինիս ոչ մի կերպ չէր հաջողվում իր իշխանությունը ամրապնդել, այն ամբողջովին տարածել Իրանական լեռնաշխարհի վրա և պոկվել իր համառ հակառակորդից՝ Հայոց արքա Խոսրով I Քաջից: Փաստորեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ արդեն պարզ էր, որ առաջիկա տարիներին զուտ ռազմական միջոցառումներով ոչ մի լուրջ արդյունքի հասնել հնարավոր չէ: Այս պայմաններում Շապուհ I-ը դիմեց քաղաքական սպանության հինավուրց և փորձված մեթոդին՝ որոշվեց Հայոց արքային սպանել:

Հայոց արքայի դեմ նյութված դավադրության հանգամանքները բավականին հայտնի են՝ Սուրենյան տոհմին պատկանող Անակը, իբր ապստամբած լինելով Շապուհ I-ի դեմ, 252 թվականի սկզբին իր ընտանիքով և տոհմով տեղափոխվեց Հայոց թագավորության տարածք և այստեղ Սասանյանների դեմ պայքարում դաշնակիցների աջակցության մեծ կարիք ունեցող Խոսրով I Քաջի կողմից լավ ընդունելության արժանացավ: Այնուհետև, արդեն 253 թվականի ապրիլին, օգտվելով հարմար առիթից, Անակը, եղբոր հետ միասին միայնակ մնալով Հայոց արքայի մոտ, սրի հատու հարվածով ծանր վերք հասցրեց վերջինիս: Դրանից հետո դեռևս կենդանի Խոսրով I Քաջի հրամանով սպանվեց ինչպես փախուստի դիմած Անակը, այնպես էլ կոտորվեցին նրա

---

[1] Այս ճակատամարտի ժամանակը պարզել մեզ օգնում է Մովսես Խորենացու (գիրք 2, գլուխ 72) այն հաղորդումը, որ այն տեղի է ունեցել կայսր Ֆիլիպ I Արաբի (244-249) դեմ բռնկված մեծ ապստամբության ժամանակ: Այս դեպքում ակնհայտորեն նկատի է ունեցվում Մեզիայում տեղաբաշխված լեգեոնների ապստամբությունը, որոնց դեմ 249 թ-ի սեպտեմբերին տրված Վերոնայի ճակատամարտում էլ Ֆիլիպ I Արաբը զոհվեց:

[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 71, 72; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 46, 50; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[3] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 19; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 72, 73; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 51; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 9; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; Զաքարիա Քանաքեռցի «Հայոց պատմություն» գիրք 1, գլուխ 2; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Զոնորաս «Պատմություն»; Փարսադան Գորգիջանիձե «Հայոց դարձի պատմությունը»; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

տոհմն և ընտանիքի անդամները, բացառությամբ մանկահասակ որդի Գրիգորի[1], սակայն այդ հանգամանքը որևէ կերպ չերկարացրեց Հայոց հզոր այս արքայի կյանքը, որը այս դեպքերից կարճ ժամանակ անց էլ հենց մահացավ:

Այսպիսով՝ Պարսից թագավորության դեմ գրեթե երեք տասնամյակ մղված Մեծ Հայքի թագավորության պայքարը, կարծես թե, գտնվելով հաջողության փուլում, իր անակնկալ ավարտը ունեցավ, քանզի Խոսրով I Քաջի սպանությունից հետո Հայկական Վեցերորդ գերիշխանությունը, ըստ էության, վերջացավ, ավարտվեց նաև Հանուն Արշակունյաց կամ Հայ-Պարսկական II պատերազմը և Մեծ Հայքի թագավորությունից անջատվեցին գերիշխանություն ընդունած բոլոր երկրները: Մեծ Հայքի թագավորության կազմում մնացին Հայաստանի 14 նահանգ և Մինչեփրատյան Ծոփքը, իսկ Տրդատ արքայազնի մանկահասակության պայմաններում էլ թագավորության խնամակալ-արքա հռչակվեց Խոսրով I Քաջի եղբայր Խոսրովը՝ Խոսրով II-ը (253, 293-298՝ մի մասում): Երկիրը կանգնեց բարդ մարտահրավերների առջև:

Գլուխ 9
Մեծ Հայքի թագավորության թուլացումը և Սասանյան հաղթահանդեսի սկիզբը

Խնդիրը կայանում էր նրանում, որ Խոսրով I Քաջի ստեղծած տերությունն իրենից ներկայացնում էր ներքնապես թույլ և ընդամենը միայն պատերազմական կոնկրետ հետաքրքրությունների վրա հիմնված ռազմական մի համադաշնություն, որտեղ ամեն ինչ, ըստ էության, հիմնված էր անձնական կապերի վրա: Տերության սիրտը կազմում էր Մեծ Հայքի թագավորությունը, սակայն այլք հայերի հետ ընդհանուր ռազմաքաղաքական հարթության մեջ գործելու տվյալ պահին քիչ հիմքեր ունեին և արդյունքում հայերը, ինչպես արդեն ասվեց, մնացին միայնակ: Խոսրով I Քաջի սպանությունը վերջ դրեց Հայկական Վեցերորդ գերիշխանությանը, բայց այն քայքայեց մինչ այդ Մեծ Հայքի թագավորության գլխավորությամբ գործող նաև տեղական համադաշնությանը, որի սիրտն ու ոգին Հայոց հենց այս քաջարի տիրակալն էր: Իր հերթին նոր արքա Խոսրով II-ը, տարված գահակալական միանձնյա իշխանության հասնելու ցնորքներով, ոչ մի կերպ չկարողացավ արժանի լինել եղբորը, մանավանդ որ հենց այդ ժամանակ Շապուհ I-ը անցավ ակտիվ գործողությունների:

253 թվականի ամռանը Պարսից թագավորության բանակը (մոտ 130.000) մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք: Ստեղծված պայմաններում, փոխանակ միասնական դիմադրություն կազմակերպելու, Խոսրով II-ը ոչնչացրեց եղբոր՝ Խոսրով I Քաջի, ընտանիքի բոլոր անդամներին և, որպեսզի ամրապնդի իր դիրքերը տեղում, ընդունեց Պարսից թագավորության գերիշխանությունը: Խոսրով I Քաջի ընտանիքից փրկվեց միայն մանկահասակ արքայազն Տրդատը, որին նրա դայակ Արտավազդ Մանդակունին կարողացավ անցկացնել Հռոմ:

Տիրելով Մեծ Հայքի թագավորությանը՝ Շապուհ I-ը իր, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության միացյալ ռազմական մեքենան շարժեց Իբերիայի թագավորության դեմ: Ստեղծված պայմաններում Իբերիայի թագավորության արքա և տեղական Արշակունյաց գահատոհմի վերջին ներկայացուցիչ, Ռևի որդի Վաչե Արդարադատի (216-234) տղա Բակուր I-ի (մոտ 234-249) որդի Միհրդատ IV-ի (249-250) տղա Վարազ-Բակուր I-ը (250-253) հետագա դիմադրությունը կազմակերպելու և օժանդակ ուժեր ստանալու մտայնությամբ ետ քաշվեց դեպի Կովկասյան լեռներ, սակայն շուտով կնքեց իր մահկանացուն: Դրանից

[1] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 24-34; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 74, 78; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 53-55; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Անանուն Եթովպացի «Պատմություն»; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 9; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 8; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

հետո միայնակ մնացած և, ըստ էության, ամեն մի աջակցությունից զրկված վրաց իշխանները սեփական սպարապետ Մաժանի գլխավորությամբ խորհրդակցության հավաքվեցին ու որոշեցին արյաց արքային հաշտություն առաջարկել՝ ամուսնացնելով Վարազ-Բակուր Ի-ի միակ աղջկան արյաց արքայի ազգականներից մեկի հետ և պայման դնելով, որ դրանից հետո տեղական գործերում ոչ մի էական փոփոխություն չպետք է տեղի ունենա: Շապուհ Ի-ը ընդունեց արված առաջարկը և արդյունքում Իբերիայի թագավորության արքա հռչակվեց Շապուհ Ի-ի փոքրահասակ եղբայր Միհրանը՝ Միհրան III Մեծը (253-335): Իրավիճակն իր զարգացումն ունեցավ, սակայն, նաև Մեծ Հայքի թագավորության տարածքում:

Իրոք, նույն 253 թ-ին, գահին բռնատիրելու պատճառով իր դեմ ողջ թագավորությունում առկա դժգոհության արդյունքում գահընկեց արվեց արդեն նաև, ըստ էության, Շապուհ Ի-ի խամաճիկի վերածված Խոսրով II-ը, որից հետո թագավորության խնամակալ-արքա հռչակվեց երկիր վերադարձած Արտավազդ Մանդակունին՝ Արտավազդ VI-ը (253-261)[1]: Հայոց նոր արքան, սակայն, ելնելով ուժերի իրական հարաբերակցության ստեղծված վիճակից, որևէ կերպ չսրեց հարաբերությունները Պարսից թագավորության հետ՝ արդյունքում, ըստ էության, հայտնվելով Շապուհ Ի-ի յուրօրինակ ենթակայի դերում: Միաժամանակ, ցանկանալով վերջնականապես ամրապնդվել նաև իր թագավորության արևելյան սահմաններում, արդեն Շապուհ Ի-ը գահընկեց արեց Արտաշիրին հաջորդած նրա որդի Պերոզ Ի-ին (245-253) և Քուշանշահերի թագավորության արքա հռչակեց սեփական ավագ որդի Որմիզդին՝ Որմիզդ Ի-ին (253-261): Արդյունքում՝ իր ցանկացած լավագույն ձևով կարգավորելով գործերը Մեծ Հայքի թագավորությունում և նրա հարակից երկրներում, ինչպես նաև կարգի գցելով գործերը սեփական թագավորության արևելյան սահմաններին՝ Շապուհ Ի-ը ի վերջո ձեռնամուխ եղավ Հռոմեական կայսրությանը երկար սպասված պատասխան հարված հասցնելուն:

Որպես հետևանք՝ 254 թվականի ամռանը, օգտվելով «զինվորական կայսրերի» առաջացրած լիակատար խառնաշփոթի հետևանքով Հռոմեական կայսրությունում իշխանության կաթվածահար վիճակից, Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000) Աբգար X-ի գլխավորած Հռոմեական կայսրության (մոտ 1.000) և Հայոց Միջագետքի թագավորության (մոտ 2.000) միացյալ բանակից գրավեց Մծբինը, ընդ որում Աբգար X-ը զոհվեց, Հայոց Միջագետքի թագավորությունը ոչնչացավ, իսկ Մծբինը, ինչպես նաև Ծավդեք ու Արվաստան գավառները անցան Պարսից թագավորությանը[2]: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը և ելնելով պաշտոնական Հռոմի արևելյան արդեն դաշտային բանակի դեմ, Մծբինից առաջխաղացած Պարսից թագավորության բանակը Բարբալիսոս բերդի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում հաղթեց Հռոմեական կայսրության բանակին (մոտ 60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10.000)[3]: Դրանից հետո թշնամին պաշարեց Եդեսիան, սակայն, թեև չկարողացավ գրավել այն[4], սակայն, վերջ, փաստորեն Հայոց Միջագետքում վերջնականապես դուրս գալով Եփրատի ձախ ափ, Շապուհ Ի-ը կարողացավ վերացնել երկար տասնամյակներ Արշակունիների և Սասանյանների պետությունների գլխին կախված հյուսիսմիջագետքյան սեպը՝ իր ու հռոմեացիների տերության միջև սահման հաստատելով Եփրատ գետը և ապագայում պատրաստվելով նոր նվաճումների: Այս կապակցությամբ պետք է ասել, սակայն, որ Սասանյանների հաջողությունների հիմքում ընկած Հռոմեական կայսրության կաթվածահար պետական համակարգի առկայությունը ոտքի էր հանել տարածաշրջանային նաև այլ ուժերի, որոնք փորձում էին Հռոմեական

[1] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», մաս 35-37; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 76; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 54, 55; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 1, գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Զոնորաս «Պատմություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5:

[2] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 39:

[3] Շապուհ Ի-ին վերագրվող Քաաբ ի-Զարադուշտի արձանագրությունից:

[4] Զոնորաս «Պատմություն»:

կայսրությունում շարունակվող խառնաշփոթից օգտվել արդեն իրենց ձևով և իրենց պատկերացրած տեսակով:

Խոսքը ամենից առաջ հենց այս ժամանակ Սև ծովի հյուսիսային ափերին հաստատված ու ծագումով գերմանացիներ հանդիսացող օսթգոթերի կողմից ստեղծված հզոր թագավորության մասին է, որը, ծովային կոմունիկացիաների կիրառմամբ գործելով պատերազմական գործողությունների լայն թատերաբեմում, մշտական հարվածի տակ էր պահում Հռոմեական կայսրության սահմանները՝ սկսած Դանուբից ու Փոքր Ասիայից և վերջացրած Սև ծովի արևելյան ափերով: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան, որն առանց այդ էլ չէր կարողանում արդյունավետ պայքարել պարսկական վտանգի դեմ, հենց քննարկվող ժամանակաշրջանում ստացավ մի նոր և ոչ պակաս վտանգավոր ախոյանի, ի դեմս Օսթգոթական թագավորության[1]: Այս կապակցությամբ, ի դեպ ասած, հետաքրքիր է հաղորդումը Հռոմեական կայսրության բանակում ծառայող Սուքեսյան Հայի մասին, որը 255 թվականի ամռանը Պիցունդայի ճ-մ-ում (Սև ծովի հյուսիս-արևելյան ափին), գլխավորելով Հռոմեական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 1.000), հաղթեց ու հետ շպրտեց Ղրիմից ծովով արշաված Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 15.000)[2]:

250-ական թվականների երկրորդ կեսին օսթգոթերի և նրանց դաշնակից ցեղերի հարձակումներն ավելի ուժեղացան ու ստացան առավել համակարգված բնույթ: 256 թվականի աշնանը Ղրիմից ծովով արշաված Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Փոքր Ասիայի, ինչպես նաև Փոքր Հայքի ծովափնյա գավառները[3] և նահանջեց[4], իսկ արդեն 257 թվականի ամռանն էլ գրանցեց իր ամենամեծ հաջողություններից մեկը[5]՝ տիրելով Տրապիզոնին[6]: Հենց այս ժամանակ էր, ի դեպ ասած, որ քաղաքի բնակիչների մի մեծ քանակություն գերի տարվեց և այս գերյալների մեջ եղած քրիստոնյաներից էլ օսթգոթերը հետագայում աստիճանաբար ընդունեցին քրիստոնեությունը:

Գլուխ 10
Վալերիանոս Ի-ի Արևելյան արշավանքը

Իրար հաջորդած զինվորական կայսրերի շարանից հետո 253 թվականի հոկտեմբերի 22-ին ի վերջո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց Վալերիանոս Ի-ը (253-260)՝ Հռոմեական կայսրության դասական տիպի մի սենատոր, որը, սակայն, իր իշխանության սկզբնական տարիներին հռենոսյան ու դանուբյան սահմաններում խեղդված մնաց գոթերի և այլ գերմանական ցեղերի հարուցած հոգսերի մեջ: Արդյունքում, կայսրության վիճակը կարողանալով հարաբերականորեն կայունացնել միայն 250-ական թվականների ամենավերջին, այս տիրակալը այդ ժամանակ էլ հենց պատրաստվեց վճռական հարձակման անցնել Շապուհ Ի-ի ուղղությամբ, որին, ի դեպ ասած, նույն այդ ժամանակ որոշակիորեն դաշնակցում էին նաև Արտավազդ VI-ի գլխավորած Մեծ Հայքի, ինչպես նաև, բնականաբար, Իբերիայի թագավորությունները:

---

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 96:

[2] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 32:

[3] Հռոմեական կայսրության պատմիչ Զոսիմայի մոտ հիշատակված այս իրադարձությունները սովետահայ պատմագիտությունը ընդհանրապես ուշադրության չի արժանացրել:

[4] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 32, 33; Զոնորաս «Պատմություն»:

[5] Զոսիմայի մոտ հիշատակված այս իրադարձությունները ևս լիովին անտեսված են մնացել սովետահայ պատմագիտության կողմից, հավանաբար մեծապես այն պատճառով, որ համաշխարհային և հայկական պատմագիտության մեջ Փոքր Հայքի ծովափնյա գավառները համառորեն համարվում են հունական տարածք ու կոչվում են «Պոնտոս», այն դեպքում, երբ վերջինս ընդամենը արհեստականորեն ստեղծված մի անվանում է, որը կապվում է այդ տարածքներին կարճատև տիրած և վաղուց իր գոյությունը դադարեցրած Պոնտոսի թագավորության հետ: Այս մոտեցումը ոչ պատմական և ոչ էլ էթնիկ տեսանկյունից ճիշտ չէ ու մեծապես պայմանավորված է վերևում արդեն հիշատակված համաշխարհային պատմագիտության չարաբաստիկ «եվրոպակենտրոնությամբ», երբ եվրոպական պատմիչների և պատմաբանների հաճախ ազգայնամոլական դիրքերից գրված աշխատությունները ընդունվում են որպես բացարձակ ճշմարտություն ու դրանց հիման վրա մեծապես թերագնահատվում են այլ ազգերը:

[6] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 33; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 8:

260 թվականի գարնանը Վալերիանոս Ի-ը խոշոր ուժերով ժամանեց Ասորիք, որից հետո Շապուհ Ի-ի արագաշարժ ջոկատները, որոնք մինչ այդ անընդհատ ոտնատակ էին տալիս Հյուսիսային Ասորիքը, հետ մղվեցին Եփրատի ձախ ափ: Դրանից հետո, ի մի բերելով բոլոր ուժերը, Վալերիանոս Ի-ի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (70.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (6.000) նույն տարվա սեպտեմբերին Զևգմայի գետանցով անցան Եփրատը և սկսեցին շարժվել դեպի արևելք: Իր հերթին Պարսից (մոտ 100.000) և Մեծ Հայքի (մոտ 60.000) թագավորությունների միացյալ բանակը, որն առժամանակ, կարծես թե, չէր երևում, կրկնօրինակելով Մարկոս Կրասոսին ջախջախած Սուրենի բանակի լավագույն մարտավարությունը, այս դեպքերից կարճ ժամանակ անց հակառակորդի համար լիովին անակնկալ կերպով հեծելազորի հսկայական ու շարժունակ ուժերով սրընթաց առաջխաղացում իրականացրեց և Եդեսիայի մոտ շրջապատեց կայսերական բանակին: Արդյունքում՝ հակառակորդի մասնակի, սակայն բազմաթիվ գրոհներից, հզոր նետահարությունից, ինչպես նաև պարենի ու ջրի պակասից և բռնկված հիվանդություններից Հռոմեական կայսրության բանակը սկսեց ծանր կորուստներ կրել, որից հետո, ստեղծված պայմաններում չգտնելով այլ ելք, ի վերջո իր ողջ կազմով անձնատուր եղավ[1]: Վալերիանոս Ի-ը գերվեց, ինչը բացառիկ մի բան էր Հռոմեական կայսրության ողջ պատմության ընթացքում, փոխադրվեց Պարսից թագավորություն և այստեղ, բազում ստորացումներից հետո, հետագայում սպանվեց: Դժբախտ այդ միապետի գլխին եկած անձնական ողբերգությունը, սակայն, թերևս, խամրում էր այն բանի հանդեպ, ինչը նույն այս ժամանակ պայթեց Հռոմեական կայսրության ողջ Արևելքի գլխին:

Գլուխ 11
Շապուհ Ի-ի Արևմտյան թռիչքը

Իրոք, գերված կայսրն իր հետ Եփրատն անցկացրել և արդյունքում փաստորեն կործանել էր կայսրության ոչ միայն արևելյան, այլև, ըստ էության, նաև լավագույն ուժերը, իսկ այդ պարագայում Ասորիքն ու Փոքր Ասիան մնում էին լիովին անպաշտպան, ընդ որում կայսեր գերման հետ միաժամանակ գործնականում առանց դիմադրության կորսվել էին նաև Եդեսիան ու Խառանը: Իր հերթին Շապուհ Ի-ը, ի վերջո ցանկանալով կյանքի կոչել Սասանյանների կողմից երկար տարիներ փայփայած երազանքը՝ դուրս մղել պաշտոնական Հռոմին Արևելքից, տիրել Ասորիքին ու Փոքր Ասիային և վերականգնել Աքեմենյանների տերության երբեմնի սահմանները Արևմուտքում, չհապաղեց անմիջապես էլ խոշոր ուժերով Եփրատի աջ ափ անցնել: Միաժամանակ, սեփական դիրքերի աննախադեպ ամրացման պայմաններում իրեն զգալով բավականին ազատ նաև հարակից այլ երկրների պարագայում, նույն 261 թվականի ամենասկզբին Սասանյանների հզոր տիրակալը Մեծ Հայքի թագավորության գահից հեռացրեց Արտավազդ VI-ին, որը, չունենալով այլ ելք, կրկին ապաստանեց Հռոմեական կայսրության սահմաններում, որից հետո Մեծ Հայքի թագավորության արքա հռչակեց իր ավագ որդի և Քուշանշահերի թագավորության նախկին արքա Որմիզդ Ի-ին՝ Որմիզդին (261-273): Փաստորեն, ինչպես Իբերիայի թագավորության և Միհրան III Մեծի պարագայում եղավ, այս անգամ արդեն, ի դեմս Որմիզդի, Սասանյանների տերության ռազմաքաղաքական հետաքրքրությունների ոլորտում սկսեց ուղղակիորեն գործել նաև

[1] Տրեբելիոս Պոլիոն «Օգոստոսների կենսագրություններ, Երկու Վալերիանոսներ», մաս 3; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 32; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսերի կյանքից և բարքերից», գլուխ 32; Պետրոս Պատրիկոս «Պատմություն», հատված 8; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 36, գիրք 3, գլուխ 32; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 22; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 7; Լակտացիոս «Հալածողների մահվան մասին», գլուխ 5, մաս 2; Զոնորաս «Պատմություն»; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 9; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 6, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 62; [1] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8; Շապուհ Ի-ին վերագրվող Քաաբ ի-Զարադուշտի արձանագրությունից:

Մեծ Հայքի թագավորությունը, իսկ այս հանգամանքը Շապուհ Ի-ի հարվածային ուժն ավելի մեծացրեց: Ինչ վերաբերում է Քուշանշահերի թագավորությանը, ապա այստեղ արքա նշանակվեց Շապուհ Ի-ի մյուս որդի Ներսեսը (261-276):

Արդյունքում՝ 261 թվականի գարնանը Պարսից (մոտ 100.000) և Մեծ Հայքի (մոտ 60.000) թագավորությունների միացյալ բանակը անցավ Եփրատը ու Հռոմեական կայսրության բանակից (մոտ 6.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից[1] (մոտ 1.000) հանկարծակի հարձակումով գրավեց Անտիոքը[2], ընդ որում քաղաքի անկումն այն աստիճան անակնկալ եղավ, որ, երբ հակառակորդի ուժերն արդեն քաղաքում էին, այստեղ քաղաքացիները դեռևս ոչնչից տեղյակ չէին ու թատրոն էին վայելում: Դրանից հետո դաշնակից ուժերը, ինչպես մ.թ.ա. 41 թվականին, բաժանվեցին երկու մասին, որոնցից առաջինը, դաժանորեն ասպատակելով Ասորիքն և Պաղեստինը, հսկայական ավար ձեռք բերեց[3]: Ոչ պակաս հաջող գործեց, սակայն, նաև դաշնակից ուժերի երկրորդ մասը, որը, ասպատակելով առաջանալով Անտիոք-Կիլիկիա երթուղով, կարճ ժամանակ անց գրավեց Տարսոնը[4], միաժամանակ ոտքի տակ տալով նաև Կապադովկիան և դավաճանության շնորհիվ տիրելով մինչ այդ համառ դիմադրություն ցույց տված Կեսարիային: Դրանից հետո, ծանրաբեռնված ավարով, Պարսից թագավորության բանակը սկսեց հետ քաշվել Կիլիկիայից և Ասորիքից:

261 թվականի նույն ամռանը, սակայն, Սոլեի ճ-մ-ում Բալլիստայի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 20.000) անակնկալ հարձակումով հաղթեց նահանջող Պարսից (մոտ 30.000) և Մեծ Հայքի (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակին, խլեց տարվող ավարը ու ազատեց գերիներին[5]: Վերջին պարտությունը սկիզբ հանդիսացավ Շապուհ Ի-ի հետագա անկմանը:

Գլուխ 12
Պալմիրայի թագավորությունը և պարսից բազեի ընդհատված թռիչքը

Իրոք, հռոմեական աղետը ու կենտրոնական իշխանության լիակատար կաթվածահար վիճակը այլ ելք չէր թողնում տեղական ուժերին, քան գործելն էր, և ահա հենց այս պայմաններում էլ ռազմաքաղաքական թատերաբեմ մտավ հերթական, բայց յուրօրինակ զինվորական մի կայսր, ի դեմս Պալմիրայի կառավարիչ Օդենատոսի (260-267), որն արագորեն կարողացավ կարգավորել տեղական ուժերին ու նախկին հողագործների, ինչպես նաև քոչվոր արաբ բեդվինների հաշվին բավականին մարտունակ զգալի ուժեր ստեղծել: Արդյունքում՝ արդեն 261 թվականի ամռանը[6], երբ թշնամին, հարստացած խոշոր ավարով ու, կարծես թե, գտնվելով ապահովության, մեջ նահանջում էր, Պալմիրայի կառավարիչ Օդենատոսի գլխավորած պալմիրա-հռոմեական բանակը (մոտ 90.000) Խառանի ճ-մ-ում անակնկալ հարձակումով ծանր պարտության

---

[1] Սկսած մոտ 255 թվականից Փոքր Հայքում և Անդրեփրատյան Ծոփքում Հռոմը կազմավորեց և տեղաբաշխեց 2 նոր լեգեոն՝ պսևդոկոմիտատեսներ **I Armeniaca**-ն և **II Armeniaca**-ն, որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում էր 3.000-ական լեգեոներ: Այս լեգեոնները համալրվում էին բացառապես տեղական բնակչության հաշվին, բնականաբար ճնշող մեծամասնությամբ կազմված էին հայերից և մինչև 360-ական թվականները իրենց գործուն մասնակցությունն են բերել կայսրության կողմից արևելքում մղած բոլոր խոշոր ռազմական օպերացիաներին:

[2] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 18, գլուխ 6, գիրք 20, գլուխ 11, գիրք 23, գլուխ 5; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 27, գիրք 3, գլուխ 32; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 8; Զոնորաս «Պատմություն»; Յակուբի «Պատմություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[3] Շապուհ Ի-ին վերագրվող Քաաբ ի-Զարադուշտի արձանագրությունից; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5, գիրք 6, գլուխ 8:

[4] Շապուհ Ի-ին վերագրվող Քաաբ ի-Զարադուշտի արձանագրությունից; Զոնորաս «Պատմություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5, գիրք 6, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 5; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[5] Զոնորաս «Պատմություն»:

[6] Այս ճակատամարտի թվականի մասին Սեբեոսը հայտնում է իրար խիստ հակասող տեղեկություններ (մաս 2): Ըստ նրա այն եղել է Հռոմի Գալլիենոս կայսեր և պարսկական Արտաշիր Ի-ի որդի Շապուհ ԻԻ-ի օրոք, այն դեպքում, երբ վերջինս Արտաշիրի որդին չէր, այլ՝ թոռան թոռը, և գահ էր բարձրացել Գալլիենոսի մահից մոտ 40 տարի հետո: Կարելի է կարծել որ Սեբեոսը նկատի է ունեցել Շապուհ Ի-ին, որը իրոք Արտաշիրի որդին էր և Գալլիենոսի ժամանակակիցը:

մատնեց Շապուհ Ի-ի ուժերին, ընդ որում Օդենատոսը ոչ միայն հետ խլեց տարվող ավարի զգալի մասը, այլև դրանից հետո առանց լուրջ մարտերի մտավ Եդեսիա, Խառան և Մծբին[1]:

Օդենատոսի անակնկալ հաջողությունը հիմնիվեր տապալեց անդրեփրատյան տարածքներին ի վերջո տիրելու Շապուհ Ի-ի հույսերը, ընդ որում արդեն 262 թվականին, քանի որ սկիզբ առած գահակալական պայքարում աջակցել էր Վալերիանոս Ի-ի որդի ու Հռոմեական կայսրության հերթական կայսր Գալլիենոսին (260-268), Օդենատոսը հռչակվեց կրտսեր համակայսր և այդ կարգավիճակում տիրեց կայսրության փոքրասիական ու մերձավորարևելյան բոլոր տիրույթներին: Միաժամանակ հարկ է նշել, սակայն, որ Գալլիենոսը, առանց այդ էլ անփույթ, նվիրված իր հաճույքներին և մազաչափ իսկ չհոգացող ստորացուցիչ գերության մեջ հայտնված սեփական հոր մասին, դրա հետ միաժամանակ նաև գլխովին խրված էր ոչ միայն գահակալական մշտական մրցակցության, այլև դանուբյան ու հռենոսյան սահմաններում արտաքին թշնամիների դեմ մղվող պատերազմական գործողությունների մեջ, իսկ այս պարագայում Արևելքի ողջ պաշտպանությունը մնում էր Օդենատոսի վրա:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ տաղանդավոր կազմակերպիչ Օդենատոսը, հրաժարվելով, ըստ էության, վերացած և առայժմ վերստեղծման ամեն մի հնարավորություն բացառող Հռոմեական կայսրության ռազմական մեքենայից, իր բանակը կազմակերպեց, ինչպես արդեն ասվեց, լիովին նոր սկզբունքներով՝ շեշտը դնելով ամենից առաջ տեղական ուժերի վրա, որոնց սիրտը բեդվին արաբներն էին[2]: Արդյունքում՝ փաստորեն ստեղծվեց մի իրավիճակ, երբ վաղուց ի վեր Հռոմեական կայսրության տիպի բանակի դեմ պայքարելուն սովոր սասանյան ռազմական մեքենան պետք է ընդհարվեր նոր տիպի մի ռազմական մեքենայի հետ, ընդ որում կյանքը ցույց տվեց, որ տեղի ունեցած կտրուկ փոփոխությանը վերջինս ամենևին էլ պատրաստ չէր:

Իրոք, բեդվին արաբները հիանալի էին կողմնորոշվում տեղանքում և ավելի լավ էին տանում անապատային պայմանները, նրանք արագաշարժ էին ու դրանով չեզոքացնում էին Սասանյանների ռազմական մեքենայի հիմնական հաղթաթղթերից մեկը հանդիսացող արագությունը, և, բացի այդ, գործում էին ձիերի ու ուղտերի վրա, որոնք, ի համեմատ իրենց հակառակորդների ունեցած նույն կենդանիների, ավելի էին պատրաստ Ասորիքի և Միջագետքի անապատային շրջաններում մարտեր վարելուն: Այս ամենն էլ հենց իր համակցության մեջ առժամանակ զգալի առավելություն ապահովեց զարմանալի ճակատագիր ունեցող Օդենատոսին և նրա բանակին՝ ստիպելով, թվում է, թե վաղուց ի վեր փայփայած իր երազանքների կատարման ամենաշեմին գտնվող Շապուհ Ի-ին այնուհանդերձ նահանջել:

262 թվականին Օդենատոսը վերջնականապես ամրացրեց ասորիքյան սահմանը, 263 թվականին կենտրոնացրեց և կարգի բերեց իր ուժերը, իսկ արդեն 264 թվականին էլ ծանր հարված հասցրեց Կենտրոնական Միջագետքին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դատելով ըստ ամենայնի, տաղանդավոր այս զորավարը, լիովին օգտագործելով սեփական բեդվինների շարժունակությունը անապատում, հարձակումը իրականացրել է ասորիքյան անապատի միջով՝ դրանով օպերատիվ լիակատար անակնկալ ապահովելով Շապուհ Ի-ին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

264 – ***<u>Տիգբոնի ճ-մ</u>***[3]

---

[1] Տրեբելիոս Պոլիոն «Օգոստոսների կենսագրություններ, Երկու Վալերիանոսներ», մաս 4; Պետրոս Պատրիկոս «Պատմություն», հատված 10; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 22; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 10; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 39; Զոնորաս «Պատմություն»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8: Այս մասին հայտնում է նաև Սինկելլոսը:

[2] Տրեբելիոս Պոլիոն «Օգոստոսների կենսագրություններ, 30 բռնատիրողներ», մաս 10, 15, 30; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 10; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 39:

[3] Տրեբելիոս Պոլիոն «Օգոստոսների կենսագրություններ, 30 բռնատիրողներ», մաս 10, 15, 30; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ

Պալմիրայի կառավարիչ, համակայսր Օդենատոսի գլխավորությամբ ասորիքյան անապատն անակնկալ անցած և Եփրատը գետանցած պալմիրա-հռոմեական բանակը (մոտ 90.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) սկսեցին աննկատ մոտենալ Շապուհ I-ի գլխավորությամբ քաղաքում գտնվող Պարսից թագավորության բանակին (մոտ 10.000):

I փուլ – Օդենատոսի բանակը անցավ հարձակման և պարտության ու փախուստի մատնեց թշնամու բանակին, որի մնացորդները պատսպարվեցին քաղաքում:

II փուլ – Հետապնդելով թշնամուն՝ Օդենատոսի բանակը ներխուժեց քաղաք, սակայն, չկարողանալով ամրանալ այնտեղ, ավարով հետ նահանջեց:

III փուլ – Օդենատոսի բանակը պաշարեց քաղաքը, սակայն իրականացված համառ գրոհները որևէ արդյունք չտվեցին:

IV փուլ – Արևելքից սկսեցին քաղաքին մոտենալ Պարսից թագավորության բանակի խոշոր ուժեր, այդ թվում նաև Մեծ Հայքի և Իբերիայի թագավորություններից (մոտ 100.000): Ստեղծված պայմաններում այլևս անհնարին համարելով քաղաքի գրավումը՝ Օդենատոսի բանակը մարտերով նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 15.000, թշնամին՝ մոտ 15.000 զինվոր:

Այսպիսով՝ Օդենատոսին, չնայած օպերատիվ անակնկալին, այնուհանդերձ չհաջողվեց գրավել Սասանյանների մայրաքաղաքը, թեև հարձակման հանդգնությունն իսկ վկայում էր այն մասին, որ Շապուհ I-ի դրությունն այնքան էլ կայուն չէր, իսկ հռոմեացիների դեմ ձեռք բերված հաջողություններն էլ մեծապես պայմանավորված են եղել վերջիններիս մոտ տիրող խառնաշփոթով և վատ կառավարմամբ: Իրոք, կյանքը ցույց տվեց, որ Հռոմեական կայսրության միայն արևելյան մասի դեմ կռվելն իսկ Շապուհ I -ի տերության համար բավականին դժվարին մի գործ է:

Գլուխ 13
Լուցիոս Ավրելիանոսի Արևելյան արշավանքը

267 թվականին Օդենատոսը և իր որդին զոհ գնացին Օդենատոսի հորեղբորորդու կողմից հղացած դավադրությանը, ինչից հետո տաղանդավոր այս տիրակալին հաջորդեց նրա մեկամյա մյուս որդի Վաբելլատոսը (267-271), սակայն վերջինս բնականաբար որևէ իրական իշխանություն չուներ և փաստացի կառավարում էր իր մայր Զենոբիան՝ կնոջ իշխանության բացառիկ մի դեպք իր ժամանակի պատմության մեջ: Զենոբիան, ցանկանալով Հռոմեական կայսրության արևելքում վերջնականապես միանձնյա անկախ իշխանության հասնել, փոխեց հակասասանյան քաղաքականության մինչ այդ վարվող գիծը և, սկսելով դաշնակցել պաշտոնական Տիզբոնի հետ, դուրս եկավ արդեն պաշտոնական Հռոմի դեմ: Գալլիենոսը, սակայն, 268 թվականի օգոստոսին իր հերթին սպանվեց՝ մինչ այդ այդպես էլ ոչ ցանկություն և ոչ էլ հնարավորություն չունենալով միջոցներ ձեռնարկել պարսիկների կամ Զենոբիայի դեմ: Արդյունքում՝ միակ բանը, որ մարդկային և պետական գործչի առանց այդ էլ բարձր հատկանիշներ չունեցող այս կայսրը թողեց իրենից հետո, դա ծանր հեծելազորային ստորաբաժանումների ստեղծումն էր, որը հետագայում շատ էր պետք գալու նրա հետնորդներին՝ հատկապես արևելքում մղվող պատերազմներում: Գալլիենոսից հետո կայսրության գահին իրար հաջորդեցին ևս երկու «զինվորական կայսրեր» և 270 թվականի ապրիլին ի վերջո կայսր հռչակվեց Լուցիոս Ավրելիանոսը (270-275):

Տաղանդավոր այս տիրակալը, որն իր կյանքի ուղին սկսել էր որպես հասարակ մի

հերետիկոսների» գիրք 7, գլուխ 22; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 10; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 39; Զոնորաս «Պատմություն»:

լեգեոներ և անցել էր կայսրության ռազմական մեքենայի բոլոր աստիճաններով, բացառիկ մի դեպք էր «զինվորական կայսրերի» մռայլ երթաշարքում, մարդ, որն իր պայծառ խելքով ու կազմակերպչական մեծ շնորհքով մի պահ, կարծես թե, կարողացավ երկիրը դուրս հանել անվերջ թվացող քաոսից: Նոր կայսեր կարելի էր թերևս, այն էլ զգալի պայմանականությամբ, մեղադրել միայն չափն անցնող խստության և նույնիսկ դաժանության մեջ, սակայն այն բարդ պայմաններում, որում ստիպված էր գործել Լուցիոս Ավրելիանոսը, դա, թերևս, բացատրելի կամ նույնիսկ ընդունելի էր: Միաժամանակ նոր կայսեր կերպարում, անկասկած, դրականը նաև այն էր, որ վերջինս որոշակիորեն լայնախոհ և նույնիսկ փիլիսոփայական մտածողության հակված մի անձնավորություն էր:

Եվ այսպես, մի քանի կտրուկ քայլերով ամրացնելով իր իշխանությունը գահի վրա, հրաժարվելով պաշտպանության համար անչափ շատ ջանքեր պահանջող Մարկոս Տրայանոսի նվաճած Դակիայից, սակայն փոխարենն ամուր պաշտպանության անցնելով Դանուբ գետի աջ ափով, Լուցիոս Ավրելիանոսը 271 թվականին պատրաստվեց վերականգնել Հռոմեական կայսրության ամբողջությունը նաև Արևելքում՝ պատերազմ սկսելով Զենոբիայի դեմ: Իր հերթին, զգալով իր վրա կախված վտանգը, Շապուհ I-ի հետ վերջնական համաձայնության հասավ նաև Զենոբիան, թեև օժանդակ ուժեր արյաց արքան այդպես էլ չկարողացավ կամ չհասցրեց ուղարկել:

271 թվականի գարնանը Լուցիոս Ավրելիանոս կայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 180.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (6.000), իրենց կազմում ունենալով նաև կայսեր կողմից նոր զարգացում ստացած հեծելազորային զգալի ուժեր, պալմիրա-հռոմեական կայազորից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 200) դավաճանության շնորհիվ գրավեցին Տիանան (Հյուսիս-արևմտյան Կիլիկիա)[1]: Դրանից հետո Լուցիոս Ավրելիանոսի բանակը մտավ Հյուսիսային Ասորիք:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

271 ամառ – ***Անտիոքի ճ-մ***[2]

Լուցիոս Ավրելիանոս կայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 170.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.900) մոտեցան պալմիրա-հռոմեական բանակին (մոտ 100.000): Կողմերը մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Հմուտ մանևրելով հյուծելով հակառակորդին՝ Հռոմեական կայսրության բանակը անցավ հարձակման և հետևակի ու հեծելազորի համակցված հարվածով ծանր պարտության մատնեց վերջինիս բանակին, որի մնացորդները պատսպարվեցին քաղաքում:

II փուլ – Հաջորդ օրը հաջողությունը զարգացրած Հռոմեական կայսրության բանակը առանց լուրջ մարտերի մտավ քաղաք:

III փուլ – Մի քանի օր անց, պատրաստվելով զարգացնել հաջողությունը ու շարժվել Հեմսի ուղղությամբ, Հռոմեական կայսրության բանակը Դափնեի մոտ հարձակվեց ամուր դիրքեր գրաված հակառակորդի բանակի վրա և վերջնական պարտության մատնեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 150, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

271 աշուն – ***Հեմսի ճ-մ***[3]

[1] Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Աստվածային Ավրելիանոսը», մաս 22-24; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 50:

[2] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 50-52; Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Աստվածային Ավրելիանոսը», մաս 25:

[3] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 52-53; Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Աստվածային

Լուցիոս Ավրելիանոս կայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 160.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.500) մոտեցան քաղաքի մոտ մարտակարգ ընդունած պալմիրա-հռոմեական բանակին (70.000): Կողմերը մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Հակառակորդի հեծելազորը կենտրոնում անցավ հուժկու հարձակման և հզոր հարվածով ճեղքեց Լուցիոս Ավրելիանոսի բանակի առաջին շարքը՝ ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին, սակայն միաժամանակ նաև խախտելով՝ սեփական դասավորվածությունը:

II փուլ – Օգտվելով ունեցած թվական գերակշռությունից՝ Լուցիոս Ավրելիանոսի բանակի հեծելազորը թևերից շրջապատեց առաջ եկած հակառակորդին և համառ մարտից հետո ծանր պարտության մատնեց վերջինիս, որի մնացորդները պատսպարվեցին քաղաքում:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 40.000 զինվոր:

Այսպիսով՝ Լուցիոս Ավրելիանոս կայսեր երկաթյա ձեռքով կառավարվող Հռոմեական կայսրության կարգի գցված ռազմական ահեղ մեքենայի դեմ տրված երկու բաց ճակատամարտերի արդյունքում Զենոբիան, ըստ էության, մնաց առանց բանակի, որ արդյունքում էլ նույն թվականի աշնանը առանց լուրջ դիմադրության ընկավ արդեն նաև Պալմիրան: Դրանից հետո Զենոբիան փորձ կատարեց շարժվել դեպի ասորիքյան անապատ և գոնե այնտեղ հանդիպել Շապուհ I-ի ուղարկած ուժերին, սակայն անհաջողության մատնվեց ու որդու հետ միասին գերվեց[1]: Պալմիրա քաղաքի հետ ռազմունակ կայսրը սկզբում շատ մեղմ վարվեց, բայց հետո, երբ 272 թվականի գարնանը այս քաղաքը ապստամբության դրոշ բարձրացրեց, Լուցիոս Ավրելիանոսը կրկին վերադարձավ նրա պարիսպների տակ և, այս անգամ արդեն համառ մարտերով գրավելով այն, հիմնովին ավերեց[2]: Ինչ վերաբերում է Զենոբիայի և Վաբելլատոսին, ապա նրանք հաստատվեցին Հռոմում ու հենց այնտեղ էլ ավարտեցին իրենց օրերը:

Այսպիսով՝ Լուցիոս Ավրելիանոսի ամուր ձեռքի տակ Հռոմեական կայսրությունը փաստորեն միավորվեց և վերագտավ իր հինավուրց հզորությունը, իսկ այս պայմաններում էլ իր կյանքի արդեն յոթերորդ տասնամյակը մտնող Շապուհ I-ն արդեն ոչ միայն չէր կարող մտածել նոր հարձակման մասին, այլև ինքը պետք է ձեռնարկեր պաշտպանական զգալի միջոցառումներ: Շուտով պարզվեց, սակայն, որ Լուցիոս Ավրելիանոսն ինքն էլ, որի տերությունն այդ պահին հարձակման վտանգի տակ էր հայտնվել հռենոսյան և դանուբյան սահմաններում գործող գերմանացիների կողմից, զերծ է մնում պարսիկների դեմ նոր պատերազմ հրահրելուց՝ վերադառնալով Բալկանյան թերակղզի:

273 թվականի ամենասկզբում Շապուհ I-ը մահացավ, որից հետո Պարսից թագավորության նոր արքա հռչակվեց Մեծ Հայքի թագավորության արքա Որմիզդը՝ Որմիզդ I-ը (273)՝ իր հերթին Մեծ Հայքի թագավորության արքա հռչակելով սեփական որդուն՝ Որմզդակին (273-276): 273 թվականի ամենավերջում, սակայն, Որմիզդ I-ը կիսեց հոր ճակատագիրը, որից հետո գահն անցավ ամենայն հավանականությամբ մինչ այդ սեփական եղբոր մահը կազմակերպած Վահրամ I-ին (273-276): Իր հերթին, տեղեկանալով ահեղ Շապուհ I-ի մահվան մասին և որոշելով սրան հաջորդած որդիների օրոք ի վերջո հաշիվ տեսնել Պարսից թագավորության հետ, արդեն 275 թվականի սկզբին

Ավրելիանոսը», մաս 25; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 24:

[1] Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Աստվածային Ավրելիանոսը», մաս 26-28; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 54; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 35; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 13; Զոնորաս «Պատմություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[2] Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Աստվածային Ավրելիանոսը», մաս 31; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 59, 61:

Լուցիոս Ավրելիանոսը, բոլոր կողմերից բանակային խոշոր ուժեր հավաքելով Փոքր Ասիայում, ինքը ևս իր շքախմբով սկսեց աստիճանաբար շարժվել արևելյան ուղղությամբ, սակայն նույն 275 թվականի սեպտեմբերի 25-ին էլ զոհ գնաց իր իսկ մտերիմների հղացած դավադրությանը: Ռազմունակ կայսեր սպանվելը ծանր հարված հասցրեց Հռոմեական կայսրությանը և այստեղ կրկին գահակալական ճգնաժամ առաջացավ, ինչի պայմաններում Պարսից թագավորության դեմ նոր պատերազմի մասին խոսք գնալ որևէ կերպ արդեն չէր կարող:

Գլուխ 14
Սասանյանների ներքին քաոսը

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ, ի տարբերություն առաջին երկու Սասանյանների ամուր կառավարմանը, քննարկվող ժամանակաշրջանում ամուր չէին նաև Սասանյանների գահին հայտնված չորրորդ գահակալ Վահրամ I-ի դիրքերը, որին, կարծես թե, հետևում էր մահացած եղբոր ստվերը: Իր հերթին հարկ է նշել, որ, ի տարբերություն իր հզոր պապի, ռազմունակ հոր և հավասարակշիռ եղբոր, Վահրամ I-ը, մի կողմ թողած պետական կառավարման հարցերը, իր հիմնական ժամանակը նվիրում էր խնջույքներին, ռազմական վարժություններին ու բանակային խաղերին: Միաժամանակ, արյաց նոր արքան հետ քաշվեց նաև իր նախորդների օրոք գոյություն ունեցող կրոնական հանդուրժողականության հեռատես քաղաքականությունից՝ արդյունքում հրամայելով մահապատժի ենթարկել նաև մանիքեականության հիմնադիր համարվող ոչ անհայտ Մանիին, իսկ այս ամենն էլ, իր համակցության մեջ, որոշակի խառնաշփոթ առաջացրեց երկրում: Այս պայմաններում ոտքի ելան նաև արյաց արքայի հորեղբայր, Իբերիայի թագավորության արքա Միհրան III Մեծն, ինչպես նաև սեփական հոր մահվան մեջ համառորեն հենց հորեղբորը կասկածող Մեծ Հայքի թագավորության արքա Որմզդակը: Արդյունքում՝ 276 թվականի գարնանը Որմզդակ արքայի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 60.000) և Միհրան III Մեծի գլխավորած Իբերիայի (մոտ 60.000, որից ուղիղ 40.000 պարսիկ հեծյալ) թագավորությունների միացյալ բանակը, նպատակ ունենալով գահընկեց անել Վահրամ I-ին ու արքա հռչակել Միհրան III Մեծին, մոտեցավ Մծբինին: Տրամադրված լինելով վճռականորեն՝ հորեղբոր և եղբորորդու դեմ խոշոր ուժերով շարժվեց, սակայն, նաև Վահրամ I-ը, բայց սկսված բանակցությունների արդյունքում ռազմական բախումից հնարավոր եղավ այնուհանդերձ զերծ մնալ, ընդ որում, թեև նոր փոփոխություններ սկզբունքորեն չեղան, սակայն փոխարենը Միհրան III Մեծը Աղվանքում ու Ատրպատականում նոր տիրույթներ ստացավ[1]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ հյուսիսում ձեռք բերած հաջողության պտուղները Վահրամ I-ը վայելել այդպես էլ չհասցրեց, քանի որ մայրաքաղաք վերադառնալուց կարճ ժամանակ անց նա մահացավ, որից հետո գահը զբաղեցրեց իր երիտասարդ որդին՝ Վահրամ II-ը (276-293): Նոր արքան, ակնհայտորեն գահին հասած լինելով ավագ սերնդի համաձայնությամբ, ստիպված եղավ անել մեկ էական զիջում, թեև այնքան էլ ոչ իր հաշվին՝ Որմզդակի փոխարեն Մեծ Հայքի թագավորության արքա հռչակելով իր հորեղբայր, մինչ այդ «Հնդկաստանի, Սակաստանի և Թուրանի արքա» հռչակված Քուշանշահերի թագավորության արքա Ներսեսին (276-287, 287-293՝ մի մասում), որն ինքն էլ հավակնում էր Սասանյանների գահին: Ինչ վերաբերում է Քուշանշահերի թագավորությանը, ապա այստեղ արքա նշանակվեց Որմիզդ I-ի որդի Որմիզդ II-ը (276-302):

Փաստորեն Սասանյանների տերության հյուսիսային հատվածում շարունակում էր խիստ ազդեցիկ մնալ արյաց արքայի ավագ սերնդի ազգականների իշխանությունը, ինչը Տիզբոնում իշխող գահակալին զգալիորեն զրկում էր ամրության հիմքերից: Քննարկվող

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 62:

ժամանակահատվածում խաղաղ չէր, սակայն, նաև հռոմեացիների մոտ:

Գլուխ 15
Անորոշ տարիները. Տակիտոսից Մարկոս Պրոբոս

Տաղանդավոր Լուցիոս Ավրելիանոսը, ծրագրելով Սասանյանների տերությանը հարված հասցնել, այդ թվում նաև օսթգոթերի միջոցով և նախատեսելով, որ Կովկասյան լեռներից հարավ թափանցած գերմանական ռազմատենչ այդ ցեղն ու նրանց դաշնակիցները, մինչ ինքը ուղղակի կհարձակվի Տիզբոնի վրա, առնվազն գոնե կկաշկանդեն Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորություններին, իր կառավարման վերջին ամիսներին մեծ խոստումներով ոտքի էր հանել Օսթգոթական թագավորությանը, սակայն այժմ, այն բանից հետո, երբ Լուցիոս Ավրելիանոսը սպանվեց, իսկ նրա Արևելյան նախատեսվող նոր արշավանքն էլ չեղյալ համարվեց, պաշտոնական Հռոմի այդ չկայացած դաշնակիցները իրենց մեծապես խաբված համարեցին ու թշնամական դիրք գրավեցին հաջորդ կայսր Տակիտոսի (275-276) նկատմամբ: Իր հերթին, Հռոմեական կայսրության նորահռչակ այս կայսրը, պետության առաջ ծառացած բոլոր խնդիրների շարքում ամենակարևորը համարելով այնուհանդերձ հենց արևելյան սահմանի անվտանգությունը, 275 թվականի ամենավերջում սեփական եղբայր Ֆլորիանոսի հետ միասին ժամանեց Արևելք՝ թերևս, ցանկանալով և օգտվել Սասանյանների տոհմում առաջացած վեճերից, և սաստել հյուսիսային վայրենիներին: Սասանյանները, սակայն, ինչպես արդեն ասվեց, իրենց գործերը առանց բացահայտ ռազմական բախման կարգավորեցին, ընդ որում նրանք Տակիտոսին ոչ միայն գործելու հնարավորություն չտվեցին, այլև նաև Օսթգոթական թագավորության բանակին չխանգարեցին հարված հասցնել Փոքր Ասիային:

276 թվականի հունիսին Տակիտոսը, չիմանալով թշնամիների հարվածի ուղղությունը և Ֆլորիանոսին խոշոր ուժերով, համենայն դեպս, թողնելով Կիլիկիայում, ինքը Խոսրով I Քաջի երիտասարդ, սակայն իր հսկայական ուժով ու զորական մեծ խիզախությամբ մարտերում արդեն իսկ աչքի ընկնող որդի Տրդատի հետ միասին գտնվում էր Տրապիզոնի մոտակայքում: Հենց այդ ժամանակ էր, ահա, որ նա լուր ստացավ իրենից դեպի ավելի արևմուտք՝ ինչ-որ տեղ Սինոպի մոտակայքում, օսթգոթերի հասցրած ծովային հզոր հարվածի մասին, սակայն, մինչ կշարժվեր սրանց դեմ, մի նոր վտանգ ծագեց:

Իրոք, Միհրան III Մեծն ու Ներսեսը, կարգի գցած իրենց գործերը հարավում, նույն այս ժամանակ շարժվեցին Տրապիզոնի ուղղությամբ: Արդյունքում՝ 276 թ-ի հունիսի վերջին Պարսից (մոտ 40.000), Մեծ Հայքի (մոտ 40.000) և Իբերիայի (մոտ 30.000) թագավորությունների միացյալ բանակը Խաղկտիքի լեռներում ծանր պարտության մատնեց[1] Տակիտոս կայսեր ու Տրդատ արքայազնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակին (մոտ 34.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 6.000), ընդ որում սպանվածների թվում էր նաև Հռոմեական կայսրության դժբախտ կայսրը[2]: Փաստորեն, ինչպես 16 տարի առաջ եղավ, Արևելքում ընթացած պատերազմը

[1] Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Տակիտոս», մաս 13; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 36; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 23; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 63; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 16; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 76; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 18; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 5; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 6, գլուխ 9; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[2] Այս ճակատամարտի վրա ուշադրություն չի դարձվել Մովսես Խորենացուն թերագնահատելու պատճառով, ինչը սխալ է: Նախ՝ նշենք, որ, ըստ Պատմահոր, այս ճակատամարտում սպանվել է կայսր Տակիտոսը, այսինքն՝ կասկածից վեր է վերջինիս թվականը, իսկ այդ դեպքում այլևս որևէ հիմք չի մնում թերահավատորեն մոտենալ Խորենացու հաղորդմանը: Բացի այդ հետաքրքիր է, որ հռոմեական աղբյուրները խիստ հակասական տեղեկություններ են տալիս Տակիտոսի մահվան հանգամանքների մասին: Ըստ Ֆլավիոս Վոպիսկոսի («Տակիտոս») կայսրը կյանքից հեռացել է ծովափն ասպատակող օսթգոթերի դեմ արշավանքի ժամանակ, ընդ որում ըստ հեղինակի նրան կամ լեգեոներներն են սպանել, կամ նա մահացել է հիվանդությունից: Զոսիման, սակայն, ուղղակիորեն նշում է, որ Տակիտոսը սպանվել է լեգեոներների կողմից, այն դեպքում, երբ, ըստ Ավրելիանոս Վիկտորի և Եվտրոպիոսի, վերջինս մահացել է տենդից Տիանայում կամ Տարսոնում այն բանից հետո, երբ արշավի է ելած եղել Փոքր Ասիան ասպատակող գոթերի դեմ: Այս ամենի

Հռոմեական կայսրության կայսեր այս անգամ ևս կյանք արժեցավ, ընդ որում, կարծես թե, վերադառնում էին 260-ական թվականների սկզբի աղետալի ժամանակները: Այս անգամ, սակայն, ամեն ինչ, բարեբախտաբար, ավելի թեթև ընթացք ունեցավ:

Իրոք, շուտով պարզվեց, որ Միհրան III Մեծն և Ներսեսը, որոնք ոչ մի կերպ չէին ցանկանում Հռոմեական կայսրության դեմ լայնածավալ պատերազմի մեջ ներքաշվել ու, առավել ևս, այդ ծանր գործի մեջ ներքաշել Պարսից թագավորությանը, որի մեծամասշտաբ աջակցության վրա, ի դեպ ասած, ամեն դեպքում հույս դնել չէին կարող, արդյունքում իրենց բավարարված զգացին ձեռք գցած հսկայական ավարով և հետ քաշեցին ուժերը Հռոմեական կայսրության սահմաններից: Ինչ վերաբերում է օսթգոթերին, ապա սրանք, խուսափելով նոր կայսր հռչակված Ֆլորիանոսի (276) ուժերից և իրենց հերթին գոհացած ավարով, նստեցին սեփական նավերը ու ծովով հեռացան դեպի հյուսիս: Ֆլորիանոսն իր հերթին, սակայն, որ, կարծես թե, ազատվել էր բոլոր թշնամիներից, այնուհանդերձ չխուսափեց իր համար նախապատրաստված ողբերգական ճակատագրից և 276 թվականի սեպտեմբերի 9-ին զոհ գնաց ներքաղաքական հերթական ապստամբությանը[1], որից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց Լուցիոս Ավրելիանոս կայսեր բավականին նման ու վերջինիս սկզբունքորեն կրկնող, բայց ինչ-որ տեղ նրանից գուցե ավելի կոպիտ, պարզունակ և տաղանդներից մեծապես զուրկ Մարկոս Պրոբոսը (276-282):

Մարկոս Պրոբոսը լի էր Լուցիոս Ավրելիանոսի ծրագրերը կյանքի կոչելու վճռականությամբ, սակայն մինչ այդ նա պետք է անվտանգ դարձնել հռենոսյան և դանուբյան սահմանները: Այս հոգսերի վրա կայսրը ծախսեց առաջիկա երկու տարին և միայն 279 թվականին էր, որ վերջինս ի վիճակի եղավ ուժերն աստիճանաբար կենտրոնացնել Արևելքում: Այստեղ, սակայն, պարզվեց, որ տեղում ևս կան ներքին որոշակի հոգսեր, ի դեմս ամենից առաջ վերջին տասնամյակների փաստացի անիշխանությունից հետո ավազակների մի իսկական բնի վերածված Իսավրիայի լեռնային շրջանի և Կիլիկիայի արևմտյան հատվածի: Արդյունքում՝ 279 թվականի աշնանը Մարկոս Պրոբոս կայսեր և Տրդատ արքայազնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 120.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) ինքնահռչակ կայսր Մարկիանոսի բանակից (մոտ 1.000) գրավեցին Կրեմնան (Անթալիայից 68 կմ հյուսիս) որից հետո, ասպատակելով Իսավրիան, վերացրին տեղում տիրող ապստամբական տրամադրությունները[2]:

280 թվականը ծախսելով Արևելքում իր իշխանությունը ամրապնդելու վրա, իսկ 281 թվականին էլ կենտրոնացնելով ուժերը՝ Մարկոս Պրոբոսը նախատեսել էր արդեն հաջորդ տարի ի վերջո կյանքի կոչել այնքան երկար սպասված արշավանքը Սասանյանների դեմ, մանավանդ որ նույն 280-ական թվականների սկզբին Վահրամ II-ի իշխանությունն ամենևին էլ ամուր համարվել չէր կարող: Իրոք, նույն այս ժամանակ երկրի ներսում այս ու այնտեղ բռնկվում և ճնշվում էին տեղական իշխանների ապստամբությունները, լայն տարածում էր ստանում մանիքեականությունն ու փոթորկվում էին դրա դեմ ծավալվող հալածանքները, Սասանյան գահակալի ավագ սերնդի հզոր ներկայացուցիչները գործնականում ինքնիշխան իշխում էին հյուսիսում, արևելքում իրեն շատ ազատ էր զգում Քուշանշահերի թագավորության արքա Որմիզդ II-ը, իսկ նույն արևելքից էլ արդեն աստիճանաբար սկսվում էր այն հայտնի ճնշումը, որը

ֆոնի վրա բավականին տրամաբանական է թվում Մովսես Խորենացու հաղորդումը, որը լրացնում է հռոմեական աղբյուրներին և որի լույսի տակ, կարծես թե, պարզ է դառնում, որ Տակիտոսը սպանվել է Պարսից թագավորության բանակի համար հաղթական հանդիսացած ճակատամարտի վերջում, ընդ որում՝ սեփական լեգեոներների կողմից: Կարելի է ենթադրել, որ հենց դրանից հետո է հաջողությունը զարգացրած Պարսից թագավորության բանակը գրավել Անդրեփրատյան Ծոփքը, որի գրավումը 276 թվականին անկասկած ընդունվում է խորհրդահայ պատմագիտության կողմից:

[1] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 63; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 76; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 6; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 6, գլուխ 9; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[2] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 1, գլուխ 69, 70; Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ,Պռոբոս», մաս 13; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 17; Եվնապիոս «Դեկսիպյան պատմության շարունակությունը», գիրք 1, հատված 3:

զգալիորեն ուժեղանալու էր հաջորդ տասնամյակներում և մյուս հարյուրամյակում՝ խոսքը հետագայում «Ժողովուրդների մեծ գաղթ» կոչված երևույթի մասին է: Իրոք, նույն այս ժամանակ շարունակվում էր երկրագնդի միջին ջերմաստիճանի անշեղ անկումը և Մեծ տափաստանի Փոքր ակտիվությունը աստիճանաբար թափ էր հավաքում՝ իր քաղաքական արտահայտությունը գտնելով ամենից առաջ հենց Հոնական տերության ակտիվության բարձրացման մեջ:

Գլուխ 16
Մարկոս Կարոսի Արևելյան արշավանքը

Մարկոս Պրոբոսին, սակայն, այնուհանդերձ վիճակված չէր կյանքի կոչել արևելյան երկար սպասված արշավանքը, քանզի 282 թվականի հոկտեմբերի սկզբին ռազմունակ այս կայսրը զոհ գնաց հերթական դավադրությանը, որի գլխին կանգնած էր պրետորյանների պրեֆեկտ Մարկոս Կարոսը: Ինչպես և սպասելի էր, Մարկոս Պրոբոսի մահից հետո կայսր հռչակվեց նույն Մարկոս Կարոսը (282-283), որը, չունենալով իր նախորդի ոչ ռազմական ունակություններն և ոչ էլ հեղինակությունը, այնուհանդերձ որոշեց ի վերջո կյանքի կոչել արևելյան արշավանքը՝ հույս ունենալով ամենից առաջ օգտվել Պարսից թագավորության ներքաղաքական անկայուն վիճակից: Իրոք, նույն այս ժամանակ վերջնականապես ապստամբել էր Քուշանական թագավորությունից զգալի աջակցություն ստացած Քուշանշահերի թագավորության արքա Որմիզդ II-ը և Վահրամ II-ը նույն այդ ժամանակ խոշոր ռազմական ուժերով գտնվում էր իր տերության արևելքում:

Եվ այսպես, ամրապնդելով սեփական դիրքերը գահի վրա և վայելելով, ըստ էության, Մարկոս Պրոբոսի իրականացրած ռազմական ձեռնարկումների պտուղները, 283 թվականի մայիսին Մարկոս Կարոս կայսեր և Տրդատ արքայազնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 120.000[1]) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000), առաջանալով Մելիտե-Եդեսիա[2]-Նիկեփորիոն-Կիրկեսիոն-Դուր-Եվրոպոս-Սելևկիա երթուղով, նույն թվականի օգոստոսի սկզբին մոտեցան Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնին, որի մոտակայքում էլ անորոշ ելքով ընդհարվեցին Վահրամ II-ի գլխավորությամբ արևելքից վերադարձած Պարսից թագավորության բանակի (մոտ 120.000, մոտ 50 փիղ) հետ[3]: Հենց այս մարտերում էր, ի դեպ ասած, որ աչքի ընկավ Տրդատ արքայազնը, որը հետևակ նիզակամարտով պաշտպանեց վիրավորներին, սակայն նույն այդ մարտերում էր նաև, որ ծանր վերք ստացավ կայսր Մարկոս Կարոսը: Տիզբոնի համար մղվող ճակատամարտը անորոշ ելք ունեցավ և կայսերական ուժերը դեռ չէին որոշել իրենց անելիքը, երբ շուտով՝ արդեն օգոստոսի սկզբին, վերքերից տառապող Մարկոս Կարոս կայսրը կնքեց իր մահկանացուն, որից հետո սկիզբ առած խառնաշփոթի պայմաններում Հռոմեական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները կայսր հռչակված հանգուցյալի որդի Մարկոս Նումերիանոսի (283-284) ու Տրդատ արքայազնի գլխավորությամբ սկսեցին Սելևկիա-Դուր-Եվրոպոս-Կիրկեսիոն-Նիկեփորիոն երթուղով նահանջ իրականացնել: Սասանյանները, սակայն, ամենևին էլ չէին ցանկանում հենց այդպես, ուղղակի թույլ տալ հեռանալ իրենց սահմանը ներխուժած թշնամիներին:

Արդյունքում՝ 283 թվականի սեպտեմբերին դեռևս Խոսրով I Քաջի օրոք սպարապետի պաշտոնը զբաղեցրած և այժմ արդեն ծերունազարդ Կոռնակ Մամիկոնյանի գլխավորած Պարսից (մոտ 90.000, մոտ 40 փիղ), Մեծ Հայքի (մոտ 70.000) և Իբերիայի (մոտ 40.000) թագավորությունների միացյալ բանակը ինչ-որ տեղ Եդեսիայի ու Խառանի միջակայքում հասավ նահանջող հակառակորդին և ծանր պարտության մատնեց վերջինիս: Այս անգամ ևս մարտում աչքի ընկավ Տրդատ արքայազնը, որը, այն բանից հետո, երբ հակառակորդի նետաձիգները Հայոց ապագա արքայի տակ

---

[1] Սկզբնաղբյուրներում չկան տվյալներ 282 թվականի Արևելյան արշավանքում Հռոմեական կայսրության բանակի թվաքանակի մասին: Կարելի է ենթադրել միայն, որ այս անգամ Հռոմեական կայսրության բանակը եղել է մոտավորապես այնքան, ինչքան եղել է Լուցիոս Ավրելիանոսի բանակը 271 թ-ի Արևելյան արշավանքում:

[2] Արշավանքի սկիզբը և ընթացքը Հայաստանով ընթանալու մասին հայտնում է Սիդոնիոս Ապոլինարիոսը («Բանաստեղծություններ», 23, 91-96:

[3] Ֆլավիոս Վոպիսկոս «Օգոստոսների կենսագրություններ, Կարոս, Կարինոս և Նումերիանոս», մաս 8; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 38; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 38; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 23; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 18; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 24; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 24, գլուխ 5; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 23; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 79, 82; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 6; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 6, գլուխ 9; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8): Այս մասին հայտնում է նաև Հովհաննես Մալալան («Ժամանակագրություն» գիրք 12, գլուխ 34, ինչպես նաև Զոնորասը:

սպանեցին ձիուն ու նա վերջինիս հետ միասին գետին տապալվեց, այնուհանդերձ իրեն չկորցնելով արագորեն ոտքի կանգնեց և, մարտնչելով արդեն հետևակ վիճակում, ցրեց իրեն հարվածել փորձող նետաձիգներին, իսկ հետո էլ հարձակվեց մարտական մի փղի վրա՝ փախուստի մատնելով վերջինիս ու նրա վրա գտնվող ռազմիկներին: Իր հերթին, հետապնդելով հակառակորդին մինչև Եփրատի աջ ափ, հաղթողների միացյալ բանակը կոտորեց և գերեց հակառակորդի ռազմիկներին: Այս պայմաններում հետապնդողներից պոկվելու նպատակով Տրդատ արքայազնը իր զենքերով և ողջ հանդերձանքով ստիպված եղավ վիրավոր ձիու սանձը բռնած լողալով անցնել Եփրատի աջ ափ[1]: Տրդատ արքայազնն, անկասկած, խիզախություն և անձնական մեծ քաջություն էր դրսևորել, սակայն այդ հանգամանքը ոչ մի կերպ չէր կարող փոխհատուցել արշավանքի ընդհանուր անհաջող ելքը, ինչպես նաև նահանջելիս Խառանի մոտակայքում՝ արդեն Հռոմեական կայսրության սահմաններում, կրած ծանր պարտությունը:

Մարկոս Կարոսը թողել էր երկու որդիներ՝ բանակի կողմից կայսր հռչակված Մարկոս Նումերիանոսին և կայսրության արևմուտքում իշխանության հավակնություններ դրսևորող Մարկոս Կարինոսին: Արևելյան անհաջող արշավանքից հետո, սակայն, 284 թվականի սեպտեմբերի 17-ին Մարկոս Նումերիանոսը ինքը ևս զոհ գնաց դավադրությանը, որից հետո գահին բազմեց տաղանդավոր Դիոկլետիանոսը (284-305), ընդ որում վերջինս, լի վճռականությամբ, հենց զինվորների աչքի առաջ էլ մահով պատժեց Մարկոս Նումերիանոսի կյանքի նկատմամբ ոտնձգություն իրականացրածներին: Նոր այս տիրակալը, սակայն, նույնքան վճռականորեն էլ շարունակեց գահակալական պայքարը և արդեն 285 թվականի հուլիսին Մեզիայում տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարտության մատնեց նաև Մարկոս Կարինոսին, որին դրանից հետո սպանեցին հենց յուրայինները:

Գլուխ 17
Զարմանալի Դիոկլետիանոսը

Դիոկլետիանոսը՝ վերջինը «զինվորական կայսրերից» կամ առաջինը նոր սերնդի տիրակալներից, լայն մտահորիզոնի և մեծ արարքների ընդունակ, բայց նաև բնավորության հակասական գծերով լի զարմանալի մի անձնավորություն էր: Դիոկլետիանոսի ներքաղաքական գործունեության մեջ դրականն այն էր, որ նա ամուր և վերջնական կայսերական իշխանություն հաստատեց ու վերջ տվեց նախկին ձևականությանը, երբ, ըստ էության, բացարձակ իշխանության տեր կայսրը համարվում և ընկալվում էր միայն որպես «առաջինը սենատորներից»: Այժմ, ինչպես արդեն ասվեց, կայսրության բարձրագույն իշխանության կրողի կարգավիճակը ծայրահեղորեն հստակեցվեց և մեծապես ստացավ բացարձակ միապետի կարգավիճակը կրկնող կարգավիճակ արդեն նաև իրավաբանորեն:

Սրանով հանդերձ, սակայն, մի կողմ թողնելով նոր կայսեր ներքաղաքական այլ և հիմնականում դրական տեսք ունեցող ձեռնարկումները, Դիոկլետիանոսը կյանքի կոչեց նաև համակայսրեր նշանակելու բավականին վիճելի մի գործունեություն, որը նա ինքը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ կայսրությունը մեծ էր ու մեկ կայսրն ուղղակի ֆիզիկապես ի վիճակի չէր դեմ կանգնելու կայսրության բոլոր սահմաններում անվերջ ծագող մարտահրավերներին: Գաղափարը, կարծես թե, իդեալում լավն էր, սակայն գործնականում այն սկիզբ դրեց գահակալական խոշոր ընդհարումների և վերջին հաշվով, ըստ էության, արժեզրկեց նաև կայսեր իշխանության այն բացարձակ բնույթը, որի ընդգծումը փորձ էր կատարում իրականացնել նույն Դիոկլետիանոսը:

Այսպես թե այնպես, սակայն 285 թվականին Դիոկլետիանոսը իր մտերիմ զորավար

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 79; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5; Անանիա Շիրակացի «Պատմություն»; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Զոնորաս «Պատմություն»:

Մաքսիմիանոսին նշանակեց կրտսեր համակայսր կամ կեսար, իսկ 286 թվականին էլ նրան շնորհեց իրեն հավասար օգոստոսի կոչում, որը սա կրեց մինչև 305 թվականը, ընդ որում նախատեսվում էր, որ Դիոկլետիանոսը պետք է կառավարի կայսրության արևելյան, իսկ Մաքսիմիանոսը՝ արևմտյան մասը: Իր հերթին 293 թվականին Դիոկլետիանոսը, Մաքսիմիանոսի համաձայնությամբ իրեն որպես կեսար կամ կրտսեր համակայսր նշանակելով արդեն մեկ այլ զորավար Գալերիոսին, որն այս պաշտոնը վարեց մինչև 305 թվականը, Մաքսիմիանոսի կեսար կամ կրտսեր համակայսր էլ նշանակել տվեց Կոնստանդիոս Ի-ին, որը ևս այս պաշտոնը վարեց մինչև նույն 305 թվականը: Դիոկլետիանոսը, որպես բոլորից հեղինակությամբ բարձրը, պետք է հսկողության տակ պահեր Արևելքը, Գալերիոսը՝ դանուբյան սահմանը, Մաքսիմիանոսը՝ հռենոսյան սահմանը, իսկ Կոնստանդիոս Ի-ն էլ՝ Գալլիան և Բրիտանիան: Միաժամանակ ենթադրվում էր, որ, հաշված 285 թվականից, 20 տարի հետո օգոստոսները պետք է հրաժարվեին իրենց իշխանություններից, իսկ կեսարները պետք է դառնային օգոստոսներ և իրենց հերթին նշանակեին նոր կեսարներ: Արդյունքում, թեև արդեն իսկ ակնհայտ էր, որ անորոշ լիազորություններով օժտված ավագ և կրտսեր համակայսրերի այդ տարօրինակ նշանակումները լավ բանի չէին հանգեցնելու, սակայն Դիոկլետիանոսը, առայժմ անառարկելի հեղինակություն ունենալով բանակում ու պետության մեջ, դրա շնորհիվ ամեն ինչ գոնե առժամանակ կարգի գցեց: Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ տարօրինակ այս կայսրն այդպես էլ չըմբռնեց, որ համակարգը գործում է ոչ թե ինքնաբավ, այլ, ըստ էության՝ կառավարվելով մեկի, կոնկրետ դեպքում հենց իր կողմից և, հենց որ նույն այդ կենտրոնական կառավարումը, ի դեմս իրեն, վերանա, համակայսրերից յուրաքանչյուրն, ի հաշիվ մյուսների, ձգտելու է հասնել բացարձակ իշխանության, իսկ դա իր հերթին բերելու է գահակալական դաժան մի ընդհարման:

Գլուխ 18
Տրդատ II Մեծի գահակալումը

285 թվականի ամռանը, օգտվելով այն բանից, որ կայսրության հարվածային ուժերը Արևելքից դեպի Բալկանյան թերակղզի են տեղափոխվել, Սավրոմատ IV-ի (մոտ 275 - ուղ. 286) գլխավորությամբ ծովով արշաված Բոսպորի, ինչպես նաև Օսթգոթական թագավորության միացյալ բանակը (մոտ 80.000, այդ թվում գոթեր և ալաններ) հարված հասցրեց Կապադովկիային ու Փոքր Հայքին[1], սակայն, այն բանից հետո, երբ Դիոկլետիանոսը վճռականորեն շարժվեց նորահայտ այս թշնամիների դեմ, սրանք, ինչպես և սպասելի էր, նստեցին իրենց նավերը ու վերադարձան Ղրիմի թերակղզի: Մի նոր հարձակում ևս, սակայն, Սավրոմատ IV-ը ձեռնարկեց արդեն հաջորդ տարի, բայց 286 թվականի գարնանը ինչ-որ տեղ Փոքր Հայքում տեղի ունեցած խոշոր ճակատամարտում Դիոկլետիանոս կայսեր և Տրդատ արքայազնի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 60.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) ծանր պարտության մատնեցին հակառակորդին, ընդ որում մարտից առաջ Տրդատը, փոխարինելով Հռոմեական կայսրության կայսեր, մենամարտեց վերջինիս մարտահրավեր ուղարկած անպարտելի և հզոր ռազմիկի համբավ ունեցող Սավրոմատ IV-ի հետ ու գերեց նրան[2]: Դիոկլետիանոսի և Տրդատի ձեռք բերած հաղթանակը խոշոր նշանակություն ունեցավ, քանի որ դրանից հետո Հռոմեական կայսրությանը պատկանող սևծովյան հարավային ափերի վրա հյուսիսից հարձակում այլևս չեղավ, ինչը կարևոր դեր ունեցավ հետագա գործողությունների հաջողության համար:

Նույն 286 թվականին էլ, երբ սաստվեց կայսրության սևծովյան հարևանը, Դիոկլետիանոսը պատրաստվեց հերթական հարվածը հասցնել Սասանյանների

[1] Կոնստանդին Ծիրանածին «Կայսրության կառավարման մասին», գլուխ 51:
[2] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», գլուխ 39-41, 44-46; Անանուն Եթովպացի «Պատմություն»; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 58; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

տերությանը, ընդ որում տաղանդավոր այս զորավարը, լիովին ըմբռնելով Մարկոս Կարոսի ձեռնարկած գործողության թույլ կողմը, այս անգամ նախատեսել էր, զերծ մնալով ուղղակի հարվածից, Վահրամ II-ին ամենից առաջ զրկել ավագ սերնդի աջակցությունից՝ հետ գրավելով Մեծ Հայքի թագավորությունը և, այնտեղ հաստատելով Խոսրով I Քաջի որդի Տրդատի իշխանությունը, այս թագավորությունը կրկին ընդգրկել Հռոմեական կայսրության շահերի տիրույթ: Այս կապակցությամբ իրավացիորեն ենթադրվում էր նաև, որ այդ պարագայում մեծապես կլուծվեր արդեն նաև Իբերիայի թագավորության դաշնակցության հարցը:

Արդյունքում՝ 287 թվականի գարնանը, ուժերը կենտրոնացնելով Անտիոքում և, կարծես թե, պատրաստվելով կրկնել 283 թվականի արշավանքի երթուղին, Տրդատ արքայազնի ու սպարապետ Արտավազդ Մանդակունու գլխավորությամբ արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 70.000, որից 50.000 հեծյալ), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 7.000), ինչպես նաև հետագայում արշավողներին միացած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 40.000), անակնկալ փոխելով ուղղությունը և մտնելով Մեծ Հայքի թագավորության տարածք, առաջացան Անտիոք-Կոմագենե-Մելիտե-Եփրատի հովտով Դաստարակ բերդ-Նիկոպոլիս-Սատաղ-Սինորա-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Զարեհավան-Մասյացոտն-Արմավիր-Արտաշատ երթուղով՝ մանր մարտերում հաղթելով ու երկրից դուրս մղելով այդ ամենին բացարձակապես անպատրաստ գտնված Մեծ Հայքի թագավորության արքա Ներսեսի գլխավորած Պարսից թագավորության բանակին[1]: Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակված Տրդատ արքայազնի՝ Տրդատ II Մեծի (287-330), իշխանության տակ անցան Մեծ Հայքի բոլոր նահանգները, բացառությամբ Փայտակարանի և Պարսկահայքի, ինչպես նաև Վասպուրականի արևելքի, որտեղ շարունակեց թագավորել իր նախկին տիրույթների մեծ մասից զրկված Ներսեսը: Այս գործողություններում հատկապես աչքի ընկավ Օտա Ամատունին, որը կարողացավ հասնել նրան, որ արքայական գանձարանը չհեռացվեց երկրից և Հայոց նոր արքան ապագա ֆինանսական խնդիրներից զերծ մնաց:

Տրդատ II Մեծը նույնիսկ տաղանդավոր գահակալներից ամենևին էլ ոչ զուրկ իր ժամանակի քաղաքական երկնակամարում աչքի էր ընկնում սեփական արտառոց ունակություններով: Հսկայական ուժի, զորավարական և զորական հմտության, խիզախության ու անձնական մեծ քաջության տեր այս արքան դրա հետ միաժամանակ աչքի էր ընկնում նաև կենդանի խելքով, խորաթափանցությամբ և քաղաքական բացառիկ հեռատեսությամբ, այս արքան կարծես վերջինն էր ու հենց իրենով էլ փակում էր մինչմիջնադարյան Հայոց մեծագույն արքաների շարքը, որոնք մեծ բարձունքների էին հասցրել Հայոց պետականությունը:

Տրդատ II Մեծի հաստատվելը մեծ Հայքի թագավորության գահին և Ներսեսի հեռացվելը նույն այդ գահից անմիջապես բարդացրեց Հայոց արքայի հարաբերությունները Իբերիայի թագավորության ու Միհրան III Մեծի հետ, ընդ որում, եթե Վահրամ II-ը ինչ-որ տեղ, թերևս, կարող էր մխիթարվել այն բանով, որ, չնայած ռազմաքաղաքական դրության ընդհանուր վատթարացմանը, իր հզոր և ինքնիշխան ավագ ազգականներից գոնե մեկն է թուլացել, ապա Միհրան III Մեծի պարագայում վերջինս հիանալի ըմբռնեց սեփական շահերի միանշանակ ոտնահարումը ու անմիջապես էլ սպառնալից դիրք գրավեց Մեծ Հայքի թագավորության նկատմամբ:

288 թվականի գարնանը Միհրան III Մեծի գլխավորած Իբերիայի (մոտ 50.000) ու Պարսից (մոտ 70.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Գուգարքը

[1] Դավիթ Հռոմեացի «Հայոց պատմություն», գլուխ 123; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 82; Անանուն Եթովպացի «Պատմություն»; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 58, 63, 67; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 10; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 8; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 17; Անանուն «Հայոց թագավորների պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 62; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

և նահանջեց[1], որին ի պատասխան էլ, արդեն 289 թվականի գարնանը, Իբերիայի թագավորության հարավը ասպատակեց ու իր հերթին նահանջեց արդեն Տրդատ II Մեծի և սպարապետ Արտավազդ Մանդակունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության (մոտ 60.000) ու Հռոմեական կայսրության (մոտ 70.000) միացյալ բանակը[2]: 290 թվականի գարնանը Միհրան III Մեծը ու Ներսեսը կրկնեցին հարվածն և նահանջեցին[3], սակայն արդեն 291 թվականի գարնանը Հայոց արքան ու Հռոմեական կայսրության ռազմական մեքենան իրենց հերթին պատասխան հարված հասցրին հակառակորդի տարածքին և հերթական անգամ սաստեցին Միհրան III Մեծին[4]: Իբերիայի թագավորության հետ մխացող պատերազմը, թերևս, կշարունակվեր նաև հաջորդ տարիներին, սակայն հենց այդ ժամանակ տեղի ունեցան նոր զարգացումներ, որոնք, կարծես, ինքնըստինքյան հանգեցրին Տրդատ II Մեծի ու Միհրան III Մեծի պայքարը:

293 թվականի գարնանը Վահրամ II-ը կնքեց իր մահկանացուն, որից հետո տեղական ուժերը գահ բարձրացրին նրա փոքրահասակ որդի Վահրամին՝ Վահրամ III-ին (293): Ներսեսը, սակայն, որ, մանավանդ Մեծ Հայքի թագավորության գահից զրկված լինելու հանգամանքով պայմանավորված, նեղված էր և, բացի այդ նաև, չափազանց երկար էր սպասել Սասանյան գահին բազմելու սեփական հերթին, իր փոխարեն սեփական տիրույթների արքա հռչակեց մոռացությունից հանված Մեծ Հայքի թագավորության երբեմնի արքա Խոսրով II-ին, որից հետո առկա բոլոր ուժերով շարժվեց Վահրամ III-ի դեմ: Պարսից թագավորության գահի նոր թեկնածուն գործում էր ամենայն վճռականությամբ և արդյունքում արդեն ամռան կեսերին Սասանյանների գահի հարցը լուծված էր հօգուտ իրեն՝ Պարսից թագավորության արքա հռչակվեց Շապուհ I-ի որդի Ներսեսը (293-302), իսկ դժբախտ Վահրամ III-ը սպանվեց:

Արդյունքում՝ կայսր Դիոկլետիանոսը, առժամանակ գոհ լինելով Արևելքում ընթացող զարգացումներից, բարեկամական մի դեսպանություն ուղարկեց արյաց նորընծա արքայի մոտ և շնորհավորեց վերջինիս՝ Պարսից թագավորության գահի նկատմամբ, ըստ էության, ճանաչելով Ներսեսի իրավունքները: Առժամանակ, կարծես թե, բարեկամաբար էր տրամադրված նաև Ներսեսը, որին մի կողմից պետք էր ամրանալ գահին, իսկ մյուս կողմից էլ՝ զսպել Որմիզդ II-ին և վերացնել սեփական տերության արևելյան սահմաններին ավելի ու ավելի շատ ճնշում գործադրող հոների վտանգը: Այս պայմաններում Տրդատ II Մեծի հետ հաշտվելուց զատ այլ բան անել չէր մնում անել նաև Միհրան III Մեծին, ընդ որում վերջինս հիանալի հասկանում էր, որ սեղմված է հայերի ու հռոմեացիների միջակայքում, հյուսիսից անվերջ սպառնում է Բասիլական թագավորությունը, իսկ հեռավոր Տիզբոնում Սասանյանների գերագույն իշխանությանը հասած սեփական եղբորորդին էլ հազիվ է թե այրվում իրեն օգնելու մարմաջից: Այս կապակցությամբ, որպես հաշտության պայման, Իբերիայի թագավորության արքային արվեց, թերևս, միայն մեկ զիջում՝ Միհրան III Մեծը հռչակվեց Գուգարքի բդեշխ, սակայն փոխարենն ինչպես Գուգարք նահանգը, այնպես էլ նույն նահանգի բդեշխն ընդհանրապես և Միհրան III Մեծը, մասնավորապես, սկսեցին ենթարկվել Մեծ Հայքի թագավորությանն ու նրա տիրակալին: Այսպիսով՝ Միհրան III Մեծը կարող էր իրեն մխիթարել նոր տիտղոսով կամ պաշտոնով, սակայն հայերն էլ շահեցին այն առումով, որ հյուսիսում մշտական խաղաղություն հաստատվեց, իսկ որպես Գուգարքի բդեշխ էլ հանդես եկավ Միհրան III Մեծը՝ դրանով իսկ, որպես Տրդատ II Մեծի ենթակա, ինչ-որ տեղ նույնիսկ Իբերիայի թագավորությունը ենթարկեցնելով Մեծ Հայքի թագավորությանը: Այս առումով հատկանշական է, որ հետագա Հայոց ողջ պաշտոնական գրագրության մեջ Միհրան III Մեծը հանդես է գալիս որպես ընդամենը միայն Հայոց տիրակալին ենթակա

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 63:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

[3] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»:

[4] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

Մեծ Հայքի թագավորության բդեշխ, այն դեպքում, երբ բուն Իբերիայի թագավորությունում վերջինս արքայի տիտղոս էր կրում:

Գլուխ 19
Պարսից թագավորության Մեծ աղետը և Քառասնամյա հաշտությունը

295 թվականին, կարգավորելով գործերը սեփական թագավորության արևելյան սահմաններում, զսպելով Որմիզդ II-ին և նույնիսկ որոշակի օժանդակություն ստանալով հոներից, Ներսեսը խոշոր ուժեր տեղափոխեց իր տերության արևմտյան սահմաններ ու պատրաստվեց հարված հասցնել, կարծես թե, խաղաղորեն տրամադրված հռոմեացիներին և հայերին: Պատերազմը պայթեց 296 թվականի աշնանը, երբ Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000) Խառանի մոտ տարածվող հարթավայրում մի խոշոր հաղթանակ տարավ՝ հերթականությամբ պարտության մատնելով ուժերն աստիճանաբար մարտի մեջ մտցնող Գալերիոս համակայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակի (մոտ 35.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 6.000) սկզբում առաջապահին, հետո հիմնական բանակին, իսկ վերջում էլ՝ վերջապահին[1]: Գալերիոսի բանակի մնացորդները շպրտվեցին Եփրատի աջ ափ, իսկ ողջ Հյուսիսային և Հայոց Միջագետքները ոտնատակ տված ու այնտեղ իր իշխանությունը, կարծես թե, հաստատած Ներսեսն էլ հենց հաջորդ տարի պատրաստվեց լուծել արդեն նաև Մեծ Հայքի թագավորության հարցերը: Վճռական էր տրամադրված, սակայն, նաև Դիոկլետիանոսը, որը, Գալերիոսին ինչպես հարկն է հանդիմանելուց հետո, վերջինիս բանակը նոր ուժերով համալրեց և, տեղյակ լինելով թշնամու հարվածի հիմնական ուղղության մասին, շարժեց դրանք Հայաստանի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

297 գարուն – ***<u>Ոսխայի ճ-մ</u>*** (Արարատ, Բասեն գավառ, Կարինից մոտ 20 կմ արևելք)[2]

Ներսես արքայի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000, մոտ 50 փիղ) ***<u>Տրպատունիք-Թավրիզ-Գաբիթյան-Մարանդ-Գողթն-Նախիջևան-Արած-Ուրծաձոր-Արտաշատ-Մասյացոտն-Զարեհավան-Բագրևանդ</u>*** երթուղով ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք և, ենթարկվելով Տրդատ II Մեծի ու սպարապետ Արտավազդ Մանդակունու գլխավորությամբ նահանջող Մեծ Հայքի թագավորության բանակի (մոտ 70.000) անկանոն հարվածներին, ճամբարեց Բասենում՝ Ոսխա գյուղի մոտակայքում: Այս ընթացքում Գալերիոս համակայսեր գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (25.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000), արշավելով ***<u>Սատաղ-Եկեղիք-Դերջան-Կարին</u>*** երթուղով, Բասենում միացան Մեծ Հայքի թագավորության բանակին: Մարտի նախորդ օրը Գալերիոսը, Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը, ծպտվելով որպես կաղամբավաճառներ, անձամբ մտան թշնամու ճամբար ու հետախուզեցին այն:

I փուլ – Հաջորդ օրը լուսաբացին Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության միացյալ բանակը անակնկալ հարձակվեց թշնամու ճամբարի

---

[1] Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 39; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 25; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9, մաս 25.1; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 25; Զոնորաս «Պատմություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 21; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 39; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 25; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9, մաս 25.1; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 14, 25; Պետրոս Պատրիկոս «Պատմություն», հատված 13; Լակտացիոս «Հալածողների մահվան մասին», գլուխ 9; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 17, գլուխ 5, , գիրք 22, գլուխ 4, գիրք 23, գլուխ 5; Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 63; Զոնորաս «Պատմություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 7): Այս մասին հայտնում է նաև Սինեսիոսը:

վրա: Անակնկալ համակցված հարվածի արդյունքում թշնամու բանակը, նույնիսկ չհասցնելով էլ մարտակարգ ընդունել, գլխովին ջախջախվեց:

II փուլ – Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության միացյալ բանակը հետապնդեց թշնամուն ու ծանր կորուստներ պատճառեց նրան: Ներսեսը վիրավորվեց և հազիվ փրկվեց գերվելուց:

Հայերը կորցրին մոտ 6.000, դաշնակիցը՝ մոտ 6.000 զինվոր, թշնամին՝ մոտ 50.000 սպանված և վիրավոր, մոտ 30.000 գերի: Գերվեցին պարսից արքայի ընտանիքը և կանանոցը, հաղթողների ձեռքն ընկավ նաև պարսից արքայի արքայական գանձարանը, ինչպես նաև Պարսից թագավորության բանակի սրբազան խորհրդանիշը՝ Դիրյաիշ-ի-Կավյանի դրոշը:

Այնպիսի պարտություն, ինչպիսին կրել էր Սասանյանների ռազմական մեքենան հենց նոր ավարտված ճակատամարտում, վերջինս մինչ այդ երբեք չէր կրել: Ըստ էության, առանց լուրջ դաշտային դիմադրության, ընկել էին տասնյակ հազարավոր ռազմիկներ, կորսվել էր սրբազան դրոշը, գերության մեջ էին հայտնվել արյաց արքայի ընտանիքն ու հարեմը, ինչպես նաև հարյուրավոր բարձրաստիճան իշխաններ և զինվորականներ, դե իսկ Ներսեսն ինքն էլ, տանջվելով մարտում ստացած վերքից ու ինքնասիրությանը հասցված լրջագույն հարվածից, հազիվ միայն փրկվել էր փախուստով: Փաստորեն Պարսից թագավորության բանակը ոչ միայն ջախջախիչ պարտություն էր կրել, այլև կրել էր նաև իսկական խայտառակ մի պարտություն, որը, կարծես, ամոքում էր նախորդ բոլոր տասնամյակներում Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի կրած անհաջողությունները և, ընդհակառակը, նսեմացնում էր Պարսից թագավորության ձեռքբերումները:

Ավելին՝ հենց նոր ավարտված ճակատամարտից հետո Ներսես արքայի անկումային տրամադրությունը, իսկ գուցե նաև պետության ռազմական մեքենայի քայքայումն այնքան խորը բնույթ էին ստացել, որ արդյունքում մեկ տարուց էլ քիչ տևած բանակցություններից հետո արյաց արքան, որպեսզի ազատի գերիներին, հետ բերի դրոշը և վերջացնի պատերազմը, համաձայնեց հռոմեա-հայկական կողմի համար ամենաձեռնտու ու իր պետության համար ամենևին էլ ոչ ձեռնտու պայմաններով հաշտություն կնքելուն: Արդյունքում՝ 298 թվականի գարնանը կնքվեց Մծբինի հաշտության պայմանագիրը, երբ կողմերը պարտավորվեցին դրանից հետո 40 տարի շարունակ խաղաղություն պահպանել, Մեծ Հայքի թագավորությունը պահպանեց իր լիակատար անկախությունը ու վերականգնեց տարածքային ամբողջականությունը, Խոսրով II-ի իշխանությունը իր վերջը գտավ, նրա տիրույթները անցան Տրդատ II Մեծին, իսկ Հռոմեական կայսրությանն էլ անցան ողջ Հայոց և Հյուսիսային Միջագետքները, երբ, ըստ էության, վերականգնվեց Հռոմեական կայսրության ու դեռևս Պարթևական թագավորության միջև հաստատված սահմանը 217 թվականի վիճակով: Փաստորեն նախորդ բուռն տասնամյակներից հետո տարածաշրջանում սկիզբ առան համեմատական անդորրի և խաղաղության երկարատև տարիներ, որոնք էլ իրենց հետ բերելու էին մեծամեծ հետևանքներ:

Գլուխ 20
Քրիստոնեության ընդունում որպես Մեծ Հայքի թագավորության պետական կրոն

301 թվականին Տրդատ II Մեծը, իր ժամանակի համար զարմանալի հեռատեսությամբ ընկալելով քրիստոնեության, որպես կրոնի, դերն ու նշանակությունը նախորդ հարյուրամյակում սկիզբ առած և այժմ արդեն բուռն զարգացում ապրող հասարակական նոր հարաբերությունների համատեքստում, իր թագավորության համար առաջինը պատմության մեջ այն հռչակեց որպես պետական կրոն: Դատելով ըստ

ամենայնի՝ Տրդատ II Մեծն իրոք զարմանալի քաղաքական մի հոտառությամբ գիտակցել էր, որ հին կրոնը, մանավանդ թուլացած վերջին տասնամյակներում Մեծ Հայքի թագավորության գահին հաստատված Սասանյան գահակալների բարեփոխումներով և արդյունքում առավել նմանված զրադաշտականությանը, արդեն ոչ միայն մեծապես անընդունելի ու անհասկանալի էր դարձել հայ ժողովրդի մեծ մասի համար, այլև չէր համապատասխանում նաև իր ժամանակի հայերի հոգևոր պահանջմունքներին ամենից առաջ հենց սոցիալական մակարդակում: Երկիրը մուտք էր գործում ֆեոդալական հասարակական հարաբերությունների դարաշրջան, իսկ Հայոց հին հավատքը, ըստ էության, դրա համար չէր: Նույն այս խնդիրն, ի դեպ ասած, հետաձգված հարյուրամյակներով և այդպես էլ չլուծված, սրանից 350 տարի հետո կործանելու էր զրադաշտական պարսկական քաղաքակրթությանը ու բերելու էր նրան, որ այդ քաղաքակրթության ներկայացուցիչները մասսայականորեն ընդունեն իսլամ: Հին աստվածներն այլևս չէին համապատասխանում նոր մարդկանց պահանջներին ու եկավ... նոր մի աստված: «*301 թվականի, երբեմնի Արամ-Րամը, հազարամյակներ շրջագայելուց ու բյուր վերափոխություններից հետո Քրիստոսի կերպարանքով կվերադառնա և պաշտոնապես կհաստատվի Հայաստանում: Նոր կրոնում հայ-արիները՝ հանձինս իրենց երբեմնի խաչի, լուսապսակի, երկնքի արեգակնային որդու և այլ հնագույն տարրերի, կճանաչեն հարազատ սկզբունքները*»[1],-՝ հարյուրամյակներ անց այս մասին կասի Ալեքսանդր Վարպետյանը՝ զարմանալիորեն ճշտորեն բնութագրելով ինչպես քրիստոնեության էությունը, այնպես էլ նրա դերն ու նշանակությունը հայ ժողովրդի համար:

Ինչ վերաբերում է արտաքին հարաբերություններին, ապա Տրդատ II Մեծի կողմից քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն անակնկալ էր նաև Դիոկլետիանոսի համար: Մի կողմից, սակայն, իրեն բնորոշ լայնախոհության պատճառով, իսկ մյուս կողմից էլ մեծ հաշվով դա Մեծ Հայքի ներքին գործը համարելուն հակված կայսրը հարաբերություններն այդպես էլ չսրեց, մանավանդ որ առաջին քրիստոնյա միապետը ամուր էր պահում հռոմեացիների հետ կնքած դաշինքը և հավատարիմ էր դրան:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ նոր կրոնի հաստատումը, չնայած երկրում հանդիպեց որոշակի դիմադրության, բայց գործընթացը մեծ հաշվով անցավ առանց լուրջ ցնցումների: Բանակային ուժերի կիրառման կարիք եղավ, ըստ էության, միայն Տարոնում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Ալեքսանդր Վարպետյան, «Ովքե՞ր են ի վերջոյ արիացիները», Մարսել 1990, էջ 98:

301 – ***<u>Կուառսի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Տարոն)[1]

301 թվականին Մեծ Հայքի թագավորությունը առաջինը աշխարհում քրիստոնեությունը ընդունեց որպես պետական կրոն: Երկրի որոշ մասերում, սակայն, նոր կրոնի տարածումը հանդիպեց խորը դժգոհության, իսկ Տարոնում բանը հասավ զինված դիմադրության: Նպատակ ունենալով ճնշել այն՝ Անգեղյաց իշխանի, Տիրոց Արծրունու, Անդովկ Սյունու, Շահեն Անձևացու, Մոկաց իշխանի և հետևակի հրամանատար Ապահունյաց իշխանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության կառավարական բանակը (մոտ 8.000, որից 4.000 հոգին սրերով զինված հետևակայիններ, 3.300 ծանր հեծյալ, մոտ 700 թեթև հեծյալ) Գրիգոր Լուսավորչի ուղեկցությամբ արշավանք սկսեց դեպի Տարոն: Ի պատասխան դրա՝ Արձան քրմապետի և նրա որդի Դեմետրեի գլխավորած քրմական բանակը (մոտ 8.000) պատրաստվեց դիմադրության, ընդ որում դիմադրությունն առավել լավ կազմակերպելու նպատակով Արձան քրմապետի ջոկատը (400) դիրքեր գրավեց Արձան լեռան վրա՝ միաժամանակ գյուղի մոտ գտնվող այգիներում թողնելով դարան ու սպասելով Աշտիշատից եկող օգնությանը: Այս ընթացքում տեղում իրավիճակին տիրապետելու համար Անգեղյաց իշխանը հիմնական բանակը (մոտ 7.700, որից 3.000 ծանր և մոտ 700 թեթև հեծյալ) ուղարկեց Հարք և շրջակա գավառներ, իսկ ինքը Անդովկ Սյունու, Շահեն Անձևացու, Մոկաց իշխանի ու Գրիգոր Լուսավորչի ուղեկցությամբ մնացած բանակով (300 հեծյալ) մոտեցավ գյուղին և սկսեց բարձրանալ լեռն ի վեր:

I փուլ – Լեռն ի վեր բավականին բարձրացած կառավարական ջոկատը հարձակման ենթարկվեց Արձանի ջոկատի կողմից, որի արդյունքում բռնկվեց համառ մարտ: Չկարողանալով ճշգրիտ որոշել հարձակվողների թիվը և այն համարելով շատ մեծ՝ Անգեղյաց իշխանը իր ջոկատին հրամայեց նահանջել, որից հետո ստեղծված իրավիճակի մասին սուրհանդակների միջոցով տեղեկացրեց հիմնական բանակին:

II փուլ – Անգեղյաց իշխանը Գրիգոր Լուսավորչին Մոկաց իշխանի ուղեկցությամբ ուղարկեց մոտակայքում գտնվող ***<u>Ողական ամրոցը</u>*** (Մշո դաշտի արևմուտք), սակայն վերջիններս Կուառսի մոտից անցնելիս անակնկալ հարձակման ենթարկվեցին այգիներում տեղաբաշխված դարանի կողմից և ի վերջո միայն մեծ դժվարությամբ պատսպարվեցին ամրոցում, որը պաշարվեց քրմական բանակի կողմից:

III փուլ – Պաշարվածներին ստեղծված իրավիճակի մասին հաջողվեց տեղեկացնել Անգեղյաց իշխանին: Վերջինս Ապահունյաց իշխանի հետևազորը ուղարկեց Ողականում պաշարվածներին օգնության, սակայն այն միայն եռօրյա մարտերից հետո կարողացավ լիովին վերացնել ամրոցի պաշարումը:

IV փուլ – Առաջին ընդհարումից 2 օր անց Անգեղյաց իշխանը հետախուզության նպատակով հեծյալ մի ջոկատ ուղարկեց Արձան լեռն ի վեր ու, թեև վերջինիս հաջողվեց պարզել հակառակորդի թվաքանակը, սակայն այն անմիջապես էլ հարձակման ենթարկվեց Արձանի ջոկատի կողմից և ստիպված եղավ նահանջել:

V փուլ – Տեղեկանալով սկսված մարտի մասին՝ Անգեղյաց իշխանը իր տրամադրության տակ մնացած հեծելագնդով յուրայիններին օգնելու նպատակով շարժվեց լեռն ի վեր և հարձակվեց քրմական բանակի վրա: Բռնկվեց համառ մարտ, որի ընթացքում Արձանը մարտակոչ ուղղեց Անգեղյաց իշխանին: Հենց անմիջապես էլ տեղի ունեցած մենամարտում, թեև Արձանին հաջողվեց նիզակի հարվածով ոտքից վիրավորել Անգեղյաց իշխանին, բայց վերջինս այնուհանդերձ հաղթանակ տարավ և գլխատեց իր հակառակորդին:

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

VI փուլ – Տեղ հասավ Աշտիշատից ժամանած քրմական բանակը (5.450) և հարձակվեց Անգեղյաց իշխանի հեծելագնդի վրա: Ստեղծված պայմաններում վերջինս ստիպված սկսեց նահանջել լեռն ի վար, սակայն այս անգամ էլ հարձակման ենթարկվեց Կուառսի այգիներում գտնվող դարանի կողմից, ընդ որում կառավարական բանակը սկսեց հատկապես ծանր կորուստներ կրել կիրճերի վերևից գլորվող հսկայական ժայռաբեկորներից:

VII փուլ – Հալածվելով թիկունքից, ճնշվելով թևերից հարձակման անցած հսկայական ուժերից ու ընկնելով ժայռաբեկորների հարվածների տակ՝ կառավարական բանակը հուսահատ հարձակումով ճեղքեց Արձանի մահից հետո նրա որդի Դեմետրեի կողմից ղեկավարվող քրմական բանակի շարքերը և, հետապնդվելով հակառակորդի կողմից, դժվարությամբ հասավ լեռան գագաթը՝ ընդհանուր հաշվով կորցնելով 220 հեծյալ: Մութն ընկնելուն պես մարտն ընդհատվեց, ինչը հնարավորություն տվեց Անգեղյաց իշխանի հեծելագնդի մնացորդներին պատսպարվել լեռան գագաթում և ծանր հեծելազորին ու Ապահունյաց իշխանին հետևազորին տեղեկացնել ստեղծված իրավիճակի մասին: Տեղեկանալով Անգեղյաց իշխանի հեծելագնդի օրհասական վիճակի մասին՝ վերջիններս արագորեն շարժվեցին օգնության և լուսաբացին տեղ հասան: Իր հերթին գիշերվա ընթացքում քրմական բանակը Տիրակատար քաղաքից և այլ վայրերից ինքն էլ ստացավ համալրում (700 զինվոր ու մոտ 600 աշխարհազորային):

VIII փուլ – Առավոտյան կառավարական բանակը (7.080, որից 3.080 հեծյալ) հարձակվեց քրմական բանակի (6.946) վրա և բռնկված մարտում սկսեց հաղթանակ տանել:

IX փուլ – Այս վճռական պահին հզոր ռազմիկի համբավ ունեցող Հաշտենից իշխանը և նրա գլխավորած ջոկատը (700 հեծյալ) անցան քրմերի կողմը ու կողքից հարվածեցին կառավարական բանակին: Մարտն ընդունեց խիստ համառ բնույթ, որի ընթացքում Անդովկ Սյունին, մարտադաշտում հանդիպելով քաջաբար մարտնչող և իրեն մարտակոչ նետող Հաշտենից իշխանին, մենամարտեց վերջինիս հետ: Մենամարտի ընթացքում մարտական մուրճով հզոր հարված հասցնելով հակառակորդի սաղավարտին ու հետապնդելով նրան սկզբում մինչև մոտակա բլուր, իսկ հետո՝ դեպի Իննակյան վանք, Սյունյաց իշխանը տապալեց վերջինիս ձիուց և ի վերջո գլխատեց: Այս ընթացքում Տիրոց Արծրունին մարտադաշտում հանդիպեց Աշտիշատի Մեստակես քրմապետին, հետապնդեց վերջինիս մինչև մոտակա անտառի ծայրը, որտեղ էլ, թեև քրմապետին հաջողվեց խոցել իր հակառակորդի ազդրը, սակայն վերջինս ի վերջո գլխատեց քրմապետին: Դրանից հետո Արծրունյաց իշխանը սկսեց հետապնդել Արջուի իշխանին և անակնկալ հարձակվեց իր թաքնված հակառակորդի վրա: Արդյունքում՝ վերջինս ընկավ ձիուց մի սուր ճյուղի վրա և զոհվեց: Իր հերթին Դեմետրեն մենամարտում սպանեց Մոկաց իշխանի որդուն, որից հետո սկսեց մենամարտել Անգեղյաց իշխանի հետ, սակայն մենամարտի ընթացքում Տիրոց Արծրունին հարձակվեց Դեմետրեի վրա և սպանեց նրան: Ի վերջո, արդեն առանց առաջնորդների մնացած քրմական բանակը դադարեցրեց դիմադրությունը:

Կառավարական բանակը կորցրեց մոտ 400, հակառակորդը՝ մոտ 638 զինվոր:

Գլուխ 21
Դիոկլետիանոսի Մեծ քաոսը

298 թվականին կնքված Մծբինի հաշտության պայմանագիրը ընդամենը հետաձգեց, բայց ոչ մի կերպ չվերացրեց այն խորը հակասությունները, որ կային երկարատև քաղաքական ցնցումներից հետո մեջքն արդեն ուղղած Հռոմեական

կայսրության, ինչպես նաև Պարսից թագավորության միջև, ընդ որում, եթե հռոմեա-հայկական կողմը, մեծապես գոհ մնալով հաշտության պայմաններից, ձգտում էր հնարավորինս երկար պահպանել ստեղծված վիճակը, ապա պարտված ու ստորացված, սակայն չընկճված պարսկական կողմը այրվում էր կորցրածը հետ բերելու մարմաջից: Ինչ վերաբերում է հնարավորությանը, ապա այն իրեն երկար սպասեցնել չտվեց, քանզի անորոշ լիազորություններով ավագ ու կրտսեր համակայսրերի տարօրինակ այն համակարգը, որը ստեղծել էր Դիոկլետիանոսը, շուտով ուղղակի դադարեց գործել:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 305 թվականի մայիսի 1-ին Դիոկլետիանոսը կամավոր, իսկ Մաքսիմիանոսը՝ Դիոկլետիանոսի ճնշման արդյունքում, հրաժարվեցին օգոստոսների կոչումից և դրանք փոխանցեցին իրենց կեսարներին՝ Դիոկլետիանոսը՝ Գալերիոսին, իսկ Մաքսիմիանոսը՝ Կոնստանդիոս I-ին: Դրանից հետո օգոստոսի կոչումին արժանացած Գալերիոսը իր կեսար նշանակեց Մաքսիմինոս II Դազային (305-313), իսկ Կոնստանդիոս I-ն էլ՝ Վալերիոս Սևերոսին (305-307): 306 թվականի հուլիսի 25-ին, սակայն, օգոստոս Կոնստանդիոս I-ը մահացավ և դրանից հետո էլ հենց ամեն ինչ իրար խառնվեց:

Ենթադրվում էր, որ Կոնստանդիոս I-ին պետք է հաջորդի նրա կեսար Վալերիոս Սևերոսը և սկզբում հենց այդպես էլ եղավ, սակայն, չէր հասցրել դեռ օգոստոս Վալերիոս Սևերոսը իրեն կեսար նշանակել, երբ ապստամբեց ու իրեն կայսր հռչակեց Կոնստանդիոս I-ի որդի Կոնստանդինը՝ Կոնստանդին I Մեծը (306-337): Վերջինս մինչ այդ Արևելքում ծառայել էր Դիոկլետիանոսի հրամանատարության տակ և, գտնվելով այդ արտառոց մարդու կողքին, նրանից, ի բարեբախտություն իրեն, պետական կառավարման հարցերում վերցրել էր միայն դրականը: Միաժամանակ Կոնստանդին I Մեծի օգտին էր նաև այն հանգամանքը, որ իր հանգուցյալ հայրը սեփական լավ կառավարման արդյունքում բանակում ու ժողովրդի մեջ և հատկապես կայսրության արևմտյան հատվածում հսկայական հեղինակություն ուներ, իսկ դրան հակառակ էլ՝ անգույն Վալերիոս Սևերոսը որևէ հեղինակություն չուներ: Ավելին, նույն 306 թվականի երկրորդ կեսին, երբ դեռ չէր պարզվել, թե Արևմուտքում իշխող տիրակալներից ո՞րն է առաջնայինը՝ Վալերիոս Սևերոսը թե՞ Կոնստանդին I Մեծը, այդպես էլ իշխանությունից հրաժարվել չկարողացած Մաքսիմիանոսի դրդումներով Ապենինյան թերակղզում ոտքի կանգնեց վերջինիս որդի Մաքսենցիոսը (306-312), ինչի արդյունքում Գալլիայում գտնվող Վալերիոս Սևերոսը հայտնվեց Բրիտանիայում գործող Կոնստանդին I Մեծի և Ապենինյան թերակղզում գտնվող Մաքսենցիոսի մեջտեղում: Ահա լարված հենց այս պահին էր, որ 306 թվականի աշնանը Պարսից թագավորության նոր արքա և Քուշանշահերի թագավորության նախկին արքա Որմիզդ II-ը (302-309), որը, փոխարինելով կրած ծանր պարտությունից հետո այդպես էլ ուշքի չեկած Ներսեսին ու Քուշանշահերի թագավորության արքա հռչակելով իր որդի Պերոզ II-ին (302-330), ձգտում էր փոփոխել իրերի ստեղծված դրությունը, խոշոր մի բանակով ասպատակեց Հայոց Միջագետքը և Հյուսիսային Ասորիքը ու նահանջեց[1]՝ կարծես ցանկանալով ցույց տալ, որ պարսիկները ամենևին էլ չեն հաշտվել ստեղծված իրավիճակի հետ:

306 թվականի վերջինս Կոնստանդին I Մեծը Մաքսենցիոսի հետ համաձայնության եկավ ընդդեմ Վալերիոս Սևերոսի, ընդ որում Վալերիոս Սևերոսի հարվածը Հռոմում ամրացած Մաքսենցիոսին էլ իր հերթին որևէ արդյունք չտվեց: Ավելին, Ռավեննա նահանջած Վալերիոս Սևերոսը, ենթարկվելով սեփական խաղը սկսած Մաքսիմիանոսի դրդումներին, ի վերջո հանձնվեց Մաքսենցիոսի ողորմածությանը և արդեն 307 թվականի սեպտեմբերի 30-ին Հռոմում սպանվեց: Նույն տարում էլ իրենց օգոստոսներ հռչակեցին ինչպես Մաքսիմիանոսը, այնպես էլ Մաքսենցիոսը, ընդ որում որպես օգոստոսներ գործում էին նաև Գալերիոսն ու Կոնստանդին I Մեծը: Կեսարի դերում առժամանակ մնաց միայն Մաքսիմինոս II Դազան:

308 թվականին, ցանկանալով այնուհանդերձ կարգի գցել սեփական համակարգը,

[1] Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»:

բոլոր պաշտոններից հրաժարված, սակայն դեռևս մեծ հեղինակություն վայելող Դիոկլետիանոսը, ինչպես նաև սեփական խաղը խաղալ փորձող Մաքսիմիանոսը իրար բերեցին բոլոր տիրակալներին և ի վերջո համաձայնության եկան իշխանության նոր բաժանման շուրջ: Արդյունքում որոշվեց, որ Արևմուտքում օգոստոս կլինի Հայոց արքա Տրդատ II Մեծի լավ բարեկամ Լիցինիոսը (308-324), որի կեսար կնշանակվի Կոնստանդին I Մեծը, Արևելքում էլ օգոստոս կլինի Գալերիոսը, իսկ նրա կեսար էլ՝ Մաքսիմինոս II Դազան: Որոշվեց նաև, որ, ինչպես և առաջ, Մաքսիմիանոսը պետք է հեռանա գործերից, իսկ Մաքսենցիոսն էլ հայտարարվեց բռնատիրող:

Ձեռք բերված համաձայնությունը, սակայն, ըստ էության, միայն ձևական բնույթ ուներ, քանի որ Ապենինյան թերակղզուն և Հյուսիսային Աֆրիկային փաստացի տիրող Մաքսենցիոսը որևէ կերպ չէր պատրաստվում զիջել դիրքերը, նրա հայր Մաքսիմիանոսն իր հերթին որևէ ցանկություն չուներ դուրս մնալ խաղից, Կոնստանդին I Մեծը որևէ հիմք չէր տեսնում ստորադասվել Լիցինիոսին, իսկ Մաքսիմինոս II Դազան էլ, ցանկանալով դառնալ օգոստոս, իր հերթին իրեն համարում էր անարժանիորեն զրկված: Արդյունքում՝ փոխադարձ կասկածներն և դժգոհություններն ի վերջո բերեցին նրան, որ 309 թվականին Կոնստանդին I Մեծին և Մաքսիմինոս II Դազային տրվեցին օգոստոսի տիտղոսներ: Հետագա մի քանի տարում, սակայն, գերառատ համակայսրերը պակասեցին: Այսպես, որդու հետ անհարթ հարաբերություններ ունեցող Մաքսիմիանոսն ի վերջո անցավ Կոնստանդին I Մեծի տիրապետության տակ գտնվող տարածքներ և 310 թ-ի հուլիսին վերջինիս կողմից հենց այստեղ էլ սպանվեց, Գալերիոսը բնական մահով մահացավ 311 թվականի մայիսի 5-ին, իսկ 312 թվականի հոկտեմբերի 28-ին էլ նույն Կոնստանդին I Մեծը Հռոմի մոտ գտնվող և Տիբեր գետի վրա ձգվող Մալվինյան կամրջի մոտակայքում տեղի ունեցած վճռական ճակատամարտում հաղթեց Մաքսենցիոսին, որը դիմեց փախուստի, սակայն կամրջից ընկավ գետը ու խեղդվեց:

Կորցրածը հետ բերելու հետ կապված գաղափարները, որոնք Պարսից թագավորությունում արտացոլվեցին դեռևս 306 թվականին, հատկապես բուռն զարգացում ապրեցին Որմիզդ II-ի որդի և հաջորդ, Սասանյանների գահատոհմի ամենաակնառու գահակալներից մեկը հանդիսացող Շապուհ II-ի (309-379) օրոք: Շապուհ II-ի հայրը զոհ էր գնացել սեփական իշխանների հղացած դավադրությանը դեռ այն ժամանակ, երբ ապագա այս տիրակալը գտնվում էր մոր արգանդում, սակայն դա չխանգարեց նրան, որ Պարսից թագավորության ռազմաքաղաքական ավագանու ազդեցիկ խմբավորումներից մեկը, այն բանից հետո, երբ իր ժամանակի բժշկական գիտելիքների կիրառմամբ պարզվեց, որ դեռևս չծնված մանկիկը արական սեռի է, գահից հեռացնելով և սպանելով Պարսից հերթական արքա, Որմիզդ II-ի որդի Ատրներսեհին (309), կուրացնելով վերջինիս փոքր եղբորն ու մյուս եղբորն էլ ստիպելով ապաստանել հռոմեացիների մոտ, «արյաց արքա» հռչակի հենց դեռևս մոր արգանդում գտնվող քուշանուհու այդ որդուն, իսկ Շապուհ կոչված նորածնի լույս աշխարհ գալն էլ, որը տեղի ունեցավ այս դեպքից մի քանի ամիս հետո, արդեն գործնականում արդարացրեց հիշատակված խմբավորման սպասելիքները: Մինչ Շապուհ կոչված նորածինը կաներ իր կյանքի առաջին քայլերը կամ նույնիսկ խոսել կսովորեր, սակայն, տարածաշրջանում սկսեցին զարգանալ նորանոր իրադարձություններ: Խոսքն ամենից առաջ կրկին վերաբերում էր Հռոմեական կայսրությանը:

Շապուհ II-ի ծննդյան և իշխելու առաջին տարիներին Հռոմեական կայսրությունում դեռևս շարունակվում էր 305 թվականից սկիզբ առած գահակալական դաժան ներքաղաքական պայքարը, երբ իշխանության տենչով բռնկված մեծաքանակ կեսարներն ու օգոստոսները փորձում էին հաստատել իրենց միահեծան իշխանությունը և այդ ընթացքում դաժանորեն ոչնչացնում էին մեկը մյուսին: Արդյունքում, «զինվորական կայսրերի» «լավագույն» ավանդույթների ոգով, Դիոկլետիանոսի հրաժարականից հետո ևս գրեթե երկու տասնամյակ Հռոմեական կայսրությունը մնաց գահակալական պայքարի քաոսի մեջ, իսկ այդ հանգամանքն էլ ոչ միայն կյանք արժեցավ իր այդքան

ձգտած հանգիստը այդպես էլ վայելել չհասցրած Դիոկլետիանոսին, որին 311 թ-ի դեկտեմբերի 11-ին ուղղակի սպանեցին, այլև հնարավորություն տվեց պարսիկներին ուղղել մեջքը:

312 թվականի վիճակով Հռոմեական կայսրության տարածքում, ըստ էության, մնացել էին երեք օգոստոսներ՝ Կոնստանդին I Մեծը, որը իշխում էր Արևմուտքում, Լիցինիոսը, որն իր իշխանության տակ ուներ Բալկանյան թերակղզին, ինչպես նաև Մաքսիմինոս II Դազան, որը տիրում էր Փոքր Ասիային: Այսպիսով՝ Մաքսիմինոս II Դազան վարում էր կայսրության արևելյան գործերը, սակայն դրա հետ միաժամանակ վերջինս նաև անձնական շատ վատ հարաբերություններ ուներ Հայոց արքայի հետ, իսկ այն հանգամանքն էլ, որ Տրդատ II Մեծը ժամանակին պատկանելիս էր եղել Դիոկլետիանոս կայսեր շրջապատին, որի մեջ էին նաև այդ ժամանակ արդեն մահացած Գալերիոս համակայսրը, ինչպես նաև այժմ Բալկանյան թերակղզում իշխող Մաքսիմինոս II Դազայի հակառակորդ Լիցինիոսը, ավելի էր սրում հարաբերությունները:

312 թվականի ամռանը Մաքսիմինոս II Դազան, պատրվակ բռնելով Փոքր Ասիայի արևմուտքում գործող ավազակախմբերի առկայությունը, Տրդատ II Մեծից պահանջեց վերջիններիս դեմ պայքարում օժանդակել իրեն: Արդյունքում՝ Սարգիս զորավարի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (40 հեծյալ), հասնելով դեպքի վայր, մանր մարտերում ոչնչացրեց իրենց իրոք բավականին ազատ զգացող տեղում գործող ավազակախմբերին (ընդհանուր՝ մոտ 1.000)՝ վերացնելով դրանց գործունեության արդյունքում ստեղծված պարենային ճգնաժամը[1]: Հայերի փայլուն գործողությունները, սակայն, Մաքսիմինոս II Դազայի միայն զայրույթն ու նախանձը առաջացրին և արդյունքում վերջինս, հրավիրելով մի խնջույքի, նենգորեն ոչնչացրեց Հայկական օժանդակ հեծելագնդի անդամներին, որոնցից փրկվեց միայն մեծ դժվարությամբ Մեծ Հայքի թագավորություն վերադարձած Սարգիսը, որը ճակատագրական հրավերքից կարողացավ խուսափել միայն իր սիրուհու կողմից ժամանակին իրեն փոխանցված տեղեկատվության շնորհիվ: Փաստորեն Հռոմեական կայսրության համակայսրը կոպտորեն և աննախադեպ ձևով խախտել էր հայ-հռոմեական դաշինքի պայմանները, սակայն, չբավարարվելով դրանով, վերջինս շուտով իրար բերեց իր բոլոր ուժերը և պատրաստվեց ներխուժել արդեն բուն Մեծ Հայքի թագավորության տարածք: Ստեղծված պայմաններում այլ բան չէր մնում անել նաև հայերին, քան զենքի դիմելն էր, և ահա արդեն 312 թվականի աշնանը[2] Տրդատ II Մեծի ու սպարապետ Արտավազդ Մանդակունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 100.000) Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմաններում, հավանաբար Դերջանում, ծանր պարտության մատնեց Մաքսիմինոս II Դազա համակայսեր գլխավորությամբ Սատաղից առաջխաղացած Հռոմեական կայսրության բանակին (մոտ 100.000[3])[4]:

---

[1] Անանուն Եթովպացի «Պատմություն»:

[2] Այս ճակատամարտի թվականի մասին Եվսեբիոս Կեսարացին ոչինչ չի ասում, սակայն վերջինս տրվել է այն հիմնավորմամբ, որ հենց 312 թվականին Հռոմի արևելյան պրովինցիաներում լիակատար իշխանության հասած Մաքսիմինոս II Դազան հալածանքներ սկսեց քրիստոնյաների դեմ: Կարելի է կարծել, որ արդեն իսկ չարացած լինելով քրիստոնյաների, հետևաբար նաև Մեծ Հայքի թագավորության վրա, վերջինս մարտական գործողություններ է սկսել Մեծ Հայքի դեմ Սարգսի գլխավորած հեծելագնդի հետ կապված էպիզոդից, ինչպես նաև այն բանից հետո, երբ Տրդատ II Մեծը մերժել է նրա պահանջը ռազմական օգնություն ցույց տալ իրեն Հռոմի կենտրոնական պրովինցիաներում լիակատար իշխանության հասած Տրդատ II Մեծի երբեմնի ընկեր ու բարեկամ Լիցինիոսի դեմ մղվող պայքարում: Հայտնի է, որ 311 թվականին Մաքսիմինոս II Դազայի և Լիցինիոսի միջև բանը ընդհարման չհասավ ու նրանք համաձայնության եկան ազդեցության ոլորտների բաժանման հարցում: Այս ամենի ֆոնի վրա կարելի է կարծել, որ հենց դրանից հետո է Դազան մարտական գործողություններ սկսել Մեծ Հայքի դեմ: Պետք է նշել նաև, որ Հռոմեական կայսրության բանակի երթուղին կոնկրետ հայտնի չէ, սակայն ես առաջնորդվում եմ այն ենթադրությամբ, որ Հռոմեական կայսրության բանակը սովորաբար այդ երթուղով էր մտնում Մեծ Հայք:

[3] Գրականության մեջ միանշանակ կարծիք չկա 300-337 թվականներին Հռոմեական կայսրության լեգեոնների քանակի մասին: Սակայն առկա տվյալների վերլուծության արդյունքում կարելի է մոտավորապես ասել, որ քննարկվող ժամանակաշրջանում Հռոմն ուներ.

1. 41 լեգեոն: Սրանցից 30-ը նախկինում գոյություն ունեցած, իսկ 11-ը՝ նոր կազմավորված լեգեոններն էին: Այս լեգեոնները կազմված էին 7.000 լեգեոներներից, որոնցից զգալի թիվ էին կազմում հեծյալները, ունեին «կոմիտատես»-ի կարգավիճակ և հանդիսանում էին բանակի հիմքն ու նրա հիմնական հարվածային ուժը:

2. 24 լեգեոն: Սրանք նոր էին կազմավորվել, մեծապես համալրվում էին պրովինցիաների դաշնակից ռազմիկներից, ունեին «պսևդոկոմիտատես»-ի կարգավիճակ և կազմված էին 3.000 լեգեոներներից՝ իրենց կազմում գրեթե չունենալով հեծյալներ: Նրանց հիմնական խնդիրն էր կայսրության սահմանների պաշտպանությունը և մինչև հիմնական ուժերի տեղ հասնելը թշնամու առաջխաղացման կասեցումը:

Հայերի դեմ իրականացված հարձակումը վերջացել էր խայտառակ անհաջողությամբ, սակայն Մաքսիմինոս II Դազան արդեն ոչ ուժ և ոչ էլ ժամանակ չուներ շարունակելու մարտական գործողությունները, քանզի 313 թվականի սկզբին վաղուց ի վեր թաքնված ատելությունը բացահայտ տեսք ընդունեց նաև Լիցինիոսի պարագայում ու պատերազմ բռնկվեց արդեն նաև վերջինիս դեմ: Ստեղծված պայմաններում Տրդատ II Մեծին իր հերթին այլ բան չէր մնում անելու, քան աջակցել իր հին ընկեր և բարեկամ Լիցինիոսին:

Արդյունքում՝ 313 թվականի գարնանը և ամռանը նույն Սարգսի գլխավորությամբ արշաված Մեծ Հայքի թագավորության հեծելազորը (մոտ 30.000) ասպատակեց Կապադովկիան ու Կիլիկիան[2]: Մաքսիմինոս II Դազան, որը ողջ հույսը դրել էր Լիցինիոսին հաղթելու և հետո նոր միայն Հայոց արքայի վրա հարձակվելու վրա, իր 70.000 հոգանոց բանակով ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներով (մոտ 6.000) 313 թվականի մայիսի 1-ին Սիրենյան դաշտի ճ-մ-ում (= Հելեսպոնտոսի ճ-մ) (Թրակիա, Բյուզանդիոնից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտք) ծանր պարտություն կրեց Լիցինիոսի բանակից (30.000)[3], որից հետո, կորցրած ամեն ինչ, ապաստանեց Կիլիկիայում: Դրանից հետո, արդեն 313 թվականի հունիսին, Կիլիկիա ներխուժած Լիցինիոսի բանակը (մոտ 100.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000), ինչպես նաև Սարգսի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 30.000) Մաքսիմինոս II Դազայի բանակից (մոտ 1.000) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 1.000) պաշարեցին Տարսոնը, ինչի արդյունքում Մաքսիմինոս II Դազան ինքնասպան եղավ, քաղաքի կայազորը հանձնվեց, իսկ Լիցինիոսը դարձավ Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաների միանձնյա տիրակալ[4]՝ կիսելով իշխանությունը կայսրության արևմտյան մասում միանձնյա իշխող Կոնստանդին I Մեծի հետ: Մի պահ թվում էր, թե երիտասարդությունը արդեն վաղուց իսկ հետևում թողած Հայոց արքայի տիրույթների սահմաններում խաղաղություն է հաստատվել, սակայն շուտով պարզվեց, որ այդ հույսերին վիճակված չէ կյանքի կոչվել:

Գլուխ 22
Հյուսիսային II պատերազմը

310-ական թվականների սկզբի վիճակով Իբերիայի թագավորության երկարակյաց արքա Միհրան III Մեծը, որն ինքն էլ վաղուց արդեն երիտասարդ չէր, բավականին ժամանակ էր արդեն, որ հաշտվել էր Մեծ Հայքի թագավորության արքա Տրդատ II Մեծի հետ՝ որպես Իբերիայի թագավորության պետական կրոն ընդունելով քրիստոնեությունը և ստանալով Հայոց արքայի աջակցությունը: Ավելին, այս արքան, փոքր որդուն ամուսնացնելով Հայոց արքայի աղջկա հետ և վայելելով վերջինիս աջակցությունը, արդեն երկար տարիներ էր, որ համառ ու փոփոխակի հաջողությամբ պայքար էր մղում հյուսիսից իր թագավորության վրա հարձակվող Բասիլական և Ալանական թագավորությունների դեմ: III դարի երկրորդ կեսին այդ պայքարում Իբերիայի թագավորությանը զգալի աջակցություն էր ցույց տալիս Պարսից թագավորությունը,

---

Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության բանակն ուներ 359.000 լեգեոներ: Սակայն, հաշվի առնելով այն, որ այս ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության կայսրությունը, հետևաբար նաև բանակը, բաժանված էր 3 կայսրերի միջև, կարելի է ասել, որ նրանցից յուրաքանչյուրի տրամադրության տակ կար մոտ 120.000 լեգեոներ:
Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, անմիջականորեն Մեծ Հայք ներխուժած Մաքսիմինոս II Դազայի բանակը կարող էր կազմել մոտ ***100.000*** լեգեոներ:

[1] Եվսեբիոս Կեսարացի «Եկեղեցական պատմություն», գիրք 9, գլուխ 8:

[2] Անանուն Եթովպացի «Պատմություն»:

[3] Լակտացիոս «Հալածողների մահվան մասին», գլուխ 45, գլուխ 46, մաս 1, 8-12, գլուխ 47; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 41; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 77; Սեբեոս «Պատմություն», գլուխ 46:

[4] Լակտացիոս «Հալածողների մահվան մասին», գլուխ 49; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 41; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 40; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 28; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10 գլուխ 4; Անանուն Եթովպացի «Պատմություն»; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 59; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 19:

սակայն այժմ Միհրան III Մեծը մնացել էր միայնակ, իսկ հյուսիսից եկող հարվածն արդյունավետ հետ մղելու համար էլ նրա թագավորության ուժերը քիչ էին: Սրան հակառակ, ուժեղացել էր Բասիլական թագավորությունը, որը, շարունակելով տիրել Նախակովկասյան տափաստաններին և իրեն ենթակա Ալանական թագավորության միջոցով ազդեցության տակ պահելով նաև Կովկասյան լեռնաշղթայի մարտունակ լեռնականներին, իրենից զգալի ուժ էր ներկայացնում:

Այս առումով պետք է ավելացնել նաև, որ բասիլների հզորությունը մեծապես պայմանավորված էր նաև արևելքից եկող Հոնական տերության կազմակերպած ճնշումով, երբ բասիլների ազգակից տարբեր ցեղեր, չհամակերպվելով հոների իշխանության հետ, անցնում էին Վոլգան և հաստատվում Բասիլական թագավորությունում: 310-ական թվականների սկզբի վիճակով Բասիլական թագավորության գլուխ կանգնած էր Գեդռեհոն I-ը (մոտ 300 - ուղ. 314), ընդ որում բացառված չէ, որ սա ոչ թե հատուկ անուն է, այլ՝ տիտղոս, սակայն, այսպես թե այնպես, այս անձնավորությանն այլ կերպ կոչել ուղղակի հնարավոր չէ:

313 թվականի աշնանը[1], երբ դեռ նոր էին դադարել Մաքսիմինոս II Դազայի հարուցած հուզումները և բոլորը ձգտում էին խաղաղության, Գեդռեհոն I-ի գլխավորած Բասիլական ու Ալանական թագավորության միացյալ բանակը (մոտ 30.000, այդ թվում խազարներ, հոներ, լեզգիներ, դուրձուկներ և դիդոներ), Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժելով Իբերիայի թագավորության տարածք, Միհրան III Մեծի գլխավորությամբ նահանջող ուժերին հետապնդելով հասավ մինչև Գուգարք, որտեղ ապաստանել էր Իբերիայի թագավորության արքան՝ փաստորեն սկիզբ դնելով Հյուսիսային II պատերազմին (313-315)[2]: Այստեղ, սակայն, Ապահունյաց իշխանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (30.000) հաղթեց և հետ շպրտեց առաջխաղացած հակառակորդին, ընդ որում, հետապնդելով վերջինիս՝ Հայկական բանակը ազատեց գերիներին ու հետ խլեց ավարի մի մասը: Ստեղծված պայմաններում, վերականգնելով Միհրան III Մեծի իշխանությունը իր թագավորության վրա, միաժամանակ Տրդատ II Մեծը, հետագա ներխուժումները կանխելու նպատակով, Աղձնիքի Դրաստամատ իշխանի գլխավորությամբ Գուգարքում թողեց ուժեղ սահմանապահ զորախումբ[3]:

314 թվականի գարնանը Գեդռեհոն I-ի գլխավորությամբ Ալանաց դուռ լեռնանցքից կրկին ներխուժած Բասիլական և Ալանական թագավորության միացյալ բանակը (մոտ 30.000, այդ թվում խազարներ, հոներ, լեզգիներ, դուրձուկներ և դիդոներ) Միհրան III Մեծին հերթական անգամ ստիպեց նահանջել Մեծ Հայքի թագավորության ուղղությամբ: Թշնամին, սակայն, այս անգամ արդեն կանգ չառավ և մտավ Հայոց թագավորության տարածք, ընդ որում, օգտվելով կաշառված և իր արքային դավաճանած Աղձնիքի Դրաստամատ իշխանի թողտվությունից, Գեդռեհոն I-ի գլխավորած ուժերը հասան Տուրուբերանի նահանգի Տարոն գավառ[4]:

Նույն այս ժամանակ Տարոնում էր գտնվում նաև Հայոց արքան, որը պատրաստվում էր մեկնել Հռոմեական կայսրություն: Դատելով ըստ ամենայնի, Տրդատ II Մեծն արդեն

---

[1] Այս ճակատամարտի թվականը պարզվում է Հովհան Մամիկոնյանի (գիրք 1, գլուխ 4) այն հաղորդման շնորհիվ, ըստ որի. «հենց այդ ժամանակ» Տրդատ II Մեծին լուր հասավ, որ Կոնստանդին I Մեծը մկրտվել է որպես քրիստոնյա: Հայտնի է, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 313 թվականին:

[2] Հյուսիսային II պատերազմը ավանդականորեն համարվել է վիպական և ուսումնասիրության չի ենթարկվել, ինչը սխալ է: Հովհան Մամիկոնյանի կողմից տրվող այս պատերազմի ճակատամարտերի նկարագրությունը դրանք առասպել ընդունելու իրոք որևէ հիմք չի թողնում, քանի որ նկարագրությունները իրենց բնույթով նման են մեր պատմիչների կողմից նկարագրված այն բազում ճակատամարտերին, որոնք երբևէ առասպելական լինելու կասկած չեն առաջացրել: Իր հերթին այս իրադարձությունները, որոնց թիվը հնարավոր է ասել խիստ որոշակիությամբ (այս մասին մանրամասն՝ ստորև) իրենց ճշգրիտ տեղն են գտնում նաև տարածաշրջանային իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա դիտարկելիս: Ըստ «Քարթլիս Ցխովրեբա»-ի (Լեոնտիոս Մրովելի) Իբերիայի արքա Միհրան III Մեծը III դարի վերջին և IV դարի սկզբին համառ և փոփոխակի հաջողությամբ պայքար էր մղում հյուսիսից կատարվող ներխուժումների դեմ: Վրացական աղբյուրը ուղղակիորեն չի խոսում Իբերիայի արքայի որևէ խոշոր պարտության մասին, սակայն, ըստ Հովհան Մամիկոնյանի ուղղակի վկայության, Միհրան III Մեծը նահանջել է դեպի Մեծ Հայքի թագավորության տարածք և օգնություն է խնդրել Տրդատ II Մեծից, ինչը վկայում է նրա կրած անհաջողության մասին: Իր հերթին Իբերիայի արքայի այս արարքի հետևանքը եղավ այն, որ, հետապնդելով վերջինիս, հյուսիսականները հարձակվեցին Մեծ Հայքի թագավորության վրա՝ սկսելով Հյուսիսային II պատերազմը:

[3] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

[4] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

տեղյակ էր Միլանի էդիկտի մասին և, ինքը լինելով քրիստոնյա միապետ, սակայն դեռևս, ըստ երևույթին, լավ չպատկերացնելով վիճակը կայսրությունում, փորձում էր անձնական այցելությամբ պարզել իրականությունը: Դատելով ըստ ամենայնի՝ Հայոց արքան ցանկանում էր ամենից առաջ տեսակցել իր հին բարեկամ Լիցինիոսի հետ, մանավանդ որ այլ կերպ, ըստ էության, չէր էլ կարող լինել, քանզի Արևելքում տիրում էր հենց այս տիրակալը: Անակնկալ հարձակումը, սակայն, փաստորեն խախտեց Հայոց արքայի ծրագրերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

314 գարուն – ***<u>Կուառս գյուղի ճ-մ</u>***[1]

Առաջ անցնելով Մեծ Հայքի սահմանապահ բանակից՝ Գեդռեհոն Ի-ի գլխավորած Բասիլական և Ալանական թագավորությունների միացյալ բանակը (58.000, այդ թվում խազարներ, հոներ, լեզգիներ, դուրձուկներ և դիդոներ) սկսեց մոտենալ ***<u>Տարոնին</u>***՝ նպատակ ունենալով ազատել Ողական ամրոցում պահվող գերիներին: Կռահելով թշնամու շարժման ուղղությունը՝ Տրդատ II Մեծի, Անգեղյաց իշխանի, Անդովկ Սյունու, Սմբատ Բագրատունու և Գարջույլ Խորխոռունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (30.000, այդ թվում Մաղխազական գունդը) ևս մտավ ***<u>Տարոն:</u>*** Շուտով պարզվեց, որ Հայկական բանակի հրամանատարությունը իրոք չէր սխալվել, քանի որ կարճ ժամանակ անց Տարոն մտավ նաև թշնամու բանակը և, արդեն գիշերով մոտենալով գյուղին, պաշարեց այն, ընդ որում թշնամու հետևակը պաշարումն իրականացրեց արևմուտքից, իսկ հեծելազորը՝ հարավից: Տեղեկանալով թշնամու մոտենալու մասին՝ հայ իշխանները առաջարկեցին գիշերային հարձակում կազմակերպել, սակայն Տրդատ II Մեծը մերժեց այդ առաջարկը՝ նշելով, որ դա կարող է վտանգավոր լինել, քանի որ թշնամու իրական թիվը անհայտ է: Նույն գիշերն էլ Սյունյաց գնդի ռազմիկները բռնեցին մի քանի գերիների, որոնցից էլ հայտնի դարձավ առաջիկա ճակատամարտում թշնամական բանակի թվական կազմը և մարտական գործողությունների նախատեսած պատկերը: Հիմք ընդունելով առկա տեղեկատվությունը՝ Հայոց արքան կատարեց Մեծ Հայքի թագավորության բանակի տեղաբաշխում: Առաջին ջոկատը (6.000) տեղավորվեց դարանում՝ Արձան լեռան գագաթի այգիներում, երկրորդը (4.000)՝ գյուղի արևմուտքում, երրորդը (4.000)՝ անցկացվեց թշնամու թիկունք և տեղաբաշխվեց գյուղից հարավ-արևելք գտնվող բարձունքներում, իսկ չորրորդը (մոտ 1.000 պարսատիկավոր) տեղավորվեց գյուղի հարավում: Միաժամանակ բոլոր ջոկատների հրամանատարներին խստորեն հրամայվեց չխաբվել թշնամու կեղծ նահանջներից՝ սկյութական մարտաձև կիրառելու փորձերից, և առանց հրամանի չմտնել մարտի մեջ: Ըստ նախապես հաստատված մարտական պատկերի՝ Տրդատ II Մեծը մնացած ուժերով (մոտ 15.000) պետք է թշնամուն ցույց տար, թե փորձում է բարձրանալ Արձան լեռն ի վեր, իբր այնտեղ պաշտպանություն կազմակերպելու համար, սակայն իրականում դրանով պետք է վերջինիս իր հետևից քաշեր և գցեր նախապես պատրաստված դարանների՝ չորս առանձնացված ջոկատների, հարվածների տակ:

I փուլ – Առավոտյան Տրդատ II Մեծի գլխավորած ուժերը շարժվեցին Արձան լեռն ի վեր: Տեղեկանալով այդ մասին՝ Գեդռեհոն Ի-ի հեծելազորը հարավից շարժվեց դեպի հյուսիս-արևելք: Թշնամին փակեց Հայկական բանակի ճանապարհը, որի արդյունքում բռնկվեց և բավականին երկար շարունակվեց համառ մարտ:

II փուլ – Թշնամու հետևակը շարժվեց դեպի հարավ և այդ կողմից հարձակվեց գյուղի վրա: Իր հերթին այս ուղղությամբ տեղավորված Հայկական

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

չորրորդ ջոկատը հզոր հարված հասցրեց թշնամուն և նահանջեց դեպի գյուղի խորքերը՝ վերջինիս իր հետևից քաշելով դեպի նախապես պատրաստված դարանը: Արդեն գյուղի խորքում չորրորդ ջոկատը հետ դարձավ և, գյուղի արևմուտքում տեղավորված երկրորդ ջոկատի հետ միասին նախապես պատրաստված դիրքերից սկզբում խոշոր քարերով, իսկ հետո արդեն հեռահար զենքերով հզոր հարվածներ հասցրեց թշնամուն: Արդյունքում՝ վերջինս, կորցնելով 1.006 զինվոր, դիմեց անկանոն փախուստի ու ցրվեց:

III փուլ – Այս ընթացքում Արձան լեռան գագաթին տեղակայված Հայկական առաջին ջոկատը թիկունքից հզոր հարված հասցրեց Տրդատ II Մեծի ուժերին համառորեն դիմադրող թշնամու բանակին, որը, արդեն չդիմանալով երկկողմանի հարվածներին, դիմեց փախուստի դեպի գյուղի հարավային կողմը՝ հետապնդվելով Տրդատ II Մեծի հիմնական բանակի և առաջին ջոկատի կողմից:

IV փուլ – Փախուստի դիմած թշնամին մոտեցավ գյուղից դեպի հարավ-արևմուտք գտնվող բարձունքներում տեղավորված երրորդ ջոկատի դիրքերին, որն էլ իր հերթին անմիջապես մտավ մարտի մեջ և ծանր հարված հասցրեց վերջինիս:

V փուլ – Բոլոր կողմերից հալածվելով և կորցնելով 1.700 զինվոր, որոնցից 806 -ին ոչնչացրեցին պարսատիկավորները՝ Գեդռեհոն I-ի բանակը դիմեց խուճապահար փախուստի:

Ընդհանուր հաշվով թշնամին կորցրեց 4.252, հայերը՝ մոտ 1.000 զինվոր:

314 գարուն – ***Մուշեղամարգ գյուղի ճ-մ*** (Մինչեփրատյան Ծոփք, Հաշտեանք գավառ)[1]

Նախորդ ճակատամարտում պարտություն կրած և փախուստի դիմած Բասիլական ու Ալանական թագավորությունների միացյալ բանակը (53.748, այդ թվում խազարներ, հոներ, լեզգիներ, դուրձուկներ և դիդոներ) հասավ ***Հաշտեանք:*** Այստեղ կարգի բերելով իր բանակը՝ Գեդռեհոն I-ը կրկին մարտի կանչեց Մեծ Հայքի թագավորության բանակին, իսկ Տրդատ II Մեծին էլ, ուղարկելով խիստ վիրավորական մի մարտակոչ, հրավիրեց մենամարտի: Ի պատասխան դրա՝ Տրդատ II Մեծի, Անգեղյաց իշխանի, Անդովկ Սյունու, Սմբատ Բագրատունու և Գարջույլ Խորխոռունու կողմից գլխավորվող ու որոշակիորեն համալրված Մեծ Հայքի թագավորության բանակը (30.000, այդ թվում Մաղխազական գունդը) շարժվեց դեպի ***Հաշտեանք:*** Հայկական բանակը մոտեցավ գյուղին և մարտակարգ ընդունեց՝ առաջին շարքում տեղավորելով հեծելազորը, իսկ երկրորդում՝ հետևակը: Առաջին շարքի ձախ թևը ղեկավարում էր Անգեղյաց իշխանը, աջ թևը՝ Անդովկ Սյունին, իսկ կենտրոնը՝ Գարջույլ Խորխոռունին: Երկրորդ շարքը, որը տեղավորված էր առաջին շարքի աջ թևի և կենտրոնի հետևում, գտնվում էր Սմբատ Բագրատունու հրամանատարության տակ: Ողջ բանակի ղեկավարումը իր վրա վերցրեց Տրդատ II Մեծը: Ճակատամարտից առաջ երկու բանակների մարտակարգերի միջատարածքում հանդիպեցին Տրդատ II Մեծը և Գեդռեհոն I-ը, որը ինքն էլ համարվում էր հզոր ու անպարտելի մի ռազմիկ: Մենամարտը սկսվեց մարտական մուրճերով և տևեց բավականին երկար՝ առավելություն չբերելով կողմերից ոչ մեկին: Ընթացքում, սակայն, Գեդռեհոն I-ը աստիճանաբար սկսեց հոգնել և, նպատակ ունենալով փոխել իր համար վտանգավոր դարձած մենամարտի ընթացքը, հանկարծ կտրուկ պոկվեց Հայոց արքայից ու հեռվից նետեց օղապարանը՝ կաշկանդելով Տրդատ II Մեծի թևերը: Դրանից հետո Գեդռեհոն I-ը, հույս ունենալով Հայոց արքային տապալել ձիուց, ձգեց օղապարանը, սակայն Տրդատ II Մեծն ինքը ասպանդակեց նժույգը և, մոտենալով հակառակորդին ու թույլ չտալով վերջնականապես կաշկանդել իր թևերը, ձիու

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

արագ թռիչքներով խճճեց հակառակորդին սեփական օղապարանի մեջ, որից հետո ծանր թրի հզոր հարվածով սպանեց նրան:

I փուլ – Հայկական առաջին շարքի հեծելազորը անցավ հարձակման, որի արդյունքում Հայկական ձախ թևը ձախից շրջանցեց թշնամու աջ թևը և անցավ նրա թիկունք, իսկ համակցված հարված հասցրած հայկական կենտրոնը ու աջ թևն էլ իրենց հերթին, հարվածելով թշնամու կենտրոնին, ճեղքեցին այն և վերջնականապես շրջապատեցին թշնամու աջ թևը: Այս ընթացքում Անդովկ Սյունին մարտադաշտում հանդիպեց թշնամու աջ թևի հրամանատարին: Տեղի ունեցած մենամարտի սկզբում հակառակորդը ճարպիկ հարվածով սպանեց Սյունյաց իշխանի ձիուն, սակայն վերջինս չկորցրեց իրեն և, արդեն գետին գլորվելիս, իր հերթին կարողացավ թրի հարված հասցնել հակառակորդի նժույգի ոտքերին ու շարքից հանել վերջինիս: Դրանից հետո հակառակորդները մարտը շարունակեցին արդեն հետևակ վիճակում, որից հետո Անդովկ Սյունին ցատկեց իր թիկնապահի մատուցած ձիու վրա և ի վերջո գլխատեց իր հակառակորդին:

II փուլ – Մինչ տեղի էր ունենում այս ամենը՝ Հայկական բանակի երկրորդ շարքը հզոր հարձակում կազմակերպեց թշնամու ձախ թևի վրա, որի արդյունքում ոչ միայն թույլ չտվեց վերջինիս օգնության հասնել սեփական կենտրոնին և աջ թևին, այլև՝ ի վերջո փախուստի մատնեց նաև նրան:

III փուլ – Թշնամու բանակը ծանր պարտություն կրեց և դիմեց խուճապահար փախուստի: Հայկական բանակը հետապնդեց թշնամուն մինչև երեկո և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 2.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

314 գարուն – ***<u>Ճապաղջուր գետի ճ-մ</u>*** (Մինչեփրատյան Ծոփք, Հաշտեանք գավառ)[1]

Նախորդ ճակատամարտում պարտություն կրած Բասիլական և Ալանական թագավորությունների միացյալ բանակը (մոտ 43.000, այդ թվում խազարներ, հոներ, լեզգիներ, դուրձուկներ և դիդոներ) մութն ընկնելուն պես կարողացավ պոկվել Հայկական բանակից, որից հետո Գեդռեհոն I-ի զորավարներից մեկը կարգի բերեց այն ու բանակի մնացորդները կենտրոնացրեց Ճապաղջուր գետի ձախ ափին: Ստացվեց այնպես, սակայն, որ Տրդատ II Մեծի, Անգեղյաց իշխանի, Անդովկ Սյունու, Սմբատ Բագրատունու և Գարջույլ Խորխոռունու գլխավորությամբ թշնամուն հետապնդող Հայկական բանակը (մոտ 28.000, այդ թվում Մաղխազական գունդը), իր արագ առաջխաղացման մեջ չնկատելով վերջինիս, առաջ անցավ թշնամուց ու գետանցեց Ճապաղջուրը: Արդյունքում՝ կորցնելով թշնամուն՝ Հայկական բանակը ուշ գիշերով բանակեց գետի աջ ափին՝ թշնամու բանակի հարևանությամբ:

I փուլ – Հետախույզներից իմանալով Հայկական բանակի տեղադրության մասին՝ թշնամին վաղ առավոտյան անցավ անակնկալ հարձակման: Արդյունքում՝ հատկապես ծանր վիճակում հայտնվեց Անգեղյաց իշխանի ջոկատը, որին թշնամին շրջապատեց և սկսեց մեծապես նեղել: Մարտում ծանր վերքեր ստացավ նաև Անգեղյաց իշխանը:

II փուլ – Առանձին տեղակայված ու այդ պատճառով էլ հարձակման չենթարկված Անդովկ Սյունու ջոկատը օգնության հասավ հիմնական բանակին և, հզոր հարված հասցնելով թշնամուն, ցրեց նրան՝ հնարավորություն տալով Հայկական բանակին լիովին սպառազինվել ու վերականգնել մարտական վիճակը:

III փուլ – Գետի ձախ ափ շպրտված թշնամին վերականգնեց մարտակարգը և կրկին անցավ հարձակման, ընդ որում վերջինս Գեդռեհոն I-ի զորավարի անձնական ղեկավարությամբ հատկապես հզոր հարված հասցրեց մարտակարգ ընդունած Հայկական բանակի աջ թևի առաջին շարքի հեծելազորին, որը

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:

գլխավորվում էր անձամբ Տրդատ II Մեծի կողմից, ու սկսեց պարտության մատնել նրան:

IV փուլ – Այս վճռական պահին մարտի մեջ մտավ Հայկական բանակի երկրորդ շարքի հետևակը, որից հետո արդեն Հայկական բանակի ողջ աջ թևը Հայոց արքայի անձնական ղեկավարությամբ անցավ հակահարձակման, գլխովին ջախջախեց թշնամու ձախ թևին և փախուստի մատնեց: Այս ընթացքում Տրդատ II Մեծը մարտադաշտում հանդիպեց Գեդռեհոն I-ի զորավարին և տեղի ունեցած մենամարտում սպանեց նրան:

V փուլ – Թշնամու բանակը ջախջախիչ պարտություն կրեց և դիմեց խուճապահար փախուստի: Հայկական բանակը հետապնդեց թշնամուն և ծանր կորուստներ պատճառեց նրան:

Հայերը կորցրին 1.080 զինվոր, ընդ որում ստացած վերքերից մահացավ նաև Անգեղյաց իշխանը, իսկ թշնամին՝ 15.942 զինվոր:

Նախորդ ճակատամարտում փախուստի դիմած թշնամու բանակը բաժանվեց 2 մասի: Առաջին մասը շարժվեց Կարինի, իսկ երկրորդը՝ Հարքի ուղղությամբ: Մանավազյան իշխանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 8.000), սակայն, այն բանից հետո, երբ ջախջախված թշնամու մնացորդները հայտնվեցին Հարքում, թակարդը գցեց դրանց և, հարվածելով վեց կողմից, վերջնականապես ջախջախեց[1], իսկ Տրդատ II Մեծի, Անգեղյաց իշխանի, Անդովկ Սյունու, Սմբատ Բագրատունու ու Գարջույլ Խորխոռունու գլխավորած Մեծ Հայքի (մոտ 40.000) և Միհրան III Մեծի գլխավորած Իբերիայի (մոտ 20.000) թագավորությունների միացյալ բանակն էլ, առաջանալով Կարին-Տայք-Գուգարք-Իբերիա երթուղով, հալածեց այդ ուղղությամբ նահանջող թշնամու բանակի մնացորդներին:[2]

Հյուսիսականները ծանր և իրենց համար որոշակիորեն անսպասելի մի պարտություն էին կրել և լի էին կորցրածը հետ բերելու վճռականությամբ, ընդ որում վճռական էր տրամադրված հատկապես իր նախորդին փոխարինած Գեդռեհոն II-ը (314-315): Արդյունքում, նախապատրաստելով վճռական հարված և ի մի բերելով ուժերը, վերջինս արդեն հաջորդ տարի պատրաստվեց մահացու հարված հասցնել Մեծ Հայքի թագավորությանը և այդ անել նոր ուղղությունից, սակայն հայերին անակնկալի բերել այս անգամ ևս չհաջողվեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

315 գարուն – ***<u>Գարգարացվոց դաշտի ճ-մ</u>***[3]

Գեդռեհոն II-ի գլխավորությամբ ***<u>Դերբենդի լեռնանցքից</u>*** արշաված Բասիլական և Ալանական թագավորությունների միացյալ բանակը (մոտ 100.000, այդ թվում խազարներ, հոներ, բուլղարներ, լեզգիներ, դուրձուկներ, դիդոներ, լփիններ, ճղբեր և կասպեր) մտավ ***<u>Ուտիքի հարավ</u>***՝ տեղակայվելով Կուրի ու Արաքսի միախառնման վայրից ոչ հեռու: Ի պատասխան դրա՝ Տրդատ II Մեծի, սպարապետ Արտավազդ Մանդակունու, Բագրատ Բագրատունու, Վահան Քաջ Ամատունու[4] և Մանաճիհր Ռշտունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:
[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 1:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 84, 85; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 12; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 67, 68; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 18; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 62; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:
[4] Այստեղ, որոշակիորեն թեմայից շեղվելով, կուզենայի մասնագետների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ, կարծես թե, սխալ է սկսած Խորենացու առաջին կրկնակողներից և նրա աշխատությունից առաջինը օգտված պատմիչներից մինչ այսօր գրականության մեջ տարածված այն տեսակետը, թե Ամատունիները ծագումով հրեաներ են (գիրք 2, գլուխ 57) և եկել են Հայաստան մ.թ.ա. II դարի առաջին կեսում: Առավել հավանական է թվում այն տեսակետը, որ Ամատունիները սերել են Միտանիի թագավորությունում իշխած ու Հայկազունիների կրտսերը ճյուղը հանդիսացող Հայկազուտներից:

բանակը (մոտ 100.000) արագորեն շարժվեց թշնամուն ընդառաջ: Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Անցնելով խոյընթաց հարձակման՝ Հայկական բանակը հարվածեց թշնամու բանակի կենտրոնին և խորը մխրճվեց վերջինիս շարքերում: Թշնամու բանակի թևերը, սակայն, սկսեցին սեղմել Հայկական բանակի առաջ եկած կենտրոնին: Բռնկված համառ մարտում ընկավ Հայոց սպարապետը և զոհվեցին այլ անվանի նախարարներ:

II փուլ – Տրդատ II Մեծը, անձամբ գլխավորելով պահեստազորի հիմնական ուժերը, երկրորդ հարվածը հասցրեց թշնամու բանակին: Բռնկված ձեռնամարտում շատերն ընկան Հայոց արքայի հարվածից և չգտնվեց մեկը, որ կարողանար դիմադրել նրան: Տեսնելով Տրդատ II Մեծի անհաղթահարելի ուժը և խիզախությունը՝ Գեդռեհոն II-ը գերադասեց թիկունքից մոտենալ վերջինիս: Դրանից հետո վերջինս նետեց օղապարանը, որը փաթաթվեց Հայոց արքային այն պահին, երբ նա ձեռքը բարձրացրել էր հերթական հարվածը հասցնելու համար: Հույս չունենալով Տրդատ II Մեծին գցել թամբից իր ուժերով՝ հակառակորդը օղապարանի մյուս ծայրը ամրացրեց սեփական ձիու թամբին և շուռ տվեց ձիու գլուխը՝ նպատակ ունենալով Հայոց արքային տապալելու համար օգտագործել նաև սեփական նժույգի արշավային թափը: Տրդատ II Մեծը, սակայն, ձախ ձեռքով բռնեց օղապարանը և, կտրուկ ու ուժեղ շարժումով հակառակորդին նժույգի հետ միասին քաշելով իր կողմը, ծանր թրի հարված հասցրեց վերջինիս, որով ոչ միայն կրծքավանդակից կիսեց թշնամուն, այլև թռցրեց նաև Գեդռեհոն II-ի ձիու գլուխը:

III փուլ – Հայկական բանակին հաջողվեց ջախջախել թշնամու մարտակարգի կենտրոնը և փախուստի հարկադրել վերջինիս, որից հետո փախուստի դիմեցին նաև թշնամու բանակի թևերը:

IV փուլ – Հայկական բանակը ***Ուտիք-Աղվանք-Դերբենդ ամրոց*** երթուղով հետապնդեց թշնամուն և ծանր կորուստներ պատճառեց նրան:

Հայերը կորցրին մոտ 25.000, թշնամին՝ մոտ 60.000 զինվոր: Հյուսիսային II պատերազմը ավարտվեց:

Այս անգամ հյուսիսականների կրած պարտությունն իրոք ոչ միայն ջախջախիչ էր, այլև վերջնական, ընդ որում, որպես հետևանք այս ամենի, Բասիլական և Ալանական թագավորությունները նույնիսկ ընդունեցին Մեծ Հայքի թագավորության գերիշխանությունը ու հրաժարվեցին վարվող ավարառուական քաղաքականությունից, վերջիններիցս, որպես երաշխիք կնքված հաշտությանը, վերցվեցին պատանդներ, իսկ Տրդատ II Մեծն էլ ամուսնացավ ալանական արքայադուստր Աշխենի հետ[1]: Հիմա արդեն Մեծ Հայքի թագավորության սահմաններում իրոք որ հաստատվեց անդորր, ընդ որում Սլկունիների խնդիրն էլ, որոնք նախորդ իրադարձությունների ամենաթեժ պահին ապստամբել էին Հայոց արքայի դեմ, հաջողվեց լուծել խորամանկ Արտավազդ Մամիկոնյանին, որը, նույն 315 թվականի գարնանը խաբեությամբ գրավեց մինչ այդ անառիկ համարվող Ողականը, ինչի արդյունքում Սլկունիների տոհմը գրեթե բնաջնջվեց, Տարոնը անցավ Մամիկոնյաններին, իսկ Արտավազդ Մամիկոնյանն էլ դարձավ Մեծ

[1] Գրականության մեջ այս ճակատամարտը գրեթե միշտ նույնացվում է 314 թ-ի Մուշեղամարգ գյուղի ճակատամարտի հետ: Սակայն սրանք տարբեր ճակատամարտեր են իրենց ողջ ընթացքով՝ չխոսելով արդեն այն մասին, որ այս 2 ճակատամարտերը տեղի են ունեցել Մեծ Հայքի տարբեր և իրարից խիստ հեռու ընկած մասերում: Շփոթմունքի և նույնացման պատճառը, ըստ երևույթին, եղել է երկու արքաների մենամարտի և օղապարանի էպիզոդը: Սակայն, ինչպես տեսնում ենք Մովսես Խորենացու և Հովհան Մամիկոնյանի նկարագրությունների ուշադիր վերլուծությունից, էականորեն տարբերվում են և մենամարտի (բացառությամբ օղապարանի էպիզոդի), և ճակատամարտի ընթացքն ու հատկապես արդյունքը: Այսպես, 314 թ-ի Մուշեղամարգ գյուղի ճակատամարտում մենամարտը եղել ճակատամարտից առաջ, այն կրել է համառ բնույթ, թեև թշնամիների արքան կրկին կիրառել է օղապարան, իսկ 315 թ-ի Գարգարացվոց դաշտի ճակատամարտում մենամարտը տեղի է ունեցել ճակատամարտի ընթացքում, հակառակորդը անակնկալ հետևի կողմից է հարձակվել Հայոց արքայի վրա և սպանվել է Տրդատի միակ հարվածով: Իր հերթին Մուշեղամարգ գյուղի ճակատամարտը չբերեց պատերազմի ավարտի, իսկ Գարգարացվոց դաշտի ճակատամարտի արդյունքում պատերազմը ավարտվեց:

Հայքի թագավորության սպարապետ[1]: Այս կապակցությամբ կարծում եմ, որ մինչև առաջ անցնելը կարիք կա մի քանի խոսք ասել Մամիկոնյանների ծագման վերաբերյալ:

Գլուխ 23
Մամիկոնյանների հիմնախնդիրը

Խնդիրն, ըստ էության, կայանում է հետևյալում՝ ի վերջո Չինաստանից եկած գաղթականնե՞ր էին արդյոք Մամիկոնյանները, որոնք Մեծ Հայքի թագավորությունում հայտնվում են միայն III դարի վերջում, թե՞ նրանք այնուհանդերձ ունեին հայկական ծագում և ապրել են Հայաստանում դրանից շատ առաջ: Այս առումով միանգամից ասեմ, որ կարծում եմ, որ սխալ է, սկսած Մովսես Խորենացու առաջին կրկնակողներից և նրա աշխատությունից առաջինն օգտված պատմիչներից մինչ այսօր գրականության մեջ տարածված այն տեսակետը, թե Մամիկոնյան տոհմի հայրենիքը Չինաստանն է և, որ նրանք եկել են Հայաստան III դարի կեսերին: Իրականում, ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացու բերած տվյալների[2] ուշադիր վերլուծությունը, նրանք ոչ թե «եկել են Հայաստան», այլ ընդամենը տեղաշարժվել են Հայաստանի մի գավառից մյուսը: Իրոք, ըստ Պատմահոր Մամիկոնյանները տեղաշարժվել են. «*...արևելյան հյուսիսային քաջատոհմիկ ու գլխավոր Աշխարհից՝ Ճենաստանից, որ ես (**Մովսես Խորենացին – Մ.Հ.**) բոլոր հյուսիսային ազգերի մեջ առաջինն եմ համարում*»:

Արդյունքում՝ ինչպես տեսնում ենք, Պատմահայրը նկատի ունի մի տարածք, որը գտնվում է Հայաստանից հյուսիս-արևելք, ընդ որում V դարում ապրած Խորենացու իր ժամանակին բնորոշ «Հայաստանի» հյուսիսային սահմանի մի մասը Պարխարյան լեռներն էին: Այսպիսով՝ ոչ մի ակնարկ չկա Հայաստանից արևելք գտնվող Չինաստանի մասին, իսկ «Ճենաստանը» իրականում Փոքր Հայքի Խաղկտիք գավառն է, որն իրոք «հյուսիսային գլխավոր աշխարհն էր», այնտեղ բավականին զգալի թիվ կազմող ճաների անունով հայտնի էր որպես ճաների երկիր կամ Ճանիք և աշխարհագրորեն իրոք գտնվում է «Խորենացու Հայաստանի» հյուսիսում ու հյուսիս-արևելքում: Իր հերթին հայտնի է, որ Մամիկոնյանների տոհմական կալվածքները, մինչև Տարոնին տիրելն և այն իրենց կալվածքների կենտրոն դարձնելը, գտնվում էին Տայքում՝ Խաղկտիքի սահմանում, կենտրոն ունենալով Էրախանի ամրոցն ու իրենց որոշ մասով ընդգրկելով նաև Պարխարյան լեռները: Այսինքն՝ Պատմահայրն իրականում նկատի ունի Տայքի հյուսիսը՝ Պարխարյան լեռները, որոնք երկար ժամանակ այնտեղ բնակված ճաների անունով խոսակցականում կոչվում էին «Ճենաստան»:

Լրիվ տրամաբանական այս սխեմայից զատ կարելի է բերել նաև մի քանի այլ ուղղակի և անուղղակի ապացույցներ.

1. Ապպիանոսը[3] Լուկոլլոսի արշավանքի ժամանակ, որպես Տիգրանակերտի կայազորի հրամանատար, հիշատակում են Մանկայոսին, որն ըստ Ն. Ադոնցի հիմնավոր դիտարկման, «Մամիկոնյան» անվանման կրճատ ձևն է[4],

2. Մ.թ.ա. 51 թվականին Հայկական բանակն առաջնորդել է Վասակ իշխանը[5], իսկ 62 թ-ի գարնան Հռանդեայի ճակատամարտին ու դրան նախորդած իրադարձություններին էլ մասնակցել է ևս մեկ Վասակ իշխան[6]՝ մի անուն, որը բնորոշ էր Մամիկոնյաններին,

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 84; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 18; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 81:
[3] Ապպիանոս «Հռոմի պատմությունը, Միհրդատյան պատերազմներ», գլուխ 84:
[4] Ադոնց Ն. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», Երևան 1987, էջ 461; Toumanoff C. "Studies in Christian Caucasian History" (Georgetown University Press, 1963), pp. 209; 211-212, n. 238; Toumanoff C. "The Mamikonids and the Liparitids", Armeniaca (Venice, 1969), pp. 125 -137.
[5] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 40, գլուխ 29; Վելլեյուս Պատերկուլոս «Հռոմեական պատմություն», գիրք 2, գլուխ 46; Ֆրոնտին «Ստրատեգամներ», գիրք 2, գլուխ 5, մաս 35; Ցիցերոն «Նամակներ Աթթիկա, Տիտոս Պոմպոնիոսին 5.16»; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 6, գլուխ 13:
[6] Տակիտոս «Տարեգրություններ», գիրք 15, գլուխ 14:

3. 114 թ-ի աշնանը, կապված Մարկոս Տրայանոսի Արևելյան արշավանքի դրվագներից մեկի հետ, Հայաստանի հարավում հիշատակվում է մի իշխան, որի անունը փոխանցվում է «Մանիսար» ձևով[1], ընդ որում, եղած տեղեկատվության խիստ սակավության պայմաններում վերջինս երբեմն համարվում է Կորճայքի իշխան, իսկ երբեմն էլ՝ Պարթևական թագավորության գահի թեկնածու: «Մանիսար»-ի՝ Կորճայքի իշխան լինելու հանգամանքն ենթադրելու համար հիմք է ընդունվել, սակայն, միայն այն հանգամանքը, որ նա հիշատակվում է բացառապես միայն Կորճայքում մղված մարտերում: Իր հերթին վերջինիս՝ պարթևական գահի թեկնածու լինելու տարբերակի դեպքում էլ բավարար բացատրություն չի գտնում արդեն այն հանգամանքը, թե ի՞նչ էր անում գահի այս թեկնածուն Կորճայքում՝ Մեծ Հայքի թագավորության տարածքում: Այս առումով ինձ առավել ընդունելի է թվում այն տեսակետը, որ իրականում «Մանիսար»-ի անվան տակ, ինչպես «Մանկայոս»-ի պարագայում, հանդես է գալիս Մամիկոնյան տոհմի հերթական ղեկավարը և Մեծ Հայքի սպարապետը: Այս տեսանկյունից խնդիրը մեկնաբանելիս կարելի է ենթադրել, որ «Մանիսար» անունն իրականում առաջացել հայկական «Մամիկոնյան սպարապետ» բառերի աղավաղված տեսքով միացումից,

4. Վաղ միջնադարում ու հատկապես V դարում մեր պատմիչները հստակ պատկերացում չունեին Չինաստանի մասին և, ըստ նրանց, արևելքում «աշխարհը վերջանում էր» Հնդկաստանով, առավել ևս, որ այդ ժամանակաշրջանում Չինաստանը հաճախ չուներ ներկայիս Չինաստանի սահմաններն և սահմանափակվում էր միայն ներկայիս Չինաստանի հարավ-արևելքով՝ Հուանհե ու Յանցզի գետերի հովիտներով,

5. Քիչ հավանական է, որ եկվոր փախստականներին Տրդատ II Մեծը հանձներ այնպիսի մի կարևորագույն պաշտոն, ինչպիսին սպարապետությունն է, թեկուզև Սլկունիների տոհմին հաղթելուց և նրանց ամրոցը գրավելուց հետո, այսինքն՝ ողջ բանակը, իր ու իր երկրի ապագան դներ եկվոր, օտար և, ըստ էության, չստուգված ու առանձնակի հեղինակության չհասած և միայն իրենց խորամանկությամբ աչքի ընկած անձանց տիրապետության տակ, քանի որ Ողականն եկվորները գրավեցին ու Սլկունիներին ոչնչացրին, ըստ էությամբ, խորամանկությամբ,

6. Օտար տոհմը չէր կարող միանգամից այնքան սիրել, նվիրվել իր նոր հայրենիքին, նրանում մի քանի տարում ուղղակի չէր հասցնի ձևավորվել այն տոհմական հայասիրական-հայրենասիրական մթնոլորտը՝ տարոնականությունը, որով դաստիարակվել և որը մարտի դաշտում միանգամից դրսևորում են Մամիկոնյան հենց առաջին ժառանգական սպարապետները՝ Վաչեն, Վասակը, Մուշեղն և այլն:

Խնդիրը պարզաբանել մեզ կարող է օգնել նաև տեղեկատվությունը Օրբելյանների ծագման մասին: Մասնագիտական գրականության մեջ հավանական է համարվում կարծիքը, որ Օրբելյանները սերել են Մամիկոնյաններից[2]: Իրոք, զարմանալի կերպով, այն բանից հետո, երբ հենց այդ տոհմանունով Մամիկոնյանների մասին հիշատակումները վերանում են, խոսքը վերաբերում է IX դարի վերջին, անմիջապես էլ սկսվում են հիշատակություններն Օրբելյանների մասին[3]: Այս առումով հավանական է կարծել, որ Մամիկոնյանները սկսել են հանդես գալ նոր տոհմանունով, ըստ էության, այն բանի ազդեցության տակ, որ մի կողմից խուսափեն հակաարաբական ապստամբություններում բավականին հայտնի դարձած ու արաբների կողմից բացասական ընկալվող իրենց տոհմանունից և դրա առաջացրած հնարավոր ոչ բարենպաստ հետևանքներից, իսկ մյուս կողմից էլ՝ խուսափեն հենց այդ ժամանակ նորահռչակ Անիի թագավորության ղեկին հայտնված Բագրատունիների կասկածներից, քանզի Մամիկոնյաններն իրենց հերթին Բագրատունիների ավանդական մրցակիցներն

[1] Դիոն Կասսիոս «Հռոմեական պատմություն», գիրք 68, գլուխ 22:
[2] Toumanoff C. "The Mamikonids and the Liparitids", Armeniaca (Venice, 1969), pp. 125-137.
[3] «*Այդ ժամանակ Լիպարիտը տիրեց Թռեղքի երկրին, կառուցեց Կլդեկարի ամրոցն և ընդունեց Բագրատի որդի Դավթի ենթակայությունը*» («Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»): Այս հաղորդման մեջ հիշատակվում են Հյուսիսային Բագրատունիների երկրորդ սերնդի հիմնադիր Աշոտը, նրա որդի Բագրատը և վերջինիս որդի Դավիթը, այսինքն Օրբելյանների տոհմի հիմնադիրը համարվող Լիպարիտը հիշատակվում է 876-881 թվականներին:

էին:

Այս առումով, մի քիչ էլ առաջ անցնելով, ամրագրենք, որ Քարթլիի թագավորության կենտրոնական իշխանության դեմ Օրբելյանների 1176-1177 թվականների անհաջող ապստամբությունից հետո Հյուսիսային Հայաստանում կրկին ի հայտ են գալիս Մամիկոնյաններ, որոնք իրենց գոյությունը շարունակեցին մինչև նոր ժամանակները: Արդյունքում՝ հավանական է համարել, որ, ինչպես մի ժամանակ Մամիկոնյանները որոշակի նպատակներ հետապնդելով փոխեցին տոհմանունն և դարձան Օրբելյաններ, այնպես էլ դրանից երեք հարյուրամյակ անց, երբ Օրբելյաններն անընկալելի դարձան արդեն Քարթլիի գահակալների համար, նրանք կրկին փոխեցին տոհմանունը ու, հատկանշական փաստ, վերադարձան հենց «Մամիկոնյան» տոհմանվանը: Այսպիսով՝ կան բոլոր հիմքերն ենթադրելու, որ Օրբելյանները հանդիսանում են Մամիկոնյանների ճյուղերից մեկի հետնորդները, իսկ այս պարագան էլ իր հերթին մեզ համար կարևորվում է Մամիկոնյանների ծագումը պարզաբանելու հարցում շրջանառության մեջ լրացուցիչ տեղեկատվություն դնելու առումով:

Բանը կայանում է նրանում, որ Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Օրբելյանների ծագման մասին, մեզ է փոխանցում վիպականացված և լեգենդար քողով պատված մի պատմություն, որը շատ նման է նույն այն պատմությանը, որը փոխանցվում է Մովսես Խորենացու կողմից Մամիկոնյանների պարագայում[1]: Միաժամանակ, սակայն, Ստեփանոս Օրբելյանն անում է մի շարք ուշագրավ դիտարկումներ, որոնք հիմքեր են տալիս ասելու, որ Մամիկոնյանները հայտնվում են պատմական թատերաբեմում ոչ թե III դարի վերջում, այլ՝ մ.թ.ա. IV դարի վերջում, ընդ որում այս պարագայում իր բացատրությունն է գտնում նաև այն հաղորդումների ամբողջությունը, որոնք այնուհանդերձ կան Մամիկոնյանների վերաբերյալ և նախորդում են III դարին:

Ստեփանոս Օրբելյանը հայտնում է, որ դեռևս «Քարթլոսի ժամանակներից» Գուգարք նահանգի Տաշիր գավառի հյուսիսում՝ պատմական Հայաստանի ծայր հյուսիսային կետերից մեկում և Շամշուլդե ամրոցից մոտ 19 կմ հյուսիս գտնվող Օրբեթ ամրոցի մոտակայքում, հիշատակվում են Օրբելյանները, որոնք հատկապես առաջընթաց են ապրում Իբերիայի թագավորության հիմնադիր արքա Փառնավազի օրոք, ընդ որում, այս մասին վերևում որոշակիորեն խոսվեց, հավանական է համարել, որ Օրբելյանները վերելք են ապրել այն բանի ֆոնին, որ Մեծ Հայքի թագավորությունն ամեն կերպ աջակցում էր ոտքի կանգնող նորահռչակ Իբերիայի թագավորությանը և Օրբելյաններն եղել են Հայոց արքայի հենց այս քաղաքականության առաջամարտիկները:

Ողջ վերոգրյալի ընդհանրացմամբ, վերադառնալով Մամիկոնյանների ծագման խնդրին, հավանական եմ համարում հետևյալ սխեման.

1. Ի սկզբանե տոհմը կոչվել է «Օրբելյան»,

2. Սլկունիների նկատմամբ հաղթանակ տանելուց և աչքի ընկնելուց հետո Օրբելյաններից մեկը համարվող Մամգոնը կամ Արտավազդ Մամիկոնյանը Հայաստանի հյուսիսից տեղափոխվում է հարավ և հաստատվում է Տարոնում, ինչից հետո առաջին դիրքերում է հայտնվում արդեն Մամիկոնյան կոչվող հենց այս ճյուղը, իսկ նույն տոհմի հյուսիսային ճյուղն առժամանակ մղվում է հետին պլան:

3. IX դարի վերջին, երբ Մամիկոնյանների հարավային և հիմնականը համարվող ճյուղն իր հերթին թուլանում է, տոհմական առաջնությունը կրկին իր ձեռքն է վերցնում Հյուսիսային Հայաստանում գտնվող նույն տոհմի նախնական կամ հիմնական ճյուղը՝ վերևում մատնանշված պատճառներով շեշտադրելով իր հիմնական տոհմանունը՝ «Օրբելյաններ»:

4. 1177 թվականից հետո, երբ Օրբելյանները ծանր հարված ստացան և դրանից հետո սկսեցին անկում ապրել, Քարթլիի գահակալների բացասական վերաբերմունքից խուսափելու միտումով դրդված կրկին առաջ եկավ «Մամիկոնյան» տոհմանունը, ընդ որում, եթե վերջին Օրբելյաններն այդ տոհմանունով հիշատակվում են ընդհուպ մինչև XV

[1] Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 66:

դարի վերջը, ապա նրանցից վերընձյուղված Մամիկոնյանները հայտնի են մինչև օրս:

Խնդիրը վերջնականապես պարզաբանելու համար ավելացնենք, որ, եթե կրկին «Մամիկոնյան» տոհմանվանը վերադարձած, հետագայում Թումանաշվիլի, իսկ ավելի ուշ էլ Թումանյան անվանումը ստացած տոհմի ճյուղերից մեկը պահպանեց իր հայականությունը, ապա արդեն XV դարի վերջին որպես Բարաթաշվիլի հայտնի դարձած և նույն Օրբեթ ամրոցին տիրող Օրբելյանների մյուս ճյուղն աստիճանաբար վրացականացավ ու կտրվեց հայկական միջավայրից, ընդ որում նույնիսկ այն հանգամանքն էլ, որ XVII դարի սկզբից Բարաթաշվիլիների տոհմից կրկին առանձնացավ Օրբելիներ կոչվող տոհմը, մեծ հաշվով չբերեց նրան, որ Բարաթաշվիլիներն ու Օրբելիները հայականանան:

Այսպիսով, ընդհանրացնելով ողջ վերոգրյալը, թույլ տանք մեզ գալ պարզ մի հետևության: Ակնհայտ է, որ Մամիկոնյանների տոհմը տոհմիկ հայկական է և նրանց «եկվորության» մասին որևէ տվյալ ուղղակի չկա, այլ այդ թեզն առաջ է եկել զուտ «ճեն» բառը որպես «չին» սխալ մեկնաբանելու արդյունքում:

Գլուխ 24
Տարածաշրջանի հիմնական խաղացողների ռազմական մեքենաների համեմատականը և տարածաշրջանի ռազմաքաղաքական ընդհանուր բնութագիրը

Շապուհ II-ի կյանքի առաջին տարիների մասին շատ քիչ բան է հայտնի, սակայն մի բան փաստ է, որ հենց այդ տարիներին, երբ նրա մասին հարևան տիրակալներից, կարծես թե, ոչ-ոք չէր էլ հիշում, ձևավորվեց մի բավականին խելացի ու կամային մեծ հատկանիշների տեր անհատականություն, որն այրվում էր փառասիրական տենչերից: Լինելով արդեն իսկ մեծ փառքի հասած Սասանյանների տոհմի ներկայացուցիչ և իր իշխանության տակ ունենալով հզոր, բայց վերջին անհաջողությունից հետո որոշակիորեն հուսալքված մի տերություն՝ Շապուհ II-ը իր կյանքի գերնպատակը դարձրեց ոչ միայն Շապուհ I-ի փայլուն հաջողությունները վերստին իրականություն դարձնելը, այլև՝ անելն ավելին և հասնել Սասանյանների ռազմաքաղաքական մշտական երազանքի իրականացմանը՝ Աքեմենյանների տերության վերստեղծմանը իր հզորության ժամանակի սահմաններով: Պատանի արքան ուներ բնավորության նաև այլ գծեր, որոնցից կարելի է առանձնացնել հաշվենկատությունը, խորամանկությունը և դաժանությունը, ընդ որում, քաղաքական կյանքին միշտ ու բոլոր ժամանակներում էլ բնորոշ այս հատկանիշների առկայության պարագայում բնավորության նույն այդ բոլոր գծերը, միահյուսվելով ամենատարբեր խառնուրդներում, բերում էին ամենատարբեր արդյունքների՝ ոչ միշտ հանդիսանալով միանշանակ դրական կամ բացասական երևույթներ նրա կամ նրա շրջապատի համար:

Միաժամանակ պետք է ընդգծել նաև, որ, ամենավաղ տարիքից իսկ անհուն տենչով ձգտելով դեպի ռազմական գործն ու պատերազմները, Շապուհ II-ը մինչև իր կյանքի վերջ այդպես էլ չկարողացավ դրսևորել զորավարական քիչ թե շատ ակնառու մի տաղանդ, ընդ որում համառությունն ու մարդկային և նույնիսկ յուրայինների կյանքերի հետ համառորեն հաշվի չնստելու սովորությունը հաճախ էր ծանր հետևանքներ ունենում հենց իր իսկ՝ Պարսից թագավորության, բանակի համար: Շապուհ II-ը, ինչպես ասվեց, ժառանգություն էր ստացել մի լայնարձակ, սակայն որոշակիորեն խարխլված տերություն և իրերի հենց այդ վիճակն էլ նա ձեռնամուխ եղավ փոխելու այն բանից հետո, երբ մուտք գործեց իր կյանքի երկրորդ տասնամյակի կեսերը: Այս նպատակով, ահա, չափահասության հասած արքան ամենից առաջ ձեռնամուխ եղավ ռազմական բարեփոխմանը, որպեսզի ապագա իրադարձություններում ձեռքի տակ ռազմական արդյունավետ մի գործիք ունենա:

Խնդիրն ամենից առաջ կայանում էր նրանում, որ Հռոմեական կայսրության բանակի դեմ նախկինում մղված մարտական գործողությունները համոզիչ կերպով ցույց

էին տվել, որ Պարսից թագավորության բանակը ուներ մի շարք թերություններ: Խոսքն ամենից առաջ վերաբերում էր հեծելազորին: Այսպես, ինչպես ցույց տվեց կյանքը, Հռոմեական կայսրության երկաթյա լեգեոնների հետ ընդհարվելիս, որպես հակառակորդի ծանր հետևակի շարքերի ճեղքման միջոց, ծայրահեղ կերպով չէր հերիքում ծանր հեծելազորը, որը պարթևական նույնիսկ լավագույն ավանդույթները մերժող Սասանյանների օրոք ակնհայտ անկում էր ապրել: Իրոք, ժամանակին դեռևս նույնիսկ պարթևական ծանր զրահավոր հեծյալներն իրենք էին մեծ դժվարությամբ ընդհարվում Հռոմեական կայսրության կուռ լեգեոնների հետ, իսկ այժմ վիճակն ավելի էր վատացել: Իհարկե, Արտաշիր Ի-ի ստեղծած հեծելազորն այնուհանդերձ կար, կային նաև ավելի ծանր զրահավորված առանձին հեծյալներ, քանզի համապատասխան նյութական միջոցների տիրապետող անձինք միշտ էլ ձգտում էին մարտում առավելագույնս պաշտպանված լինել, սակայն պարթևական ծանր զրահավոր հեծելազորի ու թեթև հեծելազորի մարտավարական համագործակցության լավագույն ավանդույթները գործնականում վերացել էին, իսկ առկա ծանր հեծյալներն էլ հեծելազորի ընդհանուր տեսակարար կշռում այնուհանդերձ ոչ միայն շատ քիչ էին, այլև, պատկանելով իշխանական ամենաբարձր վերնախավին, հակված չէին մահացու ճեղքումների գնալ:

Իր ժամանակին դեռևս Արտաշիր Ի-ն էր փորձել, որպես ծանր հետևազորի շարքերի ճեղքման միջոց, գործարկել մարտադաշտերում վաղուց արդեն կիրառությունից դուրս մղված և գործնականում մոռացված մարտակառքերը[1], սակայն 230-ական թվականների սկզբին դրանց նույնիսկ հարյուրավոր մարտական միավորների կիրառությունը վերջնականապես ապացուցեց իր անարդյունավետությունը՝ մարտակառքերը անարդյունավետ էին դեռևս հունական ֆալանգի դեմ կիրառվելիս, իսկ հռոմեական լեգեոնի պարագայում՝ առավել ևս: Միաժամանակ, սակայն, 230-ական թվականների երկրորդ կեսից սկսված այն ծանր ճգնաժամը, որ սկիզբ առավ Հռոմեական կայսրության սահմաններում, մի կողմից բացառեց Հռոմեական կայսրության մեծաքանակ բանակների կենտրոնացված կիրառությունը պարսկական ճակատում, մյուս կողմից էլ պարսիկների համար նույն այդ ճակատում քանակական զգալի գերակշռություն ապահովեց, ինչը որոշակիորեն մեղմեց Սասանյանների ռազմական մեքենայի հիշատակված թերությունը: III դարի վերջին քառորդում, սակայն, երբ Հռոմեական կայսրությունը սկսեց աստիճանաբար ուղղել մեջքը և կարգի գալ, արդյունքում նաև մարտադաշտ հանելով խոշոր բանակներ, Պարսից թագավորության բանակի հիշատակված թերությունը մեջտեղ եկավ իր առավել սրված տարբերակով: Այսպիսով՝ հենց հեծելազորային այս թերությունն էր, որ արմատապես վերացրեց Շապուհ II-ը:

Ինչպես հայտնում են սկզբնաղբյուրները[2], Շապուհ II-ը, ըստ էության, վերականգնեց Պարթևական թագավորության հեծելազորային լավագույն ավանդույթները՝ իհարկե, իր ժամանակին համապատասխան որոշակի շտկումներով: Արդյունքում՝ իրականացնելով Սասանյանների բանակի, ըստ էության, առաջին լուրջ բարեփոխումը, Շապուհ II-ը նյութական հսկայական միջոցների կիրառմամբ ստեղծեց ծանր զրահավորված հեծելազորի հարվածային ստորաբաժանումներ, որոնք իրենց հերթին, ինչպես պարթևական ժամանակաշրջանում, սերտորեն համագործակցում էին հաճախ արևելքից բերվող քոչվորներից կազմված հոնական տիպի թեթև հեծելազորի հետ: Այս առումով հատկանշական է, որ, եթե պարթևական ծանր զրահավոր հեծելազորի կազմավորման սոցիալական հիմքը բարձր ազնվականների բավականին սակավաթիվ դասն էր, ապա այժմ Շապուհ II-ը, չխնայելով միջոցները, պետական գանձարանի հաշվին զինեց իր հեծելազորի հատուկ ընտրված առանձին ռազմիկների և փաստորեն հասավ մի իրավիճակի, երբ, ի տարբերություն պարթևների, այժմ ուներ ուղղակիորեն հենց արքայի ձեռքի տակ գտնվող ու նրան ենթակա ծանր զրահավորված հեծյալների զգալի ուժեր: Պարթև Արշակունիները չէին վճարում իրենց ծանր զրահավորված հեծելազորի համար,

[1] Էլիոս Լամպրիդոս «Օգոստոսների կենսագրություններ, «Ալեքսանդր Սևերոս», մաս 50:
[2] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 69-70:

այն համալրելը բարձր դասի ազնվականության սոցիալական և բարոյական պարտականությունն էր, սակայն ահա այժմ Շապուհ II-ը, վճարելով իր ծանր զրահավոր հեծյալների համար ու, կարծես թե, խոշոր վնասներ կրելով, փոխարենը ձեռք էր բերում նաև անառարկելի օգուտներ: Իրոք, ծանր զրահավոր հեծյալներն այժմ վարձու ռազմիկի կարգավիճակում էին, նրանց վճարում էր պետական գանձարանը և, եթե պարթևների պարագայում ծանր զրահավոր հեծյալների հավատարմությունը հաճախ կասկածելի էր, քանի որ այն կազմվում էր բարձր դասի ազնվականությունից, ապա այժմ ծանր զրահավորված հեծելազորը բացառիկ կերպով նվիրված դարձավ Շապուհ II-ին, իսկ վերջին հանգամանքն էլ երկրի ներսում ոչ միայն կտրուկ ամրացրեց արյաց արքայի դիրքերը, այլև ահարկու մի գործիք տվեց վերջինիս ձեռքը արտաքին հարաբերություններում:

Առկա տվյալները որոշակի հիմքեր են տալիս ասելու, որ գործունյա այս արքան վերակազմավորեց նաև հետևազորը՝ փորձ անելով ամենից առաջ ստեղծել ծանր հետևակի ստորաբաժանումներ[1]: Իհարկե, պարթևների դեմ պայքարի ելած Սասանյանների բանակն ի սկզբանե ամենից առաջ հենց հետևազորի՝ գյուղացիությունից հավաքվող դեհկանների, բանակ էր, քանզի հակապարթևական ելույթը աջակցություն էր գտել ամենից առաջ հենց սոցիալական այս խավի կողմից, սակայն այժմ հետևազորի ստորաբաժանումները ստացան նոր զենքեր[2] և ավելի լավ զրահավորում՝ ավելի լավ նախապատրաստվելով նաև ամրությունների գրոհին ու դրանց պաշտպանությանը: Եվ վերջապես, որպես ծանր հետևազորի դեմ պայքարի յուրօրինակ մի միջոց, ինչպես նաև միջոց, որը ի վիճակի էր քիչ թե շատ արդյունավետ պայքարել հեծելազորի ու թեթև հետևակի դեմ, այս արքայի օրոք, ըստ էության, ստեղծվեց և իր մեծ զարգացումն ապրեց նաև պարթևների օրոք մոռացված մարտական փղերի գունդը: Միաժամանակ հստակ և ավելի լավ կարգավորում ստացավ նաև դեռևս Շապուհ II-ի նախորդների օրոք վերստեղծված Մատյան գունդը, որն իրականացնում էր ոչ միայն արքայի անձի պահպանություն, այլև մարտի վճռական պահերին կամ հատուկ գործողությունների ժամանակ իրենից ներկայացնում էր մի էլիտար հարվածային ստորաբաժանում: Այսպիսով՝ գրեթե երկու տասնամյակ շարունակվող բարեփոխումների արդյունքում Պարսից թագավորության բանակի մարտունակությունը զգալիորեն բարձրացավ, ընդ որում բանակը դարձավ ավելի բազմաֆունկցիոնալ և հզոր, ինչպես նաև սկսեց առավել արդյունավետ կիրառել նոր զորատեսակներ, զինատեսակներ ու վարձկան կամ դաշնակից ուժեր: Նորակազմ բանակի հարվածային ուժը կազմում էին ծանր զրահավորված հեծյալների հզոր բյուրերը, որոնք արդեն զգալի սպառնալիք էին ներկայացնում նույնիսկ Հռոմեական կայսրության կամ հայկական ծանր հետևակի համար:

Դեռևս Դիոկլետիանոսը, կարծես թե, կանխատեսելով ապագա փոթորկալից իրադարձությունները, մեծ թափով շարունակեց և ավարտին հասցրեց իր ռազմավարչական բարեփոխումները, որոնց թվում հատկապես պետք է առանձնացնել «Strata Diocletiana»-ն՝ Պաղեստինից մինչև Ամիդ ձգվող ամրությունների հզոր շղթան, ինչպես նաև դեռևս Գալլիենոսի կողմից ստեղծած և Լուցիոս Ավրելիանիոսի ու Մարկոս Պրոբոսի զարգացրած ծանր հեծելազորային ստորաբաժանումների վերջնական կազմակերպումը: Նորաստեղծ այս հեծելազորն, իհարկե, իր մարտական միջին հատկանիշներով դեռևս զիջում էր Արևելքում գոյություն ունեցող գործնականում բոլոր հեծելազորներին, սակայն մյուս կողմից էլ այն առավելագույնս էր համապատասխանում Արևելքում սպասվող ռազմական գործողություններին, ինչպես նաև այս ընթացքում արդեն մեծապես գերմանական տարրերով համալրված Հռոմեական կայսրության բանակի ոգուն:

Քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության բանակն իր հերթին

[1] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 103:
[2] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 103:

իրենից արդեն ամենևին էլ չէր ներկայացնում կայսրության դասական ժամանակների լավագույն ռազմական մեքենան՝ իր բնորոշ լավագույն հատկություններով: Իրոք, անցած լինելով «զինվորական կայսրերի» մութ ու խառնակ ժամանակները և արդեն մեծապես համալրված լինելով Եվրոպայի գալլո-գերմանական ցեղերից ելած ու որոշակիորեն ռոմանականացված ռազմիկներով՝ այս բանակը կորցրել էր իր նախկին կազմակերպչական և մարտավարական գրեթե բոլոր հատկանիշները: Իհարկե, բանակն ինքնին դեռ լավն էր, իսկ քանակական գերակշռությունն և ամրացված կետերի լայն շղթան էլ, որ ստեղծվել էր Դիոկլետիանոսի հոգատար ձեռքով, գումարած գալլո-գերմանական ցեղերին այդ ժամանակ այնուհանդերձ բնորոշ ընդհանուր եռանդին ու մարտական բարձր հատկանիշներին, ամեն դեպքում իրենցն ասում էին, սակայն փաստը մնում էր փաստ՝ դա Հռոմեական կայսրության արդեն դասական «լեգեոնային» բանակը չէր, ընդ որում IV դարի Հռոմեական կայսրության բանակում մարտավարական միավորը կազմում էր մոտավորապես 1.000 ռազմիկից կազմված լեգեոնը, որը գործնականում ամեն ինչով զիջում էր իր հայտնի նախորդին: Միակ առավելությունը, որ նախորդ համակարգի հետ համեմատած կար, դա, թերևս, ավելի որակյալ հեծելազորն էր[1], բայց դե այն էլ իր հերթին զիջում էր պարսկականին:

Ինչ վերաբերում է հայերին, ապա քննարկվող ժամանակաշրջանում Մեծ Հայքի թագավորության բանակը կազմված էր մոտ 120.000 ռազմիկից, որոնցից մեկ ուղղությամբ հնարավոր էր կիրառել մոտ 100.000-ը: Ավելին, Տրդատ II Մեծը, որն արդեն բավականին երկար ժամանակ էր, որ կանգնած էր երկրի գլուխ, կարողացել էր զարգացնել և բարձր որակներ ապահովել սեփական ռազմական մեքենային: Հայկական բանակը ուժեղ էր ամենից առաջ հեծելազորով, առանձնահատուկ որակով էին փայլում հատկապես ծանր զրահավորված հեծելազորայինները, հետագա սասանյան հեծյալների յուրօրինակ մարտական այդ նախատիպերը, սակայն այն ուներ նաև բավականին որակյալ հետևազոր՝ ակնհայտորեն ավելի լավը, քան պարսկականն էր: Նույն այս ժամանակ Իբերիայի թագավորության բանակն իրենից, ըստ էության, ներկայացնում էր Հայկական բանակի ավելի փոքր մակարդակի պատճենը, հյուսիս-կովկասյան լեռնական տարի որոշակի առկայությամբ, իսկ ինչ վերաբերում է Բասիլական թագավորության բանակին, ապա այն սակա-քուշանական տիպի բանակի մի յուրօրինակ տիպար էր՝ աղվանական, հյուսիս-կովկասյան և ալանական տարրերի զգալի խառնուրդով:

Հարկ է նշել, որ Շապուհ II-ի փառասիրական մղումները կյանքի կոչելու համար կային, կարծես թե, նաև արտաքին բոլոր անհրաժեշտ նախապայմանները: Այսպես, 320-ական թվականների առաջին կեսին Հռոմեական կայսրության սահմաններում մահացու մրցակցության մեջ էին մտել արդեն Կոնստանդին I Մեծը և Լիցինիոսը, ընդ որում Արևելքում իշխող Լիցինիոսը, ռազմական տեսանկյունից զիջելով իր հակառակորդին և բոլոր ուժերը կենտրոնացնելով վերջինիս դեմ, ըստ էության, աչքաթող էր արել իր, իսկ արդյունքում նաև կայսրության արևելյան սահմանները: Վիճակն առայժմ համեմատականորեն խաղաղ էր նաև Պարսից թագավորության արևելյան սահմաններում, որտեղ IV դարի սկզբներին Հոնական տերության կողմից ծանր պարտության էին մատնվել մասագետները: Իրոք, Քուշանական թագավորության անկումից հետո սակերի արքայական ցեղ հանդիսացող մասագետները III դարի կեսերին մի քանի տասնամյակ իրենց քիչ թե շատ ինքնիշխան տիրապետությունն էին հաստատել Կասպից ծովի արևելյան ափերին, սակայն «մասագետական վերածնունդ» այդպես էլ տեղի չունեցավ և մասագետներն իրենք ևս հոների ճնշման տակ այնուհանդերձ ի վերջո ստիպված եղան լքել հայրենի տափաստանները[2]: Մասագետների կողմից լքված տարածքներում հաստատված հոներն իրենց հերթին ստեղծեցին Հիոնիտների թագավորությունը, որն առայժմ, սակայն, լուրջ սպառնալիք չէր Շապուհ II-ի տերության համար:

[1] Լիբանիոս «Ճառեր, Հուլիանոսի մահախոսականը», 206:
[2] Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 9 գլուխ 18, 22:

Մեծ հաշվով Շապուհ II-ի օգտին էր նաև դրությունը իր պետության հյուսիսային սահմաններում: Իրոք, շարժվելով դեպի հյուսիս, իսկ հետո՝ դեպի արևմուտք՝ 310-ական թվականների վերջին մասագետների հորդան անցավ Վոլգան և իր հերթին կործանեց թուլացած Բասիլական թագավորությունը՝ հիմնելով ակտիվ արտաքին ավարառուական քաղաքականություն վարող, Արշակունիների կողմից ղեկավարվող ու Հյուսիս-արևելյան Կովկասը, Նախակովկասյան տափաստանները և ողջ Աղվանքը ընդգրկող Մազքութական թագավորությունը: Նորաստեղծ այս թագավորությունը, ըստ էության, ռազմաքաղաքական առումով լինելով Բասիլական թագավորության կրկնությունը և, սկսած արդեն 330-ական թվականներից դաշնակցելով Պարսից թագավորության հետ, իրենից զգալի սպառնալիք էր ներկայացնում Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորությունների համար՝ դրանով մեծապես զսպելով վերջիններիս հնարավորությունները Շապուհ II-ի տերության դեմ պայքարում:

298 թվականի Մծբինի հաշտության պայմանագրով, ըստ էության, Հռոմեական կայսրության տիրապետության տակ էր հայտնվել, ինչպես Պարթևական թագավորության վերջին շրջանում էր, ողջ Հյուսիսային Միջագետքը: Որպես հետևանք, ստեղծվել էր օպերատիվ մի իրավիճակ, երբ Հռոմեական կայսրության ռազմական մեքենան, որպես առաջնակետ ունենալով Հյուսիսային Միջագետքի ամենահարավային սահմանում գտնվող Սինգարա ամրացված ռազմականացված քաղաքը, իսկ թիկունքում էլ ունենալով «Strata Diocletiana»-ն, մահացու սպառնալիքի պես կախվել էր Կենտրոնական Միջագետքի, իսկ արդյունքում՝ ոչ միայն Պարսից թագավորության մայրաքաղաքի, այլև՝ այս երկրի ամենաբարեբեր շրջաններից մեկի վրա: Առաջիկա տասնամյակներում մղվող հռոմեա-պարսկական պատերազմների ռազմավարական բովանդակությունը կազմելու էր ուժերի հենց այս դասավորումը, երբ պարսկական կողմը փորձ էր կատարելու Հռոմեական կայսրությանը ամեն կերպ դուրս մղել հիշատակված տարածքներից, իսկ վերջինս էլ, բնականաբար, ամեն կերպ խոչընդոտելու էր դրան: Արդյունքում՝ ռազմավարական հենց այս պատկերն էր, որ, ընդհուպ մինչև 363 թվականը, պայմանավորելու էր կողմերի գործողությունները:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ, եթե Մեծ Հայքի թագավորությունը Հյուսիսային Միջագետքում Պարսից թագավորության հետ նախկինում սահմանի մի լայն հատված ուներ, ապա այժմ, կապված կայսրության տիրապետության առաջխաղացման հետ, փոքրացել էր հայ-պարսկական սահմանի երկարությունը, Հյուսիսային Միջագետքում Հռոմեական կայսրության սահմանը հասել էր գրեթե ներկայիս Մոսուլի մոտակայքը և արդյունքում ապահով էր դարձել Միջագետքի կողմից Հայկական լեռնաշխարհ մուտք գործելու հիմնական ճանապարհը՝ Բաղեշի մոտ գտնվող Ձորա Պահակ կիրճը: Ինչ վերաբերում է սահմանի մնացած հատվածին, ապա այն մինչև Ուրմիա լիճ հիմնականում կազմված էր Կորճայքի բարձր լեռներից, որոնց առկայությունը հեշտացնում էր պաշտպանությունը, իսկ հարձակումը, համապատասխանաբար՝ դժվարացնում: Փաստորեն բուն Մեծ Հայքի թագավորության դեմ խոշոր ուժերով հարձակման անցնելու համար Պարսից թագավորությանը մնում էր միայն Ուրմիա լճի արևելյան ափով ձգվող Գանձա-Թավրիզ-Հեր ճանապարհը, բայց այդ պարագայում էլ, երբ խոշոր ուժերը կշեղվեին այդ ուղղությամբ՝ հեռու ռազմական գործողությունների միջագետքյան թատերաբեմից, վտանգ կար, որ Հռոմեական կայսրության կամ հայ-հռոմեական ուժերը Հյուսիսային Միջագետքից կիջնեն ուղիղ Տիգրոնի մոտակայքն և ոտնատակ կտան Կենտրոնական Միջագետքը՝ ստիպելով ի վերջո հետ քաշել Հայկական լեռներում խրված ուժերը Ուրմիա լճից ավելի հյուսիս ընկած տարածքներից: Ընդհանրացնելով վերը շարադրվածը փաստենք, որ, ինչպես ակնհայտ էր շապուհյան բոլոր տեսաբաններին, քրիստոնյաների դեմ հաջող պայքար մղելու համար ամենից առաջ պետք էր վերացվեր հռոմեացիներին պատկանող Հյուսիսային Միջագետքի սեպաձև հատվածը, որից հետո միայն արդեն հնարավորություն կստեղծվեր ավելի ապահով պայմաններում շարունակական կերպով հետ մղել հռոմեացիներին և հարձակում գործել Մեծ Հայքի

թագավորության վրա:

Գլուխ 25
Մեծ պատերազմի նախօրեին

Հյուսիսային II պատերազմի հարուցած հոգսերն, ըստ էության, ամբողջ երկու տարով հետաձգեցին Տրդատ II Մեծի նախատեսած այցը Հռոմեական կայսրություն և ամենից առաջ Լիցինիոսի մոտ, սակայն այժմ, երբ ամեն ինչ խաղաղվել էր ու արդեն հնարավորություն կար հանգիստ գնահատական տալ իրավիճակին, Հայոց արքան և նրա շրջապատն արդեն իրենք հիմքեր չտեսան մեկնելու նույն Լիցինիոսի մոտ: Այո, Հռոմեական կայսրության արևելյան մասի տիրակալի հետ հին բարեկամական կապերը դեռևս բնականաբար առկա էին, սակայն ավելի կարևոր էին քաղաքական հաշվարկները, իսկ դրանք ամենևին էլ հանդիպման օգտին չէ, որ խոսում էին:

Իրոք, 313 թվականին վերջնականապես հաստատվելով Հռոմում և, ըստ էության, ամրանալով ողջ Արևմուտքում, Կոնստանդին I Մեծը, հրապարակելով Միլանի էդիկտը, իր տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքներում մինչ այդ հալածյալ քրիստոնյաներին թույլ էր տվել ազատորեն դավանել իրենց հավատքը: Ավելին, Կոնստանդին I Մեծը, ինքն էլ լինելով քրիստոնյա, ըստ էության, բացահայտորեն հովանավորում էր քրիստոնյաներին և արդեն պարզ էր, որ նոր կրոնը արագորեն գերիշխող դիրք է ձեռք բերում՝ իր հերթին արդյունքում մեծացնելով նաև Կոնստանդին I Մեծի ուժն ու հզորությունը: Այսպիսով, արդեն 315 թվականի վիճակով պարզ էր, որ բոլոր առավելությունները հենց Կոնստանդին I Մեծի կողմում են և ամեն ինչ խոսում էր այն բանի օգտին, որ Լիցինիոսն ի վերջո պարտվելու է: Արդյունքում, հաշվի առնելով ուժերի ստեղծված հենց այս հարաբերակցությունը, ի վերջո որոշվեց այցը կայսրություն հետաձգել, քանի որ մի կողմից հարկ չկար սրել հարաբերությունները Կոնստանդին I Մեծի հետ, հարաբերություններ վերստեղծելով վերջինիս հակառակորդ և ավելի թույլ Լիցինիոսի հետ, իսկ մյուս կողմից էլ ակնհայտ էր, որ համառորեն քրիստոնեությունը ժխտող նույն Լիցինիոսը դժվար թե ցանկանար լուրջ հարաբերություններ հաստատել քրիստոնեությունը դավանող Տրդատ II Մեծի հետ:

324 թվականի օգոստոսին, երբ Կոնստանդին I Մեծի և Լիցինիոսի միջև մղվող պայքարը հասավ իր գագաթնակետին ու Լիցինիոսը բոլոր առկա ուժերը կենտրոնացրել էր իր ախոյանի դեմ, Շապուհ II-ը առաջին անգամ փորձարկեց իր նորակազմ ռազմական մեքենան՝ հարձակվելով Հռոմեական կայսրության տիրույթների վրա: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը, մի կողմ թողնելով ամրացված Սինգարան, հարվածն ուղղեց ուղիղ Ամիդ քաղաքի վրա, որն այդ ժամանակ դեռևս չուներ այն հզոր պարիսպները, որոնցով պետք է այդքան հայտնի դառնար հետագայում: Թշնամին գրավեց քաղաքը[1], սակայն Ամիդից Տիգրանակերտ տանող ճանապարհին գտնվող Նարարա կոչվող վայրում տեղի ունեցած ճակատամարտում անհաջողության մատնվեց և նահանջեց[2]: Հենց այս ժամանակ հայտնի դարձավ նաև, որ Նիկոմեդիայի (Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտք) մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում նույն այդ ժամանակ պարտություն է կրել[3] ու քաղաքական ասպարեզից, ըստ էության, հեռացել է նաև Լիցինիոսը, մի հանգամանք, որը ստիպեց մեկ գայիսոնի տակ վերամիավորվող Հռոմեական կայսրության հետ ընդհարումից խուսափելու ձգտող Շապուհ II-ին կտրուկ

---

[1] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 66-74; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[2] Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 27, մաս 2:

[3] Անանուն Վալեսիացի «Ընտրյալ պատմություն», մաս 1, գլուխ 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 41; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2; Սոզոմենոս «Եկեղեցական պատմություն», գիրք 1, գլուխ 7; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 28; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 88; Սեբեոս «Պատմություն», գլուխ 46; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 59; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 19: Պայքարի մակարդակը պատկերացնելու համար նշենք, որ 324 թ-ի օգոստոսին տեղի ունեցած Նիկոմեդիայի ճ-մ-ին, ըստ առկա տվյալների, Լիցինիոսը ներգրավել էր 130.000 ռազմիկ, որից կորցրեց 25.000-ին: Կոնստանդին I Մեծի ուժերն ավելի մեծ էին:

նահանջել՝ թողնելով նաև Ամիդը: Իրոք, իշխանությունից զրկված Լիցինիոսը, չնայած այն բանին, որ հանդիսանում էր Կոնստանդին I Մեծի քրոջ ամուսինը, վերջինիս հրամանով շուտով սպանվեց և արդյունքում Հռոմեական կայսրությունը վերջնականապես միավորվեց մեկ գայիսոնի ներքո՝ Դիոկլետիանոսի ստեղծած խառնաշփոթը վերջացավ և Հռոմեական կայսրության միանձնյա տիրակալ հռչակվեց վերջինիս առավել հաջողակ կրկնությունը հանդիսացող Կոնստանդին I Մեծը: Նահանջի համար, սակայն, կար նաև մեկ այլ և ոչ պակաս կարևոր պատճառ:

Իրոք, զգալի ուժեր կուտակելով հյուսիս-արևմուտքում, Շապուհ II-ն, ըստ էության, անպաշտպան էր թողել իր տերության հյուսիսային սահմանները, ինչից էլ օգտվելով Տրդատ II Մեծի, սպարապետ Արտավազդ Մամիկոնյանի, Բագրատ Բագրատունու, Վահան Քաջ Ամատունու և Մանաճիհր Ռշտունու ընդհանուր ղեկավարությամբ Թավրիզ-Գանձա-Կենտրոնական Ատրպատական երթուղով արշաված Մեծ Հայքի թագավորության (մոտ 70.000), Հռոմեական կայսրության (մոտ 20.000), ինչպես նաև Իբերիայի, Ալանական ու Մազքութական թագավորությունների միացյալ բանակը (մոտ 50.000), կարծես Խոսրով I Քաջի լավագույն ժամանակներում, սրընթաց երթով իջավ մինչև Էկբատան: Ատրպատականի սիրտը համարվող այս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտը Պարսից թագավորության բանակին խոշոր մի պարտություն արժանացավ[1], սակայն Հայոց արքան ևս իր հերթին, հաշվի առնելով, որ Շապուհ II-ը հետ է քաշվել Հյուսիսային Միջագետքից և խոշոր ուժերով ուղղվում է իր կողմը, թողեց Էկբատանի շրջափակումը ու հետ քաշվեց դեպի սեփական լեռներ:

Ուժերի առաջին այս փորձարկումը, որն, ի դեպ ասած, Շապուհ II-ին որևէ առավելություն չտվեց և նույնիսկ մեկ ու բավականին խոշոր էլ մի պարտություն արժեցավ, պարսից ռազմական տեսաբաններին հուշեց ապագայում այլևս նույն սխալը չկրկնել: Արդյունքում՝ ապագա ռազմական գործողություններում, երբ Շապուհ II-ը փորձում էր Հյուսիսային Միջագետքում Հռոմեական կայսրությանը այս կամ այն ուժգնությամբ հարված հասցնել, վերջինս մշտապես ստիպված էր լինում նաև Ատրպատականում Մեծ Հայքի թագավորության դեմ զգալի ուժեր թողնել կամ գոնե որևէ այլ կերպ զսպել վերջինիս, ինչի հետևանքով էլ Հռոմեական կայսրության դրությունը որոշակիորեն թեթևանում էր:

330 թվականի ամռանը գրեթե ութսունամյա տարիքում կյանքից հեռացավ Մեծ Հայքի թագավորության արքա և պատմության մեջ առաջին քրիստոնյա միապետ Տրդատ II Մեծը, որն իր կյանքի վերջին տարիներն անցկացնում էր ճգնակեցության մեջ: Հիմա արդեն իրոք անհնար է ասել, թե ի՞նչն էր ստիպել երբեմնի հզոր այդ ռազմիկին և եռանդուն քաղաքական գործչին իր կյանքի վերջում ճգնակեցության ուղին ընտրել, սակայն, այլ պատճառների թվում կարելի է կարծել նաև այն, որ Հայոց արքային որոշակիորեն տանջում էին հին աստվածների նկատմամբ գործադրած իր թեև անհրաժեշտ, բայց այնուհանդերձ՝ մեղքերը, քանզի, մտքով լինելով արդեն նոր ժամանակների մարդ, հոգով ու մարմնով այս տիրակալն այնուհանդերձ պատկանում էր նախորդ դարաշրջանին: Այս առումով, թերևս, հատկանշական էր, որ հակասական կյանք ունեցած Հայոց այս արքայի նաև մահվան հանգամանքների մասին էին մինչև վերջ հակասական կարծիքներ թևածում, քանզի, այն բանից հետո, երբ շրջակայքում անասունների իրենց հոտերն արածեցնող հովիվները Մանյա այրքի մոտքի մոտ գտան նույն այդ այրում ճգնող արքայի դիակը, երկրում սկսեցին համառ լուրեր շրջանառվել, թե Տրդատ II Մեծին թունավորել են:

330-ական թվականների կեսերին իր կյանքի երրորդ տասնամյակին վերջին մոտեցող Շապուհ II-ը նախատեսել էր անցնել վճռական գործողությունների: Մծբինի քառասնամյա հաշտության ժամկետը, հաշված 297 թվականից, արդեն սպառվում էր,

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 87; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 12; Ուխտանես «Հայոց պատմություն», գլուխ 68; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Փարսադան Գորգիջանիձե «Հայոց դարձի պատմությունը»:

Կոնստանդին I Մեծն ավելի ու ավելի շուտ էր հիվանդանում, իսկ իր անհաղթ հզորությամբ ողջ Մերձավոր Արևելքը դղրդացնող Մեծ Հայքի անչափ վճռականորեն տրամադրված Տրդատ II Մեծ արքան էլ այլևս չկար՝ Հայոց գահին վերջինիս փոխարինել էր նրա որդին՝ Խոսրով III-ը (330-338), որը, ընդհանուր առմամբ վատ մարդ և տիրակալ չլինելով հանդերձ, չուներ իր հոր ոչ հզորությունը, ոչ ուժն ու վճռականությունը և ոչ էլ անձնական հմայքը, իսկ այս ամենն էլ, իր համակցության մեջ, միանգամից բարդացրեց երկրի ներքին ու արտաքին դրությունը: Այս առումով հատկանշական է, որ երկրում արդեն իսկ խոշոր ֆեոդալի սոցիալական կարգավիճակ ստացած Հայ առաքելական եկեղեցին հենց Խոսրով III-ի օրոք առաջին քայլերը կատարեց ոտք մեկնելու պետական իշխանության հետ: Իր հերթին վիճակը սահմաններում դանդաղ, բայց անշեղորեն բարդանում էր և այս պայմաններում Հայոց արքան կարող էր բացարձակապես հույս դնել, թերևս, միայն հայրենանվեր ու զորավարական հսկայական փորձով և զորական տաղանդով աչքի ընկնող ծերունազարդ սպարապետ Վաչե Մամիկոնյանի վրա, ինչպես նաև, որոշակի թեականությամբ, քանի որ սրանք ամեն դեպքում խոշոր հողատեր ազնվականներ էին, այնպիսի տաղանդավոր իշխանների վրա, ինչպիսիք էին Սյունյաց նահապետ Անդովկը (մոտ 298-370), քուշանական Արշակունիների հետնորդ, բայց արդեն հայացած Արշավիր Կամսարականը (մոտ 295-350), Տրդատ II Մեծի զինակից Սմբատ Բագրատունու (մոտ 290 -314) որդի Բագրատ Բագրատունին (մոտ 314-350), ինչպես նաև կրկին Տրդատ II Մեծի զինակից Օտա Ամատունու (մոտ 270-314) որդի Վահանը (մոտ 314-345)[1]:

Արդեն 330 թվականին՝ Տրդատ II Մեծի մահից անմիջապես հետո, Փայտակարանում բռնկվեց պաշտոնական Տիզբոնի կողմից ուղղորդվող և Մազքութական թագավորության արքա հռչակված Սանատրուկ Արշակունու (մոտ 331-332) հակաարքունական խռովությունը, որը ճնշվեց Բագրատ Բագրատունու, Հռոմեական կայսրության Անտիոքոս զորավարի ու Միհրան III Մեծի գլխավորած Մեծ Հայքի (մոտ 30.000) ու Իբերիայի (մոտ 20.000) թագավորությունների, ինչպես նաև Հռոմեական կայսրության (մոտ 10.000) միացյալ բանակի արշավանքի արդյունքում[2]: Սանատրուկն իրեն աջակցող Մազքութական թագավորության բանակի հետ միասին դուրս մղվեց Պարսից թագավորության տարածք, սակայն, հատկապես Մազքութական թագավորության օրըստօրե ուժեղացող ագրեսիվ մղումների պայմաններում, Մեծ Հայքի թագավորության արևելյան սահմաններին խաղաղությունը երկար ժամանակով խախտվեց: Հենց նույն այդ տարիներին էր նաև, որ երկրի ներսում բռնկվեց Մանավազյանների և Որդունիների միջտոհմային պատերազմը, որը քիչ արյուն չէր, որ արժեցավ՝ լրջորեն խաթարելով Մեծ Հայքի թագավորության ներքաղաքական կայունությունը[3]:

Գլուխ 26
Հյուսիսային III պատերազմը

Կյանքը ցույց տվեց, որ 324 թվականի դասերը, երբ պարսից զենքի ողջ հնարավոր հաջողությունն, ըստ էության, ի դերև ելավ այն բանից հետո, երբ Մեծ Հայքից դաշույնի պես հատու հարված հասցվեց Ատրպատականին, Շապուհ II-ն և նրա շրջապատը լավ էին յուրացրել: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Մեծ Հայքը չեզոքացնելու նպատակով Շապուհ II-ի դեսպանները լայն դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Մազքութական Արշակունիների հետ[4], իսկ այն բանից հետո էլ, երբ Հայաստանի որոշ տարածքների հաշվին գրգռեցին սրանց ագահության տենչերն ու մազքութների նոր

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 93-94:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 4, 6; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 12; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 10; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 20; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 4:
[4] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 9:

արքա Սանեսանին (մոտ 332 - ուղ. 336) էլ խոստացան Մեծ Հայքի թագավորության գահը, մազքութները վերջնականապես անցան պաշտոնական Տիզբոնի կողմը: Շապուհ II-ը, դատելով ըստ ամենայնի, նախատեսել էր «մազքութական հաղթաթուղթը» խաղի մեջ մտցնել միայն մեծ պատերազմի պարագայում, սակայն Սանեսանի անզսպությունը խառնեց արյաց արքայի ծրագրերը և 335 թվականի աշնանը սկիզբ առավ Հյուսիսային III պատերազմը (335-336)՝ յուրօրինակ մի նախերգանք հանդիսանալով հաջորդ տասնամյակներում ողջ Առաջավոր Ասիան ցնցելու կոչված պատերազմական գործողություններին:

335 թվականի աշնանը Սանեսանի գլխավորությամբ առաջխաղացած Մազքութական թագավորության բանակը (մոտ 120.000, այդ թվում մազքութներ, ալաններ, հոներ, փոխեր, թավասպարներ, հեճմատակներ, իժմախներ, գետեր, գղվարներ, գուգարներ, շչբեր, ճղբեր, բաղասիճներ և եգերսվաններ) Ուտիքի հյուսիսում տեղի ունեցած ճակատամարտում հաղթեց Մեծ Հայքի Հյուսիսային զորավարության հրամանատար, Գուգարքի բդեշխ և միաժամանակ նաև Իբերիայի թագավորության արքա Միհրան III Մեծի գլխավորած Մեծ Հայքի թագավորության Հյուսիսային զորավարության ու Իբերիայի թագավորության միացյալ բանակին (մոտ 25.000) և ցրեց այն, ընդ որում գրեթե մեկ դար ապրած ու 82 տարի կառավարած Միհրան III Մեծ էլ ընկավ մարտում[1]: Դրանից հետո թշնամու մասերի բաժանված բանակի ծանր հարվածին ենթարկվեցին Ուտիքը, Արցախը, Գուգարքը, Սյունիքը, Փայտակարանը, Արարատը, Վասպուրականն ու Պարսկահայքը, որից հետո թշնամին, հավաքելով ավարը և ցրված ուժերը, բանակեց Վաղարշապատ քաղաքում ու նրա շրջակայքում[2]: Մեծ Հայքի թագավորության արքա Խոսրով III-ը ստիպված եղավ արքունիքով ամրանալ Դարույնք ամրոցում (Արարատ, Կոգովիտ գավառ, Սիսի հարավ-արևելյան լանջին), իսկ թշնամին էլ գրավեց Ցոր բերդը (Արցախ, Պածկանք գավառի արևմուտք)[3]: 336 թվականի գարնանը, սակայն, Մեծ Հայքի թագավորության սպարապետ Վաչե Մամիկոնյանը, որը մինչ այդ գտնվում էր Հռոմեական կայսրությունում, վերադարձավ երկիր և իրար բերեց ուժերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

336 գարուն – ***<u>Օշականի ճ-մ</u>*** (Արարատ, Արագածոտն գավառ)[4]

Մեծ Հայքի թագավորության սպարապետ Վաչե Մամիկոնյանը, Արևմտյան զորավարության հրամանատար Բագրատ Բագրատունին, Հարավային զորավարության հրամանատար Մեհենդակ Ռշտունին, որին օգնում էր Գարեգին Ռշտունին, Արևելյան զորավարության հրամանատար Վահան Քաջ Ամատունին, Վարազ Կամինականը և այլ իշխաններ կենտրոնացրեցին Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 100.000), որից հետո այն շարժեցին Օշականի ու Վաղարշապատի շրջակայքում Սանեսանի գլխավորությամբ ճամբարած Մազքութական թագավորության բանակի (մոտ 100.000, այդ թվում մազքութներ, ալաններ, հոներ, փոխեր, թավասպարներ, հեճմատակներ, իժմախներ, գետեր, գղվարներ, գուգարներ, շչբեր, ճղբեր, բաղասիճներ և եգերսվաններ) դեմ:

I փուլ – Հայկական բանակը աննկատ մոտեցավ ***<u>Ցլի գլուխ լեռան</u>*** մոտ ճամբարած թշնամու հեծելազորին և լուսաբացին անակնկալ գրոհով գլխովին ջախջախեց այն՝ ազատելով մեծաթիվ գերիների:

II փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ Հայկական բանակը անակնկալ գրոհով ներխուժեց ***<u>Վաղարշապատ,</u>*** ուր հետևակի հիմնական ուժերով բանակել էր

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 9
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 7; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 9; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1:
[3] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 14:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 7; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 9; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 12; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 22:

Սանեսանը: Չկարողանալով կազմակերպված դիմադրություն ցույց տալ՝ թշնամին գլխովին ջախջախվեց, իսկ Սանեսանը սպանվեց:

III փուլ – Հետապնդելով թշնամու բանակի մնացորդներին՝ Հայկական բանակը հասավ նրան Օշականի մոտ գտնվող մի քարքարոտ վայրում: Թույլ չտալով թշնամուն մարտակարգ ընդունել և սկսել իր համար սովորական նետաձգությունը՝ Հայկական բանակը ծանր հեծելազորի ու նրան կրկնած ծանր հետևակի ճակատային, ինչպես նաև թեթև հետևակի թևային համակցված հուժկու հարվածներով գլխովին ջախջախեց վերջինիս: Այդ ընթացքում Վահան Ամատունին մարտադաշտում հանդիպեց քաջաբար և խիզախորեն մարտնչող թշնամու հսկայամարմին հրամանատարին, որը այնպես վարպետորեն էր զրահավորված, որ ոչ մի հարված նրան չէր վնասում: Վահանը, սակայն, արշավեց վերջինիս ուղղությամբ և, հզոր հարվածով միջանցիկ նիզակահարելով, սպանեց նրան:

IV փուլ – Հայկական բանակը հետապնդեց թշնամու մինչև ***Աղվանքի արևելք*** և ծանր կորուստներ պատճառեց:

Հայերը կորցրին 10.000, թշնամին՝ մոտ 80.000 զինվոր:

Մազքութների կրած ջախջախիչ պարտությունից հետո Հյուսիսային III պատերազմը ավարտվեց և արդյունքում Մազքութական ու Ալանական թագավորությունները կտրուկ թուլացան և ստիպված եղան հրաժարվել Հայաստանի նկատմամբ վարվող ավարառուական քաղաքականությունից: Փաստորեն Մազքութական թագավորության ուժերով Մեծ Հայքի թագավորության շարքից հանելու գործողությունը Շապուհ II-ին ոչ միայն որևէ հաջողություն չբերեց, այլև ստեղծվեց մի իրավիճակ, երբ Մազքութական թագավորության հզորությունն անվերադարձ կոտրվեց ու վերջինս այլևս և ոչ մի հնարավորություն չունեցավ լուրջ սպառնալիք ներկայացնել Հայոց թագավորության արևելյան սահմաններին: Արդյունքում՝ խախտվեց ռազմավարական այն դասավորությունը, որ շապուհյան տեսաբանները նախատեսել էին դեռևս 324 թվականից սկսած՝ նոր պայմաններում, ինչպես ասվեց, Պարսից թագավորությունը ստիպված էր Ատրպատականում հայերի դեմ մշտապես խոշոր ուժեր պահել, ինչը թուլացնում էր հարվածի թափը գլխավոր՝ Հյուսիսային Միջագետքի, ուղղությամբ: Հենց այս պայմաններում էլ սկիզբ առավ Հայ-Պարսկական III պատերազմը (336-387):

Գլուխ 27
Հայ-Պարսկական III պատերազմը

336 թվականի աշնանը գործեց Հայոց թագավորության դեմ նախատեսված խաղաթղթերից ևս մեկը՝ ապստամբեց Աղձնիքի Բակուր բդեշխը: Խոսրով III-ը, սակայն, այս անգամ գործեց ամենայն վճռականությամբ՝ 336 թվականի աշնանը Մանաճիհր Ռշտունու, Վաղինակ Սյունու, Ջոն Կորդվացու, Մարի Անգեղացու, Ներսես Շահունեցու, Դատ Հաշտենցու և Մանակ Բասենցու գլխավորած Մեծ Հայքի թագավորության կառավարական (մոտ 50.000), ինչպես նաև Հռոմեական կայսրության (մոտ 5.000) միացյալ բանակը Մծբինի մոտ հաղթեց Բակուրի գլխավորած Հայկական (մոտ 10.000) ու Պարսից թագավորության (մոտ 40.000) միացյալ բանակին[1]: Բակուրը սպանվեց, նրա տոհմը գրեթե բնաջնջվեց, Աղձնիքի բդեշխ նշանակվեց Վաղինակ Սյունին, իսկ Ծավդեք և Արվաստան գավառները, ինչպես նաև Մծբին քաղաքն առժամանակ միավորվեցին Մեծ Հայքի թագավորությանը: Այսպիսով՝ փաստորեն ինչպես հյուսիսում, այնպես էլ հյուսիս-

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 9; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 4, 7; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 20; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 24; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 13, գլուխ 3:

արևմուտքում արյաց արքայի ձեռնարկած անուղղակի գործողությունները, որոնք ուղղված էին ապագա մեծ պատերազմում Մեծ Հայքի թագավորությունը շարքից հանելուն կամ գոնե առնվազն վերջինիս լրջորեն թուլացնելուն, որևէ հաջողության չարձանագրեցին: Անհամբեր Շապուհ II-ը, սակայն, որը վառվում էր իր նորակազմ բանակն և ուժերը լիարժեք պատերազմում քրիստոնյաների հետ հնարավորինս շուտ չափելու տենչից, դրանից հետո այլևս չհամբերեց:

337 թվականի վաղ գարնանը Շապուհ II-ը մի դեսպանախումբ ուղարկեց Կոնստանդին I Մեծի մոտ, պահանջելով վերջինիցս տարածքային որոշակի զիջումներ, ընդ որում պաշտոնական Տիզբոնում հաշվի էին առել, որ առաջին քրիստոնյա կայսրն այսպես թե այնպես չի զիջի, իսկ այդ պարագայում էլ իրենք պատերազմ սկսելու հարմար առիթ կունենան: Շապուհ II-ն և իր շրջապատը, սակայն, կարծես թե, իրոք լավ չէին հաշվարկել ռազմատենչ կայսեր վճռականությունը, քանզի Կոնստանդին I Մեծը, որն արդեն մեկ ու կես տասնամյակ սեփական գայիսոնի տակ ուներ Հռոմեական միավորված կայսրությունը, Դանուբի ափերին սահմանային մանր մարտերից զատ որևէ այլ մեծ պատերազմ վաղուց չէր տեսել, դրանց, ի դեպ, իր մասնակցությունն էր բերել նաև Մեծ Հայքի թագավորության օժանդակ զորագունդը[1], ինչպես նաև հինավուրց Բյուզանդիոնի տարածքում 330 թվականին հիմնադրել էր Բոսֆորի և Դարդանելի նեղուցներում անչափ կարևոր դիրք զբաղեցնող նոր մի քաղաք, կոչելով այն Կոստանդնուպոլիս ու այստեղ հաստատելով կայսրության մայրաքաղաքը, այժմ լի էր նոր պատերազմ վարելու վճռականությամբ: Արդյունքում՝ կայսրը վճռական տեսքով և զգալի ուժերով ժամանեց Արևելք ու այստեղ շարունակեց կենտրոնացնել իր բանակը, ինչը բավականին ահաբեկեց պաշտոնական Տիզբոնին: Թվում էր, թե նոր պատերազմը հնարավոր կլինի կանխել, քանի որ Կոնստանդին I Մեծի վճռականությունից ահաբեկված հակառակորդը դադարեցրեց ագրեսիվ գործողությունները, դե իսկ կայսրն ինքն էլ դժվար թե առաջինը հարձակվեր, սակայն տարածաշրջանին այնուհանդերձ իրոք որ կարծես անխուսափելիորեն վիճակված էր ճաշակել պատերազմի դառը բաժակը՝ 337 թվականի մայիսի 22-ին Կոնստանդին I Մեծը Նիկոմեդիայում հանկարծամահ եղավ:

Կոնստանդին I Մեծի մահից հետո մի պահ մեկ գայիսոնի ներքո հավաքված կայսրությունը կրկին բաժանվեց՝ այս անգամ արդեն երեք մասի: Իրոք, գահակալական կարճատև, սակայն անողոք պայքարում վերացնելով իրենց երկու հորեղբայրներին և յոթ հորեղբորորդիներին, արդյունքում օգոստոսի կարգավիճակով Հռոմեական կայսրության գահին բազմեցին հանգուցյալի երեք որդիները՝ ավագ որդի Կոնստանդին II-ը (337-340), միջնեկ որդի Կոնստանդիոս II-ը (337-361) և փոքր որդին Կոնստանդ I-ը (337-350), ընդ որում առաջինի իշխանությունը տարածվում էր կայսրության հյուսիս-արևմտյան հատվածի վրա, երկրորդին բաժին հասավ արևելքը, իսկ երրորդին էլ՝ հարավ-արևմուտքը: Արևելքը բաժին էր հասել Կոնստանդիոս II-ին և նրա հետ էլ հիմնականում եղան հայերի շփումները: Կոնստանդիոս II-ը հոր տաղանդներից բացարձակապես զուրկ, զգուշավոր, դաժան, անվճռական, հաշվենկատ, մեծ ձեռնարկումներից հեռու մնացող և իր անձի նկատմամբ սերը բացարձակության աստիճանի հասցրած մի անձնավորություն էր, որը, սակայն, այս ամենի հետ միաժամանակ նաև, այնուհանդերձ զուրկ չէր դիվանագիտական որոշակի կարողություններից: Այսպես թե այնպես, սակայն Կոնստանդին I Մեծի մահը, որը Հռոմեական կայսրությունում միանգամից էլ գահակալական ճգնաժամ առաջացրեց, իր հերթին կրկին մեծ հույսերով վառեց Շապուհ II-ին, որի լարած ռազմական մեքենան վերջնականապես գործեց, երբ պատերազմը դարձավ անխուսափելի:

337 թվականի հունիսին Գանձա-Տրպատունիք-Գաբիթյան երթուղով Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000,

[1] Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 24; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2; Անանուն Վալեսիացի «Ընտրյալ պատմություն», մաս 1, գլուխ 6; Հովհաննես Դարդել «Ժամանակագրություն Հայոց», գլուխ 3; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 3:

մոտ 10 փիղ) Դատաբե Բզնունու դավաճանության պատճառով անակնկալ հարձակմամբ հաղթեց նույն Բզնունյաց նախարարի գլխավորած Մեծ Հայքի թագավորության Հարավային զորավարության աշխարհազորին (մոտ 20.000)։ Դրանից հետո, փորձելով զարգացնել հաջողությունը, թշնամու բանակը Վասպուրականի հյուսիսով սկսեց առաջանալ դեպի Վանա լճի հյուսիս արևելյան ափեր։ Այս ընթացքում, սակայն, սպարապետ Վաչե Մամիկոնյանի ու Վահան Քաջ Ամատունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (30.000) ելավ թշնամու դեմ և նույն տարվա արդեն հուլիսին Առեստի ճ-մ-ում (Վասպուրական, Առբերանի գավառ, Վանա լճի հյուսիս-արևելյան ափ) գլխովին ջախջախեց Թոռնավան-Բաղիովիտ-Առբերանի երթուղով առաջխաղացում իրականացրած Պարսից թագավորության բանակին (մոտ 48.000, 10 փիղ)[1]։ Որպես մարտավար վերցվեցին փղեր, Դատաբեն գերվեց և քարկոծվեց, նրա տոհմը բնաջնջվեց, իսկ տիրույթները անցան Հայ առաքելական եկեղեցուն։

Մեծ Հայքի թագավորության դեմ իրականացված հարձակման հետ միաժամանակ Շապուհ II-ը հարձակման անցավ նաև Հյուսիսային Միջագետքի ուղղությամբ, սակայն 337 թվականի օգոստոսին տեղի ունեցած Սիսարայի ճ-մ-ում (Սինգարայի մոտ) Պարսից թագավորության բանակը ոչ մի հաջողության չհասավ և հետ քաշվեց[2]։ Հաջողություն չբերեց նաև մեկ ամիս անց ավելի հյուսիսային ուղղությամբ հասցված նոր հարվածը, երբ 337 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած Կոնստանդինեի ճ-մ-ում (Մծբինից 85 կմ արևմուտք) Հռոմեական կայսրության բանակին (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 200) կրկին հաջողվեց ստիպել Պարսից թագավորության բանակին (մոտ 20.000) նահանջել[3]։ Փաստորեն իր իսկ սանձազերծած պատերազմը դրա առաջին տարում արյաց ռազմատենչ արքային որևէ հաջողություն չբերեց, սակայն Շապուհ II-ը, ի մի բերելով ուժերը, պատրաստվեց թարմ ուժերով հարձակման անցնել արդեն նոր՝ 338, թվականին։ Այս կապակցությամբ պետք է նշել, սակայն, որ, եթե Կոնստանդին I Մեծի մահվամբ պայմանավորված կայսրությունում մի պահ գահակալական խլրտումներ էին առաջացել, ապա արդեն 337 թվականի երկրորդ կեսին Հռոմեական կայսրության արևելյան մասում իշխող Կոնստանդիոս II-ին հաջողվել էր կարգի գցել գործերը և կիսել կայսրությունն իր եղբայրների հետ, որից հետո արդեն նա ժամանել էր պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմ։

338 թվականի գարնանը Սիկգարայի ճ-մ-ում (Սինգարայի մոտ) Հռոմեական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200) անորոշ ելքով ընդհարվեցին Պարսից թագավորության առաջխաղացած հերթական բանակի (մոտ 20.000) հետ ու հետ մղեցին վերջինիս[4]։ Այս անգամ, սակայն, Շապուհ II-ը, կարծես թե, որոշել էր չբավարարվել միայն հակառակորդի ուժերը շոշափելով, ինչպես անցած տարի էր, այլ՝ գրավել Հռոմեական կայսրության պաշտպանական համակարգի կարևորագույն կետերից մեկը հանդիսացող Մծբինը՝ Սասանյանների համար ատելի այդ քաղաքը, որտեղ կնքվել էր 298 թվականի հաշտության համաձայնագիրը։ Արդյունքում՝ առկա ուժերը բաժանելով մի քանի կորպուսների, 338 թվականի մարտի սկզբին Շապուհ II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակներից մեկը (մոտ 40.000) Հռոմեական կայսրության (մոտ 1.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 1.000) միացյալ բանակից պաշարեց Մծբինը։ Քրիստոնյաները, սակայն, դիմանում էին ամենայն համառությամբ և ահա մայիսի սկզբին, այն բանից հետո, երբ միջատների մի մեծ պարս հարձակվեց Շապուհ II-ի բանակի ձիերի ու փղերի վրա և, ըստ էության, շարքից հանեց դրանք, արյաց հպարտ արքան ստիպված եղավ նահանջի հրաման տալ[5]։ Հաջող չգործեցին նաև

---

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 8։
[2] Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27։
[3] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 75-76; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27։
[4] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 77-78; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27։
[5] Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 30; Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Ամմիանոս «Հռոմի

Պարսից թագավորության բանակի մյուս մասերը, որոնցից մեկը (մոտ 30.000), փորձելով այնուհանդերձ գոնե մի որևէ հաջողության հասնել, առաջացավ Մծբինից մի փոքր դեպի արևմուտք, սակայն հենց նույն 338 թվականի մայիսի սկզբին էլ Կոնստանդինեի ճ-մ-ում ընդհարվեց Հռոմեական կայսրության բանակի (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 200) հետ և, ինչպես նախորդ անգամները, չնայած մարտի անորոշ ելքին, ստիպված եղավ հետ քաշվել[1]: Գլխավոր անհաջողությունը, սակայն, որ բաժին հասավ Շապուհ II-ին և որն էլ մեծ հաշվով ստիպեց վերջինիս թողնել Մծբինն ու նահանջել, պատուհասեց վերջինիս Աղձնիք նահանգում:

Իրոք, օղակելով Մծբինը և բանակային մանր ուժերով կաշկանդելով հռոմեացիներին Հյուսիսային Միջագետքում, Շապուհ II-ը հենց նույն ժամանակ էլ մի խոշոր բանակ ուղարկեց Աղձնիքի ուղղությամբ: Արդյունքում՝ նույն 338 թվականի մայիսի սկզբներին Աղձնիքի լեռներում, կոնկրետ վայրը աղբյուրների սղության պատճառով, դժբախտաբար, անհնար է նշել, տեղի ունեցավ մի խոշոր և արյունահեղ ճակատամարտ, որի արդյունքում սպարապետ Վաչե Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 80.000) համառ ու դաժան մարտում հետ շպրտեց Պարսից թագավորության առաջխաղացած բանակին (մոտ 100.000, 15 փիղ): Ըստ իմ գնահատականի այս ճակատամարտում հայերը ընդհանուր շարքից դուրս եկած կորցրին մոտ 30.000 զինվոր, որոնց թվում զոհվեցին սպարապետը և շատ այլ անվանի նախարարներ, իսկ թշնամին՝ մոտ 50.000 զինվոր[2]: Հենց այս ճակատամարտից հետո էր, ի դեպ, երբ պարզվեց, որ Մամիկոնյան տոհմի արական սեռի կենդանի մնացած ներկայացուցիչներից ամենաավագը Վաչեի որդի, երիտասարդ Արտավազդն էր, վերջինս ճանաչվեց Մեծ Հայքի թագավորության սպարապետ, ընդ որում, մինչև Արտավազդը իր պարտականությունները լիարժեք կատարելուն ունակ կդառնար, Մեծ Հայքի թագավորության բանակի առաջնորդ-զորավարներ և երիտասարդ սպարապետի խնամակալներ ճանաչվեցին Վաչե Մամիկոնյանի փեսաները՝ Անդովկ Սյունին ու Արշավիր Կամսարականը[3]: Աղձնիքում տեղի ունեցած ահեղ մարտերի ժամանակ Խոսրով III-ն արդեն իսկ գտնվում էր մահամերձ վիճակում և թշնամու պարտությունն ու ընդհանուր նահանջը ոչ միայն Մեծ Հայքի թագավորության տարածքից, այլև՝ Հյուսիսային Միջագետքից, ոչ մի կերպ չերկարացրին փոքրամարմին մեր այս արքայի կյանքը, որը մահացավ հենց նույն 338 թվականի ամռանը:

Մեծ Հայքի թագավորության գահի թափուր մնալը ծանր ներքաղաքական վիճակ առաջացրեց երկրում, ընդ որում վատը նաև այն էր, որ արդեն չկար նաև հայրենանվեր Վաչե Մամիկոնյանը: Ստեղծված ներքաղաքական խառնաշփոթը կարող էր աստիճանաբար վերածվել նաև արդեն արտաքին քաղաքական բարդությունների, բայց, բարեբախտաբար, այդ ժամանակ երկրի ղեկին հայտնվեցին արդեն որոշակիորեն տարիքն առած, սակայն հին եռանդի տեր հայրենանվեր Անդովկ Սյունին, ինչպես նաև ոչ պակաս հայրենանվեր ու եռանդուն Արշավիր Կամսարականը: Հիշատակված երկու գործիչներին հաջողվեց ոչ միայն մեկ ամուր բռունցքի մեջ հավաքել ֆեոդալական մասնատվածության վտանգի ենթակա երկիրը, այլև՝ ամուր կապեր հաստատել Կոնստանդիոս II-ի հետ և Հայոց գահին հաստատել մահացած արքայի որդի Տիրանին՝ Տիրան II-ին (338-344): Նոր արքան սեփական հոր լիակատար հակապատկերն էր և ավելի շատ նման էր իր մեծ պապին, թեև, ի տարբերություն վերջինիս, Տիրան II-ին այնուհանդերձ որոշակիորեն չէին հերիքում քաղաքական փորձառությունը, բնավորության զսպվածությունը և դիվանագիտական փորձը, իսկ այդ ամենի պակասն էլ, գումարվելով այս արքայի մոտ, անկասկած, առկա եռանդուն բնավորությանը, հաճախ կարող էին լավ արդյունքների չհասցնել:

պատմությունը», գիրք 20, գլուխ 7; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 27, մաս 2; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Լևոն Սարկավագ «Պատմություն», գիրք 10, մաս 1; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[1] Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 11; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 22:

[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 11:

Պետք է ասել, որ Կոնստանդիոս II-ն ինքն էլ մեծապես մտահոգված էր արևելյան հարցով, իսկ Հայաստանը կորցնելն էլ նա արդեն ոչ մի կերպ չէր ուզում: Այս առումով վատը, թերևս, միայն այն էր, որ հենց այս ժամանակ, ի ապահովումն Հռոմեական կայսրության աջակցության, Մեծ Հայքի թագավորությունը ստիպված եղավ պաշտոնական Կոստանդնուպոլսին զիջել Հայոց Միջագետք նահանգի Ծավդեք և Արվաստան գավառները, ինչպես նաև Մծբինը՝ կարելի է կարծել, Կոնստանդիոս II-ի փափուկ ճնշման և այդ տարածքների պաշտպանությունը հետագայում ավելի լավ ապահովելու մտայնությամբ: Այսպիսով՝ քրիստոնյաների միահամուռ կամքով Մեծ Հայքի թագավորության գահին բազմեց Տիրան II-ը, իսկ Շապուհ II-ն էլ, որը մեծ հույսեր ուներ տիրել Հայաստանին, ըստ էության, արդյունքում մնաց խաղից դուրս:

Խոցված իր անհաջողություններից՝ 338 թվականի աշնանը արքայազն Ներսեսի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000, 15 փիղ) Աղձնիքի կողմից կրկին ներխուժեց Մեծ Հայքի թագավորության տարածք, սակայն հենց անմիջապես էլ Մռուղնի դաշտում տեղի ունեցած ծանր և արյունահեղ մի նոր ճակատամարտում Անդովկ Սյունու ու Արշավիր Կամսարականի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000) պարտության մատնեց և հետ շպրտեց թշնամուն: Մեծ Հայքի թագավորության գահին վերջնականապես հաստատվեց Տիրան II-ը, իսկ Շապուհ II-ի նկրտումները, համենայն դեպս իրենց գոնե այս փուլում, գտան իրենց վերջը առանց որևէ արդյունքի[1]:

Վերջին ճակատամարտը ռազմական գործողություններում որոշակի դադար առաջացրեց, ինչը պաշտոնական Կոստանդնուպոլիսն օգտագործեց առաջին հերթին սեփական ամրաշինական կառույցները վերանորոգելու և ամրացնելու համար: Հենց այս ժամանակ էր, ի դեպ, որ կառուցվեցին Ամիդի հռչակավոր պարիսպները, որոնք գրավելը հետագայում Շապուհ II-ին այդքան արյուն էր արժենալու: Խաղաղությունն առայժմ պահպանվում էր և առաջիկա տարիներին, թերևս, միայն 342 թ-ով հիշատակվող մեկ ընդհարումն էր Հյուսիսային կամ Հայոց Միջագետքի տարածքում, որ տեղի ունեցավ պատերազմող կողմերի միջև, ընդ որում այս անգամ ևս իր սպասելի արդյունքով՝ պաշտոնական Տիզբոնը հետ շպրտվեց[2]:

Այս ժամանակին են վերաբերում նաև հայ-պարսկական հարաբերությունների որոշակի ջերմացման մասին տեղեկությունները, երբ Շապուհ II-ը, առժամանակ հրաժարված լինելով բիրտ ուժի կիրառումից, սկսել էր սիրաշահել Տիրան II-ին, երկու պետությունների միջև հարաբերությունները որոշակիորեն կարգավորվել էին և բանը հասել էր նույնիսկ նրան, որ Մեծ Հայքի (մոտ 60.000) ու Պարսից (մոտ 60.000) թագավորությունների միացյալ բանակը, պարտության մատնելով Մազքութական թագավորության բանակին (մոտ 80.000), դուրս էր մղել վերջինիս Աղվանքի տարածքից[3]: Իրոք, թուլացած մազքութները, որոնք դրան գումարած էլ նաև անհանգստացնում էին Պարսից թագավորության հյուսիսային սահմանները[4], Շապուհ II-ին այլևս պետք չէին և նա փորձ կատարեց արդեն հենց վերջիններիս հաշվին բավարարել հայերին: Պետք է ասել, սակայն, որ Մազքութական թագավորության դեմ ձեռք բերված այս հաջողությունը հեռանկարային առումով մեծ արդյունք այնուհանդերձ այդպես էլ չունեցավ, քանի որ կողմերը ի վիճակի չէին իրենց ամուր տիրապետությունը հաստատել Աղվանքում և հետագա տարիներին Աղվանքի տարածքը կրկին ընկավ առաջխաղացած մազքութների տիրապետության տակ: Այսպիսով՝ միակ իրական արդյունքը, ըստ երևույթին, այն էր, որ Մեծ Հայքի, ինչպես նաև Պարսից թագավորությունների նկատմամբ մազքութները սկսեցին իրենց ավելի հանգիստ պահել:

343 թվականը ծախսելով դիրքերը վերջնականապես ամրապնդելու վրա՝ 344

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 10:
[2] Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 12; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 13; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:
[4] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 13:

թվականին սկզբներին Շապուհ II-ը Հյուսիսային Միջագետքում ձեռնամուխ եղավ նոր ռազմական գործողությունների, ընդ որում հենց այս ժամանակ էր, որ, չարաշահելով Տիրան II-ի վստահությունը և օգտվելով կենտրոնատենչ այս արքայի դեմ իր իսկ թագավորությունում առաջացած դժգոհություններից, արյաց արքային հաջողվեց ձերբակալել բանակցությունների ժամանած Տիրան II-ին ու կուրացնել նրան: Այսպիսով, առժամանակ, կարծես թե, չեզոքացնելով հայերին, 344 թվականի մարտին Շապուհ II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000) Հռոմեական կայսրության բանակից (մոտ 1.000) և քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 1.000) հերթական անգամ պաշարեց Մծբինը: Հայոց հինավուրց այս քաղաքի պաշարումը, սակայն, ինչպես և նախորդ անգամ, ձգվեց մինչև մայիսի վերջերը և Շապուհ II-ին կրկին որևէ հաջողություն չտվեց[1], ընդ որում այս անգամ արդեն Կոնստանդիոս II-ն ինքը, ի վերջո ցանկանալով սաստել ագրեսիվ հարևանին ու կարգի գցել սեփական տերության սահմանային գործերը, խոշոր ուժերով ելավ թշնամու դեմ:

Հարկ է նշել, որ, կանխատեսելով Հռոմեական կայսրության խոշոր բանակի առաջխաղացումը, Մծբինի պաշարման հետ միաժամանակ Շապուհ II-ը ոչ միայն խոշոր ուժեր էր կուտակել Հյուսիսային Միջագետքում, այլև առաջ էր շարժել իր արագաշարժ ուժերի ջոկատներից մեկը, որը կարողացել էր գրավել Զևգմայի գետանցը: Պարսից արքան ակնհայտորեն հույս ուներ հենց Եփրատի ափին, գետը օգտագործելով որպես բնական ամրություն և ամրանալով Զևգմայում, եթե ոչ կանգնեցնել, ապա գոնե դանդաղեցնել Հռոմեական կայսրության բանակի առաջխաղացումը, որպեսզի ավելի ազատ ու հնարավորինս երկար ժամանակով գործի Հյուսիսային Միջագետքում: Հայերը, սակայն, խորապես խոցված Տիրան II-ին բաժին հասած ճակատագրից, նույն Անդովկ Սյունու և Արշավիր Կամսարականի գլխավորությամբ առաջացան դեպի Զևգմայի գետանց ու թիկունքային հարվածով ջարդեցին այն հսկող Պարսից թագավորության բանակին՝ օգնելով Հռոմեական կայսրության բանակին գետանցել Եփրատը[2]: Արդյունքում՝ Կոնստանդիոս II-ն իր հետ բերված խոշոր ուժերով հաջողությամբ անցավ Եփրատը, որից հետո միացավ Անդովկ Սյունու և Արշավիր Կամսարականի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի հիմնական ուժերին (մոտ 60.000):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 30; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 25, գլուխ 1, գլուխ 27, մաս 2; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը»:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 12:

344 հունիս – ***Սինգարայի ճ-մ*** (քաղաքից մոտ 100 կմ արևելք, Տիգրիս գետի ափերին)[1]

Կոնստանդիոս II-ի, Անդովկ Սյունու և Արշավիր Կամսարականի գլխավորած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 140.000[2]), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (6.000), ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 60.000), ազատելով Մծբինը պաշարումից ու հետապնդելով հակառակորդին, շարժվեցին դեպի հարավ և առաջապահ ուժերով ճամբարեցին Սինգարայից մոտ 80 կմ արևելք, ընդ որում իրեն ոչ մի կերպ ապահովության մեջ չհամարող Շապուհ II-ը շտապեց անցնել Տիգրիսի ձախ ափ: Հետագայում, սակայն, մինչ քրիստոնյաները առաջ կքաշեին բոլոր ուժերը, արևելքից ժամանած նոր ուժերով համալրված և ուժերը կենտրոնացրած Պարսից թագավորության բանակը (մոտ 200.000) Շապուհ II-ի գլխավորությամբ կրկին առաջացավ և սկսեց մոտենալ Տիգրիսի ձախ ափին: Իրենց հերթին քրիստոնյաները նախատեսել էին թույլ տալ թշնամուն անարգել գետանցել Տիգրիսը՝ նախատեսելով մեկ ու վճռական մարտում պարտության մատնել վերջինիս ողջ բանակին: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը, մոտենալով Տիգրիսի ձախ ափին և չհանդիպելով որևէ դիմադրության, արագորեն երեք կամուրջներ կառուցեց ու մի քանի օրվա ընթացքում անցավ գետի աջ ափ: Դրանից հետո թշնամին ճամբարեց Տիգրիսի աջ ափին՝ ամրացնելով ճամբարը պարսպով: Կարգի բերելով բանակը՝ Շապուհ II-ը մարտակարգ ընդունեց՝ թեթև հետևակայիններին տեղաբաշխելով թևերի բարձունքներում և ճամբարի պարսպի վրա, ծանր հետևակին ու ծանր հեծելազորին՝ պարսպի դիմաց, իսկ նրանցից առաջ էլ՝ թեթև հեծելազորին: Տեղեկանալով թշնամու պատրաստությունների մասին՝ քրիստոնյաները ևս մարտակարգ ընդունեցին և սկսեցին դանդաղ շարժվել թշնամուն ընդառաջ՝ դեպի արևելք: Պարսից բանակի հրամանատարությունը որոշեց մանր մարտերով հակառակորդին քաշել դեպի ճամբար և միայն այստեղ տալ գլխավոր մարտը՝ գցելով թշնամուն նետաձիգների թևային ու ծանր հեծելազորի ճակատային համակցված հարվածի տակ:

I փուլ – 10:00-ի մոտակայքում Պարսից թագավորության բանակի թեթև հեծելազորը մոտեցավ քրիստոնյաների առաջխաղացող բանակին և կանգ առավ՝ մարտակարգ ընդունելով ու սպասելով թշնամու հարձակմանը: Իր հերթին, զգալով, որ թշնամին չի առաջանում, ինչպես նաև կարծելով, թե վերջինիս ողջ բանակն այդքանն է, քրիստոնյաների բանակի ռազմիկները, չենթարկվելով հրամանին, անցան հարձակման և հարվածեցին հակառակորդին: Վերջինս, մանր մարտերով նահանջելով դեպի արևելք, արդեն օրվա վերջին հասցրեց հակառակորդին սեփական ճամբարի մատույցներին:

II փուլ – 17:00-ի մոտակայքում, հասնելով հակառակորդի ճամբարին և տեսնելով վերջինիս մարտակարգը, քրիստոնյաների բանակն այնուհանդերձ չդադարեցրեց հարձակման թափը ու համառ հանդիպակաց մարտի բռնվեց

---

[1] Լիբանիոս «Ճառեր, Գովեստի խոսք, ուղղված արքաներ Կոնստանդիոսին և Կոնստանդին», 99-120; Լիբանիոս «Ճառեր, Հուլիանոսի մահախոսականը», 207; Հուլիանոս «Կոնստանդիոսին», 58-68; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 18, գլուխ 5; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10, գլուխ 10; Օրոսիոս «Պատմություն» գիրք 7, գլուխ 29; Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 25, մաս 5; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 13, գլուխ 17; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 12; Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 11, գիրք 4, գլուխ 1; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[2] Գրականության մեջ միանշանակ կարծիք չկա 337-428 թվականներին Հռոմեական կայսրության լեգեոնների քանակի մասին: Սակայն առկա տվյալների վերլուծության արդյունքում կարելի է մոտավորապես ասել, որ քննարկվող ժամանակաշրջանում վերջինս շարունակում էր ունենալ 41 կոմիտատես և 24 պսևդոկոմիտատես լեգեոններ, որոնց կազմում, վերջիններիս համապատասխանաբար 7.000 և 3.000 հաստիքային թվաքանակի պայմաններում, ընդգրկված էր 359.000 լեգեոններ: Ընդ որում՝ քննարկվող ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության բանակի կեսը տեղաբաշխված էր արևելյան ուղղությամբ և գտնվում էր Կոնստանդիոս II համակայսեր տրամադրության տակ: Այս պայմաններում կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, Արևելքում անմիջականորեն մարտական գործողություններ մղող Հռոմեական կայսրության բանակը կարող էր կազմել մոտ ***140.000*** ռազմիկ:

հակառակորդի հետ՝ ի վերջո պարտության և փախուստի մատնելով վերջինիս:

III փուլ – 19:00-ի մոտակայքում տեղ հասած արդեն հիմնական ուժերով քրիստոնյաները սկսեցին թշնամու ամրացված ճամբարի գրոհը և ի վերջո գրավեցին այն: Մինչև ուշ երեկո ճամբարում համառ մարտ ընթացավ, որում քրիստոնյաները ի վերջո հաղթանակ տարան, իսկ պարսից գահաժառանգ Ներսեսն ու իր շքախմբի անդամները գերի ընկան և սպանվեցին: Սկիզբ առավ թշնամու ճամբարի թալանը, որի արդյունքում քրիստոնյաների բանակը կորցրեց մարտակարգը և կառավարումը:

IV փուլ – 21:00-ի մոտակայքում Պարսից թագավորության բանակի հեծյալ և հետևակ նետաձիգները իրենց կողմից աննկատ մոտեցան ճամբարին ու սեփական նախկին վրանների ուղղությամբ զգալի ժամանակով մասշտաբային գորգային նետահարում իրականացրին: Միաժամանակ թշնամու բանակի հարվածային խմբերը ներխուժեցին ճամբար և գիշերային խավարում ծանր կորուստներ պատճառեցին քրիստոնյաներին:

V փուլ – 24:00-ի մոտակայքում քրիստոնյաները մարտի մեջ մտցրին վերջապահը և միայն ծանր մարտից հետո կարողացան հետ մղել թշնամուն գետի մյուս ափ ու վերջ դնել մարտին:

Հայերը կորցրին մոտ 10.000, դաշնակիցը՝ մոտ 40.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր:

Սինգարայի արյունահեղ ճակատամարտը՝ Շապուհ II-ի կողմից երկար տարիներ տենչված այդ ընդհարումը, որին վերջինս սպասում էր այդքան ժամանակ և որին էլ, ըստ էության, պատրաստվում էր իր անցած գիտակցական կյանքի գրեթե ողջ ընթացքում, ավարտվեց նրա ծանր պարտությամբ, ընդ որում դա վերջնական ջախջախումից հազիվ փրկված ոչ միայն իրոք մի ծանր պարտություն էր, այլև, ըստ էության, նաև մինչ այդ փայփայած հույսերի կորուստ էր: Վերջ, կյանքը ցույց տվեց, որ մեծ թվերի առկայության պարագայում Պարսից թագավորության նույնիսկ վերակազմակերպված բանակն իսկ ի վիճակի չէ բաց դաշտում ընթացած ուղիղ մարտում առավելության հասնել Հռոմեական կայսրության և Մեծ Հայքի թագավորության միացյալ ուժերի նկատմամբ, ընդ որում բոլորի համար էլ ակնհայտ էր, որ վերջնական պարտությունից արյաց արքային փրկեց միայն քրիստոնյաների անկարգապահությունը, որոնք զինվորական կարգապահության կոպիտ խախտման հետևանքով ճակատամարտի հատկապես վերջինի փուլերում ծանր կորուստներ կրեցին՝ մեծապես արժեզրկելով սեփական հաղթանակը:

Եվ վերջապես նշենք, որ փայփայած հույսերից և իր իսկ կողմից հղացած ռազմաքաղաքական դասավորության ողջ ցանկալի պատկերի փլուզումից զատ այս ճակատամարտը Շապուհ II-ի գլխին պայթեց նաև անձնական մի մեծ ողբերգության տեսքով, քանզի, նույնիսկ եթե մի կողմ թողնենք էլ այն, որ բուն ճակատամարտի ընթացքում Շապուհ II-ը, որպես զորավար ու զինվոր, խուճապի մատնվեց և դիմեց ամոթահար փախուստի դեռ այն ժամանակ, երբ դրա հիմքերը, կարծես թե, չկային, այսինքն, հիշատակված ճակատամարտը նաև արյաց արքայի անձնական մեծ խայտառակությունն էր, ընդ որում դրան շատերն էին ականատես եղել, այսպիսով, եթե նույնիսկ մի կողմ էլ թողնենք արյաց արքայի անձնական մեծ խայտառակությունը, ապա ճակատամարտը գոռոզ Շապուհ II-ին հասցրեց ևս մեկ ու ավելի խորը հոգեկան մի վերք: Իրոք, քրիստոնյաները, չիմանալով, թե ում են գերի վերցնում, մարտի ընթացքում բռնել էին արյաց արքայի նահանջն ապահովող ուժերը ղեկավարող վերջինիս սիրելի որդի ու հետնորդ Ներսեսին և, ամենայն հավանականությամբ գրգռվելով գերյալի հանդուգն վարքագծից, մտրակահար անելով տանջել էին արյաց արքայազնին, իսկ վերջում էլ մորթել էին:

Այս ամենից զատ, սակայն, ինչպես արդեն ասվեց, հենց նոր ավարտված ճակատամարտում Պարսից թագավորության ուժերը նաև լուրջ հարված էին ստացել և,

համենայն դեպս գոնե մոտակա տարիներին, դրանք ի վիճակի չէին անցնել ագրեսիվ լուրջ գործողությունների: Այս ամենի արդյունքում Շապուհ II-ը, թեպետ և ատամները սեղմած, ստիպված եղավ զինադադար կնքել՝ գոնե առժամանակ հրաժարվելով հետագա ագրեսիվ գործողություններից: Ինչ վերաբերում է Մեծ Հայքին, ապա Հայոց թագավորության արքա դարձավ Արշակ III-ը (344-368)[1]՝ Տիրան II-ի որդին և վերջինիս ողջ քաղաքականության առավել եռանդուն ու խելամիտ այդ շարունակողը:

Սինգարայի վճռորոշ ճակատամարտին հաջորդող մի քանի տարին անցան համեմատականորեն խաղաղ: Այս ընթացքում Կոնստանդիոս II-ը զբաղված էր չափից ավելի հզորացած իր եղբայր Կոնստանդ I-ին որևէ կերպ դիմագրավելու հոգսերով, քանզի վերջինս դեռևս 340 թվականին հաղթել էր Կոնստանդին II-ին և վերջինս ընկել էր մարտում, ինչից հետո Կոնստանդ I-ը իրենով էր արել կայսրության ողջ Արևմուտքը: Հանգիստ էր նաև արյաց արքան, քանզի Շապուհ II-ը մինչ այդ ստացած վերքերն էր լիզում, դե իսկ Մեծ Հայքի թագավորության գահին ամրացած Արշակ III-ն էլ, իրենից բացառիկ մի դեպք ներկայացնելով միջնադարյան պատմության մեջ, սկիզբ էր դրել հետագայում իրեն այդքան հայտնի դարձրած սեփական բարեփոխումներին՝ փորձ կատարելով ուժեղացնել իր երկիրը, նոր որակ հաղորդել վերջինիս և նախապատրաստել այն ապագա ցնցումներին:

Իրոք, Հայոց նոր արքան, հաշվի առնելով իր հոր և պապին բաժին հասած քաղաքական ճակատագիրը և կրողը լինելով Տրդատ II Մեծի ունակություններին, համենայն դեպս գոնե մտավոր մակարդակում, հիանալի ըմբռնում էր ու ճշգրիտ գնահատական էր տալիս ոչ միայն կոնկրետ ներքաղաքական կամ արտաքին քաղաքական իրադարձություններին, այլև կարողանում էր նկատել նաև հասարակական զարգացումների խորքային շերտերը: Ֆեոդալական հասարակական հարաբերությունները, որոնք արդեն ամուր կերպով հաստատվել էին Մեծ Հայքի թագավորությունում, դանդաղ, բայց անշեղ կերպով բերում էին կենտրոնական իշխանության թուլացմանը և, ի պատիվ իրեն, Արշակ III-ը սա արագորեն նկատեց: Միայն այս հանգամանքը, սակայն, ինքնին հերիք չէր լինի այս արքային բացառիկ համարելու համար, քանզի այդ ժամանակաշրջանում ևս էլի կային քաղաքական գործիչներ, որ նկատում էին սոցիալական այս նոր զարգացումները, սակայն Արշակ III-ի իրական մեծությունը կայանում էր նրանում, որ համաշխարհային պատմության մեջ նա առաջինը նշմարեց սոցիալական այն հիմքը, որը պետք է ամրություն հաղորդեր կենտրոնական արքայական իշխանությանը:

Խնդիր կայանում էր նրանում, որ խոշոր հողատեր իշխանները, իդեալում ինչքան էլ հայրենասեր լինեին, իրենց սոցիալական բնույթով իսկ սկզբունքորեն չէին կարող նպաստել կենտրոնական իշխանության ուժեղացմանը և, նույնիսկ ընդհակառակը, ամեն կերպ թուլացնում էին այն: Արդյունքում՝ Հայոց այս ակնառու գահակալը զարմանալի քաղաքական խորաթափանցությամբ հենց միանգամից էլ նկատեց իր իշխանության ամրության մեջ իրապես շահագրգռված սոցիալական շերտերին՝ ազատ գյուղացիությանը, առևտրա-արհեստավորական դասին և մանր ազնվականներին: Արդյունքում, բազմելով Մեծ Հայքի թագավորության գահին և փորձելով հակակշռել խոշոր ու կենտրոնախույս հողատերներին, Արշակ III-ը սկսեց ամենատարբեր միջոցառումներով երկրում առաջին դերերի մղել հենց սոցիալական այս խմբերին և շերտերին, ինչն իր ժամանակի համար արդեն բացառիկ մի երևույթ էր ու զգալի ուժ հաղորդեց Հայոց թագավորությանը: Իր հերթին այդ ուժը հայերին շատ էր պետք, քանզի կյանքը ցույց տվեց, որ իրավիճակը շուտով կրկին լարվելու է:

Ստեղծված պայմաններում Հայոց արքայի ձեռնարկումներին աջակցում էր ամենից առաջ տաղանդավոր սպարապետ, Արտավազդ Մամիկոնյանի երրորդ որդի և Հայոց

[1] Ավանդականորեն ընդունված է Մեծ Հայքի թագավորության արքա Տիրան II-ի որդի Արշակին կոչել Արշակ II: Սակայն այստեղ ակնհայտորեն հաշվի չի առնեցվում Մեծ Հայքի տաղանդավոր արքա, Վաղարշակ I-ի որդի Արշակ I-ը: Հաշվի առնելով վերջինիս, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության արքա, Արտավան III-ի ավագ որդի և թագաժառանգ Արշակ II Պարթևին, ես լիովին հիմնավորված Հայոց այս ամենանվիրական արքաներից մեկին կոչում եմ Արշակ III:

արքայի մանկության ընկեր Վասակ Մամիկոնյանը, իսկ որոշ պարագայում էլ արքան կարող էր զգալի հույսեր դնել նաև իր բարձր ունակություններով աչքի ընկնող Անդովկ Սյունու վրա, որի աղջիկ Փառանձեմի հետ արքան ամուսնացավ 350 թվականին: Իրենց հերթին մյուս նախարարները ու ամենից առաջ Արծրունիները, Մամիկոնյանների Տայքի ճյուղը, Կամսարականները, Բագրատունիները և այլք, հավասար համեմատական արքայի կենտրոնամետ քաղաքականության ուժեղացմանը, աստիճանաբար ըմբոստ դիրքեր գրավեցին:

348 թվականին, հերթական անգամ սկիզբ դնելով մարտական գործողությունների, Պարսից թագավորության բանակը (մոտ 20.000) անցավ Հռոմեական կայսրության սահմանը և փորձեց գրավել սահմանային ատելի Սինգարա քաղաքը, սակայն դրանից մոտ 20 կմ արևմուտք գտնվող Հիլելա կոչվող վայրում քաղաքից աննկատ առաջխաղացած Հռոմեական կայսրության բանակը (մոտ 6.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 20) գիշերային անակնկալ հարձակումով հաղթեցին թշնամուն[1]: 349 թվականին, սակայն, թշնամուն այնուհանդերձ հաջողվեց տիրել Սինգարային[2]:

Դրանից հետո, փորձելով զարգացնել հաջողությունը, 350 թվականի մարտին, ինչպես մինչ այդ արել էր երկու անգամ, Շապուհ II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 120.000, մոտ 20 փիղ) պաշարեց Մծբինը: Այս անգամ քաղաքին տիրելու համար արյաց արքան մի խորամանկ հնարք էր մտածել՝ արյաց արքայի ռազմիկները կարողացան քաղաքի մոտով հոսող Ջախջախ գետի ջրի հոսքը կենտրոնացնելով փլել պարսպի մի մասը, բայց այդ հանգամանքը այսպես թե այնպես նրանց այնուհանդերձ որևէ օգուտ չտվեց, քանզի քաղաքի քրիստոնյաները պարիսպը արագորեն վերականգնեցին[3]: Համոզվելով սեփական ջանքերի անօգուտ լինելու մեջ և, որ գուցե ավելի կարևոր էր, տեղեկանալով հենց այդ ժամանակ Քուշանշահերի թագավորության արքա Պերոզ II-ին հաջորդած նրա որդի Վահրամի (330-353) ապստամբության ու Հիոնիտների թագավորության ուժերի հետ միասին սեփական տերության արևելյան սահմանները ոտնատակ տալու մասին, մայիս ամսին գոռոզ Շապուհ II-ը ստիպված եղավ քաղաքի գրոհի ժամանակ 20.000 զինվորներ կորցրած իր բանակով արդեն երրորդ անգամ նահանջել Մծբինից՝ շարժվելով դեպի արևելք: Իրոք, նույն այս ժամանակ հոները կրկին բռնել էին նվաճումների ուղին, ընդ որում հիմնական հարվածն ուղղված էր դեպի արևմուտք և այդ արվում էր ամենից առաջ, ի դեմս հիոնիտների, որոնք իրենցից, ըստ էության, ներկայացնում էին հոների առաջապահը ու հենց նոր ոչնչացրել էին Քուշանական թագավորությունը: Այսպիսով՝ Պարսից թագավորության արևելքում կտրուկ բարդացած իրավիճակը որոշակիորեն թեթևացրեց քրիստոնյաների դրությունը Մերձավոր Արևելքում:

Հարկ է նշել, որ 350 թվականին որոշակիորեն բարդացել էր, սակայն, նաև Կոնստանդիոս II-ի դրությունը, քանզի նրա եղբայր Կոնստանդ I-ը նույն տարվա փետրվարին դավադիրների կողմից սպանվել էր և այժմ կայսրության արևմտյան հատվածում իր իշխանությունն էր հաստատել դավադիրների ղեկավար ու Կոնստանդ I-ի թիկնապահների երբեմնի հրամանատար Մագնենտիոսը: Նորընծա տիրակալը բնականաբար սուր հարաբերություններ ուներ նաև Կոնստանդիոս II-ի հետ և սա չէր կարող չբերել ընդհարման, որը բացահայտ տեսք ստացավ 351 թվականի երկրորդ կեսին, ընդ որում կայսրության արևելքի տիրակալը այս հարցում լայն օժանդակություն ստացավ Մեծ Հայքի թագավորության արքա Արշակ III-ի կողմից, որի եղբայր Տրդատն, ի դեպ, պատվավոր պատանդի կարգավիճակով նույն այս ժամանակ գտնվում էր Կոնստանդիոս II-ի արքունիքում:

---

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 18, գլուխ 9; Հիերոնիոմոս 2363; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27; Կոնստանդնոպոլսյան կոնսուլների մասին; Հակոբ Եդեսիացի «Ժամանակագրություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 19:

[2] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2, գիրք 3, գլուխ 36; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 19, գլուխ 2; Զոնորաս «Պատմություն»:

[3] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն; Հուլիանոս, «Ճառեր», մաս 10, 11; Լիբանիոս «Ճառեր, Հուլիանոսի մահախոսականը», 207; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 27, մաս 2; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 7; Զոնորաս «Պատմություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 3:

Հաջողությունը սկզբում Մագնենտիոսի կողմում եղավ, երբ վերջինիս բանակը (մոտ 10.000) ինչ-որ տեղ ներկայիս Բելգրադի մոտակայքի մի կիրճում դարանը գցեց և անակնկալ հարձակումով ու խոշոր քարեր գլորելով ծանր կորուստներ պատճառեց իր դեմ շարժված Կոնստանդիոս II-ի (80.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 8.000) միացյալ բանակի առաջապահին[1]: Հետո, սակայն, երբ մարտի մեջ մտան հիմնական ուժերը, իրավիճակը փոխվեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

351 սեպտեմբերի 26-28 – ***<u>Մուրսայի ճ-մ</u>*** (Բալկանյան թերակղզի, Բելգրադից մոտ 115 կմ հյուսիս-արևմուտք, Դանուբի ափին)[2]

Փորձելով զարգացնել նախորդ ճակատամարտում ձեռք բերած հաջողությունը՝ Մագնենտիոսի բանակը (36.000) մոտեցավ Մուրսային և պաշարեց այն՝ միաժամանակ դարանակալ ուժեր տեղակայելով քաղաքի մոտ գտնվող մարզադաշտում: Կոնստանդիոս II-ը, տեղեկանալով թշնամու շարժի ամենի մասին, իր (80.000) և Մեծ Հայքի թագավորության (մոտ 8.000) միացյալ բանակով սկսեց մոտենալ թշնամուն:

I փուլ – Սեպտեմբերի 26-ին Մագնենտիոսի բանակը մի շարք գրոհներ գործեց Մուրսայի վրա, սակայն որևէ հաջողության չհասավ: Միաժամանակ քաղաքի կայազորին հաջողվեց Կոնստանդիոս II-ին տեղյակ պահել թշնամու դարանակալ ջոկատի մասին:

II փուլ – Սեպտեմբերի 27-ի օրվա առաջին կեսին Կոնստանդիոս II-ի բանակի մի մասը շրջափակեց քաղաքի մոտ գտնվող մարզադաշտը և ոչնչացրեց այնտեղ տեղակայված դարանակալ ջոկատին, իսկ օրվա երկրորդ կեսին էլ, արդեն հիմնական ուժերով, սկսեց մարտակարգ ընդունել: Մարտակարգ ընդունեցին նաև հակառակորդի ուժերը:

III փուլ – Սեպտեմբերի 27-ի օրվա երկրորդ կեսին սկիզբ առավ համառ և փոփոխակի հաջողությամբ ընթացած մարտ, որը շարունակվեց ողջ գիշեր և միայն սեպտեմբերի 28-ի առավոտյան Կոնստանդիոս II-ի բանակը, շնորհիվ հեծելազորի վճռական հարձակման, ի վերջո առավելության հասավ: Այս ընթացքում աչքի ընկավ Մեծ Հայքի օժանդակ հեծելագնդի հրամանատար Մանվելը, որը, սակայն, ի վերջո զոհվեց Ռոմուլոսի հետ մենամարտում:

IV փուլ – Կոնստանդիոս II-ի բանակը հետապնդեց թշնամուն և ծանր կորուստներ պատճառեց:

Ընդհանուր շարքից դուրս եկած 30.000 զինվորից հայերը կորցրին մոտ 3.000, դաշնակիցները՝ մոտ 27.000 զինվոր: Թշնամին կորցրեց 24.000 զինվոր:

Տանուլ տալով վճռական մարտը՝ Մագնենտիոսը իր ուժերի մնացորդներով հետ քաշվեց դեպի Ապենինյան թերակղզի, սակայն, 351 թվականի հոկտեմբերին Տիչինայի ճ-մ -ում (Հյուսիսային Իտալիա, Միլանից մոտ 20 կմ հարավ-արևմուտք) վերջնական պարտություն կրելուց հետո կրկին փախուստի դիմեց, իսկ հետագայում էլ ինքնասպան եղավ[3]: Արդյունքում՝ Կոնստանդիոս II-ը մնաց որպես Հռոմեական կայսրության միանձնյա կայսր, իսկ նրա իշխանությունն էլ մեծապես ամրապնդվեց:

351 թվականը, որը Հռոմեական կայսրության կայսրը ծախսեց իր իշխանությունը ամրապնդելու վրա, արյաց արքան իր հերթին ծախսեց սեփական տերության արևելյան

---

[1] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2:

[2] Հուլիանոս «Նամակներ» «Նամակ Կոնստանդիոսին»; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 2; Ավրելիանոս Վիկտոր «Կեսարների մասին», գլուխ 41; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 42; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 29; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10, գլուխ 12; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 78:

[3] Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10, գլուխ 12; Զոնորաս «Պատմություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 21:

սահմաններին առաջացած սպառնալից դրությունը վերացնելու վրա: Ավելին, դատելով ըստ ամենայնի, 352 թվականին դրությունն այստեղ ավելի էր լարվել և Շապուհ II-ը արևելքում էր կուտակել իր տերության գործնականում գրեթե բոլոր ուժերը, ինչից էլ օգտվելով Կոնստանդիոս II-ը նույն 352 թվականին կարողացավ հետ գրավել Սինգարան[1]: 353 թվականին, սակայն, դատելով արևմտյան սահմանին պաշտոնական Տիզբոնի դրսևորած ակտիվությունից, Շապուհ II-ի արևելյան գործերը աստիճանաբար սկսեցին կարգի ընկնել: Իրոք, նույն այդ տարում Վահրամը գահընկեց արվեց և դիմեց փախուստի, 365 թվականին հենց փախստականի կարգավիճակում էլ հեռանալով կյանքից, Քուշանշահերի թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ անցավ Պարսից թագավորությանը:

Այս ամենը քրիստոնյաների համար կրկին սպառնալից դրություն առաջացրեց՝ ըստ էության սկիզբ դնելով նոր մի պատերազմաշրջանի: Իրոք, Քուշանշահերի թագավորությունը ոչնչացրած Շապուհ II-ին, դատելով ըստ ամենայնի, նույն այս ժամանակ հաջողվել էր եթե ոչ նվաճել արդեն նաև Հիոնիտների թագավորությունը, ապա սկզբի համար գոնե դաշնակցային լուրջ պարտավորություններ պարտադրել հոների այդ պետությանը, իսկ այդ պարագայում էլ, երբ Պարսից թագավորության բանակը համալրվում էր խիստ մարտունակ հոների մեծ քանակությամբ, կրկին աճում էին արյաց արքայի նվաճողական նկրտումները և վտանգներ էին առաջանում քրիստոնյաների համար:

Որպես հետևանք, արդեն նույն 353 թվականին մասերի բաժանված Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000) ասպատակեց Հայոց Միջագետքն ու Հյուսիսային Ասորիքը և նահանջեց[2]: Դրանից հետո Շապուհ II-ը, 354 թվականին ըստ երևույթին վերջնականապես պայմանավորվելով հոների հետ, 355 թվականին սեփական մասերի բաժանված ռազմական մեքենայով կրկին ասպատակեց Հայոց Միջագետքը ու արդեն նաև Կորճայքը, թեև կրկին նահանջեց[3]: Շապուհ II-ն ակնհայտորեն փորձարկում էր ուժերը և վճռական հարվածի համար հող էր նախապատրաստում, իսկ այդ պարագայում խորամանկ այս արքան ոչ մի կերպ աչքաթող անել չէր կարող անել նաև Մեծ Հայքի թագավորության և Արշակ III-ի դիրքորոշումը:

Ընդհանրապես ասած Արշակ III-ը, որ գահ էր բարձրացել հռոմեացիների աջակցությամբ և պարսից սպառնալիքի պարագայում, ամենասկզբում հասկանալի հռոմեական կողմնորոշում ուներ, բայց հետո, երբ պաշտոնական Տիզբոնի դիրքերը որոշակիորեն թուլացել էին, իսկ մեկ գայիսոնի տակ միավորված հսկայական կայսրության գլուխ կանգնած Կոնստանդիոս II-ն էլ սկսել էր չափից դուրս մեծացնել պահանջները, ինչ-որ տեղ սպառնալիք դառնալով նույնիսկ Մեծ Հայքի թագավորության համար, 350-ական թվականների առաջին կեսին ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով Հայոց ինքնատիպ այս արքան իր հերթին բարելավեց հարաբերություններն արդեն Շապուհ II-ի հետ, որին, իմիջիայլոց ասած, հենց դա էլ պետք էր:

Արդյունքում՝ Հյուսիսային Միջագետքի դեմ իրականացված հետախուզական հարվածների հետ միաժամանակ արյաց արքան բանակցություններ սկսեց նաև Հայոց արքայի հետ, որի արդյունքը եղավ այն, որ, երբ 356 թվականի ամռանը Պարսից թագավորության արքան պատրաստվեց հերթական անգամ պաշարել Մծբինը, Արշակ III-ի և սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (40.000) քաղաքի պարիսպներին տակ հասավ արյաց բանակից ավելի շուտ: Հայերի մտադրությունները մեծապես դեռևս անհայտ էին և խուլ կասկածներով համակված կայսերական զորավարները համենայն դեպս մարտական պատրաստության բերեցին իրենց առկա ուժերն ու ճամբար զարկեցին քաղաքի

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 6:
[2] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 14, գլուխ 13, գիրք 15, գլուխ 13:
[3] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 15, մաս 13:

մոտակայքում: Հենց այստեղ էր, սակայն, որ հայերը անակնկալ հարված հասցրին հռոմեացիներին՝ ջախջախելով ու փախուստի մատնելով նրանց բանակը[1], իսկ հետագայում էլ հաղթական մարտադաշտում դիմավորեցին գուցե դիտավորյալ, իսկ գուցե ինչ-որ տեղ էլ պատահաբար ուշացած Շապուհ II-ին և նրա բանակին[2]:

Տեղի էր ունեցել զարմանալի, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ աննախադեպ մի բան՝ Հայկական բանակը ոչ միայն պարտության էր մատնել իր ավանդական դաշնակցին, այլև Հայոց պետության ղեկավարներն էին փորձում կապ հաստատել երեկվա թշնամու հետ: Արշակ III-ի հղացած ճկուն քայլը, սակայն, մեծ հաշվով այդպես էլ մնաց որպես ընդամենը միայն մի քայլ, քանի որ, թեև քիթը տրորված հռոմեացիները առժամանակ փորձեցին նկատելու չտալ տեղի ունեցածը, իսկ Շապուհ II-ն էլ դրանից հետո ևս մի քանի տարի զերծ մնաց ուղղակիորեն Մեծ Հայքի թագավորության վրա հարձակվելուց, սակայն հայ-պարսկական դաշնադրություն կամ գոնե տեղային խաղաղություն կնքել այնուհանդերձ չհաջողվեց: Այս գործողությունը, սակայն, անձնական մեկ արձագանք այդուհանդերձ ունեցավ, քանզի, դատելով ըստ ամենայնի, հենց այս ամենի արդյունքում էր, որ պատվավոր պատանդի կարգավիճակում գտնվող Տրդատը զրկվեց կյանքից: Արդյունքում բացառված չէ նաև տարբերակը, որ այս ամենի իրական նպատակը հենց այդ էր՝ Արշակ III-ն ազատվեց գահի հնարավոր թեկնածուից:

357 թվականին Շապուհ II-ը դնում էր իր արևելյան պատերազմի վերջին ակորդները և հռոմեացիները, իրենց չափազանցված պատկերացումներով կարծես փորձելով օգտվել վերջինիս համար առաջացած ծանր դրությունից, արյաց արքային հաշտության առաջարկ արեցին: Առաջարկը, սակայն, մի կողմից տեղ հասավ չափազանց ուշ, իսկ մյուս կողմից էլ խորամանկ Շապուհ II-ն ինքը պատասխանն այնքան ձգձգեց, մինչև որ

---

[1] Այս ճակատամարտը չի ընդունվում խորհրդահայ պատմագիտության կողմից, իբր հաշվի առնելով մի կողմից Մեծ Հայքի թագավորության և Հռոմեական կայսրության ռազմական հզորությունների տարբերությունը, մյուս կողմից էլ՝ Փավստոս Բյուզանդի կողմից վերջինիս կոնկրետ ժամանակ չնշելը: Ըստ իս, սակայն, սրանք միանգամայն անհիմ փաստարկներ են: Այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ Մեծ Հայքի թագավորության բանակը ուներ որակական գերակշռություն, խիստ կոփված էր մարտերում և ինչպես դրանից առաջ, այնպես էլ հետո, շատ անգամ էր հաղթել Հռոմեական կայսրության բանակին: Իր հերթին, եթե այս ժամանակաշրջանում հոներից պարտված և նահանջող գոթերն ի վիճակի էին Ադրիանապոլսի 378 թ օգոստոսի 9-ի ճակատամարտում պարտության մատնել ու գլխովին ջախջախել Հռոմեական կայսրության բանակը, ապա բնական հարց է ծագում, թե ինչո՞ւ նույն բանը ի վիճակի չէր անել այդ ժամանակաշրջանի գոթական բանակին իր շատ հատկանիշներով գերազանցող Մեծ Հայքի թագավորության բանակը: Իր հերթին ավելացնենք, որ, եթե ի սկզբանե այս ճակատամարտի նկատմամբ չորդեգրվեր թերահավատ և ժխտողական մոտեցում, ապա հեշտ կլիներ պարզել նաև վերջինիս թվականը: Այսպես, ըստ Փավստոս Բյուզանդի (գիրք 4, գլուխ 21). «*Հայոց Արշակ թագավորի Պարսից Շապուհ թագավորից փախչել գնալուց հետո Պարսից թագավորը 8 տարի լուռ էր մնում...*» և միայն «Ամոթալի դաշնագրի» կնքումից հետո է, որ. «*... Պարսից Շապուհ թագավորը կազմեց իր զորքերը և պատերազմով եկավ Հայոց Արշակ թագավորի վրա*»: Հայտնի է, որ «Ամոթալի դաշնագիր»-ը կնքվել է 363 թ-ի ամռանը, իսկ այս պայմաններում՝ 363 թ-ի մնացած մասը նոր ձեռք բերած տարածքներում ամրանալու վրա ծախսած լինելու և «8 տարի լուռ մնալու» դեպքում ստանում ենք 356 թ-ը: Եվ, վերջապես, կարելի է գրեթե վստահությամբ պնդել, որ այս իրադարձությունները ժխտվում են, քանի որ այդ մասին լռում է Ամմիանոսը: Արդեն ասվել է, որ խորհրդահայ պատմագիտության անընդունելի մեթոդական թերություններից մեկն էլ այն էր, որ սովորաբար առանց բացառության դեն էին նետվում, կամ էլ խիստ քննադատության և բացասական վերաբերմունքի էին արժանանում Հայոց զենքի հաջողությունների մասին վկայող բոլոր այն փաստերը, որոնք չէին հաստատվում օտարերկրյա աղբյուրների կողմից և չէին տեղավորվում համաշխարհային պատմության կողմից գրված ու սովորական դարձած սխեմաներում: Սա նման դեպքերից մեկն է: Հատկանշական է, սակայն, որ այս իրադարձությունների մասին մշուշոտ ու աննկատ մնացած ակնարկ կա նույնիսկ Ամմիանոսի մոտ, որը չի նկատվել ի սկզբանե որդեգրված թերահավատ և բացասական մոտեցման պատճառով, սակայն որը, համադրելով Փավստոս Բյուզանդի տեղեկությունների հետ, հնարավորություն է տալիս վերականգնել իրադարձությունների իրական պատկերը: Այսպես, ըստ Ամմիանոսի (գիրք 16, գլուխ 9) հենց նույն 356 թ-ին. «*... արևելքում պարսիկները գերեցին մարդկանց ավելի շուտ ավազակային հարձակումների, քան ճիշտ մարտերի միջոցով, ինչպես լինում էր առաջ*», իսկ այս հաղորդումը, հաշվի առնելով այն, որ հունահռոմեական հեղինակները հռոմեական զենքի անհաջողությունները նկարագրելու մեջ սովորաբար անսահման ժլատություն էին դրսևորում, իրոք շատ բան է ասում: Ավելին, հունահռոմեական հեղինակի տեղեկությունները բավարար են նաև պարզելու, թե տարվա որ մասում է տեղի ունեցել այս ճակատամարտը, քանի որ ըստ վերջինիս այս ճակատամարտին անմիջապես հաջորդող ձմեռը Շապուհ II-ը անցկացրեց Պարսից թագավորության արևելքում, հետևաբար նա կարող էր այստեղ քննարկվող իրադարձությանը ներկա լինել միայն դրան նախորդող ամռանը: Այսպիսով՝ ըստ էության իրոք որևէ իրական հիմք չկա կասկածի տակ առնելու այս ճակատամարտի իսկությունը և նրանում Հայկական բանակի տարած փայլուն հաղթանակը: Միաժամանակ, սակայն, պետք է նշել, որ Փավստոս Բյուզանդի փոխանցած տեղեկություններում ևս կա անճշտություն: Վերջինս Մեծ Հայքի թագավորության բանակի թիվը նշում է որպես 400.000 (գիրք 4, գլուխ 20) և այս դեպքում, ըստ իս, պետք է առաջնորդվել ««մեկ զրո պակասեցնել»-ու մեթոդով, որից հետո Հայկական բանակի թիվը միանգամից դառնում է չափազանց իրական: Իրոք, ըստ Փավստոս Բյուզանդի (գիրք 4. Գլուխ 20) Վասակ Մամիկոնյանը. «*...սպառազինվեց և սահմանված ժամին բոլոր իր պատերազմական բանակով՝ Այրարատյան բանակով, հարձակվեց հունաց բանակի վրա*»: Ինչպես տեսնում ենք, այստեղ գործել է «Այրարատյան», այսինքն՝ միայն Ոստանիկ բանակը, առանց նախարարական զորագնդերի, իսկ Ոստանիկ բանակը այդ ժամանակաշրջանում, հիմք ընդունելով «Զորանամակ»-ը, ունեցել է իմ բերած թիվը ճշգրտորեն հաստատող թվաքանակ՝ 40.000 զինվոր: Այսպիսով՝ «Համադրման մեթոդ»-ի և տրամաբանական սխեմաների կիրառման շնորհիվ մեզ հաջողվեց պարզել Հայկական բանակի շահած կարևորագույն, սակայն «վիպական» հռչակված ևս մի ճակատամարտ:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 20; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 19, գլուխ 9; Զոնորաս «Պատմություն»:

վերջնականապես կարգավորեց հարաբերությունները հիոնիտների հետ: Արդյունքում, սկսած արդեն 358 թվականից, մարտունակ հիոնիտները արդեն իրենց հիմնական կազմով մի քանի տարով լրջորեն լծվեցին պարսից ռազմական մեքենային, իսկ այդ հանգամանքը, ինչպես արդեն նշվեց, էականորեն բարձրացրեց Շապուհ II-ի հարվածի թափը: Այս պարագայում պարզ էր, որ աստիճանաբար կրկին գահակալական պայքարի մեջ խրվող և անվճռականությամբ համակվող Կոնստանդիոս II-ի հետ Շապուհ II-ը խաղաղություն հաստատելու ոչ ցանկություն ուներ, ոչ էլ նպատակ:

359 թվականին վիճակված էր ամենածանրը լինել արևելքի քրիստոնյաների համար և ամենահաջողը՝ Շապուհ II-ի մղած երկարատև պատերազմում: Ամեն ինչ սկսվեց Ամիդի պաշարումով և գրավումով:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

359 հուլիսի 24 - հոկտեմբերի 6 – ***<u>Ամիդի գրավումը</u>***[1]

Շապուհ II-ի գլխավորությամբ ***<u>Տիգրիսի հովտով</u>*** առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (100.000, այդ թվում հիոնիտներ, քուշաններ, մազքութներ, ինչպես նաև մոտ 50 փիղ) մոտեցավ քաղաքին, որտեղ Հռոմեական կայսրության բանակը (մոտ 7.000[2]) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) անցան պաշտպանության:

I փուլ – Հուլիսի 24-ին Պարսից թագավորության բանակի առաջապահը (20.000) մոտեցավ քաղաքին և հաղթեց Հռոմեական կայսրության հեծյալ մի ջոկատի (700):

II փուլ – Թշնամու հիմնական բանակը մոտեցավ և պաշարեց քաղաքը, որից հետո Շապուհ II-ը քաղաքի պաշտպաններին առաջարկեց հանձնվել, սակայն ընկավ նետահարության տակ, իսկ հաջորդ օրը շարունակված բանակցությունների ժամանակ էլ հռոմեացիներից մեկը բալիստից նետահարեց ու սպանեց արդեն հիոնիտների արքա Գրումբատի որդուն: Դրանից հետո Շապուհ II-ը հրամայեց չխնայել ոչ-ոքի և ոչինչ: Հաջորդ 2 օրվա ընթացքում հակառակորդի բանակը հիմնովին ասպատակեց քաղաքի շրջակայքը:

III փուլ – Մյուս օրը Պարսից թագավորության բանակը զբաղեցրեց հարձակման համար նախատեսված ելման դիրքերը: Արևելքից պետք է հարձակվեին հիոնիտները, հյուսիսից՝ մազքութները, արևմուտքից՝ քուշանները, որոնց կողմում էին տեղավորված նաև մարտական փղերը, իսկ հարավից՝ Պարսից թագավորության բանակի մնացած մասերը: Քաղաքի գրոհը սկսվեց վաղ առավոտից, սակայն արդեն ուշ գիշերով համառ մարտերից և պաշտպանվողների համարձակ արտագրոհներից հետո թշնամին նահանջեց: Դրանից հետո թշնամին առժամանակ դադարեցրեց գրոհները և անցավ կանոնավոր պաշարման՝ քաղաքը շրջապատելով պաշարողական կառույցներով ու պատրաստելով հսկայական պաշարողական աշտարակներ:

IV փուլ – Սեպտեմբերի 20-ին Պարսից թագավորության բանակը վերսկսեց քաղաքի գրոհ, սակայն մինչև ուշ գիշեր շարունակված մարտի արդյունքում վերջինս կրկին շպրտվեց ելման դիրքեր, որից հետո 10 օր դադարեցրեց գրոհները:

---

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 18, գլուխ 4, 6-10, գիրք 19, գլուխ 1-9; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», մաս 27; Զոնորաս «Պատմություն»:

[2] Ըստ Ամմիանոսի (գիրք 18, գլուխ 9) քաղաքի պաշտպանությանը մասնակցել են 7 հռոմեական լեգեոններ, որոնցից 1-ը՝ պսևդոկոմիտատես V Parthica-ն, ի սկզբանե կազմել է քաղաքի կայազորը, իսկ մնացած 6-ը՝ կոմիտատեսներ X Fretensis-ը և XIII Gemina-ն, 2-ական այլ կոմիտատեսներ ու պսևդոկոմիտատեսներ, պատսպարվել են այնտեղ՝ նահանջելով առաջխաղացող Պարսից թագավորության բանակից: Այս հաշվարկով առաջնորդվելով, սակայն, ստացվում է, որ քաղաքում կար միայն 37.000 լեգեոներ, չհաշված դեռ «*տեղի բնակիչներից կազմված զգալի մեծության հեծյալ ջոկատ*»-ը, ինչպես նաև կոմիտատների առանձնացված հեծյալ ջոկատները (գիրք 18, գլուխ 9): Այսպիսով, եթե առաջնորդվենք Ամմիանոսի տվյալներով, ապա կստացվի, որ քաղաքում կար մոտ 40.000 ռազմիկ, ինչը իրական չէ, մանավանդ այն հաղորդման ֆոնին, որ պաշարման պահին քաղաքում ընդհանուր առմամբ կար միայն 20.000 հոգի: Կարելի է ենթադրել, որ քաղաքում իրոք կային Ամմիանոսի թվարկած զորամասները, սակայն վերջիններիս իրական, այսինքն՝ այդ պահին քաղաքում առկա, թվաքանակը շատ մեծ չափով զիջում էր իրենց հաստիքային թվաքանակին:

V փուլ – Դավաճանի միջոցով տեղեկանալով դեպի քաղաքի հարավային աշտարակներ տանող գաղտնուղու մասին՝ Շապուհ II-ը սեպտեմբերի 30-ի գիշերը Մատյան գնդի 70 նետաձիգներ մտցրեց այնտեղ, որոնք լուսաբացին հիմնական բանակի հետ միաժամանակ անցան հարձակման: Ի պատասխան դրա՝ պաշտպանվողները, 5 բալիստ տեղավորելով գրավված աշտարակի ուղղությամբ, ոչնչացրեցին այնտեղ գտնվող թշնամու ռազմիկներին, որից հետո ողջ օրը տևած մարտում հետ մղեցին նաև թշնամու հիմնական բանակի գրոհը: Հաջորդ օրերը թշնամին ծախսեց ***Զինթա ամրոցի*** (Ամիդի մոտ) գրավման ու վերջինիս շրջակայքի ասպատակման վրա:

VI փուլ – Հոկտեմբերի 1-ի գիշեր պաշարյալները արտագրոհ կատարեցին և ներխուժեցին թշնամու ճամբար ու մարտերով նահանջեցին՝ կորցնելով 400 զինվոր, սակայն իրենց հերթին ծանր կորուստներ պատճառելով թշնամուն: Դրանից հետո կնքվեց եռօրյա զինադադար:

VII փուլ – Հոկտեմբերի 4-ին Պարսից թագավորության բանակը, կիրառելով պաշարողական աշտարակներ և նրանց վրա տեղավորված բալիստներ, վերսկսեց քաղաքի գրոհը, սակայն ողջ օրը տևած համառ մարտերից հետո կրկին ստիպված եղավ նահանջել ելման դիրքեր:

VIII փուլ – Հոկտեմբերի 5-ին թշնամին կրկին անցավ գրոհի, սակայն մինչև երեկո տևած համառ մարտում պաշտպանվողներին հաջողվեց քարանետներից քարեր ու դյուրավառ նյութերով լցված կավե անոթներ նետելով վնասել պաշարողական աշտարակները, վախեցնել փղերին և, ծանր կորուստներ պատճառելով, հետ շպրտել թշնամուն:

IX փուլ – Հոկտեմբերի 6-ին Պարսից թագավորության բանակին քաղաքի հարավային կողմում ի վերջո հաջողվեց փլել պարսպի մի մասը, որից հետո, ողջ ուժերով այդ ուղղությամբ անցնելով գրոհի, գրավել քաղաքը:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ 30.000 զինվոր:

Ամիդի գրավումը բավականին թանկ արժեցավ արյաց արքային, ընդ որում ոչ 7.000 հոգանոց քրիստոնյաների կայազորի ոչնչացումը և ոչ էլ մոտ մեկ տասնյակ հազար գերիների ձեռք բերումն ու ավերված քաղաքի գրավումը երևի թե չարժեր իր ահեղ հակառակորդի դեմ պայքարում մարդկային ուժի առանց այդ էլ մեծ պակաս զգացող Շապուհ II-ի կողմից 30.000 սեփական ռազմիկներ կորցնելուն, ռազմիկներ, որոնց իր սկզբնական անհաջողություններից խոցված արյաց արյաց արքան մարտի էր ուղարկում արդեն առանց խնայելու: Իհարկե, նույնիսկ եթե ընդունենք այն հանգամանքը, որ կորուստների ընդհանուր թվակազմում զգալի թիվ են կազմել նաև դաշնակիցները, ապա նույնիսկ այդ պարագայում էլ մեկ նմանատիպ քաղաքի գրավման համար տրված կորուստները չափից դուրս շատ էին և իրականում սա մեծապես ընդամենը միայն Պյուրոսյան մի հաղթանակ էր, որը կոչված էր շոյել Պարսից թագավորության արքայի խոցված փառասիրությունը: Այսպես թե այնպես, սակայն, թեկուզ և թանկ գնով, ձեռք էր բերվել ոչ փոքր մի հաջողություն և այժմ արդեն պետք էր գոնե նրա պտուղները քաղել:

Հենց Ամիդի դիմաց, բայց արդեն Մեծ Հայքի թագավորության տարածքում, գտնվում էր Ամիդից ոչ պակաս ամրացված Տիգրանակերտը: Շարժվելով այս քաղաքի դեմ, որտեղ ամրացած Մեծ Հայքի թագավորության ուժերին գլխավորում էր աննկուն Անդովկ Սյունին, 359 թվականի հոկտեմբերի 10-ին Շապուհ II-ի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակը պաշարեց այն, սակայն, չնայած նույնիսկ գերված լեգեոներների կողմից Հռոմեական կայսրության լավագույն պաշարողական տեխնիկայի կիրառմանն էլ, ոչ մի հաջողության չհասավ[1]: Հասկանալով, որ վտանգի է ենթարկվում Մեծ Հայքի թագավորության տարածքում կործանել իր առանց այդ էլ ծանր կորուստներ կրած բանակը, Տիգրանակերտի անհաջող պաշարումից հետո

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 26:

Շապուհ II-ը կրկին իջավ դեպի հարավ, որից հետո նույն 359 թվականի նոյեմբերին պաշարեց և երկօրյա համառ գրոհից հետո պարսպի մի մասը փլելու շնորհիվ ի վերջո գրավեց Բզաբդե ամրոցը[1], իսկ հետո էլ կրկին տիրեց ատելի Սինգարային[2]: Հյուսիսային Միջագետքում ընկել էին հռոմեացիների բոլոր ամրացված կետերը ու, թերևս, միայն Պիրն էր, որ, գտնվելով Զևգմայի գետանցի հակառակ կողմում, կարողացավ դիմանալ հակառակորդի հարվածին և արդյունքում թույլ չտալ թշնամուն ներխուժել արդեն նաև Ասորիք[3]:

Տիգրանակերտի հաջող պաշտպանությունը փակել էր Պարսից թագավորության բանակի մուտքը դեպի Մեծ Հայքի թագավորության կենտրոնական շրջաններ, բայց, դժբախտաբար, հենց Պիրի անհաջող պաշարումից վերադառնալիս էր, որ Շապուհ II-ն ի վերջո ստացավ երկար սպասված լուրը՝ հզոր նախարարությունների առաջնորդներ Վահան Մամիկոնյանն և Մեհրուժան Արծրունին դավաճանել են իրենց ազգին ու երկրին, ելել են սեփական արքայի դեմ և այժմ հայցում են իր օժանդակությունը: Առիթն ավելի քան հարմար էր և նույն 359 թվականի ամենավերջին Մեհրուժան Արծրունու ու Վասակ Մամիկոնյանի եղբայր Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ Վասպուրականով առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000) ասպատակեց Արարատ նահանգը, թեև արդյունքում, խուսափելով սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ առաջխաղացող Մեծ Հայքի թագավորության բանակից (10.000 հեծյալ), հապճեպ նահանջեց դեպի Թավրիզ՝ կորցնելով ձեռք բերված ավարը և գերիներին[4]:

Ռազմական մեծ իրադարձություններով հագեցված 359 թվականը ավարտվեց և Շապուհ II-ն այս անգամ, չնայած հաջողությունն իր վրա ևս ամեն դեպքում էժան չէր նստել, թերևս, կարող էր գոհ լինել: Իրոք, ինչպես արդեն ասվեց, գրավվել էին Հյուսիսային Միջագետքում գտնվող հռոմեացիների հիմնական ամրացված կետերը, դե իսկ Մեծ Հայքի թագավորության պարագայում էլ երկիրը լրջորեն երկփեղկվել էր և թուլացել, ընդ որում նորադարձ կրոնավորներին բնորոշ մոլեռանդությամբ գործող Վահան Մամիկոնյանի ու Մեհրուժան Արծրունու պարագան էլ նոր հույսեր էր ներշնչում:

360 թ-ի սկզբին, մինչ վերջին տասնամյակում ձեռք բերած հաջողություններից իր հզորության մեջ քարացած Կոնստանդիոս II-ը, որ անակնկալ և ծանր հարված էր ստացել Արևելքում, պատասխան հարվածի համար աստիճանաբար ի մի էր բերում դժվար հավաքվող ուժերը, Շապուհ II-ը, որը լավ էր հասկանում, որ ժամանակն ամենևին էլ իր օգտին չէ, որ աշխատում է, որոշեց նոր քայլ ձեռնարկել: Արդյունքում՝ քանի որ Հյուսիսային Միջագետքում այլևս հռոմեացիներ չկային, գործելով այդ հարմար ցատկահարթակից, նոր բացվող տարում արյաց արքան նախատեսեց ծանր հարված հասցնել իր արդեն մյուս հակառակորդին՝ Մեծ Հայքի թագավորությանը:

360 թվականի ամռան սկզբին, արշավելով Բզաբդե-Արզն երթուղով, Շապուհ II-ի գլխավորությամբ և դավաճաններ Մեհրուժան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի ուղեկցությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000, այդ թվում գերված լեգեոներներ, մոտ 50 փիղ) լեգեոներների կողմից գործարկվող իր ժամանակի պաշարողական ողջ տեխնիկայի կիրառմամբ կրկին գրոհեց Տիգրանակերտը և այս անգամ արդեն, պարսպի մի մասը փլելու միջոցով, Անդովկ Սյունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակից համառ մարտերից հետո գրավեց հինավուրց հայկական այդ քաղաքը[5]: Դրանից հետո, շարժվելով դեպի Տիգրիսի վերին հոսանքները, Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ գործող թշնամական բանակը պաշարեց Անգղ ամրոցը (Աղձնիք, Անգեղտուն գավառ, Տիգրիսի վերին հոսանքում), սակայն չկարողացավ գրավել այն[6]: Շապուհ II-ի ռազմական մեքենան

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 7 ՛Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 6:
[3] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 7:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 23:
[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 24; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 28:
[6] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 24:

իրեն միացած հայազգի դավաճանների հետ միասին գործում էր ամենայն հապճեպությամբ և արդյունքում, առաջանալով Դարանաղի-Եկեղիք-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Մասյացոտն երթուղով, ոտնատակ տալով երկիրը ու ձեռք գցելով մեծ ավար, վերջինս ճամբարեց Արագածոտն գավառում: Թշնամին ձեռք էր բերել հսկայական ավար և գերիներ, բայց նաև, ինչը որ առավել անպատվաբեր էր երկրի համար, բացել էր Դարանաղի գավառում գտնվող Հայ Արշակունիների տոհմական գերեզմանները և այժմ պատրաստվում էր Մեծ Հայքի Արշակունի արքաների մասունքները տեղափոխել Պարսից թագավորության տարածք: Երկրի համար ստեղծված այս աղետալի դրության մեջ սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (60.000) գիշերային անակնկալ հարձակում գործեց ճամբարած թշնամու վրա, հաղթանակ տարավ Պերճ Զեյթունցյանի դիպուկ բնորոշմամբ «*պատվի այդ յուրօրինակ ճակատամարտում*»[1] և հետ խլեց թշնամու կողմից խլված ամեն ինչ: Հայոց արքաների մասունքները իրենց վերջնական հանգիստ գտան Արագածի լանջերին գտնվող Աղձք գյուղի մոտ գտնվող տոհմական դամբարանում, իսկ թշնամու մնացորդներն էլ դուրս շպրտվեցին երկրից[2]: Իրենց տիրույթներում առժամանակ ապաստանեցին նաև դավաճան հայ իշխանները, սակայն հետագան ցույց տվեց, որ այստեղ ամրանալ նրանք ոչ մի կերպ չէին կարողանալու:

360 թվականի աշնանը, ի վերջո ի մի բերելով իր հսկայական բանակը, Կոնստանդիոս II-ը որոշեց վճռական գործողությունների անցնել Արևելքում: Ընդհանրապես ասած, սակայն, հաջող մարտական գործողությունների համար ընտրված ժամանակահատվածը այնքան էլ հարմար չէր, բայց կայսրը մի կողմից ուզում էր գոնե այդ տարի մի որևէ բան արած լինել, իսկ մյուս կողմից էլ՝ հիմքեր նախապատրաստել ապագա գործողությունների համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

360 նոյեմբեր – ***<u>Բզաբդե ամրոցի պաշարումը</u>***[3]

Կոնստանդիոս II-ի գլխավորությամբ ***<u>Սեբաստիա-Մելիտե-Սամոսատ-Եդեսիա-Ամիդ</u>*** երթուղով արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 150.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (6.000), ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 20.000) մոտեցան ամրոցին և սկսեցին նրա պաշարումը Պարսից թագավորության բանակից (մոտ 2.000):

I փուլ – Քրիստոնյաները անցան գրոհի, սակայն ողջ օրը տևած մարտում թշնամին այն հետ մղեց:

II փուլ – Հաջորդ օրը պատրաստվելով նոր գրոհի՝ պաշարման երրորդ օրը քրիստոնյաները կրկին անցան հարձակման, որը այս անգամ ևս համառ մարտում հետ մղվեց:

III փուլ – Քրիստոնյաները 10 օրվա ընթացքում պատրաստեցին և ամրոցին մոտեցրեցին հսկայական մի խոյ ու պաշարողական աշտարակներ, իսկ պարսպի դիմաց էլ կառուցեցին վերջինիս բարձրության պաշարողական հողաթումբ: Դրանից հետո քրիստոնյաների բանակը կրկին անցավ գրոհի: Գրոհողներին հաջողվեց խոյը մոտեցնել պարսպին, սակայն, ի պատասխան դրա, թշնամին պարսպից նետած ցանցերով կաշկանդեց վերջինիս գործողությունը, որից անմիջապես հետո արտագրոհ կազմակերպեց ու փորձեց այրել պաշարողական տեխնիկան: Պաշարվածների այս արտագրոհը հետ մղվեց, սակայն դրան անմիջապես հաջորդեց նորը, որի արդյունքում համառ մարտերից հետո թշնամուն ի վերջո հաջողվեց այրել պաշարողական տեխնիկան, իսկ վրա հասած գիշերը

[1] Տես՝ Զեյթունցյան Պ. «Արշակ II», Երևան 1987, էջ 461:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 24; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 27:
[3] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 20, գլուխ 11; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 3, 36; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10 գլուխ 15:

ընդհատեց մարտը:

IV փուլ – Հաջորդ օրը քրիստոնյաները կրկին անցան գրոհի՝ միաժամանակ պաշարողական հողաթմբի վրա տեղավորելով բալիստներ և դրանցով մեծ վնաս պատճառելով ամրոցի պարիսպների վրա գտնվող թշնամուն: Զգալով վիճակի վտանգավորությունը՝ թշնամին հզոր արտագրոհ կազմակերպեց և բռնկված համառ մարտում կարողացավ զգալիորեն վնասել պաշարողական տեխնիկան:

V փուլ – Քրիստոնյաները որոշ ժամանակ շարունակեցին ամրոցի պաշարումը, սակայն շուտով, հաշվի առնելով սկսվող անձրևային եղանակն ու ցրտերը, թողեցին պաշարումն ու հետ քաշվեցին ***Անտիոք:***

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 6.000, թշնամին՝ 1.000 զինվոր: Արդյունքում՝ քրիստոնյաների բանակը, ցանկանալով խուսափել վերահաս ձմեռվանից, ստիպված եղավ նահանջել՝ Հռոմեական կայսրության բանակը հեռացավ Անտիոք, իսկ Մեծ Հայքի թագավորության բանակը վերադարձավ Հայրենիք:

Կոնստանդիոս II-ը իրոք նախատեսել էր վճռական գործողությունների անցնել 361 թվականին, սակայն մի շատ կարևոր հանգամանք խանգարեց նրան: Բանն այն է, որ կայսեր հորեղբորորդին՝ մշտական կասկածների ու թաքնված, բայց խիստ հալածանքների ենթարկվող Հուլիանոսը, որի հայրը Կոնստանդիոս II-ի կասկածամտությանը զոհ էր գնացել դեռևս 337 թվականի ամռանը, հեթանոսական ռազմիկի դաստիարակություն ստացած այդ երիտասարդ ազնվականը, որը կայուն ժխտողական մոտեցում ուներ քրիստոնեության նկատմամբ, չնայած կայսեր աննկատ, սակայն համառ դիմադրությանը, որն ամեն կերպ խոչընդոտում էր վերջինիս հաջողություններին և կասկածանքով ու նախանձով էր վերաբերվում դրանց, վերջին տարիներին բավականին հաջող մարտեր էր վարում հռենոսյան սահմանագծում առաջանալ փորձող գերմանացիների դեմ՝ արդյունքում բանակի և ռազմիկների շարքերում հասնելով մեծ հեղինակության: Եվ ահա Կոնստանդիոս II-ը, որը, ինչպես արդեն ասվեց, մի կողմից անսքող նախանձով ու մրցակցության զգացումով էր հետևում Հուլիանոսին, իսկ մյուս կողմից էլ փորձառու և մարտերում կոփված ռազմիկների մեծ կարիք ուներ, 361 թվականի սկզբին Հուլիանոսից պահանջեց իրեն ուղարկել վերջինիս տրամադրության տակ առկա ուժերի զգալի մասը: Հուլիանոսի ռազմիկները, սակայն, որոնք մի կողմից տրամադրված էին կայսեր դեմ և անձնական շփումներում ավելի հասանելի ու հմայիչ Հուլիանոսի օգտին, իսկ մյուս կողմից էլ ինքնին առանձնապես չէին այրվում պարսկական ճակատում կռվելու ցանկությունից, ապստամբեցին և կայսր հռչակեցին Հուլիանոսին:

361 թվականի գարնանը սկիզբ առան բանակցություններ, որոնց անհաջող ավարտի պայմաններում էլ Հուլիանոսն արագորեն առաջացավ և, ըստ էության, իր տիրապետությունը հաստատեց Բալկանյան թերակղզու հյուսիսում՝ փաստորեն իրենով անելով Հռոմեական կայսրության ողջ արևմտյան հատվածը: Ստեղծված պայմաններում կայսրը նույնիսկ մտածել իսկ չէր կարող Շապուհ II-ի դեմ իրականացվելիք որևէ լուրջ գործողության մասին, ընդ որում, մինչև վերջին պահն էլ տատանվելով սեփական հորեղբորորդու դեմ արշավելու կամ տեղում մնալու ընտրության միջև, նույն 361 թվականի նոյեմբերի 5-ին Կիլիկիայում գտնվող Կոնստանդիոս II-ը ջերմաստիճանի անակնկալ ուժեղ բարձրացում ունեցավ և կնքեց իր մահկանացուն: Քիչ ավել, քան մեկ ամիս հետո՝ 361 թվականի դեկտեմբերի 11-ին, արդեն կայսեր կարգավիճակի հասած Հուլիանոսը (361-363) ոտք դրեց Կոստանդնուպոլիս և հաստատվեց կայսերական գահին որպես տերության միակ և բացարձակ տիրակալ: Անսպասելի ընթացք ունեցած 361 թվականը ստիպել էր Շապուհ II-ին հանգիստ մնալ, իսկ ինչ վերաբերում է Մեծ Հայքի թագավորությանը, ապա մեկ տարին մեծ հաշվով բավական եղավ, որ Արշակ III-ը կարողանար երկրում ճնշել ապստամբական տրամադրությունները և, որ ոչ պակաս

կարևոր էր, դեպի Պարսից թագավորության տարածք դուրս մղեր նույնիսկ սեփական հպատակների կողմից չընդունված Վահան Մամիկոնյանին ու Մեհրուժան Արծրունուն: Առջևում էին վճռական իրադարձություններ և այս պարագայում երկրի միասնությունն ապահովելը կենսական անհրաժեշտություն էր:

362 թվականին, հարազատ մանր պատերազմով հակառակորդի ուժերը ստուգելու իր ռազմավարությանը, մասերի բաժանված Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000) ասպատակեց Հայոց Միջագետքը և նույնիսկ Հյուսիսային Ասորիքի որոշ շրջաններ ու նահանջեց[1]: Իրոք, նոր կայսր Հուլիանոսը, որ հետագայում հայտնի էր դառնալու «Ուրացող» մականվամբ, բազմափորձ Շապուհ II-ի համար իրենից առայժմ ակնհայտորեն մի իսկական հանելուկ էր ներկայացնում և արյաց արքան առայժմ չէր պատկերացնում, թե ի՞նչ կերպ պետք է գործել ապագայում: Կյանքն իր հերթին ցույց տվեց, որ, ինչ-ինչ, բայց հենց վճռականությունը և նույնիսկ չափից դուրս ու կտրուկության աստիճանի հասնող վճռականությունն էր, որ նոր կայսեր չէր պակասում:

Հուլիանոսն իրենից ներկայացնում էր Հռոմեական դասական կայսրության ժամանակների մի իսկական վերապրուկ, որը, իր համար նախատեսված ժամանակներից ծնված լինելով մեկ կամ նույնիսկ երկու հարյուրամյակ ուշ, քաղաքական մի իսկական անախրոնիզմ էր: Այս մարդը, եթե ապրելիս լիներ I կամ գոնե II դարի Հռոմեական կայսրությունում և ձեռք բերեր քաղաքական բարձրագույն իշխանություն, բոլոր հնարավորությունները կունենար հայտնի դառնալու որպես մի հզոր տիրակալ՝ գուցե իր հերթին նույնիսկ մի նոր դափնի էլ ավելացնելով հռոմեական հինավուրց փառքին: Այժմ, սակայն, դրսում նույնիսկ III չէ, այլ արդեն հսկայական փոփոխությունների կրող հանդիսացած IV դարն էր, ամենուր լայնամղոն քայլերով հաստատվում էր քրիստոնեությունը, քանդվում էին սոցիալ-տնտեսական հին ինստիտուտներն և երևույթները ու դրանց փոխարինում էին նորերը, իսկ այդ ամենն էլ իր հետ բերելու էր լիովին նոր իրողություններ և լրիվ նոր մի աշխարհ: Ահա այս ամենն էր, սակայն, որ Հուլիանոսը համառորեն նկատել չէր ուզում:

Իրոք, երեսնամյա կայսրը, տարված հռոմեական հինավուրց փառքի մասին գոնե ոչ թե պատմական, այլ իդեալիստական և գեղարվեստական հովերով, այրվելով մի նոր Ալեքսանդր կամ գոնե Տրայանոս դառնալու մարմաջով ու այս ճանապարհին համառորեն չցանկանալով ուշադրություն դարձնել ոչ մեկի և ոչ մի բանի վրա, հարուցում էր բարեմիտ տրամադրված իր նույնիսկ յուրայինների աննկատ տարակուսանքը: Իր հերթին, տարված բացարձակապետության և հռոմեական իշխանության բացառիկության հովերով, երկարատև ճնշումներից հետո գահին հասած, ինչպես նաև զինվորական փառքի ճաճանչներից որոշակիորեն կուրացած Հուլիանոսը բացարձակ իշխանության տեր դառնալուց անմիջապես հենց հետո էլ հրամայեց վերացնել քրիստոնեությունը ու վերականգնել հռոմեական նախկին հավատքը: Այս հանգամանքը մի իսկական խառնաշփոթ առաջացրեց երկրում, որին գումարվեց նաև այն հանգամանքը, որ հռոմեական աշխարհի վերջին այդ հեթանոս կայսրը նաև լայն հալածանքներ սկսեց նախորդ կայսեր կողմնակիցների նկատմամբ: Արդյունքը եղավ մի իսկական ներքաղաքական քաոս, որի վրա մազաչափ իսկ ուշադրություն չդարձնելով էլ, սակայն, հռոմեական լավագույն և հինավուրց ավանդույթներին նմանակելու անդուլ եռանդով համակված Հուլիանոսը ձեռնամուխ եղավ Պարսից թագավորության դեմ իրականացվելիք մի հսկայական արշավանքի կյանքի կոչման ծրագրի մշակմանն ու նախապատրաստմանը: Ամեն ինչ արվում էր ըստ հինավուրց, թեկուզ և արդեն մեծապես ժամանակավրեպ սովորույթներին համապատասխան, կայսրը ամեն ինչ, կարծես թե, ճիշտ էր անում, թեև ճիշտ՝ կտրված կյանքից ու իդեալում, և այս ճանապարհին, ահա, Հուլիանոսը չմոռացավ նաև հռոմեական հանրահայտ գոռոզության մասին:

Արևելքում պատերազմ վարելիս Հռոմեական կայսրության նույնիսկ ամենահզոր կայսրերի ու զորավարների համար էլ Մեծ Հայքի թագավորության դիրքորոշումը

[1] Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 31; Զոնորաս «Պատմություն»:

մշտապես կարևոր էր և հազվադեպն էր սրանցից, թերևս, կարելի է մատնանշել միայն Մարկոս Տրայանոսին, որ հայկական գործոնը հաշվի չէր առնում: Մարկոս Տրայանոսը, սակայն, գործում էր Հռոմեական կայսրության հզորության գագաթնակետին, թեև հայկական գործոնը հաշվի չառնելը, ըստ էության, ի չիք դարձրեց նույնիսկ այս գերհսկայի ծրագրերը, բայց նույն Հուլիանոսի պարագայում արդեն ոչ Հռոմեական կայսրության երկաթյա լեգեոնները կային և ոչ էլ Շապուհ II-ի գլխավորած Պարսից ամուր թագավորությունն էր իր վերջին շրջանի Պարթևական խարխուլ թագավորությունը: «Նորահայտ Ալեքսանդրը», սակայն, մոռացավ այս ամենի մասին:

Ավելին, նույնիսկ չցանկանալով էլ իրեն նեղություն իսկ տալ և դիվանագիտական քաղաքավարության գոնե տարրական կանոնները պահպանելով շփվել Արշակ III-ի հետ, Հուլիանոսը, մի կողմ թողած ամեն մի ձևականություն, կայսրության հզորության գագաթին գտնվող դասական հռոմեացուն բնորոշ կոպիտ տոնով, որով կարելի էր հրաման տալ, ասենք, լեգեոնի սովորական մի հարյուրապետի, թեև խելոք մարդիկ նույնիսկ այդ պարագայում էլ իրենց զուսպ էին պահում և չէին կոպտում միջին օղակի այդ կարևոր հրամանատարներին, ահա ուրեմն, Հուլիանոսը, մի կողմ թողած ամեն մի ձևականություն, մի աննախադեպ կոպիտ տոն պարունակող նամակ ուղարկեց հռոմեացիների հավատարիմ դաշնակից ու Մեծ Հայքի թագավորության արքա Արշակ III-ին՝ կարճառոտ արտահայտություններով նկարագրելով Պարսից թագավորության դեմ ապագայում մղվելիք ռազմական գործողությունների ընդհանուր պատկերը՝ ընթացքում սպառնալով Հայոց արքային և, որպես իր շարքային մի զորավարի, ցույց տալով վերջինիս տեղը գործողությունների ընդհանուր համայնապատկերում[1]: Այս ամենն ավելին էր, քան կոպտություն ու իրավիճակի սխալ գնահատում և, վերափոխելով հատնի խոսքը, կարելի է ասել՝ սա ուղղակի սխալ էր, քաղաքական կոպիտ մի սխալ, որը շատ թանկ էր նստելու ոչ միայն հենց անձամբ քաղաքական բացարձակ իշխանությունից կուրացած Հուլիանոսի, այլև ամբողջ Հռոմեական կայսրության ու քրիստոնեական ողջ աշխարհի վրա:

Պարսից թագավորության դեմ նախապատրաստվող մարտական գործողությունների ապագա ծրագիրը, որը Հուլիանոսն և նրա կողմնակիցները կազմեցին 362 թվականին, իր մեջ ներառում էր դեպի Կենտրոնական ու Հարավային Միջագետք իրականացված արշավանքների ընթացքում նախորդ հարյուրամյակներում Հռոմեական կայսրության ռազմական մտքի կուտակած լավագույն գաղափարները և արտաքինից իրոք որ անխոցելի էր: Նախատեսվում էր, հավաքելով հնարավորինս մեծաքանակ ուժեր, անշտապ և աստիճանաբար, վերացնելով հակառակորդի ամրացված կետերը ու ուղեկցվելով պարենամթերքն և ռազմական հանդերձանքը գետով դեպի ներքև տեղափոխող գետային նավատորմիկի կողմից, Եփրատի ափերով իջնել հարավ, անցնել Տիգրիսի ափերին տարածվող Տիզբոն ու գրավել թշնամու մայրաքաղաքը, ընդ որում վերջին պարագան, ինչպես ենթադրում էին ակնհայտորեն դեռևս II դարի Հռոմեական կայսրության բանակի պարթևական արշավանքների ազդեցության տակ գտնվող Հուլիանոսն և նրա տեսաբանները, որևէ դժվարություն իրենից, ըստ էության, պետք է, որ չներկայացներ:

Հռոմեական տեսաբանները, սակայն, աչքաթող էին անում մի շարք կարևոր հանգամանքներ, այդ թվում, մասնավորապես նաև վերջին՝ 283 թվականի, անհաջող արշավանքի տխուր փորձը, ինչպես նաև մոռանում էին, այս մասին մեկ անգամ չէ, որ ասվեց, որ ոչ իրենց ձեռքի տակ եղած բանակն էր իրենից II դարի Հռոմեական կայսրության լավագույն ռազմական մեքենան ներկայացնում, ոչ էլ իրենց հակառակորդն էր Պարթևական թագավորությունը: Իրոք, Հռոմեական կայսրության արդեն բավականին խաթարված ռազմական մեքենային այժմ վիճակվելու էր ընդհարվել ռազմատենչ Շապուհ II-ի ձեռքով ստեղծված և իր մեջ նաև միջինասիական մարտաշունչ քոչվորների ջոկատներ ընդգրկած ուժերի հետ, որոնք, դրան գումարած նաև, գործելու էին՝ հիմք

[1] Տես՝ Մանանդյան Հ. Հ. «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատոր 2, Երևան 1978, էջ 179-180:

ունենալով Արշակունիների դառը փորձից իմաստնացած Սասանյանների հոգատար ձեռքերով ստեղծված Տիզբոնյան կեսմիլիոնանոց քաղաքային համալիրի ամրությունների հզորագույն համակարգը:

Եվ վերջում ավելացնենք, որ, նույնիսկ, եթե մի կողմ թողնենք նաև հայերի պարագան, Հուլիանոսի կազմած ռազմական ծրագիրը մեկ թերություն ևս ուներ, որի մասին ոչ-ոք չմտածեց: Ամենալավ ռազմական ծրագիրն էլ ունի մի վատ սովորություն՝ ինչ -որ պահի ինչ-որ պատճառով հանկարծ չգործել, իսկ այդ պարագայում, ինչպես պարզվեց հետագայում, Հուլիանոսն և նրա կողմնակիցները ոչ մի պահեստային ծրագիր չունեին, նրանք ուղղակի չէին մտածել այն մասին, թե ինչպե՞ս պետք է վարվել այն պարագայում, եթե հանկարծ մի որևէ պատճառով չհաջողվի գրավել Տիզբոնը և կարիք լինի հետ քաշվել: Գործելով լավագույն ռազմիկի, բայց ոչ երբեք՝ զորավարի նման, Հուլիանոսն ուղղակի բացառում էր անհաջողության հնարավորությունը, ինչն իր հերթին ապագա ողջ ռազմագործողության վրա ամենածանր մի ազդեցություն ունեցավ:

Այսպես թե այնպես, սակայն գործողությունների գլխավոր ծրագիրը կազմվեց և հաստատվեց անձամբ կայսեր կողմից, իսկ դրանում էլ հայերին ու Արշակ III-ին էլ հատկացվեց բավականին համեստ մի դեր՝ Եգիպտոսի նախկին դուքս Սեբաստիանոսի գլխավորած Հռոմեական կայսրության 30.000 հոգանոց կորպուսի հետ միասին Տիգրիս գետի հովտով իջնել դեպի հարավ և հնարավորինս աջակցել կայսեր հրամանի տակ գտնվող հիմնական զորասյանը: Եվ այսպես ի մի բերվեցին հսկայական ուժեր և 363 թվականի վաղ գարնանը Հուլիանոսը ձեռնամուխ եղավ իր հսկայածավալ ծրագրերի կյանքի կոչմանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

363 մարտի 5 - հունիսի 15 – ***<u>Եփրատի ճ-մ</u>***[1]

Մարտի 5-ին դուրս գալով ***<u>Անտիոքից</u>***՝ Հուլիանոս կայսեր գլխավորությամբ արշաված Հռոմեական կայսրության բանակը (մոտ 200.000[2], այդ թվում գալլեր, գոթեր և բատտավներ, ինչպես նաև 1.150 նավակ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) Գասանյանների թագավորության բանակի ուղեկցությամբ (17.000) առաջացան ***<u>Հիերապոլիս</u>*** (Զևգմայից մոտ 40 կմ հարավ) - ***<u>Զևգմա-Պիր-Բատնա-Խառան</u>*** երթուղով ու մարտի 27-ին հասան ***<u>Նիկեփորիոն,</u>*** որից հետո, շարունակելով առաջխաղացումը ***<u>Կիրկեսիոն-Դուր-Եվրոպոս</u>*** ուղղությամբ, Եփրատ գետով առաջխաղացող նավատորմիկի ուղեկցությամբ ներխուժեցին Պարսից թագավորության տարածք, ընդ որում կայսեր հրամանով Խաբուր գետի վրա գցված բոլոր կամուրջներն այրվեցին, որպեսզի ռազմիկներն առավել վճռական գործեն և մտածել իսկ չհամարձակվեն եկած ճանապարհով վերադառնալու մասին:

I փուլ – Ապրիլի 14-ին մանր հարձակումների ենթարկվող Հռոմեական կայսրության բանակը ստիպեց հանձնվել ***<u>Անահտա ամրոցին</u>*** (Միջագետք, Դուր-Եվրոպոսից մոտ 80 կմ հարավ-արևելք, Եփրատի կղզու վրա), իսկ ապրիլի 17-ին էլ,

---

[1] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 23, գլուխ 2-3, 5, գիրք 24, գլուխ 1-6; Լիբանիոս «Ճառեր, Հուլիանոսի մահախոսականը», 212-255; Հուլիանոս «Նամակներ, Նամակ Սոֆիստ և քվեստոր Լիբանիոսին, 49»; Զ ոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 13-25; Սոզոմենոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 1; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 28; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10 գլուխ 16; Եվնապիոս «Պատմություն», հատված 22-24; Զոնորաս «Պատմություն»; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 13, 15; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 10; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:

[2] Սկզբնաղբյուրներում հստակորեն չի արտահայտված Հուլիանոսի բանակի թվաքանակը 363 թվականի Արևելյան արշավանքում: Ընդամենը հայտնի է, որ այս արշավանքին հաստատ մասնակցել են I Armeniaca-ն, ինչպես նաև, առանց որևէ կոնկրետացման՝ Հռոմեական կայսրության հյուսիս և հյուսիս-արևելյան սահմաններում տեղաբաշխված լեգեոնները: Ինչպես արդեն նշվեց, քննարկվող ժամանակաշրջանում հռոմեական բանակն ուներ 359.000 լեգեոններ, որոնցից 130.000 լեգեոներ տեղաբաշխված էր արևելյան ուղղությամբ: Հաշվի առնելով այս, ինչպես նաև հյուսիս և հյուսիս-արևելյան սահմաններում տեղաբաշխված լեգեոնների մասնակցության հանգամանքը, կարելի է ենթադրել, որ տեղերում անհրաժեշտ-նվազագույն կայազորային և սահմանապահ ուժեր թողնելուց հետո, 363 թ-ի Արևելյան արշավանքում հռոմեական բանակը կարող էր կազմել մոտ *<u>200.000</u>* ռազմիկ:

շրջափակելով և մի կողմ թողնելով ***Թիլութա*** (Միջագետք, Անահտայից մոտ 40 կմ հարավ-արևելք, Եփրատի կղզու վրա) և ***Ախալխալա*** (Միջագետք, Թիլութայի մոտ, Եփրատի կղզու վրա) ***ամրոցները,*** շարունակեց առաջխաղացումը դեպի հարավ՝ մի քանի օրից ***Դիակիրա քաղաքի*** (Միջագետք, Թիլութայից մոտ 30 կմ հարավ-արևելք) մոտ հետ շպրտելով Սուրենի գլխավորած թշնամու բանակին: Այս ընթացքում Հռոմեական կայսրության լրացուցիչ զորասյունը (30.000), ինչպես նաև Զորա Ռշտունու գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 60.000[1]) ասպատակեցին ***Հյուսիսային Միջագետքը,*** սակայն չկարողացան ապահովել հետագա առաջխաղացումը դեպի հարավ:

II փուլ – Ապրիլի վերջին Հռոմեական կայսրության բանակը շրջապատեց և մի քանի օրվա ընթացքում ստիպեց հանձնվել ***Պերոզ-Շապուհի*** (Միջագետք, Դիակիրայից մոտ 100 կմ հարավ-արևելք) կայազորին (2.500), իսկ արդեն մայիսի սկզբին էլ մի քանի օրվա համառ մարտերից հետո գրավեց ***Մայզամալխան*** (Միջագետք, Տիզբոնից մոտ 20 կմ հյուսիս-արևմուտք) և ուժերը կենտրոնացրեց Տիզբոնյան քաղաքային համալիրի մաս կազմող ***Սելևկիա քաղաքի*** մոտակայքում՝ ողջ այդ ընթացքում մանր մարտեր մղելով Սուրենի գլխավորությամբ անկանոն ու փոքրաթիվ ուժերով անակնկալ հարձակումներ գործող թշնամու ուժերի դեմ: Չբավարարվելով վերջին հանգամանքով, սակայն, Շապուհ II հրամայեց բացել նաև գետարգելները ու հեղեղեց թշնամական բանակի գործողության ողջ տարածքը, իսկ այդ ամենին էլ գումարվեց մոծակների և այլ զեռունների հարձակումը: Մայիսի առաջին կեսին, վերակառուցելով Եփրատն և Տիգրիսն իրար կապող հինավուրց ջրանցքը ու այն դարձնելով նավարկելի, Հուլիանոսի բանակը, Եփրատից Տիգրիս անցկացնելով նավատորմիկը, աստիճանաբար շարունակեց առաջխաղացումը դեպի հարավ և մայիսի երկրորդ կեսին հիմնական ուժերով տեղակայվեց ***Տիզբոնի մոտակայքում:***

III փուլ – Մայիսի վերջին ուժերը կենտրոնացրած Պարսից ու Լախմյանների թագավորության միացյալ բանակը (մոտ 150.000) մոտեցավ Տիգրիսի արևելյան ափին, սակայն առաջապահ ուժերի ընդհարումից և այն բանից հետո, երբ Հռոմեական կայսրության բանակը գիշերային կտրուկ հակահարձակումով հետ շպրտեց թշնամուն ու անցավ գետի մյուս ափ, այնուհանդերձ նահանջեց՝ կորցնելով 2.500 զինվոր:

IV փուլ – Առավոտյան ուժերը վերախմբավորած Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը կրկին անցավ հարձակման, սակայն, համառ մարտից հետո կորցնելով 6.000 ռազմիկ, կրկին հետ մղվեց ելման դիրքեր

V փուլ – Մայիսի վերջից մինչև հունիսի սկիզբ Հռոմեական կայսրության բանակը շրջափակեց ***Տիզբոնը,*** սակայն այդպես էլ որևէ էական արդյունքի չհասավ:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 15.000, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

363 հունիսի 17 - հուլիսի 1 – ***Տիգրիսի ճ-մ***[2]

---

[1] Այս իրադարձություններում Հայկական բանակի գործողությունների մասին հայտնում է Մովսես Խորենացին (գիրք 3, գլուխ 15), սակայն սխալմամբ Հռոմի կայսր Հուլիանոսին ժամանակակից է համարում Մեծ Հայքի թագավորության Տիրան II արքային: Կարելի է կարծել, որ իրականում դեպքը տեղի է ունեցել Հուլիանոսին ժամանակակից Մեծ Հայքի թագավորության արքա Արշակ III-ի օրոք:, ընդ որում ըստ իս այն կապվում է հռոմեական 363 թ-ի Արևելյան արշավանքի հետ, որին օժանդակելու համար էլ Մեծ Հայքի թագավորության բանակը իրականացրել է այս գործողությունը:

[2] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 24, գլուխ 7, 8, գիրք 25, գլուխ 1-3, 5-8; Լիբանիոս «Ճառեր, Հուլիանոսի համար վրիժառության մասին», 6-9; Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 3, գլուխ 26-31, 33-36; Սոզոմենոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 1, 3; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 31; Ռուֆուս Սեքստուս «Կեսարների պատմությունը», գլուխ 28; Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 25, գիրք 4, գլուխ 1; Եվտրոպիոս «Համառոտ պատմություն քաղաքի հիմնադրումից ի վեր», գիրք 10 գլուխ 16, 17; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 43; Լիբանիոս «Ճառեր, Կյանքի կամ սեփական բախտի մասին», 133-134; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 80; Զոնորաս «Պատմություն: Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 7; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 6; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Անանուններ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»; Իսահակ Երեց

Կայսր Հուլիանոսը, զգալով, որ Տիզբոնի պաշարումը որևէ հեռանկար չունի, հրահանգեց, բացառությամբ գետանցի համար նախատեսված 12 նավերի, այրել ողջ նավատորմիկը, իսկ բանակն էլ նրանից հրաման ստացավ արշավանքի ելնել դեպի արևելք՝ Հարավային Ատրպատականի ուղղությամբ առաջանալով դեպի թշնամու տարածքի խորքերը: Ի պատասխան դրա, սակայն, Շապուհ II-ը հրամայեց այրել Արևելյան Միջագետքի հարթավայրերի ողջ բուսականությունը, որի հետևանքով Հուլիանոսի բանակը շատ շուտով սկսեց պարենի և անասնակերի պակաս զգալ: Արդյունքում՝ ծանր վիճակում հայտնված Հուլիանոսը փոխեց ծրագիրը և հրամայեց Հռոմեական կայսրության բանակին (մոտ 150.000, այդ թվում գալլեր, գոթեր, բատտավներ, 12 նավակ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5.000) Գասանյանների թագավորության բանակի ուղեկցությամբ (մոտ 15.000) ***Տիգրիսի ձախ ափով*** նահանջել դեպի հյուսիս: Տեղեկանալով այդ մասին՝ Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը (մոտ 150.000) սկսեց հետապնդել հակառակորդին:

I փուլ – Հունիսի 17-ի առավոտյան Պարսից թագավորության բանակը հարձակում գործեց երթային ճամբարից դուրս գալ պատրաստվող հակառակորդի վրա, սակայն համառ մարտից հետո հետ շպրտվեց ելման դիրքեր: Օրվա երկրորդ կեսին գումակի վրա հարձակվել փորձեց Լախմյանների թագավորության բանակը, սակայն կարճատև ընդհարումից հետո այն ևս հետ մղվեց: Շարունակելով առաջխաղացումը և աստիճանաբար պարենի որոշակի պակաս զգալով՝ Հռոմեական կայսրության բանակը հասավ ***Գուկումբրա*** (Տիզբոնից մոտ 40 կմ հյուսիս, Տիգրիսի ձախ ափին) և ռազմիկների ուժերը վերականգնելու, ինչպես նաև հետ մնացած ուժերը հավաքելու նպատակով երկու օր մնաց այդ քաղաքում ու վերջինիս շրջակայքում:

II փուլ – Հունիսի 20-ին Պարսից թագավորության բանակը անակնկալ հարձակվեց ***Գուկումբրայից*** հեռացող Հռոմեական կայսրության բանակի վերջապահի վրա, որոշակի կորուստներ պատճառեց վերջինիս և հետ մղվեց միայն այն բանից հետո, երբ տեղ հասան լրացուցիչ ուժեր: Նույն օրվա վերջում էլ Հռոմեական կայսրության բանակը ճամբարեց ***Մարանգայում*** (Տիզբոնից մոտ 55 կմ հյուսիս, Տիգրիսի ձախ ափին)՝ արդեն իսկ պարենամթերքի զգալի պակաս զգալով:

III փուլ – Հունիսի 21-ի լուսաբացին Պարսից թագավորության բանակը անցավ հուժկու հարձակման, սակայն դրա արդյունքում ողջ օրը տևած համառ ու արյունահեղ մարտը հաջողություն չբերեց կողմերից և ոչ մեկին: Նույն օրն էլ կնքվեց եռօրյա զինադադար, որի ընթացքում Հռոմեական կայսրության բանակը շարունակեց նահանջել:

IV փուլ – Հունիսի 26-ին արևելքից մոտեցած Պարսից թագավորության բանակը հզոր հարված հասցրեց դեռևս երթի մեջ գտնվող և ձգված հակառակորդի երթային շարասյան սկզբում վերջապահին, հետո՝ առաջապահին, իսկ ամենավերջում էլ՝ կենտրոնին: Բռնկվեց համառ մարտ, որի արդյունքում, թեև արդեն երեկոյան կողմ թշնամու հարձակումը ի վերջո հետ մղվեց, սակայն առանց զրահի ու վահանի մարտի նետված Հուլիանոսը հենց այդ ժամանակ էլ մահացու վերք ստացավ յուրայիններից մեկի նետած հեծելազորային տեգի հարվածից[1], որի հետևանքով նույն օրը գիշերն էլ սեփական վրանում կնքեց իր մահկանացուն:

V փուլ – Հունիսի 27-ին արդեն իսկ ուժեղ սովի մատնված Հռոմեական կայսրության բանակը ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները կայսր ընտրեցին

«Ժամանակագրություն», գլուխ 10; Անանուն «Հայոց թագավորների պատմությունը»; Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:

[1] Սա, ի դեպ, հռոմեական քարոզչամեքենայի պաշտոնական վարկածն էր, իսկ իրականում մինչև վերջ էլ չժխտվեց մյուս վարկածը, ըստ որի Հուլիանոսը մահացու վիրավորվել է յուրայինների կողմից թիկունքից հասցված նետի հարվածից:

Հովիանոսին (363-364) և շարունակեցին նահանջը: Միաժամանակ, սակայն, Հուլիանոսի մահվան մասին տեղեկացած Շապուհ II-ը հարձակման նետեց իր հիմնական ուժերը: Սկիզբ առավ համառ մարտ, որն ընդհատվեց միայն մութն ընկնելուն պես, ընդ որում Հռոմեական կայսրության բանակը, շարունակելով առաջխաղացումը նաև գիշերը, միայն հուլիսի 28-ի լուսաբացին ճամբար զարկեց ***Սամառայի մոտակայքում*** (Տիզբոնից մոտ 160 կմ հյուսիս, Տիգրիսի ձախ ափին): Կարճ ժամանակ անց, սակայն, թշնամու բանակը շրջապատեց հարակից բլուրները ու սկսեց աղեղների հարվածներ հասցնել, իսկ որոշ ժամանակ անց էլ վերջինիս հեծելազորը անցավ հզոր հարձակման և, ճեղքելով ներս խուժելով գետնին մեջ ցցված նիզակներով փակված ճամբարի մուտքից ու ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին, սակայն ինքն էլ ծանր կորուստեր կրելով, ի վերջո հետ շպրտվեց: Դրանից հետո Հռոմեական կայսրության բանակը կրկին գիշերային երթ իրականացրեց և հունիսի 29-ի առավոտյան ճամբարեց ***Խարխայում*** (Տիզբոնից մոտ 180 կմ հյուսիս, Տիգրիսի ձախ ափին): Կարճատև հանգստից հետո վերսկսելով երթը և հետ մնացած ուժերը հավաքելու նպատակով դանդաղեցված ընթացքով առաջանալով ընդամենը 6 կմ, լուսաբացին կրկին որոշակիորեն ուժերը կենտրոնացրած Հռոմեական կայսրության բանակը ճամբարեց ***Դուրայում*** (Տիզբոնից մոտ 190 կմ հյուսիս, Տիգրիսի ձախ ափին):

VI փուլ – Հուլիսի 1-ին Լախմյանների և վերջինիս միացած Գասանյանների թագավորության միացյալ բանակը հարձակում գործեց իրենց հյուծված նժույգների հետ միասին ոտքով առաջացող Հռոմեական կայսրության բանակի ծանր հեծյալների վրա, որոնց վերջնական կործանումից փրկեց միայն այն, որ տեղ հասավ թեթև հեծելազորը: Արդյունքում, սակայն, Հռոմեական կայսրության բանակը չկարողացավ շարունակել առաջխաղացումը, իսկ նույն օրը տեղ հասած Պարսից թագավորության բանակի հիմնական ուժերն էլ ավելի ծանրացրին իրավիճակը:

VII փուլ – Հուլիսի 2-ից 5-ը Հռոմեական կայսրության բանակը մի շարք փորձեր կատարեց վերսկսել առաջխաղացումը դեպի հյուսիս, սակայն յուրաքանչյուր անգամ հետ շպրտվեց ելման դիրքեր: Հուլիսի 6-ին Տիգրիսի աջ ափն անցավ բատտավ ռազմիկների մի ջոկատ (500) և, ոչնչացնելով թշնամու պահակակետերը, հաջող գետանցման համար որոշակի պայմաններ ապահովեց, սակայն հաջորդ երկու օրերին կամուրջ կառուցելու իրականացված փորձերը որևէ հաջողություն չբերեցին, իսկ այդ ընթացքում ահագնացող սովն էլ արդեն ահռելի չափեր ընդունեց: Ստեղծված պայմաններում Շապուհ II-ը հուլիսի 9-ին մի դեսպանություն ուղարկեց թշնամու ճամբար և, որպես փրկագին, հաշտության ծանր պայմաններ առաջարկեց: Սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին մինչև հուլիսի 13-ը, ընդ որում այս ընթացքում ավելի ու ավելի ահագնացող սովը Հռոմեական կայսրության բանակին գործնականում զրկեց մարտունակությունից: Այս պայմաններում վերջնական հաշտություն կնքվեց, որից հետո միայն Հռոմեական կայսրության բանակի մնացորդները, այնուհանդերձ ենթարկվելով Լախմյանների և Գասանյանների թագավորությունների միացյալ բանակի մանր հարձակումներին, ի վերջո անցնելով Տիգրիսը ու հսկայական չափեր ընդունած սովի պայմաններում գտնվելով անչափ ծանր վիճակում, ամսվա վերջում անցան ***Հատրայի*** մոտով և ի վերջո մեծ դժվարությամբ պատսպարվեցին ***Մծբինում:***

Հայերը կորցրին մոտ 4.500, դաշնակիցը՝ մոտ 80.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Ըստ հենց նոր կնքված հաշտության պայմանների՝ Պարսից թագավորության բանակը թույլ էր տալիս թշնամուն անցնել Տիգրիսը և հեռանալ, սակայն դրա փոխարեն Հռոմեական կայսրությունը Պարսից թագավորությանն էր զիջում Ծավդեք ու Արվաստան

գավառները, Մծբին և Սինգարա քաղաքները, ինչպես նաև Կաստրո-Մավրորում ամրոցը (Մծբինից 70 կմ արևմուտք): Բացի այդ վերջինս պարտավորվում էր նաև հետագայում որևէ կերպ չօժանդակել մինչ այդ իր դաշնակիցը հանդիսացած Մեծ Հայքի թագավորությանը:

Կայսր Հովիանոսի կողմից կնքված հաշտությունը, եթե նույնիսկ մի կողմ թողնենք դրա խայտառակ բնույթը, ինքին ծանր մի հարված էր ոչ միայն Հռոմեական կայսրության, այլև մյուս քրիստոնյաների և, հատկապես, հայերի համար: Արդեն ասվեց, թե Հյուսիսային Միջագետքի դեպի արևելք առաջացող սեպաձև հատվածն ինչ կարևոր նշանակություն ուներ Հայոց թագավորության համար, որի սահմանը Պարսից թագավորության հետ այժմ ավելի երկարեց և հարվածի համար բաց մնացին Աղձնիքի համեմատականորեն ավելի խոցելի հատվածն ու Ձորա Պահակ կիրճը, բայց, դրանից զատ, կնքված պայմանագիրը խիստ ծանր հետևանք ունեցավ նաև Արևելքում Հռոմեական կայսրության ընդհանուր դիրքերի համար՝ և ռազմավարական, և օպերատիվ մակարդակում:

Այսպես, ռազմավարական մակարդակում այդուհետ հարվածի տակ էր հայտնվում Հռոմեական կայսրության կարևորագույն դաշնակից Մեծ Հայքի թագավորությունը, ինչը չէր կարող բացասաբար չանդրադառնալ կայսրության ընդհանուր ռազմական դրության վրա: Իր հերթին, օպերատիվ մակարդակում, տիրելով Մծբինին և, ըստ էության, վերջնականապես վերացնելով «Strata Diocletiana»-ի Հյուսիսային Միջագետքի հատվածը, այդուհետ պաշտոնական Տիզբոնի համար, հիմք ունենալով Հռոմեական կայսրության նախկին ամրությունները, ավելի հեշտ էր լինելու հարված հասցնել Հայոց Միջագետքին ու Հյուսիսային Ասորիքին, իսկ հռոմեական կողմին էլ, ընդհակառակը, ավելի դժվար էր լինելու պայքարել պարսկական կողմի դեմ: Իրոք, դրանից հետո արդեն երկար ժամանակով Պարսից թագավորությունն և Արևելքը հիմնականում միայն առաջ էին շարժվելու, իսկ քրիստոնյաներն էլ՝ հետ էին քաշվելու:

Հուլիանոս Ուրացողի՝ հերոսական կամ, առնվազն, հերոսականի ձգտող այդ ռազմիկի, ողբերգական անհաջողությունը և կնքված հաշտությունը ևս մեկ կարևոր ու արդեն քաղաքական և նույնիսկ գաղափարական հետևանք ունեցավ, քանզի այն հանգամանքը, որ հռոմեացիները, կարծես թե, ամեն ինչ այդքան ճիշտ անելով ու գործելով այն աստիճան ռազմունակ մի կայսեր հրամանի ներքո, ինչպիսին Հուլիանոսն էր, այնուհանդերձ պարտվեցին, իր ժամանակի ռազմաքաղաքական մտքից վերջնականապես և անվերադարձ կերպով դուրս մղեց Պարսից թագավորության դեմ որևէ խոշոր արշավանք իրականացնելու կամ, ավելին, Տիզբոնին հարված հասցնելու գաղափարը՝ չհաշված դեռ այն, որ հետագա կայսրերը, Հռոմեական կայսրության թափ առնող քայքայման պայմաններում, դրա հնարավորությունը տարին տարու վրա ավելի ու ավելի քիչ էին ունենալու: Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ ամենևին էլ պատահական չի կարելի համարել այն, որ Շապուհ II-ն ամեն կերպ իր աջակցությունն ապահովեց Հովիանոսին և բանը հասցրեց նույնիսկ նրան, որ սպառնաց անխտիր ոչնչացնել հռոմեացի բոլոր ռազմիկներին, եթե նրանք հանկարծ կայսր ընտրեն այլ անձի: Իրոք, Հովիանոսը Պարսից թագավորությանն էր հանձնում այնպիսի մի հյութալի պատառ և նա այնպիսի մի ծնկաչոք դրության մեջ էր դնում մինչ այդ մեծապես հաղթական Հռոմեական կայսրությանը, որ արյաց արքան իրոք բոլոր հիմքերն ուներ ջանքեր գործադրելու Հովիանոսին Հռոմեական կայսրության գահի վրա պահպանելու համար:

Ժամանակակիցների կողմից իրոք որ արժանիորեն «Ամոթալի» կոչված այդ հաշտության արդյունքում արևելքում Հռոմեական կայսրության միակ և, հատկապես շահերի ընդհանրությունը հաշվի առնելով, հավատարիմ դաշնակից Արշակ III-ն ու նրա թագավորությունը հզոր Պարսից թագավորության դեմ մնում էին, ըստ էության, լիովին միայնակ, քանզի պաշտոնական Կոստանդնուպոլիսը պարտավորվել էր որևէ կերպ չօգնել կամ չաջակցել Հայոց արքային: Արդյունքում՝ Շապուհ II-ը, որը հասել էր, թվում էր, թե անհասանելիին, ի մի բերեց բոլոր ուժերը և պատրաստվեց վերջնականապես լուծել Մեծ Հայքի թագավորության հարցերը: Սկիզբ էին առնում կատաղի մարտական

գործողություններ մեծապես արդեն հենց հայերի դեմ և դրանց վիճակված էր լինելու բավականին երկարատև, ծանր ու դաժան:

Արդեն 363 թվականի աշնանը[1] Արշակ III-ի կենտրոնաձիգ քաղաքականության դեմ կտրուկ կերպով հանդես եկող Հայոց նախարարները, ակնհայտորեն օգտվելով այն բանից, որ Հայոց արքան առկա ուժերը կենտրոնացրել էր երկրի հարավային սահմաններում և գործելով Շապուհ II-ի գաղտնի դրդումներով, գրավեցին Փոքր Մասիսի հարավային լանջերին՝ Կոգովտի գավառում, գտնվող արքայական Արշակավանը՝ հիմնովին ավերելով այն ու կոտորելով բնակչությանը[2]: Արշակավանը կառուցելով և թույլ տալով այնտեղ բնակվել, այդ թվում նաև իրենց տերերից դժգոհ ծառաներին՝ Արշակ III-ն, ըստ էության, բացառիկ մի քայլ էր անում՝ փորձելով երկրի ներսում ստեղծել իրեն նվիրված և հենց թեկուզ իրենց դասակարգային շահերից ելնելով իսկ արքայական իշխանության համար պայքարի պատրաստ մարդկանց մի խումբ: Նախարարական ցասումը, սակայն, որ պայթեց Արշակավանի գլխին, կենտրոնախույս ուժերի հենց պատասխան հարվածն էր, որը ցաք ու ցրիվ արեց կենտրոնական իշխանության հենարանը լինելուն ուղղված առաջին այդ բջիջը: Այլ, ավելի հանգիստ պայմաններում, Արշակ III-ի ծրագրերը գուցե և կյանքի կոչվեին, բայց այժմ, երբ երկրի գլխին կախված էր պարսկական ահեղ վտանգը և արքայական ողջ ուժերն ուղղված էին թագավորության սահմանները պաշտպանելուն, արքայամետ ուժերը, ենթարկվելով երկրի նախարարների վրեժխնդիր հարվածին, ծանր պարտություն կրեցին:

Արշակավանի ավերումն, ինչպես արդեն ասվեց, ըստ էության, բացահայտ մի ելույթ էր արքայական իշխանության դեմ, այն իսկական մի մարտահրավեր էր, որը կենտրոնական իշխանությունը ոչ մի կերպ չէր կարող աչքաթող անել: Միաժամանակ, հայաստանյան իրադարձությունների հետ, կարծես թե, համահունչ, սակայն, սրվեց իրավիճակը նաև Հայոց թագավորության հյուսիսային սահմանին, երբ Շապուհ II-ի կողմն անցած Իբերիայի թագավորությունը սկսեց գործել Հայոց թագավորության դեմ:

Իր կյանքի երկրորդ հատվածում Տրդատ II Մեծի հավատարիմ դաշնակիցը հանդիսացած Իբերիայի թագավորության արքա Միհրան III Մեծի մահից հետո թագավորության գահին նրան հաջորդել էր որդին՝ Բակուր II-ը (335-364), որի օրոք, սակայն, բարիդրացիական հարաբերությունները երկու թագավորությունների միջև խախտվել էին: Չնայած ուղղակի տեղեկությունների բացակայությանը՝ կարելի է կարծել, որ հարաբերությունների խաթարման հիմքում ընկած էր ամենից առաջ նույն Գուգարքի խնդիրը, որին տիրում էր Միհրան III Մեծը, բայց տիրում էր՝ որպես Մեծ Հայքի թագավորության արքա Տրդատ II Մեծի ենթակա: Այս առումով կարելի է ենթադրել, որ Տրդատ II Մեծին հաջորդող տարիներին Բակուր II-ն, արդեն, համենայն դեպս, իր կարծիքով, բոլոր հիմքերն ուներ ուղղակիորեն իրեն տեր համարելու Գուգարքին առանց Հայոց արքայի գերագահությունն ընդունելու, իսկ այդ պարագան անպայման պետք է կոնֆլիկտի հասցներ: Այս պայմաններում Իբերիայի թագավորության արքան հարաբերություններ հաստատեց Շապուհ II-ի հետ: Իրադրությանը լրացուցիչ սրություն հաղորդեց նաև այն հանգամանքը, որ Բակուր II-ի փոխարեն հայերը ձգտում էին Իբերիայի թագավորության գահին հաստատել Միհրան III Մեծի տղա Արևի և Տրդատ II Մեծի աղջկա որդի Սաուրմագին, որին աջակցում էին մի շարք վրաց իշխաններ: Արդյունքում՝ արդեն 363 թվականին ստեղծվել էր մի դրություն, երբ Մեծ Հայքի թագավորության տարածքում իրենց արքայից դժգոհ իշխանները սկսեցին աջակցություն ցույց տալ Բակուր II-ին, իսկ Սաուրմագի օգտին գործող և Արշակ III-ին աջակցող մի շարք վրաց իշխաններ էլ դուրս եկան Բակուր II-ի դեմ:

---

[1] Արշակավանի գրավման և Ոստանիկ ու նախարարական բանակների ընդհարման տեղն ու թվականը Փավստոս Բյուզանդը և Մովսես Խորենացին չեն տալիս: Վերջինս տատանվում է 364-368 թվականների միջև: Հաշվի առնելով, որ հայ-վրացական հարաբերությունների սրացումն ընկնում է 363 թվականին, որոշակիորեն տրամաբանական է նաև կարծել, որ հենց այս ժամանակ է տեղի ունեցել Արշակավանի գրավումը, որի հետ կապված հիշատակվում է «Վրաց արքան»՝ Իբերիայի գահի հավակնորդ Սաուրմագը:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 13; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 27; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

363 թվականի աշնանը՝ Արշակավանի անկումից քիչ անց, Իբերիայի թագավորության արքա Բակուր II-ի գլխավորությամբ առաջխաղացած Իբերիայի և Պարսից թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև Ներսես Կամսարականի գլխավորությամբ գործող ապստամբած հայ նախարարների գնդերը իջան դեպի հարավ ու հաղթեցին Սաուրմագի գլխավորած Մեծ Հայքի և Իբերիայի ապստամբած իշխանների միացյալ բանակին[1]: Արշակ III-ը անհաջողության էր մատնվել, բայց հեշտ չէր նաև ապստամբների դրությունը և արդյունքում ի վերջո կնքվեց հաշտություն, երբ կողմերը որոշեցին փոխադարձաբար ներել միմյանց: Չնայած այդ հանգամանքին, սակայն, հետագայում Արշակ III-ը գրեթե բնաջնջեց Կամսարականների տոհմը, իսկ հաջորդ տարիներին էլ, Մեծ Հայքի թագավորությունում ստեղծված ծանր դրության պայմաններում, Գուգարքն աստիճանաբար հայտնվեց Իբերիայի թագավորության գերիշխանության ներքո, ընդ որում այստեղ սկսեցին իշխել Միհրան III Մեծի մեկ այլ աղջկա ամուսին և Սասանյանների արքայատոհմի շառավիղ Պերոզն ու նրա սերունդները: Նույն այս ժամանակ Իբերիայի թագավորությունը միացավ նաև աստիճանաբար, ըստ էության, պաշտոնական Տիզբոնի կողմը հակված Մազքութական թագավորությանը: Մեծ Հայքի թագավորության շուրջն օղակը աստիճանաբար սեղմվում էր:

364 թվականի փետրվարի 17-ին, չկառավարելով նույնիսկ մեկ տարի, Անկյուրայի մոտակայքում հանկարծամահ եղավ այդպես էլ որևէ դրական բան անել չհասցրած, բայց փոխարենը հսկայական վնաս հասցրած Հովիանոսը: Դրանից հետո Հռոմեական կայսրության կայսր հռչակվեց զինվորական դասից սերող Վալենտինիանոս I-ը (364-375), որը կարճ ժամանակ անց, իր վրա վերցնելով կայսրության արևմտյան հատվածի կառավարումը, արևելքում կայսր հռչակեց եղբորը՝ Վալենտ II-ին (364-378): Հայերը փաստորեն շփվելու էին ամենից առաջ հենց այս համակայսեր հետ և վերջինիս հետ հարաբերություններ հաստատելու համար էլ, ահա հենց, 364 թվականի մայիսին Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես I Մեծը (353-373) ներկայացավ Վալենտ II-ին:

Այժմ դժվար է ասել, թե ի՞նչը հարուցեց արիոսական դավանանքին հետևող կայսեր դժգոհությունը, չնայած ակնարկներն ամենից առաջ արվում են հենց կրոնական հարթության վրա, բայց արդյունքում Վալենտ II-ը հրամայեց ձերբակալել Ներսես I Մեծին, որից հետո խիստ թշնամական դիրքորոշում որդեգրեց Հայոց թագավորության նկատմամբ: Վալենտ II-ը մասնակցել էր Հուլիանոսի արշավանքին և գուցե բացասական դեր խաղաց ամենից առաջ հենց այդ հանգամանքը, քանզի Հռոմեական կայսրության որոշ շրջանակներ տեղի ունեցած աղետում, ինչպես չարաբաստիկ Մարկոս Անտոնիոսի և Արտավազդ III-ի պարագայում եղավ, հակված էին ամենից առաջ մեղադրել հենց հայերին ու Արշակ III-ին, բայց մյուս կողմից էլ չի կարելի բացառել նաև կրոնական շարժառիթը: Խնդիրը կայանում էր նրանում, որ Հուլիանոսն այնպիսի մի կրոնական խառնաշփոթ էր առաջացրել, որ Վալենտ II-ի կառավարման առաջին իսկ ամիսներին մեջտեղ եկած ամենատարբեր կրոնական ուղղությունները արդեն սկսել էին լրջորեն ազդել կայսրության ամբողջության վրա, իսկ այդ պարագայում քրիստոնեության հարցում ավանդականորեն սեփական կարծիքն ունեցող հայերի ու նրանց հոգևոր առաջնորդի հայտնվելը Վալենտ II-ի պալատում իրոք կարող էր հունից հանել որոշակիորեն բռնկուն և անհեռատես այդ կայսեր: Ներսես I Մեծի անակնկալ ձերբակալումը սրեց հայ-հռոմեական հարաբերությունները, ընդ որում ոտնահարված էր նաև Հայոց թագավորության պատիվը, և ահա Արշակ III-ը, չնայած գրեթե բոլոր սահմաններում ստեղծված բարդ իրավիճակին, այնուհանդերձ որոշեց գործել:

Արդյունքում՝ 364 թվականի հուլիսից մինչև դեկտեմբեր սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության հեծելազորը (26.000)

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 29, 31; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 64:

ասպատակելով արշավեց Սեբաստիա-Կեսարիա-Անկյուրա-Կեսարիա-Սեբաստիա երթուղով[1], ընդ որում Հռոմեական կայսրության բանակի ընդհանուր քայքայվածության, ինչպես նաև հենց քննարկվող ժամանակահատվածում հիշատակված տարածքներում սկիզբ առած Հուլիանոս Ուրացողի մորաքրոջ որդի Պրոկոպիոսի ապստամբության պայմաններում ոչ միայն որևէ մեկը առանձնակի ցանկություն չդրսևորեց ընդհարվել Հայոց երկաթյա հեծյալների հետ, այլև դրա հնարավորությունն էլ, ըստ էության, չկար[2]: Արդյունքում՝ տարվա վերջին Վալենտ II-ը հետ կանգնեց իր անմիտ քաղաքականությունից, Ամենայն Հայոց կաթողիկոսն ազատ արձակվեց ու վերադարձավ Հայաստան, մյուս տարի Պրոկոպիոսի ապստամբությունն աստիճանաբար անկում ապրեց, Պրոկոպիոսը գերվեց և մահապատժի ենթարկվեց ու հայ-հռոմեական հարաբերությունները հունի մեջ մտան: Իրոք, Շապուհ II-ը սպառնում էր անխտիր բոլոր քրիստոնյաներին, իսկ իրականացված վերջին զիջումներից հետո էլ, երբ խախտվել էր կայսրության պաշտպանական շրջանի արևելյան ողջ հատվածը և ամեն պահի կարող էր հարված հասցվել Ասորիքին, հռոմեացիներին պետք չէր հայերի հետ սրել հարաբերությունները: Հեշտ չէր, սակայն, նաև հայերի վիճակը, քանզի Հայոց թագավորությունն, ըստ էության, մեն միայնակ էր մնացել Պարսից թագավորության դեմ, որի ռազմական հնարավորություններն առնվազն երեք անգամ գերազանցում էին Մեծ Հայքի թագավորության ռազմական հնարավորություններին:

Նույն այս ժամանակ Շապուհ II-ը, փորձելով առավել հարմար պայմաններում հաշիվ տեսնել Մեծ Հայքի թագավորության հետ և նախատեսելով հարված հասցնել 365 թվականին, սկսեց բանակային ուժեր կուտակել Ուրմիա լճից հարավ գտնվող Գանձա քաղաքի շրջակայքում: Սպարապետ Վասակ Մամիկոնյանը, սակայն, տեղեկանալով թշնամու այս նախապատրաստությունների մասին, կանխարգելիչ հարված հասցրեց վերջինիս բանակատեղիին, որի հետևանքով ծանր պարտություն կրած Շապուհ II-ի բոլոր նախապատրաստությունները ի դերև ելան, իսկ 365 թվականին էլ որևէ նոր հարված

---

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 11:

[2] Այս արշավանքը ևս լիովին անհիմն, առաջնորդվելով արդեն քննարկված փաստարկներով, հայտարարվել է ոչ իրական, ինչը, սակայն, կրկին ճիշտ չէ: Ու, թեև վերջինիս ժամանակի մասին Փավստոս Բյուզանդի մոտ որևէ կոնկրետ տվյալ չկա, սակայն այս անգամ ևս օգնության է գալիս «Համադրման մեթոդ»-ը, որով էլ առաջնորդվելիս, վերջինս իրադարձությունների շղթայում գտնում է իր ճշգրիտ տեղը: Բանն այն է, որ Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաները կառավարող համակայսր Վալենտ II-ի գահակալության հենց սկզբում՝ 364 թ-ի գարնանը, հենց նոր համակայսր հռչակված Վալենտ II-ի դեմ Կոստանդնուպոլսում ու Փոքր Ասիայում բռնկվեց սկզբում մեծ չափերի հասած, սակայն 365 թ-ի սկզբին արագորեն հանգած ինքնահռչակ կայսր Պրոկոպիոսի ապստամբությունը: Հետաքրքիր է, որ այս մասին վկայող մի աղոտ ակնարկ կարող է պարունակել Ամմիանոսի հաղորդումն այն մասին, որ Պրոկոպիոսը. «*…անհանգստանում էր այն մարդկանց իր կողմը գրավելու համար, որոնք կարող էին օգտակար լինել մարտում, մարդիկ, որոնց մեծ քանակությամբ և խոշոր չափով գալն էր նա սպասում*» (Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 26, գլուխ 8): Այս ֆոնի վրա հավանական է թվում, որ ճկուն դիվանագետի ընդունակություններ ունեցող Արշակ III-ը փորձել է մանևրել գահի երկու հավակնորդների միջև, նրանցից յուրաքանչյուրի հետ հաջողության դեպքում լավ հարաբերություն ունենալու համար: Եվ այդ նպատակով վերջինս Վասակ Մամիկոնյանին ուղարկելով ասպատակելու Փոքր Ասիան, որպես օժանդակություն Պրոկոպիոսին, միաժամանակ էլ Ներսես I Մեծին ուղարկել է բանակցելու Վալենտ II-ի հետ: Ընդ որում՝ վերջին հանգամանքի հետ կապված Փավստոս Բյուզանդը, հավատարիմ իր ոճին, առաջնային տեղ բանակցություններում հատկացնում է կրոնական թեմաներին (գիրք 4, գլուխ 5), այն դեպքում, երբ իրականում առաջնայինը ակնհայտորեն քաղաքական հարցերն էին, որոնց լուծումից էլ դժգոհ Վալենտ II-ը, որին հավանաբար նաև տեղեկացրել էին Վասակ Մամիկոնյանի ջոկատի գործողությունների մասին, ազատությունից զրկում է կաթողիկոսին ու միայն հետագայում, հայերին շատ չգրգռելու համար, ազատ արձակում՝ հնարավոր է Պրոկոպիոսին աջակցելուց հրաժարվելու խոստման դիմաց: Այնուհանդերձ պետք է նշել, որ առկա տեղեկատվության մեջ այնուհանդերձ երկու անճշտություն.

1. Փավստոս Բյուզանդը Վասակ Մամիկոնյանի ասպատակող բանակի թիվը նշում է որպես 260.000, ինչը ակնհայտ չափազանցություն է, քանի որ ըստ «Զորանամակ»-ի խնդրո առարկա ժամանակաշրջանում Մեծ Հայքի թագավորության բանակի ընդհանուր թիվը կազմել է 124.000՝ 84.000 նախարարական և 40.000 Ոստանիկ ռազմիկներ: Ըստ իս տվյալ դեպքում կրկին պետք է առաջնորդվել «մեկ զրո պակասեցնել»-ու մեթոդով, որից հետո 26.000 թիվը շատ ճշգրիտ սկսում է համապատասխանել Մեծ Հայքի թագավորության այն ժամանակվա ռազմական պոտենցիալին, քանի որ բնականաբար այս արշավանքին պետք է մասնակցեր ոչ թե ողջ բանակը (որի ստվար մասը տեղաբաշխված էր երկրի հարավային և արևելյան սահմաններում), այլ նրա որոշ և մոբիլ մասը՝ հեծելազորի էլիտար ջոկատներից կազմված միավորումը,

2. կարելի է ենթադրել, որ այս կամ այն պատճառով Փավստոս Բյուզանդի երկի այս հատվածում տեղ գտած «ամ» բառում բաց է թողնվել բառավերջի «ս»-ն: Դրա հետևանքով «ամ»-ը գրաբարից ժամանակակից հայերեն է թարգմանվել որպես «տարի» («…զվեց *ամ*» (գիրք 4, գլուխ 11), այն դեպքում, երբ դա այս դեպքում այս կամ այն պատճառով աղավաղված կամ կիսատ գրված «ամս» («ամիս») բառն է, քանի որ 6 ամիսը ժամկետը ճշգրիտ համապատասխանում է և Պրոկոպիոսի ապստամբության տևողությանը, և այն հստակ տրամաբանությանը, որ ոչ Ներսես I Մեծը 6 տարի աքսորված կմնար, իսկ հայերը այդ ժամանակաշրջանում՝ առանց կաթողիկոս, և ոչ էլ՝ որ Մեծ Հայքի թագավորության բանակը 6 տարի կասպատակեր Փոքր Ասիան, մանավանդ որ վերջին հանգամանքը չի հաստատվում Հռոմեական կայսրության աղբյուրների կողմից տրվող տվյալ ժամանակաշրջանում կայսրությունում տիրող քաղաքական դեպքերի զարգացման նկարագրություններով:

Այսպիսով՝ կրկին «Համադրման մեթոդ»-ի և տրամաբանական սխեմաների կիրառման շնորհիվ մեզ հաջողվեց պարզել Մեծ Հայքի թագավորության բանակի կողմից իրականացված, սակայն «վիպական» հռչակված մի կարևորագույն գործողություն:

հասցնելու մասին արդեն խոսք գնալ որևէ կերպ չէր կարող[1]:[2] Սեղմելով ատամները և պատրաստվելով նոր հարձակման՝ Շապուհ II-ը պատրաստվեց վճռական հարված հասցնել հայերին արդեն 366 թվականին, ընդ որում այս անգամ հարվածը պետք է հասցվեր միանգամից մի քանի ուղղություններով:

366 թվականին, գործի դնելով բանակային միանգամից երեք խմբավորումներ, Շապուհ II-ը իր հիմնական ուժերով մտավ Հայոց թագավորության տարածք: Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000, 30 փիղ), անցնելով Գանձա-Տրպատունք-Թավրիզ -Գաբիթյան-Բաքեան երթուղով և ցանկանալով օգտագործել թվական գերակշռությունը, բաժանվեց երեք մասի: Դրանից հետո թշնամական առաջին բանակը (մոտ 50.000, 15 փիղ), արշավելով Ճվաշ-Արտազ-Կոգովիտ-Մասյացոտն-Արագածոտն երթուղով, հասավ Շիրակ, սակայն Արարատ նահանգի Վանանդ գավառում գտնվող Երևելու ճ-մ-ում սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի առաջին մասը (մոտ 30.000) ջախջախեց Հազարվուխտի գլխավորած Պարսից թագավորության այս բանակին, ընդ որում Հազարվուխտը սպանվեց[3]:[4] Հաջորդ ճակատամարտը թշնամու երկրորդ բանակի (մոտ 50.000, 10 փիղ) դեմ տեղի ունեցավ արդեն իսկ հայտնի Առեստի մոտ, որտեղ Բագոս զորավարի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի երկրորդ մասը (մոտ 30.000) հաղթեց Անդիկանի գլխավորությամբ Թոռնավան-Բաղիովիտ-Առբերան երթուղով առաջխաղացում իրականացրած Պարսից թագավորության երկրորդ բանակին, ընդ որում Անդիկանը ևս սպանվեց, թեև այս անգամ թշնամու փղերի ջոկատի դեմ պայքարելիս քաջաբար զոհվեց նաև Բագոսը[5]: Եվ վերջապես երրորդ ճակատամարտը տեղի ունեցավ կրկին ոչ անհայտ Ոսխա գյուղի մոտ, որտեղ արդեն Հայոց արքա Արշակ III-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակի երրորդ մասը (մոտ 30.000) գիշերային հարձակումով ջախջախեց Շապուհ II-ի գլխավորությամբ Ճվաշ-Արտազ-Կոգովիտ-Բագրևանդ-Բասեն երթուղով առաջխաղացում իրականացրած և ճամբարած Պարսից թագավորության երրորդ բանակին (մոտ 50.000, 10 փիղ), ընդ որում պարսից արքան փրկվեց միայն մեծ դժվարությամբ[6]: Հայերը փայլուն հաղթանակ տարան երեք հիմնական ճակատամարտերում և, ծանր պարտության մատնելով, հետ շպրտեցին թշնամուն, որից հետո, զարգացնելով հաջողությունը, Արշակ III-ի ու սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ միավորված ու հաջողությունը զարգացրած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 50.000) ասպատակեց Ատրպատականի հյուսիսը և նահանջեց[7]: Հայաստանում ծավալվող ահեղ իրադարձություններին հռոմեացիները մասնակցություն չէին բերել, քանի որ Վալենտ II-ը, իր հետ ունենալով նաև որոշ քանակի հայ ռազմիկներ, քննարկվող ժամանակահատվածում խրվել էր գոթերի դեմ Դակիայում մղվող մարտերի մեջ, որոնց ընթացքում, ի դեպ ասած, առաջին անգամ հայտնի դարձավ Մեծ Հայքի ապագա արքա, Արշակ III-ի եղբայր, Հռոմում սպանված Տրդատի որդի Վարազդատի հաղթական անունը[8]:

367 թվականին Շապուհ II-ը նախատեսել էր Հայաստանին հարված հասցնել Թավրիզի կողմից: Հայերը, սակայն, այս անգամ ևս կանխեցին թշնամուն՝ սպարապետ

---

[1] Այս ճակատամարտի թվականը տրվում է այն հիմնավորմամբ, որ Փավստոս Բյուզանդը (գիրք 4, գլուխ 21) այն անմիջապես կապում է պարսկա-հռոմեական հաշտության՝ 363 թ-ի «Ամոթալի դաշնագրի» կնքման: Այս պայմաններում 363 թ-ի մնացած մասը նոր ձեռք բերած տարածքներում ամրանալու վրա ծախսած լինելու և «8 տարի լուռ մնալու» դեպքում ստանում ենք 356 թ-ը:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 21:

[3] Այս և հետագա երկու ճակատամարտերի նկատմամբ եղած թերիավատ մոտեցումը հնարավորություն չի տվել վերլուծել դրանք ու նկարագրել պարսկական բանակների արշավանքի երթուղիները, մի բաց, որը ես փորձել եմ լրացնել: Պետք է նշել նաև, որ Փավստոս Բյուզանդը, տեղադրելով այս ճակատամարտերը 363 թ-ի «Ամոթալի դաշնագրից» հետո, այնուհանդերձ որևէ կոնկրետ թվական չի նշում: Սակայն ակնհայտ է, որ վերջիններս տեղի են ունեցել 366 թվականին, քանի որ 364 թվականին Մեծ Հայքի հեծելազորը 6 ամիս շարունակ իրականացրեց Փոքր Ասիայի ասպատակումը, ինչը դժվար թե տեղի ունենար պարսկական բանակի ներխուժման տարում, իսկ 365 թ-ի ռազմական բովանդակությունը կարող էր կազմել միայն Գանձակի ճակատամարտը:

[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 22:

[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 22:

[6] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 22:

[7] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 22:

[8] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 27, գլուխ 5; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 40:

Վասակ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (20.000, այդ թվում ալաններ և հոներ) հաղթեց Շապուհ II-ի գլխավորությամբ Մեծ Հայք ներխուժել պատրաստվող Պարսից թագավորության բանակին (մոտ 30.000) և, զարգացնելով հաջողությունը ու ասպատակելով Ատրպատականը, հետ դարձավ:[1]

«Ամոթալի հաշտության» կնքումից հետո անցել էր արդեն 4 տարի, սակայն մինչ այդ, թվում էր, թե որսի հեշտ պատառ հանդիսացող Մեծ Հայքի թագավորությունը ոչ մի կերպ տեղի չէր տալիս Շապուհ II-ի նկրտումներին: Ավելին, քաղաքական ղեկավարի բարձր ունակություններ դրսևորող Արշակ III-ը, զորավարական մեծ տաղանդ դրսևորող նրա սպարապետ Վասակ Մամիկոնյանը, ինչպես նաև աննկուն խիզախություն դրսևորող ողջ հայ ժողովուրդը, չնայած ուժերի ծայրահեղ լարման հաշվին, բայց այնուհանդերձ ոչ միայն դիմացել էին թշնամու հարվածներին, այլև մի քանի անգամ էլ խոշոր պարտության էին մատնել հակառակորդին՝ ծանր հակահարված հասցնելով Պարսից թագավորության կարևորագույն մասերից մեկը համարվող Ատրպատականին: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Շապուհ II-ն և նրա ռազմական տեսաբանները որոշեցին նոր բացվող 368 թվականին հայերի դեմ կռվել լիովին այլ կերպ:

Իրոք, ակնհայտորեն երկար քննարկումներից հետո թշնամու ղեկավար կազմը նույն այս ժամանակ եկել էր մի հետևության, որ հայերը հաջող են դիմադրում, իսկ իրենք էլ մատնվում են անհաջողության այն պատճառով, որ պաշտոնական Տիզբոնը հասցնում է, որպես կանոն, մեկ միասնական և միակ գլխավոր մի հարված, իսկ այդ պարագայում հայերը կարողանում են կենտրոնացնել ուժերն ու կազմակերպչական միջոցները ավելի հաջող, քան իրենք՝ դրանով իսկ չեզոքացնելով Շապուհ II-ի գովերգված ռազմական մեքենայի թվական և, ինչպես իրենց էր թվում, նաև որակական գերակշռությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ահա, որոշվեց 368 թվականին վարվել այլ կերպ՝ բանակը բաժանել մոտ 25 մանր մասերի և, հույսը դնելով միջին օղակի հրամանատարների վարպետության, ինչպես նաև այն բանի վրա, որ հայերը չեն կարողանա այդ մակարդակում հաջող դիմադրություն կազմակերպել, տարբեր ուղղություններով, բայց գործնականում միաժամանակ, ներխուժել Մեծ Հայքի թագավորության տարածք՝ ծնկի բերելով հայերին: Թվում էր, թե ամեն ինչ լավ է հաշվարկված, սակայն այդ հաշվարկներից դուրս էր մնացել, թերևս, միայն ամենակարևոր հանգամանքը՝ շապուհյան ռազմական տեսաբանները հաշվի չէին առել Վասակ Մամիկոնյանի գործոնը և թերագնահատել էին այդ փառահեղ զորավարի ռազմական ու կազմակերպչական ունակությունները: Իրոք, Մամիկոնյան տաղանդավոր սպարապետը, արագորեն կռահելով թշնամու մտադրությունները, ինքը ևս մասերի բաժանեց Հայկական բանակը և համապատասխան մակարդակում մանր պատերազմի միջոցով դիմադրություն կազմակերպեց թշնամու մանր ջոկատներին, իսկ միջին օղակի հայ հրամանատարներն էլ ապացուցեցին, որ ամենևին էլ չեն զիջում արյաց արքայի գովերգված զորավարներին:

368 թվականին Մեծ Հայքի թագավորությունում ծավալվող ռազմական իրադարձությունների մանրամասները մեզ առանձնապես չեն հասել, իսկ հաճախ էլ դժվար է նույնիսկ նշել կոնկրետ ճակատամարտի վայրը: Մյուս կողմից, սակայն, առկա տեղեկությունները իրենց սեղմությամբ հանդերձ բավականին հստակ են, իսկ երբեմն էլ հայտնի է նույնիսկ թշնամական այս կամ այն բանակի հրամանատարի անունը և նրա հետագա ճակատագիրը: Այսպիսով՝ 368 թվականի գարնանը Թավրիզից մինչև Տիգրանակերտ ձգվող հայ-պարսկական լայնարձակ սահմանի ողջ երկայնքով մեկ հարվածի համար նախատեսված Պարսից թագավորության 100.000 հոգանոց բանակը, բաժանվելով մոտ 23 մասի[2], համակցված ու միաժամանակյա հարձակման անցավ հայերի դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 25:

[2] Մեզ է հասել տեղեկատվություն 23 ճակատամարտի մասին, բայց անկասկած է, որ ներխուժումն իրականացնող բանակային մասերը եղել են ավելի շատ և մենք գիտենք միայն այն դեպքերի մասին, երբ թշնամին անհաջողության է մատնվել:

- 368 գարուն – ***Թավրիզի ճ-մ***[1]: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) ջախջախեց Բոյեկանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Բոյեկանը[2]:
- 368 գարուն – ***Տրպատունքի ճ-մ***[8] (գավառի հյուսիս): Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 5.000) գիշերային հարձակումով ջախջախեց ***Թավրիզ-Տրպատունիքի հյուսիս*** երթուղով Զինդկապետի գլխավորությամբ ներխուժած և դաշտային ամրություններում ճամբարած Պարսից թագավորության բանակին (9.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր, որոնց թվում

---

[1] Այս և հետագա միանման նկարագրված 22 ճակատամարտերը ավանդականորեն համարվել են վիպական, որպես կռվան ընդունելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ մի քանի տարում տալ 23 ճակատամարտ և հաղթել, Մեծ Հայքի թագավորության բանակը ինքն ի վիճակի չէր դա անել Պարսից թագավորության բանակի նկատմամբ, իսկ Պարսից թագավորության բանակի վերաբերյալ բերվող թվերն էլ չեն կարող այդքան հսկայական լինել: Հիշատակվող երկրորդ և երրորդ փաստարկների սնանկությանը հանգամանալից անդրադարձել է Արմեն Այվազյանը և նրա փաստարկների հետ ես լիովին համաձայն եմ: Մասնավորապես, երրորդ փաստարկի վերաբերյալ միանգամայն ճիշտ է «մեկ զրո պակասեցնել»-ու մեթոդը: Ինչ վերաբերում է առաջին փաստարկին, ապա իմ կարծիքով բոլոր ճակատամարտերն էլ իրականություն են եղել, ուղղակի պետք չէ դրանք ընկալել որպես ավանդականորեն ընդունվող մեծաթիվ բանակների միջև հարթ տարածությունում տեղի ունեցած խոշորամասշտաբ «ճիշտ» բախում: Ուշադիր վերլուծությունը մեզ բերում է այն հետևությանը, որ Պարսից թագավորության բանակը, ինչպես մի քանի անգամ փորձել էր անել մինչ այդ, օգտվելով իր թվական գերակշռությունից, բաժանվել է մանր մասերի և, տարբեր մասերից ու տարբեր ուղղություններով միանգամից ներխուժելով Մեծ Հայքի թագավորության տարածք, փորձել է դրանով իսկ մասնատել Մեծ Հայքի թագավորության ռազմական մեքենան և այդ կերպ հաղթահարել նրա դիմադրությունը: Այդ ռազմավարությունը, սակայն, վերջինիս հաջողություն չբերեց, քանի որ դրան ի պատասխան Հայկական բանակն ինքն էլ մասնատվեց մանր մասերի և, հաջողությամբ օգտագործելով արագ մանևրը, առանձին-առանձին ջախջախեց թշնամուն: Այս ամենի հետ կապված, սակայն, ուզում եմ անել մի քանի դիտողություններ: Ամենից առաջ նշենք, որ նախորդ և այս 23 ճակատամարտերը Փավստոս Բյուզանդի երկի թարգմանված տարբերակում, «ամս» բառը գրաբարից թարգմանելով որպես «տարի» («... զերեսուն և զչորս *ամս* ետուն» (գիրք 4, գլուխ 50), տեղադրված են, ըստ թարգմանիչների տրամաբանության, «34 ամս»-ի, այսինքն՝ 34 տարվա ընթացքում: Իմ կարծիքով, սակայն, «ամս»-ը, որը այստեղ այս կամ այն պատճառով աղավաղված «ամիս» բառն է, պետք է թարգմանել ոչ թե որպես «տարի», այլ՝ որպես «ամիս», իսկ այդ դեպքում արդեն այս ճակատամարտերի ժամկետները ստանում են լիովին իրական տեսք՝ տեղադրվելով 365-368 թվականներին՝ 34 ամսվա ընթացքում: Միաժամանակ առաջ անցնելով նշենք, որ Փավստոս Բյուզանդի հաղորդումների ընդհանրացումից հնարավոր է դառնում մեծ ճշտությամբ պարզել, թե ինչ ուղղություններով են այս կամ այն հաջողությամբ ներխուժել Պարսից թագավորության մանր բանակները: Մասնավորապես, առկա տեղեկատվության վերլուծությունից պարզ է դառնում, որ Զինդկապետի և Բոյեկանի բանակները առաջին զորասյան կազմում փորձել են ներխուժել Ուրմիա լճի հյուսիս-արևելյան ափով ու պարտության են մատնվել, համապատասխանաբար, Տրպատունիքի և Թավրիզի ճակատամարտերում, Համբարակապետի, Վահրիճի ու Մոգաց Անդերձապետի բանակները երկրորդ զորասյան կազմում առաջացել են Պարսկահայքով և պարտվել են, համապատասխանաբար, Սաղամաս գետի ճակատամարտում ու Մաղխազյան դաշտի 2 առանձին ճակատամարտերում, Վինի, Գումանդի, Ալանոյզանի և Շապստանի բանակները երրորդ զորասյան կազմում առաջխաղացում են իրականացրել Կորճայքով ու պարտության են մատնվել հենց այդ նահանգում տեղի ունեցած 4 առանձին ճակատամարտերում, Հազարվուխտի, Մարուճանի և Վաչականի բանակներն էլ չորրորդ զորասյան կազմում Մեծ Հայքի թագավորության են մտել Աղձնիք-Տուրուբերան-Արարատ ու Աղձնիք-Վասպուրական-Արարատ ուղղություններով և պարտվել են, համապատասխանաբար, Աղձնիքի, Արարատյան դաշտի ու Դարույնք ամրոցի ճակատամարտերում: Պարսից թագավորության մնացած բանակների երթուղու և պարտության հնարավոր վայրերի մասին որևէ կոնկրետ կամ վերջնական եզրակացություն անելն առայժմ անհնար է թվում, քանի որ առկա տեղեկատվությունը չափազանց քիչ է: Կարելի է միայն այս կամ այն հավանականությամբ ենթադրել, որ դրանք տեղի են ունեցել մատնանշված չորս ուղղություններից որևէ մեկում: Ողջ վերոգրյալի կապակցությամբ նշենք նաև, որ այս 23 ճակատամարտերում պետք է զարգացնել «մեկ զրո պակասեցնել»-ու մեթոդը, որը այն դեպքում, երբ բանակների թիվը հաշվվում է տասնյակ հազարներով, որպես կանոն ճիշտ է: Երբեմն, սակայն, այն պետք է վերափոխել «երկու զրո պակասեցնել»-ու, իսկ որոշ դեպքերում նույնիսկ՝ «երեք զրո պակասեցնել»-ու մեթոդի: Այս դեպքում, երբ մենք ուղղակի դեն ենք նետում Պարսից թագավորության բանակի վերաբերյալ բերված թվերի վերջի «ավելորդ զրոները», 23 ճակատամարտերում Պարսից թագավորության բոլոր բանակների միագումար թվաքանակը կազմում է 105.000 զինվոր՝ նորմալ և միանգամայն ընդունելի մի թիվ այդ դարաշրջանի Պարսից թագավորության ռազմական մեքենայի համար: Առաջ անցնելով նշենք, որ գրեթե բոլոր ճակատամարտերում որպես Մեծ Հայքի թագավորության բանակի հրամանատար հիշատակված է սպարապետ Վասակ Մամիկոնյանը, սակայն, ըստ իս, այդ հաղորդումը ավելի շատ պետք է ընկալել ընդհանուր իմաստով՝ որպես բանակի ընդհանուր ղեկավարություն իրականացնող: Ակնհայտորեն կոնկրետ մարտը շատ դեպքերում վարել են այլ անձիք, քանի որ այս դեպքում սպարապետն իրոք ի վիճակի չէր լինի անձամբ ներկա գտնվել երկրի տարբեր վայրերում գրեթե միաժամանակ ընթացող 23 ճակատամարտի: Իր հերթին ճակատամարտերի մեծ մասի վերաբերյալ առկա է տեղեկատվություն, որ թշնամու կողմից ներկա է եղել Մեհրուժան Արծրունին, որին, ընդ որում՝ միշտ, հաջողվում է փախչել: Սա ևս, ըստ երևույթին, պետք չէ բառացի հասկանալ, քանի որ այս դեպքում կրկին Մեհրուժանը ի վիճակի չէր լինի մասնակցել երկրի տարբեր վայրերում գրեթե միաժամանակ ընթացող մեկ տասնյակից ավելի ճակատամարտերի և այն էլ, Պարսից թագավորության բանակների ջախջախումների պայմաններում, միշտ փրկվել: Կարելի է ենթադրել, որ Փավստոս Բյուզանդը, իսկ գուցե նաև նրա երկը կրկնակողները, բոլոր մարտերին Մեհրուժանին մասնակից են համարել, քանի որ վերջինս այդ ժամանակ մարտնչում էր թշնամու կողմում և ընդհանուր ուղղություն է տալիս Պարսից թագավորության բանակներին: Եվ, վերջապես, նշենք, որ նկարագրված ճակատամարտերի մեծ մասում թշնամու առաջնորդները սպանվել են: Իմ կարծիքով մեր պատմիչի հաղորդումը այս դեպքում արդեն կասկածի տեղիք չպիտի տա, քանի որ դա իրոք հնարավոր էր:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 39:

[3] Որպես այս ճակատամարտի վայր Փավստոս Բյուզանդը նշում է Ատրպատականը, սակայն, հաշվի առնելով հակառակորդի զորասյունների առաջխաղացման ուղիները և, մասնավորապես, առաջին զորասյան շարժման ուղղությունը, կարելի է ենթադրել, որ այս դեպքում խոսքը գնում է Ուրմիա լճի արևելյան ափն ընդգրկող Տրպատունիք (Ատրպատունիք) գավառի մասին, որն այն ժամանակ կամ արդեն ընկալվել է որպես «Ատրպատական» աշխարհաքաղաքական հասկացության մի մաս, կամ էլ, որն ավելի հավանական է, այս կամ այն պատճառով հետագա կրկնակողների կողմից «Ատրպատունիք» բառը շփոթվել է «Ատրպատական» բառի հետ:

սպանվեց նաև Զինդկապետը[1]:

- 368 գարուն – ***Սաղամաս գետի ճ-մ*** (Պարսկահայք, Առնա գավառ): Մեծ Հայքի թագավորության բանակը (1.000), դարանելով մի քանի վայրերում, գիշերային հարձակումով ջախջախեց Համբարակապետի գլխավորությամբ ***Պարսկահայքով*** առաջխաղացած և ճամբարած Պարսից թագավորության բանակին (9.000): Հայերը կորցրին մոտ 400, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Համբարակապետը[2]:
- 368 գարուն – ***Մաղխազյան դաշտի ճ-մ*** (Հեր գավառ, Հեր քաղաքի մոտ): Մեծ Հայքի թագավորության բանակը (4.000) ջախջախեց Վահրիճի գլխավորությամբ ***Պարսկահայքով*** առաջխաղացած Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Վահրիճը[3]:
- 368 գարուն – ***Մաղխազյան դաշտի ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 1.000) ջախջախեց Մոգաց Անդերձապետի գլխավորությամբ ***Պարսկահայքով*** առաջխաղացած Պարսից թագավորության բանակին (1.800): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 1.500 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Մոգաց Անդերձապետը[4]:
- 368 գարուն – ***Կորճայքի ճ-մ***[5]: Թշնամու առաջխաղացման մասին նախօրոք տեղեկացված Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 2.000) ջախջախեց Ալանոյզան Պահլավի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 5.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր[6]:
- 368 գարուն – ***Կորճայքի ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 5.000) ջախջախեց Հայկական սահմանապահ բանակի անփութության պատճառով Գումանդ Շապուհ II-ի գլխավորությամբ երկրի խորք ներխուժած Պարսից թագավորության հիմնական բանակին (9.000), որից հետո ոչնչացրեց նաև թշնամու ցրված ասպատակներին: Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Գումանդ Շապուհը[7]:
- 368 գարուն – ***Կորճայքի ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) ջախջախեց Շապստանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (5.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Շապստանը[8]:
- 368 գարուն – ***Կորճայքի ճ-մ***: Արշակ III-ի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 2.000) ջախջախեց Վինի գլխավորությամբ Մեծ Հայքի սահմանային տարածքները ասպատակող Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր[9]:
- 368 գարուն – ***Աղձնիքի ճ-մ*** (նահանգի հարավային սահմանում): Մեծ Հայքի թագավորության բանակը (1.100) ջախջախեց Հազարվուխտի գլխավորած Պարսից թագավորության բանակին (8.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝

---

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 43:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 48:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 30:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 47:
[5] Վերլուծելով Փավստոս Բյուզանդի հայտնած տվյալները այս և հետագա 3 ճակատամարտերի տեղերի մասին՝ գալիս ենք եզրակացության, որ դրանք եղել են Կորճայքում: Այս տեսակետի օգտին են խոսում ամենից առաջ այն, որ քննարկվող ներխուժումները չէին կարող տեղի ունենալ Ուրմիա լճի արևելյան և արևմտյան ափերով կամ Աղձնիքով, քանի որ այդ ուղղություններով կատարվող ներխուժումների մասին մենք ունենք ուղղակի տվյալներ: Իր հերթին ողջ ճակատով 4 զորասյուններով իրականացվող մանր բանակների ներխուժման մասին տվյալներ ունենալու պայմաններում, մենք տեղեկություններ ունենք ներխուժումների մասին, որոնք կատարվել են Ուրմիա լճի արևելյան և արևմտյան ափերով, ինչպես նաև Աղձնիքով, և սա այն դեպքում, երբ Կորճայքով, որպես հայ-պարսկական ճակատի լայն մի հատվածով, տեղի ունեցած ներխուժումների մասին մենք տեղեկություններ չունենք: Այսպիսով՝ բոլոր տրամաբանական հիմքերը կան Մեծ Հայքի հարավում տեղի ունեցած այս ճակատամարտերը բաժին հանել Կորճայքին՝ ողջ «ճակատային» ներխուժման համայնապատկերը ամբողջացնելու համար:
[6] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 38:
[7] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 31:
[8] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 46:
[9] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 26:

մոտ 4.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Հազարվուխտը[1]:

- 368 գարուն – ***Արարատյան դաշտի ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 4.000) ջախջախեց ***Աղձնիք-Տուրուբերան*** երթուղով Մարուճանի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակին (6.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Մարուճանը[2]:
- 368 գարուն – ***Դարույնք ամրոցի ճ-մ*** (Արարատ, Կոգովիտ գավառ): Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 1.000) ջախջախեց ***Աղձնիք-Վասպուրական*** երթուղով Վաչականի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակին (1.800): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Վաչականը[3]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (1.200) ջախջախեց Անդիկանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 300, թշնամին՝ մոտ 1.500 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Անդիկանը[4]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 5.000) հաղթեց Դմավունդ Վսեմականի գլխավորած Պարսից թագավորության բանակին (9.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին 6.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Դմավունդ Վսեմականը[5]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (7.000) հաղթեց Դեհկանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (40.000): Հայերը կորցրին մոտ 2.000, թշնամին 10.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Դեհկանը[6]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (3.000) ջախջախեց Սուրենի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 5.000, 5 փիղ): Հայերը կորցրին մոտ 800, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Սուրենը[7]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) պարտության մատնեց Ապական Վսեմականի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 5.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Ապական Վսեմականը[8]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) հաղթեց Զիկի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 4.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Զիկը[9]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության հետևակ բանակը (1.000) գիշերային հարձակումով ջախջախեց Սուրենի գլխավորած Պարսից թագավորության ճամբարած բանակին (6.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր, որոնց թվում գերվեց ու սպանվեց նաև Սուրենը[10]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 5.000) հաղթեց Հրեվշողմի գլխավորած Պարսից թագավորության բանակին (9.000): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 6.000 զինվոր[11]:

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 28:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 42:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 40:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 27:
[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 29:
[6] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 32:
[7] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 33:
[8] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 34:
[9] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 35:
[10] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 36:
[11] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 37:

- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) ջախջախեց Մշկանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (3.500): Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Մշկանը[1]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 3.000) պարտության մատնեց Սակաստան Անդերձապետի գլխավորած Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Սակաստան Անդերձապետը[2]:
- 368 գարուն – ***Ճ-մ***: Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 1.000) ջախջախեց Մռկանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (4.000): Հայերը կորցրին մոտ 300, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր, որոնց թվում սպանվեց նաև Մռկանը[3]:

Այսպիսով, Շապուհ II-ի ձեռնարկած մանր հարձակումների ռազմավարությունը ևս, որ կիրառության մեջ դրվեց 368 թվականի գարնանը, ռազմատենչ այս արքային որևէ ռազմական հաջողություն չբերեց: Միաժամանակ, սակայն, դիմադրության կազմակերպումը հեշտ չտրվեց նաև հայերին, մանավանդ որ ներքաղաքական երկպառակտությունները ոչ միայն չէին վերանում, այլ, ընդհակառակը, գնալով խորանում էին:

Որպես հետևանք, անհաջողության մատնվելով հարվածի գործնականում բոլոր ուղղություններով, 368 թվականի ամռանը Շապուհ II-ը մի պատգամավորություն ուղարկեց Արշակ III-ի և Վասակ Մամիկոնյանի մոտ՝ առաջարկելով վերջիններիս բանակցությունների համար ժամանել Տիզբոն: Արդյունքում՝ Հայոց արքան և սպարապետը, մի կողմից այլևս հնարավոր չհամարելով հետագա հաջող դիմադրությունը, իսկ մյուս կողմից էլ որոշակիորեն սխալվելով ու կուլ տալով «սրբազան երդումների» տեսքով ուղարկված անվտանգության երաշխիքների խայծը, ընդունեցին թշնամու առաջարկը և մեկնեցին Տիզբոն: Սա քաղաքական կոպիտ մի սխալ էր իր լիովին սպասելի հետևանքներով՝ Շապուհ II-ի հրամանով Արշակ III-ը ձերբակալվեց և բանտարկվեց պետական բանտ հանդիսացող Անհուշ բերդում, իսկ Վասակ Մամիկոնյանն էլ դաժան մահապատժի ենթարկվեց:

368 թվականի երկրորդ կեսի վիճակով Մեծ Հայքի թագավորությունն, ըստ էության, գլխատված էր: Չկային իմաստուն արքան և ռազմաշունչ սպարապետը, բացակայում էին երկրի ուժերը մեկ հիմնական բռունցքի մեջ միավորելու ի վիճակի ուժերը, իսկ առանձին նախարարներն էլ, փակված սեփական տիրույթներում, հոգում էին առավելագույնը դրանց, ինչպես նաև յուրայինների անվտանգության մասին: Սկիզբ առան մղձավանջային ժամանակներ, որոնք շատ թանկ էին նստելու Հայոց թագավորության վրա, ընդ որում արյաց արքայի լիովին սպասելի վերջնական հարվածը մի պահ հապաղեցրեց միայն այն հանգամանքը, որ խլրտումներ էին սկսվել հոների մոտ և 368 թվականի հոկտեմբերից նոյեմբեր ամիսներին Շապուհ II-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 140.000), ինչպես նաև դավաճաններ Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գլխավորած Արծրունյաց ու Մամիկոնյաց գնդերը (մոտ 500) ասպատակեցին Հիոնիտների թագավորության տարածքը և նահանջեցին[4]: Հոները հերթական անգամ հնազանդության բերվեցին, որից հետո Շապուհ II-ը, չցանկանալով այլևս կորցնել և ոչ մի ակնթարթ, նույն 368 թվականի դեկտեմբերին իր բանակը մտցրեց Հայոց թագավորության տարածք:

Թշնամու հիմնական հարվածն ուղղված էր Արտագերս ամրոցին (Արարատ, Արշարունիք գավառ), որտեղ տեղակայված էին Հայոց արքայի արքունիքը, ընտանիքն ու

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 41:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 45:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 49:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 5)

գանձարանը: Թշնամին, սակայն, հերթական անգամ անհաջողության մատնվեց, քանզի Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 11.000) գիշերային անակնկալ հարձակումով ջախջախեց ամրոցը պաշարած Պարսից թագավորության բանակին (մոտ 15.000)[1]:[2] Հայերը հաջողության էին հասել, բայց պարզ էր, որ ապագայում նրանք ստիպված էին լինելու գործ ունենալ թշնամու ավելի խոշոր ուժերի հետ: Արշակ III-ի գերվելուց հետո նրա կին Փառանձեմը՝ Անդովկ Սյունու այդ արժանի դուստրը, Հայոց թագավոր դարձրեց տասնութնամյա Պապին (368-374) և սկսեց երկիրը տենդորեն նախապատրաստել հաջորդ տարի սպասվող փոթորիկներին: 368[3] և 369[4] թվականին Վալենտ II-ը շարունակում էր խրված մնալ Դակիայում մղվող հարատև ռազմական գործողությունների մեջ, իսկ այդ ընթացքում Հայաստանում տեղի ունեցան հիրավի ողբերգական իրադարձություններ:

369 թվականի գարնանը դավաճաններ Մեհրուժան Արծրունու ու Վահան Մամիկոնյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք և, օգտվելով այն բանից, որ կենտրոնացված դիմադրության չհանդիպեց, պաշարեց ու գրավելով ավերեց Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը, Վանը և Նախիջևանը՝ տանելով հսկայական քանակի ավար ու վերցնելով մեծ քանակի գերիներ[5]: Հուսահատորեն համառ դիմադրություն ցույց տված այլ ամրություններից պետք է մատնանշել ամենից առաջ նույն Արտագերս ամրոցը, որը Փառանձեմ թագուհու գլխավորությամբ Զիկի և Կարենի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 40.000) համառորեն դիմադրեց մինչև տարվա ամենավերջին օրերը ու գրավվեց միայն այն բանից հետո, երբ բռնկված համաճարակը ոչնչացրեց բոլոր Հայ ռազմիկներին[6]: Հայոց թագուհի Փառանձեմը գերվեց, տեղափոխվեց Տիզբոն և այնտեղ տանջամահ արվեց, իսկ երիտասարդ Պապը, որ բարեբախտաբար կարողացել էր ժամանակին հեռանալ ամրոցից, շարժվեց դեպի հյուսիս և պատսպարվեց Հռոմեական կայսրության սահմանի մոտակայքում կամ գուցե հենց բուն Հռոմեական կայսրության տարածքում: Ուժեղ դիմադրեց և արդյունքում այդպես էլ չգրավվեց նաև Դարույնք ամրոցը[7], սակայն հաջող դիմադրության այս եզակի օրինակը ամենևին էլ չէր կարող փոխել ընդհանուր անմխիթար պատկերը:

Ողբերգական իրավիճակը չփոխեց նաև ավելի շուտ անձնական վրիժառության ակտի բնույթ ունեցող Տիզբոնյան ռազմագործողությունը, երբ 369 թվականի դեկտեմբերին, օգտվելով այն բանից, որ Շապուհ II-ը սեփական բանակային հիմնական ուժերով հերթական անգամ մարտնչում էր իր պետության արևելյան սահմաններում, Փառանձեմ թագուհու հայր, ծերունազարդ, սակայն երիտասարդական ավյունով գործող Անդովկ Սյունու գլխավորությամբ Տիզբոնում գտնվող Սյունյաց գունդը (1.700) անակնկալ կերպով ասպատակեց քաղաքը, որից հետո ավերեց արքայական պալատներն ու պետական պահեստարաններն և նահանջեց Սյունիք[8]:[9] Պարտված, սակայն

---

[1] Այս իրադարձությունը վերլուծելիս ուշադրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ 11.000 հոգանոց բանակ (Փավստոս Բյուզանդ, Գիրք 4, գլուխ 55) Արտագերսում գործնականում չէր կարող տեղավորվել: Պետք է ենթադրել, որ Մեծ Հայքի թագավորության բանակը ամրոցին օգնության է հասել դրսից:

[2] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 27, գլուխ 12; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 35:

[3] Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 27, գլուխ 5:

[4] Զոսիմա «Նոր պատմություն» գիրք 4, գլուխ 32; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 27, գլուխ 5; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 40:

[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 55; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 35; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 25, գլուխ 7, գիրք 27, գլուխ 12; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 10; Սեբեոս «Պատմություն», գլուխ 5; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

[6] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 4, գլուխ 55; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 35; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 16; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 27, գլուխ 12:

[7] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 1)

[8] Մովսես Կաղանկատվացու (գիրք 2, գլուխ 1) և Ստեփանոս Օրբելյանի (գլուխ 9) կողմից բերված պատերազմի այս դրվագը, որի իսկությունը չի ընդունվում, իր մեջ «առասպելական» կամ «վիպական» որևէ տարը չի պարունակում: Այս դեպքում, իհարկե, սխալ է նաև Անդովկ Սյունու արարքը բացատրել լոկ խոցված փառասիրությամբ: Այստեղ ավելի բարդ հոգեբանական վիճակ է, որը

չհնազանդված Հայաստանից ստացված տիզբոնյան ապտակը, սակայն, արյաց ինքնասեր արքայի համար իր հերթին ծանր վիրավորանք համարվեց և արդյունքում 370 թվականի գարնանը Պարսից թագավորության մի խոշոր բանակ ներխուժեց արդեն բուն Սյունիք:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

370 գարուն – ***<u>Բաղաբերդի ճ-մ</u>*** (Սյունիք, Ձորք գավառ)[2]

Սյունիք ներխուժած Պարսից թագավորության բանակը (մոտ 30.000) պաշարեց բերդը Անդովկ Սյունու գլխավորած Սյունյաց գնդից (մոտ 1.000):

I փուլ – Հայկական բանակը հետ մղեց թշնամու բոլոր գրոհները:

II փուլ – Կենտրոնացնելով ուժերը՝ թշնամին նորից անցավ գրոհի, սակայն Հայկական բանակը, օգտագործելով նախապես պատրաստված խոշոր քարեր, կրկին հետ շպրտեց թշնամուն:

III փուլ – Չկարողանալով ուղղակի գրոհով գրավել բերդը՝ թշնամին անցավ կանոնավոր և երկարատև պաշարման:

IV փուլ – Զգալով, որ երկար դիմադրելն անհնար է՝ Հայկական բանակը ճեղքեց պաշարման օղակը և հեռացավ:

Հայերը կորցրին մոտ 300, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Շապուհ II-ը ոտնատակ տվեց Սյունիքը: Նույն այդ ժամանակ, սակայն, Մեծ Հայքի թագավորության արևմուտքում արդեն ծավալվում էին լուրջ իրադարձություններ:

Իրոք, հենց նույն այս ժամանակ էր, որ Վալենտ II-ը, ի վերջո աչք բացելով Դակիայում մղվող ռազմական գործողություններից, հանկարծ կանգ առավ և գիտակցեց այն իրողությունը, որ, եթե առաջ ճեղքվել էր կայսերական պաշտպանական միջագետքյան շրջանը, ապա այժմ, անցնելով Մեծ Հայքի թագավորության տարածքով, Եփրատի վերին հոսանքում թշնամու գնդերը կախվում են արդեն բուն կայսրության տարածքների վրա, ընդ որում այս հատվածում կայսրությունը ոչ մի լուրջ պաշտպանական կառույց չուներ: Անհրաժեշտ էր որևէ կերպ շտկել իրավիճակը և, քանի որ ամրությունների կառուցումը արագ իրականացնել ոչ մի կերպ հնարավոր չէր, իսկ բանակային ուժերն էլ կաշկանդված էին դանուբյան ճակատում օրըստօրե ուժեղացող գոթական ճնշմանը դիմագրավելով, Վալենտ II-ը, որոշակիորեն խախտելով «Ամոթալի հաշտության» պայմանները, ռազմական օժանդակություն ցույց տվեց իր սահմանների մոտ ապաստանած Պապին՝ ձգտելով վերջինիս միջոցով հետ գրավել Մեծ Հայքի թագավորությունը և որևէ կերպ շտկել իրավիճակը: Հարկ է նշել, որ այդ գործի համար ժամանակն ավելի քան հարմար էր ընտրված:

Իրոք, մեկ տարուց մի քիչ ավելի ժամանակը բավարար եղավ, որ հայ նախարարները, որոնք, դժգոհ լինելով Արշակ III-ի վարած հարատև կենտրոնաձիգ քաղաքականությունից, աստիճանաբար լքել էին վերջինիս և դրանով պայմանավորել Հայոց ազգանվեր այս արքայի պայքարի վերջնական անհաջողությունն ու գերվելը, ահա ուրեմն, մեկ տարուց մի քիչ ավելի ժամանակը բավարար եղավ, որ հայ նախարարները

հասկանալով մենք կպարզենք նաև այս իրադարձության թվականը: Կարելի է լիովին հավանական համարել այն, որ Անդովկը Տիզբոնում հյուրընկալվել էր այն ժամանակ, երբ իր աղջիկ և Մեծ Հայքի թագուհի Փառանձեմը դեռ ողջ էր ու դիմադրում էր Արտագերսում և Սյունյաց իշխանը, ժամանելով Տիզբոն, ըստ երևույթին փորձել է դիվանագիտական ուղիներով փրկել իր աղջկան: Այս ֆոնի վրա միանգամայն հավանական պետք է համարել այն, որ թշնամու մայրաքաղաքի ավերումը Անդովկի միանգամայն տրամաբանական և սպասելի վրեժն էր իր աղջկա անարգալից մահվան համար, որից հետո ծերունի հոր համար բնականաբար արդեն վերանում էր ամեն մի արգելք: Կարելի է ասել, որ դրանից հետո նա կորցնում է իր կյանքի իմաստը, ինչն էլ կարող էր հուսահատության հասած ու խիստ պատվախնդիր Սյունյաց նահապետին դրդել այս քայլին՝ հաշվի չառնելով նույնիսկ չարացած Շապուհի պատասխան հարվածի ողջ ծանրությունը: Այսպիսով՝ Տիզբոնի ասպատակման իմ բերած թվականը միանգամայն հավանական է թվում, իսկ այդ դեպքում իրոք որևէ հիմք չի մնում թերահավատորեն մոտենալու այս իրադարձությանը:

[1] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 1; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 9:

[2] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 1; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 9:

հասկանային և գիտակցեին պարսից նոր իշխանության իրական «հաճույքները»: Մինչև սեփական որդի Սամվելի կողմից սպանվելը Մեհրուժան Արծրունու հետ միասին երկրում տնօրինություն էր անում Վահան Մամիկոնյանը, իսկ վերջինիս սպանվելուց հետո էլ միանձնյա իշխանությունն անցավ նույն Մեհրուժանին, բայց դա քիչ բան փոխեց: Պարսիկները իրենց պահում էին ինչպես մի իսկական նվաճված երկրում, ամենուր մոլեգնում էին թալանն ու ավերը, հսկայական չափերի էին հասել ավարառությունները, սպանությունները, ամեն տեսակի բռնությունները և կրոնական ու ազգային հալածանքները, ընդ որում դրանցից զերծ չէին մնում ոչ հասարակ ժողովուրդը և ոչ էլ ազնվականները: Եթե իր հաղթանակից արբեցած Շապուհ II-ի կատաղած ոհմակը գրավված, սակայն չհնազանդեցված Մեծ Հայքի թագավորության տարածքում իրեն գոնե մի քիչ համեստ պահեր, իսկ արյաց արքան էլ ձգտեր նորանվաճ այս թագավորությունն արագորեն ընդգրկել Սասանյան տերության վարչաիրավական համակարգում, ապա, հնարավոր է, ամեն ինչ այլ տեսք ունենար, սակայն այժմ ստեղծվել էր մի իրավիճակ, երբ պարսիկներից դժգոհ էին գործնականում բոլորը և ամեն ինչ լրիվ հակառակ տեսքն ունեցավ: Շապուհ II-ը չէր կարող անվերջ Հայաստանում պահել իր խոշոր հարվածային բանակը և արդեն 370 թվականի սկզբներին այստեղ էին միայն կայազորային ուժեր, իսկ ստեղծված պայմաններում հերիք էր միայն այն, որ Պապը Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղ Քաջ Մամիկոնյանի, իր անձնական պահակազորի և Հռոմեական կայսրության մի փոքրիկ ջոկատի ուղեկցությամբ արևմուտքից մտնի Հայոց թագավորության տարածք, որ այդ պարագայում բոլորը միանգամից հավաքվեն նրա շուրջը: Մեհրուժան Արծրունին սկսեց տենդագին միջոցառումներ գործադրել պարսից իշխանությունը երկրում պահպանելու ուղղությամբ, սակայն որևէ հաջողության չհասավ:

Պապը՝ սեփական հոր այդ արժանի զավակը, հոր պես միասին բացառիկ մի երևույթ էր հայ ժողովրդի միջնադարյան պատմության մեջ, քանզի այս արքան ավելին, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը, խորը կերպով գիտակցում էր իր երկրի գլխին կախված մարտահրավերներն, այդ թվում նաև սոցիալ-տնտեսական մակարդակում: Ինչպես և իր հայրը ձգտելով դեմ ելնել կենտրոնախույս ուժերին՝ Պապը մի շարք կտրուկ միջոցառումներ իրականացրեց, որոնցով մեծապես ուժեղացրեց կենտրոնական իշխանությունը, ընդ որում Հայոց արքայի ձեռնարկների հիմքը ուժեղ բանակն էր, որը համալրվեց արքունի գանձարանի միջոցների լայն կիրառմամբ և որի գլուխ կանգնեց կրկին իր հոր արժանի զավակը հանդիսացած Մուշեղ Քաջ Մամիկոնյանը:

370 թվականի գարնանը սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (10.000) Դարանաղի գավառում ընթացած մարտերում ջախջախեց Զիկի և Կարենի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 25.000), ընդ որում սպանվեցին նաև Զիկն ու Կարենը[1], որից հետո Դարույնք ամրոցը ազատվեց պաշարումից, իսկ Պարսից թագավորության բանակի մնացորդներն էլ արագորեն թողեցին Մեծ Հայքի թագավորության տարածքը: Դրանից հետո շարժվելով դեպի միջնաշխարհ և արագորեն համալրելով ուժերը՝ սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (40.000) Թավրիզի մոտակայքում հարձակվեց Շապուհ II-ի գլխավորությամբ Մեծ Հայք ներխուժել պատրաստվող Պարսից թագավորության ճամբարած բանակի (մոտ 70.000, 10 փիղ) վրա և գլխովին ջախջախեց վերջինիս[2]: Շապուհ II-ը հազիվ փրկվեց գերությունից, ընդ որում գերված մեծաթիվ պարսիկ ազնվականները և իշխանները, որպես վրեժ Վասակ Մամիկոնյանի մահվան ու Արշակ III-ի գերության համար, Հայոց սպարապետի հրամանով մաշկազերծ արվեցին: Դրան հակառակ, սակայն, Շապուհ II-ի գերված կանանոցը Մուշեղը անվնաս վերադարձրեց Տիզբոն:

Ձեռք բերած կարևոր հաղթանակից հետո Մեծ Հայքի թագավորության բանակը

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 1; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 36:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 2:

(մոտ 60.000) ասպատակեց Ատրպատականը[1] և նահանջեց[2], ընդ որում հենց այդ ժամանակ արքայական բանակը մտավ Փայտակարան ու Արցախ՝ այստեղ վերականգնելով արքայական իշխանության գերակայությունը[3]: Անմիջապես էլ հետևեց ընդհարումը Ուռնայր II-ի (մոտ 358-380) գլխավորած Մազքութական թագավորության հետ, որը մինչ այդ, օգտվելով հայերի մոտ առկա խառը վիճակից, տիրել էր Ուտիքին և այժմ ոչ մի կերպ չէր ցանկանում վերադարձնել ապօրինի կերպով իր կողմից ձեռք գցածը: Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղը, սակայն, այն մարդը չէր, որ թույլ տար իր Հայրենիք նկատմամբ նման մի ոտնձգության անպատիժ մնալը:

Արդյունքում՝ Հայոց սպարապետը արագորեն գործի մեջ դրեց իր նորակազմ ռազմական մեքենան, ջարդ ու փշուր արեց մազքութներին, հետ շպրտեց նրանց Կուրի ձախ ափ և վերականգնեց Հայոց թագավորության սահմանների ամբողջությունը արևելքում[4]: Նույն կերպ եղավ նաև հյուսիսում՝ Իբերիայի և Գուգարքի պարագայում, երբ նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը հաղթեց Իբերիայի թագավորության բանակին, դուրս մղեց երկրամասից Պերոզի տոհմն ու նրա սերնդին և վերամիավորեց այն Մեծ Հայքի թագավորությանը՝ սահմանափակելով Իբերիայի թագավորության նոր արքա, Բակուր II-ին հաջորդած նրա որդի Միհրդատ V-ի (364-369, 369-375՝ համիշխան) քաղաքական հավակնությունները[5]: Այս առումով հայերի օգտին եղավ նաև այն հանգամանքը, որ Պապը, որպես Իբերիայի թագավորության արքա ճանաչեց Սաուրմագին՝ Սաուրմագ II-ին (369-375՝ համիշխան), որին աջակցեցին նաև հռոմեացիները, իսկ այդ ամենի արդյունքում Միհրդատ V-ի դիրքերը սեփական երկրում լրջագույն անկում ապրեցին: Հայերը կատաղի կերպով էին պայքարում իրենց թագավորության համար, սակայն նրանց օգտին եղավ նաև մեկ այլ հանգամանք: Բանն այն էր, որ վերևում արդեն իսկ հիշատակված հոների շարժը դեպի արևմուտք հենց նույն 370 թվականին հասել էր իր բարձրակետին:

Իրոք, հենց այս ժամանակ էր, որ հոների քոչվոր համադաշնությունը նորից մտավ շարժման մեջ և կրկին շարժվեց դեպի արևմուտք: Արդյունքում, արդեն հիմնական ուժերով անցնելով Վոլգան, 370 թվականին Հոնական տերության ռազմական մեքենան վերջնականապես ջախջախեց Հյուսիսային III պատերազմից հետո խիստ թուլացած Մազքութական ու Ալանական թագավորություններին՝ վերջնականապես ստեղծելով և գլխավորելով հսկայական, տարացեղ ու արտաքին ավարառուական քաղաքականություն վարող հզոր քոչվոր մի ուժ: Արդյունքում՝ Ալանական թագավորությունը սահմանափակվեց Թերեք գետից հարավ գտնվող Կովկասյան լեռներով, իսկ Մազքութական թագավորությունը՝ Դերբենդ ամրոցից հարավ գտնվող Աղվանքի տարածքով: Փաստորեն հենց մեր կողմից դիտարկվող ժամանակներում Նախակովկասյան տափաստաններում հայտնվել էր մի ահասարսուռ ուժ, որն էլ նույն 370 թվականին Դերբենդ ամրոցի կողմից ներխուժեց Աղվանք ու Ատրպատական:

Հոնական վտանգը իրոք ահարկու էր և Շապուհ II-ը, մոռացած Հայաստանի մասին, Պարսից թագավորության բանակով, ինչպես նաև նրա կազմում գտնվող և Դրաստամատ Անգեղացու կողմից գլխավորվող Հայ ռազմագերիներից կազմված օժանդակ հեծելագնդով շարժվեց Հոնական տերության բանակի դեմ: Հոները սկսեցին մանր մարտերով նահանջել: Հենց այս ժամանակ էր, որ մարտերից մեկից առաջ Շապուհ II-ին փոխարինած, արդեն հանգուցյալ Անդովկ Սյունու որդի Բաբիկը (մոտ 370-398)՝ իր հորն իրոք արժանի հերթական այդ որդին, մենամարտելով պարսից արքային մարտահրավեր ուղարկած ու անպարտելի և հզոր ռազմիկի համբավ ունեցող թշնամու առաջնորդ

[1] Փավստոս Բյուզանդի մոտ նշվում է, որ Մուշեղը հնազանդեցրեց «Մարաց Աշխարհը», այսինքն՝ Ատրպատականը, սակայն դա, ըստ երևույթին, պետք է հասկանալ այն իմաստով, որ նա պատժիչ արշավանք է իրականացրել Պարսից թագավորության հիմնական նահանգներից մեկում:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 8:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 13:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 12, 14:
[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 15:

Հոնագուրի հետ սկզբում նիզակամարտում, հետո թրամարտում և ի վերջո՝ տապարամարտում, հաղթեց ու գլխատեց վերջինիս, ընդ որում, որպես պարգև այս հաղթանակի՝ Պարսից թագավորության բանակը դուրս եկավ Սյունիքից, իսկ Բաբիկը ճանաչվեց հայրենական կալվածքների տեր[1]:

371 թվականի սկզբին սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության կառավարական բանակը մտավ Պարսկահայք, Կորճայք, Աղձնիք և Մինչեփրատյան Ծոփք, որի արդյունքում այս նահանգներում ևս վերահաստատվեց արքայական իշխանությունը[2]: Փաստորեն Հայոց թագավորությունը վերականգնվում էր իր հին սահմաններում, վերստեղծվում էր Հայոց հինավուրց միասնությունը և միասնականությունը, իսկ դրանք հենց այդ ժամանակ անչափ պետք էին հայերին, քանի որ, առժամանակ ազատված հոների վտանգից ու կատաղած այդքան ջանքերից հետո կրկին կորսված Մեծ Հայքի թագավորության ըմբոստությունից, Շապուհ II-ը պատրաստվեց վճռական ու կործանիչ լինելուն կոչված մի վերջին հարված հասցնել:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

371 գարուն – ***<u>Ձիրավի ճ-մ</u>*** (Արարատ, Բագրևանդ գավառ, Նպատ լեռան հյուսիսային ստորոտում, Արածանիի գետահովտում)[3]

Ցանկանալով վերջնականապես գրավել Մեծ Հայքի թագավորությունը՝ Շապուհ II-ը հսկայական մի բանակ (մոտ 200.000, 50 փիղ) շարժեց դեպի Հայոց թագավորություն: Առաջխաղացումը շարունակած պարսից արքան ուժեղ պահեստազորով (30.000) մնաց Գանձայում, իսկ մնացած բանակը (մոտ 170.000) դավաճան Մեհրուժան Արծրունու գլխավորությամբ ուղարկեց առաջ: Մեծ Հայքի թագավորության տարածք ներխուժած և ***<u>Տրպատունք-Թավրիզ-Գաբիթյան-Բաբեան-Ճվաշ-Արտագ-Կոգովիտ</u>*** երթուղով ասպատակելով առաջ շարժված Պարսից թագավորության բանակին ճանապարհին միացան Ուռնայր II-ի գլխավորած Մազքութական թագավորության (մոտ 20.000 հեծյալ) ու Շերգիրի գլխավորած Լեզգիական իշխանության (մոտ 10.000) բանակները, որից հետո թշնամին մտավ ***<u>Բագրևանդ:</u>*** Տեղեկանալով այս մասին՝ Պապի և սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (90.000) Ներսես I Մեծ կաթողիկոսի հոգևոր առաջնորդությամբ, որպես օժանդակություն ունենալով կոմս Տերենտոսի գլխավորած Հռոմեական կայսրության մի ջոկատ (մոտ 6.000), շարժվեց թշնամուն ընդառաջ ու Նպատ լեռան մոտ փակեց նրա ճանապարհը: Հաջորդ օրը լուսաբացից առաջ կողմերը մարտակարգ ընդունեցին:

Պարսից թագավորության բանակի առաջին շարքում տեղավորված էր հետևակը, իսկ երկրորդում՝ հեծելազորը, ընդ որում երկրորդ շարքի ձախում Պարսից թագավորության բանակի կազմում գտնվում էր մազքութական, իսկ կենտրոնում՝ լեզգիական հեծելազորը, այն դեպքում, երբ աջ թևն ու պահեստազորը լիովին կազմված է Պարսից թագավորության բանակից: Հայկական բանակի առաջին շարքում տեղավորվեց ծանր հետևակը, երկրորդ շարքի կենտրոնում՝ թեթև հետևակը, թևերում՝ թեթև հեծելազորը, իսկ երրորդ շարքում, որպես ընդհանուր պահեստազոր, տեղաբաշխվեց ծանր հեծելազորը, ընդ որում առաջին

[1] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 1; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 10:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 10, 11, 16-20:

[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 4; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 37; Մովսես Երեց «Պատմություն»; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 13; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 1, գլուխ 10; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 13; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 16; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 24; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Ամմիանոս «Հռոմի պատմությունը», գիրք 29, գլուխ 1; Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 2, գլուխ 32; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5:

շարքի ձախում գտնվում էր Հռոմեական կայսրության ջոկատը, որը, սակայն, հրաման ունենալով ակտիվորեն չմասնակցել մարտին, մինչև մարտի վերջ ճշտորեն կատարեց այն: Հայկական բանակի աջ թևը և երրորդ շարքը ղեկավարում էր սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանը, ձախ թևը՝ կոմս Տերենտոսը, կենտրոնը՝ Սպանդարատ Կամսարականը, իսկ երկրորդ շարքը՝ Սմբատ Բագրատունին:

I փուլ – Արևածագը անդրադարձավ Հայ ռազմիկների զրահների վրա և, լույսի վառ շողերով շփոթեցնելով թշնամուն, միաժամանակ նաև ոգևորեց հայերին: Դրանից հետո հայկական երկրորդ շարքը շարժվեց առաջ և, օգտվելով համընթաց քամուց, նետերի հզոր հարվածի տակ առավ հակառակորդին: Կորուստներ կրելով և ցանկանալով փոխել իրավիճակը՝ թշնամին անցավ գրոհի ու փորձեց հարվածել վերջինիս, սակայն հայկական երկրորդ շարքը, շարունակելով նետահարել, արագորեն նահանջեց առաջին շարքի վահանափակի հետևը, որը ճեղքել թշնամուն չհաջողվեց և վերջինս ստիպված նահանջեց: Այսպես կրկնվեց բազմաթիվ անգամներ:

II փուլ – Բավականին թուլացնելով թշնամուն՝ Հայկական ծանր հեծելազորը անցավ խոյընթաց հարձակման և, ջախջախիչ հարված հասցնելով թշնամուն հատկապես վերջինիս ձախ թևում, փախուստի մատնեց նրա ողջ առաջին շարքը:

III փուլ – Չթուլացնելով հարվածի թափը՝ Հայկական ծանր հեծելազորը մխրճվեց թշնամու հեծելազորի մեջ և սկսեց անխնա ջարդել վերջինիս: Այդ ընթացքում Սպանդարատ Կամսարականը մարտադաշտում հանդիպեց Շերգիրին և մենամարտում սպանեց նրան: Իր հերթին, Մուշեղը հանդիպեց Ուռնայր II-ին ու, թեև մենամարտում վիրավորեց վերջինիս, սակայն, նիզակի կոթով հարվածներ հասցնելով իր հակառակորդի գլխին, ի վերջո ազատ արձակեց նրան, քանի որ իրեն բարոյական իրավունք չվերապահեց սպանել թագ կրող անձնավորությանը:

IV փուլ – Մարտի մեջ մտավ Հայկական ծանր հետևակը, որի արդյունքում թշնամին վերջնականապես ջախջախվեց:

V փուլ – Հայկական բանակը մինչև Մեծ Հայքի հարավ-արևելյան սահման ու Ատրպատական հետապնդեց և անխնա ոչնչացրեց թշնամու բանակի մնացորդներին: Այդ ընթացքում Սմբատ Բագրատունին գերեց Մեհրուժան Արծրունուն ու «պսակեց» նրան շիկացած երկաթով: Վերջինս, սակայն, մահացած ձևանալով կարողացավ փրկվել:

Հայերը կորցրին մոտ 20.000, դաշնակիցը՝ մոտ 200, թշնամին՝ մոտ 50.000 զինվոր:

371 գարուն – ***<u>Գանձայի ճ-մ</u>***[1]

Սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 70.000), որպես օժանդակություն ունենալով կոմս Տերենտոսի գլխավորած Հռոմեական կայսրության մի ջոկատը (մոտ 5.500), հետապնդելով թշնամուն, մտավ ***<u>Ատրպատական:</u>*** Ի պատասխան դրա Շապուհ II-ը, հավաքելով իր բանակի մնացորդները և դրանց միացնելով իր տրամադրության տակ եղած ուժերը, Պարսից թագավորության բանակով (մոտ 140.000) քաղաքի մոտ փակեց հակառակորդի ճանապարհը: Հայկական բանակի առաջին շարքում տեղավորվեց ծանր հետևակը, երկրորդ շարքի կենտրոնում՝ թեթև հետևակը, թևերում՝ թեթև հեծելազորը, իսկ երրորդ շարքում, որպես ընդհանուր պահեստազոր, տեղակայվեց ծանր հեծելազորը: Պարսից թագավորության բանակի առաջին շարքում տեղավորված էր հետևակը, իսկ երկրորդում՝ հեծելազորը:

I փուլ – Հայկական երկրորդ շարքը առաջ շարժվեց և նետերի հզոր հարվածի

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 5, 6:

տակ առավ թշնամուն: Ցանկանալով փոխել իրավիճակը՝ Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման, որին էլ ի պատասխան հայկական բանակի երկրորդ շարքը, չդադարեցնելով հարվածել թշնամուն, պատսպարվեց առաջին շարքի վահանափակի հետևում: Չկարողանալով ճեղքել վահանափակը՝ Պարսից թագավորության բանակը նահանջեց:

II փուլ – Օգտվելով հակառակորդի շարքերում առաջացած խառնաշփոթից՝ Հայկական ծանր հեծելազորը անցավ վճռական հարձակման և խոյընթաց հարվածով գլխովին ջախջախեց ու ցրեց թշնամուն:

Հայերը կորցրին մոտ 6.000, դաշնակիցը՝ մոտ 300, թշնամին՝ 30.000 զինվոր:[1]

Շապուհ II-ի պարտությունը լիակատար էր, ավելի ամբողջական, քանի 344 թվականին, և փաստորեն ոչ միայն նախորդ տարիներին թափված ջանքերը, այլև 369 թվականի հաջողությունն էլ լիովին ի չիք դարձվեցին: Արդյունքում՝ կքնվեց զինադադար, որով տարածաշրջանում վերականգնվեց 336 թվականին երկու պետությունների միջև գոյություն ունեցած վիճակը: Կրած ծանր կորուստներից և ավերներից հետո Մեծ Հայքի թագավորությանն այնուհանդերձ պահեց դիրքերը և Շապուհ II-ը, ինչպես 363 թվականին էր, ստիպված էր գոհանալ պաշտոնական Կոստանդնուպոլսի դեմ ձեռք բերած միջագետքյան հաջողություններով: Միաժամանակ հարկ է նշել, որ արյաց արքայի վիճակը բարդացնում էր նաև այն, որ Պարսից տերության հյուսիս-արևելյան սահմաններում պահպանված տարտամ վիճակը ոչ մի կերպ չէր վերանում ու արդյունքում 371 թվականի նոյեմբերից դեկտեմբեր ամիսներին Շապուհ II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) և նրա կազմում գտնվող ու Դրաստամատ Անգեղացու, ինչպես նաև Մանվել ու Կոմս Մամիկոնյանների կողմից գլխավորվող Հայ ռազմագերիներից կազմված օժանդակ հեծելագունդը (մոտ 5.000) ասպատակեցին Հիոնիտների թագավորության տարածքը և նահանջեցին[2]:

371 թվականից սկսած Պապը իրականացրեց ներքաղաքական և տնտեսական բնույթի վճռական, սակայն հավասարակշռված մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում Հայոց թագավորությունը սկսեց աստիճանաբար ոտքի կանգնել: Ծերացող Շապուհ II-ն իր հերթին, առժամանակ ձեռք քաշելով ռազմական գործողություններից և, կարծես թե, հիասթափված հայաստանյան ուղղությամբ իր թափած ջանքերի անարդյունավետությունից, նույն այս ժամանակ փորձում էր սիրաշահել Պապին, չնայած որ շարունակում էր գերության մեջ պահել վերջինիս հորը: Պաշտոնական Տիզբոնի հետ հարաբերություններում ժխտողական վերաբերմունք չուներ, սակայն, նաև երիտասարդ Պապը, որը, մի կողմ դնելով անձնական հանգամանքները, այնուհանդերձ հստակորեն գիտակցում էր, որ հարավային հզոր հարևանի հետ պետք է հնարավորինս դրական հարաբերություններ պահպանել, մինչև որ կգան ավելի լավ ժամանակներ: Իրոք, Հռնական տերության ճնշումը իր բոլոր սահմաններում, բայց հատկապես դանուբյան սահմանում, նույն այս ժամանակ հսկայական չափերի էր հասել, հոներից ահաբեկված Օսթգոթական երբեմնի հզոր թագավորության փլատակները լքող մարտունակ գոթերը մեծ քանակությամբ շարժվում էին դեպի Դանուբից արևմուտք ձգվող կայսերահպատակ տարածքներ, Վալենտ II-ը ամբողջովին զբաղված էր բալկանյան սահմանում ահագնացող հոգսերով և պաշտոնական Տիզբոնի հետ հնարավոր ընդհարման պարագայում ոչ մի կերպ հայերին օգնել ի վիճակի չէր լինելու: Պապի բարեփոխումները արագորեն իրենց արդյունքը տվեցին և երկիրը սկսեց ոտքի կանգնել, սակայն գործընթացը, դժբախտաբար, կարճ ընթացք ունեցավ:

Իրոք, Կոստանդնուպոլսում վաղուց էին նախատեսում սպանել Հայոց արքա Պապին, սակայն առաջին փորձն անցավ անհաջողությամբ, երբ պաշտոնական հրավերով Տարսոն ներկայացած Հայոց արքան վերջին պահին տեղեկացավ

[1] Այս ճակատամարտի վրա բավարար ուշադրություն չի դարձվել, իսկ երբեմն էլ այն համարվել է Ձիրավի ճակատամարտի գրչական կրկնությունը, սակայն ճակատամարտի հստակ տեղի նշումը մեզ թույլ է տալիս այն դիտարկել առանձին: Այսպիսով, թեև Ձիրավի ճակատամարտը վճռական նշանակություն ունեցավ, սակայն տվյալ փուլում այն չեղավ վերջինը:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 7:

դավադրության մասին և, իր պահակազորի հետ սրընթաց երթով հեռանալով, կարողացավ անցնել Եփրատը ու պոկվել դարանից: Դրանից հետո, սակայն, ամեն ինչ բարդելով թյուրիմացության վրա, Վալենտ II-ը Արևելքում Հռոմեական կայսրության բանակի հրամանատար Տրայանոսին հրամայեց հենց տեղում էլ կազմակերպել Պապի սպանությունը:

Արդյունքում՝ ամենատարբեր միջոցներով շահելով Հայոց արքայի վստահությունը, Հռոմեական կայսրության զորավարը վերջինիս ի վերջո հրավիրեց շքեղ կազմակերպված մի խնջույքի, որին ներկա էին ինչպես կայսրության այլ զորավարներ, այնպես էլ որոշ հայ իշխաններ: Կերուխումի ընթացքում ինչ-որ մի պահի Տրայանոսը դուրս եկավ խնջույքի սրահից, որից հետո, թուրը դուրս քաշած պատյանից, Պապի վրա հարձակվեց կայսրական բանակում ծառայող վարձկան գերմանացիներից մեկը: Հայոց արքան վերջին պահին նկատեց հարձակումը և ինքնապաշտպանության նպատակով հասցրեց դուրս քաշել դաշույնը, սակայն արդյունքում կրծքից խոցված ընկավ: Արքայի հետ գտնվող Գնել Անձևացին, անմիջապես դուրս քաշելով իր թուրը, հարվածեց Պապին խոցած մարդասպանին, սակայն մոտակայքում գտնվող Տերենտիոս զորավարի կողմից այս անգամ արդեն ինքը հարված ստացավ գլխին և ջախջախված գանգով գետին տապալվեց: Հռոմեացիները վաղուց էին խանդով հետևում ոչ միայն պարսիկների հետ սկիզբ դրած Պապի հարաբերություններին, այլև՝ սեփական երկիրը ոտքի հանելու երիտասարդ արքայի ջանքերին, իսկ հզոր Հայաստան երբեք և ոչ մեկին էլ աշխարհում, բացի, իհարկե, հայերից, պետք չի եղել:

Պապի սպանությունից հետո, օգտվելով այն բանից, որ Շապուհ II-ը իր երկրի արևելքում ծանր պատերազմի մեջ էր խրվել նույն հիոնիտների դեմ, Վալենտ II-ը որպես Հայոց գահի թեկնածու առաջ քաշեց Դակիական պատերազմի հերոս Վարազդատ Արշակունուն՝ մի իսկական ռազմիկի և օլիմպիական խաղերի գործող չեմպիոնի, որը նույնիսկ Հայաստան տեղափոխվելու ճանապարհին էլ առիթը բաց չթողեց ի ցույց դնելու իր արտասովոր ֆիզիկական ուժն ու խիզախությունը[1]: Այսպիսով՝ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Պապի հորեղբայր, պատանդության մեջ սպանված Տրդատի որդի Վարազդատը (374-378), որը, սակայն, լինելով լավ ռազմիկ և մարզիկ, որպես քաղաքական ղեկավար, այն էլ այնպիսի բարդ մի երկրի, ինչպես Մեծ Հայքի թագավորությունն էր, դժբախտաբար ոչ մի կերպ հարմար չեղավ:

Վարազդատը լավ չէր կողմնորոշվում 370-ական թվականների կեսերի նախարարական Հայաստանի բարդ ու խճճված հարաբերություններում, տեղի էր տալիս անարժան մարդկանց խորհուրդներին և, որ, թերևս, ամենից կարևորն էր, նա կիսատ թողեց կամ վերացրեց Պապի իրականացրած բարեփոխումները: Պապի օրոք հսկայական հեղինակություն ունեին Մամիկոնյանները և նրանց տոհմապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանը, իսկ այդ հանգամանքն իր հերթին նախանձով էր լցնում նորանշանակ արքայի սիրտը: Միաժամանակ Վարազդատին, ըստ երևույթին, խոցում էր նաև այն հանգամանքը, որ, եթե Հռոմեական կայսրության սահմաններում ինքը հանրահայտ ու ընդունված մի չեմպիոն էր և բոլորը նրա այդ կարգավիճակի հետ հաշվի էին նստում, ապա Հայաստանում, այն էլ մարտերի բովով անցած Մուշեղի անթերի մարտական խիզախության ֆոնին, իր ձեռքբերումները որոշակիորեն խամրում էին:

370-ական թվականների կեսերին ավելի ու ավելի էր ուժեղանում վայրագ հոների ճնշումը իր ժամանակի ողջ քաղաքակիրթ աշխարհի արևմտյան մասի վրա: Այս պայմաններում Շապուհ II-ը, մոռացած հայաստանյան հոգսերը, իր տերության արևելքում համառ պայքար էր մղում հոների արդեն վերջապահի դերը ստանձնած Հիոնիտների թագավորության դեմ, սակայն Վալենտ II-ն ինքն էլ, որին հոները դեռևս չէին հասել, ի դեմս խուճապահար կերպով Դանուբն անցնող ու կայսրության տարածք լցվող հռոմեացիների երբեմնի սարսափ գոթերի, այնուհանդերձ ևս լիովին զգում էր վերջիններիս ահարկու հզորության արդյունքը: Թույլ չէր, սակայն, հոների ճնշումը նաև Կովկասյան լեռնաշղթայի

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 40:

երկայնքով:

374 թվականին Հոնական տերության հսկայական բանակը, փորձելով կրկնել 4 տարի առաջ ձեռք բերած հաջողությունը, Դերբենդի լեռնանցքից ներխուժեց Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներ, ոտնատակ տվեց Աղվանքը, Փայտակարանը, Ատրպատականը, Հյուսիսային Միջագետքը, Հայոց Միջագետքի արևելքը ու Աղձնիքի արևմուտքը և ձեռք բերած հսկայական ավարով հետ նահանջեց[1]: Հենց այս ընթացքում էր, որ Հոնական տերության բանակը (մոտ 100.000) Մեծ Հայքի թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) գրավեց այդպես էլ լիովին չվերականգնված Տիգրանակերտը[2], իսկ պարսիկներից էլ՝ պաշտպանական բոլոր հնարավորություններն ունեցող Բզաբդե ամրոցը[3], որից հետո, ավերելով դրանք, նույն երթուղով հետ նահանջեց:

375 թվականին հերթական անգամ Դերբենդի լեռնանցքից ներխուժում իրականացրած Հոնական տերության բանակը (մոտ 120.000) ասպատակեց Աղվանքը, Փայտակարանը, Ատրպատականը, Պարսկահայքը, Վասպուրականը, Մոկքը, Տարոնը, Մինչեփրատյան Ծոփքի արևմուտքը և Մելիտեի շրջակայքը, որից հետո կենտրոնացավ Բաղեշի մոտ[4]: Նախորդ տարում հոներն անպատիժ էին մնացել, սակայն այս անգամ Հայոց սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանը նրանց համար մի տհաճ անակնկալ էր նախապատրաստել: Այս առումով հարկ է հատկապես ընդգծել, որ, նույն 375 թվականին Միհրդատ V-ի և Սաուրմագ II-ի մահից հետո Մեծ Հայքի թագավորությունը որպես Իբերիայի թագավորության արքա էր ճանաչել Միհրդատ V-ի որդի Վարազ-Բակուրին II-ին (375-394), ինչով էլ պայմանավորված, Իբերիայի թագավորությունը կրկին դաշնակցային օգնություն ապահովեց Մեծ Հայքի թագավորությանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

375 – ***<u>Ալկիքար ամրոցի ճ-մ</u>*** (Կորճայք, Վերին Կորդուք գավառի հյուսիս)[5]

Սպարապետ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի ընդհանուր ղեկավարությամբ գործող Մեծ Հայքի (մոտ 90.000, որից 24.000 հեծյալ) և Վարազ-Բակուր II-ի գլխավորած Իբերիայի (մոտ 40.000) թագավորությունների միացյալ բանակը շարժվեց Բաղեշի մոտ կենտրոնացած Հոնական տերության բանակի (մոտ 120.000) դեմ: Տեղեկանալով այդ մասին՝ թշնամու առաջնորդը իր բանակը բաժանեց երկու մասի: Առաջին և առավել փոքրաքանակ մասը վերջինս տեղադրեց Ջերմաձոր գավառում, իսկ մյուսով նահանջեց դեպի հարավ, ընդ որում թշնամու բանակի առաջին մասը խնդիր ստացավ դարանից անակնկալ հարձակվել քրիստոնյաների բանակի վրա և, կորուստներ պատճառելով վերջինիս, արագորեն նահանջել դեպի հարավ՝ քաշելով մարտակարգը կորցրած հակառակորդին դեպի դաշտավայր ու գցելով թշնամու բանակի երկրորդ մասի հարվածների տակ:

I փուլ – Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորությունների միացյալ բանակը անակնկալ հարձակվեց Ջերմաձոր գավառում դարանած թշնամու վրա և գլխովին ջախջախեց նրան:

II փուլ – Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորությունների միացյալ բանակը, պահպանելով մարտակարգը, շարունակեց առաջխաղացումը դեպի հարավ-արևելք և, մոտենալով Ալկիքար ամրոցի մոտ մարտակարգ ընդունած թշնամու հիմնական ուժերին, ինքն էլ մարտակարգ ընդունեց: Մարտից անմիջապես առաջ երկու բանակների մարտակարգերի միջատարածքում հանդիպեցին Մուշեղը և Հոնական տերության բանակի առաջնորդը, որը վայելելով հզոր ու անպարտելի ռազմիկի համբավ, վիրավորական տոնով մարտահրավեր էր նետել Հայոց

[1] Մովսես Երեց «Պատմություն»:
[2] Մովսես Երեց «Պատմություն»; Անանուն Ասորի «Մար Սաբայի վարքաբանությունը»:
[3] Մովսես Երեց «Պատմություն»:
[4] Մովսես Երեց «Պատմություն»:
[5] Մովսես Երեց «Պատմություն»:

սպարապետին: Տեսնելով իր սպիտակ նժույգով մոտեցող Մուշեղին՝ վերջինսը իր ձիով սրընթաց արշավեց Հայոց սպարապետի ուղղությամբ՝ նախատեսելով հենց ընթացքից նիզակի հզոր հարված հասցնել Մամիկոնյան իշխանին: Մուշեղը, սակայն, վահանի վրա ընդունելով հակառակորդի հարվածը, ծանր թրով հարվածեց վերջինիս ուսին և, վիրավորելով ու տապալելով հակառակորդին ձիուց, գերեց նրան: Դրանից անմիջապես հետո Հայոց սպարապետը հարձակման տարավ իր տարած հաղթանակից ոգևորված քրիստոնյա ռազմիկներին և համառ մարտում ծանր պարտության մատնեց հակառակորդին:

III փուլ – Մեծ Հայքի ու Իբերիայի թագավորությունների միացյալ բանակը հետապնդեց թշնամուն մինչև Բզաբդե ամրոց և ծանր կորուստներ պատճառեց նրան:

Հայերը կորցրին մոտ 15.000, դաշնակիցը՝ մոտ 7.000, թշնամին՝ մոտ 60.000 զինվոր:[1]

Այսպիսով՝ հոները մի իսկական ջախջախիչ պարտություն կրեցին, որի արդյունքում վերջ տրվեց Հոնական տերության արշավանքներին դեպի Կովկասյան լեռնաշղթայից հարավ: Մուշեղ Քաջ Մամիկոնյանը, սակայն, որ իր երկրին և ժողովրդին, դե ինչու չէ, նաև հարևան երկրներին ու ժողովուրդներին ազատել էր ինչպես պարսկական, այնպես էլ տափաստանային քոչվոր հոների ահեղ վտանգներից, այս իրադարձություններից հետո շատ չապրեց և անլուր նախանձից խեղդվող Վարազդատ արքայի հրամանով 376 թվականին դավադրաբար սպանվեց:

Վարազդատին թվում էր, թե դրանից հետո իր իշխանությունը երկրում ավելի կամրանա և հայերն իրեն ավելի շատ կսիրեն, քան առաջ, բայց ցնորամիտ այդ գաղափարները բնականաբար ցրվեցին իրական կյանքի առաջին իսկ հարվածներից: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ հոների դեմ պայքարում, ի տարբերություն հայերի, այնքան էլ հաջող չէին ընթանում պարսիկների գործերը:

Իրոք, 376 թվականին հիոնիտները և քուշանները Բահլի ճ-մ-ում ծանր պարտության մատնեցին Շապուհ II-ի գլխավորած Պարսից թագավորության խոշոր բանակին ու նրա կազմում գտնվող և Դրաստամատ Անգեղացու, ինչպես նաև Մանվել ու Կոմս Մամիկոնյանների կողմից գլխավորվող Հայ ռազմագերիներից կազմված օժանդակ հեծելագնդին: Պարսից բանակի փախուստի ժամանակ էլ հենց, սակայն, Դրաստամատը փրկեց Շապուհ II-ի կյանքը, որի համար որպես պարգև իրավունք ստացավ տեսակցել Անհուշ բերդում բանտարկված Արշակ III-ի հետ: Այս տեսակցությունը, ինչպես հայտնի է, ավարտվեց Արշակ III-ի և Դրաստամատի ինքնասպանությամբ:

Բահլի մոտ կրած պարտության արդյունքում Պարսից թագավորությունը բավականին երկար ժամանակով հրաժարվեց Հիոնիտների թագավորության նկատմամբ ոտնձգություններից, բայց այդ ճակատամարտի արդյունքներից ևս մեկն էլ, մասնավորապես, նաև այն եղավ, որ Պարսից թագավորության բանակի կազմում գործող Հայկական հեծելագունդը, օգտվելով առաջացած խառնաշփոթից, վերադարձավ Հայրենիք[2]: Հիշատակված հեծելագնդի կազմում էին Մուշեղ Քաջ Մամիկոնյանի դավադիր սպանությունից մեծապես խոցված եղբայրներ Մանվել և Կոմս Մամիկոնյանները՝ Վասակ Մամիկոնյանի եղբայր Արտաշեսի որդիները ու Մամիկոնյանների հզոր տոհմի ներկայիս առաջնորդները: 377 թվականին Մեծ Հայքի թագավորությունում ստեղծվեց խառն ու անկայուն մի վիճակ, քանի որ հայերը չէին ընդունում Վարազդատ արքայի

[1] Այս ճակատամարտը պատկանում է մոռացված ճակատամարտերի թվին: Այս, ինչպես նաև նախորդ 2 տարիների հոների արշավանքների հետ կապված իրադարձությունների մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է հայտնում Մեսրոպ Երեցը, որի անտիպ աշխատանքում պահպանված տվյալները փոխանցում է Ղևոնդ Ալիշանը («Հայապատում»: Հետաքրքիր է, որ Արբելայի մոտ պահպանվել է մի ուշագրավ ժայռաքանդակ, որը ևս վկայում է այս ճակատամարտի մասին: Ժայռաքանդակը, որը պատկանում է ասորի վարպետներին և պատկերում է իր ճերմակ ձիու վրա ճեմող Մուշեղին ու հոների գերված առաջնորդին, հանդիսանում է ասորիների յուրատեսակ երախտիքի տուրքը Հայոց սպարապետին, որի տարած փայլուն հաղթանակը, այդ թվում նաև ասորիներին ազատեց հոների դաժան ասպատակություններից:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 37; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, մաս 5:

իշխանությունը, իսկ երկիր վերադարձած և Մամիկոնյանների գլուխ կանգնած Մանվել Մամիկոնյանն էլ իր եղբայր Կոմսի հետ միասին բացահայտ թշնամական մի դիրք էին բռնել: Կողմերի միջև վճռական ընդհարումը տեղի ունեցավ արդեն հաջորդ տարի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

378 – ***<u>Կարին գավառի ճ-մ</u>***[1]

Սեփական երկրում որևէ հեղինակության չհասած և միայն մենամարտերում, ձեռնամարտում, ըմբշամարտում, ֆիզիկական այլ վարժություններում ու նետաձգության մեջ անհաղթ ռազմիկի և մարզիկի համբավ վաստակած, ֆիզիկական հսկայական ուժի ու ճարպկության, սակայն սահմանափակ խելքի տեր Վարազդատ արքայի կառավարումը խորը դժգոհություն առաջացրեց Մեծ Հայքի թագավորությունում, իսկ այն բանից հետո, երբ վերջինս, դրսևորելով ծայրահեղ ստորություն, Բատ Սահառունու դրդումով հրամայեց դավադրաբար գերել և սպանել Մուշեղ Քաջ Մամիկոնյանին, երկրում նրա դեմ բռնկվեց իսկական ապստամբություն: Այս պայմաններում Պարսից թագավորությունից վերադարձած և Մամիկոնյանների նահապետ հռչակված Մանվել Մամիկոնյանը Վարազդատից պահանջեց հեռանալ Մեծ Հայքից: Անարդյունք տևած բանակցություններից հետո Մանվել Մամիկոնյանի գլխավորած Մամիկոնյան (3.000) և այլ նախարարական գնդերը (մոտ 7.000) շարժվեցին դեպի Կարին՝ մոտենալով Վարազդատ արքայի, սպարապետ Բատ Սահառունու և Գարեգին Ռշտունու գլխավորությամբ իրենց ընդառաջ ելած կառավարական բանակին (մոտ 10.000):

I փուլ – Ապստամբների բանակը անցավ հարձակման և պարտության մատնեց կառավարական բանակին, ընդ որում այդ ընթացքում տեղի ունեցած մենամարտում Վարազդատը, հույս չունենալով որևէ այլ կերպ վնասել ընտիր զրահավորված հսկայամարմին Մանվելին, նիզակի ուժեղ հարված հասցրեց վերջինիս դեմքին: Ու, թեև հակառակորդի նիզակի ծայրը խրվեց Մանվելի բերանի մեջ, սակայն Մամիկոնյաց իշխանը կարողացավ կտրել այն կոթից և սեփական այտի միջով դուրս քաշել: Դրանից հետո Մանվելը, չնայած ծանր վերքին, ի վերջո փախուստի մատնեց իր հակառակորդին՝ հետապնդելով նրան որոշ տարածություն և նիզակի կոթով հարվածներ հասցնելով վերջինիս գլխին: Այդ պահին Վարազդատի հետապնդմանը միացան նաև Մանվելի որդիները՝ Հմայակն ու Արտաշեսը, սակայն երբ վերջիններս, հասնելով Վարազդատին, ցանկացան նիզակահար անել նրան, որդիներից արդեն բավականին հետ մնացած Մանվելը հետ կանչեց նրանց՝ արգելելով ձեռք բարձրացնել Մեծ Հայքի թագը կրող թեկուզ և անարժան մի անձնավորության վրա:

II փուլ – Ապստամբների բանակը որոշ տարածություն հետապնդեց կառավարական բանակին, սակայն ի վերջո դադարեցրեց այն և վերադարձավ մարտադաշտ: Բատ Սահառունին ու նրա որդին գերվեցին և սպանվեցին, իսկ մարտի դաշտում անօգնական ընկած Գարեգին Ռշտունուն սպանեց Դանուն Մամիկոնյանը:

Հաղթողները կորցրին մոտ 1.000, պարտվողները՝ մոտ 2.000 զինվոր:

Այսպիսով՝ Վարազդատ արքան ծանր պարտություն կրեց և ստիպված եղավ հեռանալ այդպես էլ իր կողմից չընկալված ու իրեն ընկալել չցանկացող Մեծ Հայքի թագավորությունից: Լինելով օտար դաստիարակության տեր ու այդպես էլ չկարողանալով մերվել տեղական պայմաններին, դառնալով իրոք Հայոց մի արքա,

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 37; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 24; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի ր «Հայոց պատմության համառոտագրություն»:

Վարազդատը անփառունակ կերպով լքեց Հայրենիքը և հետագայում օտարության մեջ էլ կնքեց իր մահկանացուն: Ինչ վերաբերում է Մեծ Հայքի թագավորությանը, ապա այստեղ Մանվել Մամիկոնյանը համիշխան արքաներ հռչակեց Պապի մանկահասակ որդիներ Արշակին և Վաղարշակին՝ Արշակ IV-ին (378, 387-388՝ համիշխան, 378-387) ու շատ կարճ և ձևական իշխած, վաղամեռիկ Վաղարշակ II-ին (378), որոնց խնամակալ դարձան իրենց մայրը՝ Զարմանդուխտը, և ինքը՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանը: Նույն այս ժամանակ ընթանում էր Շապուհ II-ի կառավարման արդեն 69-րդ տարին և անսովորության աստիճանի երկար իշխած այս արքան Մեծ Հայքի թագավորությունում տեղի ունեցած փոփոխությունների մեջ մի վերջին հնարավորությունը տեսավ հասնելու իր նպատակին՝ տիրելու Հայաստանին:

Արդյունքում՝ նույն 378 թվականին Պարսից թագավորությունից անորոշ լիազորություններով Մեծ Հայքի թագավորություն ժամանեց Սուրեն զորավարը, որը, սկզբում ներկայանալով որպես դիվանագիտական գործունեություն իրականացնող, վերջնական արդյունքում փորձեց ներսից պայթեցնել Հայոց թագավորությունը: Մանվել Մամիկոնյանը, սակայն, որն իր հերթին ուշադիր հետևում էր Սուրենի գործողություններին, ի մի բերեց Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 10.000) և անակնկալ հարձակումով ջախջախեց նրա գլխավորած Պարսից թագավորության ճամբարած հեծելազորին (10.000)[1,2]:

Սուրենի հետ միաժամանակ կամ նրանից մի քիչ ուշ հարձակման անցավ Գումանդ Շապուհի գլխավորած Պարսից թագավորության ևս մեկ բանակ (48.000), սակայն ուժերը համալրած Մանվել Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (20.000) ջախջախեց նաև սրան՝ սպանելով Գումանդին:[3] Այս դեպքերից անմիջապես հետո սպարապետ Մանվել Մամիկոնյանի գլխավորած Մեծ Հայքի թագավորության բանակը (10.000 հեծյալ) հաղթեց նաև Վարազի գլխավորությամբ Մեծ Հայք ներխուժած Պարսից թագավորության երրորդ բանակին (18.000), սպանելով Վարազին[4], իսկ հետո էլ Արտանդան դաշտի ճ-մ-ում գիշերային անակնկալ հարձակումով լիակատար պարտության մատնեց Մռկանի գլխավորությամբ Մեծ Հայք ներխուժած և ճամբարած Պարսից թագավորության վերջին բանակին (40.000)՝ սպանելով նաև Մռկանին[5]: Մանր հարձակումների 368 թվականին կիրառված ռազմավարությունը, որը Շապուհ II-ին հաջողություն չէր բերել այդ դեպքերից 10 տարի անց, փաստորեն իրեն չարդարացրեց նաև 378 թվականին, երբ Հայոց թագավորությունը այս անգամ ևս կարողացավ պահել դիրքերը: 378 թվականին Մեծ Հայքի թագավորության տարածքում խոշոր իրադարձություններ տեղի ունեցան, սակայն իրական և արդեն համաշխարհային նշանակության մի իրադարձություն էլ նույն այս տարում տեղի ունեցավ Հայաստանի սահմաններից շատ հեռու՝ Բալկանյան թերակղզու հարավում՝ Կոստանդնուպոլսից հյուսիս գտնվող Ադրիանապոլիս քաղաքի մոտակայքում:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 375 թվականին, անհաջողության մատնվելով Կովկասյան լեռնաշղթայից հարավ թափանցելու փորձերում, հոներն իրենց հիմնական հարվածային ուժերը տեղափոխեցին արևմուտք և ուղղակի վերջնականապես ջնջեցին մինչ այդ Մերձսևածովյան տափաստաններում մի իսկական գերիշխող ուժ հանդիսացող Օսթգոթական հզոր թագավորությունը, երբ Մերձսևածովյան տափաստաններում օսթգոթերի վերջին արքան՝ հարյուրտասնամյա Գերմաներիխը (337-376)՝ գոթերի այդ մարտունակ տիրակալը, որի օրոք Օսթգոթական թագավորությունը հասել էր իր հզորության գագաթնակետին, մի քանի ճակատամարտերում հոներից համոզիչ պարտություն կրեց: Դրանից հետո իր մեջ գոթական, կարծես թե, III դարի իսկական

[1] Այս և հաջորդ 3 ճակատամարտերը ևս պետք է դիտարկել այն մեթոդով, որը առաջարկվեց վերևում հիշատակված 23 «միանման» ճակատամարտերի վերաբերյալ:
[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 37:
[3] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 39:
[4] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 40:
[5] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 41:

փառքը մարմնավորած այս հզոր ռազմիկ-արքան, որը, չնայած պատկառելի տարիքին, թշնամիների դեմ այնուհանդերձ մարտնչում էր երիտասարդական ավյունով, տանջվելով յուրայիններից ստացած ծանր վերքից, ի վերջո մահացավ, իսկ այդ պայմաններում էլ գոթերի այլևս և ոչ մի կազմակերպված դիմադրության մասին խոսք լինել չէր կարող: Օսթգոթական թագավորության ջախջախումից հետո Հոնական տերության սահմանները արևմուտքում հասան Դանուբին և Հռենոսին, ինչի արդյունքում հոնական ահեղ վտանգը վերջնականապես կախվեց հռոմեական ողջ աշխարհի վրա:

Հոների այս հզոր շարժը ջախջախիչ մի իսկական հարված հասցրեց գերմանական աշխարհին, որի ներկայացուցիչները մինչ այդ գերիշխում էին Եվրոպայի գործնականում ողջ տարածքում: Սրանից հետո իր հերթին մի կողմից ուժեղացավ գերմանացիների հոսքը դեպի Դանուբից և Հռենոսից հարավ ընկած տարածքներ, իսկ մյուս կողմից էլ գերմանական տարրը աստիճանաբար սկսեց լքել Արևելյան Եվրոպայի տարածքները՝ հետ քաշվելով դեպի արևմուտք ու հարավ-արևմուտք: Արդյունքում, սկսած արդեն այս ժամանակներից, բայց ավելի շատ հատկապես հետագա երկու հարյուրամյակներում, գերմանացիների կողմից լքված Արևելյան Եվրոպայում աստիճանաբար սկսեցին հաստատվել հյուսիսից դեպի հարավ առաջխաղացող սլավոնները՝ որպես առաջամարտիկներ ունենալով անտերին: Սլավոնները, գերմանացիների հետ միասին, ըստ էության, սերված լինելով միևնույն արմատից, միաժամանակ նաև գերմանացիների համեմատ ավելի քիչ քաղաքակրթված էին և իրավիճակը կրկնվեց մոտավորապես ինչպես գալլերի ու նույն գերմանացիների պարագայում, երբ համեմատականորեն առավել քաղաքակրթված գալլերը իր ժամանակին դեպի հարավ և հարավ-արևմուտք էին հետ քաշվել հյուսիսից եկող գերմանական ճնշման արդյունքում: Հարկ է նշել նաև, սակայն, որ սլավոններն, ի տարբերություն գերմանացիների, նոր տարածքներ ոտք դնելով ի սկզբանե այստեղ հոների գերիշխանության պայմաններում, մանավանդ սեփական հետամնացության վիճակում, այդպես էլ ի վիճակի չեղան որևէ լուրջ պետական միավոր ստեղծել: Արդյունքում՝ Հոնական տերությունը, ահեղ փոթորկի պես ներխուժելով Արևելյան Եվրոպա և այստեղի ցեղերին ու ժողովուրդներին դիտարկելով բացառապես միայն որպես հարստահարման աղբյուր, նույն այդ ցեղերի և ժողովուրդների ռազմունակ տղամարդկանց սկսեց ռազմական գործում օգտագործել ամենաանխնա տեսքով ու ամենավտանգավոր տեղերում, երբ հոների կողմից իրականացվող ռազմական գործողություններում գերմանացի և սլավոն ռազմիկները սկսեցին պատերազմի ընդամենը միայն էժանագին մի միջոցի դեր խաղալ: Գերմանացիների թվից հոների ենթակա դաշնակիցներն էին ամենից առաջ օսթգոթերը, ինչպես նաև գեպիդները, էրուլները, լանգոբարդները և այլք, իսկ սլավոնների կազմից էլ ամենից առաջ՝ անտերը: Այսպիսով՝ ի սկզբանե քոչվոր տափաստանային մարտավարության կրող հոնական ռազմական մեքենան մոտական տասնամյակներում համալրվեց սարմատական և օսթգոթական հզոր ծանր հեծելազորի, ինչպես նաև գերմանական ու սլավոնական հետևազորի զգալի ուժերով, ինչը ավելի ուժեղացրեց վերջինիս հարվածային թափը: Փոփոխությունները, սակայն, միայն սրանցով չսահմանափակվեցին:

Հոներից խուսափող գոթերը, որոնք ահա արդեն 10 տարի շարունակ անվերջ հոսանքով անցնում էին Դանուբը և լցվում էին Վալենտ II-ի տերության սահմանները, սկզբում տրամադրված բավականին խաղաղ ու հնազանդ, ի վերջո, սակայն, գրգռված կայսերական պաշտոնյաների լկիտության աստիճանի հասած դաժան վերաբերմունքից, 376 թվականին մի մեծ ապստամբություն բարձրացրին: Գոթական զայրույթի հրով էր լցված ողջ Թրակիան և Վալենտ II-ին չէր մնում այլ բան, քան հավաքել իր բանակը և այն ուղարկել գերմանական ահեղ այդ վտանգի դեմ: 376 և 377 թվականներին հաջողությունը, կարծես թե, կայսերական բանակի կողմում էր, սակայն 378 թվականին օգոստոսի 9-ին Ադրիանապոլսի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում կայսերական հիմնական բանակը ոչ միայն ուղղակի սրբվեց գոթերի ծանր հեծելազորի կողմից և

ջախջախիչ պարտություն կրեց, այլև, շրջապատված թշնամու ռազմիկների կողմից, հրո բոցերի մեջ անտառային մի հասարակ հյուղակում էլ հենց իր կյանքի վերջը գտավ նաև Վալենտ II-ը:

Ադրիանապոլսի ջախջախումը ծանր նստեց 363 թվականի աղետից հետո հազիվհազ գոնե մի կերպ ուշքի գալ փորձող Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի վրա, ընդ որում, լեգեոնային ուսուցման և համալրման առանց այդ էլ խաթարված համակարգի պայմաններում, երբ միանգամից ոչնչացան կայսերական հիմնական ուժերը ու բանակի բարձր և միջին հրամանատարական կազմի զգալի մասը, Վալենտ II-ին հաջորդող կայսրերն այլևս ոչ ուժ ու ոչ էլ հնարավորություն չունեցան վերականգնելու Հռոմեական կայսրության ռազմական մեքենան իր գոնե IV դարի տեսքով: 378 թվականի աղետը Հռոմեական կայսրության բանակի արևելյան, իսկ քիչ անց նաև արևմտյան մասի համար կարծես մի խոշոր ջրբաժան հանդիսացավ, որը վերջնականապես անցյալում թողեց Հռոմեական կայսրության դասական բանակը և հիմք դրեց մի նոր տեսակի բանակի:

Վալենտ II-ից հետո կայսրության արևելյան մասի ղեկավարումը մի քանի ամիս ստանձնեց Արևմուտքում կառավարող կայսր, Վալենտինիանոս I-ի որդի Գրացիանոսը (375-383), որը թարմ ուժերով ժամանել էր Արևելք, սակայն արդեն 379 թվականի հունվարի 19-ին նա Արևելքում իշխող կայսր հռչակեց զինվորական դասից սերող Թեոդոսիոսին՝ Թեոդոսիոս I Մեծին (379-395), որից հետո վերադարձավ Արևմուտք: Թեոդոսիոս I Մեծի առաջ խնդիր դրվեց գործնականում փաստորեն զրոյից վերստեղծել կայսերական բանակը, ընդ որում փորձառու հրամանատարները հիմնականում զոհվել էին կամ հեռացել էին Գրացիանոսի հետ միասին, իսկ տեղում առկա ռազմիկների մեծամասնությունն էլ իրենցից, ըստ էության, ներկայացնում էր գերմանական այս կամ այն ցեղը: Միաժամանակ ուժեղացող հոսանքով շարունակվում էր նաև նույն այդ գերմանական տարրի հոսքը դեպի կայսրության տարածք, երբ գերմանական էթնոմշակութային միջավայրն իր գրկում աստիճանաբար խեղդում և վերացնում էր հունահռոմեական ամեն ինչ ամենից առաջ հենց պետականաշինական, իսկ հետո արդեն՝ մշակութային ու գաղափարական մակարդակներում: Արդյունքում՝ Թեոդոսիոս I Մեծը, սկզբում տարված բանակաշինության հրատապ հարցերով և այրվող Բալկաններով, իսկ հետո արդեն՝ Արևմուտքում իշխող կայսերի դեմ մղվող գահակալական պայքարով կամ մրցակցությամբ, ոչ մի հնարավորություն չուներ խառնվել Արևելքի գործերին: Ի մեծ բարեբախտություն Հռոմեական կայսրության, սակայն, նույն այս ժամանակ փայլուն չէին գործերը նաև Պարսից թագավորությունում:

379 թվականին իր թագավորության և կյանքի 70-րդ տարում Հայոց ութ արքաներ և Հռոմեական կայսրության մեկուկես տասնյակից ավելի կայսրեր տեսած ու նրանց դեմ պայքարած Շապուհ II-ը մահացավ, որից հետո Պարսից տերության հզորությունը սասանվեց: Ընդհանրապես ասած, սեփական տերության հզորության սասանման հիմքերը դրել էր դեռևս նույն Շապուհ II-ը, որի երկարատև և հաճախ ոչ այնքան հաջող պատերազմները մարդկային ու նյութական միջոցների տեսակետից ուժասպառ էին անում երկիրը, ընդ որում հատկանշական է, որ, որպես սեփական յոթանասնամյա գահակալման պայքարի արդյունք, Շապուհ II-ը կարող էր պարծենալ, թերևս, միայն Հյուսիսային Միջագետքի հետ գրավումով՝ մնացած սահմաններում պահպանվել էր այս կամ այն տիպի հավասարակշռություն: Շապուհ II-ին հաջորդեց նրա արդեն բավականին ծեր եղբայրը՝ Արտաշիր II-ը (379-383), որի կառավարման տարիներին երկիրը ուզում էր, թերևս, միայն մեկ բան՝ խաղաղություն: Ինքը՝ Արտաշիր II-ը, կարելի է կարծել սեփական հեղինակության բարձրացման նպատակով, 10 տարով ազատեց երկիրը հարկերից, հալածեց քրիստոնյաներին և ի վերջո իր դեմ հանեց սեփական իշխաններին, ինչը ներքաղաքական լրացուցիչ անկայունություն առաջացրեց: Նույն 379 թվականին, սակայն, Շապուհ II-ի մահով պայմանավորված տեսնելով սեփական քաղաքական գծի լիակատար կործանումը, իր հերթին Մեծ Հայքի թագավորությանը տիրելու մի վերջին և

որոշակիորեն նաև արդեն հուսահատ փորձ կատարեց արդեն Մեհրուժան Արծրունին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

379 – ***<u>Ավան գյուղի ճ-մ</u>*** (Բագրևանդ, Զարեհավանի մոտ)[1]

Մեհրուժան Արծրունու գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) ***<u>Կորճայք-Վասպուրական</u>*** երթուղով մտավ Մեծ Հայքի թագավորության տարածք և ճամբարեց: Դրանից հետո, վերցնելով սեփական ուժերի մի մասը (մոտ 5.000), Մեհրուժանը կտրվեց հիմնական բանակից և, հետախուզելու նպատակով շարժվելով առաջ, հասավ ***<u>Կոգովիտ:</u>*** Բավարար տեղեկություններ հավաքելով հակառակորդի մասին՝ Մեհրուժանի բանակը սկսեց հետ վերադառնալ՝ մտնելով ***<u>Բագրևանդ:</u>*** Տեղեկանալով այս տեղաշարժի մասին՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանը ***<u>Զարեհավանի</u>*** մոտ տեղաբաշխված Մեծ Հայքի թագավորության բանակով (մոտ 15.000) առաջ շարժվեց, շրջապատեց Մեհրուժանի բանակը և անցավ հարձակման:

I փուլ – Մեծ Հայքի թագավորության բանակը անցավ հարձակման և բռնկված համառ մարտում Պարսից թագավորության բանակը սկսեց պարտություն կրել: Միաժամանակ Մեհրուժանը, նմանակելով իր սպառազինությունը, սեփական ջոկատում ստեղծել էր իր նմանակներին և արդյունքում հայերը, ցանկանալով սպանել Մեհրուժանին, անընդհատ ոչնչացնում էին սրանց, սակայն միայն դրանից հետո էին պարզում, որ սպանվածը Մեհրուժանը չէ: Ի վերջո, Մանվելը ճանաչեց դավաճանին այն բանից, որ վերջինս ձի հեծնելուց ոտքերը չէր սեղմում նրա կողերին: Տարբերակելով Մեհրուժանին իր նմանակներից՝ Մանվելը ասպանդակեց իր ձին և հարձակվեց վերջինիս վրա, սակայն ընդհարման արդյունքում երկու հակառակորդներն էլ ընկան ձիերից: Եվ, մինչ Մանվելը մարտի բովում կրկին կգտներ իր հակառակորդին, Մեհրուժանին հանդիպեց Բաբիկ Սյունին, որը հարձակվեց դավաճանի վրա, նիզակահարեց նրան ու ի վերջո գլխատեց: Իր հերթին տասնվեցամյա Արտավազդ Մամիկոնյանը, որին տարիքի պատճառով արգելվել էր մասնակցել մարտին և որը, սակայն, անտեսել էր այդ արգելքը, չափազանց հմուտ լինելով նետաձգության մեջ, ոչնչացրեց թշնամու բազմաթիվ ռազմիկների: Ի վերջո, հակառակորդի մի ռազմիկ, երեխայի տեղ ընդունելով պատանի Մամիկոնյանին և ցանկանալով գերել նրան, հարձակվեց Արտավազդի վրա, սակայն վերջինս այնպես նետահարեց իր հակառակորդին, որ նետը միջաթափանց ծակեց զրահապատված թշնամուն ու դուրս եկավ նրա թիկունքից: Դրանից հետո, շարունակելով հետևակ նիզակամարտը, Արտավազդը ոչնչացրեց բազում թշնամիների:

II փուլ – Մեծ Հայքի թագավորության բանակ հետապնդեց թշնամուն և լիովին ոչնչացրեց, սակայն այդ ընթացքում զոհվեցին Վաչե Մամիկոնյանն ու Գարջույլ Խորխոռունին:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր: Թշնամու հիմնական բանակը, մնալով առանց առաջնորդի, արագորեն նահանջեց և հեռացավ Մեծ Հայքի սահմաններից:[2]

---

[1] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 5, գլուխ 41; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»:

[2] Այս ճակատամարտի թիվը տրվել է այն հիմնավորմամբ, որ սրանից հետո ըստ Փավստոս Բյուզանդի (գիրք 5, գլուխ 42). «*... եւ հետ այսորիկ ամս եւթն*» Պարսից թագավորության բանակն այլևս չի ներխուժում Մեծ Հայք: Ըստ իս հիշատակված «ամս»-ի վերջի «ս»-ն այս դեպքում արդյունք է այս կամ այն աղավաղման և իրականում մենք գործ ունենք «ամ» («տարի») բառի, այսինքն՝ 7 տարվա հետ: Համեմատաբար երկար տևած խաղաղ այս ժամանակաշրջանը, առաջնորդվելով «Համադրման մեթոդ»-ով, ակնհայտորեն արդյունքն էր ռազմատենչ Շապուհ II-ի մահվան և Պարսից թագավորությունում դրան հաջորդած խառնաշփոթի ու գահակալական պայքարի, իսկ Մեհրուժան Արծրունին, իր հովանավորի մահվանից հետո կորցնելով հաջողության հասնելու բոլոր հույսերը, ըստ երևույթին վերջին հուսահատ և իր համար ճակատագրական փորձն է կատարել հաստատվելու Մեծ Հայքի գահին, որն սակայն վերջացել է այս դավաճանի կործանմամբ: Սրա հետ կապված սխալ է թվում այն տեսակետը, որ Մեհրուժանը սպանվել է 371 թ-ի Ձիրավի ճակատամարտի վերջում: Ավանդական թերահավատ մոտեցումը Փավստոս Բյուզանդի երկի նկատմամբ բերել է նրան, որ չի ընդունվել Ձիրավի ճակատամարտին հաջորդող Մեհրուժան Արծրունու գործունեությունը և, հետևաբար նաև՝ այս ճակատամարտը:

382 թվականին որպես Հռոմեական կայսրության արևելյան մասի տիրակալ իր դիրքերը քիչ թե շատ կայունացրած Թեոդոսիոս I Մեծը ի վերջո լեզու գտավ կայսրության տարածքը ողողած գերմանական ցեղերի առաջնորդների հետ, ինչի արդյունքում վերջնականապես հրաժարվեց Հռոմեական կայսրության նախկին տիպի բանակ ունենալու գաղափարից և այդուհետ իր բանակը սկսեց կազմել ու համալրել գործնականում միայն գերմանական ցեղերի և հատկապես դաշնակից կամ վարձկան գոթերի ուժերից: Այս հանգամանքը, որը շուտով իր տարածումը գտավ նաև կայսրության արևմտյան մասում, թեև պետականաշինական մակարդակում, ինչպես արդեն ասվեց, հետագայում իր մեջ վերջնականապես խեղդելու էր հունահռոմեական ոգին, սակայն այժմ, գոնե մոտակա տեսլականում, որոշակի ուժ հաղորդեց մինչ այդ ծայրահեղ անկայուն վիճակում գտնվող Թեոդոսիոս I Մեծին:

383 թվականին պարսից ապստամբած իշխանները գահից հեռացրին խաղաղ տրամադրված Արտաշիր II-ին և գահ բարձրացրին Շապուհ II-ի որդի Շապուհ III-ին (383-388): Պարսից նոր արքան վերստին սահմանեց հոր օրոք գործող հարկերը, բայց նաև, ձգտելով սիրաշահել սեփական հպատակներին, զերծ մնաց այլ տիպի կտրուկ քայլերից: Միաժամանակ իր արքա հռչակման փաստը հայտարարելու կապակցությամբ Թեոդոսիոս I Մեծի մոտ ուղարկած հատուկ դեսպանախմբի միջոցով հիմնական խնդրի հետ միասին Շապուհ III-ը վերջինիս հետ բանակցություններ սկսեց նաև Հայաստանի հետագա ճակատագրի վերաբերյալ: Թեոդոսիոս I Մեծը, որպես Հռոմեական կայսրության արևելյան մասի տիրակալ, այլ խանգարող հանգամանք չլինելու պարագայում մեծ հաշվով ավելի ուժեղ էր Շապուհ III-ից, սակայն իրականում լիովին տարված էր սեփական հոգսերով և ոչ մի կերպ ի վիճակի չէր խառնվել Արևելքի հարցերին:

Իրոք, դեռևս 383 թ-ի օգոստոսի 25-ին սեփական ապստամբած զորավար Մագնուս Մաքսիմուսի դեմ պայքարում ընկել էր Հռոմեական կայսրության արևմտյան հատվածը կառավարող կայսր Գրացիանոսը, ինչից հետո վերջինիս ձևականորեն հաջորդած նրա տասներկուամյա որդի Վալենտինիանոս II-ը (383-392) արդեն 387 թվականին ստիպված էր եղել փախչել Արևելք և ապաստանել Թեոդոսիոս I Մեծի մոտ: Այսպիսով՝ Հռոմեական կայսրության տարածքում սկիզբ էր առնում գահակալական հերթական մրցակցությունը և այս պայմաններում պաշտոնական Կոստանդնուպոլիսը իրեն ոչ մի կերպ չէր կարող շքեղություն թույլ տալ՝ մարտական գործողությունների մեջ ներքաշվել Արևելքում: Դրան հակառակ Շապուհ III-ը, թեկուզ և կանգնած ոչ նախկինի հզորությունն ունեցող իր թագավորության գլխին ու այլ հավասար պայմաններում զիջելով հռոմեացիներին, միաժամանակ նաև գտնվում էր ռազմական գործողությունների ապագա հնարավոր թատերաբեմին ավելի մոտ: Բացի այդ նույն այս ժամանակ խաղաղ մի վիճակ էր ստեղծել Պարսից թագավորության արևելյան սահմաններին, քանզի Հիոնիտների թագավորությունը, որը չէր նվաճվել Շապուհ II-ի կողմից, բայց վերջինիս անվերջ հարվածների, ինչպես նաև հոների հիմնական մասի՝ դեպի արևմուտք անցնելու պատճառով, ըստ էության, կործանվել էր, իսկ Քուշանական թագավորության անկումից հետո Հյուսիսային Հնդկաստանում իր գոյությունը հաստատած Գուպտերի հնդկական թագավորությունն էլ որևէ կերպ չէր կարող սպառնալիքներ առաջացնել Պարսից թագավորության արևելյան սահմանների նկատմամբ: Արդյունքում՝ արյաց հերթական արքան ի վիճակի էր իր ողջ ուշադրությունը կենտրոնացնել արևմտյան ուղղությամբ: Այս ամենի ֆոնին հարկ է նշել, որ որևէ կերպ մխիթարական չէր վիճակը նաև Մեծ Հայքի թագավորությունում, որը, որևէ մի ուժեղ առաջնորդի առկայության պայմաններում ամենայն հավանականությամբ ամեն դեպքում կկարողանար պահել դիրքերը նաև այս

Ինչպես երևում է Մովսես Խորենացու երկի համապատասխան հատվածի (գիրք 3, գլուխ 37) ուշադիր ուսումնասիրությունից, սակայն, Սմբատ Բագրատունին իրականում միայն շիկացած շամփուրով «թագադրում» է Մեհրուժանին, որի մահվան մասին այլ ուղղակի տվյալ չկա և դա ենթադրաբար բխեցվել է հենց «թագադրման» այս փաստից: Այս պայմաններում, որևէ հիմք չունենալով Փավստոս Բյուզանդի հաղորդումը Մեհրուժան Արծրունու գործողությունների մասին կասկածի տակ առնելու, կարելի է ենթադրել, որ վերջինիս այնուհանդերձ հաջողվել է այս կամ այն կերպ կենդանի մնալ «թագադրումից» հետո և շարունակել իր գործունեությունը:

անգամ, բայց նման ուժեղ առաջնորդ, դժբախտաբար, չգտնվեց:

385 թվականին մահացավ հայրենանվեր Մանվել Մամիկոնյանը և երկիրն, ըստ էության, մնաց Արշակ IV-ի խնամակալ մոր՝ Զարմանդուխտ թագուհու, վրա, որը, ինչպես ցույց տվեց կյանքը, միանգամից կորցրեց կառավարման սանձերը և թագավորությունը մատնվեց ինքնահոսի: Քմահաճ և ինքնակամ հայ նախարարներին մեկ բռունցքում միավորելը նույնիսկ Մուշեղի կամ Մանվելի պես հզոր տղամարդկանցից, ինչպես նաև Արշակ III-ի ու Պապի տիպի իմաստուն ղեկավարներից էր հսկայական ջանքեր պահանջում, սակայն այժմ հիշատակված հզոր անհատականություններից և ոչ մեկն էլ արդեն չկար, իսկ նոր անհատականություն այդպես էլ չգտնվեց: Արդյունքում՝ Մանվել Մամիկոնյանի մահից հետո երկրի ղեկը մնաց անօգնական մի կնոջ և մանկահասակ մի երեխայի վրա, որից հետո Մեծ Հայքի թագավորությունը սուզվեց քաոսում:

Այս պայմաններում Շապուհ III-ի և Թեոդոսիոս I Մեծի միջև ընթացող բանակցությունները 387 թվականին իրենց վերջը գտան և դրանց արդյունքը եղավ այն, որ պաշտոնապես կնքվեց հաշտություն, երկու մեծ տերությունները պարտավորվեցին չպատերազմել և ավելի բարեհաճ քաղաքականություն վարել միմյանց նկատմամբ: Հայ-Պարսկական III պատերազմն իր հերթին ավարտվեց, իսկ Մեծ Հայքի թագավորությունն էլ, ըստ էության, բաժանվեց երկու անհավասար մասերի՝ երկրի մեկ հինգերորդ մասն անցավ Հռոմեական կայսրությանը, իսկ չորս հինգերորդ մասն էլ՝ Պարսից թագավորությանը: Արվաստանի, Ծավդեքի, Արձնի, Սանասունքի, Տուրուբերանի, Արարատի, Տայքի արևմուտքի, Փոքր Հայքի արևելքի և հյուսիս-արևելքի գծից արևելք ընկած տարածքները անցան Պարսից թագավորությանը, իսկ դրանցից արևմուտք ընկած տարածքները՝ Հռոմեական կայսրությանը[1]:[2]

Գլուխ 28
Մեծ Հայքի թագավորության մայրամուտը

Ստեղծված պայմաններում երկիմաստ դրության մեջ էին մնում, սակայն, ըստ էության արդեն ընդամենը միայն կողմնակի մի դիտորդի վերածված և իր պատանի հասակի պատճառով իրավիճակի լրջությունը այդպես էլ չգիտակցող Արշակ IV-ը ու նրա մայր Զարմանդուխտը: Արդյունքում՝ Զարմանդուխտը, վերջնականապես կորցնելով իր խնամակալությանը մնացած թագավորությունը, չկարողացավ հղանալ մեկ այլ ավելի լավ գաղափար, քան որդու և արքունիքի հետ միասին Հռոմեական կայսրության տիրապետության տակ անցնող Մեծ Հայքի թագավորության մաս անցնելն էր: Պետք է ասել, սակայն, որ Շապուհ III-ին ևս ձեռք էր տալիս հայերի այդ քայլը, քանզի վերջինս գրեթե անմիջապես էլ Մեծ Հայքի թագավորության պարսկական ազդեցության մասում գտնվող հատվածի արքա հռչակեց Խոսրով անունով մի Արշակունու՝ Խոսրով IV-ին (387-388՝ համիշխան, 388, 416), որը սկզբում լիովին գտնվում էր իր ազդեցության ներքո: Սկզբնական պահերին հայ նախարարները, Խոսրով IV-ի գահակալելը ընկալելով որպես երկիրը ռազմակալելու պարսկական հերթական մի փորձ, գործնականում իրենց ողջ կազմով հետևեցին Արշակ IV-ին, բայց հետո պարզվեց, որ իրականում ստեղծվել է լրիվ նոր մի իրավիճակ:

---

[1] Մեծ Հայքի թագավորության 387 թվականի բաժանման կապակցությամբ պետք է նշել, որ սխալ է թվում շրջանառության մեջ գտնվող այն տեսակետը, թե այս բաժանումով Հայաստանի մեծ մասն իբր անցել է Պարսից թագավորությանը (տես օրինակ՝ ՀՍՀ հատոր 5, էջ 79): Ինչպես հստակորեն կարող է տեսնել Հայաստանի քարտեզի վրա հայացք գցող ցանկացած ոք, այն բաժանվել է լրիվ հավասար՝ Հայաստանի հավասար տարածքներ բաժին հանելով Հռոմին և Պարսից թագավորությանը:
Իսկ այս սխալ տեսակետը տարածում է գտել «Հայաստան» և «Մեծ Հայք» հասկացությունների նույնացումից, որը, ինչպես արդեն նշել ենք, արմատապես սխալ է:

[2] Փավստոս Բյուզանդ «Հայոց պատմություն», գիրք 6, գլուխ 1; Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 42, 43; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 1, գլուխ 6, 7; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 13; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 1; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 16; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Օրոսիոս «Պատմություն ընդդեմ հերետիկոսների» գիրք 7, գլուխ 34; Ավրելիանոս Վիկտոր «Քաղվածքներ Հռոմեական կայսրության կայսրերի կյանքից և բարքերից», գլուխ 68; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»:

Իրոք, արդեն Հռոմեական կայսրության սահմաններում պարզվեց, որ Թեոդոսիոս I Մեծը ամենևին էլ դեմ չէ Շապուհ III-ի առաջխաղացմանը և երկու տիրակալների մեջ կա կնքված հստակ մի համաձայնություն: Իր հերթին պատանի ու, թերևս, նաև արդեն հիվանդ Արշակ IV-ը ոչ մի կերպ հույս չէր ներշնչում, թե կկարողանա կրկնել հոր քայլը և հետագայում հետ բերել կորցրածը, ընդ որում դա այն պարագայում, երբ նրա հետ հեռացած իշխաններից շատերը Մեծ Հայքի թագավորության պարսկական հատվածում թողել էին իրենց ունեցվածքը ու կալվածքները: Խզմանը ոչ քիչ նպաստեց նաև Արշակ IV-ն ինքը, որը, չդրսևորելով քաղաքական հասունություն, սկսեց ավելորդ խստությամբ վարվել առանց այդ էլ իրեն հավատարիմ մնալու ավելի ու ավելի քիչ հիմքեր ունեցող հայ նախարարների հետ: Այսպես, զարմանալի է, սակայն Հայոց արքայի խստություններն ամենից առաջ ուղղվեցին հենց իր եղբոր աներ, Բագրատ Բագրատունու հայրենանվեր որդի Սմբատ Բագրատունու (մոտ 350-380) տղա Սահակ Բագրատունու (մոտ 380-388) դեմ, որը, ինչպես հավատացրել էին արքային, իբր իր մոտ էր պահել արքայական թանկարժեք զարդերից մեկը: Արդյունքում՝ Բագրատունյաց իշխանը, մի ինչ-որ հարմար պահ որսալով, դիմեց փախուստի և ծառայության անցավ Խոսրով IV-ի մոտ: Սահակ Բագրատունու հետ հեռանալ էին նախատեսում նաև Սուրեն Խորխոռունին, Վահան Առավեղյանը և Աշխադար Դիմաքսյանը, սակայն, չկարողանալով ժամանակին այդ անել, նրանք առժամանակ մնացին տեղում: Եվ վերջապես իր դերը խաղաց նաև հեռացած նախարարներին ուղղված Շապուհ III-ի սիրալիր ուղերձը, ինչպես նաև Խոսրով IV-ի կողմից կազմակերպված լավ ընդունելությունը վերադարձողներին:

Արդյունքում Արշակ IV-ի հետևից գնացած նախարարներն աստիճանաբար հետ վերադարձան և ընդունեցին Խոսրով IV-ի իշխանությունը, ընդ որում Սուրեն Խորխոռունին, Վահան Առավեղյանը և Աշխադար Դիմաքսյանն էլ ոչ միայն հեռացան, այլև իրենց հետ փախցնելով բերեցին նաև Արշակ IV-ի գանձարանը[1]: Իր հերթին Խոսրով IV-ին ծառայության անցած սպարապետ Սահակ Բագրատունին ոչ միայն ճնշեց Վանանդեցիների հակաարքունական խռովությունը, այլև վերադարձող նախարարներին օգնեց ազատվել Արշակ IV-ի օգտին գործող, Վահան Մամիկոնյանի որդի Սամվել Մամիկոնյանի հետապնդումից[2]: Դրանից հետո հետ մղվեց նաև Արշակ IV-ի օգտին գործող ուժերի մի նոր հարձակում ևս[3]: Արդյունքում՝ առժամանակ Արշակ IV-ի մոտ մնացին Արշակ IV-ի աներձագ և Բաբիկ Սյունու որդի Դարան, Սպանդարատ Կամսարականի (մոտ 365-385) որդի Գազավոնը (մոտ 385-425), ինչպես նաև Պերոզ Գարդմանցին, Կենա Ամատունին, Սուրեն Մոկացին և այլք:

Մեծ Հայքի թագավորության բաժանումով Գուգարքը բաժին էր հասել Պարսից թագավորության ազդեցության տակ գտնվող Իբերիայի թագավորությանը, սակայն նույն 387 թվականին Գուգարքի արևմտյան հիմնական գավառներից մեկը կազմող Կղարջքի բնակչությունը ապստամբեց և ընդունեց Հռոմեական կայսրության տիրապետությունը: Իր հերթին, կորցրածը հետ գրավելու նպատակով առաջխաղացած Վարազ-Բակուր II-ի գլխավորած Իբերիայի թագավորության բանակին Հռոմեական կայսրության սահմանապահ բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները հետ շպրտեցին[4]:

388 թվականին Շապուհ III-ը, որն այնուհանդերձ ժառանգել էր իր հոր հեռատեսությունը, համարելով, որ Խոսրով IV-ը արդեն չափից շատ է ուժեղանում, իսկ գուցե նաև սեփական լրատուներից տեղեկանալով, որ Արշակունի այս գահակալը նպատակ ունի ոտքի հանել Մեծ Հայքի թագավորությունը, զգալի ուժերով Մեծ Հայքի թագավորություն ուղարկեց իր Արտաշիր անունով որդուն՝ հրամայելով նրան ձերբակալել Հայոց արքային և տեղափոխել Տիզբոն: Ճանապարհին Շավարշ Կամսարականի, Պարգև Ամատունու ու վերջինիս որդի Մանվելի գլխավորած Կամսարականների (մոտ 1.000) և

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 43, 44:
[2] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 45:
[3] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 46:
[4] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Վախուշտի Բագրատունի «Սամցխեի և Կղարջքի կյանքը»:

Ամատունիների (700) միացյալ հեծելազորը հարձակվեց Խոսրով IV-ին, ինչպես նաև Գազավոն ու Հրահատ Կամսարականներին ձերբակալած Պարսից թագավորության բանակի (մոտ 5.000) վրա և փորձեց ազատել վերջիններիս, սակայն Խոսրով IV-ը շղթայված էր ու նրան ազատել չհաջողվեց, իսկ բռնկված համառ մարտում էլ Մանվելն և Շավարշը զոհվեցին, Պարգևն էլ գերվեց ու հետագայում սպանվեց[1]: Ձեռք բերած, կարծես թե, հաջողությունը չվայելեց, սակայն, նաև Արտաշիրը, որը, փորձ կատարելով զբաղեցնել մինչ այդ կյանքից հեռացած հոր գահը, անմիջապես էլ սպանվեց:

Արդյունքում՝ Խոսրով IV-ը բանտարկվեց Անհուշ բերդում, իսկ Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց վերջինիս եղբայր Վռամշապուհը (388-416): Հենց նույն 388 թվականին իր հերթին մահացավ նաև Արշակ IV-ը, որից հետո, վերջինիս ուղղակի հետնորդի բացակայության պայմաններում, Մեծ Հայքի թագավորության Հռոմեական կայսրությանն անցած մասում որևէ արքա այլևս չթագավորեց: Արդյունքում՝ զուտ իրավական տեսանկյունից, Մեծ Հայքի թագավորության միակ արքան մնաց Վռամշապուհը՝ լինելով, սակայն, քաղաքականապես արդեն շատ թույլ և տիրելով նախկինի համեմատ անհամեմատ փոքրածավալ մի պետության: Այս պայմաններում Հայոց հերթական այս արքան առավելագույնը, որ կարողացավ անել, դա Հայոց գրերի գյուտի վերստեղծման գործընթացին, ինչպես նաև մշակույթային կյանքի բուռն զարգացմանն աջակցել կարողանալն էր:

Փաստորեն 387 թվականի պայմանագրով Մեծ Հայքի թագավորության համար ընթացող հռոմեա-պարսկական մրցակցությունը, համենայն դեպս գոնե այս փուլում, ըստ էության, գտավ իր վերջը: Պետք է ասել, սակայն, որ բաժանումից այնուհանդերձ անհամեմատ ավելի շատ շահեց Պարսից թագավորությունը: Եթե խնդիրը դիտարկենք պատմական տեսակետից, ապա պատմական Հայաստանը երկու գերտերությունների միջև բաժանվել էր հավասարապես, սակայն մյուս կողմից էլ, եթե դիտարկենք միայն Մեծ Հայքի թագավորությունը, ապա նրա հիմնական մասն այնուհանդերձ անցավ Պարսից թագավորությանը: Սրանից զատ տեղի ունեցան էլի որոշակի ռազմաքաղաքական փոփոխություններ ևս:

Այսպես, ամենից առաջ երկարեց հռոմեա-պարսկական սահմանը, քանզի նախկինում, եթե Հռոմեական կայսրությանը հարված հասցնելիս Պարսից թագավորությունը ստիպված էր այդ անել բացառապես միայն Հյուսիսային Միջագետքի վրայով, իսկ հակառակ պարագայում էլ՝ հաղթահարել հայերի համառ դիմադրությունը և նոր միայն հասնել Հռոմեական կայսրության տիրույթներին, ապա այժմ հռոմեա-պարսկական սահմանը ձգվեց գործնականում գրեթե մինչև Սև ծով ու կարիք առաջացավ իրականացնել կայսրության սահմանների պահպանությունը նաև ողջ այդ տարածության երկայնքով: Սրանից զատ դրվեց նաև Իբերիայի թագավորության հարցը, քանզի, եթե նախկինում Պարսից թագավորությունը այստեղ իր ազդեցությունը կարողանում էր պահպանել միայն շատ մեծ ջանքերի արդյունքում, ապա այժմ, Հռոմեական կայսրության առանց այդ էլ թուլացած ազդեցության պայմաններում, Իբերիայի թագավորությունը հայտնվեց Մեծ Հայքի թագավորության տարածքից ուղիղ կերպով առաջացող Պարսից թագավորության հարմար հարվածի տակ և պաշտոնական Տիզբոնի ազդեցությունը այս երկրում վերջնականապես ամրապնդվեց, իսկ այդ պայմաններում Վրաստանում հռոմեացիներին միակ հույսը մնում էր հենց այդ պատճառով էլ աստիճանաբար վերելք ապրող, սակայն ամուր կերպով հռոմեացիներին ենթակա ու Արևմտյան Վրաստանն ընդգրկող Լազական թագավորությունը: Փոխարենը այս ամենին, որ հասկանալով կամ չհասկանալով կորցրեց Թեոդոսիոս I Մեծը, իր տերության արևելյան սահմաններին ձեռք բերած հարաբերական անդորրն էր, որը, սակայն, այսպես թե այնպես լինելու էր, քանի որ պաշտոնական Տիզբոնը, այն էլ հայերի ակտիվ հակազդեցության և ներքաղաքական առաջացած բարդությունների պայմաններում, հազիվ թե կարողանար լուրջ սպառնալիք հանդիսանալ Հռոմեական

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 50:

կայսրության սահմանների համար նույնիսկ այն պարագայում, երբ Թեոդոսիոս I Մեծը զբաղված լիներ բացառապես միայն արևմտյան հարցերով:

Սկսվում էին, սակայն արդեն, նոր ժամանակներ, որոնք իրենց հետ նոր փոփոխություններ էին բերելու:

Մաս IX
Բյուզանդա-պարսկական աշխարհը և Հայաստանը

Գլուխ 1
Բյուզանդական կայսրության ծնունդը

387 թվականի պայմանագրով Մեծ Հայքի թագավորության համար ընթացող հռոմեա-պարսկական մրցակցությունը, ինչպես արդեն ասվեց, մի որոշակի փուլում գտավ իր վերջը: Խնդիրը, սակայն, որն առկա էր իր ժամանակի երկու գերտերությունների միջև, ոչ մի կերպ չէր կարող համարվել վերջնականապես լուծված, քանի որ երկու կողմերն էլ, այդ պահին այս կամ այն պատճառով հարմար չգտնելով շարունակել հակամարտությունը և ժամանակի մի ինչ-որ պահի համաձայնության գալով, մեծ հաշվով որևէ կերպ չէին հրաժարվել մեկը մյուսին ինչպես ընդհանրապես պարտության մատնելու, տարածաշրջանից դուրս մղելու կամ նույնիսկ ոչնչացնելու նպատակից, այնպես էլ, մասնավորապես, Հայաստանին ու հարակից երկրներին տիրելու գաղափարից: Նույն այս ժամանակ, սակայն, արևմուտքի քրիստոնյաների մոտ տեղի ունեցավ ևս մեկ ու դարերի ընթացքում մեծ արձագանք գտած մի փոփոխություն:

Գործընթացի ձևական սկիզբ հանդիսացավ այն, որ, նույն չարաբաստիկ 387 թվականին Վալենտինիանոս II-ը, ինչպես արդեն ասվեց, ստիպված եղավ փախչել Արևելք և ապաստանել Թեոդոսիոս I Մեծի մոտ: Արևելքում իշխող կայսրը, սակայն, չընդունելով այս փոփոխությունը, 388 թ-ի օգոստոսի 12-ին պարտության մատնեց և մահապատժի ենթարկեց Վալենտինիանոս II-ին վտարած Մագնուս Մաքսիմուսին, որից հետո, որպես Հռոմեական կայսրության արևմտյան մասի տիրակալ, վերջնականապես հաստատեց նույն Վալենտինիանոս II-ին: Վերջինս, սակայն, մարդկայնորեն և քաղաքականապես այդպես էլ չհասունանալով, 392 թ-ի մայիսի 15-ին իր իսկ մտերիմների կողմից սպանվեց, ինչից հետո դավադիրները Հռոմեական կայսրության արևմտյան մասում կայսր հռչակեցին սպանվածի քարտուղար Եվգենիոսին (392-394): Իր հերթին հերթական անգամ չհամակերպվելով այս փաստի հետ, սակայն, Թեոդոսիոս I Մեծը մարտական գործողություններ սկսեց վերջինիս դեմ և 394 թ-ի սեպտեմբերի 6-ին պարտության մատնեց ու մահապատժի ենթարկեց գերված Եվգենիոսին: Արդյունքում, որպես Հռոմեական կայսրության միակ կայսր մնաց Թեոդոսիոս I Մեծը, սակայն դրանից հետո վերջինս ինքն էլ երկար չապրեց, իսկ վերջնարդյունքում էլ արդեն սկիզբ առան անդառնալի փոփոխություններ:

Իրոք, այն բանից հետո, երբ 395 թվականի հունվարի 17-ին Թեոդոսիոս I Մեծը կնքեց իր մահկանացուն, Հռոմեական կայսրությունը, թվում էր, թե հերթական անգամ, բայց այս անգամ արդեն վերջնականապես, բաժանվեց երկու մասի՝ արևմտյան և արևելյան հատվածների: Փաստորեն այն գործընթացը, որը, ի դեմս կայսրության տարբեր մասերում տարբեր ուժերի կողմից հռչակվող և միաժամանակ իշխող մի քանի կայսրերի սաղմնավորվել էր դեռևս «զինվորական կայսրերի» արյունոտ դարաշրջանում ու որի սկիզբը դրել էր դեռևս Սեպտիմիանոս Կարակալլան, այժմ ստացավ իր վերջնական և ավարտուն տեսքը: Արդյունքում՝ Հռոմեական կայսրության արևմտյան մասում ստեղծվեց հետագայում Արևմտյան Հռոմեական կայսրություն, իսկ ժամանակակիցների կողմից դեռևս Հռոմեական կայսրություն կոչված պետությունը, որն ընկավ 476 թվականին, իսկ նույն կայսրության արևելյան մասում էլ փաստորեն առաջացավ հետագայում Արևելյան Հռոմեական կայսրություն, ժամանակակիցների կողմից դեռևս Հռոմեական կայսրություն, իսկ հետագա սերունդների կողմից ու հատկապես գիտական մակարդակում էլ Բյուզանդական կայսրություն կոչված պետությունը: Վերջինս, ի տարբերություն իր արևմտյան համարժեքի, որը չապրեց նույնիսկ մեկ հարյուրամյակ էլ, դրանից հետո գոյություն էր ունենալու ևս մեկ ամբողջ հազարամյակ՝ հսկայական ու անջնջելի մի հետք թողնելով Արևելյան Եվրոպայի, Փոքր

Ասիայի, ինչպես նաև Մերձավոր և նույնիսկ Միջին Արևելքի պատմության մեջ: Փաստորեն մինչև 476 թվականը, ինչպես բազմիցս եղել էր մինչ այդ, իրավաբանորեն գոյություն ունեին Հռոմեական կայսրության միանգամից երկու կայսրեր և միայն 476 թվականից հետո էր, որ, երբ Արևմտյան Հռոմեական կայսրության կայսրը գահընկեց եղավ, մնաց միայն մեկ կայսր, իսկ կայսրությունն էլ փաստորեն վերամիավորվեց, թեև բնականաբար՝ զգալի տարածքներ կորցնելու հաշվին:

Արևմտյան Հռոմեական կայսրությունն այդուհետ գործնականում ոչ մի ազդեցություն չունեցավ Հայաստանի ու վերջինիս հարակից երկրների վրա և այս տեսակետից նրա պատմությունը մեզ, ըստ էության, որևէ կերպ հետաքրքիր չէ: Այս առումով միայն ավելացնենք, որ հոր մահից հետո 395 թվականի հունվարին Արևմտյան Հռոմեական կայսրություն ղեկին հայտնվեց Թեոդոսիոս I Մեծի կրտսեր որդին՝ տասնմեկամյա Հոնորիոսը (395-423), որը, համենայն դեպս իր կառավարման գոնե սկզբնական տարիներին, ուներ միայն ձևական իշխանություն, իսկ իրական իշխանությունը գտնվում էր նրա ամենազոր խնամակալների ձեռքին: Հենց այս կայսեր օրոք էլ Արևմտյան Հռոմեական կայսրությունը փաստորեն բռնեց կործանման ուղին: Ինչպես արդեն ասվեց, սակայն, միանգամայն այլ ճակատագիր էր վիճակված Արևելյան Հռոմեական կայսրությանը, կամ, ինչպես ավելի հաճախ են կոչում և այսուհետ այդպես կկոչենք նաև մենք, Բյուզանդական կայսրությանը: Նույն 395 թվականի հունվարին վերջինիս ղեկին հայտնվեց Թեոդոսիոս I Մեծի ավագ որդին՝ տասնութնամյա Արկադիոսը (395-408), որը ևս, սակայն, այդպես էլ մեծ հաշվով ինքնուրույն կառավարել չկարողացավ ու որի օրոք իրական իշխանությունը ևս գտնվում էր կայսեր հզոր խորհրդատուների ձեռքին: Մինչև առաջ անցնելը, սակայն, չէր խանգարի ուշադրություն հրավիրել նաև հետևյալ հանգամանքի վրա:

Մեզ համար, որ դիտարկում ենք երևույթը հազարամյակների բարձունքից, արդեն գրեթե սովորական է դարձել 395 թվականը ընկալել որպես Հռոմեական միասնական կայսրության տրոհման և, կարծես թե, սկզբունքորեն մի ինչ-որ նոր ու նախորդից տարբերվող երևույթի սկիզբ, ինչպես, ի դեպ, իրականում նաև այդպես էլ կա: Իր ժամանակակիցների համար, սակայն, այս իրադարձությունն ու նրա հատկապես հեռուն գնացող հետևանքները մնացին մեծապես չընկալված և իրականում բոլորին թվում էր, թե դա ուղղակի համակայսրերի կառավարման հերթական օրինակներից մեկն է: Ավելին, այս դեպքերից հետո երկար հարյուրամյակներ անց ևս բոլորին թվում էր, թե մեծ հաշվով ոչինչ չի փոխվել և շարունակում է գոյություն ունենալ հռոմեական հինավուրց փառքի կրող Հռոմեական կայսրությունը, ուղղակի այն արևմուտքում կորցրել է իր երբեմնի հիմնական մասը կազմող տարածքները: Ավելին, նույնիսկ «Բյուզանդական կայսրություն» տերմինն ինքը, այդքան սովորական մեզ բոլորիս համար, սկզբունքորեն անծանոթ և նույնիսկ անընդունելի էր նույն այդ կայսրության հպատակների համար, որոնք խորապես վստահ էին, որ շարունակում են ապրել, գուցե մի քիչ այլ սահմաններով, իսկ հաճախ էլ՝ առանց բուն Հռոմ քաղաքի, բայց այնուհանդերձ հենց Հռոմեական կայսրությունում: Ավելորդ էլ է ասել, որ վիճակը այս կերպ էր ընկալվում նաև կայսրության հարևանների և հենց նույն Պարսից թագավորության կողմից:

Պատմությունը լի է սահուն շրջադարձներով և հաճախ դժվար է ասել, թե ե՞րբ սկիզբ առավ այս կամ այն երևույթը, որը հետագայում բերեց հսկայական նշանակություն ունեցող փոփոխությունների: Մասնագետները մինչ այժմ էլ վիճում են, թե էթնո-քաղաքական առումով, ի վերջո, Հռոմեական կայսրությունը ե՞րբ վերածվեց Բյուզանդական կայսրության, իսկ հռոմեական պետությունն էլ իր բնույթով ե՞րբ դարձավ հունական՝ առաջարկելով 330՝ Կոստանդնուպոլսի հիմնումը, 395՝ Հռոմեական կայսրության բաժանումը Թեոդոսիոս I Մեծի որդիների միջև և 476՝ Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին կայսեր գահազրկումը, թվականները: Պետությունները, սակայն, որպես էթնոմշակութային և քաղաքական երևույթներ, չեն առաջանում մի քաղաքի հիմնադրումով, որևէ այլ պետության արհեստական բաժանմամբ կամ էլ, ըստ

էության, որևէ իրական իշխանություն չունեցող ինչ-որ մի կայսեր գահազրկմամբ: Իմ խորին համոզմամբ այսպես առաջանում է վարչաքաղաքական միավորը, իսկ պետությունը, որպես էթնոմշակութային և քաղաքական բարդ մի երևույթ, ստեղծվում է տասնամյակների, եթե ոչ հարյուրամյակների ընթացքում:

Այս տեսանկյունից դիտարկելիս, թերևս, կարելի է ամրագրել, որ Բյուզանդական կայսրությունը, ստեղծված 395 թվականին, ըստ էության պատմական ասպարեզ իջավ 476 թվականին, երբ մինչ այդ, թեկուզ և բաժանված վիճակում, գոյություն ունեցող Հռոմեական կայսրությունը վերջնականապես կորցրեց Ապենինյան թերակղզին, իսկ վերջնականապես էլ ձևավորվեց VI դարի վերջին, երբ լատիներենի փոխարեն պետական լեզու հռչակեց հունարենը: Իրոք, հենց 476 թվականից սկսած էլ Բյուզանդական կայսրությունում հունական տարրը, աստիճանաբար հետ մղելով մինչ այդ լատինականի նկատմամբ գերիշխանության հասած գերմանականին, սկսեց աստիճանաբար ինքը գերիշխել՝ հետագա հարյուրամյակներում Հռոմեական կայսրությունը աստիճանաբար վերածելով Բյուզանդական կայսրության, որում արդեն հռոմեական էին, թերևս, միայն անցյալի խամրող հուշերը և մեկ էլ մշտապես իր ուժից վեր հավակնություններ ունենալը: Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը և ամրագրելով, որ Բյուզանդական կայսրությունը, որպես էթնոմշակութային և քաղաքական երևույթ, վերջնականապես ձևավորվեց երկու հարյուրամյակների ընթացքում, ստորև պարզության ու առավել կոռեկտության համար Արևելյան Հռոմեական կայսրության կապակցության այնուհանդերձ կօգտագործվի հենց «Բյուզանդական կայսրություն» տերմինը:

Գլուխ 2
Դարաշրջանի ընդհանուր բնութագիրը

388 թվականին Շապուհ III-ի մահից հետո Պարսից թագավորության գահին նրա հաջորդեց իր որդի Վահրամ IV-ը (388-399): Այս արքան, ընդհանուր առմամբ լինելով թույլ մի տիրակալ և, բացի այդ նաև, ունենալով առողջական խնդիրներ, ոչ մի լուրջ արտաքին ձեռնարկում չիրականացրեց, ինչը խաղաղություն ապահովեց նաև քրիստոնյաների հետ հարաբերություններում: Այս տարիների կապակցությամբ մինչև առաջ անցնելը հարկ է քննարկել, թերևս, միայն մեկ հարց:

Իրոք, գրականության մեջ կարծիք է թևածում[1], թե սկսած արդեն 380-ական թվականների սկզբից, Հիոնիտների թագավորության փոխարեն Պարսից թագավորության արևելյան սահմանին հայտնվում է Հեփթաղական թագավորությունը, ընդ որում հեփթաղներն, իբր, Պարսից թագավորության բանակի հետ միասին 384 թվականին նույնիսկ ասպատակել էլ են Հայոց Միջագետքը և պաշարել են Եդեսիան: Այս հանգամանքը, սակայն, համենայն դեպս սույն տողերը գրելու պահին, չի հաստատվում սկզբնաղբյուրներով և, ըստ էության, ընդամենը միայն տարածված թյուրիմացության արդյունք է: Իրականում, ընդհուպ մինչև 420-ական թվականները, Պարսից թագավորության արևելյան հարևանի մասին մենք գործնականում ոչ մի հստակ տեղեկություն չունենք, իսկ այս պայմաններում կարող ենք ընդամենը միայն ենթադրել, որ այստեղ շարունակում էին այս կամ այն կերպ գոյություն ունենալ Հիոնիտների թագավորության փլատակների վրա գոյատևող տեղական բնույթի ուժեր: Այսպես թե այնպես, սակայն, քննարկվող ժամանակահատվածում արևելքից Պարսից թագավորության վրա տեղի ունեցած որևէ հարձակման կամ գոնե այս թագավորության արևելյան սահմանին մի որևէ ռազմաքաղաքական ակտիվության մասին մենք որևէ տեղեկություն չունենք:

Նույն այս ժամանակ, հատկապես նախորդ տարիների բուռն իրադարձությունների ֆոնին, համեմատական խաղաղություն էր տիրում նաև մեծապես արդեն թուլացած Մեծ

[1] Տես օրինակ՝ Гумилев Л. Н. “Эфталиты и их соседи в IV в.”, Вестник древней истории 1959, N 1.

Հայքի թագավորությունում: Միաժամանակ հարկ է նշել, որ Մեծ Հայքի թագավորությունը, մինչ այդ միանշանակ ուժեղ լինելով Իբերիայի թագավորությունից, այժմ, իր այս նոր դրության մեջ, սեփական ռազմաքաղաքական անկում ապրած հզորությամբ արդեն մեծապես իջել էր Իբերիայի թագավորության մակարդակին, որին էր զիջվել նաև Մեծ Հայքի կարևորագույն հյուսիսային բաղադրիչներից մեկը՝ Գուգարքի հիմնական մասը: Արդեն ընդգծվեց, որ Իբերիայի թագավորության արքաները, Մեծ Հայքի թագավորության գահի նկատմամբ զբաղեցնելով ենթակայի դերը, որոշակի ժամանակահատվածներում, որպես Հայոց արքայի ստորադասներ, կրում էին նաև Գուգարքի բդեշխի տիտղոսը և ահա այժմ, օգտվելով Մեծ Հայքի թագավորության թուլացումից, ստորադաս վիճակը Հայոց արքայից մոռացվեց, սակայն բդեշխի տիտղոսն ու հատկապես դրանից բխող իրավունքները Գուգարքի նկատմամբ մնացին:

Ինչ վերաբերում է Մազքութական թագավորությանը, ապա, սկսած արդեն 370-ական թվականներից և, հատկապես այն բանի ֆոնին, որ այս թագավորության հիմքը կազմող ու խիստ անկայուն քոչվոր տարրը մեծապես ընդգրկվել էր Հոնական տերության ռազմաքաղաքական ձեռնարկումներում, վերջինս հայտնվել էր գործնական քայքայման եզրին, ընդ որում իրավիճակն այն աստիճանի անդառնալի հետևանքներ էր ունեցել, որ այժմ նույնիսկ միանշանակ կարծիք էլ չկա, թե ի վերջո, ե՞րբ վերջնականապես անկում ապրեց կամ վերացավ այս թագավորությունը: Այս առումով մեզ հետաքրքրում է, թերևս, ընդամենը միայն մեկ հանգամանք և մենք կարող ենք անել, թերևս, միայն մեկ ամրագրում՝ Մեծ Հայքի թագավորության արևելյան կարևորագույն բաղադրիչները կազմող Արցախ և Ուտիք նահանգները, որոնք ձևականորեն ընդգրկված էին Մազքութական թագավորության կազմում, այս թագավորության քայքայման պայմաններում տեղական նախարարական տոհմերի գլխավորությամբ գործնական անկախություն էին վայելում ու Հայաստանի այլ մասերի հետ անբաժանելի կերպով ընդգրկված էին նույն էթնոմշակութային և քաղաքական համակարգում:

Վերջին տասնամյակում տեղական թագավորությունների կազմում նոր երևույթ էր Լազական թագավորությունը, որը հետագա երկու հարյուրամյակում ապրելու էր իր ծաղկման և անկման շրջանները: Արդեն ասվեց, որ IV դարի վերջում Մեծ Հայքի թագավորության թուլացման պայմաններում Իբերիայի թագավորությունը հայտնվեց Մեծ Հայքի թագավորության տարածքից ուղիղ կերպով առաջացող Պարսից թագավորության հարմար հարվածի տակ և պաշտոնական Տիզբոնի ազդեցությունը այս երկրում վերջնականապես ամրապնդվեց, իսկ այդ պայմաններում Վրաստանում Բյուզանդական կայսրության միակ հենակետը մնում էր հենց այդ պատճառով էլ աստիճանաբար վերելք ապրող, Արևմտյան Վրաստանն ընդգրկող և իր սոցիալ-քաղաքական վիճակով, ըստ էության, մեծապես հենց Իբերիայի թագավորության մի քիչ պարզունակացված պատճենը հանդիսացող Լազական թագավորությունը:

370-ական թվականների բուռն առաջխաղացումից հետո 380 և 390-ական թվականներին որոշակիորեն թուլացել էր նաև Հոնական տերությունը, որը, չնայած տեղեկությունների խիստ հատվածական բնույթին, ինչպես կարելի է դատել մեզ հասած պատառիկներից ու ակնարկներից, ներքաղաքական անկայունության մի որոշակի շրջան էր ապրում: Այս հանգամանքը առժամանակ օգտակար եղավ հատկապես Հռոմեական կայսրության համար, որտեղ, տեղում հաստատված գերմանա-հունահռոմեական յուրօրինակ մի սիմբիոզի պայմաններում, ինչպես ասվեց, իրավիճակը որոշակիորեն կայունացավ: 390-ական թվականների կեսերին, սակայն, ինչպես կարելի է դատել մեզ հասած տեղեկատվությունից, Հոնական տերությունը հաղթահարեց իր ներքին թուլության շրջանը և կրկին անցավ նախկինում իրեն հարազատ արտաքին ավարառուական քաղաքականությանը:

Գլուխ 3
Նոր դերակատարների մասնակցությամբ նոր խաղի սկիզբը

395 թվականի աշնանը, օգտվելով Բյուզանդական կայսրությունում տիրող խառը ներքաղաքական վիճակից, ինչպես նաև ձգտելով օգուտ քաղել Վահրամ IV-ի լիակատար անճարակությունից, Հոնական տերության մասերի բաժանված բանակը (մոտ 200.000) Դանուբից ու Փոքր Ասիայից մինչև Սև ծովի արևելյան ափերն ընդգրկող լայն ճակատով մի հզոր ու համակցված հարված հասցրեց: Կովկասյան լեռնաշղթայի հատվածում Ալանաց դուռ լեռնանցքից առաջխաղացած թշնամու հարվածի տակ ընկան Աղվանքը, Ուտիքը, Փայտակարանը, Ատրպատականը, Հյուսիսային Միջագետքը, Սատրապական Հայաստանի[1] հարավային մասը և նույնիսկ Հյուսիսային Ասորիքը: Հոնական տերության բանակը, սակայն, ավարառությունից բացի այլ նպատակ, ըստ էության, չէր հետապնդում և արդյունքում, այն բանից հետո, երբ Պարսից (մոտ 120.000) ու Մեծ Հայքի (մոտ 50.000) թագավորությունների միացյալ բանակը հմուտ զորաշարժերով կասեցրեց վերջինիս ծավալման հետագա հնարավորությունները, իսկ Բյուզանդական կայսրության բանակն (մոտ 40.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներն (մոտ 4.000) էլ իրենց կողմից մտան շարժի մեջ, վերջինս հավաքեց իր ուժերը ու Դերբենդի և Ալանաց դուռ լեռնանցքներով հեռացավ Նախակովկասյան տափաստաններ՝ կտրուկ նահանջի կամ նույնիսկ փախուստի ընթացքում լքելով ձեռք բերված ավարի ու գերիների զգալի մասը[2]: Այսպիսով՝ Կովկասյան լեռներից դեպի հարավ իրականացված հոնական հերթական հարվածը, որն, ինչպես արդեն ասվեց, մասն էր կազմում Դանուբից և Փոքր Ասիայից մինչև Սև ծովի արևելյան ափերն ընդգրկող տարածքն ընդգրկող մեկ ավելի մեծ գործողության, հարվածին ենթակա տարածքների համար ինչքան էլ անակնկալ ու ահարկու, բայց նույնքան էլ անսպասելի և մեծ հաշվով բարենպաստ ելք ունեցավ: Դրանից հետո հետագա տասնամյակներում Հոնական տերությունը իր հարվածի հիմնական ուղղությունը տեղափոխեց դանուբյան ու հռենոսյան սահման և արդյունքում Կովկասյան լեռնաշղթայից հարավ ձգվող տարածաշրջանը, ըստ էության, զերծ մնաց հետագա ծանր հարվածներից:

399 թվականին անգործունյա Վահրամ IV-ը սպանվեց և, գահից հեռացնելով այդպես էլ թագավորել չհասցրած Հազկերտ անունով վերջինիս որդուն, Պարսից թագավորության գահին բազմեց նույն Հազկերտ անունը կրող Վահրամ IV-ի եղբայրը՝ Հազկերտ I-ը (399-419): Նոր այս գահակալը կտրուկ կերպով փոխեց իր հոր և եղբոր օրոք վարվող ներքին ու արտաքին քաղաքականությունը, ինչն իր բացատրությունն ուներ:

Բանն այն է, որ Պարսից թագավորությունում մանր հողատերների, առևտրականների, արհեստավորների և նույնիսկ ազնվականների շարքերում նույն այս ժամանակ մի կողմից մեծ տարածում էր գտել քրիստոնեությունը, իսկ մյուս կողմից էլ Շապուհ II-ի երկաթյա ձեռքի ծանրությունից ազատված ու սոցիալ-տնտեսական բարենպաստ զարգացումների արդյունքում մեծապես ուժեղացած խոշոր հողատեր ազնվականները և զրադաշտական ողջ հոգևորականությունը, ուժեղացած սոցիալ-տնտեսական բարենպաստ զարգացումների արդյունքում, սկսել էին ելույթներ ունենալ նույնիսկ կենտրոնական իշխանության դեմ, իսկ այս պայմաններում էլ իրերի վիճակը որոշակիորեն լավ պատկերացնող նոր գահակալը փորձում էր հենարան գտնել քրիստոնյաների բավականին մեծաքանակ շերտի ու հիմնականում հենց նրանց ներկայացնող դասակարգի մեջ: Այս առումով հարկ է նշել, որ, թեև Հազկերտ I-ի նկրտումները որոշակիորեն արդյունք տվեցին և կենտրոնական իշխանության դիրքերը զգալիորեն ամրապնդվեցին, բայց Պարսից թագավորությունը մեծ հաշվով շարունակեց մնալ հարաբերական թուլացածության ու պառկատվածության վիճակում, ինչը

---

[1] Այսուհետ և հետագայում «Սատրապական Հայաստան» տերմինով ես նկատի եմ ունենալու տվյալ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրության տիրապետության տակ գտնվող Հայաստանի տարածքները, ինչ չափի էլ որ դրանք լինեն: Իհարկե, հատկապես հետագա դարերի վերաբերյալ, այս տերմինի կիրառումը այնքան էլ ճիշտ չէ, սակայն դրա փոխարեն կարճ է և հարմար:

[2] Պրիսկուս «Գոթական պատմություն», մաս 8; Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 1; Հիերոնիմոս; Սոզոմենոս «Եկեղեցական պատմություն», գիրք 8, գլուխ 1; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 9; Անանուն «Եդեսայի ժամանակագրություն»; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Աբուլ-Ֆիդա «Համառոտ պատմություն մարդկային ցեղի»:

խաղաղություն ապահովեց ոչ միայն վերջինիս ավանդական հակառակորդ Բյուզանդական կայսրության հետ հարաբերություններում, այլև թույլ տվեց իրենց բավարար ազատ զգալ նաև Մեծ Հայքի, Իբերիայի, Մազքութական և Լազական թագավորություններին, ընդ որում, ի տարբերություն խաղաղասեր Վռամշապուհի, տրամադրություններն առավել անհանդուրժող էին հատկապես Իբերիայի թագավորությունում:

Իրոք, Իբերիայի թագավորության արքա Վարազ-Բակուրին II-ին հաջորդած նրա որդի Բակուր III-ի (394-405) եղբայր Փարսման III-ի (405409) որդի Միհրդատ VI-ը (409-411), նույն այս ժամանակ վերջ տալով իր նախորդների կողմից վարվող համակերպվողական քաղաքականությանը և փորձ կատարելով օգտվել երկու գերտերությունների ներքին անկայուն վիճակից, ինչպես Բյուզանդական կայսրության, այնպես էլ Պարսից թագավորության նկատմամբ պահանջատիրության գիծ որդեգրեց: Իբերիայի թագավորության արքան հատկապես ոգևորվեց այն բանից հետո, երբ, փոխարինելով 408 թ-ի մայիսի 1-ին մահացած հորը, Բյուզանդական կայսրության գահին բազմեց յոթնամյա Թեոդոսիոս II-ը (408-450): Իրոք, նոր կայսեր իշխանության գրեթե ողջ ընթացքում կայսրության կառավարման սանձերը գտնվում էին նրա խնամակալների կամ խորհրդականների ձեռքում և բավականին երկար կառավարած, սակայն քաղաքականապես այդպես էլ երբեք չհասունցած ու իր ողջ կյանքում կարծես մանկական տարիքում մնացած Թեոդոսիոս II-ը ոչ մի ինքնուրույն քայլ, այն էլ Արևելքում, այդպես էլ չիրականացրեց: Ինչ վերաբերում է կայսեր խնամակալներին ու խորհրդականներին և, ընդհանրապես, նրա մերձավոր շրջապատին, ապա սրանք բոլորը, գրեթե առանց բացառության, իրենցով մարմնավորելով քննարկվող ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունում գերիշխող դիրքերի հասած «գերմանական աշխարհն» ու վերջինիս բնորոշ մտածողությունը, իրենց ուշադրությունն և ջանքերն ուղղում էին բացառապես միայն դանուբյան սահմանին, իսկ այս պայմաններում առանց այդ էլ բարձիթողի վիճակում գտնվող արևելյան գործերը ընդհանրապես հայտնվեցին լքյալի կարգավիճակում: Ահա տարածաշրջանի գերտերությունների հենց այս վիճակից էր, որ փորձ կատարեց օգտվել Իբերիայի թագավորության ռազմատենչ արքա Միհրդատ VI-ը՝ սկզբում դաշնակցելով Պարսից թագավորության հետ:

410 թվականին Միհրդատ VI-ի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 30.000), ձգտելով հետ գրավել Գուգարքի արևմուտքը, մտավ կայսրության տարածք և առաջացավ մինչև Կարին, սակայն արդյունքում Բյուզանդական կայսրության տեղական բանակը (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Անձիձորի ճ-մ-ում (Կարինի մոտ) ծանր պարտության մատնեցին հակառակորդին և հետ շպրտեցին[1]: Անհաջողության մատնվելով արևմտյան ճակատում՝ Միհրդատ VI-ը, հարաբերությունները խզելով դաշնակցի հետ, իր ռազմական տենչն ուղղեց դեպի արևելք, սակայն այստեղ ևս նրան անհաջողություն էր սպասում, ընդ որում՝ ավելի մեծ չափերի:

411 թվականին Միհրդատ VI-ի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) մտան Ուտիքի հյուսիսային տարածքներ, սակայն գրեթե հենց անմիջապես էլ մինչ այդ հակառակորդի շարժին ուշադիր կերպով հետևող Աղվանքի տարածքում գտնվող Պարսից թագավորության խոշոր բանակը (մոտ 60.000) Գարդմանի ճ-մ-ում (Ուտիքի հյուսիս) ծանր պարտության մատնեց թշնամուն, որից հետո հիմնովին ասպատակեց Իբերիայի թագավորության տարածքը[2]: Այլոց թվում գերվեց ու գերության մեջ իր կյանքն ավարտեց նաև Միհրդատ VI-ը, իսկ Իբերիայի թագավորության գահն անցավ նրա հայազգի կնոջից ծնված որդի Արչիլին (411-435): Նոր այս գահակալը, որը հոր նման խիզախ էր ու

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Լեոնտիոս Մրովելի «Վրաց թագավորների, նախահայրերի և տոհմերի պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 69:

ռազմատենչ, ի տարբերություն վերջինիս, սակայն, նաև ավելի խոհեմ էր և հավասարակշռված: Արդյունքում՝ վերջինիս առժամանակ հաջողվեց կարգավորել հարաբերությունները Բյուզանդական կայսրության ու Պարսից թագավորության հետ և, Պարսից թագավորության նկատմամբ ընդամենը միայն մեծացնելով իր ստանձնած հարկային բեռը, պահպանել նախկին դիրքերը:

Գլուխ 4
Բյուզանդա-Պարսկական I պատերազմը

416 թվականին կյանքից հեռացավ Մեծ Հայքի թագավորության արքա Վռամշապուհը, որից հետո թագավորության գահը կարճ ժամանակով անցավ Անհուշ բերդի մոռացությունից հանված Խոսրով IV-ին, սակայն վերջինս ինքը ևս նույն տարում մահացավ և Մեծ Հայքի թագավորության արքա հռչակվեց Հազկերտ I-ի ավագ որդի Շապուհը (416-419): Այս դեպքերով էլ հենց, ըստ էության, իր վերջը գտավ այն քիչ թե շատ խաղաղ վիճակը, որը կար տարածաշրջանում դրան նախորդող տարիներին: Իրոք, Հազկերտ I-ը, բավականին թուլացնելով սեփական թագավորության սահմաններում իր դեմ գործող ուժերին, վերջին տարիներին փոխել էր հանդուրժող վերաբերմունքը նաև քրիստոնյաների նկատմամբ, որին, ի դեպ ասած, քիչ չէին նպաստել նաև հենց իրենց՝ քրիստոնյաների, գրգռիչ վարքագիծն ու Իբերիայի թագավորությունում ծավալվող իրադարձությունները, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորությունում հասունացող ըմբոստ տրամադրությունները: Շապուհի հայտնվելը Մեծ Հայքի թագավորության գահին նպատակ էր հետապնդում այստեղ, իսկ արդյունքում նաև հարակից երկրներում, ամրապնդել պաշտոնական Տիզբոնի դիրքերը, սակայն այս ծրագրերը այդպես էլ մնացին անկատար, իսկ ըմբոստ տրամադրություններն էլ ավելի մեծ թափով զարգացան: Արդյունքում՝ Մեծ Հայքի թագավորության գահին հայտնված Շապուհը այդպես էլ որևէ իրական իշխանության չհասավ:

419 թվականի աշնանը դեպի հեռավոր Հյուրկանիա կատարած ուղևորության ժամանակ Հազկերտ I-ը դավադրության զոհ դարձավ, ինչի մասին տեղեկանալով էլ, Մեծ Հայքի թագավորության արքա Շապուհը թողեց ամեն ինչ և արագորեն ուղղվեց դեպի Տիզբոն: Արդյունքում՝ Շապուհը՝ Շապուհ IV-ը (419-420) զբաղեցրեց հոր տեղը, սակայն այդպես էլ, ըստ էության, չկարողացավ լիակատար իշխել, քանի որ 420 թ-ի գարնանը սպանվեց, իսկ դավադիրներն էլ, որպես գահի թեկնածու, առաջ քաշեցին Սասանյանների տոհմից սերող մի ոմն Խոսրովի, սակայն վերջինս ինքն էլ չհասցրեց արքա օծվել: Իրոք, շուտով պարզվեց, որ նախորդ դեպքերի հետ միաժամանակ թափուր մնացած գահը զբաղեցնելու լուրջ հայտ է ներկայացրել նաև Հազկերտ I-ի փոքր որդին՝ Վահրամը, որին հայրը իր կենդանության օրոք այն աստիճան չէր սիրում, որ ուղարկել էր դաստիարակվելու Պարսից թագավորությունից կախյալ Լախմյանների արաբական թագավորության արքա Նուման I-ի (մոտ 415-464) մոտ: Վերջին հանգամանքը, սակայն, անակնկալ կերպով Վահրամի օգտին եղավ, քանի որ Նուման I-ը իր սրտին հարազատ դարձած Վահրամին զգալի ռազմական օժանդակություն ապահովեց: Արդյունքում՝ Պարսից թագավորության արքա հռչակվեց Վահրամը՝ Վահրամ V-ը (420-438): Նոր արքային անհետաձգելի գործեր էին սպասում, մանավանդ որ հասունանում էր հերթական ընդհարումը արևմտյան հարևանի հետ, իսկ Հայաստանում զարգացող իրադարձություններն էլ ավելի ու ավելի քիչ հիմքեր էին թողնում լավատեսության համար:

Իրոք, նույն 419 թվականին, երբ Տիզբոնում դեռ զբաղված էին գահակալական ներքին խնդիրներով, Պարսից թագավորության դեմ պայթեց արդեն վաղուց հասունացող բացահայտ ելույթը նաև Մեծ Հայքի թագավորությունում: Արդյունքում՝ Ներսես Ճիճրակացու գլխավորությամբ ուժերն ի մի բերած Մեծ Հայքի թագավորության բանակը (մոտ 50.000) Արտաշատի ճ-մ-ում հաղթեց Մեծ Հայքի տարածքում գտնվող Պարսից թագավորության բանակին (մոտ 20.000) և երկիրը մաքրեց Պարսից թագավորության

կայազորներից: Այս մարտում աչքի ընկավ Վանանդցիների գունդը, իսկ Ասպրամ Սպանդունին էլ մենամարտում սպանեց թշնամու բանակի հրամանատարին[1]: Ստեղծված պայմաններում պաշտոնական Տիզբոնի դեմ բնականաբար ոտքի ելավ նաև Իբերիայի թագավորությունը:

420 թվականի ամռանը, ձգտելով ապստամբների շարքերից հանել Իբերիայի թագավորությանը, ինչպես նաև թիկունքից հարված հասցնել Մեծ Հայքի թագավորությանը, Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) փորձեց հարավ-արևելքից մտնել Իբերիայի թագավորության տարածք, սակայն Արչիլ արքայի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) Դեբեդ գետի ճ-մ-ում հաղթեցին թշնամուն[2]: 420 թվականի մնացած ողջ մասում և հաջորդ տարվա սկզբում Վահրամ V-ը ի վիճակի չէր մի որևէ նոր բան ձեռնարկել ու բանը հասավ նույնիսկ նրան, որ 421 թվականի ամռանը Արչիլ արքայի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) իրենք ասպատակեցին արյաց արքայի հսկողության տակ գտնվող Աղվանքը, թեև արդյունքում նահանջեցին[3]:

Իրավիճակը չթեթևացավ, սակայն, նաև 421 թվականի վերջին, քանզի պաշտոնական ու, ստեղծված պայմաններում կարելի է նույնիսկ ասել՝ որոշակիորեն նաև դանդաղամիտ, Կոստանդնուպոլսում ի վերջո տեղից շարժվեցին և, օգտագործելով հարմար առիթը ու հանկարծակի կարծես նոր միայն հիշելով քրիստոնյաների հալածանքների, ինչպես նաև առևտրական և տնտեսական մի քանի այլ պարտքերի մասին, նույն տարվա աշնանը պատերազմ սկսեցին Պարսից թագավորության դեմ: Սկիզբ առավ Բյուզանդա-Պարսկական I պատերազմը (421-422), որը կոչված էր առաջինը լինելու հետագա պատերազմների երկար շարքում, որոնք մղվելու էին Բյուզանդական կայսրության և Պարսից թագավորության միջև: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Արևելքում գործող կայսերական բանակում սկսեց գործել նաև Մանվել Մամիկոնյանի որդի Արտաշեսի (388-393) տղա, սպարապետ Համազասպի (393-432) որդի, հետագայում հայերի կողմից այդքան սիրված հերոս Վարդան Քաջ Մամիկոնյանը, որը հենց այս պատերազմում էլ, ըստ էության, սկիզբ դրեց իր զորավարական գործունեությանը:

421 թվականի սեպտեմբերին Արդուվարիոսի գլխավորությամբ Աղձնիքն ասպատակած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000, այդ թվում գոթեր) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Արզնի ճ-մ-ում հաղթեցին ռազմական ոլորտում իր հերթին, թերևս, առաջին անգամ իր ունակությունները փորձող Ներսեհ Միհրանյանի, կամ, ինչպես նա ավելի էր հայտնի հայերին՝ Միհրներսեհի, գլխավորած Պարսից թագավորության բանակին (40.000)[4], որից հետո ասպատակեցին Աղձնիքը և խոշոր ավարով նահանջեցին[5]: Միաժամանակ, սակայն, չցանկանալով բավարարվել ձեռք բերածով ու ցանկանալով հետ խլել մինչ այդ կորցրած դիրքերը, նույն 421 թվականի աշնանից սկսած մինչև 422 թվականի գարուն Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) պաշարեցին Մծբինը: Այս հարցում, սակայն, քրիստոնյաները հաջողության այդպես էլ չհասան, քանզի ի վերջո, տեղեկանալով Միհրներսեհի գլխավորած Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակի (մոտ 50.000, այդ թվում Մատյան գունդը, մոտ 15 փիղ) առաջխաղացման մասին, նրանք ստիպված եղան նահանջել[6]:

---

[1] Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 56, 58:
[2] Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:
[3] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:
[4] Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 7, գլուխ 18; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:
[5] Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 7, գլուխ 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[6] Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 7, գլուխ 18; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 3:

Այսպիսով, 421 թվականի վիճակով պաշտոնական Տիզբոնը հազիվ միայն կարողացավ պահել դիրքերը Հայոց Միջագետքում և դրությունը քիչ թե շատ բարելավեց միայն հաջորդ տարվա սկզբին՝ գործի մեջ դնելով Լախմյանների թագավորության բեդվիններին:

422 թվականի գարնանը Պարսից թագավորության բանակը (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) ասպատակեցին Ռաշ-Այնի շրջակայքը և նահանջեցին[1]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց Մծբինից առաջխաղացած Մատյան գունդը (10.000 հեծյալ) անակնկալ հարձակվեց Արդուվարիոսի գլխավորությամբ քաղաքից հեռացող Բյուզանդական կայսրության բանակի (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 3.000) վրա ու սկսեց հաղթանակ տանել, սակայն քրիստոնյաների պահեստազորը թիկունքից հարվածեց թշնամուն և արդյունքում պարտության մատնեց վերջինիս[2]: Այսպիսով՝ առավելագույնը, որ այդ պահին կարողացավ անել Վահրամ V-ը, դա Մծբինը պաշարումից ազատելն էր, ընդ որում դա մի ոչ փոքր պարտություն արժեցավ նրա ընտիր թիկնապահ ստորաբաժանմանը: 422 թվականի ամռանը Արդուվարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000, այդ թվում գոթեր) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000) կրկին ասպատակեցին Աղձնիքը՝ այդ ընթացքում գերելով 7.000 խաղաղ բնակիչների, որոնց, սակայն, Ամիդի եպիսկոպոսը հետագայում փրկագնեց՝ մարդասիրական այդ քայլի համար վաճառելով եկեղեցիների արծաթյա գավաթներն ու զարդեղենը[3]: Արդյունքում՝ 422 թվականի աշնանը պատերազմական գործողությունների թատերաբեմում հաստատվեց ուժերի հարաբերակցության յուրօրինակ մի դրություն, քանի որ, ինչպես պարզվեց, Բյուզանդական կայսրությունը ամենատարբեր պատճառներով ի վիճակի չէ խոշոր ուժեր կենտրոնացնել Պարսից թագավորության դեմ, իսկ Վահրամ V-ի պետությունն էլ, այդ պահին և տվյալ տարածաշրջանում հեռանկարային առումով լինելով ավելի ուժեղ, սեփական ներքին խնդիրների պատճառով ինքը ևս հնարավորություն չունի խոշոր հարվածներ հասցնել կամ որևէ էական վնաս պատճառել հակառակորդին, ընդ որում դրա հետ միաժամանակ նաև՝ Պարսից թագավորության բանակը պարենային լուրջ խնդիրներ ուներ:

Իրոք, արյաց արքան հենվում էր հիմնականում, ըստ էության, միայն Լախմյանների թագավորության ուժերի վրա, բայց դե սրանք էլ համեմատական փոքրաքանակ էին, հակված չէին կանոնավոր մարտերի և, ընդհանրապես, Բյուզանդական կայսրության դեմ իրականացվելիք լուրջ գործողությունների, իսկ Նուման I-ի անձնական եռանդն էլ այդ պարագայում, թերևս, ավելի շատ կարող էր վնասել: Եվ ահա ընթացող պատերազմական գործողությունների մի իսկական վերջակետ հանդիսացավ 422 թվականի աշնանը ինչ-որ տեղ Եփրատ գետի ափերին տեղի ունեցած խոշոր ճակատամարտը, երբ Արդուվարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) անակնկալ հարձակումով հաղթեցին Նուման I-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակին (մոտ 15.000) ու ծանր կորուստներ պատճառեցին վերջինիս[4]: Վերջ, այս պարտությամբ Վահրամ V-ը փաստորեն զրկվեց իր ձեռքի տակ գտնվող ու քիչ թե շատ մեծաքանակ և մարտունակ վերջին ուժերից, իսկ այս պայմաններում, երբ, ինչպես ասվեց, խոշոր գործողությունների ունակ չէր նաև պաշտոնական Կոստանդնուպոլիսը, կողմերին այլ բան չէր մնում, քան հաշտություն կնքել: Որպես հետևանք, նույն 422 թվականի վերջին հաշտություն կնքվեց և Բյուզանդա-Պարսկական I պատերազմը ավարտվեց: Արդյունքում, ի համեմատ նախկինի, որևէ փոփոխություն տեղի չունեցավ, իսկ Մեծ Հայքի թագավորության արքա էլ հռչակվեց

---

[1] Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 37; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[2] Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 7, գլուխ 20; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Մշիխա Զեխա «Ադիեբենի եկեղեցու պատմությունը»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 11; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[3] Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[4] Սոկրատես Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 7, գլուխ 18; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 2; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

Վռամշապուհի որդին՝ տասնութնամյա Արտաշես IV-ը (422-428):

Հենց նոր ավարտված պատերազմը, առաջինը հանդիսանալով երկու տերությունների միջև հետագայում մղված երկարատև և աստիճանաբար ծանր ու կործանարար բնույթ ստացած պատերազմներից, կարծես գծագրեց նույն այդ պատերազմների ընդհանուր պատկերն և ընթացքը: Այս կապակցությամբ ամենից առաջ նշենք, որ, պայմանավորված հենց այս հակամարտությամբ, աստիճանաբար զգալի կշիռ և ազդեցություն ձեռք բերեցին Ասորիքի ու Միջագետքի արաբական թագավորությունները, ընդ որում Ասորիքի արաբները, որպես կանոն, դաշնակցում էին Բյուզանդական կայսրությանը, իսկ Միջագետքի արաբները՝ Պարսից թագավորությանը: Ասորիքի և հատկապես նրա հարավային հատվածի վրա մեծ ազդեցություն ունեցող արաբական տոհմերից առաջնայինը Գասանյաններն էին, որոնց կիսաքոչվոր իշխանությունը, ըստ էության, ուներ կայսրության ֆեդերատի կարգավիճակ ու իրենից ներկայացնում էր պաշտոնական Կոստանդնուպոլսի շահերի հիմնական պաշտպանը Ասորիքում և հատկապես նրա հարավային հատվածում: Գասանյանների թագավորության ավելի պարզունակ և թույլ կրկնօրինակներն էին հանդիսանում Կինդյանների ու Ղաբալյանների թագավորությունները, ինչպես նաև Աբու-Տաղլիբ ռազմունակ քոչվոր համադաշնությունը: Մյուս կողմից, հայելային սկզբունքով, Պարսից թագավորության շահերի պաշտպանն էր հանդիսանում Միջագետքի հատկապես հարավ-արևմտյան հատվածում իշխող Լախմյանների թագավորությունը՝ արյաց տերության պետական համակարգում ունենալով գործնականում նույն դերն ու նշանակությունը, ինչ Գասանյանների թագավորությունը Բյուզանդական կայսրության պարագայում: Ինչպես և սպասելի է, արաբական այս երկու իշխանությունները մահացու ատելություն էին տածում միմյանց նկատմամբ, ինչից էլ օգտվում էին նրանց ավագ դաշնակիցները:

Հռոմեական կայսրության լավ ժամանակներում կայսրության հետ հարաբերություններում արաբական և ոչ մի իշխանություն չէր կարող հավակնել նույնիսկ սեփական շահերն ունեցող դաշնակցի կարգավիճակի ու արդյունքում Ասորիքի հարավային հատվածն ընդգրկող արաբական մանր իշխանությունները աստիճանաբար անկում էին ապրել: Իրոք, ենթարկվելով կայսրության ռազմաքաղաքական հարատև ճնշմանը, այս իշխանություններն արդեն II դարի սկզբի վիճակով, ըստ էության, վերացել էին՝ միայն մի կարճաժամկետ ու յուրօրինակ փորձ կատարելով վերականգնվել Օդենատոսի և Զենոբիայի օրոք: Այժմ, սակայն, երբ Բյուզանդական կայսրությունը, խրված էր իր ներքին խնդիրների մեջ և Արևելքում նույնիսկ քաղաքական մտածողության մակարդակում իսկ իրեն պասիվ էր պահում, Գասանյանների դերը աստիճանաբար առավել կարևորվեց ու ընդգծվեց: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ, ըստ էության, նույն դրությունն էր տիրում նաև սահմանի մյուս կողմում, քանզի, եթե զգալի հզորության տեր առաջին Սասանյաններն ի վիճակի էին անտեսել սեփական տարածքներում գտնվող արաբներին, ապա այժմ, երբ Պարսից թագավորության գործերն այնքան էլ լավ չէին և, բացի այդ, անհրաժեշտություն կար դիմադարձ լինել սահմանի մյուս կողմից գործող անհարմար հակառակորդին, արյաց արքաներն իրենք էլ աստիճանաբար սկսեցին մեծ տեղ հատկացնել Լախմյան արքաներին, որոնց կարևորությունը ու յուրօրինակ դերը իր հերթին բնականաբար ընդգծվեց:

Պետականաշինական մակարդակում սկզբունքորեն նման միմյանց՝ արաբական այս երկու թագավորությունները կարող էին մարտադաշտ հանել առավելագույնը մինչև 30.000 ռազմիկներ ընդգրկող բանակներ, թեև սովորաբար կիրառության մեջ էին դրվում ավելի քիչ ուժեր: Արաբները ամենից առաջ ձգտում էին խուսափել կանոնավոր մարտից և շեշտը դնում էին ավարառության ու ասպատակությունների վրա, ընդ որում այս պարագայում նրանք լիովին օգտվում էին տեղանքի լավ իմացությունից և դրան ավելի լավ հարմարված լինելու հանգամանքից, հարվածի անակնկալից, ինչպես նաև այն բանից, որ անապատային կյանքին սովոր ու ամեն վտանգավոր վիճակում դեպի

ավազուտները նահանջող արաբների հետ պատերազմելը տարածաշրջանի երկու տերություններից էլ հսկայական ջանքեր էր պահանջում՝ նույնիսկ վերջնական հաջող արդյունքի պարագայում էլ կասկածելի օգտակարությամբ, քանի որ արաբներից վերցնելու ոչ մի բան, ըստ էության, չկար: Արդյունքում՝ և պաշտոնական Կոստանդնուպոլիսը, և պաշտոնական Տիզբոնը կոպտելու փոխարեն գերադասում էին որոշակիորեն սիրաշահել արաբներին և, օգտագործելով սրանց միմյանց հակակշռելու համար, վերջիններիս դեմ անիմաստ պատերազմ մղելու փոխարեն նրանց օգտագործել իրենց ռազմական գործողություններում:

Գլուխ 5
Մեծ Հայքի թագավորության անկումը

Վահրամ V-ը սկզբունքորեն տարբերվում էր հորից և, չնայած առաջին տարիների խառնաշփոթին, աստիճանաբար գերեց իր հպատակների սրտերը, այդ թվում նաև՝ դժգոհներից: Իրոք, եթե Հազկերտ I-ը, հետևողականորեն պայքարելով կենտրոնական իշխանության ուժեղացման համար, իր դեմ էր հանել շատ շատերին, ապա Վահրամ V-ը, երկրի կառավարման ներքին հոգսերը թողնելով ինքնահոսի և տրվելով հաճույքներին, որսերին, խնջույքներին ու ռազմական խաղերին, թույլ տվեց ամեն ինչին վերադառնալ ի շրջանս յուր, ինչը չէր կարող դուր չգալ մարդկանց: Վահրամ V-ը փաստորեն լիուլի վայելեց այն քաղաքականության պտուղները, որը հետևողականորեն իրականացնում էր իր հայրը՝ օգտվելով վերջինիս օրոք Պարսից թագավորության կուտակած ներքին ուժերի համախմբումից և ինչ-որ տեղ նույնիսկ շռայլորեն վատնելով դրանք: Միաժամանակ, սակայն, նոր արքան նաև ուժեղացրեց հալածանքները քրիստոնյաների նկատմամբ, ինչպես նաև սկիզբ դրեց ավելի ակտիվ արտաքին քաղաքականության:

418-419 թվականներին, երբ իր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի արևմտյան ծայրամասում երկու գերտերությունները և նրանց օգտին կամ դեմ հանդես եկող մյուս պետություններն ու ազգերը իրենց հարաբերություններն էին պարզում, ոչ պակաս խոշոր իրադարձություններ էին տեղի ունենում նաև իր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մյուս՝ արևելյան, ծայրում: Իրոք, հենց այս ժամանակ էր, որ Մեծ տափաստանի արևելքում տեղական քոչվոր համադաշնության ամենավերևում հայտնված ավարները շահեցին պատերազմը միջինասիական հոների և քուշանների մնացորդների դեմ, որոնք մինչ այդ այսպես թե այնպես, բայց պահում էին դիրքերը Գոբիի անապատի արևմուտքի ու Միջին Ասիայի արևելքի հատման կետում: Ավարների էթնիկ պատկանելիության հարցը մինչ այժմ էլ վիճելի է, սակայն հավանական է թվում կարծիքը, որ սրանց բյուրեղացման հիմքում ի սկզբանե դրված է եղել ոչ թե էթնիկ ընդհանրությունը, այլ՝ սոցիալական գործոնը, երբ չինական քաղաքակրթության սահմաններից ամենատարբեր պատճառներով դուրս մղված անձիք Մանջուրիայում, ինչպես նաև Հեռավոր Արևելքի հարակից շրջաններում աստիճանաբար ինքնակազմակերպվեցին, որից հետո միայն ձեռք բերեցին էթնիկ ընդհանրության որոշակի տարրեր:

Այսպես թե այնպես, սակայն արդյունքում քուշանական ցեղերից մեկի առաջնորդը հանդիսացող Կիդարան (մոտ 412-437) իր հպատակների հետ միասին թողեց հայրենի տափաստանները, շարժվեց դեպի հարավ-արևմուտք և, մտնելով Կարշիի օազիս[1], հաստատվեց Վալամ քաղաքում[2]: Դրանից հետո Կիդարայի հպատակները յուրօրինակ ռազմաքաղաքական համագործակցություն սկսեցին Պամիրյան լեռների լեռնական հեփթաղների հետ, ինչի արդյունքում լեռներից իջած և համեմատականորեն ավելի քաղաքակիրթ հեփթաղները փաստորեն հայտնվեցին հենց նոր իրար եկած քոչվոր ուժեղ մի համադաշնության ամենավերևում: Այսպիսով՝ ստեղծվեց Հեփթաղական հզոր

[1] Кабанов С.К. К вопросу о столице кидараитов см. "Вестник древний истории" 1953 N 2. Предположение Р.М. Гиршмана, что столица кидаритов помещалась в Балхе (Ghirshman R. Les Chionites - Hephtalites, стр. 79-80), не подтвердилось.
[2] См. Бичурин Н.Я. (Иакинф) Собрание сведений о народах, обитавших в Средней Азии в древние времена М.-Л., 1950, т. II, стр. 264

թագավորությունը և, որպես հետևանք նոր այս զարգացման, սկսած արդեն 420-ական թվականների սկզբներից, Պարսից թագավորության արևելքում փաստորեն հայտնվեց հզոր ու շատ ագրեսիվ տրամադրված մի ուժ: Արդյունքում՝ Պարսից թագավորության արևելյան սահմաններում մինչ այդ գրեթե կես դար տևած խաղաղությունը երկար ժամանակով վերացավ[1]:

Լարումը, որ տարին տարու վրա հասունանում էր Պարսից թագավորության արևելքում, ի վերջո պայթեց 426 թվականին և բերեց մի մեծ պատերազմի, որը դեռ երկար էր տևելու ու Պարսից թագավորությանն արժանանալու էր մի քանի ծանր և ստորացուցիչ հարվածներ: Սկիզբը, սակայն, Վահրամ V-ի տերության համար, կարծես թե, այնքան էլ աննպաստ չէր, քանզի, այն բանից հետո, երբ արդեն 427 թվականին Հեփթաղական թագավորության 250.000 հոգանոց բանակը առաջացավ մինչև Մերվ ու ճամբար զարկեց քաղաքի մոտակայքում, Վահրամ V-ի անձնական գլխավորությամբ գործող Պարսից թագավորության ավելի փոքրաքանակ բանակը անակնկալ գիշերային հարձակումով գլխովին ջախջախեց վերջինիս: Վահրամ V-ը իրոք որ փառահեղ մի հաղթանակ էր շահել, ընդ որում գերության մեջ էր հայտնվել նույնիսկ Կիդարայի կինը, որը հետո սպասուհի կարգվեց Պարսից թագավորության գլխավոր՝ Կրակի, տաճարում: Իրացնելով խոշոր այդ հաջողության պտուղները՝ Պարսից թագավորության բանակը, շարունակելով հետապնդել ու ոչնչացնել փախչող հակառակորդին, անցավ Ամու-Դարյան և ի վերջո ստիպեց Հեփթաղական թագավորությանն ու Կիդարային հաշտություն խնդրել:

Դատելով ժամանակակից և ականատես հայ հեղինակների լռությունից՝ Մեծ Հայքի թագավորությունը որևէ կերպ չի մասնակցել վճռական այս իրադարձություններին՝ արդեն անուժ ու միայն ձևական իշխանություն ունեցող Արտաշես IV-ի իշխանության վերջին տարիներին շարունակելով խմորվել ներքաղաքական քայքայիչ գործընթացների մեջ: Ավելին, հենց նույն 427 թվականին, երբ Պարսից թագավորությունը կենաց ու մահու մարտ էր տալիս իր արևելյան սահմաններում, Արչիլ արքայի գլխավորած Իբերիայի թագավորության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) հերթական անգամ ասպատակեցին Աղվանքը և նույնիսկ հյուսիսային Ատրպատականը ու նահանջեցին[2]: Այս ամենի ֆոնին կարելի է ենթադրել, որ Մեծ Հայքի դիրքորոշումը, եթե նույնիսկ չէր էլ հասել ուղղակի ըմբոստության, ապա ամեն դեպքում բերել էր մի իրավիճակի, երբ պաշտոնական Տիզբոնի դիրքերը երկրում մեծապես թուլացել էին: Այլ բանով որևէ կերպ չի կարելի բացատրել այն հանգամանքը, որ Արտաշես IV-ը և հայ նախարարները, ըստ էության, աչքաթող են արել արյաց արքայի օգնության կոչը, որը, չնայած սկզբնաղբյուրների լռությանը, անկասկած էր, որ պետք է ուղղված լիներ հայերին:

Վահրամ V-ի հաղթահանդեսը, սակայն, ինչպես ասվեց, լիակատար էր և կարելի է ենթադրել, որ այլ պատճառների թվում նաև հենց այս մեկն էր, որ վերջնական դեր խաղաց Վահրամ V-ի կողմից ընդունված սկզբունքային որոշման մեջ՝ վերացնել Մեծ Հայքի թագավորությունը: Հենց այդպես էլ եղավ և արդյունքում, երբ հայ նախարարները, մի վերջին անգամ դուրս գալով կենտրոնական իշխանության դեմ ու լքելով սեփական արքային, դիմեցին Վահրամ V-ին և խնդրեցին իրենց վերցնել արյաց արքայի ուղղակի հպատակության տակ, այդ խնդրանքը պատրաստակամորեն բավարարվեց: Արդյունքում՝ 428 թվականին Արտաշես IV-ը գահընկեց արվեց, Մեծ Հայքի թագավորությունը վերացավ, նրա տարածքը ուղղակիորեն մտավ Պարսից թագավորության կազմի մեջ և կազմվեց Հայոց մարզպանությունը՝ մի նոր էջ բացելով հայ ժողովրդի պատմության մեջ:

Ավանդականորեն ընդունված է կարծել, որ Մեծ Հայքի թագավորության ոչնչացումով հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը, ինչը, սակայն, իմ խորին համոզմամբ որոշակիորեն պարզունակացված մի մոտեցում է: Այս կապակցությամբ

[1] Гумилев Л. Н. “Эфталиты - горцы или степняки”, Вестник древней истории 1967, N 4.
[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:

ամենից առաջ պետք է նշել, որ իրականում վերացվեց միայն պետական բարձրագույն իշխանության հայկական կրողի պաշտոնը և երկիրը զրկվեց արտաքին քաղաքական կուրս ընտրելու մինչ այդ այս կամ այն չափով գոյություն ունեցող հնարավորությունից: Դրան հակառակ, սակայն, պահպանվեցին պետական համակարգին բնորոշ տարրերը իրենց վաղ ֆեոդալական տեսքով: Այս առումով հետաքրքիր է նշել, որ առանձին հայ առաջատար նախարարներ, իրավական առումով չունենալով արքայի կոչում, իրենց հզորությամբ այնուհանդերձ չէին զիջում կամ, երբեմն, նույնիսկ գերազանցում էին նման կոչում ունեցող հարևան որոշ անձանց ու պետություններին, ընդ որում դա դեռ միայն առանձին նախարարների կամ նախարարական տների դեպքում, իսկ այն պարագայում, երբ Մարզպանական Հայաստանը հանդես էր գալիս որպես մեկ միասնական մի ամբողջություն, վերջինս, չլինելով թագավորություն, այնուհանդերձ միանշանակորեն իրենից ավելի հզոր մի ուժ էր ներկայացնում, քան, ասենք, իրավաբանորեն թագավորության կարգավիճակ ունեցող Իբերիայի և Լազական թագավորությունները կամ, առավել ևս, Մազքութական թագավորությունը: Սրան գումարվում էր նաև այն, որ ներքին կյանքում Մարզպանական Հայաստանը վայելում էր լայն ինքնավարություն, իսկ այս ամենն էլ միասին մեկ համակցության մեջ մեզ թույլ է տալիս ասել, որ, եթե մի կողմ թողնենք Մեծ Հայքի թագավորության իրոք ցավալի անկումը, խորը կամ գլոբալ առումով ոչինչ սկզբունքորեն չէր փոխվել:

Իհարկե, ցանկալի կլիներ, որ Մեծ Հայքի թագավորությունը շարունակեր իր գոյությունը, սակայն ես նկատի ունեմ այն, որ պետք չէ արհեստականորեն ուռճացնել կամ ողբալ չարաբաստիկ «428 թվականը»: Եղավ այն, ինչ եղավ, լավ կլիներ, որ այն, ինչ եղավ, չլիներ, բայց դե եղածը եղած էր և ստեղծված իրադրությունը պետք չէ արհեստականորեն դրամատիկացնել և, առավել ևս, խորքային, հեռուն գնացող կամ նույնիսկ ազգային ինչ-ինչ բացասական հատկանիշների մասին հետևությունների բերող մտքերի հանգել:

Գլուխ 6
Մարզպանական Հայաստանի ընդհանուր բնութագիրը

Մարզպանական Հայաստանում հաստատված վաղ ֆեոդալական տիպի հասարակական հարաբերություններում առաջնային դեր ունեին խոշոր հողատեր նախարարական տոհմերը: Վերջիններիս մեջ առաջին դերերում էին հինգ տոհմեր՝ Մամիկոնյանները, Բագրատունիները, Սյունիները, Արծրունիները և Կամսարականները:

Քննարկվող ժամանակաշրջանում Մամիկոնյաններին գլխավորում էր 432 թվականից սպարապետի պաշտոնը վարող Վարդան Քաջ Մամիկոնյանը (432-451), որին աջակցում էին իր եղբայրներ Համազասպը և Հմայակը: Վարդան Քաջ Մամիկոնյանը, ի տարբերություն գրեթե ոչ մի բանով հայտնի չդարձած իր հոր, մինչ այս զբաղեցնում էր Բյուզանդական կայսրության բանակի արևելյան ուժերի հրամանատարի պաշտոնը, սակայն հոր մահից հետո տեղափոխվեց Մարզպանական Հայաստան և միանգամից էլ ակնառու դեր զբաղեցրեց Պարսից թագավորության ռազմական համակարգի մասը հանդիսացող Մարզպանական Հայաստանի ռազմական ենթահամակարգում նույնիսկ անկախ այն բանից, որ զբաղեցնում էր սպարապետի պաշտոնը: Հանդիսանալով քաջ և խիզախ մի զորական, ինչպես նաև տաղանդավոր զորավար՝ Վարդան Քաջ Մամիկոնյանը սկսած 432 թվականից ու մինչև իր մահը, ըստ Մեսրոպ Վայոց ձորցու և Վարդան Արևելցու արժեքավոր տեղեկությունների, 19 տարում ամենատարբեր մարտերում տարավ 42 հաղթանակ, ընդ որում, դրանց հիմնական մասը՝ հեփթաղների դեմ Պարսից թագավորության արևելքում մղվող պատերազմում: Այս առումով հատկանշական է, որ սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի անառարկելի հեղինակությունն և դերը մեծ էին ոչ միայն բանակում, այլ նաև՝ Մարզպանական ողջ Հայաստանում, Բյուզանդական կայսրությունում ու Պարսից թագավորությունում:

Մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում Մարզպանական Հայաստանում Բագրատունիները ներկայացված էին ի դեմս Սմբատ Բագրատունու (մոտ 388-440), որը հանդիսանում էր Արշակ IV-ի դեմ պայքարած Վաղարշակ II-ի կնոջ հայր Սահակ Բագրատունու որդին: Հետագայում Բագրատունիներին գլխավորեց Սմբատի որդի Տիրոցը (մոտ 440-450), ընդ որում Բագրատունի այս երկու իշխաններն էլ խիստ զգուշավոր և հավասարակշռված բնավորության տեր մարդիկ էին:

Դիտարկվող ժամանակաշրջանում Անդովկ Սյունու բուռն, հակասական ու երկարատև կառավարումից հետո դիրքերն այնուհանդերձ զգալիորեն ուժեղացրել էին նաև Սյունիները, որոնց գլուխ էր կանգնած Բաբիկ Սյունու որդի Վասակը (մոտ 410 - ուղ. 451), որը մրցակցային պայքարում կարողացել էր չեզոքացնել իր հորեղբայր Վաղինակին (մոտ 398-410): Վասակ Սյունին մեծ խելքի, եռանդի և կրթական զգալի մակարդակի տեր մի անձնավորություն էր, որին, սակայն, հաճախ պակասում էր իրական խորաթափանցությունը, ընդ որում վերջինս նաև թույլ էր բարոյական արգելակներից: Այս առումով ավելորդ չէ նշել, որ Վասակ Սյունին իրենից ներկայացնում է մեր պատմության, թերևս, հանիրավի ամենավիճահարույց համարված գործիչը, հանիրավի, որովհետև քաղաքական ու ռազմական դավաճանության մեջ ոչ մի վիճահարույց բան չկա և, առաջնորդվելով միայն ինչ-ինչ քաղաքական մղումներով, Սյունյաց այս իշխանի կերպարը արհեստականորեն բարձրացվել է վիճահարույցության մակարդակին, իսկ նրա գործողություններին էլ փորձ է կատարվել որոշակի արդարացումներ գտնել: Այսպես թե այնպես, սակայն մշտապես Մամիկոնյաններին ու Բագրատունիներին զիջող և դժվարությամբ Արծրունիների հետ մրցակցող Վասակին իր իշխանության օրոք հաջողվեց Մարզպանական Հայաստանում սեփական տոհմին առնվազն գոնե երրորդ տեղն ապահովել:

Մեհրուժան Արծրունու դավաճանական գործունեությունից հետո մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Մարզպանական Հայաստանում դիրքերի որոշակի անկում էին ապրել Արծրունիները: Հետագա տասնամյակներում, սակայն, Արծրունիներին մեծապես հաջողվել էր ամոքել կորուստները և այժմ Արծրունիների նախարարները Մարզպանական Հայաստանի այլ նախարարների շարքում դժվարությամբ վիճարկում էին երրորդ դիրքը Սյունիների հետ: Մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում Արծրունիների գլուխն էր կանգնած եռանդուն, բայց բարոյական սկզբունքներից որոշակիորեն զուրկ Շավասպը (մոտ 440 - ուղ. 449)՝ Վասակ Սյունու, ըստ էության, տաղանդազուրկ կրկնօրինակը Արծրունիների տոհմում:

Մարզպանական Հայաստանի նախարարական ազդեցիկ տոհմերի հնգյակը եզրափակում էին Կամսարականները, որոնք գաղափարապես ամենամոտն էին կանգնած մարտաշունչ Մամիկոնյաններին: Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Կամսարականների գլուխ էին կանգնած Գազավոն Կամսարականի որդի Հրահատը (մոտ 425-430) և վերջինիս տղա Սպանդարատը (մոտ 430-445): Վերջինիս էլ հաջորդեց քննարկվող ժամանակաշրջանի ամենաակնառու Կամսարականն, ի դեմս Սպանդարատի որդի Արշավիրի (մոտ 445-465):

Մարզպանական Հայաստանի այսպես կոչված երկրորդ էշելոնի տոհմերի շարքում պետք է մատնանշել ամենից առաջ Ամատունիներին, Խորխոռունիներին, Ռշտունիներին, Մոկացիներին, Գնունիներին, Անձևացիներին, Վարաժնունիներին, Քաջբերունիներին և այլոց: Սրանց քանակությունը, համեմատական հզորության անկման, անցնում էր 400-ը և սրանք բոլորն այս կամ այն չափով գործում էին առաջատար տոհմերի հնգյակի քաղաքական նախասիրությունների համատեքստում:

Մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում խոշոր հողատերի դիրքում Մարզպանական Հայաստանում սոցիալապես վերջնականապես ամրապնդվել էր նաև Հայ առաքելական եկեղեցին, որը, իր ձեռքում ունենալով դատավարությունն ու բնակչության հոգևոր կյանքի կառավարումը, հսկայական հեղինակություն, ուժ և ազդեցություն ուներ: Հայ առաքելական եկեղեցին գլխավորող կաթողիկոսները իրենց

ակտիվ մասնակցություն էին բերում երկրի ներքին և արտաքին հարցերի կարգավորմանը ու հաճախ ազդեցիկ դեր էին խաղում:

Գլուխ 7
Մեծ ապստամբության նախօրեին

427 թվականի ջախջախումը 15 տարով խաղաղություն ապահովեց Պարսից թագավորության արևելյան սահմաններին, ընդ որում նույն այդ ժամանակ Վահրամ V-ին որևէ կերպ չէր սպառնում նաև Բյուզանդական կայսրությունը, քանի որ ահեղ Աթիլլայի (434-453) օրոք, հերթական ու մի վերջին անգամ վերելք ապրող Հոնական տերությունը ահարկու մի սպառնալիքի նման կախվել էր ոչ միայն Բյուզանդական կայսրության, այլև՝ Արևմտյան Հռոմեական կայսրության և եվրոպական ողջ քաղաքակրթության վրա: «Աստծո պատիժ» մականունը ստացած հոների այս առաջնորդն ի վիճակի էր մարտադաշտ հանել մի քանի հարյուր հազար ռազմիկ կազմող հսկայական ու տարացեղ մի բանակ, որում տափաստանային ընտիր ռազմիկներ հանդիսացող հոների և այլ քոչվորների հետ միավորվել էին նաև մինչ այդ առանց այդ էլ հռոմեական աշխարհի հետ մշտապես պատերազմող մարտունակ գերմանացիների, ինչպես նաև սլավոնների զգալի զանգվածներ, իսկ դա ինքնին հսկայական մի սպառնալիք էր:

Այսպիսով՝ գրեթե մինչև իր թագավորության վերջը Վահրամ V-ն և իր տերությունը վայելում էին անվտանգություն ու անդորր, ինչը բոլոր պայմանները ստեղծեց խրախճասեր և կենսասեր այս արքայի համար, երկրի կառավարումը գործնականում արդեն ամբողջ ծավալով թողնելով դեռևս իր հոր օրոք առաջին դերերի վրա հայտնված ու վերջին պատերազմում իրեն էլ ռազմական օգնություն ցույց տված Միհրանյան տոհմի ակնառու ներկայացուցիչ և մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցնող Միհրներսեհի վրա, լիովին տրվել իր սիրած զբաղմունքներին՝ սիրային արկածներին, խնջույքներին, ռազմական խաղերին ու հատկապես որսին: Հենց վերջին հանգամանքն էլ, ի դեպ ասած, սակայն, ի վերջո չար կատակ խաղաց Վահրամ V-ի գլխին, քանզի 438 թվականի ուշ աշնանը նա հենց որսի ժամանակ էլ անհետ կորավ: Ժամանակակիցներն ասում էին, թե, ինչպես հինավուրց լեգենդներում է, Վահրամ V-ն իր նժույգով ընկել է մի խոր վիհի մեջ ու այլևս չի կարողացել դուրս գալ, սակայն ավելի կենցաղային հայացքների տեր մարդիկ, ըստ էության, կարող էին ենթադրել, որ Վահրամ V-ը, ինչպես և իր հայրը, ուղղակի զոհ է գնացել պալատական հերթական դավադրությանը: Վահրամ V-ի անհետանալուց հետո Պարսից թագավորության գահին բազմեց վերջինիս որդի Հազկերտը՝ Հազկերտ II-ը (438-457): Նոր արքան հորը նման էր, թերևս, միայն այն բանով, որ երկրի կառավարումը իր հերթին ևս թողեց Միհրներսեհի վրա: Այլ հարցերում, սակայն, Հազկերտ II-ը հոր հակապատկերն էր՝ նեղմիտ, քինախնդիր, հեշտ բռնկվող և մոլի զրադաշտական՝ արյաց նոր արքան ոչ մի կերպ նման չէր իր կենսասեր հորը:

440-ական թվականների սկզբին Հոնական տերության ճնշումը դանուբյան սահմանում ահռելի չափերի էր հասել և այս պայմաններում Բյուզանդական կայսրությունը, մոռանալով արևելյան սահմանի մասին, ստիպված էր առկա գրեթե բոլոր ուժերը տեղակայել այս ուղղությամբ, ինչից օգտվելով էլ Հազկերտ II-ը փորձեց իր դարավոր ախոյանին ատամներ ցույց տալ: Արդյունքում՝ 441 թվականի գարնանը Հազկերտ II-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000) ու նրա կազմում սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորությամբ գործող Հայոց այրուձին (30.000) ասպատակեցին Հայոց Միջագետքի արևմուտքը և Հյուսիսային Ասորիքը, սակայն, ուժի այդ բացահայտ ցուցադրումից հետո համարելով իրենց նպատակը իրականացված, նահանջեցին՝ ստանալով զգալի փրկագին ու այն քրիստոնյաներին, որոնք փախել էին Պարսից թագավորությունից և ապաստանել Բյուզանդական կայսրության սահմաններում[1]: Իրոք, Հազկերտ II-ին պետք

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 1; Թեոդորիտոս Կյուրոսցի «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 37;

էր, ըստ էության, թերևս, միայն ուժի ցուցադրում իրականացնել, քանի որ, եթե Բյուզանդական կայսրությունը լրջագույն խնդիրներ ուներ դանուբյան սահմանում և ողջ առկա ուժերն, ըստ էության, կենտրոնացրել էր այդ ուղղությամբ, ապա ոչ պակաս խնդիրներ էին հասունանում նաև Պարսից թագավորության արևելյան սահմաններում:

Խնդիրը կայանում էր նրանում, որ 440-ական թվականների սկզբին լարումը Պարսից թագավորության արևելյան սահմաններում կրկին մեծացել էր, քանի որ ուժերը վերականգնած Հեփթաղական թագավորությունը, հրաժարվելով խոշոր ուժերով ներխուժում կազմակերպելու մի ժամանակ անհաջողություն բերած երբեմնի իր ռազմավարությունից, այժմ դրա փոխարեն ձեռնարկում էր բազմաթիվ մանր, բայց նաև զգալի վնասներ պատճառող ներխուժումներ: Միաժամանակ, ի տարբերություն երկու տասնամյակ առաջվա դրության, Հեփթաղական թագավորությունն այժմ իրենից ավելի կազմակերպված և, ըստ էության, ավելի վտանգավոր մի ախոյան էր ներկայացնում: Այս ամենը ի վերջո ստիպեց Հազկերտ II-ին վճռական միջոցների դիմել, ընդ որում բանը ի վերջո հասավ նույնիսկ նրան, որ, սկսած 442 թվականից 7 երկար տարիներ լքելով Տիզբոնը, արյաց արքան հաստատվեց Մերվում՝ ստիպված լինելով անձամբ ղեկավարել հեփթաղների դեմ մղվող մարտական գործողությունները:

Պետք է ասել, սակայն, որ այս անգամ արյաց արքան կարողացավ լիուլի օգտագործել պատերազմական գործողությունների այն միջոցը, ինչն իր ժամանակին օգտագործել չէր հաջողվել նրա հորը՝ խոսքը Հայոց փառապանծ այրուձիու մասին է, որի թվաքանակը հենց այս ժամանակի վերաբերյալ սկզբնաղբյուրներից մեկը գնահատում է 30.000 ռազմիկի սահմաններում: Արդյունքում՝ ինչպես Հայոց այրուձին, այնպես էլ Իբերիայի թագավորության և արդեն գործնականում վերացած Մազքութական թագավորության տարածքում գտնվող մանր ու ամորֆ իշխանությունների հեծելազորները Հայոց սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորությամբ 442-449 թվականներին իրենց խոշոր մասնակցությունը բերեցին Հեփթաղական թագավորության դեմ Պարսից թագավորության արևելքում մղվող պատերազմին: Հիշատակված ռազմական գործողությունների մանրամասները, սակայն, մեզ դժբախտաբար գրեթե չեն հասել, քանի որ պարսկական պատմական ավանդույթը միայն շատ հակիրճ տեղեկություններ է պահպանել նույնիսկ Հազկերտ II-ի մասին, իսկ իր ժամանակի հայ պատմիչներն էլ, իրավիճակն ըստ ամենայնի պատկերացնելով բավականին անորոշ և հիմք ունենալով, թերևս, միայն արևելքից վերադարձած Հայ ռազմիկների պատմածներն ու տարածվող լուրերը, գերադասում են ամեն ինչ ներկայացնել միայն ընդհանուր խոսքերով:

Այսպես թե այնպես, սակայն մեզ հասած սուղ և հատվածական տեղեկատվությունը հիմք է տալիս ասելու, որ Հազկերտ II-ը Հեփթաղական թագավորության դեմ պատերազմի էր ելել հսկայական պատրաստություններով ու իր թագավորության բանակի զգալի մասով: Ինչ վերաբերում է մարտական գործողությունների ընթացքին, ապա, ընդհանրացնելով առկա տեղեկատվությունը, կարելի է ասել, որ սկիզբ առած պատերազմն ընդունել էր դեպի Հեփթաղական թագավորության խորքը կազմակերպվող ամենամյա արշավանքների տեսք, ընդ որում արյաց արքայի բանակը, այդպես էլ չհասնելով վճռական հաջողության, այդ հարվածների ընթացքում զգալի կորուստներ էր կրում: Եվ վերջապես պետք է մատնանշել ևս մեկ հետաքրքիր հանգամանք՝ արյաց արքան ամեն երկու տարին մեկ ռոտացիոն սկզբունքով փոխում էր մարտական գործողություններին մասնակցող իր դաշնակից ուժերի կազմը՝ իրենց տներն ուղարկելով ծառայությունն ավարտած ռազմիկներին և նրանց փոխարինելով նորերով:

Սկսած արդեն 442 թվականից և ընդհուպ մինչև 448 թվականը, ներառյալ՝ Պարսից թագավորության բանակը, ինչպես արդեն ասվեց, մի քանի հետևողական հարվածներ հասցրեց Հեփթաղական թագավորությանը, բայց արդյունքում որևէ շոշափելի

Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:

հաջողության այդպես էլ չհասավ[1]: Ցանկանալով գոնե մի որևէ կերպ փոխել իրավիճակը՝ Հազկերտ II-ը հսկայական մի հարված նախապատրաստվեց հասցնել արդեն 449 թվականին, ընդ որում դրա հետ միաժամանակ էլ նա որոշեց լուծել նաև իր երկրի ներքաղաքական ամենակնճռոտ հարցերից մեկը՝ քրիստոնյաների խնդիրը:

449 թվականի գարնանը Հազկերտ II-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 220.000) ու նրա կազմում սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 30.000) հերթական անգամ մտան Հեփթաղական թագավորության տարածք: Սկիզբ առած մարտական գործողությունները, ընդունած մանր ընդհարումների բնույթ, ձգվեցին մինչև աշուն, ինչի արդյունքում Հազկերտ II-ը ի վերջո ստիպված եղավ հերթական անգամ նահանջի հրաման տալ[2]: Մինչ այս, սակայն, ամենայն հավանականությամբ համարելով, որ հեփթաղների խնդիրն այս անգամ պետք է որ վերջնականապես իր լուծումը ստանա, ի վերջո Տիզբոն վերադարձած ինքնասեր արյաց արքան, ենթարկվելով Միհրներսեհի դրդումներին, հատուկ մի հրովարտակով դիմեց իր տերության բոլոր քրիստոնյաներին՝ պահանջելով դառնալ զրադաշտական:

Գլուխ 8
Վարդանանց պատերազմը կամ Մարզպանական Հայաստանի I ապստամբությունը

Պետք է ասել, սակայն, որ Մարզպանական Հայաստանում և հարևան քրիստոնյա երկրներում Հազկերտ II-ի դեմ մինչ այդ իր հերթին ևս զգալի դժգոհություն էր կուտակվել: Նոր արքան նման չէր ամեն ինչին որոշակիորեն ավելի թեթև վերաբերվող իր հորը և հետևողականորեն սահմանափակում էր բոլոր քրիստոնյա հպատակների վարչական ու քաղաքական իրավունքները, իսկ այս պայմաններում էլ, երբ բանը հասավ արդեն կրոնափոխության առաջարկին, պայթյունը, թերևս, արդեն անխուսափելի էր: Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ պարսից կենտրոնական իշխանության դեմ ելույթին, համենայն դեպս գոնե 449 թվականի վիճակով, քրիստոնյաները այնքան էլ պատրաստ չէին ամենից առաջ հենց կազմակերպչական մակարդակում: Իրոք, կենտրոնացված պետության անկումից հետո, համենայն դեպս գոնե հայերի պարագայում, սա առաջին զանգվածային միջոցառումն էր: Նման գործողությունը դժվար էին կազմակերպվում դեռևս կենտրոնացված իշխանության առկայության պարագայում, իսկ այժմ, երբ երկիրը ավելի էր խրվել ֆեոդալական հարաբերությունների հորձանուտում, ամեն ինչ ավելի էր դժվարացել:

Հաշվի առնելով այս ամենը՝ ինչ-որ ժամանակ 449 թվականի օգոստոսին Արտաշատում հավաքված հայ, ինչպես նաև վրաց և աղվանից նախարարները որոշեցին, թեև այնուհանդերձ մերժելով արյաց արքայի պահանջը, գործն ամեն դեպքում անմիջական սրացման չհասցնել: Այս առումով հատկանշական է, որ հենց այստեղ արդեն իսկ ձևավորվեց քաղաքական կողմնորոշումների երկու հստակ ճամբարների առկայությունը, երբ Մամիկոնյաններն և Կամսարականները իրենց մեծաթիվ կողմնակիցների հետ միասին առավել անզիջում դիրք գրավեցին, իսկ Վասակ Սյունին մի քանի այլ ու ավելի փոքրաքանակ նախարարների հետ էլ դեմ դուրս եկավ այս դիրքորոշմանը: Առժամանակ տատանվում էին Բագրատունիներն և Արծրունիները, թեև ուժերի ընդհանուր քանակության մեջ, հաշվի առնելով նաև երկրորդ էշելոնի տոհմերին, բացարձակ մեծամասնություն ամեն դեպքում կազմում էին Մամիկոնյանների ու Կամսարականների կողմնակիցները: Այս առումով, թերևս, ավելորդ էլ է ասել, որ Հայ առաքելական եկեղեցին ևս հստակորեն կանգնեց անզիջում դիրքորոշում արտահայտող նախարարների կողքին:

---

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 1, 2; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70:
[2] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 2:

Այսպես թե այնպես, սակայն, առժամանակ մի կողմ դնելով հակասությունները, կազմվեց և Տիզբոն ուղարկվեց մեղմ տոնայնությամբ գրված մի պատասխան, որը, սակայն, դրանով իսկ հանդերձ, անլուր կատաղության գիրկը նետեց արյաց կամակոր արքային, ընդ որում առանց այդ էլ բռնկուն Հազկերտ II-ին ավելի էր գրգռում հատկապես Միհրներսեհը: Քրիստոնյաների մերժումը համարելով կենտրոնական իշխանության դեմ դրսևորած բացարձակ մի անհնազանդություն՝ Հազկերտ II-ը և նրա անունից կառավարող Միհրներսեհը մի նոր հրովարտակ ուղարկեցին քրիստոնյա առաջնորդներին՝ պահանջելով վերջիններիս անձամբ ներկայանալ Տիզբոն ու բացատրություններ տալ: 449 թվականի աշնանը հայ և վրաց նախարարները մեկնեցին Տիզբոն, որտեղ փորձ կատարեցին մեղմել իրադրությունը ու ընդունված որոշումից հետ համոզել Հազկերտ II-ին, սակայն արյաց արքան մնաց անկոտրում և նույնիսկ ավելին՝ սպառնաց անմիջապես մահվան գիրկը նետել բոլոր ընդդիմացողներին, եթե հենց այդ ժամանակ տեղի չունենա կրոնափոխություն ու չտրվի համաձայնություն: Ստեղծված բացառիկ պայմաններում քրիստոնյա առաջնորդները որոշեցին խորամանկել և, առերևույթ ընդունելով զրադաշտականությունը, ազատություն ձեռք բերել, վերադառնալ իրենց տիրույթները ու դրանից հետո նոր միայն արդեն գործել:

Տիզբոնում ծավալվող իրադարձությունների մասին լուրերը երկակի դրության մեջ էին դնում Պարսից թագավորության արևելքում գործող Հայոց և դաշնակից այրուձիներին: Տեղեկատվությունը, հատվածական և անորոշ, բայց այսպես թե այնպես հասնում էր հեփթաղական սահմանում գործող ռազմիկներին, իսկ այդ հանգամանքը չէր կարող իր հետևանքները չունենալ: Այս առումով մի կողմից պարզ էր, որ իրենց հայրենի երկրներում բռնկվող հնարավոր ապստամբության պայմաններում հեփթաղների դեմ գործող ռազմիկները պետք էին լինելու հենց այդտեղ, այլ ոչ այստեղ՝ հեփթաղների դեմ, իսկ մյուս կողմից էլ այստեղ, կռվելով իրենց հնարավոր թշնամիների թշնամիների դեմ, նրանք, ըստ էության, աջակցելու էին սեփական երկրների ու ազգակիցների դեմ ոտնձգող պաշտոնական Տիզբոնին: Եվ վերջապես չէր կարելի բացառել նաև այն բանի հավանականությունը, որ Պարսից թագավորության մեծաքանակ բանակը ինչ-որ մի պահի կարող էր իր գրկում ուղղակի խեղդել, զինաթափել և նույնիսկ ոչնչացնել քրիստոնյա ռազմիկներին կամ էլ, իրերի այլ դասավորության պարագայում, նրանց դնել հեփթաղների հարվածի տակ ու ոչնչացնել արդեն այդ կերպ: Հաշվի առնելով այս ամենը՝ Պարսից թագավորության արևելքում մարտնչող քրիստոնյա ռազմիկները պատրաստվեցին շարժվել իրենց երկրների ուղղությամբ:

449 թվականի աշնանը Տիզբոնից վերադարձող Մարզպանական Հայաստանի նախարարներին ուղեկցող Պարսից թագավորության բանակը (մոտ 5.000), արշավելով Գանձա-Տրպատունք-Թավրիզ-Գաբիթյան-Բաքեան-Ճվաշ-Արտազ-Կոգովիտ երթուղով, հասավ Ծաղկոտն ու նոյեմբերի վերջին ճամբարեց այստեղ գտնվող Անգղ բերդի մոտակայքում: Մինչ այս, սակայն, ծավալված իրադարձությունների մասին լուրերը արդեն հասել էին Մարզպանական Հայաստան, որտեղ բռնկվել էր հզոր ապստամբություն: Սկիզբ էր առել Վարդանանց պատերազմը կամ Մարզպանական Հայաստանի I ապստամբությունը (449-451):

Իրավիճակն, ինչպես արդեն ասվեց, ըստ էության, վաղուց իսկ պայթունավտանգ բնույթ էր ստացել և ամեն ինչ ի վերջո պայթեց այն բանից հետո, երբ Անգղ բերդի մոտ ճամբարած Պարսից թագավորության բանակում գտնվող մոգերը փորձեցին կրակարանի վերածել տեղի եկեղեցին: Ի պատասխան այս գործողության՝ մոտակայքում կենտրոնացած Հայկական բանակը (մոտ 15.000), վաղ առավոտվանից շրջապատելով Պարսից թագավորության բանակի ճամբարը արևելքից, արևմուտքից և հյուսիսից, հարձակման անցավ: Ու թեև Սյունյաց գունդը Վասակ Սյունու հրամանով ինչ-որ մի պահի անցավ թշնամու բանակի կողմը, սակայն վերջինս շատ արագ դադարեցրեց դիմադրությունը և ողջ կազմով գերի հանձնվեց[1]:

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 32; Կիրակոս

Դրանից հետո ապստամբ հայ նախարարները և եկեղեցականները ստեղծեցին իրենց գործողությունները համակարգող մի խորհուրդ ու իրականացրին պաշտոնների նշանակում: Ինչպես և սպասվում էր, ռազմական առաջնորդ կարգվեց սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանը, իսկ քաղաքացիական իշխանության հիմնական կրող, չնայած զգալի անվստահությանը, որ ապստամբները տածում էին նրա նկատմամբ, դարձավ Վասակ Սյունին: Այս ամենից հետո, զարգացնելով հաջողությունը, Հայկական բանակը շարժվեց Դվինի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

449 դեկտեմբերի սկիզբ – ***<u>Դվինի ճ-մ</u>***[1]

Սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի, Տաճատ Ռշտունու և Վահրիճ Անձևացու գլխավորած Հայկական բանակը (1.200) մոտեցավ Վնդոյի ու Շիրոյի գլխավորությամբ քաղաքում ուժերը կենտրոնացրած Պարսից թագավորության բանակին (մոտ 2.000):

I փուլ – Հայկական բանակը անցավ անակնկալ հարձակման և գլխովին ջախջախեց հակառակորդի բանակին: Վնդոն ու Շիրոն սպանվեցին, ընդ որում մարտի ընթացքում Վարդան Քաջ Մամիկոնյանը մարտադաշտում հանդիպեց դավաճան Շավասպ Արծրունուն և տեղի ունեցած մենամարտում հաղթեց նրան ու թրի հզոր հարվածով սպանեց:

II փուլ – Հայկական բանակը հետապնդեց թշնամու բանակի մնացորդներին մինչև ***<u>նախիջևան:</u>***

Հայերը կորցրին մոտ 200, թշնամին՝ մոտ 1.500 զինվոր:

Վնասազերծելով հակառակորդի պաշտպանական ամենակարևոր հենակետներից մեկը՝ նույն 449 թվականի դեկտեմբերի սկզբին Հայկական բանակը (մոտ 30.000) ջախջախեց ու Մարզպանական Հայաստանից դուրս մղեց Վանի, ինչպես նաև Գառնի, Անի (վերջինը՝ Շիրակ, Ախուրյանի աջ ափին), Արտագերս, Երկայնորդ, Արխնի, Բարձրաբող, Խորանիստ, Ծախանիստ, Ողական, Արփանյալ, Ջռեյլ (վերջինը՝ Վասպուրական, Առնոտոյն գավառի հարավ-արևմուտք), Կապույտ (վերջինը՝ Գաբեղյանք, Արաքսի հարավային ափին), Որոտ, Շաղատ (վերջինները՝ Սյունիք, Ծղուկ գավառ),Վասակաբերդ (Սյունիք, Սոթք գավառ) ամրոցների և բերդերի Պարսից թագավորության կայազորները (ընդհանուր մոտ 7.000)[2]: Այս ընթացքում, տեղեկանալով Մարզպանական Հայաստանում բռնկված ապստամբության մասին, հեփթաղական սահմանում գտնվող Հայոց և դաշնակից այրուձիները լքեցին Պարսից թագավորության բանակը, անցան Հոնական տերության արևելյան տարածքներ և Կասպից ծովի արևելյան ափ-հյուսիսային ափ-արևմտյան ափ-Դերբենդ ամրոց-Աղվանք երթուղով ի վերջո վերադարձան Հայրենիք: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, սակայն, որ վերոհիշյալ փաստին սկզբնաղբյուրները որևէ կերպ չեն անդրադառնում և արդյունքում կարիք կա մի քանի խոսք ավել ասելուն:

Իրոք, ըստ սկզբնաղբյուրների, դեռևս ապստամբությունից առաջ Հայոց և դաշնակից այրուձիները գտնվում էին Պարսից թագավորության արևելքում, բայց հետո՝ արդեն ապստամբության հետ կապված իրադարձությունների ժամանակ, դրանք ու հատկապես Հայոց այրուձին արդեն իրենց երկրներում էին: Այսպիսով՝ մենք, ըստ էության, ունենք երկու կետեր՝ սկզբնական ու վերջնական, բայց թե ի՞նչ է եղել միջնամասում, սկզբնաղբյուրները լռում են: Վերջին պարագան մեզ ստիպում է իրականացնել ռազմատեսական բնույթի մի վերլուծություն, որը թույլ կտա պարզել և

Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1: Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 17:

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 1; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 15; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 27:

[2] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Մեսրոպ Վայոցձորեցի «Հիշատակարան 967 թվականի»:

հասկանալ այն ամենը, ինչի մասին սկզբնաղբյուրները չեն հայտնում:

Եվ այսպես, արյաց արքայի հրամանը քրիստոնյա ռազմիկներին հասավ ինչ-որ տեղ Մերվի մոտակայքում, իսկ սկսված ապստամբության մասին լուրերն էլ սկսեցին տեղ հասնել նույն 449 թվականի ուշ աշնանը: Արդեն ասվեց, որ զարգացող իրադարձությունները բացառիկ ծանր պայմանների մեջ էին դրել քրիստոնյա ռազմիկներին: Իրոք, քննարկվող ժամանակահատվածում քրիստոնյաների հիմնական ռազմական ուժը կազմված էր հենց հեծելազորից և, եթե նույնիսկ հեծյալներին հաջողվեր էլ, ինչ-որ տեղ ժամանակ շահելով, անցնել հեփթաղների կողմը ու մնալ նրանց մոտ, ապա այդ պարագայում արյաց արքան բոլոր հնարավորությունները կունենար հաշիվ տեսնել, ըստ էության, անպաշտպան մնացած նրանց հայրենակիցների հետ, որոնք այդ պարագայում պետք է պաշտպանվեին միայն տեղական ուժերով: Իրենից բավարար ելք չէր ներկայացնում նաև փորձը ճեղքելով անցնել ու վերադառնալ հայրենիք Կասպից ծովի հարավային ափերով, քանի որ մի կողմից դրա համար ուժերն ակնհայտորեն քիչ էին, իսկ մյուս կողմից էլ հիշատակված տեղաշարժի մասին ժամանակին տեղեկացված հակառակորդը բոլոր հնարավորությունները կունենար խոչընդոտել այդ շարժին և (կամ) ծուղակը գցել քրիստոնյա ռազմիկներին: Փաստորեն, ըստ էության, մնում էր միայն մեկ ելք, որը կայանում էր հետևյալում՝ վերադառնալ իրենց երկրներ Կասպից ծովի հյուսիսայի ափերով:

Վարդանանց պատերազմը կամ Մարզպանական Հայաստանի I ապստամբությունը նկարագրված է երկու առաջնակարգ, ինչպես նաև մինչև մեկ տասնյակ երկրորդական սկզբնաղբյուր հանդիսացող հեղինակների կողմից, սակայն նրանցից և ոչ մեկը մի որևէ տեղեկություն չի տալիս հիշատակված շարժի մասին: Միաժամանակ, սակայն, ինչպես ասվեց, մենք ունենք իրադարձությունների սկիզբն ու վերջը՝ 449 թվականի աշնանը քրիստոնյա ռազմիկները գտնվում էին Պարսից թագավորության արևելքում, իսկ 450 թվականի սկզբին էլ նրանք արդեն գործում էին իրենց երկրներում: Այս պարագայում, երբ, մի կողմից պարզ է, որ պարսկական կողմն ինքը ոչ մի կերպ կամավոր չէր թույլ տա անցումը սեփական տարածքներով, իսկ մյուս կողմից էլ դրա հետ կապված որևէ ընդհարման մասին մենք տեղեկություն չունենք, մնում է միայն մի բան՝ գործի դնել բացառման սկզբունքը և ընդունել, որ քրիստոնյա ռազմիկները իրենց երկրներն են վերադարձել Կասպից ծովի արևելյան, հյուսիսային և արևմտյան ափերով: Նկարագրված սխեմայի անուղղակի աղբյուրագիտական հիմնավորում կարող են հանդիսանալ, թերևս, միայն երկու հանգամանքներ:

Նախ՝ նշենք, որ Մարզպանական Հայաստանը թշնամու ուժերից մաքրելուց հետո արդեն 449 թվականի դեկտեմբերին Հայկական բանակը (մոտ 30.000) ասպատակեց Ատրպատականը և նահանջեց[1]: Այս առումով, թերևս, կարելի է ենթադրել, որ Ատրպատականին հասցված այդ հարվածով Հայոց բանակի ղեկավարությունը, դեռևս վերջնական տեղեկություններ չունենալով այն մասին, որ քրիստոնյա ռազմիկները իրենց տեղերն են վերադառնում Կասպից ծովի հյուսիսային ափերով, փորձ է կատարել աջակցել յուրայիններին: Մյուս փաստարկը վերաբերվում է այս դեպքերից 171-172 տարի անց տեղի ունեցած նմանատիպ մի իրադարձության, երբ քրիստոնյա ռազմիկները լրիվ նույն կերպ Կասպից ծովի արևելյան, հյուսիսային և արևմտյան ափերով վերադարձան իրենց երկրներ, ընդ որում վերջին պարագայում առկա է աղբյուրագիտական հաղորդում[2]: Այս առումով կարելի է կարծել, որ ինչպես 620-621 թվականներին, այնպես էլ 449-450 թվականներին քրիստոնյա ռազմիկներն իրենց երկրներն են վերադարձել հենց մեր կողմից առաջարկվող երթուղով: Այս կապակցությամբ եզրափակելով ասվածը՝ թերևս

---

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3:

[2] «*Ապա հայերը ապստամբելով՝ Ճենաստանցի Ճեպետխի միջնորդությամբ գնացին ծառայության հյուսիսի կողմերի արքա Մեծն Խաքանին (**Արևմտյան Թյուրքական խաքանության խաքան Տուն-Յագբուին – Մ.Հ.**), իսկ հետո հյուսիսի կողմերով գնացին արևելքից դեպի արևմուտք՝ իրենց թագավոր խաքանի հրամանով միանալու այն Ճեպետխի զորքերին: Հետո, բազմաթիվ զորքերով Ճորա Պահակից ելնելով, նրանք գնացին օգնության հունաց թագավորին (**Բյուզանդական կայսրության կայսր Հերակլես Ի-ին – Մ.Հ.**)*» (Սեբեոս «Պատմություն», գլուխ 29):

միայն ամրագրենք, որ հեփթաղներն իրենք, պարզ է, ոչ մի դրդում չպետք է ունենային խանգարել քրիստոնյա ռազմիկներին իրականացնել հիշատակված շարժը, քանի որ վերջիններս, վերադառնալով սեփական երկրները և պայքար սկսելով Պարսից թագավորության դեմ, դրանով իսկ դառնում էին իրենց բնական դաշնակիցները, ընդ որում մի քանի տասնյակ հազար երկաթյա հեծյալների հետ ընդհարվելն էլ, հեծյալներ, որոնք կորցնելու ոչ մի բան այդ պահին, ըստ էության, արդեն չունեին, հեփթաղական կողմի համար իրենից ներկայացնում էր ուժերի լիովին անիմաստ և անհեռանկար մի վատնում:

Միաժամանակ հարկ է նշել, որ քրիստոնյաների ապստամբությունը արդեն պաշտոնական Տիզբոնի համար իր հերթին իրենից որոշակի անակնկալ էր ներկայացնում, անակնկալ, որին Պարսից թագավորությունն, ըստ էության, պատրաստ չէր: Իրոք, տերության հիմնական բանակային ուժերը գտնվում էին երկրի արևելքում և Հեփթաղական թագավորության դեմ չդադարող ռազմական գործողությունների պարագայում, համենայն դեպս գոնե մոտ ժամանակներս, ապստամբների դեմ խոշոր ուժեր շարժելու հնարավորությունները որոշակիորեն սահմանափակ էին: Մյուս կողմից էլ, սակայն, պետք էր անպատճառ գոնե մի որևէ բան ձեռնարկել և արդյունքում որոշվեց, թեև սահմանափակ, բայց 450 թվականի սկզբին ապստամբներին այնուհանդերձ հարված հասցնել: Այս առումով որոշվեց ամենից առաջ շարքից հանել աղվանցիներին, որից հետո, տիրելով արդեն նաև Աղվանքին, համակցված հասցնել Մարզպանական Հայաստանին:

Իր հերթին Վարդան Քաջ Մամիկոնյանը, տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին և գործելով որպես Հայկական բանակի գլխավոր հրամանատար, բանակը բաժանեց երեք մասի՝ առաջինը ուղարկեց Հարավային Հայաստան՝ թշնամու հնարավոր ներխուժումը այս ուղղությունից կանխելու նպատակով, երկրորդ և գերակշիռ մասը վերցրեց իր հետ, իսկ երրորդ մասը Վասակ Սյունու գլխավորությամբ թողեց երկրում՝ որպես ռազմավարական պահեստազոր, որը նաև պետք է օգնության հասներ վտանգավոր ուղղությանը: Ահա այստեղ էլ հենց Վասակ Սյունին կատարեց իր առաջին քայլը, որը այլ կերպ, քան դավաճանություն չես անվանի, քանզի նա հատուկ նամակով պարսից զորահրամանատար Սեբուխտին տեղեկացրեց հայկական բանակի արշավի և զորքի քանակության մասին՝ ինքնին բացառիկ ստորության աստիճանի մի արարք, ինչը, դատելով ըստ ամենայնի, խախտեց նաև մինչ այդ սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի կողմից նախատեսված հակառակորդին անակնկալ հարված հասցնելու ծրագիրը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

450 ապրիլ – ***<u>Խաղխաղի ճ-մ</u>***[1]

> Աղվանքում տեղակայված և համալրված Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000, այդ թվում լփիններ և բաղասականներ) Սեբուխտի գլխավորությամբ սկսեց ասպատակել շրջակայքը ու շարժվել Մարզպանական Հայաստանի ուղղությամբ: Տեղեկանալով այդ մասին՝ սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 30.000) շարժվեց Պարսից թագավորության բանակին ընդառաջ և Կուր գետի աջ ափով սկսեց հյուսիսից մոտենալ Խաղխաղին, ընդ որում, տեղյակ լինելով թշնամու բանակի ճամբարելու վայրի մասին, սպարապետը նախատեսել էր վերջինիս անակնկալ հարված հասցնել: Ստացվեց այնպես, սակայն, որ Վասակ Սյունին թշնամուն դավաճանորեն տեղեկացրեց Հայկական բանակի արշավի մասին, որի արդյունքում վերջինիս մոտենալու

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 33-35; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 1; Մեսրոպ Վայոցձորեցի «Հիշատակարան 967 թվականի»; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 17; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70:

ժամանակ թշնամու բանակն արդեն մարտակարգով և լիովին սպառազինված վիճակում կանգնած էր Կուր գետի աջ ափին:

Պարսից թագավորության բանակի առաջին շարքում տեղավորվեց հեծելազորը, երկրորդում՝ հետևակը, ընդ որում թշնամու բանակի ձախ թևը զբաղեցրել էին լփինների արքաեղբայր Վուրկի գլխավորած լփինները և բաղասականները: Հայկական բանակի առաջին շարքում տեղավորվեց ծանր հետևակը, երկրորդ շարքի կենտրոնում՝ թեթև հետևակը, թևերում՝ թեթև հեծելազորը, իսկ երրորդ շարքում, որպես ընդհանուր պահեստազոր, տեղաբաշխվեց ծանր հեծելազորը: Հայկական բանակի աջ թևը գլխավորում էր Արշավիր Կամսարականը, որպես օգնական ունենալով Մուշ Դիմաքսյանին, իսկ ձախ թևը՝ Խորեն Խորխոռունին, որպես օգնական ունենալով Հմայակ Դիմաքսյանին: Կենտրոնի և ողջ բանակի ղեկավարումը իրականացնում էր սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանը:

I փուլ – Հայկական բանակի աջ թևի հեծելազորը գրոհեց թշնամու ձախ թևի վրա և հզոր հարվածով փախուստի մատնեց լփիններին ու բաղասականներին: Ծանոթ չլինելով տեղանքին, սակայն, Հայկական հեծելազորը խրվեց ճահճուտում և սկսեց կորուստներ կրել փախուստը դադարեցրած հակառակորդի ձախ թևի, ինչպես նաև կենտրոնից Սեբուխտի ղեկավարությամբ օգնության շտապած հիմնական ուժերի հարվածներից: Այս ընթացքում Սեբուխտի հետ տեղի ունեցած մենամարտում սպանվեց Մուշ Դիմաքսյանը, մարտում վիրավորվեց նաև Գազրիկ Դիմաքսյանը:

II փուլ – Օգտվելով թշնամու կենտրոնի թուլացումից՝ Հայկական բանակի կենտրոնի և ձախ թևի հեծելազորները հզոր հարված հասցրեցին թշնամու բանակի, համապատասխանաբար, կենտրոնին ու աջ թևին՝ պարտության ու փախուստի մատնելով վերջիններիս:

III փուլ – Այս ընթացքում Հայկական բանակի աջ թևի հեծյալները, հետևելով Արշավիր Կամսարականի օրինակին, ցած թռան ճահճուտում խրված իրենց ձիերից և հակառակորդի ռազմիկների հետ հետևակ ձեռնամարտ սկսեցին, որի ընթացքում Արշավիրը մենամարտում հաղթեց ու սպանեց Վուրկին, ինչպես նաև վերջինիս մի քանի թիկնապահների:

IV փուլ – Կենտրոնում և իր ձախ թևում հաջողության հասած Հայկական բանակը օգնության հասավ սեփական աջ թևին ու թևային հարված հասցրեց թշնամուն: Արդյունքում՝ պարտություն կրեց և փախուստի դիմեց նաև Պարսից թագավորության բանակի ձախ թևը:

V փուլ – Փորձելով փրկվել հետապնդող Հայկական բանակից՝ Պարսից թագավորության բանակի հրամանատարությունը նավակներով, իսկ մնացած ռազմիկները՝ հիմնականում առանց դրանց, խուճապահար փախուստի մեջ փորձեցին անցնել Կուր գետի ձախ ափ: Օգտվելով դրանից՝ գետափին մոտեցած և սեփական ծանր հեծելազորի ու հետևակի պաշտպանությունից օգտվող Հայկական բանակի հետևակ և հեծյալ նետաձիգները հզոր հարվածի տակ առան թշնամու ռազմիկներին, որի արդյունքում վերջիններս ծանր կորուստներ կրեցին ու վերջնական պարտության մատնվեցին:

Հայերը կորցրին մոտ 3.000, թշնամին՝ մոտ 25.000 զինվոր:

Զարգացնելով հաջողությունը՝ սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը 450 թվականի մայիսին Պարսից թագավորության բանակից գրավեց Դերբենդ ամրոցը: Արդյունքում՝ Վահան Առանշահիկի գլխավորությամբ այստեղ թողնվեց ուժեղ կայազոր, իսկ Հոնական տերության առաջնորդ Աթիլլայի հետ էլ կնքվեց հակապարսկական ուղղվածություն ունեցող ռազմական

փոխօգնության մի դաշինք[1]:

Աղվանքի տարածքում գործերի կարգավորումը Վարդան Քաջ Մամիկոնյանից մի քանի ամիս ժամանակ խլեց, ինչից օգտվելով էլ Վասակ Սյունին, վերջնականապես և արդեն բացահայտ դավաճանելով իր ազգին ու երկրին, անցնելով թշնամու կողմը և դուրս գալով սեփական հայրենակիցների դեմ, 450 թվականի սեպտեմբերին իր գլխավորած ուժերով ասպատակեց Արարատը ու այստեղ զգալի ավերածություններ գործեց՝ հարվածի հիմնական սայրն ուղղելով ռազմական բնույթի ենթակառուցվածքների ոչնչացմանը: Միաժամանակ Վասակ Սյունին ձերբակալեց նաև որոշ նախարարների ընտանիքի անդամներին և, հետագայում Պարսից թագավորություն տեղափոխելու նպատակով, նրանց սկզբում տարավ Սյունիք՝ ակնհայտորեն նպատակ ունենալով վերջիններիս միջոցով ազդեցություն գործել ապստամբների կողմում գործող նրանց ընտանիքի ավագ անդամների վրա[2]: Դեպքերին ականատես Եղիշեն, մեզ փոխանցելով Աղվանքում գտնվող Վարդան Քաջ Մամիկոնյանին ներկայացած գուժկանի խոսքերը, ցավով նշում է, թե Վասակը. «*...հեռացել է քրիստոնեության ուխտից ու ավերել է Հայոց աշխարհի շատ տեղերը, մանավանդ արքունի ձմեռոցները, որոնք զորքի կայարաններն էին, Գառնին, Երամոնսը, մեծ դաստակերտ Դրասխանակերտը, Վարդանաշատը, Օշական ամրոցը, Փառախոտը, Սարդյանքը, Ձողակերտ ավանը, Արմավիրի բերդը, Կուաշ ավանը, Արուճը, Աշնակը, ողջ Արագածոտնը, Արտաշատի նահանգը և նույնիսկ Արտաշատն ամբողջովին, ինչպես նաև՝ նրա շուրջը գտնված բոլոր գյուղերն ու ավանները*»[3]: Այս առումով, թերևս, ակնհայտ է, որ պատերազմող բանակի թիկունքում այսպիսի քայլեր կատարելը միշտ ու նաև այժմ կոչվում է դավաճանություն և դիվերսիա, որը խստորեն պատժվել է բոլոր ժամանակներում ու իրավակարգերում, ընդ որում Սյունյաց իշխանի արարքները լիովին պատժելի են և քրեական, և բարոյական մակարդակներում:

Այսպես թե այնպես, սակայն, ի վերջո խուսափելով Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորությամբ երկիր վերադարձող հաղթական բանակից, որը տեղ հասավ ավելի շուտ, քան Սյունյաց իշխանն էր ենթադրում, Վասակ Սյունին խուճապահար և հապճեպորեն հետ քաշվեց Սյունիք[4]: Ավելին, 450 թվականի հոկտեմբերին սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը ասպատակեց Սյունիքը՝ դրանով, ըստ էության, վնասազերծելով սյունյաց դավաճանին և թույլ տալով հորձանք տալ վերջինիս դեմ իր իսկ իշխանության տարածքում կուտակված դժգոհությանը: Արդյունքում՝ Սյունիքը ընկավ հայրենասեր ուժերի տիրապետության տակ, գերյալներն ազատվեցին, իսկ Վասակ Սյունին էլ հեռացավ Պարսից թագավորություն[5]:

Նախորդ տարվա անհաջողությունը խիստ խոցել էր արյաց ինքնասեր արքային, ընդ որում ապստամբության ծավալումը լրջագույն վտանգ էր ստեղծում արդեն հենց իր՝ Պարսից թագավորության, համար: Ստեղծված պայմաններում, այս կամ այն կերպ կարգավորելով հարաբերությունները Հեփթաղական թագավորության հետ, պաշտոնական Տիզբոնը աստիճանաբար սկսեց դեպի արևմուտք տեղափոխել և Փայտակարան նահանգում գտնվող ու ներկայումս որպես Մուղանի հարթավայր հայտնի վայրում կուտակել սեփական ընտիր հարվածային բանակը: Փաստորեն, չավարտած արտաքին պատերազմը, արյաց արքան սեփական անխոհեմ քաղաքականությամբ իր իսկ երկրում սկիզբ էր դրել նոր ու ծանր մի ներքին պատերազմի և այժմ պետք էր ամենից առաջ հենց այդ հարցը լուծել:

451 թվականի գարնան սկզբին Պարսից թագավորության բանակը հիմնականում

---

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 35; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 2; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70:

[2] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 36; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 2:

[3] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3:

[4] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 36; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 2:

[5] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3:

արդեն ավարտել էր Փայտակարանում նախատեսված սեփական կուտակումը: Հարկ է նշել, որ բանակային ողջ տեղաշարժի ու կազմակերպչական խնդիրների գլուխ էր կանգնած անձամբ մեծ վեզիր Միհրներսեհը, որը ավելորդ չհամարեց նաև հետախուզական տեղեկություններ հավաքել Հայկական բանակի վերաբերյալ, ընդ որում այս անգամ ևս հակառակորդի բանակի գլխավոր հրամանատարին տեղեկատվական լայն օժանդակություն ցույց տվեց պարսկական կողմում հայտնված Վասակ Սյունին: Այս առումով դեպքերին ժամանակակից ու ականատես Եղիշեն հայտնում է. «*Երբ այս բոլոր չարագործությունները Միհրներսեհը տեսավ նրա մեջ, իր անձից ավելի հույսը նրա վրա դրեց: Հարցնում և ստուգում էր, թե ընդամենը քանի՞ մարդ կա Հայոց աշխարհում Վարդանի գնդի մեջ: Երբ նրանից լսեց, թե 60.000 հոգուց ավելի են, նաև տեղեկություններ պահանջեց յուրաքանչյուրի քաջության մասին, կամ թե՝ նրանցից քանի՞ հոգի են սպառազեն և կամ քանի՞ հոգի են առանց զենքի լոկ աղեղնավորներ, նույնպես նաև՝ վահանավոր հետևակայինների մասին: Եվ, երբ լսեց բազմության թիվն ու համարը, էլ ավելի շտապեց իմանալ, թե քանի՞սն են քաջ զինվորների պարագլուխները, որպեսզի նրանցից յուրաքանչյուրի դեմ երեքը պատրաստի, բացի բոլոր մնացած բաներից: Նա մինչև անգամ նրանցից ամեն մեկի դրոշների մասին էլ էր տեղեկություն հարցնում, և, թե զորքը քանի՞ գնդի են բաժանելու ու նրանցից ովքե՞ր պետք է հրամանատար լինեն, որ զորագլուխը որ կողմից պետք է պատերազմի մեջ մտնի, ի՞նչ են յուրաքանչյուր համհարզների անունները, քանի՞ փողհար պետք է ձայն արձակեն գնդի մեջ, արդյո՞ք ցցապատնեշներով և խրամով շրջապատված բանակ պիտի դնեն, թե՞ արձակ դաշտում տեղավորվեն, ճակատ առ ճակա՞տ պիտի գործեն, թե՞ համագունդ մի տեղի վրա պիտի գրոհ տան, նրանցից ո՞րը պետք է տատանման մեջ մնա և կամ նրանցից ո՞րը ջանք թափի՝ իր անձը մահվան ենթարկելով: Եվ, երբ այս ամենի մասին տեղեկացավ նրանից, կանչեց բոլոր զորագլուխներին ու նրա ներկայությամբ բոլորին հրաման տվեց, որ բոլորը կատարեն նրա հրահանգները: Նա ողջ զորքը զորագլուխների հետ միասին հանձնեց ավագներից մեկին, որի անունը Մուշկան Նիսալավուրտ էր*»[1]:

Մինչ այս, սակայն, անգործ նստած չէին նաև հայերը, որոնք դաշնակիցներ էին փնտրում: Աթիլլայի հոների հետ դաշինքն արդեն կնքված էր, սակայն մի կողմից հոները սկզբունքորեն այնքան էլ հուսալի չէին, մյուս կողմից էլ հենց այս ժամանակ ահեղ Աթիլլան սեփական հիմնական ուժերն իր հերթին շարժել էր դեպի հռենոսյան սահման և պատրաստվում էր մահացու հարված հասցնել Արևմտյան Հռոմեական կայսրությանը՝ միաժամանակ սպառնալով նաև Բյուզանդական կայսրությանը: Այս առումով Վասակ Սյունին ևս մեկ անգամ դավաճանական աջակցություն ցույց տվեց իր ազգի դեմ ահարկու պայքարի ելած հակառակորդին, երբ, Աղվանքի տարածքում իրականացնելով լայն կազմակերպչական գործունեություն և հսկողության տակ առնելով Դերբենդի լեռնանցքը, արգելեց հոների հնարավոր արշավանքը դեպի հարավ: Միաժամանակ Սյունյաց իշխանը հավաքագրեց նաև լեռնային և դաշտային որոշ վայրենի ցեղերի, որոնք հետագայում հանդես եկան հայեր դեմ:

451 թ-ի սկզբի վիճակով հոների օգնության հարցը աստիճանաբար կորցնում էր իրականության գծերը և ստեղծված պայմաններում հայերին ու մյուս քրիստոնյաներին մնում էր միայն մեկ դաշնակից՝ Բյուզանդական կայսրությունը, բայց այս պարագայում ևս պահն ավելի քան անհարմար էր, քանի որ, եթե Աթիլլան հռենոսյան սահմանում սպառնում էր Արևմտյան Հռոմեական կայսրությանը, ապա դանուբյան սահմանում էլ վերջինիս ռազմական մեքենան ահարկու սպառնալիքի նման կախվել էր Բյուզանդական կայսրության գլխին: Այսպես թե այնպես, սակայն ապստամբները որոշեցին դիմել կայսրությանը, սակայն առանց այդ էլ ծանր ընթացող բանակցությունները վերջնական անհաջողության մատնվեցին այն բանից հետո, երբ 450 թվականի հունիսի 28-ին, խիստ անժամանակ մի պահի, որսի ժամանակ ձիուց ընկավ և իր մահկանացուն կնքեց Թեոդոսիոս II-ը: Իրոք, այդպես էլ քաղաքականապես չհասունացած այս կայսեր մահով ոչ

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 3:

միայն, ըստ էության, վիժեցվեցին առանց այդ էլ մեծ հեռանկարներ չխոստացող բանակցությունները հայերի հետ, այլև ծանր ռազմաքաղաքական դրության մեջ հատնվեց նաև բուն Բյուզանդական կայսրությունը, քանի որ հենց այս ժամանակ Աթիլլայի հսկայական բանակը արդեն մոտեցել էր Դանուբի արևելյան ափերին: Այս կապակցությամբ մինչև առաջ անցնելը հարկ է ավելացնել, սակայն, որ կայսրության կողմից ստացված փաստացի մերժման գործում քիչ չէր նաև Վասակ Սյունու մեղքը:

Այո, փաստ էր, որ պաշտոնական Կոստանդնուպոլիսը ցանկություն չուներ և ստեղծված պայմաններում, ըստ էության, նույնիսկ ի վիճակի էլ չէր հայերին որևէ աջակցություն ցույց տալ, սակայն փաստ էր նաև այն, որ Վասակ Սյունին ինքն իր հերթին ոչ մի ջանք չխնայեց հայ-բյուզանդական հնարավոր և հայ-վիրա-աղվանական կայացած դաշինքը վիժեցնելու ուղղությամբ: Իրոք, հենց Սյունյաց իշխանն էր, որ Ավարայրի ճակատամարտից մի քանի շաբաթ առաջ տեղեկացրեց Վրաստան, Աղվանք ու Կոստանդնուպոլիս, թե իբր արյաց արքան արդեն հրաժարվել է իր նպատակներից և այլևս կարիք չկա օգնության հասնել հայերին, ընդ որում նա ի վերջո հասավ իր նպատակին: Նույն ձևով Վասակ Սյունին խոչընդոտեց նաև Խաղկտիքից, Տմորիքից, Աղձնիքից և Կորդույքից եկող հնարավոր օգնությանը նաև տեղի հայերից: Վասակ Սյունին փորձեց խոչընդոտել նաև Արցախից եկող օգնությանը, սակայն, քանի որ Արցախը ավելի սերտ կապերի մեջ էր Վարդանանց հետ, այս քայլը չհաջողվեց և, ըստ Ստեփանոս Օրբելյանի մի տեղեկության, Արցախի Առանշահիկների ու նրանց հետ էլ, նաև Ուտիքի և Գարդմանքի հեծելագնդերը ու ժողովրդական աշխարհազորները, որպես Առանշահիկների կրտսեր և քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող նախարարներ, մասնակցել են Ավարայրի ճակատամարտին: Այս առումով հետաքրքիր է, որ կայսրության հետ իր հարաբերություններում Վասակ Սյունուն մեծապես գործակցում էր Սատրապական Հայաստանում գործող Վասակ Մամիկոնյան անունով մի իշխան, որը, դատելով ըստ ամենայնի, դավաճան Վահան Մամիկոնյանի որդի Սամվելի տղան էր: Այս ամենն իր հերթին համընկավ կայսրությունում ստեղծված ծանր դրության հետ:

Իրոք, այն պայմաններում, երբ չկար հանգուցյալ կայսեր ուղղակի ժառանգորդ, Թեոդոսիոս II-ի քույրը ամուսնացավ հասարակ ծագում ունեցող և հաջող ռազմաքաղաքական ուղի անցած Մարկիանոսի հետ, ինչի արդյունքում կայսր հռչակվեց նույն Մարկիանոսը (450-457): Նոր կայսեր օրոք առաջնայինը շարունակում էր մնալ դանուբյան սահմանը և Մարկիանոսը, եթե նույնիսկ ցանկություն էլ ունենար, որը տվյալ պարագայում ինքնին չկար, չէր կարող օգնության ձեռք մեկնել արևելյան քրիստոնյաներին: Ավելին, առկա ողջ ուժերը հավաքելով Դանուբի արևմտյան ափին՝ նոր կայսրը, չնայած հակառակորդի ուժերի բացարձակ գերակշռությանը, վճռականորեն մերժեց իրեն խոշոր փրկագին վճարելու վերաբերյալ Աթիլլայի պահանջը: Արդյունքում, թեև Հոնական տերության ահեղ տիրակալը այդ պահին ավելի հարմար համարեց շարժվել Արևմտյան Հռոմեական կայսրության դեմ և հոնական սպառնալիքը մի պահ, կարծես թե, հաղթահարվեց, սակայն Մարկիանոսն, այսպես թե այնպես, ստիպված էր խոշոր ուժեր պահել դանուբյան սահմանում, իսկ դրա արդյունքն էլ եղավ փաստացի այն մերժումը, որը արդեն 451 թվականի գարնանը Մարզպանական Հայաստան բերեցին անհաջողությամբ ավարտված բանակցություններին մասնակցած ապստամբների պատվիրակները:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նաև նշել, որ նույնիսկ սեփական ազգակիցների համար ծանր այդ ճակատագրական վիճակում էլ Վասակ Սյունին չհապաղեց ու ևս մեկ դավաճանական քայլ արեց՝ իր կողմնակիցների հետ միասին Պարսից թագավորության բանակի կազմում մասնակցություն բերելով ռազմական հարձակմանը: Սկիզբ էր առնում 451 թվականը՝ իրադարձությունների իր ռազմաքաղաքական հագեցվածությամբ բացառիկ մի տարի, թերևս, մի քանի տասնամյակների ընթացքում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

451 մայիսի կես – ***Զարավանդ գավառի ճ-մ***[1]

Ցանկանալով վերջնականապես արյան մեջ խեղդել ապստամբությունը՝ Հազկերտ II-ը Մուշկան Նիսալվուրտի, վերջինիս օգնական Դողվճի ու փղերի գնդի հրամանատար Արտաշիրի գլխավորությամբ ***Փայտակարանում*** կենտրոնացրեց Պարսից թագավորության մի հսկայական բանակ (218.000, այդ թվում ավարներ, կատիշներ, հեփթաղներ, գիլաններ, լփիններ, բաղասականներ, ճղբեր, վատեր, գավեր, գղվարներ, խրսաններ, հեճմատականներ, փասխեր, փոխեր, փյուքվաններ, թավասպարներ, իժմախներ, գուգարներ, շչբեր, եգերսվաններ, Մատյան գունդը, ինչպես նաև 15 փիղ), որին իրենց գնդերի մի մասի (7.000) ուղեկցությամբ միացան նաև Վասակ Սյունին և դավաճան այլ նախարարներ: Ավարտելով նախապատրաստությունները՝ Պարսից թագավորության բանակը ***Փայտակարան-Թավրիզ-Գաբիթյան-Հեր*** երթուղով մեծ արշավանքի դուրս եկավ Մարզպանական Հայաստանի դեմ և, հասնելով ***Զարավանդ,*** ամրացված ճամբար զարկեց ու սկսեց կենտրոնացնել արշավի երթուղու ողջ երկայնքով ձգված իր ուժերը: Ի պատասխան դրա՝ Առանձար Ամատունու գլխավորած Հայկական բանակի առաջապահը (2.000) մոտեցավ թշնամու բանակին և սկսեց հսկել վերջինիս գործողությունները:

I փուլ – Մուշկան Նիսալվուրտը իր հիմնական բանակից առանձնացրեց մի ջոկատ (մոտ 5.000) և ուղարկեց շրջակայքը ասպատակելու: Տեղեկանալով այդ մասին՝ Հայկական բանակը դարանը գցեց թշնամուն և գլխովին ջախջախեց:

II փուլ – Հայկական բանակի առաջապահը հետապնդեց թշնամու մնացորդներին և հալածեց մինչև Պարսից թագավորության բանակի ճամբար:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Նախորդ իրադարձությունից կարճ ժամանակ անց Առանձար Ամատունու գլխավորած Հայկական բանակի առաջապահի հեծյալ ջոկատը (300) ևս մեկ հարված հասցրեց՝ անակնկալ հարձակումով թիկունքից ներխուժելով Պարսից թագավորության բանակատեղի և ծանր կորուստներ պատճառելով թշնամու վերջապահ ջոկատին[2]: Ահա այս ամենից հետո էլ հենց եղավ հանրահայտ այն ճակատամարտը, որն այնքան խորը հետք է թողել մեր պատմության և նույնիսկ ազգային ինքնագիտակցության մեջ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

451 մայիսի 26 – ***Ավարայրի ճ-մ*** (Վասպուրական, Արտազ գավառ, Տղմուտ գետի ափին)[3]

Մուշկան Նիսալվուրտի, վերջինիս օգնական Դողվճի և փղերի գնդի հրամանատար Արտաշիրի գլխավորությամբ ուժերի կենտրոնացումը ավարտած Պարսից թագավորության բանակը (մոտ 213.000, այդ թվում ավարներ, կատիշներ, հեփթաղներ, գիլաններ, լփիններ, բաղասականներ, ճղբեր, վատեր, գավեր, գղվարներ, խրսաններ, հեճմատականներ, փասխեր, փոխեր, փյուքվաններ, թավասպարներ, Մատյան գունդը, ինչպես նաև 15 փիղ) Վասակ Սյունու ու

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 4, 5:
[2] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37:
[3] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 5; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 37-39; Սեբեոս «Պատմություն», գլուխ 7; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 1; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 27, 44; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 1; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 15; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Մեսրոպ Վայոցձորեցի «Հիշատակարան 967 թվականի»; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 17; Ստեփանոս Գեակավանքեցի «Հիշատակարան 1232 թվականի»; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; Սիմեոն Երևանցի «Ջամբռ», գլուխ 2; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70; Մյուենջջիմ-Բաշի «Պատմություն»:

դավաճան այլ նախարարների և նրանց գնդերի (7.000) ուղեկցությամբ շարունակեց առաջխաղացումը դեպի հյուսիս: Անցնելով ***Ճվաշ-Արտագ*** երթուղով՝ մայիսի 23-ին թշնամու բանակը ճամբարեց Տղմուտ գետի հարավային ափին: Այս ընթացքում սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանի գլխավորությամբ ու Ամենայն Հայոց կաթողիկոս Հովսեփ I Վայոց ձորցու հոգևոր առաջնորդությամբ Արտաշատում կենտրոնացած Հայկական բանակը (100.000, որից 66.000 նախարարական գնդի ռազմիկ, 34.000 աշխարհազորային) իր հերթին շարժվեց թշնամուն ընդառաջ և, հասնելով վերջինիս մայիսի 25-ին, բանակեց Տղմուտ գետի հյուսիսային ափին: Անմիջապես էլ հրավիրված խորհրդակցությունում ձևակերպվեց Հայկական բանակի մարտական խնդիրը՝ առաջիկա մարտում հնարավորինս արյունաքամ անել թշնամուն, որից հետո մասնատել ուժերը և մանր ջոկատներով ծավալել հզոր անկանոն մի պայքար: Հաջորդ օրը վաղ առավոտյան կողմերը մարտակարգ ընդունեցին:

Պարսից թագավորության բանակի առաջին շարքում տեղավորվեց հետևակը, երկրորդում՝ հեծելազորը, ընդ որում երկրորդ շարքի աջ թևում էին գտնվում վայրենի ցեղերի ռազմիկները և հայ դավաճանների գնդերը: Աջ թևի և կենտրոնի հետևում գտնվող երրորդ շարքում տեղավորվեց փղերի գունդը, որը ուժեղացված էր մեծաքանակ հետևազորով (45.000), իսկ չորրորդ շարքում էլ, որպես ընդհանուր պահեստազոր, տեղաբաշխվեց Մատյան գունդը: Հայկական բանակի առաջին շարքում ծանր հետևակի պաշտպանության ներքո տեղավորվեց թեթև հետևազորը, երկրորդ շարքում՝ աշխարհազորը, երրորդ շարքում՝ հեծելազորը, չորրորդում՝ պահեստազորը, իսկ մարտակարգի ծայր աջում և ծայր ձախում, համապատասխանաբար, Ներսեհ Քաջբերունու ու Փափագ Առավեղյանի գլխավորությամբ, տեղակայվեցին առանձնացված հեծյալ ջոկատներ: Հայկական բանակի աջ թևը գլխավորում էր Խորեն Խորխոռունին, որպես օգնական ունենալով Արսեն Ընծայեցուն, ձախ թևը՝ Թաթուլ Վանանդեցին, որպես օգնական ունենալով Տաճատ Գնթունուն, կենտրոնը՝ Ներշապուհ Արծրունին, որպես օգնականներ ունենալով Վահան Արծրունուն, Արտակ Մոկացուն և Միհրշապուհ Մարդպետունուն, իսկ պահեստազորը՝ Արշավիր Կամսարականը, որպես օգնական ունենալով Համազասպ Մամիկոնյանին: Սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանը իր վրա վերցրեց բանակի ընդհանուր ղեկավարումը:

I փուլ – Արեգակը ծագելուն պես Հայոց սպարապետը և կաթողիկոսը ոգևորիչ խոսքով դիմեցին իրենց բանակին՝ հայ ռազմիկներին հորդորելով չերկնչել թշնամուց ու մինչև վերջ կատարել իրենց զինվորական պարտքը: Այնուհետև Հայկական բանակի նետաձիգները մոտեցան գետի հյուսիսային ափին և սկսեցին նետերի տարափ տեղալ թշնամու մարտակարգի վրա: Սրան ի պատասխան՝ Պարսից թագավորության բանակի նետաձիգներն իրենց հերթին մոտեցան գետի հարավային ափին և սկսեցին պատասխան գործողությունները: Աղեղնամարտը տևեց բավականին երկար:

II փուլ – 10:00-ի մոտակայքում Պարսից թագավորության բանակի թևերը անցան գետը և հարձակվեցին Հայկական բանակի թևերի վրա: Սկսված և բավականին երկար տևած համառ հանդիպակաց մարտը Հայկական բանակի աջ թևում հաջողություն չբերեց կողմերից ոչ մեկին, սակայն դրա փոխարեն արդեն 12:00-ի մոտակայքում Հայկական բանակի ձախ թևում թշնամին մղվեց ելման դիրքեր:

III փուլ – Հայկական պահեստազորի ու ձախ թևի մի մասից, ինչպես նաև ծայր ձախի առանձնացված հեծելազորից ստեղծված հատուկ հարվածային ջոկատը Վարդան Քաջ Մամիկոնյանի անձնական ղեկավարությամբ անցավ վճռական գրոհի, Պարսից թագավորության բանակի աջ թևի ձախ մասի և կենտրոնի աջ մասի շփման հատվածում ճեղքեց վերջինիս մարտակարգը,

ներխուժեց թշնամու շարքերը ու, ծանր կորուստներ պատճառելով, փախուստի մատնեց մարտակարգը լիովին կորցրած թշնամու ռազմիկներին, ընդ որում միաժամանակ Հայկական բանակի կենտրոնը և թևերը ևս անցան գետը ու հզոր հարված հասցրին Պարսից թագավորության բանակին՝ դրանով իսկ առժամանակ կաշկանդելով վերջիններիս գործողությունները և որոշ ժամանակով ապահովելով սպարապետի ջոկատի գործողության ազատությունը:

IV փուլ – Հետապնդելով թշնամուն և զարգացնելով հաջողությունը՝ սպարապետի գլխավորած ջոկատը հարձակվեց Պարսից թագավորության բանակի երրորդ շարքի վրա, որը ևս ծանր կորուստներ կրելով դիմեց փախուստի: Դրանից հետո Վարդան Քաջ Մամիկոնյանի, ինչպես նաև կենտրոնից թշնամու շարքերը ճեղքելով առաջ եկած Վահան Արծրունու ջոկատները հզոր հարված հասցրեցին Մատյան գնդին ու փախուստի մատնեցին նաև «անմահ» կոչվածներին:

V փուլ – Վարդան Քաջ Մամիկոնյանի և Վահան Արծրունու ջոկատները սկսեցին սրընթաց շարժերով ծանր հարվածներ հասցնել թշնամու կենտրոնին ու աջ թևին՝ նպատակ չունենալով նահանջել և ձգտելով հնարավորինս ծանր կորուստներ պատճառել հակառակորդին:

VI փուլ – 15:00-ի մոտակայքում, օգտվելով ընձեռնված դադարից և անմիջական հետապնդման բացակայությունից, ինչպես նաև՝ թվական հսկայական գերակշռությունից, Մատյան գունդը ու թշնամու բանակի երրորդ շարքը վերականգնեցին մարտակարգը և շրջապատեցին այդ ընթացքում Պարսից թագավորության բանակի աջ թևում ու կենտրոնում հսկայական ջարդ իրականացրած Վարդան Քաջ Մամիկոնյանի և Վահան Արծրունու ջոկատներին: Սկսվեց համառ ու կատաղի, սակայն խիստ անհավասար մի մարտ, որի արդյունքում, կռվելով մինչև վերջ, ի վերջո ընկան սպարապետն ու Վահան Արծրունին և զոհվեցին նրանց ջոկատների գրեթե բոլոր մարտիկները:

VII փուլ – 18:00-ի մոտակայքում Հայկական բանակը ողջ ճակատով նահանջեց և ամուր դիրքեր գրավեց գետի հյուսիսային ափին՝ երեք ժամվա ընթացքում հետ մղելով թշնամու բոլոր գրոհները ու հաջող հակագրոհներով շպրտելով վերջինիս ելման դիրքեր: 21:30-ի մոտակայքում մարտը վերջացավ: Գրեթե անմիջապես էլ հրավիրվեց ողջ մնացած նախարարների երեկոյան խորհրդակցություն, որում որոշվեց, որ Հայկական բանակը կատարել է իր մարտական առաջադրանքը, ծանր կորուստներ է պատճառել թշնամուն և ճակատամարտը շարունակելը այլևս իմաստ չունի, եկել է ժամանակը ցրել ուժերը ու սկսել անկանոն պայքար:

VIII փուլ – 23:00-ի մոտակայքում Հայկական բանակը իրականացրեց հաջող նահանջ և հեռացավ մարտադաշտից, իսկ հսկայական կորուստներ կրած Պարսից թագավորության բանակը չհամարձակվեց որևէ կերպ խոչընդոտել դրան:

Հայերը կորցրին մոտ 35.000 զինվոր, այդ թվում զոհվեցին սպարապետ Վարդան Քաջ Մամիկոնյանը, Վահան Արծրունին, Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Տաճատ Գնթունին, Հմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայեցին և Գարեգին Սրվանձտյանը, ինչպես նաև ընկան 133 ռազմիկներ Մամիկոնյան տոհմից, 57 ռազմիկներ Պալունի տոհմից, 22 ռազմիկներ Դիմաքսյան տոհմից, 20 ռազմիկներ Սրվանձտյան տոհմից, 19 ռազմիկներ Խորխոռունյաց տոհմից, 19 ռազմիկներ Գնթունյաց տոհմից, 7 ռազմիկներ Ընծայեցյաց տոհմից, 7 ռազմիկներ Քաջբերունյաց տոհմից, 3 ռազմիկներ Գնունյաց տոհմից, իսկ 739 ռազմիկներ էլ՝ այլ նախարարական տոհմերից: Պարսից թագավորության բանակը կորցրեց մոտ 120.000 զինվոր, որոնց թվում 3.544 ռազմիկներ դավաճաններից: Մարտավարական տեսանկյունից ճակատամարտը վերջացավ Հայկական բանակի օգտին, քանի որ թշնամին երեք անգամ շատ

կորուստ կրեց: Ռազմավարական տեսանկյունից ևս, սակայն, Հայկական բանակը շահեց այն, քանի որ դրա, ինչպես նաև հետագա գործողությունների արդյունքում Պարսից թագավորության բանակը հեռացավ Մարզպանական Հայաստանից, կնքվեց հաշտություն և վերականգնվեց 428 թվականին Մարզպանական Հայաստանում տիրող վիճակը:

451 թվականի մայիսի 29-ից 31-ը Բակ իշխանի գլխավորած Հայկական բանակը (813) հետ մղեց Անգղ բերդը պաշարած Պարսից թագավորության բանակի (մոտ 5.000) գրոհները, սակայն, պարենի անբավարարության պատճառով չկարողանալով շարունակել պաշտպանությունը, գիշերով ճեղքեց թշնամու պաշարման օղակը և հեռացավ[1]: 451 թվականի հունիսի սկզբին Հոնական տերության բանակը (մոտ 70.000), որը իր կամքից անկախ կամ գուցե դիտավորյալ, մայիսի երկրորդ կեսին հարված չհասցրեց, այնուհանդերձ ասպատակեց Փայտակարանը ու Ատրպատականը և նահանջեց[2]: Այս ընթացքում ահեղ մարտեր ծավալվեցին նաև Սյունիքում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

451 հունիսի սկիզբ – ***Սյունիքի ճ-մ***[3]

Մարտիրեի գլխավորած Առանշահիկների (մոտ 700), Ուտիների (մոտ 700) և Գարդմանցիների (մոտ 700) միացյալ գնդերը Սյունիքի վրայով ուղղություն վերցրին դեպի ***Արցախ:*** Պարսից թագավորության բանակը (մոտ 15.000), տեղեկանալով վերջիններիս շարժման ուղղության մասին, սկսեց հետապնդել Հայկական գնդերին:

I փուլ – ***Անգեղ ձորում*** (Վայոց ձոր) Պարսից թագավորության բանակը շրջապատեց Հայկական բանակին, սակայն վերջինս ճեղքեց շրջապատման օղակը և հեռացավ:

II փուլ – ***Եղեգիս գյուղում*** (Վայոց ձոր) հետապնդում իրականացնող Պարսից թագավորության բանակը կրկին շրջապատեց Հայկական բանակին, սակայն այս անգամ ևս վերջինիս հաջողվեց ճեղքել թշնամու շարքերը և հեռանալ: Հայերը կորցրին 300 զինվոր:

III փուլ – Մարտերով ***Մարանդ գավառի*** ուղղությամբ շարժվող Հայկական բանակին ի վերջո հաջողվեց պոկվել թշնամուց և նահանջել:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

451 թվականի հունիսի կեսին Կապույտ ամրոցի ճ-մ-ում Հայկական բանակը (մոտ 3.000) հաղթեց ամրոցը պաշարած և գրոհի անցած Պարսից թագավորության բանակին (մոտ 7.000)[4]: Իր հերթին, 451 թվականի հունիս կեսին էլ Տմորիքից հարձակված Հայկական բանակը (մոտ 5.000) ասպատակեց Հյուսիսային Միջագետքը և նահանջեց[5]: Եվ վերջապես նույն այս ժամանակ ծանր մարտեր ծավալվեցին նաև Մարզպանական Հայաստանի հյուսիսում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

451 հունիսի վերջ – ***Որջնհաղի ճ-մ*** (Տայք, Արսյաց Փոր գավառ)[6]

Տայք մտած Պարսից թագավորության բանակը (մոտ 15.000) սկսեց

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 6; Ստեփանոս Գեակավանքեցի «Հիշատակարան 1232 թվականի»:
[2] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 6; «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72:
[3] Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 19:
[4] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 6:
[5] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 6:
[6] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 6; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 40, 41:

ասպատակել հայկական գյուղերը, ինչի հետ միաժամանակ թշնամու բանակի մի խոշոր ջոկատ (մոտ 5.000) մոտեցավ Հմայակ Մամիկոնյանի, Արտեն Գաբեղյանի և Վարազ-Շապուհ Պալունու գլխավորությամբ ճամբարած Հայկական բանակին (մոտ 3.000)՝ փորձելով անակնկալի բերել վերջինիս:

I փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման, սակայն Հայ ռազմիկները անակնկալի չեկան և, հեծնելով ձիերը, իրենք գրոհեցին հակառակորդի վրա:

II փուլ – Պարսից թագավորության բանակը անակնկալի եկավ, մատնվեց խուճապի և, կրելով ծանր կորուստներ, դիմեց փախուստի:

III փուլ – Հայկական բանակը հետապնդեց և անխնա ոչնչացրեց թշնամու բանակին, սակայն այդ ընթացքում Հմայակը զոհվեց:

IV փուլ – Հայկական բանակը հարձակվեց գյուղերն ասպատակել փորձող թշնամու ջոկատների վրա և ոչնչացրեց ու հալածեց նրանց:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ մոտ 8.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը, ըստ էության, վերջինը եղավ Վարդանանց պատերազմում: Իրոք, Հազկերտ II-ը, որ իր համար որոշակիորեն անակնկալ կերպով ոչ միայն պատերազմ էր հրահրել սեփական տերության ամենակարևոր մասերից մեկի դեմ, այլև արդեն ծանր կորուստներ էր կրել, այս ամենի արդյունքում ի վերջո ստիպված եղավ հրաժարվել քրիստոնյաների նկատմամբ մինչ այդ վարվող քաղաքականությունից: Սա նաև Միհրներսեհի վարած քաղաքական ողջ գծի տապալումն էր և արդյունքում ամենևին էլ պատահական չէր, որ այդուհետ ամենազոր այս վեզիրի քաղաքական աստղն աստիճանաբար անկում ապրեց:

Եվ այսպես, Պարսից թագավորության բանակի կրած հսկայական կորուստների, Մարզպանական Հայաստանում շարունակվող և Պարսից թագավորության բանակի համար անհաջող ընթացք ունեցող մարտերի, ինչպես նաև Հոնական տերության հսկայական բանակի ներխուժման պայմաններում փաստորեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ պաշտոնական Տիզբոնին, առանց լրջորեն վնասելու արյաց արքայի հեղինակությունը, պետք էր վերականգնել նախկին վիճակը: Վիճակն իրոք որ բավականին ծանր էր, ընդ որում դա դեռ այն բանի ֆոնին, որ Հեփթաղական թագավորության դեմ մղվող պատերազմն էլ ոչ մի կերպ դադարած համարվել չէր կարող: Այն մասին, թե ինչ աստիճանի ծանր կորուստներ էր կրել Պարսից թագավորության ռազմական մեքենան, վկայում է նաև այն հանգամանքը, որ Վարդանանց պատերազմի արդյունքում, ըստ էության, վերջ դրվեց Պարսից թագավորության վերելքի այն ընթացքին, որը համեմատականորեն խաղաղ երկար տարիների ընթացքում նախապատրաստվել էր Հազկերտ II-ի նախորդների կողմից: Արդյունքում՝ Հազկերտ II-ն իր իշխանության արդեն երկրորդ շրջանում ձեռքի տակ, ըստ էության, արդեն մի տերություն ուներ, որն անհամեմատ ավելի թույլ էր, քան մինչ Վարդանանց պատերազմը: Ծանր կորուստներ էին կրել, սակայն, նաև հայերը:

Վարդանանց պատերազմում ընկել էին ոչ միայն նախարարական տոհմերի զգալի թվով ղեկավարներ և ազնվականներ, այլև՝ մեծ քանակի մարդիկ նաև այլ խավերի ներկայացուցիչներից: Զգալի էր նաև գերյալների քանակությունը և, ընդհանրացնելով վերոշարադրյալը, կարող ենք գալ հետևության, որ Վարդանանց պատերազմը ընդհատեց նաև քիչ թե շատ բարենպաստ այն ընթացքը, որը վերջին տասնամյակներում հաստատվել էր Մարզպանական Հայաստանում: Այսպես թե այնպես, սակայն նկարագրված իրադարձություններից հետո կողմերը և ամենից առաջ պաշտոնական Տիզբոնը խաղաղություն էին տենչում ու այդ ուղղությամբ շուտով գործնական քայլեր ձեռնարկեցին:

Արդյունքում՝ արդեն 451 թվականի հուլիսի սկզբին արձակվեց Հազկերտ II-ի պաշտոնական նոր հրովարտակը, որը ուժը կորցրած էր ճանաչում կրոնափոխության

վերաբերյալ նախորդ հրովարտակը: Ավելին, իրավիճակը շտկելու ակնհայտ մտայնությամբ նույն այդ նոր հրովարտակով կոչ ուղղվեց Մարզպանական Հայաստանի նախարարներին՝ հերթական անգամ ներկայանալ Տիզբոն և կարգավորել հարաբերությունները արյաց արքայի հետ: 451 թվականի հուլիս ու օգոստոս ամիսներին հայ նախարարները, ըստ էության, հաշտության բանակցություններ վարելու նպատակով, կրկին Տիզբոնում էին և այս անգամ նրանց արդեն լրիվ այլ մի ընդունելություն էր սպասում: Ճիշտ է, պաշտոնապես հայ նախարարարներն այնուհանդերձ ապստամբներ էին և արյաց արքայի վարկը գոնե այդ հարցում պետք էր փրկել, բայց միաժամանակ նաև պարզ էր, որ նրանց նկատմամբ որևէ բռնության մասին խոսք գնալ արդեն չի կարող:

Ավելին, նույն պաշտոնական Տիզբոնը, կրկին սեփական դեմքը փրկելու մտայնությամբ, վարվեց այնպես, ինչպես բոլոր ժամանակներում և միշտ վարվել են բռնակալները՝ սեփական սխալները բարդել սեփական իսկ քաղաքականության գործիքը հանդիսացած անձի վրա, իսկ այդ անձը կոնկրետ դեպքում ամենից առաջ հենց Վասակ Սյունին էր: Արդյունքում, ընդունելով անմեղ խաբվածի մի տեսք և գործի դնելով այդ թվում նաև հասկանալի այն ատելությունը, որը Սյունյաց իշխանի նկատմամբ տածում էին Վարդանանց կողմում գործող հայ նախարարներն ու հոգևորականները, կազմակերպվեց պաշտոնական մի դատավարություն, որի ելքը ավելի քան կանխատեսելի էր՝ Վասակ Սյունին ճանաչվեց որպես Հազկերտ II-ին մոլորության մեջ գցած մի անձնավորություն, բոլոր արարքներն և բացասական հետևանքները բարդվեցին նրա վրա ու, որպես հետևանք այս ամենի, Վասակը շնորհազրկվեց, բանտարկվեց և հենց բանտում էլ կնքեց իր մահկանացուն: Ինչ վերաբերում է Վարդանանց կողմում գործող նախարարներին, ապա նրանք և իրենց հետ գտնվող հոգևորականները մի որոշ ժամանակ աքսորվեցին Պարսից թագավորության արևելյան շրջաններ, որտեղից էլ նախարարները հետագայում մեծ մասամբ վերադարձան իրենց երկրները: Սրան հակառակ, սակայն, աքսորի ենթարկված հոգևորականները իրենց հիմնական մասով այնուհանդերձ զոհ գնացին: Այսպես թե այնպես, սակայն 451 թվականի արդեն վերջին Մարզպանական Հայաստանի I ապստամբությունն, ըստ էության, վերջացած էր և կողմերն այժմ բոլոր ջանքերն էին ներդնում, որպեսզի վերականգնեին մինչապստամբական դրությունը, թեև, ավելորդ չի լինի կրկնել, որ և Մարզպանական Հայաստանը մասնավորապես, և Պարսից թագավորությունն ընդհանրապես այս իրադարձություններից դուրս եկան զգալիորեն թուլացած:

Այսպիսով ավարտվեց Հայոց պատմության առաջին և ամենամեծ այն ապստամբությունը, որը տեղի ունեցավ Մեծ Հայքի թագավորության անկումից հետո, ապստամբություն, որն ինքնին բացառիկ էր իր տեսակի մեջ: Իրոք, սա ոչ միայն առաջին ապստամբությունն էր Հայոց անկախ պետականության անկումից հետո, այլ այն նաև մարդկության պատմության մեջ առաջին պատերազմն էր հանուն քրիստոնեական հավատքի, ինչպես նաև խղճի ազատության, երբ ապստամբները պաշտպանում էին գաղափարներ, որոնք նույն Եվրոպայում ի հայտ էին գալու դրանից միայն մոտ հազար տարի անց:

Գլուխ 9
Հոնական տերության անկումը և Իբերիայի թագավորության վերջին վերելքը

Ծավալված ահեղ իրադարձություններից հետո Պարսից թագավորությանը զգալի ժամանակ էր պետք ուշքի գալու համար, ընդ որում առաջնային դերերում էր հայտնվում նաև հին հիմնախնդիրը՝ պատերազմը Հեփթաղական թագավորության դեմ: 455 թվականին, քիչ թե շատ կարգի գցելով իր տերության գործերը, Հազկերտ II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը ու նրա կազմում գործող Հայոց այրուձին

ասպատակեցին Հեփթաղական թագավորության տարածքը և նահանջեցին[1]: Այս անգամ, սակայն, ի տարբերություն նախորդների, Հազկերտ II-ի հասցրած հարվածն ավելի քան թույլ էր և, դատելով ըստ ամենայնի, այն ավելի շուտ նպատակ ուներ Հեփթաղական թագավորության դեմ պայքարում ոչ թե վերջնական հաղթանակ ապահովել, այլ ուղղակի հիշեցնել Պարսից թագավորության մասին և գոնե մի որևէ կերպ սանձել թշնամու հետագա ագրեսիվ նկրտումները: Այս առումով պետք է ասել, սակայն, որ հեփթաղները ևս, ըստ էության, աստիճանաբար ի վերջո հանգելով այն մտքին, որ Պարսից թագավորության դեմ պատերազմը, համենայն դեպս գոնե այս փուլում, որևէ էական հաջողության չի խոստանում և նույնիսկ, ընդհակառակը, պատասխան հարվածների է բերում, այս ուղղությամբ իրենց աստիճանաբար սկսեցին որոշակիորեն ավելի հանգիստ պահել՝ փոխարենը մոտակա տարիներին մի քանի կործանիչ արշավանքներ իրականացելով Հնդկաստանի հյուսիսում լայնարձակ տիրույթներ ունեցող, բայց արդեն զգալիորեն թուլացած Գուպտերի թագավորության դեմ: Եվ վերջապես նշենք, որ մեր կողմից նկարագրվող բուռն իրադարձությունների հետ միասին վճռական զարգացումներ էին տեղի ունեցել նաև Եվրասիա մայրցամաքի ամենածայր արևմուտքում:

Իրոք, 451 թվականի հուլիսի վերջին ահեղ Աթիլլան, այն բանից հետո, երբ մի քանի տարի շարունակ ավերիչ արշավանքներ էր կազմակերպել անդրդանուբյան և անդրհռենոսյան տարածքների ուղղությամբ, գլխավորելով 500.000 ռազմիկ կազմող ամենամեծ բանակներից մեկը, որը մինչ այդ երբևէ հարձակվել էր քաղաքակիրթ Եվրոպայի վրա, ու մի քանի զորասյուններով առաջանալով դեպի Արևմտյան Եվրոպա, ներկայիս Ֆրանսիայի Շամպայն մարզում գտնվող լայնարձակ մի երկրամասում, որը հայտնի էր որպես Կատալաունյան դաշտեր, ահեղ մի ճակատամարտում դեմ դուրս եկավ Արևմտյան Հռոմեական կայսրության ու նրա դաշնակից գերմանացիների գրեթե նույնաքանակ միացյալ բանակին: Ճակատամարտը, որն իր չափերով բացառիկ էր ոչ միայն մինչ այդ եղածների, այլ նաև իրեն հաջորդածների մեջ ընդհուպ մինչև Նոր ժամանակաների սկիզբ, տևեց մի քանի օր և արդյունքում հոների ահեղ տիրակալին ծանր կորուստներ արժեցավ, թեև հեշտ չեղավ նաև հակառակորդի համար: Հենց նոր ավարտված ճակատամարտում Աթիլլայի բանակը կորցրել էր 165.000, իսկ հակառակորդը՝ 135.000 ռազմիկ, և գոնե ձևականորեն Աթիլլան չէր պարտվել ու կարող էր հավակնել մարտավարական ոչ-ոքիի գոնե մի վիճակի: Ռազմավարական առումով, սակայն, հետևանքները իրոք որ կործանարար էին, քանի որ կրած կորուստները մի կողմից հնարավորություն չեղավ վերականգնել, իսկ մյուս կողմից էլ նախկինում բռնի կերպով դաշնակցային պարտավորություն ստանձնած շատ ցեղեր և ժողովուրդներ, հատկապես գերմանացիներից, այս ճակատամարտից հետո դուրս եկան Աթիլլայի դեմ: 452 թվականին, ցանկանալով այնուհանդերձ վերականգնել դիրքերը, Աթիլլան վերսկսեց ակտիվ գործողությունները, իսկ 453 թվականի ամենասկզբներին էլ կրկին ներխուժեց Գալլիա, սակայն նույն տարվա մարտին արյունարբու այս տիրակալը հանկարծամահ եղավ, որից հետո հոների տարացեղ տերությունը արագորեն բռնեց քայքայման ուղին:

Արդեն 454 թվականի սկզբին հոների գերիշխանության դեմ դուրս եկած գերմանական Գեպիդական թագավորության արքա Արդարիքը (453-460) Նեդաո գետի ճակատամարտում ծանր պարտության մատնեց Աթիլլայի որդի և հաջորդ Էլլակին (453-454), որը տերության սիրտը կազմող հոների 30.000 ընտիր ռազմիկների հետ միասին ընկած մնաց մարտի դաշտում: Արդյունքում՝ գեպիդները հաստատվեցին Դանուբի միջին հոսանքում և, հատկապես, ներկայիս Հունգարիայի տարածքում, որտեղից վտարեցին մինչ այդ իրենց պետության սիրտն այստեղ հաստատած հոներին: Վերջ, դրանից հետո Հոնական տերությունը, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ և այն ահեղ սպառնալիքը, որ արդեն գրեթե մեկ դար կախված էր քաղաքակիրթ Եվրոպայի վրա,

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 7; Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 2, գլուխ 48; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 70:

փաստացի վերացավ: Արդարիքը Գեպիդական իր թագավորությունը ամուր կերպով հաստատեց Բալկանյան թերակղզու հյուսիսում, իսկ Էլլակի եղբայրներն էլ հոների վերջին մնացորդներով նահանջեցին Մերձսևածովյան տափաստաններ, որտեղ փորձեցին փրկել իրենց երբեմնի հզոր տերության գոնե վերջին մնացորդները, սակայն նրանց գերիշխանությունն արդեն ավելի քան ձևական էր: Այս ամենի արդյունքում անկախություն ձեռք բերեց նաև Հյուսիսային Կովկասում և Նախակովկասյան տափաստաններում դեռևս որոշակիորեն գերիշխող Ալանական թագավորությունը, որը իր արտաքին ավարառուական քաղաքականության սլաքն ուղղեց ամենից առաջ դեպի հարավ, ընդ որում թուլացած այս ուղղությունը, կարծես թե, մեծ հույսեր էր խոստանում:

Իրոք, Մարզպանական Հայաստանի և պաշտոնական Տիզբոնի դիրքերի թուլացումը Հայաստանում ու հարակից երկրներում այլ հետևանքների թվում հանգեցրեց նաև նրան, որ որոշակիորեն առաջնային դերում հայտնվեց Իբերիայի թագավորությունը: Մեծ հաշվով, իհարկե, Մարզպանական Հայաստանն այժմ ևս ուժեղ էր Իբերիայի թագավորությունից, բայց Վարդանանց պատերազմի արդյունքում առաջացած կազմակերպչական և կառավարչական որոշակի խնդիրների պատճառով առաջնային դերին արդեն լիովին կարող էր հավակնել նաև կորուստներից զերծ մնացած ու կենտրոնացված ավելի հստակ կառավարում ունեցող Իբերիայի թագավորությունը: 447 թվականին, հաջորդելով անժամանակ մահացած իր հորը՝ Արչիլի որդի Միհրդատ VII-ին (435-447), Իբերիայի թագավորության արքա էր հռչակվել վեցամյա Վախթանգ I Գորգասալը (447-491), որը իր գահակալման սկզբում բնականաբար միայն ձևական իշխանություն ուներ և դրա հետևանքով նրա երկիրը որոշակիորեն թուլացել էր: Վախթանգ I Գորգասալը, ըստ էության, բաց թողեց նաև Վարդանանց պատերազմը, երբ Իբերիայի թագավորությունը ներկայացնում էր Գուգարքի բդեշխ Աշուշան, սակայն արդեն 457 թվականին չափահասության հասած այս արքան, այրվելով փառասիրական մեծ տենչերից և ինքն էլ լինելով մեծ եռանդի, խելքի, ուժի ու քաջության տեր մի անձնավորություն, անցավ ակտիվ գործողությունների՝ իր թագավորության հետ միասին, ըստ էության, մի որոշ ժամանակ ստանձնելով տարածաշրջանային առաջատարի դերը: Միաժամանակ Միհրդատ VII-ի անժամանակ մահվամբ, նոր արքայի փոքրահասակությամբ, ինչպես նաև Վարդանանց պատերազմի բուռն իրադարձություններով պայմանավորված, ինչպես արդեն ասվեց, որոշակիորեն ակտիվացել էր նաև Ալանական թագավորությունը և Իբերիայի երիտասարդ արքայի հարվածն ամենից առաջ ուղղվեց հենց վերջինիս դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

457 մայիս[1] – ***<u>Արագվի լեռան ճ-մ</u>*** (Հյուսիսային Կովկաս, Ալանաց դուռ կիրճում)[2]

Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի և Պարսից թագավորությունների միացյալ բանակը (222.000, այդ թվում 10.000 պարսիկ հեծյալ, 50.000 հեծյալ կովկասյան լեռնական ցեղերից) ու նրա կազմում Արտավազդ Մամիկոնյանի և Տիրոց Բագրատունու գլխավորությամբ գործող Բագրատունյաց ու Մամիկոնյան միացյալ գնդերը[3] (2.000[4]), առաջանալով ***<u>Մծխեթից</u>***, մտան ***<u>Ալանաց</u>***

[1] Այս և հաջորդող իրադարձություններին թվականը տրվել է հիմք ընդունելով վրաց սկզբնաղբյուրում («Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը») հայտնվող տեղեկությունները, ըստ որոնց 451 թվականին, երբ տեղի ունեցավ Հոնական տերության հարձակումը Ատրպատականի և Աղվանքի վրա, Վախթանգ I Գորգասալը հազիվ 10 տարեկան էր, իսկ այս դեպքերի ժամանակ, որը տեղի ունեցավ 6 տարի անց, նա 16 տարեկան էր:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72:

[3] Այս և հաջորդող իրադարձություններին Բագրատունյաց ու Մամիկոնյան գնդերի մասնակցության մասին նշվել է՝ հիմք ընդունելով վրաց սկզբնաղբյուրում («Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը») հայտնվող տեղեկությունները Արտավազդի մասին, որը իշխում էր Տայքում և ակնհայտորեն Մամիկոնյան էր, ինչպես նաև հաղորդումը «Բյուրականյան»-ի մասին, որը իր հերթին ակնհայտորեն վերաբերվում է Բագրատունիներին, ընդ որում դա այն դեպքում, երբ վերջինս տիրում էր Կարծիքին:

[4] Ըստ վրաց սկզբնաղբյուրի («Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը») Աղվանքի մարզպանը այս և հաջորդող իրադարձություններին մասնակցել է 12.000 հեծյալ ունեցող բանակի կազմով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

Դուռ լեռնանցք և, շարժվելով դեպի հյուսիս ու ճամբարելով, ամուր դիրքեր գրավեցին կիրճի հյուսիսային մուտքի մոտ: Տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին՝ Հոնական տերության և Ալանական թագավորության միացյալ բանակը (մոտ 150.000) 7 օր անց իր հերթին մոտեցավ վերջինիս ու ամուր դիրքեր գրավեց:

I փուլ – Առաջին օրը տեղի ունեցան մանր մարտեր, որոնք որևէ հաջողություն չապահովեցին կողմերից և ոչ մեկին, ընդ որում տեղի ունեցած մենամարտում թշնամու բանակի լավագույն ռազմիկներից մեկը համարվող հոն Թարխանը մենամարտում հաղթեց ու սրատելով սպանեց Վախթանգ I Գորգասալի բանակի լավագույն ռազմիկներից մեկը համարվող պարսիկ Փարսման Ֆառուխին:

II փուլ – Երկրորդ օրը մանր մարտերը շարունակվեցին՝ կրկին որևէ առավելություն չապահովելով որևէ կողմին, ընդ որում տեղի ունեցած հեծյալ մենամարտում Վախթանգ I Գորգասալը հեծյալ նիզակամարտում հաղթեց և սպանեց Թարխանին:

III փուլ – Երրորդ օրը, այն բանից հետո, երբ Իբերիայի արքան հեծյալ մենամարտում հաղթեց աղեղով գործող ալան Բաքթարին և սրատելով սպանեց վերջինիս, Վախթանգ I Գորգասալի բանակը, առաջին շարքում ունենալով ծանր հեծելազորը, նրանցից հետո՝ հետևազորը, իսկ վերջում էլ՝ թեթև հեծյալներին, անցավ վճռական հարձակման ու համառ մարտում ծանր պարտության մատնեց հակառակորդին:

IV փուլ – Վախթանգ I Գորգասալի բանակը հետապնդեց թշնամու փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեց:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցները՝ մոտ 20.000 զինվոր, թշնամին՝ մոտ 50.000 սպանված և վիրավոր, ինչպես նաև 30.000 գերի:

Հենց նոր շահած մեծ հաղթանակից հետո Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի ու Պարսից թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև նրա կազմում Արտավազդ Մամիկոնյանի և Բյուրատ Բագրատունու գլխավորությամբ գործող Բագրատունյաց ու Մամիկոնյան միացյալ գնդերը ասպատակեցին Ալանական թագավորության տարածքը և Նախակովկասյան տափաստանները, որից հետո նահանջեցին[1]: Արդյունքում՝ Հոնական տերությունը և Ալանական թագավորությունը ստիպված եղան հրաժարվել մինչ այդ վարվող արտաքին ավարառուական քաղաքականությունից, ինչը զգալիորեն մեծացրեց անվտանգությունը Կովկասյան լեռնաշղթայից հարավ ձգվող տարածքներում:

457 թվականի աշնանը, հաջողությամբ ավարտելով Ալանական թագավորության դեմ պատերազմը, Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի և Պարսից թագավորությունների միացյալ բանակը (մոտ 100.000, այդ թվում կովկասյան լեռնական ցեղերի ռազմիկներ), ինչպես նաև նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) ասպատակեցին Աբխազիան: Աբխազիայում մղվող մարտերը, սակայն, ձգձգվեցին մինչև 459 թվականի սկիզբը, թեև դաշնակիցներին ի վերջո հաջողվեց երկրամասից դուրս մղել Բյուզանդական կայսրության բանակին և միացնել այն Իբերիայի թագավորությանը, իսկ միջնորդավորված ձևով նաև՝ Պարսից թագավորությանը[2]: Փաստորեն Իբերիայի թագավորության արքան, լայն դաշնակցության մեջ գործելով Պարսից թագավորության հետ, դուրս էր եկել Բյուզանդական կայսրության դեմ և այս գործընթացը դեռ որոշ ժամանակ ևս շարունակվելու էր:

մի կողմից Պարսից թագավորության հաստիքային գունդն այդ ժամանակ կազմում էր 10.000 ռազմիկ, մյուս կողմից էլ այն, որ 1.000-ական ռազմիկներ, հաշվի առնելով «Զորաբանակ»-ի տվյալները, ակնհայտորեն կարող էին բաժին ընկնել Բագրատունիներին և Մամիկոնյաններին, ես թույլ եմ տվել ինձ ենթադրելու, որ այս իրադարձությանը մասնակցած Աղվանքի մարզպանի բանակում հայերը կազմում էին 2.000 հոգի:

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ Վախթանգ I Գորգասալի ակտիվացումը համընկավ ևս մեկ իրադարձության հետ, քանզի նույն 457 թվականի մարտին մահացել էր իր փայփայած ծրագրերից և ոչ մեկն էլ այդպես էլ կյանքի կոչել ի վիճակի չեղած Հազկերտ II-ը, որից հետո արյաց գահին նրան հաջորդել էր փոքր որդին՝ Որմիզդ III-ը (457-459): Ընդհանրապես ասած, Հազկերտ II-ին պետք է հաջորդեր ավագ որդին՝ Պերոզը, սակայն Որմիզդ III-ի օգտին էր հանդես եկել հենց հայրը, որը իր մահվանից մեկ շաբաթ առաջ հենց վերջինիս էր նշանակել որպես սեփական ժառանգորդ, քանի որ որոշակիորեն լայնախոհ և ռազմական հիանալի հատկանիշների տիրապետող կրտսեր որդին, որպես ծանր վիճակում հայտնված Պարսից թագավորության ղեկավար, ակնհայտորեն ավելի լավ հույսեր էր ներշնչում, քան քինախնդիր, բռնկուն, անհեռատես ու ռազմական որևէ ունակությունից բացարձակապես զուրկ ավագ որդի Պերոզը: Արդյունքում՝ գահակալական իրավունքներից զրկված Պերոզը հեռացավ Պարսից թագավորության արևելյան տարածքներ և, ստանալով ամենից առաջ հենց Միհրանյանների աջակցությունը, ի դեմս Ռահատ Միհրանյանի, հարաբերություններ հաստատեց Հեփթաղական թագավորության հետ, իսկ Որմիզդ III-ն էլ լայն համագործակցություն սկսեց քրիստոնյաների ու հատկապես Իբերիայի թագավորության հետ:

459 թվականի մարտին, հեփթաղներից որպես օժանդակություն ստանալով 30.000 ռազմիկներից կազմված մի ուժեղ բանակ, Պերոզն ու Ռահատը բացահայտ ապստամբություն սկսեցին արյաց արքայի դեմ և, օգտվելով այն բանից, որ շատերը լքեցին Որմիզդ III-ին, լիակատար հաղթանակ տարան: Արդյունքում, Որմիզդ III-ը գահազրկվեց և շուտով սպանվեց, իսկ Պարսից թագավորության արքա հռչակվեց Պերոզը՝ Պերոզ I-ը (459-484): Նոր արքան գործնականում բոլոր բնագավառներում, այդ թվում նաև քրիստոնյաների հետ հարաբերություններում, կտրուկ կերպով փոխեց մինչ այդ վարվող պետական քաղաքականությունը: Այս պայմաններում առավելագույնը, որ կարողացավ անել Վախթանգ I Գորգասալը, դա Աբխազիայում մղվող մարտերը գոնե մի կերպ հաջողությամբ ավարտին հասցնելն էր, ընդ որում պաշտոնական Տիզբոնի կողմից սկիզբ առած ճնշումը ուժեղանում էր ամիս առ ամիս: Այս կապակցությամբ պետք է ասել, որ իրավիճակն առավել ծանր տեսք ստացավ ամենից առաջ հենց Մարզպանական Հայաստանում, ընդ որում, այստեղ դեռևս պահպանվող որոշակի անկազմակերպվածության պայմաններում Պերոզ I-ի հարվածն ամենից առաջ ուղղվեց իրավաբանորեն Մարզպանական Հայաստանի կազմում չգտնվող, բայց փաստացի և, ըստ էության, վերջինիս մի մասը կազմող Արցախ-Ուտիքի թագավորության դեմ:

Գլուխ 10
«Թագավոր Աղվանից» հասկացության նրբությունները

Խնդիրը կայանում էր նրանում, որ Մեծ Հայքի թագավորության անբաժանելի մասը կազմող Արցախ և Ուտիք նահանգները Մեծ Հայքի թագավորության անկումից հետո չընդգրկվեցին Մարզպանական Հայաստանի կազմում մեջ, այլ կցվեցին 370 թվականից միայն Աղվանքի տարածքն ընդգրկող, սակայն արդեն մեծապես մազքութական էթնիկ կազմ ունեցող Մազքութական (Աղվանքի) թագավորությանը, որն իր հերթին ոչնչացավ 451 թվականին: Դրանից հետո Կուրի ձախափնյակից մինչև Կասպից ծով, Դերբենդի լեռնանցք ու Կովկասյան լեռներ ձգվող տարածքում ստեղծվեցին մանր ցեղային թագավորություններ, ի դեմս Լփինների, Ճղբերի, Բաղասականների, Մազքութների և այլ թագավորությունների, ընդ որում ստացվեց այնպես, որ այս տարածքը «Աղվանք» կոչելը արդեն չուներ որևէ կիրառական նշանակություն ու գործնականում ավելի հարմար և քաղաքական տեսանկյունից ավելի ճիշտ էր ասել, օրինակ, Լփինների, Ճղբերի, Բաղասականների կամ Մազքութների թագավորություն: Իր հերթին, միացյալ Մազքութական (Աղվանքի) թագավորության ոչնչացումից հետո բնականաբար անկախ

թագավորություն հռչակվեցին նաև մի կուռ էթնոմշակութային ամբողջություն հանդիսացող Արցախը և Ուտիքը:

Ավելին, եթե լփինները, ճղբերը կամ բաղասականները, ղեկավարվելով նեղ ցեղային շահերով ու արժեքներով, որևէ կերպ չցանկացան հետագա կապ ունենալ «Աղվանք» հասկացության հետ, ապա Արցախում և Ուտիքում գերագահության իրավունքով իշխող Առանշահիկները, դրսևորելով ավելի մեծ լայնախոհություն, ընդհակառակը, սեփականացրին այս հասկացությունը ու սկսեցին իրենց կոչել «Թագավոր Աղվանից»: Դրանով վերջիններս իրենց վարկը բարձրացնելուց զատ հետապնդում էին ևս մեկ և ավելի կարևոր նպատակ՝ ստեղծել «իրավաբանական հիմք» հավակնելու Կուրի ձախափնյակին, այսինքն՝ նախկին Մազքութական (Աղվանքի) թագավորության ողջ տարածքին: Այսպիսով, զուտ միայն քաղաքական նպատակներով իրենց վերցնելով «թագավոր Աղվանից» տիտղոսը, իսկ իրենց թագավորությունն էլ որոշ դեպքերում կոչելով «Աղվանից թագավորություն», Արցախ-Ուտիքի թագավորության արքաները, իրենց կամքից անկախ, հիմք տվեցին ներկայիս պատմակեղծարարներին հավակնություններ հայտարարել Կուրի աջափնյակում ձգվող պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգների նկատմամբ:

Գլուխ 11
Մարզպանական Հայաստանի II ապստամբությունը

Վարդանանց պատերազմին հաջորդած խառը տարիներին Արցախ-Ուտիքի թագավորության առաջին և հիմնադիր արքան էր Վաչեն (451-460), որը ամուսնացած էր Հազկերտ II-ի աղջկա հետ: Հաշվի առնելով վերջին հանգամանքը՝ Որմիզդ III-ի վերաբերմունքը Վաչեի նկատմամբ, ըստ էության, դրական էր, սակայն նույն այդ դրական վերաբերմունքի հետևանքն էլ իր հերթին եղավ նաև այն, որ հենց նոր գահին տիրացած Պերոզ I-ը անհանդուրժող վերաբերմունք դրսևորեց Վաչեի նկատմամբ: Հերթը շուտով բնականաբար հասնելու էր նաև Վախթանգ I Գորգասալին, բայց սկզբում պետք էր հաշիվ տեսնել ավելի մոտ գտնվող Վաչեի հետ և ահա Արցախ-Ուտիքի թագավորությունում պաշտոնական Տիզբոնի կողմից սկիզբ առած ճնշումը 459 թվականի ամռանն ու աշնանը հասավ անտանելիության աստիճանի: Արդյունքում՝ սկիզբ առավ Մարզպանական Հայաստանի II ապստամբությունը (459-460):

459 թվականի աշնանը Վաչե արքայի գլխավորած Արցախ-Ուտիքի թագավորության բանակը Պարսից թագավորության կայազորից գրավեց Դերբենդ ամրոցը[1], ընդ որում Վաչեն ակնհայտորեն նպատակ ուներ, ինչպես մի ժամանակ վարվել էին Վարդանանք, համագործակցություն ապահովել հյուսիսային քոչվորների հետ: Սկիզբը, կարծես թե, դրական էր և, ինչպես մազքութները, այնպես էլ կովկասյան 11 այլ ցեղեր համաձայնեցին դաշնակցել հայերին, սակայն հոների պարագան դեռևս մեծապես մնում էր անորոշ: Պերոզ I-ն իր հերթին, խոցված սեփական իշխանության դեմ իրականացրած այդ բացահայտ ելույթից, անմիջապես էլ միջոցներ ձեռք առավ, սակայն նույն 459 թվականի աշնանը Վաչե արքայի գլխավորած Արցախ-Ուտիքի թագավորության բանակը, վարձկան մազքութները և 11 կովկասյան ցեղերի ռազմիկները Արցախի ճ-մ-ում հաղթեցին Պարսից թագավորության բանակին[2]: Տարին արդեն վերջանում էր և հետագան թողնվեց մյուս տարվան:

Ձմռանը Պերոզ I-ին հաջողվեց հարաբերություններ հաստատել Հոնական տերության վերջին մնացորդների հետ և արդյունքում հասնել մի վիճակի, երբ հոների զգալի ուժեր աջակից դարձան պաշտոնական Տիզբոնին: 460 թվականի գարնանը Հոնական տերության մի խոշոր բանակ, առաջանալով Դերբենդի լեռնանցքից, մտավ Արցախի սահմանները: Վաչե արքան, որը մնացել էր առանց դաշնակիցների, որևէ կերպ չէր կարող բաց մարտի մեջ մտնել թշնամու դեմ և արդյունքում նա որդեգրեց անկանոն պատերազմի ռազմավարությունը: Սկիզբ առան մարտեր, որոնք ձգվեցին մինչև ամառ: Հոները դաժանորեն ասպատակում էին երկրամասը, սակայն հայերը ևս համառ դիմադրություն էին ցույց տալիս, ընդ որում Վաչեի օգտին եղավ նաև այն, որ թշնամու ռազմիկների շարքերում տարածվեցին վարակիչ հիվանդություններ ու թշնամու բանակը դրանցից ևս մեծ կորուստներ կրեց[3]: Ի վերջո՝ փոխադարձ զիջումներով կնքվեց հաշտություն, Վաչեն հրաժարվեց գահից և անցավ մասնավոր կյանքի, Արցախ-Ուտիքի թագավորության արքա հռչակվեց նրա եղբորորդի Վաչագանը (460 - մոտ 505), Մարզպանական Հայաստանի II ապստամբությունը վերջացավ և վերականգնվեց նախկին վիճակը: Այս դեպքերից կարճ ժամանակ անց, սակայն, տեղի ունեցան նոր զարգացումներ ևս, որոնք վերջնականապես շարքից հանեցին մինչ այդ տարածաշրջանի գլխավոր դերակատարներից մեկը հանդիսացող ուժին:

Գլուխ 12

---

[1] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 7; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 10:

[2] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 7; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 10:

[3] Եղիշե «Վարդանի և Հայոց պատերազմի մասին», գլուխ 7; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 1, գլուխ 10, 29, 30:

Սաբիրական թագավորության ստեղծումը

463 թվականին Արևմտյան Սիբիրում բնակվող քոչվոր սաբիրները, ինչպես նաև նրանց քոչվոր համադաշնության կազմում գտնվող սարագուրները, հոգուրները և հոնոգուրները, պարտության մատնվելով հերթական անգամ որոշակիորեն դեպի արևմուտք առաջացած ավարներից, իրենց հերթին շարժվեցին դեպի արևմուտք ու անցան Վոլգան, ընդ որում վերջին երեք ցեղերն արդյունքում, ըստ էության, տարալուծվեցին սաբիրների մեջ: Միաժամանակ, օգտվելով անմիջական հետապնդման բացակայությունից, հերթական այս փախստականները, շնորհիվ իրենց մեծաթվության և ավելի հզոր ռազմական համակարգի, Նախակովկասյան ու Մերձսևածովյան տափաստաններում խլեցին գերիշխանությունը արդեն իսկ խիստ թուլացած հոներից և սրանց ենթակա ակացիրներից ու հռչակեցին Սաբիրական թագավորությունը, որը շարունակեց հոների ավարառուական քաղաքականությունը: Այսպիսով՝ Հոնական տերությունը վերջնականապես կործանվեց, սակայն Կովկասյան լեռներից հյուսիս հայտնվեց նոր և տարածաշրջանային մակարդակում նախորդին միայն քիչ զիջող մի գիշատիչ հարևան, որը շարունակեց վերջինիս ավարառուական քաղաքականությունը: Սաբիրական թագավորությունը, զբաղեցնելով Վոլգայից Դանուբ ձգվող լայնարձակ տարածքները, աշխարհաքաղաքական առումով ուներ նույն առաջնահերթությունները, ինչ մինչ այդ հիշատակված տարածքներին տիրած ուժերը՝ հարվածել հարավում, հնարավորինս տարածվել դեպի հյուսիս և փորձ կատարել առաջանալ անդրդանուբյան տարածքներում: Սաբիրական թագավորության ռազմական մեքենան ուներ քոչվոր տափաստանաբնակներին բնորոշ դասական տեսքը, իսկ վերջինիս թվաքանակն էլ, ըստ իմ գնահատականի, կարող էր հասնել մինչև 150.000 ռազմիկի[1]:

Մինչ տեղի էին ունենում վերևում նկարագրված իրադարձությունները, կարծես թե, կարգի գցելով գործերը երկրի ներսում, Պերոզ I-ը, չնայած որ գահին էր հասել հեփթաղների օգնությամբ, ձեռնամուխ եղավ պատերազմի հենց նույն Հեփթաղական թագավորության դեմ: Արդեն 465 թվականին Պերոզ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության հսկայական բանակը ու վերջինիս կազմում Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ գործող Հայոց այրուձին ասպատակեցին հեփթաղների տարածքները և նահանջեցին[2]: Սա արյաց արքայի կողմից ուժերի, ըստ էության, առաջին փորձությունն էր, որին հետո հետևելու էին նորանոր հարվածեր: Մի պահ, սակայն, Պերոզ I-ին շեղեցին այլ հոգսեր:

466 թվականին Ալանաց դուռ լեռնանցքով առաջխաղացած Սաբիրական թագավորության խոշոր բանակը ասպատակեց Վրաստանի տարածքը և Գուգարքն ու, թեև նահանջեց[3], սակայն հարձակման վտանգը պահպանվեց նաև հաջորդ տարում, իսկ այդ պայմաններում արյաց արքան որևէ կերպ չէր կարող ակտիվ գործողությունների անցնել իր պետության արևելքում: Հաշվի առնելով այս ամենը՝ Պերոզ I-ը ի վերջո ստիպված եղավ ոչ միայն բանակային խոշոր ուժեր պահել արևմտյան սահմանի մոտակայքում, այլև, ինչքան էլ չուզենալով, Իբերիայի թագավորության արքա Վախթանգ I Գորգասալի հետ վերականգնել հարաբերությունների նույն այն բնույթը, որը կար դեռևս Որմիզդ III-ի օրոք: Պետք է ասել, որ Իբերիայի թագավորության եռանդուն արքան ևս, սակայն, իր հերթին ձգտում էր այս դաշնադրությանը, քանի որ արևելքում Բյուզանդական կայսրության ակնհայտ թուլության պայմաններում վերջինս մեծ հնարավորություններ էր տեսնում իր թագավորության սահմանները այդ ուղղությամբ լայնացնելու հարցում: Եվ ահա Վախթանգ I-ն ամուսնացավ Պերոզ I-ի դստեր հետ, որից հետո, որպես կնոջ օժիտ, արյաց արքայի հատուկ հրովարտակով հարակից բոլոր երկրների նկատմամբ նշանակվեց գերագահ տիրակալ: Իր հերթին նույն այս ժամանակ Բյուզանդական

[1] Թեոփանոս Խոստովանողը, նկատի ունենալով 520-ական թվականները, հայտնում է, որ սաբիրների տրամադրության տակ կար մոտ 100-120.000 հոգանոց բանակ:
[2] Պրիսկուս «Գոթական պատմություն», մաս 27; Անանիա Շիրակացի «Պատմություն»:
[3] Պրիսկուս «Գոթական պատմություն», մաս 31:

կայսրությունում գործերն իրոք որ բավականին խառն էին:

Գլուխ 13
«Գերմանական խնդիրը» Բյուզանդական կայսրությունում

457 թվականի հունվարին Մարկիանոսի մահից հետո Բյուզանդական կայսրության գահին վերջինիս հաջորդել էր Լևոն I-ը (457-474)՝ ճարպիկ և գործունյա, բայց նաև սեփական դաժանությամբ հայտնի մի զինվորական, որն իր անձնական հատկանիշների, ինչպես նաև իրերի հաջող դասավորության արդյունքում կայսերական գահին էր հասել հասարակության ամենաստորին շերտերից: Լևոն I-ը գահին էր հասել գերմանական տարրի հսկայական աջակցությամբ և, ինքը չլինելով գերմանացի, այնուհանդերձ համարվում էր վերջինիս դրածոն, ընդ որում բնականաբար ենթադրվում էր նաև, որ նա պետք է հնազանդ կերպով կյանքի կոչի հենց այս խմբի շահերը: Մեկ տասնամյակ անց, սակայն՝ արդեն մեր կողմից քննարկվող ժամանակահատվածում, ավելի շուտ տեղական և նույնիսկ փոքրասիական տարրի վրա հենվող Լևոն I-ի ու գերմանական խմբավորման հարաբերություններն այն աստիճան էին սրվել, որ, երկրում առաջացած փաստացի երկիշխանության պայմաններում, կայսրության ռազմավարչական համակարգը, ըստ էության, հայտնվել էր կաթվածահար վիճակում: Այստեղ ևս, սակայն, տեղի էին ունեցել ուշագրավ զարգացումներ:

Իրոք, գերմանական տարրը, վերջին հարյուրամյակում ավանդականորեն գերիշխելով կայսրության ռազմավարչական համակարգում, մեր կողմից քննարկվող ժամանակահատվածում արդեն որոշակիորեն սկսում էր դիրքերը զիջել: Իհարկե, գերմանացիները դեռևս հզոր էին ու դեռևս մեծապես հենց նրանք էին տոն տալիս կայսրությունում, բայց մյուս կողմից էլ արդեն սկիզբ էին առել այլ սոցիալ-քաղաքական և նույնիսկ ժողովրդագրական գործընթացներ, որոնք աստիճանաբար թուլացնում էին վերջիններիս դիրքերը երկրում: Բանն այն է, որ, այն բանից հետո, երբ 454 թվականին Հոնական տերությունն անկում ապրեց, Եվրոպայում սկսվեց կամ, ավելի ճիշտն ասած, վերսկսվեց մոտ մեկ դարով ընդհատված գերմանական դարաշրջանը, որին բնորոշ էր ամենից առաջ ճնշումը Հռոմեական կայսրության հինավուրց սահմանների վրա:

Այդպես եղավ նաև այս անգամ, սակայն, քանի որ Բյուզանդական կայսրությունը ամենատարբեր պատճառներից ելնելով ավելի ամուր էր, իսկ Արևմտյան Հռոմեական կայսրությունն էլ, դրան հակառակ, օրըստօրե թուլանում էր և գնում դեպի կործանում, ստեղծված պայմաններում, ինչը, իհարկե, բնական էր, գերմանական տարրի հոսքն ուղղվեց առավել թույլ դիմադրության ուղով: Այսպիսով՝ գերմանական առաջնորդների և ամենից առաջ Ապենինյան թերակղզում, ըստ էության, անսահմանափակ իշխանության հասած Օդոակրի, իսկ հետո արդեն գերմանական տարրի վաղմիջնադարյան մի իսկական վերելք ապահոված Օսթգոթական թագավորության արքա Թեոդորիք I Մեծի (470-526) օրոք նույն այդ գերմանական տարրն իր եռանդն ուղղեց ամենից առաջ հենց դեպի Արևմտյան Հռոմեական կայսրության, այլ ոչ թե Բյուզանդական կայսրության դեմ: Այս ամենի արդյունքը մի կողմից այն եղավ, որ Արևմտյան Հռոմեական կայսրությունը ի վերջո անկում ապրեց, բայց մյուս կողմից էլ հենց դրա հետևանքով նույն այդ գերմանական տարրի դիրքերը Բյուզանդական կայսրությունում սկսեցին աստիճանաբար թուլանալ: Իհարկե, մեր կողմից նկարագրվող ժամանակներում հիշատակված գործընթացը դեռ նոր էր միայն սկիզբ առնում և իր վերջնական ավարտին էր հասնելու մոտ մեկ դար հետո, բայց այնուհանդերձ, արդեն այս ժամանակ այն սկսվել էր և իրեն զգացնել էր տալիս:

Այս ամենի արդյունքում էլ, ահա, մեծապես տեղական և նույնիսկ փոքրասիական տարի վրա հիմնվող Լևոն I-ը մի կողմից սեփական ուժերի աստիճանական ավելացման, իսկ մյուս կողմից էլ գերմանական ուժերի աստիճանական թուլացման պայմաններում ի վերջո կարողացել էր ապահովել ուժերի քիչ թե շատ հավասարակշիռ մի դրություն,

սակայն դրա արդյունքը եղել էր նաև այն, որ կայսրության ռազմավարչական համակարգը, ինչպես արդեն ասվեց, հենց մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում հայտնվել էր փաստացի կաթվածահար վիճակում: Իրոք, գերմանական տարրն ինքնին արդեն այնքան ուժեղ չէր, որ իշխանությունից հեռացներ Լևոն Ի-ին և, գահին դնելով սեփական թեկնածուին, սկսեր գործել, բայց մյուս կողմից էլ նույն Լևոն Ի-ն ինքն ու տեղացիներն իրենք ևս այնքան ուժեղ չէին, որ սասաններին գերմանացիների դիրքերը՝ հատկապես բանակում: Արդյունքն, ինչպես արդեն ոչ մեկ անգամ ասվեց, եղավ ռազմավարչական համակարգի կաթվածահար վիճակը, որից էլ փորձ կատարեցին օգտվել կայսրության արևելյան հարևանները:

Դեռևս 466 թվականին գերմանական խմբավորման ազդեցիկ առաջնորդներից Ասպարը՝ Բյուզանդա-Պարսկական Ի պատերազմի կայսերական հրամանատար Արդուվարիոսի որդին, որը միաժամանակ նաև կայսրության արևելյան բանակի հրամանատարն էր, զգալով, որ յուրայիններն աստիճանաբար տեղի են տալիս, գաղտնի կապ էր հաստատել պարսկական կողմի հետ՝ փորձ կատարելով նախապատրաստել այդ ավանդական հակառակորդի ներխուժումը դեպի կայսրության տարածք: Գերմանացի առաջնորդի դավադրությունը, սակայն, բացահայտվեց նույն 466 թվականին, որից հետո վերջինս պաշտոնանկ արվեց ու հետ կանչվեց Կոստանդնուպոլիս: Դեռևս ուժեղ դիրքեր ունեցող Ասպարը, սակայն, խուսափեց պատժից, իսկ Լևոն Ի-ն էլ, գոնե մի կերպ իր վարկը փրկելու համար, ձևական մակարդակում, բայց Պարսից թագավորությանը այնուհանդերձ պատերազմ հայտարարեց, որից հետո, արդեն 467 թվականին, տարածաշրջանի երկու գերտերությունների հարաբերությունները զգալիորեն լարվեցին: Ահա հենց այս ողջ դրությունից էր, որ իր հերթին փորձ կատարեց օգտվել Վախթանգ Ի Գորգասալը՝ ուժերի հավասարակշռության ստեղծված յուրօրինակ այդ վիճակում փորձելով մեծացնել սեփական տիրույթները:

Գլուխ 14
Վախթանգ Ի Գորգասալի արևմտյան հարվածը

468 թվականի մայիսին[1], երբ կայսրությունում առկա ներքաղաքական հակամարտությունը մոտենում էր իր գագաթնակետին և բոլորը զբաղված էին դրանով, Վախթանգ Ի Գորգասալի ու Աղվանքի մարզպան Վարազ-Բակուրի գլխավորած Իբերիայի և Պարսից թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև նրա կազմում Տրդատ Արշակունու, Բյուրատ Բագրատունու, Արև Սյունու, Արտավազդ ու Համազասպ Մամիկոնյանների և Ջիվանշիր Արծրունու գլխավորությամբ գործող Արշակունյաց, Սյունյաց, Մամիկոնյան ու Արծրունյաց միացյալ գնդերը ասպատակեցին Կարինի շրջակայքը (Բարձր Հայք, Կարին գավառ), որից հետո, մի ջոկատ (24.000) թողնելով քաղաքի պաշարումը շարունակելու համար, շարժվեցին դեպի հյուսիս[2]: Դաշնակից ուժերի նպատակը Տրապիզոնն էր, որ պաշարվեց արդեն հունիսին և այդ պաշարումը տևեց մինչև սեպտեմբեր[3]: Կայսրության ամրացված այս քաղաքի պաշարումը, սակայն, դաշնակիցներին հաջողություն չբերեց, որից հետո նրանք հետ քաշվեցին Սպերի ուղղությամբ: Հենց այստեղ էլ տեղի ունեցած խոշոր ընդհարումներ մի կերպ ուժերը

[1] Այս և հաջորդ իրադարձությունների թվագրումը, որը բացակայում է վրաց աղբյուրներում, մեզ օգնում է պարզել Պրիսկուսի հաղորդումներից մեկը, ըստ որի մի կողմից Բյուզանդական կայսրության և Լազական թագավորության, իսկ մյուս կողմից էլ Պարսից և Իբերիայի թագավորությունների հարաբերությունները սրվել են հենց 468 թվականին (Պրիսկուս «Գոթական պատմություն», մաս 35): Այս առումով բերված թվականը հետաքրքիր կերպով կարող է հաստատվել նաև Բյուզանդական կայսրությունում զարգացող ներքաղաքական իրադարձությունների ընթացքով, քանի որ հայտնի է, որ 466 թվականին կայսրության արևելյան բանակի հրամանատար Ասպարը մերկացվում է պարսիկների հետ գաղտնի հարաբերություններ ունենալու մեջ, երբ վերջինս, ելնելով ներքաղաքական զարգացումներում իր և իր կողմնակիցների շահերից, դրդում էր պարսկական կողմին հարձակում գործել կայսրության սահմանների վրա (տես՝ Three Byzantine Saints, 1948, Dodgeon, M. H., Lieu, S. N. C., Greatrex, G. The Roman Eastern Frontier and the Persian Wars, Part II, 2002, p. 46.):

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 12:

[3] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:

հավաքած կայսրության բանակի հետ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

468 սեպտեմբեր – ***Սպերի ճ-մ***[1]

Պոլիկարպոս Լոգոթեդի գլխավորությամբ ***ծովով*** առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (25.000, 500 նավ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) աննկատ մոտեցան Վախթանգ I Գորգասալի ու Աղվանքի մարզպան Վարազ-Բակուրի գլխավորությամբ գործող Իբերիայի և Պարսից թագավորության ցրված ու ասպատակությամբ զբաղվող միացյալ բանակին (մոտ 150.000, այդ թվում լեզգիներ և կովկասյան լեռնականներ), ինչպես նաև նրա կազմում Տրդատ Արշակունու, Բյուրատ Բագրատունու, Արև Սյունու, Արտավազդ և Համազասպ Մամիկոնյանների ու Ջիվանշիր Արծրունու գլխավորությամբ գործող Արշակունյաց, Սյունյաց, Մամիկոնյան և Արծրունյաց միացյալ գնդերին (մոտ 9.500):

I փուլ – Կայսրության բանակը անակնկալ հարձակվեց թշնամու վրա և ծանր պարտության մատնեց վերջինիս, որը կորցրեց 27.000 ռազմիկ:

II փուլ – Մարտի մեջ մտան Պարսից թագավորության բանակի հիմնական ուժերը, սակայն սրանք ևս ծանր պարտություն կրեցին, իսկ Վարազ-Բակուրը սպանվեց:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 50, դաշնակիցը՝ մոտ 2.500, պարտվողներից՝ հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցները՝ մոտ 15.000 զինվոր:

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:

468 սեպտեմբեր – ***<u>Սպերի ճ-մ</u>***[1]

Ցամաքով առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (80.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 800) միավորվեցին Պոլիկարպոս Լոգոթեդի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 450), որից հետո մոտեցան Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի ու Պարսից թագավորությունների միացյալ բանակին (մոտ 100.000, այդ թվում լեզգիներ և կովկասյան լեռնականներ), ինչպես նաև նրա կազմում Տրդատ Արշակունու, Բյուրատ Բագրատունու, Արև Սյունու, Արտավազդ և Համազասպ Մամիկոնյանների ու Ջիվանշիր Արծրունու գլխավորությամբ գործող Արշակունյաց, Սյունյաց, Մամիկոնյան և Արծրունյաց միացյալ գնդերին (մոտ 9.000):

I փուլ – Վախթանգ I Գորգասալի բանակը հարձակվեց թշնամու վրա և ծանր պարտության մատնեց վերջինիս այն բանից հետո, երբ Իբերիայի արքան հետևակ մենամարտում հաղթելով սպանեց թշնամու բանակի լավագույն ռազմիկներից մեկը համարվող Պոլիկարպոսին:

II փուլ – Վախթանգի I Գորգասալի բանակը հետապնդեց թշնամու փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեց:

Հաղթողներից ընդհանուր շարքից դուրս եկած 43.000 զինվորից հայերը կորցրին մոտ 4.000, դաշնակիցները՝ մոտ 39.000 զինվոր, պարտվողներից ընդհանուր շարքից դուրս եկած 72.000 սպանվածից և 12.500 գերուց հայերը կորցրին մոտ 350 զինվոր: Կնքվեց հաշտություն, որի արդյունքում Գուգարքի արևմուտքն անցավ Քարթլիի թագավորությանը:

Ողջ վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ Բյուզանդական կայսրության դեմ պատերազմելիս քրիստոնյաները և հատկապես Վախթանգ I Գորգասալը գտնվում էին որոշակիորեն երկիմաստ մի դրության մեջ: Իհարկե, արյաց արքայի հպատակը լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կայսրության բանակում դեռևս գերիշխող արիոսական դավանանքի հետնորդ գերմանական տարրը ակնհայտ արհամարհանքով էր վերաբերվում արևելյան քրիստոնյաներին ու բացահայտ գրգռիչ վարքագիծ էր դրսևորում, հանգեցնում էր այն բանին, որ դաշնակիցները կռվում էին ամենայն համառությամբ, բայց մյուս կողմից էլ վերջնական հաջողությունը թուլացնելու էր հենց իրենց՝ քրիստոնյաներին, և ուժեղացնելու էր Պերոզ I-ի դիրքերը: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ նույն Լևոն I-ը, մահացու մրցապայքարի մեջ գտնվելով գերմանական տարրի հետ, որոշակիորեն շահագրգռված էր վերջինիս անհաջողությունով և այս պայմաններում բացահայտ մեղմ վերաբերմունք էր դրսևորում Իբերիայի թագավորության արքայի նկատմամբ՝ միաժամանակ, սակայն, բնականաբար զգուշանալով վերջինիս հաջողությունների չափից դուրս մեծ ծավալներից: Ուժերի բախման և հավասարակշռության այս յուրօրինակ ու անկրկնելի վիճակն էր հենց, որ, ինչպես արդեն ասվեց, բերեց վերը նկարագրված իրադարձություններին, ընդ որում դրանից վերջին հաշվով շահող դուրս եկան հենց դաշնակից ուժերն և Բյուզանդական կայսրության կայսրը, քանի որ ընթացած գաղտնի բանակցությունների արդյունքում առաջիններին հասավ զգալի ավար ու եղան տարածքային ձեռքբերումներ, ինչպես նաև հիմքեր ստեղծվեցին Լևոն I-ի հետ հետագա համագործակցության համար, իսկ երկրորդն էլ շահեց նրանով, որ ծանր պարտություն կրած բանակը, իսկ արդյունքում ամենից առաջ հենց գերմանական տարրը, թուլացավ և զգալիորեն հեղինակազրկվեց: Այս ամենից ամենաքիչը շահեց երևի թե միայն Պերոզ I-ը, որը, թեև ձևականորեն հաջողության հասավ, բայց իրականում ընդամենը միայն ուժեղացրեց ապագայում իր դեմ գործել

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72:

պատրաստվող ուժերին:

Գլուխ 15
Վախթանգ I Գորգասալն ընդդեմ պաշտոնական Տիզբոնի

Այսպես թե այնպես, սակայն, կարգի գցելով գործերն իր տերության արևմտյան սահմաններին, արյաց արքան սեփական ողջ ուժերը կենտրոնացրեց երկրի արևելքում և պատրաստվեց վճռական հարված հասցնել Հեփթաղական թագավորությանը: 468 թվականի աշնանը Պերոզ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության ու Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև վերջինիս կազմում Արտավազդ ու նրա հորեղբորորդի Սաուրմագ Մամիկոնյանների, Բյուրատ Բագրատունու և Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ գործող Հայոց այրուձին Հեփթաղական թագավորության բանակից գրավեցին Վալամը[1]: Սա ամենամեծ հաջողությունն էր, որին հասավ Պերոզ I-ը հեփթաղների դեմ երկարատև հակամարտության ընթացքում, սակայն կյանքը ցույց տվեց, որ այն այնուհանդերձ մեծապես վաղանցիկ էր:

Հեփթաղական պատերազմի հերթական փուլը քիչ թե շատ հաջողությամբ ավարտելուց հետո քրիստոնյաները վերադարձան իրենց երկրները, սակայն արդեն շատ շուտով պարզվեց, որ, գերագնահատելով ձեռք բերած հաջողությունը, արյաց արքան կրկին ձեռք է մեկել հոր վարած քաղաքականությանը՝ առաջնային խնդիր հռչակելով կրոնափոխության հարցը: Կողմերի միջև ակտիվ բանակցությունները շարունակվեցին 469-470 թվականներին, բայց արդեն հաջորդ տարի հարաբերություններն այն աստիճան էին լարվել, որ քրիստոնյաները Վախթանգ I Գորգասալի գլխավորության անցան բացահայտ անհնազանդության:

471 թվականի մայիսից մինչև օգոստոս Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի և Ալանական թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև նրա կազմում Արտավազդ Մամիկոնյանի ու Բյուրատ Բագրատունու գլխավորությամբ գործող Բագրատունյաց և Մամիկոնյանց միացյալ գնդերը փոփոխական հաջողությամբ ընթացած մանր մարտերում ընդհարվեցին Պարսից թագավորության առաջխաղացած բանակի հետ, սակայն, այն բանից հետո, երբ Բյուզանդական կայսրության բանակն ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները սկսեցին կենտրոնանալ Գուգարքում, կողմերը հաշտություն կնքեցին[2]: Փաստորեն այն քաղաքականության սերմերը, որոնք ցրվել էին դեռևս 468 թվականին, տվեցին իրենց արդյունքը 471 թվականին: Իրոք, այն բանից հետո, երբ այս իրադարձությունների հետ գրեթե միաժամանակ՝ նույն 471 թվականի ամռան կեսերին, Լևոն I-ը կազմակերպեց գերմանական տարրի առաջնորդների սպանությունը և կտրուկ թուլացրեց վերջինիս դիրքերը, նա հնարավորություն ստացավ արդեն լրիվ ծավալով տնօրինել կայսրության բանակային ուժերը, ընդ որում այն բանի ֆոնին, որ հասունանում էր հերթական լարվածությունը Պարսից թագավորության արևելքում, Պերոզ I-ին այլ բան չէր մնում անելու, քան հաշտվել ստեղծված իրավիճակի հետ ու գոնե առժամանակ հրաժարվել կրոնափոխության քաղաքականությունից:

Գլուխ 16
Պերոզ I-ի հետագա պայքարը Հեփթաղական թագավորության դեմ

472 թվականին Պերոզ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության և Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի թագավորության միացյալ բանակը, ինչպես նաև վերջինիս կազմում Արտավազդ ու նրա հորեղբորորդի Սաուրմագ Մամիկոնյանների, Բյուրատ Բագրատունու և Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ գործող Հայոց այրուձին գրավեցին Հեփթաղական թագավորության

[1] Պրիսկուս «Գոթական պատմություն», մաս 35; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 10; Անանիա Շիրակացի «Մատենագրություն»:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72:

արևմտյան տարածքները[1]՝ մարտում կորցնելով այդ թվում նաև Սաուրմագ Մամիկոնյանին: Այս անգամ ևս, սակայն, Պերոզ Ի-ին չհաջողվեց ավելին անել, քան 468 թվականին էր, ընդ որում քննարկվող պարագայում հաջողության չափերն ակնհայտորեն ավելին փոքր էին:

Մի քանի տարի ծախսելով ուժերը վերականգնելու վրա՝ 478 թվականին Պերոզ Ի-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող դաշնակից ուժերը կրկին ասպատակեցին Հեփթաղական թագավորության տարածքը, սակայն հենց այդ ընթացքում էլ Պերոզ Ի-ը գերվեց և նրա ղեկավարած բանակը ստիպված նահանջեց: Դրանից հետո միայն պարսից արքան մեծ փրկագնով ազատ արձակվեց, ընդ որում այդ ընթացքում վերջինիս քրիստոնյա դաշնակիցները վերադարձան իրենց երկրները[2]:

Չհամակերպվելով կրած անհաջողության հետ և կրկին հավաքելով առկա բոլոր ուժերը՝ 479 թվականին Պերոզ Ի-ը հերթական անգամ ներխուժեց Հեփթաղական թագավորության տարածք, սակայն Մատյան գնդի հետ միասին մի նեղ կիրճում կրկին շրջապատվեց հեփթաղների կողմից: Այս անգամ ևս, սակայն, ինչպես նախկինում եղավ, կնքվեց հաշտություն, ըստ որի Պերոզ Ի-ը Հեփթաղական թագավորությանը զիջեց նախկինում գրաված սահմանային շրջանները և պարտավորվեց վճարել 30 ջորու բեռ արծաթե դրամ: Պայմանավորված 20 բեռը վճարվեց անմիջապես, իսկ մնացածի փոխարեն Պերոզ Ի-ը պատանդ թողեց իր որդի Կավատին, աղջկան որպես կին տվեց Հեփթաղական թագավորության արքա Վահշունավարին (մոտ 455-490) և, միայն այդ գնով ազատություն ձեռք բերելով, վերադարձավ մայրաքաղաք[3], ընդ որում ամեն ինչից ակնհայտ էր, որ Գուպտերի թագավորության դեմ աստիճանաբար ծանր մարտերի մեջ ներքաշվող հեփթաղները ոչ մի կերպ չէին ուզում փչացնել հարաբերությունները արյաց արքայի հետ և, չնայած իրավիճակի բացառիկությանը, երկու անգամ էլ, ըստ էության, վերջինիս հետ շատ մեղմ վարվեցին:

Պերոզ Ի-ի կրած անհաջողությունները ծանր անդրադարձան նրա տերության վրա: Արքայի հեղինակությունը ոտնակոխ էր եղել, բայց դրան գումարվել էր նաև այն, որ, փրկագնի հերթական չափաքանակը հավաքելու և արքայազնին հետ գնելու մտայնությամբ պատված արյաց արքան աննախադեպ չափերով մեծացրել էր հարկային բեռը: Միաժամանակ չէին մոռացվել նաև հին պահանջները կրոնափոխության վերաբերյալ: Այս պայմաններում Պարսից տերության ծայրամասերում սկսվեցին տարերային ընդվզումներ, որոնք հետո մեծ չափեր էին ընդունելու:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ 481 թվականի գարնանը ապստամբեց արդեն միայն Դերբենդ ամրոցի շրջակայքի լեռներով սահմանափակված Մազքութների թագավորությունը և այդ ապստամբությունը ճնշելու նպատակով մարզպան Զարմիհր Հազարվուխտի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը ու սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայոց այրուձին ասպատակեցին Մազքութների թագավորության տարածքը և նահանջեցին[4]: Հենց այս ժամանակ էր, որ հայերը լուր ստացան՝ ապստամբել է նաև Իբերիայի թագավորության արքա Վախթանգ Ի Գորգասալը:

Գլուխ 17
Վահանանց պատերազմը կամ Մարզպանական Հայաստանի III ապստամբությունը

Եվ ահա սկիզբ առավ Վահանանց պատերազմը կամ, այլ կերպ ասած, Մարզպանական Հայաստանի III ապստամբությունը (481-485), որը սկզբունքորեն նման

---

[1] Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72;
[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 10; «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»:
[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 10:
[4] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 66:

էր Մարզպանական Հայաստանի I ապստամբությանը, ընդ որում՝ նման էր ինչպես կողմերի կողմից իրենց առաջ դրված նպատակների, այնպես էլ հերոսների ու հակահերոսների պահով: Վերջին հանգամանքի կապակցությամբ ավելացնենք, որ այս անգամ ապստամբության գլուխ կանգնեցին Վարդան Քաջ Մամիկոնյանի եղբայր Հմայակի որդիներ Վահան Մամիկոնյանը (մոտ 475 - ուղ. 505) և նրա եղբայրներ Վասակը, Վարդը ու Արտաշեսը, իսկ դավաճանների գլխավորն էր Վարազ-Վահան Սյունու (451 - մոտ 475) և Վասակ Սյունու աղջկա որդի Գդիհոն Սյունին, որը, ձևականորեն հռչակվելով Սյունիների առաջնորդ, իր կողմնակիցների հետ միասին ձգտում էր կյանքի կոչել նույն այն խնդիրները, ինչ՝ Վասակ Սյունին իր ժամանակին: Այս առումով հետաքրքիր է, որ Վասակ Սյունու որդին՝ Սյունիների նախարարական տոհմի փաստացի և իրավական ղեկավար Բաբիկ Սյունին (մոտ 475 - ուղ. 485), գործում էր ապստամբների կողմում: Հատկանշական է, որ, ի տարբերություն իր տատանվող հոր, այս անգամ միանշանակորեն ապստամբների կողմը կանգնեց նաև Բագրատունյաց տոհմի առաջնորդ, ուսյալ և լուսավոր, բայց նաև հիանալի զորավարի ու ռազմիկի հատկություններ ունեցող Սահակ Բագրատունին (450-482), որը ընտրվեց Հայոց մարզպան: Սպարապետի պաշտոնը հասկանալիորեն գտնվում էր Վահան Մամիկոնյանի ձեռքում:

Վահան Մամիկոնյանը դժվար մանկություն էր ունեցել, սակայն արդյունքում կոփվել էր զորավարական մեծ ունակություններով և զորականի իսկական տաղանդով օժտված մի հայրենասեր անձնավորություն: Հիանալի զորական էր նաև նրա կենսուրախ եղբայր Վասակը: Ինչ վերաբերում է Գդիհոն Սյունուն, ապա սա, ինչպես արդեն ասվեց, փորձելով կյանքի կոչել Վասակ Սյունու քաղաքական գիծը, հանդիսանում էր ոչ վատ մի ռազմիկ, բայց զուրկ էր Վասակ Սյունու բարձր մտավոր ունակություններից:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

481 աշուն – ***<u>Ակոռիի ճ-մ</u>*** (Արարատ, Մասյացոտն գավառ)[1]

> Իբերիայի թագավորության արքա Վախթանգ I Գորգասալը սպանեց իր հավատուրաց բդեշխ Վազգենին և անցավ բացահայտ ապստամբության: Տեղեկանալով այդ մասին՝ հայ նախարարները ևս ապստամբեցին՝ իրենց առաջնորդ ընտրելով Վահան Մամիկոնյանին: Ստացվեց այնպես, սակայն, որ մարզպան Ատրվշնասպին (465-481) և իր օգնականներին հաջողվեց փախուստի դիմել ու հեռանալ Ատրպատական: Դրանից հետո, ցանկանալով անմիջապես խեղդել ապստամբությունը և թույլ չտալ նրա ծավալումը, Ատրվշնասպը Գդիհոն Սյունու ու դավաճան մի քանի այլ նախարարների ուղեկցությամբ Ատրպատականի կայազորային բանակով (7.000, այդ թվում կատիշներ և կոպրեացիներ) ***<u>Թավրիզ-Գաբիթյան-Բաքեան-Գողթն</u>*** երթուղով կրկին մտավ Մարզպանական Հայաստան: Տեղեկանալով այդ մասին՝ Վասակ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (400 հեծյալ) շարժվեց թշնամուն ընդառաջ՝ նպատակ ունենալով Արաքսը գետանցելու պահին անակնկալ հարձակում կազմակերպել թշնամու վրա: Շուտով պարզվեց, սակայն, որ վերջինս արդեն անցել է Արաքսը: Այս պայմաններում Հայկական բանակը ստիպված եղավ նահանջել, ընդ որում վերջապահում գտնվող Վասակը, միայնակ մնալով թշնամու կողմից արդեն գրավված գյուղում, իր ուղեկիցներին հրամայեց աննկատ նահանջել, իսկ ինքը իբր բանակցելու նպատակով մոտեցավ Ատրվշնասպին և, անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով թշնամու բանակի որակի ու քանակական կազմի մասին, հաջողությամբ կարողացավ հեռանալ: Հիմք ընդունելով առկա տեղեկատվությունը՝ Հայկական բանակի հրամանատարությունը որոշեց մանր մարտերով հակառակորդին քաշել Մասիսի հարավային լեռնոտ փեշերը և միայն

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 68, 69; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 29:

այստեղ տալ գլխավոր մարտը:

I փուլ – Մանր մարտերով նահանջելով ***Արած-Ուրծաձոր*** երթուղով՝ Արաքսը գետանցած Հայկական բանակը, չորս հավասար մասի բաժանելով առկա ուժերը, արդեն հիմնական մարտի համար մարտակարգ ընդունեց Ակոռի գյուղի մոտակայքի մի բարձրավանդակում: Հայկական բանակի աջ թևը (100) գլխավորում էին Ատոմ Գնունին ու նրա եղբայր Առոստոմը, կենտրոնը (100)՝ Վասակ Մամիկոնյանը և Բաբիկ Սյունին, իսկ ձախ թևը (100) գտնվում էր Գարջույլ Խորխոռունու հրամանատարության տակ: Միաժամանակ եղբայրներ Ներսեհ ու Հրահատ Կամսարականների գլխավորությամբ ձախ թևի և կենտրոնի միջև գտնվող երկրորդ շարքում թողնվեց պահեստազոր (100): Իր հերթին Արաքսը գետանցած Պարսից թագավորության բանակի աջ թևում տեղավորվեցին կատիշները, այն դեպքում, երբ կենտրոնում և ձախ թևում մնացին Պարսից թագավորության բանակի հաստիքային ուժերը:

II փուլ – Պարսից թագավորության բանակը ողջ ճակատով անցավ գրոհի: Ի պատասխան դրա՝ թշնամուց ավելի բարձր տեղավորված Հայկական ծանր հեծելազորը անցավ հուժկու հակագրոհի և, օգտագործելով նաև բարձունքից արշավող ծանր հեծելազորի հարվածայինի հզոր թափը, ճզմեց թշնամու մարտակարգը՝ ծանր կորուստներ պատճառելով ու փախուստի մատնելով թշնամու բանակի ռազմիկներին: Այդ ընթացքում Հրահատը հեծյալ նիզակամարտում սպանեց սեփական մարտակարգից առաջ անցած թշնամու մի հզոր ռազմիկի, իսկ կենտրոնում բռնկված ձեռնամարտում էլ սպանվեց Ատրվշնասպը և զոհվեցին թշնամու բանակի շատ այլ առաջնորդները: Բռնկված ձեռնամարտում շատ հակառակորդներ սպանվեցին նաև Ատոմ և Առոստոմ Գնունիների կողմից, սակայն Գդիհոն Սյունին կարողացավ նրանցից խույս տալ ու հեռանալ:

III փուլ – Այս վճռական պահին Հայկական բանակի ձախ թևը ողջ կազմով անցավ թշնամու կողմը և, միանալով հարձակման անցած կատիշներին ու կոպրեացիներին, Հայկական հիմնական բանակի համար աննկատ տեղաշարժով անցավ վերջինիս թիկունք՝ փորձելով անակնկալ թիկունքային հարված հասցնել: Ստացվեց այնպես, սակայն, որ թշնամու հարձակմանը ենթարկված մի քանի հայ ռազմիկներ կարողացան աղմուկ բարձրացնել և տեղեկացնել թշնամու մոտենալու մասին: Դրանից հետո, ուղարկված հետախույզներից ստանալով այդ լուրի հաստատումը, Ներսեհ և Հրահատ Կամսարականները մարտին գրեթե չմասնակցած իրենց պահեստազորը անմիջապես շարժեցին թշնամուն ընդառաջ ու հզոր հարված հասցրեցին վերջինիս, ընդ որում Ներսեհը, մարտի դաշտում հանդիպելով կատիշների հզոր առաջնորդին, հեծյալ նիզակամարտում սպանեց նրան, որից հետո ձեռնամարտում ոչնչացրեց նաև թշնամու բազում այլ ռազմիկների: Գրեթե անմիջապես էլ Կամսարականների պահեստազորին օգնության հասավ Հայկական հիմնական բանակը, որի արդյունքում Պարսից թագավորության բանակը վերջնական պարտություն կրեց:

IV փուլ – Հայկական բանակը հետապնդեց փախուստի դիմած հակառակորդի բանակին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 100, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Հայերը մի իսկական հաղթանակ էին շահել, ընդ որում այն պարագայում, երբ Պերոզ I-ի հիմնական հարվածային ուժերը գտնվում էին Պարսից թագավորության արևելքում, նրանք, համենայն դեպս գոնե այդ տարի, բավարար ժամանակ ունեին ուժերը կենտրոնացնելու համար: Այս անգամ ևս, սակայն, ինչպես եղել էր Վարդանանց պատերազմի ժամանակ, Մարզպանական Հայաստանի ֆեոդալական բնույթը, համենայն դեպս գոնե սկզբում, զգալիորեն խանգարեց ուժերի համախմբմանը: Արդեն

տեսանք, որ Գդիհոն Սյունին, ձգտելով կյանքի կոչել իր մորական պապի քաղաքական գիծը, բացահայտորեն հանդես էր գալիս ապստամբների դեմ, այն դեպքում, երբ նրա քեռի Բաբիկը թողել էր հոր քաղաքական գիծն և ապստամբների հետ էր: Խնդիրներ կային, սակայն, նաև այլ վայրերում ևս: Այսպես օրինակ, առժամանակ զերծ էին մնում միանշանակորեն ապստամբների կողմը անցնելուց հզոր Արծրունիները, իսկ որոշ տոհմեր էլ երկփեղկվել էին կամ, որ ավելի վատ էր, լիովին անցել էին հակառակորդի կողմը: Այս պարագայում դեռ լավ էր, որ բանը վերջացավ ընդամենը գոնե միայն մեկ ընդհարումով:

Այսպես, 482 թվականի մարտին ապստամբությանը դեմ հանդես եկող Սևուկ Անձևացու գլխավորած Անձևյաց գնդի մի մասը, ինչպես նաև Հովհան Մոկացու գլխավորած Մոկաց գունդը Առեստի մոտ փորձեցին անակնկալ հարձակումով ջախջախել ապստամբներին միավորվելու ընթացող Հովհան Անձևացու գլխավորած Անձևյաց գնդի մյուս մասին, ինչպես նաև Ներսեհ Երվանդունու գլխավորած Երվանդունիների գնդին, սակայն Ներսեհը հեծյալ նիզակամարտում վիրավորեց Հովհան Մոկացուն, որից հետո վրա հասած Հովհան Անձևացու օգնությամբ տապալեց նրան ձիուց և սպանեց, իսկ հարձակվողները փախուստի դիմեցին ու ցրվեցին[1]: Այսպիսով, եթե չհաշվենք վերոհիշյալ փոքրիկ ընդհարումը, խոշոր պառակտումից կամ արյունահեղությունից մեծ հաշվով հաջողվեց խույս տալ, իսկ միասնություն այդ ժամանակ ու այդ պահին հայերին ավելին, քան պետք էր, քանի որ սկսել էին լուրեր հասնել, որ Պերոզ Ի-ի խոշոր բանակներից մեկը հերթական անգամ շարժվում է հայերի դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 482 ապրիլի 30 – ***<u>Ներսեհապատի ճ-մ</u>*** (Վասպուրական, Արտազ գավառի արևմուտք)[2]
>
> Ցանկանալով վերջնականապես խեղդել ապստամբությունը՝ Պերոզ Ի-ը Մատյան գնդի հրամանատար Ատրներսեհի, վերջինիս օգնականներ Սուրեն Սուրենյանի, Վին Խոռյանի ու Ատրվշնասպ Տապյանի գլխավորությամբ, ինչպես նաև դավաճան Գդիհոն Սյունու և Սյունյաց գնդի մի մասի (մոտ 1.000) ուղեկցությամբ ապստամբների դեմ շարժեց Պարսից թագավորության մի խոշոր բանակ (մոտ 60.000, այդ թվում կատիշներ): Թշնամին, անցնելով ***<u>Թավրիզ-Գաբիթյան-Հեր-Զարավանդ-Թոռնավան</u>*** երթուղով, մտավ ***<u>Արտազ:</u>*** Այս ընթացքում սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ու Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհան Ի Մանդակունու (478-490) հոգևոր առաջնորդությամբ ***<u>Դվինում</u>*** (Արարատ, Ոստան Հայոց գավառ) կենտրոնացած Հայկական բանակը (մոտ 50.000) շարժվեց դեպի հարավ և մոտեցավ գյուղի մոտ ճամբարած թշնամուն: Հաջորդ օրը կողմերը մարտակարգ ընդունեցին:
>
> Հայկական բանակի առաջին շարքը կազմված էր հետևակից, երկրորդը՝ հեծելազորից: Մարտակարգի ծայր աջում՝ աջ թևից աջ, Վահան Մամիկոնյանի տրամադրության տակ թողնվեց առանձնացված հեծյալ ջոկատ, որը կազմված էր նախարարական գնդերի ամենահզոր ռազմիկներից: Հայկական բանակի ձախ թևը գլխավորում էին եղբայրներ Ներսեհ, Հրահատ և Վահան Կամսարականները, ինչպես նաև Վասակ ու Արտաշես Մամիկոնյանները, աջ թևը՝ Բարսեղ Վահևունին, Բաբիկ Սյունին, Ատոմ Գնունին և Փապակ Պալունին: Միաժամանակ աջ թևի և կենտրոնի միջև գտնվող երրորդ շարքում Վրեն Վանանդեցու ու Պապ Արշակունու գլխավորությամբ թողնվեց պահեստազոր: Կենտրոնի ղեկավարումը հանձնվեց մարզպան Սահակ Բագրատունուն, իսկ ընդհանուր բանակի կառավարումն իր

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 70:
[2] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 70, 71:

վրա վերցրեց սպարապետ Վահան Մամիկոնյանը: Ըստ Հայկական բանակի ղեկավարության նախապես հաստատված մարտական պատկերի՝ սկզբում պետք է հարձակվեին Հայկական բանակի աջ թևն ու ծայր աջի ջոկատը՝ խնդիր ունենալով ջախջախել թշնամու ձախ թևը և դուրս գալ նրա թիկունք: Արեգակը ծագելուն պես Հայոց սպարապետը և կաթողիկոսը ոգևորիչ խոսքով դիմեցին իրենց բանակին՝ կոչ անելով հայերին տալ հայ ռազմիկին վայել մարտ:

I փուլ – Պարսից թագավորության բանակը, կանխելով Հայկական բանակի հարձակումը, ողջ ճակատով անցավ միաժամանակյա գրոհի: Ճակատի ողջ երկարությամբ բռնկվեց համառ մարտ, որը հատկապես կատաղի բնույթ ընդունեց կենտրոնում: Այստեղ, հանդիպելով իրար մարտադաշտում, սկզբում նիզակներով, իսկ հետո թրերով սկսեցին մենամարտել Սահակ Բագրատունին և Ատրներսեհը, որի արդյունքում Սահակը հաղթեց ու սպանեց իր հակառակորդին: Ի վերջո, Հայկական բանակի թևերը սկսեցին նահանջել:

II փուլ – Օգտվելով նրանից, որ Հայկական բանակի նահանջած աջ թևին հետապնդող թշնամու ձախ թևը խորը խրվել է Հայկական մարտակարգի մեջ և անպաշտպան մնացել թևերից ու հատկապես իր ձախ կողմից՝ հայկական մարտակարգի ծայր աջ թևում գտնվող առանձնացված հեծյալ ջոկատը կողքից, իսկ երրորդ շարքի պահեստազորն էլ՝ ճակատից, հզոր հարված հասցրին նրան: Արդյունքում՝ թշնամին, չդիմանալով երկկողմ համակցված հարվածին, ծանր կորուստներ կրելով դիմեց փախուստի:

III փուլ – Հայկական բանակի աջ թևը և պահեստազորը, հետապնդելով թշնամու փախչող ձախ թևին, կողքից հարվածեցին Պարսից թագավորության բանակի կենտրոնին, այն դեպքում, երբ Հայկական առանձնացված հեծյալ ջոկատը և պահեստազորը, շարունակելով թշնամու ձախ թևի հետապնդումը, ծանր կորուստներ պատճառեցին նրան, որից հետո հետ վերադարձան ու թիկունքից հարվածեցին թշնամու կենտրոնին: Այս ընթացքում Վահան Մամիկոնյանը, մարտադաշտում հանդիպելով քաջաբար մարտնչող Վին Խոռյանին, մենամարտում հաղթեց ու սպանեց սկզբում նրան, իսկ հետո՝ վերջինիս երկու թիկնապահներին և թշնամու բազում այլ ռազմիկների: Ի վերջո, Պարսից թագավորության բանակի կենտրոնը դիմեց փախուստի:

IV փուլ – Հարձակման անցավ Հայկական բանակի նահանջած ձախ թևը, որից հետո թշնամու փախուստը դարձավ համընդհանուր: Այդ ընթացքում Ներսեհ Կամսարականը, մարտադաշտում հանդիպելով Ատրվշնասպ Տապյանին, մենամարտում հաղթեց ու սպանեց նրան, որից հետո սպանեց նաև թշնամու բազում այլ ռազմիկների:

V փուլ – Հայկական բանակը սկսեց հետապնդել և ոչնչացնել թշնամու փախչող բանակին:

Հայերը կորցրին մոտ 12.000, թշնամին՝ մոտ 40.000 զինվոր:

Հայկական բանակը փառահեղ մի հաղթանակ էր տարել և, հերթական անգամ խորտակելով պաշտոնական Տիզբոնի նկրտումները Մարզպանական Հայաստանի նկատմամբ, շուտով շարժվեց Ծաղկոտն գավառ՝ հանգստանալու ու ուժերը վերականգնելու համար: Գրեթե անմիջապես էլ, սակայն, Վահան Մամիկոնյանին ներկայացավ Վախթանգ I Գորգասալի կողմից ուղարկված մի սուրհանդակ և հայտնեց, որ Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության մեկ այլ բանակ (մոտ 50.000) մտել է Վրաստան, իսկ ինքը՝ Իբերիայի թագավորության արքան, բավարար ուժեր չունենալով դիմադրելու թշնամուն, պատսպարվել է իր թագավորությանը սահմանակից Հայաստանի լեռնային շրջանում՝ Կանգարք գավառի Մթին լեռներում: Միաժամանակ սուրհանդակը, նպատակ ունենալով անպայման ապահովել Հայկական բանակի օգնությունը, խեղելով իրականությունը հայտնեց, թե իբր սաբիրները շտապում են

օգնության և շատ շուտով կմիավորվեն Իբերիայի թագավորության բանակին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

482 օգոստոս – ***<u>Ճարմանայի ճ-մ</u>*** (Իբերիա, Կուր գետի աջ ափին, Գուգարքի Ցուրտավ քաղաքից մոտ 20 կմ արևելք)[1]

Նպատակ ունենալով օժանդակել դաշնակցին՝ սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 30.000) շարժվեց դեպի հյուսիս: Մթին լեռներում միավորվելով Իբերիայի թագավորության բանակին (մոտ 10.000)՝ վերջինս մի քանի օր սպասեց սաբիրներին, որոնք այդպես էլ չեկան: Այնուհետև Վախթանգ I Գորգասալը, կրկին խեղելով իրականությունը, սկսեց համոզել Վահան Մամիկոնյանին, որ, եթե իրենց բանակը իջնի բաց դաշտ, սաբիրները այդ դեպքում արդեն անպայման կմիանան իրենց: Ու թեև Վահան Մամիկոնյանը չէր ցանկանում իր բանակը իջեցնել դաշտավայր, քանի որ քրիստոնյաների բանակի շարքերում բացակայում էր միաբանությունը, նրանք թվով զգալիորեն զիջում էին հակառակորդին, սաբիրների վրա լրջորեն հույս դնել չէր կարելի, իսկ Հայկական բանակն էլ հաջող էր կռվում հենց լեռնային տեղանքում, բայց ի վերջո տեղի տվեց Իբերիայի թագավորությունը ասպատակումից զերծ պահելու նպատակով արվող Վախթանգ I Գորգասալի հորդորներին: Արդյունքում՝ Իբերիայի թագավորության և Հայկական միացյալ բանակը, շարժվելով դեպի արևելք, մտավ Կուր գետի հովիտ, որտեղ էլ ուժեղ շոգի պայմաններում բանակեց Կուրի աջ ափին՝ Ճարմանայի դաշտում: Երեք օր անց արևելքից մոտեցավ Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) և բանակեց Կուր գետի ձախ ափին: Գրեթե անմիջապես էլ որոշ հայ դավաճան նախարարներ ներկայացան Միհրանին և խոստացան մարտի ժամանակ օժանդակել վերջինիս:

Հաջորդ օրը կողմերը մարտակարգ ընդունեցին: Քրիստոնյաների բանակի առաջին շարքը կազմված էր հետևակից, իսկ երկրորդը՝ հեծելազորից: Ձախ թևում Վախթանգ I Գորգասալի գլխավորությամբ տեղավորվեց Իբերիայի թագավորության բանակը, իսկ աջ թևում և կենտրոնում՝ Հայկական բանակը: Աջ թևի ու կենտրոնի միջև գտնվող երրորդ շարքում Սահակ Բագրատունու և Բաբիկ Սյունու գլխավորությամբ թողնվեց պահեստազոր: Քրիստոնյաների բանակի աջ թևը գլխավորում էին Բարսեղ Վահևունին ու Սատոն Գաբեղյանը, կենտրոնը՝ եղբայրներ Վահան, Վասակ, Վարդ և Արտաշես Մամիկոնյանները, Ներսեհ ու Հրահատ Կամսարականները, ինչպես նաև Ատոմ Գնունին:

I փուլ – Պարսից թագավորության բանակը ողջ ճակատով անցավ Կուրը և սկսեց գրոհը: Ի պատասխան դրա՝ քրիստոնյաների բանակը անցավ հակագրոհի՝ փորձելով հետ շպրտել թշնամուն, սակայն, միայն կենտրոնին հաջողվեց պարտության մատնել Պարսից թագավորության բանակին և, շպրտելով նրան գետի մյուս ափը, անցնել այն ու հետապնդել թշնամուն: Հետապնդման ընթացքում Վասակը, թեև մի հաղթանդամ ռազմիկի հեծյալ նիզակամարտում տապալելիս կոտրեց նիզակը, սակայն, վերցնելով նոր նիզակ, հաջողությամբ շարունակեց մարտը: Կոտրված նիզակի փոխարեն ձեռք բերելով նոր նիզակ՝ հաջողությամբ շարունակեց մարտնչել նաև Ներսեհ Կամսարականը:

II փուլ – Քրիստոնյաների բանակի ձախ թևը կազմող Իբերիայի թագավորության բանակը չդիմացավ հանդիպակաց մարտին ու դիմեց փախուստի: Միաժամանակ մարտնչող բանակի աջ թևն էլ դավաճան հայ նախարարները շրջեցին և, դուրս գալով մարտից, լքեցին մարտադաշտը: Արդյունքում՝ քրիստոնյաների բանակի կենտրոնը միանգամից հայտնվեց

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 73, 74; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 29; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 18:

շրջապատման մեջ:

III փուլ – Այս վճռական պահին երրորդ շարքում գտնվող Հայկական պահեստազորը դրսից հարված հասցրեց սեփական կենտրոնը շրջապատած թշնամու բանակին: Գրեթե միաժամանակ էլ շրջապատման օղակի ներսից գրոհի անցավ նաև Հայկական բանակի կենտրոնը: Համակցված հարվածների արդյունքում շրջապատումը հաջողությամբ ճեղքվեց, թեև մարտում ընկան Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը, զոհվեցին այլ անվանի նախարարներ, իսկ Հրահատ Կամսարականն էլ, ընկնելով ձիուց ու մնալով հետիոտն, գերվեց: Գերվեց նաև Յազդ Սյունին, իսկ Բաբիկ Սյունին ստացավ ծանր վերք և փրկվեց միայն շնորհիվ այն բանի, որ Վահանը, վերցնելով նրան իր ձիու վրա, դուրս հանեց մարտադաշտից:

IV փուլ – Դժվարությամբ պոկվելով թշնամու հետապնդումից՝ Հայկական բանակը վերադարձավ Մարզպանական Հայաստան, իսկ Իբերիայի թագավորության բանակը ամրացավ Իբերիայում:

Հայերը կորցրին մոտ 10.000, որոնց թվում զոհվեցին նաև Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 6.000 զինվոր:

Անհաջող այս ճակատամարտից հետո Վահան Մամիկոնյանը ցրեց Հայկական բանակը, ինքը փոքր մի ջոկատով (100) ճամբարեց Մկնառիճ գյուղում (Կարինից մոտ 30 կմ հյուսիս-արևելք), իսկ նրան հետապնդող Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակն էլ (մոտ 2.000) ճամբարեց Դու գյուղում (Կարինից մոտ 15 կմ հյուսիս-արևելք): Կողմերի միջև սկսվեցին բանակցություններ, սակայն դրանց ընթացքում Միհրանը իր հետ եղած բանակով անակնկալ հեռացավ և, հավաքելով Մարզպանական Հայաստանում ցրված իր բանակը, վերադարձավ Պարսից թագավորություն: Օգտվելով դրանից՝ Վահան Մամիկոնյանը վերադարձավ Դվին:

482 թվականի օգոստոսի Ճարմանայի ճակատամարտը, չնայած որ քրիստոնյաներին մի բավականին զգալի պարտություն արժեցավ, բայց միաժամանակ մեծ հաշվով էական հաջողություն չապահովեց նաև պաշտոնական Տիզբոնին, ընդ որում Միհրանի հապճեպ նահանջը, որի պատճառներն առայժմ անհայտ են, թույլ տվեց հայերին վերականգնել բոլոր այն դիրքերը, որոնք կարող էին սպառնալիքի տակ հայտնվել այդ պարտության հետևանքով: Ավելին, հայերը կարողացան հետ խլել նաև գերիներից ոմանց: Այսպես, 482 թվականի սեպտեմբերի 16-ին, աննկատ հետապնդելով թշնամու հեռացող բանակին, Ներսեհ Կամսարականի գլխավորած Կամսարականների գունդը (1.000) Բագավանի մոտ հարձակվեց գերիներին Պարսից թագավորություն տանող Պարսից թագավորության ջոկատի (մոտ 1.000) վրա և ազատեց Հրահատին, թեև Յազդ Սյունին մնաց գերված ու հետագայում սպանվեց[1]:

483 թվականի գարնանը, ցանկանալով ի վերջո լուծել ապստամբների հարցերը, արյաց արքան Մարզպանական Հայաստան ուղարկեց հերթական մի բանակ: Իր հերթին սպարապետ Վահան Մամիկոնյանը, հավաքելով Հայոց այրուձին (30.000), Գերանա դաշտում դեմ ելավ հակառակորդի բանակին: Բռնկվեց մի խիստ կատաղի, համառ և արյունահեղ մարտ, որի արդյունքում Պարսից թագավորության բանակը, որն իր կազմում ուներ նաև զգալի թվով սաբիրներ, ի վերջո պարտություն կրեց ու մատնվեց փախուստի[2,3]:

---

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 76; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 18:

[2] Սեբեոսի բերած այս ճակատամարտի իսկությունը լիովին անհիմն չի ընդունվել, ըստ երևույթին, հիմնականում այն պատճառով, որ Ղազար Փարպեցին այն չի հիշատակում, սակայն այդ փաստարկը որևէ քննադատության չի դիմանում: Հետաքրքիր է նաև նշել, որ, չընդունելով հանդերձ այս ճակատամարտի իսկությունը, խորհրդահայ պատմագիտությունը, որպես իրականությանը համապատասխանող, լիովին արդարացիորեն ընդունում է Սեբեոսի հաղորդման մեջ հիշատակած Հայկական այրուձիու թվաքանակը: Ըստ իս իրականում այս ճակատամարտը լրացնում է Վահանանց պատերազմի պակասող օղակներից մեկը և, թեև Սեբեոսը կոնկրետ թվական չի նշում, սակայն, հաշվի առնելով Ղազար Փարպեցու կողմից նկարագրվող իրադարձությունների ժամանակագրական ընթացքը, երբ վերջինս տեղեկություններ է տալիս 481, 482, ինչպես նաև 484 թվականների վերաբերյալ, կարելի է կարծել, որ այն տեղի է ունեցել 483 թ-ի գարնանը: Այդ մասին անուղղակիորեն վկայում է նաև այն հանգամանքը, որ 483 թ-ի իրադարձությունների նկարագրումը Փարպեցու մոտ բացակայում է, 481, 482 և 484 թվականների ռազմական բովանդակությունը

Այսպիսով՝ հերթական այս հարձակումը ևս, որը Պերոզ I-ը իրականացրեց ամենից առաջ մեծապես հենց սաբիրների ուժերով, վերջինիս որևէ հաջողություն չբերեց, իսկ Հեփթաղական թագավորության դեմ պատրաստվող հերթական հարձակման հետ միաժամանակ էլ Մարզպանական Հայաստանն ու հարակից երկրները շարունակում էին մնալ ապստամբական դրության մեջ: Այս պայմաններում էլ հենց բացվեց 484 թվականը, որին մի քանի տարի տևող այս հակամարտության մեջ վիճակված էր վճռականը լինել:

484 թվականի գարնանը պարսից արքունիքի կողմից ուղարկված մարդիկ սկսեցին կեղծ լուրեր տարածել, թե իբր Վասակ Մամիկոնյանը և Սահակ Բագրատունին ողջ են ու թաքնվում են Իբերիայի թագավորության տարածքում՝ դրանով ի վերջո հասնելով նրան, որ վերջիններիս որոնելու նպատակով առանց այդ էլ ցրված Հայոց այրուձիու մեծ մասը Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանի գլխավորությամբ մեկնի հյուսիս: Արդյունքում՝ օգտվելով Հայկական բանակի մասնատումից, Հազարվուխտի գլխավորած Պարսից թագավորության խոշոր մի բանակ դավաճան Գդիհոն Սյունու և Սյունյաց գնդի մի մասի ուղեկցությամբ սրընթաց երթով մտավ Մարզպանական Հայաստան, որից հետո, ճամբարելով Խոսրովի անտառում ու Ջրվեժի բարձունքներում, պաշարեց Դվինը: Ստեղծված բարդ պայմաններում, նպատակահարմար չգտնելով այլևս մնալ Դվինում, սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը գիշերային անակնկալ հարձակումով ճեղքեց պաշարման օղակը և նահանջեց հյուսիս, ընդ որում այս ընթացքում զոհվեցին Քաջաջ Սահառունին ու Որդի Դիմաքսյանը, իսկ պաշարումը ճեղքողների հետ գտնվող Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհան I Մանդակունին էլ ընկավ ձիուց, գերվեց, սակայն հետագայում ազատ արձակվեց[2]: Դրանից հետո Հայկական բանակը, միավորելով ուժերը, ճամբարեց Խաղկտիքում՝ անցնելով անկանոն պատերազմի ռազմավարությանը:

Հազարվուխտը, ցանկանալով զարգացնել հաջողությունը և հետապնդելով հեռացող հայերին, ասպատակեց շրջակայքը ու գրավեց Տայքի մի քանի ամրություններ, որից հետո, Շապուհ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակի մի քանի հազարյակ, ինչպես նաև դավաճան Գդիհոն Սյունուն ու նրա գնդի մի մասը թողնելով հայերի դեմ, ինքը հիմնական ուժերով շարժվեց դեպի Իբերիայի թագավորություն[3]: Այս ընթացքում, սակայն Վարայրվարոյնի ճ-մ-ում (Բարձ Հայք, Շաղագոմ գավառ) Հազարվուխտի գլխավորած Պարսից թագավորության բանակը այնուհանդերձ հասցրեց անակնկալ հարձակվել Կամսարականների գնդի (մոտ 1.000) վրա և, պարտության մատնելով վերջինիս, գերել Հրահատի ու Ներսեհի կանանց[4]: Միաժամանակ, սակայն, ցանկանալով գերյալներին օգտագործելով որևէ կերպ ազդել Կամսարական իշխանների վրա, Հազարվուխտը հայ կանանց վերաբերվեց ամենայն հարգանքով ու պատվով: Արդյունքում՝ Պարսից թագավորության հիմնական բանակն անցավ հյուսիս և սկսեց հետապնդել Վախթանգ I Գորգասալին, իսկ Շապուհ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակն էլ Գդիհոն Սյունու գլխավորած Սյունյաց գնդի մի մասի հետ միասին փորձեցին լուծել հայազգի ապստամբների հարցերը:

Այս ընթացքում, սակայն, մի քանի գիշեր շարունակ Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակի հետևակ նետաձիգները շրջապատեցին Ոքաղե

հայտնի է, արդեն 484 թվականին Պարսից թագավորությունը ձեռնամուխ եղավ Հեփթաղական թագավորության դեմ ձեռնարկվելիք խոշոր արշավանքին և այս պայմաններում քիչ հավանական է ոչ միայն վարձկան սաբիրների հարձակումը Մարզպանական Հայաստանի վրա, այլև՝ որևէ խոշոր ընդհարման առկայությունը: Եվ վերջապես քիչ հավանական է, որ 482 թ-ի օգոստոսի Ճարմանայի ճակատամարտում տարած հաղթանակից հետո Պարսից թագավորությունը մոտ մեկ տարի հանգիստ կթողներ ապստամբներին և չէր փորձի զարգացնել հաջողությունը: Այսպիսով՝ Սեբեոսի բերած տվյալները, լույս սփռելով 483 թվականի գարնանը տեղի ունեցած իրադարձությունների ընթացքի վրա, վերականգնում են Վահանանց ապստամբության իրադարձությունների շղթայի պակասող օղակներից մեկը:

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 8; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»:

[2] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 78:

[3] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 79:

[4] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 79, 80:

ամրոցի (Տայք, Ոքաղե գավառ) մոտ ճամբարած թշնամու բանակատեղին և իրականացրեցին անխնա նետահարում: Միաժամանակ նաև Հայկական բանակի հարվածային խմբերը ներխուժեցին թշնամու ճամբար և, կորուստներ պատճառելով թշնամուն գիշերային խավարում, հեռացան, այն դեպքում, երբ դրանից հետո մթության մեջ հակառակորդի ռազմիկները իրենք շարունակեցին միմյանց կոտորել[1]: Կատաղած վերջին անհաջողությունից՝ Շապուհը և Սյունյաց իշխանը Ծաղիկ գյուղի ճ-մ-ում (Բարձր Հայք, Կարին գավառ) փորձեցին այնուհանդերձ շրջապատել հայերին, սակայն վերջիններիս հաջողվեց հեռանալ ու պոկվել թշնամուց[2]: Նախորդ իրադարձությունների հետևանքով այնպես ստացվեց, որ Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանը, Ներսեհ Կամսարականը, Խուրս Արշամունին և իրենց հետ գտնվող փոքրաթիվ ռազմիկները (մոտ 20) կտրվեցին դեպի Կարին շարժվող Հայկական հիմնական բանակից: Եվ ահա, մոտենալով Արծաթ գյուղին (Կարինից մոտ 5 կմ հյուսիս), նրանք տեսան, թե ինչպես իրենց հետապնդած և չհասած թշնամու ջոկատի ռազմիկներից մեկը, կատաղած կրած անհաջողությունից, ուզում է սպանել հունձ անող հայ գյուղացիներից մեկին: Տեսնելով դա՝ Խուրս Արշամունին հարձակվեց այդ ռազմիկի վրա և սպանեց նրան, իսկ մնացած հայերն էլ ոչնչացրեցին թշնամու մյուս ռազմիկներին[3]: Նախորդ դեպքերից որոշ ժամանակ անց Երեզի ճ-մ-ում (Տուրուբերան, Արշամունիք գավառ) Հայկական բանակի հետևակ նետաձիգները գյուղի աշխարհազորի ուղեկցությամբ գիշերով հարձակվեցին գյուղը շրջապատած Շապուհ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակի և Գդիհոն Սյունու գլխավորած Սյունյաց գնդի մի մասի վրա ու կրկին իրականացրեցին անխնա նետահարում, ընդ որում այս անգամ ևս դրա հետ միաժամանակ Հայկական բանակի հարվածային խմբերը ներխուժեցին թշնամու ճամբար և, հսկայական կոտորած անելով գիշերային խավարում, աննկատ հեռացան, այն դեպքում, երբ դրանից հետո հակառակորդի ռազմիկները իրենք շարունակեցին միմյանց կոտորել: Թշնամին ծանր կորուստներ կրեց, իսկ հայերի կորուստներից հայտնի է միայն Գաբաղ Գաբեղյանի մասին, որը ծանր վերք ստացավ և որոշ ժամանակ անց մահացավ[4]: Եվ ի վերջո վճռական և նախորդներին իր չափերով գերազանցող մի վերջին ընդհարում էլ տեղի ունեցավ իրադարձությունների այս շղթայի ամենավերջում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 484 ամառ – ***<u>Շտեա գյուղի ճ-մ</u>*** (= ***<u>Ողին գյուղի ճ-մ</u>***) (Տուրուբերան, Արշամունիք գավառ)[5]
>
> Շապուհ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (3.000) և Գդիհոն Սյունու գլխավորած Սյունյաց գնդի մի մասը (մոտ 650) պաշարեցին Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ գյուղում ապաստանած Հայկական հեծելազորին (100):
>
> I փուլ – Հայկական հեծելազորը անցավ հզոր հարձակման՝ փորձելով ճեղքել թշնամու պաշարման օղակը և հեռանալ: Ու թեև հարձակման ընթացքում Հայկական հեծելազորի կեսից ավելին (60), ահաբեկվելով թշնամու մեծաթվությունից, դադարեցրեց այն ու ցրվեց, սակայն մնացածները Վահան և Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանների, ինչպես նաև Ներսեհ, Հրահատ ու Վահան Կամսարականների անձնական ղեկավարությամբ մխրճվեցին թշնամու շարքերը և, ծանր կորուստներ պատճառելով Պարսից թագավորության բանակին,

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 81:
[2] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 81:
[3] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 81:
[4] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 81, 82; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 2:
[5] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 83-85; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 2; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 16; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն», գլուխ 17; «Քարթլիս-Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»:

աստիճանաբար սկսեցին դուրս գալ պաշարումից:

II փուլ – Ցանկանալով կասեցնել հայերի առաջխաղացումը՝ Շապուհ Միհրանյանը Գդիհոն Սյունու գլխավորությամբ մարտի նետեց Սյունյաց ռազմիկներին: Ապստամբները, սակայն, պարտության մատնեցին նաև նրանց, ընդ որում Գդիհոնն ինքը հեծյալ նիզակամարտում ծանր վերք ստացավ և տապալվեց ձիուց:

III փուլ – Ապստամբները ճեղքեցին թշնամու շարքերը և հեռացան, իսկ թշնամու բանակն էլ սկսեց հետապնդել Հայկական բանակի մյուս՝ ցրված, մասին՝ որոշակի կորուստներ պատճառելով վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 30 զինվոր, այդ թվում զոհվեցին Քոնթ Առավեղյանը, Ներս Հովսեփյանը, Ատգեն Վանանդեցին և Լերպագոս Հույնը: Թշնամին կորցրեց մոտ 500 զինվոր, վերջինիս կողմում գտնվող հայերը՝ մոտ 200 զինվոր: Մի քանի օր անց ստացած վերքից մահացավ նաև դավաճան Գդիհոն Սյունին, որից հետո նրա հետ եղած Սյունյաց գնդի ռազմիկները լքեցին Պարսից թագավորության բանակը և վերադարձան Սյունիք:

Նախորդ դեպքերից հետո Շապուհ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը բանակեց Ալվար գյուղում: Եվ ահա, մինչ պարսից զորավարը, պատված կասկածներով և հետագա գործողություններում այլևս չտեսնելով որևէ հեռանկար, մտմտում էր իր անելիքը, նրան լուր հասավ հեփթաղների դեմ պատերազմում պարսկական կողմին պատուհասած աննախադեպ մի աղետի մասին, աղետ, որն իրոք ստվերում էր թողնում մինչ այդ էլ Հեփթաղական պատերազմում, մեղմ ասած, առանձնապես չփայլած Պերոզ I-ի կրած բոլոր և նույնիսկ ամենախոշոր անհաջողությունները՝ ըստ էության փաստորեն կրկնելով այն ջախջախումը, որը պայթել էր Կյուրոս II Մեծի գլխին մ.թ.ա. 530 թ-ին:

Բանն այն էր, որ արյաց արքան, մի կողմից ակնհայտորեն թերագնահատելով թշնամուն, իսկ մյուս կողմից էլ ոչ պատշաճ գնահատելով իրավիճակը, ինչպես նաև դեռ չավարտված քրիստոնյաների դեմ մղվող ոչ այնքան մեծամասշտաբ, բայց այնուհանդերձ ընթացող և իրեն առանձնակի հաջողության չբերած պատերազմը, նույն 484 թվականի գարնանը իր տերության հիմնական ուժերով հերթական մի արշավանք էր ձեռնարկել Հեփթաղական թագավորության դեմ: Ռազմական բախտը, սակայն, որ արևելյան պատերազմի ողջ ընթացքում դաժանորեն հետապնդում էր Պերոզ I-ին, իսկ ինչ-որ տեղ էլ գուցե նաև սեփական խելքի պակասը, այս անգամ վերջնականապես ասացին իրենց խոսքը, ընդ որում մինչ այդ երկու անգամ գերության մեջ հայտնված և հրաշքով փրկված արյաց արքային երրորդ հնարավորությունն այդպես էլ չտրվեց: Հստակ տվյալները և հատկապես ռազմական մանրամասների մասին քիչ են, սակայն առկա տեղեկատվության ամբողջության վերլուծությունը աննախադեպ այս աղետի ծավալը թույլ է տալիս նկարագրել լիակատար պարզությամբ:

Եվ այսպես, Պերոզ I-ն ու իր բանակի զգալի մասը, պատերազմ սկսելով հեփթաղների դեմ և խորանալով թշնամու տարածքում, գործնականում ողջ կազմով հայտնվել էին թշնամու թակարդում ու գլխովին ջախջախվել էին, ընդ որում մարտի դաշտում ընկել էր ոչ միայն արյաց արքան, այլև զոհվել էին նրա որդիներից 30-ը, 4 եղբայրները, 7 բարձրատոհմիկ իշխաններ և այլ ազնվականներ ու ազգականներ, իր հետ եղած որդիներից միակ ողջ մնացածը՝ Կավատը, հայտնվել է գերության մեջ, իսկ տերության բանակն էլ ծանրագույն կորուստներ էր կրել: Ստեղծված պայմաններում, երբ հեփթաղական ներխուժման ահեղ վտանգը կախվել էր արդեն բուն Պարսից թագավորության տարածքների վրա, ինչպես Մարզպանական Հայաստանում գտնվող Շապուհ Միհրանյանի, այնպես էլ Իբերիայի թագավորության տարածքում գտնվող Հազարվուխտի բանակները արագորեն վերադարձան մայրաքաղաք՝ փորձ կատարելով ուժերի այդ ծայրահեղ կենտրոնացման հաշվին փրկել ճգնաժամի մեջ հայտնված

սեփական թագավորությունը: Իրոք, պարզ էր, որ ստեղծված բացառիկ իրադրության մեջ քրիստոնյաները չէին, որ պետք է ամենից առաջ հուզեին Պարսից թագավորության առանց արքայի մնացած ավագանուն:

Հեփթաղներից կրած ջախջախիչ պարտությունը, մանավանդ նախորդ տարիների անհաջողությունների ֆոնին, Պարսից թագավորության ընդհանուր ռազմաքաղաքական դրության վրա շատ ծանր անդրադարձ ունեցավ: Արևելյան լայնարձակ տարածքները, այդ թվում նաև Մերվը, կորսվեցին, ընդ որում հեփթաղական վտանգը դրանից հետո կախվեց արդեն Պարսից թագավորության կենտրոնական շրջանների վրա: Ստեղծված աննախադեպորեն ծանր իրավիճակում Պարսից թագավորության ռազմաֆեոդալական ավագանին, Միհրանյանների ղեկավար և հայերին հիանալի ծանոթ Շապուհի, ինչպես նաև Կարենյանների տոհմի նահապետ Զոհրաբի գլխավորությամբ երկրի գահին հաստատեց Պերոզ I-ի եղբորը՝ Վաղարշին (484-488)՝ փորձելով գոնե այդ կերպ կայունացնել իրադրությունը: Վաղարշը, ի տարբերություն իր գոռոզ և սնապարծ եղբոր, մեղմ ու հավասարակշիռ մի անձնավորություն էր, թեև մյուս կողմից էլ, ստեղծված ծանր իրադրության մեջ նա բնավորության այլ գծեր դրսևորել, երևի թե, չէր էլ կարող: Դատելով ըստ ամենայնի՝ Վաղարշին գահին էր հաստատել և նրան աջակցում էր ամենից առաջ երկրի խոշոր ավագանին, ընդ որում, դատելով Սասանյանների համար մեծ հաշվով անսովոր նոր գահակալի անունից, ինչպես նաև Միհրանյանների ու Կարենյանների աջակցությունից, նոր արքան ամենայն հավանականությամբ արտահայտում էր դեռևս բավականին հզոր և իր արմատներով դեպի պարթևական ժամանակները գնացող ռազմաֆեոդալական ավագանուն լայն շահերը:

Մինչ Տիզբոնում տեղի էր ունենում գահակալական փոփոխություն, հեփթաղները, ոտնատակ տալով Պարսից թագավորության արևելյան տարածքները, աստիճանաբար մոտենում էին երկրի կենտրոնական շրջաններին, ընդ որում Սասանյանների հեղինակությունը տապալված էր, կենտրոնական իշխանության ձեռքի տակ բանակային բավարար ուժեր գրեթե չկային, իսկ գանձարանն էլ գործնականում դատարկ էր, քանի որ առկա բոլոր միջոցները սեփական ռազմական ձեռնարկումներում մսխել էր դեռևս Պերոզ I-ը: Ստեղծված պայմաններում Կարենյան Զոհրաբը, բոլոր հնարավոր ուժերը հավաքելով տերության արևելյան սահմաններում, փորձում էր որևէ կերպ կասեցնել հեփթաղներին, իսկ նույն այդ ժամանակ էլ Միհրանյան Շապուհն ու Վաղարշ արքան միջոցներ էին ձեռնարկում գոնե քրիստոնյաների հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Արդյունքում՝ սկսվեցին բանակցություններ և արդեն 485 թվականի գարնանը կնքվեց Նվարսակի հայտնի հաշտության պայմանագիրը, որով Վահանանց պատերազմը (Մարզպանական Հայաստանի III ապստամբությունը) վերջացավ: Կնքված հաշտությամբ Պարսից թագավորությունը պարտավորվեց վերացնել կրոնափոխության հարկադրանքը, քանդել Մարզպանական Հայաստանում կառուցված կրակատները, չհալածել հայ եկեղեցուն, Մարզպանական Հայաստանում պաշտոնների նշանակել արժանի մարդկանց և չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին, իսկ հայերն էլ պարտավորվեցին լինել Պարսից տերության օրինապահ հպատակներ ու ամեն կերպ աջակցել գործող արքային: Այս կապակցությամբ հատուկ պետք է ընդգծել, որ այդ պահին քրիստոնյաների աջակցությունը պաշտոնական Տիզբոնին ավելին, քան պետք էր:

Իրոք, հեփթաղները զսպվում էին ուժերի միայն ծայրահեղ լարումով, սակայն կայուն չէր նաև ներքաղաքական դրությունը: Արքայազն Կավատը, որը մինչ այդ պատանդ էր եղել հեփթաղների մոտ և այժմ նորից հայտնվել էր հեփթաղական գերության մեջ, ինչպես մի ժամանակ իր հայրն էր վարվել, նույն հեփթաղական ռազմական մեքենայի օգնությամբ ցանկանում էր տիրել Պարսից թագավորության գահին, բայց գահակալական հավակնություններ ուներ նաև ևս մեկ արքայազն՝ Զարեհը: 485 թվականի գարնանը, երբ հայերի հետ հաշտությունը դեռ նոր էր կնքվել, Զարեհը ապստամբություն բարձրացրեց հորեղբոր դեմ և խոշոր ուժերով սկսեց մոտենալ Տիզբոնին: Ստեղծված ծանր իրավիճակը շտկեց, սակայն, Վրեն Վանանդեցու և Գրիգոր

Մամիկոնյանի գլխավորած Հայոց այրուձին, որը, ի կատարումն հենց նոր կնքած հաշտության պայմաններից մեկի, ժամանել էր Վաղարշին աջակցության: Արդյունքում՝ Զարեհի բանակը գլխովին ջախջախվեց, նա ինքը գերվեց ու մահապատժի ենթարկվեց, իսկ Վաղարշի դիրքերն էլ որոշակիորեն ամրապնդվեցին[1]: Նույն այս ժամանակ, սակայն, ուշագրավ զարգացումներ էին տեղի ունեցել նաև Բյուզանդական կայսրությունում:

Գլուխ 18
Արևմտյան Հռոմեական կայսրության վերացումը

Բանն այն էր, որ Լևոն I-ը, երկրում կործանիչ հարված հասցնելով գերմանական տարրի ազդեցությանը, այնուհանդերձ չհասցրեց լիովին վայելել սեփական հաջողության պտուղները և 474 թվականի հունվարի 18-ին կնքեց իր մահկանացուն, իսկ կայսերական գահի վրա էլ վերջինիս հաջորդեց նրա աղջկա որդին՝ յոթնամյա Լևոն II-ը (474): Ոչ լրիվ, քան մեկ ամիս անց, սակայն, այս երեխային համոզեցին հրաժարվել իշխանությունից և գահին բազմեց Լևոնի I-ի աղջկա ամուսինն ու Լևոն II-ի հայրը՝ Զենոնը (474-475, 476-491), որը, ծագումով լինելով Իսավրիայից և հաջողությամբ կազմակերպելով ու գործի դնելով իր հայրենակիցների ռազմական ուժերը, հանդիսանում էր Լևոն I-ի հավատարիմ աջակիցներից մեկը, ընդ որում աներոջ կենդանության օրոք Զենոնը պալատական թիկնազորի, ինչպես նաև կայսրության փոքրասիական բանակի հրամանատարն էր: Զենոնը տգեղ, բռի, միջոցների մեջ խտրություն չդնող և զեխ ու շվայտ կյանքի սովոր մի անձնավորություն էր, որը, միաժամանակ, սակայն, նաև մեծ եռանդի և խորաթափանցության տեր մի մարդ էր: Ինչ վերաբերում է Լևոնը II-ին, ապա նույն թվականի նոյեմբերի 17-ին նա մահացավ, ընդ որում համառ լուրեր էին պտտվում այն մասին, որ վերջինիս թունավորել են հենց իր հոր՝ Զենոնի, հրամանով:

475 թվականի գարնանը Զենոնի դեմ ապստամբեց Լևոնի I-ի կնոջ եղբայր Վասիլիկոսը և արդյունքում Զենոնը, հասցնելով հետը վերցնել պետական գանձարանն ու իր ընտանիքին, դիմեց փախուստի՝ ապաստանելով կայսրության անառիկ ամրություններից մեկում: Շուտով պարզվեց, սակայն, որ նոր կայսր Վասիլիկոսը (475-476), ըստ էության, ավելի վատն էր, քան նախորդը, ընդ որում սեփական մոտ մեկամյա իշխանության շրջանում վերջինս իր դեմ հանեց գործնականում բոլորին: Արդյունքում՝ արդեն 476 թվականի ամռանը Զենոնն իր հավատարիմ ուժերի հետ միասին անցավ հակահարձակման և կրկին տիրեց կայսերական գահին: Վասիլիկոսն ու նրա ընտանիքը ձերբակալվեցին և, քանի որ Զենոնը խոստացել էր չթափել նրանց արյունը, փակված փոքրասիական ամրություններից մեկում, ուղղակի սովահար արվեցին: Կայսերական գահին կրկին և արդեն վերջնականապես հաստատվեց փոքրասիական ծագում ունեցող առաջին տիրակալը:

Կայսերական գահին հենց նոր կրկին բազմած Զենոնին, սակայն, մի հետաքրքիր իրադարձություն էր սպասում, քանզի հենց նույն 476 թվականի սեպտեմբերի 4-ին, այսինքն՝ երկրորդ անգամ իր գահ բարձրանալուց ընդամենը մի քանի ամիս անց, Արևմտյան Հռոմեական կայսրությունում գործող գերմանական վարձկանների առաջնորդ Օդոակրը գահընկեց արեց Արևմուտքի վերջին կայսր Ռոմուլոսին (475-476) և ինքը հռչակվեց առաջնորդ՝ միաժամանակ, սակայն, զերծ մնալով կայսերական տիտղոս վերցնելուց: Փաստորեն, քանի որ Արևմուտքում իշխող կայսր այլևս չկար, Հռոմեական կայսրությունը իրավաբանորեն միավորվեց, թեև ըստ էության, ինչպես նաև ընդունված է այժմ ասել, Արևմտյան Հռոմեական կայսրությունը կործանվեց և շարունակեց գոյատևել արդեն միայն Արևելյան Հռոմեական կայսրությունը, այլ կերպ ասած՝ Հռոմեական կայսրությունը կամ, ավելի ճիշտ, ըստ էության, արդեն՝ աստիճանաբար ծնվող մի նոր պետություն, ի դեմս Բյուզանդական կայսրության: Տեղի ունեցած գահակալական բուռն իրադարձությունների հետևանքով իր հերթին, սակայն, կայսրության սահմանների

[1] Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», գիրք 3, գլուխ 94:

պաշտպանությունը զգալիորեն թուլացել էր, ընդ որում հատկապես սպառնալից դիրք էր գրավել Թեոդորիք I Մեծի գլխավորած Օսթգոթական թագավորությունը:

Իրոք, Օսթգոթական թագավորությունը, իր ժամանակին վտարված Մերձսևածովյան տափաստաններից և երկար տասնամյակներ ենթակա լինելով Հոնական տերությանը, այժմ հաստատվել էր Բալկանյան թերակղզու հյուսիսային հատվածում և նույն այս ժամանակ ի մի էր բերում ուժերը: Թեոդորիք I Մեծն ինքը սկզբում կայսերական ծառայության մեջ էր, սակայն հետագա տարիներին նա աստիճանաբար մեծացրեց իր անկախությունը և ի վերջո փաստացի լիովին դուրս եկավ Զենոնի իշխանության տակից՝ արդյունքում Բյուզանդական կայսրության համար սկսելով լուրջ խնդիրներ առաջացնել: Ստեղծված պայմաններում Զենոնը, որպեսզի ազատվի օսթգոթական արքայի սպառնալիքներից, կարողացավ համոզել վերջինիս գերմանական հարվածի ալիքն ուղղել դեպի Ապենինյան թերակղզի՝ Օդոակրի դեմ: Մի քանի տարվա համառ պայքարից հետո այս ռազմագործողությունը օսթգոթերին հաջողություն ապահովեց և Օդոակրի պետությունը կուլ գնաց Օսթգոթական թագավորության հարվածներին: Միաժամանակ, սակայն, Թեոդորիք I Մեծն ինքը ևս, ինչպես Օդոակրը, որևէ կերպ կայսերական տիտղոս չընդունեց՝ իրավաբանորեն մնալով Կոստանդնուպոլսի կայսեր ենթակայության տակ, բայց փաստացի, որպես անկախ մի տիրակալ, շարունակելով տիրել անկախ մի թագավորության: Նույն 484 թվականին, երբ Մարզպանական Հայաստանում հայերը լուծում էին իրենց իրավունքների հարցերը, յուրօրինակ մի ապստամբություն էլ բռնկվեց Բյուզանդական կայսրության իշխանության տակ գտնվող Սատրապական Հայաստանում:

Գլուխ 19
Սատրապական Հայաստանի I ապստամբությունը

Զենոնի իշխանության սկզբնական շրջանում մեծ ազդեցության էր հասել Հելլուս անունով մի զորավար, որի զգալի աջակցությամբ էլ Վասիլիկոսը ինչպես հասավ գահին, այնպես էլ զրկվեց դրանից: Հելլուսն իր ազդեցությունը պահպանում էր նաև երկրորդ անգամ Զենոնի իշխանության գալուց հետո, ընդ որում, իր մոտ պատանդի վիճակում պահելով Զենոնի եղբայր Լոնգինոսին, նա իր համար ապահովել էր փաստացի անկախ մի դրություն: 484 թվականի սկզբին Զենոնը փորձեց կազմակերպել իր պալատ հրավիրված Հելլուսի սպանությունը, սակայն անհաջողության մատնվեց, ընդ որում Հելլուսն ու նրա կողմնակիցները հեռացան արևելք և արդյունքում բացահայտ ապստամբություն սկսեցին: Դրանից հետո, այլևս չունենալով այլ ելք, Զենոնը Հելլուսից պահանջեց ազատ արձակել եղբորը և փաստացի մտնել իր ենթակայության տակ: Այս ամենի արդյունքը եղավ Սատրապական Հայաստանի I ապստամբությունը (484-488):

484 թվականի ամռանը, երբ գործերը Մարզպանական Հայաստանում արդեն կարգի էին ընկել, իսկ գոռոզ և անհեռատես Պերոզ I-ն էլ արդեն չկար, Զենոնը զգալի ուժերով Հելլուսի դեմ ուղարկեց Լեոնտիոս անունով մի զորավարի, սակայն Հելլուսին հաջողվեց կաշառքով ու համոզելով վերջինիս իր կողմը գրավել՝ հռչակելով կայսր: Միաժամանակ ապստամբները, ակնհայտորեն բավարար կերպով չգնահատելով իրերի իրական դրությունը Պարսից թագավորությունում, աջակցություն ստանալու համար մի դեսպանություն ուղարկեցին Տիզբոն, սակայն, ինչպես և սպասելի էր, որևէ արդյունքի չհասան, քանզի արյաց արքա Վաղարշին սեփական հոգսերը լիուլի հերիք էին և արտաքին մի որևէ ձեռնարկման մեջ խառնվել նա ուղղակի չէր կարող:

484 թվականի աշնանը Հելլուսի ու Լեոնտիոսի գլխավորած ապստամբների բանակի և հայ սատրապների գնդերի առաջապահը (500 հեծյալ) մոտեցավ Եդեսիային, սակայն կայսերական կառավարական բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները հենց քաղաքի մոտ էլ հաղթեցին վերջինիս[1]: Այնուհետև ապստամբները,

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 12-16; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 88; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

հավաքելով բոլոր ուժերը, հարվածի հիմնական սայրն ուղղեցին արդեն Անտիոքի ուղղությամբ, սակայն 485 թվականի գարնանը Հովհան Սկյութի գլխավորած կառավարական բանակը Անտիոքի ճ-մ-ում ևս մեկ անգամ ու այս անգամ արդեն վերջնականապես հաղթեց և ցրեց Հելլուսի ու Լեոնտիոսի գլխավորած ապստամբների բանակին և հայ սատրապների գնդերին[1]: Երկրորդ այս անհաջողությունը կործանարար հետևանքներ ունեցավ ապստամբության համար, ընդ որում հայ սատրապները վերադարձան իրենց տեղերն և դադարեցրին ակտիվ գործողությունները, իսկ Հելլուսն ու Լեոնտիոսն էլ պատսպարվեցին Լեռնային Կիլիկիայում:

485 թվականի գարնանից մինչև 488 թվականի գարուն Հովհան Սկյութի գլխավորած կառավարական բանակը Հելլուսի ու Լեոնտիոսի գլխավորած ապստամբների բանակից (մոտ 1.000) և տեղի հայ ռազմիկներից (մոտ 100) պաշարեց Պապուրիա ամրոցը, ընդ որում անհույս, բայց համառ դիմադրություն ցույց տված ամրությունն ի վերջո ընկավ միայն դավաճանության շնորհիվ: Հելլուսն ու Լեոնտիոսը գերվեցին և մահապատժի ենթարկվեցին, իսկ Սատրապական Հայաստանի I ապստամբությունն էլ ավարտվեց[2]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Սատրապական Հայաստանի I ապստամբությունը, չնայած մեծապես կրում էր գահակալական պայքարի բնույթ, իր հորձանուտում ընդգրկեց նաև Բյուզանդական կայսրության տիրապետության տակ գտնվող հայ իշխաններին, ինչն էլ առիթ հանդիսացավ, որ Զենոն կայսեր հատուկ հրովարտակով հետագայում վերջիններս զրկվեն իրենց ժառանգական տիրույթներից: Ու, թեև այս հրամանը գործնական մակարդակում կյանքի կոչելը շատ դժվար եղավ, բայց այնուհանդերձ այն զգալի հարված հասցրեց կայսրությանը հպատակ հայ իշխանների դիրքերին: Նույն այս ընթացքում իր հերթին, քաղաքական այն փոթորիկը, որը չարաբախտ Պերոզ I-ի զոհվելուց հետո սկիզբ էր առել Պարսից թագավորությունում, ոչ մի կերպ չէր ուզում հանդարտվել:

Գլուխ 20
Կավատ I-ը և մազդակյանները

Մեղմաբարո Վաղարշին հաջողվել էր կարգավորել հարաբերությունները քրիստոնյաների հետ, սակայն նրա սեփական դիրքերը հորենական գահի վրա ոչ մի կերպ ամուր համարվել չէին կարող՝ գանձարանը դատարկ էր, բնակչությունն ու ավագանին՝ ջարդված, ունեզրկված և ստորացված, իսկ բանակային ուժերն էլ գտնվում էին շփոթահար վիճակում: Վաղարշի դեմ էր նաև այն հանգամանքը, որ նրան իշխանության էին բերել հզոր իշխանական տոհմերը և այժմ նա մեծապես կախված էր հենց վերջիններիս բարեհաճությունից: Զարեհի ապստամբությունը, այն էլ մեծապես հայերի օժանդակությամբ, ճնշել հաջողվեց, սակայն շուտով արյաց արքայի դեմ բռնկվեց նոր ու ավելի վտանգավոր մի ապստամբություն:

Պերոզ I-ի վերջին դժբախտ արշավանքի ժամանակ նրա որդի Կավատը, ինչպես արդեն ասվեց, ևս հոր հետ էր, սակայն, ի տարբերություն իր ընտանիքի անդամների, նրան հաջողվեց փրկվել, թեև կրկին՝ գերության գնով: Այս անգամ ևս, սակայն, ինչպես կրկին ասվեց, Կավատին հաջողվեց շահել հեփթաղների սրտերը, ընդ որում՝ այն աստիճան, որ հենց նոր սկսվող գահակալական պայքարում Հեփթաղական թագավորության ռազմական մեքենան պարտավորվեց լուրջ աջակցություն ցույց տալ այս արքայազնին: Բանն այն էր, որ, չնայած բացառիկ ծանր դրությանը, Կարենյան Զոհրաբին այնուհանդերձ հաջողվել էր հեփթաղական առաջխաղացման դեմ զգալի

[1] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 17; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»:

[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 17; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Պրոկոպիոս Կեսարացի «Կառուցումների մասին», գիրք 3, գլուխ 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Կանդիդիոս «Պատմություն»:

դիմադրություն կազմակերպել և, չնայած որոշակի հաջողություններին, ընդհանուր արդյունքը Հեփթաղական թագավորության ղեկավարությանը վերջին հաշվով ոչ մի կերպ չէր գոհացնում: Այս ամենի արդյունքում Կավատն ու հեփթաղների արքա Վահշունավարը որոշեցին Տիզբոնում գահակալական փոփոխության հասնել, ընդ որում մեծ հույսեր էր ներշնչում նաև այն հանգամանքը, որ ավելի ու ավելի շատ Միհրանյանների ազդեցության ենթարկվող Վաղարշի նկատմամբ աստիճանաբար դժգոհությամբ էր լցվում նաև իր ռազմական սխրագործություններով մեծապես աչքի ընկած, բայց այդպես էլ չգնահատված Կարենյան Զոհրաբը՝ փաստացի որի ձեռքի տակ էին հավաքված երկրի գործնականում բոլոր ռազմական ուժերը: Շահերի եռակի այս համընկման հետևանքը եղավ այն, որ Կարենյան Զոհրաբն ի վերջո անցավ Հեփթաղական թագավորության բանակային զգալի ուժերով հերթական անգամ Պարսից թագավորության սահմաններ մտած ու գահակալական պայքար սկսած Կավատի կողմը: Վաղարշի դիրքերը սասանվեցին, ընդ որում սկիզբ առած գահակալական պայքարում նա, ըստ էության, որևէ հնարավորություն այլևս չուներ: Արդյունքում՝ արդեն 488 թվականի ամռանը Վաղարշը գահընկեց արվեց և կուրացվեց, իսկ Պարսից թագավորության գահին էլ հաստատվեց Կավատը՝ Կավատ I-ը (488-496, 499-531):

Պարսից թագավորության նոր արքան անչափ հետաքրքիր մի անձնավորություն էր: Ճկուն և գործունյա՝ Կավատ I-ը միաժամանակ նաև արագ էր կողմնորոշվում կտրուկ փոփոխվող իրադարձությունների հորձանուտում ու կարողանում էր հաջողությամբ լեզու գտնել ամենատարբեր դասերի, խմբերի և մարդկանց հետ: Արյաց նոր արքան նաև մեծ խելքի տեր մի մարդ էր և, ի տարբերություն հենց նույն իր հորը կամ պապի, ոչ միայն չէր տրվում զգացմունքային պոռթկումներին, այլև հիանալի գիտակցում էր իր ու սեփական տերության իրական շահերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերություններում, իսկ նման մի մարդ Պարսից սասանվող թագավորությանը հենց այդ պահին իրոք որ շատ էր պետք: Իրոք, Պերոզ I-ի և Վաղարշի անկայուն կառավարման, ինչպես նաև վերջին տարիների խառնաշփոթի ֆոնին Պարսից թագավորության ներքին ու արտաքին դրությունը շատ էր վատացել, ընդ որում քայքայման եզրին էր գտնվում թագավորության նաև ողջ պետական ապարատը:

Այսպես, Շապուհ II-ի երկաթյա ձեռքով ստեղծված բանակային համակարգը, որը վերջինիս մահից հետո աստիճանաբար շարքից դուրս էր գալիս, այժմ՝ մեկ դար անց, արդեն գործնականում չկար, իսկ երկրի բանակային ուժերն էլ, ըստ էության, ներկայացված էին բացառապես միայն խոշոր միջոցների տեր դարձած ռազմաֆեոդալական ավագանու ձեռքին գտնվող ջոկատներով, ինչպես նաև տարաբնույթ վարձկանների ուժերով: Այդ պայմաններում կենտրոնական իշխանության որևէ հեղինակության մասին խոսք լինել չէր կարող: Ծանր էր նաև տնտեսության վիճակը, քանզի Պերոզ I-ը ծախսել էր տերության, ըստ էության, բոլոր միջոցները և այժմ նույնիսկ դաժան հարկահանությունն էլ առանձին արդյունք չէր ապահովում: Եվ վերջապես արտաքին հարաբերություններում ևս թագավորության վիճակը թեթև չէր, թեև այս դեպքում Կավատ I-ի օգտին եղավ այնուհանդերձ այն, որ հեռավոր Կոստանդնուպոլսում համառորեն չէին ուզում հիշել արևելյան հոգսերի մասին, իսկ հեփթաղներն էլ նրա դաշնակիցներն էին: Այսպես թե այնպես, սակայն պետք էր սկսել երկրի ներքին գործերը կարգի գցելուց: Հենց այս խնդրի լուծմանն էլ ձեռնամուխ եղավ Կավատ I-ը՝ որպես դաշնակից վերցնելով անակնկալ, սակայն ահարկու մի ուժի:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Պարսից թագավորության ծանր դրությունը երկրում խիստ սրել էր սոցիալական հակասությունները, ընդ որում ռազմաֆեոդալական խոշոր ավագանու ամենաթողության հասնող վարքագիծն էլ իր հերթին առանձնակի էր բարդացնում իրավիճակը: Փաստորեն ստեղծվել էր մի դրություն, երբ Կավատ I-ի, ինչպես նաև հասարակության լայն շերտերի շահերը մի պահ համընկել էին, քանի որ վերջիններս դուրս էին գալիս մի ընդհանուր սոցիալական հակառակորդի դեմ՝ խոսքը ռազմաֆեոդալական խոշոր ավագանու, ինչպես նաև զրադաշտական բարձրաստիճան

հոգևորականության մասին է: Սկիզբ առնող գործընթացի գաղափարական հիմքն իր հերթին ապահովեց քրմական դասից սերող Մազդակը, որն այս ընթացքում հասցրել էր մեծ թվով կողմնակիցներ հավաքել, ստեղծել կրոնական ուժեղ մի համայնք և երկրում վերածվել ազդեցիկ մի ուժի:

Մազդակյանները, եթե մի կողմ թողնենք կրոնական ուսմունքի նրբությունները, մեծ հաշվով հանդես էին գալիս սոցիալական արդարության վերականգման դրոշի ներքո՝ բնականաբար ներկայացնելով հասարակության ամենաստորին խավերի, ինչպես նաև մանր արհեստավորների և առևտրականների շահերը: Ինչ-որ տեղ և ինչ-որ առումով մազդակյանների գաղափարները, համենայն դեպս գոնե առժամանակ, կարող էին արտահայտել նա մանր և նույնիսկ միջին ազնվականության որոշ մասի շահերը, բայց ում շահերը որ դրանք երբեք արտահայտել չէին կարող, դա խոշոր ռազմաֆեոդալական ավագանին էր: Ահա հենց այս ուժի հետ էլ լայն մի դաշինքի գնաց նորընծա արքան՝ ձգտելով ամրապնդել ամենից առաջ հենց սեփական դիրքերը:

Արդյունքում, սկսած արդեն 488 թվականի վերջից, Պարսից թագավորության տարածքում սկիզբ առավ և մի քանի տարի շարունակվեց սոցիալական մի իսկական փոթորիկ: Կավատ Ի-ը, լինելով կամ, ավելի ճիշտ, ձևացնելով իրեն որպես մոլեռանդ մի մազդակյան, պետական ուժերի աջակցությամբ գործի դրեց մինչ այդ մեծապես ընդհատակում գտնվող մազդակյանների հզոր հոսանքը՝ ուղղելով այն խոշոր ազնվականության դեմ: Մազդակյանները, առանց քաշվելու, բռնագրավում էին խոշոր կալվածատերերի ունեցվածքը, ձեռք էին մեկնում բոլոր հարուստների գույքին և ամեն տեղ ու ամենուր ոչնչացնում էին ամեն մի շքեղություն: Բանը հասնում էր նույնիսկ նրան, որ որոշ դեպքերում նրանք նույնիսկ կանանց էին դարձնում հանրային սեփականություն: Մի քանի տարի տևած աննախադեպ այս գործընթացի արդյունքում Պարսից թագավորության խոշոր հողատեր ազնվականությունը մահացու մի հարված ստացավ, որից այլևս ուշքի չէր գալու: Փաստորեն, ինչպես մի ժամանակ Արշակավանի պարագայում արեց Հայոց արքան և առանձնակի հաջողության չհասավ, այս անգամ սոցիալական լայն աջակցության պարագայում արդեն Պարսից արքան էր ապահովում կենտրոնական իշխանության դիրքերի ամրապնդումը, այդ անելով անհամեմատ ավելի մեծ հաջողությամբ, ընդ որում այս ամենի արդյունքում զգալիորեն թուլացան նաև զրադաշտական բարձր հոգևորականության դիրքերը:

Գլուխ 21
Մարզպանական Հայաստանի IV ապստամբության սկիզբը

Կավատ Ի-ի առաջացրած սոցիալական փոթորիկը տարածվում էր ողջ երկրով մեկ և անխուսափելիորեն պետք էր հասներ նաև Մարզպանական Հայաստան, որտեղ հայերը, սակայն, գոհ Նվարսակի հաշտության արդյունքներից, որևէ կերպ տրամադրված չէին ընկալելու իրենց համար անհասկանալի այդ նոր զարգացումները: Ընդհանրապես ասած, Կավատ Ի-ը, համենայն դեպս գոնե սկզբնական շրջանում, վատ վերաբերմունք չուներ քրիստոնյաների նկատմամբ, մանավանդ նրանց, որոնք դեմ էին Բյուզանդական կայսրության պաշտոնական դավանանքին, սակայն մազդակյանների անհասկանալի ու քրիստոնյաների համար սկզբունքորեն անընկալելի և անընդունելի ակտիվությունը այս անգամ ևս բերեց պայթյունի:

Ինչպես հայերի մոտ, նույնն էր վիճակը նաև վրացիների պարագայում, ընդ որում Իբերիայի թագավորության արքա Վախթանգ Ի Գորգասալը, ինչպես և Հայոց մարզպան Վահան Մամիկոնյանը, ինքը ևս բացարձակապես ոչ մի հիմք չէր տեսնում որևէ զիջումների գնալու: Այս ամենի արդյունքը եղավ Մարզպանական Հայաստանի IV ապստամբությունը (491-499)[1], որը սկսվեց 491 թվականին, ընդ որում, ինչպես և նախորդ

[1] Այս ապստամբությունը զարմանալի կերպով դուրս է մնացել սովետահայ պատմաբանների ուշադրության շրջանակից, թեև լիովին չի անտեսվել:

ապստամբությունը, դեպքերի զարգացումը սկսվեց Վրաստանից:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

491 գարուն – ***Դարպակ քաղաքի ճ-մ*** (Կախեթի, Մծխեթից արևելք, Իորա գետի ափին)[1]

Պարսկական տիրապետության դեմ բռնկված Վախթանգ I Գորգասալի ապստամբությունը ճնշելու համար Պարսից թագավորության մի խոշոր բանակ (74.000[2], մոտ 15 փիղ) Կավատ I-ի գլխավորությամբ պատրաստվեց ներխուժել Իբերիայի թագավորության տարածք: Այդ ընթացքում ապստամբություն բռնկվեց նաև Մարզպանական Հայաստանում, որից հետո մարզպան Վահան Մամիկոնյանի և սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը[3] (մոտ 30.000) շարժվեց հյուսիս ու միացավ Վախթանգ I Գորգասալի գլխավորած Իբերիայի թագավորության բանակին (24.000): Դրանից հետո քրիստոնյաների միացյալ բանակը, շարժվելով ***Կուր գետի հուն-Կամբեճան-Իորա գետի հուն*** երթուղով ասպատակելով արշավող Պարսից թագավորության բանակի դեմ, Դարպակ քաղաքի մոտ ամուր դիրքեր գրավեց ու սկսեց սպասել թշնամուն՝ նախատեսելով պաշտպանական մարտում ուժասպառ անել վերջինիս և դրանից հետո վճռական հարձակումով ջախջախել նրան:

Մի քանի օր անց քաղաքին մոտեցավ նաև Պարսից թագավորության բանակը: Կողմերը պատրաստվեցին մարտի:

I փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման, սակայն եռօրյա համառ մարտերի արդյունքում քրիստոնյաների բանակին ի վերջո հաջողվեց հետ շպրտել թշնամուն ելման դիրքեր՝ մեծ կորուստներ պատճառելով վերջինիս:

II փուլ – Չորրորդ օրը քրիստոնյաների բանակը պատրաստվեց վճռական հարձակման և այդ նպատակով Հայկական բանակը զբաղեցրեց թևերից մեկը, Իբերիայի թագավորության բանակի հետևակը՝ մյուսը, իսկ կենտրոնում էլ տեղակայվեց Իբերիայի թագավորության բանակի հեծելազորը: Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման, սակայն Իբերիայի թագավորության ու Հայկական միացյալ բանակը Վախթանգ I Գորգասալի, ինչպես նաև Վահան ու Վարդ Մամիկոնյանների անձնական ղեկավարությամբ անցավ շեշտակի հակագրոհի և, ջախջախելով ու փախուստի մատնելով թշնամու

---

[1] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 72; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 19-20:

[2] Ըստ «Քարթլիս Ցխովրեբա»-ի («Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը») այս ճակատամարտում Պարսից թագավորության բանակը կազմում էր 740.000, իսկ Իբերիայի թագավորության բանակը՝ 240.000 ռազմիկ, սակայն կասկածից վեր է, որ այս թվերը իրական չեն: Իմ կարծիքով այս դեպքում ևս պետք է առաջնորդվել արդեն բազմիցս հիշատակված «մեկ զրո պակասեցնել»-ու մեթոդով, որից հետո հակառակորդ բանակների թվաքանակները, հաշվի առնելով Պարսից և Իբերիայի թագավորությունների տվյալ ժամանակաշրջանի ռազմական հնարավորությունները, միանգամից իրական տեսք են ստանում: Նույնը մեթոդը պետք է կիրառել նաև կողմերի կորուստները քննարկելիս:

[3] «Քարթլիս Ցխովրեբա»-ի («Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը») բերած այս ճակատամարտի թվականը հիմնավորում են Գ. Ցուլայը և Գ. Գոլիաձեն (տես՝ Джуаншер Джуаншериани "Жизнь Вахтанга Горгасала"Тб. Мецниереба 1986, стр. 44, В. И. Гоиладзе "Вахтанг Горгасал и его историк", журнал "Мнатоби", 1983, № 11, с. 154 և այլն) ու, թեև վրացական աղբյուրը ուղղակիորեն չի նշում Հայկական բանակի մասնակցության մասին, սակայն այդ հանգամանքը հաստատվում է նախ նրանով, որ, ըստ Յոշվա Ստիլիտի, հենց այս ժամանակ Մարզպանական Հայաստանում բռնկվեց հերթական ապստամբությունը և շատ հավանական է, որ, ինչպես Մարզպանական Հայաստանի III ապստամբությունը, այնպես էլ այս ապստամբությունը սկսվել է որպես նախորդող իրադարձություններ ունենալով Իբերիայում բռնկված ապստամբությունը: Իր հերթին ինքը՝ վրացական աղբյուրը, խոսելով ճակատամարտի 4-րդ օրվան պատրաստվող քրիստոնյաների բանակի դասավորության մասին, հայտնում է, որ թևերից մեկում Վախթանգ I Գորշանալը տեղավորեց *պիտիախշին* (մարզպանին) ու *սպասապետին* (սպարապետին)՝ իրենց զորքերով: Ըստ Գ. Ցուլայի «պիտիախշ»-ը «մարզպան» անվան վրացական տարբերակն է: Իրոք տեքստի այլ մասերում վրաց պատմիչը խոսում է հենց Հայոց *պիտիախշի* (մարզպանի) մասին: Իր հերթին միակ մարզպանը, որ այդ ժամանակ կարող էր օգնության գալ Վախթանգ I Գորգասալին և գտնվել վրացական բանակում, դա Նվարսակի հաշտության պայմանագրի կնքումից հետո Հայոց Մարզպանության մարզպան նշանակված Վահան Մամիկոնյանն էր, որը բնականաբար պետք է ներկա լիներ Հայկական բանակով: Աղբյուրը հստակ չի արտահայտվում սպասապետի կապակցությամբ, խոսքը իբերական, թե Հայկական բանակի սպարապետի մասին է, սակայն կրկին հավանական է ենթադրել, որ Վահան Մամիկոնյանի մոտ գտնվում էր Հայոց սպարապետը (նրա եղբայր Վարդ Մամիկոնյանը), իսկ իբերական սպարապետը գտնվում էր իր արքայի մոտ և գլխավորում էր Իբերիայի թագավորության բանակը: Այսպիսով՝ այս ճակատամարտին Հայկական բանակի մասնակցության հարցը կարելի է համարել լուծված:

կենտրոնը, ներխուժեց վերջինիս ճամբար: Այստեղ արքայական վրանների մոտ բռնկված մարտում Վախթանգ I Գորգասալը մենամարտում սպանեց Կավատ I-ի որդուն, իսկ ինքը՝ արյաց արքան, դիմեց փախուստի և հազիվ փրկվեց, սակայն նույն տեղում էլ Իբերիայի թագավորության արքան մահացու վերք ստացավ նետի հարվածից:

III փուլ – Քրիստոնյաների բանակը որոշ տարածություն հետապնդեց թշնամուն, սակայն, մարտից Վախթանգ I Գորգասալի դուրս գալու պատճառով, դաշնակից բանակը շուտով դադարեցրեց այն, որից հետո նույնը ստիպված եղավ անել նաև Հայկական բանակը: Այնուհետև քրիստոնյաների բանակը նահանջեց և ամրացավ ***Կախեթիում:***

Հայերը կորցրին մոտ 3.000, դաշնակիցը՝ 2.800, թշնամին՝ 13.000 զինվոր:

Հակասական ելք ունեցած նախորդ ճակատամարտից կարճ ժամանակ անց Վախթանգ I Գորգասալը, այդպես էլ չապաքինվելով ստացած վերքից, կնքեց իր մահկանացուն, իսկ թշնամական ուժերն էլ կենտրոնացան Արմազիում: Այս պայմաններում Հայկական բանակը վերադարձավ Մարզպանական Հայաստան և պատրաստվեց դիմագրավել թշնամու նոր հարձակումներին: Մինչ Բյուզանդական կայսրության արևելյան սահմաններին զարգանում էին վերոհիշյալ բուռն իրադարձությունները, սակայն, մի մեծ փոփոխություն էլ տեղի ունեցավ արդեն Կոստանդնուպոլսում:

491 թվականի ապրիլի 9-ին լուլ հարբած վիճակում էպիլեպտիկ հերթական նոպան տարած Զենոնի դեմ պայթեց վաղուց նյութվող դավադրությունը, որն ավարտվեց լիակատար հաջողությամբ: Արդյունքում՝ կայսրուհու լուռ հավանությամբ գործող պալատական ավագանին Զենոնին մահացած հայտարարեց և փակ դագաղում կազմակերպեց նրա թաղումը, ընդ որում նույնիսկ այն հանգամանքը, որ երեկոյան կողմ դագաղում այնուհանդերձ ուշքի եկած կայսրը բարձր աղաղակ բարձրացրեց, չփրկեց վերջինիս, քանի որ դագաղն այդպես էլ չբացեցին այնքան ժամանակ, մինչև որ Զենոնը ներսում խեղդամահ եղավ՝ արժանանալով նույնքան զարմանալի մի մահվան, ինչքան էլ որ, ըստ էության, իր ապրած կյանքն էր:

Զենոնին հեռացնելուց հետո կայսրուհու հետ ամուսնացավ և Բյուզանդական կայսրության գահին հաստատվեց մինչ այդ պալատական կառավարչի պաշտոնը վարող վաթսունմեկամյա Անաստասը՝ Անաստաս I-ը (491-518), որը, չնայած իր եվրոպական ծագմանը, այնուհանդերձ հետևողականորեն շարունակեց կայսրության կյանքում գերմանական տարրի առանց այդ էլ թուլացող ազդեցության հետագա թուլացման գործընթացը, որի սկիզբը, ինչպես ասացինք, դրել էր դեռևս Լևոն I-ը և որի հաջող իրականացումը մեծապես կյանքի էր կոչել Զենոնը: Նոր կայսրը իր կրոնական հայացքներով միաբնակ էր և այդ հանգամանքը որոշակիորեն գցում էր նրա վարկը հպատակների հատկապես արևմտյան հատվածի աչքում, բայց մյուս կողմից էլ, ի տարբերություն բռնկուն, անհավասարակշիռ և դաժան Զենոնի, նա ավելի հանգիստ, գործունյա, բարի ու մեծ հաշվով լավ տիրակալ էր:

Չնայած ուղղակի տեղեկատվության բացակայությանը, բայց նաև հաշվի առնելով հետագա իրադարձությունները, կարելի է միանշանակ պնդել, որ այս անգամ ևս, ինչպես Վարդանանց պատերազմի պարագայում, քրիստոնյաները և ամենից առաջ հայերը օգնության հերթական խնդրանքն էին հղել կայսրությանը: Դարպակ քաղաքի ճակատամարտը, չնայած ծանր բնույթին, մեծ հաշվով պարսիկների օգտին էր եղել և հայերը քաշվել էին լեռները, ինչից օգտվելով էլ Պարսից թագավորության բանակը ոտնատակ էր տվել Իբերիայի թագավորության հարավային սահմանները, որից հետո կրկին մտել էր Մարզպանական Հայաստան: Այս պայմաններում, արդեն 491 թվականի ամռանը շտապ կերպով արևելք ժամանած Անաստաս I-ի գլխավորած Բյուզանդական

կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները[1] Կորնիֆորի ճ-մ-ում (Տայք, Կող գավառ) անորոշ ելք ունեցած մարտում ընդհարվեցին Կավատ Ի-ի գլխավորած Պարսից թագավորության առաջխաղացած բանակի հետ, որից հետո կողմերը նահանջեցին[2]: Հայաստանում մղվող պատերազմը Կավատ Ի-ին էական հաջողություն այդպես էլ չտվեց, իսկ կայսրության հետ անորոշ ելքով ընդհարումը, ինչպես նաև երկար ժամանակ Տիզբոնից հեռու գտնվելը առանց այդ էլ սոցիալական մեծ փոթորկի մեջ գտնվող երկրում կարող էր վտանգել արյաց արքայի դիրքերը ու հենց դրա համար էլ նա նահանջի հրաման տվեց: Առաջխաղացում չիրականացրեց, սակայն, ձեռք բերած արդյունքից մեծ հաշվով գոհ մնացած նաև Անաստաս Ի-ը, որի դիրքերը, դրան գումարած էլ, կայսրության փոքրասիական տիրույթներում բավականին թույլ էին:

492 թվականին պաշտոնական Տիզբոնը ևս մեկ հարված հասցրեց հայերին, սակայն նույն թվականի գարնանն էլ մարզպան Վահան Մամիկոնյանի և սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը ինչ-որ տեղ Վասպուրականի տարածքում Պարսից թագավորության առաջխաղացած բանակի նկատմամբ խոշոր հաղթանակ տարավ՝ արմատապես լուծելով թշնամու հերթական առաջխաղացման խնդիրը[3]: Ավելին, Կավատ Ի-ի առաջացրած սոցիալական փոթորիկը նույն այդ ժամանակ պայթյուն առաջացրեց նաև Ատրպատականում, որտեղ ոտքի ելան նաև կատիշները և այն աստիճանի հաջողություն արձանագրեցին, որ 493 թվականի գարնանը Պարսից թագավորության բանակից ու քաղաքի Հայ ռազմիկներից պաշարեցին նույնիսկ Մծբինը, թեև ի վերջո, չհասնելով որևէ հաջողության, հետ քաշվեցին[4]: Հատկանշական է, որ նույն այս ժամանակ ոտքի էր ելել նաև մինչ այդ պաշտոնական Տիզբոնին մեծապես հավատարիմ Լախմյանների թագավորությունը: Ստեղծված պայմաններում Կավատ Ի-ը, որևէ հնարավորություն չունենալով հերթական հարվածը հասցնելու հայերին, առժամանակ սկսեց զբաղվել բարդացող ներքաղաքական դրությամբ:

Իրոք, Կարենյան Զոհրաբի ազդեցությունն արդեն ահռելի չափերի էր հասել և նույնիսկ մազդակյանները չէին կարողանում թուլացնել վերջինիս դիրքերը: Այս պայմաններում, սակայն, ճկուն Կավատի Ի-ը գործի դրեց արդեն տոհմական մրցակցության հինավուրց գործիքը և, անցնելով մեծ հաշվով արյաց արքաներին հավատարմության ավելի խորը ավանդույթներ ունեցող Միհրանյանների կողմը, Շապուհին ուղղեց հզոր Կարենյանի դեմ: Արդյունքում՝ հաջողությունն ի վերջո եղավ Կավատ Ի-ի կողմը և Զոհրաբը սպանվեց, իսկ Կարենյանների դիրքերն էլ զգալիորեն թուլացան, թեև ինչպես արյաց արքայի, այնպես էլ թագավորության ողջ ներքին դրությունը մնում էր անկայուն:

Գլուխ 22
Սատրապական Հայաստանի II ապստամբությունը

493 թվականի գարնանը, երբ Մարզպանական Հայաստանի հայերը հերթական անգամ պայքար էին մղում իրենց իրավունքների համար և զգալի հաջողություններ էին արձանագրել, բռնկվեց Սատրապական Հայաստանի II ապստամբությունը (493-496), որն այս անգամ ևս, ինչպես և նախորդը, զգալիորեն գահակալական պայքարի բնույթ կրում էր: Բանն այն էր, որ Զենոնի մահից հետո կայսրության գահի ամենահավանական թեկնածուն էր համարվում վերջինիս եղբայր Լոնգինոսը, որը, սակայն, արքունիքում

[1] Հաշվի առնելով, որ Հայկական բանակը մասնակցում էր Բյուզանդիայի և Պարսից թագավորության միջև ընթացող պատերազմական գործողություններին և բավականին նշանակալից դեր ուներ, ես ընդունում եմ, որ այն, նույնիսկ եթե դրա մասին ուղղակի հիշատակում չկա, որպես կանոն, մասնակցել է Հայաստանում և նրա հարակից տարածքներում ընթացած երկու պետությունների միջև ընթացած բոլոր հիմնական մարտերին, եթե առկա են հետևյալ պայմանները.
ա) որևէ պատճառ չկա ենթադրելու և հիմնավորելու Հայկական բանակի բացակայությունը,
բ) վերջինիս մասնակցությունը բխում է դեպքերի զարգացման տրամաբանությունից:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Ջիվանշիր Ջիվանշիրյան «Վախթանգ Գորգասալի կյանքը»; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը»:

[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 21:

[4] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 22:

առանձնակի հեղինակություն չուներ: Եվ ահա այս պայմաններում, մանավանդ այն բանից հետո, երբ նոր կայսրը էականորեն սահմանափակեց նաև Զենոնի օրոք մեծ արտոնությունների հասած իսավրիացիների իրավունքները, վերջիններս իրենց գլխավոր ընտրեցին նույն այս Լոնգինոսին և անցան բացահայտ ապստամբության:

493 թվականի գարնանը, սակայն, դեռևս նախորդ ապստամբությունից հայտնի նույն Հովհան Սկյութի գլխավորած կառավարական բանակը Կոտեայի ճ-մ-ում (Գալաթիա) հաղթեց Կապադովկիան և Գալաթիան ասպատակելով առաջ շարժվող Լոնգինոսի գլխավորած իսավրիացիներին (1.500) ու նրանց հետ գործող Կիլիկիայի հայ աշխարհազորայիններին (մոտ 500), որոնց մնացորդները ցրվեցին Իսավրիայում և Կիլիկիայում[1]: Դրանից հետո, ցանկանալով վերջնականապես վերացնել ապստամբական տրամադրությունները, Հովհան Սկյութի գլխավորած կառավարական բանակը, ասպատակելով Իսավրիան ու Կիլիկիան և իրականացնելով պատժիչ մի շարք գործողություններ, Լոնգինոսի գլխավորած ապստամբներից ու տեղի Հայ ռազմիկներից գրավեց նրանց բոլոր ամրացված կետերը: Լոնգինոսը գերվեց և աքսորվեց, իսկ Սատրապական Հայաստանի II ապստամբությունը վերջացավ[2]: Մինչ Սատրապական Հայաստանում գործն ավարտվում էր անհաջողությամբ, սակայն, Մարզպանական Հայաստանի հայերը շարունակում էին վայելել լիակատար անկախություն:

Գլուխ 23
Մարզպանական Հայաստանի IV ապստամբության հետագա ընթացքը և ավարտը

Իրոք, 494 և 495 թվականներին իր իսկ առաջացրած սոցիալական փոթորկի կառավարումն արդեն, ըստ էության, կորցրած Կավատ I-ը ոչ մի հնարավորություն չուներ պատշաճ մակարդակով գործելու քրիստոնյաների դեմ, իսկ հետո էլ իրավիճակը արդեն լրիվ անկառավարելի բնույթ ընդունեց: Արդյունքում՝ 496 թվականի ամռանը արյաց արքայի դեմ բռնկվեց արդեն Միհրանյանների կողմից կազմակերպված ապստամբությունը, որը հաջողություն արձանագրեց: Ապստամբները կարողացան ձերբակալել Կավատ I-ին և նրա փոխարեն գահին հաստատել վերջինիս եղբայր Ջամասպին (496-499): Դրանից հետո Կավատ I-ի հետագա ճակատագրի վերաբերյալ պարսից ավագանու շարքերում մի մեծ վեճ առաջացավ և, չնայած շատերն էին առաջարկում սպանել գահազրկված տիրակալին, սակայն Ջամասպն ու մնացած դավադիրները, ի մեծ դժբախտություն իրենց, ի վերջո ուղղակի որոշեցին վերջինիս բանտարկել Անհուշ բերդում:

Ջամասպը, որպես խոշոր ռազմաֆեոդալական ավագանու ներկայացուցիչ, գործնականում ոչ մի իրական իշխանություն այդպես էլ չունեցավ, ընդ որում Պարսից թագավորության տարածքում նույն այս ժամանակ մահացու մրցակցության մեջ շարունակում էին միմյանց ոչնչացնել մազդակյաններն ու խոշոր իշխանները, իսկ Մարզպանական Հայաստանը Վահան Մամիկոնյանի և Իբերիայի թագավորությունն էլ, նոր արքա ու Վախթանգ I Գորգասալի որդի Դաչիի (491-523) գլխավորությամբ, շարունակում էին մնալ անկախ դրության մեջ: Այս պայմաններում 498 թվականի ամռանը Կավատ I-ի կնոջը, շնորհիվ բերդի գլխավորին գայթակղելու իր հաջող ջանքերի, հաջողվեց կազմակերպել ամուսնու փախուստը, ընդ որում Անհուշ բերդից Կավատ I-ը դուրս եկավ կնոջ հագուստով, իսկ մեծ նվիրվածություն ցուցաբերած Կավատ I-ի կինն էլ բանտախցում մնաց Կավատ I-ի փոխարեն: Որպես հետևանք հաջող այս գործողության՝

[1] Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 2; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 35; Զոնորաս «Պատմություն»:

[2] Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 23; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 2; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 35; Զոնորաս «Պատմություն»:

Կավատ Ի-ը, միանալով բերդի մոտակայքում իրեն սպասող մի քանի հավատարիմների, արագորեն սլացավ իր հին ծանոթ հեփթաղների մոտ, որոնք այս անգամ ևս սիրալիր ընդունելություն կազմակերպեցին գահազրկված տիրակալին:

Արդյունքում՝ ճկուն Կավատ Ի-ը, այս անգամ ևս հաջողությամբ շահելով հեփթաղների սրտերը և նրանց տարածքային զգալի զիջումներ խոստանալով, ի վերջո հասավ նրան, որ Հեփթաղական թագավորության նոր արքա Թորոմանը (մոտ 490-515) իրեն կին տվեց սեփական աղջկան, որից հետո հզոր այս թագավորության ռազմական մեքենան հերթական անգամ գործի դրվեց ի պաշտպանություն նրա շահերի: 498 թվականի ամենավերջում Կավատ Ի-ը հեփթաղական հզոր բանակով կրկին Պարսից թագավորության տարածք մտավ, ընդ որում այստեղ նրա կողմն անցան տեղական զգալի ուժեր և ամենից առաջ Միհրանյաններից ծանր հարվածներ կրած Կարենյանները՝ Զոհրաբին հաջորդած վերջինիս որդի Զարմիհրի գլխավորությամբ: Դաշնակից ուժերը սրընթաց երթով շարժվեցին դեպի Տիզբոն, ինչի արդյունքում 499 թվականի սկզբին Ջամասպը գահընկեց արվեց և հետագայում սպանվեց, ընդ որում Կավատ Ի-ը անհաջողակ այս տիրակալին ցույց տվեց, որ նման հարաբերություններում մեծահոգությունն ու բարեգթությունը, դժբախտաբար, անընդունելի բաներ են:

Կրկին հաստատվելով արյաց գահին և ամրապնդելով իր դիրքերը՝ Կավատ Ի-ն այս անգամ արդեն զգալի փոփոխություններ մտցրեց ներքին քաղաքականության մեջ: Այսպես, եթե առաջ նա մեծապես աջակցում էր մազդակյաններին, ապա այժմ, երբ սրանք փաստորեն արդեն կյանքի էին կոչել իր նպատակները և ծանր հարվածներ էին հասցրել խոշոր ազնվականությանը, սկսեց աստիճանաբար հեռանալ նրանցից: Մազդակյաններն իրենք, որ դեռևս Ջամասպի օրոք խոշոր ռազմաֆեոդալական ավագանու կազմակերպած հաջող հակահարձակման պայմաններում մեծապես թուլացել էին, այժմ իրենց հերթին որոշակիորեն ավելի չափավոր վարքագիծ էին դրսևորում՝ թեև, միաժամանակ նաև, շարունակելով իրենցից զգալի մի ուժ ներկայացնել: Մազդակյաններին կատարած զիջումներից մեկն այն էր, որ Կավատ Ի-ը իր ավագ որդի և մազդակյանների շահերի ջերմեռանդ պաշտպան Կավուսին հռչակեց սեփական հետնորդ, բայց մյուս կողմին կատարված զիջումն էլ կայանում էր նրանում, որ մազդակյանների ձեռնարկած հետագա ագրեսիվ սոցիալական փոփոխություններին վերջ տրվեց: Այս պայմաններում Կավատ Ի-ը, փաստորեն գործելով մի կողմից մազդակյանների, իսկ մյուս կողմից էլ ռազմաֆեոդալական խոշոր ավագանու մրցակցության ուժերի հավասարակշռության կետում, կարողացավ աստիճանաբար զգալիորեն ամրապնդել սեփական դիրքերը: Որոշակիորեն կարգի գցելով գործերը երկրի ներսում՝ Կավատ Ի-ը իրեն պատրաստ համարեց անդրադառնալ արդեն նաև հայերին ու վրացիներին:

Արդյունքում՝ 499 թվականի գարնանը մարզպան Վահան Մամիկոնյանի և սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը ինչ-որ տեղ կրկին Վասպուրականում տեղի ունեցած խոշոր մի ճակատամարտում անորոշ ելքով ընդհարվեց Պարսից թագավորության առաջխաղացած բանակի հետ, ընդ որում պաշտոնական Տիզբոնի համար այս անգամ ևս պարզ դարձավ, որ հայերի հետ զենքի ուժով խոսելը որևէ իմաստ չունի: Այս պայմաններում Կավատ Ի-ը հրաժարվեց կրոնափոխության և տնտեսական հալածանքների քաղաքականությունից ու վերականգնեց Նվարսակի պայմանագրի գործողությունը, որից հետո Մարզպանական Հայաստանի IV ապստամբությունը վերջացավ[1]: 501 թվականի վիճակով Կավատ Ի-ն արդեն կարող էր համարել, որ քիչ թե շատ, բայց այնուհանդերձ ոչ միայն բավականին ամուր կերպով բազմել է հորենական գահին, այլև՝ կայունացրել է երկրի ներքաղաքական դրությունը: Ավելին, արյաց արքայի ձեռքի տակ գործող հեփթաղական զգալի ուժերը, անդորրը արևելյան սահմանին, ինչպես նաև իրեն կրկին իրենց հնազանդությունը հայտնած հայերի պարագան հնարավորություն էր ընձեռնում անցնել ակտիվ

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 23-24:

գործողությունների արդեն Բյուզանդական կայսրության դեմ:

Գլուխ 24
Բյուզանդա-Պարսկական II պատերազմը

Հռոմեական երբեմնի տերության կամ, արդեն այլ կերպ ասած՝ Բյուզանդական կայսրության, դեմ վերջին պատերազմից անցել էր գրեթե 80 տարի և, եթե հաշվի չառնեցվեին սահմանային տեղայի ընդհարումները կամ ռազմական այն գործողությունները, որոնք երկու այս գերտերությունները միմյանց դեմ երբեմն մղում էին երկրորդական մասնակիցների միջոցով, այս ընթացքում կողմերի միջև ընդհանուր առմամբ տիրել էր խաղաղություն: Միաժամանակ, սակայն, նույն այդ խաղաղությունը ոչ մի կերպ չէր հանգեցրել բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, ընդհակառակը՝ փոխադարձ պահանջները և վիրավորանքներն ավելի ու ավելի էին սրվել:

Այսպես, եթե պաշտոնական Տիզբոնը կայսրությունից անվերջ պահանջում էր իրեն վճարել Կովկասյան լեռնաշղթայի անցումները հսկող ամրությունների պահպանության համար, ապա պաշտոնական Կոստանդնուպոլիսն էլ դրան հակադարձում էր մեկ այլ պահանջ՝ վերադարձնել Մծբինը և հարակից այն տարածքները, որոնք «Ամոթալի հաշտության» պայմանագրով 100 տարի ժամանակահատվածով Պարսից թագավորությանն էին զիջվել դեռևս 363 թվականին ու որոնց վերադարձի ժամկետը վաղուց արդեն անցել էր: Պաշտոնական Տիզբոնը, սակայն, բնականաբար ոչ մի կերպ չէր կարող հակառակորդին վերադարձնել այնպիսի մի առաջնակարգ ամրություն, ինչպիսին Մծբինն էր, և այնպիսի լայնարձակ տարածքներ, ինչպիսին Հյուսիսային Միջագետքն էր, որոնց համար Շապուհ II-ն այնքան արյուն էր թափել, բայց մյուս կողմից էլ ֆինանսական միջոցների մշտական պակաս ունեցող կայսրությունն իր հերթին ևս ոչ մի կերպ չէր կարող իրեն թույլ տալ ոսկով վճարել իր ոխերիմ թշնամուն, մանավանդ որ այդ պարագայում ազատվող ուժերն ու միջոցները արյաց արքան անխուսափելիորեն ուղղելու էր հենց քրիստոնյաների դեմ: Եվ վերջապես Կոստանդնուպոլսից չէի վարանում հիշեցնել նաև այն մասին, որ Կովկասյան լեռնաշղթայի պաշտպանությունն ինչքան բխում է կայսրության շահերից, նույնքան էլ, եթե ոչ ավել, համապատասխանում է հենց Պարսից թագավորության շահերին: Այսպես թե այնպես, սակայն գրեթե մեկ տարի տևած և անհաջողությամբ ավարտված բանակցություններից հետո երկարատև ընդմիջումից հետո երկու գերտերությունների միջև սկիզբ առավ հերթական մի պատերազմ, պատերազմ, որին հաջորդելու էին նորերը և որը տարածաշրջանում սկիզբ էր դնելու լիովին նոր մի իրականության: Այսպիսով՝ սկիզբ առավ Բյուզանդա-Պարսկական II պատերազմը (502-506), ընդ որում առաջին հարվածը, ինչպես դրանից հետո արվելու էր գրեթե միշտ, պարսկական կողմը հասցրեց դաշնակիցների ուժերով:

502 թվականի գարնանը կայսրության տարածք ներխուժած Լախմյանների թագավորության բանակը սկսեց ասպատակել Ամիդի շրջակայքը, սակայն քաղաքից հաջող արտագրոհ իրականացրած Բյուզանդական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները անակնկալ հարձակումով պարտության մատնեցին թշնամուն[1]: Արդյունքում, անհաջողության մատնվելով պատերազմի հենց ամենասկզբում, արյաց արքան գործի մեջ դրեց իր հիմնական բանակը:

502 թվականի օգոստոսի 22-ին Մարզպանական Հայաստանում կենտրոնացած և Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ այնտեղից առաջացած Պարսից (մոտ 200.000, այդ թվում հեփթաղներ, կատիշներ, գիլաններ) և Նուման II-ի (498-503) գլխավորած Լախմյանների թագավորությունների, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական միացյալ բանակը Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 2.000, այդ թվում իլիրիացիներ) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 1.000) պաշարեց

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 2, 3:

Կարինը և օգոստոսի 25-ին, շնորհիվ հակառակորդի հրամանատար, իլիրիացիների ջոկատի առաջնորդ ու սենատոր Կոնստանդինի դավաճանության, գրավեց այն[1]: Նույն թվականի օգոստոսի 27-ից սկսած մասերի բաժանված արյաց արքայի բանակը 5 օր շարունակ ասպատակեց Բարձր Հայքի արևմուտքը և Ծոփքը՝ դուրս մղելով տեղում գտնվող կայսերական մանր ուժերին[2]: Արդյունքում, համարելով հյուսիսում հարցերը լուծված, Կավատ I-ը իր հարավածային ուժերը հետագայում տեղաշարժեց հարավ և նույն տարվա արդեն աշնանը առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավեց Տիգրանակերտը[3]: Հաջորդը խիստ ամրացված Ամիդն էր, որ պաշարումը, սակայն, ձգձգվեց:

Այս ընթացքում, կարծես թե, նոր միայն գիտակցելով, թե պաշտոնական Կոստանդնուպոլսի կողմից վարվող արևելյան ավանդական անուշադիր քաղաքականության արդյունքում ինչ վտանգավոր վիճակ է ստեղծվել կայսրության արևելյան սահմաններում, Անաստաս I-ը կտրուկ միջոցների դիմեց: Կայսրության բանակը, սակայն, գտնվում էր Բալկանյան թերակղզում և, համենայն դեպս գոնե առժամանակ, նախատեսված էր կայսրության արևմտյան սահմաններում մարտնչելու համար, այնպես որ ստեղծված պայմաններում անելու այլ բան չէր մնում, քան խոշոր գումարներ մեջտեղ բերելը և փորձ կատարելը գոնե այդ ճանապարհով շահել պարսից գոռոզացած արքայի սիրտը: Արդյունքում՝ Անաստաս I-ը իր բարձր պաշտոնյաներից մեկը համարվող Ռուփինոսին մեծ գումարներով ուղարկեց Կավատ I-ի մոտ, սակայն վերջինս, այն բանից հետո, երբ տեղում պարզեց, որ թշնամու հարձակում արդեն ողջ թափով ընթացքի մեջ է, հետը բերած գումարները թողեց Կեսարիայում և ներկայացավ արյաց արքային առանց դրանց: Իր հերթին Կավատ I-ը, որն այդ պահին որևէ պատճառ չուներ դադարեցնելու խիստ հաջող զարգացող մարտական գործողությունները, Ռուփինոսին իր մոտ պահեց որպես գերի և շարունակեց հարվածներ հասցնել կայսրությանը՝ ողջ ծավալով իրացնելով ռազմավարական նախաձեռնության պտուղները:

502 թվականի հոկտեմբերի 5-ին Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ առաջացած Պարսից և Նուման II-ի գլխավորած Լախմյանների թագավորությունների, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական միացյալ բանակը Բյուզանդական կայսրության բանակից և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից պաշարեց Ամիդը, սակայն համառ դիմադրության հանդիպեց: Անհաջողության մատնվեցին հարձակվողների բոլոր փորձերը տիրել քաղաքին պաշարողական ամենատարբեր հնարքների կիրառմամբ, ընդ որում հատկապես հաջող արտագրոհ էին իրականացնում քաղաքի պաշտպանությանը մասնակցող բուլղարները, սակայն այս անգամ ևս հարցը լուծվեց դավաճանության շնորհիվ: Իրոք, 503 թվականի հունվարի լույս 9-ի գիշերը հարձակվող կողմը, պաշտպանվողներից ոմանց աջակցությամբ տիրելով քաղաքի աշտարակներից մեկին, արագորեն զարգացրեց հաջողությունը և իր իշխանությունը հաստատեց պարսպի զգալի հատվածի նկատմամբ: Չնայած դրան, սակայն, քրիստոնյաները քաղաքի կայազորի հրամանատար Կյուրոսի և նրա օգնական Պետրոսի գլխավորությամբ ևս երեք օր համառ դիմադրություն ցույց տվեցին՝ ստիպելով թշնամուն մեծ արյունով վճարել ամեն մի ձեռք բերած դիրքի համար: Այսպես թե այնպես, սակայն, քաղաքն արդեն դատապարտված էր և հունվարի 11-ին ճնշվեցին դիմադրության նույնիսկ վերջին օջախները, ընդ որում նետի հարվածից ծանր վիրավորված Կյուրոսը գերի ընկավ, սակայն Պետրոսին հաջողվեց խուսափել գերությունից: Հաջողության համար, ինչպես և մի ժամանակ Շապուհ II-ը, այս անգամ

---

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 48; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 3; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 7; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 37; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 14:

[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 48, 50; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 7:

[3] Պրոկոպիոս Կեսարացի «Կառուցումների մասին», գիրք 3, գլուխ 6; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

արդեն Կավատ Ի-ն էր մեծ արյունով վճարել, ի դեմս շարքից դուրս եկած 50.000 ռազմիկների, և արդյունքում արյաց կատաղած արքան հրամայեց գլխովին գերեվարել ու իր թագավորության խորքերը քշել քաղաքի ողջ բնակչությանը: Արդյունքում՝ գերության քշվեցին մեծաքանակ քրիստոնյաներ, քաղաքից վերցվեց հսկայական չափի ավար, իսկ ավելի քան 80.000 մարդ էլ սպանվեց: Ինչ վերաբերում է բուն քաղաքին, ապա, այն բանից հետո, երբ նրան բաժին հասած ավերվածությունները վերացվեցին, վերջինս վերածվեց պաշտպանական ամուր մի կետի, որտեղ Գլոնեսի գլխավորությամբ թողնվեց 3.000 հոգանոց ուժեղ մի կայազոր[1]: Ամիդի պաշարման ընթացքում՝ 502 թվականի նոյեմբերի կեսերից մինչև նոյեմբերի վերջ, Պարսից և Նուման II-ի գլխավորած Լախմյանների թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Եդեսիայի ու Խառանի շրջակայքը և նահանջեց՝ այլ ավարի թվում գերի տանելով նաև 18.500 մարդ[2]: Փաստորեն ճեղքվել էր կայսրության պաշտպանական արևելյան ողջ համակարգը, ընդ որում, հավատարիմ արևելյան գործերը ավանդականորեն աչքաթող անելու քաղաքականությանը, պաշտոնական Կոստանդնուպոլիսը փաստորեն ստեղծել էր մի դրություն, երբ որևէ կենտրոնացված գործողության մասին առայժմ խոսք գնալ չէր կարող և առավելագույնը, որ մնում էր անել, դա տեղական ուժերի կողմից սեփական միջոցներով դիմադրություն կազմակերպելն էր:

502 թվականի նոյեմբերի 19-ին Բյուզանդական կայսրության բավականին փոքրաթիվ բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները Կոնստանդինեի մոտակայքում օրվա առաջին կեսին անակնկալ հարձակումով հաղթեցին ցրված ու քաղաքի շրջակայքը ասպատակող Լախմյանների թագավորության բանակին, սակայն նույն գիշեր էլ անակնկալ հարձակման անցած Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը (500 հեծյալ, այդ թվում հեփթաղներ) պարտության մատնեց վերջիններիս[3]: Քրիստոնյաների համար առավել հաջող գործողություններ ծավալվեցին, սակայն, հյուսիսում, երբ նույն տարվա դեկտեմբերի սկզբին Մելիտեից աննկատ առաջխաղացած կայսերական բանակը անակնկալ հարձակումով Պարսից թագավորության բանակից հետ գրավեց Կարինը[4]:

Ամիդի գրավումը, թեև ծանր գին էր արժեցել Կավատ Ի-ին, սակայն վերջինս ինչ-որ տեղ կարող էր այնուհանդերձ համարել, որ իր գլխավոր խնդիրն արդեն կատարել է՝ ձեռք էր բերվել հսկայական ավար, կայսրությունը ծանր հարվածներ էր ստացել և նրա պաշտպանական համակարգը ճեղքվել էր: Հենց այս պատճառով էր, որ կայսերական ամրացված այդ քաղաքի ընկնելուց հետո արյաց արքան հետ քաշեց իր հիմնական ուժերը՝ դրանք համալրելու և հետագայում նոր հարված հասցնելու համար, մանավանդ որ հենց այս ժամանակ արդեն կարծես լուրեր էին տարածվել սաբիրներից սպասվող հարվածի մասին: Ճակատում թողնվեցին միայն առաջապահ որոշ ջոկատներ, որոնք էլ հենց 503 թվականի ապրիլին ասպատակեցին Կոնստանդինեի ու Ռաշ-Այնի շրջակայքը և նահանջեցին[5]: Կավատ Ի-ի խոշոր ուժերի հեռանալը մի կողմից, իսկ մյուս կողմից էլ համեմատականորեն խոշոր համալրումների ստացման հանգամանքն իրենց հերթին բերեցին նրան, որ 503 թվականի սկզբին օպերատիվ նախաձեռնությունը մի ինչ-որ պահի անցավ կայսրության կողմը, ընդ որում այս անգամ Կոստանդնուպոլսում որոշել էին հասցնել հարված միանգամից երկու ուղղությամբ՝ դեպի Ամիդ և Մծբին:

---

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 4; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 50, 53; Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», Հավելված; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 7; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, մաս 7; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 37; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 14; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; իբն ալ-Ասիր «Լիակատար պատմություն»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 51, 52; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 7:

[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 51; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 2:

[4] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 52:

[5] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 13; Մշիխա Զեխա «Ադիեբենեի եկեղեցու պատմությունը»:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

503 մայիս - հուլիս – ***Մծբինի ճ-մ***[1]

Արեոբինդոսի գլխավորած Բյուզանդական կայսրության I բանակը (12.000, այդ թվում գոթեր) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000) պաշարեցին քաղաքը Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 500):

I փուլ – Մայիսին կայսերական բանակը երկու մարտում ստիպեց նահանջել Կոնստանդինի գլխավորությամբ քաղաքը պաշարումից ազատել փորձող Պարսից թագավորության բանակին (20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5.000):

II փուլ – Հունիսին Կոնստանդինի գլխավորած Պարսից թագավորության բանակը կրկին մոտեցավ քաղաքին, սակայն բռնկված մարտում կայսերական բանակը այս անգամ ևս հետ մղեց նրան՝ ստիպելով ապաստանել քաղաքում:

III փուլ – Հուլիսի քաղաքին սկսեց մոտենալ Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից (մոտ 60.000) և Նուման II-ի գլխավորած Լախմյանների (մոտ 5.000) թագավորությունների, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական (մոտ 30.000) միացյալ բանակը: Արդյունքում՝ կայսերական բանակը ստիպված եղավ թողնել քաղաքի պաշարումը և նահանջել:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 700, դաշնակիցները՝ մոտ 2.000, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 2.000 զինվոր:

503 մայիս - հուլիս – ***Ամիդի ճ-մ***[2]

Պատրիկիոսի, նրա օգնական Պետրոսի, կայսեր եղբորորդի Հյուպատիոսի, Հուստինոսի, ինչպես նաև ավելի ուշ նրանց միացած Փարսմանի գլխավորած Բյուզանդական կայսրության II և III բանակները (40.000, այդ թվում գոթեր) ու նրանց կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000), ճամբարելով ***Սիֆրիոս ամրոցի մոտակայքում*** (Ամիդից մոտ 45 կմ արևմուտք), պաշարեցին քաղաքը Գլոնեսի գլխավորած Պարսից թագավորության բանակից (3.000) և քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 500):

I փուլ – Մայիսին Փարսմանը խաբեությամբ քաղաքից դուրս քաշեց Գլոնեսի գլխավորած մի ջոկատ (200 հեծյալ) և, ***Թիալասամոն գյուղի մոտակայքում*** (քաղաքից հարավ-արևմուտք) գցելով իր ջոկատի (500 հեծյալ) դարանը, գլխովին ոչնչացրեց:

II փուլ – Հունիսին կայսերական բանակը, քաղաքի պարիսպներին մոտեցնելով ոչխարների մի հոտ և այդ ճանապարհով դուրս քաշելով քաղաքից թշնամու մի ջոկատ (400), գլխովին ոչնչացրեց այն: Միաժամանակ քաղաքը պաշարողները պատրաստեցին երկաթով պատված 3 փայտյա աշտարակներ՝ նախատեսելով օգտագործել դրանք քաղաքի առաջիկա գրոհի ընթացքում:

III փուլ – Հուլիսին կայսերական բանակը անակնկալ հարձակվեց Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ առաջխաղացող Պարսից թագավորության (մոտ 60.000, այդ թվում հեփթաղներ, կատիշներ, գիլաններ), ինչպես նաև սպարապետ

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 54, 55; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 5; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Մարցելլոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 8; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 8, 9; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 4, 5; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 56; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 14:

Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական (մոտ 30.000) միացյալ բանակի առաջապահի (800 հեփթաղ) վրա և ոչնչացրեց այն:

IV փուլ – Կարծելով, թե թշնամու բանակի նկատմամբ վերջնական հաղթանակ է տարել, կայսերական բանակը ճամբարեց և պատրաստվեց հանգստի: Շուտով, սակայն, թշնամու հիմնական բանակը անակնկալ հարձակվեց կայսերական բանակի վրա և գլխովին ջախջախեց այն:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 3.000, պարտվողներից հայերը՝ մոտ 3.000, դաշնակիցը՝ մոտ 30.000 զինվոր:

Այսպիսով՝ կայսրության զորավարների կազմակերպած հակահարձակումն երկու մասերով էլ ավարտվեց լիակատար անհաջողությամբ, ընդ որում իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ հենց նույն այս ժամանակ Կավատ I-ը փաստորեն կրկին շարժման մեջ էր դրել իր հիմնական բանակը և պատրաստվում էր նոր հարված հասցնել արևմտյան ուղղությամբ: Հարված հասցնող ուժի սուր ծայրում, սակայն, այս անգամ ևս այնուհանդերձ Լախմյաններն էին, որոնք 503 թվականի օգոստոսի սկզբին ասպատակեցին Նիկեփորիոնի շրջակայքը, թեև ի վերջո մատնվեցին անհաջողության, քանզի Նիկեփորիոնի դուքս Դեմոստրատոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները անակնկալ հարձակումով հաղթեցին Նուման II-ի գլխավորած բանակին: Միաժամանակ կայսրության կողմում գործող Աբու-Տաղլիբ քոչվոր համադաշնության բեդվինները ասպատակեցին Խիրտայի շրջակայքը՝ նյութական զգալի վնաս պատճառելով Լախմյանների թագավորությանը[1]: Տեղային այս հաջողությունները, սակայն, ոչ մի կերպ չէին կարող կասեցնել պարսկական կողմի հերթական հարվածը:

503 թվականի օգոստոսի կեսին Կոնստանդինեից մոտ 10 կմ արևմուտք ընկած Ապադնայի ճ-մ-ում (= Օպատնա, = Արզամենա) Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական միացյալ բանակը հաղթեց Պատրիկիոսի և Պետրոսի գլխավորությամբ առաջխաղացող ու դեռևս երթի մեջ գտնվող Բյուզանդական կայսրության բանակի և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների սկզբում առաջապահին, իսկ հետո՝ հիմնական ուժերին: Պետրոսը ամրացավ Սիֆրիոս ամրոցում, սակայն, այն բանից հետո, երբ ամրոցը պաշարվեց, նրա կայազորը, ի հաշիվ սեփական փրկության, հանձնեց Պետրոսին և նրա շքախմբին, որի անդամները սպանվեցին[2]: Զարգացնելով հաջողությունը՝ Կավատ I-ը պաշարեց Կոնստանդինեն, սակայն, այն բանից հետո, երբ նույն այն հերոս Պետրոսը կարողացավ համոզել իրեն մոտեցնել քաղաքի պարիսպներին, որից հետո հայտնեց, որ քաղաքում գտնվող հրեաները պատրաստվում են իրենց սինագոգի մեջ փորված պատի անցքով քաղաք մտցնել թշնամու ուժեր, վիժեցնելով քաղաքի գրավումը, նահանջեց[3]: Խնդիրը կայանում էր նրանում, սակայն, որ առանձնացված վիճակում գտնվող Կոնստանդինեն չէր կարող փառասեր Կավատ I-ի համար լուրջ նպատակ հանդիսանալ և վերջինս իրականում ցանկանում էր տիրել ավելի խոշոր մի ավարի:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

503 սեպտեմբեր – ***<u>Եդեսիայի պաշտպանությունը</u>***[4]

Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից (մոտ 100.000, այդ թվում հեփթաղներ, կատիշներ, գիլաններ) և Նուման II-ի գլխավորած Լախմյանների

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 57:
[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 57; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 5:
[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 58:
[4] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 58-63; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 14:

(մոտ 5.000) թագավորությունների, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական (մոտ 20.000) միացյալ բանակը պաշարեց քաղաքը Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 2.000):

I փուլ – Սեպտեմբերի 9-ին Կավատ I-ի բանակը մանր գրոհներից հետո բանակցություններ սկսեց: Այս ընթացքում հեփթաղները ասպատակեցին ***Խառանի շրջակայքը***, բայց անակնկալ հարձակման ենթարկվեցին վերջինիս կայազորի (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 100) կողմից ու պարտություն կրեցին: Հեփթաղների առաջնորդը գերվեց և նրա ազատության փոխարեն թշնամին պարտավորվեց չասպատակել Խառանի շրջակայքը ու հեռանալ: Միաժամանակ Նուման II-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակը ասպատակեց ***Սրուճի*** (= Բատնա) ***շրջակայքը*** և ավարով վերադարձավ Եդեսիայի մոտ:

II փուլ – Սեպտեմբերի կեսին Պատրիկոսի և նրա որդի Վիտալիանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) հաղթեցին քաղաքից դեպի հյուսիս առաջխաղացած թշնամու մի ջոկատի, բայց ի վերջո ստիպված եղան հետ քաշվել դեպի ***Սամոսատ:***

III փուլ – Սեպտեմբերի 17-ին քաղաքի կայազորը հետ մղեց թշնամու գրոհը՝ զգալի կորուստներ պատճառելով վերջինիս: Հաջորդ օրը սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում Կավատ I-ը համաձայնեց 12 օրվա ընթացքում 2.000 կգ ոսկի ստանալու դիմաց նահանջել: Սեպտեմբերի 19-ին Կավատ I-ը փորձեց նախապես պայմանավորված ոսկուց ստանալ 300 կգ, սակայն ստացավ մերժում և սեպտեմբերի 24-ի առավոտյան կրկին անցավ ակտիվ գործողությունների:

IV փուլ – Սեպտեմբերի 24-ին Կավատ I-ի բանակը ողջ ուժերով անցավ վճռական գրոհի, սակայն համառ մարտից հետո նրա բանակը հետ մղվեց ելման դիրքեր:

V փուլ – Սեպտեմբերի 25-ին Կավատ I-ի բանակը թողեց քաղաքի պաշարումը և, ասպատակելով ***Սրուճն ու նրա շրջակայքը,*** նահանջեց ***Մծբին:***

Պաշտպանվողներից հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 200, հարձակվողներից՝ հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցները՝ մոտ 5.000 զինվոր:

Վերջին իրադարձությունները ամենաակնառու կերպով ցույց տվեցին, որ պարսկական կողմի առավելությունն համոզիչ է, ընդ որում այս պարագայում լիովին ակնհայտ դարձավ նաև ողջ այն կործանարար քաղաքականության բնույթը, որը պաշտոնական Կոստանդնուպոլիսը վարում էր Արևելքում՝ փորձելով մոռացության մատնել ու չնկատել այնտեղ ծագող բոլոր խնդիրները և վստահ լինելով, որ պատերազմը սկսողն ու վերջացնողը, այսպես թե այնպես, ինքն է լինելու: Կյանքը, սակայն, ցույց տվեց, որ դա ամենևին էլ այդպես չէր, ընդ որում իրերի ստեղծված դրության պայմաններում իրավիճակը արագորեն շտկելու ռազմական որևէ մեծամասշտաբ միջոցառում ձեռնարկելու իրական հնարավորություն առայժմ դեռևս չկար: Այս պայմաններում Անաստաս I-ին չէր մնում այլ բան, քան, գործի դնելով զգալի միջոցներ, ոտքի հանել մարտաշունչ սաբիրներին և նրանց ուղղել Կավատ I-ի թիկունքին:

Արդյունքում՝ 503 թվականի սեպտեմբերի կեսին Դերբենդի լեռնանցքից ներխուժած Սաբիրական թագավորության խոշոր բանակը, ստանալով տեղի կատիշների աջակցությունը, ասպատակեց Փայտակարանը, Ուտիքը, Աղվանքը և Ատրպատականը, սակայն, խուսափելով Կավատ I-ի ընդհանուր ղեկավարությամբ իր դեմ շարժվող Պարսից թագավորության ու մարզպան Վահան Մամիկոնյանի, ինչպես նաև սպարապետ Վարդ Մամիկոնյանի գլխավորած Հայկական միացյալ և արևմուտքից առաջխաղացող

բանակից, նահանջեց[1]: Այսպես թե այնպես, սակայն սաբիրներին բաժին հասավ խոշոր ավար, իսկ կայսրությունն էլ շահեց այնքանով, որ արյաց արքան ստիպված եղավ իր ուժերը հետ քաշել: Ավելին, սրանից հետո ևս սաբիրական վտանգը շարունակեց իրական մնալ, ինչը մեծապես սահմանափակեց պարսկական կողմի հարձակողական հնարավորությունները արևմտյան ուղղությամբ: Իրոք, եթե նախկինում արյաց արքան, թեկուզ և ունենալով ուժասպառ եղած, ծանր կորուստներ կրած ու ոչ միանշանակորեն ամուր կառավարում ունեցող երկիր, կայսրության դեմ արևմտյան ճակատում այնուհանդերձ կարողանում էր ապահովել ուժերի թեկուզ և ոչ զգալի, բայց այնուհանդերձ առավելություն, ապա այժմ, երբ հյուսիսից կախված վտանգը մշտապես մնում էր ուժի մեջ ու արյաց արքան ստիպված էր իր հիմնական ուժերը պահել Ատրպատականի հյուսիսում, արևմտյան ճակատում քանակական գերակշռությունը կրկին անցավ Անաստաս I-ի կողմը: Եվ այսպես, Կավատ I-ի հետ քաշվելը հնարավորություն տվեց կայսրության բանակին որոշակիորեն ակտիվանալ:

503 թվականի հոկտեմբերի սկզբին Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000, այդ թվում գոթեր և արաբներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000) ասպատակեցին Աղձնիքը և նահանջեցին[2]: Հաջողությունը կայսրության բանակի կողմում մնաց նաև հարավում, երբ 503 թվականի հոկտեմբերի սկզբին Նիկեփորիոնի ճ-մ-ում Նիկեփորիոնի հաջողակ դուքս Դեմոստրատոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200) անակնկալ հարձակումով հաղթեցին քաղաքի շրջակայքը ասպատակող Պարսից թագավորության բանակին (մոտ 5.000) ու գերեցին նրա հրամանատարին: Դրանից հետո Պարսից թագավորության հիմնական բանակը մոտեցավ քաղաքին և սկսված բանակցություններից հետո համաձայնություն ձեռք բերվեց, որ գերված զորավարի ազատության փոխարեն չի ասպատակվի քաղաքի շրջակայքը և թշնամին կհեռանա[3]: Այսպիսով՝ օպերատիվ նախաձեռնությունը, մեծապես շնորհիվ սաբիրների խիստ ժամանակին հասցված հարվածի, հերթական անգամ անցավ կայսրության բանակի կողմը, որի առջև արդեն հերթական անգամ խնդիր դրվեց հետ գրավել Ամիդը, ընդ որում այս անգամ Անաստաս I-ը գործին ձեռք զարկեց ամենայն բարեխղճությամբ՝ շեշտը դնելով մասնավորապես նաև բանակի ավելի լավ կառավարման մոդելի ընտրության վրա:

Իրոք, նախորդ տարիների և հատկապես 503 թվականի դառը փորձը ցույց էր տվել, որ հավասարազոր լիազորություններով մի քանի զորավարների ուղարկումը պատերազմի թատերաբեմ գործնական մի մեծ սխալ էր, քանզի վերջիններս, անխուսափելիորեն մտնելով վեճերի մեջ և չունենալով մեկին, որին պետք է ենթարկվեին ի պաշտոնե, դրանով իսկ, ըստ էության, վիժեցնում էին ապագա հաջողության ամեն մի հեռանկար: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կայսրն այս անգամ Արևելքում մղվող մարտական գործողությունների գլխավոր հրամանատար նշանակեց իր պալատական զորավար Կելլերին, որից հետո, հրամայելով բոլորին ենթարկվել նրան, ձեռնամուխ եղավ ռազմական գործողությունների նոր արարին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

503 դեկտեմբեր - 505 հունվար – ***<u>Ամիդի գրավումը</u>***[4]

Կելլերի, Ռոմանոսի և Պատրիկոսի գլխավորած Բյուզանդական կայսրության

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 8; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 8:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 7; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 5; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 65:
[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 64; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»:
[4] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 66, 70-78, 80, 81; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 9; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 5; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 5; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 37; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 14:

բանակը (մոտ 50.000, այդ թվում գոթեր և արաբներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) պաշարեցին քաղաքը Պարսից թագավորության բանակից (2.400):

I փուլ – 504 թ-ի հունվարին քաղաքին մոտեցած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) հարձակվեց քաղաքը պաշարողների վրա և, պարտության մատնելով վերջիններիս, սեղմեց քաղաքի մոտ հոսող գետին:

II փուլ – Կործանման եզրին հայտնված կայսերական բանակը անցավ հուսահատորեն համառ դիմադրության, որի արդյունքում ի վերջո փախուստի մատնեց հակառակորդին:

III փուլ – Քրիստոնյաների բանակը վերսկսեց քաղաքի պաշարումը, սակայն վերջինս այն աստիճանի անառիկ էր, որ այն հնարավոր էր գրավել միայն սովի միջոցով: 504 թ-ի հունիս ամսին քաղաքում գտնվող դավաճան Կոնստանդինը հանձնվեց և, ստանալով ներում, վանական կարգվեց, իսկ հուլիսին էլ քաղաքից արձակված բալիստի նետի հարվածից սպանվեց Արաբիայի դուքս Գայնասը:

IV փուլ – 504 թ-ի աշնանը պարսիկները, հիմք ընդունելով բանակցությունների ժամանակ կայսերական զորավարների արտահայտած այն միտքը, թե քաղաքում իրենց ստրուկներն են դիմադրում, առաջարկեցին օգնել վերջիններիս և, ստանալով քաղաքը պաշարողների համաձայնությունն ու երդումն առ այն, որ հարձակում չի լինի, փորձեցին քաղաք մտցնել 300 ուղտերից կազմված քարավան, սակայն դուքս Նոմմոսը, որը ներկա չէր եղել երդման արարողությանը, խլեց քարավանը, որի ցորենի պարկերում, ինչպես պարզվեց, նաև նետեր կային թաքցրած: Ի վերջո՝ արդեն ավելի քան մեկամյա պաշարումից հետո, երբ քաղաքի կայազորը հետ մղեց մի շարք գրոհներ, նույնիսկ մարդակերության աստիճանի հասած խիստ դաժան սովը ստիպեց վերջինիս, խաբելով հակառակորդին, որ պարեն դեռ շատ կա և ստանալով 1.000 կգ ոսկի, 505 թ-ի հունվարին ենթարկվել պատվավոր անձնատվության ու իր բոլոր զենքերով, դրոշներով և տարբերանշաններով հեռանալ քաղաքից:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 1.500 զինվոր:

504 թվականի սկզբին, երբ Ամիդը դեռ պաշարված էր և օպերատիվ նախաձեռնությունը լիովին գտնվում էր կայսերական բանակի ձեռքում, սկիզբ առան մարտեր նաև Մծբինի համար, թեև դրանք վերջնական հաջողություն այդպես էլ չապահովեցին: Իրոք, 504 թվականի մարտին Նիկեփորիոնի դուքս Դեմոստրատոսի գլխավորությամբ Ռաշ-Այնից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (6.000 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները Մծբինի մոտ անակնկալ հարձակումով հաղթեցին արածող ձիերին հսկող Պարսից թագավորության բանակին (10.000), խլեցին ձիերը ու վերադարձան Ռաշ-Այն[1]: Նույն թվականի հուլիսին Բյուզանդական կայսրության բանակը ասպատակեց Աղձնիքը և նահանջեց՝ սպանելով 10.000 ու գերելով 30.000 խաղաղ բնակչի[2]: Ստեղծված պայմաններում, ցանկանալով գոնե որևէ կերպ վերատիրել նախաձեռնությանը և նույնիսկ օգնել Ամիդին, Կավատ I-ը փորձեց ակտիվանալ Մծբինի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

504 հուլիս – ***Մծբինի ճ-ս***[3]

Մծբինից դեպի արևմուտք առաջխաղացող Պարսից թագավորության

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 69:
[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 75; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 75:

(7.000) և Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանի գլխավորած Հայկական (մոտ 5.000) միացյալ բանակը մոտեցավ մարտակարգ ընդունած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 10.000, այդ թվում գոթեր և արաբներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000), ընդ որում քրիստոնյաներին մինչ այդ հաջողվել էր իրենց կողմը գրավել Մուշեղին:

I փուլ – Պարսից թագավորության և Հայկական միացյալ բանակը սկսեց մոտենալ հակառակորդին, որը, քաղաքի մոտ հիմնական բանակը դնելով դարանում, առաջ ուղարկեց փոքրիկ մի ջոկատ:

II փուլ – Պարսից թագավորության ու Հայկական միացյալ բանակը սկսեց հետապնդել հակառակորդի առաջ եկած փոքրիկ ջոկատին, որը, իրականացնելով հաջող նահանջ, իրեն հետապնդողներին գցեց հիմնական բանակի դարանը և, արդեն նաև իր կողմն անցած Հայկական բանակի օգնությամբ, գլխովին ջախջախեց:

Հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ մոտ 8.000 զինվոր:

Այսպիսով՝ անհաջողությամբ ավարտվեց պարսկական կողմի ակտիվանալու հերթական փորձը ևս, ընդ որում այս անգամ ու արդեն վերջնականապես, օպերատիվ նախաձեռնությունն անցավ կայսերական բանակի ձեռքը: Արդյունքում՝ 504 թվականի աշնանը Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000, այդ թվում գոթեր և արաբներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) Արբելայի ճ-մ-ում հաղթեցին Պարսից թագավորության բանակին (10.000 հեծյալ)[1]:

Կավատ I-ի անհաջողությունները մինչ այդ, թվում էր, թե այդքան հաջող ընթացող պատերազմում, ակնհայտ էին, ընդ որում սաբիրական վտանգը նույն այս ժամանակ շարունակում էր կախված մնալ Պարսից թագավորության հյուսիսային սահմանների վրա: Իրավիճակում ի վերջո վերջնական հստակություն մտցրեց արդեն նաև 505 թվականի հունվարին տեղի ունեցած Ամիդի անկումը, որից հետո պարզվեց, որ պարսկական կողմը որևէ հաջողության մասին նույնիսկ խոսել իսկ չի կարող: Արդյունքում՝ 505 թվականի նույն հունվարին կնքվեց զինադադար և կողմերը բանակցություններ սկսեցին՝ վերջնական հաշտություն կնքելու նպատակով:

505 թվականի ամռանը, երբ հաշտության բանակցությունները դեռևս շարունակվում էին, Աբու Յաֆուր իբն Ալկամի (503-505) գլխավորած Լախմյանների թագավորության բանակը ասպատակեց Եդեսիայի շրջակայքը և նահանջեց, սակայն Մծբինի պարսից հրամանատարը, դժգոհ զինադադարի խախտումից, ձերբակալեց Աբու Յաֆուր իբն Ալկամին և մահապատժի ենթարկեց[2]: Նույն թվականի աշնանը Աբու-Տաղլիբ քոչվոր համադաշնության արաբներն իրենց հերթին ասպատակեցին Մծբինի շրջակայքը և նահանջեցին, սակայն այս անգամ արդեն Նիկեփորիոնի դուքս Դեմոստրատոսը, քանզի Կելլերն իր հերթին դժգոհ էր մնացել զինադադարի խախտումից, ձերբակալեց վերջիններիս առաջնորդներից ամենաակտիվներին և մահապատժի ենթարկեց[3]: Արաբները համառորեն չէին ուզում հասկանալ, որ առայժմ իրենք հզորների խաղում գործող ընդամենը միայն սովորական խաղացողներ են, որոնք կարող են իրենց ազատ զգալ, թերևս, միայն իրենց ղեկավարների համաձայնությամբ, սակայն, երբ այն բացակայում էր, իրենք որևէ նախաձեռնություն դրսևորել սկզբունքորեն չեն կարող: Այսպես թե այնպես, սակայն տարածաշրջանի երկու գերտերությունների միջև ընթացող բանակցությունները, որոնք փաստացի խաղաղության վիճակ էին ստեղծել դեռևս 505 թվականին, 506 թվականի գարնանը ավարտվեցին վերջնական յոթնամյա հաշտության կնքմամբ, որով էլ Բյուզանդա-Պարսկական II պատերազմը ավարտվեց: Արդյունքում՝

[1] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 79:
[2] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 88:
[3] Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 88:

զուտ ռազմաքաղաքական մակարդակում, ի համեմատ նախկինի, որևէ էական փոփոխություն տեղի չունեցավ, սակայն, հենց նոր ավարտված պատերազմի խորքային հետևանքներն ավելին, քան ակնհայտ էին:

Ամենից առաջ պետք է նշել, որ հենց նոր ավարտված պատերազմը մի իսկական դաս հանդիսացավ պաշտոնական Կոստանդնուպոլսի համար, որը, սկզբունքորեն վերանայելով արևելյան սահմանների նկատմամբ նախկինում վարվող իր քաղաքականությունը, այդուհետ սկսեց լրջորեն ամրացնել այս ուղղությամբ գործող պաշտպանական բնագիծը՝ ուժեղացնելով արդեն իսկ գոյություն ունեցած ամրությունները, այդ թվում նաև Կարին քաղաքը, ինչպես նաև կառուցելով Մծբինի հենց դիմաց գտնվող Դարա ամրոցը, ընդ որում վերջինս կոչված էր հակակշռել Մծբինին և, առիթի դեպքում, այդ քաղաքի վրա հարձակվելու համար հարմար ցատկահարթակ հանդիսանալ: Փաստորեն, ի հակադրություն նախկինի, պաշտոնական Կոստանդնուպոլիսը կտրուկ մեծացրեց ուշադրությունը սեփական արևելյան սահմանների նկատմամբ, թեև առժամանակ ընդամենը միայն՝ պաշտպանական ուղղվածությամբ: Նախկինի համեմատ, սակայն, սա ինքնին ևս ձեռքբերում էր: Այսպիսով՝ Բյուզանդա-Պարսկական II պատերազմի հետևանքներից մեկն այն եղավ, որ, զուտ պաշտպանական տեսանկյունից բացի, մեծացավ պաշտոնական Կոստանդնուպոլսի նաև ընդհանուր հետաքրքրությունը արևելյան պրովինցիաների նկատմամբ, պրովինցիաներ, որոնք հետագայում այնքան կարևոր դեր էին ունենալու կայսրության համար: Հենց նոր ավարտված պատերազմի հետևանքներից ևս մեկն էլ այն եղավ, որ պատերազմը վերջնականապես ցույց տվեց, որ կայսրության բանակում գերմանական տարրը էականորեն զիջել է իր տեղը, իսկ բանակային ուժերի կազմավորման նախկին համակարգն էլ իրեն արդեն մեծապես սպառել է, ընդ որում ապագայում կարիք է լինելու բանակային ուժերը կազմավորել լիովին նոր սկզբունքների հիման վրա: Այսպիսով, եթե մի կողմ թողնենք Բյուզանդա-Պարսկական I պատերազմը, որը, ըստ էության, ընթանում էր լիովին այլ պայմաններում և մեծապես կրում էր անցյալի ազդեցությունը, ապա բովանդակային առումով Բյուզանդա-Պարսկական հենց II պատերազմն էր, որ իրական առաջամարտիկը հանդիսացավ պատերազմների այն երկար շարանին, որը մոտակա 130 տարում իրար դեմ մղելու էին առաջավոր Ասիայի երկու գերտերությունները:

Գլուխ 25
Վիտալիանոսի ելույթը և Սատրապական Հայաստանի III ապստամբությունը

Բյուզանդա-Պարսկական II պատերազմի ավարտից հետո Պարսից թագավորության վրա հյուսիսից շարունակում էր կախված մնալ վտանգն, ի դեմս Սաբիրական թագավորության, ընդ որում առաջիկա տասնամյակում վիճակը շարունակում էր մնալ կայուն ծանր: 513 թվականին սաբիրները հերթական անգամ անցան Դերբենդի լեռնանցքով և ոտնատակ տվեցին արյաց արքայի տիրույթները, սակայն ինչ-որ տեղ Ատրպատականում տեղի ունեցած ճակատամարտում Պարսից թագավորության բանակի կողմից զգալի հարվածներ ստացան և հետ մղվեցին[1]: Սաբիրական այս, ինչպես նաև հետագա հարվածներին Հայաստանի տարածքներից որոշակիորեն ենթարկվեց միայն Ուտիքը, իսկ հիմնական կորուստները կրեցին Աղվանքը և Ատրպատականը: Սաբիրների հետ Կավատ I-ի հակամարտությունը շարունակվում էր, բայց նույն այս ժամանակ խաղաղ չէր նաև Անաստաս I-ի տիրույթներում:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Անաստաս I-ը, վարելով որոշակի մի կրոնական քաղաքականություն, ավելի շատ հակված էր, ինչպես արդեն ասվեց, դեպի միաբնակությունը, ինչը խորը դժգոհություններ էր հարուցում երկաբնակության

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 10; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 6; Յոշվա Ստիլիտ «Ժամանակագրություն», գլուխ 65:

կողմնակից հոգևորականների, ինչպես նաև տեղական, այդ թվում հատկապես գերմանական տարրի շարքերում, ընդ որում վերջինս հատկապես դժգոհ էր սեփական դերակատարության դանդաղ, բայց անշեղ կորստից: Հիշատակված դժգոհության արտահայտիչը եղավ Վիտալիանոսը՝ Բյուզանդա-Պարսկական II պատերազմին իր հայր Պատրիկոսի հետ սեփական մասնակցությունը բերած, սակայն առանձնակի ոչ մի բանով այդպես էլ աչքի չընկած գերմանական արմատներով այդ ազնվական զորավարը, որը, սակայն, հիմա՝ տասը տարի անց, հսկայական ազդեցություն էր ձեռք բերել: Իրոք, պարսիկների հետ հաշտության հաստատումից հետո Վիտալիանոսը տեղափոխվել էր բալկանյան ճակատ և այստեղ հասել էր զինվորական բարձր աստիճանի: Միաժամանակ, սակայն սրվել էին նաև Վիտալիանոսի հարաբերությունները կայսեր հետ, ինչից օգտվելով էլ և իր կողմը գրավելով տեղական զգալի ուժերի, ինչպես նաև ստանալով համալրումներ նաև անդրդանուբյան տարածքներից, 514 թվականի գարնանը վերջինս Անաստաս I-ի դեմ բացահայտ ապստամբություն սկսեց:

Ցանկանալով հնարավորինս արագ հաշիվ տեսնել ապստամբների հետ՝ Անաստաս I-ը իր եղբորորդի, Բյուզանդա-Պարսկական II պատերազմի մեկ այլ մասնակից Հյուպատիոսի գլխավորությամբ Վիտալիանոսի դեմ մի խոշոր բանակ շարժեց, որի կազմում նաև Հայ ռազմիկներ կային, սակայն Սև ծովի հյուսիս-արևմտյան ափին գտնվող Օդյուսոսի ճ-մ-ում Վիտալիանոսի բանակը, անակնկալի բերելով հակառակորդին, խոշոր հաղթանակ տարավ: Դրանից հետո կայսերական կառավարական բանակն, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ, իսկ ինքը՝ անհաջողակ զորավար Հյուպատիոսը, գերվեց, զգալի ժամանակ փակված մնաց խոզանոցում և հետագայում միայն մեծ փրկագնի դիմաց բաց թողնվեց[1]:

Նույն այս ժամանակ իրենց հերթին, օգտվելով Վիտալիանոսի ապստամբությունից, ոտքի կանգնեցին նաև հայերը և նույն 514 թվականի ամռանը բռնկվեց Սատրապական Հայաստանի III ապստամբությունը (514), որը հնարավոր եղավ հանդարտեցնել միայն այն բանից հետո, երբ 514 թվականի աշնանը ինչ-որ տեղ Սատրապական Հայաստանում տեղի ունեցած ճակատամարտում կառավարական բանակը ապստամբների նկատմամբ ռազմական հաղթանակ տարավ[2]: Ապստամբության պատճառներն ու նախապայմանները, սակայն, ինչպես նաև ապստամբական տրամադրությունները նույն այդ Սատրապական Հայաստանում գտնվող հայերի շրջանում դրանից հետո շարունակեցին գերիշխող մնալ և դա իրեն զգացնել էր տալու նաև հետագայում:

Ինչ վերաբերում է Վիտալիանոսին, ապա նա, ըստ էության բաց թողնելով հարմար պահը, անմիջապես չզարգացրեց հաջողությունը և միայն 515 թվականի աշնանն էր, որ մոտեցավ Կոստանդնուպոլսին: Ապստամբները նախատեսում էին քաղաքը գրավել ցամաքային և ծովային համակցված հարվածով, սակայն կառավարական բանակի դեմ մարտերում նրանք զգալի անհաջողություններ կրեցին, հատկապես ծանր կորուստներ կրելով ծովի վրա կառավարական նավատորմի կողմից կիրառվող կրականետների հաջող կիրառման արդյունքում, ինչից հետո անկանոն կերպով հետ քաշվեցին[3]: Այս դեպքերից կարճ ժամանակ անց կառավարական բանակն իր հերթին փորձեց զարգացնել հաջողությունը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

515 աշուն – ***<u>Օդյուսոսի ճ-մ</u>***[4]

Կիրիլի գլխավորած Բյուզանդական կայսրության կառավարական բանակը

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 7, գլուխ 13, գիրք 8, գլուխ 2; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 43; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 89:

[2] Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», Հավելված; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[3] Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 43; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 89; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[4] Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 43; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 89:

(մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) մոտեցան Վիտալիանոսի գլխավորած ապստամբներին (մոտ 70.000, այդ թվում բուլղարներ, սլավոններ ու սաբիրներ): Կողմերը մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Վիտալիանոսի և Կիրիլի բանակներն անցան հանդիպակաց հարձակման: Բռնկվեց համառ մարտ, ինչի արդյունքում Կիրիլի բանակն ի վերջո հետ քաշվեց քաղաք:

II փուլ – Նույն գիշեր էլ Վիտալիանոսին հաջողվեց կաշառել քաղաքի պահապաններին, որից հետո վերջինիս բանակը անակնկալ հարձակումով մտավ քաղաք և գրավեց այն՝ ծանր պարտության մատնելով կառավարական բանակին:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 800 զինվոր:

Նախորդ ճակատամարտից հետո հաստատվեց ուժերի հավասարակշռության անկայուն մի վիճակ: Արդյունքում, որոշ ժամանակ անց փոխադարձ զիջումներով հաշտություն կնքվեց և ապստամբությունը վերջացավ: Ապստամբները ցրվեցին, իսկ ներման արժանացած Վիտալիանոսը վերադարձավ Կոստանդնուպոլիս:

Գլուխ 26
Սաբիրական վտանգի սանձումը

515 թվականի աշնանը, Կոստանդնուպոլսի ուղղությամբ կազմակերպված վճռական հարձակման հետ միասին, Վիտալիանոսին հաջողվել էր ոտքի հանել նաև սաբիրներին, որոնք շուտով շարժվեցին կայսերական փոքրասիական տիրույթների ուղղությամբ: Արդյունքում՝ 515 թվականի աշնանից մինչև 516 թվականի գարուն Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժած ու Աղվանք-Իբերիա-Կոլխիդա-Փոքր Հայք-Անդրեփրատյան Ծոփք-Կապադովկիա երթուղով արշաված Սաբիրական թագավորության բանակը ասպատակեց Սատրապական Հայաստանը և Կապադովկիան, որից հետո, լիացած ավարով, նույն երթուղով նահանջեց[1]: Փաստորեն կյանքը ցույց տվեց, որ սաբիրական վտանգը էական էր ոչ միայն Պարսից թագավորության, այլ նաև Բյուզանդական կայսրության համար, ինչը ոչ մի կերպ չպետք է աչքաթող արվեր:

Սաբիրական հիմնական հարվածին, սակայն, այնուհանդերձ ենթակա էր Պարսից թագավորությունը և ահա 517 թվականին սաբիրները կրկնեցին այն, երբ Դերբենդի լեռնանցքից ներխուժած Սաբիրական թագավորության բանակը ասպատակեց Փայտակարանը ու Աղվանքը և այդ տարածքները որոշ ժամանակ գցեց իր տիրապետության տակ[2]: Իրավիճակը պահանջում էր կտրուկ միջոցներ, որոնք էլ ի վերջո ձեռնարկվեցին Կավատ I-ի կողմից: Արդյունքում՝ նույն 517 թվականին Ուտիք նահանգի Ռոտ-Պայկան գավառի արևելքում գտնվող Բայլական քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հայոց մարզպան Վարդ Մամիկոնյանին (505-514) հաջորդած Մժեժ Գնունու (514-548) գլխավորած Հայկական բանակը Սաբիրական թագավորության բանակի նկատմամբ խոշոր հաղթանակ տարավ և հերթական անգամ հետ շպրտեց վերջինիս[3]:

Հայոց մարզպանի շահած այս հաղթանակը, որը Գնունյաց իշխանին մեծ հեղինակություն բերեց, զգալիորեն սահմանափակեց սաբիրների հետագա ագրեսիվ նկրտումները, երբ վերջիններս պաշտոնական Տիզբոնի հետ դրանից հետո գերադասում էին արդեն որոշակի դաշնակցային հարաբերություններ հաստատել: Արդյունքում, ի հավաստումն կնքված փխրուն հաշտության, սաբիրական մի ջոկատ տեղակայվեց Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածքում: 521 թվականին, սակայն, Բայլականի մոտ տեղակայված սաբիրական 20.000 հոգանոց օժանդակ բանակին կասկածելով

[1] Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 3, գլուխ 43; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 77:
[3] Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 77: Այս մասին հնարավոր է հայտնում է նաև Դիոնիս Տել-Մահրացին:

դավաճանության մեջ, Պարսից թագավորության բանակը (12.000) գիշերային անակնկալ հարձակումով ոչնչացրեց վերջինիս[1]՝ վերջնականապես մաքրելով Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած տարածքները տափաստանային գիշատիչներից: Դրանից հետո, քիչ թե շատ կայունացնելով իրավիճակը հյուսիսում՝ Կավատ I-ը ձեռնամուխ եղավ ամրությունների մի հզոր համակարգի կառուցմանը, ընդ որում առժամանակ, չկարողանալով ամրացնել բուն Դերբենդի լեռնանցքն իր հին ամրոցի տեղում, արյաց արքան սահմանափակվեց նրանով, որ ամրությունների մի ամբողջ շարան ստեղծեց Կուր գետի ափերի երկայնքով՝ բուն Դերբենդ ամրոցի ամրացումը հետաձգելով ավելի լավ ժամանակների:

Գլուխ 27
Հուստինոս I-ը և Հուստինիանոսի թռիչքի սկիզբը

518 թվականի հունիսի լույս 10-ի գիշերը ութսունութնամյա Անաստաս I-ը մահացավ, որից հետո, ճնշելով իր հակառակորդների մի քանի ելույթներ, կայսրության գահին բազմեց նրա պահակազորի վաթսունութնամյա հրամանատար Հուստինոսը՝ Հուստինոս I -ը (518-527): Նոր կայսրը, որը որպես հասարակ մի զինվորական իր գործունեությունը սկսել էր դեռևս Լևոն I-ի ժամանակներից, մասնակցել էր վերջին տասնամյակներում ծավալված բոլոր հիմնական իրադարձություններին, այդ թվում նաև Բյուզանդա-Պարսկական II պատերազմին, ինչպես նաև Վիտալիանոսի դեմ մղվող պայքարին: Չնայած սրան, սակայն, Հուստինոս I-ը բացարձակ անգրագետ և որևէ կրթություն չստացած մի անձնավորություն էր, որը նույնիսկ գրել իսկ չգիտեր: Միաժամանակ նաև, լինելով քաղկեդոնական, Հուստինոս I-ն իր վարած կրոնական քաղաքականությամբ իր դեմ հանեց արևելյան քրիստոնյաներին, որոնք միաբնակությանը հակված Անաստաս I-ի օրոք իրենց բավականին ազատ էին զգում: Այս ամենը բերեց խառն և անկայուն դրության՝ հատկապես կայսրության արևելյան պրովինցիաներում: Եվ վերջապես պետք է նշել, որ տարիքով արդեն բավականին առաջացած Հուստինոս I-ի օրոք երկրի իրական կառավարումն աստիճանաբար իր ձեռքը վերցրեց նրա երիտասարդ քրոջորդի Հուստինիանոսը՝ ապագա այդ ակնառու կայսրը:

Արևելքում Կավատ I-ի հետ հարաբերությունները Հուստինոս I-ը վարում էր ընդգծված զգուշավորությամբ, երբ երկու տիրակալների հարաբերությունները փայլում էին իրենց հազվադեպ ջերմությամբ, իսկ Արևմուտքում էլ վերջինս փորձում էր քայլ առ քայլ պաշտոնական Կոստանդնուպոլսի ազդեցությանը ենթարկել աստիճանաբար թուլացող Օսթգոթական թագավորությանը: Միաժամանակ, սակայն, ռազմաքաղաքական իրական կամ էական որևէ ձեռնարկում այս կայսրը այդպես էլ չիրականացրեց, եթե, իհարկե, հաշվի չառնենք 520 թվականին կազմակերպված և արդեն, կարծես թե, ներում ստացած Վիտալիանոսի սպանությունը, որի դրդիչը, այդ թվում նաև, նրա քրոջորդի Հուստինիանոսն էր: 520-ական թվականներին վիճակված էր փոփոխությունների և յուրօրինակ ու նոր մի դարաշրջանի սկիզբ հանդիսանալ Եվրասիայի համար, ինչն էլ հաշվի առնելով կարծում եմ, որ ավելորդ չի լինի մի պահ կանգ առնել և ընդհանուր մի հայացք գցել ուժերի ստեղծված դասավորության վրա՝ շարժվելով արևելքից արևմուտք:

Գլուխ 28
Տարածաշրջանային նոր իրողությունները, Հյուսիսային Բագրատունիների հիմնախնդիրը և Հյուսիսային Բագրատունիների առաջին սերունդը

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 17; Անանուն «Զատկական ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 90; Բալազորի «Երկրների նվաճումների գիրք»; իբն ալ-Ասիր «Լիակատար պատմություն»; Յակուտ ալ-Համավի «Աշխարհագրական բառագիրք»:

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Հեփթաղական թագավորության լավ ժամանակներն արդեն աստիճանաբար մնում էին անցյալում: Իրոք, հյուծիչ պայքարի մեջ ներքաշվելով Հնդկաստանի տարածքում մղվող թեկուզ և հաղթական մարտերում, այս թագավորությունն աստիճանաբար ավելի ու ավելի քիչ հնարավորություններ էր ունենում իր սահմանների արևմուտքում ագրեսիվ քաղաքականություն վարել Պարսից թագավորության նկատմամբ, ընդ որում հետագայում վիճակն ավելի էր բարդանալու, իսկ թագավորության թուլացման գործընթացն էլ արդեն աստիճանաբար անդառնալի բնույթ էր ընդունելու:

520-ականների սկզբին նոր դարաշրջան էր մուտք գործում նաև Պարսից թագավորությունը: Կավատ I-ը, ի վերջո կայունացնելով իրավիճակը սեփական թագավորությունում և զարգացման մեծ ուժ հաղորդելով վերջինիս, իր կյանքի մայրամուտին երկրի կառավարման ղեկին ավելի ու ավելի էր մոտ թողնում սեփական որդի Խոսրովին, որն ինքնին աչքի ընկնող մի անձնավորություն էր և որի հետագա կառավարման ժամանակաշրջանը Պարսից թագավորության պատմության մեջ կազմելու էր յուրօրինակ մի դարաշրջան: Այս առումով հատկանշական է, որ, եթե Պարսից թագավորությունում, աստիճանաբար փոխարինելով ծերացող հորը, առաջին դերերի վրա էր գալիս վերջինիս երիտասարդ որդի Խոսրովը, ապա Բյուզանդական կայսրությունում էլ գործնականում նույն դերն էր իրականացնում նաև Հուստինիանոսը՝ աստիճանաբար փոխարինելով քաղաքական ասպարեզից հեռացող իր ծերացող քեռուն:

Իր հերթին, մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում նոր դարաշրջանի շեմին էր կանգնած նաև Բյուզանդական կայսրությունը: Իրոք, հետևում թողած գերմանական հետքը կրող խառը ժամանակները՝ կայսրությունը պատրաստվում էր մուտք գործել իր որոշակիորեն հակասական, բայց այնուհանդերձ ամենափայլուն դարաշրջաններից մեկը, որը նշանավորվելու էր նոր կայսեր ակնառու կառավարմամբ: Փաստորեն Առաջավոր Ասիայի երկու գերտերությունների ղեկին հայտնվում էին անձիք, որոնք սեփական պետությունների պատմության մեջ իրենք իրենցով իսկ մի ամբողջ դարաշրջան էին նշանավորելու՝ այնտեղ թողնելով սեփական անջնջելի հետքը: Քննարկվող ժամանակաշրջանում հետաքրքիր զարգացումներ էին տեղի ունենում, սակայն, նաև հայերի ու վրացիների մոտ:

Իրոք, նախորդ հարյուրամյակում ունեցած փայլուն դերակատարությունից հետո Մարզպանական Հայաստանում մի պահ, կարծես թե, համեմատականորեն հետին պլան էին մղվել Մամիկոնյանները՝ մարզպանի պաշտոնը զիջելով պարսից արքունիքում մեծ ազդեցության հասած Գնունիներին, ի դեմս մարզպան Մժեժ Գնունու: Առաջատար այլ տոհմերը մեծ հաշվով փակված էին իրենց տիրույթներում և այս պարագայում ուշագրավ է, թերևս, միայն Բագրատունիների առաջխաղացումը, ինչի մասին անհրաժեշտ է մի քանի խոսք ավել ասել:

523 թվականին Իբերիայի թագավորության արքա Դաչին գահընկեց արվեց, իսկ Իբերիայի թագավորությունը և այնտեղի հատկապես կենտրոնական իշխանությունն էլ կտրուկ թուլացան: Արդյունքում՝ արդեն Դաչիի որդի Բակուր IV-ը (523 - մոտ 540) Պարսից թագավորության ահագնացող ճնշման պայմաններում, ըստ էության, զրկված էին որևէ իրական իշխանությունից: Միաժամանակ, սկսած արդեն նույն Բակուր IV-ի կառավարման սկզբից, պաշտոնական Կոստանդնուպոլիսն և Տիզբոնը սկսեցին ավելի ու ավելի մեծ տեղ հատկացնել Տայք և Գուգարք նահանգներում հսկայական կալվածքների տեր Բագրատունիներին՝ ձգտելով, ի դեմս նրանց ոչ միայն ուղղորդել Իբերիայի թագավորության վերջին արքաների դեմ հանդես եկող կենտրոնախույս ուժերին, այլև՝ Բագրատունիների միջոցով վերջիններիս դեմ հզոր մի հակակշիռ ստեղծել: Այս պայմաններում, սկսած արդեն VI դարի սկզբներից, Բագրատունիները աստիճանաբար հասել էին մեծ հզորության՝ իրենց փաստացի ազդեցությունը տարածելով նաև Տայքից և Գուգարքից հյուսիս ընկած Վրաստանի տարածքների վրա, որտեղ սեփական արքաներից դժգոհ վրաց իշխանները ավելի շատ հակված էին ենթարկվել ոչ թե իրենցից

բարձր դիրք ունեցող միապետին, այլ, թեև իրենցից հզոր, սակայն այնուհանդերձ, ըստ էության, իրենցից յուրաքանչյուրին հավասար կարգավիճակ ունեցող Բագրատունիներին:

Սահակ Բագրատունու զոհվելուց հետո Բագրատունիների գլուխ կանգնեց վերջինիս եղբայր Սպանդիատը (482-505), որից հետո տոհմի ղեկավարման ղեկն իր ձեռքը վերցրեց Սահակի ավագ որդի[1] Բագրատը (505-515), որն ուներ վեց կրտսեր եղբայրներ: Դրանից հետո, համաձայն վրացական աղբյուրների, Բագրատն և իր երկու եղբայրները մնացին հորենական տիրույթներում, իսկ Գուրգեն-Գուարմը, Սահակը, Արշամը ու Վարազ-Վարդը 510-ական թվականների վերջերին շարժվեցին դեպի հյուսիս: Այստեղ Գուրգեն-Գուարմը ամուսնացավ Վախթանգ I Գորգասալի աղջկա հետ և, ըստ էության, հիմք դրեց Բագրատունիների հյուսիսային ճյուղին, որին այսուհետ կկոչենք Հյուսիսային Բագրատունիներ: Այսպիսով՝ Գուրգեն-Գուարմը (515-532) հանդիսացավ Հյուսիսային Բագրատունիների առաջին սերնդի նախահայրը: Արդեն 523 թվականին Բագրատունի եղբայրների գլխավորած Բագրատունյաց գունդը և տեղի վրացական աշխարհազորը հաղթեցին տեղի իշխան Բեզանի գլխավորած Պարսից թագավորության բանակին, ինչի արդյունքում Բեզանը սպանվեց, իսկ Սահակ Բագրատունին էլ դարձավ Կախեթիի իշխան՝ հիմք դնելով Բագրատունիների տոհմի Կախեթիում իշխող ճյուղին[2]: Փաստորեն արվեց առաջին քայլը բուն Վրաստանի նկատմամբ Բագրատունիների իշխանության հաստատման ուղղությամբ, ընդ որում Բակուր IV-ի իշխանության շարունակվող թուլացման պայմաններում այս գործընթացն աստիճանաբար թափ հավաքեց:

Գլուխ 29
Հուստինիանոս I-ը որպես ռազմաքաղաքական գործիչ

527 թվականի ապրիլի 1-ին, գործնականում արդեն լիովին մի կողմ քաշված երկրի կառավարման հարցերից, Հուստինոս I-ը համակայսր հռչակեց քրոջորդուն, իսկ նույն թվականի օգոստոսի 1-ին էլ կնքեց իր մահկանացուն: Դրանից հետո արդեն գրեթե չորս տասնամյակ Բյուզանդական կայսրության ղեկին կանգնեց այդ պահին դեռևս քառասունհինգամյա Հուստինիանոս I-ը (527-565):

Ծագումով լինելով հասարակ խավից՝ այս կայսրը, ի տարբերություն իր քեռու, մեծ խելքի և եռանդի տեր մի անձնավորություն էր, ընդ որում, դրան գումարած էլ նաև, վերջինս բարձր անձնական կարգապահություն ուներ՝ չէր տրվում հույզերին, ինչպես նաև կայսրերին բնորոշ ցոփ ու շվայտ կյանքին: Հուստինիանոս I-ի միակ հույզը և, կարելի է ասել՝ թուլությունը, նրա կին Թեոդորան էր՝ թեթև վարքի տեր երբեմնի այդ մերկապարուհին, որին Հուստինիանոսը սիրեց դեռ երիտասարդ տարիներին, երբ դեռևս կայսր չէր: Այս կնոջը Հուստինիանոս I-ն իր հավատարմությունը պահպանեց նաև կայսերական գահի վրա՝ նույնիսկ վերջինիս մահից հետո էլ չանելով այլ ընտրություն: Ակնառու այս կայսրը, սակայն, ուներ նաև թերություններ, որոնք ժամանակի հետ ավելի խորացան՝ Հուստինիանոս I-ը դոգմատիկության աստիճան համառ էր, առանձնապես չէր ձգտում նորարարությունների և, որ տվյալ պայմաններում ևս որոշակիորեն բացասական էր, մինչև հոգու խորքը տարված էր Հռոմեական կայսրության փառքի արդեն անցյալում մնացած հուշերով:

Իրոք, կայսերական գահին հասած Հուստինիանոս I-ը, ծագումով լինելով

---

[1] Վրաց սկզբնաղբյուրը, որ հայտնում է այս Բագրատի մասին, նրան ներկայացնում են որպես ազգությամբ հրեա ոմն Սողոմոնի որդի («Քարթլիս-Ցխովրեբա», Սմբատ Դավթորդի «Բագրատունյաց պատմություն»): Այս կապակցությամբ կարծում եմ, սակայն, որ վերջինս, ինչպես նաև նույն սկզբնաղբյուրում հիշատակվող իր վեց եղբայրները, եղել են հենց Հայոց մարզպան Սահակ Բագրատունու որդիները: Որպես ասվածի անուղղակի ապացույցներ կամ նույնիսկ ակնարկներ կարող է հանդիսանալ ամենից առաջ այն հանգամանքը, որ Մովսես Խորենացու հովանավոր Սահակ Բագրատունին համարվում էր իր ժամանակի իմաստուն և ամենակրթված մարդկանցից մեկը, ինչպես նաև այն, սա քննարկվող կոնտեքստում ոչ պակաս կարևոր է, որ հենց վերջինիս օրոք հիմք դրվեց նույն Մովսես Խորենացու մոտ արտահայտված այն տեսակետին, թե Բագրատունիները սերում են հրեաներից: Արդյունքում՝ կարծում եմ, որ «Սողոմոն» անունը այլաբանորեն կամ նույնիսկ մականվան մակարդակում ցույց է տալիս հենց նույն Սահակ Բագրատունուն:

[2] «Քարթլիս-Ցխովրեբա», Սմբատ Դավթորդի «Բագրատունյաց պատմություն»; Վախուշտի Բագրատունի «Սամցխեի և Կղարջքի կյանքը»:

կայսրության բալկանյան մասից, արդյունքում իր գերնպատակը հռչակեց ցանկացած գնով հասնել մի իրավիճակի, երբ Հռոմեական կայսրության հինավուրց սահմանները կամբողջանան: Այս հարցում դրսևորած համառությունը մի կողմից գովելի էր, բայց մյուս կողմից էլ այն ծանր անդրադարձավ կայսրության ընդհանուր վիճակի վրա, որը պատրաստ չէր իր ուժերից վեր այդ խնդրի իրագործմանը: Ավելին, այդպես էլ չկարողանալով ընկալել այն մեծ դերն ու նշանակությունը, որ կայսրության համար ունեին արևելյան տարածքները, ի դեպ, այդ հանգամանքի վրա մեկ անգամ չէ, որ Թեոդորան այնուհանդերձ հրավիրեց կայսեր ուշադրությունը, Հուստինիանոս Ի-ը, հույսը դրած դեռևս իր նախորդների օրոք ստեղծված պաշտպանական ամուր համակարգի, ինչպես նաև Պարսից թագավորության հետ ձեռք բերած պայմանավորվածությունների վրա, այս ուղղությամբ իրեն անփութության աստիճանի պասիվ էր պահում, ինչը զգալի ծանր հետևանքներ առաջացրեց:

Գլուխ 30
Բյուզանդա-Պարսկական III պատերազմը

520-ական թվականների երկրորդ կեսին կրկին սրվել էին հարաբերությունները Մերձավոր Արևելքի երկու գերտերությունների միջև, ընդ որում պատճառներն ինչքան հին էին, այնքան էլ սովորական՝ պարսկական կողմը պահանջում էր Կովկասյան լեռնանցքները հսկելու համար իրեն իբր թե հասանելիք ոսկին, իսկ բյուզանդական կողմն էլ, բնականաբար նվազագույն ցանկություն իսկ չունենալով վճարել, հետ էր պահանջում Մծբինը և հարակից տարածքները: Հարաբերությունների աստիճանական սրման ֆոնին բանը ի վերջո հասավ պատերազմի և արդյունքում արդեն 527 թվականի գարնանը, երբ կայսրության ղեկին արդեն, ըստ էության, հաստատվել էր Հուստինիանոս Ի-ը, բռնկվեց Բյուզանդա-Պարսկական III պատերազմը (527-532):

Այս անգամ ևս, ինչպես և նախորդ պատերազմի պարագայում, ռազմական գործողությունների սկիզբն ազդարարեցին մարտական գործողությունների ապագա թատերաբեմին առավել մոտ տեղակայված Լախմյան արաբները, որոնք, հնազանդ Կավատ Ի-ի կոչին, 527 թվականի գարնանը անցան Եփրատն ու ասպատակեցին Ասորիքը: Կարելի է կարծել, թե Կավատ Ի-ը նպատակ ուներ օգտվել Հուստինոս Ի-ի անկարողությունից և Կոստանդնուպոլսում ենթադրաբար սպասվող գահակալական հերթական գզվռտոցից, սակայն վերջինս ակնհայտորեն թերագնահատել էր Հուստինիանոսին և նրա քեռուն, իսկ այդ հանգամանքը Պարսից թագավորության համար արդյունքում մեծ բարդություններ առաջացրեց:

527 թվականի գարնանը՝ արաբների հարվածից կարճ ժամանակ անց, Հուստինոս Ի-ն ու Հուստինիանոսը ոտքի հանեցին իրենց մերձակա շրջապատին պատկանող լավագույն զորավարներին և անցան ակտիվ գործողությունների: Արդյունքում՝ ապագայում այդքան մեծ փառքի հասած Բելիսարիոսի, ինչպես նաև ազգությամբ հայ, Թեոդորայի քրոջ ամուսին Սիտտա Հայի ու Ատոմ Ակեացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) ասպատակեցին Աղձնիքը, Արզնը ու նրա շրջակայքը և նահանջեցին[1]: Դրանից հետո սկսվեցին բանակցություններ, որոնք, սակայն որևէ արդյունքի չհանգեցրին, քանզի զիջումների գնալ կողմերից և ոչ մեկը պատրաստ չէր, իսկ առկա խնդիրներն էլ մնում էին: Այսուհանդերձ կարելի է կարծել, որ պատերազմի նման սրընթաց սկիզբը որոշակի անակնկալ էր հենց պարսկական կողմի համար և հենց այս հանգամանքն էր, որ, չնայած տարածաշրջանում ուժերի որոշակի գերակշռությանը, համենայն դեպս գոնե ռազմական գործողությունների սկզբնական փուլում Կավատ Ի-ին զրկեց օպերատիվ նախաձեռնությունից, որն անցավ կայսրության կողմը:

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 8, գլուխ 5; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 17; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 12:

527 թվականի հուլիսին, փորձելով հերթական անգամ լուծել հաջողության ճանապարհին մի իսկական խոչընդոտ հանդիսացող Մծբինի խնդիրը, Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) ասպատակեցին այս քաղաքի շրջակայքը, սակայն ի վերջո նահանջեցին[1]: Նույն թվականի օգոստոսին Դեմոստրատոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000) Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) պաշարեցին Դարա ամրոցից մոտ 80 կմ արևելք գտնվող Թեբեթա ամրոցը, սակայն, մատնվելով անհաջողության, նահանջեցին՝ այդ ընթացքում ծարավից, հիվանդություններից և արևահարությունից կրելով ծանր կորուստներ[2]:

Սրանով կայսրության բանակի ակտիվությունն Արևելքում առժամանակ սահմանափակվեց, քանի որ կյանքը ցույց տվեց, որ, չնայած զգալի եռանդին, կայսրության ռազմական մեքենան արևելյան ուղղությամբ առայժմ այնուհանդերձ դեռևս որևէ կերպ ի վիճակի չէ մեծածավալ հարձակողական գործողություններ իրականացնել՝ պատրաստ չլինելով դրան ոչ նյութապես և ոչ էլ կազմակերպչական մակարդակում: Իրոք, կայսերական ռազմիկները, սովոր մարտական գործողությունների բալկանյան թատերաբեմին, իրենց վատ էին դրսևորում Արևելքում ընթացող մարտական գործողությունների գրեթե բոլոր ասպարեզներում՝ սկսած բնակլիմայական պայմաններին դժվար ընտելանալուց և վերջացած շարժուն ու յուրօրինակ հակառակորդի հետ ընդհարվելիս դրսևորած անպատրաստվածությամբ: Իր բացասական դերն էր խաղում նաև այն հանգամանքը, որ, արդեն մեկ ու կես դարից ավել արևելյան ճակատում զբաղված լինելով բացառապես միայն ռազմավարական պաշտպանությամբ, կայսերական բանակը չուներ ոչ միայն ռազմավարական հարձակում մղելու որևէ իրական փորձ կամ նույնիսկ ծրագիր, այլև վերջինիս չէին հերիքում նաև տարրական ամրացված կետերը, որոնց վրա հիմնվելով հնարավոր կլիներ առաջանալ դեպի հակառակորդի տարածքի խորքերը: 527 թվականի ամռանը, սակայն, մինչ երկու գերտերություններն իրենց ուժերն էին փորձարկում հարավում, պայթեց իրավիճակը նաև հյուսիսում:

Իբերիայի թագավորության տարածքում պարսից իշխանությունն, ըստ էության, երբեք էլ ամուր չէր եղել, սակայն այժմ, երբ Հայաստանի հյուսիսում և Կախեթիում ուժեղացել էին Բագրատունիները, պաշտոնական Տիզբոնի ազդեցությունը Վրաստանում ավելի էր թուլացել: Բագրատունիների կողմն էր անցել նաև տեղում ավանդականորեն կայսրության դաշնակիցը հանդիսացող Լազական թագավորությունը և արդյունքում Կավատ Ի-ի դեմ այստեղ բացահայտ մի ելույթ էր սկսվել: Ստեղծված պայմաններում արյաց արքային չէր մնում այլ բան, քան իր ուժերը շարժել ամենից առաջ հյուսիսային ուղղությամբ:

Արդյունքում՝ Պարսից թագավորության մի խոշոր բանակ (մոտ 70.000) շարժվեց Վրաստանի ուղղությամբ և սկիզբ առան մանր, բայց համառ մարտեր: Հայաստանի հյուսիսում ու Վրաստանում գործում էին Գուրգեն-Գուարմ Բագրատունու և նրա ազգական Պերանիոսի ընդհանուր ղեկավարությամբ գործող տեղական բանակը (մոտ 20.000, այդ թվում վրացիներ), Ստատիոսի գլխավորած Լազական թագավորության բանակը (մոտ 10.000), ինչպես նաև, որպես օժանդակություն, Գիլդերիխի, Կիրիկոսի և Իրենիայի գլխավորությամբ ժամանած Բյուզանդական կայսրության բանակն (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500): Հրամանատարների չհամաձայնեցված գործողությունների պատճառով, սակայն, այս ուժերը սկզբում անհաջողության մատնվեցին, բայց հետո, երբ օգնության հասան Պետրոս Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 1; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 17; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 12:
[2] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 1:

Հայ ռազմիկները (մոտ 1.000), հաջողության նժարը կրկին թեքվեց դաշնակիցների կողմը: Վերջնական հաջողությունը, սակայն, այնուհանդերձ եղավ պարսկական կողմում, քանզի, այն բանից հետո, երբ առաջացան Պարսից թագավորության բանակի հիմնական ուժերը, դաշնակիցներն ի վերջո նահանջեցին[1]: Պատերազմական այս փուլում, փաստորեն, Բագրատունիներին չհաջողվեց իրենց ազդեցությունը տարածել բուն Վրաստանի տարածքի նկատմամբ և այստեղ, զրկված արդեն որևէ իրական իշխանությունից և վերածված Պարսից թագավորության մի իսկական կամակատարի, շարունակեց կառավարել Բակուր IV-ը: 527 թվականի ռազմական իրադարձություններից կարիք կա հիշատակել նաև Թրակիայում բռնկված մարտերը, երբ նույն թվականի աշնանը արդեն գործող կայսեր Հուստինիանոս I-ի մորաքրոջ որդի Հերմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները հաղթեցին առաջխաղացում իրականացրած սլավոններին և անտերին[2]:

528 թվականի գարնանը, զգալով, որ ուժերի հավասարակշռությունը դանդաղ, բայց անշեղորեն անցնում է հակառակորդի կողմը, Հուստինիանոս I-ը ոտքի հանեց կայսրության ավանդական հակապարսկական դաշնակիցներին, ի դեմս սաբիրների, և ուղղեց վերջիններիս Իբերիայի թագավորության տարածքում գործող Պարսից թագավորության բանակի դեմ, սակայն Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժած ու Վրաստանը ասպատակելով արշաված Սաբիրական թագավորության բանակը տեղում գտնվող Պարսից թագավորության բանակի գործողությունների արդյունքում ի վերջո հետ մղվեց Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս[3]: Նույն այս ժամանակ հաջող չէին, սակայն, կայսրության գործերը նաև հարավում:

Իրոք, ինչ-որ տեղ հիմնավոր համարելով այն գաղափարը, որ նախորդ տարի Մծբինի ուղղությամբ իրականացրած իրենց առաջխաղացման անհաջողության գլխավոր պատճառներից մեկը ռազմավարական հենակետների բացակայությունն էր, կայսրության զորավարները նույն այս ժամանակ փորձ կատարեցին լրացնել այդ բացը և Դարա ամրոցից արևելք ու Մծբինից արևմուտք գտնվող տարածության վրա հերթական մի ամրություն կառուցել: Այս գործի համար իրենց ուժերն էին ի մի բերել նախորդ տասնամյակի մեծ ապստամբ Վիտալիանոսի որդի Բուզեսը իր եղբայր, Դամասկոսի դուքս Կուզեսի հետ միասին, Փյունիկիայի դուքս Պրոկլիանոսը, զորավար Սեբաստիանը, կոմիտ Վասիլ և նույնիսկ ինքը՝ Բելիսարիոսը՝ տեղում կենտրոնացնելով խոշոր մի բանակ, ընդ որում այս բանակին օգնության էր եկել նաև Տաֆարի (մոտ 520 - ուղ. 528) գլխավորած Ղաբալյանների թագավորության բանակը: Հակառակորդը, սակայն, ժամանակին տեղեկանալով իրականացվող աշխատանքների մասին, անցավ հակամիջոցների: Արդյունքում՝ արքայազն Քսերեքսի և Միհրանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (30.000) հարձակումով ու կեղծ նահանջի միջոցով նախապես փորված փոսերը գցելու շնորհիվ Մինդուռսի ճ-մ-ում (= Թանուրինի ճ-մ) (Մծբինից արևմուտք) ծանր պարտության մատնեց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 20.000, այդ թվում իսավրիացիներ ու գոթեր) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 4.000), ինչպես նաև Տաֆարի գլխավորությամբ վերջիններիս օգնության հասած Ղաբալյանների թագավորության բանակին (մոտ 4.000): Որպես արդյունք, մասնավորապես, Տաֆարը և Պրոկլիանոսը սպանվեցին, իսկ Կուզեսը, Սեբաստիանը ու Վասիլը գերվեցին, ընդ որում գերության մեջ հայտնված վիրավոր Կուզեսն էլ ի վերջո սպանվեց[4]: Ավելորդ էլ է ասել, որ հաղթողները անմիջապես վերացրին շինարարության բոլոր այն արդյունքները, որին մինչ այդ հասել էին քրիստոնյաները՝ իրարից զգալի տարածության մեջ միմյանց դեմ հանդիման հառնած թողնելով միայն մի կողմից սահմանային ամրացված քաղաք

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 12; Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 90:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 40:
[3] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[4] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 2; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 13; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:

համարվող Մծբինը, իսկ մյուս կողմից էլ՝ Դարա ամրոցը: Նույն այս ժամանակ հաջող չէին կայսրության գործերը, սակայն, նաև դանուբյան սահմանում:

V դարի վերջին մինչ այդ սաբիրների քոչվոր համադաշնության կազմում գտնվող արևելյան բուլղարները, այսպես կոչված «ուտուրգուրներ»-ը, արևմտյան բուլղարները, այսպես կոչված «կուտուրգուրներ»-ը, ինչպես նաև հենց այդ ժամանակ հյուսիսից դեպի հարավ իրենց շարժն ուժեղացրած սլավոնները սեփական տիրապետությունն էին հաստատել Մերձսևածովյան տափաստանի համապատասխանաբար արևելյան, կենտրոնական և արևմտյան մասերում: Դրա հետևանքով Սաբիրական թագավորության տիրապետությունը սահմանափակվել էր միայն Նախակովկասյան տափաստաններով և Վոլգայի հարավային հովտով մինչև Դոն, իսկ Դանուբից այն կողմ էլ կայսրության հարևանները դարձան ռազմատենչ բուլղարների երկու թագավորությունները և սրանց հետ որոշակիորեն կրտսեր դաշնակցի հարաբերությունների մեջ գտնվող սլավոնները: Բուլղարական երկու թագավորությունները և հատկապես Արևմտյանը սլավոններին ու սրանց առաջամարտիկները հանդիսացող անտերին, ինչպես իրենց ժամանակին հոները, դիտարկում էին որպես պատերազմի էժանագին մի միջոց, որը օգտագործում էին անխնա և ամենավտանգավոր տեղերում: Իրենց հերթին սլավոնները ևս, փորձ կատարելով այնուհանդերձ օգտվել ստեղծված իրավիճակից, ակտիվորեն մասնակցում էին բուլղարների արշավանքներին և կամ էլ, օգտվելով առիթից, երբեմն սեփական ուժերով էին ավարառուական նպատակներով ներխուժում անդրդանուբյան տարածքներ: Այս ամենը հարավ-արևմտյան ուղղությամբ ի վերջո բերեց սլավոնական ցեղերի մեծ տեղաշարժի, երբ նորահայտ այս ցեղերը ձգտելու էին զբաղեցնել մեծապես դեպի արևմուտք հեռացած գերմանական ցեղերի թողած համեմատականորեն ազատ տարածությունները նույն անդրդանուբյան տարածքներում և, հատկապես, Դանուբ գետի ստորին ու միջին հոսանքում: Ողջ այս գործընթացն իր հերթին ընդհարումների անսպառ մի դաշտ էր բացում դանուբյան սահմանում: Իրոք, եթե գերմանական ցեղերի հետ հարյուրամյակների երկարատև հարևանության ընթացքում հռոմեական, իսկ հետո արդեն նաև բյուզանդական քաղաքական ավանդույթը կարողացել էր խաղաղ համակեցության քիչ թե շատ ընդունելի մի վարվելաձև գտնել, ապա սլավոնների, ինչպես նաև բուլղարների և սրանց հետագայում հաջորդած տափաստանային այլ քոչվորների պարագայում այդ վարվելաձևն արդեն մեծապես չէր հաջողելու:

528 թվականի գարնանը Դանուբն անցած Արևմտյան Բուլղարական թագավորության և սլավոնների հետ Թրակիայի տարածքում ընթացած առաջին մարտերը կայսրության բանակին պարտություն արժեցան[1] ու, թեև հաջողության նժարը հետագայում որոշակիորեն թեքվեց դեպի Հուստինիանոս I-ի կողմը[2], սակայն հաջորդած մարտերում կայսրության բանակն այնուհանդերձ վերջնական անհաջողության մատնվեց[3] և հարձակվողները մեծ ավարով դարձան իրենց տեղերը: Դանուբյան սահմանում բարդացած իրավիճակը ոչ մի հնարավորություն չէր տալիս կայսրությանը համալրել Արևելքում գործող իր բանակը, իսկ այս հանգամանքն իր հերթին գոնե առժամանակ բացառում էր որևէ ակտիվության հնարավորություն՝ տեղ թողնելով միայն տեղային մարտերի համար:

Իրոք, 528 թվականի աշնանը Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200), ինչպես նաև Գասանյանների և Կինդյանների թագավորությունների միացյալ բանակը (մոտ 15.000), հետապնդելով Մունդիր II-ի (512-554) գլխավորությամբ Հարավային Ասորիքը ասպատակած ու դեպի հարավ-արևելք նահանջող Լախմյանների թագավորության բանակին (30.000), ասպատակեցին Հյուսիսային Արաբիան և Հարավ-արևմտյան Միջագետքը, որից հետո, առանց լուրջ մարտերի գրավելով ու ավերելով 4 ամրոց, ավարով նահանջեցին[4]:

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[4] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

Փաստորեն, ինչպես և առաջ, մարտական գործողություններն առայժմ հիմնականում մղվում էին երկու գերտերություններին ենթակա դաշնակից արաբական ուժերի միջև ու շնորհիվ դրանց: Իրոք, թեև Հուստինիանոս Ի-ը զբաղված էր դանուբյան սահմանով, սակայն նույն այդ ժամանակ հեշտ չէր դրությունը նաև Պարսից թագավորությունում:

Խնդիրը կայանում էր նրանում, որ սեփական թագավորության սկզբնական տարիներին, ինչպես արդեն ասվեց, մեծ տեղ տալով մազդակյաններին և սրանց ավերիչ գործունեության արդյունքում մեծապես ուժեղացնելով արքայական դիրքերը, իր գահակալության վերջին շրջանում Կավատ Ի-ն արդեն մեծապես սկսել էր նեղվել նույն այդ մազդակյաններից: Մազդակյանների ամենաթողությունը, ինչպես կրկին ասվեց, սահմանափակվել էր դեռևս 499 թվականին, սակայն դրան հաջորդած երեք տասնամյակներում Մազդակի ու նրա հետևորդների ազդեցությունը ևս երկրում մնացել էր չափազանց ուժեղ: Ավելին, արդեն պարզ էր, որ Կավատ Ի-ի տարիները հաշված են, իսկ այդ պարագայում գահի ամենահավանական թեկնածուն մնում էր մազդակյանների ջերմեռանդ պաշտպանը հանդիսացող նրա ավագ որդի Կավուսը: Իրավիճակը վաղուց էր ստիպում գործել, բայց կայսրության հետ սկիզբ առած պատերազմը հետաձգեց վճռական հարվածը: 528 թվականին, սակայն, երբ Հուստինիանոս Ի-ի բոլոր ուժերը շեղված էին դանուբյան սահմանի ուղղությամբ և Արևելքում որևէ լուրջ ռազմական գործողություն չէր սպասվում, Կավատ Ի-ի համոզմամբ եկավ գործելու ամենահարմար ժամանակը, ընդ որում արյաց արքան գործեց ինչքան դաժան, այնքան էլ վճռական:

Վերջին տասնամյակներում պարսից հասարակությունում երբեք էլ չէին դադարել կրոնական վեճերը և, չնայած մազդակյանների ակնառու հաջողություններին, զրադաշտական մոգերը շարունակում էին պնդել իրենց տեսակետների ուղղությամբ: Արդյունքում, կարծես թե, նպատակ ունենալով ի վերջո սկիզբ դնել կրոնական յուրօրինակ մի երկխոսության, 528 թվականի կեսերին արյաց արքան Մազդակի իսկ գլխավորությամբ Տիզբոնում հավաքեց մազդակյանների բոլոր ակնառու առաջնորդներին, որից հետո նախապես որոշված օրը Կավատ Ի-ի պալատում պետք է սկսվեր նախատեսվող բանավեճը զրադաշտական մոգերի հետ: Սկիզբը հայտնի էր բոլորին, սակայն նախապատրաստվող միջոցառման վերջի կապակցությամբ իրերի իրական դրությունը գիտեին միայն Կավատ Ի-ը և նրա երրորդ որդի Խոսրովը, որոնց հրամանով էլ, առանց խորանալու կրոնական նրբությունների մեջ, Կավատ Ի-ի արքունիք հրավիրված Մազդակն ու նրա կողմնակիցները արդյունքում անմիջապես ձերբակալվեցին:

Մազդակի հետ իր հին ու անձնական բնույթի հաշիվներն ուներ հատկապես արքայազն Խոսրովը, քանզի իր ժամանակին, երբ մազդակյանների ամենաթողության դեմ անուժ էր նույնիսկ արյաց արքան, Մազդակի հրամանով Խոսրովի մորը պատրաստվում էին հանրայնացնել, ինչպես մազդակյաններն այդ ժամանակ վարվում էին այլ կանանց հետ, և արդյունքում միայն մեծամեծ աղաչանքներից ու այն բանից հետո, երբ Խոսրովն ինքն անձամբ համբուրեց Մազդակի կոշիկները, Խոսրովի մայրը փրկվեց: Պատմում էին, թե, Խոսրովի իսկ խոսքերի համաձայն, նա մինչև կյանքի վերջն էլ ի վիճակի չէր մոռանալ այդ ստորացումը և, որ ինքնին հատկանշական է, Մազդակի կոշիկների հոտը, իսկ այս պարագան պարսից արքայազնին այժմ արդեն բոլոր հիմքերը տալիս էր մազդակյանների նկատմամբ անողոք լինել:

Այսպես թե այնպես, սակայն մազդակյանների աչքի ընկնող առաջնորդներին դաժան վերջաբան պատուհասեց, քանզի ձերբակալվելուց հետո նրանք կենդանի վիճակում թաղվեցին հողի մեջ, դե իսկ Մազդակի հետ էլ վերջինիս մահապատժից առաջ Խոսրովն ինքը գերադասեց մի փոքր զվարճանալ անձնապես՝ ծակծկելով վերջինիս աղեղից արձակված նետերի թույլ հարվածներով: Ինչ վերաբերում է Կավուսին, ապա իր աջակիցներից զրկված այս արքայազնը դիմեց փախուստի և մի պահ նույնիսկ իրեն արյաց արքա հռչակեց, սակայն, զրկված ամեն ինչից և լքված բոլորի կողմից, շուտով բռնվեց ու մահապատժի ենթարկվեց: Այսպիսով՝ նույն 528 թվականին, երբ

Հուստինիանոս Ի-ը թաղված էր դանուբյան ճակատում առաջացած հոգսերի մեջ, Պարսից թագավորությունում վերջնականապես լուծվեց ներքին անկայունության մշտական աղբյուր հանդիսացող մազդակյանների հիմնախնդիրը և այս թագավորությունը վերջնականապես ոտք դրեց կայուն զարգացման ճանապարհին: Պետք է ասել, սակայն, որ նախորդ տարվա հոգսերը դեռևս իրենց հետք թողեցին 529 թվականի վրա և այդ տարում իրավիճակը ճակատում որևէ էական փոփոխություն չկրեց: Ակտիվ էին գործում, ըստ էության, միայն արաբները, երբ նախորդ տարի որոշակի անհաջողության մատնված Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների և Պարսից թագավորության միացյալ բանակը նույն թվականի մարտի վերջին ասպատակեց Ասորիքի արևմուտքն ու Անտիոքի շրջակայքը, սակայն ի վերջո, խուսափելով Բյուզանդական կայսրության առաջխաղացող բանակից, նահանջեց[1]: Հաջորդ տարի, սակայն, իրավիճակը հիմնովին փոխվեց և մարտական գործողությունների ակտիվությունը կտրուկ մեծացավ:

Իրոք, 530 թվականին, կարծես ի մի բերած նախորդ տարիներին կրած անհաջողության դասերը, Բյուզանդական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները ի վերջո կարողացան ծանր պարտության մատնել հերթական անգամ Թրակիա ներխուժած Արևմտյան Բուլղարական թագավորության բանակին ու սլավոններին[2], որից հետո դանուբյան ճակատում իրավիճակն առժամանակ կայունացավ: Այս հանգամանքը Հուստինիանոս Ի-ին իր հերթին թույլ տվեց բալկանյան ճակատում գործող բանակային ուժերի գոնե մի մասը, այդ թվում նաև զգալի քանակությամբ գերված ու կայսրության բանակում ծառայության անցած բուլղար և սլավոն ռազմիկների, տեղափոխել արևելյան ճակատ ու համալրել այստեղ գտնվող բանակը, մանավանդ որ, դատելով ըստ ամենայնի, այստեղ լուրջ իրադարձություններ էին հասունանում: Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ կայսրության իշխանությունն Արևելքում նույն այս ժամանակ այնքան էր թուլացել, որ այստեղ իրենց սկսել էին ազատ զգալ նույնիսկ այնպիսի ուժեր, որոնք նախկինում որևէ ակտիվություն չէին դրսևորել:

Այսպես, 530 թվականի գարնանից սկսած ճաները (մոտ 3.000) բազում ավազակային հարձակումներ կազմակերպեցին Գուգարքի արևելյան, ինչպես նաև Տայքի ու Բարձր Հայքի հյուսիսային գավառների ուղղությամբ՝ ձեռք բերած խոշոր ավարով հեռանալով Ռիզոնի (Փոքր Հայք, Սև ծովի ափին, Տրապիզոնից մոտ 60 կմ արևելք) ուղղությամբ[3]: Արդյունքում՝ ահա, 530 թվականի հունիսին Սիտտա Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը մանր մարտերում հաղթեց ճաներին և ի վերջո ստիպեց նրանց խաղաղվել[4]:

Խաղաղեցնելով ճաներին՝ Բելիսարիոսի, Սիտտա Հայի և Ատոմ Ակեացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակն ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները ներխուժեցին Մարզպանական Հայաստանի տարածք, սակայն գրեթե անմիջապես էլ Ներսեհ, Հրահատ և Սահակ Կամսարականների գլխավորած Հայկական բանակը Բողաբերդի ճակատամարտում (Տայք, Բուա գավառ) ծանր պարտության մատնեց թշնամուն[5]: Կայսրության զորավարները անակնկալ անհաջողության էին մատնվել, սակայն այս հանգամանքը էական հետևանքներ չունեցավ, քանզի այս դեպքերից շատ կարճ ժամանակ անց Կամսարական եղբայրներն իրենք անցան կայսրության կողմը: Ավելին, շուտով Կամսարական եղբայրների, ինչպես նաև Արտավանես Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (50) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 45) անակնկալ գրոհով գրավեցին Բողաբերդը արդեն Պարսից թագավորության կայազորից (120), որը լիովին ոչնչացվեց, իսկ հետո էլ

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 15:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 15; Պրոկոպիոս Կեսարացի «Կառուցումների մասին», գիրք 3, գլուխ 6:
[5] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 12:

այս կարևոր ամրությունը հանձնեցին կայսրությանը[1]: Հիշատակված դեպքերից քիչ ժամանակ անց կայսեր հատուկ հրովարտակով Կամսարական եղբայրները տեղափոխվեցին Հարավային Եգիպտոս, որտեղ նրանց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները ասպատակեցին Եգիպտոսից հարավ տարածվող Բլեմիումի իշխանության տարածքը՝ վերացնելով տիրող ապստամբական տրամադրությունները[2]: Մինչ հյուսիսում զարգանում էին մեր կողմից նկարագրվող ու փոփոխակի հաջողությամբ ընթացող իրադարձությունները, սակայն, խոշոր զարգացումներ էին տեղի ունենում հարավում:

Այսպես, ի վերջո ի մի բերած ուժերը և ցանկանալով գոնե մի որևէ կերպ խափանել ամեն տարի Մծբինի վրա գալացող հարվածները, Կավատ I-ը նույն այս ժամանակ Պերոզ Միհրանյանի գլխավորությամբ Դարա ամրոցի դեմ մի խոշոր բանակ շարժեց, իսկ զգալի մեծության մի բանակ էլ Միհրան Միհրանյանի գլխավորությամբ ուղղեց դեպի Մինչեփրատյան Ծոփք: Թշնամու նախապատրաստությունների մասին ժամանակին տեղեկացած քրիստոնյաներն իրենց հերթին, ցանկանալով ամենից առաջ պահպանել Դարա ամրոցը, վերջինիսի մոտակայքում զգալի ուժեր կուտակեցին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

530 հուլիս – ***<u>Դարա ամրոցի ճ-մ</u>*** (Մծբինից 10 կմ արևմուտք)[3]

Պերոզ Միհրանյանի և Բարեսմանեսի գլխավորությամբ ***<u>Ամմուդիոս ամրոցից</u>*** (Դարա ամրոցից մոտ 80 կմ արևելք) առաջացած Պարսից թագավորության բանակը (70.000, այդ թվում կատիշներ, ինչպես նաև Մատյան գունդը) ու նրա կազմում Աղձնիքի բդեշխի գլխավորությամբ գործող Հայ ռազմիկները (մոտ 10.000) մոտեցան ամրոցին և պատրաստվեցին մարտի: Հայ ռազմիկները տեղավորեցին մարտակարգի աջ թևում և նրանց հրամանատարությունը ստանձնեց Աղձնիքի բդեշխը: Մյուս թևի ղեկավար նշանակվեց Բարեսմանեսը, իսկ կենտրոնի և ողջ բանակի հրամանատարությունը ստանձնեց Պերոզը:

Իր հերթին Արևելքի հրամանատար Բելիսարիոսի, ինչպես նաև Հերմոգենեսի, Բուզեսի, Հովհաննես Տրոգոլիտայի, Կիրիլի, Մարցելոսի, Հերմանոսի, Դորոթեոսի, էրուլների առաջնորդ Ֆարասի, բուլղարների առաջնորդներ Սունիկայի և Սիմմայի, ինչպես նաև նրանց օգնականներ Այգայի ու Ասկանոսի հրամանատարությամբ գործող Բյուզանդական կայսրության բանակը (25.000, այդ թվում 1.200 բուլղար, 300 էրուլ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) ամուր դիրքեր գրավեցին ամրոցի դիմաց՝ պատրաստվելով պաշտպանողական մարտ տալ: Կայսերական բանակի դիրքերն ուժեղացված էին կենտրոնում դեպի հետ գնացող հողաթմբով ու դրա վրա գտնվող ցցապարսպով, ընդ որում կենտրոնի ձախ ծայրում Սունիկայի և Այգայի գլխավորությամբ գտնվում էր բուլղարների ջոկատներից առաջինը (600 հեծյալ), իսկ մյուս ծայրում՝ Սիմմայի ու Ասկանոսի գլխավորությամբ գործող մյուս ջոկատը (600 հեծյալ): Ձախ թևի հրամանատարությունը ստանձնեց Բուզեսը, իսկ աջինն իրենց վրա վերցրին Հովհաննեսը, Կիրիլը, Մարցելոսը, Հերմանոսը և Դորոթեոսը: Կենտրոնը ղեկավարում էր Հերմոգենեսը, իսկ պահեստազորի և ողջ բանակի հրամանատարությունն իրականացնում էր Բելիսարիոսը:

I փուլ – Առաջին օրը կողմերը գրեթե ողջ օրը մարտակարգ ընդունած կանգնեցին իրար դիմաց, սակայն ոչ մեկը չցանկացավ նախահարձակ լինել: Միայն օրվա վերջում Պարսից թագավորության բանակի աջ թևը հարձակվեց

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 15, գիրք 8, գլուխ 8:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 19:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 13,14; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»:

հակառակորդի ձախ թևի վրա, սակայն կարճատև մարտից հետո հետ շպրտվեց՝ որպես սպանվածներ կորցնելով 7 ռազմիկի: Հաջորդ օրը անցավ անարդյունք վերջացած բանակցություններով, իսկ օրվա վերջում Պարսից թագավորության բանակը համալրվեց խոշոր ուժերով (10.000):

II փուլ – Երրորդ օրը կեսօրին Պարսից թագավորության բանակը մոտեցավ կայսերական բանակի ձախ թևին և, աղեղների հզոր հարված հասցնելուց հետո անցնելով հարձակման, ճեղքեց հակառակորդի շարքերը: Այդ վճռական պահին, սակայն, մինչ այդ կենտրոնից ձախ ու ձախ թևից ավելի հետ գտնվող բլրի հետևում դարանում տեղավորված Ֆարասի գլխավորած էրուլները, կենտրոնից դեպի ձախ թեքված Սունիկայի և Այգայի գլխավորած բուլղարները, ինչպես նաև նահանջը դադարեցրած կայսերական բանակի ձախ թևը մտան մարտի մեջ ու, համակցված հարված հասցնելով հակառակորդին և հետ շպրտելով վերջինիս, վերականգնեցին սեփական մարտակարգը: Այս մարտում միայն սպանված Պարսից թագավորության բանակը կորցրեց 3.000 ռազմիկ:

III փուլ – Պարսից թագավորության բանակը, վերախմբավորելով ուժերը և մինչ այդ կենտրոնում գտնվող Մատյան գունդը շարժելով դեպի սեփական ձախ թևը, պատրաստվեց հարված հասցնել կայսերական բանակի աջ թևին: Ի պատասխան դրա, ճիշտ գնահատելով իրավիճակը, Բելիսարիոսն իր հերթին Սունիկայի և Այգայի գլխավորած բուլղարներին կենտրոնի ձախ հատվածից տեղափոխեց դեպի աջ հատված՝ ուժեղացնելով Սիմմայի ու Ասկանոսի գլխավորությամբ այստեղ մինչ այդ տեղակայված բուլղարներին: Կենտրոնից և ձախ թևից վերցված այլ ուժերով ուժեղացվեց նաև կայսերական բանակի աջ թևը: Շուտով Պարսից թագավորության բանակի ձախ թևն անցավ հարձակման և Բարեսմանեսի անձնական ղեկավարությամբ հզոր հարված հասցրեց հակառակորդին: Արդյունքում՝ թշնամին այս անգամ ևս ճեղքեց կայսերական բանակի շարքերը, սակայն այս բեկումնային պահին կրկին մարտի մեջ մտան կենտրոնի աջ հատվածում գտնվող բուլղարները, որոնք այս անգամ ևս սեփական հետ քաշված աջ թևի հակահարձակման անցած ուժերի հետ միասին համակցված հարված հասցրին հակառակորդին: Արդյունքում՝ հակառակորդը ծանր կորուստներով հետ շպրտվեց, կայսերական բանակի մարտակարգը վերականգնվեց, իսկ մարտադաշտում Բարեսմանեսի հետ մենամարտում ընդհարված Սունիկան էլ հաղթեց ու սպանեց պարսից զորավարին: Այս մարտում միայն սպանված Պարսից թագավորության բանակը կորցրեց 5.000 ռազմիկ:

IV փուլ – Կայսերական բանակը անցավ հարձակման և սկսեց հետապնդել խուճապահար նահանջող հակառակորդին՝ որոշակի կորուստներ պատճառելով վերջինիս: Շուտով, սակայն, երկյուղելով հայտնվել դարանում, կայսերական բանակը դադարեցրեց հետապնդումը և վերադարձավ ելման դիրքեր:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցները՝ մոտ 4.000, պարտվողներից հայերը՝ մոտ 3.000, դաշնակիցները՝ մոտ 20.000 զինվոր, որոնց թվում զոհվեց նաև Բարեսմանեսը:

Դարա ամրոցի ուղղությամբ հասցված հարվածը պարսկական կողմի համար ակնկալվող արդյունքը չապահովեց, թեև նահանջելիս վերջինս այնուհանդերձ ոտնատակ տվեց հարակից որոշակի տարածքներ[1], սակայն ոչ բավարար եղան արդյունքները նաև մյուս բանակի պարագայում: Այսպես, 530 թվականի օգոստոսին Հայաստանի հրամանատար Դորոթեոսի գլխավորությամբ Սատաղից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) անակնկալ հարձակումով զգալի կորուստներ պատճառեցին Միհրան Միհրանյանի գլխավորությամբ Սատաղի ուղղությամբ առաջախաղացող

[1] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 3:

Պարսից թագավորության բանակին (մոտ 33.000, այդ թվում 3.000 սաբիրներ) ու Բաբիկ Սյունու որդի Վռամի (մոտ 485-491) եղբայր Վասակին (մոտ 491-505) հաջորդած Աճիրի (505 - մոտ 515) եղբայր Բաբկեն Սյունու (մոտ 515-535) գլխավորությամբ նրա կազմում գործող Հայ ռազմիկներին (մոտ 10.000), որից հետո հետ քաշվեցին Սատաղ[1]: Չնայած անհաջողությանը, սակայն, Միհրան Միհրանյանը որոշեց շարունակել առաջխաղացումը Սատաղի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

530 օգոստոս – ***Սատաղի ճ-մ***[2]

Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (30.000, այդ թվում սաբիրներ) և Բաբկեն Սյունու գլխավորությամբ նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 10.000) մոտեցան քաղաքին ու ճամբարեցին: Ի պատասխան դրա՝ Հայաստանի հրամանատար Դորոթեոսի գլխավորությամբ քաղաքում գտնվող Բյուզանդական կայսրության բանակը (15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 7.000) անցան համառ պաշտպանության՝ Սիտտա Հայի գլխավորությամբ մի ջոկատ (1.000) տեղավորելով դարանում՝ քաղաքի պարիսպներից դուրս ու թշնամու թիկունքում գտնվող բլուրներից մեկի հետևում:

I փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման, սակայն, չկարողանալով հաղթահարել պարիսպները, աստիճանաբար սկսեց հետ քաշվել:

II փուլ – Սիտտայի ջոկատը անակնկալ հարձակվեց հակառակորդի վրա, որը, բարձրացված փոշու պատճառով չկարողանալով պարզել վերջինիս թվաքանակը, սկսեց նահանջել:

III փուլ – Պարսից թագավորության բանակը մարտի մեջ մտցրեց նոր ուժեր և, օգտագործելով թվական գերակշռությունը, առժամանակ համառ դիմադրություն կազմակերպեց:

IV փուլ – Կայսերական բանակը, վերադասավորելով ուժերը և հերթական հարվածը հասցնելով հակառակորդին, վերջնական պարտության մատնեց վերջինիս, որը հետ քաշվեց ելման դիրքեր, իսկ հաջորդ օրն էլ, թողնելով քաղաքի պաշարումը, հեռացավ:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 2.000, պարտվողներից՝ հայերը՝ մոտ 3.000, դաշնակիցը՝ մոտ 6.000 զինվոր:

Այսպիսով՝ թերևս, կարող ենք փաստել, որ 530 թվականի համար երկար ժամանակ նախապատրաստվող ռազմական գործողությունները պաշտոնական Տիզբոնին այդպես էլ ոչ միայն որևէ հաջողություն չտվեցին, այլև առնվազն երկու զգալի պարտություն արժեցան: Այս պարագայում Կավատ I-ը կարող էր մխիթարվել, թերևս, միայն այն բանով, որ 530 թվականի աշնանը Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000, այդ թվում մեծաթիվ կատիշներ) հաղթեց Հայոց Միջագետք նահանգի Արվաստան գավառում՝ Տիգրիսի ափին գտնվող Մելբաշա վայրում, ապագա հարձակողական գործողությունների համար հերթական ամրությունը կառուցել փորձող Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000)՝ արդյունքում բնականաբար վերացնելով նաև մինչ այդ իրականացված շինարարության բոլոր արդյունքները[3]:

531 թվականին Մերձավոր Արևելքում հակամարտությունը շարունակող երկու գերտերություններն էլ պատրաստվում էին նոր քայլեր իրականացնել: Այսպես, ցանկանալով քայքայել հակառակորդի պաշտպանությունն ամենից առաջ ոչ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 15:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 15:
[3] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 5:

կանոնավոր պատերազմի միջոցով՝ Կավատ I-ը հերթական անգամ ոտքի հանեց Մունդիր II-ի գլխավորած Լախմյան արաբներին և Հազարաթեսի գլխավորությամբ գործող իր բանակի մի մասը: Իրենց հերթին, ոգևորված նախորդ տարվա ընդհանուր առմամբ հաջող արդյունքներից, Արևելքում գործող կայսերական զորավարներ նույն այդ տարի ևս նախատեսել էին Պարսից թագավորությանը խոշոր հարված հասցնել:

531 թվականի մարտի սկզբին Հազարաթեսի գլխավորած Պարսից (մոտ 20.000) և Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների (մոտ 6.000) թագավորությունների միացյալ բանակը ասպատակեց Կոմմագենեն, ինչպես նաև Կիննասրինի (Հալեպից մոտ 30 կմ հարավ-արևմուտք) ու Նիկեփորիոնի շրջակայքը՝ հետագայում հետ քաշվելով, ամրանալով Նիկեփորիոնի շրջակայքում և շարունակելով ասպատակությունները[1]: Տեղեկանալով թշնամու գործողությունների մասին՝ պատասխան գործողությունների անցավ նաև կայսերական բանակը, ընդ որում արդեն 531 թվականի մարտի կեսին Սունիկայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (4.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) Գաբբուլոնի ճակատամարտում անակնկալ հարձակումով զգալի կորուստներ պատճառեցին Հազարաթեսի ընդհանուր ղեկավարությամբ Եփրատի աջ ափով կրկին դեպի հյուսիս առաջխաղացած, ճամբարած և շրջակայքն ասպատակած Պարսից (մոտ 20.000) ու Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության (մոտ 6.000) միացյալ բանակին, որից հետո հետ քաշվեցին[2]: Զայրացած կրած անհաջողությունից՝ 531 թվականի մարտի վերջին Հազարաթեսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից (մոտ 16.000) և Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության (մոտ 5.500) միացյալ բանակը Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50) գրավեց Գաբբուլոնը[3], սակայն արդեն այս ժամանակ հասունանում էին վճռական իրադարձություններ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

531 ապրիլի 18-20 – ***<u>Նիկեփորիոնի ճ-մ</u>*** (= ***<u>Գաբբուլոնի ճ-մ</u>***)[4]

> Արևելքի հրամանատար Բելիսարիոսի, ինչպես նաև Հերմոգենեսի, թրակիացիների առաջնորդ նշանակված Դորոթեոսի, Բուզեսի քրոջորդի, Ամիդից ժամանած ուժերի հրամանատար նշանակված Աբրոսի դուքս Դոմենտիոլոսի, լիկոնիացիների առաջնորդ Մարցելոսի, իսավրիացիների առաջնորդներ Լոնգինոսի և Ստեփանիկոսի, բուլղարների առաջնորդներ Սունիկայի ու Սիմմայի, ինչպես նաև նրանց օգնականներ Այգայի և Ասկանոսի հրամանատարությամբ գործող Բյուզանդական կայսրության բանակը (20.000, այդ թվում 2.000 իսավրիացիներ, լիկոնիացիներ, թրակիացիներ, բուլղարներ), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000, այդ թվում Պետրոս Հայը), ինչպես նաև Գասանյանների թագավորության բանակը (մոտ 2.000), հետապնդելով Հազարաթեսի գլխավորությամբ Եփրատի աջ ափով դեպի հարավ նահանջող Պարսից թագավորության (15.000) ու Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության (5.000) միացյալ բանակին, ապրիլի 18-ի երեկոյան հակառակորդից ավելի դեպի հարավ ճամբար զարկեցին Նիկեփորիոնից հարավ ձգվող Եփրատ գետի այն հատվածում, որտեղ գետը, ի տարբերություն նախկինի, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք հոսելու փոխարեն մի կարճ տարածություն սկսում է հոսել հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք, ընդ որում կայսերական

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 17, 18:
[2] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[3] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 17, 18; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 4; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15:

բանակի զգալի ուժեր հետ մնացին:

Ապրիլի 19-ին կողմերը մարտակարգ ընդունեցին: Կայսերական բանակի թևերում տեղավորվեց հետևակը՝ ձախ թևում Սունիկայի և Սիմմայի գլխավորությամբ, իսկ աջում՝ Դորոթեոսի, Մարցելոսի, Լոնգինոսի ու Ստեփանիկոսի ղեկավարությամբ, ի դեմս նրանց հրամանատարության տակ գտնվող իսավրիցիների, լիկոնիացիների և թրակիացիների: Գասանյանների թագավորության բանակը ևս գտնվում էր աջ թևում: Կենտրոնում տեղակայվեց հեծելազորը, իսկ ողջ բանակն էլ ուժեղացված էր նետողական մեքենաներով: Կենտրոնի և ողջ բանակի հրամանատարությունն իր վրա վերցրեց Բելիսարիոսը: Հազարաթեսի բանակի աջ թևում, ավելի աջ ունենալով Եփրատ գետը, տեղաբաշխվեց Պարսից թագավորության, իսկ ձախ թևում՝ Լախմյանների թագավորության բանակը:

I փուլ – Արեգակը ծագելուն պես սկսվեց աղեղնամարտ, որը տևեց բավականին երկար, ընդ որում կայսերական բանակը, որը կիրառում էր նետողական մեքենաներ, առավելության հասավ և զգալի կորուստներ պատճառեց թշնամուն:

II փուլ – Պարսից թագավորության բանակը կեղծ հարձակում գործեց կայսերական բանակի ձախ թևի վրա, նպատակ ունենալով հրապուրել վերջինիս իր հետևից ու խառնել նրա մարտակարգը, սակայն հաջողության չհասավ:

III փուլ – Օրվա երկրորդ կեսին Լախմյանների թագավորության բանակը անցավ վճռական հարձակման և, արյունահեղ մարտում պարտության ու փախուստի մատնելով Գասանյանների թագավորության բանակին, իսկ հետո արդեն՝ իսավրիցիներին, լիկոնիացիներին ու թրակիացիներին, դուրս եկավ հակառակորդի կենտրոնի թիկունք: Այս մարտում Հազարաթեսի բանակից ընկան մասնավորապես Անդրազը, ինչպես նաև Լախմյանների արքայազն Նաամանը, իսկ կայսերական բանակից սպանվեցին մեծ խիզախություն դրսևորած Ասկանոսը, ինչպես նաև Լոնգինոսը: Ստեփանիկոսը վիրավորվեց, իսկ Դոմենտիոլոսը գերվեց: Միայն այս մարտում կայսերական բանակը կորցրեց 800 ռազմիկ:

IV փուլ – Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը, միաժամանակ հարված հասցնելով նաև թշնամու ձախ թևին, հարձակվեց վերջինիս կենտրոնի վրա, որի մի մասը դիմեց փախուստի, իսկ մյուսը մասը՝ շրջապատվեց:

V փուլ – Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը վերջացրեց հակառակորդի կենտրոնի շրջապատված մասի ոչնչացումը՝ վերջում նետաձիգների հզոր հարվածի տակ առնելով նաև Եփրատի ձախ ափն անցնելու նպատակով գետում հայտնված թշնամու ռազմիկներին: Այդ ընթացքում մարտի մեջ մտան Պետրոս Հայի գլխավորությամբ տեղ հասած կայսերական բանակի հետ մնացած ուժերը և, աջակցելով թիկունքով դեպի գետը դարձած ձախ թևին, պատրաստվեցին շարունակել դիմադրությունը:

VI փուլ – Հազարաթեսի բանակը հարձակման անցավ հակառակորդի ձախ թևի ուղղությամբ, սակայն այդ ընթացքում սկսեցին մարտադաշտ հասնել կայսերական բանակի հետ մնացած այլ ուժեր ևս, ինչը հնարավորություն տվեց վերջինիս, թեև ծանր կորուստներով, բայց դիմանալ մինչև մութն ընկնելը ու իր հերթին ծանր կորուստներ պատճառել հակառակորդին, ընդ որում Պարսից թագավորության բանակի երկու բարձրաստիճան իշխաններ սպանվեցին, իսկ Ամերդախին էլ, կտրելով ձեռքը, մենամարտում հաղթեց և գերեց Սունիկան:

VII փուլ – Մութն ընկնելուն պես Պարսից և Լախմյանների թագավորության միացյալ բանակը վերադարձավ ելման դիրքեր, իսկ կայսերական բանակը նահանջեց դեպի Եփրատի վրա գտնվող մի կղզի: Հաջորդ օրը, տեղաբաշխվելով Նիկեփորիոնից ուղարկված նավակներում վերջինս, այն բանից հետո, երբ Հազարաթեսի բանակը, թալանելով ընկածների հեռացավ, ինքն էլ իր հերթին

թալանելով ընկածներին, հեռացավ:

Հայերը կորցրին մոտ 900, դաշնակիցը՝ մոտ 9.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

Այսպիսով՝ դեպի հարավ շարժվելու փորձը կայսերական բանակի համար ավարտվեց անհաջողությամբ, ինչն ի չիք դարձրեց ընդհանուր առմամբ հաջող տեսք ունեցած 530 թվականի արդյունքները: Այս պայմաններում Հուստինիանոս Ի-ի համար միակ մխիթարությունը կարող էր լինել, թերևս, միայն թշնամու բանակի կրած զգալի կորուստների հանգամանքը, ինչպես նաև այն պարագան, որ վերևում նկարագրված դեպքերից մոտ մեկ ամիս անց Սիտտա Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) ասպատակեցին Աղձնիքը, Արզնը ու նրա շրջակայքը և նահանջեցին Սամոսատ:[1]

531 թվականի հունիսին Պարսից (մոտ 20.000) և Լախմյանների (մոտ 5.000) թագավորությունների միացյալ բանակը, միաժամանակ գրոհելով պարիսպները ու ներս խուժելով պարսպի տակ փորված թունելից, Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 200) գիշերային գրոհով գրավեց Հայոց Միջագետքում գտնվող Աբգարաշատը[2]: Այս դեպքերից մեկ ամիս անց, սակայն, հաջողություն կրկին թեքվեց կայսերական բանակի կողմը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

531 հուլիս – ***<u>Նիմֆիս բերդի ճ-մ</u>*** (Աղձնիք,Նփռետ գավառ Արևմտյան Տիգրիսի և նրա ձախ վտակ Քաղիրթի միախառնման վայրում)[3]

Տիգրանակերտի դուքս Բեսսասի գլխավորած Բյուզանդական կայսրության հեծելազորը (500 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200 հեծյալ) մոտեցան Գագարի ու վերջինիս քրոջորդի Հազկերտի գլխավորությամբ Տիգրանակերտին մոտեցած Պարսից թագավորության բանակին (6.000, որից 700 հեծյալ):

I փուլ – Կայսերական բանակը սրընթաց հարված հասցրեց հակառակորդի հեծելազորին, սակայն, զգալով, որ վերջինս շուտով աջակցության կարժանանա սեփական հետևակի կողմից, նահանջեց:

II փուլ – Կայսերական բանակը կրկին անցավ հարձակման և, կեղծ նահանջով առաջ քաշելով ու վերջնականապես հետևակից կտրելով հակառակորդի հեծելազորին, կտրուկ հակահարձակումով պարտության մատնեց վերջինիս:

III փուլ – Կայսերական բանակը, զարգացնելով հաջողությունը, հարված հասցրեց սեփական հեծելազորի հետևից հասնել փորձած և ձգված շարքերով տարածված հակառակորդի հետևակին՝ պարտության ու փախուստի մատնելով նաև վերջինիս: Այս և նախորդ մարտում Պարսից թագավորության բանակը կորցրեց 2.000 զինվոր, ընդ որում Գագարը սպանվեց, իսկ Հազկերտն էլ գերվեց:

IV փուլ – Փորձելով փրկվել հետապնդումից՝ Պարսից թագավորության բանակի ռազմիկները խուճապահար փախուստի մեջ սկսեցին անցնել Նիմֆիս գետի մյուս ափ, սակայն նրանցից շատերը խեղդվեցին գետի հորձանուտում: Իր հերթին, խուսափելով երկար տարածություն հետապնդել հակառակորդին, կայսերական բանակն ի վերջո հետ քաշվեց և ամրացավ Տիգրանակերտում:

Հայերը կորցրին մոտ 70, դաշնակիցը՝ մոտ 100, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[2] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[3] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 5; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:

Նույն այս ժամանակ հաջող էին նաև Դորոթեոսի գործերը, որի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000, այդ թվում իսավրիացիներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) 531 թվականի օգոստոսին ինչ-որ տեղ Սատաղի մոտակայքում պարտության մատնեցին լեգեոնական այդ բանակատեղիի ուղղությամբ հերթական անգամ առաջանալ փորձող Պարսից թագավորության բանակին (մոտ 8.000, այդ թվում կատիշներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 3.000)[1], որից հետո տիրեցին մի շարք ամրությունների[2], ընդ որում դրանցից մեկը գրավեցին սովի շնորհիվ, այն բանից հետո, երբ բերդի մոտ ժամանեց կայսերական սենեկապետ և հետագայում այնքան հայտնի դարձած Ներսես Կամսարականը՝ Կամսարական հայտնի երեք եղբայրների տոհմակիցը[3]: Այս ընթացքում փոփոխություն կրեց, սակայն, նաև կայսերական բանակի բարձր հրամանատարական կազմը, քանզի, մի կողմից դժգոհ Արևելքում ոչ այնքան հաջող վարած մարտական գործողություններից, իսկ մյուս կողմից էլ նպատակ ունենալով Բելիսարիոսին կիրառել Արևմուտքում ապագայում նախատեսվող գործողություններում, Հուստինիանոս Ի-ը վերջինիս ազատեց արևելյան բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնից և հետ կանչեց մայրաքաղաք, իսկ արևելյան բանակի հրամանատար էլ նշանակեց երկու հոգու՝ Սիտտա Հային հայաստանյան ուղղությամբ, իսկ Կոնստանտինոլին էլ՝ ասորիքյան, ընդ որում ընդհանուր հրամանատարությունը, որպես Արևելքի հրամանատար, պետք է իրականացներ Կոնստանտինոլը: Կրած անհաջողությունները, սակայն, իրենց հերթին ստիպեցին ի մի բերել ուժերը նաև պաշտոնական Տիզբոնին:

Արդյունքում՝ 531 թվականի սեպտեմբերի սկզբին Միհրան Միհրանյանի, Բավի Ասպահապետի ու Ադրգունդաբանդ Խանարանգեսի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) Տիգրանակերտի դուքս Բեսսասի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 1.000) պաշարեցին Տիգրանակերտը, սակայն, համառ գրոհներից հետո մատնվեցին անհաջողության: Միաժամանակ քաղաքը պաշարողներն արդեն ամսվա վերջին տեղեկացան նաև, որ նույն ամսվա սեպտեմբերի 13-ին իր մահկանացուն է կնքել Կավատ Ի-ը: Բացի այս վերջիններիս լուր հասավ նաև այն մասին, որ Սամոսատից Հայաստանի հրամանատար Սիտտա Հայի, իսկ Դարա ամրոցից էլ Արևելքի հրամանատար Կոնստանտինոլի գլխավորությամբ առաջացել ու քաղաքի մոտակայքում ուժերն են միավորել Գասանյանների բանակի կողմից ուժեղացված կայսերական բանակի խոշոր մասերը: Իր հերթին պարսից հրամանատարության հայտնի դարձավ նաև, որ սկիզբ են առել հաշտության բանակցություններ, իսկ Սաբիրական թագավորության բանակն էլ սկսում է իր առաջխաղացումը դեպի հարավ: Եվ վերջապես Տիգրանակերտի դուքս Բեսսասն և նրա օգնական Բուզեսը, չնայած քաղաքի թույլ ու արդեն վնասված պաշտպանական համակարգին, գործում էին ամենայն եռանդով, իսկ այս ամենն էլ, իր համակցության մեջ, զգալիորեն նվազեցրեց կայսրության դեմ պայքարող Պարսից թագավորության բանակի ռազմիկների եռանդը: Վերջին հանգամանքին գումարվեցին նաև սկսված ցրտերը և այս պայմաններում նույն թվականի դեկտեմբերի սկզբին Պարսից թագավորության բանակը թողեց Տիգրանակերտի պաշարումն ու նահանջեց[4]: Ի լրումն ողջ վերոգրյալի հարկ է նշել, սակայն նաև, որ Տիգրանակերտից Պարսից թագավորության նահանջին նպաստող բազում հանգամանքների մեջ իր կարևոր տեղն ուներ նաև գահակալական այն անկայուն վիճակը, որը Կավատ Ի-ի մահվանից հետո ստեղծվել էր Տիզբոնում:

Իրոք, Կավատ Ի-ին հաջորդել էր նրա երրորդ որդի, արդեն իսկ հիշատակված

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[2] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[3] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 21; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»:

քառասնամյա Խոսրովը՝ Խոսրով Ի-ը (531-579), որը ունենալով գահակալական որոշակի խնդիրներ, կոնկրետ այդ պահին ձգտում էր խաղաղության, որպեսզի կենտրոնանա ներքին խնդիրների լուծման վրա: Բանն այն էր, որ Կավուսի սպանվելուց հետո գահակալական որոշակի նկրտումներ էր դրսևորում հզոր ռազմիկի համբավ ունեցող Կավատ Ի-ի երկրորդ որդի Ջամասպը՝ մի հզոր զորական, որը, սակայն, մեկ աչքից կույր լինելու պատճառով, արիների հինավուրց սովորության համաձայն նույնիսկ տեսականորեն էլ չէր կարող հավակնել Պարսից թագավորության գահին: Այնուհանդերձ, ցանկանալով գոնե մի որևէ կերպ հասնել արյաց գահին, Ջամասպը, որպես գահի թեկնածու, առաջ էր քաշել իր մանկահասակ որդի Կավատի թեկնածությունը: Դավադիրները, որոնց թվում էին նաև Տիգրանակերտի մոտ գործող բանակի ղեկավարները, մտադիր էին սպանել հենց նոր գահ բարձրացած Խոսրով Ի-ին, սակայն դավադրությունը բացահայտվեց և այդ ամենից կատաղած արյաց նոր արքայի հրամանով ինչպես Ջամասպը, այնպես էլ նրա բոլոր կողմնակիցներն ու նրանց ընտանիքի անդամները սպանվեցին: Պատժիչ գործողություններին զոհ գնաց նաև Բավի Ասպահապետը, իսկ Միհրան Միհրանյանն ու Ադրգունդաբանդ Խանարանգեսն էլ, մեծապես շնորհազրկված, աքսորվեցին Պարսից թագավորության արևելյան տարածքներ: Միաժամանակ հարկ է նշել, որ Ադրգունդաբանդին հաջողվեց փրկել և իր հետ տանել նաև մանկահասակ Կավատին, որին հետագայում դեռ էլի էր վիճակված լինելու որոշակի դեր ունենալ երկու գերտերությունների հարաբերություններում:

Խոսրով Ի-ին հաջողվել էր բացահայտել դավադրությունը և կործանիչ հարված հասցնել նրա մասնակիցներին, սակայն այս ամենն այնուհանդերձ զգալի խառնաշփոթ էր առաջացրել երկրում ու բանակում, ինչի պայմաններում հաջող մարտական գործողություններ մղելու մասին խոսք իսկ գնալ չէր կարող: Արդյունքը եղավ այն, որ, ինչպես արդեն ասվեց, արյաց նոր արքան ևս, ինչպես և Արևմուտքի ուղղությամբ առաջանալ փորձող Բյուզանդական կայսրության կայսրը, սկսեց ձգտել խաղաղության: Այսպիսով՝ Պարսից թագավորության բանակը վճռականորեն հետ կանգնեց մարտական գործողությունները հետագայում շարունակելու մտադրությունից: Արդյունքում, սակայն, թեև կայսերական զորավարներն իրենք էլ առանձնապես չէին ձգտում ակտիվության, սակայն մարտական գործողություններն այնուհանդերձ մի որոշ ժամանակ շարունակվեցին և այդ ամենը սաբիրների շնորհիվ:

531 թվականի դեկտեմբերի կեսերից մինչև 532 թվականի հունվարի կես մինչ այդ պաշտոնական Տիզբոնի կոչով ոտքի ելած և Ալանաց դուռ լեռնանցքից ներխուժած Սաբիրական թագավորության խոշոր բանակը (մոտ 100.000), օգտվելով այն բանից, որ կայսերական ուժերը հետ են քաշվել Սամոսատ ու Դարա և ցրվել են ձմեռոցներում, ասպատակեց Սատրապական Հայաստանը ու Հյուսիսային Ասորիքը, սակայն ի վերջո, խուսափելով Դորոթեոսի գլխավորությամբ առաջխաղացող Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 5.900), ինչպես նաև լիացած ավարով, հետ քաշվեց Նախակովկասյան տափաստաններ[1]: Սաբիրների այս հարձակումը նշանավորվեց տափաստանային այս գիշատիչների երկու զգալի պարտությամբ, երբ 532 թվականի հունվարի կեսին Բեսսասի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) Տիգրանակերտի ճ-մ-ում հաղթեցին քաղաքի շրջակայքը ասպատակող թշնամու մի ջոկատի (մոտ 1.000)[2], իսկ Կիթառիճ ամրոցի (Մինչեփրատյան Ծոփք, Հաշտեանք գավառ) մոտակայքում գործող կայսերական մեկ այլ բանակը (1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներն (700) էլ ոչ միայն հետ մղեցին ամրոցի շրջակայքը ասպատակող Սաբիրական թագավորության բանակի (մոտ 2.000) հարձակումը, այլև, անցնելով հակահարձակման, ջարդեցին թշնամուն[3]: Եվ վերջապես

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 21; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6, 14; Անանուն Եդեսիացի «Տարեգրություն»:
[2] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6:
[3] Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 6, 14; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 1,

հենց 531 թվականի վերջին էր, որ Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), ինչպես նաև Գասանյանների թագավորության բանակը (մոտ 10.000) Պաղեստինում հաղթեցին ապստամբած սամարիացիներին (մոտ 40.000)՝ ճնշելով մոտ 3 տարի տևած անհնազանդության բնույթ ունեցող սամարիացիների ապստամբությունը[1]:

Քաղաքական ասպարեզից Կավատ I-ի հեռանալը, ինչպես արդեն ասվեց, բերեց պատերազմական գործողությունների ավարտին, որոնք շարունակվում էին կարծես հենց միայն այս գահակալի քմահաճույքով, քանզի գործողությունների որևէ այլ մասնակցի այս ամենը, համենայն դեպս գոնե այդ պահին, պետք չէր: Արդյունքում՝ տարածաշրջանի երկու գերտերությունների միջև մղվող բանակցությունները, որոնք սկիզբ առան 531 թվականի վերջից, որոշակի անհարթություններով ընթացան մինչև 532 թվականի սկիզբը, ընդ որում գործին զգալիորեն խանգարեց նաև «Նիկա» անվանում ստացած այն հայտնի ապստամբության բռնկումը, որը, Հուստինիանոս I-ի համար լիովին անակնկալ, Կոստանդնուպոլսում պայթեց 532 թվականի հունվարի 13-ին և տևեց 6 օր:

Արդյունքում՝ ապստամբները, որպես գահի թեկնածու առաջ քաշելով իր քաղաքական նկրտումներում այդպես էլ չբավարարված Հյուպատիոսին և մայրաքաղաքային մեծահարուստ Պոմպեոսին, մի ինչ-որ պահի ծայրահեղ վտանգավոր վիճակ ստեղծեցին Հուստինիանոս I-ի ու նրա իշխանության համար, ընդ որում բանը հասավ նույնիսկ նրան, որ կայսրը պատրաստվեց թողնել ամեն ինչ և դիմել փախուստի: Հուստինիանոս I-ի ակնթարթային այս տատանմանը, սակայն, դեմ ելավ ամենից առաջ նրա կին Թեոդորան, ընդ որում կայսեր վճռականությունը վերջնականապես ամրապնդվեց այն բանից հետո, երբ մայրաքաղաքում գտնվող և Բելիսարիոսի գլխավորությամբ պարսկական ճակատից հենց նոր վերադարձած հեղինակավոր զորավարները ոչ միայն զորավիգ եղան վերջինիս, այլև պատրաստակամություն հայտնեցին անցնել վճռական միջոցառումների: Արդյունքում՝ մարտերում թրծված կայսերական բանակի ռազմիկները անմիջապես էլ գործի անցան և, անկանոն ու առանց որևէ ծրագրի գործող ապստամբների շարքերում մեծ ջարդ իրականացնելուց հետո, մայրաքաղաքում կարգ ու կանոն հաստատեցին: Հյուպատիոսը ձերբակալվեց և, թաղվելով պատի մեջ, մահապատժի ենթարկվեց, իսկ Պոմպեոսն էլ ուղղակի սրատվեց, ընդ որում ամենամոտավոր հաշվարկներով զոհվեցին մոտ 35.000 ապստամբներ[2]:

Այսպես թե այնպես, սակայն Հուստինիանոս I-ի իշխանությունը վերջնականապես ամրապնդվեց և արդեն այս պայմաններում 532 թվականի ամռանը իրենց վերջնական ավարտը գտան նաև խաղաղության բանակցությունները, երբ կնքվեց հերթական, բայց «Հավիտենական» կոչված հաշտությունը ու Բյուզանդա-Պարսկական III պատերազմը ավարտվեց: Արդյունքում, թեև ի համեմատ նախկինի, որևէ էական փոփոխություն տեղի չունեցավ, սակայն իրեն որոշակի բավարարված կարող էր զգալ այնուհանդերձ պարսկական կողմը, քանզի Խոսրով I-ը կարողացավ հասնել նրան, որ կայսրությունն ի վերջո վճարի այնքան երկար պահանջված այն գումարը, որի առիթով երկու տերությունները մեկ անգամ չէր, որ պատերազմել էին, ինչպես նաև անի ռազմական բնույթի մի քանի մանր այլ զիջումներ: Կողմերը ազատ արձակեցին նաև գերիներին, որոնց թվում կայսրության տարածք վերադարձան նաև Սեբաստիանը, Վասիլը և Դոմենտիոլոսը, իսկ պաշտոնական Տիզբոնն էլ հետ ստացավ Ամերդախին ու Հազկերտին: Տարածաշրջանային երկու գերտերությունների հարաբերություններում սկիզբ էին առնում առերևույթ ջերմությամբ լցված մի քանի տարիներ, երբ Հուստինիանոս I-ը ձեռնամուխ էր լինելու Արևմուտքին տիրելու իր ծրագրերը կյանքի կոչելուն, իսկ

գլուխ 25:

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 93; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 1, գլուխ 24; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 14; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 21:

Խոսրով I-ն էլ, վերջնականապես ամրապնդելով սեփական դիրքերը արյաց գահի վրա, իր հերթին արագորեն կյանքի էր կոչելու սեփական տերության հզորության հերթական դարաշրջանի հիմքը հանդիսացած իր ռազմական, տնտեսական և քաղաքական բարեփոխումները:

Գլուխ 31
Բյուզանդական կայսրությունը և Գերմանական աշխարհը VI դարի առաջին կեսում

Պաշտոնական Կոստանդնուպոլիսը վաղուց էր ձգտում ծավալվել դեպի Արևմուտք կամ, այլ կերպ ասած, վերադարձնել Արևմուտքը: 476 թվականին Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին կայսր Ռոմուլոսի գահազրկումը արդեն այն ժամանակ զուտ իրավաբանորեն ստեղծել էր մի իրավիճակ, երբ, ինչպես արդեն ասվեց, որպես Հռոմեական կայսրության միակ իրավաբանական տիրակալ մնացել էր Կոստանդնուպոլսում տիրող կայսրը: Կար, սակայն, նաև մեկ այլ նրբություն՝ Արևմտյան Հռոմեական կայսրությունը, սկսելով կորցնել իր տարածքները դեռևս V դարի առաջին քառորդից, 476 թվականի վիճակով արդեն հայտնվել էր մի վիճակում, երբ կայսրության իրավաբանական սահմաններում գտնվող տարածքներում այժմ հաստատված գերմանական ցեղերը վաղուց արդեն ստեղծել էին իրենց առանձին թագավորությունները:

Այսպես, հոների հզոր հոսանքով քշված Մերձսևածովյան տափաստաններից՝ օսթգոթերն իրենց կործանված թագավորությունը վաղուց արդեն վերակերտել էին Բալկանյան թերակղզու հյուսիսում և Ապենինյան թերակղզում, իսկ նրանց ազգակից վեսթգոթերն էլ լիովին նույն պայմաններում սկզբում հաստատվել էին ներկայիս Ֆրանսիայի հարավ-արևմուտքում ու Պիրենյան թերակղզու հյուսիսում՝ հետագայում փակվելով միայն Պիրենյան թերակղզում: Իր հերթին, Պիրենյան թերակղզում կենտրոնացած վեսթգոթերը այստեղից դուրս էին մղել մինչ այդ թերակղզի ներխուժած վանդալներին և սրանց դաշնակից ալաններին, որոնք, անցնելով Հյուսիսային Աֆրիկա, իրենց տիրապետությունն էին հաստատել արդեն այստեղ: Եվ վերջապես Հռենոսի վերին հոսանքից առաջացող ֆրանկները նույն այս ընթացքում աստիճանաբար իրենց տիրապետությունն էին հաստատել ներկայիս Ֆրանսիայի հիմնական տարածքում: Հոներին ջախջախելուց հետո սեփական թագավորությունը ամրապնդեցին նաև գեպիդները, թեև սրանք, տիրելով Դանուբի միջին հոսանքներին և ներկայիս Հունգարիայի տարածքին, ամենաքիչն էին գերմանական ցեղերի մեջ, որ ոտք էին դրել նախկին Հռոմեական կայսրության տարածքներ: Գեպիդական թագավորությունից հյուսիս-արևմուտք տարածվում էր Լանգոբարդական թագավորությունը և երկու այս թագավորությունները միմյանց հետ լուրջ թշնամություն էին անում:

Այսպիսով՝ 530-ական թվականների սկզբի վիճակով Բալկանյան թերակղզու հյուսիսում և Ապենինյան թերակղզու վրա իշխանություն ուներ արդեն թուլացող Օսթգոթական թագավորությունը, այն դեպքում, երբ Պիրենյան թերակղզուն տիրում էր իր հերթին թուլացման ուղին բռնած Վեսթգոթական թագավորությունը: Ավելի հյուսիս, ի հակառակ նախորդների, տարածվում էր զարգացման ուղին բռնած Ֆրանկական թագավորությունը, թեև Խլոդվիգ I-ի (481-511) կառավարման փայլուն տարիներն արդեն ամեն դեպքում անցյալում էին և այժմ իրենց հոր թողած լայնարձակ ու միասնական թագավորության վրա, փաստացի բաժանած այն չորս մասերի և հաճախ նույնիսկ ձևականորեն էլ չընդունելով ավագի իշխանությունը, իշխում էին վերջինիս չորս որդիները: Խլոդվիգ I-ի չորս որդիները, սակայն, հաճախ գժտվելով ներքին հարցերում, արտաքին ռազմաքաղաքական հարցերում այնուհանդերձ, որպես կանոն, միասնական էին: Եվ վերջապես Հյուսիսային Աֆրիկայի արևմտյան և կենտրոնական մասի հռոմեական նախկին տիրույթների վրա գտնվում էր Վանդալական թագավորությունը: Սրանցից զատ

կային նաև գերմանական այլ թագավորություններ ու իշխանություններ ևս, որոնց, սակայն, առանձին-առանձին անդրադառնալն ուղղակի իմաստ չունի և դրանց մասին մենք կհիշենք միայն առիթի դեպքում:

Կայսրության ռազմական մեքենայի ընդհանուր քայքայման պայմաններում գերմանական տարրը, ինչպես տեսանք, կայսրության բանակում սկզբում ազդեցիկ դիրք գրավեց, իսկ հետո էլ, արդեն մի կողմ մղելով ուժազրկված կայսրերին, իր կողմից զբաղեցված տարածքների վրա հաստատեց սեփական ցեղերի արքաների իշխանությունը: Արդյունքում՝ Արևմտյան Հռոմեական կայսրության կայսրը նույն 476 թվականի վիճակով իր իշխանության տակ հազիվ միայն Հռոմն ուներ, որն էլ, ի վերջո, ինչպես արդեն ասվեց, կորսվեց: Եվ այսպես, փաստորեն ստեղծվել էր մի դրություն երբ, ինչպես արդեն մի քանի անգամ ասվեց, Կոստանդնուպոլսում տիրող կայսրը, իրավաբանորեն ու նաև բարոյապես, հիմնականում որպես քրիստոնեական հավատքի գլխավոր առաջնորդ հանդիսացող երկրի ղեկավար, իր հավակնություններն ուներ Հռոմեական կայսրության նախկին բոլոր տարածքների նկատմամբ, ընդ որում այդ հավակնությունները քրիստոնեական աշխարհի արևմտյան մասի բնակչության հիմնական մասի կողմից ընկալվում էին որպես ինքնըստինքյան բնական և հասկանալի մի երևույթ:

Միաժամանակ պետք է ասել, որ Հուստինիանոս I-ին նախորդող կայսրերը, ռազմական տեսակետից զիջելով Արևմտյան Հռոմեական կայսրության տարածքին տիրած գերմանական թագավորություններին կամ գոնե առնվազն, բավարար ուժեր չունենալով իրենց հավակնությունները զենքի ուժով կյանքի կոչելու համար, հիմնականում բավարարվում էին միայն դիվանագիտական ու քաղաքական միջոցառումներով, ինչպես նաև միակ կայսեր տիտղոսը կրելու բարոյական գերազանցության զգացումով, ընդ որում գերմանական թագավորությունների ղեկավարներն էլ իրենց հերթին նույն կերպ անտարբեր էին այս ամենի նկատմամբ՝ Բյուզանդական կայսրության սահմաններից հեռու գտնվողներին այս ամենը մեծ հաշվով քիչ էր հետաքրքրում, իսկ կայսրության անմիջական հարևաններն էլ պատրաստակամ էին զիջել բարոյական առաջնայնությունը Կոստանդնուպոլսի տիրակալին՝ սեփական սահմաններում հանգիստ իշխելու փոխարեն: V դարի երկրորդ կեսից սկիզբ առած ուժերի յուրօրինակ հավասարակշռության վիճակ ստեղծող այս դրությունը, սակայն, VI դարի սկզբից սկսած սկսեց աստիճանաբար փոխվել, ինչն ուներ իր պատճառները:

Իր դերը խաղաց ամենից առաջ այն հանգամանքը, որ Արևմտյան Հռոմեական կայսրության սահմաններում ստեղծված գերմանական թագավորություններն այս ժամանակ սկսել էին աստիճանաբար թուլանալ, ընդ որում հիշատակված գործընթացն արդեն անդառնալի բնույթ էր կրում: Իր հերթին կարևոր դեր ուներ նաև այն հանգամանքը, որ, հետևում թողած ընդհանուր թուլությամբ համակված V դարը, նույն այս ժամանակ, համենայն դեպս գոնե ի համեմատ իր գերմանական հարևանների, նաև Բյուզանդական կայսրությունն էր աստիճանաբար ուժեղանում:

Ինչպես արդեն ասվեց, գերմանական 4 առաջատար թագավորություններից 530-ական թվականների սկզբի վիճակով զարգացման ուղու վրա էր, թերևս, միայն Ֆրանկական թագավորությունը, իսկ մյուս երեքում գործերն այնքան էլ լավ չէին: Վերջիններիցս, դեռևս Թեոդորիք I Մեծից եկող և ավանդականորեն ընկալվող հեղինակությամբ, առաջնայինը կարող էր համարվել, թերևս, Օսթգոթական թագավորությունը, սակայն կյանքը ցույց տվեց, որ նրա ուժի և հզորության մասին պատկերացումները ևս մեծապես արդեն կապ չունեին իրականության հետ: Վեսթգոթական թագավորությունը, մի ժամանակ առաջատարը գերմանական թագավորությունների շարքում, այժմ, ծանր հարվածներ ստացած լինելով Ֆրանկական թագավորությունից, իրեն ընդգծված ստվերում էր պահում՝ փորձելով գործել Օսթգոթական թագավորության հովանու ներքո: Ինչ վերաբերում է Վանդալական թագավորությանը, ապա այն, թերևս, ամենաշատը գերմանական մյուս

թագավորություններից խնդիրներ ունենալով տեղական բերբերական և նույնիսկ ռոմանական կամ ռոմանականացված բնակչության հետ, հազիվ զբաղված էր ներքին կայունության պահպանմամբ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գերմանական թագավորությունների թուլացման արմատում ընկած էր իրենց իսկ բնույթը և այն, ինչ ժամանակին նրանց ուժ էր ապահովում, այժմ սկսեց դառնալ թուլություն:

Իրոք, գերմանական ցեղերը, ի համեմատ Հռոմեական կայսրության սահմաններում գտնվող կայսրության բնակիչների, նվաճողական պոռթկումի մեջ ի վիճակի էին զենքի տակ դնել սեփական համայնքից հավաքված անհամեմատ ավելի մեծ քանակի և անհամեմատ ավելի մարտունակ ռազմիկների ու այս հանգամանքը սկզբում իր վճռական դերը խաղաց: Հետագայում, սակայն, երբ մեծ նվաճումների ժամանակն արդեն անցել էր, սահմանները, չնայած սահմանային պատերազմների մշտական վիճակի, քիչ թե շատ կայունացել էին և ժամանակն էր սեփական թագավորությունների արդեն ներսում խաղաղ կյանք կառուցել, գերմանական քաղաքակրթությունն այս խնդիրը հաջողությամբ լուծել այդպես էլ չկարողացավ:

Խնդիրն ամենից առաջ կայանում էր նրանում, որ, Հռոմեական կայսրության տարածքի բնակչության հետ միջին համեմատական մակարդակում գտնվելով զարգացման ավելի ցածր մակարդակի վրա՝ նույն այդ կայսրության տարածքին տիրելուց և պատերազմական լայնածավալ գործողությունների ավարտից հետո գերմանական հզորության հիմքը կազմող հասարակության առանձին անդամների բարձր անձնական ու մոբիլիզացիոն մարտունակությունն իր վերջը գտավ և սոցիալական հարաբերությունների նոր ոլորտ մուտք գործած գերմանական հասարակությունը դասակարգային առումով միանգամից շերտավորվեց: Արդյունքում՝ գերմանական համայնքի հասարակ անդամները, ամենաընդհանուր իմաստով, զբաղեցրին այն տեղը, ինչն ուներ Հռոմեական նախկին կայսրության շահագործվող դասակարգը, իսկ իշխող վերնախավն էլ, փորձելով կրկնօրինակել նույն այդ Հռոմեական կայսրության բարքերը, զբաղեցրեց շահագործողների դիրքը: Սրան գումարվեց նաև այն հանգամանքը, որ եկվոր գերմանական տարրը լավ չէր տիրապետում նստակյաց կյանքի սոցիալական և նույնիսկ առօրեական կանոններին հատկապես նոր ու ավելի քաղաքակրթված մակարդակում, ինչի արդյունքում, միջին մակարդակում մարտադաշտում գերիշխելով Արևմտյան Հռոմեական կայսրության բնակչությանը, խաղաղ կյանքում այն տեղի տվեց վերջինիս: Եվ վերջապես իր դերը խաղաց նաև մշակութային զարգացվածության և ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակը, քանզի գերմանական մեծ քաղաքակրթության զարթոնքին դեռևս հազար տարի կար, այն դեպքում, երբ համաքրիստոնեական և համահռոմեական քաղաքակրթական կաթսայում գերմանական տարրն այժմ ուղղակի տարալուծվեց:

Վերևում նկարագրված գործընթացներում գերմանական տարրի համար դիմադրության միակ օղակը կարող էր լինել, թերևս, միայն անկրկնելի արիոսական հավատքը, որին, բացառությամբ ֆրանկների, հետևում էին մյուս երեք թագավորություններն և այդ հանգամանքը իրոք որոշակիորեն օգնեց պահել դիրքերը, բայց վերջինս նաև իր բացասական դերն ունեցավ, քանզի, ինչ-որ տեղ իրոք թույլ չտալով գերմանացիների ձուլվել տեղի ռոմանականացված բնակչությանը, մյուս կողմից էլ նույն այդ բնակչությունը արիոսականությունը դավանող գերմանացիներին իր հերթին ընկալում էր որպես իսկական հերետիկոսների՝ ամեն կերպ ձգտելով վերադառնալ իսկական կայսրերի հետնորդներ ընկալվող Կոստանդնուպոլսի կայսրերի տիրապետության տակ: Իհարկե, Կոստանդնուպոլսի կայսրերի տիրապետությունն էլ իրենից մեծ հաշվով շահագործման մի այլ տեսակ էր ենթադրում, ընդ որում հաճախ նույնիսկ՝ ավելի կազմակերպված և դաժան, սակայն գերմանական բիրտ, իսկ հաճախ նաև չկարգավորված իշխանությունը մի կողմից, իսկ մյուս կողմից էլ անցյալի իդեալականացվող հուշերը Արևմտյան Հռոմեական կայսրության նախկին սահմաններում գտնվող տեղի ռոմանական և ռոմանականացված բնակչության մեջ

համենայն դեպս գոնե սկզբնական ժամանակներում այնուհանդերձ ապահովում էին մեր կողմից նկարագրվող տրամադրությունները: Վերը նկարագրված բացասական զարգացումները իրենց կնիքը դրեցին նաև գերմանական երեք թագավորությունների զինված ուժերի վրա:

Արդեն ասվեց, որ, այն բանի արդյունքում, երբ նոր սահմաններում հաստատված գերմանացիները անցան նստակեցության, քայքայվեց վերջիններիս արդեն նաև ռազմական բարձր մոբիլությունը, իսկ առանձին ռազմիկների մարտունակության բարձր մակարդակն էլ կամ վերացավ, կամ էլ արդեն խաղաղ կյանքի անցած նույն այդ նախկին ռազմիկների մոտ այն էական անկում ապրեց: Իրոք, սերունդները փոխվում էին և նոր ու արդեն խաղաղ ռոմանականացման պայմաններում հայտնված գերմանական նոր սերնդի արական անդամներն աստիճանաբար ավելի ու ավելի շատ էին հեռանում ռազմական գործից, որի կարիքը վրա հասած գործնական խաղաղության պայմաններում կարծես այնքան էլ չկար՝ իրենց նվիրելով այլ գործունեության: Վերը նկարագրված գործընթացը, թերևս, ամենից ակնառու օրինակով կարող ենք ի ցույց դնել Վանդալական թագավորության պարագայում, քանզի, եթե Վանդալական թագավորության հիմնադրման պահին առկա էին առնվազն 80.000 մարտունակ ռազմիկներ, ապա այժմ՝ մեկ դար անց, երբ դրված էր թագավորության լինել-չլինելու հարցը, նույն այդ Վանդալական թագավորությունը, լարելով բոլոր ուժերը, չկարողացավ զենքի տակ դնել նույնիսկ 20.000 հոգու:

Ինչպես արդեն ասվեց, գերմանական թագավորությունների շարքում վերը նկարագրված բացասական զարգացումներն ամենաշատը խորացած էին Վանդալական թագավորությունում, իսկ բոլոր այդ բացասական գործոններն ամենաքիչն էլ առկա էին ֆրանկների մոտ: Վերջին հանգամանքը մի կողմից բացատրվում է նրանով, որ ռոմանականացվածության մակարդակը այս թագավորության հիմքը կազմող Գալլիայում այնուհանդերձ այնքան էլ խորը չէր, ինչքան մյուս վայրերում, իսկ ռոմանական բնակչությունն էլ համեմատականորեն քիչ դերակատարություն ուներ, իսկ մյուս կողմից էլ նրանով, որ ֆրանկների արքաները ավանդական քրիստոնեական դավանանքի հետնորդներն էին, ընդ որում եկվոր գերմանացիների և տեղական բնակչության ընդհանուր զարգացումներում նրանք կարողացան հավասարակշիռ զարգացում ապահովել: Եվ վերջապես ֆրանկների օգտին եղավ նաև այն հանգամանքը, որ նրանք, մյուս երեք թագավորությունների համեմատ, մի կողմից առավել մոտ էին Հռենոսից ու Դանուբից անդին տարածվող բուն գերմանական տարածքներին և այստեղից սեփական ցեղակիցների մշտական հոսք էին ստանում, իսկ մյուս կողմից էլ՝ ամենահեռուն էին Հռոմեական կայսրության քաղաքակրթության օջախներից: Նույն այս ժամանակ իր հերթին, երբ գերմանական աշխարհը խմորվում էր վերևում նկարագրված հակասական զարգացումներում, նույն այդ զարգացումները հակառակ արդյունքն էին ապահովում Բյուզանդական կայսրության սահմաններում:

Ինչպես արդեն ասվեց, հետևում թողած գերմանական շնչով հագեցված V դարը, Բյուզանդական կայսրությունը VI դար մտավ արդեն մեծապես ազատված դրանից: Գերմանական ազդեցության վերջի գործընթացի սկիզբը դրել էին դեռևս Լևոն I-ն ու Զենոնը, ընդ որում վերջինս, գործի դնելով ամենատարբեր հնարքներ, կարողացել էր նույնիսկ այնպես անել, որ կայսրության տարածքում գործող գերմանացիների զգալի քանակություն սկսի հեռանալ իր սահմաններից և իր եռանդը ներդնի Թեոդորիք I Մեծի գլխավորած արշավանքներում: Որպես հետևանք, տարված Օսթգոթական թագավորության ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը բերելու մարմաջով, զգալի քանակի մարտունակ գերմանացիներ իրոք հեռացան կայսրության տարածքից: Արդյունքում՝ նաև այս գործընթացի հետևանքով եղավ, որ կայսրության բնակչության ընդհանուր թվաքանակում գերմանական տարրի դերը զուտ քանակական տեսանկյունից ընկավ, ընդ որում ընկավ այն աստիճան, որ սկիզբ առավ և աստիճանաբար անդառնալի չափեր ընդունեց տեղում մնացած գերմանացիների

վերջնական ուծացման գործընթացը:

530-ական թվականների սկզբի վիճակով այս գործընթացն արդեն իր գրեթե վերջնական տեսքն էր ստացել և ասվածի պարզ օրինակ կարող է հանդիսանալ հենց միայն կայսերական բանակի ղեկավար կազմի էթնիկ պատկանելիության քննարկումը: Իրոք, նույն ինքը՝ Բելիսարիոսը, ծագումով լինելով ինչ-որ տեղ Դանուբի ափերից, իրեն մեծապես արդեն գիտակցում էր ոչ թե որպես գերմանացի, այլ ամենից առաջ՝ որպես Բյուզանդական կայսրության հավատարիմ և նվիրված մի զորավար: Նույն վիճակն էր նաև Դորոթեոսի, Բուզեսի, Կուզեսի, Իլդիգերի, Դագիսթայոսի և այլոց պարագայում: Այս առումով հատկանշական է, որ, եթե Բյուզանդա-Պարսկական II պատերազմում գործող կայսերական բանակի հրամանատարական կազմի հիմնական մասը իրենից ներկայացնում էր, թեև արդեն դիրքերը մեծապես զիջող, բայց այնուհանդերձ գերմանական աշխարհը, ապա Բյուզանդա-Պարսկական III պատերազմի պարագայում մենք արդեն տեսնում ենք նոր սերնդի մարդկանց՝ հիմնական արդեն միայն արմատներով գերմանացի հանդիսացող զորականների առկայություն: Վերևում նկարագրված գործընթացն, ինչպես, թերևս, պարզ է, իր անխուսափելի հետքը թողեց նաև Բյուզանդական կայսրության բանակի վրա՝ ի համեմատ նախկին մեծ հաշվով դրականորեն բարելավելով վերջինիս դրությունը:

Իրոք, ողջ V դարում, լեգեոնական համակարգի վերջնական անկման պայմաններում, Բյուզանդական կայսրության զինված ուժերն, ըստ էության, կազմված էին բացառապես միայն գերմանացիների ջոկատներից, որոնք գործում էին իրենց հարազատ ձևերով ու կանոններով՝ հեռու մնալով Հռոմեական կայսրության ավանդական ռազմական մեքենայից, իսկ արդյունքում էլ կայսրության ռազմական մեքենան կորցրել էր մինչ այդ իրեն բնորոշ դրական հատկանիշները: Փաստորեն ստեղծվել էր մի դրություն, երբ նույն դարի վերջի վիճակով Բյուզանդական կայսրության ռազմական մեքենան իրենից ներկայացնում էր, ըստ էության, գերմանական ռազմական մեքենայի ընդամենը միայն ռոմանական մի կրկնություն: Այժմ, սակայն, երբ գերմանական տարրի դերը վերջնականապես ի չիք էր դառնում, գործունյա Հուստինիանոս I-ը կայսրության բանակը սկսեց կազմակերպել լիովին նոր հիմունքներով: Արդյունքում, մի կողմ թողած գերմանացիներին, որոնք ժամանակին լիովին իրենցով էին արել ռազմական համակարգը և վարվում էին իրենց ցանկացած ձևով, նոր կայսրը, գործի դնելով ֆինանսական զգալի միջոցներ ու առաջ քաշելով նոր սերնդի զորականների շարքերից, ստեղծեց պրոֆեսիոնալ և վարձատրվող ռազմիկներից կազմված սկզբունքորեն նոր մոդելի մի բանակ, որն իր մարտական մկրտությունը ստացավ Բյուզանդա-Պարսկական III պատերազմում:

Նոր բանակը հիմնականում կազմված էր արդեն առավելագույնը, թերևս, միայն արմատներով գերմանացի հանդիսացող անձանցից, ինչպես նաև կայսրության այլ ազգերի ներկայացուցիչներից, որոնց թվում էին ռոմանականացված նույն գերմանացիները, ինչպես նաև իլիրիացիները, թրակիացիները, հոնիացիները, լիկոնիացիները և այլ ազգերի ու ցեղերի ներկայացուցիչները: Այս պայմաններում, երբ շեշտը փաստորեն դրվեց կայսրության ոչ եկվոր մարդկային ռեսուրսի հաշվին բանակի շարքերը համալրելու վրա, բանակում սկսեցին աստիճանաբար զգալի դերակատարություն ստանձնել նաև ավանդականորեն իրենց բարձր մարտունակությամբ աչքի ընկնող հայերը, ընդ որում այս գործընթացը հետագայում ավելի էր խորանալու[1]: Հուստինիանոս I-ի ստեղծած նոր մոդելի այս բանակը իր գոյությունը պահպանելու էր մոտ մեկ դար՝ հետագայում իր տեղը զիջելով մեկ այլ մոդելի բանակի, որի մասին մանրամասն կխոսենք իր տեղում: Այժմ միայն, թեման, թերևս, ամբողջացնելու համար, ավելացնենք, որ նոր բանակի առավելությունների շարքում կարող ենք մատնանշել ամենից առաջ վերջինիս ռազմիկների բարձր պրոֆեսիոնալիզմն ու հավատարմությունը բացառապես միայն իրենց վճարող կայսեր, բայց նույն այդ

[1] Տես՝ Իսկանյան Վ. Կ. «Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ», Երևան 1991, էջ 156:

բանակի թերությունների շարքում էլ ակնառու տեղ էր զբաղեցնում արդեն քանակական գործոնը՝ ռազմիկները, որոնց պետական գանձարանը վճարում է կանխիկ գումարով, պահանջում էին զգալի ցուցանիշներ և եկամուտ ունեցող տնտեսական համակարգ, իսկ նման համակարգով Հուստինիանոս Ի-ի պետությունը ոչ մի կերպ պարծենալ չէր կարող: Հուստինիանոս Ի-ի ստեղծած ռազմական նոր այս մեքենայի վերջնական արդյունավետության մասին կխոսվի հետագայում, իսկ այժմ ընդամենը միայն արձանագրենք, որ կայսերական նորաստեղծ բանակը, միջինում համալրված մարտական բարձր որակ ունեցող ռազմիկներով և ունենալով ավելի բարձր մարտական հատկանիշներ, քան նախորդը, այնուհանդերձ մեծաքանակ չէր ու իր առջև դրված մեծամասշտաբ ռազմաքաղաքական խնդիրները լուծում էր ուժերի միայն ծայրահեղ լարումով:

Գլուխ 32
Վանդալական պատերազմը

Եվ այսպես, ավարտելով գործերը Արևելքում ու, թվում է թե, հավերժական խաղաղություն հաստատելով այստեղ, Հուստինիանոս Ի-ն ի վերջո ձեռնամուխ եղավ այն բանին, ինչին ձգտում էր ողջ հոգով՝ վերականգնել Հռոմեական կայսրության հինավուրց փառքն և սահմանները: Պաշտոնական Կոստանդնուպոլսում արդեն վաղուց էին հետևում Արևմուտքում զարգացող իրադարձություններին և գործողությունների ապագա ծրագիրն արդեն վաղուց էր գծագրված, ընդ որում, համաձայն ռազմավարական հարվածների դասական կանոնների, որոշված էր առաջին հարվածը հասցնել հակառակորդներից ամենաթույլին: Եվ այսպես, Բյուզանդական կայսրության հարվածի սուր ծայրում հայտնվեց Վանդալական թագավորությունը: Պետք է ասել, որ վանդալների մոտ գործերը նույն այս ժամանակ իսկապես ողբալի վիճակում էին:

Իրոք, տեղական բերբերական քոչվորների հետ մշտապես մղվող և մեծ հաշվով անհաջող ընթացք ունեցող ռազմական գործողությունները տեղի բնակչության կողմից այդպես էլ չընկալված վանդալներին նույն այս ժամանակ դրել էին ծանր դրության մեջ, ընդ որում իրավիճակը բարդանում էր նաև իշխող գահատոհմի շարքերում առկա գահակալական խնդիրներով, երբ քիչ թե շատ ռոմանական արմատներ ու կողմնորոշում ունեցող արքա Հիլդերիքը (523-530), ռազմական անհաջողությունների և ընդհանուր քայքայվածության պայմաններում, 530 թվականին գահընկեց արվեց ավելի անզիջում ու ազգայնական դիրքորոշում ունեցող իր ազգականի կողմից: Արդյունքում՝ Վանդալական թագավորության արքա հռչակվեց Գելիմերը (530-534), որին վիճակված էր լինելու այս թագավորության վերջին արքան:

Վանդալական ուղղությունում զրկվելով քիչ թե շատ կայսերամետ Հիլդերիքից, Հուստինիանոս Ի-ը, որին արդեն միայն հարմար առիթ էր հարկավոր, անցավ վճռական գործողությունների: Եվ այսպես, 533 թվականի ամռանը առանց լուրջ մարտերի տիրելով Ղրիմին և ոչնչացնելով Բոսպորի թուլացած թագավորությունը[1], փառասիրական տենչերով տարված Հուստինիանոս Ի-ը հարված հասցրեց վանդալներին: Սկիզբ առավ Վանդալական պատերազմը (533-534), որին վիճակված էր առաջինը լինել Արևմուտքում Հուստինիանոս Ի-ի վարած պատերազմներից:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

533 սեպտեմբերի 13 – ***Դեցիումի ճ-մ*** (Լիբիա, Կարթագենից մոտ 16 կմ հարավ)[1]

Արևմուտք հրամանատար Բելիսարիոսի և նրա օգնական Հովհաննես Հայի, նավատորմի հրամանատար Կալոնիմոս Ալեքսանդրիացու, ֆեդերատների հրամանատարներ Դորոթեոսի, Սողոմոն Դարացու, Կիպրիանոսի, Վալերիանոսի, Մարտինոսի, Մարցելոսի, Ալթիասի, Կիրիլի, Ստոցասի, Պերանիոս Բագրատունու, հեծելազորի հրամանատարներ Ռուփինոսի ու Այգանի, վերջիններիս օգնականներ Բարբատոսի, Պապպոսի և նրա եղբայր Հովհաննես Տրոգոլիտայի, հետևազորի գլխավոր հրամանատար Հովհաննես Էպիդոմնացու, հետևազորի հրամանատարներ Թեոդորոս Կտեյանի, Տերենտիոսի, Զահիդոսի, Մարկիանոսի ու Սարապիոսի, էրուլների հրամանատար Ֆարասի, ինչպես նաև բուլղարների հրամանատարներ Սիննայի և Բաղայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (15.000, որից 5.000 հեծյալ, այդ թվում 600 բուլղարներ և 400 էրուլներ, 500 նավ, որից 92 մարտանավ) ու նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 1.500) Վանդալական թագավորության դեմ արշավանքի ելնելու կապակցությամբ կենտրոնացան ***Կոստանդնուպոլսում:*** Հունիս ամսին արշավանք սկսելով արևմտյան ուղղությամբ՝ կայսերական բանակը Ադրիատիկ ծովով առաջացավ և հասավ ***Սիցիլիա,*** որից հետո, տեղեկություններ հավաքելով Վանդալական թագավորության մասին, սեպտեմբերի սկզբին ափ իջավ ***Կարթագենից*** 200 կմ արևելք, ընդ որում արշավանքի ընթացքում Դորոթեոսը Սիցիլիայում մահացավ: Այս ընթացքում արքաեղբայր Ցազոնի գլխավորած Վանդալական թագավորության մի բանակ (5.000, 120 նավ) արշավանքի էր ելել Սարդինիա կղզու ապստամբած բնակչության դեմ, իսկ Վանդալական թագավորության արքա Գելիմերի գլխավորած սակավաթիվ ուժերն էլ ցրված էին երկրով մեկ՝ որևէ կերպ պատրաստ չլինելով ապագա մարտական գործողություններին:

Ափհանումից անմիջապես հետո կայսերական բանակը ճամբար զարկեց, որից կարճ ժամանակ անց առանց մարտերի տիրեց ավելի արևմուտք գտնվող ծովափնյա Սիլեկտ քաղաքին: Դրանից հետո կայսերական բանակը, առաջապահում ունենալով Հովհաննես Հայի գլխավորած ուժերը և ուղեկցվելով նավատորմի կողմից, ծովափով աստիճանաբար սկսեց առաջանալ դեպի արևմուտք՝ Կարթագենի ուղղությամբ: Իր հերթին Գելիմերը, Կարթագենում գտնվող արքաեղբայր Ամմատիային հրամայելով զենք կրելու ունակ բոլոր ռազմիկներով առաջ խաղալ արևելյան ուղղությամբ, ինքն իր տրամադրության տակ գտնվող բանակով սկսեց առաջանալ հարավից: Միաժամանակ, վանդալների արքան, ինքը պատրաստվելով ծովի ափով դեպի արևմուտք առաջացող կայսերական բանակին հարվածել հարավ-արևելքից, իր եղբորորդի Գիբամունդի գլխավորությամբ հիմնական ուժերից առանձնացրեց ևս մեկ ջոկատ (2.000), որը պետք է հարվածեր կայսերական բանակին հարավ-արևմուտքից՝ նախատեսելով արևմուտքից, հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից հասցվող համակցված հարվածներով սեղմել հակառակորդին ծովին ու հասնել վերջնական հաղթանակի:

I փուլ – Սեպտեմբերի 13-ին 12:00-ի մոտակայքում Հովհաննես Հայի գլխավորած առաջապահ ուժերը, անակնկալ հանդիպելով սեփական ուժերից առաջ անցած Ամմատիային և նրա շքախմբի անդամներին, չնայած վերջիններիս դրսևորած խիզախությանը, հաղթեցին ու սպանեցին նրանց, որից հետո, զարգացնելով հաջողությունը, հարված հասցրին արդեն սեփական առաջնորդների հետևից հասնել փորձած և ձգված շարքերով տարածված հակառակորդի մնացած ուժերին՝ պարտության ու փախուստի մատնելով նաև վերջիններիս և հասնելով մինչև Կարթագենի պարիսպներին:

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 3, գլուխ 11-19; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»:

II փուլ – 14:00-ի մոտակայքում Գիբամունդի ջոկատն ի վերջո զբաղեցրեց ելման դիրքեր՝ այդ ընթացքում ծանր կորուստներ պատճառելով իրենց առաջխաղացումը կասեցնել փորձող բուլղարներին: Գիբամունդը, սակայն, սպասելով մյուս ուժերի գործողություններին, չզարգացրեց հաջողությունը:

III փուլ – 15:00-ի մոտակայքում, վերախմբավորելով ուժերը և ստանալով համալրումներ, բուլղարները անցան հակահարձակման ու պարտության և փախուստի մատնեցին Գիբամունդի ջոկատին, ընդ որում Գիբամունդը զոհվեց: Այդ ընթացքում մարտադաշտին մոտեցան կայսերական բանակի հիմնական ուժերը՝ հետևակի ուժերով դիրքեր զբաղեցնելով իրենց կողմից ամրացված ճամբարում:

IV փուլ – 16:00-ի մոտակայքում մարտադաշտին սկսեցին մոտենալ Գելիմերի գլխավորած ուժերը: Տեղեկանալով այդ մասին՝ կայսերական բանակի հեծելազորը շարժվեց թշնամու ուղղությամբ և փորձ կատարեց ամրանալ տեղանքի վրա գերիշխող բարձունքում, սակայն հակառակորդի բանակին հաջողվեց հետ շպրտել վերջինիս: Բելիսարիոսը, որպես աջակցություն նահանջողներին, իր թիկնապահ Ուլարիսի գլխավորությամբ առաջ շարժեց վահանակիրների մի ջոկատ (800), սակայն վերջինս ևս, չկարողանալով փոխել դրությունը, միացավ նահանջողներին ու սկսեց հետ քաշվել:

V փուլ – 17:30-ի մոտակայքում, օգտվելով այն բանից, որ Գելիմերը չի զարգացնում հաջողությունը և տարվել է զոհված եղբորը ողբալով, իսկ նրա ռազմիկներն էլ ցրվել են ու դիակապտությամբ են զբաղվում, կայսերական բանակը, վերախմբավորելով ուժերը, վճռական հարձակման անցավ և ծանր պարտության մատնեց մարտակարգը կորցրած հակառակորդի բանակին:

Հայերը կորցրին մոտ 150, դաշնակիցը՝ մոտ 1.500, թշնամին՝ մոտ 6.000 զինվոր:

Սեպտեմբերի 15-ին կայսերական բանակը տեղի բնակչության աջակցությամբ առանց որևէ դիմադրության մտավ Կարթագեն, այն դեպքում, երբ Գելիմերը, հետ կանչելով Սարդինիայում գործող բանակին, իր ուժերը սկսեց կենտրոնացնել Կարթագենից արևմուտք տարածվող շրջաններում: Դրանից հետո, Սողոմոն Դարացուն իրավիճակի մասին զեկույցով ուղարկելով մայրաքաղաք, Բելիսարիոսը ձեռնամուխ եղավ նոր նվաճված տարածքներում ամրանալու գործին: Իր հերթին Գելիմերը պատրաստվեց կենտրոնացնել ուժերը ու ևս մեկ անգամ փորձել կայսրության բանակի ուժը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

533 դեկտեմբերի 15 – ***<u>Տրիկամերիայի ճ-մ</u>*** (Լիբիա, Կարթագենից մոտ 30 կմ արևմուտք)[1]

Բելիսարիոսի և նրա օգնական Հովհաննես Հայի, ֆեդերատների հրամանատարներ Վալերիանոսի, Մարտինոսի, Մարցելոսի, Հովհաննի, Կիպրիանոսի, Ալթիասի, հեծելազորի հրամանատարներ Այգանի, վերջինիս օգնականներ Բարբատոսի ու Պապպոսի, հետևազորի գլխավոր հրամանատար Հովհաննես Էպիդոմնացու, էրուլների հրամանատար Ֆարասի և այլոց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 13.000, այդ թվում բուլղարներ և էրուլներ) ու նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 1.300), առաջանալով Կարթագենից, դեկտեմբերի 14-ի երեկոյան մոտեցան քաղաքից արևմուտք գտնվող

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 3, գլուխ 25, գիրք 4, գլուխ 1-4; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Մարցելոս Կոմիտ «Ժամանակագրություն»; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին»; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 1, գլուխ 25; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»:

փոքրիկ գետակի ափին Գելիմերի, ինչպես նաև իր ուժերով Սարդինիայից վերադարձած և եղբորը միացած Ցազոնի գլխավորած Վանդալական թագավորության ճամբարած բանակին (մոտ 13.000, այդ թվում բերբերներ)՝ ճամբար զարկելով գետակի մյուս ափին:

Հաջորդ օրը առավոտյան կողմերը գետակի իրենց ափերին մարտակարգ ընդունեցին: Կայսերական բանակի ձախ թևում տեղակայված ֆեդերատների ղեկավարությունն իրականացնում էին Վալերիանոսը, Մարտինոսը, Մարցելոսը, Հովհաննը, Կիպրիանոսը, Ալթիասը և ֆեդերատների մնացած հրամանատարները, աջ թևի հեծելազորը գտնվում էր Այգանի ու վերջինիս օգնականներ Բարբատոսի և Պապպոսի հրամանատարության տակ, կենտրոնում Հովհաննես Հայի գլխավորությամբ տեղակայվեցին Բելսարիոսի անձնական վահանակիրներն ու նիզակակիրները, որոնց հետ մնացած իր ջոկատով (500 հեծյալ) վերջին պահին միացավ ընդհանուր ղեկավարությունն իրականացնող Բելիսարիոսը: Միաժամանակ Հովհաննես Էպիդոմնացու գլխավորած հետևազորը, այդ թվում նաև էրուլները, հետ էին մնացել և, գտնվելով ընթացքի մեջ, դեռ մոտենում էին յուրայիններին: Հիմնական ուժերից առանձին տեղակայվեցին բուլղարները, որոնք կասկածելի հավատարմություն էին դրսևորում: Վանդալական թագավորության բանակի կենտրոնը գտնվում էր Ցազոնի հրամանատարության տակ, իսկ ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Գելիմերը: Վերջինիս բանակի առաջին շարքում տեղակայված էին վանդալները, իսկ երկրորդում՝ բերբերները: Կողմերը բավականին երկար ժամանակ մնացին անշարժ վիճակում, քանի որ Բելիսարիոսը սպասում էր իր հետ մնացած հետևազորին, իսկ հակառակորդն էլ չէր ցանկանում նախահարձակ լինել:

I փուլ – 12:00-ի մոտակայքում Հովհաննես Հայի անձնական ղեկավարությամբ գործող կենտրոնի որոշ ուժեր անցան գետակը և հարվածեցին հակառակորդին, սակայն հետ մղվեցին ելման դիրքեր:

II փուլ – 13:00-ի մոտակայքում Հովհաննես Հայի գլխավորած կենտրոնի ուժերի մի մասը կրկնեց հարձակումը, սակայն համառ մարտից հետ կրկին մղվեց ելման դիրքեր:

III փուլ – 14:00-ի մոտակայքում հարձակման անցավ կայսերական բանակի ողջ կենտրոնը, որի արդյունքում թշնամին ի վերջո հետ մղվեց և փակվեց սեփական ճամբարի կենտրոնում կառուցված ցցապարսպի հետևում: Այս մարտում ընկավ Ցազոնը: Միաժամանակ հարձակման անցած կայսերական բանակի թևերը ևս ստիպեցին նահանջել իրենց դեմ գործող հակառակորդի թևերին: Համարելով, որ բացառապես միայն հեծելազորային ուժերով ճիշտ չէ գրոհել ցցապարիսպը, կայսերական բանակը դադարեցրեց մարտը և սկսեց սպասել հետ մնացած հետևակին, որը տեղ հասավ մի քանի ժամից: Միայն այս մարտում կայսերական բանակը կորցրեց 50, իսկ թշնամին՝ 800 ռազմիկ:

IV փուլ – 18:00-ի մոտակայքում կայսերական բանակը մոտեցավ ցցապարսպին, սակայն, մինչ այդ, տեղեկացված լինելով հակառակորդի առաջխաղացման մասին, Գելիմերն և իր մերձավորները արդեն դիմել էին փախուստի: Արդյունքում՝ Վանդալական թագավորության բանակը արդեն ոչ մի կազմակերպված դիմադրություն ցույց չտվեց: Ողջ երեկոյան և ուշ գիշեր կայսերական բանակի ռազմիկները զբաղվեցին ավարառությամբ ու գերեվարությամբ:

V փուլ – Հաջորդ օրը լուսաբացին, դժվարությամբ ի մի բերելով ուժերը, Բելիսարիոսը Հովհաննես Հայի գլխավորությամբ առանձնացրեց մի ջոկատ (200 հեծյալ), որը պետք է հետապնդեր ու գերեր Գելիմերին, սակայն այդ ընթացքում Հովհաննես Հայը զոհվեց իր ջոկատի կազմում գտնվող Ուլարիսի կողմից արձակած նետից կոկորդին ստացած պատահական հարվածից, ինչի արդյունքում

հետապնդումը դադարեց:

Հայերը կորցրին մոտ 150, դաշնակիցը՝ մոտ 1.500, թշնամին՝ մոտ 8.000 զինվոր:

Նախորդ անհաջողություններից հետո արդեն լիովին հուսալքված Գելիմերը, դիմադրելով մինչև 534 թվականի ապրիլի սկիզբ, ի վերջո հանձնվեց և, պատվավոր գերու կարգավիճակով ուղարկվելով Կոստանդնուպոլիս, իր օրերն ավարտեց որպես կայսերական սովորական պրովինցիալ մի հողատեր ազնվական: Վանդալական պատերազմը ավարտվեց: Արդյունքում՝ Վանդալական թագավորությունը ոչնչացավ և նրա տարածքը անցավ Բյուզանդական կայսրությանը: Եվ այսպես, արդեն 534 թվականի սկզբի վիճակով պաշտոնական Կոստանդնուպոլիսը կարող էր համարել, որ Վանդալական պատերազմն հաջողությամբ ավարտված է, իսկ Վանդալական թագավորության տարածքն էլ հանդիսանում է կայսրության տարածքի բաղկացուցիչ մաս:

Արդյունքում՝ արագորեն կարգավորելով գործերը նոր ձեռք բերված տարածքներում և այստեղ ստեղծելով կայսերական այլ տարածքներին բնորոշ պետական կառավարման համակարգ, պաշտոնական Կոստանդնուպոլիսը ձեռնամուխ եղավ գործողությունների գերմանական մյուս երկու թագավորությունների դեմ: 534 թվականի փետրվարին Հովհաննես Էպիդոմնացու գլխավորած բանակը, առաջանալով մինչև Ջիբրալթարի նեղուցի հարավային ափ, Վեսթգոթական թագավորության բանակից գրավեց Սեպտոն ամրոցը, իսկ հետագայում էլ տիրեց Սուետային, որը վեսթգոթերը զբաղեցրել էին Վանդալական թագավորության անկումից հետո[1], սակայն որոշ հանգամանքներ այնուհանդերձ ձգձգեցին ապագա մեծ պատերազմի սկիզբը:

Նախ 534 թվականի գարնանը մի զգալի անհաջողություն պատուհասեց կայսրության բանակին դանուբյան սահմանում, երբ սլավոնները (մոտ 20.000) շրջապատեցին Հիլիբուդի գլխավորությամբ գետն անցած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 7.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 300) ու գլխովին ջախջախեցին: Այս պարտությունը, չնայած չբերեց դեպի կայսրության տարածք անմիջական ներխուժման, սակայն այնուհանդերձ որոշակիորեն անկայունացրեց դրությունը բալկանյան ճակատում: Իր հերթին խաղաղ չէր դրությունը, սակայն, նաև նոր ձեռք բերված տարածքներում:

Գելիմերի հանձնվելուց հետո Բելիսարիոսը, հետը վերցնելով վանդալների նախկին արքային, տեղում թողնելով իր հիմնական ուժերը և քաղաքացիական իշխանությունը հանձնելով մայրաքաղաքից վերադարձած Սողոմոն Դարացուն, իր շքախմբի հետ միասին մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ լավ ընդունելության արժանացավ: Հուստինիանոս Ի-ն արդեն պատրաստվում էր հարված հասցնել օսթգոթերին, սակայն հաջորդ տարի իրավիճակը նոր ձեռք բերված տարածքներում կրկին բարդացավ:

Խնդիրը կայանում էր նրանում, որ, մազաչափ իսկ չհոգալով այն մասին, ինչի մասին, ի դեպ, շատ էր հոգում Բելիսարիոսը, որ նոր ձեռք բերված տարածքներում գրավի մարդկանց սրտերը, պաշտոնական Կոստանդնուպոլիսը, տարված հինավուրց Հռոմեական կայսրության կարգերի մասին կյանքից կտրված պատկերացումներով, Վանդալական թագավորության նախկին տարածքներում անմիջապես էլ փորձ կատարեց ներդնել հինավուրց և, կարելի է ասել, արդեն ժամանակավրեպ ու իրենց սպառած կարգերն և սովորույթները: Արդյունքում՝ վերջին հարյուրամյակի համեմատական ազատության և շահագործման թեթև ձևերին սովորած տեղական բնակչության մոտ առաջին ոգևորությանն արագորեն փոխարինեց խորը դժգոհությունը: Իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ բերբերները երբեք էլ իրապես ենթակա չէին եղել Հռոմեական կայսրության իշխանությանը և այժմ կատարված կոպիտ փորձը, դնել

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 5; Իսիդոր Սեվիլիացի «Գոթերի, վանդալների և սվեվների պատմություն», գլուխ 42; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

նրանց Հռոմեական կայսրության սովորական կարգերի ենթակայության տակ, անխուսափելիորեն պայթյուն էր առաջացնելու: Եվ վերջապես իր դերն ունեցավ նաև այն հանգամանքը, որ հեռու ափերում հայտնված վարձու ռազմիկները, որոնց մոտ մշտապես էլ ուժեղ էին արկածախնդրական տրամադրությունները, առիթի դեպքում ձգտում էին նորանոր ձեռքբերումների ու արկածախնդրությունների, իսկ կայազորային տխուր ծառայությունն էլ նրանց որևէ կերպ չէր հրապուրում:

534 թվականի աշնանը արդեն բացահայտ ապստամբության ուղին բռնած բերբերների բանակը (50.000) Կարթագենի մոտ գտնվող կիրճերից մեկում շրջապատեց Ռուփինոսի և Այգայի գլխավորությամբ իրենց ձեռք բերած ավարը խլած Բյուզանդական կայսրության բանակին (500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10) և գլխովին ջախջախեց, ընդ որում Այգան ընկավ մարտում, իսկ վիրավոր վիճակում գերված Ռուփինոսը հետագայում սպանվեց[1]: 534 թվականի դեկտեմբերին Սողոմոն Դարացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) շարժվեցին թշնամու դեմ ու Բյուզակիոնի ճ-մ-ում, հանդիպակաց մարտում առանձնացված ջոկատի (500) ուժով ներխուժելով թշնամու ճամբար և խուճապի մատնելով այն եզրող ուղտերին, խուճապի ու ծանր պարտության մատնեցին բերբերներին (50.000)[2]: Զարգացնելով հաջողությունը՝ 535 թվականի հունվարին Բուրգաոնի ճ-մ-ում (Լիբիա, Ջեբել Բոն Գանաուի մոտ) Սողոմոն Դարացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 80), շրջանցիկ ջոկատի (1.000) ուժով գրավելով լեռան գագաթը ու խուճապի մատնելով վերջինիս լանջերին պաշտպանվող հակառակորդին, վերջնական պարտության մատնեցին բերբերներին (մոտ 20.000)[3], որից հետո մինչև ամառ ասպատակեցին Աբրասիոս բարձրավանդակը (Լիբիայի արևմուտք)[4]: Արդյունքում՝ բերբերների ելույթը ճնշվեց և Աֆրիկայի հյուսիսային ափերին գոնե առժամանակ խաղաղություն հաստատվեց:

Գլուխ 33
Գոթական պատերազմը

Վանդալական պատերազմը, գերմանական ռազմական համակարգի հետ ընդհարումներում Հուստինիանոս I-ի ռազմական մեքենայի համար զուտ ռազմական առումով կարծես փորձաքար հանդիսանալով, վերջին հաշվով ցույց տվեց, որ ընտրված ուղին ճիշտ է: Իրոք, 533 թվականի սեպտեմբերի 13-ի նույն Դեցիումի ճակատամարտում տափաստանային քոչվոր բուլղարները իրենց հեծյալ աղեղնամարտով մարտավարական մակարդակում լիովին գերազանցեցին ավանդական գերմանական մարտավարություն ցուցադրող վանդալներին՝ հարվածելով հեռվից, երբ սրանք նետողական զենքեր չունեին կամ ունեին չնչին քանակությամբ և շեշտադրում էին ձեռնամարտը: Իր հերթին, 533 թվականի դեկտեմբերի 15-ի արդեն Տրիկամերիայի ճակատամարտում, երբ ըստ Պրոկոպիոս Կեսարացու Գելիմերը. «*... բոլոր վանդալներին հրաման էր տրվել մարտում չօգտվել ոչ նիզակներից, ոչ այլ նետողական զենքերից, այլ հույսը դնել միայն թրերի վրա*» և իրոք, հետագայում. «*Բարբարոսները քաջաբար դիմադրեցին...՝ կռվելով միմիայն թրերով*», գերմանական ռազմական մեքենան ևս մեկ անգամ համոզիչ անհաջողություն կրեց: Փաստորեն կյանքը ցույց տվեց, որ հոների կողմից գերազանցվելուց հետո մեկ դար անց էլ գերմանական ռազմական միտքը հետևություններ չէր արել այն ուղղությամբ, որ չի կարելի միայն մերձամարտի զենքերի վրա հույս դնել և մերձամարտի ձգտող մարտավարություն վարել, ընդ որում այս պարագայում գերմանացիների վիճակը կրկնակի էր բարդանում նրանով, որ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 10:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 11:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 12:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 13:

հեռամարտի զենքով զինվածներին կայսերական բանակը մերձամարտում հաջողությամբ լրացնում էր ուժեղ հետևակով ու հեծելազորով: Փաստորեն հեռամարտի և մերձամարտի խառնուրդը, որը կիրառում էր կայսերական բանակը, ավելի արդյունավետ էր, քան բացառապես միայն մերձամարտի վրա շեշտադրող գերմանական մարտավարությունը: Ապագա պատերազմում իրերի քաղաքական դրությունը ևս, սակայն, դրական հույսեր էր ներշնչում:

Իրոք, նույն այս ժամանակ օսթգոթերը, վախենալով ընդհարման մեջ մտնել ֆրանկների հետ, չէին օժանդակել իրենց բնույթով գերմանական Բուրգունդիայի և Թյուրինգիայի թագավորություններին, որոնք զոհ էին գնացել ֆրանկների հարվածներին, իսկ արդյունքում էլ Ֆրանկական թագավորությունը, փոխադարձ խորը անվստահության պայմաններում, սահմանի մի լայնարձակ հատվածով հյուսիսից կախվել էր Օսթգոթական թագավորության վրա: Լավ չէր իրերի դրությունը, սակայն, նաև բալկանյան սահմանում, որտեղ սեփական իրավունքների համար եռանդուն կերպով պայքար մղող գեպիդների առաջնորդ Մունդոսի օրոք մինչ այդ կախվածության մեջ հայտնված Գեպիդական թագավորությունը 529 թվականին ևս թողեց օսթգոթերի գործը և անցավ կայսրության կողմը: Կայուն չէր վիճակը, սակայն, նաև երկրի ներսում, քանզի Թեոդորիք I Մեծի որդի, մանկահասակ Ատալարիքի (526-534) մահվանից հետո երկրում մինչ այդ փաստացի իշխող վերջինիս մայր Ամալասունտան 534 թվականին գահազրկվեց, որից հետո թագավորության ղեկին հայտնվեց վերջինիս խորթ եղբայր Թեոդաքատը (534-536): Նոր արքան, սակայն, անվճռական էր, երկրում առանձնակի հեղինակություն չուներ և նրա դիրքերը չափազանց երերուն էին: Եվ վերջապես իրերի դրությունը քաղաքակրթական մակարդակում ևս օսթգոթերի կողմում չէր ու այս մակարդակում ևս, չնայած արտաքին փայլին և դեռևս ավանդականորեն ընկալվող հեղինակությանը, գործերն այդքան էլ լավ չէին:

Իրոք, նստակեցության անցած և ռոմանականացված գոթերի հսկայական հատվածներ նույն այս ժամանակ արդեն դուրս էին եկել Օսթգոթական թագավորության տիրապետության տակից ինչպես քաղաքակրթական, այնպես էլ կոնկրետ ռազմական մակարդակում: Իհարկե, առիթի դեպքում օսթգոթական առաջնորդները զուտ կամային որոշումով ի վիճակի էին ի մի բերել որոշակի տարածքի արական սեռի բնակչության զգալի հատվածներ, բայց արդյունքում առաջացած ռազմիկների կուտակումն իրենից արդեն ամենևին էլ չէր ներկայացնում թեկուզ և նախկին ցեղական ռազմական մեքենայի մակարդակում առկա մարտունակությունը: Մարդկանց այս հավաքածուն այժմ ավելի շատ նմանվում էր ֆեոդալիզմի դարաշրջանի եվրոպական մի բանակի, որում, ըստ ֆեոդալի հրամանի, ի մի էին հավաքվել իր հրամանի տակ գործող բոլոր գյուղացիները, իսկ նման ուժերի մարտունակությունը, չնայած հաճախ զգալի քանակությանը, որպես կանոն, բավականին ցածր էր:

Օսթգոթական թագավորության հետ զարգացող հարաբերությունները վերջնականապես պատերազմական տեսք ստացան այն բանից հետո, երբ, չնայած Հուստինիանոս I-ի ձեռնարկած դիվանագիտական ջանքերին, կայսերամետ նախկին թագուհի Ամալսունտան Թեոդաքատի հրամանով սպանվեց, ընդ որում վերջինիս խեղդամահ արեցին տաք բաղնիքում՝ կարծես դրանով իսկ ավելի ընդգծելով արարքի հակակայսերական բնույթը: Արդյունքում՝ արդեն 535 թվականի ամռանը Օսթգոթական թագավորության դեմ մղվող գործողությունները սկսեցին ստանալ գործնական տեսք, ընդ որում Հուստինիանոս I-ի ռազմական տեսաբանները ապագա պատերազմում նախատեսել էին թշնամուն հարվածել միանգամից երկու ուղղություններով՝ որպես գլխավոր ուղղություն հարված պետք է հասցվեր Իտալիայի հարավից, իսկ բալկանյան ճակատից եկող հարվածն էլ ուներ երկրորդական նշանակություն: Իտալիայի հարավից հասցվող հիմնական հարվածն իրականացնող բանակի ղեկավար կարգվեց Բելիսարիոսը, իսկ մյուս ճակատի հրամանատար նշանակվեց Օսթգոթական թագավորության նախկին հրամանատար և գեպիդների առաջնորդ Մունդոսը, որը,

սակայն, արդեն գործում էր կայսրության կողմում: Սկիզբ էր առնում Գոթական պատերազմը (535-555)՝ ծանր մի պատերազմ, որի արդյունքները լինելու էին ինչքան շշմեցուցիչ և փայլուն, այնքան էլ՝ վաղանցիկ:

535 թվականի աշնանը Մունդոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 7.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 70) Սալոնայի ճ-մ-ում հաղթեցին Օսթգոթական թագավորության իրար գլուխ հավաքված կայազորային ուժերին (մոտ 7.000) և մտան քաղաք[1]: Արդյունքում՝ ողջ Դալմացիան, իսկ հետո արդեն Բալկանյան թերակղզին ընկան Բյուզանդական կայսրության տիրապետության տակ և կայսրությունը սկսեց մոտենալ Ապենինյան թերակղզու հյուսիս-արևելյան սահմաններին: Իր հերթին, 535 թվականի աշնանը գլխավոր հրամանատար Բելիսարիոսի, նրա օգնականներ Կոնստանդինի և Բեսսասի, Պերանիոս Բագրատունու, հեծելազորի հրամանատարներ Վալենտինի, Մագնուսի ու Ինոկենտիոսի, հետևազորի հրամանատարներ Հերոդիանոսի, Պողոսի, Դեմետրիոսի և Ուրսիցիոսի, ինչպես նաև իսավրիացիների հրամանատար Էննոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (15.000, այդ թվում 3.000 իսավրիացի, 300 մավր, 200 բուլղար) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) ափհանում իրականացրին Սիցիլիայում, որից հետո առանց լուրջ մարտերի մտան Կատանիա (Սիցիլիայի արևելյան ափին, Սիրակուզայից մոտ 55 կմ հյուսիս-արևմուտք) և Սիրակուզա: Համեմատականորեն համառ դիմադրություն ցույց տվեց միայն Պալերմոն (Սիցիլիայի հյուսիսային ափին), սակայն վերջինս էլ ընկավ այն բանից հետո, երբ նավահանգիստ մտած նավերի կայմերից կախված մակույկներից կայսերական ռազմիկները նետերի հեղեց թափեցին հակառակորդի ռազմիկների վրա[2]: Արդյունքում՝ Սիցիլիան ընկավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ և օղակը Օսթգոթական թագավորության շուրջն ավելի սեղմվեց: Հետագա հաջողությունները, սակայն, տրվեցին ավելի դժվար և հետաձգվեցին, ինչն ուներ իր պատճառները: Ավելին, 536 թվականի գարնանը Մունդոսի դեմ ուժերը կենտրոնացրած Թեոդաքատը պատասխան հարված հասցրեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 5:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 5; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

536 գարուն – ***Սալոնայի ճ-մ***[1]

Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 10.000) մոտեցավ Մունդոսի և նրա որդի Մավրիկոսի գլխավորությամբ քաղաքի մոտակայքում տեղակայված Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 7.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 70):

I փուլ – Օսթգոթական թագավորության բանակը անակնկալ հարված հասցրեց Մավրիկոսի գլխավորած կայսերական բանակի առաջապահին և համառ մարտում լիովին ոչնչացրեց այն: Զոհվեց նաև Մավրիկոսը:

II փուլ – Տեղեկանալով այս մասին՝ Մունդոսի գլխավորած ուժերը մտան մարտի մեջ և պարտության ու փախուստի մատնեցին հակառակորդին, սակայն իրականացված հետապնդման ընթացքում Մունդոսը ծանր վերք ստացավ և կարճ ժամանակ անց մահացավ:

Հայերը կորցրին մոտ 7, դաշնակիցը՝ մոտ 700, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Ստեղծված պայմաններում չկարողանալով ամրանալ տեղում՝ կայսերական բանակը թողեց քաղաքը և հետ քաշվեց: Այսպիսով, չնայած վերջին ճակատամարտի որոշակիորեն հակասական արդյունքին, բալկանյան ճակատում առանց գլխավոր հրամանատարի մնացած և զգալի կորուստներ կրած կայսերական բանակը կորցրեց նախաձեռնությունը: Ավելին, զարգացող դեպքերը կասեցրին նաև հարավից գործող Բելիսարիոսին, քանզի հերթական անգամ պայթեց դրությունը Հյուսիսային Աֆրիկայում:

Իրոք, որոշակիորեն հղփացած ձեռք բերած հաջողություններից և հարստացած, Սողոմոն Դարացու հրամանի տակ գտնվող տեղի կայազորային ռազմիկները վերջին շրջանում սկսել էին աստիճանաբար արդեն դուրս գալ կառավարումից, սակայն բանը վերջնական ընդհարման հասավ այն բանից հետո, երբ զոհված կամ անհետ կորած վանդալ ռազմիկների կանանց հետ ամուսնական փաստացի կապեր հաստատած կայսերական ռազմիկները սկսեցին Սողոմոն Դարացուց պահանջել իրենց հանձնել իրենց ներկայիս կանանց նախկին ամուսինների ունեցվածքը և ամենից առաջ՝ հողային տիրույթները: Ըմբոստների գլուխ կանգնած էր Ստոցասը, որը փորձում էր տեղում սեփական թագավորությունը ստեղծել:

536 թվականի ապրիլին Ստոցասի դավադիրները փորձ կատարեցին սպանել Սողոմոն Դարացուն, սակայն դավադրությունը բացահայտվեց: Դրանից հետո ապստամբած ռազմիկները Ստոցասի գլխավորությամբ անցան արդեն բացահայտ ելույթի՝ որպես առաջնորդ ընտրելով Թեոդորոս Կապադովկիացուն ու Աֆրիկայի կառավարչին պաշարելով քաղաքում: Արդյունքում՝ ծայրահեղ վիճակում հայտնված Սողոմոն Դարացին Թեոդորոս Կապադովկիացու գաղտնի աջակցությամբ փախավ Սիցիլիա, իսկ Կարթագենը շարունակեց մնալ շրջափակված վիճակում: Այս ժամանակ Բելիսարիոսն արդեն տենդագին պատրաստություններ էր տեսնում Ապենինյան թերակղզու հարավ անցնելու համար, սակայն Հյուսիսային Աֆրիկայում զարգացող իրադարձությունները և Սիցիլիայում հայտնված Սողոմոն Դարացին ուշացրին նրան:

Արդյունքում՝ 536 թվականի ամռան կեսերին Սիցիլիայից ժամանած Բելիսարիոսի, ինչպես նաև Սողոմոն Դարացու և Թեոդորոս Կապադովկիացու գլխավորած կառավարական բանակը (2.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) մտան Կարթագեն, որից հետո այս քաղաքի շրջակայքում գտնվող ապստամբները նահանջեցին և կենտրոնացրին ուժերը Բագրադ գետի մոտակայքում՝ Կարթագենից մոտ 70 կմ հարավ-արևմուտք, Մեմբրեսիա քաղաքի մոտ: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը, 536 թվականի օգոստոսին Բելիսարիոսի բանակը անակնկալ հարձակումով հաղթեց Ստոցասի գլխավորած ապստամբներին (մոտ 10.000, այդ թվում վանդալներ, էրուլներ և մավրներ) ու նրանց կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 7:

100)[1]: Դրանից հետո Բելիսարիոսը վերադարձավ Սիցիլիա և շարունակեց ընդհատված ռազմական նախապատրաստությունները, իսկ ապստամբների դեմ մղվող մարտական գործողությունների հրամանատար էլ նշանակվեցին Իլդիգերն ու Թեոդորոս Կապադովկիացին:

Արդյունքում, փորձելով վերջնականապես պարտության մատնել և ձերբակալել խռովարար ռազմիկներին, արդեն ամռան սկզբին Մարցելոսի, Կիրիլի, հեծելազորի հրամանատար Բարբատոսի, ինչպես նաև հետևազորի հրամանատարներ Տերենտիոսի ու Սարապիոսի գլխավորությամբ Կարթագենից նրանց դեմ բանակ ուղարկվեց, սակայն այս բանակը, ենթարկվելով մարտից առաջ Ստոցասի արձակած կոչին, ի վերջո ինքն էլ ապստամբեց և անցավ հակառակորդի կողմը: Ստեղծված պայմաններում կառավարական բանակի բարձր հրամանատարական կազմը դիմեց փախուստի և ապաստանեց եկեղեցիներից մեկում, սակայն Ստոցասը, շրջապատելով այն և անվտանգության երաշխիքներ տալով, ստիպեց բոլորին հանձնվել: Արդյունքում, սակայն, Մարցելոսը, Կիրիլը, Բարբատոսը, Տերենտիոսն ու Սարապիոսը սպանվեցին: Այս դեպքերից հետո Հուստինիանոս I-ը Հյուսիսային Աֆրիկայի կառավարիչ նշանակեց իր մորաքրոջ որդի Հերմանոսին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

536 սեպտեմբեր – ***<u>Սկսվե Վետերսի ճ-մ</u>*** (Կարթագենից մոտ 10 կմ հարավ)[2]

Հերմանոսի, Սողոմոն Դարացու, հետևակի հրամանատար Դոմինիկի, հեծելազորի հրամանատարներ Թեոդորոս Կապադովկիացու, Իլդիգերի և Հովհաննես Տրոգլիտայի գլխավորած կառավարական բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) սկսեցին մոտենալ Ստոցասի գլխավորությամբ ***<u>Կարթագենին</u>*** մոտեցող ապստամբներին (մոտ 30.000, այդ թվում վանդալներ, էրուլներ և մավրներ) ու նրանց կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 100), որոնք, տեղեկանալով այդ մասին, հետ քաշվեցին: Կողմերը ճամբար զարկեցին, իսկ հաջորդ օրը մարտակարգ ընդունեցին:

Կառավարական բանակի ձախ թևի և ողջ բանակի հրամանատարությունն իրականացնում էր Հերմանոսը, ավելի աջ՝ կենտրոնում, տեղակայված էին Թեոդորոսի ու Իլդիգերի ջոկատները, իսկ աջ թևում էլ գտնվում էր Հովհաննեսի ջոկատը: Դոմինիկի գլխավորած հետևազորը, ամրացած սայլերի հետևում, գտնվում էր երկրորդ շարքում: Ապստամբների բանակի առաջին շարքում տեղակայվեցին նախկին կայսերական ապստամբ ռազմիկները, ձախ թևում՝ էրուլները, իսկ երկրորդ շարքում՝ բերբերները, ընդ որում վերջիններիս հավատարմությունը կասկածելի էր և նրանք պատրաստվում էին մարտի ժամանակ անցնել հաղթողի կողմը:

I փուլ – Ապստամբների բանակի առաջին շարքի ձախ թևում էրուլներն անցան հարձակման և, պարտության մատնելով հակառակորդի աջ թևի առաջին շարքին, մատնեցին փախուստի, որից հետո համառ մարտի մեջ մտան կառավարական բանակի երկրորդ շարքի հետևազորի հետ:

II փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ ապստամբների բանակի առաջին շարքն անցավ հարձակման նաև կենտրոնում և աջ թևում, սակայն համառ մարտից հետո հետ շպրտվեց:

III փուլ – Կառավարական բանակի ձախ թևը և կենտրոնում գործող Թեոդորոսի ջոկատը սկսեցին հետապնդել հակառակորդի աջ թևին ու կենտրոնին, իսկ Իլդիգերի ջոկատն էլ, միանալով աջ թևում մարտադաշտ վերադարձած Հովհաննեսի ջոկատի, ինչպես նաև երկրորդ շարքի հետևազորի հետ, համակցված

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 15; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 16, 17; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

հարված հասցրին ապստամբների բանակի առաջ եկած ձախ թևին: Արդյունքում՝ ծանր կորուստներ կրելով փախուստի դիմեց նաև ապստամբների բանակի ձախ թևը:

IV փուլ – Կառավարական բանակը հարձակման անցավ թշնամու ճամբարի ուղղությամբ և իր կողմն անցած բերբերների օգնությամբ ի վերջո գրավեց այն:

V փուլ – Կառավարական բանակը հետապնդեց թշնամու մնացորդներին և, ծանր կորուստներ պատճառելով, վերջնականապես ցրեց նրան:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 50, դաշնակիցը՝ մոտ 800, պարտվողներից հայերը՝ մոտ 20, դաշնակիցները՝ մոտ 8.000 զինվոր:

Եվ այսպես, Ստոցասի ապստամբությունը ճնշվեց, իսկ ապստամբների հրամանատարն ինքն էլ ապաստանեց Մավրիտանիայում՝ պայքարի շարունակումը հետաձգելով այլ ժամանակների: Իր հերթին, վերջնականապես ամրապնդելով թիկունքը, կայսերական արևմտյան բանակն ի վերջո ձեռնամուխ եղավ Օսթգոթական թագավորության դեմ մղվող պատերազմի շարունակմանը, ինչը հետաձգվել էր արդեն գրեթե մեկ տարի:

Անցած մեկ տարին, սակայն, մինչ Հուստինիանոս I-ի ուժերը զբաղված էին այլ գործերով, ոչ միայն թույլ էր տվել Թեոդաքատին ուշքի գալ, այլև նույնիսկ հիմքեր էր տվել կարծելու, որ վտանգն արդեն անցել է: Արդյունքում՝ կայսերական դիվանագետների հետ մղվող բանակցություններում օսթգոթերի արքան, դրա համար չունենալով որևէ հիմք, կոշտացրել էր դիրքորոշումը: Այս հանգամանքն էլ, ահա, հիանալի առիթ տվեց Հուստինիանոս I-ին վերսկսել պատերազմական գործողությունները Օսթգոթական թագավորության դեմ:

536 թվականի հոկտեմբերի սկզբին, վերսկսելով պայքարը Սալոնի համար, բալկանյան ճակատի գլխավոր հրամանատար Կոնստանդինի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 400), առանց լուրջ մարտերի հետ մղելով տեղում գործող Օսթգոթական թագավորության բանակին, մտան քաղաք: Արդյունքում՝ Դալմացիան և Լիբուրնիան արդեն վերջնականապես ընկան Բյուզանդական կայսրության տիրապետության տակ[1]: Գլխավոր ճակատը, սակայն, հարավայինն էր և հենց այս կողմից էր, որ Օսթգոթական թագավորությանը մահացու հարված էր հասցվելու:

536 թվականի հոկտեմբերի կեսից մինչև նոյեմբերի սկիզբ Բելիսարիոսի գլխավորությամբ Սիցիլիայից արշաված և Հարավային Իտալիայում ափհանում իրականացրած Բյուզանդական կայսրության բանակը (15.000, այդ թվում իսավրիացիներ, մավրեր, բուլղարներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000, այդ թվում Պերանիոս Բագրատունին), օգտվելով հակառակորդի կողմից կազմակերպված դիմադրության բացակայությունից, սկսեցին արագորեն զբաղեցնել տեղական քաղաքները և ամրոցները, ընդ որում Հարավային Իտալիայում օսթգոթերի հրամանատար, Թեոդաքատի փեսա Էբրիմուտը, նույնիսկ փորձ էլ չանելով որևէ բան ձեռնարկել, ուղղակի անցավ հակառակորդի կողմը: Իր հերթին կայսերական բանակը 20-օրյա պաշարումից հետո Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեց Նեապոլը (Իտալիա, Տիրենյան ծովի ափին)՝ ուշ գիշերով քաղաք ներխուժելով ջրատար խողովակի միջոցով: Դրանից հետո, զարգացնելով հաջողությունը, Նեապոլում թողնելով կայազոր (300) և առանց մարտերի զբաղեցնելով նաև Կուման (Նեապոլից մոտ 20 կմ հյուսիս, ծովի ափին), նույն թվականի դեկտեմբերի 9-ին Բելիսարիոսի բանակը կրկին առանց մարտերի մտավ Հռոմ՝ վերցնելով քաղաքը հակառակորդի կայծակնային առաջխաղացումից անակնկալի եկած ու բառացիորեն վերջին պահին քաղաքից հեռացած Օսթգոթական թագավորության բանակից (4.000)[2]:

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 7:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 8-10, 14; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Մարցելոս Կոմիտի

Հռոմի գրավումը հսկայական տպավորություն թողեց ժամանակակիցների վրա, որոնց թվում էր, թե վերադարձել են Հռոմեական կայսրության հին ժամանակները: Ավելի իրատես մարդիկ, սակայն, ու նրանց թվում նաև Բելիսարիոսը, հասկանում էին, որ հաջողությունն այդքան հեշտ ձեռք է բերվել մեծապես միայն լավ կազմակերպված անակնկալ հարվածի, ինչպես նաև Օսթգոթական թագավորության ղեկավար կազմի անճարակության պատճառով, ընդ որում որևէ մի նոր և ավելի եռանդուն հակառակորդի ի հայտ գալու պարագայում դեռևս սպասվում էր լուրջ պայքար: Արդյունքում, հայտնվելով Հռոմում, Բելիսարիոսը անմիջապես սկսեց հիմնովին ամրացնել քաղաքի պարիսպները և ուժեղացնել դրանք խանդակով, ինչպես նաև իր ժամանակին բնորոշ պաշտպանական այլ միջոցներով: Միաժամանակ քաղաքում կուտակվեց նաև զգալի քանակի սննդամթերք, քանզի պարզ էր, որ հետագա առաջխաղացման մասին առժամանակ պետք է մոռանալ և, ընդհակառակը, պետք է սպասել հակահարվածի, մանավանդ որ հակառակորդի ճամբարից ստացվող լուրերը հաստատում էին այդ:

Իրոք, լիովին հեղինակազրկված ու հուսահատված, դեպի Ռավեննա ուղղվելիս 536 թվականի դեկտեմբերի սկզբին Թեոդաքատը իր իսկ ռազմիկների կողմից սպանվեց, որից հետո օսթգոթերի արքա հռչակվեց մինչ այդ լավ զորականի համբավի հասած Վիտիգեսը (536-542), որն էլ հենց կանգնած էր այդ սպանության արմատներում: Արդյունքում՝ Վիտիգեսը, որը մինչ այդ հանդիսանում էր Օսթգոթական թագավորության բանակի գլխավոր հրամանատարը, եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ պատասխան միջոցառումների և, գործի դնելով բոլոր միջոցները, առանց որևէ բացառության կամ ընտրության զենքի տակ դրեց իր տիրապետության տակ գտնվող տարածքների զենք կրելու ունակ ու օսթգոթական գործը պաշտպանելու պատրաստ բոլոր տղամարդկանց: Որպես հետևանք այս ամենի՝ 537 թվականի ամենասկզբին Օսթգոթական թագավորության 150.000 հոգանոց բանակը Ապենինյան թերակղզու հյուսիսից արշավանքի ելավ դեպի հարավ:

Առաջին ընդհարումը 537 թվականի փետրվարի սկզբին եղավ Պերուջայի մոտ (Կենտրոնական Իտալիա, Օսիմոյից մոտ 330 կմ արևմուտք), երբ Բելիսարիոսի զորավար Կոստանդինի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) հաղթեցին քաղաքին մոտեցած Օսթգոթական թագավորության բանակի մի մասին (մոտ 5.000)[1]: Գրեթե նույն այս ժամանակ հետ մղվեց Վիտիգեսի հակահարվածը նաև բալկանյան ուղղությամբ, երբ 537 թվականի փետրվարի կեսին Սկարդոնայի ճ-մ-ում (Սալոնայի մոտ) բալկանյան ճակատի գլխավոր հրամանատար Կոստանդինի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50) հաղթեցին քաղաքին մոտեցած Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 10.000)[2]: Կարճ ժամանակ անց հետ մղվեց ևս մեկ հարված Սալոնայի ուղղությամբ[3], որից հետո բալկանյան ճակատում խոշոր մարտեր այլևս չեղան՝ կողմերը կենտրոնացրին ուժերը Ապենինյան թերակղզում մղվող պայքարի վրա:

537 թվականի փետրվարի վերջին Վիտիգեսի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (150.000) հյուսիսից սկսեց մոտենալ Հռոմին: Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Նարնիի (Հռոմից մոտ 70 կմ հյուսիս) մոտ, որտեղ ըստ Բելիսարիոսի հրամանի ուժերը հետ քաշող Բեսսասը մի պահ հապաղեց և ընդհարվեց թշնամու առաջապահի հետ[4]: Հաղթելով և մի կողմ շպրտելով հակառակորդին՝ Բեսսասն ու այլ զորավարներ իրենց ջոկատներով հավաքվեցին Հռոմում, որի մոտակայք շուտով ժամանեց նաև Վիտիգեսն իր բանակով: Սկիզբ էր առնում իր ժամանակի ամենաերկարատև, մեծամասշտաբ և խոշոր ճակատամարտերից մեկը:

Շարունակող «Ժամանակագրություն»:

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 16:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 16:

[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 16:

[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 16, 17:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

537 մարտի 10 - 538 մարտի 19 – ***Հռոմի ճ-մ***[1]

Վիտիգես արքայի գլխավորությամբ ***Ռավեննայի մոտակայքից*** առաջխաղացած Օսթգոթական թագավորության բանակը (150.000) մոտեցավ Հռոմին, որտեղ Բելիսարիոսի, Կոնստանդինի, Բեսսասի, Պերանիոս Բագրատունու և այլոց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (5.000, այդ թվում իսավրիացիներ, բերբերներ և բուլղարներ), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500), ինչպես նաև Հռոմի աշխարհազորը (մոտ 5.000) պատրաստվեցին պաշտպանության:

I փուլ – Մարտի 10-ին կայսերական հեծելազորը (1.000), փորձելով ամրապնդել Տիբեր գետի կամրջի պահպանությունը, դուրս եկավ քաղաքից, սակայն կամուրջը հսկող պահակազորի կողմից դիրքերը լքելու հետևանքով թշնամին ոչ միայն կարողացավ անցնել գետը, այլև՝ անակնկալ հարձակումով թևերից ու թիկունքից գրեթե օղակեց կայսերական հեծելազորին: Արդյունքում՝ կայսերական բանակը, ընդհանուր առմամբ հետ քաշվելով և միայն երբեմն անցնելով տեղական հակագրոհների, միայն ողջ օրը տևած համառ մարտից հետո մեծ դժվարությամբ կարողացավ մոտենալ քաղաքի պարիսպներին: Քաղաքի կայազորը, սակայն, չհավատալով, որ պարիսպների տակ պաշտպանվողները յուրայիններ են և տեղիք տալով Բելիսարիոսի սպանված լինելու մասին լուրերին, առժամանակ հրաժարվեց բացել դարպասը: Ստեղծված բացառիկ ծանր պայմաններում կայսերական բանակի ռազմիկները փրկվեցին միայն շնորհիվ այն բանի, որ երեկոյան մթնշաղում հզոր հակագրոհով հետ շպրտեցին անկանոն առաջացող թշնամուն՝ միայն դրանից հետո ի վերջո կարողանալով պատսպարվել քաղաքում: Միայն օրվա սկզբում թշնամին կորցրեց 1.000 ռազմիկ: Շուտով հիմնական ուժերով քաղաքին մոտեցած Օսթգոթական թագավորության բանակը արևելքից, հյուսիսից ու արևմուտքից պաշարեց այն՝ տեղաբաշխվելով 7 առանձին ճամբարներում, որոնցից 3-ը քաղաքի արևելքում էին, մյուս 3-ը՝ հյուսիսում, իսկ վերջինը՝ Տիբեր գետի ձախ ափին՝ քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում:

II փուլ – Մարտի 28-ի վաղ առավոտյան Օսթգոթական թագավորության բանակը, արևելքից, հյուսիսից ու արևմուտքից պատրաստվեց սկսել քաղաքի գրոհը: Պաշարողական տեխնիկայի լայն կիրառմամբ օրվա սկզբում առաջին հարվածը հասցվեց քաղաքի հյուսիս-արևելքում գտնվող Սալարինյան դարպասի ուղղությամբ, սակայն պաշտպանվողներին հաջողվեց ոչ միայն վնասազերծել հակառակորդի պաշարողական տեխնիկան, այլև, ծանր կորուստներ պատճառելով, հետ շպրտել թշնամու առաջացող ռազմիկներին: Մատնվելով անհաջողության՝ Վիտիգեսը այս հատվածում հակառակորդի ուժերը կաշկանդելու նպատակով Սալարինյան դարպասի ուղղությամբ թողեց զգալի ուժեր, իսկ ինքը պատրաստվեց քաղաքին հարվածել արդեն արևելքից և արևմուտքից:

III փուլ – Մարտի 28-ի կեսօրին Օսթգոթական թագավորության բանակը պաշարողական տեխնիկայի կիրառմամբ հարձակման անցավ քաղաքի հարավ-արևելքում գտնվող Պրանեստինյան դարպասի ուղղությամբ: Միաժամանակ հակառակորդը, այս անգամ կիրառելով միայն աստիճաններ, հարվածեց նաև քաղաքի արևմտյան պարիսպների ուղղությամբ՝ հյուսիս-արևմուտքում գտնվող Սուրբ Պետրոսի ամրություններից մինչև հարավ-արևմուտքում գտնվող Ավրելիոսյան դարպաս: Սկզբնական հաջողությունը հարձակվողների կողմում

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 5, գլուխ 16-23, 25-29, գիրք 6, գլուխ 1-10, 13; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»:

եղավ հատկապես արևմտյան կողմում, որտեղ, օգտվելով մարտավարական անակնկալից, Օսթգոթական թագավորության բանակի ռազմիկները արագորեն և առանց լուրջ կորուստների անցան նետողական զենքերի հարվածին ենթակա ամրությունների դիմացի հատվածը և, կուտակվելով պարիսպների տակ, փորձեցին վեր մագլցել: Իր հերթին պաշտպանվողները, արագորեն հաղթահարելով խուճապային տրամադրությունները, պարսպի տակ հայտնված հակառակորդի ռազմիկներին հարվածներ հասցրին քարերով և նույնիսկ արձանների կոտրված բեկորներով, իսկ երբ ներքևում գտնվողները աստիճանաբար հետ քաշվեցին ու հայտնվեցին արդեն նետողական զենքերի հարվածին ենթակա տարածքում՝ նաև դրանցով: Արդյունքում, կրելով ծանր կորուստներ, քաղաքի արևմուտքում Օսթգոթական թագավորության բանակը հետ մղվեց ելման դիրքեր: Միաժամանակ նախնական հաջողությունը հակառակորդի կողմում եղավ նաև քաղաքի արևելյան ամրությունների մոտ, որտեղ, գրավելով նախապարիսպը, վերջինս սկսեց առաջանալ հիմնական ամրությունների ուղղությամբ: Կայսերական բանակի ռազմիկները, սակայն, ժամանակին համալրում ստանալով Բելիսարիոսի գլխավորությամբ Սալարինյան դարպասի կողմից ժամանած ուժերից, ոչ միայն ծանր կորուստներ պատճառեցին հակառակորդին, այլև ի վերջո հետ շպրտեցին վերջինիս ելման դիրքեր՝ այրելով հակառակորդի ռազմիկների կողմից լքված ու պարիսպների դիմաց գտնվող պաշարողական տեխնիկան:

IV փուլ – Մարտի 28-ի օրվա վերջին կայսերական բանակը հաջող արտագրոհ իրականացրեց նաև Սալարինյան դարպասի կողմից՝ այս անգամ ևս հետ շպրտելով հակառակորդին ելման դիրքեր և այրելով պաշարողական տեխնիկան:

V փուլ – Մարտի 31-ին, ցանկանալով կտրել քաղաքի կապը ծովի հետ, Օսթգոթական թագավորության բանակը անակնկալ գրոհով գրավեց ***Պորտոսը*** (քաղաքից մոտ 20 կմ արևմուտք)՝ կոտորելով վերջինիս բնակչությանը և տեղում թողնելով կայազոր (1.000): Հունիսի 20-ին կայսերական բանակը համալրվեց քաղաք մտած մի խոշոր ջոկատով (1.600 բուլղարներ, սլավոններ և անտեր):

VI փուլ – Հունիսի 21-ին կայսերական բանակի մի ջոկատ (200) դուրս եկավ քաղաքից և, ամուր դիրքեր գրավելով ու հրապուրելով թշնամիներին հարձակվել իր վրա, անընդհատ հարվածներ հասցնելով նահանջեց պարիսպների ուղղությամբ՝ գցելով հակառակորդին բալիստների հարվածների տակ ու ծանր կորուստներ պատճառելով վերջինիս: Մի քանի օր անց նույնը կրկնեց նաև մեկ այլ ջոկատ (300), իսկ որոշ օրեր անց՝ ևս մեկը: Արդյունքում՝ թշնամին կորցրեց 4.000 զինվոր:

VII փուլ – Հուլիսի կեսերին Օսթգոթական թագավորության բանակի մի ջոկատ (500) փորձ կատարեց մոտենալ պարիսպներին և դուրս քաշել հակառակորդին բաց դաշտ, սակայն շրջապատվեց Բեսսասի գլխավորությամբ արտագրոհ իրականացրած կայսերական բանակի մի ջոկատի (1.000) կողմից ու ծանր պարտություն կրեց: Մի քանի օր անց նմանատիպ պայմաններում կայսերական բանակի հերթական ջոկատը (1.500) ոչնչացրեց թշնամու ևս մեկ ջոկատ: Միաժամանակ վերջին ամիսների հաջողությունները չափից դուրս ինքնավստահություն ներշնչեցին կայսերական բանակի ռազմիկներին, որոնք, ճիշտ չգնահատելով իրավիճակը, սկսեցին Բելիսարիոսից պահանջել բաց մարտի հանել իրենց: Ի վերջո, տեղի տալով համառ պնդումներին, Բելիսարիոսը պատրաստվեց բաց մարտի դուրս գալ հակառակորդի դեմ:

VIII փուլ – Հուլիսի վերջին, հիմնական ուժերով դուրս գալ քաղաքի հյուսիսում գտնվող Սալարինյան և Պինցինյան դարպասից, Բելիսարիոսը միաժամանակ նաև Վալենտինի գլխավորությամբ քաղաքի արևմուտքում գտնվող Ավրելիոսյան դարպասից դուրս հանեց հիմնականում քաղաքային աշխարհազորայիններից

կազմված ուժերը՝ որոնք խնդիր ունեին վարել ամուր պաշտպանական մարտ և, գլխավորապես, կասեցնել իրենց դիմաց գործող հակառակորդի 7-րդ ճամբարի ակտիվությունն այլ ուղղություններով ու հատկապես հյուսիսային ուղղությամբ: Մարտակարգ ընդունեց նաև Օսթգոթական թագավորության բանակը, ընդ որում քաղաքի հյուսիսային կողմում Վիտիգեսի գլխավորությամբ դիրքեր գրաված ուժերի թևերում տեղակայվեց հեծելազորը, իսկ կենտրոնում՝ հետևակը: Մարտական վիճակի բերվեցին նաև Օսթգոթական թագավորության բանակի այն ուժերը, որոնք տեղակայված էին քաղաքի արևմտյան և արևելյան պարիսպների մոտ: Օրվա առաջին կեսին կայսերական բանակի հեծելազորը, սրընթաց գրոհելով ու նահանջներով, այդ ընթացքում կիրառված հեծյալ աղեղնամարտում զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին: Միաժամանակ, չնայած ստացված հստակ առաջադրանքին, քաղաքի արևմտյան պարիսպների մոտ գտնվող կայսերական ուժերն անցան գրոհի և իրենց հերթին ոչ միայն փախուստի մատնեցին հակառակորդին, այլև՝ գրավեցին վերջինիս ճամբարը: Դրանից հետո, սակայն, տարվելով ավարառությամբ, վերջիններս ցրեցին ուժերը, ինչից օգտվելով էլ արդեն օրվա երկրորդ կեսին հակահարձակման անցած Օսթգոթական թագավորության բանակը ոչ միայն հետ գրավեց սեփական ճամբարը, այլև Վալենտինի գլխավորությամբ գործող ռազմիկներին շպրտեց ելման դիրքեր: Նախորդ դեպքերի հետ միաժամանակ, արդեն քաղաքի հյուսիսային կողմումը Օսթգոթական թագավորության բանակը, ի վերջո կաշկանդելով հակառակորդին ճակատային մարտով, աջ թևից հարվածած հեծելազորային ուժերով խուճապի և փախուստի մատնեց վերջինիս: Արդյունքում՝ քաղաքի հյուսիսային կողմում ևս կայսերական բանակի ռազմիկները, մատնվելով փախուստի, միայն ուշ երեկոյան և մեծ դժվարությամբ ապաստանեցին քաղաքում:

IX փուլ – Ամռան մնացած մասը և մինչև ուշ աշուն կայսերական բանակը հաջողությամբ հետ մղեց հակառակորդի մանր գրոհները՝ իրականացնելով բազում արտագրոհներ: Այս ընթացքում, հաշվի առնելով աստիճանաբար սրվող պարենային դրությունը, Բելիսարիոսի հրամանով Կամպանիա ժամանած Պրոկոպիոս Կեսարացին պարենամթերքի զգալի պաշարներ տեսավ: Միաժամանակ, մինչ Պողոսի և Կոնանի գլխավորությամբ Նեապոլ էին ժամանում իսավրիացիների հիմնական ուժերը (3.000), Զենոնի գլխավորած իսավրիացիների առաջապահը (300 հեծյալ) մտավ Հռոմ: Իր հերթին Օթրանտում ափ իջավ նախկին հայտնի ապստամբ Վիտալիանոսի եղբորորդի Հովհաննես Թրակիացու, վերջինիս եղբորորդի Վիտալիանոսի, ինչպես նաև Ալեքսանդրի ու Մարցենիոսի գլխավորած հեծելազորը (1.800 հեծյալ, այդ թվում 800 թրակիացիներ):

X փուլ – Նոյեմբերի կեսին Տրայանոսի գլխավորությամբ Պինցինյան դարպասից արտագրոհ իրականացրած կայսերական բանակի ռազմիկները (1.000), հարձակումով և կեղծ նահանջով առաջ քաշելով, սեփական ճամբարից դուրս քաշեցին հակառակորդի հիմնական ուժերը, որից հետո, քանդելով մինչ այդ քարերով շարված Ֆլամինևյան դարպասը, Բելիսարիոսի գլխավորությամբ հիմնական ուժերի կազմով դուրս եկան բաց դաշտ: Փորձ կատարելով գրավել հակառակորդի ամրացված ճամբարներից մեկը, որն այդ պահին դատարկ էր, սակայն մատնվելով անհաջողության, Բելիսարիոսի ուժերը շարժվեցին դեպի արևելք և, նահանջը դադարեցրած Տրայանոսի ջոկատի ռազմիկների հետ միասին հասցված համակցված հարվածով ծանր կորուստներ պատճառելով ու փախուստի մատնելով հակառակորդին, վերադարձան քաղաք: Սրանից կարճ ժամանակ անց Հովհաննես Թրակիացու, Վիտալիանոսի, Ալեքսանդրի, Մարցենիոսի, Պողոսի, Կոնանի, ինչպես նաև Ներսեհ և Հրահատ Կամսարականների գլխավորությամբ մինչ այդ Նեապոլում ուժերը միավորած կայսերական բանակը, ուղեկցելով սայլերով տեղափոխվող պարենամթերքը, մարտարշավ սկսեց դեպի Հռոմ ու

հաջողությամբ ապաստանեց քաղաքում: Նոյեմբերի վերջին 3 ամսով կնքվեց զինադադար, որի ընթացքում Վիտիգեսի դեսպանները պետք է մեկնեին Կոստանդնուպոլիս և բանակցություններ վարեին Հուստինիանոս Ի-ի հետ: Զինադադարի ընթացքում Օսթգոթական թագավորության բանակը սկսեց զգալի կորուստներ կրել տարածված համաճարակներից: Տարածված համաճարակից տուժեցին նաև կայսերական բանակի ռազմիկներից ոմանք և հատկապես բուլղարները: Այս ընթացքում Հռոմ ժամանեց նաև Իլդիգերի գլխավորած հեծելազորը (մոտ 3.000), իսկ Պողոսի գլխավորած ուժերը զբաղեցրին հակառակորդի կողմից լքված ***Պորտոսը:*** Կայսերական բանակը զբաղեցրեց նաև ***Յենտումցելան*** (Հռոմից մոտ 60 կմ հյուսիս-արևմուտք, ծովի ափին), ինչպես նաև ***Ալբա երկրամասը*** (Հռոմից հյուսիս): Արդյունքում՝ Օսթգոթական թագավորության բանակը, հայտնվելով ռազմավարական շրջափակման մեջ, աստիճանաբար սկսեց պարենի պակաս զգալ:

XI փուլ – 538 թ-ի փետրվարի վերջին, երբ զինադադարն ավարտվեց, Հովհաննես Թրակիացու, Վիտալիանոսի, Դամիանի, Սունտայի և Ադեգինայի գլխավորությամբ Հռոմից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (2.000 հեծյալ) և նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 20) սկսեցին գործել հակառակորդի խորը թիկունքում: Իր հերթին, Օսթգոթական թագավորության բանակը լքված ջրատարով քաղաք թափանցելու միջոցով փորձ կատարեց տիրել Հռոմին, սակայն անհաջողության մատնվեց: Տապալվեցին նաև քաղաքը ինչպես դավաճանությամբ, այնպես էլ ուղղակի գրոհով գրավելու մի քանի փորձեր ևս: Ստեղծված պայմաններում, սպառնալիքի տակ տեսնելով արդեն Ռավեննան, Օսթգոթական թագավորության բանակը պատրաստվեց թողնել քաղաքի պաշարումը և նահանջել:

XII փուլ – 538 թ-ի մարտի 19-ին, այրելով ճամբարները, Օսթգոթական թագավորության բանակը թողեց քաղաքի պաշարումը և սկսեց հեռանալ հյուսիսային ուղղությամբ: Տեղեկանալով այդ մասին՝ Բելիսարիոսի գլխավորած կայսերական բանակը հարձակում գործեց հակառակորդի վերջապահի վրա, և ծանր կորուստներ պատճառելով վերջինիս, վերադարձավ քաղաք:

Հայերը կորցրին մոտ 300, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր:

Հռոմի համար մղված և հենց նոր ավարտված վիթխարի ճակատամարտը հսկայական և նույնիսկ վճռական ազդեցություն ունեցավ պատերազմի հետագա ընթացքի վրա: Օսթգոթերը կոտրված էին, ընդ որում գործնականում անդառնալի հարված էր ստացել ինչպես թագավորության ռազմական մեքենան, այնպես էլ օսթգոթերի հոգեբանությունը: Մինչ այդ սովոր լինելով հռոմեացիներին և, հատկապես, նախկին կայսրության արևելյան տարածքների բնակիչներին համարել ծաղրանքի արժանի երկրորդ դասի մարդիկ, այժմ օսթգոթերը, թվում էր, թե ամեն ինչ ճիշտ արած ու ապահոված ուժերի հսկայական առավելություն, անհաջողություն կրեցին: Ծանր հարվածներ էր ստացել նաև Օսթգոթական թագավորության ռազմական մեքենան, որը, կրած ծանր կորուստների պայմաններում, համենայն դեպս գոնե առժամանակ, ի վիճակի չէր որևէ համակարգված և միասնական գործողության: Եվ վերջապես լիովին հուսալքվել էր նաև մինչ այդ իր եռանդով աչքի ընկնող Վիտիգեսը, որը, թվում է, թե ամեն ինչ արած լինելով հաղթանակի համար, այնուհանդերձ անհաջողության էր մատնվել:

538 թվականի մարտի սկզբին՝ Հռոմի համար մղվող ճակատամարտի տառացիորեն վերջին օրերին, Հովհաննես Թրակիացու, Վիտալիանոսի, Դամիանի, Սունտայի և Ադեգինայի գլխավորությամբ Հռոմից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (2.000 հեծյալ) ու նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 20) արդեն լիուլի տնօրինություն էին անում հակառակորդի բանակի թիկունքում՝ հասնելով

Ռավեննայի պարիսպներին: Այստեղ, փորձելով գոնե մի որևէ կերպ կասեցնել հակառակորդին, Վիտիգեսի եղբայր Ուլֆիլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 4.000) մարտով ընդառաջ դուրս եկավ հակառակորդին, սակայն կայսերական թրծված ռազմիկներն այս անգամ ևս առավելության հասան՝ ջախջախելով հակառակորդին և սպանելով Ուլֆիլային: Դրանից հետո կայսերական բանակն առանց մարտի մտավ Ռիմինի (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Ռավեննայից մոտ 50 կմ հարավ-արևելք)[1]: Քայքայվում էր արդեն Վիտիգեսի խորը թիկունքը, իսկ դա իր հերթին կայսերական բանակի համար հաջողությունների նոր դուռ բացեց: Իրոք, Միլանի ավագանին, տեղեկանալով կայսերական բանակի հաջողությունների մասին, նույն այս ժամանակ հատուկ պատվիրակությամբ դիմեց Բելիսարիոսին՝ առաջարկելով կայսեր իշխանությունը հաստատել քաղաքում:

538 թվականի մարտի վերջին Հռոմից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 7.000, այդ թվում իսավրիացիներ, թրակիացիներ, բերբերներ, էրուլներ, սլավոններ և բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 300) Օսթգոթական թագավորության բանակից (400) գրավեցին Պետրան (Կենտրոնական Իտալիա, Պիցինյան երկրամաս)՝ անհաջողությամբ ավարտված գրոհից հետո ստիպելով վերջինիս հանձնվել թիկունքում գտնվող բարձունքից իրականացված քարանետմամբ[2]: Իր հերթին, 538 թվականի ապրիլի սկզբին Մունդիլայի գլխավորությամբ դեպի Միլան շարժվող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.100, այդ թվում 1.000 իսավրիացիներ ու թրակիացիներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) Տիչինայի ճ-մ-ում հաղթեցին իրենց դեմ դուրս եկած Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 2.000), որից հետո, չկարողանալով գրավել քաղաքը, շարժվեցին առաջ ու զբաղեցրին Միլանը, ինչպես նաև Բերգամոն, Կոմը և Նովին[3]: Ապենինյան թերակղզու հյուսիսում օսթգոթերի իշխանությունը աստիճանաբար վերանում էր և այս պայմաններում Վիտիգեսին մնում էր միայն տեղային հակահարված հասցնելը:

Արդյունքում՝ 538 թվականի ապրիլի սկզբին Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 20.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50) պաշարեց Անկոնը (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Ռիմինիից մոտ 220 կմ հարավ-արևելք), սակայն, չհասնելով հաջողության, ապրիլի կեսին հետ քաշվեց[4]: Չհասնելով հաջողության ոչ մի կողմում՝ Վիտիգեսն իր բոլոր ուժերը հավաքեց մի վերջին հանգրվան հանդիսացող Ռավեննայում և պատրաստվեց համառ պաշտպանության: Հենց այս ժամանակ էլ, սակայն, արդեն գործի անցավ մինչ այդ զարգացող իրադարձություններին աննկատ, սակայն մեծ ուշադրությամբ հետևող ևս մեկ խաղացող՝ Ֆրանկական թագավորությունը:

Ֆրանկները, ու հատկապես չորս եղբայրներից ավագը հանդիսացող Թեոդեբերտ Ի-ը (534-548), ինչպես արդեն ասվեց, գոթերի հետ վաղուց ի վեր գտնվում էին խուլ մրցակցության մեջ և, համեմատականորեն վերջերս հետ շպրտելով Վեսթգոթական թագավորությանը Հարավային Ֆրանսիայից, առնվազն խորը կասկածամտությամբ էին վերաբերվում նույն վեսթգոթերին լայն աջակցություն ցույց տված օսթգոթերին: Եվ ֆրանկները, և գոթերը, ունենալով գերմանական նույն արմատները, գերմանական միասնական էթնոսի այդպես էլ վերջնականապես դեռևս չկազմավորման պայմաններում մեկը մյուսին այնուհանդերձ համարում էին հակառակորդ, ընդ որում, թեև միասնական քրիստոնեության սահմաններում, բայց այնուհանդերձ նույն հավատքի տարբեր ճյուղեր դավանելու հանգամանքն ինքն էլ իր հերթին ամենևին չէր նպաստում միասնականությանը: Վերջին ծանր իրադարձություններում որևէ աջակցություն չստանալով վեսթգոթերից, օսթգոթերը, ինչ-որ տեղ ստիպված, օգնության խնդրանքով դիմեցին ֆրանկներին, որոնք իրենց հերթին, տեսնելով լայն նախապատրաստություններ,

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին» գիրք 6, գլուխ 10:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 11:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 12:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 13:

այնուհանդերձ չշտապեցին կոնկրետ գործողությունների դիմել: Այժմ, սակայն, երբ Օսթգոթերի թագավորությունը գտնվում էր կործանման շեմին, Թեոդեբերտ Ի-ը անցավ վճռական գործողությունների:

538 թվականի ապրիլի սկզբին Թեոդեբերտ Ի-ի ուղարկած վասալ բուրգունդները (10.000), ինչպես նաև Օստգոթական թագավորության բանակը (մոտ 2.000) Մունդիլայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (300), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) և քաղաքի աշխարհազորից (մոտ 4.000) պաշարեցին Միլանը: Պաշարյալները համառ դիմադրություն էին ցույց տալիս, սակայն քաղաքում առաջացած սովը 539 թվականի մարտին ի վերջո ստիպեց հանձնվել: Մունդիլան և իր ռազմիկները գերվեցին ու նրանց վնաս չտրվեց, սակայն բուն քաղաքը հիմնովին ավերվեց, զենք կրելու ընդունակ 30.000 տղամարդիկ սպանվեցին, իսկ կանայք էլ, որպես ռազմավար, հանձնվեցին բուրգունդներին[1]:

Միլանին հասված հարվածի հետ միաժամանակ Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 20.000) Հովհաննես Թրակիացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50) պաշարեց նաև Ռիմնին, սակայն ի վերջո, խուսափելով Բելիսարիոսի ու կայսերական գանձապահ Ներսես Կամսարականի գլխավորությամբ ցամաքով և ծովով մի քանի ուղղություններով առաջ շարժվող բյուզանդական հիմնական բանակից (մոտ 20.000, այդ թվում 2.000 էրուլներ, ինչպես նաև իսավրիացիներ, թրակիացիներ, բերբերներ, սլավոններ և բուլղարներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 200, այդ թվում Ներսեհ, Հրահատ և Սահակ Կամսարականները), մանր մարտերից հետո դիմեց խուճապահար փախուստի[2]: Ռիմնիի հաջող պաշտպանությունից հետո, սակայն, Ապենինյան թերակղզում գործող կայսերական բանակի համար նոր դժվարություններ առաջացան:

Իրոք, գլխավոր հրամանատարությունը նույն այս ժամանակ ձևականորեն շարունակում էր իրականացնել Բելիսարիոսը, սակայն դրա հետ միաժամանակ էլ նաև մայրաքաղաքից ավելի ուշ և անորոշ լիազորություններով ժամանած ու կայսր շատ մոտիկ անձնավորություն համարվող Ներսես Կամսարականն իր հերթին բավարար հիմքեր ուներ իր վրա վերցնելու մարտական գործողությունների ղեկավարումը: Տարաձայնություններն ի հայտ եկան գրեթե միանգամից, երբ Բելիսարիոսն առաջարկում էր, աստիճանաբար տիրելով դեռևս հակառակորդի ձեռքում մնացած ամրություններին, միայն դրանից հետո շարժվել Ռավեննայի ուղղությամբ, իսկ Ներսեսը կողմ էր միանգամից Ռավեննային հարված հասցնելու տարբերակին:

538 թվականի ապրիլի վերջին Բելիսարիոսի և կայսերական գանձապահ Ներսես Կամսարականի գլխավորությամբ Ռիմնիից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000, այդ թվում իսավրիացիներ, թրակիացիներ, բերբերներ, էրուլներ, սլավոններ և բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200, այդ թվում Ներսեհ, Հրահատ և Սահակ Կամսարականները) Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 500) պաշարեցին Ուրբինոն (Կենտրոնական Իտալիա, Պետրայից մոտ 30 կմ հյուսիս) ու Վոլսինենսկյան լճի կղզին, որից հետո մինչ այդ գաղտնի բնույթ ունեցող հակասությունը բացահայտ բնույթ ստացավ: Արդյունքում՝ Ներսեսի գլխավորած զորքը թողեց պաշարումը և վերադարձավ Ռիմնի, սակայն Բելիսարիոսն իր զորքի հետ միասին, այնուհանդերձ շարունակեց պաշարումը և ի վերջո, օգտվելով թշնամու մոտ առաջացած ջրի պակասից, ստիպեց վերջինիս հանձնվել[3]: Դրանից հետո Հովհաննես Թրակիացին գրավեց Կայսենինը (Կենտրոնական Իտալիա, Ռիմնիից մոտ 50 կմ հյուսիս-արևմուտք)[4], որից հետո անակնկալ գրոհով մտավ Ֆորոկորնելիուս (= Իմոլա)

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 7, 12, 21, 22; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 12, 13, 16-18; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին»:

[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 19; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 19:

(Ռավեննայից մոտ 50 կմ արևմուտք)[1]: Ուրբիվենտոնը (Կենտրոնական Իտալիա, Ուրբինոյի մոտ), սակայն, այդքան հեշտ չտրվեց և Բելիսարիոսի ու առաջապահի հրամանատար Պերանիոս Բագրատունու գլխավորած բանակը, պաշարելով քաղաքը 538 թվականի ապրիլի վերջին, Օսթգոթական թագավորության բանակին, այն էլ քաղաքում առաջացած ջրի պակասի արդյունքում, ի վերջո ստիպեց վերջինիս հանձնվել միայն 539 թվականի գարնանը՝ Միլանի անկման հետ միասին[2]:

539 թվականի գարնանը, զգալով, որ երկու զորավարների մրցակցությունը մեծապես ազդում է բանակի մարտունակության վրա, ինչպես նաև, դատելով ըստ ամենայնի, դադարելով կասկածներ տածել Բելիսարիոսի հավատարմության նկատմամբ, Հուստինիանոս I-ի հրամանով Ներսես Կամսարականը հետ կանչվեց Ապենինյան թերակղզուց, որից հետո, որպես ռազմական գործողությունների միակ գլխավոր հրամանատար, մնաց Բելիսարիոսը, թեև պետք է ասել, որ արդյունքում վերջինիս հեղինակությունն տեղում արդեն մեծապես սասանվել էր: Այսպես թե այնպես, սակայն, շարունակելով կյանքի կոչել պատերազմական գործողությունների իր տեսլականը, Բելիսարիոսը շարունակեց հակառակորդի ամրությունների վերացմանն ուղղված իր գործունեությունը՝ առժամանակ հետաձգելով հարվածը Ռավեննայի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

539 ապրիլ - հոկտեմբեր – ***<u>Օսիմոյի գրավումը</u>*** (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Ռիմինիից մոտ 270 կմ հարավ-արևելք)[3]

Ստանալով Միլանի գրավման լուրը՝ Իտալիայում գործող բանակի միանձնյա հրամանատար մնացած Բելիսարիոսը իր բանակը բաժանեց մի քանի մասերի: Մի մասին Կիպրիանոսի և Հուստինոս Իլիրիացու գլխավորությամբ վերջինս ուղարկեց պաշարելու ***<u>Ֆեզուլան</u>*** (Կենտրոնական Իտալիա, Ուրբինոյի մոտ, Ֆլորենցիայից մոտ 8 կմ հյուսիս), մյուս մասին Միլանում գտնվող թշնամու բանակի գործողությունները կասեցնելու նպատակով Մարտինոսի, Հովհաննես Թրակիացու ու Հովհաննես Ֆագասի գլխավորությամբ ուղարկեց Պո գետի հովտի ուղղությամբ, իսկ վերջին մասով էլ որոշեց գործել Իտալիայի կենտրոնական հատվածում դեռևս դիմադրությունը շարունակող թշնամու ամրությունների դեմ: Արդյունքում՝ Բելիսարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (11.000, այդ թվում իսավրիացիներ, թրակիացիներ բերբերներ, սլավոններ և բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200, այդ թվում Պերանիոս Բագրատունին, ինչպես նաև Ներսեհ, Հրահատ և Սահակ Կամսարականները) պաշարեցին քաղաքը Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 1.000):

I փուլ – Տեսնելով, որ քաղաքը պաշարողները բաժանվել են մի քանի ճամբարների և համարելով, որ դրանցից մեկի վրա հարձակվելիս մյուսներին դժվար կլինի վերջինիս օգնության հասնել՝ Օսթգոթական թագավորության բանակը քաղաքի արևելյան կողմից անակնկալ արտագրոհ իրականացրեց հենց այն ջոկատի վրա, որտեղ գտնվում էր Բելիսարիոսը, սակայն հետ մղվեց: Իր հերթին, սակայն, թշնամուն հետապնդելու փորձն արդեն Բելիսարիոսին որևէ հաջողության չբերեց և կողմերը վերադարձան ելման դիրքեր: Նույն օրը գիշերը և հաջորդ օրը քաղաքը պաշարողները ոչնչացրին կամ ցրեցին մինչ այդ քաղաքից պարենամթերք ձեռք բերելու համար դուրս եկած թշնամու մանր ջոկատներին:

II փուլ – Ապրիլից մինչև հոկտեմբեր քաղաքի մոտ ընթացան մարտեր, որոնցում, մասնավորապես, աչքի ընկան նաև Կամսարական եղբայրների

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 19:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 20; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 23-27; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

գլխավորած հայերը: Ի վերջո ծայրահեղ սովի մատնված թշնամին, հույսը կտրելով որևէ օգնությունից, դադարեցրեց դիմադրությունը և հանձնվեց:

Հայերը կորցրին մոտ 20, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր: Թշնամու կայազորի մնացորդները ընդգրկվեցին հաղթողների բանակի կազմում:

Օսիմոյի անկումից քիչ առաջ, կրկին սովի շնորհիվ, Կիպրիանոսի ու Հուստինոս Իլիրիացու գլխավորած կայսերական բանակին հաջողվել էր տիրել նաև Ֆեզուլային[1]: Նույն այս ժամանակ, սակայն, ի վերջո սկսեցին գործել նաև ֆրանկները:

Իրոք, 539 թվականի ամռանը, մինչ Բելիսարիոսը դեռևս զբաղված էր հակառակորդի ամրությունները պաշարելով, Պոն գետանցած և Թեոդեբերտ I-ի գլխավորությամբ ասպատակելով առաջխաղացած Ֆրանկական թագավորության բանակը (100.000) անակնկալ հարձակումով հաղթեց որպես օգնականներ իրեն ընդունած Օստգոթական թագավորության ճամբարած բանակին (մոտ 2.000): Դրանից հետո, կարծես թերահավատորեն վերաբերվելով բոլորին և ձգտելով հանդես գալ իրական առաջնորդի դերում, ֆրանկները Տիչինայի մոտ հերթական անակնկալ հարվածը հասցրին՝ հաղթելով ու ցրելով նաև Օստգոթական թագավորության բանակի փախուստից ոգևորված և դա իրենց հերթին սխալմամբ յուրայինները գործը համարելով առաջխաղացած այս անգամ արդեն Մարտինոսի, Հովհաննես Թրակիացու ու Հովհաննես Ֆագասի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10): Թվում էր, թե Ապենինյան թերակղզու հյուսիսում հանդես է գալիս նոր և տիրական մի ուժ, սակայն տեղի ունեցավ անսպասելին, քանզի Ֆրանկական թագավորության բանակի կազմում բռնկվեց դիզենտերիայի ուժեղ մի համաճարակ, որին զոհ գնացին 30.000 ռազմիկներ: Ստեղծված պայմաններում, չտեսնելով այլ ելք և ունենալով նաև պարենամթերքի զգալի պակաս, Թեոդեբերտ I-ը հետ քաշվեց սեփական սահմաններ: Ֆրանկների առաջացրած փոթորկի անակնկալ սպառվելուց հետո նախկին դիրքերը գրավեց նաև կայսրական բանակը[2]: Ապենինյան թերակղզու հյուսիսում զարգացող դրամատիկ իրադարձություններից զատ 539 թվականի ամառը, սակայն, արտասովոր էր նաև այլ ուղղություններում:

Գլուխ 34
Խոսրով I-ը և նրա բարեփոխումները

Իրադրությունը կայսրության արևելյան սահմաններին վաղուց էր լարվում, սակայն, բոլոր ուժերը, ողջ ջանքն ու եռանդը ներդրած Արևմուտքում վարվող հյուծիչ պատերազմում, պաշտոնական Կոստանդնուպոլիսը ոչ մի կերպ չէր ցանկանում նկատել այդ: Ավելին, տարված «Հավիտենական խաղաղության» տված սին երաշխիքներով, Հուստինիանոսն I-ն ու նրա շրջապատը բառիս բուն իմաստով աչքաթող էին արել նաև այն խորը գործընթացները, որոնք վերջին մի քանի տարիներին ընթանում էին Պարսից թագավորությունում: Իրոք, հաջորդելով հորը ու դեռևս երերուն իր գահն ամրապնդելով կայսրության հետ մղվող պատերազմն ավարտելով, Խոսրով I-ը, ինչպես արդեն ասվեց, դրանից հետո ձեռնամուխ էր եղել վաղուց ի վեր հասունացած բարեփոխումների իրագործմանը, որոնք ընդգրկել էին Սասանյանների հասարակության բոլոր ոլորտները՝ տնտեսությունը, մշակույթը, երկրի վարչակառավարական համակարգը և իհարկե՝ բանակը:

Արյաց նոր արքան ինքնին բացառիկ մի անձնավորություն էր: Խելացի, լայնախոհ, հեռատես, կամային, վճռական, երբեմն դաժան, բայց մեծ հաշվով գթասիրտ և օժտված դիվանագիտական ու դերասանական լավ հատկանիշներով՝ Խոսրով I-ը միանգամից էլ ձեռնամուխ եղավ իր հղացած լայնամասշտաբ ծրագրերի իրականացմանը:

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 23-24, 27; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 23-26; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

Տնտեսական ոլորտի բարեփոխումների թագն ու պսակը հանդիսանում էր ամենից առաջ այն, որ այժմ, ի տարբերություն նախկինի, պաշտոնական Տիզբոնը գործի էր դրել հստակ հաշվարկների վրա հիմնված հարկային մի համակարգ, որը կտրուկ մեծացրել էր արյաց արքայի եկամուտները: Խոսրով I-ը, գործելով դաժան վճռականությամբ, վերջ էր տվել նաև կրոնական վեճերին՝ վերջնականապես խեղդելով մազդակյաններին, բայց նաև՝ աննախադեպ հանդուրժողականություն դրսևորելով քրիստոնյաների նկատմամբ: Արյաց արքան ստեղծել էր նաև պետական կառավարման գործուն մի համակարգ, որը խիստ մեծացրել էր պարսից տերության կառավարելիությունը, իսկ արդյունքում նաև՝ ռազմաքաղաքական հնարավորությունները:

Ինչ վերաբերում է բանակին, ապա Խոսրով I-ը, առաջնորդվելով «*ամենայն նորը լավ մոռացված հինն է*» սկզբունքով, ըստ էության, վերակերտեց Սասանյանների ռազմական մեքենան իր այն տեսքով, ինչ տեսքով որ վերջինս ստեղծվել էր Շապուհ II-ի կառավարման սկզբում: Շապուհ II-ի ռազմական բարեփոխումների մասին վերևում արդեն խոսվել է և այս առումով կրկնվել, թերևս, չարժե, սակայն արժե այնուհանդերձ շեշտել, որ մազդակյանների ու խոշոր հողատեր ազնվականության վերջին տասնամյակների հյուծիչ պայքարից հետո թուլացած խոշոր ազնվականությունն ինքը Խոսրով I-ի ռազմական մեքենայի համար հիանալի կադրեր էր ապահովում, ընդ որում, եթե Շապուհ II-ի պարագայում այդ արքան կարծես ինքն էր շահագրգռված մարդկանց հրապուրել իր մոտ, ապա այժմ անկում ապրած շատ խոշոր հողատերեր կամ նրանց սերունդներն իրենք էին ձգտում, թեկուզ հենց սեփական սոցիալական շահերից ելնելով, համալրել Խոսրով I-ի հեծելազորի շարքերը: Այս առումով հետաքրքիր է, որ, ձգտելով իր դերը սեփական զինված ուժերում նաև գաղափարապես ամրապնդել, արյաց գործող արքան շրջանառության մեջ դրեց, իսկ նրա շրջապատն էլ բանակայինների շարքերում հաջողությամբ կարողացավ տարածել գաղափարական այն թեզը, թե Խոսրով I-ը հանդիսանում է իր բոլոր ռազմիկների «հայրը»՝ իհարկե սոցիալական իմաստով:

Եվ այսպես, ստեղծվեցին 120.000 հոգու կազմով գործող 12 հեծելազորային բյուրեր, զգալի քայլեր ձեռնարկվեցին հետևազորի մարտական հատկանիշների բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև իրենց նախկին լավագույն հատկանիշներով կրկին սկսեց փայլել 10.000 ռազմիկ պարունակող Մատյան գունդն և մարտական փղերի կորպուսը: Բանակի ընդհանուր թվաքանակը սկսեց մոտենալ 300.000-ի[1]: Այսպիսով՝ արյաց արքան, կարգի գցելով գործերը և, ի տարբերություն Հուստինիանոս I-ի, ուշադիր հետևելով հարևան տերությունում զարգացող իրադարձություններին, միայն հարմար առիթի էր սպասում հարձակողական գործողությունների անցնելու համար: Իրավիճակը խաղաղ չէր, սակայն, նաև բուն կայսրության արևելյան սահմանամերձ շրջաններում և, հատկապես, Սատրապական Հայաստանում:

Գլուխ 35
Սատրապական Հայաստանի IV ապստամբությունը

Իրոք, վերջին տասնամյակների բուռն իրադարձություններից հետո ցանկանալով թուլացնել տեղի հայ իշխողներին, Հուստինիանոս I-ը նույն այս ժամանակ հղացել էր ռեֆորմների ամբողջական մի շղթայի կյանքի կոչման ծրագիր, որը կոչված էր թուլացնել հայ տիրակալների իշխանության սոցիալական հիմքերը: Սա, իր հերթին, խորը դժգոհություններ էր առաջացրել տեղում և իրավիճակը, աստիճանաբար լարվելով, շուտով հայտնվեց պայթյունավտանգ մակարդակում: Հայերը, այս անգամ որպես բացառություն, օգնության համար պատրաստվում էին դիմել արյաց արքային, որին նույն այդ ժամանակ ներկայացել էին արդեն նաև Վիտիգեսի դեսպանները՝ ամեն կերպ դրդելով սկիզբ դնել մարտական գործողությունների: Եվ վերջապես Խոսրով I-ին ոչ մի կերպ դուր գալ չէր կարող գալ նաև այն հանգամանքը, որ Հուստինիանոս I-ը գաղտնի

[1] Տես՝ Howard-Johnston, J. “The Late Sasanian Army”, page 110:

կապեր էր հաստատել Լախմյանների թագավորության իշխող վերնախավի հետ և դրդում էր ավանդականորեն պարսիկների օգտին գործող այս արաբներին անցնել կայսրության կողմը: Այսպիսով, ամեն ինչ, կարծես թե, պատրաստ էր պայթյունի համար և 539 թվականի արդեն ամռանը իրավիճակը դուրս եկավ հսկողությունից:

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Մարզպանական և Սատրապական Հայաստանների սահմանին գտնվող Կաբալայի ոսկու հանքերի տիրակալ, Վարդ Մամիկոնյանի որդի Սիմոն Մամիկոնյանը, որն իր իշխանությունը ստացել էր դեռևս Կավատ I-ի կողմից, մինչ այս անցել էր կայսրության կողմը և, վերջինիս հանձնելով իրեն պատկանող ոսկու հանքերը, ստացել էր տեղական մի շարք այլ հայերի տիրույթներ: Ունեզրկված հայերն, իրենց հերթին դժգոհ մնալով այդ ամենից, 535 թվականին դավադրություն էին կազմել և սպանել էին Սիմոնին, որից հետո ապաստանել էին Մարզպանական Հայաստանում: Ստեղծված պայմաններում Սիմոնի տիրույթները հանձնվեցին նրա եղբայր Համազասպին (518-536), սակայն Կոստանդնուպոլսում մեծ կապեր ունեցող Ակակիոս Ակեացին կայսեր մոտ կարողացավ վատաբանել Համազասպին և 536 թվականին վերջինիս սպանեցին, իսկ Համազասպի փոխարեն էլ նշանակվեց Ակակիոսը: Վերջինս իր հերթին, սակայն, սանձարձակ վարք դրսևորելով նոր պաշտոնում և ամեն կերպ հարստահարելով տեղական բնակչությանը, կուտակված դժգոհությունն ի վերջո հասցրեց այն աստիճանի, որ 539 թվականի ամռանը հերթական անգամ ոտքի կանգնած հայերը այս անգամ սպանեցին արդեն իրեն՝ Ակակիոսին: Սկիզբ առավ Սատրապական Հայաստանի IV ապստամբությունը (539-545), որի ղեկին հայտնվեցին Հովհաննես Արշակունին, նրա որդի Արտավանը և փեսա, Մամիկոնյանների տոհմապետ ու Համազասպի եղբայր Վասակ Մամիկոնյանը (536 - մոտ 545): Շուտով, սակայն, ապստամբներին հարեցին նաև Հյուսիսային Հայաստանում լայնարձակ տիրույթներ ունեցող Բագրատունիները:

Եվ ահա միայն այժմ նոր միայն զգալով, որ կայսրության արևելյան սահմաններին բռնկվել է մի հրդեհ, որը հանգցնելն այդքան էլ հեշտ չի լինելու, Հուստինիանոս I-ը, ձգտելով Արևելքում այնուհանդերձ զերծ մնալ իրերի դրության փոփոխությունից և ցանկանալով վտանգի տակ չդնել այդքան մեծ դժվարությունների գնով Արևմուտքում, կարծես թե, ահա-ահա նշմարվող հաջողությունը, ապստամբների հետ բանակցությունների համար ուղարկեց Արևելքի հրամանատար նշանակված Սիտտա Հային, որը մինչ այդ վարում էր բալկանյան ճակատում գործող ուժերի հրամանատարությունը: Սիտտա Հայը, ի սկզբանե ձգտելով խնդիրը լուծել խաղաղությամբ, հայերին առաջարկեց վերջ տալ ապստամբությանը՝ խոստանալով խնդիրը ներկայացնել կայսեր և հասնել բավարար լուծումների: Սկիզբ առած բանակցությունները, սակայն, ձգձգվեցին, իսկ այդ ընթացքում Կոստանդնուպոլսում գտնվող Ատոմ Ակեացին՝ Ակակիոսի որդին, դժգոհ մնալով այդ ամենից, Հուստինիանոս I-ին սկսեց տրամադրել Սիտտա Հայի դեմ՝ մեղադրելով վերջինիս դանդաղկոտության մեջ: Արդյունքում՝ Արևելքում իրերի դրությունն այդպես էլ լավ չպատկերացնող կայսրը հատուկ հրահանգով Սիտտա Հային հրամայեց հայերին հնազանդեցնել զենքի ուժով:

539 թվականի աշնանը, երբ բանակցությունները դեռևս ընթացքի մեջ էին, Սիտտա Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 13.000) շարժվեց ապստամբների դեմ և, անակնկալ հանդիպելով Բագրատունյաց գնդին (մոտ 200), հաղթանակ տարավ՝ գերելով Վարազ-Տիրոց և Գուրգեն-Գուարմ Բագրատունիների կանանց ու երեխաներին, ինչպես նաև այլ ոչ ռազմունակ անձանց, որոնք հետագայում սպանվեցին[1]: Դաժան այս հաշվեհարդարը փակեց հետագա համաձայնության բոլոր դռները և կողմերն անցան բացահայտ ռազմական գործողությունների:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 3:

539 աշուն – ***<u>Ավնիկ ամրոցի ճ-մ</u>***[1]

Հովհաննես և Արտավան Արշակունիների, ինչպես նաև Վասակ Մամիկոնյանի ու Վարազ-Տիրոց և Գուրգեն-Գուարմ Բագրատունիների գլխավորած Հայկական բանակը (մոտ 7.000) շարժվեց Սիտտա Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 12.500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 700) ընդառաջ: Քանակապես զիջելով հակառակորդին՝ Հայկական բանակը կարողացավ պարտադրել վերջինիս ճակատամարտի մեջ մտնել այնպիսի վայրում, որտեղ հնարավորություն չկար կազմել միասնական ճակատ, իսկ մարտն էլ մղվում էր առանձին և իրարից կտրված ջոկատների միջև:

I փուլ – Հայկական բանակի հիմնական ուժերը, դուրս գալով հակառակորդի բանակի այն մասի դեմ, որի կազմում իր շքախմբի հետ միասին գտնվում էր Սիտտան, հարձակման պատրանքով և մանր մարտերով նահանջելով, ստիպեցին հակառակորդին անցնել երկու ուժերի միջև գտնվող ձորակը:

II փուլ – Մարտի մեջ մտցնելով հիմնական ուժերը՝ Հայկական բանակը հզոր հարված հասցրեց հետ քաշվել փորձող հակառակորդին և գլխովին ոչնչացրեց, ընդ որում Արտավանը հեծյալ նիզակամարտում հաղթեց և սպանեց Սիտտային:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 3.000, վերջինիս կողմում հանդես եկող հայերը՝ մոտ 200 զինվոր, որոնց թվում նաև Սիտտան:

Կրած անհաջողությունից հետո Հուստինիանոս I-ը, այնուհանդերձ չցանկանալով թույլ տալ դեպքերի հետագա ծավալումը, Արևելքի նոր հրամանատար նշանակեց Բուզեսին, որը հաշտության բանակցությունների պատրվակի տակ փորձ կատարեց գերել և ոչնչացնել ապստամբության ղեկավարներին: Այդ նպատակով Բուզեսը հատուկ կոչով դիմեց հայ իշխաններին՝ առաջարկելով հանդիպել սահմանային վայրերից մեկում և քննարկել իրավիճակը: Արված առաջարկը երկընտրանքի առաջ կանգնեցրեց հայերի առաջնորդներին, քանզի, եթե իշխանների մեծ մասը, որևէ հիմք չտեսնելով վստահել Բուզեսին, մերժողական պատասխան տվեց, ապա Հովհաննես Արշակունին, ըստ երևույթին որոշակի հարաբերություններ ունենալով Բուզեսի հոր հետ դեռևս Սատրապական Հայաստանի III ապստամբություն ժամանակներից ի վեր, պնդում էր հակառակը: Ի վերջո, Բուզեսի հետ բանակցությունների մեկնեցին միայն Հովհաննեսն և Վասակը, ընդ որում, նույնիսկ այն բանից հետո էլ, երբ Վասակը, նկատելով որ կայսերական ռազմիկները շրջապատում են բանակցությունների վայրը, առաջարկեց Հովհաննեսին փախչել, վերջինս հրաժարվեց դիմել այդ քայլին: Արդյունքում՝ Վասակ Մամիկոնյանը միայն իրեն բնորոշ ճարպկությամբ վերջին պահին կարողացավ խույս տալ դարանից և փրկվել, իսկ Բուզեսի հետ ի վերջո հանդիպած Հովհաննեսն էլ, ինչպես և սպասելի էր, զոհ գնաց դավադրությանը: Արդյունքում՝ Բուզեսի իրականացրած գործողությունը ոչ մի էական հաջողություն չբերեց և Արևելքում բռնկված հրդեհը շարունակեց ճարակել: Ավելին, խոցված նախորդ իրադարձություններից, հայերը նույն Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ անմիջապես էլ մի պատվիրակություն ուղարկեցին Տիզբոն, որտեղ, Վիտիգեսի դեսպանների հետ միասին ներկայանալով արյաց արքային, սկսեցին վերջինիս ամեն կերպ համոզել մարտական գործողություններ սկսել կայսրության դեմ՝ իրենց հերթին պարտավորվելով այդ պարագայում օժանդակել Պարսից թագավորությանը: Նույն այս ժամանակ, երբ Արևելքն արդեն ահա-ահա արդեն պայթելու էր, լարվեց կայսրության դրությունը, սակայն, նաև դանուբյան ճակատում:

Ընդհանրապես իրերի դրությունն այստեղ, ինչպես և Արևելքում, աստիճանաբար բարդանում էր դեռևս վերջին տարիներին ու բանը հասել էր նույնիսկ նրան, որ արդեն 537 թվականի ամռանը Դանուբն անցած Արևմտյան Բուլղարական թագավորության բանակի դեմ մարտական գործողություններ էր սկսել դեռևս Սիտտա Հայը՝ Յատրուսի ճ-մ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 3:

-ում հաղթելով և հետ շպրտելով հակառակորդին[1], սակայն իրերի ընդհանուր դրությունը դա քիչ էր փոխել: Բանն այն է, որ Մունդոսի զոհվելուց հետո Գեպիդական թագավորությունն աստիճանաբար դուրս էր եկել կայսրության դաշնակցի կարգավիճակից և, բալկանյան ճակատում մի կողմից կայսերական ուժերի ծայրահեղ սակավության, իսկ մյուս կողմից էլ բուլղարների ու սլավոնների համարձակ գործողությունների լույսի ներքո, ինքը ևս աստիճանաբար հակվում էր ինքնուրույն քաղաքականության: Արդյունքում՝ 539 թվականի աշնանը, երբ Սիտտա Հայն այլևս կենդանի չէր, նրան մինչ այդ փոխարինած Կալլուկը մատնվեց անհաջողության:

Իրոք, եթե Գեպիդական թագավորության բանակի դեմ առաջին մարտում Կալլուկի գլխավորած կայսերական բանակը սկզբում հաղթանակ տարավ[2], ապա դրան հաջորդած երկրորդ ճակատամարտում վերջինս ծանր պարտություն կրեց[3]: Արդյունքում, թեև գեպիդները, բավարարված ձեռք բերածով և զգուշանալով իրենցից ավելի հյուսիս-արևմուտք գտնվող Լանգոբարդական թագավորությունից, չզարգացրին հաջողությունը, սակայն Բալկանյան թերակղզու հյուսիսային հատվածը դուրս եկավ պաշտոնական Կոստանդնուպոլսի ազդեցության տակից, իսկ դանուբյան ողջ ճակատում էլ ստեղծվեց սպառնալից դրություն:

Այս ամենի ֆոնին էլ հենց Խոսրով I-ը, ամենաբարյացակամ կերպով ականջ դնելով իրեն ներկայացած պատվիրակներին և հատկապես հայերին, ի վերջո որոշում կայացրեց սկիզբ դնել մարտական գործողությունների: Միաժամանակ, սակայն, քանի որ արդեն մոտենում էին ձմեռային ժամանակները, իսկ ապագա լայնամասշտաբ պատերազմին պատրաստ լինելու համար բանակին այնուհանդերձ որոշակի ժամանակ էր պետք, արյաց արքան, վճռական գործողությունները հետաձգելով մյուս տարվա սկզբին, առժամանակ բավարարվեց միայն տեղական հարվածներ հասցնելով: Սկիզբ առավ Բյուզանդա-Պարսկական IV պատերազմը (539-562), որին, իր նախկինի հետ համեմատած, վիճակված էր լինելու ավելի ծանր ընթացք ունենալ:

Գլուխ 36
Բյուզանդա-Պարսկական IV պատերազմը

Եվ այսպես 539 թվականի աշնանը, մինչ Բելիսարիոսի հրամանատարությամբ գործող բանակը, մշտական սպառնալիքի տակ գտնվելով թվական հսկայական առավելություն ու պատերազմական ավելի լավ հնարավորություններ ունեցող Ֆրանկական թագավորության ռազմական մեքենայի կողմից, ուժերի ծայրահեղ լարման հաշվին այնուհանդերձ փորձում էր խեղդել Օսթգոթական թագավորության պաշտպանական վերջին հնարավորությունները, իսկ դանուբյան ճակատն էլ գտնվում էր անորոշ և սպառնալից դրության մեջ, Պարսից ու Լախմյանների թագավորությունների (մոտ 50.000), ինչպես նաև Հայկական (մոտ 10.000) միացյալ բանակը ասպատակեց Հայոց Միջագետքն և Հյուսիսային Ասորիքը ու նահանջեց[4]: Ստեղծված պայմաններում, գործելով դեռևս նախորդ պատերազմի թելադրած կանոններով, Բուզեսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակն (մոտ 25.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) իրենց հերթին ասպատակեցին Աղձնիքը ու Կորճայքն և նահանջեցին[5]: Վերջ, պատերազմն Արևելքում վերջնականապես դարձավ իրականություն և այս պայմաններում Հուստինիանոս I-ի համար որոշակի մի մխիթարանք, իսկ նրա բանակի համար էլ գոնե մի ինչ-որ չափի թեթևացում կարող էր համարվել, թերևս, միայն այն հանգամանքը, որ դիմացը ձմեռ էր, իսկ արդյունքում էլ, մինչև հաջորդ տարվա գարնանը սպասվող ռազմական գործողությունների սկիզբը,

[1] Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[3] Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[4] Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15:
[5] Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15:

դեռևս մի քանի ամիս կար: Այս պայմաններում Բելիսարիոսի առջև խնդիր դրվեց վերջնականապես և հնարավորինս արագ ճնշել Վիտիգեսի դիմադրությունը՝ այն հաշվարկով, որ ազատված ուժերը տեղափոխվեն Արևելք՝ Պարսից թագավորության դեմ: Բելիսարիոսը, սակայն, ի պատիվ իրեն սկզբունքորեն ի վերջո կյանքի կոչելով իր առջև դրված խնդիրը, այնուհանդերձ ուշացավ:

Եվ այսպես, 539 թվականի դեկտեմբերին Բելիսարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում Ներսեհ, Հրահատ ու Սահակ Կամսարականների գլխավորությամբ գործող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Վիտիգեսի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 2.000) շրջափակեցին Ռավեննան և, մանր մարտերից հետո աստիճանաբար գրավելով ողջ Հյուսիսային Իտալիան, ի վերջո Վիտիգեսի տրամադրության տակ թողեցին միայն բուն այս քաղաքը: Օսթգոթերի արքան, սակայն, համառում էր և, մի կողմից սպասելով ֆրանկների մի որևէ գործողության, իսկ մյուս կողմից էլ հույսը դրած կայսրության բարդացած ռազմաքաղաքական ընդհանուր դրության վրա, անշտապ տարվող բանակցություններով անընդհատ ձգձգում էր հանձնվելը: Ի վերջո, բանը հասավ նույնիսկ նրան, որ օսթգոթերի արքան Բելիսարիոսին առաջարկեց ուղիղ ապստամբություն բարձրացնել կայսեր դեմ՝ իր ձեռքը վերցնելով Արևմուտքում կատարված բոլոր նվաճումները և կառավարելով որպես անկախ մի տիրակալ:

Ստեղծված պայմաններում Բելիսարիոսը, սեղմվելով ժամանակի մեջ, ցանկանալով գոնե այդ կերպ դրդել հակառակորդին վերջ տալ դիմադրությանը և, միաժամանակ նաև, անձնապես ենթարկվելով հսկայական վտանգի, քանզի ազնիվ այս զորավարին Հուստինիանոս I-ն առանց այդ էլ մշտապես կասկածում էր անհավատարմության մեջ, տվեց իր ձևական համաձայնությունը: Արդյունքում՝ 540 թվականի մայիսին Ռավեննան դադարեցրեց դիմադրությունը, երբ Վիտիգեսն իր ընտանիքի բոլոր անդամներով ու կողմնակիցներով հանձնվեց կայսերական բանակին՝ Բելիսարիոսին փոխանցելով նաև արքայական գանձարանը[1]: Վիտիգեսը փոխադրվեց Կոստանդնուպոլիս, ստացավ պատրիկի կայսերական աստիճան և 2 տարի անց հենց Արևելքում էլ կնքեց իր մահկանացուն: Այսպիսով՝ Օսթգոթական թագավորության դիմադրությունը, կարծես թե, վերջնականապես խեղդվեց, սակայն դա տեղի ունեցավ 540 թվականի գարնան միայն ամենավերջին և դա այն դեպքում, երբ գարնան դեռ արդեն սկզբից Խոսրով I-ի անձնական ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության կարգի գցված ռազմական մեքենան դաժան մրրիկի նման անցնում էր Բյուզանդական կայսրության արևելյան, ըստ էության, անպաշտպան սահմանների վրայով: Այսպիսով, թեև Բելիսարիոսն իր առջև դրված խնդիրն այնուհանդերձ կատարեց և ծնկի բերեց Օսթգոթական թագավորությանը, սակայն ռազմական գործողությունների վերջին արարում նա, գուցե այնքան էլ ոչ իր մեղքով, այնուհանդերձ ուշացավ՝ համենայն դեպս այնքան, որ Հուստինիանոս I-ն արդեն և ոչ մի հնարավորություն չուներ ի մի բերել Արևմուտքում թրծված իր ուժերը, դրանք տեղափոխել Արևելք ու կանխել այս ուղղությամբ շարժման մեջ մտած հավերժական հակառակորդի կործանիչ հարվածը: Արդյունքում՝ սեփական ուժերի գերագնահատման, հակառակորդի թերագնահատման և ընդհանուր իրավիճակի սխալ գնահատականի հետևանք հանդիսացած ռազմավարական խոշոր բացթողումը կայսրությանը ծանր գին արժանացավ:

Իրոք, Հուստինիանոս I-ը հույս ուներ սեփական ռազմական մեքենայի արագ և ճշգրիտ գործողությունների արդյունքում հասնել տառացիորեն ամենուր, սակայն մի կողմից օսթգոթերի համառ դիմադրությունը, իսկ մյուս կողմից էլ հայերի ապստամբությունը ու արյաց արքայի կողմից իրավիճակին տրված ճիշտ գնահատականը հանգեցրին աղետի, քանզի կայսեր ստեղծված ռազմական մեքենան այս անգամ արդեն ուղղակի ֆիզիկապես ի վիճակի չեղավ կյանքի կոչել իր վրա դրված և,

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 6, գլուխ 28, 29; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին»; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 1, գլուխ 25:

կարելի է ասել, իր ուժերից արդեն վեր խնդիրները: Որպես ընդհանուր հետևանք այս ամենի, ինչպես արդեն ասվեց, հանուն Արևմուտքին տիրելու ուժերի ծայրահեղ լարման մեջ ջղաձգված կայսրության բանակն ուղղակի չկարողացավ գործել ինչպես հարկ էր, իսկ դա իրենից հետո ռազմաքաղաքական անհաջողությունների շղթայական մի ամբողջ շարք առաջացրեց:

540 թվականի մարտին, մի կողմ թողնելով Նիկեփորիոնը ու միջագետքյան պաշտպանական ողջ շրջանը, անցնելով Եփրատը նրա ստորին հոսանքում և առաջանալով գետի աջ ափով, Խոսրով I-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 120.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 20.000), ինչպես նաև Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակը (մոտ 5.000) Արշակ Արշակունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 200) գրավեցին Սուրը, ընդ որում դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ, պարիսպների վրա մարտնչող Արշակը նետի հարվածից զոհվեց, իսկ թշնամու գրոհը հետ մղելուց հետո բանակցությունների մեկնած և վերադարձող քաղաքային պատվիրակության անդամերի հետ դարպասներին մոտեցած հակառակորդի մի քանի ռազմիկներ էլ անակնկալ հարվածով գրավեցին դրանք: Գերվեցին նաև 12.000 խաղաղ բնակիչներ, որոնց հետագայում փոխանակեցին 200 կգ ոսկու հետ[1]: Նախորդ հաջողությունից հետո, շարունակելով ընթացքը հյուսիս-արևմտյան ուղղությամբ և առաջանալով Եփրատի աջ ափով, 540 թվականի ապրիլին արյաց արքայի միացյալ բանակը մոտեցավ արդեն Մեմբիջին (= Հիերոպոլիս), որից հեռացավ միայն 2.000 կգ արծաթ ստանալուց հետո: Դրանից հետո, առաջանալով արդեն հարավ-արևմտյան ուղղությամբ, 540 թվականի մայիսին Խոսրով I-ի միացյալ բանակը առանց մարտի մտավ Հալեպ՝ արդյունքում ստիպելով հանձնվել նաև կարճատև դիմադրություն ցույց տված միջնաբերդին: Հատկանշական է, որ այս քաղաքում պաշտպանվող կայսերական վարձկան կայազորայիններից շատերն ուղղակի փոխեցին իրենց տիրակալին և համալրեցին Խոսրով I-ի բանակի շարքերը, քանի որ վաղուց չէին ստացել իրենց հասանելիք աշխատավարձը[2]:

Տիրելով Հյուսիսային Ասորիքի կարևոր կենտրոններից մեկին՝ Պարսից թագավորության միացյալ բանակը 540 թվականի նույն մայիս ամսին, շարունակելով առաջխաղացումը հարավային ուղղությամբ, մոտեցավ Անտիոքին, որը, արևելքից ու արևմուտքից իրականացված համակցված գրոհի արդյունքում համառ դիմադրությունից հետո նույն տարվա հունիսին այնուհանդերձ ընկավ: Դրանից հետո, շարունակելով արշավանքը արդեն դեպի հարավ-արևմուտք և առանց մարտերի մտնելով Սելևկիա Պիերիա (Հյուսիս-արևմտյան Ասորիք, Անտիոքից մոտ 25 կմ հարավ-արևմուտք, Օրոնտեսի գետաբերանում), Խոսրով I-ի բանակը ուղղություն վերցրեց դեպի Ապամեա, որտեղ, ի սկզբանե ստիպելով այս քաղաքի կայազորին վճարել 1.000 կգ ոսկի ու հանձնվել, արդյունքում այնուհանդերձ դաժան թալանի ենթարկեց առևտրական հարուստ այդ քաղաք[3]: Հաջողությունը հսկայական էր և Խոսրով I-ն իրոք կարող էր գոհ լինել, քանզի ձեռք բերած հսկայական ավարից զատ Պարսից թագավորության իշխանության տակ էր հայտնվել նաև, ըստ էության, ողջ Հյուսիսային Ասորիքը՝ մի հաջողություն, որին Սասանյանների տերությունը հասել էր միայն գրեթե 300 տարի առաջ՝ Շապուհ I-ի օրոք: Ժամանակն էր հիմնական ուժերով հետ դառնալու և այս անգամ արդեն, հընթացս անշտապ բանակցելով կայսերական դեսպանների հետ և կարծես ծաղրելով

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 5; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 6; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 6, 7; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 6; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 6-11; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 11; Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 6; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:

Հուստինիանոս Ի-ին, արյաց արքան որոշեց դա իրականացնել Հյուսիսային և Հայոց Միջագետքներով:

Արդյունքում՝ հընթացս ավերելով Կիննասրինը և որպես փրկագին ստանալով 200 կգ ոսկի, 540 թվականի հուլիսին Ապամեայից հետ քաշվող Պարսից թագավորության միացյալ բանակը շարունակեց ուղին դեպի հյուսիս-արևելք՝ ի վերջո երեք օրում Եփրատ գետի ձախ ափ անցնելով Բարբալիսոս բերդից մոտ 8 կմ հյուսիս ընկած հատվածում: Դրանից հետո կրկին ուժերը ցրած արյաց արքայի բանակը ասպատակեց Սրուճի և Եդեսիայի շրջակայքը՝ այս անգամ արդեն աբգարյան այս քաղաքից որպես փրկագին ստանալով 200 կգ ոսկի[1]: Հաջորդը Խառանն ու Կոստանդինեն էին, որոնց շրջակայքը ոտքի տակ տալուց հետո Խոսրով Ի-ի ռազմիկները հետ քաշվեցին միայն ոսկու հերթական չափաբաժինները ստանալուց հետո[2]:

Այս ամենից հետո, կրկին ի մի բերելով ուժերը և աստիճանաբար սեփական տերության խորքերը տեղափոխելով ձեռք բերված հսկայական ավարն ու գերիներին, Խոսրով Ի-ը, դրսևորելով դերասանական անզուգական մի տաղանդ և անվերջ մոլորեցնելով իր մոտ գտնվող կայսերական դեսպաններին, կարծես թե, վերջնական համաձայնության եկավ այն բանի օգտին, որ, եթե կնքվի հաշտություն, իրեն պետք է միանվագ վճարվի 5.000 կգ ոսկի, իսկ դրանից հետո էլ ամեն տարի պետք տրվի 500 կգ ոսկի: Միաժամանակ, չնայած այն բանին, որ ստացել էր կայսեր դեսպանների նախնական համաձայնությունը, սակայն, քաջ գիտակցելով, որ Կոստանդնուպոլսում իրեն ցանկացած դեպքում խաբելու են, Խոսրով Ի-ը մոտեցավ ատելի Դարա ամրոցին՝ փորձելով առաջնագծային կարևորագույն այս ամրությանը տիրելով, կարծես թե, եզրափակել նախորդ հաջողությունների երկար շարանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

540 օգոստոս – ***<u>Դարա ամրոցի պաշտպանությունը</u>***[3]

> Խոսրով Ի-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000), ինչպես նաև Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակը (մոտ 4.000) մոտեցան ամրոցին, որտեղ Մարտինոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) անցան համառ պաշտպանության:
>
> I փուլ – Հարձակվողները, այրվող նետերով այրելով ամրոցի հիմնական պարիսպների դիմաց ձգվող հողաթմբի վրա գտնվող ցցապարսպի դարպասները և հաղթահարելով դրանք, անցան հարձակման հիմնական պարիսպներին ուղղության, որը, սակայն, հաջողություն չբերեց:
>
> II փուլ – Հարձակվողները, նպատակ ունենալով ներխուժել ամրոց, թունել փորեցին պարսպի տակ, սակայն ամրոցի կայազորը, իմանալով այդ մասին աշխատանքներին մասնակցող մի ռազմիկից, փորվածքը հատեց մեկ այլ փորվածքով և անակնկալ հարձակումով ջարդեց աշխատանքները կատարող հակառակորդի ռազմիկներին ու ոչնչացրեցին թշնամական թունելը:
>
> Հարձակվողներից հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 1.000, պաշտպանվողներից հայերը՝ մոտ 5, դաշնակիցը՝ մոտ 50 զինվոր: Կրած անհաջողություններից հետո հարձակվողները, ստանալով 1.000 կգ արծաթ, թողեցին ամրոցի պաշարումը և նահանջեցին Պարսից թագավորության տարածք:

Արևելքում պաշտոնական Կոստանդնուպոլսի ստացած հարվածը շլացուցիչ էր, ընդ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 12-13; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 15:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 13:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 13:

որում, Պարսից տերության սպառնալիքները դրանից հետո շարունակեցին ուժի մեջ մնալ նաև հետագայում, քանզի ինքն իրեն հավատարիմ մնացած Հուստինիանոս Ի-ը իրոք չհապաղեց հայտարարել, որ Դարա ամրոցի վրա կատարված հարձակումը վերացնում է բոլոր նախկին պայմանավորվածությունները: Այսպիսով՝ պատերազմական վիճակը նույն Արևելքում շարունակեց իրական մնալ, բայց այս պայմաններում պաշտոնական Կոստանդնուպոլսին պատուհասեց ևս մեկ անհաջողություն, ինչը վերջնականապես վերացրեց Արևելքին օգնության հասնելու հնարավորությունը: Իրոք, նույն այս ժամանակ իր խոսքն ասաց նաև Բալկանյան ճակատը, որը, հանուն Արևմուտքին տիրելու գերնպատակի, մինչ այս իր հերթին անթույլատրելիության աստիճան թուլացվել էր:

Եվ այսպես, մինչ կայսերական տեսաբանները մտմտում էին, թե ի՞նչ կերպ վարվեն Արևելքում, բուլղարներն ու սլավոնները, հսկայական քանակությամբ անցնելով Դանուբը և ոտնատակ տալով ամեն ինչ, 540 թվականի ամռանը հայտնվեցին Կոստանդնուպոլսի գրեթե ուղիղ պարիսպների տակ: Քաղաքը, այն էլ այնպիսի մի ամրացված ու մեծ քաղաք, ինչպիսին Կոստանդնուպոլիսն էր, անդրդանուբյան այս քոչվորները գրավել, այն էլ հընթացս, որևէ կերպ իհարկե, ի վիճակի չէին, սակայն նրանք կարծես չէին էլ ձգտում դրան: Իրոք, մինչ կայսերական ռազմիկները ուշադիր պահակություն էին իրականացնում քաղաքի պարիսպների վրա, Արևմտյան Բուլղարական թագավորության բանակն ու սլավոնները դաժան ասպատակության ենթարկեցին Բալկանյան թերակղզու ողջ հարավային հատվածը և ի վերջո հետ քաշվեցին Դանուբից անդին[1]: Բուռն 540 թվականին, սակայն, նաև այսքանով վիճակված չէր եզրափակվել: Խնդիրը կայանում էր նրանում, որ Սողոմոն Դարացին, որը նշանակվել էր Հյուսիսային Աֆրիկայի կառավարիչ և ընդհանուր առմամբ հիանալի էր տանում այդ դերը, ամեն կերպ զարգացնելով իրեն հանձնված տարածքները, այս ճակատում ևս այնուհանդերձ նոր բարդություններ առաջացրեց: Իրոք, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որևէ կերպ հնազանդվել չցանկացող բերբերները անվերջ անհանգստացնում էին կայսերական սահմանները, եռանդուն այս կառավարիչն արդյունքում որոշվեց գործողություններ սկսել նրանց դեմ:

Արդյունքում՝ 540 թվականի ամռանը Սողոմոն Դարացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) Բաբոսի ճ-մ-ում (Լիբիայի արևմուտք), խուսափելով հարթավայրում ստեղծված արհեստական ցեխից ու հետապնդելով Գոնթարիսի գլխավորած իրենց առաջապահին պարտության մատնած և շրջապատել փորձող բերբերներին (մոտ 20.000), հասան ու հաղթեցին ճամբար զարկած թշնամուն[2]: Զարգացնելով հաջողությունը՝ Սողոմոնի գլխավորած բանակը, հուժկու նետահարությամբ ծանր կորուստներ պատճառելով թշնամու կայազորին, մինչ այդ փախուստի մատնված բերբերներից գրավեց Զերբուլա ամրոցը (Լիբիայի արևմուտք, Աբրասիոսի բարձրավանդակ)[3]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց կայսերական ռազմիկները Թումարի ճ-մ-ում (Լիբիայի արևմուտք, Աբրասիոսի բարձրավանդակ) ևս մեկ հաջողություն գրանցեցին՝ անակնկալ հարվածով գրավելով դեպի անառիկ թվացող լեռան գագաթը տանող ճանապարհը և խուճապի մատնելով, թվում էր թե, ամուր դիրքեր գրաված բերբերներին (20.000)[4]: Դրանից հետո Սողոմոն Դարացու բանակը անակնկալ հարձակումով տիրեց նաև Գեմինանիա ամրոցին (Լիբիայի արևմուտք, Աբրասիոսի բարձրավանդակ)[5]:

Այսպիսով՝ պաշտոնական Կոստանդնուպոլիսը կարող էր մխիթարվել, թերևս, միայն այն բանով, որ բացառիկ ծանր ընթացք ունեցած 540 թվականին գործերն այնուհանդերձ լավ էին գնում գոնե Արևմուտքում, որտեղ դիրքերն ամրապնդվել էին Հյուսիսային Աֆրիկայում և վերջնականապես, կարծես թե, հնազանդեցվել էր

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 4; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 19:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 19:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 20; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[5] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 20:

Օսթգոթական թագավորությունը: Այս արդյունքը, ինչպես արդեն ասվեց, թեև ձեռք էր բերվել Արևելքում կրած հսկայական կորուստների և դանուբյան ճակատում պատուհասած ստորացման գնով, բայց իրենից մի ինչ-որ մխիթարանք այնուհանդերձ ներկայացնում էր: Նույն 540 թվականին, սակայն, տեղի ունեցավ սկզբում, կարծես թե, աննկատ մնացած ևս մեկ իրադարձություն, որը, սակայն, հետագայում հսկայական հետևանքներ էր ունենալու: Իրոք, կայսրության համար, ընդհանուր առմամբ, անհաջող հենց այդ տարում էր նաև, որ Եգիպտոսում ի հայտ եկան ահավոր այն ժանտախտի առաջին նշանները, որին հետագա տարիներին Հուստինիանոս Ի-ի լայնարձակ տերության ողջ սահմաններով մեկ վիճակված էր լինելու մարդկային կյանքերի մի իսկական հունձ իրականացնել՝ իր անունը ստանալով հենց այս իսկ դարակազմիկ կայսեր անունից՝ «Հուստինիանոսի ժանտախտ»:

541 թվականին Հուստինիանոս Ի-ը փորձ կատարեց փոխել իրերի ընդհանուր առմամբ այն ծանր դրությունը, որը կայսրության համար ստեղծվել էր նախորդ տարում: Արդյունքում, համարելով, որ Ապենինյան թերակղզում բանակային լուրջ գործողություններն, ըստ էության, արդեն ավարտվել են, պաշտոնական Կոստանդնուպոլիսը, արդեն Արևելքում իրավիճակը փրկելու մտայնությամբ, հենց նույն այս ժամանակ այստեղից հետ կանչեց ոչ միայն Բելիսարիոսին, այլև՝ նրա բանակային ուժերի զգալի մասին: Որպես հետևանք՝ Հուստինիանոս Ի-ը Կոնստանդինի, Ալեքսանդրի, Բեսսասի, Հովհաննես Թրակիացու, Վիտալիանոսի, Հուստինոս Իլիրիացու և այլոց գլխավորությամբ տեղում թողեց ընդամենը միայն կայազորային ուժեր, որոնք պետք է հսկեին կայսեր ձեռքբերումները, իսկ մնացած ուժերը տեղափոխեց Արևելք: Շուտով պարզվեց, սակայն, որ վանդալական անհաջող փորձը մեծ հաշվով ոչինչ չի սովորեցրել Հուստինիանոս Ի-ին, որը, կուրորեն տարված ամենայն հռոմեականը բացարձականացնելու և հնով ապրելու իր պատկերացումներով, միանգամից էլ տեղում հաստատեց կառավարման դաժան մի ռեժիմ՝ ամենից առաջ շեշտը դնելով թալանի հասնող հարկահանության վրա: Արդյունքում, փոխանակ շահելու մարդկանց սրտերը և այդ կերպ ամրապնդվելու նոր հետ բերված տարածքներում, կայսերական վարչակազմը ձեռնամուխ եղավ դաժան շահագործման ներքին մի իսկական կողոպտիչ քաղաքականության իրականացմանը՝ բանը հասցնելով նույնիսկ նրան, որ բնակչությունից սկսեցին պահանջել չվճարված հարկերը սկսած 526 թվականից, երբ մահացել էր Թեոդորիք Ի Մեծը: Սրա հետ միաժամանակ նաև, մշտապես ունենալով փողի պակաս, սկսվեցին խիստ ընդհատումներով վճարել կամ, երբեմն, նույնիսկ ընդհանրապես չվճարել Արևմուտքում տեղակայված կայսերական ռազմիկների աշխատավարձերը, ինչն էլ հենց ամենաշատը քայքայեց վարձկանների ուժի վրա հիմնված կայսերական ռազմական մեքենան Ապենինյան թերակղզում, երբ դասալքությունը հսկայական չափերի հասավ:

Նույն այս ժամանակ օսթգոթերը, որոնք Վիտիգեսի հանձնվելուց հետո այնուհանդերձ շարունակում էին իրենց ձեռքում պահել մի քանի ամրություններ, հիմնականում կենտրոնանալով Պո գետի հովտում, այստեղ էլ հենց, տատանվելով Ուրիայի և Իլդեբադի միջև, ի վերջո իրենց արքա ընտրեցին վերջինիս: Եվ ահա Իլդեբադը (540-541), քիչ թե շատ կարգի գցելով գործերը և ավելորդ չհամարելով համենայն դեպս սպանել Ուրիային, անցավ ակտիվ գործողությունների: Արդյունքում՝ 541 թվականի ապրիլին Իլդեբադ արքայի գլխավորած Օստգոթական թագավորության բանակը (1.000) Տրեվիզոյի ճ-մ-ում (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիսային ափ, Վենետիկից հյուսիս) հաղթեց Վիտալիանոսի գլխավորությամբ առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 2.000, այդ թվում մեծաթիվ էրուլներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 50)[1]: Այս հաղթանակը զգալի հեղինակություն ապահովեց Իլդեբադին, սակայն հաջողությունը հետագայում զարգացնել վերջինս չկարողացավ, քանզի 541 թվականի մայիսին սպանվեց ազգությամբ գեպիդ իր թիկնապահի կողմից, որի

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 1:

հարսնացուին մինչ այդ, դիտավորյալ թե չիմացությամբ, կնության էր տվել մեկ ուրիշի: Իլդեբադի սպանվելուց հետո, մինչ օսթգոթերը կկողմնորոշվեին գահի հաջորդ թեկնածուի հարցով, Օսթգոթական թագավորության արքա հռչակվեց Վենետիկի մոտակայքում հնուց ի վեր հաստատված ռուգիների առաջնորդ Էրարիքը (541), սակայն վերջինս, ըստ էության, խորթ լինելով օսթգոթերի հիմնական մասի համար, որոնք ռուգիներին ընկալում էին որպես ստորին դասի իրենց ենթականեր, այդպես էլ չընդունվեց վերջիններիս կողմից: Արդյունքում՝ օսթգոթերն առժամանակ ի վիճակի չեղան ակտիվ գործողությունների, ինչն էլ առնվազն գոնե հետաձգեց իրերի դրության ծանրացումը Ապենինյան թերակղզում: Արևելքը, սակայն, նույն այս ժամանակ շարունակում էր ճարակել:

540 թվականի հաղթարշավից հետո պաշտոնական Տիզբոնն այս անգամ նախատեսել էր հարված հասցնել հյուսիսային ուղղությամբ՝ նպատակակետ ունենալով Լազիկան ու ցանկանալով, ինչպես և հարավում Միջերկրական ծովի պարագայում, հյուսիսում ևս դուրս գալ այս անգամ արդեն Սև ծովի ափ: Այս պարագայում արյաց արքային հատկապես մեծ հույսեր էր ներշնչում այն հանգամանքը, որ, ծայրահեղ դժգոհ պաշտոնական Կոստանդնուպոլսի կողմից Լազիկայում վարվող բացահայտ գռփողական քաղաքականությունից, Լազական թագավորության արքա Գուբազ II-ը (541-555) ապստամբության դրոշ էր պարզել ու օգնության համար դիմել էր պաշտոնական Տիզբոնին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 541 ապրիլ – ***<u>Պետրայի գրավումը</u>*** (Լազիկա, Բաթումիից մոտ 40 կմ հյուսիս, Սև ծովի ափին)[1]
>
> Խոսրով I-ի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարսից, ինչպես նաև Գուբազ II-ի գլխավորած Լազական թագավորությունների միացյալ բանակը (մոտ 80.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) պաշարեցին քաղաքը Հովհաննես Ցիբուսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50):
>
> I փուլ – Քաղաքի կայազորը, համոզելով հակառակորդին, որ քաղաքը լքված է, անակնկալ արտագրոհով փախուստի մատնեց պարսպին մոտեցած վերջինիս առաջապահին և ոչնչացրեց պաշարողական տեխնիկան:
>
> II փուլ – Հաջորդ օրը Խոսրով I-ի բանակը անցավ վճռական գրոհի, սակայն մինչև երեկո տևած մարտում այն հետ մղվեց: Այդ ընթացքում, սակայն, պարանոցին ստացված նետի հարվածից Հովհաննեսը ծանր վիրավորվեց և կարճ ժամանակ անց մահացավ: Միաժամանակ քաղաքը պաշարողները սկսեցին փորել պարսպի աշտարակներից մեկի տակ:
>
> III փուլ – Մի քանի օր անց, տակը փորված աշտարակի տակ գտնվող թունելում դրված գերանները այրելու միջոցով քաղաքը պաշարողները փլեցին այն, որից հետո գրավեցին պարսպի այդ հատվածը: Ստեղծված պայմաններում քաղաքի կայազորը բանակցություններ սկսեց և դադարեցրեց դիմադրությունը:
>
> Հաղթողներից հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 1.000, պարտվողներից հայերը՝ մոտ 30, դաշնակիցը՝ մոտ 900 զինվոր: Քաղաքի կայազորի ռազմիկների զգալի մասը միացավ Խոսրով I-ի բանակին:

Պետրայի գրավումը կարևոր քայլ հանդիսացավ Լազիկային տիրելու համար, քանզի դրանից հետո Սեբաստապոլսում և Պիցունդայում գտնվող կայսերական կայազորները, երկյուղելով թշնամու առաջխաղացումից, քանդեցին ամրությունները ու ծովով հեռացան Տրապիզոն: Նույն այս ժամանակ, սակայն, մինչ հակառակորդի

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 15, 17, 29, գիրք 8, գլուխ 4:

հիմնական ուժերը շեղված էին հյուսիսային ուղղությամբ, ի վերջո Արևելք ժամանած և ուժերը կարգի գցած Բելիսարիոսը փորձեց ակտիվանալ հարավային ուղղությամբ: Գործողությունների ծրագիրը նույնն էր, ինչ և առաջ:

Արդյունքում՝ 541 թվականի ապրիլին Արևելքի հրամանատար Բելիսարիոսի, Հայաստանի հրամանատար Բուզեսի, Լիբանանի զորքերի հրամանատարներ Հոեկիթանգոսի և Թեոկտիստոսի, Պետրոս Հայի, Հովհաննես Տրոգոլիտայի ու Հովհաննս Ֆագասի գլխավորությամբ Դարա ամրոցից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000, այդ թվում գոթեր, էրուլներ, վանդալներ և բերբերներ), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000, այդ թվում Պետրոս Հայը), ինչպես նաև Գասանյանների թագավորության բանակը (մոտ 2.000) Նաբեդեսի գլխավորած Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) և քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 500) պաշարեցին Մծբինը, սակայն, այն բանից հետո, երբ անզգուշորեն ընդհուպ քաղաքին մոտեցած նրանց առաջապահը հարձակման ենթարկվեց ու պարտություն կրեց, ընդ որում հակառակորդը նահանջեց միայն գոթական հեծելազորի հակահարձակումից հետո, որոշ ուժեր թողնելով քաղաքը շրջափակելու համար, շարունակեցին շարժվել դեպի արևելք[1]: Նույն թվականի մայիսին կայսերական բանակը Պարսից թագավորության բանակից (800 հեծյալ) պաշարեց Սիսավրանոն ամրոցը (Մծբինից 39 կմ արևելք), որը պարենի պակասի պատճառով հունիսին ի վերջո հանձնվեց[2]: Գերված պարսիկ ռազմիկների հրամանատար կարգվեց Վասակ Մամիկոնյանի եղբայր Արտավազդ Մամիկոնյանը, որից հետո վերջինս իր ջոկատի հետ միասին տեղափոխվեց Արևմուտք:

Նախորդ իրադարձություններից հետո Գասանյանների թագավորության բանակը ասպատակեց Հյուսիսային Միջագետքը, իսկ Բելիսարիոսի բանակը, ավերելով Սիսավրանոնը, բայց շոգերից ու տարածված հիվանդություններից զգալիորեն կորցնելով մարտունակությունը, ի վերջո վերադարձավ Մծբին և, վերամիավորելով ուժերը, այստեղից էլ հետ քաշվեց արդեն դեպի Դարա ամրոց: Փաստորեն կրկնվեց նույն այն իրավիճակը, ինչ եղել էր նախորդ պատերազմներում և, հատկապես, Մծբինի դեմ մղվող պայքարում՝ կայսերական բանակը Արևելքում ոչ մի կերպ չէր կարողանում մեծածավալ բնույթի հաջող հարձակողական գործողություններ իրականացնել: Միաժամանակ հարկ է նշել, որ կայսերական բանակի նահանջի գործում իր դերն ունեցավ նաև այն հանգամանքը, որ, տեղեկանալով հարավում զարգացող իրադարձությունների մասին, Խոսրով I-ը հերթական անգամ կայսրության դեմ հանեց ռազմատենչ սաբիրներին, որոնք հենց այս ժամանակ ասպատակեցին Սատրապական Հայաստանի հյուսիսային մասը, թեև արդյունքում Վալերիանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) Կարինի ճ-մ-ում այնուհանդերձ հաղթեցին ու հետ շպրտեցին տափաստանային այս գիշատիչներին[3]: Հարկ է նշել, որ ռազմական գործողություններից զատ պաշտոնական Կոստանդնուպոլիսը հենց այս ժամանակ փորձ կատարեց Պարսից թագավորությունում նաև ներքաղաքական դրությունը սրել:

Իրոք, 531 թվականին բացահայտված դավադրության արդյունքում փրկվել հաջողվել էր միայն Ջամասպի որդի Կավատին, որին էլ հենց այժմ, կամ սեփական նախաձեռնությամբ, կամ էլ կայսրության դրդումով գործող Ադրգունդաբանդ Խանարանգեսը մեջտեղ բերեց որպես արյաց գահի թեկնածու: Այս դավադրությունը, սակայն, ևս բացահայտվեց, ընդ որում մատնիչի դերում հանդես եկավ Ադրգունդաբանդի որդի Վահրամը, որը, կատաղած Խոսրով I-ի միջոցով մեջտեղից վերացնելով հորը, զբաղեցրեց վերջինիս պաշտոնը ու տեր դարձավ նրա տիրույթներին: Ինչ վերաբերում է Կավատին, ապա գահի անհաջողակ այս թեկնածուն այս անգամ ևս մի ինչ-որ հրաշքով փրկվեց և ապաստանեց Բյուզանդական կայսրությունում, որտեղ նրան, համենայն դեպս,

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, գլուխ 16, 18:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Գաղտնի պատմություն», գլուխ 2; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 6; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Գաղտնի պատմություն», գլուխ 2:

պահեցին իրենց մոտ՝ հետագայում մի որևէ պարագայում օգտագործելու մտայնությամբ:

541 թվականի հոկտեմբերին Էրարիքը զոհ գնաց դավադրությանը, որից հետո կրկին ի մի եկած օսթգոթերը իրենց արքա ընտրեցին Իլդեբադի եղբորորդի Տոտիլլային (541-552): Օսթգոթերի հերթական այս արքան իր ժողովրդի իսկական մի զավակն էր դրա ամենադասական իմաստով: Տոտիլլան աչքի էր ընկնում զորավարական մեծ տաղանդով, նա քաջ էր, խիզախ, ուժեղ և իր մեջ կարծես պարփակում էր ողջ այն լավագույնը, որին գերմանական քաղաքակրթությունն ընդհանրապես ու գոթականը, մասնավորապես, այդ ժամանակ հասել էր ռազմական գործում: Տաղանդավոր այս արքային սրանից հետո վիճակված էր լինելու տասը տարուց էլ քիչ ավելի ոչ միայն լարվածության մեջ պահել ողջ Ապենինյան թերակղզին, այլև, երբեմն, նույնիսկ՝ լրջորեն վիճարկել կայսրության իշխանությունն այստեղ: Նույն այս ժամանակ, սակայն, մինչ օսթգոթերը զբաղված էին արքայական ընտրություններով, Ապենինյան թերակղզում գտնվող սեփական բանակի վաղուց արդեն ռազմավարական բնույթ ընդունած պասիվությունից դժգոհ Հուստինիանոս I-ը վերջինիցս սկսեց ակտիվություն պահանջել:

Արդյունքում, ուժեղացնելով տեղում գտնվող ուժերը Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ տեղ հասած ջոկատով, կայսրը խնդիր դրեց տիրել օսթգոթերի ձեռքին մնացած վերջին ամրություններին: Եվ ահա 542 թվականի մարտի սկզբին Կոնստանդինի, Ալեքսանդրի, Հովհաննես Թրակիացու, Բեսսասի, Վիտալիանոսի և այլոց գլխավորությամբ Ռավեննայից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակի (12.000, այդ թվում պարսիկներ) և նրա կազմում Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ գործող Հայ ռազմիկների (մոտ 100) առաջապահը (100) Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 800) գիշերային անակնկալ գրոհով գրավեց Վերոնան (Հյուսիսային Իտալիա), սակայն սեփական բանակը ժամանակին օգնության չհասավ, որից էլ օգտվելով փախուստը դադարեցրած հակառակորդի ռազմիկները հետ դարձան: Արդյունքում՝ արդեն Արտավազդի մարդիկ ստիպված եղան, ցատկելով պարսպից ու կորուստներ կրելով, հեռանալ քաղաքից[1]: Այսպիսով՝ ռազմավարական նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելու փորձը կայսրության բանակին այդպես էլ հաջողություն չբերեց, սակայն շուտով պարզվեց իրերի դրության ավելի վատ վիճակը, քանզի եռանդուն Տոտիլլան, ի մի բերելով առայժմ դեռևս փոքրաքանակ, սակայն մեծ ոգևորությամբ համակված իր մարտունակ ուժերը, ինքը պայքար սկսեց ռազմավարական նախաձեռնությանը տիրելու համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

542 մարտի կես – ***<u>Ֆավիենտիայի ճ-մ</u>*** (Ռավեննայից մոտ 100 կմ հարավ-արևմուտք)[2]

> Կոնստանդինի, Ալեքսանդրի, Հովհաննես Թրակիացու, Բեսսասի, Վիտալիանոսի և այլոց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 11.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 80, այդ թվում Արտավազդ Մամիկոնյանը) շարժվեցին Տոտիլլա արքայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակի դեմ (5.000): Այդ ընթացքում հրավիրված խորհրդակցությունում Արտավազդ Մամիկոնյանն առաջարկեց հարձակվել թշնամու վրա այն պահին, երբ վերջինս միայն մասնակի անցած կլինի գետը, սակայն այդ ծրագիրը չընդունվեց և, մինչ կայսերական բանակի հրամանատարությունը վիճում էր հետագա գործողությունների ծրագրի շուրջ, Տոտիլլան հիմնական բանակով ոչ միայն հաջողությամբ ավարտեց գետանցումը, այլև մեկ այլ ջոկատ էլ, գետն անցկացնելով այլ վայրում, ուղղեց դեպի հակառակորդի թիկունք: Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին: Մարտից անմիջապես առաջ երկու բանակների մարտակարգերի

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 3; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 4; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

միջատարածքում հանդիպեցին Արտավազդ Մամիկոնյանը և անպարտելի ու հզոր ռազմիկի համբավ ունեցող հսկայամարմին գոթ Վալարիսը: Տեղի ունեցած մենամարտում Արտավազդը հաղթեց և սպանեց իր հակառակորդին, սակայն քիչ անց պատահաբար դիպավ գետնին խրված թշնամու նիզակի սուր ծայրին, կտրեց քներակը և 3 օր անց արյան մեծաքանակ կորստից մահացավ:

I փուլ – Օսթգոթական թագավորության բանակը անցավ հարձակման, որի արդյունքում բռնկվեց համառ մարտ:

II փուլ – Կայսերական բանակի թիկունքն անցած թշնամու ջոկատը անակնկալ հարված հասցրեց, որից հետո, առանց այդ էլ բարոյալքված Արտավազդի վիրավորվելու լուրից, կայսերական բանակը մատնվեց խուճապի և դիմեց փախուստի:

III փուլ – Օսթգոթական թագավորության բանակը հետապնդեց թշնամուն և ծանր կորուստներ պատճառեց:

Հայերը կորցրին մոտ 20, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

542 մարտի վերջ – ***<u>Մուջելլոյի ճ-մ</u>*** (Ֆլորենցիայից մոտ 30 կմ հյուսիս)[1]

Տոտիլլա արքայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 8.000) մոտեցավ Ֆլորենցիային, որի պաշտպանությունը գլխավորող Հուստինոս Իլիրիացին այս մասին տեղեկացրեց Ռավեննայում գտնվող ուժերին: Արդյունքում՝ Բեսսասի, Կիպրիանոսի և Հովհաննես Թրակիացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50) շարժվեցին քաղաքին օգնության: Տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին՝ Տոտիլլան իր բանակը հետ քաշեց քաղաքից հյուսիս և ճամբարեց: Կայսերական բանակի հրամանատարությունը, միավորվելով ուժերը Հուստինոսի գլխավորած կայազորի հետ և գնալով հակառակորդի հետքերով, ի վերջո հանգեց մի ծրագրի, ըստ որի Հովհաննեսի գլխավորած ուժեր հենց երթից պետք է հարձակվեին վերջինիս վրա, որից հետո միայն պետք է մարտի մեջ մտնեին տեղ հասած հիմնական ուժերը:

I փուլ – Հովհաննեսի գլխավորած ջոկատը անակնկալ հարձակվեց ճամբարած թշնամու վրա և, ջարդելով վերջինիս ու մատնելով փախուստի, սկսեց հետապնդել, իսկ ընթացքում մարտադաշտ սկսեցին հասնել կայսերական բանակի հիմնական ուժերը:

II փուլ – Հովհաննեսի գլխավորած ջոկատը զարգացրեց հարձակումը դեպի մոտակա բլրի վրա դիրքեր գրաված հակառակորդի ուժերը և համառ մարտի բռնվեց վերջիններիս հետ, սակայն Հովհաննեսի մահվան մասին տարածված կեղծ լուրը բարոյալքեց հարձակվողներին և արդյունքում նրանք, պարտություն կրելով, հետ շպրտվեցին ու ապաստանեցին հիմնական բանակի շարքերում:

III փուլ – Ուժերը կենտրոնացրած Օսթգոթական թագավորության բանակը անցավ հակահարձակման և ծանր պարտության մատնեց ու ցրեց մինչ այդ արդեն բարոյալքված կայսերական բանակին:

Հայերը կորցրին մոտ 30, դաշնակիցը՝ մոտ 5.000, որոնց թվում վիրավորվեց նաև Բեսսասը, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Կարճ ժամանակի ընթացքում կրած երկու լուրջ պարտությունները բերեցին նրան, որ Ապենինյան թերակղզում գործող կայսերական բանակը, համենայն դեպս գոնե առժամանակ, դադարեց իրենից որևէ կազմակերպված մարտական միավոր ներկայացնել, իսկ տարբեր ամրություններում էլ ցրված ռազմիկներն ուղղակի ի վիճակի չէին որևէ լայնածավալ գործողության: Արդյունքում՝ Տոտիլլայի ուժերն առանց լուրջ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 5,6; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

մարտերի տիրեցին Կայսենին և Պետրա ամրոցներին, ինչպես նաև Ուրբինոյին, Մոնֆերետտային և Բենվենտին (վերջինը՝ Հարավային Իտալիա)։ Եվ այսպես, Հուստինիանոս Ի-ը ոչ միայն չկարողացավ Արևմուտքում տիրել ռազմավարական նախաձեռնությանը, այլև՝ այն լիովին զիջեց հակառակորդին։ Նույն այս ժամանակ, սակայն թեթև չէր իրերի դրությունը նաև Արևելքում, ընդ որում, ի տարբերություն նախորդ տարվա և հետևելով 540 թվականի հաջողված օրինակին, այս անգամ ևս Խոսրով Ի-ը նախատեսել էր հակառակորդին հարված հասցնել հարավից։

Արդյունքում՝ 542 թվականի մարտի սկզբին, հերթական անգամ, բայց միայն արդեն առժամանակ, մի կողմ թողնելով Նիկեփորիոնը ու միջագետքյան պաշտպանական ողջ շրջանը, անցնելով Եփրատը նրա ստորին հոսանքներով և առաջանալով գետի աջ ափով, Խոսրով Ի-ի գլխավորությամբ արշաված Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 25.000), ինչպես նաև Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակը (մոտ 5.000) արշավանք սկսեցին դեպի հյուսիս՝ մինչև ապրիլ վերջապահի ուժերով (6.000) հընթացս պաշարելով, սակայն այդպես էլ չկարողանալով գրավել Սերգիոպոլիսը (Հարավային Ասորիք, Սուրից մոտ 25 կմ հարավ)։ Աննշան այդ անհաջողությունը, սակայն, ոչինչ էր հերթական այն հաղթարշավի համեմատ, որն իրականացրեց արյաց արքան, ընդ որում, քանի որ Հյուսիսային Ասորիքը հայտնվել էր Պարսից թագավորության տիրապետության տակ դեռևս երկու տարի առաջ, արդյունքում վերջինս կարողացավ մխրճվել արդեն նաև Սատրապական Հայաստանի խորքերը՝ ասպատակելով և առանց լուրջ դիմադրության հանդիպելու հասնելով Կոմմագենե։ Արյաց արքան հերթական անգամ կարող էր լիովին գոհ մնալ մարտարշավի արդյունքներից և դրա համար էլ, խուսափելով Բելիսարիոսի գլխավորությամբ կենտրոնացող Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 30.000, այդ թվում գոթեր, էրուլներ, վանդալներ և բերբերներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (1.000, այդ թվում Ատոմ Ակեացին), ինչպես նաև ստանալով երաշխիքներ առ ապագայում կնքվելիք հաշտության, հետ քաշեց ուժերը։

Իրոք, մինչ Հերմանոսի եղբայր, կայսր մորաքրոջ որդի Հուստոսն ու Բուզեսը փակված էին Մեմբիջում, Բելիսարիոսը կարողացավ տպավորություն ստեղծել, թե իր հետ առկա են զգալի ուժեր և ինքը ստանալու է խոշոր համալրումներ, ինչն էլ ի վերջո ստիպեց արյաց արքային ուժերը հետ քաշել, մանավանդ, որ վերջինս այնուհանդերձ հույս ուներ ստանալ բանակցությունների առարկա հանդիսացող ոսկին։ Խոսրով Ի-ը, սակայն, հակառակորդի համար ամեն դեպքում մի տհաճ անակնկալ ուներ պատրաստած և արդյունքում, կարծես թե, ընդառաջելով վերջինիս, հետ քաշվելով, Եփրատի ափերով իջնելով հարավ ու ուղղություն վերցնելով դեպի սահմանային կարևորագույն ամրություն հանդիսացող Նիկեփորիոն, արյաց արքան հիմնովին ավերեց առանց մարտի հանձնված այդ քաղաքը և նոր միայն հեռացավ իր թագավորության տարածք[1]։ Նիկեփորիոնի անկումը ծանր հարված հասցրեց առանց այդ էլ խափանումներով գործող կայսրության արևելյան պաշտպանական համակարգին, քանզի այժմ բաց էին Եփրատի ափերով դեպի հյուսիս տանող արդեն երկու ճանապարհները, ընդ որում կայսրությունը ոչ միայն զրկվել էր կարևորագույն պաշտպանական ամրություններից ևս մեկից, այլև կորել էր հնարավորությունը առիթի դեպքում թիկունքից սպառնալ Եփրատի մյուս ափով դեպի հյուսիս շարժվող հակառակորդի ուժերին, այնպես որ Խոսրով Ի-ը կարող էր իրեն լիովին գոհացած զգալ։

Բելիսարիոսի գործողությունները, համենայն դեպս գոնե սկզբնական շրջանում և հակառակորդի հետ քաշվելու տպավորության տակ, քանի դեռ Նիկեփորիոնի անկման լուրը լայնորեն դեռ չէր տարածվել, վերջինիս հեղինակությունն ավելի մեծացրին, բայց միաժամանակ դա սրեց նաև այս զորավարի նկատմամբ հավերժական կասկածներով

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 20, 21; Պրոկոպիոս Կեսարացի «Գաղտնի պատմություն», գլուխ 3; Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 6; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 77։

լցված Հուստինիանոս I-ի նույն այդ կասկածները: Սրան գումարվեց նաև այն, որ Պետրոս Հայն և Հովհաննես Ֆագասը գաղտնի բողոք ուղարկեցին Հուստինիանոս I-ին ու հայտնեցին, որ, վերջինիս ծանր հիվանդության կամ մահվան կապակցությամբ տարածված լուրերի պայմաններում Բելիսարիոսն և Բուզեսը համաձայնության են եկել որևէ նոր մարդու այլևս կայսր չճանաչել: Այս պայմաններում Բելիսարիոսն ու Բուզեսը կանչվեցին Կոստանդնուպոլիս և շնորհազրկվեցին, ընդ որում Բուզեսը ավելի քան երկու տարով բանտ նետվեց, պահվելով Թեոդորայի հարկաբաժնի հենց ներքևում գտնվող խավար խցերից մեկում, իսկ Բելիսարիոսն էլ, թեև չձերբակալվեց, սակայն մի քանի տարի հեռու պահվեց ռազմական գործողություններից:

Նույն այս ժամանակ, երբ գործերը գտնվում էին նման կասկածելի դրության մեջ, ի վերջո իր ողջ ուժով պայթեց նաև ժանտախտի այն ահեղ համաճարակը, որի կանխանշանները երևացել էին դեռևս երկու տարի առաջ: Համաճարակի հետևանքներն իրոք սարսափելի էին, քանզի այն, թուլացող թափով շարունակվելով ավելի քան տասը տարի, ամենաընդհանուր գնահատականներով արժեցավ կայսրության բնակչության մոտ մեկ երրորդի կյանքը՝ փաստորեն նվազեցնելով ոչ միայն բնակչության, իսկ արդյունքում նաև ռազմիկների թիվը, այլև՝ լրջորեն ազդելով նաև տնտեսական ցուցանիշների վրա, ընդ որում վերջինս իր հետ միասին նաև ծանր հոգեբանական ազդեցություն թողեց: Ավելին, ժանտախտի ի հայտ գալն ուղեկցվեց արդեն նաև բնակլիմայական բնույթ ունեցող ևս մեկ երևույթով, որի բացասական հետևանքները ևս իրենց ողջ ուժով երևացին հենց մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում:

Մասնագետները դեռ երկար կվիճեն, թե ի՞նչն է եղել երևույթի պատճառը, բայց փաստը մնում է փաստ, որ, սկսած IV դարի կեսերից, երկրագնդի միջին ջերմաստիճանը, ի համեմատ նախկինի, աստիճանաբար սկսում էր ընկնել: Այս գործընթացը, աստիճանաբար ուժեղանալով, երկրագնդի հասարակածային հատվածում տեղի ունեցած մի քանի հրաբխային հզոր ժայթքումների հետևանքով, որի արդյունքում մթնոլորտ էր նետվել մեծ քանակի հրաբխային մոխիր, իր գագաթնակետին էր հասել 530-ական թվականների վերջին: Արդյունքում՝ ձմեռները դարձել էին ավելի ցուրտ և երկար, իսկ ամառները՝ ավելի սառն ու կարճատև: Որպես հետևանք՝ լուրջ հարված էր կրել տնտեսական կյանքը, որի հիմքն, ըստ էության, գյուղատնտեսությունն էր: Հաճախակի էին դարձել անբերրի տարիները, կարկուտը, ցրտահարությունները և գյուղատնտեսությանը վնասող այլ բնակլիմայական երևույթները, իսկ այդ ամենն էլ լրջորեն ազդել էր բոլոր պետությունների տնտեսությունների վրա: Եվ այսպես, սահմաններում մղվող մշտական և ոչ այնքան հաջող բնույթ ունեցող պատերազմները, ժանտախտի սարսափելի համաճարակը և տնտեսական անկումը մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում Հուստինիանոս I-ի կայսրության համար ստեղծել էին բավականին ծանր մի դրություն, թեև, հասկանալի էր, որ այս ամենից տուժում էին նաև այլ ազգեր և պետություններ: Ավելին, 542 թվականին Արևելքում կրած ռազմաքաղաքական անհաջողությանը չհապաղեց լրացնել նաև Արևմուտքը, որտեղ Տոտիլլան գործում էր ամենայն եռանդով:

Իրոք, օսթգոթերի տաղանդավոր առաջնորդը, հիանալի տեղեկացված լինելով կայսրության իշխանության տակ նոր հայտնված տարածքներում տիրող տրամադրությունների մասին, Ապենինյան թերակղզում իրականացրեց այն, ինչ դրանից առաջ իրականացրել էր Բելիսարիոսը Վիտիգեսի նկատմամբ: Արդյունքում, առժամանակ մի կողմ թողնելով Հռոմն և կայսերական մնացած ամրությունները թերակղզու կենտրոնական հատվածում, Տոտիլլան արագորեն ստվարացող իր ուժերը շարժեց դեպի Ապենինյան թերակղզու հարավ՝ նպատակ ունենալով ոչ միայն օգտվել իր հիմնական մասով պաշտոնական Կոստանդնուպոլսից դժգոհ տեղի բնակչության աջակցությունից, այլև, զրկելով Ապենինյան թերակղզու կենտրոնական ու հյուսիսային մասում գործող կայսերական ուժերին պարենավորման կարևոր կենտրոններից, առավել հեշտացնել հետագա հաջողությունը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

542 մարտի վերջ - 543 մարտ – ***Նեապոլի ճ-մ***[1]

Տոտիլլա արքայի գլխավորությամբ ***Բենվենտից*** առաջխաղացած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 20.000) պաշարեց քաղաքը Կոնոնի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (1.000, այդ թվում իսավրիացիներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (10):

I փուլ – Գարնան և ամռան ընթացքում շրջափակելով քաղաքը՝ Օսթգոթական թագավորության բանակը գրավեց ***Կուման,*** ինչպես նաև իր իշխանությունը հաստատեց գրեթե ողջ Հարավային Իտալիայի վրա:

II փուլ – Աշնանը Սիցիլիա ժամանած, այնտեղից էլ Հռոմ շարժված և ի վերջո Նեապոլի ափերի մոտ խարիսխ գցած կայսերական նավատորմն (մոտ 50 նավ) ու բանակը (մոտ 5.000), ինչպես նաև նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) փորձեցին ափհանում իրականացնել, սակայն անակնկալ հարձակման ենթարկվեցին թշնամու կողմից և գլխովին ջախջախվեցին:

III փուլ – 543 թ-ի հունվարին կայսերական նավատորմն (մոտ 80 նավ) և բանակը (մոտ 8.000), ինչպես նաև նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500, այդ թվում Ֆազաս Բագրատունին) հերթական փորձը կատարեցին շրջափակումից ազատել քաղաքն ու մոտեցան վերջինիս, սակայն ուժեղ փոթորիկը ափ նետեց նավերի հիմնական մասը կամ խորտակեց և ցրեց դրանք այն դեպքում, երբ փրկված ռազմիկներն էլ զոհ գնացին թշնամիների հարվածներին:

IV փուլ – Սպառելով դիմադրության բոլոր միջոցները՝ 543 թ-ի մարտին քաղաքը հանձնվեց թշնամուն: Կոնոնն և նրա ռազմիկները պատվավոր կապիտուլյացիայի ենթարկվեցին ու մեկնեցին Հռոմ՝ յուրայինների մոտ:

Հայերը կորցրին մոտ 300, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

543 թվականը Հուստինիանոս I-ի համար սկսվեց Նեապոլի անկման հետ կապված ծանր լուրով, սակայն կայսրը, որն իր ռազմաքաղաքական ակտիվության կենտրոնն այդ ժամանակ արդեն տեղափոխել էր Արևելք, լավ լուրեր չստացավ նաև այս ճակատից: Իրոք, նպատակ ունենալով Ապենինյան թերակղզում Տոտիլլային կասեցնել հարատև մարտերում՝ պաշտոնական Կոստանդնուպոլիսը Արևելյան ճակատում իր բոլոր սպառնալիքներում արդեն անտանելի դարձած Խոսրով I-ի դեմ նույն այս ժամանակ զգալի ռազմական ուժեր էր կուտակել, որոնք կազմում էին կայսրության բանակի լավագույն մասը: Հուստինիանոս I-ը նախատեսում էր գոնե մի որևէ կերպ զսպել Խոսրով I -ին, որից հետո կրկին անդրադառնալ Տոտիլլային, սակայն այս ծրագիրը չհաջողեց:

Նախորդ տարիներին Արևելքում վարվող ռազմական գործողությունները մղվել էին հարավային և հյուսիսային ուղղություններով, ընդ որում երկու դեպքում էլ հաջողությունը եղել էր պաշտոնական Տիզբոնի կողմում: Արդյունքում, չցանկանալով մարտի մեջ մտնել հակառակորդի կողմից ավերված տարածքներում և միաժամանակ նաև ցանկանալով առաջանալ պատերազմական գործողություններից համեմատաբար զերծ մնացած տարածքներով, ինչպես նաև ապահովել ռազմավարական անակնկալ ու միաժամանակ նաև վնաս հասցնել Խոսրով I-ին, կայսերական զորավարներն այս անգամ որոշեցին հարված հասցնել Մարզպանական Հայաստանի ուղղությամբ: Խոսրով I-ի հետախուզությունը, սակայն, արդյունքում լիովին ապակողմնորոշեց հակառակորդին:

Իրոք, տեղեկանալով այն մասին, որ կայսերական զորավարները պատրաստվում են հարված հասցնել Մարզպանական Հայաստանին, պարսկական կողմն ամենից առաջ լուրեր տարածեց, թե Ատրպատականում հավաքված արյաց արքայի բանակում

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 6-8:

ժանտախտի համաճարակ է բռնկվել և վերջինս իր ուժերը հետ է քաշել Միջագետք: Ավելին, երկակի խաղի մեջ ներքաշվեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Քրիստոփոր Ի-ը (539-545), որը, որպես Խոսրով Ի-ի դեսպան ներկայանալով Հայաստանում գտնվող կայսերական զորքերի հրամանատար Վալերիանոսին, իրավիճակը ներկայացրեց այնպես, թե իբր արյաց արքան, ձգտելով խաղաղության, սպասում է Հուստինիանոս Ի-ի դեսպանախմբին: Միաժամանակ, հակառակորդին մոլորեցնելու ուղղությամբ կատարվեց ևս մեկ քայլ, երբ կաթողիկոսի եղբայրը, կարծես թե, գործելով կայսրության օգտին և պարսկական կողմից գաղտնի, տեղեկացրեց, թե իրականում արյաց արքայի դեմ ապստամբել է նրա որդիներից մեկը, համաճարակն իրոք մեծ չափերի է հասել ու Խոսրով Ի-ը հակված է խաղաղության: Այսպիսով՝ պարսկական կողմը ոչ միայն գուշակեց հակառակորդի հարվածի հավանական ուղղությունը, այլև լիակատար մոլորության մեջ գցեց վերջինիս գործնականում ռազմավարական մակարդակում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

543 մարտ – ***<u>Անգղ ամրոցի ճ-մ</u>***[1]

Արևելքի հրամանատար Մարտինոսի, Հայաստանի հրամանատար Վալերիանոսի, Պետրոս Հայի, Իլդիգերի, Թեոկտիստոսի, Դոմենտիոլոսի, Հուստոսի, Հովհաննես Տրոգոլիտայի, Հովհաննես Ֆագասի, էրուլների հրամանատարներ Ֆիլեմութի և Վերոսի, Պերանիոս Բագրատունու, Ներսեհ ու Սահակ Կամսարականների, ինչպես նաև Ատոմ Ակեացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (30.000, այդ թվում էրուլներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000) ներխուժեցին Մարզպանական Հայաստան, որից հետո, կարծելով, թե տեղում իրենց դիմադրող ուժ չկա, մարտարշավի ընթացքում ցրեցին ուժերը ու սկսեցին ասպատակել շրջակայքը: Հետագայում, սակայն, տեղեկանալով Նաբեդեսի գլխավորությամբ ամրոցում և նրա շրջակայքում տեղակայված Պարսից թագավորության բանակի (4.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 2.000) առկայության մասին, Մարտինոսը, Վալերիանոսը, Պետրոս Հայը, Իլդիգերը, Թեոկտիստոսը, Դոմենտիոլոսը, Հովհաննես Տրոգոլիտան, Հովհաննես Ֆագասը, Ներսեհ և Սահակ Կամսարականները, ինչպես նաև Ատոմ Ակեացին միավորեցին ուժերը ու մոտեցան ամրոցին: Դրանից հետո առանց մարտակարգը պահպանելու ելման դիրքեր գրաված կայսերական բանակը պատրաստվեց գրոհել հակառակորդի դիրքերը, ընդ որում աջ թևի հրամանատարությունը ստանձնեց Պետրոս Հայը, ձախինը՝ Վալերիանոսը, իսկ կենտրոնի և ողջ բանակի ղեկավարությունն իր վրա վերցրեց Մարտինոսը:

Իր հերթին Նաբեդեսը, ժամանակին տեղեկանալով թշնամու թվական գերակշռության մասին, ամուր դիրքեր գրավեց ամրոցում և նրա մատույցներում՝ փորելով խանդակներ ու քարերից և սայլերից կազմված ամրությունով փակելով գյուղի միջով դեպի ամրոց տանող նեղ ճանապարհը: Միաժամանակ նաև գյուղի խրճիթներում կազմակերպված դարաններում աննկատ տեղակայվեցին հետևակ ռազմիկներ:

I փուլ – Կամսարական իշխանների, ինչպես նաև Ատոմ Ակեացու գլխավորած ուժերը, իրենց կազմում ունենալով Ֆիլեմութի և Վերոսի գլխավորած էրուլներին, անցան հարձակման, ինչի արդյունքում հակառակորդի առաջապահը կարճատև դիմադրությունից հետո նահանջեց գյուղ տանող նեղ ճանապարհի ուղղությամբ՝ իր հետևից քաշելով կայսերական բանակի ռազմիկներին:

II փուլ – Կայսերական բանակը փորձեց զարգացնել հաջողությունը, սակայն, նեղ տեղանքում չկարողանալով լայն ճակատ կազմել և օգտագործել թվական

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 24, 25; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 9, գլուխ 28:

գերակշռությունը, ի վիճակի չեղավ ճեղքել հակառակորդի շարքերը՝ ծանր կորուստներ կրելով ինչպես ճակատից հարվածող հակառակորդի նետաձիգների հարվածներից հեռամարտում, այնպես էլ հենց այդ ժամանակ խրճիթներում տեղակայված դարաններից անակնկալ կերպով մարտի մեջ մտած հակառակորդի հետևակ ռազմիկների հարվածներից ձեռնամարտում:

III փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ կտրուկ հակահարձակման և, օգտագործելով նաև բարձունքից արշավող ծանր հեծելազորի հարվածային հզոր թափը, ճզմեց հակառակորդի առաջին շարքերը՝ ջախջախելով ու փախուստի մատնելով հակառակորդի ռազմիկներին: Այս ընթացքում ծանր վիրավորվեց Ներսեհ Կամսարականը ու, թեև Սահակին ի վերջո հաջողվեց հանել եղբորը մարտից, սակայն վերջինս դրանից կարճ ժամանակ անց մահացավ:

IV փուլ – Պարսից թագավորության բանակը հետապնդեց հակառակորդին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս: Այդ ընթացքում սպանվեց նաև Ատոմ Ակեացին՝ նահանջի պահին ամրություններից մեկից նետված քարով հարված ստանալով գլխին:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 400, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 10.000 զինվոր:

Նախորդ իրադարձությունների հետ միաժամանակ Հուստոսի և Պերանիոս Բագրատունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 6.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 600) ասպատակեցին Տարոնը, սակայն, տեղեկանալով հիմնական բանակի պարտության մասին, նահանջեցին:[1] Այսպիսով, չնայած այն զոհողություններին, որին պաշտոնական Կոստանդնուպոլիսը գնաց Արևմուտքում, Արևելքում գործերի ընթացքի մեջ բեկում մտցնել այնուհանդերձ այդպես էլ չհաջողվեց:

Նեապոլի պարիսպների տակ Հուստինիանոս I-ի ռազմական մեքենայի կրած անհաջողությունը ավելի էր ծանրացրել Ապենինյան թերակղզում գործող կայսրության բանակի հետագա դրությունը, որն արդեն հայտնվում էր նույնիսկ ռազմավարական շրջափակման մեջ, ընդ որում կայսրությունը ոչ միայն լուրջ ռազմական կորուստներ էր կրել, այլև ոչ պակաս լրջորեն տրորվել էր նաև, նախկինում, թվում էր, թե այնքան բարձր, վերջինիս ռազմական հեղինակությունը: Արդյունքում՝ 543 թվականի ողջ ընթացքում Ապենինյան թերակղզում գործող կայսրության ուժերը, սպասելով Տոտիլլայի հերթական հարվածին, մատնվեցին լիակատար անգործության, սակայն Տոտիլլան, ինչպես պարզվեց, այդքան էլ չէր շտապում՝ գերադասելով ամրապնդել ուժերը և առավել վատթարացնել հակառակորդի դրությունը:

544 թվականը, ինչն արդեն, թերևս, սովորական էր վերջին տարիներին, Արևելքում բացվեց Պարսից թագավորության հերթական հարվածով: Արդյունքում՝ պարզվեց, որ արյաց արքան այս անգամ հարվածն ուղղել է կայսրության եփրատյան բնագծում կանգուն մնացած ամրություններից, թերևս, ամենավերջինի դեմ:

Հետագա անհրաժեշտ է կրկին դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

544 մարտ - ապրիլ – ***<u>Եդեսիայի պաշտպանությունը</u>***[2]

Խոսրով I-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000, այդ թվում բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000),

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 25; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 10:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 26, 27, գիրք 8, գլուխ 14; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Զաքարիա Միտլենացի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 11; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 9, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

ինչպես նաև Մունդիր II-ի գլխավորած Լախմյանների թագավորության բանակը (մոտ 4.000) մոտեցան քաղաքին, որտեղ Արևելքի հրամանատար Մարտինոսի, Պետրոս Հայի ու Պերանիոս Բագրատունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000, այդ թվում բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 800), ինչպես նաև Գասանյանների թագավորության բանակը (մոտ 1.000) անցան համառ պաշտպանության:

I փուլ – Պարսից թագավորության բանակի առաջապահը կազմող սաբիրները վաղ առավոտյան անակնկալ հարձակվեցին քաղաքի շրջակայքում արածող ոչխարների հոտի վրա, սակայն հովիվների հետ մինչև կեսօր տևած համառ մարտում ի վերջո նահանջեցին՝ կարողանալով խլել միայն ոչխարների մի մասը: Նույն օրն էլ արդեն հիմնական բանակը մոտեցավ քաղաքին և սկսեց նրա պաշարումը:

II փուլ – Պաշարման ութերորդ օրը պաշարողները սկսեցին քաղաքի պարսպի դիմաց քարերի, հողի և գերանների օգնությամբ վեր հանել հողաբլուր՝ նպատակ ունենալով, թշնամու հարվածներից պաշտպանելով կաշվե հաստ վարագույրով, այն աստիճանաբար տարածել դեպի պարիսպը ու դրա վրայով ներխուժել քաղաք: Շինարարության ընթացքում քաղաքի կայազորը հիմնականում բուլղարների ուժերով արտագրոհ իրականացրեց և որոշակի վնաս հասցրեց հակառակորդի պաշարողական տեխնիկային, սակայն ի վերջո նահանջեց: Այդ մարտում աչքի ընկավ Արգեկ նիզակակիրը, որը ոչնչացրեց հակառակորդի 27 ռազմիկ: Դրանից հետո կողմերը բանակցություններ սկսեցին, որոնք, սակայն, որևէ արդյունքի չհասցրին: Ի վերջո, քաղաքի կայազորը սկսեց պարսպի տակից թունել փորել դեպի կառուցվող հողաբլրի հիմքը՝ արդյունքում հասնելով իր նպատակին և թունելի առաստաղը ամրացնելով գերաններով:

III փուլ – Մի քանի օր անց, երբ հողաբլուրն արդեն պատրաստ էր և ընդհուպ մոտեցել էր պարսպին, Պարսից թագավորության բանակն անցավ գրոհի: Ի պատասխան դրա՝ քաղաքի կայազորն այրեց թունելի առաստաղը պահող գերանները և, որպեսզի քողարկի գետնի տակից բարձրացող ծուխը, այրվող նետերով սկսեց հարվածել հողաբլրին՝ բավականին ժամանակ կարողանալով տպավորություն ստեղծել, թե ծուխ տարածվում է հենց այդ պատճառով: Ի վերջո, հողաբլուրը փլվեց՝ ծանր կորուստներ պատճառելով հարձակվողներին, իսկ քաղաքի գրոհն էլ արդեն երեկոյան հետ մղվեց:

IV փուլ – Վեց օր անց վաղ լուսաբացին Խոսրով I-ի բանակը փորձեց անակնկալ գրոհով գրավել քաղաքը, սակայն կայազորի կազմում գտնվող մի գյուղացի վերջին պահին նկատեց թշնամուն և ոտքի հանեց յուրայիններին, ինչի արդյունքում գրոհը հետ մղվեց: Նույն օրը կեսօրին թշնամու մի խոշոր ջոկատ գրոհ ձեռնարկեց քաղաքի Մեծ դարպասի ուղղությամբ, բայց այն ևս հաջողության չհասավ: Վերսկսվեցին բանակցություններ, որոնք կրկին վերջացան անարդյունք:

V փուլ – Երկու օր անց Պարսից թագավորության բանակը, տեղաբաշխելով ուժերը պարիսպների շրջանակի ողջ երկարությամբ, իսկ երկրորդ շարքում էլ, քաղաքից փախչողներին որսալու նպատակով թողնելով Լախմյանների թագավորության բանակը, անցավ վճռական գրոհի, սակայն բռնկված և բավականին երկար տևած մարտի արդյունքում հետ շպրտվեց, ընդ որում պարսպին մոտեցած փղերի վրա տեղակայված ռազմիկները, որոնք սկզբում շփոթության մատնեցին պաշտպանվողներին, վնասազերծվեցին այն բանի շնորհիվ, որ պարսպից կախած խոզերն իրենց սուր ձայնով ահաբեկեցին փղերին: Օրվա երկրորդ կեսին Խոսրով I-ի բանակը կրկնեց հարձակումը, սակայն մինչև երեկո տևած մարտում կրկին որևէ արդյունքի չհասավ, ընդ որում մասնակի հաջողություն ձեռք բերվեց միայն Սոյինե դարպասի մոտ, որտեղ, հաղթահարելով Գասանյանների թագավորության բանակի դիմադրությունը, թշնամին մի քանի

տեղից ներխուժեց քաղաք, սակայն Մարտինոսը Պերանիոս Բագրատունու գլխավորությամբ օգնական ուժեր ուղարկեց և հետ շպրտեց հակառակորդին:

VI փուլ – Երկու օր անց Պարսից թագավորության բանակը հարձակվեց Բարլաոսի դարպասի վրա, սակայն, հանդիպելով ուժեղ դիմադրության և ծանր կորուստներ կրելով, շուտով վերադարձավ ելման դիրքեր:

Կրած անհաջողություններից հետո հարձակվողները, ստանալով 500 կգ ոսկի, թողեցին քաղաքի պաշարումը և նահանջեցին Պարսից թագավորության տարածք: Հարձակվողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 10.000, պաշտպանվողներից՝ հայերը՝ մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 600 զինվոր:

Այսպիսով՝ Եդեսիային տիրելու փորձը Խոսրով I-ին հաջողություն չբերեց, թեև մեծ հաշվով դա որևէ կերպ չստվերեց այն հսկայական ձեռքբերումները, որոնց կայսրության դեմ մղվող պատերազմում վերջին տարիներին հասել էր արյաց արքան: Իրոք, փաստացի Պարսից թագավորության տիրապետության տակ էին հայտնվել երկու խիստ կարևոր երկրամասեր՝ Հյուսիսային Ասորիքն և Լազիկան, որոնք ելքեր էին ապահովել դեպի տարածաշրջանի երկու ծովերը: Իր հերթին, սակայն, կայսրության ռազմական մեքենայի այնուհանդերձ ուժեղացող դիմադրությունը արյաց արքային, կարծես, հուշում էր, թե ավելիին ձգտել, համենայն դեպս այս փուլում, պետք չէ՝ պաշտոնական Կոստանդնուպոլսի ուշադրությունը Արևմուտքից արդեն շեղվել էր Արևելքի ուղղությամբ և այս պայմաններում հեռատես Խոսրով I-ը ոչ մի հիմք չէր տեսնում շտապելու համար: Իրոք, պարզ էր, որ փառատենչ Հուստինիանոս I-ը, Արևելքում իրավիճակը հանդարտվելուց հետո, իր ուժերը կրկին տեղափոխելու էր Արևմուտք և ահա այս պայմաններում կայսերական արհեստավարժ ռազմիկների հետ ընդհարվելու ողջ ծանրությունը արյաց արքան հեռատեսորեն թողեց օսթգոթերի ու բերբերների ուսերին: Կար, սակայն, ևս մեկ ու ոչ պակաս կարևոր մի հանգամանք:

Իրոք, Խոսրով I-ը սեփական քաղաքական խորաթափանցությամբ բացառիկ մի մարդ էր, որը, ի տարբերություն իր տոհմակից շատ արքաների, կարողանում էր տեսնել խորքային զարգացումների ընթացքը և կանխատեսել դրանց հետևանքները, իսկ դրանք, կարծես թե, այնքան էլ պարսից քաղաքակրթության օգտին չէր: Բանը կայանում էր նրանում, ու Խոսրով I-ը, կարծես թե, աստիճանաբար սկսում էր գիտակցել այն հանգամանքը, որ զրադաշտականության արժեհամակարգի վրա հիմված պարսկական քաղաքակրթությունը, ինչքան էլ յուրօրինակ և իր տեսակի մեջ գեղեցիկ, համենայն դեպս գոնե արդեն VI դարի վիճակում ակնհայտորեն հետ էր մնում իր ժամանակից՝ փակվելով ինքն իր մեջ ու չկարողանալով որևէ նոր և հրապուրիչ բան առաջարկել ոչ միայն իր, այլև նույնիսկ հարևան քաղաքակրթությունների ներկայացուցիչներին: Արդյունքում՝ ստեղծվել և աստիճանաբար խորանում էր իրավիճակը, երբ հարևան, իսկ ինչ-որ տեղ արդեն նաև հպատակ ոչ զրադաշտական բնակչության համար զրադաշտականության արժեհամակարգով տոգորված քաղաքակրթությունը դառնում էր դժվար ընկալելի, եթե ոչ՝ անընկալելի, իսկ արդյունքում նաև՝ ոչ ընդունելի: Դրան հակառակ, իր թերություններով հանդերձ, բայց հարևան գերտերությունը այնուհանդերձ կարողացել էր ավելի ժամանակակից տեսք ունեցող և արմատներով դեպի քրիստոնեությունը գնացող արժեքների հիման վրա անհամեմատ ավելի հրապուրիչ մի իրավիճակ ստեղծել, որին էլ ձգտում էին մարդիկ: Եվ այսպես, Խոսրով I-ն այնուհանդերձ, կարծես թե, արդեն սկսել էր գլխի ընկնել այս ամենը և արդյունքում նա ուղղակի չէր ձգտում դուրս գալ զրադաշտականության քաղաքակրթության սահմաններից, որոնք, որպես կանոն, իրենց հերթին համապատասխանում էին Սասանյանների տերության քաղաքական սահմաններին: Ահա հենց սրանով է, թերևս, բացատրվում այն հանգամանքը, որ, անհաջողություն կրելով Եդեսիայի պարիսպների տակ, արյաց արքան չմերժեց բանակցություններ սկսելու հերթական առաջարկը:

Արդյունքում՝ 545 թվականին, այն բանից հետո, երբ Հուստինիանոս I-ն

այնուհանդերձ վճարեց 500 կգ ոսկի, հինգ տարով զինադադար կնքվեց, որը, սակայն, վերաբերում էր միայն Ասորիքին ու Հայաստանին և չէր վերաբերում Լազիկային, թեև այն զգալի չափով պահպանվեց նաև այդ երկրամասում: Հարկ է նշել, սակայն, որ հիշատակված զինադադարն անչափ պետք էր ամենից առաջ հենց Հուստինիանոս I-ին, որի համար արդեն ակնհայտ էր, որ, համենայն դեպս այս պայմաններում, երբ Արևելքում մղվող պատերազմը ծանր բեռի նման կախված է կայսերական ռազմական մեքենայի ուսերից, ինքն արդյունքում անխուսափելիորեն կկորցնի նաև Արևմուտքը, որի ձեռք բերման համար այնքան ջանքեր էին ներդրվել, որին կայսրն այդչափ ձգտում էր և որը հանդիսանում էր նրա երազանքների հիմնական առարկան: Ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև արդեն ոչ ռազմական և նույնիսկ նաև ոչ քաղաքական բնույթ ունեցող մեկ հանգամանք ևս՝ 545 թվականին վերջին տարիներին աստիճանաբար ուժեղացող «Հուստինիանոսի ժանտախտը» մոլեգնում էր իր ողջ ուժով՝ հսկայական մարդկային կորուստներ պատճառելով կայսրությանը, խաթարելով առանց այդ էլ ոչ փայլուն վիճակում գտնվող տնտեսությունը և մեծապես բարոյալքելով կայսեր հպատակներին:

Եվ ահա Հուստինիանոս I-ը, որ ձգտում էր առավելագույնս հանդարտեցնել Արևելքը, զինադադարի կնքման հենց նույն տարում էլ հատուկ հրովարտակով ներում շնորհեց արդեն նաև հայազգի ապստամբներին, որից հետո Սատրապական Հայաստանի IV ապստամբությունը վերջացավ ու վերականգնվեց նախկին վիճակը: Վերջ, Արևելքում մի քանի տարով հաստատվում էր խաղաղություն, որը շատ էր պետք գալու Արևմուտքում գործերի դրությունը շտկելու փորձ կատարելու համար, քանզի, գումարած այն բանին, որ Ապենինյան թերակղզում ռազմավարական նախաձեռնությունը լիովին գտնվում էր Տոտիլլայի ձեռքում, անակնկալ կերպով պայթեց իրավիճակը նաև արդեն մինչ այդ, թվում էր, թե գոնե քիչ թե շատ հանգիստ ու կայուն զարգացում ապրող երկրամասերից ևս մեկում՝ Հյուսիսային Աֆրիկայում:

Իրոք, մինչ այս Հուստինիանոս I-ի կայսրության այս հատվածում իրադրությունը համեմատականորեն հանգիստ էր և նույնիսկ առկա էին զարգացման միտումներ, սակայն ի վերջո նաև այս երկրամաս ոտք դրած ժանտախտի համաճարակը, կայսրության դրության ընդհանուր վատթարացումը և, ըստ էության, այդպես էլ չնվաճված բերբերների հետ աստիճանաբար սրվող հարաբերությունները բանը հասցրին բախման: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Սողոմոն Դարացու եղբորորդի Սերգիոսը, իբր բանակցությունների նպատակով իր մոտ հավաքելով բերբերների 80 երևելի առաջնորդների, նրանց բոլորին կոտորեց, որից հետո խորապես խոցված բերբերներն անցան բացահայտ ապստամբության:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

544 գարուն – ***<u>Լեպտիս-Մանգուի ճ-մ</u>*** (Լիբիա, Տրիպոլիի մոտ)[1]

Սողոմոն Դարացու եղբորորդի Սերգիոսը, ինչպես նաև Պուցենդիոսը, իբր բանակցությունների նպատակով իրենց մոտ հավաքելով բերբերների 80 երևելի առաջնորդների, նրանց բոլորին կոտորեցին, որից հետո նրանց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) շարժվեցին մոտակայքում տեղակայված բերբերների (մոտ 2.000) ճամբարի դեմ:

I փուլ – Կայսերական բանակը անակնկալ հարձակվեց հակառակորդի ճամբարի վրա և, փախուստի մատնելով թշնամու ռազմիկներին, ձեռք բերեց զգալի ավար:

II փուլ – Կայսերական բանակի մի մասը Պուցենդիոսի գլխավորությամբ փորձ կատարեց հետապնդել հակառակորդին, սակայն հայտնվեց դարանում և ծանր կորուստներ կրեց, ընդ որում մարտում ընկավ նաև Պուցենդիոսը:

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 21; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

Արդյունքում՝ Սերգիոսը, հավաքելով ցրված ուժերը, վերադարձավ ելման դիրքերի:
Հայերը կորցրին մոտ 3, դաշնակիցը՝ մոտ 300, թշնամին՝ մոտ 700 զինվոր:

Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ միայն իր ուժերով մարտնչել Սերգիոսն ի վիճակի չէ և նա սկիզբ է դրել մի իսկական պատերազմի: Արդյունքում՝ Սերգիոսը հետ քաշվեց հորեղբոր ուղղությամբ և օգնություն խնդրեց վերջինիցս:
Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

544 գարուն – ***Թեբեսթայի ճ-մ*** (= ***Քիլիումի ճ-մ***, = ***Կասերինեի ճ-մ***) (Լիբիա, Կարթագենից մոտ 700 կմ հարավ)[1]

Սողոմոն Դարացու, նրա եղբորորդիներ Կյուրոսի, Սերգիոսի և Սողոմոն Փոքրի, ինչպես նաև Գոնթարիսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) մարտարշավ սկսեցին բերբերների (մոտ 20.000) դեմ, ընդ որում վերջիններիս մինչ այդ հաջողվել էր գաղտնի հարաբերություններ հաստատել Գոնթարիսի հետ և նրան գրավել իրենց կողմը:
I փուլ – Կայսերական բանակը անակնկալ հարձակվեց հակառակորդի ճամբարի վրա և, փախուստի մատնելով թշնամու ռազմիկներին, ձեռք բերած ավարով սկսեց նահանջել: Միաժամանակ այն հանգամանքը, որ Սողոմոնը հրաժարվեց անմիջապես ավարը բաժանել մարտը հենց նոր ավարտած ռազմիկներին, բերեց նրան, որ վերջիններս, պատված խորը դժգոհությամբ, իրենց մեծ մասով աստիճանաբար լքեցին մարտարշավ իրականացնող բանակի շարքերը և կարծես ինքնաբերաբար ցրվեցին, իսկ շարքում մնացած փոքր մասն էլ, հիասթափված այդ ամենից, հետագայում որևէ մարտական եռանդ չցուցաբերեց:
II փուլ – Ուժերը կենտրոնացրած բերբերները անցան հակահարձակման և, օգտվելով հակառակորդի բանակի փաստացի կազմաքանդումից, ինչպես նաև Գոնթարիսի գլխավորած ուժերի դավաճանությունից, ծանր պարտության մատնեցին հակառակորդին, ընդ որում հետ քաշվելիս Սողոմոնն ու իր թիկնապահները հայտնվեցին մոտակա գետի վարար հոսանքում: Արդյունքում՝ Սողոմոնը տապալվեց նժույգից և, չնայած սեփական թիկնապահները նրան բարձրացրին ու վերցրին իրենց ձեռքերի վրա, սակայն այդ ընթացքում բերբերները շրջապատեցին նրանց և բռնկված ձեռնամարտում Սողոմոնը, ինչպես նաև նրա թիկնապահներից շատերը զոհվեցին:
Հայերը կորցրին մոտ 40, դաշնակիցը՝ մոտ 7.000, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Նախորդ հաջողությունից անմիջապես հետո բերբերները (մոտ 5.000) պաշարեցին Լարիբան (Լիբիա, Կարթագենից մոտ 500 կմ հարավ-արևմուտք) և նահանջեցին միայն փրկագին ստանալուց հետո[2]: Դրանից հետո նրանք, միավորելով ուժերը հենց այդ ժամանակ Մավրիտանիայից վերադարձած և իրենց միացած Ստոցասի գլխավորած ապստամբների հետ ու լիովին տիրելով ռազմավարական նախաձեռնությանը, Մենեֆեսայի ճ-մ-ում անակնկալ հարձակումով շրջապատեցին և մանր մարտերից հետո գերեցին Գիմերիոս Թրակիացու ու Սեվերաինոս Փյունիկիացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5)[3], ընդ որում կայսերական բանակի գերված ռազմիկները ծառայության անցան Ստոցասի մոտ: Այնուհետև, հերթական անգամ զարգացնելով

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 21; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 22:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 22:

հաջողությունը և օգտվելով մինչ այդ քաղաք ժամանած ու քաղաքի կայազորին կեղծ հավաստիացումներ տված Գիմերիոս Թրակիացու գործողություններից, բերբերները անակնկալ հարձակումով մտան Ադրամետոս՝ առանց լուրջ մարտերի գերելով քաղաքի կայազորին[1]: Այսպիսով՝ մինչ այդ, կարծես թե, հանգիստ տարածաշրջան հանդիսացող Հյուսիսային Աֆրիկայում ևս իրադրությունը ոչ միայն սրվեց, այլև՝ հետագայում սկսեց աստիճանաբար ավելի բարդանալ:

545 թվականին, մեծ դժվարությամբ և զոհողությունների գնով խաղաղություն հաստատելով Արևելքում, Հուստինիանոս I-ը որոշեց կրկին ուշադրությունը կենտրոնացնել Արևմուտքի վրա, որտեղ գործերը դանդաղ, բայց անշեղորեն վատանում էին: Միաժամանակ, սակայն, վստահ չլինելով Արևելքի վերջնական կայունության վրա, պաշտոնական Կոստանդնուպոլիսը ստիպված էր այստեղ այնուհանդերձ զգալի ուժերը պահել, ինչը զգալիորեն թուլացրեց հարվածի թափը Արևմուտքում: Այսպես թե այնպես, սակայն 545 թվականին սկսվեց կայսրության հարվածային ուժերի հերթական տեղափոխումը՝ այս անգամ արդեն Արևելքից Արևմուտք, ընդ որում ապագա ռազմագործողությունների գլխավոր հրամանատար կրկին նշանակվեց շնորհազրկումից վերադարձած Բելիսարիոսը:

Մինչ կայսրության ռազմական մեքենան հերթական շրջադարձը կաներ, սակայն, Ապենինյան թերակղզում ռազմավարական նախաձեռնությունը դեռևս իր ձեռքում պահող Տոտիլլան շարունակեց ակտիվ գործողությունները, թեև հաջողություններն այս անգամ արդեն այնքան էլ միանշանակ չէին: 545 թվականի գարնանը Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) պաշարեց Պիսավրումը (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Ռիմնիից մոտ 120 կմ հարավ-արևելք) Սաբինիանիի և Թորիմուտի գլխավորությամբ մինչ այդ առանց մարտերի քաղաք մտած ու քաղաքի ավերված պարիսպներն և դարպասները վերականգնած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10)[2]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

545 գարուն – ***<u>Օսիմոյի պաշտպանությունը</u>***[3]

Տոտիլլա արքայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) պաշարեց քաղաքը Մագնուսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10):

I փուլ – Բելիսարիոսի թիկնապահներ Սաբինիանիի, Ռուքիլայի և Թորիմուտի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) գաղտնի մտան քաղաք, իսկ հաջորդ օրը արտագրոհ իրականացրին, սակայն Ռուքիլան զոհվեց և արտագրոհ իրականացնողները վերադարձան քաղաք:

II փուլ – Որոշելով, որ հետագա արտագրոհներ իրականացնելն այլևս հնարավոր չէ, իսկ քաղաքում մնալ էլ պարենային խնդիրներ կառաջացնի, Սաբինիանիի և Թորիմուտի գլխավորած բանակը գիշերով լքեց քաղաքը, սակայն նախապես այդ մասին տեղեկացած թշնամու ջոկատը (2.000) դարանը գցեց վերջինիս ու ցրեց: Սաբինիանիի ու Թորիմուտը, կորցնելով 200 հոգի և ողջ գումակը, դժվարությամբ հեռացան:

III փուլ – Տոտիլլան շարունակեց քաղաքի շրջափակումը, սակայն, որևէ հաջողության չհասնելով, ի վերջո նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 3, դաշնակիցը՝ մոտ 250, թշնամին՝ մոտ 500 զինվոր:

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 23:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 11:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 11; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

545 թվականի գարնանը Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) պաշարեց նաև Պերուջան, սակայն, չնայած այն բանին, որ կարողացավ կազմակերպել քաղաքի պաշտպանությունը գլխավորող Կիպրիանոսի սպանությունը հենց վերջինիս իսկ թիկնապահի ձեռքով, քաղաքը չգրավվեց[1]: Նույն այս ժամանակ էլ Վիտալիանոսի և Թորիմուտի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5) Բոնոնիի ճ-մ-ում (Իտալիա, Ռավեննայից մոտ 200 կմ արևմուտք) դարանը գցեցին և անակնկալ հարվածով հաղթեցին իրենց դեմ շարժվող Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 1.000):[2]

Գլխավոր իրադարձությունները, սակայն, զարգանում էին հարավում, որտեղ մինչև ամառ Տոտիլլան առանց լուրջ մարտերի՝ դավաճանության կամ պայմանավորվածությունների շնորհիվ, կարողացավ զբաղեցնել Թիբուրը (Իտալիա, Հռոմից մոտ 50 կմ արևելք), Ֆիրման (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Օսիմոյից մոտ 120 կմ հարավ-արևելք), Ասկոլին (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ափ, Օսիմոյից մոտ 220 կմ հարավ-արևելք), Սպոլետոն (Կենտրոնական Իտալիա, Օսիմոյից մոտ 220 կմ հարավ-արևմուտք), Ասիսիումը (Կենտրոնական Իտալիա, Օսիմոյից մոտ 300 կմ հարավ-արևմուտք) և Կլեզիումը (Կենտրոնական Իտալիա, Սպոլետոյից մոտ 100 կմ արևմուտք)[3]: Միաժամանակ, դեռևս Նեապոլի անկումից հետո կազմելով մարտունակ նավատորմ, օսթգոթերի տաղանդավոր արքան հասավ նաև նրան, որ, գերիշխելով Տիրենյան ծովում, սկսեց զավթել Սիցիլիայից Հռոմ, իսկ հետագայում արդեն նաև Իտալիայի կայսերական այլ կայազորներին հաց, պարենամթերք և այլ անհրաժեշտ իրեր հասցնող նավերը: Արդյունքում՝ մատակարարումից զրկված կայսերական բանակի կայազորները աստիճանաբար սկսեցին պարենի լուրջ պակաս զգալ: Նախորդ քաղաքների անկումից կարճ ժամանակ անց՝ 545 թվականի ամռանը, Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) պաշարեց նաև Օթրանտը (Իտալիայի հարավ-արևելք, Ադրիատիկ ծովի ափ), թեև արդեն այստեղ զգացվեց իրադարձությունների փոփոխությունը:

Իրոք, արդեն 545 թվականի ամռանը, գոնե մի որոշ չափով կարգի գցելով գործերը Արևելքում, Բելիսարիոսն իր ուժերն աստիճանաբար սկսեց հավաքել Սոլունի շրջակայքում, ընդ որում հակառակորդի դեմ շարժվելու երկու ծրագիր կար և, եթե Հովհաննես Թրակիացին առաջարկում էր ցամաքային ճանապարհով առաջանալ Ռավեննա ու հյուսիսից մոտենալ թշնամուն, ապա Բելիսարիոսն ինքը կողմ էր ծովով ուղիղ դեպի Հռոմ շարժվելու գաղափարին: Սկզբում, սակայն, հավանություն տրվեց Հովհաննեսի ծրագրին, որից հետո կայսերական բանակը սկսեց ուժերը կենտրոնացնել Ռավեննայում: Միաժամանակ, սակայն, հարավային ուղղությամբ հակառակորդին այնուհանդերձ ևս անհանգստացնելու նպատակով, որոշվեց ծովով Ապենինյան թերակղզի անցկացնել որոշակի ուժեր, որոնք պետք է աջակցեին և ոգի տային զգալիորեն հուսալքված և առկա սուղ ռեսուրսներով մեծ դժվարությամբ հակառակորդին դիմադրող այստեղ գործող կայսրության ռազմիկներին: Արդյունքում՝ Վալենտինոսի գլխավորած բանակը, առաջանալով ծովով, ափ իջավ Օթրանտում հենց այն ժամանակ, երբ, արդեն հույսները կտրած, վերջինիս կայազորը դրանից 4 օր հետո պատրաստվում էր հանձնվել հակառակորդին: Ուժեղացնելով Օթրանտի կայազորը թարմ ուժերով՝ Վալենտինոսը, ավար ձեռք բերելու և իրավիճակին ծանոթանալու նպատակով իր ուժերով դուրս եկավ քաղաքից, սակայն, գործելով անկազմակերպ, շուտով ենթարկվեց

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 11; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 11:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 10-12; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

հակառակորդի հարվածին ու հետ քաշվեց քաղաք: Արդյունքում, չնայած տեղային անհաջողությանը, Օթրանտը այնուհանդերձ չհանձնվեց[1]: Այս կապակցությամբ պետք է ասել, որ, ինչպես 536 թվականին եղավ, այս անգամ ևս Հյուսիսային Աֆրիկայում զարգացող իրադարձությունները ուշացրին Բելիսարիոսին, քանզի պարզ էր, որ, առանց լիովին կարգավորելու գործերը վանդալների նախկին երկրում, ճիշտ չէր պայքար սկսել Տոտիլլայի դեմ: Իր հերթին իրավիճակը Հյուսիսային Աֆրիկայում ամենևին էլ դրական հույսեր չէր ներշնչում:

545 թվականի աշնանը Հուստինիանոս Ի-ը Հյուսիսային Աֆրիկա էր ուղարկել Արեոբինդոսների փառահեղ տոհմին պատկանող հերթական ներկայացուցչին, սակայն, ինչպես պարզվեց, վերջինս որևէ կերպ չէր տիրապետում ռազմական գործին և նորանշանակ պաշտոնյայի, թերևս, միակ արժանիքն այն էր, որ նա կայսեր քրոջ աղջկա ամուսինն էր: Արեոբինդոսի հետ միասին իրենց ռազմիկներով Հյուսիսային Աֆրիկա ժամանեցին նաև Սատրապական Հայաստանի հենց նոր ավարտված ապստամբության ղեկավարներից ոմանք, ի դեմս Հովհաննես Արշակունու որդիներ Արտավանի և Հովհաննեսի, Արտավանի զինակիր Արտաշիրի ու հորեղբորորդի Գրիգորի: Դրանից հետո Արեոբինդոսը, իմանալով, որ բերբերներն և Ստոցասի ապստամբները ճամբարել են Կարթագենից մոտ 100 կմ հեռավորության վրա գտնվող Սիկկաբեներիա քաղաքի մոտակայքում, հրամայեց իր քաջությամբ աչքի ընկնող Հովհաննես Սիսինիոլոսյանին, հետը վերցնելով նաև հայերին, շարժվել վերջիններիս վրա, ընդ որում նախատեսվում էր, որ Սերգիոսն իր հերթին պետք է աջակցի այս ուժերին: Հովհաննես Սիսինիոլոսյանի հետ էր կայսերական բանակի լավագույն մասը, սակայն այն պատճառով, որ Սերգիոսն այդպես էլ չկատարեց հրամանը, վերջինիս բանակը հակառակորդի դեմ հանդիման հայտնվեց քանակապես հակառակորդին էականորեն զիջելու պայմաններում: Արդյունքում՝ 545 թվականի աշնանը Սիկաբեներիայի 6-մ-ում բերբերները (մոտ 15.000), ինչպես նաև Ստոցասի գլխավորությամբ նրանց միացած վանդալներն և բուլղարները (մոտ 1.500) հաղթեցին Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 10.000), ինչպես նաև նրա կազմում Արտավան, Հովհաննես, Գրիգոր ու Արտաշիր Արշակունիների գլխավորությամբ գործող Հայ ռազմիկներին (մոտ 1.000), ընդ որում մարտի սկզբում Հովհաննես Սիսինիոլոսյանը նետահարեց և մահացու վերք հասցրեց Ստոցասին, որը մարտից հետո մահացավ, սակայն նահանջի ժամանակ ինքը ևս ընկավ ձիուց, որից հետո հակառակորդի ռազմիկների դեմ մղվող ձեռնամարտում զոհվեց: Անհաջող այս ճակատամարտում կորուստներ կրեցին նաև հայերը, ընդ որում սպանվածների թվում էր նաև Հովհաննես Արշակունին[2]: Հուստինիանոս Ի-ը, իմանալով տեղի ունեցածի մասին և հասկանալով, որ, առանց գլխավոր հրամանատարի միայն մի քանի զորավարների ուժով մարտնչելու իր կողմից համառորեն առաջ քաշվող ռազմավարությունը հերթական անգամ անհաջողության է մատնվել, հատուկ հրամանով Կոստանդնուպոլիս կանչեց Սերգիոսին, թեև այդ հանգամանքը առանձնապես չփոխեց իրավիճակը, քանի որ Արեոբինդոսն այսպես թե այնպես միանգամայն անճարակ էր:

545 թվականի երկրորդ կեսին Ռավեննայի մոտակայքում Բելիսարիոսի կողմից աստիճանաբար ի մի բերվող ռազմական բռունցքի առկայությունը Տոտիլլային իր հերթին հանգեցրեց մտքի, որ ժամանակն է վերջ տալու, ըստ էության, հաջող, սակայն վերջնական հաջողություն այդպես էլ չապահոված ռազմավարությանը՝ անցնելով սկզբունքորեն նոր մի գործելաոճի: 537-538 թվականներին Հռոմի մոտ օսթգոթերը ծանր անհաջողության էին մատնվել, ընդ որում դրանից հետո կարծես հոգեբանական յուրօրինակ մի արգելք նրանց խանգարում էր հերթական անգամ ոտնձգություն իրականացնել այս քաղաքի նկատմամբ: Փոփոխված իրավիճակը, սակայն, Տոտիլլային ի վերջո բերեց համոզման, որ ժամանակն է լուծել արդեն նաև Հռոմի հարցերը՝ Բելիսարիոսի և կայսերական համալրված ռազմական մեքենայի դեմ պայքարին

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 9, 10:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 24; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

ապագայում ավելի լավ պատրաստ լինելու համար: Սկիզբ առավ հերթական ճակատամարտը Հռոմի համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

545 դեկտեմբերի կես - 546 դեկտեմբերի 17 – ***<u>Հռոմի գրավումը</u>***[1]

Տոտիլլա արքայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 20.000) մոտեցավ Հռոմին, որտեղ Բեսսասի, Կոնոնի, Արտաշիր Պարսիկի և Բարբոտիոնի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (3.000, այդ թվում իսավրիացիներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 30), ինչպես նաև Հռոմի աշխարհազորը (մոտ 1.000) պատրաստվեցին պաշտպանության:

I փուլ – 545 թ-ի դեկտեմբերի կեսին Արտաշիր Պարսիկի և Բարբոտիոնի գլխավորած բանակը, չնայած Բեսսասի պնդումներին, արտագրոհ իրականացրեց, սակայն ընկավ դարանը ու գլխովին ջախջախվեց: Արտաշիրը և Բարբոտիոնը քչերի հետ միասին դժվարությամբ փրկվեցին ու պատսպարվեցին քաղաքում:

II փուլ – 546 թ-ի գարնանը ***<u>Պորտոս</u>*** ժամանեցին Վալենտինոսն և Փոկասը՝ խնդիր ունենալով դրսից գրոհել քաղաքը պաշարած գոթերի վրա, այն դեպքում, երբ այդ ժամանակ նույնը քաղաքից պետք է իրականացնեին Բեսսասի գլխավորած ուժերը: Առաջին հարձակումը համեմատաբար հաջող ավարտ ունեցավ, թեև Բեսսասը քաղաքից օգնության չհասավ և արդյունքում հարձակվողները վերադարձան Պորտոս: Որոշ ժամանակ անց, սակայն, երբ նախապատրաստվում էր երկրորդ հարձակումը, թշնամին մի դասալիքի միջոցով իմացավ այդ մասին և, դարանը գցելով գլխովին ջախջախեց Վալենտինոսի ու Փոկասի ուժերին, ընդ որում դա այն դեպքում, երբ Բեսսասն այս անգամ ևս արտագրոհ չիրականացրեց: Վալենտինոսն և Փոկասը զոհվեցին, իսկ նրանց ջոկատի մնացորդները պատսպարվեցին Պորտոսում:

III փուլ – 546 թ-ի աշնանը Պորտոս ժամանեցին Բելիսարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100, այդ թվում Ֆազաս Բագրատունին և Սահակ Կամսարականը): Սահակ Կամսարականին թողնելով պահպանել Պորտոսը՝ Բելիսարիոսը, գետով առաջ մղելով երկու լաստերի վրա կառուցված բարձր աշտարակը, սկսեց շարժել այն դեպի Տիբեր գետի վրա կառուցված և 2 աշտարակներից ու երկաթյա շղթայից կազմված ամրությունները՝ նպատակ ունենալով ոչնչացնել դրանք և պարենամթերքով բարձած նավեր մտցնել քաղաք: Դրված խնդիրը կատարվեց, սակայն այդ ընթացքում Սահակ Կամսարականը, ոգևորվելով ստացված լուրերից, իր հերթին ձեռքի տակ եղած ջոկատով (100) հարձակվեց ***<u>Օստիայում</u>*** Ռոդերիքի գլխավորությամբ տեղակայված թշնամու ճամբար վրա՝ ջարդելով ու փախուստի մատնելով վերջինիս: Շուտով, սակայն, թշնամին վերադասավորեց ուժերը և հզոր հակահարձակումով ջարդեց Սահակ Կամսարականի ջոկատին: Սահակը գերվեց, իսկ նրա ջոկատի մնացորդները պատսպարվեցին Պորտոսում: Այդ ընթացքում, տեղեկանալով Սահակի ջոկատի պարտության մասին և կարծելով, թե Պորտոսը գրավվել է, Բելիսարիոսը դադարեցրեց առաջխաղացում և վերադարձավ Պորտոս: Մի քանի օր անց, տեղեկանալով, որ Ռոդերիքը ստացած վերքերից մահացել է, Տոտիլլայի հրամանով Սահակը սպանվեց:

IV փուլ – Իսավրիացիները, դժգոհ իրենց աշխատավարձի ուշացումից և տարածված սովից, կապ հաստատեցին թշնամու հետ և 546 թ-ի դեկտեմբերի լույս

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 11, 13, 15-20; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

17-ի գիշերը պարսպի իրենց պահպանությանը հանձված հատվածով ներս թողեցին թշնամու բանակը քաղաք: Լուսաբացին տեղեկանալով այդ մասին՝ քաղաքի կայազորը այլ դարպասներով դուրս եկավ ու դիմեց փախուստի՝ այդ ընթացքում կորցնելով 86 զինվոր:

Հայերը կորցրին մոտ 50 զինվոր, որոնց թվում զոհվեց Սահակ Կամսարականը, դաշնակիցը՝ մոտ 500, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

546 թվականի գարնանը, երբ Հռոմը դեռևս պաշարված էր, Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) պաշարեց նաև Պիչենցիան (Հյուսիսային Իտալիա, Միլանից մոտ 220 կմ հարավ-արևելք) և, օգտվելով քաղաքում առաջացած սովից, ամռանն ի վերջո ստիպեց հանձնվել[1]: Նույն այս ժամանակ, սակայն, իրավիճակը, դրամատիկ զարգացումներով էր հագեցված նաև Հյուսիսային Աֆրիկայում:

Եվ այսպես, մինչ Հռոմը պաշարված էր, իսկ Բելիսարիոսն էլ Ռավեննայում փորձ էր կատարում հավաքել այնքան քանակի ռազմիկների, որ դրանցով բավարար լինի հյուսիսից բաց մարտով ելնել Տոտիլլայի դեմ, Կարթագենում պայթեց հերթական ապստամբությունը: Ստոցասն արդեն չկար, սակայն, քանի որ առկա էին ապստամբության բավարար նախադրյալներ, հերթական առաջնորդն այնուհանդերձ գտնվեց: Իրոք, տեղում գտնվող վանդալները հասկանալիորեն դժգոհ էին նոր կարգերից, դե իսկ բերբերների մշտական ընդվզումներն էլ միայն ուժեղացնում էին ապստամբելու տրամադրությունները: Արդյունքում՝ վանդալներն իրենց առաջնորդ ընտրեցին մինչ այդ կայսերական ծառայության անցած իրենց ազգակից Գոնթարիսին, որին շուտով միացավ նաև «Ստոցաս Փոքր» մականվանյալ Հովհաննեսը, որը գլխավորում էր Ստոցասի համախոհներին: Արդյունքում՝ ոտքի ելնելով Կարթագենում, 546 թվականի մարտին ապստամբները առավելության հասան այդպես էլ ռազմական գործին խորթ մնացած Արեոբինդոսի նկատմամբ, որը գերվեց և սպանվեց: Դրանից հետո Գոնթարիսը, վայելելով հաղթանակը, իրեն հռչակեց Աֆրիկայի դուքս՝ հեռահար նպատակ ունենալով լիովին անջատվել կայսրությունից: Այս պայմաններում ոչ միանշանակ դրության մեջ հայտնված Արտավան, Գրիգոր ու Արտաշիր Արշակունիները իրենց տրամադրության տակ մնացած Հայ ռազմիկների հետ միասին, ձևացնելով կեղծ հնազանդություն, անցան թշնամու կողմը և առժամանակ սկսեցին ծառայել նոր տիրակալին[2]:

Գոնթարիսին բաժին էին հասել բոլոր այն խնդիրները, որոնց բախվել էին իր նախորդները, սակայն դրանց մեջ առաջնայինը բերբերների դեմ պայքարն էր: Արդյունքում՝ 546 թվականի ապրիլին Արտավան, Գրիգոր և Արտաշիր Արշակունիների, ինչպես նաև Հովհաննես Փոքր Ստոցասի ու Գոնթարիսի զինակիր Ուլիթորի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 4.000, այդ թվում վանդալներ և բերբերներ) և նրա կազմում գործող Հայ ռազմիկները (մոտ 1.500) հետ մղեցին Կարթագենին մոտեցող բերբերներին (մոտ 10.000),[3] ընդ որում հայերը, ձևացնելով, թե իբր վախենում են հետապնդել հակառակորդին, իրականում թույլ չտվեցին ապստամբների բանակին վերջնական հաջողության հասնել: Դրանից հետո, համարելով իր իշխանությունը կայունացած՝ Գոնթարիսը պատրաստվեց մի մեծ խնջույքի: Իրենց հերթին հայերն իրենք, նպատակ ունենալով սպանել ապստամբին և երկրամասը կրկին դնել Հուստինիանոս I-ի իշխանության տակ, դավադրություն կազմեցին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

546 մայիս – ***<u>Կարթագենի ճ-մ</u>***[4]

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 13, 16:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 25:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 27:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 27, 28; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

Կարթագենում տեղակայված Հայկական բանակի (մոտ 1.000) հրամանատարությունը որոշեց ոչնչացնել Գոնթարիսին և վերականգնել Հյուսիսային Աֆրիկայի վրա Բյուզանդական կայսրության գերիշխանությունը: Հարմար առիթը ստեղծվեց շուտով, այն բանից հետո, երբ Գոնթարիսը Արտավան, Գրիգոր և Արտաշիր Արշակունիներին խնջույքի հրավիրեց իր պալատ:

I փուլ – Արտաշիրը խնջույքի ժամանակ թևքի մեջ պահած դաշույնով անակնկալ հարվածեց Գոնթարիսին ու, թեև միայն վիրավորեց նրան, սակայն Արտավանը և Գրիգորը իրենք էլ անմիջապես միացան վերջինիս ու իրենց մոտ պահած դաշույններով վերջնականապես սպանեցին Գոնթարիսին: Դրանից հետո վերջիններս հարձակվեցին պալատում գտնվող Գոնթարիսի սակավաթիվ թիկնապահների վրա և ոչնչացրեցին նրանց ևս:

II փուլ – Քաղաք մտած Հայկական բանակը անակնկալ հարվածով ջախջախեց այնտեղ գտնվող վանդալներին (մոտ 1.000) և գրավեց այն:

Հայերը կորցրին մոտ 100, թշնամին՝ մոտ 950 զինվոր:

Եվ այսպես, շնորհիվ հայերի համարձակ գործողությունների, Հյուսիսային Աֆրիկան կրկին ընկավ Հուստինիանոս I-ի տիրապետության տակ, իսկ Արտավան Արշակունին էլ հռչակվեց Աֆրիկայի դուքս: Վերջինս, սակայն, արդյունքում այդ պաշտոնում երկար չմնաց և իր խնդրանքի համաձայն շուտով հետ կանչվեց Կոստանդնուպոլիս:

Հյուսիսային Աֆրիկայում իրերի դրության խաղաղվելը մի կողմից, իսկ մյուս կողմից էլ այն հանգամանքը, որ Ռավեննայում այդպես էլ հնարավորություն չէր ստեղծվում հյուսիսից օսթգոթերի վրա արշավելու համար բավարար քանակի ռազմիկներ հավաքել, արդեն 546 թվականի ամռանը ստիպեցին Բելիսարիոսին աստիճանաբար անցնել երկրորդ տարբերակի կյանքի կոչմանը և հենց այս տրամաբանության մեջ էր, որ նույն թվականի աշնանը, առաջանալով ծովով, նա արդեն Հռոմի մոտակայքում էր, թեև քաղաքի անկումը կասեցնել, ինչպես արդեն ասվեց, նա այդպես էլ չկարողացավ: Սրա հետ միաժամանակ, ցանկանալով սանձել նաև Հարավային Իտալիայում գործող Տոտիլլայի ուժերին, Բելիսարիոսը տեղում ափ իջեցրեց որոշ քանակի ռազմիկների և նրանց հրամանատար նշանակեց Հովհաննես Թրակիացուն:

546 թվականի ամռանը Հովհաննես Թրակիացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000, այդ թվում անտեր և էրուլներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50, այդ թվում Գլակ Հայը) Բրենդեսիոնի ճ-մ-ում (Իտալիա, Ադրիատիկ ծովի հարավ-արևմտյան ափին) անակնկալ հարվածով հաղթեցին Օսթգոթական թագավորության ճամբարած բանակին (մոտ 3.000), որից հետո մտան Կանուզիա (Հարավային Իտալիա)[1]: Կարճ ժամանակ անց, արդեն Ռեյդի ճ-մ-ում (Իտալիա, Բրուտիոսյան թերակղզի) նույն այս ուժերը հերթական անգամ անակնկալ հարված հասցրին Օսթգոթական թագավորության ճամբարած բանակին (մոտ 2.000, այդ թվում բերբերներ), որից հետո հետապնդեցին վերջինիս փախուստի դիմած մնացորդներին և, գրեթե լիովին ոչնչացնելով հակառակորդին, առանց հետագա մարտերի իրենց իշխանությունը հաստատեցին ողջ Հարավային Իտալիայի նկատմամբ[2]: Նույն այս ժամանակ հետաքրքիր մի իրադարձություն էլ տեղի ունեցավ, սակայն, նաև բալկանյան ճակատում:

Իրոք, ցանկանալով համալրում ապահովել Բելիսարիոսին, կայսրը նույն այս ժամանակ կայսերական գանձապահ Ներսես Կամսարականին և Հովհաննես Ֆագասին ուղարկեց էրուլների մոտ, որպեսզի, համոզելով սրանց առաջնորդ Ֆիլեմութին, Բելիսարիոսի բանակի կազմում պայքարի մեջ ներքաշի: Ֆիլեմութն արդյունքում համաձայնեց և մոտ 5.000 էրուլ ռազմիկներ աստիճանաբար սկսեցին կենտրոնանալ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 18:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 18:

Թրակիայում՝ հաջորդ տարվա գարնանը Բելիսարիոսի մոտ տեղափոխվելու մտադրությամբ: Հենց այդ ժամանակ էլ, ահա, էրուլները Դանուբի մոտակայքում անակնկալ հարվածով հաղթեցին գետն անցած և շրջակայքը ասպատակած Արևմտյան Բուլղարական թագավորության բանակին (մոտ 5.000, այդ թվում սլավոններ)՝ ազատելով գերիներին ու հետ խլելով թալանված ավարը[1]:

Հովհաննես Թրակիացու հաջող գործողությունները Օսթգոթական թագավորության բանակին դրեցին ռազմավարական բարդ դրության մեջ: Մնալ Հռոմի շրջակայքում՝ նշանակում էր թույլ տալ, որ հակառակորդը տիրի Հարավային ողջ Իտալիային, սակայն Հովհաննեսի դեմ շարժվելն էլ իր հերթին ազատում էր Հռոմի մոտակայքում գործող Բելիսարիոսի ձեռքերը: Ի վերջո, որոշում ընդունվեց ուժերի գոնե մի մասով շարժվել հարավային հակառակորդի դեմ, ընդ որում մինչ այդ օսթգոթերի արքան, հատուկ հրահանգով տալով մեծ արտոնություններ, կայսերական բանակի դեմ ոտքի հանեց տեղի բոլոր գյուղացիներին, որոնք, չանցնելով բացահայտ գործողությունների, այնուհանդերձ սկսեցին ամեն կերպ աջակցել օսթգոթերին: Արդյունքում՝ Հովհաննես Թրակիացու ձեռքում, ըստ էության, մնացին միայն Օթրանտը և նրա շրջակայքը:

Չնայած դրան, սակայն, 547 թվականի մարտին Հովհաննես Թրակիացու գլխավորությամբ մասերի բաժանված Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000, այդ թվում 300 անտեր) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50, այդ թվում Գլակ Հայը) մանր մարտերում հաղթեցին Տոտիլլայի գլխավորությամբ Հռոմից դեպի հարավ շարժված, մասերի բաժանված ու շրջակայքը ասպատակող Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 10.000) և առժամանակ կասեցրին հակառակորդին[2]: Հենց նույն այս ժամանակ քաղաքի կայազորում ծառայության անցած Մարտինիոսն և նրա կողմն անցած ռազմիկները (15) Պերուջայից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակի (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 5) աջակցությամբ Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 500) անակնկալ գրոհով գրավեցին Սպոլետոն[3]: Փաստորեն ռազմավարական փակուղու մեջ հայտնված Տոտիլլան երկու անհաջողություններ կրեց, սակայն առավել մեծ անհաջողությունը դեռ առջևում էր, քանզի 547 թվականի մարտի վերջին Բելիսարիոսի գլխավորությամբ Պորտոսից առաջխաղացած և Հռոմին մոտեցած Բյուզանդական կայսրության բանակը (1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50, այդ թվում Ֆազաս Բագրատունին) հաղթեցին դարանակալ հարձակում գործել փորձող Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 1.000)[4], որից հետո, նույն տարվա ապրիլին, օգտվելով այն բանից, որ թշնամին ավերել է քաղաքն և հեռացել է, Բելիսարիոսն արդեն երկրորդ անգամ առանց մարտերի մտավ Հռոմ՝ սկսելով ամրացնել այն:

Այս ընթացքում Տոտիլլան, սահմանափակ ուժեր ուղարկեց գրավելու Աքերոնտիդիաս ամրոցը (Հարավային Իտալիա, Լուկայի մոտ) և հասավ հաջողության[5]: Միաժամանակ 547 թվականի մարտի վերջին Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 1.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) պաշարեց նաև Պերուջան, որն ընկավ միայն 548 թվականի հոկտեմբերին[6]: Գլխավոր իրադարձություններին, սակայն, վիճակված էր կրկին զարգանալ Հավերժական քաղաքի պարիսպների տակ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

547 ապրիլ – ***Հռոմի ճ-մ***[7]

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 13:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 22:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:
[5] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23:
[6] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23:
[7] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 24:

Տոտիլլա արքայի գլխավորությամբ առաջխաղացած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 25.000) մոտեցավ Հռոմին, որտեղ Բելիսարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200, այդ թվում Ֆազաս Բագրատունին), ինչպես նաև Հռոմի աշխարհազորը (մոտ 500) պատրաստվեցին պաշտպանության: Միաժամանակ պաշտպանվողների գործը բարդանում էր նրանով, որ պարիսպները քանդված էին և դրանք միայն մասնակի հաջողվեց վերականգնել, իսկ դարպասներ դնել ընդհանրապես չհաջողվեց: Վերջինիս կապակցությամբ Բելիսարիոսը կարողացավ անել միայն այն, որ դարպասների համար նախատեսված մուտքերում տեղադրեց ցցեր և այդ վայրերում տեղակայեց լավագույն ռազմիկներին:

I փուլ – Օսթգոթական թագավորության բանակը, փորձելով ընթացքից վերցնել քաղաքը, անցավ գրոհի, սակայն ողջ օրը տևած համառ մարտի արդյունքում մղվեց ելման դիրքեր:

II փուլ – Հաջորդ օրը թշնամին կրկին անցավ հարձակման, սակայն հետ մղվեց: Թշնամուն հետապնդել փորձած Բելիսարիոսի ռազմիկները հայտնվեցին պարիսպներից բավականին հեռու և հայտնվեցին շրջապատման վտանգի մեջ, սակայն քաղաքից ժամանակին հասած օգնության շնորհիվ կարողացան անվնաս հետ քաշվել քաղաք:

III փուլ – Օրեր անց Օսթգոթական թագավորության բանակը կրկին հարձակում գործեց պարիսպների վրա, սակայն այս անգամ ևս որևէ արդյունքի չհասավ: Արդյունքում, թողնելով պաշարումը, թշնամին նահանջեց և ամրացավ ***Թիբուր քաղաքում:***

Հայերը կորցրին մոտ 10, դաշնակիցը՝ մոտ 100, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

Հռոմի համար ընթացած հաջող ճակատամարտի հետ միաժամանակ հաջողությունն առժամանակ կայսերական ուժերի կողմում էր նաև հարավում, որտեղ 547 թվականի ապրիլին Կապուայի ճ-մ-ում (Նեապոլից մոտ 30 կմ հյուսիս) Հովհաննես Թրակիացու գլխավորությամբ Աքերոնտիդիաս ամրոցի մոտակայքից առաջխաղացած և քաղաքին մտած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 500, այդ թվում բուլղարներ, անտեր և էրուլներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10, այդ թվում Գլակ Հայը) անակնկալ հարձակումով հաղթեցին իրենց հետ գրեթե միաժամանակ քաղաք ժամանած Օսթգոթական թագավորության բանակին (400)[1]: 547 թվականի մայիսին, սակայն, Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (10.000) Լևկանիայի ճ-մ-ում (Կապուայի մոտ) բուլղարների դավաճանության շնորհիվ գիշերային անակնկալ հարձակումով հաղթեց Հովհաննես Թրակիացու գլխավորությամբ ճամբարած Բյուզանդական կայսրության բանակին (1.000, այդ թվում բուլղարներ, անտեր և էրուլներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10, այդ թվում Գլակ Հայը), ընդ որում գերության մեջ հայտնված Գլակը սպանվեց[2]:

547 թվականի ամռանը աստիճանաբար սկսեցին Ապենինյան թերակղզի ժամանել կայսերական համալրումները, ընդ որում ամենասկզբում ժամանեցին Պերանիոս Բագրատունու որդի Բակուրը և Սողոմոն Դարացու եղբորորդի Սերգիոսը, որոնք հաստատվեցին Օթրանտում, որտեղ, հավաքելով վերջերս ջախջախված իր ուժերի մնացորդները, գտնվում էր նաև Հովհաննես Թրակիացին: Հաջորդը տեղ հասան Վերոսի գլխավորած 300 էրուլները, որոնց հետևում էին Վարազ Հայի գլխավորած 800 ռազմիկները, իսկ վերջում էլ 1.000 ռազմիկների գլուխն անցած ճանապարհ էր ընկել Հայաստանի հրամանատար Վալերիանոսը: էրուլները, սակայն, գործեցին մեծ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:

անզգուշությամբ և, առաջանալով դեպի թշնամին, ճամբարեցին: Արդյունքում՝ Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Բրենդեսիոնի ճ-մ-ում անակնկալ հարձակումով հաղթեց Վերոսի գլխավորած էրուլներին, որոնց մնացորդները պատսպարվեցին մացառուտներում և փրկվեցին միայն այն բանի շնորհիվ, որ Տոտիլլան, անհանգստանալով հենց այդ ժամանակ ափին մոտեցող Վարազ Հայի գլխավորած ուժերից, նահանջեց[1]:

Այսպիսով՝ Օթրանտում ուժերը կուտակեցին թվով 100 ռազմիկից էլ քիչ ու նախորդ ջարդից փրկված էրուլները, Վարազ Հայը, Վալերիանոսը, ինչպես նաև Հովհաննես Թրակիացին: Այս հանգամանքը կասեցրեց Տոտիլլայի առաջխաղացումը, բայց մյուս կողմից էլ հետագա ակտիվ գործողությունների համար կայսերական ուժերը ևս ոչ մի կերպ բավարար չէին: Այսպիսով, այն պատճառով, որ Հովհաննես Թրակիացին լուրջ անհաջողության մատնվեց, Օսթգոթական թագավորության բանակը կարողացավ զգալիորեն բարելավել իր ռազմավարական դրությունը, քանզի Ապենինյան թերակղզու հարավում իր դեմ գործող և իրեն մշտապես սպառնացող ուժը, ըստ էության, դադարեց իրենից ռազմական սպառնալիք ներկայացնել, իսկ Հռոմում ամրացած Բելիսարիոսն էլ հետագա հարձակողական գործողությունների համար իր հերթին բավարար ուժեր չուներ: Իրերի դասավորվածության այս դրությունը պահպանվեց բավականին երկար, ընդ որում պաշտոնական Կոստանդնուպոլիսը, ձգտելով որևէ կերպ աջակցել Հռոմում հաստատված Բելիսարիոսին, վերջինիս որոշակի համալրումներ այնուհանդերձ ուղարկում էր, թեև իրերի ընդհանուր դրությունը դա մեծ հաշվով չէր փոխում:

547 թվականի ամռանը, երբ Ապենինյան թերակղզում ստեղծվեց ուժերի հավասարակշռության առժամանակ քիչ թե շատ կայուն մի դրություն, ցեղակիցներին ի վերջո փորձեց օգնության հասնել նաև մինչ այդ զարգացող իրադարձություններին միայն կողքից նայող Վեսթգոթական թագավորությունը, ընդ որում, չունենալով ոչ բավարար ուժեր, ոչ էլ, հատկապես՝ նավատորմ, ինչպես նաև ցանկանալով վտանգի տակ դնել հակառակորդի հենց խորը թիկունքը ու նաև՝ օգտվել մշտապես անհանգիստ բերբերների առկայությունից՝ վեսթգոթերը հարվածի սայրը ուղղեցին Հյուսիսային Աֆրիկային: Արդյունքում՝ 547 թվականի ամռանը ափհանում իրականացրած Վեստգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50) համառ մարտում գրավեց Սեպտոն ամրոցի արտաքին պարսպի մի մասը, սակայն, գոհ հաջողությունից, առժամանակ դադարեցրեց ռազմական գործողությունները, որից էլ օգտվելով հակահարձակման անցած պաշտպանվողների ուժերը շրջապատեցին և գլխովին ոչնչացրին թշնամուն[2]: Այսպիսով՝ վեսթգոթերի ակտիվանալու փորձը անհաջողության մատնվեց, սակայն բերբերների հարձակումները շարունակվում էին և արդյունքում դրությունը Հյուսիսային Աֆրիկայում աստիճանաբար կրկին լարվեց:

Նախորդ տարիների անհաջող նշանակումից հետո, օգտվելով Արևելքում, կարծես թե, հաստատված խաղաղությունից, Հուստինիանոս I-ը Հյուսիսային Աֆրիկայի կառավարիչ նշանակեց Հովհաննես Տրոգոլիտային, որը, տեղ հասնելով, ակտիվորեն ձեռնամուխ եղավ կարգ ու կանոնի հաստատմանը: 547 թվականի ամռանը Հովհաննես Տրոգոլիտայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) Բյուզակիոնի ճ-մ-ում հաղթեցին բերբերներին (մոտ 20.000)[3], սակայն, ծովափից հեռացող հակառակորդը կարողացավ իր հետևից տանել կայսերական ուժերին և, շոգից ու ջրի պակասից նեղված հակառակորդի ռազմիկների նկատմամբ Լարիբայի ճ-մ-ում կարճ ժամանակ անց լուրջ հաղթանակ տարան արդեն բերբերները, իսկ Հովհաննեսն ինքն էլ հազիվ փրկվեց[4]:

---

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 27; Մարցելոս Կոմիտի Շարունակող «Ժամանակագրություն»:
[2] Իսիդոր Սեվիլիացի «Գոթերի, վանդալների և սվեվների պատմություն»:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 28; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 1, գլուխ 25:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 28:

548 թվականի հունվարին, հույսը կտրելով որևէ բան ձեռնարկել հակառակորդի դեմ ցամաքում, Բելիսարիոսը փոխեց հարվածի ուղղությունը և որոշեց ուժերը կենտրոնացնել Օթրանտում: Արդյունքում՝ Բելիսարիոսի ընդհանուր ղեկավարությամբ ժամանող օժանդակ ուժերին դիմավորելու նպատակով նավելով Տերենտի մոտակայք հասած և ափ իջած Բյուզանդական կայսրության բանակի առաջապահը (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) Ֆազաս Բագրատունու և Բարբոտիոնի գլխավորությամբ անակնկալ հարձակումով հաղթեցին Օսթգոթական թագավորության ճամբարած և Ռուսցինա ամրոցը (Հարավ-արևելյան Իտալիա, Տերենտի մոտ) շրջափակած բանակին (մոտ 1.000):[1] Կարճ ժամանակ անց, սակայն, Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակն (3.000 հեծյալ) իր հերթին գիշերային անակնկալ հարձակումով հաղթեց Ֆազաս Բագրատունու և Բարբոտիոնի գլխավորությամբ ճամբարած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 470) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 90), ընդ որում Ֆազասը զոհվեց[2]: Արդյունքում՝ Օսթգոթական թագավորության բանակը շրջափակեց Ռուսցինա ամրոցը և, չնայած ծովից ամրոցին օգնության հասնելու Բելիսարիոսի երկու փորձերին, ի վերջո, օգտվելով առաջացած սովից, ստիպեց հանձնվել[3]:

Այսպիսով՝ Ապենինյան թերակղզում իրավիճակը փոխելու հերթական փորձն առժամանակ ավարտվեց անհաջողությամբ: Այս պայմաններում, ցանկանալով գոնե մի որևէ կերպ մեծացնել իր ուժերը, Բելիսարիոսը այս հարցը կարգավորելու համար Հովհաննես Թրակիացուն ուղարկեց կայսեր մոտ, սակայն մայրաքաղաքում հայտնված Հովհաննեսը, որը վաղուց էր ցանկանում առաջին դերերի վրա դուրս գալ և ի վերջո կյանքի կոչել սեփական հորեղբոր անհաջողության մատնված ծրագրերը, չշտապեց կատարել իր վրա դրված հանձնարարությունը, այլ փոխարենն ամեն կերպ ամրապնդեց սեփական դիրքերը մայրաքաղաքում, իսկ վերջում էլ ամուսնացավ կայսեր մորաքրոջ որդի Հերմանոսի աղջկա հետ:

548 թվականի գարնանը, վերախմբավորելով ուժերը և ստանալով որոշակի համալրումներ, Հովհաննես Տրոգոլիտան վերսկսեց մարտական գործողությունները հակառակորդի դեմ, որոնք այս անգամ արդեն ավարտվեցին վճռական հաջողությամբ: Իրոք, Աֆրիկայի կառավարիչը, կարծես թե, շարժվելով ծովափից հեռացող հակառակորդի հետքերով, ի վերջո կարողացավ ստիպել վերջինիս բաց մարտի մեջ մտնել և Բյուզակիոնի ճ-մ-ում գլխովին ջախջախել բերբերներին[4]: Վերջ, սրանից հետո Հյուսիսային Աֆրիկան խաղաղվեց արդեն զգալի ժամանակով, ինչն էլ հաջորդ տարիներին ի վերջո հնարավորություն տվեց ուժերը կենտրոնացնել օսթգոթերի դեմ: 548 թվականի ամռանը, սակայն, երբ թվում էր, թե ի վերջո հնարավորություն է առաջացել ողջ ուժով գործել Ապենինյան թերակղզում, այնուհանդերձ բարդացավ իրավիճակը մինչ այդ, կարծես թե, համեմատաբար կայուն դանուբյան սահմանում:

Իրոք, Բալկանյան թերակղզու հյուսիսային հատվածում՝ Դանուբ գետի երկու ափերին, գտնվող Գեպիդական թագավորությունը արդեն մի քանի տասնամյակ էր, որ, չնայած որոշ բարդացումների, ըստ էության, դաշնակցային հարաբերությունների մեջ էր գտնվում Բյուզանդական կայսրության հետ, ընդ որում գեպիդները, զգուշանալով իրենցից ավելի հյուսիս-արևմուտք գտնվող Լանգոբարդական թագավորությունից, հիմնականում հավատարիմ էին մնում նույն այդ դաշնակցային պարտավորություններին: Այժմ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայսրության իշխանությունը Բալկանյան թերակղզում աստիճանաբար թուլանում էր, իսկ պաշտոնական Կոստանդնուպոլսի ուշադրությունն էլ բևեռված էր այլ ուղղությունների վրա, գեպիդները ոտքի կանգնեցին: Արդյունքում՝ հենց նոր գահ բարձրացած Տորիսվիդն արքայի (548-560) գլխավորած Գեպիդական թագավորության բանակը 548 թ-ի ամռանը գրավեց Սիրմիան

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 28:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 23:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 29, 30:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 4, գլուխ 28:

(Սերբիա, Սավա գետի ափին)[1], որը դեռևս 537 թվականին օսթգոթերն էին հանձնել գեպիդներին, բայց որին բացահայտորեն տիրել վերջիններս համարձակվեցին միայն այժմ: Սա արդեն բացահայտ ելույթ էր պաշտոնական Կոստանդնուպոլսի դեմ:

548 թվականի աշնանը, ցանկանալով Բալկանյան թերակղզում ռազմական գործողությունների գոնե նոր մի ճակատ չունենալ, Հուստինիանոս I-ը մինչ այդ գեպիդների կողմից գրավված Սիրմիան իր հերթին հանձնեց Լանգոբարդական թագավորության արքա Աուդինին (546-566)՝ ըստ էության լանգոբարդներին հանելով գեպիդների դեմ և ավելի սրելով գերմանական այս երկու ցեղերի առանց այդ էլ սրված հարաբերությունները: Դրանից հետո գերմանական երկու թագավորություններն էլ դեսպանություններ ուղարկեցին Կոստանդնուպոլիս, սակայն այստեղ ի վերջո որոշեցին աջակցել այնուհանդերձ լանգոբարդներին՝ Կոնստանդինի, բանտարկությունից ազատված Բուզեսի, Հրահատ Կամսարականի, Հովհաննես Թրակիացու և Ֆիլեմութի գլխավորությամբ լանգոբարդներին որպես աջակցություն ուղարկելով 10.000 հեծյալից կազմված ուժեղ մի զորաբանակ, ինչպես նա Ապենինյան թերակղզի ուղարկվելու համար նախապատրաստված 4.500 էրուլներին: Միաժամանակ Հովհաննես Թրակիացուն նաև հրահանգվեց Բալկանյան թերակղզում իրավիճակի հանգուցալուծումից հետո շարժվել Բելիսարիոսին օգնության:

Պետք է նշել, սակայն, որ փառամոլ թրակիացին իրականում իր հերթին կրկին ամենևին չէր այրվում տրված հրամանը մինչև վերջ կատարելու մոլուցքով, որը արդյունքում պետք է հերթական անգամ ընդամենը միայն ավելացներ Բելիսարիոսի փառքը, իսկ իրեն էլ թողներ ստվերում: Այս կապակցությամբ պետք է նշել նաև, որ էրուլների մեծ մասն իր հերթին դեմ էր լանգոբարդներին դաշնակցելու գաղափարին, քանի որ էրուլները դեռևս 510-ական թվականներին ծանր պարտություն էին կրել նույն լանգոբարդներից և, կորցնելով իրենց թագավորությունն ու անցնելով կայսերական ծառայության, դեռևս լցված էին վրեժխնդրությամբ, իսկ այժմ էլ էրուլների զգալի մասը, կարծես թե, հարմար առիթ տեսավ՝ միացած գեպիդներին ինքնուրույն քայլեր ձեռնարկել: Արդյունքում՝ այդքան դժվարությամբ հավաքված ուժերից առանձնացան 3.000 էրուլներ և շարժվեցին գեպիդների ուղղությամբ: Այս խնդիրը, սակայն, արագ լուծում ստացավ, քանզի ապստամբ էրուլները, ընդհարվելով կայսերական հիմնական բանակի հետ, պարտություն կրեցին և գլխովին ոչնչացան[2]: Այսպիսով՝ էրուլների խնդիրը որոշակիորեն լուծվեց, սակայն լուծվեց, ըստ էության, կայսրության պահեստազորի ոչնչացման գնով և դա այն պայմաններում, երբ դեռ խնդիր կար դրված ոչ միայն սանձել գեպիդներին, այլև՝ օգնական ուժեր ուղարկել Ապենինյան թերակղզի: Այս պայմաններում որոշակի թեթևացում կարող էր համարվել, թերևս, միայն այն, որ լանգոբարդներն և գեպիդները, մի ինչ-որ պահի, կարծես թե, գիտակցելով ընդհանուր վտանգը, հաշտություն կնքեցին, իսկ դրանից հետո էլ, շարունակելով սպառնալ մեկը մյուսին, արդյունքում առնվազն գոնե ստեղծեցին մի իրավիճակ, երբ սահմանափակվեց գեպիդների ակտիվությունը հարավում:

Եվ այսպես լանգոբարդների ու գեպիդների միջև գործը ռազմական բախման այս անգամ, կարծես թե, չհասավ և կնքվեց հաշտություն, որից անմիջապես հետո էլ, ի կատարում հենց նոր կնքված հաշտության պայմանների, Աուդինը Տորիսվիդնից պահանջեց իրենց հանձնել Լանգոբարդական թագավորության գահի նկատմամբ իր իրավունքների պահանջով հանդես եկող Հիլդիգիսին՝ դրա հետ միաժամանակ իր հերթին մոտը պահելով նաև Գեպիդական թագավորության գահի հավակնորդ Ուստրիգոտին: Տորիսվիդը, սակայն, չուզենալով հանձնել Հիլդիգիսին, բայց նաև չցանկանալով սրել հարաբերությունները լանգոբարդների հետ, թույլ տվեց վերջինիս հեռանալ, ընդ որում Հիլդիգիսը սկզբում որոշեց միանալ Տոտիլլային: Արդյունքում՝ 549 թվականի գարնանը Հիլդիգիսի գլխավորած բանակը (6.000, այդ թվում լանգոբարդներ, սլավոններ և

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 33:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 34:

գեպիդներ) մտավ Հյուսիսային Իտալիա, որտեղ Վենետիկի ճ-մ-ում (Իտալիա, Ադրիատիկ ծովի հյուսիսային ափ) անակնկալ հարձակումով հաղթեց Ղազարի ընդհանուր հրամանատարությամբ գործող ու մասերի բաժանված Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 30)[1]: Այս հաղթանակից հետո, սակայն, փոխելով մտադրությունը, Հիլդիգիսը հետ քաշեց իր ուժերը, ապաստանեց անդրդանուբյան տարածքներում գործող սլավոնների մոտ, իսկ որոշ ժամանակ անց էլ ժամանեց Կոստանդնուպոլիս՝ առժամանակ անցնելով կայսերական ծառայության: Բավականին ծանր տարի հանդիսացած 548 թվականին, սակայն, վիճակված էր ևս մեկ իրադարձության ականատես լինել, որը հետագայում լուրջ հետևանքներ էր ունենալու:

Իր ժամանակին Գուբազ II-ն և լազերը, դժգոհ Լազական թագավորությունում վարվող թալանչիական քաղաքականությունից, ապստամբել ու անցել էին Պարսից թագավորության կողմը, սակայն տարիների հետ պարզվել էր, որ Խոսրով I-ի իշխանությունը ևս քաղցր չէ: Իրոք, պաշտոնական Տիզբոնը, տեղերում իր իշխանության ամրապնդման հետ համեմատական, արդեն այս ժամանակ աստիճանաբար հետ էր կանգնել քրիստոնյաների նկատմամբ վարվող մեղմ քաղաքականությունից: Սա ամենից առաջ իր արտահայտությունը գտավ Մարզպանական Հայաստանում, որտեղ Մժեժ Գնունու մահից հետո վերջինիս փոխարինեց ոչ թե հայ նախարարներից մեկը, այլ՝ ազգությամբ պարսիկ և Պարսից թագավորության պաշտոնյա Գուշնասպ-Վահրամը (548-552): Քրիստոնյաների նկատմամբ վարվող նոր քաղաքականությունը, սակայն, իր ամենակոպիտ դրսևորումը ստացավ այնուհանդերձ հենց լազերի երկրում, որտեղ, ինչպես մի ժամանակ Մարզպանական Հայաստանում, սկիզբ էր առել կրոնափոխության հարկադրանքի բռնի մի քաղաքականությունը: Միաժամանակ, լազերն անչափ դժգոհ էին մնացել նաև այն հանգամանքից, որ կտրվել էին ավանդական տնտեսական կապերը Բյուզանդական կայսրության հետ և դա սկսել էր տնտեսական լուրջ դժվարություններ հարուցել, ընդ որում լազերի արքան ինքն էլ զրկվել էր իրեն հասանելիք հսկայական վճարներից, որը նա ստանում էր Կոստանդնուպոլսից:

Արդյունքում՝ Գուբազ II-ը հերթական անգամ փոխեց իր քաղաքականության ուղղությունը և, վերականգնելով կապերը պաշտոնական Կոստանդնուպոլսի հետ, պարտավորվեց կայսերական բանակի հետ համատեղ հանդես գալ Պարսից թագավորության դեմ: Միաժամանակ, որպես լրացուցիչ աջակցություն, լազերի արքան 300 կգ ոսկու դիմաց խոստացավ ապահովել Սաբիրական և Ալանական թագավորությունների աջակցությունը, որոնք պետք է գործեին Իբերիայի թագավորության տարածքում գործող Պարսից թագավորության բանակի հաղորդակցության ուղիների վրա ու հատկապես խանգարեին հակառակորդի պարենավորմանը: Այս առումով, սակայն, առժամանակ հնարավոր եղավ ապահովել, թերևս, միայն Սաբիրական թագավորության աջակցությունը, այն դեպքում, երբ Ալանական թագավորությունն ամեն դեպքում հանդես եկավ Պարսից թագավորության կողմում: Որպես հետևանք այս ամենի՝ Արևելքում արդեն մի քանի տարի ձգվող խաղաղությունն իր վերջը գտավ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

548 աշուն – ***<u>Պետրայի պաշտպանությունը</u>***[2]

> Դագիսթայոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (8.000, այդ թվում 1.000 ճաներ, ինչպես նաև գոթեր և գեպիդներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000, այդ թվում Հովհաննես Գուզես Հայը և Արտավան Հայը), ինչպես նաև Գուբազ II-ի գլխավորած Լազական թագավորության բանակը

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 35:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 29, 30:

(մոտ 7.000) պաշարեցին քաղաքը, որտեղ գտնվող Պարսից թագավորության բանակը (1.500) անցավ համառ պաշտպանության: Միաժամանակ, տեղեկանալով այս մասին, Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (30.000) շարժվեց քաղաքին օգնության:

I փուլ – Քաղաքի կայազորը հաջողությամբ հետ մղեց հակառակորդի մի քանի գրոհներ: Միաժամանակ վերջինս, այն փլելու մտադրությամբ, սկսեց փորել պարսպի հատվածներից մեկի հիմքերը: Արդյունքում՝ պարսպի այդ հատվածը փլվեց, սակայն քաղաքի կայազորը, իր հերթին փլուզելով մոտակայքում գտնվող տները, հուսալիորեն խցանեց պարսպի փլուզված հատվածը: Դրանից հետո պաշարողները սկսեցին փորել պարսպի հիմքերը այլ հատվածում և որոշ ժամանակ անց պարսպահատվածն այս մասում մասնակի փլուզվեց: Միաժամանակ, սակայն, սպասելով իրեն խոստացված պարգևներին, Դագիսթայոսը սկսեց ձգձգել քաղաքի գրավումը:

II փուլ – Մի քանի օր անց Հովհաննես Գուզեսը իր ջոկատով (50) թափանցեց քաղաք, սակայն, չստանալով աջակցություն հիմնական բանակի կողմից, նահանջեց: Միաժամանակ, տեղեկանալով, որ Միհրան Միհրանյանի բանակը մոտենում է քաղաքին, Դագիսթայոսը, իր բանակից առանձնացնելով մի ջոկատ (100), վերջինիս, ինչպես նաև Լազական թագավորության բանակին ուղարկեց թշնամուն ընդառաջ՝ կիրճերը զբաղեցնելու միջոցով թշնամու առաջխաղացումը կասեցնելու նպատակով:

III փուլ – Միհրան Միհրանյանի բանակը, մոտենալով այն կիրճին, որը պաշտպանում էր կայսերական բանակը, համառ մարտում կորցնելով 1.000 ռազմիկ, այնուհանդերձ ցրեց իրեն դիմադրող հակառակորդի ուժերին և դուրս եկավ Պետրան պաշարող բանակի թիկունք: Տեղեկանալով այդ մասին՝ Դագիսթայոսը թողեց քաղաքի պաշարումը և նահանջեց՝ միանալով Գուբազ II-ի բանակին:

IV փուլ – Քաղաքի կայազորը փորձեց ավարառել պաշարողների կողմից լքված ճամբարը, սակայն վերջապահում գտնվող ճաները փախուստի մատնեցին հակառակորդին և, իրենք տիրանալով ավարին, հեռացան իրենց բնակավայրերը:

Հայերը կորցրին մոտ 20, դաշնակիցները՝ մոտ 200, թշնամին՝ 2.000 զինվոր:

Արդյունքում՝ Միհրան Միհրանյանի գլխավորած բանակը մտավ քաղաք և այստեղ հաստատեց ուժեղ կայազոր (3.000): Հետագայում Միհրան Միհրանյանը փորձեց պարեն ձեռք բերելու նպատակով ասպատակել շրջակայքը, սակայն, որևէ արդյունքի չհասնելով և ենթարկվելով հակառակորդի մանր հարձակումներին, Փար-Փիրուզ Միհրանյանի գլխավորությամբ տեղում թողեց մի ուժեղ ջոկատ (5.000), իսկ ինքը մնացած ուժերով նահանջեց Մարզպանական Հայաստան՝ ճամբարելով Դվինի մոտակայքում:

548 թվականի աշնանը բարդացավ ներքաղաքական իրավիճակը նաև Կոստանդնուպոլսում: Իրոք, նույն այս ժամանակ վաղուց արդեն քաղցկեղով ծանր հիվանդ Թեոդորայի վիճակը գնալով վատանում էր, իսկ այս կնոջն անհուն կերպով սիրող Հուստինիանոս I-ն էլ կարծես լրիվ տարվել էր վերջինիս առողջական խնդիրներով: Չնայած այս ամենին, սակայն, 548 թվականի հունիսի 28-ին Թեոդորան մահացավ և հենց այս ժամանակ էր, ահա, որ Կոստանդնուպոլսում հայտնված Արտավան Արշակունին փորձ կատարեց դավադրություն կազմել, գահից զրկել Հուստինիանոս I-ին ու գահ բարձրացնել Հերմանոսին: Այս դավադրությունը, սակայն, բացահայտվեց շնորհիվ Հերմանոսի որդի Հուստոսի, որին իրենց ծրագրերի մասին հայտնել էին դավադիրները և որը, սակայն, այդ ամենի մասին տեղեկացրել էր հորը, իսկ արդյունքում էլ լուրը հասել էր նաև կայսեր: Հուստինիանոս I-ը, սակայն, գուցե կնոջ կորստի ազդեցության տակ, զարմանալիորեն մեղմ գտնվեց դավադիրների նկատմամբ և նրանք որևէ լուրջ պատիժ այդպես էլ չկրեցին: Այս դավադրությունը, սակայն, ուշագրավ էր մեկ այլ տեսակետից ևս,

քանզի սա առաջին անգամն էր, և դա ինչ-որ տեղ նաև խորհրդանշական էր, որ կայսրությունում աստիճանաբար ռազմաքաղաքական զգալի կշռի հասած հայերը հայտարարում էին իրենց հավակնությունների մասին՝ դուրս գալով ռոմանականացված ու թուլացած գերմանական տարրի, ինչպես նաև տեղական ուժերի դեմ: Այսպիսով՝ հերթական տարին ավարտվեց ընթացիկ հոգսերի մեջ և, լինելով տարտամ ու անորոշ, պաշտոնական Կոստանդնուպոլսին մեծ հաշվով այն այդպես էլ հնարավորություն չապահովեց ուղղություններից գոնե որևէ մեկում մի խոշոր գործողության անցնել, բայց վատը նաև այն էր, որ հենց այդ տարում վերսկսվեցին մարտական գործողություններն արդեն նաև Արևելքում:

549 թվականի փետրվարին Բելիսարիոսի նախկին թիկնապահ, սակայն այժմ հակառակորդի կողմին անցած Ինդուլֆի գլխավորությամբ ափ իջած և շրջակայքը ասպատակող Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 2.000) Լավրեատայի ճ-մ-ում (Դալմացիա, Սալոնայի մոտ) հաղթեց Սալոնայից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 30), որից հետով ավարով հետ վերադարձավ[1]: Ինդուլֆի դավաճանությունը, վերջերս Կոստանդնուպոլսում բացահայտված դավադրությունը, Բելիսարիոսին մշտապես հովանավորող Թեոդորայի մահը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ապենինյան թերակղզում կայսերական բանակն այդպես էլ չէր կարողանում հաջողության հասնել, սակայն, ի վերջո սասանեցին երբեմնի փառավոր զորավար Բելիսարիոսի հեղինակությունը, որը հենց այս ժամանակ էլ պաշտոնանկ արվեց և դրանից հետո արդեն շատ երկար ժամանակով հեռացվեց ռազմական գործունեություններից: Այսպիսով՝ Հուստինիանոս Ի-ը, մշտապես կասկածելով մեծ հաշվով ազնիվ այս զորավարին, ի վերջո տեղիք տվեց իր կասկածամտությանը, սակայն այս հանգամանքը ոչ մի կերպ չէր կարող դրական ազդեցություն ունենալ Տոտիլլայի դեմ մղվող մարտական գործողությունների ընթացքի վրա: Այսպես թե այնպես, սակայն Արևմուտքում գործող բանակի հրամանատար նշանակվեց կայսեր մորաքրոջ որդի Հերմանոսը, սակայն, արդեն այս ժամանակ ծանր հիվանդ, վերջինս չկարողացավ փաստացի ձեռնամուխ լինել իր պարտականությունների կատարմանը և 550 թվականի սեպտեմբերի սկզբին մահացավ:

549 թվականի գարնանը Դագիսթայոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 7.000, այդ թվում գոթեր և գեպիդներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.500, այդ թվում Հովհաննես Գուզես Հայը և Արտավան Հայը), ինչպես նաև Գուբազ II-ի գլխավորած Լազական թագավորության բանակը (մոտ 7.000) վաղ առավոտյան անակնկալ հարձակումով հաղթեցին Փար-Փիրուզ Միհրանյանի գլխավորությամբ Փասիս գետի ափին տեղակայված Պարսից թագավորության ճամբարած բանակի հետախուզական ջոկատին (1.000), որից հետո հարձակվեցին ու ոչնչացրեցին նաև ճամբարած հիմնական բանակը[2]: Այսպիսով՝ Լազական թագավորության տարածքում գործող Պարսից թագավորության դաշտային բանակը դադարեցրեց իր գոյությունը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

549 ամառ – ***<u>Հիպպիս գետի ճ-մ</u>*** (Լազիկա)[3]

> Հայաստանի հրամանատար Դագիսթայոսի, Հովհաննես Գուզես Հայի և գեպիդների հրամանատար Ֆիլեգագոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 6.000, այդ թվում գոթեր ու գեպիդներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.500, այդ թվում Արտավան Հայը), ինչպես նաև Գուբազ II-ի գլխավորած Լազական թագավորության բանակը (մոտ 8.000)

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 35:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 2, մաս 30:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 8:

շարժվեցին Խոռյանի գլխավորությամբ առաջխաղացող Պարսից և Ալանական թագավորությունների միացյալ բանակի (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 3.000) դեմ: Կողմերը մոտեցան իրար և մարտակարգ ընդունեցին:

Քրիստոնյաների բանակի առաջին շարքում տեղակայվեց Լազական թագավորության հեծելազորը, երկրորդում՝ կայսերական հեծելազորը, իսկ երրորդ շարքում դիրքեր գրավեց հետևազորը: Պարսից և Ալանական թագավորությունների միացյալ բանակի առաջին շարքում տեղակայվեց ծանր հեծելազորի հարվածային մի ջոկատ (1.000 ծանր հեծյալ), որից հետո դիրքեր զբաղեցրեց նաև մնացած բանակը:

I փուլ – Լազական թագավորության հեծելազորը, մինչ հակառակորդ բանակները կմոտենային իրար, առաջ անցավ և փորձեց հարձակվել թշնամու առաջապահ ջոկատի վրա, սակայն կարճ ժամանակ անց, չկարողանալով դիմանալ հակառակորդի հարվածին, նահանջեց ու պատսպարվեց կայսերական հեծելազորի մարտակարգում: Այդ ընթացքում կողմերը, միմյանց մոտենալով հիմնական ուժերով, պատրաստվեցին հետագա մարտին: Միաժամանակ, զգալով, որ թշնամու թվական գերազանցությունը վտանգավոր է դարձնում հեծելազորային բաց հանդիպակաց մարտը, Հովհաննես Գուզեսի առաջարկով կայսերական բանակի հեծյալները ցած թռան նժույգներից և, առաջ ցցելով նիզակները ու ուժեղացնելով հետևակայինների շարքերը, անցան ամուր պաշտպանության:

II փուլ – Պարսից և Ալանական թագավորությունների միացյալ բանակը, խուսափելով գրոհել ծանր հետևազորի նիզակաշարքը, մոտեցավ հակառակորդի մարտակարգին ու աղեղների հարվածի տակ առավ այն՝ փորձելով առավելության հասնել և ցրել այն աղեղնամարտով, սակայն արդյունքում, թեև որոշակի կորուստներ պատճառեց հակառակորդին, բայց ինքն էլ իր հերթին զգալի կորուստներ կրեց վերջինիս հետևակ նետաձիգների հարվածներից: Ի վերջո, պատահական մի նետ դիպավ Խոռյանի կոկորդին և սպանեց պարսից զորավարին, որից հետո վերջինիս բանակը կորցրեց մարտակարգը և, ենթարկվելով հակառակորդի հարվածներին, դիմեց խուճապահար փախուստի:

III փուլ – Ուժերը կենտրոնացրած քրիստոնյաների բանակը անցավ հարձակման և շուտով մոտեցավ թշնամու ճամբարին: Վերսկսված մարտում Հովհաննես Գուզեսը նիզակի հարվածով հաղթեց և սպանեց ճամբարի մուտքի պաշտպանությունը գլխավորող հսկայամարմին ու հմուտ աղեղնամարտ վարող մի ալան ռազմիկի, որից հետո թշնամու ճամբարը գրավվեց և նա վերջնական պարտության կրեց:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 1.500, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 10.000 զինվոր:

Բելիսարիոսի հեռանալը ապենինյան ճակատից, ինչպես նաև այն հանգամանքը, որ պաշտոնական Կոստանդնուպոլսի ուշադրությունը նույն այս ժամանակ զգալիորեն սևեռված էր Արևելքի և դանուբյան ճակատի ուղղությամբ, բերեց նրան, որ Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 25.000) 549 թվականի ամռանը Դիոգենեսի և Պողոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 100) կրկին պաշարեց Հռոմը՝ ի վերջո 550 թվականի հունվարի 16-ին քաղաք թափանցելով իսավրիացիների հերթական դավաճանության շնորհիվ և դարանակալ ուժերով ոչնչացնելով քաղաքից խուճապահար հեռացող ռազմիկներից շատերին[1]: Այսպիսով՝ վերջին տարիներին Ապենինյան թերակղզում անշեղորեն վատացող ռազմական ընդհանուր դրությունն, ի վերջո, կայսրությանը խոշոր մի անհաջողություն արժանացավ, ընդ որում հարցը միայն Հռոմի

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 35; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:

անկումով չսպառվեց և Տոտիլլան շարունակեց իր հաղթարշավը:

550 թվականի մարտին Տոտիլլայի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 20.000) Թորիմուտի և Հիմերիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 5) պաշարեց Ռեգիումը (Բրուտիոսյան թերակղզու հարավ), որից հետո, բանակի մի մասով շրջափակելով այն և բռնկված սովի շնորհիվ մայիսին ի վերջո ստիպելով հանձնվել, մտավ Տերենտ[1]: 550 թվականի ապրիլ ամսին դավաճանության շնորհիվ ընկավ նաև Ռիմինին[2], որից կարճ ժամանակ անց Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Ռավեննայի մոտ հաղթեց Վերոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000, այդ թվում էրուլներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 15), ընդ որում քաջաբար մարտնչող Վերոսն ընկավ մարտում[3]: Մինչ կայսրության պաշտպանությունն Ապենինյան թերակղզում փլուզվում էր, սակայն, հերթական անգամ բարդացավ դրությունը նաև բալկանյան ճակատում, ընդ որում այս անգամ մեղավորն արդեն 550 թվականի ապրիլին Դանուբն անցած և շրջակայքն ասպատակելով առաջացած բուլղարներն ու սլավոններն էին, որոնք իրենց հերթին գործում էին գեպիդների դրդմամբ:

Իրոք, չնայած 548 թվականին կնքված, կարծես թե, հաշտությանը, 549 թվականին Լանգոբարդական և Գեպիդական թագավորությունների միջև հարաբերությունները կրկին սրվել էին, թեև արյունահեղ բախումից մեկ անգամ ևս հնարավոր եղավ խուսափել, այն էլ ամենավերջին պահին, քանզի, այն բանից հետո, երբ երկու թագավորությունների բանակները վճռական ճակատամարտի համար արդեն իրար էին մոտենում, հասարակ ռազմիկների ու միջին հրամանատարական կազմի գործողությունների շնորհիվ բախումը կանխվեց, ըստ երևույթին այն պատճառով, որ ազգակից այս մարդկանց համար ուղղակի պարզ չէր իրար կոտորելու իմաստն ու նպատակը: Միաժամանակ, սակայն, համարելով իրեն ավելի թույլ և նաև հավանական համարելով, որ հաջորդ տարի, այսպես թե այնպես, անխուսափելի է լինելու ընդհարումը լանգոբարդների հետ, Տորիսվիդնը, գոնե Բյուզանդական կայսրության կողմից հանգիստ լինելու մտայնությամբ, սկսեց նոր դաշնակիցներ որոնել, իսկ այս ճանապարհին էլ ավելի հարմար թեկնածուներ, քան բուլղարներն ու սլավոններն էին, չկային: Կողմերը դեսպանություններ փոխանակեցին և արդյունքում արդեն 550 թվականի գարնանը բուլղարներին ու սլավոնները հերթական անգամ անցան Դանուբը, ընդ որում, քանի որ կայսրության ռազմական մեքենան ամուր պահում էր գետի այն հատվածը, որը գտնվում էր իր տիրապետության տակ, գեպիդները թշնամիներին կայսրության տարածք անցկացրեցին՝ կազմակերպելով վերջիններիս գետանցումն իրենց տրամադրության տակ գտնվող գետի հատվածով:

Բուլղարներն ու սլավոնները ծանր ասպատակության ենթարկեցին կայսրության տիրույթները Բալկանյան թերակղզում և հենց այս ընթացքում էր, որ 550 թվականի ապրիլին Ադրիանապոլսի ճ-մ-ում Արևմտյան Բուլղարական թագավորության բանակը (1.800, այդ թվում սլավոններ) անակնկալ հարձակումով հաղթեց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 200)[4]: Դրանից հետո կարճ ժամանակ անց Ցուրուլ ամրոցի ճ-մ-ում Արևմտյան Բուլղարական թագավորության բանակը (1.200, այդ թվում սլավոնները) պարտության մատնեց արդեն Ասբադի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 300)[5]: Ողջ ապրիլ ամսին բուլղարներն և սլավոնները շարունակում էին ոտնատակ տալ կայսերական տիրույթները Բալկանյան թերակղզում, իսկ մայիսին էլ Տոպերի ճ-մ-ում (Թրակիա) վերջիններս կեղծ նահանջով բաց դաշտ քաշեցին Բյուզանդական կայսրության բանակին ու նրա կազմում գտնվող Հայ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 37, 39:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 37:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 37:
[4] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 38:
[5] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 38:

ռազմիկներին, ևս մեկ հաղթանակ շահեցին, ինչից հետո մանր մարտերից հետո մտան քաղաք և ավարեցին այն: Անելով այս ամենը՝ բուլղարներն ու սլավոնները հետ քաշվեցին անդրդանուբյան տարածքներ՝ մանավանդ այն բանի ֆոնին, որ կայսերական դիվանագետներին հաջողվել էր ոտքի հանել հարձակմանը մասնակցած արևմտյան բուլղարներից դժգոհ արևելյան բուլղարներին և արդյունքում ասպատակիչների թիկունքը հայտնվել էր վտանգի տակ: Այս պայմաններում, մանավանդ երբ Հուստինիանոս Ի-ը խոշոր փրկագնով նրանց մոտ էր ուղարկել Հրահատ Կամսարականին, թշնամին գերադասեց հետ քաշվել: Բուլղարների և սլավոնների այս վայրագությանը զոհ գնացին 15.000 խաղաղ բնակիչներ, իսկ հսկայական թվով մարդիկ էլ գերի տարվեցին[1], բայց վատը նաև այն էր, որ Սոլունում կենտրոնացող Հովհաննես Թրակիացու բանակը, առանց այդ էլ առանձնապես չձգտելով անցնել Ապենինյան թերակղզի, հարմար պատրվակի տակ այդպես էլ տեղից չշարժվեց:

550 թվականի նույն մայիսին, համարելով Հարավային Իտալիայում գործերը կարգի գցած և արդեն վստահ, որ Բալկանյան թերակղզում խրված կայսրության ռազմական մեքենայից գոնե այդ տարի հարված չի ստանա, Տոտիլլան անցավ Սիցիլիա և ասպատակեց կղզին՝ Դոմենտիոլոսի գլխավորած կայսերական բանակից, սակայն, չկարողանալով գրավելով Մեսսինան (Սիցիլիայի հյուսիս-արևմտյան ափ)[2], ինչպես նաև, արդեն ամռանը՝ անհաջողության մատնվելով Սիրակուզայի պարիսպների տակ: Չկարողանալով տիրել կայսերական երկու գլխավոր ամրություններին, բայց միաժամանակ նաև ձեռք բերելով հարուստ ավար՝ Տոտիլլայի գլխավորած բանակը կրկին հետ քաշեց ուժերը Ապենինյան թերակղզի՝ կղզում կայազորներ թողնելով միայն չորս ամրոցներում:[3] 550 թվականի ամռանը, սակայն, կայսրության դրությունը հերթական անգամ բարդացավ նաև Արևելքում:

Խնդիրը կայանում էր նրանում, որ այստեղ լազերն, ըստ էության, կայսրության դաշնակիցներն էին, սակայն պաշտոնական Տիզբոնը, իր հերթին ևս ցանկանալով տեղում դաշնակիցներ ունենալ, ոտքի հանեց աբխազներին, որոնք նույն այս ժամանակ իրենց հերթին լիուլի տեսել էին Կոստանդնուպոլսի կառավարման «հաճույքները» և, համեմատելով դրանք պարսից տիրապետության հետ, որոշել էին ապստամբել: Սրա հետ միաժամանակ, սակայն, փոփոխություն էր կրել նաև տեղում գործող կայսերական բանակի ղեկավար կազմը, քանզի լազերը, ինչ-որ տեղ հիմնավոր, պատվիրակություն էին ուղարկել Կոստանդնուպոլիս և Պետրայի անհաջող պաշարման, ինչպես նաև իրավիճակի ընդհանուր բարդացման մեջ մեղադրել էին Դագիսթայոսին: Արդյունքում՝ Հուստինիանոս Ի-ը մայրաքաղաք կանչեց Դագիսթայոսին և ձերբակալեց, որից հետո Հայաստանի հրամանատար նշանակեց Բեսսասին: Բեսսասը իրեն լավ չէր դրսևորել Հռոմի պաշտպանության ժամանակ, սակայն, հաշվի առնելով ծերունի զորավարի հսկայական փորձը, Հուստինիանոս Ի-ը որոշեց նրան ևս մեկ հնարավորություն տալ և դրա համար էլ նշանակեց Հայաստանի զորավար:

Արևելք ժամանելուն պես Բեսսասը հանդիպեց մի իրավիճակի, երբ Լազիկայից հյուսիս ապստամբության ուղին էին բռնել աբխազները, իսկ Պետրայում գտնվող կայազորին էլ Միհրան Միհրանյանը լիովին ապահովել էր պարենամթերքով՝ ամեն կերպ ուժեղացնելով քաղաքի պաշտպանությունը: Արդյունքում, որոշվեց ամենից առաջ հնազանդեցնել աբխազներին, ընդ որում այս գործի գլուխ դրվեցին Հովհաննես Գուզես Հայը և էրուլների առաջնորդ Ուլիգագոսը: 550 թվականի ամռանը Հովհաննես Գուզեսի և Ուլիգագոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000, այդ թվում էրուլներ, 50 նավ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000), ծովով շրջանցելով Օպսիտեսիի գլխավորությամբ ամուր դիրքեր գրաված Աբխազական իշխանության բանակին (մոտ 7.000), Տրախեայի ճ-մ-ում ճակատային և թիկունքային

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 38:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 38; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 39, 40:

համակցված հարվածով հաղթեցին վերջինիս, հետապնդեցին հակառակորդին ու, խառնվելով փախչող ռազմիկներին, գրավեցին հակառակորդի այդ մայրաքաղաքը[1]: Աբխազների ապստամբությունը ճնշվեց, սակայն այդ տարի Արևելքում որևէ ակտիվ ռազմական գործողություն մղելու մասին խոսք գնալ այլևս չէր կարող և առավելագույնը, որին հասավ կայսերական բանակը, դա այն էր, որ Հովհաննես Գուզեսն ու Ուլիգագոսը գրավեցին նաև Ցիբելե ամրոցը (Աբխազիայի հյուսիս) և վերջնականապես վերացրին աբխազների մոտ տիրող ապստամբական տրամադրությունները[2]:

Հարկ է նշել, սակայն, որ 550 թվականի ամռանը, չնայած պարսկական կողմը կարողացավ ամրացնել Պետրայի պաշտպանությունը, սակայն կայսերական բանակի դեմ որևէ լուրջ գործողություններ ձեռնարկելու հնարավորությունից զրկված էր նաև վերջինիս ռազմական մեքենան, քանի որ հենց այս ժամանակ Խոսրով I-ի դեմ ապստամբեց նրա ավագ որդի Անուշզադեն: Փառատենչ այս արքայազնը, որը կապեր էր հաստատել նույնիսկ իր հոր հարեմում գտնվող կանանց հետ, վաղուց էր ձգտում փոխարինել հորը արդեն նաև որպես պետության գլուխ և ահա այժմ, երբ լուր տարածվեց այն մասին, որ հայրը ծանր հիվանդ է, վերջինս որոշեց գործել՝ հենվելով տոհմիկ ավագանու բարձրաստիճան ներկայացուցիչներից ոմանց վրա, ինչպես նաև վայելելով մանիքեացիների ու որոշ քրիստոնյաների աջակցությունը: Անուշզադեի այս ելույթը, սակայն՝ հախուռն և անպատրաստ, առանց լուրջ ռազմական բախման ճնշվեց այն բանից հետո, երբ զգալի ուժերով ապստամբների դեմ ելավ Փար-Փիրուզ Միհրանյանը, որին էլ հենց հաջողվեց ձերբակալել Անուշզադեին: Տիզբոն հասցված ապստամբ արքայազնին Խոսրով I-ի հրամանով պատժեցին նրանով, որ շիկացած երկաթով այլանդակեցին վերջինիս թարթիչները՝ դրանով իսկ զրկելով նրան արյաց գահին հավակնելու նույնիսկ տեսական հնարավորությունից, քանզի, ըստ արյաց ավանդական օրենքի, ինչպես արդեն ասվեց, մարմնական արատ ունեցող անձը չէր կարող նման հավակնություններ ունենալ: Այսպես թե այնպես, սակայն Պարսից թագավորության ներսում բարդացած ներքաղաքական իրավիճակը թույլ չտվեց արյաց արքային 550 թվականին Լազիկայում որևէ լուրջ ռազմական գործողություն իրականացնել, ինչն էլ իր հերթին հնարավորություն տվեց Բեսսասին առավել լավ նախապատրաստվել առաջիկա իրադարձություններին:

550 թվականի աշնանը Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 5.000) Պալադիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 5) պաշարեց Կրոտոնը (Բրուտիոսյան թերակղզու արևելք), սակայն ի վերջո, խուսափելով ծովով քաղաքին մոտեցած կայսերական նավատորմից, նահանջեց:[3] Տեղային այս անհաջողությունը բերեց նրան, որ օսթգոթերի առաջնորդներից Տերենտի կայազորի հրամանատար Ռագնարիսը, ինչպես նաև Աքերոնտիդիաս ամրոցի հրամանատար Մորասը կապեր հաստատեցին Բակուր Բագրատունու հետ և առաջարկեցին, պատշաճ պայմանների դիմաց, իրենց հանձնված ամրությունների հետ միասին ծառայության անցնել Հուստինիանոս I-ին: Պայմանավորվածությունը վերջնական տեսքի բերելու համար Բակուրը մեկնեց Կոստանդնուպոլիս, սակայն գործը ձգձգվեց ավելի քան մեկ տարի, քանի որ այստեղ առժամանակ դեռևս ոչ մի կերպ չէին կողմնորոշվում իրավիճակում: 551 թվականը բացվեց նույն այն խնդիրներով, որոնք կայսրությանը հուզել էին նախորդ տարիներին:

Այս ժամանակ Հերմանոսին հաջորդելու հավակնություններ դրսևորող Հովհաննես Թրակիացին և նրա հետ գտնվող ուժերը դեռևս Սոլունում էին, որտեղ, Ապենինյան թերակղզի արշավելու նպատակով, աստիճանաբար հավաքվում էին նաև նոր ուժեր, ընդ որում, ի հեճուկս Հովհաննեսի, այս անգամ ևս գլխավոր ի վերջո իրեն չնշանակեցին, այլ ապագա արշավանքի հրամանատար նշանակվեց դանդաղ առաջանալով, տեղում ուժեր

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 9,10:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 10:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 25:

հավաքելով և բուլղարներին ու սլավոններին հնարավորինս հետ մղելով միայն աշնանը Սոլուն ժամանած Ներսես Կամսարականը: Կայսրության ռազմական մեքենայի հարվածային բռունցքի կենտրոնացումը Սոլունում, սակայն, իր հերթին բերեց բալկանյան պաշտպանական գծի ընդհանուր թուլացմանը և ահա արդեն գարնանը բուլղարներն ու սլավոնները, գեպիդների աջակցությամբ նախկինի համեմատ ավելի մեծ քանակությամբ անցնելով Դանուբն ու ասպատակելով շրջակայքը, կրկին մոտեցան Ադրիանապոլսին: Այս պայմաններում պաշտոնական Կոստանդնուպոլիսը, ցանկանալով սանձել հակառակորդին, գլխավոր հրամանատար նշանակված պալատական ներքինի Սխոլաստիկոսի, ինչպես նաև Կոնստանդինի, Հրահատ Կամսարականի, Նազարեսի, Հովհաննես Ֆագասի ու Հուստինիանոս I-ի մորաքրոջ թոռ և Հերմանոսի որդի Հուստինոսի գլխավորությամբ առաջ ուղարկեց խոշոր մի բանակ, սակայն հակառակորդը, ճամբարելով մի բարձրադիր վայրում, ի վերջո հաղթանակ տարավ իրենցից ներքև հարթավայրում ճամբարած, պարենի պակաս զգալ սկսած և այդ պատճառով էլ ստիպված հարձակման անցած կայսերական բանակի նկատմամբ[1]:

Թրակիայում գործող կայսերական բանակը անսպասելի և ինչ-որ տեղ նաև ստորացուցիչ պարտություն էր կրել ու արդյունքում բանը հասավ նույնիսկ նրան, որ բուլղարների և սլավոնների ջոկատներից ոմանք հասան նույնիսկ Կոստանդնուպոլսի Երկար պարիսպներին, թեև այստեղ արդեն ուշքի եկած կայսերական ռազմական մեքենան Կոնստանդինի, Հրահատ Կամսարականի, Նազարեսի, Հուստինոսի ու Հովհաննես Ֆագասի գլխավորությամբ այնուհանդերձ հաջողության հասավ ու հետ շպրտեց հակառակորդին, իսկ գործն էլ, ինչպես 11 տարի առաջ, ոչ մի կերպ չհասավ նույնիսկ մայրաքաղաքի պաշարմանը: Իրոք, բուլղարներն ու սլավոնները, առժամանակ ցանկանալով, ըստ էության, միայն ավարառություն իրականացնել և գոհ ձեռք բերած արդյունքից, ի վերջո հետ քաշվեցին անդրդանուբյան տարածքներ[2]: Այս առումով հատկանշական է, որ ժամանակակիցները կասկածում էին, թե բուլղարների ու սլավոնների հերթական ակտիվացման մեջ մեղավոր էր Տոտիլլան, որը բոլոր հիմքերն ուներ հարված սպասելու Սոլունում կենտրոնացող ուժերի կողմից և մեծապես շահագրգռված էր տեղի ունեցածում, սակայն նույնիսկ դեպքերին քաջատեղյակ ու ժամանակակից Պրոկոպիոս Կեսարացին ինքն էլ զգուշանում է վերջնական կարծիք կազմել: Արդյունքում, թերևս, հավանական է կարծել, որ ուղղակի առկա եղավ համընկնում:

551 թվականի գարնանը, կարծես թե, ամեն ինչ պատրաստած հաջողության համար, Արևելքում գործող կայսերական բանակն իր հերթին անցավ ակտիվ գործողությունների: Սկիզբ էին առնում խոշոր իրադարձություններ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

551 գարուն – ***<u>Պետրայի գրավումը</u>***[3]

> Բեսսասի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (6.000, այդ թվում գոթեր, գեպիդներ և սաբիրներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000, այդ թվում Հովհաննես Գուզես Հայը և Արտավան Հայը) պաշարեցին քաղաքը Պարսից թագավորության բանակից (2.300):
>
> I փուլ – Պաշարողները, փորելով տակը և կիրառելով պաշարողական տեխնիկա, զգալիորեն վնասեցին պարիսպները և մի շարք մասնակի գրոհներ ձեռնարկեցին:
>
> II փուլ – Կենտրոնացնելով հիմնական ուժերը՝ կայսերական բանակը հարձակման անցավ պարսպի առավել վնասված հատվածի ուղղությամբ: Որոշ

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 40:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 40:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 11,12:

ժամանակ անց գրոհ ձեռնարկվեց նաև մեկ այլ ուղղությամբ, սակայն թշնամին շարունակեց համառ դիմադրությունը: Այդ ընթացքում Հովհաննեսը հայկական ջոկատով թիկունքից ներխուժեց թշնամու կողմից գրեթե չպաշտպանվող մի աշտարակ և գրավեց այն: Այնուհետև, զարգացնելով հաջողությունը և ներխուժելով քանակապես գերակշիռ թշնամու շարքերը, Հովհաննեսը և իր հետ եղած ռազմիկները ոչնչացրեցին բազում թշնամիների, ընդ որում՝ Հովհաննեսը մենամարտում ընդհարվեց մի խիզախ պարսիկի հետ, հաղթեց ու սպանեց նրան: Քաղաքը գրավվեց, որի արդյունքում կայազորից գերվեց 730 ռազմիկ:

III փուլ – Քաղաքի կայազորից 500 ռազմիկ նահանջեց դեպի միջնաբերդ և, ամրանալով այնտեղ, այրեց քաղաքը: Ստացվեց այնպես, սակայն, որ քամին կրակը քշեց հենց միջնաբերդի վրա, որը այնտեղ գտնվողների և հանձնվելու առաջարկը մերժածների հետ միասին այրվեց: Այդ ընթացքում Հովհաննեսը պարսպի վրայից նետված մի խոշոր քարով հարված ստացավ գլխին և զոհվեց:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 700, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 2.200 զինվոր: Բեսսասի հատուկ հրամանով Պետրայի պարիսպները հիմնովին ավերվեցին:

551 թվականի ամռանը, ցանկանալով գոնե մի որևէ կերպ օժանդակել Պետրայում պաշտպանվող յուրայիններին, Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից և Սաբրիական թագավորությունների միացյալ բանակը ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները կրկին մոտեցան Լազիկայի սահմաններին, թեև արդյունքում ուշացան և Պետրան ընկավ: Դրանից հետո, ցանկանալով շտկել իրավիճակը, Միհրան Միհրանյանի գլխավորած Պարսից (մոտ 25.000, այդ թվում դելմիկներ, ինչպես նաև 8 փիղ) և Սաբրիական (4.000) թագավորությունների միացյալ բանակը ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) մոտեցան Արքեոպոլսին (Լազիկա, Քութայիսիից մոտ 50 կմ արևմուտք) և, պաշարելով այն, մի շարք գրոհներ ձեռնարկեցին: Իրենց հերթին, սակայն, Օդոնախոսի, Բաբաս Թրակիացու, Վենիլիոսի, Վարազ Հայի և էրուլների հրամանատար Ուլիգագոսի գլխավորությամբ քաղաքում գտնվող Բյուզանդական կայսրության բանակը (3.000, այդ թվում էրուլներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 300), որոշ ժամանակ հետ մղելով քաղաքին մոտեցած թշնամու գրոհները, ի վերջո անակնկալ արտագրոհով պարտության և փախուստի մատնեցին վերջինիս[1]: Այսպիսով՝ Արևելքում հաջողությունն ի վերջո թեքվեց կայսերական բանակի կողմը, թեև պայքարը դեռևս շարունակվում էր: Իր հերթին, 551 թվականի ամռանը, մեր կողմից նկարագրվող ժամանակահատվածի համար հազվադեպ, տեղի ունեցավ բացառիկ խոշոր մի ծովամարտ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

551 ամառ – ***<u>Անկոնի ծովացամաքամարտ</u>***[2]

Սկիպուրի, Գիբալայի և Ինդուլֆի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 10.000, 47 նավ) պաշարեց քաղաքը Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 50): Իմանալով այդ մասին՝ Ռավեննայում գտնվող Վալերիանոսը առաջարկեց Սոլունում գտնվող Հովհաննես Թրակիացուն միավորել ուժերը և, առաջանալով ծովով, օգնության հասնել քաղաքին: Արդյունքում՝ ծովով առաջխաղացած Հովհաննես Թրակիացին, ունենալով 12 նավ, ինչպես նաև Ռավեննայից առաջխաղացած Վալերիանոսը, որն ուներ 38 նավ, որոշեցին միավորել ուժերն և շարժվել թշնամու դեմ:

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 13, 14:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 23:

I փուլ – Բյուզանդական կայսրության նավատորմի ռազմիկները (մոտ 5.000), այդ թվում նաև նրանց կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), ողջ օրը տևած համառ աբորդաժային ծովամարտում հաղթեցին Օսթգոթական թագավորության նավատորմին (47)՝ ոչնչացնելով նաև նավերում գտնվող թշնամական բանակի ռազմիկներին:

II փուլ – Կայսերական բանակը ափհանում իրականացրեց և ստիպեց քաղաքի մոտ տեղակայված ու այն շրջապատած թշնամու բանակին նահանջել, որից հետո Վալերիանոսն իր ուժերով վերադարձավ Ռավեննա, իսկ Հովհաննեսը՝ Սոլուն:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 1.000 զինվոր, մոտ 5 նավ, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր, 36 նավ:

Անկոնի ծովացամաքամարտը կործանիչ հարված հասցրեց Տոտիլլայի ծովային ուժերին, որոնք դրանից հետո այլևս երբեք չվերականգնվեցին, իսկ ծովային գերիշխանությունն էլ վերջնականապես անցավ կայսրության կողմը: Իր հերթին, 551 թվականի աշնան Արտավան Արշակունու գլխավորությամբ Սիցիլիայում գործող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 3.000) և նրա կազմում գործվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) մանր մարտերից հետո գրավեցին կղզում հակառակորդի ձեռքում մնացած վերջին ամրությունները ու տեղում ամրապնդեցին կայսեր իշխանությունը[1]: Սարդինիայի կապակցությամբ, սակայն, կայսերական ռազմական մեքենան անհաջողության մատնվեց, քանզի, այն բանից հետո, նույն այս ժամանակ Կարթագենից առաջխաղացած, ափ իջած և Կարանալեան (Սարդինիա) պաշարած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) անակնկալ հարձակման ենթարկվեցին Օսթգոթական թագավորության բանակի (մոտ 1.000) կողմից, ծանր պարտություն կրեցին և, միայն մեծ դժվարությամբ տեղավորվելով նավերում, վերադարձան Կարթագեն[2]:

551 թվականի աշնանը սկիզբ առավ Արևմտյան Բուլղարական թագավորության և սլավոնների հերթական ավերիչ ներխուժումը դեպի կայսրության տարածք, ընդ որում այս անգամ կայսրության զորավարները, այդ թվում նաև Հերմանոսի որդիներ Հուստոսն ու Հուստինիանոսը, բավարար ուժեր չունենալով հակառակորդին կազմակերպված դիմադրություն ցույց տալու համար, քանզի Սոլունում հավաքվող ուժերին Հուստինիանոս I-ը ոչ մի կերպ չէր ուզում ձեռք տալ, սկսեցին կիրառել անկանոն կռվի ռազմավարությունը: Եվ ահա, թեև նրանք որոշակի կորուստներ պատճառեցին հակառակորդին, սակայն վերջինիս համար արդյունքն այս անգամ ևս ավելի քան գոհացուցիչ էր, ընդ որում ձախողվեց նաև Դանուբն անցնելու պահին հակառակորդին ոչնչացնելու կայսրության զորավարների մտադրությունը, քանի որ սլավոններին անդրդանուբյան տարածքներ վերադառնալուն օժանդակեցին այս անգամ արդեն կայսրության նկատմամբ բացահայտ թշնամական դիրք որդեգրած գեպիդները[3]: Գեպիդների հակակայսերական վերջին դիրքորոշումը, սակայն, մանավանդ այն բանի ֆոնին, որ լանգոբարդների հետ թշնամությունը դեռևս ոչ-ոք չէր վերացրել, բերեց նրան, որ Հուստինիանոս I-ի ուղղակի դրդումով Աուդինը հերթական անգամ սկիզբ դրեց ռազմական գործողությունների:

Լանգոբարդների արքան այս անգամ լի էր անսասան վճռականությամբ և արդյունքում, 552 թվականի գարնան սկզբին Տորիսվինդին ու իր բանակին սեղմելով Սիրմիային, այս քաղաքի մոտակայքում տեղի ունեցած Ասֆելդի խոշոր և արյունահեղ ճակատամարտում էլ հենց վերջինս ջախջախիչ պարտության մատնեց հակառակորդին, ընդ որում երկու կողմերի կորուստներն իրար հետ դիտարկված կազմում էին 60.000 ռազմիկ: Ասֆելդի ճակատամարտը կործանիչ հարված հասցրեց Գեպիդական

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 24:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 24:
[3] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 25:

թագավորությանը, որի ռազմական հզորությունը կոտրվեց և այլևս երբեք չվերականգնեց: Նույն այդ ճակատամարտը, սակայն, ռազմական առումով ինքնին ծանր նաև լանգոբարդների համար, աշխարհաքաղաքական առումով վատ ծառայություն մատուցեց նաև Աուդինին, քանզի լանգոբարդները զրկվեցին իրենցից ավելի արևելք գտնվող և իրենցից թույլ միակ այն ուժից, որը նույն լանգոբարդներին պաշտպանում էր Մեծ տափաստանի արևմուտքում հաստատված հզոր ուժերից: Իրոք, գեպիդները ժամանակին սաստել էին հոներին ու այժմ, զիջելով լանգոբարդներին և, ըստ էության, էական սպառնալիք չհանդիսանալով վերջիններիս համար, մեծապես կարգավորում էին գերմանական աշխարհի հարաբերությունները բուլղարների ու սլավոնների հետ: Կրած ծանր պարտությունից հետո, սակայն, երբ Գեպիդական թագավորության մեջքը կոտրվեց, մինչ այդ գեպիդների առջև ծառացած խնդիրները լիուլի ընկան արդեն լանգոբարդների ուսերին: Այսպես թե այնպես, սակայն Ասֆելդի ճակատամարտից հետո գեպիդների ռազմաքաղաքական ակտիվությանը վերջ դրվեց, ընդ որում, չցանկանալով Լանգոբարդական թագավորության չափից դուրս ուժեղացումը, Հուստինիանոս I-ն այնուհանդերձ պնդեց այն բանի շուրջ, որ Գեպիդական թագավորությունը չվերացվի, այլ շարունակի իր գոյությունը՝ որպես կայսրության կրտսեր դաշնակից:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ զարգացող իրադարձություններից դժգոհ մնաց նաև Հիլդիգիսը, որը, Աուդինի հետ Հուստինիանոս I-ի հարաբերությունների կարգավորման ֆոնին արդեն վերջնականապես զրկվում էր լանգոբարդական գահի նկատմամբ ամեն մի հույսից: Արդյունքում, ցանկանալով ապաստանել գեպիդների մոտ, Գոարի հետ միասին Կոստանդնուպոլսից փախուստի դիմած Հիլդիգիսն ու նրա շքախումբը սկսեցին շարժվել դեպի հյուսիս և այս շարժը մի որևէ էական նշանակություն չէր ունենա, եթե դա չբերեր կայսրության լավագույն զորավարների, ըստ էության, պատահական կորստին: Իրոք, ցանկանալով հետ վերադարձնել Հիլդիգիսին, Հուստինիանոս I-ը ոտքի հանեց Հրահատ Կամսարականին, Ռեցիթանգոսին, Լեոնիանին, Արիումթոսին և նրանց թիկնապահներին, որոնք, սակայն, հետապնդման ընթացքում առանձնանալով հիմնական բանակից ու տեղավորվելով հանգստի, անակնկալ հարձակման ենթարկվեցին փախստականների կողմից և ողջ կազմով զոհվեցին[1]: Հիլդիգիսի գործը, սակայն, այսպես թե այնպես հույսեր չէր ներշնչում և արդյունքում, հասնելով Տորիսվինդի մոտ, վերջինս ինքն էլ զոհ գնաց դավադրությանը, երբ, փոխադարձ համաձայնությամբ, Աուդինն ինքն էլ սպանեց իր մոտ գտնվող Ուստրիգոտին: 552 թվականի գարնանը սպառվում էին իրադարձությունները նաև Արևելքում:

Իրոք, հենց այս ժամանակ Միհրան Միհրանյանի գլխավորությամբ Սվանեթիան և Աբխազիան ասպատակած Պարսից ու Սաբիրական թագավորությունների միացյալ բանակը (մոտ 80.000, այդ թվում սաբիրներ, դելմիկներ, ինչպես նաև մոտ 20 փիղ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) հերթական անգամ պաշարեցին Արքեոպոլիսը, սակայն այս անգամ ևս չկարողացան գրավել այն Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 300), որից հետո, ենթարկվելով մանր հարձակումների, նահանջեցին Քութայիսիից և Մոխերեսից (Լազիկա), մանավանդ, որ դրա համար շուտով հայտնվեց հարմար մի առիթ[2]: Բանը կայանում էր նրանում, որ դեռևս 551 թվականին սկզբին լրացել էր Բյուզանդական կայսրության և Պարսից թագավորության միջև կնքված հնգամյա այն զինադադարի ժամկետը, որը ստորագրվել էր 545 թվականին և այս պայմաններում, հետագա իրավիճակը հստակեցնելու նպատակով, Խոսրով I-ի ուղարկած դեսպանախումբը ժամանել էր Կոստանդնուպոլիս: Արյաց արքայի պատվիրակների հետ բանակցություններ այս անգամ զգալի ժամանակ խլեցին, սակայն արդյունքը մեծ հաշվով գոհացրեց երկու կողմերին էլ, քանզի արդեն 552 թվականի գարնանը, այն բանից հետո,

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 27:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 17:

երբ Հուստինիանոս Ի-ը վճարեց 2.600 կգ ոսկի, հինգ տարով կնքվեց հերթական զինադադար, որը, սակայն, կրկին անգամ չէր վերաբերում Լազիկային:

Արդյունքում՝ թեև Հուստինիանոս Ի-ը զգալի քանակի ոսկի վճարեց, բայց գոնե հինգ տարով ի վիճակի եղավ կանխել մեծամասշտաբ մարտական գործողությունների վերսկսումն Արևելքում, ընդ որում Լազիկայում մղվող մարտական գործողությունների ծավալը ևս, ինքնին փոքր ու ոչ գլխավոր արևելյան ճակատի համար, պետք է, որ անկում ապրեր: Գոհ կարող էր լինել, սակայն, նաև արյաց արքան, քանզի վերջինս մի կողմից ստանում էր խոշոր քանակի ոսկի, իսկ մյուս կողմից էլ շատ բարեպատեհ առիթով, ըստ էության, ազատվում էր իրեն արդեն որևէ հեռանկար չխոստացող պատերազմական գործողությունների շարունակման հոգսից: Արյաց արքային կարող էր գոհացնել նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն Հուստինիանոս Ի-ի ավելի լավատեղյակ Մեծ տափաստանում տիրող իրավիճակին, Խոսրով Ի-ն և նրա ռազմաքաղաքական տեսաբաններն արդեն այս ժամանակ զգում էին այն մեծ լարումը, որը կուտակվում էր այստեղ ու որը ստիպելու է հետագայում մինչ այդ իր տերության արևելյան սահմաններին իրեն մեծապես ազատ զգացող արյաց արքային սեփական հարվածային հիմնական ուժերը տեղափոխել Արևելք: Այսպես թե այնպես, սակայն 552 թվականի գարունը Հուստինիանոս Ի-ի համար բացվեց նոր հույսերով:

Իրոք, Արևելքում հաստատվել էր գոնե մի քանի տարի տևել խոստացող քիչ թե շատ կայուն խաղաղություն, վաղուց հանգիստ էր Աֆրիկան, հանգստացել էր նաև դանուբյան սահմանը և արդեն կարծես բոլոր հնարավորությունները կային վճռական հարված հասցնելու Տոտիլլային, որն իր հերթին, չնայած տեղական հաջողություններին, վերջին տարիներին աստիճանաբար թուլացել էր: Արդյունքում՝ Կոստանդնուպոլսում սկսեցին տենդագին պատրաստություններ տեսնել օսթգոթերի դեմ մղվող պայքարն ի վերջո ավարտին հասցնելու ուղղությամբ, երբ մինչ այդ Սոլունում կուտակված և աստիճանաբար համալրվող կայսրության ռազմական բռունցքն ի վերջո պետք է գործի անցներ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ներսես Կամսարականի գլխավոր հրամանատարությամբ Սոլունում կուտակված հարվածային բանակն իրենից լուրջ ուժ էր ներկայացնում և սա գուցե ամենալավ բանակն էր, որ երբևէ մարտադաշտ էր հանվել Հուստինիանոս Ի-ի երկար կառավարման շրջանում:

Իրոք, Ներսես Կամսարականի բանակը կազմված էր 30.000 ռազմիկներից, որոնց կորիզը կազմում էին վերջին տարիներին գրեթե անընդհատ մղվող պատերազմների մարտական բովով անցած կայսրության լավագույն ռազմիկները՝ մարտական զգալի փորձ ունեցող լավագույն զորավարների հետ միասին: Բացի սրանցից, կայսրության բանակում էին նաև Աուդինի կողմից, ի կատարումն դաշնակցային պարտավորության, ուղարկված 5.500 լանգոբարդներ, ընդ որում գեպիդների նկատմամբ հենց նոր հաղթարշավն ավարտած այս ռազմիկները և բարձր մարտական որակների տեր էին, և համակված էին մեծ ոգևորությամբ: Առկա էին նաև 3.000 էրուլներ, որոնք ևս մարտական մեծ որակ էին ներկայացնում: Հենց վերջերս ծանր կորուստներ կրած գեպիդները ներկայացված էին ի դեմս 400 թրծված ռազմիկների, սակայն գերմանական աշխարհի այս ներկայացուցիչներից զատ առկա էին նաև սլավոններ, սրանց ազգակից անտեր, բուլղարներ և նույնիսկ Արևելքում գերված ու կայսրության բանակում ծառայության անցած պարսիկներ՝ իրենց վտարանդի արքայազն Կավատի գլխավորությամբ: Իր հերթին Ներսես Կամսարականը, և որպես իր ժամանակի լավագույն ռազմիկների, և որպես ազգակիցների, լավագույն հույսերը կապում էր նաև կայսրության բանակում գտնվող Հայ ռազմիկների հետ, որոնց թիվը չի կոնկրետացվում, բայց որոնք կարող էին կազմել մոտ 8.000 հոգի: Ներսեսից զատ հայերից այս բանակում մարտարշավի սկզբում հայտնի էին նաև Խանարանգես Հայի, Դամիան Հայի և Ընձյուղ Հայի անունները, սակայն հետագայում Կամսարական իշխանին միացան նաև այլք ու ամենից առաջ Արշակունիների զորականները՝ Արտավանի գլխավորությամբ:

Տոտիլլան կայսրության հարվածին սպասում էր ծովից և դրա համար էլ ուժերը

կենտրոնացրել էր Ապենինյան թերակղզու կենտրոնական հատվածում, սակայն, հաշվի առնելով իրավիճակը, Ներսես Կամսարականն ու մյուս զորավարները որոշեցին հակառակորդի վրա գնալ ցամաքով՝ անցնելով Ռավեննայով և Ապենինյան թերակղզի մտնելով հյուսիսից: Այս ուղին իր դժվարություններն ուներ, որոնցից մեկն էլ այն էր, որ այդ հատվածում հակառակորդը շատ ամրացված կետեր ուներ և բոլոր ուղիները պահում էր հսկողության տակ: Այս խնդրին այն լուծումը տրվեց, որ բանակը սկսեց առաջանալ ծովափով, ընդ որում սրա առավելությունը նաև այն էր, որ բանակին հետևող նավատորմը մշտապես պարենամթերքով և այլ անհրաժեշտ իրերով կապահովեր վերջինիս: Մյուս դժվարությունը, որն ավելի շատ արդեն քաղաքական բնույթ ուներ, կապված էր ֆրանկների հետ:

Այս ժամանակ Ֆրանկական թագավորության գահին, հաջորդելով Թեոդեբերտ Ի-ին, բազմել էր վերջինիս որդի Թեոդեբալդը (548-555), որը մի հիվանդոտ, կասկածամիտ և իր հպատակների կողմից չսիրված անձնավորություն էր՝ զուրկ ռազմաքաղաքական որևէ խորաթափանցությունից: Թեոդեբալդը, շարունակելով դեռևս հոր որդեգրած ավանդական քաղաքականությունը գոթերի և կայսրության նկատմամբ, փորձում էր վերկոնֆլիկտային մի երրորդ դեր խաղալ՝ հնարավորինս շատ օգուտներ ապահովելով ֆրանկների համար: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ տաղանդավոր Տոտիլլայի առկայությունը Թեոդեբալդին ոչ մի կերպ չէր բավարարում, դե իսկ կայսրության իշխանությունն էլ Ապենինյան թերակղզում, ինչպես հաշվարկում էին ֆրանկների մոտ, պետք է որ մշտապես թույլ լիներ: Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ ֆրանկները մի կողմից այն բանի ազդեցության տակ, որ Ներսեսի բանակում էին իրենց երդվյալ հակառակորդ լանգոբարդները, հրաժարվեցին վերջինիս ճանապարհ տալ սեփական տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Իտալիայի մարզերով, բայց մյուս կողմից էլ նույն այդ ֆրանկները ոչ մի կերպ չխանգարեցին Ներսեսի բանակի երթին և չաջակցեցին Տոտիլլային:

Դուրս գալով Սոլունից 552 թվականի գարնանը՝ կայսերական գանձապահ, գլխավոր հրամանատար Ներսես Կամսարականի, Հովհաննես Թրակիացու, Հովհաննես Ֆագասի, Դագիսթայոսի, Ռավեննայում բանակին միացած Վալերիանոսի և Հուստինոս Իլիրիացու, էրուլների հրամանատարներ Ֆիլեմութի ու Արութոսի, գեպիդների հրամանատար Ասբադի և պարսիկների հրամանատար Կավատի գլխավորությամբ Ռավեննայով առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (30.000, այդ թվում 5.500 լանգոբարդներ, 3.000 էրուլներ, 400 գեպիդներ, ինչպես նաև սլավոններ, անտեր, բուլղարներ և պարսիկներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000, այդ թվում Խանարանգես Հայը, Դամիան Հայը և Ընձյուղ Հայը) մարտական գործողություններ սկսեցին Տոտիլլայի դեմ, ընդ որում օսթգոթերի արքան, գալով ռազմավարական անակնկալի, առժամանակ չկարողացավ արգելել հակառակորդի առաջխաղացումն իր տարածքներում: Արդյունքում, մի կողմ թողնելով ամրացված Վերոնան, Ներսեսն իր բանակը տարավ ուղիղ Ռիմնիի վրա, ընդ որում այս բանակի առաջապահի ռազմիկներից մեկը քաղաքի կամրջի մոտ տեղազննում իրականացնելիս նետահարեց թշնամու հեծյալներից մեկին, որից հետո էլ արդեն էրուլների ջոկատի ուժերով պարտության մատնվեց Ուսդրիլայի գլխավորությամբ քաղաքից արտագրոհ իրականացնել փորձող Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 1.000), երբ այլոց թվում զոհվեց նաև Ուսդրիլան: Կամուրջ գցելով գետի վրա և չցանկանալով ժամանակ վատնել քաղաքի ու այլ ամրությունների պաշարման համար՝ Ներսես Կամսարականի բանակը շարունակեց արշավանքը դեպի հարավ[1]: 552 թվականի ամռանը կայսերական բանակն արդեն կենտրոնական Իտալիայում էր, որտեղ էլ ի վերջո վերջինիս ճանապարհը փակեց ուժերն ի մի բերած Տոտիլլան:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 7, գլուխ 21, 22, 26, 28; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18:

552 հունիսի վերջ – ***Տագինեի ճ-մ*** (= ***Բուստա-Գալլորումի ճ-մ***) (Կենտրոնական Իտալիա, Պերուջայից մոտ 50 կմ հյուսիս-արևելք)[1]

Կայսերական գանձապահ, գլխավոր հրամանատար Ներսես Կամսարականի, Հովհաննես Թրակիացու, Հովհաննես Ֆագասի, Դագիսթայոսի, Վալերիանոսի, Հուստինոս Իլիրիացու, էրուլների հրամանատարներ Ֆիլեմութի և Արութոսի, գեպիդների հրամանատար Ասբադի ու պարսիկների հրամանատար Կավատի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (30.000, այդ թվում 5.500 լանգոբարդներ, 400 գեպիդներ, ինչպես նաև մոտ 2.950 էրուլներ, սլավոններ, անտեր, բուլղարներ և պարսիկներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000, այդ թվում Խանարանգես Հայը, Դամիան Հայը և Ընձյուղ Հայը) ***Ռիմինիի մոտակայքից*** շարժվեցի ***Պերուջայի*** ուղղությամբ: Իմանալով այդ մասին՝ Տոտիլլա արքայի գլխավորությամբ Հռոմից առաջխաղացող Օսթգոթական թագավորության բանակը (20.000) շարժվեց նրանց դեմ: Տոտիլլան, փորձելով անակնկալի բերել հակառակորդին, իրեն ներկայացած Ներսեսի դեսպաններին հայտարարեց, թե մարտ կտա միայն ութ օր անց, սակայն հենց նույն օրն էլ առաջխաղացում իրականացրեց և ընդհուպ մոտեցավ վերջինիս ճամբարին:

Նույն գիշեր էլ Ներսեսը մի ուժեղ ջոկատ (500) տեղավորեց տեղանքի վրա գերիշխող, իր մարտակարգի ձախ թևում գտնվող բարձունքում: Հաջորդ օրը առավոտյան կողմերը մարտակարգ ընդունեցին: Ներսեսը իր բանակի թևերում տեղավորեց 4.000-ական թեթև հեծյալներ, որոնք հրաման ստացան գործել որպես հետևակ նետաձիգներ, իսկ կենտրոնում տեղաբաշխեց ծանր հետևակը, որը հիմնականում կազմված էր լանգոբարդներից, էրուլներից, գեպիդներից, սլավոններից և անտերից: Ձախ թևում, որպես ընդհանուր պահեստազոր, բարձունքից դեպի ավելի ձախ, տեղակայվեց առանձին հեծելազորային ջոկատ (1.500), որը խնդիր ստացավ կասեցնել հակառակորդի թևանցումը և առիթի դեպքում անցնել հակահարձակման: Ձախ թևի և ողջ բանակի ղեկավարումը իր վրա վերցրեց Ներսեսը, որպես օգնական ունենալով Հովհաննես Թրակիացուն, իսկ աջ թևի հրամանատարներ նշանակվեցին Վալերիանոսը, Հովհաննես Ֆագասը ու Դագիսթայոսը: Օսթգոթական թագավորության բանակի առաջին շարքում տեղավորվեց հեծելազորը, երկրորդում՝ հետևակը:

I փուլ – Վաղ առավոտյան, տեսնելով, որ թշնամին զբաղեցրել է տեղանքի վրա գերիշխող բարձունքը, Տոտիլլան հարձակման նետեց իր հեծելազորային ջոկատներից մեկը, սակայն համառ մարտի արդյունքում այն հետ մղվեց ելման դիրքեր: Արդյունք չտվեց նաև թշնամու ձեռնարկած նոր հարձակումը: Ցանկանալով, ինչ գնով էլ լինի, գրավել այդ բարձունքը՝ հարձակման անցան Օսթգոթական թագավորության բանակի այլ հեծյալ ջոկատներ, սակայն դրանք, մի քանի ժամ տևած համառ մարտից հետո այդպես էլ որևէ արդյունքի չհասնելով, ստիպված եղան վերադառնալ ելման դիրքերում և կեսօրին մարտը հանդարտվեց: Այդ ընթացքում երկու բանակների մարտակարգերի միջատարածքում մենամարտեցին Ներսեսի թիկնապահ Ընձյուղը և նախկին կայսերական ռազմիկ, դասալիք Կոկասը, ինչի արդյունքում Ընձյուղին հաջողվեց հաղթանակ տանել ու սպանել իր հակառակորդին: 12:00-ի մոտակայքում, ցանկանալով ժամանակ շահել և սպասելով ուր որ է մարտադաշտին մոտեցող Տեյայի հեծյալ ջոկատին (2.000), ասպարեզ եկավ Տոտիլլան և սկսեց զինախաղ ցուցադրել՝ սեփական դիրքերը վերադառնալով միայն այն բանից հետո, երբ տեղեկացավ հեծելազորային ջոկատի ժամանման մասին: Այդ ընթացքում Ներսեսը աննկատ տեղաշարժեց իր

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 29-33; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 2, գլուխ 1; Հովհան Սարկավագ «Վենետիկյան ժամանակագրություն» գիրք 1, գլուխ 2; Ջիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

բանակի թևերը՝ որոնք, շրջվելով դեմքով դեպի սեփական կենտրոնը, իրենց դեմ հարձակվել պատրաստվող հակառակորդի հիմնական ուժերի համեմատ հայտնվեցին կողային դիրքերում:

II փուլ – 16:00-ի մոտակայքում Օսթգոթական թագավորության ծանր հեծելազորը վճռական հարձակման անցավ թշնամու կենտրոնի ուղղությամբ, սակայն կայսերական բանակը, ձեռնամարտում կանգնեցնելով հակառակորդի առաջխաղացումը, թևերից աղեղների հզոր հարվածի տակ առավ առաջխաղացող հակառակորդին: Մի քանի ժամ տևած մարտի արդյունքում թշնամու ծանր հեծելազորը ոչ միայն ի վերջո հետ շպրտվեց ելման դիրքեր, այլև, պատսպարվելով սեփական հետևակի շարքերում, որոշակի կորուստներ պատճառեց վերջինիս ու լիովին խառնեց սեփական բանակի մարտակարգը:

III փուլ – 20:00-ի մոտակայքում կայսերական բանակի նետաձիգները առաջ շարժվեցին և հուժկու հարվածի տակ առան հակառակորդի արդեն ողջ մարտակարգը՝ կորուստներ պատճառելով ու վերջնական փախուստի մատնելով թշնամու ռազմիկներին:

IV փուլ – Կայսերական բանակը ողջ կազմով անցավ վճռական հարձակման՝ հետապնդելով հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառելով վերջինիս: Այս ընթացքում ծանր վերք ստացավ նաև Տոտիլլան, որը դրանից կարճ ժամանակ անց մահացավ:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 600 զինվոր, թշնամին՝ 6.000 սպանված և մոտ 5.000 գերի, որոնք հիմնականում սպանվեցին: Շուտով առանց դիմադրության Ներսեսի տիրապետության տակ անցան ***Նարնին, Սպոլետոն և Պերուջան***:

Տագինեի ճակատամարտը վճռական դեր ունեցավ Օսթգոթական թագավորության դեմ պայքարում: Բացի այն, որ այստեղ ծանր կորուստներ կրեց Տոտիլլայի բանակի ծաղիկը, վճռական նշանակություն ունեցավ նաև օսթգոթական արքայի մահանալու հանգամանքը, ինչը կործանիչ հարված հասցրեց դիմադրական ողջ շարժմանը: Արդեն 552 թվականի հուլիսին կայսերական բանակը, որը մինչ այդ զրկվել էր լանգոբարդներից, քանզի լավ պարգևատրելուց հետո անկարգություններ սկսած այս ռազմիկներին Ներսեսը մինչ այդ իրենց տեղերն էր ուղարկել, միաժամանակ գրոհելով պարիսպների մի քանի հատվածներում, Օսթգոթական թագավորության բանակից (մոտ 1.000) հերթական, բայց արդեն վերջին անգամ գրավեց Հռոմը, որից հետո առանց մարտերի մտավ Պորտոս, Նեպա և Պետրա, ինչպես նաև իր տիրապետություն հաստատեց Սարդինիա, Կորսիկա և Բալեարյան կղզիների վրա[1]: Տարածաշրջանն, ըստ էության, հնազանդվում էր, թեև դիմադրության որոշ օջախներ այնուհանդերձ կային: Դրանցից մեկն էր Տերենտն, սակայն նույն հուլիս ամսին Բակուր Բագրատունու գլխավորությամբ Օթրանտից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) հաղթեցին Ռագնարիսի գլխավորած Օսթգոթական թագավորության բանակին (մոտ 500) ու մտան քաղաք[2]:

Տոտիլլայի զոհվելուց հետո, ցանկանալով գոնե մի որևէ կերպ դեմն առնել վերջական կործանման, օսթգոթերը իրենց արքա ընտրեցին Վերոնայի կայազորի հրամանատար Տեյային (552), որը մի վերջին անգամ փորձեց դիմադրություն կազմակերպել կայսրությանը: Իր հերթին, մինչ օսթգոթերը զբաղված էին նոր առաջնորդի ընտրությամբ, կայսերական բանակը մոտեցավ Կումային, որտեղ իր ժամանակին Տոտիլլան կենտրոնացրել էր հսկայական քանակի պաշարներ և հավաքել էր պետության գանձարանը: Քաղաքի պաշտպանությունը գլխավորում էր Տոտիլլայի եղբայր Ալիգերնը, որը համառ դիմադրություն կազմակերպեց և այս քաղաքի պաշարումը

[1] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 33, 34:
[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 34:

ձգձգվեց մինչև 553 թվականի վերջը, ընդ որում ապարդյուն ավարտված գրոհներից հետո հաջողություն չբերեց նույնիսկ պարսպահատվածներից մեկի տակ փորելու միջոցով այն փլուզելը[1]: Այսպես թե այնպես, սակայն, մինչ Ալիգերնը դիմադրում էր Կումայում, Տեյան մի վերջին անգամ ի մի բերեց ուժերը և փորձ կատարեց շարժվել դեպի Ապենինյան թերակղզու հարավ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

552 սեպտեմբեր - հոկտեմբեր – ***<u>Վեզուվի լեռան ճ-մ</u>*** (Իտալիա, Կապուայից հարավ-արևելք)[2]

Տեյայի գլխավորությամբ ***<u>Տիչինայից</u>*** առաջխաղացած Օսթգոթական թագավորության բանակը (մոտ 10.000), շրջանցելով Հյուսիսային Իտալիայում գտնվող ամրությունները, ներխուժեց Կամպանիա և սկսեց մոտենալ Կապուային: Տեղեկանալով այդ մասին՝ կայսերական գանձապահ, գլխավոր հրամանատար Ներսես Կամսարականի, Հովհաննես Թրակիացու, Հովհաննես Ֆագասի, Դագիսթայոսի, Վալերիանոսի, Հուստինոս Իլիրիացու, էրուլների հրամանատարներ Ֆիլեմութի և Արութոսի, գեպիդների հրամանատար Ասբադի ու պարսիկների հրամանատար Կավատի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000, այդ թվում էրուլներ, գեպիդներ, սլավոններ, անտեր, բուլղարներ և պարսիկներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000), կենտրոնացնելով ուժերը, շարժվեցին թշնամու ուղղությամբ: Հանդիպելով իրար լեռան ստորոտում՝ կողմերը առանց կամուրջի անանցանելի Դրակոն գետի տարբեր ափերին ճամբար դրեցին:

I փուլ – Սեպտեմբերից մինչև հոկտեմբեր տեղի ունեցան աղեղնամարտեր, մենամարտեր և մանր ընդհարումներ՝ պաշտպանական աշտարակների երկկողմանի կիրառմամբ:

II փուլ – Հոկտեմբերի սկզբին Ներսեսին հաջողվեց, օգտագործելով հրամանատարի դավաճանությունը, իր տիրապետությունը հաստատել հակառակորդի նավատորմի նկատմամբ, որով էլ հենց հիմնականում իրականացվում էր պարենամթերքի մատակարարումը Տեյայի բանակին: Այս պայմաններում, հաշվի առնելով պարենամթերքի աստիճանաբար սրվող պակասը և այն, որ ռազմաքաղաքական ընդհանուր իրավիճակը փոխվում է ոչ իր օգտին, Տեյան իր բանակով նահանջեց և դիրքեր գրավեց ավելի հեռու գտնվող Կաթնասարի լանջերին: Ի պատասխան դրա՝ կայսերական բանակը ևս առաջխաղացում իրականացրեց ու շրջափակեց թշնամուն, որի մոտ պարենամթերքի պակասն ավելի սուր տեսք ընդունեց:

III փուլ – Հոկտեմբերի վերջին, ցանկանալով բեկում մտցնել իրավիճակում՝ Օսթգոթական թագավորության բանակը Տեյայի անձնական գլխավորությամբ հետևակ վիճակում անցավ վճռական հարձակման: Բռնկվեց և ողջ օրը շարունակվեց համառ մարտ, որի ընթացքում Տեյան սպանվեց, իսկ նրա բանակը, կրելով ծանր կորուստներ, հետ մղվեց ելման դիրքեր:

IV փուլ – Հաջորդ օրը Օսթգոթական թագավորության բանակը, փորձելով դուրս գալ շրջափակումից, կրկին անցավ հարձակման, սակայն ողջ օրը տևած արյունահեղ և համառ մարտում կրելով ծանր կորուստներ, կրկին հետ մղվեց ելման դիրքեր: Ի վերջո, սկսվեցին բանակցություններ, որի արդյունքում Ներսեսը համաձայնեց թույլ տալ հակառակորդի բանակի մնացորդներին պատվավոր անձնատվության ենթարկվել և, զենքով ու գույքով լքելով մարտի դաշտը, հեռանալ

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 1, գլուխ 7-11, 20; Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 34, 35:

[2] Պրոկոպիոս Կեսարացի «Պատերազմների մասին», գիրք 8, գլուխ 34, 35; Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 1, գլուխ 1; Ջիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

Ապենինյան թերակղզուց:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 700, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր:

Տեյայի զոհվելուց և վերջին ճակատամարտում պարտվելուց հետո օսթգոթերը նոր արքա այլևս չընտրեցին: Արդյունքում՝ Օսթգոթական թագավորությունը ոչնչացավ, իսկ ողջ Հարավային և Կենտրոնական Իտալիան էլ ընկան Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Այսպիսով՝ հսկայական ջանքերի և մեծ զոհողությունների գնով Հուստինիանոս I-ը վերջնականապես հասավ նրան, որ Ապենինյան թերակղզու հիմնական մասը հայտնվեց Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, թեև տեղում վերջնականապես ամրանալու համար ծախսվեց ողջ հաջորդ տարին: Իրոք, արդեն 553 թվականի գարնանը և ամռանը Ներսես Կամսարականը առանց լուրջ մարտերի կայսրության իշխանության տակ վերցրեց Ֆլորենցիան, Սենտումցելլան (= Չիվիտա Վեկիա), Վոլատերան, Լունան (= Կարարա), Լուկան (Հյուսիսային Իտալիա) և Պիզան (Հյուսիսային Իտալիա)[1]՝ միաժամանակ ամրապնդելով իր ուժերը և համալրելով դրանք: Հենց այս ժամանակ էլ, սակայն, երբ վերջնական խաղաղությունը, կարծես թե, այդքան մոտ էր, ծագեց մի նոր հակամարտություն և խնդիրը հերթական անգամ վերաբերում էր Ֆրանկական թագավորությանը:

Իր ժամանակին Թեոդեբալդը չօգնեց և չխանգարեց ոչ օսթգոթերին, ոչ էլ կայսրությանը, սակայն այժմ, երբ Օսթգոթական թագավորությունն արդեն չկար, ֆրանկների արքան որոշեց, որ իսկը ժամանակն է ի վերջո տիրելու Ապենինյան թերակղզուն: Տեղական բնակչությունը, սակայն, և հատկապես ողջ մնացած օսթգոթերը խորապես վիրավորված էին ֆրանկներից՝ լիովին գիտակցելով այն երկակի դերը, որ վերջիններս ունեցան իրենց իշխանության անկման հարցում: Արդյունքում՝ նրանք ամենևին էլ ոգևորված չէին ֆրանկներին աջակցելու գաղափարից և այս առումով հատկանշական է հենց Կումայի կայազորի հրամանատար Ալիգերնի վարքագիծը, որը, իր ժամանակին համառ դիմադրություն կազմակերպած լինելով կայսրությանը, այժմ ինքը բանակցություններ սկսեց Ներսեսի հետ, ինչի արդյունքում ինչպես ամրությունը, այնպես էլ ողջ գանձարանը հանձնեց վերջինիս՝ ստանալով կայսրության ազնվականի կարգավիճակ ու դուրս գալով ֆրանկների դեմ: Փաստորեն Ապենինյան թերակղզում իրար դեմ հանդիման մնացին արդեն միայն Ֆրանկական թագավորությունն ու Բյուզանդական կայսրությունը և հենց վերջիններիս էր արդեն վիճակված վճռական մարտում ի վերջո որոշել թերակղզու ճակատագիրը: Մինչ այս, սակայն, օսթգոթերի դեմ պայքարում ձեռք բերած վճռական հաջողությունը դրդեց անհուն կերպով Հռոմեական կայսրության հինավուրց սահմանները վերականգնել ձգտող Հուստինիանոս I-ին ևս մեկ քայլ անել, որն ավարտվեց խոշոր հաջողությամբ:

Իրոք, գործերը Վեսթգոթական թագավորությունում վերջին տարիներին անշեղորեն վատանում էին, ընդ որում բանն արդեն հասել էր նրան, որ վեսթգոթերի արքա Ագիլա I-ի (549-553) դեմ ոչ միայն առանձին երկրամասեր էին ապստամբություն բարձրացնում, այլև՝ այս արքան ինքն էր անհաջողություն կրում վերջիններիս դեմ պայքարում: Ի վերջո, բանը հասավ նրան, որ վեսթգոթերի արքայի դեմ ապստամբեց երկրի մեծատոհմիկներից մեկը հանդիսացող Աթանագիլդոսը, որին էլ անմիջապես իր աջակցությունը ցույց տվեց բանակի մեծ մասը: 552 թվականին կողմերը գտնվում էին փխրուն հավասարակշռության մեջ, սակայն արդեն 553 թվականին առավելությունը սկսեց անցնել Աթանագիլդոսի կողմը, որին, գումարած իր ուժերին, օգնության էին հասել նաև Հուստինիանոս I-ի կողմից ուղարկված Լիբերիոսի գլխավորած կայսերական նավատորմն ու բանակը: Արդյունքում՝ արդեն 553 թվականի գարնանը Ագիլա I-ը վերջնականապես պարտություն կրեց և սպանվեց, իսկ կայսերական աջակցությունը վայելող Աթանագիլդոսը (553-567) հռչակվեց արքա: Աթանագիլդոսի հաջողության մեջ իր զգալի բաժինն ուներ նաև Հուստինիանոս I-ը, որին, որպես պարգև, անցավ Պիրենյան

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 1, գլուխ 11-13, 15-18:

թերակղզու հարավային զգալի հատվածը, այդ թվում Կորդովան, Մալագան և Կարտաքենան (Իսպանիայի հարավ-արևելյան ծովափին), ընդ որում Վեսթգոթական թագավորությունն ինքն էլ գործնականում ստացավ Բյուզանդական կայսրության կրտսեր դաշնակցի կարգավիճակ[1]: Արդյունքում՝ Արևմուտքում Հռոմեական կայսրության հինավուրց սահմանները, բացառությամբ Գալլիայի և Բրիտանիա կղզու հարավային մասի, գործնականում վերականգնվեցին, սակայն դեռևս մնում էր Ապենինյան թերակղզու հարցը, ինչի նկատմամբ գերիշխանությունը շարունակում էին վիճարկել, ինչպես արդեն ասվեց, ֆրանկները:

Եվ այսպես, Ապենինյան թերակղզում վճռական պայքարի մեջ մտան մի կողմից Ֆրանկական թագավորությունը, իսկ մյուս կողմից էլ Բյուզանդական կայսրությունը, ընդ որում վերջինիս համար դեռ լավ էր, որ այդ ժամանակ դեռևս գործում էին խաղաղության այն պայմանները, որոնք քիչ առաջ կնքվել էին Պարսից թագավորության հետ: Իր հերթին հենց այս ժամանակ մինչ այդ տարածաշրջանում, կարծես թե, լիարժեք գերիշխող Խոսրով I-ի համար նոր խնդիրներ առաջացան, քանզի 553 թվականի նույն գարնանը, երբ Հուստինիանոս I-ն ի վերջո ամրացավ Ապենինյան թերակղզում, Դերբենդի լեռնանցքից ներխուժած Սաբիրական թագավորության բանակը (մոտ 80.000) ասպատակեց Փայտակարանը, Ուտիքը և Աղվանքը, ինչի արդյունքում Արցախ-Ուտիքի թագավորությունը ու Աղվանքի տարածքն ընկան Սաբիրական թագավորության գերիշխանության տակ: Սաբիրների առաջխաղացումը որոշակիորեն անակնկալի էր բերել պաշտոնական Տիզբոնին և Խոսրով I-ը, չցանկանալով անմիջական մարտական գործողություններ սկսել հակառակորդի դեմ, անցավ բանակցությունների: Արդյունքում՝ ի վերջո զգալի քանակի ոսկի վճարելով սաբիրներին, արյաց արքան հասավ նրան, որ տափաստանային այս եկվորները առժամանակ սկսեցին դաշնակցել իրեն[2]:

553 թվականի ամռանը Թեոդեբալդը մի ուժեղ բանակ ուղարկեց Ապենինյան թերակղզու հյուսիս, ընդ որում այս բանակի կազմում զգալի քանակություն էին կազմում վերջերս նվաճված ալեմանները՝ իրենց առաջնորդներ Բուքելինի և Լևտարիսի գլխավորությամբ: Այդ ընթացքում կայսերական բանակը, դեռևս ցրած ուժերը, ամրանում էր Ապենինյան թերակղզում և արդյունքում նոր այս հակառակորդի հետ առաջինն ընդհարվելու բախտը վիճակվեց վերջերս մահացած Ֆիլեմութին փոխարինած Ֆուլկարիսին, որը մի խիզախ ու քաջ ռազմիկ էր, բայց միաժամանակ նաև՝ ռազմական գործից հեռու զորավար: Արդյունքում՝ Ֆրանկական թագավորության բանակը (մոտ 8.000, այդ թվում ալեմաններ), հարվածելով դարանից, Պարմայի ճ-մ-ում (Հյուսիսային Իտալիա) փախուստի մատնեց Ֆուլկարիսի գլխավորությամբ առանց մարտակարգը պահպանելու առաջացող Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000, այդ թվում էրուլներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 300), ընդ որում Ֆուլկարիսն իր թիկնապահների հետ շրջապատվեց և, նույնիսկ մենակ մնալուց հետո էլ կռվելով մինչև վերջ, քաջաբար զոհվեց: Ստեղծված իրավիճակում Հովհաննես Թրակիացու և Արտավան Արշակունու գլխավորած հիմնական բանակը, հավաքելով նաև փրկված յուրայիններին, հետ քաշվեց Ֆավիենտիա[3]: Պարմայի տակ գործի էր անցել, սակայն Ֆրանկական թագավորության բանակի, ըստ էության, միայն առաջապահը, քանի որ հիմնական ուժերի հավաքվելու համար դեռևս ժամանակ էր պետք: Արդյունքում, ամրանալով շրջակայքում, ֆրանկները սկսեցին իրենց ուժերը կենտրոնացնել, դե իսկ Ներսես Կամսարականն էլ, կանխատեսելով ապագայում սպասվելիք իրադարձությունները, սկսեց սեփական հակամիջոցները ձեռնարկել:

553 թվականի վերջին և 554 թվականի սկզբին ֆրանկները, ցանկանալով հարուստ ավարի տեր դառնալ, աստիճանաբար տեղ հասնող ուժերի կազմով սկսեցին ոտնատակ տալ Ապենինյան թերակղզու հյուսիսը: Հենց նման ջոկատներից մեկի հետ էլ վիճակվեց

[1] Իսիդոր Սեվիլիացի «Գոթերի, վանդալների և սվեվների պատմություն», գլուխ 47; Գրիգոր Տուրացի «Ֆրանկների պատմություն», գիրք 4, գլուխ 8; Հորդիանոս «Գոթերի ծագման և գործերի մասին»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[2] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի»,գիրք 2, գլուխ 4:
[3] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 1, գլուխ 14, 15:

ընդհարվել Ներսես Կամսարականին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

554 հունվար – ***Ռիմնիի ճ-մ***[1]

Ֆրանկական թագավորության բանակը (2.000, որից 1.100 հեծյալ) մոտեցավ քաղաքին և սկսեց ասպատակել նրա շրջակայքը:

I փուլ – Քաղաքում գտնվող Ներսես Կամսարականի շքախումբը (300 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200) շարժվեցին թշնամու դեմ, որը, հավաքելով ցրված ուժերը, մարտակարգ ընդունեց մոտակա անտառում:

II փուլ – Ներսեսի շքախումբը մոտեցավ հակառակորդին և փորձեց նետաձգությամբ խախտել վերջինիս մարտակարգը, բայց չհասավ որևէ հաջողության:

III փուլ – Ներսեսի շքախումբը հարձակվեց հակառակորդի մարտակարգի վրա և դիմեց կեղծ նահանջի: Հեռացնելով իրեն հետապնդող հակառակորդի հեծելազորը վերջինիս հետևակից՝ Ներսեսի շքախումբը դադարեցրեց նահանջը և, անցնելով հարձակման, փախուստի մատնեց ու ծանր կորուստներ պատճառեց հակառակորդին, որի հեծելազորը ի վերջո կարողացավ պոկվել մարտից և հեռանալ:

IV փուլ – Ներսեսի շքախումբը հարձակվեց թշնամու հետևակի վրա և փախուստի մատնեց նաև նրան:

Հայերը կորցրին մոտ 20, դաշնակիցը՝ մոտ 10, թշնամին՝ 900 զինվոր:

Ռիմնիի պարիսպների տակ կրած անհաջողությունը առժամանակ սառեցրեց ֆրանկների առաջնորդների եռանդը: Իրոք, վերջիններս, կարծես թե, նոր միայն գիտակցեցին, որ հարավում ամեն ինչ այնքան էլ հեշտ չի լինելու, ինչպես ենթադրվում էր:

Այսպես թե այնպես, սակայն 554 թվականի ամռանը Բուքելինի և Լևտարիսի գլխավորած Ֆրանկական թագավորության բանակը (70.000, այդ թվում ալեմաններ) ի վերջո մտավ շարժի մեջ ու սկսեց առաջանալ կայսերական բանակին ընդառաջ: Միաժամանակ, սակայն, ցանկանալով խուսափել պարենավորման հետ կապված դժվարություններից, ինչպես նաև առիթի դեպքում ունենալ մանևրի ազատություն, ֆրանկներն իրենց բանակը բաժանեցին երկու մասի, ընդ որում Լևտարիսի գլխավորած մասը (40.000, այդ թվում ալեմաններ) խնդիր ստացավ ամայացնել Ապենինյան թերակղզու հարավ-արևելքը, իսկ Բուքելինի գլխավորությամբ առաջացող բանակի մյուս մասը (30.000, այդ թվում ալեմաններ) պետք է նույն խնդիրը լուծեր թերակղզու հարավ-արևմուտքում: Հակառակորդի շարժին, սակայն, ուշադիր հետևում էր նաև Ներսես Կամսարականը, որը, գլխավոր ուժերը կենտրոնացնելու հետ միաժամանակ, Արտավան Արշակունու գլխավորությամբ Լևտարիսի դեմ ուժեղ մի ջոկատ ուղարկեց: Արդյունքում՝ Արտավան Արշակունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 3.000, այդ թվում բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), այն բանից հետո, երբ, ծանրաբեռնված ավարով, այս բանակը սկսեց հետ քաշվել, Ֆանիումի ճ-մ-ում անակնկալ հարձակումով հաղթեցին Լևտարիսի գլխավորությամբ ճամբարած Ֆրանկական թագավորության բանակի հետախուզական ջոկատին (3.000) ու հետապնդեցին մինչև նրա ճամբար, ինչի արդյունքում էլ, օգտվելով այն բանից, որ ճամբարում գտնվող զորքը մարտակարգ ընդունեց, այնտեղ գտնվող գերիները, իրենց հետ վերցնելով ավարի հիմնական մասը, դիմեցին փախուստի: Արտավան Արշակունին, սակայն, դադարեցնելով ռազմական գործողությունները, քանզի կոնկրետ դեպքում քանակական գործոնը կարող էր արդեն վճռական լինել, իր ձեռքի տակ եղած ուժերով հետագայում հետ քաշվեց և միացավ հիմնական բանակին: Լևտարիսի բանակի համար,

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 1, գլուխ 19, 21, 22:

սակայն, փորձությունները սրանով չավարտվեցին, քանզի, ձեռք բերված ավարի մնացած մասով փորձ անելով հետ քաշվել դեպի հյուսիս, վերջինս Ապենինյան թերակղզու հյուսիսում իր շարքերում բռնկված ժանտախտի համաճարակից գրեթե լիովին ոչնչացավ, ընդ որում մահացավ նաև Լևտարիսը[1]:

554 թվականի աշնանը վիճակված էր վճռական լինել Ապենինյան թերակղզու համար մղվող մարտերում: Իրոք, դեռևս անտեղյակ Լևտարիսին ու նրա բանակին բաժին հասած ճակատագրից, Ֆրանկական թագավորության մյուս բանակը շարունակեց խորանալ Ապենինյան թերակղզում և ի վերջո կայսերական բանակին հանդիպեց Կապուայի մոտակայքում:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

554 աշուն – ***Կասուլինի ճ-մ*** (= ***Տանետիումի ճ-մ***) (= ***Վոլտուրնի ճ-մ***) (= ***Կապուայի ճ-մ***) (Հարավային Իտալիա, Կապուայի մոտ)[2]

Կայսերական գանձապահ, գլխավոր հրամանատար Ներսես Կամսարականի, Հովհաննես Թրակիացու, Վալերիանոսի, Արտավան Արշակունու, Հովհաննես Ֆագասի, Դագիսթայոսի, Հուստինոս Իլիրիացու, էրուլների հրամանատարներ Սինդուլի, գեպիդների հրամանատար Ասբադի և պարսիկների հրամանատար Կավատի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (18.000, այդ թվում էրուլներ, գեպիդներ, սլավոններ, անտեր, բուլղարներ և պարսիկներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000, Բակուր Բագրատունին, Խանարանգես Հայը և Դամիան Հայը) մոտեցան Բուքելինի գլխավորած Ֆրանկական թագավորության բանակին (30.000, այդ թվում ալեմաններ), ընդ որում Բուքելինը, իր բանակով ճամբարելով գետի ափին և սեփական բանակատեղին շրջապատելով հողի մեջ թաղված սայլերով ու խանդակով, միակ կամրջի պաշտպանության համար կառուցել էր նաև մի բարձր փայտյա աշտարակ: Գտնվելով արդեն թշնամու անմիջական հարևանությամբ՝ Ներսեսի բանակը ճամբարեց:

I փուլ – Հաջորդ օրը, նկատելով, որ թշնամին շրջակա քաղաքներից սայլերի շարասյունով անարգել պարեն է ստանում, Ներսեսը Խանարանգեսին հանձնարարեց վերցնել Հայկական հեծելազորը և ոչնչացնել թշնամու շարասյունը: Արդյունքում՝ Հայկական հեծյալները ոչ միայն կատարեցին իրենց առջև դրված առաջադրանքը ու գրավեցին թշնամու սայլերի շարասյուն, այլև խոտով բարձած սայլերից մեկն էլ այրեցին և, գլորելով կամրջի մոտ կառուցված աշտարակի վրա, հրդեհեցին ու ոչնչացրին այն:

II փուլ – Ֆրանկական թագավորության բանակը դուրս եկավ բաց դաշտ և ընդունեց սուր ծայրը դեպի հակառակորդի մարտակարգի կենտրոնն ուղղված սեպաձև մարտակարգ: Մարտակարգ ընդունեց նաև կայսերական բանակը՝ հետևակը տեղավորելով կենտրոնում, իսկ հեծելազորը՝ թևերում: Աջ թևի և ողջ բանակի ղեկավարումը իր վրա վերցրեց Ներսեսը, իսկ ձախ թևի հրամանատարությունը հանձնվեց Արտավանին ու Վալերիանոսին: Միաժամանակ, թեև էրուլների հետևակը, վրդովված լինելով իրենց առաջնորդներից մեկի կրած արժանի պատժով, հրաժարվեց մասնակցել մարտին, սակայն Ներսեսը կենտրոնի մարտակարգում էրուլների համար հատուկ տեղ թողեց՝ պատվիրելով հայտնել նրանց, որ, լինելով իսկական տղամարդիկ, նրանք պետք է որ չհրաժարվեն մոտակա փառահեղ հաղթանակից: Ֆրանկական թագավորության բանակը անցավ հարձակման և, հեշտությամբ ճեղքելով էրուլների

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 2, գլուխ 1-3; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 2, գլուխ 2:

[2] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 2, գլուխ 4-10; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 2, գլուխ 2; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

բացակայության պատճառով ավելի թուլացած հակառակորդի մարտակարգի կենտրոնը ու երկու մասի բաժանելով այն, արդյունքում, սակայն, ըստ էության ինքը հայտնվեց շրջապատման մեջ՝ կորցնելով շարժման թափը և ստիպված լինելով սեպի թևային ուժերով մարտ սկսել հակառակորդի թևերի դեմ:

III փուլ – Կայսերական բանակի ծանր հեծելազորը և հետևակը ձեռնամարտում կանգնեցրին հակառակորդի առաջխաղացումը կենտրոնում, ինչպես նաև՝ ծավալումը թևերում, որից հետո հեծյալ նետաձիգները, սեփական, ինչպես նաև հակառակորդի շարքերի վրայով սկսեցին նետերի տարափ տեղալ սեփական մարտակարգի հակառակ թևի հետ կռվող հակառակորդի ռազմիկների անպաշտպան թիկունքներին՝ ծանր կորուստներ պատճառելով թշնամուն:

IV փուլ – Մարտի մեջ մտան էրուլները և հզոր հարված հասցրեցին հակառակորդն, որը, կորցնելով մարտակարգը, գլխովին ջախջախվեց:

V փուլ – Կայսերական բանակը ողջ կազմով անցավ վճռական հարձակման՝ հետապնդելով հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառելով վերջինիս: Այս ընթացքում ծանր վերք ստացավ նաև Բուքելինը, որը դրանից կարճ ժամանակ անց մահացավ:

Հայերը կորցրին մոտ 800, դաշնակիցները՝ մոտ 2.500, թշնամին՝ մոտ 28.000 զինվոր, որոնց թվում զոհվեց նաև Բուքելինը:

Վերջ, սա իրոք արդեն վերջն էր, քանզի Ֆրանկական թագավորության վերջին այս բանակի ջախջախումից հետո չէր մնացել արդեն և ոչ մի ուժ, որն ի վիճակի էր լինելու վիճարկել Բյուզանդական կայսրության գերիշխանությունը Ապենինյան թերակղզու նկատմամբ: Արդյունքում՝ կայսերական բանակը իր ժամանակին դեռևս Տերենտի պարիսպների տակ անհաջողություն կրած Ռագնարիսի գլխավորած վերջին ուժերից (7.000) պաշարեց Կալեպսա ամրոցը (Հյուսիսային Իտալիա): Հիշատակված ամրոցը համառ դիմադրեց, սակայն համառ արտագրոհներից և այն բանից հետո, երբ արդեն 555 թվականի գարնանը բանակցությունից վերադարձող ու Ներսեսին անակնկալ կերպով նետահարել փորձող Ռագնարիսը ինքը նետահարվեց հայազգի զորավարի թիկնապահների կողմից և մահացավ, թշնամու կայազորը, ստանալով բավարար երաշխիքներ, ի վերջո հանձնվեց: Սրանով էլ հենց Գոթական պատերազմն ավարտվեց և փաստացի, և իրավաբանորեն, ինչի արդյունքում ողջ Ապենինյան թերակղզին վերջնականապես ընկավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, իսկ Ներսես Կամսարականն էլ նշանակվեց Իտալիայի դուքս[1]: Վերջ, իր իշխանության գրեթե երեսուներորդ տարում Հուստինիանոս Ի-ը հասավ նրան, ինչին ձգտել էր ողջ կյանքի ընթացքում՝ Հռոմեական կայսրության սահմանները գրեթե վերականգնված էին: Այժմ, երբ Արևմուտքը վերջնականապես խաղաղվել և հնազանդվել էր, Հուստինիանոս Ի-ը, թվում էր, թե արդեն ի վիճակի էր լուծել նաև Լազիկայի խնդիրը՝ ի վերջո վայելելով իր հաջողության պտուղները: Արևելքում, սակայն, իրավիճակը դեռևս պարզաբանումների կարիք ուներ:

Իրոք, 555 թվականի ամռանը, երբ Աղվանքի խնդիրն, ըստ էության, արդեն լուծվել էր, Խոսրով Ի-ը կրկին գործի մեջ դրեց իր ռազմական մեքենան և հարված հասցրեց Լազիկային, որի կապակցությամբ մինչ այդ կնքված խաղաղությունը, ինչպես նշվեց, չէր գործում: Արդյունքում՝ 555 թվականի ամռանը Միհրան Միհրանյանի գլխավորությամբ անակնկալ առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 80.000, այդ թվում սաբիրներ, դելմիկներ, ինչպես նաև մոտ 20 փիղ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) ասպատակեցին Արևմտյան Վրաստանը՝ մանր մարտերում կորուստներ պատճառելով Մարտինոսի ու Թեոդորոսի գլխավորությամբ հապճեպ հետ քաշվող Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 10.000, այդ թվում գոթեր, գեպիդներ,

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 2, գլուխ 11-14:

էրուլներ, ինչպես նաև 500 ճաներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 300)[1]: Հետաքրքիր է, որ 555 թվականի անակնկալը ապահովվեց մեծապես այն բանի շնորհիվ, որ Միհրանը, լուրեր տարածելով իր ծանր հիվանդության, իսկ հետո արդեն՝ մահվան, մասին, ըստ էության, կարողացավ հասնել նրան, որ կայսերական զորավարները տրվեցին անհոգության՝ վստահ լինելով, որ առանց զորավարի մնացած արյաց բանակը հարձակողական գործողություններ չի իրականացնի:

555 թվականի վերջին, սակայն, Միհրան Միհրանյանն իրոք մահացավ, որից հետո Լազիկայի ուղղությամբ գործող Պարսից թագավորության բանակի հրամանատար նշանակվեց Նախորագանը: Միաժամանակ, փոփոխություն կրեց նաև կայսերական բանակի հրամանատարական կազմը, քանզի վերջնականապես իրեն վարկաբեկած և արդյունքում շնորհազրկված ու գույքի բռնագրավումից հետո աքսորված Բեսսասին, որպես Հայաստանի հրամանատար, փոխարինեց Մարտինոսը, որի օգնականներն էին Բուզեսը և Հուստինիանոսը: Հարկ է նշել, սակայն, որ վերջին անհաջողությունները մեկ այլ հետևանք ևս ունեցան:

Իրոք, Լազական թագավորության արքա Գուբազ II-ը, ամենաշատը շահագրգռված կայսերական զենքի հաջողություններով, այս ժամանակ հերթական անգամ դիմեց Հուստինիանոս I-ին՝ կայսեր զորավարներին մեղադրելով պատերազմը վատ վարելու մեջ: Վերջիններս իրենց հերթին ու ամենից առաջ Մարտինոսը, աչքի առաջ ունենալով Բեսսասին բաժին հասած ճակատագիրը, որոշեցին սպանել լազերի արքային, ընդ որում, որպեսզի այդ սպանությունը գոնե մի որևէ բանով արդարացվի, նրանք գաղտնի Կոստանդնուպոլիս ուղարկեցին Հովհաննես Գալաթացուն և նրա միջոցով առանց այդ էլ կասկածներով լցված կայսեր կարողացան համոզել, որ Գուբազ II-ն ինքն է անցել պարսիկների կողմը, իսկ վերջին անհաջողության մեղավորն էլ հենց նա է: Արդյունքում՝ Հովհաննես Գալաթացին հետ վերադարձավ՝ հետն ունենալով լազերի արքային ձերբակալելու հրամանը, ընդ որում հատուկ նշվում էր նաև, որ դիմադրության պարագայում թույլատրվում է նաև ուժ կիրառել:

Դավադիրներին հենց սա էլ պետք էր և ահա 555 թվականի հոկտեմբերին կայսերական զորավարները Գուբազ II-ին հրավիրեցին իբր խորհրդակցության, սակայն այդ ընթացքում, հմուտ կերպով սադրելով լազերի արքային, եղբայրներ Հովհաննես և Ռուստիկ Գալաթացիները, Մարտինոսի, Բուզեսի ու Հուստինիանոսի լուռ համաձայնությամբ ուղղակի սպանեցին վերջինիս: Սեփական արքայի սպանությունը, սակայն, լազերի համար կարծես ազդանշան հանդիսացավ ու արդյունքում նրանք, ինչպես և սպասելի էր, լիովին հեռացան կայսեր գործը պաշտպանելուց, ինչն իր հերթին միանգամից բարդացրեց Բյուզանդական կայսրության բանակի դրությունը Լազիկայում: Այսպիսով՝ պատերազմն Արևելքում առժամանակ շարունակվեց, թեև այժմ արդեն պաշտոնական Կոստանդնուպոլիսը, լիովին ազատված արևմտյան հոգսերից, ի վիճակի էր Արևելքում աստիճանաբար զգալի հարվածային ուժեր կուտակել: Իր հերթին Նախորագանը, օգտվելով այն բանից, որ կայսրության հիմնական ուժերը Արևմուտքից դեռևս չեն տեղափոխվել Արևելք, 555 թվականի նոյեմբերին հերթական անգամ հարված հասցրեց կայսրության բանակին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

555 նոյեմբեր – ***<u>Օնոգիրուսի ճ-մ</u>*** (Լազիկա, Արքեոպոլսի մոտ)[2]

> Հայաստանի հրամանատար Մարտինոսի, Բուզեսի և Հուստինիոսի, սլավոնների հրամանատար Դաբրագեզի, ինչպես նաև Ուսիգարդոյի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (50.000, այդ թվում ճաներ, սաբիրներ, իսավրիացիներ, էրուլներ, լանգոբարդներ, բերբերներ ու սլավոններ) ու նրա

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 2, գլուխ 19-22:
[2] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 3, գլուխ 2, 5-8:

կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) պաշարեցին քաղաքը Պարսից թագավորության (մոտ 1.000) բանակից, ինչից հետո պաշարողական տեխնիկայի կիրառմամբ անցան գրոհի: Այդ ընթացքում Նախորագանի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000, այդ թվում, դելմիկներ, ինչպես նաև մոտ 20 փիղ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) իրենց հերթին սկսեցին մոտենալ քաղաքին:

I փուլ – Քաղաք թափանցել փորձող գերված սուրհանդակից տեղեկանալով Նախորագանի բանակի մոտենալու մասին՝ կայսերական զորավարները հակառակորդին կասեցնելու նպատակով Դաբրագեզի և Ուսիգարդոյի գլխավորությամբ վերջինիս դեմ ուղարկեցին մի ջոկատ (600), իսկ իրենք հիմնական ուժերով շարունակեցին քաղաքի գրոհը:

II փուլ – Դաբրագեզի և Ուսիգարդոյի ջոկատը անսպասելի հարձակվեց Պարսից թագավորության բանակի առաջապահի (3.000 հեծյալ) վրա ու անակնկալ հարվածով փախուստի մատնեց վերջինիս: Միաժամանակ հաջող ընթացք ստացավ նաև քաղաքի գրոհը, որի արտաքին պարիսպը գրեթե գրավվեց:

III փուլ – Պարսից թագավորության բանակի առաջապահը վերականգնեց շարքերը և, ունենալով թվական գերակշռություն ու պարզելով, որ հարձակման է ենթարկվել ավելի փոքրաքանակ հակառակորդի կողմից, անցավ հակահարձակման, փախուստի մատնեց Դաբրագեզի և Ուսիգարդոյի ջոկատին ու հետապնդեց վերջինիս մինչև քաղաքի պարիսպները:

IV փուլ – Պարսից թագավորության բանակի առաջապահը, զարգացնելով հաջողությունը և հարվածելով քաղաքն արդեն գրեթե գրաված, արդյունքում, սակայն, նաև մարտակարգը կորցրած ու ավարառությամբ զբաղվել սկսած կայսերական բանակի հիմնական ուժերին, խուճապահար փախուստի մատնեց վերջինիս:

V փուլ – Պարսից թագավորության բանակի առաջապահը, միանալով հիմնական, բանակին, ինչպես նաև քաղաքից արտագրոհ իրականացրած յուրայիններին, հետապնդեց կայսերական փախչող բանակին ու ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 1.000, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցները՝ մոտ 10.000 զինվոր:

556 թվականի գարնանը Լազիկայի համար պայքարը բռնկվեց նոր ուժով: Ոգևորված նախորդ տարվա վերջում ձեռք բերած իր հաջողություններից՝ Նախորագանն այս անգամ նախատեսել էր գլխավոր հարվածը հասցնել հենց Արքեոպոլսի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

556 գարուն – ***<u>Արքեոպոլսի ճ-մ</u>***[1]

Նախորագանի գլխավորությամբ արշավանքի ելած Պարսից թագավորության բանակի (60.000, այդ թվում դելմիկներ, ինչպես նաև մոտ 20 փիղ) կազմում հանդես եկող դելմիկները (3.000) շարժվեցին քաղաքի մոտ տեղավորված Բյուզանդական կայսրության բանակի (մոտ 10.000, այդ թվում 2.000 սաբիր) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 2.000) դեմ՝ նախատեսելով անակնկալ գիշերային հարված հասցնել ամենից առաջ քաղաքից դուրս առանձին ճամբարած սաբիրներին:

I փուլ – Դելմիկները փորձեցին անակնկալ հարձակվել սաբիրների ճամբարի վրա, սակայն վերջիններս, ժամանակին տեղեկանալով այդ մասին և լքելով ճամբարը, իրենք դարան դրեցին, որից հետո անակնկալ հարվածով գլխովին

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 3, գլուխ 15, 17-18:

ոչնչացրին ճամբար ներխուժած թշնամուն, որը միայն այստեղ կորցրեց 800 ռազմիկ:

II փուլ – Բաբաս Թրակիացու գլխավորած կայսերական հիմնական բանակը ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների միացան մարտին և, սաբիրների հետ միասին հետապնդելով փախչողներին, ծանր կորուստներ պատճառեցին վերջիններիս, որոնք կորցրին ևս 1.200 ռազմիկ:

Հայերը կորցրին մոտ 10, դաշնակիցները՝ մոտ 300, թշնամին՝ 2.000 զինվոր:

556 գարուն – ***Փասիսի ճ-մ*** (Փասիս գետի ափին) [1]

Ցանկանալով վերջնական բեկում մտցնել պատերազմում՝ Նախորագանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (60.000, այդ թվում դելմիկներ, ինչպես նաև մոտ 20 փիղ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) ուղղություն վերցրին դեպի Արքեոպոլիս, սակայն անհաջողությամբ ավարտված բանակցություններից հետո պարսից հրամանատարը փոխեց արշավի ուղղությունը և, արևելքից մոտենալով Փասիսին, պաշարեց այն: Այս ընթացքում Հայաստանի հրամանատար Մարտինոսի, Հուստինոսի, Վալերիանոսի, ճաների հրամանատար Թեոդորոսի, սաբիրների հրամանատար Էլմինգիրի, իսավրիացիների հրամանատար Ֆիլոմաթիոսի, բերբերների հրամանատար Անգիլոսի, սլավոնների հրամանատար Դաբրագեզի, ինչպես նաև լանգոբարդների և էրուլերի հրամանատար Գիբրոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000, այդ թվում ճաներ, սաբիրներ, իսավրիացիներ, բերբերներ, էրուլներ, լանգոբարդներ ու սլավոններ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000), խուսափելով թշնամուց և նավարկելով Փասիս գետով, իսկ հետագայում արդեն, խուսափելով գետի վրա թշնամու կողմից ստեղծված արհեստական խցանումից ու ընթանալով ցամաքով, իրենց հերթին արագորեն հասան Փասիս գյուղակին:

Արդյունքում Մարտինոսը, ամրացրած սեփական դիրքերը ցցապարիսպներով և ջրով լցված խորը խանդակներով, գյուղն, ըստ էության, վերածեց դաշտային ամրացված մի լայնարձակ ճամբարի: Նախորագանն իր հերթին, սեփական մարտակարգի կենտրոնում տեղավորելով դելմիկներին, պատրաստելով պաշարողական տեխնիկա և սեփական ռազմիկների ուժերով մի քանի վայրերում այնուհանդերձ կարողանալով լցնել խանդակները, պատրաստվեց վճռական գործողությունների:

I փուլ – Մի քանի օրից առավոտյան Անգիլոսի և Ֆիլոմաթիոսի գլխավորած բերբերներն ու իսավրիացիները (200), իսկ քիչ անց էլ նաև Թեոդորոսի գլխավորությամբ նրանց միացած ճաները արտագրոհ իրականացրին պարսպին մոտեցած, նետահարություն սկսած և իրենց կորուստներ պատճառող թշնամու ուղղությամբ, սակայն արդյունքում, շրջապատվելով դելմիկների կողմից, միայն մեծ դժվարությամբ կարողացան ճեղքել հակառակորդի շարքերը ու կրկին ապաստանել քաղաքում: Դրա հաջորդ օրը Մարտինոսը, յուրայինների ոգևորելու համար կեղծ լուրեր տարածեց, թե իբր հարավից իրենց օգնության է շարժվում խոշոր մի բանակ: Այս տեղեկությունը հասավ նաև հակառակորդին, ինչը Նախորագանին իր հերթին ստիպեց սեփական բանակից մի խոշոր ջոկատ առանձնացնել և ուղարկել հարավային ուղղությամբ: Միաժամանակ, Հուստինոսի գլխավորությամբ մի խոշոր հեծյալ ջոկատ (5.000) աննկատ դուրս եկավ ամրացված շրջանից և դարանեց հարավային կողմում:

II փուլ – Երրորդ օրը առավոտյան Պարսից թագավորության բանակը ողջ ճակատով անցավ գրոհի, ինչի արդյունքում բռնկվեց համառ մարտ, ընդ որում պարսից հրամանատարը մինչ այդ հրահանգել էր մոտակա անտառներում

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 3, գլուխ 19-27:

ծառահատումով զբաղված սեփական հետևակայիներին, այն բանից հետո, երբ ականատեսն կլինեն պարիսպների այրվելուն, դա համարելով պաշտպանական շրջանի անկման սկիզբ, թողնել ամեն ինչ և միանալ գրոհին:

III փուլ – Կեսօրին, օգտվելով ծանր կորուստներով հետ քաշվող թշնամու բանակի շարքերում առաջացած շփոթից, մարտի մեջ մտավ Հուստինոսի գլխավորած ջոկատը և, թիկունքից հարվածելով թշնամու ձախ թևին, հետ շպրտեց վերջինիս:

IV փուլ – Կենտրոնում գտնվող դելմիկները, տեսնելով սեփական բանակի ձախ թևում առաջացած շփոթը, փորձեցին օգնության հասնել վերջինիս, սակայն, անմիջապես էլ, հարվածի ենթարկվելով քաղաքից արտագրոհ իրականացրած կայսերական բանակի մնացած ուժերի կողմից, ստիպված եղան հետ դառնալ ելման դիրքեր:

V փուլ – Դելմիկների չկողմնորոշվող գործողությունները Պարսից թագավորության մնացած բանակը սկսեց ընկալել որպես փախուստի արտահայտություն, ինչի արդյունքում Նախորագանի բանակի ձախ թևը դիմեց իրական փախուստի, որից հետո փախուստի դիմեց արդեն նաև վերջինիս բանակի կենտրոնը՝ իր հետ տանելով նաև դելմիկներին:

VI փուլ – Այս ընթացքում Պարսից թագավորության բանակը, մարտի մեջ մտցնելով նաև փղերին, զգալի հաջողությունների էր հասել սեփական աջ թևում, սակայն կայսերական բանակն ի վերջո հաղթահարեց հակառակորդի դիմադրությունը նաև այստեղ, ընդ որում դա հաջողվեց անել միայն այն բանից հետո, երբ պաշտպանվողները կարողացան վիրավորելով խուճապի մատնել իրենց շարքերին մոտեցած փղերին, որոնք սկսեցին տրորել սեփական ռազմիկներին:

VII փուլ – Օգտագործելով առաջացած խառնաշփոթը՝ կայսերական բանակը անցավ վճռական գրոհի և հակառակորդի բանակին հետ շպրտեց ելման դիրքեր: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը կորցրեց 10.000 ռազմիկ:

VIII փուլ – Ծառահատումով զբաղված հետևակայինները, նկատելով պարիսպների որոշ հատվածներում բռնկված հրդեհը, գործելով ըստ նախապես ստացված հրահանգի և սխալ գնահատելով իրավիճակը, նետվեցին ցցապարսպի ուղղությամբ, սակայն, հանդիպելով կայսերական հաղթական բանակին և կորցնելով 2.000 ռազմիկ, իրենց հերթին մատնվեցին փախուստի: Հաջորդ օրը, հաշվի առնելով կրած ծանր կորուստները, Նախորագանի բանակը դադարեցրեց ակտիվ գործողությունները և, հետ քաշելով ուժերը, կենտրոնացավ ***Քութայիսիի*** (Արևմտյան Վրաստան) մոտ, իսկ հետո էլ, հավաքելով ցրված ուժերը, նահանջեց Իբերիայի թագավորության տարածք:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 2.000, պարտվողներից հայերը՝ մոտ 1.500, դաշնակիցները՝ մոտ 15.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտում կրած պարտությունը Պարսից թագավորության բանակի համար, ըստ էության, վերացրեց հետագա բոլոր հնարավորություններն ամրանալու Լազիկայում: Փաստին պատշաճ գնահատական տրվեց նաև Տիզբոնում, երբ նույն տարվա վերջում Նախորագանը հետ կանչվեց, ձերբակալվեց և մաշկազերծ արվելով սպանվեց: Այս հանգամանքը, սակայն, ինքնին ամենևին էլ չմեծացրեց Լազիկային տիրելու Խոսրով Ի-ի հնարավորությունները: Իրենց հերթին, քիչ թե շատ ամրանալով Լազիկայում, կայսերական զորավարները որոշեցին լուծել նաև Աբխազիայի հարցերը, քանի որ, առանց ամուր տիրապետություն ունենալու նաև այստեղ, հնարավոր չէր ամուր իշխանություն ունենալ նաև Լազիկայում, իսկ արդյունքում՝ ողջ Արևմտյան Վրաստանում:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ 556 թվականի ամռանը Վարազ Հայի,

Մակսենցիոսի, լազերի հրամանատար Փարսանեսի և ճաների հրամանատար Թեոդորոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (4.000, այդ թվում լազեր և ճաներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) մոտեցան Պարսից թագավորության ճամբարած բանակին (մոտ 3.500, որից 2.500 հեծյալ, այդ թվում 500 սաբիրներ) և իրենք էլ ճամբարեցին, սակայն այն բանից հետո, երբ կայսերական հեծելազորը (300) անակնկալ հարձակումով ոչնչացրեց առանձին ճամբարած սաբիրներին (500), սակայն, խուսափելով թշնամու առաջխաղացող հեծյալ ջոկատից (2.000), իր հերթին նահանջեց, մարտական գործողությունները դադարեցին, ընդ որում հենց նոր ավարտված ընդհարումում ծանր վիրավորվել էր նաև Մակսենցիոսը[1]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց բուլղարների հրամանատար Էլիզարոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (2.000 հեծյալ, այդ թվում մեծաքանակ բուլղարներ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500), օգտվելով նրանից, որ կայազորային ծառայություն իրականացնող Պարսից թագավորության բանակը (մոտ 600) դուրս է եկել բաց դաշտ, անակնկալ հարձակումով գրավեցին Հռոդոպոլիսը (Լազիկա), իսկ հետո էլ ոչնչացրեցին նաև խուճապահար ցրված թշնամու ռազմիկներին[2]: Աբխազիայի տարածքում ամրանալու հաջորդ քայլը աբխազական Միսիմինիական կոչվող ցեղի հնազանդեցումն էր, որի առաջնորդները, կապեր հաստատելով Պարսից թագավորության հետ և սպանելով իրենց մոտ ուղարկված դեսպաններին, բռնել էին բացահայտ անհնազանդության ուղին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

556 նոյեմբեր – ***<u>Ճահար բերդի ճ-մ</u>*** (Աբխազիայի հարավ)[3]

Հովհաննես Դադիկի, ճաների հրամանատար Թեոդորոսի, սլավոնների հրամանատար Լեոնտիոսի և այլոց գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000, այդ թվում իսավրիացիներ, սլավոններ, անտեր ու ճաներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) շարժվեցին ապստամբած Միսիմիացիների (մոտ 8.000) դեմ:

I փուլ – Միսիմիացիները (600) հարձակվեցին հակառակորդի առաջապահի (40) վրա, փորձելով շրջապատել ու ոչնչացնել այն, սակայն հարձակման ենթարկվեցին կայսերական հիմնական բանակի կողմից և նահանջեցին դեպի բերդ: Թշնամին կորցրեց 520 զինվոր:

II փուլ – Գտնելով դեպի բերդի ստորոտ տանող գաղտնի արահետը՝ կայսերական մի ջոկատ (100) Թեոդորոսի, Լեոնտիոսի, Հելլուսի և Զեպերի գլխավորությամբ անակնկալ գիշերային հարձակումով մտավ բերդի ստորոտում գտնվող գյուղակը, որից հետո, միանալով ճակատային հարձակման անցած հիմնական ուժերին, մեծ կոտորած արեց: Զոհվեցին հակառակորդի մոտ 5.000 զինվորներ և զգալի քանակի խաղաղ բնակիչներ:

III փուլ – Լուսաբացին Միսիմիացիները (500) անակնկալ հարձակվեցին ձեռք բերած հաջողությունից անհոգության տրված կայսերական բանակի վրա և հետ շպրտեցին վերջինիս ելման դիրքեր:

IV փուլ – Կայսերական բանակը շարունակեց բերդի պաշարումը և ի վերջո ստիպեց նրա պաշտպաններին հանձնվել:

Հայերը կորցրին մոտ 200, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 6.000 զինվոր:

556 թվականը հաջող տարի եղավ կայսրության համար Արևելքում մղվող

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 4, գլուխ 13, 14:
[2] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 4, գլուխ 15; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 3:
[3] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 4, գլուխ 15-20:

ռազմական գործողություններում, ընդ որում, թեև Մարտինոսն ի վերջո այնուհանդերձ մեղադրվեց Գուբազ II-ի սպանությանը մասնակցություն ունենալու մեջ, սակայն, հաշվի առնելով վերջինիս մարտական մեծ ծառայությունները, նա պատժվեց միայն պաշտոնազրկումով: Այսպիսով, թեև մարտական այս զորավարի հանդեպ Հուստինիանոս I-ը սահմանափակվեց ընդամենը միայն թեթև պատժով, սակայն փոխարենը սպանության անմիջական կազմակերպիչ և իրականացնող հանդիսացող Հովհաննես ու Ռուստիկ Գալաթացի եղբայրները ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին, իսկ ծանր կորուստներ կրած ու անկման ուղին բռնած Լազական թագավորության արքա էլ հռչակվեց սպանվածի եղբայր Ցատ II-ը (556-580):

Լազիկայի և Աբխազիայի տարածքում 556 թվականին ընթացած ռազմական գործողությունները բեկումնային նշանակություն ունեցան տարածաշրջանին տիրելու համար մղվող պայքարում, քանի որ արդեն պարզ էր, որ, ազատված Արևմուտքի հոգսերից, պաշտոնական Կոստանդնուպոլիսը ի վիճակի է աստիճանաբար նոր ուժեր կենտրոնացնել Արևելքում, իսկ, դրան հակառակ էլ, ծանր ու արդեն մեծապես անհեռանկար պատերազմի շարունակումը ոչ մի կերպ չէր համապատասխանում Խոսրով I-ի ձգտումներին, որին հենց այս ժամանակ իր հերթին ավելի ու ավելին էին սկսում էին անհանգստացնել իր թագավորության արդեն արևելյան սահմանների մոտ կուտակվող սպառնալիքները: Արդյունքում, ազատվելով պատերազմական անմիջական հոգսերից, պաշտոնական Կոստանդնուպոլիսը ևս մեկ անգամ անդրադարձավ հերթական անգամ ապստամբած Պաղեստինին և, դիմելով մի քանի կտրուկ միջոցների, տեղում արագորեն կարգ ու կանոն հաստատեց[1]:

Եվ ահա 557 թվականին սկսվեցին հաշտության բանակցություններ, որոնք, սակայն, տևեցին մի քանի տարի: Այս առումով կարծում եմ, որ ժամանակն է փոխել պատմաաշխարհագրական մեր դիտարկման մասշտաբները, դուրս գալ Արևմտյան Վրաստանի նեղ սահմաններից և հերթական մի հայացք գցել Եվրասիայի ու հատկապես վերջինիս արևելյան հատվածի վրա, որտեղ հենց մեր կողմից նկարագրվող ժամանակաշրջանում էլ զարգանում էին վճռական իրադարձություններ:

Գլուխ 37
Թյուրքական խաքանությունը և նոր փոփոխությունները Մեծ տափաստանում

Եվ այսպես, մինչ Հուստինիանոս I-ը փոփոխական հաջողություններով և ուժերի ծայրահեղ լարումով պատերազմում էր իր կայսրության տարբեր սահմաններում, իսկ սեփական բարեփոխումների արդյունքները վայելող Խոսրով I-ն էլ բզկտում էր Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները ու ոսկի էր քամում պաշտոնական Կոստանդնուպոլսից, նույն այդ ժամանակ Մեծ տափաստանի արևելքում ոտքի էին կանգնել թյուրքերը, որոնք, հետագա տարիներին աստիճանաբար հաղթելով և ռազմաքաղաքական ասպարեզից դուրս մղելով մինչ այդ Մեծ տափաստանի արևելքում գերիշխող Ժուժանական խաքանությանը ու աստիճանաբար հարաբերություններ հաստատելով չինական տարբեր թագավորությունների հետ, արդեն 550-ական թվականների սկզբի վիճակով դարձել էին Մեծ տափաստանի արևելքում գերակշռող հիմնական ուժը՝ երբ նորաստեղծ Թյուրքական խաքանությունն իր ձեռքի տակ էր հավաքել տեղական քոչվոր տարացեղ ուժերը ու հայտնվել էր յուրօրինակ քոչվոր այդ համադաշնության ամենավերևում: Արդյունքում՝ Թյուրքական խաքանության խաքան Մուքանի (553-572) հրամանով արդեն 554 թվականին Ջունգարյան դարպասներից արևմուտք տարածվող գրավված և ապագայում գրավվելիք ողջ տարածքների ղեկավար նշանակվեց իր հորեղբայր Իստեմի խանը (554-576), որը հսկայական ուժերի գլուխն անցած սկսեց սեփական Արևմտյան Առաջին արշավանքը:

[1] Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 94:

Որպես հետևանք, հնազանդեցնելով իր ճանապարհին հայտնված բոլոր ցեղերին և ժողովուրդներին, Թյուրքական խաքանության բանակը արդեն 555 թվականին անցավ Յոթնագետքը ու հասավ Արալյան ծովին, որտեղ էլ ընդհարվեց Արալյան ծովի հյուսիսային ափերին բնակվող հերթական քոչվոր համադաշնության հետ, որի գլուխ կանգնած էին ավարները, իսկ ակնառու դերեր էլ ունեին նաև հիոնիտները, վարերը և օգորները: Ավարական քոչվոր համադաշնությունը, լայն դաշնակցային հարաբերություններ ունենալով Ժուժանական խաքանության հետ, իր ժամանակին հաղթել և Միջին Ասիայի հյուսիս-արևելքից ստիպել էր հեռանալ սաբիրներին, սակայն այժմ եկավ նաև արդեն հենց իրենց՝ ավարների, հեռանալու հերթը, քանզի թյուրքերը ոչ մի կերպ չէին կարող թույլ տալ իրենց երդվյալ հակառակորդ ժուժանների դաշնակցի գոյությունը սեփական սահմանների մոտակայքում: 556 թվականին ավարներն ու իրենց դաշնակից ցեղերը Իստեմի խանից ծանր հարվածներ կրեցին և մի կերպ դիմացան նաև 557 թ-ին, սակայն արդեն 558 թվականին վերջիններս ստիպված եղան հետ քաշվել մինչև Կասպից ծովի հյուսիսային տափաստաններ՝ ի վերջո անցնելով Վոլգան: Իստեմի խանը, սակայն, նույն այս ժամանակ ավարտելով իր արշավանքը, չհետապնդեց նահանջողներին և չանցավ Վոլգան, ինչը հնարավորություն տվեց այս ցեղերին ուշքի գալ: Բանը կայանում էր նրանում, որ, առաջանալով Միջին Ասիայի հյուսիսային հատվածով, Իստեմի խանը իր թիկունքում՝ ավելի հարավ-արևելքում, թողել էր արդեն անկում ապրող Հեփթաղական թագավորությանը, հենց որի դեմ պատերազմն էլ դարձել էր օրակարգային խնդիր՝ մանավանդ այն պարագայում, որ հեռացող ցեղերը որևէ սպառնալիք թյուրքերի համար, ըստ էության, արդեն չէին ներկայացնում:

Թյուրքական խաքանությունն իրենից ահեղ և իրոք բոլորին գերակշռող մի ուժ էր ներկայացնում՝ հզորությամբ գործնականում առնվազն հավասար, եթե ոչ գերակշռող, Հոնական տերությանը 370-ական թվականների վերջինիս լավագույն վիճակով՝ ընդհանուր առմամբ զենքի տակ ունենալով մինչև մոտ 600.000 ռազմիկ: Հարկ է նշել, սակայն, որ Թյուրքական ռազմական մեքենան ուժեղ էր ոչ միայն քանակապես, այլև գերազանցում էր իր տափաստանային հակառակորդներին նաև կազմակերպչական և նույնիսկ տեխնոլոգիական որոշ նորույթների կիրառման հաշվին՝ մասնավորապես ավելի մասսայական կիրառման մեջ դնելով երկաթն ու դրանից ստեղծված զենքերը, ինչպես նաև առավել հաջող կիրառելով տափաստանային քոչվորներին բնորոշ մարտավարական հնարքները: Թյուրքերը հարվածի հիմնական սայրն ուղղել էին չինական թագավորությունների ուղղությամբ, սակայն մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում նրանց հզորությունն այնքան մեծ էր, որ դրա հետ գործնականում միաժամանակ նրանք կարող էին առաջանալ նաև արևմտյան ուղղությամբ:

Գլուխ 38
Ավարական խաքանությունը և նրա ընդհանուր բնութագիրը

Եվ այսպես, ստանալով բավարար ժամանակ ուշքի գալու համար, հախուռն այդ նահանջի ընթացքում հիոնիտները, վարերն ու օգորները վերջնականապես ընդունեցին ավարների գերիշխանությունը և, կենցաղով ու բարքով լինելով միմյանց շատ մոտ, հետագայում արագորեն, ըստ էության, տարալուծվեցին ավարների մեջ: Արդյունքում՝ ավարները, շնորհիվ իրենց մեծաթվության և ավելի հզոր ռազմական համակարգի, կարողացան գլխովին ջախջախել սկզբում Կասպից ծովից հյուսիս-արևմուտք ընկած տափաստաններում հաստատված Սաբիրական թագավորությանը, հետո՝ հաղթել ու ոչնչացնել Արևելյան և Արևմտյան Բուլղարական թագավորությունները, իսկ վերջում էլ հնազանդեցնել սլավոններին՝ ստեղծելով Վոլգայից Դանուբ ձգվող ու արտաքին ավարառուական քաղաքականություն վարող Ավարական հզոր խաքանությունը: Այս առաջխաղացման արդյունքը, մասնավորապես, եղավ նաև այն, որ Սաբիրական թագավորության մնացորդները, կրկնելով Մազքութական թագավորության քաղաքական

ճակատագիրը 374 թվականի վիճակով, սեղմվեցին Կովկասյան լեռնաշղթային և, իրենց հիմնական մասով անցնելով Դերբենդի լեռնանցքը, հաստատվեցին Աղվանքի տարածքում՝ մեծացնելով սպառնալիքները Պարսից թագավորության հյուսիս-արևմտյան սահմաններին:

Հենց նոր քաղաքական ասպարեզ եկած Ավարական խաքանությունն իրենից ներկայացնում էր Մեծ տափաստանին բնորոշ մի իսկական գիշատիչ և պորտաբույծ պետական մի միավոր, ընդ որում, սեփական հպատակներին, ինչպես նաև առանց բացառության իրենց բոլոր հարևաններին Ավարական խաքանության խաքանները դիտարկում էին բացառապես միայն շահույթ ստանալու տեսանկյունից՝ Եվրոպայում, ըստ էության, շարունակելով նույն այն քաղաքականությունը, որի սկիզբը դրել էին դեռևս հոները և որը այս կամ այն հաջողությամբ կյանքի էին կոչել սաբիրները, ինչպես նաև Արևելյան ու Արևմտյան Բուլղարական թագավորությունները: Այս առումով հատկանշական է, որ ավարները նույն կերպ էին վերաբերվում ինչպես իրենց, ըստ էության, օտար գերմանացիներին և սլավոններին, այնպես էլ կենցաղով ու վարքով իրենց, ըստ էության, հարազատ բուլղարներին:

Ավարական խաքանությունը իր հզորության գագաթնակետին ընդհանուր առմամբ ի վիճակի էր մարտի դաշտ հանել մոտ 300.000 ամենատարբեր մակարդակի ռազմիկներ, որոնց մեջ մոտ 60.000 ռազմիկի կազմով աչքի էր ընկնում որակյալ ծանր հեծելազորը, իսկ մնացած թվաքանակը լրացվում էր թեթև հեծելազորի, ինչպես նաև ավարներին ենթակա բուլղարների, սլավոնների, գերմանացիների և այլ ենթակա ցեղերի հաշվին: 558 թ-ի վիճակով Ավարական խաքանության գլխին կանգնած էր երիտասարդ և տաղանդավոր, բայց նաև անչափ դաժան, հաշվենկատ ու խորամանկ Բայան I-ը (554-602), որն էլ հենց, ըստ էության, կազմակերպիչն էր հանդիսացել իր ժողովրդի ոչ միայն հաջող նահանջին, այլև՝ նոր վերելքին:

Նույն 558 թվականին էլ, ամուր կերպով հաստատելով իր պետությունը Վոլգայից Դանուբ ձգվող տափաստաններում, Բայան I-ը մի դեսպանություն ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և, հնարավորության դեպքում, ապահովելու համար դրամական այն նույն հատուցումները, որոնք Հուստինիանոս I-ը սահմանային հանգստության համար մինչ այդ հատկացնում էր բուլղարներին: Դեսպանությունը, սակայն, անհրաժեշտ արդյունք չտվեց և արդեն հաջորդ տարի դանուբյան ողջ սահմանի երկայնքով սկիզբ առան մարտական գործողություններ:

Այս իրադարձությունները իրենց հետ մեկ մասնավոր, բայց ուշագրավ հետևանք ևս ունեցան՝ ստեղծված ծանր պայմաններում Հուստինիանոս I-ը մոռացության խավարից կրկին հանեց արդեն տարիքը որոշակիորեն առած Բելիսարիոսին և, կարծես սրբելով փոշին վերջինիս արդեն խունացած փառքի վրայից, ազնիվ այս զորավարին դրեց գործող բանակի գլուխ: Իր հերթին ի պատիվ իրեն պետք է ասել, որ Բելիսարիոսն այս անգամ ևս արդարացրեց կայսեր հույսերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

559 մարտ – ***<u>Կոստանդնուպոլսի ճ-մ</u>***[1]

> Բելիսարիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200) շարժվեցին Թրակիան ու Հունաստանը ասպատակելով առաջացած Ավարական խաքանության բանակի (մոտ 100.000, այդ թվում սլավոններ և անտեր) կազմում Զաբերգանի գլխավորությամբ առաջացած, ***<u>Երկար պարիսպներն</u>*** անցած ու ***<u>Մելանտիդա գյուղի</u>*** մոտ ճամբարած բուլղարներին (7.000 հեծյալ) ընդառաջ՝ ճամբարելով

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 5, գլուխ 12-14, 16, 19, 20; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8: Այս մասին հայտնում են նաև Հովհան Եփեսացին և Վիկտոր Տոնեացին:

Խիտա գյուղի մոտակայքում: Կարճ ժամանակ անց, սակայն, պարզելով, որ հակառակորդը փոքրաքանակ է, իսկ եղած ռազմիկներն էլ հիմնականում անմարտունակ են, Զաբերգանը առանձնացրեց մի ջոկատ (2.000 հեծյալ)՝ նախատեսելով հարված հասցնել հակառակորդին և հասնել հեշտ հաղթանակի: Իր հերթին Բելիսարիոսը, մի ջոկատ (200) տեղադրելով դարանում՝ թշնամու առաջխաղացման ճանապարհի երկու կողմերում, մնացած ուժերով դիրքեր գրավեց ճակատում՝ միաժամանակ պատվիրելով մարտի ժամանակ աղաղակ բարձրացնել և դրանով ահաբեկել թշնամուն:

I փուլ – Բուլղարները անցան հարձակման, սակայն ընկան դարանում տեղակայված, ինչպես նաև ճակատից գործող կայսերական ռազմիկների համակցված հարվածների տակ, ինչի արդյունքում կորուստներ կրեցին և կորցրին մարտակարգը:

II փուլ – Կայսերական բանակը շարունակեց հարվածել հակառակորդին և արդյունքում բուլղարները դիմեցին խուճապահար փախուստի:

III փուլ – Կայսերական բանակը, որոշ տարածություն հետապնդելով բուլղարներին, սակայն, իր հերթին զգուշանալով հայտնվել դարանում, հետ քաշվեց:

IV փուլ – Պոկվելով հակառակորդից, հասնելով սեփական ճամբար, միանալով այստեղ գտնվող ռազմիկներին և անցնելով ***Երկար պարիսպները***՝ բուլղարները ևս մեկ անգամ փորձ արեցին հարձակվել, սակայն, այդպես էլ որևէ արդյունքի չհասնելով, հեռացան:

Հայերը կորցրին մոտ 2, դաշնակիցը՝ մոտ 50, թշնամին՝ 400 զինվոր:

559 մարտ - հուլիս – ***Խերսոնեայի պաշտպանությունը*** (Հալիոպոլսի թերակղզում)[1]

Բուլղարներն և սլավոնները (մոտ 20.000) մոտեցան քաղաքին, որտեղ Թորոթեոսի որդի Հերմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50) անցան համառ պաշտպանության:

I փուլ – Մարտից մինչև հուլիս թշնամին մի շարք գրոհներ ձեռնարկեց, սակայն քաղաքի պաշտպանները դրանք հետ մղեցին:

II փուլ – Հուլիսին, պատրաստելով 150 լաստեր և դրանց վրա տեղադրելով 600 ռազմիկների, թշնամին փորձեց ծովային անակնկալ հարձակումով ներխուժել քաղաք, սակայն, իմանալով այդ մասին նախապես, Հերմանոսը սեփական 20 նավակներով դարանակալ հարված հասցնելով, ոչնչացրեց և լաստերը, և դրանց վրա գտնվող ռազմիկներին:

III փուլ – Մի քանի օր անց քաղաքի պաշտպանները հզոր արտագրոհ կազմակերպեցին և, ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին, նահանջեցին:

Հայերը կորցրին մոտ 2, դաշնակիցը՝ մոտ 50 զինվոր, որոնց թվում վիրավորվեց նաև Հերմանոսը, թշնամին՝ մոտ 2.000 զինվոր:

Ստեղծված պայմաններում, մանավանդ տեղեկանալով, որ անհաջողությամբ են ավարտվել գործողությունները նաև Կոստանդնուպոլսի և Հունաստանի ուղղությամբ, իսկ Ավարական խաքանության բանակն էլ հետ է քաշվում դեպի ելման դիրքեր, թշնամին նահանջեց, ընդ որում բուլղարները Դանուբի մոտակայքում հարձակման ենթարկվեցին յուրայինների կողմից ու ծանր կորուստներ կրեցին: Եվ այսպես, Ավարական խաքանության առաջին այդ հզոր հարվածը հետ մղվեց, սակայն արդեն պարզ էր, որ դանուբյան սահմանը արդեն երկար ժամանակով չի խաղաղվի: Իրոք, եթե առաջ այստեղ

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 5, գլուխ 21-23; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

գործող բուլղարներն ու սլավոնները, համակված ներքին երկպառակտություններով և արդյունքում լինելով թույլ, ի վերջո ենթարկվում էին պաշտոնական Կոստանդնուպոլսի կարգավորումներին, ապա հզոր ու կենտրոնացված պետություն ստեղծած Բայան Ի-ի պարագայում դա բացառվում էր, ընդ որում նույն բուլղարների և սլավոնների ուժերին բնականաբար գումարվեցին նաև արևելքից բերված ավարական խաքանի մարտունակ ռազմիկները: Ինչ վերաբերվում է Բելիսարիոսին, որը մի վերջին անգամ լավ ծառայություն էր մատուցել կայսրությանը, ապա այս դեպքերից մի քանի տարի անց նրա նկատմամբ այնուհանդերձ կրկին քննություն սկսվեց, սակայն Հուստինիանոս Ի-ն ի վերջո Բելիսարիոսին արդարացրեց, ինչից հետո 565 թ-ի մարտին երբեմնի փառահեղ այս զորավարը լիակատար մոռացության մեջ աննկատ հեռացավ կյանքից:

560 թվականին Կոստանդնուպոլսում շարունակվում էին անշտապ բանակցությունները Խոսրով Ի-ի դեսպանների հետ և կայսրության համար այդ տարվա միակ էական իրադարձությունն, ըստ էության, այն էր, որ կրկին ավազակության ուղին բռնած ճաները, օգտվելով պատերազմական դրության ամենաթողությունից, մանր հարձակումներով ասպատակեցին Գուգարքի արևելյան, ինչպես նաև Տայքի և Բարձր Հայքի հյուսիսային գավառները[1]: Այս տարին հօգուտ իրեն օգտագործեց, սակայն, նաև Բայան Ի-ը՝ իր ազդեցությանը ենթարկելով Գեպիդական թագավորության վերջին արքա Կունիմունդին (560-568), ինչպես նաև հարաբերություններ հաստատելով Լանգոբարդական թագավորության արքա Աուդինի հետ՝ այս ամենով հանդերձ նախապատրաստվելով հարված հասցնել արդեն նաև արևմտյան ուղղությամբ: Իր հերթին նույն այս ժամանակ, ծանր կորուստներ կրելով փոխադարձ պայքարում, բուլղարները վերջնականապես կախվածության մեջ հայտնվեցին ավարներից: 561 թվականին իր հերթին, կարծես թե, արդեն պայմանավորված Խոսրով Ի-ի հետ, Հուստինիանոս Ի-ը որոշեց կարգի հրավիրել նաև ճաներին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

561 գարուն – ***<u>Ռիզոնի ճ-մ</u>***[2]

Թեոդորոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) շարժվեցին քաղաքի ուղղությամբ և, ճամբարելով ճաների բանակից (մոտ 3.000) ոչ հեռու, սկսեցին բանակցություններ, որոնք վերջացան անարդյունք:

I փուլ – Ավելի հարմար դիրք գրաված ճաները սկսեցին աղեղներով և պարսատիկներով հարվածներ հասցնել ճամբարած հակառակորդին:

II փուլ – Փորձելով հետ մղել ճաներին՝ կայսերական բանակը անցավ գրոհի, սակայն հետ մղվեց՝ կորցնելով 40 զինվոր:

III փուլ – Ճաները անցան գրոհի, որի արդյունքում հակառակորդի ճամբարի պարսպի մոտ համառ մարտ բռնկվեց:

IV փուլ – Օգտվելով հակառակորդի հիմնական բանակի զբաղված լինելուց՝ կայսերական բանակի մի մասը դուրս եկավ սեփական ճամբարից և թիկունքից հզոր հարված հասցրեց վերջինիս, որը, մատնվելով խուճապի, դիմեց փախուստի:

V փուլ – Կայսերական բանակը սկսեց հետապնդել և ոչնչացնել փախչող հակառակորդին:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 400, թշնամին՝ 2.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտի արդյունքում ճաների ասպատակությունները դադարեցին և նրանք որդեգրեցին խաղաղ ապրելակերպ: 561 թվականի գարնանը, սակայն, որոշ անհարթություններ առաջացան նաև Հուստինիանոս Ի

[1] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 5, գլուխ 1:
[2] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 5, գլուխ 1:

-ի տերության արևմուտքում, որտեղ, արդեն գրեթե 10 տարի, հաջողությամբ ղեկավարում էր իրականացնում Ներսես Կամսարականը:

Իրոք, 554 թվականի անհաջողությունից հետո ֆրանկները նույն այս ժամանակ արդեն աստիճանաբար կարծես սկսել էին ուշքի գալ և Ֆրանկական թագավորության նոր արքա Սիգիբերտ I-ը (561-575) կրկին սկսել էր հավակնություններ դրսևորել կայսերական տիրույթների նկատմամբ: Հենց այս ժամանակ էլ, ահա, էրուլները ապստամբեցին և փորձ կատարեցին ապահովել ֆրանկների աջակցությունը, սակայն կարճ ժամանակ անց Ներսես Կամսարականի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) Տրիոլի ճ-մ-ում (Հյուսիս-արևելյան Իտալիա) հաղթեցին ապստամբած էրուլներին աջակցելու նպատակով առաջխաղացած Ֆրանկական թագավորության բանակին (մոտ 20.000, այդ թվում էրուլներ): Արդյունքում՝ կայսրության գերիշխանությունը ընդունեցին նաև Վերոնան ու Բրեշան, ինչի հետևանքով Հուստինիանոս I-ի իշխանության տակ հայտնվեց գործնականում ողջ Հյուսիսային Իտալիան[1], իսկ ֆրանկների հավակնություններն էլ հերթական անգամ սանձվեցին:

Այս ամենով հանդերձ հարկ է նշել, սակայն, որ ֆրանկների ակտիվությունն այսպես թե այնպես աստիճանաբար մեծանում էր և արդյունքում, նպատակ ունենալով սահմանափակել Իտալիայի նկատմամբ Սիգիբերտ I-ի հետագա հավակնությունները, նույն 561 թվականին կայսերական դիվանագիտությունը կարողացավ հասնել նրան, որ Բայան I-ը կյանքի կոչի ֆրանկների ուղղությամբ իր կողմից արդեն իսկ նախատեսված հարվածը: Իրենց հերթին այս ժամանակ գեպիդներն արդեն մեծապես կախված էին ավարներից, իսկ լանգոբարդներն էլ միայն ուրախ էին իրենց երդվյալ հակառակորդ ֆրանկներին հասցվող հարվածի համար, այնպես որ ոչինչ չխանգարեց այն բանին, որ, առաջանալով գեպիդների և լանգոբարդների տարածքներով, Բայան I-ի մարտունակ հորդան ներխուժի Ֆրանկական թագավորության արևելյան սահմաններ: Արդյունքում, թեև ավարները լուրջ հաջողության չհասան և ի վերջո ձեռք բերած ավարով հետ քաշվեցին, սակայն սեփական թագավորության արևելյան սահմաններին բարդացած դրությունը Սիգիբերտ I-ին հետագայում ստիպեց գործնականում մոռանալ Իտալիայի մասին:

562 թվականի ամենասկզբում ի վերջո կնքվեց հիսնամյա հերթական հաշտությունը և Բյուզանդա-Պարսկական IV պատերազմը ավարտվեց: Արդյունքում՝ Հայաստանում և Ասորիքում սահմանների որևէ փոփոխություն չկատարվեց և կողմերը վերադարձան ելման դիրքեր, սակայն հյուսիսում Լազիկան վերջնականապես անցավ Բյուզանդական կայսրությանը, թեև վերջինս էլ իր հերթին Պարսից թագավորությանը վճարեց 1.000 կգ ոսկի: Հաշտության պայմանագրով սահմանվեցին ևս մի շարք պայմաններ, որոնք կոչված էին կարգավորելու տարածաշրջանի երկու գերտերությունների հարաբերությունները, ընդ որում, մասնավորապես, սահմանվեց նաև պայման, որն ապահովվեց քրիստոնյաների իրավունքների անարգել իրականացումը Պարսից թագավորության ողջ տարածքում: Սրանից հետո մինչ այդ առաջին և, ըստ էության, վերջին անգամ եվրասիական երկու գերտերությունների պայքարի գլխավոր թատերաբեմը հանդիսացած Արևմտյան Վրաստանը կրկին անցավ մոռացության գիրկը, քանզի հետագայում առաջ եկան նոր հոգսեր, իսկ փոխադարձ անհանդուրժողականության մեծացման պայմաններում էլ կողմերն հարաբերությունները գերադասում էին պարզել մեկը մյուսի արդեն հիմնական տարածքներում:

Գլուխ 39
Ավարական և Թյուրքական խաքանությունների վերելքը, ինչպես նաև Սաբրիական ու Հեփթաղական թագավորությունների կործանումը

[1] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 2, գլուխ 2: 3; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 8; Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

562 թվականի մարտին Ավարական խաքանության բանակը (մոտ 20.000, այդ թվում բուլղարներ, սլավոններ և անտեր) ասպատակեց Թրակիան և Բազիպոլսի շրջակայքը, սակայն, խուսափելով կայսր քրոջորդի Մարցելուսի գլխավորությամբ առաջխաղացող Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 25.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 2.000), ապրիլին ի վերջո նահանջեց[1], թեև մինչ այդ թալանվեց Անաստասապոլիսը[2]: Հենց այդ ժամանակ էլ Բայան Ի-ը, կործանիչ հարված հասցնելով անտերին և հաշիվ տեսնելով վերջիններիս վերնախավի հետ, վերջնականապես իրեն ենթարկեցրեց ինչպես սլավոններին, այնպես էլ բուլղարներին՝ ավելի մեծացնելով սեփական խաքանության հզորությունը:

563 թվականի հունվարին բերբերները, երկարատև ընդմիջումից հետո ոտքի կանգնած իրենց առաջնորդներից մեկի սպանության պատճառով, ասպատակեցին Հյուսիսային Աֆրիկան: Արդյունքում, սակայն, խուսափելով կայսեր քրոջորդի Մարկիանոսի գլխավորությամբ առաջխաղացող Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 2.000), ինչպես նաև ստանալով անհրաժեշտ դրամական բավարարում, ի վերջո խաղաղվեցին[3]:

Հարկ է նշել, որ վերջին հաշտությունը սպասված էր նաև Խոսրով Ի-ի համար, որը, բացի այն, որ զգալի քանակի ոսկի էր ստանում, նաև ազատում էր իր ուժերը՝ սեփական տերության հյուսիսային և արևելյան սահմաններում սպասվող բարդացումներին ընդառաջ: Իրոք, Ավարական խաքանության կողմից Սաբիրական թագավորության ջախջախումը բերել էր նրան, որ, գործելով սեղմված փուչիկի սկզբունքով, սաբիրների հիմնական ուժերը կենտրոնացել էին Աղվանքի տարածքում և այդ հանգամանքն արդեն վտանգավոր էր դառնում: Խնդիրներ էին առաջացել, սակայն նաև Հեփթաղական թագավորության հետ, քանզի դեռևս 560 թվականից սկսած նույն Իստեմի խանը հյուսիսից ուժեղացրել էր ճնշումը նաև հեփթաղների նկատմամբ, ընդ որում հեփթաղները միաժամանակ շարունակում էին մարտնչել նաև Հնդկաստանի ուղղությամբ: Իր հերթին Իստեմի խանը, չցանկանալով միայնակ դուրս գալ հեփթաղների դեմ, դաշինքի առաջարկ էր արել Խոսրով Ի-ին և վերջինս ընդունել էր այդ առաջարկը:

Եվ այսպես, արդեն հանգիստ բյուզանդական սահմանից, 563 թվականի գարնանը Խոսրով Ի-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 30.000) մտան Աղվանքի տարածք ու ջախջախեցին Սաբիրական թագավորության բանակին (մոտ 50.000)[4]: Սաբիրական թագավորությունը, ըստ էության, կրկնեց Մազքութական թագավորության քաղաքական ճակատագիրը նաև վերջաբանի պարագայում և արդյունքում սաբիրների մնացորդների մի մասը հետ մղվեց Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս, ընդունեց Ավարական խաքանության գերիշխանությունը ու հետագայում արագորեն ձուլվեց ավարների մեջ, իսկ տեղում մնացած մասն էլ հետագայում տարալուծվեց տեղական միջավայրում:

Վերջին խոշոր հաջողությունից հետո արյաց արքան իր հերթին սկսեց արագորեն ամրացնել Դերբենդի լեռնանցքը, ընդ որում, ի տարբերություն Պերոզ Ի-ի և Կավատ Ի-ի ժամանակների, երբ պաշտոնական Տիզբոնը Աղվանքի տարածքը փաստորեն զիջում էր տափաստանային քոչվորներին ու պաշտպանության էր անցնում Կուրի և Արաքսի բնագծով, այժմ Խոսրով Ի-ը նախատեսում էր հակառակորդին կանգնեցնել հենց Դերբենդ ամրոցի պարիսպների տակ՝ իրենով անելով Աղվանքը: Դերբենդի լեռնանցքի ամրոցի շինարարությունն իրականացվում էր մեծ եռանդով և այս հարցում արյաց արքան միջոցներ չխնայեց: Արդյունքում՝ արդեն մի քանի տարուց լեռնանցքը հուսալիորեն փակված էր, ինչը զգալիորեն մեծացրեց Պարսից թագավորության հյուսիսային սահմանների ապահովությունը և ուժեղացրեց դիրքերը Թյուրքական խաքանության հետ

[1] Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Հովհաննես Մալալա «Ժամանակագրություն» գիրք 18; Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»:
[4] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:

հետագա հարաբերություններում:

563 թվականին, ավարտած գործերը Աղվանքում, Խոսրով Ի-ը իր հիմնական բանակային ուժերը շարժեց դեպի երկրի արևելյան սահմաններ, որտեղ հենց նույն այս ժամանակ Հեփթաղական թագավորության դեմ ռազմական գործողություններ էր սկսել նաև Իստեմի խանը: Հեփթաղները սեղմված էին երկու կողմից և անկման շրջանում գտնվող նրանց թագավորությունն, ըստ էության, արդեն դատապարտված էր: Արդյունքում՝ արդեն 564 թվականին Պարսից թագավորության բանակը գրավեց Հեփթաղական թագավորության հարավային, իսկ Թյուրքական խաքանության բանակը՝ հյուսիսային շրջանները: Բոլոր կողմերից սեղմված հեփթաղները փորձ կատարեցին դիմադրությունը շարունակել 565 թվականին, սակայն Մավերնահրում գտնվող Կարշի քաղաքի մոտ տեղի ունեցած ութօրյա ճակատամարտում թյուրքերը նրանց գլխովին ջախջախեցին: Հեփթաղական թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ կիսվեց Պարսից թագավորության և Թյուրքական խաքանության միջև: Հարաբերությունները, սակայն, հեփթաղներին ջախջախած դաշնակիցների միջև ի սկզբանե պատված էին կասկածներով և ահա այն բանից հետո, երբ նախկին միասնական թշնամին արդեն չկար, դրանք արդեն բացահայտ թշնամական բնույթ ընդունեցին:

Գլուխ 40
Հուստինիանոս Ի-ի գահակալման արդյունքները

Մինչ Միջին Ասիայում զարգանում էին մեր կողմից նկարագրվող իրադարձությունները, 565 թվականի նոյեմբերի 14-ին գրեթե 40 տարի իշխելուց հետո 83 տարեկան հասակում Կոստանդնուպոլսում կյանքից հեռացավ Հուստինիանոս Ի-ը՝ վերջինը Հռոմեական կայսրության ոգու ցոլանքներն իր մեջ պահպանած բյուզանդական կայսրերից, որն, իրենով էլ հենց կարծես, ամփոփեց մի ամբողջ դարաշրջան: Հուստինիանոս Ի-ն, իրոք, իրենից, ըստ էության, ներկայացնելով քաղաքական մի իսկական անախրոնիզմ, վերջինն էր կայսրության այն տիրակալներից, որը տարված էր հռոմեական հինավուրց փառքի վերականգման գաղափարներով և որը դրան նվիրեց իր ողջ գործունեությունը: Ժամանակները, սակայն վաղուց արդեն փոխվել էին և, ապրեր Հուստինիանոս Ի-ը երկու կամ երեք հարյուրամյակ առաջ, ի դեմս վերջինիս մենք հնարավոր է ականատես լինեինք Հռոմեական կայսրության հաջողակ կայսրերից մեկին, ինչպես օրինակ Դիոկլետիանոսն էր կամ Կոնստանդին Ի Մեծը, սակայն այժմ՝ փոփոխված պայմաններում, Հուստինիանոս Ի-ն ու նրա արտաքինից մեծ հաշվով փայլուն դարաշրջանն իրոք որ ժամանակավրեպ էին և արդյունքում հանգուցյալ կայսրն իրենից հետո թողել էր արտաքին մեծ փայլով պատված, սակայն ներքնապես խարխուլ մի պետություն:

Իրոք, թեև Հռոմեական կայսրության հինավուրց սահմանները, բացառությամբ, թերևս, Գալլիայի և Բրիտանիա կղզու հարավային մասի, վերականգնված էին, սակայն դա ձեռք էր բերվել հսկայական ջանքերի գնով ու ծանր գին էր արժեցել պետությանը: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ, եթե իր լավագույն ժամանակներում Հռոմեական կայսրության սահմանները անսասան էին ոչ միայն Հռոմեական կայսրության ռազմական մեքենայի, այլև խորը արմատներ ունեցող միասնական գաղափարախոսության ու տնտեսության շնորհիվ, ապա այժմ Հուստինիանոս Ի-ի թողած տերությունը ներքնապես ամուր լինելու համար չուներ ոչ գաղափարական և ոչ էլ տնտեսական որևէ հիմք: Արևմուտքը վաղուց արդեն օտարացած էր Կոստանդնուպոլսին և այստեղ այդպես էլ չհաջողվեց հաղթահարել գերմանական ազդեցությունը, ինչի արդյունքում Բալկանյան թերակղզուց արևմուտք ընկած տարածքների բնակչությանն այնուհանդերձ հարազատ էին հենց գերմանացիները, այլ ոչ թե արևելցիները, սակայն պակաս կարևոր չէր նաև տնտեսական գործոնը, քանզի, տիրելով նորանոր

տարածքների ու ի մի բերելով Հռոմեական կայսրության երբեմնի սահմանները, Հուստինիանոս I-ն այդպես էլ չկարողացավ տեղի բնակչությանը մի որևէ նոր այլ բան առաջարկել, քան իրեն վաղուց արդեն սպառած հռոմեական տիպի ստրկատիրական կարգերն էին, իսկ դրա համեմատ էլ ավելի ազատ գերմանական կացութաձևը տեղի բնակչության համար վերջին հաշվով ավելի գայթակղիչ էր:

Եվ վերջապես ռազմական մեքենան, որի կիրառմամբ ձեռք բերվեց վերջնական հաջողությունը, արդյունավետ զուտ ռազմական առումով, վերջին հաշվով իրեն ևս չարդարացրեց ամենից առաջ հենց տնտեսապես, քանզի արդյունավետ, բայց թանկ՝ վերջին հաշվով ստեղծվեց մի իրավիճակ, երբ նույն այդ ռազմական մեքենան պահելու ծախսերն ու դրա կիրառման հետևանքով ձեռք բերված նյութական արդյունքները ոչ մի կերպ արդարացված չէին: Հենց այս հանգամանքն էր, ի դեպ, որ արդեն դեռևս 555 թվականից հետո բերել էր մի իրավիճակի, երբ, հասած իր ռազմաքաղաքական հիմնական նպատակներին, Կոստանդնուպոլսի տիրակալը սկսել էր բանակային ուժերի համատարած կրճատումը՝ փոխարենն ավելի ու ավելի լայն կիրառության մեջ դնելով արտաքին սպառնալիքները դրամական հատուցումներով կանխելու ռազմավարությանը: Նոր այս ռազմավարությունը, գործուն այլ հնարքների հետ միասին և այն էլ կարճ ժամանակով, ի վերջո արդյունքում հանգեցրեց նրան, սակայն, որ կայսրության գանձարանը սկսեց արագորեն դատարկվել, ընդ որում դա եղավ մինչ այդ փայլուն վիճակում գտնվող ռազմական մեքենայի դեգրադացման պայմաններում:

Այսինքն՝ իրոք արտառոց այս կայսրը արեց իրենից հասանելիք ամեն ինչը, բայց մի բան չկարողացավ անել և նա կարծես չհասկացավ էլ դա՝ Հուստինիանոս I-ը իր թողած պետության համար զարգացման ճիշտ ուղի չկանխորոշեց: Այսպիսով՝ կարող ենք, թերևս, փաստել, որ Հուստինիանոս I-ը, ըստ էության, ամենավերջինը հռոմեական կայսրերից, իրենից հետո թողեց խիստ հակասական մի ժառանգությունը և, բացարձակացրած Հռոմեական կայսրության սահմանների վերականգման գերնպատակը, նա դրան զոհաբերեց իր պետության լավագույն ուժերը ու նույնիսկ իր փայլուն ռազմական մեքենան, իսկ այս պայմաններում արդեն ինքնին պարզ էր, որ նույն այդ սահմանների հարատևությունը չէր կարող երկարատև լինել:

Գլուխ 41
Հուստինոս II-ը, ինչպես նաև Ավարական և Թյուրքական խաքանությունների հետագա վերելքը

Հուստինիանոս I-ին կյանքի վերջին ամիսներին, քանի որ ծերունի կայսրը անմիջական ոչ մի ժառանգորդ չուներ, որպես նրա հետնորդի հավանական թեկնածուներ դիտարկվում էին վերջինիս երկու ազգականները՝ պատերազմներում զգալի ծառայություններով աչքի ընկած Հուստինիանոս I-ի մորաքրոջ թոռ և Հերմանոսի որդի Հուստինոսը, ինչպես նաև, թերևս, միայն պալատական ծառայությամբ աչքի ընկած հանգուցյալ կայսեր քրոջորդի, նույնանուն Հուստինոսը: Հերմանոսի որդի Հուստինոսը, սակայն, թերևս, առավել արժանի կայսերական գահին, հեռու էր և, մինչ վերջինս մայրաքաղաք կժամաներ, կայսերական գվարդիայի գործունյա հրամանատար Տիբերիոսի ու այլոց եռանդուն աջակցությամբ կայսր հռչակվեց մյուս Հուստինիոսը:

Հուստինոս II-ը (565-578)՝ թեթևամիտ և, ինչպես մի քանի տարի անց նաև պարզվեց, հոգեկան լուրջ շեղումներ ունեցող մի անձնավորություն, ամենաքիչն էր հարմար Կոստանդնուպոլսի տիրակալի այն պատասխանատու դերի համար, որը վերջինիս բաժին էր հասցրել ճակատագիրը: Ձգտելով ամեն ինչում նմանակել իր հանգուցյալ քեռուն՝ նոր կայսրը, սակայն, նույնիսկ ձևի առումով էլ ի վիճակի չեղավ հասնել այդ նպատակին: Հուստինոս II-ի օրոք միանգամից էլ մեծ ազդեցության հասավ նրա կին Սոֆիան, որը հանգուցյալ կայսրուհի Թեոդորայի եղբոր աղջիկն էր և իր հերթին ամեն կերպ ձգտում էր նմանակել հորաքրոջը, թեև այս անգամ ևս, բացառությամբ, թերևս, միայն արտաքին փայլի, որևէ այլ նմանակման հասնել այդպես էլ չհաջողվեց: Իրոք, եթե խելացի և գործունյա Թեոդորան կյանքի մի իսկական ուղեկից էր Հուստինիանոս I-ի համար, այդ թվում նաև կայսրությունը կառավարելու հարցում, ապա թեթևամիտ ու սնապարծ Սոֆիան ընդամենը միայն տարված էր սեփական անձը մեծարելու հոգսերով: Մի խոսքով, ապագա փոթորկալից ժամանակներին ընդառաջ ճակատագիրը կայսրությանը ավելի քան կասկածելի մի ղեկավար կազմ բաժին հանեց, ընդ որում, այն բանից հետո, երբ նույն 565 թվականի ամենավերջում դավադրության մեջ մեղադրվեց ու սպանվեց արդեն նաև Ալեքսանդրիա աքսորված Հերմանոսի որդի Հուստինոսը, ողջ այս կազմում միակ լուսավոր կետը մնաց, թերևս, միայն կայսերական գվարդիայի հրամանատար Տիբերիոսը: Գործունյա իշխանության բացակայությունը Կոստանդնուպոլսում, սակայն, իր հերթին անմիջապես էլ իրեն զգացնել տվեց կայսրության սահմաններում:

Իրոք, Վեսթգոթական թագավորության արքա Աթանագիլդոսը, որ մի ժամանակ իշխանության էր եկել կայսրության աջակցությամբ, այժմ, ձգտելով վերականգնել Վեսթգոթական թագավորության հինավուրց սահմանները, 567 թվականին մոտեցավ Կորդովային, սակայն, չկարողանալով գրավել քաղաքը կայսրության բանակից, ասպատակելով շրջակայքը նահանջեց[1]: Այս կապակցությամբ կայսրության օգտին եղավ, թերևս, միայն այն հանգամանքը, որ Աթանագիլդոսը սրանից կարճ ժամանակ անց մահացավ:

566 թվականին, վերջնականապես ամրանալով Միջին Ասիայի հիմնական մասում, Իստեմի խանը սկսեց իր Արևմտյան Երկրորդ արշավանքը՝ նպատակ ունենալով վերջնականապես լուծել արդեն ավարների հարցերը և ավարտել այն գործը, որը կիսատ էր թողել դրանից 10 տարի առաջ: Արդյունքում՝ արդեն 567 թվականին թյուրքերը, Ավարական խաքանությանը հետ շպրտելով Դոնից արևմուտք, իրենց իշխանությունը հաստատեցին նաև Նախակովկասյան տափաստանների նկատմամբ: Դրանից հետո հարաբերությունները երկու նախկին դաշնակիցների միջև վերջնականապես փչացան և բանը հասավ պատերազմի:

Եվ ահա 568 թվականին Իստեմի խանի գլխավորած Թյուրքական խաքանության

[1] Կեսարավգուստոս «Ժամանակագրություն»:

բանակը (մոտ 200.000) հյուսիսից մոտեցավ Դերբենդ ամրոցին, սակայն հենց նոր ավարտված ամրության պարիսպների անառիկության, ինչպես նաև Պարսից թագավորության բանակի (մոտ 70.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 20.000) ակտիվ գործողությունների հետևանքով թյուրքերը հետ շպրտվեցին[1]: Այսպիսով՝ իրեն լիովին արդարացրեց այն փոփոխված ռազմավարությունը, որը Աղվանքի պաշտպանության հարցում որդեգրել էր Խոսրով Ի-ը: Արդյունքում՝ Իստեմի խանը, ոտնատակ տալով Հյուսիսային Կովկասն ու Մերձսևծովյան տափաստանները և, ընդհանուր առմամբ գոհ լինել իր Արևմտյան Երկրորդ արշավանքի արդյունքներից, հիմնական ուժերը հետ քաշեց Միջին Ասիա: Թյուրքերի դեմ պատերազմում կրած անհաջողությունը, բայց նաև թյուրքական վտանգի հեռանալը Բայան Ի-ին իր հերթին ստիպեցին ուժերը կենտրոնացնել իր պետության արևմտյան հատվածում, մանավանդ որ այստեղ շուտով հաջող ավարառության մի նոր առիթ առաջացավ:

Իրոք, Լանգոբարդական թագավորության նոր արքա, Աուդինին 566 թվականին վերջինիս մահից հետո հաջորդած նրա որդի Ալբոինը (566-573) անմիջապես գահ բարձրանալուց հետո նույն 566 թվականին էլ հենց դրդել էր Բայան Ի-ին, անցնելով իր թագավորության տարածքով, հերթական անգամ հարված հասցնել Ֆրանկական թագավորությանը: Ավարները ֆրանկների հետ ընդհարվել էին դեռևս 561 թվականին և այդ ժամանակ հաջողությունը որոշակիորեն քրիստոնյաների կողմում էր եղել, երբ նրանք կարողացել էին հետ մղել հակառակորդին, սակայն այժմ, ենթադրաբար նաև լանգոբարդների աջակցությամբ, Թյուրինգիայում տեղի ունեցած խոշոր ճակատամարտում Ֆրանկական թագավորության բանակը ծանր պարտություն կրեց, ընդ որում գերության մեջ հայտնվեց նույնիսկ Սիգիբերտ Ի-ը: Արդյունքում, թեև խոշոր փրկագնի և այլ զիջումների դիմաց Ֆրանկական թագավորության արքան ի վերջո ազատվեց գերությունից, սակայն այս պատերազմը ֆրանկների ռազմական հզորությանը զգալի հարված հասցրեց՝ համենայն դեպս գոնե մոտակա հեռանկարում վերջնականապես վերացնելով Ապենինյան թերակղզի արշավելու, ինչպես նաև լանգոբարդներին վնասելու վերջններիս մտադրությունները: Հաջողությամբ լուծելով ֆրանկների խնդիրը՝ Ալբոինը, այդպես էլ չմոռացած հինավուրց թշնամությունը մյուս ազգակից ժողովրդի հետ, շուտով հասավ նաև նրան, որ Ավարական խաքանությունը դուրս եկավ արդեն գեպիդների դեմ: Արդյունքում՝ արդեն 567 թվականի վերջին և 568 թվականին սկզբին Ալբոինի գլխավորած Լանգոբարդական թագավորության, ինչպես նաև Բայան Ի-ի գլխավորած Ավարական խաքանության միացյալ բանակը ծանր հարված հասցրեց Գեպիդական թագավորությանը՝ ըստ էության ոչնչացնելով այն: Գեպիդների վերջին արքա Կունիմունդը ընկավ մարտում, Գեպիդական թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ անցավ Ավարական խաքանությանը:

Այս ամենից հետո Ալբոինը, կարծես թե, պետք է արդեն իրոք որ գոհ լիներ իրերի ստեղծված դասավորությունից և հատկապես վաղեմի թշնամիներից մեկի սանձումից, իսկ մյուսի էլ՝ անկումից, սակայն, եթե լանգոբարդների արքան ժամանակին չէր հասկացել կամ գոնե ձևացրել էր, թե չէր հասկացել իր արարքի աշխարհաքաղաքական հետևանքները, ապա այժմ իսկը ժամանակը եկավ այն գնահատելու: Իրոք, Ավարական գիշատիչ խաքանությունը, գեպիդների ոչնչացումից հետո արդեն անմիջականորեն հարևան դառնալով լանգոբարդներին, սկսեց միանգամից էլ սպառնալ վերջիններիս: Ալբոինը, հիմա նոր միայն, թերևս, լիովին գիտակցելով, որ ֆրանկներն իրեն օգնության չեն հասնի, իսկ միայն սեփական ուժերով էլ լանգոբարդներն իրենք ի վիճակի չեն դիմադրել Բայան Ի-ին, ի վերջո վերջինիս հետ պայմանավորվածություն ձեռք բերեց առ այն, որ ինքն իր ժողովրդի հետ միասին պետք է սեփական թագավորությունը տեղափոխի Ապենինյան թերակղզի, իսկ մինչ այդ իրենց զբաղեցրած տարածքներն էլ հանձնի ավարներին: Իհարկե, թերևս, ձևի համար, նախատեսվեց նաև բացառություն, որ, եթե մի օր լանգոբարդները որոշեին վերադառնալ, ավարները պետք է վերադարձնեին

[1] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; իբն ալ-Ասիր «Լիակատար պատմություն»:

նրանց իրենց զիջված տարածքները, սակայն, իրականում բոլորն էլ հասկանում էին, որ ոչ լանգոբարդները այլևս երբևէ կվերադառնան, ոչ էլ ավարներն այդ պարագայում նրանց որևէ բան կվերադարձնեն: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ ինչպես Հուստինիանոս Ի-ի ամուր և սթափ կառավարման տարիները հետևում թողած Բյուզանդական կայսրության այլ մասերում, այնպես էլ Ապենինյան թերակղզում տիրող ընդհանուր դրությունը Ալբոինին բոլոր հիմքերը տալիս էր հավակնելու հաջողության:

Իրոք, կուրացած փառքից և չգիտակցելով, որ նախորդ տասնամյակների հաջողություններն ամենից առաջ հենց մի խումբ մարդկանց համակարգված և քրտնաջան ջանքերի արդյունքն էին, Հուստինոս II-ը ու Սոֆիան վերջին տարիներին կարծես ամեն ինչ անում էին իրավիճակը փլուզելու համար: Նոր քաղաքական հովերը մի կողմ չէին թողել նաև արդեն մոտ 15 տարի Իտալիան և, ընդհանրապես, ողջ Արևմուտքը հաջողությամբ կառավարող Ներսես Կամսարականին, ընդ որում ողջ խնդիրը հանգում էր նրան, որ փառասեր Սոֆիան նպատակ էր դրել տաղանդավոր այս առաջնորդի փոխարեն Արևմուտքը հանձնել իր աղջկա ամուսին Բադուարիոսին: Հարաբերությունները տարիների հետ ավելի սրվեցին և բանը ի վերջո հասավ նրան, որ Սոֆիան Ներսեսին՝ փառապանծ այդ զորավարին, թել մանելու իլիկ ու կարուձևի այլ պարագաներ ուղարկեց՝ նկատի ունենալով Ներսեսի ներքինի լինելու հանգամանքը և ակնարկելով, թե վերջինիս ավելի հարիր է կանացի հենց այդ զբաղմունքը: Ներսեսը, սակայն, խորապես վիրավորված այդ ամենից, իր հերթին պատվիրեց հայտնել Սոֆիային, որ ինքը շուտով այնպիսի և այնքան քանակությամբ թել կապահովի Կոստանդնուպոլսում իշխող զույգին, ինչքան չի հերիքի սրանց մանելու նույնիսկ իրենց ողջ կյանքի ընթացքում: Հետագա իրադարձությունների հարցում կան տարբեր տեսակետներ և ոմանք պնդում են, թե հենց Ներսեսն է Ալբոինին Իտալիա հրավիրել, սակայն այլք էլ ընդամենը ակնարկում են, որ Ներսեսն ուղղակի չի խանգարել լանգոբարդների արքային:

Այսպես թե այնպես, սակայն Ապենինյան թերակղզու վրա կախված ահեղ վտանգը պայթեց 569 թվականի արդեն ամռանը, երբ նույն այդ ժամանակ Ալբոինի գլխավորությամբ Իտալիա մտած Լանգոբարդական թագավորության բանակը (մոտ 80.000, այդ թվում 20.000 սաքսեր, ինչպես նաև գեպիդներ, սվեվներ, ալեմաններ, բուլղարներ, ալաններ, ավարներ և սլավոններ) մինչև 572 թվականի աշուն այդպես էլ լուրջ դիմադրություն ցույց չտված Բյուզանդական կայսրության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 100) գրավեց Ֆրիուլը, Ակվելիան, Միլանը, Պավիան ու Տիչինան (Իտալիա): Արդյունքում՝ Իտալիայում՝ այն Իտալիայում, որին տիրելու համար նախորդ տասնամյակներում այդքան ջանք ու միջոց էր վատնվել, Բյուզանդական կայսրության տիրապետության տակ մնացին միայն Ապենինյան թերակղզու հարավային, կենտրոնական ու հյուսիսային որոշ մասերը, այդ թվում Հռոմը, Սիցիլիան, Սարդինիան, Պադուան, Մանտուան, Ռավեննան, Ռիմինին, Օթրանտը և Օնկոնեն[1]: Ավելին, վերջնականապես կորսվեց նաև ռազմավարական նախաձեռնությունը և հետագայում խնդիրը հանգում էր, ըստ էության, միայն նրան, թե լանգոբարդներն իրենք ի՞նչ ուժով հարված կհասցնեն կայսրության տիրապետության այս կամ այն մասերին: Այսպիսով՝ Արևելյան և, մասնավորապես նաև Կենտրոնական Եվրոպայում 560-ական թվականներին տեղի ունեցան խոշոր տեղաշարժեր, երբ Ավարական խաքանությունն ավելի ուժեղացավ, գերմանական տարը, դրան հակառակ, ավելի թուլացավ ու վերջնականապես զիջեց դիրքերը Եվրոպայի արևելքում, իսկ տեղեկատվություն ապրող Բյուզանդական կայսրությունն էլ սկսեց անկասելիորեն նահանջել:

569 թվականի աշնանը վատացան Հուստինոս II-ի գործերը նաև Հյուսիսային

[1] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 2, գլուխ 5-9, 14, 25-27; Հովհան Սարկավագ «Վենետիկյան ժամանակագրություն» գիրք 1, գլուխ 3, 5; Անանուն «Լանգոբարդների ծագումը»; Կոնստանդին Ծիրանածին «Կայսրության կառավարման մասին», գլուխ 27; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

Աֆրիկայում, որտեղ բերբերները (մոտ 5.000) հենց այդ ժամանակ հաղթեցին Աֆրիկայի դուքս Թեոդորոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 30)[1]: 570 թվականի գարնանը[2] և ամռանը[3] կայսերական ռազմական մեքենան ևս երկու անգամ պարտություն կրեց բերբերներից, ինչն իր հերթին աստիճանաբար վատթարացրեց պաշտոնական Կոստանդնուպոլսի դրությունը նաև այս երկրամասում: Եվ վերջապես հենց 570 թվականի ամռանն էր, որ Լեովիլգիլդ արքայի (568-585) գլխավորած Վեստգոթական թագավորության բանակը (մոտ 10.000) Մալագայի ճ-մ-ում հաղթեց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 2.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (ընդհանուր՝ մոտ 10) և, ասպատակելով Բաստետայի ու Մալագայի շրջակայքը (Հարավ-արևմտյան Իսպանիա), նահանջեց[4]:

Նախորդ իրադարձություններ ընթացքում Իստեմի խանը հասցրել էր մի դեսպանություն ուղարկել Կոստանդնուպոլիս, առաջարկելով Հուստինոս II-ին դաշնակցել ավարների և պարսիկների դեմ, սակայն շուտով պարզվեց, որ կայսրության ու թյուրքերի ձգտումները մեծ հաշվով տարբեր են: Իրոք, Իստեմի խանն ամենից առաջ ձգտում էր նրան, որ կայսրությունը պատերազմական գործողություններ սկսի Պարսից թագավորության դեմ, սակայն, դրան հակառակ, օրըստօրե թուլացող սեփական պետության դրությունը հաշվի առնելով, պաշտոնական Կոստանդնուպոլսում իրենց հերթին ցանկանում էր ամենից առաջ տեսնել թյուրքերի կողմից հասցվող հարվածը ամենից առաջ հենց ավարներին, ինչին, սակայն, զբաղված պարսկական հոգսերով, Իստեմի խանն արդեն ինքը պատրաստ չէր: Արդյունքում՝ առանց այդ էլ ծանր ընթացող բանակցությունները որևէ արդյունք այդպես էլ չունեցան:

570 թվականի ամռանը, տիրացած արդեն նաև լանգոբարդների նախկին տարածքներին, իրեն համարելով Արևելյան, իսկ ինչ-որ տեղ նաև նույնիսկ Կենտրոնական Եվրոպայի մի իսկական գերիշխող, ինչպես նաև հանգիստ լինելով ուժերը հետ քաշած թյուրքերից, Բայան I-ը բալկանյան ճակատում մարտական գործողություններ սկսեց Բյուզանդական կայսրության դեմ, ընդ որում այստեղ գործող ռազմական մեքենայի հրամանատարն էր կայսերական զույգին նվիրված, թերևս, միակ զորավար Տիբերիոսը: Սիրմիայի մոտ ընթացած առաջին ճակատամարտում հաջողությունը Տիբերիոսի օգտին եղավ և նա հաղթականորեն մայրաքաղաք վերադարձավ[5], սակայն 571 թվականի գարնանը կրկին իրենց դեմ շարժված նույն Տիբերիոսի դեմ խոշոր հաղթանակ տարան արդեն ավարները, որոնք, հետ շպրտելով կայսերական բանակին և մտնելով Սիրմիա, ձեռք բերած խոշոր ավարով կարճ ժամանակ անց հետ քաշվեցին ելման դիրքեր[6]: Նույն այս ժամանակ Լեովիլգիլդ արքայի գլխավորած Վեստգոթական թագավորության բանակը (մոտ 10.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 5) դավաճանության շնորհիվ գրավեց Ասիդոնը (Հարավ-արևմտյան Իսպանիա)[7]:

Եվ այսպես, 570-ականների սկիզբ Հուստինոս II-ի տերությունը մուտք գործեց խիստ ծանր պայմաններում: Ապենինյան թերակղզու զգալի մասը կորսված էր և այն հետ բերելու որևէ հնարավորություն չկար, վեսթգոթերը ու բերբերները վիճարկում էին կայսրության գերիշխանությունը, համապատասխանաբար, Պիրենյան թերակղզում և Հյուսիսային Աֆրիկայում, իսկ բալկանյան ճակատում էլ իր առաջացրած հսկայական սպառնալիքներով ոտքի էր կանգնել սեփական ուժի գիտակցումից ու Իստեմի խանի սպառնալիքներից ազատվելու արդյունքում հղփացած Բայան I-ը: Առժամանակ քիչ թե

[1] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[2] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[3] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[4] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[5] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[6] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 34; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 11, 12; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[7] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

շատ հանգստություն էր տիրում, թերևս, միայն Արևելքում, սակայն շուտով պայթեց իրավիճակը նաև այստեղ:

Գլուխ 42
Փոքր Վարդանի ապստամբությունը. Մարզպանական Հայաստանի V ապստամբությունը

Սկսած արդեն 562 թվականից Պարսից թագավորությունում Խոսրով I-ի կառավարման շրջանը հասավ զարգացման իր գագաթնակետին, ընդ որում Հեփթաղական թագավորության ոչնչացումը և Թյուրքական խաքանության որոշակի սանձումն իրենց հերթին հսկայական դրական ազդեցություն ունեցան իր ձեռնարկած բարեփոխումների պտուղներն արդեն լիուլի վայելող ու սեփական իշխանության չորրորդ տասնամյակը բոլորող Խոսրով I-ի և նրա պետության վրա: Իրոք, եթե Հուստինոս II-ի անճարակ կառավարման շրջանում Պարսից թագավորության ավանդական հակառակորդը սկսել էր սասանվել, ապա նույն այս ժամանակ Խոսրով I-ի տերությունը այս արքայի ամուր կառավարման ներքո շարունակում էր իր դրական զարգացման ուղին՝ 560-ական թվականներին, ինչպես արդեն ասացինք, հասնելով Խոսրով I-ի կառավարման շրջանի իր զարգացման բարձրակետին: Միաժամանակ հարկ է նշել, սակայն, որ ձեռք բերված հաջողությունների հետ միասին ներքին քաղաքականության մեջ պաշտոնական Տիզբոնը նաև մի շարք բացթողումներ թույլ տվեց, որոնք հետագայում բացասական զգալի հետևանքներ ունեցան:

Խոսքն ամենից առաջ վերաբերում էր քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքին, որոնց դրությունը սկսել էր ծանրանալ սկսած արդեն 550-ական թվականներից, իսկ 560-ական թվականներին էլ վիճակն ավելի վատացավ: Վերևում արդեն որոշակիորեն անդրադարձ կատարվեց այն խնդրին, որ Պարսից քաղաքակրթությունը, համենայն դեպս արդեն վաղ միջնադարի վիճակով, իրենից ներկայացնում էր ինքն իր ներսում ներփակված և արտաքին ազդակների համար միանգամայն խուլ մի ամբողջություն, սակայն դժբախտության դեռ միայն կեսը կլիներ, որ բանը միայն սրանով սահմանափակվեր, քանի որ կար նաև մեկ այլ հանգամանք, որը վերաբերում էր պարսից զրադաշտական քաղաքակրթության արտաքին ընկալմանը, քանզի այն իրոք որ արդեն լիովին անընկալելի էր դարձել վճռականապես բոլորի համար:

Խնդիրը հատկապես բարդանում էր քրիստոնեական քաղաքակրթության պարագայում, որը, սեփական թերություններով հանդերձ, իր ժամանակի համար այնուհանդերձ իրոք որ առաջադեմ երևույթ էր՝ մանավանդ զրադաշտական քաղաքակրթության հետ համեմատության պարագայում: Այս ամենը, սակայն, ոչ մի կերպ հաշվի չէր առնեցվում Պարսից թագավորության ներքին քաղաքականության մեջ և, եթե իր իշխանության սկզբնական տարիներին Խոսրով I-ը կրոնական այլ ուղղությունների ու հատկապես քրիստոնյաների նկատմամբ որոշակի հանդուրժողականություն դեռ ինչ-որ տեղ դրսևորում էր, ապա արդեն մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում անհանդուրժողականությունը հասել էր զգալի չափերի: Այս առումով հասկանալի է, որ հարվածի տակ էին ընկնում ամենից առաջ հայերը, որոնք իրենցից ներկայացնում էին Պարսից թագավորության ոչ միայն քրիստոնյա բնակչության ամենագերակշիռ, այլև՝ ամենամարտունակ մասը, ընդ որում վիճակն առավել բարդանում էր նրանով, որ նույն այս ժամանակ վրացիները գործում էին հայերի հետ սերտ համագործակցության պայմաններում:

560-ական թվականների երկրորդ կեսին և 570-ական թվականների ամենասկզբին Խոսրով I-ի տերության քրիստոնյա հպատակների համար դրությունը, ինչպես արդեն ասվեց, խիստ ծանրացել էր, ընդ որում վիճակը աղետալի էր հատկապես Մարզպանական Հայաստանում, Իբերիայի թագավորության տարածքում և Աղվանքում: Դեռևս 550-ական թվականներից հերթական անգամ սկիզբ առած հարկադիր

կրոնափոխության քաղաքականությունը, որն ամենից առաջ արտահայտվեց Լազական թագավորությունում, հետագա իր արտահայտությունը գտավ նաև հարևան այլ երկրամասերում: Իր հերթին ուժեղանում էր նաև հարկային բեռը, ընդ որում հարկային վարչարարության խստացման և կարգավորման պայմաններում այժմ ամեն ինչ գանձվում էր լրացուցիչ մանրախնդրությամբ և համակարգվածությամբ: Այսպիսով՝ Մարզպանական Հայաստանում և ռազմաքաղաքական իմաստով վերջինիս կցորդը հանդիսացող Իբերիայի թագավորության տարածքում, ինչպես նաև Աղվանքի տարացեղ բնակչության շրջանում արդեն բոլոր պայմանները հասունացել էին հակապարսկական հերթական ելույթի համար:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Մարզպանական Հայաստանում առաջատար դիրքերում էր ամենից առաջ Մամիկոնյանների տոհմը, որի հեղինակությունն իրոք հսկայական էր: 505 թվականին Վահան Մամիկոնյանի մահից հետո Մամիկոնյաններին գլխավորել էր նրա եղբայր Վարդը, որը մինչև 514 թվական վարում էր նաև Հայոց մարզպանի պաշտոնը, թեև հենց նրա կյանքի վերջին տարիներին էլ իր դիրքերն ամրապնդած Կավատ I-ը խստացրեց վերաբերմունքը Մամիկոնյանների նկատմամբ: Վարդին, որպես արդեն միայն տոհմապետ, հաջորդեց նրա որդի Համազասպը, իսկ վերջինիս էլ հաջորդեց իր եղբայր Վասակը (536 - մոտ 545), որի գործունեությունը մենք ականատես եղանք Սատրապական Հայաստանի IV ապստամբության հետ կապված: Վասակին հաջորդեց նրա եղբայր Հմայակը (մոտ 545-552), որից հետո մի պահ տոհմի գլուխ կանգնեց տարեց սեպուհ Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանը (մոտ 552-555), իսկ հետո էլ, արդեն մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում, Մամիկոնյաններին սկսեց գլխավորել Վասակի որդի Մանվելը (մոտ 555-571), որը սերտորեն համագործակցում էր իր երիտասարդ եղբայրներ Վարդանի, Վարդի ու Վահանի, ինչպես նաև Հմայակի որդի Մուշեղի հետ: 560-ականների վերջին Մամիկոնյանների տոհմում յուրօրինակ հոգևոր հոր դեր էր խաղում նաև դեռևս Վահանանց պատերազմի մասնակից ու արդեն հարյուրն անցած Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանը:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում Մարզպանական Հայաստանում ու նաև հատկապես Իբերիայի թագավորության տարածքում հսկայական ազդեցություն ունեին նաև Բագրատունիները, որոնց հիմնական ճյուղը շարունակում էր իշխել իր ավանդական տիրույթներում, իսկ մյուս ճյուղն էլ դիրքերն ավելի էր ամրապնդել Հայաստանի հյուսիսային շրջաններում և Իբերիայի թագավորության տարածքում: Բագրատունիների հիմնական ճյուղում Բագրատին հաջորդել էր նրա որդի Վարազ-Տիրոցը (515-545): Վարազ-Տիրոցից հետո Բագրատունիների հիմնական ճյուղը գլխավորել էր վերջինիս որդի Աշոտը (մոտ 545-560), իսկ Աշոտին էլ հաջորդել էր եղբայրը՝ Մանվելը (մոտ 545-580): Ինչ վերաբերում է Հյուսիսային Բագրատունիներին, ապա այստեղ Գուրգեն-Գուարմին հաջորդել էր նրա որդի Բագրատը (532-568), իսկ վերջինիս էլ հետնորդ էր հանդիսացել որդին՝ Գուրգեն-Գուարմը (568-595): Այսպիսով՝ մեր կողմից նկարագրվող ժամանակահատվածում Բագրատունիների գլուխ էին կանգնած Մանվելը և Գուրգեն-Գուարմը, ընդ որում հիմնական ճյուղի ներկայացուցիչ հանդիսացող Մանվելը, կարծես թե, ավելի ազդեցիկ էր, սակայն իրականում առաջին դերերի վրա էր գործունյա ու խելացի Գուրգեն-Գուարմը:

Մարզպանական Հայաստանում մեծ էր նաև Սյունիների ազդեցությունը, թեև հստակ էր, որ նրանք, լինելով անչափ ազդեցիկ, այնուհանդերձ միանշանակորեն զիջում էին Մամիկոնյաններին և Բագրատունիներին: Դատելով ըստ ամենայնի, Սյունիներն իրենք ևս գիտակցում էին այս հանգամանքը և հենց դա էր, որ ստիպում էր նրանց Մարզպանական Հայաստանի գործերից որոշակիորեն մի կողմ քաշվել: Բաբկեն Սյունուց հետո Սյունիների գլուխ կանգնեց նրա որդի Հովհանը (մոտ 535-554), վերջինիս հաջորդեց նրա եղբայր Վաղողը (554-555), իսկ նրան էլ որդին՝ Գրիգորը (555 - մոտ 565): Մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում Սյունիների գլուխն էր կանգնած Գրիգորի եղբայր

Ֆիլիպը (մոտ 565-575), որն էլ հենց հստակորեն արտահայտիչը եղավ վերևում նկարագրված ձգտմանը: Իրոք, արդեն 560-ական թվականների կեսերին Սյունիները հասան նրան, որ Սյունիքը դուրս հանվեց Մարզպանական Հայաստանի կազմից և, որպես ներքին ինքնավարություն վայելող մի միավոր, վարչական առումով կցվեց Ատրպատականին: Ավելին, Ֆիլիպ Սյունին շուտով սկսեց հստակորեն վարել մոտավորապես նույն այն քաղաքականությունը, ինչ իր ժամանակին վարել էր Վասակ Սյունին:

Մեր կողմից դիտարկվող ժամանակահատվածում հատկապես Մարզպանական Հայաստանի հարավային շրջաններում, անկասկած, հսկայական ազդեցություն էին վայելում նաև Արծրունիները, սակայն այս ժամանակահատվածի համար վերջիններիս տոհմացանկը մեզ որևէ կերպ հայտնի չէ: Արծրունիները, որոշակիորեն հավասար լինելով Սյունիներին, իրենց ուժով և ազդեցությամբ նրանց պես ևս միանշանակորեն զիջում էին Մամիկոնյաններին ու Բագրատունիներին:

Քննարկվող ժամանակահատվածում Մարզպանական Հայաստանում այս կամ այն կերպ իրենց գոյությունը շարունակում էին նաև նախարարական այլ տոհմեր ևս, ընդ որում սրանց մեջ առանձնանում էին Մամիկոնյաններին ավանդականորեն դաշնակցող Կամսարականները, սակայն դրանց մենք առանձին չենք անդրադառնա: Ինչ վերաբերում է Հայոց մարզպանի պաշտոնին, ապա 555 թվականին մարզպանի պաշտոնից հեռացված Գուշնասպ-Վահրամին հաջորդել էր Թան-Շապուհը (552-560), վերջինիս՝ Վարազդատը (560-564), իսկ Վարազդատին էլ փոխարինել էր Սուրենյան Ճիհովր Վշնասպը (564-572):

Ինչպես արդեն ասվեց, 560-ական թվականների վերջում և 570-ական թվականների սկզբում Մարզպանական Հայաստանում ստեղծվել էր պայթյունավտանգ դրություն, սակայն դրա հետ միաժամանակ առկա էին նաև մի շարք արտաքին ազդակներ ևս, որոնք իրենց հերթին դրդում և, համենայն դեպս գոնե առերևույթ, նպաստում էին ապստամբությանը, ընդ որում այստեղ ամենից առաջ հարկ է հիշատակել պաշտոնական Կոստանդնուպոլսի դիրքորոշումը: Հուստինիանոս I-ը Արևելքում զգուշավոր և, ըստ էության, պաշտպանողական քաղաքականություն էր վարում, հիմնական շեշտը դնելով Արևմուտքի նվաճման վրա, սակայն Հուստինոս II-ի օրոք այս մոտեցումը արմատապես վերանայվեց:

Իրոք, Կոստանդնուպոլսի նոր տիրակալը, քաղաքականապես չհիմնավորված հույսեր կապելով Թյուրքական խաքանության առաջխաղացման հետ, մի ինչ-որ պահի սկսեց ենթադրել, թե Պարսից թագավորությունը գտնվում էր ռազմաքաղաքական աննպաստ դրության մեջ՝ միանգամից հարվածի ենթարկված լինելով և արևելքից, և արևմուտքից: Տեսականորեն ճիշտ այս մոտեցումը, սակայն, մանրուքներում արժեզրկվում էր և նույնիսկ հակառակ արդյունքն էր ապահովելու, քանի որ ամենից առաջ կայսրության արդեն իսկ քայքայված ռազմական մեքենան ինքն, առանց այդ էլ զբաղված Արևմուտքի ու Հյուսիսային Աֆրիկայի հոգսերով, ինչպես նաև հիմնական ուժերը կուտակած լինելով բալկանյան սահմանում, Արևելքում արյաց արքային ոչ միայն զգալի հարված հասցնելու, այլ վերջինիս երկաթյա բյուրերի հարվածին նույնիսկ դիմանալու համար անչափ թույլ էր: Իրեն չէր արդարացնելու, սակայն, նաև թյուրքերի պարագան, քանզի, արտաքնապես շահագրգռված լինելով Պարսից թագավորության թուլացմամբ, Իստեմի խանն արյաց արքայի նույն այդ երկաթյա բյուրերի հետ կենաց ու մահու ընդհարման մեջ մտնելուն այնուհանդերձ պատրաստ չէր, ընդ որում Թյուրքական խաքանության արևմտյան մասի տիրակալին մշտապես շեղում էին հոգսերը նաև խաքանության արևելյան հատվածում, ի դեմս գահակալական անվերջ մրցակցության, ինչպես նաև չինական պետական միավորների դեմ պայքարի հարցերի: Եվ վերջապես ոչ պակաս դեր ուներ նաև կայսեր անձի գործոնը, քանզի խոհեմ և հաշվենկատ Հուստինիանոս I-ի փոխարեն այժմ գահին բազմած էր թեթևամիտ Հուստինոս II-ը, որը, նույնիսկ նոր ու ահեղ պատերազմի շեմին էլ շարունակելով տարված մնալ իր կնոջով և

անվերջ զվարճանքներով, ոչ մի բան չարեց ռազմական առումով Արևելքն ուժեղացնելու համար: Այս պարագայում Արևելքի հրամանատար նշանակված կայսեր մորաքրոջ որդի Մարկիանոսի և Հայաստանի հրամանատար Դեմոստրատոսի որդի Հովհանի գործերը շատ էին բարդանում, քանզի բանակն ինքնին, ինչպես արդեն ասվեց, ոչ մի առումով պատրաստ չէր նոր պատերազմին:

Եվ այսպես, խաբված այն հանգամանքից, որ արյաց տերության հիմնական ուժերը գտնվում են Պարսից թագավորության արևելքում, իսկ տեղում մնացած ուժերի նկատմամբ էլ կայսրության արևելյան բանակը, իր ակտիվում ունենալով նաև ապստամբների ուժերը, ինչ-որ տեղ նույնիսկ քանակական առավելություն ունի, կայսրության ռազմական տեսաբանները ոչ մի կերպ հաշվի չառան այն հանգամանքը, որ իր բանակային հիմնական ուժերը արևելքից արևմուտք փոխադրելը արյաց արքայի համար առավելագույնը պետք է մեկ տարվա խնդիր լիներ և դա այն պարագայում, երբ կայսրությունն ինքը Արևելքում լրացուցիչ ուժեր ոչ միայն չուներ, այլև չէր էլ կարող դրանք տեղ հասցնել նաև այլ ճակատներից: Ահա հենց այս պայմաններում էլ բռնկվեց Փոքր Վարդանի ապստամբությունը (Մարզպանական Հայաստանի V ապստամբություն) (572-591), որին հետագա իրադարձություններում վիճակված էր հսկայական դեր ու նշանակություն ունենալ:

Մինչև առաջ անցնելը, սակայն, հարկ է նշել նաև, որ Սուրենյան Ճիհովր Վշնասպի դեմ, պայմանավորված և վերջինիս անձնական որակներով, և պաշտոնական Տիզբոնի վարած ընդհանուր քաղաքականությամբ, Մարզպանական Հայաստանում դժգոհություններ վաղուց էին կուտակվել, սակայն իրավիճակը պայթեց այն բանից հետո, երբ, կապված կանանցի ինչ-որ հանգամանքով, վերջինս սպանեց Մամիկոնյանների առաջնորդ Մանվելին: Սկզբնաղբյուրներից շատերն են ակնարկում այն հանգամանքը, որ Սուրենյան իշխանը հայերի կողմից չընդունվող հարաբերություններ էր հաստատել կամ փորձում էր նման հարաբերություններ հաստատել հայ նախարարների ընտանիքի անդամ կանանց ու աղջիկների հետ, սակայն մանրամասները մեզ, դժբախտաբար, չեն հասել և այս առումով հայտնի է միայն արդյունքը՝ Մանվել Մամիկոնյանը զոհվեց Սուրենյան Ճիհովր Վշնասպի պատճառով: Սա, սակայն, միայն սկիզբն էր, քանզի արդեն 572 թվականի հունվարին Մարզպանական Հայաստանը եռում էր, իսկ փետրվարի հենց սկզբի օրերին էլ ուժերն ի մի բերած նախարարական գնդերը Մանվելի որդիներ Վարդանի, Վահանի և Վարդի, ինչպես նաև վերջիններիս հորեղբորորդի Մուշեղ Խիզախի գլխավորությամբ սկսեցին մոտենալ Դվինին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

572 փետրվարի 2-5 – ***Դվինի ճ-մ***[1]

Սպարապետ Վարդան Մամիկոնյանի, նրա եղբայրներ Վահանի և Վարդի, հորեղբորորդի Մուշեղ Խիզախի, ինչպես նաև Զորակ Կամսարականի գլխավորած Հայկական բանակը (20.000) աննկատ մոտեցավ մարզպան Սուրենյան Ճիհովր Վշնասպի գլխավորությամբ քաղաքում ու նրա շրջակայքում ճամբարած Պարսից թագավորության բանակին (15.000):

I փուլ – Փետրվարի 2-ին Հայկական բանակը անակնկալ հարձակումով ջախջախեց Պարսից թագավորության բանակին, ընդ որում մարտի ժամանակ Զորակ Կամսարականը, մենամարտելով Սուրենյան Ճիհովր Վշնասպի հետ, հաղթեց և սպանեց նրան: Թշնամին կորցրեց 13.240 զինվոր:

II փուլ – Փետրվարի 3-ին Զորակ Կամսարականի գլխավորած Հայկական բանակը (10.000), հետապնդելով թշնամու բանակի փախչող մնացորդներին (1.760), հասավ նրանց և ծանր հարված հասցրեց: Թշնամին կորցրեց 880 զինվոր:

III փուլ – Փետրվարի 4-ին Զորակ Կամսարականի ուժերը, շարունակելով հետապնդումը, հասան փախչող հակառակորդին և կրկին պարտության մատնեցին վերջինիս: Թշնամին կորցրեց 440 զինվոր:

IV փուլ – Փետրվարի 5-ին Զորակ Կամսարականի գլխավորած Հայկական բանակը, շարունակելով հետապնդել Պարսից թագավորության բանակի փախչող մնացորդներին (440), հասավ և հերթական անգամ պարտության մատնեց վերջիններիս: Թշնամին կորցրեց 160 զինվոր:

Հայերը կորցրին մոտ 1.500, թշնամին՝ 14.840 զինվոր: Ձեռք բերած փառահեղ հաղթանակից հետո ապստամբության ղեկավարությունը Սուրենյան Ճիհովր Վշնասպի գլուխն ուղարկեց Կարինում ուժերը Հայաստանի հրամանատար Հովհաննին:

Մարզպանական Հայաստանում Մամիկոնյանների ոտքի կանգնելու հետ միաժամանակ ոտքի կանգնեցին նաև Բագրատունիները, որոնք հիմնական հարվածը հասցրին արդեն Իբերիայի թագավորության ուղղությամբ, երբ Վրաստանի էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 20.000, այդ թվում վրացիներ) հաղթեց Պարսից թագավորության բանակին (մոտ 25.000)[2]: Փաստորեն, պաշտոնական Տիզբոնի համար ինչ-որ տեղ անակնկալ, արյաց արքայի տերության հյուսիս-արևմտյան հատվածում սկիզբ առավ մի մեծածավալ ապստամբություն, որը լուրջ կերպով ապակայունացրեց իրավիճակը նաև հարակից երկրամասերում: Մարզպանական Հայաստանը և հարակից տարածքները պարսից կայազորներից ազատագրելուց հետո Վարդան Մամիկոնյանն իր ուժերը շարժեց Հայաստանի հարավային շրջանների ուղղությամբ, որտեղ էլ 572 թվականի արդեն մայիս - հուլիս ամիսներին կարողացավ մանր մարտերով հետ շպրտել Վարդան Վշնասպի գլխավորությամբ առաջխաղալ փորձող Պարսից թագավորության բանակին (մոտ 70.000)՝ ի վերջո սպանելով Վարդան Վշնասպին և ստիպելով թշնամուն նահանջել[3]:

Խոսրով I-ը, զայրացած Վարդան Վշնասպի կրած անհաջողությունից և

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 8; Անանիա Շիրակացի «Մատենագրություն»; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 16; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 32, 44; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; «Քարթլիս Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 18-20; Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 37; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 7; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 9; Թեոփանոս Բյուզանդացի «Պատմություն», մաս 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», Հավելված; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:

[2] Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

[3] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 21; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»:

Մարզպանական Հայաստանի ուղղությամբ գործող իր բանակի հրամանատար նշանակելով Գողոն Միհրանյանին, Սյունյաց գնդի մի մասի հետ վերջինիս միացած Ֆիլիպ Սյունու հետ միասին նրան ուղարկեց ապստամբների դեմ: Արդյունքում՝ 572 թվականի օգոստոսի սկզբին, կեղծ երդումով տալով անհրաժեշտ երաշխիքներ և խախտելով դրանք, թշնամին տիրեց Անգղ բերդին[1]: Այնուհետև, ձգտելով զարգացնել հաջողությունը և մի կողմ թողնելով Դվինը, Պարսից թագավորության բանակը սրընթաց առաջխաղացում իրականացրեց դեպի հյուսիս, սակայն արդեն սեպտեմբերի կեսերին Վրաստանի էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 20.000, այդ թվում վրացիներ) Տփղիսի ճ-մ-ում ծանր պարտության մատնեց հակառակորդին և հետ շպրտեց ելման դիրքեր[2]: Այսպիսով՝ ապստամբությունը արագորեն ճնշելու պաշտոնական Տիզբոնի փորձերն ավարտվեցին լիակատար անհաջողությամբ, ինչն էլ իր հերթին սկիզբ դրեց նոր իրադարձությունների:

572 թվականի ամռանը, երբ պաշտոնական Կոստանդնուպոլիսը Արևելքում սկիզբ առնող հակամարտության համար ուժերն էր ի մի բերում, Լեովիլգիլդ արքայի գլխավորած Վեստգոթական թագավորության բանակը գրավեց Կորդովան[3], ինչ արդյունքում Պիրենյան թերակղզում կայսրության տիրապետության տակ մնաց միայն թերակղզու հարավային ծովափնյա նեղ շերտը: Պաշտոնական Կոստանդնուպոլսի հոգսը, սակայն, ոչ մի կերպ արդեն հեռավոր Պիրենյան թերակղզին չէր, քանզի նույն այս ժամանակ ի վերջո բռնկվեց նաև պատերազմը Պարսից թագավորության դեմ: Սկիզբ առավ Բյուզանդա-Պարսկական V պատերազմը (572-591), որին իր հերթին վիճակված էր ավելի ծանր ու կորստաբեր լինել, քան նախորդն էր:

Գլուխ 43
Բյուզանդա-Պարսկական V պատերազմը

Բյուզանդա-Պարսկական V պատերազմը սկսվեց այն կերպ, ինչ նախորդները, ընդ որում այս անգամ ևս, համենայն դեպս իրադարձությունների գոնե սկզբնական փուլում, նախաձեռնությունը գտնվում էր կայսրության ձեռքում, իսկ հարվածի առաջին թիրախն էլ նույն Աղձնիքն էր: Արդյունքում՝ 572 թվականի սեպտեմբերի վերջին, ինչպես դա եղավ 421, 527 ու 539 թվականներին, այս անգամ արդեն Թեոդորոսի, Սերգիոսի և Յուվենտիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (3.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) ասպատակեցին Հայոց այս երկրամասը և նահանջեցին[4]: Սա ուժերի կարծես մի յուրօրինակ փորձություն էր, որը համեմատականորեն հաջողությամբ ավարտվեց, սակայն նույն այդ փորձությունն էլ ցույց տվեց նաև, որ ավելի մեծամասշտաբ գործողությունների կայսրության բանակն առայժմ ընդունակ չէ:

573 թվականի մարտին Արևելքի հրամանատար Մարկիանոսի գլխավորությամբ Դարա ամրոցից առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Սարգաֆոնի ճ-մ-ում (Մծբինի մոտ) անակնկալ հարձակումով հաղթեցին մեծ զորավարի հավակնություններ ունեցող Միհրանյանների տոհմից սերող Վահրամ Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 7.000), ընդ որում թշնամին կորցրեց 1.200 սպանված և 70 գերի: Դրանից հետո, սակայն, չկարողանալով գրավել Թեբոֆան ամրոցը, կայսերական բանակը հետ քաշվեց Դարա[5]: Մարկիանոսը պատրաստվում էր խոշոր գործողություններ ձեռնարկել և

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:
[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 21; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»:
[3] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[4] Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 10; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 22; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8:
[5] Թեոփանոս Բյուզանդացի «Պատմություն», մաս 4; Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 8; Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 10; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

հարված հասցնել ամենից առաջ Մծբինին, սակայն հենց այս նույն ժամանակ ուժերն արդեն ի մի բերած Խոսրով Ի-ն ինքն էր իր հերթին պատրաստվում անցնել հակահարձակման՝ մինչ այդ, սակայն, նախատեսելով հարված հասցնել Մամիկոնյանների կենտրոն Տարոնին:

Իրոք, ցանկանալով արյան մեջ խեղդել շարունակվող ապստամբությունը, բայց միաժամանակ նաև դեռևս պատրաստ չլինելով լայնամասշտաբ հարված հասցնել կայսրությանը, Խոսրով Ի-ը արևմտյան ուղղությամբ այլ սահմաններից ուժերը կենտրոնացնելու հետ միասին Միհրան Միհրանյանի և վերջինիս օգնական Վաշրի գլխավորությամբ ապստամբների դեմ դեպի Տարոն ուղարկեց Պարսից թագավորության առանձին մի բանակ (30.000): Վերջինս, արշավելով Աղձնիք-Հաշտեանք-Տարոն երթուղով, հասավ Արձան լեռանը և ճամբարեց նրա մոտ: Դրանից հետո, թողնելով հիմնական ուժերը լեռան մոտ, Միհրանը և Վաշիրը մնացած բանակով (12.500) 573 թ-ի մարտի վերջին[1] շարժվեցին դեպի Մուշ (Տարոն, Մեղրագետի ափին) ու ճամբարեցին նրա շրջակայքում: Այստեղ թշնամին կրկին բաժանեց ուժերը:

Հիմնական ուժերը թողնելով ճամբարում՝ Միհրանը Ի ջոկատը (8.000 հեծյալ) ուղարկեց ասպատակելու Մեղտին և պաշարելու Մեղտի ու Աստղոնք ամրոցները (Տարոն), իսկ Վաշիրի գլխավորած ΙΙ ջոկատը (2.000) ուղղեց Ապահունիք: Այնուհետև Պարսից թագավորության բանակի մի ջոկատ (մոտ 500) հարձակվեց Սուրբ Կարապետ վանքի վրա, թալանեց այն և սրի քաշեց վանականներին, սակայն Հայկական բանակը (մոտ 500) գրեթե անմիջապես էլ անակնկալ հարձակվեց դեռևս վանքում գտնվող թշնամու վրա ու ջարդեց և փախուստի մատնեց նրան[2]: Նույն այս ժամանակ Պարսից թագավորության բանակը (8.000) երկու օր պաշարեց Աստղոնք ամրոցը, սակայն, չկարողանալով գրավել այն Հայկական բանակից (մոտ 500), վերադարձավ Մուշ[3]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

---

[1] Այս թվականը նշվում է որպես հիմնավորում ունենալով հետևյալ տրամաբանությունը: Այսպես, Սուրբ Կարապետ վանքի ճ-մ-ը առաջինն է Հովհան Մամիկոնյանի կողմից հիշատակվող 4 ճակատամարտերից կազմված այն շղթայում, որի գլխավոր գործող անձը «Գայլ» մականվանյալ Վահան Մամիկոնյանն է: Եվ այսպես, Հովհան Մամիկոնյանը, ընդգծված սիրով խոսելով այս Վահանի մասին, բավականին մանրամասն պատմում է նաև նրա հոգևոր հայր ու դաստիարակ Մուշեղ Քաջ Մամիկոնյանի մասին, որն այս իրադարձությունների ժամանակ, ըստ հեղինակի իսկ խոսքերի, 120-ամյա մի ծերունի էր և շուտով ծերությունից մահանում է, ընդ որում ժամանակակիցներին լայնորեն հայտնի էր, որ այս Մուշեղը ողջ կյանքի ընթացքում պատերազմել էր պարսիկների դեմ: Ինչպես արդեն նշվել է, Մարզպանական Հայաստանի ΙΙΙ ապստամբության ժամանակ Ղազար Փարպեցին հիշատակում է Մուշեղ անունով Մամիկոնյան երիտասարդ մի սեպուհի, որը առաջին դերերում չէր և նույնիսկ չէր էլ հավակնում Մամիկոնյանների առաջնորդի դերի, բայց միաժամանակ նաև բավականին ակտիվ ու խիզախ կերպով իր մասնակցությունն էր բերում ապստամբության բոլոր հիմնական իրադարձությունների: Մեկ այլ հեղինակ՝ ասորի Եսու Եդեսիացին (գլուխ 75), 504 թ-ի հուլիսի Մծբինի ճ-մ-ի կապակցությամբ, առանց տարիքը կոնկրետացնելու, սակայն, հաշվի առնելով ենթատեքստը՝ որպես արդեն բավականին հասուն մի մարդու, հիշատակում է ոմն Մուշեղ Հայի, որն այս ճակատամարտի ժամանակ անցնում է Բյուզանդական կայսրության կողմը և արդյունքում Պարսից թագավորության բանակը պարտություն է կրում: Եվ այսպես, եթե Մուշեղ Քաջ Մամիկոնյանը 481-485 թվականներին դեռ երիտասարդ էր, իսկ 504 թվականին էլ՝ արդեն հասուն անձ, ապա 120-ամյա մի իսկական ծերունի նա իրոք կարող էր լինել 570-ական թվականների սկզբին: Այս պայմաններում Վահան Գայլ Մամիկոնյանը լիովին կարող էր լինել Մուշեղ Քաջ Մամիկոնյանի հոգևոր որդին, ընդ որում այն հանգամանքը, որ Մուշեղը Վահանի հենց հոգևոր, այլ ոչ թե ֆիզիոլոգիական հայրն էր, Հովհան Մամիկոնյանը հատուկ է ընդգծում: Այս ֆոնի վրա, հաշվի առնելով Փոքր Վարդանի ապստամբության և Բյուզանդա-Պարսկական V պատերազմի դեպքերի զարգացման տրամաբանությունը 570-ական թվականների սկզբին, կարելի է լիովին հավանական համարել, որ 4 ճակատամարտերից կազմված հիշատակված շղթան կարող էր տեղի ունենալ հենց 573 թվականին՝ ոչ ուշ և ոչ շուտ: Բանն այն է, որ հայերի առաջին բացահայտ դիմումները պաշտոնական Կոստանդնուպոլիս թվագրվում են 571 թ-ի վերջով, իսկ բուն ապստամբությունը սկսվեց 572 թ-ի փետրվարի 2-ի Դվինի ճ-մ-ով: Դրանից հետո մինչև ամառ հաջողությունը ակնհայտորեն հայերի կողմում էր, որի արդյունքում պաշտոնական Տիզբոնը կորցրեց վերահսկողությունը Մարզպանական Հայաստանի նույնիսկ դաշտային շրջանների վրա, դեռ չասած՝ լեռնայինները: Իր հերթին նույն 572 թ-ի օգոստոսի վերջին սկիզբ է առնում պատերազմն արդեն Բյուզանդական կայսրության դեմ, ընդ որում այս անգամ ևս հաջողությունը սկզբում ակնհայտորեն կայսերական ռազմական մեքենայի կողմն էր, որն ասպատակեց Աղձնիքը և 573 թ-ի մարտին հաղթանակ տարավ Սարգաֆոնի ճ-մ-ում, բայց հետո կտրուկ կերպով տեղի տվեց: Իրոք, թեև արդեն ապրիլ ամսին կայսերական զորքերը պաշարեցին Մծբինը, սակայն անձամբ Խոսրով Ի Անուշիրվանի գլխավորած թշնամական հսկայական բանակի հակահարձակման պայմաններում սեփական բանակի բարձ հրամանատարական կազմում առկա տարաձայնությունների պատճառով կայսերական բանակն այն աստիճան անկազմակերպ նահանջեց, որ ծանր կորուստներ կրեց առաջխաղացած թշնամու հարվածներից: Եվ այսպես, հաշվի առնելով այս ամենը, ես ինձ լիովին հիմնավորված իրավունք եմ տալիս պնդել, որ 4 ճակատամարտերից բաղկացած այս շղթան սկիզբ է առել հենց 573 թ-ի մարտի վերջին, երբ, կայսերական բանակի որոշակի հաջողությունների պայմաններում, Խոսրով Ի Անուշիրվանը վճռական քայլեր ձեռնարկեց պաշարված Մծբինին օգնության հասնելու ուղղությամբ: Ահա հենց նույն այս ժամանակ էլ, ամենայն հավանականությամբ Մծբինին օգնության հասնելու հետ զուգահեռ, հայերի ապստամբությունը հենց բնում խեղդելու նպատակով մի խոշոր բանակ ուղարկեց Տարոնի ուղղությամբ:

[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

[3] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

573 ապրիլ – ***<u>Օձի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Տարոն)[1]

Վահան Գայլ Մամիկոնյանը հաշտության առաջարկ հղեց Միհրան Միհրանյանին, բայց վերջինս չընդունեց այն և հայտարարեց, որ կհեռանա միայն Մուշեղ Քաջակորով Մամիկոնյանին ձերբակալելուց հետո: Ի պատասխան դրա՝ Վահանը մեկնեց Միհրանի մոտ և, ցույց տալով, թե իբր ապստամբել է Մուշեղի դեմ, համոզեց վերջինիս Օձը գրավելու համար իրեն տալ մի ուժեղ ջոկատ (4.000 հեծյալ): Դրանից հետո, թշնամու մի հեծյալ ջոկատ (50) թողնելով Հարձք գյուղում, Վահանը մնացած ուժերով մոտեցավ քաղաքին, որտեղ դարան էր մտել նախապես տեղեկացված Հայկական բանակը (մոտ 1.000):

I փուլ – Քաղաքի դարպասները թշնամուն ընդունելու համար բացվեցին այնքան նեղ, որ թշնամու ռազմիկները կարողացան ներս անցնել միայն փոքր խմբերով: Օգտվելով դրանից՝ Հայկական բանակը մաս առ մաս ոչնչացրեց թշնամու ողջ ջոկատը: Դրանից հետո Հայ ռազմիկները հանդերձավորվեցին թշնամու ռազմիկների զինվորական հանդերձանքով, իսկ Վահանն էլ տեղեկացրեց Միհրանին, թե իբր քաղաքի վերջնական գրավման համար անհրաժեշտ են ևս 2.000 հեծյալներ:

II փուլ – Մինչև թշնամու ուղարկած հերթական ուժերը տեղ կհասնեին՝ Վահանը Պարսից թագավորության բանակի ռազմիկների հանդերձանքով հանդերձավորված Հայ ռազմիկներին կանգնեցրեց քաղաքից դուրս և պատվիրեց թշնամու մոտենալուն պես ձևացնել, թե իբր ոչ միայն արդեն սկսել են քաղաքի գրոհը, այլև գրեթե գրավում են այն: Այս ծրագիրը հաջողությամբ իրագործվեց: Օգնության եկած թշնամու հեծյալները, 20 հեծյալ ուղարկելով Միհրանին ձեռք բերած հաջողության մասին տեղեկացնելու, մնացած ուժերով միացան կեղծ գրոհ իրականացնողներին և, վերջիններիս հետ ներխուժելով քաղաք, ընկան թակարդը ու ողջ կազմով ոչնչացվեցին:

III փուլ – Թշնամու մի փոքրիկ ջոկատ (40 հեծյալ) կարողացավ հեռանալ քաղաքից, սակայն Հայկական բանակը հետապնդեց վերջինիս և, հասնելով նրան քաղաքի մոտ գտնվող ճահճուտներում, լիովին ոչնչացրեց:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ 5.930[2] զինվոր:

573 ապրիլ – ***<u>Մեղրագետի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Տարոն)[3]

Նախորդ ճակատամարտից հետո Վահան Գայլ Մամիկոնյանը իր բանակով (500 հեծյալ և 200 հետևակ նիզակակիր) կրկին մեկնեց Միհրան Միհրանյանի մոտ: Ճանապարհին նա 300 հեծյալ թողեց Մեղրագետի գետանցի հյուսիսային կողմում, իսկ 200 նիզակակիր էլ դարանեց գետանցման հարավային կողմում: Հասնելով Մուշ՝ Վահանը կարողացավ համոզել Միհրանին այն բանում, որ Պարսից թագավորության բանակը, թեև գրավել է Օձը, սակայն ապստամբել է և պատրաստվում է անցնել Բյուզանդական կայսրություն: Արդյունքում՝ Վահանը Միհրանից ստացավ ևս մի բանակ (2.000 հեծյալ) ու կրկին շարժվեց Օձի ուղղությամբ: Ճանապարհին Վահանը կարողացավ համոզել պարսիկ հրամանատարին մասնատել ուժերը և 1.000 հեծյալ ուղարկել թևային անցում կատարելու՝ հիմնական ուժերին թևային հարձակումից պաշտպանելու համար: Դրանից հետո Վահանը իր հետ եղած ուժերից 100 հեծյալ ուղարկեց հետևելու թևանցում կատարող այս ուժերին: Շուտով Վահանի (100 հեծյալ) և Պարսից թագավորության (1.000 հեծյալ) միացյալ ջոկատը հասավ Մեղրագետին ու

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:
[2] Ըստ Հովհան Մամիկոնյանի (մաս 2, գլուխ 1) Պարսից թագավորության բանակից սպանվել է. «վեց հազար՝ հինգը միայն պակաս», սակայն ողջ մարտի ընթացքի վերլուծությունից պարզ է դառնում, որ իրականում պարսկական բանակից փրկվել են 70 հեծյալներ:
[3] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

հանգստանալու տեղավորվեց գետանցման մոտ: Այնուհետև Վահանին հաջողվեց խաբեությամբ բանակատեղիից հեռացնել Պարսից թագավորության բանակի նժույգները:

I փուլ – Վահանի ջոկատը անակնկալ հարձակվեց Պարսից թագավորության բանակի վրա և լիովին ոչնչացրեց այն:

II փուլ – Որոշ ժամանակ անց հայտնվեցին թևային անցում կատարող ուժերը, որոնց հետքերով աննկատ շարժվում էր նաև Հայկական ջոկատը: Թողնելով թշնամուն մտնել գետը՝ Վահանը իր հետ եղած ուժերով միացավ թշնամուն հետևող ջոկատին և արդեն միավորված ուժերով թիկունքից հարձակվեց թշնամու վրա: Դրա հետ միաժամանակ էլ ճակատից հարձակվեցին դարանում տեղավորված նիզակակիրները (200): Արդյունքում՝ թշնամին լիովին ոչնչացվեց:

Հայերը կորցրին մոտ 400, թշնամին՝ 2.000 զինվոր:

Նախորդ իրադարձություններից հետո Վահան Գայլ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը և քաղաքի ապստամբած աշխարհազորը (ընդհանուր մոտ 3.000) Մուշում շրջապատեցին Պարսից թագավորության բանակին, որը կարճատև մարտից հետո գերի հանձնվեց՝ տալով 86 սպանված և 1.904 գերի[1]: Դրանից հետո Խոշտանգելով Միհրանին՝ Վահանը կարողացավ նրանից ստանալ Ապահունիքում գտնվող Պարսից թագավորության բանակին ուղղված մի հրաման, ըստ որի վերջինս պետք է մոտենար Կոթ բերդին (Տուրուբերան, Տարոն): Այնուհետև գերիները փակվեցին մի շենքում և ողջակիզվեցին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

573 ապրիլ – ***<u>Կոթ բերդի ճ-մ</u>***[2]

Նախորդ իրադարձություններից հետո Վահան Գայլ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (3.000) շարժվեց դեպի Կոթ և երեք կողմից դարան դրեց: Իր հերթին Վաշիրը իր բանակից առանձնացրեց 50 հեծյալ և ուղարկեց հետախուզության:

I փուլ – Վահանը Վաշիրին հրավիրեց իր վրանը և, ձերբակալելով ու խոշտանգելով նրան, ստիպեց վերջինիս իր օգնականներին կանչել վրան: Արդյունքում՝ Վաշիրի բոլոր օգնականները սրատվեցին: Այնուհետև Վահանը ստիպեց Վաշիրին հրամայել իր բանակի մի մասին (950) մոտենալ բերդին, իսկ մյուս և ավելի հեռու գտնվող մասին էլ (1.000)՝ Բյուզանդական կայսրության բանակի դեմ կռվելու պատրվակով ժամանել բերդի մոտ ու միանալ Վահանի ջոկատին: Ու, թեև պարսից իշխաններից մեկին ի վերջո հաջողվեց փախչել և տեղեկացնել սեփական բանակին վտանգի մասին, բայց դա արդեն ոչինչ չփոխեց: Երեք կողմից հալածվելով և կոտորվելով՝ թշնամին հետ քաշվեց դեպի բերդ, սակայն վերջինիս կայազորն էլ իր հերթին մտավ մարտի մեջ ու չորրորդ կողմից հարված հասցրեց: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը գլխովին ջախջախվեց:

II փուլ – Պարսից թագավորության բանակի մի մասին (100) հաջողվեց փախուստի դիմել, սակայն Հայկական բանակը հետապնդեց նրան և ոչնչացրեց արդեն ***<u>Ապահունիքում</u>***:

III փուլ – Վահանին հաջողվեց բերդին մոտեցած թշնամու հեծյալ ջոկատի (1.000) հրամանատարին համոզել ուղարկել ձիերն արածելու և միաժամանակ պատրաստ լինելու երեկոյան հետևակ վիճակում Բյուզանդական կայսրության բանակի վրա հարձակում գործելու համար: Այն բանից հետո, սակայն, երբ ձիերը հեռացվեցին, Հայկական բանակի դարանակալ ռազմիկները առևանգեցին դրանք:

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:
[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

Դրանց հետո, թույլ չտալով թշնամուն ուշքի գալ, Հայկական հիմնական բանակը երկու կողմից հարձակվեց թշնամու վրա և գլխովին ջախջախեց:

Հայերը կորցրին մոտ 400 զինվոր, թշնամին՝ 1.910 սպանված, 40 գերի, որոնք ազատ արձակվեցին:

Տեղեկանալով ծավալված իրադարձությունների մասին՝ Արձան լեռան մոտ ճամբարած Պարսից թագավորության բանակի մնացած մասը արագորեն նահանջեց, իսկ Վահանը ազատ արձակված գերիների միջոցով Միհրանի գլուխն ուղարկեց Խոսրով I -ին՝ պատվիրելով օգտագործել այն որպես խաղագնդակ: Հենց դրանից հետո էր, որ թշնամին Վահանին կնքեց «Գայլ» մականունով: Եվ այսպես, Տարոնի ուղղությամբ հասցված հարվածը վերջացավ լիակատար անհաջողությամբ և այս պայմաններում, մինչ Խոսրով I-ը վերջնականապես ի մի կբերեր ուժերը, թուլացած պարսկական ուժերի դեմ կրկին գործի անցավ նաև Բյուզանդական կայսրության բանակը, որը, ինչպես 503, 504, 527, 528 և 541 թվականներին, հասցրեց երկար նախապատրաստվող հերթական հարվածը Մծբինի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

573 ապրիլ – ***Մծբինի ճ-մ***[1]

Արևելքի հրամանատար Մարկիանոսի և Հայաստանի հրամանատար Հովհանի գլխավորությամբ ***Դարա ամրոցից*** առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) պաշարողական տեխնիկայի կիրառմամբ պաշարեցին քաղաքը Վահրամ Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակից (մոտ 3.000):

I փուլ – Կայսրական բանակը շրջափակեց քաղաքը, սակայն որևէ էական հաջողության չհասավ, իսկ արդեն շուտով էլ, այն բանից հետո, երբ Մարկիանոսը մեղադրվեց գահակալական հավակնությունների մեջ և կոպիտ վիրավորանքներից հետո պաշտոնազրկվեց, առաջ եկած անհամաձայնության ու խառնաշփոթի պայմաններում սկսեց նահանջել:

II փուլ – Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ քաղաքի կայազորը արտագրոհ իրականացրեց և պարտության մատնեց նահանջողներին՝ հատկապես ծանր կորուստներ պատճառելով հակառակորդի հետևակին:

Հայերը կորցրին մոտ 1.500, դաշնակիցը՝ մոտ 2.000, թշնամին՝ մոտ 1.500 զինվոր, ընդ որում քաղաքի կայազորին բաժին հասավ նաև քաղաքի գրավման համար նախատեսված պաշարողական տեխնիկան:

Մծբինի պարիսպների տակից կայսերական բանակի խայտառակ նահանջը, թերևս, արդեն սովորական էր վերջին բոլոր պատերազմների համար: Սովորական եղավ, սակայն, նաև դեպքերի հետագա զարգացումը, երբ, կարծես թե, կրկնվեց 540 թվականի վիճակը:

Իրոք, դեպքերը փոխանցող հեղինակները կայսերական բանակի նահանջի հարցում էական են համարում ամենից առաջ հենց Մարկիանիոսի պաշտոնականության կապակցությամբ տրված խիստ անժամանակ հրահանգը, սակայն, թերևս, ավելի կարևոր էր այն հանգամանքը, որ հենց այս ժամանակ սեփական տերության արևելյան սահմաններից տեղափոխված իր երկաթյա բյուրերի գլուխն անցած լայն ճակատով արևելքից Մծբինին էր մոտենում Խոսրով I-ը: Իրոք, 140.000 հոգանոց այս բանակը, որի կազմում կային հեծելազորի 4 լիարժեք բյուրեր և 10 բյուր հետևակ, այլ պարագայում ուղղակի կճզմեր Մծբինի պարիսպների տակ ևս մի քիչ հապաղած Մարկիանոսի ռազմիկներին: Արդյունքում, թեև բոլոր սկզբնաղբյուրներն էլ կայսրության բանակի հապճեպ և նույնիսկ խուճապահար նահանջի հարցում, ինչպես արդեն ասվեց, միաձայն մատնանշում են այնուհանդերձ հենց Մարկիանոսի պաշտոնանկությամբ պայմանավորված հիասթափությունը, սակայն կարծում եմ, որ այստեղ առաջնային էր հենց հսկայական ուժերով առաջացող Խոսրով I-ի պարագան, ինչի մասին լուրերը Մարկիանոսի պաշտոնանկության պահին արդեն իսկ, անկասկած, տարածվել էին Մծբինը պաշարած բանակում: Այսպես թե այնպես, սակայն սեփական հաճույքների մեջ Կոստանդնուպոլսում լողացող Հուստինոս II-ին արյաց արքան այս անգամ ևս ցույց տվեց թե ինչ է «540 թվականը» և ինչի կարող է հանգեցնել թեթևամիտ ու հակառակորդին թերագնահատելու մտայնությամբ անպատրաստ վիճակում սկսած պատերազմը: Այս առումով, թերևս, պատահական չէր, որ հենց այս դեպքերից հետո Հուստինոս II-ը, որի հոգեկան վիճակը մինչ այդ էլ առանձնապես կայուն չէր, արագացող տեմպերով աստիճանաբար վերջնականապես խելագարվեց:

Հյուսիսային Միջագետքի և Ասորիքի ուղղությամբ 530 ու 540 թվականներին իրականացված հարվածների ժամանակ Պարսից թագավորության ռազմական

[1] Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 8, 9; Թեոփանոս Բյուզանդացի «Պատմություն», մաս 4; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 10, 11; Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 38; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 2; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17: Այս մասին հայտնում են նաև Փոտը:

մեքենան երկու անգամ էլ կանգ էր առել Դարա ամրոցի առջև, սակայն այս անգամ, դատելով ըստ ամենայնի, արյաց խորամանկ արքան այդ մասին նախապես մտածել էր: Արդյունքում՝ նույնիսկ իր հայտնվելու լուրով իսկ ցրելով Մծբինի պարիսպների տակ ճամբարած կայսերական բանակին, Պարսից թագավորության բանակը նույն թվականի ապրիլ ամսին Հայաստանի հրամանատար Հովհանի գլխավորած կայսրության կայազորից շրջափակեց Դարա ամրոցը: Այս ամրոցը, սակայն, որն, ինչպես կղզին ծովի մեջ, դիմացավ մինչև սեպտեմբեր, չկասեցրեց արյաց արքայի հիմնական բանակի հեղեղանման առաջխաղացումը, ընդ որում վերջինիս հարվածի սուր ծայրում այս անգամ ևս բազմաչարչար Անտիոքն էր, որը նախորդ գրավումից հետո մեծ հաշվով դեռևս չէր էլ հասցրել ուշքի գալ:

Եվ այսպես, արդեն 573 թվականի ամռանը, լայնարձակ մի ճամբար զարկելով Դարա ամրոցի մոտակայքում, այս ճամբարը պետք է կիրառվեր որպես հարվածային բանակի թիկունքային ապահովման միջոց, ինչպես նաև ավարի և գերիների կենտրոնացման վայր, ու միաժամանակ շարունակելով նաև Դարա ամրոցի պաշարումը, Խոսրով I-ն ինքը մնաց տեղում՝ փոխարենն առաջ ուղարկելով սեփական բանակային հիմնական ուժերը: Ավելին, այս անգամ ևս կրկնելով «540 թվականի պատկերը», արյաց արքան մինչ այդ Կիրկեսիոնի մոտ Եփրատի աջ ափ էր անցկացրել Ադարմահոնի գլխավորած մի ուժեղ ջոկատ (6.000), ինչպես նաև, բնականաբար, Կավուսի (մոտ 570-574) գլխավորած Լախմյանների թագավորության ողջ բանակը, որոնց էլ հենց պետք է միանային արդեն Դարա ամրոցից ուղարկված սեփական բանակային հիմնական ուժերը:

Արդյունքում, ինչպես 540 և 544 թվականներին, Հայոց Միջագետքն ու Հյուսիսային Ասորիքը ասպատակելով առաջացած Ադարմահոնի հարվածային բանակը մոտեցավ բազմաչարչար Անտիոքին և այս անգամ արդեն առանց լուրջ մարտերի գրավեց այն: Այնուհետև, շարունակելով արշավանքը, Ադարմահոնի բանակը ուղղություն վերցրեց դեպի Ապամեա և, համոզելով նրա կայազորին հանձնվել, թալանեց ու ավերեց նաև այս քաղաք: Դրանից հետո արյաց արքայի հարվածային բանակը ձեռք բերած խոշոր ավարով վերադարձավ Դարա ամրոցի մոտակայքում գտնվող հիմնական ճամբարը, որտեղ արդեն կենտրոնացված էր հսկայական չափի մի ավար, ինչպես նաև կային գերված 292.000 հոգի խաղաղ բնակիչներ[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

573 ապրիլի կես - սեպտեմբերի կես – ***<u>Դարա ամրոցի գրավումը</u>***[2]

Խոսրով I-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (140.000, որից 40.000 հեծյալ, այդ թվում հեփթաղներ) մոտեցավ ամրոցին, որտեղ Հայաստանի հրամանատար Հովհանի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500, այդ թվում Սարգիսը) անցան համառ պաշտպանության:

I փուլ – Ապրիլ ամսից մինչև օգոստոսի վերջ հարձակվողները պաշարողական տեխնիկայի լայն կիրառմամբ մի շարք փորձեր կատարեցին տիրելու ամրոցին, սակայն դրանք ավարտվեցին անհաջողությամբ: Նույն կերպ

[1] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 6; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 9; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 9, 10; Թեոփիլիատոս Սիմոնակատաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 10; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 9; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5:

[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 5; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 9; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 9, 10; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 5, 11, 18; Թեոփանոս Բյուզանդացի «Պատմություն», մաս 4; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն»; Զաքարիա Ղազվինի «Երկրների հայտնի վայրերը և հաղորդումները Ալլահի ստրուկների մասին»; Յակուտ ալ-Համավի «Աշխարհագրական բառագիրք»:

ավարտվեցին նաև 500 կգ ոսկի ստանալու դիմաց ամրոցից հեռանալու մասին բանակցությունները: Այս ընթացքում նետի մահացու հարված ստացավ և զոհվեց Սարգիսը: Միաժամանակ, ամրոցի շրջափակման համար թողնելով անհրաժեշտ ուժեր, Պարսից թագավորության բանակի հիմնական ուժերը ներխուժեցին և ասպատակեցին ***Ասորիքը, ինչպես նաև Հայոց Միջագետքը***՝ միանալով մինչ այդ այստեղ արդեն իսկ գործող Ադարմահոնի և Լախմյանների թագավորության բանակին:

II փուլ – Սեպտեմբերի առաջին կեսին, երբ բանակային հիմնական ուժերը կրկին արդեն հավաքված էին ամրոցի մոտակայքում, ձևացնելով, թե իբր հեռանում են ամրոցից, հարձակվողները բթացրին վերջինիս կայազորի զգոնությունը և պաշարողական աշտարակի օգնությամբ ձեռնարկած անակնկալ գրոհով տիրեցին ամրոցի պարիսպների առաջին շարքին, սակայն ամրոցի կայազորը, համառ դիմադրելով, հետ քաշեց ուժերը ու դիմադրությունը շարունակեց պարիսպների երկրորդ շարքում:

III փուլ – Հարձակվողները 7 օր շարունակ գրոհեցին ամրոցի պարիսպների երկրորդ շարքը, սակայն, կրելով զգալի կորուստներ, որևէ հաջողության չհասան:

IV փուլ – Սեպտեմբերի կեսերին Խոսրով Ի-ը վերսկսեց բանակցությունները և կողմերը եկան համաձայնության այն բանի շուրջ, որ ամրոցի կայազորը պետք է պատվավոր կապիտուլյացիայի ենթարկվի ու զենքով և հանդերձանքով հեռանա, սակայն, այն բանից հետո, երբ պաշտպանվողները դուրս եկան պարիսպների երկրորդ շարքից, անակնկալ հարձակման ենթարկվեցին հակառակորդի կողմից ու ողջ կազմով զոհվեցին կամ գերվեցին, ինչից հետո ամրոցը վերջնականապես գրավվեց:

Հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 900, թշնամին՝ մոտ 7.000 զինվոր:

573 թվականի աշնանը Պարսից թագավորության բանակը Դարա ամրոցից հրաշքով դուրս պրծած Հայաստանի հրամանատար Հովհանի գլխավորած կայսերական բանակից գրավեց նաև հետագայում այնքան հայտնի դարձած Մարդինը (Հայոց Միջագետք, Մծբինի մոտ 50 կմ հյուսիս-արևմուտք)[1], ընդ որում այս անգամ Հովհանն արդեն գերվեց: Դրանից հետո, միանգամայն գոհ ձեռք բերած արդյունքից, արյաց արքան հիմնական ուժերը աստիճանաբար սկսեց հետ քաշել դեպի ելման դիրքեր: 573 թ-ն ավարտվում էր և տարվա արդյունքով արյաց արդեն ծերացող արքան փաստորեն լիուլի ցույց տվեց, որ ինքը դեռևս ի վիճակի է կայսրության համար «540 և 544 թվականներ» կազմակերպել, իսկ այդ պարագայում կանխատեսելի էր նաև արդյունքը, ինչպես եղավ 545 թվականին:

Եվ այսպես, Խոսրով Ի-ի հաղթարշավից հետո 573 թվականի արդեն աշնանը սկսվեցին բանակցություններ և, այն բանից հետո, երբ պաշտոնական Կոստանդնուպոլիսը վճարեց 300 կգ ոսկի ու պարտավորվեց ամեն տարվա համար վճարել ևս այդքան, երեք տարով զինադադար կնքվեց, որը, սակայն վերաբերում էր միայն Ասորիքին ու Միջագետքին: Իր հերթին, որպես յուրօրինակ մի զիջում, Խոսրով Ի-ը, հետ տալով Անտիոքը, գերված խաղաղ բնակչության հիմնական մասին հսկողության տակ տեղաբաշխեց նույն Անտիոքի շրջակայքի լայնարձակ ճամբարներում: Միաժամանակ վերջնական բանակցությունները խաղաղություն կնքելու ուղղությամբ շարունակվեցին, սակայն, դրանք, տևելով ողջ 574 թվականը, այդպես էլ ոչ մի արդյունքի չհասցրին:

Նախորդ տարի կնքված հաշտությունը վերաբերում էր, ինչպես արդեն ասվեց, միայն Ասորիքին ու Միջագետքին, ինչն էլ հաշվի առնելով, Խոսրով Ի-ը 574 թվականին հարված հասցրեց Հայաստանի ու Վրաստանի ուղղությամբ: Արդեն 574 թվականի գարնանը Վահրամ Չուբինի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից

[1] Հովհան Եպիփանացի «Պատմություն»:

թագավորության բանակը (20.000, մոտ 15 փիղ), օգտվելով Ֆիլիպ Սյունու գլխավորած Սյունյաց գնդի մի մասի (մոտ 1.000) աջակցությունից, առաջացավ Վասպուրականում, սակայն արդյունքում Մարդաստան գավառի Խաղամախյա դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 20.000) հաղթանակ տարավ հակառակորդի նկատմամբ և հետ շպրտեց վերջինիս[1]: Նույն այս ժամանակ իր հերթին, չնայած ձեռք բերված զինադադարի պայմաններին, Խոսրով Ի-ը ոտքի հանեց իբրև թե սեփական նախաձեռնությամբ գործող արաբներին և արդյունքում Գասանյանների ու Լախմյանների թագավորությունների միացյալ բանակը (մոտ 10.000) անակնկալ հարձակումով ասպատակեց Անտիոքի շրջակայքը և ավարով նահանջեց[2]: Այսպիսով, ձևականորեն չխախտելով զինադադարի պայմանները, խորամանկ Խոսրով Ի-ն այնուհանդերձ թալանեց կայսերական տարածքները: 574 թվականը գործնականում արդեն լիովին խելագարված Հուստինոս II-ի համար, սակայն, թեթև չէր նաև իր կայսրության արևմտյան սահմաններին, որտեղ Լանգոբարդական թագավորության բանակը (մոտ 80.000) նույն թվականի ամռանը պաշարեց Հռոմը և քաղաքը հնարավոր եղավ պահել միայն մեծ դժվարությամբ[3]:

574 թ-ի սկզբին հյուսիսային ուղղությամբ հասցված հարվածը պաշտոնական Տիզբոնին հաջողություն չէր բերել և արդյունքում, փորձելով այնուհանդերձ հետ բերել Հայաստանն և հարակից երկրները, Խոսրով Ի-ը հենց նույն տարում էլ հերթական քայլն արեց, այս անգամ հարված հասցնելով Կուր գետի հովտով, ընդ որում հարվածի ղեկավարն էր դավաճան Ֆիլիպ Սյունին: 574 թվականի աշնանը, սակայն, սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 15.000) Կաղանկատվայքի ճ-մ-ում (Արցախ, Մեծ Կուենք գավառի արևելք, Թարթառ գետի ափին) անորոշ ելք ունեցած մարտում ընդհարվեց Ֆիլիպ Սյունու գլխավորած Պարսից թագավորության բանակի (մոտ 40.000) ու Սյունյաց գնդի մի մասի (մոտ 1.000) հետ և ի վերջո նահանջեց[4]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց, սակայն, արդեն Ութմուս գյուղի ճ-մ-ում (Արարատ, Վանանդ գավառ) սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 20.000) վերջնական հաղթանակ տարավ Ֆիլիպ Սյունու գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 30.000) և Սյունյաց գնդի մի մասին (մոտ 900) նկատմամբ: Այսպիսով՝ 574 թվականին պաշտոնական Տիզբոնի քաղաքականությունը հյուսիսում, ի տարբերություն հարավի, անհաջողության մատնվեց[5]: Ավելին, դատելով ըստ ամենայնի, վերոգրյալ անհաջողությունը վճռական ազդեցություն ունեցավ նաև Ֆիլիպ Սյունու քաղաքական ճակատագրի վրա, քանզի դրանցից հետո նրա մասին հիշատակություններ այլևս չկան:

574 թվականի վերջի վիճակով Հուստինոս II-ի հոգեկան վիճակը, ինչպես արդեն ասվեց, հասել էր քայքայվածության ծայրահեղ աստիճանի, ընդ որում բանը, երբեմն, հասնում էր նույնիսկ նրան, որ կայսրը սկսում էր շան նման հաչել և կաղկանձել՝ չորեքթաթ պտտվելով սեփական պալատի պարիսպների տակ: Ստեղծված պայմաններում կայսրությունը փաստորեն մնացել էր առանց ղեկավար ձեռքի և արդյունքում, հաշվի առնելով հատկապես սահմաններում ստեղծված ծանր դրությունը, մեծապես հենց կայսրուհի Սոֆիայի ջանքերով ու համաձայնությամբ 574 թվականի դեկտեմբերի 7-ին իշխող զույգը որոշում ընդունեց որդեգրել պալատական պահակազորի հրամանատար, Հուստինոս II-ի ընկեր և զինակից համարվող Տիբերիոսին՝ փաստացի հենց վերջինիս կարգելով կայսրության ղեկավար: Ընդունված որոշումը արագորեն կյանքի կոչվեց և արդյունքում Հուստինոս II-ը, իրավաբանական մակարդակում շարունակելով ղեկավարել Բյուզանդական կայսրությունը, իրականում մի կողմ մղվեց պետական կառավարման

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 8; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 16; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 30:
[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 4; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն:
[3] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 3, գլուխ 11; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն:
[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:
[5] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:

լծակներից, որոնք փաստացի անցան Տիբերիոսի՝ Տիբերիոս I-ի (574-578 գահակից, 578-582), ձեռքը: Վերջինս ուշագրավ, իսկ ինչ-որ տեղ նույնիսկ հակասական մի անձնավորություն էր:

Ծննդով Բալկանյան թերակղզուց և արդյունքում հանդիսանալով գերմանա-հռոմեական քաղաքակրթության հետնորդ՝ նոր կայսրը, կարծես, կայսրության ղեկից գործնականում արդեն լիովին հեռացած նույն այդ քաղաքակրթության վերջին ու տիպիկ կրողներից մեկն էր: Լինելով տաղանդավոր կազմակերպիչ և սթափ գնահատելով իրերի ստեղծված ծանր դրությունը՝ Տիբերիոս I-ը դրա հետ մեկտեղ կարծես նաև հանդես էր բերում արդեն վաղուց անցյալի գիրկն անցած Հռոմեական կայսրության կայսրերի հին սովորությունները՝ սիրաշահել ժողովրդին և այդ ճանապարհին կանգ չառնել ծախսերի առաջ: Նոր տիրակալը, կյանքը սկսած լինելով հասարակության ցածր շերտերից, մեծ հաշվով բարի, ներողամիտ և մեծահոգի մի անձնավորություն էր, որը, դրան գումարած, նաև նվիրված էր իր ընտանիքին: Սրա հետ միաժամանակ Տիբերիոս I-ը ուներ նաև թերություններ և դրանցից ամենից առաջ կարելի էր մատնանշել պետական մտածողության որոշակի սահմանափակությունը, քանզի, ինչպես ցույց տվեց կյանքը, նորահայտ այս տիրակալը մեծ հաշվով այդպես էլ մնաց ռազմական իրավիճակի ընդամենը միայն գործունյա մի կազմակերպչի դերում, երբ ավելի առաջ գնալ և անել քայլեր, որոնք կկայունացնեին պետության դրությունը ու կմատնանշեին վերջինիս զարգացման հետագա հիմնական ուղղությունները, նա այդպես էլ չարեց: Հատկանշական է նաև, որ, լինելով հետևողական քաղկեդոնական, Տիբերիոս I-ը արևելյան քրիստոնյաների նկատմամբ ուժեղացրեց նաև կրոնական ճնշումները, ինչն իր հերթին չէր կարող բացասական չանդրադառնալ կայսրության ընդհանուր դրության վրա:

Հուստինոս II-ը, իհարկե պետական հարցերում, անձնական հաճույքների գործում այս կայսրը ևս ցոփ ու շվայտ էր, գործում էր պետական միջոցների ծայրահեղ խնայողության իր կողմից որդեգրած քաղաքականության պայմաններում, սակայն Տիբերիոս I-ը գործեց լիովին հակառակ կերպ: Թուլացնելով հարկային բեռը, ինչպես նաև զգալի միջոցներ ծախսելով ժողովրդի շրջանում իր հեղինակության ամրապնդման վրա՝ դրա հետ միաժամանակ էլ նոր տիրակալը նաև խոշոր միջոցներ դրեց բանակային քայքայված մեխանիզմը կարգի գցելու գործի մեջ: Այս ոլորտում, ըստ էության չունենալով այլ ելք, Տիբերիոս I-ը փաստացի կյանքի կոչեց Հուստինիանոս I-ի կառավարման սկզբնական տարիներին իրականացվող նույն քաղաքականությունը՝ ֆինանսական հսկայական միջոցների կիրառմամբ Եվրոպայից հավաքագրել հնարավորինս մեծ քանակի վարձկաններ: Բանակաշինության հարցում իրականացված այս քաղաքականությունը, որը հետևողականորեն իրականացվեց 575 թվականին, իր արդյունքները տվեց արդեն հաջորդ տարի:

575 թվականին, իրոք, երկու գերտերությունների հարաբերություններին, կարծես թե, վիճակված էր շունչ քաշելու տարի լինել, երբ Տիբերիոս I-ը արագորեն կյանքի էր կոչում բանակը համալրելու հետ կապված իր միջոցառումները, իսկ Խոսրով I-ին էլ նախորդ հակասական տարիներից հետո ուժերն ի մի բերելու համար ժամանակ էր պետք, թեև գործողությունների ազատություն ամեն դեպքում ուներ հենց պաշտոնական Տիզբոնը: Միաժամանակ, սակայն, հենց այս տարում էր, որ մինչ այդ շահագրգռված, բայց առժամանակ իրադարձությունների կողմնակի դիտորդ հանդիսացող Իստեմի խանը ի վերջո միջամտեց Կովկասյան լեռնաշղթայից հարավ զարգացող դեպքերին՝ գործի դնելով Ալանական թագավորությունը:

Արդյունքում՝ Իստեմի խանի ուժերն անցան Ալանաց դուռ լեռնանցքը և ուղղություն բռնեցին դեպի հարավ: Հենց նույն այս ժամանակ Պարսից թագավորության հերթական մի բանակ, առաջանալով Կուրի ափերով, փորձ կատարեց ներխուժել Հյուսիսային Հայաստան ու Հարավային Վրաստան, սակայն Էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Հայկական բանակը (մոտ 10.000, այդ թվում վրացիներ), Ալանական թագավորության բանակը (մոտ 10.000, այդ թվում

թյուրքեր), ինչպես նաև Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) հաղթեցին ու հետ շպրտեցին թշնամուն[1]: Դրանից հետո, հաղթականորեն առաջանալով և համալրված լինելով արդեն նաև Խուրսի և Թեոդորոսի գլխավորած կայսերական բանակի նոր ուժերով, Գուրգեն-Գուարմ Բագրատունու հրամանատարության տակ գործող բանակը ասպատակեց Աղվանքի տարածքը[2]:

Կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերի ուղղությամբ հասցված հարվածի անհաջողությունը ծանր նստեց պաշտոնական Տիզբոնի վրա, ընդ որում բանը հասավ ի վերջո նույնիսկ նրան, որ, ևս մեկ անգամ ոտնատակ տալով Աղվանքը նույն թվականի արդեն աշնանը, դաշնակից ուժերը փորձ կատարեցին ամրանալ այս երկրամասում՝ արյաց արքայի տերության համար Կապադովկիայից մինչև Կասպից ծով ձգվող լայն ճակատով հյուսիսից մշտական սպառնալից վիճակ ստեղծելու նպատակով[3]: Այսպիսով՝ 575 թվականին Խոսրով Ի-ին չհաջողվեց լուծել վերջին տարիների իրադարձությունների հակասական բնույթը և, պատրաստած արդեն ամեն ինչ, արյաց արքան պատրաստվեց վճռական հարված հասցնել հաջորդ տարում, ընդ որում պաշտոնական Տիզբոնին որոշակի հույսեր էր տալիս նաև այն հանգամանքը, որ մշտապես տատանվող և սեփական քաղաքական առաջնահերթությունների մեջ այդպես էլ իրական ընտրություն չկատարած Իստեմի խանը հենց այդ տարում իր հերթին պատրաստվում էր հարված հասցնել կայսրությանը Ղրիմում:

576 թվականի ամենասկզբում Իստեմի խանը շարժի մեջ դրեց իր մեծաքանակ հորդան և, ոտնատակ տալով կայսրության թույլ պաշտպանված տիրույթները Ղրիմում, գրավեց Բոսպոր քաղաքը[4]: Ավելի առաջանալ, սակայն, Թյուրքական խաքանության ռազմական մեքենան առժամանակ ի վիճակի չէր, քանի որ արևմտյան ուղղությամբ ուժերն ի մի բերած Ավարական խաքանությունն և իրադարձություններին ուշադիր հետևող Բայան Ի-ն էին, իսկ հարավային ուղղությամբ էլ գործում էին ինչպես Պարսից թագավորության, այնպես էլ Բյուզանդական կայսրության զգալի ուժեր, ընդ որում ոչ մի կերպ հնարավոր չէր վերջնականապես հաշվարկել, թե ռազմական հարաբերակցության ի վերջո վերջնական ի՞նչ իրադրություն կառաջանա:

Թյուրքերի ակտիվանալու հետ միաժամանակ ակտիվացան նաև Խոսրով Ի-ի զորավարները, որոնք խնդիր ունեին կայսրությանն ահաբեկելու միջոցով հասնել նրան, որ նախորդ տարիներին կնքված զինադադարը նույն այդ պայմաններով երկարաձգվի ևս 5 տարով, ընդ որում արդեն ուժերը զգալիորեն ի մի բերած Տիբերիոս Ի-ին նույն այդ զինադադարը պետք էր առավելագույնը 2 տարի ժամկետով: Արդյունքում՝ Ադարմահոնի և Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորությամբ 576 թվականի մարտին Դարա ամրոցից առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 20.000) ասպատակեց Դարա ամրոցի, Կոնստանդինեի, Թելբեշմայի ու Ռաշ-Այնի շրջակայքը, սակայն հետագայում, տեղեկանալով Արևելքի նոր հրամանատար Հուստինիանոսի գլխավորությամբ կենտրոնացող կայսերական խոշոր բանակի (60.000) առաջխաղացման մասին, նահանջեց[5]: Դրանից հետո բանակցություններն ավարտվեցին և, այն բանից հետո, երբ կայսրությունը վճարեց 300 կգ ոսկի ու պարտավորվեց ամեն տարվա համար վճարել ևս այդքան, երեք տարով հերթական մի զինադադար կնքվեց, որը, սակայն, կրկին վերաբերում էր միայն Ասորիքին և Միջագետքին: Արդյունքում, համարելով իրադրությունը հարավում հանդարտեցված, Խոսրով Ի-ը ձեռնամուխ եղավ վերջինը և վճռականը լինելուն կոչված վաղուց նախապատրաստվող իր հզոր հարվածը հասցնելուն, որը ստեղծված պայմաններում բնականաբար պետք է լիներ Հայաստանի ուղղությամբ:

---

[1] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; իբն ալ-Ասիր «Լիակատար պատմություն»; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 24; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17:

[2] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 43:

[3] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 43, 44:

[4] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 47:

[5] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 13; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 13; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 42; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

576 թվականի մարտին Խոսրով Ի-ի և Վահրամ Չուբինի գլխավորությամբ Մծբին-Արզն-Բաղեշ-Խլաթ (վերջինը՝ Տուրուբերան, Բզնունիք գավառ, Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին) -Բագավան երթուղով առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000, մոտ 30 փիղ) արդեն ապրիլ ամսին Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 2.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 1.000) պաշարեց Կարինը, սակայն այդպես էլ չկարողացավ գրավել այն[1]: Նույն այս ժամանակ հերթական անգամ Կովկասյան լեռնաշղթայից հարավ իր քաղաքականությունն էր որոշել կյանքի կոչել, սակայն, նաև Իստեմի խանը, որը ինչպես թյուրքերի, այնպես էլ կովկասյան լեռնականների, աբխազների ու վրացիների լայն աջակցությունն ապահովեց Գուրգեն-Գուարմին: Ստեղծված պայմաններում, մի պահ ընդհատելով շարժը դեպի արևմուտք և Կարինի պաշարում շարունակելու համար տեղում թողնելով որոշ ուժերը, Խոսրով Ի-ը իր 140.000 հոգանոց հարվածային բանակը, այդ թվում 40.000 հեծյալ, շարժեց Գուգարքի ուղղությամբ: Արդյունքում, առաջանալով Կարին-Բարձր Հայք-Տայք երթուղով, արյաց արքան պարտության մատնեց էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Հայկական (մոտ 20.000, այդ թվում վրացիներ) և Ալանական թագավորության (մոտ 10.000, այդ թվում թյուրքեր) միացյալ բանակին, ինչպես նաև Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 1.000)[2]: Որպես հետևանք, համարելով հյուսիսը հանդարտեցված, արյաց արքան շարունակեց առաջխաղացումը արևմտյան ուղղությամբ, սակայն, ինչպես շուտով պարզվեց, կայսերական ռազմական տեսաբանները խորամանկել էին իրեն և արդյունքում փորձված արքան, ինչպես նաև մեծ զորավարի հավակնություններ դրսևորող Վահրամ Չուբինը սեփական բանակով հայտնվեցին օպերատիվ իսկական մի ծուղակում:

Բանն այն էր, որ Տիբերիոս Ի-ը, կանխատեսելով ապագա հնարավոր զարգացումները, արդեն մեծապես համալրված իր 120.000 հոգանոց արևելյան բանակը բաժանել էր երկու մասի, որի ուղիղ կեսը Արևելքի հրամանատար Հուստինիանոսի գլխավորությամբ գործում էր Ամիդի մոտակայքում, իսկ մյուս կեսն էլ Հայաստանի հրամանատար Կուրսի գլխավորությամբ տեղակայված էր Սեբաստիայից հյուսիս-արևմուտք: Եվ վերջապես գոյություն ուներ նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորած 30.000 հոգանոց Հայկական բանակը, որը, Խոսրով Ի-ին զիջելով Մարզպանական Հայաստանի հիմնական մասը և առանց մարտերի հետ քաշվելով հյուսիսային ուղղությամբ, միաժամանակ Գուրգեն-Գուարմի պարտված, բայց չոչնչացված ուժերի հետ միասին պատրաստվում էր իր լայն մասնակցությունը բերել կայսրության զորավարների ապագա օպերատիվ մտահաղացմանը:

Այսպես թե այնպես, սակայն, նպատակակետ ունենալով Կապադովկիան, 576 թվականի հունիսին Պարսից թագավորության բանակը գրավեց Սեբաստիան և ավերեց այն[3], որից հետո ուղղություն բռնեց դեպի Կեսարիա: Հենց այդ պահից էլ վերջնականապես փակվեց օպերատիվ այն թակարդը, որի մեջ հայտնվեցին արյաց արքան, նրա փառատենչ զորավարը և Պարսից թագավորության հարվածային բանակը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

576 հունիս – ***<u>Կեսարիայի ճ-մ</u>***[4]

---

[1] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 43; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8, գիրք 2, գլուխ 21; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 12; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Սեբեոս «Պատմություն», գլուխ 8:

[2] Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; իբն ալ-Ասիր «Լիակատար պատմություն»; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8; Վախուշտի Բագրատունի «Քարթլիի պատմությունը» ; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

[3] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 12; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 18; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17:

[4] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 24, գիրք 6, գլուխ 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17:

Խոսրով Ի-ի և Վահրամ Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 140.000, մոտ 30 փիղ) սկսեց առաջանալ ***Սեբաստիա-Կեսարիա*** երթուղով: Ի պատասխան դրա՝ Վարդան Մամիկոնյանին, ինչպես նաև էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (30.000) սկսեց շարժվել վերջինիս հետքերով, իսկ Հայաստանի հրամանատար Կուրսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներն (մոտ 10.000) էլ կասեցրին հակառակորդի առաջխաղացումը՝ ամուր դիրքեր գրավելով Կեսարիայից հյուսիս-արևելք տարածվող լեռներում: Փորձ կատարելով դուրս գալ շրջապատման օղակից և խուսափել երկու ճակատով մարտնչելուց՝ Պարսից թագավորության բանակը, չհասած Կեսարիային, կտրուկ շրջադարձ կատարեց դեպի արևելք և սկսեց նահանջել ***Մելիտեի*** ուղղությամբ, որտեղ նրա առաջխաղացումը պատրաստվեցին կասեցնել արդեն Արևելքի հրամանատար Հուստինիանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (60.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000)[1], ընդ որում ուժերը միավորած Կուրսի և Վարդան Մամիկոնյանի միացյալ բանակը շարունակում էր շարժվել հակառակորդի հետքերով:

I փուլ – Կուրսի ու Վարդան Մամիկոնյանի միացյալ բանակը անակնկալ հարձակում գործեց Պարսից թագավորության բանակի ճամբարի վրա և, պարտության մատնելով ճամբարը հսկող թշնամու վերջապահին, զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին ու մեծ ավար ձեռք բերեց:

II փուլ – Պարսից թագավորության բանակը, օգտվելով այն բանից, որ ավարառությամբ զբաղված հակառակորդը անմիջականորեն հետապնդում չի իրականացնում, սրընթաց երթով շարունակեց նահանջը դեպի արևելք և, մանր մարտերից հետո իր ճանապարհից ստիպելով մի կողմ քաշվել Հուստինիանոսի բանակին, ի վերջո հասավ ***Մելիտեին*** ու ճամբար զարկեց այդ քաղաքի մոտակայքում:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 10.000 զինվոր:

576 հուլիս – ***Մելիտեի ճ-մ***[2]

Արևելքի հրամանատար Հուստինիանոսի և Հայաստանի հրամանատար Կուրսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 115.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 18.000), ինչպես նաև Վարդան Մամիկոնյանին ու էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 29.000) մոտեցան Խոսրով Ի-ի և Վահրամ Չուբինի գլխավորությամբ քաղաքից հարավ ճամբար զարկած Պարսից թագավորության

[1] Քննարկվող իրադարձություններում Բյուզանդական, ինչպես նաև Վարդան Մամիկոնյանի բանակների թվակազմը տալիս հիմք է ընդունվել հետևյալը: Համաձայն Հովհան Եփեսացու, Արևելքում գտնվող կայսերական բանակը կազմում էր 120.000 ռազմիկ («Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8: Նույն հեղինակը հայտնում է նաև, որ 576 թ-ի սկզբին այս բանակը բաժանված էր երկու մասի և դրանցից մեկը, որը գտնվում էր Արևելքի հրամանատար Հուստինիանոսի հրամանատարության տակ, կազմում էր 60.000 ռազմիկ («Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 13), ինչից էլ տրամաբանորեն հետևում է, որ Հայաստանի հրամանատար Կուրսի գլխավորած բանակի մյուս մասին էլ բաժին է հասնում մնացած 60.000 ռազմիկը: Եվագրիոս Սխոլաստիկոսը («Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 14), նկատի ունենալով արդեն Արևելքում գործող բոլոր ուժերին, հայտնում է, որ դրանք կազմում էին 150.000 ռազմիկ: Հիմք ընդունելով վերոգրյալը կարծում եմ, որ առաջին ու երկրորդ հեղինակների հայտնած տվյալների տարբերությունը կազմող 30.000 ռազմիկը բաժին է ընկնում Մարզպանական Հայաստանին և, մասնակի նաև, Հարավային Վրաստանին, ընդ որում այս թիվը լիովին համապատասխանում է հիշատակված տարածքների ռազմական հնարավորություններին:

[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8, 9; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 12; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 14; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 12, 14; Հովհան Եպիփանացի «Պատմություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 8, 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 3, գլուխ 12; Հովհան Սարկավագ «Վենետիկյան ժամանակագրություն», գիրք 1, գլուխ 10; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

բանակին (մոտ 130.000, մոտ 30 փիղ):

I փուլ – Հաջորդ օրը Պարսից թագավորության բանակը հետ քաշվեց Մելիտեից և քաղաքից արևելք տարածվող հարթավայրում մարտակարգ ընդունեց: Նույնն արեցին նաև քրիստոնյաները, սակայն արդյունքում կողմերը մեկ ամբողջ օր կանգնեցին իրար դիմաց և, չցանկանալով նախահարձակ լինել, մանր ընդհարումներից ու ռազմիկների առանձին մենամարտերից հետո վերադարձան սեփական ճամբարները, ընդ որում քրիստոնյաները տեղավորվեցին երկու առանձին ճամբարներում, որոնցից մեկը գտնվում էր Մելիտեից հարավ-արևելք, իսկ մյուսը՝ հյուսիս-արևելք:

II փուլ – Ուշ գիշերով Պարսից թագավորության բանակը շարժվեց քրիստոնյաների հյուսիսային ճամբարի ուղղությամբ և, անակնկալ հարձակումով փախուստի մատնելով հակառակորդի ռազմիկներին ու առանց մարտերի կրկին մտնելով Մելիտե, այրեց քաղաքը, ինչից հետո գիշերվա վերջին և լուսաբացին պատրաստվեց արագ գետանցման:

III փուլ – Պարսից թագավորության բանակի տեղաշարժերի մասին տեղեկացած քրիստոնյաների հարավային բանակը, միավորելով ուժերը հյուսիսային բանակի ցրված ուժերի հետ, վաղ լուսաբացին մարտակարգ ընդունեց: Ստեղծված պայմաններում նույնը ստիպված եղավ անել նաև հակառակորդը, ընդ որում Պարսից թագավորության բանակը ընդունեց երկար, բայց ոչ խորը, իսկ քրիստոնյաները՝ կարճ ու խորը դասավորություն: Դրանից հետո Պարսից թագավորության բանակի թեթև հեծելազորը անցավ հարձակման և սկսեց նետերի տարափ տեղալ հակառակորդի վրա՝ նպատակ ունենալով ապահովել հիմնական բանակի արագ ու հաջող գետանցը:

IV փուլ – Թողնելով Պարսից թագավորության բանակին սկսել գետանցը՝ Կուրսի անձնական ղեկավարությամբ աջ թևում հարձակման անցած հեծելազորի խոշոր ուժերը պարտության և փախուստի մատնեցին թշնամու ձախ թևին, որից հետո մխրճվեցին ինչպես թշնամու գումակի, այնպես էլ գետանց կատարող ուժերի մեջ՝ ծանր կորուստներ պատճառելով հակառակորդին:

V փուլ – Ձարգացնելով հաջողությունը՝ քրիստոնյաների բանակը անցավ համընդհանուր հարձակման և ծանր պարտության մատնեց մարտակարգը կորցրած և խուճապի մատնված Պարսից թագավորության բանակին, որի շատ ռազմիկներ, ինչպես նաև մովպետաց-մովպետը, խեղդվեցին գետում:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 70.000 զինվոր: Որպես մարտավար վերցվեցին 24 փղեր, Պարսից արքայի արշավային վրանը, ինչպես նաև Պարսից թագավորության բանակի արշավային սրբազան կրակը: Պարսից տիկնաց-տիկինը գերվեց, իսկ Խոսրով I-ը հազիվ փրկվեց գերվելուց՝ փղի վրա բազմած միայն մեծ դժվարությամբ անցնելով Եփրատը:

Հենց նոր ավարտված իրադարձությունները ծանր և ինչ-որ տեղ նույնիսկ անդառնալի հարված հասցրին Խոսրով I-ի տերությանը: Իրոք, ջախջախվել կամ առնվազն ծանր կորուստներ էին կրել արյաց արքայի հարվածային ուժերը և փաստորեն փշրվել էր հենց նույն այն ռազմական մեքենան, որի վրա վերջինս աշխատել էր այդքան երկար տարիներ ու որը նույնքան ժամանակ էլ անխափան կերպով ծառայել էր արդեն ծերունազարդ տիրակալին: Միաժամանակ Պարսից թագավորության պարագայում խնդիրը առավել բարդանում էր նրանով, որ, լինելով փակ քաղաքակրթության կրող, պարսից պետականությունը ուժեր էր ներծծում միայն իր ներսից կամ, այլ խոսքերով ասած, Պարսից թագավորության բանակը մեծ հաշվով համալրվում էր բացառապես միայն պարսիկներից կամ էլ, առավելագույնը, արդեն պարսկացած փոքրաթիվ տարրերից: Արդյունքում՝ կրած կորուստները ամենևին էլ հնարավոր չեղավ ամոքել նույնիսկ համեմատականորեն երկար ժամանակաշրջանում, իսկ, որպես հետևանք էլ

դրան, մղվող պատերազմում ռազմավարական նախաձեռնությունը, չնայած առանձին մարտավարական հաջողությունների, այդուհետ մեծ հաշվով անցավ և այդպես էլ մնաց Բյուզանդական կայսրության ձեռքում:

Այս առումով, մի պահ վեր հառնելով ռազմաքաղաքական դրությունից, կարող ենք ամրագրել, որ փաստորեն կյանքը ցույց տվեց, որ քաղաքակրթական մակարդակում ավելի ունիվերսալ քրիստոնեական Բյուզանդական կայսրությունն անվիճելի առավելություն ուներ ինքն իր ներսում փակված զրադաշտական քաղաքակրթության նկատմամբ: Իրոք, եթե զրադաշտական արժեքները ոչ մի կերպ ընկալելի չէին պարսիկների հարևան ազգերի և ժողովուրդների համար, ապա, անհրաժեշտ միջոցների առկայության պարագայում քրիստոնեական համընդհանուր ու ճանաչված կենտրոն հանդիսացող նույն Բյուզանդական կայսրությունը կարող էր անվերջ մարդկային ռեսուրսներ քամել առնվազն ողջ Եվրոպայից: Վերջին պարագան իր հերթին ոչ միայն քանակական, իսկ ինչ-որ տեղ նաև՝ որակական, առավելություն էր ապահովում կայսրությանը, այլև թույլ էր տալիս, ի համեմատ նույն Պարսից թագավորության, առավել արագ ամոքել ռազմական ծանր հարվածների հետևանքները, քանզի խնդիրն, ըստ էության, հանգում էր ընդամենը միայն վարձկանների նոր խմբեր գտնելու և, դրամական շահագրգռվածությունը կիրառելով, դրանք հավաքագրելու ու մարտական գործողությունների ապագա թատերաբեմ հասցնելու մեջ:

Հեռանկարային հետևանքներից զատ, սակայն, կրած ծանր անհաջողությունը Պարսից թագավորության համար նաև անմիջական ռազմական հետևանքներ ունեցավ, քանզի, որպես կազմակերպված ուժ, ըստ էության, դադարել էր գոյություն ունենալ Հայաստանում գործող Պարսից թագավորության ողջ հարվածային ռազմական մեքենան: Արդյունքում, լիուլի օգտագործելով հաղթանակի պտուղները, կայսրության բանակը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գործուն աջակցությամբ մինչև սեպտեմբեր ամիս հաղթական երթ իրականացրեց Մելիտե-Դերջան-Կարին-Բասեն-Բագրևանդ-Կոգովիտի հյուսիս-Մասյացոտն-Դվին-Սևանի հյուսիսային ափ-Ուտիք-Աղվանք երթուղով՝ ասպատակելով շրջակայքը և փորձ կատարելով ամրապնդվել հենց նոր ձեռք բերված տարածքներում[1]: Հետագայում, սակայն, կայսերական ուժերը հետ քաշվեցին և բանակը ձմեռելու տեղակայվեց Հյուսիսային Հայաստանում ու Հարավային Վրաստանում, որտեղ ամրապնդվեց կայսրության գերիշխանությունը: Այս կապակցությամբ պետք է ասել, սակայն, որ, թեև ոչ այն չափի, ինչ պարսկական ռազմական մեքենայի պարագայում էր, սակայն ձեռք բերած հաջողությունից հետո խնդիրներ առաջացան նաև կայսրության ռազմական մեքենայում:

Բանն ամենից առաջ կայանում էր նրանում, որ Տիբերիոս Ի-ը, ծայրահեղ լարելով կայսրության ֆինանսական միջոցները և մարտադաշտ հանելով մեծ քանակի վարձկանների, ֆինանսների հասկանալի բացակայության պատճառով այնուհանդերձ որևէ կերպ ի վիճակի չէր երկար ժամանակ օգտվել վերջիններիս ծառայությունից: Այս պայմաններում, ինչ-որ տեղ իրավացիորեն համարելով, որ արյաց տերության ռազմական մեքենան խորտակիչ հարված է ստացել, Կոստանդնուպոլսում որոշեցին կտրուկ կերպով կրճատել վարձկանների քանակությունը, ընդ որում, քանի որ արդեն ձմեռ էր և որևէ հնարավորություն չկար առանց ռազմական լուրջ ցնցումներ առաջացնելու ցրել այդքան մեծաքանակ վարձկանների, որոշվեց գործընթացը սկսել նրանից, որ առժամանակ դադարեցվեն վերջիններիս տրվող վճարումները: Փաստորեն Տիբերիոս Ի-ը, ըստ էության, աշխատանքից ազատելով մեծաքանակ վարձկանների, սակայն վերջնականապես չցրելով նրանց և նույնիսկ ավելին, անուղղակիորեն շարունակելով օգտվել վերջիններիս ծառայություններից զուտ այն բանի հաշվին, որ սրանք գտնվում էին Արևելքում, ինչ-որ տեղ անազնիվ մի երկակի խաղ խաղաց, որը չէր

[1] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 10, 11; (Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 14; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 14, 15; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

կարող ծանր հետևանքներ չառաջացնել: Արդյունքում, իրոք, մնալով առանց աշխատավարձի և իրենց զգալով խաբված, Եվրոպայի տարբեր անկյուններից հավաքված վարձկանները Հյուսիսային Հայաստանում ու Հարավային Վրաստանում իրենց սկսեցին պահել ինչպես մի իսկական գրավված երկրում՝ համատարած բռնություններ իրականացնելով տեղական բնակչության նկատմամբ և հետապնդելով ընդամենը միայն մեկ մի գերնպատակ՝ լցնել սեփական գրպանները ու, ըստ իրենց պատկերացումների, վերականգնել արդարությունը: Ստեղծված իրավիճակը տեղական բնակչության աչքում իր հերթին բառիս բուն իմաստով ոտնատակ տվեց պաշտոնական Կոստանդնուպոլսի հեղինակությունը, իսկ այն պայմաններում էլ, երբ դրան գումարվեց նաև պարտություն կրած արյաց արքայի մեղմ տոնայնությունը Տիզբոնից, կայսրության ռազմաքաղաքական դրությունը տեղում ավելի թուլացավ:

Արդյունքում՝ կայսրության ռազմական մեքենան լքեց ամենից առաջ Վարդան Մամիկոնյանը, որը, իրավիճակը գոնե մի ինչ-որ կերպ կարգավորելու մտայնությամբ, տոհմապետությունն և իր իշխանությունը հանձնեց սեփական հորեղբորորդի Մուշեղին ու մեկնեց Կոստանդնուպոլիս, սակայն, այդպես էլ որևէ հաջողության չհասավ և այլևս Հայաստան չվերադարձավ՝ ըստ երևույթին մինչև իր մահը փորձելով այս կամ այն կերպ վարել հայերի դեսպանորդի դերը կայսերական մայրաքաղաքում: Վարդան Մամիկոնյանի հեռանալուց հետո կայսրության ռազմական մեքենայի դաշնակցի դերը փաստացի լքեց նաև Հայկական բանակը, որը, ինչպես ցավով նշում են ականատես հեղինակները, 20.000 հոգու կազմով հեռացավ ակտիվ մարտական գործողությունների թատերաբեմից՝ կենտրոնանալով Տուրուբերան նահանգի արևմուտքում և, համենայն դեպս, մոտ մնալով Տարոնին[1]:

Որպես վերջնարդյունք այս ամենի՝ մի կողմից կայսրության տարած փայլուն հաղթանակը մեծապես արժեզրկեց, իսկ մյուս կողմից էլ Արևելքում վերստեղծեց ուժերի հավասարակշռության յուրօրինակ դրությունը, քանզի, եթե իր վրա ֆինանսական անտանելի բեռ վերցրած պաշտոնական Կոստանդնուպոլիսը հետագա տարիներին անխուսափելիորեն կրճատելու էր վարձկանների թիվը, ապա նույն այդ հանգամանքն էլ ուժերի հավասարակշռության վիճակ էր ստեղծելու Պարսից թագավորության հետ հարաբերություններում, որը, ինչպես արդեն ասվեց, ինքն էլ ծանր կորուստներ էր կրել: Այս ամենը, որպես ընդհանուր արդյունք, իր հետ բերեց նաև պատերազմական գործողությունների ծավալի կրճատման ու լարվածության զգալի անկման, երբ 573 կամ 576 թվականների մասշտաբների ընդհարումների մասին արդեն և որևէ խոսք գնալ չէր կարող, իսկ մարտական գործողություններն էլ այդուհետ մղվելու էին անհամեմատ ավելի փոքրաքանակ ուժերով՝ բնականաբար հետապնդելով անհամեմատ ավելի փոքրամասշտաբ նպատակներ:

Եվ վերջապես արժանահիշատակ 576 թվականի մասին խոսելիս, թերևս, ավելորդ չի լինի նաև մատնանշել, որ հենց այդ տարվա օգոստոսին ողջ ուշադրությունը Արևելքին նվիրած Տիբերիոս I-ը մի ցավալի պարտություն կրեց արդեն Արևմուտքում: Իրոք, հենց այս տարում էր, որ Լանգոբարդական թագավորության բանակը (մոտ 30.000) Սպոլետոյի ճ-մ-ում հաղթեց Սոֆիա կայսրուհու փեսա ու Ներսես Կամսարականի անհաջող հետնորդ Բադուարիոսին, որը զոհվեց մարտում, իսկ Սպոլետոն և Բենվենտն էլ ընկան Լանգոբարդական թագավորության տիրապետության տակ[2]:

577 թվականը, տարօրինակ առաջին հայացքից, բայց լիովին բացատրելի վերևում նկարագրվածի ֆոնին, բացվեց Պարսից թագավորության բանակի հակահարձակումով: Իրոք, մի ողջ ձմեռ թալանի և ամենաթողության տրված վարձկաններից կազմված կայսրության բանակը նույն այս ժամանակ իրենից, ըստ էության, արդեն մարտունակ ռազմական միավոր չէր ներկայացնում: Ավելին, բանակի հրամանատարները չափը

[1] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 10, 11; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 14; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 14, 15; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

[2] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն:

կորցրած և դժգոհության հակված այս վարձկաններին իրենք էին կենտրոնացրել Փոքր Հայքի ծովափնյա շրջաններում՝ հետագայում ծովով իրենց ուզած տեղերը տեղափոխելու մտայնությամբ: Այսպիսով, որպես կազմակերպված և մարտունակ ուժ կայսրության բանակը Արևելքում, ըստ էության, արդեն չկար, հայերն էլ առնվազն չեզոք դիրք էին բռնել ու այս պայմաններում նախորդ տարվա պարտության խայտառակությունը սրբելու տենչով համակված Տամ-Խոսրով Միհրանյանը, որի ուժերը չէին մասնակցել Պարսից թագավորության ռազմական մեքենային պատուհասած անհաջողությանը և համեմատականորեն թարմ էին ու եռանդով լի, անցավ հակահարձակման: Այս առումով հատկանշական է, որ Տամ-Խոսրովի հրամանի տակ գործում էր Պարսից թագավորության ռազմական մեքենայի, ըստ էության, սերուցքը՝ լավագույն ռազմիկների ողջ այն հավաքածուն, որը հնարավոր էր եղել հավաքել ամբողջ բանակից:

Արդեն 577 թվականի մարտին Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) Կթնի գյուղի ճ-մ-ում (Արարատ, Բագրևանդ գավառ) հաղթեց Գուգարքից նահանջող Բյուզանդական կայսրության բանակի վերջապահին (մոտ 10.000)[1], ինչից կարճ ժամանակ անց արդեն Բոլորապահակի ճ-մ-ում (Արարատ, Բասեն, Մուրց և Արաքս գետերի միախառնման վայրում) ևս մեկ հաղթանակ տարավ[2]: Դրանից հետո, ըստ էության, իր իշխանությունը հաստատելով Մարզպանական Հայաստանի նկատմամբ, Տամ-Խոսրով Միհրանյանը սեփական հարվածային բանակը (30.000) կենտրոնացրեց Բասենում, որտեղից էլ, անակնկալ առաջանալով ու մտնելով Փոքր Հայք, անսպասելի հարված հասցրեց կազմակերպական ամեն մի տեսքից զրկված կայսրության արդեն 120.000 հոգանոց վարձկանների խառնամբոխին՝ պարտության մատնելով և, հետապնդելով սրանց երկար տարածություն, ծանր կորուստներ պատճառելով[3]: Այսպիսով՝ 577 թվականին, կարծես ի հակադրություն փայլուն արդյունք գրանցած 576 թվականի, կայսրության բանակը Արևելքում մի իսկական խայտառակ դրության մեջ հայտնվեց, իսկ այդ հանգամանքն էլ գործունյա Տիբերիոս Ի-ին հերթական անգամ ստիպեց միջոցներ ձեռնարկել: Արդյունքում՝ Տիբերիոս Ի-ը պաշտոնազրկեց Արևելքի հրամանատար Հուստինիանոսին և նրա փոխարեն նշանակեց իր վաղեմի ընկեր ու աղջկա հավանական փեսացու, արմատներով հայ, սակայն իրեն ամենևին էլ հայ չզգացող Մավրիկոսին կամ, ինչպես հայերն էին նրան կոչում՝ Մորրիկին, որին էլ, տալով ֆինանսական զգալի միջոցներ և լայն լիազորություններ, ուղարկեց Արևելք:

Մավրիկոսն ինքնին ուշագրավ մի անձնավորություն էր: Իր ուղին սկսած լինելով որպես հասարակ մի գրագիր՝ Մավրիկոսը, ժամանակին միանալով Տիբերիոս Ի-ին և հանդիսանալով նրա ընկերն ու զինակիցը, հենց վերջինիս հետ միասին էլ վեր էր բարձրացել պետական ծառայության աստիճաններով: Լինելով բավականին խելացի, համակարգային մտածողության տեր և հավասարակշռված մի անձնավորություն՝ Մավրիկոսը դրա հետ միաժամանակ էլ նաև որոշակիորեն սահմանափակ ու կոշտ բնավորություն ուներ՝ չկարողանալով արագորեն ըմբռնել իրերի և տեղի ունեցող փոփոխությունների բնույթը ու հաճախ դրսևորելով դոգմատիկության աստիճանի հասնող ոչ ճկունություն:

Այսպես թե այնպես, սակայն, տեր կանգնելով Արևելքի նախկին զորավար Հուստինիանոսի թողած ծանր ժառանգությանը, Մավրիկոսը անմիջապես էլ ձեռնամուխ եղավ իրադրությունը կայունացնելուն: Արևելքի նոր զորավարը հետը զգալի ֆինանսական միջոցներ էր բերել և այդ հանգամանքը, գումարած ձեռնարկվող կազմակերպչական լայն գործունեությանը, զգալիորեն կայունացրեց իրավիճակը տեղում: Արդյունքում՝ ուժերի գերակշռությունը կրկին անցավ կայսրության բանակի կողմը, քանզի Տամ-Խոսրով Միհրանյանի բանակը ամեն դեպքում քանակապես զիջում էր

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 15; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 43; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 24; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 12; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 8; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն:

կայսրության ուշքի եկած արևելյան բանակին: Ստեղծված պայմաններում պարսից զորավարը, խուսափելով ճակատային բախումից և ճարպկորեն օգտվելով Արևելքի նոր զորավարի որոշակի անտեղյակությունից, հատուկ բանագնաց ուղարկեց վերջինիս մոտ ու առաջարկեց մարտի համար հանդիպել Կարին քաղաքի մոտակայքում: Մավրիկոսը, բնականաբար, անմիջապես էլ ընդունեց մարտահրավերը, սակայն Տամ-Խոսրովը, դրան հակառակ և օգտվելով դրությունից, իր համալրված բանակը բաժանեց ավելի մանր մասերի ու, հակառակորդին թողնելով հյուսիսում, արագորեն իջավ հարավ և ասպատակեց Մինչեփրատյան Ծոփքը, ինչպես նաև Տիգրանակերտի ու Ամիդի շրջակայքը[1]: Այսպիսով՝ Արևելքի նոր հրամանատարը իր պաշտոնը ստանձնեց բարոյական մի իսկական ապտակ ստացած, երբ Տամ-Խոսրովն ու Արևելքի յուրօրինակ պայմանները, կարծես թե, առաջին անգամ ցույց տվեցին Մավրիկոսին, որ ուղղամիտ գործելաոճը ռազմական գործողություններում և, հատկապես, Արևելքի պարագայում այնքան էլ տեղին չեն:

577 թվականի հուլիս - օգոստոս ամիսներին Արևելքի հրամանատար Մավրիկոսի, ինչպես նաև Հայաստանի հրամանատար Կուրսի և Ռոմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), փորձելով պատասխան տալ Տամ-Խոսրով Միհրանյանի գործողություններին, ասպատակեցին Աղձնիքի արևելքը և Արզնի շրջակայքը որից հետո, զբաղեցնելով Ափում ամրոցը (Աղձնիք,Նփռետ գավառ, Տիգրանակերտից հյուսիս), հիմնական բանակով նահանջեցին[2]: Այսպիսով՝ Մավրիկոսի հայտնվելը այնուհանդերձ սանձեց Տամ-Խոսրով Միհրանյանին, որը արագորեն հետ քաշվեց ելման դիրքեր: Արդյունքում՝ մի կողմից ծանր կորուստներ կրած Պարսից թագավորության բանակի, իսկ մյուս կողմից էլ վարձկանների զգալի քանակությունից զրկված կայսրության ռազմական մեքենայի միջև ի վերջո վերջնականապես հաստատվեց ուժերի հավասարակշռության այն վիճակը, որի մասին արդեն խոսվեց վերևում, ընդ որում կրկնենք, որ իրերի այս դրությունը մեծ հաշվով պահպանվելու էր մինչև պատերազմի ավարտը:

576 թվականին ևս մեկ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ և այս անգամ արդեն Թյուրքական խաքանության սահմաններում, երբ Իստեմի խանը մահացավ ու հոր լիազորություններով նրան հաջորդեց որդին՝ Ղարա-Չուրինը (576-599, 599-603՝ խաքան): Նոր տիրակալը, սակայն, անմիջապես էլ ներքաշվեց գահակալական մրցակցությունների մեջ, ինչն էլ անխուսափելիորեն բերեց նրան, որ, այդուհետ և արդեն անդառնալիորեն, Թյուրքական խաքանության ճնշումը արևմտյան սահմանում թուլացավ: Արդյունքում՝ թյուրքերի անվերջ սպառնալիքներից ազատված Բայան I-ը իրեն վերջնականապես ազատ զգաց, իսկ այդ հանգամանքն էլ բերեց նրան, որ ավարները, ուժեր կուտակած և գործի մեջ դնելով սլավոնների մեծ քանակություն, իրենց հերթին կտրուկ կերպով ուժեղացրին ճնշումը Բյուզանդական կայսրության նկատմամբ բալկանյան սահմանում: Այս ամենի հետևանքով պաշտոնական Կոստանդնուպոլիսը ստիպված եղավ ռազմիկների առանց այդ էլ պակաս զգացող իր արևելյան բանակից զգալի ուժերը տեղափոխել դեպի բալկանյան ճակատ, ինչն էլ իր հերթին ավելի թուլացրեց ճնշումը մոտական տարիներին սեփական խնդիրների հորձանուտի մեջ թաղվող Պարսից թագավորության վրա:

Վերևում նկարագրված ուժերի դասավորությունը չսպասեցրեց իրեն զգացնել տալ: Արդյունքում՝ արդեն 577 թվականի նոյեմբերին Թրակիան ու Հունաստանը ասպատակող սլավոնների (100.000) և Ավարական խաքանության բանակի (մոտ 150.000, որից 60.000 ծանր հեծյալ) մի մասը (մոտ 20.000) մոտեցավ Երկար պարիսպներին ու, թեև Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ

[1] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 14, 27; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 13; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 42:

[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 15, 27, 34; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 13; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 19; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 15; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

ռազմիկները (մոտ 1.000) մեծ հաշվով պահեցին դիրքերը, սակայն թշնամուն հաջողվեց հետ մղել միայն այն բանից հետո, երբ 578 թվականի գարնանը Դանուբի աջ ափով առաջխաղացող ավարները կայսրության դրդմամբ ներխուժեցին սլավոնների զբաղեցրած տարածքներ[1]

578 թվականի ամռանը Արևելքի հրամանատար Մավրիկոսի, Հայաստանի հրամանատար Կուրսի և Ռոմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), ինչպես նաև Գասանյանների թագավորության բանակը (մոտ 10.000) ասպատակեցին Մծբինի շրջակայքը[2]: Մարտական գործողությունները կայսրության զորավարները շարունակեցին նաև հետագայում և արդեն սեպտեմբերին հարված հասցրեցին Սինգարայի շրջակայքին, թեև ի վերջո ասպատակություններից հետո, քանդված լինելու պատճառով չկարողանալով անցնել Եփրատն ու Տիգրիսը իրար կապող ջրանցքի վրայով ձգված կամրջով, նոյեմբեր ամսին հետ քաշվեցին[3]: Հենց այս արշավանքի ժամանակ էր, որ Մավրիկոսն ու Գասանյանների թագավորության արքա Մունդիր III-ը (569-580) լուրջ ընդհարում ունեցան, քանի որ Մավրիկոսը սկսեց կասկածել, որ Գասանյանների արքան համագործակցում է հակառակորդի հետ և, մասնավորապես, ռազմական բնույթի տեղեկություններ է փոխանցում վերջինիս, ընդ որում Մավրիկոսը Մունդիր III-ին ամենից առաջ մեղադրում էր նրանում, որ այդ հենց նա էր հակառակորդին ժամանակին տեղեկացրել իրենց առաջխաղացման մասին ու պատճառ հանդիսացել արդեն իսկ հիշատակված կամրջի քանդմանը:

578 թվականի հոկտեմբերի 4-ին, այդպես էլ, ըստ էության, ուշքի չգալով խելագարությունից, Հուստինոս II-ը հեռացավ կյանքից, ինչից հետո Տիբերիոս I-ը արդեն նաև իրավաբանորեն դարձավ Բյուզանդական կայսրության ղեկավար: Նույն այս ժամանակ, սակայն, կապված հատկապես նախորդ կայսեր մահվան հանգամանքի հետ, ակտիվացան նաև Խոսրով I-ի զորավարները, որոնք որոշեցին հակահարված հասցնել միանգամից և Հայաստանի, և Միջագետքի ուղղություններով:

578 թվականի հոկտեմբերին Ութմուս գյուղին մոտեցած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) սկզբում հաղթեց, բայց հետո գլխովին ջախջախվեց Վարազ-Վզրուկի գլխավորությամբ ուժերը վերադասավորած Պարսից թագավորության բանակի (մոտ 10.000) կողմից[4]: Դրանից հետո թշնամին առաջխաղացում իրականացրեց և հոկտեմբերից մինչև նոյեմբեր ասպատակեց արդեն Կարինի շրջակայքը, թեև ի վերջո հետ քաշվեց[5]: Կարինի ուղղությամբ հասցված հարվածի հետ միաժամանակ Ադարմահոնի գլխավորած Պարսից (12.000, այդ թվում սաբիրներ) ու Լախմյանների (8.000 հեծյալ) թագավորությունների մասերի բաժանված միացյալ բանակը ասպատակեց նաև Կոնստանդինեի, Ռաշ-Այնի և Եդեսիայի շրջակայքը՝ հետ քաշվելով միայն այն բանից հետո, երբ տեղ հասան Մավրիկոսի հրամանատարության տակ գործող ուժերը[6]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց Գասանյանների թագավորության բանակը ծանր պարտության մատնեց իր երդվյալ հակառակորդ Լախմյանների թագավորության բանակին, ընդ որում Լախմյանների պարտությունն այն մակարդակի էր, որ նրանք զգալի ժամանակով, ըստ էության, վնասազերծվեցին: Վերջին հանգամանքն իր հերթին կարևոր նշանակություն ունեցավ կայսրության համար, քանզի միջագետքյան ուղղությամբ մղվող մարտական գործողություններում Պարսից թագավորությունն, ըստ էության, զրկվեց կարևորագույն մի դաշնակցի աջակցությունից:

---

[1] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 43; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 2, գլուխ 25, գիրք 6, գլուխ 30; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

[2] Ագաթիոս Մարինացի «Հուստինիանոսի թագավորության մասին», գիրք 4, գլուխ 29; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 16:

[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 16; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 13:

[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 49:

[5] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 15:

[6] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 17, 18; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 13; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 52; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 15; Հովհան Եպիփանացի «Պատմություն»:

579 թվականի հունվարի 31-ին, կառավարելով Պարսից թագավորությունը գրեթե կես դար, իր մահկանացուն կնքեց Խոսրով I-ը, որից հետո, սպանելով եղբայրներից մեկին և կուրացնելով մի քանիսին, Պարսից թագավորության գահին բազմեց հեփթաղուհուց ծնված նրա որդի Որմիզդ IV-ը (579-590):

Խոսրով I-ի մահով, ինչպես Հուստինիանոս I-ի հետ կապված Բյուզանդական կայսրության պարագայում եղավ, Պարսից թագավորությունում իր վերջը գտավ խոշոր մի դարաշրջան, որը, սակայն, ինչպես նաև արյաց հանգուցյալ արքայի թողած քաղաքական ժառանգությունը, հակասական էին: Իրոք, մի կողմից Խոսրով I-ը, հաջողությամբ շարունակելով հոր գործը, մեծամասշտաբ բարեփոխումների միջոցով ոչ միայն ոտքի էր հանել պարսից պետականության խարխլված կառույցը, այլև դրել էր այն ամուր հիմքերի վրա, ընդ որում իր իսկ բարեփոխումների պտուղները այս արքան հենց ինքն էլ կարողացավ լիուլի վայելել: Մյուս կողմից, սակայն, Խոսրով I-ը այդպես էլ որևէ համակարգային լուծում չէր տվել իր տերության առջև ծառացած հայեցակարգային խնդիրներին, որոնց թվում առաջնայինը պարսից զրադաշտական քաղաքակրթության անընկալելիությունն էր: Ավելին, իր իսկ կողմից իրականացված կրոնական քաղաքականությամբ նույն Խոսրով I-ը սեփական իշխանության վերջին շրջանում ավելի էր խորացրել իրերի ճգնաժամային դրությունը: Եվ վերջապես Խոսրով I-ը իր հաջորդին որպես ժառանգություն թողեց նաև հերթական պատերազմը Բյուզանդական կայսրության դեմ, որը, չնայած սկզբնական տարիների որոշակի հաջողություններին, այս արքայի մահվան պահին Պարսից թագավորության համար այնուհանդերձ արդեն այնքան էլ հաջող ընթացք չուներ: Ամփոփելով ասվածը կարող ենք, թերևս, փաստել, որ, ինչպես և Հուստինիանոս I-ի պարագայում, Խոսրով I-ի դեպքում ևս արյաց արքան այդպես էլ չկարողացավ հայեցակարգային լուծումներ ապահովել իր պետության համար և հատկապես, որ առավել կարևոր էր, մատնանշել Պարսից թագավորության զարգացման հետագա ուղղությունները:

Որմիզդ IV-ը, որը հաջորդեց հորը, մի բռնկուն, ինքնասեր, համառ և որևէ մեկի կարծիքի հետ հաշվի չնստող անձնավորություն էր, կարծես թե, հանդիսանալով սեփական տաղանդավոր հոր ավելի պարզունականացված շարունակությունը: Արդյունքում՝ նոր արքան, ըստ էության, ձգտելով շարունակել հոր քաղաքական գիծը բոլոր ուղղություններով, այդ ամենը սկսեց կյանքի կոչել այնպիսի պարզունակ մի ուղղամտությամբ, որ օգուտի փոխարեն ավելի շատ վնաս հասցրեց: Այս առումով հատկանշական է, որ, ինչպես և իր հայրը, խորապես վստահ սեփական պետության գերազանցության վրա, ի տարբերություն, սակայն նույն այդ հոր, որը նման դեպքերում ավելի խորամանկ էր վարվում, Որմիզդ IV-ը անմիջապես էլ այդ մասին հայտարարեց Տիբերիոս I-ի դեսպաններին՝ միաժամանակ, ինչպես կարգն էր, նույնիսկ հարկ իսկ չհամարելով հատուկ դեսպանախումբ ուղարկել Կոստանդնուպոլիս և տեղեկացնել սեփական գահակալման սկզբի մասին: Արտաքին այս դատարկ ելույթից բացի, սակայն, Որմիզդ IV-ը ծայրահեղությունների հասավ արդեն նաև ներքին քաղաքականության ոլորտում, որը շուտով ծանր դրություն առաջացրեց:

Ինչպես արդեն նշվեց վերևում, Խոսրով I-ը, հիմնվելով մանր ազնվականության և ազատ դասակարգի վրա, վարում էր խոշոր հողատեր ազնվականության թուլացման հետևողական մի քաղաքականություն՝ թույլ չտալով վերջինիս ուշքի գալ մազդակյանների հասցրած հարվածներից: Ամենից առաջ հենց այս քաղաքականությունը փորձեց շարունակել նաև Որմիզդ IV-ը, սակայն, եթե իր հայրը ամեն ինչ անում էր աննկատ ու չափազանց զգույշ, ապա Որմիզդ IV-ի բացահայտ և ուղղամիտ գործողությունները ի վերջո երկրում խորը դժգոհություններ առաջացրին: Ընդհանրապես ասած, Պարսից թագավորությունում դժգոհությունները միշտ էլ առկա էին, իսկ 576 թվականի ծանր կորուստներից հետո էլ դրանք ավելի էին խորացել, ընդ որում դժգոհների շարքերն աստիճանաբար համալրվում էին նաև այն դասակարգի ներկայացուցիչների կողմից, որոնց վրա ավանդականորեն հենվում էին արյաց վերջին երկու արքաները: Արդյունքում,

Որմիզդ IV-ը, փոխանակ գոնե մի որևէ կերպ ուղղեր իրավիճակը, ավելի ներքև իջեցրեց սոցիալական նախասիրությունների իր սանդղակը և, մի կողմ թողնելով արդեն նաև հոր ավանդական հենարան մանր ազնվականներին, սկսեց աջակցություն փնտրել հասարակության ավելի ցածր խավերի շարքերում, իսկ այս հանգամանքն էլ իր հերթին ավելի թուլացրեց նրա դիրքերը: Միաժամանակ ստորին խավերին սիրաշահելու մղումը արտահայտվեց նաև այն բանում, որ որոշակիորեն մեղմվեց վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ, ինչը, ճիշտ է, թեև, որպես դրական երևույթ, թուլացրեց պաշտոնական Տիզբոնի նկատմամբ Մարզպանական Հայաստանում առկա անզիջում տրամադրությունները, սակայն այս ամենը որևէ համակարգված և վերջնական տեսք այդպես էլ չստացավ ու վնասից բացի վերջին հաշվով որևէ օգուտ չտվեց: Ինչ վերաբերում է ռազմական քաղաքականությանը, ապա այս ոլորտում, հանդես գալով ավելի շատ որպես ընդամենը միայն մի ռազմիկ, այլ ոչ թե նույնիսկ զորավար կամ, առավել ևս՝ ռազմաքաղաքական գործիչ, Որմիզդ IV-ը իր բոլոր հարևանների և, հատկապես, Բյուզանդական կայսրության նկատմամբ, ծայրահեղ անզիջումության մի ագրեսիվ քաղաքականություն որդեգրեց:

579 թվականին Մավրիկոսը այնուհանդերձ փորձեց կյանքի կոչել իր այն ծրագիրը, որը չէր հաջողել նախորդ տարում: Արդյունքում՝ նույն թվականի ամռանը Արևելքի հրամանատար Մավրիկոսի, Ասորիքի հրամանատար Ներսեհ Կամսարականի, Ռոմանոսի և Թեոդորիքոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) ասպատակեցին Մծբինի շրջակայքը, Հայոց Միջագետքի արևելքը և Կորճայքի արևմուտքը, սակայն ի վերջո նահանջեցին[1]: Կայսրության ուժերի նահանջի սկզբնապատճառը նույնն էր, ինչ նախորդ տարում, քանզի այս անգամ ևս պարսից զորավարները, խուսափելով ճակատային ընդհարումից, հարվածն ուղղեցին դեպի հակառակորդի խորը թիկունք:

Արդյունքում՝ Պահլավի գլխավորությամբ Մարզպանական Հայաստանում խորացող Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000), հարվածելով թշնամու բանակի աջ թևին, Շիրակավանի ճ-մ-ում (Շիրակ, Ախուրյան գետի աջ ափին) հաղթեց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 3.000)[2], իսկ նույն այս ժամանակ էլ Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 30.000) ասպատակեց Հյուսիսային Միջագետքը, Մինչեփրատյան Ծոփքը, Բալուի (= Փաբնարիոսի), (վերջինը՝ Խարբերդից մոտ 40 կմ արևելք) Ամիդի, ինչպես նաև Կիթառիճ ամրոցի շրջակայքը և նահանջեց միայն Մավրիկոսի հետ քաշվելուց հետո[3]: Եվ վերջապես հակառակորդի թիկունքին հարված հասցվեց նաև Ադարմահոնի կողմից, որի գլխավորությամբ Հայոց Միջագետքը և Եդեսիայի շրջակայքը ասպատակելով առաջացած Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 200) թեև չգրավեց Եդեսիան, սակայն հետո, ավերելով շրջակայքը, սկսեց նահանջել Նիկեփորիոնի ուղղությամբ[4]: Թվում էր, թե, ինչպես նախորդ տարում, պարսկական կողմի ռազմավարությունը այս անգամ ևս հաջողություն էր ապահովելու, սակայն, դատելով ըստ ամենայնի, կայսրության զորավարներն և Մավրիկոսն այս անգամ որոշակի հետևություններ այնուհանդերձ արել էին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

579 ամառ – ***<u>Նիկեփորիոնի ճ-մ</u>***[5]

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոկատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 17; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:
[3] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 53-55; Թեոփիլիկատոս Սիմոկատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 15:
[4] Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 20; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:
[5] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 3, գլուխ 25, գիրք 6, գլուխ 16; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 20; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Թեոփիլիկատոս Սիմոկատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 17; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 20; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

Արևելքի հրամանատար Մավրիկոսի, Ասորիքի հրամանատար Ներսեհ Կամսարականի, Ռոմանոսի և Թեոդորիքոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000), ինչպես նաև Մունդիր III-ի գլխավորած Գասանյանների թագավորության բանակը (մոտ 5.000) սկսեցին հետապնդել Ադարմահոնի գլխավորությամբ ***Հայոց Միջագետքից*** նահանջող Պարսից թագավորության բանակին (մոտ 40.000)՝ քաղաքի մոտ հասնելով վերջինիս: Արդյունքում՝ կողմերը մարտակարգ ընդունեցին և պատրաստվեցին մարտի:

I փուլ – Առաջին օրը քրիստոնյաները համառ մարտում ծանր պարտության մատնեցին հակառակորդին:

II փուլ – Երկրորդ օրը Պարսից թագավորության բանակը փորձեց շարունակել մարտը, սակայն քրիստոնյաները այս անգամ ևս առավելության հասան՝ հետ շպրտելով հակառակորդին դեպի սեփական ճամբար:

III փուլ – Պարսից թագավորության բանակը, այրելով սեփական ճամբարը, սրընթաց երթով պոկվեց հակառակորդից և հեռացավ:

IV փուլ – Քրիստոնյաները փորձեցին զարգացնել հաջողությունը, սակայն, քանի որ հետագա առաջխաղացման ուղու վրա գտնվող կամուրջը Եփրատին հարող Խաբուր գետի ստորին հոսանքում հակառակորդի կողմից նախապես ոչնչացվել էր, ստիպված այրեցին Եփրատով տարվող բեռնանավերը և հետ քաշվեցին:

Հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Նախորդ ճակատամարտից հետո, հերթական անգամ կասկածներով պատվելով Մունդիր III-ի նկատմամբ, Մավրիկոսն այս անգամ իրեն արդեն ոչ մի կերպ զսպել չկարողացավ և երկու առաջնորդների հարաբերություններն իրենց վերջը գտան ծանր մի ընդհարումով, որը հեռուն գնացող հետևանքներ էր ունենալու: Միաժամանակ հարկ է նշել, որ վերջին ճակատամարտում կրած պարտությունը, որը իր մասշտաբներով ոչ մի կերպ չէր կարող համեմատվել 576 թվականի աղետի հետ և նույնիսկ օպերատիվ հետևանքներ չունեցավ, այնուհանդերձ ծանր հարված հասցրեց կայսրության արևելյան սահմաններում գործող Պարսից թագավորության ռազմական մեքենային, ինչի արդյունքում վերջինիս հետագա ակտիվությունը էականորեն սահմանափակվեց: Արևելքում կայսրության դրության ժամանակավոր թեթևացումը, սակայն, իրերի դրության ընդհանուր թեթևացման չբերեց, քանզի այն համընկավ բալկանյան սահմանում իրավիճակի կտրուկ ծանրացման հետ:

Իրոք, արդեն ազատված կարծես բոլոր հոգսերից, Բայան I-ը դանուբյան ճակատում հենց այս ժամանակ սկիզբ դրեց հարատև ռազմական գործողությունների մի ամբողջ շարանի՝ վերջնական նպատակ ունենալով դուրս մղել Բյուզանդական կայսրությանը ողջ Բալկանյան թերակղզուց: Այս առումով հատկանշական է, որ լիովին ինքն իրեն թողնված Ապենինյան թերակղզում կայսրությունն ինքն ընդհանրապես ոչ մի գործողություն ձեռնարկել ի վիճակի չէր և պաշտոնական Կոստանդնուպոլսին մնում էր ընդամենը միայն անուժ կերպով դիտարկել այն, թե ինչպես նույն 579 թվականի աշնանը Լանգոբարդական թագավորության բանակը տիրեց Կլասիսին (Ռավեննայի նավահանգիստը)[1]:

Բալկանյան սահմանում ավարները գործում էին օպերատիվ նախաձեռնության լիակատար տիրապետության պարագայում և լրիվ բացահայտ կերպով իրենց կամքն էին թելադրում Տիբերիոս I-ին, որը, հույսը դրած այս սահմանում հաստատված խաղաղության վրա, նվազագույն անհրաժեշտից ավելի քանակով պակասեցրել էր այդ ճակատում գտնվող բանակային ուժերը և դրանք տեղափոխել էր Արևելք: Իր հերթին

[1] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 3, գլուխ 13; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

օգտվելով այս հանգամանքից՝ Բայան I-ը, վերջնագրերի տեսքով խոսելով կայսեր հետ, ի վերջո երկու մեծ կամուրջներ կառուցեց Դանուբի վրա և իր հարվածային ուժերը գետի մյուս ափ անցկացրեց: Այսպիսով՝ արդեն 579 թվականի աշնանը Ավարական խաքանության բանակը (մոտ 50.000) շրջափակեց խիստ ամրացված Սիրմիան՝ նպատակ ունենալով ստիպել հակառակորդին առանց մարտի դադարեցնել դիմադրությունը[1]: Միաժամանակ, ինչպես եղավ Դարա ամրոցի պարագայում Արևելքում, Սիրմիայի համառ դիմադրությունը չկասեցրեց հակառակորդի հորդայի առաջխաղացումը դեպի հարավ և արդյունքում 579 թվականի վերջին ու ողջ 580 թվականը Ավարական խաքանության բանակը, գործնականում լիովին անպատիժ, ոտնատակ տվեց Դալմացիան, Թրակիան և Հունաստանը:

580 թվականի գարնանը թեթև չէր կայսրության դրությունը, սակայն, նաև Ղրիմում, քանզի, մի պահ կրկին արևմտյան քաղաքականության շարունակությանը վերադարձած Ղարա-Չուրինը հենց այս ժամանակ շարժի մեջ էր դրել Թյուրքական խաքանության խոշոր ուժեր և կայսրությունից գրավել էր Խերսոնեսը[2]: Այս պայմաններում Տիբերիոս I-ը մի պահ փորձեց ավարներին ահաբեկել նույն թյուրքերի առաջխաղացումով, սակայն իրերի իրական դրությանն ավելի լավ տեղյակ Բայան I-ին համոզել չհաջողվեց: Դրանից հետո պաշտոնական Կոստանդնուպոլիսը փորձեց ավարների թիկունքում ոտքի հանել լանգոբարդներին ու սրանց հարևան այլ ուժերին: Հենց այդ նպատակով էլ, ահա, մոռացությունից հանվեց և բանակցությունների համար հսկայական նյութական միջոցներով լանգոբարդների մոտ ուղարկվեց Իտալիայի նվաճման հերոս Ներսես Կամսարականը, սակայն վերջինս ճանապարհին հիվանդացավ ու մահացավ և նրա վերջին այս ձեռնարկն անավարտ մնաց:

Ստեղծված պայմաններում Տիբերիոս I-ին ոչինչ չէր մնում անելու, քան զգուշորեն Արևելքից որոշ ուժեր Բալկանյան թերակղզի տեղափոխելն էր, ինչն էլ աստիճանաբար կյանքի կոչվեց մոտակա տարիներին: Միաժամանակ, ձգտելով գոնե մի վերջին անգամ օգտագործել դեպի այլ ճակատ տեղափոխվող ուժերին, 580 թվականի նույն գարնանը Արևելքի հրամանատար Մավրիկոսի և Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) հերթական անգամ ասպատակեցին Մծբինի շրջակայքը և նահանջեցին[3], որից հետո, 580 թվականի արդեն ամռանը Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) պաշարեցին Քլիմար ամրոցը (Աղձնիք, Արձն գավառ, Արևմտյան Տիգրիսի Քաղիրթ վտակի միջին հոսանքի ձախ ափին), սակայն այդպես էլ որևէ հաջողության չհասան ու հետ քաշվեցին[4]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ ծայրահեղ բարդացել էին նաև պաշտոնական Կոստանդնուպոլսի հարաբերությունները Գասանյանների հետ, քանզի Մավրիկոսը դեռևս 580 թվականի սկզբին էր Տիբերիոս I-ին զեկուցել իր կասկածների մասին և դրանք հաստատելու համար նույնիսկ անձամբ մեկնել էր Կոստանդնուպոլիս, այնպես որ բանը ի վերջո հասավ նրան, որ 580 թվականի ամռանը Մունդիր III-ին նենգորեն ձերբակալեցին ու ուղարկեցին մայրաքաղաք: Արդյունքում, ցանկանալով վրեժ լուծել հոր համար, Մունդիր III-ի որդի Նուման VI-ի (580-585) գլխավորած Գասանյանների թագավորության բանակը (մոտ 5.000) սկսեց ասպատակել Ասորիքը և Պաղեստինը, որից հետո պաշարեց Բոստրան ու հենց այս քաղաքի պարիսպների տակ էլ հաղթեց բաց դաշտ դուրս եկած տեղի կայսերական կայազորին[5]:

---

[1] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 65-68; Թեոփիլիկատոս Սիմոկատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 24, 30-33; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 20; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

[2] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 66:

[3] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 57, 58:

[4] Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 59, 60; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 34, 35:

[5] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 3, գլուխ 42; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 2; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17:

Հետագայում, սակայն որոշակի զիջումների դիմաց Նուման VI-ին հաջողվեց հանդարտեցնել:

581 թվականին Ավարական խաքանության բանակը շարունակում էր ոտնատակ տալ Բալկանյան թերակղզին, ընդ որում անհաջողությամբ ավարտվեցին հակառակորդի խորը թիկունքում մնացած Սիրմիային օգնության հասնելու, ինչպես նաև այն գոնե բանակցությունների միջոցով շրջապատումից ազատելու բոլոր փորձերը: Միաժամանակ, ի վերջո հասկանալով, որ այդ պահին առկա ուժերով ավարներին ու սլավոններին հետ մղելու և ոչ մի հնարավորություն, ըստ էության, չկա, Տիբերիոս I-ը սկիզբ դրեց հաշտության բանակցությունների, մանավանդ որ իրադրությունը նույն այս տարում անակնկալ կերպով բարդացել էր նաև Արևելքում:

Իրոք, 581 թվականի աշնանը, գոհ Խերսոնեսի ուղղությամբ ձեռք բերված հաջողությունից, Ղարա-Չուրինը կրկին շարժի մեջ դրեց սեփական հսկայաքանակ ռազմական մեքենան և, անցնելով Ալանաց դուռ լեռնանցքից ու ոտնատակ տալով ողջ Վրաստանը և Աբխազիան, առաջացավ մինչև Խաղկտիք: Կայսրության ողջ արևելքի վրա կախված ահեղ վտանգը Արևելքի հրամանատար Մավրիկոսին իր հերթին ստիպեց առկա ուժերը արագորեն քաշել հյուսիս և կենտրոնացնել դրանք Խաղկտիքի ուղղությամբ, սակայն, ինչպես պարզվեց շուտով, թյուրքերը լուրջ մարտ տալու տրամադրված չէին: Արդյունքում, Վրաստանում և հատկապես Լազական թագավորության տարածքում իրականացնելով տեղի բնակչության մի իսկական ջարդ, որին զոհ գնաց մոտ 300.000 խաղաղ բնակիչ, Թյուրքական խաքանության բանակը, մանր մարտերով հետ մղելով Մավրիկոսի ուժերին, ձեռք բերած հսկայական ավարով հետ քաշվեց Նախակովկասյան տափաստաններ[1]:

581 թվականը կայսրության համար փակվում էր ծանր արդյունքներով, ընդ որում Բալկանյան թերակղզում բանը հասավ նույնիսկ նրան, որ 581 թվականի հոկտեմբերի 27-ից 28-ը սլավոնները (5.000) պաշարեցին նույնիսկ Թեսալոնիկեն, թեև ի վերջո նահանջեցին[2]: Դրությունը չթեթևացավ, սակայն, նաև 582 թվականին, ընդ որում արդեն այդ տարվա հուլիս ամսին, սպառած դիմադրության բոլոր միջոցները և հասած սովի ծայրահեղ աստիճանի, Սիրմիայի կայազորը, համաձայն Տիբերիոս I-ի իսկ հրամանի, թողեց քաղաքը ու բնակչության հետ միասին նահանջեց դեպի հարավ: Սիրմիայի անկումը լիուլի բավարարեց Բայան I-ին, որի հետ դրանից հետո արդեն հաշտություն կնքվեց: Հաշտության դիմաց կայսրությունը վճարեց վերջին երեք տարվա համար վճարվող գումարը, ի դեմս 1.140 կգ ոսկու, ինչպես նաև պարտավորվեց հետագայում տարեկան ևս 360 կգ ոսկի վճարել, ընդ որում ինքնին, հասկանալի էր, որ Սիրմիան մնում էր ավարների տիրապետության տակ:

Թյուրքական վերջին ահեղ արշավանքը, որը ռազմական առումով խոշոր ընդհարումների այնքան էլ չբերեց և մեծ հաշվով թեթևացրեց Պարսից թագավորության դրությունը, իր հետ բերեց, սակայն, քաղաքական երեք մեծ հետևանքներ: Առաջին արդյունքն այն էր, որ հենց այս արշավանքի արդյունքում ոչնչացավ Լազական թագավորությունը, իսկ լազերն իրենք էլ ծանրագույն մարդկային կորուստներ կրեցին, ընդ որում այն աստիճանի, որ դրանից հետո նրանք տարածաշրջանում այլևս երբեք չկարողացան էական դերակատարություն ունենալ: Որպես երկրորդ արդյունք՝ Արևմտյան Վրաստանում աստիճանաբար առաջնային դերերի վրա հայտնվեցին լազերից ավելի հյուսիս տեղակայված աբխազները: Եվ վերջապես թյուրքական ավերիչ արշավանքի երրորդ հետևանքն էլ այն եղավ, որ, այս անգամ արդեն Որմիզդ IV-ի կողմից գահընկեց արվեց Իբերիայի թագավորության վերջին արքա, Բակուր IV-ի որդի Փարսման IV-ի (մոտ 540-558) եղբորորդի Փարսման V-ի (մոտ 558-565) տղա Բակուր V-ը (մոտ 565 - ուղ. 581), Իբերիայի թագավորությունը հայտարարվեց վերացված և ինչպես Հյուսիսային

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 8; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 61:
[2] Հովհան Թեսալոնիկացի «Սուրբ Դմիտրիոս Սալոնիկացու հրաշագործությունները», մաս 1, գլուխ 12; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

Հայաստանում, այնպես էլ ողջ Վրաստանում վերջնականապես ամրագրվեց Հյուսիսային Բագրատունիների առաջնայնությունը:

Ազատված թյուրքական վտանգից՝ Արևելքի հրամանատար Մավրիկոսը կրկին վերադարձավ Պարսից թագավորության դեմ մղվող մարտական գործողություններին: Այս անգամ նախատեսվում էր թշնամուն հարված հասցնել ինչպես հարավից, այնպես էլ հյուսիսից, ընդ որում հետագա գլխավոր հարվածը նախատեսված էր հարավային ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

582 հունիս 2 – ***<u>Կոնստանդինեի ճ-մ</u>***[1]

Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) սկսեց մոտենալ քաղաքին: Տեղեկանալով այդ մասին՝ Արևելքի հրամանատար Մավրիկոսի, ինչպես նաև Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 20.000), ինչպես նաև Նուման VI-ի գլխավորած Գասանյանների թագավորության բանակը (մոտ 5.000) շարժվեցին քաղաքի ուղղությամբ:

I փուլ – Պարսից թագավորության բանակը մի քանի օր պաշարեց քաղաքը, սակայն որևէ հաջողության չհասավ:

II փուլ – Քաղաքին մոտեցան կայսրության բանակը անցավ վճռական հարձակման և հանդիպակաց մարտում ծանր պարտության մատնեց թշնամու բանակին, ընդ որում Կոնստանդին անունով միջին օղակի զորավարներից մեկը մարտի ժամանակ հեծյալ նիզակամարտում ընդհարվեց Տամ-Խոսրովի հետ, հաղթեց և սպանեց նրան, թեև արդյունքում ինքն էլ շրջապատվեց ու զոհվեց:

III փուլ – Կայսրության բանակը հետապնդեց հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր, որոնց թվում զոհվեց նաև Տամ-Խոսրովը:

Նախորդ դեպքերից մոտ մեկ ամիս անց՝ 582 թվականին հուլիսին, Մարզպանական Հայաստանի ուղղությամբ Հայաստանի հրամանատար Կուրսի գլխավորությամբ հարձակման անցած կայսրության մյուս բանակը (20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) արդեն Դվինի ճ-մ-ում անակնկալ հարձակումով հաղթեցին Պարսից թագավորության ճամբարած բանակին (մոտ 20.000): Արդյունքում՝ քաղաք մտնել, սակայն, քրիստոնյաները չկարողացան և նահանջեցին[2]:

Վերջին հաղթանակները, գումարվելով 579 թվականի հաջողությանը, ի վերջո բերեցին նրան, որ, չնայած կայսրության ուժերի թուլացմանը և դրանց զգալի մասի՝ բալկանյան սահման տեղափոխմանը, օպերատիվ նախաձեռնությունը Արևելքում լիովին անցավ պաշտոնական Կոստանդնուպոլսի կողմը: Տիբերիոս I-ը, սակայն, հստակորեն գիտակցելով, որ վերջին հաշվով շահեկան դիրքերում է գտնվում այնուհանդերձ ռազմավարական նախաձեռնության կրող հենց Որմիզդ IV-ը, վերջին հաջողությունները հաշվի առնելով ու փորձ կատարելով առավելագույնս իրացնել դրանց պտուղները, արյաց արքային անմիջապես էլ հաշտության առաջարկ արեց: Սկիզբ առած բանակցությունները, սակայն, որևէ էական արդյունքի այդպես էլ չհանգեցրին, քանզի

[1] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 26; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 18; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 62, 63; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 20; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[2] Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 27; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 61:

ռազմատենչ Որմիզդ IV-ն ինքն էլ հիանալի գիտակցում էր սեփական դրության այժմեական շահեկանությունը և այն հանգամանքը, որ բալկանյան ճակատն, այսպես թե այնպես, լրջորեն շեղում է կայսրության ռազմական մեքենայի ուշադրությունը: Իհարկե, ավելի հեռու հեռանկարում արյաց արքան ինքն էլ էր խնդիրներ ունենալու սեփական թագավորության արևելյան սահմաններում և նույն Խոսրով I-ը դա հաստատ հաշվի կառներ, սակայն Որմիզդ IV-ն այդ մասին չմտածեց:

582 թվականի օգոստոսի 14-ին Կոստանդնուպոլսում վաղաժամ կյանքից հեռացավ Տիբերիոս I-ը, ընդ որում համառ լուրեր էին շրջանառվում, թե, խոցված առաջին դերերում հանդես գալուց զրկված լինելու հանգամանքից, քանզի սեփական կնոջը հավատարիմ մնացած Տիբերիոս I-ը համառորեն այդպես էլ մերժել էր նախկին կայսրուհի Սոֆիայի կողմից արված ամուսնական բոլոր առաջարկությունները, վերջինիս թունավորել էր հենց նույն Սոֆիան: Տիբերիոս I-ի հեռանալը, սակայն, չավելացրեց, այլ, ընդհակառակը, ավելի պակասեցրեց Սոֆիայի ազդեցությունը, քանի որ կայսրության վերնախավի, ըստ էության, միահամուռ համաձայնությամբ գահին բազմեց Տիբերիոս I-ի աղջկա ամուսին և Արևելքում մի քանի զգալի հաղթանակների հասած Մավրիկոսը (582-602):

Տիբերիոս I-ն, ըստ էության, արտակարգ իրավիճակի պայմաններում գործող մի լավ զորավար էր, որը, թեև ռազմական ոլորտում կայսրության առջև հառնած սպառնալիքները հետ մղելու գործում մեծ ավանդ ունեցավ, սակայն խնդիրների լուծման համակարգային մոտեցում վերջինս այդպես էլ չցուցաբերեց: Դրան հակառակ, սակայն, Մավրիկոսը, բնավորության միայն իրեն բնորոշ համակարգվածությամբ, անմիջապես էլ ձեռնամուխ եղավ կայսրության պետական համակարգի և, մասնավորապես, ռազմական մեքենայի կարգավորմանը: Արդյունքում՝ այս կայսրը վերջնականապես ավարտեց նոր պայմաններում հայտնված կայսրության ռազմական մեքենայի գործունեության կարգավորումը, ընդ որում հետաքրքիրն այն էր, որ Մավրիկոսն ինքը, լինելով նաև ռազմական տեսաբան, զորքեր իջեցրեց իր հայտնի «Ստրատեգիկոն»-ը, որտեղ մանրամասն քննարկված էին տարբեր թշնամիների դեմ տարբեր պայմաններում կայսրության բանակի կողմից ռազմական գործողություններ մղելու հնարավոր և ցանկալի տարբերակները: Միաժամանակ հարկ է նշել նաև, որ նոր կայսեր բնավորության մի շարք թերություններ այնուհանդերձ էականորեն իջեցրին վերջինիս գործունեության ընդհանուր արդյունավետության աստիճանը, իսկ միջոցների մշտական պակասն էլ, գումարված կայսեր որոշակի և հաճախ անտեղի խնայողության ձգտումներին, վերջնարդյունքում իսկական մի աղետի հասցրին:

Իրոք, թեև Մավրիկոսը խելացի էր, սակայն դրա հետ միասին նա, երբեմն, աչքի էր ընկնում նաև զարմանալիության աստիճանի հասնող նեղմտությամբ: Կայսրը կամային բնավորության տեր ու զուսպ մի մարդ էր, սակայն դրա հետ միաժամանակ էլ նաև իրավիճակը գնահատելիս նա հաճախ աչքի չէր ընկնում իրատեսական մոտեցումներով և, որ ոչ պակաս կարևոր էր, բոլորից, ըստ էության, պահանջում էր լինել ու գործել այնպես, ինչպես ինքը, այսինքն՝ բարձր բարոյական և ներքին կարգապահության պայմաններում՝ չհասկանալով, որ ընդհանուր թվաքանակում միջին մակարդակում գտնվող մարդկանցից պահանջել այն ողջ դրականի առկայությունը, որ կար իր մոտ, իրական չէ: Արդյունքում՝ կայսրը, կարծես քարանալով իդեալիզմի իր պատկերացումների մեջ, տարիների հետ միասին մարդկանց աստիճանաբար սկսեց վերաբերվել որպես անզգացմունք շախմատային ֆիգուրների՝ պահանջելով նրանցից ընդամենը միայն, ըստ տիրակալի ցանկության, իր կողմից ղեկավարվող շախմատի ռազմաքաղաքական այդ յուրօրինակ այդ տախտակի վրա անհրաժեշտ քայլեր կատարել: Կյանքը, սակայն, շախմատային տախտակ չէր, իսկ մարդիկ էլ անմռունչ կամ անշունչ ֆիգուրներ չէին, բայց այս ամենը ևս Մավրիկոսը, հատկապես տարիներն անցնելու հետ միասին, համառորեն չէր ուզում նկատել: Այսպես թե այնպես, սակայն կայսրության ղեկին հայտնված Մավրիկոսն ինքը, լինելով անցումային շրջանի նախավերջին կայսրը, ինքն իրենով յուրօրինակ մի փոքրիկ դարաշրջան ներկայացրեց:

Կայսր դառնալուց հետո Մավրիկոսն Արևելքի հրամանատար կարգեց մինչ այդ որպես իր օգնական հանդես եկած Հովհան Մյուստակոնին, որն իր այս մականունը ստացել էր երկար բեղեր ունենալու պատճառով: Արդյունքում՝ արդեն հաջորդ տարի Արևելքի նոր հրամանատարը որոշեց դիմել ակտիվ ռազմական գործողությունների:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

583 հուլիս – ***<u>Նիմֆիս բերդի ճ-մ</u>***[1]

Արևելքի հրամանատար Հովհան Մյուստակոնի և Հայաստանի հրամանատար Կուրսի ընդհանուր ղեկավարությամբ գործող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) մոտեցան Խարդարիգանի գլխավորած Պարսից և Լախմյանների թագավորությունների միացյալ բանակին (մոտ 50.000): Կայսերական բանակի կենտրոնի, ինչպես նաև ընդհանուր հրամանատարությունը ստանձնեց Հովհան Մյուստակոնը, ձախ թևինը՝ Արիուլֆոսը, իսկ աջինը՝ Կուրսը: Լախմյանների թագավորության բանակը տեղակայվեց սեփական մարտակարգի ձախ թևում:

I փուլ – Քրիստոնյաների բանակի կենտրոնն ու ձախ թևն անցան հարձակման և, պարտության մատնելով թշնամու բանակի կենտրոնին ու աջ թևին, ստիպեցին վերջինիս նահանջել: Միաժամանակ, սակայն, կայսերական բանակի աջ թևի հիմնական ուժերը Կուրսի գլխավորությամբ սկսեցին նահանջել և լքել մարտադաշտը, ինչը խուճապ տարածեց կենտրոնում ու ձախ թևում:

II փուլ – Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Լախմյանների թագավորության բանակը հակահարձակման անցավ սեփական ձախ թևում և վերջնական փախուստի մատնեց թշնամու բանակի աջ թևի ուժերին:

III փուլ – Պարսից թագավորության բանակը ողջ ճակատով անցավ վճռական հարձակման և փախուստի մատնեց հակառակորդին, որը միայն մեծ դժվարությամբ պատսպարվեց սեփական ամրացված ճամբարում:

Հայերը կորցրին մոտ 3.000, դաշնակիցը՝ մոտ 17.000, թշնամին՝ մոտ 15.000 զինվոր:

583 թվականի օգոստոսին Խարդարիգանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 300) պաշարեց, սակայն չկարողացավ գրավել Ափում ամրոցը[2]: Ի պատասխան դրա՝ կայսրության ռազմական մեքենան իր հերթին որոշեց պատասխան հարված հասցնել արդեն հակառակորդի ամրություններից մեկին:

Հետագա անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 9; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 5, գլուխ 20, գիրք 6, գլուխ 3; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 63; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 12:

583 օգոստոս – ***<u>Ակբաս ամրոցի ճ-մ</u>*** (Աղձնիք,Նփռետ գավառ, Արևմտյան Տիգրիսի ձախ վտակ Քաղիրթի ափին)[1]

Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) պաշարեցին ամրոցը, որի արդյունքում պարենամթերքի խիստ պակաս զգացող Պարսից թագավորության բանակը (մոտ 300) ի վերջո դադարեցրեց դիմադրությունը, հանձնվեց ու գերվեց: Ամրոցն ավերվեց, սակայն տեղում կայազոր չթողնվեց, որից էլ օգտվելով, Պարսից թագավորության մեկ այլ ջոկատ (մոտ 300) կրկին զբաղեցրեց այն:

I փուլ – Կայսրության բանակը կրկին մոտեցավ ամրոցին, սակայն հակառակորդը համառորեն հետ մղեց բոլոր գրոհները:

II փուլ – Ափում ամրոցը պաշարած Խարդարիգանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 8.000) անակնկալ հարձակվեց Ակբաս ամրոցը պաշարած կայսրության բանակի վրա և փախուստի մատնեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 1.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

Վերևում նկարագրված ճակատամարտերում կրած պարտությունները զգալիորեն խունացրին վերջին տարիներին հաջողության մեջ գտնվող կայսրության արևելյան բանակի հաջողության լուսապսակը, թեև ծանր հետևանքներ դրանք մեծ հաշվով չունեցան և օպերատիվ նախաձեռնությունը շարունակեց պատկանել հենց կայսրության բանակին: Միաժամանակ, սակայն, նույն այդ պարտությունների հետևանքով կայսրության արևելյան բանակի ռազմական ակտիվությունը զգալիորեն ընկավ, իսկ դա էլ իր հերթին, հաշվի առնելով նաև սեփական տերության արևմտյան սահմաններին տարին տարու վրա դեպի անկում գնացող Պարսից թագավորության բանակի ակտիվության մակարդակը, վերջնական հաշվով, ի համեմատ նախկինի, բերեց մարտական գործողությունների ինտենսիվության էլ ավելի անկմանը: Իրոք, մի կողմից իրադրությունը Պարսից թագավորության արևելյան սահմաններին տարին տարու վրա լարվում էր, քանզի Թյուրքական խաքանությունն այստեղ նախապատրաստում էր վերջինն ու վճռականը լինելուն կոչված իր գլխավոր հարվածը, իսկ մյուս կողմից էլ թյուրքական վտանգից վերջնականապես ազատված Ավարական խաքանությունը լուրջ հավակնություններ էր ներկայացնում Բալկանյան թերակղզու նկատմամբ արդեն Բյուզանդական կայսրության դանուբյան սահմանում, այնպես որ երկու գերտերությունների հոգսը մեծապես արդեն միմյանց դեմ պայքարելը չէր:

583 թվականի օգոստոսի վերջից մինչև հոկտեմբեր Ավարական խաքանության բանակը (մոտ 150.000, այդ թվում սլավոններ և լանգոբարդներ) Բյուզանդական կայսրության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 50) գրավեց Սինգիդունը (Սավա և Դանուբ գետերի միախառնման վայրում, ներկայումս՝ Բելգրադ), Օգոստան (Օգոստա գետի ափին), Վիմինսկը (Սերբիա, Դանուբի աջ ափին) և Անքիլոսը (= Պոմորիե) (Բուլղարիա, Սև ծովի ափին): Ստեղծված ծանր պայմաններում, հնարավորություն չունենալով հետ մղել ավարներին ու միաժամանակ նաև ձգտելով ժամանակ շահել, Մավրիկոսը բանակցություններ սկսեց և 584 թվականի գարնանը Բայան I-ի հետ հերթական մի զինադադար կնքեց, որի դիմաց կայսրությունը վճարեց 450 կգ ոսկի ու պարտավորվեց այդքան էլ վճարել ամեն տարի, իսկ հակառակորդն էլ ազատեց գրավված քաղաքները,

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 12; Մենանդրոս Պրոտեկտոր «Պատմություն», հատված 74, 76, 77; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 36, 37; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 21; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

բացի Սիրմիայից[1]:

Կրած վերջին անհաջողություններից հետո Մավրիկոսը պաշտոնանկ արեց Արևելքի հրամանատար Հովհան Մյուստակոնին և նրա փոխարեն նշանակեց սեփական քրոջ ամուսին Ֆիլիպիկին, որը համարվում էր իր ժամանակի լավագույն ռազմական տեսաբաններից մեկը, թեև, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, գործնական հմտություններն ու կամային և զորավարական որակները այս նոր զորավարին ամեն դեպքում պակասում էին: Այսպես թե այնպես, սակայն Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) 583 թվականի սեպտեմբերին ասպատակեցին Հայոց Միջագետքի արևելքն ու Հյուսիսային Միջագետքն և նահանջեցին[2]: Մեկ ամիս անց՝ 583 թվականի հոկտեմբերին, Ֆիլիպիկը փորձ կատարեց կրկնել հարվածը, սակայն արդյունքում, ստիպված լինելով խուսափել Պարսից թագավորության առաջխաղացող ավելի մեծ բանակից (մոտ 30.000) ու զորքը բաժանվելով երկու մասի, նահանջեց Սիսավրանոն ամրոցի և Կարինի ուղղությամբ, ընդ որում ստեղծված բացառիկ իրավիճակում նահանջողների հետ միասին Կարինի ուղղությամբ տարվող գերիները գրեթե ողջ կազմով կամ սպանվեցին հենց գերեվարողների իսկ կողմից, կամ էլ մահացան ստեղծված ծանր պայմանների արդյունքում[3]:

Ձգտելով կյանքի կոչել հակառակորդի տրամադրության տակ գտնվող շրջանները ոտնատակ տալու իր կողմից առաջ մղվող ռազմավարությունը՝ Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) 584 թվականի մարտին ասպատակեցին Աղձնիքի կենտրոնական ու արևելյան մասը և նահանջեցին[4]: Ի պատասխան դրա՝ մեկ ամիս անց՝ 584 թվականի ապրիլին, արդեն Խարդարիգանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 30.000) ասպատակեց Տիգրանակերտի շրջակայքն ու Աղձնիքի արևմուտքը և նահանջեց[5]: Այս դեպքերից կարճ ժամանակ անց, սակայն, Ֆիլիպիկը ծանր հիվանդացավ ու ստիպված եղավ մի կողմից առողջանալու, իսկ մյուս կողմից էլ Մավրիկոսի հետ խորհրդակցելու համար թողնել գործող բանակը և առժամանակ հեռանալ Կոստանդնուպոլիս, ինչը վերջինիս բանակն իր հերթին անգործության մատնեց:

585 թվականի գարնանը վերադառնալով գործող բանակ և Հայաստանի հրամանատար նշանակելով Հերակլես Ավագ Հային՝ Արևելքի հրամանատար Ֆիլիպիկը սկիզբ դրեց վճռական գործողությունների: Հենց այս ժամանակ, սակայն, Ամիդում նրան ներկայացավ Որմիզդ IV-ի դեսպանը և առաջարկեց վերջ դնել պատերազմական գործողություններին՝ միաժամանակ, սակայն, պահանջելով նաև վաղուց ի վեր վեճի առարկա հանդիսացող դրամական նույն հատուցումը: Մերժելով այս առաջարկը՝ Ֆիլիպիկը շարունակեց առաջխաղացումը, ինչից հետո խաղաղության առաջարկով ևս մեկ անգամ նրան ներկայացավ արդեն Մծբինի եպիսկոպոսը: Խաղաղության առաջարկված պայմանները Ֆիլիպիկն այս անգամ գրավոր տեսքով ուղարկեց Մավրիկոսին, սակայն վերջինս մերժեց դրանք և հրամայեց շարունակել ռազմական գործողությունները՝ լիովին հիմնավորված գալով այն հետևության, որ այդ պահին խաղաղությունն ավելի շուտ ձեռնտու էր հենց ուժերի ծայրահեղ լարմանն արդեն աստիճանաբար չդիմացող պարսկական կողմին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 4, 6; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:

[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 13; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 3:

[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 13; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[4] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 14; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[5] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 14; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

585 մայիս – ***Սոլոհոն ամրոցի ճ-մ*** (Մծբինից մոտ 30 կմ արևմուտք, Արզամոն գետի ափին)[1]

Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի և Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) շարժվեցին թշնամուն ընդառաջ և ճամբար զարկեցին մի ամրացված վայրում՝ իրենց տիրապետության տակ պահելով Արզամոն գետի հունը: Տեղեկանալով այդ մասին՝ Խարդարիգանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 30.000) մոտեցավ հակառակորդին: Կողմերը մարտակարգ ընդունեցին:

Կայսերական բանակի ձախ թևի հրամանատարներ նշանակվեցին Իլիֆերդը և Ապսիքանը, աջ թևի հրամանատարությունը ստանձնեց Վիտալիոսը, իսկ կենտրոնի ու ողջ բանակի ղեկավարությունն էլ իրենց վրա վերցրին Ֆիլիպիկն և Հերակլեսը: Պարսից թագավորության ձախ թևի հրամանատարությունը ստանձնեց Հրահատը, աջ թևինը՝ Մովպետ Սուրենյանը, իսկ կենտրոնի և ողջ բանակի ղեկավարությունն իր վրա վերցրեց Խարդարիգանը:

I փուլ – Կողմերն անցան հարձակման և բռնկվեց համառ հանդիպակաց մարտ, ինչի արդյունքում Վիտալիոսի գլխավորած ուժերը պարտության ու փախուստի մատնեցին Պարսից թագավորության բանակի ձախ թևին, սակայն, փոխանակ հետապնդեն վերջինիս, սկսեցին զբաղվել ավար հավաքելով: Օգտվելով դրանից՝ թշնամու ուժերը պատսպարվեցին սեփական մարտակարգի կենտրոնում և այստեղ ավելի ուժեղացրին ճնշումը հակառակորդի վրա:

II փուլ – Համառ և արյունահեղ մարտից հետո քրիստոնյաների բանակի կենտրոնը պարտության և փախուստի մատնեց հակառակորդին:

III փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ կայսերական բանակը պարտության և փախուստի մատնեց նաև հակառակորդի աջ թևին:

IV փուլ – Քրիստոնյաների բանակը հետապնդեց և կոտորեց թշնամու բանակի փախչող մնացորդներին՝ միայն ուշ երեկոյան վերադառնալով սեփական ճամբար:

V փուլ – Հաջորդ օրը լուսաբացին մարտադաշտ հասած թշնամու վերջապահ ուժերը անակնկալ հարված հասցնելով փորձեցին փոխել մարտի ելքը, սակայն իրենց հերթին պարտություն կրեցին և դիմեցին փախուստի, ընդ որում հակառակորդի բանակի ղեկավար կազմի մի մասը զոհվեց, իսկ մնացած մասն էլ միայն մեծ դժվարությամբ խուսափեց գերվելուց:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր, որոնց թվում նաև 2.000 գերի:

Այսպիսով՝ ձեռք բերվեց զգալի մի հաջողություն: Արդյունքում 585 թվականի հունիս ու հուլիս ամիսներին, զարգացնելով ձեռք բերված հաջողությունը, Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) ասպատակեցին Աղձնիքի կենտրոնական ու արևելյան մասը և, ձեռք բերելով մեծաթիվ գերիներ, նահանջեցին[2]:

585 թվականի ձեռքբերումները, վերջին տարիներին Արևելքում մղվող մարտական գործողություններում հանդիսանալով կայսրության բանակի հաջողությունների կարծես

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 15, գիրք 2, գլուխ 1-6; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 3; Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 43, 44; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 6, 7:

յուրօրինակ մի պսակը, ոչ միայն թույլ տվեց վերջինիս իր ձեռքում պահել օպերատիվ նախաձեռնությունը, այլև թույլ տվեց նաև, օգտվելով Պարսից թագավորության արևելյան սահմաններում նույն այս ժամանակ արդեն մեծապես լարված դրությունից, երբ արյաց արքան այդ ուղղությամբ ստիպված էր զգալի ուժեր տեղակայել, Որմիզդ IV-ի տերության արևմտյան սահմաններում վերջինիս համար ծանր դրություն ստեղծել: Միաժամանակ, սակայն, ձեռք բերված հաջողությունից ոգևորված կայսրության բանակի բարձր հրամանատարական կազմը, մոտավորապես այնպես, ինչպես 10 տարի առաջ եղավ, թույլ տվեց մի քանի ռազմական բնույթի բացթողումներ, որոնք զգալիորեն արժեզրկեցին իրերի այս դրական դրությունը: Կայսրության դեմ խաղաց նաև այն հանգամանքը, որ Արևելքում ձեռք բերված զգալի հաջողությունների հետ գործնականում հենց միաժամանակ հերթական անգամ և ավելի լուրջ, քան նախորդ տարիներին էր, բարդացավ գործերի դրությունը արդեն դանուբյան ճակատում: Եվ վերջապես բացասական դեր ունեցավ նաև սուբյեկտիվ մի գործոն ևս, քանզի Մավրիկոսը, մի կողմից իրոք միջոցների պակաս ունենալով, իսկ մյուս կողմից էլ ձգտելով խնայել բանակի վրա ծախսվող նույն այդ միջոցները, սկիզբ դրեց յուրօրինակ մրցակցության մի քաղաքականության՝ կայսրության արևելյան սահմաններին Պարսից թագավորության ճնշման թուլացմանը համընթաց քչացնելով սեփական բանակին տրամադրվող միջոցների քանակը: Դրանով կայսրը կարծես փորձում էր հավասարակշռության մեջ պահել իրադրությունը՝ հավասար համեմատական հակառակորդի բանակի թուլացմանը ֆինանսական միջոցների խնայման նպատակով թուլացնելով նաև իր բանակը: Արդյունքում՝ բանակին տրվող ֆինանսավորումը փոխանակ գոնե առնվազն նույն մակարդակի վրա պահվեր և Որմիզդ IV-ի համար ծանրացող իրադրության պայմաններում վճռական հաջողության հասնելու համար ուժեղացվեր ճնշումը պաշտոնական Տիզբոնի վրա, կայսրը փորձ կատարեց ընդամենը միայն պահպանել հավասարակշռությունը, ինչով մի կողմից բաց թողեց առկա հնարավորությունները, իսկ մյուս կողմից էլ պարսկական կողմին թույլ տվեց պահել դիրքերը և նույնիսկ երբեմն՝ տեղային հակահարվածներ հասցնել:

Դանուբյան ճակատում առաջին հարվածը հասցրին սլավոնները (մոտ 60.000), որոնք, ոտնատակ տալով Թրակիան, 585 թվականի հուլիսին մոտեցան Երկար պարիսպներին, թեև այս անգամ ևս չկարողանալով անցնել դրանք, նահանջեցին[1]: Դրանից հետո Արևմուտքի հրամանատար Կոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) 585 թվականի հուլիսին Էրգինիա գետի ճ-մ-ում (Թրակիա) անակնկալ հարձակումով ջախջախեցին սլավոններին (մոտ 40.000)[2], իսկ կարճ ժամանակ անց էլ նույնն արեցին արդեն Անսինա ամրոցի ճ-մ-ում (Ադրիանապոլսի մոտ)[3]: Փաստորեն դեպի հարավ սլավոնների առաջխաղացումն ավարտվեց լիակատար պարտությամբ և արդյունքում նրանք հետ մղվեցին Դանուբից հյուսիս: Գործը, սակայն, ակնհայտորեն սրանով չէր ավարտվելու, քանզի անհաջողության կրած սլավոնների փոխարեն Բայան I-ը շուտով շարժի մեջ դրեց արդեն բուն ավարական ուժերը:

Որպես հետևանք այս ամենի՝ 585 թվականի աշնանը Ավարական խաքանության բանակը (մոտ 150.000, այդ թվում սլավոններ) իջավ դեպի հարավ և Բյուզանդական կայսրության բանակից (ընդհանուր՝ մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (ընդհանուր՝ մոտ 50) գրավեց Արչար ամրոցը, ինչպես նաև Վիդնին (Բուլղարիայի հյուսիս-արևմուտք), Ակիսը (ներկայիս Մակեդոնիայի հարավ), Դորոստոլը (Թրակիա, Դանուբի ափին), Վառնան (= Օդյուսոս) (Բուլղարիա, Սև ծովի ափին)

[1] Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 6, 7; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:
[2] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:
[3] Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 7; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:

Պանասան, Մարկինոպոլիսը և Թրոպիցան (Բուլղարիայի արևելք)[1]: Նախորդ իրադարձությունների հետ միաժամանակ մեկ անհաջողություն էլ պատուհասեց կայսրությանն արդեն Ապենինյան թերակղզում, երբ 585 թվականի օգոստոսին Ավտարիկ արքայի (584-590) գլխավորած Լանգոբարդական թագավորության բանակը (մոտ 30.000) Ռավեննայի ճ-մ-ում հաղթեց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 200)[2]:

586 թվականի գարնանը Արևելքի հրամանատար Ֆիլիպիկն իր հերթին վերսկսեց մարտական գործողությունները Արևելքում: Այս անգամ, սակայն, ամեն ինչ այնքան էլ հաջող չստացվեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

586 գարուն – ***<u>Քլիմար ամրոցի ճ-մ</u>***[3]

Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի և Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 7.000, այդ թվում Մարուֆուս Հայը և Հովիոս Հայը) պաշարեցին ամրոցը Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000)՝ նպատակ ունենալով գրավել այն և ամրանալ վերջինիս շրջակայքում: Միաժամանակ որոշվեց հետախուզել տեղանքը և դրա համար փոքր ջոկատով (20) առաջ ուղարկվեց Հերակլեսը:

I փուլ – Հերակլեսի ջոկատը անակնկալ հանդիպեց Խարդարիգանի գլխավորությամբ հիմնականում շատ վատ պատրաստված աշխարհազորայիններից կազմված և աննկատ առաջխաղացում իրականացրած Պարսից թագավորության բանակին (մոտ 10.000), որից հետո, հմուտ մանևրելով խուսափելով հակառակորդից, Հերակլեսին հաջողվեց հիմնական բանակին տեղեկացնել թշնամու առաջխաղացման մասին:

II փուլ – Պարսից թագավորության բանակը մոտեցավ ամրոցին և ճամբարեց, ընդ որում թշնամական բանակներին բաժանում էր մի խորը ձորակ: Մի քանի օր անց, օգտվելով հակառակորդի անգործությունից, Խարդարիգանի բանակը գրեթե լիովին շրջապատեց վերջինիս:

III փուլ – Տեղեկանալով ստեղծված իրավիճակի մասին՝ սկզբում Ֆիլիպիկը, իսկ հետո էլ արդեն նաև կայսրության ողջ բանակը մութ գիշերով դիմեցին խուճապահար փախուստի՝ այդ ընթացքում, լավ ծանոթ չլինելով ձորակներով կտրտված տեղանքին, կրելով զգալի կորուստներ: Օրը բացվելուն պես պարզելով իրողությունը՝ Պարսից թագավորության բանակը սկսեց հետապնդել դեպի ***<u>Ափում ամրոց</u>*** շարժվող հակառակորդին՝ զգալի կորուստներ պատճառելով վերջինիս:

IV փուլ – Հետագա օրերին Պարսից թագավորության բանակը շարունակեց հետապնդումը՝ հակառակորդին հալածելով մինչև ***<u>Ամիդ</u>*** և ձեռք գցելով վերջինիս գումակը:

Հայերը կորցրին մոտ 2.500, դաշնակիցը՝ մոտ 7.500, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

Նախորդ ճակատամարտում կրած անհաջողությունը, ոչ այնքան խոշոր, և, ըստ էության, չփոխող ուժերի դասավորությունը Արևելքում, միաժամանակ, սակայն, փաստորեն նաև ոչնչացրեց Ֆիլիպիկի ողջ ռազմական հեղինակությունն ու փառքը, երբ պարզվեց, որ լավ տեսաբանի համբավ ունեցող այս զորավարը անհաջողության մատնվեց ոչ միայն պարզագույն մարտավարական տեղաշարժերում, այլև՝ անձնական

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 1, գլուխ 8; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:
[2] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 7-9; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

ամոթալի և զորականի համար անընդունելի վարքագիծ դրսևորեց՝ տրվելով խուճապահար վախին: Իր հերթին Ֆիլիպիկը, հերթական անգամ ծանր հիվանդացած, ըստ երևույթին, արդեն վերապրածից, գործող բանակի հրամանատարությունը հանձնեց Հերակլես Ավագ Հային և բացատրություններ տալու նպատակով մեկնեց Կոստանդնուպոլիս: Նույն 586 թվականին դանուբյան սահմանն իր հերթին շարունակում էր այրվել, ընդ որում հարվածի տակ հայտնվեց արդեն նաև բալկանյան ճակատում գտնվող կայսրության գլխավոր քաղաքներից մեկը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

586 սեպտեմբերի 23-29 – ***<u>Թեսալոնիկեի պաշտպանությունը</u>***[1]

Բայան I-ի գլխավորությամբ աննկատ երթով առաջխաղացած Ավարական խաքանության բանակը (100.000, այդ թվում սլավոններ, բուլղարներ, գեպիդներ, լանգոբարդներ և հոներ) պաշարեց քաղաքը Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 100):

I փուլ – Սեպտեմբերի 23-ի վաղ լուսաբացին թշնամին, օգտվելով պարիսպները պահպանողների անփութությունից, փորձեց աննկատ գրավել դրանք, սակայն վերջին պահին հետ շպրտվեց, որից հետո, ասպատակելով քաղաքի շրջակայքն և կենտրոնացնելով ուժերը, պատրաստվեց քաղաքի կանոնավոր պաշարմանը:

II փուլ – Մեկ օր ծախսելով պաշարողական տեխնիկա կառուցելու վրա՝ սեպտեմբերի 25-ի առավոտյան քաղաքը պաշարողները բոլոր կողմերից անցան գրոհի, սակայն արդեն օրվա վերջում հետ մղվեցին ելման դիրքեր: Միաժամանակ անհաջողությամբ ավարտվեց նաև ծովի կողմից քաղաք ներխուժելու փորձը:

III փուլ – Սեպտեմբերի 26-ին քաղաքի գրոհը վերսկսվեց այս անգամ հիմնականում Կասանդրոսյան դարպասների կողմից, սակայն այն ևս որևէ հաջողություն չբերեց, քանի որ, թեև գրոհողների հաջողվեց մասնակի քանդել արտաքին պարսպի մի մասը, սակայն պաշտպանվողներն ի վերջո հզոր արտագրոհով հետ շպրտեցին հարձակվողներին:

IV փուլ – Սեպտեմբերի 27-ին և 28-ին 50-ից ավել քարանետներով հարվածելով քաղաքի պարիսպներին, սակայն այդպես էլ չկարողանալով էական վնաս պատճառել դրանց, քաղաքը պաշարողները դրա հաջորդ օրը պատրաստվեցին վճռական գրոհ կազմակերպել: Պարենի սուր պակասի և ներբանակային հարաբերությունների սրման պատճառով հայտնվելով ծանր վիճակում, սակայն, երբ նույնիսկ առանձին ներքին ընդհարումներ սկսվեցին, Ավարական խաքանության բանակի ռազմիկները, սեպտեմբերի լույս 29-ի գիշերը ոչնչացնելով պաշարողական տեխնիկան ու հետները վերցնելով միայն անհրաժեշտը, հեռացան:

Հայերը կորցրին մոտ 5, դաշնակիցը՝ մոտ 150, թշնամին՝ մոտ 5.000 զինվոր:

586 թվականի աշնանը, կարգի գցելով գործերը և փաստացի իրականացնելով Արևելքի հրամանատարի պարտականությունները, Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000) ասպատակեցին Աղձնիքի կենտրոնական և արևելյան մասը, Կորճայքը ու Ատրպատականի արևմուտքը և նահանջեցին[2]: Այս ժամանակ Թյուրքական խաքանության կողմից Պարսից թագավորության արևելյան սահմանների վրա ճնշումը ավելի էր ուժեղացել և այստեղ սպասվում էին մեծամասշտաբ մարտական գործողություններ, ինչի արդյունքում իր

[1] Հովհան Թեսալոնիկացի «Սուրբ Դմիտրիոս Սալոնացու հրաշագործությունները»:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 10; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

պետության արևմտյան ճակատում որևէ ակտիվության մասին Որմիզդ IV-ը որևէ կերպ մտածել չէր կարող:

Արդյունքում՝ օգտվելով հօգուտ իրեն դասավորված իրերի դրությունից, 587 թվականի գարնանը Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000) կրկին ասպատակեցին Աղձնիքի կենտրոնական և արևելյան մասը, Կորճայքը ու Ատրպատականի արևմուտքը և նահանջեցին[1]: Նույն այս ժամանակ Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի, ինչպես նաև Թեոդորոսի ու Անդրեասի գլխավորությամբ գործող կայսրության բանակը, առանց մարտերի մտնելով Մատեարոն ամրոց և ամրացնելով այն, Պարսից թագավորության բանակից (մոտ 500) գրավեց նաև Բեյդուսես ամրոցը (Մծբինից 5 կմ հյուսիս)[2], որից հետո տիրեց ևս մեկ ամրոցի[3]: Սրանով մարտական գործողություններն Արևելքում այդ տարի, ըստ էության, իրենց վերջը գտան, սակայն, դրան հակառակ, դանուբյան սահմանում պատերազմական գործողություններն ավելի թեժացան:

587 թվականի մարտից մինչև ապրիլ Արևմուտքի հրամանատար Կոմենցիոլոսի օգնականներ Կաստասի և Մարտինոսի գլխավորությամբ երկու մասի բաժանված Բյուզանդական կայսրության բանակը (ընդհանուր՝ մոտ 4.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.200) ասպատակեցին Հյուսիս-արևելյան Թրակիան, սակայն, ժամանակին չստանալով օժանդակություն, ի վերջո նահանջեցին[4]: 587 թվականի ապրիլին Ավարական խաքանության բանակը (մոտ 5.000, այդ թվում սլավոններ) Զալդապի ճ-մ-ում (Թրակիա, Գեմա լեռան մոտ) անակնկալ հարձակումով հաղթեց Կաստասի բանակի ձեռք բերած ավարը փոխադրող Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 50)՝ հետ խլելով ավարը[5]: Նախորդ անհաջողությանը, սակայն, շուտով փոխարինեց հաջողությունը, քանզի կարճ ժամանակ անց Մարտինոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 600), օգտվելով այն բանից, որ ավարառության համար ուժերը ցրած խաքանը ճամբարում է գտնվում միայն համեմատականորեն փոքրաթիվ ուժերով, Թոմիսիայի ճ-մ-ում (Ռումինիայի հարավ-արևելք, ծովի ափին) անակնկալ հարձակումով ջախջախեցին Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության ճամբարած բանակին (մոտ 10.000, այդ թվում սլավոններին), ընդ որում խաքանն ինքը հազիվ փրկվեց գերվելուց[6]: Վերջնական հաջողությունը, սակայն, այնուհանդերձ մնաց Բայան I-ի կողմում, որը, օգտվելով Կոմենցիոլոսի անգործությունից, որը ժամանակին չաջակցեց իր ենթականերին, 587 թվականի մայիսին Սաբուլենտե Կանալիոյի ճ-մ-ում (Թրակիա, Անքիլոսի մոտ) անակնկալ հարձակումով ցրեց ու հաղթեց Կաստասի և Մարտինոսի գլխավորությամբ գետն անցած ու Կաստասի գլխավորությամբ գործող կայսերական բանակի մի մասին[7]: Նախորդ հաջողությունից հետո, օգտվելով այն բանից, որ իրեն դիմադրող դաշտային բանակ չկա, 587 թվականի հունիսին Ավարական խաքանության բանակը (մոտ 50.000, այդ թվում սլավոններ) Բյուզանդական կայսրության բանակից (500) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 5) գրավեց Մեսեմվրիան, որից հետո ասպատակեց ողջ Թրակիան՝ հերթական անգամ հասնելով մինչև Երկար պարիսպներ[8]: Փաստորեն համեմատաբար փոքր ծավալի հաջող գործողությունները, որոնք սկիզբ առան Ավարական խաքանության դեմ 587 թվականի սկզբին, նույն տարվա արդեն կեսերին կայսրության համար վերաճեցին

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 10:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[4] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 10; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[5] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 10:
[6] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 10, 11; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[7] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 11, 12; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[8] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 12; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 10:

հակառակորդի խոշոր մի հակահարձակման, որն իրենից զգալի վտանգ էր ներկայացնում: Իր հերթին, սակայն, համարելով իրավիճակը ծանր, Արևմուտքի հրամանատար Կոմենցիոլոսն ի վերջո անցավ վճռական գործողությունների:

Արդյունքում՝ 587 թ-ի հունիսին Լիվիդուրգի ճակատամարտում (Անքիլոսի մոտ) Արևմուտքի հրամանատար Կոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (8.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 400) անակնկալ հանդիպեցին Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակին (մոտ 10.000, այդ թվում սլավոններին), ինչի արդյունքում խուճապահար փախուստի մատնեցին հակառակորդին, սակայն, ընթացքում իրենք էլ խուճապի մատնվելով, իրենք ևս դիմեցին փախուստի[1]: Նախորդ դեպքերից անմիջապես հետո Բայան I-ը գրավեց Ապիարիա ամրոցը (Թրակիա, Դանուբի աջ ափին)[2], ինչին էլ, արդեն հուլիս և օգոստոս ամիսներին, հաջորդեց Ավարական խաքանության համալրված խոշոր բանակի հիմնական հարվածը:

Արդյունքում՝ Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակը, հերթական անգամ ողողելով Թրակիան, պաշարեց Բերիան, Դիոկլետիանոպոլիսը (Կենտրոնական Բուլղարիա, Ֆիլիպոպոլսի մոտ), Ֆիլիպոպոլիսը (Կենտրոնական Բուլղարիա, ներկայումս՝ Պլովդիվ) և Ադրիանապոլիսը, թեև այդպես էլ չկարողացավ տիրել այդ քաղաքներին[3]: Այս ընթացքում, սակայն, Մավրիկոսի աջակցությունը վայելող և Կոմենցիոլոսին փոխարինած Արևմուտքի նոր հրամանատար Հովհան Մյուստակոնը, ի վերջո զգալի համալրումներ ստանալով Արևելքից, կարողացավ կարգի բերել սեփական ուժերը ու շարժվել հակառակորդի դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

587 սեպտեմբեր – ***<u>Ադրիանապոլսի ճ-մ</u>***[4]

> Արևմուտքի հրամանատար Հովհան Մյուստակոնի և նրա օգնական Դրակտոնի գլխավորությամբ ***<u>Կոստանդնուպոլսից</u>*** առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) մոտեցան քաղաքին: Արդյունքում՝ Բայան I-ի գլխավորությամբ քաղաքը պաշարած Ավարական խաքանության բանակը (մոտ 80.000, այդ թվում սլավոններ) հետ քաշվեց, ինչից հետո հաջորդ օրը վաղ առավոտյան կողմերը մարտակարգ ընդունեցին:
>
> I փուլ – Առավոտյան կայսրության բանակը հարձակվեց թշնամու վրա և կեղծ նահանջեց՝ քաշելով վերջինիս իր հետևից:
>
> II փուլ – Կեսօրին կայսրության բանակը անցավ կտրուկ հակահարձակման մարտակարգը խախտած հակառակորդի ուղղությամբ և ծանր պարտության մատնեց վերջինիս:
>
> Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 9.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

587 թվականը բալկանյան ճակատում մղվող մարտական գործողությունների գագաթնակետը հանդիսացավ, երբ, չնայած զգալի կորուստներին և գործերի հակասական ընթացքին, կայսրությանն այնուհանդերձ հաջողվեց պարտության մատնել ու հետ մղել Ավարական խաքանությանը, ինչից հետո իրավիճակի սրությունն առժամանակ վերացավ, թեև սպառնալիքները պահպանվեցին: Այս անգամ ևս, սակայն, ինչպես դա եղավ Արևելքի պարագայում, Մավրիկոսը շարունակեց կյանքի կոչել

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 15; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 15, 16; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 16; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 10:
[4] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 2, գլուխ 17, գիրք 3, գլուխ 4:

բանակին տրվող ֆինանսավորումը, ինչպես նաև բուն բանակային ուժերը կրճատելու իր հետևողական քաղաքականությունը՝ կարծես հերթական անգամ ձգտելով հավասարակշռության վիճակ ստեղծել պետության առջև կանգնած սպառնալիքների և բանակային առկա ուժերի համահավասար թուլացման միջև ու փորձ իսկ չանելով իրերի դրությունը գոնե մի քիչ փոխել սեփական բանակի օգտին: Նույն այս ժամանակ հակասական էին կայսրության գործերը, սակայն, արդեն Ապենինյան թերակղզում:

Իրոք, թեև 588 թվականի գարնանը Իտալիայի էքսարքոս Սմարագդուսի և Դրակտոնի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200), ինչպես նաև Ֆրանկական թագավորության բանակը (մոտ 10.000) Ռավեննայի ճ-մ-ում հաղթեցին Ավտարիկ արքայի գլխավորած Լանգոբարդական թագավորության բանակին (մոտ 20.000), որից հետո առանց մարտերի մտան Կլասիս[1], սակայն դրանից հետո Լանգոբարդական թագավորության բանակն (մոտ 10.000) իր հերթին մինչև աշուն պաշարեց Կոմացինա կղզին և ի վերջո կայսրության բանակին ստիպեց հանձնվել[2]: Այս ընթացքում, իրենց հերթին անակնկալ բարդություններ առաջացան արդեն Արևելքում:

Իրոք, նույն 587 թվականին, համարելով, որ Արևելքում վիճակն ավելի է հանդարտվել, կայսրը հատուկ հրահանգով հրամայեց այստեղ գտնվող ռազմիկների ինչպես աշխատավարձերը, այնպես էլ մնացած հատուցումներն ու հատկացվող միջոցները ևս մեկ քառորդով կրճատել, ինչն էլ ի վերջո արդեն բերեց վաղուց հասունացող պայթյունի: Իրավիճակին լրացուցիչ սրություն հաղորդեց, սակայն, ևս մեկ հանգամանք:

Խնդիրը կայանում էր նրանում, որ 586 թվականի անհաջողությունը ծանր տարած Արևելքի հրամանատար Ֆիլիպիկն այս ընթացքում այդպես էլ չէր առողջացել կամ, այսպես ասենք, չէր կարողացել հաղթահարել սեփական հոգեբանական խնդիրները, ընդ որում նա փաստացի իր ձեռքը չէր վերցրել բանակի ղեկավարումը Արևելքում նաև 587 թվականին: Ստեղծված պայմաններում, արդեն 588 թվականի գարնանը, ցանկանալով փոխարինել անգործունակության մատնված Ֆիլիպիկին, Մավրիկոսը արևելք ուղարկեց լավ զորավարի համբավ ունեցող Պրիսկոսին՝ հետը դնելով բանակի կարիքներին հատկացվող միջոցները մեկ քառորդով կրճատելու իր տխրահռչակ հրամանը: Եվ ահա Պրիսկոսը, ժամանելով Արևելքի հրամանատարի նստավայրը հանդիսացող Կոնստանդինե, 588 թվականի ապրիլի 18-ին հրամայեց զորքի առաջ կարդալ հիշատակված հրամանը, սակայն այդ քայլը վերջնականապես պայթեցրեց առանց այդ էլ լարված դրությունը և Հերմանոս Փոենիկացու գլխավորությամբ ապստամբած ռազմիկներից Արևելքի նոր հրամանատարն արդյունքում հազիվ փրկվեց: Որպես հետևանք, արդեն 588 թվականի գարնանը կայսրության արևելյան բանակը փաստորեն չէր ենթարկվում պաշտոնական Կոստանդնուպոլսին:

Հարկ է նշել, որ 588 թվականի նույն գարնանը ծայրահեղ ծանրացել էր նաև Պարսից թագավորության դրությունը, երբ Թյուրքական խաքանության հետ տարին տարու վրա աստիճանաբար սրվող հակասությունները Պարսից թագավորության արևելքում նույն այս ժամանակ հասել էին լարվածության իրենց կիզակետին: Այս պայմաններում վաղուց ի վեր իր լավագույն ուժերը սեփական թագավորության Արևելքում պահող Որմիզդ IV-ը նույնիսկ մտածել իսկ չէր կարող կայսրության դեմ որևէ մեծածավալ ռազմական գործողության մասին, սակայն Մավրիկոսի անհեռատես քաղաքականությունն իր հերթին կայսրությանը զրկեց Արևելքում վճռական և, կարելի է ենթադրել, հեշտ հաջողության հասնելու հնարավորությունից: Ավելին, բանը նույնիսկ հասավ նրան, որ Պարսից թագավորության տեղական կայազորային ուժերից կազմված փոքր բանակն ինքը (մոտ 1.000), օգտվելով դիմադրության լիակատար բացակայությունից, 588 թվականի ապրիլի վերջին ասպատակեց Կոնստանդինեի շրջակայքը և փորձեց գրավել

[1] Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 3, գլուխ 19:
[2] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 3, գլուխ 27:

քաղաքը, թեև ի վերջո հետ քաշվեց[1]: Դրանից հետո, չնայած ընդհանուր ծանր դրությանը, Որմիզդ IV-ը այնուհանդերձ փորձեց օգտվել կայսրության արևելյան բանակում առաջացած անակնկալ ապստամբությունից և իր կողմը գրավել ապստամբներին: Ի պատիվ Հերմանոս Փոենիկացու ու քրիստոնյա ռազմիկների, սակայն, վերջիններս մերժեցին արյաց արքայի առաջարկները և, զգալով, որ Մավրիկոսի վերաբերմունքն, ըստ էության, արդեն վերանայվել է, որոշեցին մի լրացուցիչ ծառայությամբ վերջնականապես իրենց կողմը հակել կայսեր: Հարմար առիթը հայտնվեց շատ շուտով, քանզի, այնուհանդերձ փորձելով մի որևէ օգուտ քաղել ստեղծված իրավիճակից, Պարսից թագավորության բանակը սկսել էր առաջանալ Տիգրանակերտի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

588 մայիս – ***Տիգրանակերտի ճ-մ***[2]

Հերմանոս Փոենիկացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (4.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000) շարժվեցին քաղաքին մոտեցող Պարսից թագավորության բանակի (մոտ 4.500) դեմ:

I փուլ – Բյուզանդական կայսրության բանակի փոքրիկ մի ջոկատ հարձակվեց Պարսից թագավորության բանակի վրա և սկսեց նահանջել՝ իր հետևից քաշելով թշնամու ողջ բանակը:

II փուլ – Հաղթականորեն արշավող Պարսից թագավորության բանակը ընկավ նախապես պատրաստված դարանը, շրջապատվեց և ի վերջո գերի հանձնվեց:

Հայերը կորցրին մոտ 50, դաշնակիցը՝ մոտ 200 զինվոր, թշնամին՝ մոտ 3.500 զինվոր, այդ թվում 3.000 գերի:

588 թվականի ամռան վիճակով Մավրիկոսն ինքն էր, ըստ էության, արդեն ուղիներ փնտրում ապստամբների հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ և վերջին ճակատամարտում ձեռք բերված հաջողությունը դրա համար հիանալի առիթ տվեց: Արդյունքում՝ Պրիսկոսը պաշտոնանկ արվեց և նրա փոխարեն կրկին նշանակվեց Ֆիլիպիկը, սակայն վերջինս, ըստ էության, այդպես էլ չկարողանալով հաղթահարել սեփական ներքին խնդիրները, դրանից հետո զգալի ժամանակ շարունակ կրկին չկարողացավ ձեռնամուխ լինել իր պարտականությունների կատարմանը: Այսպիսով՝ բանակային ապստամբությունն, ըստ էության, իր վերջը գտավ, չնայած մանրախնդիր Մավրիկոսն այնուհանդերձ ավելորդ չհամարեց գոնե ձևի համար ձերբակալել և մահապատժի դատապարտել Հերմանոս Փոենիկացուն: Վերջին հանգամանքը, սակայն, ըստ էության ձևական բնույթ էր կրում և ներում ստացած Հերմանոսը շուտով կրկին Արևելքում էր:

588 թվականին հանգիստ չէր իրավիճակը նաև Հյուսիսային Աֆրիկայում, երբ կայսրության բանակը մանր մարտերում հաղթեց բերբերներին[3]: Վճռական իրադարձությունները, սակայն, նույն այս ժամանակ զարգանում էին ամեն դեպքում Պարսից թագավորության արևելքում:

Իրոք, ցանկանալով վերջնականապես ծնկի բերել Պարսից թագավորությանը և տիրել դեպի Արևմուտք տանող բոլոր ուղիներին, հենց այս ժամանակ Ղարա-Չուրինը, ի մի բերելով Թյուրքական խաքանության հիմնական բանակը, վճռական արշավանքի ելավ արյաց տերության դեմ: Նույն այս ժամանակ Որմիզդ IV-ի թագավորությունը ամենևին էլ ամուր ներքաղաքական դրության մեջ չէր, որ գտնվում էր, իսկ Սավե շահի

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 3-5; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 9; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 21; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 4:

գլխավորությամբ առաջացող թյուրքական 300.000 հոգանոց բանակի հարձակումն էլ արդյունքում ընդհանրապես ճգնաժամային իրավիճակ առաջացրեց: Տիզբոնում հրավիրված հրատապ խորհրդակցության ժամանակ, սակայն, այնուհանդերձ որոշում ընդունվեց թյուրքերին վճռական մարտ տալ և մարտական գործողությունների ընդհանուր հրամանատար նշանակվեց հայերին ու կայսրության զորականներին լավ ծանոթ Վահրամ Չուբինը: Վերջինիս տրամադրության տակ դրվեցին Պարսից թագավորության ողջ բանակից ընտրական սկզբունքով հավաքված 12.000 լավագույն ռազմիկներ, ինչպես նաև նրա հրամանի տակ պետք է գործեր պետության արևելքում տեղակայված 58.000 հոգանոց բանակը, որը հետ էր քաշվել թյուրքերի առաջխաղացման հետևանքով: Արդյունքում՝ 588 թվականի օգոստոսի սկզբին կողմերի բանակները վճռական ճակատամարտի համար իրար եկան Հերաթի մոտակայքում, որտեղ էլ տեղի ունեցած համառ մարտում Թյուրքական խաքանության բանակը ջախջախիչ պարտություն կրեց: Թյուրքական խաքանության բանակը կորցրեց 200.000 ռազմիկ՝ դրանով իսկ ոչ միայն մինչև երկինք հասցնելով Վահրամ Չուբինի մարտական փառքն, այլև, ըստ էության, կոտրելով Թյուրքական խաքանության ռազմական մեքենայի մեջքը:

Հերաթի ճակատամարտ վճռորոշ նշանակություն ունեցավ Պարսից թագավորության և Թյուրքական խաքանության հարաբերություններում: Իրոք, արդյունքում Ղարա-Չուրինը գործնականում հրաժարվեց Պարսից թագավորության նկատմամբ մինչ այդ վարվող ագրեսիվ քաղաքականությունից, իսկ Թյուրքական խաքանության հետ էլ 588 թվականի սեպտեմբերի արդեն սկզբին վերջնական հաշտություն կնքվեց: Որպես հետևանք այս ամենի՝ Որմիզդ IV-ի համար ստեղծվեցին բոլոր հնարավորությունները ի վերջո կրկին ակտիվանալ իր տերության արևմտյան սահմաններում, իսկ դա էլ իր հերթին նշանակում էր, որ Բյուզանդական կայսրության և Պարսից թագավորության միջև մղվող մարտական գործողությունները կրկին պետք է մեծ ծավալներ ստանային: Այս առումով, մինչև առաջ անցելը, հետաքրքիր է փաստել, որ հենց այս բուռն իրադարձությունների ժամանակ էր, որ տեղի ունեցավ պատմության ընթացքում իր տեսակի մեջ ամենահայտնի և գուցե նույնիսկ եզակի իրադարձություններից մեկը, երբ մի խումբ ռազմագերիներ ու այլ բանտարկյալներ կարողացան ոչ միայն հաջող փախուստ կազմակերպել Պարսից թագավորության պետական բանտ համարվող հայտնի Անհուշ բերդից, այլև վերջին հաշվով նույնիսկ ապաստանել Բյուզանդական կայսրության տարածքում[1]: Եվ վերջապես նույն 588 թվականին էր, որ սլավոնները նախկին արշավանքներին իր ուժով զգալիորեն զիջող մի արշավանք ևս իրականացրին կայսրությանը պատկանող տարածքների ուղղությամբ, սակայն ի վերջո հետ քաշվեցին ելման դիրքեր:

589 թվականը, ինչպես և սպասելի էր, բացվեց Արևելքում մղվող ռազմական գործողությունների նոր թափ ստացած շարանով, ընդ որում այս անգամ արդեն, Պարսից թագավորության արևելքից դեպի արևմուտք տեղափոխած իր հաղթական ուժերը, քրիստոնյաների դեմ գործում էր թյուրքերին գլխովին ջախջախած և ձեռք բերած փառքից արդեն որոշակիորեն իրականության զգացումը կորցրած նույն Վահրամ Չուբինը: 589 թվականի մայիսի վերջին Վահրամ Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 70.000) հաղթեց ու հետ մղեց մայիսի 5-ին Դերբենդի լեռնանցքն անցած, առաջխաղացած ու Աղվանքը և Փայտակարանը ասպատակելով արշաված Թյուրքական խաքանության բանակին (մոտ 60.000, այդ թվում խազարներ)[2]: Հետ մղելով հակառակորդին նաև կովկասյան ճակատում՝ 589 թվականի մայիսի վերջից մինչև հունիս Վահրամ Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 60.000) ասպատակեց Փայտակարանը ու Աղվանքը և նահանջեց՝ կենտրոնանալով Թավրիզի շրջակայքում ու զգալի ուժեր ուղարկելով Հյուսիսային Միջագետքի

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 6; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

ուղղությամբ[1]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

589 մայիսի կես - հուլիսի սկիզբ – ***Տիգրանակերտի ճ-մ***[2]

Ցանկանալով օժանդակել թշնամուն տիրել քաղաքին՝ վերջինիս կայազորի միջին օղակի հրամանատար Սիտտան կապեր հաստատեց հակառակորդի հետ և, համոզելով տեղի կայազորի հրամանատարին, որ գործ ունեն ապստամբած ու կայսրության կողմն անցած մարդկանց հետ, քաղաքին մտցրեց Պարսից թագավորության մի ջոկատ (400):

I փուլ – Քաղաքում գտնվող Պարսից թագավորության բանակը, ուժեղացված Սիտտայի կողմից ազատություն ստացած և զինված ռազմագերիներով, անակնկալ հարվածով գրավեց քաղաքը:

II փուլ – Հուլիսի 1-ին Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) պաշարեցին քաղաքը և, աշտարակներից մեկի տակ փորելով, նույնիսկ փլեցին էլ այն, սակայն նույն գիշեր էլ հակառակորդը վերականգնեց աշտարակը:

III փուլ – Մի քանի օր անց Մովպետ Սուրենյանի, իսկ քիչ անց նաև վերջինիս միացած Հրահատի գլխավորությամբ քաղաքին մոտեցած Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000) անակնկալ հարվածով ծանր պարտության մատնեց հակառակորդին և ցրեց, ինչից հետո զգալի ուժեր տեղակայեց քաղաքում:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 4.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր, որոնց թվում նաև պատահական նետից զոհված Մովպետ Սուրենյանը:

Ստեղծված պայմաններում կայսրը պաշտոնանկ արեց իրեն վերջնականապես չարդարացրած Ֆիլիպիկին և նրա փոխարեն Արևելքի հրամանատար նշանակեց Կոմենցիոլոսին: Արևելքի նոր այս հրամանատարին էլ հենց վիճակված էր դեմ ելնել հաղթական առաջխաղացում իրականացնող Վահրամ Չուբինի բանակին:

589 թվականի հուլիսի կեսին Հրահատի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 25.000) Սիսավրանոն ամրոցի ճ-մ-ում հաղթեց հենց մարտի սկզբում փախուստի դիմած Արևելքի հրամանատար Կոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 3.000), որոնց ցրված մնացորդները հասան մինչև Կարին[3]: Նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց Հրահատի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 22.000) Ծաղկաջուրի ճ-մ-ում (Տուրուբերան, Բզնունիք գավառ) կայսրության բանակի նկատմամբ ևս մեկ հաղթանակ տարավ[4], որից հետո սկսեց մոտենալ Կարինին: 589 թվականի հուլիսի վերջին, սակայն Հայաստանի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորությամբ քաղաքի մոտ մարտակարգ ընդունած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 8.000) Կարինի ճ-մ-ում հաղթեցին Հրահատի գլխավորությամբ Բզնունիքից առաջխաղացած Պարսից թագավորության բանակին (մոտ 20.000), իսկ հաջորդ օրն էլ տիրեցին վերջինիս ճամբարին: Այս ճակատամարտում զոհվեց նաև Հրահատը[5]: Այսպիսով՝ Հայաստանին տիրելու

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 6:

[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 5, 6; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 14; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 78; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 21; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 6; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 15; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 9:

[5] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 6; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 15; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 9; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների,

նպատակով Պարսից թագավորության բանակի կողմից իրականացված սրընթաց առաջխաղացումը վերջացավ լիակատար անհաջողությամբ: Ավելին, զարգացնելով հաջողությունը, 589 թվականի հուլիսի վերջից մինչև օգոստոս Հովհան Մյուստակոնի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) պաշարեցին Դվինը, սակայն ի վերջո հետ քաշվեցին[1]:

Նախորդ իրադարձություններից հետո ակտիվացան նաև Լազիկայի հրամանատար Ռոմանոսի գլխավորությամբ գործող հարվածային ուժերը, որոնց հետ սերտ համագործակցության մեջ գործում էր էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը[2]: Արդյունքում՝ այս բանակը 589 թվականի հուլիսի վերջից մինչև օգոստոսի սկիզբ ասպատակեց Աղվանքի հյուսիսային և կենտրոնական շրջանները՝ պատրաստվելով վճռական մարտի մեջ մտնել Վահրամ Չուբինի ուժերի դեմ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

589 նոյեմբերի վերջ – ***<u>Վարդանակերտ ամրոցի ճ-մ</u>*** (Փայտակարան, Վարդանակերտ գավառ)[3]

Լազիկայի հրամանատար Ռոմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000), ինչպես նաև էրիսմտավար Գուրգեն-Գուարմ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 20.000, այդ թվում վրացիներ, թյուրքեր, ալաններ, դուրձուկներ ու դիդոներ) սկսեցին շարժվել Վահրամ Չուբինի գլխավորությամբ ***<u>Թավրիզի շրջակայքում</u>*** կենտրոնացած Պարսից թագավորության բանակի (մոտ 50.000) դեմ: Տեղեկանալով այդ մասին՝ վերջինս սկսեց նահանջել Գանձայի ուղղությամբ: Այդ ընթացքում, սակայն, Պարսից թագավորության բանակի գերի ընկած 2 հետախույզներ կարողացան համոզել Ռոմանոսի բանակի հետախուզության մեկնած և իրենց գերած ջոկատին (50), որ հնարավորություն կա անակնկալ հարձակվել թշնամու վրա, ու այդ միջոցով ի վերջո հասան նրան, որ նույն այդ ջոկատն իր ողջ կազմով գերվեց: Գերվածների հարցաքննությունից պարզելով, որ Ռոմանոսի բանակը քանակապես ոչ միայն զիջում է իր բանակին, այլ նաև որոշակիորեն անկազմակերպ է և գտնվում է տատանողական տրամադրությունների մեջ, Վահրամը դադարեցրեց նահանջը ու անցավ հակահարձակման: Իր հերթին, գերությունից խուսափած 3 ռազմիկների միջոցով իմանալով կատարվածի մասին, Ռոմանոսը սեփական ուժերից հարվածային ուժեղ մի ջոկատ (10.000) ստեղծեց և այն շարժեց թշնամու ուղղությամբ, ընդ որում այս ջոկատից էլ իր հերթին առանձնացվեցին առաջապահ ուժեր (2.000)՝ թշնամու շարժին հետևելու նպատակով:

I փուլ – Քրիստոնյաների բանակի առաջապահը անակնկալ հարձակումով գլխովին ջախջախեց թշնամու բանակի առաջապահին և հետապնդեց վերջինիս մնացորդներին մինչև ***<u>Վարդանակերտ ամրոցի</u>*** մոտակայքը հասած ու ճամբարած Վահրամ Չուբինի հիմնական ուժերի բանակատեղի, որից հետո վերադարձավ սեփական ուժերի մոտ: Շուտով արդեն, հավաքելով ձգված ուժերը, հյուսիսից Արաքս գետին մոտեցավ նաև Ռոմանոսի հիմնական բանակը և ճամբարեց գետի ձախ ափին: Հաշվի առնելով, որ թշնամու հակադարձության պայմաններում գետի

ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»:

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 10:

[2] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 6; Սեբեոս «Պատմություն», գլուխ 10; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[3] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 7; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

խորը հունը վտանգավոր է դարձնում գետանցումը՝ թշնամական բանակներից և ոչ մեկը չցանկացավ առաջինն անցնել գետը և նախահարձակ լինել: Ի վերջո՝ երեք օր իրար դեմ կանգնելուց հետո քրիստոնյաները համաձայնեցին Վահրամի առաջարկին և հետ քաշեցին ուժերը՝ հնարավորություն ընձեռելով վերջինիս բանակին մարտ տալու համար անցնել գետը:

III փուլ – Քրիստոնյաները հարձակվեցին հակառակորդի կենտրոնի վրա և հարկադրեցին վերջինիս նահանջել: Իրավիճակը շտկելու նպատակով Վահրամ Չուբինը ձախ թևից դեպի կենտրոն տեղափոխեց խոշոր ուժեր:

IV փուլ – Օգտվելով հակառակորդի ձախ թևի թուլացումից՝ Ռոմանոսի բանակը սեփական աջ թևում անցավ հզոր հարձակման և գլխովին ջախջախեցի հակառակորդին:

V փուլ – Քրիստոնյաները հետապնդեցին հակառակորդին բանակին և ծանր կորուստներ պատճառեցին վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 25.000 զինվոր:

Այսպիսով՝ քրիստոնյաների դեմ մղված խոշոր ճակատամարտը Վահրամ Չուբինը լիովին տանուլ տվեց, ինչը զգալի հարված հասցրեց վերջինիս, թվում էր թե, անբիծ ռազմական հեղինակությանը: Իրավիճակը, սակայն, շուտով էլ ավելի ծանրացավ:

Գլուխ 44
Պարսից թագավորությունում սկիզբ առած գահակալական պայքարը և Բյուզանդա-Պարսկական V պատերազմի ավարտը

Բանն այն էր, որ դեռևս հերաթյան հաղթահանդեսի ժամանակ Վահրամ Չուբինի և Որմիզդ IV-ի միջև առաջ էր եկել խորը անվստահության վրա հիմնված մի հակասություն, որն այժմ ավելի սրվեց: Սրան գումարվեց նաև այն, որ 589 թվականի նոյեմբերի վերջին Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) արդեն նաև Մծբինի ճ-մ-ում հաղթեցին Պարսից թագավորության բանակին (մոտ 25.000), թեև ի վերջո հետ քաշվեցին[1]: Այս ամենից հետո կայսրության դեմ մղված պատերազմում խոշոր անհաջողություններ կրած Վահրամ Չուբինի և Որմիզդ IV-ի հարաբերությունները վերջնականապես փչացան, ընդ որում արյաց բռնկուն արքան ինքնասեր Վահրամին կանանցի հանդերձանք ուղարկեց և փորձեց վերջինիս պաշտոնանկ անել, սակայն ստեղծված պայմաններում լիովին սպասելի էր նաև հակաքայլը, քանզի այս անգամ արդեն Վահրամն ինքը ոչ միայն բացահայտ ապստամբության ուղին բռնեց, այլև, փղերի ոտքերի տակ գցելով, սպանեց արյաց արքայի պատվիրակին՝ սկիզբ դնելով սեփական գահակալական պայքարին:

589 թվականի դեկտեմբեր Վահրամ Չուբինի բանակը (մոտ 30.000) Պարսից թագավորության կառավարական բանակից (մոտ 1.000) առանց լուրջ մարտերի գրավեց Մծբինը, որից հետո թալանեց քաղաքն ու նրա շրջակայքը և, չամրանալով տեղում, հետագայում շարժվեց դեպի Տիզբոն[2]: Նույն այս ժամանակ Արևելքի հրամանատար Կոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) գրավեցին Ակբաս ամրոցը[3]: Վահրամ Չուբինի բանակային ապստամբության հետ գործնականում միաժամանակ, սակայն, իր հերթին պայթեց իրավիճակը նաև բուն Տիզբոնում:

Որմիզդ IV-ը ամուսնացած էր 531 թվականին Խոսրով I-ի դեմ դավադրություն

[1] Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»; Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 4, գլուխ 1:
[2] Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 4, գլուխ 1; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:
[3] Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 15; Թեոփիլիկատոս Սիմոակատտաս «Պատմություն», գիրք 4, գլուխ 2:

կազմելու մեջ մեղադրված ու մահապատժի ենթարկված Բավի Ասպահապետի որդի Շապուհի աղջկա հետ և արդյունքում Շապուհ Ասպահապետի որդիներ Վինդոյն ու Վիստահմը, փաստորեն, իր կնոջ եղբայրներն էին: Որմիզդի IV-ի իշխանության ամենավերջում, սակայն, երկու այս եղբայրները զրկվել էին արյաց արքայի հովանավորությունից, ընդ որում Վինդոյը ձերբակալվել էր, իսկ Վիստահմը հասցրել էր թաքնվել: Եվ ահա այժմ ճարպիկ Վիստահմը, ոտքի հանելով ինչպես Ասպահապետի տոհմն և նրա կողմնակիցներին, այնպես էլ արյաց արքայից դժգոհ այլ տարրերին, բացահայտ ապստամբություն սկսեց արդեն Տիզբոնում: Արդյունքում՝ 590 թվականի փետրվարի 6-ին ներխուժելով բանտերը և ազատելով ձերբակալվածներին, որոնց մեջ էր նաև Վինդոյը, երկու եղբայրները, անցած ապստամբների գլուխ, ներխուժեցին արյաց արքայի պալատ: Որմիզդ IV-ը, ցանկանալով մի վերջին հնարավորություն օգտագործելով տպավորություն գործել իր հպատակների վրա, ապստամբներին դիմավորեց լավագույն հանդերձների մեջ պարուրված և գահին բազմած: Այս տեսարանը, սակայն, որ գուցե ազդեր այլոց վրա, Վինդոյին և Վիստահմին որևէ կերպ չհուզեց ու նրանք, շարունակելով ոգևորել ապստամբներին, արյաց արքային ի վերջո ցած քաշեցին գահի վրայից և, հանելով շքեղ հանդերձները, գլխից վերցրին նաև թագը, որից հետո վերջինիս փակեցին արքայական բանտերից մեկում:

Նույն այս ժամանակ, երբ զարգանում էին վերևում նկարագրված իրադարձությունները, իր բանակային ուժերի գլուխն անցած Տիզբոնին էր մոտենում նաև Վահրամ Չուբինը, որն էլ, առանց որևէ դիմադրության հանդիպելու, շուտով մտավ մայրաքաղաք: Դրանից հետո ապստամբները հավաքվեցին հատուկ դատավարության, որում ներկայացրին նաև արյաց նախկին արքա Որմիզդ IV-ին: Դատավորները, որոնք իրենցից ներկայացնում էին ապստամբների առաջնորդներին, ըստ էության, արդեն ունեին պատրաստի դատավճիռ և «ժողովրդական արքային» արդեն ոչինչ չէր կարող փրկել: Արդյունքում, որևէ ուշադրություն չդարձնելով Որմիզդ IV-ի խոսքերի վրա, որոնցում, ի դեպ, ճշմարտության այնուհանդերձ շատ ու շատ տարրեր կային, դատավորները միակամ որոշում ընդունեցին, ինչից հետո Որմիզդ IV-ի աչքի առաջ ամենից առաջ սպանեցին նրա սիրելի որդուն, որին էլ հենց վերջինս նախատեսել էր փոխանցել արքայական գահը, հետո՝ տանջամահ արեցին նրա սիրելի կնոջը, իսկ վերջում էլ կուրացրին արդեն հենց իրեն: Վերջնականապես գահընկեց անելով Որմիզդ IV-ին՝ 590 թվականի փետրվարի 15-ին Վինդոյի և Վիստահմի գործուն աջակցությամբ Պարսից թագավորության արքա հռչակվեց Որմիզդ IV-ի մյուս որդի Խոսրովը՝ Խոսրով II-ը (590, 591-628), որը մինչ այդ շնորհազրկված էր, գտնվում էր Ատրպատականի հյուսիսում և այստեղ ձևական մի պաշտոն էր վարում: Գահին բազմելուց հետո հենց սկզբի պահերին Խոսրով II-ը փորձ կատարեց մեղմել հորը բաժին հասած ճակատագիրը և ազատությունից զրկված ու կուրացված նախկին արյաց արքային նույնիսկ համեղ ուտեստներ ուղարկեց, սակայն հպարտ Որմիզդ IV-ը հրաժարվեց այդ ամենից: Միաժամանակ հարկ է նշել, սակայն, նաև, որ Խոսրով II-ի գահ բարձրանալը ամենևին էլ չլիցքաթափեց իրավիճակը Պարսից թագավորությունում:

Իրոք, միայն մի պահ միավորած ուժերը ընդդեմ ընդհանուր թշնամու, այժմ սեփական կողմնակիցների հետ միասին մահացու մրցակցության մեջ իրար եկան արդեն մի կողմից Ասպահապետներն և նրանց գահակալող արքա Խոսրով II-ը, մյուս կողմից էլ, կրկին իրենց կողմնակիցների հետ միասին՝ Միհրանյաններն ու բանակային հիմնական ուժերը: Արդյունքում, այն բանից հետո, երբ նույն տարվա փետրվարի 28-ին Խոսրով II-ի բանակը, որի սիրտը կազմում էր արյաց արքային հավատարմություն պահպանած Մատյան գունդը, Վահրամ Չուբինի բանակի հետ ընդհարումում պարտություն կրեց, նա իր կողմնակիցների հետ միասին լքեց Պարսից թագավորությունը և անցավ Բյուզանդական կայսրության տարածք, իսկ Պարսից թագավորության արքա էլ հռչակվեց Վահրամ Չուբինը՝ Վահրամ VI Չուբինը (590-591): Այս առումով հատկանշական է, որ, մի վերջին անգամ լսելով հոր կարծիքն այն մասին, որ արաբներին դիմելու

փոխարեն Խոսրով II-ը պետք է դիմի Բյուզանդական կայսրությանը, Խոսրով II-ի կողմնակիցները և հատկապես Վինդոյն ու Վիստահմը, կանխատեսելով հնարավոր այն բարդությունները, որ կարող էին ի հայտ գալ, եթե մայրաքաղաքին տիրած Վահրամ VI Չուբինը հանկարծ, թեկուզ և ձևականորեն, գահի վրա վերականգներ Որմիզդ IV-ին ու սկսեր կառավարել նրա անունից, սեփական որդու, ըստ էության, լուռ համաձայնությամբ դագանակներով ծեծելով ի վերջո սպանեցին վերջինիս: Այսպիսով՝ Խոսրով II-ը սեփական գահակալության հենց ամենասկզբում էլ իր վրա վերցրեց հայրասպանության լուռ ստվերը, որը հետևելու էր նրան մինչև իր մահ՝ ամենավերջում զարմանալի հատուցում ապահովելով նաև հենց իր համար: Վերևում նշված հատուցումը, սակայն, վրա էր հասնելու տասնամյակներ անց և այս արքայի հասուն տարիքում, իսկ այժմ Խոսրով II-ը, դեռևս երիտասարդ ու գահազրկված, ուղղություն վերցրեց դեպի կայսրության տարածքներ, ընդ որում, այլոց հետ միասին թիկունքում հետ մնացած, այս անգամ ևս Վինդոյն հայտնվեց բանտում, իսկ Վիստահմին հաջողվեց փախուստի դիմել և ապաստանել Ատրպատականում, որտեղ կազմակերպչական լայնածավալ գործունեություն ծավալեց:

Արյաց գահին Վահրամ VI Չուբինի բազմելը Սասանյանների տերության համար բացառիկ մի իրադարձություն էր, քանզի, փաստորեն, գահին բազմեց Սասանյան տոհմին չպատկանող մի անձնավորություն, որը, դեռ ավելին, ուներ նույնիսկ դեպի Արշակունիները գնացող արմատներ, ի դեմս Միհրանյանների իր տոհմի: Այս, ինչպես նաև բազում այլ պատճառներով դիվանագիտական հատկանիշներից առանց այդ էլ զուրկ և բնավորության կտրուկությամբ աչքի ընկնող նոր արքան այդպես էլ չընդունվեց Պարսից թագավորության բնակչության զգալի մասի կողմից, ընդ որում վերջինիս վիճակն ավելի բարդացավ այն բանից հետո, երբ Խոսրով II-ը ինքը, ըստ էության, ինքնին բացառիկ մի քայլ անելով, ներկայացավ Արևելքում կայսրության բանակի հրամանատար Կոմենցիոլոսին և, հորենական գահին կրկին բազմելու նպատակով, վերջինիս միջոցով խնդրեց պաշտոնական Կոստանդնուպոլսի աջակցությունը: Խոսրով II-ի դիմումը իր ժամանակի Կոստանդնուպոլսի քաղաքական վերնախավում բուռն վեճեր առաջացրեց, սակայն բավականին երկար տևած քննարկումներից հետո ի վերջո որոշվեց այնուհանդերձ աջակցել վտարանդի արքային: Այսպես թե այնպես, սակայն ինչպես քննարկումները, այնպես էլ կոնկրետ գործողությունները զգալի ժամանակ էին պահանջում և դրա վրա ծախսվեց, ըստ էության, ողջ 590 թվականը:

Այս ընթացքում, սկսած արդեն 590 թվականի մարտից և մինչև նոյեմբեր, Մելիտեի եպիսկոպոս Դոմիցիանոս Հայի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) պաշարեցին Տիգրանակերտը, սակայն քաղաքը գրավեցին միայն այն բանից հետո, երբ Խոսրով II-ը, որը մինչ այդ գաղտնի կերպով դրդում էր յուրայիններին չհանձնել քաղաքը, ստիպված եղավ քաղաքի կայազորին այնուհանդերձ հրամայել դադարեցնել դիմադրությունը[1]: Հենց այս ամենից հետո էր, ի դեպ, որ գերության մեջ հայտնված դավաճան Սիտտային ողջակեզ արեցին:

590 թվականի ամռանը Վահրամ VI Չուբինի կողմում գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000) Խոսրով II-ի կողմում գործող Պարսից թագավորության բանակից (մոտ 800) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 200) իր հերթին փորձեց գրավել Մծբինը, սակայն, չհասնելով հաջողության և ասպատակելով Կոնստանդինեի շրջակայքը, նահանջեց[2]: Հաշվի առնելով նաև վերջին իրադարձությունները՝ Մավրիկոսը պաշտոնանկ արեց Արևելքում իրեն բացարձակապես դրսևորել չկարողացած Կոմենցիոլոսին և Արևելքի հրամանատար նշանակեց բազում մարտերում իրեն հիանալի դրսևորած ու Արևելքին քաջածանոթ Հերակլես Ավագ Հային,

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 4, գլուխ 12, 13, 15; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 18; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:
[2] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 4, գլուխ 15:

որին էլ նախապատրաստեց ակտիվ գործողությունների:

Նույն այս ժամանակ, երբ կողմերը վճռական մարտի համար ի մի էին բերում ուժերը, 590 թվականի հունիսի սկզբին Վիստահմը, պայմանավորվածություն ձեռք բերելով եղբոր հսկողությունը ստանձնած Վահրամ VI Չուբինի որդի Սիյավուշի հետ, հանդուգն հարձակմամբ ոչ միայն ազատեց Վինդոյին բանտարկությունից, այլև դրանից անմիջապես հետո իր մեծաքանակ կողմնակիցների գլուխն անցած անակնկալ գիշերային հարձակում գործեց նաև այն պալատի վրա, որտեղ այդ պահին գտնվում էր Վահրամ VI Չուբինն ինքը: Հարվածի անակնկալը դավադիրներին սկզբնական հաջողություն ապահովեց, սակայն հետագայում արյաց արքայի թիկնազորը, ուշքի գալով և ենթարկվելով հստակ հրամանների, պալատի սենյակներում և միջանցքներում ընթացած դաժան ընդհարումում առավելության հասավ ու հետ շպրտեց դավադիրներին: Արդյունքում՝ Սիյավուշը բռնվեց և սպանվեց, Վինդոյը դիմեց փախուստի ու միացավ Խոսրով II-ին, իսկ Վիստահմն էլ կրկին վերադարձավ Ատրպատական՝ փորձ կատարելով եղբորն և քրոջորդուն աջակցություն ապահովել արդեն այստեղից:

Նույն 590 թվականին, համարելով իրավիճակը Արևելքում և դանուբյան սահմանում որոշակիորեն կայունացված, Մավրիկոսը ձեռնամուխ եղավ նաև իրերի դրության ուղղմանը Ապենինյան թերակղզում: Այս նպատակով կայսրը Իտալիայի էքսարոս նշանակեց Լազիկայի նախկին հրամանատար, տաղանդավոր և եռանդուն Ռոմանոսին, որին էլ զգալի նյութական ու ֆինանսական ռեսուրսներ հանձնեց՝ խնդիր դնելով վերականգնել կայսրության դիրքերը թերակղզում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Իտալիայի զգալի մասին տիրելուց հետո լավ չէին գործերը նաև լանգոբարդների մոտ:

Դեռևս Ալբոինի իշխանության վերջին տարիներին էր, որ Լանգոբարդական թագավորությունն, ըստ էության, լուրջ ապակենտրոնացում էր ապրել՝ բաժանվելով մի շարք մանր իշխանությունների, որոնք գործում էին իրենց տեղական շահերով և հաճախ նույնիսկ աչքաթող էին անում լանգոբարդների արքայի շահերը: Այս կապակցությամբ Մավրիկոսը ավելորդ չգտավ նաև դիվանագիտական ջանքեր գործադրել և արդյունքում ապահովել լանգոբարդների հետ անհաշտ թշնամությունը շարունակող Ֆրանկական թագավորության աջակցությունը: Ընդհանրապես ասած, հակալանգոբարդյան դաշինքի հիմքը Մավրիկոսը դրել էր դեռևս 580-ական թվականների սկզբին, երբ ֆրանկները մի քանի արշավանքներ իրականացրին լանգոբարդների դեմ, որոնք, չնայած հակասական արդյունքներին, զգալիորեն սահմանափակեցին վերջիններիս ռազմական հզորությունը: Այդ ժամանակ, սակայն, պայմանավորված ամենատարբեր հանգամանքներով, կայսրությունը ոչ միայն չկարողացավ համակարգել իր գործողությունները Ֆրանկական թագավորության հետ, այլև ավելին՝ նույնիսկ ռազմական գործողություններ իսկ չկարողացավ սկսել լանգոբարդների դեմ՝ պայքարի ողջ ծանրությունը թողնելով ֆրանկների ուսերին: Համագործակցել ստացվել էր նաև 588 թվականի գարնանը, սակայն այժմ, երբ գործերը, կարծես թե, կարգավորվում էին, Ռոմանոսի առջև խնդիր դրվեց ի վերջո հստակ համագործակցություն ապահովել ֆրանկների հետ: Համագործակցության հերթական փորձը, սակայն, այս ևս անգամ տապալվեց և ամենից առաջ հենց ֆրանկների պատճառով, որոնք, հերթական անգամ սկիզբ դնելով մարտական գործողություններին ավելի շուտ, քան կայսրության բանակն իր հերթին կհասցներ գործի անցնել, նույն այդ գործողությունները կրկին ավարտեցին ավելի շուտ, քան նախատեսված էր: Այսպիսով՝ ռազմական համագործակցության հերթական փորձը ևս հաջողություն չապահովեց, սակայն, քանի որ լանգոբարդներն այնուհանդերձ ծանր հարվածներ էին ստացել, 590 թվականի ամռանը և աշնանը Իտալիայի էքսարքոս Ռոմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) Լանգոբարդական թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) գրավեցին Մոդենան, Ռեջիոն, Պարման, Պիչենցան, Ալցինումը և Մանտուան (Իտալիա)[1]:

[1] Այս մասին հայտնում է Պապերի վարքաբանությունը:

591 թվականին Մավրիկոսն ու կայսրության ղեկավար կազմն արդեն ունեին պատրաստի որոշում և արդյունքում կայսրության ռազմական մեքենան սկսեց գործել՝ աջակցելով Խոսրով II-ին, որին որպես կին, ի դեպ, Մավրիկոսը տվեց իր աղջիկ Մարիային ու փոխարենը ապագայում կատարվելիք տարածքային զիջումների վերաբերյալ նրանից ամուր գրավոր երդումներ վերցրեց: 591 թվականի փետրվարի 7-ին Խոսրով II-ի բանակը (մոտ 1.000) գիշերը խաբեությամբ մտավ Խարխաս ամրոց և անակնկալ հարձակումով հաղթեց այնտեղ ճամբարած Վահրամ VI Չուբինի բանակին (մոտ 2.000)[1]: Դրանից հետո արդեն սկիզբ առավ բուն արշավանքը, որի նպատակն էր գահընկեց անել Վահրամ VI Չուբինին և արյաց գահի վրա հաստատել Խոսրով II-ին:

591 թվականի մարտի սկզբից Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականի և Խոսրով II-ի գլխավորությամբ Կոնստանդինե-Մարդին-Դարա-Ամադիա (վերջինը՝ Կորճայք, Այտվանք գավառի հարավ-արևմուտք) -Միգդոնիա-Տիգրիս երթուղով առաջ շարժված Բյուզանդական կայսրության բանակը (40.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (20.000, այդ թվում Մելիտեի եպիսկոպոս Դոմիցիանոս Հայը), ինչպես նաև Մատյան գունդը հուլիսի վերջին ճամբարեցին Տիգրիս գետի աջ ափին՝ սպասելով սպարապետ Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի, Մանվել Բագրատունու որդի Սմբատ Բազմահաղթ Բագրատունու ու Հայաստանի հրամանատար Հովհան Մյուստակոնի գլխավորությամբ հյուսիսից մոտեցող Բյուզանդական կայսրության բանակին (4.000, որից 3.000 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (2.000), ինչպես նաև Հայկական բանակին (30.000, որից 15.000 հեծյալ): Դրանից հետո Մատյան գնդի հազարյակը աննկատ գետանցեց Փոքր Զաբը և անակնկալ գիշերային հարվածով հաղթեց Վահրամ VI Չուբինի բանակի ճամբարած ջոկատներից մեկին (մոտ 2.000): Այնուհետև, զարգացնելով հաջողությունը, դաշնակից բանակն անցավ Տիգրիսը և ճամբարեց Դինաբադոնում (Մեծ Զաբ գետի ափին)[2]: Արդյունքում՝ ձգված ուժերը հավաքելու հետ միաժամանակ 591 թվականի հուլիսի վերջին խորը թևանցում իրականացրած Մատյան գնդի մի ջոկատ (2.000), ինչպես նաև Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) անակնկալ հարձակումով ու առանց լուրջ մարտերի Վահրամ VI Չուբինի բանակից (մոտ 2.000) գրավեցին Սելևկիան, Տիզբոնը և Անտիոքիան (վերջինը՝ Տիզբոնի մոտ):[3]

580-ական թվականների երկրորդ կեսին և 590-ական թվականների առաջին կեսին Մարզպանական Հայաստանում շարունակում էին առաջին դերերի վրա մնալ երկու տոհմեր, ի դեմս Մամիկոնյանների և Բագրատունիների: Մամիկոնյաններին, փոխարինելով Վարդան Մամիկոնյանին, արդեն առաջնորդում էր նրա հորեղբորորդի Մուշեղ Խիզախ Մամիկոնյանը, որի հետ միասին գործում էր նաև եղբորորդին՝ Վարդանի եղբայր Վահանը: Բագրատունիների պարագայում առաջին դերերը հաջողությամբ կիսում էին Հյուսիսային Բագրատունիների առաջնորդ Գուրգեն-Գուարմը, ինչպես նաև հիմնական ճյուղի ղեկավար, ի տարբերություն իր հոր ավելի ուժեղ և գործունյա Սմբատը Բազմահաղթ Բագրատունին: Մուշեղն և Սմբատը երկուսն էլ բացառիկ անձնավորություններ էին, յուրօրինակ իրենց տեսակի մեջ: Մուշեղն ուժեղ էր, խիզախ, ուներ անբիծ ռազմական հեղինակություն և լայնորեն վայելում էր ժողովրդի ու բանակի սերը: Սմբատը ևս իր հերթին աչքի էր ընկնում բացառիկ ֆիզիկական ուժով ու զորավարական, ինչպես նաև զորական տաղանդով, բայց Բագրատունյաց իշխանը նաև ուսյալ մարդ էր և առիթի դեպքում լավ դիվանագիտական հատկանիշներ էր դրսևորում: Նախորդ երկու տոհմերին հաջորդում էին իրենց որոշակիորեն պասիվ պահող Արծրունիները, ինչպես նաև մինչ այդ դրսևորած պրոպարսկական դիրքորոշում ունենալու պատճառով որոշակիորեն թուլացած Սյունիները, ընդ որում Կամսարականները շարունակում էին մնալ Մամիկոնյանների կողքին:

---

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 5, գլուխ 1:
[2] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 5, գլուխ 3-6; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 21:
[3] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 5, գլուխ 4, 6:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Մարզպանական Հայաստանում, ինչպես նաև հարակից հայկական հողերում Վահրամ VI Չուբինի նկատմամբ վերաբերմունքը ամենևին էլ միանշանակ չէր: Հայերի համար Վահրամ VI Չուբինն ամենից առաջ հենց այն մարդն էր, որի դեմ դեռևս 574 թվականի գարնանը նրանք մի արյունոտ ճակատամարտ էին տվել և, ընդհանրապես, դրանից հետո Խոսրով I-ի այս հայտնի զորավարի հետ շատ էին ընդհարվել: Այս առումով հատկանշական է Աբու Հանիֆա ալ-Դինավարիի կողմից փոխանցվող պատմությունը, որը վերաբերում էր դեռևս 590 թվականին և որտեղ արդեն իսկ հստակորեն երևում էր հայերի ու, մասնավորապես, Մամիկոնյանների վերաբերմունքը արյաց նոր արքայի նկատմամբ. «*Դրանից հետո Վահրամն իր մոտ հավաքեց թագավորության հայտնի մարդկանց և ասաց. «Ձեզ բոլորիդ հայտնի է, թե ինչ ծանր մեղք գործեց Խոսրովը՝ մեծ վեզիրների միջոցով սպանելով իր հորը: Այժմ նա փրկվել է փախուստով, արդ համաձա՞յն եք դուք, որ ես զբաղվեմ պետությանը տեր կանգնելով, մինչև որ Որմիզդի որդի Շահրիյարը չափահաս դառնա և ես կառավարումը հանձնեմ նրան»: Այդ ժամանակ հավաքված մարդկանց մի խումբը համաձայնեց նրա հետ, սակայն մյուս խումբը մերժեց: Սրանց մեջ էր նաև հայազգի Մուշեղը, որը մեծ մարզպաններից էր: Եվ ահա նա ասաց Վահրամին. «Հեյ, սպահապետ, քո գործը չէ այդ բանով զբաղվելը, Խոսրովը՝ այս թագավորության տերն ու ժառանգորդը, դեռ կենդանի է»: Այդ ժամանակ Վահրամն ասաց. «Ով դժգոհ է, թող հեռանա Մադաինայից, քանզի, եթե ես ապագայում հանդիպեմ նման մարդու գոնե երրորդ մասին էլ, ես այդ մարդու գլուխը կթռցնեմ»: Եվ ահա հեռացավ հայազգի Մուշեղն իր համախոհներով, որոնք մոտավորապես 20.000 հոգի էին և, նրանք գնացին Ատրպատական ու կանգ առան՝ սպասելով Խոսրովի գալստյանը Ռումի երկրից*»: Այսպիսով՝ Մուշեղը, ըստ էության, արտահայտելով հայերի հավաքական կամքը, բացահայտ մի մարտահրավեր էր նետել Վահրամ VI Չուբինին, ընդ որում մարտահրավերը ոչ միայն քաղաքական, այլ նույնիսկ անձնական մակարդակի վրա էր՝ հայերը չէին ընդունել և չէին էլ ուզում ընդունել Վահրամ VI Չուբինի ոչ քաղաքական, ոչ ռազմական և ոչ էլ նույնիսկ անձնական հեղինակությունը, իսկ մարտի դաշտում էլ ունենալով այս զորավարի դեմ շահած խոշոր մի ճակատամարտ, նրանք բոլոր հիմքերն ունեին այդպես վարվելու համար:

Այս ամենով հանդերձ, սակայն, պետք էր հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ արդեն Որմիզդ IV-ի օրոք Միհրանյաններից սերող Վահրամ VI Չուբինը որոշակիորեն ավելի հետին պլան էր մղվել, իսկ այժմ էլ նույնիսկ պայքարում էր Խոսրով II-ի դեմ: Ավելին, դեռևս 570-ական թվականների սկզբին Սյունիները համագործակցում էին վերջինիս հետ, իհարկե դեմ դուրս գալով համահայկական նպատակներին, և, երևի, ամենից առաջ հենց նրանց նկատի ունի դեպքերին ժամանակագրորեն շատ մոտ կանգնած Սեբեոսը, երբ ասում է, թե հայերից ոմանք չէին բացառում հակախոսրովյան ու հակաբյուզանդական համագործակցությունը Վահրամ VI Չուբինի կողմում և հենց այդ պատճառով էր, որ վճռական ճակատամարտից հենց առաջ վերջինիցս ստացված ու համագործակցության առաջարկ պարունակող նամակի մասին Մուշեղ Խիզախ Մամիկոնյանը շատերին չասաց՝ վախենալով հնարավոր տատանումներից:

Իրոք, Վահրամ VI Չուբինն ինքը, որ, դատելով ըստ ամենայնի, հիանալի տեղյակ էր հայերի մոտ առկա նույն այդ ներքին տատանումներից, հենց մեր կողմից նկարագրված դեպքերի ժամանակ հատուկ նամակով դիմել էր Մուշեղ Խիզախ Մամիկոնյանին և, առաջարկելով վերջ տալ Սասանյանների գործի համար պայքարին, միաժամանակ այդ պարագայում ամենահաստատ երդումներով խոստացել էր ճանաչել հայերի անկախ թագավորությունը հայերի իսկ ուզած արքայի գլխավորությամբ՝ Մեծ Հայքի ամենալայն սահմաններով: Այժմ իրոք դժվար է ասել, թե ինչպե՞ս կզարգանային իրադարձությունները, եթե հայերը ականջ կախեին արված առաջարկին, սակայն, հաշվի առնելով ուժերի ընդհանուր դասավորությունը, երևի թե կարելի է ասել, որ դա ամեն դեպքում ճիշտ որոշում չէր լինի, քանի որ Վահրամ VI Չուբինն այդ պահին իրոք արդեն թույլ էր, կորցրել էր իր երկրի սիրտը հանդիսացող շրջանները, երկրի միայն մի մասն էր

նրան աջակցում և, բացի այդ, Բյուզանդական կայսրության ռազմական մեքենան հսկայական հեղինակություն ունեցող Սասանյանների հետ միասին դուրս էր եկել նրա դեմ: Եվ վերջապես պետք չէ մոռանալ նաև, որ հայերը հազար ու մի թելերով կապված էին հենց կայսրության հետ և հսկայական էր հայերի թիվը հենց կայսրության բանակում: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ հենց այս ամենն էլ հաշվի առնելով էր, որ Մուշեղ Խիզախ Մամիկոնյանն ի վերջո մերժեց արված առաջարկը և դա իրեն արդարացրած որոշում էր: Արդյունքում՝ իր պետության սրտից զրկված Վահրամ VI Չուբինին չէր մնում այլ բան, քան, հույսը դրած գործող բանակի և, մասնակիորեն միայն, բուն Պարսից թագավորության հյուսիսային շրջանների աջակցության վրա, վճռական մարտ տալ հակառակորդին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

591 օգոստոսի կես – ***<u>Գանձայի ճ-մ</u>***[1]

> Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականի և Խոսրով II-ի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (46.000[2], որից 13.000 հեծյալ, այդ թվում բուլղարներ), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 12.000), ինչպես նաև Մատյան գունդը (10.000), շարունակելով արշավանքը դեպի արևելք, սկսեցին մոտենալ Վահրամ VI Չուբինի գլխավորած Պարսից թագավորության բանակին (40.000, այդ թվում թյուրքեր, մոտ 20 փիղ): Միաժամանակ հյուսիսից ***<u>Պարսկահայքով</u>*** դեպի հարավ սկսեցին շարժվել սպարապետ Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի, Սմբատ Բազմահաղթ Բագրատունու և Հայաստանի հրամանատար Հովհան Մյուստակոնի գլխավորությամբ մոտեցող Բյուզանդական կայսրության բանակը (4.000, որից 3.000 հեծյալ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 5, գլուխ 7-11; Եվագրիոս Սխոլաստիկոս «Եկեղեցական պատմություն», գիրք 6, գլուխ 18, 19; Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 96; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 11; Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 2; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 17; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 16; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3, 6; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 17; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 31; Դավիթ Բաղիշեցի «Ժամանակագրություն»; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 81, Հավելված; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 23; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 8:

[2] Այս ճակատամարտին մասնակցած դաշնակից ուժերի թվաքանակի մասին առկա են տարաբնույթ տեղեկություններ: Այսպես, համաձայն Թեոփիլիկատոս Սիմոնակատտասի, Ներսեհ Կամսարականի և Խոսրով II-ի տրամադրության տակ կար 60.000 հոգուց ավել բանակ, Հովհան Մամիկոնյանը նշում է, որ դաշնակից ուժերը կազմել են 70.000 հոգի, որոնցից 30.000-ը բաժին է ընկնում ոչ բյուզանդահպատակ Հայկական բանակին, համաձայն Սեբեոսի այս ճակատամարտին մասնակցել է ոչ բյուզանդահպատակ 15.000 հոգանոց Հայոց այրուձին, նույն հեղինակը նշում է նաև բյուզանդական 3.000 հոգանոց հեծելազորի մասին, Անանուն Եդեսիացին, Անանուն Ասորացին և Բար-Հեբրեոսը Բյուզանդական կայսրության բանակի թիվը մատնանշում են որպես 40.000, ուշագրավ տեղեկություն հայտնելով նաև 20.000 հոգանոց Արմենիակների և Բուկելարների բանակաթեմերի ռազմիկների մասին, Աբու Հանիֆա ալ-Դինավարին ուշագրավ տեղեկություն է հայտնում 20.000 հայ ռազմիկների մասին, սակայն բանակի ընդհանուր թվաքանակը պարզելու տեսանկյունից այդ տեղեկությունը մեզ ոչինչ չի տալիս, իսկ Տաբարին հայտնում է 60.000 ռազմիկի մասին: Իր հերթին հայտնի է, որ Խոսրով II-ի կողմում գործում էր Մատյան գունդը, որն, ըստ Սեբեոսի և Թովմա Արծրունու, կազմել է 8.000, իսկ ըստ Թեոփիլիկատոս Սիմոնակատտասի, Անանուն Եդեսիացու, Անանուն Ասորու, Բար-Հեբրեոսի և Աբու Հանիֆա ալ-Դինավարիի՝ 10.000 հեծյալ (Սեբեոսը և Թովման ակնհայտորեն հաշվի չեն առել, որ Մովպետի գլխավորած Մատյան գնդի 2 հազարյակը վերջին պահին հասցրել են միանալ դաշնակից բանակին): Համադրելով առկա տեղեկությունները ամենից առաջ Հայկական բանակի առումով՝ կարելի է ենթադրել, որ Սեբեոսը նկատի է ունեցել միայն ոչ բյուզանդահպատակ Հայոց այրուձին, որն այդ ժամանակաշրջանում իրոք կազմում էր 15.000 հեծյալ, իսկ Հովհանը՝ արշավանքին մասնակցած ողջ ոչ բյուզանդահպատակ Հայկական բանակը: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ ոչ բյուզանդահպատակ Հայկական բանակը կազմել է 30.000 ռազմիկ: Իր հերթին, հաշվի առնելով Հովհան Մամիկոնյանի, Թեոփիլիկատոս Սիմոնակատտասի և Անանուն Եդեսիացու բերված տվյալները, կարելի է ենթադրել, որ դաշնակից բանակում քրիստոնյա ռազմիկները կազմել են 70.000 հոգի, որոնցից 40.000-ը բաժին է ընկել բուն Բյուզանդական կայսրության բանակին, որն իր կազմում ուներ 20.000 ռազմիկ Արմենիակների, ինչպես նաև Բուկելարների բանակաթեմից, իսկ 30.000-ը՝ ոչ բյուզանդահպատակ Հայկական բանակին: Եվ վերջապես կարելի է ենթադրել, որ հիշատակված հեղինակներից և ոչ մեկը ընդհանուր թվում չի նշում Սեբեոսի, Թեոփիլիկատոս Սիմոնակատտասի, Անանուն Ասորացու և Աբու Հանիֆա ալ-Դինավարի կողմից նշված Մատյան 10.000 հոգանոց գունդը: Այսպիսով՝ կարելի է գալ հետևության, որ այս ճակատամարտում դաշնակից ուժերը կազմել են 80.000 ռազմիկ, որոնցից ավելի քան կեսը բաժին է ընկնում հայերին, ի դեմս ոչ բյուզանդահպատակ Հայկական բանակի և Բյուզանդական կայսրության բանակի կազմում գործող Հայ ռազմիկների:

(2.000), ինչպես նաև Հայկական բանակը (30.000, որից 15.000 հեծյալ), որը, հմուտ երթաշարժով խուսափելով իր դեմ շարժված թշնամական ուժերից, ի վերջո միավորվեց Ներսեհ Կամսարականի բանակի հետ:

Վաղ առավոտյան դաշնակից ուժերը քաղաքի մատույցներում մարտակարգ ընդունեցին: Աջ թևում Մեբոդի գլխավորությամբ տեղակայվեցին Մատյան գունդը և Բյուզանդական կայսրության որոշ ուժեր, կենտրոնում Ներսեհ Կամսարականի ու Խոսրով II-ի գլխավորությամբ տեղաբաշխվեցին Բյուզանդական կայսրության բանակը և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները, իսկ ձախ թևում Հովհան Մյուստակունի, Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի ու Սմբատ Բազմահաղթ Բագրատունու գլխավորությամբ դիրքեր զբաղեցրեց Հայկական բանակը: Վահրամ VI Չուբինի բանակը, ամուր դիրքերի գրավելով մի բարձրադիր վայրում, իր հերթին ևս բաժանվեց երեք մասի, ընդ որում կենտրոնի առաջին շարքում տեղավորվեցին հետևակը և մարտական փղերը, իսկ աջ թևում էլ այլ ուժերի հետ միասին տեղակայվեցին նաև Նիխորճեսի գլխավորած թյուրքերը:

I փուլ – Օրվա երկրորդ կեսին Վահրամ VI Չուբինի բանակի ձախ թևը հարձակվեց Մատյան գնդի վրա և կարճատև մարտից հետո կեղծ նահանջ իրականացրեց դեպի իր ամրացված դիրքեր: Այս ընթացքում շրջապատվեց և գերվեց թշնամու մի ջոկատ (500), սակայն թշնամու հիմնական ուժերին հետապնդել փորձող Մատյան գունդը ծանր կորուստներով հետ շպրտվեց, ընդ որում իրավիճակը փրկեց միայն այն հանգամանքը, որ ժամանակին մարտի մեջ մտավ դաշնակից ուժերի կենտրոնը: Կողմերը վերադարձան ելման դիրքեր, իսկ մյուս օրը վաղ առավոտյան Վահրամ VI Չուբինի բանակը սրընթաց նահանջ իրականացրեց՝ ձգտելով հյուծել հետապնդող թշնամուն: Տեղեկանալով այդ մասին՝ դաշնակից բանակը շարժվեց թշնամու հետքերով և երկրորդ օրվա վերջում հասավ վերջինիս: Հաջորդ օրը լուսաբացին կողմերը կրկին ընդունեցին նույն մարտակարգը:

II փուլ – Առավոտյան, կենտրոնացնելով լավագույն ուժերը ձախ թևում, Վահրամ VI Չուբինը հզոր հարված հասցրեց հակառակորդի աջ թևին: Արդյունքում՝ Խոսրով II-ի գլխավորած թևը պարտություն կրելով աստիճանաբար սկսեց նահանջել, որը կասեցվեց ու համառ ընդհարման վերաճեց միայն այն բանից հետո, երբ կենտրոնից տեղ հասան օգնական ուժեր: Այս ընթացքում, լավագույն ուժերը տեղաշարժելով արդեն դեպի կենտրոն և մարտի մեջ մտցնելով նաև մարտական փղերը, Վահրամ VI Չուբինը կրկին հզոր հարձակման անցավ: Արդյունքում՝ բռնկվեց համառ մարտ, որը շարունակվեց բավականին երկար:

III փուլ – Հայկական բանակը, օգտվելով այն բանից, որ իր դիմաց գտնվող թշնամական ուժերը զգալիորեն թուլացել են, օրվա առաջին կեսին անցավ հուժկու հարձակման: Բռնկվեց համառ մարտ, որի ընթացքում Մուշեղը մարտադաշտում հանդիպեց Նիխորճեսին և մենամարտեց վերջինիս հետ: Մենամարտը ստացվեց բավականին համառ, ընդ որում Մուշեղը ի վերջո սկսեց հոգնել և առավելությունը աստիճանաբար անցավ Նիխորճեսի կողմը: Զգալով մենամարտի արդեն վտանգավոր դարձած ընթացքը՝ Մուշեղը այն շարունակեց մարտական մուրճով, որով էլ, որսալով հարմար պահը, մահացու հարված հասցրեց հակառակորդի գլխին, սպանեց նրան ու տապալեց ձիուց: Սպանված հակառակորդի գլուխը ցուցադրելով Հայ ռազմիկներին՝ Մուշեղը ոգևորեց նրանց և տարավ նոր հարձակման, որի արդյունքում թշնամին պարտություն կրեց ու դիմեց փախուստի:

IV փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ Հայկական բանակը արդեն օրվա երկրորդ կեսին կործանիչ հարված հասցրեց թշնամու կենտրոնին: Արդյունքում՝ Վահրամ VI Չուբինի բանակի կենտրոնը, չդիմանալով թևային ու ճակատային հարվածներին, դիմեց փախուստի: Փախուստի դիմեց նաև թշնամու բանակի ձախ թևը:

V փուլ – Օրվա վերջին Վահրամ VI Չուբինի բանակի մի խոշոր ջոկատ (6.000)

ամրացավ մոտակա բլրի վրա, սակայն շրջապատվեց և լիովին ոչնչացվեց: Միաժամանակ ոչնչացվեցին կամ վնասազերծվեցին նաև մարտական փղերն ու նրանց հետ միասին գործող ռազմիկները:

VI փուլ – Մինչև ուշ գիշեր դաշնակից ուժերը հետապնդեցին հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեցին վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 4.000, դաշնակիցները՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

Կրած ծանր պարտությունից հետո Վահրամ VI Չուբինը, որը Պարսից թագավորությունում մինչ այդ էլ միանշանակ աջակցություն չէր վայելում, զրկվեց ամեն ինչից, դիմեց փախուստի և ապաստանեց իր նախկին հակառակորդ Թյուրքական խաքանությունում, որտեղ էլ Խոսրով II-ի դրդումներին ենթարկված Ղարա-Չուրինի լուռ համաձայնությամբ հետագայում ի վերջո դավադրաբար սպանվեց: Ինչ վերաբերում է այս ամենի արդյունքում արյաց արքայի տիտղոսին հասած Խոսրով II-ին, ապա նա վերջնականապես հաստատվեց հոր արյունով ներկված գահին և սկսեց աստիճանաբար ամրացնել իր դիրքերը:

591 թվականին երկարատև և, կարծես թե, անվերջանալի պատերազմից հոգնած տարածաշրջանում ապրող շատ շատերին էր թվում, թե վերջ, սա վերջին պատերազմն է, ընդ որում խոսքը հատկապես վերաբերում էր այս ամենից առավելագույն օգուտ քաղած կողմին, ի դեմս պաշտոնական Կոստանդնուպոլսի, որն Արևելքում աննախադեպ կերպով լայնացրել էր իր սահմանները, հետ էր բերել այն ամենը, ինչ այդքան ժամանակ պահանջել էր պարսկական կողմից, ինչպես նաև ազատվել էր դրամական հատուցում վճարելու վերաբերյալ պարսկական մշտական պահանջներից: Իրոք, 591 թվականի օգոստոսի վերջին, ըստ էության, վերջնականապես ուժի մեջ մտած հաշտությունը աննախադեպ չափերով լայնացրեց կայսրության արևելյան սահմանները: Արդյունքում՝ Հայաստանի 10 նահանգ՝ Կիլիկիան, Փոքր Հայքը, Հայոց Միջագետքը, Բարձր Հայքը, Տայքը, Գուգարքը, Արարատը, Տուրուբերանը, Ծոփքը և Աղձնիքը ընկան Բյուզանդական կայսրության գերիշխանության տակ, իսկ Կորճայքը, Մոկքը, Վասպուրականը, Պարսկահայքը, Փայտակարանը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը շարունակեցին մնալ Պարսից թագավորության տիրապետության տակ: Իր հերթին Խոսրով II-ն ինքը, մի կողմից լինելով դեռևս անչափ թույլ ու թեականորեն ընդունվող իր հպատակների կողմից, իսկ մյուս կողմից էլ Մավրիկոսի նկատմամբ այսպես թե այնպես լցված լինելով շնորհակալական զգացումներով, քրիստոնյաների հետ իրեն ընդգծված սիրալիր էր պահում: Խելացի մարդիկ, սակայն, և հատկապես բազում մարտերում փորձված կայսրության զորավարները, ի տարբերություն Կոստանդնուպոլսում գործող շատ ու շատ տեսաբանների, այնուհանդերձ տեսնում էին իրերի իրական դրությունը և կարծես նախազգում էին ապագան, մանավանդ այն բանի ֆոնին, որ Խոսրով II-ը, երբ Վահրամ VI Չուբինը դեռևս չէր պարտվել, մտնելով Դարա ամրոց, չհապաղեց սեփական նժույգով մուտք գործել Դարա ամրոցի եկեղեցի՝ խորը դժգոհություն պատճառելով քրիստոնյաներին: Քրիստոնյաների բանակի վրա վատ տպավորություն թողեց նաև, թեև այդպես էլ վերջնականապես չհաստատված, այն լուրը, թե արյաց նոր արքան իբր մտադիր է եղել թունավորել կայսրության ռազմիկներին, սակայն հաջողության չի հասել:

Վահրամ VI Չուբինի պարտությունից և փախուստից հետո բազմելով արյաց գահին՝ պարսից նոր տիրակալը լիուլի վարձատրեց իրեն օգնած բոլոր ռազմիկներին ու զորականներին, իսկ մի խոշոր գումար էլ ուղարկեց Մավրիկոսին՝ գրեթե քառապատիկ հատուցելով բոլոր այն ծախսերը, որոնք իր համար արվել էին կայսրության կողմից: Ինչպես ասվեց, սակայն, չնայած այս արտաքին փայլին, իրերի իրական դրությունը շատերն էին տեսնում ու գիտակցում և պատահական չէր, որ Միջագետքի հրամանատար Ներսեհ Կամսարականը, ցանկանալով կարծես գոնե մի որևէ կերպ կանխել ապագա զարգացումները, բաժանվելիս արյաց արքային այնուհանդերձ ասաց. «*Հիշիր այս օրը,*

Խոսրով: Հռոմեացիները քեզ թագավորություն են շնորհում»: Այս առումով հատկանշական է, որ, եթե այլ պարագայում գոռոզ Խոսրով II-ը ծանր պատժով կպատասխաներ նման խոսքերին, ապա այժմ նրան այլ բան չէր մնում, քան առնվազն գոնե լռել: Այս առումով հատկանշական էր նաև այն, որ արդեն 591 թվականի սեպտեմբերի սկզբին ինչ-որ տեղ Ուրմիա լճի ափերին Վահրամ VI Չուբինի գանձարանը կայսրություն տեղափոխող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 300) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) հարձակման ենթարկվեցին գանձարանը խլելու նպատակով հարձակված Պարսից թագավորության բանակի (մոտ 500) կողմից, թեև ի վերջո կարողացան հետ մղել հարվածը[1]:

Հարկ է նշել, որ նորընծա արյաց արքայի հետ իրենց ազատ էին պահում նաև հայերը՝ բնականաբար հաշվի առնելով և հենց նոր վերջացած ապստամբությունը, և իրենց ձեռքբերումները, քանի որ բոլոր հիմքերը կար պարսկական կողմին հենց պարտված համարելու: Այս առումով ավելորդ չէ հիշել, թե ինչ կերպ է նկարագրում հայերի հրաժեշտը արյաց արքայի հետ դեպքերի ժամանակակից Հովհան Մամիկոնյանը՝ Մամիկոնյան տան ժամանակակից պատմիչը, որը, բնականաբար, հիանալի տեղյակ էր այս ամենից. «*Պարսից Խոսրով արքան, երբ լսեց այս բանը, չափազանց ուրախացավ: Իսկ հունաց զորքերը՝ ամոթահար մնալով, խիստ տրտմեցին: Ուստի, երբ թագավորը կանչեց Մուշեղին և կարգադրեց ամբողջ զորքին պարգև տալ, հունաց Մորիկ արքան, որովհետև թագավորի փոխանորդ էին նրան կարգել, գաղտնի մարդ ուղարկեց Խոսրովի մոտ՝ թե դու գիտե՞ս, որ Մուշեղից քեզ կործանում է սպասվում: Եվ սա էլ մտածեց Մուշեղի նկատմամբ մահվան դարան պատրաստել: Մարդ ուղարկեց և Մուշեղին իր մոտ կանչեց, սակայն Խոսրովի քույրը իմանալով, Մուշեղին տեղեկացրեց իր եղբոր նենգությունը: Իսկ Մուշեղը առավ իր հետ քառասուն իշխանների միայն և էլ ուրիշ ոչ ոքի, պատերազմի մեկնելու կազմ ու պատրաստ ձևով, սրերը մեջքներին կապած, այդպես եկան ներկայացան թագավորին: Ձիերի վրա նստած՝ առանց երիվարներից իջնելու եկան մինչև խորանի դուռը, ամենայն խստությամբ նրան պատասխան տվին, բացահայտ արեցին նրա գործած մահվան դարանը և թքակոծեցին ու անարգեցին նրա անմտությունը, ապա մեծ բարկությամբ հետ դարձան ու հեռացան թագավորի մոտից: Թագավորը լսելով այդ խոսքերը շատ խիստ երկյուղեց նրանցից, որովհետև մանուկ էր: Ապա՝ Մուշեղ իշխանը պատգամախոս ուղարկեց հունաց զորապետի մոտ և ասաց. «Դուք կամենում եք նենգությա՞մբ սպանել ինձ, արդ, մի զարթեցրեք առյուծին, որ քնած է և ոչ գայլին, որ մոռացել է իր բարքը: Ապա թե ոչ՝ նա, որ ութանասուն հազարին հաղթեց, հեշտությամբ կարող է նաև յոթանասուն հազարին հաղթել»: Դրանից հետո Մուշեղը հրաժարվեց մարզպանությունից, ամբողջ զորքը թողեց Դվինում, առավ իր զինվորներին, որ զուտ Մամիկոնյան տանից էին և ելավ գնաց իր գավառը»*: Հովհան Մամիկոնյանի այս մեջբերումով, որը հաստատվում է նաև Սեբեոսի կողմից, թերևս, ամեն ինչ, ըստ էության, ասված է, ընդ որում հատկանշական է, որ արդեն այստեղ իսկ հստակորեն երևում էին հակահայկական այն յուրօրինակ դաշինքի ուրվագծերը, որոնք աստիճանաբար գծագրվում էին պարսից արքայի ու կայսեր միջև: Ամեն ինչ, իրոք, իրականում հարթ չէր նաև հայերի և պաշտոնական Կոստանդնուպոլսի հարաբերութուններում:

Խնդիրը կայանում էր նրանում, որ, հայերը, որ առնվազն վերջին 20 տարիներին իրենց գործնականում անկախ էին զգացել, այժմ ևս ոչ մի հիմք չէին տեսնում ենթարկվելու Մավրիկոսի մանրախնդիր իշխանությանը, որը, ինչպես և իր մնացած հպատակներին, հայերին ևս պատրաստվում էր վերաբերվել ինչպես անմռունչ գործիքների: Այս առումով հատկանշական է, որ հետագա տարիները բնորոշվում են և պաշտոնական Տիզբոնի, և պաշտոնական Կոստանդնուպոլսի դեմ հայերի մղած անհաշտ պայքարով, որը հաճախ զինված բնույթ էր ստանում: Այս առումով, ըստ էության, ձգտելով հետ չմնալ, իսկ, երբեմն, նույնիսկ առաջ անցնելով Մամիկոնյաններից, իրենց ըմբոստ վարքագծով աչքի էին ընկնում արդեն նաև Բագրատունիները, որոնք, փաստացի իրենց

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 12:

ազդեցության տակ ունենալով նաև Վրաստանի հիմնական հատվածը, զգալիորեն հզորացել են: Ասվածի ֆոնին հետաքրքիր է նաև նշել, որ իրենց ավանդական պրոպարսկական դիրքորոշումից զգալի նահանջ ապահովեցին նաև Սյունիները:

Գլուխ 45
Երկու մեծ պատերազմների միջակայքում

Թերևս 591 թվականի արդեն հոկտեմբերով[1] է կարելի թվագրել Սպերի ճ-մ-ը, երբ բռնկված Սատրապական Հայաստանի V ապստամբության պայմաններում (591), չցանկանալով տեղափոխվել մարտնչելու դանուբյան ռազմական թատերաբեմ, Սմբատ Բազմահաղթ Բագրատունու գլխավորած Հայկական բանակը (1.000) հաղթեց իրեն հնազանդեցնելու նպատակով Հայաստանի կառավարիչ Հովհանի գլխավորությամբ առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 5.000), ընդ որում Հովհանը զոհվեց: Դրանից հետո, տեղեկանալով ստեղծված իրավիճակի մասին, կայսր Մավրիկոսը հատուկ հրովարտակով ներում խոստացավ ապստամբներին՝ խոստանալով նաև նրանց չտեղափոխել դանուբյան սահման: Արդյունքում՝ ապստամբները ներկայացան Կոստանդնուպոլիս և, միանալով մինչ այդ այնտեղ ժամանած Սահակ Մամիկոնյանի ջոկատին (1.000), այնուհանդերձ համաձայնեցին մեկնել դանուբյան սահման: Բացառություն կազմեց միայն Սմբատը, որը վերադարձավ Հայրենիք, սակայն շուտով ձերբակալվեց և կրկին փոխադրվեց Կոստանդնուպոլիս: Սրանով կարող ենք, թերևս, փաստել, որ Սատրապական Հայաստանի V ապստամբությունը ճնշվեց, սակայն Բագրատունյաց իշխանը դեռ շարունակելու էր զգալի դեր խաղալ զարգացող իրադարձություններում: Իրոք, դատապարտված լինելով մահապատժի և կրկեսային մենամարտում սեփական ուժի ու խիզախության շնորհիվ հաղթելով վայրի գազաններին՝ Սմբատը ներման արժանացավ և Աֆրիկայի նորանշանակ դուքս Գենադիոսի հետ միասին զինվորական ծառայության նշանակվեց Հյուսիսային Աֆրիկայում[2]:

592 թվականի գարնանը Աֆրիկայի դուքս Գենադիոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100, այդ թվում Սմբատ Բազմահաղթ Բագրատունին) անակնկալ հարձակումով ջախջախեցին բերբերներին (մոտ 30.000), որից հետո Հյուսիսային Աֆրիկայում զգալի ժամանակով վերականգնվեց խաղաղությունը[3]: Այս պայմաններում, սակայն, Սմբատ Բազմահաղթ Բագրատունին լքեց կայսերական բանակը, Կարմիր ծովով շրջանցեց Արաբական թերակղզին և, անցնելով Պարսից թագավորություն, սկսեց ծառայել Խոսրով II-ին՝ վերջինիս մոտ աստիճանաբար հասնելով բարձր դիրքի ու մեծ հարգանքի: 592 թվականին իր հերթին բռնկվեց Մարզպանական Հայաստանի VI ապստամբությունը (592):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

592 ամառ – ***<u>Նախիջևան գավառի ճ-մ</u>***[4]

> Բռնկված Մարզպանական Հայաստանի VI ապստամբության պայմաններում Ատատ Խորխոռունու, Սամվել Վահևունու, Մամիկ Մամիկոնյանի, Ստեփանոս Սյունու, Կոտիտ Ամատունու և Թեոդորոս Տրպատունու գլխավորած Հայկական բանակը (2.000 հեծյալ) պատրաստվեց հարձակվել հարկերը տանող Պարսից

---

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտասը այս իրադարձությունը տեղադրում է 589 թվականի նոյեմբերից. «*քիչ ժամանակ առաջ*», այն դեպքում, երբ Սեբեոսի մոտ վերջինս թվագրվում է 591 թվականից զգալի ժամանակ անց: Իրականում, սակայն, կարելի է կարծել, որ երկու հեղինակներն էլ որոշակիորեն սխալվում են, մանավանդ որ ժամանակագրական կողմը երկուսի մոտ էլ ավանդաբար կաղում է: Հաշվի առնելով քաղաքական իրավիճակի իրական պատկերը, կարելի է կարծել, որ այս ապստամբությունը տեղի է ունեցել Բյուզանդա-Պարսկական V պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ, օգտվելով Արևելքում հաստատված խաղաղությունից, Բյուզանդական կայսրության կայսր Մավրիկոսը սկսեց իր բանակային ուժերը եռանդուն կերպով տեղափոխել դեպի դանուբյան ռազմական թատերաբեմ ընդդեմ Ավարական խաքանության: Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ, ըստ Սեբեոսի, ապստամբությունը երկու փուլով է ընթացել, կարելի է ենթադրել, որ նրա սկիզբը և Հովհանի սպանությունը ընկնում է 591 թ-ի հոկտեմբերին, իսկ Սմբատի ձերբակալումը՝ մյուս տարվա գարնանը:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 20; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 8:

[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 6; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Հովհան Բիկլարացի «Ժամանակագրություն»:

[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 16:

թագավորության բանակի (մոտ 1.000) վրա:

I փուլ – Հայկական բանակը հարձակվեց հակառակորդի վրա և պարտության մատնեց վերջինիս:

II փուլ – Հայկական բանակը բանակեց ***Նախիջևան քաղաքի*** մոտ: Դրանից հետո, խուսափելով Արևելքի հրամանատար Հերակլես Ավագ Հայի գլխավորությամբ հարձակման անցած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 5.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500), ինչպես նաև Պարսից թագավորության առաջխաղացած բանակից (մոտ 3.000), Մամիկ Մամիկոնյանը, Ստեփանոս Սյունին և Կոտիտ Ամատունին իրենց գնդերով հեռացան Պարսից թագավորություն ու ժամանեցին ***Ռեյ*** (Ատրպատական, Էկբատանից մոտ 300 կմ հյուսիս-արևելք), իսկ Սամվել Վահևունին ու Ատատ Խորխոռունին էլ սեփական գնդերով նահանջեցին ***Սյունիք-Սոդք-Կուր*** երթուղով և, բանակելով Կուրի ձախ ափին՝ Ճահուկի դաշտում, սկսեցին սպասել թյուրքերին ու խազարներին: Այն բանից հետո, սակայն, երբ Պարսից թագավորության բանակն իր հերթին բանակեց Կուրի աջ ափին, իսկ սպասվող օգնությունն էլ այնուհանդերձ չեկավ, Ատատը և Սամվելը իրենց գնդերով ևս ի վերջո հեռացան Բյուզանդական կայսրություն:

Հայերը կորցրին մոտ 100, թշնամին՝ մոտ 700 զինվոր:

Այսպիսով՝ Մարզպանական Հայաստանի VI ապստամբությունը ևս վերջացավ՝ առանց էական արդյունք ապահովելու ապստամբների համար: Այս առումով իրոք հատկանշական և, ըստ էության, բնորոշիչ էր հայերի ու Հայաստանի համար ստեղծված այն իրավիճակը, երբ Բյուզանդական կայսրության դեմ ընդվզած հայերը ապաստան էին գտնում Պարսից թագավորությունում, իսկ Պարսից թագավորության դեմ ընդվզած հայերն էլ՝ Բյուզանդական կայսրությունում:

591 թվականին Արևելքում հաստատված գոհացուցիչ խաղաղությունը հնարավորություն ստեղծեց իր բոլոր ձեռնարկումներին խիստ մանրակրկտորեն նախապատրաստվել սիրող Մավրիկոսին կրկին անդրադառնալ դանուբյան սահմանին: Ողջ 592 թվականը կայսրն, ըստ էության, ծախսեց նրա վրա, որ, Արևելքից աստիճանաբար դեպի դանուբյան սահման տեղափոխելով ուժերը, համալրի դրանք, անհրաժեշտ ռազմական որակներ ապահովի և միայն դրանից հետո վճռական պայքարի դուրս գա Ավարական խաքանության դեմ: Հենց այս գործընթացով է բնականաբար պայմանավորված նաև Մավրիկոսին վերագրվող հայտնի հակահայկական այն քաղաքականությունը, որի մասին, թերևս, ավելորդ չի լինի մի քանի խոսք ավել ասել:

Ավանդականորեն ընդունված է համարել, որ Բյուզանդական կայսրության կայսր Մավրիկոսը, չնայած իր հայկական ծագմանը, ուներ ընդգծված հակահայկական դիրքորոշում և դիտավորյալ վարում էր Հայաստանը դատարկելու քաղաքականություն: Այս առումով, որպես հիմնական կռվաններ, բերվում են Սեբեոսի կողմից մեզ փոխանցվող կայսեր հատուկ նամակը արյաց արքային, ինչպես նաև փաստացի իրողությունը, երբ, իրոք, կայսրության տիրապետության տակ հայտնված հայկական տարածքներից հենց 590-ական թվականների սկզբին սկիզբ առավ ու մոտ 10 տարի շարունակվեց հայերի զինական ուժերը Բալկանյան թերակղզի տեղափոխելու գործընթացը: Այս առումով կարծում եմ, սակայն, որ, ինչպես ցույց է տալիս փաստերի սթափ վերլուծությունը, ոչ մի ընդգծված հակահայկականություն, հենց հայերին վնասելու իմաստով, Մավրիկոսն այնուհանդերձ չէր դրսևորում: Այո, նա հանում էր Հայոց զինական ուժերը Հայաստանից, այո, դրա հետևանքով հայերն ու Հայաստանը օբյեկտիվորեն թուլանում էին, սակայն Մավրիկոսը դա անում էր ընդամենը միայն որպես Բյուզանդական կայսրության կայսր, որի համար իր կայսրության շահերը վեր էին ամեն ինչից և բոլոր միջոցներն ու ռեսուրսները, պատկանող, այդ թվում նաև հայերին, պետք է ծառայեին հենց նույն այդ կայսրության հզորության ամրապնդմանը: Այս տեսանկյունից

խնդիրը դիտարկելիս իրոք արդեն պարզվում է, որ հենց հայերի դեմ հատուկ ընտրված ոչ մի քաղաքականություն Մավրիկոսի կողմից չէր իրականացվում, ինչպես ասում են՝ ոչ մի անձնավորված մոտեցում, ուղղակի Մավրիկոսը հայերին դիտարկում էր որպես հերթական ու բավականին արժեքավոր մի ռեսուրս և իր կայսրության շահերն ապահովելու համար բոլոր միջոցներով փորձում էր այն կիրառության մեջ դնել:

Այսպիսով, թեև Մավրիկոսն իր քաղաքականությամբ օբյեկտիվորեն վնասում էր հայերին և ամեն կերպ ձգտում էր թուլացնել նրանց դիմադրական ոգին, այնուհանդերձ նա այդ անում էր ոչ թե հայերի նկատմամբ ինչ-որ առանձնահատուկ հակակրանք տածելու պատճառով, այլ ուղղակի՝ որպես Բյուզանդական կայսրության կայսր: Եվս մեկ անգամ փաստենք, որ, թեև այս ամենը օբյեկտիվորեն վնաս էր հասցնում հայերին ու Հայաստանին, սակայն այդ վնասի չափերը որոշակիորեն ուռճացված են, ընդ որում, Արևելքում հաստատված խաղաղության պայմաններում մասնագիտական առումով առանձնապես դրսևորվելու հնարավորություններ չունենալով Արևելքում, հայ ռազմիկներն հաճախ իրենք ևս մեծ հաշվով դեմ չէին վարձկանների կարգավիճակով Բալկանյան սահման տեղափոխվելուն: Իրավիճակին իմ մոտեցումը վերջնականապես պարզաբանելու համար ավելացնեմ նաև, որ հակակայսերական երկու ապստամբությունները, որոնք տեղի ունեցան Մավրիկոսի դեմ հենց այս թվականներին, դրանով հանդերձ իրենց հիմքերում ավելի շատ ունեին ոչ թե այն հանգամանքը, որ հայ ռազմիկներին տեղափոխում են Բալկանյան ճակատ, այլ այն, որ հայերը, ինչպես արդեն նշվեց վերևում, վերջին երկու տասնամյակ սովորած լինելով և վայելելով փաստացի անկախություն ու իրապես չենթարկվելով ոչ կայսեր և ոչ էլ պարսից արքային, ըստ էության, ոտքի էին կանգնում հենց այդ վիճակը պահպանելու համար, քանզի զինվորական ծառայությունը հայ ռազմիկների մեծ մասին ոչ միայն խորթ չէր, այլև հաճախ դա նրանց միակ զբաղմունքն էր ու հենց դրանով էին նրանք ապրում և սոցիալական միջավայրում ապահովում իրենց դերն ու նշանակությունը:

Բալկանյան ճակատում կուտակվող սպառնալիքներին իր հերթին չէր կարող անտարբեր նայել նաև Բայան Ի-ը, որը, թեև ոչ այն ուժով ու հանդգնությամբ, քան նախորդ տասնամյակներում էր, բայց այնուհանդերձ ինքն էլ պատրաստվեց ռազմական գործողությունների, ընդ որում հատկանշական է, որ, եթե նախորդ տասնամյակներում ռազմավարական նախաձեռնությունը գտնվում էր հենց ավարների ու սլավոնների ձեռքում, ապա Արևելքի հոգսերից ձերբազատված Մավրիկոսն այժմ այն իր ձեռքը վերցրեց և լիովին իրականացրեց վերջինիս պտուղները: Այսպես թե այնպես, սակայն, քանի դեռ վճռական հարված հասցնելու համար կայսրության ռազմական մեքենան չէր հասցրել լիովին կարգի գալ, Բայան Ի-ը որոշեց առաջինը հենց ինքը հարվածել: Սիրմիան արդեն վաղուց ավարներինն էր և արդյունքում հաջորդ հարվածն ուղղվեց ներկայիս Բելգրադի տեղում գտնվող Սինգիդունի վրա, ընդ որում նախատեսվում էր, որ, տիրելով այս քաղաքին և ձեռքում ունենալով նաև Սիրմիան, ավարները, ըստ էության, Դանուբի միջին հոսանքում իրենց տիրապետության տակ կունենային այս գետի վրա գտնվող երկու հիմնական գետանցումները: 592 թվականի աշնանը Սինգիդունի համար մղվող մարտերը, սակայն, Ավարական խաքանության բանակին (մոտ 15.000, այդ թվում մեծաթիվ սլավոններ) հաջողություն չբերեցին և վերջինս ի վերջո, որպես փրկագին ստանալով 10 կգ ոսկի ու թանկարժեք նվերներ, նահանջեց, իսկ Բայան Ի-ն էլ որոշեց հետագայում գետանցումն իրականացնել Սիրմիայի մոտ[1]:

593 թվականի գարնանը Մավրիկոսը, կարծես թե, արդեն ամեն ինչ նախապատրաստել էր վճռական հարվածի համար, սակայն այն մի պահ ևս հետաձգվեց: Իրոք, նույն այս ժամանակ Արևելքում բռնկվեց Սատրապական Հայաստանի VI ապստամբությունը (593):

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 3, 4; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

593 ապրիլ – ***<u>Ջերմ գետի ճ-մ</u>*** (Կորճայք, Կորդուք գավառ, Տիգրիսի արևելյան վտակ)[1]

Բռնկված Սատրապական Հայաստանի VI ապստամբություն պայմաններում Սամվել Վահևունու, ինչպես նաև Թեոդորոս, Սարգիս, Վարազ-Ներսեհ, Ներսես և Վստամ Տրպատունիների գլխավորած Հայկական բանակը (մոտ 1.500), խուսափելով Հերակլես Ավագ Հայի ու Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի որդի Համազասպի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 5.000), ամրացավ մի կիսաքանդ ամրոցում: Առաջխաղացումը շարունակող կայսրության բանակը սկզբում չկարողացավ անցնել գետը, սակայն, այն բանից հետո, երբ մի ճամփորդ ցույց տվեց գետանցումը, վերջինս անցավ գետը և մոտեցավ ամրոցին:

I փուլ – Կայսրության բանակն անցավ հարձակման և կատաղի մարտերից հետո գրավեց ամրոցը: Արդյունքում՝ Սամվելը, Ներսեսը և Վստամը ընկան մարտում, իսկ Սարգիսն ու Վարազ-Ներսեհը գերվեցին և հետագայում գլխատվեցին:

II փուլ – Թեոդորոսին և Հայկական բանակի մի մասին հաջողվեց ճեղքել պաշարման օղակը ու ապաստանել Պարսից թագավորությունում, սակայն հետագայում Խոսրով II-ը Թեոդորոսին հանձնեց Բյուզանդական կայսրությանը, որից հետո վերջինս ևս ենթարկեց մահապատժի:

Հայերը կորցրին մոտ 1.500, թշնամին՝ մոտ 2.500 զինվոր:

Այսպիսով՝ Սատրապական Հայաստանի VI ապստամբությունը ճնշվեց: Արդյունքում, վերջնականապես հանդարտություն հաստատելով Արևելքում, Մավրիկոսը ձեռնամուխ եղավ Ավարական խաքանության դեմ երկար ժամանակ նախապատրաստվող պատերազմական գործողություններին, թեև այս անգամ ևս առաջին հարվածը հասցրեց այնուհանդերձ Բայան I-ը:

593 թվականի մայիս Արևմուտքի փոխհրամանատար Սալբիանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (1.000 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 300) Պրոկլիան կիրճի ճ-մ-ում (Բուլղարիա, Մարկինոպոլսի մոտ) 3 օր հետ մղեցին Բայան I-ի գլխավորությամբ առաջխաղացած Ավարական խաքանության բանակի (մոտ 80.000, այդ թվում սլավոններ) առաջապահի (մոտ 16.000, որից 8.000-ը ժամանեց երկրորդ օրը) հարձակումը, սակայն, այն բանից հետո, երբ ի վերջո մարտադաշտ ժամանեցին թշնամու հիմնական ուժերը, նահանջեցին[2]: Դրանից հետո 593 թվականի հունիսին թշնամին պաշարեց Դրիզիպերան (Արևելյան Բուլղարիա), սակայն, չկարողանալով գրավել այն, հետ քաշվեց[3]:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

593 հուլիս – ***<u>Պերինֆի ճ-մ</u>*** (Արևելյան Բուլղարիա)[4]

Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակը (մոտ 80.000, այդ թվում սլավոններ) մոտեցավ Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորությամբ ճամբարած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000), ինչպես նաև Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող Հայոց այրուձիուն (մոտ 2.000, այդ թվում Ատատ Խոռխոռունին, Սահակ և Մամակ Սամիկոնյանները) ու ճամբար զարկեց:

I փուլ – Բայան I-ը մի քանի օր շարունակ օրվա սկզբին ճամբարից հանեց և

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 17:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 4, 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 5:
[4] Մավրիկոս «Ռազմավարություն», գիրք 9, մաս 2, Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Լևոն VI «Մարտավարություն», մաս 11, գլուխ 25; Սեբեոս «Պատմություն», գլուխ 16, 18, 20:

մարտակարգով շարեց սեփական բանակը, սակայն օրվա վերջում, իբր խուսափելով մարտից, այն վերադարձրեց ճամբար: Նույն կերպ վարվեց նաև կայսերական բանակը, ընդ որում վերջինիս հեծելազորը գիշերը ի վերջո հրաժարվեց վերադառնալ ճամբար և պատսպարվել այնտեղ:

II փուլ – Ավարական խաքանության բանակը անակնկալ գիշերային հարձակումով պարտության մատնեց կայսերական բանակի հեծելազորին, որի մնացորդները պատսպարվեցին ճամբարում:

III փուլ – Ավարական խաքանության բանակը, թողնելով մարտադաշտը և ամայացնելով շրջակայքը, հետ քաշվեց:

Հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 800, թշնամին՝ մոտ 500 զինվոր:

Չնայած կրած անհաջողությանը՝ 593 թվականի օգոստոսից մինչև սեպտեմբեր Յուրուլ ամրոցի մոտ ընթացած մարտերում կայսրության բանակն այնուհանդերձ կարողացավ ոչ միայն կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, այլև ստիպել Բայան I-ին նույնիսկ հետ քաշվել, ընդ որում այս արդյունքն ապահովվեց մեծապես այն բանի շնորհիվ, որ խաքանը ստացավ Պանոնիայի վրա նախապատրաստվող հարձակման մասին տվյալներ պարունակող և Պրիսկոսին ուղղված, սակայն իրականում դիտավորյալ գերի ընկած սուրհանդակի միջոցով հատուկ իր համար նախապատրաստված կայսր Մավրիկոսի նամակը: Հենց վերջին հանգամանքն էլ ի վերջո ստիպեց, ըստ էության, ռազմական խորամանկության զոհ դարձած Բայան I-ին աննշան մի գումարի դիմաց հաշտություն կնքել և արագորեն նահանջել ելման դիրքեր[1]:

Նախորդ դեպքերից քիչ ժամանակ անց՝ 593 թվականի աշնանը, Իտալիայի տաղանդավոր էքսարքոս Ռոմանոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) Լանգոբարդական թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) գրավեցին Սուտրիան, Բոմարցիոն, Օրթան, Թոդերը, Ամելիան, Պերուջան և Կանտյանոն: Տեղեկանալով այդ մասին՝ Ագիլուլֆուս արքայի (591-616) գլխավորած Լանգոբարդական թագավորության մի խոշոր բանակ շարժվեց դեպի Հռոմ, սակայն շուտով հաշտություն կնքվեց[2]: Այսպիսով՝ թերևս, կարող ենք փաստել, որ արդեն 593 թվականին ի հայտ եկան հաջողության այն առաջին նշանները, որոնք սպասում էին կայսրությանը հաջորդ տարիներին: Ավելին, 594 թվականին հարված հասցնելու հերթը կայսրությանն էր և Մավրիկոսի զորավարները չհապաղեցին:

Արդեն 594 թվականի հունիսի սկզբին Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորությամբ Դանուբը գետանցած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000), ինչպես նաև Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000, այդ թվում Ատատ Խոռխոռունին, Սահակ և Մամակ Սամիկոնյանները) Յալոմիցա գետի ճ-մ-ում (Հարավային Ռումինիա, գետի հարավային ափին) անակնկալ գիշերային հարձակումով ջախջախեցին Արդագաստի գլխավորությամբ ճամբարած սլավոններին (մոտ 30.000), որից հետո ասպատակեցին շրջակայքը՝ տեր դառնալով հսկայական ավարի[3]: Ավարների հիմնական դաշնակիցներ սլավոնները ծանր հարված ստացան, սակայն մարտերը նրանց դեմ սրանով չավարտվեցին:

594 թվականի հունիսի կեսին սլավոնները (մոտ 700) Դորոստոլի մոտ անակնկալ հարձակում գործեցին ձեռք բերած ավարը Թաթիմերոսի գլխավորությամբ փոխադրող բյուզանդական ճամբարած բանակի (300) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 50) վրա, սակայն ի վերջո պարտություն կրեցին, ընդ որում թշնամին կորցրեց այդ

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 5, 6; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 4, գլուխ 8; Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 3, գլուխ 4; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»: Այս մասին հայտնում է նաև Պրոսպերայի Կոպենհագենյան շարունակողը:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 6-8; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Սեբեոս «Պատմություն», գիրք 3, գլուխ 17, 18:

թվում նաև 50 գերի[1]: 594 թվականի հունիսի վերջին արդեն Յալոմիցա գետի հյուսիսային ափին Ալեքսանդրի գլխավորությամբ հետախուզության նպատակով գետանցում իրականացրած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 100) անակնկալ հարձակումով փախուստի մատնեցին սլավոններին (մոտ 100), որից հետո շրջապատեցին թավուտներում ու ճահճոտ տեղանքում պատսպարված թշնամու ռազմիկներին և դավաճանության շնորհիվ գերեցին[2]: 594 թվականի հուլիսի սկզբին Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորությամբ Յալոմիցան, իսկ հետո նաև Սիրետ գետը անցած Բյուզանդական կայսրության բանակը (3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 800) անակնկալ գիշերային հարձակումով ջախջախեցին Մուսոկիոսի գլխավորությամբ ճամբարած սլավոններին (մոտ 10.000)՝ տեր դառնալով հսկայական ավարի, ընդ որում գերվեց նաև Մուսոկիոսը[3]: Սա արդեն երկրորդ ծանր հարվածն էր սլավոններին, թեև վերջիններս իրենք դրանից հետո ևս իրենց ամենևին պարտված համարել չէին պատրաստվում:

Արդյունքում՝ արդեն 594 թվականի օգոստոսի վերջին սլավոնները (մոտ 10.000) անակնկալ գիշերային հարձակում գործեցին Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորությամբ Յալոմիցա գետի հյուսիսային ափին ճամբարած Բյուզանդական կայսրության բանակի (մոտ 30.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 7.000), ինչպես նաև Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող Հայոց այրուձիու (մոտ 2.000, այդ թվում Ատատ Խոռխոռունին և Սահակ Սամիկոնյանը) վրա, ընդ որում միայն առավոտյան և մեծապես շնորհիվ հետևակի վճռական գործողությունների այդ հարվածը ի վերջո հաջողվեց հետ մղել: Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով նաև այն, որ վրա է հասնում ձմեռը, Պրիսկոսը հետ քաշեց ուժերը դեպի Դանուբի ձախ ափ և փորձեց, ի կատարումն կայսերական հրամանի, ձմեռել այնտեղ՝ Արդյունքում, սակայն, ձմեռվա սկզբին այնուհանդերձ ստիպված լինելով անցնել գետն ու ճամբար զարկել գետի կայսերական ափին[4]: Այսպիսով, թեև ծանր գնով, սակայն 594 թվականին Ավարական խաքանության դեմ պայքարում կայսրության բանակը զգալի հաջողության հասավ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, սակայն, որ 594 թվականի մարտական գործողությունների արդյունքից և հատկապես այն բանից, որ Պրիսկոսը իր զորքով չի ձմեռել Դանուբի մյուս ափին, Մավրիկոսը դժգոհ էր մնաց: Կայսրը, վստահ իր տեսական մտահանգումների վրա, միաժամանակ, սակայն, աչքաթող էր անում հարցի գործնական կողմը ու համառորեն չէր ուզում հասկանալ, որ, տեսականորեն գուցե և հիմնավորված այդ ռազմական դրույթը մանրուքներում լուրջ ապահովում էր պահանջում, երբ ռազմիկները դրա համար պետք է բավարար բարոյական ու նյութական պատրաստվածություն ունենային: Հատկանշական է, որ արդեն այդ տարի, կապված Դանուբի մյուս ափին ձմեռն անցկացնելու հետ, բանակը, ըստ էության, ապստամբեց և միայն Պրիսկոսն էր, որ կարողացավ հանգցնել դժգոհությունը: Այս հանգամանքը, սակայն, Մավրիկոսին ամենևին էլ չստիպեց բավարար հետևություններ անել և վերջինս, բացարձակապես վստահ իր տեսական մոտեցումներին, շարունակեց պնդել դրանք: Ավելին, դժգոհ մնալով Պրիսկոսից, կայսրը շուտով պաշտոնանկ արեց վերջինիս և Արևմուտքի հրամանատար նշանակեց իր եղբայր Պետրոսին, որը, ըստ էության, պատրաստ չէր զբաղեցնել իրեն վստահված պատասխանատու այդ պաշտոնը և այդպես էլ չկարողացավ բավարար կերպով փոխարինել Պրիսկոսին՝ նույնիսկ վերջինիս գոնե ձեռքբերումները պահպանելու առումով:

595 թվականի գարնանը և ամռանը մարտական գործողությունների թափն ընկավ, քանի որ մի կողմից կայսրության բանակը, իսկ մյուս կողմից էլ Պետրոսն ինքը

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 8; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 8, 9:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 9; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[4] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 6, գլուխ 9-11; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

պատրաստ չէին դրանց: Արդյունքում՝ միայն 595 թվականի հունիսին էր, որ Ալեքսանդրի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (1.000 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 200) Մարկինոպոլսի ճ-մ-ում հաղթեցին շրջակայքն ասպատակած, նահանջած, շրջապատված ու սայլերի մոտ հետևակ վիճակում պաշտպանություն զբաղեցրած սլավոններին (600), որոնք, մինչև վերջնական պարտությունը, սպանեցին բոլոր գերիներին[1]: Տարվա վերջում, սակայն, մարտական գործողությունները կրկին թափ հավաքեցին:

595 թվականի սեպտեմբերի սկզբին բուլղարները (1.000 հեծյալ) Ասիմայի ճ-մ-ում (Ռումինիայի հարավ, Դանուբի ձախ ափին, Դանուբի հարավային վտակ Ասիմայի և Դանուբի հատման կետից հյուսիս) հաղթեցին Բյուզանդական կայսրության բանակին (1.000 հեծյալ) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 200)[2]: Նույն տարվա սեպտեմբերի կեսին արդեն Արջեշ գետի ճ-մ-ում (Ռումինիայի հարավ, Դանուբի հյուսիսային վտակ Արջեշի ափին) Պիրոգաստի գլխավորած սլավոնները (մոտ 20.000) ոչնչացրին Արևմուտքի հրամանատար Պետրոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակի (մոտ 30.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 5.000), ինչպես նաև Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող Հայոց այրուձիու՝ (մոտ 3.000, այդ թվում Ատատ Խոռխոռունին և Սահակ Սամիկոնյանը) գետն անցած առաջապահին (1.000 հեծյալ), սակայն, այն բանից հետո, երբ Պետրոսը առկա բոլոր ուժերով անցնելով գետն և նետողական զենքերով հարվածելով ծանր կորուստներ պատճառեց թշնամուն, պարտություն կրեցին, ընդ որում սպանվեց նաև Պիրոգաստը[3]: Ծանր գնով ձեռք բերված այս հաջողությունը, սակայն, սկիզբն էր մի մեծ ու վերջնական անհաջողության, քանզի 595 թվականի սեպտեմբերի վերջին Յալոմիցա գետի ճ-մ-ում սլավոնները (մոտ 20.000), ըստ էության, ոչնչացրին գետին մոտեցած և ծարավից տանջվող կայսերական բանակը, ընդ որում հենց այս ճակատամարտում էր, որ գերվեց ու հետագայում սպանվեց նաև Մուշեղ Խիզախ Մամիկոնյանը, իսկ կայսրության բանակի միայն խղճուկ մնացորդներին էր, որ դժվարությամբ հաջողվեց անցնել Դանուբը և փրկվել[4]:

Պետրոսի գլխավորությամբ կայսերական բանակի 595 թվականին կրած անհաջողությունը ջնջեց հաջողության բոլոր այն պտուղները, որը Պրիսկոսի գլխավորությամբ վերջինս ձեռք էր բերել 594 թվականին, ընդ որում դրանից հետո ռազմավարական նախաձեռնությունը գրեթե երկու տարով կրկին անցավ Բայան I-ին: Այս պայմաններում Մավրիկոսին չէր մնում այլ բան անելու, քան հրաժարվել ամեն գնով յուրայիններին տարբեր պաշտոններում առաջադրելու իր քաղաքականությունից և, պաշտոնանկ անելով եղբորը, կրկին Արևմուտքում գործող բանակի հրամանատար նշանակել Պրիսկոսին՝ ըստ էության ընդունելով, որ վերջինիս որդեգրած ռազմավարությունն ավելի հիմնավոր էր:

596 թվականի մայիսին Ավարական խաքանության բանակը (մոտ 10.000, այդ թվում մեծաթիվ բուլղարներ) կրկին առաջխաղացում իրականացրեց, պաշարեց Սինգիդունը և պարսպահար մեքենաներով նույնիսկ ավերեց վերջինիս պարիսպների զգալի մասը, սակայն Արևմուտքի փոխհրամանատար Գուդվինի գլխավորությամբ առաջխաղացած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000) հաղթեցին ու հետ շպրտեցին հակառակորդին[5]: Սինգիդունի պարիսպների տակ կրած անհաջողությունից հետո Բայան I-ը հարվածն ուղղեց համեմատականորեն քիչ պաշտպանված Դալմացիային, սակայն Գուդվինը

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 2; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 4; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 4, 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[4] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 5; Սեբեոս «Պատմություն», գլուխ 18; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[5] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 7, 11; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

հաջող գործեց նաև այստեղ, երբ, հակառակորդի հիմնական բանակի հետ ընդհարվելու համար չունենալով բավարար ուժեր, 596 թվականի ամռանը Բոնի ճ-մ-ում (Դալմացիա) նա անակնկալ հարձակումով այնուհանդերձ ջախջախեց հիմնական բանակի ձեռք բերած ավարը պահպանող հակառակորդի ջոկատին (2.000)[1]: 596 թվականը հանգիստ չէր, սակայն, նաև Պարսից թագավորությունում:

Որմիզդ IV-ը, ինչպես արդեն ասացինք, ամուսնացած էր 531 թվականին Խոսրով I-ի դեմ դավադրություն կազմելու մեջ մեղադրված ու մահապատժի ենթարկված Բավի Ասպահապետի որդի Շապուհի աղջկա հետ և արդյունքում Խոսրով II-ի քեռիներն էին Շապուհ Ասպահապետի որդիներ Վինդոյն ու Վիստահմը: Վերջիններս, բնականաբար սեփական շահերի համատեքստում, ժամանակին եռանդուն կերպով հանդես էին եկել Խոսրով II-ի շահերի պաշտպանության օգտին և արդյունքում վերջնական հաջողության գործում մեծ ներդրում ունեցան, սակայն դրանից հետո, երբ անցավ մի քանի տարի, քրոջորդու և քեռիների հարաբերությունները սրվեցին: Բանն ի վերջո հասավ նրան, որ արյաց արքան ձերբակալել և սպանել տվեց Վինդոյին, իսկ Վիստահմն էլ, դիմելով սրընթաց փախուստի, փրկվեց միայն մեծ դժվարությամբ՝ ապաստանելով Գիլանում ու որպես դաշնակիցներ հավաքելով ինչպես տեղացիներին, այնպես էլ Վահրամ VI Չուբինի նախկին կողմնակիցներին, ընդ որում ապստամբներին շուտով սկսեցին հարել նաև Միհրանյանները: Ստեղծված պայմաններում, կանգնելով փաստացի սկիզբ առած գահակալական հերթական պատերազմի առջև, Խոսրով II-ն իր հերթին ի մի բերեց իրեն հավատարիմ ուժերը, որոնց թվում էին նաև կայսրության ռազմիկներն, ի դեմս ամենից առաջ բյուզանդական տիրապետության տակ գտնվող հայաբնակ շրջաններից, ինչպես նաև Հայաստանի այլ շրջաններից հավաքված Հայ ռազմիկների:

596 թվականի ամռանը, շարժվելով ապստամբների դեմ՝ Խոսրով II-ի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (86.000), ինչպես նաև Գագիկ և Մամիկ Մամիկոնյանների հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000, այդ թվում Ստեփանոս Սյունին, Կոտիտ Ամատունին,Պապ Բագրատունին, Խոսրով Վահևունին և Վարդան Արծրունին) Ռեյի ճ-մ-ում հաղթեցին Վիստահմի գլխավորած ապստամբներին (մոտ 20.000, այդ թվում դելմիկներ)[2]: Ստեղծված պայմաններում, ցանկանալով ամրապնդել հաջողությունը, արյաց արքան բռնություններ սկսեց ինչպես այն շրջանների բնակիչների շարքերում, որոնք հարել էին ապստամբերին, այնպես էլ՝ յուրայինների: Արդյունքում, մասնավորապես, դավադրաբար սպանվեց Կոտիտ Ամատունին, ընդ որում Խոսրով II-ի մոտ գտնվող հայ իշխաններից ոմանք էլ մինչ այդ ցրվել էին կամ մահացել բնական մահով: Եվ ահա ողջ մնացած հայ իշխաններն և ռազմիկների մի մասը որոշեցին թողնել արյաց արքային ու միանալ ապստամբներին:

596 թվականի ամռանը Պապ Բագրատունու և Վարդան Արծրունու հրամանատարությամբ Սպահանից հեռացած Հայոց այրուձին (մոտ 5.000), հետ մղելով իրեն հետապնդող Պարսից թագավորության բանակին (մոտ 10.000), ի վերջո ապաստանեց Հյուրկանիայում՝ միանալով Վիստահմի գլխավորած ապստամբներին[3]: Արդյունքում, զգալիորեն համալրելով իր ուժերը, Վիստահմը փորձեց արյաց արքայի բանակի դեմ ևս մեկ անգամ բաց մարտի մեջ մտնել, սակայն 596 թվականի աշնանը Էկբատանի ճ-մ-ում Խոսրով II-ի ընդհանուր հրամանատարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (86.000), ինչպես նաև Գագիկ և Մամիկ Մամիկոնյանների հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000, այդ թվում Ստեփանոս Սյունին, Կոտիտ Ամատունին,Պապ Բագրատունին, Խոսրով Վահևունին և Վարդան Արծրունին) հաղթեցին Վիստահմի գլխավորած ապստամբներին (մոտ 20.000, այդ թվում դելմիկներ), ինչպես նաև Պապ Բագրատունու ու Վարդան Արծրունու

[1] Թեոփլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 12; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 21, 22; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:
[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 23:

հրամանատարությամբ գործող Հայոց այրուձիուն (մոտ 4.000)[1]: Երկրորդ այս անհաջողությունից հետո ապստամբների մնացորդները Վիստահմի հետ միասին նահանջեցին Գիլան՝ ապստամբական դրության մեջ մնալով ևս մի քանի տարի, ընդ որում պաշտոնական Տիզբոնն ինքը, համարելով դիրքերը ոչ այնքան ամուր և ավանդականորեն չձգտելով մարտերի մեջ մտնել Գիլանում, խուսափեց ռազմական գործողությունների հետագա շարունակումից: Արդյունքում՝ Պարսից թագավորությունում տիրող ներքաղաքական անկայունությունը ոչ միայն իր վերջը չգտավ, այլև՝ շարունակվեց:

Վիստահմի ապստամբության ամենասկզբում Միհրանյանների տոհմի զառամյալ առաջնորդ Միհրանը, ցանկանալով խուսափել հնարավոր քաղաքական հալածանքներից և օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից, իր տոհմի ու մեծաքանակ հպատակների հետ միասին իր հերթին շարժվեց դեպի հյուսիս՝ նպատակ ունենալով անցնել Թյուրքական խաքանության տարածք: Այն ժամանակ, սակայն, երբ փախստականները գտնվում էին դեռևս Արցախի տարածքում, նրանց հասավ Խոսրով II-ի հրամանը, որով առաջարկվում էր չհեռանալ Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս, այլ մնալ և տիրել այն տարածքին, որտեղ նրանք այդ պահին գտնվում են: Արդյունքում՝ Միհրանի գլխավորած Միհրանյանները մնացին Արցախի տարածքում և սկսեցին հաստատվել տեղում: Դրանից հետո Միհրանը հրավիրեց մի հատուկ պատրաստված ճաշկերույթի և արդյունքում սպանեց տեղական 12 իշխանների, որից հետո տիրեց նրանց տիրույթներին: Արդյունքում՝ Արցախ-Ուտիքի թագավորությունում իշխանությունն անցավ Միհրանյաններին, իսկ թագավորության նոր արքա էլ հռչակվեց Միհրանը (մոտ 596-600):

597 թվականի օգոստոսի կեսին Բայան I-ի գլխավորությամբ շրջակայքն ասպատակած Ավարական խաքանության բանակը (մոտ 50.000, այդ թվում սլավոններ) պաշարեց Թոմիսիան, սակայն, քաղաքի պարիսպների տակ մնալով մինչև 598 թվականի ապրիլի կես, այդպես էլ չկարողացավ գրավել այն Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10): Ավելին, այն բանից հետո, երբ Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորությամբ քաղաքին մոտեցան Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի ու Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 3.000), վերջինս զինադադար կնքեց և նահանջեց:[2]

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

> 598 ապրիլի 21-23 – ***<u>Յանտրուս գետի ճ-մ</u>*** (Հյուսիսային Բուլղարիա, Դանուբի աջ ափին)[3]
>
> Արևմուտքի փոխհրամանատար Կոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի ու Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000) մոտեցան Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակին (մոտ 50.000), ընդ որում Կոմենցիոլոսը կայսր Մավրիկոսի կողմից գաղտնի հրաման ուներ կազմակերպել սեփական հրամանատարության տակ գտնվող բանակի պարտությունը՝ նախատեսելով, որ այդ կերպ վերջ կգտնեն բանակում տիրող ապստամբական տրամադրությունները:
>
> I փուլ – Ապրիլի լույս 21-ի գիշերը թշնամական բանակի անմիջական

[1] Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 25; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»:

[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 12; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 13; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»:

առաջխաղացման պայմաններում կայսերական բանակը տագնապով ոտքի հանվեց, սակայն հստակ հրամանների բացակայության պայմաններում ռազմիկները լիարժեք չզինվեցին և չդիրքավորվեցին: Արդեն օրվա մեջ Ավարական խաքանության բանակը, կենտրոնացնելով երթարշավի մեջ գտնվող ուժերը, մանր մարտերից հետո դիրքավորվեց հակառակորդի հարևանությամբ, իսկ օրվա վերջում էլ կողմերը վերադարձան ելման դիրքեր:

II փուլ – Ապրիլի 22-ի առավոտյան կողմերը կրկին մարտակարգ ընդունեցին, ընդ որում Կոմենցիոլոսի կողմից դիտավորյալ տրված խառնաշփոթ և անիմաստ հրամանների արդյունքում կայսրության բանակի մարտակարգը խառնվեց, իսկ մարտունակությունն էլ ընկավ: Օրվա կեսին, իրավիճակն համարելով արդեն խիստ վտանգավոր, Կոմենցիոլոսը լքեց սեփական բանակը և դիմեց փախուստի: Տեղեկանալով այդ մասին՝ ցրվեց և անկանոն փախուստի դիմեց նաև կայսրության բանակը՝ մինչև օրվա վերջ հետապնդվելով Ավարական խաքանության բանակի կողմից ու կրելով ծանր կորուստներ, ընդ որում թշնամին գործնականում առանց մարտերի տիրեց խուճապահար փախուստի մեջ լքված լեռնային անցումները պահպանող մի շարք ամրությունների:

III փուլ – Ապրիլի 23-ին, դժվարությամբ հավաքելով ցրված ուժերը, կայսրության բանակը կարողացավ տեղային հակահարձակումներ կազմակերպել և հետ խլել լեռնային անցումները պահպանող մի շարք ամրություններ: Միաժամանակ սրընթաց առաջխաղացում իրականացրած Ավարական խաքանության բանակը հասավ մինչև ***Երկար պարիսպներ***, սակայն, պատրաստ չլինելով դրանց գրոհին, ասպատակելով շրջակայքը ի վերջո հետ քաշվեց:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 10.000, թշնամին՝ մոտ 1.000 զինվոր:

Այսպիսով, չվստահելով բանակին և, ըստ էության, ցանկանալով այն թշնամու հանձնելու միջոցով ճնշել տեղում առկա ապստամբական տրամադրությունները, Մավրիկոսն ու նրա հավատարիմ զորավար Կոմենցիոլոսը բանակի մի իսկական պարտություն կազմակերպեցին, ինչի անմիջական ռազմական հետևանքը եղավ այն, որ հերթական անգամ ոտքի տակ գնաց Թրակիան: Ավարական խաքանության բանակը իրոք խորն առաջխաղացում էր իրականացրել և բանը հասավ նույնիսկ նրան, որ Երկար պարիսպների պաշտպանությունն ապահովելու նպատակով Մավրիկոսն ինքը ստիպված եղավ ոտքի հանել նույնիսկ սեփական թիկնազորին, ինչպես նաև Կոստանդնուպոլսի աշխարհազորին: Ինչ վերաբերում է այս պարտության ավելի հեռահար հետևանքներին, ապա այն դրսևորվեց նրանում, որ վերջնականապես ոչնչացավ բալկանյան բանակում մինչ այդ առանց այդ էլ ծայրահեղ ցածր աստիճանի վրա գտնվող կայսեր հեղինակությունը:

598 թվականի ապրիլի վերջին հետ քաշվելով Երկար պարիսպներից՝ Բայան I-ի գլխավորությամբ ասպատակելով առաջխաղացած Ավարական խաքանության բանակը (մոտ 40.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) գրավեց Դրիզիպերան[1]: Շուտով, սակայն, Բայան I-ի բանակը սկսեց ծանր կորուստներ կրել տարածված համաճարակից, որի արդյունքում էլ արդեն ամռան սկզբին վերջինս հաշտություն կնքեց և նահանջեց՝ տարեկան վճարվող ոսկին ևս 50 կգ ավելացնելու պայմանով: Այսպիսով՝ 598 թվականին բալկանյան ճակատում ընթացող պատերազմական գործողությունները կայսրությանը որևէ հաջողություն չբերեցին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ արդեն հենց նույն այդ 598 թվականին երևացին ապագա խոշոր այն աղետի նախանշանները, որը պատուհասելու էր Մավրիկոսին և կայսրությանը դրանից մի քանի տարի անց:

Ինչպես արդեն ասվեց, բալկանյան ճակատում գործող բանակում կայսեր

[1] Թեոփիլիկատոս Սիմոկատտաս «Պատմություն», գիրք 7, գլուխ 13, 14; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

հեղինակությունը լիովին ոչնչացված էր, սակայն իրադրությունն առավել ծանր տեսք ստացավ այն բանից հետո, երբ բանակային հատուկ պատվիրակությունը, որի կազմում էր գտնվում, ի դեպ ասած նաև, Փոկաս անունով առայժմ ոչ այնքան հայտնի մի հարյուրապետ, ներկայացավ Մավրիկոսին և պահանջեց պատժել Կոմենցիոլոսին: Մավրիկոսը, սակայն, կարծես արդեն լիովին կտրված կյանքից ու վստահ, որ գործ ունի շախմատային անմռունչ ֆիգուրների հետ, անմիջապես էլ կազմակերպված կեղծ դատավարությունում կայսերական իր ողջ հեղինակությամբ հանդես եկավ հեղինակազրկված և, ըստ էության, պետական դավաճանություն իրականացրած Կոմենցիոլոսի օգտին՝ ի վերջո հասնելով նրան, որ դատավորներն արդարացրին այդ զորավարին: Ավելին, հենց այդ դատավարության ժամանակ էր, որ իրեն չափից ավելի հանդուգն պահած և նույնիսկ կայսեր հասցեին կոպիտ արտահայտություններ թույլ տված Փոկասն ինքը բռնությունների ենթարկվեց, երբ նրան, ըստ էության, ծեծեցին ու նույնիսկ բզկտեցին մորուքը: Այս ամենը անչափ մեծացնում էր ապագա պայթյունի հավանականությունը, սակայն Մավրիկոսն և նրա կողմնակիցները, համառորեն չցանկանալով նկատել վտանգը, ոչ միայն ոչ մի միջոց ձեռք չառան այն կանխելու ուղղությամբ, այլև ինչպես բողոք ներկայացրածներին, այնպես էլ հենց իրեն՝ Կոմենցիոլոսին, կրկին ուղարկեցին գործող բանակ:

599 թվականի սկզբի վիճակով բալկանյան ճակատում գործող կայսերական բանակում դժգոհությունները հասել էին ծայրահեղ աստիճանի և միակ զսպիչ ուժն, ըստ էության, միայն Արևմուտքի հրամանատար Պրիսկոսն էր, որի ռազմական հեղինակությունը, անձնական խիզախությունն ու ազնվությունը հաշվի առնելով, ռազմիկները դեռևս զսպվում էին: Պրիսկոսի հետ էր գտնվում, սակայն, նաև նրա տեղակալ Կոմենցիոլոսը, որը, ամեն կերպ խանգարելով Պրիսկոսին և ինչ-որ տեղ նույնիսկ ցանկանալով կրկնել բանակը հակառակորդի սրին հանձնելու իր նախորդ տարվա գործողությունը, բոլոր հնարավոր միջոցներով ամեն դեպքում հեռու էր մնում դաշտային պայմաններից՝ ինչ-որ տեղ արդարացի կերպով կարծելով, որ կատաղած ռազմիկների մոտ հայտնվելուն պես ինքն ուղղակի ինքնադատաստանի կենթարկվի: Բանակային դժգոհությանը գումարվեց, սակայն, նաև բնական աղետը, երբ 599 թվականի ապրիլի 2-ին տեղի ունեցած կործանիչ երկրաշարժը կայսրության բնակչությանը ծանր կորուստներ պատճառեց, իսկ եղածին էլ գումարվեց նաև այդպես էլ չվերացած ժանտախտի համաճարակի հերթական ուժեղացումը, որի պատճառած զոհերը ևս զգալի էին: Այս ամենին կայսրության հատկապես արևելյան տարածքներում իր հերթին ավելացավ նաև ծանր երաշտը, որը բերեց անբերրիության և, արդյունքում, սովի, ընդ որում փրկված բերքն էլ իր զգալի չափով զոհ գնաց մորեխների հարձակմանը: Միաժամանակ կայսրության բնակչությանը ծայրահեղ զայրացրեց, իսկ կայսեր հեղինակության մնացորդներն էլ վերջնականապես հողին հավասարեցրեց այն հանգամանքը, որ հենց այս ժամանակ Մավրիկոսը հրաժարվեց փրկագնել 12.000 քրիստոնյա գերիներին, որոնց այս ամենից խոցված ավարներն ուղղակի սպանեցին:

599 թվականի գարնանը Ռեքարեդ I-ի (586-601) գլխավորած Վեստգոթական թագավորության բանակը (մոտ 10.000) ասպատակեց Կորդովայի, Մալագայի և Կարտաքենայի շրջակայքը, սակայն Բյուզանդական կայսրության բանակի (ընդհանուր՝ մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 10) հետ մանր ընդհարումներից հետո նահանջեց[1]: 599 թվականի մայիսին Իտալիայի էքսարքոս Կալինիկոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 50) Ռավեննայի մոտ տեղի ունեցած մանր մարտերում հաղթեցին ներխուժած ու շրջակայքն ասպատակող Ավարական խաքանության բանակին (մոտ 10.000, այդ թվում մեծաթիվ սլավոններ և լանգոբարդներ)[2],

[1] Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[2] Այս մասին հիշատակվում է Բյուզանդիայի էքսարքոս Կալինիկոսին ուղղված Հռոմի Գրիգոր պապի 599 թ-ի ուղերձում, ինչպես նաև, որպես անցած տարվա իրադարձություն, Միլանի եպիսկոպոսին ուղղված 600 թվականի ուղերձում:

սակայն Բայան Ի-ի համար հիմնական իրադարձությունները զարգանալու էին ամեն դեպքում Բալկանյան ճակատում, որտեղ իր ուժերը կենտրոնացրել էր նաև Մավրիկոսը՝ առժամանակ որևէ հնարավորություն չունենալով զբաղվել Ապենինյան և Պիրենյան թերակղզիներում ծագող հոգսերով: Հենց այստեղ էր, որ կայսրության ռազմական տեսաբանները նախատեսել էին վճռական հարված հասցնել հակառակորդին, իսկ նույն այդ տեսաբաններից ոմանք էլ այդ ընթացքում կրկին չէին բացառում բանակը ուղղակիորեն հակառակորդի սրին հանձնելու տարբերակը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

599 հունիս – ***<u>Վիմինսկ կղզու ճ-մ</u>*** (Արևելյան Սերբիա, Բրանիչև քաղաքից մոտ 10 կմ արևելք, Դանուբի ձախ ափին)[1]

Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի և փոխհրամանատար Կոմենցիոլոսի գլխավորությամբ կղզուն մոտեցան Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի ու Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 5.000) ճամբարեցին Դանուբ գետի աջ ափին, որից հետո, հսկողություն հաստատելով գետի մեջ գտնվող Վիմինսկ կղզու նկատմամբ, պատրաստվեցին այն օգտագործելով գետանցում իրականացնել: Տեղեկանալով այդ մասին՝ արևելքից գետին մոտեցավ նաև Ավարական խաքանության բանակը (մոտ 50.000):

I փուլ – Առաջապահ ուժերով սրընթաց անցնելով գետը՝ կայսրության բանակը հետ շպրտեց թշնամուն և ամրացված ճամբար զարկեց գետի ձախ ափին: Միաժամանակ, սակայն, Վիմինսկում հաստատված Կոմենցիոլոսը, չնայած գործող բանակի կողմից ժամանած բազում պատգամավորների խնդրանքներին, վճռականորեն հրաժարվեց հետևել գետն անցնող բանակին և նույնիսկ, բացելով սեփական երակները ու հասնելով արյան կորստի, հիվանդություն ձևացրեց: Ստեղծված պայմաններում Պրիսկոսը ևս, վախենալով դավաճանությունից, առժամանակ հրաժարվեց անցնել գետը, սակայն երրորդ օրվա վերջում բանակային հիմնական ուժերի հետ միասին ի վերջո այնուհանդերձ անցավ գետի մյուս ափ:

II փուլ – Փորձելով հետ մղել թշնամուն՝ Ավարական խաքանության բանակը 3 օր շարունակ հարձակումներ գործեց քրիստոնյաների ամրացված ճամբարի վրա, սակայն որևէ հաջողության չհասավ:

III փուլ – Չորրորդ օրը կեսօրին Պրիսկոսը ճամբարից հանեց և մարտական կարգով շարեց իր բանակը: Մարտակարգ ընդունեց նաև թշնամին, սակայն բռնկված և մինչև օրվա վերջ շարունակված մարտում Ավարական խաքանության բանակը պարտություն կրեց ու նահանջեց: Քրիստոնյաները կորցրին 300, թշնամին՝ 4.000 զինվոր:

IV փուլ – Երեք օր անց Ավարական խաքանության բանակը կրկին մոտեցավ քրիստոնյաների ճամբարին և կողմերը մարտակարգ ընդունեցին: Բռնկված մարտում թևանցելով հակառակորդին՝ քրիստոնյաները մինչև օրվա վերջ շարունակված կռվում կրկին առավելության հասան: Թշնամին կորցրեց 9.000 ռազմիկ:

V փուլ – Տասն օր անց Ավարական խաքանության բանակը հերթական անգամ մոտեցավ քրիստոնյաների ճամբարին և կողմերը կրկին մարտակարգ ընդունեցին: Կեսօրին բռնկված և մինչև ուշ երեկո ընթացած մարտում կայսրության բանակը, հերթական անգամ թևանցելով հակառակորդին ու համակցված հարված հասցնելով թևերում և կենտրոնում, ծանր պարտության ու վերջնական փախուստի

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 8, գլուխ 1-3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

մատնեց Ավարական խաքանության բանակին, ընդ որում թշնամու ռազմիկներից շատերը խեղդվեցին մոտակա լճում:

Հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 1.600, թշնամին՝ 28.000 զինվոր:

Այսպիսով՝ Մավրիկոսը, հերթական անգամ գործի դնելով Կոմենցիոլոսին, բանակը կրկին փորձեց հանձնեց թշնամու սրին «*կսպանեն նրանք, կսպանեն մեր թշնամիներին, կսպանվեն նրանք՝ կսպանվեն մեր թշնամիները*» իր իսկ բարձրաձայնած հայտնի բանաձևով, սակայն փաստն այն է, որ արդյունքում կայսրության բանակը, շնորհիվ ռազմիկների քաջասրտության և Պրիսկոսի անձնական որակների, խոշոր մի հաղթանակ տարավ՝ գուցե ամենախոշորը, սկսած 587 թվականից: Իրոք, Բայան I-ը իսկական մի պարտություն էր կրել, ընդ որում նրա բանակի սիրտը կազմող լավագույն ռազմիկների հետ միասին զոհվել էին նաև նրա որդիներից շատերը:

599 թվականի հունիսին Բյուզանդական կայսրության բանակը (1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10) ասպատակեցին Սավա գետի հարավային ափերը և ավարով նահանջեցին[1], սակայն հիմնական հարվածի հնարավորությունն ամեն դեպքում վերապահված էր Պրիսկոսին: Արդյունքում՝ 599 թվականի հուլիսի սկզբին Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 45.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.800), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի ու Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 3.800), թևերի խաչաձև հարվածի տակ առնելով կենտրոնում հարձակման անցած Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակին (մոտ 12.000), Տիսա գետի ճ-մ-ում (Արևելյան Հունգարիա) հաղթեցին վերջինիս: Դրանից հետո, հրով ու սրով անցնելով գեպիդների նախկին թագավորության, իսկ այժմ արդեն Ավարական խաքանության սիրտը կազմող տարածքներով, կայսրության բանակը գեպիդների մի իսկական ջարդ իրականացրեց՝ ձեռք գցելով հսկայական քանակի գերիների և ոչնչացնելով 30.000 խաղաղ բնակչի[2]: Նախորդ դեպքերից կես ամիս անց՝ 599 թվականի հուլիսի վերջին, Տիսա գետի ափերին տեղի ունեցած ևս մեկ ճակատամարտում Արևմուտքի հրամանատար Պրիսկոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.500), ինչպես նաև Սահակ Մամիկոնյանի և Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 3.500) ծանր պարտության մատնեցին Բայան I-ի գլխավորած Ավարական խաքանության բանակին (մոտ 30.000, այդ թվում մեծաթիվ գեպիդներ և սլավոններ): Վերջին ճակատամարտում գերվեցին 8.000 սլավոն, 3.000 ավար և 6.200 այլ ազգությունների պատկանող մարդիկ[3]:

599 թվականը որոշիչ եղավ Ավարական խաքանության հետ Բյուզանդական կայսրության երկարատև հակամարտության գործում, ընդ որում այն ավելի վճռորոշ էր, քան 587 թվականի հաջողությունը: Այս առումով հատկանշական է, որ, եթե 587 թվականի հերոս Կոմենցիոլոսը այժմ երակները բացած և բոլոր կողմից մերժված մղվել էր հետին պլան, ապա առաջին դերերում էր գտնվում բոլորի կողմից սիրված ու հերթական անգամ իր ազնվությունն և ռազմական ունակությունները ապացուցած Պրիսկոսը: Իրոք, մի քանի ճակատամարտերում կրած ծանր պարտությունները Բայան I-ի պետությանը ոչ միայն մարտունակ մեծաքանակ ռազմիկների ծանր կորուստներ արժանացան, այլև հարվածի տակ ընկան նաև հպատակի կարգավիճակ ունեցող խաքանի երկրորդական դաշնակիցները, որոնք, սակայն, խիստ կարևոր դեր ունեին ավարական ռազմական մեքենայի կազմում՝ խոսքը սլավոնների և գեպիդների մասին է: Արդյունքում՝ ծանր կորուստներ կրած գեպիդները, ըստ էության, հեռացան պատմության թատերաբեմից, իսկ սլավոններն էլ զգալիորեն թուլացան, ընդ որում նույն սլավոնների մոտ

[1] Կոնստանդին Ծիրանածին «Կայսրության կառավարման մասին», գլուխ 30:
[2] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 8, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 8, գլուխ 3; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

աստիճանաբար սկսեց հասունանալ ավարական գերիշխանությունը թոթափելու և առաջնային դերերի վրա հայտնվելու մղումը: Իրոք, սլավոններն արդեն լիուլի գիտակցում էին, թե ինչ անխնա են իրենց օգտագործում ավարները, ընդ որում նրանք նաև հասկանում էին, որ հենց իրենք են կազմում ավարական ռազմական մեքենայի հզորության հիմնական բաղադրիչներից մեկը և այս պարագայում իրենք ինչ-որ տեղ արդեն ի վիճակի են սեփական խաղը խաղալ: Եվ վերջապես, որպես հետևանք այս ամենի, պետք է նշել, որ հենց այս իրադարձություններով պայմանավորված էլ վերջնական ու անդառնալի տեսք ստացավ այն գործընթացը, երբ Բալկանյան թերակղզում գերմանական կամ ռոմանականացված գերմանական տարրը իր տեղը զիջեց սլավոններին, ինչի արտահայտությունը երևալու էր արդեն մոտակա տասնամյակներում:

599 թվականը Պրիսկոսի իսկական հաղթահանդեսն էր, այն մի իսկական հաղթահանդես էր նաև կայսրության ռազմական մեքենայի համար, սակայն, փոխանակ զարգացնելու հաջողությունը և վերջնական հարված հասցնելու հակառակորդին, մշտական կասկածներով համակված Մավրիկոսը այնուհանդերձ չհապաղեց անմիջապես էլ պաշտոնազրկել տաղանդավոր Պրիսկոսին ու նրա փոխարեն կրկին Արևմուտքի հրամանատար նշանակել ամենևին էլ ռազմական ունակություններով աչքի չընկող իր եղբորը: Այսպիսով՝ կայսրը, որը հենց այս ժամանակներում արդեն աստիճանաբար կյանքի էր կոչում սեփական որդիների միջև կայսրությունն ապագայում բաժանելու ծրագիրը, ընդ որում նախատեսված էր, որ Մավրիկոսի երկրորդ որդի Տիբերիոսը պետք է տիրի Հռոմին և նախկին Հռոմեական կայսրության արևմտյան մասին, ամեն կերպ առաջ էր մղում իր ազգականներին ու ընտանիքի անդամներին՝ քաղաքական զարմանալի կուրություն դրսևորելով և այդպես էլ չգիտակցելով, թե ինչ վտանգավոր հետևանքների կարող է հասցնել իր կարճամիտ ողջ այդ ընդհանուր քաղաքականությունը:

Նախորդ աղետից հետո Ավարական խաքանության բանակի ռազմական ակտիվությունը կտրուկ անկում ապրեց և, այն էլ տեղային հատվածներում, որոշակի ակտիվություն շարունակեցին դրսևորել միայն սլավոնները: Հենց նրանք էին, որ 600 թվականի գարնանը ինչ-որ տեղ Դալմացիայում դարանը գցեցին և գլխովին ջախջախեցին ավարառությամբ զբաղվող Բյուզանդական կայսրության բանակին (1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10)[1], ինչից հետո գրավեցին Կղիս ամրոցը (Դալմացիա, Սոլունից 4 կմ հյուսիս), սակայն այդ ամենը էական հետևանքների չբերեց[2], իսկ դա էլ իր հերթին առանց այդ էլ անգործունյա Պետրոսին նոր գործողությունների առիթ չտվեց: Նույն 600 թվականին, սակայն, հերթական ու մի վերջին անգամ սրվեց իրավիճակը Պարսից թագավորության արևելքում:

Այս ժամանակ Խոսրով II-ը դանդաղ ու դժվարությամբ իր ձեռքն էր հավաքում երկիրը և նախորդ տասնամյակում արդեն զգալի հաջողությունների էր հասել, ընդ որում կրած ռազմական պարտություններից հետո դիմադրության հիմնական առաջնորդը համարվող Վիստահմն ինքն էլ արդեն չէր համարձակվում բացահայտ ռազմական բախման մեջ մտնել քրոջորդու հետ: Այս պայմաններում առավելագույնը, որին նա կարողացավ հասնել, դա այն էր, որ այս կամ այն չափով իր ազդեցության տակ պահեց Գիլանը և մարտունակ դելմիկներին: Միաժամանակ նույն Վիստահմը, զգալով, որ նման կերպ շարունակելու դեպքում ժամանակն իր դեմ է խաղում և իր պարտությունը ընդամենը ժամանակի հարց է, փորձ կատարեց ապստամբական տրամադրությունների հակել նաև Պարսից թագավորության արևելյան տարածքները, ինչպես նաև, առիթի դեպքում՝ ապահովել Թյուրքական խաքանության աջակցությունը:

Իրոք, Մեծ տափաստանի զգալի ազդեցությունը կրող Պարսից թագավորության

[1] Կոնստանդին Ծիրանածին «Կայսրության կառավարման մասին», գլուխ 30: Այս մասին խոսվում է նաև Հռոմի Գրիգոր պապի նամակներից մեկում:

[2] Կոնստանդին Ծիրանածին «Կայսրության կառավարման մասին», գլուխ 30: Այս մասին որոշակիորեն անորոշ կերպով հայտնում է նաև Թովմա Սպլիտացին: Այս մասին խոսվում է նաև Հռոմի Գրիգոր պապի նամակներից մեկում:

արևելյան և հատկապես հյուսիս-արևելյան շրջաններում պաշտոնական Տիզբոնի դիրքերը երբեք էլ առանձնակի ամուր չէին եղել ու այստեղ դեռևս թարմ էին հիշողությունները քուշանական և հոնա-հեփթաղական անցյալի մասին: Ահա հենց նման տրամադրությամբ վարակված տեղական իշխողների հետ էլ հենց Գիլանում ամրացած Վիստահմը բանակցություններ սկսեց՝ հեռանկարում ցանկանալով ապահովել նաև Ղարա-Չուրինի աջակցությունը: Նախատեսված այս ծրագրերին, սակայն, վիճակված չէր կյանքի կոչվել, քանի որ հենց այս ժամանակ Ղարա-Չուրինը, 599 թվականին ի վերջո հասած Թյուրքական խաքանության խաքանի գահին, ծանր պայքարի մեջ էր մտել համաչինական մակարդակի հասած Սույի տերության հետ, որը բնականաբար աջակցում էր նոր խաքանի ներքաղաքական հակառակորդներին: Այսպիսով՝ առանց այդ էլ իր հզորության գագաթնակետային շրջանն անցած Ղարա-Չուրինի Թյուրքական խաքանությունը ներքաշված էր ծանր մի հակամարտության մեջ և ոչ մի կերպ ի վիճակի չէր ու շահագրգռված էլ չէր պայքարի նոր թատերաբեմ ունենալ պարսկական սահմանում: Այս ամենին էլ շուտով գումարվեց նաև այն հանգամանքը, որ հենց այս ժամանակ Վիստահմն ինքը սպանվեց՝ զոհ գնալով Խոսրով II-ի դրդումով գործող սեփական կնոջ դավադրությանը, որը Վահրամ VI Չուբինի քույրն էր և գործում էր Խոսրով II-ի ամենահավատարիմ մերձավորներից մեկը հանդիսացող իր մյուս եղբոր ցուցումով:

Այսպիսով՝ 601 թվականին Վիստահմն արդեն կենդանի չէր և դա արյաց արքային որոշակի հիմքեր տվեց փորձ կատարել ի վերջո հնազանդեցնել դելմիկներին, իսկ այս ամենն էլ արդյունքում Պարսից թագավորության արևելքում բերեց հերթական մի հակամարտության առաջացմանը: Որպես առաջիկա իրադարձություններում իր գլխավոր զորավար՝ Խոսրով II-ը ընտրեց Սմբատ Բազմահաղթ Բագրատունուն, որը, ինչպես արդեն ասվեց, հեռանալով կայսերական ծառայությունից, հաստատվել էր Տիզբոնում և իր անձնական ու գործնական հատկանիշների շնորհիվ դարձել էր արյաց արքայի ամենամերձավոր ու վստահելի պաշտոնյաներից մեկը: Այսպիսով՝ հենց Բագրատունյաց իշխանին էլ հանձնարարվեց դելմիկների դեմ պատերազմը, սակայն սկիզբը սկսվեց անհաջողությամբ, երբ 601 թվականի դեկտեմբերին դելմիկները (մոտ 2.000), ինչպես նաև Պապ Բագրատունու և Վարդան Արծրունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 4.000) Խեկևանդ գյուղի ճ-մ-ում (Միջին Ասիայի հարավ-արևմուտք, Հյուրկանիա) հաղթեցին Սմբատ Բազմահաղթ Բագրատունու ու մարզպան Շահ-Վահրիճի գլխավորությամբ իրենց հետապնդող Պարսից թագավորության բանակին (մոտ 8.000), ինչպես նաև Բագրատունյաց գնդին (մոտ 1.000)[1]:

Դելմիկների շարքերում ակտիվորեն մարտնչում էին ժամանակին Սպահանից հեռացած հայ իշխաններն ու նրանց ռազմիկները, սակայն, թերևս, արդեն բոլորի համար պարզ էր, որ դա հայերի պատերազմը չէ: Արդյունքում՝ Սմբատին հաջողվեց կապ հաստատել հայրենակիցների հետ և դրա հետևանքն արդեն հաջողությունը եղավ: 602 թվականի գարնանը Սմբատ Բազմահաղթ Բագրատունու գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 2.000) և Բագրատունյաց գունդը (մոտ 1.000), օգտվելով Պապ Բագրատունու ու Վարդան Արծրունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձիու (մոտ 3.000)՝ իրենց կողմը անցնելուց, հաղթեցին դելմիկներին[2], որոնք հետ քաշվեցին դեպի ելման դիրքեր և այդուհետ, գոնե ձևականորեն, համաձայնեցին ընդունել Խոսրով II-ի իշխանությունը: Արյաց արքան արժանին մատուցեց Բագրատունյաց իշխանին և նա, ամենալայն լիազորություններով, նշանակվեց Պարսից թագավորության արևելյան տարածքների տիրակալ, որտեղ իրավիճակն այնուհանդերձ դեռևս հեռու էր վերջնականապես հանգստացած լինելուց:

602 թվականի ամռանը, մեկ տարի ծախսած լինելով բանակը զինելու և համալրելու վրա, Արևմուտքի հրամանատար Պետրոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 40.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000), ինչպես նաև

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 24, 25:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 27:

Ատատ Խորխոռունու հրամանատարությամբ գործող Հայոց այրուձին (մոտ 4.000) ասպատակեցին Դանուբի հյուսիսային ափերը[1]: Հաջողությունը զգալի էր և ծանր անհաջողություններից ուշքի չեկած ավարներն, ըստ էության, էական դիմադրության ի վիճակի չէին: Ստեղծված պայմաններում, սակայն, ցանկանալով ամրապնդել հաջողությունը, հերթական անգամ ազատվել զգալի ծախսերից և ի վերջո նաև գործնականում ստուգել թշնամական երկրում ձմեռելու ու հենց ձմռանը սլավոնների դեմ պայքարելու սեփական վաղեմի տեսությունը, Մավրիկոսը Պետրոսի բանակին հրամայեց տեղակայվել Դանուբի հյուսիսային ափին և ձմեռն անցկացնել այնտեղ: Արդյունքում, սակայն, բավարար ուժեր չունենալով հաջողությամբ կատարելու հրամանը և պատրաստ չլինելով դրան, տառապելով վրա հասած ցրտերից, ինչպես նաև չվստահելով Պետրոսին ու նրա եղբորը և համարելով, որ դա բանակը թշնամու սրին մատնելու ընդամենը հերթական մի փորձն է, կայսերական բանակը նախորդ ըմբոստություններում արդեն իսկ աչքի ընկած հարյուրապետ Փոկասի գլխավորությամբ վերջնականապես դուրս եկավ հսկողությունից և ահեղ մի ապստամբություն բարձրացրեց:

Անգործունյա և անվճռական Պետրոսը, մի քանի անհաջող փորձ կատարելով զսպել ապստամբներին, ի վերջո զոհ գնաց կատաղած ռազմիկների ցասումին, որից հետո Փոկասի գլխավորած բանակը, չհանդիպելով որևէ լուրջ դիմադրության և նպատակ ունենալով ի վերջո հաշիվ տեսնել ատելի Մավրիկոսի հետ, շարժվեց ուղիղ դեպի մայրաքաղաք: Նույն թվականի նոյեմբերի երկրորդ կեսին էլ մոտենալով Կոստանդնուպոլսին և օգտվելով քաղաքային աշխարհազորի դավաճանությունից, քանզի մայրաքաղաքում ևս կայսրը որևէ հեղինակություն չուներ, այստեղ նրան վաղուց էին բացահայտ կերպով ծաղրում, իսկ այժմ էլ այնտեղ մի իսկական ապստամբություն էր բռնկվել, վերջինս առանց որևէ դիմադրության գրավեց Կոստանդնուպոլիսը: Մավրիկոսը իր ընտանիքի անդամների հետ միասին մեծ դժվարությամբ անցավ ասիական ափ և պատսպարվեց Քաղկեդոնի վանքերից մեկում, սակայն փախստականներին շուտով ձերբակալեցին: Արդյունքում՝ 602 թվականի նոյեմբերի 27-ին Մավրիկոսը և նրա որդիները Եվտրոպիայի ծովապատնեշի վրա մահապատժի ենթարկվեցին, ընդ որում, գործելով առանձնակի դաժանությամբ, Փոկասի հրամանով հենց հոր աչքի առաջ սկզբում սպանվեցին կայսեր որդիները, իսկ հետո արդեն՝ ինքը:

Առժամանակ փրկվեցին միայն կայսեր կին Կոնստանդինեն, նրա երեք դուստրերը, ինչպես նաև ավագ որդի Թեոդոսիոսը, որը քննարկվող ժամանակահատվածում դեպքերի բերումով Կոստանդնուպոլսում չէր ու իր աներ, Արևելքի երբեմնի հրամանատար Հուստինիանոսի եղբայր Հերմանոսի որդի Հերմանոսի հետ միասին որս էր անում մայրաքաղաքից հյուսիս: Իրենց, հերթին, տեղեկանալով պայթած աղետի մասին, Թեոդոսիոսն և իր աները դիմեցին փախուստի ու փորձ կատարեցին ուղղություն բռնել դեպի արևելք, սակայն ստանալով հետ վերադառնալու մասին հոր հրամանը, Թեոդոսիոսը հետ վերադարձավ և շուտով ինքն էլ ընկավ Փոկասի մարդասպանների ձեռքը: Արդյունքում՝ Թեոդոսիոսը ևս սպանվեց, թեև, ի տարբերություն հոր և եղբայրների, նրա սպանությունը գաղտնի տեղի ունեցավ ու նրա գլուխը չցուցադրվեց Կոստանդնուպոլսում, ինչն հետագայում իր հետևանքներն էր ունենալու: Իրոք, շատ արագ սկսեցին համառ լուրեր շրջել, որ Հերմանոսին հաջողվել էր կաշառել Փոկասի մարդասպանների գլխավորներից մեկը հանդիսացող նախկին զորավար Ալեքսանդրին և սա կազմակերպել էր Թեոդոսիոսի փախուստը: Սրա համար, ի դեպ, Ալեքսանդրն ինքը կյանքով հատուցեց: Այս կապակցությամբ պետք է ասել, սակայն, որ ժամանակակիցներից ու կայսեր ընտանիքին մոտ կանգնած անձանցից Թեոփիլիկատոս Սիմոնակատտասը իր ժամանակին հատուկ զբաղվեց այս հարցով և ի վերջո եկավ միանշանակ հետևության, որ Թեոդոսիոսն այնուհանդերձ սպանվել է:

Այսպես թե այնպես, սակայն Մավրիկոսը գահընկեց արվեց, ձերբակալվեց և իր 6 որդիների հետ միասին սպանվեց, ընդ որում նախկին կայսեր շատ կողմնակիցների հետ

[1] Թեոփիլիկատոս Սիմոնակատտաս «Պատմություն», գիրք 8, գլուխ 5; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

միասին սպանվեց նաև ոչ պակաս ատելի Կոմենցիոլոսը, իսկ բանակում զգալի հեղինակություն ունեցող Պրիսկոսն էլ, անձնական ապահովության ձգտումով, համենայն դեպս այնուհանդերձ վանք հեռացավ: Այսպիսով՝ Մավրիկոսի հետևողական քաղաքականությունը, որը, թվում էր, թե հիմնված էր ամենաամուր հաշվարկների վրա, իրականում, կտրված լինելով կյանքից և հաշվի չառնելով կոնկրետ իրողությունները, կայսեր, նրա ընտանիքի ու մտերիմների համար մի իսկական ողբերգությամբ ավարտվեց՝ հեռանկարում ծանր հետևանքներ առաջացնելով նաև կայսրության համար և, ըստ էության, ջուրը լցնելով նույն Մավրիկոսի քսանամյա ջանքերի բոլոր արդյունքները:

Մավրիկոսը նախավերջինն էր անցումային այն երկար դարաշրջանի կայսրերից, որոնք Հռոմեական կայսրության անկումից հետո դեռևս գործում էին հռոմեական հինավուրց քաղաքակրթության սահմաններում և, իրենց համարելով Հռոմեական կայսրության կայսրեր, ձգտում էին վերականգնել նույն Հռոմեական կայսրության հզորությունը, ընդ որում նա նախավերջինն էր զուտ ձևականորեն, իսկ իրականում, հաշվի առնելով հաջորդ կայսեր ողջ գործունեությունը, նա, ըստ էության, իրոք վերջինն էր: Այս առումով հատկանշական է նաև որ հենց Մավրիկոսի օրոք էր, որ կայսրության կյանքում լատիներենը հունարենի կողմից վերջնականապես դուրս մղվեց շրջանառությունից:

Մավրիկոսի մահից հետո Բյուզանդական կայսրության կայսր հռչակվեց հիսունհինգամյա Փոկասը (602-610)՝ վերջինը գերմանական կամ ռոմանականացված գերմանացիների կայսրերից և արդեն նաև իրապես վերջինը մի ամբողջ դարաշրջան իշխած կայսրերից, ընդ որում Փոկասն ինքն իրենով ու իր իշխանությամբ կարծես նաև խորհրդանշանակորեն ամփոփեց նույն այդ դարաշրջանը: Փոկասը, որպես ռոմանականացված մի իսկական գերմանացի, գործում էր դեռևս V դարի գերմանական ամենաթողության լավագույն ավանդույթներով, ընդ որում նա ինքը, կայսրությանը վերաբերվելով ընդամենը միայն կարծես որպես նվաճված մի տարածքի, ըստ էության, ոչ միայն ոչ մի լուրջ քայլ չձեռնարկեց վերջինիս առաջ հառնած խնդիրները լուծելու ուղղությամբ, այլև իր վայրենի վարքուբարքով ավելի խորացրեց ճգնաժամը: Փոկասը, լինելով կոպիտ, անտաղանդ, ինքնասեր և բռնի գործողությունների հակված մի զինվորական, իր ողջ գործունեությամբ հետապնդում էր ընդամենը միայն մեկ մի գերնպատակ՝ մնալ կայսրության գահի վրա, ընդ որում հանուն այդ նպատակի նա պատրաստ էր ամեն ինչի: Դաժան այս կայսեր կառավարումը, թերևս, կարելի է համարել Բյուզանդական կայսրության պատմության ամենամռայլ ժամանակներից մեկը, երբ, բացառությամբ բոլոր սահմաններում իրար հաջորդող և արդեն օրինաչափությունների բնույթ ստացած անհաջողությունների, մնացած իրադարձությունների շարքում կարելի է նշել, թերևս, միայն համընդհանուր բռնությունները, մահապատիժները ամեն մի չնչին զանցանքի կամ, թերևս, միայն կասկածի համար, ինչպես նաև ծանր այլ պատիժները: Հենց Փոկասի օրոք և նրա գործադրած բռնությունների արդյունքում էր նաև, որ կայսրության ռազմաքաղաքական կյանքից վերջնականապես հեռացավ Հուստինիանոսների տոհմը: Մի խոսքով, նոր կայսրին, որը կարծես մարմնավորում էր ողջ այն դաժանն ու բռնին, որ Հռոմեական կայսրության քաղաքակրթության սահմաններ էր մտել գերմանական տարի առաջխաղացմամբ, վերապահված էր Հռոմեական կայսրության քաղաքակրթության մեջ հենց իրենով էլ փակելու մինչ այդ բացված գերմանական նույն այդ էջը:

Փոկասի գահակալումը միանշանակ չընդունվեց հայերի կողմից, ընդ որում առաջինը արձագանքեցին բալկանյան ճակատում գործող հայ նախարարներն և ռազմիկները: Իհարկե, հայերը կարող էին համարվել Փոկասի և բալկանյան բանակի ոչ միայն դաշնակիցներ, այլև նույնիսկ՝ բաղկացուցիչ տարրեր, սակայն, թերևս, արդեն պարզ էր, որ գերմանական վաղեմի մրցակցությունը տեղական տարրերի հետ հանգիստ չէր թողնելու նաև նրանց: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ, չնայած մեծ հաշվով իր ապազգային բնույթին, Մավրիկոսը շատերի կողմից այնուհանդերձ որպես

հայ էր ընկալվում ու սա չէր կարող հերթական անգամ չսրել գերմանական տարրի թշնամությունը հայերի նկատմամբ: Եվ վերջապես Փոկասը, չունենալով ամուրի իշխանություն և մազաչափ իսկ չմտածելով ռազմական համակարգված գործողությունների մասին, առնվազն գոնե պետք է անտերության մատներ բալկանյան սահմանում գործող հայերին ու զրկեր նրանց նյութական ապահովությունից: Արդյունքում, հաշվի առնելով ողջ վերոգրյալը, բալկանյան ճակատում գործող հայ ռազմիկները որոշեցին վերադառնալ Հայրենիք:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

602 նոյեմբերի վերջ - դեկտեմբերի վերջ – ***<u>Ատատի նահանջը</u>***[1]

Օգտվելով Փոկասի ապստամբության հետևանքով ստեղծված խառնակ իրավիճակից՝ Կոստանդնուպոլսում գտնվող Ատատ Խորխոռունին իր ջոկատին (մոտ 1.000) միացրեց Թրակիայից վերադարձած Հայ ռազմիկներին (մոտ 2.000) և, անցնելով ասիական ափ ու սկսելով Սատրապական Հայաստանի VII ապստամբությունը (602), ուղղություն վերցրեց դեպի Հայաստան:

I փուլ – Հայկական բանակը 18 անգամ ընդհարվեց իր առաջխաղացումը կասեցնել փորձող Բյուզանդական կայսրության կայազորային ուժերի (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 100) հետ, սակայն արդյունքում բոլոր մարտերում էլ առավելությունը մնաց վերջինիս կողմում և այն հասավ Սատրապական Հայաստան:

II փուլ – Հետապնդվելով կայսերական ուժերի կողմից՝ Հայկական բանակը ի վերջո անցավ Մարզպանական Հայաստան, մոտեցավ ***<u>Նախիջևանին</u>*** և ամրացավ քաղաքում:

III փուլ – Հայկական բանակը հետ մղեց կայսրության բանակի բոլոր գրոհները, որը ի վերջո, խուսափելով Պարսից թագավորության առաջխաղացած բանակից (մոտ 20.000), նահանջեց:

Հայերը կորցրին մոտ 800, թշնամին՝ մոտ 3.000 զինվոր:

Նախիջևանի պարիսպների տակից Բյուզանդական կայսրության բանակի հեռանալով Սատրապական Հայաստանի VII ապստամբությունն վերջացավ, քանի որ ապստամբներն, ըստ էության, չունեին այլ նպատակ, քան Փոկասի իշխանության սահմաններից հեռանալն էր: Նախորդ իրադարձություններից հետո Ատատ Խորխոռունին իր բանակով անցավ Պարսից թագավորություն, որտեղ ճոխ ընդունելության արժանանալուց հետո որոշ ժամանակ անց, սակայն, Խոսրով II-ի հրամանով դավադրաբար սպանվեց, իսկ նրա բանակն էլ ցրվեց: Ատատի սպանությունը, թերևս, վերջինն արտահայտությունն էր, չնչին բացառությունով, ի դեմս Բագրատունյաց իշխանի, հայերի ու հայ նախարարների նկատմամբ արյաց արքայի դրսևորած տմարդի, իսկ քաղաքական իմաստով էլ, իհարկե, սխալ և չհիմնավորված քաղաքականության:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ նախորդ տարիներին անբնականության աստիճան ջերմ բյուզանդա-պարսկական հարաբերությունները սկսեցին սրվել անմիջապես էլ հենց Մավրիկոսի սպանությունից հետո, ընդ որում Փոկասն ինքն էլ ոչ միայն ոչ մի առանձնահատուկ ջանք չգործադրեց դրանք պահպանելու ուղղությամբ, այլև՝ ընդհակառակը ավելի սրեց իրավիճակը: Այսպես, փոխանակ, ինչպես սովորությունն էր, իր կողմից գահը զբաղեցնելու մասին պատշաճ դեսպանախմբի միջոցով նա անմիջապես հայտներ պաշտոնական Տիզբոնին, կայսրն այդ մասին հիշեց միայն ավելի քան կես տարի անց, ընդ որում արյաց տիրակալին ուղղված կարծես առանձնահատուկ մի մարտահրավեր էր այն հանգամանքը, որ դեսպանախմբի գլխավոր նշանակվեց Լիլիանոսը՝ մի մարդ, որն Ալեքսանդրի հետ

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 30:

միասին անձամբ էր կազմակերպել Մավրիկոսի և նրա ընտանիքի անդամների սպանությունը: Կայսրության հետ խաղաղության պահպանման առանձնակի ձգտում չուներ, սակայն, նաև Խոսրով II-ը:

Իրոք, նախորդ պատերազմից հետո կրած լինելով հսկայական կորուստներ, Պարսից թագավորությունում ոչ մի կերպ չէին կարող գոհ լինել խաղաղության վերջնական պայմաններից, քանզի զիջումները, որոնք պարտադրվել էին պաշտոնական Տիզբոնին, աննախադեպ էին և դրանցով, ըստ էության, ջնջվել էին բոլոր այն ձեռքբերումները, որոնց Սասանյանները հասել էին 363 թվականից սկսած: Մավրիկոսի կենդանության ժամանակ Խոսրով II-ն ինքը դեռևս բավարար ներքին խնդիրներ ուներ, որոնք թույլ չէին տալիս նրան արտաքին ակտիվություն դրսևորել, սակայն նույն Մավրիկոսի մահը համընկավ Պարսից թագավորության ներքաղաքական կայունության ամրապնդման հետ: Այս առումով պակաս կարևոր չէր, սակայն, նաև թյուրքերի պարագան:

Իրոք, Ղարա-Չուրինը, արդեն որպես Թուրքական խաքանության խաքան, 599 թվականից, ինչպես արդեն ասվեց, աստիճանաբար ավելի ու ավելի էր ներքաշվել Սույի տերության դեմ մղվող պայքարի մեջ, ինչը բնականաբար խիստ սահմանափակում էր խաքանության ակտիվությունը արևմուտքում՝ պարսկական սահմանում: Այսպիսով, կարծես թե, առկա էին բոլոր նախադրյալները կայսրությանը հարված հասցնելու համար և պակասում էր միայն առիթը, սակայն պակասող առիթն էլ, ինչպես արդեն ասացինք, Փոկասը հենց ինքը տվեց՝ ոչ միայն սպանելով մի մարդու ու ոչնչացնելով նրա ընտանիքը, որի վերաբերյալ արյաց արքան, գոնե ձևականորեն, պետք է, որ շնորհակալական զգացմունքներ ունենար, այլև՝ ոչ մի քայլ չձեռնարկելով խզումը կանխելու ուղղությամբ և նույնիսկ ավելին՝ կարծես հենց ինքը գնալով դրան:

Սկզբնական ամիսներին, սակայն, չնայած ընձեռնված հարմար առիթին, կայսրության դեմ մեծամասշտաբ պատերազմ սկսելու համար Պարսից թագավորության վիճակն այնուհանդերձ դեռևս բավարար չէր, դե, ինչո՞ւ չէ՝ նաև, իր թերություններով հանդերձ, սակայն Մավրիկոսի ստեղծած ռազմական համակարգը ևս դեռևս հարակայուն մակարդակում գործում էր ու ժամանակ էր պետք ընկալելու համար, որ այն արդեն քայքայվել է: Այսպես թե այնպես, սակայն նույն 602 թվականին Խոսրով II-ն արևմտյան ուղղությամբ արձանագրեց հերթական, կարծես թե, հաջողությունից մեկը՝ ձերբակալելով և սպանել տալով Լախմյանների թագավորության արքա Նուման III-ին (579 -602): Արդյունքում Լախմյանների թագավորությունը ոչնչացավ, իսկ նրա տարածքն էլ արդեն սկսեց ուղղակի ենթարկվել պաշտոնական Տիզբոնին, սակայն հաջողությունն այնքանով էր հարաբերական, որ Պարսից թագավորությունը արդյունքում զրկվեց տեղական անկրկնելի պայմաններում հիանալի մարտնչող մի դաշնակցից և ոչ միայն վաստակեց տեղի արաբների թշնամանքը, այլ նաև կորցրեց Մեծ անապատի վրա ազդեցության կարևոր գործիքներից մեկը, ինչն իրեն դեռևս զգացնել տալու էր:

Միաժամանակ հարկ է նշել, որ նույն այս ժամանակ Պարսից թագավորության արևելյան տարածքներում Վիստահմի ապստամբության հետքերը դեռևս զգալի էին, իսկ Թյուրքական խաքանության սպառնալից վարքագիծն էլ դեռևս լավատեսության առանձնահատուկ հիմքեր չէր տալիս: Ավելին, նույն այս ժամանակ Պարսից թագավորության արևելքում գործող ապստամբները բոլոր հիմքերն ունեին սպասելու, որ, թվում էր, թե արդեն ի վերջո գործերը կարգի գցած Ղարա-Չուրինն այնուհանդերձ կաջակցի իրենց և հերթական անգամ հարված կհասցնի Պարսից թագավորությանը:

Հաշվի առնելով այս ամենը՝ Արևելքում գործերը վերջնականապես կարգավորելու համար Խոսրով II-ը նշանակեց իր ամենամտերիմ պաշտոնյաներից մեկը հանդիսացող Սմբատ Բազմահաղթ Բագրատունուն, որը իր՝ հիմնականում հայերից կազմված ուժերով 602 թվականի վերջին կրկին արդեն Պարսից թագավորության արևելքում էր: Արդյունքում՝ 603 թվականի հունվարին Սմբատ Բազմահաղթ Բագրատունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Բագրատունյաց, Վարազ-Շապուհ Արծրունու գլխավորած

Արծրունյաց, Սարգիս Տայեցու գլխավորած Տայոց, Մանվել, Արտավազդ, Վստամ և Հմայակ Ապահունիների գլխավորած Ապահունյաց, Վռամ Գողթնցու գլխավորած Գողթնյաց, Սարգիս Դիմաքսյանի գլխավորած Դիմաքսյանց ու Սարգիս Տրպատունու գլխավորած Տրպատունյաց միացյալ գնդերը (2.000) Բահլի ճ-մ-ում հասան ու գլխովին ջախջախեցին ապստամբած և Թյուրքական խաքանության գերիշխանությունը ընդունած քուշաններին ու հեփթաղներին (մոտ 5.000)[1]: Բագրատունյաց իշխանի շահած խոշոր հաղթանակից հետո Պարսից թագավորության արևելքում իրավիճակը որոշակիորեն հանդարտվեց, քանզի ապստամբները, սպասելով թյուրքական աջակցությանը, առժամանակ զերծ մնացին հետագա բացահայտ ընդհարումներից: Միաժամանակ, սակայն, հենց այս ժամանակ էր, որ Ղարա-Չուրինը պատերազմ սկսեց Սույի տերության դեմ, որը գահակալական պայքարում հերթական անգամ աջակցել էր իր հակառակորդներին, իսկ սա էլ, որպես հետևանք, հետաձգեց խոստացված օգնության տրամադրումը Պարսից թագավորության արևելքում գործող ապստամբներին:

Այսպիսով՝ արևելքում սպասվող պայթյունը, որն ամենածանր հարվածն էր հասցնելու կայսրությանը, հասունանում էր դանդաղ, սակայն, դրան հակառակ, Արևմուտքը կայսրության համար չսպասեցրեց իրեն զգացնել տալ, ընդ որում մեղավորն Իտալիայի Էքսարքոս Կալլինիկոսն էր, որ գերեց Լանգոբարդական թագավորության արքա Ագիլուլֆոսի (590-616) աղջկան ու նրա ամուսնուն և նրանց բերեց Պարմա: Արդյունքում՝ 603 թվականի հուլիսին Լանգոբարդական թագավորության բանակը (մոտ 70.000, այդ թվում ավարներ և սլավոններ) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) պաշարեց Կրեմոնան (Հյուսիսային Իտալիա) և, օգոստոսի 21-ին գրավելով այն, ավերեց[2]: Նույն թվականի օգոստոսի վերջին լանգոբարդները մոտեցան նաև Մանտուային (Հյուսիսային Իտալիա) և սեպտեմբերի 13-ին տիրեցին նաև այս քաղաքին, որից հետո առանց մարտերի մտան Պադուա (Հյուսիսային Իտալիա)[3]: Ստեղծված ծանր պայմաններում Փոկասը պաշտոնանկ արեց Կալլինիկոսին և Իտալիայի էքսարքոս նշանակեց մինչ այդ էլ հիշատակված պաշտոնը վարած Սմարագդուսին: Վերջինիս, ազատելով գերվածներին, առժամանակ հաջողվեց խաղաղեցնել իրավիճակը, սակայն կայսրության գործերը Ապենինյան թերակղզում շարունակելու էին անշեղորեն վատանալ: Արևմուտքը, չէր, սակայն, որ շուտով պետք է անհանգստացներ Փոկասին, ոչ էլ Մավրիկոսի ծանր ճիգերով խաղաղեցված բալկանյան ճակատը, այլ Արևելքն էր վերջինիս համար կործանման դուռ բացելու, Արևելքը, որտեղից կայսրությանը շուտով վճռական հարված հասավ, որն էլ ի վերջո ծանր հետևանքներ առաջացրեց:

603 թվականի աշնան սկզբին Թյուրքական խաքանությունից սպասվող օգնությունը ի վերջո տեղ հասավ: Այս պայմաններում Պարսից թագավորության արևելքում գործող ապստամբները անցան վճռական գործողությունների:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

603 հոկտեմբեր – ***<u>Խրոխտ գյուղի ճ-մ</u>*** (Մերվի մոտ)[4]

> Օգտվելով նրանից, որ Հայկական հեծելազորը տեղավորվել է գավառի տարբեր մասերում, ապստամբներին օգնության եկած Թյուրքական խաքանության բանակը (30.000) պաշարեց Դատոյան Պարսիկի գլխավորությամբ և Սմբատ Բագրատունու ընդհանուր ղեկավարությամբ գյուղում ամրացած պարսկական հեծելազորին (300) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10):
>
> I փուլ – Սմբատը հրամայեց Դատոյանին դիմադրել թշնամուն

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 28; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Մխիթար Անեցի «Հանդիսարանների աշխարհավեպ մատյան», գլուխ 17; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1:
[2] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 4, գլուխ 20, 28; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[3] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 4, գլուխ 20, 28; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:
[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 28:

ամրությունների հետևում և ոչ մի դեպքում դուրս չգալ բաց դաշտ, որից հետո, իր հետ վերցնելով Սարգիս Դիմաքսյանին, Սարգիս Տրպատունուն և Սմբատիկին, օգնություն բերելու ու հետագա դիմադրությունը կազմակերպելու նպատակով ճեղքեց պաշարման օղակը և հեռացավ:

II փուլ – Դատոյանը, չկատարելով տրված հստակ հրամանը, հանեց իր բանակը ամրություններից և փորձեց հարվածել թշնամուն, սակայն բաց դաշտում բռնկված մարտում գլխովին ջախջախվեց:

III փուլ – Թյուրքական խաքանության բանակը, ասպատակելով շրջակայքը, հասավ մինչև ***Ռեյ ու Սպահան***, որից հետո հետ քաշվեց:

Պարսիկները կորցրին մոտ 290, թշնամին՝ մոտ 400 զինվոր:

Այսպիսով՝ Պարսից թագավորության արևելքում իրավիճակը պաշտոնական Տիզբոնի համար ծանր տեսք ստացավ, սակայն չինական ճակատում զարգացող իրադարձությունները այս անգամ ևս Խոսրով II-ի օգտին եղան: Իրոք, 603 թվականի վիճակով Թյուրքական խաքանության լավ ժամանակներն արդեն, թերևս, անցյալում էին, իսկ Ղարա-Չուրինի իշխանության վերջին տարիներն էլ, ինչպես մի քանի անգամ արդեն ասվեց, պատված էին գահակալական ըստ էության, մշտական պայքարի, ներքին ապստամբությունների և Սույի տերության դեմ ոչ այնքան հաջող առճակատման դրվագներով: 603 թվականի աշնանը, սակայն, վիճակված էր, կարծես թե, գագաթնակետը հանդիսանալ վերևում նկարագրված գործընթացի և, այն բանից հետո, երբ նույն թվականի ամռանը չինացիների դեմ պատերազմում թյուրքերը մի քանի անհաջողություններ կրեցին, աշնան սկզբին Ղարա-Չուրինի դեմ մղվող գահակալական ներքին պայքարը նոր թափ ստացավ:

Ապստամբները գործում էին ամենայն վճռականությամբ և արդյունքում ինչ-որ տեղ դեպի իր տերության ծայրամասեր հեռացած Ղարա-Չուրինն ի վերջո անհետ կորավ: Այժմ արդեն հաստատ չենք կարող ասել, խաքանը մահացա՞վ, թե՞ նրան այնուհանդերձ սպանեցին, բայց մի բան փաստ է, որ դրանից հետո Ղարա-Չուրինի մասին որևէ տեղեկություն ոչ-ոք այդպես էլ չիմացավ, իսկ, որպես հետևանք էլ այս ամենի, Թյուրքական խաքանությունը, վերջնականապես ընկղմվեց քաոսի մեջ՝ ըստ էության բաժանվելով երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան: Արևելյան և Արևմտյան Թյուրքական խաքանությունները դրանից հետո անհաշտ թշնամությամբ պայքար սկսեցին միմյանց դեմ և արդյունքում ճնշումը արևմտյան ճակատում կտրուկ թուլացավ: Թյուրքերի մոտ տեղի ունեցած աղետից հետո Սմբատ Բազմահաղթ Բագրատունին իր հերթին անմիջապես էլ ակտիվացրեց գործողությունները ապստամբների դեմ և նոյեմբեր ամսին կրկին մոտեցավ Բահլին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

603 նոյեմբեր – ***Բահլի ճ-մ***[1]

Սմբատ Բազմահաղթ Բագրատունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Բագրատունյաց, Վարազ-Շապուհ Արծրունու գլխավորած Արծրունյաց, Սարգիս Տայեցու գլխավորած Տայոց, Մանվել, Արտավազդ, Վստամ ու Հմայակ Ապահունիների գլխավորած Ապահունյաց, Վռամ Գողթնցու գլխավորած Գողթնյաց, Սարգիս Դիմաքսյանի գլխավորած Դիմաքսյանց և Սարգիս Տրպատունու գլխավորած Տրպատունյաց միացյալ գնդերը (2.000), օգտվելով Թյուրքական խաքանության բանակի հեռանալուց, վերսկսեցին ակտիվ գործողությունները ու մոտեցան դելմիկների, քուշանների և հեփթաղների միացյալ բանակին (մոտ 6.000):

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 28; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 31; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3:

Ճակատամարտից առաջ երկու բանակների մարտակարգերի միջատարածքում հանդիպեցին Սմբատը և հսկայական ուժի ու անպարտելի ռազմիկի համբավ ունեցող հակառակորդի առաջնորդը: Մենամարտը տևեց բավականին երկար, սակայն ի վերջո Սմբատին հաջողվեց հաղթանակ տանել և նիզակահար անել ու սպանել իր հակառակորդին:

I փուլ – Հայկական հեծելազորը անցավ հարձակման և պարտության մատնեց հակառակորդին:

II փուլ – Հետապնդելով փախչող հակառակորդին՝ Հայկական հեծելազորը ծանր կորուստներ պատճառեց վերջինիս և ի վերջո մտավ ***Բահլ***:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ մոտ 4.000 զինվոր:

Վերևում նկարագրված իրադարձությունները, գործելով «ընկնող դոմինոների սկզբունքով», անմիջապես էլ չհապաղեցին իրենց զգացնել տալ Արևմուտքում, քանզի նախկին Թյուրքական խաքանության երկու մասերը, ինչպես արդեն ասվեց, միանգամից էլ անհաշտ մրցակցության մեջ մտան միմյանց դեմ և արդյունքում Պարսից թագավորության արևելքում գործող ապստամբները զրկվեցին թյուրքական օգնության ամեն մի հնարավորությունից, ինչն էլ պայմանավորեց նրանց վերջնական անհաջողությունը: Որպես հետևանք այս ամենի՝ վերջնական արդյունքում ազատվեցին նաև Խոսրով II-ի ձեռքերը, որը հնարավորություն ստացավ ի վերջո պատերազմ սկսել արդեն իր արևմտյան հարևանի դեմ: Այսպիսով՝ 603 թվականի արդեն վերջից Պարսից թագավորության արևելյան սահմանում ամուր խաղաղություն հաստատվեց, ինչը Խոսրով II-ին հնարավորություն տվեց, Արևելքում թողնելով միայն Հայոց այրուձիու մի ջոկատ (մոտ 1.000), մնացած ուժերը կենտրոնացնել ընդդեմ Բյուզանդական կայսրության: Ինչ վերաբերում է Սմբատ Բազմահաղթ Բագրատունուն, ապա նա վերադարձավ Տիզբոն, հաստատվեց Խոսրով II-ի արքունիքում, այստեղ մեծ հարգանքի ու պատվի արժանացավ և, մեծ ազդեցություն պահպանելով նաև Մարզպանական Հայաստանում, սակայն հենց Տիզբոնում էլ մահանալով 617 թվականին, թաղվեց Դարույնք ամրոցում գտնվող Բագրատունիների տոհմական գերեզմանատանը:

Գլուխ 46
Բյուզանդա-Պարսկական VI պատերազմը

Պետք է ասել, որ իր կառավարման սկզբնական ամիսներին Փոկասը, որը գահընկեց էր արել բոլորի կողմից չսիրված Մավրիկոսին, զգալի ժողովրդական աջակցություն էր վայելում, սակայն, չէր անցել դեռ կես տարի, երբ կայսրության բնակչության գործնականում բոլոր խավերը հասցրին դժգոհությամբ լցվել Փոկասի բիրտ կառավարման հանդեպ: 603 թվականի սկզբին Փոկասի դեմ դավադրություն կազմեցին Թեոդոսիոսի ողջ լինելու մասին լուրերից ոգևորված Մավրիկոսի այրի Կոնստանդինեն ու նրա խնամի Հերմանոսը, սակայն դավադրությունը բացահայտվեց և միայն Կոստանդնուպոլսի պատրիարքի ձեռնարկած ծայրահեղ ջանքերի շնորհիվ էր, որ դավադիրները փրկվեցին մահապատժից ու փակվեցին վանքում: Այսպիսով՝ արդեն այս ժամանակից կայսրության ներքաղաքական դրությունը սկսեց սասանվել, ինչն անխուսափելիորեն հանգեցրեց սահմանների կայունության անկմանը, ընդ որում Փոկասի վարկի անկումը համընկավ Խոսրով II-ի մոտ առաջացած հնարավորության հետ՝ հարվածել կայսրությանը:

Իր հերթին, արդեն 603 թվականի կեսերին Բյուզանդական կայսրության արևելյան շրջանները ցնցվում էին տեղական հուզումներից, քանզի, ամեն ինչից զատ, Փոկասը մի նոր թափով սկիզբ էր դրել նաև քաղկեդոնականությունը պարտադրելու վաղուց ի վեր մլմլացող քաղաքականությանը: Արդյունքում՝ տեղում սկսվել էին տարաբնույթ հուզումներ, որոնք, սակայն, առավել լուրջ տեսք ստացան այն բանից հետո, երբ Արևելքի

հրամանատար Ներսեհ Կամսարականն ինքը բացահայտ ապստամբության ուղին բռնեց և, կապ հաստատելով արյաց արքայի հետ, փորձ կատարեց ապահովել վերջինիս աջակցությունը: Այս առումով հետաքրքիր է, որ Ներսեհն ընտրել ու արյաց արքային էր ուղարկել Մավրիկոսի սպանված ավագ որդի Թեոդոսիոսին արտաքինով շատ նման մի երիտասարդի և հայտարարել էր, որ դա հենց հրաշքով փրկված գահաժառանգն է, որը պայքար է սկսում իր օրինական իրավունքների վերականգման համար: Խոսրով II-ին արդեն, թերևս, հենց միայն այս ձևական առիթն էր պակասում և արդյունքում վերջինս, հաճույքով օգտվելով ընձեռնված հնարավորությունից, ամենայն հանդիսավորությամբ կազմակերպեց այդ երիտասարդի թագադրությունը ու նրան հռչակեց Բյուզանդական կայսրության կայսր, որից հետո, հաջողությամբ խաղալով Մավրիկոսին երախտապարտ լինողի դերը, ոտքի հանեց իր ռազմական մեքենան:

Եվ այսպես, ավարտելով բոլոր նախապատրաստությունները, արյաց արքան մի մեծ զորատես կազմակերպեց, որից հետո առանձնացրեց արևմտյան ուղղությամբ նախապատրաստվող հարվածի գլխավոր հրամանատարին, ինչպես նաև՝ այլ հրամանատարների: Որպես գլխավոր հրամանատար նշանակվեց «Շահր Վարազ», այսինքն՝ արքայական վարազ, պատվավոր կոչումը ստացած Խոռյան Ռազմիոզան Ֆառուխանը, որին պետք է ենթարկվեին այլ հրամանատարներ և որը որպես կին ստացավ Խոսրով II-ի աղջկան: Զարմանալի ճակատագիր էր վիճակված մինչ այդ երկրորդական դերերի վրա գտնվող Խոռյանների տոհմին պատկանող պարսից այս զորավարին, որի տոհմը մինչ այդ, ըստ էության, ոչնչով աչքի չէր ընկել և, իր հզորությամբ ոչ մի կերպ նույնիսկ չմոտենալով էլ Պարսից թագավորության յոթ գլխավոր տոհմերին, նախնիների զորավարական սխրագործություններից կարող էր պարծենալ, թերևս, միայն մի քանի դրվագներով, ի դեմս 482 թվականի ապրիլի 30-ի Ներսեհապատի և 549 թվականի Հիպպիս գետի ճակատամարտերի, ընդ որում երկու դեպքերում էլ արդյունքները, մեղմ ասած, այնքան էլ միանշանակ չէին: Այսպես թե այնպես, սակայն երկրորդ էշելոնին պատկանող այս զորականն այժմ ամենաառաջին դերի վրա էր, սակայն անսովոր բախտ ունեցած այս մարդու համար ճակատագիրը հետո ևս անակնկալներ էր պատրաստել: Արյաց արքան ինքը չէր պատրաստվում բանակի կոնկրետ ու երկարատև հրամանատարություն իրականացնել և, բացառությամբ սկզբնական ամիսների, պատերազմի ողջ ընթացքում մարտական գործողությունների կոնկրետ ղեկավարմանը, ըստ էության, այդպես էլ որևէ մասնակցություն չունեցավ: Սկիզբ էր առնում Բյուզանդա-Պարսկական VI պատերազմը (603-628), որին կոչված էր երկու գերտերությունների հակամարտությունում լինել և ամենավերջինը, և ամենակործանարարը:

603 թվականի նոյեմբերին Փոկասի տիրապետության դեմ ապստամբած Ներսեհ Կամսարականի գլխավորած բանակը (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 3.000) տիրեցին Եդեսիային[1], ինչն էլ, ըստ էության, սկիզբ հանդիսացավ պատերազմի: Դրանից հետո, որպես առաջապահ, Խոսրով II-ը զգալի ուժերով առաջ ուղարկեց Կեղծ-Թեոդոսիոսին, սակայն արդեն 603 թվականի դեկտեմբերին Դարա ամրոցի մոտ տեղի ունեցած Բեթ-Վաշի ճ-մ-ում Արևելքի նոր հրամանատար նշանակված և զորքին դեռևս 588 թվականի դեպքերի կապակցությամբ լավ ծանոթ Հերմանոս Փոենիկացու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) հաղթեցին կայսրության գահի այդ անհաջող հավակնորդին և հետ շպրտեցին նրա բանակին[2]: Այսպիսով՝ առաջին հարվածը հետ մղվեց, սակայն դա, ըստ էության, արդեն ոչինչ չէր փոխելու, քանզի շուտով արյաց արքայի անձնական ղեկավարությամբ արշավի ելան

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 31; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 4; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 85:

[2] Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

Պարսից թագավորության հիմնական հարվածային ուժերը, ընդ որում, ինչպես և նախկինում, հարվածի սուր ծայրում էր Դարա ամրոցը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

604 հունվար - հոկտեմբեր – ***<u>Դարա ամրոցի գրավումը</u>***[1]

Խոսրով II-ի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 15.000) մոտեցան ամրոցին, որտեղ Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 1.500) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) անցան համառ պաշտպանության:

I փուլ – Հունվար ամսից մինչև հոկտեմբեր հարձակվողները պաշարողական տեխնիկայի լայն կիրառմամբ մի շարք փորձեր կատարեցին տիրելու ամրոցին, սակայն դրանք ավարտվեցին անհաջողությամբ: Միաժամանակ, ամրոցի շրջափակման համար թողնելով անհրաժեշտ ուժեր, Պարսից թագավորության բանակի հիմնական ուժերը ներխուժեցին ու ասպատակեցին ***<u>Հայոց Միջագետքը</u>***:

II փուլ – Հոկտեմբերի առաջին կեսին հարձակվողները, պաշարողական տեխնիկայի կիրառմամբ, ինչպես նաև պարսպի տակ փորված թունելի օգնությամբ փլելով պարսպի մի քանի հատվածներ, վճռական գրոհով տիրեցին ամրոցի պարիսպների առաջին շարքին, սակայն ամրոցի կայազորը, համառ դիմադրելով, հետ քաշեց ուժերը և դիմադրությունը շարունակեց պարիսպների երկրորդ շարքում:

III փուլ – Հարձակվողները գրոհեցին ամրոցի պարիսպների երկրորդ շարքը և գրավեցին այն:

IV փուլ – Կայսրության բանակի ռազմիկների միայն փոքր մասին հաջողվեց ճեղքել պաշարման օղակը և հեռանալ:

Հարձակվողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 5.000, պաշտպանվողներից հայերը՝ մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 1.300 զինվոր:

Դարա ամրոցի մոտ ծավալվող իրադարձությունների հետ միաժամանակ, ինչպես արդեն ասվեց այն ձգձգվեց մոտ տասն ամիս, Պարսից թագավորության բանակը իր հիմնական ուժերով, ինչպես և նախորդ անգամները, շարունակեց առաջխաղացումը դեպի արևմուտք, ընդ որում, հաշվի առնելով ապստամբական դրության մեջ գտնվող Ներսեհ Կամսարականի պարագան, հարվածի սուր ծայրում այս անգամ արդեն Աբգար V Մեծի հինավուրց քաղաքն էր, որի մոտ, փորձ կատարելով վերացնել ապստամբական դրությունը մինչև պարսկական հիմնական ուժերի հայտնվելը, նույն այս ժամանակ գործում էին նաև Արևելքի նոր հրամանատար նշանակված Հերմանոս Փոենիկացու գլխավորած կառավարական զգալի ուժեր:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

604 մարտ – ***<u>Եդեսիայի ճ-մ</u>***[2]

Արևելքի հրամանատար Հերմանոս Փոենիկացու գլխավորած կառավարական բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) պաշարեցին քաղաքը Ներսեհ Կամսարականի գլխավորած բանակից (մոտ 2.000) ու նրա կազմում գտնվող Հայկական ռազմիկներից (մոտ 1.500):

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 31; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 86; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 31; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

I փուլ – Կառավարական բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց, սակայն դրանք բոլորը հետ մղվեցին:

II փուլ – ***Դարա ամրոցից*** առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) մոտեցան քաղաքին և, լուսաբացին անակնկալ հարձակվելով կայսերական կառավարական բանակի վրա, գլխովին ջախջախեցին այն:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 50, դաշնակիցը՝ մոտ 1.000, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 5.000 զինվոր, ընդ որում ծանր վիրավորված Հերմանոսը շուտով մահացավ:

Հյուսիսային ու Հայոց Միջագետքի ուղղությամբ հասցված հարվածի հետ միաժամանակ պարսից ռազմական տեսաբանները նախատեսել էին հարված նաև Սատրապական Հայաստանի ուղղությամբ, ընդ որում այս ուղղությամբ հրամանատար էր նշանակվել Ջան-Վեհը: Արդյունքում՝ 604 թվականի ամենասկզբին Ջան-Վեհի գլխավորությամբ առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) մտան Դվին, որից հետո, արդեն մարտ ամսին, փորձեցին ավելի առաջանալ դեպի հյուսիս, սակայն Եղվարդի ճ-մ-ում (Արարատ, Արագածոտն գավառ) Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 15.000) խոշոր հաղթանակ տարան ու հետ շպրտեցին հակառակորդին[1]: Ջան-Վեհի կրած պարտությունը, որը նրան կյանք արժեցավ, 604 թվականին կասեցրեց պարսից առաջխաղացումը Սատրապական Հայաստանի ուղղությամբ, սակայն հարավում առաջխաղացումը շարունակվում էր:

Դարա ամրոցի պաշարման սկզբից կարճ ժամանակ անց, ինչ-որ տեղ 604 թվականի մարտին, Պարսից թագավորության բանակը պաշարեց Արևելքում կայսրության պաշտպանական ամրացված ևս երկու կարևոր կետեր՝ Մծբինից մոտ 70 կմ հյուսիս գտնվող Հիսն-Քեֆը (= Ժայռի բերդ), ինչպես նաև Մարդինը: Հիանալի պաշտպանական հնարավորություն ունեցող այս ամրությունների հետ, սակայն, գործերը ձգձգվեցին և հակառակորդի խորը թիկունքում մնացած Հիսն-Քեֆն ընկավ միայն 606 թվականի մարտին[2], իսկ Մարդինը՝ 607 թվականի մարտին[3]: Մի քանի այս ամրությունների թեկուզ և հերոսական դիմադրությունը, սակայն, ի զորու չէր փոխել իրերի ընդհանուր դրությունը, երբ, լիակատար կերպով տիրելով օպերատիվ, իսկ գուցե ինչ-որ տեղ արդեն նաև ռազմավարական նախաձեռնությանը, Պարսից թագավորության հսկայական բանակը անկասելի մի լավայի պես առաջացավ:

604 թվականի վերջի վիճակով կայսրության դրությունը ծանր էր արևելյան ճակատի հատկապես հարավային հատվածում: Արդեն ընկել էր Դարա ամրոցը, Եդեսիայի տակ կայսրության բանակը մի զգալի անհաջողություն էր կրել, ստացած վերքերից մահացել էր Արևելքի նախկին հրամանատարը, իսկ պարսից սպառնալիքներն էլ գնալով ահագնանում էին: Ստեղծված ճգնաժամն ի վերջո ստիպեց ամբողջովին Բալկանյան թերակղզով տարված և պատերազմի հենց այդ թատերաբեմին ձգտող ու հենց դրան հիանալի ծանոթ Փոկասին ի վերջո միջոցների դիմել նաև Արևելքում: Արդյունքում՝ Արևելքի հրամանատար նշանակվեց կայսեր մերձավոր օգնական Լեոնտիոսը, որը, սակայն, դատելով ըստ ամենայնի, ռազմական փորձառություն ընդհանրապես չուներ, իսկ կայսեր եղբորորդի Դոմենցիոլոսն էլ՝ պալատական գործերի կառավարիչ Դոմենցիոլոսի որդին, նշանակվեց Միջագետքի հրամանատար: Դրանից հետո, հավաքելով առկա ուժերը և զգալի համալրումներ ստանալով բալկանյան ճակատից, կայսրության զորավարները փորձեցին կասեցնել արյաց արքայի հարվածը:

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 31, 32:

[2] Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[3] Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 86; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

604 նոյեմբեր – ***<u>Արքսամունի ճ-մ</u>*** (Մարդինից հարավ-արևմուտք)[1]

Խոսրով II-ի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 120.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) մոտեցան Արևելքի հրամանատար Լեոնտիոսի, ինչպես նաև Միջագետքի հրամանատար Դոմենցիոլոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 60.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10.000): Հաջորդ օրը կողմերը մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Կողմերն անցան հանդիպակաց հարձակման, ինչի արդյունքում բռնկվեց և ողջ օրը շարունակվեց համառ մարտ, ընդ որում մի պահ բանը հասավ նույնիսկ նրան, որ կայսրության բանակի ռազմիկներից մեկը արյաց արքայի վրա օղապարան նետեց, սակայն Մուշկան անունով Մատյան գնդի ռազմիկներից մեկը կարողացավ ժամանակին հատել այն և փրկել արքային: Օրվա վերջում կողմերը վերադարձան ելման դիրքեր:

II փուլ – Երկրորդ օրը կողմերը կրկին մարտակարգ ընդունեցին, որից հետո Պարսից թագավորության բանակը, մարտի նետելով նաև փղերի գունդը, անցավ վճռական հարձակման: Բռնկվեց համառ մարտ, ինչի արդյունքում կայսրության բանակն ի վերջո ծանր պարտություն կրեց:

III փուլ – Պարսից թագավորության բանակը հետապնդեց հակառակորդի փախչող բանակին և ծանր կորուստներ պատճառեց:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 12.000, պարտվողներից հայերը՝ մոտ 5.000, դաշնակիցը՝ մոտ 30.000 զինվոր:

Հենց նոր ավարտված ճակատամարտը ավելի ծանրացրեց առանց այդ էլ ողբալի վիճակի մեջ գտնվող կայսերական բանակի դրությունը Արևելքում: Վերջ, սրանից հետո արդեն որևէ խոշոր գործողության մասին, որը կոչված կլիներ կասեցնել հակառակորդի առաջխաղացումը Արևելքում, ըստ էության, մտածել արդեն հնարավոր չէր: Նախորդ պարտությունից հետո կայսրը պաշտոնանկ արեց Արևելքի հրամանատար Լեոնտիոսին, կանչեց Կոստանդնուպոլիս և ձերբակալեց, որից հետո Արևելքի հրամանատար նշանակեց իր եղբորորդի Դոմենցիոլոսին, իսկ Միջագետքի հրամանատար էլ՝ Հովհաննեսին, սակայն իրերի առկա ծանր դրությունը դա քիչ փոխեց:

605 թվականին Խոսրով II-ը, մեծ հաշվով գոհ հարավում ձեռք բերած արդյունքներից, պատրաստվեց հարված հասցնել նախորդ տարի իրեն անհաջողություն բերած հյուսիսային ուղղությամբ: Ակնհայտ էր, որ Խոսրով II-ն և նրա ռազմական տեսաբանները որոշել էին որևէ առաջխաղացում չիրականացնել Ասորիքի ուղղությամբ, մինչև վերջնականապես չեն ամրանա Հայկական լեռնաշխարհում: Սրանով, սակայն, արյաց արքան ամեն ինչից զատ փաստորեն, նաև հիշելով հին հաշիվները և բաժանվելիս իրեն ասված Ներսեհի խոսքերը, ըստ էության, բախտի քմահաճույքին թողեց Կամսարական իշխանին, ինչից էլ պատրաստվեց օգտվել Փոկասը:

Որպես հետևանք այս ամենի՝ 605 թվականի մարտին, օգտվելով այն հանգամանքից, որ հակառակորդն առժամանակ դադարեցրել է առաջխաղացումը հարավային ուղղությամբ, կայսրության զորավարները որոշեցին ի վերջո լուծել Ներսեհ Կամսարականի հարցերը, ընդ որում Հովհաննեսը հարավ-արևելքում գտնվող կայսրության բանակի ուժերի մի մասով մոտեցավ Եդեսիային, իսկ Դեմոնցիոլոսն էլ՝ Մեմբիջին, ուր նահանջել և ամրացել էր Ներսեհը: Արդյունքում, մանր մարտերից հետո տալով ապահովության երաշխիքներ, Հովհաննեսը հասավ նրան, որ Եդեսիան

[1] Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»:

հանձնվեց[1]: Ինչ վերաբերում է Մեմբիջին, ապա, կրկին մանր մարտերից հետո Արևելքի հրամանատար Դոմենցիոլոսից ստանալով անձնական ապահովության երաշխիքներ, դիմադրությունը դադարեցրեց ու քաղաքի հետ միասին հանձնվեց նաև Ներսեհը, թեև կյանքը ցույց տվեց, որ մեծ հաշվով դա սխալ որոշում էր, քանի որ Կամսարական իշխանին տեղափոխեցին Կոստանդնուպոլիս և այստեղ Փոկասի հրամանով ի վերջո հրակեզ արեցին[2]: Դաժան այդ հաշվեհարդարը, սակայն, օգուտի փոխարենը Փոկասին ավելի շատ վնաս տվեց, քանզի Արևելքում և հատկապես արևելյան բանակում հսկայական հեղինակություն ունեցած զորավարի նման դաժան մահապատիժը ընդամենը միայն ավելի սրեց կայսեր նկատմամբ առկա ատելությունը տեղում՝ միաժամանակ բարոյալքելով նաև բանակը: 605 թվականի նույն մարտ ամսին, երբ հարավում ճնշվում էր Ներսեհ Կամսարականի ապստամբությունը, պաշտոնական Տիզբոնը հարված հասցրեց Սատրապական Հայաստանի ուղղությամբ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

605 մարտ – ***<u>Գետիկ գյուղի ճ-մ</u>*** (Շիրակ, Երազգավորսից մոտ 3 կմ արևմուտք)[3]

Դատոյան Պարսիկի գլխավորությամբ ***<u>Դվինից</u>*** դեպի հյուսիսի առաջխաղացած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) մոտեցան ***<u>Շիրակավանում</u>*** տեղակայված Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 10.000), որոնք, տեղեկանալով այդ մասին, հետ քաշվեցին, անցան Ախուրյան գետը և ճամբարեցին նրա ափին գտնվող գյուղի մոտ: Գետանցում իրականացրեց նաև հակառակորդը, որից հետո կողմերը մոտեցան միմյանց և մարտակարգ ընդունեցին

I փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման և, առավելության հասնելով, փախուստի մատնեց հակառակորդին:

II փուլ – Շրջակա գյուղերի հայկական աշխարհազորը, ցանկանալով օժանդակել կայսրության բանակին, թիկունքային հարվածով ներխուժեց վերջինիս ճամբար և, հասնելով առավելության, ձեռք բերած ավարով հեռացավ:

III փուլ – Ելման դիրքեր վերադարձած Պարսից թագավորության բանակը, ականատես լինելով սեփական ճամբարի ավերմանը, մոտեցավ և առանց լուրջ դիմադրության տիրեց ***<u>Էրգինա ամրոցին</u>*** (Գետիկի մոտ), որից հետո ասպատակեց շրջակա 30 գյուղերը ու ձեռք բերած գերիներով և ավարով հետ քաշվեց ***<u>Դվին:</u>***

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցը՝ մոտ 5.000, պարտվողներից հայերը՝ մոտ 10.000, դաշնակիցը՝ մոտ 5.000 զինվոր:

Այսպիսով՝ 605 թվականին պաշտոնական Տիզբոնը մի խոշոր հաջողության հասավ նաև հյուսիսային ուղղությամբ, որը բոլոր հիմքերը ստեղծեց հետագա առաջխաղացման համար, ընդ որում, սրան հակառակ, պաշտոնական Կոստանդնուպոլիսն այդպես էլ չկարողացավ որևէ իրական հակաքայլ ձեռնարկել: Ավելին, Լանգոբարդական թագավորությունը, որը ռազմավարական նախաձեռնության և ուժերի հսկայական գերակշռության լիակատար առկայության պայմաններում շարունակում էր բզկտել կայսրության տիրույթները Ապենինյան թերակղզում, 605 թվականի ապրիլին գրավեց Բանյարեյան ու Ուրբիսվետիսը (Կենտրոնական Իտալիա)[4]: Այս պայմաններում, չունենալով այլ ելք, պաշտոնական Կոստանդնուպոլիսը Լանգոբարդական թագավորությանը զիջեց նաև Օրվիենտոն (Կենտրոնական Իտալիա) և, վերջինիս վճարվելով 25 կգ ոսկի, միայն մեծ դժվարությամբ հասավ հաշտության կնքմանն ու

[1] Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 85:
[2] Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»:
[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 32:
[4] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 4, գլուխ 30:

լանգոբարդների հետագա առաջխաղացման կասեցմանը:

Նույն այս ժամանակ, սակայն, ամենևին հանդարտ չէր դրությունը նաև բուն Կոստանդնուպոլսում, որտեղ Կոնստանդինեն ու Հերմանոսը Փոկասի դեմ հերթական դավադրությունը կազմեցին, սակայն այս անգամ ևս անհաջողության մատնվեցին և, որպես արդյունք, 605 թվականի հունիսի 7-ին Եվտրոպիայի ծովապատնեշի վրա՝ նույն այն վայրում, որտեղ կյանքից հեռացել էին Մավրիկոսն ու նրա որդիները, գլխատվեցին[1]: Այս ժամանակ էր նաև, որ Կոստանդնուպոլսում մի խոշոր հրդեհ բռնկվեց, որը ծանր հետևանքներ ունեցավ:

606 թվականին, ցանկանալով զարգացնել հաջողությունը հյուսիսային ուղղությամբ, Պարսից թագավորության բանակը հերթական առաջխաղացումն իրականացրեց Սատրապական Հայաստանում: Այս շարժն իր հերթին բերեց խոշոր հետևանքների:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

606 մարտ – ***<u>Անգղ ամրոցի ճ-մ</u>***[2]

Սենի Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորությամբ ***<u>Դվինից</u>*** առաջխաղացած և ամրոցին մոտեցած Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) շրջապատեցին Հայաստանի հրամանատար Թեոդորոս Խորխոռունու գլխավորությամբ ամրոցում և նրա հարակից գյուղում ճամբարած Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5.000):

I փուլ – Օրվա սկզբին, օգտվելով կայսրության բանակի անգործությունից՝ հակառակորդի ռազմիկները մոտեցան և հուժկու ու մեծածավալ նետաձգություն իրականացրին վերջինիս դիրքերի ուղղությամբ՝ զգալի կորուստներ պատճառելով քրիստոնյաներին, առաջացնելով խուճապ և անկարգություններ ու հասնելով նրան, որ հակառակորդի բանակի նժույգների մեծ մասը կտրեց կապերը և փախավ:

II փուլ – Օրվա երկրորդ կեսին զարգացնելով հաջողությունը՝ Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման և ծանր պարտության մատնեց հակառակորդին:

III փուլ – Թեոդորոս Խորխոռունին փրկված փոքրաքանակ ռազմիկների հետ միասին հետ քաշվեց և դիրքեր գրավեց ամրոցում, սակայն, սկսված բանակցությունների արդյունքում ստանալով բավարար երաշխիքներ, հանձնվեց:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 1.000, պարտվողներից հայերը՝ մոտ 4.000, դաշնակիցը՝ մոտ 8.000 զինվոր: Թեոդորոս Խորխոռունին փոխադրվեց Պարսից թագավորություն, որտեղ, թեև արժանացավ լավ ընդունելության, սակայն ի վերջո սպանվեց:

Ծանր հարված հասցնելով կայսրության բանակին և, ըստ էության, ոչնչացնելով այն, պարսից ռազմական տեսաբաններն այս անգամ որոշեցին ի վերջո շարունակել առաջխաղացումը դեպի արևմուտք արդեն նաև հայաստանյան ուղղությամբ: Արդյունքում, առաջանալով հյուսիս-արևմտյան ուղղությամբ, Սենի Տամ-Խոսրով Միհրանյանի գլխավորած բանակը հասավ հակառակորդին ու վերջինիս նկատմամբ ևս մեկ հաղթանակ տարավ արդեն Բասենում[3]: Հետագա առաջխաղացման ճանապարհին, սակայն, կանգնած էր ամրացված Կարինը, որի գրոհին Պարսից թագավորության բանակն այդ պահին դեռևս պատրաստ չէր:

607 թվականի մարտին Սենի Տամ-Խոսրովին հայաստանյան ուղղությամբ փոխարինեց Աշտատ-Հեզտայարը, որի առջև խնդիր դրվեց զարգացնել հետագա

[1] Пигулевская Н. В. “Византия и Иран на рубеже VI-VII веков”, Москва 1946, стр. 180:
[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 32; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»:
[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 32; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»:

հաջողությունը այս ուղղությամբ և ավելի առաջանալ դեպի արևմուտք: Նույն այս ժամանակ, ցանկանալով այնուհանդերձ կասեցնել հակառակորդին, կայսրության զորավարները Կարինի մոտակայքում խոշոր ուժեր կենտրոնացրին, սակայն արդյունքում Որդորուի ճ-մ-ում (Արարատ, Բասեն գավառ) Աշտատ-Հեզտայարի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) հաղթեցին Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 15.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 5.000), որոնց մնացորդներին հետապնդեցին մինչև Սատաղ[1]: Պարտության մատնելով կայսրության դաշտային բանակին և վերջնականապես վերացնելով բաց ճակատամարտում դիմադրություն կազմակերպելու կայսրության ռազմական մեքենայի բոլոր հնարավորությունները՝ Աշտատ-Հեզտայարն ի մի բերեց ուժերը և մոտեցավ Կարինին: Սկիզբ առան պաշարողական գործողություններ, սակայն դրանք երկար չտևեցին, քանի որ ստեղծված պայմաններում մի կողմից քրիստոնյաները պատրաստ չէին երկարատև դիմադրության, մյուս կողմից էլ պաշարյալներին կոչով դիմեց մի վերջին անգամ պատմության թատերաբեմում երևացած Կեղծ-Թեոդոսիոսը: Այս ամենը հաշվի առնելով Կարինի կայազորը դադարեցրեց դիմադրությունը և հանձնվեց[2]:

608 թվականի մարտին, լիովին տիրելով նախաձեռնությանը տեղում, Աշտատ-Հեզտայարի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) Բյուզանդական կայսրության բանակից (ընդհանուր՝ մոտ 2.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) առանց լուրջ մարտերի գրավեցին Սատաղը, Առուստայը, Նիկոպոլիսը և Կիթառիճ ամրոցը[3]: Այսպիսով՝ կայսրության անհաջողությունները Հայաստանում, կարծես թե, ամբողջանում էին, սակայն նույն այս ժամանակ Փոկասին պատուհասեց ևս մեկ ու ավելի հեռուն տանող անհաջողություն, քանզի նույն 608 թվականի ամռանը ապստամբեց արդեն Եգիպտոսը, որտեղ իշխանության գլուխ էին կանգնած հայերը: Արդյունքում՝ 608 թվականի գարնանը Ալեքսանդրիայի ճ-մ-ում (Եգիպտոս, Միջերկրական ծովի ափին, Նեղոսի դելտայի մոտ) Աֆրիկայի ապստամբած էքսարքոս և Արևելքի երբեմնի հրամանատար, պատրիկ Հերակլես Ավագ Հայի, նրա որդի Հերակլես Կրտսեր Հայի, եղբայր Գրիգոր Հայի, վերջինիս որդի Նիկիտա Հայի ու Վահանի Ձորականի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) հաղթեցին ամուր պաշտպանական դիրքեր գրաված Բյուզանդական կայսրության կառավարական բանակին (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 500), որից հետո մտան քաղաք[4]:

Կոստանդնուպոլսում գտնվող Փոկասը, որին նրա կողմնակիցները եռանդուն կերպով տեղյակ պահեցին Եգիպտոսում զարգացող իրադարձությունների մասին, սկզբում աչքաթող արեց դրանք, բայց հետո մտքափոխ եղավ և որոշեց ակտիվ գործողությունների անցնել: Այս ժամանակ կայսեր հավատարիմ օգնական Վոնոսը գտնվում էր Ասորիքում և, իրականացնելով լայն ծավալներ ստացած բռնություններ, փորձում էր ամրապնդել կայսեր դիրքերը տեղում: Արդյունքում, սակայն, ստանալով Փոկասի հրամանը, Վոնոսը որոշեց շարժվել դեպի Եգիպտոս, որտեղ գործող Փոկասի համակիրներն արդյունքում ավելի ակտիվացան: Որպես հետևանք, 608 թվականի ամռանը Վոնոսի գլխավորությամբ ծովով և ցամաքով Ակկայից առաջխաղացած

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 32; «Քարթլիս-Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2, 3; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 32; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»:

[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 2; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Արսեն Սափարացի «Վրաց և Հայոց բաժանման մասին»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն Քաղկեդոնացի «Հայոց պատմության համառոտագրություն»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», Հավելված 5:

[4] Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 107; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 1.000), օգտվելով այն բանից, որ մարտի ժամանակ տեղում գործող իրենց կողմնակիցները թիկունքից հարվածեցին հակառակորդին, Մանուֆի ճ-մ-ում (Եգիպտոս, Միջերկրական ծովի ափին, Նեղոսի դելտայի մոտ) հաղթեցին Վահան Զորականի գլխավորած ապստամբների բանակին (մոտ 5.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 2.000), ընդ որում Վահանն ընկավ մարտում[1]: Այսպիսով՝ կառավարական բանակի համար, կարծես թե, հարմար նախապայմաններ ստեղծվեցին հարված հասցնելու համար արդեն Ալեքսանդրիային:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

608 ամառ – ***<u>Ալեքսանդրիայի ճ-մ</u>***[2]

Վոնոսի ընդհանուր հրամանատարությամբ գործող Բյուզանդական կայսրության կառավարական բանակը (մոտ 10.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 500) սկսեցին մոտենալ Նիկիտայի գլխավորությամբ քաղաքում ամուր պաշտպանական դիրքեր գրաված ապստամբների բանակին (մոտ 8.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 3.000):

I փուլ – Կառավարական բանակը քաղաքին մոտեցավ վերջինիս ծովահայաց կողմից, սակայն, ընկնելով քարանետների հարվածի տակ և կրելով որոշակի կորուստներ, հետ քաշվեց:

II փուլ – Քաղաքին մոտեցած կառավարական բանակի հիմնական ուժերն անցան հարձակման, սակայն, ընկնելով քարանետների, նետողական այլ մեքենաների և նետաձիգների հուժկու հարվածի տակ, կորուստներով հետ շպրտվեցին:

III փուլ – Ապստամբների բանակն անցավ հուժկու արտագրոհի և պարտության ու փախուստի մատնեց հակառակորդին՝ հետապնդելով վերջինիս և ծանր կորուստներ պատճառելով:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 100, դաշնակիցը՝ մոտ 1.400, պարտվողներից՝ հայերը մոտ 1.000 զինվոր, դաշնակիցը՝ մոտ 1.000 զինվոր:

Նախորդ անհաջողությունից հետո Վոնոսը հետ քաշվեց դեպի Նիկյուա և սկսեց հավաքել ցրված ու արդեն բավականին փոքրաթիվ իր ուժերը: Դրանից հետո վերջինս փորձ կատարեց ասպատակել Ալեքսանդրիայի շրջակայքը, սակայն, այն բանից հետո, երբ Նիկիտայի հրամանով կտրվեցին հակառակորդի առաջխաղացման ուղու վրա գտնվող պարանե կամրջի ամրանները, այդ մտադրությունը խափանվեց[3]: Հույսը կտրելով հաջողության հասնել զուտ զինվորական միջոցառումներով՝ Վոնոսը փորձ կատարեց անցնել քաղաքական սպանությունների վաղուց փորձված մեթոդին, սակայն այս անգամ ևս անհաջողության մատնվեց, քանի որ նրա ծառաներից ինչ-որ մեկը մատնեց դաշույնը ծոցում պահած Նիկիտային մոտենալ փորձող մարդասպանին և նրան հենց տեղում էլ գլխատեցին: Դրանից հետո Նիկիտայի գլխավորած բանակն ինքը ասպատակեց Նիկյուայի և Մանուֆի շրջակայքը՝ Եգիպտոսից վերջնականապես դեպի արևելք դուրս մղելով Վոնոսի գլխավորած կառավարական բանակին[4]: Ամեն ինչ կորցրած Վոնոսն անցավ Պաղեստին, իսկ հետո էլ վերադարձավ մայրաքաղաք՝ զեկուցելով Փոկասին իր անհաջողության մասին: Կայսեր շուրջ օղակն աստիճանաբար սեղմվում էր:

609 թվականին հայաստանյան ուղղությամբ Աշտատ-Հեզտայարին փոխարինեց Շահեն Վահմանզադականը, որի առջև խնդիր դրվեց ավարտել Սատրապական

[1] Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 107:
[2] Հովհաննես Նիկյուացի, «Ժամանակագրություն», գլուխ 107, 108:
[3] Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 108, 109:
[4] Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 109:

Հայաստանի նվաճումը և դուրս գալ Կապադովկիա: Հենց այս ժամանակ էլ պաշտոնական Կոստանդնուպոլիսը մի վերջին փորձ կատարեց կասեցնել հակառակորդին, սակայն որևէ հաջողության չհասավ: Իրոք, 609 թվականի մարտին Շահեն Վահմանզադականի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) Կարինի մոտ հաղթեցին Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 3.000)[1], որից հետո, ցրելով ուժերը, 609 թվականի ապրիլից մինչև մայիս կայսրության հեռացող բանակից առանց լուրջ մարտերի գրավեցին Տիգրանակերտը, Ամիդը, Ռաշ-Այնը, Եդեսիան, Պիրը, ինչպես նաև Թլպաշար ամրոցը (Կիլիկիայի արևելք, Թլպաշար գավառ, Պիրից մոտ 40 կմ հարավ-արևմուտք)[2]: Հաջողությունները հսկայական էին և, կարելի էր արդեն արձանագրել, որ 609 թվականի սկզբին Պարսից թագավորության տիրապետության տակ հայտնվեց Հայաստանի մեծ մասը, բացառությամբ, թերևս, միայն Փոքր Հայքի և Կիլիկիայի:

Սկսած արդեն 609 թվականի ամռանից մինչև 610 թվականի գարուն Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի և Խարդարիգանի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության համալրված բանակը (մոտ 120.000) ասպատակեց Անդրեփրատյան Ծոփքը, որից հետո ոտնատակ տվեց Կապադովկիան, Լյուկիան ու Պիսիդան: Բանը հասավ նույնիսկ նրան, որ Շահեն Վահմանզադականի ջոկատները, աննախադեպ մի երևույթ երկար հարյուրամյակների ընթացքում, հասան մինչև Քաղկեդոնի շրջակայք, թեև այս անգամ, ոտնատակ տալով այն, այնուհանդերձ հետ քաշվեցին[3]: Այս առումով հակառակորդի առաջխաղացման դեմ հանդես եկող միակ պատվարը, թերևս, պաշտպանությունը լիովին ձախողած Արևելքի հրամանատար Դոմենցիոլոսին փոխարինած նրա հորեղբայր և Փոկասի եղբայր Կոմենցիոլոսն էր, որը ուժերը կենտրոնացրել էր Անկյուրայի մոտակայքում ու սպառնում էր փակել Քաղկեդոնի մոտ հայտնված հակառակորդի նահանջի ուղին:

610 թվականին Փոկասի անփառունակ կառավարման շրջանը հասավ ինչպես իր գագաթնակետին, այնպես էլ՝ ավարտին: Իրոք, Եգիպտոսում գործող Հերակլես Ավագն ու նրա ընտանիքի անդամները, որոնք ապստամբել էին դեռևս 608 թվականին, տեղում ամրապնդելով դիրքերը, արդեն 609 թվականին որոշեցին վերջնականապես գահընկեց անել աստիճանաբար հարբեցողության տրվող և կառավարման սանձերը ձեռքից բաց թողնող Փոկասին, ընդ որում այս հարցում նրանց աջակցում էր Կոստանդնուպոլսի էքսարքոս նշանակված Պրիսկոսը, որը, թեև Փոկասի փեսան էր, սակայն կայսրը մի դատարկ առիթով թշնամացել էր նրա հետ ու հալածանքների էր ենթարկում: Իրոք, Փոկասին դուր չէր եկել այն հանգամանքը, որ 607 թվականին կրկեսային միջոցառումներից մեկի ժամանակ Պրիսկոսի արձանը տեղադրվել էր իր արձանի հետ համահավասար: Այս պայմաններում, ահա, զգալով, որ իր վիճակը դառնում էր վտանգավոր, Պրիսկոսը կապ հաստատեց Եգիպտոսի ապստամբների հետ և նրանց մայրաքաղաք հրավիրեց: Արդյունքում՝ 610 թվականի ամռանը, օգտվելով Փոկասի ռազմական մեքենայի լիակատար քայքայումից, Հերակլես Ավագը և նրա եղբայր Գրիգորը որոշեցին տիրել ոչ միայն Կոստանդնուպոլսին, այլև՝ կայսերական գահին: Հետաքրքիր է, սակայն, որ, որպես գահի թեկնածուներ, Եգիպտոսի էքսարքոսն ու նրա եղբայրը առաջ քաշեցին իրենց որդիներին՝ Հերակլես Կրտսերին և Նիկիտային, ընդ որում որոշվեց, որ նա կդառնա կայսր, ով առաջինը կհասնի Կոստանդնուպոլիս և գահընկեց կանի Փոկասին: Իրավիճակին լրացուցիչ դրամատիկություն էր հաղորդում այն

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 4; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 86; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

[3] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 88; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78:

հանգամանքը, որ Հերակլես Կրտսերի մայրն ու նշանածը գտնվում էին Կոստանդնուպոլսում և, իմանալով Եգիպտոսում սկիզբ առած ապստամբության մասին, Փոկասի գլխակերները ձերբակալել էին այդ կանանց ու պահում էին խիստ հսկողության տակ: Եվ վերջապես նույն այս ժամանակ Կոստանդնուպոլսում բացահայտվեց Փոկասի դեմ ուղղված հերթական դավադրություններից ևս մեկը ու նրա մասնակիցները դաժան պատիժների արժանացան:

Արդյունքում՝ որոշվեց Կոստանդնուպոլսի վրա հարձակում իրականացնել միանգամից երկու ճանապարհով՝ ցամաքով ու ծովով, ընդ որում ծովային հարձակումը պետք է գլխավորեր Հերակլեսը, իսկ ցամաքայինը՝ վերջինիս հորեղբայր Գրիգորի որդի Նիկիտան: Բոլոր առավելությունները, սակայն, ծովով ավելի արագ առաջացող Հերակլես Կրտսերի կողմում էին և արդյունքում 610 թվականի հոկտեմբերի 4-ին նրա գլխավորած ծովային ուժերը մոտեցան Աբիդոսին: Հերակլեսի նավատորմի մոտենալու մասին լուրը ստանալուն պես կայսեր եղբայր Դոմենցիոլոսը, որին հանձնարարված էր Երկար պարիսպների հսկողությունը, թողեց իրեն վստահված դիրքը և ապաստանեց բուն քաղաքում: Այստեղ ևս, սակայն, Փոկասի դիրքերը ամուր չէին, քանզի, կայսեր իրականացրած դաժան բռնությունների տարիներ տևած քաղաքականության պատճառով կայսրության մայրաքաղաքում նրանից դժգոհ էին գործնականում բոլորը: Արդյունքում՝ քաղաքի աշխարհազորը Պրիսկոսի աննկատ աջակցությամբ ապստամբեց, ընդ որում ապստամբական գործողություններն անմիջականորեն գլխավորում էր Փոտ անունով մեկը, որի կնոջը Փոկասը ժամանակին բռնաբարել էր: Արդյունքում՝ Փոկասի պահակազորի մի մասը դիմադրելիս զոհվեց, մի մասն էլ ցրվեց և գործնականում արդեն միայնակ մնացած Փոկասն ընկավ Փոտի ձեռքը, որը, իր ուզածի պես վրեժ լուծելով գերյալից, ի վերջո ծովով անցավ Աբիդոս և, մորուքից քարշ տալով բերելով, Փոկասին հասցրեց Հերակլեսի մոտ[1]:

Հերակլեսի հրամանով գերուն բերեցին այն նավի վրա, որտեղ գտնվում էր նա ինքը և, ասում են, թե նույնիսկ այդ պայմաններում էլ նախկին ռազմիկն իրեն հավատարիմ է մնացել: Իրոք, տեսնելով Փոկասին, Հերակլեսը չկարողացավ իրեն զսպել և արհամարհանքով նետեց. «*Ուրեմն, թշվառական, այդ դո՞ւ էիր այսպես կառավարում պետությունը*», ինչին Փոկասը պատասխանեց. «*Իսկ դու, ի՞նչ է, մտադրվել ես ավելի լա՞վ կառավարել*»: Հանդգնությունը, սակայն, չփրկեց Փոկասին և Հերակլեսի հրամանով նրան հենց տեղում էլ պատժեցին՝ կտրեցին ձեռքերն ու ոտքերը, իսկ հետո էլ սրահար արեցին, որից հետո նախկին կայսեր բզկտված մարմինը տեղափոխեցին Կոստանդնուպոլիս և, ժողովրդին ի ցույց դնելուց հետո, այրեցին: Քաղաք մտած հաղթական Հերակլեսն ու նրա կողմնակիցները Փոկասի կողմնակիցների մի իսկական ջարդ իրականացրին, երբ սպանվեցին կայսեր եղբայր Դոմենցիոլոսը, Արևելքի երբեմնի հրամանատար Լեոնտիոսը, կայսեր մերձավոր Վոնոսը և շատ ուրիշներ: Փրկվեց, թերևս, միայն Դոմենցիոլոսի որդի Դոմենցիոլոսը, որին վանքից հանված Ֆիլիպիկի հետ միասին Հերակլեսը որպես պատվիրակ ուղարկեց Արևելքի գործող հրամանատար, Փոկասի եղբայր Կոմենցիոլոսի մոտ: Կոմենցիոլոսը, սակայն, որևէ կերպ չցանկանալով դադարեցնել դիմադրությունը, ձերբակալեց Ֆիլիպիկին և սկսեց ակտիվ նախապատրաստություններ տեսնել Կոստանդնուպոլսին հարվածելու համար, սակայն 610 թվականի աշնանը սպանվեց Մավրիկոսի խնամի Հերմանոսի որդի Հուստինոսի կողմից, ինչից հետո Հերակլեսի իշխանությունը վերջնականապես ամրապնդվեց: Ինչ վերաբերում է Դոմենցիոլոսին,

[1] Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 109, 110; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն «Արաբա-բյուզանդական ժամանակագրություն 741 թվականի», մաս 6; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 4; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 90; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 32; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; Հովհան Սարկավագ «Վենետիկյան ժամանակագրություն», գիրք 1, գլուխ 21; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

ապա, թերևս հաշվի առնելով նրա վերջին այդ գործունեությունը, նրան թույլ տրվեց մասնավոր կյանքի անցնել:

Փոկասը վերջինն էր Բյուզանդական կայսրության գահին բազմած ռոմանականացված գերմանացիների սերնդից, որի անկումով էլ գերմանական էջը կայսրության կյանքում վերջնականապես փակվեց: Վերջ, այդուհետ և հավետ կայսրության կյանքում առաջնային դերերի վրա էին հայտնվելու հույներն ու հայերը, ընդ որում, ձևականորեն լինելով, կարծես թե, հունական պետություն, առաջիկա կես հազարամյակում Բյուզանդական կայսրությունն իրենից ներկայացնելու էր, ըստ էության, ռազմաքաղաքական ավելի մեծ ակտիվություն դրսևորող հենց հայերի մի յուրօրինակ պետական միավոր:

Այսպիսով՝ Բյուզանդական կայսրության կայսր հռչակվեց Հերակլեսը՝ Հերակլես Ի-ը (610-641), որի կառավարումով էլ բազմամյա կայսրության կյանքում մի նոր դարաշրջանի սկիզբ դրվեց, դարաշրջան, որը բնորոշվում էր մի քանի հատկանիշներով: Այս առումով ամենից առաջ պետք է նշել, որ հենց Հերակլես Ի-ի գահակալումով էր, որ կայսրության կյանքում վերջնականապես սկսեց իշխել իշխանության ժառանգման դինաստիական սկզբունքը, երբ կառավարող կայսրը ձգտում էր իշխանության ղեկը փոխանցել որդուն: Իհարկե, նախկինում ևս կային նման երևույթի սաղմեր, երբ, օրինակ, Հուստինոս Ի-ից սկսած իշխանությունը մի քանի սերունդ մնաց նույն տոհմի ձեռքում, կամ այն հանգամանքը, որ Մավրիկոսն ինքն էր պատրաստվում իշխանության ժառանգորդ դարձնել սեփական որդիներին, սակայն այժմ ամեն ինչ վերջնական և առավել ամբողջական տեսք ստացավ, թեև հստակ գահաժառանգման համակարգ այնուհանդերձ այդպես էլ չստեղծվեց: Մյուս հանգամանքը, որը պետք է առանձնացնել, քաղաքակրթական մակարդակի էր և կայանում էր նրանում, որ, ըստ էության, հենց այս ժամանակից սկսած էլ անտիկ դարաշրջանն, իրեն բնորոշ հատկանիշներով, վերջնականապես պատմության գիրկն անցավ: Վերջ, այսուհետ Բյուզանդական կայսրությունն իրենից, սեփական առանձնահատկություններով հանդերձ, ներկայացնելու էր միջնադարյան ռազմաֆեոդալական տիպի մի պետություն, որը հիմնվելու էր ամենից առաջ տեղական ուժերի վրա: Իրենց հերթին տեղական ուժերից ռազմական առումով առավել կազմակերպվածը հենց հայերն էին և հենց այս հանգամանքն էր, որ մոտական հարյուրամյակներում առաջ էր մղելու հենց նրանց:

Հերակլես Ի-ին բաժին էր հասել բացառիկ ծանր վիճակում հայտնված մի պետություն: Երեսունհինգամյա կայսեր գահ բարձրանալու պահին կայսրությունն Արևելքում փաստացի արդեն զրկված էր Հայաստանի հիմնական մասից, ինչի արդյունքում ուղղակի սպառնալիք էր կախված արդեն նաև Փոքր Ասիայի և Ասորիքի վրա: Խաղաղ չէր, սակայն, նաև բալկանյան սահմանում, որտեղ, չնայած Մավրիկոսի դրսևորած համառ ջանքերի արդյունքում ձեռք բերված հաջողությանը, այժմ սլավոնները, մանր խմբերով անցնելով Դանուբը և օգտվելով Փոկասի օրոք լիակատար քայքայում ապրած ռազմական համակարգի բացակայությունից, բառացիորեն ողողել էին Բալկանյան թերակղզին՝ ըստ էության խաղաղ ճանապարհով հասնելով նրան, ինչին չէին կարողացել հասնել նախորդ տասնամյակների համառ ռազմական գործողությունների արդյունքում: Ինչ վերաբերում է Ապենինյան և Պիրենյան թերակղզիներին, ապա այստեղ կայսրությունը ևս շարունակում էր դանդաղ, բայց հաստատուն կերպով զիջել դիրքերը:

Կայսրության գահին բազմելու հետ գործնականում միաժամանակ Հերակլես Ի-ը նաև ամուսնացավ, ընդ որում երիտասարդ կայսեր ընտրյալ Ֆաբիան կամ, ինչպես նրան սկսեցին կոչել արդեն որպես կայսրուհի՝ Եվդոկիան, այն կինն էր, որի հետ Հերակլեսը նշանված էր դեռ մանկուց և հարաբերությունները, կարծես թե, հիմնված էին սիրո վրա: Կյանքը, սակայն, գեղեցիկ այն տեսքը չունեցավ, ինչը լինում է հեքիաթներում, երբ երիտասարդ արքայազնը հաղթում է չարին ու ազատում գեղեցկուհուն, և այս հարցում իրականությունը Հերակլես Ի-ին մի դաժան անակնկալ մատուցեց: Փոկասի կառավարման վերջին տարիներին, ինչպես արդեն ասվեց, իմանալով Հերակլես Ավագ

Հայի ու նրա որդու ապստամբության մասին, Փոկասի հրամանով Հերակլես Ի-ի մայրն ու հարսնացուն ձերբակալվել էին: Ձերբակալության հետ կապված վախե՞րն էին, թե՞ այլ պատճառ կար, սակայն ամուսնության հենց սկզբից էլ պարզվեց, որ Եվդոկիան հոգեկան զգալի շեղումներ ունի, ընդ որում ժամանակի հետ նրա վիճակը աստիճանաբար ավելի բարդացավ: Այսպիսով՝ երիտասարդ կայսրը ընտանեկան կյանքում հենց սկզբից էլ ականատես եղավ ծանր մի դժբախտության, որն իր հերթին հետագայում նոր զարգացումներ էր ունենալու:

Բացվում էր 611 թվականը և Հերակլես Ի-ի դիմաց իրենց ողջ հասակով հառնում էին բոլոր այն խնդիրները, որոնք ծագել էին դեռևս չարաբաստիկ Փոկասի օրոք: Բալկանյան սահմաններում սլավոնական առաջխաղացումն արդեն գործնականում անդառնալի բնույթ էր ստացել և գերմանական, ինչպես նաև ռոմանականացված գերմանական տարրն անկասելիորեն զիջում էր դիրքերը: Իրենց հերթին կայսրության իրական տիրույթները, մի ժամանակ դժվարությամբ մնալով Դանուբի միջին հոսանքում, այժմ անկասելիորեն սեղմվում էին դեպի ավելի հարավ, իսկ թերակղզու հյուսիս-արևմտյան հատվածն էլ, այսպես կոչված Դալմացիան, որով ապահովվում էր կայսրության ցամաքային կապը Ապենինյան թերակղզու հետ, աստիճանաբար հայտնվում էր լուրջ վտանգի տակ: Այս առումով, թերևս, պատահական չէր, որ արդեն 611 թվականի ամռանը Ավարական խաքանության բանակը սլավոն ռազմիկների զգալի աջակցությամբ տիրեց Դալմացիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Իստրոս թերակղզուն[1], ինչից հետո զգալիորեն սասանվեցին կայսրության դիրքերը ողջ Դալմացիայում: Առավել մեծ վտանգ, սակայն, Հերակլես Ի-ի տերությանը սպառնում էր, այսպես թե այնպես, Արևելքից: Արդյունքում, փորձ կատարելով կասեցնել արևելյան վտանգը, կայսրության գահին բազմելուց անմիջապես իսկ հետո Հերակլես Ի-ը հատուկ ուղերձով դիմեց Խոսրով II-ին և, ընդգծելով, որ Մավրիկոսի վրեժը լիուլի լուծված է, խնդրեց դադարեցնել ռազմական գործողությունները: Արյաց արքան, սակայն, որի համար Մավրիկոսի համար վրեժը ակնհայտորենը ընդամենը միայն պատերազմ սկսելու համար հարմար առիթ էր, այդ առաջարկին որևէ կերպ չընդառաջեց:

611 թվականի ամռանը, առաջանալով Հայաստանից, Շահեն Վահմանզադականի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) քաղաքում գտնվող հրեաների դավաճանության շնորհիվ քաղաքի պաշտպանության ժամանակ անձնական մեծ խիզախությամբ աչքի ընկած ու մարտում էլ զոհված Վասակ Քաջ Արծրունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) գրավեցին Կեսարիան[2]: 576 թվականին Պարսից թագավորության խոշոր բանակը մի պահ փորձել էր մոտենալ Կապադովկիայի այս գլխավոր քաղաքին և հետ էր մղվել, սակայն այժմ հաջողությունը պարսկական զենքի օգտին եղավ: Սա մի լուրջ հայտ էր տիրելու արդեն ողջ Կապադովկիային, իսկ այդ հանգամանքը Կոստանդնուպոլսում աչքաթող անել որևէ կերպ չէին կարող: Արդյունքում, օգտվելով այն բանից, որ քաղաքի անկումից հետո հակառակորդի խոշոր ուժերը հետ էին քաշվել, Հերակլես Ի-ը նորից ռազմական ուղու վրա դրեց վերջին տասնամյակում քաղաքացիական պաշտոնների անցած բալկանյան ճակատի հերոս Պրիսկոսին, հավաքեց բոլոր հնարավոր ուժերը և վերջինիս հետ դրանք ուղարկեց Արևելք:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

611 աշուն - 612 գարուն – ***<u>Կեսարիայի ճ-մ</u>***[3]

---

[1] Պողոս Սարկավագ «Լանգոբարդների պատմություն», գիրք 4, գլուխ 40:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 33; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 92; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 1; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9:

[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1:

Արևելքի հրամանատար Պրիսկոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 20.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) պաշարեցին քաղաքը Շահեն Վահմանզադականի գլխավորած Պարսից թագավորության բանակից (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 2.000):

I փուլ – 611 թ-ի աշնանից մինչև 612 թ-ի գարուն կայսրության բանակը մի շարք գրոհներ ձեռնարկեց քաղաքի ուղղությամբ, սակայն որևէ հաջողության չհասավ:

II փուլ – 612 թ-ի գարնանը Պարսից թագավորության բանակը անակնկալ արտագրոհ իրականացրեց և, ծանր պարտության մատնելով, փախուստի մատնեց կայսրության բանակին:

Հաղթողներից հայերը կորցրին մոտ 400, դաշնակիցը՝ մոտ 4.000, պարտվողներից հայերը՝ մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 8.000 զինվոր:

Այսպիսով՝ Պրիսկոսը, որպես Արևելքի հրամանատար, լիակատար անհաջողության մատնվեց, ինչով էլ, ըստ էության, հակասական ընթացք ունեցած այս զորավարի ռազմական ուղին ավարտվեց: Իրոք, հիասթափված Պրիսկոսից, Հերակլես I-ը դրանից հետո վերջինիս հետ կանչեց մայրաքաղաք և, զրկվելով պաշտոնից, թույլ տվեց կրկին վանական կարգվել: Պրիսկոսից հետո Արևելքի հրամանատար նշանակվեց զորավարների կրկին հին դարաշրջանի սերնդին պատկանող Ֆիլիպիկը՝ Մավրիկոսի քրոջ ամուսինը, որը ժամանակին զոհ էր գնացել նույն Մավրիկոսի կասկածներին, իսկ իր անկումից քիչ առաջ էլ վերջինս նույնիսկ հրամայել էր ձերբակալել Ֆիլիպիկին: Մավրիկոսի գահազրկումից հետո ազատության ստացած Ֆիլիպիկը մի պահ իր ծառայություններն էր առաջարկել Փոկասին, սակայն ուղղամիտ այդ ռազմիկը վճռականորեն մերժել էր համագործակցության ամեն մի առաջարկ՝ ընդգծելով, որ, եթե ինչ-որ մեկը դավաճանել է իր կնոջ եղբորը, ինչպե՞ս կարող է ինքը վստահել նրան: Դրանից հետո Ֆիլիպիկը, փրկվելով հետագա կասկածներից, իր հերթին համենայն դեպս վանական էր կարգվել և պատսպարվել էր իր իսկ հիմնադրած վանքերից մեկում, սակայն այժմ, սուր կերպով զգալով փորձառու զորավարների պակաս, Հերակլես I-ը որոշեց կրկին գործի դնել վերջինս:

612 թվականի ամռանը, առաջանալով Տրապիզոն-Բարձր Հայք-Արարատ-Վաղարշապատ երթուղով, Արևելքի հրամանատար Ֆիլիպիկի գլխավորությամբ արշաված Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) սրընթաց երթով մոտեցան Նիգ գավառին, սակայն հակառակորդին օպերատիվ անակնկալի բերել չհաջողվեց, քանզի վերջինս ինքը ևս թիկունքում զգալի ուժեր ուներ: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը (մոտ 10.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 2.000) մոտեցան Ֆիլիպիկի բանակին և անակնկալ գիշերային հարձակումով հաղթեցին վերջինիս առաջապահին, թեև ծանր կորուստներից այս անգամ հաջողվեց խուսափել, քանզի, ինչքան սրընթաց առաջացել էին, նույնքան սրընթաց էլ կայսրության հիմնական ուժերը Արագածոտն-Շիրակ-Վանանդ-Աբեղյանք-Բասեն-Կարին-Բարձր Հայք-Տրապիզոն երթուղով հետ քաշվեցին[1]: Այսպիսով՝ Ֆիլիկիպը ևս, ինչպես և Պրիսկոսը, թեև խուսափեց ծանր կորուստներից, բայց այնուհանդերձ որևէ հաջողության չհասավ:

Արդյունքում՝ Հերակլես I-ը հրաժարվեց նաև այս զորավարի ծառայությունից և Ֆիլիկիպը, հետևելով Պրիսկոսի օրինակին, կրկին վանք մտավ: Դրանից հետո, ձեռքի տակ չունենալով այլևս և ոչ մի հարմար մարդ, կայսրը որոշեց ինքն անձամբ իրականացնել Արևելքում գործող բանակի հրամանատարությունը՝ բացառիկ մի բան կայսրության պատմության մեջ, ընդ որում նման բան չէր եղել 491 թվականից ի վեր, դե

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1:

իսկ իրականացված գործողությունների խորության առումով էլ, ընդհանրապես՝ 363 թվականից ի վեր:

613 թվականի ամռանը Կարինից արշաված Պարսից թագավորության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 5.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու քաղաքի Հայ ռազմիկներից (մոտ 1.000) գրավեցին Մելիտեն[1]: Հասունանում էր, սակայն, Հերակլես Ի-ի հղացած պատասխան հարվածը, ընդ որում կայսրը նախատեսել էր այն հասցնել ամենից առաջ հարավային ուղղությամբ: Արդյունքում, սակայն, 613 թվականի սեպտեմբերի 8-ին Անտիոքի ճ-մ-ում Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 6.000) կատաղի մարտում հաղթեցին Հերակլես Ի-ի ու կայսրեղբայր, Արևելքի հրամանատար Թեոդորոսի գլխավորությամբ Կիլիկիայից առաջխաղաց Բյուզանդական կայսրության բանակին (մոտ 60.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 6.000), որից հետո մտան Անտիոք, Հալեպ, Կիննասրին, Խառան ու Մեմբիջ[2]: Անհաջողության մատնված Հերակլես Ի-ին չէր մնում այլ բան, քան, հակառակորդի անմիջական հետապնդման պայմաններում, արագորեն հետ քաշել իր պարտված ուժերը: Արդյունքում՝ միայն 613 թվականի սեպտեմբերի կեսին Պլատանա կիրճում տեղի ունեցած ճակատամարտում էր, որ կայսրության նահանջող հիմնական բանակի վերջապահը կարողացավ հետ մղել հակառակորդի առաջապահին և թույլ տալ հիմնական բանակի շարունակել նահանջը[3]: Դա, սակայն, չէր փրկելու Կիլիկիան:

Իրոք, 613 թվականի սեպտեմբերի վերջին Կիլիկիա մտած Պարսից թագավորության բանակը (մոտ 40.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 4.000) կայսրության բանակից գրավեցին Տարսոնը, ընդ որում այս քաղաքը, բացառությամբ Տրապիզոնի, թերևս, վերջինն էր Հայաստանում գտնվող կայսրության ամրացված կետերից[4]: Այսպիսով, ըստ էության, փաստվեց Կիլիկիայի անկումը և, ինչպես իր զորավարները նախորդ տարիներին, այս անգամ արդեն անհաջողության մատնված Հերակլես Ի-ն ինքը ստիպված եղավ հետ քաշվել, ինչով էլ առաջիկա մի քանի տարիների կտրվածքով վերացավ Պարսից թագավորության դեմ ակտիվ դաշտային ճակատամարտում դիմադրություն կազմակերպելու ամեն մի փորձ:

Կայսրության ռազմական ակտիվությունը վերջնականապես ճնշելուց հետո Խոսրով II-ի և նրա ռազմական տեսաբանների առջև իր ողջ հասակով, սակայն, հառնեց ռազմական գործողությունների հետագա շարունակման հնարավոր ուղղությունների ընտրության հարցը: Հարձակման մի ուղղությունը փոքրասիականն էր, սուր ծայրում ունենալով Կոստանդնուպոլիսը, իսկ մյուս ուղին տանում էր դեպի հարավ: Հակառակորդի ընտիր պաշտպանված մայրաքաղաքին անծանոթ ճանապարհով հարված հասցնելու առաջարկը, սակայն, դեռևս պարթևական ժամանակներից արիական ռազմական մտքին հիանալի ծանոթ ասորիքյան ուղղությամբ հասցվող հարվածի համեմատ ի վերջո պակաս հմայիչ թվաց, ընդ որում այս դեպքում հարվածի վերջնակետում համեմատականորեն խոցելի և հարուստ Եգիպտոսն էր: Արդյունքում՝ Խոսրով II-ն և նրա զորավարներն ի վերջո որոշեցին գոնե սկզբում գնալ ծանոթ ճանապարհով՝ հարվածելով հարավում:

613 թվականի հոկտեմբերի վերջին Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 150.000) և նրա կազմում

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Անանիա Շիրակացի «Մատենագրություն», էջ 208; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 10, գլուխ 25, գիրք 11, գլուխ 1; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 109:

[3] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

[4] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3:

գտնվող Հայ ռազմիկները (մոտ 15.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 100) գրավեցին Դամասկոսը[1]: Հաջորդը քրիստոնյաների սուրբ քաղաք համարվող Երուսաղեմն էր, որին Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի հարվածային ուժերը մոտեցան 614 թվականի մարտի 26-ին: Երուսաղեմի պաշարումը երկար չտևեց և այն ընկավ նույն թվականի ապրիլի 15-ին: Բացառիկ այս պատերազմի ընթացքում սա ինքնին մի բացառիկ բան էր, ընդ որում խոսքն ամենևին էլ այն մասին չէ, որ պարսիկները, ինչպես նաև քրիստոնեության հետ իրենց հին հաշիվներն ունեցող հրեաները հենց քաղաքի անկումից անմիջապես հետո տեղի քրիստոնյաների մի իսկական ջարդ կազմակերպեցին: Բացառիկ էր այն հանգամանքը, որ քրիստոնյաների սրբության սրբոցը համարվող Փրկչական խաչը, որ գտնվում էր Երուսաղեմում, հայտնվեց զրադաշտականների գերության մեջ, ինչը ժամանակակիցների կողմից ընկալվեց որպես աշխարհի վերջի նման մի բան[2]: Տիրելով Սուրբ քաղաքին՝ Պարսից թագավորության բանակը շուտով առանց լուրջ մարտերի իր վերջնական տիրապետությունը հաստատեց նաև Ասորիքի, Փյունիկիայի և Պաղեստինի նկատմամբ:

Արևելքում տեղի ունեցած աղետի հետ միաժամանակ դանդաղ, սակայն անշեղորեն շարունակեց ծանրանալ կայսրության դրությունը նաև Արևմուտքում և ամենից առաջ Բալկանյան թերակղզում, որտեղ 614 թվականի ամռանը Ավարական խաքանության բանակը ու սլավոնները (մոտ 10.000) կայսրության բանակից գրավեցին Էպիդավրոսը (Դալմացիայի հարավ, Ադրիատիկ ծովի արևելյան ափին)[3]՝ հետագայում պատրաստվելով առաջանալ դեպի ավելի հարավ: Եվ ահա, այն բանից հետո, երբ 615 թվականի ամռանը Ավարական խաքանության բանակը ու սլավոնները (մոտ 30.000) համառ մարտերից հետո ի վերջո խուճապի մատնված և դեպի նավահանգիստ շարժված Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 10) գրավեցին նաև Սալոնան, Դալմացիան վերջնականապես ընկավ Ավարական խաքանության տիրապետության տակ[4]: Դալմացիայի հարցերը լուծելուց հետո ավարա-սլավոնական հորդան շարունակեց շարժվել դեպի հարավ և արդեն 616 թվականի ամռանը Բայան I-ին հաջորդած Բայան II-ի (602-630) ռազմական մեքենան գրավեց Նաիսն ու Սերդիկան (Բուլղարիա), ինչի արդյունքում Ավարական խաքանության տիրապետության տակ ընկավ արդեն Հյուսիսային Թրակիան[5]: Հաջորդը Թեսալոնիկեն էր, որին թշնամին մոտեցավ նախորդ դեպքերից կարճ ժամանակ անց, սակայն ծովից ու ցամաքից միաժամանակյա հարձակման անցած սլավոնները այս քաղաքի պարիսպների տակ անհաջողություն կրեցին[6]:

---

[1] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն «Արաբա-բյուզանդական ժամանակագրություն 741 թվականի», մաս 4; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 1; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 92; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբու Հանիֆա ալ -Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»;

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 34; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 10; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Անանիա Շիրակացի «Պատմություն»; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Շապուհ Բագրատունի «Պատմություն», գլուխ 2; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3, 6; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 32; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; Հովհաննես Երեց «Ժամանակագրություն»; Անանուն Լիվոռնացի «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 92; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 1; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Անանուններ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78; Գիյոմ Տյուրացի «Անդրծովյան երկրների պատմությունը», գիրք 1, գլուխ 2; Հովհան Սարկավագ «Վենետիկյան ժամանակագրություն» գիրք 1, գլուխ 21; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 10:

[3] Այս մասին հայտնում է Թովմա Սպլիտացին:

[4] Այս մասին հայտնում է Թովմա Սպլիտացին:

[5] Հովհան Թեսալոնիկացի «Սուրբ Դմիտրիոս Սալոնիկացու հրաշագործությունները», մաս 2, գլուխ 2; Թովմա Սպլիտացի, Կոնստանդին Ծիրանածին:

[6] Հովհան Թեսալոնիկացի «Սուրբ Դմիտրիոս Սալոնիկացու հրաշագործությունները», մաս 2, գլուխ 1; Հովհաննես Նիկյուացի «Ժամանակագրություն», գլուխ 109:

Արևմուտքում գործերի ծանրացումը, սակայն, չսահմանափակվեց միայն Բալկանյան թերակղզով, քանի որ Ապենինյան թերակղզում շարունակում էր սպառնալից դիրք գրավել Լանգոբարդական թագավորությունը, իսկ Պիրենյան թերակղզում էլ հերթական անգամ ոտքի կանգնեց արդեն նաև Վեսթգոթական թագավորությունը: Իրոք, Վեսթգոթական թագավորության արքա Սիսեբատը (612-621), մի քիչ ուշ, սակայն ի վերջո գիտակցելով, թե ինչ ծանր դրության մեջ է հայտնվել պաշտոնական Կոստանդնուպոլիսը, սկսած արդեն 615 թվականից աստիճանաբար ուժեղացող թափով սկսեց ճնշում գործադրել Պիրենյան թերակղզու հարավում գտնվող կայսերական տարածքների վրա, ընդ որում համատեղ գործողություններ կազմակերպելու նպատակով վերջինս մշտական ուղերձներ էր հղում նաև Լանգոբարդական թագավորության արքա Ագիլուլֆոսին: Արդյունքում՝ Սիսեբատը, աստիճանաբար ուժեղացնելով ճնշումը կայսրության տարածքների նկատմամբ, բայց միաժամանակ, սակայն, նաև հաշվի առնելով Ագիլուլֆոսի հետ համագործակցության չստացվելը, սկզբնական մի քանի տարիներին շեշտը հիմնականում դրեց բանակցությունների վրա, որոնք, առանց որևէ էական արդյունքին, ձգձգվեցին բավականին երկար[1]:

Հյուսիսից առաջացող սպառնալիքի հետ միաժամանակ դանդաղ, բայց անշեղորեն վատանում էր պաշտոնական Կոստանդնուպոլսի դրությունը նաև Արևելքում, որտեղ 616 թվականի աշնանը Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի, Սայիդի, Շահինի և Բուդի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 120.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 12.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 2.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 100) գրավեցին Պելուզիան, Ալեքսանդրիան ու Կարթագենը, ինչի արդյունքում Պարսից թագավորությունը իր տիրապետությունը հաստատեց Եգիպտոսի և Լիբիայի վրա[2]: Արդյունքում՝ փաստորեն, Խոսրով II-ն այնպիսի մի հաջողության հասավ, ինչպիսին չէր հասել ոչ Սասանյան և ոչ էլ Արշակունի արքաներից և ոչ մեկը՝ մի հաջողություն, որը Սասանյան այս տիրակալին մոտեցնում էր առաջին Աքեմենյանների մակարդակին: Խնդիրներն, իհարկե, դեռևս առջևում էին, բայց առայժմ, այսպես թե այնպես հարավ-արևմուտքում հարցերը համարելով լուծված, պարսից զորավարներն իրենց հարվածային բռունցքն ուղղեցին դեպի հյուսիս-արևմուտք:

617 թվականի գարնանը Շահեն Վահմանզադականի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 1.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 100) գրավեցին վերջին տարիներին փոքրասիական բանակային ուժերի հավաքատեղի հանդիսացող Անկյուրան[3], իսկ արդեն ամռանն էլ իրենց վերջնական տիրապետությունը հաստատեցին Կիլիկիային վրա: Դրանից հետո Պարսից թագավորության տիրապետության տակ ընկավ նաև Հռոդոսը[4]:

617 թվականի ամռանը Շահեն Վահմանզադականի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 120.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 12.000), ըստ էության, ոտնատակ էին տալիս արդեն Փոքր Ասիայի արևմուտքը և, որպես գագաթնակետ այս ամենի, 618 թվականի ամռանը նրանք տիրեցին նաև Քաղկեդոնին:

---

[1] Ֆրեդեգար «Ժամանակագրություն», գիրք 4, գլուխ 3:

[2] Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն «Արաբա-բյուզանդական ժամանակագրություն 741 թվականի», մաս 4; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 1; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 92; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Շապուհ Բագրատունի «Պատմություն», գլուխ 2; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; Անանուններ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[3] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 96; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3:

[4] Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 17; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

Ինչպես Եգիպտոսի պարագայում, այս անգամ ևս հաղթահանդեսն իսկական էր և գոնե այդ տարի Խոսրով II-ը իրեն լիուլի կարող էր համարել առաջին Աքեմենյանների գործի շարունակող: Հարկ է նշել, սակայն, որ Քաղկեդոնն ընկավ այն բանից հետո, երբ Հերակլես I-ը Շահենի հետ բանակցություններ սկսեց և համոզեց վերջինիս թողնել քաղաքի պաշարումը, սակայն Խոսրով II-ը ընդհատեց հետագա բոլոր շփումները, հետ կանչեց ու մահապատժի ենթարկեց Շահենին, իսկ նրա բանակին էլ հրամայեց մնալ տեղում, ասպատակել քաղաքի շրջակայքը և գրավել այն[1]: Այսպիսով, գտնվելով հաջողության գագաթնակետում, արյաց արքան արդեն երկրորդ անգամ փակեց բանակցությունների բոլոր դռները և պատրաստվեց պատերազմը շարունակել մինչև դրա լիակատար ու հաղթական ավարտը, ընդ որում նա ոչ մի կերպ հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ չափազանց ձգված հաղորդակցման ուղիներն և հենց նոր ձեռք բերված, սակայն իրապես չնվաճված տարածքները նույնիսկ Սասանյանների տերության տիպի ուժի համար ձեռքում պահելն աստիճանաբար վերածվում էր դժվարին մի գործի:

Հարկ է նշել, որ պարսկական առաջխաղացման հետ միասին պաշտոնական Կոստանդնուպոլսի շուրջ օղակը հյուսիսից փորձում էր սեղմել նաև Բայան II-ը, որի գլխավորած Ավարական խաքանության բանակը (մոտ 120.000, այդ թվում սլավոններ, բուլղարներ, գեպիդներ և լանգոբարդներ) 618 թվականի սեպտեմբերի սկզբին հերթական անգամ մոտեցավ Թեսալոնիկեին, սակայն, 33 օր մնալով այս քաղաքի պարիսպների տակ, հոկտեմբերի սկզբին ստիպված եղավ այնուհանդերձ հետ քաշվել[2]: Վերջին անհաջողությունը Բայան II-ը փորձ կատարեց ծածկել Կոստանդնուպոլսին մոտենալով, ինչը կատարվեց արդեն 619 թվականի ամռանը: Քաղաքից հյուսիս-արևմուտք տարածվող Երկար պարիսպները, սակայն, մի վերջին անգամ բարի ծառայություն մատուցեցին կայսրությանը, քանզի այն անցնել թշնամին ի վերջո չկարողացավ: Ստեղծված պայմաններում Բայան II-ը, որն ինչպես պետքն էր ոտնատակ էր տվել Թրակիան, այն բանից հետո, երբ չկարողացավ խորամանկությամբ գերել բանակցությունների մեկնող Հերակլես I-ին, ինչպես նաև տեղեկացավ իր թիկունքում բուլղարների բարձրացրած ապստամբության մասին, խոշոր փրկագին ստանալուց հետո թողնեց սկսած գործն ու նահանջեց[3]:

620 թվականը կարող էր համարվել պարսկական զենքի հաջողության գագաթնակետի տարի: Խոսրով II-ի ռազմիկները կանգնած էին Բոսֆորի ափերին, արդեն քանի տարի էր, որ նրանք տնօրինություն էին անում Ասորիքում, Եգիպտոսում և Լիբիայում, իսկ երբեմնի հզոր կայսրությունն էլ սեղմվել էր Կոստանդնուպոլսում, նրա շրջակայքում ու Հունաստանում, չհաշված իհարկե հեռավոր և ծայրամասային որոշ շրջաններ: Թվում էր, թե Սասանյաններին ի վերջո հաջողվել էր հետ բերել Աքեմենյանների փառահեղ ժամանակները, սակայն այդ ամենն, ըստ էության, միայն արտաքին նմանություն էր, մեծապես պայմանավորված էր Բյուզանդական կայսրության ներքին խնդիրներով և ամեն ինչ ամենևին հարթ չէր հենց արյաց արքայի տիրույթներում:

Այս առումով ամենից առաջ պետք է նշել, որ, տիրելով հսկայական տարածքների, պաշտոնական Տիզբոնը նվազագույն փորձ իսկ չարեց ներառել դրանք համապարսկական քաղաքակրթության շրջանակում կամ գոնե հասնել մի վիճակի, երբ նվաճված տարածքի բնակչությունը լուրջ շահագրգռվածություն կունենար իրեն համարելու արյաց արքայի հպատակը: Պարսկական կողմը նվաճված տարածքներին ու նրա բնակչությանը վերաբերվում էր բացառապես որպես միայն պարզագույն եկամտի մի աղբյուրի՝ թալանի աստիճան շահագործելով հիշատակված տարածքում հայտնված մարդկանց և պարզագույն կերպով կողոպտելով ու բուն պարսից տիրույթներ

[1] Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 78; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 1; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 9; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

[2] Հովհան Թեսալոնիկացի «Սուրբ Դմիտրիոս Սալոնիկացու հրաշագործությունները», մաս 2, գլուխ 2:

[3] Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»:

տեղափոխելով տեղի նյութական արժեքները: Որպեսզի պարզ լինի, թե վերջին պարագայում բանը մինչև ուր էր հասնում, նշենք, որ պարսից պաշտոնյաները պատերից պոկում և տեղափոխում էին նույնիսկ շենքերի մարմարյա արտաքին քարե ծածկերը: Այսպիսով՝ քաղաքակրթական այն մեծ խոչընդոտը, որը զրադաշտականության ընկալման հարցում առկա էր հարևան ազգերի ներկայացուցիչների մոտ, պաշտոնական Տիզբոնի կողմից ոչ միայն չհաղթահարվեց, այլև այդ ուղղությամբ նույնիսկ որևէ փորձ իսկ չձեռնարկվեց և նույնիսկ ավելին՝ ամեն ինչ արվեց առանց այդ էլ դժվար ընկալելի զրադաշտականությունից մարդկանց վանելու ուղղությամբ: Արդյունքում՝ ստեղծվեց մի վիճակ, երբ Լիբիայի անապատներում և Քաղկեդոնի պարիսպների տակ կանգնած արյաց արքայի ռազմիկների թիկունքում գտնվում էին հսկայական տարածքներ, որտեղ առկա էր ստորացված, թալանված և, արդյունքում, չարացած ու պաշտոնական Տիզբոնի նկատմամբ խորը ատելություն տածող տեղական բնակչության մի մեծ հատված, իսկ այդ ամենն էլ այն պայմաններում, երբ Պարսից թագավորության ամենից առաջ հենց մարդկային ռեսուրսները սահմանափակ էին:

Պարսից թագավորությունն, այո, հանդիսանում էր տարածաշրջանի առաջատար ուժերից մեկը, այո, այն մի իսկական տերություն էր և ի վիճակի էր ոտք մեկնել հինավուրց հռոմեական փառքի հետ, սակայն, վերևում այս մասին արդեն խոսվեց, վերջինս այնուհանդերձ հենց ազգային պետություն էր՝ պարսիկ ազգի հոգևոր ու մշակութային արժեքների, ինչպես նաև զրադաշտական հավատքի միահյուսման արդյունքում ստեղծված և պետականության մակարդակի բարձրացված յուրօրինակ մի սիմբիոզ: Որպես հետևանք սրա՝ պարսկական պետական մեքենայի և ամենից առաջ բանակի շարքերը մեծ հաշվով կարող էին համալրվել, ըստ էության, միայն պարսիկների կողմից, որոնք էլ, ինչպես արդեն նշվեց, լինելով փակ հոգևոր-մշակութային մի ամբողջություն ու քանակապես աճելով, ըստ էության, բացառապես միայն ծնելիության հաշվին, դանդաղ էին շատանում, իսկ լայնածավալ և երկարատև պատերազմներում կրած կորուստներն էլ դժվար էին ամոքվում: Այսպիսով, արդեն 620 թվականի վիճակով, անկախ գրաված հսկայական տարածքներից, Պարսից թագավորության ռազմական մեքենան ամենից առաջ հենց քանակի խնդիր ուներ, քանզի կորուստները հասարակության բնական աճի հաշվին չէին հասցնում համալրվել, համալրման քաղաքակրթական ճանապարհը, որը գործում էր Բյուզանդական կայսրության պարագայում, չկար ի սկզբանե, իսկ պարզագույն վարձկանության ինստիտուտի կիրառման համար էլ մի կողմից բավարար միջոցներ չկային, իսկ մյուս կողմից էլ՝ բավարար թեկնածուներ: Այս առումով հատկանշական են Թեոփանոս Խոստովանողի նկատառումները 624 թվականի իրադարձությունների հետ կապված, երբ. «*Այդ տարին պարսից Խոսրով արքան*»,- հայտնում է կայսերական պատմիչը,- «*նոր զորակոչ արեց ու զինվորագրեց և օտարականներին, և քաղաքացիներին, և ստրուկներին՝ ծագումն ուշադրության չառնելով*»: Եվ այսպես, արդեն նույն 624 թվականին Պարսից թագավորության ռազմական մեքենան մարդկային ռեսուրսը համալրելու լրջագույն խնդիր ուներ ու բանը հասել էր արդեն նրան, որ արյաց արքան ստիպված էր համալրել բանակը՝ զինվորագրելով, օտարականներին, քաղաքացիներին և ստրուկներին: Կար, սակայն, նաև մեկ այլ խնդիր ևս:

Պարսից հասարակության նույնիսկ ամենաբարձր խավերի մոտ, չնայած հաճախ նույնիսկ հաղթական պատերազմներին և ձեռք գցած զգալի քանակի ավարին, երկարատև պատերազմները խորը դժգոհության տեղիք էին տալիս, ընդ որում դժգոհություն արտահայտողները, կարծես, իրենք ևս այս կամ այն չափով գիտակցում էին վերևում նկարագրված սոցիալական ներքին օրինաչափությունները: Այսպես, դեռևս 576 թվականի իրադարձությունների հետ կապված սկզբնաղբյուրները մեզ են փոխանցում այն խուլ դժգոհությունը, որն առկա էր անվերջ պատերազմներից[1], իսկ 588 թվականին էլ,

[1] «*Իր մեծամեծներ, սակայն, նրա հետ մշտապես վիճում էին ու ասում. «Մենք կապրենք կամ կմեռնենք, սակայն Պարսկաստանը մեր պատճառով վատ անուն կունենա: Ոչ մի պարսից արքա երբեք այդպես չէր արել, ինչ-որ դու արեցիր, քանզի դու մեզ այս լեռները*

դատելով Վահրամ VI Չուբինի խոսքերից, որը Սասանյանների տիրապետության շրջանը մի իսկական պատուհաս էր համարում և արդյունքում կարողացավ հասարակության տարբեր խավերից իրեն լայն աջակցություն ապահովել, հիշատակված դժգոհությունն ավելի էր խորացել: Իր հերթին, հիմք ընդունելով արդեն 626 թվականին Փոքր Ասիայի ծայր արևմուտքում գործող բանակի վարքագիծը, կարելի է պնդել, որ արդեն հենց նույն 620-ական թվականներին հիշատակված բացասական տրամադրությունները հասել էին իրենց գագաթնակետին: Եվ վերջապես հարկ է ընդգծել ևս մեկ կարևոր մի հանգամանք:

Խնդիրը կայանում էր նրանում, որ 620-ական թվականներին Պարսից թագավորությունում արդեն վաղուց էին անցել այն հիացական տրամադրությունները, երբ Սասանյանների տոհմը ընկալվում էր որպես մի վերին, անփոխարինելի և պետականության հետ անխզելիորեն կապված երևույթ: Դեռևս մազդակյաններն էին հիմնովին ցնցել Սասանյանների հեղինակությունը և Խոսրով I-ն իր խոհեմ կառավարմամբ միայն մեծ դժվարությամբ էր քիչ թե շատ ամոքել ստացված հարվածները, սակայն այս արքայի ջանքերի բոլոր պտուղները ջուրը լցրին պարզունակ Որմիզդ IV-ն ու իր գոռոզ վարքագծով աչքի ընկնող Խոսրով II-ը, իսկ այս տիրակալների գահակալման շրջանն ընդգրկող ապստամբություններն էլ միայն ավելի բորբոքեցին առկա դժգոհությունները: Հետագա իրադարձությունները վերջնականապես պատկերացնելու համար ևս մեկ անգամ հիշենք, որ, այս մասին վերևում ևս նշվեց, նմանատիպ խնդիրներն ունեցող Պարսից թագավորության հակառակորդ Բյուզանդական կայսրությունը, որպես քաղաքակրթական ավելի ունիվերսալ մի երևույթ, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում անկասելի ուժով դեպի իրեն էր ձգում քրիստոնեական քաղաքակրթության շրջանակներում գործող բոլոր տարրերին և հենց միայն դրանով մարդկային ռեսուրսի, ինչպես նաև ընդհանուր ընկալողունակության հմայքի իսկ տեսակետից ավելի էր մեծացնում սեփական հնարավորությունները:

Այսպիսով, չնայած ձեռք բերած հսկայական հաջողություններին և արտաքին փայլին, 620 թվականի վիճակով Խոսրով II-ի տերության գործերը, իրերի դրության վրա ավելի խորը մի հայացք գցելու պարագայում, ամենևին էլ փայլուն վիճակում չէին, որ գտնվում էին, ընդ որում, դատելով ըստ ամենայնի, Պարսից թագավորության առջև հառնած քաղաքակրթական մարտահրավերները, որոնք այս կամ այն չափով գիտակցվում էին իր ժամանակի պարսկական հասարակության նույնիսկ ցածր խավերի ներկայացուցիչների կողմից, բացարձակապես հասու չէին հենց այս ժամանակ արյաց արքայի գահին բազմելու իր երեսնամյակը նշող Խոսրով II-ին: Իրոք, դեպքերի հաջող բերումով հասած Սասանյանների գահին և հաջողությամբ խուսափելով գահի շատ թեկնածուներին մինչ այդ պատուհասած անհաջողությունից, տապալած փառքի հսկայական փայլով պատված Վահրամ VI Չուբինին և համառ մրցակցության մեջ քաղաքական ասպարեզից դուրս մղած ամենազոր Միհրանյանների, ինչպես նաև Ասպահապետի տոհմերին ու կարծես ամրապնդված գահի վրա ինչպես պետքն է՝ քաղաքական գլխապտույտ ապրող այս տիրակալը համառորեն չէր ուզում նկատել ոչինչ և ի վիճակի չէր ուշադրություն դարձնել ոչ մի բանի վրա: Պարսից թագավորության առջև հառնած խնդիրների բացահայտում հանդիսացավ, սակայն, ամենից առաջ հենց հայերի հանդեպ դրսևորված քաղաքականությունը, որն էլ իր հետևից, շղթայականության սկզբունքով, բացահայտեց նաև մյուս խնդիրները:

Իրոք, իր ժամանակին հայերը, մի կողմից ծանր տանելով Մավրիկոսի մանրախնդրության աստիճանի հասնող համակարգված քաղաքականությունը, իսկ մյուս կողմից էլ, ի դեմս կառավարչական դեռևս լրջագույն խնդիրներ ունեցող Պարսից թագավորության տեսնելով համեմատական մի ազատություն, աստիճանաբար հակվել էին դեպի Խոսրով II-ի իշխանությունը, իսկ սկիզբ առած պատերազմում էլ, դատելով նկարագրվող դեպքերին գործնականում ականատես Սեբեոսի խոսքերի տողատակերից,

---

բերեցիր մեռնելու»: Դրանցից մեկի միջոցով էլ հենց հոռոմները իմացան, թե ինչ էին խոսել իրար մեջ»,- հայտնում է Հովհան Եփեսացին (Հովհան Եփեսացի «Եկեղեցական պատմություն», մաս 3, գիրք 6, գլուխ 8):

նույնիսկ ամենևին էլ դեմ չէին նաև վերջինիս հաջողությանը՝ համենայն դեպս գոնե սկզբնական տարիներին: Սկսած 610-ական թվականներից, սակայն, հավասար համեմատական արյաց արքայի ձեռք բերած հաջողություններին, մի կողմից աստիճանաբար սկսեց փոխվել վերջինիս վերաբերմունքը արդեն նաև հայերի նկատմամբ, իսկ մյուս կողմից էլ հայերն իրենք, աստիճանաբար ուժեղացող թափով ենթարկված այս անգամ արդեն պաշտոնական Տիզբոնի ուժեղացող իշխանությանը, սկսեցին երես թեքել Խոսրով II-ից, իսկ այդ ամենն էլ այն բանի ֆոնին, որ Բյուզանդական կայսրության գահին բազմած հայազգի Հերակլես I-ն ինքը աստիճանաբար սկսեց հայերին սիրաշահելու քաղաքականություն վարել: Հիշատակված գործընթացն իր տրամաբանական ավարտին հասավ, թերևս, 617 թվականին, երբ մինչ այդ Տիզբոնում հայերի շահերն ամենաբարձր ու պատշաճ մակարդակով ներկայացնող Սմբատ Բազմահաղթ Բագրատունին հեռացավ կյանքից, իսկ վերոհիշյալ իմաստով էլ նրան արժանի փոխարինող չգտնվեց, թեև ստեղծված պայմաններում այն, թերևս, չէր էլ կարող գտնվել: Հաջորդ տարիները բերեցին հայերի և պաշտոնական Տիզբոնի հարաբերությունների միայն վատթարացման և արդեն 620 թվականի դրությամբ առկա էր մի իրավիճակ, երբ Հայաստանը հերթական անգամ կանգնած էր ապստամբության եզրին՝ սկիզբ էր առնում Մարզպանական Հայաստանի VII ապստամբությունը (620-628)՝ վերջինը Սասանյանների տիրապետության դեմ հայերի ձեռնարկած ապստամբություններից:

Գլուխ 47
Մարզպանական Հայաստանի VII ապստամբությունը

Մարզպանական Հայաստանի VII ապստամբությունը պատմական գրականության մեջ բավարար լուսաբանում չի ստացել, քանի որ վերջինիս հիմնական սկզբնաղբյուր է հանդիսանում Հովհան Մամիկոնյանի հայտնի «Տարոնի պատմություն»-ը, որը նույնիսկ չի էլ դիտարկվել կոնկրետ պատմական մակարդակում: Կարծում եմ, սակայն, որ ժամանակն է լրացնել այդ բացը: Այս առումով ամենից առաջ հարկ է նշել, որ Հովհան Մամիկոնյանի մոտ առկա են իր, իսկ գուցե նաև հետագա կրկնակողների մեղքով առկա ժամանակագրական զգալի անհարթություններ, որոնք, սակայն, պատշաճ ուղղումներ ստանալուց հետո, արդյունքում վեր են հանում մեր այս հերթական ապստամբության փառահեղ դրվագների իրական պատկերը: Մինչև առաջ անցնելը, սակայն, մի պահ ևս կանգ առնենք և փորձ կատարենք հիմնավորել հենց 620 թվականի պարագան: Այս թվականը նշվում է որպես հիմնավորում ունենալով հետևյալ տրամաբանությունը:

Այսպես, Ծծմահովտի ճ-մ-ը առաջինն է Հովհան Մամիկոնյանի կողմից հիշատակվող 2 ճակատամարտերից կազմված այն շղթայում, որի գլխավոր գործող անձը վերևում արդեն հիշատակված «Գայլ» մականվանյալ Վահան Մամիկոնյանն է: Իր հերթին Հովհան Մամիկոնյանը, սկսելով պատումը ճակատամարտերի այս նոր շղթայի մասին, իրավիճակը, ըստ էության, նկարագրում է այնպես, որ ճակատամարտերի այն առաջին շղթայից, որին իր մասնակցությունն է բերել Վահանը, արդեն անցած է եղել է բավականին ժամանակ, երբ այնտեղ «Գայլը» ներկայանում էր որպես երիտասարդ և ուժով լեցուն մի անձնավորություն, իսկ այստեղ նա, թեև կրկին եռանդով լի, բայց արդեն բավականին տարիքն առած մի այր է, որն ունի Սմբատ անունով հասուն մի որդի: Այսպիսով՝ ակնհայտ է, որ, հաշված 573 թ-ից, անցած է եղել առնվազն մի քանի տասնամյակ, իսկ որ ավելի հավանական էր՝ մոտ 50 տարի, քանի որ, 573 թվականին հիշատակված երիտասարդ Վահան Գայլ Մամիկոնյանը 620 թվականին իրոք արդեն լիովին կարող էր ընկալվել որպես ծեր մի մարդ, որը միաժամանակ նաև բոլոր հնարավորություններ ուներ ունենալ հասուն տարիքի մի որդի: Իր հերթին, Բյուզանդա-Պարսկական VI պատերազմի իրադարձությունների վերլուծությունը ևս մեզ բերում է հետևության, որ խոսքը կարող է գնալ 620 թ-ի մասին:

Այսպես, սկսելով պատումը ճակատամարտերի այս նոր շղթայի մասին, Հովհան Մամիկոնյանը, կարծես, իմիջիայլոց հայտնում է. «*Երբ պարսից թագավորը (**Պարսից թագավորության արքա Խոսրով II-ը – Մ.Հ.**) երկրորդ անգամ շարժվեց գնաց հույների դեմ, այնժամ մտաբերեց իր քրոջ որդի Միհրանի մահը և նրա հորեղբայր Վախթանգին 30.000 ընտիր հեծելազորով ուղարկեց Հայոց երկիրը՝ Տարոն*»: «Առաջին անգամը» կամ, այլ խոսքերով ասած, Բյուզանդա-Պարսկական VI պատերազմում Պարսից թագավորության ձեռնարկած ռազմավարական առաջին հարձակումը, սկիզբ առավ 603 թ-ի վերջին և մեծ ծավալներ ընդունեց 604 թվականից սկսած, որի արդյունքում արդեն 617 թ-ի վիճակով Պարսից թագավորության տիրապետության տակ հայտնվեցին Ասորիքի ու Եգիպտոսի, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Փոքր Ասիայի հիմնական մասերը: Դրանից հետո, արդեն 618 թ-ին, Քաղկեդոնի ուղղությամբ գործող հարվածային բանակի ղեկավար Շահեն Վահմանզադականը, ինչպես արդեն ասվեց, հայտնի չէ իր նախաձեռնությամբ թե պարսից արքայի հրամանով, խաղաղության բանակցություններ սկսեց Հերակլես I-ի հետ, սակայն Խոսրով II-ը կտրուկ ընդհատեց դրանք և մահապատժի ենթարկեց Շահենին, որից հետո, խոշոր ուժեր կենտրոնացնելով կայսրության դեմ, պատրաստվեց սկսել այդ պատերազմում Պարսից թագավորության ռազմավարական երկրորդ հարձակումը, որը պետք է հերթական անգամ ակտիվացներ մարտական գործողությունները: Այս ամենի ֆոնին իրոք հավանական է համարել, որ հենց այդ ժամանակ էր, որ այս խիստ ինքնասեր արքան նաև որոշեց վերջնականապես մաքրել հաշիվները ըմբոստ դիրք ունեցող Տարոնի լեռնականների հետ, որոնք այդ ժամանակ փաստորեն գործում էին Պարսից թագավորության բանակի խորը թիկունքում:

Այս առումով հատկանշական է, որ հենց 618-620 թվականներին էր, ոչ ուշ և ոչ շուտ, որ կայունացած ռազմական իրավիճակը հնարավորություն էր տալիս Պարսից թագավորությանը զբաղվել ներքին հաշվեհարդարներով, ընդ որում հենց այս ժամանակահատվածում էր նաև, որ Խոսրով II-ը Բյուզանդական կայսրության դեմ պատերազմում հասել էր հսկայական հաջողությունների և նրան կարող էր թվալ, թե հայկական օժանդակությունն արդեն այնքան էլ կարևոր չէ: Միաժամանակ ամենևին էլ պատահական չպետք է համարել նաև այն հանգամանքը, որ մինչ այդ Խոսրով II-ի մոտ հսկայական հեղինակություն ունեցող և, ըստ էության, պարսից արքունիքում հայերի միասնական ներկայացուցիչը հանդիսացող ու նրանց շահերը պաշտպանող Սմբատ Բագրատունու մահը թվագրվում է 617 թ-ով, որից հետո էլ, պայմանավորված այս հայրենանվեր անձնավորության մահով, աստիճանաբար սկսում է վատանալ նաև պաշտոնական Տիզբոնի վերաբերմունքը իրենց եռանդուն ներկայացուցիչը կորցրած հայերի նկատմամբ: Պետք է ավելացնել, սակայն, հատկանշական մեկ դետալ ևս:

Այսպես, ըստ Հովհան Մամիկոնյանի, սկիզբ առած իրադարձությունները շարունակվել են ընդհանուր առմամբ երեք տարի և ավարտվել են պարսկական կողմի ծանր կորուստներով: Այսինքն, եթե Շահենի մահապատիժը դնենք 618 թ-ին, 619 թ-ը համարենք ծախսված ուժերի կենտրոնացման վրա և իրադարձությունների սկիզբը դնենք 620 թվականին, ապա երեք տարին կավարտվի 622 թ-ին: Արդյունքում, երբ հայերի դեմ պատերազմում լուրջ կորուստներ կրած Պարսից թագավորության երկրորդ էշելոնի բանակը լրջորեն թուլացավ, 623 թվականին Հերակլես I-ը հնարավորություն ստացավ, մի կողմ թողնելով Քաղկեդոնի մոտ գործող թշնամու առաջին էշելոնի բանակը, թևային մարտարշավով դուրս գալ երկրորդ էշելոնում գործող թշնամու բանակի դիրքեր՝ ձեռնարկել իր արևելյան հայտնի արշավանքներից առաջինը:

Այսպիսով, եթե ընդունենք այս սխեման, ապա Բյուզանդա-Պարսկական VI պատերազմի ավարտական փուլը, ըստ էության, լրացվում է իրադարձությունների անչափ կարևոր մի շղթայով, ընդ որում միաժամանակ հիմնավոր կերպով իր բացատրությունն է գտնում նաև Պարսից թագավորության թիկունքի անակնկալ «փլուզումը», որի պատճառները հստակ արտահայտված չեն ոչ հայկական

աղբյուրներում և որը, ինչպես արդեն ասացինք, թույլ տվեց Հերակլես Ի-ին իրականացնել իր խորը մարտարշավը՝ դրանով իսկ վտանգի տակ դնելով Քաղկեդոնի ուղղությամբ գործող Պարսից թագավորության հարվածային բանակի հաղորդակցման ուղիները և արդյունքում լուրջ հարցականի տակ դնել արդեն վերջինիս հաջողության ընդհանուր հնարավորությունները: Եվ այսպես, հաշվի առնելով այս ամենը, հավանական է համարել, որ հենց 620 թվականին էր, որ Խոսրով II-ը, սկսելով մղվող պատերազմում Բյուզանդական կայսրության դեմ ռազմավարական մակարդակի իր երկրորդ հարձակումը, միաժամանակ հերթական հարձակումը ձեռնարկեց նաև Տարոնի ուղղությամբ՝ նպատակ ունենալով վերջնականապես հենց իր բնում խեղդել հայերի ապստամբությունը: Հենց այս հանգամանքն էլ բերեց արդեն բացահայտ տեսք ստացած ապստամբության ծավալմանը կոնկրետ ռազմաքաղաքական մակարդակում, ընդ որում ապստամբության գլուխ կանգնեցին Մամիկոնյանները՝ Վահան Գայլ Մամիկոնյանի և նրա որդի Սմբատի գլխավորությամբ:

Հետագային անհրաժեշտ է անդրադառնալ առանձին մեջբերումների տեսքով.

620 աշուն – ***<u>Ծծմահովտի ճ-մ</u>*** (Տարոն և Հաշտեանք գավառների սահման)[1]

Վախթանգ Միհրանյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (30.000), կողմնապահ ջոկատներ թողնելով ***<u>Ապահունիքում,</u>*** հիմնական ուժերով մտավ Տարոն և, բանակելով ***<u>Ձյունակերտում,</u>*** սկսեց բանակցություններ: Չհասնելով հաջողության՝ Վախթանգը իր բանակից առանձնացրեց մի ջոկատ (6.000, որից 4.000 հեծյալ) և Ռահանի գլխավորությամբ ուղարկեց հայերի դեմ: Թշնամին բանակեց ***<u>Ծծմահովտում</u>***: Այս ընթացքում Վահան Գայլ Մամիկոնյանի ընդհանուր և Սմբատ Մամիկոնյանի անմիջական ղեկավարությամբ գործող Մամիկոնյաց (18.000), Ողնուտյաց իշխանի գլխավորած Ողնուտյաց (5.000), Արջուի գլխավորած Արջուտյաց (4.000), Վարազ Միհարվածանի Պալունու գլխավորած Պալունյաց (2.200) և Սմբատ Հաշտենցու գլխավորած Հաշտենից (600) միացյալ գնդերից ստեղծվեց համահավաք հարվածային ջոկատ (3.000), քանի որ նախատեսվել էր ճամբարած թշնամուն գիշերային անակնկալ հարված հասցնել:

I փուլ – Հայկական մի ջոկատ Սմբատ Մամիկոնյանի գլխավորությամբ աննկատ թափանցեց թշնամուն ճամբար և առևանգեց բանակային նժույգներին:

II փուլ – Հարձակման անցավ Հայկական հիմնական բանակը և գլխովին ջախջախեց թշնամուն, ընդ որում, մարտադաշտում հանդիպելով Ռահանին, Հաշտենից իշխանը մենամարտում հաղթեց ու սպանեց նրան:

III փուլ – Հայկական բանակը շրջապատեց հակառակորդի բանակի մնացորդներին, թշնամու ռազմիկները խնդրեցին խնայել իրենց, սակայն հայերը անողոք գտնվեցին և գրեթե բոլորին էլ ոչնչացրեցին:

Հայերը կորցրին մոտ 500, թշնամին՝ 5.400 զինվոր: Թշնամու բանակից փրկվեց միայն 600 հոգի, որոնց, սակայն, գազազած Վախթանգն ինքը հրամայեց գլխատել:

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

620 աշուն – ***<u>Մեղրագետի ճ-մ</u>*** (Տարոն)[1]

Վախթանգ Միհրանյանը Ասուրի գլխավորությամբ Հայկական բանակի դեմ ուղարկեց պարսկական մեկ այլ բանակ (8.000), որը ճամբարեց Մեղրագետի ափին: Դրանից հետո Ասուրը վիրավորական տոնով հայերից պահանջեց դադարեցնել դիմադրությունը: Ի պատասխան դրա՝ Վահան Գայլ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (6.000) շարժվեց թշնամուն ընդառաջ: Մոտենալով իրար՝ կողմերը մարտակարգ ընդունեցին:

I փուլ – Հայկական բանակն անցավ հարձակման: Բռնկվեց համառ մարտ, որի ընթացքում Սմբատը մարտադաշտում հանդիպեց Ասուրին և թրի հզոր հարվածով գլխատեց նախ հակառակորդի ձիուն, իսկ հետո նաև՝ Ասուրին: Միաժամանակ 9 տապարակիրներ շրջապատեցին Վահանին և ձեռնամարտում ծանր վերքեր հասցրեցին նրան: Վերջին պահին, սակայն, Սմբատը հասավ օգնության և, կոտորելով թշնամիներին ու սպանելով նաև Ասուրի որդուն, փրկեց հորը:

II փուլ – Պարսից թագավորության բանակը վերջնական պարտություն կրեց և, հետապնդվելով Հայկական բանակի կողմից, դիմեց փախուստի:

Հայերը կորցրին մոտ 1.500, թշնամին՝ 5.000 զինվոր:

Ստեղծված պայմաններում Վախթանգը դադարեցրեց ակտիվ մարտական գործողությունները՝ դրանք հետաձգելով հաջորդ տարվան: Նույն տարվա ձմռանն էլ ստացած վերքերից Վահանը մահացավ, իսկ Տարոնի իշխան հռչակվեց նրա որդի Սմբատը:

Հետագային անհրաժեշտ է անդրադառնալ առանձին մեջբերման տեսքով.

621 գարուն – ***<u>Մահվան ագարակի ճ-մ</u>*** (Անդովկ լեռան մոտ)[2]

Վախթանգ Միհրանյանը Սմբատ Մամիկոնյանից պահանջեց դադարեցնել դիմադրությունը և հնազանդվել, սակայն, ստանալով մերժողական պատասխան, Պարսից թագավորության համալրված բանակով (20.000) կրկին դուրս եկավ ռազմարշավի: Տեղեկանալով թշնամու առաջխաղացման մասին՝ Սմբատը կատարեց համընդհանուր զորահավաք և կենտրոնացրեց զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց, ընդ որում դեռևս ռազմական բավարար պատրաստություն չունեցող աշխարհազորի մի մասը (2.500) Մամիկոնյաց իշխանը ռազմական հետագա պատրաստություն ստանալու համար իր որդի Վահանի գլխավորությամբ թողեց Մուշում, իսկ ինքը, գլխավորելով մնացած բանակը (9.000, որից 4.000 հեծյալ), շարժվեց թշնամուն ընդառաջ:

Մոտենալով հակառակորդին՝ Սմբատ Մամիկոնյանը հետևազորը թողեց ագարակի մոտ գտնվող մի բլրի վրա, իսկ ինքը, գլխավորելով հեծելազորը, առաջ շարժվեց: Իր հերթին Վախթանգը, կարծելով, թե ողջ Հայկական բանակը կազմված է միայն իր դեմ շարժվող հեծելազորից, մի ուժեղ ջոկատով (9.000) առաջ շարժվեց և շրջապատեց վերջինիս:

I փուլ – Գիշերը շրջապատման մեջ հայտնված Հայոց հեծյալազորայինները, ձեռքերում ունենալով վառվող ջահեր, շրջապատման օղակի ներսից, իսկ բլրի վրա ամրացած հետևազորայիններն էլ շրջապատման օղակի դրսից միաժամանակյա համակցված հարված հասցրին թշնամուն և ծանր պարտության մատնեցին վերջինիս: Վախթանգը 200 հեծյալների ուղեկցությամբ դիմեց փախուստի, իսկ ձեռք բերված մեծ քանակությամբ նժույգները Սմբատը ուղարկեց Մուշ, որտեղ

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:
[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

գտնվող հետևակ աշխարհազորայինները դարձան հեծյալներ:

II փուլ – Հաջորդ օրը Սմբատը ութ ժամ տևած հմուտ զորաշարժներով այնքան ժամանակ խուսափեց մարտից, մինչև Մուշից ժամանեցին Վահանի գլխավորած հեծյալ աշխարհազորայինները: Դրանից հետո Հայկական բանակը կրկին բանակեց ագարակի մոտ գտնվող բլրի վրա: Շուտով Վախթանգի գլխավորած Պարսից թագավորության բանակը (11.200) մոտեցավ բլրին և բանակեց հայերից ներքև: Նույն գիշերն էլ Սմբատը մի հեծյալ ջոկատ (4.000) ուղարկեց թշնամու թիկունքի ուղղությամբ: Վերջինս, բաժանվելով փոքր խմբերի, լեռնային արահետներով անցավ թշնամու թիկունք և, իր հերթին բաժանվելով երկու հավասար մասերի, դարանեց թշնամու թիկունքի աջ ու ձախ կողմերում:

III փուլ – Մյուս օրն առավոտյան Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման բլրի վրա տեղակայված Հայկական բանակի ուղղությամբ և բռնկված համառ մարտում սկսեց նեղել վերջինիս:

IV փուլ – Հայկական ջոկատը թիկունքից հարվածեց թշնամուն, որը շրջապատվեց ու համառ մարտում գլխովին ջախջախվեց: Այդ ընթացքում, մարտադաշտում հանդիպելով նժույգի վրա գործող Վախթանգին, Սմբատը հեծյալ մենամարտում ընդհարվեց վերջինիս հետ: Մենամարտի ընթացքում, սկզբում գործելով մերձամարտում, Սմբատը թրի հզոր հարվածներով վնասեց Վախթանգի զրահը և վերքեր հասցրեց նրան, սակայն Վախթանգն ի վերջո կարողացավ պոկվել հակառակորդից ու հեռանալ նրանից: Դրանից հետո, նժույգի վրա կրկին սուրալով Մամիկոնյաց իշխանի ուղղությամբ, Վախթանգը նիզակով այնպիսի ուժի հարված հասցրեց իր դեմ սուրացող Մամիկոնյաց իշխանին, որ նիզակը խրվեց վերջինիս զրահի մեջ: Սմբատ Մամիկոնյանը, սակայն, չտապալվեց նժույգից, այլ, օգտվելով այն բանից, որ իրար հանդիպած հակառակորդների նժույգները հեծյալներին կրկին տանում են տարբեր ուղղություններով, արագորեն հետ դարձրեց իր նժույգը և, կրկին սլանալով նույնն անել չհասցրած հակառակորդի ուղղությամբ, հզոր հարվածով թիկունքից նիզակահարեց Վախթանգին ու գետին տապալեց: Դրանից հետո Սմբատը մոտեցավ տապալված հակառակորդին և գլխատեց նրան, ինչից անմիջապես հետո էլ, արդեն հետևակ վիճակով, հարձակվեց սեփական իշխանի համար վրեժ լուծել փորձող Վախթանգի երկու զինակիրների վրա և գործելով մարտական մուրճով, հաղթեց ու սպանեց նաև նրանց:

Հայերը կորցրին մոտ 2.000, թշնամին՝ 10.800 զինվոր:

Եվ այսպես, պաշտոնական Տիզբոնի նախատեսած հարվածը Տարոնի ուղղությամբ վերջացավ լիակատար անհաջողությամբ, ընդ որում հայերը, շարունակելով առաջխաղացումը, մտան նաև Պորպ (Տուրուբերան նահանգ, Տարոն գավառ)[1]: Միհրանյան իշխանի անհաջողությունը, սակայն, միայն ուժեղացրեց պաշտոնական Տիզբոնի հայատյաց տրամադրությունները, որտեղ պատրաստվեցին նոր հարձակման:

Այս առումով մինչև առաջ անցնելը հարկ է նշել, որ, ինչպես 449-450 թվականներին, պայմանավորված Հայաստանում զարգացող իրադարձություններով, այժմ ևս խիստ երկիմաստ էր դարձել հայկական այն հեծելագնդի դրությունը, որը, սկսած դեռևս Սմբատ Բագմահաղթ Բագրատունու ժամանակներից, գործում էր Պարսից թագավորության արևելյան սահմաններում: Ստեղծված պայմաններում հայկական հեծելագնդի ղեկավարությունը ընդունեց նույն այն որոշումը, որն ընդունվել էր նախորդ անգամ 449-450 թվականների՝ լքել դիրքերը և, մի լայն շրջանց կատարելով Կասպից ծովի հյուսիսային ափերով, հյուսիսից վերադառնալ Հայաստան: Խնդիրը մեծ հաշվով հաջողությամբ կյանքի կոչվեց և 621 թվականին Հայոց այրուձիու ռազմիկներն արդեն Հայաստանում

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

էին[1]:

621 թվականի աշնանը Սուրեն Միհրանյանի գլխավորած բանակը հերթական անգամ մոտեցավ Տարոնին: Այս անգամ, սակայն, կարծես թե, ավելի շատ խնդիր էր դրված բանակցել, քանի որ պարսից զորավարը ցանկանում էր գերությունից ազատել իր զոհված քրոջորդի Վախթանգի ընտանիքի անդամներին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

621 աշուն – ***Սուրբ Կարապետ վանքի ճ-մ***[2]

Վախթանգի մորեղբայր Սուրեն Սուրենյանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (9.000) մտավ Տարոն և ճամբարեց Արդնի գյուղի մարգագետիններում: Դրանից հետո Սուրենը, նպատակ ունենալով հասնել գերությունից Վախթանգի կնոջ և տղայի ազատմանը, սկիզբ դրեց բանակցությունների: Այս ընթացքում Սմբատ Մամիկոնյանը, իր հիմնական բանակը (6.000) թողնելով Մեղտիում, բանակցությունների ժամանած Սուրենին առաջարկեց իր հերթին ապահովության համար մեկ հեծյալ ջոկատ (500) թողնել Մեծամորում: Ավարտելով ուժերի տեղաբաշխումը՝ Սմբատի գլխավորած Մամիկոնյան (մոտ 500) և Վարազ Միհարվածանի Պալունու գլխավորած Պալունյաց (մոտ 200) միացյալ հեծյալ գնդերը, ինչպես նաև Սուրենի գլխավորած հեծյալ ջոկատը (400) մոտեցան վանքին:

I փուլ – Հայկական բանակը անակնկալ հարձակումով ոչնչացրեց հակառակորդին, ընդ որում մարտի ժամանակ Վարազը մենամարտում ընդհարվեց Սուրենի հետ և սպանեց նրան, իսկ պարսից զորավարի գերված ուղեկիցներին էլ հայերը կախեցին մոտակա ծառերից:

II փուլ – Հայերը շրջապատեցին Մեծամորում տեղակայված թշնամու ջոկատը ու ոչնչացրին նաև այն:

Հայերը կորցրին մոտ 100, թշնամին՝ 900 զինվոր:

621 աշուն – ***Արդնի գյուղի ճ-մ***[3]

Թշնամու բանակի հրամանատարության ոչնչացումից հետո Սմբատ Մամիկոնյանի և Վարազ Միհարվածանի Պալունու ընդհանուր ղեկավարությամբ գործող մասերի բաժանված Հայկական բանակը (մոտ 5.500) սկսեց գործել Պարսից թագավորության բանակի մնացած մասերի (մոտ 8.100) ուղղությամբ:

I փուլ – Հայկական մի ջոկատ մտավ Արդնու մոտ ճամբարած հակառակորդի ճամբար և առևանգեց 2.000 նժույգ, սակայն թշնամու մի ջոկատ (2.020, որից 520 հեծյալ) սկսեց հետապնդել հեռացող հայերին:

II փուլ – Օգտվելով այն բանից, որ իրենց հետապնդող հակառակորդի հեծելազորայինները կտրվել են սեփական հետևազորից, ***Գողոց աղբյուրի*** մոտ հայերը դարան դրեցին և անակնկալ հարձակումով լիովին ոչնչացրին թշնամու հեծելազորը: Դրանից հետո, վերցնելով նաև իրենց ձեռքում հայտնված նոր նժույգները՝ հայերը շարունակեցին նահանջը և պատսպարվեցին մոտակա անտառում՝ Սերեմի գլխավորությամբ թողնելով վերջապահ մի ջոկատ (500):

III փուլ – Հայկական վերջապահը հարձակվեց մոտեցող հակառակորդի վրա, որից որոշ ժամանակ անց հարձակման անցավ նաև հիմնական բանակը: Արդյունքում, թեև Սերեմը նետի մահացու հարված ստացավ և սպանվեց, սակայն թշնամին ինքը գլխովին ջախջախվեց՝ միայն այդ մարտում կորցնելով 992 զինվոր:

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 29:
[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:
[3] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

IV փուլ – Նախորդ պարտությունից փրկված թշնամու ռազմիկները փորձեցին թաքնվել ***Ողական ամրոցի*** մոտակայքում գտնվող քարայրում, բայց անակնկալ հարձակման ենթարկվեցին ամրոցի կայազորի (150) կողմից և ոչնչացվեցին:

V փուլ – Մինչ զարգանում էին նախորդ իրադարձությունները՝ Սմբատի ու Վարազի գլխավորած հեծելազորայինները, թաքնվելով ձորակում և բաց թողնելով իրենց մոտից սլացող ու թշնամու նժույգներն առևանգած հայերին և նրանց հետապնդողներին, կանչեցին Մեղտիում գտնվող հիմնական բանակը (6.000), սակայն, մինչ այն կժամաներ, Սմբատը հակառակորդի վրա հարձակվելու ու վերջինիս մարտի քաշելու համար առաջ ուղարկեց մի հեծյալ ջոկատ (100): Վերջինս կատարեց իր առջև դրված մարտական խնդիրը և շուտով երևաց նրան հետապնդող Պարսից թագավորության բանակը: Այս պայմաններում կողմերը մարտակարգ ընդունեցին, ընդ որում Սմբատը գլխավորում էր Հայկական բանակի աջ, իսկ Վարազը՝ ձախ թևը:

VI փուլ – Հայկական բանակը հակահարձակման անցավ հարձակման անցած թշնամու հետևակի (6.000) ուղղությամբ և բռնկեց համառ մարտ: Հայկական բանակի աջ թևը հզոր հարվածով խորը խրվեց թշնամու մարտակարգի մեջ, բայց հակառակորդի հսկայական թվական գերակշռությունը սկսեց իրեն զգացնել տալ և արդյունքում Սմբատի ջոկատը շրջապատվեց ու հայտնվեց ծանր վիճակում, իսկ թշնամու բազմաթիվ ռազմիկներ էլ շրջապատեցին անձամբ Սմբատին և լուրջ հարվածներ հասցրին նրան:

VII փուլ – Օգտվելով նրանից, որ թշնամու կենտրոնի ուժերը շարժվել են դեպի սեփական ձախ թևի դեմ գործող Սմբատի ուժերի դեմ, Հայկական ձախ թևը թիկունքից հարվածեց հակառակորդի կենտրոնին, ընդ որում այդ ընթացքում Վարազը միջաթափանց նիզակահարելով տապալեց հակառակորդի մի ռազմիկի և, կոտորելով Սմբատին շրջապատողներին, ազատեց ինչպես Մամիկոնյաց իշխանին, այնպես էլ նրա ռազմիկներին:

VIII փուլ – Պարսից թագավորության բանակի աջ թևն ու կենտրոնը վերադասավորեցին ուժերը և, շրջապատելով արդեն Հայկական երկու ջոկատներին, կրկին սկսեցին հաղթանակ տանել:

IX փուլ – Մարտադաշտ հասավ Վահան Մամիկոնյանի ու Սմբատ Հաշտենցու գլխավորած Հայկական բանակը (6.000) և, հզոր հարվածով ճեղքելով պաշարման օղակը, շրջապատեց թշնամուն ու սկսեց անխնա կոտորել: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը գլխովին ջախջախվեց:

Հայերը կորցրին մոտ 1.000 զինվոր, թշնամին՝ 7.800 սպանված, 300 գերի:

Այսպիսով՝ հայերին հնազանդեցնելու հերթական փորձը, որը պաշտոնական Տիզբոնը ձեռնարկեց 621 թվականին, վերջինիս այս անգամ ևս հաջողություն չբերեց: Դրանից հետո, այնուհանդերձ չցանկանալով համակերպվել անհաջողության հետ, ինչպես նաև չցանկանալով սեփական, ըստ էության, խորը թիկունքում ունենալ անհնազանդության մի օջախ, Խոսրով II-ը իրականացրեց առկա ուժերի վերախմբավորում և պատրաստվեց հայերին հարված հասցնել արդեն 622 թվականին: Մինչև առաջ անցնելը պետք է նշել սակայն, որ նույն 621 թվականին, թեև այդ մասին Կոստանդնուպոլսում արդեն, ըստ էության, ոչ-ոք չէր էլ մտածում, վերջնականապես փլուզվեց դրությունը նաև Պիրենյան թերակղզում:

Իրոք, Վեսթգոթական թագավորության արքա Սիսեբատը մի քանի տարի տևած անհաջող բանակցություններից հետո մի կողմից արդյունք չունենալով, իսկ մյուս կողմից էլ վերջնականապես համոզվելով, թե ինչ ծանր դրության մեջ է կայսրությունը, որոշեց սկիզբ դնել ակտիվ ռազմական գործողությունների, սակայն նա շուտով մահացավ և արքա հռչակվեց վերջին տարիների նրա հավատարիմ զորավար հանդիսացած Սվինտիլան (621-631), որը մասնակցել էր Սիսեբատի բոլոր ռազմական

ձեռնարկումներին: Սվինտիլան, եռանդուն կերպով կյանքի կոչելով իր նախորդի ծրագրերը, անմիջապես էլ անցավ ռազմական գործողությունների և, տիրելով լիակատար ռազմավարական նախաձեռնությանն ու օգտվելով այն բանից, որ Պիրենյան թերակղզու հարավում գտնվող կայսրության տիրույթները նույնիսկ սկզբունքորեն իսկ չէին կարող օգնության հույս ունենալ կենտրոնից, 622 թվականի գարնանը գրավեց Կորդովան, Մալագան և Կարտաքենան[1]: Արդյունքում՝ Պիրենյան թերակղզում կայսրությունը վերջնականապես կորցրեց իր բոլոր տիրույթները: Պիրենյան թերակղզում կայսրությանը վրա հասած աղետը, սակայն, Հերակլես I-ին ոչ մի կերպ չէր կարող շեղել Արևելքի հոգսերից, որոնք առաջիկա տարում հերթական զարգացումն ապրեցին, ի դեմս ամենից առաջ Պարսից թագավորության կողմից հայերին հասցված հարվածների:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

[1] Իսիդոր Սեվիլիացի «Գոթերի, վանդալների և սվեվների պատմություն», գլուխ 62; Անանուն «Մոսարաբական ժամանակագրություն», գլուխ 18:

622 գարուն – ***Հոնընկեցի ճ-մ*** (Մինչեփրատյան Ծոփք, Հաշտեանք գավառ)[1]

Տիրանի գլխավորած Պարսից թագավորության բանակը (20.000, որից 6.000 թյուրք) մտավ ***Ապահունիք***:: Այստեղ Տիրանը ընդունեց բանակցությունների նպատակով իր մոտ ժամանած Վահան Մամիկոնյանին և նրանից պահանջեց ոչ միայն դիմադրության լիակատար դադարեցում, այլև՝ Մուշեղ Քաջակորով ու Վահան Գայլ Մամիկոնյանների աճյունների հանձնում: Առկա արդյունքներով հոր մոտ վերադարձած Վահանը այդ մասին տեղեկացրեց Սմբատ Մամիկոնյանին, իսկ այդ ընթացքում հակառակորդը շարունակեց առաջխաղացումը և, մտնելով ***Հաշտեանք***, ճամբարեց:

Ի պատասխան այս ամենի՝ Սմբատ Մամիկոնյանը կենտրոնացրեց Տարոնում առկա զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց, ինչից հետո Հայկական բանակը (9.940, որից 5.000 հեծյալ) շարժվեց Հաշտեանք և ճամբարեց ***Սերեմավայրում***: Դրանից հետո, տեղում պարզելով իրավիճակը, Մամիկոնյաց իշխանը որոշեց օգտվել Տիրանի մարտավարական սխալից, որը ոչ միայն մասնատել էր ուժերը՝ մի խոշոր ջոկատ (3.000) առանձնացնելով հիմնական ուժերից և հետ ուղարկելով Ապահունիք, այլև՝ վարձկան թյուրքերին թույլ էր տվել բանակել հիմնական բանակի ուժերից բավականին հեռու:

I փուլ – Գիշերը Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայկական մի ջոկատ երկու անգամ հարձակում գործեց թյուրքերի ճամբարի վրա, ընդ որում առաջին անգամ սպանվեց Տիրանի որդին և ոչնչացվեցին ևս երեք իշխաններ, իսկ երկրորդ հարձակման ժամանակ էլ Վահանը սպանեց Տիրանին:

II փուլ – Վահանը 100 ջորիների վրա ուղղահայաց երկաթե զրահներ ամրացրեց և մոտեցավ թյուրքերին, ընդ որում յուրաքանչյուր 10 կենդանու մոտ տեղավորվել էր մեկական մարդ, որոնք, մոտենալով թշնամուն, սրերով խթանեցին ջորիներին: Արդյունքում՝ խուճապահար կենդանիները մտան թյուրքերի ճամբար և ոչ միայն ավերեցին այն, այլև առաջացրին մեծ խառնաշփոթ ու խուճապ:

III փուլ – Հայկական բանակը ներխուժեց թշնամու ճամբար և սկսեց իսկական մի ջարդ, ընդ որում թյուրքերը, գիշերային խավարում, կարծելով թե շրջապատվել են հսկայական ուժերի կողմից ու ծանոթ չլինելով տեղանքին, խուճապահար փախուստի մեջ նետվեցին դեպի մոտակա վիհի բերանը և գրեթե ողջ կազմով լցվեցին ձորը: Թյուրքերից փրկվեցին միայն քչերը, իսկ Հայկական բանակին հասավ հսկայական ավար: Պարսից թագավորության բանակը, առավոտյան տեղեկանալով գիշերային իրադարձությունների մասին, առաջնորդ ընտրեց Միհրխոսրովին և շարժվեց հայերին ընդառաջ: Տեղեկանալով այդ մասին՝ Հայկական բանակը ինքը ևս մարտակարգ ընդունեց: Հայկական բանակի առաջին շարքում ծանր հետևակի պաշտպանության ներքո տեղավորվեց թեթև հետևակը, երկրորդ շարքում տեղաբաշխվեց աշխարհազորը, երրորդ շարքում դիրքեր գրավեց հեծելազորը, իսկ չորրորդ շարքում մնաց պահեստազորը: Հայկական բանակի աջ թևը գլխավորում էր Վարազ Միհարվածանի Պալունին, ձախ թևը գտնվում էր Սմբատ Հաշտենցու, իսկ կենտրոնը՝ Վահան Պալունու հրամանի ներքո: Պահեստազորի ղեկավարությունն իրականացնում էր Վահան Մամիկոնյանը: Կենտրոնում էր գտնվում ու միաժամանակ նաև ողջ բանակի ղեկավարումն էր իրականացնում Սմբատ Մամիկոնյանը, որը Հայկական մի ջոկատ (3.000) անցկացրեց թշնամու բանակի թիկունքը և այս ջոկատը, բաժանվելով երեք մասի, աջից, ձախից ու կենտրոնից դարան դրեց:

IV փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման և բռնկվեց համառ մարտ: Արդյունքում՝ հակառակորդի կենտրոնին հաջողվեց աստիճանաբար հետ մղել Հայկական կենտրոնին և շրջապատել այն:

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

V փուլ – Մարտի մեջ մտավ Հայկական բանակի պահեստազորը և հարվածեց հակառակորդին, ինչի արդյունքում Պարսից թագավորության բանակը կենտրոնում պարտություն կրեց ու դիմեց փախուստի: Այս ընթացքում Սմբատը մարտադաշտում հանդիպեց Միհրխոսրովին և, մենամարտում ընդհարվելով վերջինիս հետ, հաղթեց ու սպանեց նրան:

VI փուլ – Հայկական բանակի կենտրոնն ու թևերը զարգացրին հաջողությունը և սկսեցին հետապնդել հակառակորդին, ինչի ընթացքում վերջինիս հարվածեցին նաև դարանակալ ուժերը: Արդյունքում՝ Պարսից թագավորության բանակը ծանր պարտություն կրեց, սակայն վերջինիս խոշոր ուժեր կարողացան հեռանալ մարտադաշտից:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ 9.000 զինվոր:

622 գարուն – ***<u>Արածանիի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Տարոն)[1]

Սմբատ Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 8.000) շարժվեց նախորդ ճակատամարտից հետո հետ քաշվող Պարսից թագավորության բանակի (11.000) հետևից, սակայն վերջինս, Ապահունիքից ստանալով համալրում (3.000), հավաքելով ցրված ուժերը և ձեռք բերելով քանակական զգալի առավելություն, ինքն անցավ ակտիվ գործողությունների: Ավելին, առաջխաղացման արդյունքում ստացվեց այնպես, որ Հայկական բանակը բաժանվեց երեք մասի, երբ Վարազ Միհարվածանի Պալունու գլխավորած ջոկատը (մոտ 2.000) զգալի տարածություն առաջ անցավ, սակայն Վահան Մամիկոնյանի հրամանատարությամբ գործող ջոկատն (մոտ 4.000) իր հերթին հետ մնաց Սմբատ Մամիկոնյանի գլխավորած ջոկատից (մոտ 2.000): Ստեղծված պայմաններում հակառակորդին հաջողվեց գետին սեղմել Վահանի և Սմբատի ջոկատներին ու պարտադրել նրանց մտնել մարտի մեջ:

I փուլ – Վահանի ջոկատը կտրուկ հակահարձակումով փախուստի մատնեց իր վրա հարձակված Պարսից թագավորության բանակին (3.000) և, հետապնդելով երկար տարածություն, անխնա ոչնչացրեց: Այդ ընթացքում, սակայն, Պարսից թագավորության բանակի մյուս մասը սկսեց առավելության հասնել Սմբատի ջոկատի նկատմամբ:

II փուլ – Տեղեկանալով սկսված մարտի մասին՝ Վարազ Պալունին հետ դարձրեց իր ջոկատը և թիկունքից հարվածեց Սմբատի ջոկատին լրջորեն նեղող հակառակորդին, որը խուճապի մատնվեց և դիմեց փախուստի:

III փուլ – Հայկական բանակը երկար տարածություն հետապնդեց թշնամուն և ծանր կորուստներ պատճառեց, ընդ որում Վարազի ջոկատը հասավ մինչև ***<u>Կուրան,</u>*** իսկ Սմբատինը՝ մինչև ***<u>Հովեանք ամրոց</u>***:

IV փուլ – Սմբատի ջոկատը ճակատից, իսկ Հովեանք ամրոցի կայազորը թիկունքից հզոր հարված հասցրեցին թշնամուն և վերջնական պարտության մատնեցին նրան:

Հայերը կորցրին մոտ 1.000, թշնամին՝ 6.480 զինվոր:

Այսպիսով, Մարզպանական Հայաստանի դիմադրության հիմնական կենտրոն հանդիսացած Տարոնի նկատմամբ երեք տարի շարունակ իրականացված հզոր հարձակումները պաշտոնական Տիզբոնի համար ավարտվեցին լիակատար անհաջողությամբ, երբ այդպես էլ չհաջողվեց վերացնել կայսրության դեմ մարտնչող սեփական բանակի թիկունքում գտնվող դիմադրության խոշոր օջախներից մեկը, որը, դրան գումարած նաև, անկայունություն ու ապստամբական տրամադրություններ էր տարածում, ըստ էության, նաև Հայաստանի մնացած մասերում: Այս կապակցությամբ

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

հարկ է նշել, որ մի կողմից կայսրության դեմ մղված մարտական գործողություններում ի հայտ եկած դադարը, իսկ մյուս կողմից էլ թիկունքում Պարսից թագավորության ռազմական մեքենայի ունեցած զգալի անհաջողությունները, ինչպես նաև Պարսից թագավորության ընդհանուր և տարին տարու վրա անշեղորեն վատացող դրությունը, որը բերեց հակառակորդի ճնշման թուլացմանը, Հերակլես Ի-ին հնարավորություն տվեց վերսկսել պայքարը թշնամու դեմ՝ այդ գործն այս անգամ կազմակերպելով արդեն լիովին նոր հիմքերով:

Իրոք, մարտի դաշտում գրեթե տասը տարի կրած անհաջողությունները և թշնամու բացարձակ գերակշռությունը արդեն մեր կողմից քննարկվող ժամանակահատվածում Հերակլես Ի-ին ի վերջո հանգեցրել էին այն մտքին, որ կայսրության ռազմական մեքենան, համենայն դեպս իր այն տեսքով, ինչ տեսքով որ այն գոյություն ուներ նախկին կայսրերի օրոք, իրեն արդեն սպառել է: Խնդիրն ամենից առաջ կայանում էր որակյալ ռազմական կադրերի կիրառմամբ բանակային շարքերը համալրելու անհնարինության մեջ, քանզի գրեթե անվերադարձ կորսված Բալկանյան թերակղզին, ինքնին արդեն ողողված սլավոնական ալիքով, կայսրությանը զրկել էր նախկինում այդքան լայնորեն կիրառության մեջ դրված զինվորական կադրեր ձեռք բերելու հսկայական ռազմական շուկայից, երբ կայսրության բանակը գերմանական տարրով համալրելու այլևս և ոչ մի բաց ու հասանելի հնարավորություն, ըստ էության, այժմ արդեն չկար: Այս պայմաններում Հերակլես Ի-ին չէր մնում այլ բան, քան վերափոխել հինը և, ըստ էության, ստեղծել նորը: Արդյունքում, գործի դնելով ֆինանսական զգալի միջոցներ, կայսրն իր բանակը սկսեց համալրել տեղական և հիմնականում փոքրասիական ու հայկական տարրերից:

Հարկ է նշել, սակայն, որ Փոկասն իրենից հետո իսկական ավերակներ էր թողել այդ թվում նաև ֆինանսական բնագավառում և Հերակլես Ի-ի գահակալման սկզբնական տարիներին վիճակը դեպի լավը առանձնապես չփոխվեց: 620 թվականից սկսած, սակայն, երբ ռազմական գործողություններում մի պահ դադար հայտնվեց, կայսրը հնարավորություն ունեցավ գործի անցնել, ընդ որում պակասող ֆինանսական հնարավորությունների մի զգալի մասը կայսեր տրամադրեց Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոսը (610-638)՝ հանուն ընդհանուր գործի չխնայելով եկեղեցական բոլոր միջոցները և բանը հասցնելով նույնիսկ եկեղեցական ունեցվածքի վաճառքին: Սերգիոսն ինքն ինքնին բացառիկ մի անձնավորություն էր, բացառիկ ամենից առաջ իր կրոնական հայացքներով, ինչի հետևանքները մոտակա տասնամյակներում դեռ պետք է երևային, սակայն այժմ, մի կողմ թողած կրոնական վեճերն և դոգմաները, պատրիարքը սեփական կայսեր մի իսկական գործնական աջակցություն ապահովեց՝ գործի դնելով, ինչպես արդեն ասվեց, եկեղեցական գործնականում բոլոր միջոցները: Եվ այսպես, ֆինանսների հարցը, կարծես թե, լուծվեց և երկրորդ հարցը, որ մնում էր, դա զինվորական բավարար քանակի կադրեր գտնելն էր, սակայն այդ խնդրի լուծումն էլ հուշեց իրավիճակն ինքը:

Բանն այն էր, որ Փոքր Ասիան հնուց ի վեր հանդիսանում էր երկրագնդի ամենաբնակեցված տարածաշրջաններից մեկը և մարդկային զգալի ռեսուրսներ ուներ: Միաժամանակ, երկար հարյուրամյակներ լինելով, ըստ էության, թիկունքային մի երկրամաս և զերծ թշնամական ուղղակի ներխուժումներից, Փոքր Ասիայի բնակչությունն ինքն, ըստ էության, մի կողմից աճ էր ապրել, իսկ մյուս կողմից էլ հեռու էր մնացել ռազմական գործից: Այժմ, սակայն, սկսած արդեն 610-ական թվականների սկզբից, հենց այս տարածաշրջանն էր, որ ոչ միայն հայտնվել էր Պարսից թագավորության բանակի ուղղակի հարվածի տակ, այլև ավելին՝ վերջին տարիներին թշնամու բանակի տիրապետությունն այս տարածաշրջանում, ըստ էության, դարձել էր գերիշխող: Արդյունքում, ահա, այն բանի ազդեցության ներքո, որ պաշտոնական Տիզբոնը նոր ձեռք բերած տարածքները ոչ մի կերպ չէր ձգտում ներառել Պարսից թագավորության ընդհանուր պետական համակարգում և հիշատակված տարածքներում բռնության ու թալանի վրա հիմնված բիրտ մի քաղաքականություն էր իրականացնում, այս մասին

վերևում արդեն խոսվեց՝ կենտրոնական իշխանության հակազդեցության բացակայության պայմաններում ինքնապաշտպանական տարերային միջոցառումների սկսեց դիմել արդեն ինքն իրեն մնացած և ինքնակազմակերպված տեղական բնակչությունը: Որպես հետևանք, գրեթե 10 տարվա ընթացքում այս երկրամասում ձևավորվեց ռազմական գործին շատ մոտ կանգնած մարդկանց մի անկրկնելի շերտ և հենց այդ շերտն էլ ապահովեց Հերակլես I-ին այդքան անհրաժեշտ զինվորական կադրերի առկայությունը: Այս առումով հատկանշական է, որ մարդկանց հիշատակված շերտը, կենաց ու մահու մակարդակում շահագրգռված լինելով կայսերական գործի հաջողությամբ, իսկ հաճախ էլ գործելով նաև անձնական վրիժառության դաշտում, ավելի քան հարմար էր Հերակլես I-ի կողմից ձեռնարկվող գործի համար, իսկ հիշատակված մակարդակում էլ վարձկան և զուտ ֆինանսական շահով գործող գերմանացիների հետ համեմատության որևէ եզրեր էլ ուղղակի արդեն չկային: Արդյունքում, երբ ֆինանսները կային, իսկ ռազմական առումով խիստ մոտիվացված տարրերն էլ հենց ձեռքի տակ էին, մնում էր անել միայն մի վերջին քայլ՝ ֆինանսական միջոցների կիրառմամբ հավաքել առկա ռազմական կադրերին, դրանց զինվորական պատշաճ տեսք ապահովել և դնել գործի մեջ: Հենց այս խնդիրների լուծմամբ էր, ահա, որ զբաղված էր Հերակլես I-ը վերջին տարիներին և արդեն 622 թվականի ամենավերջում կարծես ժամանակը եկավ գործի մեջ դնելու նորակազմ բանակը:

Հերակլես I-ի կազմած հարվածային բանակը, կազմակերպած և մարզեցված անձամբ կայսեր և նրա եռանդուն օգնականների կողմից, որոնց շարքերում հատկապես աչքի էր ընկնում Մժեժ Գնունին, խնդիր ուներ գործել Փոքրի Ասիայի արևմուտքում, Ասորիքում ու Եգիպտոսում գտնվող թշնամու բանակների թիկունքում՝ հաղորդակցության ուղիները հարվածի տակ դնելու միջոցով, ըստ էության, կասկածի տակ դնելով Պարսից թագավորության ռազմական մեքենայի բոլոր ձեռքբերումները և մշտական սպառնալիքի նման կախվելով նաև Տիզբոնի վրա: Այս առումով ոչ պակաս կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Կիլիկիայից հյուսիս-արևելյան, ինչպես նաև Տրապիզոնից հարավ օպերատիվ ուղղությամբ հարվածներ հասցնող բանակները, միանալով գրավված, սակայն չնվաճված Հայաստանում գործող Հայկական բանակի հետ, առիթի դեպքում կարող էին լիովին կտրել հատկապես Փոքր Ասիայում գործող հակառակորդի բանակի հաղորդակցության գործնականում բոլոր ուղիները Պարսից թագավորության հիմնական տարածքի հետ, ընդ որում կայսերական բանակն ինքը նույն Հայաստանից կարող էր համալրումների նորանոր քանակություն ստանալ: Այսպիսով՝ Հերակլես I-ը գործեց, ըստ էության, նույն ռազմավարությամբ, ինչ մի ժամանակ Տիգրան II Մեծը՝ հարվածի տակ թողնելով սպառնալիքի ենթարկված մայրաքաղաքը՝ հիմնական ուժերով ներխուժել հակառակորդի խորը թիկունք և, ռազմավարական հանդիպակաց այդ խաղում գերազանցելով հակառակորդին, ստիպել վերջինիս հետ քաշել ուժերը սեփական մայրաքաղաքից: Հայոց արքայի ռազմավարությունն իր ժամանակին հաջողեց, դատելով ըստ ամենայնի, պետք է հաջողեր նաև բյուզանդական կայսեր ռազմավարությունը:

Եվ այսպես, բանակը կազմակերպված էր, ապագա ռազմավարությունը՝ որոշված, ու մնում էր, ըստ էության, միայն ընտրել գործողությունների պատշաճ ծրագիր, ընդ որում Հերակլես I-ն ու նրա ռազմական տեսաբանները այս առումով ևս հիանալի գործեցին: Կայսրության բանակը իրենից զգալի քանակություն էր կազմում և, ըստ էության, պարզ էր, որ մեկ անգամ անցած ուղով հետ վերադառնալը, հենց միայն բանակի պարենային ու այլ անհրաժեշտ իրերով ապահովման տեսանկյունից, չէր կարող ճիշտ որոշում համարվել: Արդյունքում, հաշվի առնելով վերոգրյալը, որոշվեց թշնամու խորը թիկունքում նախատեսվող մարտարշավը ամենից առաջ սկսել Տրապիզոնից, որտեղ էլ հենց կուտակված էին բանակային հիմնական ուժերը: Դրանից հետո նախատեսվում էր, հարված հասցնելով ընդհուպ մինչև Ատրպատական, Հայաստանի հարավային շրջաններով հետ քաշվել ու վերջնականապես ապաստանել Կիլիկիայում, որտեղ կուտակված բանակի պարենային և այլ անհրաժեշտ իրերով ապահովման հարցն էլ իր

հերթին կարող էր հաջողությամբ լուծել արդեն ծովում լիակատար գերիշխանություն ունեցող կայսերական նավատորմը: Նախատեսված ծրագրի կյանքի կոչման համար պակասում էր, ըստ էության, միայն վերջին մասնիկը՝ տիրապետությունը Կիլիկիայի վրա, և հենց դա ապահովելու համար էլ 622 թվականի ամենավերջին Հերակլես Ի-ի դիմեց առանձին մի ռազմագործողության:

Ինչպես արդեն ասվեց, կայսրության բանակը հիմնականում հավաքված էր Փոքր Հայքում, կենտրոն ունենալով Տրապիզոնը, սակայն, գործելով նավատորմի լայն կիրառմամբ, գերիշխելով ծովում և արդյունքում ունենալով տեղաշարժի արագություն՝ մարտական գործողությունների հիմնական ծանրությունը հաջորդ տարվան թողնելով հանդերձ 622 թվականի ամենավերջին Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 30.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 10.000) ափ իջան Կիլիկիայում և արդեն դեկտեմբեր ամսին Պլատանա կիրճի ճ-մ-ում հաղթեցին հապճեպորեն տեղում հավաքվող Պարսից թագավորության բանակին (մոտ 30.000, այդ թվում մեծաքանակ արաբներ)[1]: Ծանր հարված ստացած Պարսից թագավորության բանակը հետ քաշվեց դեպի Անտիոք, սակայն կայսրության բանակը, իրականացնելով հետապնդում, այս քաղաքի մոտ ևս մեկ անգամ հասավ թշնամուն և հերթական անգամ պարտության մատնեց վերջինիս[2]: Դրանից հետո, խնդիր չունենալով առաջանալ Ասորիքում և հիմնական խնդիր ունենալով ամրանալ Կիլիկիայում, կայսրության բանակը հետ քաշվեց դեպի այս երկրամաս ու ամրացավ այստեղ՝ առաջիկա տարում նախապատրաստվող խորը ռազմարշավի ամենավերջի համար նախապատրաստելով հիմնական բանակի վերջնական ապաստարանը: Այսպիսով՝ ձեռք բերվեց զգալի մի հաջողություն, ընդ որում ոչ միայն Կիլիկիան ընկավ պաշտոնական Կոստանդնուպոլսի տիրապետության տակ և ապահովվեց հետագա ու ավելի մեծ մի ռազմագործողության հաջող իրականացումը, այլև հիշատակված ռազմագործողության ընթացում նորաստեղծ բանակը ապացուցեց նաև իր արդյունավետությունը, իսկ Բոսֆորի ափերին գտնվող Պարսից թագավորության բանակի հաղորդակցության ուղիներն էլ արդեն հենց այդ պահին որոշակիորեն հայտնվեցին վտանգի տակ:

Կիլիկիային տիրելուց հետո ակտիվացավ նաև Փոքր Հայքում հավաքված կայսրության 120.000 հոգանոց հարվածային բանակը, որը, գոնե վերջին գրեթե կես դարի համար, աննախադեպ էր իր քանակությամբ: Կայսրության բանակների սպառնալից տեղաշարժերը սեփական խորը թիկունքում գտնվող հաղորդակցության ուղիների վրա, սակայն, իրենց հերթին խիստ անհանգստություն պատճառեցին Խոսրով II-ի ռազմական տեսաբաններին, որոնք, կարծես թե, ի վերջո հասկացան, որ, զգալի ուժեր կտրելով Պարսից թագավորության բուն տարածքից, դրանք առանց որևէ ռազմավարական նպատակի ցրելով Փոքր Ասիայի արևմուտքում, Ասորիքում ու Հյուսիսային Աֆրիկայում և զբաղվելով գրաված տարածքների ընդամենը միայն պարզունակ մի թալանով, դեռ չասած էլ այն մասին, որ հաղորդակցման ուղիների հետ միասին վտանգի տակ էին հայտնվում նաև նույն այդ ուժերը, իրենց հերթին վտանգի տակ են հայտնվել արդեն նաև բանակային հիմնական ուժերից զրկված արյաց արքայի հիմնական տիրույթները: Արդյունքում, փորձելով շտկել իրավիճակը, հակառակորդի շարժի մասին միայն 622 թվականի վերջում տեղեկացած արյաց բանակի հրամանատար Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը ինքը ևս պատասխան գործողություններ ձեռնարկեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

623 փետրվարի 7 – ***<u>Սատաղի ճ-մ</u>***[3]

Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի գլխավորությամբ

[1] Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 33:
[2] Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 33; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 10:
[3] «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Ջիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»:

Քաղկեդոնի մոտակայքից և Փոքր Ասիայից ուժերը հավաքող ու դրանք հետ քաշող Պարսից թագավորության բանակը (մոտ 110.000) շարժվեց Հերակլես Ի-ի և Հայոց իշխան Մժեժ Գնունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակի (120.000, այդ թվում լազեր, աբխազներ, վրացիներ և խազարներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկների (մոտ 50.000) դեմ և մի ամուր լեռան վրա ճամբար դրեց: Մանր ընդհարումներից հետո ի վերջո վաղ առավոտյան կողմերը մարտակարգ ընդունեցին:

Ի փուլ – Կայսրության բանակը հարձակվեց թշնամու վրա և կեղծ նահանջեց՝ քաշելով վերջինիս իր հետևից:

II փուլ – Կայսրության բանակը կտրուկ հակահարձակման անցավ մարտակարգը խախտած հակառակորդի ուղղությամբ և պարտության ու փախուստի մատնեց վերջինիս:

Հայերը կորցրին մոտ 2.500, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 15.000 զինվոր:

Այսպիսով՝ Փոքր Ասիայից առաջացող և սեփական հաղորդակցության ուղիների, ինչպես նաև արյաց արքայի բուն տիրույթների անվտանգությունն ապահովելու մտայնությամբ գործող Պարսից թագավորության խոշոր բանակը անհաջողության մատնվեց ու, թեև դա, ըստ էության, կործանիչ ազդեցություն չունեցավ այս բանակի մարտունակության վրա, սակայն այսպես թե այնպես գոնե մի որոշ ժամանակով բերեց վերջինիս նույն այդ մարտունակության զգալի անկմանը: Իրոք, ցրված ուժերը կրկին հավաքելու, դրանք կարգի գցելու և կրկին դեպի արևելք շարժվելու համար Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին առնվազն գոնե մի որոշ ժամանակ էր պետք, ինչից էլ հենց որոշեցին օգտվել Հերակլես Ի-ն ու նրա զորավարները:

Արդյունքում, 623 թվականի փետրվարի առաջին կեսին սկսելով շարժվել դեպի հարավ-արևելք, Հերակլես Ի-ի և Մժեժ Գնունու գլխավորությամբ Բասեն-Բագրևանդ-Մասյացոտն երթուղով արշաված Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 110.000, այդ թվում լազեր, աբխազներ, վրացիներ և խազարներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 48.000) արդեն մարտ ամսին Պարսից թագավորության բանակից (ընդհանուր՝ մոտ 1.000) գրավեցին Դվինն և Նախիջևանը ու այրեցին[1]: Դրանից հետո, շարունակելով առաջխաղացումը Դվին-Նախիջևան-Ուրմիա (վերջինը՝ Պարսկահայք, Թրաբի գավառ, Ուրմիա լճի ափից մոտ 7 կմ արևմուտք) երթուղով, կայսրության բանակը արդեն ապրիլի 8-ին ծանր պարտության մատնեց Խոսրով II-ի և Շահեն Ռոզբեհանի գլխավորությամբ հապճեպ հավաքված ու սեփական առաջխաղացումը կասեցնել փորձող Պարսից թագավորության բանակի (40.000) կազմում գործող Մատյան գնդին (10.000)[2]:

Այսպիսով՝ ռազմավարական կոպիտ սխալը և այն հանգամանքը, որ հակառակորդը հիմնավոր կերպով օգտվեց դրանից, վերջին տարիների հաղթարշավից հղփացած Խոսրով II-ին միանգամից դրեց եթե ոչ ծանր, ապա առնվազն գոնե՝ ստորացուցիչ դրության մեջ: Իրոք, հեռավոր արևմուտքում գործող արյաց արքայի զորավարները, թեև իրենց տրամադրության տակ ունեին զգալի ուժեր, սակայն առժամանակ կտրված էին սեփական տերության հիմնական տարածքներից և մի քանի ամիս շարունակ ուղղակի ի վիճակի չէին օգնության հասնել դրանց: Վիճակն իրոք երկիմաստ էր, քանի որ մի կողմից, այո, կայսրության բանակը մի քանի ամիս ուներ ոտնատակ տալու համար հակառակորդի տերության սիրտը, բայց մյուս կողմից էլ այն վտանգի տակ էր հայտնվում սեղմվելու շրջապատման օղակում այն բանից հետո, երբ արյաց արքայի երկաթյա գնդերն ի վերջո կժամանեին արևմուտքից, իսկ Խոսրով II-ն

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Այս մասին հայտնում է Գեորգ Պիսիդացին իր «Հերակլեա» պոեմում:

[2] «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»: Այս մասին հայտնում է Գեորգ Պիսիդացին իր «Հերակլեա» պոեմում:

ինքն էլ ի մի կբերեր ուժերը և կառաջանար հարավից:

Այսպես թե այնպես, սակայն, սկսած արդեն ապրիլի կեսերից և մինչև օգոստոսի վերջ կայսրության բանակը, օգտվելով անակնկալ զով ամառվանից, առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավեց ու ավերեց Փրաասպան, Թեբարամասիան (= Բեթ Արամիան, = Թախտ ի Սուլեյման) և Էկբատանը՝ ձեռք գցելով հսկայական ավար ու ստորացուցիչ վիճակում պահելով արյաց ողջ տերությանը: Այս ընթացքում Հերակլես Ի-ը, կարծես, յուրօրինակ մի վրեժ լուծեց նաև Փոքր Ասիայի և, հատկապես, Քաղկեդոնի անկման համար, քանի որ հենց նոր իր կողմից գրաված տարածքներում էին գտնվում ոչ միայն կարևոր տնտեսական, այլ նաև զրադաշտական առաջնային հոգևոր կենտրոններ, որոնք ավերվեցին[1]: Ամռան վերջին, սակայն, տեղ հասան վաղուց սպասվող լուրերն այն մասին, որ Պարսից թագավորության բանակները, լքած Քաղկեդոնը, մի քանի ուղղություններով մոտենում են Հերակլես Ի-ի բանակին:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերումների տեսքով.

623 դեկտեմբեր – ***<u>Դյուականի ճ-մ</u>*** (Ուտիք, Գարդմանք գավառ, Կուրի Ձագամ վտակի միջին հոսանքից հարավ)[2]

Ամռան վերջին Հերակլես Ի-ի և Հայոց իշխան Մժեժ Գնունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 100.000, այդ թվում լազեր, աբխազներ, վրացիներ և խազարներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 40.000) սկսեցին հետ քաշվել ***<u>Գանձա-Փայտակարան-Կուրի հովիտ-Վարդանակերտ-Գարդմանք</u>*** երթուղով՝ մանր մարտեր մղելով Շահեն Ռոզբեհանի գլխավորությամբ հարավից իրեն կրնկակոխ հետապնդող Պարսից թագավորության բանակի (35.000) դեմ: Միաժամանակ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազի գլխավորած Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000), առաջանալով ***<u>Սատաղ-Սպերի հարավ-Դերջան-Կարին-Արաքսի հովտով Բասեն-Արածանիի հովտով Բագրևանդ-Կոգովիտի հյուսիս-Մասյացոտն-Արագածոտն-Նիգ-Վարաժնունիք-Աղվե-Տուչ Կատակ</u>*** երթուղով, իր հերթին սկսեց կայսերական բանակին մոտենալ հյուսիսից, իսկ ***<u>Դվին-Սողք-Քուստ-ի-Փառնես</u>*** երթուղով առաջխաղացում իրականացնող Հայոց մարզպան Շահր Պղականի (619-628) գլխավորությամբ գործող Պարսից թագավորության բանակն (մոտ 40.000) էլ սկսեց վերջինիս ուղղությամբ գալ արևմուտքից:

I փուլ – Գործնականում օպերատիվ շրջապատման մեջ հայտնված Հերակլես Ի-ի բանակը, կեղծ նահանջով իր հետևից տանելով Շահեն Ռոզբեհանի բանակին և այդ ընթացքում մի ուժեղ ջոկատ (30.000) անցկացնելով հակառակորդի թիկունք, ի վերջո անցավ անակնկալ հակահարձակման ու ճակատային և թիկունքային համակցված հարվածով պարտության մատնեց ու ցրեց հակառակորդի բանակին:

III փուլ – Կարճ ժամանակ անց կայսրության բանակը հարձակվեց արդեն Շահր Պղականի բանակի վրա ու նրան ևս պարտության մատնեց, ընդ որում մարտում վիրավորվեց նաև Շահր Պղականը:

Հայերը կորցրին մոտ 4.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 30.000 զինվոր:

623 դեկտեմբեր – ***<u>Արճեշի ճ-մ</u>*** (Տուրուբերան, Աղիովիտ գավառ, վանա լճի

[1] «Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 10, 11; Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3:

[2] «Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 10; Սեբեոս «Պատմություն», գլուխ 34, 38; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»:

հյուսիսային ափին)[1]

Շրջապատման վտանգից ազատված Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 100.000, այդ թվում խազարներ), որից մինչ այդ անջատվել էին լազերը, աբխազները և վրացիները, հընթացս համալրելով իր կազմում ունեցած Հայ ռազմիկների (մոտ 20.000) շարքերը և զգալի օժանդակություն ստանալով Արևմտյան Թյուրքական խաքանությունից ժամանած խազարների կողմից, Հերակլես Ի-ի և Մժեժ Գնունու գլխավորությամբ ***Խաչենագետի հովիտ-Սյունիք-Նախիջևան-Արտազ-Մարդաստան-Աղիովիտ-Բագրևանդ*** երթուղով հասավ ***Ապահունիք*** ու ճամբարեց ***Խաղկտուկ գյուղի*** մոտակայքում: Մինչ այդ, սակայն, ***Տուչ Կատակ-Աղվե-Վարաժնունիք-Նիգ-Արագածոտն-Մասյացոտն-Կոգովիտ-Բագրևանդ*** երթուղով առաջացավ նաև Շահեն Ռոզբեհանի և Շահր Պղականի բանակների մնացորդների հետ ուժերը միավորած ու Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազի ընդհանուր ղեկավարությամբ գործող Պարսից թագավորության բանակը (մոտ 100.000): Դրանից հետո, տեղաբաշխելով իր բանակը գյուղերում և ցանկանալով անակնկալ հարձակում կազմակերպել կայսերական ճամբարած բանակի վրա, Շահր-Վարազն իր անձնական ղեկավարությամբ գործող մի հեծյալ ջոկատի (6.000) ուղեկցությամբ մտավ ***Արճեշ***:

I փուլ – Տեղեկանալով թշնամու տեղաշարժի մասին՝ Հերակլես Ի-ի անձնական ղեկավարությամբ գործող հեծելազորը (20.000, այդ թվում խազարներ[2]) շարժվեց թշնամու ուղղությամբ և ոչնչացրեց քաղաքից դուրս գտնվող Շահր-Վարազի ջոկատի առաջապահին (500):

II փուլ – Կայսերական հեծելազորը անակնկալ հարձակումով մտավ ***Արճեշ*** և ոչնչացրեց արդեն այստեղ տեղակայված Շահր-Վարազի ջոկատը, ընդ որում Շահր Վարազն ինքը հազիվ փրկվեց:

III փուլ – Զարգացնելով հաջողությունը՝ կայսերական հիմնական բանակը հարձակվեց գյուղերում տեղաբաշխված Պարսից թագավորության բանակի վրա և, օգտվելով կազմակերպված դիմադրության բացակայությունից, ծանր պարտության մատնելով ցրեց վերջինիս: Դրանից հետո, չիրականացնելով հակառակորդի հետապնդում և վերսկսելով երթը դեպի արևմուտք, կայսերական բանակը առանց մարտերի մտավ ***Մանազկերտ ու Տիգրանակերտ,*** ինչից հետո ի վերջո ապաստանեց հակառակորդի կողմից լքված ***Կեսարիայում:***

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 3.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Ավարտվող տարվա արդյունքներից Հերակլես Ի-ի ինչքան կարող էր գոհ լինել, նույնքան էլ դրանից պետք է, որ դժգոհ մնար Խոսրով II-ը: Իրոք, կայսրական բանակին, ըստ էության, հաջողվել էր հակառակորդի բանակի ամենախորը թիկունքում իր խորությամբ ոչ միայն աննախադեպ մի մարտարշավ իրականացնել և ոտնատակ տալ արյաց տերության սիրտը համարվող շրջանները, այլև՝ մի քանի լուրջ պարտության մատնել վերջինիս բանակին ու լրջորեն վնասել հակառակորդի ընդհանուր մարտական դրությանը՝ և օպերատիվ, և ռազմավարական մակարդակում: Արդյունքում, ամեն ինչից զատ, տրորվել էր նաև արյաց արքայի մինչ այդ, թվում էր, թե անբիծ ռազմական հեղինակությունը, ընդ որում շատերն արդեն հասկանում էին, որ, թերևս, ամեն ինչ չէ, որ

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 10; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Սամվել Անեցի «Ժամանակագրություն»; Մխիթար Այրիվանցի «Հայոց պատմություն», մաս 3; Հովհաննես Ավագերեց «Ժամանակագրություն»; Գրիգոր Կամախեցի «Ժամանակագրություն»; Ամիրաս Երզնկացի «Տարեգրություն»; Առաքել Դավրիժեցի «Պատմություն», գլուխ 56; Մարտիրոս Խալիֆա «Ժամանակագրություն»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[2] Համաձայն Ամիրաս Երզնկացու, Արճեշը գրավել է. «թուրք»-ը, ինչը, այն բանի ֆոնին, որ հիշատակվող ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրության բանակում գործում էին խազարները, կարող է հիմք տալ ասելու, որ Արճեշի 623 թ-ի գրավման գործում վճռական նշանակություն է ունեցել հենց խազարական հեծելազորը:

այդքան միանշանակ պաշտոնական Տիզբոնի կողմում է:

Արյաց արքան մեկ հանգամանքից ևս պետք է, որ շատ դժգոհ մնացած լիներ, քանզի, դեռ հերիք չէր, որ նախորդ երեք տարիներին նա այդպես էլ չէր կարողացել ճնշել հայերի ապստամբությունը և ոչնչացնել դիմադրության հիմնական կենտրոն հանդիսացող Տարոնը, այլ հայերն իրենք էին, ըստ էության, հանդիսացել Հերակլես Ի-ի հաջողության հիմնական գրավականներից մեկը: Եվ ահա այժմ, այն բանից հետո, երբ իր փայլուն մարտարշավից հետո առաջիկա տարում կայսրը որոշեց սեփական բանակին հանգիստ տալ ու ուժերի անհրաժեշտ վերախմբավորում իրականացնել, իսկ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազն էլ իր ուժերը տեղակայեց կայսրության բանակի և ըմբոստ Տարոնի միջակայքում, Տիզբոնում որոշվեց ևս մեկ անգամ հարված հասցնել Տարոնին, ինչպես նաև մեկ այլ, վճռականն ու վերջինը կոչված լինելու հարված էլ հասցնել կայսրությանը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

624 գարուն[1] – ***<u>Կաղամախյա բլրի ճ-մ</u>*** (Տարոն, Արածանի գետի ափ)[2]

Տիրան Մամիկոնյանի և Վարազ Միհարվածանի Պալունու գլխավորած Հայկական բանակը (մոտ 30.000) շարժվեց Վարդուհրի գլխավորությամբ Տարոն մտած Պարսից թագավորության բանակի (50.000) դեմ՝ ամուր դիրքեր գրավելով բլրի մոտով հոսող գետի ափին: Շուտով գետի մյուս ափին մոտեցավ Պարսից թագավորության բանակը:

I փուլ – Պարսից թագավորության բանակը անցավ հարձակման և փորձեց գետանցում իրականացնել, սակայն Հայկական բանակը կտրուկ հակահարձակումով պարտության մատնեց թշնամուն, ծանր կորուստներ պատճառեց վերջինիս ու մատնեց փախուստի:

II փուլ – Հայկական բանակը անցավ գետը և սկսեց հետապնդել թշնամու փախչող բանակին: Այդ ընթացքում Տիրանը հանդիպեց Վարդուհրին և, հասնելով վերջինիս, մենամարտի մեջ մտավ պարսից զորավարի հետ: Արդյունքում՝ Տիրանը հարվածեց Վարդուհրի աջ ոտքին ու հատեց այն, որից հետո իր հակառակորդին տապալեց ձիուց և գլխատեց: Նույն այդ ժամանակ Վարազը հետապնդելով նիզակահարեց մի հեծյալ հակառակորդի, իսկ մյուսը, թեև հարվածեց ու Պալունյաց իշխանի տակ սպանեց ձիուն, սակայն այս անգամ վերջինս արդեն հետևակ վիճակում հարձակվեց հեծյալ վիճակում մարտնչող հակառակորդի վրա և սպանեց նրան:

Հայերը կորցրին մոտ 13.000, թշնամին՝ 49.550 զինվոր:

Այսպիսով՝ հայերին հասցված հերթական հարվածը խոշոր անհաջողությամբ ավարտվեց: Մեկ տեղական հաջողություն արյաց արքան իր օգտին այնուհանդերձ, սակայն, կարողացավ արձանագրել, երբ նախորդ դեպքերի հետ գործնականում միաժամանակ տիրեց Համշենին (Խաղկտիք, Տրապիզոնից մոտ 120 կմ արևելք, Սև ծովի

[1] Տարոնում զարգացող իրադարձությունների այս փուլը տեղադրվել է 624 թ-ին հետևյալ հիմնավորմամբ: Հայտնի է, որ 624 թ-ի գարնանը Հերակլես Ի-ի խոշոր բանակի Կեսարիա նահանջելուց հետո Պարսից թագավորությունը ոչ միայն իր իշխանությունը վերահաստատեց Հայաստանում, այլև Խոռյան Շահր-Վարազը կրկին ներխուժեց Փոքր Ասիա: Այս պայմաններում տրամաբանական է, որ հենց 624 թ-ի գարնանը, ոչ ուշ և ոչ շուտ, Պարսից թագավորությունը պետք է աներ հերթական փորձը վերջնականապես հնազանդեցնելու Տարոնի Մամիկոնյաններին և ամրապնդելու իր իշխանությունը ողջ Հայաստանում: Այս ճակատամարտի վրա ուշադրություն չի դարձվել Հովհան Մամիկոնյանին թերագնահատելու պատճառով, ինչը սխալ է: Կարելի է ենթադրել, որ այն բանից հետո, երբ Խոռյան Շահր-Վարազի գլխավորած խոշոր ուժերը շարժվեցին Փոքր Ասիա, վերջինս Վարդուհրին թողեց Հայաստանի հարավում՝ մի կողմից Հերակլես Ի-ին զսպելու, մյուս կողմից էլ Տարոնը վերջնականապես հնազանդեցնելու համար: Փաստորեն հենց այս ճակատամարտում կրած խոշոր պարտությունն էր, որ մեծապես սահմանափակեց Պարսից թագավորության հարձակողական հնարավորությունները՝ իր հերթին հնարավորություն տալով Հերակլես Ի-ին ևս մեկ ավերիչ արշավանք սկսել իր հակառակորդի թիկունքում: Այսպիսով՝ քննարկվող ճակատամարտը, իր ազդեցությունը թողնելով նաև Բյուզանդա-Պարսկական VI պատերազմի վրա և, ըստ էության, լրացնելով վերջինիս պակասող օղակներից մեկը, խիստ կարևորվում է նաև Պարսից թագավորության և Բյուզանդական կայսրության պատմության համար:

[2] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

ափից մոտ 10 կմ հարավ), ավերեց այն և նահանջեց[1]:

Այսպես թե այնպես, սակայն ընդհանուր անհաջողությունն ակնհայտ էր, ընդ որում պաշտոնական Տիզբոնն այս անգամ ոչ ուժ ու, թերևս, արդեն և ոչ էլ հնարավորություն չուներ կրկնել հարվածը, քանի որ հենց նույն ժամանակ սկիզբ առավ վճռական հարվածը կայսրության մայրաքաղաքին: Այս առումով հետաքրքիր է նշել, որ, ուղղակի շփումների բացակայության պայմաններում, պարսից ռազմական տեսաբաններն ամեն դեպքում որոշեցին օգտվել իր հերթին վերջինն ու վճռականը կոչված լինելուն ուղղված այն մեծ հարձակումից, որը Կոնստանդին I Մեծի հիմնադրած քաղաքի ուղղությամբ պատրաստվում էր ձեռնարկել արդեն Ավարական խաքանության խաքան Բայան II-ը՝ ի մի բերած ձեռքի տակ եղած բոլոր ուժերը:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

624 դեկտեմբեր - 626 սեպտեմբեր – ***<u>Կոստանդնուպոլսի ճ-մ</u>***[2]

Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը, Շահեն Ռոզբեհանի գլխավորությամբ մի խոշոր բանակ (մոտ 100.000) թողնելով Կապադովկիայի տարբեր մասերում, Խարդարիգանի հետ միասին հիմնական ուժերով (մոտ 100.000) մոտեցավ ***<u>Քաղկեդոնին</u>*** և սկսեց նրա պաշարումը: Վերջինիս կայազորը կազմող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 3.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 300) անցան պաշտպանության:

I փուլ – 624 թ-ի դեկտեմբերից մինչև 626 թ-ի հունիս Պարսից թագավորության բանակը, շրջափակելով քաղաքը, ասպատակեց ինչպես վերջինիս շրջակայքը, այնպես էլ ***<u>Կապադովկիան, Փոյուգիան և Պիսիդիան</u>***՝ փորձելով դրանով օժանդակել հյուսիսից Կոստանդնուպոլսին մոտեցող Ավարական խաքանության բանակին (300.000[3], այդ թվում մեծաքանակ սլավոններ, բուլղարներ և գեպիդներ), ինչից հետո Շահր Վարազը հիմնական ուժերով հետ քաշվեց Կապադովկիա՝ Քաղկեդոնի մոտ Շահեն Ռոզբեհանի գլխավորությամբ թողնելով զգալի ուժեր (մոտ 70.000):

II փուլ – 626 թ-ի հունիսի վերջին Ավարական խաքանության բանակը մոտեցավ Կոստանդնուպոլսին և առանց լուրջ մարտերի անցավ ***<u>Երկար պարիսպները</u>***՝ հիմնիվեր ավերելով դրանք, վառվող խարույկների միջոցով Քաղկեդոնի մոտ գտնվող Պարսից թագավորության բանակին տեղեկացնելով իր մոտենալու մասին ու պաշարելով քաղաքը Վոնոսի գլխավորած Բյուզանդական կայսրության բանակից (մոտ 15.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 4.000):

III փուլ – 626 թ-ի հուլիսի 29-ին Ավարական խաքանության բանակը, օգտագործելով 12 պաշարողական աշտարակներ, ինչպես նաև լայն կիրառության

---

[1] Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3:

[2] «Թեոդորոս Սինկելլոս «Աստվածապահ քաղաքի վրա անաստված ավարների և պարսիկների հարձակման և նրանց խայտառակ նահանջի մասին, որը տեղի ունեցավ Աստծու և Աստվածածնի մարդասիրության արդյունքում»; Անանուն «Զատկական ժամանակագրություն»; Գեորգի Պիսիդացի «Ավարական պատերազմի մասին»; «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Շապուհ Բագրատունի «Պատմություն», գլուխ 2; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 98; Աբդ ալ-Հաքամ «Եգիպտոսի նվաճումը»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[3] Ավարական խաքանության բանակի թվաքանակի հարցը վիճահարույց է և վերջնականապես պարզաբանված չէ: Ֆ. Ուսպենսկին հայտնում է իմ կողմից բերված թվի մասին (տես՝ Успенский Ф. И. “История Византийской империи”, том 1, СПб 2006, стр. 691), սակայն այլ ուսումնասիրություններում խոսվում է «30.000» թվի մասին, ընդ որում տպավորություն կա, թե Ֆ. Ուսպենսկու բերած թիվը կամայականորեն է փոքրացվել է 10 անգամ: Ցավալին այն է, որ ռազմական այս իրադարձության որոշ սկզբնաղբյուրներ այս պահին ինձ անհասանելի են և ես ի վիճակի չեմ սեփական ջանքերով ստուգել վերոհիշյալ թվերը: Այս առումով ավելացնեմ միայն, որ «30.000»-ը ակնհայտորեն և անբնականորեն քիչ է կեսմիլիոնանոց, իր ժամանակակի հզոր պաշտպանական կառույցներով հագեցված և 12.000 հոգանոց կայազոր ունեցող քաղաքի գրավման համար, մանավանդ այն բանի ֆոնին, որ Ավարական խաքանությանը համար «30.000»-ը ևս անընդունելի քիչ է, իսկ «300.000»-ն արդեն լիովին համապատասխանում է պետական այս միավորի ռազմական հնարավորություններին՝ պայմանով, որ զենքի տակ են դրվել զենք կրելու ունակ բոլոր անձիք:

մեջ դնելով պաշարողական այլ տեխնիկա, անցավ վճռական գրոհի, սակայն ողջ օրը տևած համառ մարտում քաղաքում գտնվող կայսերական բանակը հետ մղեց թշնամու գրոհները՝ ի վերջո այրելով նաև պաշարողական աշտարակները:

IV փուլ – 626 թ-ի օգոստոսի 4-ին սլավոնները մեծաքանակ նավակներով փորձեցին մոտենալ Քաղկեդոնին և Կոստանդնուպոլսի մոտ տեղափոխել Պարսից թագավորության բանակի ռազմիկներին, սակայն ծովում լիակատար գերիշխանություն ունեցող կայսերական նավատորմի (մոտ 200 նավ) գործողությունների արդյունքում ծանր պարտություն կրեցին, ընդ որում հակառակորդը կորցրեց 100 նավակ, ինչպես նաև 4.000 ռազմիկներ:

V փուլ – 626 թ-ի օգոստոսի 7-ին գեպիդները և սլավոնները, նպատակ ունենալով հաջողության հասնել գիշերային գրոհով, ***Ոսկեղջյուր հրվանդանի*** կողմից մոտեցան քաղաքի պարսպին: Ի պատասխան դրա՝ պարսպի այդ հատվածում հսկողություն իրականացնող Հայ ռազմիկները, ցույց տալով, թե իբր ապստամբություն են բարձրացրել և այրել են իրենց պաշտպանությանը հանձնված Վլախեռնայի պարսպահատվածի մի մասը, համոզեցին հակառակորդին գիշերային ափհանում իրականացնել, սակայն դրանից անմիջապես հետո էլ հարձակվեցին ափ իջած հակառակորդին ռազմիկներին վրա ու գլխովին ջախջախեցին:

VI փուլ – 626 թ-ի օգոստոսի 8-ին ծանր կորուստներ կրած Ավարական խաքանության բանակը թողեց պաշարումը և, այրելով պաշարողական տեխնիկան ու ենթարկվելով կայսրության բանակի մանր հարվածներին, նահանջեց:

VII փուլ – 626 թ-ի սեպտեմբերին կայսրեղբայր, Արևելքի հրամանատար Թեոդորոսի գլխավորված Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 50.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 20.000), ծովով ու ցամաքով աննկատ կենտրոնանալով ***Քաղկեդոնի մոտ***, հաղթեցին Շահեն Ռոզբեհանի գլխավորած Պարսից թագավորության բանակին (մոտ 70.000) և ցրեցին այն:

Հայերը կորցրին մոտ 2.000, դաշնակիցը՝ մոտ 6.000, թշնամին՝ մոտ 120.000 զինվոր:

Լուր ստանալով սեփական մայրաքաղաքի հաջող պաշտպանության մասին՝ Կեսարիայում իր հարվածային ուժերը կենտրոնացրած Հերակլես Ի-ը որոշեց սկսել հերթական արշավանքը դեպի արևելք և առաջանալ այս անգամ Հայաստանի արդեն հարավային շրջաններով՝ ակնհայտորեն նպատակ ունենալով արշավանքը վերջացնել արդեն Տրապիզոնում: Կոստանդնուպոլսի մոտ անհաջողության մատնված Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազը, սակայն, որին նախորդ տարիները այս կապակցությամբ ինչ-որ բան կարծես այնուհանդերձ սովորեցրել էին, ուշադիր հետևում էր կայսերական բանակի տեղաշարժին և Հերակլես Ի-ի մտահղացումն այս անգամ, ըստ էության, չգործեց:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

626 աշուն – ***Ադանայի ճ-մ***[1]

Հերակլես Ի-ի և Հայոց իշխան Մժեժ Գնունու գլխավորած Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 120.000) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 40.000), ելնելով ***Կեսարիայից,*** առաջացան ***Մելիտե-Խարբերդ-Ամիդ-Տիգրանակերտ*** երթուղով, սակայն, տեղեկանալով այն մասին, որ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի գլխավորությամբ Փոքր Ասիայում գործող ուժերը կենտրոնացած Պարսից թագավորության բանակը (մոտ 140.000) ***Կոմանա-***

[1] «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

Կոկիսոն-Մարաշ-Այնթապ (վերջին երկուսը՝ Կիլիկիայի արևելք, Թլպաշար գավառ) ***–Զևգմա*** երթուղով շարժվում է իրենց հետքերով, փոխեցին շարժման ուղղությունը ու շարժվեցին հակառակորդին ընդառաջ: Կայսրության բանակը մոտեցավ ***Պիրին***, սակայն տեղում պարզվեց, որ Շահր Վարազի հրամանով գետի վրա ձգված պարանե կամուրջը վերցվել է, իսկ հակառակորդն էլ ամուր պաշտպանական դիրքեր է գրավել Եփրատի աջ ափին: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կայսերական բանակը աննկատ շարժվեց դեպի ***Սամոսատ*** և, արդեն այստեղ գետանցելով Եփրատը, ***Մարաշի*** մոտով հետ քաշվեց դեպի ***Ադանա***: Շահր Վարազն իր հերթին, տեղեկանալով այն մասին, որ հակառակորդի բանակը այնուհանդերձ թևանցել է իր բանակին և արդեն գտնվում է սեփական թիկունքում, հետ քաշեց Պարսից թագավորության բանակը և ի վերջո մոտեցավ Ադանային, որի մոտակայքում գտնվող գետի վրա ձգված կամրջի մատույցներում կայսրության բանակը ամուր պաշտպանական դիրքեր էր գրավել:

I փուլ – Պարսից թագավորության բանակը հարձակման անցավ կամրջի ուղղությամբ և, կեղծ նահանջով առաջ քաշելով կայսրության բանակի մի մասին, անակնկալ հակահարձակումով փախուստի մատնեց վերջինիս:

II փուլ – Պարսից թագավորության բանակը փորձեց զարգացնել հաջողությունը, սակայն Հերակլես I-ը, օգտվելով այն բանից, որ թշնամին կամրջի վրայով միայն փոքր խմբերով է ի վիճակի անցնել գետը, հարձակման տարավ իր հիմնական ուժերը և, ծանր կորուստներ պատճառելով, հետ շպրտեց վերջինիս, ընդ որում հենց կամրջի վրա տեղի ունեցած մենամարտում էլ կայսրը հաղթեց ու գետը գցեց հակառակորդի բանակի հսկայամարմին ռազմիկներից մեկին:

III փուլ – Կայսրության բանակը անցավ գետը և փախուստի մատնեց հակառակորդին, սակայն, խուսափելով հայտնվել դարանում, չիրականացրեց հակառակորդի հետապնդում:

Հայերը կորցրին մոտ 1.000, դաշնակիցը՝ մոտ 5.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Կրած անհաջողությունից հետո Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազը հավաքեց իր ցրված ուժերը և ձմեռն անցկացնելու նպատակով տեղակայվեց Կիլիկիայի արևելքում ու Անդրեփրատյան Ծոփքում, իսկ Հերակլես I-ն էլ, հավաքելով արդեն սեփական բանակը, շարժվեց դեպի Սեբաստիա, որի մոտակայքում էլ այն տեղավորեց ձմեռոցներում: 627 թվականին կոչված էր բեկումնային դեր ունենալ արդեն գրեթե 25 տարի մղվող պատերազմում և հենց այս տարում էր, որ կայսրությանը հաջողվեց պատերազմական հաջողության երկար ժամանակ տատանվող կշեռքի նժարն ի վերջո իր կողմը թեքել: Այս առումով կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ Հերակլես I-ն ի վերջո կարողացավ ապահովել թյուրքերի աջակցությունը:

Ղարա-Չուրինի անհետ կորելուց կամ զոհվելուց հետո հերթական անգամ բորբոքված գահակալական պայքարի արդյունքում Թյուրքական խաքանությունն, ինչպես արդեն ասվեց, վերջնականապես կիսվեց երկու մասի, երբ Ջունգարյան դարպասներից արևելք ձգվող տարածքներում ձևավորվեց Արևելյան Թյուրքական խաքանությունը, իսկ նույն դարպասներից արևմուտք և ընդհուպ մինչև Դոն ձգվող տարածքներում էլ ստեղծվեց Արևմտյան Թյուրքական խաքանությունը: Արևելյան Թյուրքական խաքանությունն ի սկզբանե թույլ և չինական Սույի, իսկ հետո արդեն վերջինիս փոխարինած Տանի տերությանը ենթակա պետություն էր, որն անկում ապրեց 630 թվականին և նրա ռազմաքաղաքական ուղին մեր կողմից դիտարկվող իրադարձությունների հետ, ըստ էության, որևէ առնչություն չունի: Ինչ վերաբերում է Արևմտյան Թյուրքական խաքանությանը, ապա, ազատված գահակալական պայքար մղող տարրերի զգալի մասից, ինչպես նաև չինական պետական միավորների դեմ մղվող հյուծիչ պայքարից, մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանում վերջինս կայունության

որոշակի շրջան մտավ:

Արևմտյան Թյուրքական խաքանության առաջին խաքանը մինչ այդ մղվող գահակալական պայքարի ակտիվ դերակատարներից մեկը հանդիսացող Իլ-Թեգին Բույրուն (603-604) էր, որը, սակայն կարճ տիրեց և շուտով սպանվեց: Նրան հաջորդեց որդին՝ Թամանը (604-612), որը, սակայն, 612 թվականին իր հերթին գահընկեց արվեց խաքանությունում ազդեցիկ դերակատարություն ունեցող Նուշիբի ցեղային միության կողմից: Ապստամբները խաքանի գահին բազմեցրին Ղարա-Չուրինի թոռ Շեգույին (612-618), սակայն նրա իշխանությունը ևս թույլ էր և 618 թվականին այս խաքանը մահացավ: Արդյունքում՝ խաքանության գլուխ կանգնեց Ղարա-Չուրինի մյուս թոռ Տուն-Յագբուն (618-629), որի խելամիտ և եռանդուն կառավարման շրջանում էլ հենց Արևմտյան Թյուրքական խաքանությունը հասավ իր զարգացման բարձրակետին, թեև այս պարագայում նախկին Թյուրքական խաքանության հատկապես սկզբի տարիների ամենակուլ հզորության վիճակին նույնիսկ մոտ վիճակի մասին արդեն որևէ կերպ խոսել, իհարկե, հնարավոր չէր: Ահա մեջքն ուղղած թյուրքերի հետ էլ հենց Հերակլես Ի-ը որոշեց դաշնակցել:

Դատելով ըստ ամենայնի, Տուն-Յագբուի հետ առաջին շփումները կայսերական դիվանագետները հաստատել էին դեռևս 620-622 թվականներին, քանի որ արդեն 623 թվականին կայսերական բանակի կազմում գործում էին Տուն-Յագբուի հպատակները համարվող խազարները: Հետագա տարիներին, սակայն, կապերն ավելի սերտացան, Հերակլես Ի-ը խաքանին որպես կին տվեց իր աղջկան և հակապարսկական ընդհանուր հողի վրա կողմերն ի վերջո համաձայնության եկան, ըստ որի Տուն-Յագբուի հեծյալները Պարսից թագավորության դեմ պատերազմում պետք է օգնեին Հերակլես Ի-ի բանակին, ընդ որում համագործակցության հիմնական արարը նախատեսվում էր իրականացնել հենց արժանահիշատակ նույն 627 թվականին:

627 թվականի հուլիսին Տուն-Յագբու խաքանի գլխավորությամբ Դերբենդի լեռնանցքից ներխուժած և Աղվանքը ու Ուտիքը ասպատակելով արշաված Արևմտյան Թյուրքական խաքանության բանակը (մոտ 100.000, այդ թվում 40.000 խազարներ) բնակչության հետ միասին քաղաքը խուճապահար լքող Պարսից թագավորության բանակից (մոտ 1.000) և նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներից (մոտ 500) առանց լուրջ մարտերի գրավեց Պարտավը (Ուտիք, Ուտի Առանձնյակ, Թարթառ գետի ձախ ափին) ու ավերեց[1]: Թյուրքական խաքանության բանակի հիմնական նպատակակետը, սակայն, Տփղիսն էր, որտեղ ամրացել էր Գուրգեն-Գուարմի որդի ու Վրաստանի էրիսմտավար, Հյուսիսային Բագրատունիների տոհմի ակնառու ներկայացուցիչ Ստեփանոս Բագրատունին (595-627): Վերջինիս, որ, ի տարբերություն հոր, դեմ էր դուրս եկել պաշտոնական Կոստանդնուպոլիսին, այժմ հանդես էր գալիս Պարսից թագավորության օգտին և հենց այս հանգամանքը հաշվի առնելով էր, որ Տուն-Յագբուի կատաղի ռազմիկներին Հերակլես Ի-ը ուղղեց Վրաստանի վրա: Դիմելով հիշատակված քայլին՝ կայսրը նպատակ ուներ մի կողմից պատժելու Բագրատունյաց իշխանին և հպատակեցնելու հիշատակված երկրամասը, իսկ մյուս կողմից էլ՝ սպասվող մեծաքանակ ավարով կշտացնելու թյուրքերին, ընդ որում տեղական ուժերի շարքերից առաջիկա գործողություններում կայսրը համագործակցում էր Կախեթիի իշխան Ատրներսեհ Սասանյանի հետ, որը, հանդիսանալով Իբերիայի թագավորության վերջին ու գահընկեց արված արքա Բակուր Վ-ի որդին, իր հին և նույնիսկ տոհմական հաշիվներն ուներ Վրաստանում գերիշխանության հասած Բագրատունիների ու հատկապես նրանց հյուսիսային ճյուղի հետ: Եվ այսպես, հասկանալով, որ հարվածի սուր ծայրում Տփղիսն է, Խոսրով II-ի օգտին գործող ուժերը հավաքվեցին այդ քաղաքում և ամրացրին այն, ընդ որում, առաջանալով հարավից, քաղաքում ապաստանեց նաև Հայոց մարզպան Շահր Պղականը:

Այս ամենի կապակցությամբ մինչև առաջ անցնելը հարկ է նաև նշել, սակայն, որ նույն այս ժամանակ հիանալի գործող կայսերական հետախուզությունն այս անգամ ևս

[1] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 11:

մեծապես օգնեց սեփական բանակին, քանզի, այն բանից հետո, երբ արյաց արքան հատուկ նամակ ուղարկեց Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին և պահանջեց իր ուժերով անմիջապես շարժվել Տիզբոնին օգնության, վերջինիս գործակալները ձեռք գցեցին այդ նամակը և, փոխելով բովանդակությունը ու բանն այնպես ներկայացնելով, թե դրա կարիքը չկա, Խոսրով II-ի անունից պարսից զորավարին հրամայեցին, ընդհակառակը, մնալ տեղում և շարունակել մարտական գործողությունները Փոքր Ասիայում: Եվ այսպես, Խոսրով II-ն առժամանակ մնաց առանց իր հարվածային բանակային ուժերի, ինչն էլ խիստ ծանր դրություն առաջացրեց Պարսից թագավորության համար:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

627 հուլիս - օգոստոս – ***<u>Տփղիսի պաշտպանությունը</u>***[1]

Հերակլես I-ի և Հայոց իշխան Մժեժ Գնունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Բյուզանդական կայսրության բանակը (մոտ 70.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 25.000), ինչպես նաև Հայաստանի հրամանատար Վահան Մամիկոնյանի[2] գլխավորած Հայկական (մոտ 20.000), Ատրներսեհ Սասանյանի գլխավորած Կախեթիի իշխանության (մոտ 5.000) և Տուն-Յագբու խաքանի գլխավորած Արևմտյան Թյուրքական խաքանության (մոտ 90.000, այդ թվում 40.000 խազարներ) միացյալ բանակը պաշարեցին քաղաքը Հայոց մարզպան Շահր Պղականի ու Վրաստանի էրիսմտավար Ստեփանոս Բագրատունու գլխավորած Հայկական (մոտ 1.000, այդ թվում վրացիներ) և Պարսից թագավորության (1.000) միացյալ բանակից:

I փուլ – Հուլիսին քաղաքը պաշարողները մի շարք գրոհներ ձեռնարկեցին, սակայն որևէ հաջողության չհասան, ընդ որում պաշտպանվողները մի շարք համարձակ արտագրոհներ իրականացրին և զգալի կորուստներ պատճառեցին հակառակորդին: Հենց այս ընթացքում էլ, սակայն, մարտերից մեկում ընկավ արտագրոհները անձամբ գլխավորող Ստեփանոսը:

II փուլ – Օգոստոսին կայսրության բանակը անցավ հարձակման և համառ մարտերից հետո գրավեց քաղաքը, սակայն քաղաքի կայազորի մնացորդը հասցրեց նահանջել միջնաբերդ և ամրանալ այնտեղ:

III փուլ – Քաղաքը պաշարողները մի շարք գրոհներ ձեռնարկեցին միջնաբերդի ուղղությամբ, սակայն, որևէ հաջողության չհասնելով, ի վերջո նահանջեցին:

Հարձակվողներից հայերը կորցրին մոտ 500, դաշնակիցները՝ մոտ 1.500, պաշտպանվողներից հայերը՝ մոտ 300, դաշնակիցները՝ մոտ 300 զինվոր:

Այսպիսով՝ Տփղիսի պարիսպների տակ Հերակլես I-ի գլխավորած դաշնակից ուժերը անհաջողության մատնվեցին, թեև վերջիններս կարող էին որոշակիորեն սփոփվել այն բանով, որ ազատվել էին իրենց ոխերիմ հակառակորդ Ստեփանոսից, ընդ որում նրա տոհմը ևս զգալի կորուստներ էր կրել: Հաշվի առնելով ստեղծված դրությունը՝ կայսրը Վրաստանի էրիսմտավար նշանակեց Ատրներսեհ Սասանյանին (627-642), որից հետո, Տփղիսի կայազորի կողմից անձնական վիրավորանքների արժանացած Տուն-Յագբուին

[1] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 11; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Սմբատ Դավթորդի «Բագրատունյաց պատմություն»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն «Քարթլիի դարձը»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 79; Աբբաս-գուլի-աղա Բաքիխանով «Դրախտային ծաղիկ», մաս 1:

[2] Այստեղ և հետագայում հիշատակվող Վահանի տոհմանունը սկզբնաղբյուրները չեն կոնկրետացնում, սակայն լիովին տեղին է ենթադրել, որ դա Տարոնի իշխան Սմբատ Մամիկոնյանի որդին էր, քանզի պատերազմում իրեն այդքան լավ դրսևորած այլ հայազգի Վահանի մասին տվյալ ժամանակահատվածում մենք տվյալներ չունենք:

ձևականորեն հանձնարարելով շարունակել քաղաքի պաշարումը, ինքը քրիստոնյաների հիմնական ուժերով պատրաստվեց արշավանք իրականացնել Տիզբոնի ուղղությամբ:

Այս առումով հարկ է նշել, որ Տփղիսի կայազորի ռազմիկներն իրոք անձնապես խորը վիրավորել էին ոչ միայն Տուն-Յագբուին, նրան համեմատելով սեխի հետ, այլ նաև՝ կայսեր, որը, առաջին կնոջ մահից հետո ամուսնացած լինելով իր քրոջ աղջիկ Մարտինայի հետ և հենց նոր վերջինիցս մի տղա ունենալով, ժամանակի իր հակառակորդների կողմից հայտարարվում էր արյունապիղծ ու քրիստոնեական կանոնները ոտնահարող և հենց այս հանգամանքն էին կայսեր երես տվել Տփղիսի կայազորի ռազմիկները: Ռազմավարական անհրաժեշտությունը, սակայն, Հերակլես Ի-ին ստիպում էր գոնե առժամանակ մի կողմ թողնել անձնական խոցված զգացմունքները և մտածել առաջիկա պատերազմական գործողությունները հաջող վարելու մասին, ինչն էլ հաշվի առնելով վերջինս որոշեց այնուհանդերձ դեպի հարավ արշավել: Տփղիսի միջնաբերդի անառիկ պարիսպների տակ հետագայում մնալ չէր պատրաստվում, սակայն, նաև խաքանը, քանզի նրա ռազմիկները, ծանրացած ավարով, իրենք ևս որևէ հիմք չէին տեսնում արյուն թափելու իրենից, ըստ էության, արդեն ոչինչ չներկայացնող մի ամրության գրավման համար: Արդյունքում՝ արդեն 627 թվականի աշնանը Տուն-Յագբուն, ասպատակելով Ուտիքը, Արցախը և Աղվանքը, իր ուժերը հետ քաշեց Նախակովկասյան տափաստաններ[1]՝ մարտական գործողությունների հետագա ողջ ծանրությունը թողնելով քրիստոնյաների վրա: Եվ այսպես Հերակլես Ի-ը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի հրամանատարության տակ գտնվող բանակը առժամանակ հեռու է և դեպի Պարսից թագավորության սիրտը տանող ճանապարհները կրկին, ինչպես չորս տարի առաջ, ըստ էության չեն պաշտպանվում իր ուժերին հավասար ուժերի կողմից, սրընթաց երթով իջավ դեպի հարավ:

Հետագան անհրաժեշտ է դիտարկել առանձին մեջբերման տեսքով.

627 դեկտեմբերի 10-12 – ***<u>Նինվեի ճ-մ</u>*** (քաղաքի ավերակներից մոտ 5 կմ հարավ)[2]

Հերակլես Ի-ի և Հայոց իշխան Մժեժ Գնունու ընդհանուր ղեկավարությամբ գործող Բյուզանդական կայսրության բանակը (90.000), նրա կազմում գտնվող Հայ ռազմիկները (մոտ 30.000), ինչպես նաև Հայաստանի հրամանատար Վահան Մամիկոնյանի գլխավորած Հայկական բանակը (մոտ 15.000), սրընթաց արշավելով ***<u>Տփղիս-Վանանդ-Վարդանակերտ-Կոգովիտ-Հեր-Գաբիթյան-Թավրիզ-Գանձա</u>*** երթուղով ու այդ ընթացքում ասպատակելով և ավերելով շրջակայքը, ներխուժեցին ***<u>Հյուսիսային Միջագետք</u>***: Ստեղծված պայմաններում, խնդիր ունենալով ամեն գնով կասեցնել դեպի Կենտրոնական Միջագետք առաջացող հակառակորդին, Խոսրով II-ի հրամանով Հերակլես Ի-ի բանակի հետքերով սկսեց շարժվել Հրազատես Ռոճ-Վեհի գլխավորությամբ հապճեպ ի մի բերված Պարսից թագավորության բանակը (30.000): Իր հերթին, տեղեկանալով այս մասին, կայսրը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ մի ուժեղ ջոկատ (12.000) տեղաբաշխեց վերջապահում:

I փուլ – Դեկտեմբերի 10-ին Վահան Մամիկոնյանի վերջապահ ուժերը հարձակվեցին թշնամու մոտեցող առաջապահի վրա և, ջախջախելով այն, հետ շպրտեցին:

II փուլ – Առաջանալով դեկտեմբերի 11-ին՝ հակառակորդ կողմերի

[1] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 12:

[2] Սեբեոս «Պատմություն», գլուխ 38; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 12; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Շապուհ Բագրատունի «Պատմություն», գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; «Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Անանուն «Արաբա-բյուզանդական ժամանակագրություն 741 թվականի», մաս 11; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն» գիրք 11, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

հիմնական բանակները դեկտեմբերի 12-ին մոտեցան իրար, սակայն խիստ մշուշի պայմաններում սկզբում չնկատեցին միմյանց և, ընդհուպ մոտենալով ու դրանից հետո միայն նկատելով մեկը մյուսին, անցան հանդիպակաց հարձակման: Բռնվեց համառ մարտ, որի արդյունքում Պարսից թագավորության բանակը գլխովին ջախջախվեց, իսկ նրա բոլոր բարձրաստիճան հրամանատարները սպանվեցին: Այդ ընթացքում Հերակլես Ի-ը մարտադաշտում հանդիպեց թշնամու բանակի բարձրաստիճան երեք հրամանատարների, հեծյալ մենամարտում ընդհարվեց նրանց հետ և հաղթեց: Ի վերջո, կայսրը հանդիպեց նաև Ռոճ-Վեհին ու, թեև հեծյալ մենամարտի ընթացքում նետի երկու թեթև հարված ստացավ դեմքին և ոտքին, սակայն ի վերջո կարողացավ նիզակահարել ու գլխատել նաև այս հակառակորդին:

Հայերը կորցրին մոտ 4.000, դաշնակիցները՝ մոտ 6.000, թշնամին՝ մոտ 20.000 զինվոր:

Նախորդ ճակատամարտում տարած հաղթանակը, ըստ էության, բերեց մի իրավիճակի, երբ դեպի հարավ շարժվող կայսերական բանակի առջև չկար և ոչ մի խոչընդոտ, ընդ որում, ի մի բերելով առկա արդյունքները, թերևս, կարելի է փաստել, որ Հերակլես Ի-ն և նրա բանակը, ինչպես նաև դաշնակից ուժերը օպերատիվ մարտախաղում արդեն երրորդ ու վերջին անգամ լիովին գերազանցեցին ինչպես արյաց արքային, այնպես էլ նրա ռազմական տեսաբաններին: Իրոք, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր-Վարազը Պարսից թագավորության հարվածային հիմնական ուժերով նույն այս ժամանակ գտնվում էր ինչ-որ տեղ Հայաստանի հարավ-արևմուտքում, իսկ զգալի ուժեր էլ ցրված էին Եգիպտոսից մինչև Քաղկեդոն ձգվող լայնարձակ տարածքներում, սակայն կոնկրետ տեղում և 627 թվականի դեկտեմբերի վերջի, ինչպես նաև 628 թվականի հունվար-փետրվար ամիսների կոնկրետ ժամանակահատվածում դրանք ոչ մի կերպ չէին կարող հայտնվել անկասելիորեն դեպի հարավ շարժվող կայսերական բանակի ու Պարսից թագավորության սիրտը համարվող Կենտրոնական Միջագետքի միջև: Չնայած այս ամենին, սակայն, ամենևին վերջնական ու հաղթական չէր կարող համարվել նաև քրիստոնյաների դրությունը:

Իրոք, Տիզբոնային քաղաքային համալիրն ինքը՝ իր ժամանակի խոշորագույն քաղաքային համալիրներից մեկը գրեթե կես միլիոնի հասնող իր բնակչությամբ, հզոր պաշտպանական համակարգեր ուներ, որոնք գրավելը, նույնիսկ եթե հաջողվեր էլ, օպերատիվ լիակատար գերակայություն և զգալի ժամանակի առկայություն էր ենթադրում, իսկ ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը Հերակլես Ի-ը չուներ, քանի որ այս ամենի մասին ի վերջո տեղեկացած ու շարժի մեջ մտած Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի ուժերը նույն այս ժամանակ արդեն առաջանում էին արևմուտքից: Առժամանակ, սակայն, քրիստոնյաներին դեռևս ոչինչ չէր խանգարում այնուհանդերձ ոտնատակ տալու Կենտրոնական Միջագետքի բարեբեր շրջանները և այս առումով, ինչպես 623 թվականին էր, կայսրն իր ռազմիկներին ոչ մի կերպ չսահմանափակեց:

Արդյունքում, 628 թվականի հունվարին Տիգրիսի աջ ափով իջնելով դեպի հարավ, քրիստոնյաները թեև չկարողացան և, դատելով ըստ ամենայնի, նույնիսկ լուրջ փորձ իսկ չձեռնարկեցին տիրելու Տիզբոնյան քաղաքային համալիրի, ըստ էության, մասը կազմող Վեհ-Կավատին (= Սելևկիա), սակայն փոխարենը դաժանորեն ասպատակեցին ողջ շրջակայքը[1], ինչից հետո, սկսած 628 թվականի արդեն հունվարի վերջից մինչև փետրվարի կես, նույն Տիգրիս գետի հովտով սկսեցին հետ քաշվել Գանձայի ուղղությամբ՝ ի վերջո ճամբարելով Ատրպատականի արևմուտքում: Դրամատիկ զարգացումների խտացում հանդիսացող իրավիճակը մոտենում էր իր գագաթնակետին և թվում էր թե,

[1] «Թեոփանես Խոստովանող «Ժամանակագրություն»; Անանուն «Արաբա-բյուզանդական ժամանակագրություն 741 թվականի», մաս 11; Շապուհ Բագրատունի «Պատմություն», գլուխ 3; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 98, 99; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Զիգբերտ Ժամբլացի «Տարեգրություն»; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Օրուջ-բեկ Բայաթ «Պատմություն», գիրք 1, գլուխ 10:

ինչպես 623 թվականին եղավ, այս անգամ ևս քրիստոնյաներին հերթական կենաց ու մահու մարտեր էին սպասվում իրենց մոտեցող Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի բանակի հետ: Այս անգամ, սակայն, իրադարձությունները մի նոր զարգացում ստացան և, դատելով ըստ ամենայնի, Հերակլես Ի-ը տեղյակ էր դրանց մասին ու չէր բացառում այն ամենը, ինչն ի վերջո եղավ:

Խնդիրը կայանում էր նրանում, որ Խոսրով II-ի կառավարումը, ի սկզբանե չընդունված սեփական հպատակների զգալի մասի կողմից, սակայն հետագայում մեծապես արժևորված ձեռք բերված աննախադեպ հաջողություններով, 620-ական թվականների երկրորդ կեսին, այն էլ ռազմական գործողությունների կասկածելի ընթացքի պայմաններում, Պարսից թագավորության գործնականում արդեն բոլոր խավերի համար այնուհանդերձ դարձել էր անտանելի: Արյաց արքայից դժգոհ էին իրոք բոլորը՝ ինչպես ռազմաքաղաքական ավագանին, որը մշտապես ենթակա էր բռնությունների և, զրկված լինելով հաջող պատերազմի հետ կապված օգուտներից, զոհ էր գնում մարտի դաշտում ու ներքաղաքական հաշվեհարդարներում, այնպես էլ նույն այդ պատերազմի պատճառով զոհեր տվող ու սեփական եկամուտների զգալի մասից, ըստ էության, զրկվող ավելի ցածր խավերը: Արյաց արքան, սակայն, խնդիր ուներ նաև իր ընտանիքի ներսում, եթե իհարկե շահական հսկայական հարեմը կարող էր ընտանիք համարվել, քանզի Խոսրով II-ի տիկնաց-տիկինը՝ Մավրիկոսի աղջիկ Մարիան, ըստ էության, գործում էր կայսրության օգտին և կարելի էր, թերևս, ասել, որ արյաց արքայի գործը դավաճանվել էր ամենաբարձր մակարդակով: Սրան գումարվում էր նաև արդեն իսկ դեպի իր կյանքի մայրամուտն ընթացող արյաց արքայի հետնորդի խնդիրը, քանզի Խոսրով II-ն ինքը որպես իր հաջորդ նախատեսել էր իր սիրելի կին Շիրինից ծնված որդի Մարդանշահին, այն դեպքում, երբ նրա տիկնաց-տիկին Մարիան գահի վրա բնականաբար ուզում էր տեսնել սեփական որդի Կավատին: Վերջնական խզմանը հարցում մեղքի իր բաժինն ուներ, սակայն, նաև Խոսրով II-ն ինքը:

Իրոք, արտաքինից ինչ-որ տեղ հիմնավոր, բայց վերջին հաշվով, ըստ երևույթին, ամեն դեպքում անհիմն՝ վերջին տարիներին արյաց արքայի մոտ աստիճանաբար խորը դժգոհություն էր կուտակվում իր երբեմնի սիրելի զորավար Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի նկատմամբ, որին Խոսրով II-ը ոչ մի կերպ չէր կարողանում ներել ամենից առաջ հենց 623 թվականի աղետը: Դատելով ըստ ամենայնի, սակայն, իր դերն էր խաղացել նաև այն հանգամանքը, որ, երկար տարիներ գործելով Տիզբոնից հեռու և, ըստ էության՝ սեփական հայեցողությամբ, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազն ինքն էլ արդեն որոշակի հեղինակության էր հասել ու, ամուսնացած լինելով արյաց արքայի աղջկա հետ, ինչ-որ կերպ, հնարավոր է, սկսել էր բարձրագույն իշխանությանը հասնելու հավակնություններ դրսևորել, ինչն էլ իր հերթին, գույները խտացրած տեսքով ներկայացվելով հավերժական կասկածներով պատված արյաց արքային, բերել էր վերջնական խզման: Դատելով ըստ ամենայնի՝ Խոսրով II-ին դուր չէին եկել նաև ինչ-որ տեղ գուցե գունազարդված կերպով իրեն հասած այն լուրերը, թե Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազն արդեն բացահայտորեն հայտարարում է, որ բոլոր հաջողությունների կազմակերպիչն և իրագործողը հենց ինքն է ու Խոսրով II-ը իզուր է դրանք իրեն վերագրում: Եվ վերջապես Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի նկատմամբ դժգոհությունը վերջնականապես հասավ իր գագաթնակետին այն բանից հետո, երբ վերջինս, գուցե զորավարական բացթողման արդյունքում, իսկ գուցե ինչ-որ տեղ՝ դիտավորյալ, անհրաժեշտ արագությամբ, ըստ էության, դեմ դուրս չեկավ Հերակլես Ի-ին այն բանից հետո, երբ 627 թվականի վերջերից սկսած վերջինս շարժվեց ուղիղ Տիզբոնի վրա:

Արդյունքում՝ սեփական զորավարի նկատմամբ վստահությունը վերջնականապես կորցրած Խոսրով II-ը 627 թվականի վերջին նամակագրական կապ հաստատեց Արևմուտքում գործող բանակում երկրորդ տեղը զբաղեցնող Խարդարիգանի հետ՝ հրամայելով նրան սպանել Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին ու

զբաղեցնել վերջինիս տեղը: Խարդարիգանը, սակայն, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի հետ միասին անցած լինելով մարտական երկար ուղի և, ըստ էության, չցանկանալով կատարել հրամանը, պատասխան նամակում զգուշորեն առարկեց արյաց արքային ու սկսեց համոզել, որ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը հենց այն մարդն է, որն իրոք պետք է Խոսրով II-ին: Արյաց արքան, սակայն, չընդունելով մերժումը, ևս մեկն անգամ նամակ ուղարկեց Խարդարիգանին, բայց այս անգամ ևս ստացավ նույնաբովանդակ մի պատասխան: Այդպես եղավ նաև երրորդ անգամ, որից հետո, զայրացած արդեն Խարդարիգանի վրա, Խոսրով II-ը նույնաբովանդակ պահանջով նամակ ուղարկեց արդեն Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին՝ այս անգամ պահանջելով արդեն, որ սա ինքը սպանի Խարդարիգանին: Արդյունքում՝ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը Խարդարիգանի հետ մի ծանր խոսակցություն ունեցավ, որի ընթացքում Խարդարիգանն ինքը մեջտեղ բերեց արյաց արքայից ստացված նամակները և ցույց տվեց իր ազնիվ վարքագիծը Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի նկատմամբ, որը դրսևորել էր մինչ այդ: Դրանից հետո մահացու վտանգի տակ հայտնված երկու զորավարները, հասկանալով, որ իրենցից յուրաքանչյուրի անկումը կարող է միայն մոտեցնել մյուսի կործանումը և միաժամանակ գիտակցելով նաև, որ կոնկրետ պահին իրենք անչափ պետք են մեկը մյուսին, առժամանակ գաղտնի պահեցին ամեն ինչ ու կարգավորեցին իրենց հարաբերությունները՝ սպասելով դեպքերի հերթական զարգացումներին, որոնք իրենց հերթին շատ չուշացան:

Իր հերթին, չստանալով դրական պատասխան Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին ուղղված իր վերջին նամակին, արդեն 627 թվականի ամենավերջին Խոսրով II-ը հերթական փակ մի նամակն ուղարկեց կրկին Խարդարիգանին և հրամայեց նրան ի վերջո ոչնչացնել Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին: Այս անգամ ստացվեց այնպես, սակայն, որ նամակը հայտնվեց կայսրության հետախույզների ձեռքում, որոնք այն հանձնեցին կայսեր, իսկ վերջինս էլ, բնականաբար, հատուկ հանդիպման ժամանակ չհապաղեց այդ մասին տեղյակ պահել Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին: Որպես հետևանք, ստեղծված իրավիճակից վերջնականապես խոցված Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը, բնականաբար գործելով նաև ինքնապաշտպանական դրդումներով, անցավ գործի:

Արդյունքում, ցանկանալով ապահովել բանակային լայն աջակցություն, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը, կատարելով կեղծիք, իր անվանից բացի արյաց արքայի նամակում ավելացրեց նաև ինչպես Խարդարիգանի, այնպես էլ բանակի բարձր հրամանատարական կազմին պատկանող 400 այլ զինվորականների անուններ, որից հետո հատուկ զինվորական խորհրդում հրապարակեց նամակը և պահանջեց որոշում ընդունել: Արդյունքն ավելի քան սպասելի էր, քանի որ այս անգամ արդեն բանակի ողջ բարձր հրամանատարական կազմն իրեն խորապես խոցված և մեծ վտանգի մեջ զգաց, որից հետո, գործելով ինքնապաշտպանական նույն մղումներով, ըստ էության, բռնեց բացահայտ ապստամբության ուղին: Ահա հենց այս հանգամանքն էլ 628 թվականի հունվարյան վճռական օրերին Խոսրով II-ին զրկեց բանակային հիմնական ուժերի աջակցությունից: Իրոք, յուրայինների վերջնական համաձայնությունը ձեռք բերելուց հետո Հերակլես I-ի հետ հատուկ հանդիպման ժամանակ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը հետագա համատեղ գործողությունների վերաբերյալ վերջինիս հետ վերջնական համաձայնություն ձեռք բերեց, ընդ որում, որպես գրավական ձեռք բերված պայմանավորվածությունների, նա կայսեր պատանդ տվեց իր ավագ որդուն:

Եվ այսպես, 628 թվականի հունվարի երկրորդ կեսին և փետրվարի առաջին կեսին Խոսրով II-ը շարունակում էր լքված մնալ բանակային իր հիմնական ուժերի կողմից, իսկ այդ հանգամանքն էլ, կարծես ամբողջացնելով արյաց արքայի դեմ առկա բոլոր դժգոհությունները, ի վերջո բերեց պայթյունի, երբ արդյունքում 628 թվականի փետրվարի

արդեն կեսին Տիզբոնում գահակալական մի հեղաշրջում տեղի ունեցավ: Ապստամբների գլխավորում էր Մավրիկոսի աղջիկ Մարիայի տղա Կավատը, որը, բացելով բանտերի և, հատկապես, հայտնի Անհուշ բերդի դռները, ազատություն ստացած ու վրեժի ծարավից տոչորվող մարդկանց խմբերին ուղղեց արյաց արքայի պալատի վրա: Ապստամբների շարքերում հատկապես ակտիվ դերակատարություն էին ստանձնել Ասպահապետներն, ի դեմս Վինդոյի որդի Ֆառուխ-Որմիզդի և վերջինիս որդիներ Ռուստամ Ֆառուխզադեի, Խոռզադ Ֆառուխզադեի ու Վինդոյի, Միհրանյաններն, ի դեմս Միհր-Որմիզդի, Միհրանի ու Վահրամ VI Չուբինի թոռ Սիյավուշի, ինչպես նաև Խանարանգեսի տոհմը: Առնվազ իրենց պասիվությամբ ապստամբների օգտին էին գործում նաև հայերը, որոնց գլխավորում էր Սմբատ Բազմահաղթ Բագրատունու որդի և Բագրատունիների տոհմապետ Վարազ-Տիրոց Բագրատունին (617-646): Միաժամանակ դավադրությունն իր պտուղները տվեց նաև Մատյան գնդում, որի ռազմիկները վերջին իրադարձություններում ևս տրորվել էին, և արդյունքում արյաց արքայի պահակախմբի կազմի մի մասն անցավ ապստամբների կողմը, իսկ մյուս մասն էլ սկսեց գործել արքայի դեմ տեղում՝ մասնավորապես հափշտակելով արքունական ձիանոցի նժույգները: Արդյունքում՝ Խոսրով II-ը, լքված բոլորի կողմից, մնացած մեն-միայնակ:

Ժամանակին տղամարդկային ակնհայտորեն ավելի բարձր հատկանիշներով օժտված Որմիզդ IV-ը ապստամբներին դիմավորել էր գահին նստած վիճակում, թեև դա վերջին հաշվով չէր փրկել նրան, սակայն այժմ նրա որդին, որն ակնհայտորեն ավելի փոքրոգի էր, պալատից փախավ ու թաքնվեց մոտակայքում գտնվող շքեղ այգու թփուտների տակ, սակայն դա ևս նրան հաջողություն չբերեց: Իրոք, Սեպանդ Միհրանյանը շուտով հայտնաբերեց Խոսրով II-ին, ձերբակալեց և փակեց իր տանը, իսկ կարճ ժամանակ անց էլ բերեց արդեն իսկ արքա հռչակված Կավատի՝ Կավատ II-ի (628), մոտ: Ժամանակին Խոսրով II-ը սպանել էր հորը և ահա այժմ՝ գրեթե 40 տարի անց, հայրասպանության ստվերն հառնեց արդեն հենց իր վրա: Ինչպես և հոր պարագայում եղավ, այս անգամ արդեն Խոսրով II-ի նկատմամբ մի արագացված դատավարություն կազմակերպեցին, որտեղ ևս դատավճիռն արդեն պատրաստ էր, իսկ դատավարության ղեկավար Ասպադ-Գուշնասպն էլ, ըստ էության, միայն ձևական գործունեություն էր իրականացնում:

Որպես հետևանք այս ամենի՝ Խոսրով II-ի իսկ աչքի առաջ սպանեցին ինչպես գահի անհաջողակ թեկնածու Մարդանշահին, այնպես էլ վերջինիս 40 եղբայրներին և այլ տոհմակիցների, ինչից հետո արյաց ազատազրկված նախկին արքային արյաց նոր արքայի հրամանով սկսեցին սովահար անել: Շուտով պարզելով, սակայն, որ գործն այնուհանդերձ ձգձգվում է, Միհր-Որմիզդի գլխավորությամբ գործող դահիճները ավելի կոնկրետ գործողությունների անցան: Արդյունքում՝ 628 թվականի փետրվարի 28-ին Կավատ II-ի հրամանով Խոսրով II-ին սկզբում նետահարեցին, հետո, երբ երբեմնի հզոր այդ տիրակալի մարմնում կյանքը դեռևս պլպլում էր, նրան սկսեցին խեղդել, իսկ վերջում էլ արդեն՝ տապարահար արեցին:

Փետրվարի երկրորդ կեսի արյունոտ այդ օրերում Կավատ II-ը ամրապնդվեց Պարսից թագավորության գահին, սակայն դրա հետ միաժամանակ նա նաև ծանր և նույնիսկ անդառնալի կորուստներ պատճառեց սեփական Սասանյան տոհմին: Ինչ վերաբերում է քաղաքական դասավորությանը, ապա այս տիրակալի օրոք իր կողմնակիցների հետ միասին հատկապես ազդեցիկ դիրք գրավեց Փիրուզ-Խոսրովը, որն էլ ի վերջո նշանակվեց վեզիր և, ըստ էության, դարձավ Պարսից թագավորության երկրորդ մարդը: Հենց նա էր, ի դեպ, որ, գոնե ձևականորեն փրկելու համար իբր բանից անտեղյակ արյաց արքայի վարկը, մահապատժի ենթարկեց Միհր-Որմիզդին:

Ներքին խնդիրներից զատ, սակայն, դեռևս մնում էր ընթացող պատերազմը ու, թեև Կավատ II-ը դեռևս գահի հավակնորդի վիճակում գործել էր կայսեր իմացությամբ, սակայն այժմ ժամանակն էր ամեն ինչին վերջնական տեսք տալու: Ստեղծված պայմաններում պատերազմող կողմերի միջև բանակցություններ սկսվեցին, որոնց

արդյունքում 628 թվականի մայիսի 15-ին կնքվեց հաշտություն և Բյուզանդա-Պարսկական VI պատերազմը, ինչպես նաև Մարզպանական Հայաստանի VII ապստամբությունը գոնե իրավաբանորեն վերջացան[1]: Հաշտության կնքումից հետո Մարզպանական Հայաստանում մարզպան նշանակվեց Վարազ-Տիրոց Բագրատունին (628-634): Նույն այս ժամանակ սպարապետ նշանակվեց Մուշեղ Խիզախ Մամիկոնյանի որդի Համազասպի տղա Դավթի որդի Մուշեղը, այն դեպքում, երբ Սատրապական Հայաստանում հայկական բանակի ղեկավարությունն իրականացնում էր վերջինիս պապի պապի եղբոր թոռան թոռ, կայսրության Արևելքի հրամանատար Վահան Մամիկոնյանը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ հաշտությանը հաջորդած առաջին ամիսներին կարելի էր խոսել պատերազմական գործողությունների դեռևս իրոք, թերևս, միայն իրավաբանական վերջի մասին, քանի որ, ի տարբերություն նախորդ պատերազմների, այժմ հակամարտող կողմերի բանակներն, ըստ էության, գտնվում էին մեկը մյուսի տարածքում և առնվազն գոնե մի քանի ամիս էր պետք, որ Պարսից թագավորության ուժերը հետ քաշվեն Եգիպտոսից մինչև Քաղկեդոն ձգվող հսկայական տարածքներից: Սրանից բացի, սակայն ոչ պակաս կարևոր դեր ունեցավ նաև այն հանգամանքը, որ իր համար մինչ այդ խիստ հաջող ընթացք ստացած պատերազմական գործողություններից այդքան հեշտ չէր պատրաստվում հրաժարվել նաև Տուն-Յագբուն:

Արդյունքում՝ 628 թվականի դեկտեմբերին, մինչ Հերակլես Ի-ի հիմնական հարվածային ուժերը գտնվում էին Հայաստանի հարավ-արևելքում, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազն ավարտում էր իր ցրված ուժերի հետ քաշումը մինչև 591 թվականի սահման, 628 թվականի սեպտեմբերի 6-ին ժանտախտից մահացած հայրասպան Կավատ II-ին Պարսից թագավորության գահին փոխարինել էր նրա յոթնամյա որդի Արտաշիր III-ը (628-629), իսկ Պարսից թագավորությունն էլ տառապում էր սովից, Միջագետքի ջրային համակարգի խաթարման արդյունքում առաջացած ջրերից ու ցեխից, ինչպես նաև համաճարակից, Տուն-Յագբուի գլխավորած Արևմտյան Թյուրքական խաքանության բանակը (մոտ 150.000, այդ թվում մեծաթիվ խազարներ), առաջանալով Դերբենդի լեռնանցքից, կրկին մոտեցավ ուղիղ Տփղիսին: Խաքանը չէր մոռացել քաղաքի պարիսպների տակ նախորդ տարի իրեն հասցրած վիրավորանքը և այս անգամ նա վրեժխնդիր եղավ լիուլի:

Իրոք, ի տարբերություն նախկինի, այս անգամ Տփղիսը նվաճվեց ընդամենը միայն կարճատև պաշարումից հետո և անխնա ավերի ենթարկվեց, իսկ քաղաքի, ինչպես նաև շրջակա բնակչությունն էլ գերեվարվեց: Խաքանը հատկապես դաժան հաշվեհարդար տեսավ Շահր Պղականի, ինչպես նաև քաղաքի կառավարիչի հետ, որոնք սկզբում կուրացվեցին, հետո էլ մաշկազերծ արվեցին և կախվեցին[2]:

Ավարտելով գործերը Վրաստանում՝ Արևմտյան Թյուրքական խաքանության բանակն իջավ դեպի հարավ և, ասպատակելով Ուտիքը, Արցախն ու Աղվանքը, հիշատակված տարածքներն, ըստ էության, գցեց իր գերիշխանության տակ[3]: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թյուրքերին սանձելու համար բավարար ուժեր չունեցող Հերակլես Ի-ը, որը նույն այս ժամանակ լիովին զբաղված էր Պարսից թագավորության դեմ

---

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 39; Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 12, 13; Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն», գիրք 3; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 3; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 3; Հովհաննես Դրասխանակերտցի «Հայոց պատմություն», գլուխ 17; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; Ավագ Սեբաստացի «Ժամանակագրություն»; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; Հեթում Պատմիչ «Ժամանակագրություն»; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Անանուններ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն «Քարթլիի դարձը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Սմբատ Դավթորդի «Բագրատունյաց պատմություն»; Գիյոմ Տյուրացի «Անդրծովյան երկրների պատմությունը», գիրք 1, գլուխ 2; Տաբարի «Արքաների ու մարգարեների պատմություն», գիրք 5; Աբդ ալ-Հաքամ «Եգիպտոսի նվաճումը»; Աբու Հանիֆա ալ-Դինավարի «Մատյան երկարապատում ավանդությունների»:

[2] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 14; «Քարթլիս-Ցխովրեբա», «Քարթլիի մատյանը»; «Քարթլիս-Ցխովրեբա», Անանուն «Քարթլիի դարձը»; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 1; «Քարթլիս-Ցխովրեբա», Սմբատ Դավթորդի «Բագրատունյաց պատմություն»; Դավիթ Բագրատունի «Վրաստանի պատմությունը», գլուխ 79:

[3] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 14; Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն», գլուխ 10:

ձեռք բերած հաջողությունը ամրապնդելու գործով, ոչ մի կերպ չխոչընդոտեց այդ պահին Պարսից թագավորության մաս համարվող տարածքների ավերմանը՝ մի կողմից բնականաբար խուսափելով իր համար ավելորդ և վտանգավոր մի նոր ընդհարման մեջ ներքաշվելուց, մյուս կողմից էլ ձգտելով այդ կերպ հագուրդ տալ թյուրքերին ու սանձել նրանց հետագա հավակնությունները: Ինչ վերաբերում է յոթնամյա արյաց արքային, ապա իրական իշխանություն չունեցող այս տիրակալի խորհրդականները ևս իրական ռազմական ոչ մի հնարավորություն չունեին դեմ ելնելու ահեղ Տուն-Յագբուին:

629 թվականի առաջին կեսին, չնայած այն բանին, որ նախորդ տարվա առաջին կեսին իրավաբանորեն, իսկ տարվա վերջին էլ, ըստ էության, արդեն նաև փաստացի պատերազմն իր վերջն էր գտել, տարածաշրջանը դեռևս փոթորկվում էր: Իրոք, Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի զորքերի հեռանալուց հետո կայսրության արևելքում նախկին դիրքերը վերականգնելու համար Հերակլես Ի-ին դեռևս զգալի ժամանակ էր պետք, քանզի, ամենից առաջ կրոնական, բայց նաև տնտեսական ու ազգային հանգամանքներով պայմանավորված մինչ այդ էլ Կոստանդնուպոլսից առանձնակի գոհ լինելու հիմքեր չունեցած տարածաշրջանում դժգոհությունները համատարած էին, իսկ որոշ տեղերում էլ բանը հասնում էր զինված դիմադրության:

Դիմադրության օջախներից ամենաակտիվը Եդեսիան էր ու, թեև սկզբնաղբյուրները անհնազանդության մեջ մեղադրում են ամենից առաջ հրեաներին, սակայն, թերևս, կարող ենք պնդել, որ դեռևս Ներսեհ Կամսարականի և Փոկասի ժամանակներից այս քաղաքում չէին սիրում Կոստանդնուպոլսի տիրակալներին: Իրավիճակը բարդանում էր նաև նրանում, որ անչափ թույլ և հեղինակազրկված կենտրոնական իշխանության առկայության պայմաններում քաղաքում տեղակայված Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի ռազմիկներն իրենք ևս առանձնակի հիմքեր չէին տեսնում զիջել դիրքերը: Խնդիրը, սակայն, 629 թվականի գարնանը հաջողվեց հարթել կայսրեղբայր, Արևելքի հրամանատար Թեոդորոսին, որը, զգալի ուժերով մոտենալով քաղաքին և սկզբի համար գործի դնելով պաշարողական տեխնիկան, ի վերջո կարողացավ Պարսից թագավորության կայազորի հետ հաշտության եզրեր գտնել ու հեռացնել վերջինիս քաղաքից, իսկ հետո էլ արդեն՝ հրեաներին ստիպել դադարեցնել դիմադրությունը: Հրեաները անձնական վիրավորանքներ էին հասցրել Թեոդորոսին և նա հասցրեց մի շարք մահապատիժներ իրականացնել վերջիններիս շարքերում, սակայն հետո տեղ հասավ կայսեր սուրհանդակը ու տեղեկացրեց, որ Հերակլես Ի-ը, տեղիք տալով քաղաքի համայնքի ներկայացուցիչ Հովսեփի խնդրանքներին, որոշել է ներել հրեաներին: Արդյունքում, թեև մահապատիժները դադարեցին, սակայն 12.000 հրեաներ, որոնք համարվեցին ամեն ինչի մեղավոր, ամեն դեպքում այսպես թե այնպես աքսորվեցին Եդեսիայից և նրա շրջակայքից[1]: Նույն այս ժամանակ վիճակը հանդարտ չէր, սակայն, նաև Պարսից թագավորությունում, որտեղ մանուկ Արտաշիր III-ը ոչ մի կերպ չէր կարող համարվել երկրի տիրակալ:

Իրոք, արյաց նոր արքան ընդամենը մի երեխա էր և այս պայմաններում, մի կողմ մղելով Փիրուզ-Խոսրովին, երկրի կառավարումն, ըստ էության, իրականացնում էր նոր վեզիր Մահ-Ադհուր Գուշնասպը, որի մայրը Խոսրով II-ի մորաքույրն էր: Վերջինս, սակայն, չնայած մի քանի կտրուկ միջոցառումների, այդպես էլ ի վիճակի չեղավ ամրացնել սեփական իշխանությունը: Իրոք, 629 թվականի սկզբի վիճակով Պարսից թագավորությունում չափից շատ էին արյաց արքայի գահին ձգտող մարդիկ:

Դեռևս 628 թվականի վերջից սկսած Պարսից թագավորությունում, ըստ էության, ստեղծվել էին մի քանի խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրն ուզում էր արյաց գահի վրա տեսնել իր թեկնածուին: Ամենաազդեցիկ դերերում էր ամենից առաջ Ասպահապետների խմբավորումը, որը ներկայացնում էր վերջին տասնամյակներում

[1] Սեբեոս «Պատմություն», գլուխ 42; Թովմա Արծրունի «Պատմություն Արծրունյաց տան», գիրք 2, գլուխ 4; Ստեփանոս Տարոնեցի «Տիեզերական պատմություն», գիրք 2, գլուխ 4; Վարդան Արևելցի «Տիեզերական պատմություն», գլուխ 33; Իսահակ Երեց «Ժամանակագրություն», գլուխ 18; Դիոնիս Տել-Մահրացի «Տարեգրություն», մաս 4; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 101; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3:

կրկին ուժեղացած խոշոր հողատեր ազնվականության շահերը և որին աջակցում էին թագավորության հիմնականում հյուսիսային շրջանները: Այս խմբավորմանն ամենից առաջ հակադրվում էին Փիրուզ-Խոսրովն և նրա կողմնակիցները, որոնք հիմնականում ներկայացնում էին սոցիալական ավելի ցածր խավերը ու աջակցություն էին վայելում հատկապես երկրի հարավում: Ազդեցիկ էր նաև Խանարանգեսի խմբավորումը, որի ավանդական հենարանը երկրի արևելյան շրջաններն էին, որտեղ ուժեղ էին քոչվոր տարրերի դիրքերը: Արյաց գահի նկատմամբ սեփական պատկերացումներն ունեցող անձանց շարքերում, սակայն, քիչ չէին նաև վերջին տասնամյակները իրենց կյանքը պատերազմներում անցկացրած զինվորականները, իսկ եթե դրան գումարենք նաև այն հանգամանքը, որ բանակը ըմբոստության հարուստ փորձ ուներ դեռևս Վահրամ VI Չուբինի ժամանակներից, վիճակն առավել ծանր տեսք էր ստանում: Զինվորականներին ներկայացնող վերջին խմբավորման ղեկավարներն էին Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազն և նրա մարտական զինակից Խարդարիգանը: Եվ վերջապես իրենց յուրօրինակ դիրքորոշումն ունեին նաև Վարազ-Տիրոց Բագրատունու գլխավորած հայերը, որոնք, ակտիվորեն չմասնակցելով գահակալական պայքարին, անկախության իրենց մշտական ձգտումներով ևս այնուհանդերձ որևէ կերպ չէին նպաստում իրավիճակի կայունացմանը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գործող տիրակալի ենթարկվելու ոչ մի հիմք չէր տեսնում հատկապես Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը, որը, խոցված և վիրավորված դեռևս Խոսրով II-ի կողմից, այժմ, ձեռքի տակ ունենալով երկիր վերադարձած բանակային ուժերը, որոնց շարքերում իր հեղինակությունը հսկայական էր, իրեն լիովին պատրաստ էր համարում արյաց գահը զբաղեցնելու համար: Ավելին, հենց Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազն ու իր խմբավորումն էր, որ ամենից պատրաստն էին կտրուկ գործողությունների, ընդ որում պատերազմների բովով անցած և մահ տեսած այս զորականները որևէ կերպ վճռականության պակաս չունեին: Արդյունքում՝ 629 թվականի ապրիլի երկրորդ կեսին Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի բանակային ուժերը մոտեցան Տիզբոնին և, վայելելով ամենից առաջ Փիրուզ-Խոսրովի, ինչպես նաև Խանարանգեսի խմբավորումների աջակցությունը, ապրիլի 27-ին առանց լուրջ դիմադրության հանդիպելու տիրեցին քաղաքին: Արտաշիր III-ը գահընկեց արվեց և Մահ-Ադհուր Գուշնասպի հետ միասին շուտով սպանվեց, իսկ Պարսից թագավորության արքա էլ հռչակվեց Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը (629)՝ Վահրամ VI Չուբինից հետո լինելով երկրորդ անձը, որը, չլինելով Սասանյանների տոհմից, բազմեց Սասանյանների տերության գահին:

Արյաց նոր արքան այս ժամանակ դեռևս Արևելքում գտնվող Հերակլես I-ի հետ լավ հարաբերություններ ուներ, ընդ որում մարտաշունչ տրամադրություններով ամենևին պատված չէր նաև կայսրը, որի տերությունն ինքն էլ անվերջ ռազմական գործողություններից ուժասպառ էր եղել, երբ մարդիկ իրոք մահու չափ հոգնել էին չվերջացող պատերազմից: Այսպիսով, հանգիստ լինելով կայսրության կողմից, Պարսից թագավորության գործող արքան, ըստ էության, միայն երկու խնդիր ուներ՝ ամրացնել դիրքերը երկրի ներսում և հետ մղել թյուրքերին:

Երկրի ներսում գահին բազմելուց հետո Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի հիմնական հակառակորդն ամենից առաջ սեփական զինակից նույն Խարդարիգանն էր՝ ևս մեկ մարտական զորական, որի հետ Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին կապում էին համատեղ անցած մարտական ուղին, ինչպես նաև ընդհանուր վտանգին դեմ հանդիման մեկը մյուսի նկատմամբ դրսևորած ազնիվ վարքագիծը: Այժմ, սակայն, երբ Խոսրով II-ն արդեն չկար, մարտական այս զորավարները մահացու մարտում իրար եկան: Արդյունքում, ժամանակին հավաքելով ուժերը և օգնություն ստանալով այդ թվում նաև Հերակլես I-ից, 629 թվականի մայիսի 19-ին Տիզբոնի պարիսպների տակ տեղի ունեցած ճակատամարտում Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի կողմնակիցները վճռական հաղթանակի հասան,

Խարդարիգանը սպանվեց, իսկ գործող արքայի դիրքերն էլ առժամանակ ամրապնդվեցին[1]: Այս դեպքերից կարճ ժամանակ անց Խանարանգեսի խմբավորումը որպես արյաց գահի սեփական թեկնածու Պարսից թագավորության արևելյան շրջաններում առաջ քաշեց ոմն Խոսրովի՝ Խոսրով III-ին (629), սակայն սա շուտով զոհ գնաց դավադրությանը և Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազը ազատվեց նաև այս հոգսից:

Արյաց արքայի համար առավել բարդ էր թյուրքական խնդրի լուծումը, քանի որ Տուն-Յագբուի մարտիկները, իրենց լիովին տեր ու տնօրեն զգալով Պարսից թագավորության հյուսիս-արևմտյան տիրույթներում, ոչ մի կերպ չէին պատրաստվում հետ քաշվել: Թյուրքերին գոնե մի որևէ կերպ սանձելու նպատակով արյաց արքան դիմեց ռազմական գործողությունների, սակայն 629 թվականի մայիսի վերջին Սևանա լճի ափին տեղի ունեցած ճակատամարտում Արևմտյան Թյուրքական խաքանության բանակի (մոտ 100.000, այդ թվում մեծաթիվ խազարներ) առաջապահը (3.000), կեղծ նահանջով առաջ քաշելով Պարսից թագավորության բանակին (10.000, այդ թվում մեծաթիվ արաբներ) ու նրա կազմում գտնվող Հայ ռազմիկներին (մոտ 1.000), գցեց հիմնական բանակի նախապատրաստած դարանը և գլխովին ջախջախեց[2]: Այսպիսով՝ թյուրքական վտանգը շարունակում էր իրական մնալ, սակայն մի անակնկալ հանգամանք ինքնին լուծեց խնդիրը, քանի որ հենց նույն այն ժամանակ, երբ թյուրքերը Պարսից թագավորության բանակի նկատմամբ հաղթանակ տարան, լուր եկավ, թե Տուն-Յագբուն զոհ է գնացել Նուշիբի ցեղախմբի երդվյալ հակառակորդը հանդիսացող Դուլու ցեղախմբի անդամների կողմից հղացած հաջող դավադրությանը և Արևմտյան Թյուրքական խաքանությունում հերթական գահակալական մի ծանր պայքար է սկիզբ առել, որին, ի դեպ ասած, այս անգամ վիճակված էր արդեն վերջնականապես թաղել այս պետությանը: Արդյունքում՝ թյուրքերը, այլևս ի վիճակի չլինելով մնալ Կովկասյան լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներում, հետ քաշեցին ուժերը Նախակովկասյան տափաստաններ: Սրանով էլ, ըստ էության, ռազմական գործողություններն արդեն իրոք իրենց վերջը գտան, սակայն տարածաշրջանին քիչ թե շատ հարատև հանդարտություն վայելել դեռևս ամենևին էլ վիճակված չէր:

Թյուրքերի հետ քաշվելը, որը տեղի ունեցավ 629 թվականի ամռան ամենասկզբին, ինքնին անակնկալ ու թանկարժեք մի նվեր Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազի համար, վերջին հաշվով այնուհանդերձ օգուտ չտվեց նաև այս տիրակալին, քանի որ 629 թվականի հունիսի 9-ին, երբ արյաց գահը զբաղեցրած նախկին զորավարը զորատես էր իրականացնում, մինչ այդ դավադրություն կազմած վերջինիս պահակազորի երեք եղբայրներ թիկունքի կողմից նետված նիզակներով հարվածեցի նրան և սպանեցին: Դավադրության հետևում, դատելով ըստ ամենայնի, կանգնած էր Ֆառուխ-Որմիզդի խմբակցությունը, որին իշխանության վերջին բաժանումից ամենաքիչն էր բաժինն էր հասել: Եվ ահա այժմ, վերացնելով Խոռյան Ռազմիոզան Ֆառուխան Շահր Վարազին և կործանիչ հարված հասցնելով զինվորականների խմբակցությանը, հարված, որից վերջինս հետագայում այդպես էլ ուշքի չեկավ, Ասպահապետների առաջնորդը, բացառիկ մի դեպք Պարսից թագավորության պատմության մեջ, արյաց գահին բազմեցրեց Խոսրով II-ի դուստր Բորանդուխտին (629-630, 631-632): Նորընծա թագուհին, վայելելով խոշոր հողատեր ազնվականների աջակցությունը, որոնք հենց թեկուզ սեփական շահերից ելնելով գոնե այդ պահին ձգտում էին նրա իշխանության ամրապնդմանը, փորձ կատարեց արագորեն կարգուկանոն հաստատել երկրում՝ միաժամանակ արդեն պաշտոնապես բացասական վերաբերմունք արտահայտելով հայրասպան Կավատ II-ի ու նրա ողջ գործունեության նկատմամբ:

---

[1] Անանուն Ասորի «Սասանյանների ժամանակագրությունից»; Անանուն Եդեսիացի «Ժամանակագրություն», մաս 101; Միքայել Ասորի «Ժամանակագրություն», գիրք 11, գլուխ 3; Բար-Հեբրեոս «Աշխարհիկ պատմություն», գիրք 10; Նիկեփոր պատրիարք «Համառոտ պատմություն», մաս 1; Թեոփանոս Խոստովանող «Ժամանակագրություն»; Գեորգի Մտացմինդելի «Սկյութների, ըստ էության, ռուսների, կողմից Կոստանդնուպոլսի պաշարման, ինչպես նաև դեպի Պարսկաստան կայսր Հերակլեսի արշավանքի մասին»:

[2] Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», գիրք 2, գլուխ 16:

Մինչ Բորանդուխտը փորձում էր ամրանալ կնոջ համար այնքան անսովոր արյաց գահին՝ 629 թվականի ամռանն և աշնան սկզբին, անշտապ ճանապարհորդելով կայսերական արևելյան տիրույթներով, ցուցադրելով հենց նոր գերությունից ազատված Փրկչական խաչն և դժվարությամբ խաղաղեցված տարածքներում այդ կերպ հնարավորինս մեծ հեղինակություն ձեռք բերելով, Հերակլես Ի-ն իր շքախմբի հետ միասին նույն տարվա սեպտեմբերի վերջին ի վերջո ժամանեց Կոստանդնուպոլիս: Կայսրը մայրաքաղաք մտավ Ոսկե դարպասներով, ընդ որում սեփական մուտքը մայրաքաղաք ոչ միայն նա ինքը վերածեց մի իսկական հաղթահանդեսի, այլև մայրաքաղաքն ինքը Հերակլես Ի-ին դիմավորեց ամենայն հանդիսավորությամբ ու սիրով:

Իրոք, բոլորին թվում էր, թե վերջ, սա վերջին պատերազմն է և հսկայական զոհողությունների ու ուժերի գերլարման ծանր գնով ձեռք բերված անհավատալի և թանկարժեք այդ հաղթանակը վերջ է տալու բոլոր ընդհարումներին: Մարդկանց հատկապես մեծ հույսեր էր ներշնչում ավանդական հակառակորդի՝ Պարսից թագավորության, թուլացումն և ամեն տեսակի հավակնություններից հրաժարումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ արյաց գահին հայտնվել է մի կին, որ դիրքերն էլ, դրան գումարած, ամուր չէին:

Մարդիկ չէին էլ կասկածում, սակայն, որ արդեն սկիզբ են առել նոր ժամանակներ:

Մհեր Հակոբյան

Մեծ խաղը

(Եվրասիական Մեծ խաղը և Հայաստանը)

Հատոր I

Խմբագիր՝ Թ. Հակոբյան
Ձևավորում՝ Ա. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Մ. Սմբատյան

Հեղինակային Հրատարակություն
Երևան 2025
Չափսը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ
23 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100:
Հեռ.՝ (093) 45-80-04
e-mail Lion1700@yandex.ru
961